

Նախորդ հրատարակության գրախոսականներ

«...Հեղինակները նախաձեռնել են ծավալուն հետազոտություն... Ոչ մի մենագրություն կամ մեկնաբանություն չի կարող համեմատվել հեղինակների կատարած հսկայական աշխատանքի հետ... Ընդհանուր առմամբ այս նյութը ՔՔԻՄԴ-ով ամրագրված իրավունքների ընկալման և տարածման ամբողջական պատկեր է»:

Էքարտ Բլայն, Միջազգային իրավունքի ամերիկյան հանդես

«...Մի օգտակար աշխատություն, որը մեծ հետաքրքրություն կառաջացնի մարդու իրավունքների ոլորտում...»

«Քամոնուելզ լոյեր» հանդես

«Այս գիրքը` սեղմ շարադրանքով, հիանալի ցանկերով և յուրաքանչյուր գործի տրամաբանական ներկայացմամբ` մարդու իրավունքների իրավագիտական վերլուծության և եզրահանգումների հարուստ գանձարան է...Կարծում եմ` մոտ քսան տարի անց յուրաքանչյուր ավստրալիացի իրավաբան նման նյութերը միշտ ձեռքի տակ է ունենալու»:

Ջասթիս Մայքլ Քրքի, Ավստրալիայի իրավաբանական հանդես

«...Սա Մարդու իրավունքների կոմիտեի աշխատանքն ու տարբեր գործառույթները դասակարգելու և մատչելի դարձնելու համար ծանրակշիռ ներդրում է: Մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային բազայի ժամանակագրական համադրման շնորհիվ այս աշխատությունն առանձնանում է մարդու իրավունքներին վերաբերող գրականության մեջ»:

Միջազգային իրավունքի Ավստրալիայի տարեգիրք

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ) ամենակարևոր համաձայնագիրն է մարդու իրավունքների ոլորտում. այն համաշխարհային նշանակություն ունի, քանի որ բաց է բոլոր երկրների վավերացման համար:


Այս հրատարակությունում ներկայացվում են ՔՔԻՄԴ-ով որպես մոնիթորինգի իրականացման մարմին հաստատված Մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային շտեմարանը և գործերի վերլուծությունը: ՔՔԻՄԴ-ի նյութաիրավական դրույթները, ինչպես նաև գործերի ընդունելիության վերաբերյալ առաջին արձանագրության դրույթները վերլուծվում են առաջին արձանագրության, համապատասխան ընդհանուր մեկնաբանությունների և մասնակից պետությունների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումների շրջանակներում ներկայացված անհատական դիմումներով կայացված որոշումների քաղվածքներով: ՄԱԿ-ի այլ համաձայնագրերի, ինչպես օրինակ` Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում կայացված որոշումները նույնպես մեջբերված են ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով իրավագիտական նորմերի փոխլրացմող բնույթն ընդգծելու նպատակով:

Հետևողականորեն համակարգված և հղումներով հագեցած այս գիրքը մատուցում է Մարդու իրավունքների կոմիտեի և ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով պայմանագրային մարմինների նախադեպային իրավագիտական բազան: Պարզ և ուսուցողական եղանակով ներկայացված նյութն օգտակար կլինի դատական համակարգի աշխատակիցների, մարդու իրավունքների ոլորտի իրավաբանների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող գործիչների, պետական հաստատությունների, դասախոսների և ուսանողների համար:



Սառա Ջոզեֆ` Մոնաշի համալսարանի իրավագիտության պրոֆեսոր և Մարդու իրավունքների Քասթանի անվան կենտրոնի տնօրեն

Ջենի Շուլց` Վիկտորիա նահանգի գերագույն դատարանի և Ավստրալիայի վերին դատարանի արտոնագրված փաստաբան, Մոնաշի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս

Մելիսա Քասթան` Վիկտորիա նահանգի գերագույն դատարանի և Ավստրալիայի վերին դատարանի արտոնագրված փաստաբան, Մոնաշի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, Մարդու իրավունքների Քասթանի անվան կենտրոնի փոխտնօրեն



ՍԱՐԱ ՋՈԶԵՖ, ՋԵՆԻ ՇՈՒԼՑ, ՄԵԼԻՍԱ ՔԱՍԹԱՆ
SARAH JOSEPH, JENNY SCHULTZ AND MELISSA CASTAN



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ
«ԲԱՎԻՂ»
2009

THE INTERNATIONAL COVENANT ON CIVIL AND POLITICAL RIGHTS

Cases, Materials, and Commentary

Second Edition

SARAH JOSEPH, JENNY SCHULTZ, and MELISSA CASTAN

FOREWORD TO FIRST EDITION BY ELIZABETH EVATT AC

FOREWORD TO SECOND EDITION BY IVAN SHEARER AM

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ

Գործեր, նյութեր և մեկնաբանություններ

Երկրորդ հրատարակություն

ՍԱՌԱ ՋՈՋԵՖ, ՋԵՆԻ ՇՈՒԼՑ, ՄԵԼԻՍԱ ՔԱՍԹԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ՝ ԷԼԻԶԱԲԵԹ ԷՎԱԹԻ
ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ՝ ԻՎԱՆ ՇԻՐԵՐԻ

ՀՏԴ 347: 342
ՊՄԴ 67.99 (2) 3
Ք 162

Ք-162 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր: Գործեր, նյութեր և մեկնաբանություններ /Ս. Ջոզեֆ, Ջ. Շուլց, Մ. Քասթան. - Եր.: Բավիլոն, 2009.- 956 էջ:

"The International Covenant on Civil and Political Rights: Cases, Materials and Commentary" was originally published in English in 2005. This translation is published by arrangements with Oxford University Press.

This translation is the result of a joint project between the Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law, the Human Rights Defender's Office in the Republic of Armenia and the United Nations Development Programme (UNDP) with financial support from the Swedish International Development Cooperation Agency (Sida)."

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր. գործեր, նյութեր և մեկնաբանություններ» գիրքն առաջին անգամ հրատարակվել է անգլերեն 2005 թվականին: Թարգմանությունը հրատարակվում է «Oxford University Press» հրատարակչության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն:

Թարգմանությունն իրականացվել է Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) համագործակցությամբ և Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (ՇՍԶՀԳ) ֆինանսական աջակցությամբ:

All rights reserved.
© S Joseph, J Schults, and M Castan 2004

No part of this publication may be reproduced, stored in a retrieval system, or translated by any other means without prior written permission of the copyright holder. Please direct all enquiries to the Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law.

Բոլոր իրավունքները պաշտպանված են
© Ս. Ջոզեֆ, Ջ. Շուլց, Մ. Քասթան 2004

Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, գետեղվել տեղեկատվական որոնման համակարգում կամ թարգմանվել որևէ այլ միջոցով՝ առանց հեղինակային իրավունքի պահառուի գրավոր համաձայնության: Խնդրում ենք բոլոր հարցերը հղել Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտին:

The views expressed in this publication do not necessarily represent those of the United Nations (UN), United National Development Programme (UNDP), Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law (RWI) or Swedish International Development Cooperation Agency (Sida).

Սույն հրատարակության մեջ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ ներկայացնեն Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի կամ Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (ՇՍԶՀԳ) տեսակետները:

ՊՄԴ 67.99 (2) 3

ISBN 978-9939-818-06-1



Raoul Wallenberg Institute
of Human Rights and Humanitarian Law



Մարդու իրավունքների
պաշտպան

 **Sida**



ՆՎԻՐՎՈՒՄ Է

Աարոն Ռոնալդ Քասթանի (1939-1999)
հիշատակին

Առաջին հրատարակության նախաբան

Այս գիրքը հետապնդում է մի շատ ողջունելի նպատակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի և այլ պայմանագրային մարմինների աշխատանքը հասանելի դարձնել հնարավորինս լայն շրջանների: Չնայած ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի՝ յուրաքանչյուր անհատի կյանքին առնչվելու ձգտումներին՝ դրա գործառույթներն ու հնարավորությունները բավականաչափ հայտնի չեն: Բավականաչափ ընկալված չեն նաև դրա պատասխանատվության համակարգը, ներուժը և սահմանները:

Բոլոր պետությունները, որոնք վավերացրել են ՄԱԿ-ի մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, պատասխանատու են անկախ «պայմանագրային մարմինների» առջև՝ զեկույցների համակարգի միջոցով: Որոշ պետություններ ճանաչել են նաև Մարդու իրավունքների կոմիտեի իրավասությունը, Ռասայական խտրականության վերացման կոմիտեի (ՌԽՎԿ) և Խոշտանգումների դեմ կոմիտեի (ԽԴԿ) իրավասությունը անհատների կողմից իրենց իրավունքների ոտնահարման վերաբերյալ բողոքներն ուսումնասիրելու հարցում¹: Այս մարմիններն ընթացակարգեր են սահմանել, որոնց շրջանակներում մասնակից պետությունները հրավիրվում են մասնակցելու կոմիտեի անդամների հետ առերես քննարկումների և պատասխանելու նրանց հարցերին՝ ազգային օրենքների և գործնական իրադրժման մասին (այս գործընթացը երբեմն կոչվում է «երկխոսություն»): Փաստաթղթերում նման հանդիպումների վերաբերյալ բացահայտ հղումներ չկան, սակայն մասնակից պետություններն ընդունել են ընթացակարգը, և դրա կարևորությունն ու օգտակարությունը ապացուցվել են: Պայմանագրային մարմինների՝ պետություններից և այլ աղբյուրներից հստակ տեղեկություններ ձեռք բերելու ունակությունը հնարավորություն է տվել նրանց իրատեսական գնահատական տալու առանձին երկրներում մարդու իրավունքների պահպանման իրավիճակին:

Հաշվետվողականության այս մեխանիզմները հիմք են ծառայել պայմանագրային մարմինների համար՝ իրենց գործունեության մոտ երեսուն տարվա ընթացքում մշակելու բազմաթիվ տարրերից բաղկացած նշանակալի դատաիրավական պրակտիկա: Ջեկույցների ներկայացման ընթացակարգերում պայմանագրային մարմինները տեղեկատվություն են ստանում մի շարք աղբյուրներից, այդ թվում՝ միջպետական և ոչ կառավարական կազմակերպություններից, և օգտվում այդ նյութերից՝ պետություններին հասցեագրված հարցադրումներ անելու և նրանց պատասխանները ստուգելու համար: Արդյունքում նրանց Եզրափակիչ մեկնաբանությունները՝ ի պատասխան յուրաքանչյուր պետության ներկայացրած զեկույցի, կարող են հստակ և նպատակաուղղված լինել: Թեև դիտողություններն ուղղվում են առանձին պետությունում տիրող իրավիճակին, սակայն դրանք առավել լայն նշանակություն ունեն, քանզի ներկայացնում են կոմիտեի անդամների համաձայնեցված մոտեցումը փաստաթղթի առանձին դրույթի մեկնաբանության և կիրառման վերաբերյալ: Պայմանագրային մարմինների դատաիրավական գործելակերպի այլ տարր են Մարդու իրավունքների կոմիտեի և այլ կոմիտեների կողմից քննվող գործերի առնչությամբ արտահայտված կարծիքները: Չնայած դրանք օրենքով պարտադիր չեն, սակայն փաստաթղթի կիրառման կարևոր ցուցիչ են: Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումները և կարծիքները առանձին գործերի վերաբերյալ այն հիմնական աղբյուրն են, որի հիման վրա մշակվում են նրա Ընդհանուր մեկնաբանությունները դաշնագրի առանձին դրույթների վերաբերյալ: Այս գիրքն արժանի է դրվատանքի, քանզի միավորում է պայմանագրային մարմինների դատաիրավական պրակտիկայի բոլոր երեք տարրերը՝ յուրաքանչյուր իրավունքի քննարկման գծով:

Հավասարապես դրվատանքի է արժանի նաև այն փաստը, որ որոշ իրավունքների և ազատությունների վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանություններում և անհատական հաղորդումներում տարբեր պայմանագրային մարմինների կողմից արտահայտված կարծիքները մեկտեղված են՝ դրանով իսկ ընձեռնելով համեմատելու և մեկնաբանելու հնարավորություն: Դրա օրինակներից է Մարդու իրավունքների կոմիտեի և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի վերաբերմունքի տարբերությունը հավասարության սկզբունքով պետական գործերին մասնակցելու իրավունքին և տարբեր մոտեցումները համակարգային խտրականության հարցում: ՄԱԿ-ի համակարգի խնդիրնե-

¹ ԿՆԽՎԿ-ի կամընտիր արձանագրությունը Գլխավոր ասամբլեան ընդունել է 1999 թ. հոկտեմբերին:

րից մեկն այն է, որ այն ներառում է ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ փաստաթղթեր, ինչի արդյունքում բազմաթիվ դրույթներ հաճախ մասնակիորեն հատվում են: Այսպիսով, համադրելով նույն իրավունքներին առնչվող տարբեր փաստաթղթերի դրույթները՝ հեղինակները զգալի ներդրում են կատարել համընկնող իրավասությունների ոլորտներում համակարգի ներդաշնակությունը պահպանելու գործում:

Պայմանագրային մարմինները ջանում են հետևողականություն պահպանել ինչպես փաստաթղթերի և դրանցում ներառված նորմերի մեկնաբանություններում, այնպես էլ մասնակից պետությունների կողմից այդ նորմերի կիրառման հարցում՝ անկախ տարածաշրջանից և երկրի զարգացման աստիճանից: Օրինակ՝ Մարդու իրավունքների կոմիտեն կարծում է, որ դաշնագրի իրավունքներն ու ազատությունները համընդհանուր նվազագույն չափորոշիչներ են, որոնք պետք է նույն իմաստն ունենան բոլորի համար: Պայմանագրային մարմինների՝ իրավունքների համընդհանուր կիրառման ապահովման դերն ընդլայնվում է նաև այն փաստով, որ նրանց անդամները գտնվում են տարբեր տարածաշրջաններում և ներկայացնում են տարբեր իրավական համակարգեր: Թեև ո՛չ տարածաշրջանային, ո՛չ էլ սեռական հավասարակշռությունը օպտիմալ չէ, այնուամենայնիվ, պայմանագրային մարմինների անդամների փորձառության, անցած ուղու, լեզուների և մշակույթների բազմազանության շնորհիվ նրանց մեկնաբանությունները հիմնված չեն օրենքների կամ արժեքների սոսկ մեկ համակարգի վրա:

ՄԱԿ-ի փաստաթղթերը պարտավորեցնում են պետություններին ձեռնարկել իրավունքների իրականացմանն ուղղված հատուկ օրինական և այլ միջոցներ, իսկ այստեղ քննարկված իրավունքների խախտման դեպքում նաև պահանջվում են իրավական պաշտպանության միջոցներ²: Յուրաքանչյուր փաստաթղթի առանցքային սկզբունքներից մեկն այն է, որ իրավունքների առաջնային պաշտպանությունը պետք է ապահովվի ազգային օրենքներով, քաղաքականություններով և ընթացակարգերով, ոչ թե միջազգային մարմինն դիմելու միջոցով: Ցավոք, ազգային օրենսդրության դրույթներն ու կիրառումը հաճախ չեն համապատասխանում միջազգային նորմերին, զգալի տարբերություններ կան այդ նորմերի կիրառման եղանակների միջև, և չափից ավելի շատ անհատներ են մնում առանց պաշտպանության կամ պահանջի իրավունքի: Շատ քիչ պետություններ են խուսափել պայմանագրային մարմինների քննադատությունից, և գրեթե բոլորին ներկայացվել են հանձնարարականներ ազգային օրենքներն ու դրանց կիրառումը համաձայնագրով ստանձնած պարտավորություններին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Իրենց համաձայնագրային պարտավորությունները լիովին հարգելու համար մասնակից պետությունները պետք է ոչ միայն դիտարկեն առանձին փաստաթղթի մասնավոր դրույթները, այլև հաշվի առնեն և իրենց օրենքներում ու գործելակերպում արտացոլեն նաև պայմանագրային մարմինների կարծիքներն ու դիտողությունները: Այնուհանդերձ, պետությունները միշտ չէ, որ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում կամընտիր արձանագրության շրջանակներում կոմիտեի Եզրափակիչ մեկնաբանությունների կամ կարծիքների իրագործմանն ուղղությամբ: Փաստաթղթերն ինքնին իրավաբանորեն պարտադիր են մասնակից պետությունների համար, սակայն պայմանագրային մարմինների որոշումներն ու հանձնարարականներն ուղղակիորեն պարտադիր չեն: Չնայած պայմանագրային մարմինները պնդում են, որ ըստ համաձայնագրերի՝ պետությունները պետք է հարգեն իրենց հաշվետու լինելու պարտավորությունները, իսկ բարեխիղճ կատարման սկզբունքը պահանջում է հստակորեն արձագանքել կոմիտեի կարծիքներին և հանձնարարականներին, չկա որևէ իշխանություն, որը կարողանար հարկադրել այդ պարտավորությունների կատարումը: ՄԱԿ-ի համաձայնագրերի կենսագործման վերահսկողության համակարգի այս թերությունները բարդացնում են պայմանագրային մարմինների գործը, իսկ երբեմն հիասթափեցնող արդյունքների հանգեցնում: Բացի այդ, վերջիններս ստիպված են աշխատել նվազագույն ռեսուրսներով և առանց այն աջակցության, որն անհրաժեշտ է իրենց գործառույթն առավելագույն արդյունավետությամբ կատարելու համար: Այս խնդիրներն արձանագրվել են ՄԱԿ-ի բազմաթիվ զեկույցներում:

Համակարգի բացերը, որոնք վերոնշյալ թերությունների հետևանք են, նաև որոշ չափով մասնակից պետությունների պատասխանատվությունն են. օրինակ՝ վերջիններս երբեք չեն կիրառել դաշնագրի 41-րդ հոդվածով նախատեսված միջպետական բողոքների ներկայացման մեխանիզմը: Անհրաժեշտ է պայմանագրային մարմինների աշխատանքին նեցուկ լինել նաև ներպետական մակարդակի միջոցառումներով: Եթե ազգային դատարանները, գործող իրավաբանները և մարդու իրավունքների պաշտպանները լիովին իրազեկ լինեին իրենց պետությունների ստանձնած պարտավորությունների և այն

² ՌԽՎՄԿ-ի հոդվ. 6, ԿՆԽՎԿ-ի հոդվ. 2, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի դեպքում այդպես չէ:

մասին, թե ինչպես են այդ պարտավորությունները մեկնաբանվում և կիրառվում անկախ վերահսկող մարմինների կողմից, ապա, հավանաբար, արդյունավետ իրագործում պահանջելու և ապահովելու ավելի մեծ հնարավորություն կունենային, որպեսզի օրենքների և քաղաքականությունների կիրառումը հնարավորինս համապատասխանի համաձայնագրային պարտավորություններին: Այսպես հնարավոր կլիներ ուժեղացնել մարդու իրավունքների համակարգի ազդեցությունը ազգային օրենքների և քաղաքականությունների զարգացման վրա:

Այն պետություններում, որտեղ միջազգային համաձայնագրերը վավերացումից հետո դառնում են ազգային օրենսդրության մաս, դատական որոշումներում հաճախակի հղումներ են կատարվում դաշնագրին և կոմիտեի դատաիրավական պրակտիկային: Սակայն բազմաթիվ երկրներում՝ իրավաբանների և ոչ կառավարական կազմակերպությունների շրջանում, քիչ տեղեկություններ կան պայմանագրերի կամ պայմանագրային մարմինների աշխատանքի մասին: Քիչ բան է արվում համապատասխան տեղեկությունները տարածելու համար: Որոշ պետություններում նույնիսկ այն գործակալությունները, որոնք անմիջականորեն պատասխանատու են համաձայնագրերի իրագործման համար, երբեմն լավ չեն տեղեկացվում: Դրա հետևանքով դատարանները և իրավաբանները կարող են զբաղվել քաղաքացիական և քաղաքական իրավունքներին առնչվող հարցերով՝ առանց իրազեկ լինելու, որ պայմանագրային մարմիններից մեկը մեկնաբանել կամ կիրառել է համապատասխան դրույթը: Անհատները կարող են անտեղյակ լինել, որ իրենց իրավունքները պաշտպանվում են փաստաթղթերով, կամ չգիտեն, թե ինչպես կարող են հարգել տալ այդ իրավունքները կամ իրավական պաշտպանության դիմել:

Չի կարելի անվերապահորեն ենթադրել, թե առավել մեծ իրազեկությունն անպայման կհանգեցնի իրականացման մակարդակի բարելավման: Սակայն տեղեկատվությունը կարող է կարևոր զենք լինել մարդու իրավունքների համար պայքարում: Իրավունքների իրականացման և պաշտպանության համար պատասխանատու պետությունների իշխանությունները պետք է անեն շատ ավելին պայմանագրային մարմինների աշխատանքի մասին տեղեկությունները տարածելու համար: Ազգային ոչ կառավարական կազմակերպությունները պետք է կարողանան ազատորեն օգտվել մարդու իրավունքների նորմերի մասին տեղեկություններից, որոնք պետությունները պարտավորվել են հարգել, և տեղյակ լինեն, թե ինչպես պետք է այդ նորմերը կիրառվեն, որպեսզի ազգային մակարդակում առավել արդյունավետ լինեն մարդու իրավունքների պաշտպանության գործում:

ՄԱԿ-ի նյութերը հրատարակվում են, և դրանցից շատերն առկա են նաև համացանցում: Սակայն դրանք առանձնապես հարմար չեն ընթերցանության համար և բովանդակության ցանկ կամ խաչաձև հղումներ չունեն: Ուստի չափազանց զգալի է այս կարգի աշխատությունների կարիքը, որոնց մեջ ներկայացվում է պայմանագրային մարմինների ողջ դատաիրավական պրակտիկան՝ դասակարգված ըստ թեմաների և ուղեկցված լուսաբանող մեկնաբանություններով: Այս գիրքն առանձնապես արժեքավոր է այն առումով, որ ընդգրկում է բազմաթիվ մեջբերումներ պայմանագրային մարմինների դիտողություններից, հանձնարարականներից և մեկնաբանություններից: Հուսանք, որ այն կհանգեցնի առավել մեծ հետաքրքրության մարդու իրավունքների նորմերի նկատմամբ և դրանց առավել լայն կիրառմանն ազգային դատաիրավական պրակտիկայում՝ պայմանագրային մարմինների մեկնաբանություններին համապատասխան:

Հեղինակները նշանակալի ներդրում են կատարել ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի հիմնադիրների իդեալների՝ մարդկային ընտանիքի բոլոր անդամների անկապտելի իրավունքների հանդերձանուր պահպանման հարցում: Գլոբալացումը, մի հասկացություն, որն այլ համատեքստերում հաճախ բացասական է ընկալվում, կարող է դրական ուժ դառնալ մարդու իրավունքների ասպարեզում:

ԷԼԻԶԱԲԵԹ ԷՎԱՐԹ

*Մարդու իրավունքների կոմիտեի անդամ
1999 թ., դեկտեմբեր*

Երկրորդ հրատարակության առաջաբան

Այս աշխատության երկրորդ հրատարակությունը մեծապես խրախուսելի է: Ես լավ հիշում եմ առաջին հրատարակության լույսընծայումը, երբ հետևում էի հարգարժան Էլիզաբեթ Էվաթին (նա գրել էր այդ հրատարակության նախաբանը)՝ որպես Մարդու իրավունքների կոմիտեի անդամի: Գրքի օրինակները հայտնվեցին կոմիտեի սրահում ինչպես սնկերն անձրևից հետո (շտապում եմ նշել, որ դրանք հրատարակչի կողմից տրամադրված անվճար օրինակներ չէին, այլ գնվել էին անդամների կողմից, իրենց անձնական միջոցներով, այնքան ակնհայտ էին գրքի արժեքն ու օգտակարությունը):

Մարդու իրավունքների համընդհանուր բնույթի շուրջ քննարկումները դեռ շարունակվում են: Մարդու իրավունքներին առնչվող դաշնագրերի և կոնվենցիաների շրջանակներում ստեղծված տարբեր վերահսկող մարմինների աշխատանքը քննադատական գնահատականների է արժանացել, և նույնիսկ որոշ հարձակումների է ենթարկվել: Խոսք է լինում նաև մարդու իրավունքների «արդյունաբերության» մասին, այսինքն՝ այնպիսի մարդկանց կամ խմբերի, որոնք առաջ են տանում իրենց նպատակները և տեսլականը կոպիտ, «հարձակողական» կամ անգիշտ կերպով: Առավել խոր վերլուծության կարիք է զգացվում: Մայքլ Իգնատիեֆն իր լուծման է ներդրել մարդու իրավունքների վերաբերյալ խորհրդածությունների գործում «Մարդու իրավունքները որպես կռապաշտություն» համարձակ վերնագրված իր էսսեով¹: Մարդու իրավունքների արդարացումը հիմնելով «շրջահայաց և պատմական» նկատառումների, այլ ոչ թե գաղափարախոսության կամ մշակույթի վրա, նա արտահայտվում է «միմիալիստական» մոտեցման օգտին, որն այնուհանդերձ պաշտպանում է այն, ինչն իրապես կարևոր է մարդկային էակների կյանքում: Հիմնվելով պատմության վրա՝ նա պնդում է, որ

«[Մ]արդ արարածների կյանքն սպառնալիքի տակ է, եթե նրանք զրկված են ազատ կամքի՝ դրսևորման տարրական միջոցներից. այդ կամքն ինքնին միջազգայնորեն ընդունված նորմերով պաշտպանության կարիք ունի: Այդ նորմերը պետք է լիազորեն անհատներին իրենց պետությունների ներսում հակառակվելու և դիմադրելու անարդար օրենքներին և կարգադրություններին և վերջապես, երբ բոլոր այլ միջոցները սպառվեն, այդ անհատները պետք է իրավունք ունենան դիմելու այլ ժողովուրդների, ազգերի և միջազգային կազմակերպությունների՝ իրենց իրավունքների պաշտպանության աջակցության համար... Տարբեր մշակույթներին պատկանող մարդիկ կարող են շարունակ տարածայնություններ ունենալ այն հարցի շուրջ, թե ինչն է լավ, բայց համաձայն լինել այն հարցի կապակցությամբ, թե ինչն է անտանելի, անտարակույս սխալ: Մարդու իրավունքներից բխող համընդհանուր պարտավորությունները կարող են համատեղելի լինել բազմաթիվ ապրելակերպերի հետ, եթե միայն ենթադրյալ համընդհանրությունը գիտակցաբար միմիալիստական է: Մարդու իրավունքները կարող են համընդհանուր հավանության արժանանալ միայն որպես աներկբայորեն «թույլ» տեսություն այն բանի մասին, թե ինչն է ճիշտ, այսինքն՝ որպես յուրաքանչյուր կյանքի նվազագույն պայմանների բնութագրում»²:

Մարդու իրավունքների համընդհանրության խնդիրը քննարկվում է սույն հրատարակության առաջին գլխում:

Գրքի առանցքը Մարդու իրավունքների կոմիտեի աշխատանքն է 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթների մեկնաբանության, կիրառման և տարածման ուղղությամբ: Հեղինակներն այնպիսի հմտությամբ են ներկայացրել կոմիտեի աշխատանքի արդյունքները, որ կոմիտեի գործառնությունների իրականացման վերաբերյալ միաժամանակ տրվում են և՛ տեղեկություն, և՛ քննադատական գնահատում: Այդ գործառնություններն են. ա) վերահսկել մասնակից պետությունների օրենքներում և գործելակերպում դաշնագրի կիրառումը, բ) քննության առնել անհատների բողոքները մասնակից պետության կողմից դաշնագրի դրույթների խախտումների վերաբերյալ, գ) մշակել ընդհանուր մեկնաբանություններ դաշնագրի առանձին դրույթների իմաստի և ազդեցության շրջանակների մասին: Կա պարտականությունների չորրորդ շրջանակ, այն է՝ քննության առնել դաշնագրի դրույթների խախտումների վերաբերյալ մի պետության մյուսի դեմ ներկայացրած բողոքները (հոդված 41), սակայն այս մեխանիզմը երբևէ չի կիրառվել:

¹ Michael Ignatieff, *Human Rights as Politics and Idolatry* (Princeton, NJ, Princeton University Press, 2001).

² Սույնը, 55-6:

Կոմիտեն բաղկացած է տասնութ անդամից, որոնք ընտրվում են չորս տարի ժամկետով՝ մասնակից պետությունների՝ երկու տարին մեկ անցկացվող ժողովում: Այդ անդամներն անկախ են իրենց կառավարություններից և չեն վարձատրվում: Կոմիտեի նիստերը գումարվում են տարեկան երեք անգամ, յուրաքանչյուր նստաշրջանը տևում է երեք շաբաթ: Յուրաքանչյուր նստաշրջանին նախորդում է աշխատանքային խմբի ժողովը՝ մեկ շաբաթ տևողությամբ, որին մասնակցությունը կամավոր է: Տրամադրված ժամանակը հազիվ թե կարելի է բավական համարել կոմիտեի գործառնությունների իրականացման համար: Առհասարակ դժվար թե կոմիտեն կարողանար գործել առանց ժնկում տեղակայված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի նվիրված և արդյունավետ աշխատակազմի աջակցությամբ:

Մի շարք փոփոխություններ են իրականացվել կոմիտեի աշխատանքային մեթոդներում, որպեսզի նրան հնարավորություն տրվի իրականացնելու իր հարաճուն պարտականությունները սահմանափակ ռեսուրսների պայմաններում: Այս փոփոխությունները բացահայտ են դաշնագրի մասնակից պետությունների (ներկայումս դրանց թիվը 149 է) 40-րդ հոդվածով պահանջվող պարբերական զեկույցների տնօրինման հարցում: Այժմ պետություններին խորհուրդ է տրվում ներկայացնել առավել հակիրճ և նպատակաուղղված զեկույցներ, դրա շնորհիվ նվազում են նաև ժամանակատար և ծախսատար թարգմանության հետ կապված բարդությունները: Կոմիտեն տրոհվում է առանձին երկրների առնչությամբ ստեղծված «հատուկ աշխատանքային խմբերի», որոնցում տվյալ երկրում մարդու իրավունքներին առնչվող իրավիճակի քննությունը կատարվում է ավելի քիչ թվով մարդկանց խմբի կողմից: Այնուհանդերձ, բոլոր անդամները մասնակցում են բանավոր լուծմանին: Այդ ընթացակարգը նկարագրվում է այս գրքի ներածական գլխում: Կարևոր է նշել, որ կոմիտեն ստանում և ընթերցում է զեկույցներ նաև հասարակական կազմակերպություններից՝ հաշվետու երկրում մարդու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով: Դրանք կարող են լինել միջազգային կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ «Amnesty» և «Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպությունները, կամ ազգային խմբեր, որոնք գործում են տվյալ երկրում: Ակնհայտ է, որ այդ զեկույցներում նշված ամեն ինչ չէ, որ ընդունվում է որպես անքննելի ճշմարտություն, սակայն զեկույցները բազում աղբյուրներից ստացված տեղեկությունները համեմատելու տեսանկյունից անգնահատելի նյութեր են տրամադրում:

Կոմիտեին ներկայացված անհատական դիմումների (բողոքների) թիվը, որոնցում մարդիկ բողոքում են դաշնագրի՝ իրենց վերաբերող խախտումներից, անընդհատ մեծանում է, քանզի կամընտիր արձանագրությանը միացած մասնակից պետությունների թիվն ավելանում է (2003 թ. դրությամբ՝ 140 պետություն), իսկ ընթացակարգերի գոյությունն առավել լայն ճանաչում է ստանում: Արձանագրված նոր դիմումների թիվը 1997 թ. 60 բողոքից 2002-ին հասել է մինչև 107-ի: 2002 թ. դեկտեմբերին առկա գործերի թիվը կազմում էր 278: Կարող է հարց առաջանալ, թե ինչպես է կոմիտեն կարողանում արդարադատություն իրականացնել այդքան շատ գործերում, երբ կողմերը ներկա լինելու իրավունք չունեն, և ապացույցները չեն ստուգվում դատական կարգով: Այնուամենայնիվ, բողոքատուի և պատասխանող պետության միջև խնդիրները համարյա բոլոր գործերում բավականաչափ հստակեցվում են գրավոր բողոքի և պատասխանի գործընթացի միջոցով, որն իրականացնում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի բողոքների ընդունման ստորաբաժանումը նախքան լիակազմ կոմիտեի կողմից գործի պաշտոնական քննարկումը: Բացի այդ, կոմիտեին կարելի է դիմում ներկայացնել միայն այն բանից հետո, երբ իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները սպառվել են: Կոմիտեն փաստերը համարում է բավականաչափ հիմնավորված, եթե առարկող կողմը դրանք չի վիճարկում կամ համոզիչ պատասխան չի տալիս: Այնուհետև կոմիտեն իր կարծիքներն է հրապարակում բողոքի վերաբերյալ: Դրանք դատարանի վճիռների նման պարտադիր ուժ չունեն: Այնուհանդերձ, չեն կարող համարվել պարզապես խորհրդատվական բնույթի որոշումներ, որոնք դաշնագրային պարտավորությունները խախտած պատասխանող մասնակից պետությունը կարող է վճարկանորեն մերժել կամ վիճարկել: Կոմիտեի կարծիքները դաշնագրով սահմանված մարմնի՝ որպես այդ փաստաթղթի հիմնական մեկնաբանի հեղինակավոր սահմանում են: Հետևաբար մասնակից պետությունները պարտավոր են հարգել այդ կարծիքները՝ բարեխղճության սկզբունքից ելնելով:

Կոմիտեի՝ վերջերս ներկայացված Ընդհանուր մեկնաբանություններից մեկն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում մարդու իրավունքների և ահաբեկչության դեմ պայքարի համատեղելիության առնչությամբ: Արտակարգ դրության ժամանակ շեղումների վերաբերյալ թիվ 29 Ընդհանուր մեկնաբանությունում, որն ընդունվել է 2001 թ. հուլիսի 24-ին, կոմիտեն մեկնաբանել է դաշնագրի 4-րդ հոդվածը, որը հնարավորություն է տալիս մասնակից պետություններին արտակարգ դրության ժամա-

նակ միջոցներ ձեռնարկելու՝ ի շեղումն դաշնագրով ստանձնած իրենց որոշ պարտավորությունների: Կոմիտեն բացատրել է, որ

ցանկացած շեղում իրավիճակի պահանջով սահմանափակելու պահանջն արտացոլում է համաչափության սկզբունքը, որն ընդհանուր է շեղումների և սահմանափակումների համար: Բացի այդ, այն փաստը, որ առանձին դրույթից թույլատրելի շեղումը կարող է ինքնին արդարացված լինել իրավիճակի պահանջներով, չի ազատում այն պահանջից, որ շեղումից բխող միջոցները նույնպես պետք է հստակորեն պահանջվեն իրավիճակի բերումով: Գործնականում սա կապահովի, որ դաշնագրի ոչ մի դրույթ, որքանով էլ դրանից շեղումը հիմնավոր լինի, ամբողջությամբ անկիրառելի չդառնա մասնակից պետության համար... Բոլոր շեղումները միայն իրավիճակի սրությամբ պահանջվող չափով սահմանափակելու օրինական պարտականությունը պարտավորեցնում է ինչպես մասնակից պետություններին, այնպես էլ կոմիտեին դաշնագրի յուրաքանչյուր հոդվածի մանրագնին վերլուծություն կատարել՝ հիմնվելով առկա իրավիճակի օբյեկտիվ գնահատման վրա:

Ահաբեկչության այս դարում որոշ իրավունքների սահմանափակումների կապակցությամբ սարսափահար հապշտապ արձագանքները չեն նպաստում մարդու իրավունքների ընդհանուր գործին: Մյուս կողմից՝ պետությունների կողմից չափազանց խիստ միջոցների ձեռնարկումը լավագույն պատասխանը չէ ահաբեկչության վտանգը կասեցնելու համար: Անհրաժեշտ է վտանգների և դրանց դեմ պայքարի անհրաժեշտ քայլերի ողջամիտ վերլուծություն կատարել: Այն իրավիճակում, որը ստեղծվել է 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո, և որում պետություններն իրենց խոցելի են զգում ահաբեկչական հարձակումների դեմ հանդիման, կոմիտեի կողմից արված այս հեռատեսական մեկնաբանությունները ողջամիտ ուղենիշ են ծառայում՝ ահաբեկչության սպառնալիքի դեմ անհրաժեշտ միջոցները և մարդու իրավունքների նկատմամբ պատշաճ հարգանքը ներդաշնակեցնելու համար: Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանությունը քննարկվում է 25-րդ գլխում:

Ես շնորհավորում եմ հեղինակներին և այս նոր հրատարակության հրատարակիչներին սույն աշխատության համար, որը դարձել է անհրաժեշտ ուղեկից և ուղեցույց Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մեկնաբանության և կիրառման համար:

ԻՎԱՆ ՇԻՐԵՐ

Սիդնեյի համալսարանի

Չալիխի անվան միջազգային իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի անդամ

2003 թ., սեպտեմբեր

Երկրորդ հրատարակության առաջաբան

Այս երկրորդ հրատարակությունը լույս է տեսնում առաջին հրատարակության տպագրությունից չորս տարի անց: Աշխատությունը թարմացվել է, ներառվել է Մարդու իրավունքների կոմիտեի դատաիրավական պրակտիկան՝ 2003 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ: Սառա Ջոզեֆն այս գրքի տվյալների համալրման հիմնական պատասխանատուն է: Մարդու իրավունքների կոմիտեի քննարկած գործերի վերաբերյալ համալրումները կարելի է գտնել *Human Rights Law Review* պարբերականի յուրաքանչյուր համարում:

Երկրորդ հրատարակությունն առաջինից հիմնականում տարբերվում է համալրված նյութերով, որոնք գրքի ավելի քան մեկ քառորդ մասն են կազմում: Ներածական առաջին գլուխը նորովի է գրվել, և որոշ նոր բաժիններ են ընդգրկվել, ինչպես օրինակ՝ 25-րդ գլխի իրավահաջորդության վերաբերյալ բաժինը:

Չեղինակները ևս մեկ անգամ ցանկանում են շնորհակալություն հայտնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին ՄԱԿ-ի հսկայածավալ նյութերի տպագրության թույլտվության համար, մասնավորապես՝ կամընտիր արձանագրության շրջանակներում հայցերի ուսումնասիրման աշխատախմբին՝ տեղեկատվության օպերատիվ տրամադրման համար: Հատկապես շնորհակալություն ենք հայտնում Մարիկա Մակադամին նրա գերազանց հետազոտությունների և աշխատանքի համար՝ հավելվածների, տողատակի ծանոթագրությունների և խաչաձև հղումների մասով: Շնորհակալություն նաև պրոֆեսոր Իվան Շիրերին՝ Մարդու իրավունքների կոմիտեի ներկայիս ավստրալիացի անդամին, նրա աջակցության և մտածելու առիթ տվող մեկնաբանությունների համար: Բնականաբար, երախտապարտ ենք նաև Օքսֆորդի համալսարանի հրատարակչության իրավաբանական բաժնի աշխատակազմին, այդ թվում՝ պրոֆ. Ջոն Լուքին, տկն. Գվեն Բուքին և տկն. Ժերալդին Մանգլիին երկրորդ հրատարակությունը տպագրելու համաձայնության և այս գիրքը պատրաստելու ընթացքում ցուցաբերած աջակցության համար:

Բոլորս պետք է շնորհակալություն հայտնենք Մոնաշ համալսարանի իրավաբանական ֆակուլտետին, ներառյալ՝ նրա գրադարանի և համակարգչային անձնակազմին այս գիրքն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ ժամանակ, ռեսուրսներ և տեխնիկական միջոցներ հատկացնելու համար: Արդարև, ֆակուլտետի շրջանակներում գործող Կաստանի անվան մարդու իրավունքների կենտրոնին մշտապես ցույց տրվող աջակցությունն արտացոլում է ֆակուլտետի անշեղ նվիրումը մարդու իրավունքների խնդիրներին:

Պետք է շնորհակալություն հայտնենք բոլոր այն մարդկանց, ովքեր կապվել են մեզ հետ վերջին մի քանի տարվա ընթացքում, հավանություն հայտնել գրքի կապակցությամբ և առաջարկներ արել երկրորդ հրատարակության համար: Վերջապես, ցանկանում ենք շնորհակալություն հայտնել մեր ընտանիքներին և ընկերներին:

Մոնաշի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ
Քասթանի անվան մարդու իրավունքների կենտրոն
Մելբուռն
2003 թ., հոկտեմբեր

ՍԱՌԱ ՋՈԶԵՖ
ՋԵՆԻ ՇՈՒԼՑ
ՄԵԼԻՍԱ ՔԱՍԹԱՆ

Բովանդակություն

Գործերի ցանկ	xix
Համաձայնագրերի ցանկ	xliii
Մարդու իրավունքներին առնչվող տարբեր միջազգային կոմիտեների մեկնաբանությունների, հանձնարարականների և այլ փաստաթղթերի ցանկ	li
Հապավումների ցանկ	liii
Ծանոթագրություն ոճի և մեջբերումների վերաբերյալ	lv

Մաս I. Ներածություն

1. Ներածություն	3
-----------------	---

Մաս II. Ընդունելիությունը ըստ ՔՔԻՄԴ-ի

2. «Ռացիոնե տեմպորիս» կանոնը	51
3. «Տուժող լինելու» պահանջը	59
4. Տարածքային և իրավագործության սահմանափակումներ	75
5. Դիտարկում այլ միջազգային ընթացակարգով	88
6. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը	95

Մաս III. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

7. Ինքնորոշման իրավունք. հոդված 1	129
8. Կյանքի իրավունք. հոդված 6	140
9. Խոշտանգումից զերծ մնալու և մարդկային վերաբերմունքի արժանանալու իրավունքներ. հոդվածներ 7 և 10	174
10. Տարբեր իրավունքներ. հոդվածներ 8, 11 և 16	267
11. Կամայական կալանավորումից զերծ լինելու ազատություն. հոդված 9	275
12. Տեղաշարժվելու իրավունք. հոդված 12	317
13. Դատաիրավական իրավունքներ արտաքսման դեմ. հոդված 13	342
14. Արդար դատավարության իրավունք. հոդված 14	352
15. Հետադարձ ուժ ունեցող քրեական օրենքների արգելում. հոդված 15	422
16. Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք. հոդված 17	435
17. Մտքի, խղճի և կրոնի ազատություն. հոդված 18	458
18. Ազատ արտահայտվելու իրավունք. հոդվածներ 19 և 20	473
19. Հավաքների և միավորումներ կազմելու ազատություններ. հոդվածներ 21 և 22	516
20. Ընտանիքի պաշտպանություն. հոդված 23	530
21. Երեխաների պաշտպանություն. հոդված 24	563
22. Քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքներ. հոդված 25	587
23. Անխտրականության իրավունքներ. հոդվածներ 2(1), 3 և 26	613
24. Փոքրամասնությունների իրավունքներ. հոդված 27	678

Մաս IV. ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտականությունների փոփոխում

25. Վերապահումներ, չեղյալ հայտարարումներ, իրավահաջորդություն և մասնակի չեղյալ հայտարարումներ	717
--	-----

Հավելվածներ

Ա. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր	753
Բ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն	769
Գ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրություն՝ ի վերացումն մահապատժի	773
Դ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին մասնակից պետությունները	777
Ե. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրությանը մասնակից պետությունները	781
Զ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրությանը մասնակից պետությունները	785
Է. Պետություններ, որոնք արել են դաշնագրի 41-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունը	787
Ը. Մարդու իրավունքների կոմիտեի անդամները (նախկին և ներկա)	789
Թ. Կամընտիր արձանագրության գործեր	791
Ժ. Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություններ	815
Առարկայական ցանկ	817

Գործերի ցանկ

Բերված բոլոր հղումները վերաբերում են պարբերությունների համարներին, բացի շեղագրով տրված մեջբերումներից, որոնք վերաբերում են գրքի վերջում զետեղված հավելվածի էջերի համարներին: Թավատառով հղումները վերաբերում են տվյալ պարբերությունում ամբողջությամբ կամ մասամբ ներկայացված գործերին:

Սույն ցանկի բոլոր էջերը՝ բացառությամբ վերջին էջերի, պարունակում են հղումներ Մարդու իրավունքների կոմիտեին:

Մարդու իրավունքների կոմիտե

- «Աարելան և Նակալայարվին ընդդեմ Ֆինլանդիայի»
(*Äärelä and Näkkäläjärvi v Finland*, 779/97) **[14.20]**, **[14.21]**, [14.22], **[14.49]**,
[24.34], [24.35], [24.53]
- «Ադամն ընդդեմ Չեխիայի Հանրապետության»
(*Adam v Czech Republic*, 586/94) [23.13], [23.18], [23.24],
[23.44], **[23.45]**
- «Ա.Դ.-ն ընդդեմ Կանադայի» (*A.D. v Canada*, 78/80) [3.21]
- «Ադուայոմը և այլք ընդդեմ Տոգոյի»
(*Aduayom et al v Togo*, 422–424/90) 12/7/96 **[2.04]**, **[2.17]**, [11.67], **[11.68]**,
[11.69], [18.04], [22.49], [22.51]
- «Ա. Ի. Է.-ն ընդդեմ Լիբիայի Արաբական Ջամահիրիայի»
(*A.I.E. v Libya Arab Jamahiriya*, 457/91) [2.03]
- Ալբերտայի միությունների գործ, տես «Ջ. Բ.-ն և այլք ընդդեմ Կանադայի»
(*J.B. et al v Canada*, 118/82) 18/7/86
- «Կինտերոս Ալմեյդան ընդդեմ Ուրուգվայի» (*Quinteros Almeida v Uruguay*, 107/81) 21/7/83 [9.24],
[9.45], [9.46]
- «Ալտհամերն ընդդեմ Ավստրիայի» (*Althammer v Austria*, 998/01) [5.12], [5.15],
[23.32A], [23.33]
- «Վան Ալփենն ընդդեմ Նիդեռլանդների»
(*Van Alphen v Netherlands*, 305/88), 23/7/90 [6.08], **[11.13]**
- «Ակլան ընդդեմ Տոգոյի» (*Ackla v Togo*, 505/92) 25/3/96 **[12.04]**
- «Բերտերեչե Ակոստան ընդդեմ Ուրուգվայի»
(*Berterretche Acosta v Uruguay*, 62/83) [9.34]
- «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» (*A v Australia*, 560/93) 3/4/97 [1.51], [1.59], [3.04], [6.20], [11.08], [11.10],
[11.16], [11.17], [11.17A], [11.20], **[11.55]**,
[11.56], **[11.59]**, [11.61], **[11.62]**, [11.64],
[11.65A], [11.67], [12.12]
- «Ա.-ն ընդդեմ Նոր Զելանդիայի» (*A v New Zealand*, 754/97) 15/7/99 [11.08], **[11.21]**, [11.22],
[11.50], [11.52]
- «Ա.-ն ընդդեմ Ս-ի» (*A v S*, 1/76) [5.04]
- «Ա.Պ.Ա.-ն ընդդեմ Իսպանիայի» (*A.P.A. v Spain*, 433/90) 25/3/94 **[6.09]**
- «Ա. Պ.-ն ընդդեմ Իտալիայի» (*A.P. v Italy*, 204/86) 2/11/87 **[14.149]**
- «Ա. Փ.Լ. Վ. դ. Ս-ն ընդդեմ Նիդեռլանդների»
(*A.P.L. v.d.M. v Netherlands*, 478/91) 26/7/93 [23.24], [23.38]
- «Ա. Ջ. Վ. Գ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (*AJ.v.G. v Netherlands*, 1142/02) [9.88], [15.03]
- «Առեդոնդոն ընդդեմ Պերուի» (*Arredondo v Peru*, 688/96) [14.65]
- «Ա. Ռ. Ջ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (*A.R.J. v Australia*, 692/96) 28/7/97 [9.80], [14.149]
- «Ա.Ռ.Ս.-ն ընդդեմ Կանադայի» (*A A.R.S. v Canada*, 91/81) 28/10/81 **[3.30]**, [15.05]
[15.06], [15.07]

- «Ա. Ռ. Ու-ն ընդդեմ Նիդեռլանդների» (A.R.U. v Netherlands, 509/92) [8.53]
- «Ա. Ս.-ն ընդդեմ Կանադայի» (A.S. v Canada, 68/80) 31/3/81..... **[20.09]**
- «Ա. Ս.-ն և Լ. Ս.-ն ընդդեմ Ավստրալիայի» I (A.S. and L.S. v Australia, 490/92) [2.03]
- «Ավելանալ ընդդեմ Պերուի» (Avellanal v Peru, 202/86) 28/10/88..... **[10.12]**, [14.15], [14.17]
- «Ատքինսոն ընդդեմ Կանադայի» (Atkinson v Canada, 573/94)..... [2.10]
- «Կավալկանտի Արաուխո-Յոնգեն ընդդեմ Նիդեռլանդների»
(Cavalcanti Araujo-Jongen v Netherlands, 418/90) 22/10/93..... [23.13], [23.24], **[23.37]**
[23.38], [23.59]
- «Բաուտիստա դե Արելանան ընդդեմ Կոլումբիայի»
(Bautista de Arellana v Colombia, 563/93) 27/10/95 **[8.16]**, [8.17], [8.18]
- «Սանխուան Արևալոն ընդդեմ Կոլումբիայի»
(Sanjunn Arzvalo v Colombia, 181/84) 3/11/89 **[8.12]**, [8.13], [11.03]
- «Արզուագո Գիլբոան ընդդեմ Ուրուգվայի»
(Arzuago Gilboa v Uruguay, 147/83) 1/11/85 [6.15], [9.34], [9.151]
- «Աունեներուդի-Ցիֆրան և այլք ընդդեմ Մավրիկիոսի»
«Մավրիկիոսի կանանց» գործը (Aumeeruddy-Cziffra et al v Mauritius, 35/78)
9/4/81 '*Mauritian Women's Case*' **[1.98]**, [1.101], **[3.01]**, **[3.31]**, **[3.36]**,
[16.21], [16.22], **[20.05]**, **[20.14]**,
[20.15], [20.36], **[23.43]**
- «Բաբանն ընդդեմ Ավստրալիայի» (Baban v Australia, 1014/01) **[11.17A]**, [11.62], **[11.65A]**,
[18.06], [18.31A], [18.32]
- «Բաբոերամը և այլք ընդդեմ Սուրինամի»
(Baboeram et al v Suriname 146,148-154/83) 4/4/85 **[5.03]**, **[8.10]**
- «Բալագեր Սանտականան ընդդեմ Իսպանիայի»
(Balaguer Santacana v Spain, 417/90) 15/7/94 [20.08], **[20.10]**, **[20.51]**
- «Բալանթայնը, Դևիդսոնը և Մակինթայրն ընդդեմ Կանադայի»
«Քվեբեկի լեզուների» գործ (Ballantyne, Davidson, and McIntyre v Canada, 359, 385/89)
31/3/93, '*Quebec Languages Case*' [1.28], [3.13], **[3.37]**, **[18.05]**, **[18.42]**,
[18.43], [18.45], **[23.39]**, [23.56], **[23.74]**,
[23.75], **[24.07]**, **[24.08]**, [24.09], **[24.50]**
- «Օլգ Բահամոնդեն ընդդեմ Զասարակածային Գվինեայի»
(Olg Bahamonde v Equatorial Guinea, 468/91) 20/10/93 [11.04], [12.15], **[14.14]**,
[14.17], **[14.29]**
- Բառելլն ընդդեմ ճամայկայի (Burrell v Jamaica 546/93) 18/7/96 **[8.07]**, [8.24], [8.39]
- «Դերմիտ Բարբատոն ընդդեմ Ուրուգվայի»
(Dermit Barbato v Uruguay, 84/81) 27/10/82 **[6.15]**, [8.07], **[8.40]**
- «Բարետը և Սատկլիֆն ընդդեմ ճամայկայի»
(Barrett and Sutcliffe v Jamaica, 270-271/88) 30/3/92 **[9.54]**
- «Բարզիգն ընդդեմ Ֆրանսիայի» (Barzhig v France, 327/88) [6.20], [14.127]
- «Վալենտինի դե Բազանոն ընդդեմ Ուրուգվայի»
(Valentini de Bazzano v Uruguay, 5/77) [9.151], [11.15]
- «Բաունգարտենն ընդդեմ Գերմանիայի» (Baumgarten v Germany, 960/00)..... [15.04], **[15.12]**, [15.13]
- «Բաուտիստա դե Արելանան ընդդեմ Կոլումբիայի»
(Bautista de Arellana v Colombia, 563/93) 27/10/95..... **[8.16]**, [8.17], [8.18]
- «Բաքլն ընդդեմ Նոր Զելանդիայի» (Buckle v New Zealand, 858/99) **[20.27]**, [21.34]
- «Բ.դ.Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների»
(B.d.B. v Netherlands, 273/88) 30/3/89 [1.82], **[6.08]**, **[14.38]**,
[22.49A], **[23.107]**
- «Բեյլին ընդդեմ ճամայկայի» (Bailey v Jamaica, 334/88) 31/3/93 [9.35], [9.145]
- «Բեյլին ընդդեմ ճամայկայի» (Bailey v Jamaica, 709/96) 21/7/99 **[9.43]**, **[14.106]**, [14.116]
- «Բենետն ընդդեմ ճամայկայի» (Bennett v Jamaica, 590/94) [9.141]
- «Բերրին ընդդեմ ճամայկայի» (Berry v Jamaica, 330/88) 7/4/94 **[11.53]**, [14.93],
[14.118], [14.134]
- «Բերտերեչե Ակոստան ընդդեմ Ուրուգվայի» (Berterretche Acosta v Uruguay, 162/83) [9.34]

«Կաբալը և Պասինի Բերտրանն ընդդեմ Ավստրալիայի» (Cabal and Pasini Bertran v Australia, 1020/02)	[1.82], [8.41A], [9.32] , [9.137A], [9.150A]
«Բիկարուն ընդդեմ ճամայկայի» (Bickaroo v Jamaica, 555/93) 29/10/97	[9.59]
«Բիրնը և Լազարեսկուն ընդդեմ Կանադայի» (Byrne and Lazarescu v Canada, 742/97) 25/3/99	[21.30]
«Բլաշեկը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Blazek et al v Czech Republic, 857/99)	[23.44]
«Բլանկոն ընդդեմ Նիկարագուայի» (Blanco v Nicaragua, 328/88)	[6.34] , [9.145], [11.15]
«Բլեյերն ընդդեմ Ուրուգվայի» (Bleier v Uruguay, 30/78) 29/3/82	[9.42]
«Բլեյնն ընդդեմ ճամայկայի» (Blaine v Jamaica, 696/96)	[9.141]
«Բլոմն ընդդեմ Շվեդիայի» (Blom v Sweden, 191/85) 4/4/88	[5.07], [23.13], [23.24], [23.63], [23.64]
«Սինգհ Բինդերն ընդդեմ Կանադայի» (Singh Bhinder v Canada, 208/86) 9/11/89	[12.25], [17.17] , [23.36]
«Բոզիզեն ընդդեմ Կենտրոնաաֆրիկյան Հանրապետության» (Bozize v Central African Republic, 428/90)	[9.145]
«Բոլանյոսն ընդդեմ Էկվադորի» (Bolaños v Ecuador, 238/87)	[11.15], [11.66]
«Ֆալս Բորդան և այլք ընդդեմ Կոլումբիայի» (Fals Borda et al v Colombia, 46/79) 27/7/82	[14.35] , [14.36]
«Բորդեսը և Տեմեհարոն ընդդեմ Ֆրանսիայի» (Bordes and Temeharo v France, 645/95) 22/7/96	[3.35] , [7.23], [8.52], [8.54]
«Բորիսենկոն ընդդեմ Հունգարիայի» (Borisenko v Hungary, 852/99)	[11.31], [14.107]
«Բվալյան ընդդեմ Ջամբիայի» (Bwalya v Zambia, 314/88) 14/7/93	[11.04], [22.31] , [23.13]
«Բրաունը և Փարիշը ընդդեմ ճամայկայի» (Brown and Parish v Jamaica, 665/95)	[8.24]
«Բրաունն ընդդեմ ճամայկայի» (Brown v Jamaica, 775/97) 23/3/99	[8.27] , [8.29], [9.93] , [9.144], [14.92], [14.93] , [14.116]
«Բրինխոֆն ընդդեմ Նիդեռլանդների» (Brinkhof v Netherlands, 402/90) 27/7/93	[8.53]
«Բրինն ընդդեմ Նորվեգիայի» (Bryhn v Norway, 789/97) 29/10/99	[14.142]
«Բրոկը և Բրոկովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Brok and Brokova v Czech Republic, 774/97)	[23.48] , [23.49]
«Բրուկսն ընդդեմ Նիդեռլանդների» (Broeks v Netherlands, 172/84) 9/4/87	[1.60], [1.62], [19.24], [23.10] , [23.13], [23.14], [23.16], [23.17], [23.33], [23.37], [23.58], [23.59], [23.67]
«Բուդուն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Boodoo v Trinidad and Tobago, 721/96)	[9.142], [17.12] , [25.40]
«Բուսյոն և այլք ընդդեմ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության» (Busyo et al v Democratic Republic of the Congo, 933/00)	[14.30], [22.53]
«Լոպես Բուրգոսն ընդդեմ Ուրուգվայի» (López Burgos v Uruguay, 52/79) 29/7/81	[4.13] , [9.34], [11.15], [14.102]
«Գալլիմորն ընդդեմ ճամայկայի» (Gallimore v Jamaica, 680/96)	[6.26], [9.141], [14.106]
«Կանյոն Գարսիան ընդդեմ Էկվադորի» (Cañon García v Ecuador, 319/88) 5/11/91	[9.39]
«Ռոխաս Գարսիան ընդդեմ Կոլումբիայի» (Rojas García v Colombia, 687/96)	[9.24] , [16.28]
«Գարսիա Պոնսն ընդդեմ Իսպանիայի» (Garcia Pons v Spain, 454/91) 30/10/95	[14.07], [23.13], [23.61]
«Գ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (G.B. v France, 348/89) 1/11/91	[18.10], [25.11]
«Տորո Գեդումբեն ընդդեմ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության» (Toro Gedumbe v Democratic Republic of the Congo, 641/95)	[22.53]
«Սուարես դե Գուերրերոն ընդդեմ Կոլումբիայի» (Suárez de Guerrero v Colombia, 45/79) 31/3/82	[8.03] , [8.04], [8.07], [8.15]
«Գեսդոնն ընդդեմ Ֆրանսիայի» գործից	

(Guesdon v France, 219/86) 25/7/90	[14.127] , [18.09], [18.45], [24.46]
«Գերարդուս Ստրիկն ընդդեմ Նիդեռլանդների»	
(Gerardus Strik v Netherlands, 1001/01)	[14.01]
«Գ. Թ.-ն ընդդեմ Կանադայի» (G.T. v Canada, 420/90)	[6.27]
«Արզուազո Գիլբոան ընդդեմ Ուրուգվայի»	
(Arzuago Gilboa v Uruguay, 147/83) 1/11/85	[6.15], [9.34], [9.151]
«Գիրին ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության»	
(Giry v Dominican Republic, 193/85) 20/7/90	[11.15], [13.05], [13.20]
«Գլազիուսն ընդդեմ Ֆրանսիայի» (Glaziu v France, 452/91) 18/7/94	[5.16]
«Գոբինն ընդդեմ Մավրիկիոսի» (Gobin v Mauritius, 787/97)	[1.49]
«Գոմես Կասաֆրանկան ընդդեմ Պերուի»	
(Gómez Casafranca v Peru, 981/01)	[11.15], [14.65], [15.05], [15.06]
«Գոմես Վասկեսն ընդդեմ Իսպանիայի»	
(Gómez Vazquez v Spain, 701/96)	[3.06], [3.22], [14.134]
«Մարին Գոմեսն ընդդեմ Իսպանիայի» (Marín Gómez v Spain, 865/99)	[14.105]
«Գոնսալես դել Ռիոն ընդդեմ Պերուի»	
(Gonzáles del Río v Peru, 263/87) 28/10/92	[12.19] , [12.25], [14.54] , [14.58], [16.18]
«Սանչես Գոնսալեսն ընդդեմ Իսպանիայի» (Sánchez González v Spain, 1005/01)	[14.105]
«Գոտիենն ընդդեմ Կանադայի» (Gauthier v Canada, 633/95) 7/4/99	[18.08], [18.17], [18.19], [18.31] , [18.32], [19.26] , [19.28], [19.29], [23.110]
«Գորդոնն ընդդեմ ճամայկայի» (Gordon v Jamaica, 237/87) 5/11/92	[14.121]
«Գ. Ս.-ն ընդդեմ ճամայկայի» (GS. v Jamaica, 369/89) 8/11/89	[14.50]
«Գրանտն ընդդեմ ճամայկայի» (Grant v Jamaica, 353/88) 31/3/94	[6.07] , [14.80], [14.118], [14.123]
«Գրանտն ընդդեմ ճամայկայի» (Grant v Jamaica, 597/94) 22/3/96	[11.26] , [11.27], [11.28]
«Գրիդինն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության»	
(Gridin v Russian Federation, 770/97)	[11.11], [14.47] , [14.71] , [14.77]
«Գրիլ Մոտան և այլք ընդդեմ Ուրուգվայի» (Grille Motta v Uruguay, 11/77) 29/7/80	[5.08], [6.15], [9.34]
«Գրիֆինն ընդդեմ Իսպանիայի» (Griffin v Spain, 493/92) 4/4/95	[6.10], [9.139] , [11.27] , [11.28], [14.120]
«Գուլեյը և այլք ընդդեմ Ֆրանսիայի» (Gueye et al v France, 196/85) 3/4/89	[2.09], [2.14], [23.13], [23.24], [23.51] , [23.52]
«Գուտիերես Վիվանկոն ընդդեմ Պերուի» (Gutiérrez Vivanco v Peru, 678/96)	[14.65]
«Դանինգն ընդդեմ Նիդեռլանդների» (Danning v Netherlands, 180/84) 9/4/87	[20.08], [23.13], [23.24], [23.66]
«Դե Բատոնն ընդդեմ Ուրուգվայի» (de Bouton v Uruguay, 37/78)	[11.15]
«Դեբրեչենյն ընդդեմ Նիդեռլանդների» (Debreczeny v Netherlands, 500/92) 3/4/95	[22.34] , [23.61]
«Դե Գալիչիոն և Վիկարիոն ընդդեմ Արգենտինայի»	
(De Galicchio and Vicario v Argentina, 400/90)	[21.04], [21.09], [21.52]
«Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի»	
(Delgado Páez v Colombia, 195/85) 12/7/90	[1.82], [1.96], [11.03] , [11.04], [11.06], [17.19], [17.30] , [18.27] , [22.49], [22.54]
«Դել Զիդ Գոմեսն ընդդեմ Պանամայի» (Del Cid Gómez v Panama, 473/91)	[14.91]
«Դեյդրիկն ընդդեմ ճամայկայի» (Deidrick v Jamaica, 619/95) 9/4/98	[9.35]
«Դես Ֆորս Վալդերոդե և Կամերլանդերն ընդդեմ Չեխիայի Հանրապետության»	
(Des Fours Walderode and Kammerlander v Czech Republic, 747/97)	[23.44]
«Դերմիտ Բարբատոն ընդդեմ Ուրուգվայի»	
(Dermi Barbatto v Uruguay, 84/81) 27/10/82	[6.15] , [8.07], [8.40]
«Դիասն ընդդեմ Անգոլայի» (Dias v Angola, 711/96)	[11.04]

«Դիերգաարդտն ընդդեմ Նամիբիայի» (Diergaardt v Namibia, 760/97)	[7.24], [14.127], [18.46] , [22.05] , [23.39], [23.56] , [23.57] , [24.25] , [24.48]
«Դիքսիթն ընդդեմ Ավստրալիայի» (Dixit v Australia, 978/01).....	[6.23]
«Դոմուկովսկին և այլք ընդդեմ Վրաստանի» (Domukovsky et al v Georgia, 623-624/95, 626-627/95) 6/4/98	[9.34], [11.11], [14.102], [14.127], [14.134]
«Դրբալն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Drbal v The Czech Republic, 498/92) 22/7/94	[6.38], [20.49], [21.27] , [21.29], [25.48]
«Դրեյքը և Ջուլիանն ընդդեմ Նոր Զելանդիայի» (Drake and Julian v New Zealand, 601/94) 3/4/97	[23.26], [23.61]
«Դրեսչեր Կալդասն ընդդեմ Ուրուգվայի» (Drescher Caldas v Uruguay, 43/79) 9/4/81	[11.24], [14.84]
«Դրոբեկն ընդդեմ Սլովակիայի» (Drobek v Slovakia, 643/95).....	[23.46] , [23.47], [23.49]
«Դուգլասը, Ջենթլսը և Քերնն ընդդեմ Ճամայկայի» (Douglas, Gentles and Kerr v Jamaica, 352/89) 19/10/93.....	[23.26], [23.61]
«Եգատեսվարա Սարման ընդդեմ Շրի Լանկայի» (Jegatheeswara Sarma v Sri Lanka, 950/00)	[1.76A] , [9.46]
«Ե. Հ. Փ. -ն ընդդեմ Կանադայի» (E.H.P. v Canada, 67/80) 27/10/82.....	[3.28] , [6.16], [8.46]
«Ե. Մ. Ե. Հ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (E.M.E.H. v France, 409/90).....	[4.20]
«Ենսենն ընդդեմ Ավստրալիայի» (Jensen v Australia, 762/97)	[9.28], [9.48] , [9.51], [9.92]
«Ե. Ս. Ու.-ն ընդդեմ Նիդեռլանդների» E.C.W. v Netherlands (524/92) 3/11/93	[8.53]
«Ե. Ու.-ն և այլք ընդդեմ Նիդեռլանդների» (E.W. et al v Netherlands, 429/90) 8/4/93	[3.17] , [3.34] , [8.52]
«Ջվաան դե Վրիսն ընդդեմ Նիդեռլանդների» (Zwaan-de-Vries v Netherlands, 182/84) (182/84) 9/4/87	[1.60], [1.62], [23.13], [23.51], [23.58]
«Ջ.Փ.-ն ընդդեմ Կանադայի» (Z.P. v Canada, 341/88)11/4/91.....	[14.68], [14.109], [14.110]
«Էդուարդսն ընդդեմ Ճամայկայի» (Edwards v Jamaica, 529/93) 28/7/97	[9.93]
«Էլահին ընդդեմ Ճամայկայի» (Elahie v Jamaica, 553/93)	[9.144], [9.156]
«Էլիսն ընդդեմ Ճամայկայի» (Ellis v Jamaica, 276/88)	[6.03], [6.26]
«Էլ Մեգրեյսին ընդդեմ Լիբիայի Արաբական Զամահիրիայի» (El-Megreisi v Libyan Arab Jamahiriya, 440/90).....	[9.98], [9.145]
«Էշլին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Ashley v Trinidad and Tobago, 580/94)	[6.16], [25.29]
«Էռերա Ռուբիոն ընդդեմ Կոլումբիայի» (Herrera Rubio v Colombia, 161/83).....	[8.11] , [9.34], [9.112]
«Էստևիլն ընդդեմ Իսպանիայի» (Estevill v Spain, 1004/01)	[14.139]
«Էստրելան ընդդեմ Ուրուգվայի» (Estrella v Uruguay, 74/80) 29/3/83	[9.34], [9.153] , [14.68], [14.102], [16.25]
«Էվանսն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Evans v Trinidad and Tobago, 908/00)	[14.09], [25.30]
«Թադմանն ընդդեմ Կանադայի» (Tadman v Canada, 816/98).....	[3.05] , [23.06]
«Թեյլորն ընդդեմ Ճամայկայի» (Taylor v Jamaica, 705/96) 2/4/98	[9.141], [14.16], [14.119] , [14.120]
«Թեյլորն ընդդեմ Ճամայկայի» (Taylor v Jamaica, 707/96) 14/7/97	[9.139], [14.16]
«Թ. Թ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (T.T. v Australia, 706/96) 4/11/97	[4.22], [8.22], [9.80]
«Թիսդեյլն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Teesdale v Trinidad and Tobago, 677/96)	[9.143], [11.38] , [14.103], [14.116], [23.111]
«Թ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (T v UK)	
«Թշիոնգո ա Մինանգան ընդդեմ Զաիրի» (Tshiongo a Minanga v Zaire, 366/89) 2/11/93.....	[11.15]
«Թշիսեկեդին ընդդեմ Զաիրի» (Tshisekedi v Zaire, 241–242/87).....	[16.31]
«Թոալան ընդդեմ Նոր Զելանդիայի» (Toala v New Zealand, 675/95)	[12.31] , [12.32], [12.38], [20.23]
«Թոմասն ընդդեմ Ճամայկայի» (Thomas v Jamaica, 272/88).....	[14.43], [14.80]

- «Թոմասն ընդդեմ ճամայկայի» (Thomas v Jamaica, 321/88) 19/10/93 [5.01], [6.26], [9.36], [9.145]
- «Թոմասն ընդդեմ ճամայկայի» (Thomas v Jamaica, 532/93) 3/11/97 **[1.63]**, [14.110]
- «Թոմասն ընդդեմ ճամայկայի» (Thomas v Jamaica, 614/95) 31/3/99 [1.43], [14.51], [14.92]
- «Թոմասն ընդդեմ ճամայկայի» (Thomas v Jamaica, 800/98) 8/4/99 [9.167], **[25.41]**
- «Թոմսոնն ընդդեմ Պանամայի» (Thompson v Panama, 438/90) [6.03]
- «Թոմսոնն ընդդեմ Սենտ Վինսենթ և Գրենադինների»
(Thompson v Saint Vincent and the Grenadines, 806/98) **[1.63]**, **[8.28]**, **[8.30]**, **[9.61]**
- «Թրուոնգն ընդդեմ Կանադայի» (Truong v Canada, 743/97) [13.13]
- «Թ. Ու. Մ. Բ.-ն ընդդեմ Նիդերլանդների» (T.W.M.B. v Netherlands, 403/90) 7/11/91 [8.53]
- «Թ. Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (T.K. v France, 220/87) 8/11/89 **[6.01]**, **[24.11]**, **[25.09]**, [25.25]
- «ժալոն ընդդեմ Նիդերլանդների» (Jalloh v Netherlands, 794/98) **[11.19]**, **[21.10]**
- «ժաոնան ընդդեմ Մադագասկարի» (Jaona v Madagascar, 132/82), 1/4/85 [18.04]
- «ժելուդկովն ընդդեմ Ուկրաինայի» (Zheludkov v Ukraine, 726/96) [9.154], [14.50]
- «ժիլոտն ընդդեմ Ֆրանսիայի» (Gillot v France, 932/00) [1.68], **[7.07]**, [22.22]
- «Իգնատանն ընդդեմ Լատվիայի» (Ignatane v Latvia, 884/99) **[22.36]**
- «Իսկիերրոն ընդդեմ Ուրուգվայի» (Izquierdo v Uruguay, 73/80) [14.84]
- «Ի. Լ.-ն ընդդեմ Կանադայի» (Y.L. v Canada, 112/81) 8/4/86 [6.11], **[14.04]**
- «Ի. Մ.-ն ընդդեմ Իտալիայի» (I.M. v Italy, 266/87) [8.18]
- «Ինոստրոսան և այլք ընդդեմ Չիլիի» (Inostroza et al v Chile, 717/96) 23/7/99 [2.10], [3.08], **[10.14]**
- «Ի.Պ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (I.P. v Finland, 450/91) 26/7/93 [14.27], [14.133], [16.32]
- «Իրվինգն ընդդեմ Ավստրալիայի» Irving v Australia (880/99) **[14.147]**
- «Լամլին ընդդեմ ճամայկայի» (Lumley v Jamaica, 662/95) 31/3/99 **[14.136]**, [14.138]
- «Լանդինելլի Սիլվան ընդդեմ Ուրուգվայի»
(Landinelli Silva v Uruguay, 34/78) 8/4/81 [22.20], **[25.73]**, [25.74]
- «Լանսմանը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի»
(L.Nsman et al v Finland, 511/92) 26/10/94 [1.62], **[6.20]**, [18.24], [22.15], **[24.24]**,
[24.31], [24.33], [24.34],
[24.35], [24.43], [24.53]
- «Լանսմանը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի»
(L.Nsman et al v Finland, 671/95) 30/10/96 [22.15], [24.21], [24.32], **[24.33]**, [24.34],
[24.35], [24.43], [24.53]
- «Լանցովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» (Lantsov v Russian Federation, 763/97) **[8.41]**
- «Լապցևիչն ընդդեմ Բելառուսի» Laptsevich v Belarus (780/97) **[18.11]**
- «Լավենդեն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի»
(LaVende v Trinidad and Tobago, 554/93) 29/10/97 **[9.59]**, **[14.110]**
- «Լաուրեանոն ընդդեմ Պերուի» (Laureano v Peru, 540/93) 25/3/96 [5.04], [8.14], [9.98],
[9.106], [21.09]
- «Լաֆուենտե Պենյարիետան ընդդեմ Բոլիվիայի»
(Lafuente Peñarrieta v Bolivia, 176/84) [9.34], [9.151]
- «Լ. Ե. Ս. Կ.-ն ընդդեմ Նիդերլանդների» (L.E.S.K v Netherlands, 381/89) 21/7/92 [5.01]
- «Լևին ընդդեմ ճամայկայի» (Levy v Jamaica, 719/96) 3/11/98 [9.141], [14.110]
- «Լիթլն ընդդեմ ճամայկայի» (Little v Jamaica, 283/88) 1/11/91 [6.08], [6.26], [14.79], [14.94]
- «Լիքթենշտեյնն ընդդեմ Ուրուգվայի» (Lichtensztein v Uruguay, 77/80) 31/3/83 [12.17], [12.18]
- «Լիհոնգն ընդդեմ ճամայկայի» (Leehong v Jamaica, 613/95) 13/7/99 [11.04], **[11.29]**
- «Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի»
(Lindgren et al v Sweden, 298–299/88) 9/11/90 [1.28], [1.82], [22.49A], [23.13],
[23.24], [23.61], [23.63]
- «Լինդերհոլմն ընդդեմ Խորվաթիայի» (Linderholm v Croatia, 744/97) 23/7/99 [5.11]
- «Լինդոնն ընդդեմ Ավստրալիայի»
(Lindon v Australia, 646/95) 20/10/98 [8.53], **[14.19]**, [14.21], **[14.108]**
- «Լինտոնն ընդդեմ ճամայկայի» (Linton v Jamaica, 255/87) 22/10/92 [9.35], [9.145]
- «Լյուբիկոն լճի ցեղախմբի գործը տե՛ս Օմինայակը և Լյուբիկոն լճի ցեղախումբն ընդդեմ
Կանադայի» (Ominayak and the Lubicon Lake Band v Canada, 167/84) 26/3/90
- «Լյուիսն ընդդեմ ճամայկայի» (Lewis v Jamaica, 527/1993) [1.64]

- «Լյուիսն ընդդեմ ճամայկայի» (Lewis v Jamaica, 708/96) 17/7/96..... [9.170], [11.38]
- «Լոպես Բուրգոսն ընդդեմ Ուրուգվայի»
(López Burgos v Uruguay, 52/79) 29/7/81 **[4.13]**, [9.34], [11.15], [14.102]
- «Սանչես Լոպեսն ընդդեմ Իսպանիայի» (Sánchez López v Spain, 777/97) 18/10/99
- «Լովլեյսն ընդդեմ Կանադայի» (Lovelace v Canada, 24/77) 30/7/81 **[2.07]**, [2.13], [2.14], **[12.07]**,
[20.15], **[24.12]**, [24.13], [24.14],
[24.18], [24.19]
- «Լովն ընդդեմ Ավստրալիայի» (Love v Australia, 983/01) [23.14], [23.24], **[23.60]**
- «Լ. Պ.-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության»
(L.P. v Czech Republic, 946/00) [3.24], **[20.52]**, **[20.53]**, [20.56]
- «Լ.Տ.Կ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (L.T.K. v Finland, 185/84) 9/7/85 [10.03], **[17.22]**, [17.23]
- «Լրագիր հրատարակող ընկերությունն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի»
(A Newspaper Publishing Company v Trinidad and Tobago, 360/89) 14/7/89 [3.11]
- «Լուբուտոն ընդդեմ Զամբիայի» (Lubuto v Zambia, 390/90) 31/10/95 [1.101], **[8.21]**, **[14.95]**
- «Տերան Խիյոն ընդդեմ Էկվադորի»
(Terán Jijón v Ecuador, 277/88) 26/3/92 [11.15], [11.31], [14.150]
- «Խիմենես Վական ընդդեմ Կոլումբիայի»
(Jiménez Vaca v Colombia, 859/99) **[8.08]**, [8.14], [11.04]
- «Կաաբերն ընդդեմ Իսլանդիայի» (Kaaber v Iceland, 674/95) 5/11/96 [6.14]
- «Կաբալը և Պասինի Բերտրանն ընդդեմ Ավստրալիայի»
(Cabal and Pasini Bertran v Australia, 1020/02) [1.82], [8.41A], **[9.32]**,
[9.137A], [9.150A]
- «Կադորեն և Լե Բիհանն ընդդեմ Ֆրանսիայի»
(Cadoret and Le Bihan v France, 221/87, 323/88) [14.127], [18.09]
- «Կազանովան ընդդեմ Ֆրանսիայի» (Casanovas v France, 441/90) 19/7/94 **[5.13]**, [5.14], [5.17],
[14.07], [14.07A], [14.59]
- «Կազանցիսն ընդդեմ Կիպրոսի» (Kazantzis v Cyprus, 972/01) [1.19], [6.20], [14.07A]
- «Կալենգան ընդդեմ Զամբիայի» (Kalenga v Zambia, 326/88) 27/7/93 [18.04]
- «Կալն ընդդեմ Լեհաստանի» (Kall v Poland, 552/93) 14/7/97 [1.23], [22.47], [22.55]
- «Կամպորա Շվեյցերն ընդդեմ Ուրուգվայի»
(Cámpora Schweizer v Uruguay, 66/80) 12/10/82 [14.148]
- «Կանգն ընդդեմ Կորեայի Հանրապետության»
(Kang v Republic of Korea, 878/99) [2.18], [9.97], [9.151A], [9.170],
[17.05A], **[18.02A]**
- «Կանեպան ընդդեմ Կանադայի» (Canepa v Canada, 558/93) 3/4/97 [1.53], **[9.88]**, **[12.35]**,
[20.17], **[20.20]**
- «Կանյոն Գարսիան ընդդեմ Էկվադորի» (Cañon García v Ecuador, 319/88) 5/11/91 [9.39]
- «Կավալկանտի Արաուխո-Յոնգենն ընդդեմ Նիդերլանդների»
(Cavalcanti Araujo-Jongen v Netherlands, 418/90) 22/10/93 [23.13], [23.24], **[23.37]**,
[23.38], [23.59]
- «Կավանան ընդդեմ Իռլանդիայի» (Kavanagh v Ireland, 819/98) [1.24], **[14.11]**, [14.64],
[23.109]
- «Կավանան ընդդեմ Իռլանդիայի» (Kavanagh v Ireland, 1114/02) [1.24]
- «Կարակուրտն ընդդեմ Ավստրիայի» (Karakurt v Austria, 965/00) **[5.12]**, [23.23], [23.24],
[23.50]
- «Կարիբոնին ընդդեմ Ուրուգվայի» (Cariboni v Uruguay, 159/83) [9.34]
- «Կարկերն ընդդեմ Ֆրանսիայի» (Karker v France, 833/98) [11.09], **[12.08]**, [12.10],
[12.25], [12.38]
- «Կարպոն և այլք ընդդեմ Ֆիլիպինների» (Carpo et al v Philippines, 1077/02) [8.26], [8.30]
- «Կարտունենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Karttunen v Finland, 387/89) [14.02], **[14.53]**, [14.142]
- «Կարրին ընդդեմ ճամայկայի» (Currie v Jamaica, 377/89) [6.26], **[14.16]**, [14.18], [14.111]
- «Կեշավիեն ընդդեմ Կանադայի» (Keshavjee v Canada, 949/00) [1.83], **[4.16]**
- «Կիմն ընդդեմ Կորեայի Հանրապետության»
(Kim v Republic of Korea, 574/94) 3/11/98 [2.02], **[18.35]**, [18.36]

- «Կինտերոս Ալմեյդան ընդդեմ Ուրուգվայի»
(Quinteros Almeida v Uruguay, 107/81) 21/7/83 [9.24], **[9.45]**, [9.46]
- «Կիվենմաան ընդդեմ Ֆինլանդիայի» (Kivenmaa v Finland, 412/90) 31/3/94 [1.114], [15.01],
[18.04], **[18.06]**, [18.07],
[19.06], [19.10], [19.29]
- «Կիտոկն ընդդեմ Շվեդիայի» (Kitok v Sweden, 197/85) 27/7/88 [1.86], **[7.22]**, **[24.18]**, [24.19],
[24.20], **[24.23]**, [24.24],
[24.27], [24.31], [24.32]
- «Կ. Լ. Դ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (C.L.D. v France, 228/87) 18/7/88 **[24.49]**, [25.19]
- «Կ. Լ. Դ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (C.L.D. v France, 439/90) 8/11/91 [14.127], [25.11]
- «Կ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (C v Australia, 900/99) [1.59], **[6.05]**, [9.28], **[9.49]**, [9.80],
[9.81], [9.83], [9.92], [11.10], **[11.17]**, [11.17A],
[11.56], **[11.61]**, [11.62], [11.64], [11.65A]
- «Կոլանովսկին ընդդեմ Լեհաստանի» (Kolanowski v Poland, 837/98) **[14.07A]**
- «Կոլարն ընդդեմ Ավստրիայի» (Kollar v Austria, 989/01) [5.15], [5.16]
- «Կոնեն ընդդեմ Սենեգալի» (Koné v Senegal, 386/89) 21/10/94 **[11.42]**
- «Կոորդինամենտոն ընդդեմ Իտալիայի» (Coordinamento v Italy, 163/84) [3.08]
- «Կ. Վ.-ն և Ս. Վ.-ն ընդդեմ Գերմանիայի» (K.V. and C.V. v Germany, 560/93) 8/4/94 [17.27]
- «Կրույտ-Ամեսն ընդդեմ Նիդերլանդների» (Kruyt-Amesz v Netherlands, 66/95) [15.01]
- «Կուբաս Սիմոնեսն ընդդեմ Ուրուգվայի» (Cubas Simones v Uruguay, 70/80) [9.151]
- «Կուլոմին ընդդեմ Հունգարիայի» (Kulomin v Hungary, 521/92) [2.09], [2.14], [9.153],
[11.33]
- «Կուոկ Կոյն ընդդեմ Պորտուգալիայի» (Kuok Koi v Portugal, 925/00)
- «Կուրովսկին ընդդեմ Լեհաստանի» (Kurowski v Poland, 872/99) [2.03], **[2.15]**, [2.16],
[2.17], [2.19]
- «Հ. Ա. Դ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (H.A.D. v Switzerland, 216/99) [9.71]
- «Հ. Ա. Է. Դ. Յ.-ն ընդդեմ Նիդերլանդների» (H.A.E.d.J. v Netherlands, 297/88) 30/10/89 **[23.26]**
- «Համելն ընդդեմ Մադագասկարի» (Hammel v Madagascar, 155/83) 3/4/87 [11.47], [11.53],
[13.12]
- «Հանկլն ընդդեմ ճամայկայի» (Hankle v Jamaica, 710/96) 28/7/99 [14.92]
- «Հարվարդն ընդդեմ Նորվեգիայի» (Harward v Norway, 451/91) 15/7/94 **[14.82]**
- «Հարտիկայնենը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի»
(Hartikainen et al v Finland, 40/78) 9/4/81 **[3.08]**, **[17.29]**
- «Հենդրիքսն ընդդեմ Գայանայի» (Hendricks v Guyana, 838/98) [14.116]
- «Հենդրիքսն ընդդեմ Նիդերլանդների» (Hendriks v Netherlands, 201/85) 27/7/88 **[6.30]**, **[14.52]**,
[20.07], **[20.45]**, [20.50], [20.52]
- «Հենրին ընդդեմ ճամայկայի» (Henry v Jamaica, 230/87) 1/11/91 [6.08], **[6.26]**, [6.27],
[8.24], [14.80], [14.118],
[14.137], [14.138]
- «Հենրին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի»
(Henry v Trinidad and Tobago, 752/97) 3/11/98 [9.39], [9.141], [14.16]
- «Հեսսեն ընդդեմ Ավստրալիայի» (Hesse v Australia, 1087/02) [1.28], [23.24]
- «Մուոչոս Հերմոսան ընդդեմ Պերուի» (Muroz Hermoza v Peru, 203/86) 4/11/88 [14.42],
[14.58], [22.53]
- «Հերցբերգը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի» (Hertzberg et al v Finland, 61/79) [1.62], [1.82],
[1.96], [3.08], [12.25], [16.35],
[18.22], [18.24], **[18.25]**
- «Հ. Թ. Բ.-ն ընդդեմ Կանադայի» (H.T.B. v Canada, 534/93) 19/10/93 **[14.134]**
- «Հիբերտոն ընդդեմ ճամայկայի» (Hibbert v Jamaica, 293/88) [6.26]
- «Հիգինսոնն ընդդեմ ճամայկայի» (Higginson v Jamaica, 792/98) **[9.90]**
- «Հիլը և Հիլն ընդդեմ Իսպանիայի» (Hill and Hill v Spain, 526/93) 2/4/97 [3.06], [9.104], **[9.160]**,
[11.28], **[11.40]**, **[14.88]**,
[14.89], **[14.104]**, [14.105]
- «Հիլտոնն ընդդեմ ճամայկայի» (Hylton v Jamaica, 407/90) 8/7/94 [9.35]

«Հիլտոնն ընդդեմ ճամայկայի» (Hylton v Jamaica, 600/94)	[1.64], [6.26], [9.54]
«Հոլանդիան ընդդեմ Իռլանդիայի» (Holland v Ireland, 593/94).....	[2.02]
«Հոոֆդմանն ընդդեմ Նիդերլանդների» (Hoofdman v Netherlands, 602/94) 3/11/98.....	[20.08], [23.13], [23.24], [23.66], [23.67]
«Հոպյուն և Բեսսերն ընդդեմ Ֆրանսիայի» (Hopu and Bessert v France, 549/93)	[6.18], [16.06] , [20.06], [20.11] , [24.05],
«Հ.վ.դ.Պ.-ն ընդդեմ Նիդերլանդների» (H.v.d.P. v The Netherlands, 217/86) 8/4/87	[4.18] , [5.01]
«Հրատարակչական ու տպագրական ընկերությունն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (A Publication and Printing Company v Trinidad and Tobago, 361/89) 14/7/89	[3.11]
«Հուսեյնն ընդդեմ Մավրիկիոսի» (Hussain v Mauritius, 980/01)	[14.92], [14.115]
«Վան դեր Հուվենն ընդդեմ Նիդերլանդների» (Van der Houwen v The Netherlands, 583/94) 14/7/95	[11.31], [24.38], [25.13] , [25.25]
«Հ. Բ.-ն ընդդեմ ճամայկայի» (H.C. v Jamaica, 383/89) 28/7/92.....	[14.117] , [14.118]
«Հ.Բ.Ս.Ա.-ն ընդդեմ Նիդերլանդների» (H.C.M.A. v Netherlands, 213/86).....	[8.18], [9.126]
«Մ.Ա.-ն ընդդեմ Իտալիայի» (M.A. v Italy, 117/81) 10/4/84	[1.22], [2.08], [18.07], [18.33] , [18.36], [19.12], [22.32]
«Մ.Ա.Բ.-ն, Վ.Ա.Թ.-ն և Ժ.-Ա.Ի.Տ.-ն ընդդեմ Կանադայի» (M.A.B., W.A.T. and J.-A.Y.T. v Canada 570/93) 8/4/94	[17.04]
«Մազուն ընդդեմ Կամերունի» (Mazou v Cameroon, 630/95).....	[22.52]
«Մաթյուսն ընդդեմ Սլովակիայի» (Mátyus v Slovakia, 923/00)	[22.27]
«Մալեկին ընդդեմ Իտալիայի» (Maleki v Italy, 699/96) 15/7/99	[14.01], [14.99] , [25.12]
«Մալիկն ընդդեմ Չեխոսլովակիայի» (Malik v Czechoslovakia, 669/95)	[23.47], [23.49]
«Մակայզենն ընդդեմ Կանադայի» (MacIsaac v Canada, 55/79) 14/10/82	[3.30], [15.05], [15.08]
«Մակթագարտն ընդդեմ ճամայկայի» [McTaggart v Jamaica, 749/97) 31/3/98	[1.51], [9.43], [9.141], [11.43], [14.51], [14.69], [14.92]
«Մակլաուրենսն ընդդեմ ճամայկայի» (McLawrence v Jamaica, 702/96) 18/7/97.....	[14.75]
«Մակլեոդն ընդդեմ ճամայկայի» (McLeod v Jamaica, 734/97).....	[1.51], [9.141], [14.116]
«Մահուիկան ընդդեմ Նոր Զելանդիայի» (Mahuika v New Zealand, 547/93).....	[7.22], [14.23] , [14.25] , [14.26], [14.27], [24.20] , [24.21], [24.24]
«Մանսարաջը և այլք ընդդեմ Սիեռա Լեոնեի» (Mansaraj et al v Sierra Leone, 839-841/98)	[1.54], [14.37]
Մավրիկիոսի կանանց գործը, տե՛ս «Աուսենթուդի-Ցիֆրան և այլք ընդդեմ Մավրիկիոսի» (Aumeeruddy-Cziffra et al v Mauritius, 35/78) 9/4/81	
«Մասերան ընդդեմ Ուրուգվայի» (Massera v Uruguay, 5/77) 15/8/79	[9.95], [9.141]
«Մասիոտին և Բարիստուսիոն ընդդեմ Ուրուգվայի» (Massiotti and Baristussio v Uruguay, 25/78) 26/7/82.....	[4.03]
«Մարայիսն ընդդեմ Մադագասկարի» (Marais v Madagascar, 49/79)	[9.98]
«Մարին Գոմեսն ընդդեմ Իսպանիայի» (Marín Gómez v Spain, 865/99).....	[14.105]
«Մարշալն ընդդեմ Կանադայի» (Marshall v Canada, 205/86) 4/11/91, «Միկմաք ցեղայինությունն ընդդեմ Կանադայի» (Mikmaq Tribal Society v Canada)	[7.22], [22.14] , [22.15], [24.05], [24.20], [24.36], [24.42]
«Մարշալն ընդդեմ ճամայկայի» (Marshall v Jamaica, 730/96)	[9.144], [14.110]
«Մարտինես Մաչադոն ընդդեմ Ուրուգվայի» (Martínez Machado v Uruguay, 83/80).....	[6.15], [14.84]
«Մարտինն ընդդեմ ճամայկայի» (Martin v Jamaica, 317/88)	[9.60]
«Վիդալ Մարտինսն ընդդեմ Ուրուգվայի» Vidal Martins v Uruguay (57/79) 23/3/82	[4.14], [12.17]
«Մարուֆիդուն ընդդեմ Շվեդիայի» (Maroufidou v Sweden, 58/79) 9/4/81	[13.08] , [13.10], [13.14], [13.21]
«Մբենգեն և այլք ընդդեմ Զաիրի» (Mbenge et al v Zaire, 16/77)25/3/83	[3.26], [4.04], [8.23] , [8.24], [14.98] , [14.99]
«Մ. Գ. Բ.-ն և Ս. Պ.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (M.G.B. and S.P. v Trinidad and Tobago, 268/87)	[2.10], [11.69]

- «Մեթյուն ընդդեմ ճամայկայի» (Matthews v Jamaica, 569/93) 31/3/98.....[9.91], [9.141]
- «Մեյն ընդդեմ Ֆրանսիայի» (Maille v France, 689/96) [6.20], [23.55]
- «Մ. Տ.-ն ընդդեմ Իսպանիայի» (M.T. v Spain, 310/88) [2.03]
- «Միանգո Մույոն ընդդեմ Զաիրի» (Miango Muiyo v Zaire, 194/85) 27/10/87 [8.14], [9.34]
- «Միլան Սեքուեյրան ընդդեմ Ուրուգվայի» (Millnn Sequeira v Uruguay, 6/77) 29/7/80 [5.01], [5.07]
- «Միկմաք ցեղախումբն ընդդեմ Կանադայի»,
տե՛ս «Մարշալն ընդդեմ Կանադայի» (Marshall v Canada, 205/86),
- «Միհան ընդդեմ Հասարակածային Գվինեայի» (Miha v Equatorial Guinea, 414/90) [4.02]
- «Թշիոնգո ա Մինանգան ընդդեմ Զաիրի» (Tshiongo a Minanga v Zaire, 366/89) 2/11/93..... [11.15]
- Մ. Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (M.K. v France, 222/87) 8/11/89 [6.01], [25.11]
- «Մ. Յ. Գ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (M.J.G. v Netherlands, 267/87) 24/3/88 [23.26]
- «Մյուլլերը և Էնգելհարդն ընդդեմ Նամիբիայի»
(Müller and Engelhard v Namibia, 919/00) [23.29], **[23.62]**
- «Մոխիկան ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության»
(Mojica v Dominican Republic, 449/91) 15/7/94 [8.14], **[9.105]**, [9.106]
- «Սալգար դե Մոնտեխոն ընդդեմ Կոլումբիայի»
(Salgar de Montejo v Colombia, 64/79) 24/3/82 **[14.135]**, [25.73]
- «Պերեյրա Մոնտերոն ընդդեմ Ուրուգվայի»
(Pereira Montero v Uruguay, 106/81) 31/7/83..... **[4.14]**, [12.17]
- «Գրիլ Մոտան և այլք ընդդեմ Ուրուգվայի»
(Grille Motta et al v Uruguay, 11/77) 29/7/80..... [5.08], [6.15], [9.34]
- «Մորաելն ընդդեմ Ֆրանսիայի» (Moraël v France, 207/86) 28/7/89 **[14.41]**, [14.42], [14.59], **[14.73]**
- «Մորգանը և Ուիլյամսն ընդդեմ ընդդեմ ճամայկայի»
(Morgan and Williams v Jamaica, 720/96) 3/11/98 [9.43], [9.141]
- «Մորիսոնը և Գրեհեմն ընդդեմ ճամայկայի» (Morrison and Graham v Jamaica, 461/91) [14.116]
- «Մորիսոնն ընդդեմ ճամայկայի» (Morrison v Jamaica, 663/95) 3/11/98..... [3.03], [9.141], [11.28],
[14.116]
- «Մպակա-Նսուսուն ընդդեմ Զաիրի» (Mpaka-Nsusu v Zaire, 157/83) 26/3/86 [12.04]
- «Մպանդանջիլան և այլք ընդդեմ Զաիրի» (Mpandanjila et al v Zaire, 138/83) 26/3/86 [3.27], **[6.13]**,
[9.134], [12.04], [18.04]
- «Մուկոնգն ընդդեմ Կամերունի» (Mukong v Cameroon, 458/91) 21/7/94 [1.101], [9.33], **[9.42]**, **[9.93]**,
[9.145], [9.148], [11.15], **[18.37]**
- «Մուկունտոն ընդդեմ Զամբիայի» (Mukunto v Zambia, 768/97) [2.05], [14.58], [14.95]
- «Մուհոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Muhonen v Finland, 89/81) 8/4/85 [6.03], [6.11], [6.44],
[14.145], [14.147]
- «Մուլոյոս Էրմոսան ընդդեմ Պերուի»
(Muñoz Hermoza v Peru, 203/86) 4/11/88 [14.42], **[14.58]**, [22.53]
- «Մուտեբան ընդդեմ Զաիրի» (Muteba v Zaire, 124/82) 24/7/84..... [9.34]
- «Մ. Ֆ.-ն ընդդեմ ճամայկայի» (M.F. v Jamaica, 233/88) [14.94]
- «Յալլոհն ընդդեմ Նիդեռլանդների» (Jalloh v Netherlands, 794/98)..... **[11.19]**, **[21.10]**
- «Յանգն ընդդեմ Ավստրալիայի» (Young v Australia, 941/00)..... [23.25], **[23.67A]**, **[23.67B]**
- «Յանգն (Young v Jamaica, 615/95) 4/11/97 [9.36], [14.122]
- «Յանսեն-Գիելենն ընդդեմ Նիդեռլանդների» (Jansen-Gielen v Netherlands, 846/99)..... [14.07], **[14.48]**
- «Յասինը և Թոմասն ընդդեմ Գայանայի Հանրապետության»
(Yasseen and Thomas v Republic of Guyana, 676/96) 30/3/98 [9.43], [9.141], **[14.81]**, [14.92]
- «Յարվինենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Järvinen v Finland, 295/88) 25/7/90 [1.64], [23.24],
[23.52], [23.54], [23.55]
- «Յ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (Y v Australia, 772/97) **[3.21]**
- «Յոհաննես Վոսն ընդդեմ Նիդեռլանդների»
(Johannes Vos v Netherlands, 786/97) 26/7/99 [6.20], [23.13], [23.16], [23.59]
- «Յուբերգանգն ընդդեմ Ավստրալիայի» (Uebergang v Australia, 963/01)..... [14.146]
- «Յուտրոնիցն ընդդեմ Չիլիի» (Yutronic v Chile, 740/97) [3.23]
- «Նահլիկն ընդդեմ Ավստրիայի» (Nahlik v Austria, 608/95) 22/7/96 [1.82], [23.28], **[23.82]**, [23.83]
- «Ն. Ա. Յ.-ն ընդդեմ ճամայկայի» (N.A.J. v Jamaica, 246/87) 26/7/90 [6.32]

«Նգ.-ն ընդդեմ Կանադայի» (Ng v Canada, 469/91) 5/11/93	[1.51], [8.34], [9.63] , [9.80]
«Նիիֆսն ընդդեմ Նիդեռլանդների» (Neefs v Netherlands, 425/90) 15/7/94.....	[23.24], [23.61]
«Նիկոլովն ընդդեմ Բուլղարիայի» (Nikolov v Bulgaria, 824/98)	[5.01]
«Վարել Նունյեսն ընդդեմ Ուրուգվայի» (Varel Nuñez v Uruguay, 108/81) 22/7/83.....	[12.17], [12.18]
«Շալտոն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Shalto v Trinidad, 447/91) 4/4/95	[14.94]
«Շլոսսերն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Schlosser v Czech Republic, 670/95).....	[23.47], [23.49]
«Շմիտց դե Յոնգն ընդդեմ Նիդեռլանդների» (Schmitz-de Jong v Netherlands, 855/99).....	[23.24]
«Շեդկոն ընդդեմ Բելառուսի» (Schedko v Belarus, 886/99).....	[9.47]
«Շպրենգերն ընդդեմ Նիդեռլանդների» (Sprenger v Netherlands, 395/90).....	[20.08], [23.13]
	[23.14] [23.16], [23.24], [23.66], [23.67]
«Շոուն ընդդեմ ճամայկայի» (Shaw v Jamaica, 704/96) 2/4/98.....	[9.98], [9.106], [9.141], [9.151], [14.16], [14.116]
«Կամպորա Շվեյցերն ընդդեմ Ուրուգվայի» (Compora Schweizer v Uruguay, 66/80) 12/10/82	[14.148]
«Չանգն ընդդեմ ճամայկայի» (Chung v Jamaica, 591/94)	[9.14]
«Չապլինն ընդդեմ ճամայկայի» (Chaplin v Jamaica, 596/94)	[9.144]
«Չեբանը և այլք ընդդեմ Ռուսաստանի» (Cheban et al v Russia, 790/97)	[1.28]
«Չելեպլին ընդդեմ Շվեդիայի» (Celepli v Sweden, 456/91)	[11.09] , [12.03], [12.10], [12.11] , [12.25], [12.38]
«Չիշիմբին ընդդեմ Զաիրի» (Tshishimbi v Zaire, 542/93) 25/3/96	[9.98], [9.106], [11.04], [11.06]
«Չիրա Վարգաս Մաչուկան ընդդեմ Պերուի» (Chira Vargas Machuca v Peru, 906/00)	[22.53]
«Չոնգվեն ընդդեմ Զամբիայի» (Chongwe v Zambia, 821/98)	[8.08] , [11.04], [11.06]
«Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի» (Delgado Páez v Colombia, 195/85) 12/7/90	[1.82], [1.96], [11.03] , [11.04], [11.06], [17.19], [17.30] , [18.27] , [22.49], [22.54]
«Սոլիս Պալման ընդդեմ Պանամայի» (Solís Palma v Panama, 436/90) 18/7/94	[3.21]
«Պաստուխովն ընդդեմ Բելառուսի» (Pastukhov v Belarus, 814/98)	[14.07A], [14.30], [22.53]
«Պատինյոն ընդդեմ Պանամայի» (Patiño v Panama, 437/90) 21/10/94	[6.03]
«Պարկանյին ընդդեմ Հունգարիայի» (Párkányi v Hungary, 410/90) 27/7/92	[2.05], [9.141], [14.121]
«Պարկն ընդդեմ Կորեայի Հանրապետության» (Park v Republic of Korea, 628/95).....	[18.35]
«Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (Pauger v Austria, 415/90) 26/3/92	[1.24], [23.13], [23.58], [23.67], [23.104]
«Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (Pauger v Austria, 716/97) 25/3/99.....	[1.24], [5.16]
«Պեզոլովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Pezoldova v Czech Republic, 757/97)	[5.02], [23.108]
«Պելտոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Peltonen v Finland, 492/92) 21/7/94	[12.21] , [12.22], [12.25], [12.38]
«Պեկարիետան ընդդեմ Բոլիվիայի» (Pecarrietta v Bolivia, 176/84)	
«Լաֆուենտե Պենյարիետան ընդդեմ Բոլիվիայի» (Lafuente Peñarrieta v Bolivia, 176/84)	[9.34], [9.151]
«Պեպելսն ընդդեմ Նիդեռլանդների» (Pepels v Netherlands, 484/91) 15/7/94.....	[23.13]
«Պերեյրա Մոնտերոն ընդդեմ Ուրուգվայի» (Pereira Montero v Uruguay, 106/81) 31/7/83.....	[4.14] , [12.17]
«Պերերան ընդդեմ Ավստրալիայի» (Perera v Australia, 536/93) 28/3/95.....	[2.03], [6.07] , [14.120], [14.122], [14.134]
«Պիետրարոյան ընդդեմ Ուրուգվայի» (Pietraroia v Uruguay, 44/79) 27/3/81.....	[1.68], [9.151], [22.20], [25.73]
«Պինտոն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Pinto v Trinidad and Tobago, 232/87) 20/7/90	[8.24], [9.156], [14.50] , [14.102]
«Պինտոն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Pinto v Trinidad and Tobago, 512/92) 16/7/96	[9.140] , [9.156]

- «Պլոտնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության»
(Plotnikov v Russian Federation, 784/97) 25/3/99 **[8.47]**
- «Պոլայ Կամպոսն ընդդեմ Պերուի» (Polay Campos v Peru, 577/94) 6/11/97 [5.05], [9.36], [9.98],
[9.141], **[14.65]**, [25.50], [25.73]
- «Պորտորեալն ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության»
(Portorreal v Dominican Republic, 188/84) 5/11/87..... **[9.93]**, [11.15], [11.31],
[11.47], [11.66]
- «Պունգավանամն ընդդեմ Մավրիկիոսի» (Poongavanam v Mauritius, 567/93) 26/7/94 **[3.02]**
- «Ջ. Ա. Մ. Բ.-Ռ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (J.A.M.B.-R. v Netherlands, 477/91) 7/4/94 [23.24], [23.38]
- «Ջայավարդենն ընդդեմ Շրի Լանկայի» (Jayawardene v Sri Lanka, 916/00) **[11.05]**, [11.06]
- «Ջաջն ընդդեմ Կանադայի» (Judge v Canada, 829/98).....[1.62], [1.64], [3.33A], **[4.25]**,
[8.34], **[8.35]**, [8.37],
[8.38], [23.13]
- «Ջ. Բ.-ն և այլք ընդդեմ Կանադայի» *Ալբերտայի միությունների գործ*
(J.B. et al v Canada, 118/82) 18/7/86, 'Alberta Unions Case' [1.62], [1.64],
[19.18], **[19.19]**, [19.29]
- «Ջ.Լ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (J.L. v Australia, 491/92) 28/7/92 **[2.08]**, [2.16], [14.07]
- «Ջ. Հ. Ու.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (J.H.W. v Netherlands, 501/92) 16/7/93 **[23.15]**, [23.16]
- «Ջ. Մ.-ն ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (J.M. v Jamaica, 165/84) 26/3/86 **[12.29]**
- «Ջոնասենը և այլք ընդդեմ Նորվեգիայի» (Jonassen et al v Norway, 942/00).....[1.48], **[6.04]**, [6.29],
[24.43], [24.53]
- «Ջոնսն ընդդեմ Ճամայկայի» (Jones v Jamaica, 585/94) [9.144], [14.116]
- «Ջոնսն ընդդեմ Ճամայկայի» (Jones v Jamaica, 585/96) [14.93]
- «Ջոնսոնն ընդդեմ Ճամայկայի» (Johnson v Jamaica, 588/94) 22/3/96 [1.62], [1.64], **[9.55]**,
[9.58]
- «Ջոնսոնն ընդդեմ Ճամայկայի» (Johnson v Jamaica, 592/94) 20/10/98 [8.32], [14.110]
- «Ջոնսոնն ընդդեմ Ճամայկայի» (Johnson v Jamaica, 653/95) [9.141]
- «Ջոսլինը և Նոր Զելանդիայի» (Joslin v New Zealand, 902/99) [20.07], **[20.29]**, [20.34], [20.56]
- «Ջ. Ռ. Թ.-ն և Վ. Գ. Կուսակցությունն ընդդեմ Կանադայի»
(J.R.T. and the W.G. Party v Canada, 104/81) 6/4/83..... **[3.09]**, **[6.12]**, **[18.56]**, [18.57]
- «Ջ.Ռ.Կ.-ն ընդդեմ Կոստա Ռիկայի» (J.R.C. v Costa Rica, 296/88) 30/3/89 [13.17], [13.18]
- «Ջ. վ. Բ.-ն և այլք ընդդեմ Նիդեռլանդների» (J. v. K. et al v Netherlands, 483/91) 23/7/92 [17.27]
- «Ջուման ընդդեմ Ավստրալիայի» (Juma v Australia, 984/01)..... [14.127], [14.136]
- «Ջ.Փ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (J.P. v Canada, 446/91) 7/11/91..... **[17.27]**
- «Ջ. Փ. Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (J.P.K. v Netherlands, 401/90) 7/11/91 [8.53]
- «Ջ. Բ.-ն ընդդեմ Կանադայի» (J.K. v Canada, 174/84) 26/10/84..... **[14.50]**
- «Տորես Ռամիրեսն ընդդեմ Ուրուգվայի» (Torres Ramirez v Uruguay, 4/77) [5.01], [6.15],
[11.15], [25.73]
- «Ռայթը և Հարվին ընդդեմ Ճամայկայի» (Wright and Harvey v Jamaica, 459/91) [14.110]
- «Ռայթն ընդդեմ Ճամայկայի» (Wright v Jamaica, 349/89) 27/7/92 [5.02], [6.26], [8.24],
[14.57], [14.80]
- «Ռաջանը և Ռաջանն ընդդեմ Նոր Զելանդիայի»
(Rajan and Rajan v New Zealand, 820/98) [6.01A], **[20.26A]**
- «Ռ. Ա. Վ. Ն.-ն ընդդեմ Արգենտինայի» (R.A.V.N. v Argentina, 343-345/88) [2.10]
- «Ռեյդն ընդդեմ Ճամայկայի» (Reid v Jamaica, 250/87)..... [8.24]
- «Ռեյդն ընդդեմ Ճամայկայի» (Reid v Jamaica, 355/89) 8/7/94 **[14.134]**, [14.138]
- «Ռեյնոլդսն ընդդեմ Ճամայկայի» (Reynolds v Jamaica, 229/87) 8/4/91 [14.94]
- «Ռեյնոլդսն ընդդեմ Ճամայկայի» (Reynolds v Jamaica, 587/94) [9.145]
- «Ռեյնոլդսն ընդդեմ Ճամայկայի» (Reynolds v Jamaica, 597/94) [14.94]
- «Գոնսալես դել Ռիոն ընդդեմ Պերուի»
(González del Río v Peru, 263/87) 28/10/92 **[12.19]**, [12.25], **[14.54]**, [14.58], [16.18]
- «Ռիչարդսն ընդդեմ Ճամայկայի» (Richards v Jamaica, 535/93) 31/3/97 **[14.40]**, **[14.46]**
- «Ռիսն ընդդեմ Ճամայկայի» (Reece v Jamaica, 796/98)..... **[11.15A]**, [14.09], [14.120]
- «Ռիքեթսն ընդդեմ Ճամայկայի» (Ricketts v Jamaica, 667/65)..... [14.116]

«Ռ.Լ.Ա.Ու.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (R.L.A. W. v The Netherlands, 372/89).....	[5.01]
«Ռ.Լ.Մ.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (R.L.M. v Trinidad and Tobago, 380/89) 16/7/93	[16.33]
«Ռ.Լ.Մ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (R.L.M. v France, 363/89) 6/4/92	[25.11]
«Ռ. Լ.-ն և այլք ընդդեմ Կանադայի» (R.L. et al v Canada, 358/89) 5/11/91	[6.35], [24.13], [24.19]
«Ռ.Մ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (R.M. v Finland, 301/88) 23/3/89.....	[14.50] , [14.63], [14.142]
«Ռ.-ն և Մ. Ջ.-ն ընդդեմ Իտալիայի» (R and M.H. v Italy, 565/93) 8/4/94	[3.21]
«Ռոբինսոնն ընդդեմ ճամայկայի» (Robinson v Jamaica, 223/87)	[14.110]
«Ռոբինսոնն ընդդեմ ճամայկայի» (Robinson v Jamaica, 731/97).....	[9.96] , [9.142]
«Ռոգլն ընդդեմ Գերմանիայի» (Rogl v Germany, 808/98)	[5.14]
«Ռոդրիգեսն ընդդեմ Ուրուգվայի» (Rodriguez v Uruguay, 322/88) 19/7/94	[2.10], [9.125] , [9.145], [14.26]
«Ռոդրիգես Օրեխուելան ընդդեմ Կոլումբիայի»	
(Rodríguez Orejuela v Colombia (848/99)	[14.62] , [14.63]
«Ռոխաս Գարսիան ընդդեմ Կոլումբիայի» (Rojas García v Colombia, 687/96)	[9.24] , [16.28]
«Ռոջերսն ընդդեմ ճամայկայի» (Rogers v Jamaica, 494/92)	[9.53]
«Ռոջերսոնն ընդդեմ Ավստրալիայի» (Rogerson v Australia, 802/98).....	[14.94], [14.136]
«Ռոսն ընդդեմ Կանադայի» (Ross v Canada, 736/97)	[17.05], [18.41], [18.57]
«Ռ. Ս.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (R.S. v Trinidad and Tobago (684/96)	[8.32], [9.62] , [9.143]
«Ռ. Տ. Ջ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (R.T.Z. v Netherlands, 245/87) 5/11/87	[23.26]
«Ռ.Տ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (R.T v France, 262/87) 30/3/89	[6.02] , [6.03], [6.14]
«Էռերա Ռուբիոն ընդդեմ Կոլումբիայի» (Herrera Rubio v Colombia, 161/83).....	[8.11] , [9.34], [9.112]
«Ռ. Ու.-ն ընդդեմ ճամայկայի» R.W. v Jamaica (340/88) 21/7/92	[6.27]
«Սալգար դե Մոնտեխոն ընդդեմ Կոլումբիայի»	
(Salgar de Montejo v Colombia, 64/79) 24/3/82.....	[14.135] , [25.73]
«Սահիդն ընդդեմ Նոր Զելանդիայի» (Sahid v New Zealand, 893/99).....	[20.26] , [20.56]
«Սանտուլո Վալկադան ընդդեմ Ուրուգվայի» (Santullo Valcada v Uruguay, 9/77).....	[11.66]
«Սանխուան Արևալոն ընդդեմ Կոլումբիայի»	
(Sanjunn Arévalo v Colombia, 181/84) 3/11/89.....	[8.12] , [8.13], [11.03]
«Սանչես Գոնսալեսն ընդդեմ Իսպանիայի» (Snnchez Gonznlez v Spain, 1005/01)	[14.105]
«Սանչես Լոպեսն ընդդեմ Իսպանիայի» (Sánchez López v Spain, 777/97) 18/10/99.....	[5.07], [14.131]
«Բալագեր Սանտականան ընդդեմ Իսպանիայի»	
(Balaguer Santacana v Spain, 417/90) 15/7/94	[20.08], [20.10] , [20.51]
«Եգատեսեսվարա Սարման ընդդեմ Շրի Լանկայի»	
(Jegatheeswara Sarma v Sri Lanka, 950/00)	[1.76A] , [9.46]
«Ս.Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (S.G. v France, 347/88) 1/11/91.....	[18.10], [25.11]
«Սելիբերտի դե Կասարիեգոն ընդդեմ Ուրուգվայի» (Celiberti de Casariego v Uruguay, 56/79)	
«Սեմեյն ընդդեմ Իսպանիայի» (Semey v Spain, 986/01)	[14.134]
«Սենդիցն ընդդեմ Ուրուգվայի» (Sendic v Uruguay, 63/79).....	[9.34]
«Սեքստուսն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի»	
(Sextus v Trinidad and Tobago, 818/98)	[11.38], [14.91] , [14.92], [14.95]
«Միլան Սեքուեյրան ընդդեմ Ուրուգվայի» (Millán Sequeira v Uruguay, 6/77) 29/7/80	[5.01], [5.07]
«Ս. Է.-ն ընդդեմ Արգենտինայի» (S.E. v Argentina, 275/88) 26/3/90	[1.23], [2.10] , [2.14], [9.126], [10.14], [11.69]
«Սթիվանսն ընդդեմ ճամայկայի» (Steadman v Jamaica, 528/93)	
«Սիլվան և այլք ընդդեմ Զամբիայի» (Silva et al v Zambia, 825-8/98)	[10.04]
«Լանդինելի Սիլվան ընդդեմ Ուրուգվայի»	
(Landinelli Silva v Uruguay, 34/78) 8/4/81	[22.20], [25.73] , [25.74]
«Կուբաս Սիմոնեսն ընդդեմ Ուրուգվայի» (Cubas Simones v Uruguay, 70/80)	[9.151]
«Սիմոնսն ընդդեմ Պանամայի» (Simons v Panama, 460/91)	[16.33]
«Սիմպսոնն ընդդեմ ճամայկայի» (Simpson v Jamaica, 695/96).....	[14.116]
«Սիմսն ընդդեմ ճամայկայի» (Simms v Jamaica, 541/93)	[9.53]
«Սիմունեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության»	
(Simunek v Czech Republic, 516/92) 19/7/95	[23.13], [23.33], [23.44], [23.45], [23.46]

- «Սինգերն ընդդեմ Կանադայի» (Singer v Canada, 455/91) 26/7/94..... **[3.13]**, [3.14], [18.44]
- «Սինգհ Բինդերն ընդդեմ Կանադայի»
(Singh Bhinder v Canada, 208/86) 9/11/89..... [12.25], **[17.17]**, **[23.36]**
- «Սինեյրո Ֆերնանդեսն ընդդեմ Իսպանիայի» (Sineiro Fernandez v Spain, 1007/01) [14.134]
- «Ս. Յ. Բ.-ն ընդդեմ Կանադայի» (S.H.B. v Canada, 192/85) 24/3/87 **[6.42]**, [6.44]
- «Սմիթը և Ստյուարտն ընդդեմ ճամայկայի» (Smith and Stewart v Jamaica, 668/95) 8/4/99 [14.116]
- «Սմիթն ընդդեմ ճամայկայի» (Smith v Jamaica, 282/88) 31/3/93..... **[14.79]**
- «Ս. Մ.-ն ընդդեմ Բարբադոսի» (S.M. v Barbados, 502/92) 31/3/94 **[3.12]**
- «Սոլիս Պալման ընդդեմ Պանամայի» (Solís Palma v Panama, 436/90) 18/7/94 [3.21]
- «Սոլորսանոն ընդդեմ Վենեսուելայի» (Solórzano v Venezuela, 156/83)..... [9.144]
- «Սոմերսն ընդդեմ Հունգարիայի» (Somers v Hungary, 566/93) 23/7/9..... [2.02], [23.61]
- «Սոյերսը, Մակ-Լինը և Մակ-Լինն ընդդեմ ճամայկայի»
(Sawyers, McLean and McLean v Jamaica (226, 256/87) 11/4/91 **[14.80]**
- «Սոնն ընդդեմ Կորեայի Հանրապետության»
(Sohn v Republic of Korea, 518/92) 19/7/95 **[6.20]**, **[18.38]**
- «Սոտելի Չամբալան ընդդեմ Զամբիայի» (Soteli Chambala v Zambia, 856/99) [11.67]
- «Սպակմոն ընդդեմ Նորվեգիայի» (Spakmo v Norway, 631/95) 5/11/99..... [11.14]
- «Սպրենգերն ընդդեմ Նիդերլանդների» (Sprenger v the Netherlands, 395/90) 31/3/92 [20.08],
[23.13], **[23.14]**, [23.16],
[23.24], [23.66], [23.67]
- «Ս. Ս.-ն ընդդեմ Նիդերլանդների» (S.S. v Netherlands, 191/01)
- «Ստալա Կոստան ընդդեմ Ուրուգվայի»
(Stalla Costa v Uruguay, 198/85) 9/7/87 [22.28], [22.35], **[22.50]**,
[22.51], [23.73], [23.75]
- «Ստասելովիչն ընդդեմ Բելառուսի» (Staselovich v Belarus, 887/99)..... [9.47]
- «Ստեֆենսն ընդդեմ ճամայկայի» (Stephens v Jamaica, 373/89) 18/10/95 [11.27], **[11.46]**, **[14.93]**
- «Ստյուարտն ընդդեմ Կանադայի» (Stewart v Canada, 538/93) 1/11/96 [1.53], [1.59], [9.88], **[12.33]**,
[12.36], [12.38], **[20.17]**,
[20.19], [20.56]
- «Գերարդուս Ստրիկն ընդդեմ Նիդերլանդների» (Gerardus Strik v Netherlands, 1001/01)..... [14.01]
- «Սուարես դե Գեռերոն ընդդեմ Կոլումբիայի»
(Suárez de Guerrero v Colombia, 45/79) 31/3/82 **[8.03]**, [8.04], [8.07], [8.15]
- «Սուգրիմն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Soogrim v Trinidad and Tobago, 362/89) [9.145]
- «Սուկլալն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Sooklal v Trinidad and Tobago, 928/00) [9.90], [14.116]
- «Սփենսն ընդդեմ ճամայկայի» (Spence v Jamaica, 59/94) [1.64]
- «Վայսն ընդդեմ Ավստրիայի» (Weiss v Austria, 1086/02) [1.51], [1.54], **[5.15]**, [5.17],
[6.17], [14.12]
- «Վալենսուելան ընդդեմ Պերուի» (Valenzuela v Peru, 309/88) 14/7/93 [23.13]
- «Վալենտինի դե Բազանոն ընդդեմ Ուրուգվայի»
(Valentini de Bazzano v Uruguay, 5/77) [9.151], [11.15]
- «Վալենտինն ընդդեմ Ֆրանսիայի» (Valentijn v France, 584/94) 31/10/95..... [5.16]
- «Սանտուլո Վալկադան ընդդեմ Ուրուգվայի» (Santullo Valcada v Uruguay, 9/77)..... [11.66]
- «Խիմենես Վական ընդդեմ Կոլումբիայի» (Jiménez Vaca v Colombia, 859/99)..... **[8.08]**, [8.14], [11.04]
- «Վակենհեյմն ընդդեմ Ֆրանսիայի» (Wackenheim v France, 854/99) [23.13], [23.17], [23.24],
[23.34], [25.04]
- «Վակումենն ընդդեմ Ֆրանսիայի» (Vakoumé v France, 822/98) [6.18]
- «Վեյսմանը և Լանսա Պերդոմոն ընդդեմ Ուրուգվայի»
Weismann and Lanza Perdomo v Uruguay (8/77) 3/4/80..... [11.15], [25.73]
- «Վան Ալփենն ընդդեմ Նիդերլանդների» (Van Alphen v Netherlands, 305/88), 23/7/90 [6.08], **[11.13]**
- «Վան դեր Հուվենն ընդդեմ Նիդերլանդների» (Van der Houwen v The Netherlands, 583/94) [11.31]
- «Վան Դյուզենն ընդդեմ Կանադայի» (Van Duzen v Canada (50/79) 7/4/82 [3.04], [15.05], **[15.07]**
- «Վան Մյուրսն ընդդեմ Նիդերլանդների»
(Van Meurs v Netherlands, 215/86) 13/7/90 **[14.50]**, **[14.67]**, [14.122]
- «Վանսան ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» Wanza v Trinidad and Tobago (683/96) [9.143]

«Վան Օրդն ընդդեմ Նիդերլանդների» (van Oord v Netherlands (658/95) 23/7/97	[23.23], [23.50]
«Վասիլսկիսն ընդդեմ Ուրուգվայի» (Vasilskis v Uruguay, 80/80) 31/3/83.....	[14.112]
«Գոմես Վասկեսն ընդդեմ Իսպանիայի» (Gómez Vazquez v Spain, 701/96)	[3.06], [3.22], [14.134]
«Չիրա Վարգաս Մաչուկան ընդդեմ Պերուի» (Chira Vargas Machuca v Peru, 906/00)	[22.53]
«Վարգասն ընդդեմ Չիլիի» (Vargas v Chile, 718/96) 26/7/99	[2.10], [10.14]
«Վարել Նունյեսն ընդդեմ Ուրուգվայի» (Varel Nuñez v Uruguay, 108/81) 22/7/83.....	[12.17], [12.18]
«Վ.Բ.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (V.B. v Trinidad & Tobago, 485/91).....	[14.93]
«Վելասկես Ռոդրիգեսն ընդդեմ Հոնդուրասի» (Velasquez Rodriguez v Honduras)	
«Վ.Ե.Մ.-ն ընդդեմ Իսպանիայի» (V.E.M. v Spain, 467/91) 16/7/93.....	[5.17]
«Վենիեն և Նիկոլան ընդդեմ Ֆրանսիայի» (Venier and Nicolas v France, 690-691/97)	[23.55]
«Վիդալ Մարտինսն ընդդեմ Ուրուգվայի» (Vidal Martins v Uruguay (57/79) 23/3/82	[4.14], [12.17]
«Վիսենտեն և այլք ընդդեմ Կոլումբիայի» (Vicente et al v Colombia, 612/95).....	[6.03] , [8.16], [9.39], [9.126], [14.75]
«Գուտիերես Վիվանկոն ընդդեմ Պերուի» (Gutiérrez Vivanco v Peru, 678/96).....	[14.65]
«Վ.Մ.Ռ.Բ.-ն ընդդեմ Կանադայի» (V.M.R.B. v Canada, 236/87) 18/7/88.....	[1.46], [13.10], [13.17] , [13.18], [13.19], [13.20], [14.07], [18.39]
«Վ. Յո.-ն ընդդեմ Նորվեգիայի» (V.Ø. v Norway, 168/84).....	[5.10]
«Վոսն ընդդեմ Նիդերլանդների» (Vos v Netherlands, 218/86) 29/3/89	[23.13], [23.21], [23.26], [23.38], [23.52]
«Յոհաննես Վոսն ընդդեմ Նիդերլանդների» (Johannes Vos v Netherlands, 786/97) 26/7/99	[6.20], [23.13], [23.16], [23.59]
«Վոլֆն ընդդեմ Պանամայի» (Wolf v Panama, 289/88) 26/3/92	[9.156], [9.163], [10.03], [14.43], [14.87], [14.89], [14.100]
«Վուլանն ընդդեմ Ֆինլանդիայի» (Vuolanne v Finland, 265/87) 7/4/89	[9.03], [9.06], [9.26] , [9.27], [9.48], [9.49], [9.92], [11.08], [11.58] , [12.26], [23.27]
«Տերան Խիխոն ընդդեմ Էկվադորի» (Ternn Jijón v Ecuador, 277/88) 26/3/92	[11.15], [11.31], [14.150]
«Տոմլինն ընդդեմ Ճամայկայի» (Tomlin v Jamaica, 589/94)	[14.140]
«Տոոնենն ընդդեմ Ավստրալիայի» (Toonen v Australia, 488/92) 31/3/94	[1.28], [1.51], [1.68], [1.98], [1.99], [3.38] , [16.12], [16.14] , [16.36] , [16.38], [17.19], [18.27], [23.25], [25.55]
«Տորեգրոսաս Լաֆուենտեն և այլք ընդդեմ Իսպանիայի» (Torregrosas Lafuente et al v Spain, 866/99).....	[14.105]
«Տորեսն ընդդեմ Ֆինլանդիայի» (Torres v Finland, 291/88) 2/4/90.....	[9.80], [11.08], [11.49] , [11.52], [11.57]
«Տորես Ռամիրեսն ընդդեմ Ուրուգվայի » (Torres Ramirez v Uruguay, 4/77)	[5.01], [6.15], [11.15], [25.73]
«Տորո Գեդումբեն ընդդեմ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության» (Toro Gedumbe v Democratic Republic of the Congo, 641/95)	[22.53]
«Տրեբուտիենն ընդդեմ Ֆրանսիայի» (Trabutien v France 421/90) 18/7/94	[5.16]
«Ցիկլինն ընդդեմ Կանադայի» (Cziklin v Canada, 741/97)	
«Ուայթն ընդդեմ Մադագասկարի» (White v Madagascar, 115/82).....	[9.39]
«Ուայնբերգեր Վեյսն ընդդեմ Ուրուգվայի» (Weinberger Weisz v Uruguay, 28/78)	[15.04]
«Ու. Բ. Է.-ն ընդդեմ Նիդերլանդների» (W.B.E. v The Netherlands, 432/90) 23/10/92	[11.39] , [14.73]
«Ուեստերմանն ընդդեմ Նիդերլանդների» (Westerman v Netherlands, 682/96) 3/11/99	[17.25]
«Ուիլյամսն ընդդեմ Ճամայկայի» (Williams v Jamaica, 609/95) 4/11/97	[8.32], [9.52]
«Ուինատան ընդդեմ Ավստրալիայի» (Winata v Australia (930/00)	[1.112], [13.02], [20.21] , [20.24], [20.25], [20.26], [20.56], [21.32]

- «Ուլաջինը և Կայսն ընդդեմ Նիդերլանդների» (Oulajin & Kaiss v Netherlands, 406, 426/90)
- «Ուոլդմանն ընդդեմ Կանադայի» (Waldman v Canada, 694/96) 3/11/99 [1.28], [3.05], [17.32],
[23.06], [23.13], [23.59], **[23.63]**,
[23.64], **[23.76]**, [23.104], [24.45]
- «Ուոլենն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Wallen v Trinidad and Tobago, 576/94) [3.29]
- «Ուոլֆն ընդդեմ Պանամայի» (Wolf v Panama, 289/88)
- «Ուոլքերը և Ռիչարդսն ընդդեմ ճամայկայի»
(Walker and Richards v Jamaica, 639/95) 28/7/97 **[9.144]**
- «Ու. Ջ. Ջ.-ն ընդդեմ Նիդերլանդների»
(W.J.H v The Netherlands, 408/90) 22/7/92 [14.73], **[14.146]**, [14.147]
- «Ու. Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (U.S. v Finland, 197/02) [9.71]
- «Փարքանյին ընդդեմ Հունգարիայի» (Párkányi v Hungary, 410/1990)
- «Փաուգերն ընդդեմ Ավստրիայի» (Pauger v Austria, 415/90)
- «Փ. Է.-ն ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (P.E. v FRANCE, CAT 193/01)
- «Փեննանթն ընդդեմ ճամայկայի» (Pennant v Jamaica, 647/95) 20/10/98 **[9.60]**, [9.61], [9.141]
- «Փիանդիոնգն ընդդեմ Ֆիլիպինների» (Piandiong v Philippines, 869/99) **[1.54]**
- «Փինքնյին ընդդեմ Կանադայի» (Pinkney v Canada, 27/78) 29/10/81 [1.67], **[9.164]**, [12.24],
[16.10], [16.21], [16.24],
[18.19], [19.05]
- «Փիրթն ընդդեմ ճամայկայի» (Peart v Jamaica, 464, 482/91) 19/7/95 **[14.122]**, **[14.124]**
- «Փոթերն ընդդեմ Նոր Զելանդիայի» (Potter v New Zealand, 632/95) [9.148]
- «Փոլ Քելլին ընդդեմ ճամայկայի» (Paul Kelly v Jamaica)
- «Գարսիա Փոնսն ընդդեմ Իսպանիայի»
(Garcia Pons v Spain, 454/91) 30/10/95 [14.07], [23.13], [23.61]
- «Փ.Ս.-ն ընդդեմ Դանիայի» (P.S. v Denmark, 397/90) 22/7/92 **[3.23]**, **[6.25]**, [6.27], [19.11]
- «Փրաթը և Մորգանն ընդդեմ ճամայկայի»
(Pratt and Morgan v Jamaica, 210/86, 225/87) 6/4/89 **[6.14]**, **[6.20]**, [9.61], [14.94],
[14.103], **[14.122]**
- «Փրայսն ընդդեմ ճամայկայի» Price v Jamaica (572/94) [8.24]
- «Քագասը, Բուտինը և Աստիլլերոն ընդդեմ Ֆիլիպինների»
(Cagas, Butin and Astillero v Philippines, 788/97) **[14.72]**
- «Քանանան ընդդեմ Զաիրի» (Kanana v Zaire, 366/89) [9.34], [9.145]
- «Քարբալլան ընդդեմ Ուրուգվայի» (Carballal v Uruguay, 33/78) [11.15], [14.84]
- «Ք.Բ.Դ.-ն ընդդեմ Նիդերլանդների» (C.B.D. v The Netherlands, 394/90) 22/7/92 [5.01], [8.53]
- «Քելլին ընդդեմ ճամայկայի» (Kelly v Jamaica, 253/87) 8/4/91 [1.51], [8.24], [9.139], **[11.25]**,
[14.75], [14.79], **[14.90]**, [14.92], [14.94],
[14.102], **[14.113]**, [14.118]
- «Քելլին ընդդեմ ճամայկայի» (Kelly v Jamaica, 537/93) 17/7/96 **[14.83]**, [14.84]
- «Քեմփբելն ընդդեմ ճամայկայի» (Campbell v Jamaica, 248/87) [6.26], [8.24], [14.92]
- «Քեմփբելն ընդդեմ ճամայկայի» (Campbell v Jamaica, 307/88) 24/3/93 **[14.45]**
- «Քեմփբելն ընդդեմ ճամայկայի» (Campbell v Jamaica, 618/95) 20/10/98 [9.141], **[14.114]**,
[14.120]
- «Քենեդին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի»
(Kennedy v Trinidad and Tobago (845/98) [8.22], **[8.30]**, **[8.31]**, **[9.142]**, [11.15A],
[14.09], [14.16], **[25.22]**, **[25.29]**,
[25.30], **[25.35]**, [25.37], [25.39], [25.40]
- «Քինդլերն ընդդեմ Կանադայի» (Kindler v Canada, 470/91) 30/7/93 [1.22], [1.59], [1.62], [1.64],
[3.32], [3.33], **[4.21]**, **[8.33]**,
[8.34], [8.35], [8.36], **[8.42]**, [9.53],
[13.05], [23.13]
- «Ք. Լ. Բ. Ու.-ն ընդդեմ Ավստրալիայի» (K.L.B.W. v Australia, 499/92) [2.03]
- «Քյոնյե և Քյոնյե ընդդեմ Հունգարիայի»
(Könye and Könye v Hungary, 520/92) 7/4/94 **[2.03]**, [2.06], **[2.11]**, [2.12],
[2.13], [2.14]

- «Ք.-ն ընդդեմ Ավստրալիայի» (C v Australia, 900/99) [1.59], **[6.05]**, [9.28], **[9.49]**, [9.80],
[9.81], [9.83], [9.92], [11.10], **[11.17]**,
 [11.17A], [11.56], **[11.61]**, [11.62],
 [11.64], [11.65A]
- «Բոերիելը և Աուրիկն ընդդեմ Նիդեռլանդների»
 (Coeriel and Aurik v Netherlands, 453/91) 31/10/94 **[16.02]**, **[16.03]**, **[16.04]**, **[16.15]**,
 [16.16], [17.18], [23.62]
- «Բոլինսն ընդդեմ ճամայկայի» (Collins v Jamaica, 356/89) [14.116]
- «Բոքսն ընդդեմ Կանադայի» (Cox v Canada, 539/93) 31/10/94 [1.53], **[3.33]**, [8.34], [9.02],
 [9.59], [9.65], [14.56]
- Քվեբեկի լեզուների գործ *տե՛ս* «Բալանթայնը, Ղևիդսոնը և Մակինթայրն ընդդեմ Կանադայի» *‘Quebec Languages Case’* (Ballantyne, Davidson, and McIntyre v Canada, 359, 385/89) 31/3/93,
 «Քրեսն ընդդեմ Նիդեռլանդների» (Croes v Netherlands, 164/84) 7/11/88 [3.29], **[8.17]**, [8.18]
- «Ք. Ֆ.-ն ընդդեմ Կանադայի» (C.F. v Canada, 118/81) 12/4/85 **[6.06]**, **[6.41]**, [6.42], [6.44]
- «Օլո Բահամոնդեն ընդդեմ Հասարակածային Գվինեայի»
 (Oló Bahamonde v Equatorial Guinea, 468/91) 20/10/93 [11.04], [12.15], **[14.14]**,
 [14.17], **[14.29]**
- Օմինայակը և Լյուբիկոն լճի ցեղախումբն ընդդեմ Կանադայի»
 (Ominayak and the Lubicon Lake Band v Canada, 167/84) 26/3/90 [1.114], **[3.15]**, [6.06], **[6.16]**,
 [6.18], [6.28], [6.35], [7.22],
[24.28], [24.29], **[24.30]**, [24.36]
- «Օ.Յ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» O.J. v Finland (419/90) [1.46]
- «Օսբորնն ընդդեմ ճամայկայի» (Osbourne v Jamaica, 759/97) [6.26], [9.90]
- «Վան Օրդն ընդդեմ Նիդեռլանդների» (van Oord v Netherlands (658/95) 23/7/97 **[23.23]**, [23.50]
- «Ռոդրիգես Օրեխուելան ընդդեմ Կոլումբիայի»
 (Rodríguez Orejuela v Colombia (848/99) **[14.62]**, [14.63]
- «Օրտեգան ընդդեմ Էկվադորի» (Ortega v Ecuador, 481/91) [9.145]
- «Օուլաջինը և Կաիսն ընդդեմ Նիդեռլանդների»
 (Oulajin and Kaiss v Netherlands, 406 & 426/90) [20.05], [23.13], [23.14], [23.16],
 [23.24], **[23.65]**
- «Օ. Ֆ.-ն ընդդեմ Նորվեգիայի» (O.F. v Norway, 158/83) 26/10/84 **[14.108]**
- «Ֆ. Ա.-ն ընդդեմ Նորվեգիայի» (F.A. v Norway, 18/00) [1.49]
- «Ֆաբրիկանտն ընդդեմ Կանադայի» (Fabrikant v Canada, 970/01) [8.41A], [9.162]
- «Ֆաբրիովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության»
 (Fábryová v Czech Republic, 765/97) **[23.108]**
- «Ֆալս Բորդան և այլք ընդդեմ Կոլումբիայի»
 (Fals Borda et al v Colombia, 46/79) 27/7/82 **[14.35]**, [14.36]
- «Ֆանալին ընդդեմ Իտալիայի» (Fanali v Italy, 75/80) 31/3/83 **[5.07]**
- «Ֆեյն ընդդեմ Կոլումբիայի» (Fei v Colombia, 514/92) [3.18], **[14.42]**, [14.58], **[20.50]**
- «Սինեյրո Ֆերնանդեսն ընդդեմ Իսպանիայի» (Sineiro Fernández v Spain, 1007/01) [14.134]
- «Ֆիլաստրեն և Բիզուարեն ընդդեմ Բոլիվիայի»
 (Fillastre and Bizouarn v Bolivia, 336/88) 5/11/91 [1.101], **[6.29]**, **[11.37]**
- «Ֆիլիպն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի»
 (Phillip v Trinidad and Tobago, 594/92) [6.24], [9.141], **[14.78]**
- «Ֆորբսն ընդդեմ ճամայկայի» (Forbes v Jamaica, 649/95) [9.141]
- «Ֆորիսոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Faurisson v France, 550/93) 8/11/96 [1.68], [6.20], [6.27],
 [18.20], [18.41], [18.57],
[18.58], [18.62]
- «Ղես Ֆորս Վալդերոդեն և Կամերլանդերն ընդդեմ Չեխիայի Հանրապետության»
 (Des Fours Walderode and Kammerlander v Czech Republic, 747/97) [23.44]
- «Ֆրենսիսն ընդդեմ ճամայկայի» (Francis v Jamaica, 320/88) 24/3/93 [9.36], [9.145]
- «Ֆրենսիսն ընդդեմ ճամայկայի» (Francis v Jamaica, 606/94) 25/7/95 **[9.57]**
- «Ֆրենսիսն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Francis v Trinidad and Tobago, 899/99) [9.143]
- «Ֆրիմենթլն ընդդեմ ճամայկայի» (Freemantle v Jamaica, 625/95) [11.31], [11.66]

«Ֆուլանն ընդդեմ Ֆրանսիայի» (Foin v France, 666/95) 3/11/99	[1.64], [23.24], [23.53], [23.54]
«Ֆուենզալիդան ընդդեմ Էկվադորի» (Fuenzalida v Ecuador, 480/91) 12/7/96	[14.125]

Խոշտանգումների դեմ կոմիտե

«Ա. Դ.-ն ընդդեմ Նիդերլանդների» (A.D. v Netherlands, CAT 96/97)	[9.71]
«Ալանն ընդդեմ Շվեյցարիայի» (Alan v Switzerland, CAT 21/95)	[9.70]
«Ա. Լ. Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (A.L.N. v Switzerland, CAT 90/97)	[9.71]
«Ահմեդ Քարուին ընդդեմ Շվեդիայի» (Ahmed Karoui v Sweden, CAT 185/01)	[9.77]
«Այասն ընդդեմ Շվեդիայի» (Ayas v Sweden, CAT 97/97)	[9.70]
«Ա.-ն ընդդեմ Նիդերլանդների» (A v Netherlands, CAT 91/97)	[9.70]
«Ա. Ս.-ն ընդդեմ Շվեդիայի» (A.S. v Sweden, CAT 149/99)	[9.76]
«Արկաուզ Արանան ընդդեմ Ֆրանսիայի» (Arkauz Arana v France, CAT 63/97)	[9.75], [9.84]
«Բարակատն ընդդեմ Թունիսի» (Barakat v Tunisia, CAT 14/94)	[3.21]
«Բարակետն ընդդեմ Թունիսի» (Baraket v Tunisia, CAT 60/96)	[9.116]
«Էնկարնասիոն Բլանկո Աբադն ընդդեմ Իսպանիայի» (Encarnacion Blanco Abad v Spain, CAT 59/96)	[9.115], [9.116], [9.117]
«Բ. Ս.-ն ընդդեմ Կանադայի» (B.S. v Canada, CAT 166/00)	[9.68]
«Գ. Կ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (G.K. v Switzerland, CAT 219/02)	[9.75]
«Գ. Ռ. Բ.-ն ընդդեմ Շվեդիայի» (G.R.B. v Sweden, CAT 83/97)	[9.13], [9.14], [9.15], [9.17], [9.25]
«Զ. Զ.-ն ընդդեմ Կանադայի» (Z.Z. v Canada, CAT 1123/99)	[9.72]
«Է. Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (E.A. v Switzerland, CAT 28/95)	[9.71]
«Էլմին ընդդեմ Ավստրալիայի» (Elmi v Australia, CAT 120/98)	[9.14], [9.15]
«Էմեյն ընդդեմ Շվեյցարիայի» (Aemei v Switzerland, CAT 34/95)	[9.70], [9.85]
«Էնկարնասիոն Բլանկո Աբադն ընդդեմ Իսպանիայի» (Encarnacion Blanco Abad v Spain, CAT 59/96)	[9.115], [9.116], [9.117]
«Թալան ընդդեմ Շվեդիայի» (Tala v Sweden (CAT 43/96)	[9.69]
«Թ. Փ. Ս.-ն ընդդեմ Կանադայի» (T.P.S. v Canada, CAT 99/97)	[9.87]
«Լ. Ա. Օ.-ն ընդդեմ Շվեդիայի» (I.A.O. v Sweden, CAT 65/97)	[9.68]
«Ի. Ա. Օ.-ն ընդդեմ Շվեդիայի» (I.A.O. v Sweden, CAT 65/97)	
«Խանն ընդդեմ Կանադայի» (Khan v Canada, CAT 15/94)	[9.70]
«Կ. Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (K.N. v Switzerland, CAT 94/97)	[9.71]
«Հալիմի-Նեժիբին ընդդեմ Ավստրիայի» (Halimi-Nedzibi v Austria, CAT 8/91)	[9.114]
«Հայդինն ընդդեմ Շվեդիայի» (Haydin v Sweden, CAT 101/97)	[9.70]
«Հ. Դ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (H.D. v Switzerland, CAT 112/98)	[9.70]
«Հ. Մ. Հ. Լ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (H.M.H.I. v Australia, CAT 177/01)	[9.17]
«Հ. Ք. Հ.-ն ընդդեմ Շվեդիայի» (H.K.H. v Sweden, CAT 204/02)	[9.78]
«Մոհամեդն ընդդեմ Հունաստանի» (Mohamed v Greece, CAT 40/96)	[9.83]
«Մուտոմբոն ընդդեմ Շվեյցարիայի» (Mutombo v Switzerland, CAT 13/93)	[9.70]
«Մ. Փ. Ս.-ն ընդդեմ Ավստրալիայի» (M.P.S. v Australia, CAT 138/99)	[9.13]
«Յ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (Y v Switzerland, CAT 18/94)	[9.71]
«Ն. Փ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (N.P. v Australia, CAT 106/98)	[9.71]
«Պաեզն ընդդեմ Շվեդիայի» (Paez v Sweden, CAT 39/96)	[9.84]
«Պ. Ք. Լ.-ն ընդդեմ Կանադայի» (P.Q.L. v Canada, CAT 57/96)	
«Ջեմայլը և այլք ընդդեմ Հարավսլավիայի» (Dzemajl et al v Yugoslavia, CAT 161/00)	[9.12], [9.13], [9.37], [9.38], [9.117], [9.122]
«Ջ. Ու. Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (J.U.A. v Switzerland, CAT 100/97)	[9.71]
«Ռոսենմանն ընդդեմ Իսպանիայի» (Rosenmann v Spain, CAT 176/00)	[9.130]
«Ռ. Ս.-ն ընդդեմ Ավստրիայի» (R.S. v Austria, CAT 111/98)	[9.119]
«Ս. Մ. Ռ.-ն և Մ. Մ. Ռ.-ն ընդդեմ Շվեդիայի» (S.M.R. and M.M.R. v Sweden, CAT 103/98)	[9.70]
«Ս. Ս.-ն և Ս. Ա.-ն ընդդեմ Շվեդիայի» (S.S. and S.A. v Sweden, CAT 142/99)	[9.71]

«Ս.Ս.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (S.S. v Netherlands, CAT 191/01)	[9.17], [9.71]
«Ս. Վ.-ն ընդդեմ Կանադայի» (S.V. v Canada, CAT 49/96)	[9.13]
«Վ. Խ. Ն.-ն և Յ. Ն.-ն ընդդեմ Շվեդիայի» (V.X.N. and H.N v Sweden, CAT 130-131/99)	
«Վնիմն ընդդեմ Կանադայի» (Vnim v Canada (CAT 119/98)	[6.31]
«Վ. Ք. Ն.-ն և Յ. Ն.-ն ընդդեմ Շվեդիայի» (V.X.N. and H.N. v Sweden, CAT 130-131/99).....	[9.13], [9.68]
«Փ. Է.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (P.E. v France, CAT 193/01)	[9.108]
«Փ. Ս. Փ. Կ.-ն ընդդեմ Շվեդիայի» (P.M.P.K. v Sweden, CAT 30/95)	[6.19]
«Փ. Ք. Լ.-ն ընդդեմ Կանադայի» (P.Q.L. v Canada, CAT 57/96)	[9.71]
«Ահմեդ Քարուի ընդդեմ Շվեդիայի» (Ahmed Karoui v Sweden, CAT185/01).....	[9.77]
«Մ. Ն.-ն ընդդեմ Իսպանիայի» (X v Spain, CAT 23/95).....	[9.83]
«Ք.-ն ընդդեմ ՄԹ» (X v UK) (Gay News case) (1982) 28 DR 77	[18.41]
«Ք.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (X v Netherlands, CAT 41/96)	[9.70]
«Ք.-ն, Յ.-ն և Ջ.-ն ընդդեմ Շվեդիայի» (X, Y and Z v Sweden, CAT 61/96)	
«Բորբանն ընդդեմ Շվեդիայի» (Korban v Sweden, CAT 88/97).....	[9.79] [9.71]
«Ֆալակաֆլակին ընդդեմ Շվեդիայի» (Falakaflaki v Sweden, CAT 89/97)	[9.70]

Ռասայական խտրականության վերացման կոմիտե

«Ահմադն ընդդեմ Դանիայի» (Ahmad v Denmark, CERD 16/99).....	[18.53]
«Ահմեդ Հաբասին ընդդեմ Դանիայի» (Ahmed Habassi v Denmark, CERD 10/97)	[23.100]
«Բարբարոն ընդդեմ Ավստրիայի» (Barbaro v Australia, CERD 7/95)	[6.09], [6.21] , [6.22]
«Բլանկոն ընդդեմ Նիկարագուայի» (Blanco v Nicaragua, 328/88).....	[6.34] , [9.145], [11.15]
«Բ. Ս. Ս.-ն ընդդեմ Ավստրալիայի» (B.M.S. v Australia, CERD 8/96).....	[23.24]
«Բ.Ջ.-ն ընդդեմ Դանիայի» (BJ. v Denmark, CERD 17/99)	[23.103]
«Ջ. Ու.Բ.Ս.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (Z.U.B.S. v AUSTRALIA, CERD 6/95)	
«Լ. Ք.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (L.K. v Netherlands, CERD 4/91)	[1.82], [18.52]
«Հագանն ընդդեմ Ավստրալիայի» (Hagan v Australia, CERD 26/02).....	[18.54]
«Յիլմազ-Դոգան ընդդեմ Նիդեռլանդների» (Yilmaz-Dogan v Netherlands (CERD 1/84).....	[18.52], [23.86]
«Նարայնենն ընդդեմ Նորվեգիայի» (Narrainen v Norway, CERD 3/91)	[14.55]
«Ռասայական խտրականության հարցերի փաստագրական և խորհրդատվական կենտրոնն ընդդեմ Դանիայի» (Documentation and Advisory Centre on Racial Discrimination v Denmark, CERD 28/03)	[3.08A]
«Ս.Փ.-ն և Մ.Փ.-ն ընդդեմ Դանիայի» (C.P. and M.P. v Denmark, CERD 51/94)	[6.09]

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով և դատարան

«Ա. Դ. Թ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (A.D.T. v UK, 2001, 31 EHRR 803)	[16.38]
«Ահմեդն ընդդեմ Ավստրիայի» (Ahmed v Austria)	[9.14]
«Ահմուտն ընդդեմ Նիդեռլանդների» (Ahmut v Netherlands, App. No. 21702/93), judgment of 28 November 1996.....	[20.21]
«Ամուուրն ընդդեմ Ֆրանսիայի» (Amuur v France, 1996) 22 EHRR 533	[11.18]
«Այդինն ընդդեմ Թուրքիայի» (Aydin v Turkey, 1998) 25 EHRR 251	[9.05]
«Անդրոնիկուն ընդդեմ Կիպրոսի» (Andronicou v Cyprus, Case 86/1996/705/897), judgment of 25 August 1997, (1998) 3 BHRR 389	[8.05]
«Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի» (Belilos v Switzerland, 1988) 10 EHRR 466	[25.18]
«Բրաննիգանը և Մակբրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brannigan and McBride v UK, Series A No. 258B (1994) 17 EHRR 539	[25.74], [25.75]
«Բուրգհարտն ընդդեմ Շվեյցարիայի» (Burghartz v Switzerland, Series A No. 280B)	[23.62]
«Գարուդին ընդդեմ Ֆրանսիայի» (Garaudy v France, App. No. 65831/01)	[18.58]
«Գուդվինն (Քրիստին) ընդդեմ Միացյալ Թագավորության» (Goodwin (Christine) v UK, 2002) 35 EHRR 18	[20.30]
«Դադգեոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Dudgeon v UK 1982) 4 EHRR 149	[16.38]
«Դե Յոնգը, Բալիեթը և Վան դեն Բրինկն ընդդեմ Նիդեռլանդների»	

(De Jong, Baljet and Van den Brink v Netherlands, 1986) 8 EHRR 20.....	[11.58]
«Զ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Z v UK).....	[9.12]
«Թիննելլի և Սոնսը և Մակելդաֆն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Tinnelly & Sons and McElduff v UK, 1999) 27 EHRR 249	[23.109]
«Թ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (T v UK, 2000) 30 EHRR 121	[14.132], [21.16]
«Ի.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (I v UK, 2003) 36 EHRR 53.....	[20.30]
«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v UK, 1979-80) 2 EHRR 25	[9.05], [9.31]
«Լասկին, Ջագարդը և Բրաունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Laskey, Jaggard and Brown v UK, 1997) 24 EHRR 39.....	[16.35]
«Լեհիդեյքս և Իսորնի ընդդեմ Ֆրանսիայի» (Lehideux and Isorni v France, 2000) 30 EHRR 665	[18.58]
«Լ.-ն և Վ.-ն ընդդեմ Ավստրիայի» (L and V v Austria), judgment of 9 January 2003	[16.38]
«Լ. Ս. Բ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (L.C.B. v UK, 1999) 27 EHRR 212	[8.51]
«Լուզիդու ընդդեմ Թուրքիայի» (Louzidou v Turkey, 1995) 20 EHRR 99.....	[25.33]
«Հանդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Handyside v UK, 1979) 1 EHRR 737	[1.96], [18.23]
«Մակկանը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann and Others v UK, Series A, No. 324), judgment of 27 September 1995	[8.05]
«Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի» (Mahmut Kaya v Turkey).....	[9.12]
«Մոդինոսն ընդդեմ Կիպրոսի» (Modinos v Cyprus, 1993) 16 EHRR 485	[16.38]
«Յանգը, Ջեյմսը և Ուեբստերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Young, James and Webster v UK 1982) 4 EHRR 38	[19.28]
«Նորիսն ընդդեմ Իռլանդիայի» (Norris v Ireland, 1991) 13 EHRR 186.....	[16.38]
«Շեֆիլդը և Հորշամն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sheffield and Horsham v UK, 1999) 27 EHRR 163.....	[20.30]
«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chahal v UK, 1997) 23 EHRR 413	[11.18]
«Ջոնսթոնն ընդդեմ Իռլանդիայի» Johnston v Ireland, Series A No. 112, (1987) 9 EHRR 203.....	[20.32]
«Ռոուն և Դեյվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Rowe and Davis v UK, 2000) 30 EHRR 1.....	[23.109]
««Սանդի Թայմս» ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sunday Times v UK, 1979-80) 2 EHRR 245.....	[1.67]
«Ս. Լ.-ն ընդդեմ Ավստրիայի» (S.L. v Austria), judgment of 9 January 2003.....	[16.38]
«Ստյերնան ընդդեմ Ֆինլանդիայի» (Stjerna v Finland, 1997) 24 EHRR 195.....	[16.16]
«Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v UK, No 161, 1989) 11 EHRR 439.....	[1.62], [9.53]
«Վան դեր Սլայս, Չուդերվելդ և Կլապե ընդդեմ Նիդերլանդների» (Van der Sluijs, Zuiderveld and Klappe v Netherlands, 1991) 13 EHRR 461	[11.58]
«Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (V v UK, 2000) 30 EHRR 121	[14.132], [21.16]
«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Osman v UK, 2000) 29 EHRR 245.....	[1.79], [1.80], [9.12]
«Ֆիթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fitt v UK, 2000) 30 EHRR 480.....	[23.109]
«X ընտանիքն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Family v UK, 1983) D & R 30	[20.21]

Եվրոպական դատարան

«Էնդերբին ընդդեմ Ֆրանսիայի առողջապահության գերատեսչության» (Enderby v Frenchay Health Authority)	[1994] 1 CMLR 8 [23.93]
---	-------------------------

Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողով

«Դոնասոն Լայթ» (Գրենադա) (Donasson Knights (Grenada)), Case no 12.028, Report no 47/01, Annual Report of the Inter-American Commission on Human Rights 2000, Vol II.....	[8.28]
--	--------

«Լուսիո Պարադա Սեա և այլք» (Էլ Սալվադոր) (Lucio Parada Cea et al (El Salvador)), Case no 10.480, Report no 1/99, Annual Report of the Inter-American Commission on Human Rights 1998, Vol II[9.127]

«Ռաֆայել Մերրեր-Մազորա և այլք» (Միացյալ Նահանգներ) (Rafael Merrer-Mazorra et al (United States)), Case no 9903, Report no 51/01, Annual Report of the Inter-American Commission on Human Rights 2000, Vol II [11.18]

«Ռուդոլֆ Բապտիստ» (Գրենադա) (Rudolphe Baptiste (Grenada)), Case no 11.743, Report no 38/00, Annual Report of the Inter-American Commission on Human Rights 1999, Vol I[8.28]

«Սամուել Ալֆոնսո Կատալան Լինկոլեո» (Չիլի) (Samuel Alfonso Catalnn Lincoleo (Chile)), Case no 11.771, Report no 61/01, Annual Report of the Inter-American Commission on Human Rights, Vol II..... [9.127]

Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան

«Իլերը, Կոնստանտինը և Բենջամինը ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Hilaire, Constantine and Benjamin et al v Trinidad and Tobago, Series C/94), judgment of 21 June 2002..... [8.28]

«Անձին կալանքից ազատելու իրավական միջոցներն արտակարգ իրավիճակներում. խորհրդատվական կարծիք» (Habeas Corpus in Emergency Situations, Advisory Opinion) OC-88/87, 30 January 1987 [25.68]

«Մայանյա (Սումո) Ավաս Թինյի համայնքն ընդդեմ Նիկարագուայի» (Mayagna (Sumo) Awas Tingni Community v Nicaragua), Series C/79,judgment of 16 April 2001 [24.42]

«Մերի և Քերրի Դանն (Միացյալ Նահանգներ)» (Mary and Carrie Dann (United States)), Case No 11.140, Report No. 75/02..... [24.42]

«Յանոմանի ցեղի հնդկացիներն ընդդեմ Բրազիլիայի» (Yanomani Indians v Brazil, Case No. 7615, (1985) Inter-American Yearbook on Human Rights 264..... [24.42]

«Վելասկես-Ռոդրիգեսն ընդդեմ Հոնդուրասի» (Velasquez-Rodriguez v Honduras, 1988) 9 HRLJ 212.....[1.78], [1.80], [9.12], [9.125]

Արդարադատության միջազգային դատարան

«Արևմտյան Սահարա, խորհրդատվական կարծիք» (Western Sahara Advisory Opinion [1975]) ICJ Rep 12[7.10], [7.12]

«Բարսելոնայի աջակցություն» (Barcelona Traction Case) [1.44]

«Գերմանիան ընդդեմ ԱՄՆ-ի» (Լագրանդ) (Germany v USA (LaGrand) [1999]) ICJ Rep 9; [2001] ICJ Rep 104 [1.110]

«Խորհրդատվական կարծիք Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի ուժի մեջ մտնելու վերաբերյալ վերապահումների իրավական նշանակության մասին» (Advisory Opinion on the Effect of Reservations on the Entry into Force of the American Convention on Human Rights, 1982) 22 ILM 37 [25.18]

«Խորհրդատվական կարծիք պետությունների համար Նամիբիայի տարածքում Հարավային Աֆրիկայի Հանրապետության շարունակական վերահսկողության իրավական հետևանքների մասին (Հարավարևմտյան Աֆրիկա) (Advisory Opinion on the Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South-West Africa)[1971]) ICJ Rep 16..... [22.06], [24.25]

«Վերապահումներ ցեղասպանության վերաբերյալ»
(Reservations to the Genocide Case[1951]) ICJ Rep 15..... [25.14], [25.15], [25.33]

Իսրայել

«Իսրայելի խոշտանգումների դեմ հանրային կոմիտեն իսրայելի կառավարության և այլոց»
(The Public Committee Against Torture in Israel v The Government of Israel et al, HCJ 5100/94), decision of 6 September 1999[9.31], [9.128A]

Գաղտնի խորհուրդ

«Գլխավոր դատախազը (Կանադա) ընդդեմ Գլխավոր դատախազի (Օնտարիո)» (Attorney-General (Canada) v Attorney-General (Ontario)) [1937] AC 326 [1.28]

«Լեսան ընդդեմ Նոր Զելանդիայի գլխավոր դատախազի»
(Lesa v The Attorney-General of New Zealand) [1983] 2 AC 20 [12.31]

«Նոյել Ռայլին և այլք ընդդեմ գլխավոր դատախազի»
(Noel Riley et al v The Attorney-General (1981))..... [6.20]

«Փրաթը և Մորգանն ընդդեմ ճամայկայի գլխավոր դատախազի»
(Pratt and Morgan v The Attorney General for Jamaica) [1993] 3 WLR 995; [1994] 2 AC 1 [6.20], [9.53], [11.15A], [25.29], [25.39]

Ավստրալիա

Ալվարոյի գործ (Alvaro's Case)[6.21], [6.22]

«Կաբլը ընդդեմ պետական դատախազության տնօրենի»
(Kable v Director of Public Prosecutions (NSW) (1996)) 189 CLR 51[11.22]

«Համագործակցությունն ընդդեմ Թասմանիայի»
(Commonwealth v Tasmania, 1983) 158 CLR 1 [1.28]

«Մակգինտին ընդդեմ Արևմտյան Ավստրալիայի»
(McGinty v Western Australia, 1996) 186 CLR 140 [22.28]

«Մորիսն ընդդեմ Ռ-ի» (Morris v R, 1987)..... [6.22]

«Պոլյուխովիչն ընդդեմ Ավստրալիայի համագործակցության»
(Polyukhovich v Commonwealth of Australia, 1991) 172 CLR 501 [15.11]

Կանադա

«Ադլերն ընդդեմ Օնտարիոյի» (Adler v Notario [1996]) 3 SCR 609 [23.63]

«ԱրՋեյԱր-Մակդոնալդն ընդդեմ Կանադայի» (Գլխավոր դատախազ)
RJR-MacDonald v Canada (Attorney-General) (1995) 3 SCR 199 [3.14]

«Բլինդերն ընդդեմ Կանադայի ազգային երկաթուղու»
(Bhinder v Canadian National Railway) Co[1985] 2 SCR 561 [17.17]

«Բուզարին ընդդեմ Իրանի Իսլամական Հանրապետության»
(Bouzari v Islamic Republic of Iran [2002]) Carswell Ont 1469 [9.129]

«Միացյալ Նահանգներն ընդդեմ Բերնսի» (US v Burns)..... [8.35]

«Ռ.-ն ընդդեմ Բիգ Մ Դրագ Մարտի» (R v Big M Drug Mart [1985]) 1 SCR 295 [18.43]

«Ռ.-ն ընդդեմ Օակսի» (R v Oakes [1986]) 26 DLR (4d) 200 [18.43]

Նոր Զեւանդիա

«Տե Ռունանգա օ Վարեկաուրի Ռեկոհու ընդդէմ գլխավոր դատախազի»

(Te Runanga o Wharekauri Rekohu v Attorney-General) [24.20]

Նորվեգիա

Աուրսունդենի գործ (Aursunden Case, 1997) [1.48], [6.04], [24.43]

Թամնեսի գործ (Tamnes Case, 1997) [6.04], [24.43]

Կորսյոֆյելի գործ (Korssjøfjell Case, 1988) [6.04], [24.43]

Սելբուի գործ (Selbu Case) [6.04]

Միացյալ Թագավորություն

«Դերբիշիրի Երկրամասի խորհուրդն ընդդէմ «Թայմզ» լրագրերի»

(Derbyshire County Council v Times Newspapers) [1992] QB 770 [1.30]

«Ռ.-ն ընդդէմ Բարթլի և Մետրոպոլիսի ոստիկանության լիազորի և այլոց, Պինոչետի անունից»

(R v Bartle and the Commissioner of Police for the Metropolis and Others, ex parte

Pinochet [1999] 2 WLR 827 [9.129]

«Քաղաքացիական ծառայության միությունների խորհուրդն ընդդէմ քաղաքացիական

ծառայության նախարարի» (Council of Civil Service Unions v Minister for Civil Service)

[1985] AC 374 [13.19]

ԱՄՆ

«Բրաունն ընդդէմ Կրթության խորհրդի» (Brown v Board of Education) 347 US 483 (1954) [23.07]

«Կադիկն ընդդէմ Կարաձիչի» (Kadic v Karadzic) 70 F 3d 232 (2nd Cir, 1995) [9.15]

«Բլինտոնն ընդդէմ Ջոնսի» (Clinton v Jones, 117 S Ct 1636 (1997)) [14.13]

Համաձայնագրերի ցանկ

Այս ցանկում ներկայացված չեն հղումները Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին, առաջին և երկրորդ կամընտիր արձանագրություններին, քանի որ դրանք ընդգրկված են առարկայական ցանկում:

Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիա

ընդհանուր [5.06]

1969 թ. Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա

մասնակի չեղյալ հայտարարում [25.68]

հորիզոնական պարտավորություններ [1.78]

Իրավունքների և ազատությունների Կանադայի խարտիա

ընդհանուր..... [3.14], [8.33], [18.43], [18.57], [20.17], [23.63]

Հոդված 6 [8.33]

s 1 [18.57]

s 2(ա)-(բ) [18.57]

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն

ընդհանուր..... [7.21], [8.50], [8.51], [18.49], [18.50], [18.57]

համընդհանուր հարգանք մարդու իրավունքների նկատմամբ [1.44]

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա

ընդհանուր..... [101], [1.12], [6.01], [9.02], [9.03],
[9.04], [9.08], [9.11], [9.12], [9.16], [9.18],
[9.19], [9.23], [9.25], [9.31], [9.37], [9.38],
[9.79], [9.83], [9.107], [9.108], [9.113],
[9.116], [9.119],
[9.122], [9.129], [9.130], [9.176]

Հոդված..... [9.04], [9.06], [9.07], [9.09], [9.11], [9.12], [9.13],
[9.14], [9.17], [9.18], [9.31], [9.46], [9.64], [9.74], [9.122], [11.65]

Հոդված 1(1) [9.37]

Հոդված 2 [9.30], [9.31]

Հոդված 2(1) [9.12], [9.37], [9.109]

Հոդված 3 [6.19], [6.31], [9.13], [9.14], [9.17],
[9.67], [9.68], [9.69], [9.70], [9.71], [9.73],
[9.74], [9.75], [9.76], [9.78], [9.79], [9.83],
[9.84], [9.85], [9.86], [9.87], [9.108]

Հոդված 3(1) [9.69], [9.76], [9.77]

Հոդված 3(2) [9.69], [9.71], [9.74], [9.76], [9.77]

Հոդված 4 [9.109], [9.123], [9.129], [9.130]

Հոդված 5 [9.129], [9.130]

Հոդված 5(1) [9.129], [9.130]

Հոդված 5(1)(ա)-(գ) [9.130]

Հոդված 5(2)-(3) [9.129]

Հոդված 6(1) [9.129]

Հոդված	[9.129]
Հոդված 8	[9.130]
Հոդված 8(4)	[9.130]
Հոդված 9	[9.130]
Հոդված 9(1)	[9.130]
Հոդված 10.....	[9.03], [9.22], [9.102], [9.122]
Հոդված 11.....	[9.03], [9.22], [9.104], [9.122]
Հոդված 12.....	[9.03], [9.22], [9.113] , [9.114], [9.115], [9.116], [9.117], [9.122]
Հոդված 13	[9.03], [9.22], [9.113] , [9.115], [9.116], [9.117], [9.119], [9.122], [9.130]
Հոդված 14.....	[9.121] , [9.122], [9.130]
Հոդված 15.....	[9.107], [9.108], [9.114]
Հոդված 16.....	[9.03], [9.11], [9.12], [9.22] , [9.37], [9.122]
Հոդված 16(1)	[9.12], [9.22] , [9.122]
Հոդված 19	[9.75]
Հոդված 22.....	[9.76], [9.79], [9.83], [9.87]
Հոդված 22(4)	[9.73]
Հոդված 22(5)(բ).....	[6.01]
Հոդված 22(7)	[9.87], [9.115]
Հոդված 31	[25.42]

1979 թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

ընդհանուր.....	[112], [20.42], [21.22], [22.46], [23.03], [23.10], [23.40], [23.70], [23.94], [23.100], [23.101], [23.112], [25.42]
Հոդված 1.....	[23.19], [23.90]
Հոդված 2(1)(ե).....	[23.86]
Հոդված 2(ե)	[1.81]
Հոդված 2(զ).....	[23.101]
Հոդված 2(ե)	[23.101]
Հոդված 4.....	[22.56], [23.70], [23.77]
Հոդված 4(1)	[6.01]
Հոդված 5.....	[23.98]
Հոդված 5(ա)	[20.43]
Հոդված 7.....	[22.56]
Հոդված 8.....	[22.56]
Հոդված 10(զ)	[23.98]
Հոդված 12(2)	[23.70]
Հոդված 16.....	[20.42]
Հոդված 16(2)	[21.17]
Հոդված 18.....	[23.94]
Հոդված 28.....	[25.36]
1999 թ. կամընտիր արձանագրություն	[1.30], [1.36], [6.01]

Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին չրջանակային կոնվենցիա

ընդհանուր	[9.12]
-----------------	--------

Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիր (Հռչակագիր բարեկամական հարաբերությունների մասին)

ընդհանուր.....	[7.04], [7.05], [7.10], [7.11], [7.16]
----------------	--

Խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից բխող անձանց պաշտպանության մասին հռչակագիր

ընդհանուր..... [9.14]

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

ընդհանուր [101], [1.30], [1.49], [5.06], [5.10], [5.12], [5.16],
[9.12], [14.104], [16.35], [18.23], [18.24], [25.10],
[25.31], [25.33]
Հոդված 2..... [1.79], [9.12]
Հոդված 2(2) [8.05]
Հոդված 2(2)(բ)..... [15.12]
Հոդված 3..... [9.12], [9.14], [9.20], [23.34]
Հոդված 5(3) [25.75]
Հոդված 6..... [5.14]
Հոդված 8..... [5.14], [16.04], [16.35], [20.21], [20.30]
Հոդված 10..... [18.58]
Հոդված 11..... [5.12]
Հոդված 12 [20.30], [20.32]
Հոդված 14..... [1.60], [5.11], [5.14], [23.13]
Հոդված 15..... [25.74]
Հոդված 35(1) [1.49]
Արձանագրություն I [24.43]
Արձանագրություն II [18.23]

Պատենտների մասին եվրոպական կոնվենցիա

ընդհանուր..... [4.18]

1976 թ. ԱՄՆ-ի և Կանադայի միջև հանցագործների հանձնման մասին համաձայնագիր

ընդհանուր [4.21], [8.33]

Ժնևի կոնվենցիաներ, Լրացուցիչ արձանագրություն թիվ I

Հոդված 77(2) [21.49]

Փախստականների կարգավիճակի մասին ժնևի կոնվենցիա

ընդհանուր..... [9.83], [25.59]

Ցեղասպանության մասին կոնվենցիա

ընդհանուր..... 154
Վերապահումներ..... [25.16]

1990 թ. Գերմանիայի միավորման մասին համաձայնագիր

ընդհանուր..... [15.12]

1980 թ. Երեխաների միջազգային առևանգումների քաղաքացիական

հայեցակետերի մասին Հաագայի կոնվենցիա [21.46]]

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին**ԱՄԿ-ի թիվ 111 կոնվենցիա**

ընդհանուր..... [16.36]

1930 թ. Բռնի կամ հարկադրական աշխատանքի մասին ԱՄԿ-ի թիվ 29 կոնվենցիա

ընդհանուր..... [10.03]

1948 թ. Միավորումներ կազմելու ազատության և կազմակերպություններ**ստեղծելու իրավունքի մասին ԱՄԿ-ի կոնվենցիա** [19.10]**Անկախ երկրներում բնիկ և ցեղային ժողովուրդների վերաբերյալ****ԱՄԿ-ի թիվ 169 կոնվենցիա**

ընդհանուր..... [24.15]

1948 թ. ԱՄԿ-ի թիվ 78 կոնվենցիա

ընդհանուր..... [19.16], [19.20], [19.21]

Հոդված 3 [19.20]

Հոդված 10 [19.21]

1973 թ. Աշխատանքի ընդունվելու նվազագույն տարիքի մասին**ԱՄԿ-ի թիվ 138 կոնվենցիա** [21.43]**Մարդու իրավունքների միջամերիկյան կոնվենցիա**

ընդհանուր [5.02], [5.06]

1985 թ. Խոշտանգումները կանխելու և պատժելու մասին միջամերիկյան կոնվենցիա

Հոդված 2..... [9.10]

1966 թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին**միջազգային կոնվենցիա**ընդհանուր [112], [1.49], [1.82], [1.109], [6.01], [7.14],
[7.18], [14.55], [18.51], [18.52],
[23.03], [23.10], [23.25A],
[23.40], [23.86], [23.100], [23.112],
[24.16], [25.38]

Հոդված 1..... [18.54], [23.19], [23.100]

Հոդված 1(1) [18.52]

Հոդված 1(4) [23.70]

Հոդված 2 [7.14], [18.54]

Հոդված 2(1) [18.53]

Հոդված 2(1)(a)..... [18.54]

Հոդված 2(1)(դ)..... [1.81], [18.52], [18.53], [23.86]

Հոդված 2(դ) [23.100]

Հոդված 2(ե) [23.98]

Հոդված 2(2) [23.70], [23.77]

Հոդված 4..... [1.82], [18.51], [18.52], [18.54], [18.65], [23.08]

Հոդված 4(ա) [18.51], [18.52], [18.53]

Հոդված 5(ա) [14.55]

Հոդված 5(զ)	[7.14]
Հոդված 5(դ)	[23.19]
Հոդված 5(դ)(i)	[18.54]
Հոդված 5(դ)(ix)	[18.54]
Հոդված 5(ե)	[23.19]
Հոդված 5(ե)(i)	[23.86]
Հոդված 5(ե)(v)	[18.53]
Հոդված 5(ե)(vi)	[18.54]
Հոդված 5(զ)	[18.54]
Հոդված 6	[18.52], [18.53], [18.54], [23.100], [23.101], [23.102], [23.103]
Հոդված 7	[18.54], [23.98]
Հոդված 14	[3.08A]
Հոդված 14(5)	[1.49]
Հոդված 14(7)(ա)	[6.01]
Հոդված 20(2)	[25.36]
Հոդված 21	[25.42]

1990 թ. Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա

ընդհանուր.....	[1.81], [13.21], [20.26B], [23.25A]
Հոդված 1	[23.25A]
Հոդված 7	[23.25A]
Հոդված 19	[11.20A]
Հոդված 19(2)	[11.20A]
Հոդված 20(1)-(2)	[10.09A]
Հոդված 22	[13.21] , [13.23]
Հոդված 22(1)-(9)	[13.21]
Հոդված 23	[13.22] , [13.23]
Հոդված 36	[13.23]
Հոդված 50	[20.26B]
Հոդված 56(3)	[13.23]

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ընդհանուր.....	[101], [1.10], [1.11], [1.16], [1.36], [1.94], [1.101], [7.01], [19.19], [19.24], [21.05], [23.10], [23.14], [25.38]
Հոդված 1	[7.01]
Հոդված 2	[6.26], [23.10]
Հոդված 2(1)	[116], [1.101], [23.10]
Հոդված 2(2)	[21.05]
Հոդված 3	[23.10], [24.01]
Հոդված 6	[19.28]
Հոդված 7	[19.28]
Հոդված 8	[19.21]
Հոդված 8(1)(դ).....	[19.19], [19.24]
Հոդված 9	[23.10]
Հոդված 15	[24.01]

Մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագիր [8.51]

1945 թ. Լոնդոնյան խարտիա..... [18.58]

Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրություն

ընդհանուր.....	[9.19], [25.65]
Հոդված 7	[1.20]
Հոդված 7(2)(b)	[9.19]
Հոդված 8(2)(բ)(xxvi)	[21.49]
Հոդված 20	[14.149]
Հոդված 68	[14.66]
Հոդված 68(5)	[14.66]

Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրություն

Հոդված 6	[18.58]
----------------	---------

1956 թ. Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը նմանվող ինստիտուտների և գործողությունների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա

ընդհանուր.....	[10.02]
Հոդված 1(բ)	[10.05]

Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի օգտագործման ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներ

ընդհանուր.....	[8.06], [9.12]
Ընդհանուր սկզբունք 9.....	[8.06]

1988 թ. Կալանքի կամ բանտարկության որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ՄԱԿ-ի հավաքածու

ընդհանուր.....	[9.138]
----------------	---------

1989 թ. ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

ընդհանուր.....	[101], [1.36], [21.01], [21.02], [21.04], [21.05], [21.06], [21.18], [21.22], [21.24], [21.25], [21.34], [21.57], [24.15], [25.59]
Հոդված 1	[21.15]
Հոդված 2.....	[21.20] , [23.25A]
Հոդված 2(1)	[21.20] , [21.22]
Հոդված 2(2)	[21.20]
Հոդված 3	[21.04]
Հոդված 4	[21.05]
Հոդված 5	[21.24]
Հոդված 6	[21.05]
Հոդված 7	[21.51]
Հոդված 7(1)	[21.51]
Հոդված 7(2)	[21.51] , [21.56]
Հոդված 8.....	[21.51]
Հոդված 9.....	[20.46], [21.26] , [21.34]
Հոդված 9(1)	[21.31], [21.34]
Հոդված 9(2)	[21.34]
Հոդված 9(3)-(4)	[21.26]
Հոդված 10	[21.31]
Հոդված 11	[21.46]
Հոդված 12	[21.04]
Հոդված 13	[21.05]
Հոդված 14	[21.05]
Հոդված 15	[21.05]

Հոդված 16	[21.05]
Հոդված 18	[21.24], [21.25]
Հոդված 18(1)	[21.24]
Հոդված 18(2)–(3)	[21.25]
Հոդված 19	[21.36]
Հոդված 20	[21.35]
Հոդված 21	[21.47]
Հոդված 23	[21.22]
Հոդված 23(1)	[21.22]
Հոդված 23(2)–(4)	[21.22]
Հոդված 24	[21.05]
Հոդված 26	[21.05]
Հոդված 30	[21.05], [24.15]
Հոդված 31	[21.05], [21.43]
Հոդված 31(1)–(2)	[21.43]
Հոդված 32	[21.43]
Հոդված 33	[21.45]
Հոդված 34	[21.37]
Հոդված 35	[21.46]
Հոդված 36	[21.36]
Հոդված 37	[21.05]
Հոդված 38	[21.48], [25.59]
Հոդված 38(1)–(4)	[21.48]
Հոդված 40	[21.05]
Հոդված 43	[21.03]
Հոդված 44(2)	[21.03]
Հոդված 51	[25.36]
Հոդված 52	[25.42]
18 տարեկանից ցածր անձանց զինված ուժեր զորակոչելու արգելման մասին կամընտիր արձանագրություն	[21.49]
Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնկագրության վերաբերյալ կամընտիր արձանագրություն	[21.41]
Նախաբան	[21.02], [21.18]

1951 թ. ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա

ընդհանուր	[9.83]
Հոդված 1F	[9.84]

1978 թ. ՄԱԿ-ի Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքականոցներ

ընդհանուր	[9.12], [9.138], [9.148]
-----------------	--------------------------

1981 թ. ՄԱԿ-ի Կրոնի կամ հավատքի հիման վրա խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

ընդհանուր	[17.01]
-----------------	---------

ՄԱԿ-ի Ազգային կամ էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագիր

ընդհանուր	[24.01]
-----------------	---------

1982 թ. Բանտարկյալներին և կալանավորներին խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից պաշտպանության հարցում բուժանձնակազմի և մասնավորապես բժիշկների դերակատարմանն առնչվող բժշկական էթիկայի ՄԱԿ-ի սկզբունքներ

ընդհանուր.....	[9.138]
1987 թ. ՄԱԿ-ի Անչափահասների գործերով արդարադատության իրականացման չափանիշային նվազագույն կանոններ	
ընդհանուր.....	[9.166]
1957 թ. ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության ստանդարտ նվազագույն կանոններ	
ընդհանուր.....	[9.136], [9.137], [9.138], [9.148], [9.149]
Կանոն 6.....	[9.149]
Կանոններ 8-11	[9.149]
Կանոններ 15-26	[9.149]
Կանոններ 31-36	[9.149]
Կանոններ 38-44	[9.149]
Կանոններ 44(3).....	[9.149]
1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր	
ընդհանուր.....	[1.09], [1.10], [1.11], [1.105], [11.03], [18.41], [25.38]
Հոդվածներ 1-21	[1.09]
Հոդված 3	[11.03]
Հոդված 7	[18.59], [23.10]
Հոդված 17(1)	[1.10]
Հոդվածներ 22-27.....	[1.09]
1969 թ. և 1986 թ. Հաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա	
ընդհանուր.....	[25.15], [25.16], [25.17], [25.19], [25.37], [25.48]
Հոդված 2(1)(ա).....	[25.10]
Հոդված 2(1)(դ).....	[25.10]
Հոդված 19	[25.17]
Հոդված 19(3).....	[25.14]
Հոդված 20	[25.17]
Հոդված 20(4).....	[25.15]
Հոդվածներ 21-23	[25.17]
Հոդված 27	[1.29], [25.27]
Հոդված 29	[4.06], [4.09]
Հոդված 31	[9.55], [19.19], [19.21], [23.10]
Հոդված 32	[19.19]
1978 թ. Համաձայնագրերով պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի կոնվենցիա	
Հոդված 34	[25.45]

***Մարդու իրավունքներին առնչվող տարբեր միջազգային
կոմիտեների մեկնաբանությունների, հանձնարարականների
և այլ փաստաթղթերի ցանկ***

Խոշտանգումների դեմ կոմիտե

Ընդհանուր մեկնաբանություն թիվ 1 [9.73], [9.74]

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե

Ընդհանուր հանձնարարական

թիվ 3 [23.90]
թիվ 13 [23.93]
թիվ 14 [1.104], [23.90], [23.91]
թիվ 15 [18.55]
թիվ 16 [23.94]
թիվ 17 [23.94]
թիվ 19 [8.57], [23.89], [23.90], [23.95]
թիվ 21 [20.43]
թիվ 23 [22.35], [22.56]
թիվ 26 [23.102], [25.42]

Ռասայական խտրականության վերացման կոմիտե

Ընդհանուր հանձնարարական

թիվ 8 [23.78]
թիվ 14 [23.40], [23.70]
թիվ 15 [18.51]
թիվ 19 [23.07]
թիվ no 21 [7.05], [7.09], [7.11], [7.14], [7.16]
թիվ no 23 [23.79], [24.16], [24.40]
թիվ no 29 [23.25A]

Երեխայի իրավունքների կոմիտե

Ընդհանուր մեկնաբանություն թիվ 1 [21.14]

Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ

3 [23.69]
4 [23.69], [23.96]
5 [25.57]
6 [1.75], [8.02], [8.09], [8.13], [8.19], [8.45], [8.50], [9.55], [15.12]
8 [11.07], [11.30], [11.35], [11.58]
10 [1.42], [18.02], [18.03], [18.12], [18.18], [18.58]
11 [18.49], [18.55]
12 [1.42], [7.01], [7.04], [7.20]
13 [14.01], [14.02], [14.03], [14.28],
[14.34], [14.39], [14.61], [14.70], [14.71],
[14.74], [14.76], [14.85], [14.96], [14.121],
[14.126], [14.128], [14.132],
[14.133], [14.143], [14.148]
14 [3.34], [8.51], [8.52], [8.54], [8.63]

15.....	[1.42], [12.09], [13.03], [13.07], [13.11], [13.12], [13.13]
16.....	[11.64], [16.08], [16.11], [16.12], [16.13], [16.17], [16.19], [16.20], [16.23], [16.26], [16.27], [16.30], [16.36], [16.39], [20.06], [20.12], [25.55]
17.....	[21.07], [21.11], [21.13], [21.15], [21.19], [21.24], [21.25], [21.26], [21.34], [21.35], [21.37], [21.44], [21.45], [21.48], [21.51], [21.55], [21.57], [22.07]
18.....	[23.04], [23.11], [23.28], [23.32], [23.41], [23.69], [23.72], [23.89]
19.....	[20.02], [20.03], [20.04], [20.06], [20.28], [20.33], [20.37], [20.38], [20.39], [20.41]
20.....	[1.20], [1.74], [9.12], [9.20], [9.21], [9.25], [9.30], [9.32], [9.63], [9.67], [9.68], [9.89], [9.93], [9.97], [9.99], [9.102], [9.103], [9.105], [9.106], [9.109], [9.110], [9.111], [9.125]
21.....	[1.101], [9.134], [9.135], [9.138], [9.148], [9.157], [9.163], [9.166], [9.168]
22.....	[17.01], [17.02], [17.06], [17.10], [17.13], [17.14], [17.19], [17.20], [17.23], [17.28], [17.33]
23.....	[1.42], [1.74], [22.15], [24.01], [24.02], [24.03], [24.10], [24.13], [24.15], [24.19], [24.22], [24.36], [24.46], [24.51]
24.....	[1.95], [25.05], [25.06], [25.07], [25.08], [25.14], [25.14], [25.15], [25.16], [25.18], [25.21], [25.22], [25.23], [25.24], [25.25], [25.26], [25.27], [25.28], [25.31], [25.32], [25.33], [25.35], [25.63]
25.....	[18.31], [22.02], [22.11], [22.16], [22.19], [22.23], [22.25], [22.28], [22.30], [22.32], [22.34], [22.36], [22.37], [22.42], [22.43], [22.47]
26.....	[25.38], [25.43], [25.44], [25.48]
27.....	[1.67], [12.02], [12.05], [12.07], [12.10], [12.14], [12.16], [12.24], [12.25], [12.27], [12.30], [12.34], [12.37], [12.38], [24.31]
28.....	[1.42], [1.100], [8.43], [8.49], [8.55], [9.44], [9.147], [9.161], [9.165], [10.06], [10.12], [10.13], [11.09], [12.05], [12.24], [13.06], [14.15], [16.07], [17.09], [18.63], [20.06], [20.38], [20.40], [20.43], [21.21], [22.56], [23.02], [23.69], [23.81], [24.12], [25.50], [25.58], [25.60], [25.64], [25.74]
29.....	[25.54], [25.56], [25.57], [25.65], [25.67], [25.69], [25.71], [25.75]
30.....	[1.40]
31 (նախագիծ)	[1.20], [1.27], [1.29], [1.44], [1.55], [1.69], [1.73], [1.83], [1.87], [1.89], [1.102], [3.10], [4.02], [4.12], [4.15], [4.17], [4.23]

Հապավումների ցանկ

CAT Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment – Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, ԽԴԿ

CEDAW Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women – Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, ԿՆԽՎԿ

CERD Committee on the Elimination of Racial Discrimination – Ռասայական խտրականության վերացման կոմիտե, ՌԽՎԿ

CRC Convention of the Rights of the Child – Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, ԵԻԿ

CROC Committee on the Rights of the Child – Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտե, ԵԻԴԿ

ECHR European Convention on Human Rights – Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, ՄԻԵԿ

ESD Right of External Self Determination – Արտաքին ինքնորոշման իրավունք, ԱԻԻ

HRC Human Rights Committee – Մարդու իրավունքների կոմիտե, ՄԻԿ

ԹԹԻՄԴ International Covenant on Civil and Political Rights – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ԹԹԻՄԴ

ICERD International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination – Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, ՌԽՎՄԿ

ILC International Law Commission – Միջազգային իրավունքի հանձնաժողով, ՄԻՀ

ICESCR International Covenant on Economic, Social and Cultural Rights – Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ՏՍՄԻՄԴ

ISD Right of Internal Self Determination – Ներքին ինքնորոշման իրավունք, ՆԻԻ

OP First Optional Protocol – Առաջին կամընտիր արձանագրություն, ԿԱ

UN United Nations – Միավորված ազգերի կազմակերպություն, ՄԱԿ

Ծանոթագրություն ոճի և մեջբերումների վերաբերյալ

Քանի որ այս գրքում առաջնային տեղեկատվության բազմաթիվ հիշատակումներ կան, օգտագործված ոճի և մեջբերումների մասին բացատրության անհրաժեշտություն կա:

Պարբերությունների համարակալումը տեքստում: Գիրքը կազմված է գլուխներից, որոնց ներսում պարբերությունները համարակալված են, օրինակ՝ **[1.01]**: Սակայն բոլոր պարբերությունները չէ, որ համարակալում ունեն: Իրականում յուրաքանչյուր հերթական համար ավելի շատ վերաբերում է մի ամփոփ թեմայի, քան մեկ պարբերության: Նման համարակալումը հեշտացրել է միջանցիկ հղումների նշումը: Այսպես, **[1.01]** պարբերության հղումը տեքստում կամ ծանոթագրություններում կնշվի **[1.01]**:

«Յեղիմակներ»: Դատական գործերից մեջբերված հատվածներում հայցվորին (այն անձը, ով հայց է ներկայացնում), Մարդու իրավունքների կոմիտեի կողմից օգտագործվող բառապաշարին համահունչ, սովորաբար անվանում են «հեղիմակ»:

Կամընտիր արձանագրության առնչությամբ հաղորդումների մեջբերումը: Կամընտիր արձանագրության հաղորդումների մեջբերման համակարգը պատշաճորեն փոխառվել է Մ. Նովակից, որը նա գործածում է «*ՔՔԻՄԴ-ի մեկնաբանություն*» (1993) աշխատությունում: Հաղորդման մեջբերման օրինակ է հետևյալը. «*Լովելասն ընդդեմ Կանադայի*» (*Lovelace v Canada, 27/77*): Առաջին թիվը ցույց է տալիս հաղորդման համարը, որը տրվել է տվյալ գործին, երբ այն ընդունվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների քարտուղարության կողմից: *Լովելասը* գրանցված 27-րդ հաղորդումն է: Երկրորդ թիվը վերաբերում է հաղորդումը ներկայացնելու տարեթվին, տվյալ դեպքում՝ 1977 թ.: Այն չի վերաբերում վճռի կայացման ամսաթվին, որին կարելի է ծանոթանալ Հավելված I-ում: Հավելված I-ի ձևաչափը նույնպես փոխառված է Նովակից:

Ընդհանուր մեկնաբանություններ: Տեքստում հաճախակի են հիշատակվում «Ընդհանուր մեկնաբանությունները», որոնք ՔՔԻՄԴ-ում ընդգրկված իրավունքների ընդարձակ մեկնաբանումներ են, սակայն որոշ դեպքերում դրանք կարող են վերաբերել նաև այլ հարցերի, ինչպիսիք են վերապահումները կամ դատապարտումները: Ընդհանուր մեկնաբանությունների ցուցակը ներկայացված է Հավելված Ժ-ում: Երբեմն մեջբերված հատվածներում ընդհանուր մեկնաբանությանը հղում է արվում երկու թվերի միջոցով. օրինակ՝ «*թիվ 20(44) Ընդհանուր մեկնաբանություն*»: Փակագծերում ներկայացված թիվը ցույց է տալիս այն միստը, որի ընթացքում ընդունվել է տվյալ Ընդհանուր մեկնաբանությունը. սա Ընդհանուր մեկնաբանություններ մեջբերելու այլընտրանքային եղանակ է: Մենք որոշել ենք Ընդհանուր մեկնաբանությունները մեջբերել միայն ըստ նրանց հերթական համարների:

Թիվ 31 Ընդհանուր մեկնաբանությունը սույն գրքի պատրաստման ժամանակ դեռևս վերջնական տեսքի չէր բերվել: Այս հրատարակության մեջ ընդգրկվել են հատվածներ Ընդհանուր մեկնաբանության նախագծից, որը հանրության համար հասանելի դարձավ 2003 թ. մայիսին: Ընթերցողներին խնդրում ենք նայել Ընդհանուր մեկնաբանության վերջնական տարբերակը, որը տեղադրվելու է համաձայնագրերի տեքստերի ինտերնետային կայքում՝ www.unhchr.ch/tbs/doc.nsf հասցեով:

Եզրափակիչ դիտարկումներ: Գրքում հաճախ հիշատակվում են նաև Եզրափակիչ դիտարկումներ մասնակից պետությունների վերաբերյալ: Սրանք ՄԻԿ-ի կողմից հրապարակված մեկնաբանություններ են, որոնք վերաբերում են ՔՔԻՄԴ-ին տարբեր մասնակից պետությունների համապատասխանությանը: Եզրափակիչ դիտարկումները մեջբերվում են դրանց իրավագիտական արժեքի համար, այսինքն՝ դրանք օգնում են վեր հանելու ՔՔԻՄԴ-ի տարբեր իրավունքների իմաստը: Եզրափակիչ դիտարկումները մեջբերվում են ոչ այն նպատակով, որ մատնանշեն առնչվող պետությունների գրանցած արդյունքները՝ մարդու իրավունքների պաշտպանության առումով: ՄԱԿ-ի բոլոր պայմանագրային մարմինների

ընդունած բոլոր Եզրափակիչ դիտարկումները կարելի է գտնել համաձայնագրերի տեքստերի ինտեր-նետային կայքում՝ www.unhchr.ch/tbs/doc.nsf հասցեով:

Կոմիտեի անդամների հիշատակումներ: ՄԻԿ-ը քվադիդատական մարմին է, ուստի կոմիտեի անդամ-ներին «դատավոր» չեն անվանում: Փոխարենը՝ ՄԻԿ-ի անդամներին սովորաբար դիմում են որպես պրն X, տկն Y կամ օրդ Z: Կան որոշ բացառություններ, օրինակ՝ լորդ Քոլվիլը կամ սըր Նայջլ Ռոդլին:

Պարբերությունների համարակալումը մեջբերվող հատվածներում: Մեջբերվող հատվածների մեծ մասում ներքին համարակալումը վերաբերում է ներկայացվող հատվածում պարբերությունների հերթական համարներին: Օրինակ, ՄԻԿ-ի՝ մեծամասնությամբ ընդունված բոլոր որոշումներն ունեն պարբերությունների ներքին համարակալում: Սակայն փոքրամասնությունների կայացրած որոշ որոշումներում պարբերությունների համարակալում չկա:

Ծանոթագրություններ պարունակող հատվածներ: Որպես կանոն՝ չենք ներառել բնագրից մեջբերված հատվածներին կից ծանոթագրությունները:

Մաս I

Ներածություն

Ներածություն

• Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ. փիլիսոփայական հենքը	[1.03]
• Բնական իրավունքներ	[1.03]
• Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը.....	[1.09]
• Երկու դաշնագրերը.....	[1.10]
• Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը	[1.12]
• Վավերացում	[1.13]
• Էական իրավունքներ.....	[1.14]
• Օժանդակ երաշխիքներ.....	[1.15]
• ՔՔԻՄԴ-ը և ներպետական օրենսդրությունը	[1.25]
• Մարդու իրավունքների կոմիտեն	[1.31]
• Ջեկույցների համակարգը և Եզրափակիչ դիտարկումները	[1.37]
• Ընդհանուր մեկնաբանություններ.....	[1.41]
• Միջպետական բողոքներ.....	[1.43]
• Անհատական հաղորդումներն առաջին կամընտիր արձանագրությամբ.....	[1.45]
• Միջանկյալ միջոցների գործադրման դիմումներ	[1.53]
• ՔՔԻՄԴ-ի նորմերի մեկնաբանումը և մշակումը.....	[1.56]
• Ընդհանուր ամփոփագիր	[1.57]
• Նախադեպի դերը.....	[1.63]
• ՔՔԻՄԴ-ի իրավունքների սահմանափակումները	[1.66]
• Դրական պարտավորություններ.....	[1.71]
• Ուղղահայաց և հորիզոնական պարտավորություններ.....	[1.76Ա]
• Մարդու իրավունքների համակարգային ոտնահարում	[1.85]
• Մշակութային ռեյատիվիզմը և քաղաքացիական ու քաղաքական իրավունքները	[1.88]
• Անձնական և հավաքական իրավունքներ	[1.89]
• Իրավունքներ և պարտականություններ.....	[1.90]
• Քաղաքացիական և քաղաքական իրավունքների գերակայությունը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների նկատմամբ	[1.91]
• Տնտեսական ռեյատիվիզմ	[1.92]
• ՔՔԻՄԴ-ը և մշակութային/տնտեսական ռեյատիվիզմը.....	[1.94]
• Մարդու իրավունքների կոմիտե. գնահատում.....	[1.106]
• Ոչ լրիվ զբաղվածությունը.....	[1.108]
• Համաձայնեցումը կոմիտեների միջև	[1.109]
• Հարաբերությունները մասնակից պետությունների և ՄԻԿ-ի միջև	[1.110]
• ՄԻԿ-ի հրապարակայնությունը	[1.112]
• ՄԻԿ-ի արտադրանքի որակը.....	[1.114]
• Եզրակացություն	[1.117]

[1.01] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ) ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից 1966 թ. և ուժի մեջ մտել անհրաժեշտ քանակի վավերացումներ ստանալու արդյունքում՝ 1976 թ.: Թերևս ՔՔԻՄԴ-ը մարդու իրավունքների պաշտպանության ամենակարևոր համաձայնագիրն է աշխարհում, եթե հաշվի առնվի, որ այն համաշխարհային տարածում ունի (ի տարբերություն, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, 1951 թ. (ՄԻԵԿ)), ներառում է բազմաթիվ իրավունքներ (ի տարբերություն ընդամենը մեկ խնդրի անդրադարձող համաձայնագրերի, ինչպիսին է, օրինակ, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան (1984 թ. (ԽԴԿ)), և նախատեսված է բոլոր դասերի անձանց նկատմամբ կիրառության համար (ի տարբերություն, օրինակ, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի, 1989 թ. (ԵԻԿ)): Ավելին, իրավագիտության մի մեծ զանգված է ա-

ռաջացել ՔՔԻՄԴ-ի վերաբերյալ՝ ի տարբերություն նրա «քույր» համաձայնագրի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՏՍՄԻՄԴ)։ Այն նաև ներառվել է բազմաթիվ մասնակից պետությունների ազգային օրենսդրության մեջ¹։

[1.02] ՔՔԻՄԴ-ը մշակվել է մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքները պաշտպանելու համար, ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը, կամայական կալանավորումից զերծ լինելու ազատությունը և արտահայտվելու ազատությունը։ ՔՔԻՄԴ-ի III մասում ներառված է մարդու իրավունքների պաշտպանության նյութական երաշխիքների մի ցանկ։ II մասն ապահովում է օժանդակ երաշխիքներ, ինչպիսիք են մասնակից պետությունների համար պարտադիր ՔՔԻՄԴ-ում ներառված իրավունքների խախտումների դեպքում իրավական պաշտպանության տեղական միջոցներ տրամադրելու պարտավորությունը։ IV մասը սահմանում է մշտադիտարկման և վերահսկողության համակարգը, որի միջոցով հնարավոր է հետևել ՔՔԻՄԴ-ը կենսագործող մասնակից պետությունների ունեցած արդյունքներին։ Ըստ էության, IV մասով ստեղծվում է Մարդու իրավունքների կոմիտե (ՄԻԿ), որը ՔՔԻՄԴ-ի կենսագործումը մշտադիտարկման ենթարկող մարմին է, ինչպես նաև ուրվագծվում է այդ կառույցի գործառնությունների մի մասը։ Ի լրումն՝ Առաջին կամընտիր արձանագրությամբ (ԿԱ), որը ՔՔԻՄԴ-ի օժանդակ համաձայնագիր է, ՄԻԿ-ը կարող է քննել հաղորդումներ՝ ստացված անհատներից, ովքեր պնդում են, որ ՔՔԻՄԴ-ով սահմանված իրենց իրավունքները ոտնահարվել են ԿԱ-ին միացած մասնակից պետությունների կողմից։ Երկրորդ կամընտիր արձանագրությունը տրամադրում է քաղաքացիական իրավունքների հավելյալ նյութական երաշխիքներ՝ արգելելով մահապատժի կիրառումը։

Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ. փիլիսոփայական հենքը

ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

[1.03] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների գաղափարը, ըստ էության, բխում է XVII և XVIII դարերի արևմտյան ազատական փիլիսոփայական ուղղություններից։ Մասնավորապես, Լոքն իր «Կառավարման երկրորդ տրակտատում» ["Second Treatise of Government"] պնդում էր, որ «բնական վիճակում» մարդիկ ծնվում են հավասար և ի ծնե ձեռք են բերում «բնական իրավունքներ», ինչպիսիք են կյանքի, ազատության և սեփականության իրավունքները²։ XVIII դարում նման գաղափարներ ձևակերպել են նաև Լուսավորչական դարաշրջանի ֆրանսիացի փիլիսոփաներ, ինչպիսիք էին Ռուսոն, Մոնտեսքյոն և Վոլտերը, ովքեր պնդում էին, որ նման իրավունքները բխում են տղամարդու բնածին բանականությունից և առաքինությունից, հաղթահարելով այն «իռացիոնալ» գիտական և կրոնական դոգման, որն իշխում էր միջնադարում³։

[1.04] Բնական իրավունքների վերաբերյալ տեսությունները Արևմուտքի քաղաքագիտական մտքում չափազանց ազդեցիկ էին XVIII դարի վերջին՝ մասնավորապես Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի հեղափոխական խանդավառության տարիներին։ Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների «Անկախության հռչակագիրը» 1776 թ. հռչակեց, որ «բոլոր մարդիկ ծնվում են հավասար, որ նրանք իրենց Արարչի կողմից օժտվում են որոշակի անօտարելի իրավունքներով, որոնց թվում են կյանքը, ազատությունը և երջանկության ձգտումը»։ «Բնական իրավունքների» նման ազդեցություն կարելի է տեսնել Ֆրանսիայում 1789 թ. ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին հռչակագրում»։

¹ Օրինակ՝ ՔՔԻՄԴ-ն ուղղակիորեն ներմուծվել է բազմաթիվ մասնակից պետությունների օրենսդրության մեջ, օրինակ՝ Ֆինլանդիայի, Նիդեռլանդների, Ռուսաստանի Դաշնության և Կորեայի Հանրապետության (Հարավային Կորեա)։ ՔՔԻՄԴ-ը նաև որպես ձևանմուշ է ծառայել իրավունքների մի շարք օրինաչափերի համար, ինչպես, օրինակ՝ Հոնկոնգում և Նոր Զելանդիայում։

² J. Locke, *The Second Treatise of Government*, reprinted in P. Laslett (ed), *Locke, Two Treatises of Government* (2nd edn, Cambridge University Press, Cambridge, 1988), at 265ff.

³ B.H. Weston, "Human Rights" (1984) 3 *HRQ* 257, at 259։ Այստեղ պատահական չի օգտագործված սեքսիստական լեզուն, քանի որ, ինչպես երևում է, բնական իրավունքների մասին XVII և XVIII դարերի տեսություններում կանանց տղամարդկանց հետ հավասար իրավունքներ չէին վերապահվում։ Տե՛ս H. Lauterpacht, *International Law and Human Rights* (Garland Publishing, 1973), at 104-5։

[1.05] Բնական իրավունքների մասին դասական տեսության մեջ հասարակությունները արհեստական, սակայն հարմար կառույցներ էին՝ ձևավորված «սոցիալական պայմանագրով», որով մարդիկ պահպանում էին իրենց ազատությունները՝ ենթակա լինելով մի սահմանափակման, այն է՝ դրանք չպետք է սպառնան կամ վնասեն այլոց ազատությունները: Իրենց հերթին՝ իշխանությունները պետք է հարգեին մարդու այս նախաստեղծ բնական իրավունքները՝ միջամտելով այնքան, որքան անհրաժեշտ է այդ սոցիալական պայմանագրի կատարումն ապահովելու համար: Այսպիսով, բնական իրավունքների վաղ տեսաբաններն առաջարկում էին ունենալ սահմանափակ կամ «փոքր» իշխանություն՝ շեշտը դնելով իշխանությունների միջամտությունից *զերծ լինելու ազատության*, ոչ թե իշխանությունների կողմից ընձեռված բարիքներից օգտվելու *իրավունքների վրա*: Ավանդական քաղաքացիական և քաղաքական իրավունքները, որոնք թե՛ ԱՄՆ «Իրավունքների օրինաչարի» և թե՛ Ֆրանսիայի «Հռչակագրի» գլխավոր թեման են, զգալիորեն առնչվում են մարդու՝ սեփական ցանկություններին համապատասխան գործելու ազատությանը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելը չէր ենթադրում պետական օժանդակության պահանջ, հետևաբար քաղաքացիական և քաղաքական իրավունքները համահունչ են արևմտյան վաղ կապիտալիստական հասարակությունների ազատական բնույթին:

[1.06] Չնայած վաղ շրջանում բնական իրավունքները կապվում էին կյանքի, ազատության և սեփականության հետ, դրանք չէին առնչվում տնտեսական կամ սոցիալական իրավունքներին, ինչպիսիք են աշխատանքի և անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքները: Նման «իրավունքներից» օգտվելը ընկալվում էր որպես իշխանությունների կողմից դրական միջամտություն պահանջող ազատություն⁴, որի դեպքում մտավախություն կար, որ դա իշխանություններին հնարավորություն կտար իրավունքների ընդլայնման կեղծ արդարացման քողի տակ զսպող սահմանափակումներ մտցնելու շուկա: Այդպիսով, XVIII դարում և XIX դարի սկզբին արևմտյան կապիտալիստական հասարակությունների տնտեսական հարաբերություններում կիրառվեց չմիջամտելու (*laissez-faire*) մոտեցումը. տնտեսական հարաբերությունները և ձեռներեցության ազատությունն ընդհանրապես չէին սահմանափակվում իշխանությունների կարգավորմամբ⁵:

[1.07] XVIII դարի վերջից ի վեր բնական իրավունքների տեսությունները քննադատության են ենթարկվել մի շարք պատճառներով, օրինակ՝ դրանց եսասիրական (էգոիստական) և հավանական է՝ հակասոցիալական հիմքի պատճառով (այսինքն՝ սոցիալական պայմանագիրը ստեղծվում է, որպեսզի մարդկանց պաշտպանի միմյանցից)⁶, կամ որպես «անարխիստական մոլորություններ», որոնք մարտահրավեր են նետում հասարակությանը⁷ և ներկայացուցչական խորհրդարանների ինքնիշխանությանը⁸: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ստրկատիրության և հետհեղափոխական Ֆրանսիայում՝ «տեռորի իշխանության» տեսքով մարդու իրավունքների կոպիտ խախտումների առկայությունը, հակառակ այդ երկրներում իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների գոյության, ամրապնդեցին Բենթամի կողմից բնական իրավունքներին տրված հանրահայտ բնորոշումը՝ «ոստնափայտերով քայլող աբսուրդ»⁹:

[1.08] Չնայած քննադատությանը՝ բնական իրավունքների տեսությունները դիմացան և հասունացան՝ ընդլայնելով իրենց ընդգրկումը և ներառելով կանանց, ստրուկների և աշխատողների իրավունքները¹⁰: Օրինակ՝ աշխատողների իրավունքների մասին գաղափարները, որոնք մեղմում էին վաղ կապիտալիզմի ծայրահեղությունները, արևմտյան հասարակություններում սկսեցին երևան գալ XIX դարում¹¹: Իսկապես, ժամանակակից արևմտյան ազատականությունն իր ծայրահեղ ազատական ակունքներից ա-

⁴ Վեստոն, տե՛ս վերը, ծմբ. 3, էջ 264: Այնուամենայնիվ, ինչպես նշված է ստորև, քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հավասարեցումը համապատասխանաբար բացասական և դրական իրավունքներին պարզունակ մոտեցում է:

⁵ Դ. Լաուտերպախտ, տե՛ս վերը, ծմբ. 3, էջ 105:

⁶ Տե՛ս, օրինակ՝ Karl Marx, "On the Jewish Question", reprinted in D. McLellan (ed), *Marx: Selected Writings* (OUP, Oxford, 1977) գրքում, at 51-7:

⁷ Տե՛ս Jeremy Bentham, "Anarchical Fallacies", reprinted in J. Waldron (ed), *Nonsense Upon Stilts: Bentham, Burke and Marx on the Rights of Man* (Methuen, London, 1987) at 46ff:

⁸ Տե՛ս A. V. Dicey, *Introduction to the Study of the Law of the Constitution* (10th edn, MacMillan, London, 1964), at 199ff:

⁹ Բենթամ, տե՛ս վերը, ծմբ. 7, էջ 53:

¹⁰ Վեստոն, տե՛ս վերը, ծմբ. 3, էջ 261:

¹¹ Նույն տեղում, էջ 265:

ճել է և ձևափոխվել՝ սոցիալական պետության կողմից տրամադրվող «ապահովության ցանցի» ձևով բավարարելով տնտեսական իրավունքների իրականացումը¹²։ Եթե սոցիալական պետությունը տնտեսական իրավունքներով է օժտում ծայրահեղ կարիքավորներին, ապա հարկահանությամբ էլ տնտեսական գին է սահմանում պակաս կարիքավորների համար¹³։ Այսուհանդերձ, որոշ պետություններ շարունակում են հակադրվել միջազգային իրավունքում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ճանաչմանը¹⁴։

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՆԳՅԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

[1.09] Երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքները ցույց տվեցին մարդ արարածի իրավունքների բացարձակ արհամարհման սարսափելի հետևանքները, 1948 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) ընդունմամբ բնական իրավունքները ձևափոխվեցին և վերածվեցին միջազգայնորեն ճանաչված «մարդու իրավունքների» սկզբունքների¹⁵։ ՄԻՀՀ-ի 1-ին հոդվածն իր այն հայտարարությամբ, թե «բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»¹⁶, հիշեցնում է վաղ շրջանի արևմտյան «իրավունքների օրինաշարերը»։ Ի լրումն, փաստաթղթում՝ 2-21-րդ հոդվածներում, կրկին գերիշխում են քաղաքացիական և քաղաքական չափորոշիչները։ Մի կողմից՝ ճշմարիտ է այն, որ մարդու իրավունքների և արժանապատվության գաղափարները կարելի է հանդիպել արևմտյան աշխարհին չպատկանող քաղաքակրթությունների¹⁷ փիլիսոփայական աղբյուրներում, հավասարապես ճշմարիտ է և այն, որ ՄԻՀՀ-ի նախագծի մշակման մեջ ներգրավված պետությունների ճնշող մեծամասնության մտածողությունը սահմանափակված էր բնական իրավունքների տեսությամբ¹⁸։ Այնուամենայնիվ, ՄԻՀՀ-ի 2-27-րդ հոդվածներում ներառված են նաև մի շարք տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ՝ այդպիսով ցուցադրելով մասնակի հեռացումը բնական իրավունքների ավանդական հայեցակարգերից¹⁹։

ԵՐԿՈՒ ԴԱՇՆԱԳՐԵՐԸ

[1.10] ՄԻՀՀ-ում ներառված իրավունքների մեծ մասը համաձայնագրի տեսք ստանալուն հասել է երկու միջազգային դաշնագրերում՝ ՔՔԻՄԴ-ում և ՏՄՄԻՄԴ-ում²⁰։ Բնական իրավունքների լեզուն, որն օգտագործվել է ՄԻՀՀ-ում, վերստին արտացոլված է երկու դաշնագրերի մախաբաններում։ Երկուսն էլ հռչակում են «մարդկության ընտանիքի բոլոր անդամների ի ծնե արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչում» և պնդում են, որ «իրավունքները բխում են մարդու ի ծնե արժանապատվությունից»։

[1.11] Մշտապես ՄԱԿ-ի հռետորական արվեստի մաս է կազմել այն, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքները՝ մի կողմից, և տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները՝ մյուս կողմից, փոխկախվածության մեջ են և անբաժանելի։ Այնուամենայնիվ, որոշ պետությունների իշխանությունների հավատարմությունը ավանդական բնական իրավունքների տեսությանը կարող է նպաստած լինել ՄԻՀՀ իրավունքները երկու դաշնագրերի բաժանելու որոշման կայացմանը։ Մասնավորա-

¹² H. Steiner and Alston, *International Human Rights in Context* (2nd edn, OUP, Oxford, 2000), 362-4:

¹³ St' u D. Kelley, *Life of One's Own: Individual Rights and the Welfare State* (Cato Institute, Washington, DC, 1998), մեջբերված՝ Steiner and Alston, տե՛ս վերը, ծմբ. 12, էջ 258:

¹⁴ St' u P. Alston, "US Ratification of the Covenant on Economic Social and Cultural Rights: the Need for an Entirely New Strategy" (1990) 84 *American Journal of International Law* 365, 372: St' u նաև Steiner and Alston, վերը, ծմբ. 12, էջ 249-51; Lauterpacht, տե՛ս վերը, ծմբ. 3, էջ 285-6:

¹⁵ St' u նաև M. Ignatieff, *Human Rights as Politics and Idolatry* (Princeton University Press, Princeton, NJ, 2001), 65-6:

¹⁶ J. Morsink, 'The Philosophy of the Universal Declaration' (1984) 3 *Human Rights Quarterly* 309, at 310-11:

¹⁷ St' u, օրինակ, P.G. Lauren, *The Evolution of International Human Rights* (University of Pennsylvania Press, 1998), chap.1:

¹⁸ Մորսինկ, տե՛ս վերը, ծմբ. 16, էջ 310-16:

¹⁹ St' u *նույնը*, էջ 325-32 ՄԻՀՀ-ում «նոր իրավունքների» ներառման վերաբերյալ։ Բերվել են փաստարկներ, որ այս նոր իրավունքները համահունչ են ժամանակակից ազատական տեսությանը, որը բնական իրավունքների ավանդույթի ժառանգորդն է. տե՛ս Շտայներ և Ալսթոն, վերը, ծմբ. 12, էջ 362:

²⁰ Արժանահիշատակ բացառություն է սեփականության իրավունքը ՄԻՀՀ-ի հոդված 17(1)-ում, որը չէր համապատասխանի արևելյան ճամբարում իշխող սոցիալիստական տեսություններին, այն ժամանակ, երբ մշակվում էին դաշնագրերի նախագծերը:

պես, արևմտյան երկրների կառավարությունները պնդում էին, որ իրավունքների այս երկու համախմբերը հիմնավորապես տարբեր են միմյանցից, և երկճյուղավորումը (դիֆուսիոնիզմ) հարկ է արտացոլել երկու առանձին համաձայնագրերում: Մասնավորաբար, պնդում էին, որ միայն քաղաքացիական և քաղաքական իրավունքներն են դատական կարգով քննության ենթակա²¹: Կարծիք կար, որ միայն «Պետության անհարկի միջամտության դեմ ուղղված ազատական (քաղաքացիական և քաղաքական) իրավունքներն» են «ուղղակիորեն կիրարկելի դատարանների միջոցով»²²: Մյուս կողմից՝ արևելյան երկրների ճամբարը դեմ էր արտահայտվում իրավունքները երկու դաշնագրերի միջև բաժանմանը, քանի որ դա կարող էր այն ենթադրության տեղիք տալ, թե իրավունքների այդ երկու համախմբերի միջև հիերարխիկ կապ գոյություն ունի²³: Արդյունքում Արևմուտքի տեսակետի հաղթանակը հանգեցրեց երկու չափազանց տարբեր դաշնագրերի ստեղծմանը: Չնայած դաշնագրերի նախաբաններում փոխկախվածության և անբաժանելիության մասին առկա ոգուն, որևէ կասկած չկա, որ երկու դաշնագրերից ՔՔԻՄԴ-ն առավել ուժեղ է: ՔՔԻՄԴ-ում ներառված են մարդու «դասական» իրավունքները, այն է՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքները, որոնք հոդված 2(1)-ի համաձայն՝ անմիջականորեն պարտադիր ուժ ունեն մասնակից պետությունների համար և Կամընտիր արձանագրությամբ դատաքննելի են միջազգային մակարդակով²⁴: Ի հակադրություն՝ ՏՄՄԻՄԴ-ում ներկայացված իրավունքները պետք է կենսագործվեն աստիճանաբար՝ կախված տվյալ պետության առկա ռեսուրսներից, և դեռևս միջազգայնորեն դատաքննելի չեն²⁵: Հիմնականում չափանիշների անհստակության և դրա պատճառով մասնակից պետությունների պարտավորությունների մեկնաբանման պակասի հետևանքով ՏՄՄԻՄԴ-ի տրամադրած երաշխիքները, համեմատած ՔՔԻՄԴ-ում ներառված ժամանակակից «բնական իրավունքների» հետ, նորմատիվային և իրավագիտական տեսանկյունից մնացել են թերզարգացած:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը

[1.12] ՔՔԻՄԴ-ը ՄԱԿ-ի ամենահամապարփակ և ամենահանրաճանաչ համաձայնագիրն է քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ. այս ոլորտում ՄԱԿ-ի իրավագիտության առյուծի բաժինն առաջացել է ՔՔԻՄԴ-ի շնորհիվ: Ուստի այս գիրքը զգալի չափով առնչվում է ՔՔԻՄԴ-ին և դրանով ձևավորված իրավաբանությանը: ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների մասին այլ համաձայնագրերը քաղաքացիական և քաղաքական կոնկրետ իրավունքների վերաբերյալ նյութերի կարևոր աղբյուր են եղել. դրանց կանդիդատմանը այս գրքի համապատասխան գլուխներում: Օրինակ՝ 1984 թ. ընդունված՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (ԽԴԿ) շնորհիվ խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժամիջոցներից զերծ լինելու իրավունքի մասին կարևոր իրավաբանական նյութեր են ստեղծվել: Խտրականությունն արգելող երկու համաձայնագրերը՝ 1966 թ. ընդունված՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (ՌԽՎՄԿ) և 1979 թ. ընդունված՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿՆԽՎԿ), խտրականությունից զերծ լինելու իրավունքի վերաբերյալ նշանակալի նյութերի ծնունդ են տվել:

²¹ D. McGoldrick, *The Human Rights Committee* (OUP, Oxford, 1994), para 1.16:

²² M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), pp. xx-xxi:

²³ Մակգոլդրիկ, տես վերը, ծմբ. 21, պարբ. 1.25:

²⁴ Հարկ է նշել, որ որոշ ոչ դասական իրավունքներ հայտնվում են ՔՔԻՄԴ-ում, ինչպիսին է, օրինակ, 1-ին հոդվածում ինքնորոշման իրավունքը, ընտանիքների և երեխաների պաշտպանության իրավունքները, որոնք ներկայացված են 23-րդ և 24-րդ հոդվածներում, և 27-րդ հոդվածում մշակութային իրավունքների մասին դրույթը:

²⁵ 2001 թ. Մարդու իրավունքների հանձնաժողովը նշանակեց մի անկախ փորձագետի՝ ուսումնասիրելու ՏՄՄԻՄԴ-ի կամընտիր արձանագրության նախագծի հարցը, որը հնարավորություն կտար ՏՄՄԻՄԴ-ով ներկայացնել անհատական բողոքներ: Տես Մարդու իրավունքների հանձնաժողովի բանաձև. թիվ 30/2001, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/RES/2001/30:

ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

[1.13] ՔՔԻՄԴ-ն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թ. և ուժի մեջ մտել 1976 թ. 35 վավերացում ապահովելուց հետո²⁶: 2003 թ. սեպտեմբերի դրությամբ ՔՔԻՄԴ-ին միացել էին 149 մասնակից պետություններ, Առաջին կամընտիր արձանագրությանը՝ 104, իսկ Երկրորդ կամընտիր արձանագրությանը՝ 49 մասնակից պետություններ²⁷: Թե՛ ՔՔԻՄԴ-ի և թե՛ Առաջին կամընտիր արձանագրության մասնակից պետությունների քանակը «սառը պատերազմի» ավարտից հետո, երբ Միավորված ազգերի կազմակերպության ներսում նվազեց մարդու իրավունքների քաղաքականացվածության աստիճանը, նշանակալիորեն աճեց: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, որ երկար ժամանակահատվածով բացակայում էր մարդու իրավունքների միջազգային համակարգից, 1992 թ. վավերացրեց ՔՔԻՄԴ-ը: Նույն տարին Ռուսաստանի Դաշնությունում ուժի մեջ մտավ Առաջին կամընտիր արձանագրությունը:

ԷԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

[1.14] ՔՔԻՄԴ-ի հիմնական երաշխիքները ներկայացված են III մասում, սակայն 1-ին հոդվածը, կանոնից շեղվելով, ներառված է I մասում²⁸: Էական իրավունքները հետևյալն են.

- Հոդված 1. Ինքնորոշման իրավունք.
- Հոդված 6. Կյանքի իրավունք.
- Հոդված 7. Ազատություն խոշտանգումներից, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքից և պատժամիջոցներից.
- Հոդված 8. Ազատություն ստրկությունից, ստրկավաճառությունից և հարկադիր աշխատանքից.
- Հոդված 9. Անձի ազատության և անվտանգության իրավունք.
- Հոդված 10. Ազատությունից զրկված անձանց՝ մարդասիրական վերաբերմունքի արժանանալու իրավունք.
- Հոդված 11. Ազատություն պայմանագրային պարտավորության չկատարման հիմքով ազատագրվելուց.
- Հոդված 12. Տեղաշարժվելու ազատություն.
- Հոդված 13. Արտաքսման որոշման դեպքում օտարերկրացիների՝ պատշաճ գործընթաց անցնելու իրավունք.
- Հոդված 14. Արդար քննության իրավունք.
- Հոդված 15. Ազատություն հետադարձ ուժ ունեցող քրեական օրենքներից.
- Հոդված 16. Իրավասության եկտության ճանաչման իրավունք.
- Հոդված 17. Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք.
- Հոդված 18. Մտքի, խղճի և դավանանքի ազատություն.
- Հոդված 19. Սեփական կարծիք ունենալու և արտահայտելու ազատություն.
- Հոդված 20. Պատերազմի քարոզչությունից ազատություն և ազատություն ռասայական, կրոնական կամ ազգային տեսլության հրահրումից.
- Հոդված 21. Խաղաղ հավաքների իրավունք.
- Հոդված 22. Միավորումներ կազմելու ազատություն.
- Հոդված 23. Անուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք.
- Հոդված 24. Երեխաների պաշտպանության իրավունքներ.
- Հոդված 25. Հասարակական կյանքին մասնակցելու իրավունք.
- Հոդված 26. Օրենքի առջև հավասարության իրավունք և անխտրականության իրավունքներ.
- Հոդված 27. Փոքրամասնությունների իրավունքներ:

²⁶ Հոդված 49:

²⁷ Միավորված ազգերի կազմակերպության համաձայնագրերի շտեմարան [United National Treaties Database], հետևյալ հասցեով՝ <http://untreaty.un.org>. ստուգվել է 2003 թ. սեպտեմբերին: Որոշ պետություններ ժառանգել են այս պարտավորությունները: Ժառանգելու վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տես [25.43]ff:

²⁸ Սա կարող է արտահայտել դրա՝ որպես ոչ անհատական իրավունքի պարականոն կարգավիճակը. տես [7.22]:

Օժանդակ երաշխիքներ

[1.15] Դաշնագրի II մասի 2-5-րդ հոդվածներում ընդգրկված են օժանդակ երաշխիքները:

[1.16] Հոդված 2(1)-ը հիմնարար նշանակություն ունի. դա «պարտավորություն» սահմանող այն դրույթն է, որը մասնակից պետություններին թելադրում է համայնքային մակարդակում անմիջապես ապահովել ՔՔԻՄԴ-ի էական երաշխիքները: Մասնավորապես, հոդված 2(1)-ը մասնակից պետություններին պարտավորեցնում է «հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց» էական իրավունքները, որոնք ճանաչվել են ՔՔԻՄԴ-ով՝ «առանց որևէ խտրականության»: Այս պարտավորության անհետաձգելիությունը նպաստում է որևէ մասնակից պետության՝ ՔՔԻՄԴ-ով ստանձնած պարտավորությունների դատական կարգով քննելու հնարավորությանը և դրանց սահմանմանը: Որևէ մասնակից պետություն կամ կատարում է իր պարտավորությունները, կամ չի կատարում. 2-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես երևում է, որևէ բացառություն թույլ չի տալիս: Այս անմիջականորեն գործող պարտավորության կարևորությունն ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք ՏՄՄԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված աստիճանական պարտավորության հետ: Յուրաքանչյուր մասնակից պետություն, ըստ ՏՄՄԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի, պարտավոր է «ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում ... միջոցներ ձեռնարկել՝ աստիճանաբար հասնելու ՏՄՄԻՄԴ-ով ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը»: Հեշտ չէ սահմանել աստիճանական պարտավորության բովանդակությունը, ինչպես որ դժվար է պարզել, թե երբ է խախտվում այս պարտավորությունը: «Ունեցած» բառը «մասնակից պետության խուսափելու» չափազանց մեծ տեղ է թողնում²⁹: ՏՄՄԻՄԴ-ում սահմանված պարտավորությունների՝ աստիճանական կատարում ենթադրող բնույթը անկասկած խոչընդոտել է ՏՄՄԻՄԴ-ի նորմերի զարգացումը:

[1.17] Հոդված 2(1)-ը նաև սահմանում է ՔՔԻՄԴ-ի անհատական և աշխարհագրական ընդգրկումը. ՔՔԻՄԴ-ի շահառուներն «անհատներ» են, այն դեպքում, երբ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորություն է կրում միայն այն անձանց և իրադարձությունների համար, որոնք գտնվում են տվյալ պետության «տարածքի սահմաններում և իրավագործության տակ»³⁰:

[1.18] Վերջապես, հոդված 2(1)-ը նաև պարունակում է անխտրականության մի կարևոր երաշխիք: 3-րդ հոդվածը լրացնում է անխտրականության այս երաշխիքը՝ մասնավորապես երաշխավորելով տղամարդկանց ու կանանց՝ դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք: Կարծիք կա, թե 3-րդ հոդվածն անտեղի է: Թե՛ 2-րդ հոդվածի 1-ին կետը և թե՛ 3-րդ հոդվածն ամրապնդում են 26-րդ հոդվածում առանձին սահմանված խտրականության արգելման դրույթը³¹:

[1.19] 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը լրացնում են 1-ին կետը՝ պահանջելով ձեռնարկել ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքների ներպետական պաշտպանության որոշակի միջոցներ: Հոդված 2(2)-ը մասնակից պետություններին պարտավորեցնում է «ձեռնարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար»: Այսպիսով, մասնակից պետությունները պարտավոր են փոփոխությունների ենթարկել իրենց օրենքները, որպեսզի դրանք համապատասխանեն ՔՔԻՄԴ-ով ստանձնած իրենց պարտավորություններին: Հոդված 2(3)(ա)-ն մասնակից պետություններին պարտավորեցնում է ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ տեղական միջոցներ այն անձանց համար, որոնց ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքները ոտնահարվել են³²: Հոդված 2(3)(բ)-ն մասնավորեցնում է, որ իրավական պաշտ-

²⁹ R. Robertson, 'Measuring State Compliance with the Obligation to Devote the 'Maximum Available Resources' to Realising Economic, Social and Cultural Rights' (1994) 16 *Human Rights Quarterly* 693, 694:

³⁰ Տե՛ս ընդհանրապես գլուխ 4-ը:

³¹ Խտրականությունից զերծ լինելու երաշխիքների վերաբերյալ տե՛ս գլուխ 23-ը:

³² Հոդված 2(3)(ա)-ի «բառացի ընկալման» դեպքում «թվում է, թե պահանջվում է, որ դաշնագրի երաշխիքներից մեկի փաստացի խախտումը պաշտոնապես հաստատվի՝ որպես իրավական պաշտպանության միջոց, օրինակ՝ փոխհատուցում կամ իրավունքների վերականգնում ստանալու անհրաժեշտ նախապայման: Այսուհանդերձ, 2-րդ հոդվածի 3(ա) պարբերությունը մասնակից պետություններին պարտավորեցնում է ապահովել, որ իրավական պաշտպանության մեծ միջոցներ ստանալու իրավունքի մասին որոշում կայացնի իրավասու դատական, վարչական կամ օրենսդիր իշխանութ-

պանության այս միջոցները պետք է որոշվեն պետական իշխանության իրավասու մարմնի, լավագույն դեպքում՝ դատական մարմնի կողմից, իսկ հոդված 2(3)(գ)-ն պահանջում է ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը:

[1.20] Այս շարադրանքի ընթացքում կոմիտեն դեռևս 2-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանություն մշակելու գործընթացում էր: Ընդհանուր մեկնաբանության նախագծի որոշ հատվածներ, որոնք մատչելի դարձան 2003 թ. մայիսին, ներառված են այս գրքի տարբեր հատվածներում: Ընթերցողներին խորհուրդ ենք տալիս Ընդհանուր մեկնաբանության վերջնական տարբերակը նայել համաձայնագրերի տեքստերի ինտերնետային կայքում:

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

¶ 14. 2-րդ հոդվածի 3-րդ կետը պահանջում է, որ, ի լրումն դաշնագրով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանության, մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ անհատները նույնպես իրավական պաշտպանության մատչելի, արդյունավետ և կիրարկելի միջոցներ ունենան՝ պաշտպանելու համար այդ իրավունքները: Կոմիտեն մեծ կարևորություն է տալիս մասնակից պետությունների կողմից համապատասխան դատական և վարչական մեխանիզմների ստեղծմանը՝ անդրադառնալու համար ներպետական օրենսդրության շրջանակներում իրավունքների ոտնահարումների մասին պնդումներին: [Կոմիտեն նշում է, որ դաշնագրով ճանաչված իրավունքներից օգտվելն արդյունավետորեն կխթանվի, օրինակ, եթե դատարանների կողմից ընդունվի դրանց անմիջական կիրառման հնարավորությունն այն դեպքերում, երբ տեղական օրենսդրությունն անձանց թույլ է տալիս կիրառել միջազգային իրավունքի այնպիսի դրույթներ, որոնք համարվում են ինքնակիրառվող:] Հատկապես վարչական մեխանիզմների կարիք կա, որպեսզի իրավական ուժ ստանա այն ընդհանուր պարտավորությունը, ըստ որի՝ իրավունքների խախտումների մասին պնդումները պետք է անկախ և անկողմնակալ մարմինների կողմից ուսումնասիրվեն պատշաճ կարգով, խորությամբ և արդյունավետորեն: Որևէ մասնակից պետության կողմից իրավունքների խախտումների մասին հայտարարությունների ուսումնասիրություն չկատարելն ինքնին կարող է հանգեցնել դաշնագրի առանձին խախտման:

¶ 15. [...] 2-րդ հոդվածի 3-րդ կետը պահանջում է, որ մասնակից պետությունները փոխհատուցում տան [...] այն անձանց, որոնց՝ դաշնագրով սահմանված իրավունքները ոտնահարվել են: Եթե դաշնագրով սահմանված իրավունքները ոտնահարված անձանց փոխհատուցում չի տրվում, ապա իրավական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու պարտավորությունը, որն առանցքային նշանակություն ունի 2-րդ հոդվածի 3-րդ կետի արդյունավետության տեսանկյունից, չի կատարվում: Ի լրումն հստակ նախատեսված փոխհատուցման, որը պահանջվում է համաձայն 9-րդ հոդվածի 5-րդ կետի և 14-րդ հոդվածի 6-րդ պարբերության, դաշնագիրն ընդհանրապես պահանջում է համարժեք դրամական փոխհատուցում: Կոմիտեն նշում է, որ, երբ տեղին է, փոխհատուցումը կարող է ընդունել այլ ձևեր, ինչպիսիք են հրապարակայնորեն ներողամտություն հայցելը, հրապարակային հուշագրերը [...] և համապատասխան օրենքներում և աշխատանքային գործընթացներում փոփոխությունների կատարումը, ինչպես նաև մարդու իրավունքների խախտումներ կատարած անձանց արդարադատության առջև կանգնեցնելը: Սովորաբար փոխհատուցման այս եղանակները կիրառվում են ի լրումն դրամական փոխհատուցման:

¶ 16. Առհասարակ այս դաշնագրի նպատակները կծախողվեն առանց 2-րդ հոդվածի բաղադրիչ հանդիսացող մի պարտավորության, համաձայն որի՝ հարկ է ձեռնարկել միջոցներ՝ կանխարգելելու դաշնագրի խախտման որևէ դեպքի կրկնություն: Համապատասխանաբար, կամընտիր արձանագրությամբ դիտարկվող գործերում կոմիտեի կողմից հաճախակի հանդիպող գործելաոճ է իր տեսակետներում ընդգծել, որ միջոցներ ձեռնարկելու կարիք կա, տուժողների իրավական պաշտպանության հատուկ միջոցներից բացի, դիտարկվող ոտնահարման տեսակի կրկնությունից խուսափելու համար: Նման միջոցները կարող են փոփոխություններ պահանջել տվյալ մասնակից պետության օրենքներում կամ գործելաոճում:

յան որևէ մարմին, մի երաշխիք, որն իրավական ուժ չէր ունենա, եթե այն հասանելի չլիներ այն դեպքերում, երբ խախտումը դեռևս չի հաստատվել. «*Կազանցիս ընդդեմ Կիպրոսի*» (*Kazantzis v Cyprus*, 972/01), պարբերություն 6.6: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը հավելում է, որ «որևէ մասնակից պետությունից չի կարելի ողջամտորեն պահանջել՝ հիմնվելով 2-րդ հոդվածի 3(բ) կետի վրա, հնարավոր դարձնել նման ընթացակարգերից օգտվելը անկախ այն հանգամանքից՝ որքան թերի կլինեն նման դիմումները»: Հետևաբար, «2-րդ հոդվածի 3-րդ կետը պաշտպանություն է տրամադրում ենթադրյալ տուժողներին, եթե նրանց հայցադիմումները բավարար չափով հիմնավորված են, որպեսզի դրանք հնարավոր լինի դաշնագրով պաշտպանել»:

¶ 17. [...] Այն դեպքերում, երբ 16-րդ պարբերությունում հիշատակված ուսումնասիրությունները բացահայտում են դաշնագրով սահմանված որոշակի իրավունքների խախտումներ, մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ դրանց պատասխանատվությունը կանգնեն արդարադատության առջև: Ինչպես ուսումնասիրությունները ծախսողն ու դեպքում, նման խախտումներ կատարած անձանց արդարադատության առջև չկանգնեցնելն ինքնին կարող է հանգեցնել դաշնագրի առանձին խախտման: Նշված պարտավորությունները ծագում են հատկապես այն խախտումների առնչությամբ, որոնք միջազգային իրավունքով ճանաչված են որպես քրեական. օրինակ՝ խոչտանգումները և նմանատիպ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը (հոդված 7) [9.111], [կյանքից արագացված ընթացակարգով և կամայականորեն զրկման դեպքերը (հոդված 6) [8.09] և ազատությունից հարկադրաբար զրկելու դեպքերը (հոդվածներ 7, 9 և հաճախ՝ 6)]: Իսկապես, այս խախտումների համար անպատժելիության հիմնախնդիրը, որը կոմիտեի մշտական մտահոգության առարկան է, [հաճախ դիտվում է որպես] այդ խախտումների կրկնությանը [գուցե] նպաստող կարևոր տարր: Այն դեպքերում, երբ դրանք պարբերական բնույթ ունեն կամ լայնածավալ գործողություններ են քաղաքացիական բնակչության վրա հարձակման համատեքստում, ապա այդ և դաշնագրի որոշ այլ խախտումներ համարվում են մարդկության դեմ հանցագործություններ (տե՛ս Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը [Rome Statute of the International Criminal Court], հոդված 7):

Համապատասխանաբար, այն դեպքերում, երբ կարծիք կա, թե պետական ծառայողները կամ պետական իշխանության մարմինները խախտել են դաշնագրով նախատեսված այս պարբերությունում հիշատակված իրավունքները, դրան առնչվող մասնակից պետությունները խախտողներին չեն կարող ազատել անձնական իրավական պատասխանատվությունից, ինչպես եղել է որոշ համաձայնագրերի դեպքում (տե՛ս թիվ 20(44) Ընդհանուր մեկնաբանություն) [9.123]: Ի լրումն, որևէ պաշտոնական կարգավիճակ չի արդարացնում նման խախտումների համար պատասխանատու և մեղադրման ենթակա անձանց իրավական պատասխանատվությունից ազատելը: Պետք է վերացվեն նաև իրավական պատասխանատվության հաստատմանը խանգարող այլ իրավական խոչընդոտներ, ինչպիսիք են վերադասի հրամաններին ենթարկվելը պաշտպանելը կամ կանոնադրական սահմանափակումների անհիմն կարճ ժամկետները [...] այն դեպքերում, երբ նման սահմանափակումները [...] թույլատրելի են ...

¶19. ... Այն դեպքում, երբ 2-րդ հոդվածի 3-րդ կետը գլխավորապես վերաբերում է ներպետական իրավական համակարգում իրավական պաշտպանության միջոցների տրամադրմանը, այն մասնակից պետություններին, որոնք մինչ օրս չեն վավերացրել [առաջին] կամընտիր արձանագրությունը, հիշեցվում է վավերացման կարևորությունը, որպեսզի անձինք հնարավորություն ստանան դիմելու Մարդու իրավունքների կոմիտե՝ կապված դաշնագրով սահմանված իրենց իրավունքների խախտումների հետ:

[1.21] 4-րդ հոդվածը մասնակից պետություններին իրավունք է տալիս «պետության մեջ արտակարգ դրության ժամանակ» մասնակիորեն շեղվելու ՔՔԻՄԴ-ով ստանձնած իրենց պարտավորություններից: Այսուհանդերձ, շեղվելու այս իրավունքը խստորեն սահմանափակված է 4-րդ հոդվածի ներքին դրույթներով. այդպիսով, գոյություն ունեն պետության կողմից այդ իրավունքի չարաշահումից ապահովագրող երաշխիքներ³³:

[1.22] 5-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունները, խմբերը կամ անձինք չպետք է չարաշահեն ՔՔԻՄԴ-ով սահմանված իրավունքները, որպեսզի չվնասեն այլոց կողմից ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքներից օգտվելուն: Օրինակ՝ անհատները չպետք է չարաշահեն իրենց իրավունքները և խթանեն ֆաշիստական քաղաքականություններ, որոնք կոչ են անում վերացնել այլոց իրավունքները³⁴:

Հոդված 5(2)-ը ամրագրում է, որ արգելվում է ՔՔԻՄԴ-ն օգտագործել որպես քաղաքացիական և քաղաքական իրավունքների համար միջազգային համաձայնագրերով կամ ներպետական օրենսդրությամբ կամ ավանդույթներով տրամադրվող պաշտպանության մակարդակն իջեցնելու պատրվակ: Հոդված 5(2)-ը «խնայողական» դրույթ է³⁵, որը պահպանում է այն օրենքների անձեռնմխելիությունը, որոնք ապահովում են մարդու իրավունքների պաշտպանության ավելի բարձր մակարդակ, քան պահանջվում է ՔՔԻՄԴ-ով³⁶:

³³ Շեղումներ թույլ տալու իրավունքի մասին տե՛ս գլուխ 25-ը:

³⁴ Տե՛ս «Մ.Ա.-ն ընդդեմ Իտալիայի» (M.A. v Italy, 117/81), [18.33] հատվածը:

³⁵ Նովակ, տե՛ս վերը, ծնթ. 22, էջ 100:

³⁶ Հոդված 5(2)-ի կատարման պահանջի օրինակի համար տե՛ս պրն Լալահի [Mr Lallah] հակառակ տեսակետն այստեղ՝ «Քինդլերն ընդդեմ Կանադայի» (Kindler v Canada, 470/91):

[1.23] Որևէ մասնակից պետության կողմից 2-5-րդ հոդվածներում ամրագրված օժանդակ երաշխիքներն առանձին չեն կարող ուսմահարվել: Դրանք չեն կարող ուսմահարվել, քանի դեռ զուգահեռ չի խախտվել դաշնագրի III մասում ամրագրված որևէ էական իրավունք: Օրինակ՝ չի կարելի պնդել, թե ուսմահարվել է որևէ մեկի՝ իրավական պաշտպանության միջոց ստանալու իրավունքը՝ նախատեսված հոդված 2(3)-ով, եթե նախօրոք չի հաստատվել իրավական պաշտպանության տվյալ միջոցից օգտվելու իրավունքը որևէ էական իրավունքի ուսմահարման հետևանքով: Այնուամենայնիվ, այս առումով հարկ է հիշատակել «Կալն ընդդեմ Լեհաստանի» (*Kall v Poland, 552/93*)³⁷ գործի շրջանակներում տկն էվաթի, տկն Սեդինա Քուիրոգայի և տկն Շանեի՝ ՄԻԿ-ի երկարաժամկետ իրավագործության հետ չհամաձայնող և դրան վճռական մարտահրավեր նետող տեսակետների մասին:

¶ 3. ... Մինչ այժմ կոմիտեն հակված է եղել այն տեսակետին, որ չի կարող համարվել, թե որևէ մասնակից պետություն խախտել է [հոդված 2(3)-ը], քանի դեռ չի պարզվել դաշնագրով նախատեսված մեկ այլ իրավունքի համապատասխան խախտում: Մենք չենք կարծում, թե սա հոդված 2(3)-ի ճիշտ ընկալում է:

¶ 4. Հարկ է հաշվի առնել, որ 2-րդ հոդվածն ուղղված է ոչ թե կոմիտեին, այլ մասնակից պետություններին. հոդվածը շարադրում է մասնակից պետությունների այն պարտավորությունները, որոնք նրանք ստանձնում են, որպեսզի ապահովեն իրենց իրավագործության տակ գտնվող ժողովրդի օգտվելը իրավունքներից: Եթե հոդվածն ընկալում ենք այդ կերպ, ապա այնքան էլ տրամաբանական չէ, որ մասնակից պետությունները, ըստ դաշնագրի, պետք է իրավական պաշտպանության միջոցներ տրամադրեն միայն այն դեպքերում, երբ կոմիտեն կարծում է, որ եղել է իրավունքների խախտում: 2-րդ հոդվածի 3-րդ կետի մեծ մեկնաբանումն այն անօգուտ է դարձնում: Այն, ինչին նպատակաուղղված է 2-րդ հոդվածը, հետևյալն է. ամրագրել, որ ամեն անգամ, երբ պետական իշխանության որևէ մարմնի գործողության հետևանքով տուժում է դաշնագրով ճանաչված՝ որևէ մարդու իրավունք, ապա պետք է գոյություն ունենա պետության կողմից հաստատված մի ընթացակարգ, որն անձին, ում իրավունքները տուժել են, հնարավորություն կտա դիմելու իրավասու մարմնին և պնդելու, որ տեղի է ունեցել իրավունքի ուսմահարում: Այս մեկնաբանումը համահունչ է դաշնագրի հիմքում ընկած ողջ տրամաբանությանը, այն է՝ մասնակից պետությունները պետք է այդ նպատակով կենսագործեն դաշնագիրը և տրամադրեն պետական իշխանության մարմինների կողմից իրավունքների հնարավոր խախտումները շտկելու համար նախատեսված հարմար եղանակներ: Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է այն, որ միջազգային վերահսկողությունը միջամտում է միայն այն դեպքում, երբ պետությունը սեփական միջազգային պարտավորությունները կատարելու պարտավորությունը չի կատարում:

[1.24] Այնուամենայնիվ, այս կանոնի խստությունը վերջերս ավելի ընդգծվեց «Կավանան ընդդեմ Իռլանդիայի» (*Kavanagh v Ireland, 1114/02*) գործում, որում հեղինակը բողոքում էր ՔՔԻՄԴ-ով ճանաչված և ավելի վաղ տեղի ունեցած «Կավանան ընդդեմ Իռլանդիայի» (819/98) [23.109] գործի շրջանակներում հենց ՄԻԿ-ի կողմից հաստատված իր իրավունքների խախտման առնչությամբ մասնակից պետության կողմից իրավական պաշտպանության միջոցների տրամադրումը մերժելու դեմ: ՄԻԿ-ը, ակնհայտորեն անտեսելով սեփական տեսակետները, որոշեց, որ Կավանագի երկրորդ բողոքն անընդունելի է³⁸:

ՔՔԻՄԴ-ը և ներպետական օրենսդրությունը

[1.25] Չնայած ՔՔԻՄԴ-ը մասնակից պետությունների համար պարտավորություններ է սահմանում իրավունքի միջազգային հարթությունում, ենթադրվում է, որ դրանց առնչվող իրավունքների իրականացումը գլխավորապես ներպետական խնդիր է³⁹: Իսկապես, 2-րդ հոդվածը՝ ընդհանուր պարտավորությունների մասին դրույթը, մասնակից պետություններից պահանջում է տեղական մակարդակում պաշտպանել ՔՔԻՄԴ-ով ճանաչվող իրավունքները: Հարկադրման միջազգային միջոցները, ինչպիսիք են ՄԻԿ-ի վերահսկիչ մեխանիզմները, մշակվել են որպես ՔՔԻՄԴ-ով սահմանվող իրավունքների պաշտպանութ-

³⁷ Տե՛ս նաև պրն Վեններգրենի առանձնահատուկ տեսակետը այստեղ՝ «Ս.Է.-ն ընդդեմ Արգենտինայի» (*S.E. v Argentina, 275/88*): Հոդված 2(3)-ի ուսմահարում՝ առանց ՔՔԻՄԴ-ի որևէ էական իրավունքի համապատասխան խախտման, կարող է լինել, օրինակ, այն դեպքում, երբ էական իրավունքի խախտումը կատարվել է նախքան տվյալ պետության կողմից ՔՔԻՄԴ-ի վավերացումը. տե՛ս [2.10]:

³⁸ Պարբ. 4.2. cf «Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (*Pauger v Austria, 415/90*) և «Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (*Pauger v Austria, 716/96*) [23.58]: Պաուգերի գործում խախտում էր հայտնաբերվել երկրորդ զեկույցում (տե՛ս գլուխ 23, ծնթ. 52), առավելապես, քանի որ առաջին զեկույցում հայտնաբերված խախտումները շարունակվել էին ոչ թե այն պատճառով, որ առաջին զեկույցի առնչությամբ իրավական պաշտպանության որևէ միջոց չէր տրամադրվել:

³⁹ Տե՛ս Նովակ, վերը, ծնթ. 22, էջ 27:

յան երկրորդային աղբյուրներ: Օրինակ՝ անձինք չեն կարող օգտվել անհատական բողոքների մեխանիզմից, քանի դեռ չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները⁴⁰: Ներպետական հարկադիր կիրարկմանը տրվող առաջնությունն արտահայտում է պետության ինքնիշխանության նկատմամբ հարգանքը, ինչպես նաև օրենքների պարտադրման ներպետական համակարգերի գերադասելի կարողունակությունը, առավել նպատակահարմարությունը և արդյունավետությունը⁴¹:

[1.26] Այսպիսով, մասնակից պետությունները ՔՔԻՄԴ-ում ամրագրված երաշխիքները անհատների համար տեղական իրավունքների վերածելու պարտավորություն ունեն⁴²: ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքներին հատկացված փաստացի ներպետական պաշտպանությունը կախված է տվյալ մասնակից պետության իրավական և քաղաքական համակարգից: Օրինակ՝ անհրաժեշտություն չկա, որ որևէ մասնակից պետություն ընդունի իրավունքների սահմանադրական կամ նույնիսկ կանոնադրական օրինագիծ, որը ներառի ՔՔԻՄԴ-ում սահմանված իրավունքները, քանի դեռ ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքներն *ինչ-որ կերպ* պաշտպանված են: Այնուամենայնիվ, սահմանադրական իրավունքների օրինաչափ հավանաբար ՔՔԻՄԴ-ում ներառված իրավունքների պաշտպանության ամենաարդյունավետ միջոցն է:

[1.27]

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

¶ 11. 2-րդ հոդվածի 2-րդ կետը մասնակից պետություններից պահանջում է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել, որպեսզի դաշնագրով նախատեսված իրավունքները կիրարկվեն ներպետական համակարգում: Այնուհետև նշվում է, որ քանի դեռ ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքները պաշտպանված չեն տեղական օրենքներով կամ գործնական կիրառմամբ, մասնակից պետությունները պարտավոր են դաշնագրի վավերացումից հետո ազգային օրենսդրության մեջ և գործնականում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են դրանց համապատասխանությունը դաշնագրին ապահովելու համար: Այն դեպքերում, երբ անհամապատասխանություններ կան ներպետական օրենսդրության և դաշնագրի միջև, 2-րդ հոդվածը պահանջում է, որ ներպետական օրենսդրությունը կամ պրակտիկան փոխվեն՝ բավարարելու դաշնագրի էական երաշխիքների պարտադրած չափանիշները: 2-րդ հոդվածը մասնակից պետությանը թույլ է տալիս հետամուտ լինել այս փոփոխություններին՝ համաձայն սեփական սահմանադրական կառուցվածքի, և համապատասխանաբար չի պահանջում, որ դաշնագիրն ուղղակիորեն կիրառելի լինի դատարաններում՝ ներպետական օրենսդրության մեջ դրա ներմուծման միջոցով: Կոմիտեն, այսուհանդերձ, պաշտպանում է այն տեսակետը, որ դաշնագրի տրամադրած երաշխիքները կարող են լայն պաշտպանություն գտնել այն պետություններում, որտեղ ՔՔԻՄԴ-ն ինքնաբերաբար կամ հատուկ եղանակով ներառման միջոցով տեղական իրավական համակարգի մաս է կազմում: Կոմիտեն հրավիրում է այն մասնակից պետություններին, որտեղ դաշնագիրը [որպես տարբերակ՝ դեռևս] ներպետական իրավական համակարգի մաս չի կազմում, դիտարկել դաշնագրի ներառման հնարավորությունը, որպեսզի ներպետական օրենսդրության մի մասը հատկացվի դաշնագրին՝ 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքների լիակատար իրականացման նպատակով⁴³:

[1.28] ՔՔԻՄԴ-ի 50-րդ հոդվածն ամրագրում է, որ դաշնագրի տրամադրած երաշխիքները «տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակումների կամ բացառությունների»: Հետևաբար այնպիսի դաշնությունների կենտրոնական իշխանություններից, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները, Կանադան, Ավստրալիան, Բրազիլիան և Ռուսաստանի Դաշնությունը, պահանջվում է երաշխավորել, որ իրենց երկրների մարզային (նահանգային) օրենքները և մարզային մարմինների գործունեությունը համապատասխանում են դաշնագրի դրույթներին: Իսկապես, շատ դեպքերում դաշնագրի դրույթների խախտումներ են արձանագրվել, երբ վիճարկվող օրենքը եղել

⁴⁰ Ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս գլուխ 6-ը:

⁴¹ Տե՛ս D.L. Donoho, 'Relativism versus Universalism in Human Rights: The Search for Meaningful Standards' (1991) 27 *Stanford Journal of International Law* 345, 372-3, տե՛ս նաև D. Harris, 'The International Covenant on Civil and Political Rights and the United Kingdom: An Introduction', in D. Harris and S. Joseph, *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law*, (Clarendon Press, Oxford, 1995), 6:

⁴² Միջազգային իրավունքում իրավունքների կամ պարտավորությունների և ներպետական օրենսդրության մեջ իրավունքների կամ պարտավորությունների այս փոխհարաբերությունները համապարփակ վերլուծության են ենթարկվել հետևյալ աշխատությունում. S. Joseph, 'A Rights Analysis of the Covenant on Civil and Political Rights' (1999) 5 *Journal of International Legal Studies* 57:

⁴³ Բազմաթիվ եզրափակիչ դիտարկումներում (եզրափակիչ դիտարկումների վերաբերյալ տե՛ս [1.39]) ՄԻԿ-ը խորհուրդ է տվել ՔՔԻՄԴ-ը ներառել ներպետական օրենսդրության մեջ: Այսուհանդերձ ներառումը ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտավորություն չէ:

է մարզային, այլ ոչ թե դաշնային օրենք⁴⁴: Այսուամենայնիվ, տվյալ խախտումը վերագրվում է կենտրոնական իշխանությանը, քանի որ կենտրոնական իշխանությունն է, որ օժտված է միջազգային իրավասուբյեկտությամբ և հանդիսանում է տվյալ համաձայնագրի փաստացի կողմ: Իհարկե, որևէ պետության կազմում գործող դաշնային միավորների միջև տարբերությունները թույլատրելի են⁴⁵. մարզային տարբերությունները կառավարման դաշնային համակարգի հատկանիշներից մեկն են: Նման տարբերությունները պետք է այնուամենայնիվ լինեն «ողջամիտ և օբյեկտիվ», այլապես կխախտեն դաշնագրի՝ խտրականությունն արգելող դրույթները⁴⁶: 50-րդ հոդվածը ՔՔԻՄԴ-ով սահմանվող իրավունքների կարևոր երաշխիք է. ՔՔԻՄԴ-ի ազդեցությունը նշանակալի չափով նվազ կլինեն դաշնություններում, եթե դաշնագիրը չտարածվեր մարզային իրավական հարթության վրա⁴⁷: Հարկ է ընդունել, որ 50-րդ հոդվածը կարող է կենտրոնական իշխանությունների համար ներքին իրավական հիմնախնդիրներ ստեղծել, երբ դրանք դաշնագիրը խախտող մարզային (նահանգային) օրենքները հաղթահարելու կամ «շտկելու» հարցում սահմանադրական իշխանության պակաս ունեն⁴⁸:

[1.29]

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Իհարկե, որևէ մասնակից պետություն, ձգտելով մեղմացնել ՔՔԻՄԴ-ով սահմանված իր պատասխանատվությունը, չի կարող հայտարարել, թե իր ներպետական օրենքներն արգելում են կատարել ՔՔԻՄԴ-ով ստանձնած սեփական պարտավորությունները:

¶ 3. Դաշնագրով սահմանված պարտավորությունները՝ ընդհանրապես և 2-րդ հոդվածը՝ մասնավորապես, յուրաքանչյուր մասնակից պետության՝ որպես ամբողջության համար պարտադիր կատարման ուժ ունեն: Պետական իշխանության բոլոր ճյուղերը [գործադիր, օրենսդիր և դատական] և պետական այլ իշխանությունները կարող են ի վիճակի լինել ստանձնելու պետության՝ որպես դաշնագրի կողմի պատասխանատվությունը: Գործադիր իշխանությունը, որը միջազգային ասպարեզում սովորաբար ներկայացնում է մասնակից պետությունը, ներառյալ՝ կոմիտեի հետ հարաբերություններում, չի կարող հղում անել այն փաստին, որ դաշնագրի դրույթները խախտող տվյալ գործողությունը կատարել է պետական իշխանության մեկ այլ ճյուղ, և փորձել այդպիսով մասնակից պետությանն ազատել այդ գործողության և դրա հետևանքով դաշնագրին դրա անհամապատասխանության համար պատասխանատվությունից: Այս ընկալումն ուղղակիորեն բխում է Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի [Vienna Convention on the Law of Treaties] 27-րդ հոդվածի այն սկզբունքից, ըստ որի՝ որևէ մասնակից պետություն «որպես պայմանագիրը չկատարելու պատճառաբանություն չի կարող բերել իր ներքին իրավունքի դրույթները»: Չնայած 2-րդ հոդվածի 2-րդ կետը մասնակից պետություններին թույլ է տալիս դաշնագրով սահմանված իրավունքներն իրականացնել ըստ ներպետական սահմանադրական ընթացակարգերի, նույն սկզբունքը գործում է կանխելու համար, որ մասնակից պետությունները տվյալ համաձայնագրով ստանձնած պարտավորությունները չկատարելը կամ դրանք ուժի մեջ չմտցնելը արդարացնելու նպատակով սահմանադրական իրավունքի դրույթներ կամ ներքին իրավունքի այլ դրույթներ չվկայակոչեն: Այս առումով կոմիտեն դաշնության կառուցվածք ունեցող մասնակից պետություններին հիշեցնում է 50-րդ հոդվածով սահմանված պայմանների մասին, որոնց համաձայն՝ դաշնագրի դրույթները «տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակումների կամ բացառությունների»:

[1.30] ՔՔԻՄԴ-ով սահմանված իրավունքների փաստացի ներպետական պաշտպանությունը կախված է տվյալ մասնակից պետության իրավական և քաղաքական համակարգից: Որոշ մասնակից պետություն-

⁴⁴ Տե՛ս, օրինակ, «Բալանթայնը և այլք ընդդեմ Կանադայի» (Ballantyne et al v Canada, 359, 385/89), այստեղ՝ (18.42), «Ուոլդմանն ընդդեմ Կանադայի» (Waldman v Canada, 694/96) [23.63] և «Տոոնենն Ավստրալիայի» (Toonen v Australia, 488/92), այստեղ՝ [16.36]:

⁴⁵ Տե՛ս «Չեբանը և այլք ընդդեմ Ռուսաստանի» (Cheban et al v Russia, 790/97), պարբ. 7.4:

⁴⁶ Խտրականության վերաբերյալ, ընդհանուր առմամբ, տե՛ս գլուխ 23-ում: Տե՛ս «Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի» (Lindgren et al v Sweden, 298-9/88) և «Հեսսենն ընդդեմ Ավստրալիայի» (Hesse v Australia, 1087/02), որտեղ մեկ պետության ներսում տարբեր բնակավայրերի միջև հայտարարվող խտրականության մասին բողոքները հաջողություն չունեցան (և չընդունվեցին Հեսսենի գործում):

⁴⁷ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Ավստրալիայի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, պարբ. 516-17:

⁴⁸ Օրինակ՝ պարտադիր չէ, որ Կանադայի դաշնային կառավարության իշխանությունը տարածվի միջազգային պայմանագրերից, ներառյալ՝ ՔՔԻՄԴ-ից բխող խնդիրների վրա: Տե՛ս, օրինակ, «Գլխավոր դատախազը (Կանադա) ընդդեմ գլխավոր դատախազի (Օնտարիո)» [1937] AC 326: Այս պատճառով դաշնային կառավարությունը կարող է ստիպված լինել բանակցել նահանգային իշխանությունների հետ, որպեսզի շտկի ՔՔԻՄԴ-ի խախտումները: Սրան հակառակ՝ Ավստրալիայի դաշնային կառավարությունը կարող է չեղյալ ճանաչել նահանգային այն օրենքները, որոնք հակասում են միջազգային պայմանագրերով Ավստրալիայի պարտավորություններին. տե՛ս, օրինակ, «Բրիտանական համագործակցությունն ընդդեմ Թասմանիայի» (Commonwealth v Tasmania, 1983) 158 CLR 1:

ներում, օրինակ՝ Նիդեռլանդներում ՔՔԻՄԴ-ը գործում է անմիջականորեն և, հետևաբար, ներպետական օրենսդրության մի մասն է: Հայտարարվող խախտումները կարելի է բողոքարկել տեղական դատարաններում: Այլ մասնակից պետություններում ՔՔԻՄԴ-ն ինքնաիրականացվող չէ, այսինքն՝ ինքնաբերաբար չի դառնում ներպետական օրենսդրության մի մասը: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում և Ավստրալիայում պայմանագրերը պետք է հատուկ կարգով ներառվեն ներպետական իրավունքի մեջ, որպեսզի դրանց դրույթները տեղական դատարաններում կիրարկելի դառնան: Թվարկված պետություններից որևէ մեկում ՔՔԻՄԴ-ը նման կերպ չի ներառվել⁴⁹: Այնուամենայնիվ, ՔՔԻՄԴ-ով նախատեսված առանձին իրավունքներ երկու երկրներում էլ պաշտպանված են տարբեր իրավական ակտերով, ինչպիսիք են ոստիկանության ուժերի կիրառումը կարգավորող կանոնադրությունները կամ խտրականությունն արգելող օրենքները: Ավելին՝ նշված երկու մասնակից պետություններում ՔՔԻՄԴ-ն անուղղակի ազդեցություն ունի այն առումով, որ դրա նորմերը դատական մարմինների կողմից օգտագործվում են երկիմաստ իրավական նորմերը պարզաբանելու և ընդհանուր իրավունքում առկա բացերը լրացնելու նպատակով⁵⁰:

Մարդու իրավունքների կոմիտեն

[1.31] ՄԻԿ-ն ստեղծվել է ՔՔԻՄԴ-ի 28-րդ հոդվածով: Այն մարդու իրավունքների ոլորտի 18 փորձագետներից կազմված խորհուրդ է: ՄԻԿ-ի անդամների թեկնածությունները ներկայացվում են այն մասնակից պետությունների կողմից, որոնց քաղաքացին են⁵¹, ընտրվում են բոլոր մասնակից պետություններն ընդգրկող քվեարկությամբ և պաշտոնավարման քառամյա ժամկետով⁵²: ՄԻԿ-ի անդամների կեսն ընտրվում է երկու տարին մեկ⁵³: ՄԻԿ-ը նիստեր է գումարում տարին երեք անգամ՝ անցկացնելով երեք շաբաթ տևողությամբ հանդիպումներ, սակայն կոմիտեի անդամները համապատասխան աշխատանք կատարում են նաև նիստերի միջև ընկած ժամանակահատվածներում. օրինակ՝ որպես պետությունների զեկույցներն ուսումնասիրող աշխատանքային խմբերի անդամ [1.38Ա] կամ որպես հատուկ զեկույցող [1.108Ա]:

[1.32] ՔՔԻՄԴ-ի հոդված 31(2)-ը սահմանում է, որ «կոմիտեի ընտրությունների ժամանակ հաշվի է առնվում անդամության աշխարհագրական հավասար բաշխումը և քաղաքակրթության տարբեր ձևերի ու իրավական հիմնական համակարգերի ներկայացուցչությունը»: Հետևաբար, մասնակից պետությունները պետք է ձգտեն հավասար թվով ՄԻԿ-ի անդամներ ընտրել Արևմտյան Եվրոպայից և այլ պետություններից, Արևելյան Եվրոպայից, Լատինական Ամերիկայից և Կարիբյան ավազանից, Աֆրիկայից և Ասիայից:

[1.33] Հատուկ կարևորություն ունի այն հանգամանքը, որ ՄԻԿ-ի անդամները գործում են *անձնապես*⁵⁴: Չնայած ՄԻԿ-ի անդամի թեկնածությունը ներկայացնում է համապատասխան մասնակից պետությունը, անդամը չի գործում որպես պետական իշխանության ներկայացուցիչ: Հետևաբար, ՄԻԿ-ի հանդիպումները բացահայտ քաղաքականացված բնույթ չունեն՝ ի տարբերություն, օրինակ, Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստերի⁵⁵: Գործի են դրվում որոշակի ե-

⁴⁹ Միացյալ Թագավորության խորհրդարանը 1998 թ. ընդունեց «Մարդու իրավունքների մասին» օրենքը, որն ուժի մեջ մտավ 2000 թ. և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ներմուծեց Միացյալ Թագավորության իրավունքի մեջ:

⁵⁰ Տե՛ս «*Դերբիշիրի երկրամասի խորհուրդն ընդդեմ «Թայմզ» լրագրերի (Derbyshire County Council v Times Newspapers)* [1992] QB 770 և Justice M. Kirby, "The Australian Use of International Human Rights Norms: From Bangalore to Balliol-a View from the Antipodes" (1993) 16, *University of New South Wales Law Journal* 363:

⁵¹ ՔՔԻՄԴ-ի հոդվ. 29:

⁵² ՔՔԻՄԴ-ի հոդվ. 32:

⁵³ Այս կանոնը պարտադիր ենթադրվում է ՔՔԻՄԴ-ի հոդվ. 32(1)-ից:

⁵⁴ ՔՔԻՄԴ-ի հոդվ. 28 (3):

⁵⁵ Մարդու իրավունքների հանձնաժողովը Միավորված ազգերի կազմակերպության կազմում գործող մարմին է, որը կազմված է մասնակից պետությունների կառավարությունների 53 ներկայացուցիչներից: Հանձնաժողովի աշխատանքներն ակնհայտորեն ավելի քաղաքականացված են, քան կոմիտեի գործունեությունը, քանի որ հանձնաժողովի անդամները գործում են առավելապես իրենց կառավարությունների անունից, քան որպես մարդու իրավունքների ոլորտի անկախ փորձագետներ: Հանձնաժողովի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս Շտայներ և Ալսթոն, վերը, ծմբ. 12, գլուխ 8:

րաշխիքներ՝ քաղաքական անկողմնակալություն ապահովելու համար: Օրինակ՝ ՄԻԿ-ի անդամը չի մասնակցում այն որոշումների կայացմանը, որոնք ուղղակիորեն վերաբերում են իր երկրին: Այսուհանդերձ, իհարկե, փոքր է հավանականությունը, որ մասնակից պետություններն առաջարկեն այնպիսի թեկնածություններ, որոնք բացահայտ ընդդիմանան իրենց քաղաքականությանը⁵⁶: Անկասկած, ՄԻԿ-ի անդամները, գուցե ենթագիտակցորեն, ենթարկվել են իրենց հայրենի երկրների քաղաքականության և մշակույթի ազդեցությանը⁵⁷: Իրոք, Արևելքի և Արևմուտքի միջև քաղաքական դիրքորոշումների տեսանելի բախումներ էին տեղի ունենում «սառը պատերազմի» ողջ ընթացքում, որոնց հետևանքով հաստատությունները որոշ չափով կաթվածահար էին լինում⁵⁸: ՄԻԿ-ի նախաձեռնությունների աճն ակնառու էր 1990-ական թվականներին. դրան նպաստում էր «սառը պատերազմի» ավարտից հետո ավելի բարձր աստիճանի ներքին կոնսենսուսը:

[1.34] Ներկայումս (2003 թ. հոկտեմբերի դրությամբ) պաշտոնավարող 18 անդամների հակիրճ կենսագրությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կոմիտեի բոլոր անդամները մարդու իրավունքների ասպարեզում փորձագիտական հմտություններ ունեն և սեփական իշխանությունների հետ անմիջական կապ չունեն: Այսպիսով, ըստ ամենայնի, ներկա կոմիտեն բավարարում է անկախության և փորձագիտության որոշ չափանիշներ: Հավանական է, որ այսպես չի եղել վաղ շրջանի կոմիտեների պարագայում, որոնցում որպես անդամ ներգրավվում էին չափազանց մեծ թվով դիվանագետներ, ովքեր ավելի հակված էին առաջ մղելու սեփական երկրների «պաշտոնական» տեսակետները⁵⁹:

[1.35] Չնայած կոմիտեի Ընթացակարգային կանոնները նախատեսում են որոշումների կայացման մեծամասնական կարգ, ՄԻԿ-ը ջանում է որոշումներ կայացնել փոխհամաձայնությամբ (կոնսենսուսով)⁶⁰: Իհարկե, նման որոշումներն ավելի մեծ կշիռ ունեն, քան մեծամասնության կարծիքն արտահայտող որոշումները⁶¹: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում փոխհամաձայնության հասնելու համար անհրաժեշտ է գնալ հարկադրված զիջումների, որոնք դժբախտաբար թուլացնում են տվյալ որոշումների ուժը⁶²:

[1.36] ՄԻԿ-ը ՔՔԻՄԴ-ի կենսագործումը դիտարկման ենթարկելիս չորս էական գործառույթ ունի. (1) կազմակերպում է երկխոսություններ և պետությունների զեկույցների հիման վրա անում եզրակացություններ, (2) ընդունում է Ընդհանուր մեկնաբանություններ, որոնք բացատրում են ՔՔԻՄԴ-ի դրույթների իմաստը, (3) դիտարկում է 41-րդ հոդվածով ներկայացված միջպետական բողոքները, և (4) որոշումներ է ընդունում Առաջին կանոնադրության առնչությամբ: Այս գործառույթները հիմնականում իրականացվում են նաև այլ պայմանագրային մարմինների կողմից, միայն թե որոշ պայմանագրային մարմիններ անհատական բողոքներ քննելու իրավասություն չունեն⁶³:

⁵⁶ Այս կապակցությամբ ուշադրություն դարձրեք 1994 թ. Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության (Սերբիա-Մոնտենեգրո) կողմից պրն Վոյին Դիմիտրիևիչի՝ որպես ՄԻԿ-ի անդամի թեկնածությունը կրկին ներկայացնելու ծախսողման վրա: Պրն Դիմիտրիևիչի թեկնածությունն առաջին անգամ ներկայացվել էր նախկին Հարավսլավիայի կառավարության կողմից, 1982 թ.:

⁵⁷ Համա, տես վերը, ծմբ. 41, էջ 21:

⁵⁸ S. Joseph, "New Procedures Concerning the Human Rights Committee's Examination of State Reports" (1995) 13 *Netherlands Quarterly of Human Rights* 5, 5-6: Տես նաև L. Heffernan, "A Comparative View of Individual Petition Procedures under the European Convention on Human Rights and the International Covenant on Civil and Political Rights" (1997) 19 *Human Rights Quarterly* 78, 85:

⁵⁹ Տես A. Bayefsky, "The UN Human Rights Treaty System. Universality at the Crossroads" հետևյալ ինտերնետային հասցեով՝ www.yorku.ca/hrights/, թիվ 109: Այս ինտերնետային կայքը վերջին անգամ ստուգվել է 2002 թ. մարտին: Հրատարակությունը լույս է տեսել նաև որպես՝ *The UN Human Rights Treaty System: Universality at the Crossroads* (Kluwer Law International, Deventer, 2001): Հարկ է նաև նշել, որ ՄԻԿ-ը պայմանագրային մարմինների շարքում գուցե «ամենափորձագետ» կառույցն է: Օրինակ՝ այլ պայմանագրային մարմիններում իշխանությունների հետ բացահայտ կապեր ունեցող անդամների մասնաբաժինն ավելի մեծ է:

⁶⁰ Մարդու իրավունքների կոմիտեի Ընթացակարգային կանոններ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/Rev. 6, 24 ապրիլի, 2001 թ., թիվ 51 կանոն: Թիվ 51 կանոնը թույլատրում է պարզ մեծամասնությամբ քվեարկությունը, սակայն թիվ 51 կանոնի 1-ին և 2-րդ ծանոթագրությունները նախընտրություն են սահմանում կոնսենսուսով (միաձայն) քվեարկության համար:

⁶¹ Ջոզեֆ, տես վերը, ծմբ. 58, էջ 6:

⁶² M. Schmidt, "Individual Human Rights Complaint Procedures based on United Nations Treaties and the Need for Reform" (1992) 43 *ICLQ* 645, 656-8:

⁶³ ՏՄՄԻՄԴ-ով կամ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով (ԵԻԿ/CRC) անհատական հաղորդումների ներկայացման որևէ ընթացակարգ գոյություն չունի: ԿԵԽՎԿ-ի կանոնադրությունը, որով սահմանվեց անհատական և խմբային բողոքների ներկայացման ընթացակարգ, ՄԱԿ-ի կողմից ընդունվեց 1999 թ. հոկտեմբերին, ուժի մեջ մտավ 2000 թ. դեկտեմբերի 22-ին, բայց մինչև 2003 թ. հոկտեմբերը որևէ վերջնական տեսակետ չի հրապարակվել:

ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

[1.37] ՄԻԿ-ն ուսումնասիրում է ԶԶԻՄԴ-ի 40-րդ հոդվածով մասնակից պետությունների կողմից ներկայացված զեկույցները և անում մեկնաբանություններ: Սա ԶԶԻՄԴ-ով դիտարկում իրականացնելու միակ պարտադիր մեխանիզմն է. մասնակից պետություններից պահանջվում է պարբերաբար զեկույցներ ներկայացնել դաշնագիրը կենսագործելու վերաբերյալ: Պետությունները պարտավոր են ԶԶԻՄԴ-ն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ժամկետում ներկայացնել նախնական զեկույց: Մինչև վերջերս մասնակից պետություններից պահանջվում էր պարբերական զեկույցներ ներկայացնել հինգ տարին մեկ: ՄԻԿ-ը փոփոխել է այս կանոնը և այժմ պահանջում է պարբերական զեկույցներ ներկայացնել ցանկացած ժամանակ, երբ ՄԻԿ-ը նման պահանջ կառաջադրի⁶⁴: 1999 թ. և ապա 2000 թ. փոքր վերախմբագրումից հետո ՄԻԿ-ը հրապարակեց «Պետությունների զեկույցների ներկայացման ամփոփ ուղեցույց» [“Consolidated Guidelines for State reports”]⁶⁵, որը պետություններին կարևոր ցուցումներ է տալիս, թե ինչպես պատրաստել 40-րդ հոդվածի նպատակներից բխող պահանջները բավարարող զեկույցներ:

[1.38] 1992 թ. ՄԻԿ-ը մարդու իրավունքների սուր ճգնաժամ ապրող մասնակից պետություններից արտահերթ զեկույցներ պահանջելու գործելաոճ որդեգրեց. այդ տարի նման երկրներից էին Բոսնիա-Յերզեգովինան, Խորվաթիան և նախկին Հարավսլավիայի Հանրապետությունը (Սերբիա-Մոնտենեգրո): ՄԻԿ-ը հազվադեպ է օգտագործել արտահերթ զեկույցներ պահանջելու ընթացակարգը⁶⁶: Այնուամենայնիվ, դրա գոյությունն ապահովում է, որ ՄԻԿ-ը և այլ պայմանագրային մարմիններ, որոնք նույնպես որդեգրել են այս գործելաոճը, կարողանան պահպանել իրենց կարևորությունը մարդու իրավունքների ծայրահեղ խախտումների իրավիճակներում⁶⁷: Մյուս կողմից՝ արտահերթ զեկույցների ընթացակարգը կարող է խնդրահարույց լինել, հատկապես դրանց օգտագործման մասին ընդհանուր ուղեցույցի բացակայության ներկայիս պայմաններում: Գուցե այն սահմանափակեր ՄԻԿ-ի քվադիդատական դերը, եթե վերջինս ընկալվեր որպես մի մարմին, որը «նշանառության տակ» է վերցնում այն մասնակից պետություններին, որոնց ցանկանում է մանրակրկիտ ստուգել. փոխանակ ուսումնասիրելու յուրաքանչյուր մասնակից պետությանը՝ ըստ նրա համապատասխան զեկույցների ներկայացման ժամանակացույցի⁶⁸: Թերևս Մարդու իրավունքների հանձնաժողովի համար ավելի հարմար է կայացնել որոշումներ, որոնք անխուսափելիորեն դիտվելու են որպես քաղաքական՝ ուշադրությունը սևեռելով մարդու իրավունքների առումով որոշակի «թեժ կետերի» վրա⁶⁹:

[1.38Ա] Մասնակից պետությունների զեկույցները սովորաբար ՄԻԿ-ի կողմից ուսումնասիրվում են մասնակից պետության ներկայացուցիչների հետ հրապարակային երկխոսության միջոցով: Պետությունների զեկույցներն ուսումնասիրող աշխատանքային խմբերի (ՊԶԱԽ/CRTFs) ստեղծման (յուրաքանչյուր զեկույցի համար) շնորհիվ այս երկխոսության գործընթացը վերջերս հղկվել է: Յուրաքանչյուր ՊԶԱԽ կազմված է ՄԻԿ-ի 4-6 անդամներից, ներառյալ առնվազն մեկ անձ այն նույն տարածաշրջանից, որին պատկանում է զեկույցող երկիրը: ՊԶԱԽ-ի մեկ անդամ նշանակվում է որպես «երկրի զեկույցող», որը երկխոսության ընթացքում դիտարկման համար հիմնական հարցերի ցանկի նախապատրաստման գործում առաջատարի դեր է ստանձնում և օժանդակություն ստանում համապատասխան ՊԶԱԽ-ի մյուս անդամներից: Հարցաշարի կազմման ընթացքում կոմիտեն հիմնական կազմով առնչվող ոչ կառավարական կազմակերպությունների և այլ միջկառավարական գործակալությունների դոմիկալ լսումներ է

⁶⁴ Report of the Human Rights Committee, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, հտ. I (հետայսու՝ 2000 Annual Report of the HRC ՄԻԿ-ի 2000 թ. տարեկան զեկույց), հավելված III, էջ 113, պարբերություն B.1: Տե՛ս Rules of Procedure of the Human Rights Committee [Մարդու իրավունքների կոմիտեի ընթացակարգային կանոններ], ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/3/Rev. 6, 2001 թ. ապրիլի 24, կանոն 66(2): Տե՛ս նաև [1.39Ա]:

⁶⁵ ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/66/GUI/Rev. 2, 2001 թ. փետրվարի 26:

⁶⁶ Արտահերթ զեկույցների ընթացակարգը վերջին «Ձեկույցների ուղեցույցում» առանձին ներկայացված չէ, քանի որ դա կարող է ներառվել այն ընդհանուր կանոնում, ըստ որի՝ ՄԻԿ-ը կոչ է անում զեկույց ներկայացնել, երբ կոմիտեն «նման պահանջ է ներկայացնում»: Ի հակադրություն՝ Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (ՌԽՎԿ/CERD) ողջամիտ հաճախականությամբ օգտագործում է իր «Հրատապ գործողություն» ընթացակարգը: Օրինակ՝ այս կոմիտեն վերջերս համապատասխան «Որոշումներ» ընդունեց Լաոսի (ՄԱԿ-ի փաստաթուղթ CERD/C/63/Dec.1, 2003 թ. օգոստոսի 22) և Իսրայելի (ՄԱԿ-ի փաստաթուղթ CERD/C/63/Misc.11/Rev.1, 2003 թ. օգոստոսի 14) առնչությամբ:

⁶⁷ Արտահերթ զեկույցների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս Ջոզեֆ, վերը, ծմբ. 58, էջ 13-22:

⁶⁸ Տե՛ս նաև Բայեֆսկի, վերը, ծմբ. 59, էջ 23-4:

⁶⁹ Մարդու իրավունքների հանձնաժողովի վերաբերյալ տե՛ս վերը, ծմբ. 55:

կազմակերպում: ՊՁԱԽ-ի անդամները հետագա երկխոսության կազմակերպման հարցում ստանձնում են առաջնորդող դեր, իսկ ՄԻԿ-ի մյուս անդամներն իհարկե մասնակցում են⁷⁰:

[1.39] Գործընթացի ավարտին ՄԻԿ-ը հրապարակում է կոնսենսուսով ընդունված Եզրափակիչ դիտարկումների մի փաթեթ, որը տվյալ մասնակից պետության համար կատարում է ՔՔԻՄԴ-ով «զեկույցի քարտի» դեր: Համապատասխան ՊՁԱԽ-ը ՄԻԿ-ի մյուս անդամներից արծագանքներ ստանալուց հետո պատասխանատվություն է կրում համապատասխան Եզրափակիչ դիտարկումների նախագիծ մշակելու համար: ՄԻԿ-ն սկսեց Եզրափակիչ դիտարկումներ հրապարակել միայն 1992 թ., չնայած, որ զեկույցների համակարգը գործում էր 1977 թ. ի վեր⁷¹: Մասնակից պետությունների զեկույցների վերախմբագրված ուղեցույցում ՄԻԿ-ը հաստատեց, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ՄԻԿ-ի Եզրափակիչ դիտարկումների ամենաթարմ փաթեթում ձևակերպված մտահոգություններն օգտագործի որպես իր պարբերական զեկույցները նախապատրաստելու հիմք⁷²: Այսպիսով, Եզրափակիչ դիտարկումները ՄԻԿ-ին օգնում են հղկել զեկույցների ներկայացման համակարգը:

[1.39Ա] ՄԻԿ-ը կարող է որոշել իր Եզրափակիչ դիտարկումներում ընդգծել որոշակի ոլորտներ, որոնց տվյալ մասնակից պետությունը պետք է առաջնահերթություն տա⁷³: Մասնավորապես, ՄԻԿ-ը կարող է պահանջել, որ տեղեկություններ տրամադրվեն իր կողմից նշված թեմաներով՝ սովորաբար մեկ տարվա ընթացքում: 2002 թ. Եզրափակիչ դիտարկումների իրականացմանը հետամուտ լինելու նպատակով կոմիտեի ներսում ստեղծվեց մի նոր պաշտոն՝ հատուկ զեկուցող, որն ուսումնասիրում է նման լրացուցիչ տեղեկությունները և այդ տեղեկատվության հիման վրա ՄԻԿ-ի համար զեկույց պատրաստում: Այնուհետև կոմիտեի լիազոմար միստը որոշում է, թե արժի՞ արդյոք ստացված նոր տեղեկությունների վերաբերյալ պաշտոնական առաջարկություններ ընդունել, եթե այո, ապա ի՞նչ առաջարկություններ, և կարիք կա՞ արդյոք տվյալ մասնակից պետության հաջորդ հերթական զեկույցը ներկայացնելու ժամկետը համապատասխանաբար փոխել: Եթե մասնակից պետությունը չի ներկայացնում պահանջվող տեղեկությունները, այդ փաստն արձանագրվում է ՄԻԿ-ի տարեկան զեկույցում: 2003 թ. տարեկան զեկույցում կավելացվի մի նոր գլուխ՝ նվիրված Եզրափակիչ դիտարկումների կատարմանը հետամուտ լինելուն⁷⁴:

[1.40] Ինչպես նշվում է ստորև, զեկույցների ներկայացման համակարգի աշխատանքը որոշ դեպքերում խաթարվել է մասնակից պետությունների կողմից համագործակցելուց հրաժարվելու հետևանքով [1.110]: 2002 թ. թիվ 30 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը հստակ ավելի խիստ մոտեցում որդեգրեց զեկույցների ներկայացումից խուսափելու և/կամ զեկույցները պաշտպանելու նպատակով տվյալ պետության պատվիրակության չհայտնվելու հարցում: ՄԻԿ-ն այժմ կարող է մասնակից պետությունների զեկույցները քննել տվյալ մասնակից պետության պատվիրակության բացակայության պայմաններում, եթե նշանակված օրը համապատասխան պատվիրակությունը բացակայում է⁷⁵, և կոմիտեն նույնիսկ կարող է որևէ մասնակից պետության՝ ՔՔԻՄԴ-ի կենսագործման ընթացքը քննել նրա զեկույցի բացակայության պայմաններում տվյալ պետությանը նման քննության համար նշանակված օրվա մասին տեղեկացնելուց հետո⁷⁶: Նման քննություն տեղի ունեցավ Փամբայի առնչությամբ, 2002 թվակա-

⁷⁰ ՊՁԱԽ-ների վերաբերյալ տե՛ս Annual Report of the Human Rights Committee [«Մարդու իրավունքների կոմիտեի տարեկան զեկույց»], 2002 թ., Հավելված III.B, էջ 154:

⁷¹ Այս դիտարկումների (հայտնի են որպես Եզրափակիչ դիտարկումներ) բնույթի և սկզբնական շրջանում զեկույցների գործընթացի վրա դրանց ազդեցության ուսումնասիրությունը տե՛ս Ջոզեֆ, վերը, ծմբ. 58, էջ 7-12:

⁷² Consolidated Guidelines for State Reports under the International Covenant on Civil and Political Rights [«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի ներքո մասնակից պետությունների կողմից զեկույցների ներկայացման ամփոփ ուղեցույց»], CCPR/C/66/GUI/Rev.2, 2001 թ. փետրվարի 26, պարբ. E.1:

⁷³ Rules of Procedure of the Human Rights Committee [Մարդու իրավունքների կոմիտեի ընթացակարգային կանոններ], ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/3/Rev. 6, 2001 թ. ապրիլի 24, Կանոն 70(5):

⁷⁴ Տե՛ս Annual Report of the Human Rights Committee [«Մարդու իրավունքների կոմիտեի տարեկան զեկույց»], (2002 թ.), Հավելված III(A), էջ 153:

⁷⁵ Թիվ 30 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 3 և 4(ա):

⁷⁶ *Նույնը*, պարբ. 4(բ): Տե՛ս նաև Rules of Procedure [«Ընթացակարգային կանոններ»], ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/3/Rev. 6, Կանոն 69A, 2001 թ. ապրիլի 24: ՌԽԿ կոմիտեն որդեգրեց նմանատիպ ընթացակարգ և վերջերս հրապարակեց Եզրափակիչ դիտարկումներ Մալավիի վերաբերյալ՝ չնայած զեկույցի և Մալավիի պատվիրակության բացակայությանը, ում հետ հնարավոր կլինեի քննարկել այդ պետության կողմից ՌԽԿ-ի կենսագործումը (տե՛ս ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/63/CO/14, հրապարակվել է 2003 թ. օգոստոսի 22-ին):

նին⁷⁷: Ձեկույցների կամ ՔՔԻՄԴ-ի կենսագործման արդյունքների քննությունները տվյալ մասնակից պետության բացակայության պայմաններում կանցկացվեն դեմփակ⁷⁸: Նման լսումների ավարտին եզրափակիչ դիտարկումները կփոխանցվեն տվյալ մասնակից պետությանը, չնայած 2003 թ. հոկտեմբերի դրությամբ Գամբիային վերաբերող եզրափակիչ դիտարկումները դեռևս չէին հրապարակվել: Եթե Ձեկույցները կամ, Ձեկույցի բացակայության դեպքում, ՔՔԻՄԴ-ի կենսագործման արդյունքները քննության են ենթարկվում մասնակից պետությունների բացակայությամբ, ապա նշանակվում է հատուկ Ձեկույցող, որը փորձում է տվյալ մասնակից պետության հետ երկխոսություն սկսել կամ վերականգնել⁷⁹:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1.41] Սկզբնական շրջանում ՄԻԿ-ը հրաժարվեց 40-րդ հոդվածի համաձայն իր մանդատը մեկնաբանել որպես որևէ մասնակից պետության Ձեկույցի վերաբերյալ կոնսենսուսով ընդունվող գնահատում հրապարակելու և դրան հետևող երկխոսություն նախաձեռնելու լիազորություն տվող: ՄԻԿ-ի վաղ շրջանի որոշ անդամներ, մասնավորապես՝ արևելյան ծամբարը ներկայացնողները կարծում էին, որ նման պրակտիկան անհարկի միջամտություն կլինի մասնակից պետության ներքին գործերի⁸⁰: Փոխհամաձայնության հասնելու համար ՄԻԿ-ը սկզբում հոդված 40(4)-ը մեկնաբանեց որպես ընդհանրապես բոլոր մասնակից պետություններին ուղղված մեկնաբանություններ հրապարակելու լիազորություն:

[1.42] Այսպես, ՄԻԿ-ը հրապարակել է բազմաթիվ «Ընդհանուր մեկնաբանություններ» այնպիսի խնդիրների վերաբերյալ, որոնք կարևոր են բոլոր մասնակից պետությունների համար: Այս Ընդհանուր մեկնաբանությունների մեծ մասը պարզաբանում է դաշնագրով սահմանված առանձին իրավունքների իմաստը: Որոշ մեկնաբանություններ, ինչպիսիք են, օրինակ, «Դաշնագրով օտարերկրացիների վիճակի» մասին թիվ 15 Ընդհանուր մեկնաբանությունը և «Տղամարդկանց և կանանց միջև իրավունքների հավասարության» վերաբերյալ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունը, որոշակի թեմայի սահմաններում անդրադարձել են իրավունքների ավելի լայն շրջանակի: Մի քանի մեկնաբանություններ առնչվում են այնպիսի բազմազան հարցերի, ինչպիսիք են վերապահումները, դատապարտումները և մասնակից պետություններին ուղղված խորհուրդներն այն մասին, թե ինչպես պատրաստել Ձեկույցները⁸¹: Առհասարակ ավելի վաղ շրջանի մեկնաբանությունները, ինչպիսիք են 1-ին հոդվածի (Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին թիվ 12 Ընդհանուր մեկնաբանություն) և 19-րդ հոդվածի (արտահայտվելու ազատության մասին թիվ 10 Ընդհանուր մեկնաբանություն) վերաբերյալ ընդունվածները, պակաս մանրամասն և, հետևաբար, պակաս օգտակար են, քան ավելի ուշ ընդունված և ավելի մանրակրկիտ մեկնաբանությունները (տե՛ս, օրինակ՝ փոքրամասնությունների իրավունքների մասին թիվ 23 Ընդհանուր մեկնաբանությունը): Չնայած դրանց մեկնարկը արդարացիորեն համարվում էր 40-րդ հոդվածի թույլ և փոխզիջումային մեկնաբանում, ժամանակի ընթացքում ՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանությունները դարձան արժեքավոր իրավաբանական աղբյուր: Հաջորդ գլուխներում, հարկ եղած դեպքում, դրանցից կատարվել են մեծ թվով մեջբերումներ:

⁷⁷ Սուրինամի (որն ուշագած Ձեկույց ներկայացրեց 2003 թ.) դեպքում նույնպես դաշնագրի կատարման արդյունքները քննվելու էին պատվիրակության բացակայության պայմաններում, սակայն Սուրինամը վերջին պահին պատվիրակություն ուղարկեց: Տե՛ս ՄԱԿ-ի փաստաթուղթ A/57/40, հտ. 1 (Մարդու իրավունքների կոմիտեի 2002 թ. տարեկան Ձեկույց), պարբ. 54: Հավանական է, որ մոտ ապագայում կկանգնեն այլ մասնակից Ձեկույցներ չներկայացրած պետություններ, ինչպիսին է, օրինակ, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունը:

⁷⁸ Թիվ 30 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 4:

⁷⁹ Նույնը, պարբ. 5:

⁸⁰ Տե՛ս, օրինակ, Mr. Graefrath of the German Democratic Republic այստեղ՝ ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/SR 231, պարբ. 10:

⁸¹ Տե՛ս նաև Consolidated Guidelines for State Reports under the International Covenant on Civil and Political Rights [«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի ներքո մասնակից պետությունների կողմից Ձեկույցների ներկայացման ամփոփ ուղեցույց»], CCPR/C/66/GUI/Rev.2, 2001 թ. փետրվարի 26:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐ

[1.43] Ըստ ՔՔԻՄԴ-ի 41-րդ հոդվածի՝ մասնակից պետությունները կարող են բողոք ներկայացնել մեկ այլ մասնակից պետության կողմից ՔՔԻՄԴ-ի խախտումների վերաբերյալ, եթե երկու պետություններն էլ հայտարարել են, որ ՄԻԿ-ն իրավասու է քննելու նման բողոքներ: Այսպիսով, ընթացակարգը կամընտիր է: Չնայած 2003 թ. սեպտեմբերի դրությամբ 48 մասնակից պետություններ, ըստ 41-րդ հոդվածի, հայտարարություններ արել են, միջպետական բողոքների մեխանիզմը երբևէ չի օգտագործվել: Ենթադրվում է, որ սրա պատճառը նման քայլի դիվանագիտական և քաղաքական հետևանքներն են: պետությունները մտավախություն ունեն, որ, ի պատասխան, քննադատության կենթարկվեն մարդու իրավունքների պաշտպանության իրենց իսկ ցույց տված արդյունքները:

[1.44]

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄԻԿ-ը թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության մեջ մասնակից պետություններին հիշեցնում է ՔՔԻՄԴ-ով ստանձնած միջպետական պարտավորություններին մասին:

¶ 1. ... Թեև 2-րդ հոդվածը բովանդակում է անհատների՝ որպես դաշնագրով իրավատերերի առջև մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունները, յուրաքանչյուր մասնակից պետություն յուրաքանչյուր այլ մասնակից պետության կողմից սեփական պարտավորությունները կատարելու հարցում իրավական շահագրգռություն ունի: Սա հետևում է այն փաստից, որ «մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող կանոնները» *erga omnes* (բոլորին վերաբերող) պարտավորություններ են (Արդարադատության միջազգային դատարան/ICJ, *Barcelona Traction Case*, պարբերություն 34), բացի այդ, ինչպես նշված է դաշնագրի նախաբանի չորրորդ պարբերությունում, գոյություն ունի Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն ստանձնած պարտավորություն, այն է՝ խթանել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքը և դրանց պաշտպանությունը, ի լրումն՝ յուրաքանչյուր համաձայնագրի պայմանագրային կողմը ներառում է տվյալ համաձայնագրի կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության՝ ցանկացած այլ մասնակից պետության նկատմամբ ունեցած պարտավորությունը, որ է՝ պահպանել տվյալ համաձայնագրով ստանձնած պարտավորությունները: Միայն այն փաստը, որ գոյություն ունի դաշնագրի 41-րդ հոդվածի համաձայն Մարդու իրավունքների կոմիտեին հայտարարություն արած մասնակից պետությունների վերաբերյալ բողոքներ ներկայացնելու պաշտոնական միջպետական մեխանիզմ, չի նշանակում, թե այդ ընթացակարգը միակ եղանակն է, որի միջոցով մասնակից պետությունները կարող են այլ մասնակից պետությունների հետ հարաբերություններում պաշտպանել սեփական շահերը: Ընդհակառակը, 41-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը հարկ է դիտել որպես մասնակից պետությունների՝ միմյանց կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու հարցում շահագրգռության լրացուցիչ, այլ ոչ թե նվազեցնող հանգամանք:

Համապատասխանաբար, կոմիտեն մասնակից պետություններին հիշեցնում է, որ 2-րդ հոդվածը նրանց հստակ պարտավորեցնում է որևէ մասնակից պետության կողմից դաշնագրով սահմանված երաշխիքների ոտնահարումը դիտարկել որպես իրենց ուշադրությանն արժանի: Այլ մասնակից պետությունների կողմից դաշնագրով սահմանված պարտավորությունների հնարավոր խախտումների նկատմամբ ուշադրություն հրավիրելը չպիտի համարվի թշնամական գործողություն, այլ հանրության հիմնավորված շահագրգռության արտահայտություն: Կոմիտեն մասնակից պետություններին հիշեցնում է 41-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունների ցանկալիության մասին: Ի լրումն՝ կոմիտեն այն մասնակից պետություններին, որոնք արդեն իսկ արել են նման հայտարարություններ, հիշեցնում է այդ հոդվածով նախատեսված ընթացակարգի հնարավոր օգտակարության մասին:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ

[1.45] Առաջին կամընտիր արձանագրությունը ՔՔԻՄԴ-ից առանձին համաձայնագիր է: Եթե որևէ պետություն վավերացնում է կամընտիր արձանագրությունը, ապա անհատները ՄԻԿ-ին բողոքներ կամ «հաղորդումներ» հղելու իրավունք են ստանում տվյալ պետության կողմից ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրենց իրավունքների խախտումների մասին:

[1.46] ՄԻԿ-ն առաջին հերթին պետք է որոշի՝ հաղորդումն ընդունելի՞ է, թե՞ ոչ: Ընդունելիության չափանիշներն ամրագրված են կամընտիր արձանագրության 1-3-րդ և 5-րդ հոդվածներում: Գոյություն ունեն ընդդատության տեսանկյունից ընդունելիության մի քանի չափանիշներ: Առաջին՝ պետք է առկա լինի

տուժող անձ (անհատական ընդդատություն)։ չի կարելի վերացական պնդումներ անել ՔՔԻՄԴ-ի խախտումների մասին⁸²։ Երկրորդ՝ հաղորդումը պետք է կապվի տվյալ պետության իրավասության ներքո գտնվող խնդրի հետ (վարչատարածքային ընդդատություն)⁸³։ Երրորդ՝ հաղորդումը պետք է առնչվի որևէ դեպքի, որը տեղի է ունեցել տվյալ պետության կողմից կամ ընտիր արձանագրությունը վավերացնելուց հետո (ժամանակային ընդդատություն)⁸⁴։ Ընթացակարգային ընդունելիության պահանջներին կարելի է ծանոթանալ կամ ընտիր արձանագրության 5-րդ հոդվածում։ հաղորդումը չի կարող միաժամանակ ներկայացվել մեկ այլ միջազգային դատարան⁸⁵, և բոլոր ներկայացնողը («հեղինակ») մինչև ՄԻԿ-ին հաղորդում ներկայացնելը պետք է սպառնա լինի իրավական պաշտպանության ներպետական միջոցները⁸⁶։ Մինչև ՄԻԿ-ը կանցնի հաջորդ քայլին, հեղինակը նաև պարտավոր է ներկայացնել հաղորդումը հիմնավորող բավարար ապացույցներ։ Հիմնական էական արգելքն այն է, որ հաղորդումը պետք է առնչվի այնպիսի խնդրի, որը ծագում է ՔՔԻՄԴ-ի առնչությամբ։ Ընդունելիության արգելքը պարզաբանվում է կամ ընտիր արձանագրության 2-րդ հոդվածում, որը նախատեսում է, որ տուժողների պահանջները պետք է համապատասխանեն ՔՔԻՄԴ-ում քվարկված որևէ իրավունքի, ինչպես նաև 3-րդ հոդվածում, որն արգելում է ընդունել «չհամապատասխանող» հաղորդումներ։ Օրինակ՝ հաղորդումները, որոնք հայտարարում են սեփականության իրավունքի⁸⁷ և ապաստանի իրավունքի⁸⁸ խախտումների մասին, համարվել են անընդունելի *ռացիոնե մատերիե* *, քանի որ դրանց արդյունքում դաշնագրի որևէ որոշակի դրույթով պահանջ չի ներկայացվում։

[1.47] Անընդունելիության մեկ այլ տարածված պատճառը ծագում է ԿԱ-ի պայմաններից անկախ։ ՄԻԿ-ը, լինելով միջազգային վերահսկիչ մարմին, չի գործում որպես վճռաբեկ դատարան, որին որևէ պետության բարձրագույն դատական ատյանից կարելի է բողոքներ բերել։ Այն չի գործում որպես «չորրորդ ատյանի դատարան» [14.50]։ Սա նշանակում է, որ ՄԻԿ-ը հազվադեպ կբավարարի այնպիսի բողոքներ, որոնք ներպետական դատարանների կողմից ճանաչվել են չհիմնավորված, եթե այդ ներպետական դատաքննություններն անդրադարձել են համապատասխան ԿԱ բողոքի էությանը⁸⁹։ Սրա պատճառն այն է, որ ՄԻԿ-ը, լինելով քվադիդատական կառույց, որն ընդունում է միայն գրավոր (և ոչ բանավոր) վկայություններ, ստացված տվյալները, հատկապես նույնականացման փաստերը գնահատելու ավելի սահմանափակ հնարավորություն ունի, քան տեղական դատարանը։ ՄԻԿ-ը որևէ ներպետական դատարանի բացահայտումները չեղյալ կհամարի միայն այն դեպքում, եթե ակնհայտ լինի, որ այդ դատարանը գործել է կամայական եղանակով կամ իրականում չի գործել արդար ընթացակարգերի համաձայն։

[1.48] Այս «չորրորդ ատյանի» սկզբունքի օրինակներից մեկը «*Ջոնասենը և այլք ընդդեմ Նորվեգիայի*» (*Jonassen et al v Norway, 942/00*) գործում է, որում հեղինակները պնդում էին, որ պետության կողմից բնիկ սամիների որոշակի հողային իրավունքները և դրանցից բխող իրավասությունները չճանաչելը 27-րդ հոդվածի խախտում է [24.43]։ Սամիների հողային իրավունքների տարբերակումը հանգեցրեց Նորվեգիայի դատարանների կողմից բնիկ խմբի և խնդրի առարկա հողի ամուր պատմական կապի գոյության կամ բացակայության փաստի բացահայտմանը։ Տեղական դատարաններից մեկի որոշումներից մեկով (1997 թ. «Աուրսունդենի գործ») Նորվեգիայի բարձրագույն դատարանը զգալիորեն հենվեց 1897 թ. բարձրագույն դատարանի կողմից ավելի վաղ հայտնաբերած փաստերի վրա։ ԿԱ-ով ներկայացված բողոքներից մեկը վերաբերում էր Նորվեգիայի դատարանի՝ հեղինակներին խտրականությունից պաշտպանելու անկարողությանը՝ «փաստերի հաստատումը հիմնելով բարձրագույն դատարանի վճռի վրա, որը կայացվել էր 1897 թ., երբ սամիների վերաբերյալ ընդհանուր կարծիքը խտրական էր»⁹⁰։ Հեղինակները պնդում էին, որ 1897 թ. վճռի վրա արատավոր ազդեցություն են ունեցել բնիկ ժողովուրդների

⁸² «Տուժող» լինելու պահանջի մասին տե՛ս գլուխ 3-ը։

⁸³ «*Ratione loci*» (վայրի պատճառով) անընդունելիության մասին տե՛ս գլուխ 4-ը։

⁸⁴ «*Ratione temporis*» (ժամկետների պատճառով) անընդունելիության մասին տե՛ս գլուխ 2-ը։

⁸⁵ Ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս գլուխ 5-ը։

⁸⁶ Ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս գլուխ 6-ը։

⁸⁷ «Օ.Յ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (Օ.Յ. v Finland, 419/90)։

⁸⁸ «Վ.Մ.Ռ.Բ.-ն ընդդեմ Կանադայի» (V.M.R.B. v Canada, 236/87)։

* *Ratione materiae* - (իրավախախտման) օբյեկտիվ գործոն (ծնթ. թարգմ.)։

⁸⁹ Տե՛ս նաև [14.50]ff, [20.49] և [20.51]։

⁹⁰ Պարբ. 3.15։

և նրանց մշակույթի նկատմամբ ինստիտուցիոնալ նախապաշարումները⁹¹: ՄԻԿ-ը, կիրառելով «չորրորդ ատյանի դատարանի» իր սկզբունքը, բողոքն այս տեսանկյունից համարեց անընդունելի. «Կոմիտեն իրավասու չէ վերագնահատելու» բարձրագույն դատարանի եզրակացությունն այն մասին, որ 1897 թ. վճիռը կողմնակալ չի եղել և հետևաբար ողջամիտ հիմք է, որի վրա կարելի է կառուցել սամինների հողային իրավունքներին վերաբերող եզրահանգումները⁹²: Այս որոշումը ցույց է տալիս ՄԻԿ-ի «չորրորդ ատյանի» սկզբունքի ուժը: Չնայած XIX դարի վերջին Ֆինլանդիայի պետական իշխանության մարմինների կողմից սամինների նկատմամբ նսեմացնող վերաբերմունքի մասին վկայող մշանակալի փաստերի ներկայացմանը՝ ՄԻԿ-ը հրաժարվեց պրպտել բարձրագույն դատարանի այն վճռի հիմնավորումները, ըստ որի՝ 1897 թ. կայացված որոշումը սամինների նկատմամբ խտրական բնույթ ուներ:

[1.49] Ի տարբերություն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով⁹³ և ՌԽՎՄԿ-ով⁹⁴ գործող անհատական բողոքների ընթացակարգի՝ կամընտիր արձանագրությամբ բողոքներ ներկայացնելու համար ժամանակային խիստ սահմանափակումներ գոյություն չունեն: Այնուամենայնիվ, «*Գոբինն ընդդեմ Մավրիկիոսի*» (*Gobin v Mauritius, 787/97*) գործում ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշեց, որ հաղորդումն անընդունելի է հետևյալ ձևակերպմամբ.

¶ 6.3. Մասնակից պետությունը պնդում է՝ քանի որ հաղորդումը ներկայացվել է ուշացումով, կոմիտեն պետք է այն անընդունելի համարի՝ որպես կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածով դիմում ներկայացնելու իրավունքի խախտում: Կոմիտեն մշում է, որ գոյություն չունեն ըստ կամընտիր արձանագրության հաղորդումներ ներկայացնելու հաստատուն ժամանակային սահմանափակումներ, և սույն դիմում ներկայացնելու ուշացումը հաղորդում տալու իրավունքի խախտում չի պարունակում: Այսուհանդերձ որոշակի հանգամանքներում կոմիտեն ակնկալում է ուշացումն արդարացնող տրամաբանական բացատրություն: Քննարկվող գործում հայտարարվող խախտումը տեղի է ունեցել հերթական ընտրությունների ընթացքում, որոնք անցկացվել են հայտարարված տուժողի անունից կոմիտեին հաղորդում ներկայացնելուց հինգ տարի առաջ. մման ուշացումն արդարացնող համոզիչ բացատրություն չի տրվել: Այդ պարագայում կոմիտեն կարծում է, որ մման ժամանակային շեղումով հաղորդում ներկայացնելը պետք է համարվի դիմում ներկայացնելու իրավունքի խախտում, որը, ըստ կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի, տվյալ հաղորդումը դարձնում է անընդունելի:

Պարոնայք Յենկին Շայնինը, Շիրերը և Յալդենը և տկն Շանեն համատեղ հրապարակեցին իրենց անհամաձայնությունը, որի հետ պրն Քլայնը, ըստ էության, համաձայնեց: Նրանք պնդեցին, որ «կոմիտեն չի կարող ... կամընտիր արձանագրություն ներմուծել որևէ կանխարգելիչ ժամանակային սահմանափակում»՝ հավելելով, որ «ուշացման հետևանքով մասնակից պետությունը որևէ առանձնահատուկ վնասներ չի կրել»:

[1.50] Անհատական հաղորդումներ ներկայացնելու ընթացակարգի երկրորդ փուլը ՄԻԿ-ի կողմից որևէ բողոքի թեր և դեմ կողմերը գնահատելն է: Վերջում ՄԻԿ-ը հրապարակում է կամընտիր արձանագրության հոդված 5(4)-ով թեր և դեմ կողմերի վերաբերյալ իր «տեսակետները»: Այդպիսով կոմիտեն հայտարարում է ՔՔԻՄԴ-ի խախտումների առկայության կամ բացակայության մասին: ՄԻԿ-ի տեսակետները պարտադիր իրավական ուժ չունեն, քանի որ ՄԻԿ-ը դատական ատյան չէ⁹⁵:

[1.51] Այնուամենայնիվ, ՄԻԿ-ն ինքնին պարտադիր իրավական ուժ ունեցող ՔՔԻՄԴ-ը մեկնաբանող գլխավոր կառույցն է: Ուստի ՄԻԿ-ի որոշումները իրավական պարտավորությունների հզոր ցուցիչներ են, հետևաբար այդ որոշումներն արհամարհելը տվյալ պետության կողմից ՔՔԻՄԴ-ով ստանձնած պարտավորությունների նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի վառ վկայություն է⁹⁶: Իսկապես,

⁹¹ Նման կողմնապահության վկայությունների համար տես *Յոնասենի* գործը, պարբ. 2.14-2.17:

⁹² Պարբ. 8.3:

⁹³ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 35(1)-ն ամրագրում է. «Դատարանը կարող է որևէ դիմում քննել միայն այն դեպքում, երբ իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները սպառվել են, վեց ամսվա ժամանակահատվածում՝ հաշված վերջին վճիռների կայացման օրվանից»:

⁹⁴ Հոդված 14(5)-ը պահանջում է, որ հաղորդումը տրվի իրավական պաշտպանության վերջին միջոցի սպառումից հաշված վեց ամսվա ընթացքում: Կոմիտեի կանոնները [Rules of the Committee] (Կանոն 91(f), ՄԱԿ-ի փաստաթուղթ CERD/C/35/Rev.3, 1989 թ. հունվարի 1) «բացառիկ դեպքերում» թույլ են տալիս արտոնություններ: «*Ֆ.Ա.-ն ընդդեմ Նորվեգիայի*» (*F.A. v Norway, 18/00*) գործն անընդունելի էր, որովհետև հաղորդումը ներկայացվել էր վեց շաբաթ ուշացումով:

⁹⁵ Մակգոլդրիկ, տես վերը, ծմբ. 21, էջ 54-55, 151-2:

⁹⁶ S. Joseph, "Toonen v Australia: Gay Rights under the ICCPR" (1994) 13 *University of Tasmania Law Review* 392, 401: Տես նաև J.S. Davidson, "The Procedure and Practice of the Human Rights Committee under the First Optional Protocol to

ՄԻԿ-ի որոշումները հրապարակվում են «դատական ոգով»⁹⁷: Դիմումների էության մասին կայացված որոշումները մնանում են խնդրո առարկա պետության կողմից տեղի ունեցած խախտումների կամ խախտումների բացակայության վերաբերյալ վերջնական եզրակացության: ՄԻԿ-ը նաև խորհուրդ է տալիս իրավական պաշտպանության համապատասխան միջոցի վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ, վիճարկվող օրենսդրության փոփոխությունը⁹⁸, վնասների դիմաց փոխհատուցման վճարումը⁹⁹, որևէ մասնակից պետությամբ, ուր որևէ հեղինակ դաշնագրի խախտմամբ¹⁰⁰ արտաքսվել է, դեմարշը կամ անարդարացիորեն կալանավորված անձանց ազատ արձակումը¹⁰¹: Ավելին՝ ՄԻԿ-ն ստեղծել է «հետա-մուտ լինելու» մեխանիզմ, որի միջոցով հրապարակվում է կամընտիր արձանագրությանն առնչվող իր առաջարկությունների վերջնական ճակատագիրը¹⁰²: Այսպես, որևէ պետության կողմից ՄԻԿ-ի տեսա-կետները հաշվի չառնելը հրապարակայնորեն արձանագրվում է, ինչը կարող է հանգեցնել քննադա-տության և դատապարտման: Հետևաբար, վատ համբավի միջազգային իրավական ծանոթ պատժամի-ջոցը կարող է կիրառվել այն դեպքերում, երբ պարզվում է, որ պետությունները խախտել են կամընտիր արձանագրությունը և երբ չեն շտկում այդ խախտումները: Միջազգային փորձաքննության արդյուն-քում հասարակական պարսավանքի արժանանալու վախը հաճախ կարող է բավարար շարժառիթ լի-նել, որ պետությունները բարելավեն իրենց արդյունքները մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում¹⁰³: ՄԻԿ-ի որոշումներն անմիջականորեն դրդել են պետություններին փոխել իրենց օրենք-ները և/կամ գործնական կիրառությունները, որպեսզի դրանք համապատասխանեն ԶԶԻՄԴ-ին¹⁰⁴: Այսու-հանդերձ, առկա է կամընտիր արձանագրությամբ կայացված որոշումներին անհամապատասխանու-թյան անթույլատրելի մակարդակը¹⁰⁵: Այս երևույթը քննարկվում է ստորև [1.110]:

[1.52] Սինգլ 1997 թ. կամընտիր արձանագրությամբ ներկայացվող հաղորդումները դիտարկվում էին երկու փուլով. ընդունելիություն, որին, եթե անհրաժեշտ է, հետևում է դիմումի էության դիտարկումը: 1997 թ. կեսին ՄԻԿ-ը կամընտիր արձանագրության գործընթացը կատարելագործելու նպատակով ըն-դունեց ընթացակարգային նոր կանոններ: Սա արձագանք էր ներկայացված հաղորդումների քանակի շեշտակի աճի, որի պատճառը կամընտիր արձանագրության վավերացումների քանակի արագ ավելա-ցումը և ընթացակարգի վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակի բարձրացումն էին¹⁰⁶: Այժմ 91-րդ կանոնը թելադրում է, որ ՄԻԿ-ը դիմումների ընդունելիության և էության հարցերը քննարկի միա-տեղ, եթե հաղորդումների հարցերով հատուկ զեկուցողը չի որոշում տարանջատել այդ հարցերի քննարկումը: Այնուամենայնիվ, ընդունելիության կանոնները մնում են նույնը: Եթե տվյալ գործը բացա-հայտ անընդունելի է, ինչպես, օրինակ, այն դեպքերում, երբ հաղորդումն անընդունելի է *ratione temporis* (ժամանակի պատճառով), այն մերժվում է: Այլապես, պետություններին տրվում է վեց ամիս՝

the International Covenant on Civil and Political Rights" (1991) 4 *Canterbury Law Review* 337, 353, և Heffernan, տես վերը, ծնթ. 58, էջ 102-3:

⁹⁷ Կամընտիր արձանագրության ներքո Մարդու իրավունքների կոմիտեի որոշումների հատընտիր, CCPR/C/OP/2 (1988), 1:

⁹⁸ Տես, օրինակ, «Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի» (Toonen v Australia, 488/92):

⁹⁹ Տես, օրինակ, «Ա-ն ընդդեմ Ավստրալիայի» (A v Australia, 560/93): «Մակլեոդն ընդդեմ ճամայկայի» (McLeod v Jamaica, 734/97) և «Մակթագարտն ընդդեմ ճամայկայի» (McTaggart v Jamaica, 749/97) գործերի մեկնաբանություններում պրն Շեյնին ավստրալացի է հայտնել ՄԻԿ-ի՝ իրավական պաշտպանության ավելի որոշակի միջոցների (օրինակ՝ փոխհատուց-ման որոշակի գումարներ) ձեռնարկման ձախողման առնչությամբ:

¹⁰⁰ Տես «Նգ-ն ընդդեմ Կանադայի» (Ng v Canada, 469/91), պարբ. 18, «Վայսն ընդդեմ Ավստրիայի» (Weiss v Austria, 1086/02), պարբ. 11.1:

¹⁰¹ Ճամայկայում գրանցված մահապատժի բազմաթիվ դեպքերում ՄԻԿ-ը բացահայտել է 14-րդ հոդվածի խախտումներ, ո-րոնք բխել են դատական համապատասխան ընթացակարգերից: Նման դեպքերում ՄԻԿ-ի առաջարկությունները տուժող-ներին ազատ արձակելու վերաբերյալ միանշանակ չեն, քանի որ տվյալ մասնակից պետությունը մտավախություն ունի, թե հավանաբար ազատ արձակվեն վտանգավոր հանցագործներ: Պրն Սադին «Քելլին ընդդեմ ճամայկայի» (Kelly v Jamaica, 253/87) գործում իր անհամաձայնությունն արտահայտող տեսակետում նշեց, որ ինքը բաց է իրավական պաշտ-պանության այլ միջոցների համար, ներառյալ՝ նոր դատաքննություն նշանակելը:

¹⁰² Տես օրինակ՝ "Follow-Up Activities under the Optional Protocol", in *Annual Report of the Human Rights Committee* (1998), A/53/40, i, էջ 70-77:

¹⁰³ R. Higgins, "Some Thoughts on the Implementation of Human Rights" (1990)s *Interights Bulletin*, vol. 5, էջ 52:

¹⁰⁴ Օրինակ՝ «Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի» (Toonen v Australia, 488/92) գործով կայացված վճիռը հանգեցրեց դաշնա-յին օրենսդրության ընդունման, որը տրամադրեց իրավական պաշտպանության միջոց և ի վերջո հանգեցրեց Թասմա-նիայի վիճարկվող օրենքի չեղյալ հայտարարմանը: Տես նաև C. Cohn, 'The Early Harvest: Domestic Legal Changes Related to the Human Rights Committee and the Covenant on Civil and Political Rights' (1991) 13 *HRQ* 295:

¹⁰⁵ Հարրիս, տես վերը, ծնթ. 41, էջ 38: Տես նաև *Annual Report of the Human Rights Committee* (2002) N57/40, Executive Summary and Q 255:

¹⁰⁶ Annual Report of the Human Rights Committee (1998), A53/40, i, 61.

պատասխանելու ոտնահարման մեղադրանքներին: Միայն առաջին երկու ամիսների ընթացքում նրանք իրավունք ունեն անընդունելիության հիման վրա դիմումներ ներկայացնելու հաղորդումները մերժելու մասին: Նման դիմումը մասնակից պետությանը չի ազատում հատկացված վեց ամիսների ընթացքում գործի էության մասին տեղեկություններ տրամադրելու պարտավորությունից: Ժամկետների երկարաձգում կարող է թույլատրվել միայն հատուկ հանգամանքների առկայության դեպքում¹⁰⁷:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ

[1.53] ՄԻԿ-ը մշակել է նաև պետության կողմից կամընտիր արձանագրությամբ ներկայացված որոշ գործերում ստատուս քվոն պահպանելուն ուղղված միջանկյալ միջոցներ գործադրելու դիմումների հրապարակման կարգ: Նման դիմումներն ընդունվում են համաձայն կոմիտեի «Ընթացակարգային կանոնների»¹⁰⁸ 86-րդ կանոնի, ըստ որի, պետության կողմից որոշակի գործողությունների իրականացումը անդառնալի վնաս կհասցնի կամընտիր արձանագրությամբ դիմած հեղինակին¹⁰⁹: Օրինակ՝ 86-րդ կանոնով դիմումները մշտապես ընդունվում են այնպիսի գործերի առնչությամբ, որոնցում հեղինակը հայտարարել է, որ մահապատիժը սահմանվել է սխալմամբ. բնականաբար, մասնակից պետությունից պահանջվում է ձեռնպահ մնալ որևէ հեղինակի մահապատիժ ենթարկելուց, քանի դեռ քննարկվում է կամընտիր արձանագրությամբ ներկայացված հաղորդումը: 86-րդ կանոնի համաձայն դիմումներ ընդունելու հետ կապված իրավիճակն այն է, որ պետությունից պահանջվում է զերծ մնալ արտաքսում իրականացնելուց, երբ հաղորդման մեջ խնդրո առարկա է տվյալ արտաքսման համապատասխանությունը դաշնագրին: «Արտաքսումների» դեպքերի մեծ մասը վերաբերել է այն հայտարարություններին, ըստ որոնց՝ հեղինակը տվյալ երկիր վերադառնալու դեպքում կբախվի ՔՔԻՄԴ-ի խախտումների¹¹⁰: Այնուամենայնիվ, «Ստյուարտն ընդդեմ Կանադայի» (*Stewart v Canada, 538/93*) գործում հայտարարված բողոքը վերաբերում էր արտաքսման այնպիսի փաստի, որը, համաձայն հայտարարության, միջամտելու էր հեղինակի ընտանեկան կյանքին, ոչ թե ընդունող երկրում հնարավոր խախտումներին¹¹¹: Այդ դեպքում ՄԻԿ-ը մերժեց 86-րդ կանոնով դիմումն ընդունելը, քանի որ արտաքսումն անհրաժեշտաբար չէր հանգեցնելու անդառնալի վնասների. հեղինակն ի վիճակի չեղավ հիմնավորելու, որ իր վերադարձը կարգելի, եթե կոմիտեն խախտումներ բացահայտի¹¹²:

[1.54] Որպես կանոն՝ պետությունները ենթարկվում են 86-րդ կանոնով ներկայացված դիմումներին, չնայած այդ ենթարկվելը բացարձակ չէ: Օրինակ՝ «Փիանդիոնգն Ֆիլիպինների» (*Piandiong v Philippines, 869/99*) գործում, նման մահապատիժներից ձեռնպահ մնալու մասին 86-րդ կանոնի համաձայն, խնդրագիր ստանալուց երկու շաբաթից մի փոքր անց Ֆիլիպինները մահապատիժ ենթարկեց հաղորդման երեք հեղինակներին: ՄԻԿ-ը խստորեն դատապարտեց Ֆիլիպինների կառավարության գործողությունները¹¹³:

¶ 5.1. Հարգելով կամընտիր արձանագրությունը՝ դաշնագրի մասնակից պետությունը ճանաչում է Մարդու իրավունքների կոմիտեի՝ անձանցից հաղորդումներ ստանալու և դիտարկելու իրավասությունը, ովքեր պնդում են, որ իրենք դաշնագրով ճանաչված որևէ իրավունքի ոտնահարումից տուժող են (նախաբան և հոդված 1): Երբ պետությունը միանում է արձանագրությանը, ոչ բացահայտ ենթադրվում է, որ տվյալ պետությունը պարտավորվում է բարեխղճորեն համագործակցել կոմիտեի հետ, որպեսզի նրան իրավունք և հնարավորություն տա դիտարկելու նման հաղորդումները և ուսումնասիրության ավարտին իր տեսակետներն ուղարկելու առնչվող մասնակից պետությանը և անձին (հոդված 5(1), (4)): Այդ պարտավորությունների հետ անհամատեղելի է այն, որ որևէ մասնակից պետություն ձեռնարկի այնպիսի գործողություն, որը կոմիտեին հաղորդումը դիտարկելու, ուսումնասիրելու և սեփական «Տեսակետները» արտահայտելու հնարավորություն չի տա կամ կխոչընդոտի դա:

¹⁰⁷ Տե՛ս Rules of Procedure of the Human Rights Committee, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/3/Rev. 6, 24 April 2001 Rule 91:

¹⁰⁸ Տե՛ս Rules of Procedure of the Human Rights Committee ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/3/Rev. 6, 24 April 2001, Rule 86.

¹⁰⁹ Միջանկյալ միջոցների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս J. Harrington, 'Punting Terrorists, Assassins, and Other Undesirables: Canada, the Human Rights Committee, and Requests for Interim Measures of Protections' (2003) 48 *McGill Law Journal* 2:

¹¹⁰ Տե՛ս, օրինակ՝ «Քոքսն ընդդեմ Կանադայի» (*Cox v Canada, 539/93*):

¹¹¹ Տե՛ս [12.33] և [20.17], տե՛ս նաև «Կանեպան ընդդեմ Կանադայի» (*Canepa v Canada, 558/93*) գործն այստեղ՝ [9:88], [12.35] և [20.20].

¹¹² Տե՛ս Հարինգթոն, վերը, ծմբ. 109, էջ 13:

¹¹³ Տե՛ս նաև «Մանսարաջը և այլք ընդդեմ Սիերա Լեոնեի» (*Mansaraj et al v Sierra Leone, 839-841/98*):

¶ 5.2. Այդպիսով, հաղորդման մեջ դաշնագրի՝ տվյալ մասնակից պետությանը վերագրվող ոտնահարումից բացարձակապես անկախ, մասնակից պետությունը կատարում է կամընտիր արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների լրջագույն խախտումներ, եթե ձեռնարկում է գործողություններ, որոնք ուղղված են դաշնագրի ոտնահարման մասին որևէ հաղորդում կոմիտեի կողմից դիտարկելը թույլ չտալուն կամ խոչընդոտելուն կամ կոմիտեի իրականացրած ուսումնասիրությունը հարցականի տակ դնելուն և կոմիտեի «Տեսակետները» չեղյալ և անհիմաստ հայտարարելուն: Ներկա հաղորդման առնչությամբ հեղինակները հայտարարում են, որ ենթադրյալ տուժողները զրկված են եղել դաշնագրի 6-րդ և 14-րդ հոդվածներով սահմանված իրավունքների պաշտպանությունից: Տեղեկացված լինելով ստացված հաղորդման մասին՝ մասնակից պետությունը խախտում է կամընտիր արձանագրությամբ ստանձնած իր պարտավորությունները, եթե կանգ չի առնում և մահապատժի է ենթարկում հայտարարության մեջ նշված տուժողներին, քանի դեռ կոմիտեն չի ավարտել հաղորդման դիտարկումը և ուսումնասիրությունը և չի ձևակերպել ու փոխանցել իր «Տեսակետները»: Մասնակից պետության այդպիսի վարմունքը հատկապես աններելի է այն դեպքերում, երբ կոմիտեն, իր 86-րդ կանոնի համաձայն, պահանջել է տվյալ մասնակից պետությունից ձեռնպահ մնալ նման քայլից:

¶ 5.3. Կոմիտեն նաև արտահայտում է իր խորին մտահոգությունը մասնակից պետության՝ սեփական գործողությունների բացատրության կապակցությամբ: Կոմիտեն չի կարող ընդունել մասնակից պետության այն փաստարկը, թե ճիշտ չէր լինի, եթե փաստաբանը հաղորդում ներկայացներ Մարդու իրավունքների կոմիտե այն բանից հետո, երբ հեղինակները ներում ստանալու նպատակով դիմել են նախագահին, և այդ դիմումը մերժվել է: Կամընտիր արձանագրությունը որևէ դրույթ չի պարունակում, որը կսահմանափակեր դաշնագրով սահմանված իրավունքների ոտնահարումից որևէ տուժող՝ հաղորդում ներկայացնելու իրավունքն այն բանից հետո, երբ ներման կամ համաձայնության խնդրանքը մերժվել է, և մասնակից պետությունն իրավունք չունի միակողմանի կերպով այնպիսի պայմաններ ստեղծելու, որոնք սահմանափակում են թե՛ կոմիտեի իրավասությունը և թե՛ հայտարարվող տուժողների՝ կոմիտեին հաղորդումներ ներկայացնելու իրավունքը: Ավելին՝ մասնակից պետությունը ցույց չի տվել, որ կոմիտեի՝ միջանկյալ միջոցներ գործադրելու պահանջին համաձայնելու դեպքում արդարադատության ընթացքը կխաթարվեր:

¶ 5.4. Կոմիտեի՝ դաշնագրի 39-րդ հոդվածի համաձայն ընդունված կանոններից 86-րդից բխող միջանկյալ միջոցները էական նշանակություն ունեն ըստ արձանագրության կոմիտեի դերի տեսանկյունից: Կանոնի անտեսումը, հատկապես այնպիսի անդառնալի միջոցների կիրառմամբ, ինչպիսիք են հայտարարվող տուժողի մահապատժը կամ նրա արտաքսումը երկրից, վտանգում է դաշնագրում ամրագրված իրավունքների պաշտպանությունը կամընտիր արձանագրության միջոցով:

Չնայած կոմիտեն 86-րդ կանոնից բխող միջանկյալ դիմումների խախտումները բնութագրել է որպես «կամընտիր արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների լրջագույն խախտումներ», դրանք չեն ոտնահարում հատկապես ՔՔԻՄԴ-ը: «Վայսն ընդդեմ Ավստրիայի» (*Weiss v Austria, 1086/02*) գործում հեղինակին արտաքսել են ԱՄՆ՝ մերժելով նման քայլից ձեռնպահ մնալու մասին 86-րդ կանոնի համաձայն ներկայացված դիմումը: Հեղինակը պնդել է, որ իր արտաքսումը հոդված 9(1)-ով սահմանված իր ազատության իրավունքի ոտնահարում է¹¹⁴: Չնայած ՄԻԿ-ը իր 86-րդ կանոնի համաձայն ներկայացված դիմումն անտեսելու համար դատապարտեց մասնակից պետությանը նույն բառերով, որոնք օգտագործվել էին *Փիանդիոնգի* գործով¹¹⁵ վերը մեջբերված հատվածում, այնուամենայնիվ, լուծում չտվեց 9-րդ հոդվածով հեղինակի անհամաձայնության խնդրին:

¹¹⁴ Պարբ. 6.1:

¹¹⁵ Պարբ. 7.1-7.2: Վայսը, այլ հարցերի թվում, պնդում էր, որ իր արտաքսումն ԱՄՆ, որտեղ ինքը դատապարտվեց ցմահ ազատազրկման՝ առանց պայմանական վաղաժամկետ ազատ արձակման իրավունքի, կխախտեր ՔՔԻՄԴ-ով ճանաչված իր իրավունքները: Նոր հաղորդումների հարցերով հատուկ զեկուցողը մասնակից պետությանը խնդրել էր ձեռնպահ մնալ Վայսի արտաքսումից, մինչև ՄԻԿ-ը «կստանա և կուսումնասիրի մասնակից պետության դիմումն այն կապակցությամբ, թե արդյոք գոյություն ունի՝ հեղինակին անդառնալի վնաս հասցնելու վտանգ», եթե նա ենթարկվի արտաքսման (պարբ. 1.2): Հազվագյուտ դեպք է, բայց մասնակից պետությանը հնարավորություն տրվեց ցույց տալու, որ մինչև գործի վերջնական վճռումը արտաքսումից չի բխի որևէ անդառնալի վնաս՝ հնարավորություն ստեղծելով չեղյալ հայտարարելու 86-րդ հոդվածով ներկայացված պահանջը մինչև գործի վերջնական վճիռը: Այնուամենայնիվ, հակառակ 86-րդ հոդվածով ներկայացված պահանջի, մասնակից պետությունը Վայսին արտաքսեց ԱՄՆ պահանջն ստանալուց մոտ երկու շաբաթ անց:

[1.55]**ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

¶ 18. Այնուհետև կոմիտեն որդեգրում է այն տեսակետը, ըստ որի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ձեռք բերելու իրավունքը որոշ դեպքերում կարող է մասնակից պետություններից ժամանակավոր կամ միջանկյալ միջոցների նախատեսում և ձեռնարկում պահանջել, որպեսզի խուսափեն խախտումները շարունակելուց և հնարավոր ամենասեղմ ժամկետներում ձգտեն վերականգնելու հասցված բոլոր վնասները, որոնք կարող էին առաջանալ նման խախտումների հետևանքով: [Մասնավորապես, եթե տուժողները ձգտում են իրավական պաշտպանության միջոցներ ձեռք բերել ներպետական դատարաններում, կարելի է միջանկյալ օգնության կամ պաշտպանության կոչ անել:]

¶ 19. Կամընտիր արձանագրությանն առնչվող դեպքերում մինչև կոմիտեի կողմից տվյալ գործի դիտարկումն ավարտելը անդառնալի վնաս հասցնելուց խուսափելու նպատակով կոմիտեի մատնանշած ժամանակավոր միջոցների գործադրումը ձախողելը պետք է համարվի անհամատեղելի դաշնագիրը, մասնավորապես դրա 2-րդ հոդվածը և կամընտիր արձանագրության համաձայն անհատական հաղորդումներ ներկայացնելու իրավունքը բարեխղճորեն հարգելու պարտավորության հետ:

ՔՔԻՄԴ-ի նորմերի մեկնաբանումը և մշակումը

[1.56] Այս գրքի մտահոգության առարկան Միավորված ազգերի կազմակերպության պայմանագրային մարմինների, հատկապես ՄԻԿ-ի նախադեպային իրավունքն է: Քանի որ այդ նախադեպային իրավունքից մեջբերումները և դրա վերլուծությունը ձևակերպված են առանձին գլուխներում՝ համաձայն համապատասխան էական իրավունքի, անհրաժեշտ է այս ներածական գլխում մեկնաբանություններ տալ այդ նախադեպային իրավունքի շրջանակներում որոշ ընդարձակ միավորող թեմաների վերաբերյալ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՍՓՈՓԱԳԻՐ

[1.57] ՄԻԿ-ի նախադեպային իրավունքի էական աղբյուրները այդ մարմնի՝ կամընտիր արձանագրության համաձայն կայացրած որոշումներն են, Ընդհանուր մեկնաբանությունները և Եզրափակիչ դիտարկումները: Կամընտիր արձանագրության համաձայն կայացված որոշումները ՔՔԻՄԴ-ը կիրառում է որոշակի իրավիճակներում և այդպիսով մատուցում դաշնագրի դրույթների ամենամանրակրկիտ մեկնաբանումներ: Ինչպես նշված է ստորև, Եզրափակիչ դիտարկումների և Ընդհանուր մեկնաբանությունների առավել ընդհանրական («թանձր վրձնահարվածների») մոտեցումն ունի իր առավելությունները, երբ գործ ունենք ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքների համակարգային խախտումների հետ [1.86]:

[1.58] Մինչև 2002 թ. վերջը ՄԻԿ-ն ավարտին էր հասցրել մոտ 800 հաղորդումների դիտարկում: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ հաղորդումների անհամամասնորեն խոշոր մասը վերաբերում էր մի փոքր խումբ պետությունների և թեմաների նեղ շրջանակի: 1976-ից մինչև գրեթե 1985 թ. հաղորդումների մեծ մասը վերաբերում էր մարդու իրավունքների զանգվածային խախտումներին, ներառյալ Ուրուգվայի ռազմական կառավարության ձեռնարկած խոշտանգումների, անհետացումների և երկարաժամկետ կամայական կալանավորումների վերաբերյալ մեղադրանքները: 1980-ական թվականների կեսից սկսած՝ հսկայական քանակով դեպքեր ներկայացվել են Կարիբյան ավազանի երկրներում, մասնավորապես՝ ճամայկայում, մահապատժի դատապարտված կալանավորների կողմից¹¹⁶: Այս գործերն ընդհանուր առմամբ վերաբերել են արդար դատավարություններին, որոնք հանգեցրել են մահապատժի դատապարտող դատավճիռների, չնայած այս դիմումների մի մասն առնչվել է մահապատժի դատապարտվածների կալանավորման ժամկետին և պայմաններին¹¹⁷: «Բողոքների մակարդակի» այս անհարթությունը հանգեցրել է նրան, որ կամընտիր արձանագրությամբ ՄԻԿ-ի նախադեպային իրա-

¹¹⁶ 1998 թ. սեպտեմբերի 1-ին կամընտիր արձանագրությամբ կայացված որոշումների մի վիճակագրական հետազոտություն, որը տեղադրված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով զբաղվող հանձնակատարի ինտերնետային կայքում՝ www.unhcr.ch/html/menu218/stat2.htm, բացահայտեց, որ 829 հաղորդումներից 177-ը վերաբերել են ճամայկային:

¹¹⁷ 1997 թ. վերջին ճամայկան կատարեց կամընտիր արձանագրության համակարգից դուրս գալու (այն ժամանակ) աննախադեպ բայլ: Այդ օրինակին 1998 թ. հետևեց Տրինիդադ և Տոբագոյն, չնայած սա վերապահումով վերամիացավ կամընտիր արձանագրությանը հենց նույն օրը, որն արգելում էր մահապատժի դատավճիռների ի կատար ածման մասին բողոքները: Տե՛ս [25.39]: Տե՛ս *Annual Report of the Human Rights Committee* (1998), A/53/40, i, 87, notes f & g:

վունքն անհամամասնորեն շեղված է դեպի 7-րդ, 9-րդ, 10-րդ և 14-րդ հոդվածներին առնչվող խնդիրները: Մինչդեռ գոյություն ունի համեմատաբար սահմանափակ նախադեպային իրավունք այնպիսի իրավունքների վերաբերյալ, ինչպիսիք են 21-րդ և 22-րդ հոդվածներում ամրագրվածները:

[1.59] Չնայած անհամամասնորեն մեծ թվով հաղորդումներ, ըստ էության, նույն բնույթի են, կամընտիր արձանագրությունը, այնուամենայնիվ, առաջացրել է նախադեպային իրավունքի մի ընդգրկուն աղբյուր, որն անդրադառնում է ՔՔԻՄԴ-ով սահմանված իրավունքների մեծ մասի կարևոր կողմերին: ՄԻԿ-ն զբաղվել է մեծաթիվ բարդ խնդիրներով, որոնք անհրաժեշտ են դարձրել իրավունքի իրական բացահայտումները՝ ի հակադրություն սոսկ փաստերի արձանագրման: Օրինակ՝ կամընտիր արձանագրությամբ կայացված որոշումներն անդրադարձել են հետևյալ օրենքների, վարչական որոշումների կամ գործնական կիրառությունների համապատասխանությանը ՔՔԻՄԴ-ին. օրենք, որն արգելեց Հոլոքոստի ժխտումը [18.58], տարբեր համատեքստերում անձանց արտաքսումը կամ հանձնումը¹¹⁸, պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած անձանց անձնագրային հսկողությունը [12.21], զինվորական կարգապահության հետ կապված պատճառներով կալանավորումը [11.58], ապաստան որոնող անօրինական միգրանտների կալանավորումը¹¹⁹, համասեռամուլների սեռական ակտի արգելումը [16.36], համայնքում հայտարարելու օրենքները [9.125], մահապատժի դատապարտվածների կալանավորման ժամկետի ձգձգումը [9.55], որոշակի լեզվական մշակույթ խթանելու նպատակով մշակված լեզվական պահանջները [18.42], բնիկների հողերում իրականացվող առևտրային ձեռնարկումները¹²⁰, խորհրդարանի գործունեությունը լուսաբանելու համար լրատվամիջոցների հնարավորությունների սահմանափակումները [18.31], միասեռական ամուսնությունների արգելումը [20.29], ահաբեկիչներին դատելու համար հատուկ դատարանները [23.109], բնիկների արտակարգ պահանջների օրենսդրական կարգավորումը [24.20], մահապատժի պարտադիր դատավճիռները [8.28], ընտանիքների միասնության վրա ազդող ներգաղթի վերահսկողությունը [20.21] և ՔՔԻՄԴ-ով ու ԿԱ-ով ստանձնած պարտավորությունների տարածման սահմանները կախյալ տարածքներում [4.06]:

[1.60] Կարելի է պնդել, որ կամընտիր արձանագրությամբ կայացված ամենախիստ որոշումները վերաբերել են 26-րդ հոդվածին՝ խտրականությունից զերծ լինելու ինքնուրույն երաշխիքին¹²¹: 1987 թ. «*Բրուկսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Broeks v Netherlands, 172/84*) [23.10] և «*Չվասն դե Վրիեսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Zwaan-de Vries v Netherlands, 182/84*) գործերով կայացված դարակազմիկ որոշումներում ՄԻԿ-ն ամրագրեց, որ 26-րդ հոդվածը խտրականությունից զերծ լինելը երաշխավորում է բոլոր իրավունքների առնչությամբ, ներառյալ՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Սրան հետևած բազմաթիվ հաղորդումներում ՄԻԿ-ն ստիպված էր դիտարկել ներպետական սոցիալական ապահովության քաղաքականություններում խտրական հայտարարվող մեծաքանակ միջոցների համապատասխանությունը: Որոշումներն առանձնապես նշանակալի էին, քանի որ Եվրոպական կոնվենցիայում ներառված խտրականության արգելման համապատասխան երաշխիքը՝ 14-րդ հոդվածը, խտրականությունն արգելում է միայն դաշնագրով սահմանված այլ իրավունքների առնչությամբ [23.13]:

[1.61] Կամընտիր արձանագրության նախադեպային իրավունքն իհարկե լրացվում է ընդհանուր մեկնաբանություններով և եզրափակիչ դիտարկումներով, որոնք անդրադարձել են ներկայացված հաղորդման սահմաններից դուրս մնացող բազմաթիվ հարցերի: Վերջապես, այլ կարևոր խնդիրների, ինչպես օրինակ՝ ՌԽՎ կոմիտեում ներկայացվող ռասայական անարգանքին առնչվող խնդիրներին¹²² անդրադարձել են ՄԱԿ-ի այլ պայմանագրային մարմիններ:

¹¹⁸ Տե՛ս, օրինակ՝ «Քինդլերն ընդդեմ Կանադայի» (*Kindler v Canada, 470/91*) այստեղ՝ [8.33], «Ստյուարտն ընդդեմ Կանադայի» (*Stewart v Canada, 538/93*) [12.33] և [20.17]: Տե՛ս նաև [9.67]ff:

¹¹⁹ «Ա-ն ընդդեմ Ավստրալիայի» (*A v Australia, 560/93*) [11.16], [11.55] և [11.59], «Բ-ն ընդդեմ Ավստրալիայի» (*C v Australia, 900/99*) [11.17] և [11.61]:

¹²⁰ Տե՛ս [24.31] ff:

¹²¹ Հարրիս, տե՛ս վերը, ծնթ. 41, 17, ընդհանուր առմամբ, տե՛ս գլուխ 23:

¹²² Տե՛ս [18.51-18.57]:

[1.62] Առհասարակ ընդունվում է այն տեսակետը, որ մարդու իրավունքների պաշտպանության փաստաթղթերը պետք է մեկնաբանվեն ազատորեն, և, հետևաբար, համապատասխան սահմանափակումները պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով¹²³։ Այնուամենայնիվ դժվար է ՄԻԿ-ի մեկնաբանություններում նկատել ազատականության, ծայրահեղականության կամ պահպանողականության որևէ միտում¹²⁴։ Օրինակ՝ 1988 թ. ՄԻԿ-ի նախաձեռնությամբ 26-րդ հոդվածի տարածումը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշտում կարող է ընկալվել որպես արմատական¹²⁵։ Այնուամենայնիվ կարծիք կա, որ ՄԻԿ-ը հետագայում՝ խտրականության վերաբերյալ հաղորդումները դիտարկելիս, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պահպանման հարցում բավականին պահպանողական էր, քանի որ հազվադեպ էր եզրակացնում, որ եղել է 26-րդ հոդվածի խախտում։ ՄԻԿ-ն ավելի պահպանողականորեն է արձագանքել «մահապատժի դատապարտվածների երևույթին», քան Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ «Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Soering v UK*) գործում¹²⁶։ Այնուամենայնիվ վերջերս ՄԻԿ-ը բավական արմատական գտնվեց, երբ անձի հանձնումը մի երկիր, որտեղ նրան մահապատժի դատավճիռ է սպասում, բնորոշեց որպես կյանքի իրավունքի խախտում՝ չնայած 6-րդ հոդվածով հստակորեն սահմանված մահապատժին վերաբերող բացառությանը¹²⁷։ Հետագայում ՄԻԿ-ը եվրոպական կառույցներից ավելի արմատական էր տրամադրված, երբ բացահայտ մերժեց գնահատման սահմանի զգուշավոր սկզբունքը¹²⁸։ ՄԻԿ-ի մեկնաբանությունների կայուն «փիլիսոփայության» բացակայությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ երկու տարին մեկ նրան միանում են նոր աշխատակիցներ¹²⁹։

ՆԱԽԱԴԵՊԻ ԴԵՐԸ

[1.63] ՄԻԿ-ն իր գործունեության ընթացքում ակնհայտորեն կաշկանդված չէ նախադեպային որևէ սկզբունքով։ «Թոմասն ընդդեմ Ճամայկայի» (*Thomas v Jamaica, 532/1993*) գործի շրջանակներում պարոնայք Պոկարը և Լալլան նշեցին.

Կոմիտեի՝ իրավական հիմքեր ունեցող յուրաքանչյուր... տեսակետ ... կարող է ամեն պահի շրջվել կամ ձևափոխվել մեկ այլ գործի դիտարկման ժամանակ կոմիտեի անդամների կողմից բերված նոր փաստարկների լույսի ներքո։

«Թոմսոնն ընդդեմ Սենտ Վինսենթ և Գրենադինների» (*Thompson v Saint Vincent and the Grenadines, 806/98*) գործում պարոնայք Կրեցմերը, Ամորը, Յալդենը և Ջախսիան հայտարարեցին.

Կոմիտեն կաշկանդված չէ իր նախկին նախադեպային իրավունքով։ Նա ազատորեն կարող է հրաժարվել նման նախադեպային իրավունքից և այդպես էլ կանի, եթե համոզված լինի, որ նախկինում իր մոտեցումը սխալ է եղել։ Այնուամենայնիվ, ինձ թվում է՝ եթե կոմիտեն ցանկանում է, որ մասնակից պետությունները լրջորեն վերաբերվեն իր նախադեպային իրավունքին և դաշնագիրը կենսագործելիս առաջնորդվեն դրանով, այն ժամանակահատվածներում, երբ տեղի է ունենում ուղղության փոփոխություն, նա պարտավոր է մասնակից պետություններին և բոլոր շահագրգիռ անձանց բացատրել, թե ինչու որոշեց նման քայլի դիմել...

¹²³ Տե՛ս "Siracusa Principles on Limitations and Derogations to the ICCPR" (1985) 7 *HRQ* 3, 4: Նովակ, տե՛ս վերը, ծմբ. 22, XXIV: Տե՛ս նաև մեծամասնության կարծիքը *Ալբերտայի միությունների* գործում (*Alberta Unions Case, 118/82*), պարբ. 5:

¹²⁴ Հարրիս, տե՛ս վերը, ծմբ. 41, էջ 19-20:

¹²⁵ Տե՛ս T. Opsahl, 'Equality in Human Rights Law with Particular Reference to Article 26 of the International Covenant of Civil and Political Rights', in M. Nowak, D. Steurer, and H. Tretter (eds), *Festschrift für Felix Ermacora* (Engel, Strasbourg, 1988), at 52, որտեղ նկարագրվում է Հոլանդիայի բացասական արձագանքը *Broeks-ի* և *Zwaan-de-Vries-ի* գործերում կատարված բացահայտումներին: Տե՛ս նաև Հարրիս, վերը, ծմբ. 41, էջ 18, ծմբ. 92:

¹²⁶ Տե՛ս «Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Soering v UK*), թիվ 161 (1989) 11 EHRR 439: Տե՛ս, օրինակ, «Ջոնսոնն ընդդեմ Ճամայկայի» (*Johnson v Jamaica, 588/94*), որը ժխտում է Սոերինգի հիմնավորումները [9.55]:

¹²⁷ Տե՛ս «Ջաջն ընդդեմ Ճամայկայի» (*Judge v Canada, 829/98*) [8.35] գործը, որը չեղյալ դարձրեց «Քինդլերն ընդդեմ Կանադայի» (*Kindler v Canada, 470/91*) [8.33] գործը:

¹²⁸ Գնահատման սահմանին համանման մի սկզբունք ՄԻԿ-ի կողմից բացահայտորեն կիրառվել է միայն մեկ անգամ «Հերցբերգն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Hertzberg v Finland, 61/79*) գործով: ՄԻԿ-ի նախկին անդամ Ռոսլին Հիգգինսն այդ ժամանակից ի վեր ժխտել է, թե վերջին տարիներին դա կիրառվել է ՄԻԿ-ի կողմից: *Հերցբերգի* գործի և «սահմանի» սկզբունքի մասին քննարկման համար տե՛ս [18.22-18.24]: Տե՛ս նաև «Լանսմանն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Lämsman v Finland, 511/92*) գործը, որում ՄԻԿ-ը մերժեց գնահատման սահմանի կիրառումը փոքրամասնությունների իրավունքների մասին 27-րդ հոդվածի համատեքստում, պարբ. 9.4. տե՛ս [24.32]: Վերջապես, տե՛ս Հեֆերնան, վերը, ծմբ. 58, էջ 91:

¹²⁹ Կոմիտեի մշտական անդամների մեծամասնությունը սովորաբար վերընտրվում է: Այնուամենայնիվ միշտ գոյություն ունեն մի քանի թափուր տեղեր, որոնք առաջացել են անդամների՝ թոշակի անցելու, մահվան կամ թեկնածությունը վերաառաջարկել կամ վերընտրվել չկարողանալու հետևանքով:

[1.64] ՄԻԿ-ը շատ առիթներով բացահայտ հետևել է սեփական որոշումներին¹³⁰: Այնուամենայնիվ, նրա՝ սեփական նախադեպային իրավունքը կիրառելու հնարավորությունները սահմանափակ են եղել, քանի որ մեծաթիվ գործեր առաջացել են փաստերի բացահայտումների, ոչ թե իրավունքի շուրջ¹³¹: Որոշ դեպքերում ՄԻԿ-ն իր կարծիքներն արտահայտելիս հետևողական չի եղել: Օրինակ՝ «*Ֆուանն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Foin v France, 666/95*) [23.53] գործը կարծես թե վերանայում է «*Յարվինենն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Jiirvinen v Finland, 295/88*) [23.52] գործով կայացված նախկին որոշումը: «*Ջաջն ընդդեմ Կանադայի*» (*Judge v Canada, 829/98*) [8.35] գործն ակնհայտորեն վերանայում է «*Քինդլերն ընդդեմ Կանադայի*» (*Kindler v Canada, 470/91*) [8.33] գործով ընդունած որոշումը: Եզրափակիչ դիտարկումներում մատնանշվել է, որ ՔԲԻՄԴ-ը, չնայած ավելի վաղ «*Ջ.Բ.-ն ընդդեմ Կանադայի*» (*J.B. v Canada, 118/82*) [19.19] գործով կայացված որոշման, իսկապես կարող է պաշտպանել գործադուլի իրավունքը¹³²: ՄԻԿ-ի շեղումները սեփական նախադեպային իրավունքից, որքան էլ հազվադեպ երևույթ լինեն, ցույց են տալիս, որ ՔԲԻՄԴ-ը կենսունակ գործիք է՝ ունակ դինամիկ զարգացման:

[1.65] ՄԻԿ-ը ՄԱԿ-ի այլ պայմանագրային մարմինների կայացրած որոշումներին հղում անելու սուղ հնարավորություն է ունեցել, որոնք ձգտել են զբաղվել տարբեր ոլորտներում արձանագրված դեպքերով: ՄԻԿ-ը հաճախ չի հիշատակել նաև մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային կառույցները, որոնք կարևոր նախադեպային իրավունքի մի հսկա զանգված են ստեղծել: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիշատակումները սակավաթիվ են և ավելի շուտ կողմերի բերած փաստարկների արդյունք են¹³³: Գերադասելի է միջազգային կառույցներին հղում անելու առավել հետևողականությունը, որպեսզի հնարավոր լինի օժանդակել մարդու իրավունքների պաշտպանության ավելի կայուն միջազգային սկզբունքների մշակմանը¹³⁴:

ՔԲԻՄԴ-ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

[1.66] ՔԲԻՄԴ-ի որոշ իրավունքներ բացարձակ են: Նման բացարձակ իրավունքներից են 7-րդ հոդվածը, որն արգելում է խոշտանգումները, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը, և 8-րդ հոդվածի 1-ին կետը, որն արգելում է ստրկությունը: Պետությունը չի կարող որևէ սահմանափակում կիրառել բացարձակ իրավունքի նկատմամբ, եթե նա չի մտցրել պարտավորությունից պատշաճ շեղում կամ դրա նվազեցում [derogation]՝ սահմանված 4-րդ հոդվածով¹³⁵, կամ պատշաճ վերապահում [reservation]¹³⁶:

[1.67] Այն դեպքերում, երբ ՔԲԻՄԴ-ի իրավունքների սահմանափակումներ թույլատրվում են, դրանք պետք է նախատեսված լինեն ազգային օրենսդրությամբ¹³⁷: Սա նշանակում է, որ սահմանափակումը պայմանավորող հանգամանքները հստակորեն սահմանվում են մատչելի օրենսդրությամբ [accessible law]՝ լինի դա ստատուտային իրավունք [statute law] թե ընդհանուր իրավունք¹³⁸ [common law]: Օրենսդրությունը պետք է այնքան հստակ լինի, որ իր կիրառության առումով չափազանց ազատ մեկնաբանություն և անկանխատեսելիություն թույլ չտա¹³⁹:

¹³⁰ Օրինակ՝ «*Ջոնսոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Johnson v Jamaica, 588/94*) գործում մահապատժի դատապարտվածների երևույթի վերաբերյալ կիրառված հիմնավորումը հետագայում օգտագործվել է մեծամասնությունների կայացրած բազմաթիվ որոշումներում, ինչպիսիք են «*Հիլտոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Hylton v Jamaica, 600/1994*), «*Լյուիսն ընդդեմ Ճամայկայի*» (*Lewis v Jamaica, 527/1993*) և «*Սփենսն ընդդեմ Ճամայկայի*» (*Spence v Jamaica, 59/1994*) գործերը:

¹³¹ Նշվածը ճշմարիտ է Ուրուգվային և Ճամայկային վերաբերող գործերի մեծ մասի դեպքում:

¹³² Տե՛ս նաև համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու մասին ՄԻԿ-ի փոփոխվող նախադեպային իրավունքի վերաբերյալ մեկնաբանությունն այստեղ՝ [17.22–17.27] և [10.03]:

¹³³ Տե՛ս Յարրիս, վերը, ծնթ. 41, էջ 15, ծնթ. 75:

¹³⁴ *Նույնը*, էջ 15:

¹³⁵ Սակայն բացարձակ իրավունքների մեծ մասը նվազելի չէ [non-derogable]: Հոդված 10(1)-ը նվազելի իրավունք է՝ չնայած սահմանվել է բացարձակ ձևակերպումներով:

¹³⁶ Մասնակից պետությունների վերապահման իրավունքի վերաբերյալ տե՛ս գլուխ 25:

¹³⁷ Այս պահանջը տարբեր կերպ արտահայտված է ՔԲԻՄԴ-ի տարբեր երաշխիքներում:

¹³⁸ Տե՛ս Նովակ, վերը, ծնթ. 22, 171: Տե՛ս նաև «*Սանդեյ Թայմսն ընդդեմ ՄԻԴ-ի*» (*Sunday Times v UK, 1979-80*) 2 EHRR 245, պարբ. 49, որը հաստատում է, որ նախադեպային իրավունքը կարող է բավականաչափ արմատացած «օրենքներ» կազմել՝ եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների սահմանափակման համար:

¹³⁹ Տե՛ս, օրինակ՝ «*Փինքնեյն ընդդեմ Կանադայի*» (*Pinkney v Canada, 27/78*), այստեղ՝ [16.10]: Տե՛ս նաև թիվ 27 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 13 [12.24]:

[1.68] ՔՔԻՄԴ-ի որոշ իրավունքներ (օրինակ՝ 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 13-րդ հոդվածը, 14-րդի 1-ին կետի մի մասը, 18-րդի 1-ին կետը, 19-րդի 2-րդ կետը, 21-րդը և 22-րդը) բացահայտ սահմանափակող կետեր ունեն, որոնք թվարկում են թույլատրելի սահմանափակումները, ինչպիսիք են հասարակական կարգը, ազգային անվտանգությունը և այլոց իրավունքների պաշտպանությունը¹⁴⁰։ Բոլոր թվարկված սահմանափակումները «պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում», ինչը որոշակի սահմանափակման թույլատրելիությունը որոշելու հարցում ներմուծում է համաչափություն հասկացությունը¹⁴¹։ ՔՔԻՄԴ-ի այլ իրավունքներ (օրինակ՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը, 9-րդի 1-ին կետը, 12-րդի 4-րդ կետը և 17-րդը) թույլատրում են «ոչ կամայական» սահմանափակումներ։ «Կամայականություն» հասկացությունը նման սահմանափակումների չափի որոշման հարցում ներառում է նաև համաչափությունը¹⁴²։ 25-րդ հոդվածով սահմանված իրավունքները, որոնք բացահայտորեն կարող են սահմանափակվել «հիմնավորված»^{*} միջոցներով¹⁴³, և 26-րդ հոդվածով սահմանված անխտրականության իրավունքները, որոնք կարող են սահմանափակվել, ըստ ՄԻԿ-ի նախադեպային իրավունքի¹⁴⁴, «հիմնավորված և օբյեկտիվ» միջոցներով, հավասարապես սահմանափակվում են համաչափություն հասկացությամբ¹⁴⁵։ Հավանական չէ, որ սահմանափակող դրույթը համարվի ոչ կամայական, հիմնավորված կամ համաչափ, եթե այն ձևակերպված չէ այնպես, որ համապատասխանի բացահայտ սահմանափակող կետերում սահմանված օրինական նպատակներից մեկին։ Հետևաբար, չնայած տարբեր ձևակերպումներ ունեցող թույլատրելի սահմանափակումներին, ՔՔԻՄԴ-ի իրավունքների մեծ մասը կարող է սահմանափակվել համաչափ օրենքներով, որոնք նախատեսված են պաշտպանելու համար հակաշռոջ համայնքային շահը, ինչպիսին է հասարակական կարգը, կամ պաշտպանելու համար մեկ այլ անձի հակադրվող իրավունքը¹⁴⁶։

[1.69]

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄԻԿ-ը վերջերս հաստատեց, որ համաչափություն հասկացությունը ՔՔԻՄԴ-ի իրավունքների սահմանափակումների օրինականությունը որոշելիս առանցքային դեր է խաղում։

¶ 5. ... [ՔՔԻՄԴ] իրավունքների յուրաքանչյուր սահմանափակում պետք է թույլատրելի լինի՝ համաձայն դաշնագրի համապատասխան դրույթների։ Այն դեպքում, երբ նման սահմանափակումները թույլատրված են, պետությունները, ամեն պարագայում, պետք է ցույց տան դրանց անհրաժեշտությունը և ձեռնարկեն միայն այնպիսի միջոցներ, որոնք համաչափ են օրինական նպատակների հետապնդման առումով՝ ապահովելով դաշնագրի իրավունքների շարունակական և արդյունավետ պաշտպանությունը։ Երբեք չի կարելի սահմանափակումներ դնել կամ կիրառել այնպես, որ դրանք խաթարեն դաշնագրով սահմանված իրավունքի էությունը։ ...

[1.70] ՔՔԻՄԴ-ի իրավունքի և դրա սահմանափակումների բաժանարար գիծը ոչ մի կերպ հստակ չես անվանի, մանավանդ երբ գտնվում ես իրավունքի «եզրագծում»։ Իրավունքի եզրագիծը կարելի է բնութագրել որպես հատված, որը գտնվում է իրավունքի բացահայտ պահպանման և բացահայտ խախտ-

¹⁴⁰ Այդ սահմանափակումները չեն մեկնաբանվել յուրաքանչյուր համապատասխան իրավունքի համատեքստում։ Այնուամենայնիվ, կարելի է կարծել, որ պայմանները համանման կերպով կմեկնաբանվեն բոլոր համատեքստերում։

¹⁴¹ Տե՛ս «Պիետրարոյան ընդդեմ Ուրուգվայի» (*Pietraroia v Uruguay*, 44/79), պարբ. 16 և Էվաթի, Կրեցմերի ու Քլայնի [մասնավոր կարծիքը «Ֆորիսոն ընդդեմ Ֆրանսիայի» (*Faurisson v France*, 550/93) գործում, նրանց մասնավոր կարծիքի 8-րդ պարբերությունն այստեղ՝ [18.59]։

¹⁴² Տե՛ս «Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի» (*Toonen v Australia*, 488/92), պարբ. 8.3 [16.12]։

* ՔՔԻՄԴ-ի 25-րդ հոդվածի հայերեն թարգմանության մեջ խոսվում է «անհիմն» [unreasonable] սահմանափակումների մասին (ծան. թարգմ.)։

¹⁴³ Տե՛ս «Գիլոտն ընդդեմ Ֆրանսիայի» (*Gillot v France*, 932/00), պարբ. 13.2, որը հաստատում է համաչափության տեղին լինելը 25-րդ հոդվածով սահմանված իրավունքների սահմանափակումները որոշելիս [7.07]։

¹⁴⁴ Տե՛ս [23.41] և հաջորդը [ff]։

¹⁴⁵ Հարրիս, վերը, ծնթ. 41, 13։

¹⁴⁶ Տե՛ս P. Hassan, 'International Covenant on Civil and Political Rights: Background Perspectives on Article 9(1)' (1973) 3 *Denver Journal of International Law and Policy* 153, որը մանրամասներ է ներկայացնում հոդված 9(1)-ի նախագծման պատմությունից, երբ անձի ազատության իրավունքի սահմանափակումների համարակալված ցանկի փոխարեն հոդվածում ներառվեց «կամայական» բառը։ Հասանել եզրակացնում է, որ ազատության «կամայական» սահմանափակումների արգելումը «կարող է պաշտպանության ավելի լավ երաշխիքներ տալ կառավարությունների կողմից սեփական ժողովուրդների կեղեքման դեմ, քան սահմանափակումների մանրակրկիտ ցանկ պարունակող ցանկացած հոդված» (այստեղ՝ 183)։

ման միջև¹⁴⁷: Օրենքի համատեղելիությունը մարդու իրավունքների հետ, երբ այն ազդում է մարդու որևէ իրավունքի ծայրամասի վրա, հիմնականում որոշվում է դեպք առ դեպք սկզբունքով, եթե չկա էապես կիրառելի նախադեպ: Այս անորոշությունը գալիս է հաստատելու, որ ՔՔԻՄԴ-ի վերացական իրավունքները դեռևս լիովին չեն որոշակիացվել: Այդ որոշակիացման գործընթացը տեղի է ունենում ժամանակի ընթացքում՝ ՄԻԿ-ի իրավական նախադեպերի կուտակման միջոցով և առաջ մղվում ՔՔԻՄԴ-ի իրավունքների վերաբերյալ ներպետական որոշումներով ու գիտական աշխատություններով:

ԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1.71] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների դասական ըմբռնմամբ՝ դրանք ազատություններ են պետության կամայական միջամտությունից¹⁴⁸: Ուստի դրանք սովորաբար հայեցակարգվում են որպես «բացասական» իրավունքներ, քանի որ պետությունները զերծ են մնում որոշակի գործողություններից: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների այս ավանդական հայեցակարգը մեծապես նպաստել է այն ընկալմանը, համաձայն որի՝ այդ իրավունքները ծախսեր չեն պահանջում, այն առումով, որ պետությունը ոչինչ չի «ծախսում», երբ ձեռնպահ է մնում ինչ-որ բան անելուց: Ծախսեր չպահանջող իրավունքները կարող են նաև առավել արդարացիորեն սահմանվել որպես անմիջապես իրականացման ենթակա, ինչն իր հերթին դրանք դարձնում է դատաքննելի: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների այս «բնութագրիչները» կարող են հակադրվել այն հատկանիշներին, որոնք սովորաբար վերագրվում են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին: Վերջիններս ավանդաբար ընկալվում են որպես «դրական» իրավունքներ՝ այն առումով, որ պետությունները պարտավոր են գործողություններ ձեռնարկել՝ դրանք տրամադրելու համար (օրինակ՝ պետությունները պարտավոր են տրամադրել պատշաճ առողջապահություն և կրթության չափորոշիչներ): Արդյունքում՝ դրական իրավունքներն ընկալվում են որպես ծախսատար, աստիճանական [progressive] և ոչ դատաքննելի: Իրականում, քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների այս սուր ընկալվող բաժանումը մեծապես նպաստեց այն որոշմանը, որով իրավունքների երկու համախմբերը բաժանվեցին երկու դաշնագրերի միջև¹⁴⁹:

[1.72] Այսուհանդերձ, ակնբախ է դարձել, որ այդ բաժանումը բավական պարզունակ ու խոցելի է: Իսկապես, բնագդն անգամ բավարար է ՔՔԻՄԴ-ի բազմաթիվ հոդվածներում դրական կողմեր վեր հանելու համար: Օրինակ՝ 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կալանավորման ընթացքում մարդասիրական վերաբերմունքի երաշխավորումն անհրաժեշտ է դարձնում բավարար թվով կալանավորման վայրերի կառուցումը, որպեսզի կանխվեն ազատազրկվածների գերբնակեցումները: 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքն ակնհայտորեն առաջ է բերում արդարադատության անկախ մարմինների առկայության անհրաժեշտությունը: 25-րդ հոդվածի (բ) կետով սահմանված ընտրելու իրավունքը հիմնարար կերպով նախատեսում է արդար ընտրությունների ապահովման համար անհրաժեշտ ապարատի առկայություն: Ընտանիքների պաշտպանությանը վերաբերող հատուկ պարտավորությունները, որոնք նշված են 23-րդ հոդվածում, և երեխաների պաշտպանությանը վերաբերողները, որոնք նշված են 24-րդ հոդվածում, աներկբայորեն պահանջում են դրական միջոցներ:

¹⁴⁷ St'u M. Delmas-Marty, 'The Richness of Underlying Legal Reasoning', in M. Delmas-Marty (ed), *The European Convention for the Protection of Human Rights* (Martinus Nijhoff, Dordrecht, 1992), 332:

¹⁴⁸ Մակգոլդրիկ, վերը, ծմբ. 21, 11:

¹⁴⁹ Նույնը, տե՛ս նաև C. Scott, 'The Interdependence and Permeability of Human Rights Norms: Towards a Partial Fusion of the International Covenants on Human Rights' (1989) 27, *Osgoode Hall Law Journal* 769, 832. 833-ում Արտուրը ներկայացնում է մի կողմից տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների, մյուս կողմից՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների, ըստ ընդհանուր ընկալման, հիմնական «բնութագրիչները»: Քաղաքացիական և քաղաքական իրավունքները բնութագրվում են որպես «անմիջական», «դատաքննելի» և «իրական կամ օրինական իրավունքներ», մինչդեռ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները բնութագրվում են որպես «աստիճանական», «ոչ դատաքննելի» և «մղումներ կամ նպատակներ»:

[1.73]**ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

¶ 5. 2-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված իրավական պարտավորությունը բնութագրվում է թե՛ բացասական է, թե՛ դրական: Մասնակից պետությունները պետք է ձեռնպահ մնան դաշնագրով երաշխավորված իրավունքների խախտումից, և այդ իրավունքների յուրաքանչյուր սահմանափակում պետք է թույլատրելի լինի դաշնագրի համապատասխան դրույթներով: ...

¶ 6. Ի լրումն՝ մասնակից պետությունների՝ երաշխավորված իրավունքներն ապահովելու պարտավորությունը [որոշակի հանգամանքների բերումով] անհրաժեշտության դեպքում ենթադրում է դրական միջոցների օգտագործում՝ դաշնագրի ընձեռած երաշխիքները երկրի ներսում արդյունավետորեն խթանելու և պաշտպանելու նպատակով: 2-րդ հոդվածը պահանջում է, որ մասնակից պետություններն աշխատեն դաշնագրի իրավունքների արդյունավետ իրականացմանը խանգարող բոլոր խոչընդոտների վերացման ուղղությամբ և այդ առումով ձեռնարկեն օրենսդրական, դատական, վարչական, կրթական և այլ համապատասխան միջոցներ՝ իրենց օրինական պարտավորությունները կատարելու նպատակով:

[1.74] ՄԻԿ-ն ուղղակիորեն գտել է ՔՔԻՄԴ-ի տարբեր նյութական իրավունքներով պետությունների վրա դրված բազմաթիվ դրական պարտավորություններ: Նա նշել է, որ պետությունները ՔՔԻՄԴ-ի խախտման վերաբերյալ պնդումները հետաքննելու պարտականություն ունեն¹⁵⁰, ինչպես նաև՝ ՔՔԻՄԴ-ի խախտումները կանխելու ընթացակարգեր և մեխանիզմներ ապահովելու պարտականություններ¹⁵¹: Համապատասխան աշխատակիցները պետք է վերապատրաստում անցնեն՝ ըստ դաշնագրի վարվելակերպի վերաբերյալ գիտելիքներ ստանալու նպատակով¹⁵²: Առհասարակ բնակչությանը կրթելու, մարդու իրավունքների մշակույթով ներթափանցելու պարտականությունը նշված է բազմաթիվ եզրափակիչ դիտարկումներում¹⁵³: Վերջապես, ՄԻԿ-ը թիվ 23 Ընդհանուր մեկնաբանությունում բացահայտ դրական պարտավորություններ է ներառել 27-րդ հոդվածի՝ փոքրամասնությունների իրավունքների երաշխիքի մեկնաբանության մեջ¹⁵⁴:

[1.75] ՄԻԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների դրական կողմերի բացահայտման ձեռնարկմանը շաղկապված է նրա ցանկությունը, որ ՔՔԻՄԴ-ի իրավունքները «ներթափանցվեն» տնտեսական, սոցիալական և մշակութային զգալի տարրերով¹⁵⁵: Ինչպես նշվեց վերը, 26-րդ հոդվածը մեկնաբանվել է այնպես, որ տարածվել է մինչև ամխտրականություն տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտներում [1.60]: 6-րդ հոդվածը՝ կյանքի իրավունքը, մեկնաբանվել է այնպես, որ ներառի պետությունների՝ մասնական մահացությունը, համաճարակները զսպելու և կյանքի տևողությունը երկարացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պարտականությունը¹⁵⁶: Այդպիսով պետությունները պարտավոր են առողջապահության որոշակի նվազագույն մակարդակ ապահովել, որն ավանդաբար ընկալվում է որպես սոցիալական իրավունք:

[1.76] ՄԻԿ-ի նախադեպային իրավունքը որոշ չափով հակվել է դեպի քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ավանդական բաժանման վերացումը: ՄԻԿ-ը հաստատել է, որ ՔՔԻՄԴ-ի բոլոր իրավունքները մասնակից պետությունների համար սահմանում են զերծ մնալու [forbearance] բացասական պարտականություններ և կատարման [performance] դրական պարտականություններ¹⁵⁷:

¹⁵⁰ Տե՛ս, օրինակ, թիվ 20 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 14, որը վերաբերում է հոդված 7-ի խախտման մասին պնդումները հետաքննելու պարտականությանը [9.111]:

¹⁵¹ Տե՛ս, օրինակ, նույնը, պարբ. 11 [9.103]:

¹⁵² Տե՛ս, օրինակ, նույնը, պարբ. 10 [9.102]:

¹⁵³ Տե՛ս, օրինակ, Եզրափակիչ դիտարկումներ Հունգարիայի վերաբերյալ (1994) UN doc. CCPR/C/79/Add. 22, պարբ. 11: Եզրափակիչ դիտարկումներ Էկվադորի վերաբերյալ (1998) UN doc. CCPR/C/79/Add. 92, պարբ. 21:

¹⁵⁴ Տե՛ս [24.51-24.52]:

¹⁵⁵ Տե՛ս, ընդհանրապես, Աբուտ, վերը, ծնթ. 149:

¹⁵⁶ Տե՛ս թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, հոդված 6-ի վերաբերյալ, պարբ. 5, այստեղ՝ [8.45]:

¹⁵⁷ Նովակ [Nowak], վերը, ծնթ. 22, էջ xviii:

ՈՒՂԱՅԱՅԱՑ ԵՎ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1.76Ա] ՔՔԻՄԴ-ի իրավունքները պետք է առավել ակներև դատաքննելի լինեն, և պետք է պետության ներսում ունեցած իրավասությունների սահմաններում պետությունների դեմ պաշտպանության միջոցներ գոյություն ունենան. դա հայտնի է որպես ՔՔԻՄԴ-ի *ուղղահայաց* իրականացում: Պետությունն անմիջականորեն պատասխանատու է իր իշխանությունների գործողությունների համար, ինչպիսիք են իր ոստիկանությունը, բանտային համակարգը, բանակը, քաղաքացիական ծառայողները, օրենսդիրները և արդարատության համակարգի աշխատակիցները: «*Եգատեսվարա Սարման ընդդեմ Շրի Լանկայի*» (*Jegatheeswara Sarma v Sri Lanka, 950/00*) գործում բողոքը վերաբերում էր հեղինակի որդու անհետացմանը: Մասնակից պետությունն ընդունել էր, որ անհետացման պատասխանատվությունը կրում է կապրալ Սարատը՝ Շրի Լանկայի բանակի սպաներից մեկը: Այնուամենայնիվ մասնակից պետությունը պնդում էր, որ կապրալ Սարատը, առևանգելով դիմողի որդուն, գործել է իր իրավասություններից դուրս՝ առանց մասնակից պետության գիտության: Մինչդեռ բողոքի հեղինակը պնդում էր, որ անհետացումը բանակի համակարգային քաղաքականության մաս է կազմում: ՄԻԿ-ը հրաժարվեց որոշում կայացնել երկու փաստական պատճառաբանությունների միջև՝ նշելով.

¶ 9.2. Ինչ վերաբերում է բողոքի հեղինակի պնդմանը՝ կապված իր որդու անհետացման հետ, կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը չի ժխտել, որ հեղինակի որդին 1990 թ. հունիսի 23-ին առևանգվել է Շրի Լանկայի բանակի սպայի կողմից և դրանից հետո չի հայտնաբերվել: Կոմիտեն համարում է, որ տվյալ դեպքում պետության պատասխանատվությունը որոշելիս նշանակություն չունի, որ սպան, որին վերագրվում է անհետացումը, գործել է *ուլտրա վիրեն*^{*}, կամ որ վերադաս սպաները տեղյակ չեն եղել սպայի գործողություններին: Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ տվյալ հանգամանքներում մասնակից պետությունը պատասխանատու է բողոքի հեղինակի որդու անհետացման համար:

ՄԻԿ-ի որոշումը միջազգայնորեն ապօրինի համարվող գործողությունների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ Միջազգային իրավունքի հանձնաժողովի հոդվածների նախագծում տրված մոտեցման հայելային արտացոլումն է: Հոդվածների այդ նախագծի 7-րդ հոդվածում նշվում է¹⁵⁸.

Պետության մարմնի կամ պետական իշխանության տարրեր իրականացնելու լիազորություն ունեցող անձի կամ միավորի գործողությունները, համաձայն միջազգային իրավունքի, համարվում են պետության գործողություններ, եթե այդ մարմինը, անձը կամ միավորը գործում է այդ կարգավիճակով, եթե նույնիսկ գերազանցում է իր լիազորությունները կամ հակառակվում է աշխատակարգերին:

[1.77] Պետությունը ՔՔԻՄԴ-ի իրավունքները պաշտպանելու և դրանցից օգտվելն ապահովելու իր պարտականությունն իրականացնելիս ունի նաև դրական պարտականություն, այն է՝ ոչ պետական միավորների կամ հաստատությունների համար սահմանել այլոց իրավունքները չխախտելու պարտավորություններ. սա հայտնի է որպես դաշնագրի *հորիզոնական* իրականացում: Այդպիսով, ՔՔԻՄԴ-ի վավերացումը նշանակում է, որ պետությունը պետք է սահմանափակի անձանց որոշ ազատություններ, ինչը կարող է անտրամաբանական թվալ ՔՔԻՄԴ-ի արևմտյան ազատական արմատների առումով¹⁵⁹: Համենայն դեպս, ՔՔԻՄԴ-ով պետության «հորիզոնական» պարտավորությունների աստիճանը շատ ավելի անորոշ է, քան «ուղղահայաց» պարտավորությունների աստիճանը, քանի որ հորիզոնականությունը մարդու իրավունքների միջազգային օրենսդրության համեմատաբար նոր և, հետևաբար, թերզարգացած ոլորտ է: Պետության հորիզոնական պարտավորությունները չեն կարող լինել այնքան խիստ, որքան ուղղահայաց պարտավորությունները. չի կարելի ակնկալել, որ պետությունը մասնավոր անձանց նկատմամբ ունենա վերահսկողության միևնույն աստիճանը, ինչ իր իսկ ծառայողների դեպքում, որպեսզի ոտնձգություն չկատարի այդ անձանց ազատությունների նկատմամբ:

* *ultra vires* - իր իրավասություններից դուրս (*լատ., ծան. թարգմ.*):

¹⁵⁸ Միջազգային իրավունքի հանձնաժողովի 53-րդ նստաշրջանի հաշվետվություն (2001). տես <http://untreaty.un.org/ilc/reports/2001/2001report.htm> (անգլերեն բնագրում նշված հղումն այլևս չի գործում, *ծան. թարգմ.*):

¹⁵⁹ Յոգեֆ, տես վերը, ծմբ. 42, 74-5: Այնուամենայնիվ, նկատի առեք, որ վաղ շրջանի բնական իրավունքների տեսությունները նախատեսում էին ազատությունների կրճատում, որպեսզի կանխվեր այլոց հասցվող վնասը [1.05]:

[1.78] *Վելասկես-Ռոդրիգեսի գործով (Velasquez-Rodriguez Case)* Միջամերիկյան դատարանը խոսեց Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայով պետության հորիզոնական պարտավորությունների մասին¹⁶⁰։

¶ 172. Ապօրինի գործողությունը, որը խախտում է մարդու իրավունքները և սկզբնապես ուղղակիորեն վերագրելի չէ պետությանը (օրինակ՝ գործողություն կատարողը մասնավոր անձ է, կամ պատասխանատու անձը դեռևս չի պարզվել), կարող է հանգեցնել պետության միջազգային պատասխանատվության ոչ թե բուն գործողության, այլ *խախտումը կանխելուն կամ դրան արձագանքելուն ուղղված պատշաճ հոգածություն չցուցաբերելու* պատճառով, ինչպես պահանջվում է դաշնագրով։ [Շեղատառն ավելացված է:]

[1.79] «*Օսմանն ընդդեմ Մ.Թ.-ի*» (*Ali Osman v UK*) գործում մասնակից պետությունը մեղադրվում էր այն բանի համար, որ չէր կարողացել Ալի Օսմանի կյանքը սպանողից՝ Փոլ Փեջիտ-Լյուիսից պաշտպանելու բավարար քայլեր ձեռնարկել։ Հանգեցնել եզրակացության, որ ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածը (կյանքի իրավունքի երաշխավորումը) չի խախտվել, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է.¹⁶¹

¶ 116. Ըստ դատարանի և հաշվի առնելով 2-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքի բնույթը, մի իրավունքի, որը հիմնարար դիրք է զբաղեցնում դաշնագրի կառուցվածքում, դիմողի համար բավական է ցույց տալ, որ իշխանությունները *չեն արել այն ամենը, ինչը ողջամտորեն կարելի էր ակնկալել նրանցից՝ խուսափելու համար կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգից*, որին նրանք տեղյակ են եղել կամ պետք է տեղյակ լինեին։ Սա մի հարց է, որին կարելի է պատասխանել միայն որևէ որոշակի գործի բոլոր հանգամանքների լույսի ներքո։ [Շեղատառն ավելացված է:]

[1.80] *Վելասկեսի* և *Օսմանի* գործերը ցույց են տալիս, որ մարդու իրավունքների համաձայնագրերին մասնակից պետությունները պարտավոր են ողջամիտ քայլեր ձեռնարկել և պատշաճ հոգածություն դրսևորել մասնավոր անձանց կամ միավորների կողմից մարդու իրավունքների խախտումները կանխելու, զսպելու, հետաքննելու և դրանց համար պատժելու ուղղությամբ։ Ի հակադրություն՝ պետությունը խիստ պատասխանատվություն է կրում սեփական ներկայացուցիչների կողմից մարդու իրավունքների ոտնահարումները կանխելու կամ դրանց հետևանքները վերացնելու համար։

[1.81] ՔՔԻՄԴ-ի որոշ իրավունքներ ակնհայտ հորիզոնական գործողություն ունեն։ 20-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է արգելել պատերազմի քարոզչությունը և ազգային, ռասայական կամ կրոնական ատելության սերմանումը¹⁶²։ 6-րդ հոդվածի 1-ին կետը և 17-րդ հոդվածի 2-րդ կետը նշում են, որ, համապատասխանաբար, կյանքի և մասնավոր կյանքի իրավունքները պետք է պաշտպանվեն օրենքով։ Հետևաբար, պետությունը պետք է օրինական պաշտպանություն տրամադրի ոչ պետական միավորների կամ անձանց կողմից մարդասպանությունների և մասնավոր կյանք ներխուժման դեմ¹⁶³։ ՄԱԿ-ի այլ համաձայնագրեր նույնպես նախատեսում են, որ իրենց բովանդակած իրավունքները հորիզոնական ազդեցություն ունեն։ Օրինակ՝ ընդդեմ խտրականության երկու համաձայնագրերն էլ պահանջում են, որ միջոցներ ձեռնարկվեն մասնավոր հատվածում համապատասխանաբար ռասայական և սեռական հիմքով խտրականության դեմ պայքարելու համար¹⁶⁴։ Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին 1990 թ. միջազգային կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ 2003 թ. հուլիսի 1-ին, 16-րդ հոդվածի 2-րդ կետում աներկբայորեն պարտավորեցնում է մասնակից պետություններին «արդյունավետ պաշտպանություն տրամադրել միգրանտ աշխատողներին՝ ընդդեմ ... պետական պաշտոնյաների կամ մասնավոր անձանց, խմբերի կամ հաստատությունների կողմից ... բռնության, մարմնական վնասվածքի, սպառնալիքների և ահաբեկման»։ Վերջապես, ՄԻԿ-ը հաճախ ՔՔԻՄԴ-ի իրավունքների հորիզոնական գործողությունը մատնացույց է արել իր Ընդհանուր մեկնաբանություններում։ Օրինակ՝ 7-րդ և 26-րդ հոդվածների վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանություններում ՄԻԿ-ը շեշտել է, որ մասնակից պետությունները պետք է միջոցներ

¹⁶⁰ Ներկայացված է (1988) 9 «Մարդու իրավունքների օրենսդրության հանդեսում» [Human Rights Law Journal] 212, շեղատառն ավելացված է։

¹⁶¹ 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռ՝ ներկայացված (2000) 29 «Մարդու իրավունքների եվրոպական հանդեսում» [European Human Rights Review] 245, այստեղ՝ 306, շեղատառն ավելացված է։

¹⁶² Տե՛ս ընդհանուր 18-րդ գլուխը։

¹⁶³ Տե՛ս մասնավոր սպանությունների մասին՝ [8.42-8.44] և մասնավոր կյանքի հանդեպ ոչ կառավարական միավորների ոտնձգությունների մասին՝ [16.17-16.19]։

¹⁶⁴ Տե՛ս, օրինակ, ՌԽՎՄԿ հոդված 2(դ) և ԿՆԽՎԿ հոդված 2(ե)։

ծեռնարկեն մասնավոր անձանց կամ միավորների կողմից, համապատասխանաբար, խոշտանգում, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք և խտրականություն բուլանդակող գործողությունների դեմ պայքարելու համար¹⁶⁵:

[1.82] ՄԻԿ-ը ԲԲԻՄԴ-ի իրավունքների հորիզոնական գործողությունը վերլուծելու սահմանափակ հնարավորություն է ունեցել կամընտիր արձագրությամբ վերաբերող գործերում: Կոմիտեի՝ վաղ շրջանում «*Հերցբերգն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Hertzberg v Finland, 61/79*) գործով կայացրած վճիռը ցույց տվեց, որ նման գործողությունը արտահայտման ազատության ոլորտում շատ թույլ է [18.22]: Այնուամենայնիվ, «*Բ.դ.Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*B.d.B. v the Netherlands, 273/88*) գործում ՄԻԿ-ը նշեց, որ մասնակից պետությունը «չի ազատվում դաշնագրով սահմանված պարտավորություններից, երբ իր որոշ գործառույթներ պատվիրակվում են այլ ինքնավար մարմինների կողմից»¹⁶⁶: Համապատասխան «ինքնավար մարմինը» արդյունաբերական խորհուրդ էր՝ բաղկացած գործատուների և աշխատողների կազմակերպությունների ներկայացուցիչներից, որը ոչ մի պաշտոնական կապ չուներ կառավարության հետ¹⁶⁷: Հետագա վճիռները, օրինակ՝ «*Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի*» (*Delgado Paez v Colombia, 195/85*) գործով [18.27]՝ անձի անվտանգության իրավունքի վերաբերյալ, «*Կաբալը և Պասինի Բերտրանն ընդդեմ Ավստրալիայի*» (*Cabal and Pasini Bertran v Australia, 1020/02*) գործով [9.137Ա]՝ մասնավոր բանտում վերաբերմունքի վերաբերյալ, ինչպես նաև «*Լ. Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*L.K. v the Netherlands, ՌԽՎԿ թիվ 4/1991*) գործով [18.52]՝ ռասայական ատելությունն արգելող ՌԽՎՄԿ պարտավորության վերաբերյալ Ռասայական խտրականության վերացման կոմիտեի (ՌԽՎԿ) որոշումը¹⁶⁸ հաստատեցին ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական օրենսդրության հորիզոնական կիրառությունը:

[1.83] ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Վերջերս ՄԻԿ-ը ԲԲԻՄԴ-ի «հորիզոնականության» բնույթի վերաբերյալ մեկնաբանության նախագիծ հրապարակեց:

¶ 7. 2-րդ հոդվածի 1-ին կետի պարտավորություններն ուղղված են պետությանը և, որպես այդպիսին, միջազգային իրավունքի առումով ուղղակի հորիզոնական գործողություն չունեն: Դաշնագիրը չի կարող դիտարկվել որպես ներքին քրեական կամ քաղաքացիական օրենսդրությանը փոխարինող: Այնուամենայնիվ, մասնակից պետությունների՝ դաշնագրի իրավունքներն ապահովելու դրական պարտավորությունները, որոնց մասին խոսվում է 6-րդ պարբերությունում, լիովին կկատարվեն միայն այն դեպքում, եթե անձինք պաշտպանված լինեն ոչ միայն պետության կամ նրա գործակալների կողմից դաշնագրով սահմանված իրավունքների խախտումներից, այլև մասնավոր անձանց կամ միավորների կողմից կատարված գործողություններից, որոնք [նշանակալիորեն] խաթարում են դաշնագրով սահմանված իրավունքներից [դրանց էությունից] օգտվելը: Կարող են լինել իրավիճակներ, երբ դաշնագրով սահմանված իրավունքները չապահովվել, ինչպես պահանջվում է 2-րդ հոդվածով, սկիզբ դնի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքների խախտումների՝ մասնակից պետությունների կողմից [sic] մասնավոր անձանց կամ միավորների նման գործողությունների թույլատրման կամ դրանց առումով համապատասխան միջոցներ չծեռնարկելու կամ նման գործողություններով պատճառված վնասը կանխելու, դրա համար պատժելու, հետաքննելու կամ վերականգնելու համար պատշաճ հոգածություն չցուցաբերելու հետևանքով: Պետություններին հիշեցվում է դրական պարտավորությունների (սահմանված 2-րդ հոդվածով) և խախտման դեպքում արդյունավետ պաշտպանության միջոցներ տրամադրելու անհրաժեշտության (սահմանված 2-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ) միջև առկա փոխհարաբերության մասին: Դաշնագիրը որոշ հոդվածներում նախատեսում է որոշակի ոլորտներ, որտեղ առկա են մասնակից պետությունների՝ մասնավոր անձանց կամ կազմակերպությունների գործողություններին անդրադառնալու դրական պարտավորություններ: Օրինակ՝ 17-րդ հոդվածի՝ մասնավոր կյանքին վերաբերող երաշխիքները պետք է պաշտպանված լինեն օրենքով: 7-րդ հոդվածով նաև ենթադրվում է, որ մասնակից պետությունները պետք է դրական միջոցներ ծեռնարկեն՝ ապահովելու, որ մասնավոր անձինք կամ կազմակերպություններն իրենց իշխանության ներքո գտնվողներին չենթարկեն խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ

¹⁶⁵ Տե՛ս [9.25] և [23.81]:

¹⁶⁶ Պարբ. 6.6-ում. տե՛ս նաև «Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի» (*Lindgren et al v Sweden, 298-99/88*), պարբ. 10.4:

¹⁶⁷ Գործն անընդունելի էր այլ պատճառներով: Տե՛ս նաև «Նահլիկն ընդդեմ Ավստրիայի» (*Nahlik v Austria, 608/95*) գործը, պարբ. 8.2 [23.82]:

¹⁶⁸ ՌԽՎՄԿ 4-րդ հոդվածը մասնակիորեն արտացոլում է ԲԲԻՄԴ-ի 20-րդ հոդվածը. վերջինն ավելի հեռուն է գնում՝ պետություններից պահանջելով, որ արգելեն ազգային կրոնական ատելությունը. տե՛ս ընդհանուր 18-րդ գլուխը:

նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Կյանքի հիմնական կողմերի վրա ազդեցություն ունեցող ոլորտներում, ինչպիսիք են աշխատանքը կամ բնակարանային պայմանները, անհատները պետք է առնվազն պաշտպանված լինեն 26-րդ հոդվածում նշված խտրականության համապատասխան ձևերից¹⁶⁹:

[1.84] ՔՔԻՄԴ-ի իրավունքների մեծ մասից օգտելու հնարավորությունն ամբողջովին կխաթարվեր, եթե պետությունները չունենային մասնավոր հատվածում մարդու իրավունքների ոտնահարումը վերահսկելու պարտավորություններ: Յետևաբար, 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ընդհանուր պարտավորությունը, համաձայն որի՝ պետությունը պետք է «ապահովի» ՔՔԻՄԴ-ի իրավունքները, ենթադրում է անձանց պաշտպանության պարտավորություն՝ այլոց կողմից ՔՔԻՄԴ-ի բոլոր իրավունքների ոտնահարումից¹⁷⁰:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ

[1.85] Թեև ՔՔԻՄԴ-ի իրավունքները, ըստ էության, շնորհվում են անձանց, որոշ քաղաքացիական և քաղաքական իրավունքների ոտնահարումներն այնքան էնդեմիկ են, որ դրանք իրատեսորեն չեն կարող լուծում ստանալ անձնական մակարդակում: Օրինակ՝ համակարգային անհավասարություն կարող է ծագել այնտեղ, որտեղ որոշակի հասարակության ներսում որոշակի խմբեր ճնշվել են դարեր շարունակ: Սակայն դժվար է ապացուցել, որ որևէ մեկը հանդիսանում է «համակարգային անհավասարության» անհատական զոհ¹⁷¹: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների նման համակարգային ոտնահարումներն այնքան էլ հեշտորեն որոշելի կամ շտկելի չեն անհատականացված կամ ընտիր արձանագրության ընթացակարգով:

[1.86] Մարդու իրավունքների համակարգային ոտնահարումների տարածվածությունն ի ցույց է դնում մարդու բոլոր իրավունքները որպես անձնական իրավունքներ ընկալելու վրիպումը: Պետությունների՝ մարդու իրավունքների առումով առավել «համակարգային» որոշ պարտականություններ հայեցակարգային տեսանկյունից ավելի լավ են դիտվում որպես խմբային իրավունքներ: Օրինակ՝ 1-ին հոդվածում նշված ինքնորոշման իրավունքը անտարակույս պատկանում է ժողովուրդներին և փաստորեն չի կարող կիրարկվել հաղորդման անհատական մեխանիզմով¹⁷²: Այդ առումով Ընդհանուր մեկնաբանությունները և Եզրափակիչ դիտարկումները տալիս են ՔՔԻՄԴ-ի իրավունքների կարևոր կոնսենսուսային մեկնաբանություններ՝ հատկապես մակրոմակարդակում առկա բարդ խնդիրների վերաբերյալ:

[1.87] ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության մախագծում ՄԻԿ-ը նշում է այն բազմապիսի արտաօրինական (օրենքով չնախատեսված) ճանապարհները, որոնցով կարելի է դիմագրավել քաղաքացիական կամ քաղաքական իրավունքների համակարգային ոտնահարմանը:

¶ 13. Մասնակից պետություններին հիշեցվում է, որ դաշնագրի իրավունքների արդյունավետ պաշտպանությանը կարելի է հասնել տարատեսակ միջոցների կիրառությամբ, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում օրենսդրական, վարչական և կրթական քաղաքականություններով ու ծրագրերով: Ի լրումն՝ կոմիտեն կարծում է, որ դաշնագրի վերաբերյալ իրազեկության աստիճանը բարձրացնելը կարևոր է ոչ միայն պետական պաշտոնյաների և պետության գործակալների, այլև առհասարակ բնակչության շրջանում:

¹⁶⁹ Տե՛ս նաև «Կեշավիեն ընդդեմ Կանադայի» (Keshavjee v Canada, 949/00), պարբ. 4.2 [4.16]:

¹⁷⁰ Տե՛ս նաև A. Clapham, *Human Rights in the Private Sphere* (Clarendon Press, Oxford, 1993), 107-12:

¹⁷¹ Տե՛ս [23.87] և հաջորդը:

¹⁷² Տե՛ս, օրինակ, «Կիտոկն ընդդեմ Շվեդիայի» (Kitok v Sweden, 197/85), այս պարբ. [7.22]:

Մշակութային ռեկառուկցիոն և քաղաքացիական ու քաղաքական իրավունքները

[1.88] Դրանց ակնհայտ արևմտյան արմատների պարագայում զարմանալի չէ, որ քաղաքացիական և քաղաքական «միջազգային» իրավունքների գաղափարի վարկը կասկածի տակ է առնվել ոչ արևմտյան ազգերի կողմից: Թերևս արևմտյան ազգերի այն պնդումը, որ մյուս ազգերը համապատասխանեն քաղաքացիական և քաղաքական իրավունքների չափորոշիչներին, մշակութային առումով կայսերապաշտական կարելի է համարել: Ի պատասխան քաղաքացիական և քաղաքական իրավունքների դեմ բերված «մշակութային կայսերապաշտության» փաստարկին՝ առաջին հերթին մատնացույց է արվում այն հանգամանքը, որ ամեն տեսակ մշակույթներ և կրոններ ներկայացնող երկրների մեծ մասն ազատորեն վավերացրել է ՔՔԻՄԴ-ը՝ ի ցույց դնելով դրանում արտահայտված ընդգրկումն սկզբունքների պատշաճության վերաբերյալ միջազգային կոնսենսուսի խելամիտ աստիճան: Սակայն կան նաև նշանակալի բացականքներ՝ ներառյալ պետություններ, որոնք քաղաքացիական և քաղաքական իրավունքների առումով մեծապես սատարել են մշակութային ռեկառուկցիոն գաղափարը, ինչպիսիք են Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը,¹⁷³ Մալայզիան և Սաուդյան Արաբիան: Ավելին՝ պետությունների միջև զգալի տարբերություններ կան ՔՔԻՄԴ-ի իրավունքների մեկնաբանության հարցում: Հետևաբար կարևոր է քննել այն փաստարկներից մի քանիսը, համաձայն որոնց՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքները, ըստ էության, արևմտյան կառույցներ են, որոնք շատ քիչ կապ ունեն ոչ արևմտյան աշխարհի հետ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

[1.89] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների, ներառյալ ՔՔԻՄԴ-ում ներառվածների մեծապես անհատականացված նրբերանգը չի համապատասխանում որոշ ոչ արևմտյան պետություններում առկա՝ իրավունքների ավելի հավաքական հասկացություններին¹⁷⁴: Սակայն կարելի է նշել, որ ՔՔԻՄԴ-ի 1-ին հոդվածով ճանաչվում է հավաքական անձնակարևոր իրավունքը՝ Ժողովրդների ինքնորոշման իրավունքը: Ավելին՝ ՔՔԻՄԴ-ի որոշ իրավունքներ անհրաժեշտաբար նախատեսում են, որ դրանցից օգտվեն մարդկանց խմբեր, ինչպես օրինակ՝ 22-րդ հոդվածով սահմանված միավորումներ կազմելու ազատության իրավունքը կամ 27-րդ հոդվածում տրված փոքրամասնությունների իրավունքների երաշխիքը¹⁷⁵: Ավելին՝ ՔՔԻՄԴ-ում ներառված իրավունքները չափավորում են իրավունքների վաղ շրջանի արևմտյան որոշ օրինագծերում տեղ գտած անհատապաշտությունը: Օրինակ՝ ԱՄՆ Մարդու իրավունքների օրինադրի առաջին փոփոխությունը առարկություն չհանդուրժող ձևակերպումներով հռչակում է, որ «Կոնգրեսը չպետք է ստեղծի որևէ օրենք, որը վերաբերում է կրոնի հիմնադրմանը կամ արգելում է դրա ազատ դավանումը կամ նվազեցնում խոսքի ազատությունը ...»: Ի հակադրություն՝ ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածում տեղ գտած արտահայտման ազատության երաշխիքը¹⁷⁶ ենթակա է սահմանափակումների, «որոնք, սակայն, պետք է սահմանվեն միայն օրենքով և լինեն անհրաժեշտ»՝ հարգելու համար այլոց հեղինակությունը, պաշտպանելու համար պետական անվտանգությունը, հասարակական կարգը, բնակչության առողջությունը կամ բարոյականությունը: ՔՔԻՄԴ-ը, իր իրավունքների նկատմամբ նախատեսելով բազմաթիվ թույլատրելի սահմանափակումներ, արտոնում է շատ դեպքեր, երբ հավաքական իրավունքները և թերևս հասարակության մշակութային կարիքները կարող են «կտրել» անձնական ազատությունները¹⁷⁷:

¹⁷³ ՉԺՀ-ն ժառանգել է Միացյալ Թագավորության ՔՔԻՄԴ-ի պարտավորությունները Հոնկոնգի վերաբերյալ, և Պորտուգալիայի ՔՔԻՄԴ-ի պարտավորությունները՝ Մակաոյի վերաբերյալ. տե՛ս [25.47]:

¹⁷⁴ F. Jhabvala, 'The International Covenant on Civil and Political Rights as a Vehicle for the Global Promotion and Protection of Human Rights' (1985) 15 *Israel Yearbook on Human Rights* 184, 198:

¹⁷⁵ Տե՛ս թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության նախագիծ, պարբ. 8:

¹⁷⁶ «Արտահայտման»-ն ավելի ճշգրտորեն է արտահայտում իրավունքի շրջանակները, քան «խոսք»-ը՝ հստակորեն ներառելով ոչ բանավոր հաղորդակցությունը: Անշուշտ, ԱՄՆ երաշխիքը ծածկում է ոչ բանավոր «խոսքը»:

¹⁷⁷ Դոնոհո, վերը, ծնթ. 41, 378: Տես նաև Յոզեֆ, վերը, ծնթ. 42, 68:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1.90] Սևեռումը անձանց «իրավունքների» վրա սուր կերպով հակադրվում է ոչ արևմտյան ավանդական սևեռմանը անձանց կողմից իրենց համայնքների հանդեպ ունեցած «պարտականությունների» վրա: Այնուամենայնիվ, իրավունքների իր տպավորիչ վերլուծության մեջ Յոհն Բեյլը համոզիչ կերպով փաստարկում է, որ իրավունքները պարտականությունների իրավական հարաբերակցությունն են¹⁷⁸: Այսինքն՝ երբ մի անձի տրվում են իրավունքներ, մյուսին տրվում են պարտականություններ՝ հարգելու այդ իրավունքները: Հետևաբար պարտականությունները ստեղծում են իրավունքներ և հակառակը, և կարող են դիտվել որպես միևնույն մետադադրամի երկու կողմ: Այդպիսով, իրավունքներ-պարտականություններ մշակութային դիֆուսիզմի (երկատվածությունը) կարող է ընդամենը եզրաքանակալան լինել¹⁷⁹: Իհարկե, արևմտյան ազատական տեսության մեջ, քաղաքացիական և քաղաքական իրավունքների դասական հայեցակարգի համաձայն, դրանք պարտականություններ են սահմանում կառավարությունների, ոչ թե այլ անձանց համար: Այնուամենայնիվ, ինչպես նկարագրված է վերը [1.77], ՔՔԻՄԴ-ը մեկնաբանվել է այնպես, որ պետություններից պահանջում է իրենց իրավագործության ներքո գտնվող անհատների և այլ մասնավոր միավորների համար սահմանել այլոց իրավունքները հարգելու պարտականություններ¹⁸⁰: Այդ առումով կարելի է նշել ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածը, որը հստակ սահմանում է, որ արտահայտման ազատության իրավունքի իրացումը «հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության»:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

[1.91] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների հետագա քննադատությունը վերաբերում է մարդու իրավունքների ժամանակակից համակարգում դրանց կասկածի չենթարկվող գերակայությանը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների նկատմամբ, որոնք ընկալվում են որպես առավել մտահոգիչ նվազ զարգացած ոչ արևմտյան աշխարհի համար¹⁸¹: Իրոք, գրեթե կասկած չկա, որ որոշ արևմտյան ազգեր, հատկապես Միացյալ Նահանգները, բարեհաճ չեն տնտեսական, սոցիալական և մշակութային «իրավունքների» գաղափարի հանդեպ¹⁸²: Մյուս կողմից՝ տնտեսական և սոցիալական կարևոր իրավունքները երաշխավորված են Եվրոպական Միության շրջանակներում¹⁸³: Վերջին հաշվով, «գերակայության» փաստարկը, ըստ էության, սատարում է իրավունքների երկու համախմբերի ճանաչումը՝ որպես իրապես «անբաժանելի և փոխկախյալ ու փոխկապակցված»¹⁸⁴, հանգեցնելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հզորացմանը, ոչ թե քաղաքացիական և քաղաքական իրավունքների անհրաժեշտ թուլացմանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵԼՅԱՏԻՎԻԶՄ

[1.92] Հարակից փաստարկներից է այն, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանությունը չի համատեղվում տնտեսական, սոցիալական և մշակութային փաստարկների պաշտպանության հետ: Այս փաստարկի համաձայն՝ դասական քաղաքական իրավունքները, ինչպիսիք են ընտրելու և քաղաքական մասնակցության ու արտահայտման իրավունքները, հավաքների ու միավորումներ կազմելու ազատությունը¹⁸⁵, տեղին չեն խոցելի, զարգացող տնտեսություն ունեցող երկրներում: Նշվում է, որ նման իրավունքների կիրարկումը խաթարում և մասնատում է երկիրը, երբ տնտեսության

¹⁷⁸ Տե՛ս W.N. Hohfeld, 'Some Fundamental Legal Conceptions as Applied to Judicial Reasoning' (1913) 23 *Yale LJ* 16:

¹⁷⁹ Տե՛ս նաև M. Perry, *The Idea of Human Rights* (OUP, Oxford, 1998), 51:

¹⁸⁰ Տե՛ս նաև Լորեն, վերը, ծմբ. 17, գլուխ I:

¹⁸¹ Տե՛ս O. Yasuaki, 'Toward an Inter-Civilizational Approach to Human Rights', in J. Bauer and Bell (eds), *The East Asian Challenge for Human Rights* (CUP, Cambridge, 1999), at 112-18:

¹⁸² Ալսթոն, վերը, ծմբ. 14, 372-7:

¹⁸³ Տե՛ս, ընդհանուր առմամբ, P. Alston, M. Bustelo, and J. Heenan (eds), *The EU and Human Rights* (OUP, Oxford, 1999), Chaps գլուխ 13-14:

¹⁸⁴ Տե՛ս Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր, 1993, պարբ. 5:

¹⁸⁵ Իհարկե, արտահայտման, հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքները կիրառելի են նաև ոչ քաղաքական համատեքստում:

հստակ ուղղորդումն ապահովելու համար անհրաժեշտ է ուժեղ ղեկավարություն՝ ամենավիճելի տարբերակով՝ մեկ կուսակցությամբ քաղաքական համակարգով: Նշվում է, որ նման պետություններում ազգի համար առաջնահերթությունը տնտեսական զարգացումն է. հետևաբար, քաղաքացիական և քաղաքական իրավունքների «լիարժեք» պաշտպանությունը պետք է հետաձգվի մինչև տնտեսական զարգացման բավարար աստիճանի հասնելը¹⁸⁶: Այդպիսով, այս փաստարկի համաձայն, քաղաքացիական և քաղաքական իրավունքները տնտեսապես հարաբերական (ռելյատիվ) են, այն իմաստով, որ դրանց պաշտպանությունը պետք է տարբերվի՝ կախված պետության տնտեսական կարողություններից:

[1.93] Մինչդեռ նկատվել է, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքների հանդեպ հարգանքը պետության հաշվետվողականության բարձր մակարդակ է ապահովում և, հետևաբար, գործում է որպես տեղական (էնդեմիկ) կոռուպցիայի զարգացման էական խոչընդոտ. պաշտոնական կոռուպցիան տնտեսական բնականոն զարգացմանը սպառնացող վատթարագույն վտանգներից է: Նույնիսկ կոռուպցիայի բացակայության պարագայում քաղաքացիական և քաղաքական ազատությունները կարող են ապահովել, որ կառավարությունը և ժողովուրդը տեսակետների մեծ բազմազանության հաղորդակից լինի և այդպիսով զուրկ չմնա «լավ» գաղափարներից օգտվելու հնարավորությունից¹⁸⁷: Ավելին՝ բերվել են անհերքելի փաստարկներ առ այն, որ զարգացումը չի կարող դիտվել որպես բացառապես տնտեսական խնդիր, որպեսզի հասարակության առավել խոցելի հատվածը և նույնիսկ մեծամասնությունը հետ չմնան: Հասարակության ներսում իրոք արգասաբեր զարգացումը ենթադրում է քաղաքացիական, քաղաքական և սոցիալական զարգացում, և ոչ թե սոսկ տնտեսական զարգացում¹⁸⁸: Վերջապես, ՔՔԻՄԴ-ի մասնակից ոչ լիարժեք զարգացած պետությունները ազատորեն համաձայնել են 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորությանը, այն է՝ անհապաղ երաշխավորել նրանում ներառված իրավունքները, ոչ թե հետաձգել դրանք մինչև զարգացման բավարար աստիճանի հասնելը:

ՔՔԻՄԴ-Ը ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ/ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵԼՅԱՏԻՎԻԶՄԸ

[1.94] ՔՔԻՄԴ-ը հիմնականում շարադրված է համընդհանրական (ունիվերսալիստական) լեզվով: Օրինակ՝ նախաբանում օգտագործվում են «ներհատուկ արժանապատվության» և «մարդկային ընտանիքի բոլոր անդամների[ն] ... հավասար ու անկապտելի իրավունքների» արտահայտությունները: Նման ձևակերպումները տարբեր իրավունքների հասկացություններ չեն ներմուծում տարբեր մշակույթների անդամների համար: Ավելին, մասնակից պետություններն ազատորեն վավերացրել են դաշնագիրը: Նման միահամուռ (կոնսենսուալ) վավերացումից հետո թերևս համոզիչ չի հնչում, երբ պետությունը որոշ իրավունքների առումով մշակութային բացառություն է պահանջում: Վերջապես, 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորության անմիջականությունը, հատկապես երբ համեմատում ենք ՏՄՄԻՄԴ-ի պարտավորության աստիճանականության հետ, կարծես թե հաստատում է, որ ՔՔԻՄԴ-ի իրականացումը չի կարող «հետաձգվել» մինչև տնտեսական պայմանների բարելավումը¹⁸⁹:

[1.95] Սակայն ՔՔԻՄԴ-ն իսկապես որոշ չափով ծառայում է մշակութային տարբերություններին: Նախ՝ պետությունները կարող են համապատասխան վերապահումներ մտցնել, եթե հրաժարվում են իրականացնել որոշակի իրավունքներ¹⁹⁰: Թեպետ ՄԻԿ-ն իր թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության մեջ փորձել է խստորեն սահմանափակել պետության վերապահման իրավունքները: ՄԻԿ-ը թվարկել է մի շարք իրավունքներ, որոնց նկատմամբ չի կարող որևէ վերապահում թույլատրվել, ներառյալ որոշ իրավունքներ, որոնք հատվում են մշակութային փաստարկի հետ, ինչպիսիք են մտքի, խղճի և կրոնի ազատությունը

¹⁸⁶ Տե՛ս, օրինակ՝ A. Sen, 'Critical Perspectives on the "Asian Values" Debate', in Bauer and Bell (eds), տե՛ս վերը, ծմբ. 181, բանավեճի նկարագրությունն այստեղ՝ 90-1:

¹⁸⁷ Օրինակ՝ Սենը նշում է, որ Չինաստանում «Մեծ ցատկ առաջ»-ի քաղաքականությունը չկասեցվեց երեք տարի, որի ընթացքում միլիոնավոր մարդիկ մահացան: «Ոչ մի ժողովրդավար երկիր, որտեղ ընդդիմադիր կուսակցություններ և ազատ մամուլ կան, չէր կարող թույլ տալ, որ նման բան տեղի ունենար»։ Նույնը, 93:

¹⁸⁸ Տե՛ս, ընդհանուր առմամբ, A. Sen, *Development as Freedom* (OUP, Oxford, 2001): Տե՛ս նաև Զարգացման իրավունքի մասին հռչակագիր, 1986:

¹⁸⁹ Այնուամենայնիվ, ուշադրություն դարձրեք հոդված 23(4)-ում առկա ակնհայտ աստիճանական պարտավորությանը. տե՛ս [20.41]:

¹⁹⁰ Դոմոհո, վերը, ծմբ. 41, 364:

(հոդված 18(1)): Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության մեջ իրոք բավականաչափ հակասականություն է դրսևորվել, թեև նրա կապակցությամբ հատկապես «մշակութային» առարկություններ չեն եղել¹⁹¹:

[1.96] Երկրորդ՝ ՔՔԻՄԴ-ի որոշ իրավունքների բազմաթիվ սահմանափակումների գոյությունը այդ իրավունքների մեկնաբանության մեջ որոշ տեղ է թողնում մշակութային բազմազանության համար: Օրինակ՝ մի շարք իրավունքներ կարող են բացահայտ սահմանափակվել «հանրային բարոյականությունը» պաշտպանելուն միտված համաչափ միջոցներով, ինչն իր բնույթով ռեյատիվիստական հայեցակարգ է, որն իր կիրառության մեջ անխուսափելիորեն տարբեր երկրներում տարբեր է¹⁹²: Իրոք, ՔՔԻՄԴ-ի սահմանափակումներում տեղ գտած անորոշությունը ճկունություն է մտցնում մարդու իրավունքների մեկնաբանման մեջ և գաղափարաբանական ու մշակութային բանավեճ ծնում մարդու իրավունքների երաշխիքների շուրջ¹⁹³:

[1.97] Քանի որ ՄԻԿ-ը բազմազգ անդամակցություն ունի, որոնք ներկայացնում են «քաղաքակրթության և ... հիմնական իրավական համակարգերի ... տարբեր ձևեր»¹⁹⁴, և աշխարհի բոլոր հատվածները ներկայացնող պետությունների նկատմամբ իրավասություն ունի, ՔՔԻՄԴ-ի իր մեկնաբանությունը պետք է պարարտ հող ապահովի մարդու իրավունքների շուրջ մշակութային բախումները հատկորոշելու և թերևս լուծելու համար:

[1.98] «*Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի*» (*Toonen v Australia*) ԿԱ գործում (488/92) ՄԻԿ-ը որոշեց, որ Թասմանիայում գործող հակասոդոմական օրենքները ՔՔԻՄԴ-ի 17-րդ հոդվածի՝ մասնավոր կյանքի իրավունքի խախտում են: Իր միաձայն որոշումը կայացնելիս ՄԻԿ-ն անտարակույս ազդվել էր այն փաստից, որ ավստրալիական մյուս բոլոր նահանգները վերացրել էին նման օրենքները, և Թասմանիայում այդ օրենքների տեղին լինելու վերաբերյալ «կոնսենսուս չկար»¹⁹⁵: Այս որոշումը ցույց տվեց, որ հնարավոր է ՔՔԻՄԴ-ը մեկնաբանել ռեյատիվիստական կերպով. թերևս համանման օրենքները՝ ընդունված այլ երկրներում, որոնք համեմատելի չեն արվամոլության նկատմամբ հանդուրժողականության և այն ընդունելու տեսանկյունից, հաղթահարելի են համանման մարտահրավերը¹⁹⁶: Ի լրումն՝ «*Աունեբրուդի-Ցիֆրան և այլք ընդդեմ Մավրիկիոսի*» (*Aumeeruddy-Cziffra et al v Mauritius*) (35/78) գործում («*Մավրիկիացի կանանց գործ*») ՔՔԻՄԴ-ի 23-րդ հոդվածի առնչությամբ, որը երաշխավորում է ընտանիքի պաշտպանության իրավունքները, ՄԻԿ-ը նշում է.

¶ 9.2(բ) 2 (ii) 1. Կոմիտեն այն կարծիքին է, որ այն իրավական պաշտպանությունը և միջոցները, որ հասարակությունը կամ պետությունը կարող են հատկացնել ընտանիքին, կարող են երկրից երկիր տարբերվել և կախված լինել տարբեր սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային պայմաններից ու ավանդույթներից:

Այդպիսով, եղել են որոշ նշաններ, որ ՄԻԿ-ը պատրաստ է ընդունելու ՔՔԻՄԴ-ի իրավունքների ռեյատիվիստական մեկնաբանությունը:

[1.99] Այնուամենայնիվ, 1994 թ. *Տոոնենի* գործով վճռից ի վեր ՄԻԿ-ը հստակորեն ցուցադրել է իր բացասական մոտեցումը մշակութային հարաբերականության (ռեյատիվիստական) փաստարկների նկատմամբ: Օրինակ՝ կոմիտեն հետևողականորեն քննադատել է հակաարվամոլային օրենքները մեծ թվով մասնակից պետություններում, որոնց բնակչությունն ավանդաբար ավելի հոմոֆոբ է, քան Ավստրալիայինը [16.38]: Կոմիտեն նաև օգտագործել է առիթը՝ դատապարտելու բազմաթիվ սովորույթներ, որոնք հնարավոր է պաշտպանել որպես մշակութային ավանդույթներ, ինչպես օրինակ՝ կանանց սեռական օրգանների խեղումը [9.39] և պոլիգամիան Աֆրիկայում [20.38], իսլամական օրենքները ուրացման [17.06] և աբորտներն արգելելու վերաբերյալ¹⁹⁷:

¹⁹¹ Տե՛ս ընդհանուր 25-րդ գլուխը:

¹⁹² Տե՛ս, օրինակ՝ «Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի» (*Delgado Páez v Colombia*, 195/85), այստեղ՝ [18.27], և «Ջերգ-բերգը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի» (*Hertzberg et al v Finland*, 61/79) այստեղ՝ [18.22]: Տե՛ս նաև «Հանդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Handyside v UK*), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1976 թ. դեկտեմբերի 7-ի վճիռ, արձանագրված այստեղ՝ (1979) 1 EHRR 737, այստեղ՝ պարբ. 48:

¹⁹³ Տե՛ս Դոնոհո, վերը, ծնթ. 41, այստեղ՝ 370 և 382-4:

¹⁹⁴ ՔՔԻՄԴ-ի հոդվ. 31:

¹⁹⁵ Պարբ. 8.6 [16.36]:

¹⁹⁶ Ս. Յոզեֆ, վերը, ծնթ. 96, 407-8:

¹⁹⁷ Տե՛ս [8.55] և հաջորդը:

[1.100]**ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Տղամարդկանց և կանանց իրավահավասարության վերաբերյալ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը նշում է հետևյալը.

¶ 5. Ողջ աշխարհում կանանց իրավունքների իրացման առումով անհավասարությունը մեծապես պայմանավորված է ավանդույթով, պատմությամբ և մշակույթով, ներառյալ կրոնական դիրքորոշումը ...: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ ավանդական, պատմական, կրոնական կամ մշակութային դիրքորոշումները չօգտագործվեն կանանց՝ օրենքի առջև հավասար լինելու և դաշնագրի իրավունքներից հավասարապես օգտվելու իրավունքի խախտումներն արդարացնելու համար: Մասնակից պետությունները պետք է համապատասխան տեղեկություններ տրամադրեն ավանդույթների, պատմության, մշակութային սովորույթների և կրոնական դիրքորոշումների այն կողմերի վերաբերյալ, որոնք վտանգում են կամ կարող են վտանգել համապատասխանությունը 3-րդ հոդվածին, և նշեն, թե ինչ միջոցներ են ձեռնարկել կամ նախատեսում են ձեռնարկել՝ այդ գործոնները հաղթահարելու համար:

Ջարմանալի չէ, որ ՄԻԿ-ի կողմից մշակութային ռեյատիվիզմի ամենախիստ մերժումը տեղ գտավ կանանց իրավունքների վերաբերյալ կոնսենսուսով ընդունված մեկնաբանության մեջ, հարց, որը սուր մշակութային տարաձայնությունների տեղիք է տալիս:

[1.101] Նմանապես, ՄԻԿ-ը, ընդհանուր առմամբ, չի ընդունել տնտեսական ռեյատիվիզմի փաստարկները: Օրինակ՝ «Մուկոնգն ընդդեմ Կամերունի» (*Mukong v Cameroon, 458/91*) գործում կոմիտեն հրաժարվեց ընդունել, որ տնտեսական դժվարությունները և բյուջետային սահմանափակումները կարող են պետության համար պատասխանատվությունից խուսափելու հիմք լինել այն ահավոր բանտային պայմանների համար, որոնց զոհն էր դարձել բողոքի հեղինակը [9.33]: «Լուբուտոն ընդդեմ Ջամբիայի» (*Lubuto v Zambia, 390/90*) գործում տնտեսական դժվարությունները չէին կարող արդարացնել բողոքի հեղինակի դատապարտումը բողոքարկելու գործընթացում տեղ գտած ուշացումը [14.95]¹⁹⁸: Վերջապես, 10-րդ - հոդվածի վերաբերյալ իր թիվ 21 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը նշում է, որ ազատագրվածների արժանապատվության հանդեպ հարգանքով վերաբերվելու պարտավորությունը «չի կարող կախված լինել մասնակից պետությունում առկա նյութական ռեսուրսներից»¹⁹⁹: Անբավարար զարգացածությունը, այդպիսով, չի կարող արդարացնել գերբնականումները բանտերում կամ ազատագրվածներին բավարար (աղեկվատ) ռեսուրսներ չտրամադրելը: Մյուս կողմից՝ «Մունեբերուդի-Ցիֆրան և այլք ընդդեմ Մավրիկիոսի» (35/78) գործում ՄԻԿ-ն իրոք նշում է, որ 23-րդ հոդվածով պահանջվող ընտանիքների պաշտպանության աստիճանը կարող է տատանվել՝ կախված «տարբեր սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային պայմաններից և ավանդույթներից»²⁰⁰: Սա կարող է նշանակել, որ տնտեսական ռեյատիվիզմը, թերևս ՔՔԻՄԴ-ում եզակի կարգով, իսկապես կիրառելի է 23-րդ հոդվածով սահմանված իրավունքներից օգտվելու իրավունքի աստիճանի հարցում: Սակայն տնտեսական ռեյատիվիզմը, ի տարբերություն ՏՄՄԻՄԴ-ում առկա իրավունքների, հիմնականում կիրառելի չէ ՔՔԻՄԴ-ի իրավունքների նկատմամբ²⁰¹:

[1.102] Այդպիսով, ստացվում է, որ ՄԻԿ-ը հազվադեպ է «մշակույթը» կամ խոցելի տնտեսությունը դիտում որպես ՔՔԻՄԴ-ով ստանձնած պարտավորությունների մեղմացման հիմք: Եվ իրոք, ՄԻԿ-ը թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության նախագծում նշում է.

¶ 12. 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված պահանջը, որը վերաբերում է դաշնագրի իրավունքների իրականացմանն ուղղված քայլեր ձեռնարկելուն, ամբողջական է և ամփոփական ուժ ունի: Սույն պարտավորությունը չկատարելը չի կարող արդարացվել՝ հղում անելով պետության ներսում առկա սոցիալական, մշակութային կամ տնտեսական հանգամանքներին:

¹⁹⁸ Տե՛ս նաև ՄԻԿ-ի որոշումը «Ֆիլաստրեն և Բիզուարն ընդդեմ Բոլիվիայի» (*Fillastre and Bizouarn v Bolivia, 336/88*) գործի վերաբերյալ [11.36]:

¹⁹⁹ Տե՛ս թիվ 21 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 4 [9.138]:

²⁰⁰ Պարբ. 9.2. (բ) 2 (ii) 1. տե՛ս [20.05]:

²⁰¹ ՏՄՄԻՄԴ, հոդված 2(1)-ի՝ աստիճանական պարտավորությանը վերաբերող դրույթում լիովին ընդունում է, որ համեմատաբար աղքատ երկրները չեն կարող երաշխավորել ՏՄՄԻՄԴ-ի իրավունքները մույն չափով, ինչ համեմատաբար հարուստ երկրները:

[1.103] Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը նաև գիտակցում է, որ ավանդական սովորույթների փոփոխությունն իրականում չի կարող տեղի ունենալ մեկ գիշերվա ընթացքում, որքան էլ դաշնագրում տեղ գտած պարտավորությունները, ըստ 2-րդ հոդվածի 1-ին կետի, անվերապահորեն անմիջական են: Օրինակ՝ Կամերունի վերաբերյալ, համակարգային սեռական խտրականության առնչությամբ, ՄԻԿ-ը նշել է²⁰²:

¶ 25. Կոմիտեն կառավարությանը կոչ է անում բարելավել կանանց դրությունը՝ նպատակ ունենալով հասնել դաշնագրի 3-րդ հոդվածի արդյունավետ կիրառությանը, մասնավորապես՝ որդեգրելով անհրաժեշտ կրթական և այլ միջոցներ՝ հաղթահարելու համար որոշ սովորույթների և ավանդույթների ազդեցությունը ...:

Սենեգալի վերաբերյալ ՄԻԿ-ը նշել է հետևյալը²⁰³:

¶ 12. ... Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանը մեկնարկել համակարգված քարոզարշավ՝ ուղղված բնականության շրջանում կանանց հանդեպ կայուն բացասական դիրքորոշման վերաբերյալ իրազեկության խթանմանը ...:

Հետևաբար, շրջահայացորեն ընդունվում է, որ պետությունները չեն կարող ակնթարթային փոփոխություններ բերել մշակութային հայացքներում, սակայն պետք է անկեղծորեն ջանքեր գործադրեն այդ ուղղությամբ, երբ նման հայացքները վտանգում են քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելը: Դեպք առ դեպք ՄԻԿ-ի կողմից կրթական, այլ ոչ թե հարկադիր միջոցները շեշտադրելը ասես կարող է մշակութային առումով զգայուն վայրերում ՔՔԻՄԴ-ի պարտավորությունների բնականոն անմիջականությունից բացառություն ընկալվել: Հնարավոր է նաև, որ ՄԻԿ-ը խնդրո առարկա պետությանն ավելի մեծ ազատություն է տալիս, երբ քաղաքացիական և քաղաքական իրավունքների իրականացման «մշակութային» վտանգը ծագում է նրա մարդկանց հայացքներից, ոչ թե ուղղակի պետության օրենսդրությունից²⁰⁴:

[1.104] Քանի որ մշակութային ամենասուր խնդիրների մի մասը ծագում է կանանց համար հավասար իրավունքների իրականացման առումով, զարմանալի չէ, որ ԿՆԽՎ կոմիտեն մի շարք կարևոր Ընդհանուր հանձնարարականներում անդրադարձել է մշակութային չափմանը²⁰⁵: ԿՆԽՎ կոմիտեն, ինչպես և ՄԻԿ-ը, շեշտադրել է կանանց հավասարության իրավունքների համընդհանուր կիրառությունը՝ այդպիսով մերժելով մշակութային անձեռնմխելիության վրա հիմնված հակընդդեմ փաստարկները: Օրինակ՝ իր թիվ 14 Ընդհանուր հանձնարարականում ԿՆԽՎ կոմիտեն դատապարտում է կանանց սեռական օրգանների թլպատումը: Այնուամենայնիվ, ԿՆԽՎ կոմիտեն առաջարկում է, որ կանանց սեռական օրգանների թլպատման հարատևող սովորույթի դեմ պայքարի համար ձեռնարկվեն կրթական միջոցներ, ոչ թե միանգամից իրականացվեն մեղավորների պատժամիջոցները սահմանող օրենքները²⁰⁶: ԿՆԽՎ կոմիտեն ընդունում է, որ մշակութային հենք ունեցող անմարդկային սովորույթները վերացնելու համար անպայման ժամանակ է հարկավոր:

[1.105] Վերը բերված դիտարկումը չպետք է մեկնաբանվի կամ ենթադրության տեղիք տա, թե արևմտյան ազգերը ՔՔԻՄԴ-ի առումով անթերի պատմություն ունեն: Արևմտյան ազգերը շատ հաճախ են խախտել ՔՔԻՄԴ-ը: Իրականում ՔՔԻՄԴ-ի (և մինչ այդ՝ ՄԻՀՀ-ի) գործառույթը ոչ թե զուտ արևմտյան որոշ արժեքների համընդհանրացումն է, այլ դրանցից մի քանիսի, օրինակ՝ ռասիզմի, սեքսիզմի, հակասեռականության, գաղութացման և ստրկացման համընդհանուր արգելումը²⁰⁷:

²⁰² Եզրափակիչ դիտարկումներ Կամերունի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 33, պարբ. 25:

²⁰³ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 82.

²⁰⁴ Այս մոտեցումը կարող է արտացոլել պետության ուղղահայաց և հորիզոնական պարտավորությունների համեմատությունը (խստության տեսանկյունից). տե՛ս [1.77]:

²⁰⁵ ԿՆԽՎ Ընդհանուր հանձնարարականները ՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանությունների համարժեքն են:

²⁰⁶ Ի հակադրություն՝ ՄԻԿ-ը Լեսոտոյի և Սուդանի վերաբերյալ դիտարկումներում առարկում էր, «որ այդ սովորույթը պատժի օրենքով» ([9.39], ծմբ. 48-ում): Սակայն նկատի ունեցեք, որ ԿՆԽՎ պարտավորությունները, ի տարբերություն ՔՔԻՄԴ-ի հոդված 2(1)-ով սահմանված պարտավորությունների, աներկբայորեն անմիջական չեն:

²⁰⁷ Տե՛ս Իգնատև, վերը, ծմբ. 15, 92. J. Donnelly, 'Human Rights and Asian Values: A Defence of 'Western' Universalism', Բաուեր և Բելլ (խմբ.) գրքում, վերը, ծմբ. 181, էջ 68:

Մարդու իրավունքների կոմիտե. գնահատում

[1.106] Վերջին տարիներին ՄԻԿ-ը և ՄԱԿ-ի այլ պայմանագրային մարմինները նշանակալի և տեղին մանրակրկիտ քննության են ենթարկվել: Օրինակ՝ դրանց հեղինակության առնչությամբ 2000 թ. կասկածներ է հայտնել Ավստրալիայի կառավարությունը²⁰⁸: Այնուհետև դրանց գործունեությունը վերլուծության է ենթարկվել Ալսթոնի և Քրոուֆորդի [Alston and Crawford] խմբագրած ժողովածուի մեջ²⁰⁹, ինչպես նաև Մարդու իրավունքների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի (ՄԻԳՅԳ) և Ֆորդի հիմնադրամի ծրագրի կողմից, որն իրականացրել է Բայեֆսկին²¹⁰: ՄԱԿ-ի բազմաթիվ ներքին փաստաթղթեր նույնպես անդրադարձել են դրանց բարեփոխման խնդրին²¹¹:

[1.107] ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների համակարգի յուրաքանչյուր անկողնակալ գնահատում պետք է սկսի պետությունների և ՄԱԿ-ի կողմից կոմիտեներին տրամադրվող ֆինանսական և այլ ռեսուրսների ակնհայտ սղությունն ընդունելուց²¹²: «Պայմանագրային համակարգում մասնակից պետությունների թվի աճը չի զուգակցվել նրանց մասնակցությունը սպասարկելուն ուղղված ռեսուրսների համընթաց աճով»²¹³: Ռեսուրսների սղությունը, օրինակ, խստորեն սահմանափակում է պայմանագրային մարմին՝ տեղեկություններ հավաքելու ունակությունը, փաստաթղթերի ժամանակին թարգմանությունը և տրամադրումը, կոմիտեների տրամադրության տակ եղած ժամանակը, որն օգտագործվում է իրենց գործառնություններն իրականացնելու համար²¹⁴: Իսկապես, միջոցների հատկացման ավելացումը մեծ նշանակություն կունենար կոմիտեների հետ կապված շատ խնդիրների մեղմացման համար, որոնք ուրվագծված են ստորև: Այդ առումով, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ վերջին տարիներին պայմանագրային մարմիններին հատկացվել են որոշ հավելյալ ռեսուրսներ: Օրինակ՝ Մարդու իրավունքների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի կազմում ստեղծվել է Պայմանագրային մարմինների առաջարկությունների ստորաբաժանում՝ պետություններին և քաղաքացիական հասարակությանը համաձայնագրի հետ կապված պարտավորությունների և առաջարկությունների կատարման առումով օժանդակություն ցույց տալու համար²¹⁵:

ՈՉ ԼՐԻՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

[1.108] Այն, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմիններն աշխատում են ոչ լրիվ զբաղվածությամբ, խնդրահարույց է, թեև դժվար է զարմանալի համարել՝ հաշվի առնելով, որ դրանց անդամները չեն վարձատրվում: ՄԻԿ-ը՝ որպես լիազոմար խումբ, հավաքվում է տարին երեք անգամ, ընդամենը երեքական շաբաթով²¹⁶: Պայմանագրային մարմիններից ոչ մեկը տարեկան միստերի համար ավելի շատ ժամանակ չունի: Յուրաքանչյուր կոմիտե դիտարկման համար պետությունների հաշվետվությունների և, եթե իրեն վերաբերում է, անհատական հաղորդումների զգալի կուտակումներ ունի: Այդ

²⁰⁸ Տե՛ս Արտաքին գործերի նախարարության, գլխավոր դատախազի և ներգաղթի ու բազմաձևականության հարցերի նախարարի համատեղ մամլո հաղորդագրությունը՝ «Միավորված ազգերի կազմակերպության կոմիտեների արդյունավետության բարձրացումը», 29 հուլիսի, 2000 թ.:

²⁰⁹ P. Alston and J. Crawford (eds), *The Future of the UN Human Rights Treaty Monitoring System* (Cambridge University Press, 2000):

²¹⁰ Տե՛ս վերը, ծմբ. 59:

²¹¹ Տե՛ս 'Review of Recent Developments relating to the work of Treaty Bodies', Քարտուղարության զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI/MC/2003/2, 5 հունիսի, 2003. 'Methods of Work Relating to the State Reporting Process', Քարտուղարության կողմից պատրաստված տեղեկատու փաստաթուղթ, ՄԱԿ-ի փաստաթուղթ HRI/ICM/2003/3, 11 ապրիլի, 2003. 'Strengthening of the United Nations: an Agenda for Further Change', Գլխավոր քարտուղարի զեկույց, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/57/387, 9 սեպտեմբերի, 2002, պարբ. 52–54: Տե՛ս նաև անկախ փորձագետի (պրոֆեսոր Ֆիլիպ Ալսթոն) զեկույցը, 'Final report on enhancing the long-term effectiveness of the United Nations human rights treaty system', ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/1997/74, 27 մարտի, 1997:

²¹² Տե՛ս, ընդհանուր M. Schmidt, 'Servicing and Financing Human Rights Supervision', Ֆ. Ալսթոն և Ջ. Քրոուֆորդ (խմբ.) զրքում, վերը, ծմբ. 209, 481–98:

²¹³ Բակսկի, վերը, ծմբ. 59, 137:

²¹⁴ *Նույնը*, 136:

²¹⁵ Քարտուղարության զեկույց, վերը, ծմբ. 211, պարբ. 41–42: Այստեղ «առաջարկությունները» վերաբերում են Եզրափակիչ դիտարկումներին, Ընդհանուր մեկնաբանություններին և անհատական բողոքների վերաբերյալ որոշումներին:

²¹⁶ Նստաշրջաններից մեկը տվորաբար անցկացվում է ապրիլին, Նյու Յորքում: Մյուս նստաշրջաններն անցկացվել են ժնևում, հուլիսին և հոկտեմբեր-նոյեմբերին: 2003 թ. բյուջետային պատճառներով բոլոր նստաշրջաններն անցկացվել են ժնևում, սակայն ՄԻԿ-ը 2004 թվականից վերադարձել է Նյու Յորք:

«անթույլատրելի ուշացումները տեղի են ունենում մի ժամանակ, երբ բազմաթիվ հաշվետվությունների ներկայացման ժամկետները լրացել են, սակայն չեն ներկայացվել: Եթե բոլոր պետությունները զեկույցները ներկայացնեին ժամանակին, ուշացումները ... բացառություն կլինեին»²¹⁷: Ինչպես նշվեց վերը, ՄԻԿ-ի գործունեությունը վերանայվեց, քանի որ հնգամյա ժամկետը կիրառելի չէր: Նմանապես Քրոուֆորդը ԿԱ ընթացակարգի վերաբերյալ նկատում է. «[Եթե] կամընտիր արձանագրության յուրաքանչյուր մասնակից պետություն տարին ընդամենը մեկ հաղորդում ներկայացներ, կուտակումը շուտով կդառնար անտանելի»²¹⁸: Բողոքի ներկայացման և վերջնական վճռի կայացման միջև ընկած ժամանակահատվածը տևում էր չորս տարի²¹⁹:

[1.108Ա] Այնուամենայնիվ, վերջին շրջանում կատարվել են մի շարք քայլեր՝ ուղղված այդ կուտակումներն ինչ-որ չափով թեթևացնելուն: 1997 թ. ՄԻԿ-ը փոխեց իր աշխատակարգը՝ հաղորդման ընդունելիության քննությունը սեղմելու նպատակով [1.52]: Այդ աշխատակարգն ակնհայտորեն կրճատեց ԿԱ բողոքների ներկայացման և վերջնական տեսակետի հայտնման միջև ընկած ժամանակահատվածը՝ այն դարձնելով երկու տարուց մի փոքր ավելի²²⁰: Նոր հատուկ զեկուցողի պաշտոնների ստեղծումը նպաստեց ՄԻԿ-ի աշխատանքի բարելավմանը՝ ՄԻԿ-ի անհատ անդամներին պատվիրակելով պետության հաշվետվության ուսումնասիրությունը պատրաստելու, Եզրափակիչ դիտարկումներին հետևելու, նոր ԿԱ հաղորդումներով զբաղվելու և պետությունների՝ ՄԻԿ-ի տեսակետների արձագանքներին անդրադառնալու պարտականությունները²²¹: Ավելին՝ լիազուրկ խմբի կողմից հավելյալ աշխատանք է պատվիրակվում ավելի փոքր խմբերի, ինչպիսիք են Պետությունների զեկույցներն ուսումնասիրող աշխատանքային խմբերը (ՊՁԱԽ/CRTFs) [1.38Ա] հաղորդումների հարցերով նախանիստային աշխատանքային խումբը, որը, օրինակ, կանոնավոր կերպով պատրաստում է ԿԱ-ով ընդունելիության վերաբերյալ որոշումների նախագծեր²²²:

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՄԻՋԵՎ

[1.109] Կոմիտեների միջև համակարգված համաձայնության և համագործակցության ակնհայտ պակաս կա՝ չնայած նրանց մասնակի համընկնող մանդատներին²²³: Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել հարցերի կրկնությունները տարբեր պայմանագրային մարմիններում՝ հաշվի առնելով բոլոր կոմիտեներում առկա կուտակումները, ինչպես նաև պետության՝ զեկույցներ ներկայացնելու պարտականությունների ծավալուն բնույթը: Նման նվազեցումը կրճատում է նաև կոմիտեների մեկնաբանությունների հնարավոր անհամապատասխանությունների հավանականությունը²²⁴: Այդպիսով, հնարավոր բարեփոխումներից մեկը կարող է լինել թույլտվությունը պետություններին ներկայացնել մեկ բաղադրյալ հաշվետվություն: Կոմիտեներն այնուհետև կարող են ուսումնասիրել իրենց մանդատին վերաբերող բաժինները՝ միաժամանակ ստանալով տվյալ երկրի մարդու իրավունքների իրավիճակի ամբողջական պատկերը²²⁵: Որպես այլընտրանք՝ գուցե ՄԻԿ-ը և ՏՆտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների

²¹⁷ J. Crawford, 'The UN Human Rights Treaty System: A System in Crisis?' Ֆ. Ալսթոն և Ջ. Քրոուֆորդ (խմբ.) գրքում, վերը, ծմբ. 209, 5–6: Տե՛ս նաև Քարտուղարության կողմից պատրաստված տեղեկատու փաստաթուղթ, վերը, ծմբ. 211, պարբ. 13:

²¹⁸ Քրոուֆորդ, վերը, ծմբ. 217, 8–9:

²¹⁹ Բաևսկի, վերը, ծմբ. 59, 26: Ներկայացման և անընդունելիության վերաբերյալ եզրակացության հանգելու միջև ընդմիջումը 2.5 տարի է:

²²⁰ Տե՛ս Քարտուղարության հաշվետվություն, վերը, ծմբ. 211, պարբ. 36:

²²¹ Ընդհանուր առմամբ տե՛ս Բաևսկի, վերը, ծմբ. 59, այստեղ՝ 30–7:

²²² Տե՛ս Rules of Procedure of the Human Rights Committee, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/3/Rev. 6, 24 ապրիլի, 2001, կաճոն 87 և հաջորդները, հատկապես կանոն 89-ը:

²²³ Տե՛ս Քարտուղարության պատրաստած տեղեկատու փաստաթուղթ, վերը, ծմբ. 211, պարբ. 31: 2002 և 2003 թթ. կազմակերպված միջկոմիտեական համդիպումները, որոնց մասնակցում էին յուրաքանչյուր առանցքային պայմանագրային մարմնի ղեկավարը և երկու անդամներ, ողջունելի նախաձեռնություն էր, որն ուղղված էր նրանց աշխատանքային մեթոդների «ներդաշնակությունը և պարզեցումն» ավելացնելուն. տե՛ս նույնը, պարբ. 18:

²²⁴ Տե՛ս E. Tistounet, 'The Problem of Overlapping among Different Treaty Bodies', Ֆ. Ալսթոն և Ջ. Քրոուֆորդ (խմբ.) գրքում, վերը, ծմբ. 209, այստեղ՝ 389–96:

²²⁵ Նույնը, 388: Տե՛ս նաև Բաևսկի, վերը, ծմբ. 59, 21: Մեկ զեկույցի ներկայացումը պայմանագրային բոլոր 6 մարմիններին Գլխավոր քարտուղարի զեկույցի մեջ ներկայացված առաջարկներից մեկն էր, վերը, ծմբ. 211, պարբ. 54: Սակայն ՄԻԿ-ը և պայմանագրային մյուս մարմիններն ընդդիմանում են այս բարեփոխմանը. տե՛ս Քարտուղարության պատրաստած տեղեկատու փաստաթուղթ, վերը, ծմբ. 211, պարբ. 9: Մեկ զեկույցի հետ կապված բարդությունների վերաբերյալ, ինչպիսիք են հարցերի հնարավոր լուսանցքայնացումը՝ մեկ հարցի վերաբերող համաձայնագրերի ներքո, կամ պայմա-

կոմիտեն հաշվետվողական համակարգում չփորձեն «գործ ունենալ իրենց հիմնական դաշնագրի բոլոր կողմերի հետ, այլ մի շարք ... հարցեր թողնեն որոշակի պայմանագրային մարմնին»²²⁶։ Օրինակ՝ այն հարցերը, որոնք վերաբերում են մասնակից պետությունում ռասայական խտրականությանը, թերևս ավելի լավ է թողնել Ռասայական խտրականության վերացման կոմիտեին, եթե տվյալ պետությունը հանդիսանում է ՌԽՎՄԿ անդամ՝ առանց համապատասխան վերապահումների։

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԿ-Ի ՄԻՋԵՎ

[1.110] Ստահոգող է նաև ՄԻԿ-ի նկատմամբ մասնակից պետությունների հարգանքի ակնհայտ պակասը։ Ինչպես նշվեց վերը, մասնակից պետությունները հաճախ ուշացնում են իրենց զեկույցները։ Վերջին ժամանակներս ՄԱԿ-ի կոմիտեները, ներառյալ ՄԻԿ-ը, փորձել են պայքարել այդ երևույթի դեմ՝ պետությունների վերաբերյալ գրանցված տվյալները քննելով պետությունների զեկույցների բացակայության պայմաններում [1.40]։ Ավելին՝ զեկույցների որակը կարող է շատ ցածր լինել բովանդակության և ճշգրտության տեսանկյունից²²⁷։ Վերջապես, պետությունները հաճախ չեն կատարում ՄԻԿ-ի առաջարկությունները՝ շարադրված թե՛ եզրափակիչ դիտարկումներում, թե՛ ԿԱ կարծիքներում։ Այս անհարգալից վերաբերմունքի պատճառը չի կարելի համարել սոսկ այն, որ ՄԻԿ-ը դատական կարգավիճակ չունի, կամ չկան պատասխան խիստ մեխանիզմներ²²⁸։ Պետությունների անբավարար արձագանքը կարող է մեծապես պայմանավորված լինել «կամակոր պետությունների կարծի դիրքորոշումներով»²²⁹։ Իսկապես, կարելի է ասել, որ չենթարկվել միջազգային իրավական համակարգի հիմնական խնդիրներից է։ Օրինակ՝ պետությունները ժամանակ առ ժամանակ անտեսել են ՄԱԿ-ի Միջազգային դատարանի [International Court of Justice]՝ աշխարհի թիվ 1 միջազգային դատարանի որոշումները²³⁰։ Հետևաբար, արդարացի չի լինի ՄԻԿ-ին չափազանց խիստ դատել որոշ պետությունների կատարողականի ցածր ցուցանիշների համար։

[1.111] Անհրաժեշտ է հիշել նաև, որ ՄԻԿ-ի միակ խնդիրը ՔՔԻՄԴ-ի իրականացման մշտադիտարկումն է (մոնիթորինգ)։ Քաղաքական կամ տնտեսական առումով հրատապ արտաքին հարցերը, որոնք սովորաբար ազդեցություն են ունենում կառավարությունների վրա, նշանակություն չունեն ՄԻԿ-ի՝ համաձայնագրի խախտման կամ չխախտման վերաբերյալ որոշման համար²³¹։ Հետևաբար, անխուսափելի է, որ ՄԻԿ-ը, ճիշտ ինչպես ներպետական դատարանները, կայացնի որոշումներ, որոնք կառավարության հավանությանն այնքան էլ չարժանանան։ Ավելին՝ ՄԻԿ-ի որոշումները կարող են ազդեցություն թողնել պետության անմիջական հնազանդության բացակայության դեպքում։ Դրանք կարող են ՔՔԻՄԴ-ի խնդիրներ ներարկել ներքին բանավեճերին և ջուր լցնել տեղի լոբբիստական խմբերի ջրաղացին։ Դրանք կարող են նաև ապագա բարեփոխումների ուղենիշներ տրամադրել։ Վերջապես, դրանք դաշնագրի մեկնաբանության ուղեցույց են, ինչը վերաբերում է ոչ միայն տվյալ երկրին, այլև բոլոր մասնակից պետություններին։

նագրային մարմինների հնարավոր խրախուսումը, որ չափից դուրս գործածեն իրենց մանդատները [overreach their mandates], տես նույնը, պարբ. 47–48:

²²⁶ Տխտունետ, վերը, ծմբ. 224, 401:

²²⁷ Բաևսկի, ծմբ. 59, 22-3:

²²⁸ Ընդհանուր առմամբ տես M. Schmidt, 'Follow-up of Treaty Body Conclusions', in A. Bayefsky (ed), *The UN Human Rights System in the 21st Century*, (Kluwer Law International, The Hague, 2000), at 233-49: Բացի ԿԱ բողոքների առումով իրականացմանը հետևելուն [1.51], ՄԻԿ-ը սկսել է «կիրառել համակարգված ընթացակարգ՝ հետևելու համար եզրափակիչ դիտարկումների իրականացմանը» 2001 թ. մարտից. տես Քարտուղարության կողմից պատրաստված տեղեկատու փաստաթուղթ, վերը, ծմբ. 211, պարբ. 9–10 և [1.39Ա]:

²²⁹ H. Steiner, 'Individual Claims in a World of Massive Violation: What Role for the Human Rights Committee', 36 Ալսթոն և Ջ. Քրոուֆորդ (խմբ.) գրքում, վերը, ծմբ. 209, 30:

²³⁰ Օրինակ՝ ԱՄՆ-ը խախտեց «Գերմանիան ընդդեմ ԱՄՆ-ի (Լագրանդ)» (*Germany v USA (LaGrand)*) գործով Միջազգային դատարանի (ՄԴ) կայացրած վճիռը ժամանակավոր միջոցների վերաբերյալ, 1999 թ. մարտի 3-ի վճիռ, [1999] ՄԴ զեկույց. 9, որով ԱՄՆ-ին հորդորում էին մահապատժի չենթարկել Գերմանիայի քաղաքացի հանդիսացող Լագրանդին, ում ձերբակալվելիս թույլ չէր տրվել օգտվել հյուպատոսական օգնությունից՝ ի խախտումն միջազգային իրավունքի։ ՄԴ-ն հետագայում որոշեց, որ ժամանակավոր միջոցների վերաբերյալ իր վճիռը իրավական առումով պարտադիր բնույթ ունի, այստեղ՝ [2001] ՄԴ զեկույց. 104, 2001 թ. հունիսի 27-ի որոշում:

²³¹ Տես Քրոուֆորդ, վերը, ծմբ. 217, այստեղ՝ 10-11:

ՄԻԿ-Ի ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

[1.112] Դժբախտաբար, ներկայումս պայմանագրային մարմինների որոշումների հրապարակայնությունը բավականին փոքր է: Օրինակ՝ «Ուինատան ընդդեմ Ավստրալիայի» (*Winata v Australia*, 930/00) գործով 2001 թ. հուլիսի որոշումը, որով Ավստրալիայի ներգաղթի որոշ կողմեր համարվեցին ՔՔԻՄԴ-ը խախտող, չհայտնվեց ավստրալիական խոշոր թերթերից և ոչ մեկում՝ չնայած երկրի ներսում խնդրի հրատապությունը²³²: Պայմանագրային մարմինների վերաբերյալ գիտելիքների բացակայությունը երևում է այն փաստից, որ ԿԱ-ին մասնակից պետությունների գրեթե մեկ երրորդը երբևէ հաղորդման սուբյեկտ չի հանդիսացել²³³: Պայմանագրային մարմինները պետք է ընդլայնեն իրենց ջանքերը լրատվամիջոցներին ներգրավելու ուղղությամբ, որպեսզի ապահովեն իրենց աշխատանքի պատշաճ հրապարակայնությունը, ինչը կբարձրացնի մասնակից պետությունների վրա իրենց ազդեցության աստիճանը²³⁴:

[1.113] Հարկ է արժանին մատուցել պայմանագրային մարմինների աշխատանքին ծանոթանալու հնարավորության մեծացմանն ուղղված վերջին մախաձեռնություններին²³⁵: Պայմանագրային մարմինների տվյալների շտեմարանը²³⁶ օգտագործելը ներկայումս ավելի դյուրին է, այն ավելի ընդգրկում է, ժամանակին թարմացվող և համալրվում է պայմանագրային մարմինների աշխատանքի հիման վրա: Այժմ արդեն գործում է անվճար հանրային առաքիչ ծառայությունը, որը պայմանագրային մարմնի նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստով բաժանորդագրվածներին ինքնաշխատ կերպով ուղարկում է պայմանագրային մարմնի առաջարկությունները: Յուրաքանչյուր ոք կարող է բաժանորդագրվել պայմանագրային մարմինների տվյալների շտեմարանին²³⁷: Այս էլեկտրոնային միջոցները պետք է բարձրացնեն պայմանագրային մարմինների աշխատանքի և դերի մասին իրազեկությունը:

ՄԻԿ-Ի ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

[1.114] Քննադատություն է հնչում նաև ՄԻԿ-ի՝ որպես ՔՔԻՄԴ-ի ուղեցույցի աշխատանքի բովանդակային արժեքի շուրջ: ԿԱ որոշումները տարբերվում են իրենց որակով: Դրանք սովորաբար ուրվագծում են դիմողի և վեճի առարկա պետության տարատեսակ փաստարկները, սակայն ՄԻԿ-ի վերջնական վճիռները հաճախ կարող են շատ հակիրճ լինել՝ սակավաթիվ բացատրություններով, թե ինչպես է որոշումն ընդունվել²³⁸: Մյուս կողմից՝ կան մի շարք բացառիկ որոշումներ, որոնք լույս են սփռել մարդու իրավունքների մի շարք չափազանց կարևոր հարցերի վրա, ինչպիսիք են ցեղասպանության ժխտումը [18.58] և մահապատժի դատապարտվածների խցերի երևույթը [9.55]: Որակը ՄԻԿ-ի անդամների տրամաչափի հետ զուգահեռ բարելավվում է: Ավելին՝ թե՛ տարբերվող, թե՛ համընկնող անհատական կարծիքների ավելի մեծ հաճախականությունը ողջունելի զարգացում է, քանի որ այդ կարծիքները հաճախ ավելի լավ են հիմնավորվում, քան լիազուրկ որոշումները [1.35]:

[1.115] ԿԱ տեսակետներն անհաջափորեն շատ են անդրադարձել որոշ հարցերի վրա, ինչպիսիք են մի շարք աղաղակող ապօրինությունները, ներառյալ՝ խոշտանգումները, անհետացումները և կամայական կալանավորումը Հարավային Աֆրիկայում ու մահապատիժ մախատեսող գործերով դատավճիռների վստահելիությունը և մահապատժի դատապարտվածների հետ կապված ապօրինությունները Կարիբյան կղզիներում [1.58]: Այս անհամաչափությունը խաթարում է ԿԱ տեսակետների՝ որպես ՔՔԻՄԴ-ի ընդլայնված նշանակության ուղեցույցների գործառնությունը: Շտայներն առաջարկում է, որ ՄԻԿ-ը բողոքների

²³² Ներգաղթի վերաբերյալ բանավեճերը գերակայում էին Ավստրալիայում 2001 թ. նոյեմբերին դաշնային ընտրությունների ժամանակ:

²³³ Տե՛ս Բաևսկի, վերը, ծմբ. 59, գծապատկեր 94: Տե՛ս նաև A. Byrnes, 'An Effective Individual Complaints Mechanism', Բաևսկի (խմբ.) գրքում, վերը, ծմբ. 228, էջ 144-5:

²³⁴ Տե՛ս Բաևսկի, վերը, ծմբ. 59, 105:

²³⁵ Տե՛ս Քարտուղարության զեկույց, վերը, ծմբ. 211, պարբ. 44-48:

²³⁶ Տե՛ս www.unhcr.ch/tbs/doc.nsf

²³⁷ Նույնը:

²³⁸ Տե՛ս Շտայներ, վերը, ծմբ. 229, 38-42: Տե՛ս նաև Բիրնս, վերը, ծմբ. 233, էջ 149-51: «Օմինայակն ընդդեմ Կանադայի» (*Ominayak v Canada*, 167/84) [24.28] և «Կիվենմաան ընդդեմ Ֆինլանդիայի» (*Kivenmaa v Finland*, 412/90) [19.06] գործերով վճիռները նման ցածրորակ որոշումների օրինակներ են:

նկատմամբ կիրառի հայեցողական, ոչ թե պարտադիր իրավասություն²³⁹։ ՄԻԿ-ը կարող էր ուշադրություն սևեռել այնպիսի գործերի վրա, որոնք վեր են հանում ՔՔԻՄԴ-ի չլուծված օրենսդրության ցայտուն կետերը, ոչ թե այն գործերի, որոնք գործի են դնում «վիճահարույց փաստական հանգամանքներ, որոնց լուծումը վեր է կոմիտեի ուժերից» կամ «գործեր, որոնց բարձրացրած հարցերը լուծվել են նախկին վճիռներով կամ որոնք համընդհանուր նշանակություն չունեն»²⁴⁰։ Հայեցողական իրավասությունը ԿԱ փոփոխության անհրաժեշտություն կառաջացներ։ Անշուշտ, նման գործելակերպը կավելացներ ԿԱ տեսակետների ընդհանուր գործածությունը և կնպաստեր ԿԱ-ի հետ կապված կուտակումների կրճատմանը։ Մյուս կողմից՝ գործի դիտարկումը մերժելը հայցվորին, ով կարող է խոշտանգումների կամ անարդար կերպով նշանակված մահապատժի ծանր վտանգի տակ լինել, չափազանց բարձր զին է գիտական առումով բարելավված նախադեպային իրավունքի դիմաց վճարելու համար²⁴¹։

[1.116] Ինչպես նշվեց վերը, Ընդհանուր մեկնաբանությունները և Եզրափակիչ դիտարկումները նույնպես կարևոր ուղեցույցներ են ՔՔԻՄԴ-ի մեկնաբանության համար։ Սակայն անհրաժեշտ է բարելավել Եզրափակիչ դիտարկումների որակը, քանի որ դրանք հաճախ ճապաղ լեզվով են գրվում, ինչը չի նպաստում ՔՔԻՄԴ-ի իմաստի հստակ պատկերմանը։ Սա կարող է դրանց նախագծերի մշակման համար հատկացվող ամբավարար ժամանակի և ԿԱ տեսակետների վերաբերյալ ՄԻԿ-ի կողմից կոնսենսուսի ապահովման «ջրով բացելու» երևույթի հետևանք լինել [‘watering down’ effect]²⁴²։

Եզրակացություն

[1.117] Ներկայումս հնարավոր են մի շարք ներքին բարեփոխումներ, որոնք կարող են օպտիմալացնել կոմիտեներին հասանելի սահմանափակ ժամանակի օգտագործումը՝ այդպիսով բարելավելով նրանց աշխատանքը²⁴³։ Իսկապես, ինչպես ցույց է տալիս հատուկ զեկուցողների ներդրումը, կոմիտեներն իրենք էլ գիտեն բարեփոխման անհրաժեշտության մասին և քայլեր են ձեռնարկում սեփական արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ²⁴⁴։ Սակայն լայնածավալ բարեփոխումները, ինչպիսին է ոչ լրիվ զբաղվածությամբ պայմանագրային մարմինների միավորումը մեկ «զերկոմիտեի» մեջ, որը կթեթևացներ կուտակումները և կնվազեցներ մասնակի համընկնող մանդատների խնդիրը,²⁴⁵ չի կարող լինել առանց համաձայնագրերի փոփոխության և ռեսուրսների նշանակալի ավելացման, ինչը դժվար է քաղաքականապես իրագործել։

[1.118] Չնայած ակնհայտ խնդիրներին, համաձայնագրերի կատարման մշտադիտարկումն իրականացնող մարմինները, ՄԻԿ-ի օրինակով, «չատ երկար ճանապարհ են անցել՝ կարճ ժամանակահատվածում»²⁴⁶։ Համաձայնագրերի կատարման մշտադիտարկման համակարգը կարևոր քվազիդատական հավելում է ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների ավելի քաղաքական մարմիններին, ինչպիսիք են Մարդու իրավունքների հանձնաժողովը և Գլխավոր ասամբլեան։ Համաձայնագրերի կատարման մշտադիտարկման համակարգը մարդու իրավունքների առումով հաշվետվողականության որոշ աստիճան է ապահովում բոլոր պետությունների համար, քանի որ բոլոր պետությունները ներկայումս վավերացրել են

²³⁹ Ընդհանուր առմամբ տե՛ս Շտայներ, վերը, ծնթ. 229, 45-8։

²⁴⁰ *Նույնը*, 46։

²⁴¹ *Նույնը*, 47-8։ Այնուամենայնիվ, Շտայները նշում է, որ ՄԻԿ-ը չի կարող հույս ունենալ անհատական արդարադատություն տրամադրել յուրաքանչյուր գործում։

²⁴² Ի տարբերություն ԿԱ որոշումների, Եզրափակիչ դիտարկումները և Ընդհանուր մեկնաբանությունները միշտ ընդունվում են կոնսենսուսով։

²⁴³ Տե՛ս, ընդհանուր առմամբ, E. Evatt, 'The Future of the Human Rights Treaty System: Forging Recommendations', Բաևսկի (խմբ.) գրքում, վերը, ծնթ. 228, էջ 287-97 և Շմիդտ, վերը, ծնթ. 212, 488-95։

²⁴⁴ E. Evatt, 'Ensuring Effective Supervisory Procedures: the Need for Resources' Ալսթոն և Քրոուֆորդ (խմբ.) գրքում, վերը, ծնթ. 209, 464։

²⁴⁵ *Նույնը*, 466. T. Buergenthal, 'A Court and Two Consolidated Treaty Bodies', Բաևսկի (խմբ.) գրքում, վերը, ծնթ. 228, 299-302։ Տե՛ս նաև Բաևսկի, վերը, ծնթ. 59, 142-7։ Բաևսկին առաջարկում է ոչ լրիվ զբաղվածությամբ պայմանագրային մարմինները փոխարինել երկու լրիվ զբաղվածությամբ մարմիններով, որոնք կզբաղվեն համապատասխանաբար անհատական հաղորդումներով և պետությունների զեկույցներով։

²⁴⁶ P. Alston, 'Beyond 'Them' and 'Us': Putting Treaty Body Reform into Perspective', Ալսթոն և Քրոուֆորդ (խմբ.) գրքում, վերը, ծնթ. 209, 522։

ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների վերաբերյալ առանցքային համաձայնագրերից առնվազն մեկը: Ի տարբերություն վիճելիորեն գերակա համարվող մարդու իրավունքների տարածաշրջանային համակարգերի, ՄԱԿ-ի համակարգը ստիպված է գործ ունենալ մեծ թվով մասնակից պետությունների հետ, որոնք տարբերվում են մշակույթով, տնտեսությամբ և քաղաքականությամբ, և շատերը չեն շտապում ստեղծել մարդու իրավունքների մշտադիտարկման իրապես արդյունավետ համընդհանուր կարգ²⁴⁷: Այդ համատեքստում ՄԻԿ-ի ձեռքբերումները՝ քսանհինգ տարվա ընթացքում ԿԱ-ով և Եզրափակիչ դիտարկումների ու Ընդհանուր մեկնաբանությունների միջոցով, էական նախադեպային իրավունք ձևավորելու և պետությունների հաշվետվողական գործող, թեկուզ անկատար, համակարգ ստեղծելու առումով իսկապես նշանակալի են:

[1.119] Չնայած իրենց թերություններին՝ ՔՔԻՄԴ-ով և ՄԱԿ-ի այլ համաձայնագրերով ստեղծված քաղաքացիական և քաղաքական իրավունքների նորմերը ակնհայտորեն տեղին են դատավորների, իրավաբանների, պետական պաշտոնյաների և մարդու իրավունքների պաշտպանների մեկնաբանությունների համար բոլոր պետությունների իրավասությունների ներքո իրենց համընդհանուր կիրառելիության շնորհիվ: Այդ նորմերը, ինչպես նաև ՄԻԿ-ի և այլ պայմանագրային մարմինների նախադեպային իրավունքի ուժեղ և թույլ կողմերն ուսումնասիրվում են հետագա գլուխներում մեջբերված հատվածներում և դրանց հետ զուգակցվող մեկնաբանություններում:

²⁴⁷ Նույնը:

Մաս II

ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ըստ ՔՔԻՄԴ-ի

«Ռացիոնե տեմպորիս» կանոնը

- Ներածություն[2.01]
- Ե՞րբ է մեկնարկում ժամանակը[2.03]
- Շարունակվող խախտումներ.....[2.06]
- Եզրակացություն[2.19]

Ներածություն

[2.01] Առաջին կանոնտիր արձանագրության (ԿԱ) 1-ին հոդվածի համաձայն՝ հայց կարող է ներկայացվել միայն անձի կողմից ընդդեմ դաշնագրի մասնակից պետության, որը միացել է նաև արձանագրությանը: ԿԱ 3-րդ հոդվածի համաձայն՝ չի կարելի ներկայացնել հաղորդում, որն «անհամատեղելի է դաշնագրի դրույթներին»: Այս երկու դրույթների միջոցով կոմիտեն զերծ է մնում որևէ հարցի վերաբերյալ որոշում կայացնելուց, եթե այն անընդունելի է *ռացիոնե տեմպորիս* [ratione temporis] (ժամանակի պատճառով): Եթե բողոքում ներկայացված փաստերը վերաբերում են մի ժամանակահատվածի, որը նախորդում է տվյալ մասնակից պետության առնչությամբ ԿԱ-ի ուժի մեջ մտնելուն, ապա կոմիտեն *ռացիոնե տեմպորիս* իրավասու չէ քննելու դիմումը: Այս կանոնի հիմքը բխում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված այն սկզբունքից, որ համաձայնագրերը հետադարձ ուժ չունեն¹:

[2.02] «*Կիմն ընդդեմ Կորեայի Հանրապետության*»* (*Kim v Republic of Korea, 574/94*) գործը ցույց է տալիս, որ կարևոր է գիտենալ, թե ինչ իրադարձություն է հարուցել բողոքը: Այս դեպքում հեղինակը բողոքում էր որոշակի քաղաքական հայացքներ արտահայտելու համար, «Ազգային անվտանգության մասին» օրենքի համաձայն, իրեն դատապարտելու դեմ: Մասնակից պետությունն առարկում էր՝ պնդելով, որ բողոքն անընդունելի է *ռացիոնե տեմպորիս*, քանի որ բողոքի հեղինակի կողմից «Ազգային անվտանգության մասին» օրենքի խախտումը կատարվել է մինչև ԿԱ-ի ուժի մեջ մտնելը: ՄԻԿ-ը չհամաձայնեց դրան, քանի որ «բողոքի հեղինակի պնդմամբ՝ կատարված խախտումն իր *դատապարտումն է՝* համաձայն «Ազգային անվտանգության մասին» օրենքի», ոչ թե իրադարձությունները, որոնք հարուցել են դատապարտումը: Դատապարտումը տեղի է ունեցել ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց հետո²: Ավելին՝ «*Սոմերսն ընդդեմ Հունգարիայի*» (*Somers v Hungary, 566/93*) գործում բողոքը մասամբ վերաբերում էր 1951 թ. Հունգարիայի կոմունիստական իշխանությունների կողմից հեղինակի ծնողների գույքի բռնագրավմանը: Այս բողոքն ակնհայտորեն անընդունելի էր *ռացիոնե տեմպորիս*³: Այնուամենայնիվ, բողոքը վերաբերում էր նաև վերականգնման [restitution] մասին օրենսդրությանը, որն ընդունվել էր Հունգարիայի նոր իշխանությունների կողմից 1991 և 1992 թթ.: Հունգարիայում ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց հետո: Քանի որ 1991-92 թթ. օրենսդրությունը վերականգնում էր կոմունիստական հանրայնացման զոհերի միայն մի մասի կորուստները, իսկ մյուսներինը՝ ոչ, այն կարելի էր ներկայացնել 26-րդ հոդվածով (անխտրականության երաշխիքների խախտում)⁴:

¹ Տե՛ս J.S. Davidson, 'Admissibility under the Optional Protocol to the International Covenant on Civil and Political Rights' (1991) 4 *Canterbury Law Review* 337, at 342, մեջբերված Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի [Vienna Convention on the Law of Treaties] 4-րդ և 28-րդ հոդվածները:

* Հարավային Կորեա (ծան. թարգմ.):

² Տե՛ս նաև «*Հոլանդիան ընդդեմ Իռլանդիայի*» (*Holland v Ireland, 593/1994*) գործը, պարբ. 9.2: Տե՛ս նաև T. Zwart, *The Admissibility of Human Rights Petitions* (Martinus Nijhoff Publishers, Dordrecht, 1994), 125-6:

³ Այն անընդունելի էր նաև *ռացիոնե մատերիե* [ratione materiae] (գործի առարկայի հետ կապված հիմքերով, ծան. թարգմ.), քանի որ ՔՔԻՄԴ-ը չի երաշխավորում սեփականության իրավունքը:

⁴ Պարբ. 6.3-6.4. գործը հետազայում մերժվեց՝ ըստ էության [on the merits]:

Ե՞րբ է մեկնարկում ժամանակը

[2.03] Հարցերից մեկն այն է, թե արդյոք կոմիտեն կարո՞ղ է քննել դաշնագրի խախտումները, որոնք կատարվել են դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո, սակայն նախքան ԿԱ-ի ուժի մեջ մտնելը: Այս հարցին կոմիտեն անդրադարձել է բազմաթիվ գործերում, ներառյալ «*Քյոնյեն և Քյոնյեն ընդդեմ Հունգարիայի*» (*Könye and Könye v Hungary, 520/92*) գործը:

«ՔՅՈՆՅԵՆ և ՔՅՈՆՅԵՆ ընդդեմ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ» (*KÖNYE and KÖNYE v HUNGARY, 520/92*)

¶ 6.4. Կոմիտեն նախ նշում է, որ դաշնագրով մասնակից պետությունների պարտավորությունները սկսում են գործել տվյալ մասնակից պետության համար դաշնագրի ուժի մեջ մտնելու օրվանից: Այնուամենայնիվ, այստեղ մեկ այլ հարց կա, թե երբ է կոմիտեն իրավասու դառնում քննարկելու դաշնագրի ենթադրվող խախտումների վերաբերյալ բողոքները կամ ընտիր արձանագրության համաձայն: Կամ ընտիր արձանագրության ներքո, իր նախադեպային իրավունքի շրջանակներում, կոմիտեն որոշել է, որ չի կարող դիտարկել դաշնագրի այն ենթադրվող խախտումները, որոնք տեղի են ունեցել մասնակից պետության համար կամ ընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց առաջ, եթե բողոքում տեղ գտած խախտումները չեն շարունակվել կամ ընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո...

Այս տեսակետը հետևողականորեն պահպանվել է կոմիտեի կողմից⁵:

[2.04] Կոմիտեի միայն մեկ անդամ է երբևէ կասկածի տակ առել այդ կանոնը, համաձայն որի՝ գործերն ընդունելի չեն, եթե վերաբերում են այնպիսի իրադարձությունների, որոնք տեղի են ունեցել համապատասխան պետության կողմից դաշնագրի վավերացումից հետո, սակայն մինչև այդ պետության կողմից ԿԱ-ի վավերացումը: Այս հակառակ կարծիքն արտահայտվել է հետևյալ գործում:

«ԱԴՈՒԱՅՈՍԸ և այլք ընդդեմ ՏՈԳՈՅԻ» » (*ADUAYOM et al v TOGO, 422/90*)

Այս գործում կոմիտեի մեծամասնությունը կարծում էր, որ բողոքը ներկայացնողի պնդումները 9-րդ հոդվածի խախտումների վերաբերյալ անընդունելի են *ռազիոնե տեմպորիս*: Պարոն Պոկարն իր անհամաձայնությունը հայտնեց հետևյալ կերպ.

[Ի]մ անձնական կարծիքն այն է, որ 9-րդ հոդվածի 1-ին կետի հետ կապված պահանջը կոմիտեն կարող էր դիտարկել, եթե նույնիսկ ենթադրվող փաստերը տեղի են ունեցել Տոգոյի համար կամ ընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց առաջ: Ինչպես առիթ ունեցա նշել այլ հաղորդումների առնչությամբ և ավելի ընդհանուր կերպով, երբ կոմիտեն քննարկում էր իր Ընդհանուր մեկնաբանությունը վերապահումների մասին (տե՛ս CCPR/C/SR.1369, էջ 6, պարբ. 31), կամ ընտիր արձանագրությունը նախատեսում է ընթացակարգ, որը կոմիտեին հնարավորություն է տալիս իրականացնելու դաշնագրի մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների մշտադիտարկումը, սակայն դա, որպես այդպիսին, նշանակալի ազդեցություն չունի պարտավորությունների վրա, որոնք պետք է հետազոտվեն դաշնագրի ուժի մեջ մտնելուց ի վեր: Այլ կերպ ասած՝ դա կոմիտեին հնարավորություն է տալիս նման պարտավորությունների խախտումները դիտարկելու ոչ միայն ըստ դաշնագրի 40-րդ հոդվածով սահմանված հաշվետվողական ընթացակարգի, այլև անհատական հաղորդումների դիտարկման համատեքստում: Կամ ընտիր արձանագրության բացառապես ընթացակարգային բնույթից հետևում է, որ, եթե մասնակից պետությունն արձանագրությանը միանալիս վերապահում չի կիրառել, կոմիտեի իրավասությունը տարածվում է նաև այն իրադարձությունների վրա, որոնք տեղի են ունեցել նախքան այդ երկրի համար կամ ընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը. պայմանով, որ նման իրադարձությունները տեղի են ունեցել կամ ազդեցություն ունեն դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

⁵ Տե՛ս նաև «*Մ. Թ.-ն ընդդեմ Իսպանիայի*» (*M.T. v Spain, 310/88*), «*Ա. Ի. Է.-ն ընդդեմ Լիբիայի Արաբական Զամահիրիայի*» (*A.I.E. v Libya Arab Jamahiriya, 457/91*), «*Պերերան ընդդեմ Ավստրալիայի*» (*Perera v Australia, 536/93*), «*Ք. Լ. Ք. Ու.-ն ընդդեմ Ավստրալիայի*» (*K.L.B.W. v Australia, 499/92*), «*Ա. Ս.-ն և Լ. Ս.-ն ընդդեմ Ավստրալիայի*» (*A.S. and L.S. v Australia, 490/92*) և «*Կուրովսկին ընդդեմ Լեհաստանի*» (*Kurowski v Poland, 872/99*):

Կոմիտեի ոչ մի այլ անդամ բացահայտ չպաշտպանեց պրն Պոկարի տեսակետը: Սակայն դաշնագրի խախտումը ներկայացնում է ՔՔԻՄԴ-ի ուսմահարում՝ անկախ այն հանգամանքից՝ պետությունը վավերացրե՞լ է ԿԱ-ն, թե՞ ոչ: Այդ իսկ պատճառով Նովակը պնդում է, որ «ԿԱ-ի ուժի մեջ մտնելու օրը նշանակություն ունի միայն հաղորդման ներկայացման առումով և ոչ թե դրանից ենթադրվող խախտումների»⁶: Հետևաբար, պնդում է արվում, որ այս հարցի առնչությամբ կոմիտեի դիրքորոշման վերաբերյալ Պոկարի առարկություններն իրավական տեսանկյունից համոզիչ են⁷:

[2.05] «Պարկանյին ընդդեմ Հունգարիայի» (*Párkányi v Hungary, 410/90*) գործում մասնակից պետությունը չվիճարկեց կոմիտեի՝ հեղինակի կալանավորման վերաբերյալ բողոքը լսելու իրավասությունը, չնայած այն փաստին, որ վիճարկվող իրադարձությունները տեղի էին ունեցել Հունգարիայում դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո, սակայն նախքան ԿԱ-ի ուժի մեջ մտնելը: Իսկապես, մասնակից պետությունն աներկբայորեն ընդունեց, որ հաղորդումն ընդունելի է *ռացիոնալ տեմպորիս*⁸: Կոմիտեի մեծամասնությունը, քննարկելով հայցը լսելու իր իրավասության հարցը, որոշեց, որ Հունգարիան պատշաճ կերպով է հրաժարվել այդ առնչությամբ իր իրավունքից⁹: Պարկանյի գործը միակն է, որում կոմիտեն խստորեն չի կիրառել *ռացիոնալ տեմպորիս* կանոնը¹⁰:

Շարունակվող խախտումներ

[2.06] Ինչպես նշվեց «Քյոնյեն և Քյոնյեն ընդդեմ Հունգարիայի» (520/1992) [2.03] և մյուս գործերում, *ռացիոնալ տեմպորիս* կանոնի բացառություն կա, երբ ենթադրվող խախտումը շարունակվող է: Կոմիտեն կարող է դիտարկել հաղորդումը, որը վերաբերում է նախքան ԿԱ-ի ուժի մեջ մտնելը կատարված ենթադրյալ խախտմանը, եթե դա շարունակվում է կամ հետևանքներ ունի, որոնք հենց խախտումներ են այդ ժամկետից հետո:

[2.07] «ԼՈՎԷՅՍԼ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (LOVELACE v CANADA, 24/77)

Այս գործում բողոքի հեղինակը՝ Սանդրա Լովլեյսը, 1970 թ. մայիսի 23-ին ամուսնացել էր ազգությամբ ոչ հնդկացու հետ և, հետևաբար, «Հնդկացիների մասին» ակտի համաձայն, կորցրել մալիսիտ* հնդկացու կարգավիճակը Կանադայում ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց մոտավորապես վեց տարի առաջ: Նա վիճարկում էր իր՝ փոքրամասնությունների իրավունքի խախտումը՝ համաձայն 27-րդ հոդվածի: Թեև մասնակից պետությունն ընդունելիության կապակցությամբ որևէ առարկություն չներկայացրեց, կոմիտեն *էքս օֆիցիո** քննեց, թե արդյոք իրավասո՞ւ է *ռացիոնալ տեմպորիս* լսել այդ հաղորդումը:

¶ 7.3. Այնուամենայնիվ, ներկա հաղորդման առումով, Մարդու իրավունքների կոմիտեն պետք է նաև հաշվի առնի, որ Կանադայի համար դաշնագիրն ուժի մեջ է մտել 1976 թ. օգոստոսի 19-ին՝ տիկին Լովլեյսի ամուսնությունից մի քանի տարի անց: Ուրեմն՝ նա կորցրել է հնդկացու կարգավիճակը, երբ Կանադան կապված չէր դաշնագրով: Մարդու իրավունքների կոմիտեն որոշել է, որ իրավունք ունի դիտարկելու հաղորդումը, եթե իրադարձությունները, որոնց առումով ներկայացվել է բողոքը, թեև տեղի են ունեցել մինչև դաշնագրի ուժի մեջ մտնելը, շարունակում են հետևանքներ ունենալ, որոնք հենց դաշնագրի խախտումներ են այդ ժամկետից հետո: Հետևաբար, կոմիտեի համար տեղին է գիտենալ, թե արդյոք 1970 թ. տիկին Լովլեյսի ամուսնությունն ունեցե՞լ է նման հետևանքներ:

⁶ M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), at 679.

⁷ Տե՛ս նաև Ցվարտ, վերը, ծնթ. 2, 135-7. P. R. Ghandhi, *The Human Rights Committee and the Right of Individual Communication* (Ashgate, Dartmouth, 1998), 156-7:

⁸ Պարբ. 4:

⁹ Պրն Վեններգերը չհամաձայնեց՝ գտնելով, որ միջազգային իրավունքում ՄԻԿ-ն իրավասություն չունի քննելու նման գործերը՝ անկախ մասնակից պետության կողմից տրված որևէ համաձայնությունից:

¹⁰ Տե՛ս նաև Ցվարտ, վերը, ծնթ. 2, 137-8: Համեմատության համար տե՛ս, օրինակ, «Մուկունտո ընդդեմ Համբիայի» (*Mukunto v Zambia, 768/97*), որում որոշ մեղադրանքներ անընդունելի էին *ռացիոնալ տեմպորիս*, չնայած մասնակից պետությունը չբարձրացրեց հարցը (պարբ. 6.3):

* Կանադայի բնիկ ժողովուրդներից, որոնք բնակվում են Նյու Բրանսուիկի և Քվեբեկի տարածքում (*ծան. քարգմ.*):

* Ի պաշտոն (*ծան. քարգմ.*):

¶ 7.4. Քանի որ հաղորդման հեղինակն էթնիկ հնդկացի է, որպես հնդկացի իրավական կարգավիճակի կորստի ուրիշ հետևանքներ կարող են, սկսած Կանադայի համար դաշնագրի ուժի մեջ մտնելուց, համարվել դաշնագրով պաշտպանվող իրավունքների խախտում: Մարդու իրավունքների կոմիտեն տեղեկացվել է, որ հեղինակի իրավիճակում հայտնված անձինք զրկվում են հնդկացիական ռեզերվացիայում բնակվելու իրավունքից՝ դրանից բխող բաժանումով հնդկացիական համայնքից և իրենց ընտանիքի անդամներից: Նման արգելումը կարող է ազդեցություն ունենալ այն իրավունքների վրա, որոնք երաշխավորված են դաշնագրի 12(1), 17-րդ, 23(1), 24-րդ և 27-րդ հոդվածներով: Հեղինակի ունեցած կարգավիճակի կորուստը կարող է ունենալ նաև նման այլ հետևանքներ...

¶ 10. Մարդու իրավունքների կոմիտեն իրեն ներկայացված հաղորդումը քննելիս պետք է ելնի այն հիմնական փաստից, որ Սանդրա Լովլեյսը 1970 թ. մայիսի 23-ին ամուսնացել է ազգությամբ ոչ հնդկացու հետ, հետևաբար կորցրել իր մալիսիտ հնդկացու կարգավիճակը՝ համաձայն «Հնդկացիների մասին» ակտի 12(1)(բ) բաժնի: Այս դրույթը հիմնված էր և մինչ այժմ էլ հիմնված է սեռի հիման վրա՝ *դե յուրե* տարբերակման վրա: Այնուամենայնիվ, ոչ դրա կիրառությունը հեղինակի ամուսնության՝ որպես հնդկացու կարգավիճակից զրկվելու պատճառի նկատմամբ, ոչ դրա հետևանքներն այդ ժամանակ չէին կարող համարվել դաշնագրի խախտում, որովհետև տվյալ գործիքը Կանադայի համար ուժի մեջ չի եղել մինչև 1976 թ. օգոստոսի 19-ը: Ավելին, որպես կանոն, կոմիտեն իրավասու չէ քննելու այն մեղադրանքները, որոնք վերաբերում են մինչև դաշնագրի և կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձություններին: Հետևաբար, Կանադայի վերաբերյալ կոմիտեն կարող է դիտարկել մարդու իրավունքների միայն այն ենթադրվող խախտումները, որոնք տեղի են ունեցել 1976 թ. օգոստոսի 19-ին կամ դրանից հետո: Որոշակի անձի դեպքում, որը պնդում է, թե խախտման զոհ է հանդիսանում, կոմիտեն չի կարող օրենքի վերաբերյալ իր տեսակետն արտահայտել վերացական կերպով՝ առանց հաշվի առնելու ենթադրվող զոհի նկատմամբ օրենքի կիրառման ժամկետը: Սանդրա Լովլեյսի պարագայում ստացվում է, որ կոմիտեն իրավասու չէ որևէ տեսակետ արտահայտելու նրա՝ հնդկացու կարգավիճակը կորցնելու նախնական պատճառի, այսինքն՝ հեղինակի նկատմամբ նրա ամուսնության ժամանակ՝ 1970 թ. կիրառված «Հնդկացիների մասին» ակտի վերաբերյալ:

¶ 11. Այնուամենայնիվ, կոմիտեն ընդունում է, որ իրավիճակը կարող է տարբեր լինել, եթե ենթադրվող խախտումները, որոնք թեև վերաբերում են մինչև 1976 թ. օգոստոսի 19-ը տեղի ունեցած դեպքերին, շարունակվում են կամ ունեն հետևանքներ, որոնք հենց խախտումներ են՝ այդ ժամկետից հետո: Այդ առումով, Սանդրա Լովլեյսի դրությունը քննելիս կոմիտեն պետք է հաշվի առնի դաշնագրի բոլոր համապատասխան դրույթները: Կոմիտեն, մասնավորապես, դիտարկել է, թե որքանով կարող են 2-րդ և 3-րդ հոդվածների ընդհանուր դրույթները, ինչպես նաև 12(1), 17(1), 23(1), 24-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածներում նշված իրավունքները կիրառելի լինել Լովլեյսի ներկա դրության փաստերի դեպքում:

Կոմիտեն հանգեց այն եզրակացության, որ հաղորդումն ընդունելի է *ռազիոնե տենպորիս*¹¹.

¶ 13.1. Կոմիտեն համարում է, որ ներկա բողոքի ելթյունը վերաբերում է «Հնդկացիների մասին» ակտի շարունակվող ազդեցությանը՝ Սանդրա Լովլեյսի զրկված լինելը հնդկացու իրավական կարգավիճակից, մասնավորապես, որովհետև նա այդ պատճառով չի կարող պահանջել իր ցանկացած վայրում՝ Տոբիկ ռեզերվացիայում բնակվելու օրինական իրավունքը: Այս փաստը շարունակվում է դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո և դրա հետևանքները պետք է քննվեն՝ հաշվի չառնելով դրանց սկզբնական պատճառը...

[2.08] «Ջ. Լ.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (J.L. v AUSTRALIA, 491/92)

Այս գործում հայցվորն իրավախորհրդատու էր, նա չէր ցանկացել վճարել Վիկտորիայի իրավաբանության ինստիտուտի պահանջած տարեկան վճարը իր գործունեության արտոնագիրը թարմացնելու համար: Դրա հետևանքով իրավաբանության ինստիտուտը հրաժարվել էր նրան տրամադրել գործունեության արտոնագիր, և հայցվորը շարունակել էր աշխատել առանց արտոնագրի: Ինստիտուտի դիմումի հիման վրա գերագույն դատարանը տուգանել էր բողոքի հեղինակին, հանել նրա անունը դատապաշտպանների և իրավախորհրդատուների ցուցակից և կարգադրել բանտարկել նրան՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար: Հեղինակը բողոքել էր կոմիտեին, որ իր գործը չի քննվել անկախ և անկողմնակալ դատարանի կողմից՝ հակառակ 14-րդ հոդվածի: Նա հետևյալ դիտարկումներն էր կատարել *ռազիոնե տենպորիս* հարցի վերաբերյալ.

¹¹ Որոշում՝ ըստ ելթյան [on the merits], տե՛ս [24.12]:

¶ 3.3. Ավստրալիայի համար կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելու ժամկետի առումով պնդում է արվում, որ 14-րդ հոդվածի խախտումը շարունակվող հետևանքներ ունի, այն է՝ հեղինակը շարունակում է դուրս մնալ գերագույն դատարանի դատապաշտպանների և իրավախորհրդատուների ցուցակից՝ առանց վերականգնվելու որևէ հեռանկարի:

Կոմիտեն համաձայնեց հեղինակի հետ.

¶ 4.2. ... Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, որ իր գործը արդար և անկողմնակալ դատաքննություն չի անցել, կոմիտեն նշում է, որ թեև համապատասխան դատական լուծման անց են կացվել մինչև 1991 թ. դեկտեմբերի 25-ը, գերագույն դատարանի որոշումների հետևանքները շարունակվում են մինչ այժմ: Համապատասխանաբար, հեղինակի իրավունքների՝ ենթադրաբար այդ որոշումներից բխող խախտումների վերաբերյալ բողոքները սկզբունքորեն *ռազիոնն տենպորիս* չեն բացառվում:

Այնուամենայնիվ, կոմիտեն գործն անընդունելի համարեց այլ պատճառներով¹²:

[2.09] Կոմիտեն նաև բազմաթիվ այլ գործերում է գտել շարունակվող խախտումներ, որոնք հնարավորություն են տվել հաղորդումները *ռազիոնն տենպորիս* համարելու ընդունելի, ներառյալ «*Կուլոմին ընդդեմ Հունգարիայի*» (*Kulomin v Hungary, 521/1991*), վերաբերում էր նախնական կալանքի ժամանակահատվածին, որը սկսվել էր մինչև Հունգարիայում կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը, սակայն ավարտվել այդ ժամկետից հետո) [11.33] և «*Գույե և այլք ընդդեմ Ֆրանսիայի*» (*Gueye et al v France, 196/1985*), վերաբերում էր խտրականությանը) [23.51]:

[2.10] «Ս. Է.-ն ընդդեմ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ» (*S.E. v ARGENTINA, 275/88*)

Հաղորդման հեղինակները բողոքում էին ընդդեմ իրենց հարազատների «անհետացման»՝ պետական գործակալների ձեռքով: Այնուամենայնիվ, այդ անհետացումները և բոլոր հետագա խախտումները տեղի էին ունեցել մինչև 1986 թ., երբ կամընտիր արձանագրությունն ուժի մեջ էր մտել Արգենտինայի համար: Հեղինակները նաև պնդում էին, որ 1987 թ. «Պատշաճ հնազանդության մասին ակտի» [Due Obedience Act] ընդունումը, ինչը տեղի ունեցավ Արգենտինայում կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո, ինքնին խախտում էր դաշնագրի մի շարք հոդվածներ: Օրենքը գործնականում անձեռնմխելիություն էր ընձեռում զինվորական անձնակազմին՝ մարդու իրավունքների հավանական խոշոր խախտումներին համար: Կոմիտեն անընդունելիության վերաբերյալ հետևյալ դիտարկումներն արեց.

¶ 5.3. ... Հեղինակը հղում է կատարում դաշնագրի 2-րդ հոդվածին և պնդում, որ տեղի է ունեցել իրավական պաշտպանության իրավունքի խախտում: Այս վեճի առումով կոմիտեն վկայակոչում է իր նախադեպային պրակտիկան, ըստ որի՝ դաշնագրի 2-րդ հոդվածը պետությունների ընդհանուր պարտավորություն է, և դրան՝ առանձին վերցված, անձինք չեն կարող կամընտիր արձանագրությամբ հղում անել («*Ս. Գ. Բ.-ն և Ս. Փ.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*M.G.B. and S.P. v Trinidad and Tobago*, հաղորդում թիվ 268/1987, պարբ. 6.2, անընդունելի հռչակված 1989 թ. նոյեմբերի 3-ին): Նկատի ունենալով, որ 2-րդ հոդվածին անձինք կարող են հղում անել միայն դաշնագրի այլ հոդվածների հետ համակցված, կոմիտեն ուշադրություն է դարձնում, որ դաշնագրի 2-րդ հոդվածի 3 (ա) կետը սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է «յուրաքանչյուր անձի համար, ում ... իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն» ...: Այդպիսով, 2-րդ հոդվածի համաձայն՝ իրավական պաշտպանության իրավունքը ծագում է միայն այն բանից հետո, երբ պարզվում է, որ դաշնագրի իրավունք է խախտվել: Սակայն իրադարձությունները, որոնք կարող էին դաշնագրի մի շարք հոդվածների խախտումներ համարվել, և որոնց առումով հնարավոր կլինեի դիմել իրավական պաշտպանության, տեղի են ունեցել նախքան Արգենտինայի համար դաշնագրի և կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը: Հետևաբար, հարցը չի կարող դիտարկվել կոմիտեի կողմից, քանի որ հաղորդման այս մասը *ռազիոնն տենպորիս* անընդունելի է:

¶ 5.4. Կոմիտեն անհրաժեշտ է համարում հիշեցնել մասնակից պետությանը, որ նա դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո տեղ գտած կամ շարունակվող խախտումների առնչությամբ պարտավորություն է կրում՝ մանրակրկիտ հետաքննելու

¹² Հաղորդումն ի վերջո անհամատեղելի համարվեց դաշնագրի դրույթների հետ: Տե՛ս նաև «*Ս. Ա.-ն ընդդեմ Իտալիայի*» (*M.A. v Italy, 117/81*), պարբ. 13.2:

ենթադրվող խախտումները և, որտեղ կիրառելի է, իրավական պաշտպանություն ցույց տալու զոհերին կամ նրանց խնամքի տակ գտնվողներին:

2-րդ հոդվածի 3-րդ կետը ՔՔԻՄԴ-ի խախտումների զոհերին իրավական պաշտպանության իրավունք է տալիս: Սակայն, ինչպես հաստատվեց «Ս. Է.-ն ընդդեմ Արգենտինայի» գործում, 2-րդ հոդվածի 3-րդ կետն ինքնուրույն իրավունք չի ընձեռում¹³: Չի կարելի պնդել, որ խախտվել է 2-րդ հոդվածի 3-րդ կետը, եթե այն չի զուգակցվում դաշնագրի որևէ նյութական իրավունքի խախտմամբ: Այս գործում հեղինակը չէր կարող նյութական իրավունքների խախտման վերաբերյալ պնդում անել, նման բոլոր խախտումները տեղի էին ունեցել նախքան Արգենտինայի համար ԿԱ-ի ուժի մեջ մտնելը¹⁴:

[2.11]

**«ՔՅՈՆԵՆ և ՔՅՈՆԵՆ ընդդեմ ՅՈՒՆԳԱՐԻԱՅԻ»
(KŐNYE and KŐNYE v HUNGARY, 520/92)**

Հեղինակների գույքը հանրայնացվել էր պետության կողմից՝ նախքան 1988 թ. Յունգարիայի համար ԿԱ-ի ուժի մեջ մտնելը: Հեղինակները պնդում էին, որ պետության կողմից իրենց չփոխհատուցելը ընտանիքում և տանը իրենց մասնավոր կյանքի իրավունքը երաշխավորող 17-րդ հոդվածի շարունակվող խախտում է: Նրանք նաև պնդում էին, որ 1988 թ. հետո փոխհատուցման վերաբերյալ նոր լսումների համար իրենց դիմումի մերժումը պետության կողմից խախտում է 14-րդ հոդվածը, քանի որ այդ մերժումը տեղի չի ունեցել «հրապարակային բնության» արդյունքում: ՄԻԿ-ը չհամաձայնեց և շարունակվող խախտումների վերաբերյալ նշեց հետևյալը.

¶ 6.4. ... Շարունակվող խախտումը հարկ է մեկնաբանել որպես կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո գործողությամբ կամ հստակ մասնակցությամբ մասնակից պետության նախկին խախտումների ամրագրում:

[2.12] Տիկին Շանետը անհամաձայնություն հայտնեց *Քյոնյեի* գործով 14-րդ հոդվածին առնչվող բողոքի անընդունելիության վերաբերյալ: Իսկապես, քանի որ 14-րդ հոդվածին առնչվող բողոքը վերաբերում էր 1988 թ. հետո Յունգարիայի արդարադատության համակարգի վարչակարգի ենթադրվող բացթողումներին, մեղադրանքը հստակորեն *ռազիոնե տենպորիս* ընդունելի էր թվում, թերևս նույնիսկ կարիք չկար դիմելու «շարունակվող խախտումներ» հասկացությանը: Շանետը եզրափակեց ՄԻԿ-ի մեծամասնությանն ուղղված հետևյալ զգուշացմամբ.

Վերջապես, իմ կարծիքով, երբ կոմիտեն հաղորդում է քննում կամընտիր արձանագրությամբ, ապա իր որոշումներում պետք է առաջնորդվի միայն դաշնագրի իրավական սկզբունքներով, ոչ թե քաղաքական նկատառումներով՝ թեկուզ ընդհանուր բնույթի, կամ այն մտավախությամբ, թե հաղորդումների հեղեղ կսկսվի այն երկրներից, որոնք փոխել են իրենց կառավարման համակարգը:

[2.13] *Քյոնյեի* գործում մեծամասնության կողմից «ամրագրման» պայմանի ստուգումն անօգուտ էր¹⁵: «Ամրագրման» կարիքը ցույց է տալիս, որ ընդունելիությունը դադարում է, երբ ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց հետո խախտման շարունակվող հետևանքները մնում են առանց պետության կողմից այդ խախտումների խորացման: Այդ դեպքում *Լուվլեյսի* գործը [2.07] նույնպես կարող էր *ռազիոնե տենպորիս* անընդունելի համարվել:

[2.14] Վերը նշված գործերով, որոնցում շարունակվող խախտումներ չէին արձանագրվել (օրինակ՝ ենթադրվող խոշտանգումը և սպանությունը «Ս. Է.-ն ընդդեմ Արգենտինայի» գործում (275/88) [2.10], և հանրայնացումը «*Քյոնյե և Քյոնյե ընդդեմ Յունգարիայի*» գործում (520/92) [2.11]), վիճարկվող ակտերն ամբողջապես *ավարտվել էին* մինչև համապատասխան երկրում ԿԱ-ի ուժի մեջ մտնելը¹⁶: Մինչդեռ Սանդրա

¹³ Տե՛ս նաև «Ռ. Ա. Վ. Է.-ն ընդդեմ Արգենտինայի» (*R.A.V.N. v Argentina*, 343-345/88), «Ատկինսոն ընդդեմ Կանադայի» (*Atkinson v Canada*, 573/94), պարբ. 8.2: Տե՛ս նաև [1.23]:

¹⁴ Տե՛ս նաև «Ինոստրոսան և այլք ընդդեմ Չիլիի» (*Inostroza et al v Chile*, 717/96) [10.14], «Վարգասն ընդդեմ Չիլիի» (*Vargas v Chile*, 718/96): Ի հակադրություն՝ տե՛ս «Ռոդրիգեսն ընդդեմ Ուրուգվայի» (*Rodriguez v Uruguay*, 322/88) գործով որոշումը, այստեղ՝ [9.125]:

¹⁵ Տե՛ս նաև Գանդիի, վերը, ծմբ. 7, 147-50:

¹⁶ Այս դիտարկումը չի հակասում տիկին Շանեի բերած փաստարկին, որ արդար դատաքննության մասին բողոքը վերաբերում էր իրադարձությունների, որոնք տեղի էին ունեցել ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց *հետո* [2.12]:

Լուվլեյսին իր ցեղից օտարելը «Լուվլեյսն ընդդեմ Կանադայի» գործում (24/77) [2.07], բողոքի հեղինակի նախնական կալանքը «Կուլոմինն ընդդեմ Յունգարիայի» գործում (521/91) [2.09]¹⁷ և խտրական վերաբերմունքը «Գույը և այլք ընդդեմ Ֆրանսիայի» գործում (196/85) [2.09]¹⁸ չէին ավարտվել մինչև համապատասխան պետության համար ԿԱ-ի ուժի մեջ մտնելը: Ուստի միշտ չէ, որ հեշտությամբ կարելի է ցույց տալ «շարունակվող խախտումների» պայմանի՝ հակոտնյա որոշումների միջև առկա տարբերությունները:

[2.15] «ԿՈՒՐՈՎՍԿԻՆ ընդդեմ ԼեՅԱՍՏԱՆԻ» (KUROWSKI v POLAND, 872/99)

Հաղորդման հեղինակը պնդում էր, որ եղել է 25-րդ հոդվածի խախտում՝ կապված ենթադրաբար քաղաքական հետապնդման հետևանքով պետական ծառայությունից իր ազատման հետ: Ազատումը տեղի էր ունեցել մինչև Լեհաստանի կողմից ԿԱ-ի վավերացումը, սակայն այդ ազատման հետ կապված դատական գործընթացները, որոնք անհաջողությամբ էին պսակվել, հեղինակի կողմից ձեռնարկվել էին ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց հետո: ՄԻԿ-ը բողոքը համարեց *ռազիոնե տեմպորիս* անընդունելի:

¶ 6.5. Սույն գործում հեղինակն ազատվել էր իր զբաղեցրած պաշտոնից 1990 թ.՝ համաձայն այդ ժամանակ գործող օրենքի, և նույն տարին, առանց հաջողության, որպես թեկնածու, ներկայացել էր շրջանային ընդունող հանձնաժողովներից մեկին՝ պարզելու համար, թե բավարարո՞ւմ է վերականգնավորված ներքին գործերի նախարարությունում աշխատանքի անցնելու համար օրենքով սահմանված նոր չափանիշներին: Այն փաստը, որ հեղինակը գործը չէր շահել դատական գործընթացում, որը նախաձեռնել էր 1995 թ.՝ կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո, ինքնին դաշնագրի խախտում չէ: Կոմիտեն չի կարող եզրակացնել, որ խախտումը տեղի է ունեցել մինչև մասնակից պետության համար կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը և շարունակվել դրանից հետո: Հետևաբար, կոմիտեն, համաձայն կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի, հաղորդումը հայտարարում է *ռազիոնե տեմպորիս* անընդունելի:

[2.16] «Ջ. Լ.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործում (491/92) [2.08] իրավախորհրդատուին դատապաշտպանների և իրավախորհրդատուների ցուցակից հանելու (որտեղ առկա էր շարունակվող խախտում) և *Կուրովսկու* գործում պետական ծառայողին աշխատանքից ազատելու միջև տարբերությունը դժվար է ըմբռնել: Այնուամենայնիվ, «ցուցակից հանելը» գործողություն է, որը շարունակում է անձին թույլ չտալ օգտվելու իր կենսապահովման միջոցներից, մինչդեռ պետական ծառայությունից ազատելը չի խանգարում անձին պետական ծառայության մեկ այլ աշխատանք փնտրել, հետևաբար, տարբերությունը կրկին կարող է թաքնված լինել այն որոշման մեջ, թե երբ է վիճարկվող գործողությունը «ավարտվել»: Եթե *Կուրովսկու* և «Ջ. Լ.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործերի միջև տարբերությունը *կարող է* ընկալելի լինել, ապա շատ դժվար է տարբերություն գտնել *Կուրովսկու* և հետևյալ գործի միջև:

[2.17] «ԱԴՈՒՄՅՈՒՆ և այլք ընդդեմ ՏՈԳՈՅԻ» (ADUAYOM et al v TOGO, 422/90)

Այս գործի հայեցակետերից մեկն այն է, որ 1985 թ. մինչև 1988 թ. Տոգոյի համար ԿԱ-ի ուժի մեջ մտնելը, հաղորդման հեղինակները քաղաքական հետապնդման պատճառով հեռացվել են քաղաքացիական ծառայությունից: Հեղինակները վերականգնվեցին 1991 թ.: ՄԻԿ-ը գործի այս կողմը համարեց ընդունելի:

¶ 6.2. ... [ՄԻԿ-ը] նշեց, որ ենթադրվող խախտումները Տոգոյի համար ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց հետո ունեն շարունակվող հետևանքներ, այն է՝ հեղինակներին մերժում էին իրենց աշխատատեղերում վերականգնվելը մինչև 1991 թ. համապատասխանաբար մայիսի 27-ը և հուլիսի 1-ը, և չի կատարվել աշխատավարձի գծով պարտքերի կամ փոխհատուցման այլ ձևերի որևէ վճարում: Կոմիտեն համարեց, որ այս շարունակվող հետևանքները կարող են դիտվել մասնակից պետության կողմից ենթադրաբար կատարված նախկին խախտումների ամրագրում: Հետևաբար, կոմիտեն եզրակացրեց, որ հաղորդումների քննումը *ռազիոնե տեմպորիս* չի բացառվում, և համարեց, որ դրանք կարող են հարցեր առաջացնել՝ համաձայն դաշնագրի ... 19-րդ և 25(գ) հոդվածների:

Պարզ չէ, թե ինչու է ԿԱ-ի ուժի մեջ մտնելու ժամկետից («համապատասխան ժամկետ») հետո պետության կողմից *Ադուայոմի* գործով հեղինակների վերականգնումը մերժելը համեմատաբար տարբեր համապա-

¹⁷ Տե՛ս նաև [11.33]:

¹⁸ Տե՛ս նաև [23.51]:

տասխան ժամկետից հետո *Կուրուվսկու* գործի հեղինակին պետության դատարանների կողմից փոխհատուցումը կամ վերականգնումը մերժելուց: Հնարավոր է, որ *Ադուայումի* գործում ենթադրվող քաղաքական հետապնդումն ավելի հստակ էր¹⁹: Սակայն բողոքի էությունն առհասարակ որևէ նշանակություն չպիտի ունենա հաղորդումը *ճացիոնե տենպորիս* անընդունելի համարելու խնդրում:

[2.18] «*Կանգն ընդդեմ Կորեայի Հանրապետության*» (*Kang v Republic of Korea, 878/99*) գործում հեղինակը բողոքում էր, *ի թիվս այլոց*, լրտեսության համար դատապարտման դեմ, ինչը ենթադրաբար խախտել էր, ըստ 19-րդ հոդվածի, նրա քաղաքական հայացքների արտահայտման իրավունքը: Դատապարտումը տեղի էր ունեցել նախքան մասնակից պետության համար ԿԱ-ի ուժի մեջ մտնելը: Սակայն դատապարտմանը հետևած բանտարկությունը շարունակվել էր այդ ժամկետից հետո: ՄԻԿ-ը հաստատեց, որ «նման հանգամանքներում բանտարկության ժամկետը, առանց հավելյալ գործոնների միջամտության, որպես այդպիսին, չի հավասարեցվում, ի խախտումն դաշնագրի, «շարունակվող խախտման», որը բավարար է բանտարկման պատճառ դարձած սկզբնական հանգամանքները *ճացիոնե տենպորիս* կոմիտեի իրավա-սության շրջանակներ բերելու համար»²⁰:

Եզրակացություն

[2.19] *Ռացիոնե տենպորիս* կանոնը կիրառվում է այն գործերի ընդունելիությունը բացառելու համար, որոնցում վիճարկվող իրադարձությունները տեղի են ունեցել նախքան տվյալ մասնակից պետության համար ԿԱ-ի ուժի մեջ մտնելը: Այնուամենայնիվ, եթե խախտումը սկսվել է մինչ այդ ժամկետը և շարունակվում է այդ ժամկետից հետո, կամ եթե դրա հետևանքները, որոնք հենց խախտում են, շարունակվում են այդ ժամկետից հետո, ապա *ճացիոնե տենպորիս* կանոնի կիրառությամբ բողոքը ընդունելիության տեսանկյունից չի բացառվի: Ցավոք, շարունակվող և չշարունակվող խախտումների սահմանագիծն այնքան էլ հստակ չէ, մանավանդ *Կուրուվսկու* գործով վերջերս ընդունված որոշումից հետո:

¹⁹ Ի վերջո, ՔՔԻՄԴ-ի 25-րդ հոդվածի խախտումներ հայտնաբերվեցին «*Ադուայումը և այլք ընդդեմ Տոգոյի*» (422/90) գործում:

²⁰ Պարբ. 6.3:

«Տուժող* լինելու» պահանջը

- «Տուժող լինելու» պահանջը կամընտիր արձանագրությամբ ընդունելիության համար[3.01]
- Տուժողը պետք է անձ լինի.....[3.07]
- Հասարակական կազմակերպություններ[3.08]
- Քաղաքական կուսակցություններ[3.09]
- Կորպորացիաներ[3.10]
- Հավաքական իրավունքներ[3.15]
- Երրորդ անձանց իրավունակությունը[3.18]
- Ներկայացուցչություն[3.20]
- Տուժողն ունակ չէ անձամբ լիազորելու հաղորդումը[3.25]
- Տուժողին ներկայացնում են իրավահաջորդները[3.29]
- Պոտենցիալ խախտումներ[3.30]
- Ապագա խախտումները պետք է ողջամտության սահմաններում կանխատեսելի լինեն...[3.30]
- Կիրարկման բացակայության դեպքում օրենսդրությունը կարող է խախտել ՔՔԻՄԴ-ը[3.36]
- Եզրակացություն[3.39]

«Տուժող լինելու» պահանջը կամընտիր արձանագրությամբ ընդունելիության համար

[3.01] Կամընտիր արձանագրության (ԿԱ) 1-ին հոդվածը սահմանում է, որ հայցերը պետք է ներկայացված լինեն անձանց կողմից, որոնց կարծիքով՝ իրենք հանդիսանում են ՔՔԻՄԴ-ի խախտման զոհեր: *Մավրիկիացի կանանց* գործում (35/78) կոմիտեն արել է հետևյալ հաճախ մեջբերվող հայտարարությունը.

¶ 9.2. ... Անձը կարող է պնդել, որ հանդիսանում է տուժող՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, եթե իրականում անձամբ է ազդեցություն կրել: Այս պահանջը կարելի է հասկանալ որոշակիության տարբեր աստիճաններով: Այնուամենայնիվ, որևէ անձ չի կարող վերացական կերպով՝ *ակցիո պոպուլարիսի** միջոցով վիճարկել որևէ օրենք կամ գործելակերպ՝ պնդելով, որ այն հակասում է դաշնագրին . . .

Հետևաբար, հայցվորը կարող է պնդել, որ ինքը տուժող է հանդիսանում միայն այն դեպքում, երբ անձամբ է կրել տվյալ գործողության կամ անգործության ազդեցությունը: Կոմիտեն հաղորդումը կմերժի՝ որպես անընդունելի, եթե հայցվորը չկարողանա ցույց տալ տուժողի այս կարգավիճակը: Բացառության կարգով տուժողի փոխարեն հաղորդումը կարող է ներկայացնել երրորդ կողմը [3.19]: Սակայն տուժողը միշտ պետք է ներգրավված լինի հաղորդման մեջ: Ասվածը ցույց է տրված հետևյալ գործի օրինակով:

* Անգլերեն «victim» բառը թարգմանվում է և՛ որպես տուժող, և՛ որպես զոհ (*ժան. թարգմ.*):

* actio popularis- հանրային հայց (*ժան. թարգմ.*):

[3.02]

**«ՊՈՒՆԳԱՎԱՆԱՄՆ ընդդեմ ՄԱՎՐԻԿԻՈՍԻ»
(POONGAVANAM v MAURITIUS, 567/93)**

Այս գործի հեղինակը մեղավոր է ճանաչվել սպանության համար և Մավրիկիոսի դատարանի արտագնա միստում դատապարտվել մահապատժի: Դատավարությունը տեղի է ունեցել դատավորի և ինը հոգուց բաղկացած ատենակալների խմբի ներկայությամբ, ովքեր դատավճիռը կայացրել են միաձայն:

Հեղինակը վիճարկում էր «Ատենակալների մասին ակտը»՝ պնդելով, որ այն անհամատեղելի է դաշնագրի հետ: Հեղինակի փաստարկները հետևյալն էին.

¶ 3.2. Հեղինակը պնդում է, որ «Դատարանների մասին ակտի» 42-րդ բաժինը, որով նախատեսվում է ատենակալների խումբ՝ «բաղկացած ինը տղամարդուց, ովքեր համապատասխանում են «Ատենակալների մասին ակտով» սահմանված պահանջներին», խախտում է դաշնագրի 3-րդ հոդվածը, քանի որ այն խտրական է կանանց հանդեպ, ովքեր գործնականում զրկվում են որպես ատենակալ ծառայելու հնարավորությունից:

¶ 3.3. Այնուհետև պնդում է արվում, որ խախտվել է դաշնագրի 25(գ) հոդվածը, քանի որ մավրիկիացի կանայք հնարավորություն չեն ունեցել և գործնականում չունեն հավասարության ընդհանուր հիմունքներով մտնելու պետական ծառայության. ատենակալի ծառայությունը մեկնաբանվում է որպես պետական ծառայություն:

¶ 3.4. Հեղինակը հայտարարում է, որ մասնակից պետությունը խախտել է դաշնագրի 26-րդ հոդվածը, քանի որ կանանց բացառումը ատենակալի ծառայությունից փաստորեն նշանակում է, որ նրանց հավասարությունն օրենքի առջև երաշխավորված չէ:

Կոմիտեն որոշեց, որ հեղինակի հաղորդումն ընդունելի չէ հետևյալ պատճառաբանությամբ.

¶ 4.2. Կոմիտեն նկատի է առել հեղինակի բողոքն առ այն, որ նա հանդիսանում է Մավրիկիոսի կողմից 3-րդ, 25(գ) և 26-րդ հոդվածների խախտման տուժող, որովհետև իր դատավարության ժամանակ կանայք բացառված են եղել ատենակալի ծառայությունից: Այնուամենայնիվ, հեղինակը ցույց չի տվել, թե ինչպես է կանանց բացակայությունն ատենակալների շարքում իրականում վնասել իր օգտվելը դաշնագրով սահմանված իրավունքներից: Հետևաբար, նա չի կարող պնդել, որ հանդիսանում է «տուժող»՝ կանչնտի արժանագրության 1-ին հոդվածի իմաստով:

[3.03] «Մորիսոնն ընդդեմ Ճամայկայի» (Morrison v Jamaica, 663/95) գործում հեղինակը, որը ճամայկայում պահվող բանտարկյալ էր, լքված մի բանտախցում հայտնաբերել է իր հետ պատիժը կրող բանտարկյալների դեն նետված նամակագրությունը, ինչը նշանակում է, որ իր նամակագրությունն արժանացել է միևնույն բախտին՝ փոխանակ պատշաճ կերպով առաքվելու: Սակայն ՄԻԿ-ը գտավ, որ հեղինակն այդ առումով չի կարող պահանջ ներկայացնել, քանի որ չկա որևէ փաստ, որը ցույց տար, որ նա հայտնաբերել էր «իրեն ուղարկված կամ իր կողմից ուղարկված նամակներ կամ փաստաթղթեր»:

[3.04] «Վան Դյուզենն ընդդեմ Կանադայի» (Van Duzen v Canada, 50/79) գործում ՄԻԿ-ն ըստ էության որոշում ընդունեց հեղինակի դեմ՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ ընդունելիությանը հետևող զարգացումները բավարարել են նրա գանգատը: Սակայն պարտադիր չէ, որ որևէ մեկը շարունակի մնալ «տուժող» իր բողոքի քննարկման ողջ ժամանակահատվածում: Վան Դյուզենի գործի փաստերը բացառիկ էին, քանի որ հեղինակը նույնիսկ չէր կարողանում ցույց տալ, որ իր իրավունքները երբևէ խախտվել են¹: Համեմատության համար նշենք, որ «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» (A v Australia, 560/93) գործում հեղինակը կարողացավ ապացուցել, որ ինքն իրոք տուժող է հանդիսանում 9-րդ հոդվածի առումով, չնայած ազատ էր արձակվել մինչև ՄԻԿ-ի կողմից ըստ էության որոշման կայացումը²: Այնուամենայնիվ, Ա.-ն իրեն կամայական կալանավորելու համար փոխհատուցման իրավունք ստացավ:

[3.05] «Թադմանն ընդդեմ Կանադայի» (Tadman v Canada, 816/98) գործը «տուժողի» պահանջի շուրջ ուշագրավ տարածայնություն վեր հանեց ՄԻԿ-ում: Հեղինակները, որոնք ոչ կաթոլիկ կրոնական դավանանք ունեցող անձինք էին, բողոքում էին, որ հռոմի կաթոլիկ դպրոցները Կանադայում գործող միակ ոչ աշխարհիկ դպրոցներն են, որոնք պետական ֆինանսավորում են ստանում: Միևնույն հարցի վերաբերյալ մեկ այլ բողոք «Ուոլդմանն ընդդեմ Կանադայի» (Waldman v Canada) [23.63] գործում, որը ներկա-

¹ Այդ գործի քննարկումը տես այստեղ՝ [15.07]:

² «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» (560/93) գործի քննարկումը տես այստեղ՝ [11.16], [11.55] և [11.59]:

յացրել էր մի հրեա ծնող, ով իր երեխաներին ուղարկում էր մասնավոր հրեական դպրոց, իրականում բավարարվել էր՝ համարվելով 26-րդ հոդվածի խախտում: Այնուամենայնիվ, *Թադմանի* գործի հեղինակները տուժող չճանաչվեցին, քանի որ նրանց երեխաները հաճախում էին պետական աշխարհիկ դպրոցներ, որոնք ֆինանսավորվում էին պետության կողմից ճիշտ այնպես, ինչպես մասնավոր կաթոլիկ դպրոցները: ՄԻԿ-ն ընդունեց պետության ներկայացրած փաստարկը անընդունելիության վերաբերյալ:

¶ 6.2. Մասնակից պետությունը վիճարկել է հաղորդման ընդունելիությունն այն հիմքով, որ հաղորդման հեղինակները չեն կարող ապացուցել, որ հանդիսանում են դաշնագրի խախտման զոհ: Այս համատեքստում կոմիտեն նշում է, որ հեղինակները, որ թեպետ պնդում են, թե հանդիսանում են խտրականության զոհ, իրենց երեխաների համար չեն փնտրում պետական ֆինանսավորում ունեցող կրոնական դպրոցներ, ընդհակառակը՝ պահանջում են դադարեցնել մասնավոր հռոմեական կաթոլիկ դպրոցների պետական ֆինանսավորումը: Այսինքն՝ եթե դա տեղի ունենար, հեղինակների անձնական դրությունը՝ կապված կրոնական կրթական հաստատությունների ֆինանսավորման հետ, չէր բարելավվի: Հեղինակները բավարար կերպով չեն հիմնավորել, թե ինչպես է մասնավոր հռոմի կաթոլիկ դպրոցներին ներկայումս հատկացվող պետական ֆինանսավորումն իրենց վնաս պատճառում կամ բացասաբար անդրադառնում իրենց վրա: Ելնելով այդ հանգամանքներից՝ կոմիտեն համարում է, որ նրանք չեն կարող ենթադրվող խտրականությունից տուժող ճանաչվել՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

Անհամաձայնություն հայտնելով՝ փոքրամասնություն կազմող տիկին Էվաթը, տիկին Մեդինա Քուիրոզան և պարոնայք Բիագվաթին ու Հենկինը նշեցին.

Ծնողները, որոնք ցանկանում են իրենց երեխաներին *կրոնական* կրթության տալ, բայց չունեն այդ հնարավորությունը դպրոցական համակարգի շրջանակներում և ստիպված են իրենք հոգալ նման կրթության հետ կապված ծախսերը, նույնպես կարող են համարվել տուժողներ: Այս գործում դիմողները դասվում են այդ մարդկանց շարքը, և այդ անձանց հայցերը, իմ կարծիքով, առնվազն անհրաժեշտ է համարել ընդունելի: [Շեղատառն ավելացված է:]

Այս գործը ցույց է տալիս, թե որքան խիստ է տուժող լինելու պահանջը: Ծնողները պարտավոր էին մինչև «տուժողի» կարգավիճակ ստանալը իրենց երեխաներին տեղափոխել ոչ կաթոլիկ կրոնական դպրոց՝ չնայած նման քայլը կանխող ծախսերի առկայությանը: *Թադմանի* գործում նախապատվությունը հարկ է տալ փոքրամասնության կարծիքին, քանի որ այն հաշվի է առնում նման տեղափոխման հետ կապված ֆինանսական դժվարությունները:

[3.06] «*Հիլը և Հիլն ընդդեմ Իսպանիայի*» (*Hill and Hill v Spain, 526/93*) գործում ՄԻԿ-ը հաստատեց, որ ԿԱ-ով կարելի է գործ ներկայացնել, եթե նույնիսկ ներկայացնողի սեփական վարքն անբասիր չէ: Այն փաստը, որ հեղինակները փախել էին Իսպանիայից՝ խախտելով գրավի դիմաց ազատ արձակվելու իսպանական պայմանները, չանդրադարձավ նրանց՝ ԿԱ-ով բողոք ներկայացնելու հնարավորության վրա³:

Տուժողը պետք է անձ լինի

[3.07] Տուժողը պետք է ֆիզիկական անձ լինի, ոչ թե իրավաբանական անձ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[3.08] «*ՀԱՐՏԻԿԱՅՆԵՆՆ ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ*»
(*HARTIKAINEN v FINLAND, 40/78*)

Հաղորդման հեղինակը ֆիննական դպրոցի ուսուցիչ էր, որ հաղորդումը ներկայացրել էր իր անունից և նաև որպես Ֆինլանդիայի ազատամիտների միության գլխավոր քարտուղար: Կոմիտեն հեղինակի՝ կազմակերպություն ներկայացնելու փորձի վերաբերյալ արեց հետևյալ դիտարկումները.

¶ 3. 1978 թ. հոկտեմբերի 27-ին Մարդու իրավունքների կոմիտեն որոշում էր կայացրել. (ա) համաձայն ժամանակավոր ընթացակարգի թիվ 91 կանոնի՝ հաղորդումն ուղարկել մասնակից պետությանը՝ հաղորդման ընդունելիությամբ:

³ Պարբ. 12.1: Տե՛ս նաև «*Գոմես Վասկեսն ընդդեմ Իսպանիայի*» (*Gómez Vazquez v Spain, 701/96*) գործը, պարբ. 10.3:

յան հարցի վերաբերյալ տեղեկություններ և նկատառումներ ստանալու համար, որքանով որ դրանք վերաբերում են հեղինակին՝ որպես անձի, և . . . (բ) տեղեկացնել հեղինակին, որ կոմիտեն չի կարող քննարկել հաղորդում այնքանով, որքանով որ այն ներկայացվել է դիմողի՝ որպես Ֆինլանդիայի ազատամիտների միության գլխավոր քարտուղարի կողմից, եթե նա չներկայացնի այն անձանց անունները և հասցեները, ում, իր պնդման համաձայն, ինքը ներկայացնում է, ինչպես նաև նրանց անունից հանդես գալու իրավունք ունենալու վերաբերյալ տեղեկությունները:

¶ 4. 1978 թ. դեկտեմբերին և 1979 թ. հունվարին հեղինակը ներկայացրեց 56 մարդու ստորագրություն և այլ տվյալներ, ովքեր լիազորում էին իրեն գործել իրենց՝ որպես ենթադրվող տուժողների անունից:

Չետևաբար, հասարակական կազմակերպությունները (ՉԿ-ներ) չեն կարող գործեր ներկայացնել սեփական անունից⁴: Սակայն կոմիտեն թույլ է տալիս ՉԿ-ներին աջակցել հեղինակներին՝ իրենց հաղորդումների առումով, ինչպես, օրինակ, արվել էր «*Չերցբերգը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Hertzberg et al v Finland, 61/79*) և «*Ինոստրոսան և այլք ընդդեմ Իտալիայի*» (*Inostroza et al v Chile, 717/96*) գործերում:

[3.08Ա] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ) 14-րդ հոդվածը պահանջում է, որ հաղորդումները ներկայացվեն անձանց կամ խմբերի կողմից, ովքեր պնդում են, որ հանդիսանում են դաշնագրի խախտումից տուժողներ: «Տուժող լինելու» պահանջը քննության է առնվել հետևյալ գործում:

**«ՈԱՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ և
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ ԸՆԴՈՂԵՄ ԴԱՆԻԱՅԻ»
(DOCUMENTATION and ADVISORY CENTRE on RACIAL
DISCRIMINATION v DENMARK, CERD 28/03)**

Գործի հեղինակը հասարակական կազմակերպություն էր, որը ներկայացնում էր տիկին Ֆակիրա Մոհամմադը՝ կենտրոնի հոգաբարձուների խորհրդի ղեկավարը: Կազմակերպությունը բողոքում էր այն իրողության դեմ, որ պետությունը չէր կիրառել անխտրականության վերաբերյալ դանիական օրենսդրությունը՝ պատժելու համար ընկերություններից մեկին, որն աշխատանքի հայտարարության մեջ հատուկ նշել էր, որ դիմողները պետք է լինեն «դանիացի»:

¶ 3.1. ... Թեև ոչ տիկին Ֆակիրա Մոհամմադը, ոչ էլ ոչ դանիական ծագումով որևէ այլ անձ չի դիմել հայտարարված աշխատանքի համար, տիկին Մոհամմադը պետք է համարվի տուժող այդ խտրական հայտարարությունից, քանզի նրա համար անիմաստ կլիներ այդ աշխատանքի համար դիմելը: Ավելին՝ հայցվորն ինքը պետք է ճանաչվի որպես տուժողի կարգավիճակ ունեցող՝ դաշնագրի 14-րդ հոդվածի առումով, քանի որ հայցը ներկայացնում է «ոչ դանիական ծագում ունեցող անձանց մի մեծ խումբ, որոնց հանդեպ խտրականություն է դրսևորվել տվյալ հայտարարությամբ»...

Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (ՌԽՎԿ) բողոքն անընդունելի համարեց:

¶ 6.4. Կոմիտեն չի բացառում անձանց խմբի կողմից, որը ներկայացնում է, օրինակ, ռասայական կամ էթնիկական որևէ խմբի շահերը, անհատական հաղորդում ներկայացնելու հնարավորությունը, պայմանով, որ կարողանա ապացուցել, որ հանդիսանում է դաշնագրի խախտումից ենթադրաբար տուժող, կամ տուժող է հանդիսանում իր անդամներից որևէ մեկը, և կարողանա միաժամանակ, այդ կապակցությամբ ներկայացնել պատշաճ հաստատում]...

¶ 6.7. Աշխատանքի ենթադրաբար խտրական հայտարարության ազդեցությունն անձամբ կրած որևէ հատկորոշելի տուժողի բացակայության պարագայում, որին ներկայացնելու լիազորություն կունենար հայցվորը, կոմիտեն եզրակացնում է, որ հայցվորը 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով չի հիմնավորել իր պնդումը, թե հանդիսանում կամ ներկայացնում է անձանց մի խումբ, որը պնդում է, թե տուժել է Դանիայի կատարած խախտման հետևանքով...

⁴ Տե՛ս նաև «Կորդինամենտոն ընդդեմ Իտալիայի» (*Coordinamento v Italy, 163/84*) գործը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[3.09] «*Ջ. Ռ. Թ.-ն և Վ. Գ. կուսակցությունն ընդդեմ Կանադայի*» (*J.R.T. and the W.G. Party v Canada, 104/81*) գործում հաղորդումը ներկայացվել էր Կանադայի մի քաղաքացու և Վ. Գ. կուսակցության՝ արտախորհրդարանական մի կուսակցության կողմից: Կոմիտեն որոշեց, որ.

¶ 8(ա). ... Վ. Գ. կուսակցությունը միավորում է, ոչ թե անձ, և, որպես այդպիսին՝ չի կարող հաղորդում ներկայացնել կոմիտեին՝ համաձայն կամընտիր արձանագրության: Ուստի հաղորդումն անընդունելի է՝ ըստ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի, որքանով որ վերաբերում է Վ. Գ. կուսակցությանը:

ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐ**[3.10] ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

¶ 8. Քանի որ դաշնագրի երաշխիքների նախատեսված շահառուները անձինք են, դաշնագիրը՝ որպես այդպիսին, չի պաշտպանում իրավաբանական անձանց օրինական իրավունքները...

[3.11] «*Լրագիր հրատարակող ընկերությունն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*A Newspaper Publishing Company v Trinidad and Tobago, 360/89*) և «*Յրատարակչական ու տպագրական ընկերությունն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*A Publication and Printing Company v Trinidad and Tobago, 361/89*) գործերում բողոքները ներկայացվել էին ընկերությունների կողմից՝ սեփական անունից: Դրանք համարվեցին անընդունելի, քանի որ կորպորացիաները չեն կարող դիմել կոմիտե:

[3.12] Տրինիդադյան գործերից և ոչ մեկում պնդում չէր արվել, որ ենթադրվող խախտումները զուգահեռաբար խախտում են նաև անձանց իրավունքները, ինչպես օրինակ՝ բաժնետերերինը: Այդ հարցը բարձրացվեց հետևյալ գործում:

«Ս. Ս.-ն ընդդեմ ԲԱՐԲԱԴՈՍԻ» (S.M. v BARBADOS, 502/92)

Յաղորդման հեղինակը հանդիսանում էր բարբադոսյան ընկերություններից մեկի սեփականատերը և միակ բաժնետերը: Նա բողոք էր ներկայացրել կոմիտե՝ պնդելով, որ իր գործը՝ կապված ապահովագրական պահանջի հետ, արդարացի և հրապարակային քննություն չի անցել: Կոմիտեն որոշեց, որ իրական «տուժողը» փաստացի ընկերությունն է: Կոմիտեն արեց հետևյալ դիտարկումները.

¶ 6.2. Կոմիտեն նշում է, որ հեղինակը հաղորդումը ներկայացրել է՝ պնդելով, որ հանդիսանում է տուժող, քանի որ խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված իր իրավունքը՝ դատարանից օգտվելու իրավունքը, որովհետև առաջին աստիճանի դատավորը կարգադրել է, որ ընկերությունը, որի սեփականատերը և միակ բաժնետերն է հանդիսանում հեղինակը, վճարի ապահովագրական վճարը, և հետաձգել է դատը մինչև վճարման կատարումը: Ըստ էության, հեղինակը կոմիտեի առջև բարձրացնում է իր ընկերության իրավունքների խախտման հարցը: Անկախ այն հանգամանքից, որ նա ընկերության միակ բաժնետերն է, ընկերությունը հանդիսանում է առանձին անձ: Իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները փաստացի կիրառվել են ընկերության անունից, ոչ թե հեղինակի:

¶ 6.3. Կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ միայն անձինք կարող են հաղորդումներ ներկայացնել Մարդու իրավունքների կոմիտե: Կոմիտեն համարում է՝ քանի որ հեղինակը պնդում է, թե խախտվել են իր ընկերության իրավունքները, որոնք դաշնագրով չեն պաշտպանվում, իրավունակ չէ՝ ըստ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի:

«Ս. Ս.-ն ընդդեմ Բարբադոսի» գործին կարելի է հակադրել հետևյալ գործը:

[3.13] «ՍԻՆԳԵՐՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (SINGER v CANADA, 455/91)

Ավան Սինգերը գրասենյակային պիտույքների և տպագրության բիզնես էր վարում և հաճախորդներ ուներ, որոնք մեծ մասամբ անգլիախոս էին: Նա բողոք ներկայացրեց ընդդեմ քվեբեկյան օրենքների, որոնք

արգելում էին արտաքին գովազդ իրականացնել ֆրանսերենից բացի որևէ այլ լեզվով⁵։ Մասնակից պետությունը վիճարկեց հեղինակի՝ տվյալ բողոքը ներկայացնելու իրավունակությունը՝ նշելով, որ իրական տուժողը հեղինակի ընկերությունն է՝ «Ալան Սինգեր» ՍՊԸ-ն⁶։ Այդուհանդերձ, կոմիտեն բողոքը համարեց ընդունելի՝ հետևյալ պատճառաբանությամբ.

¶ 11.2. Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակը ներկայացնում է իր ընկերության իրավունքների խախտումները, և ընկերությունն իրավունակ չէ՝ համաձայն կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի։ Կոմիտեն նշում է, որ դաշնագրի՝ ներկա հաղորդման մեջ դիտարկվող իրավունքները և, մասնավորապես, արտահայտվելու ազատության իրավունքը իրենց բնույթով անբաժանելիորեն կապված են անձին։ Հեղինակն ազատ է իր նախընտրած լեզվով իր բիզնեսի մասին տեղեկություններ տալու հարցում։ Հետևաբար, կոմիտեն համարում է, որ հեղինակն ինքը, ոչ թե միայն իր ընկերությունը, անձամբ կրել է թիվ 101 և 178 օրինագծերի [Bills] վիճարկվող դրույթների ազդեցությունը։

[3.14] Սինգերի գործում, Սինգերի ընկերության առևտրային արտահայտման իրավունքների սահմանափակումը, բնականաբար, ազդեց նաև արտահայտման ազատության՝ Սինգերի սեփական իրավունքների վրա⁷։ Հաճախ կարող է պատահել, որ կորպորացիայի դեմ կատարված խախտումը ենթադրի նաև նրա բաժնետերերի կամ աշխատողների իրավունքների խախտում, որոնք, իհարկե, ունակ են իրենց անունից բողոք ներկայացնելու։ Այնուամենայնիվ, ՄԻԿ-ի վստահեցումը, թե «արտահայտման ազատությունն» «անբաժանելիորեն կապված [է] անձին», կարող է չափազանց հեռուն գնալ՝ ենթադրելով, որ կորպորատիվ արտահայտման սահմանափակումը միշտ բնութագրվում է որպես անձի արտահայտման սահմանափակում։ Հարկ է նշել, որ Սինգերի ընկերությունը փոքր ընտանեկան բիզնես էր։ Ենթադրենք՝ օրենքը սահմանափակում է խոշոր հանրահայտ ընկերության գովազդային իրավունքները, որի բաժնետերերն իրական ազդեցություն չունեն բիզնեսի վարման վրա։ Կարելի՞ է իրատեսորեն պնդել, որ նման օրենքը սահմանափակում է այդ բաժնետերերի կամ ընկերության աշխատողների կամ նույնիսկ տնօրենների արտահայտման ազատությունը⁸։

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

[3.15] «Լյուբիկոն լճի ցեղախմբի առաջնորդ Օմինայակն ընդդեմ Կանադայի» (*Ominayak, Chief of the Lubicon Lake Band v Canada, 167/84*) գործում կոմիտեն նշեց.

¶ 32.1. ... Կամընտիր արձանագրությունը սահմանում է ընթացակարգ, որի համաձայն՝ անհատները կարող են ներկայացնել իրենց անձնական իրավունքների խախտումները։ Այդ իրավունքները սահմանված են դաշնագրի III մասի ներառյալ՝ 6-27-րդ հոդվածներում։ Սակայն որևէ առարկություն չկա, եթե իրենց իրավունքների ենթադրվող խախտումների մասին հավաքական կերպով հաղորդում է ներկայացնում անձանց խումբը՝ պնդելով, որ տուժել են միևնույն կերպ։

[3.16] Հարկ է նշել, որ ՔՔԻՄԴ-ի 1-ին հոդվածում տեղ գտած ինքնորոշման իրավունքը արտառոց վիճակում է, քանի որ այն ժողովուրդների իրավունք է և այդպիսով ԿԱ-ով դատաքննելի իրավունք չէ⁹։

[3.17] «Է. Վ. և այլք ընդդեմ Նիդեռլանդների» (*E.W. et al v The Netherlands, 429/90*) գործում կոմիտեն 6588 հեղինակների վերաբերյալ նշեց.

⁵ Տե՛ս [18.42]՝ համանման «Բելլընթայնը և այլք ընդդեմ Կանադայի» (*Ballantyne et al v Canada, 359, 385/89*) գործի բնույթի քննարկման համար։

⁶ Պարբ. 8.1։

⁷ Այս պարզաբանումը հատկապես կարևոր է լրագրերի խմբագիրների և լրագրողների համար։

⁸ «Արձեյն-Սակոննայոն ընդդեմ Կանադայի (գլխավոր դատախազի)» (*RJR-MacDonald v Canada (Attorney-General)*) (1995) 3 SCR 199 գործում Կանադայի գերագույն դատարանը որոշեց, որ Կանադայի այն օրենքները, որոնք առողջության համար ծխելու վնասակարության վերաբերյալ պարտադիր գրառումներ են սահմանում ծխախոտատուփերի համար, ինչը թույլ չի տալիս որոշակի այլ գրառումներ կատարել ծխախոտատուփի վրա, խախտում են կորպորացիաների՝ ազատ արտահայտվելու իրավունքը։ Կարո՞ղ է նման բողոքը ընդհանրապես հիմնված լինել 19-րդ հոդվածի իրավունքների վրա՝ բաժնետերերի կամ տնօրենների առումով՝ հաշվի առնելով, որ ծխախոտ արտադրողը հսկայական կոնգլոմերատ է։ Տե՛ս նաև A.C. Hutchinson, 'Supreme Court Inc: The Business of Democracy and Rights', in G.W. Anderson (ed), *Rights and Democracy: Essays in UK-Canadian Constitutionalism* (Blackstone Press, London, 1999), 33, որտեղ քննադատվում է կորպորատիվ հայցվորների կողմից իրավունքների կանաչական խարտիայի «չարաշահումը»։

⁹ Տե՛ս [7.22]։

¶ 6.3. Կոմիտեն ուսումնասիրել է մասնակից պետության պնդումը, որ հաղորդումը փաստացի *ակցիո պոպուլարիս* է: Կոմիտեն նշում է, որ եթե հեղինակներից յուրաքանչյուրը հանդիսանում է տուժող՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի խմատով, ոչինչ չի խանգարում մեծ թվով անձանց կամընտիր արձանագրության ներքո գործ ներկայացնել: Լոկ այն փաստից, որ հայցվորները մեծ թիվ են կազմում, չի բխում, որ նրանց հաղորդումը *ակցիո պոպուլարիս* է, և կոմիտեն կարծում է, որ հաղորդումն այս հիմքով չի մերժվում:

Հետևաբար, երբ առկա են միևնույն բողոքն արտահայտող մի շարք տուժողներ, նրանք կարող են իրենց գործերը միավորել մեկ գործի մեջ:

Երրորդ անձանց իրավունակությունը

[3.18] Սովորաբար, տուժողներն իրենք են պարտավոր ներկայացնել ԿԱ-ով բողոքները: Օրինակ՝ «*Ֆեյն ընդդեմ Կոլումբիայի*» (*Fei v Colombia, 514/92*) գործում հեղինակը պնդում էր, որ տեղի է ունեցել 24-րդ հոդվածի խախտում՝ իր երեխաների՝ Իտալիայի քաղաքացիություն ստանալու ենթադրվող իրավունքի և երկու ծնողների հետ էլ կապ ունենալու իրավունքի առումով¹⁰: Կոմիտեն որոշեց, որ բողոքի այդ մասն անընդունելի է, քանի որ «տվյալ խախտումը պետք է ներկայացված լիներ հեղինակի երեխաների անունից, որոնց անունով հաղորդում չի ներկայացվել»¹¹:

[3.19] Այնուամենայնիվ, որոշ բացառություններ կան այն հիմնական սկզբունքից, ըստ որի՝ միայն տուժողները կարող են հայց ներկայացնել: Կան մի շարք իրավիճակներ, երբ կոմիտեն թույլ է տալիս երրորդ կողմին հաղորդում ներկայացնել: Առաջին՝ տուժողը կարող է ներկայացուցիչ նշանակել, որը տուժողի անունից կգբաղվի հաղորդմամբ: Երկրորդ՝ երրորդ կողմը կարող է հաղորդում ներկայացնել, եթե ենթադրվող տուժողն ի վիճակի չէ ինքնուրույն ներկայացնելու հաղորդումը: Երրորդ՝ եթե հաղորդման հեղինակը մահանում է գործի քննության ընթացքում, հեղինակի ժառանգները կարող են նրա անունից շարունակել գործը¹²:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

[3.20] Կոմիտեի ժամանակավոր ընթացակարգի 90(բ) կանոնը հնարավորություն է տալիս տուժողի անունից հաղորդման մեջ հանդես գալու նպատակով ներկայացուցիչ ներգրավել: Ըստ էության՝ ներկայացուցիչը տուժողի համար գործում է որպես դատապաշտպան, և գործերի մեծ մասի ներկայացուցիչները եղել են իրավախորհրդատուներ: Կոմիտեին անհրաժեշտ է ներկայացնել գրավոր փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը՝ ներկայացնելու ենթադրվող տուժողին, օրինակ՝ լիազորագիր:

[3.21] «Յ.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (Y v AUSTRALIA, 772/97)

Բողոքը ներկայացվել էր երկու իրավաբանների կողմից՝ ենթադրաբար ապաստան փնտրողի անունից, ով կալանավորվել էր Ավստրալիա հասնելուն պես և այնուհետև արտաքսվել: Մասնակից պետության արձագանքն այն էր, որ իրավաբաններն իրավունք չունեին ներկայացնելու ենթադրվող տուժողին:

¶ 6.2. Մասնակից պետությունը վիճարկել է հաղորդման ընդունելիությունն այն հիմքով, որ այն դաշնագրի կարծեցյալ խախտումներից տուժողի կողմից չի ներկայացվել: Կոմիտեն նշում է, որ իրավաբանը, որ ներկայացրել է հաղորդումը, պարոն Յ.-ին ներպետական դատարաններում չի ներկայացրել, ոչ էլ գրավոր լիազորագիր է ներկայացրել պարոն Յ.-ի անունից հանդես գալու համար: Ինչ վերաբերում է իրավախորհրդատուի և պարոն Յ.-ի միջև տեղի ունեցած հեռախոսային խոսակցությանը (որի տպագրությունը տրամադրվել է կոմիտեին), ապա դրանից պարզվում է, որ իրավախորհրդատուն ասել է պարոն Յ.-ին, թե ցանկանում է Մարդու իրավունքների կոմիտե դիմել սկզբունքային հարցով (թե արդյոք մասնակից պետությունը տվյալ դեպքում Ավստրալիա ապօրինաբար մուտք գործած անձանց իրավաբանի հետ խորհրդակցելու նրանց իրավունքի մասին տեղեկացնելու պարտավորություն

¹⁰ Այս գործի վերաբերյալ տե՛ս [20.50]:

¹¹ Պարբ. 5.2:

¹² T. Zwart, *The Admissibility of Human Rights Petitions* (Martinus Nijhoff Publishers, Dordrecht, 1994), 71.

ունի՞), և հարցրել է, թե արդյոք պարոն Յ.-ն կհամաձայնի՞, որ այդ հարցը պարզելու նպատակով իրավախորհրդատուն հաղորդումը ներկայացնի պարոն Յ.-ի անունից: Համաձայն սղագրության՝ իրավախորհրդատուն հստակորեն պարզաբանել է, որ նշված հաղորդումն անձամբ պարոն Յ.-ի վրա չի անդրադառնա (թե՛ լավ, թե՛ վատ իմաստով), և միակ բանը, որ ասել է պարոն Յ.-ն, այն է, որ չի առարկում, իրավախորհրդատուն կարող է ներկայացնել նման հաղորդում: Թեև տվյալ հեռախոսազրույցից մինչև պարոն Յ.-ի արտաքսումը անցել է 24 օր, իրավախորհրդատուն պարոն Յ.-ից որևէ ցուցում չի ստացել հաղորդման թեմայի վերաբերյալ: Իրավախորհրդատուի կապը պարոն Յ.-ի հետ ընդհատվել է Ավստրալիայից վերջինիս արտաքսմամբ:

¶ 6.3. Կոմիտեն միշտ լայն տեսանկյունից է մոտեցել ենթադրվող տուժողների՝ կամընտիր արձանագրությամբ հաղորդումներ տալիս իրավախորհրդատուի կողմից ներկայացված լինելու իրավունքին: Այնուամենայնիվ, ենթադրյալ խախտումներից տուժողների անունից հանդես եկող իրավախորհրդատուն պարտավոր է ցույց տալ, որ տուժողներից (կամ նրանց անմիջական ընտանիքի անդամներից) ստացել է իրական լիազորություն՝ գործելու նրանց անունից, կամ որոշակի հանգամանքներ թույլ չեն տվել, որ իրավախորհրդատուն ստանա նման լիազորություն, կամ հաշվի առնելով իրավախորհրդատուի և ենթադրվող տուժողի միջև նախկինում գոյություն ունեցած սերտ հարաբերությունները՝ տեղին է ենթադրել, որ տուժողն իրոք լիազորել է իրավախորհրդատուին հաղորդում ներկայացնել Մարդու իրավունքների կոմիտե: Կոմիտեն այն կարծիքին է, որ ներկա գործում իրավախորհրդատուն ցույց չի տվել նշված պայմաններից որևէ մեկի առկայությունը: Հետևաբար, կոմիտեն կարծում է, որ իրավախորհրդատուն ցույց չի տվել, որ հաղորդումը ներկայացնելիս կարող է գործել Յ.-ի անունից: Հաղորդումը չի համապատասխանում կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի պահանջին, ըստ որի՝ հաղորդումը պետք է ներկայացվի ենթադրյալ խախտման գոհի կողմից: Հետևաբար, կոմիտեն այն համարում է անընդունելի¹³:

[3.22] «*Գոմես Վասկեսն ընդդեմ Իսպանիայի*» (*Gomez Vazquez v Spain, 701/96*) գործում ՄԻԿ-ը նշեց, որ բացի տուժողի գրավոր լիազորությունից, ԿԱ ընթացակարգի համաձայն տուժողի անունից հանդես գալու համար երրորդ կողմի լիազորությունը պարզելու ուրիշ հատուկ ֆորմալ պահանջներ չկան¹⁴:

[3.23] ՄԻԿ-ը ճանաչել է անչափահասների՝ իրեն գործ ներկայացնելու իրավունքը, թեև գործերի մեծամասնության դեպքում անչափահասներին ներկայացնում են նրանց ծնողները¹⁵:

«Փ. Ս.-ն ընդդեմ Դանիայի» (*P. S. v DENMARK, 397/90*)

¶ 5.2. Կոմիտեն նկատի է առել մասնակից պետության պնդումը, որ հեղինակն իրավունակ չէ իր որդու [Թ.Ս.] անունից հանդես գալու համար, քանի որ Դանիայի օրենսդրությունը սահմանափակում է այդ իրավունքը երեխայի խնամակալությունը ստանձնած ծնողի համար: Կոմիտեն կարծում է, որ կամընտիր արձանագրության տեսանկյունից իրավունակությունը որոշվում է անկախ ազգային կանոնակարգերից և օրենսդրությունից, որոնք կարգավորում են ներպետական դատարանների առջև անձի իրավունակության հարցը: Ներկա գործում հստակ է, որ Թ. Ս.-ն չի կարող ինքնուրույն ՄԻԿ-ին բողոք ներկայացնել, հոր և որդու առկա հարաբերությունները և մեղադրանքների բնույթը պետք է բավարար համարվեն՝ հիմնավորելու համար կոմիտեի առջև Թ. Ս.-ի ներկայացումն իր հոր կողմից¹⁶:

[3.24] «*Լ. Պ.-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*» (*L.P. v Czech Republic, 946/00*) գործում հեղինակը բողոք էր ներկայացրել իր և իր որդու իրավունքների ենթադրյալ խախտման վերաբերյալ: Քանի որ նա ոչ մի տեղ չէր նշել, որ ներկայացնում է իր որդուն, հաղորդման այդ հատվածը, որը վերաբերում էր նրա որդու իրավունքներին, համարվեց անընդունելի¹⁷:

¹³ Տե՛ս նաև «*Սոլիս Պալման ընդդեմ Պանամայի*» (*Solys Palma v Panama, 436/90*), «*Ա. Դ.-ն ընդդեմ Կանադայի*», (*A.D. v Canada, 78/80*), «*Ռ.-ն և Մ. Հ.-ն ընդդեմ Իտալիայի*» (*R. and M.H. v Italy, 565/93*) գործերը և Խոշտանգումների դեմ կոմիտեի որոշումը՝ «*Բարակատն ընդդեմ Թունիսի*» (*Barakat v Tunisia, CAT 14/94*) գործով:

¹⁴ Պարբ. 10.4:

¹⁵ Ցվարտ, վերը, ծմբ. 13, 43-4, 78. P.R. Ghandhi, *The Human Rights Committee and the Right of Individual Communication* (Ashgate, Dartmouth, 1998), 89: Նկատի ունեցեք, որ «*Յուտրոնիցն ընդդեմ Չիլիի*» (*Yutronic v Chile, 740/97*) գործում տուժողի չափահաս որդիների անունից ներկայացված բողոքն անընդունելի էր, քանի որ որդիները կարող էին իրենք ներկայացնել բողոքը, և չկար որդիների կողմից բողոքը լիազորելու որևէ ապացույց (պարբ. 6.2):

¹⁶ Այնուամենայնիվ, նկատի ունեցեք, որ ՄԻԿ-ն ի վերջո որոշեց, որ բողոքն անընդունելի է, որովհետև չեն սպառվել իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները:

¹⁷ Պարբ. 6.5:

ՏՈՒԺՈՂՆ ՈՒՆԱԿ ՉԷ ԱՆՁԱՄԲ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

[3.25] Կարող են լինել հանգամանքներ, որոնց պարագայում տուժողի համար անհնար լինի անձամբ լիազորել հաղորդումը, օրինակ՝ երբ տուժողը սպանվել է կամ առևանգվել կամ զրկված է եղել հաղորդման որևէ հնարավորությունից¹⁸: Նման դեպքերում կոմիտեն պահանջում է, որ բավարար կապ լինի հեղինակի և տուժողի միջև: Պետք է հավանական լինի, որ ենթադրյալ տուժողը կհամաձայնե, որ բողոքը ներկայացնել տվյալ ներկայացուցիչը¹⁹:

[3.26] ՄԻԿ-ը հաստատել է, որ ընտանեկան մերձավոր կապը բավարար է հիմնավորելու համար հեղինակի՝ ենթադրյալ տուժողի անունից հանդես գալը²⁰: «Ընտանիքի մերձավոր անդամները», բացի նույնաընտանիքից, ներառում են նաև այնպիսի անձանց, ինչպիսիք են հորաքույրերը, մորաքույրերը, մորեղբայրները, հորեղբայրները, նրանց զավակները, ինչպես նաև զարմիկներն ու զարմուհիները²¹: ՄԻԿ-ն ավելի քիչ էր հակված թույլատրելու տուժողի ընտանիքին չպատկանող ներկայացուցչի կողմից հաղորդում ներկայացնելը²²: Օրինակ՝ «*Մբենգեն ընդդեմ Չաիրի*» (*Mbenge v Zaire, 16/77*) գործում ՄԻԿ-ը գտավ, որ հեղինակը կարող էր ներկայացնել իր ազգականներին, բայց ոչ իր վարորդին կամ դեղագործին²³:

[3.27] Այն պահից, երբ ենթադրյալ տուժողը հնարավորություն է ստանում անմիջականորեն հաղորդակցվելու կոմիտեի հետ, մա պետք է հաստատի բողոքը մինչև վերջ տանելու իր մտադրությունը, այլապես հաղորդումը կհայտարարվի անընդունելի: Օրինակ՝ «*Մպանդանջիլան ընդդեմ Չաիրի*» (*Mpandanjila v Zaire, 138/83*) գործում սկզբնական բողոքը ներկայացվել էր տասներեք հոգու անունից, որոնց ենթադրաբար կալանել էին՝ զրկելով հաղորդակցվելու որևէ իրավունքից: Տասներեքն էլ հետագայում ազատ արձակվեցին և այդպիսով հնարավորություն ստացան հաղորդակցվելու կոմիտեի հետ: Սկզբնական տասներեքից չորսը դադարեցին հաղորդակցության կողմ հանդես գալուց, քանի որ չէին հաստատել բողոքը շարունակելու իրենց մտադրությունը:

[3.28] «Է. Հ. Փ. -ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (E.H.P. v CANADA, 67/80)

Հեղինակը բողոք էր ներկայացրել իր, ինչպես նաև Օնտարիոյի Փորթ Յոուփի համայնքի «ներկա և ապագա սերունդների» անունից: Նա պնդում էր, որ թունավոր թափոնների արտանետումը Փորթ Յոուփում սպառնում է իր, ինչպես նաև ներկա և ապագա սերունդների կյանքին²⁴: Հեղինակի իրավունակության վերաբերյալ կոմիտեն մշտեց հետևյալը.

¶ 8(ա). Կոմիտեն համարում է, որ հաղորդման հեղինակն իրավունակ է հաղորդում ներկայացնելու թե՛ իր, թե՛ Փորթ Յոուփի այն բնակիչների անունից, ովքեր հատուկ լիազորել են նրան այդ անել: Հետևաբար, կարիք չկա, որ այն հարցը, թե կարելի՞ է հաղորդում ներկայացնել «ապագա սերունդների» անունից, լուծում ստանա ներկա գործի հանգամանքներում: Կոմիտեն «ապագա սերունդներին» հեղինակի արած հղումին վերաբերվում է որպես մտահոգության արտահայտության, որը նպատակ ունի պատշաճ կերպով ընդգծել հաղորդման մեջ բարձրացված հարցի կարևորությունը:

Բողոքը համարվեց անընդունելի իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները սպառած չլինելու պատճառով²⁵: Սակայն կոմիտեի երկակի մոտեցումը՝ «ապագա սերունդներին» արված հղումը մի կողմ դնելու առումով, բավականին ուշագրավ է: Գուցե կարելի է բողոք ներկայացնել դեռևս չծնված երեխայի իրավունքների մասին: Նման բողոքը կարող էր վերաբերել աբորտին (օր.՝ մեղադրանք, որը վերաբերում է ներարգանդային պտղի ենթադրյալ կյանքի իրավունքի խախտմանը)²⁶ կամ անմարդկային և ստորացնող վերաբերմունքին (օր.՝ մեղադրանք, որը վերաբերում է հղի կնոջ վրա կատարված

¹⁸ Ուրուգվայի հետ կապված վաղ շրջանի գործերից շատերը վերաբերում էին նման հանգամանքների:

¹⁹ Ցվարտ, վերը, ծնթ. 13, 76:

²⁰ Նույնը:

²¹ Նույնը:

²² M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 663:

²³ Պարբ. 5(դ):

²⁴ Տե՛ս ավելին՝ [8.46]:

²⁵ Տե՛ս ընդհանուր 6-րդ գլուխը:

²⁶ Աբորտի վերաբերյալ տե՛ս [8.55]:

հարձակմանը, որը կարող էր ծանր վնաս հասցնել դեռևս չծնված երեխային): Սակայն Փորթ Ղուլփի գործն ավելի առաջ էր անցել, քանի որ իրավունակություն էր պահանջում մարդկանց առումով, ովքեր նույնիսկ բեղմնավորված էլ չէին: Եթե նույնիսկ նման բողոքներն ընդունելի լինեին, դժվար է մեծ թվով դեպքեր պատկերացնել, երբ ապագա սերունդների «իրավունքների» խախտումներն այնքան կանխատեսելի լինեն, որ հնարավորություն տան պարզելու ընդունելիությունը²⁷:

ՏՈՒԺՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՎԱՅԱԶՈՐՂՆԵՐԸ

[3.29] «*Կրոեսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Croes v The Netherlands, 164/84*) գործում կոմիտեն թույլ տվեց հեղինակի մահից հետո ժառանգներին շարունակել հաղորդման հետ կապված գործընթացը, երբ նրա գործը դեռևս ուսումնասիրվում էր կոմիտեի կողմից: Սակայն, եթե հեղինակի ժառանգների կողմից որևէ ցուցում չի տրվում, գործը կարող է դադարեցվել, ինչպես եղավ «*Վալենն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Wallen v Trinidad and Tobago, 576/94*) գործում²⁸:

Պոտենցիալ խախտումներ

ԱՊԱԳԱ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՈՂՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԼԻՆԵՆ

[3.30] Կոմիտեն ստացել է մի շարք բողոքներ, որոնք վերաբերում են ՔՔԻՄԴ-ի ոչ թե տեղի ունեցած խախտումներին, այլ խախտումների, որոնք, հեղինակի պնդման համաձայն, պետք է տեղի ունենան ապագայում: Այդ հարցը քննարկվեց հետևյալ գործում:

«Ա. Ռ. Ս.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (*A.R.S v CANADA, 91/81*)

Հաղորդման հեղինակը կանադական բանտում իր ազատագրվումն անցկացնող Կանադայի քաղաքացի էր: Նրա բանտարկության ժամկետը լրանում էր 1988 թ., սակայն նրան գրավոր տեղեկացրել էին, որ արժանացել է այդ ժամկետի կրճատման և կարող է ազատ արձակվել 1982 թ.: Հեղինակը բողոքում էր 1970 թ. «Վաղաժամկետ ազատման մասին ակտի» որոշ դրույթների դեմ՝ ուժի մեջ մտած իր կատարած իրավախախտումներից հետո, որոնց համար պատիժ էր կրում: Հեղինակը պնդում էր, որ ինքը չպետք է ենթակա լինի վաղաժամկետ ազատման նոր համակարգին, քանի որ այն, ի հակադրություն 15-րդ հոդվածի, հին համակարգի համեմատությամբ խստացում է պարունակում²⁹: Կոմիտեն մշտեց, որ հեղինակի բողոքը՝ ներկայացված 1981 թ., վերաբերում է հիպոթետիկ իրադարձությունների և, հետևաբար, անընդունելի է³⁰: Կոմիտեն կատարեց հետևյալ դիտարկումները.

¶ 5.1. Հեղինակի սկզբունքային բողոքն ուղղված է 1970 թ. «Վաղաժամկետ ազատման մասին ակտով» 1970 թ. օգոստոսին՝ դատապարտման պատճառ դարձած պատժելի արարքների կատարումից հետո, վերահսկողության պարտադիր համակարգի ներդրման դեմ, որը տարածվում է այն բանտարկյալների վրա, ովքեր վաղաժամկետ ազատ են արձակվել: Այնուամենայնիվ, կոմիտեն այն կարծիքին է, որ որևէ գործողություն, որը կատարվել է նախքան տվյալ մասնակից պետության համար դաշնագրի ուժի մտնելը, չի կարող, որպես այդպիսին, քննության առարկա դառնալ դաշնագրից բխող պարտավորությունների լույսի ներքո: Ավելին՝ անհատները չեն կարող վերացական կերպով քննադատել ազգային օրենքները, քանի որ կամընտիր արձանագրությունը նրանց իրավունք է տալիս կոմիտեի առջև հարց բարձրացնել միայն այն դեպքում, երբ պնդում են, որ հանդիսացել են դաշնագրի խախտումից տուժող:

¶ 5.2. Ինչ վերաբերում է բուն պարտադիր վերահսկողության իրականացմանը, ինչը հեղինակի համար բողոք ներկայացնելու պատճառ է դարձել, կոմիտեն մշտեց, որ հեղինակը դեռևս չի կրել իր պատժաչափի երկու երրորդը, որի հետևանքով դեռևս վաղաժամկետ ազատման իրավունք չի ստացել, և, ի լրումն, նրա ազատումը, որը նախա-

²⁷ Տե՛ս [3.30] և հաջորդը կանխատեսելի խախտումների վերաբերյալ:

²⁸ Պարբ. 6.2:

²⁹ Տե՛ս [15.06]:

³⁰ Տե՛ս նաև «*Մաքլսասկն ընդդեմ Կանադայի*» (*MacIsaac v Canada, 55/79*) գործով որոշումը, որում ՄԻԿ-ը, ի վերջո, չկարողացավ որոշել, որ հեղինակը հանդիսանում է տուժող, քանի որ դա մի շարք վիճելի ենթադրություններ կապահանջեր այդ մասով. տե՛ս [15.08]:

տեսված է 1982 թ. սեպտեմբերի 8-ին, կախված է մինչև այդ օրը վերջինիս դրսևորած լավ վարքից: Հետևաբար, պարտադիր վերահսկողության համակարգը դեռևս կիրառելի չէ նրա նկատմամբ: Հավանականությունը, որ նրա վաստակած վաղաժամկետ ազատ արձակումը կկասեցվի, նույնիսկ ավելի հիպոթետիկ է: Հետևաբար ներկա իրավիճակում նա իրականում բողոքի որևէ հիմք չունի, ինչը, համաձայն կամընտիր արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածների, պահանջվում է անձի ներկայացրած հաղորդման ընդունելիության համար:

[3.31]

**«ԱՌԻՄԵՆՐՈՒԴԴԻ-ՑԻՖՐԱՆ և այլք ընդդեմ ՄԱՎՐԻԿԻՈՍԻ»
(AUMEERUDDY-CZIFFRA et al v MAURITIUS, 35/78)**

Մավրիկիոսի օրենսդրության համաձայն՝ մավրիկիացի տղամարդկանց օտարերկրացի կանայք մեքենայորեն ստանում էին Մավրիկիոսի ռեզիդենտի կարգավիճակ ունենալու իրավունք, մինչդեռ մավրիկիացի կանանց օտարերկրացի ամուսինները՝ ոչ: Հայցվորները մի խումբ մավրիկացի կանայք էին, որոնք պնդում էին, որ այդ օրենքները խախտում են դաշնագիրը, քանի որ խտրական են՝ սեռի հատկանիշով: Կոմիտեն հետևյալ դիտարկումներն արեց ընդունելիության վերաբերյալ.

¶ 9.2. Նախ՝ հարկ է տարանջատում մտցնել ներկա հաղորդման հեղինակների տարբեր խմբերի միջև: Անձը կարող է պնդել, որ հանդիսանում է տուժող՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, եթե իրականում անձամբ է ազդեցություն կրել: Այս պահանջը կարելի է հասկանալ կոնկրետության տարբեր աստիճաններով: Այնուամենայնիվ, որևէ անհատ չի կարող վերացական կերպով՝ *ակցիո պոպուլարիսի* միջոցով, վիճարկել որևէ օրենք կամ գործելակերպ՝ պնդելով, որ այն հակասում է դաշնագրին: Եթե օրենքը կամ գործելակերպը դեռևս որոշակիորեն չեն կիրառվել ի վնաս այդ անհատի, դրանք ամեն դեպքում պետք է կիրառելի լինեն այնպես, որ ենթադրյալ տուժողի՝ ազդեցություն կրելու վտանգը լինի ավելին, քան տեսական հավանականությունը:

¶ 9.2(ա). Այդ առումով կոմիտեն նշում է, որ 17 չամուսնացած համահեղինակների դեպքում խոսք չկա որևէ ընտանիքի նկատմամբ միջամտության կամ նրա համար օրենքով հավասար պաշտպանություն չապահովելու մասին: Ավելին՝ չկա որևէ ապացույց, որ նրանցից որևէ մեկն իրականում այս կամ դաշնագրով սահմանված ցանկացած այլ իրավունքից օգտվելիս անձնական վտանգի է ենթարկվում՝ վիճարկվող օրենքների կողմից ազդեցության առումով: Մասնավորապես չի կարելի պնդել, որ նրանց ամուսնանալու իրավունքը՝ հոդված 23(2)-ով, կամ ամուսինների հավասարության իրավունքը՝ հոդված 23(4)-ով, կրում են նման օրենքների ազդեցությունը:

Հետևաբար, գործն ընդունելի էր այնքանով, որքանով այն վերաբերում էր երեք ամուսնացած հեղինակներին:

[3.32]

«ՔԻՆԴԼԵՐՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (KINDLER v CANADA, 470/91)

Այս հաղորդման հեղինակը դրա ներկայացման ժամանակ կալանավորված էր Կանադայի բանտերից մեկում և հետագայում հանձնվեց Միացյալ Նահանգներին, որտեղ հայտնվեց մահապատժի սպառնալիքի առջև³¹: Նա կոմիտեին ներկայացրել էր հետևյալ պնդումները.

¶ 3. Հեղինակը պնդում է, որ իրեն արտաքսելու և այլ պետության հանձնելու որոշումը խախտում է դաշնագրի 6-րդ, 7-րդ, 9-րդ, 14-րդ և 26-րդ հոդվածները: Նա հայտարարում է, որ մահապատժը, *որպես այդպիսին*, դաժան և անմարդկային վերաբերմունք կամ պատիժ է, և մահապատժի դատապարտվածների պայմանները դաժան են, անմարդկային ու նվաստացնող...

Մասնակից պետությունը մի շարք հիմքերով վիճարկեց բողոքի ընդունելիությունը: Նա վիճարկեց, *ի թիվս այլոց*, հեղինակի կարգավիճակը՝ որպես ՔՔԻՄԴ-ի խախտման զոհ.

¶ 4.2. Պնդում է արվում, որ հեղինակը չի կարող համարվել տուժող՝ կամընտիր արձանագրության իմաստով, քանի որ նրա ներկայացրած մեղադրանքները ածանցվում են ապագայում հնարավոր իրադարձությունների վերաբերող ենթադրություններից, որոնք կարող են տեղի չունենալ և կախված են օրենքից ու Միացյալ Նահանգների իշխանությունների գործողություններից. . .

³¹ Տե՛ս ըստ էության, [8.33]:

Կոմիտեն բողոքը համարեց ընդունելի, քանի որ արտաքսումը և այլ պետությանը հանձնումը Քինդլերին պոտենցիալ կերպով ենթարկեց Միացյալ Նահանգների կողմից ՔՔԻՄԴ-ի իրավունքների խախտման իրական ռիսկի³²:

¶ 13.2. Եթե մասնակից պետությունն արտաքսում և այլ պետությանն է հանձնում իր իրավագործության սահմաններում գտնվող անձին այնպիսի հանգամանքներում, որ արդյունքում իրական ռիսկ է առաջանում, որ այլ իրավագործության ներքո կխախտվեն տվյալ անձի՝ դաշնագրով սահմանված իրավունքները, մասնակից պետությունն ինքը կարող է դաշնագիրը խախտող դառնալ:

[3.33]

«Քոքսը ընդդեմ Կանադայի» (COX v CANADA, 539/93)

Այս գործում հեղինակը Քինդլերի գործին շատ մեծ բողոք էր ներկայացրել: Մեծամասնությունը որոշեց, որ այդ գործը համանման կերպով ընդունելի է: Հետևյալ քաղվածքները կատարված են ընդունելիության վերաբերյալ հակառակ կարծիքից, որը ներկայացվել է տիկին Հիգինսի կողմից և համատեղ ստորագրվել պարոնայք Ֆրենսիսի, Հերնդլի, Մավրոմատիսի, Նդիայեի և Սադիի կողմից:

[«Քինդլերն ընդդեմ Կանադայի» գործով կոմիտեն որոշեց, որ «եթե մասնակից պետությունը որոշում է կայացնում իր իրավագործության սահմաններում գտնվող անձի վերաբերյալ, և դրա անհրաժեշտ և կանխատեսելի հետևանքն այն է, որ այլ իրավագործության ներքո կխախտվեն տվյալ անձի՝ դաշնագրով սահմանված իրավունքները, մասնակից պետությունն ինքը կարող է դաշնագիրը խախտող դառնալ» ...

Վերը բերված պայմանը (թեստը), համաձայն կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի, վերաբերում է նաև ընդունելիության պահանջին, որ հեղինակը հանդիսանա «տուժող»՝ այն խախտման առումով, որի վերաբերյալ բողոք է ներկայացնում: Այլ կերպ ասած՝ միշտ չէ անհրաժեշտ, որ խախտումն արդեն տեղի ունեցած լինի, որպեսզի գործողությունը դիտվի 1-ին հոդվածի շրջանակներում: Սակայն խախտումը, որը պիտի անդրադառնա անձամբ նրա վրա, պետք է լինի ամբաստանվող պետության գործողության «անհրաժեշտ և կանխատեսելի հետևանք»:

Պարզ է, որ պարոն Քոքսի գործում, ի տարբերություն պարոն Քինդլերի գործի, այս պայմանը չի բավարարվում: Պարոն Քինդլերը Կանադայից արտաքսվելու և այլ պետության հանձնվելու որոշման ժամանակ արդեն Միացյալ Նահանգներում դատարանի առջև էր կանգնել սպանության մեղադրանքով, մեղավոր էր ճանաչվել, և ատենակալներն էլ առաջարկել էին նրան մահապատժի ենթարկել: Մինչդեռ պարոն Քոքսը դեռևս չի կանգնել դատարանի առջև և *աֆորտիորի*^{*} մեղավոր չի ճանաչվել, կամ նրա համար, որպես պատիժ, մահապատժի չի առաջարկվել: Արդեն իսկ հստակ է, որ նրա հանձնումն այլ պետության չի ենթադրում «նրա իրավունքների խախտման անհրաժեշտ և կանխատեսելի հետևանքի» հավանականություն, որը կպահանջեր գործի ըստ էության քննություն: «Պոտենցիալ տուժողի» այս պայմանը չկատարվել՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, շեշտվում է այն փաստով, որ պարոն Քոքսի գործով մյուս երկու մեղադրյալներն արդեն իսկ կանգնել են Փենսիլվանիայի մահապատժի դատարանի առջև և դատապարտվել ոչ թե մահապատժի, այլ ցմահ բանտարկության: Այն փաստը, որ կոմիտեն որոշեց, և մեր կարծիքով՝ իրավամբ, որ Քինդլերը բարձրացրել է հարցեր, որոնք անհրաժեշտ է քննել ըստ էության, և ապահովվել են ընդունելիության չափանիշները, չի նշանակում, որ օրինագրանցին այլ երկրի հանձնվելու վերաբերյալ յուրաքանչյուր այս բնույթի գործ անհրաժեշտաբար ընդունելի է: Յուրաքանչյուր գործում անհրաժեշտ է գործի որոշակի փաստերի նկատմամբ կիրառել 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածներին և 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը վերաբերող պայմանները:

Կոմիտեն ընդհանրապես չի անդրադարձել կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին, այն է՝ պարոն Քոքսը կարող է համարվել «տուժող»՝ դաշնագրի 14-րդ, 26-րդ, 6-րդ կամ 7-րդ հոդվածների համաձայն իր ներկայացրած պահանջների առումով:

Մենք, հետևաբար, կարծում ենք, որ պարոն Քոքսը կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «տուժող» չի հանդիսանում, և նրա հաղորդումը՝ ներկայացված Մարդու իրավունքների կոմիտեին, անընդունելի է:

Կամընտիր արձանագրությամբ ընդունելիության համար պահանջների ուշադիր ստուգման կարևորությունը չի նվազում այն հանգամանքից, որ բողոքում որևէ կերպ չշրջանառվում է մահապատժի հարցը:

³² Տե՛ս նաև [4.21]՝ այս գործում Կանադայի տարածքային իրավասության վերաբերյալ: Ի վերջո, Քինդլերը տանուլ տվեց գործը ըստ էության [on the merits]. տե՛ս [8.33]:

* a fortiori - առավել ևս (ծան. *թարգմ.*):

[3.33Ա] «*Ջաջն ընդդեմ Կանադայի*» (*Judge v Canada, 828/98*) [8.35] գործով ՄԻԿ-ը որոշեց, որ Կանադան իրականում խախտել է 6-րդ հոդվածը, երբ Ջաջին հանձնել է ԱՄՆ-ին, որտեղ նա դատապարտված էր մահապատժի, առանց հավաստիացումների ստանալու, որ նա մահապատժի չի ենթարկվի: Իրավիճակի հեզմանքն այն է, որ ԱՄՆ-ում վերջինիս մահապատժի ենթարկվելը 6-րդ հոդվածի խախտում է ԱՄՆ կողմից [8.38]:

[3.34]

«Ե. Ու-ն ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(*E.W. et al v THE NETHERLANDS, 429/90*)

Գործի հանգամանքներն ընդգծված են կոմիտեի՝ ընդունելիության վերաբերյալ որոշման մեջ, որից ուղղակի մեջբերում է արված ստորև.

¶ 6.2. Հեղինակները պնդում են, որ մասնակից պետության նախապատրաստությունը Կոնսդրեխտում թևավոր հրթիռներ տեղակայելու ուղղությամբ, և Նիդեռլանդներում այլ միջուկային զենքերի առկայությունը խախտում են 6-րդ հոդվածով սահմանված իրենց իրավունքները: Կոմիտեն այս համատեքստում հղում է անում 6-րդ հոդվածի վերաբերյալ իր թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությանը, որում հաստատել է, որ «միջուկային զենքերի նախագծումը, փորձարկումը, պատրաստումը, դրանք ունենալը և տեղակայելը դասվում են կյանքի իրավունքի նկատմամբ ամենամեծ սպառնալիքների շարքը, որոնք այսօր ծառացել են մարդկության առջև» (Ընդհանուր մեկնաբանություն 14 [23])՝ ընդունված 1984 թ. Մոյեմբերի 2-ին): Միաժամանակ կոմիտեն նշում է, որ կամընտիր արձանագրության մեջ ամրագրված ընթացակարգը նախատեսված չէ պետական քաղաքականության այնպիսի հարցերի շուրջ հանրային քննարկումներ վարելու համար, ինչպիսիք են զինաթափումը և զանգվածային ոչնչացման միջուկային և այլ զենքերին վերաբերող հարցերը . . .

¶ 6.4. Հաջորդ քայլով կոմիտեն քննարկում է այն հարցը, թե հեղինակները հանդիսանում են «տուժողներ»՝ կամընտիր արձանագրության իմաստով: Որպեսզի ամօր կարողանա պնդել դաշնագրով պաշտպանված իրավունքի խախտման զոհ հանդիսանալը, պետք է ցույց տա, որ կամ մասնակից պետության գործողությունը, կամ անգործությունն արդեն իսկ բացասական ազդեցություն են ունեցել իր՝ նման իրավունքից օգտվելու վրա, կամ այդ ազդեցությունն անխուսափելի է, օրինակ՝ հիմնվելով գոյություն ունեցող օրենսդրության կամ դատական կամ վարչական որոշման կամ գործելակարգի վրա: Այս գործում խնդիրն այն է, թե արդյոք միջուկային զենքերի տեղակայման նախապատրաստությունը կամ բուն տեղակայումը հեղինակների կյանքի իրավունքի առկա կամ անխուսափելի խախտում է՝ հեղինակներից յուրաքանչյուրի համար: Կոմիտեն կարծում է, որ 1984 թ. հունիսի 1-ից մինչև 1987 թ. դեկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում թևավոր հրթիռների տեղակայման նախապատրաստական աշխատանքները և Նիդեռլանդներում այլ միջուկային զենքերի շարունակվող տեղակայումը հեղինակներին համապատասխան ժամանակահատվածում չի դրել այնպիսի իրադրության մեջ, որ նրանք կարողանան պնդել, թե հանդիսանում են տուժող, ուն կյանքի իրավունքն այդ ժամանակ խախտվել է կամ ունեցել է անխուսափելի խախտման հեռանկար: Համապատասխանաբար իր տրամադրության տակ եղած փաստարկների և նյութերի ուշադիր քննությունից հետո կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակները չեն կարող համարվել տուժող՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

[3.35]

«ԲՈՐԴԵՍԸ և ՏԵՄԵՀԱՐՈՆ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ»
(*BORDES and TEMEHARO v FRANCE, 645/95*)

Հեղինակները բողոքում էին իրենց կյանքի իրավունքի և ընտանեկան կյանքին միջամտությունից զերծ լինելու ազատության խախտումների դեմ, որոնք արտահայտվում էին Ֆրանսիայի կողմից Խաղաղ օվկիանոսի հարավային հատվածում 1995 թ. իրականացված միջուկային ռումբերի ստորգետնյա պայթեցումներով³³: Ի պատասխան՝ մասնակից պետությունն ապացույցներ ներկայացրեց միջուկային փորձարկումների ապահով անվտանգության վերաբերյալ: Նա կատարեց հետևյալ եզրակացությունը.

¶ 3.6. ... Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակները չեն կատարել ապացույցներ պարտականությունը, որ հանդիսանում են «տուժող»՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Նա նշում է՝ հեղինակները չեն կարող փաստարկել, որ այն ռիսկը, որին իրենք կարող են ենթարկվել միջուկային փորձարկումների հետևանքով, այնպիսին կլինի, որ անխուսափելի կդարձնի դաշնագրի 6-րդ և 17-րդ հոդվածներով սահմանված նրանց իրա-

³³ Տե՛ս նաև [8.52]:

վունքները: Սակայն բացարձակապես տեսական և հիպոթետիկ խախտումները բավարար չեն կամընտիր արձանագրության իմաստով նրանց «տուժող» դարձնելու համար:

Կոմիտեն համաձայնեց մասնակից պետության հետ, որ գործն անընդունելի է.

¶ 5.4. Կոմիտեն նկատի է առել մասնակից պետության անհամաձայնությունը, ըստ որի՝ հեղինակները չեն համապատասխանում «տուժողի» բնորոշմանը՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Կոմիտեն հիշեցնում է, որ որպեսզի անձը կարողանա պնդել, թե հանդիսանում է դաշնագրով պաշտպանվող իրավունքի խախտման զոհ, պետք է ցույց տա, որ կան մասնակից պետության գործողությունը կամ անգործությունն արդեն իսկ բացասական ազդեցություն են գործել իր կողմից այդ իրավունքից օգտվելու վրա, կամ նման հետևանքի իրական սպառնալիք կա:

¶ 5.5. Հետևաբար, սույն գործում հարցն այն է, թե արդյոք Մուրուշուայում և Ֆանգատաուֆայում միջուկային փորձարկումների հայտարարումը և այնուհետև իրականացումը Ֆրանսիայի կողմից հանգեցրել են նրանց կյանքի և ընտանեկան կյանքի իրավունքների խախտմանը՝ որոշակի տիկին Բորդեսի և պարոն Տեմեհարոյի պարագայում, կամ անխուսափելի սպառնալիք են եղել նրանց կողմից այդ իրավունքներից օգտվելու համար: Կոմիտեն համարում է, հիմնվելով կողմերի ներկայացրած տեղեկությունների վրա, որ հեղինակները չեն հիմնավորել իրենց պնդումն առ այն, որ 1995 թ. սեպտեմբերից մինչև 1996 թ. սկիզբն իրականացված միջուկային փորձարկումներն իրենց դրել են այնպիսի դրության մեջ, որ իրենք կարող են հիմնավորված կերպով պնդել, թե հանդիսանում են տուժող, ուն կյանքի և ընտանեկան կյանքի իրավունքն այդ ժամանակ խախտվել է կամ եղել է խախտման իրական սպառնալիքի տակ:

¶ 5.6. Վերջապես, ինչ վերաբերում է հեղինակների անհամաձայնությանը, ըստ որի՝ միջուկային փորձարկումները ավելի կբայթայեն փորձարկումների վայրի ատոլների երկրաբանական կառուցվածքը, ավելի կխորացնեն ատոլների կրածածկույթի ճաքերը և այլն և դրանով կմեծացնեն սոսկալի չափերի աղետի հավանականությունը, կոմիտեն նշում է, որ այդ անհամաձայնությունը մեծապես վիճելի է նույնիսկ շահագրգիռ գիտական շրջանակներում. կոմիտեն չի կարող պարզել դրա իսկությունը կամ ճշգրտությունը:

¶ 5.7. Հիմնվելով վերը բերված դիտարկումների վրա և իր տրամադրության տակ գտնվող փաստարկների ու նյութերի ուշադիր ուսումնասիրությունից հետո կոմիտեն չի համարում, որ հեղինակները կարող են իրենց համարել տուժող՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

ԿԻՐԱՐԿՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽԱԽՏԵԼ ՔՔԻՄԴ-ը

[3.36] ՄԻԿ-ը նաև եզրակացրել է, որ ներպետական օրենսդրությունը կարող է դաշնագրի հետ անհամատեղելի լինել, նույնիսկ այն դեպքում, երբ այն ուղղակիորեն չի կիրառվել տվյալ հեղինակի նկատմամբ:

«ԱՌԻՄԵՆԵՐՈՒԴԴԻ-ՑԻՖՐԱՆ և այլք ընդդեմ ՄԱՎՐԻԿԻՈՍԻ» (AUMEERUDDY-CZIFFRA et al v MAURITIUS, 35/78)

Այս գործի հանգամանքները ներկայացված են վերը [3.31]: Բողոքողների մի մասի իրավունակությունը մերժելուց հետո կոմիտեն քննարկեց, թե արդյոք մնացած հեղինակները կարո՞ղ են համարվել տուժողներ վիճարկվող օրենքի կիրարկման բացակայության պարագայում:

¶ 9.2(բ) 1. Հաջորդ քայլով կոմիտեն կքննի հաղորդման այն մասը, որը վերաբերում է 1977 թ. օրենքների ազդեցությանը երեք ամուսնացած կանանց ընտանեկան կյանքի վրա:

¶ 9.2(բ) 2 (ii) 3. Ներկա գործերում ոչ միայն արտաքսման ապագա հնարավորությունը, այլև Մավրիկիոսում օտարերկրացի ամուսինների ռեզիդենտության առկա երերուն դրությունը, կոմիտեի կարծիքով, մասնակից պետության իշխանությունների կողմից միջամտություն են մավրիկիացի կանանց և նրանց ամուսինների ընտանեկան կյանքին: Դիտարկվող ստատուտները խնդրի առարկա ընտանիքների համար անորոշ են դարձնում, թե որքանով կկարողանան և որքան ժամանակ հնարավոր կլինի շարունակել իրենց ընտանեկան կյանքը՝ համատեղ ապրելով Մավրիկիոսում: Ավելին, ինչպես նկարագրված է . . . գործերից մեկում, նույնիսկ տարիներ տևող հետաձգումը և բնակության թույլտվություն տալու վերաբերյալ դրական որոշման բացակայությունը պետք է համարել զգալի անհարմարություն, ի թիվս այլ պատճառների, քանի որ աշխատանքի իրավունքի շնորհումը և այդպիսով, իր ընտանիքի կարիքները հոգալուն ա-

մուսնու մասնակցության հնարավորությունը կախված են բնակության թույլտվությունից, և քանի որ ցանկացած ժամանակ հնարավոր է արտաքսումը՝ առանց դատական վերահսկողության:

Կոմիտեն համապատասխանաբար որոշեց, որ մնացած երեք հեղինակները կարող են համարվել «տուժող»³⁴:

[3.37]

**«ԲԱԼԱՆԹԱՅՆԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(BALLANTYNE et al v CANADA, 359 AND 385/89)**

Այս գործում հեղինակները վիճարկում էին Քվեբեկի նահանգի կառավարության ընդունած «Ֆրանսերենի խարտիայի» դրույթներից մեկը, համաձայն որի՝ հանրային վայրերում փակցված ազդագրերի և արտաքին առևտրային գովազդի համար կարելի է օգտագործել միայն ֆրանսերենը³⁵: Կոմիտեն որոշեց, որ հաղորդումն ընդունելի է, չնայած այն փաստին, որ օրենքը պաշտոնապես չէր կիրառվել երկու հեղինակների նկատմամբ: Կոմիտեի դիտարկումները հետևյալն էին.

¶ 10.4. Կոմիտեն վերանայեց *էո վոլոնտե*^{*}, թե արդյոք բոլոր հեղինակներն են պատշաճ կերպով հանդիսանում տուժողներ՝ կամ ընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Այդ համատեքստում կոմիտեն նշում է, որ պարոն Բելընթայնը և տիկին Դևիդսոնը նախագրույցից ծանուցագրեր չեն ստացել Ֆրանսերենի պաշտպանության հանձնաժողովի լիազոր ներկայացուցչից և չեն ենթարկվել որևէ տուգանքի: Այնուամենայնիվ, կոմիտեի դիրքորոշումն այն է, որ եթե անհատը պատկանում է անձանց այնպիսի դասի, որոնց գործողությունները, համապատասխան օրենքության ուժով, համարվում են օրենքին հակասող, ապա նա կարող է ներկայանալ որպես «տուժող»՝ կամ ընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

[3.38]

«ՏՈՈՆԵՆՆ ԸՆԴՈՂԵՄ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (TOONEN v AUSTRALIA, 488/92)

Այս գործը վերաբերում էր տղամարդկանց միջև փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերությունների համար քրեական պատասխանատվություն սահմանող թասմանյան օրենքների վիճարկմանը³⁶: Թեն Թասմանիայի ոստիկանությունը երկար տարիներ այդ օրենքով որևէ մեկին պատասխանատվության չէր ենթարկել, հեղինակը պնդում էր, որ այդուհանդերձ օրենքի՝ հասարակական խարան առաջացնող հետևանքներն իրեն դարձնում են տուժող: Նրա փաստարկները հետևյալն էին.

¶ 2.3. Թեն Թասմանիայի ոստիկանությունը տարիներ շարունակ գործնականում որևէ մեկին պատասխանատվության չի ենթարկել ո՛չ «անբնական սեռական ակտ» կամ «բնությանը հակառակ ակտ» կատարելու համար (բաժին 122), ո՛չ էլ «արական սեռի անձանց միջև անպարկեշտ գործողություններ» կատարելու համար (բաժին 123), հեղինակը պնդում է, որ մեկ այլ տղամարդու հետ իր երկարատև կապի, Թասմանիայի քաղաքական գործիչների շրջանում իր ակտիվ լոբբինգի և տեղական մամուլում իր գործունեության վերաբերյալ հրապարակումների և որպես համասեռամուլների իրավունքների պաշտպանության ակտիվիստ լինելու, համասեռամուլների շրջանում ՄԻԱՎ/ԶԻԱԶ-ի ոլորտում իր գործունեության պատճառով իր մասնավոր կյանքը և ազատությունը սպառնալիքի տակ են, քանի որ շարունակում են ուժի մեջ մնալ քրեական օրենսգրքի 122(ա), (գ) և 123 բաժինները:

¶ 2.4. Պարոն Տոոնեն շարունակում է իր փաստարկները՝ նշելով, որ մասնավոր համասեռամուլության քրեականացումն իրեն թույլ չի տվել բացահայտ ի ցույց դնելու իր սեռական կողմնորոշումը և հրապարակելու իր տեսակետները սեռական խնդիրներին վերաբերող համապատասխան օրենքների բարեփոխման վերաբերյալ, քանի որ զգացել է՝ դա չափազանց կվտանգեր իր աշխատանքի տեղը: Այդ համատեքստում նա պնդում է, որ 122(ա), (գ) և 123 բաժինները պայմաններ են ստեղծել աշխատանքի ընդունելիս խտրականության, հաստատում խարանի, քարկոծման, ֆիզիկական բռնության սպառնալիքների և հիմնական ժողովրդավարական իրավունքների խախտման համար:

¶ 2.5. Հեղինակը նշում է, որ Թասմանիայում բազմաթիվ «իշխանության ներկայացուցիչներ» անցած մի քանի տարիների ընթացքում համասեռամուլ տղամարդկանց և կանանց հասցեին թույլ են տվել կա՛մ նվաստացուցիչ, կա՛մ ուղղակի վիրավորական արտահայտություններ: Դրանք ներառում են հայտարարություններ՝ արված խորհրդարանի

³⁴ Տե՛ս ըստ էության, [16.21], [20.14] և [23.43]:

³⁵ Տե՛ս նաև [18.05]:

^{*} eo volonte - հոժարությամբ (*ժան. քարզմ.*):

³⁶ Ըստ էության վճռի մասին տե՛ս [16.36]:

Ստորին պալատի անդամների, պետական խորհրդականների կողմից (ինչպես օրինակ՝ «գեյերի համայնքի ներկայացուցիչները Սահամ Չուսեյնից լավը չեն», «համասեռամուլական ակտն անընդունելի է ցանկացած հասարակության համար, էլ ինչ խոսք քաղաքակիրթ հասարակության մասին»), եկեղեցու և լայն հանրության ներկայացուցիչների կողմից, որոնց հայտարարություններն ուղղված են եղել Թասմանիայի համասեռամուլ տղամարդկանց և կանանց արժանապատվության և բարեկեցության դեմ (ինչպես օրինակ՝ «[գ]եյերն ուզում են հասարակությունն իրենց մակարդակի իջեցնել», «15 անգամ ավելի հավանական է, որ ձեզ կսպանի որևէ համասեռամուլ, քան հետերոսեքսուալ մեկը» . . .): Որոշ հանրային հանդիպումների ժամանակ առաջարկվել է, որ Թասմանիայի բոլոր համասեռամուլներին պետք է հավաքել ու «շարտել» մի անմարդաբնակ կղզի կամ ենթարկել պարտադիր ստերիլացման: Նման արտահայտությունները, ինչպես պնդում է հեղինակը, այնպիսի իրավիճակ են ստեղծել, որ Թասմանիայի իշխանությունները հետ այլ պարագայում սովորական շփումները վերածվել են անընդհատ սթրեսի և կասկածամտության աղբյուրի:

¶ 2.6. Հեղինակը շարունակում է՝ պնդելով, որ Թասմանիան ականատես է եղել և շարունակում է ականատես լինել «պաշտոնական և ոչ պաշտոնական ատելության քարոզարշավի»՝ ընդդեմ արվամուլների և լեսբուհիների: Այդ քարոզարշավը Թասմանյան համասեռամուլների վերաբերյալ օրենսդրության բարեփոխման խմբի (ԹՅՕԲԽ) համար իր գործունեության մասին տեղեկություններ տարածելու և համասեռամուլության ապաքրեականացումը պաշտպանելու բարդություններ է ստեղծել: Այդպիսով, օրինակ՝ 1988 թ. սեպտեմբերին ԹՅՕԲԽ-ին թույլ չեն տվել Հոբարտ քաղաքի հանրային հրապարակում վահանակ տեղադրել, և հեղինակը պնդում է, որ ինքը՝ որպես այդ արգելքի դեմ ամենաակտիվ բողոքողներից մեկը, ենթարկվել է ոստիկանական ահաբեկման:

¶ 2.7. Վերջապես, հեղինակը պնդում է, որ Թասմանիայի քրեական օրենսգրքի 122(ա), (գ) և 123 բաժինների տևական գոյությունը շարունակում է Թասմանիայում խոր և վնասակար ազդեցություն ունենալ շատ մարդկանց վրա, ներառյալ հեղինակն ինքը, այն առումով, որ դրանք խթանում են խտրականությունը, ոտնձգությունները և բռնությունները Թասմանիայի համասեռամուլ համայնքի նկատմամբ:

ՄԻԿ-ը համաձայնեց, որ հեղինակը կարող է համարվել տուժող՝ ԿԱ 1-ին հոդվածի իմաստով: Կոմիտեն հետևյալ մեկնաբանություններն արեց ընդունելիության հարցի վերաբերյալ.

¶ 5.1. Իր 46-րդ նստաշրջանի ընթացքում կոմիտեն քննարկեց այդ հաղորդման ընդունելիությունը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք հեղինակը կարող է համարվել «տուժող»՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, կոմիտեն նշեց, որ հեղինակի կողմից օրենսգրքի վիճարկվող դրույթները Թասմանիայի դատական իշխանությունների կողմից տարիներ շարունակ չեն կիրարկվել: Կոմիտեն, այնուամենայնիվ, համարում է, որ հեղինակը ողջամիտ ջանքեր է գործադրել ցուցադրելու համար, որ կիրարկման սպառնալիքը և վարչական գործելակերպերի ու հանրային կարծիքի վրա այդ դրույթների շարունակվող գոյության ընդլայնվող ազդեցությունն անդրադարձել են անձամբ իր վրա և շարունակում են անդրադառնալ, և դրանք կարող են խնդիրներ հարուցել՝ կապված դաշնագրի 17-րդ և 26-րդ հոդվածների հետ: Համապատասխանաբար, կոմիտեն որոշեց, որ հեղինակը կարող է համարվել տուժող՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, և այդ պահանջները *ռազիոնե տենպորիս* ընդունելի են:

ՄԻԿ-ը համաձայնեց, որ օրենքների սոսկ գոյությունն արդեն խախտում է կամ առնվազն սպառնում է Տոոնենի իրավունքներին: Հետևաբար, Տոոնենը կարող էր «տուժողի» կարգավիճակ ունենալ նույնիսկ վիճարկվող օրենքների կիրարկման բացակայության պայմաններում:

Եզրակացություն

[3.39] ՄԻԿ-ը ԿԱ-ում տեղ գտած «տուժողի» պահանջը բավականին խիստ է մեկնաբանել: Ընդհանուր առմամբ հաղորդումը չի համարվի ընդունելի, եթե ներկայացնողը չի հանդիսանում ՔՔԻՄԴ-ի իրավունքների ոտնահարման անհատական զոհ կամ չի գտնվում ՔՔԻՄԴ-ի խախտման կանխատեսելի վտանգի տակ: Բացառություններ կարող են լինել, երբ հաղորդումը ներկայացվում է մեկ այլ անձի անունից, կամ երբ ներկայացնողը դառնում է օրենսդրության զոհ՝ չնայած դրա չկիրարկմանը:

Տարածքային և իրավագործության սահմանափակումներ

- Ներածություն[4.01]
- Գաղութներ [4.05]
- Պետության արտատարածքային պատասխանատվությունը [4.11]
- Մասնավոր անձանց գործողությունների համար պետության պատասխանատվությունը. [4.16]
- Միջազգային կազմակերպությունների գործողությունների համար պետության պատասխանատվությունը[4.18]
- Այլ պետությունների գործողությունների համար պետության պատասխանատվությունը ..[4.20]
- Եզրակացություն[4.26]

Ներածություն

[4.01] ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ որևէ պետության՝ ՔՔԻՄԴ-ի համաձայն ստանձնած պարտավորությունները սահմանափակվում են «իր տարածքի սահմաններում և իրավագործության տակ գտնվող անձանցով»։ Կամընտիր արձանագրության 1-ին հոդվածը նախատեսում է, որ պետության՝ դրանից բխող պատասխանատվությունը սահմանափակվում է «իր իրավագործության տակ գտնվող անձանցով»։ Այս գլուխն անդրադառնում է ՔՔԻՄԴ-ով և ԿԱ-ով պետությունների ստանձնած պարտավորությունների տարածքային և իրավագործության սահմանափակումներին

[4.02] Պետությունը պատասխանատվություն է կրում իր իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց համար՝ անկախ նրանց քաղաքացիությունից¹:

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

¶ 9. ...Ինչպես նշված է թիվ 15 Ընդհանուր մեկնաբանությունում, ... դաշնագրով ճանաչված իրավունքների իրացումը սահմանափակված չէ միայն մասնակից պետությունների քաղաքացիների շրջանակով, այլ պետք է հասանելի լինի նաև բոլոր անձանց՝ անկախ նրանց ազգությունից կամ քաղաքացիությունից գուրկ լինելու հանգամանքից, ինչպիսիք են ապաստան որոնողները, փախստականները, միգրանտ աշխատողները և այլ անձինք, ովքեր կարող են հայտնվել տվյալ մասնակից պետության տարածքում կամ նրա իրավագործության ներքո: ...

[4.03] ՄԻԿ-ն այս պահանջը մեկնաբանել է այնպես, որ յուրաքանչյուր անձ կարող է բողոքել իրավագործության սահմաններում կատարված որևէ ոտնահարման դեմ, եթե նույնիսկ ինքն այլևս չի գտնվում այդ իրավագործության սահմաններում: Օրինակ՝ «Մասիոտին և Բարիստուսիոն ընդդեմ Ուրուգվայի» (*Massiotti and Baristussio v Uruguay, 25/78*) գործում հեղինակները, երբ հանձնել են իրենց հաղորդումները, ապրել են, համապատասխանաբար, Նիդեռլանդներում և Շվեդիայում: Չնայած մասնակից պետության այն առարկությանը, թե ՄԻԿ-ը կգերազանցի իր իրավասությունները, եթե վարույթ ընդունի այդ հարցը, ՄԻԿ-ը հստակորեն նշեց, որ հեղինակները տուժել են Ուրուգվայի իրավագործության ներքո, երբ հայտարարվող ոտնահարումները փաստացի տեղի են ունեցել²:

[4.04] «Մբենգեն ընդդեմ Զաիրի» (*Mbenge v Zaire, 16/77*) գործը ցույց է տալիս, որ ներտարածքային բռնության զոհ կարող է դառնալ յուրաքանչյուր ոք, ով գտնվում է տվյալ պետության տարածքից դուրս: Մբենգենին դատեցին հեռակա կարգով (*in absentia*)՝ հակառակ հոդված 14(3)(դ)-ի³ պահանջների, չնայած

¹ Տե՛ս «Միհան ընդդեմ Դասարակածային Գվինեայի» (*Miha v Equatorial Guinea, 414/90*):

² Պարբ. 7.1-7.2:

³ Տե՛ս [14.98]:

Մբենգեն խնդրո առարկա դատավարության ժամանակ գտնվում էր Բելգիայում⁴:

Գաղութներ

[4.05] Առհասարակ ՄԻԿ-ի գործունեությունը ցույց է տալիս, որ որևէ պետության կողմից դաշնագրի և արձանագրությունների վավերացումը տարածվում է այդ պետության գաղութների վրա, եթե հակառակի մասին հայտարարությունը բացակայում է⁵: Ամենահամապարփակ քննարկումը ծավալվեց հետևյալ գործի շրջանակներում, որը, ցավոք, վեր հանեց շփոթեցնող հիմնավորումներ:

[4.06] «ԿՈՒՈԿ ԿՈՅՆ ընդդեմ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ» (KUOK KOI v PORTUGAL, 925/00)

Այս գործը վերաբերում էր Մակաոյի մի բնակչի բողոքին՝ մի դատական գործընթացում տեղ գտած տարբեր ապօրինությունների կապակցությամբ, որոնք, հեղինակի պնդմամբ, խախտել են ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքը⁶: Մակաոն մինչև 1999 թ. դեկտեմբերի 19-ը Պորտուգալիայի գաղութն էր: Մակաոյի կառավարումը Չինաստանի ժողովրդական Հանրապետությանը փոխանցվեց 1999 թ. դեկտեմբերի 20-ին: Հեղինակն սկզբում իր հաղորդումը հանձնել էր 1999 թ. դեկտեմբերի 15-ին: Հետևաբար, հաղորդումը հանձնելու ժամանակ Մակաոն գտնվում էր Պորտուգալիայի կառավարման ներքո, բայց երբ ավելի ուշ՝ 2001 թ., քննարկվում էր հաղորդումը վարույթ ընդունելու հարցը, Մակաոն արդեն գտնվում էր ՉԺՀ-ի իրավագործության ներքո: Պորտուգալիան պնդում էր, որ հայցն անընդունելի է մի շարք պատճառներով⁷, որոնցից մեկն այն է, որ պորտուգալական տիրապետության տակ գտնվելու տարիներին կամընտիր արձանագրությունը Մակաոյում երբևէ չի կիրառվել:

1992 թ. դեկտեմբերի 17-ին Պորտուգալիայի խորհրդարանը դաշնագրի գործողությունը հատուկ տարածեց Մակաոյի վրա, սակայն որևէ կերպ չհիշատակեց ԿԱ-ն: Այդ պատճառով մասնակից պետությունը պնդում էր հետևյալը.

¶ 4.1. ...Պետությունը ներկայացնող կողմը պնդում է, որ չնայած դաշնագրի գործողությունը տարածվել է Մակաոյի վրա 1992 թ. դեկտեմբերի 17-ին Պորտուգալիայի խորհրդարանի կողմից ընդունված թիվ 41/92 որոշման արդյունքում, որևէ նման որոշում չի կայացվել կամընտիր արձանագրության վերաբերյալ:

¶ 4.2. Մասնակից պետությունը նաև նշում է, որ կամընտիր արձանագրությունը թվարկված չէ համաձայնագրերի ցանկում, որը 1999 թ. նոյեմբերին Պորտուգալիայի խորհրդարանի կողմից ներկայացվել է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին՝ այն համաձայնագրերի առնչությամբ, որոնց համար Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը համաձայնել է ստանձնել իրավահաջորդի պատասխանատվությունը:

ՄԻԿ-ը չհամաձայնեց մասնակից պետությանը և համարեց, որ ԿԱ-ն կիրառելի է Մակաոյի նկատմամբ (առնվազն այն ժամանակահատվածի համար, երբ այն գտնվել է պորտուգալական տիրապետության տակ).

¶ 6.2. Ինչ վերաբերում է պորտուգալական տիրապետության տակ եղած ժամանակահատվածում (մինչև 1999 թ. դեկտեմբերի 19-ը) Մակաոյի նկատմամբ կամընտիր արձանագրության կիրառելիությանը, ապա կոմիտեն նշում է, որ մասնակից պետության կողմից կամընտիր արձանագրությանը միանալն ուժի մեջ է մտել 1983 թ. օգոստոսի 3-ից: Այնուհետև կոմիտեն մատնանշում է, որ արձանագրության կիրառումը չի կարող հիմնվել կամընտիր արձանագրության 10-րդ հոդվածի վրա, քանի որ 1976 թ. նոր սահմանադրության ընդունումից հետո Մակաոն Պորտուգալիայի մաս չի կազմել: Անհնար է նաև դրական եզրակացության հանգել Պորտուգալիայի խորհրդարանի թիվ 41/92 որոշումից, որը դաշնագրի կիրառելիությունը պաշտոնապես տարածեց Մակաոյի վրա, քանի որ դաշնագիրը և կամընտիր արձանագրությունն առանձին համաձայնագրեր են:

⁴ Տե՛ս նաև P.R. Ghandhi, *The Human Rights Committee and the Right of Individual Petition* (Ashgate, Dartmouth, 1998), 133:

⁵ M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), at 43:

⁶ Այս գործի նախաբանը և դրա վերաբերյալ մեկնաբանությունը վերցված են հետևյալ հրատարակությունից՝ S. Joseph, "Human Rights Committee: Recent Cases" (2002) 2 *HRLR* 287, at 287-90:

⁷ Տե՛ս նաև [25.44-25.48]:

¶ 6.3. Կոմիտեն, մյուս կողմից, չի ընդունում այն տեսակետը, ըստ որի՝ այն փաստը, որ նման հայտարարություն չի արվել կամ ընտիր արձանագրության առնչությամբ, թույլ չի արձանագրությունը կիրառել այս հայցի նկատմամբ: Կոմիտեն հիշատակում է կամ ընտիր արձանագրության 1-ին հոդվածի ձևակերպումը, որն առաջին պարբերությամբ սահմանում է.

«Դաշնագրի մասնակից այն պետությունը, որը դառնում է սույն արձանագրության մասնակից, ճանաչում է կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննության առնելու իր իրավագործությանը ենթակա առանձին անձանց հաղորդումներ, ովքեր հայտարարում են, թե տվյալ մասնակից պետության կողմից դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման գոհ են դարձել»:

Այս բոլոր տարրերն առկա են խնդրո առարկա գործում: Պորտուգալիան դաշնագրին, ինչպես նաև կամ ընտիր արձանագրությանը միացած պետություն է և, որպես այդպիսին, ճանաչել է կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննության առնելու «իր իրավագործությանը ենթակա» առանձին անձանց հաղորդումներ:

Մինչև 1999 թ. դեկտեմբերի 19-ը անհատները Մակաոյում գտնվում էին Պորտուգալիայի իրավագործության ներքո: Քննարկվող հայցում մասնակից պետությունն իր իրավագործությունը հեղինակի նկատմամբ գործադրել է դատարանների միջոցով:

Քանի որ կամ ընտիր արձանագրության նպատակը դաշնագրով ճանաչված իրավունքների հետագա իրականացումն է, դրա կիրառելիության անհնարինությունը որևէ մասնակից պետության իրավագործության շրջանակներում չի կարող ենթադրվել, եթե այդ մասին որևէ հստակ նշում (վերապահում կամ հայտարարություն) չի եղել: Նման որևէ գործողություն գոյություն չունի: Հետևաբար, կոմիտեն հանգում է այն եզրակացության, որ այդ պետությունը իրավասություն ունի ընդունելու և քննության առնելու այս հեղինակի հաղորդումը, այնքանով, որքանով այն վերաբերում է Պորտուգալիայի կողմից դաշնագրով սահմանված իրավունքներից որևէ մեկի հայտարարվող ոտնահարմանը:

Ծանոթագրությունների մեջ ՄԻԿ-ն ամրապնդեց այս եզրակացությունը՝ հղում կատարելով 1969 թ. ընդունված Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի [Vienna Convention of the Law of Treaties] 29-րդ հոդվածին, որը սահմանում է. «Եթե պայմանագրից այլ մտադրություն չի հետևում կամ այլ կերպ սահմանված չէ, ապա պայմանագիրը պարտադիր է յուրաքանչյուր մասնակցի համար նրա ողջ տարածքում»:

[4.07] Այսպիսով, թվում է, թե համաձայն ՄԻԿ-ի տրամաբանության՝ իրականում ԿԱ-ն Մակաոյի համար կիրառելի դարձավ Պորտուգալիայի կողմից 1983 թ. դրա վավերացման օրվանից ի վեր: Այնուամենայնիվ, այս եզրակացությունը խափանվում է ՄԻԿ-ի այն հայտարարության հետևանքով, ըստ որի «Թիվ 41/92 որոշումը դաշնագրի կիրառելիությունը պաշտոնապես տարածել է Մակաոյի վրա», ինչը տպավորություն է ստեղծում, թե ՄԻԿ-ն ընդունում է, որ ՔՔԻՄԴ-ը Մակաոյի համար կիրառելի է դարձել միայն 1992 թ. դեկտեմբերից: Եթե այդպես է, ապա ԿԱ-ն Մակաոյի համար կիրառելի կարող էր դառնալ միայն 1992 թ. դեկտեմբերի դրությամբ. ԿԱ-ի կիրառելիությունը մի տարածքի նկատմամբ, որտեղ ՔՔԻՄԴ-ը չի գործում, կլիներ անհնարին, քանի որ ԿԱ-ն գործում է միայն որպես ՔՔԻՄԴ-ում սահմանված էական իրավունքների ընթացակարգային հավելում: Այնուամենայնիվ, տարակուսանքի տեղիք է տալիս այն, թե ինչու հստակ հայտարարության բացակայության պայմաններում ԿԱ-ն Մակաոյի նկատմամբ կիրառվեց, իսկ ՔՔԻՄԴ-ը՝ ոչ: Իհարկե, կարելի է պնդել, որ ՔՔԻՄԴ-ը Մակաոյի նկատմամբ կիրառելի դարձավ 1978 թ., երբ Պորտուգալիան նման կիրառումն արգելող որևէ հայտարարություն կամ վերապահում չարեց: Ավելին՝ մինչև 1992 թ. ՄԻԿ-ի անդամների և Պորտուգալիայի ներկայացուցիչների միջև երկխոսությունները, համաձայն Պորտուգալիայի զեկույցների, նույնպես ամեն ինչ հաշվի առնելով, մատնանշում են, որ ՔՔԻՄԴ-ը Մակաոյի նկատմամբ գործել է մինչև 1992 թվականը: Դժբախտաբար, *Կուռկ Կոյի* գործով ՄԻԿ-ի կայացրած որոշումը, որը վերաբերում է նախքան ԶԺՀ-ին փոխանցվելը Մակաոյի նկատմամբ ԿԱ-ի կիրառելիությանը, տրամաբանված չէր: Իսկապես, ոչ ՔՔԻՄԴ-ը և ոչ էլ ԿԱ-ն այս հարցով ՄԻԿ-ի առաջնային իրավագործության միջոցը չեն, ինչը բխում է Պորտուգալիայի հետ անցկացված երկխոսություններից: Տրամաբանորեն կամ ԿԱ-ն, կամ ՔՔԻՄԴ-ը այն օրվանից, երբ Պորտուգալիայի համար այդ համաձայնագրերը մտել են ուժի մեջ (1983 և 1978 թթ.), կիրառվել են Մակաոյի նկատմամբ, կամ էլ 1992 թ. դեկտեմբերի դրությամբ գործել է միայն ՔՔԻՄԴ-ը:

[4.08] Արտահայտած իրենց մասնավոր կարծիքներում պարոնայք Քլայմը, Ռիվաս Պոսադան և Յալդենը, թերևս նաև պրն Շեյնինը⁸ համաձայնեցին այն եզրակացությանը, որ ԿԱ-ն Մակաոյի առնչությամբ Պորտուգալիայի համար պարտադիր ուժ է ձեռք բերել մինչև 1999 թ. դեկտեմբերի 20-ը: Նրանք հստակ կարծիք

⁸ Պրն Շեյնինն իր մասնավոր կարծիքում այնքան էլ հստակ չարտահայտվեց տվյալ հարցի կապակցությամբ:

չունեին այն մասին, թե որ օրվանից սկսած են ԿԱ-ն կամ ՔՔԻՄԴ-ը սկսել գործել Մակաոյի համար: Պրն Կրեցմերը բացահայտ հետաձգեց այս հարցով իր դիրքորոշումն արտահայտելը, քանզի մտածում էր, որ այդ պայմաններում նման որոշում կայացնելու կարիք չկա: Ընդհանուր առմամբ, ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը վճռեց, որ ԿԱ-ն Մակաոյի նկատմամբ կիրառելի է դարձել նախքան այդ երկրի փոխանցումը ՉԺՀ-ին⁹:

[4.09] Պարոնայք Ամորը և Բիագվաթին, որոնց հետ այս հարցում համակարծիք էր պրն Անդոն, չհամաձայնեցին: Նրանք նշեցին հետևյալը.

Մեր կարծիքով, հստակ է՝ քանի որ որևէ շոշափելի ժամանակահատվածում Մակաոն Պորտուգալիայի իրավագործ մաս չի եղել, չի կարելի ասել, թե նա հանդիսացել է Պորտուգալիայի տարածքի մի մասը, և, հետևաբար, չի կարելի պնդել, թե կամընտիր արձանագրությունը պարտադիր ուժ է ունեցել Մակաոյի համար՝ համաձայն Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 29-րդ հոդվածի: Պորտուգալիայի կողմից կամընտիր արձանագրության վավերացումը, հետևաբար, չի հանգեցրել այն բանին, որ արձանագրությունն ինքնաբերաբար կիրառելի դառնա Մակաոյի նկատմամբ:

Կարելի է մատնանշել նաև, որ եթե, ի հակադրություն իմ տեսակետի, Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 29-րդ հոդվածը կիրառելի լիներ, այն հավասարապես կիրառելի կլիներ դաշնագրի առումով, իսկ այդ դեպքում հարկ կլիներ դաշնագիրը համարել կիրառելի՝ սկսած հենց այն պահից, երբ Պորտուգալիան վավերացրեց այն: Սակայն անվիճելի է, որ դաշնագիրը Մակաոյի նկատմամբ կիրառելի չի դարձել Պորտուգալիայի կողմից դրա վավերացման պահից ի վեր: Իրականում դաշնագրի գործողությունն առաջին անգամ Մակաոյի վրա տարածվեց մի որոշման արդյունքում, որը Պորտուգալիայի խորհրդարանն ընդունեց 1992 թ. դեկտեմբերի 17-ին: Մինչ այդ դաշնագրի գործողությունը չէր տարածվում Մակաոյի վրա: Պորտուգալիայի խորհրդարանի կողմից 1992 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված որոշման շնորհիվ է, որ այն կիրառելի դարձավ Մակաոյի նկատմամբ: Խորհրդարանի կողմից դաշնագրի գործողությունը 1992 թ. դեկտեմբերի 17-ից Մակաոյի վրա տարածվել նաև ցույց է տալիս, որ ամեն դեպքում Պորտուգալիան, երբ վավերացնում էր դաշնագիրը, նպատակ չուներ այն կիրառելի դարձնել Մակաոյի նկատմամբ: Հետևաբար, անխուսափելի եզրակացությունը մեկն է. դաշնագիրը Մակաոյի նկատմամբ առաջին անգամ կիրառելի դարձավ 1992 թ. դեկտեմբերի 17-ին:

Եվս մեկ անգամ անդրադառնալով Մակաոյի նկատմամբ կամընտիր արձանագրության կիրառելիությանը, ես արդեն մատնանշեցի, որ կամընտիր արձանագրությունը Մակաոյի նկատմամբ կիրառելի չդարձավ այն Պորտուգալիայի վավերացնելուց հետո: Գոյություն ունի նաև մի լրացուցիչ պատճառ, թե ինչու չի կարելի պնդել, որ կամընտիր արձանագրությունը կիրառելի դարձավ Պորտուգալիայի կողմից դրա վավերացման արդյունքում: Եթե դաշնագիրը Մակաոյի նկատմամբ կիրառելի չի եղել մինչև 1992 թ. դեկտեմբերի 17-ը, ապա ինչպե՞ս կարող էր կամընտիր արձանագրությունը, որ ընդամենը մեխանիզմներ է տրամադրում դաշնագրով սահմանված իրավունքների խախտումները շտկելու համար, Մակաոյի նկատմամբ կիրառելի դառնալ ավելի վաղ: Քանի որ կամընտիր արձանագրությունը Մակաոյի նկատմամբ կիրառելի չի դարձել Պորտուգալիայի կողմից դրա վավերացման շնորհիվ, անհրաժեշտություն է առաջանում քննելու, թե հետագայում որևէ պահի այն տարածվե՞լ է Մակաոյի վրա:

Այժմ ակնհայտ է, որ գոյություն չի ունեցել որևէ հստակ իրավական ակտ, որով կամընտիր արձանագրության կիրառելիությունը տարածվեր Մակաոյի վրա: Միակ փաստարկը, որ մասնակից պետությունը [իրականում մասնակից պետությունը նման փաստարկ առաջ չի քաշել] կարող էր ներկայացնել Մակաոյի նկատմամբ կամընտիր արձանագրության կիրառելիությունը պաշտպանելու նպատակով, այն կլիներ, որ 1992 թ. դեկտեմբերի 17-ին դաշնագրի տարածումը Մակաոյի վրա ներառել է կամընտիր արձանագրության տարածումը Մակաոյի նկատմամբ: Սակայն այս փաստարկն ակնհայտորեն անընդունելի է: Նախ՝ դաշնագիրը և կամընտիր արձանագրությունը երկու առանձին համաձայնագրեր են: ...Այստեղ՝ ներկա հայցում, կարևոր է նշել, որ չնայած 1992 թ. դեկտեմբերի 17-ին դաշնագիրը տարածվեց Մակաոյի վրա Պորտուգալիայի խորհրդարանի կողմից ընդունված հատուկ որոշմամբ, այդ տարածումը չներառեց կամընտիր արձանագրությունը: Պորտուգալիան մի համաձայնագրի գործողությունը հատուկ տարածել է Մակաոյի նկատմամբ, իսկ մյուսի դեպքում նման քայլ չի կատարել: Սա հստակ ցույց է տալիս Պորտուգալիայի մտադրությունը, որ, չնայած դաշնագիրը կիրառելի կլինի Մակաոյի նկատմամբ, կամընտիր արձանագրությունը չի լինի: ...Հետևաբար, ես որևէ կասկած չունեմ, որ կամընտիր արձանագրությունը որևէ ժամանակահատվածում կիրառելի չի եղել Մակաոյի նկատմամբ, և, ուրեմն, հաղորդումը պետք է ճանաչվի անընդունելի՝ համաձայն կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի:

Փոքրամասնության այս տեսակետը հենվում է այն ենթադրության վրա, որ «անվիճելի է այն», որ

⁹ «Փոխանցման» հարցը կարևոր հարցեր առաջացրեց՝ կապված համաձայնագրերի առումով իրավահաջորդության խնդրի հետ, ինչը քննարկված է այս հատվածում [25.43-25.48]:

ՔՔԻՄԴ-ը Մակաոյի համար կիրառելի դարձավ միայն 1992 թ. դեկտեմբերի 17-ին: Այնուամենայնիվ, ինչպես փաստարկվեց վերը, այս պնդումն իրականում վիճելի է և այդպիսով ամուր հիմքեր չի տալիս փոքրամասնության աջակցությունը վայելող այս որոշման մեջ օգտագործվող փաստարկների համար: Այսուհանդերձ, Ամորիի և Բիագվաթիի տեսակետն ավելի շատ ներքին տրամաբանություն ունի, քան ՄԻԿ-ի տեսակետը:

[4.10] Ի վերջո, Կուոկ Կոյի հայցը համարվեց անընդունելի: Կոմիտեի երեք անդամներ (Ամոր, Բիագվաթի և Անդո) որոշեցին, որ ԿԱ-ն երբեք չի կիրառվել Մակաոյի նկատմամբ: Մեծամասնության մյուս անդամները (ովքեր կողմ էին անընդունելիությանը) որոշեցին, որ հեղինակը չի կարողացել սպառել իրավական պաշտպանության ներքին միջոցները¹⁰:

Պետության արտատարածքային պատասխանատվությունը

[4.11] Մասնակից պետությունները պարտավոր են ապահովել ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքների իրականացումն իրենց ինքնիշխան տարածքի սահմաններում և այն տարածքներում, որոնք փաստացի վերահսկվում են իրենց կողմից: Օրինակ՝ Իսրայելը պատասխանատվություն է կրում ՔՔԻՄԴ-ի իրականացման համար ինչպես Իսրայելի տարածքում, այնպես էլ Արևմտյան ափի և Գազայի հատվածի գրավյալ տարածքներում: Իսրայելին վերաբերող վերջին մեկնաբանություններում ՄԻԿ-ը նշել է¹¹.

¶ 11. Կոմիտեն ի գիտություն է ընդունում մասնակից պետության այն դիրքորոշումը, որ դաշնագիրը չի գործում իր տարածքի սահմաններից դուրս, մասնավորապես՝ Արևմտյան ափում և Գազայի հատվածում, հատկապես երբ այս տարածքներում շարունակվում է զինված հակամարտությունը: Կոմիտեն վերահաստատում է այն տեսակետը, որը նախկինում ներկայացրել էր Իսրայելի նախնական զեկույցի վերաբերյալ իր Եզրափակիչ դիտարկումների 10-րդ պարբերության մեջ ..., որ զինված հակամարտության ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքի կարգի կիրառելիությունը չի խոչընդոտում դաշնագրի կիրառությունը, ներառյալ՝ 4-րդ հոդվածի, որն անդրադառնում է պետության կենսագործունեությանը սպառնացող հասարակական արտակարգ իրավիճակներին: Միջազգային մարդասիրական իրավունքի կարգի կիրառելիությունը չի կասեցնում նաև դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված մասնակից պետությունների պատասխանատվությունը սեփական տարածքներից դուրս, ներառյալ՝ «գրավյալ տարածքներում» իրենց իշխանությունների գործողությունների համար: Այս իսկ պատճառով կոմիտեն վերահաստատում է, որ ներկա պայմաններում դաշնագրի դրույթները գործում են ի շահ գրավյալ տարածքների բնակչության և վերաբերում են այդ տարածքներում իշխանությունների կամ նրանց գործակալների յուրաքանչյուր գործողության, որն ազդում է դաշնագրով սահմանված իրավունքների իրացման վրա և, համաձայն միջազգային հանրային իրավունքի սկզբունքների, տեղի է ունենում այն տարածքի սահմաններում, որը գտնվում է Իսրայելի պետական պատասխանատվության ներքո:

Մասնակից պետությունը պետք է վերանայի իր դիրքորոշումը և իր երրորդ հերթական զեկույցում ներառի տեղեկություններ գրավյալ տարածքներում դաշնագրի այնպիսի կիրառման վերաբերյալ, որը բխում է այնտեղ իր իրականացրած գործողությունից:

[4.12] Թվում է, թե ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի տեքստը հստակորեն բացառում է որևէ մասնակից պետության պատասխանատվությունն այնպիսի գործողությունների համար, որոնք կատարվում են իր տարածքից դուրս: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը որևէ պետության՝ ՔՔԻՄԴ-ից բխող պարտավորությունների իրավագործության սահմանների առումով որդեգրել է ազատական մոտեցում՝ հաստատելով, որ պետություններն իսկապես ունեն որոշակի մակարդակի արտատարածքային պատասխանատվություն:

ԹԻԿ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

¶ 9. 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մասնակից պետություններից պահանջվում է հարգել դաշնագրով սահմանված իրավունքները և ապահովել դրանց հասանելիությունն այն անձանց համար, ովքեր գտնվում են իրենց տարածքներում, և այն անձանց համար, ովքեր գտնվում են իրենց իրավագործության ներքո: Սա նշանակում է, որ

¹⁰ Տե՛ս [6.36]:

¹¹ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/ISR: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 93), պարբ. 10:

յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է հարգել դաշնագրով ճանաչված իրավունքները և երաշխավորել դրանք յուրաքանչյուրի համար, ով գտնվում է տվյալ մասնակից պետության իշխանության կամ փաստացի վերահսկողության ներքո, եթե նույնիսկ այն գտնվում է այդ մասնակից պետության տարածքից դուրս...

[4.13] ՄԻԿ-ն արտատարածքային պատասխանատվության խնդրին անդրադարձել է հետևյալ գործերի շրջանակներում, որոնցում ներկայացված բողոքներով հայտարարվում է պետության գործակալների արտատարածքային գործունեության հետևանքով ՔՔԻՄԴ-ի ոտնահարումների մասին:

**«ԼՈՊԵՍ ԲՈՒՐԳՈՍԸ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ»
(LÓPEZ BURGOS v URUGUAY 52/79)**

¶ 2.2. Հեղինակը պնդում է, որ 1976 թ. հուլիսի 13-ին իր ամուսինը Բուենոս Այրեսում (Արգենտինա) առևանգվել է «Ուրուգվայի անվտանգության և հետախուզության ուժերի» անդամների կողմից, որոնց օժանդակել են արգենտինյան մերձազգևական խմբեր, և ապա գաղտնի կերպով մոտ երկու շաբաթ կալանքի տակ է եղել Բուենոս Այրեսում: 1976 թ. հուլիսի 26-ին պրն Լոպես Բուրգոսը մի քանի այլ ուրուգվայցիների հետ ապօրինաբար և գաղտնի կերպով տեղափոխվել է Ուրուգվայ, որտեղ անվտանգության հատուկ ուժերի կողմից մի գաղտնի բանտում երեք ամիս «ինկոմունիկադո» (առանց հարազատների հետ շփվելու իրավունքի) կալանքի տակ է պահվել: Արգենտինայում և Ուրուգվայում իր մոտավորապես չորս ամիս տևած կալանքի ընթացքում նա շարունակաբար ենթարկվել է մարմնական և հոգեկան խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի:

Հայցի ընդունելիության վերաբերյալ կոմիտեն արեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 12.1. Մարդու իրավունքների կոմիտեն ... կարծում է, որ չնայած Լոպես Բուրգոսի ձերբակալությունը և նախնական կալանքն ու հակաիրավական վերաբերմունքը, ըստ հայտարարության, տեղի են ունեցել օտար պետության տարածքում, կոմիտեն կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի («... իր իրավագործության ներքո գտնվող անձինք ...») կամ դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի («... իր տարածքի սահմաններում գտնվող և իր իրավագործության ներքո գտնվող անձինք ...») դրույթները չեն արգելում քննության առնել այս մեղադրանքները, ինչպես նաև հետագայում առևանգելու միջոցով նրան Ուրուգվայի տարածք բերելու պնդումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս գործողությունների համար պատասխանատու են Ուրուգվայի գործակալները, որոնք գործել են օտար հողում:

¶ 12.2. Կամընտիր արձանագրության 1-ին հոդվածում «իր իրավագործության ներքո գտնվող անձանց» հիշատակումը չի ազդում վերոնշյալ եզրակացության վրա, որովհետև այդ հոդվածում արված հղումը չի վերաբերում այն վայրին, որտեղ կատարվել է իրավունքի ոտնահարումը, այլ առավելապես անձի և պետության միջև փոխհարաբերությանը՝ կապված դաշնագրով սահմանված իրավունքներից որևէ մեկի ոտնահարման հետ, որտեղ էլ դա կատարված լինի:

¶ 12.3. Դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետը մասնակից պետությանը պարտավորեցնում է հարգել և ապահովել «իր տարածքի սահմաններում գտնվող և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց» իրավունքները, բայց այն չի ենթադրում, թե խնդրո առարկա մասնակից պետությունը չի կարող պատասխանատվության ենթարկվել դաշնագրով ճանաչված իրավունքների այն խախտումների համար, որոնք իր գործակալները կատարում են մեկ այլ պետության տարածքում՝ անկախ այն հանգամանքից՝ տվյալ պետության իշխանությունները դրան համաձայն են, թե՞ ընդդիմանում են: Դաշնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«Սույն դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որևէ պետություն, խումբ կամ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործողությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված լինի սույն դաշնագրով սահմանված իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն դաշնագրով»:

Սրան համապատասխան՝ անբարեխիղճ կլիներ դաշնագրի 2-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը մեկնաբանել այն նշանակությամբ, թե մասնակից պետությանը թույլատրվում է մեկ այլ պետության տարածքում կատարել դաշնագրի այնպիսի խախտումներ, որոնք չի կարող կատարել սեփական տարածքում:

Պրն Տոմուշատը սրան կցեց իր համընկնող կարծիքը՝ հետևյալ մեկնաբանություններով.

Ես համամիտ եմ մեծամասնության արտահայտած տեսակետներին: Այսուհանդերձ, հստակեցնելու և 12-րդ պարբերությունում բերված փաստարկները պարզաբանելու կարիք կա, որոնց նպատակը դաշնագրի կիրառելիությունը հաստատելն է նաև այն իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել Ուրուգվայի սահմաններից դուրս: Իսկապես, պարբերություն 12.3-ի առաջին նախադասությունը, համաձայն որի դաշնագրի 2-րդ հոդվածի

1-ին կետը չի նախատեսում, թե որևէ մասնակից պետություն «չի կարող պատասխանատվություն կրել դաշնագրով սահմանված իրավունքների այնպիսի խախտումների համար, որոնք իր գործակալները կատարել են մեկ այլ պետության տարածքում», չափազանց ընդարձակ ձևակերպում ունի և այդ պատճառով կարող է ապակողմնորոշող եզրակացությունների տեղիք տալ: Սկզբունքորեն դաշնագրի կիրառման սահմանները ենթակա չեն ընդլայնվելու՝ հղում կատարելով 5-րդ հոդվածին: Մի դրույթ, որը ձևակերպվել է, որպեսզի ընդգրկի այն դեպքերը, երբ ֆորմալ տեսակետից դաշնագրով գործող կանոնները կարծես օրինականացնում են այնպիսի գործողություններ, որոնք էականորեն հակառակվում են դաշնագրի նպատակներին և ընդհանուր ոգուն: Այսպիսով, կառավարությունները դաշնագրով պաշտպանված իրավունքներին և ազատություններին կից սահմանափակող դրույթները երբեք չեն կարող օգտագործել այն չափով, որ այդ իրավունքների և ազատությունների բուն էությունը չեզոքանա. անձանց իրավականորեն արգելվում է օգտվել այդ նույն իրավունքներից և ազատություններից՝ տապալելու համար օրենքի իշխանության կարգը, որն այս դաշնագրի հիմնարար փիլիսոփայությունն է: Քննարկվող գործում, այնուամենայնիվ, դաշնագիրը նույնիսկ հնարավորություն չի տալիս որևէ «իրավունքի» անունից կատարելու այն քրեական հանցագործությունները, որոնք, համաձայն կոմիտեի համոզմունքի, կատարվել են Ուրուգվայի իշխանությունների կողմից:

«Իր տարածքի սահմաններում» արտահայտությունը բացատրելն իր խիստ բառացի իմաստին համապատասխան, այն է՝ որպես պետական սահմաններից դուրս կատարվող գործողությունների համար որևէ պատասխանատվություն բացառող, հանգեցնում է բացարձակ անհեթեթ արդյունքների: Այս բանաձևը նախատեսված էր այնպիսի օբյեկտիվ դժվարությունների համար հոգ տանելու նպատակով, որոնք կարող էին խանգարել դաշնագրի իրականացմանը որոշակի իրավիճակներում: Այսպես, մասնակից պետությունը, իր տրամադրության տակ ունենալով միայն սահմանափակ կարողություններ ունեցող դիվանագիտական պաշտպանության միջոցներ, սովորաբար անկարող է երաշխավորել դաշնագրով սահմանված իրավունքների արդյունավետ իրացումն արտասահմանում գտնվող քաղաքացիների համար: Օտարերկրյա տարածքների գրավման դեպքերը ստեղծում են իրավիճակների մեկ այլ օրինակ, որը դաշնագրի նախագիծը մշակողները նախատեսել էին, երբ մասնակից պետությունների պարտավորությունները սահմանափակվել էին իրենց սեփական տարածքների սահմաններով: Այնուամենայնիվ, այս բոլոր փաստացի օրինակների ընդհանրությունն այն է, որ դրանք արժանահավատ հիմք են տալիս դաշնագրով պաշտպանությունը մերժելու համար: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ նախագիծը մշակողները, որոնց անկախությունը հնարավոր չէ կասկածի տակ դնել, նպատակ են ունեցել դաշնագրի տարածքային ընդգրկումը սահմանափակել՝ հաշվի առնելով այնպիսի իրավիճակների հնարավորությունը, որոնցում դաշնագրի կատարումն ապահովվել ամենայն հավանականությամբ կարող է բախվել բացառիկ խոչընդոտների: Այնուամենայնիվ, երբևէ չի նախատեսվել մասնակից պետություններին շնորհել անսահմանափակ ինքնուրույն իշխանություն, որպեսզի նրանք կամայական և միտումնավոր հարձակումներ իրականացնեն արտերկրում ապրող իրենց քաղաքացիների ազատության և անձնական անձեռնմխելիության նկատմամբ: Հետևաբար, չնայած 2-րդ հոդվածի 1-ին կետի ձևակերպումներին, Ուրուգվայից դուրս տեղի ունեցած դեպքերը հայտնվում են դաշնագրի իրավասության սահմաններում:

Կոմիտեն նման եզրակացության էր հանգել «Սելիբերտի դե Կասարիեգոն ընդդեմ Ուրուգվայի» (*Celiberti de Casariego v Uruguay*, 56/1979) գործում:

[1.14] «ՄՈՆՏԵՐՈՆ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ» (MONTERO v URUGUAY, 106/81)

Այս գործում հայցվորի՝ Ուրուգվայի քաղաքացու անձնագիրը բռնագրավվել էր Գերմանիայում Ուրուգվայի հյուպատոսության կողմից: Հեղինակը հայտարարել էր, որ դա հանգեցրել է 12-րդ հոդվածի ոտնահարման, որը երաշխավորում է տեղաշարժման ազատություն¹²: Չնայած այն փաստին, որ բռնագրավումը կատարվել էր Գերմանիայում, ՄԻԿ-ը որոշեց, որ խնդրո առարկա գործողությունը գտնվում է Ուրուգվայի իրավագործության ներքո: Կոմիտեն այս խնդրի շուրջ արեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 5. Մինչև հաղորդման ընդունելիության վերաբերյալ որոշում ընդունելը Մարդու իրավունքների կոմիտեն ex officio քննեց, թե արդյոք այն փաստը, որ Մաբել Պերեյրա Մոնտերոն բնակվում է արտերկրում, ազդեցություն ունի՝ կոմիտեի՝ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածով այդ հաղորդումը ստանալու և դիտարկելու իրավասության վրա՝ հաշվի առնելով դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները: Այս համատեքստում կոմիտեն կատարեց հետևյալ դիտարկումները. կամընտիր արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է տվյալ պետության իրավագործությանը ենթակա անձանց նկատմամբ, ովքեր պնդում են, թե տուժել են այդ պետության կողմից դաշնագրով ճանաչված իրենց իրավունքներից որևէ մեկի ոտնահարումից: Ուրուգվայի քաղաքացու անձնագրի խնդիրը հստակորեն տեղավորվում է Ուրուգվայի իշխանությունների իրավագործության շրջանակներում, իսկ այդ անձը նշված իմաստով գտնվում է Ուրուգվայի «իրավագործության ներքո»: Ավելին՝ անձնագիրը տվյալ անձին «ցանկացած երկիր, ներառյալ՝ իր

¹² Տե՛ս «Վիդալ Մարտինսն ընդդեմ Ուրուգվայի» (*Vidal Martins v Uruguay*) նմանատիպ գործի էությանը վերաբերող քննարկումը (57/79) էջ [12.17]:

սեփական երկիրը լքելու» հնարավորություն տալու միջոց է՝ համաձայն դաշնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի: Ուստի կոմիտեն եզրակացրեց, որ այդ իրավունքի բուն էությունից է բխում այն, որ արտասահմանում բնակվող որևէ քաղաքացու դեպքում այն պարտավորություններ է սահմանում ինչպես բնակության վայր հանդիսացող պետության, այնպես էլ հայրենի պետության համար, ուրեմն դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետը չէր կարելի մեկնաբանել որպես 12-րդ հոդվածի 2-րդ կետով Ուրուգվայի ստանձնած պարտավորությունները միայն սեփական տարածքի սահմաններում բնակվող քաղաքացիներով սահմանափակող:

[4.15]

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

¶ 9. ... [Մասնակից պետությունը պատասխանատվություն է կրում] այն անձանց համար, ովքեր գտնվում են տվյալ մասնակից պետության՝ սեփական տարածքից դուրս գործող ուժերի իշխանության կամ փաստացի վերահսկողության ներքո, ներառյալ՝ մասնակից պետության որևէ պետական գործակալի կողմից համար, որը միջազգային խաղաղապահ կամ խաղաղարար գործողություն իրականացնելու նշանակում է ստացել:

Հետևաբար, մասնակից պետությունները պատասխանատու են արտասահմանում տեղակայված իրենց զինված ուժերի, ասենք՝ 2003 թ. Իրաքում տեղակայված ուժերի գործողությունների համար¹³: Օրինակ՝ ՄԻԿ-ը Բելգիայի առնչությամբ հայտարարել է հետևյալը¹⁴:

¶ 14. Կոմիտեն անհանգստացած է Սոմալիում Միավորված ազգերի կազմակերպության Սոմալիի գործողության (UNOSOM II) շրջանակներում բելգիացի զինվորների վարքի առնչությամբ և արձանագրում է, որ մասնակից պետությունը ճանաչել է դաշնագրի կիրառելիությունն այս առումով և հետաքննության նպատակով բացել 270 փաստաթուղթ: Կոմիտեն ավստոսանք է հայտնում, որ չի ստացել հավելյալ տեղեկություններ հետաքննությունների արդյունքների և դեպքերի վերաբերյալ կայացված վճիռների մասին և դիմում է մասնակից պետությանը՝ այդ տեղեկությունները տրամադրելու համար:

Նիդեռլանդների առնչությամբ կոմիտեն հայտարարեց հետևյալը¹⁵:

¶ 8. Կոմիտեն շարունակում է մտահոգվել, որ 1995 թ. հուլիսին Սրբերենիցայի (Բոսնիա և Հերցեգովինա) անկման շուրջ տեղի ունեցող դեպքերին այս մասնակից պետության խաղաղապահ ուժերի հայտարարվող ներգրավումից վեց տարի անց դրան առնչություն ունեցող անձանց պատասխանատվությունը դեռ պետք է հրապարակայնորեն և վերջնականորեն պարզվի: Կոմիտեն կարծում է, որ նման կարևորություն ունեցող դեպքի առնչությամբ հատկապես կարևոր է, որ մասնակից պետության կողմից կյանքի իրավունքի երաշխավորման պարտավորության հետ կապված հարցերը լուծվեն արագացված և համապարփակ կարգով (դաշնագրի 2-րդ և 6-րդ հոդվածներ):

Մասնակից պետությունը հնարավորինս շուտ պետք է ավարտի իր հետաքննությունները, որոնք վերաբերում են սեփական զինված ուժերի մասնակցությանը Սրբերենիցայի դեպքերին, լայնորեն հրապարակի դրանց արդյունքները և ուսումնասիրի եզրակացությունները, որպեսզի պարզի, թե ինչ քրեական կամ կարգապահական գործողությունների անհրաժեշտություն կա:

Մասնավոր անձանց գործողությունների համար պետության պատասխանատվությունը

[4.16]

«ԿԵՇԱՎԺԵՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (KESHAVJEE v CANADA, 949/00)

Հեղինակը ՄԻԿ-ին հաղորդում ներկայացրեց, որը վերաբերում էր մի արհմիության գործողություններին: ՄԻԿ-ը որոշեց, որ հաղորդումն անընդունելի է, և նշեց.

¶ 4.2. Արհմիության գործողությունների դեմ ուղղված մեղադրանքների առնչությամբ կոմիտեն կարծում է, որ մեղադրանքներն ուղղված են մասնավոր կառույցների դեմ: Այն դեպքում, երբ բացակայում է որևէ փաստարկ, որի հիման

¹³ See T. Meron, 'Extraterritoriality of Human Rights Treaties: the US Action in Haiti' (1995) 89 AJIL 78:

¹⁴ ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 99:

¹⁵ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/NET:

վրա հնարավոր կլինեն այդ անձանց գործողությունների համար պատասխանատվության կանչել պետությանը, հաղորդման այս հատվածը *ռացիոնե պերսոնե*^{*} անընդունելի է՝ համաձայն կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի:

Առհասարակ, մասնակից պետություններից պահանջվում է սեփական իրավագործության սահմաններում կանխել մասնավոր քաղաքացիների կողմից այլոց իրավունքների չարաշահումը¹⁶: Այնուամենայնիվ, ՔՔԻՄԴ-ը որևէ ուղղակի պարտավորություններ մասնավոր կառույցների համար չի սահմանել: Կեշավի-եի գործում բոլորը ծախսովեց, քանի որ հեղինակն ի վիճակի չեղավ ցույց տալու պետության և արհմիության վիճարկվող գործողության կապը:

[4.17] Հետաքրքիր է մտորել այն հարցի շուրջ, թե արդյոք երբևէ հնարավոր կլինի՞ մասնակից պետությանը պատասխանատվության ենթարկել իր քաղաքացիների գործողությունների համար, որոնք գործել են արտասահմանում՝ որպես մասնավոր անձինք¹⁷: Օրինակ՝ հնարավոր է արդյոք որևէ մասնակից պետության պատասխանատվության ենթարկել իր կորպորատիվ քաղաքացիների կողմից արտերկրում մարդու իրավունքների հետ կապված աղաղակող չարաշահումները կանխել չկարողանալու համար: Սա մի անհաղթահարելի հարց է այն պայմաններում, երբ որոշ անդրազգային կորպորացիաներ քաղաքականապես և տնտեսապես ավելի հզոր են, քան որոշ «հյուրընկալող» պետություններ (հատկապես զարգացող երկրները), որտեղ դրանք գործում են: Հետևաբար, «հյուրընկալող պետության» պարտադիր կարգավորումը կարող է խիստ ցանկալի լինել¹⁸: Այնուամենայնիվ, ելնելով այն փաստից, որ թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության մախագծում նման պարտավորության մասին որևէ հիշատակում չկա, որը կիստակեցներ ՔՔԻՄԴ-ով մասնակից պետությունների ընդհանուր պարտավորությունները, անհավանական է թվում, թե նման պարտավորություն գոյություն ունի:

Միջազգային կազմակերպությունների գործողությունների համար պետության պատասխանատվությունը

[4.18] «Հ.վ.դ. Պ.-ն ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (H.v.d.P v THE NETHERLANDS, 217/86)

Այս հաղորդման հեղինակը բողոքում էր իր գործատուի՝ Եվրոպական արտոնագրային գրասենյակի (European Patent Office, ԵԱԳ/EPO) կողմից աշխատանքի ընդունելու որոշումների դեմ:

¶ 2.3. Ապա հեղինակը դիմեց Մարդու իրավունքների կոմիտե, որը, ըստ նրա, իրավասու էր քննել այդ գործը, քանի որ Եվրոպական արտոնագրային կոնվենցիային միացած հինգ մասնակից պետություններ (Ֆրանսիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները և Շվեդիան) նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության կողմեր են: Հեղինակը պնդում էր, որ, «համաձայն 25-րդ հոդվածի (գ) կետի, յուրաքանչյուր քաղաքացի, հավասարության ընդհանուր հիմունքներով, պետք է սեփական երկրում պետական ծառայության մտնելու հնարավորություն ունենա: ԵԱԳ-ն, չնայած կոնվենցիայի կողմ հանդիսացող պետություններում ընդունված ու գործող պետական մարմին է, հանդիսանում է Հոլանդիայի պետական իշխանության իրականացման մարմին»¹⁹: Հեղինակը պնդում էր, որ դաշնագրի 25-րդ հոդվածի (գ) կետի խախտումների դեմ ԵԱԳ մախագահին ուղղված դիմումը և Ներքին դիմումների կոմիտեի կողմից տրված կարծիքը դաշնագրի հոդված 2-ի սահմանած իմաստի տեսանկյունից իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չեն: Ավելին՝ «Ներքին դիմումների կոմիտեն իրավասության, անկախության և անկողմնակալության (ինչպես պահանջվում է դաշնագրի 14-րդ հոդվածով) ծաղր է»²⁰: Ներքին դիմումների կոմիտեն հրաժարվում է որոշում կայացնել հեղինակի կողմից հայցված միջազգային ընդհանուր իրավունքի հիման վրա, այսինքն՝ մի իրավունքի, որը պայմանագրային կողմ հանդիսացող պետությունները պարտավորվել են հարգել»:

ՄԻԿ-ը որոշեց, որ հաղորդումն անընդունելի է հետևյալ պատճառներով:

^{*} *ratione personae* - անձից կախված հանգամանքներից ելնելով (ծան. թարգմ.):

¹⁶ Տե՛ս նաև [1.77-1.84]:

¹⁷ Առհասարակ տե՛ս T. Zwart, *The Admissibility of Human Rights Petitions* (Ashgate, Dartmouth, 1998), 87-90:

¹⁸ Տե՛ս S. Joseph, "Taming the Leviathans: Multinational Enterprises and Human Rights" (1999) 46 *Netherlands International Law Review* 171, at 175-8 and 183-4:

¹⁹ Հոդված 25(գ)-ի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս 22-րդ գլուխը:

²⁰ 14-րդ հոդվածի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս 14-րդ գլուխը:

¶ 3.2. Այս կապակցությամբ Մարդու իրավունքների կոմիտեն կարծում է, որ կոմիտեն կարող է ընդունել և քննության առնել հաղորդումներ միայն այնպիսի պահանջների առնչությամբ, որոնք տեղավորվում են դաշնագրի մասնակից պետության իրավասության շրջանակներում: Այնուամենայնիվ, հեղինակի բողոքները վերաբերում են մի միջազգային կազմակերպության աշխատանքի ընդունման քաղաքականությանը, որը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես Նիդեռլանդների կամ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և դրա կամընտիր արձանագրությանը միացած որևէ այլ պետության իրավասության հարց: Հետևաբար, հեղինակի դիմումը ենթակա չէ կամընտիր արձանագրության գործողությանը:

[4.19] Ձարմանալի չէ, որ ՄԻԿ-ը որևէ իրավագործություն չունի միջազգային կազմակերպությունների նկատմամբ, քանի որ դրանք ՔՔԻՄԴ-ի կողմեր չեն հանդիսանում: Այնուամենայնիվ, ժամանակակից միջազգային կազմակերպությունների հզորությունը և ազդեցությունը, ինչպիսիք են Եվրոպական Միությունը և դրա բազմաթիվ կառույցները, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը և հենց Միավորված ազգերի կազմակերպությունը, այնքան են ընդլայնվել, որ հավանաբար այդ կառույցների համար մարդու իրավունքների համաձայնագրերը պետք է հստակ պարտադիր ուժ ունենան:

Սակայն ուշադրություն դարձնենք Սոմալիում ՄԱԿ-ի գործողության շրջանակներում բելգիական զորամիավորման վերաբերյալ [4.15] ՄԻԿ-ի արտահայտած մեկնաբանություններին, որոնք կարծես ենթադրում են, որ մասնակից պետության համար ուժի մեջ են մնում սեփական զորամիավորումների համար ՔՔԻՄԴ-ի համաձայն ստանձնած պարտավորությունները, եթե նույնիսկ դրանք գտնվում են ՄԱԿ-ի հրամանատարության ներքո:

Այլ պետությունների գործողությունների համար պետության պատասխանատվությունը

[4.20] ԿԱ 1-ին հոդվածը սահմանում է, որ բողոքները պետք է ներկայացվեն «տվյալ մասնակից պետության կողմից» կատարված խախտումներից տուժողների կողմից: Այսպիսով, մասնակից պետությունները, ընդհանուր առմամբ, պատասխանատու չեն այլ պետությունների կողմից ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքների ոտնահարումների համար²¹:

[4.21] «ՔԻՆԴԼԵՐՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (KINDLER v CANADA, 470/91)

Հեղինակը հայտարարել էր, որ մասնակից պետության կողմից իր նախատեսված հանձնումը Միացյալ Նահանգներին, որտեղ նա ենթակա է եղել մահապատժի հնարավորության, ոտնահարել է ՔՔԻՄԴ-ը²²: Մասնակից պետությունը պնդել էր, որ դիմումը *ռազիոնե լոկի*^{*} անընդունելի է, քանի որ այն, ըստ էության, վերաբերում է մեկ այլ պետության ակնկալվող գործողությունների (որն այդ ժամանակ նույնիսկ ՔՔԻՄԴ-ին միացած պետություն չէր): ՄԻԿ-ը չհամաձայնեց հետևյալ ձևակերպմամբ.

¶ 6.2. Կոմիտեն քննարկեց մասնակից պետության անհամաձայնությունն այն մասին, որ տվյալ դիմումը *ratione loci* անընդունելի է: Դաշնագրի 2-րդ հոդվածը մասնակից պետություններից պահանջում է իրենց իրավագործության սահմաններում երաշխավորել անձանց իրավունքների պաշտպանությունը: Եթե անձն օրինական կերպով արտաքսվում կամ հանձնվում է մեկ այլ պետության, դաշնագրի համաձայն՝ արտաքսող մասնակից պետությունն ընդհանուր առմամբ պատասխանատվություն չի կրում այդ անձի իրավունքների այնպիսի խախտումների համար, որոնք ավելի ուշ կարող է կատարվեն մյուս պետության իրավագործության ներքո: Այս իմաստով պարզ է, որ որևէ մասնակից պետությունից չի պահանջվում երաշխավորել անձանց իրավունքների պաշտպանությունն այլ պետությունների իրավագործության սահմաններում: Այնուամենայնիվ, եթե որևէ մասնակից պետություն որոշում է կայացնում իր իրավագործության ներքո գտնվող որևէ անձի վերաբերյալ, և դրա անհրաժեշտ և կանխատեսելի հետևանքն այն է, որ դաշնագրով այդ անձի իրավունքները այլ իրավագործության ներքո կխախտվեն, մասնակից

²¹ Տե՛ս, օրինակ՝ «Ե.Մ.Ե. Դ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (E.M.E.H. v France, 409/90) գործը: Հոդված 1(3)-ի իրավագործային սահմանափակումների մասին, այնուամենայնիվ, տե՛ս [7.21]:

²² Եւրոյան վերաբերյալ տե՛ս [8.33]:

^{*} *ratione loci* - վայրից կախված հանգամանքներից ելնելով (ծան. թարգմ.):

պետությունն ինքը դրանով կարող է խախտել ՔՔԻՄԴ-ը: Սա բխում է այն փաստից, որ տվյալ մասնակից պետության՝ դաշնագրի 2-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը կխախտվի, եթե անձը հանձնվի մեկ այլ պետության (անկախ այն հանգամանքից՝ տվյալ պետությունը դաշնագրի կողմ է, թե՞ ոչ), որտեղ նրա նկատմամբ վերաբերմունքը վստահաբար հակասելու է դաշնագրի դրույթներին, կամ եթե հանձնման նպատակը հենց դա է: Օրինակ՝ մասնակից պետությունն ինքը խախտած կլինի դաշնագիրը, եթե որևէ անձի մեկ այլ պետության հանձնի այնպիսի հանգամանքներում, երբ կանխատեսելի է, որ լինելու են խոշտանգումներ: Հետևանքի կանխատեսելիությունը կնշանակի, որ տվյալ մասնակից պետության կողմից կատարվել է դաշնագրի ոտնահարում, չնայած այդ հետևանքը իրականություն է դառնալու ապագայում:

¶ 6.3. Այս պատճառով կոմիտեն իրեն իրավասու համարեց ուսումնասիրելու, թե արդյոք մասնակից պետությունը խախտե՞լ է դաշնագիրը, երբ որոշում է կայացրել հեղինակին հանձնել համաձայն Միացյալ Նահանգների և Կանադայի միջև 1976 թ. կնքված «Հանձնման մասին համաձայնագրի» [Extradition Treaty] և 1985 թ. ընդունված «Հանձնման մասին օրենքի»:

[4.22] ՄԻԿ-ը հայտնաբերել է մի շարք խախտումներ, որոնք առաջացել են պետությունների կողմից անձանց այլ պետություններ արտաքսելով, որոնց հետևանքը լինելու էր նրանց՝ 6-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքի²³ կամ 7-րդ հոդվածում ամրագրված խոշտանգումներից զերծ լինելու ազատության խախտումն այդ մյուս պետության կողմից²⁴: Այսուհանդերձ, ՄԻԿ-ը երբեք վարույթ չի ընդունել որևէ բողոք, որը վերաբերում է այն անձի արտաքսմանը, ով վախեցել է ընդունող պետության կողմից իր նվազելի իրավունքների «պակաս» ոտնահարումից (օրինակ՝ նվազելի իրավունքների ոտնահարումից, որոնք կարելի է)²⁵:

[4.23]

ԹԻՎ 31 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

¶ 10. Ավելին՝ 2-րդ հոդվածի համաձայն, սահմանված պարտավորությունը, որը մասնակից պետություններից պահանջում է հարգել և ապահովել իրենց տարածքի սահմաններում գտնվող և իրենց իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ դաշնագրով սահմանված իրավունքները, հանգեցնում է մեկ այլ պարտավորության՝ չարտաքսել, չհանձնել, չվտարել կամ այլ կերպ չհեռացնել անձին իրենց տարածքից, եթե գոյություն ունի իրական [և էական] վտանգ [այսինքն՝ անհրաժեշտ և կանխատեսելի հետևանք], որ դրանով կհասցվի մի անդառնալի վնաս, օրինակ՝ այնպիսին, որը ներկայացված է դաշնագրի 6-րդ և 7-րդ հոդվածներում: Համապատասխան դատական և վարչական իշխանությունները պետք է իրազեկվեն այն մասին, որ նման խնդիրների կապակցությամբ պահանջվում է ապահովել դաշնագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

Թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության նախագծում ՄԻԿ-ը վտարվողի նկատմամբ պետության պարտավորությունները՝ կապված ընդունող պետության կողմից կանխատեսվող ոտնահարումների հետ, սահմանափակում է «անշրջելի վնաս» պատճառող խախտումների շրջանակով: Որպես նման անշրջելի վնասի օրինակներ՝ բերվում էին միայն 6-րդ և 7-րդ հոդվածներում ներկայացված խախտումները: Հատուցումը և փոխհատուցումը, ըստ ամենայնի, իրավական պաշտպանության միջոցներ են, որոնք հասանելի են ՔՔԻՄԴ-ի այլ խախտումների մեծ մասի դեպքում: Այնուամենայնիվ, «անդառնալի» լինելու չափանիշը չփոքեցնող է: Եթե ընդունող պետությունը ՔՔԻՄԴ-ի կողմ չէ և, հետևաբար, դուրս է ՔՔԻՄԴ-ի վերահսկիչ մեխանիզմների ազդեցությունից, ապա արդյոք դա չի՞ նշանակում, որ ավելի շատ խախտումներ են դասակարգվում որպես «անշրջելի»:

[4.24] Ուզբեկստանին վերաբերող եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշեց հետևյալը²⁶.

¶ 13. Կոմիտեն մտահոգված է, որ գոյություն չունի անձանց, ներառյալ՝ Ուզբեկստանում ապաստան որոնողներին այնպիսի երկրներ արտաքսելու կամ վտարելու արգելում, որտեղ հնարավոր է, որ մահապատժի, խոշտանգումների կամ դաժան, անարդար կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժամիջոցների

²³ Տե՛ս [8.33-8.38]:

²⁴ Տե՛ս [9.67]ff:

²⁵ «Թ.Թ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (T. T. v Australia, 706/96) գործում հեղինակը պնդում էր, որ Մալայզիա վերադառնալուց հետո ինքը ենթարկվել է անարդար քննության, ինչը 14-րդ հոդվածի խախտում է: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը չանդրադարձավ խնդրի էության մասին հարցին, քանզի որոշեց, որ նման անարդար քննությունը հեղինակի արտաքսման տրամաբանորեն կանխատեսելի արդյունք չէր:

²⁶ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/UZB:

ռիսկերի ենթարկվեն:

Մասնակից պետությունը պետք է ապահովի, որ բոլոր անձինք, ովքեր պնդում են, թե իրենք ընդունող պետությունում կենթարկվեն խոշտանգումների, անմարդկային կամ անպատշաճ վերաբերմունքի կամ մահապատժի, հնարավորություն ունենան պաշտպանություն որոնելու Ուզբեկստանում կամ առնվազն ստանան երաշխիքներ, որ չեն ենթարկվի հարկադիր վտարման (դաշնագրի 6-րդ և 7-րդ հոդվածներ):

Այս նկատառումները մատնանշում են, որ դաշնագրում ամրագրված հանձնման և արտաքսման արգելանքը տարածվում է միայն այն իրավիճակների վրա, երբ արտաքսվողը կանգնած է ընդունող պետությունում 6-րդ կամ 7-րդ հոդվածների հնարավոր չարաշահումների վտանգի առջև²⁷:

[4.25] «Ջաջն ընդդեմ Կանադայի» (Judge v Canada, 829/98) գործում որոշվեց, որ մասնակից պետությունը խախտել է 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ հեղինակին Միացյալ Նահանգներին հանձնելով, որտեղ նրա նկատմամբ կայացվել էր մահապատժի դատավճիռ [8.35]: Հեղինակի բողոքներից մեկը վերաբերում էր այն փաստին, որ ԱՄՆ-ում ինքն իրավունք չունեի անձամբ բողոքարկելու իր մահապատժի դատավճիռը, երբ վերադառնար այդ երկիր, քանի որ իր բողոքը լսվել էր իր բացակայությամբ, այն բանից հետո, երբ փախել էր Կանադա: Եթե ԱՄՆ-ն պետք է մերժեր բողոքարկում թույլատրելը, ապա դա կարող էր ԱՄՆ-ի կողմից 14-րդ հոդվածի 5-րդ կետի ոտնահարում լինել: Այսպիսով, Ջաջի հանձնումը կարող էր նրան ենթարկել 14-րդ հոդվածի 5-րդ կետով ճանաչված իրավունքների կանխատեսվող խախտման ազդեցությանը: Մեծամասնությունը չտվեց այս խնդրի լուծումը: Այնուամենայնիվ, պրն Սոլարի Յրիգոյենն իր մասնավոր կարծիքում ցույց տվեց 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտումը: Այսպես, պրն Սոլարի Յրիգոյենը հստակ համոզված է, որ պետությունները չպետք է մարդկանց կանգնեցնեն այլ պետությունների կողմից իրենց իրավունքների կանխատեսվող խախտումների վտանգի առջև, նույնիսկ այն դեպքերում, երբ համապատասխան իրավունքները չեն սահմանափակվում 6-րդ և 7-րդ հոդվածներով: Տկն Շանեն այդ նույն գործի շրջանակներում նշեց.

Իմ կարծիքով՝ չնայած կոմիտեն կարող է կյանքի (մահապատժի) կամ ֆիզիկական առողջության (խոշտանգումներ) նկատմամբ ռիսկի աստիճանը գնահատելու հարցում ինքն իրեն իրավասու հայտարարել, այնքան էլ ակնհայտ չէ, որ կարող է հիմնավորել այն կարծիքը, թե դաշնագրին միացած մի պետության տարածքում խախտումը տեղի է ունեցել երրորդ պետության կողմից դաշնագրի որևէ դրույթ չկատարելու հետևանքով:

Հակառակ տեսակետը որդեգրելը կնշանակի մի մասնակից պետությունից, որը մի երրորդ պետության հետ իր հարաբերություններում հարցականի տակ է դնում մարդու իրավունքների պաշտպանությունն այդ երկրում, պահանջել, որ նա պատասխանատվություն կրի այդ երրորդ պետության կողմից դաշնագրով տվյալ անձի համար երաշխավորված բոլոր իրավունքները հարգելու համար:

Եվ ինչո՞ւ ոչ: Վստահաբար դա քայլ առաջ կլինի մարդու իրավունքների իրացման ճանապարհին, սակայն այդ դեպքում անմիջապես կառաջանան իրավական և գործնական հիմնախնդիրներ:

Օրինակ՝ ի՞նչ ասել է «երրորդ պետություն»: Իսկ ինչպե՞ս վարվել դաշնագրի կողմ չհանդիսացող պետությունների դեպքում: Իսկ ինչպե՞ս վարվել այն պետության հետ, որը միացել է դաշնագրին, սակայն չի մասնակցում նշված ընթացակարգին: Արդյոք երրորդ պետությունների հետ իր հարաբերություններում դաշնագրի որևէ մասնակից պետության պարտավորությունը տարածվում է դաշնագրով ճանաչված բոլոր իրավունքների՞, թե՞ դրանց մի մասի վրա: Արդյոք դաշնագրին միացած որևէ պետություն կարո՞ղ է կատարել վերապահում՝ մեկ այլ պետության հետ իր երկկողմ հարաբերություններից բացառելով դաշնագրի կատարումը:

Եթե նույնիսկ մի կողմ թողնենք այս հարցերի պատասխանների բարդ բովանդակությունը, «մաքսիմալիստական» լուծման կիրառումը լի է հիմնախնդիրներով:

Չնայած կոմիտեն կարող է հավաստիանալ, որ մասնակից պետությունը չի ստանձնել չափազանց մեծ ռիսկեր և զուցե կարծիք արտահայտի այդ նպատակով տվյալ մասնակից պետության ձեռնարկած կանխարգելիչ միջոցառումների մասին, կոմիտեն երբեք չի կարող իսկապես համոզված լինել այն հարցում, որ մի երրորդ պետություն չի ոտնահարել դաշնագրով երաշխավորված իրավունքները, եթե այդ պետությունը տվյալ ընթացակարգին միացած կողմ չէ: ...

[Կոմիտեից] կպահանջվի խորությամբ ուսումնասիրել մասնակից պետությունների՝ երրորդ պետությունների հետ ի-

²⁷ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Եմենի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/YEM, պարբ. 18:

րենց հարաբերություններում դաշնագրով ստանձնած պարտավորությունների հիմնախնդիրը:

Եզրակացություն

[4.26] ՄԻԿ-ը մանրակրկիտ ուսումնասիրել է ՔՔԻՄԴ-ով պետության պատասխանատվության տարածքային և իրավագործային սահմանափակումները: Դա ակնհայտորեն երևաց կոմիտեի որոշումներից, որոնք վերաբերում էին բողոք ներկայացնելու պահին բողոք ներկայացնողի գտնվելու վայրին, պետական գործակալների արտատարածքային գործողությունների համար պատասխանատվությանը և իր ներտարածքային որոշումների արտատարածքային հետևանքների համար պետության պատասխանատվությանը: Այնուամենայնիվ, որևէ որոշում չի ընդունվել այն մասին, որ պետությունները որևէ իրավագործություն ունեն միջազգային կազմակերպությունների գործողությունների նկատմամբ, թերևս բացառությամբ խաղաղապահ ուժերի կազմում գործող զորքերի համատեքստում: Այն դեպքում, երբ հաստատվել է պետության պատասխանատվությունն իր իրավագործության ներքո գտնվող անձանց նկատմամբ, կասկածելի է, թե պետությունները կրում են որևէ պատասխանատվություն իրենց քաղաքացիների կողմից արտերկրում կատարած գործողությունների համար, երբ այդ քաղաքացիները գործում են որպես մասնավոր անձինք:

Դիտարկում այլ միջազգային ընթացակարգով

- Ի՞նչ է «այլ միջազգային ընթացակարգը» [5.03]
- Ի՞նչ է «նույն խնդրի» ուսումնասիրությունը [5.07]
- Վերապահումներ եվրոպական պետությունների կողմից [5.09]
- Եզրակացություն [5.18]

ՀՈԴՎԱԾ 5(2)(ա), ԿԱՍԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոմիտեն չպետք է դիտարկի որևէ անձի հաղորդում, քանի դեռ չի համոզվել, որ.

(ա) միևնույն խնդիրը չի գտնվում այլ միջազգային քննության կամ կարգավորման որևէ այլ ընթացակարգի ներքո:

[5.01] Հոդված 5(2)(ա)-ն մերժում է միայն Առաջին կանոնադրության (ԿԱ) առնչությամբ ստացված այն բողոքների ընդունումը վարույթ, որոնք տվյալ պահին զուգահեռաբար դիտարկվում են ՄԻԿ-ի հետ համեմատելի որևէ մարմնի կողմից: Օրինակ՝ «*L.E.U. 4.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (381/89) գործը նախկինում քննվել էր Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից: Քանի որ գործը տվյալ պահին զուգահեռաբար որևէ այլ տեղ չէր քննվում, էական չէր, որ նախկինում որևէ այլ մարմնի կողմից մերժվել էր դրա վարույթ ընդունումը¹: Ավելին՝ հոդված 5(2)(ա)-ն կիրառելի չէ այն դեպքերում, երբ որևէ այլ միջազգային մարմին ներկայացված բողոքը հետ է վերցվել²:

[5.02] Էական չէ նաև, եթե մեկ այլ մարմին ըստ էության կայացրել է իր որոշումը. դա չի խոչընդոտում տվյալ հարցը ՄԻԿ-ի վարույթ ընդունելը³: Դեյվիդսոնը դեմ է արտահայտվում՝ պատճառաբանելով, որ սույն մեկնաբանությունը մեծացնում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային եզրակացությունների հակասականության հավանականությունը, ինչը կարող է հանգեցնել մարդու իրավունքների «դատական առուվաճառքի» և մարդու իրավունքների միջազգային մարմինների նկատմամբ ակնածանքի կորստի⁴: Այդուհանդերձ, ՄԻԿ-ի մեկնաբանությունը համահունչ է հոդված 5(2)(ա)-ի բառացի մեկնաբանությանը. այն գործը, որի վերաբերյալ նախկինում վճիռ է կայացվել, «քննության ենթակա չէ» հոդված 5(2)(ա)-ի ձևակերպման շրջանակներում:

Ի՞նչ է «այլ միջազգային ընթացակարգը»

[5.03]

**«ԲԱԲՈԵՐԱՄԱՆ և այլք ընդդեմ ՍՈՒՐԻՆԱՄԻ»
(BABOERAM et al v SURINAME, 146, 148-154/83)**

Այս գործով կոմիտեն համատեղ մի քանի բողոքներ քննեց, քանի որ դրանք առնչվում էին միևնույն

¹ Տե՛ս նաև, օրինակ՝ «*Յ.վ.դ. Պ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*H.v.d.P. v The Netherlands*, 217/86), «*Ռ.Լ.Ա.Վ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*R.L.A. W. v The Netherlands*, 372/89), «*Կ.Բ.Դ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*C.B.D. v The Netherlands*, 394/90), «*Նիկոլովն ընդդեմ Բուլղարիայի*» (*Nikolov v Bulgaria*, 824/98) գործերը:

² Տե՛ս «*Միլան Սեկուեյրան ընդդեմ Ուրուգվայի*» (*Millan Sequeira v Uruguay*, 6/77) գործը, պարբ. 6, «*Տորրես Ռամիրեսն ընդդեմ Ուրուգվայի*» (*Torres Ramirez v Uruguay*, 4/77) գործը, պարբ. 9, և «*Թոմասն ընդդեմ Ճամայկայի*» (*Thomas v Jamaica*, 321/88), պարբ. 5.1:

³ Տե՛ս «*Ռայթն ընդդեմ Ճամայկայի*» (*Wright v Jamaica*, 349/89) գործը, որում նախկինում որոշվել էր, որ հեղինակի վիճակը խախտում է Մարդու իրավունքների միջամերիկյան կոնվենցիան [Inter-American Convention on Human Rights]: Տե՛ս նաև «*Պեզոլովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության*» (*Pezoldova v Czech Republic*, 757/97) գործը, պարբ. 6.6:

⁴ J.S. Davidson, "The Procedure and Practice of the Human Rights Committee under the First Optional Protocol to the International Covenant on Civil and Political Rights" (1991) 4 *Canterbury Law Review* 337, at 348.

դեպքերին: Յուրաքանչյուր դեպքում պետության կողմը դեմ էր բողոքները վարույթ ընդունելուն այն հիմքով, որ դրանք, ըստ հայտարարվածի, քննության են առնված եղել միջազգային մեկ այլ ընթացակարգով: ՄԻԿ-ը բոլոր հայցերը ընդունելի համարեց՝ ելնելով հետևյալ հանգամանքներից:

¶ 9.1. Բողոքների ընդունելիության կապակցությամբ նախ Մարդու իրավունքների կոմիտեն նկատեց, որ որևէ միջկառավարական կազմակերպության կողմից տվյալ երկրում մարդու իրավունքների իրավիճակի (ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների միջամերիկյան կոմիտեի կողմից՝ Սուրինամի վերաբերյալ) կամ տվյալ երկրում արհմիութենական իրավունքների իրավիճակի (ինչպես Աշխատանքի միջազգային կազմակերպության Միավորումներ կազմելու ազատության հանձնաժողովի կողմից քննված խնդիրը Սուրինամի վերաբերյալ) կամ ավելի համընդհանուր բնույթի մարդու իրավունքների հետ կապված հիմնահարցի (ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի հատուկ զեկույցը արագացված կամ կանայական գործադրման վերաբերյալ) ուսումնասիրությունները, թեպետ և կարող են վերաբերել անձանց կամ տեղեկություն պարունակել անձանց վերաբերյալ, նույնը չեն, ինչ առանձին դեպքի քննությունը կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2(ա) կետի բովանդակության շրջանակներում: Երրորդ՝ ոչ կառավարական կազմակերպությունների (ինչպես, ասենք, «Ամենքսի ինթերնեշնլը» (Amnesty International), Իրավաբանների միջազգային հանձնաժողովը կամ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն, չնայած վերջինի՝ միջազգային իրավունքում ունեցած պրոցեսուալ իրավունակության կարգավիճակին) կողմից հիմնված ընթացակարգը միջազգային վարույթի կամ կարգավորման ընթացակարգ չէ կամընտիր արձանագրության հոդված 5(2)(ա)-ի բովանդակության շրջանակներում: Երրորդ՝ Մարդու իրավունքների կոմիտեն սահմանեց, որ թեև հայտարարված զոհերի առանձին գործերը հանձնված են եղել IACHR-ին (Երրորդ՝ գործի հետ առնչություն չունեցող կողմի կողմից) և գրանցվել այդ մարմնի կողմից համատեղ՝ որպես գործ թիվ 9015, սակայն այդ հայցն այլևս տվյալ կազմակերպության վարույթում չէ: Ըստ այդմ, Մարդու իրավունքների կոմիտեն որոշեց, որ կամընտիր արձանագրության հոդված 5(2)(ա)-ի դրույթները չեն արգելում տվյալ բողոքների վարույթ ընդունումը:

[5.04] «Ա-ն ընդդեմ Ս-ի» (A v S, 1/76) գործով կոմիտեն որոշեց, որ Տնտսոցխորիի թիվ 1503 բանաձևով ընդունված ընթացակարգը որպես հոդված 5(2)(ա)-ի իմաստով ընթացակարգ չի դասակարգվում: Այն նախատեսված է ոչ թե անհատական բողոքները բավարարելու, այլ վերացնելու համար ավելի մեծածավալ համակարգային ոտնահարումները, մասնավորապես՝ «մարդու իրավունքների շարունակական ոտնահարումների օրինակները»⁵: Այդպես և «Սելիս Լաուրեանոն ընդդեմ Պերուի» (Celis Laureano v Peru, 540/93) գործը վարույթ ընդունելու համար խոչընդոտ չեղավ համաժամանակյա քննարկումը Միավորված ազգերի կազմակերպության Հարկադիր և ոչ կամավոր անհետացումների հարցերի աշխատանքային խմբում⁶:

[5.05] «Փոլայ Կամպոսն ընդդեմ Պերուի» (Polay Campos v Peru, 577/94) գործը համարվեց վարույթ ընդունելու ենթակա, չնայած այն գրանցված էր Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովում: Վերջինս, այդուհանդերձ, «չէր նախատեսում առաջիկա տասներկու ամիսների ընթացքում այդ գործի վերաբերյալ զեկույց պատրաստել»: Քանի որ Միջամերիկյան հանձնաժողովում վարույթները տվյալ պահին պասիվ վիճակում էին, ՄԻԿ-ը որոշեց, որ այդ գործի վարույթ ընդունումը չի խոչընդոտվում հոդված 5(2)(ա)-ի դրույթներով:

[5.06] Հետևաբար ստացվում է, որ ելնելով կամընտիր արձանագրության հոդված 5(2)(ա)-ի նպատակներից, միայն Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների պայմանագրային այլ մարմինների (ինչպիսին է, օրինակ, Խոշտանգումների դեմ կոմիտեն) վարույթում գտնվող անհատական բողոքները կամ մարդու իրավունքների տարածաշրջանային մարմինների, մասնավորապես՝ եվրոպական և միջամերիկյան մարդու իրավունքների վերաբերյալ համաձայնագրերով և Աֆրիկյան խարտիայով նախատեսված մարմինների վարույթում գտնվող անհատական բողոքների քննություններն են համարվում «միջազգային քննության կամ կարգավորման ընթացակարգեր»⁷:

⁵ Թիվ 1503 ընթացակարգի վերաբերյալ տե՛ս H. Steiner and P. Alston, *International Human Rights in Context* (2nd edn., OUP, Oxford, 2000), 612-18:

⁶ Պարբ. 7.1:

⁷ Տե՛ս նաև T. Zwart, *The Admissibility of Human Rights Petitions* (Martinus Nijhoff, Dordrecht, 1994), 175:

Ի՞նչ է «նույն խնդրի» ուսումնասիրությունը

[5.07]

«*ՖԱՆԱԼԻՆ ընդդեմ ԻՏԱԼԻԱՅԻ*» (*FANALI v ITALY, 75/80*)

Այս գործով կոմիտեն պետք է որոշում կայացներ մի բողոքի ընդունելիության վերաբերյալ, որում հեղինակները՝ նախորդած ներպետական դատավարության համաամբաստանյալները, նախկինում արդեն նմանատիպ խնդիրներ բարձրացրել էին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի առջև: Կոմիտեն որոշեց, որ հայցն ընդունելի է և ընդունելիության վերաբերյալ որոշման մեջ հստակորեն սահմանեց, թե ինչն է «նույն գործ»՝ ելնելով ԿԱ հոդված 5(2)(ա)-ի նպատակներից:

¶ 7.2. Կապված ԿԱ հոդված 5(2)(ա)-ի հետ՝ կոմիտեն չհամաձայնեց պետության ներկայացուցչի առարկությանը, թե «միևնույն գործն» ընդունվել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի վարույթ, քանի որ այլ անձինք այդ մարմնի վարույթ էին ներկայացրել իրենց գործերը, որոնք, ինչպես պարզվեց, վերաբերում էին միևնույն պատահարից ծագած բողոքներին: Կոմիտեն որոշեց, որ «նույն գործի» հայեցակարգը՝ ԿԱ հոդված 5(2)(ա)-ի բովանդակության շրջանակներում, պետք է հասկանալ որպես միևնույն բողոք միևնույն անձի վերաբերյալ՝ նրա կամ նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող մեկ ուրիշի կողմից ներկայացված մեկ այլ միջազգային մարմնի վարույթ: Քանի որ մասնակից պետությունն ինքն էլ ընդունեց, որ տվյալ բողոքի հեղինակն իր տվյալ հայցը չի ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով, Մարդու իրավունքների կոմիտեն որոշեց, որ ԿԱ-ի հոդված 5(2)(ա)-ով տվյալ բողոքը ընդունելի է:

Ֆանալիի գործին հետևեցին «*Բլոմն ընդդեմ Շվեդիայի*» (*Blom v Sweden, 191/85*) և «*Սանչես Լոպեսն ընդդեմ Իսպանիայի*» (*Sánchez López v Spain, 777/97*) գործերը: Նմանապես, «*Միլան Սեքվեյրան ընդդեմ Ուրուգվայի*» (*Millán Sequeira v Uruguay, 6/77*) գործի դեպքում Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի առջև ներկայացված հայցում երկու տողով պրն Միլան Սեքվեյրայի անվան հիշատակումը «ինչպես և հարյուրավոր այլ անձանց անունների, որոնք, ինչպես հայտարարվում է, ձերբակալվել են Ուրուգվայում նույն գործը չէր, ինչ որ մանրամասնորեն նկարագրված է հեղինակի կողմից Մարդու իրավունքների կոմիտեին ներկայացված բողոքում»⁸:

[5.08] Եթե բողոքը մյուս միջազգային մարմնին է ներկայացվել ԿԱ-ի մասնակից պետությունում ուժի մեջ մտնելու ժամկետից առաջ, ապա բողոքը ոչ մի դեպքում չի կարող անընդունելի համարվել ըստ ԿԱ-ի հոդված 5(2)(ա)-ի⁹: Օրինակ՝ «*Գրիլե Մոտտան ընդդեմ Ուրուգվայի*» (*Grille Motta v Uruguay, 11/77*) գործում ՄԻԿ-ը հիմնավորեց, որ այլընտրանքային բողոքները չեն կարող վերաբերել «նույն գործին», եթե դրանք առնչվում են ԿԱ-ի ուժի մեջ մտնելուց առաջ տեղի ունեցած դեպքերին¹⁰:

Վերապահումներ եվրոպական պետությունների կողմից

[5.09] Հոդված 5(2)(ա)-ի հիմնական խնդիրն այն է, որ կոմիտեն չի կարող քննության առնել այնպիսի բողոքներ, որոնք զուգահեռաբար լսվում են միջազգային մեկ այլ մարմնի կողմից: ԿԱ-ն չի սահմանափակում կոմիտեին այն բողոքները քննելու հարցում, որոնք նախկինում են քննության առնվել մեկ այլ մարմնի կողմից: Այդուհանդերձ, եվրոպական շատ երկրներ վերապահում են ներկայացրեցին, որը մերժում է ՄԻԿ-ի՝ միջազգային այլընտրանքային ընթացակարգով նախկինում քննության առնված բողոքները վերաքննության առնելու իրավասությունը: Այս վերապահման հետևում ակնհայտ մտադրություն կա, այն է՝ կանխել ՄԻԿ-ում եվրոպական կոմիտեին հայտարարված մարմիններում քննության առնված գործերի բողոքարկման հնարավորությունը¹¹:

⁸ Պարբ. 9:

⁹ Ցվարտ, վերը, ծմբ. 7, էջ 175-6: Տե՛ս նաև P.R. Ghandhi, *The Human Rights Committee and the Right of Individual Communication* (Ashgate, Dartmouth, 1998), 226-7:

¹⁰ Պարբ. 5(ա):

¹¹ Գանդի, տե՛ս վերը, ծմբ. 9, 228: Վերապահումների մասին ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս 25-րդ գլուխը և հատկապես՝ [25.31]:

[5.10] «Վ. Մ.-ն ընդդեմ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ» (V. Ø v NORWAY, 168/84)

Այս գործով հեղինակը նախկինում դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով, որը հայցը համարել էր ակնհայտորեն վատ հիմնավորված և, հետևաբար, անընդունելի: Կոմիտեն ուշադրությունը սևեռեց հեղինակի բողոքի նկատմամբ Նորվեգիայի ներկայացրած համապատասխան վերապահման ազդեցության վրա: Նա արեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 2.5. Ինչ վերաբերում է նախորդ դիմումին՝ ուղղված Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին, հեղինակը Մարդու իրավունքների կոմիտեին ուղղված իր բողոքում ներկայացնում է, որ (ա) Եվրոպական հանձնաժողովը ուշադրությունը սևեռել է գլխավորապես դատական ընթացակարգերի հայտարարվող դանդաղություն, բողոքի առարկա հիմնական խնդիրներին հասցված վնասի վրա, և (բ) որ Եվրոպական կոնվենցիայի դրույթները, որոնց հղում է արվել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին ուղղված բողոքում, մի շարք առումներով տարբերվում են դաշնագրի դրույթներից, որոնց հղում է արված Մարդու իրավունքների կոմիտեին ուղղված սույն բողոքում: Նա պնդում է, որ դաշնագրի համապատասխան դրույթներն ավելի հարմար են բողոքի առարկա խնդրի առնչությամբ իր իրավունքները պաշտպանելու համար, քան ավելի վաղ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին ուղղված բողոքում մեջբերված դրույթները:

¶ 2.6. Ավելի ուշ՝ 1984 թ. հուլիսի 1-ին ներկայացված հայցում նա լրացուցիչ բացատրեց, որ իր դիմումը Մարդու իրավունքների կոմիտեին Եվրոպական հանձնաժողովի վճռի բողոքարկումը չէ, այլ վերաբերում է միայն Նորվեգիայի դատարանի վճռին: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ասվում է, որ «յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»: Սրանից բխում է, որ Եվրոպական կոնվենցիայի մանդատը սահմանափակ է, երբ հարցը վերաբերում է օրենքի առջև հավասարությանը: Ավելին՝ Եվրոպական կոնվենցիան չի տարածվում դաշնագրի 23-րդ և 26-րդ հոդվածներին վերաբերող ոլորտների վրա¹²: Այսպիսով, հայցվորի գործում Միջազգային դաշնագիրն էականորեն ավելի օգտակար է, քան Եվրոպական կոնվենցիան.....»:

¶ 2.7. Հեղինակն այնուհետև փաստում է, որ «միևնույն գործը դեռևս ըստ հարկի քննության չի առնվել եղել միջազգային քննության կամ կարգավորման որևէ այլ ընթացակարգով: Իրոք, միևնույն գործը քննության չի առնվել որևէ տեղ միջազգային դաշնագրի 3-րդ, 14-րդ, 23-րդ և 26-րդ հոդվածների առնչությամբ»:

ՄԻԿ-ը որոշեց, որ հայցն անընդունելի է Նորվեգիայի կողմից կատարված վերապահման պատճառով: Կոմիտեն նշեց, որ երկու նամակները՝ ուղղված Եվրոպական հանձնաժողովին և ՄԻԿ-ին, «գրեթե նույնական» են և հղում են անում միևնույն փաստերին ու իրավական փաստարկներին¹³: Այն փաստը, որ ՔՔԻՄԴ-ի որոշ դրույթներ կարող էին առաջարկել առավել ըստ էության պաշտպանություն, քան Եվրոպական կոնվենցիան, չի վերաբերում գործի էությանը:

[5.11] «Լինդերհոլմն ընդդեմ Խորվաթիայի» (Linderholm v Croatia, 744/97) գործով բողոքը դարձյալ անընդունելի էր հռչակագրի պատճառով, որն արգելում է նախկինում Եվրոպական հանձնաժողովի կողմից քննության առնված գործերի քննությունը ըստ ԿԱ-ի: ՄԻԿ-ը հատկապես ընդգծեց, որ խտրականության չենթարկելու դրույթների ընդգրկումները Եվրոպական կոնվենցիայում և ՔՔԻՄԴ-ում տարբեր են¹⁴, սակայն եզրակացրեց, որ այդ տարբերությունները որևէ կերպ չէին փոխի տվյալ գործով ընդունված բանաձևը¹⁵:

[5.12] «ԿԱՐԱԿՈՒՐՏՆ ընդդեմ ԱՎՍՏՐԻԱՅԻ» (KARAKURT v AUSTRIA, 965/00)

Մասնակից պետությունը վերապահում ներկայացրեց, որպեսզի խոչընդոտի գործի քննությունը, եթե այն նախկինում քննության է առնվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Այս հիմնավորմամբ նա պնդեց, որ բողոքն անընդունելի է: Հեղինակը պատասխանեց.

¹² 23-րդ հոդվածի վերաբերյալ տե՛ս 20-րդ գլուխը, իսկ 26-րդ հոդվածի վերաբերյալ՝ 23-րդ գլուխը:

¹³ Պարբ. 4.2:

¹⁴ ՔՔԻՄԴ-ի 26-րդ հոդվածը խտրականությունից զերծ լինելու ավելի համապարփակ երաշխիք է, քան ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածը. տե՛ս [23.13]:

¹⁵ Պարբ. 4.2:

¶ 6.2. Ինչ վերաբերում է ընդունելիությանը, հեղինակը շեշտում է, որ Եվրոպական դատարանին ներկայացված բողոքն առնչվում է միավորումներ կազմելու իրավունքին, որը պաշտպանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով, մինչդեռ ներկայումս ներկայացված բողոքն առնչվում է խտրականությանն ու օրենքի առջև հավասարությանը՝ ըստ դաշնագրի 26-րդ հոդվածի: Յետևաբար, հեղինակը, հղում անելով հիմնականում կոմիտեի նախադեպային իրավունքին, պնդում է, որ կոմիտեին ներկայացված գործը «նույն գործը» չէ, ինչ նախկինում ներկայացված է եղել Եվրոպական դատարանին...

ՄԻԿ-ը համաձայնեց հեղինակի հետ:

¶ 7.4. Ինչ վերաբերում է մասնակից պետության առարկությանը, որ իր վերապահումը՝ ներկայացված կանոնադրության 5-րդ հոդվածին, արգելում է կոմիտեի կողմից բողոքը քննության առնելու իրավասությունը, ապա կոմիտեն նշում է, որ «միևնույն գործի» հայեցակարգը՝ կանոնադրության 5-րդ հոդվածի (2)(ա) կետի բովանդակության շրջանակներում, պետք է հասկանալ որպես միևնույն բողոքը միևնույն անձի որոշակի իրավունքի խախտման վերաբերյալ: Այս գործում հեղինակն առաջ է քաշում խտրականության և օրենքի առջև հավասարության [հոդված 26] վերաբերյալ առանձին բողոքներ, որոնք չեն և իրականում չէին էլ կարող ներկայացվել եվրոպական ատյաններին¹⁶: Ըստ այդմ՝ կոմիտեն չի համարում, որ ինքը սահմանափակված է մասնակից պետության՝ կանոնադրության 5-րդ հոդվածով ներկայացված վերապահումով՝ բողոքը քննության առնելու կապակցությամբ:

Սույն բողոքը չխոչընդոտվեց Ավստրիայի վերապահումով, քանի որ ՄԻԿ-ին ներկայացված բողոքի իրավական բովանդակությունը տարբեր էր Եվրոպական դատարանին ներկայացված բողոքի բովանդակությունից, անգամ չնայած այն հանգամանքին, որ երկու բողոքներն էլ բխում են փաստական միևնույն իրավիճակից: Համանման որոշում կայացվեց «Ալտհամերն ընդդեմ Ավստրիայի» (*Althammer v Austria* 998/01) գործով, երբ բողոքը կրկին վերաբերում էր 26-րդ հոդվածին՝ երաշխիքի, որի մասնօրինակը Եվրոպական կոնվենցիայում գոյություն չունի¹⁷: Սա նշանակում է, որ ապագայում ՄԻԿ-ը դժկամությամբ կկիրառի եվրոպական վերապահումները՝ կանխելու համար այն գործերի ընդունելիությունը, որոնք վերաբերում են ՔՔԻՄԴ-ով երաշխավորված իրավունքներին և հիմնավորապես տարբեր են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքներից¹⁸:

[5.13] «ԿԱԶԱՆՈՎԱՆ ԸՆԴՂԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (*CASANOVAS v FRANCE*, 441/90)

Այս գործում Ֆրանսիայի կառավարությունը պնդում էր, որ բողոքը հարկ է ճանաչել անընդունելի՝ այն հիմքով, որ հեղինակի դիմումն արդեն իսկ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից ճանաչվել էր անընդունելի: Կոմիտեն ընդունելիության մասին ի նպաստ հեղինակի պարզեց հետևյալը.

¶ 5.1. Իր 48-րդ միստի ընթացքում կոմիտեն քննեց հաղորդման ընդունելիության հարցը: Կոմիտեն ի գիտություն ընդունեց մասնակից պետության անհամաձայնությունը՝ այն բովանդակությամբ, որ հաղորդումն անընդունելի է մասնակից պետության կողմից կանոնադրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի առումով արված վերապահման պատճառով: Կոմիտեն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Եվրոպական հանձնաժողովը հեղինակի հաղորդումը հայտարարել է անընդունելի՝ որպես Եվրոպական կոնվենցիային *ռազիոնե մատերիե*^{*} հակասող: Կոմիտեն որոշեց, որ քանի որ Եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքներն իրենց էությանը և իրականացման ընթացակարգերի առումով տարբերվում են դաշնագրով ճանաչված իրավունքներից, խնդիրը, որը հայտարարվել է *ratione materiae* անընդունելի, վերապահման իմաստով չի «դիտարկվել» այնպես, որն անիմաստ կդարձներ կոմիտեի կողմից դրա ուսումնասիրությունը:

[5.14] «ՌՈԳԼՆ ԸՆԴՂԵՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ» (*ROGL v GERMANY*, 808/98)

¶ 9.3. Կոմիտեն նշում է, որ Եվրոպական հանձնաժողովն անցավ հաջորդ փուլին՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ Եվրոպական կոնվենցիայի այն դրույթները, որոնք, հեղինակի կարծիքով, ոտնահարվել են, կիրառելի են, և ապա ի-

¹⁶ Եվրոպական կոնվենցիան օրենքի առջև հավասարության ինքնուրույն երաշխիք չի պարունակում. տե՛ս [23.13]:

¹⁷ Պարբ. 8.4:

¹⁸ ՔՔԻՄԴ-ը ՄԻԵԿ-ից տարբերվող պաշտպանություն է ապահովում մի շարք հոդվածներով, ներառյալ՝ 14-րդ, 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածները:

* *ratione materiae* - դիտարկվող նյութի հետ կապված հանգամանքների պատճառով (ծան. *թարգմ.*):

րականացրեց այս գործից բխող փաստերի և խնդիրների լիարժեք ուսումնասիրություն: Հանձնաժողովը այս գործի բոլոր հանգամանքները խորությամբ և համապարփակ կերպով դիտարկելուց հետո ի վերջո եզրակացրեց, որ հեղինակի ընտանեկան կյանքի իրավունքին միջամտելն արդարացված էր, հետևաբար նրա դիմումը, որպես թերի հիմնավորված, համարեց անընդունելի: Ինչ վերաբերում է քննության անարդարացիության մասին պնդումներին, հանձնաժողովը որոշեց, որ բացառությամբ հայցվորի կողմից հայտարարված այն խախտման, ըստ որի՝ Բավարիայի վերաքննիչ վարչական դատարանի կողմից սեփական վճիռը հրապարակայնորեն չէր ներկայացվել, որևէ պատճառ չկա եզրակացնելու, որ քննությունը, իր ամբողջության մեջ, եղել է անարդարացի:

¶ 9.4. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, թե Եվրոպական կոնվենցիայի դրույթները տարբերվում են ներկայումս կիրառվող դաշնագրի դրույթներից, ապա սոսկ այն փաստը, որ դրույթների ձևակերպումները տարբեր են, ինքնին բավարար չէ, որպեսզի դրանից եզրակացություն արվի, թե դաշնագրում ամրագրված որևէ իրավունքի առնչությամբ բարձրացված հարցը չի «դիտարկվել» Եվրոպական հանձնաժողովի կողմից: Պետք է ցույց տրվի ընթացիկ գործի նկատմամբ կիրառելի դրույթների մի էական տարբերություն: Տվյալ դեպքում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 14-րդ հոդվածներում ամրագրված դրույթները, համաձայն Եվրոպական հանձնաժողովի մեկնաբանման, բավականաչափ մոտ են դաշնագրի ներկայումս գործող 14-րդ և 17-րդ հոդվածներում սահմանված դրույթներին, այնպես որ ծագող համապատասխան խնդիրների մասին կարելի է ասել, որ դրանք «դիտարկվել են»: Այդ եզրակացությունը չի փոխվում կոմիտեի առջև դաշնագրի 23-րդ հոդվածի լրացուցիչ պաշտպանության արդյունքում, քանի որ այդ հոդվածով ծագող ցանկացած հարցի Եվրոպական հանձնաժողովն ըստ էության անդրադարձել է վերոնշյալ քննության ընթացքում:

¶ 9.5. Այսպիսով, ներկա հաղորդումը հարկ է տարբերել «Կազանովան ընդդեմ Ֆրանսիայի» գործից, որի վրա զգալիորեն հենվում է հեղինակը այն փաստի պատճառով, որ այդ դեպքում Եվրոպական հանձնաժողովը չի քննարկել Եվրոպական կոնվենցիայի դրույթների կիրառումը նույնիսկ այդ գործում առկա փաստերի վրա տարածելու հարցը: Սրանից հետևում է, որ տվյալ հաղորդումը «դիտարկվել» է մեկ այլ միջազգային մեխանիզմի միջոցով այնքանով, որքանով խոսքը հեղինակի՝ ընտանիքի իրավունքի և արդար քննության իրավունքի մասին է (չհաշված վճռի հայտարարմանը վերաբերող մեղադրանքը): Մասնակից պետության՝ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2(ա) կետի վերաբերյալ վերապահման պարբերություն (ա)-ն, հետևաբար, կիրառելի է, ինչը կոմիտեին արգելում է ուսումնասիրել հաղորդման այդ կողմերը:

¶ 9.6. Ինչ վերաբերում է հեղինակի հայտարարությանը, որ ոտնահարվել է 14-րդ հոդվածի 1-ին կետը, երբ Բավարիայի վերաքննիչ վարչական դատարանի կողմից սեփական վճիռը հրապարակայնորեն չի ներկայացվել, կոմիտեն նշում է, որ Եվրոպական հանձնաժողովը չի անդրադարձել այս խնդրին այն հիմքով, որ սպառված չեն եղել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, մասնավորապես, քանի որ այս խնդիրը չի բարձրացվել դաշնային սահմանադրական դատարանում: Հետևաբար, հաղորդման այս հատվածը չի «դիտարկվել» մեկ այլ միջազգային մեխանիզմով, եթե դա պետք է հիմք ծառայեր, որպեսզի այն դիտարկումից հանվեր մասնակից պետության վերապահման հետևանքով...

[15.15] «ՎԵՅՍՆ ընդդեմ ԱՎՍՏՐԻԱՅԻ» (WEISS v AUSTRIA, 1086/02)

¶ 8.3. Ինչ վերաբերում է մասնակից պետության այն փաստարկին, թե կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2(ա) կետի վերաբերյալ իր վերապահումը կոմիտեին թույլ չի տալիս դիտարկել հաղորդումը, կոմիտեն նշում է, որ մասնակից պետության վերապահումը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին ներկայացված դիմումներին: Հրճաքս ենթադրելով, որ տվյալ վերապահումը իրականում գործում է նախկին Եվրոպական հանձնաժողովի փոխարեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից¹⁹ ստացված բողոքների առումով, կոմիտեն հղում է անում իր նախադեպային իրավունքին, ըստ որի՝ այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանը ընդունելիության վերաբերյալ ընթացակարգային կամ տեխնիկական որոշում ընդունելուց բացի զնահատել է հայցի էությունը, ապա տվյալ բողոքը կամընտիր արձանագրության կամ տվյալ դեպքում մասնակից պետության վերապահման տեսանկյունից համարվում է «ուսումնասիրված»: Դիտարկվող գործում կոմիտեն նշում է՝ դատարանը վճռել է, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը չի պահանջում հայցի շարունակական դիտարկում և քննարկումից հանել այդ գործը [այն բանից հետո, երբ դիմումատուին դիմեց գործը հետաձգելու համար]: Կոմիտեն կարծում է, որ որոշումն այն մասին, որ որևէ հայց բավարար կարևորություն չունի, որպեսզի նրա ուսումնասիրությունը շարունակվի այն բանից հետո,

¹⁹ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը լուծարվել է, և հաղորդումները ներկայումս հանձնվում են ուղղակիորեն վերաստեղծված Եվրոպական դատարան: «Կոլարն ընդդեմ Ավստրիայի» (Kollar v Austria, 989/01) գործում ՄԻԿ-ը հաստատեց, որ Ավստրիայի կողմից վերապահումը, որն ակնհայտորեն կիրառվեց միայն այն գործերի առնչությամբ, որոնք ներկայացված էին եղել Եվրոպական հանձնաժողով, պետք է ընկալվել որպես Եվրոպական դատարանին ներկայացվող հայցերի նկատմամբ կիրառելի՝ համարելով, որ վերջինս հանդիսանում է նախորդի գործառնությունների իրականացման հարցում իրավահաջորդը (պարբերություններ 8.2-8.3): Տե՛ս նաև «Ալտհամերն ընդդեմ Ավստրիայի» (Althammer v Austria, 998/01) գործի պարբ. 8.3:

երբ հայցվորը բողոքը հետաձգելու քայլ է կատարել, չի բավարարում որպես հայցի էության իրական գնահատում: Յետևաբար, չի կարելի ասել, թե այս բողոքը «ուսումնասիրվել» է Եվրոպական դատարանի կողմից, և կոմիտեն մասնակից պետության վերապահման հետևանքով կաշկանդված չէ այնպիսի դիմումների քննարկման հարցում, որոնք ներկայացվել են Եվրոպական կոնվենցիայով, սակայն հետագայում հանվել են հեղինակների կողմից: Ընդունելիության այլ խոչընդոտների բացակայության պայմաններում կոմիտեն եզրակացնում է, որ հաղորդման մեջ բարձրացված հարցերն ընդունելի են:

[5.16] Այսպիսով, ըստ էության անընդունելիությունը (օրինակ՝ ՄԻԵԿ-ով որևէ դիմումի բացակայություն) տարբերվում է ՄԻԵԿ-ով ընթացակարգային անընդունելիությունից (օրինակ՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելը), որպեսզի որոշում կայացվի այն մասին, թե արդյոք ստանդարտ Եվրոպական վերապահումը կաշկանդե՞լ է ԿԱ ընդունելիությունը²⁰:

[5.17] *Կազանովայի* և *Վայսի* գործերում համապատասխանաբար ֆրանսիական և ավստրիական վերապահումները կանխեցին ՄԻԿ-ի կողմից խնդրի ուսումնասիրությունը, քանի որ տվյալ խնդիրն արդեն «ուսումնասիրվել» է մարդու իրավունքների պաշտպանության մի համեմատելի մարմնի կողմից: Այն նույն ճիստի ընթացքում, երբ քննվում էր *Կազանովայի* գործը²¹, ՄԻԿ-ը քննեց «Վ.Ե.Մ.-ն ընդդեմ Իսպանիայի» (*V.E.M. v Spain, 467/91*) գործից մի բողոք, որի ընթացքում համապատասխան իսպանական վերապահումը կանխեց ԿԱ ընդունելիությունը, քանի որ միևնույն խնդիրն արդեն «ներկայացվել» էր մեկ այլ մարմնի: Քանի որ Իսպանիայի վերապահումը ակնհայտորեն ավելի ընդարձակ էր, այն կանխեց մի հայցի ընդունելիությունը, որն *Կազանովաների* գործին շատ նման փաստեր էր պարունակում:

Եզրակացություն

[5.18] ԿԱ-ի հոդված 5(2)(ա)-ն կանխում է այն հայցերի ընդունելիությունը, որոնք մարդու իրավունքների պաշտպանության համեմատելի մարմինների կողմից ենթարկվում են համաժամանակյա դիտարկման մի ընթացակարգով, որը համանման է ԿԱ ընթացակարգին: Այն բանից հետո, երբ նման ընթացակարգը դադարեցվում է, հոդված 5(2)(ա)-ն ընդունելիության առումով որևէ խոչընդոտ չի հարուցում: Այսուհանդերձ, մի շարք Եվրոպական կողմեր ԿԱ-ի վերաբերյալ ներկայացրել են վերապահումներ՝ այդպիսով կանխելով ընդունելիությունն այնպիսի դեպքերում, երբ նույն հարցը դիտարկվել է մարդու իրավունքների պաշտպանության մեկ այլ համեմատելի մարմնի կողմից, նույնիսկ այն դեպքերում, երբ նման դիտարկումն ավարտված է եղել: Չնայած ՄԻԿ-ը ջանացել է այս վերապահումները մեկնաբանել նեղ իմաստով, մի շարք հաղորդումների դեպքում դրանք ՄԻԿ-ին արգելել են գործել որպես «վերաքննիչ» մարմին Եվրոպական կոնվենցիայով գործող մարմինների համար:

²⁰ Տե՛ս նաև «Տրեբյուտիենն ընդդեմ Ֆրանսիայի» (*Trebutien v France, 421/90*), «Գլազիուն ընդդեմ Ֆրանսիայի» (*Glaziov v France, 452/91*), «Վալենտինն ընդդեմ Ֆրանսիայի» (*Valentijn v France, 584/94*), «Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (*Pauger v Austria, 716/96*) և «Կոլարն ընդդեմ Ավստրիայի» (*Kollar v Austria, 989/01*) գործերը:

²¹ 48-րդ նիստ, 1993 թ. հուլիս:

Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը

- Իրավական պաշտպանության միջոցների ո՞ր տեսակները պետք է սպառված լինեն [6.02]
- Ինչպե՞ս պետք է սպառված լինեն իրավական պաշտպանության
միջոցները..... [6.07]
- Իրավական պաշտպանության ապարդյուն միջոցների սպառման
անհարկությունը [6.14]
- Արդյոք հեղինակները պե՞տք է սպառեն իրավական պաշտպանության ծախսատար
միջոցները..... [6.25]
- Իրավական պաշտպանության միջոցների անհիմն ձգձգումը [6.28]
- Պետությունների իրավահաջորդության դեպքերում իրավական պաշտպանության
ներպետական միջոցների սպառումը..... [6.36]
- Ապացույցի բեռը..... [6.40]
- Եզրակացություն [6.45]

Առաջին կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետը

Կոմիտեն չի ուսումնասիրում անձի ներկայացրած դիմումը, եթե չի հաստատվում, որ տվյալ անձը սպառել է իրավական պաշտպանության բոլոր առկա միջոցները: Այս կանոնը չի կիրառվում այնտեղ, որտեղ իրավական պաշտպանության միջոցների կիրառումն անհիմն ձգձգվում է:

[6.01] Իրավական պաշտպանության ներպետական միջոցների մասին կանոնը նույնպես կիրառելի է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ)¹, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (ԽԴԿ)², ինչպես նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (ԿՆԽՎԿ) կամընտիր արձանագրության ներքո ներկայացված գործերի ընդունելիությունը սահմանափակելիս³: Այս կանոնն ապահովում է, որ մասնակից պետություններին հնարավորություն տրվի շտկելու մարդու իրավունքների ներքին խախտումները մինչև հարցը միջազգային ատյաններին հղելը: ՄԻԿ-ը 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի հիմնավորումը մանրամասն ներկայացրեց «Թ. Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*T.K. v France*) գործի շրջանակներում⁴:

¶ 8.3. Կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի նպատակը, ի թիվս այլոց, այն է, որ դաշնագրի դրույթների խախտումներից հնարավոր տուժողներին առաջին հերթին ուղղորդի հարցի կարգավորումը հայցել մասնակից պետության լիազոր մարմիններից և միաժամանակ հնարավորություն տա մասնակից պետություններին անհատական բողոքների հիման վրա ուսումնասիրելու իրենց տարածքում և մարմինների կողմից դաշնագրի դրույթների իրագործումը և անհրաժեշտության դեպքում տեղի ունեցող խախտումների շտկումը նախքան գործը կոմիտեին ներկայացնելը:

[6.01Ա] Պետությունը կարող է որոշում կայացնել վերացնել իրավական պաշտպանության ներպետական սպառման մասին պահանջը, ինչպես «Ռաջանը և Ռաջանն ընդդեմ Նոր Զելանդիայի» (*Rajan and*

¹ 14-րդ հոդվածի 7-րդ կետի (ա) ենթակետ:

² 22-րդ հոդվածի 5-րդ կետի (բ) ենթակետ:

³ 4-րդ հոդվածի 1-ին կետ:

⁴ Տե՛ս նաև *M.K. v France* (222/87), պարբ. 8.3.

Rajan v New Zealand, 820/98) գործի շրջանակներում⁵: Նման պարագաներում մնացած ներպետական պաշտպանության միջոցները արգելք չեն հայցադիմումի ընդունելիության համար:

Իրավական պաշտպանության միջոցների ո՞ր տեսակները պետք է սպառված լինեն

[6.02] «Ռ.Տ.-ն ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (*R. T. v FRANCE*, 262/87)

¶ 7.4. ... Կոմիտեն նշում է, որ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետը, հղում կատարելով «իրավական պաշտպանության բոլոր առկա միջոցներին», առաջին հերթին անվերապահորեն վերաբերում է դատական պաշտպանության միջոցներին:

Ուստի ներքին իրավական պաշտպանության միջոցները սովորաբար համարվում են սպառված, երբ կայացվում է վերջնական դատական որոշում, և բողոքարկման այլ ուղիներ չեն մնում⁶:

[6.03] «ՊԱՏԻՆՅՈՆ ընդդեմ ՊԱՆԱՄԱՅԻ» (*PATINÑO v PANAMA*, 437/90)⁷

¶ 5.2. ... Կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով հայցվորը պետք է դիմի դատական կամ վարչական բոլոր ատյաններ, որտեղ կարգավորման ողջամիտ հեռանկար կա:

«ՎԻՍԵՆՏԵՆ ընդդեմ ԿՈԼՈՄԲԻԱՅԻ» (*VICENTE et al v COLOMBIA*, 612/95)

¶ 5.2. ... Կոմիտեն համարում է, որ իրավական պաշտպանության արդյունավետությունը նույնպես կախված է ենթադրյալ խախտման բնույթից: Այլ կերպ ասած՝ ենթադրյալ խախտումն առանձնապես լուրջ է, ինչպես մարդու հիմնարար իրավունքների և, մասնավորապես, կյանքի իրավունքի պարագայում, ապա զուտ վարչական և կարգապահական միջոցները չեն կարող համարվել համարժեք և արդյունավետ...

Թեև *Պատինյոյի* գործով հայտարարությունը հաստատում է, որ երբեմն կարիք չկա սպառել ոչ դատական պաշտպանության միջոցները, սակայն Ռ.Տ.-ն հայտարարում է, որ դատական պաշտպանության միջոցները նրանք են, որոնք առավել հավանականությամբ արդյունավետ կլինեն, ուստի և ամենամպատակահարմարն են 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի շրջանակներում: *Վիսենտեի* գործը հաստատում է, որ դատական պաշտպանության միջոցներն էական են կոպիտ խախտումների համար, ինչպիսիք են սպանություններն ու խոշտանգումները: ՄԻԿ-ն ավելի մեծ կասկածամտություն է ցուցաբերել պաշտպանության գործադիր միջոցների հարցում և առանձնապես հակված չէ պահանջելու դրանց սպառումը: Օրինակ՝ «*Էլիսն ընդդեմ Ճամայկայի*» (*Ellis v Jamaica*, 276/88) գործի կապակցությամբ ՄԻԿ-ը եկել է այն եզրակացության, որ մահապատժի դատապարտված բանտարկյալի կողմից կալանավայրի ղեկավարին ուղղված խնդրագրի հնարավորությունը «իրավական պաշտպանության ներպետական միջոց չէ՝ 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված իմաստով»⁸: Նմանապես, ինչպես նշված է «*Մուհոնենն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Muhonen v Finland*, 89/81) գործի շրջանակներում, ՄԻԿ-ը կասկածանքով է վերաբերվում «իրավական պաշտպանության արտակարգ միջոցներին» [6.44]:

[6.04] Այդուհանդերձ, ՄԻԿ-ը հետևյալ գործի շրջանակներում ավելի հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում վարչական պաշտպանության միջոցների արդյունավետության հարցում:

⁵ Տե՛ս պարբ. 6.2 և 7.2:

⁶ A. Concado Trindade, *The Application of the Rule of Exhaustion of Local Remedies in International Law: its Rationale in the International Protection of Individual Rights* (Cambridge University Press, Cambridge, 1983), 58.

⁷ Տե՛ս նաև *Thompson v Panama* (438/90), պարբ. 5.2:

⁸ Պարբ. 9.1:

**«ՋՈՆԱՍՆԵՆԸ և այլք ընդդեմ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ»
(JONASSEN et al v NORWAY, 942/00)**

Բողոքը վերաբերում է Նորվեգիայի հողային իրավունքների առնչությամբ սամի ցեղախմբին պատկանող մի խումբ բնիկների պահանջներին [24.43]: Յեղիմակները սպառել էին դատական պաշտպանության բոլոր առկա միջոցները, սակայն դեռևս մնում էին վարչական պաշտպանության միջոցներ՝ համապատասխան հողակտորներն օտարելու մասին կառավարությանն ուղղված դիմումի ձևով: Յեղիմակները բերեցին հետևյալ փաստարկները.

¶ 3.16. Յեղիմակները պնդում են, որ դատական պաշտպանության միջոցները սպառվել են «Կորսյոֆյելի», «Աուրսունդենի» և «Տամնեսի» գործերով, որոնց վերաբերյալ Նորվեգիայի գերագույն դատարանը վերջնական որոշում է կայացրել: Դատավարությունը դեռևս ընթանում է «Սելբուի գործով», և նոր վեճ է առաջացել Աուրսունդենի և Սելբուի միջև ընկած «Յոլտաալեն» կոչվող մեծ տարածքի վերաբերյալ: Թեև հեղիմակներն սկզբում պահանջել են կոմիտեից գնահատել, թե արդյոք գերագույն դատարանը և մասնակից պետությունը «1997 թ. Աուրսունդենի գործով» և «Կորսյոֆյելի գործով» առհասարակ պաշտպանել է հարավային սամի ժողովրդի մշակույթի նյութական հիմքը, և արդյոք հենց նույն Նորվեգիայի իրավական համակարգը չի՞ ընդգրկում դաշնագրի խախտումներ, այնուամենայնիվ, հեղիմակները պնդում են, որ կոմիտեն պետք է հաշվի առնի ինչպես կայացրած վերջնական որոշումը, այնպես էլ վարույթում գտնվող գործերը: Յեղիմակները կարծում են՝ չի կարելի ակնկալել, որ իրենք իրենց տարածաշրջանում գտնվող յուրաքանչյուր առանձին շրջանի համար գրեթե նույն փաստերի հիման վրա նույն պահանջները ներկայացնեն նույն ազգային դատարաններին, որպեսզի կոմիտեն կարողանա որոշում կայացնել դաշնագրի խախտված լինելու կամ չլինելու մասին:

¶ 3.17. Յեղիմակները հյուսիսային եղջերուների համար արոտավայրեր ապահովելու նպատակով օտարման մասին դիմում են ներկայացրել Նորվեգիայի վարչական մարմիններին: Այդուհանդերձ, նրանք համարում են՝ գործնականում հնարավոր չէ, որ եղջերուները չմտնեն «1997 թ. Աուրսունդենի գործով» և «Կորսյոֆյելի գործով» ընդգրկված տարածքներ և անընդհատ լինեն դրանց ապօրինի օգտագործման համար տուգանվելու վտանգի տակ: Իշխանությունները հայեցողական լիազորություններ ունեն օտարման դիմումով որոշում կայացնելու համար: Չավանական է, որ գործի քննությունը երկար տևի, իսկ արդյունքն անորոշ է: Ըստ հեղիմակների՝ դեռևս չի եղել, որ սամի ցեղի հովիվները, հայտնվելով հեղիմակների հետ նույն վիճակում, լրիվ փոխհատուցում ստանան հողի օտարման տեսքով: Թեև օտարման մասին գործը դեռ գտնվում է վարույթում, հեղիմակները համարում են, որ մասնավոր հողատերերի հետ մեկ դարից ավելի տևող վեճից հետո հարկ է համարել, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառված են կամ ոչ արդյունավետ են:

Մասնակից պետությունը պատասխանել է հետևյալ կերպ.

¶ 4.11. Յեղիմակներին իրավունք է տրվել մասնակից պետությանը խնդրագիր ներկայացնել օտարման միջոցով արոտավայրերի օգտագործման իրավունքներ ապահովելու համար: Մասնակից պետությունը հայտարարում է, որ այդ տարբերակն առկա և արդյունավետ իրավական պաշտպանության միջոց է, որը սպառված չի եղել տվյալ պարագայում:

¶ 4.12. Այս կապակցությամբ, «Կորսյոֆյելի գործին» համապատասխան, որով գերագույն դատարանը հայտարարել է, որ արոտավայրերի վարչական հատկացումը որոշիչ դեր չի խաղում անձնական իրավունքով նախատեսված արոտավայրերի օգտագործման իրավունքները սահմանելու, 1996 թ. լրացվել է Յուսիսային եղջերվաբուծության մասին օրենքի 31-րդ բաժինը: Սամի ժողովրդի իրավունքները որպես արոտավայր օգտագործվող շրջաններում ընդլայնելու համար օրենքը փոխվեց այնպես, որ այն թույլ տա հողի օտարումը նման օգտագործողների իրավունքներն ապահովելու նկատառումով: Օրենքի նախապատրաստական աշխատանքների համաձայն՝ լրացման նպատակը հետևյալն է.

¶ 4.13. «Կառավարական մարմիններին տրամադրել անհրաժեշտ միջոցներ՝ սամի ժողովրդի հյուսիսային եղջերուների արածեցումն ապահովելու ուղղությամբ ակտիվ քայլերի դիմելու համար: Ներկա օրենսդրությունը չի նախատեսում նման լիազորություններ: Առանց օտարման վերաբերյալ նման օրենսդրական ընդլայնման՝ իշխանությունները հնարավորություն չեն ունենա կանխելու կամ լուծելու վեճերը»:

¶ 4.14. Այս ուղղումից հետո օտարման միջոցով արոտավայրերի օգտագործման ապահովման սկզբունքը դարձավ մասնակից պետության քաղաքականության և համապատասխան մարմիններին գյուղատնտեսության նախարարության կողմից տրվող հրահանգների մաս: Ավելին՝ «1997 թ. Աուրսունդենի գործում» և «Կորսյոֆյելի գործում» նշված տարածքների կապակցությամբ տեղական կառավարման և տարածաշրջանային զարգացման նախարարությունը խորհրդարանին ուղղված իր զեկույցում նշում է, որ սամի ժողովրդի դիրքն ապահովելու համար պետք է

ներմուծվի նրանց օգտին հյուսիսային եղջերուի արածեցման իրավունքների օտարումը, սակայն նախքան այս քայլին դիմելը հարկավոր է ամեն ջանք գործադրել հաշտության համաձայնագրին հասնելու համար, օրինակ՝ պետության մասնակցությամբ վարձակալման պայմանագրերի ձևով:

¶ 4.15. 1998 թ. ապրիլի 2-ին հեղինակները «1997 թ. Աուրսունդենի գործով» վիճարկվող հողերի վերաբերյալ օտարման պահանջ ներկայացրին Նորվեգիայի կառավարությանը, իսկ 1999 թ. ապրիլի 9-ին պահանջ ներկայացրին նաև «Կորսյոֆյելի գործով»: Մասնակից պետության դիրքորոշման ներկայացման ամսաթվի դրությամբ՝ սրանք միակ խնդրագրերն էին, որոնք ներկայացվել էին Նորվեգիայի կառավարությանը օրենքում 1996-ին արված ուղղումից հետո: Հեղինակների կողմից մեջբերվող այլ գործերի վերաբերյալ նշվում է, որ նրանք հաղթել են «Կվիպսդալի գործը», «Սելբուի գործը» դեռևս գտնվում է գերագույն դատարանի վարույթում, իսկ «Տամնեսի գործով» օտարման պահանջ չի ներկայացվել:

¶ 4.16. 1959 թ. հոկտեմբերի 23-ին ընդունված «Օտարման մասին» օրենքի 12-րդ բաժնի համաձայն՝ խրախուսվում է կողմերի հաշտության համաձայնության գալու փորձը նախքան օտարման գործընթաց մեկնարկելը: «1997 թ. Աուրսունդենի գործի» առնչությամբ 1998 թ. նոյեմբերի 4-ին գյուղատնտեսության նախարարությունը ձևավորել է բանակցային կոմիտե, որտեղ հողատերերը նշանակել էին իրենց ներկայացուցիչներին: Հեղինակներին արտահայտվելու հնարավորություն է տրվել բանակցային գործընթացի ժամանակ կառավարության կողմից նշանակված կոմիտեի հետ ունեցած հանդիպումների, ինչպես նաև հողատերերի հետ առաջարկվող պայմանագրի նախագծի վերաբերյալ գրավոր մեկնաբանությունների միջոցով: 2000 թ. փետրվարի 4-ին այս կոմիտեները համաձայնության են եկել և իրենց առաջարկը ներկայացրել համապատասխան խմբերին:

¶ 4.17. Պայմանագիրն օտարման նպատակներով ընդգրկում է հայցի առարկա հանդիսացող 121 քկմ արոտավայրերի մոտ 80 տոկոսը, ինչպես նաև նախատեսում է մոտ 40 կմ երկարությամբ ցանկապատի կառուցում: Ցանկապատի նպատակն է հեշտացնել հովիվների ստանձնած կանոնակարգային պարտավորության կատարումն առ այն, որ հարկ է օրինական արոտավայրերի տարածքում հյուսիսային եղջերուներին պահել համապատասխան հսկողության տակ: Ըստ առաջարկվող պայմանագրի՝ մասնակից պետությունը արածեցման դիմաց վճարում է տարեկան վարձ, ինչպես նաև՝ ցանկապատի կառուցման և սպասարկման գումարը: Մասնակից պետությունը բանակցային բոլոր ծախսերի համար վճարել է 430,000 նորվեգական կրոն և հատկացրել 4.2 միլիոն նորվեգական կրոն հյուսիսային եղջերուների համար նախատեսված ցանկապատի կառուցման համար:

¶ 4.18. Չնայած այս առաջարկված պայմանագրին՝ 2000 թ. մայիսին հեղինակները հայտնեցին գյուղատնտեսության նախարարությանը, որ իրենք մտադիր չեն հետ վերցնել իրենց պահանջը օտարման մասին: Կառավարությունը վստահ է, որ գյուղատնտեսության նախարարությունը կապշտպանի հեղինակների շահերը՝ կնքելով առաջարկված պայմանագիրը կամ որոշում կայացնելով օտարման մասին: Ամեն դեպքում Նորվեգիայի կառավարությունն առաջարկելու է խորհրդարանին գումար հատկացնել՝ համապատասխան ծախսերը հոգալու համար:

¶ 4.19. Վերը նշված ընթացակարգը հավանաբար կիրառվելու է նաև «Կորսյոֆյելի գործի» շրջանակներում վիճարկվող հողերի օտարման մասին պահանջի պարագայում: Ավելին՝ մասնակից պետությունը ներկայացնում է, որ հարցի վերաբերյալ դատական որոշումները մինչև օրս որևէ ազդեցություն չեն ունեցել հեղինակների կողմից արածեցման նպատակներով վիճարկվող հողատարածքների փաստացի օգտագործման վրա, ընդ որում՝ «1997 թ. Աուրսունդենի գործով» առաջարկվող պայմանագիրը ենթադրում է, որ մասնակից պետությունը սամի ժողովրդի կողմից վիճարկվող հողերի օգտագործման դիմաց վճարի՝ սկսած այս գործի վերաբերյալ վճռի կայացման օրվանից, այն է՝ 1997 թ. հոկտեմբերի 24-ից:

¶ 4.20 Մասնակից պետությունը հայտարարում է, որ օտարման մասին պահանջ ներկայացնելու հնարավորությունը կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոց է: Նա համարում է, որ քանի դեռ օտարման մասին պահանջները գտնվում են վարույթում, կոմիտեն ի վիճակի չէ ուսումնասիրելու՝ հեղինակները տուժե՞լ են 27-րդ հոդվածի դրույթների խախտումից, թե՞ ոչ:

Հեղինակներն առարկեցին հետևյալ կերպ.

¶ 5.9. Ի պատասխան մասնակից պետության այն պնդման, թե հեղինակները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ օտարման պահանջով չեն դիմել վարչական ատյաններ, հեղինակները հիշեցնում են միայն արդյունավետ և հեղինակներին հասանելի իրավական պաշտպանության այն միջոցից օգտվելու սկզբունքը, որի կիրառումն անհիմն չի ձգձգվում:

¶ 5.10. Ինչ վերաբերում է վիճարկվող հողերի վերաբերյալ առաջարկվող պայմանագրին 1997 թ. Աուրսունդենի գործի շրջանակներում, ապա հեղինակները կցում են 2001 թ. հունվարին գյուղատնտեսության նախարարությունից ստացված երկու նամակ, որոնց մեջ նախարարությունը հայտնում է, որ հողատերերի միայն 38 տոկոսն է նշված պայմանագիրը կնքելու ցանկություն հայտնել: 2001 թ. մարտի 26-ին հողատերերից ստացված նամակում

նրանք վիճարկում են պայմանագիրը մի քանի հիմնավորումներով: Բանակցությունները մինչև օրս ձախողվել են, և հեղինակները հարցականի տակ են առնում, որ պայմանագիրը կապահովի իրենց շահերի պաշտպանությունը:

¶ 5.11. Ավելին՝ հեղինակները նշում են, որ օտարման մասին իրենց պահանջը «1997 թ. Աուրսունդենի գործով» ներկայացվել է ավելի քան երեք տարի առաջ (1998 թ. ապրիլի 2-ին) և դեռևս գտնվում է վարույթում՝ հակառակ մասնակից պետության այն հայտարարության, թե վիճարկվող հողի վերաբերյալ որոշումն ակնկալվում է 2001 թ. առաջին կեսին: Հեղինակները կարծում են, որ այդ պահանջի արդյունքն անորոշ է, հայտնի չէ՝ բավարար է լինելու, թե՞ ոչ:

¶ 5.12. Մասնակից պետությունը պնդում է, որ այս հարցով դատական որոշումները մինչև օրս որևէ ազդեցություն չեն ունեցել հեղինակների կողմից հյուսիսային եղջերուի արոտավայրերի փաստացի օգտագործման վրա: Այդուհանդերձ, մինչև հեղինակները սպասում էին իրենց օտարման մասին պահանջների արդյունքին, 2000 թ. օգոստոսի 25-ին հեղինակների դեմ քրեական մեղադրանք է ներկայացվել Աուրսունդենի հյուսիսում գտնվող հողատարածքների ապօրինի օգտագործման համար, ուստի նրանք մտավախություն ունեն, որ հետագա քրեական հետապնդման կենթարկվեն վիճարկվող հողերի ապօրինի օգտագործման համար: 2001 թ. ապրիլի 23-ին Ուստունդենլագի տարածքային ոստիկանությունը քրեական մեղադրանքով 50000 նորվեգական կրոնի չափով տուգանք դրեց հեղինակների վրա, որոնց նախաձեռնած այդ տուգանքը վիճարկող դատավարությունը նշանակված է 2002 թ. հունվարի 7-9:

ՄԻԿ-ի մեծամասնությունը 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի դրույթների մասով որոշում ընդունեց մասնակից պետության օգտին:

¶ 8.6. Ինչ վերաբերում է մասնակից պետության՝ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետին համապատասխան պնդմանը, թե հեղինակները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը փաստարկներ է բերել առ այն, որ հեղինակները չեն սպառել վարչական մարմիններին օտարման պահանջ ներկայացնելու իրավական պաշտպանության միջոցները: Թեև հեղինակները դիմել են դատական պաշտպանության միջոցներին «Տամենսի», «1997 թ. Աուրսունդենի» և «Կորսյոֆյելի» գործերով, վերջին երկու գործերով օտարման վերաբերյալ նրանց պահանջները դեռևս գտնվում են վարույթում, մինչդեռ առաջինի շրջանակներում օտարման պահանջ չի ներկայացվել: Կոմիտեն հիշեցնում է, որ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով՝ հայցվորը պետք է օգտվի այն բոլոր դատական և վարչական ատյաններից, որոնք առաջարկում են կարգավորման ողջամիտ հեռանկար: Օտարման մասին հայցապահանջը, որը նախատեսված է 1996 թ. օրենքով, դեռևս գտնվում է վարույթում: Ուստի ակնհայտ է, որ ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառված չեն եղել:

¶ 8.7. Այնուամենայնիվ, մնում է առկա, թե իրավական պաշտպանության այս միջոցների կիրառումն արդյոք անհիմն ձգձգվե՞լ է: Կոմիտեն նշում է հեղինակների այն փաստարկը, որ նրանք ավելի քան մեկ դարի ընթացքում դիմել են դատական պաշտպանության ներպետական միջոցներին, իսկ օտարման մասին 1998 թ. և 1999 թ. ներկայացրած իրենց դիմումները դեռևս գտնվում են վարույթում, ինչը վկայում է իրավական պաշտպանության միջոցների անհիմն ձգձգման մասին:

¶ 8.8. Կոմիտեն համարում է, որ հեղինակներից իրավական պաշտպանության միջոցից օգտվելու համար պահանջված ժամանակահատվածը չի կարող հաշվարկվել այն պահից, երբ սամի ժողովուրդը սկսել է արոտավայրերի օգտագործման իրավունքների ապահովման վերաբերյալ դատական ընթացքը, այլ սկսած այն պահից, երբ իրենք՝ հեղինակները, փորձել են օգտվել իրավական պաշտպանության միջոցից: Կոմիտեն նշում է, որ հեղինակներն օտարման մասին իրենց պահանջները ներկայացրել են 1998 թ. ապրիլի 2-ին «Աուրսունդենի գործի», իսկ 1999 թ. ապրիլի 9-ին՝ «Կորսյոֆյելի գործի» շրջանակներում: Դատավարության մաս կազմող բանակցային գործընթացի արդյունքում 2000 թ. փետրվարին համաձայնագիր առաջարկվեց, սակայն այն 2000 թ. մայիսին մերժվեց: Սա ստիպեց իշխանություններին վերսկսել օտարման գործընթացը:

¶ 8.9. Կոմիտեն համարում է, որ Հյուսիսային եղջերավաթության մասին օրենքի լրացումը և դրան հետևած բանակցությունները, որոնք նպատակ են ունեցել ապահովել հեղինակներին իրավական պաշտպանության միջոցներով, ողջամիտ բացատրություն են տալիս հեղինակների պահանջի քննության տևողության վերաբերյալ: Չի կարելի եզրակացնել, որ Նորվեգիայի օրենսդրության այն պահանջը, որով հեղինակները պարտավոր են նախքան օտարման մասին հայց ներկայացնելը իրենց պահանջները կարգավորել հողատերերի հետ, ողջամիտ չէ: Կոմիտեն նաև նշում է, որ հեղինակները մի դրվագով դարձել են քրեական մեղադրանքի առարկա վիճարկվող հողերի ապօրինի օգտագործման համար և արդարացվել են՝ հնարավորություն ստանալով շարունակելու հյուսիսային եղջերուի արածեցումը նույնչափ, որքանով սահմանվել է նախկինում գերագույն դատարանի վճիռներով: Ուստի կոմիտեն չի կարող եզրակացնել, որ ներպետական իրավական պաշտպանության միջոցները անհիմն ձգձգվել են: Հեղինակների հայցապահանջը 27-րդ հոդվածի դրույթներով ամրնդունելի է, քանզի չեն սպառվել կամընտիր արձանագ-

րության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով նախատեսված իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

¶ 8.10. Կոմիտեն այն կարծիքին է, որ հաշվի առնելով 1996 թ. օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի առկայությունը, պահանջը պետք է համարվի անընդունելի: Այնուհանդերձ, մասնակից պետությանը կոչ է արվում անհապաղ ավարտել հեղինակների՝ արտավայրերից օգտվելու իրավունքներին վերաբերող գործընթացները:

Պարոնայք Յենկինը, Շայնինը և Սուլարի Յրիգոյենը համաձայն չէին և պնդում էին, որ դիմումը պետք է ընդունելի լինի 27-րդ հոդվածի դրույթներով:

Նախևառաջ՝ մենք համաձայն չենք, որ հյուսիսային եղջերուների արտավայրերից օգտվելու իրավունքն ապահովվելու նկատառումով օտարման գործընթաց մեկնարկելու համար մասնակից պետության վարչական մարմիններին դիմելը կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի խմաստով սահմանված իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է: Հեղինակներն արդեն սպառել են դատական պաշտպանության միջոցների մի գիծ, քանզի նրանց գործն ուղարկվել է գերագույն դատարան: Հեղինակները նույնիսկ որպես կողմ հանդես չեն գալիս օտարման գործընթացում (տես կետ 4.16), ինչը չի կարող դիտվել որպես իրավական պաշտպանության ներպետական այն միջոցը, որին հեղինակները կարող են դիմել: Հեղինակները սպառել են օտարմանն առնչվող իրավական պաշտպանության լրացուցիչ պահանջները՝ պարզապես այնպիսի խնդրագիր ներկայացնելով, որը հնարավոր է դարձնում օտարման գործընթացի մեկնարկը, ոչ ավելին: Թե ինչ արդյունքներ կստացվեն օտարման այս գործընթացից և ինչ ժամկետներում, դեռ առավելությունների գնահատման խնդիր է, երբ կոմիտեն կանդրադառնա մասնակից պետության՝ 27-րդ հոդվածով հեղինակների համար նախատեսված իրավունքների իրացմանն ուղղված միջոցներին:

Երկրորդ՝ եթե նույնիսկ ընդունենք, որ օտարման փաստացի գործընթացը հեղինակների կողմից սպառման ենթակա իրավական պաշտպանության միջոց է, ապա այդ գործընթացն արդեն իսկ անհիմն ձգձգվել է կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին նախադասությամբ սահմանված խմաստով: Գերագույն դատարանում «Աուրսունդենի գործով» պարտություն կրելուց հետո (ինչն ինքնին որոշակի ժամանակ պահանջեց) հեղինակներն օտարման մասին իրենց հայցադիմումը ներկայացրին 1998 թ. ապրիլի 2-ին: Գրեթե երեք տարի անց՝ 2001 թ. մարտի 26-ին, առաջարկվող հաշտության համաձայնագիրը մերժեցին հողատերերը: Թեև դրանից հետո՝ 2002 թ. մարտի 7-ին, մասնակից պետությունը ներկայացրել է կոմիտեին իր հայտարարությունը, սակայն նա չի տեղեկացրել կոմիտեին հետագա զարգացումների մասին և որևէ բացատրություն չի տվել հեղինակների ներկայացրած պահանջի չորս ու կես տարվա ուշացման վերաբերյալ և չի ներկայացրել հարցի լուծման որևէ նախանշված ժամկետ: Տվյալ հանգամանքներում կոմիտեն պետք է եզրակացնի, որ իրավական պաշտպանության միջոցն անհիմն ձգձգվում է:

Երրորդ՝ թվում է, որ հեղինակների՝ 27-րդ հոդվածով սահմանված իրավունքները տուժել են գերագույն դատարանի կողմից իրենց դեմ կայացված վճռի հետևանքով: Նախկինում նրանց օգտագործած տարածքներում արածեցնելը դարձավ ապօրինի, և հեղինակները գտնվում են հետագա դատավարությունների և իրավական պատժամիջոցների վտանգի տակ, եթե շարունակեն հյուսիսային եղջերուներին արածեցնել այդ շրջաններում: Նույնիսկ որևէ փաստարկ չի բերվել, որ օտարման գործընթացի արդյունքը կապված կլինի հեղինակների՝ 27-րդ հոդվածի դրույթներով ներկայացված պահանջի այդ մասի հետ:

Եվ, վերջապես, վերը շարադրված իրավական փաստարկներից զատ գոյություն ունեն մեկ քաղաքական նկատառումներ: Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառված չլինելն անընդունելիության վերականգնելի հիմնավորում է: Կոմիտեի մեծամասնությունը հղում է անում նույնիսկ կոմիտեի ընթացակարգի կանոնադրության 92.2 դրույթին, ըստ որի՝ հեղինակները հետագայում կարող են պահանջել կոմիտեից վերանայել ընդունելիության մասին որոշումը: Մենք կարծում ենք, որ ողջամիտ չէ հայտարարել, որ դիմումն անընդունելի է, քանզի գոյություն ունի պարզ ակնկալիք, որ հեղինակները մոտ ապագայում կպահանջեն վերսկսել իրենց գործի:

Բնիկ ժողովուրդների ներկայացրած պահանջները հողային իրավունքների գծով սովորաբար ներառում են նրանց՝ պատմական անարդարությունը շտկելու փորձերը, օրինակ՝ գաղութարարների կողմից երկար ժամանակ իրականացվող սեփականագրվումները: Հաճախ համապատասխան պետության օրենսդրությունը և, հետևաբար, դատական պաշտպանության միջոցները լավ չեն հարմարեցվել նման պահանջներին արձագանքելու համար, քանզի դա ազդում է գաղութարարության վրա: *Ջոնասենի* գործով հանդես եկող մասնակից պետությունը որոշել է անդրադառնալ այս պատմական անարդարություններին՝ տրամադրելով վարչական պաշտպանության միջոցներ, ոչ թե օրենսդրական շտկումներ: Այս մոտեցումն ընդունվեց ՄԻԿ-ի մեծամասնության կողմից ընդունելիության վերաբերյալ կայացրած որոշման ձևով: ՄԻԿ-ը պետք է ավելի պարզ բացատրեր, թե ինչու զուտ վարչական ընթացակարգերը, որոնք

հինգ տարի անց դեռ չեն մոտեցել իրենց ավարտին (մի քանի տարի ընթացող դատավարությունից հետո), տվյալ պարագայում բավարար են համարվել ենթադրյալ խախտումներից հնարավոր իրավական պաշտպանության միջոց ապահովելու տեսանկյունից:

[6.05]

«Կ.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (C v AUSTRALIA, 900/99)

¶ 7.3. Ինչ վերաբերում է ներպետական միջոցների սպառման հարցին, ապա կոմիտեն նշում է մասնակից պետության այն փաստարկը, որ վարչական պաշտպանության որոշ միջոցներ (համագործակցության օմբուդսմանի և մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների համձնաժողովը) չեն սպառվել հեղինակի կողմից: Կոմիտեն նկատում է, որ այս մարմինների կայացրած յուրաքանչյուր որոշում, եթե անգամ կայացվել հեղինակի պահանջների օգտին, կունենար խորհրդատվական, ոչ թե պարտադիր ուժ, որը գործադիր իշխանությունը կարող է իր հայեցողությամբ անտեսել: Որպես այդպիսին՝ իրավական պաշտպանության այս միջոցները չի կարելի արդյունավետ համարել կամընտիր արձանագրության դրույթների շրջանակներում:

Ուստի կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի դրույթներով իրավական պաշտպանության միջոցները պետք է պարտադիր ուժ ունենան:

[6.06]

«Ք.Ֆ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (C.F. v CANADA, 118/81)

¶ 6.2. ... Դաշնագիրը սահմանում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ տեղի է ունենում դրանով երաշխավորված իրավունքներից որևէ մեկի խախտում, պետք է ապահովվի իրավական պաշտպանության միջոց: Հետևաբար, այն չի նախատեսում կանխարգելիչ պաշտպանություն, փոխարենը՝ սահմանափակվում է արդյունավետ կարգավորում ex post facto սկզբունքով:

Թեև *ex post facto* իրավական պաշտպանության միջոցները սովորաբար ընդունվում են որպես այնպիսիք, որոնք պետք է սպառված լինեն նախքան կամընտիր արձանագրության դրույթներով Մարդու իրավունքների կոմիտե դիմելը, սակայն կան դեպքեր, երբ իրավական պաշտպանության նման միջոցները համարվում են անարդյունավետ, ինչպես օրինակ՝ «Օմինայակն ընդդեմ Կանադայի» (*Ominayak v Canada, 167/84*) [6.16] գործի պարագայում:

Ինչպե՞ս պետք է սպառված լինեն իրավական պաշտպանության միջոցները

[6.07] Կամընտիր արձանագրության դրույթներով ապագա բողոքարկողը պարտավոր է նախևառաջ դիմել տեղական իշխանություններին ՔՔԻՄԴ-ի դրույթների խախտման մասին իր բողոքի բովանդակությամբ: Այս սկզբունքը ներկայացվում է հետևյալ գործերից բերված քաղվածքներում:

«ԳՐԱՆՏԸ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (GRANT v JAMAICA, 353/88)

¶ 5.1. ...Հեղինակի՝ մահապատժի դատապարտվածների բանտախցում պահելու պայմանների մասին պնդումների առնչությամբ կոմիտեն նշել է, որ հեղինակը չի գրել, թե ինչ քայլեր է ձեռնարկել իր բողոքները բանտի լիազոր մարմիններին ներկայացնելու ուղղությամբ, և ինչ հետաքննություն է անցկացվել այդ կապակցությամբ, եթե, իհարկե, նման հետաքննություն առհասարակ նշանակվել է: Համապատասխանաբար՝ կոմիտեն համարում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառված չեն եղել:

«ՊԵՐԵՐԱՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (PERERA v AUSTRALIA, 541/93)

¶ 6.5. Հեղինակի այն պնդման առնչությամբ, որ իր հարցով կրկնակի դատավարության բողոքարկումն արդարացի չէր, քանի որ դատավորներից մեկը մասնակցել է իր դատապարտման բողոքարկման նախորդ պահանջի ուսումնասիրմանը, կոմիտեն նշում է, որ բողոքարկման ուսումնասիրմանը դատավորի մասնակցության դեմ պաշտպա-

նող կողմը առարկություն չի ներկայացրել, և այս հարցի կապակցությամբ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել: Ուստի դիմումի այս մասն անընդունելի է համարվում:

¶ 6.6. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, թե իրեն թարգմանչի ծառայություններ չեն մատուցվել, ապա կոմիտեն նշում է, որ դատարանի ուշադրությունը ոչ դատավարության, ոչ էլ բողոքարկման ժամանակ երբեք չի հրավիրվել այս խնդրի վրա: Չետևաբար, դիմումի այս մասը համարվում է անընդունելի, քանզի չեն սպառվել կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով նախատեսված իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

[6.08] «Բ.դ.Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (B.d.B. v NETHERLANDS, 273/89)

¶ 6.3. ... Կոմիտեն նշում է, որ թեև հեղինակները պետք է վկայակոչեն դաշնագրի բովանդակած նյութաիրավական իրավունքները, սակայն նրանք պարտավոր չեն կամընտիր արձանագրության շրջանակներում անպայման հղում կատարել դաշնագրի առանձին հոդվածներին:

Բ.դ.Բ-ի գործով այս որոշմանը հետևեցին «Վան Ալֆենն ընդդեմ Նիդեռլանդների» (Van Alphen v Netherlands, 305/88), «Հենրիսն ընդդեմ Ճամայկայի» (Henry v Jamaica, 230/87) և «Լիթլն ընդդեմ Ճամայկայի» (Little v Jamaica, 283/88) գործերը: Այսպիսով, ներպետական բողոքի իմաստաբանությունը վճռական դեր չի խաղում, երբ որոշվում է, թե արդյոք ներպետական մարմինները պատշաճ կերպով տեղեկացվել են ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ: Օրինակ՝ ՄԻԿ-ին ուղղված բողոքը կամայական ձերբակալության մասին չի համարվի անընդունելի 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, եթե այդ ձերբակալությունը վիճարկվել է ներպետական ատյաններում, ընդ որում՝ բողոքողը պարտավոր չէ առանձին վկայակոչել ՔՔԻՄԴ-ի 9-րդ հոդվածի դրույթները: Ավելին՝ կամընտիր արձանագրությամբ դիմում ներկայացնող հեղինակը պետք է ներպետական ատյաններում բարձրացնի միայն ՔՔԻՄԴ-ով ներառված հարցերը, սակայն պարտավոր չէ ապահովել նման ատյանների կողմից այս հարցերի պատշաճ ուսումնասիրությունը⁹:

[6.09] Իրավական պաշտպանության որոշ միջոցներ կարող են կիրառվել որոշակի ժամանակահատվածում: Օրինակ՝ հնարավոր է, որ սահմանափակ ժամկետ տրվի ստորին ատյանի դատարանի որոշումը վերին ատյանի դատարանում բողոքարկելու համար: Ընդհանրապես հեղինակին է վերապահված, որ նա հետևի ներպետական ընթացակարգային պահանջներին:

«Ա.Պ.Ա.-ն ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (A.P.A. v SPAIN, 433/90)

Չեղիմակը բողոքում էր արդար դատավարության իր իրավունքի ենթադրյալ խախտման դեմ: Ստորև նա մանրամասն ներկայացնում է ներպետական պաշտպանության միջոցները սպառելու իր փորձերը:

¶ 2.3. Չեղիմակն իր գործը բողոքարկել է Իսպանիայի գերագույն դատարանում ընթացակարգային հիմունքներով: 1989 թ. հունիսի 2-ին գերագույն դատարանը հաստատեց առաջին ատյանի դատարանի վճիռը: Իբր ամառային արձակուրդի պատճառով հեղինակը գերագույն դատարանի որոշման մասին տեղեկացվել է միայն 1989 թ. սեպտեմբերի 11-ին, ինչը զգալիորեն գերազանցում է սահմանված 20 աշխատանքային օրվա ժամկետը, որի ընթացքում թույլատրվում է սահմանադրական միջնորդություն ներկայացնել ընդունված որոշման վերաբերյալ (*recurso de amparo*)^{*}:

¶ 2.4. 1990 թ. հունվարի 15-ին Ա.Պ.Ա.-ն դիմեց սահմանադրական դատարան՝ պնդելով, որ խախտվել է սահմանադրության 24-րդ հոդվածը, որը երաշխավորում է արդար դատավարության իրավունքը: 1990 թ. փետրվարի 26-ին սահմանադրական դատարանը հայտարարեց, որ *amparo*-ն անընդունելի է, քանի որ միջնորդություն ներկայացնելու սահմանված ժամկետը լրացել է:

⁹ Տե՛ս օրինակ՝ *Henry v Jamaica* (230/87), պարբ. 7.2, *Little v Jamaica* (283/88):

^{*} *amparo* – իրավունքների պաշտպանության ընթացակարգ, միջոց., դատական վերահսկողություն ձերբակալման և կալանավորման օրինականության վրա (*ժան. քաղաք.*):

¶ 2.5. Վերը նշված համատեքստում հեղինակը նշում է, որ օգոստոս ամսին Իսպանիայի դատական համակարգը ամառային արձակուրդի հետևանքով գործնականում «կաթվածահար» էր: Այդ իսկ պատճառով Իսպանիայի քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածը սահմանում է, որ վերաքննիչ բողոքները ներկայացնելու վերջնաժամկետը որոշելիս օգոստոս ամիսը չի հաշվարկվում: Այնուամենայնիվ, 1982 թ. հունիսի 15-ի համաձայնագրի 2-րդ հոդվածը սահմանում է, որ սահմանադրական դատարանում իրականացվող մի շարք ընթացակարգերի, այդ թվում նաև *amparo*-ի պարագայում օգոստոս ամիսը չի հաշվարկվում նման վերջնաժամկետի որոշման համար:

Այդուհանդերձ, ՄԻԿ-ը որոշեց, որ հեղինակը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

¶ 6.2. Կոմիտեն ներպետական իրավական միջոցների սպառման հարցի վերաբերյալ նշել է կողմերի բերած փաստարկները: Նա նշում է, որ թեև օգոստոսը չի հաշվարկվում քրեական գործերով վերաքննիչ բողոքների ներկայացման վերջնաժամկետը որոշելիս, սակայն այն հաշվարկվում է սահմանադրական դատարանում «amparo» բնույթի ընթացակարգերի կարգավորման համար: Թեպետ ճշմարտացի է, որ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով իրավական պաշտպանության տեղական միջոցները պետք է սպառվեն միայն այնքանով, որքանով դրանք մատչելի են և արդյունավետ, սակայն հաստատված սկզբունք է, որ մեղադրյալն իրավական պաշտպանության առկա միջոցներին դիմելիս պետք է պատշաճ հոգատարություն ցուցաբերի: Տվյալ համատեքստում այն սկզբունքը, որ օրենքի չիմացությունը ոչ մեկին չի արդարացնում (*ignorantia iuris neminem excusat*), կիրառվում է նաև կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի առնչությամբ:

¶ 6.3. Տվյալ դեպքում գերագույն դատարանի 1989 թ. որոշման մասին պատշաճ կերպով ծանուցվել է հեղինակի փաստաբանը: Հեղինակը պնդում է, որ փաստաբանն իրեն այդ ծանուցման մասին տեղեկացրել էր միայն «amparo» ընթացակարգի համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո: Կոմիտեն ներկայացված գործում որևէ տեղ չի նշվում, որ հեղինակի փաստաբանը մասնավոր կարգով չի նշանակվել: Տվյալ պարագայում փաստաբանի անգործությունը կամ անբարեխղճությունն իր հաճախորդին գերագույն դատարանի վճիռը հայտնելու հարցում վերագրելի է ոչ թե մասնակից պետությանը, այլ հեղինակին: Կոմիտեն չի համարում, որ դաշնագրի 14-րդ հոդվածի համաձայն, տվյալ գործի հանգամանքներից ելնելով՝ գերագույն դատարանի քարտուղարությունը կամ դատախազությունը հեղինակին անձամբ 1989 թ. հունիսի 2-ին կայացրած վճռի մասին ուղղակիորեն ծանուցելու պարտավորություն են ունեցել: Հետևաբար, հարկ է եզրակացնել, որ իրավական պաշտպանության տեղական միջոցները պատշաճ բարեխղճությամբ չեն կիրառվել, ուստի և կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի պահանջները չեն բավարարվել:

Փոքրամասնության՝ մեծամասնության հետ համընկնող եզրակացության մեջ պրն Ագիլար Ուրբինան ավելի խորացրեց ՄԻԿ-ի տրամաբանությունը.

¶ 2.2. Ավելին՝ հեղինակն ընդունում է, որ իր փաստաբանի կողմից թույլ է տրվել անբարեխղճություն կամ բացթողում, սակայն համարում է, որ այդ վարքագիծը չի կարող վերագրվել նաև իրեն: Այդուհանդերձ, չի կարելի պնդել, որ հեղինակի փաստաբանի ենթադրյալ անբարեխղճությունը կարող է վերագրվել մասնակից պետությանը, ոչ թե հեղինակին, որն էլ պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեր օրենքով սահմանված ժամկետներում:

Նման որոշում է կայացվել ՌԽՎՄԿ-ի դրույթներով Ռասայական խտրականության վերացման կոմիտեի կողմից «Ս.Փ-ն և Մ.Փ-ն ընդդեմ Դանիայի» (*C.P. and M.P. v Denmark, CERD 5/1994*) գործի շրջանակներում, որով հեղինակի մասնավոր փաստաբանի անփութությունը սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնելու հարցում նշանակում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել, ուստի և դիմումն անընդունելի է¹⁰: «Բարբարոն ընդդեմ Ավստրալիայի» (*Barbaro v Australia, CERD 7/95*) գործում հեղինակի՝ մասնավոր կարգով վարձած փաստաբանի կողմից նախքան սահմանված ժամկետի ավարտը բողոքարկման հնարավորությունների մասին իրեն չտեղեկացնելը նույնպես նշանակում է, որ հեղինակը պատշաճ կերպով չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները¹¹:

[6.10] «Գրիֆինն ընդդեմ Իսպանիայի» (*Griffin v Spain, 493/92*) գործում հեղինակի՝ սահմանված ժամկետում իրավական պաշտպանության համապատասխան միջոցին չդիմելու փաստը չի վերագրվել հեղինակին, քանզի դատարանի կողմից նշանակված փաստաբանը չի տեղեկացրել նրան իրավական պաշտպանության այս միջոցի մասին (իրականում փաստաբանն ընդհանրապես նրա հետ չի կապ-

¹⁰ Պարբ. 6.2:

¹¹ Պարբ. 10.4:

վել)¹²: *Գրիֆինի* գործը վկայում է, որ հեղինակները կարող են ներվել իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու համար, երբ դա տեղի է ունենում, ի տարբերություն մասնավոր կարգով վարձած փաստաբանի, պետության կողմից տրամադրված փաստաբանի անփութության կամ անիրազեկության պատճառով¹³:

[6.11] *«Մուհոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Muhonen v Finland, 89/81)* գործում հեղինակին «հստակ հասկացվել է, որ գոյություն չունի իրավական պաշտպանության այլ միջոց»¹⁴, հետևաբար, նա պարտավոր չի եղել դիմել մնացած իրավական պաշտպանության միջոցին¹⁵:

[6.12] *«Ջ.Ռ.Թ.-ն և Վ.Գ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱԴԱՅԻ»
(J. R. T. and the W.G. PARTY v CANADA, 104/81)*

Այս գործով հեղինակի բողոքներից մեկի առնչությամբ ՄԻԿ-ը նշեց հետևյալը.

¶ 8(բ). Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, որ Կանադայի «Մարդու իրավունքների մասին» օրենքի 13-րդ բաժնի 1-ին կետը, որով հեռախոսային ծառայությունից իր օգտվելը ընդհատվել է, կիրառվել է դաշնագրի 19-րդ հոդվածի խախտումով, ապա կոմիտեն նշում է, որ նա դատական վերանայման համար դիմում չի ներկայացրել օրենքով սահմանված ժամկետում: Այդուհանդերձ, հաշվի առնելով տվյալ օրենքներում սահմանված հակասական ժամկետները, ողջամիտ ջանք է գործադրվել՝ սպառելու այս հարցով իրավական պաշտպանության ներպետական միջոցները, հետևաբար կոմիտեն չի կարծում, որ այս պահանջով դիմումը պետք է համարվի անընդունելի ըստ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի դրույթների...

[6.13] *«ՄՊԱՆԴԱՆՋԻԼԱՆ և այլք ընդդեմ ՉԱԻՐԻ»
(MPANDANJILA et al v ZAIRE, 138/83)*

¶ 2.4. 1982 թ. հուլիսի 7-ին [տուժողի բելգիացի] փաստաբաններն իրենց հաճախորդի անունից վերաքննիչ բողոք են ներկայացրել արդարադատության գերագույն դատարան 1982-ի հուլիսի 1-ին կայացված վճռով: 1982 թ. հուլիսի 26-ի իր որոշումով գերագույն դատարանը հրաժարվեց վերաքննիչ բողոքներն ուսումնասիրելուց, քանի որ չէին վճարվել դատական տուրքերը: Այս կապակցությամբ փաստաբանները նշում են, որ իրենք միջոցներ են ձեռնարկել՝ դատական տուրքերի վճարման պահանջի կատարումն ապահովելու համար: Նրանք նշում են՝ քանի որ իրենց հաճախորդները ցրված են տարբեր կալանավայրերում, անհնարին է հաղորդակցվել նրանց հետ, և զաիրացի փաստաբան պրն Մուկենդին հանձնարարվել է կատարել տուրքերի վճարման անհրաժեշտ ձևակերպումները: 1982 թ. սեպտեմբերի 15-ի իրենց նամակում նրանք խնդրում են փաստաբան Մուկենդին կապվել տիկին Բիրինդլայի հետ (ենթադրյալ տուժողներից մեկի կինը), որն էլ պետք է հավաքեր անհրաժեշտ դրամական միջոցները: Միաժամանակ նրանք գրել են գերագույն դատարանի ավագ դատավորին՝ հայտնելով դատարանին սահմանված պահանջները կատարելու ուղղությամբ ձեռնարկած քայլերի մասին: Հետագայում է պարզվել, որ տիկին Բիրինդլան տվյալ պահին Կինշասայում չի եղել, և դատական տուրքերի գումարների նախատեսված հավաքումն ու վճարումը չեն կատարվել: Այնուամենայնիվ, իրավաբանները պնդում են, որ թեկուզ ձախողված ջանքերը սահմանված պահանջները կատարելու ուղղությամբ պետք է համարվեն բավարար, մասնավորապես հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոքները չուսումնասիրելու մասին որոշումը կայացվել է կարճ ժամանակ անց այն բանից հետո, երբ գերագույն դատարանին տեղեկացվել է դատական տուրքերի գումարները հավաքելու և մուծելու ուղղությամբ գործադրվող ջանքերի մասին:

ՄԻԿ-ը եզրակացրեց, որ գործն ընդունելի է.

¶ 5.2. ... Կոմիտեն հաշվի առավ սահմանված ժամկետում դատական տուրքերը վճարելու հարցում հեղինակների առջև ծառացած առանձնակի դժվարությունները, քանի որ նրանք ցրված էին տարբեր կալանավայրերում: Կոմիտեն նաև մատնանշեց գերագույն դատարանի՝ բողոքարկման ոչ ենթակա որոշման արագությունը, ինչի հետևանք

¹² Պարբ. 6.1:

¹³ Այդուհանդերձ, արդար դատավարության վերաբերյալ իր նախադեպային բազայում ՄԻԿ-ը թերևս բոլոր փաստաբանների վարքի համար որդեգրել է համընդհանուր կանոններ՝ պետության պատասխանատվության մասով, անկախ այն հանգամանքից՝ նրանք վարձվել են մասնավոր՝ հիմունքներով, թե՞ ոչ: Տե՛ս [14.120]:

¹⁴ Կետ 6.1:

¹⁵ Տե՛ս նաև փոքրամասնության կարծիքը *Y.L. v Canada* (112/81) գործում, կետ 2:

քով գործը փակվեց: Տվյալ պարագաներում կոմիտեն եզրակացրեց, որ դիմումն անընդունելի չի համարվում կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով...

Այսպիսով, կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված պահանջը համարվում է կատարված, եթե հեղինակը կամ հեղինակի փաստաբանները թեկուզ ձախողված, սակայն սահմանված կարգին հետևելու և իրավական պաշտպանության տեղական միջոցները սպառելու իրական փորձ են կատարել:

Իրավական պաշտպանության ապարդյուն միջոցների սպառման անհարկիությունը

[6.14]

«ՓՐԱԹԸ և ՄՈՐԳԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՃԱՍԱՅԿԱՅԻ» (PRATT and MORGAN v JAMAICA, 210/86, 225/87)

¶ 12.3. ...Այն, որ իրավական պաշտպանության տեղական միջոցների կանոնը չի պահանջում դիմել բողոքարկման մի գործընթացի, որը հաջողության հեռանկար չի խոստանում, միջազգային իրավունքի և կոմիտեի նախադեպային բազայի հաստատված սկզբունք է:

Բողոքարկողները պարտավոր չեն դիմել իրավական պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք օբյեկտիվ պատճառներով ապարդյուն են: Այդուհանդերձ, ինչպես ցուցադրված է շատ գործերում, օրինակ՝ «Ռ.Տ-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*R. T. v France, 262/87*) և «Կաաբերն ընդդեմ Իսլանդիայի» (*Kaaber v Iceland, 674/95*) դեպքում, բողոքողի սուբյեկտիվ կարծիքն այն մասին, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցներն ապարդյուն են, ինքնին չի ազատում նրան այդ միջոցները սպառելու պահանջից:

[6.15]

«ԴԵՐՄԻՏ ԲԱՐԲԱՏՈՆ ԸՆԴՂԵՄ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ» (DERMIT BARBATO v URUGUAY, 84/81)

¶ 9.4. Ինչ վերաբերում է Գիյերմո Դերմիտի գործում իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու հարցին, ապա կոմիտեն նաև նկատի է առնում հետևյալ համգամաձևները. մասնակից պետության կողմից որպես չսպառված թվարկվող իրավական պաշտպանության միջոցները չեն կարող համարվել մատչելի ենթադրյալ տուժողի համար՝ ելնելով իր գործի համգամաձևներից: Դրանք դե յուրե կամ դե ֆակտո կիրառելի չեն և բողոքի առարկա հանդիսացող հարցերի պարագայում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չեն՝ դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իմաստով: Ուստի հիմքեր չկան փոխելու կոմիտեի՝ 1981 թ. հոկտեմբերի 28-ին կայացրած որոշումն առ այն, որ դիմումն անընդունելի չի համարվում կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված կարգով:

Կոմիտեի աշխատանքի նախորդ տարիների ընթացքում¹⁶ Ուրուգվայում տիրող ռազմական վարչակարգի դեմ ուղղված մի շարք նմանատիպ գործերում ՄԻԿ-ը որոշել է, որ մասնակից պետությունը ցույց չի տվել, որ ենթադրաբար առկա միջոցներն արդյունավետ են¹⁷: Այս գործերում խոսքը մարդու իրավունքների, օրինակ՝ կյանքի իրավունքի և խոշտանգումներից կամ կամայական կալանքից զերծ մնալու իրավունքի կոպիտ խախտումների մասին էր: Նման բազմաթիվ դեպքերում պետական իրավապահ մարմինները գործել են անպատիժ՝ իսպառ արհամարհելով օրենքի գերակայության գաղափարը: Իրավական պաշտպանության «դե յուրե» կամ «դե ֆակտո» բացակայության մասն իրավիճակը *Դերմիտ Բարբատոյի* գործում մեջբերվում է հղումով: Նման իրավիճակներում երևում է, որ ՄԻԿ-ը ճանաչում է նման վարչակարգի պայմաններում իրավական պաշտպանության ներպետական միջոցներին դիմելու ապարդյունության հավանականությունը, ուստի և մասնակից պետության վրա ապացույցի մեծ բեռ է դրվում՝ ցուցադրելու չսպառված միջոցների արդյունավետությունը: Այս պնդումը հաստատվում է «Ար-

¹⁶ Տե՛ս օրինակ՝ *Torres Ramirez v Uruguay* (4/77), *Grille Motta et al v Uruguay* (11/77) և *Martinez Machado v Uruguay* (83/80):

¹⁷ Տե՛ս ընդհանուր՝ P.R. Gandhi, *The Human Rights Committee and the Right of Individual Communication: Law and Practice* (Ashgate, Dartmouth, 1998), 240-9:

զուգորդ *Գիլբոան ընդդեմ Ուրուգվայի»* (*Arzuago Gilboa v Uruguay, 147/83*) գործով կայացված որոշումով, որում ՄԻԿ-ը նշել է, որ «արդյունավետ» միջոցները ենթադրում են «լիազոր, անկախ, անկողմնակալ, արդար և բաց դատավարության դատաիրավական երաշխիքներ»¹⁸: Մի պետությունում, որտեղ արդարադատության նման համակարգ չի ապահովվում, իրավական պաշտպանության իրագործելի և արդյունավետ միջոցների հավանականությունը ցածր է, հատկապես սեփական պաշտոնյաների դեմ բերված մեղադրանքներով, քանզի այդ համակարգը չի համապատասխանում օրենքի գերակայության սկզբունքին¹⁹:

[6.16]

**«ՕՄԻՆԱՅԱԿԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(OMINAYAK et al v CANADA, 167/84)²⁰**

Այս գործում խոսքը Կանադայի բնիկ ցեղի՝ Լյուբիկոն լճի ցեղախմբի տոհմապետի՝ իր և իր ժողովրդի իրավունքների վերաբերյալ բողոքի մասին էր: Բողոքը հիմնականում վերաբերում էր ցեղախմբի անդամների՝ 27-րդ հոդվածով սահմանված փոքրամասնությունների իրավունքների խախտմանը, որը Ալբերտա նահանգի կառավարության տարբեր գործողությունների պատճառով կործանարար հետևանքներ էր ունեցել Լյուբիկոնի մշակույթի վրա: Այստեղ ներառված են նաև Լյուբիկոն ցեղի հողերի օտարումը հօգուտ մասնավոր ընկերությունների և էներգակիրների հետազոտության թույլտվությունը նրանց բնակավայրերում²¹: Իրավական պաշտպանության ներպետական միջոցների առնչությամբ հեղինակը նշել է հետևյալը.

¶ 3.2. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կապակցությամբ նշվում է, որ Լյուբիկոն լճի ցեղն իր պահանջները ներկայացրել է ներպետական տարբեր քաղաքական և իրավական ատյաններում: Առաջ է քաշվում այն ենթադրությունը, որ ներպետական քաղաքական և իրավական ընթացակարգերն օգտագործվում են Կանադայի կառավարության պաշտոնատար անձանց և էներգամատակարարող ընկերությունների ներկայացուցիչների կողմից ցեղախմբի գործողությունները խափանելու և ձգձգելու նպատակով՝ հանգեցնելով նրան, որ վերջինս, ի վերջո, չկարողանա դրանք շարունակել, քանզի հաշվի առնելով արդյունաբերության զարգացման ներկա թափը և դրան զուգահեռ ցեղախմբի շրջակա միջավայրի և տնտեսական բազայի ոչնչացումը՝ անհնար կլինի պատկերացնել նրա գոյատևումը երկար տարիների հեռանկարում:

¶ 3.5. 1982 թ. փետրվարի 16-ին Կանադայի Ալբերտայի նահանգի Նորին մեծության դատարան հայցադիմում է ներկայացվել, որով պահանջվում էր ժամանակավոր արգելք դնել և դադարեցնել կառուցապատումը մինչև ցեղախմբի կողմից հողային և բնական պաշարների վերաբերյալ պահանջների կարգավորումը: Հեղինակի հայտարարությամբ՝ այս ժամանակավոր արգելքի հիմնական նպատակն այն է, որ թույլ չտրվի Ալբերտայի նահանգի կառավարությանը և նավթարդյունաբերող ընկերություններին («պատասխանող կողմ») շարունակել Լյուբիկոն լճի տարածքում ապրող մարդկանց ավանդական որսի և թակարդաորսի տարածքների ոչնչացումը: Սա հնարավորություն կտար ցեղախմբի անդամներին շարունակելու իրենց գոյատևումը որսորդությամբ և թակարդների տեղադրմամբ որպես իրենց բուն կենսակերպի մաս: Նահանգային դատարանը գրեթե երկու տարի որոշում չէր կայացնում, այդ ընթացքում նավթի և գազի հանքավայրերի շահագործումը շարունակվում էր, ինչն ուղեկցվում էր ցեղախմբի տնտեսական հիմքի արագ ոչնչացմամբ: 1983 թ. նոյեմբերի 17-ին ժամանակավոր արգելքի մասին պահանջը մերժվեց, և ցեղախումբը, որ թեպետ ֆինանսապես խիստ կարիքավոր էր, դատարանի որոշմամբ պետք է հատուցեր դատավարության հետ կապված բոլոր դատական և փաստաբանական ծառայությունների ծախսերը:

¶ 3.6. Նորին մեծության դատարանի վճիռը բողոքարկվեց Ալբերտա նահանգի վերաքննիչ դատարանում, որն էլ 1985 թ. հունվարի 11-ին մերժեց հայցադիմումը: Իր վճիռը կայացնելիս վերաքննիչ դատարանը համաձայնեց ստորին ատյանի դատարանի այն եզրակացությանը, որ ցեղախմբի այն պնդումը, թե որպես բնիկ ժողովուրդ հողի նկատմամբ իրավունք ունի, լուրջ իրավաբանական հարց է և պետք է որոշվի դատական կարգով: Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանը որոշեց, որ Լյուբիկոն լճի ցեղախումբն անդառնալի վնաս չի կրի, եթե պաշարների շահագործումը շարունակվի լրիվ թափով, ուստի և ելնելով «հարմարավետության հաշվեկշիռը»՝ որոշում կայացրեց արգելք դնելու պահանջը մերժել:

¹⁸ Պարբ. 7.2:

¹⁹ Սակայն «Arzuago Gilboa»-ի գործով արված հայտարարությունը չի պահանջում, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները համապատասխանեն պատշաճ դատավարության բոլոր երաշխիքներին՝ ամրագրված 14-րդ հոդվածում: Տե՛ս D. McGoldrick, *The Human Rights Committee* (Clarendon Press, Oxford, 1994), 193: Եվ իրականում, ՄԻԿ-ը համաձայնել է, որ երբեմն ոչ դատական պաշտպանության միջոցները կարող են արդյունավետ լինել [6.03]:

²⁰ Նաև հայտնի է որպես՝ *Lubicon Lake Band Case* (Լյուբիկոն լճի ցեղախմբի գործ):

²¹ Այս գործի արժանիքները քննարկվում են այստեղ՝ [24.28]:

Մասնակից պետությունը վիճարկում էր այն փաստը, որ սպառված են եղել արդյունավետ իրավական պաշտպանության բոլոր միջոցները:

¶ 5.4. Գործի հիմնավորումները դատական կարգով քննելու փոխարեն՝ ցեղախումբը բողոքարկեց ժամանակավոր արգելքի պահանջի մերժումը: Այդ բողոքը 1985 թ. հունվարի 11-ին մերժվեց Ալբերտայի նահանգի վերաքննիչ դատարանի կողմից: Ցեղախմբի՝ ժամանակավոր արգելքի մերժման որոշումը բողոքարկելու թույլտվություն ստանալու միջնորդությունը Կանադայի գերագույն դատարանում 1985 թ. մարտի 14-ին մերժվեց: Մասնակից պետությունն ավելացնում է, որ գրեթե երկու ամիս անց՝ 1985 թ. մայիսի 13-ին, Կանադայի գերագույն դատարանը մերժեց ցեղախմբի կողմից ներկայացված մեկ այլ պահանջ առ այն, որ դատարանը շրջանցի իր իսկ կանոնակարգը և նշանակի գործի նոր լսում: Մասնակից պետությունը նշում է, որ այդպիսով դատարանը պաշտպանեց իր հաստատված այն կանոնը, որով արգելվում է կրկնակի լսել բողոքարկման թույլտվություն ստանալու պահանջները:

¶ 5.5. Մասնակից պետությունը նշում է, որ միջանկյալ ընթացակարգերով պայմանավորված մնան տևական ուշացումներից և պարզորեն որոշված դատաիրավական հարցերը առարկելուց հետո հեղինակների այն պնդումը, թե իրավական պաշտպանության ներպետական միջոցների կիրառումը անողջամտորեն ձգձգվել է, անհիմն է: Նա նշում է, որ որպես պատասխանող նյութաիրավական քայլերի միջոցով դատարանում կարգավորման տեսանկյունից իր իրավական նախաձեռնություններից յուրաքանչյուրում բաց է եղել ցեղախմբի պահանջների համար:

Այս կետով ՄԻԿ-ը որոշում կայացրեց հոգուտ բողոքարկողի²²:

¶ 13.2. Կանդնտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի այն պահանջի առնչությամբ, որ հեղինակները նախքան Մարդու իրավունքների կոմիտե դիմում ներկայացնելը պետք է սպառեն իրավական պաշտպանության ներպետական միջոցները, սույն դիմումի հեղինակը մեջբերել է այն որակումը, որ այս պահանջը պետք է անտեսվի այնտեղ, «որտեղ իրավական պաշտպանության միջոցների կիրառումն անհիմն ձգձգվում է»: Կոմիտեն նշում է, որ հեղինակի պնդմամբ տվյալ պարագայում իրավական պաշտպանության միակ արդյունավետ միջոցը ժամանակավոր արգելք հայցելն էր, «քանի որ առանց ներկա իրավիճակի (status quo) պահպանման» վերջնական որոշումը գործի արժանիքների վերաբերյալ կդառնար ապարդյուն», քանզի «բնիկների իրավունքները կամ համաձայնագրով նախատեսված իրավունքները ճանաչող յուրաքանչյուր վճիռ երբևէ չէր կարող վերականգնել ցեղախմբի կենսակերպը և գոյատևման միջոցները»: Մեջբերելով իր ձևավորած նախադեպային բազան, ըստ որի՝ «ներպետական պաշտպանության միջոցների սպառումը պահանջվում է միայն այնքանով, որքանով իրավական պաշտպանության այդ միջոցները արդյունավետ են և մատչելի», կոմիտեն, ելնելով գործի հանգամանքներից, որոշեց, որ Լյուբիկոն լճի ցեղախմբին որևէ արդյունավետ իրավական պաշտպանության միջոց չի մնում:

¶ 31.1. Կոմիտեն համակողմանիորեն ուսումնասիրել է մասնակից պետության այն պահանջը, որ կոմիտեն վերանայի կանդնտիր արձանագրությամբ գործն ընդունելի համարելու վերաբերյալ իր որոշումը, «քանզի դա կարող է խնդիրներ առաջացնել դաշնագրի 27-րդ հոդվածի կամ այլ հոդվածների դրույթներով»: Այժմ իր տրամադրության տակ եղած տեղեկությունների լույսի ներքո կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը համոզիչ փաստարկներ է բերել, որ ակտիվորեն գործը ներկայացնելով համապատասխան դատարաններին՝ Լյուբիկոն լճի ցեղախումբն ի վիճակի կլիներ կրճատելու այն ուշացումները, որոնք թվում են անողջամտորեն ձգձգված: Այդուհանդերձ, հարցն այն է, թե արդյոք դատավարությունն արդյունավետ մեթոդ կլինե՞ր պահպանելու կամ վերականգնելու համար Լյուբիկոն լճի ցեղախմբի ավանդական կամ մշակութային կենսակերպը, որը տվյալ պահին ենթադրաբար կործանման եզրին էր: Կոմիտեն համոզված չէ, որ կանդնտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված իմաստով դա արդյունավետ իրավական պաշտպանության միջոց կլինե: Այս պարագայում կոմիտեն պահպանում է ընդունելիության մասին իր նախկին որոշումը:

Թեև իրավական պաշտպանության ներպետական միջոցների մասին կանոնը բավարարված է համարվում *ex post facto* իրավական պաշտպանության միջոցների ապահովմամբ [6.06], սակայն *Օմինայակի* գործով վճիռը հաստատում է, որ ողջամիտ չէր լինի ակնկալել հեղինակներից դիմել իրավական պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք կնյութականանային միայն այն բանից հետո, երբ ՔԵԻՄԴ-ով նախատեսված իրենց իրավունքներին արդեն անդառնալի վնաս պատճառված կլինե: Որոշ դեպքերում իրավական պաշտպանության *ex post facto* միջոցները, հատկապես երբ ձգձգվում են, չեն կարող ապահովել իրավունքի նշանակալի վերականգնում: Օրինակ՝ Օմինայակի գործի ընդունելիության մասին որոշումը վկայում է այն մասին, որ փոքրամասնությունների՝ 27-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտումով մշակույթի ոչնչացումը չի կարող պատշաճ կերպով հատուցվել իրավական պաշտպանության *ex post facto* միջոցներով, օրինակ՝ փոխհատուցմամբ կամ օրենսդրական բարե-

²² Պրեն Վեններգրենը չհամաձայնեց այս կետով:

փոխմամբ²³: Նման դեպքերում հեղինակը պարտավոր է դատական արգելք հայցել նախքան կամընտիր արձանագրությամբ նախատեսված իրավական պաշտպանության որևէ միջոցին դիմելը²⁴:

[6.17] Նմանապես, «Վայսն ընդդեմ Ավստրիայի» (*Weiss v Austria, 1086/02*) գործում հանցագործի հանձնման օրինականությունը վիճարկող իրավական պաշտպանության միջոցները համարվել են «ըստ սահմանման ոչ արդյունավետ» հանձնումից հետո²⁵:

[6.18] «Վակումեն ընդդեմ Ֆրանսիայի» (*Vakoume v France, 822/98*) գործում հեղինակները բողոքում էին իրենց ավանդական հողերում հյուրանոցի կառուցումից, որը խախտում էր իրենց մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքը²⁶: Հեղինակները փաստարկներ էին բերում այն պնդման օգտին, որ առկա իրավական պաշտպանության միջոցները արդյունավետ չէին, քանի որ հյուրանոցն արդեն կառուցվել էր: ՄԻԿ-ը չհամաձայնեց դրան և բողոքը, ըստ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի, համարեց անընդունելի: Վակումենի գործը կարող է տարբերվել *Օմինայակի* գործից նրանով, որ իրավական պաշտպանության միջոցներն անհիմն չեն ձգձգվել: Ավելին՝ քանի որ հյուրանոցի շինարարությունն ավարտված չէր, հեղինակները չէին կարող ավելի մեծ վնաս կրել, եթե դիմեին իրավական պաշտպանության առկա ներպետական միջոցներին:

[6.19] «Փ. Մ. Փ. Կ-ն ընդդեմ Շվեդիայի» (*P.M.P.K. v SWEDEN, CAT 30/95*)

Հեղինակը բողոք էր ներկայացրել առ այն, որ իրեն առաջարկված վտարումը Շվեդիայից Ջաիր խախտում է իր իրավունքները ԽԴԿ-ի 3-րդ հոդվածով²⁷, քանզի նման վտարումը իրեն դնում էր Ջաիրում խոշտանգումների ենթարկվելու իրական վտանգի տակ: Հեղինակի՝ ապաստան ստանալու առաջին երկու դիմումները, ևս մեկ նոր դիմում, մերժվել էին: Մասնակից պետությունը պնդում էր, որ նա կարող էր ապաստանի ևս մեկ դիմում ներկայացնել՝ տրամադրելով նոր տեղեկություններ իր առողջական վիճակի վերաբերյալ: Հեղինակը պնդում էր, որ այդ միջոցին դիմելն ապարդյուն կլիներ:

¶ 5. 1995 թ. նոյեմբերի 10-ի իր հայտարարությամբ հեղինակի փաստաբանը նշում է, որ օտարերկրացիների մասին օրենքի 2-րդ գլխի 5-րդ բաժնի դրույթներով ներկայացված նոր դիմումի պատասխանը բացասական է լինելու: Այս կապակցությամբ նա նշում է, որ դիմումը պետք է հիմնված լինի նախկինում չուսումնասիրված նոր հանգամանքների վրա, ընդ որում՝ նոր դիմումների միայն 5%-ն է ստանում դրական պատասխան: Քանի որ հեղինակի [առաջին նոր բողոքը] մերժվել է այն հիմնավորմամբ, որ իրավիճակը Ջաիրում բարելավվել է, նա պնդում է, որ նոր բժշկական տվյալների վրա հիմնված նոր դիմումը կմերժվի նույն հիմնավորմամբ:

Այդուհանդերձ, ԽԴ կոմիտեն չի կարող «եզրակացնել, որ նոր դիմումով մատչելի իրավական պաշտպանության միջոցն ի սկզբանե արդյունավետ չէ»²⁸: Փ.Մ.Փ.Կ. գործով կայացված որոշումը ցույց է տա-

²³ Ջարմանալի է, բայց վերջին հաշվով ՄԻԿ-ը որոշեց, որ ցեղախմբից վերցված հողերի դիմաց դրամական փոխհատուցումը իրավունքի վերականգնման պատշաճ միջոց է: Տես [24.29]:

ՄԻԿ-ը կարող է մասնակից պետություններից պահանջել իր ընթացակարգի 86-րդ կանոնի համաձայն ձեռնարկել ժամանակավոր միջոցներ հեղինակների իրավունքի անդառնալի վնասը կանխելու համար, մինչ գործը գտնվում է ՄԻԿ-ի վարույթում: Նման միջոցներ պահանջվել են նաև *Օմինայակի* գործով, ինչպես նաև Կարիբյան ավազանի երկրների մի շարք գործերում, որոնց դեպքում ՄԻԿ-ը պահանջում էր, որ մահապատժի դատապարտված հեղինակների մահապատիժն ի կատար չածվի, քանի դեռ ՄԻԿ-ն ուսումնասիրում է նրանց բողոքները դատավարությունների արդարացիության մասին: Դժբախտաբար, մասնակից պետությունները կարող են բացառիկ հանգամանքներում խախտել այս ժամանակավոր հրահանգները, ինչպես պատահեց «Էշլին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Ashley v Trinidad and Tobago, 580/94*) գործում (երբ հեղինակի մահապատիժն ի կատար ածվեց 86-րդ կանոնով ներկայացված պահանջին հակառակ): Տես նաև [1.53]:

²⁴ «Ե. Դ. Փ-ն ընդդեմ Կանադայի» (*E.H.P. v Canada, 67/80*) գործում հեղինակը պնդում էր, որ մոտակայքում ռադիոակտիվ քափոնի առկայությունը վտանգի տակ է դնում իր կյանքի իրավունքը (տես [3.28] և [8.46]): Նա նաև պնդում էր, որ իրավական պաշտպանության միջոցների սպառումը երկար ժամանակ կպահանջի, և այդ ժամանակամիջոցում անդառնալի վնաս կպատճառվի: ՄԻԿ-ը նաև որոշեց, որ գործը կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով անընդունելի է: Չվարտը ենթադրում է, որ «ամեն ինչ կարող էր այլ կերպ ձևավորվել, եթե հեղինակը դատական արգելք հայցեր, ոչ թե լիովին անտեսեր իրավական պաշտպանության տեղական միջոցները»: T. Zwart, *The Admissibility of Human Rights Petitions* (Martinus Nijhoff Publishers, Dordrecht/Boston/London, 1994). 197:

²⁵ Պարբ. 8.2:

²⁶ Տես ևս մեկ մեկնաբանություն նմանօրինակ գործով՝ «Հոպու և Բեսսերն ընդդեմ Ֆրանսիայի» (*Hopu and Bessert v France, 549/93*), այստեղ՝ [16.06], [20.11] և [24.38]:

²⁷ Տես ԽԴԿ-ի 3-րդ հոդվածի քննարկումը այստեղ՝ [9.671]:

²⁸ Պարբ. 7:

լիս, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով պայմանագրային մարմիններն այնքան էլ հեշտությամբ չեն ենթադրում, որ իրավական պաշտպանության միջոցներն ապարդյուն են:

[6.20] Հետևյալ գործերում անդրադարձ է կատարվում իրավական միջոցի հնարավոր արդյունավետությունը որոշելիս նախադեպերի ուսումնասիրման սկզբունքին:

«ԼԱՆՍՄԱՆԸ և այլք ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ»
(*LÄNSMAN et al v FINLAND, 511/92*)

¶ 6.1. ... Յուրաքանչյուր դեպքում, երբ ներպետական գերագույն դատարանի նախադեպային բազայում գոյություն ունի կայացված վճիռ, որը բացառում է բողոքարկման հաջողության հեռանկարը ներպետական դատարաններում, հեղինակները պարտավոր չեն կամընտիր արձանագրության սահմանված կարգով սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

«ՓՐԱԹԸ և ՄՈՐԳԱՆՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ»
(*PRATT and MORGAN v JAMAICA, 210/86, 225/87*)

Այս դեպքում հեղինակները ճամայկայում մահապատժի դատապարտված բանտարկյալներ էին: Ի թիվս այլ հանգամանքների նրանք պնդում էին, որ իրենց մահապատժի ի կատար ածումը երկարատև կալանքից հետո կխախտի ՔՔԻՄԴ-ի դրույթները: Այս առնչությամբ մասնակից պետությունը հայտնեց, որ հեղինակները դեռևս կարող են դիմել ճամայկայի գերագույն դատարան՝ պարզելու, թե արդյոք իրենց մահապատժի ի կատար ածումը կխախտի՞ ճամայկայի օրենսդրությունը: Հեղինակներն այս միջոցից չօգտվելու իրենց որոշումը հիմնավորում էին հետևյալ կերպ.

¶ 7.1. 1987 թ. հոկտեմբերի 29-ի իրենց մեկնաբանություններում հեղինակները նշում են, որ իրենք իրականում սպառել են իրավական պաշտպանության բոլոր առկա միջոցները: Նրանք հղում են կատարում Գաղտնի խորհրդի դատական կոմիտեի որոշմանը «*Նոյել Ռայլին և այլք ընդդեմ գլխավոր դատախազի*» (*Noel Riley et al v the Attorney-General, 1981*) գործով, որում ծայրերի մեծամասնությամբ (3/2) որոշում էր կայացվել առ այն, որ օրենքով մահապատժի ի կատար ածման ուշացման պատճառներից կամ տևողությունից անկախ, մահ ուշացումը չի կարող որպես հիմնավորում ծառայել մահապատժի ի կատար ածումը ճամայկայի սահմանադրության 17-րդ բաժնին հակասող համարելու համար: Հետևաբար, հիմքեր չկան սահմանադրական միջնորդության ձևով ճամայկայի գերագույն դատարան հայցադիմում ներկայացնելու համար: Որևէ մահ միջնորդություն անխուսափելիորեն կծախողվի, և դրանով կայացված որոշումը կլինի հայցվորի դեմ, ուստի սա հայցվորներին մատչելի իրավական պաշտպանության ներպետական միջոց չէ: 1986 թ. հուլիսի 17-ին Գաղտնի խորհրդի դատական կոմիտեն մերժեց հայցվորների միջնորդությունը բողոքարկելու հատուկ թույլտվություն ստանալու մասին:

Մասնակից պետությունը պատասխանեց.

¶ 11.2. Մասնակից պետությունը մերժում է այն փաստարկը, որ «գերագույն դատարանին ուղղված դիմումը ճամայկայի սահմանադրության 17-րդ բաժնի վերաբերյալ պետք է անխուսափելիորեն մերժվի՝ ելնելով Գաղտնի խորհրդի *Ռայլի* գործով կայացրած որոշումից»: Մասնակից պետության պնդմամբ՝ թեև ճիշտ է, որ նախադեպերին հղում կատարելու սկզբունքն ընդհանուր առմամբ կիրառելի է, սակայն ճիշտ է նաև, որ այդ սկզբունքը կարելի է մի կողմ դնել այն հիմնավորմամբ, որ նախորդ որոշումը կայացվել է per incuriam (անփութությամբ): Ուստի, հեղինակները կարող էին պնդել, որ «*Նոյել Ռայլին և այլք ընդդեմ գլխավոր դատախազի*» գործով որոշումը կայացվել է անփութությամբ, հատկապես հաշվի առնելով այն, որ լորդ Սկարմանը և լորդ Բրայթմանն արտահայտել են հակասական կարծիքներ: Այդ իսկ պատճառով մասնակից պետությունը պնդում է, որ հիմքեր չկան անտեսելու իր պնդումն առ այն, որ դիմումներն անընդունելի են 7-րդ հոդվածի մատով:

ՄԻԿ-ն այս կետով որոշում կայացրեց հեղինակների օգտին.

¶ 12.5. Գաղտնի խորհրդի վճռի մանրամասն ուսումնասիրությունը *Ռայլի* գործով թույլ չի տալիս եզրակացնել, որ տվյալ վճիռը կայացվել է per incuriam: ...Այսպիսի հանգամանքներում հեղինակների փաստաբանը օբյեկտիվորեն իրավասու էր ընդունելու այն դիրքորոշումը, որ նախադեպերի մեջբերման սկզբունքից ելնելով՝ պրն Փրաթի և պրն

Մորզանի գործերով սահմանադրական միջնորդությունն անպայման կծախողվեր և այդպիսով սպառնալից ենթակա արդյունավետ իրավական պաշտպանության միջոց չէ²⁹:

**«ՍՈՆՆ ընդդեմ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(SOHN v REPUBLIC OF KOREA, 518/92)**

Բողոքը վերաբերում էր աշխատանքային վեճերում երրորդ անձի միջամտությունը արգելող տեղական մի օրենքի համապատասխանությանը ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածին, որը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը³⁰: Մասնակից պետությունը պնդում էր, որ հեղինակը չի սպառնում ներպետական պաշտպանության միջոցները:

¶ 4.2. Ինչ վերաբերում է հեղինակի այն փաստարկին, որ ինքը սպառնել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանզի սահմանադրական դատարանն արդեն հայտարարել է, որ «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետը համապատասխանում է սահմանադրությանը, ապա մասնակից պետությունը պնդում է, որ սահմանադրական դատարանի նախորդ որոշման ուսումնասիրման առարկա էր միայն տվյալ դրույթի համապատասխանությունը սահմանադրությանը պաշտպանված աշխատանքի իրավունքին, հավասարության իրավունքին, ինչպես նաև օրինականության սկզբունքին: Այն չէր անդրադառնում այն հարցին, թե արդյոք այս հոդվածը համատեղելի³¹ է արտահայտվելու իրավունքի հետ:

¶ 4.3. Ուստի մասնակից պետությունը նշում է, որ հեղինակը պետք է օրենքի վերանայում պահանջեր սահմանադրությանը պաշտպանված արտահայտվելու ազատության լույսի ներքո: Քանի որ նա դա չի կատարել, մասնակից պետությունը պնդում է, որ նա չի սպառնում իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

Հեղինակը պատասխանեց հետևյալ կերպ.

¶ 5.1. Մասնակից պետության հայտարարության վերաբերյալ իր մեկնաբանություններում հեղինակը պնդում է, որ սպառնել է իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և իզուր կլիներ սահմանադրական դատարանից կարծիք պահանջել օրենսդրությանը «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի համապատասխանության վերաբերյալ, քանի որ նա դա արդեն իսկ արել է բոլորովին վերջերս:

¶ 5.2. Հեղինակը հայտարարում է, որ եթե իրավաբանական դրույթի օրենսդրականության հարցը դրվում է սահմանադրական դատարանի առջև, վերջինս օրենքով պարտավորված է հաշվի առնել բոլոր հնարավոր հիմքերը, որոնք կարող են առ ոչինչ դարձնել օրենքը: Հեղինակը պնդում է, որ փաստորեն անհիմաստ կլիներ նույն հարցը կրկին առաջադրել դատարանին:

¶ 5.3. Այս համատեքստում հեղինակը նշում է, որ թեև սահմանադրական դատարանի 1990 թ. հունվարի 15-ին կայացրած վճռի մեծամասնական կարծիքը չէր վերաբերում արտահայտվելու ազատությանը, սակայն երկու կողմ և մեկ դեմ ձայն անդրադառնում են դրան: Ուստի նա պնդում է, որ դատարանը փաստորեն ուսումնասիրել է «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի՝ սահմանադրության հնարավոր անհամապատասխանության բոլոր հիմքերը, այդ թվում նաև՝ արտահայտվելու ազատության սահմանադրական իրավունքի հնարավոր խախտումը:

Այս կետով ՄԻԿ-ը որոշում կայացրեց հոգուտ հեղինակի.

¶ 6.1. Կոմիտեն իր 50-րդ նստաշրջանում ուսումնասիրեց դիմումի ընդունելիությունը: Սահմանադրական պաշտպանության միջոցների առնչությամբ մասնակից պետության և հեղինակի ներկայացրած հայտարարություններն ուսումնասիրելուց հետո կոմիտեն որոշեց, որ «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի՝ սահմանադրությանը, ներառյալ՝ սահմանադրությանը պաշտպանված արտահայտվելու իրավունքին համապատասխանության հարցը սահմանադրական դատարանի առջև դրվել է 1990 թ. հունվարին, թե-

²⁹ Ճամայկայի իրավական համակարգում Գաղտնի խորհրդի դատական կոմիտեն ավելի բարձր ատյան է, քան ճամայկայի գերագույն դատարանը: Հեղինակներ Փրաթը և Մորզանը վերջին հաշվով դիմեցին Գաղտնի խորհրդին *Pratt and Another v Jamaica* [1993] 3 WLR 995 գործի շրջանակներում: Տարօրինակ է, բայց Գաղտնի խորհուրդը այս դեպքում որոշում կայացրեց՝ անտեսելով *Ռայլի* (Riley) գործով ստեղծված նախադեպը: Մահվան դատապարտվածների չափազանց երկար կալանավորումը և այդ երևույթի նյութաիրավական համապատասխանությունը ՔՔԻՄԴ-ին քննարկվում է այստեղ՝ [9.53]:

³⁰ Գործի արժանիքների մանրամասները տես այստեղ՝ [18.38]:

պետ մեծամասնական վճռով որոշում է կայացվել չմեջբերել արտահայտվելու ազատության իրավունքը: Նման պարագայում կոմիտեն համարում է, որ հետագայում արտահայտվելու ազատության իրավունքի մեջբերմամբ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետը վերանայելու մասին սահմանադրական դատարանին ուղղված պահանջը կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետով հեղինակի կողմից դեռևս սպառման ենթակա իրավական պաշտպանության միջոց չէր լինի:

Այս դեպքերը հաստատում են, որ հեղինակներից չի պահանջվում բողոքարկել օրենքի դրույթները վերին ատյանի դատարանի հակառակ որոշման նախադեպի առկայության պայմաններում³¹: Նմանապես, չի պահանջվում վիճարկել մի գործողություն, որը պարզորեն թույլատրված է ներպետական օրենսդրությամբ³², մանավանդ եթե նման թույլտվություն բովանդակում է երկրի սահմանադրությունը³³:

[6.21] «**ԲԱՐԲԱՐՈՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ**» (BARBARO v AUSTRALIA, CERD 7/95)

Յեղիմակը պնդում է, որ, հակառակ ՌԽՎՄԿ-ի դրույթների, տուժել է ռասայական խտրականությունից, քանի որ մշտական աշխատանքային լիցենզիայի իր հայտը մերժվել է Յարավային Ավստրալիայի ոգելից խմիչքների լիցենզավորման հանձնակատարի (ՈԽԼՅ) կողմից: Յեղիմակը պնդում էր, որ ՈԽԼՅ-ի որոշումը պայմանավորված է ռասայական խտրականությամբ: Յեղիմակը ՈԽԼՅ-ի որոշումը վերանայելու պահանջով դատարան չի դիմել, սակայն դիմել է վարչական պաշտպանության համապատասխան միջոցներին, բայց ապարդյուն: ՄԻԿ-ը որոշեց, որ հեղիմակը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

¶ 10.3. Մասնակից պետությունը նույնպես պնդել է, որ հեղիմակը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, որոնք մատչելի և արդյունավետ էին, քանի որ նա կարող էր վիճարկել ՈԽԼՅ-ի որոշումը Յարավային Ավստրալիայի գերագույն դատարանում: Յեղիմակը պատասխանեց, որ *Ավստրալիայի* գործով վճիռն ապարդյուն էր դարձնում Յարավային Ավստրալիայի գերագույն դատարան վերաքննիչ բողոք ներկայացնելու փորձը:

¶ 10.5. Կոմիտեն նաև չի համարում, որ Յարավային Ավստրալիայի գերագույն դատարանի վճիռը *Ավստրալիայի* գործով կարող էր անպայման կիրառելի լինել հեղիմակի գործով: Նախ՝ *Ավստրալիայի* գործով վճիռը կայացվել է ծայրերի մեծամասնությամբ, ոչ թե միաձայն: Երկրորդ՝ վճիռը կայացվել է այնպիսի իրավական հարցերի շուրջ, որոնք, մասնակից պետության բնորոշմամբ, հիմնականում ուսումնասիրված չէին: Տվյալ հանգամանքներում մի վճիռ գոյությունը, թեպետև հեղիմակի գործին նմանվող հարցերի առկայությամբ, չի ազատել պրն Բարբարոյին գերագույն դատարանի կանոնադրության թիվ 98.01 դրույթով նախատեսված իրավական պաշտպանության մեթոդին դիմելուց:

Բարբարոյի գործով որոշումը ցույց է տալիս, որ հեղիմակները պարտավոր են բողոքարկել իրավական հարցերը, երբ դրա վերաբերյալ առկա հակառակ նախադեպը թույլ է և, հետևաբար, կարող է հարցականի տակ առնվել³⁴:

[6.22] «**ԲԱՐԲԱՐՈՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ**» (BARBARO v AUSTRALIA, CERD 12/98)

Իր նախորդ դիմումով ՌԽՎԿ-ի հանձնաժողովի կայացրած որոշումից հետո [6.21] հեղիմակը շարունակեց իրավական պաշտպանության միջոցների դիմել Ավստրալիայում: ՈԽԼՅ-ի որոշման վերանայումը Յարավային Ավստրալիայի դատարաններում հայցելու փոխարեն՝ նա դիմեց ռասայական խտրականության իրավական պաշտպանության դաշնային միջոցներին՝ Մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների հանձնաժողով (ՄԻՀՀՀ) և դաշնային դատարան: Իրավական պաշտպանության այս միջոցներով ծախսողվելուց հետո նա կրկին դիմում ներկայացրեց կոմիտեին:

³¹ *Faurisson v France* (550/93) գործի 6.1 կետով հեղիմակը չպետք է բողոքարկեր իր գործը Ֆրանսիայի վերաքննիչ դատարանում (վճռաբեկ դատարան), քանի որ նույն գործով այլ մեղադրյալի վերաքննիչ բողոքն արդեն մերժվել էր: Տե՛ս նաև *Johannes Vos v Netherlands* (786/97), կետ 6.2, *Maille v France* (689/96), կետ 6.2, և *Kazantzis v Cyprus* (972/01), կետ 6.3:

³² Տե՛ս *A v Australia* (560/93), կետ 5.6:

³³ Տե՛ս *Barzhig v France* (327/88), կետ 5.1:

³⁴ *Ավստրալիայի* գործով վճիռը կարող էր բողոքարկվել Յարավային Ավստրալիայի գերագույն դատարանի լիակազմ դատարանում և այնուհետև, գուցե, Ավստրալիայի վերին դատարանում:

¶ 12.1. 1998 թ. նոյեմբերի 28-ի իր գրությամբ հեղինակը հայտնում է կոմիտեին, որ 1997 թ. օգոստոսին կոմիտեի կայացրած որոշումներից հետո դիմել է դաշնային դատարան՝ բողոքարկելով ՄԻՅՅԴ-ի նախագահի 1995 թ. մարտի 21-ին կայացրած որոշումը: Նա նշում է, որ դաշնային դատարան դիմելը միակ մատչելի մեխանիզմն էր: Գերագույն դատարան դիմելն անհնար էր երկու պատճառով. *Ալվարոյի* գործով հաստատված նախադեպը և ռասայական խտրականության բողոքներ լսելու հարցում դատարանի իրավասության պակասը:

¶ 12.2. Դաշնային դատարանի դատավոր Ջաստիս Օլոգլին բողոքը լսեց 1998 թ. մայիսի 14-ին և իր որոշումն ընդունեց 1998 թ. մայիսի 29-ին: Դատավոր Ջաստիս Օլոգլին որոշեց, որ թերևս կարող էր ներել բողոքի ներկայացման ուշացումը, սակայն հօգուտ բողոքողի որոշում կայացնելու ողջամիտ հեռանկարներ չկան, քանի որ, ի թիվս այլ պատճառների, ռասայական խտրականության փաստը չէր կարող ապացուցվել իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերով: 1998 թ. հունիսի 19-ին լիակազմ դաշնային դատարանն ուսումնասիրեց այս որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը և հաստատեց նախորդ որոշումը:

¶ 12.3. Հեղինակը հայտնում է, որ իր հաջորդ իրավական քայլը լինելու էր լիակազմ դատարանի որոշումը բողոքարկելը: Նախքան այդ քայլին դիմելը, նա դեռ պետք է ստանար վերին ատյանի դատարան վերաքննիչ բողոք ներկայացնելու հատուկ թույլտվությունը: Սակայն որպեսզի գործը լսվի վերին դատարանում, պետք է անցնի խիստ ուսումնասիրություն: Օրինակ՝ պետք է հաստատվի, որ տեղի է ունեցել իրավաբանական սխալ: Հատուկ թույլտվություն չի տրվում փաստերի սխալմունքի գործերի համար, որոնց շարքն էլ ակնհայտորեն դասվում է տվյալ գործը: Քանի որ դաշնային դատարանի չորս դատավոր եկել էին նույն եզրակացության, ապարդյուն կլիներ դիմել հետագա քայլերի: Կոմիտեին ներկայացրած իր հայտարարության մեջ մասնակից պետությունն ինքն է ընդունում, որ ոչ ոք պարտավոր չէ սպառել իրավական պաշտպանության այն տեղական միջոցները, որոնք ապարդյուն են կամ օբյեկտիվորեն դրական արդյունքի հեռանկար չունեն:

¶ 14.1. Լիակազմ դաշնային դատարանի որոշումը բողոքարկելու հատուկ թույլտվության ամենաբարձր հեղինակը մեքսերում է մի որոշում (*Morris v R*, 1987), որը, իր կարծիքով, հիմնավորում է իր այն պնդումը, որ դատարանը դժկամություն է ցուցաբերում հատուկ թույլտվություն շնորհելու հարցում իր գործին նմանվող գործերում: Օրինակ՝ դատարանը հայտարարել է. «Քանի որ մեկ տարում դատարանի կողմից ուսումնասիրվող գործերի թիվը սահմանափակ է, անխուսափելիորեն պետք է կատարվի մանրակրկիտ ընտրություն՝ օրենքը մշակելու և պարզաբանելու, ինչպես նաև դատարանի՝ ստորին ատյանների դատարաններում ընթացակարգային օրինաչափությունը պահպանելու պարտավորության նկատառումով: Դատարանը պարտավոր է ավելի շեշտադրել օրենքի զարգացման հարցում իր հասարակական դերը, քան իրեն դիմող դատավիճողների մասնավոր շահերը»: Ավելին՝ *Ալվարոյի* գործով վերին դատարանը մերժեց դիմումատուի բողոքարկման հատուկ թույլտվությունը: Ըստ հեղինակի՝ մասնակից պետության հայտարարությունը վերին դատարանի մատչելիության, արդյունավետության և դրական արդյունքների հեռանկարների մասին անհիմն է այս նախադեպի լույսի ներքո: Հեղինակը նաև նշում է, որ նախկին լսումների ժամանակ Հարավային Ավստրալիայի վերին դատարանը պահանջել է, որ իր գործը փակվի պարզեցված ընթացակարգով այն հիմնավորմամբ, որ ինքն ի վիճակի չի եղել ծախսերի երաշխիք տրամադրելու: Քանի որ ցանկացած հետագա դատական գործողությունը միայն կմեծացնի ծախսերը, անկասկած է, որ Հարավային Ավստրալիայի նահանգը կրկին կօգտվի նույն ռազմավարությունից:

Ռասայական խտրականության վերացման կոմիտեն դարձյալ որոշեց, որ պրն Բարբարոյի պահանջն անընդունելի է և հակիրճ արտահայտվեց այս հարցով:

¶ 15.2. Կոմիտեն նշում է, որ հեղինակը դիմել է դաշնային դատարան, ոչ թե վերին դատարան: Կոմիտեն իր տրամադրության տակ եղած բոլոր տեղեկությունների հիման վրա համարում է, որ անկախ հեղինակի՝ նման բողոքարկման արդյունավետության վերաբերյալ վերապահումներից՝ նա պարտավոր էր դիմել առկա բոլոր միջոցներին:

Բարբարոյի գործով որոշումները վկայում են, որ ՌԽՎ կոմիտեն և թերևս ՄԱԿ-ի բոլոր պայմանագրային մարմինները պատրաստակամ չեն հայցադիմում ընդունել, եթե սպառված չեն դատական պաշտպանության բոլոր միջոցները՝ անկախ դրանց հետևող առանձին բողոքարկումներից: Նման պահանջն անկասկած ծանր կլիներ հնարավոր հեղինակների համար, եթե նկատի առնվեին հետագա բողոքարկումներ ներկայացնելու դժվարությունները և դրանց հետ կապված ծախսերը:

[6.23] 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի պահանջների ծանր բնույթը վերստին բացահայտվել է հետևյալ գործի շրջանակներում:

«ԴԻՔՍԻԹՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (DIXIT v AUSTRALIA, 978/01)

Բողոքը վերաբերում էր մասնակից պետության, մասնավորապես՝ Ներգաղթի և բազմամշակութային գործերի վարչության (ՆԲԳՎ) կողմից հեղինակին և իր ընտանիքին մուտքի արտոնագիրը մերժելուն: Մասնակից պետությունը պնդում էր, որ գործն անընդունելի է մի շարք հիմունքներով, այդ թվում՝ հեղինակը չի սպառել իրավական պաշտպանության տեղական միջոցները և ՆԲԳՎ-ի որոշումը վերանայելու պահանջով չի դիմել դատարան: Հեղինակը պատասխանեց.

¶ 5.3. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու պնդմանն ի պատասխան հեղինակը պատասխանում է, որ մասնակից պետության մեջբերված միջոցները հեռու են, ծախսատար, ոչ արդյունավետ և ամենայն հավանականությամբ կծախողվեն: Հեղինակը նաև կոմիտեի ուշադրությունը հրավիրում է այն գործողությունների վրա, որոնք ինքը նախաձեռնել է մուտքի արտոնագրի իր հայտի կապակցությամբ նախքան սույն դիմումը ներկայացնելը՝ գրելով մեծ թվով նամակներ, պահանջելով տեղեկություններ և հայցելով տարբեր մարմինների աջակցությունը, բողոքելով Մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների համաձայնագրի (ՄԻՀՀԳ), մարդու իրավունքների պաշտպանին և բժշկական խորհրդին: Ավելին՝ չնայած Ներգաղթի և բազմամշակութային գործերի վարչության, ինչպես նաև նախարարի հետ իր ունեցած ծավալուն մամուլագրությանը, իրեն երբեք հայտնի չի դարձել մասնակից պետության կողմից մեջբերված իրավական պաշտպանության միջոցների գոյության մասին: Հեղինակը նաև հայտնում է, որ երբ տարի է պահանջվել հավաքելու համար այն բոլոր տարրերը, որոնք անհրաժեշտ են՝ հասկանալու, թե ինչու է իր մուտքի արտոնագրի հայտը մերժվել, իսկ երբ կապվել է Ավստրալիայում փաստաբանների հետ, նրանք ի վիճակի չէին օգնելու իրեն, քանի որ նման տեղեկությունները հասանելի չէին: Հեղինակը խնդրել է «Գոլդսմիթ լոյերգ» (Goldsmith Lawyers) փաստաբանական ընկերությանը ՆԲԳՎ-ից պահանջել իր գործի պատճենը, սակայն դա ստանալուն պես հասկացել է, որ դրանում առկա տեղեկությունները բավարար չեն առողջության գնահատման որոշ տարրերը սահմանելու համար, ինչն էլ մուտքի արտոնագրի իր հայտի մերժման պատճառ է դարձել: Ուստի նա դիմեց սենատորի օգնությանը՝ փաստերը պարզաբանելու համար, և միայն 1999 թ. կարողացավ քայլեր նախաձեռնել՝ այսպիսով դուրս մնալով դաշնային դատարան դիմելու համար սահմանված ժամկետներից: Հեղինակը համարում է, որ համապատասխան տեղեկություններ ստանալու համար այս պահանջը չի կարող իրեն վերագրվել: Այսպիսով, հեղինակը պնդում է, որ պարտավոր չէր դիմելու իրավական պաշտպանության ներպետական միջոցներին, քանի որ դրանք հաջողության ողջամիտ հեռանկար չէին խոստանում: Հաշվի առնելով մուտքի արտոնագիր ստանալու իր հայտի վերաբերյալ կայացրած որոշման բնույթը, այն հանգամանքը, որ ինքը բնակվում էր Միացյալ Նահանգներում, որ չէր ստացել բացասական որոշման հիմնավորում, որ Ավստրալիայում իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք չի ունեցել, իր համար գրեթե անհնար կլինեին դիմել դատական մարմիններին Ավստրալիայում, ասել է թե՛ դաշնային կամ վերին դատարաններ: Հեղինակը նաև նշում է, որ դատական վերանայումը նախատեսված չէ որոշելու, թե արդյոք եղել է մարդու իրավունքների խախտում, տեղի՞ է ունեցել իրավաբանական սխալ, և չի ներառում գործի նյութաիրավական մասը, որն էլ հենց մտահոգում է իրեն: Այսպիսով, իրավական պաշտպանության այդ միջոցները հեղինակին չէին տրամադրի նյութաիրավական հարցերի որևէ կարգավորում: Եվ վերջապես, հեղինակը պնդում է, որ չկա նախադեպ, որ երկրում ֆիզիկապես չգտնվող ոչ քաղաքացին դիմի վերին դատարան առողջության հիմունքներով մուտքի արտոնագրի մերժման համար, և վերին դատարանը, հանդես գալով որպես վերջին ատյանի դատարան, հորդորի վիճող կողմերին պահանջ ներկայացնել այդ փուլում: Ուստի հեղինակն այն կարծիքին է, որ ինքը սպառել է իրավական պաշտպանության բոլոր ներպետական ողջամիտ միջոցները:

Մասնակից պետությունը պատասխանեց.

¶ 6.3. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման առնչությամբ մասնակից պետությունը պնդում է, որ նախկինում իր մեջբերած միջոցները ծախսատար չեն, քանի որ նման դիմումների դեպքում գանձվող տուրքը կարող էր ներվել, հեղինակի ներկայությունը դաշնային դատարանի կամ վերին դատարանի առջև պարտադիր չէր լինի, վերին դատարանը թույլ կտար դիմում ներկայացնել սահմանված սովորական ժամկետներից դուրս, եթե դա բխեր արդարադատության շահերից, ՆԲԳՎ-ի նման տարածքային վարչության համար պատշաճ չէր լինի հայտնել անհատներին դատական վերանայման հնարավորությունների մասին, այս երկու միջոցների շրջանակներում մուտքի արտոնագրի հայտը մերժելու մասին որոշումը կարող էր փոխարինվել և ներկայացվել փոփոխման, և, վերջապես, 100-ից ավելի ներգաղթին առնչվող գործ ներկայացվել է վերին դատարան, այդ թվում նաև՝ ոչ քաղաքացիների կողմից:

ՄԻԿ-ը որոշում ընդունեց մասնակից պետության օգտին.

¶ 8.3. Կոմիտեն նշում է, որ հեղինակն ընդունում է, որ սկզբունքորեն իր դատեր համար մասնակից պետության դաշնային դատարանում հասանելի իրավական պաշտպանության միջոց գոյություն ունեն: Թեև պաշտոնապես սահմանված ժամկետներն այժմ արդեն լրացել են, սակայն կոմիտեն համարում է, որ հեղինակը որևէ ջանք չի գործադրել՝ դիմելու մասնակից պետության դատական պաշտպանության միջոցներին: Ավելին՝ ներկա պահի դրությամբ

կոմիտեն նշում է, որ հեղինակը ցույց չի տվել, որ սահմանված ժամկետներից դուրս բողոքարկելու դիմումն իրեն մատչելի չէր լինի, և նաև նշում է, որ մուտքի արտոնագրի ստանալու հետագա հայտը ստացավ դրական պատասխան: Համապատասխանաբար, դիմումը համարվում է անընդունելի 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի դրույթներով:

[6.24] «Ֆիլիպսը ընդդեմ ճամայկայի» (Phillip v Jamaica, 594/92) գործում հեղինակը պարտավոր չէր կալանավայրի ղեկավարությանը հայտնել կալանքի վատ պայմանների մասին, «քանի որ նա բողոք չի ներկայացրել՝ վախենալով բանտապահներից»³⁵: Ուստի ոչ ոք պարտավոր չէ դիմել իրավական պաշտպանության այնպիսի միջոցների, որոնցից կարող է տուժել:

Արդյոք հեղինակները պե՞տք է սպառեն իրավական պաշտպանության ծախսատար միջոցները

[6.25] «Պ.Ս.-ն ընդդեմ ԴԱՆԻԱՅԻ» (P.S. v DENMARK, 397/90)

¶ 5.4. ...Կոմիտեն հիշեցնում է մասնակից պետության այն պնդումը, որ Դանիայի սահմանադրական ակտի 63-րդ բաժնի համաձայն՝ վարչական կանոնակարգերի և որոշումների դատական վերանայումը համարվում է հեղինակին մատչելի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: Կոմիտեն նշում է, որ հեղինակը հրաժարվել է այդ միջոցներից օգտվելուց սկզբունքային նկատառումներից ելնելով և հաշվի առնելով ծախսերը: Այդուհանդերձ, կոմիտեն կարծում է, որ ֆինանսական նկատառումները և իրավական պաշտպանության ներպետական միջոցների վերաբերյալ կասկածները չեն ազատում հեղինակին դրանք սպառելու պարտականությունից: Հետևաբար, հեղինակը չի կատարել 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի պահանջներն այս առնչությամբ:

[6.26] «Հենրիսը ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (HENRY v JAMAICA, 230/87)

Այս գործով մասնակից պետությունը պնդում էր, որ հեղինակն իր դատավարության արդարացիության առնչությամբ կարող էր դիմել իրավական պաշտպանության սահմանադրական միջոցներին ճամայկայի սահմանադրական դատարանում: Հեղինակը պնդում էր, որ չէր կարող սպառել իրավական պաշտպանության այս միջոցը՝ ելնելով դրամական միջոցների սակավությունից, ինչպես նաև սահմանադրական միջնորդություններ ներկայացնելու հարցում իրավախորհրդատվության պակասից: Մասնակից պետությունը պատասխանեց.

¶ 6.4. Մասնակից պետությունը սահմանադրական միջնորդություններ ներկայացնելու հարցում իրավախորհրդատվության պակասի առնչությամբ հայտարարում է, որ կամընտիր արձանագրության կամ միջազգային սովորույթական իրավունքի ոչ մի դրույթ չի խոսում այն իրողության օգտին, որ ամեն ազատվում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու պարտականությունից այն հիմնավորմամբ, որ չկա իրավախորհրդատվության տրամադրում, և հեղինակի չունենությունը թույլ չի տվել նրան դիմելու իրավական պաշտպանության առկա միջոցներին: Այս կապակցությամբ մասնակից պետությունը նշում է, որ դաշնագիրը պարտադրում է տրամադրել իրավաբանական աջակցություն միայն քրեական գործերի շրջանակներում (14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետ): Ավելին՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին առնչվող դաշնագրերը պետությունների վրա նման իրավունքներն իրականացնելու չորակված պարտավորություն չեն դնում: Օրինակ՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածը նախատեսում է տնտեսական իրավունքների աստիճանական իրականացում և վերաբերում է պետությունների իրականացման հնարավորություններին: Այս պարագայում մասնակից պետությունը պնդում է, որ սխալ կլիներ, ելնելով հեղինակի չունենությունից և իրավունքի սահմանադրական վերականգնման դիմելու համար անհրաժեշտ իրավաբանական աջակցության բացակայությունից, եզրակացնել, որ իրավական պաշտպանության այդ միջոցը գոյություն չունի կամ մատչելի չէ:

Այս կետով ՄԻԿ-ը որոշում կայացրեց հոգուտ հեղինակի.

³⁵ Պարբ. 6.4:

¶ 7.3. Կոմիտեն հիշեցնում է, որ 1991 թ. հոկտեմբերի 10-ին մեկ այլ գործով կատարված հայտարարության մեջ մասնակից պետությունը նշել էր, որ սահմանադրական միջնորդությունների համար իրավաբանական աջակցություն չի տրամադրվում: Կոմիտեի կարծիքով՝ այս իրողությունը հաստատում է այն եզրակացությունը, որ իրավական պաշտպանության սահմանադրական միջնորդության միջոցը պետք է սպառվի կամընտիր արձանագրության շրջանակներում: Այս համատեքստում կոմիտեն նշում է, որ տվյալ դեպքում հեղինակի չունևոր լինելը չէ, որ ազատում է նրան իրավական պաշտպանության սահմանադրական միջոցներին դիմելու պարտավորությունից, այլ մասնակից պետության դժկամությունը կամ անկարողությունը՝ այս նպատակով իրավաբանական աջակցություն տրամադրելու առումով:

¶ 7.4. Մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրով պարտավորված չէ իրավաբանական աջակցություն տրամադրել սահմանադրական միջնորդությունների հարցում, քանի որ նման միջնորդությունները չեն ներառում քրեական մեղադրանքի որոշում, ինչը պահանջվում է դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետով: Սակայն այս հարցը ոչ թե բարձրացվել է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի համատեքստում, այլ միայն այն հարցի առնչությամբ, թե արդյոք իրավական պաշտպանության միջոցները սպառվե՞լ են, թե՞ ոչ:

¶ 7.6. Վերը նշված պատճառներով կոմիտեն նշում է, որ սահմանադրական միջնորդությունը կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի սահմանված իմաստով մատչելի և արդյունավետ իրավական պաշտպանության միջոց չէ:

Յենրիի գործի այս տրամաբանությունը հաստատվել է հետագա գործերի շրջանակներում³⁶: ՄԻԿ-ը հետագայում դա ամրապնդեց «*Դուգլասը և այլք ընդդեմ ճամայկայի*» (*Douglas et al v Jamaica, 352/89*) գործում:

¶ 9.2 ...Ինչ վերաբերում է մասնակից պետության այն փաստարկին, որ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող կոնվենցիաները պետությունների վրա նման իրավունքների իրականացման չորակավորված պարտավորություն չեն դնում, ապա կոմիտեն նշում է, որ այն, թե արդյոք կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված իմաստով իրավական պաշտպանության միջոցները դեռ մատչելի՞ են հեղինակին, միանգամայն այլ հարց է և ոչ մի առնչություն չունի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների աստիճանական իրացման հետ:

Յենրիի և Դուգլասի գործերով կայացված որոշումները հաստատում են, որ չունևոր մարդկանց համար իրավաբանական աջակցության բացակայությունն էական նշանակություն ունի, երբ որոշվում է, թե հեղինակը հաղթահարե՞լ է կամընտիր արձանագրությամբ սահմանված ընթացակարգային արգելքները: «*Կյուրին ընդդեմ ճամայկայի*» (*Currie v Jamaica, 377/89*) գործով կայացված որոշման մեջ Յենրիի և Դուգլասի գործերում օգտագործվող տրամաբանությունն էլ ավելի հիմնավորվեց, քանի որ սահմանադրական միջնորդությունների հարցում իրավաբանական աջակցության բացակայությունը համարվեց ՔՔԻՄԴ-ի՝ մասնավորապես արդար դատավարությունը երաշխավորող 14-րդ հոդվածի 1-ին կետի էական խախտում³⁷:

[6.27] «*Պ.Ս.-ն ընդդեմ Դանիայի*» (*P.S. v Denmark*) [6.25] գործով ՄԻԿ-ի որոշման բառացի ընթերցումը ցույց է տալիս, որ ֆինանսական նկատառումներն էական չեն, երբ ՄԻԿ-ը որոշում է իրավական պաշտպանության միջոցի արդյունավետության հարցը: Յենրիի և դրան հաջորդող գործերը հաստատում են, որ իրավիճակն ամենևին էլ այդպիսին չէ: *P.S.* -ի գործը կարելի է տարբերակել այն հատկանիշով, որ հեղինակը չի փորձել դիմել որևէ դատական պաշտպանության միջոցի և, որ ավելի կարևոր է, չի նշել, որ ի վիճակի չէ օգտվելու իրավական պաշտպանության նման միջոցներից: Իրականում ֆինանսական նկատառումները չեն ազատում հեղինակին ծախսատար միջոցին դիմելու պարտականությունից, եթե նա այդ նպատակով իրավաբանական աջակցություն ստանալու միջոցներ ունի: Օրինակ՝ «*Ռ.Ու.-ն ընդդեմ ճամայկայի*» (*R. W. v Jamaica, 340/88*)³⁸ գործում հեղինակն ի վիճակի էր վճարելու, որ իր շահերը ներկայացվեն սահմանադրական միջնորդությամբ, ուստի ճամայկայում իրավաբանական աջակցության բացակայությունը նման միջնորդությունների համար այս դեպքում նշանակություն չունեի կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի շրջանակներում: Ավելին՝ հեղինակը չի

³⁶ Տե՛ս օրինակ՝ *Campbell v Jamaica* (248/87), *Little v Jamaica* (283/88), *Ellis v Jamaica* (276/88), *Hibbert v Jamaica* (293/88), *Thomas v Jamaica* (321/88), *Wright v Jamaica* (349/89), *Hylton v Jamaica* (600/94), *Gallimore v Jamaica* (680/96), and *Osbourne v Jamaica* (759/97):

³⁷ Տե՛ս այստեղ՝ [14.16]:

³⁸ Պարբ. 6.2:

ազատվում իրավական պաշտպանության տեղական ծախսատար միջոցին դիմելու պարտավորությունից, որի համար չի կարող վճարել, եթե դեռևս իրավաբանական աջակցություն չի հայցել³⁹:

Իրավական պաշտպանության միջոցների անհիմն ձգձգումը

[6.28] Կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետը բողոքարկողներին անվերապահորեն ազատում է «անհիմն ձգձգվող» իրավական պաշտպանության միջոցներին դիմելու պարտավորությունից: *Մինայակի* գործը ցույց է տալիս, թե ինչպես անհիմն ուշացումը կարող է հանգեցնել անարդյունավետ համարելու իրավական պաշտպանության ուսումնասիրվող միջոցը 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի շրջանակներում [6.16]:

[6.29]

«ՖԻԼԼԱՍՏՐԵՆ և ԲԻՉՈՒԱՐՆԵՆ ընդդեմ ԲՈԼԻՎԻԱՅԻ» (FILLASTRE and BIZOARN v BOLIVIA, 336/88)

Բողոքը վերաբերում էր Բոլիվիայի իշխանությունների կողմից երկու ֆրանսիացի մասնավոր հետախույզների ձերբակալության և տևական կալանքի փաստին: ՄԻԿ-ը գործի ընդունելիության մասով որոշում կայացրեց հոգուտ հեղինակների:

¶ 5.2. Իր 40-րդ նստաշրջանում կոմիտեն ուսումնասիրեց դիմումի ընդունելիության հարցը: Նա հաշվի առավ մասնակից պետության մեկնաբանությունները և պարզաբանումները Բոլիվիայի դատարաններում գործի կարգավիճակի վերաբերյալ: Ըստ այդմ տուժողները դեռ սպասում էին 1987 թ. իրենց դեմ հարուցված գործի ավարտին, ասել է թե՛ ձերբակալության պահից ավելի քան երեք տարի: Տվյալ հանգամանքներում կոմիտեն համարեց, որ առաջին ատյանում գործն ավելի քան երեք տարի ձգձգվելու փաստը, չհաշված հետագա բողոքարկումների հավանականությունը, «անհիմն ձգձգում» է՝ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված իմաստով: Առկա տեղեկությունների հիման վրա կոմիտեն եզրակացրեց, որ մնացած ձգձգումները վերագրելի չեն ոչ ենթադրյալ տուժողներին, ոչ էլ գործի բարդությանը: Ուստի կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի պահանջները կատարվել են:

Ֆիլաստրեի գործով ընդունված որոշումը վկայում է, որ հավանական ձգձգումների անհիմն համարվելը կախված է գործի բարդությունից⁴⁰: Նման դիրքորոշում ենթադրվում էր նաև «Ջոնասենը և այլք ընդդեմ Նորվեգիայի» (*Jonassen et al v Norway, 942/00*) [6.04] գործի շրջանակներում:

[6.30]

«ՀԵՆԴՐԻԿՍԵՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (HENDRIKS v THE NETHERLANDS, 201/85)

Այս գործը ձևավորվել էր այն պնդման շուրջ, որ Նիդեռլանդների ընտանեկան գործերով դատարանն անարդարացիորեն որոշում է կայացրել հոգուտ հեղինակի նախկին կնոջ իրենց որդու խնամակալության հարցում՝ դրանով իսկ խախտելով 23-րդ հոդվածի 4-րդ կետը⁴¹: Բողոքն ընդունելի համարվելուց հետո ՄԻԿ-ը իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման վերաբերյալ տվեց հետևյալ մեկնաբանությունները:

¶ 6.3. Կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետը թույլ չի տալիս կոմիտեին ուսումնասիրել դիմումը, եթե չեն սպառվել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Այս կապակցությամբ կոմիտեն նշում է, որ 1986 թ. հուլիսի 9-ի իր հայտարարությամբ մասնակից պետությունը տեղեկացրեց կոմիտեին, որ ոչինչ չէր խանգարում պրն Հենդրիքսին ևս մեկ անգամ պահանջել Նիդեռլանդների դատարաններից վճիռ կայացնել երեխաների հետ իր շփվելու իրավունքի մասին: Այդուհանդերձ, կոմիտեն նշեց, որ 12 տարի առաջ պրն

³⁹ *Faurisson v France* (550/93), կետ 6.1; *G. T. v Canada* (420/90), պարբ. 6.3:

⁴⁰ Դատավարության ավարտի ձգձգումներից զերծ մնալու իրավունքը նույնպես դաշնագրի նյութաիրավական երաշխիքներից է, որն ամրագրված է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետում [14.85-14.95]: Եվ իրականում այս երաշխիքի խախտումը ճանաչվել է *Ֆիլաստրեի* գործում:

⁴¹ Այս գործի արժանիքներն ուսումնասիրվում են [20.45-20.49]:

Հենդրիքսի կողմից Նիդեռլանդների դատարաններ ներկայացված պահանջով որոշումը գերագույն դատարանի կողմից կայացվել է 1980 թ.: Հաշվի առնելով կամընտիր արձանագրության՝ անհիմն ձգձգվող իրավական պաշտպանության միջոցներին վերաբերող 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի դրույթը՝ հնարավոր չէր լինի ակնկալել հեղինակից, որ նա շարունակի նույն դատարաններից պահանջել երեխաների հետ իր շփվելու թույլտվության մասին որոշում կայացնել «փոխված հանգամանքների» հիման վրա՝ անկախ ներպետական իրավունքի ընթացակարգային այն փոփոխությունից (ուժի մեջ է մտել 1982 թ.), որով այժմ պահանջվում էր լսել նաև հեղինակի որդու կարծիքը: Կոմիտեն նշում է, որ թեև ընտանեկան իրավունքում, օրինակ՝ խնամակալության բնույթի վեճերում փոխված հանգամանքները կարող են հաճախ նոր դատական լուծման հիմք դառնալ, բավարարված է համարում իրեն ներկայացված գործով ներպետական իրավական միջոցները սպառելու պահանջը:

[6.31] Խոշտանգումների դեմ կոմիտեն ներկայացված դիմումների մեծ մասը ստացվել է այն անձանցից, որոնք պնդում էին, թե իրենց նախատեսված վտարումը որևէ երկիր խախտում է ԽԴԿ-ի 3-րդ հոդվածը, քանզի հավանականություն կա, որ ընդունող երկրում իրենք խոշտանգումների կենթարկվեն⁴²: Հաշվի առնելով, որ ապաստան հայցողների պնդումների իսկությունը պարզելու ներպետական միջոցները շատ երկրներում հաճախ կարող են բավական ձգձգվել, հետաքրքրական է նշել, թե ինչպես է Խոշտանգումների դեմ կոմիտեն մեկնաբանել անհիմն ձգձգման մասին դրույթը 3-րդ հոդվածի հիմնավորմամբ ներկայացված գործերի առնչությամբ:

«ՎՆԻՄ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (VNIM v CANADA, CAT 119/98)

¶ 6.2. Ինչ վերաբերում է 22-րդ հոդվածի 5-րդ կետի (բ) ենթակետով նախատեսված իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման ընդունելիության չափանիշին, ապա կոմիտեն նշել է, որ բողոքողի պահանջով հարուցված դատական գործի ուսումնասիրությունը տևել է ավելի քան չորս տարի, ուստի կոմիտեն համարում է, որ այդ ժամանակահատվածի հետագա երկարացումը ողջամիտ չէր լինի: Հետևաբար, կոմիտեն բողոքը համարեց ընդունելի:

[6.32] «Հ. Մ.-ն ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (H.S. v FRANCE, 184/84)

ՄԻԿ-ը որոշեց, որ այս բողոքն անընդունելի է հետևյալ ձևակերպումներով.

¶ 9.4. Կոմիտեն տեղյակ է, որ Բոբինյի քաղաքի գերագույն ատյանի դատարանում գործի քննությունը տևել է ավելի քան վեցուկես տարի: Այդուհանդերձ, կոմիտեն կարծում է, որ 1984 և 1985 թվականներին դատաքննության ձգձգումների պատճառ է հանդիսացել հենց ինքը՝ հեղինակը: Այդ իսկ պատճառով կոմիտեն չի կարող եզրակացնել, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները, որոնք, ըստ երկու կողմերի, դեռևս ընթացքում են, ոչ պատշաճ կերպով ձգձգվել են՝ այդպիսով ազատելով հեղինակին կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված կարգով դրանք սպառելու պարտականությունից:

Գործը վերաբերում էր նրան, որ մասնակից պետությունը չէր ճանաչում հեղինակի կարծեցյալ Ֆրանսիայի քաղաքացիությունը: Համարվեց, որ հեղինակն անձամբ է պատասխանատու վեցուկես տարի տևող դատավարության երկու տարվա ձգձգումների համար: Այսպիսով, ՄԻԿ-ն իր դիրքորոշման ենթատեքստում ճանաչեց, որ ներգաղթի գործընթացի ընթացակարգերի համար չորսուկես տարին «ողջամիտ» ժամկետ է, հակառակ հետագայում *ՎՆԻՄ*-ի գործով իր կայացրած որոշմանը [6.31]:

Հ. Մ.-ի գործում կիրառված այն սկզբունքը, որ իրավական պաշտպանության միջոցները չեն համարվում անողջամտորեն ձգձգված, եթե նման ձգձգումը տեղի է ունեցել հեղինակի մեղքով, հաստատվել է մի շարք գործերի շրջանակներում, այդ թվում՝ «Ն. Մ. 3-ն ընդդեմ Ճամայկայի» (*N.A.J. v Jamaica*, 246/87) գործով: Ն. Մ. 3-ի գործով հեղինակին հասանելի էր մնում Գաղտնի խորհրդի դատական կոմիտեին ուղղված վերաքննիչ բողոքի հնարավորությունը, ընդ որում՝ գործի տասներեք տարվա ձգձգումը մեծապես պայմանավորված էր հեղինակի՝ այդ ատյանին չդիմելու հանգամանքով:

⁴² Տե՛ս [9.68]:

[6.33] «2. ՈՒ.Բ.Ս.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (Z.U.B.S. v AUSTRALIA, CERD 6/95)

Այս գործի շրջանակներում Ռասայական խտրականության վերացման կոմիտեն իրավական պաշտպանության չափազանց ձգձգվող միջոցների մեկնաբանության հարցում որդեգրեց մի մոտեցում, որը համեմատաբար ավելի նպաստավոր էր հեղինակի համար: Խոսքը հեղինակի նախկին գործատուի կողմից ցուցաբերվող ռասայական խտրականության դեմ հայցում պետական իշխանությունների վարվելակերպի մասին է:

¶ 6.4. ...Մասնակից պետությունը պնդում էր, որ հեղինակը կարող էր Հավասար հնարավորությունների հարցերով դատարանի 1995 թ. հոկտեմբերի 30-ի որոշումը բողոքարկել Նոր Հարավային Ուելսի գերագույն դատարանում և կարող էր օգտվել իրավաբանական աջակցության համընթացողի այն որոշումները վերանայել տալու հնարավորությունից, որոնցով մերժվում է իրավաբանական աջակցության տրամադրումն իրեն Իրավաբանական աջակցության վերանայման կոմիտեի կողմից: Կոմիտեն համարում է, որ եթե նույնիսկ այս հնարավորությունը դեռևս հասանելի լիներ հեղինակի համար, անհրաժեշտ է հաշվի առնել բողոքարկման գործընթացի տևողությունը, և քանի որ հեղինակի բողոքի ուսումնասիրության համար խտրականության հակազդման համընթացողի և Հավասար հնարավորությունների հարցերով դատարանի վարույթում պահանջվեց երկու տարուց ավելի ժամանակ, ներկա գործի հանգամանքներն արդարացնում են այն եզրակացությունը, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցների կիրառումն անողջամտորեն ձգձգվել է կոմպենցիայի 14-րդ հոդվածի 7-րդ կետի (ա) ենթակետի սահմանած իմաստով:

[6.34] «ԲԼԱՆԿՈՆ ընդդեմ ՆԻԿԱՐԱԳՈՒԱՅԻ» (BLANCO v NICARAGUA, 328/88)

Հեղինակը բողոքում էր մարդու իրավունքների տարբեր կոպիտ խախտումներից, որոնք ի հայտ էին եկել իր հանդեպ Նիկարագուայի կառավարության վերաբերմունքում: Մինչ իր դիմումը գտնվում էր վարույթում, իշխանության էր եկել մի նոր կառավարություն, որը պնդում էր, որ հեղինակն այժմ հնարավորություն ուներ դիմելու վերջերս մատչելի դարձած իրավական պաշտպանության մի շարք միջոցների: Այդուհանդերձ, ՄԻԿ-ը գտավ, որ բողոքն ընդունելի է:

¶ 9.1. Կոմիտեն պատշաճ կերպով հաշվի է առել մասնակից պետության այն հայտարարությունը, որ հեղինակը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանզի այժմ նա կարող է իր բողոքներն ուղղել Նիկարագուայի գործող կառավարության իրավասու դատարաններին:

¶ 9.2. Կոմիտեն ողջունում է մասնակից պետության՝ հեղինակի բողոքներն ուսումնասիրելու պատրաստակամությունը, և նման ուսումնասիրությունը կարող է իրավական պաշտպանության միջոց դիտվել դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով: Այդուհանդերձ, կոմիտեն կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի շրջանակներում համարում է, որ հեղինակը՝ ձերբակալված 1979 թ. և բանտարկված տասը տարի, ներկա փուլում չի կարող կամընտիր արձանագրությամբ սահմանված կարգով Նիկարագուայի ներկա վարչակարգի դատարաններ դիմելու պարտավորություն ունենալ մինչև իր գործի ուսումնասիրությունը: Այս համատեքստում կոմիտեն հիշեցնում է, որ դիմումը ներկայացվել է կոմիտեին 1988 թ., երբ իրավական պաշտպանության ներպետական միջոցները մատչելի չէին կամ ոչ արդյունավետ: Եթե անգամ ներկայումս մատչելի են ներպետական պաշտպանության միջոցները, միևնույն է, նման միջոցների կիրառումը կհանգեցնի նրան, որ հեղինակի՝ իր կալանքի ու իր հանդեպ ենթադրյալ վատ վերաբերմունքի դիմաց հատուցվելու ջանքերն անհիմն կերկարաձգվեն, ուստի կոմիտեն եզրակացնում է, որ ելնելով գործի հանգամանքներից՝ կամընտիր արձանագրությամբ չի պահանջվում, որ հեղինակը շարունակի դիմել Նիկարագուայի դատարաններին: Ավելին՝ կոմիտեն կրկնում է իր այն եզրակացությունը, որ կամընտիր արձանագրությամբ սահմանված ընդունելիության չափանիշներն ապահովված էին դիմումի ներկայացման պահին:

[6.35] ՄԻԿ-ը մի շարք գործերում, ինչպիսին է օրինակ՝ «Ռ. Լ.-ն և այլք ընդդեմ Կանադայի» (*R.L. et al/v Canada, 358/89*) գործը, նշել է, որ հեղինակների մտավախությունները դատավարության երկար տևողության կապակցությամբ չեն ազատում նրանց իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու ողջամիտ ջանք գործադրելու պարտավորությունից⁴³: Սա նույնությամբ արտացոլում է հեղինակի՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցների ապարդյունության վերաբերյալ մտավախություններին առնչվող կանոնը [16.14]: Իհարկե, որոշ դեպքերում բողոքողները կարող են օր-

⁴³ Տե՛ս 6.4:

յեկտիվորեն արդարացնել անհիմն ուշացման մտավախությունը, ինչպես օրինակ՝ «*Օմինայակն ընդդեմ Կանադայի*» (*Ominayak v Canada*, 167/84) [6.16] գործում:

Պետությունների իրավահաջորդության դեպքերում իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը

[6.36] «ԿՈՒՈԿ ԿՈՅՆ ընդդեմ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ» (*KUOK KOI v PORTUGAL*, 925/00)

Այս գործը վերաբերում էր Մակաոյի բնակչի կողմից ներկայացված մի դիմումին, որում նա բողոքում է մի դատավարության շրջանակներում տեղ գտած տարբեր անկարգություններից, որոնք, իր պնդմամբ, խախտում են իր՝ ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդվածով ճանաչված արդար դատավարության իրավունքը⁴⁴: Մինչև 1999 թ. դեկտեմբերի 19-ը Մակաոն Պորտուգալիայի գաղութն էր: 1999 թ. դեկտեմբերի 20-ին Մակաոյի տնօրինումը փոխանցվել է Չինաստանի ժողովրդական Հանրապետությանը: Հեղինակն իր առաջին դիմումը ներկայացրել է 1999 թ. դեկտեմբերի 15-ին: Այսպիսով, դիմումի ներկայացման պահին Մակաոն Պորտուգալիայի տնօրինության տակ էր, սակայն 2001 թ. վերջին, երբ ուսումնասիրվում էր դիմումի ընդունելիության հարցը, արդեն գտնվում էր Չինաստանի ժողովրդական Հանրապետության իրավասության ներքո: Գործի ընդունելիության դեմ Պորտուգալիայի բերած փաստարկներից մեկը վերաբերում էր իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառմանը:

¶ 4.5. ...Մասնակից պետությունը պնդում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել, քանի որ հեղինակի վերաբերյալ բողոքի վերաբերյալ որոշում դեռ չի կայացվել: ...Ավելին՝ վերաբերյալ բողոքով որոշում կայացնելու պարտականությունն այլևս Պորտուգալիան չի կրելու, քանի որ այդ պարտականությունը փոխանցվելու է Չինաստանի ժողովրդական Հանրապետության իրավասության տակ գտնվող Մակաոյի հատուկ վարչական շրջանի դատարանին:

Իրականում, հեղինակի բողոքը ներկայացվել է նախքան համապատասխան դատավարության վերաբերյալ բոլոր դատական ատյանների սպառումը: Այդուհանդերձ, մինչ դիմումը գտնվում էր վարույթում, սպառված է եղել իրավական պաշտպանության վերջին ներպետական մատչելի միջոցը, որի արդյունքը բացասական է եղել հեղինակի համար: Ուստի ՄԻԿ-ի կողմից գործի ընդունելիության վերաբերյալ որոշման կայացման պահին իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառված են եղել: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը համաձայնեց Պորտուգալիայի այն պնդմանը, որ բողոքն անընդունելի է կանգնեցնել արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով:

¶ 6.4. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների առնչությամբ կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածում ասվում է.

«1-ին հոդվածի դրույթներով այն անձինք, ովքեր պնդում են, թե դաշնագրում թվարկվող իրենց իրավունքներից որևէ մեկը խախտվել է, և *իրենք սպառել են իրավական պաշտպանության բոլոր առկա ներպետական միջոցները, կարող են կոմիտեի ուսումնասիրությանը ներկայացնել գրավոր դիմում*»: [Շեղագիրն ավելացված է:]

Այս դրույթի իմաստը պարզ է. քանի դեռ ներպետական իրավական համակարգում առկա իրավական պաշտպանության միջոցները չեն սպառվել, դաշնագրով նախատեսված իր իրավունքների խախտման մասին պնդող անձն իրավասու չէ կոմիտեին դիմում ներկայացնելու: Ուստի կոմիտեն պարտավոր է որպես անընդունելի մերժել նախքան այս պայմանի բավարարումը ներկայացված դիմումը: Եվ իրականում կոմիտեի որդեգրած վարվելակարգով նա չէր ընդունում դիմումներ, երբ ակնհայտորեն պարզ էր, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել: Այսպիսով, օրինակ, քրեական գործերում արդար դատավարության իրավունքի ենթադրյալ խախտումները շոշափող դիմումներ կոմիտեն չի ընդունում և չի գրանցում, երբ պարզ է, որ տվյալ գործով վերաբերյալ բողոքը դեռևս գտնվում է վարույթում: Խնդիրն այն է, որ շատ գործերում բուն դիմումից ամենևին էլ պարզ չէ, թե արդյոք եղել են իրավական պաշտպանության ներպետական միջոցներ, և արդյոք դրանք սպառվել են հեղինակի կողմից: Նման դեպքերում կոմիտեն այլընտրանք չունի և գրանցում է դիմումը՝ դրա ընդունելիության վերաբերյալ որոշումը կայացնելով միայն հեղինակի և մասնակից պետության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման հարցի վերաբերյալ:

⁴⁴ Այս գործի ներածությունը և մեկնաբանությունները վերցված են այստեղից՝ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2002) 2 *HRLR* 287, 294-5:

տական միջոցները սպառելու փաստի վերաբերյալ հայտարարություններն ուսումնասիրելուց հետո: Երբ կոմիտեն որոշում է նման դիմումը որպես կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով ոչ ընդունելի մերժման անհրաժեշտության հարցը, սովորաբար հետևում է որոշում կայացնող այլ միջազգային մարմինների վարվելակերպին և ուսումնասիրում է՝ գործն ուսումնասիրելու պահին (այլ ոչ թե դիմումը ներկայացվելու պահին) սպառվել են արդյոք իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Այս վարվելակերպի տրամաբանությունն այն է, որ դիմումը որպես անընդունելի մերժելն անիմաստ կլինի, եթե ուսումնասիրության պահին սպառված կլինեն իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ հեղինակը պարզապես կկարողանա նոր դիմում ներկայացնել նույն ենթադրյալ խախտման կապակցությամբ: Այդուհանդերձ հարկ է նշել, որ այս վարվելակերպի հիմքում ընկած ենթադրության իմաստն այն է, որ մասնակից պետության իրավաբանական կարգավիճակը չի փոխվել դիմումի ներկայացման և ուսումնասիրության ժամանակահատվածում, հետևաբար, իրավական խոչընդոտներ չկան ենթադրյալ խախտման վերաբերյալ հեղինակի կողմից նոր դիմում ներկայացնելու համար: Եթե այս ենթադրությունը թերի է, ապա այս վարվելակերպն անհարիր է դառնում կամընտիր արձանագրության պահանջներին:

¶ 6.5. Սույն գործում ինչպես հեղինակի պնդումները պորտուգալացի հատուկ դատավորի իրավասության բացակայության վերաբերյալ, այնպես էլ հեղինակի գործով դատավարության ընթացքում դաշնագրի 14-րդ հոդվածի ենթադրյալ խախտումներն արժանաժեք են Մակաոյի երկրորդ ատյանի դատարան ուղղված վերաքննիչ բողոքում: Տվյալ դեպքում այս վերաքննիչ բողոքը դեռ չէր լսվել դիմումի ներկայացման պահին: Այս վերաքննիչ բողոքով և վերջին ատյանի դատարան հաջորդ ներկայացված բողոքի վերաբերյալ վճիռները կայացվել են համապատասխանաբար 2000 թ. հուլիսի 28-ին և 2001 թ. մարտի 16-ին, երբ Մակաոն այլևս չէր տնօրինվում Պորտուգալիայի կողմից: Դրանից հետևում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառված չեն եղել այն պահին, երբ ներկայացվել է դիմումը, հետևաբար, հեղինակն իրավասու չէ կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածով դիմում ներկայացնել: Այն ժամանակ, երբ իրավական պաշտպանության միջոցները սպառված են եղել, հեղինակն այլևս չի գտնվել Պորտուգալիայի իրավասության ներքո, և իր դիմումն անընդունելի էր կամընտիր արձանագրության 1-ին հոդվածով:

¶ 6.6. Հարկ է նշել նաև այն փաստը, որ հեղինակի վերաքննիչ բողոքները լսվել են, երբ Մակաոն այլևս Պորտուգալիայի իրավասության տակ չէր, ենթադրում է, որ այդ միջոցներն այլևս նախքան Պորտուգալիայի դեմ դիմում ներկայացնելը պարտադիր սպառման ենթակա միջոցներ չեն եղել: Թեև դիմումի ներկայացումից հետո Մակաոն հատուկ վարչական շրջան դարձավ Չինաստանի ժողովրդական Հանրապետության կազմում, սակայն դրա իրավական և քրեական գործերով բողոքարկման համակարգերը մնացին անփոփոխ: Այսպիսով, անկախ հանգամանքից, թե որ պետությունն էր հսկում տվյալ տարածքը, ներպետական իրավական համակարգի ներքո մնում էին սպառման ենթակա իրավական պաշտպանության միջոցներ:

[6.37] Պարոնայք Քլայնը, Ռիվաս Փոսադան և Յալդենը, որոնց հետ կարծես համաձայն⁴⁵ էր պրն Շայնին, եզրակացրին, որ բողոքը ընդունելի էր: Նրանք նշեցին.

Առաջին՝ մենք չենք կարծում, որ իրականում հեղինակի համար հասանելի են եղել իրավական պաշտպանության մնացած ներպետական միջոցներն այն բանից հետո, երբ Պորտուգալիայի իրավասության ժամկետը Մակաոյում ավարտվեց: Ճիշտ է, որ մասնակից պետության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության միջև եղած համաձայնությամբ քրեական գործերով բողոքարկման համակարգը պետք է մնար անփոփոխ: Սակայն ճիշտ է նաև, որ 1999 թ. դեկտեմբերի 19-ին այն դատարանները, որոնց հեղինակը կարող էր դիմել (և իրականում դիմել է), այլևս չէին գտնվում այն մասնակից պետության իրավասության ներքո, որի դեմ է ուղղված սույն դիմումը: Հեղինակն իր դիմումը ներկայացրել է 1999 թ. դեկտեմբերի 15-ին՝ Մակաոն Չինաստանին փոխանցելուց ընդամենը չորս օր առաջ: Որդեգրել այն տեսակետը, որ հեղինակը պետք է այս կարճ ժամանակահատվածում սպառած լիներ մնացած ներպետական (այսինքն՝ Պորտուգալիայի) միջոցները, ակնհայտորեն ողջամիտ չէր լինի: Ուստի, եթե նույնիսկ համարվեր, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու մասին որոշումը պետք է կայացվի՝ հիմք ընդունելով դիմումի ներկայացման, ոչ թե կոմիտեի կողմից այն ուսումնասիրելու պահը (կարիք չկա, որ մենք մեկնաբանենք այս հարցը), միևնույն է, այս պահանջը պետք է կատարվեր՝ ելնելով ներկա գործի հատուկ հանգամանքներից:

Երկրորդ՝ մենք կարծում ենք, որ կոմիտեի դիրքորոշումը մեկ այլ թերություն ունի: Մի կողմից՝ պահանջել հեղինակից դիմումի ներկայացման պահին սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, որովհետև այլ դեպքում նրա դիմումն անընդունելի կլինի, և մյուս կողմից՝ որդեգրել այն մոտեցումը, որ նրա դիմումն անընդունելի է համարվում, երբ նա արդեն կատարել է այդ պահանջը, քանի որ նա այլևս Պորտուգալիայի իրավասության ներքո չէ, ստեղծում է անընդունելի իրավիճակ, երբ հեղինակը զրկվում է դաշնագրով և կամընտիր արձանագրությամբ ապահովված որևէ արդյունավետ պաշտպանության միջոցից:

⁴⁵ Պրն Շայնինն այս կետի առնչությամբ պարզորոշ դիրքորոշում չարտահայտեց:

Վերոնշյալ պատճառներով մենք այն կարծիքին ենք, որ կոմիտեն պետք է դիմումն ընդունելի համարեր:

[6.38] Այսպիսով, ՄԻԿ-ի կազմում բանավեճ առաջացավ իրավական պաշտպանության ներպետական կանոնի կիրառման հարցի շուրջ այն պարագայում, երբ տարածքում իրավասությունը փոխվում է նախքան խնդրո առարկայի վերաբերյալ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառված լինելը: ՄԻԿ-ի համար սա մի նոր իրավիճակ էր, ուստի այստեղ հնարավոր չէր դաս քաղել նախադեպերից: Ասվում է, որ երկու մոտեցումներն էլ հիմնավորված են: Սակայն հարկ է նշել, որ փոքրամասնություն կազմող Բլայնը, Ռիվաս Փոստդան և Յալդենն իրենց տեսակետը հիմնավորում էին լուրջ քաղաքական փաստարկով: Նրանք ավելացրին, որ ՄԻԿ-ի դիրքորոշումը «ստեղծում է անընդունելի իրավիճակ. հեղինակը գրկվում է դաշնագրով և կամընտիր արձանագրությամբ ապահովված որևէ արդյունավետ պաշտպանության միջոցից»: Անշուշտ, ՄԻԿ-ի դիրքորոշումն անհնար դարձրեց Պորտուգալիայի դեմ որևէ բողոքի ներկայացումը, քանզի իրավական պաշտպանության ներպետական միջոցները գործնականում չէին կարող սպառվել մինչև 1999 թ. դեկտեմբերի 19-ը: Այդուհանդերձ, եթե Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը՝ որպես իրավահաջորդ, հանդես գար կամընտիր արձանագրությամբ սահմանված պարտավորությունների մասով, ապա հնարավոր կլիներ նրա դեմ բողոք ներկայացնել 14-րդ հոդվածի ենթադրյալ խախտումների կապակցությամբ: Կամընտիր արձանագրությամբ բողոքները կարող են մասնակից պետությունների դեմ ներկայացվել այն հարցերի կապակցությամբ, որոնք տեղի են ունեցել նախքան իրավահաջորդության օրը⁴⁶: Հետևաբար, փոքրամասնությունը ենթադրում է, որ այժմ Մակաոյի առնչությամբ կամընտիր արձանագրությունը չի կիրառվում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նկատմամբ, ինչը ամենևին էլ համոզիչ չէ⁴⁷:

[6.39] Թեև մեծամասնությունը գործը համարեց անընդունելի, սակայն պրն Շայնինն իր մասնավոր կարծիքում նշեց, որ «մեծամասնությունը անընդունելիության որևէ հատուկ պատճառի շուրջ համաձայնության չի եկել»: Մեծամասնությունը իրավական պաշտպանության ներպետական միջոցների վերաբերյալ համաձայնության չէր եկել, քանի որ ՄԻԿ-ի անդամներից երեքը դիմումը մերժել էին՝ չմեկնաբանելով իրավական պաշտպանության ներպետական միջոցների հարցը⁴⁸:

Ապացույցի բեռը

[6.40] Իրավական պաշտպանության ներպետական միջոցների առկայությունը կարող է համապատասխան պետության ներպետական իրավունքի վերաբերյալ խիստ տեխնիկական բնույթի հարցեր առաջացնել, ինչը ՄԻԿ-ի իրավասության ոլորտից դուրս է: Ուստի կարևոր է իմանալ, որ ապացույցի բեռն այն է, որ ապացուցվի իրավական պաշտպանության ներպետական միջոցների առկայությունը կամ բացակայությունը:

[6.41] «Բ. Ֆ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (C.F. v CANADA, 118/81)

Այս գործով բողոքը վերաբերում էր այն հարցին, որ Կանադայի քրեակատարողական հիմնարկներում գտնվող հեղինակներն ի վիճակի չէին քվեարկելու Քվեբեկի տարածքային ընտրություններում: Մասնակից պետությունը բերում էր այն փաստարկը, որ հեղինակները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

¶ 4.2. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառմանը, ապա մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակները, հայցելով ժամանակավոր որոշում գլխավոր դատախազի բացասական պատասխանի դեմ, ընտրել են իրավական պաշտպանության անհամապատասխան միջոց, դրա փոխարեն իրենց ընտրելու իրավունքի առնչությամբ պետք է հայցելի հայտարարության վճիռ: Մասնակից պետությունը պնդում է,

⁴⁶ Տե՛ս օրինակ՝ «Դրբալն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (*Drbal v Czech Republic*, 498/92): Թեև այս գործը անընդունելի է համարվել այլ պատճառներով, սակայն չի արժանանում այն հանգամանքը, որ ամբողջ փաստացի իրավիճակը տեղի է ունեցել նախքան 1993 թ. Չեխոսլովակիայի բաժանվելը Չեխիայի և Սլովակիայի Հանրապետությունների:

⁴⁷ Տե՛ս նաև [25.43]:

⁴⁸ Տե՛ս [4.09] և [25.44] երեք անդամների՝ Ամորի, Բիզգվաթիի, Անդոյի բերած փաստարկները անընդունելիության այլ պատճառների վերաբերյալ:

որ նման հայտարարությունը իրավական պաշտպանության «արդյունավետ և բավարար» միջոց կլիներ՝ միջազգային նախադեպային իրավունքին և Կանադայի իրավական պրակտիկային համապատասխան: Մասնակից պետությունն ընդունում է, որ հնարավոր է բերել այն փաստարկը, որ նախքան 1981 թ. Քվեբեկի տարածքային ընտրությունների անցկացումը բավականաչափ ժամանակ չի եղել հայտարարության վճիռ ստանալու համար, հետևաբար, նման հայտարարությունը ներկա դիմումի առնչությամբ արդյունավետ իրավական պաշտպանության միջոց չի եղել: Այդուհանդերձ, մասնակից պետությունը պնդում է, որ դիմումի իրական նպատակն այն է, որ ապագա ընտրություններում հաստատվի դաշնային քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների իրավունքը, և, հետևաբար, եզրակացնում է, որ հեղինակների համար «դեռևս չափազանց ուշ չէ» հայցել իրենց իրավունքների հայտարարությունը ներպետական դատարաններում: Ուստի իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառված չեն եղել:

Իրենց հետագա հայտարարություններում հեղինակները վիճարկել են իրավական պաշտպանության այս ենթադրյալ միջոցի արդյունավետությունը: Սկզբում այս կետով ՄԻԿ-ը որոշում կայացրեց հեղինակների օգտին:

¶ 6.2. Ինչ վերաբերում է կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետին, ապա կոմիտեն նշում է, որ թեև հեղինակները գուցե և վիճակի չեն եղել հայտարարության վճիռ ձեռք բերելու մինչև 1981 թ. ապրիլի 13-ի ընտրությունները, սակայն դրանից հետո կայացրած վճիռը կարող էր սկզբունքորեն արդյունավետ իրավական պաշտպանության միջոց դառնալ դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով և կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված իմաստով: Դաշնագիրը նախատեսում է, որ իրավական պաշտպանության միջոցը տրամադրվում է ամեն անգամ, երբ տեղի է ունենում երաշխավորված իրավունքներից որևէ մեկի խախտում, հետևաբար, այն առհասարակ չի սահմանում կանխարգելիչ գործողություններ, այլ սահմանափակվում է իրավունքի արդյունավետ վերականգնման միջոցով՝ *ex post facto** սկզբունքով: Այնուամենայնիվ, կոմիտեն այն կարծիքին էր, որ Կանադայի կառավարությունը ցույց չի տվել, որ հայտարարության վճիռ ձեռք բերելու հայցն արդյունավետ իրավական պաշտպանության միջոց կլիներ 1981 թ. ապրիլի 13-ին կամ ապագա որևէ այլ ընտրությունների առնչությամբ: 1982 թ. կառավարության ներկայացրած հայտարարությունից պարզ չէ, թե արդյոք բանտային իրավասու ղեկավարության կողմից ենթադրյալ տուժողներին 1981 թ. ապրիլի 13-ի ընտրություններին մասնակցելու մերժումն ապօրինի հայտարարելուն ուղղված հայցն ընդունելի կհամարվե՞ր, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ հաշվի առնելով, որ հեղինակների դիմումն ստացվել է 1983 թ. հունիսի 7-ին, կոմիտեն կասկած է հայտնել, թե մի՞թե և որքանով են Կանադայի գործադիր իշխանությունները ապագայում պարտավոր ի կատար ածել հայտարարության վճիռը նման հանգամանքներում: Քանի որ մասնակից պետությունը պարտավոր է ապացուցել այն իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը, որոնք, ըստ նրա, չեն սպառվել, ուստի կոմիտեն եզրակացնում է, որ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետը չի բացառում դիմումի ընդունելիությունը:

Ի պատասխան՝ մասնակից պետությունը ներկայացրեց Կանադայում հայտարարության վճիռների արդյունավետության մանրամասն ապացույցներ: Որից հետո ՄԻԿ-ն ընդունելիության մասին իր որոշումը հետ վերցրեց հետևյալ ձևակերպումներով⁴⁹.

¶ 10.1. Իր ժամանակավոր ընթացակարգային կանոնակարգի 93-րդ կանոնի 4-ի կետի համաձայն՝ կոմիտեն վերանայել է ընդունելիության մասին 1983 թ. հուլիսի 25-ին կայացրած իր որոշումը: 1984 թ. փետրվարի 17-ին ներկայացված հայտարարության բովանդակած մանրամասն բացատրություններին համապատասխան՝ իրավական դիրքորոշումը բավականին պարզ է դառնում այն առումով, որ գոյություն ունեն իրավական պաշտպանության միջոց՝ հայտարարության վճիռ օգնությամբ, որը դրական արդյունքի դեպքում կլիներ իշխանությունների գործողություններից արդյունավետ իրավական պաշտպանության միջոց: Սույն եզրակացությանը գալով հանդերձ՝ կոմիտեն նաև հաշվի է առնում այն հանգամանքը, որ հեղինակների շահերը ներկայացնում էր փաստաբանը:

[6.42] Ս.Ֆ.-ի գործն ակնհայտորեն ցույց է տալիս, որ մասնակից պետությունները իրավական պաշտպանության համապատասխան միջոցների գոյությունն ու արդյունավետությունն ապացուցելու մեծ բեռ են կրում: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ն ապացույցի բեռի այս «կանոնի» հարցում անհետևողական է, ինչը թերևս երևում է հաջորդ ներկայացված գործից:

**ex post facto* – լատ. դեպից հետո. (օրենքի) գործողությունը հետագարձ ուժով (ծան. թարգմ.):

⁴⁹ Վերը բերված 24-րդ ծանոթագրությունում Զվարտը քննադատում է այս անդրադարձը 202-ի կետին, քանի որ իրավական պաշտպանության այս միջոցը վերաբերում է միայն ապագա ընտրություններին, ոչ թե վերականգնում է հեղինակի՝ 1981 թ. ընտրություններին քվեարկելու իրավունքը. Տե՛ս ՄԻԿ-ի սեփական մեկնաբանությունն այստեղ՝ [6.06]:

«Ս. Յ. Բ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (S.H.B. v CANADA, 192/85)

Չեղինակն իր նկատմամբ տեղական դատարանների վերաբերմունքի մասին բողոք ներկայացրեց: Մասնավորապես՝ ընտանեկան հարցերով տեղական դատարանը հեղինակի երեխայի նկատմամբ խնամակալության իրավունքը շնորհել էր բողոքարկողի մախկին կնոջը և պարտադրել էր իրեն վճարել զգալի ալիմենտ: Բողոքարկողի պնդմամբ՝ տվյալ որոշումները կայացվել են ՔՔԻՄԴ-ի մի քանի դրույթների խախտումով⁵⁰: Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու առնչությամբ բողոքարկողը ներկայացրել է հետևյալը.

¶ 2.4. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելուն, ապա հեղինակը նշում է, որ ինքը վերաքննիչ բողոք է ներկայացրել Ալբերտա նահանգի գերագույն դատարանին, սակայն վերաքննիչ դատարանը հրաժարվել է քննել իր գործով հանդես եկող դատավորի հայեցողությամբ որոշում կայացնելու հանգամանքը և որևէ գրավոր պատճառաբանություն չի տվել վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունը մերժելու համար: Չեղինակը նաև դիմել է Ալբերտա նահանգի արդարադատության գլխավոր վարչություն, դատական խորհուրդ, Կանադայի արդարադատության մախարարին, Ալբերտա նահանգի արդարադատության մախարարին և մարդու իրավունքների տարածքային պաշտպանին, քանզի դատավորի՝ իր հայեցողությամբ որոշումներ կայացնելու լիազորությունները համարվում են անվիճարկելի, ինչի արդյունքում հետաքննություն չի իրականացվել: Չեղինակը նշում է, որ ինքը դեռ կարող էր գործը բողոքարկել Կանադայի գերագույն դատարանում, սակայն բացատրում է, որ այդ տարբերակը գործնականում ապարդյուն կլիներ, քանի որ հիմնական հարցը դատավորի՝ իր հայեցողությամբ որոշումներ կայացնելու լիազորություններն էին, իսկ ներկա օրենսդրությամբ մախատեսվում է, որ դատավորը բացարձակ հայեցողության իրավունք ունի երեխաների նկատմամբ խնամակալության սահմանման և ամուսնական սեփականության բաժանման հարցում, և այդպիսով գերագույն դատարանը, առանց օրենսդրական փոփոխության, չէր կարողանա չեղյալ համարել ստորին ատյանի դատարանի կայացրած որոշումը: Ավելին՝ եթե անգամ գործն ուսումնասիրվեր Կանադայի գերագույն դատարանի կողմից, միևնույն է, վարույթում գտնվող գործերն այնքան շատ են, որ իր գործի ուսումնասիրությունն անհնար կլիներ ողջամիտ ժամկետներում:

¶ 6.3. Ինչ վերաբերում է մասնակից պետության այն պնդմանը, որ հեղինակը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները խնամակալության հարցի առնչությամբ, ապա հեղինակը հայտարարում է, որ «մի քանի փորձագետ փաստաբան միաձայն հայտնել են, որ երեխայի նկատմամբ խնամակալության շնորհումը լիովին դատավորի հայեցողության շրջանակներում է, հետևաբար, վերաքննիչ դատարան բողոք ներկայացնելը միանգամայն ապարդյուն կլինի»: Չեղինակը պնդում է, որ չէր կարող վերաքննիչ դատարանից ստանալ փաստերի նոր գնահատում, իսկ ստորին ատյանի դատարանի որոշումը վիճարկելու միակ հնարավորությունն այն է, որ հաստատվեն դատավորի կողմնակալությունը կամ լիազորությունների չարաշահումը, կամ էլ՝ *amicus curiae*-ի* միջոցով: Դիմելով այս ոչ սովորական միջոցներին՝ նա Ալբերտա նահանգի մարդու իրավունքների տարածքային պաշտպանից պահանջեց քննություն իրականացնել և պարզել, թե ինչպես է Ալբերտա նահանգում գործում *amicus curiae* բաժանմունքը: Այդուհանդերձ, հեղինակը ենթադրում է, որ Ալբերտա նահանգի գլխավոր դատախազը, բերելով տեխնիկական բնույթի առարկություններ, հնարավորություն չի ընձեռել մարդու իրավունքների պաշտպանին հետաքննելու հարցը և հիմնավորելու հեղինակի պնդումները: Նա նաև ստորին ատյանի դատավորի գործը ներկայացրել է Ալբերտա նահանգի արդարադատության գլխավոր վարչություն և դատական խորհուրդ: Այդուհանդերձ, «դատական խորհուրդը հրաժարվեց հետաքննություն անցկացնելուց՝ այդպիսով զրկելով ինձ կողմնակալության մասին իմ պնդումներն ապացուցելու և խնամակալության հարցով նոր դատավարություն հայցելու հնարավորությունից»: Չեղինակը նաև քաղվածքներ է ներկայացնում մամուլից, որոնք ցույց են տալիս, որ վերջին շրջանում շատ այլ ամուսնալուծված հայրեր ապարդյուն փորձեր են արել դատի տալու «amicus curiae»-ին, սակայն պալատի մագիստրոսը (որը դատավոր չի հանդիսանում) կասեցրել է դատական գործը՝ «այդպիսով զրկելով այս նահանգի քաղաքացիներին իրենց գործերը դատական կարգով քննելու հիմնարար սահմանադրական իրավունքից»:

¶ 6.4. Չեղինակը եզրակացնում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցներն այնքանով, որքանով կարող են արդյունավետ համարվել, սպառված են եղել: Նա նաև ընդգծում է ժամանակի գործոնը. «Քանի դեռ լուծում չի գտնվել, իմ որդին շարունակում է վնաս կրել»:

Մասնակից պետությունը բերեց հետևյալ փաստարկը.

¶ 5.2. Ինչ վերաբերում է հեղինակի՝ խնամակալության վերաբերյալ պահանջին, ապա մասնակից պետությունը նշում է, որ թեև նա բողոքարկել է գործը Ալբերտա նահանգի վերաքննիչ դատարանում ամուսնական սեփակա-

⁵⁰ Բողոքարկողը մեջբերում էր 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8(2)-րդ, 14-րդ, 15-րդ, 23(4)-րդ և 26-րդ հոդվածները:

* *amicus curiae* – լատ. բառացի՝ դատարանի բարեկամ. անկախ փորձագետ դատարանում (*ժան. քաղզվ.*):

նության պահպանման և բաժանման մասով, սակայն վերաքննիչ բողոք չի ներկայացրել խնամակալության մասով, թեպետև կարող էր դա անել Ալբերտա նահանգի 1980 թ. դատավարության մասին օրենքին համապատասխան:

¶ 5.4. Ինչ վերաբերում է սեփականության պահպանմանը և բաժանմանը, ապա մասնակից պետությունը նշում է, որ հեղինակը չի դիմել Ալբերտա նահանգի վերաքննիչ դատարանի վճիռը Կանադայի գերագույն դատարանում բողոքարկելու թույլտվություն ստանալու համար: Մասնակից պետությունը հայտնում է, որ 1975 թ. ի վեր Կանադայի գերագույն դատարանում բողոքարկելու թույլտվությունը շնորհվել է ամուսնական սեփականության պահպանման կամ բաժանման առնվազն 18 գործերով, ընդ որում՝ այս գործերից ութում գործը ստացել էր դրական լուծում: Այսպիսով, «Կանադայի գերագույն դատարան նման հարցերով վերաքննիչ բողոք ներկայացնելու թույլտվությունը արդյունավետ և բավարար իրավական պաշտպանության ներպետական միջոց է, թեև, անշուշտ, գործի համեմատական հիմնավորումը կանդադառնա նման թույլտվություն շնորհելու հավանականության վրա»: Որոշ ուշացումներն անխուսափելի են, երբ դիմում է ներկայացվում՝ հայցելով որևէ երկրի ամենաբարձր ատյանի դատարանի բողոքարկման իրավասությունը, սակայն Կանադան հայտնում է, որ այս առումով Կանադայի գերագույն դատարանում ուսումնասիրվող գործերի ժամկետները բարենպաստ են, և առավել անկողմնակալ մոտեցում է ցուցաբերվում նման գործերին, երբ խոսքը միայն ֆինանսական և գույքային շահերի մասին է»:

Տվյալ կետով ՄԻԿ-ը որոշում կայացրեց մասնակից պետության օգտին:

¶ 7.2. Այս առնչությամբ կոմիտեն նշում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկությունների հիման վրա հեղինակը չի դիմել իրավական պաշտպանության այն միջոցներին, որոնք մասնակից պետության հայտարարությամբ իրեն հասանելի են եղել, մասնավորապես՝ վերաքննիչ դատարան խնամակալության հարցի առնչությամբ բողոք ներկայացնելու և ամուսնական սեփականության պահպանման և բաժանման հարցով Կանադայի գերագույն դատարանում որոշումը բողոքարկելու թույլտվություն ստանալու միջոցով: Կոմիտեն նկատի է ունեցել հեղինակի այն համոզմունքը, որ խնամակալության հարցով վերաքննիչ բողոքն ապարդյուն կլինի, և Կանադայի գերագույն դատարանում գործի ուսումնասիրությունը լրացուցիչ ձգձգումներ կառաջացնի: Այդուհանդերձ, կոմիտեն, ելնելով դիմումում բերված հատուկ հանգամանքներից, կարծում է, որ հեղինակի կասկածները իրավական պաշտպանության այս միջոցների առումով հիմնավորված չեն եղել, ուստի չեն ազատում նրան դրանք սպառելու պարտավորությունից՝ ըստ կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով սահմանված պահանջի: Ուստի կոմիտեն եզրակացնում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել:

Մասնակից պետությունը չի անդրադարձել հեղինակի այն փաստարկին, որ երեխայի հանդեպ խնամակալության նշանակման որոշումները, ըստ էության, թողնված են դատավարությունում հանդես եկող դատավորի հայեցողությանը: Այս առումով Մ.Ֆ.-ի գործում առկա ապացույցի բեռի սկզբունքը կարծես չի կիրառվել:

[6.43] Իրականում Մակգոլդրիկն ասում է, որ «դժվար է որոշել՝ ի սկզբանե հեղինակն է կրում ապացույցի բեռն առ այն, որ ինքը սպառել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները, թե՞ մասնակից պետությունը պետք է ապացուցի իրավական պաշտպանության ներպետական միջոցների մատչելիությունն ու արդյունավետությունը»⁵¹: Նա առաջարկում է, որ սկզբնական բեռն թերևս դրված է հեղինակի վրա, թեև այդ բեռը «գուցե այնքան էլ ծանր չէ»⁵²: ՄԻԿ-ի գոյության առաջին տարիներին Կանադո Տրինդադեն գրում էր, որ իր կարծիքով նույնպես կոմիտեն որդեգրել է «ճկուն» մոտեցում՝ բաշխելով ապացույցի բեռն պետության և բողոքարկողի միջև⁵³:

[6.44] «Մուհոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Muhonen v Finland, 89/81*) գործում հեղինակը բողոքում էր 14-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված իր իրավունքների ենթադրյալ խախտումներից: Մասնակից պետությունը պնդում էր, որ նա կարող էր հայցել «իրավական պաշտպանության արտակարգ միջոց»՝ դիմելով արդարադատության նախարարին վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու պահանջով⁵⁴: Չնայած մասնակից պետությունը մանրամասն ապացույցներ է ներկայացրել իրավական պաշտպանության այս արտակարգ միջոցի վերաբերյալ, սակայն ՄԻԿ-ը գտել է, որ այս միջոցը չպետք է անպայման սպառվի հեղինակի կողմից⁵⁵: Սա ցույց է տալիս, որ մասնակից պետությունները պարտավորության ծանր բեռ են կրում հիմնական դատական համակարգից դուրս միջոցների արդյունավետություն

⁵¹ McGoldrick, ծմբ. 19:

⁵² Նույնը: Ուրուգվայի գործերով ապացույցի բեռի վերաբերյալ որոշ մեկնաբանություններ տես նաև այստեղ՝ [6.15]:

⁵³ Sten A. Concado Trindade, 'Exhaustion of Local Remedies under the UN Covenant on Civil and Political Rights and its Optional Protocol' (1979) 28 *ICLQ* 734, 758-9, 762, 764:

⁵⁴ Պարբ. 4.2-5.2:

⁵⁵ Պարբ. 6.1:

ապացուցելու առումով: Եվ իրականում «Ք.Ֆ.-ն ընդդեմ Կանադայի» (*C.F. v Canada*) [6.41] և «Ս.Ֆ.Ք.-ն ընդդեմ Կանադայի» (*S.H.B. v Canada*) [6.42] գործերով որոշումների միջև ակնհայտ տարբերությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Ս.Ֆ.Ք.-ի գործով իրավական պաշտպանության առկա միջոցը ենթադրում է ստորին ատյանի դատարանից վերաքննիչ բողոքի փոխանցումը վերին ատյանի դատարանին, մինչդեռ Ս.Ֆ.-ի գործով խոսքը դատական հայտարարության մասին էր, ինչն ավելի անսովոր իրավական պաշտպանության միջոց է⁵⁶:

Եզրակացություն

[6.45] ՄԻԿ-ը բավական խիստ է գտնվել իրավական պաշտպանության ներպետական միջոցների կանոնն իրագործելու հարցում, քանի որ դա թերևս ամենատարածված պատճառն է դիմումների ընդունելիությունը մերժելու համար: Այդուհանդերձ, կոմիտեն որոշակի ճկունություն է ցուցաբերել այն դեպքերում, երբ իրավական պաշտպանության միջոցներն ապարդյուն են եղել և դրա մասին են վկայել պետության կողմից կարծես մատչելի միջոցների շարունակական չկիրառումը, վերին ատյանի դատարաններում բացասական նախադեպերի փորձը, առկա միջոցների անհիմն ձգձգումը և երբեմն էլ առկա միջոցների ծախսատարությունը: ՄԻԿ-ը նաև ճկուն մոտեցում է ցուցաբերել հեղինակի և մասնակից պետության միջև իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցների պատշաճ սպառման ապացույցի բեռը բաշխելու հարցում:

⁵⁶ Օրինակ՝ մասնակից պետությունն ընդունել է 7.3 կետում, որ հայտարարությունը «չի սահմանում ուղղակի պատժամիջոց պատասխանողի նկատմամբ, եթե վերջինս չհետևի դրան»: Ուստի հայտարարությունը դատական ուղեցույց է ապագա գործողությունների օրինականությունն ապահովելու համար:

Մաս III

Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

Ինքնորոշման իրավունք. հոդված 1

- Ինքնորոշման սահմանումը [7.03]
- Ժողովուրդներ [7.06]
- Արտաքին ինքնորոշում [7.09]
- Ներքին ինքնորոշում [7.13]
- 1-ին հոդվածի 2-րդ կետ [7.17]
- 1-ին հոդվածի 3-րդ կետ [7.20]
- Անդատաքննելիությունն առաջին կամընտիր արձանագրությամբ [7.22]
- Եզրակացություն [7.25]

ՅՈՂՎԱԾ 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից բխող որևէ պարտավորություն և միջազգային իրավունք: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության սեփական միջոցներից:

3. Սույն դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում և նրանք, ովքեր պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսում են ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգում այդ իրավունքը:

[7.01] Առաջին հոդվածն ընդհանուր է ինչպես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, այնպես էլ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, ինչն ընդգծում է ինքնորոշման իրավունքի բարդ բնույթը և դրա կարևորությունը բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացման համար:

ԹԻՎ 12 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. ...Ինքնորոշման իրավունքն առանձնակի կարևորություն ունի, քանի որ դրա իրացումը հիմնական պայման է մարդու անձնական իրավունքների արդյունավետ երաշխավորման և պահպանման, ինչպես նաև խթանման ու ամրապնդման համար: Այդ իսկ պատճառով պետություններն ինքնորոշման իրավունքը սահմանել են որպես դրական իրավունքի դրույթ երկու դաշնագրերում և այդ հոդվածը դրել են առաջին տեղում՝ ամրագրված այլ իրավունքներից առանձին և առաջ:

[7.02] Մարդու իրավունքների կոմիտեն և Ռասայական խտրականության վերացման կոմիտեն (ՌԽՎԿ) համատեղ մշակել են այս հարցին նվիրված Ընդհանուր մեկնաբանություն: ՌԽՎԿ-ի Ընդհանուր մեկնաբանությունը շատ ավելի մանրամասն է և օգտակար, քան ՄԻԿ-ի մեկնաբանությունը:

Ինքնորոշման սահմանումը

[7.03] ՄԻԿ-ը չափազանց փոքր նախադեպային հիմք է ստեղծել ՔՔԻՄԴ-ում սահմանված ինքնորոշում հասկացության իմաստի համար: Սա մասամբ պայմանավորված է նրանով, որ կոմիտեն հրաժարվում է 1-ին հոդվածի դրույթների վերաբերյալ բողոքներ ընդունելուց՝ Առաջին կամընտիր արձանագրությանը համապատասխան: Ավելին՝ 1-ին հոդվածին նվիրված իր Ընդհանուր մեկնաբանությունը որևէ հստակ սահմանում չի տալիս, այլ կրկնում է 1-ին հոդվածի ձևակերպումները:

[7.04]

ԹԻՎ 12 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. 1-ին հոդվածում ամփոփված է բոլոր ժողովուրդների անօտարելի իրավունքը, ինչպես շարադրված է 1-ին և 2-րդ հոդվածներում: Այդ իրավունքի շնորհիվ նրանք ազատորեն «որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն իրականացնում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»: Հոդվածը բոլոր պետությունների վրա համապատասխան պարտավորություններ է դնում: Այս իրավունքը և դրա իրականացման մասով պարտավորությունները փոխկապակցված են դաշնագրի այլ դրույթների և միջազգային իրավունքի կանոնների հետ:

¶ 7. Դաշնագրի 1-ին հոդվածի կապակցությամբ կոմիտեն հղում է կատարում բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքին վերաբերող այլ միջազգային փաստաթղթերին, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համահունչ պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն անդրադարձող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրին:

[7.05] Մեկնաբանությունը թուցիկ հիշատակում է «միջազգային իրավունքի» այլ պարտավորություններ՝ ցույց տալով, որ ՔՔԻՄԴ-ի ընկալումը համապատասխանում է ինքնորոշման միջազգային իրավական ընկալմանը¹: Միջազգային իրավունքի շրջանակներում այս առումով ամենակարևոր փաստաթուղթը Գլխավոր ասամբլեայի թիվ 2625 բանաձևն է՝ Բարեկամական հարաբերությունների մասին հռչակագիրը, որը հիշատակվում է 7-րդ կետում²: Այս հռչակագրում ինքնորոշման իրավունքը նկարագրվում է որպես «ժողովուրդների՝ օտարերկրյա հպատակեցումից, տիրապետությունից և շահագործումից զերծ լինելու իրավունք»: Այդուհանդերձ, «ժողովուրդներ» և «օտարերկրյա հպատակեցում» հասկացությունները շարունակում են վիճահարույց մնալ:

ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐ

[7.06] Ինքնորոշումը «ժողովուրդների» հավաքական իրավունքն է: «Ժողովուրդ» հասկացության համար առաջարկվել են տարբեր պայմաններ և հատկանիշներ, այդ թվում՝ պատմական ավանդույթը, ռասայական և էթնիկական ինքնությունը, մշակութային միասնությունը, լեզվական միասնությունը, կրոնական և գաղափարախոսական մերձավորությունը, տարածքային կապը, ընդհանուր տնտեսական կյանքը և որևէ նվազագույն թիվ կազմելու հանգամանք³: Սակայն գոյություն չունեն «ժողովուրդ» հասկացության հարատև և համընդհանուր չափանիշներ⁴:

Ոչ Մարդու իրավունքների, ո՛չ էլ Ռասայական խտրականության վերացման կոմիտեն որևէ սահմանում չեն առաջարկել:

¹ Տե՛ս D. McGoldrick, *The Human Rights Committee* (Clarendon Press, Oxford, 1993), 248:

² H. Hannum, 'Rethinking Self-Determination' (1993) 34 *Virginia Journal of International Law* 14. Ինքնորոշման վերաբերյալ ՌԽՎԿ-ի թիվ 21 Ընդհանուր մեկնաբանության 3-րդ կետում նույնպես հավանություն է տրվում Բարեկամական հարաբերությունների մասին հռչակագրին:

³ Տե՛ս R. McCorquodale, 'Self-Determination: a Human Rights Approach' (1994) 43 *ICLQ* 857-866, n 52, and R. White, 'Self-Determination: Time for a Re-Assessment?' (1981) 28 *Netherlands International Law Review* 147, 163, n 52: Այստեղ մեջբերվում է Փաստաբանների միջազգային հանձնաժողովի զեկույցը՝ *The Events in East Pakistan* (ICJ, Geneva, 1972), at 70.

⁴ McCorquodale, ծմբ. 3, 865; M. Koskeniemi, 'National Self-Determination Today: Problems of Legal Theory and Practice' (1994) 43 *ICLQ* 241, 261:

[7.07] «ԳԻԼՈՏԸ և այլք ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (GILLOT et al v FRANCE, 932/00)

Հեղինակները Նոր Կալեդոնիայի ֆրանսիական գաղութի ֆրանսիացի բնակիչներն էին: Բողոքը վերաբերում էր հանրաքվեներին նրանց մասնակցելու իրավունքի սահմանափակումներին, այդ թվում նաև 1998 թ. անցկացված մի հանրաքվեի, ինչպես նաև 2014-ից սկսած՝ բոլոր հետագա հանրաքվեների պարագայում, որոնք պետք է որոշեն Նոր Կալեդոնիայի կարգավիճակը՝ երկրի ժողովուրդների համար ինքնորոշման իրացման նպատակով: Անցկացված առաջին հանրաքվեի նպատակն էր որոշել, թե արդյոք պե՞տք է շարունակել ինքնորոշման գործընթացը: Ապագա հանրաքվեներն անդրադառնալու են ինքնորոշման եղանակի հարցին և պարզելու են՝ այս իրավունքն իրացվելու է անկախության միջոցով, թե՞ այլ կերպ: Հեղինակները վեճի առարկա քվեարկության սահմանափակումներն այս հանրաքվեների շրջանակներում նկարագրում են հետևյալ կերպ.

¶ 2.5. 1998 թ. նոյեմբերի 8-ին անցկացված առաջին հանրաքվեի շրջանակներում Նոր Կալեդոնիայի սահմանադրության 76-րդ հոդվածով անցկացվող ժողովրդական հանրաքվեի վերաբերյալ 1998 թ. օգոստոսի 20-ին ընդունված թիվ 98-733 որոշմամբ և 1988 թ. նոյեմբերի 9-ի թիվ 88-1028 օրենքի 2-րդ հոդվածով սահմանվեց ընտրազանգվածը (որը սահմանվել է նաև Նումեայի համաձայնագրի (Noumea Accord) 6.3 հոդվածով), մասնավորապես. «Այդ օրվա դրությամբ տվյալ տարածքի ընտրացուցակներում ընդգրկված անձինք, որոնք, սկսած 1988 թ. նոյեմբերի 6-ից, բնակվում են Նոր Կալեդոնիայում, ունեն ծայրի իրավունք»:

¶ 2.6. Հետագա հանրաքվեների համար ընտրազանգվածը սահմանվել է Ֆրանսիայի խորհրդարանի կողմից 1999 թ. մարտի 19-ին ընդունված Նոր Կալեդոնիայի թիվ 99-209 հիմնարար օրենքի 218-րդ հոդվածով (որն արտացոլում է նաև Նումեայի երկրորդ համաձայնագրի 22-րդ հոդվածը), ըստ որի.

«Հանրաքվեի օրվա դրությամբ ընտրացուցակում ընդգրկված այն անձինք, ովքեր բավարարում են հետևյալ պայմաններից որևէ մեկը, ունեն ծայրի իրավունք.

(ա) Նրանք պետք է 1998 թ. նոյեմբերի 8-ին անցկացված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցած լինեն:

(բ) Նրանք չեն ընդգրկվել 1998 թ. նոյեմբերի 8-ի հանրաքվեի ընտրացուցակներում, բայց բավարարել են հանրաքվեին մասնակցելու համար պարտադիր բնակության պահանջը:

(գ) Նրանք չեն ընդգրկվել 1998 թ. նոյեմբերի 8-ի հանրաքվեի ընտրացուցակներում, որովհետև չեն բավարարել բնակության մասով պահանջը, սակայն կարող էին ապացուցել, որ իրենց բացակայությունը պայմանավորված է եղել ընտանեկան, մասնագիտական կամ բժշկական պատճառներով:

(դ) Նրանք պետք է սովորական քաղաքացիական կարգավիճակ ունենան կամ, ծնված լինելով Նոր Կալեդոնիայում, պետք է իրենց հիմնական բարոյական և նյութական շահերն ունենան այս տարածքում:

(ե) Եթե նրանց ծնողներից մեկը Նոր Կալեդոնիայում է, պետք է իրենց հիմնական նյութական և բարոյական շահերն ունենան այս տարածքում:

(զ) Նրանք պետք է ի վիճակի լինեն հանրաքվեի օրվա դրությամբ կամ ամենաուշը մինչև 2014 թ. դեկտեմբերի 31-ն ապացուցելու 20 տարվա ընթացքում Նոր Կալեդոնիայում անընդհատ բնակվելու փաստը:

(է) Ծնված լինելով մինչև 1989 թ. հունվարի 1-ը՝ նրանք պետք է Նոր Կալեդոնիայում բնակվեին 1988-1998 թթ.:

(ը) Ծնված լինելով 1989 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո՝ նրանց ընտրելու տարիքը պետք է լրացած լինի հանրաքվեի օրը, և նրանք պետք է ունենան մի ծնող, որը կբավարարի 1998 թ. նոյեմբերի 8-ին անցկացված հանրաքվեին մասնակցելու պահանջները:

Նախկինում երկրում մշտապես բնակվող անձանց դեպքում ազգային ծառայության, ուսման կամ վերապատրաստման, ընտանեկան, մասնագիտական կամ բժշկական նպատակներով Նոր Կալեդոնիայից դուրս անցկացրած ժամանակահատվածն ընդգրկվում է բնակության վայրն ու տևողությունը որոշելու համար ուսումնասիրվող ժամանակահատվածում:

¶ 2.7. Այն հեղինակները, որոնք չեն բավարարել վերոհիշյալ պայմանները, մշում են, որ իրենք օտարված են եղել 1998 թ. նոյեմբերի 8-ի հանրաքվեից և զրկվելու են 2014 թվականից հետո նախատեսված հանրաքվեներին մասնակցելու հնարավորությունից:

Դիմումը ներկայացվել է ընտրելու իրավունքը երաշխավորող 25-րդ հոդվածի, ինչպես նաև խտրակա-
նությունից զերծ մնալու մասին 26-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Այդուհանդերձ, ՄԻԿ-ի
տրամաբանությամբ՝ այստեղ կիրառելի է միայն 1-ին հոդվածը, թեև կամընտիր արձանագրությամբ
ինքնորոշման իրավունքը նույնիսկ ենթադատելի է: ՄԻԿ-ը որոշեց, որ ինքնորոշման հարցին նվիրված
հանրաքվեներում (անցյալ և ապագա) ընտրելու սահմանափակումները ողջամիտ են ըստ ԶԶԻՄԴ-ի 1-
ին հոդվածի, ուստի չեն խախտում 25-րդ և 26-րդ հոդվածները:

¶ 11.2. Կոմիտեն պետք է որոշեր՝ 1998 թ. նոյեմբերի 8-ի և 2014 թ. հետո անցկացվելիք հանրաքվեներում ընտրա-
զանգվածի հարցում դրված սահմանափակումները դաշնագրի 25-րդ և 26-րդ հոդվածների խախտո՞ւմ են, ինչպես
պնդում են հեղինակները, թե՞ ոչ:

¶ 13.3. Ներկա գործում կոմիտեն պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ տեղական ընտրություններն անցկաց-
վել են Նոր Կալեդոնիայի բնակչության ինքնորոշման գործընթացի համատեքստում: Այդ կապակցությամբ կոմի-
տեն հաշվի է առել մասնակից պետության այն փաստարկը, որ տվյալ հանրաքվեները, որոնց ընթացակարգն ամ-
րագրվել է Նումեայի համաձայնագրով և սահմանվել է կոնգրեսի կամ խորհրդարանի քվեարկությամբ պայմանա-
վորված ընտրությունների տեսակից, պետք է, իր բուն նպատակից ելնելով, միջոց ապահովի՝ որոշելու ոչ թե ամ-
բողջ ազգաբնակչության, այլ այն անձանց կարծիքը, որոնք «մտահոգ» են Նոր Կալեդոնիայի ապագայով:

¶ 13.4. Թեև կամընտիր արձանագրությամբ կոմիտեն դաշնագրի 1-ին հոդվածով պաշտպանված ինքնորոշման ի-
րավունքի ենթադրյալ խախտումներն ուսումնասիրելու լիազորություն չունի, սակայն կարող է անհրաժեշտության
դեպքում մեկնաբանել 1-ին հոդվածը՝ որոշելու համար, թե արդյոք խախտվե՞լ են դաշնագրի II և III մասերով
պաշտպանված իրավունքները: Ուստի կոմիտեն այն կարծիքին է, որ այս պարագայում դաշնագրի 25-րդ հոդվածը
մեկնաբանելիս կարող է հաշվի առնել 1-ին հոդվածը:

¶ 13.5. Կոմիտեն հեղինակի բողոքների առնչությամբ նշում է, որ մասնակից պետությունն իրականում հաստատում
է, որ այս հանրաքվեներում ձայնի իրավունքի շնորհման հիմքում ընկած չափանիշները մի սահմանափակ ընտրա-
զանգված ձևավորելու նպատակ ունեն, ինչից էլ բխում է տարբերակումը (ա) տվյալ դեպքում ձայնի իրավունքից
գրկված անձանց, ներառյալ հեղինակների, և (բ) այն անձանց միջև, ովքեր թույլտվություն ունեն օգտվելու այս ի-
րավունքից՝ հաշվի առնելով վերջիններիս բավական ամուր կապերն այն վայրի հետ, որի ինստիտուցիոնալ զար-
գացումն է քննության առնվում: Ուստի կոմիտեն պետք է որոշի՝ այս տարբերակումը համատեղելի՞ է դաշնագրի
25-րդ հոդվածի դրույթների հետ: Կոմիտեն հիշեցնում է, որ ամեն տարբերակում չէ, որ խտրականություն է, եթե այն
հիմնված է օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա, և դրա նպատակը չի հակասում դաշնագրի դրույթներին:

¶ 13.6. Նախևառաջ կոմիտեն պետք է ուսումնասիրի՝ ընտրազանգվածի սահմանափակումը որոշելիս օգտագործ-
վե՞լ են օբյեկտիվ չափանիշներ:

¶ 13.7. Կոմիտեն նշում է, որ յուրաքանչյուր քվեարկությամբ որոշվող հարցին համապատասխան ընտրացուցակնե-
րում ընդգրկվելու պահանջից բացի օգտագործված չափանիշները հետևյալն են. (ա) 1998 թ. հանրաքվեում, որը
նվիրված էր այն հարցին, թե հարկ կա՞րդյոք շարունակելու ինքնորոշման գործընթացը, նախապայման էր սահ-
մանվել Նոր Կալեդոնիայում բնակչության տևողությունը, իսկ (բ) հետագա հանրաքվեներում, որոնք ուղղակիորեն
առնչվելու են անկախության տարբերակին, դրվել են լրացուցիչ պայմաններ, որոնք կախված են սովորական քա-
ղաքացիական կարգավիճակ ունենալու հանգամանքից, տվյալ վայրում բարոյական և նյութական շահերի առկա-
յությունից, ինչպես նաև տվյալ անձի կամ նրա ծնողների՝ այդ վայրում ծնվելու հանգամանքից: Դրանից համապա-
տասխանաբար հետևում է, որ ինքնորոշման մասին որոշման կայացման ժամկետը մոտենալուն պես չափանիշնե-
րը շատանում են և հաշվի են առնում այնպիսի գործոններ, որոնք վկայում են տվյալ վայրի հետ նրանց ամուր կա-
պերի մասին: Տվյալ վայրի հետ ընդհանուր կապ ունենալու հանգամանքը որոշելու համար բնակչության տևողույթ-
յան պայմանին (ի տարբերություն բնակչության տևողության սահմանված ժամկետներին) գումարվում են ավելի
հստակ կապի տեսակներ:

¶ 13.8. Կոմիտեն համարում է, որ վերոնշյալ չափանիշները հիմնված են օբյեկտիվ տարրերի վրա, որոնք տարբե-
րակում են բնակիչներին՝ ելնելով նրանց՝ Նոր Կալեդոնիայի հետ կապից, մասնավորապես՝ այդ վայրի հետ նրանց
տարբեր տեսակի կապերի հիման վրա, լինեն դրանք մասնավոր թե ընդհանուր՝ համահունչ յուրաքանչյուր քվեար-
կության նպատակին և բնույթին:

¶ 13.14. Կոմիտեն նաև պետք է որոշի՝ վերոնշյալ չափանիշներից բխող տարբերակումը ողջամի՞տ է, և հետապնդ-
վող նպատակն օրինակա՞ն է ըստ դաշնագրի դրույթների:

¶ 13.16. Կոմիտեն հիշեցնում է, որ ներկա գործում դաշնագրի 25-րդ հոդվածը պետք է դիտվի 1-ին հոդվածի հետ
համատեղ: Ուստի կոմիտեն համարում է, որ սահմանված չափանիշները ողջամիտ են այնքանով, որքանով դրանք

կիրառվում են միմիայն ինքնորոշման գործընթացի շրջանակներում անցկացվող քվեարկությունների դեպքում: Հետևաբար, նման չափանիշները կարող են արդարացվել միայն դաշնագրի 1-ին հոդվածի կապակցությամբ, ընդ որում՝ տվյալ հարցում մասնակից պետությունն այդպես էլ վարվում է: Չարտահայտելով իր տեսակետը 1-ին հոդվածում մեջբերվող «ժողովուրդներ» հասկացության սահմանման վերաբերյալ՝ կոմիտեն համարում է, որ տվյալ դեպքում ողջամիտ կլինեին սահմանափակել մասնակցությունը տեղական հանրաքվեներին Նոր Կալեդոնիայի ապագայով «մտահոգ» անձանցով, ովքեր ապացուցել են այդ վայրի հետ բավական ամուր կապերի առկայությունը: Կոմիտեն մասնավորապես նշում է վճռաբեկ դատարանի ավագ գլխավոր փաստաբանի եզրահանգումներն առ այն, որ յուրաքանչյուր ինքնորոշման գործընթացում ընտրազանգվածի սահմանափակումներն օրինականացվում են ազգային ինքնության սահմանմանը բավականաչափ համապատասխանելու անհրաժեշտությամբ: Կոմիտեն նաև հաշվի է առնում այն փաստը, որ Նումեայի համաձայնագիրը և 1999 թ. մարտի 19-ի հիմնարար օրենքը ճանաչում են Նոր Կալեդոնիայի քաղաքացիությունը (ոչ թե բացառելով Ֆրանսիայի քաղաքացիությունը, այլ կապ հաստատելով վերջինիս հետ), ինչն արտացոլում է համակեցության ընտրությունը և հիմք է դառնում ընտրազանգվածի սահմանափակման համար, հատկապես եզրափակիչ հանրաքվեի շրջանակներում:

¶ 13.17. Ավելին՝ կոմիտեի կարծիքով, սահմանափակումները, որոնք բխում են 1998 թ. անցկացված հանրաքվեի և 2014 թ. հետո անցկացվելիք հանրաքվեների համար սահմանված չափորոշիչներից, հարգում են համամասնության չափանիշը, քանզի դրանք բացառապես սահմանափակված են ինքնորոշման հարցին նվիրված տեղական ընտրություններով՝ *ratione loci*⁵ սկզբունքով, ուստի անհետևանք կմնան ընդհանուր ընտրություններին մասնակցելու առումով՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք օրենսդրական, նախագահական, եվրոպական, տեղական, թե՛ այլ տեսակի հանրաքվեներ են:

¶ 13.18. Հետևաբար, կոմիտեն համարում է, որ 1998 թ. անցկացված հանրաքվեի և 2014 թ. հետո անցկացվելիք հանրաքվեների համար ընտրազանգվածի որոշման նպատակով կիրառվող չափանիշները խտրական բնույթ չունեն, այլ հիմնված են տարբերակման օբյեկտիվ հիմքերի վրա և համատեղելի են դաշնագրի դրույթների հետ:

¶ 14.1. Եվ, վերջապես, հեղինակները պնդում են, որ բնակության տևողության համար սահմանված ժամկետները՝ համապատասխանաբար 10 և 20 տարի, չափազանց երկար են և խախտում են իրենց ընտրելու իրավունքը:

¶ 14.7. Նշելով, որ բնակության տևողության չափանիշը խտրական չէ, կոմիտեն համարում է, որ ներկա գործի շրջանակներում 1998 թ. անցկացված հանրաքվեի և 2014 թ. անցկացվելիք հանրաքվեի համար սահմանված ժամկետները չափազանց երկար չեն, քանի որ դրանք համապատասխանում են այս քվեարկությունների բնույթին և նպատակին, այսինքն՝ ինքնորոշման գործընթացին այնպիսի անձանց մասնակցությամբ, որոնք կարող են ապացուցել բավական ամուր կապերի առկայությունն այն վայրի հետ, որի ճակատագիրն է որոշվում: Քանի որ իրավիճակն այսպիսին է, այս ժամկետները համապատասխանում են ապագադրության գործընթացին, որը ենթադրում է այն բնակիչների մասնակցությունը, որոնք, անկախ իրենց էթնիկական ծագումից և քաղաքական կարծիքներից, նպաստել են և շարունակում են նպաստել Նոր Կալեդոնիայի կառուցմանն այդ վայրի հետ ունեցած բավական ամուր կապերի միջոցով:

Նոր Կալեդոնիայի հանրաքվեներին քվեարկելու իրավունքների աստիճանը համապատասխանում է Ֆրանսիայի կառավարության կողմից բերված այն ժողովուրդների սահմանմանը, որոնք իրավունք ունեն որոշելու Ֆրանսիական գաղութի հետագա քաղաքական կարգավիճակը: ՄԻԿ-ը, ըստ երևույթին, հավանություն է տալիս այս սահմանմանը, որով ինքնորոշման իրավունքները սահմանափակվում են տվյալ վայրի հետ երկարատև կապ ունեցող անձանցով:

[7.08] Ինքնորոշման հարցին նվիրված ժամանակակից աշխատություններից շատերում առանձնացվում են արտաքին ինքնորոշման իրավունքը (ԱԻԻ) և ներքին ինքնորոշման իրավունքը (ՆԻԻ)⁶: «ժողովուրդներ» հասկացության սահմանումը՝ ըստ ՔՔԻՄԴ-ի, դառնում է պակաս վիճահարույց, եթե ընդունենք, որ բոլոր ժողովուրդներն էլ այս կամ այն տեսակի ինքնորոշման իրավունք ունեն, թեև բոլոր ժողովուրդներն ունեն այդ իրավունքը՝ առավել արմատական դրսևորմամբ, ասել է թե՛ արտաքին ինքնորոշման ձևով: Այս առումով «ժողովուրդ» հասկացությունը կարելի է լայնորեն սահմանել որպես ընդհանուր ռասայական և էթնիկական կամ մշակութային ինքնությամբ (որում կարող են ընդգրկվել քաղաքական, կրոնական կամ լեզվական տարրեր) միավորված մի խումբ, որը ձևավորվել է երկար ժամանակի ընթացքում⁶:

⁵ Տե՛ս օրինակ՝ R. McCorquodale, վերը, ծմբ. 3, M. Pomerance, *Self-Determination in Law and Practice* (Martinus Nijhoff Publishers, Hague/Boston/London, 1982), 37-42:

⁶ S. Joseph, 'Resolving Conflicting Claims of Territorial Sovereignty and External Self-Determination, Part 1' (1999) 3(1) *International Journal of Human Rights* 40, 42-5:

ԱՐՏԱՔԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ

[7.09]

ՈՒՍՎԿ-ի ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. ...Ինքնորոշման արտաքին հայեցակետը ենթադրում է, որ բոլոր ժողովուրդներն ազատորեն միջազգային համա-րությունում իրենց քաղաքական կարգավիճակը և տեղը որոշելու իրավունք ունեն՝ ելնելով հավասար իրավունք-ների սկզբունքից, ինչի օրինակն են գաղութային տիրապետությունից ժողովուրդների ազատագրումը և ժողո-վուրդներին օտարերկրյա հպատակեցմանը, տիրապետությանը և շահագործմանը ենթարկելու արգելքը:

[7.10] Արտաքին ինքնորոշման պահանջը հավասար է ժողովուրդների կողմից որոշակի տարածքին պահանջ առաջադրելուն⁷: Արտաքին ինքնորոշման իրավունքն իրականացվում է՝ պահպանելով գո-յություն ունեցող պետական սահմանները կամ փոխելով դրանք: Արտաքին ինքնորոշման առաջին ձևն առաջանում է այնտեղ, որտեղ «ինքնորոշման միավորը» գոյություն ունեցող պետության բնակչությունն է: Երկրորդ ձևն առաջանում է այնտեղ, որտեղ համապատասխան «ինքնորոշման միավորը» ցանկա-նում է անջատվել գոյություն ունեցող պետությունից: Արտաքին ինքնորոշման իրացման առավել վիճա-հարույց եղանակը անջատումն է⁸: XX դարի 50-60-ական թվականներին անջատման իրավունքը և ինք-նորոշում հասկացությունը փոխկապակցված էին ապագաղութացում հասկացության հետ⁹: Այդուհան-դերձ, սառը պատերազմին հաջորդած ժամանակահատվածում անջատվեցին մի շարք ոչ գաղութային ժողովուրդներ, այդ թվում՝ Խորհրդային Միությունում, նախկին Չեխոսլովակիայում, նախկին Հարավս-լավիայում, Էրիթրեայում և Արևելյան Թիմորում: Ավելին՝ 1-ին հողվածի տեքստը անվերապահորեն այս իրավունքը գաղութային տիրապետության տակ գտնվող ժողովուրդներով չի սահմանափակում: Իրա-կանում ՄԻԿ-ն այժմ հաստատել է ինքնորոշման սկզբունքը, և որոշ դեպքերում թերևս անջատման իրա-վունքը պատկանում է «բոլոր ժողովուրդներին, ոչ թե սոսկ գաղութային տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին»¹⁰:

[7.11] Արտաքին ինքնորոշման իրավունքը քաղաքական տեսանկյունից վիճահարույց է, քանզի ակն-հայտորեն սպառնալիքի տակ է դնում պետությունների տարածքային ամբողջականությունը:

ՈՒՍՎԿ-ի ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. Կոմիտեն նշում է, որ էթնիկական կամ կրոնական խմբերը կամ փոքրամասնությունները հաճախ վկայակոչում են ինքնորոշման իրավունքը՝ որպես անջատման ենթադրյալ իրավունքի հիմք:

¶ 6. Կոմիտեն ընդգծում է, որ Գլխավոր ասամբլեայի Բարեկամական հարաբերությունների մասին հռչակագրի հա-մաձայն՝ կոմիտեի գործողություններից ոչ մեկը չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե այն լիազորում կամ խրախուսում է որևէ գործողություն, որն անդամահատում կամ վնասում է լրիվ կամ մասամբ ինքնավար և անկախ այն պետությունների տարածքային ամբողջականությունը, որոնք առաջնորդվում են հավասար իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքով և ունեն տվյալ տարածքի ամբողջ ժողովրդին ներկայացնող կառավա-րություն՝ առանց ռասայի, կրոնի կամ մաշկի գույնի խտրականության: Կոմիտեի տեսանկյունից՝ միջազգային իրա-վունքը չի ճանաչել ժողովուրդների՝ որևէ պետությունից միակողմանի կարգով անջատվելու ընդհանուր իրավուն-քը: Այս առումով կոմիտեն հետևում է Խաղաղության օրակարգում արտահայտված տեսակետներին (սկսած 17-րդ կետից), մասնավորապես, որ պետությունների մասնատումը կարող է բացասաբար անդրադառնալ մարդու իրա-վունքների պաշտպանության, ինչպես նաև խաղաղության և անվտանգության պահպանման վրա: Սակայն սա չի բացառում բոլոր մասնակից կողմերի ազատ համաձայնագրերի միջոցով ձեռք բերված պայմանավորվածություն-ների հնարավորությունը¹¹:

⁷ L. Brilmayer, 'Secession and Self-Determination: A Territorial Interpretation' (1991) 16 *Yale Journal of International Law* 177.

⁸ Բարեկամական հարաբերությունների մասին հռչակագիրը նշում է նաև այլ եղանակներ՝ ազատ միացում կամ ինտեգ-րում մեկ այլ անկախ պետությանը:

⁹ Տե՛ս *Western Sahara Advisory Opinion* [1975] ICJ Rep. 12, 37. Տե՛ս նաև՝ G. Simpson, 'The Diffusion of Sovereignty: Self-determination in the Post-Colonial Age' (1996) 32 *Stanford Journal of International Law* 255, 265; and R. McCorquodale, 'South Africa and the Right of Self-Determination' (1994) 10 *South African Journal on Human Rights* 4, 6: Տե՛ս նաև ՈՒՍՎԿ-ի թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությունը, կետ 4 [7.091]:

¹⁰ Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեյջանի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 38, կետ 6:

¹¹ «Խաղաղության օրակարգը» (Agenda for Peace) ներկայացվել է 1992 թ. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտ-րոս Ղալիի կողմից, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/47/277-S/24111:

[7.12] ՄԻԿ-ը հիմնականում խուսափել է գոյություն ունեցող մասնակից պետությունների կազմում անջատողական խմբերի տարածքային նկրտումների վերաբերյալ միաձայն մեկնաբանություններ տալուց: Անջատման ապագա հնարավոր թեկնածուների շարքում են Չեչնիայի, Քվեբեկի և Կոսովոյի ժողովուրդները, սակայն նրանց անջատման միջազգային իրավունքի գոյությունը կվիճարկվի համապատասխանաբար Ռուսաստանի Դաշնության, Կանադայի և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության կողմից: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը դատապարտել է Մարոկկոյի քաղաքականությունը Արևմտյան Սահարայի առնչությամբ¹²:

¶ 9. Կոմիտեն շարունակում է մտահոգվել Արևմտյան Սահարայում ինքնորոշման հարցին նվիրված հանրաքվեի նախապատրաստական աշխատանքների շատ դանդաղ ընթացքով և այդ տարածաշրջանում մարդու իրավունքների իրացման վերաբերյալ տեղեկությունների բացակայությամբ: Մասնակից պետությունը պետք է գործի ավելի արագ և լիովին համագործակցի հանրաքվեի նախապատրաստական աշխատանքներում:

Քանի որ Արդարադատության միջազգային դատարանը վճիռ է կայացրել, որ Արևմտյան Սահարայի ժողովուրդներն արտաքին ինքնորոշման իրավունք ունեն¹³, զարմանալի չէ, որ ՄԻԿ-ն առանձնացրել է նրանց անջատողական ձգտումները և տվել իր բացահայտ հավանությունը:

ՆԵՐՔԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ

[7.13] Ներքին ինքնորոշումը վերաբերում է ժողովուրդների՝ պետության ներսում իրենց քաղաքական կարգավիճակն ընտրելու կամ նշանակալի քաղաքական մասնակցություն ունենալու իրավունքին¹⁴: Օրինակ՝ ժողովրդավարական վարչակարգի կայացումը Հարավային Աֆրիկայում փաստորեն այդ երկրի սևամորթ մեծամասնության ներքին ինքնորոշման իրավունքի իրացում էր: Ներքին ինքնորոշում հասկացությունը շատ առումներով համընկնում է 25-րդ հոդվածով (քաղաքական մասնակցության իրավունք)¹⁵ և 27-րդ հոդվածով (փոքրամասնությունների իրավունքներ)¹⁶ երաշխավորված իրավունքների հետ: Եվ իրականում Կասեսեն ներքին ինքնորոշումը նկարագրում է որպես «դաշնագրում զետեղված իրավունքների ամբողջականության դրսևորում»¹⁷:

[7.14]

ՌԽՎԿ-ի ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. ...ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ներքին հայեցակետ ունի, այն է՝ բոլոր ժողովուրդների՝ ազատորեն և առանց արտաքին միջամտության իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումով զբաղվելու իրավունքը: Այս առումով կապ կա յուրաքանչյուր քաղաքացու՝ ցանկացած մակարդակով պետական գործերի իրականացմանը մասնակցելու իրավունքի հետ, որը մեջբերվում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 5-րդ հոդվածի (գ) կետում: Հետևաբար, կառավարություններում պետք է ներկայացվի ամբողջ ազգաբնակչությունը՝ առանց ռասայի, գույնի, սոցիալական, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշով խտրականության:

¶ 5. Պետության կազմում գտնվող բոլոր ժողովուրդների իրավունքները հիմնովին հարգելու նպատակով կառավարություններին կոչ է արվում պահպանել և լիովին իրականացնել մարդու իրավունքների գծով միջազգային փաստաթղթերը և, մասնավորապես, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան: Կառավարությունների քաղաքականությունները պետք է մարդու իրավունքների պաշտպանության հարցում ուղղորդվեն հոգատարությամբ՝ առանց ռասայական, ցեղային, կրոնական կամ այլ հատկանիշով պայմանավորված խտրականության: Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 2-րդ հոդվածի և համապատասխան այլ միջազգային փաստաթղթերի համաձայն՝ կառավարությունները պետք է ուշադիր լինեն էթնիկական խմբերին պատկանող անձանց իրավունքների հարցում, մասնավորապես՝ արժանավայել կյանք վարելու, իրենց մշակույթը պահպանելու և ազգային առաջընթացի արդյունքներից հավասարաչափ օգտվելու, ինչպես նաև իրենց դերակատարումն այն երկրի կառավարությունում ունենալու առումով, որի

¹² (1999 թ.) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 113:

¹³ *Western Sahara Advisory Opinion* [1975] ICJ Rep. 12.

¹⁴ McCorquodale, վերը, ծնթ. 3, էջ 864:

¹⁵ Տե՛ս ընդհանուր 22-րդ գլուխը:

¹⁶ Տե՛ս ընդհանուր 24-րդ գլուխը:

¹⁷ A. Cassese, *Self-Determination of Peoples* (Cambridge University Press, Cambridge, 1995), 53.

քաղաքացիներ են հանդիսանում այդ խմբի անդամները: Կառավարությունները նաև պետք է ուսումնասիրեն համապատասխան սահմանադրական շրջանակներում իրենց քաղաքացիների թվին պատկանող էթնիկական կամ լեզվական խմբերի ներկայացուցիչներին այնպիսի գործունեության մեջ ներգրավելու հնարավորությունը, որն առանձնապես կապված է նման անձանց կամ խմբերի ինքնության պահպանման հետ:

[7.15] Հետևաբար, ինքնորոշումը բարդ իրավունք է և ենթադրում է «ներքին» ու «արտաքին» տեսակներ: Այս իրավունքը պատկերավոր կարելի է նկարագրել որպես քաղաքական ազատականացման տարբեր աստիճանների սահող սանդղակ, որը ներկայացնում է ներքին ինքնորոշման իրավունքների տարբեր ծևեր՝ հասնելով այդ իրավունքի գագաթնակետին, ասել է թե՛ արտաքին ինքնորոշմանը, որը շնորհվում է միայն բացառիկ հանգամանքներում¹⁸: Տարբեր «ժողովուրդներ» ունեն ինքնորոշման տարբեր «աստիճանի» իրավունք:

[7.16] Առաջադրվում է այն պնդումը, որ ժողովուրդն անջատման եղանակով արտաքին ինքնորոշման իրավունք ունի¹⁹, երբ ապրում է գաղութային²⁰ կամ նեոգաղութային տիրապետության ներքո²¹, կամ երբ ժողովուրդն այնքան է ենթարկվում հալածանքների, և նրա մարդու իրավունքները խախտվում են այնպիսի պարբերականությամբ, որ արտաքին ինքնորոշումն անհրաժեշտ է նման չարաշահումները վերացնելու և հեռանկարում նրա՝ որպես ժողովրդի գոյությունը պահպանելու համար²²: Կարող են նաև այլ դեպքեր լինել, երբ ժողովուրդներն ազատորեն միմյանցից անջատվելու համաձայնության են գալիս²³, ինչպես 1993 թ. Չեխոսլովակիան խաղաղ ճանապարհով բաժանվեց՝ ստեղծելով Չեխիայի և Սլովակիայի առանձին հանրապետություններ: Եվ, վերջապես, այն ժողովուրդները, որոնք արտաքին ինքնորոշման իրավունք չունեն, այնուամենայնիվ ներքին ինքնորոշման իրավունք ունեն:

1-ին հոդվածի 2-րդ կետ

[7.17] 1-ին հոդվածի 2-րդ կետում նշվող իրավունքը ներկայանում է որպես շատ կարևոր իրավունք: Օրինակ՝ դրա դրույթները ենթադրում են, որ կառավարությունը չի կարող թույլ տալ որևէ ժողովրդի հողի վրա հանքավայրի շահագործում՝ առանց վերջինիս հավանության²⁴: Տվյալ իրավունքը մեղմացվում է «միջազգային տնտեսական համագործակցությունից բխող որոշակի միջազգային պարտավորությունների» վերապահումով: Սակայն այդ մեղմացումը կարող է չեզոքացվել դաշնագրի 47-րդ հոդվածով²⁵, որը նախատեսում է.

Սույն դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես բոլոր ժողովուրդների՝ իրենց բնական հարստությունից ու ռեսուրսներից լիարժեքորեն և ազատորեն օգտվելու և դրանք օգտագործելու անկապտելի իրավունքի սահմանափակում:

¹⁸ Տե՛ս F. Kirgis Jr, 'The Degrees of Self-Determination in the United Nations Era' (1994) 88 *American Journal of International Law* 304, 306, and B. Kingsbury, 'Claims by Non-State Groups in International Law', (1992) 25 *Cornell International Law Journal* 481, 503:

¹⁹ Ժողովուրդների արտաքին ինքնորոշման իրավունքի ճանաչման վերաբերյալ տե՛ս հիմնականում՝ Joseph, վերը, ծնթ. 6, և S. Joseph, 'Resolving Conflicting Claims of Territorial Sovereignty and External Self-Determination, Part 2' (1999) 3 (2) *International Journal of Human Rights* 49:

²⁰ Տե՛ս [7.10]:

²¹ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած զավթումները կարելի է անվանել «նեոգաղութային իրավիճակներ», որոնք հազվադեպ են ճանաչվում միջազգային հանրության կողմից: Օրինակ՝ Ինդոնեզիայի կողմից Արևելյան Թիմորի զավթման մասին տե՛ս Գլխավոր ասամբլեայի թիվ 3485 (XXX) բանաձևը և Անվտանգության խորհրդի թիվ 384 բանաձևը (1975 թ.): Չինաստանի կողմից Տիբեթի զավթման վերաբերյալ տե՛ս Գլխավոր ասամբլեայի 1961 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1723/16 բանաձևը: Օրինակ՝ Իսրայելի գրավյալ տարածքների վերաբերյալ տե՛ս ՄԱԿ-ի փաստաթուղթ A/RES/ES-7/2, GAOR, 7-րդ արտահերթ նստաշրջան, լրացում 1,3 (1980 թ.): Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի զավթման վերաբերյալ տե՛ս 1974 թ. Անվտանգության խորհրդի թիվ 353 բանաձևը, 1978 թ. թիվ 440 բանաձևը և 1983 թ. նոյեմբերի 18-ի թիվ 541 բանաձևը: Տե՛ս նաև վերը, ծնթ. 19, 52-3:

²² Բազմաթիվ մեկնաբաններ ճանաչել են «արտաքին ուղղիչ ինքնորոշման» իրավունքը, օրինակ՝ L. Buchheit, *Secession: The Legitimacy of Self-Determination* (Yale University Press, New Haven, Conn., 1978), 220, և R. White, վերը, ծնթ. 3, 160: Դրա գոյությունը նույնպես ենթադրվում է Բարեկամական հարաբերությունների մասին հռչակագրում, որը տարածքային ամբողջականությունը երաշխավորում է միայն այն պետությունների համար, որոնք «վարվում են իրավունքների հավասարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին համապատասխան»: Տե՛ս նաև Ռեպուբլիկի թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությունը, կետ 6 [7.11]:

²³ Տե՛ս օրինակ՝ Ռեպուբլիկի թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությունը, կետ 6 [7.11]:

²⁴ Այս առնչությամբ տե՛ս [24.28]:

²⁵ McGoldrick, վերը, ծնթ. 1, 15 և 251:

[7.18] Դժբախտաբար, ՄԻԿ-ը շատ քիչ լույս է սփռել 1-ին հոդվածի 2-րդ կետի դրույթների վրա: Նրա ամենամշանակալի հայտարարություններն արվել են բնիկ ժողովուրդների հողային իրավունքների համատեքստում: Կանադայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշեց²⁶:

¶ 8. Կոմիտեն նշում է, որ մասնակից պետության խոստովանությամբ՝ բնիկ ժողովուրդների հարցում իրավիճակը չարունակում է մնալ «կանադացիների առջև ծառացած մարդու իրավունքների խնդիրներից ամենահրատապը»: Այս կապակցությամբ կոմիտեն առանձնապես մտահոգված է նրանով, որ մասնակից պետությունը դեռևս չի իրականացրել Բնիկ ժողովուրդների հարցերով թագավորական հանձնաժողովի (ԲԺԹՅ) հանձնարարականները: ԲԺԹՅ-ի այն եզրակացության առնչությամբ, որ եթե չհատկացվեն ավելի շատ հողեր և ռեսուրսներ, ապա բնիկ ժողովուրդների ինքնակառավարման հաստատությունները չեն գործի, կոմիտեն ընդգծում է, որ ինքնորոշման իրավունքը, ի թիվս այլոց, պահանջում է, որ բոլոր ժողովուրդներն ի վիճակի լինեն ազատորեն օգտվելու իրենց բնական հարստություններից ու ռեսուրսներից, և արգելվում է զրկել նրանց գոյատևման սեփական միջոցներից (1-ին հոդվածի 2-րդ կետ): Կոմիտեն առաջարկում է, որ վճռական ու հրատապ քայլեր ձեռնարկվեն՝ ապահովելու հողերի և ռեսուրսների հատկացման վերաբերյալ ԲԺԹՅ-ի հանձնարարականների լրիվ իրականացումը: Կոմիտեն առաջարկում է նաև, որ բնիկ ժողովուրդներին ներհատուկ իրավունքները վերացնելու վարվելակերպը՝ որպես դաշնագրի 1-ին հոդվածի դրույթներին հակասող, առհասարակ վերացվի:

Այսպիսով, բնիկ ժողովուրդների իրավունքների վերացումը կամ դրանց ենթադրյալ նվազեցումը խախտում է 1-ին հոդվածի 2-րդ կետը²⁷:

[7.19] ՄԻԿ-ը նաև հայտարարություն է արել Շվեդիայի առնչությամբ²⁸.

¶ 15. Կոմիտեն մտահոգված է այն հանգամանքով, որ սամի ժողովրդի խորհրդարանը սահմանափակ դեր ունի այս բնիկ ժողովրդի ավանդական հողերի և տնտեսական գործունեության վրա անդրադարձող հարցերի հետ կապված որոշումների կայացման գործընթացում, օրինակ՝ ջրաէներգետիկայի, հանքարդյունաբերության և անտառապահության ոլորտում, ինչպես նաև հողի մասնավորեցման հարցերում:

Այսպիսով, բնիկ ժողովուրդները պետք է իրական քաղաքական ազդեցություն ունենան իրենց ավանդական հողերի օգտագործմանն առնչվող հարցերում:

1-ին հոդվածի 3-րդ կետ

[7.20]

ԹԻՎ 12 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Կոմիտեի կարծիքով՝ 3-րդ կետն առանձնապես կարևոր է նրանով, որ այն մասնակից պետությունների վրա որոշակի պարտավորություններ է դնում ոչ միայն սեփական ժողովուրդների, այլև այն ժողովուրդների առնչությամբ, որոնք ի վիճակի չեն եղել իրացնելու իրենց ինքնորոշման իրավունքը կամ զրկված են եղել այն իրացնելու հնարավորությունից: Այս կետի ընդհանրական բնույթը հաստատվում է դրա նախագծման պատմությամբ: Պարտավորությունները գոյություն ունեն անկախ այն հանգամանքից՝ ինքնորոշման իրավունք ունեցող ժողովուրդը կախված է դաշնագրին անդամակցող պետությունից, թե՞ ոչ: Դրանից հետևում է, որ դաշնագրին անդամակցող բոլոր մասնակից պետությունները պետք է դրական քայլեր ձեռնարկեն՝ նպաստելու ժողովուրդների կողմից ինքնորոշման իրավունքի իրացմանը և հարգեն այդ իրավունքը: Նման դրական գործողությունները պետք է համապատասխանեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը և միջազգային իրավունքին, մասնավորապես՝ պետությունները պետք է ձեռնպահ մնան այլ պետությունների ներքին գործերին միջամտելուց, ինչը բացասաբար է անդրադառնում ինքնորոշման իրավունքի իրացման վրա...

²⁶ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 105:

²⁷ ՌԽՎ կոմիտեն համարեց, որ բնիկ ժողովուրդների իրավունքների նվազեցումը խախտում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի դրույթները, քանի որ ռասայական տեսանկյունից խտրական բնույթ ունի: 1999 թ. եզրափակիչ դիտարկումներ Ավստրալիայի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CERD/C/54/Misc.40/Rev.2, տես [24.16]: Ինքնորոշման բնույթի և գոյատևման տնտեսական ու սոցիալական տեսանկյունների հետ դրա կապի առնչությամբ տես S. J. Anaya, *Indigenous People and International Law* (Oxford University Press, New York, 1996):

²⁸ Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/74/SWE: Տես [24.28], որտեղ բնիկ ժողովուրդները, առաջնորդվելով կամընտիր արձանագրությամբ, բողոքներ են ներկայացրել (հիմնականում ապարդյուն) հողի օգտագործումից բխող իրենց մշակութային իրավունքների խախտման առնչությամբ:

[7.21] 1-ին հոդվածի 3-րդ կետն արտասովոր է նրանով, որ պետությունների վրա պարտավորություններ է դնում նրանց իրավագործության ոլորտից դուրս գտնվող անձանց մասով, փաստորեն, եթե անգամ տվյալ անձինք գտնվում են այլ մասնակից պետության իրավագործության ներքո²⁹: Այս դրույթը գերազանցում է 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված սովորական պարտավորությունը, այն է՝ հարգել և ապահովել դաշնագրով նախատեսված իրավունքները սեփական իրավագործության ներքո գտնվող անձանց համար³⁰: Մասնակից պետություններից ակնկալվում է, որ նրանք դրական քայլեր ձեռնարկեն՝ «խթանելու» ինքնորոշման իրավունքներն այնտեղ, որտեղ դրանք մերժվել են: Նման միջոցառումների շարքում կարող է ընդգրկվել դիվանագիտական հարաբերությունների խզումն այն պետությունների հետ, որոնք մերժում են ինքնորոշման իրավունքը³¹: Այդուհանդերձ, պետությունները պետք է հետևեն ՄԱԿ-ի կանոնադրությանը և չմիջամտեն այլ պետությունների ներքին գործերին: Ուստի արգելվում է նրանց ուժ գործադրել՝ աջակցելով օտար պետությունում ճնշված ժողովուրդներին ինքնորոշման իրավունքը իրացնելու հարցում³²:

Անդատաքննելիությունն առաջին կամընտիր արձանագրությամբ

[7.22] Չնայած 1-ին հոդվածի անժխտելի կարևորությանը՝ ՄԻԿ-ը տարօրինակորեն որոշել է, որ այն դատաքննելի չէ առաջին կամընտիր արձանագրությամբ:

«ԿԻՏՈԿՆ ընդդեմ ՇՎԵԴԻԱՅԻ» (KITOK v SWEDEN, 197/85)

Այս գործով հանդես եկող հեղինակը, որը Յուլիսային Սկանդինավիայի սամի ժողովրդի ներկայացուցիչ էր, բողոքում էր, որ իրեն զրկել են հյուսիսային եղջերուների բուծման իրավունքից՝ ենթադրաբար խախտելով, ի թիվս այլոց, 1-ին հոդվածի դրույթները³³: ՄԻԿ-ն այս բողոքի անընդունելիության մասին որոշում կայացրեց հետևյալ ձևակերպումներով.

¶ 6.3. ...Կոմիտեն նշում է, որ հեղինակը, լինելով անձ, չի կարող պնդել է, որ դաշնագրի 1-ին հոդվածում ընդգրկված ինքնորոշման իրավունքի ուղեհարման գոհ է: Կամընտիր արձանագրությունը նախատեսում է իրավունքի վերականգնման ընթացակարգ այն անձանց համար, որոնք հայտարարում են իրենց իրավունքների խախտման մասին, մինչդեռ 1-ին հոդվածը վերաբերում է ժողովուրդներին շնորհված իրավունքներին:

1-ին հոդվածի նկատմամբ դատաքննելիության բացակայության մասին Կիտոկի գործով որոշմանը հաջորդել են մի շարք այլ գործեր, այդ թվում՝ «Օմինայակն ընդդեմ Կանադայի» (*Ominayak v Canada, 167/84*)³⁴, «Մարշալն ընդդեմ Կանադայի» (*Marshall v Canada, 205/86*)³⁵ և «Մահուիկան ընդդեմ Նոր Զելանդիայի» (*Mahuika v New Zealand, 547/93*)³⁶:

[7.23] Ցավալի է, որ ՄԻԿ-ը որդեգրել է «տուժող» ճանաչվելու համար կամընտիր արձանագրության պահանջի նման մեղ մեկնաբանություն³⁷, բացառելով 1-ին հոդվածի դրույթներով բողոքարկողների դիմումները և զրկելով տուժողներին 1-ին հոդվածով սահմանված իրավունքների խախտումներից մի-

²⁹ McGoldrick, վերը, ծնթ. 1, 253: Տե՛ս նաև 4-րդ գլուխը մասնակից պետության պատասխանատվության տարածքային սահմանների վերաբերյալ:

³⁰ McGoldrick, վերը, ծնթ. 1, 253:

³¹ 80-ական թվականներին՝ նախքան եզրափակիչ դիտարկումներ ներկայացնելու գործելակերպի սկզբնավորումը, ՄԻԿ-ի առանձին անդամներ հարցաքննում էին մասնակից պետության ներկայացուցիչներին Իսրայելի (Պաղեստինի գրավյալ տարածքների կապակցությամբ) և Հարավային Աֆրիկայի (ապարտիդի համակարգի առնչությամբ) հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին: Նույնը 251-2:

³² Տե՛ս J. Crawford, *The Creation of States in International Law* (Clarendon Press, Oxford, 1979), 114-18: Հարկ է նշել, որ մարդասիրական միջամտության վերաբերյալ միջազգային իրավունքում չկա որևէ պաշտոնապես ընդունված ընդհանուր գաղափարախոսություն: Տե՛ս օրինակ՝ B. Simma, 'NATO, the UN, and the Use of Force: Legal Aspects' (1999) 10 *European Journal of International Law* 1:

³³ Տե՛ս այս բողոքի հայեցակետը 27-րդ հոդվածով այստեղ՝ [24.18]:

³⁴ Կետ 13.3: Թեև Լյուբիկոն լճի ցեղախումբը կարելի է անվանել «ժողովուրդ»՝ 1-ին հոդվածի շրջանակներում, սակայն կամընտիր արձանագրությունն ավելի շուտ վերաբերում է անձանց, քան ժողովուրդներին: Տե՛ս [3.15-3.17]:

³⁵ Պարբ. 5.1 (նաև հայտնի է որպես *Mikmaq Tribal Society v Canada*):

³⁶ Պարբ. 9.2:

³⁷ Տե՛ս նաև [3.15-3.17]:

ջազգային իրավունքի պաշտպանության կարևոր միջոցից³⁸: Որոշ բողոքներ կարող էին թերևս ավելի դրական արդյունք ունենալ, եթե հեղինակներին թույլատրվեր հիմնվել 1-ին հոդվածի, ոչ թե դաշնագրի անձնական իրավունքների վրա: Օրինակ՝ «*Բորդեսը և Տենեհարոն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Bordes and Temeharo v France, 645/95*) գործով հանդես եկող հեղինակներն ապարդյուն բողոքում էին, որ Ֆրանսիայի կողմից միջուկային զենքի փորձարկումներն իրենց կղզիների մոտակայքում խախտում է իրենց կյանքի և ընտանեկան կյանքի իրավունքները³⁹: Եթե բողոքը ներկայացվեր 1-ին հոդվածի դրույթներով առ այն, որ փորձարկումներն իրականացվում էին առանց կղզու բնակիչների համաձայնության և կարող են լուրջ վնաս հասցնել շրջակա միջավայրին, հավանաբար, այն առավել իրագործելի կլիներ:

[7.24] «*Դիերգաարտն ընդդեմ Նամիբիայի*» (*Diernaardt v Namibia, 760/97*) գործում հեղինակները պնդում էին, որ Ռեհոբոթ Բաստերս անվանմամբ իրենց խմբի քաղաքական կարողությունները նվազել են երկու տարածաշրջանների միջև իրենց «ավանդական» ինքնավար տարածքի բաժանման հետևանքով, ինչը փոքրամասնության է վերածել Բաստերս խմբին այդ երկու շրջաններում՝ մեկ տարածքում մեծամասնություն կազմելու փոխարեն: Այն պնդումը, որ խմբի (էթնիկական Ռեհոբոթ Բաստերս անվանումով խումբ Նամիբիայում) քաղաքական կարողությունների նվազեցումը խախտում է 25-րդ հոդվածը (որը երաշխավորում է արդյունավետ քաղաքական մասնակցության իրավունքը), չհիմնավորվեց այդ իրավունքի անձնական բնույթի պատճառով [22.05]: Դիերգաարտի գործը ևս մեկ օրինակ է, թե ինչպես բողոքն ավելի շատ համապատասխանում է 1-ին հոդվածով ճանաչված հավաքական իրավունքներին, քան անձնական դատաքննելի իրավունքներին: Համենայն դեպս, քիչ հավանական էր, որ ՄԻԿ-ը Նամիբիայի սահմանադրական որոշումները այս հոդվածին հակասող հայտարարեր՝ հաշվի առնելով, որ նույն այդ որոշումները կայացվել են Նամիբիայի ժողովուրդների՝ 1-ին հոդվածով նախատեսված իրավունքներին նպաստելու համար, քանի որ նրանք երկար ժամանակ Հարավային Աֆրիկայի կողմից զրկված են եղել ինքնորոշման իրավունքից [22.06]:

Եզրակացություն

[7.25] ՔՔԻՄԴ-ի 1-ին հոդվածի նախադեպային բազան աղքատ և հիասթափեցնող էր: Ժամանակն է, որ այս կարևոր իրավունքին նվիրված իրավական նորմերում ՄԻԿ-ը հանդես գա ավելի նշանակալի ներդրմամբ: Առաջարկվում է նաև, որ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն թողարկի մի ընդհանուր մեկնաբանություն երկու փաստաթղթերի նույն 1-ին հոդվածի վերաբերյալ:

³⁸ Վերը, ծնթ. 17: Կասեսեն համոզիչ փաստարկներ է բերում այս հարցում կամընտիր արձանագրության ավելի ազատական մեկնաբանության օգտին, 141-6 և 345-6:

³⁹ Այս գործի վերաբերյալ տե՛ս [3.35]:

Կյանքի իրավունք. հոդված 6

• Պետության ձեռքով չսպանվելու իրավունք.....	[8.02]
• Սպանության փորձ	[8.08]
• Պետության՝ իրականացվող սպանությունները հետաքննելու պարտականություն.....	[8.09]
• Պետության՝ իրականացվող սպանությունների մեղավորներին պատժելու պարտականություն.....	[8.15]
• Մահապատիժ	[8.19]
• Պարտադիր մահապատիժներ	[8.27]
• Ներում հայցելու իրավունք	[8.31]
• Մահապատիժ ազատված անձինք	[8.32]
• Հանցագործի հանձնումը մահապատիժ կիրառող պետությանը	[8.33]
• Կյանքի դրական իրավունք	[8.39]
• Համապատասխան անձնակազմ պատրաստելու պարտականություն	[8.39]
• Ազատազրկվածներին պաշտպանելու պարտականություն	[8.40]
• Մասնավոր անձանց հսկելու պարտականություն	[8.42]
• 6-րդ հոդվածի սոցիալ-տնտեսական հայեցակետերը	[8.45]
• Կանայք և կյանքի իրավունքը	[8.49]
• Մասնակցությունը պատերազմին	[8.50]
• Միջուկային ներուժ	[8.51]
• Աբորտ	[8.55]
• Էվթանազիա	[8.58]
• Եզրակացություն	[8.60]

6-րդ ՅՈՒՆԱԾ

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից:

2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենաճանր հանցագործությունների համար, հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում սույն դաշնագրի և Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթներին: Այդ պատիժը կարող է իրականացվել միայն ի կատարումն իրավասու դատարանի կայացրած վերջնական դատավճռի:

3. Այն դեպքում, երբ կյանքից զրկելը ցեղասպանության հանցագործություն է, պետք է նկատի ունենալ, որ սույն դաշնագրի մասնակից պետություններին սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս որևէ կերպ շեղվել Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթների համաձայն ստանձնած ցանկացած պարտավորությունից:

4. Մահապատժի դատապարտված յուրաքանչյուր ոք ներում կամ դատավճռի մեղմացում հայցելու իրավունք ունի: Համաներումը, ներումը կամ դատավճռի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

5. Մահապատիժ չի նշանակվում տասնութ տարեկանից ցածր անձանց կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն դաշնագրի մասնակից որևէ պետության կողմից մահապատժի վերացումը հետաձգելու կամ թույլ չտալու համար:

[8.01] 6-րդ հոդվածը պաշտպանում է կյանքի իրավունքը, որը, ՄԻԿ-ի նկարագրությամբ, «գերագույն իրավունք» է¹: 6-րդ հոդվածն ունի թե՛ բացասական բաղադրիչ՝ որպես պետության կամ նրա գործակալների ձեռքով կամայականորեն և ապօրինաբար կյանքից չզրկվելու իրավունք, թե՛ դրական բաղադրիչ՝ այն առումով, որ պետությունը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անձին ապրելու հնարավորություն են տալիս:

Պետության ձեռքով չսպանվելու իրավունք

[8.02]

ԹԻՎ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. Կյանքից կամայականորեն զրկվելուց պաշտպանությունը, ինչը 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասության անվերապահ պահանջն է, գերագույն կարևորություն ունի: Կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ոչ միայն հանցավոր գործողություններով կյանքից զրկելը կանխելու և պատժելու, այլև կամայական սպանությունները սեփական անվտանգության ուժերի կողմից կանխելու համար: Կյանքից զրկելը պետական իշխանությունների կողմից ծայրաստիճան լուրջ հարց է: Ուստի օրենքը պետք է խստորեն հսկի և սահմանափակի այն հանգամանքները, որոնց պարագայում անձը կարող է զրկվել կյանքից նման իշխանությունների կողմից:

[8.03]

«ՍՈՒԱՐԵՍ դե ԳԵՌԵՐՐՈՆ ընդդեմ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ» (SUAREZ de GUERRERO v COLOMBIA, 45/79)

ՄԻԿ-ն իր տեսանկյունը հիմնավորել է հետևյալ փաստերով: 1978 թ. ապրիլի 13-ին Բոգոտայի մի տան վրա ոստիկանությունը հարձակում կատարեց՝ կարծելով, որ առևանգված նախկին դեսպանը պահվում է այնտեղ: Դեսպանին չգտան, սակայն ոստիկանության աշխատակիցները թաքնվեցին տան ներսում և սկսեցին սպասել կասկածյալ առևանգիչների վերադարձին: Որոշ ժամանակ անց տուն մտան յոթ մարդ և սպանվեցին ոստիկանության աշխատակիցների արձակած կրակոցներից:

¶ 11.5. Թեև սկզբում ոստիկանությունում պնդում էին, որ սպանվածները զոհվել են ձերբակալվելիս դիմադրելու պատճառով, սպառնացել և նույնիսկ կրակել են տարբեր տեսակի զենքերից, սակայն դատաբժշկական փորձագիտության ինստիտուտի և ձգաբանների զեկույցները, ինչպես նաև պարաֆինային փորձարկման արդյունքները ցույց տվեցին, որ սպանվածներից ոչ ոք կրակոց չի արձակել, և նրանցից մի քանիսը սպանվել են թիկունքին կամ գլխին ստացած կրակոցներից: Հաստատվել է նաև, որ զոհվածները նույն ժամանակ չեն սպանվել, այլ որոշակի ընդմիջումներով տուն հասնելուց հետո, և նրանց մեծ մասը սպանվել է, երբ փորձել է փրկվել անակնկալ գրոհից:

Ոստիկանության՝ այս գործողություններին մասնակցող և բռնի մահ պատճառելու մեջ մեղադրվող աշխատակիցներն արդարացվել էին: Արդարացման դատավճիռը կայացվել է Կոլումբիայի օրենսդրությամբ՝ 1978 թ. հունվարի 20-ի թիվ 0070 որոշման 1-ին հոդվածի դրույթներով:

¶ 11.2. 1978 թ. հունվարի 20-ի թիվ 0070 օրենսդրական որոշմամբ լրացվել է քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածը հետևյալ ձևակերպմամբ. «Քանի դեռ հասարակական կարգը շարունակում է խանգարված մնալ, իսկ ազգային տարածքը գտնվում է պաշարման վիճակում...»: Այս որոշմամբ ստեղծվեց մի նոր հիմնավորում, որը կարող էր վկայակոչվել ոստիկանության մեղադրյալ աշխատողների կողմից, որպեսզի նրանք ազատվեին «դրամաշորթության և առևանգման, ինչպես նաև թմրամիջոցների արտադրության և մշակման ոլորտում հանցավոր գործողությունները կանխելու և դրանց հակազդելու նպատակով» կատարված պատժելի գործողությունների համար:

Չնայած Կոլումբիայի ազգային օրենսդրությամբ սպանությունները համարվել են «օրինական», ՄԻԿ-ը որոշեց, որ Մարիա Ֆանի Սուարես դե Գեռերոն կյանքից զրկվել է «կամայականորեն»՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ:

¶ 13.2. Սույն գործում, ելնելով այն հանգամանքից, որ ոստիկանության դիտավորյալ գործողությունների հետևանքով յոթ անձ զրկվել է կյանքից, ակնհայտ է դառնում, որ այդ գործողությունները դիտավորյալ են եղել: Ավելին՝ ոս-

¹ Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, կետ 1:

տիկանության գործողություններն ակնհայտորեն իրականացվել են առանց զոհերին զգուշացնելու և ոստիկանության ուժերին հանձնվելու հնարավորություն տալու կամ բացատրելու իրենց ներկայության պատճառները կամ մտադրությունները: Չկա որևէ ապացույց, որ ոստիկանության գործողություններն անհրաժեշտ էին սեփական կամ այլոց պաշտպանությունն ապահովելու համար, կամ այդ գործողություններն անհրաժեշտ էին տվյալ անձանց ձերբակալությունն իրականացնելու կամ նրանց փախուստը կանխելու համար: Ավելին՝ զոհերն ընդամենը հանդիսանում էին կասկածյալներ առևանգման մի դեպքով, որը տեղի էր ունեցել մի քանի օր առաջ, հետևաբար, ոստիկանության աշխատակիցների կողմից նրանց սպանությունը զրկեց նրանց դաշնագրով նախատեսված պատշաճ դատավարության ամբողջ պաշտպանությունից:

¶ 13.3. Այս պատճառներով կոմիտեն հակված է այն կարծիքին, որ ոստիկանության՝ տիկին Մարիա Ֆանի Սուարես դե Գեներոյի մահվանը հանգեցրած գործողությունները համաչափ չեն իրավապահ գործունեության պահանջներին տվյալ գործի հանգամանքներում, և նա զրկվել է կյանքից կամայականորեն՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին հակառակ: Քանի որ ոստիկանության գործողություններն արդարացվել են 1978 թ. հունվարի 20-ի թիվ 0070 օրենսդրական որոշմամբ, կյանքի իրավունքը պատշաճ կերպով չի պաշտպանվել Կոլումբիայի կողմից, ինչպես պահանջում է 6-րդ հոդվածի 1-ին կետը:

[8.04] *Սուարես դե Գեներոյի* գործը հաստատում է, որ «կամայական» հասկացությունն ավելի լայն է, քան «ապօրինի» հասկացությունը: Ասել է թե՛ սպանությունը կարող է խախտել 6-րդ հոդվածը, եթե նույնիսկ այն թույլատրված է ներպետական օրենսդրությամբ: Կյանքից «կամայական» զրկման արգելումը նշանակում է, որ չի կարելի զրկել կյանքից անողջամիտ կամ անհամաչափ հանգամանքներում: Սպանության գործողության կամայականության մասին վկայող ցուցանիշներից են դրա հիմքում ընկած մտադրությունը և նման գործողության անհրաժեշտությունը²:

[8.05] 13.3 կետում ՄԻԿ-ը հաստատում է, որ իրավապահ գործունեության համաչափ պահանջներն արդարացնում են պետության՝ մահացու ուժ գործադրելը: 13.2 կետում ՄԻԿ-ը շարադրում է համապատասխան պահանջներից մի քանիսը՝ նշելով, որ սպանությունները չեն կատարվել սեփական անձի կամ այլ անձանց պաշտպանության նպատակով, ոչ էլ ձերբակալելու կամ փախուստը կանխելու ընթացքում: Այս բացառությունները նույնությամբ վերարտադրում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված կյանքի իրավունքի բացառությունները «իրավապահ» գործողությունների համատեքստում³:

[8.05Ա] Վերջերս Իսրայելի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը դատապարտեց կասկածյալ ահաբեկիչների սպանությունների գործելակերպը և նշեց⁴⁴:

¶ 15. Կոմիտեն մտահոգված է մասնակից պետության կողմից գրավյալ տարածքներում կասկածյալ ահաբեկիչների «թիրախային սպանություններ» անվանվող երևույթով: Այս գործելակերպը կիրառվում է առնվազն որպես զսպիչ կամ պատժիչ միջոց՝ դրանով իսկ խնդիրներ առաջացնելով 6-րդ հոդվածի առնչությամբ: Թեպետև կոմիտեն նկատի է ունեցել պատվիրակության այն նկատառումը, որ ցանկացած պատասխան գործողություն ահաբեկչական գործողություններին հարգում է համամասնության սկզբունքը քաղաքացիական բնակչության նկատմամբ, և այն պնդումը, որ որպես թիրախ են վերցվել միայն ռազմական գործողություններում անմիջական մասնակցություն ունեցող անձինք, այսուհանդերձ կոմիտեն շարունակում է մտահոգել Իսրայելի պաշտպանության բանակի՝ պաղեստինցի ահաբեկիչների գրոհներին ի պատասխան գործողությունների բնույթն ու աստիճանը:

Մասնակից պետությունը չպետք է «թիրախային սպանությունները» կիրառի որպես զսպիչ կամ պատժիչ միջոց: Մասնակից պետությունը պետք է ապահովի, որ համամասնության սկզբունքն արժանանա առավելագույն ուշադրության ահաբեկչական սպառնալիքներին և գործողություններին ի պատասխան ձեռնարկվող բոլոր քայլերի ժամանակ: Պետական քաղաքականությունն այս առնչությամբ պետք է պարզ և մանրամասն ամրագրված լինի տարածքային զինվորական ղեկավարների համար նախատեսված ուղեցույցներում, իսկ ուժի անհամաչափ գործադր-

² Տե՛ս D. McGoldrick, *The Human Rights Committee* (Clarendon Press, Oxford, 1994), 342. Տե՛ս նաև, թե ինչպես է «կամայական» բառը մեկնաբանվել այլ երաշխիքների համատեքստում, ինչպիսիք են 9-րդ հոդվածի 1-ին կետը [11.13] և 17-րդ հոդվածը [16.12]:

³ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ տե՛ս այստեղ՝ *McCann and Others v UK*, Series A, No. 324, Judgement of 27 September 1995 և այստեղ՝ *Andronicou v Cyprus*, Case 86/1996/705/897, Judgement of 25 August 1997, որոնք մեջբերվում են այստեղ՝ (1998) 3 *Butterworths Human Rights Reports* 389:

⁴ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/ISR: Տե՛ս նաև՝ S. Joseph, 'Denouement of the Deaths on the Rock: the Right to Life of Terrorists' (1995) 14 *Netherlands Quarterly of Human Rights* 5:

ման մասին բողոքները պետք է անհապաղ քննվեն անկախ մարմնի կողմից: Ահաբեկչական գործողությունների կատարման մեջ կասկածվող անձի ձերբակալությանն ուղղված բոլոր միջոցները պետք է սպառվեն՝ մահացու ուժի գործադրումից խուսափելու համար:

[8.06] 1994 թ. Կիպրոսի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգված էր նրանով, որ ոստիկանության աշխատակիցներին «ուժի գործադրման» հարցում տրվում են «սեփական հայեցողության» լայն լիազորություններ⁵: ՄԻԿ-ն առաջարկեց, որ Կիպրոսը վերաձևակերպի համապատասխան հրահանգներ՝ համապատասխանեցնելով դրանք Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի գործածման մասին ՄԱԿ-ի ընդհանուր սկզբունքների⁶: Նման հանձնարարականներ տրվել են նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներին⁷, վերջերս նաև Պորտուգալիային⁸: ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքները, ուստի նաև 6-րդ հոդվածը խիստ սահմանափակում են հնարավոր մահացու ուժի գործադրումը: Մասնավորապես, 9-րդ հիմնարար սկզբունքն առաջարկում է հրազենն օգտագործել միայն այն դեպքում, «երբ դա խիստ անխուսափելի է կյանքը պաշտպանելու համար»⁹:

[8.07] Հարկ է հաշվի առնել այն զգալի տարբերությունը, որ *Սուարես դե Գեներոյի* գործով մեջբերված սպանությունները «միտումնավոր» էին¹⁰: Արդյոք պետական գործակալների կողմից ոչ միտումնավոր կամ անփութությամբ կատարված սպանությունները խախտո՞ւմ են 6-րդ հոդվածի 1-ին կետը: Այս հարցին անդրադառնում ենք հաջորդ գործում:

ԲԱՌԵԼՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ (BURRELL v JAMAICA, 546/93)

Ռիքի Բառելը ճամայկայում մահապատժի դատապարտված բանտարկյալ էր և սպանվել էր բանտապահի ձեռքով կալանավայրում 1993 թ. տեղի ունեցած անկարգությունների ընթացքում: Բառելի փաստաբանը ապացույցներ ներկայացրեց, որ Բառելը սպանվել է «սառնասրտորեն»:

Պետությունը պատասխանեց հետևյալ կերպ.

¶ 4.1. 1994 թ. հուլիսի 22-ին ներկայացրած իր հայտարարությանը կից մասնակից պետությունը տրամադրում է 1994 թ. մայիսի 15-ին ավագ տեսուչ Բ. Ռ. Նյումանի զեկույցի պատճենը, որտեղ շարադրվում են պրն Բառելի մահվան հանգամանքները: Ձեկույցում նշվում է, որ պրն Բառելը զբաղեցնում էր Սբ Կատարինա քրեակատարողական հիմնարկի «Ջիբրալթար» բաժնի թիվ 10 բանտախոցը: «Ջիբրալթար» կոչվող բաժնի տերևարկանի շինություն է՝ բաժանված չորս մասի, որոնցից յուրաքանչյուրում կա մոտ 26 բանտախոց՝ զուրկ սանիտարական հարմարություններից: Յուրաքանչյուր մասը վերահսկվում է բանտապահների մի խմբի կողմից: Բոլոր սանիտարական հարմարությունները գտնվում են բակում: Բանտարկյալներին խցերից դուրս են բերում հինգ-հինգ՝ քայլելու, մարզվելու և սնվելու համար:

¶ 4.2. Ձեկույցում նշվում է, որ 1993 թ. հոկտեմբերի 31-ին՝ ժամը մոտ 12:30-ին, երկրորդ նախաճաշի մատուցումը մոտենում էր ավարտին: Այդ պահին հերթափոխը ստանձնած չորս բանտապահներ զբաղված էին նրանով, որ կողպում էին իրենց խցերում «Ջիբրալթար 1» բաժնում գտնվող բանտարկյալներից ոմանց, այդ թվում նաև պրն Բառելին, որոնք դեռևս գտնվում էին անցուղում: Իրենց անհայտ պատճառներով բակում «Ջիբրալթար 2» բաժնի երկու բանտարկյալների և բանտապահների միջև վեճ է բռնկվում: Այս երկու բանտարկյալները, հանկարծակիի բերելով բանտապահներին, դրսից ներխուժում են անցուղի և հարձակվում բանտապահների վրա: Ձեկույցում ասվում է, որ մյուս երկու բանտարկյալները, այդ թվում նաև՝ պրն Բառելը, միանում են նրանց և խլում բանտապահներից մահակներն ու բանալիները և դրանց օգնությամբ բացում խցերից մի քանիսը: Բանտապահներին քարշ տալով՝ մտցնում են 9-րդ և 10-րդ խցեր, որտեղ նրանց ծեծի են ենթարկում: Կարճ ժամանակ անց հայտնվում են այլ բանտապահներ և հրամայում են բանտարկյալներին ազատ արձակել պատանդներին: Ասվում է, որ բանտարկյալները հրաժարվում են կատարել այդ պահանջը, ինչից հետո կրակոցներ են արձակվում: Վիրավոր բանտապահները և բանտարկյալները տեղափոխվում են Սփենիչ թաուն քաղաքի հիվանդանոց, որտեղ էլ արձանագրվում է պրն Բառելի և երեք այլ բանտարկյալների մահվան փաստը:

⁵ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 39, կետ 6:

⁶ Նույնը, պարբ. 18: Հիմնական սկզբունքներն արտատպված են այստեղ՝ *UN Human Rights-A Compilation of International Instruments*, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/CONF. 144/28 (1990):

⁷ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50, կետ 32:

⁸ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/PRT, կետ 9:

⁹ Տե՛ս նաև՝ N. Rodley, 'Rights and Responses to Terrorism in Northern Ireland', այստեղ՝ D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 142-3:

¹⁰ Պարբ. 13.2:

¶ 4.3. Մասնակից պետությունը նշում է, որ հետմահու զննման զեկույցից երևում է՝ պրն Բառելը մահացել է հրազենով և բութ գործիքով հասցված վնասվածքներից: Նաև նշվում է, որ վկաների ցուցմունքների համաձայն՝ կրակոցները շարունակվում էին նույնիսկ բանտապահների փրկվելուց հետո:

¶ 4.4. Մասնակից պետությունը հայտարարում է՝ Ռիք Բառելի մահվան հանգամանքներից ակնհայտ է, որ նա զոհվել է «Ջիբրալթար 2» բաժնի երկու մահապատժի դատապարտված բանտարկյալների և հսկիչ խմբի որոշ բանտապահների միջև բռնկված պայքարի հետևանքով: Մասնակից պետությունը նշում է, որ ըստ երևույթին պրն Բառելը տեղյակ չի եղել միջադեպից, ինչը, հավանաբար, թշնամական արձագանք է առաջացրել «Ջիբրալթար 1» բաժնի չորս բանտապահների վրա հարձակում գործած մնացած կալանավորվածների մոտ: Մասնակից պետությունը նշում է, որ բանտապահները գտնվում էին լուրջ վտանգի տակ, քանի որ բանտարկյալներից մեկը փորձել է կտրել բանտապահի կոկորդը, իսկ մյուսները փորձել են սրբիչով կախել բանտապահին: Մասնակից պետությունը հայտարարում է, որ մնացած բանտապահները, հրամայելով կալանավորվածներին ազատ արձակել իրենց գործընկերներին և հասկանալով, որ վերջիններս գտնվում են մահացու վտանգի տակ, խուճապի են մատնվում և կրակ բացում: Մասնակից պետությունը հայտնում է, որ անհրաժեշտ ուժի գործադրումը կարող է արդարացվել Քրեակատարողական ակտերի մասին օրենքի 15-րդ բաժնի 3-րդ կետով, որում ասվում է. «Քրեակատարողական հիմնարկի յուրաքանչյուր աշխատակից կարող է ուժ գործադրել որևէ անձի հանդեպ բռնություն գործադրող ցանկացած բանտարկյալի նկատմամբ, եթե այդ աշխատակիցը ողջամիտ հիմքեր ունի կարծելու, որ տվյալ անձը գտնվում է կյանքը կորցնելու կամ ծանր վնասվածքներ ստանալու վտանգի տակ»: Այս համատեքստում մասնակից պետությունը նշում է, որ թեև բանտապահներից ոչ ոք չի հոսպիտալացվել, սակայն նրանցից երկուսը ստացված վնասվածքների հետևանքով երկու ամիս անաշխատունակ են եղել: Նրանցից մեկի պարանոցի շրջանում բանտարկյալի կողմից կտրող գործիքով հասցված վնասվածքից մնացել է երկար սպի: Մասնակից պետությունը եզրակացնում է. «Բառելը, ինչպես նաև այս չորս բանտապահները ոչ թե մասնակցել են վեճի առաջացմանը, այլ դարձել են դրա զոհերը: Բառելի համար դա ունեցավ մահացու վախճան»:

Բառելի փաստաբանը պատասխանեց հետևյալը.

¶ 5.1. Փաստաբանը մասնակից պետության հայտարարությունների վերաբերյալ իր մեկնաբանությունում նշում է, որ պետությունը ցույց չի տվել պրն Բառելի դերն իր մահվանը հանգեցրած միջադեպում: Փաստաբանն այս համատեքստում նշում է, որ երեք բանտապահներից միայն մեկն է իր ցուցմունքում նշում պրն Բառելի անունը՝ ասելով, որ նա իրեն խուց քարշ տվող բանտարկյալներից մեկն է եղել: Տեսուչ Նյումանի զեկույցում նշվում է, որ պրն Բառելը միացել էր բանտապահների վրա հարձակված մյուս կալանավորվածներին: Չկա պրն Բառելի վարքի հետազոտություն այլ հիշատակում: Փաստաբանը նաև նշում է, որ տեսուչի զեկույցը պատրաստվել է միջադեպից ավելի քան վեց ամիս հետո, և տեղեկատվության բացահայտված աղբյուրները սոսկ հսկիչ աշտարակների այն երեք բանտապահների ցուցմունքներն են, որոնք խցերում պահվել էին կալանավորների կողմից, թեպետև ստեղծվում է այն տպավորությունը, որ օգտագործվել են նաև այլ աղբյուրներ: Մասնավորապես, փաստաբանը նշում է, որ ոչ միջադեպում ներգրավված չորրորդ բանտապահը, ո՛չ էլ 1993 թ. հոկտեմբերի 31-ին հերթափոխը ստանձնած գլխավոր բանտապահը որևէ ցուցմունք չեն տվել: Նաև չեն գրանցվել այն բանտապահների ցուցմունքները, որոնք եկել էին իրենց գործընկերներին օգնության:

¶ 5.2. Ինչ վերաբերում է պրն Բառելի մահվանը, ապա փաստաբանը նշում է, որ նրա դիակը զննող բժշկի զեկույցում (որի պատճենը մասնակից պետությունը չի ներկայացրել), նշվում է, որ նա մահացել է հրազենի և բութ գործիքով հասցված վնասվածքներից, սակայն մասնակից պետությունը չի նշում, թե ինչպես է սպանվել պրն Բառելը: Փաստաբանը նշում է, որ տեսուչի զեկույցում ասվում է, որ բանտապահները խուճապի են մատնվել և կրակ բացել, ուստի, եթե պրն Բառելի մահը սրա հետևանք է, ապա դա դաշնագրի 6-րդ հոդվածի խախտում է: Ավելին՝ փաստաբանն ասում է, որ եթե մասնակից պետությունը պնդում է, թե պրն Բառելը սպանվել է խցում գտնվող բանտապահներին հետազոտ վնասվածքներից փրկելու համար, ապա դիագնոստիկությունը ցույց է տվել, որ նա սպանվել է ծեծի հետևանքով, երբ այլևս որևէ վտանգ չի ներկայացրել, ինչը դաշնագրի 6-րդ հոդվածի կոպիտ խախտում է:

¶ 5.3. Փաստաբանը նշում է նաև, որ գոյություն ունեն ապացույցներ՝ վկայող այն մասին, որ պրն Բառելը սպանվել է ոչ թե խցում գտնվող բանտապահներին հետազոտ վնասվածքներից փրկելու համար, այլ երբ այլևս վտանգ չէր ներկայացրել: Այս համատեքստում փաստաբանը նաև մեջբերում է կալանավորվածների հայտարարությունները և հոդվածները մամուլում: Նա պնդում է, որ սպանված կալանավորվածներից մի քանիսի հարազատները տեսել են, որ հրազենային վնասվածքները թիկունքի շրջանում էին, իսկ մարմնի վրա երևում էին դաժան ծեծի հետքեր: Ողջ մնացած բանտարկյալները նաև վկայում են, որ դաժան ծեծի են ենթարկվել բանտապահների կողմից և կրակոցներ են ստացել, երբ չորս բանտապահներն արդեն ազատ էին արձակվել: Նաև ասվել է, որ զինանոցի հսկիչը պատմել է ոստիկանության քննիչներին, որ բանտապահներն իրենցից հրազեն օգտագործելու թույլտվություն չեն ստացել, և հրազենը վերցվել է առանց թույլտվության: Վերջապես, փաստաբանը մեջբերում է «Amnesty International» կազմակերպության զեկույցը, որում նշվում է, որ դժվար է պատկերացնել, թե ինչպես են նման սահմանափակ տարածքում հրազենից սպանվել կալանավորվածները, իսկ բանտապահները վնասվածքներ չեն ստացել, եթե հաշվի առնենք, որ նրանք այդ պահին գտնվել են ներսում:

¶ 5.4. Փաստաբանը նշում է նաև, որ ուժի գործադրման վերաբերյալ կանոնակարգերը պահանջում են, որ գործադրվեր ոչ մահացու ուժ:

¶ 5.5. Փաստաբանը նաև նշում է՝ տեսուչի զեկույցից երևում է, որ նախքան հրազեն բերելը բանտապահները չեն ստացել վերադասի թույլտվությունը: Փաստաբանը մեջբերում է Արտաօրինական, կամայական և համաբազմաբարձի մահապատիժների արդյունավետ կանխարգելման և հետաքննության սկզբունքների 2-րդ հոդվածը, որը պահանջում է, որ ուժ և հրազեն գործադրելու օրինական իրավունք ունեցող բոլոր պաշտոնյաների գործողությունները կարգավորվեն համապատասխան վերադասի հստակ հրամաններով: Փաստաբանը պնդում է, որ 1993 թ. հոկտեմբերի 31-ի միջադեպը և Սբ Կատարինա տարածքային քրեակատարողական հիմնարկում տեղի ունեցած նախկին միջադեպերը ցույց են տալիս, որ այդտեղ չի գործել վերադասի հրամանների համապատասխան շղթան կամ էլ այն բացարձակապես անարդյունավետ է եղել: Այս համատեքստում փաստաբանը բերում է նաև այն փաստարկը, որ եթե բանտապահները պատշաճ պատրաստվածություն ունենային հսկիչ և զսպիչ գործողությունների գծով, ապա թերևս խուճապի չմատնվեին և կրակոցներ չարձակեին պրն Բառելի և Երեք այլ կալանավորվածների վրա:

¶ 5.6. Փաստաբանը բերում է այն փաստարկը, որ մասնակից պետության հետաքննությունը չի համապատասխանում դաշնագրով ստանձնած իր պարտավորություններին: Այս համատեքստում նա նշում է, որ նա այդպես էլ պատասխան չի ստացել խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանից, թե ինչո՞ւ դատաքննչական դիա-հերժման զեկույցը չի ներկայացվել կոմիտեին և ինչո՞ւ մասնակից պետությունը չի ներկայացրել մահվան պատճառների եզրակացությունը, թեև 1985 թ. Քրեակատարողական ակտերի մասին օրենքի 79-րդ հոդվածը պահանջում է, որ մահվան պատճառների դատաքննչական ուսումնասիրություն կատարվի ուղղիչ հաստատությունում մահացած յուրաքանչյուր կալանավորվածի դեպքում: Փաստաբանը մեջբերում է կոմիտեի նախադեպային բազան՝ կապված Ուրուգվայի գործերի հետ և բերում այն փաստարկը, որ մասնակից պետությունը պարտավորություն է կրում իրականացնելու լիակատար և մանրամասն հետաքննություն¹¹:

¶ 5.7. Եվ, վերջապես, փաստաբանը մեջբերում է 1994 թ. հունիսի 16-ին ճամայկայի ազգային անվտանգության և արդարադատության նախարարությունից «Amnesty International» կազմակերպությանն ուղղված նամակը, որում նախարարությունը նշում է, որ տեսչության՝ 1993 թ. հոկտեմբեր ամսվա միջադեպի վերաբերյալ զեկույցն ուղղվել է պետական դատախազության տնօրենին, որպեսզի նա որոշում կայացնի քրեական պատասխանատվության հարցի վերաբերյալ, և անհրաժեշտ չի համարվում ստեղծել անկախ քննիչ հանձնաժողով: Այս առնչությամբ մտահոգված՝ փաստաբանը նշում է, որ պետական դատախազության տնօրենը դեռևս որոշում չի կայացրել 1991 թ. տեղի ունեցած անկարգություններին նվիրված զեկույցի կապակցությամբ:

Փաստաբանն իր նախորդ հայտարարություններից մեկում արել է հետևյալ մեկնաբանությունը.

¶ 2.12. Փաստաբանը պնդում է, որ վերջին տարիներին արձանագրվել են բանտապահների կողմից գործադրված անհարկի բռնության բազմաթիվ միջադեպեր, իսկ դրանց վերաբերող բողոքները ոչ միայն պատշաճ կերպով չեն ուսումնասիրվել, այլև բռնություններից բողոքողները բանտապահների սպառնալիքների առարկա են դարձել: Եթե անցկացվում են հետաքննություններ, ապա դրանց արդյունքները չեն հրապարակվում: Նաև ներկայացվում է, որ խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանը, թպետև հանդիսանում է բողոքների ուսումնասիրման հիմնական անկախ մարմինը, իրագործման մասով լիազորություններ չունի և նրա հանձնարարականները պարտադիր կատարման ենթակա չեն: Փաստաբանը նշում է, որ մարդու իրավունքների պաշտպանի վերջին տարեկան զեկույցը խորհրդարանին ներկայացվել է 1988 թ.:

ՄԻԿ-ի կայացրած որոշումը մասնակից պետության դեմ էր.

¶ 9.5. Կոմիտեն մանրամասն ուսումնասիրել է երկու փաստաբանների և մասնակից պետության տրամադրած բոլոր տեղեկությունները 1993 թ. հոկտեմբերի 31-ին Սբ. Կատարինա քրեակատարողական հիմնարկի մահապատիժի դատապարտվածների բաժնում բանտապահներին պատանդ վերցնելուն հետևած պրն Բառելի մահվան վերաբերյալ: Կոմիտեն ցավում է, որ մասնակից պետությունը գործում չի ներկայացրել ո՛չ դիահերժման զեկույցը, ո՛չ էլ մահվան պատճառների դատաքննչական բժշկի եզրակացությունը: Կոմիտեն նշում է, որ փաստաբանը Սբ Կատարինա քրեակատարողական հիմնարկում գտնվող այլ կալանավորվածներից ստացված նամակների հիման վրա պնդում է, որ պրն Բառելը սպանվել է բանտապահներին ազատ արձակելուց հետո, և այդպիսով ուժ գործադրելու կարիք այլևս չկար: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունն ինքն է ընդունել այն փաստը, որ պրն Բառելի մահը դարձել է խուճապի մատնված բանտապահների գործողությունների ցավալի հետևանք, երբ վերջիններս տեսել են, որ իրենց գործընկերներից ոմանք գտնվում են կալանավորվածների սպառնալիքի ներքո, ինչպես նաև նշում է այն, որ մասնակից պետությունն ընդունում է, որ կրակոցները շարունակվել են բանտապահների փրկվելուց հետո: Տվյալ հանգամանքներում կոմիտեն եզրակացնում է, որ մասնակից պետությունը արդյունավետ միջոցներ չի ձեռ-

¹¹ Տե՛ս ստորև [8.09-8.14]:

նարկել պրն Բառելի կյանքը պաշտպանելու համար և դրանով իսկ խախտել է դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

Տպավորություն է ստեղծվում, թե ՄԻԿ-ը կասկածները մեկնաբանել է մասնակից պետության օգտին և ընդունել այն պնդումը, որ Բառելի սպանությունը միտումնավոր չի եղել: Այդուհանդերձ, ՄԻԿ-ը որոշեց, որ այդ սպանությունը 6-րդ հոդվածի խախտում է: Մասնակից պետությունը չի կատարել կամայականորեն չսպանելու իր բացասական պարտավորությունը և չի կատարել Բառելի կյանքը կալանավայրում պաշտպանելու իր դրական պարտավորությունը¹²:

ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

[8.08] «ՉՈՆԳՎԵՆ ընդդեմ ԶԱՄԲԻԱՅԻ» (CHONGWE v ZAMBIA, 821/98)

Հեղինակը պնդում էր, որ ինքը և ուրիշները մասնակից պետության գործակալների կողմից ենթարկվել են սպանության փորձի: ՄԻԿ-ը որոշեց, որ սպանության անհաջող փորձը, որը թեև մահվան չի հանգեցնում, կարող է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում համարվել:

¶ 5.2. Կոմիտեն նշում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը ենթադրում է մասնակից պետության համար իր տարածքում և իր իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորություն: Տվյալ գործում հեղինակը պնդում է, իսկ մասնակից պետությունն այդ պնդումը կոմիտեի առջև չի վիճարկում, որ մասնակից պետությունը թույլատրել է մահացու ուժի գործադրում՝ առանց օրինական պատճառների, ինչը կարող էր հանգեցնել հեղինակի մահվան: Տվյալ հանգամանքներում կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը չի գործել դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իր այն պարտավորությանը համապատասխան, ըստ որի՝ պետք է պաշտպաներ հեղինակի կյանքի իրավունքը:

¶ 7. Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետով՝ մասնակից պետությունը պարտավորություն էր կրում ապահովելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոց պրն Չոնգվեի համար և ձեռնարկելու համապատասխան քայլեր նրա անձնական անվտանգությունը և կյանքն ամեն տեսակի սպառնալիքներից պաշտպանելու համար: Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանն իրականացնել հրաձգության միջադեպի անկախ հետաքննություն և քրեական գործ հարուցել հրաձգության համար պատասխանատու անձանց դեմ: Եթե քրեական հետաքննության արդյունքում պարզվի, որ հրաձգության և հեղինակին վիրավորելու համար պատասխանատու են եղել պաշտոնական կարգավիճակով հանդես եկող անձինք, ապա իրավական պաշտպանության միջոցը պետք է ընդգրկի պրն Չոնգվեի կրած վնասի փոխհատուցումը: Մասնակից պետությունը պարտավոր է ապահովել, որ նման խախտումներ ապագայում տեղի չունենան:

«ԽԻՄԵՆԵՍ ՎԱԿԱՆ ընդդեմ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ» (JIMENEZ VACA v COLOMBIA, 859/99)

¶ 7.3. Հեղինակի այն պնդման առնչությամբ, թե տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, և կատարվել է իրեն սպանելու փորձ՝ խախտելով կյանքի և կյանքից կամայականորեն չզրկվելու իր իրավունքը, կոմիտեն նշում է, որ դաշնագրի 6-րդ հոդվածը մասնակից պետության պարտավորություն է ենթադրում՝ պաշտպանելու իր տարածքում և իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի կյանքը: Տվյալ դեպքում մասնակից պետությունը ոչ մերժել է հեղինակի այն պնդումը, որ իրեն սպանելու փորձին հանգեցրած սպառնալիքները և հետապնդումները իրականացվել են պետության գործակալների կողմից, ոչ էլ հետաքննություն է անցկացրել մեղավորին գտնելու համար: Գործի հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն համարում է, որ տեղի է ունեցել դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

¹² Տե՛ս նաև *Dermi Barbatto v Uruguay* [8.40]:

[8.09]

ԹԻՎ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Մասնակից պետությունները պետք է դիմեն հստակ և արդյունավետ միջոցների՝ կանխելու անձանց անհետացումը, ինչը, դժբախտաբար, չափազանց հաճախակի երևույթ է դարձել և հանգեցնում է կյանքից կամայականորեն զրկելուն: Ավելին՝ պետությունները պետք է ստեղծեն արդյունավետ միջոցներ և ընթացակարգեր անհայտ կորած և անհետացած անձանց այն գործերը մանրամասն հետաքննելու համար, որոնք կարող են համարվել կյանքի իրավունքի խախտում:

[8.10] «Բաբերամը և այլք ընդդեմ Սուրինամի» (Baboeram et al v Suriname, 146, 148-154/83) գործից կոմիտեն եզրակացրեց, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը վերաբերում է Սուրինամի ռազմական ուստիկանության կողմից տասնհինգ անձանց ձերբակալությանը և սպանությանը: ՄԻԿ-ն իրավական պաշտպանության պատշաճ միջոց առաջարկեց:

¶ 16. Ուստի կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ (i) հետաքննելու 1982 թ. դեկտեմբերի սպանությունները, (ii) պատասխանատվության կանչելու զոհերի մահվան համար պատասխանատու անձանց, (iii) փոխհատուցում վճարելու զոհերի ընտանիքներին և (iv) ապահովելու, որ կյանքի իրավունքը Սուրինամում պատշաճ կերպով պաշտպանվի:

Հետևաբար, մասնակից պետությունները դրական պարտավորություն են կրում հետաքննելու պետության կողմից իրականացվող բոլոր սպանությունները և պատասխանատվության կանչելու նրանց, ովքեր խախտում են 6-րդ հոդվածը, այդ թվում և՛ «անհետացումների» առնչությամբ:

[8.11]

**«ԷՆԵՐԱ ՌՈՒԲԻՈՆ ընդդեմ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ»
(HERRERA RUBIO v COLOMBIA, 161/83)**

Փաստերը շարադրված են ստորև:

¶ 10.2. Խոսկին Էներա Ռուբիոն ձերբակալվել է 1981 թ. մարտի 17-ին Կոլումբիայի զինված ուժերի կողմից «գեռի-յեռ» (գրոհային) լինելու կասկածանքով: Նա պնդում է, որ ենթարկվել է խոշտանգումների. Կոլումբիայի ռազմական մարմինները նրան ընկղմել են ջրի մեջ, երկար պահել կախված վիճակում և ծեծի ենթարկել՝ սպառնալով, որ եթե չստորագրի խոստովանությունը, ապա նրա ծնողները կսպանվեն: 1981 թ. մարտի 27-ին զինվորական համազգեստով մի քանի մարդ, ներկայանալով որպես հակազոռային խմբի անդամ, գնում են հեղինակի ծնողների տուն և բռնությամբ նրանց տանում իրենց հետ: Մեկ շաբաթ անց մոտակայքում գտնում են Խոսե Էներայի և Էմմա Ռուբիո դե Էներայի դիակները: Այդ նույն ժամանակ զեկույց է ստացվում, որ Կակետայի շրջանում անցկացվել է հակաապստամբական արշավ, որի ընթացքում այդ շրջանի գյուղերի մեծ մասում իրականացվել է խիստ հսկողություն զինված ուժերի կողմից: Մասնակից պետությունը ցույց է տվել, որ սպանությունների գործով դատաքննությունն ընթացել է 1982 թ. սեպտեմբերի 24-ից մինչև 1983 թ. հունվարի 25-ը, և պնդում է, որ հաստատվել է՝ զինված ուժերի ոչ մի անդամ չի մասնակցել սպանություններին:

Սպանությունների գործով անցկացրած հետաքննության վերաբերյալ Կոլումբիան ներկայացրել է հետևյալ տեղեկությունները.

¶ 6.1. Իր ներկայացրած նյութերում մասնակից պետությունը նշում է, որ Խոսե Էներայի և Էմմա Ռուբիո դե Էներայի սպանությունները պատշաճ կերպով հետաքննվել են, և որևէ ապացույց չի գտնվել զինված ուժերի անդամների դեմ մեղադրանքները հիմնավորելու համար: Այդ իսկ պատճառով հետաքննությունն ավարտվել է զինված ուժերի գծով գլխավոր դատախազի տեղակալի 1984 թ. օգոստոսի 15-ի հրամանով:

¶ 6.2 Մասնակից պետությունն ուղարկել է նաև Ֆլորենսիա քաղաքի գերագույն դատարանի քրեական գործերով պալատի 1983 թ. փետրվարի 18-ին կայացրած որոշումը, ըստ որի՝ 1982 թ. սեպտեմբերի 24-ից մինչև 1983 թ. հունվարի 25-ը ընթացող դատաքննությամբ պարզվել է, որ սպանությունները կատարվել են զինված անձանց կողմից, սակայն հնարավոր չի եղել որոշել, թե ո՞ր խմբին էին նրանք պատկանում:

¹³ Տե՛ս նաև նմանատիպ պարտավորություն 7-րդ հոդվածի մասով այստեղ՝ [9.111]:

Մասնակից պետությունը հետագայում հաստատեց, որ այս գործով այլևս նոր հետաքննություն չի իրականացվել, քանի որ բավարար ապացույցներ չկային: Չնայած Կոլումբիայի պաշտոնական մարմինների կողմից գործը քննելու ակնհայտ ջանքերին՝ ՄԻԿ-ը որոշեց, որ խախտվել է 6-րդ հոդվածը:

¶ 10.3 Թեև կոմիտեն համարում է, որ հեղինակի պնդումների լույսի ներքո հիմք կա կարծելու, որ Կոլումբիայի զինված ուժերի անդամները պատասխանատվություն են կրում խոսե և Էմմա Ռուբիո դե Էռերայի սպանությունների համար, սակայն չեն ներկայացվել եզրափակիչ ապացույցներ մարդասպանների ինքնությունը պարզելու համար: Այս կապակցությամբ կոմիտեն հղում է կատարում դաշնագրի 6-րդ կետին նվիրված իր թիվ 6 Ընդհանուր մեկնաբանության 16-րդ կետին, որում, ի թիվս այլոց, նախատեսվում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն հստակ և արդյունավետ քայլեր՝ կանխելու անձանց անհետացումները և ստեղծելու արդյունավետ միջոցներ ու ընթացակարգեր անհայտ կորած և անհետացած անձանց գործերով համապատասխան անկողմնակալ մարմնի կողմից մանրամասն հետաքննություն իրականացնելու համար, այնպիսի հանգամանքներում, որոնք կարող են ենթադրել կյանքի իրավունքի խախտում: Կոմիտեն պատշաճ կերպով հաշվի է առել մասնակից պետության ներկայացրած նյութերը այս գործով իրականացված հետաքննության վերաբերյալ, որը, սակայն, պատշաճ չի եղել դաշնագրի 2-րդ հոդվածով մասնակից պետության կողմից ստանձնած պարտավորությունների առումով:

Սակգուղիկը քննադատել է *Էռերա Ռուբիոյի* գործով կայացրած որոշումը, քանի որ նրանում «հատուկ չեն նշվել քննության առանձին անհամապատասխանությունները»¹⁴: ՄԻԿ-ը չի օգտվել այս առիթից՝ մանրամասն նշելու, թե ինչպես կարելի էր բարելավել հետաքննությունը 6-րդ հոդվածին համապատասխանությունն ապահովելու համար:

[8.12] «Սանխուան Արևալոն ընդդեմ Կոլումբիայի» (*Sanjuan Arevalo v Colombia, 181/84*) գործում խոսքը Էռերա Ռուբիոյի գործին շատ մեծ հանգամանքների մասին էր: ՄԻԿ-ի մեծամասնությունը դարձյալ որոշեց, որ Կոլումբիան խախտել է 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ չհետաքննելով Սանխուան եղբայրների անհետացումը և ենթադրյալ մահը, հատկապես հաշվի առնելով, որ իշխանությունները մեծապես ներքաշված են եղել նրանց անհետացման մեջ: Պրն Նիսուկ Անդոն ներկայացրեց իր անհամաձայնությունը՝ կարեկցանք ցուցաբերելով իշխանությունների հանդեպ այն խնդիրների կապակցությամբ, որոնց բախվում են նրանք՝ փորձելով վերահսկել իրենց անվտանգության կատաղի ուժերը, որոնք պարզապես անտեսում են օրենքի գերակայությունը:

«Այն որոշումը, որ «այս բոլոր հանգամանքներում ... Կոլումբիայի պետությունն արդյունավետ չի պաշտպանել անձի ազատության ... և անվտանգության իրավունքը», իմ կարծիքով, չափազանց ընդհանրական է: Ճիշտ է, Կոլումբիայում արձանագրվում են անհետացումների շատ դեպքեր, որոնցից մեկն էլ այս դեպքն է, և այս դեպքերի հետաքննությունը բախվել է մի շարք դժվարությունների: Եվ իրականում վիճակը ցավալի է: Այդուհանդերձ, հաշվի առնելով Կոլումբիայի կառավարության գործադրած ջանքերը, որոնց մասին վկայում են կոմիտեի պարզաբանումների պահանջներին նրա պատասխանները, ես չեմ կարող համոզվել, որ կոմիտեի ընդհանրական որոշումն արդարացված է»:

[8.13] Սանխուան Արևալոյի գործով ՄԻԿ-ի մեծամասնությունը եզրակացրեց՝ չի ենթադրվել, որ անհետացումներն «իրականացրել են այլ անձինք, ոչ թե իշխանությունների ներկայացուցիչները»¹⁵:

Ի տարբերություն՝ Անդոն համարեց, որ բավարար ապացույցներ չկան ենթադրելու, որ իշխանություններն անհետացումներին մասնակից են եղել: Այս մեկնաբանությունները հավանաբար նշանակում են, որ պետությունները պարտավորություն չեն կրում մասնավոր անձանց կողմից իրականացվող սպանությունները և անհետացումները հետաքննելու համար: Սակայն թիվ 6 Ընդհանուր մեկնաբանության 3-րդ կետում հաստատվում է, որ պետությունները պետք է «կանխեն և պատժեն հանցավոր գործողություններով կյանքից զրկումը» [8.02]: Թերևս պետության՝ մահվան դեպքը հետաքննելու պարտավորությունն ավելի մեծ է, երբ կան ապացույցներ, որոնք վկայում են այդ մահվան դեպքին պետական աշխատակիցների մասնակցության մասին:

[8.14] Մասնակից պետությունների՝ անհետացումների և մահվան դեպքերը կանխելու և ամեն միջոցով հետաքննելու խիստ պարտավորությունը միաձայն հաստատվել է «Միանգո Մույոն ընդդեմ Չաիրի» (*Miango Muiyo v Zaire, 194/85*), «Մոխիկան ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության» (*Mojica v Dominican Republic, 449/91*) և «Լաուրեանոն ընդդեմ Պերուի» (*Laureano v Peru, 540/93*) գործերով: Այս

¹⁴ Տե՛ս McGoldrick, վերը, ծնթ. 2, 344:

¹⁵ Կետ 11:

բոլոր դեպքերում առկա ապացույցները վկայում էին, որ անհետացումների ու մահվան դեպքերին մասնակցել են պաշտոնական մարմինները: «*Խիմենես Վական ընդդեմ Կոլումբիայի*» (*Jimenez Vaca v Colombia, 859/99*) գործում [8.08] 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված հետաքննելու պարտավորությունն անվերապահորեն տարածվեց սպանության փորձերի վրա:

ՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻՆ ՊԱՏԺԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[8.15] «*Սուարես դե Գեռերոն ընդդեմ Կոլումբիայի*» (*Suarez de Guerrero v Colombia, 45/79*) գործում Կոլումբիայի անվտանգության ուժերը, որոնք մեղադրվում էին ավելորդ ուժ գործադրելու համար, արդարացվեցին անձեռնմխելիության մասին կանոնակարգի համաձայն [8.03]: Բուն կանոնակարգը համարվեց 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում¹⁶: Դա վկայում է, որ մասնակից պետությունը բավականաչափ չի պաշտպանել կյանքը՝ չպատժելով կամայական սպանություններ կատարողներին¹⁷:

[8.16] «*ԲԱՈՒՏԻՍՍԱ ղԵ ԱՐԵԼԱՆԱՆ ընդդեմ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ*»¹⁸ (*BAUTISTA de ARELLANA v COLOMBIA, 563/93*)

1987 թ. օգոստոսի 30-ին Բաուտիստա դե Արելանան առևանգվում է իր սեփական տնից: 1987 թ. սեպտեմբերի 12-ին գտնում են նրա դիակը, սակայն նրա ինքնությունը պաշտոնապես հաստատվում է միայն 1990 թ. սեպտեմբերի 11-ին: Հետագա վարչական դատավարություններում նշված պետական գործակալները մեղավոր են ճանաչվում օրիորդ Բաուտիստայի անհետացման և մահվան համար: 6-րդ հոդվածի խախտման մասին որոշում կայացնելով՝ ՄԻԿ-ը նշեց հետևյալը.

¶ 8.2. 1995 թ. հուլիսի 14-ին բերած իր փաստարկներում մասնակից պետությունը նշում է, որ 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված 13-րդ որոշմամբ կարգապահական միջոցներ են սահմանվել պարոնայք Վելանդիա Յուրտադոյի և Օրտեգա Արաքի նկատմամբ, և 1995 թ. հունիսի 22-ին Կոլումբիանարկայի վարչական դատակազմը որոշել է բավարարել Նիդիա Բաուտիստայի ընտանիքի կողմից ներկայացված փոխհատուցման դիմումը: Մասնակից պետությունը նաև կրկնում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք կիրառումը երաշխավորելու իր ցանկությունը: Այս դիտարկումները թերևս վկայում են, որ մասնակից պետության կարծիքով՝ վերոնշյալ որոշումները իրավական պաշտպանության արդյունավետ միջոց են Նիդիա Բաուտիստայի ընտանիքի համար: Կոմիտեն համաձայն չէ այս տեսակետին, քանի որ դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով իրավական պաշտպանության զուտ կարգապահական և վարչական միջոցները չեն կարող համարվել իրավական պաշտպանության բավարար և արդյունավետ միջոց, հատկապես մարդու իրավունքների կոպիտ խախտումների, մանավանդ կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում:

¶ 10. ...Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանն արագացնել քրեական հետաքննության գործընթացը, որը կհանգեցնի Նիդիա Բաուտիստայի առևանգման, խոշտանգման և մահվան համար պատասխանատու անձանց անհապաղ հետապնդմանը և դատապարտմանը:

[8.17] ՄԻԿ-ը *Բաուտիստա դե Արելանայի* գործով շեշտադրում է պետության կողմից՝ իրականացվող սպանությունների առնչությամբ քրեական իրավունքով սահմանված «իրավական պաշտպանության միջոցները»՝ կարծես հակասելով հաջորդիվ բերված գործով ընդունված իր որոշմանը:

«*ՔՐԵՍՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ*» (*CROES v THE NETHERLANDS, 164/84*)

Հեղինակը հանդիսանում է Արուբա կղզու անկախության համար պայքարող Ընտրական ժողովրդական շարժում (հայտնի ԸԺԿ հապավմամբ, անգլ.՝ MEPP) քաղաքական կուսակցության ղեկավարը: 1983-ին տեղի ունեցած ԸԺԿ-ի երթի ընթացքում ոստիկանության մի աշխատակից ենթադրաբար կրակել է հեղի-

¹⁶ Պարբ. 13.3:

¹⁷ Իրավական պաշտպանության միջոցների և անձեռնմխելիության մասին տե՛ս նաև [9.123-9.128]:

¹⁸ Համեմատելու համար տե՛ս նաև «*Վիսենտեն և այլք ընդդեմ Կոլումբիայի*» (*Vicente et al v Colombia, 612/95*) գործը, պարբ. 8.2-8.3:

նակի վրա: Վերջինս չի մահացել, սակայն բողոք է ներկայացրել առ այն, որ պետությունը սպառնացել է իր կյանքի իրավունքին: ՄԻԿ-ն ի վերջո վճիռ կայացրեց, որ բողոքն անընդունելի է՝ իրավական պաշտպանության ազգային միջոցները չսպառելու պատճառաբանությամբ:

¶ 10. ...Պարոն Քրեսը կարող էր քաղաքացիական դատավարություն սկսել մասնակից պետության դեմ և փոխհատուցում պահանջել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով իրեն պատճառված վնասի դիմաց: Անշուշտ, նման օգնությունը չէր լուծի իր խնդիրները: Այս առումով կոմիտեն նշում է, որ թեև մասնակից պետությունները պարտավոր են բարեխղճորեն հետաքննել մարդու իրավունքների խախտման մասին հայտարարությունները, սակայն քրեական դատավարությունն իրավական պաշտպանության միակ միջոցը չէ: Ըստ այդմ, կոմիտեն չի կարող ընդունել հեղինակի և նրա ժառանգորդների¹⁹ այն փաստարկը, որ Արուբայի դատարաններում ընթացող դատավարությունը կանոնադրական արժանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իրավական պաշտպանության միջոց չէ, եթե այն չի հանգեցնում ոստիկանի քրեական հետապնդմանը: Կոմիտեն հավելում է, որ հեղինակի բողոքը, հաշվի առնելով դրա բոլոր տեսանկյունները, կարող է ուղղվել առհասարակ Արուբայի իշխանությունների դեմ, և նա ու իր ժառանգորդները չեն սպառել իրենց հասանելի դատական պաշտպանության բոլոր միջոցները:

[8.18] Բազում գործերով հաստատվել է, որ ՔՔԻՄԴ-ը մեկ այլ անձի դատական կարգով հետապնդելու որևէ առանձին իրավունք չի ներառում²⁰: Այնուամենայնիվ, թվում է, որ ՔՔԻՄԴ-ի ենթադրյալ խախտումները բարեխղճորեն հետաքննելու պարտականությունը կարող է երբեմն ենթադրել որոշակի անձի հետապնդելու պարտականություն, ինչը տեղի ունեցավ *Բաուտիստա դե Արելանայի* գործով: Մյուս կողմից՝ պետության կողմից բավարար հետաքննությունը փաստում է այն մասին, որ պետության՝ դատական կարգով հետապնդման մասին որոշումը հիմնավորված չէ, ինչը տեղի ունեցավ *Քրեսի* գործով, որում Նիդեռլանդների՝ Քրեսի վրա կրակելու դեպքի հետաքննությունը ոչ մի ապացույց չգտավ հօգուտ ոստիկանության չարաշահումների վարկածի²¹:

Մահապատիժ

[8.19] 6-րդ հոդվածի 2-6-րդ կետերը վերաբերում են մահապատժի սահմանմանը դատական կարգով՝ բացառությամբ կյանքի իրավունքի:

ԹԻՎ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Թեև 6-րդ հոդվածի 2-6-րդ կետերից բխում է, որ մասնակից պետությունները պարտավոր չեն իսպառ վերացնել մահապատիժը, նրանք պարտավոր են սահմանափակել դրա կիրառումը և հատկապես վերացնել այն՝ բացառությամբ «ամենածանր հանցագործությունների» դեպքերի: Ուստի նրանք պետք է այս լույսի ներքո քննեն իրենց քրեական օրենսդրությունը և ամեն դեպքում պարտավոր են սահմանափակել մահապատժի կիրառումը «ամենածանր հանցագործությունների» դեպքում: Հոդվածը վերաբերում է նաև առհասարակ մահապատժի վերացմանն այն իմաստով, որն ակնհայտորեն ենթադրում է (2-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերով) մահապատժի վերացման ցանկալի լինելը: Կոմիտեն եզրակացնում է, որ մահապատժի վերացման բոլոր միջոցները պետք է ընդունվեն որպես առաջընթաց 40-րդ հոդվածի իմաստով կյանքի իրավունքից օգտվելու հարցում, ինչի մասին հարկ է զեկուցել կոմիտեին: Կոմիտեն նշում է, որ մի շարք պետություններ արդեն վերացրել են մահապատիժը կամ ժամանակավորապես դադարեցրել դրա կիրառումը: Այդուհանդերձ, պետությունների զեկույցները վկայում են, որ մահապատժի վերացման կամ դրա կիրառման սահմանափակման մասով ունեցած առաջընթացը դեռևս բավարար չէ:

¶ 7. Կոմիտեն կարծում է, որ «ամենածանր հանցագործություններ» արտահայտությունը հարկ է ընթերցել նեղ իմաստով, այն է՝ մահապատիժը պետք է լինի միանգամայն բացառիկ միջոց: 6-րդ հոդվածի հատուկ պայմաններից նաև հետևում է, որ այն կարող է կիրառվել միայն հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում դաշնագրին: Տվյալ օրենքով նախատեսված դատաիրավական երաշխիքները պետք է պահպանվեն, այդ թվում՝ արդար դատավարության ապահովումն անկախ դատարանի կողմից, անմեղու-

¹⁹ Պարոն Քրեսը զոհվել է ավտովթարից, երբ դիմումը դեռ գտնվում էր վարույթում, և նրա ժառանգորդները շարունակել են բողոքի ընթացքը:

²⁰ Տե՛ս օրինակ՝ *H.C.M.A. v Netherlands* (213/86), *S.E. v Argentina* (275/88) գործերում:

²¹ Պարբ. 8.2: Տե՛ս նաև *I.M. v Italy* (266/87) գործը, որտեղ Ի. Մ.-ի մահվան վերաբերյալ դիմումն անընդունելի էր, որով հետև առաջանում էր մահապատժի ենթադրաբար պատասխանատու բժիշկների դեմ ուղղված քաղաքացիական իրավական պաշտպանության միջոցները դեռևս չէին սպառվել ազգային ատյաններում:

յան կանխավարկածը և ավելի բարձր ատյանի դատարանի կողմից գործի քննության իրավունքը: Սույն իրավունքները կիրառելի են՝ ի լրումն ներում կամ պատժի թեթևացում պահանջելու իրավունքին:

[8.20] Մահապատժի կիրառումն արգելված է այն մասնակից պետություններում, որոնք ստորագրել են Երկրորդ կանոնադրությունը²²: 2003 թ. հոկտեմբերի դրությամբ ընդամենը 51 երկիր էր դիմել այդ քայլին, չնայած, որ ՔՔԻՄԴ-ը ստորագրած պետությունների հետ իր երկխոսություններում ՄԻԿ-ն ակտիվորեն հորդորել է նրանց ստորագրել այն:

[8.21] «ԼՈՒԲՈՒՏՈՆ ընդդեմ ԶԱՄԲԻԱՅԻ» (LUBUTO v ZAMBIA, 390/90)

Սույն գործում ՄԻԿ-ն անդրադարձել է 6-րդ հոդվածի 2-րդ կետում բերված «ամենածանր հանցագործություններ» արտահայտության իմաստին:

¶ 7.2. Կոմիտեն նշում է, որ հեղինակը մահապատժի դատապարտվեց այն օրենքով, որով մահապատժ կիրառվում է ծանրացուցիչ հանգամանքներում և հրազենի օգտագործմամբ կատարված կոդուպուտի համար: Համապատասխանաբար պետք է որոշվեր, թե արդյոք տվյալ գործը համատեղելի՞ է դաշնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի հետ, որը թույլ է տալիս մահապատժը կիրառել միայն «ամենածանր հանցագործությունների» դեպքում: Հաշվի առնելով այն, որ տվյալ գործով հրազենի օգտագործումը չի հանգեցրել որևէ անձի մահվան կամ վիրավորման, և դատարանը չէր կարող օրենքով այս տարրերը նկատի ունենալ մահապատժի կիրառելիս, կոմիտեն կարծում է, որ այս հանգամանքներով մահապատժի պարտադիր կիրառմամբ խախտվում է դաշնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետը:

Պարոն Անդոն ընդհանուր առմամբ համաձայնեց, սակայն հավելեց, որ որոշ հանցագործություններ կարող են այնքանով ծանր լինել, որ մահապատժի սահմանում պահանջեն, եթե նույնիսկ դրանց հետևանքով ոչ ոք չի վիրավորվել, ինչպես օրինակ՝ «մարդաշատ թաղամասերի ռմբակոծում, ջրամբարների ոչնչացում, խմելու ջրի թունավորում, թունավոր նյութերի բացթողում մետրոյի կայարաններում և թերևս լրտեսությունը պատերազմի ժամանակ»: Սա պայմանավորված է նրանով, որ որոշ հանցագործություններ «լուրջ վտանգ են ստեղծում, որը կարող է հանգեցնել շատ և անհայտ անձանց մահվան կամ նրանց պատճառով անհատուցելի վնասի», ուստի դրանք պետք է խստորեն պատժվեն՝ անկախ դրանց կատարման իրական հանգամանքներից:

[8.22] ՄԻԿ-ը նաև հաստատել է, որ ստորև նշվածները «ծանրագույն հանցագործություններ» չեն և, հետևաբար, չեն կարող հանգեցնել մահապատժի կիրառման՝ չխախտելով 6-րդ հոդվածի դրույթները: Դրանք են՝ դավաճանությունը²³, կոդուպուտը²⁴, թունավոր կամ վտանգավոր թափոնների փոխադրումը²⁵, դրված ինքնասպանությունը, թմրամիջոցների հետ կապված հանցանքները, սեփականության հետ կապված հանցանքները²⁶, զինծառայությունից խուսափելու բազմաթիվ փորձերը²⁷, ուրացումը, երրորդ համասեռական ակտի կատարումը, յուրացումը պաշտոնատար անձանց կողմից, գողությունը ուժի գործադրմամբ²⁸, «մահվան չհանգեցնող առևանգումը»²⁹, տնտեսական բնույթի հանցագործությունները, ամուսնական անհավատարմությունը, կաշառակերությունը և «կյանքի կորստի չհանգեցնող հանցագործությունները»³⁰: Պարոնայք Զլայնը և Կրեցները, որոնք փոքրամասնություն են կազմում, «Թ. Թ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (*T.T. v Australia, 706/96*) գործով ենթադրեցին, որ թմրամիջոցների հետ կապված հանցանքները բավականաչափ լուրջ չէին մահապատժի հանգեցնելու համար³¹:

²² Տե՛ս հավելվածներ Գ և Զ:

²³ Եզրափակիչ դիտարկումներ Միացյալ Թագավորության անդրծովյան տարածքների վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UKOT, պարբ. 37:

²⁴ Եզրափակիչ դիտարկումներ Կորեայի Հանրապետության վերաբերյալ (1992), ՄԱԿ-ի փաստաթուղթ A/47/40, էջ 122-124, պարբ. 9:

²⁵ Եզրափակիչ դիտարկումներ Կամերունի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 33, պարբ. 9:

²⁶ Եզրափակիչ դիտարկումներ Շրի Լանկայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 56, պարբ. 14:

²⁷ Եզրափակիչ դիտարկումներ Իրաքի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/79/Add. 84, պարբ. 11:

²⁸ Եզրափակիչ դիտարկումներ Սուդանի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 85, պարբ. 8:

²⁹ Եզրափակիչ դիտարկումներ Գվատեմալայի վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/GTM, պարբ. 17:

³⁰ Եզրափակիչ դիտարկումներ Իրանի Իսլամական Հանրապետության վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 25, պարբ. 8:

³¹ Բողոքը վերաբերում էր հեղինակին Մալայզիային հանձնելուն, որտեղ, ինչպես ենթադրվում է, նա կանգնել էր թմրամիջոցների հետ կապված հանցանքի համար մահապատժի կիրառման վտանգի առջև: Մեծամասնությունը համարեց՝ քիչ հավանական էր, որ թմրամիջոցների հետ կապված նրա գործը նույնիսկ դատավարության արժանանա նրան վերադարձնելուն պես:

Իրաքի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն առանձնակի նշել է, որ «ոչ բռնի» խախտումները բավականաչափ լուրջ չեն՝ մահապատժի սահմանման հանգեցնելու համար³²։ ՄԻԿ-ը նաև նշել է, որ «քաղաքական և տնտեսական» հանցանքները «ամենածանր հանցագործություններ» չեն 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված իմաստով³³։ Եվ վերջապես, արժանի հատուցումը չի կարող իրավաբանորեն ընդունվել որպես մահապատիժ սահմանելու հիմք³⁴։ Ամփոփելով՝ կարելի է ասել, որ միայն միտումնավոր սպանությունը կամ մահափորձը և *գուցե* մարմնական ծանր վնասվածքի միտումնավոր պատճառումը կարող են հանգեցնել 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում մահապատժի սահմանման³⁵։

[8.23] «ՄԲԵՆԳԵՆ ԸՆԴՐՈՒՄ ԶԱԻՐԻ» (MBENGE v ZAIRE, 16/77)

Այս գործով ՄԻԿ-ը վճիռ կայացրեց, որ Դանիել Մոնգույա Մբենգեն երկու անգամ մահապատժի է դատապարտվել 14-րդ հոդվածի 3-րդ կետի տարբեր ենթակետերի խախտումներով ընթացող դատավարությունների արդյունքում³⁶։

¶ 17. Դանիել Մոնգույա Մբենգեն նաև հայտնում է դաշնագրի 6-րդ հոդվածի խախտման մասին։ Տվյալ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ մահապատիժ կարող է կիրառվել միայն «(մասնակից պետության)՝ հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում դաշնագրի դրույթներին»։ Սա պահանջում է, որ նյութաիրավական և դատավարական օրենսդրությամբ կիրառված մահապատիժը չհակասի դաշնագրի դրույթներին, և մահապատիժը սահմանվի այդ օրենքի շրջանակներում դաշնագրի դրույթների համաձայն։ Սրանից կարելի է եզրակացնել, որ չբավարարելով մասնակից պետության կողմից 14-րդ հոդվածի 3-րդ կետի (արդար դատավարության վերաբերյալ) համապատասխան պահանջները՝ դիմումի հեղինակի նկատմամբ իրապարակված մահապատիժը սահմանվել է հակառակ դաշնագրի դրույթներին՝ դրանով իսկ խախտելով 6-րդ հոդվածի 2-րդ կետը։

[8.24] ՄԻԿ-ը քննել է Կարիբյան ավազանի երկրներում մահապատժի դատապարտվածների բազմաթիվ բողոքներ, որոնցում նրանք մեջբերում են իրենց գործերի շրջանակներում ենթադրյալ դատավարական թերությունները։ *Մբենգեի* գործից և թիվ 6 Ընդհանուր մեկնաբանությունից երևում է, որ ՄԻԿ-ը գտել է նաև 6-րդ հոդվածի 2-րդ կետի հարակից խախտումներ, երբ մահապատիժը կիրառվել է դատավարությունից հետո, ինչը չի համապատասխանում 14-րդ հոդվածի պահանջներին³⁷։ Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մահապատժի վճռով ավարտվող դատավարություններում 14-րդ հոդվածի ոչ բոլոր խախտումներն են առաջացնում 6-րդ հոդվածի 2-րդ կետի զուգահեռ խախտումներ։ Մասնավորապես՝ արագ քրեական դատավարության և բողոքարկման երաշխիքների խախտումները (14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետ և 5-րդ կետ) միաժամանակ չեն խախտում 6-րդ հոդվածի 2-րդ կետը³⁸։ Թեև չհիմնավորված ձգձգումը համարվում է ամբաստանյալի նկատմամբ անարդար վերաբերմունքի դրսևորում, դա դեռ չի նշանակում, որ փաստացի դատավարությունն անարդարացի է անցկացվում։ Այսպիսով, դատավարության արդյունքում սահմանված ցանկացած մահապատիժ այդ աստիճան բաց չէ վիճարկման համար։

[8.25] 2002-ին Եմենի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն արել է հետևյալ մեկնաբանությունը.

¶ 15. ...Ֆինանսական փոխհատուցման հիման վրա պատժամիջոցի իրագործման կամ չիրագործման մասով տուժողի ընտանիքի գերակշիռ դերը հակասում է դաշնագրի 6-րդ, 14-րդ և 26-րդ հոդվածներին։

³² (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/79/Add. 84, պարբ. 10:

³³ Եզրափակիչ դիտարկումներ Լիբիայի Արաբական Զամահիրիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 101, պարբ. 8:

³⁴ Նույնը:

³⁵ Տե՛ս նաև *Kennedy v Trinidad and Tobago* (845/98) [8.30] գործը:

³⁶ 14-րդ հոդվածով երաշխավորվում է արդար դատավարության և արդարադատության արդար իրականացման իրավունքը: Ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս գլուխ 14:

³⁷ Տե՛ս օրինակ՝ *Pinto v Trinidad and Tobago* (232/87), *Reid v Jamaica* (250/87), *Kelly v Jamaica* (253/87), *Wright v Jamaica* (349/89), *Henry v Jamaica* (230/87), *Campbell v Jamaica* (248/87), *Burrell v Jamaica* (546/93) և *Price v Jamaica* (572/94) գործերը: Պարոն Վեններգրենն այս կետին չի համաձայնել թե՛ *Pinto* և թե՛ *Reid* գործերում, սակայն այդ պահից ի վեր ՄԻԿ-ը միակարծիք է եղել այդ կետի հարցում:

³⁸ Տե՛ս օրինակ՝ *Brown and Parish v Jamaica* (665/95) գործը, պարբ. 9.2:

Ուստի, մի շարք իսլամական պետությունների փորձին հակառակ, տուժողի ընտանիքը որպես շահագրգիռ կողմ չպետք է դեր ունենա մահապատժի ենթարկման և ի կատար ածման մասին որոշում ընդունելու գործընթացում:

[8.26] Լիբանանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը³⁹

¶ 20. ...Խիստ մտահոգված է, որ կառավարությունն ընդլայնել է մահապատիժ պահանջող հանցագործությունների ցանկը, ինչը հակասում է դաշնագրի 6-րդ հոդվածին, որով սահմանափակվում են մահապատժի սահմանման հանգամանքները՝ հայտարարելով, որ դրանք կարող են ներկայացվել շարունակական քննման՝ մահապատժի վերացման ակնկալիքներով:

Հետևաբար, մասնակից պետության՝ մահապատիժ պահանջող հանցագործությունների ցանկի որևէ ընդլայնում, այդ թվում՝ մահապատժի հնարավոր վերադարձը⁴⁰, ըստ երևույթին խախտում է 6-րդ հոդվածը, եթե նույնիսկ նման ընդլայնումը վերաբերում է միայն «ամենածանր հանցագործություններին»:

ՊԱՐՏԱԴԻՐ ՍԱՀԱՊԱՏԻԺՆԵՐ

[8.27] «ԲՐԱՈՒՆՆ ԸՆԴՂԵՄ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (BROWN v JAMAICA, 775/97)

Հեղինակը բողոքել է, ի թիվս այլոց, «ծանրացուցիչ հանգամանքներում սպանության» իրականացման համար իր նկատմամբ մահապատժի պարտադիր սահմանման առնչությամբ: ՄԻԿ-ը վճիռ կայացրեց, որ ոչ մի խախտում չի կատարվել հեղինակի մահապատժի պարտադիր բնույթի մասով:

¶ 6.14. Դատապաշտպանի այն փաստարկի առնչությամբ, որ սպանության համար մահապատժի պարտադիր սահմանումը կամայական և անհամաչափ պատժամիջոց է և հակասում է դաշնագրի պահանջներին, կոմիտեն նշում է, որ ճամայկայի օրենսդրությամբ տարբերակվում են մահապատիժ պահանջող և չպահանջող հանցագործությունները, և սպանությունը ծանրացուցիչ հանգամանքներում մահապատիժ պահանջող հանցատեսակ է: Հետևաբար, կոմիտեն կարծում է, որ դատապաշտպանի փաստարկը հիմնավորված չէ, և հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստերը՝ այս առումով դաշնագրի խախտում չի արձանագրում: Ավելին՝ կոմիտեն համարում է, որ դատապաշտպանը որևէ փաստարկ չի ներկայացրել, թե ինչ մեղմացուցիչ հանգամանքներ պետք է հաշվի առնվեին հեղինակին դատապարտելիս, և հետևաբար ինչ ազդեցություն կունենար ենթադրյալ խախտումը հեղինակի վրա:

**[8.28] «ԹՈՄՍՈՆՆ ԸՆԴՂԵՄ ՍԵՆՏ ՎԻՆՍԵՆԹ և ԳՐԵՆԱԴԻՆՆԵՐԻ»
(THOMPSON v ST VINCENT and THE GRENADINES, 806/98)**

Հեղինակը մեղավոր է ճանաչվել սպանության իրականացման համար, որը համապատասխան պետությունում սահմանվում է որպես մեկ այլ անձի մահվան հանգեցնող բռնի գործողություն, և դատապարտվել է մահապատժի, որը Սենտ Վինսենթում պարտադիր պատժամիջոց է: Հեղինակը նշում է, որ ի թիվս այլոց, «մահապատժի պարտադիր բնույթը խախտում է իր՝ 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքները»⁴¹: Հետագա փաստարկներում հեղինակը հավելել է.

³⁹ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 78, պարբ. 20, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Պերուի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 67, պարբ. 15:

⁴⁰ Մահապատժի վերադարձը չի շոշափվել ՄԻԿ-ի կողմից «Կարպոն և այլք ընդդեմ Ֆիլիպինների» (*Carpo et al v Philippines, 1077/02*) գործում, քանի որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը հայտնաբերվել է մեկ այլ հիմքով (մահապատժի պարտադիր բնույթը տե՛ս ստորև, ծնթ. 45): Տե՛ս նաև [8.37]:

⁴¹ Պարբ. 3.3: Պարտադիր մահապատիժների մասով համեմատական մախադեպային բազայի համար տե՛ս *Hilaire, Constantine and Benjamin et al v Trinidad and Tobago*, Series C/94 գործը, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի 2002 թ. հունիսի 21-ի վճիռը, *Donasson Knights (Grenada)*, Case no. 12.028, Report no. 47/01, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի 2000 թ. տարեկան զեկույցը, Vol II at 841 OEA/Ser.L/V/II. Iii, Doc. 20 rev., 16 April 2001; *Rudolphe Baptiste (Grenada)*, Case no. 11.743, Report no 38/00, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի 1999 թ. տարեկան զեկույցը, Vol 1 OEA/Ser.L/V/II.106, Doc. 3, rev., 13 April 2000:

¶ 6.1. Իր մեկնաբանություններում դատապաշտպանը պնդում է, որ հեղինակին մահապատժի դատապարտելով՝ խախտվում են դաշնագրի տարբեր դրույթները, քանի որ գործը վարող դատավորը նրան մահվան է դատապարտել՝ հաշվի չառնելով նրա բնավորությունը, անձնական հատկանիշները և հանցագործության հանգամանքները:

Որպես դատավճռով ներում շնորհելու բավարար հիմքեր հեղինակը նշել է հետևյալը.

¶ 6.2. Ներման առանձնաշնորհի կապակցությամբ դատապաշտպանը բերել է այն փաստարկը, որ մասնակից պետությունն անտեսել է այն հանգամանքը, որ ներում հայցելու իրավունքը պետք է լինի արդյունավետ: Հեղինակի դեպքում նրա ներման հայցը չի կարող արդյունավետ ներկայացվել, ինչը ներում հայցելու իրավունքը դարձնում է զուտ տեսական և սոսկ պատրանք: Հեղինակը չի կարող մասնակցել դատավարությանը և գրեթե տեղյակ չէ դրա արդյունքից: Ըստ դատապաշտպանի՝ սա նշանակում է, որ ներման մասին որոշումներն ընդունվել են կամայականորեն: Այս կապակցությամբ դատապաշտպանը նշում է, որ խորհրդատու կոմիտեն չի հարցաքննել դատապարտյալին կամ նրա ընտանիքին: Ավելին՝ դատապարտյալին ոչ մի հնարավորություն չի տրվել պատասխանելու ծանրացուցիչ հանգամանքների վերաբերյալ այն տեղեկատվությանը, որը խորհրդատու կոմիտեն հավանաբար ունի իր տրամադրության տակ⁴²:

Մասնակից պետությունը պաշտպանեց իր իրավական նորմերը.

¶ 5.2. Մասնակից պետությունը նշում է, որ մահապատժի պարտադիր բնույթն ամրագրված է միջազգային իրավունքով: Այն բացատրում է, որ Սենտ Վինսենթի և Գրենադինների քրեական իրավունքում առանձնացվում են տարբեր տեսակի ապօրինի սպանություններ: Այն սպանությունները, որոնք հավասարազոր են ոչ կանխամտածված սպանության, ենթակա չեն պարտադիր մահապատժի: Մահապատիժը պարտադիր է միայն կանխամտածված սպանության հանցագործության դեպքում: Սպանությունը իրավունքում հայտնի ամենածանր հանցագործությունն է: Ելնելով այս պատճառաբանություններից՝ մասնակից պետությունը նշում է, որ սույն գործով մահապատիժը նշանակվել է դաշնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն:

6-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ ՄԻԿ-ն ի վերջո որոշում կայացրեց հօգուտ հեղինակի.

¶ 8.2. Դատապաշտպանը պնդել է, որ հեղինակի գործում մահապատժի պարտադիր բնույթը և դրա կիրառումը դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: Մասնակից պետությունը պատասխանել է, որ մահապատիժը պարտադիր է միայն սպանության դեպքում, որն օրենքով ամենածանր հանցագործությունն է, ինչն ինքնին նշանակում է, որ դա համաչափ պատիժ է: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետության օրենսդրության շրջանակներում մահապատժի պարտադիր նշանակումը կախված է հանցագործության լոկ այն կարգից, որով հանցագործը մեղավոր է ճանաչվել՝ հաշվի չառնելով ամբաստանյալի անձնական կամ տվյալ հանցագործության իրականացման հանգամանքները: Մահապատիժը պարտադիր է սպանության (միտումնավոր բռնի գործողություն, որը հանգեցնում է այլ անձի մահվան) բոլոր դեպքերի համար: Կոմիտեն համարում է, որ պարտադիր մահապատժի նման համակարգը գրկում է հեղինակին ամենահիմնարար իրավունքից՝ կյանքի իրավունքից, և հաշվի չի առնում, թե արդյոք այս բացառիկ պատժամիջոցը համապատասխանում է տվյալ դեպքի հանգամանքներին, թե՞ ոչ: Դաշնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ներում կամ պատժամիջոցի թեթևացում պահանջելու իրավունքը բավարար պաշտպանություն չի երաշխավորում կյանքի իրավունքի տեսանկյունից, քանի որ գործադիր իշխանության հայեցողությամբ ձեռնարկված այս միջոցները բազմաթիվ այլ նկատառումների տեղիք են տալիս՝ ի տարբերություն քրեական գործի բոլոր տեսանկյունների դատական կարգով պատշաճ քննության գործընթացին: Կոմիտեն կարծում է, որ հեղինակի դեպքում մահապատժի իրականացումը համարվում է կյանքից կամայական գրկում, ինչը հակասում է դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետին:

[8.29] ՄԻԿ-ի զգալի թվով անդամներ՝ պարոնայք Կրեցմերը, Ամորը, Յալդենը, Ջախիան և Լորդ Քոլվիլը, չհամաձայնեցին: Նրանք նախ նշեցին նախադեպերից անբացատրելի շեղումը⁴³, ինչպիսին էր *Բրաունի* գործը [8.27]: Լորդ Կոլվիլը հիմնականում համաձայն էր ՄԻԿ-ի այս չորս անդամների համատեղ որոշմանը, որում նշվում էր հետևյալը.

⁴² Եվ իսկապես, հեղինակը պնդել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի հնարավոր խախտման համար իրավական պաշտպանության միջոց տրամադրելու փոխարեն՝ Սենտ Վինսենթում ներման ընթացակարգն իրականում խախտել է 6-րդ հոդվածի 4-րդ կետը, որով երաշխավորվում է «ներում կամ պատժի մեղմացում պահանջելու իրավունքը» և համաներման, ներման կամ պատժի փոխարինման հնարավորությունը մահապատժի դատապարտված բոլոր անձանց համար (կետ 3.3): 6-րդ հոդվածի 4-րդ կետի որևէ խախտում չի հայտնաբերվել, քանի որ հեղինակը դեռևս ներում կամ պատժի փոխարինում չէր հայցել: Տե՛ս նաև [8.31]:

⁴³ Տե՛ս [11.63-1.65] ՄԻԿ-ի նախադեպային բազայում նախադեպի դերի վերաբերյալ:

¶ 8. Սույն գործով հիմնական հարցն այն է, թե արդյոք *դաշնագիրը պահանջում է*, որ *դատարաններն* իրենց հայեցողությամբ պատշաճ պատիժ որոշեն յուրաքանչյուր գործի համար: Դաշնագրում չկա մի դրույթ, որում դրական պատասխան տրվի այս հարցին: Ավելին՝ դրական պատասխանը, ըստ երևույթին, կնշանակեր, որ որոշ հանցագործությունների, ինչպես օրինակ՝ բռնաբարության և թմրամիջոցների վաճառքի (որը թույլատրվում էր որոշ իրավասություններում) համար նվազագույն պատիժը հակասում է դաշնագրին: Դժվարանում են ընդունել այս եզրահանգումը:

Պարտադիր պատիժները (կամ նվազագույն պատիժները, որոնք ըստ էության պարտադիր են) կարող են լուրջ հարցեր հարուցել դաշնագրի առնչությամբ: Եթե մեծ պատիժներն անհամաչափ են այն հանցագործություններին, որոնց համար են սահմանված, ապա դրանք կարող են հանգեցնել դաշնագրի 7-րդ հոդվածի խախտման: Եթե պարտադիր մահապատիժը սահմանվում է ծանրագույն հանցագործությունների դասին չպատկանող հանցագործությունների համար, ապա խախտվում է դաշնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետը: Այդուհանդերձ, անկախ այն հանգամանքից՝ այս պատիժները նպատակահարմար են, թե ոչ, եթե նույնիսկ պատժի վերաբերյալ դաշնագրի բոլոր դրույթները բավարարվեն, ապա միայն այն փաստը, որ հանցագործության համար նվազագույն կամ հստակ պատիժը սահմանվում է օրենսդրությամբ, ոչ թե դատարանի կողմից, ինքնին չի ենթադրում դաշնագրի խախտում: Օրենքով ստեղծված իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանում ընթացող դատավարությունից հետո նշանակված պատժի իրականացումը, որը համապատասխանում է 14-րդ հոդվածի բոլոր պահանջներին, չի կարող համարվել կամայական գործողություն:

Ամփոփելով՝ կարելի ասել, որ դաշնագրում չկա որևէ դրույթ, որը պահանջի, որ դատարանները սեփական հայեցողությամբ սահմանեն քրեական գործով նշանակվելիք պատիժը: Եթե պատիժն ինքնին չի խախտում դաշնագիրը, այն փաստը, որ այն պարտադրված է օրենսդրությամբ, ոչ թե սահմանված դատարանի կողմից, չի փոխում դրա էությունը: Մահապատժի գործերի դեպքում, եթե պատիժը նշանակվել է ամենածանր հանցագործության համար (իսկ սպառնության յուրաքանչյուր դեպք ի սկզբանե համարվում է ծանրագույն հանցագործություն), ապա այն չի կարող համարվել դաշնագրին հակասող պատիժ: Ես չեմ կարող ընդունել այն, որ դաշնագրի հոդվածով դատավարությունից հետո դատարանի կողմից սահմանված պատժի իրականացումը, որը համապատասխանում է 6-րդ հոդվածի բոլոր պահանջներին, կարող է համարվել կյանքից *կամայական* զրկում:

¶ 9. Ինչպես նշված է վերը, դաշնագրում չկա որևէ դրույթ, որը պահանջի, որ դատարաններն իրենց հայեցողությամբ պատիժ սահմանեն քրեական գործերով: Բացակայում է նաև այն դրույթը, որով *պատժի սահմանման կարգը* որևէ կերպ տարբերվում է մահապատիժ պահանջող հանցանքների դեպքում: Այդուհանդերձ, սա չի նշանակում, որ մասնակից պետությունների վրա դրված չէ նախքան մահապատժի իրականացումն ամբաստանյալի անձնական հանգամանքները կամ տվյալ հանցանքի կատարման հանգամանքները հաշվի առնելու պարտականությունը: Հակառակը՝ մահապատիժը պատժի այլ ձևերից տարբերվում է նրանով, որ 6-րդ հոդվածի 4-րդ կետով հստակ պահանջվում է, որ մահապատժի դատապարտվող յուրաքանչյուր ոք իրավասու է ներում կամ պատժի մեղմացում պահանջել, և համաձայնումը, ներումը կամ պատժի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում: Հարկ է նշել, որ 6-րդ հոդվածի 4-րդ կետով *իրավունք է* ճանաչում: Մյուս բոլոր իրավունքների մեծ մասը՝ դաշնագրով այս իրավունքի ճանաչումն այն հարգելու և ապահովելու իրավական պարտավորություն է դնում մասնակից պետությունների վրա: Հետևաբար, մասնակից պետություններն իրավաբանորեն պարտավորված են բարեխղճորեն հաշվի առնել մահապատժի դատապարտված անձանց կողմից ներկայացված ներման կամ պատժի մեղմացման բոլոր դիմումները, ինչը խախտելու դեպքում մասնակից պետությունը խախտում է դատապարտյալի՝ 6-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքը՝ հանգեցնելով դաշնագրով ամրագրված իրավունքի, այդ թվում՝ տուժողի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտմանը՝ դրանից բխող բոլոր հանգամանքներով հանդերձ:

¶ 10. Այժմ ես կարող եմ ամփոփել սպառնության համար պարտադիր մահապատիժների վերաբերյալ իրավական իրողության իմ ընկալումը.

(ա) Այն հարցը, թե արդյոք մահապատիժը չի՞ հակասում դաշնագրին, կախված է նրանից, թե արդյոք դաշնագրի 6-րդ և այլ հոդվածներով, հատկապես 14-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարված են, թե՞ ոչ:

(բ) Դաշնագրի 6-րդ և այլ հոդվածների պահանջներով սահմանված մահապատժի իրականացումը չի կարող համարվել կյանքից կամայական զրկում:

(գ) Դաշնագրում չկա ոչ մի դրույթ, որը պահանջի, որ դատարաններն իրենց հայեցողությամբ սահմանեն պատիժը: Չկա նաև հատուկ դրույթ, որով պատժի սահմանումը մահապատժով գործերում տարբերվի մյուս գործերից:

(դ) Դաշնագիրը հստակ պահանջում է, որ նախքան մահապատժի իրականացումը մասնակից պետությունները հաշվի առնեն ամբաստանյալի անձնական հանգամանքները կամ տվյալ հանցագործության մասնավոր հանգամանքները: Մասնակից պետությունը ներման կամ պատժի մեղմացման դիմումները քննելիս այդ

հանգամանքները հաշվի առնելու իրավական պարտավորություն ունի: Նշված հանգամանքները հարկ է բարեխղճորեն հաշվի առնել և առաջնորդվել արդար ընթացակարգերով:

ՄԻԿ-ի փոքրամասնություն կազմող անդամները ՔԲԻՄԴ-ում բերված կյանքի իրավունքի մասով մահապատժի բացառությունը մեկնաբանել են 6-րդ հոդվածի 2-6-րդ կետերում սահմանված չափանիշների համաձայն, սակայն այդ անդամները պատրաստ չէին լրացուցիչ պայմաններ առաջարկելու 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված կյանքի իրավունքի ընդհանուր երաշխիքից բխող մահապատժի նշանակման համար: Մյուս կողմից՝ մեծամասնությունը 6-րդ հոդվածի 1-ին կետից բխող լրացուցիչ պայմաններ է ավելացրել մահապատժի կիրառմանը, ինչպիսիք են՝ պատժի սահմանման հարցում խիստ համաչափությունը և մահապատժի նշանակման հարցում դատավորների հայեցողության առկայության անհրաժեշտությունը⁴⁴:

[8.30]

**«Քենեդի ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲԱԳՈՅԻ»
(KENNEDY v TRINIDAD AND TOBAGO, 845/98)**

¶ 7.3. Դատապաշտպանը պնդել է, որ մահապատժի պարտադիր բնույթը և դրա կիրառումը պարոն Քենեդիի գործում համարվում է դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 1-ին կետի և 14-րդ հոդվածի խախտում: Մասնակից պետությունը չի անդրադարձել այս դիմումին: Կոմիտեն նշում է, որ Տրինիդադ և Տոբագոյի օրենսդրությամբ մահապատժի պարտադիր սահմանման հիմքում ընկած է զուտ հանցագործության դասակարգումը, ինչի հետևանքով էլ ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել: Բավական է վճիռ կայացնել, որ տվյալ դասակարգումը կիրառելի է, այլևս հիմքեր չեն մնում ամբաստանյալի անձնական հանգամանքները կամ տվյալ հանցագործության իրականացման հանգամանքները հաշվի առնելու համար: Տրինիդադ և Տոբագոյի գործով կոմիտեն նշում է, որ մահապատժի պարտադիր է սպանության դեպքում, և այն կարող է և փաստորեն պարտադիր պետք է սահմանվի այն դեպքերում, երբ անձը ծանր հանցագործություն է կատարել այլ անձի հանդեպ բռնությամբ, և երբ այդ բռնությունը հանգեցրել է տուժողի մահվան, եթե անգամ այն պատահական է եղել: Կոմիտեն համարում է, որ պարտադիր մահապատժի այս համակարգը գրկում է հեղինակին կյանքի իրավունքից՝ հաշվի չառնելով, թե գործի տվյալ հանգամանքներում որքանով է պատժի այս բացառիկ ձևը համապատասխանում դաշնագրի դրույթներին: Ըստ այդմ՝ կոմիտեն կարծում է, որ եղել է դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում⁴⁵:

Պարոնայք Կրեյցները և Յալդենը, որոնք չեն համաձայնել *Թոմսոնի* գործով պարտադիր պատժի հարցին, նույն հարցի շուրջ համաձայնության են եկել *Քենեդիի* գործով՝ երկու գործերը տարբերելով հետևյալ կերպ.

Թիվ 806/1998 դիմումում (*Thompson v St. Vincent and the Grenadines*), [մենք] չենք համաձայնել կոմիտեի այն կարծիքին, որ մասնակից պետության օրենսդրությամբ սպանության համար սահմանված մահապատժի պարտադիր բնույթն անպայման նշանակում է, որ հեղինակին մահապատժի դատապարտելով՝ մասնակից պետությունը խախտել է դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետը: [Մեր] կարծիքի հիմքում ընկած փաստարկներից մեկն այն էր, որ մասնակից պետության օրենսդրությամբ մահապատժի պարտադիր է միայն մեկ այլ մարդ արարածի միտումնավոր սպանության դեպքում, ինչը, մեր կարծիքով, չի խախտում դաշնագրի դրույթները, թեև խիստ անընդունելի է ներքոստորագրյալների համար: Այդուհանդերձ, սույն գործով, որը ներառում է պարտադիր մահապատժ, ցույց է տրվել, որ սպանության սահմանում կարող է ներառվել մասնակցություն մի հանցագործության, որը զուգորդվում է բռնությամբ՝ հանգեցնելով մեկ այլ անձի մահվան: Ավելին՝ սույն գործի մեղադրող կողմը չի պնդել, որ հեղինակը միտումնավոր է սպանել Նորիս Յորկին [տվյալ գործով սպանության զոհը]:

Այս հանգամանքներում ակնհայտ չէ, որ հեղինակը դատապարտվել է այն ծանրագույն հանցագործության համար, որը որպես մահապատժի սահմանելու պայման է ամրագրվել դաշնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետում: Ավելին՝ պատժի պարտադիր տեսակը թույլ չի տվել դատարանին հաշվի առնել, թե արդյոք հեղինակի տվյալ հանցագործությունն իրականում ծանրագույն հանցագործություն է 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, թե՞ ոչ: Հետևաբար, ես կարծում եմ, որ մահապատժի սահմանմամբ մասնակից պետությունը խախտել է հեղինակի՝ դաշնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված կյանքի իրավունքը:

⁴⁴ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2001) 1 *HRLR* 305, 308.

⁴⁵ Տե՛ս նաև *Carpo et al v Philippines* (1077/02), պարբ. 8.3:

ՆԵՐՈՒՄ ՀԱՅՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԵ

[8.31]

«ՔԵՆԵԴԻՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲԱԳՈՅԻ»
(KENNEDY v TRINIDAD and TOBAGO, 845/98)

Քենեդիի գործով հեղինակը բողոքել է նաև 6-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման մասին հետևյալ ձևակերպումներով.

¶ 3.6. Հեղինակը պնդում էր, որ տուժել է 6-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի խախտումից՝ հիմնավորելով, որ մասնակից պետությունն իրեն հնարավորություն չի ընձեռել, որ արդար դատալսում տեղի ունենա ներում շնորհելու առնչությամբ: Տրինիդադ և Տոբագոյում նախագահը սահմանադրության 87-րդ մասով որևէ մահապատիժ մեղմացնելու իրավասություն ունի, սակայն նա պետք է գործի իր նշանակած նախարարի խորհրդատվությամբ, որն իր հերթին գործում է վարչապետի խորհրդատվությամբ: Սահմանադրության 88-րդ մասի համաձայն՝ պետք է ստեղծվի ներման լիազորությամբ օժտված խորհրդատու կոմիտե, որը նախագահում է նշանակված նախարարը: 89-րդ մասի համաձայն՝ խորհրդատու կոմիտեն նախքան իր կարծիքը հայտնելը պետք է ուսումնասիրի որոշ նյութեր, օրինակ՝ տվյալ գործով հանդես եկող դատավորի զեկույցը: Դատապաշտպանը բերում է այն փաստարկը, որ Տրինիդադ և Տոբագոյի դատական պրակտիկայում խորհրդատու կոմիտեն իրավասու է մեղմացնելու մահապատիժը և ազատ է իր սեփական ընթացակարգը կանոնակարգելու հարցում, սակայն դրանով նա կարող է զրկել դատապարտյալին արդար դատավարությունից կամ հաշվի չառնել դիմողի որևէ այլ դատաիրավական պաշտպանության միջոց, ինչպես օրինակ՝ գրավոր կամ բանավոր փաստարկներ բերելու կամ այն նյութերը ստանալու իրավունքը, որոնց հիման վրա խորհրդատու կոմիտեն կայացնում է իր վճիռը:

¶ 3.7. Դատապաշտպանի համար 6-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ներում պահանջելու իրավունքը պետք է մեկնաբանվի որպես արդյունավետ իրավունք, այսինքն՝ այն պետք է այնպես մեկնաբանել, որ գործնականում կիրառելի և արդյունավետ լինի, ոչ թե տեսական կամ ձևական: Ուստի այն պետք է ներում հայցող անձին տա հետևյալ դատաիրավական իրավունքները.

- իրավունք ծանուցվելու այն օրվա մասին, երբ խորհրդատու կոմիտեն քննելու է գործը,
- խորհրդատու կոմիտեում գործի լսման ընթացքում փաստաթղթեր ստանալու իրավունք,
- նախքան խորհրդատու կոմիտեում գործի լսումը ընդհանուր և նյութի հետ կապված հայտարարություններ անելու իրավունք,
- խորհրդատու կոմիտեում բանավոր լսման իրավունք,
- ցանկացած միջազգային ատյանի, օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի բացահայտումները և առաջարկները խորհրդատու կոմիտեին ներկայացնելու և դրանք քննության հանձնելու իրավունք:

¶ 3.8. Դատապաշտպանը նշում է, որ խորհրդատու կոմիտեն առանց հեղինակին տեղեկացնելու կարող էր մի քանի անգամ հանդիպել նրա դիմումը քննելու համար և որոշել կրկին ժողով գումարել՝ զրկելով նրան հայտարարություններ անելու հնարավորությունից և չտրամադրելով նրան քննվելիք նյութերը: Դատապաշտպանը բերում է այն փաստարկը, որ դա 6-րդ հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաև 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում է, քանի որ խորհրդատու կոմիտեն կարող է վստահաբար որոշել, թե որ հանցագործությունն է համարվում «ամենամանր հանցագործություն», միայն այն դեպքում, երբ դատապարտյալը կարող է լիարժեք մասնակցել վճռի կայացման գործընթացին:

ՄԻԿ-ը մերժել է 6-րդ հոդվածի 4-րդ կետի հետ կապված պահանջը.

¶ 7.4. Կոմիտեն դատապաշտպանի պնդման առնչությամբ նշել է, որ դաշնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված նրա իրավունքը խախտվել է, քանի որ պարոն Քենեդիի՝ ներման դիմումի հետ կապված գործը ոչ մի փուլում չի լսվել, և նա մույնիսկ չի տեղեկացվել է տվյալ դիմումին նվիրված քննարկումների մասին: Այլ կերպ ասած՝ դատապաշտպանը բերում է այն փաստարկը, որ ներում կամ պատժի մեղմացում պահանջելու իրավունքն իրականացնելիս հարկ է առաջնորդվել 14-րդ հոդվածի (տե՛ս վերոնշյալ 3.8 կետը) դատաիրավական երաշխիքներով: Այդուհանդերձ, կոմիտեն նշում է, որ 6-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը հատուկ ընթացակարգ չի նախատեսում ներման առանձնաշնորհի իրականացման եղանակների համար: Ըստ այդմ՝ մասնակից պետությունները պահպանում են 6-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված իրավունքների իրականացման եղանակներն իրենց հայեցողությամբ սահմանելու իրավունքը: Ակնհայտ չէ, որ Տրինիդադ և Տոբագոյի դեպքում գործող ընթացակարգը և սահմանադրության 87-89-րդ մասերում սահմանված եղանակներն ուղղված են 6-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավունքի փաստացի բացառմանը: Նման հանգամանքներում կոմիտեն կարծում է, որ այս դրույթը չի խախտվել:

ՄԱՅԱՊԱՏԺՑ ԱՉԱՏՎԱԾ ԱՆՁԻՆԵՐ

[8.32] 6-րդ հոդվածի 5-րդ կետն արգելում է հղի կանանց և հանցագործության կատարման պահին անչափահաս (18 տարին չլրացած) անձանց մահապատժի դատապարտել⁴⁶։ Բացի այդ, ՄԻԿ-ը հայտնել է, որ թույլ մտավոր կարողություններ ունեցող անձինք պետք է նույնպես անձեռնմխելի լինեն մահապատժի նկատմամբ՝ ափսոսանք հայտնելով Միացյալ Նահանգների կողմից նման մարդկանց մահապատժից չպաշտպանելու մասին⁴⁷։ «Ուիլյամսն ընդդեմ Ճամայկայի» (*Williams v Jamaica, 609/95*) գործով ՄԻԿ-ը չի քննարկել «մտավոր խանգարումներ» ունեցող անձին մահապատժի դատապարտելու վերաբերյալ ներկայացված բողոքը, քանի որ դրա ուսումնասիրության ընթացքում դատավճիռը մեղմացվել է և փոխարինվել ցմահ բանտարկությամբ⁴⁸։ «Ռ. Ս.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագայի» (*R.S. v Trinidad and Tobago, 684/96*) գործով 7-րդ հոդվածի խախտման մասին որոշում է ընդունվել թույլ մտավոր կարողություններով անձի նկատմամբ մահապատիժ կիրառելու կարգադրության առնչությամբ [9.62]։ ՄԻԿ-ը նշել է, որ «դատավարության նախնական փուլում հեղինակի մտավոր առողջության վերաբերյալ տեղեկություններ» չկան, [ուստի] ի վիճակի չէր որոշելու, թե արդյոք հեղինակի՝ 6-րդ հոդվածով սահմանված իրավունքները խախտվե՞լ են, թե՞ ոչ⁴⁹։ Սույն գործից հստակ բխում է, որ անմեղսունակ անձի նկատմամբ մահապատժի սահմանումը 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է։

ՀԱՆՑԱԳՈՐԾԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԱՅԱՊԱՏԺԻ ԿԻՐԱՌՈՂ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ⁵⁰[8.33] «ՔԻՆԴԼԵՐՆ ԸՆԴՈՂԵՄ ԿԱՆԱԴԱՅԻ» (*KINDLER v CANADA, 470/91*)

ՄԻԿ-ի առջև կանգնած ամենահակասական խնդիրներից մեկն ի հայտ է եկել Կանադայի կողմից հանցագործի հանձնման գործերում. դրանցից *Քինդլերի* գործն առաջինն էր, որով նյութաիրավական հիմնավորման մասին որոշում կայացվեց։

¶ 2.1. 1983-ի նոյեմբերին հեղինակը դատապարտվեց Միացյալ Նահանգների Փենսիլվանիայի նահանգում առաջին կարգի սպանության և առևանգման համար. ատենակալներն առաջարկեցին նրան դատապարտել մահապատժի։ Ըստ հեղինակի՝ այս առաջարկը պարտադրում է դատարանին այն ընդունել։ 1984-ի սեպտեմբերին՝ նախքան մահապատժի ենթարկվելը, հեղինակը փախուստի դիմեց կալանավարից։ Նա ձերբակալվեց 1985 թ. ապրիլին Կանադայի Քվեբեկ նահանգում։ 1985 թ. հուլիսին Միացյալ Նահանգները նրան հանձնելու պահանջ ներկայացրեց, իսկ նույն թվականի օգոստոսին Քվեբեկի գերագույն դատարանը հրահանգ տվեց նրան հանձնել ԱՄՆ-ին։

¶ 2.2. 1976 թ. Կանադայի և Միացյալ Նահանգների միջև կնքված Հանցագործների հանձնման մասին համաձայնագրի 6-րդ հոդվածով սահմանվում է հետևյալը.

«Այն դեպքում, երբ այն հանցագործությունը, որով հանցագործի հանձնման պահանջ է ներկայացվում, նախատեսում է մահապատիժ հանձնման պահանջը ներկայացրած պետության օրենսդրությամբ, իսկ այդ պահանջը ստացող պետության օրենսդրությունը թույլ չի տալիս այդ հանցանքի համար սահմանել նման պատիժ, ապա հանցագործի հանձնումը կարող է մերժվել, եթե պահանջ ներկայացրած պետությունը պահանջը ստացած պետությանը չտրամադրի այնպիսի երաշխիքներ, որոնք վերջինս բավարար կհամարի՝ պարտավորվելու, որ մահապատիժ չի սահմանվի կամ սահմանվելու դեպքում ի կատար չի ածվի»։

1976 թ. Կանադան վերացրեց մահապատիժը՝ բացառությամբ որոշ ռազմական հանցագործությունների։

¶ 2.3. Հանցագործների հանձնման որոշման 25-րդ բաժնի համաձայն՝ մահապատիժը կանխարգելող երաշխիքներ պահանջելու իրավասությունը պատկանում է արդարադատության նախարարությանը։ 1986 թ. հունվարի 17-ին՝ հեղինակի դատապաշտպանին լսելուց հետո, արդարադատության նախարարությունը որոշեց երաշխիքներ չպահանջել։

⁴⁶ Տե՛ս օրինակ՝ *Johnson v Jamaica* (592/94) գործը, պարբ.10.3, որում հեղինակն ընդամենը 17 տարեկան էր ենթադրյալ հանցագործության իրականացման պահի դրությամբ և դատապարտվել էր մահվան, ինչը հակասում էր 6-րդ հոդվածի 5-րդ կետին։

⁴⁷ Եզրափակիչ դիտարկումներ ԱՄՆ-ի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50, պարբ. 16։

⁴⁸ Պարբ. 6.2։

⁴⁹ Պարբ. 7.2։

⁵⁰ Տե՛ս [9.67] անձին Միացյալ Նահանգներ արտաքսման և հայրենադարձության վերաբերյալ հարցը, որով կարող են խախտվել նրա՝ 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքները։

¶ 2.4. Հեղինակը նախարարի որոշումը վերանայելու հայց է ներկայացնում դաշնային դատարան, որն էլ 1987 թ. հունվարին մերժում է այն: Հեղինակի՝ վճռաբեկ դատարանին ներկայացրած դիմումը մերժվում է 1988 թ. դեկտեմբերին: Այնուհետև գործն անցնում է Կանադայի գերագույն դատարան, որը 1991 թ. սեպտեմբերի 26-ին որոշում է կայացնում, որ պրն Քինդլերի հանձնումը չի խախտի Կանադայի՝ Մարդու իրավունքների խարտիայով նախատեսված իրավունքները: Նույն օրը տեղի է ունենում հեղինակի հանձնումը:

Քինդլերը պնդում էր, որ իրեն հանձնելու որոշմամբ, ի թիվս այլոց, խախտվել է 6-րդ հոդվածը, քանի որ Միացյալ Նահանգներում ինքը մահապատժի ենթարկվելու վտանգի տակ էր: Դիմումի ներկայացման պահին Միացյալ Նահանգները ՔՔԻՄԴ-ին անդամակցող մասնակից պետությունն էր:

ՄԻԿ-ը չընդունեց կանադական կողմի այն փաստարկները, որ դիմումն անընդունելի էր տեղական հիմունքներով (*ratione loci*)⁵¹: ՄԻԿ-ը, գործի նյութաիրավական հիմնավորմամբ, որոշում կայացրեց մասնակից պետության օգտին հետևյալ ձևակերպումներով.

¶ 13.1. Այս դիմումի նյութաիրավական հիմնավորումներն ուսումնասիրելուց առաջ կոմիտեն նկատում է, որ ընդունելիության որոշման համաձայն՝ դիմումի առարկա է ոչ թե այն, որ պարոն Քինդլերի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել կամընտիր արձանագրության մասնակից չհանդիսացող Միացյալ Նահանգների կողմից, այլ այն, որ պարոն Քինդլերին Միացյալ Նահանգներին հանձնելով՝ Կանադան նրան ենթարկել է դաշնագրով սահմանված նրա իրավունքների խախտման իրական վտանգի: Դաշնագրի մասնակից պետությունները հաճախ կարող են նաև կրել տարբեր երկկողմ, այդ թվում՝ հանցագործների հանձնման համաձայնագրերով սահմանված պարտավորություններ: Դաշնագրին անդամակցող մասնակից պետությունը պարտավոր է կատարել իր մյուս իրավական պարտավորությունները՝ չխախտելով դաշնագրի դրույթները: Որպես այս հարցի ուսումնասիրության ելակետ պետք է ընդունվի մասնակից պետության՝ դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորությունը, այն է՝ ապահովել իր տարածքում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ դաշնագրով նախատեսված իրավունքները: Կյանքի իրավունքն այս իրավունքներից կարևորագույնն է:

¶ 13.2. Այն դեպքում, երբ պետությունն իր իրավագործության ներքո գտնվող անձին հանձնում է այնպիսի հանգամանքներում, որոնց հետևանքով մեկ այլ իրավասության ներքո առաջանում է անձի՝ դաշնագրով սահմանված իրավունքների խախտման իրական վտանգ, հնարավոր է, որ մասնակից պետությունն ինքը խախտի դաշնագիրը:

¶ 14.1. Հեղինակին հանձնելու մասին որոշման հետ մեկտեղ ի հայտ են գալիս երկու փոխկապակցված հարցեր՝ Կանադայի կողմից դաշնագրի 6-րդ հոդվածի հնարավոր խախտման առնչությամբ.

(ա) Արդյոք 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կյանքի իրավունքը պաշտպանելու պահանջն արգելում է, որ Կանադան իր իրավագործության ներքո գտնվող անձին ենթարկի իրական վտանգի (այսինքն՝ Միացյալ Նահանգներին հանձնելու հետևանքով դաշնագրի 6-րդ հոդվածին հակասող հանգամանքներում նրա կյանքի ընդհատման անհրաժեշտ և կանխատեսելի հետևանքը):

(բ) Արդյոք այն փաստը, որ Կանադան վերացրել է մահապատիժը, բացառությամբ որոշ ռազմական հանցագործությունների, պահանջում է, որ Կանադան հրաժարվի հանցագործներին հանձնելուց կամ Միացյալ Նահանգներից երաշխիքներ պահանջի, որ պարոն Քինդլերը չի ենթարկվի մահապատժի, ինչը նա պարտավոր էր անել ըստ Հանցագործների հանձնման մասին համաձայնագրի 6-րդ հոդվածի:

¶ 14.2. (ա) կետի առնչությամբ կոմիտեն հիշատակում է 6-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանությունը, որով նախատեսվում է, որ, թեև մասնակից պետությունները պարտավոր չեն ամբողջովին վերացնել մահապատիժը, պարտավոր են սահմանափակել դրա կիրառումը: Ընդհանուր մեկնաբանությունում նաև նշվում է, որ 6-րդ հոդվածի պայմանները մատնանշում են, որ ցանկալի է վերացնել մահապատիժը: Սա այն է, ինչին պետք է ձգտեն դաշնագիրը ստորագրող կողմերը. «Վերացման բոլոր միջոցները պետք է առաջընթաց համարել կյանքի իրավունքից օգտվելու հարցում»: Ավելին՝ կոմիտեն նշում է միջազգային իրավունքի զարգացման և մահապատժի վերացման միտումը, ինչը վկայում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրության ընդունումը: Բացի այդ, երբ նույնիսկ պետությունները մահապատիժը պահպանում են օրենսդրության մեջ, շատերը գործնականում այն չեն կիրառում:

¶ 14.3. Կոմիտեն նշում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը պետք է ընթերցել 6-րդ հոդվածի 2-րդ կետի հետ միասին, որը չի արգելում մահապատժի կիրառումը ամենածանր հանցագործությունների դեպքում: Կանադան պարոն Քինդլերին չի ենթարկել մահապատժի, սակայն հանձնել է նրան Միացյալ Նահանգներին, որտեղ նա հայտնվել է մահապատժի ենթարկվելու վտանգի տակ: Եթե Կանադայի կողմից հանձնվելու պատճառով պարոն Քինդլերը Միացյալ

⁵¹ Տե՛ս [4.21]:

Նահանգներում հայտնվել 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման իրական վտանգի տակ, ապա դա կենթադրել, որ Կանադան խախտել է 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իր պարտավորությունները: 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից մեկն այն է, որ մահապատիժը պետք է կիրառվի միայն առավել լուրջ հանցագործությունների դեպքում, դաշնագրին և այլ իրավական գործիքներին չհակասող հանգամանքներում և պետք է իրականացվի իրավագոր դատարանի կայացրած վերջնական դատավճռի համաձայն: Կոմիտեն նշում է, որ պարոն Քինդլերը դատապարտվել էր կանխամտածված սպանության համար, որը, անկասկած, խիստ ծանր հանցագործություն է: Հանցագործությունը կատարելու պահին նա չափահաս էր: Հեղինակը չի հայտարարել Կանադայի դատարանների կամ կոմիտեի առջև, որ Փենսիլվանիայի նահանգի դատարանում դատավարության ընթացքում խախտվել են իր՝ դաշնագրի 14-րդ հոդվածով նախատեսված արդար դատավարության իրավունքները:

¶ 14.4. Ավելին՝ կոմիտեն նկատում է, որ պարոն Քինդլերը հանձնվել է Միացյալ Նահանգներին Կանադայի դատարաններում երկար դատավարության արդյունքում, որոնք ուսումնասիրել էին ներկայացված բոլոր փաստերը պարոն Քինդլերի դատավարության և դատապարտման վերաբերյալ: Տվյալ հանգամանքներում կոմիտեն կարծում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետից բխող պարտավորությունները չեն պահանջում, որ Կանադան մերժի հեղինակի հանձնումը:

¶ 14.5. Կոմիտեն նշում է, որ Կանադան վերացրել է մահապատիժը, բացառությամբ ռազմական հանցագործությունների որոշ տեսակների, այնուամենայնիվ նա չի հանդիսանում դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրության ստորագրող կողմ: (բ) կետի առնչությամբ, այն է՝ արդյոք այն փաստը, որ Կանադան ընդհանրապես վերացրել է մահապատիժը, և դաշնագրով սահմանված իր պարտավորությունները պահանջել են, որ չհանձնի հանցագործին կամ կիրառի դաշնագրով հանցագործների հանձնման մասով սահմանված երաշխիքներ պահանջելու իր իրավունքը, կոմիտեն նշում է, որ մահապատիժի վերացումը Կանադային չի ազատում հանցագործների հանձնման մասին համաձայնագրերով ստանձնած իր պարտավորություններից: Այնուամենայնիվ, սկզբունքորեն ակնկալվում է, որ Հանցագործների հանձնման մասին համաձայնագրի շրջանակներում թույլատրելի հայեցողությամբ գործելիս (այսինքն՝ արդյոք երաշխիքներ պահանջե՞լ, որ մահապատիժ չի կիրառվի) մահապատիժի հրաժարված պետությունը նման որոշումը կայացնելիս պետք է ամենայն ուշադրությամբ քննության առնի սեփական քաղաքականությունը: Այնուամենայնիվ, կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը ցույց է տվել, որ երաշխիքներ պահանջելու հնարավորությունը սովորաբար կիրառվում է բացառիկ հանգամանքներում: Այս հնարավորությունը հանգամանակից քննարկվել է:

¶ 14.6. Թեև հանցագործների հանձնման մասին դաշնագրերի կիրառման հարցում սեփական հայեցողությամբ գործելիս պետությունը պետք է հաշվի առնի կյանքի պաշտպանության հնարավորությունները, սակայն կոմիտեն չի կարծում, որ դաշնագրի 6-րդ հոդվածը պարտադրում է, որ Կանադան մերժի հանցագործին հանձնելու պահանջը կամ երաշխիքներ պահանջի: Կոմիտեն նշում է, որ պարոն Քինդլերի հանձնումը կխախտի Կանադայի՝ դաշնագրի 6-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները, եթե առանց երաշխիքներ պահանջելու հանձնելու մասին որոշումն ընդունված լինել կամայական կարգով կամ հապճեպ: Այդուհանդերձ, կոմիտեի տրամադրության տակ եղած փաստերը ցույց են տալիս, որ արդարադատության նախարարությունն իր որոշումն ընդունել է երաշխիքներ պահանջելու օգտին բերված փաստարկը լսելուց հետո: Կոմիտեն նաև հաշվի է առնում Կանադայի կողմից տրված պատճառաբանությունները պարոն Քինդլերի գործով երաշխիքներ չպահանջելու վերաբերյալ, մասնավորապես՝ բացառիկ հանգամանքների բացակայությունը, պատշաճ դատավարության առկայությունը և սպանության մեջ մեղադրվող կամ սպանության համար դատապարտված անձանց ապահով ապաստարան չտրամադրելու կարևորությունը:

[8.34] ՄԻԿ-ի հինգ անդամներ համաձայնության չեկան Քինդլերի գործով: 6-րդ հոդվածի վերաբերյալ մեծամասնության կողմից ընդունված նման որոշումներ և տարաձայնություններ ի հայտ են եկել «Նգ-Ու ընդդեմ Կանադայի» (*Ng v Canada, 469/91*) և «Բոքսն ընդդեմ Կանադայի» (*Cox v Canada, 539/93*) գործերով: «Ջաջն ընդդեմ Կանադայի» (*Judge v Canada, 829/98*) գործով ՄԻԿ-ի մեծամասնությունը փոխել է իր կարծիքը և հիմնականում որդեգրել նախկինում Քինդլերի, Նգ-ի և Բոքսի գործերում առկա տարաձայնությունների հիմքում ընկած փաստարկները:

[8.35] «ՋԱՋՆ ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱԴԱՅԻ» (JUDGE v CANADA, 829/98)

Ջաջի (*Judge*) գործով բերված փաստերը նման էին Քինդլերի (*Kindler*) գործով բերված փաստերին: Հեղինակին Կանադայից հանձնել էին Փենսիլվանիայի նահանգին, որտեղ նրան սպասում էր էլեկտրական աթոռը: Հեղինակին արտաքսել էին ՄԻԿ-ին ուղղված իր դիմումի ներկայացման օրը: Նրա արտաքսումը գրկեց նրան այն բողոքարկելու իրավունքից: ՄԻԿ-ը պետք է ի վերջո որոշում ընդուներ երկու հարցի շուրջ, ինչպես մանրամասն նշվում է իր կայացրած որոշման մեջ.

1-ին հարց: Քանի որ Կանադան վերացրել է մահապատիժը, արդյոք խախտե՞լ է հեղինակի՝ դաշնագրի 6-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքը՝ նրան արտաքսելով մի պետություն, որտեղ նրան մահապատիժ էր սպառնում, և չերաշխավորելով, որ այդ պատիժը չի իրականացվի:

¶ 10.2. Կանադայի պարտավորությունները հաշվի առնելիս կոմիտեն մտաբերում է «Քինդլերն ընդդեմ Կանադայի» գործով իր նախադեպային բազան: Այս որոշումն ընդունելիս կոմիտեն հաշվի է առել դաշնագրի այն մեկնաբանությունը, որը վերաբերում է 6-րդ հոդվածի 1-ին կետին 6-րդ հոդվածի 2-րդ կետի հետ միասին, որով մահապատիժը չի արգելվում ամենածանր հանցագործությունների դեպքում:

¶ 10.3. Ընդունելով, որ կոմիտեն պետք է ապահովի իր նախադեպային բազայի հետևողականությունը և կապակցվածությունը, նա նշում է, որ կարող են լինել բացառիկ հանգամանքներ, որոնց դեպքում հարկ է վերանայել դաշնագրով պաշտպանվող իրավունքների կիրառման շրջանակները, օրինակ՝ այն դեպքերում, երբ խախտվում է իրավունքներից ամենահիմնարարը՝ կյանքի իրավունքը, և հատկապես երբ բարձրացված հարցում տեղի են ունեցել փաստացի և իրավական նշանակալի զարգացումներ և փոփոխություններ միջազգային հանրության տեսակետներում: Կոմիտեն հաշվի է առնում այն փաստը, որ վերոնշյալ նախադեպային բազան ձևավորվել է 10 տարի առաջ, և այդ ժամանակից ի վեր ընդլայնվել է մահապատիժի վերացումը պաշտպանող միջազգային հանրության շրջանակը, իսկ այն երկրներում, որտեղ դեռևս գործում է մահապատիժը, ընդլայնվել է դրա կիրառման դեմ արտահայտվող հանրության շրջանակը: Կոմիտեն նշում է, որ *Քինդլերի* գործից ի վեր «*Միացյալ Նահանգներն ընդդեմ Բերնսի*» (*United States v. Burns*) գործով մասնակից պետությունն ինքն է ճանաչել սեփական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու կարիքը՝ Կանադայի կողմից հանձնված հանցագործներին ընդունող պետությունում մահապատիժ պաշտպանելու համար: Այդ գործով Կանադայի վերին ատյանի դատարանը որոշեց, որ, եզակի դեպքերի բացառությամբ, բոլոր դեպքերում պետությունը պետք է երաշխիքներ պահանջի, որ մահապատիժ չի կիրառվի նախքան անձին մի պետություն հանձնելը, որտեղ նա կհայտնվի մահապատիժի վտանգի տակ: Տեղին է նշել, որ այս դատավճռի պայմաններում «մահապատիժը վերացրած մնացած երկրներն առանց երաշխիքների ընդհանրապես հանցագործներին չեն հանձնում»: Կոմիտեն համարում է, որ դաշնագիրը հարկ է մեկնաբանել որպես մի կենսունակ գործիք, իսկ դրանով պաշտպանվող իրավունքները պետք է կիրառվեն ժամանակակից համատեքստում և պայմաններում:

¶ 10.4. 6-րդ հոդվածի 1-ին կետը մի ընդհանուր կանոն է, որի նպատակն է ապահովել կյանքի պաշտպանությունը: Այն մասնակից պետությունները, որոնք վերացրել են մահապատիժը, պարտավոր են բոլոր հանգամանքներում պաշտպանել կյանքը այս կետով սահմանված կարգով: 6-րդ հոդվածի 2-6-րդ կետերն ակնհայտորեն ներառված են՝ բացառելու 6-րդ հոդվածի 1-ին կետի այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ այդ կետն ընկալվի որպես մահապատիժի վերացում: 2-6-րդ կետերն իրականում ունեն երկու գործառույթ՝ մահապատիժի մասով բացառություն ստեղծել կյանքի իրավունքի նկատմամբ և սահմանել այդ բացառության շրջանակները: Միայն որոշակի տարրերի առկայության դեպքում իրականացված մահապատիժը կարող է դիտվել որպես բացառություն: Այս սահմանափակումները կարելի է գտնել 2-րդ կետի ներածական ձևակերպման մեջ, այն է՝ միայն այն մասնակից պետությունները, որոնք «չեն վերացրել մահապատիժը», կարող են օգտվել 2-6-րդ կետերով նախատեսված բացառություններից: Այն պետությունները, որոնք վերացրել են մահապատիժը, պարտավոր են անձին չենթարկել դրա կիրառման իրական վտանգին: Ուստի նրանք չեն կարող արտաքսման կամ հանձնման միջոցով անձանց դուրս բերել իրենց իրավասության ոլորտից, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրանք մահապատիժի կենթարկվեն, և նախապես չերաշխավորել, որ դա չի իրականացվի:

¶ 10.5. Կոմիտեն գիտակցում է, որ 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերն այս կերպ մեկնաբանելով՝ մահապատիժը վերացրած և պահպանող մասնակից պետությունների նկատմամբ դրսևորվում է տարբեր վերաբերմունք: Սակայն նա համարում է, որ սա բուն դրույթի ձևակերպման անխուսափելի հետևանքն է, ինչը, ինչպես հստակ երևում է նախապատրաստական աշխատություններից (*travaux préparatoires*), ուղղված էր մահապատիժի հարցի շուրջ չափազանց տարբեր տեսակետների հաշտեցմանը՝ դրանով իսկ փորձելով փոխհամաձայնության բերել տվյալ դրույթը կազմողներին: Կոմիտեն նշում է, որ նախապատրաստական աշխատություններում գրված է, որ մի կողմից՝ դաշնագրի հիմնական սկզբունքներից մեկը պետք է լինի վերացումը, իսկ մյուս կողմից՝ մատնանշվում է, որ մահապատիժը գոյություն է ունեցել որոշ երկրներում, և դրա վերացումը կարող է դժվարություններ ստեղծել այդ երկրների համար: Դրույթի կազմման գործընթացին մասնակցող շատ պատվիրակների և մարմինների կողմից մահապատիժը դիտվել է «անկանոնություն» կամ «անհրաժեշտ չարիք»: Հետևաբար, տրամաբանական կլիներ 6-րդ հոդվածի 1-ին կետում բերված կանոնը մեկնաբանել լայն, իսկ մահապատիժի հարցին անդրադարձող 2-րդ կետը՝ նեղ իմաստով:

¶ 10.6. Ելնելով այս պատճառաբանություններից՝ կոմիտեն համարում է, որ Կանադան՝ որպես մահապատիժը վերացրած մասնակից պետություն, անկախ այն հանգամանքից՝ ընդունե՞լ է Մահապատիժի վերացմանն ուղղված դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրությունը, թե՞ ոչ, խախտել է հեղինակի՝ 6-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքը՝ նախապես չապահովելով մահապատիժի չիրականացումը:

Հարց 2-րդ: Մասնակից պետությունն ընդունում է, որ հեղինակն արտաքսվել է Միացյալ Նահանգներ նախքան Քվեբեկի վճռաբեկ դատարանում արտաքսումը միանգամից չիրականացնելու մասին իր մերժված դիմումը բողոքարկելու իրավունքից օգտվելու հնարավորություն ստանալը: Հետևանքն այն է, որ հեղինակը չկարողացավ կիրառել իրավական պաշտպանության որևէ այլ հասանելի միջոց: Արդյոք մասնակից պետությունը խախտե՞լ է հեղինակի՝ դաշնագրի 6-րդ հոդվածով սահմանված իրավունքները՝ նրան արտաքսելով մի երկիր, որտեղ նա մահապատժի կենթարկվելու նախքան այդ արտաքսման բողոքարկման մասով իր բոլոր իրավունքներից օգտվելու հնարավորություն ստանալը:

¶ 10.8. ...Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը հեղինակին դուրս է բերել իր իրավասության ոլորտից Քվեբեկի վերին ատյանի դատարանի դատավճիռն ընդունելուց մի քանի ժամ անց, որը, ըստ երևույթին, եղել է վճռաբեկ դատարանում նրա բողոքարկման իրավունքի կիրառումը կանխելու փորձ:

¶ 10.9. ...Տվյալ գործում, հեղինակին զրկելով տեղական օրենսդրությամբ իրեն վերապահված բողոքարկման իրավունքը կիրառելու հնարավորությունից, մասնակից պետությունը ցույց չտվեց, որ հեղինակի այն պնդումը, որ իր արտաքսումը մի երկիր, որտեղ ինքը կենթարկվի մահապատժի, խախտում է իր կյանքի իրավունքը, բավականաչափ է հաշվի առնվել: Մասնակից պետությունը յուրաքանչյուր բողոքարկողին հնարավորություն է ընձեռում օգտվելու բողոքարկման համակարգից և պաշտպանելու իր իրավունքները, մասնավորապես՝ ամենափիմնարար իրավունքը՝ կյանքի իրավունքը: Հաշվի առնելով այն փաստը, որ մասնակից պետությունը վերացրել է մահապատիժը, հեղինակին մի պետություն արտաքսելու որոշումը, որտեղ նա կենթարկվի մահապատժի՝ հնարավորություն չընձեռելով նրան օգտվելու իրեն վերապահված բողոքարկման իրավունքից, ընդունվել է կամայականորեն՝ դրանով իսկ խախտելով դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետն առանձին և 2-րդ հոդվածի 3-րդ կետի հետ միասին ընթերցմամբ:

12. Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի համաձայն՝ կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակն իրավասու է հայցելու իրավական պաշտպանության պատշաճ միջոց, ինչն ընդգրկում է այնպիսի քայլեր, որոնք հնարավորություն կտան ընդունող պետությանը չկիրառելու մահապատիժ հեղինակի նկատմամբ:

[8.36] Ի տարբերություն *Քինդլերի* գործի՝ միայն մեկ հակառակ կարծիք էր հնչել. պարոն Անդրն բողոքը համարեց անընդունելի: Ուստի ՄԻԿ-ը գրեթե միահամուռ որոշեց հրաժարվել *Քինդլերի* գործից և այժմ 6-րդ հոդվածը մեկնաբանում է որպես արգելք, որը թույլ չի տալիս, որ մահապատիժը վերացրած պետությունն անձին հանձնի մի պետության, որտեղ անձին մահապատժի ենթարկելը կարելի է կանխատեսել, բացառությամբ այն դեպքի, եթե հանձնող պետությունը քայլեր է ձեռնարկում ընդունող պետությունում անձի նկատմամբ մահապատժի իրականացումը թույլ չտալու համար: Թվում է, որ նույն պարտականությունը չի վերաբերում այն դեպքերին, երբ հանձնող պետությունը հանդիսանում է մահապատժին կողմնակից պետություն: Նման պետություններն օգտվում են կյանքի իրավունքի՝ 6-րդ հոդվածի 2-6-րդ կետերով սահմանված բացառություններից, չնայած այժմ թերևս անորոշ է, թե արդյոք, ի տարբերություն պետության կողմից մահապատժի իրականացմանը, այս բացառություններն ընդհանրապես կիրառվո՞ւմ են պետության կողմից հանցագործների հանձնման դեպքերում, թե՞ ոչ:

[8.37] *Ջաջի (Judge)* գործով ընդունված որոշումը նշանակում է, որ մահապատժին վերադառնալը խախտում է 6-րդ հոդվածը: Մասնակից պետությունը չի կարող «վերադառնալ» մահապատժի կիրառմանը, եթե նախկինում վերացրել է այն: Քանի որ մասնակից պետությունը դասակարգվում է որպես մահապատժի վերացրած պետություն, *Ջաջի* գործի հաստատմամբ այլևս երբեք չի կարող հիմք ընդունել մահապատժի բացառությունները՝ սահմանված 6-րդ հոդվածի 2-6-րդ կետերով:

[8.38] Մյուս դեպքերում⁵² մահապատժի անկանոն բացառությունը ստիպել է ՄԻԿ-ին դաշնագրի այնպիսի մեկնաբանություններ տալ, որ դրանց արդյունքը եղել է տարօրինակ և թերևս ոչ տրամաբանական: *Ջաջի* գործով Կանադան խախտել է 6-րդ հոդվածը՝ հեղինակին Միացյալ Նահանգներին հանձնելով, քանի որ ԱՄՆ-ն ամենայն հավանականությամբ կենթարկելու նրան մահապատժի: Այդուհանդերձ, հնարավոր է, որ կախված մահապատժի կիրառման հանգամանքներից և բուն դատապարտումից՝ ԱՄՆ-ն չի խախտի 6-րդ հոդվածը և հեղինակին մահապատժի չի ենթարկի⁵³: Այս վարկածը չի փորձարկվի, եթե ԱՄՆ-ն չդառնա կամընտիր արձանագրության ստորագրող կողմ:

⁵² Տե՛ս օրինակ՝ [9.90]:

⁵³ Այդուհանդերձ, հեղինակը հայտնեց, որ ինքն այլևս չի կարող Փենսիլվանիայի նահանգում բողոքարկել իր մահապատիժը, քանի որ Կանադայից փախուստի է դիմել: Այս հանգամանքը կարող է խախտել 14-րդ հոդվածի 5-րդ կետը, ուստի ազդել նրա մահապատժի վրա՝ դրանով իսկ խախտելով 6-րդ հոդվածը: Այս առնչությամբ տե՛ս [8.24]:

Կյանքի դրական իրավունք

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[8.39] ՔՔԻՄԴ-ի այլ իրավունքների առնչությամբ ՄԻԿ-ն առանձնահատուկ նշել է, որ մասնակից պետությունը համապատասխան անձնակազմ, օրինակ՝ ոստիկաններ և բանտապահներ պատրաստելու պարտավորություն ունի՝ բռնության հավանականությունը նվազեցնելու համար⁵⁴: Նման պարտավորություն ենթադրաբար կարող է լինել 6-րդ հոդվածի առնչությամբ: Օրինակ՝ Ռումինիայի առնչությամբ ՄԻԿ-ն առաջարկել է խստորեն կարգավորել ոստիկանության կողմից հրազենի օգտագործումը⁵⁵: Խիստ կարգավորումը ենթադրաբար ներառում է հրազենի օգտագործման համապատասխան ցուցումների տրամադրում: Տանգանիայի Միացյալ Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն ավստասանքով նշել է «ոստիկանության աշխատակիցների» մարդու իրավունքների և անկարգությունների հակազդման համար գործարկվող սարքերի, ինչպես օրինակ՝ ռետինե փամփուշտների օգտագործման մասով պատրաստվածության բացակայությունը»⁵⁶:

ԱԶՏԱԶՐԿԱԾՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[8.40] «ԴԵՐՄԻՏ ԲԱՐԲԱՏՈՆ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ» (*DERMIT BARBATO v URUGUAY, 84/81*)

ՄԻԿ-ը բողոք է ստացել ում Հյուգո Հերալդո Դերմիտ Բարբատոյի՝ Ուրուգվայի իշխանությունների կողմից պահվող բանտարկյալի մահվան մասին:

¶ 9.2. Մասնակից պետությունը ոչ զեկույց է ներկայացրել Հյուգո Դերմիտի մահվան հանգամանքների մասին, ոչ էլ տեղեկություններ կատարված հարցումների կամ դրանց արդյունքի մասին: Հետևաբար, կոմիտեն համապատասխան կշիռ է հաղորդում հեղինակի ներկայացրած տեղեկությանը՝ ցույց տալով, որ Հյուգոյի մահից մի քանի օր առաջ բանտապահները տեսել են նրան և հայտնել, որ նա լավ տրամադրություն ուներ, չնայած ընդհատվել էին նրան ազատ արձակելու և Ուրուգվայից նրա մեկնելու պատրաստությունները: Թեև կոմիտեն չի կարող հստակ եզրակացնել, թե արդյոք կալանքի ընթացքում Հյուգո Դերմիտն ինքնասպանություն է գործել, դրվել ինքնասպանության, թե՞ սպանվել այլոց կողմից, սակայն անխուսափելի է այն եզրահանգումը, որ ամեն դեպքում Ուրուգվայի իշխանությունները թե՛ իրենց գործողություններով, թե՛ հանձնարարություններով պատասխանատվություն են կրում համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար՝ դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով նրա կյանքը պաշտպանելու համար:

¶ 10. Մարդու իրավունքների կոմիտեն, գործելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներում, պաշտպանում է այն տեսակետը, որ դիմումն ի հայտ է բերում դաշնագրի, մասնավորապես՝ (ա) 6-րդ հոդվածի խախտում՝ Հյուգո Հերալդո Դերմիտ Բարբատոյի առնչությամբ, քանի որ Ուրուգվայի իշխանությունները համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել կալանքի ընթացքում նրա կյանքը պաշտպանելու համար:

¶ 11. Համապատասխանաբար, կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը պարտավոր է արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ (ա) Հյուգո Դերմիտի մահվան փաստերը պարզելու, նրա մահվան համար պատասխանատու անձանց պատասխանատվության կանչելու և նրա ընտանիքին համապատասխանաբար փոխհատուցելու համար:

[8.41] Լուրջ հիմքեր կային ենթադրելու, որ պրն Դերմիտ Բարբատոյին սպանել են պետական իշխանությունները: Այդուհանդերձ, ՄԻԿ-ը պատրաստակամ չէր նման որոշում կայացնելու: Նա որոշեց, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը ենթադրում է պետության կողմից համապատասխան քայլերի չձեռնարկում՝ կալանքի ընթացքում տուժողի մահը կանխելու համար: Նույն տրամաբանությամբ 1995-ին Միացյալ Թագավորությունը քննադատվել է «բանտարկյալների, հատկապես պատանիների շրջանում

⁵⁴ Տե՛ս օրինակ՝ 7-րդ հոդվածի առնչությամբ [9.102]:

⁵⁵ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 111, պարբ.12:

⁵⁶ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 97, պարբ.18, տե՛ս նաև եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 93, պարբ. 17: Հրազենի անփույթ օգտագործման վերաբերյալ տե՛ս նաև «Բարեկն ընդդեմ ճամայկայի» (*Burrell v Jamaica*, 546/93) գործը [8.07]:

ինքնասպանությունների մեծ թվի համար»⁵⁷: Հետևաբար, պետությունը պետական կալանքի մեջ գտնվող անձանց կյանքն ապահովելու դրական պարտավորություն ունի: Սա լրացնում է պետության՝ չսպանելու բացասական պարտականությունը: Հետևյալ գործը լավ է ցույց տալիս այս դրական պարտավորությունը:

**«ԼԱՆՑՈՎՆ ԸՆԴՂԻՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ»
(LANTSOV v RUSSIAN FEDERATION, 763/97)**

Սույն գործը վերաբերում է, ի թիվս այլոց, Մոսկվայում նախադատական կալանքի տակ գտնվող հեղինակի որդու մահվան դեպքին: Կոմիտեն որոշեց, որ խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը:

¶ 9.2. Պրն Լանցովի մահվան կապակցությամբ կոմիտեն հաշվի է առել հեղինակի՝ մի քանի բանտակիցների տված հավաստի ցուցմունքների հիման վրա արված այն պնդումները, որ իր որդին առողջության վատթարացումից հետո բուժօգնություն է ստացել միայն կյանքի վերջին մի քանի րոպեների ընթացքում, որ դրան նախորդող օրերին բանտի ղեկավարությունը մերժել է նման օգնությունը, և այդ իրավիճակն էլ հենց մահվան պատճառ է դարձել: Կոմիտեն հաշվի է առնում նաև մասնակից պետության տրամադրած տեղեկությունները, ըստ որոնց՝ հետաքննություն է անցկացվել մահվան պատճառները պարզելու համար և պարզվել է, որ մահվան պատճառ է դարձել սրտային անբավարարության հանգեցնող սուր թոքաբորբը, և պրն Լանցովը բուժօգնություն չի պահանջել: Կոմիտեն հաստատում է, որ պետությունը պարտավոր է ապահովել բանտարկյալների կյանքի իրավունքը՝ չսպասելով, որ նրանք դիմեն այդ իրավունքի պաշտպանության համար: Մասնակից պետության՝ պայմանների բարելավման նշված մտադրությունը ոչ մի ազդեցություն չունի տվյալ գործի գնահատման վրա: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը հերքել է պրն Լանցովի կալանքի պայմանների և նրա առողջական վիճակի մահացու վատթարացման միջև եղած պատճառահետևանքային կապը: Ավելին՝ եթե նույնիսկ կոմիտեն որպես ելակետ ընդունի մասնակից պետության այն պնդումը, որ ոչ ինքը՝ պրն Լանցովը, ոչ էլ նրա բանտակիցները ժամանակին բուժօգնության չեն դիմել, էականն այն է, որ անձանց ձերբակալելով և կալանավորելով՝ մասնակից պետությունը նրանց կյանքի համար հոգալու պատասխանատվություն է ստանձնում: Կալանավայրերը նախագծելիս մասնակից պետությունն է կրում բանտարկյալների առողջական վիճակից հնարավորինս տեղյակ լինելու պարտավորությունը: Ֆինանսական միջոցների սղությունը կարող է նեղացնել այս պատասխանատվության շրջանակները: Կոմիտեն համարում է, որ կալանավայրում պատշաճ գործող բժշկական ծառայությունը կարող էր տեղյակ լինել և պարտավոր էր տեղյակ լինել պրն Լանցովի առողջական վիճակի վտանգավոր փոփոխությունից: Կոմիտեն համարում է, որ պետությունը համապատասխան միջոցներ չի ձեռնարկել կալանավայրում անցկացված ժամանակահատվածում պրն Լանցովի կյանքը պաշտպանելու համար: Հետևաբար Մարդու իրավունքների կոմիտեն եզրակացնում է, որ սույն գործով տեղի է ունեցել դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

[8.41Ա] ՄԻԿ-ը «Կաբալը և Պասինի Բերտրանն ընդդեմ Ավստրալիայի» (*Cabal and Pasini Bertran v Australia*, 1020/02) գործի կապակցությամբ նշել է, որ տարափոխիկ հիվանդություններով տառապող բանտարկյալներին մյուսներից չմեկուսացնելը կարող է խնդիրներ հարուցել հիմնականում 6-րդ հոդվածի 1-ին կետի և 10-րդ հոդվածի 1-ին կետի մասով⁵⁸: Կոմիտեն էլ ավելի հեռու գնաց «Ֆաբրիկանտն ընդդեմ Կանադայի» (*Fabrikant v Canada*, 970/01) գործով՝ նշելով, որ պետությունը «պատասխանատու է իր բանտարկյալների կյանքի և բարօրության համար»⁵⁹, դրանով իսկ բանտարկյալի կյանքը պահպանելուն ուղղված ողջամիտ քայլեր ձեռնարկելու դրական պարտավորությունն ընդլայնելով մինչև բանտարկյալի առողջությունը բավարար վիճակում պահելուն ուղղված նման քայլերի ձեռնարկումը:

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ՀՍԿԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[8.42] Կյանքի դրական իրավունքը ներառում է մասնավոր անձանց կողմից սպանությունները և անհետացումները կանխելու և պատժելու պարտավորություն [8.02]⁶⁰: Եվ իսկապես, այս պարտավորություն-

⁵⁷ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 55, պարբ.13:

⁵⁸ Պարբ. 7.7:

⁵⁹ Պարբ. 9.3: Դիմումը վերաբերում էր այն հայտարարությանը, որ Կանադայի իշխանությունները սրտի անբավարարություն ունեցող բանտարկյալին չեն ապահովել համապատասխան վիրաբուժական օգնությամբ: ՄԻԿ-ը որոշում ընդունեց դիմումի անընդունելիության մասին, քանի որ փաստերը ցույց տվեցին, որ Կանադան իսկապես հեղինակին վիրահատելու պայմաններ է ստեղծել:

⁶⁰ Տե՛ս նաև H. Kabaalioglu, 'The Obligations to "Respect" and "Ensure" the Right to Life', in B. Ramcharan (ed), *The Right to Life in International Law* (Martinus Nijhoff, Dordrecht, 1985), 160-179:

նը հստակ ամրագրված է 6-րդ հոդվածի 1-ին կետով, որը պարտավորեցնում է պետությանը «օրենքով» պաշտպանել անձանց կյանքը⁶¹: Պրն Վեններգրենը հակիրճ քննարկել է 6-րդ հոդվածի այս տեսանկյունը «Քինդլերն ընդդեմ Կանադայի» (*Kinder v Canada*, 470/91) գործում բերված իր մասնավոր կարծիքի շրջանակներում:

Կյանքի իրավունքի պաշտպանությունն ապահովելու ստանդարտ ձևը մարդ արարածի սպանության քրեականացումն է: Մարդու կյանքը խլելու գործողությունը սովորաբար դասակարգում են «մարդասպանություն», «պատահական սպանություն» կամ «սպանություն» եզրույթներով: Ավելին՝ հնարավոր են բացթողումներ, որոնք կարող են դասակարգվել որպես կյանքը միտումնավոր խլելու, անգործության և բացթողման հատկանիշներով հանցագործություններ, որոնք կյանքից զրկվելու պատճառ են դարձել, ինչպես օրինակ՝ բժշկի կողմից հիվանդի կյանքը չփրկելը՝ միտումնավոր կերպով կենսամաստ սարքավորումը չմիացնելով կամ կյանքին սպառնացող իրավիճակում անձին օգնություն ցույց չտալը: Կյանքից զրկելու համար քրեական պատասխանատվությունը դրվում է թե՛ մասնավոր անձանց և թե՛ պետության ներկայացուցիչների վրա: Քրեական իրավունքը որոշակի ուղղություն է տալիս մասնակից պետության՝ դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կյանքի իրավունքն իր իրավասության ոլորտում պաշտպանելու պարտավորությունները գնահատելիս:

[8.43] ՄԻԿ-ն անդրադարձել է այս պարտավորությանը մի շարք եզրափակիչ դիտարկումներում: Պարագվայը քննադատվել է մանկասպանության մասին մեղմ օրենքներ ունենալու համար⁶²: Աֆրիկյան մի շարք պետություններ դատապարտվել են կանացի սեռական օրգանների խեղումը հանդուրժելու համար՝ հաշվի առնելով երիտասարդ գոհերի կյանքին սպառնացող վտանգը⁶³: ԱՄՆ-ն քննադատվել է «հրազենի հեշտ ձեռքբերման» համար, որը վտանգել էր «կյանքի իրավունքի պաշտպանությունը և կիրառումը»⁶⁴: Գվատեմալայի առնչությամբ ՄԻԿ-ը մտահոգված էր փողոցային երեխաների իրավունքների, այդ թվում՝ նրանց կյանքի իրավունքի լուրջ խախտումներով «պետական և մասնավոր ոստիկանության կողմից»⁶⁵, որտեղ վերջիններս կազմակերպված հսկիչ խմբեր են: «Հարկ է խափանիչ միջոցներ ձեռնարկել անչափահասների, հատկապես դժվար կացության մեջ գտնվող անձանց նկատմամբ ցանկացած տեսակի բռնության իրականացման համար մեղավոր ճանաչված անձանց պատժելու նպատակով»⁶⁶: Եվ, վերջապես, թիվ 28 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը նշել է, որ «դեռևս չպատժված այսպես կոչված «պատվի համար հանցագործությունների» հրահրումը դաշնագրի, մասնավորապես 6-րդ, 14-րդ և 26-րդ հոդվածների լուրջ խախտում է»⁶⁷:

[8.44] Մասնակից պետությունները նույնպես պարտավոր են կանխել և պատժել անփութության կամ անխոհեմության պատճառով պետական և մասնավոր հատվածներում տեղի ունեցող մահերը: Օրինակ՝ Ուկրաինան դրվատվել է ճառագայթված ապրանքների պատրաստման և վաճառքի համար պատիժ սահմանող օրենքներ մշակելու համար⁶⁸:

6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

[8.45] Ռամչարանը նշել է, որ «գոյատևման պահանջը», ինչպիսին, օրինակ, կյանքի իրավունքն է, պետք է նախատեսվի որպես կյանքի իրավունքի մաս, «քանի որ մարդ ավելի շատ սովից կամ հիվանդություններից է մահանում, քան սպանվում»⁶⁹: ՄԻԿ-ը հաստատել է, որ 6-րդ հոդվածն ունի սոցիալ-տնտեսական տեսանկյուն:

⁶¹ Sté M. Nowak, *CCPR Commentary* (N. P. Engel, Kehl, 1993), 105-6:

⁶² (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 48, պարբ. 16:

⁶³ Եզրափակիչ դիտարկումներ Լեստոյի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106, 12-րդ կետ, Եզրափակիչ դիտարկումներ Սենեգալի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 82, 12-րդ կետ, Եզրափակիչ դիտարկումներ Սուդանի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C.79/Add. 85, պարբ.10:

⁶⁴ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50, պարբ.17:

⁶⁵ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 63, պարբ. 20:

⁶⁶ Նույնը, պարբ. 32: Ավժիրը նույնպես քննադատվել է հսկիչ խմբերի նկատմամբ ցուցաբերած ակնհայտ հանդուրժողականության համար (1998): ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 95, պարբ. 8:

⁶⁷ Պարբ. 31, տես նաև Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (իր որոշ միգրանտ համայնքների առջնությանը (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/74/SWE, պարբ. 8:

⁶⁸ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 52, պարբ. 6:

⁶⁹ B. Ramcharan, 'The Right to Life' (1983) 30 *NILR* 297, 305; cf Y. Dinstein, 'The Right to Life. Physical Integrity, and Liberty', in L. Henkin (ed), *The International Bill of Rights* (Columbia University Press, New York, 1981), at 115:

ԹԻՎ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Ավելին՝ կոմիտեն նշել է, որ կյանքի իրավունքը շատ հաճախ նեղ իմաստով է մեկնաբանվում: «Կյանքի իրավունքին բնորոշ» արտահայտությունը չի կարող նեղ իմաստով պատշաճ հասկացվել, և այս իրավունքի պաշտպանությունը պահանջում է, որ պետությունը ձեռնարկի դրական միջոցներ: Այս կապակցությամբ կոմիտեն համարում է՝ ցանկալի կլիներ, որ մասնակից պետությունները, հատկապես թերսնունդ և համաճարակները բացառող միջոցներ ձեռնարկելիս, կիրառեին հնարավոր բոլոր միջոցները՝ մանկական մահացությունը կրճատելու և կյանքի միջին տևողությունը երկարացնելու համար:

Այստեղ «ցանկալի» եզրույթի մեջբերումը կարող է վկայել, որ պետությունը ոչ նորմատիվային օրենսդրությամբ («փափուկ» օրենսդրությամբ) և ոչ թե նորմատիվային օրենսդրությամբ («կոշտ» օրենսդրությամբ) սահմանված իրավական պարտավորություն ունի՝ լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մանկական բարձր մահացությունը և կյանքի կարճ տևողությունը⁷⁰:

[8.46] «Ե. Յ. Փ-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (E.H.P v CANADA, 67/80)

¶ 1.1. Դիմումի հեղինակը (նամակը սկզբում գրանցված էր 1980 թ. ապրիլի 11-ով, իսկ ավելի ուշ՝ 1981 թ. փետրվարի 4-ով) Կանադայի քաղաքացի էր: Նա դիմումը ներկայացրել էր սեփական և որպես «Փոքր Յոուփի» բնապահպանական խմբի նախագահ՝ Փոքր Յոուփի, Կանադայի Օնթարիո նահանգի ներկա և ապագա սերունդների, այդ թվում՝ Փոքր Յոուփի 129 բնակիչների անունից, որոնք հեղինակին լիազորել են գործել իրենց անունից: Հեղինակը փաստերը նկարագրում է հետևյալ կերպ.

¶ 1.2. 1945-1952 թթ. «Էլդորադո Նուբլեար» ՍՊԸ-ն՝ «Ֆեդերալ Քրաուն քորպորեյշն» (Federal Crown Corporation) կազմակերպության անդամ և Կանադայում ռոդիումի և ուրանի գտնված միակ գործարանը, միջուկային թափոններ է արտանետել աղբակետեր, որոնք գտնվում են Օնտարիո նահանգի 10 000 բնակչությամբ Փոքր Յոուփի քաղաքի սահմաններում տեղակայված մի տարածքում, որը, ըստ նախագծի, պետք է դառնա Յուրիսայի Ամերիկայի ամենախիտ բնակեցված տարածքներից մեկը: 1975-ին հայտնաբերվել է բնակավայրերի և այլ շինությունների լայնածավալ աղտոտում (կասկած չկա, որ աղբակետերի նյութերը քաղաքացիներն օգտագործել են որպես լիցք կամ շինանյութ իրենց տների համար): Ատոմային էներգիայի հսկիչ խորհուրդը (ԱԷՀԽ, Atomic Energy Control Board), որ դաշնային կառավարության կողմից լիազորված ու կարգավորիչ մարմին է և լիովին պատասխանատու է Կանադայում ատոմային էներգիայի հարցերի համար, կազմակերպեց մաքրման միջոցառում, և 1976-1980 թթ. ընկած ժամանակահատվածում մոտ 400 վայրից փորած թափոնը հեռացվել և տեղափոխվել է այլ վայրեր (Փոքր Յոուփից 6-200 մղոն հեռավորության վրա): Այս նոր աղբակետերն այժմ փակվել են Փոքր Յոուփից ռադիոակտիվ թափոնի հետագա հեռացման պատճառով: Հեղինակը պնդում է, որ պատճառները քաղաքական բնույթ ունեն, այսինքն՝ ոչ մի այլ համայնք չի ցանկանում վերցնել աղբը, և դաշնային կառավարությունը պատրաստակամ չէ առնչվելու տվյալ խնդրին: Միաժամանակ մոտ 200 000 տոննա ռադիոակտիվ թափոն (ԱԷՀԽ-ի գնահատմամբ) մնում է Փոքր Յոուփում և շարունակական մաքրման արդյունքում պահվում Փոքր Յոուփում գտնվող աղբի հեռացման ութ «ժամանակավոր» կետերում, որոնք տեղակայված են բնակավայրերին մոտ կամ անմիջապես կողքին (մեկը՝ հանրային լողավազանից մոտ 100 մետր հեռավորության վրա): Հեղինակը համարում է, որ այս ժամանակավոր լուծումն անընդունելի է, և մատնանշում է, որ քաղաքի շրջակայքում դրանց լիցենզավորումից ավելի քան 30 տարի անց դեռևս գոյություն ունեն խոշոր «ժամանակավոր» աղբակետեր: Հեղինակը պնդում է, որ Փոքր Յոուփի բնակիչների անունից գործող Ատոմային էներգիայի հսկիչ խորհրդի ջանքերը խոչընդոտում են դաշնային կառավարության կողմից այլընտրանքային աղբակետեր չհատկացնելը: ԱԷՀԽ-ն չի կարող դաշնային և տարածքային կառավարություններին ստիպել նման կետեր տրամադրել:

¶ 1.3. Հեղինակը պնդում է, որ այս իրողությունը վտանգում է Փոքր Յոուփի ներկա և ապագա սերունդներին այն առումով, որ ռադիոակտիվ նյութերի չափազանց մեծ ազդեցությունը կարող է դառնալ քաղցկեղի և գենետիկական շեղումների պատճառ, և ներկայումս Փոքր Յոուփի բնակիչների առողջությանը սպառնացող վտանգներից են ալֆա, բետա և գամմա ճառագայթների, ինչպես նաև ռադոնի արտանետումները, որոնք գերազանցում են ԱԷՀԽ-ի կողմից հաստատված անվտանգության թույլատրելի մակարդակները. հիմք են ընդունվում Ռադիոբանական պաշտպանության միջազգային հանձնաժողովի կողմից սահմանված չափանիշները:

Գործի ընդունելիության որոշման մեջ ՄԻՎ-ը «նշում [նշել] է, որ սույն դիմումը լուրջ հարցեր է բարձրացնում [բարձրացրել] մարդկու կյանքը պաշտպանելու մասով մասնակից պետությունների պարտավոր-

⁷⁰ Նովակ, տե՛ս վերը, ծմթ. 61, 107, թիվ 17:

րության առնչությամբ»⁷¹: Կոմիտեն նաև կարծում է, որ հեղինակը կարող է դիմումը ներկայացնել իր անունից, ինչպես նաև լիազորված է դա անել Փորթ Յոուփի բնակիչների անունից: Նա և մյուս բնակիչները կարող են օրինական հայց ներկայացնել առ այն, որ իրենք հանդիսանում են 6-րդ հոդվածի հնարավոր խախտման զոհեր⁷²: ՄԻԿ-ը որոշում չի ընդունել, թե հեղինակը կարող էր բողոք ներկայացնել ապագա սերունդների անունից: Այդուհանդերձ, դիմումը համարվեց անընդունելի՝ իրավական պաշտպանության ազգային միջոցները չսպառելու պատճառաբանությամբ⁷³:

[8.47]

**«ՊԼՈՏՆԻԿՈՎՆ ընդդեմ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ»
(PLOTNIKOV v RUSSIAN FEDERATION, 784/97)**

Հեղինակը ներկայացրել է հետևյալ բողոքը.

¶ 3. Հեղինակը բողոքում է, որ իր կյանքը վտանգված է դեղորայքի համար գումարի բացակայությամբ, որի պատճառ է դարձել խնայողական հաշիվների մասով սխալ ցուցանիշներ սահմանող (ինդեքսավորման) օրենքը՝ դրանով իսկ խախտելով դաշնագրի 6-րդ հոդվածը:

ՄԻԿ-ն անընդունելի է համարել բողոքը.

¶ 4.2. Կոմիտեն նշում է, որ հեղինակի պնդման հիմքում ընկած է մասնակից պետությունում գերսղաճի մակարդակը, ինչպես նաև ինդեքսավորման օրենքը, որով կրճատվել է նրա խնայողությունների ծավալը՝ դրանով իսկ հեղինակին դեղորայք գնելու հնարավորություն չտալով: Կոմիտեն նշում է, որ ընդունելիության նկատառումներով հեղինակի բերած փաստարկները չեն հիմնավորում այն, որ գերսղաճի առկայությունը կամ ինդեքսավորման օրենքով սղաճին չհակազդելը հեղինակի՝ դաշնագրով ամրագրված որևէ իրավունքի խախտում է, որի համար մասնակից պետությունը պետք է պատասխանատվության ենթարկվի:

Պլոտնիկովի գործի ընդունելիության մասին որոշումը հաստատում է, որ դժվար է ապացուցել, որ անձը հանդիսանում է 6-րդ հոդվածի խախտման զոհ՝ հանգելով սոցիալ-տնտեսական զրկանքների: Պետության պատասխանատվության մասին իր մեջբերման մեջ ՄԻԿ-ն ըստ երևույթին ընդունում է, որ պետության տնտեսական վիճակը կարող է զգալի ազդեցություն կրել իր հսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոններից:

[8.48] Հաշվի առնելով այն, որ կամընտիր արձանագրությունը թերի մեխանիզմ է սոցիալ-տնտեսական զրկանքների հարցը լուծելու համար, խրախուսելի է այն, որ մի շարք Եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն անդրադարձել է 6-րդ հոդվածի սոցիալ-տնտեսական հայեցակետերին: Օրինակ՝ Կանադայի առնչությամբ⁷⁴.

¶ 12. Կոմիտեն մտահոգված է, որ անօթևանությունը հանգեցրել է առողջական լուրջ խնդիրների և որոշ դեպքերում՝ նույնիսկ մահվան: Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը ձեռնարկի 6-րդ հոդվածով նախատեսված դրական միջոցներ այս լուրջ խնդիրը լուծելու համար:

ՄԻԿ-ը նաև մեջբերել է Ռուսինիայում «մանկական մահացության աճը»⁷⁵, ինչպես նաև Նեպալում կանանց՝ որպես «մտահոգության հիմնական առարկայի» կյանքի ավելի կարճ տևողության փաստը⁷⁶: ՄԻԿ-ը դրվատել է Հորդանանին «կյանքի տևողության բնագավառում և մանկական մահացության կրճատման մասով նշանակալի նվաճումների» համար⁷⁷: Կոմիտեն գովաբանել է Ջիմբաբվեին՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկությունը դպրոցական ծրագրում ընդգրկելու ջանքերի համար⁷⁸:

⁷¹ Պարբ. 8:

⁷² Տե՛ս նաև [3.28]:

⁷³ Տե՛ս ընդհանուր 6-րդ գլուխը:

⁷⁴ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 105:

⁷⁵ (1994) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 30, պարբ. 11, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Բրազիլիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 66, պարբ. 23:

⁷⁶ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 42, պարբ. 8:

⁷⁷ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 35, պարբ. 4:

⁷⁸ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 89, պարբ. 7:

Կանայք և կյանքի իրավունքը

[8.49]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 10. 6-րդ հոդվածով պաշտպանվող կյանքի իրավունքի մասին զեկուցելիս մասնակից պետությունները պետք է տվյալներ տրամադրեն ծննդաբերության, հղիության և ծննդաբերության պատճառով կանանց մահացության մասին: Մասնական մահացության տվյալները պետք է ներկայացվեն ըստ սեռի: Մասնակից պետությունները պետք է տեղեկություններ տրամադրեն պետության ձեռնարկած այն բոլոր միջոցների մասին, որոնք ուղղված են անցանկալի հղիությունը կանխելու հարցում կանանց օգնությանը և այնպիսի պայմանների ապահովմանը, որ նրանք ստիպված չլինեն դիմել կյանքին սպառնացող ընդհատակյա աբորտների⁷⁹: Մասնակից պետությունները պետք է զեկուցեն նաև կանանց այն գործողություններից պաշտպանող միջոցների մասին, որոնք խախտում են նրանց կյանքի իրավունքը, ինչպիսիք են իգական սեռի նորածինների սպանությունը, այրիների հրկիզումը և օժիտ չտալու պատճառով կատարվող սպանությունները: Կոմիտեն նաև ցանկանում է տեղեկություններ ունենալ կանանց վրա աղքատության և զրկանքների թողած ազդեցության մասին, որոնք կարող են վտանգել նրանց կյանքը:

Մասնակցությունը պատերազմին

[8.50]

ԹԻՎ 6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻԿ-ը հաստատել է, որ 6-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին նվազագույնի հասցնել պատերազմները և զինված հակամարտությունները:

¶ 2. Կոմիտեն նշում է, որ պատերազմը և զանգվածային բռնության այլ գործողությունները մնում են մարդկության պատուհասը և ամեն տարի խլում են հազարավոր անմեղ մարդկանց կյանք: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն՝ մի պետության կողմից մյուսի նկատմամբ սպառնալիքը կամ ուժի գործադրումն արդեն արգելված է, բացառությամբ ինքնապաշտպանության իրավունքի ապահովման դեպքերի: Կոմիտեն համարում է, որ պետությունը կյանքի կամայական կորստի պատճառ դարձող պատերազմները, ցեղասպանության և զանգվածային բռնության այլ գործողությունները կանխելու զերագույն պարտավորություն ունի: Պատերազմի, հատկապես ջերմամիջուկային պատերազմի վտանգի կասեցման և միջազգային խաղաղության ու անվտանգության ամրապնդման յուրաքանչյուր փորձ այն կարևորագույն պայմանը և երաշխիքը կլինի, որով կապահովվի կյանքի իրավունքը: Այս առումով կոմիտեն առանձնացնում է 6-րդ և 20-րդ հոդվածների կապը, ըստ որի՝ պատերազմի յուրաքանչյուր քարոզչություն (1-ին կետ) կամ բռնության դրդում (2-րդ կետ) պետք է օրենքով արգելվեն⁸⁰:

ՄԻԿ-ի այս ոչ միաձայն մեկնաբանությամբ դատապարտվում է հատկապես այն պետությունը, որը մասնակցում է պատերազմական գործողություններին: Պետությունները դատապարտվել են պատերազմի ընթացքում անհամաչափ ուժի գործադրման համար⁸¹:

Միջուկային ներուժ⁸²

[8.51] Ձինված հակամարտությունը դատապարտելով՝ ՄԻԿ-ը մի քայլ ընդառաջ գնաց թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության ընդունմանը, որով քննադատվել են միջուկային ներուժ ունեցող պետությունները:

⁷⁹ Տե՛ս նաև [8.55]:

⁸⁰ Տե՛ս 20-րդ հոդվածի վերաբերյալ, գլուխ 18:

⁸¹ Տե՛ս օրինակ՝ Եզրափակիչ դիտարկումներ Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության (Սերբիա և Մոնտենեգրո) վերաբերյալ (1992), ՄԱԿ-ի փաստաթուղթ A/48/40, 86-8, պարբ. 6-7 և Եզրափակիչ դիտարկումներ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 54, պարբ. 26-30:

⁸² Տե՛ս նաև *Advisory Opinion of the International Court of Justice on the Legality of the Threat or Use of Force of Nuclear Weapons*, 8 July 1996, արտատպված է այստեղ՝ (1996) 4 ILM 809: Դատավորների մեծ մասը չկարողացավ եզրակացություն գալ բոլոր հանգամանքներում միջուկային զենքի կիրառման ապօրինության շուրջ:

ԹԻՎ 14 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. Խորապես մտահոգված զինված հակամարտություններում զենքի կիրառման հետևանքով ունեցած մարդկային զոհերի թվով՝ կոմիտեն նշել է, որ Գլխավոր ասամբլեայի նիստերի ընթացքում աշխարհագրական բոլոր տարածաշրջանների ներկայացուցիչներն իրենց հարաճուն մտահոգությունն են հայտնել առավել սարսափելի դարձող զանգվածային ոչնչացման զենքերի մշակման և տարածման կապակցությամբ, որոնք ոչ միայն սպառնում են մարդու կյանքին, այլև այնպիսի ռեսուրսներ են սպառում, որոնք կարող էին օգտագործվել նաև կենսական նշանակության տնտեսական և սոցիալական նպատակներով, մասնավորապես՝ ի նպաստ զարգացող երկրների՝ դրանով իսկ խթանելով և երաշխավորելով մարդու իրավունքները բոլորի համար:

¶ 4. Կոմիտեն նույնպես մտահոգված է այս խնդրով: Ակնհայտ է, որ միջուկային զենքի մշակումը, փորձարկումը, արտադրությունը, տիրապետումը և տեղակայումը կյանքի իրավունքի մեծագույն սպառնալիքներից են, որոնք այսօր ծառացած են մարդկության առջև: Այս սպառնալիքին գումարվում է այն վտանգը, որ նման զենքերի փաստացի օգտագործումը կարող է տեղի ունենալ ոչ միայն պատերազմի ժամանակ, այլև նույնիսկ մարդկային կամ մեխանիկական սխալի կամ վթարի հետևանքով:

¶ 5. Ավելին՝ այս սպառնալիքի առկայությունն ու լրջությունն իսկ կասկածի և վախի մթնոլորտ են ստեղծում պետությունների միջև, ինչը հակասում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի համաձայն՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի և պահպանման խթանմանը:

¶ 6. Հարկ է արգելել միջուկային զենքի արտադրությունը, փորձարկումը, տիրապետումը, տեղակայումն ու օգտագործումը և դրանք ճանաչել որպես ոճրագործություն մարդկության դեմ:

¶ 7. Հանձնաժողովը, համապատասխանաբար, ի շահ մարդկության կոչ է անում բոլոր պետություններին, անկախ դաշնագրին անդամակցելու հանգամանքից, սեփական նախաձեռնությամբ կամ համաձայնությամբ անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ աշխարհին այս սպառնալիքից ազատելու համար:

[8.52] «Ե. Ու.-ն և այլք ընդդեմ Նիդեռլանդների» (*E.W. v Netherlands, 429/90*) գործում 6588 հեղինակ բողոք է ներկայացրել առ այն, որ Նիդեռլանդների տարածքում միջուկային զենքի տեղակայումը սպառնում է իրենց կյանքի իրավունքին: Հեղինակներն իրենց հայտերում բազում մեջբերումներ են արել թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունից: Այդուհանդերձ, ՄԻԿ-ը որոշել է, որ հեղինակներին չի հաջողվել հաստատել, որ իրենք 6-րդ հոդվածի որևէ կետով խախտման «զոհեր» են⁸³: «*Բորդեսը և Տեմեհարոն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Bordes and Temeharo v France, 645/95*) գործում շոշափվում է Ֆրանսիայի կողմից միջուկային զենքի փորձարկման և Խաղաղ օվկիանոսի հարավում կատարվող փորձերի հարևանությամբ բնակվող հեղինակների՝ 6-րդ հոդվածով ամրագրված իրավունքների հետ համատեղելիության հարցը: Երկու կողմերն էլ մանրամասն ապացույցներ են ներկայացրել այդ տարածքում բնակվող մարդկանց վրա միջուկային զենքի փորձարկումների ազդեցության վերաբերյալ: ՄԻԿ-ն ընդունել է Ֆրանսիական կողմի այն փաստարկը, որ հեղինակները չապացուցեցին, որ իրենց կյանքի նկատմամբ «իրական և անմիջական սպառնալիք» է եղել: Այսպիսով, նրանց դարձյալ չհաջողվեց հաստատել իրենց՝ տուժողի կարգավիճակը⁸⁴:

[8.53] «Ե. Ս. Ու.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (*E.C.W. v Netherlands, 524/92*) գործում հեղինակը ձերբակալվել էր ծովային իրթիռների տեղակայման դեմ ուղղված հանրահավաքի ընթացքում: ՄԻԿ-ը չընդունեց, որ այս հանգամանքը հարցեր է առաջացրել 6-րդ հոդվածի մասով: «*Ս. Ու.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*A.R. U. v Netherlands, 509/92*) գործում ՄԻԿ-ը մերժեց, որ հեղինակի զինակոչումը, ինչը ենթադրում է մասնակցություն ՆԱՏՕ-ի պաշտպանական ռազմավարությանը, «որը հիմնված է միջուկային զենքով սպառնալիքի և դրա օգտագործման վրա», 6-րդ հոդվածի խախտում է: «*Լինդոնն ընդդեմ Ավստրալիայի*» (*Lindon v Australia, 646/95*) գործում հեղինակի բողոքներն Ավստրալիայի կողմից Պայն Գեփում միջուկային պաշտպանությանն ուղղված գիտահետազոտական կայանի պահման վերաբերյալ դարձյալ բազում հարցեր առաջացրին 6-րդ հոդվածի մասով⁸⁵: ՄԻԿ-ը նման եզրահանգման եկավ «*Ս. Բ.*

⁸³ Տե՛ս [3.34]:

⁸⁴ Պարբ. 3.9: Տե՛ս ընդհանուր առմամբ [3.35]: Տե՛ս նաև «*Լ. Ս. Բ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (L.C.B. v UK)*» գործը (1999) 27 EHRR 212, որում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշեց, որ Ջատիկի կղզում միջուկային զենքի փորձարկումների մահացու ազդեցության վերաբերյալ պնդումները բավարար չափով հիմնավորված չեն:

⁸⁵ Պարբ. 6.2.

Դ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (*C.B.D. v Netherlands, 394/90*), «Զ. Փ. Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (*J.P.K. v Netherlands, 401/90*), «Թ. Ու. Մ. Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (*T.W.M.B. v Netherlands, 403/90*) և «Բրինխոֆն ընդդեմ Նիդեռլանդների» (*Brinkhof v Netherlands, 402/90*) գործերում:

[8.54] Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունը ՄԻԿ-ի առավել վիճելի մեկնաբանություններից է⁸⁶: Թեև հետազայում կամընտիր արձանագրությամբ ընդունված որոշումները կարող են վկայել, որ ՄԻԿ-ը հրաժարվել է իր նախկին մոտեցումներից, սակայն «*Բորդեսը և Տեմեհարոն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Bordes and Temeharo v France, 645/95*) գործում կրկնել է թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունը պաշտպանելու մասին իր տեսակետը⁸⁷: Թերևս չափազանց դժվար է միջուկային զենքին առնչվող հարցերին անդրադառնալ կամընտիր արձանագրության շրջանակներում, քանի որ դժվար է ապացուցել, որ ինչ-որ մեկը տուժող է միջուկային զենքի տեղակայումից: Ելնելով այն հանգամանքից, որ ՄԻԿ-ն իր ոչ մի մեկնաբանությամբ չի քննադատել որոշակի պետության ատոմային քաղաքականությունը, ՄԻԿ-ը ողջունեց միջուկային զենքի չտարածման մասին համաձայնագրերին Ուկրաինայի անդամակցելու փաստը⁸⁸:

Աբորտ

[8.55] Աբորտի դեմ պայքարողներն այն փաստարկն են բերում, որ այն չծնված երեխայի կյանքի իրավունքի խախտում է⁸⁹: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը չի որդեգրել այս դիրքորոշումը: Փոխարենը՝ կենտրոնացել է մարդու իրավունքների խնդրում հակաաբորտային օրենքների բացասական ազդեցությունների վրա, ինչպես վերջերս տեղի ունեցավ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանության մեջ [8.49]: Հարցն արժարժվել է նաև Եզրափակիչ դիտարկումներում: Օրինակ՝ ՄԻԿ-ը նման առաջարկով է հանդես եկել Պերուի վերաբերյալ գործում⁹⁰:

¶ 15. Հանձնաժողովը մտահոգված է նաև նրանով, որ աբորտը քրեական պատասխանատվության է հանգեցնում, եթե անգամ կինը հղիացել է բռնաբարության հետևանքով, և գաղտնի աբորտները մայրերի մահացության հիմնական պատճառն են: Այս դրույթները ոչ միայն ենթադրում են, որ կանայք ենթարկվում են անմարդկային վերաբերմունքի, այլև ըստ երևույթին չեն համապատասխանում դաշնագրի 3-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներին:

¶ 22. Պերուն պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ կանայք աբորտն արգելող իրավական դրույթների առկայության հետևանքով չվտանգեն իրենց կյանքը:
Զիլիի վերաբերյալ⁹¹:

¶ 15. Բոլոր աբորտների ամխտիր քրեականացումը հատկապես լուրջ հարցեր է առաջացնում, եթե հաշվի են առնվում այն անհերքելի դեպքերը, երբ շատ կանայք դիմում են ապօրինի աբորտների՝ վտանգելով իրենց կյանքը: Բուժաշխատողների վրա դրված այն իրավական պատասխանատվությունը, ըստ որի՝ հարկ է զեկուցել աբորտի դիմած կանանց մասին, կարող է ստիպել կանանց չդիմել բուժօգնության՝ դրանով իսկ վտանգելով նրանց կյանքը: Մասնակից պետությունը պարտավոր է ապահովել բոլոր անձանց, այդ թվում՝ այն հղի կանանց կյանքը, որոնց հղիությունն ընդհատվում է: Այս կապակցությամբ կոմիտեն առաջարկում է փոփոխել օրենքը՝ բոլոր աբորտների ընդհանուր արգելման հարցում բացառություններ ներառելու և բժշկական գաղտնիքը պաշտպանելու նկատառումով:

Էկվադորի վերաբերյալ⁹²:

¶ 11. Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնում զեկույցում նշված երիտասարդ կանանց ինքնասպանությունների չափազանց մեծ թվի կապակցությամբ, ինչը, ըստ երևույթին, կապված է աբորտների արգելման հետ: Այս կապակցությամբ կոմիտեն իր ափսոսանքն է հայտնում, որ մասնակից պետությանը չի հաջողվել լուծել դեռահաս աղջիկների, մասնավորապես՝ բռնաբարության զոհերի առջև ծառացած խնդիրները, որոնք մինչև իրենց կյանքի վերջը

⁸⁶ Տե՛ս McGoldrick, վերը, ծնթ. 2, էջ 335-6, R. Higgins, 'The United Nations: Still a Force for Peace' (1989) 52 *MLR* 1, 4, Nowak, վերը, ծնթ. 61, էջ 109:

⁸⁷ Պարբ. 5.9:

⁸⁸ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 52, պարբ. 7:

⁸⁹ Տե՛ս Դինստեյն, վերը, ծնթ. 69, էջ 122:

⁹⁰ Եզրափակիչ դիտարկումներ Պերուի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 67, պարբ. 15: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Լեսոտոյի վերաբերյալ (1999), CCPR/C/79/Add. 106, պարբ. 11:

⁹¹ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104:

⁹² (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 92:

տառապում են նման գործողությունների հետևանքներից: Նման իրողությունը, երբ խոսքը դեռահաս աղջիկների մասին է, թե՛ իրավական և թե՛ գործնական տեսանկյուններից հակասում է դաշնագրի 3-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներին, ինչպես նաև 24-րդ հոդվածին: Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցները՝ անցանկալի հղիության խնդիր ունեցող կանանց, մասնավորապես՝ դեռահաս աղջիկներին համապատասխան առողջապահական և կրթական հաստատություններից օգտվելու հարցում աջակցելու համար:

Յետևաբար, հակաաբորտային օրենքները, կախված իրենց խստությունից և մանրամասնությունից, կարող են խախտել ոչ միայն 6-րդ հոդվածը, այլև 7-րդ և 24-րդ հոդվածները և կանանց իրավունքները խտրականությունից պաշտպանող 3-րդ և 26-րդ հոդվածները⁹³:

[8.56] Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում⁹⁴ ՄԻԿ-ը նշել է.

¶ 18. Կոմիտեն մտահոգված է, որ պատվիրակությանը չի հաջողվել պատասխանել այն հարցին, թե որքանով է աբորտը որպես հակաբեղմնավորման միջոց կիրառելու փորձը պայմանավորված մասնակից պետությունում մայրերի մահացության բարձր մակարդակով: Մասնակից պետությունը պետք է հանգամանալից ուսումնասիրի աբորտի և մայրերի մահացության խնդիրները և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ մայրերի մահացության բարձր մակարդակն իջեցնելու համար:

Մեկնաբանությունում նշվում է, որ ընդհանրապես հասարակության մեջ աբորտը պետք է դիտվի հակաբեղմնավորման վերջին, ոչ թե առաջին տարբերակ: Յետևաբար, հարկավոր է հնարավորություն ընձեռել կանանց՝ հակաբեղմնավորման այլընտրանքային միջոցների մասին տեղեկանալու համար:

[8.57] Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով ստեղծված ՄԱԿ-ի կոմիտեն (ԿՆԽՎ կոմիտեն) իր թիվ 19 Ընդհանուր հանձնարարականի մեջ հարկադրական աբորտը հիշատակել է որպես վտանգ կանանց մտավոր և ֆիզիկական առողջության համար: Աբորտի շուրջ բանավեճում ԿՆԽՎ կոմիտեն հստակ պաշտպանում է կանանց ազատ ընտրության դիրքորոշումը:

Էֆթանագիա

[8.58] Այնքան էլ զարմանալի չէ, որ ՄԻԿ-ի՝ 6-րդ հոդվածին էֆթանագիայի համապատասխանության մասին միակ մեկնաբանությունը ներկայացվել է 2001 թ. Նիդեռլանդների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում: Այդ տարի Նիդեռլանդներն ընդունեցին էֆթանագիայի վերաբերյալ աշխարհի ամենածայրահեղական օրենքները: ՄԻԿ-ը նշել է.⁹⁵

¶ 5. (ա) Կոմիտեն քննարկեց էֆթանագիայի և օժանդակվող ինքնասպանության հարցը: Կոմիտեն ընդունում է, որ կյանքը ընդհատելու խնդրանքի և օժանդակվող ինքնասպանության ընթացակարգերի վերանայման վերաբերյալ նոր օրենքը, որն ուժի մեջ կմտնի 2002 թ. հունվարի 1-ին, մշակվել է չափազանց բարդ իրավական և բարոյական հարց բարձրացնող լայնածավալ հանրային բանավեճի արդյունքում: Կոմիտեն նաև ընդունում է, որ նոր օրենքով փորձ է արվում իրավական վստահություն և հստակություն հաղորդել այնպիսի մի իրողության, որը մի քանի տարվա ընթացքում առաջընթաց է ապրել՝ ելնելով դատական մախադեպերի և բժշկական փորձի առկայությունից: Կոմիտեն քաջ տեղյակ է, որ նոր օրենքը՝ որպես այդպիսին, չի քրեազերծում էֆթանագիան և օժանդակվող ինքնասպանությունը: Այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ մասնակից պետությունը փորձում է մեղմել մարդկային կյանքի ընդհատմանն ուղղված միտումնավոր գործողության համար մախատեսված իրավական պաշտպանություն-

⁹³ Տե՛ս նաև. եզրափակիչ դիտարկումներ Պարագվայի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 48, պարբ. 17 և 28: Բոլիվիա, (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 73, պարբ. 22: Կոլումբիա (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 75, պարբ. 24: Կոստա Ռիկա (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 107, պարբ. 11: Սենեգալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 82, պարբ. 12: Տանզանիայի Միացյալ Հանրապետություն (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 97, պարբ. 15 և Կամերուն (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 116, պարբ. 13: Լեհաստան (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110, պարբ. 11: Պերու (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/PER, պարբ. 20: Արգենտինա (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/ARG, պարբ. 14: Վիետնամ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/VNM, պարբ. 15 և Գվատեմալա (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/GTM, պարբ. 19: Վերջապես, ՄԻԿ-ը քննադատել է Իռլանդիային աբորտի վերաբերյալ տեղեկատվության սահմանափակումների մասով (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 21, պարբ. 15:

⁹⁴ (2002) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/MDA:

⁹⁵ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/NET:

նը, կոմիտեն համարում է, որ դաշնագիրը պարտադրում է այդ մասնակից պետությանը խստագույն կերպով ուսումնասիրել, թե արդյոք կյանքի իրավունքն ապահովելու գծով իր պարտավորությունները համապատասխանում են դաշնագրի 2-րդ և 6-րդ հոդվածներին:

(բ) Այդուհանդերձ, նոր օրենքը ներառում է մի շարք պայմաններ, որոնց դեպքում բժիշկը չի պատժվում մարդկային կյանքն ընդհատելու համար, ի թիվս այլոց, հիվանդի «կամավոր և լավ մտածված խնդրանքով», «անտանելի տառապանքների» պարագայում, երբ «բարելավման ոչ մի հույս և «ոչ մի ողջամիտ լուծում» չկա: Կոմիտեն մտահոգված է, որ նման համակարգը կարող է չբացահայտել և չկանխել այնպիսի իրադրություններ, երբ արտակարգ ճնշման տակ այդ չափանիշները կարող են շրջանցվել: Կոմիտեն նաև մտահոգություն է արտահայտել, որ ժամանակի ընթացքում նման փորձը կարող է հանգեցնել մի դրության, որ այն դառնա սովորական երևույթ, և սպասվածին հակառակ հնարավոր է, որ պահանջները խստորեն չկատարվեն: Կոմիտեն դժգոհությամբ տեղեկացավ այն մասին, որ ներկա իրավական համակարգով 2000 թ. էֆթանազիայի և օժանդակվող ինքնասպանության (կամ երկուսի համակցության) ավելի քան 2000 դեպք է արձանագրվել քննող հանձնաժողովի կողմից, և քննող հանձնաժողովը բացասական գնահատական է տվել միայն երեք դեպքերում: Դեպքերի մեծ թիվը կասկած է հարուցում, թե իրո՞ք ներկայիս համակարգը օգտագործվում է միայն ծայրահեղ դեպքերում, երբ բարեխղճորեն պահպանվում են բոլոր հիմնական պայմանները:

(գ) Կոմիտեն լրջորեն մտահոգված է, որ նոր օրենքը կարող է կիրառվել է նաև 12 տարին չլրացած անչափահասների դեպքում: Կոմիտեն նշում է, որ օրենքով նախատեսված է մինչև 16 տարեկան դեռահասների ծնողների կամ խնամակալների համաձայնությունը, իսկ 16-18 տարեկանների ծնողների կամ խնամակալների համաձայնությունը կարող է փոխարինվել պատանու կամքով, այն պայմանով, որ պատանին կարողանա պատշաճ կերպով գնահատել իր շահերն այս հարցում: Կոմիտեն դժվարանում է կյանքն ընդհատելու կշռադատված որոշումը համաձայնեցնել դեռահասների զարգացող և հասունացող կարողությունների հետ: Հաշվի առնելով էֆթանազիայի և օժանդակվող ինքնասպանության անդառնալիությունը՝ կոմիտեն ցանկանում է շեշտել իր այն համոզմունքը, որ դեռահասները հատուկ պաշտպանության կարիք ունեն:

(դ) Կոմիտեն, լիովին հաշվի առնելով քննող հանձնաժողովի մոնիթորինգային աշխատանքը, նաև մտահոգված է այն փաստով, որ այն իրականացնում է միայն ex post հսկողություն՝ ի վիճակի չլինելով կանխելու կյանքի ընդհատումն այն ժամանակ, երբ օրենքով սահմանված պայմանները բավարարված չեն:

Հաշվի առնելով այս դիտարկումները՝ մասնակից պետությունը պետք է վերանայի իր էֆթանազիայի և օժանդակվող ինքնասպանության մասին օրենքը: Նա պետք է ապահովի, որ եղած ընթացակարգերը բավարար երաշխիքներ առաջարկեն չարաշահման կամ սխալ օգտագործման, այդ թվում՝ երրորդ անձանց կողմից անտեղի ազդեցության դեմ: Հարկավոր է ուժեղացնել ex ante հսկողության մեխանիզմը: Անչափահասների դեպքում օրենքի կիրառումը այս մտահոգությունների լրջության վառ ապացույցն է: Հաջորդ գեկույցը պետք է մանրամասն տեղեկատվություն տրամադրի այն մասին, թե ինչ չափանիշներ են կիրառվում՝ «կամավոր և լավ մտածված խնդրանք», «անտանելի տառապանքներ» և «ոչ մի ողջամիտ այլընտրանք» հասկացությունների առկայությունը որոշելու համար: Հարկավոր է նաև ճշգրիտ տեղեկատվություն ներառել այն դեպքերի քանակի մասին, երբ կիրառվել է նոր օրենքը, ինչպես նաև տեղեկություններ ընդգրկել քննող հանձնաժողովի համապատասխան գեկույցների մասին: Մասնակից պետությանը խնդրանք է հղվել օրենքը և դրա կիրառումը խիստ հսկողության և շարունակական ուշադրության տակ պահելու վերաբերյալ:

Հետևաբար, ՄԻԿ-ը զգույշ մոտեցում է որդեգրել Հոլանդիայի՝ «ակտիվ» էֆթանազիա թույլատրող նոր օրենքների նկատմամբ⁹⁶: Օրենքները չեն դատապարտվել 6-րդ հոդվածի խախտման համար՝ բացառությամբ դեռահասների կյանքի ընդհատման համար համաձայնության վերաբերյալ դրույթների մասով: ՄԻԿ-ն անշուշտ ենթադրում է, որ կամավոր էֆթանազիան թույլատրելի է «ծայրահեղ դեպքերում» (տես 5-րդ կետի (բ) ենթակետը), չնայած նա մտահոգված է բոլոր ընթացակարգային երաշխիքների ապահովմամբ, որպեսզի ամեն դեպքում պատշաճ համաձայնություն ապահովվի կամավոր էֆթանազիայի համար:

[8.59] Ի հակադրություն՝ ՄԻԿ-ը հստակ դատապարտել է հաշմանդամ նորածինների մանկասպանության դեպքերը, որոնք արձանագրվել են Նիդեռլանդներում:

¶ 6. Կոմիտեն խիստ մտահոգված է այն գեկույցներով, որոնցում հաշմանդամ նորածինների կյանքն ընդհատվել է բժշկական անձնակազմի կողմից:

⁹⁶Տե՛ս նաև G. Zdankowski, 'The International Covenant on Civil and Political Rights and Euthanasia' (1997) 20 *University of New South Wales Law Journal* 170:

Մասնակից պետությունը մանրակրկիտ ուսումնասիրել է կյանքի իրավունքի ոտնահարումների մասին յուրաքանչյուր նման հայտարարություն (դաշնագրի 6-րդ հոդված), որոնք էֆթանագիայի մասին օրենքի շրջանակից դուրս են: Մասնակից պետությունը պետք է տեղեկացնի կոմիտեին նման դեպքերի քանակի և դրանցից բխող դատավարությունների արդյունքների մասին:

Եզրակացություն

[8.60] ՄԻԿ-ը հաստատել է, որ պետությունը մեծ պատասխանատվություն է կրում մարդկանց կամայականորեն չսպանելու կամ սպանելու փորձ չկատարելու համար: Այս պարտավորությունը ներառում է բոլոր պետական սպանություններն ուսումնասիրելու և յուրաքանչյուր անհարիր սպանություն պատժելու դրական պարտավորություն:

[8.61] Մահապատժին անդրադարձող գործերի մեծ մասը վերաբերում է այն դատավարությունների արդարությանը, որոնցով մահապատժի վճիռ է կայացվել: Դատավարությունում առկա յուրաքանչյուր թերություն ՄԻԿ-ը միանշանակ մեկնաբանել է որպես 6-րդ հոդվածի, ինչպես նաև դաշնագրի արդար դատավարության մասին դրույթների խախտում: Ավելի ուշ ՄԻԿ-ը որոշել է, որ պարտադիր մահապատժները 6-րդ հոդվածի խախտում են: 6-րդ հոդվածն արժարժվել է նաև քրեական հանցագործին պետությանը հանձնելու դեպքերում, երբ հանցագործը կարող է մահապատժի դատապարտվել: ՄԻԿ-ն այժմ չի թույլատրում նման հանձնումներ, զոնե այն դեպքերում, երբ հանցագործին ընդունող պետությունը չի վերացրել մահապատժը:

[8.62] 6-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանություններում ՄԻԿ-ը հաստատել է, որ կյանքի իրավունքը ներառում է ընդգրկում դրական տարր: Օրինակ՝ պետությունը պետք է հսկի մասնավոր միավորներին՝ չարդարացվող սպանությունները կանխելու և պատժելու համար: Առավել ծայրահեղական է թերևս 6-րդ հոդվածում ուժեղ սոցիալական և տնտեսական տարրի ներառումը, որով պետությունից պահանջվում է, որ նա իր իրավասության շրջանակում փորձի ապահովել մարդկանց ապրուստի համար անհրաժեշտ տարրական կարիքները բավարարելու հնարավորությամբ: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի այս դրական տարրերից ոչ մեկը դեռևս չի խախտվել կամընտիր արձանագրության գործերում:

[8.63] Բազմաթիվ բողոքներում բարձրացվել է միջուկային զենքի տեղակայման և փորձարկման հետևանքով կյանքին սպառնացող վտանգի հարցը: ՄԻԿ-ը չի բավարարել այս բողոքները, ինչը վկայում է, որ նա թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունում հրաժարվել է միջուկային զենքի դեմ արտահայտված խիստ դիրքորոշումներից:

[8.64] Եվ, վերջապես, դեպքերից ոչ մեկը հարց չի բարձրացրել աբորտի և էֆթանագիայի մասին: ՄԻԿ-ը հաստատել է, որ աբորտը համատեղելի է 6-րդ հոդվածի հետ, և հակաաբորտային օրենքները իրականում կարող են խախտել 6-րդ հոդվածը: Վերջին ժամանակներս ՄԻԿ-ը զգուշությամբ է արտահայտվել Նիդեռլանդներում կամավոր էֆթանագիան թույլատրող նոր օրենքների մասին: Թվում է, որ կամավոր էֆթանագիան, որին համաձայնում են անբուժելի հիվանդ մարդիկ, կարող է համատեղելի լինել 6-րդ հոդվածի հետ այն պայմանով, եթե խիստ միջոցներ ձեռնարկվեն չարաշահումը կանխելու համար:

***Խոշտանգումից զերծ մնալու և մարդկային
վերաբերմունքի արժանաճալու իրավունքներ.
հոդվածներ 7 և 10***

• 7-րդ հոդված	[9.01]
• Սահմանումներ	[9.03]
• Խոշտանգում	[9.03]
• «7-րդ հոդված»՝ վերաբերմունք. դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ	[9.21]
• 7-րդ հոդվածի իրավունքների սահմանափակումներ	[9.30]
• 7-րդ հոդվածի և Խոշտանգումների դեմ կոնվենցիայի որոշակի խախտումները	[9.34]
Ապացույցների առումով պահանջներ	[9.41]
• Կանանց՝ 7-րդ հոդվածով սահմանված իրավունքները	[9.44]
• Հոգեբանական հալածանք	[9.45]
• Մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը	[9.53]
• Մահապատժի եղանակը	[9.63]
• Հանցագործների հանձնում, արտաքսում, հարկադիր հայրենադարձում	[9.67]
• Մարմնական պատիժ	[9.89]
• Կալանքի պայմաններ	[9.92]
• Մեկուսի բանտարկություն և առանց հաղորդակցության հնարավորության կալանք	[9.97]
• Չլիազորված բժշկական փորձեր	[9.99]
• Համապատասխան անձնակազմ վերապատրաստելու պարտականություններ	[9.102]
• Հոդված 7-ով սահմանված վերաբերմունքի ռիսկերը նվազեցնելու ընթացակարգեր սահմանելու պարտականություններ	[9.103]
• Առանց հաղորդակցության հնարավորության կալանքը կանխելու պարտականություն .	[9.105]
• Հոդված 7-ով սահմանված վերաբերմունքի կիրառմամբ ձեռք բերված հայտարարությունները չօգտագործելը դատավարություններում	[9.107]
• Հոդված 7-ով սահմանված խախտումներն ուղղելու պարտականություններ	[9.109]
• Օրինագիծ անցկացնելու և գործադրելու պարտականություն	[9.109]
• Հոդված 7-ով սահմանված վերաբերմունքի մասով հայտարարություններն ուսումնասիրելու պարտականություն	[9.111]
• Զոհերին փոխհատուցելու պարտականություն	[9.121]
• Օրինազանցներին պատժելու պարտականություն	[9.123]
• Խոշտանգողների նկատմամբ համընդհանուր իրավասություն	[9.129]
• 10-րդ հոդված	[9.132]
• «Ազատությունից զրկված անձինք» հասկացության նշանակությունը	[9.134]
• Կալանքի մասնավոր հաստատություններ	[9.135]
• Կալանավորման նվազագույն պայմաններ	[9.138]
• Մեկուսի բանտարկություն և հաղորդակցվելու հնարավորությունից զուրկ կալանք	[9.151]
• Ընտանիքի և ընկերների հետ հաղորդակցությունը	[9.153]
• Տեղեկություններ ստանալու հնարավորություն	[9.154]
• Մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը	[9.155]

- Հավաժանք [9.156]
- 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված դրական պարտավորությունները [9.157]
- 10-րդ հոդվածի 2-րդ կետի (ա) ենթակետ՝ մեղադրյալների առանձնացումը
դատապարտված անձանցից [9.163]
- 10-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետ և 10-րդ հոդվածի 3-րդ կետ՝
անչափահաս կալանավորվածների պաշտպանություն [9.166]
- 10-րդ հոդվածի 3-րդ կետ՝ կալանավորման ուղղիչ նպատակ [9.168]
- Եզրակացություն [9.173]

7-րդ հոդված

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

[9.01] 7-րդ հոդվածով արգելվում են խոշտանգումները և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքը և պատժը: Դա ՔՔԻՄԴ-ի այն սակավաթիվ բացարձակ իրավունքներից մեկն է, որի սահմանափակումներն անթույլատրելի են: Ավելին՝ այն անօտարելի իրավունք է: 7-րդ հոդվածով արգելվում է անձի նկատմամբ «վատ» վերաբերմունքի կամ պատժի երեք աստիճան: Նողկալի «վերաբերմունքի» արգելումը շատ ավելի լայն է, քան ծանր «պատժի» արգելումը. վերջինս հասցվում է կարգապահական նպատակով (այնուամենայնիվ, անհիմն), մինչդեռ վերաբերմունքը կարող է ցուցաբերվել բազում նպատակներով: 7-րդ հոդվածը ՔՔԻՄԴ-ում լրացվում է 10-րդ հոդվածով, որով արգելվում են 7-րդ հոդվածով արգելված պակաս լուրջ վերաբերմունքի ձևերը: Ստորև քննարկվում է 10-րդ հոդվածը¹:

[9.02] 1984 թ. խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (ԽԴԿ) շոշափում է խոշտանգում չկատարելու պարտավորությունների շրջանակը և ինչ-որ չափով պատժի կամ վերաբերմունքի այլ սոսկալի ձևերը: Կարելի է ակնկալել, որ խոշտանգումների առնչությամբ ՄԻԿ-ը համատեղելի է խոշտանգումների դեմ կոմիտեի (ԽԴ կոմիտե) հետ²: Այս գլխում շոշափվելու են այս երկու մարմինների նախադեպային բազաները:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Խոշտանգում

[9.03] Խոշտանգումը 7-րդ հոդվածով և ԽԴԿ-ով արգելված վերաբերմունքի երեք չափորոշիչներից ամենադատապարտելին է³: Խոշտանգման սահմանումը կարևոր է՝ համեմատած անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի սահմանումների հետ, թեև վերաբերմունքի բոլոր երեք ձևերի ցուցաբերումն արգելված է դաշնագրերով: Որոշակի հետևանքներ կարող են բխել խոշտանգման դեպք հայտնաբերելու արդյունքում, որոնք չեն առաջանում վատ վերաբերմունքի պակաս ծանր դեպքի հայտնաբերման դեպքում: Օրինակ՝ ԽԴԿ-ի 16-րդ հոդվածով նախատեսվում է, որ ԽԴԿ-ի միայն 10-րդ և 13-րդ հոդվածներն են կիրառելի վերաբերմունքի պակաս ծանր ձևերի դեպքում⁴:

¹ Տե՛ս [9.132]

² Տե՛ս օրինակ՝ «*Զոքսն ընդդեմ Կանադայի*» (*Cox v Canada*, 539/93) գործում դատապաշտպանի փաստարկները, պարբ. 9. 4:

³ M. Nowak, *UN Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, (1993), 129: Տե՛ս նաև «*Վուլանն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Vuolanne v Finland*, 265/87) գործում մասնակից պետության փաստարկները, պարբ. 6.4:

⁴ Տե՛ս [9.122]:

եվ, վերջապես, պետության համար բարոյական արժեք է որպես «խոշտանգող» չպիտակավորվելը, եթե նույնիսկ նա պիտակավորվում է որպես անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հովանավոր, խոշտանգումն արժանանում է յուրահատուկ խարանի⁵:

[9.04] ԽԴԿ-ի 1-ին հոդվածում տրված է խոշտանգման սահմանումը: Հաշվի առնելով ԽԴԿ-ի համընդհանուր կարգավիճակը՝ կարելի է ասել, որ 1-ին հոդվածում տրված խոշտանգման սահմանումը լայնորեն ընդունված է:

ԽԴԿ, 1-ԻՆ ՀՈԴՎԱԾ

1. Սույն կոնվենցիայի նպատակների համար «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոշմամբ կամ համաձայնությամբ: Սա չի նշանակում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են միայն օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց:

[9.05] Այս սահմանումը հաստատում է, որ «խոշտանգումը» ենթադրում է ցավի և տառապանքի որոշակի ուժգնություն: Կարևոր է նշել, որ այս տառապանքը կարող է լինել ինչպես հոգեկան, այնպես էլ մարմնական: Մարդու իրավունքների մասով միջազգային գործերը հաստատել են, որ խոշտանգման ուժգնության շեմը չափազանց բարձր է: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշել է, որ 1970-ական թթ. սկզբին Միացյալ Թագավորությունում կասկածյալ ահաբեկիչների հարցաքննության հետևյալ միջոցների ազդեցության հանրագումարն ավելի շուտ կարելի է համարել անմարդկային վերաբերմունք, քան խոշտանգում, դրանք են՝ կալանավորվածների գլուխներն ամբողջությամբ ծածկելը, նրանց շարունակական և ուժգին «սպիտակ» աղմուկի ենթարկելը, քնից զրկելը, ոչ բավականաչափ սնունդ և ջուր տրամադրելը և երկար ժամանակ ցավոտ դիրքում կանգնեցնելը (անգլ.՝ wall-standing)⁶: Իրականում դատարանը խոշտանգումն առաջին անգամ ճանաչեց 1966 թ., երբ «Ակսոյն ընդդեմ Թուրքիայի» (*Aksoy v Turkey*) գործով որոշում կայացրեց, որ հարցաքննության որոշ ծայրահեղ միջոցներ խոշտանգում են⁷:

[9.06] Սուբյեկտի⁸ վ է արդյոք 1-ին հոդվածի սահմանումը: Որոշ մարդիկ բարձր դիմադրողականություն ունեն որոշակի գործողության հետևանքով առաջացած ցավի նկատմամբ. արդյոք այս հատկանիշով գործողությունը պետք է որպես խոշտանգում դասակարգվի: Առանձնապես զգայուն մարդը կարող է սուր ցավ զգալ կամ ծանր վնասվածք ստանալ համեմատաբար մեղմ գործողությունից: Կարող են արդյոք նման հանգամանքները հարկադրել, որ դատավճռով այն «խոշտանգում» համարվի⁸:

[9.07] Ըստ 1-ին հոդվածի՝ խոշտանգման գործողությունը պետք է միտումնավոր կատարվի: Արդյոք այդ «դիտավորությունը» վերաբերում է ցավ կամ տառապանք պատճառելուն, թե՞ փաստացի գործողությունը կատարելուն: Վերջինս առավել ընդգրկում սահմանման տեղիք կտար. միանգամայն հնարավոր է չակնկալել կամ հատուկ «չմտադրվել» այն աստիճանի ցավ կամ տառապանք պատճառել, որն իրականում հասցնում է տվյալ գործողությունը: Քանի որ սահմանումը շատ է անդրադառնում «ցավ և տառապանք» հասկացությանը, թվում է, որ համապատասխան մտադրությունն այն է, որ նման ցավ և տառապանք պատճառելը կամ առնվազն պատճառելու հնարավորությունը դիտվել են անշրջահայացորեն կամ անտարբերությամբ: Ուստի «անփութությամբ» ցավ և տառապանք պատճառելը, որը բարոյապես

⁵ Նովակ, վերը, ծմթ. 3, էջ 129, տե՛ս նաև «Այդին ընդդեմ Թուրքիայի» (*Aydin v Turkey*, 1998) 25 EHRR 251, պարբ. 82:

⁶ «Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Ireland v UK*, 1979-80) 2 EHRR 25, պարբ. 167: Տե՛ս, այնուամենայնիվ, ստորև բերված 31-րդ ծանոթագրությունը:

⁷ «Ակսոյն ընդդեմ Թուրքիայի» (*Aksoy v Turkey*, 1996) 23 EHRR 553. տեխնիկաները ներառում էին «պաղեստինյան կախաղան» (կախաղան բարձրացված դիրք, երբ ձեռքերը կապված են հետևում) և սեռական օրգանների էլեկտրահարում:

⁸ Տե՛ս «Վուլանն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Vuolanne v Finland*, 265/87) գործ, պարբ. 9.2 [9.26]:

այնքան էլ մեղադրելի չէ, որքան միտումնավոր պատճառելը, «խոշտանգում» չէ⁹: Ավելին՝ այն գործողությունները, որոնք սովորական մարդուն ուժեղ ցավ և տառապանք չէին պատճառի, սովորաբար դուրս են սահմանման շրջանակներից: Անհրաժեշտ մտադրությունը կբացակայի, եթե, իհարկե, խոշտանգողը տեղյակ չէ զոհի զգայունակության առանձնահատկություններին:

[9.08] Արդյոք «գործողությունը» որպես խոշտանգում որակելը թույլ չի տալիս, որ գործողություն չկատարելու դեպքերը նույնպես որպես «խոշտանգում» դասակարգվեն: Օրինակ՝ արդյոք սննդից կամ բուժօգնությունից դիտավորյալ զրկելը խոշտանգում է համարվում: Բուլեքսան համոզիչ փաստարկներ է բերել այն մասին, որ գործողություն չկատարելու իրողությունը սահմանման մեջ չներառելը կլինի «ոչ այլ ինչ, քան մի հնարք, որը կօգնի պետությանը խուսափել կոնվենցիայի դրույթներից» և կհակասի ԽԴԿ-ի առարկային և նպատակին¹⁰: Հետևաբար, հաստատական և բացասական պահվածքը բավարար է խոշտանգում համարվելու համար, եթե առկա են սահմանման մյուս անհրաժեշտ տարրերը: Եվ իսկապես, ՄԻԿ-ը հստակ նշել է իր որոշման մեջ, որ 7-րդ հոդվածը խախտված է համարվում դիտավորյալ գործողություն չկատարելու իրողության հանգամանքում (թեև անպայման չէ, որ այդ որոշումներով «խոշտանգման» փաստ արձանագրվի):

[9.09] 1-ին հոդվածով նաև նախատեսված է, որ կարելի է խոշտանգել որևէ նպատակով: Սահմանումը թվարկում է մի շարք նպատակներ, թեև ցանկը սպառնիչ չէ: Թվարկված բոլոր նպատակները կապված են զոհերին իրենց ինքնության համար անձնապես հալածելու ցանկության հետ: Հստակ չէ, թե արդյոք նախատեսված «նպատակները» պե՞տք է նմանվեն թվարկված նպատակներին, թե՞ ոչ: Օրինակ՝ արդյոք սադիստի՝ կամայական զոհի նկատմամբ միայն սեփական բավականության նպատակով կատարված գործողությունը կարո՞ղ է համապատասխան նպատակով կատարված խոշտանգման գործողություն համարվել¹¹: Արդյոք «հետաքրքրասիրությունից» դրված կատարված բժշկական փորձը կարո՞ղ է խոշտանգում համարվել¹²: Հուսով ենք, որ սահմանման այս տեսանկյունից ցանկացած չարամիտ նպատակ բավարար կհամարվի:

[9.10] Չարամիտ նպատակի պահանջը հնարավորություն է տալիս, որ բարյացակամ նպատակով կատարված գործողությունները որպես խոշտանգում չդասակարգվեն¹³: Վերջինիս օրինակ կարող է համարվել առանց ցավազրկման հրատապ անդամահատումը: Այնուամենայնիվ, խոշտանգման սահմանման մեջ նպատակի պահանջը, ըստ երևույթին, հաստատվել է ՄԻԿ-ի կողմից [9.20]¹⁴:

[9.11] 1-ին հոդվածում նաև մատնանշվում է, որ «ցավը և տառապանքը պետք է պատճառվի պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ»: ԽԴԿ-ի 16-րդ հոդվածում պաշտոնատար անձի ներգրավվածության պահանջը տարածվում է կոնվենցիայի՝ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի արգելման վրա: Մյուս կողմից՝ ՔՔԻՄԴ-ի 7-րդ հոդվածը կարող է որևէ պահանջ չներառել պաշտոնատար անձի ներգրավվածության մասին [9.21]: ԽԴԿ-ի 1-ին և 16-րդ հոդվածները մատնանշում են գործողության մեջ պաշտոնատար անձի պահանջվող ներգրավվածության աստիճանը: Ըստ այդմ՝ «չմիջամտել» հասկացությունը ամենաթույլ սահմանումն է նախքան գործողության որպես «խոշտանգում» սահմանվելը¹⁵: Հետևաբար, չմիջամտելու նշանակությունը վճռորոշ է ոչ պետական գործողությունների դեպքում ԽԴԿ-ով պատասխանատվության կանչելու համար: Արդյոք որոշակի տեսակի խոշտանգում չարգելելը նշանակո՞ւմ է

⁹ St' u J. Herman Burgers and H. Danelius, *The United Nations Convention Against Torture* (Martinus Nijhoff, Dordrecht, 1988), 118

¹⁰ A. Boulesbaa, *The UN Convention on Torture and the Prospects for Enforcement* (Martinus Nijhoff, The Hague, 1999), 15.

¹¹ St' u Burgers and Danelius, վերը, ծմբ. 9, էջ 119:

¹² St' u Boulesbaa, վերը, ծմբ. 10, էջ 21: Նման փորձը կխախտի ՔՔԻՄԴ-ի 7-րդ հոդվածը, քանի որ այն, հավանաբար, կհանդիսանա «չլիազորված բժշկական փորձ» [9.99-9.101]:

¹³ Պարտադիր չէ, որ «նպատակները» չարամիտ լինեն. կարող է լինել օրինական լինել ինչ-որ մեկից տեղեկատվություն ստանալու փորձ կատարելը. Բյուրգերս և Դանելիուս, տես վերը, ծմբ. 8, էջ 118:

¹⁴ St' u D. Harris, M. O'Boyle, and C. Warbrick, *The Law of the European Convention on Human Rights* (Butterworths, London, 1995), 60, թե ինչպես «նպատակը» կարող է ներառվել եվրոպական սահմանման մեջ: 1985 թ. խոշտանգումները կանխելու և պատժելու մասին միջամերիկյան կոնվենցիայի «խոշտանգման» սահմանման մեջ նշվում է, որ խոշտանգում կարող է կատարվել «ցանկացած» նպատակով:

¹⁵ St' u R. McCorquodale and R. La Forgia, "Taking off the Blindfolds: Torture. non-State Actors" (2001) 1 *Human Rights Law Review* 189, 205-11.

չմիջամտել: Արդյոք նման արգելքի թույլ գործադրումը կամ զոհերին անտեսող գործադրման ընթացակարգերի (որոնցով, հետևաբար, չի խրախուսվում պաշտոնական բողոքի ներկայացումը) ընդունումը համարվո՞ւմ է չմիջամտություն¹⁶: Սահմանման մեջ «պաշտոնատար անձ» հասկացության ներառումը նախատեսված է պետությանը պատասխանատվությունից ազատելու համար այնպիսի գործողությունների դեպքում, որոնք իր հսկողությունից դուրս են: Այնուամենայնիվ, պետությունը պետք է պատասխանատվություն կրի մասնավոր խոշտանգումների համար, եթե իրեն չի հաջողվում համարժեք պատասխան տալ դրանց կամ ողջամիտ միջոցներ ձեռնարկել դրանք կանխելու նպատակով: Հետևյալ գործում արծարծվում է, թե ինչպես պետության նման բացթողումները կարող են ԽԴԿ-ի շրջանակներում «չմիջամտության» վերածվել:

[9.12]

**«Ջեմալ և այլք ընդդեմ ՅԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ»
(DZEMAJL et al v YUGOSLAVIA, CAT 161/00)**

Հեղինակները Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության ծագումով գնչու վաթսուհինգ քաղաքացիներ էին: Ստորև բերված են փաստերը.

¶ 2.1. 1995 թ. ապրիլի 14-ին՝ երեկոյան մոտ ժամը 10-ին, Դանիլովգրադի ոստիկանության բաժանմունքում ահազանգ ստացվեց, որ երկու անչափահաս գնչուներ բռնաբարել են Ս. Բ.-ին՝ էթնիկական փոքրամասնություն ներկայացնող մոնտենեգրացի մի աղջկա: Արձագանքելով այս ահազանգին՝ կեսգիշերին մոտ ոստիկանությունը մտավ և խուզարկեց Բոգովա Գլավիցա գնչուական բնակավայրի մի շարք տներ՝ բերման ենթարկելով բնակավայրում ապրող բոլոր երիտասարդ գնչու տղամարդկանց (բոլորն էլ ներկայումս այս կոմիտեին դիմում ներկայացրած բողոքողներից են):

¶ 2.2. Նույն օրը՝ կեսգիշերին մոտ, բռնաբարված աղջկա բարեկամների և հարևանների ղեկավարությամբ երկու հարյուր էթնիկ մոնտենեգրացի հավաքվեց ոստիկանատան դիմաց և հրապարակայնորեն պահանջեց թաղապետարանից որոշում կայացնել բոլոր գնչուներին Դանիլովգրադից վտարելու մասին: Ամբոխը գնչուներին ուղղված կարգախոսներ էր գոչում՝ սպառնալով «բնաջնջել» նրանց և «հրկիզել» նրանց տները:

¶ 2.3. Ավելի ուշ երկու անչափահաս գնչուներ ճնշման տակ խոստովանեցին: Ապրիլի 15-ին՝ առավոտյան ժամը 4-ից 5-ն ընկած ժամանակահատվածում, բոլոր ձերբակալվածները, բացի խոստովանողներից, ազատ արձակվեցին:

¶ 2.4. Միաժամանակ ոստիկան Լյուբո Ռադովիչը եկել էր Բոգովա Գլավիցա գնչուական բնակավայր և ասել բնակավայրի գնչու բնակիչներին, որ նրանք պետք է անհապաղ հեռանան բնակավայրից: Ոստիկանի հայտարարությունը խուճապ առաջացրեց: Բնակիչների մեծ մասը փախուստի դիմեց՝ ուղղվելով դեպի մոտակա մայրուղի, որտեղից կարող էր նստել Պոդգորիցա տանող ավտոբուսներ: Միայն մի քանի կին և տղամարդ մնացին բնակավայրում՝ իրենց տները և անասունները պահպանելու համար: Առավոտյան ժամը 5-ին մոտ ոստիկան Լյուբո Ռադովիչը տեսուչ Բրանկո Միկանովիչի ուղեկցությամբ վերադարձավ բնակավայր: Ոստիկաններն ասացին դեռևս իրենց տներում մնացած գնչուներին (այդ թվում՝ բողոքողներից ոմանց), որ նրանք անհապաղ պետք է լքեն Դանիլովգրադը, քանի որ ոչ ոք չի կարող երաշխավորել նրանց անվտանգությունը կամ պաշտպանությունը:

¶ 2.5. Նույն օրը՝ առավոտյան ժամը մոտ 8-ին, Դանիլովգրադի ոչ գնչու բնակիչների մի խումբ մտնում է Բոգովա Գլավիցա գնչուական բնակավայր՝ քարեր նետելով և ջարդելով բողոքարկողների տների պատուհանները: Այն գնչուները, ովքեր դեռ չէին լքել բնակավայրը (բոլորն էլ գտնվում են այս կոմիտեին դիմում ներկայացրած բողոքարկողների շարքում), թաքնվել էին տներից մեկի նկուղում, որտեղից նրանց ի վերջո հաջողվեց դուրս պրծնել Պոդգորիցա տանող դաշտերով և անտառներով:

¶ 2.6. Ապրիլի 15-ի առավոտյան ողջ ընթացքում ոստիկանական մեքենան շարունակաբար շրջում էր ամայացած Բոգովա Գլավիցա բնակավայրի տարածքով: Դանիլովգրադի ոչ գնչու բնակիչների խմբեր էին հավաքվել քաղաքի տարբեր մասերում և հարակից գյուղերում: Ցերեկը ժամը 2-ին մոտ ոչ գնչուներից կազմված ամբոխը մեքենանե-

¹⁶ St'iu C. Mackinnon, "On Torture: A Feminist Perspective on Human Rights", in K. Mahoney and P. Mahoney (eds), *Human Rights in the Twenty-first Century: A Global Challenge* (Martinus Nijhoff. Dordrecht, 1993): St'iu նաև վերը Boulesbaa, ծնթ. 10, էջ 26, որում նշվում է, որ «գիշում» հասկացության ԱՄՆ ընկալումը պահանջում է, որ պաշտոնատար անձը նախքան խոշտանգումը տեղյակ լինի նման գործողությունից և, հետևաբար, խախտի նման գործողության կանխման միջամտելու իր իրավական պատասխանատվությունը:

րով և ուղքով գալիս է Բոզովա Գլավիցա բնակավայր: Շուտով առնվազն մի քանի հարյուր ոչ գնչուների ամբոխը (ըստ տարբեր աղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ ներկա է եղել 400-3000 մարդ) հավաքվել էր արդեն անայացած գնչուական բնակավայրում:

¶ 2.7. Ցերեկը՝ ժամը 2-ից 3-ն ընկած ժամանակահատվածում, ամբոխը շարունակում է ստվարանալ, իսկ ոմանք սկսում են գոչել. «Մենք դուրս կանենք նրանց», «Մենք կրակի կտանք այս բնակավայրը», «Մենք հողին կհավասարեցնենք այս բնակավայրը»: Ցերեկը՝ ժամը 3-ից քիչ անց, սկսում են քանդել բնակավայրը: Ամբոխը, քարերով և այլ առարկաներով զինված, սկզբում ջարդում է գնչուներին պատկանող մեքենաների և տների պատուհանները, ապա հրկիզում դրանք: Ամբոխը նաև ոչնչացնում և հրկիզում է բեռնատարներ, ֆերմերային և այլ մեքենաներ, անասնակերի ծածկեր, ախոռներ, ինչպես նաև գնչուներին պատկանող մնացած ամբողջ գույքը: Նրանք նախապես պատրաստած պայթուցիկ պարագաներ և «Մոլոտովի» կոկտեյլներ էին արձակում և ջարդած պատուհանների միջով վառվող լաթեր և պեմոռետիկներ նետում տները: Ավերածության ընդհանուր աղմուկում լսվում էին կրակոցներ և պայթյուններ: Միաժամանակ թալանվում էին արժեքավոր իրեր, մորթվում՝ անասուններ: Այդպես ջարդն անարգել տևեց մի քանի ժամ:

¶ 2.8. Այդ ջարդի ողջ ընթացքում ներկա գտնվող ոստիկանները չէին կատարում օրենքով նախատեսված իրենց պարտականությունները: Գրոհի մեկնարկից քիչ անց, բռնությունը դադարեցնելու փոխարեն, ոստիկաններն իրենց ոստիկանական մեքենան պարզապես կանգնեցրին անվտանգ հեռավորության վրա և իրողության մասին հայտնեցին իրենց վերադասին: Չնայած բռնությունն ու ավերածությունը ծավալվում էին, ոստիկանները ոչինչ չարեցին, բացի որոշ գրոհողների հանգստացնելու թեթև փորձերից, երբ նրանք խնդրում էին Բոզովա Գլավիցա բնակավայրից գնչուներին վտարելու մասին հավաքական հայտի վերաբերյալ թաղապետարանի վերջնական որոշումը:

¶ 2.9. Գնչուների դեմ ուղղված մոլեգնության արդյունքում ամբողջ բնակավայրը հողին հավասարեցվեց, իսկ գնչու բնակիչներին պատկանող ողջ սեփականությունը հրկիզվեց կամ լիովին ոչնչացվեց: Թեև ոստիկանության աշխատակիցները ոչինչ չարեցին գնչուական բնակավայրի ավերումը դադարեցնելու համար, ապահովեցին, որ կրակը չտարածվի դեպի գնչուներին չպատկանող հարևան շենքերը:

¶ 2.12. ... Փաստեր կան, որ ոստիկաններ Միլադին Դրագասը, Ռայկո Ռադուլովիչը, Ջորջիե Ստանկովիչը և Վուկ Ռադովիչը ներկա են եղել բռնության ծավալման ժամանակ և ոչինչ չեն ձեռնարկել կամ բավարար չափով չեն պաշտպանել Բոզովա Գլավիցայի գնչու բնակիչներին կամ նրանց սեփականությունը:

¶ 2.13. Դեպքից մի քանի օր անց կենցաղային սպասարկման ընկերությանը պատկանող շինարարական ծանր մեքենաներով գնչուական բնակավայրի ավերակներն ամբողջությամբ մաքրվեցին: Դանիլովգրադում գնչուների գոյության բոլոր հետքերը ջնջվեցին:

Հեղինակները պնդում են, որ վերոնշյալ փաստերը կամ խոշտանգում են, կամ ԽԴԿ-ի 16-րդ հոդվածին հակասող վերաբերմունք:

¶ 3.6. Բողոքողները պնդում են, որ Հարավսլավիայի իշխանությունները խախտել են կոնվենցիայի 1-ին հոդվածի հետ միասին ընթերցվող 2-րդ հոդվածի 1-ին կետը, որովհետև վերը նկարագրված իրադարձությունների ընթացքում ոստիկանությունը կանգնել և հետևել է իրադարձությունների զարգացմանը, կամ էլ 16-րդ հոդվածի 1-ին կետը՝ նույն պատճառաբանությամբ: Այս առումով հայցվորները համարում են, որ ցուցաբերված վատ վերաբերմունքի մակարդակը գնահատելիս հատկապես պետք է հաշվի առնել գնչուական փոքրամասնության խոցելիությունը: Նրանք ենթադրում են, որ «Ֆիզիկական ոտնձգության տվյալ մակարդակն ավելի շուտ համարվում է «նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունք կամ պատիժ», երբ այն դրդված է ռասայական թշնամանքով»:

«Պաշտոնատար անձ» պահանջի վերաբերյալ նրանք նշել են.

¶ 3.7. Ելնելով այն հանգամանքից, որ գործողությունները հիմնականում կատարվել են ոչ պետական անձանց կողմից, բողոքողները հիմնվում են «պատշաճ հոգատարությամբ» սկզբունքով միջազգային նախադեպային բազայի ուսումնասիրման վրա և հիշեցնում պետությունների վրա դրված «դրական» պարտավորությունների մասով միջազգային իրավունքի ներկա իրավիճակի մասին: Նրանք պնդում են, որ կոնվենցիայի դրույթների նպատակը չի սահմանափակվում մասնակից պետությունների բացասական պարտավորություններով, այլ ներառում է այն դրական քայլերը, որոնք հարկ է ձեռնարկել՝ մասնավոր անձանց կողմից խոշտանգման կամ մահալից գործողություններից խուսափելու համար:

¶ 3.8. Բողոքողները նաև բերում են այն փաստարկը, որ բռնության գործողությունները տեղի են ունեցել ոստիկանության «համաձայնությամբ կամ չմիջամտությամբ», որոնք օրենքով պատասխանատու են իրենց անվտանգության ապահովման և պաշտպանության համար:

¶ 8.8. Կոնվենցիայի 1-ին և 16-րդ հոդվածների մասով ենթադրյալ հանցագործների առնչությամբ բողոքողները հայտարարում են, որ թեև միայն պաշտոնատար անձը կամ պաշտոնյայի դերում հանդես եկող անձը կարող է հանցավոր գործողության հեղինակ համարվել վերոնշյալ ցանկացած դրույթի սահմանված իմաստով, սակայն երկու դրույթներում էլ նշվում է, որ խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի գործողությունը կարող է նաև կատարվել պաշտոնատար անձի համաձայնությամբ կամ թողտվությամբ: Հետևաբար, թեև նրանք չեն վիճարկում, որ գործողությունները ոստիկանների կողմից չեն կատարվել կամ հրահրվել, համարում են, որ դրանք կատարվել են նրանց համաձայնությամբ և չմիջամտությամբ: Ոստիկանությանը հայտնել են 1995 թ. ապրիլի 15-ին կատարվելիքի մասին, և նրանք տեղում են գտնվել ջարդը սկսվելու պահին, սակայն չեն կանխել հանցագործների օրինազանց գործողությունները:

¶ 8.9. Մասնավոր անձանց կողմից բռնի գործողությունները կանխելու և խափանելու մասով պետությունների դրական պարտավորությունների առնչությամբ հայցվորները հիշատակում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությունը, ըստ որի՝ այս դրույթը տարածվում է մասնավոր անձանց կողմից կատարված գործողությունների վրա, ինչը ենթադրում է, որ պետությունը պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել յուրաքանչյուրին նման գործողություններից պաշտպանելու համար: Հայցվորները նաև անդրադարձել են ՄԱԿ-ի Իրավապահ մարմինների աշխատակիցների վարքի կանոններին, Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և զենքի գործադրման հիմնական սկզբունքներին և Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիային, որտեղ ներառված են նմանօրինակ դրույթներ:

¶ 8.10. Նույն հարցի առնչությամբ բողոքողները հիշատակում են «Վելասկես Ռոդրիգեսն ընդդեմ Հոնդուրասի» (*Velasquez Rodriguez v Honduras*) գործով Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի վճիռը, որի համաձայն՝

այն ապօրինի գործողությունը, որը խախտում է մարդու իրավունքները և ի սկզբանե ուղղակիորեն վերագրելի չէ պետությանը (օրինակ՝ այն պատճառով, որ դա մասնավոր անձի գործողություն է, կամ պատասխանատու անձը հայտնի չէ), կարող է պետության համար պատասխանատվություն առաջացնել միջազգային ատյանում ոչ այնքան բուն գործողության, որքան բռնությունը կանխելու կամ դրան արձագանքելու համար կոնվենցիայով նախատեսված անհրաժեշտ պատշաճ հոգատարության բացակայության պատճառով:

Նման մոտեցում է այս հարցին ցուցաբերել Մարդու իրավունքների եվրոպական դատարանն «Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Osman v United Kingdom*) գործում [կյանքի իրավունքի շրջանակում]՝ նշելով, որ

[կ]ոնվենցիայի 2-րդ հոդվածը որոշակի, լավ սահմանված հանգամանքներում կարող է նաև դրական պարտավորություն ենթադրել իշխանությունների համար՝ այն անձի կյանքը պաշտպանելու նպատակով օպերատիվ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու համար, ում կյանքը մեկ այլ անձի հանցավոր գործողությունների վտանգի տակ է: Այն դեպքերում, երբ իշխանությունների կողմից խախտվել է կյանքի իրավունքը պաշտպանելու դրական պարտավորությունն անձի նկատմամբ հանցանքները կանխելու և խափանելու վերոնշյալ պարտավորության շրջանակներում, հարկավոր է հաստատել, որ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ հայտնի դարձած անձի կամ անձանց կյանքին երրորդ անձի հանցավոր գործողություններից սպառնացող իրական և անմիջական վտանգի մասին դրա առկայության պահին, և իրենց չի հաջողվել այնպիսի միջոցներ ձեռնարկել իրենց իրավասության շրջանակներում, որոնք ողջամտության պարագայում պետք է կանխեին վտանգը: Հաշվի առնելով 2-րդ հոդվածով պաշտպանվող այն իրավունքի բնույթը, որը կոնվենցիայում հիմնարար իրավունք է, հայցվորի համար բավական է ցույց տալ, որ իշխանություններն իրենցից սպասված ամեն ինչ չեն արել կյանքի նկատմամբ իրական և անմիջական վտանգը կանխելու համար, որի մասին նրանք տեղյակ են եղել կամ պարտավոր էին տեղյակ լինել:

¶ 8.11. Բողոքողները բերում են նաև այն փաստարկը, որ կանխարգելիչ միջոցների ձեռնարկման պարտավորության շրջանակը կարող է ընդլայնվել կյանքի նկատմամբ վտանգի անմիջականության հետ մեկտեղ: Այս փաստարկը պաշտպանելու համար նրանք մեծապես հենվում են «Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի» (*Mahmut Kaya v Turkey*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռի վրա, որում դատարանը պետության պարտավորությունները սահմանել է հետևյալ կերպ. առաջին՝ պետությունը պարտավոր է ցանկացած ողջամիտ քայլ

ծեռնարկել՝ անձի կյանքին և ամբողջականությանը սպառնացող իրական և անմիջական վտանգը կանխելու համար այն ժամանակ, երբ գործողությունները կարող են կատարվել անձի կամ մի խումբ անձանց կողմից հանրային իշխանությունների համաձայնությամբ կամ չմիջամտությամբ, երկրորդ՝ պետությունը պարտավոր է արդյունավետ իրավական պաշտպանության միջոց տրամադրել, այդ թվում՝ պետական իշխանությունների համաձայնությամբ կամ թողտվությամբ ոչ պետական մասնակիցների կատարած գործողությունների պատշաճ և արդյունավետ հետաքննություն:

¶ 8.12. Բողոքողները նաև հատուկ նշում են, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի շրջանակներում պետության պարտավորությունը չի սահմանափակվում միայն նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող գործողություններ կատարած մասնավոր անձանց նկատմամբ քրեական պատժամիջոցների կիրառմամբ: «*2.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*Z. v United Kingdom*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է,

որ իշխանությունները տեղյակ էին այն խիստ վատ և անփույթ վերաբերմունքի մասին, որին տարիներ շարունակ բողոքողները ենթարկվել էին իրենց ծնողների կողմից, և չնայած նրանց մոտ առկա բավարար միջոցներին՝ նրանց չի հաջողվել որևէ արդյունավետ քայլ ձեռնարկել այդ վերաբերմունքը դադարեցնելու համար: Հետևաբար, պետությունը ծախողել է կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իր դրական պարտավորությունը, այն է՝ բողոքողներին անմարդկային և նվաստացնող վերաբերմունքից համարժեք պաշտպանությամբ ապահովել:

¶ 8.13. Եվ վերջում բողոքողները հայտարարում են, որ «իրենք իսկապես ենթարկվել են համայնական բռնության գործողությունների՝ կրելով մարմնական և հոգեկան մեծ տառապանք, որը խոշտանգում և/կամ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ է»: Նրանք նշում են նաև, որ «դա տեղի է ունեցել երրորդ անձի կողմից կատարված գործողության (Ս. Բ.-ի բռնաբարության) համար իրենց պատժելու նպատակով, և վիճարկման ենթակա համայնական բռնությունը (կամ ավելի շուտ՝ ռասայական ջարդը) տեղի է ունեցել ոստիկանության ներկայությամբ և, հետևաբար, «համաձայնությամբ կամ թողտվությամբ», մինչդեռ օրենքով նախատեսված իրենց պարտականությունը լրիվ այլ է, այն է՝ ապահովել իրենց անվտանգությունը և պաշտպանությունը»:

ԽԴ կոմիտեն համաձայնեց, որ ԽԴԿ-ն խախտվել է.

¶ 9.2. Ինչ վերաբերում է հայցվորների կողմից նկարագրված 1995 թ. ապրիլի 15-ին տեղի ունեցած փաստերի իրավական որակմանը, ապա կոմիտեն առաջին հերթին համարում է, որ տների հրկիզումը և ոչնչացումը տվյալ պարագայում դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի գործողություններ են: Այս գործողությունների բնույթն էլ ավելի է սաստկանում, երբ հաշվի է առնվում տների հրկիզման և ոչնչացման պահին բնակավայրում որոշ բողոքարկողների թաքնվելու փաստը, ենթադրյալ տուժողների խոցելիությունը, ինչպես նաև գործողությունների կատարման ռասայական նշանակալի դրդապատճառի առկայությունը: Ավելին՝ կոմիտեն համարում է, որ բողոքարկողները բավարար չափով ցույց են տվել, որ ոստիկանները (պաշտոնատար անձինք), տեղեկացված լինելով բողոքարկողներին սպառնացող անմիջական վտանգի մասին և ներկա լինելով իրադարձություններին, ոչ մի համապատասխան քայլ չեն ձեռնարկել հայցվորներին պաշտպանելու համար, ինչը, հետևաբար, ենթադրում է «չմիջամտություն» կոնվենցիայի 16-րդ հոդվածի իմաստով: Այս առումով կոմիտեն բազմիցս հայտնել է իր մտահոգությունն «այն ոստիկանության և իրավապահ մարմինների անգործությամբ, որոնք բավարար չափով չեն պաշտպանում նման խմբերին սպառնացող ռասայական դրդապատճառ ունեցող գրոհներից» (Եզրափակիչ դիտարկումներ Սլովակիայի նախնական զեկույցի վերաբերյալ, ԽԴԿ A/56/44 (2001), 104-րդ պարբերություն, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Չեխիայի Հանրապետության երկրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, ԽԴԿ A/56/44 (2001), 113-րդ պարբերություն և Եզրափակիչ դիտարկումներ Վրաստանի երկրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, ԽԴԿ A/56/44 (2001), 81-րդ պարբերություն): Թեև հայցվորների կողմից նշված գործողությունները չեն կատարվել անձամբ պաշտոնատար անձանց կողմից, կոմիտեն համարում է, որ դրանք կատարվել են նրանց չմիջամտությամբ և, հետևաբար, պետության կողմից կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին կետի խախտում են:

Ուստի ակնհայտ խոշտանգման (կամ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի) մասով ոստիկանության անգործությունը համարվում է պետության կողմից չմիջամտություն նման վերաբերմունքը կանխելու առումով, ինչը հակասում է ԽԴԿ-ի 1-ին (կամ 16-րդ) հոդվածին: *Ջեմայլի (Dzemail)* գործով որոշումը ցույց է տալիս՝ այն փաստը, որ պետությանը չի հաջողվել ողջամիտ քայլեր ձեռնարկել խոշտանգումը (կամ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը) կանխելու համար, չմիջամտություն է՝ դրանով իսկ հարուցելով ԽԴԿ-ով նախատեսված պատասխանատվության հարցը:

[9.13] « Գ. Ռ. Բ.-ն ընդդեմ Շվեդիայի » (G.R.B v SWEDEN, CAT 83/97)

Հեղինակը հայց է հարուցել առ այն, որ իր արտաքսումը Պերու կխախտի ԽԴԿ-ի 3-րդ հոդվածը, որն արգելում է արտաքսումն այն պետություն, որտեղ անձը կարող է խոշտանգվել [9.67], իսկ Պերու վերադառնալուն պես ինքը կկանգնի խոշտանգման հնարավոր վտանգի առջև: Հեղինակի բողոքներից մեկը վերաբերում էր իր վերադարձի հետևանքով «Սենդերո Լումինոսո» («Փայլող ճանապարհ») պերուական ահաբեկչական խմբի կողմից իրեն սպառնացող վտանգին: Այս բողոքի առաջնությամբ մասնակից պետությունը բերել է հետևյալ փաստարկները.

¶ 4.14. Ինչ վերաբերում է հեղինակի՝ «Սենդերո Լումինոսոյի» կողմից հետապնդման մասով մտավախությանը, ապա մասնակից պետությունը շեշտել է, որ «Սենդերո Լումինոսոյի» գործողությունները չեն կարող վերագրվել իշխանություններին: Այնուամենայնիվ, մասնակից պետությունն ընդունում է, որ պայմանավորված առանձին գործի հանգամանքներով՝ կարող են անձին ապաստան տալու հիմքեր լինել, թեպետ հետապնդման վտանգը վերաբերում է ոչ թե կառավարությանը, այլ ոչ պետական միավորին: Այդուհանդերձ, ներկայիս գործում մասնակից պետության տեսակետն այն է, որ եթե անգամ «Սենդերո Լումինոսո» ահաբեկչական կազմակերպության կողմից հետապնդման վտանգ գոյություն ունի, միևնույն է, այն տեղային բնույթ է կրում, հետևաբար, հեղինակը կարող է իր անվտանգությունն ապահովել՝ տեղափոխվելով երկրի տարածքում:

ԽԴ կոմիտեն այս հարցի կապակցությամբ վճիռը կայացրել է մասնակից պետության օգտին: 1-ին հոդվածը կրկնելուց հետո կոմիտեն նշել է.

¶ 6.5. ...Կոմիտեն համարում է, որ առանց կառավարության համաձայնության կամ չմիջամտության ոչ պետական միավորման կողմից պատճառվող ցավի կամ տառապանքի վտանգի տակ գտնվող անձին վտարելուց հրաժարվող մասնակից պետության պարտավորության հարցը դուրս է կոմվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներից:

Եթե նույնիսկ Պերուի կառավարությունն ի վիճակի չէ պաշտպանելու հեղինակին «Սենդերո Լումինոսո» ահաբեկչական խմբից, ինչպես նշվում է Գ. Ռ. Բ.-ի (G.R.B.) գործում, դա չի նշանակում, որ Պերուի կառավարությունը «չի միջամտել» «Սենդերո Լումինոսոյի» վատ վերաբերմունքին: Հավանական է թվում այն, որ Պերուի կառավարությունը ողջամիտ քայլեր է ձեռնարկել «Սենդերո Լումինոսոյի» դեմ պայքարելու համար՝ հաշվի առնելով այդ հարցում կառավարության շահագրգռությունը, քանի որ «Սենդերո Լումինոսոն» նախկինում բռնի դիմադրություն է ցույց տվել Պերուի կառավարությանը: Ոչ պետական դերակատարից պաշտպանելու անկարողությունը տարբերվում է տվյալ անձին պաշտպանելու ուղղությամբ ողջամիտ քայլեր չձեռնարկելուց: Հետևաբար Գ. Ռ. Բ.-ի (G.R.B.) գործը տարբերվում է *Ջենայ-լի* գործից [9.12]¹⁷: ԽԴ կոմիտեն հետևել է Գ. Ռ. Բ.-ի գործով իր ընդունած որոշմանը «Վ. Խ. Ն-ն և Հ. Ն.-ն ընդդեմ Շվեդիայի» (V.X.N. and H.N v Sweden, CAT 130-131/99)¹⁸, «Ս. Վ.-ն ընդդեմ Կանադայի» (S.V. v Canada, 49/96)¹⁹ և «Մ. Պ. Ս.-ն ընդդեմ Ավստրալիայի» (M.P.S. v Australia, CAT 138/99) գործերում²⁰: Վերջին երկու գործերում առկա էին Գ. Ռ. Բ.-ի գործին նման փաստեր. հեղինակը վախենում էր արտաքսվելուց մի երկիր, որտեղ հեղինակի համար ենթադրաբար մի ահաբեկչական խումբ վտանգ էր ներկայացնում: Նախկին վճիռը վերաբերում էր Վիետնամ վերադարձնելու դեպքում ինչ-որ անձի կողմից հեղինակներից մեկի նկատմամբ եղած սպառնալիքին: Այնուամենայնիվ, հեղինակը երբևէ չի պնդել, որ Վիետնամն ի վիճակի կամ պատրաստական չէ պաշտպանելու իրեն տվյալ անձից:

¹⁷ Այնուամենայնիվ, Գ. Ռ. Բ. (G.R.B.) գործով հեղինակը պնդել է կետ 2.3-ում, որ ինքը բռնաբարվել է «Սենդերո Լումինոսոյի» անդամների կողմից, և ոստիկանությունը ոչ մի շահագրգռություն չի ցուցաբերել այս հարցում: Այդուհանդերձ, այս հանգամանքը փաստացի հայցի մասը չէր կազմում և անշուշտ ուղղված էր ավելի շուտ Շվեդիայի, քան Պերուի դեմ: Թեպետ այն թերևս վկայում է Գ. Ռ. Բ.-ին Պերու վերադառնալուց հետո «Սենդերո Լումինոսոյից» պաշտպանելու հարցում Պերուի իշխանությունների անպատրաստականության և, հետևաբար, ահաբեկչական խմբի կողմից հեղինակին պատճառված որևէ վնասի պարագայում այս իշխանությունների թողտվության մասին: Տե՛ս նաև McCorquodale and La Forgia, վերը, ծնթ. 15, էջ 209-10:

¹⁸ Պարբ. 3.8:

¹⁹ Պարբ. 9.5:

²⁰ Պարբ. 7.4:

[9.14] «ԷԼՄԻՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (ELMI v AUSTRALIA, CAT 120/98)

Հեղինակը նշել է, որ իրեն Սոմալի արտաքսելը կխախտի ԽԴԿ-ի 3-րդ հոդվածը, քանի որ իրեն սպառնում է Սոմալիի ապստամբական խմբերի կողմից խոշտանգվելու վտանգը: Մասնակից պետությունը բերել է հետևյալ փաստարկը.

¶ 4.4. Մասնակից պետությունը պնդում է, որ այս հաղորդումը նյութաիրավական պատճառներով (*ratione materiae*) անընդունելի է այն հիմունքով, որ կոնվենցիան կիրառելի չէ բերված փաստերի նկատմամբ: Մասնավորապես՝ այն գործողությունները, որոնց, ըստ հեղինակի, նա կարող է ենթարկվել Սոմալի վերադառնալու դեպքում, դուրս են կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված «խոշտանգում» սահմանման շրջանակներից: 1-ին հոդվածը պահանջում է, որ խոշտանգման գործողությունը «կատարվի պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոժմամբ կամ համաձայնությամբ»: Հեղինակը ենթադրում է, որ նա խոշտանգման կենթարկվի սոմալիական զինված տոհմախմբերի անդամների կողմից: Այնուամենայնիվ, այդ անդամները «պետական պաշտոնյա» չեն հանդիսանում և «պաշտոնապես» հանդես չեն գալիս:

¶ 4.5. Ավստրալիայի կառավարությունն անդրադառնում է «*Գ.Ռ.Բ.-ն ընդդեմ Շվեդիայի*» (*G.R.B. v Sweden*) գործով կոմիտեի վճռին, որում կոմիտեն նշել է, որ «մասնակից պետության» 3-րդ հոդվածով նախատեսված անձին մեկ այլ պետություն բռնի վերադարձնելուց հրաժարվելու պարտավորությունն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան կարծելու, որ անձին սպառնում է խոշտանգման ենթակվելու վտանգ, ուղղակիորեն կապված է կոնվենցիայի 1-ին հոդվածում բերված խոշտանգման սահմանման հետ»:

¶ 4.6. Մասնակից պետությունը նաև նշում է, որ 1-ին հոդվածում բերված խոշտանգման սահմանումը երկարատև բանավեճերի առարկա է եղել կոնվենցիային մվիրված բանակցությունների ընթացքում: Բազմաթիվ տեսակետներ են արտահայտվել այն հարցի շուրջ, թե ինչ հանցագործների վրա պետք է տարածվի կոնվենցիան: Օրինակ՝ Ֆրանսիայի պատվիրակությունը բերել է այն փաստարկը, որ «խոշտանգման գործողության սահմանումը պետք է լինի խոշտանգման գործողությանը ներհատուկ բնույթի սահմանում՝ անկախ այն իրականացնողի կարգավիճակից»: Ֆրանսիական կողմի տեսակետը հիմնականում չի ընդունվել, թեև պետությունների մեծ մասն իրականում համաձայնել է, որ «կոնվենցիան պետք է կիրառվի ոչ միայն պաշտոնատար անձանց կողմից կատարված գործողությունների, այլև այն գործողությունների դեպքում, որոնց համար պետական իշխանություններն կարող էին որոշ պատասխանատվություն կրել»:

¶ 4.7. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության պատվիրակությունը մեկ այլ առաջարկով հանդես եկավ, որ կոնվենցիան վերաբերի «պաշտոնատար անձի կամ մեկ այլ պետական գործչի»: Ի տարբերություն վերջինիս՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության պատվիրակությունը «կարծում է՝ հարկ է հստակեցնել, որ «պաշտոնատար անձ» հասկացությունը վերաբերում է ոչ միայն այն անձանց, ովքեր, անկախ իրենց իրավական կարգավիճակից, մշտական հիմունքներով կամ առանձին գործի շրջանակներում պետական մարմինների կողմից պետական աշխատանքի են նշանակվել, այլև այն անձանց, ովքեր որոշակի շրջաններում կամ հստակ պայմաններում օգտվում են փաստացի իշխանությունից և գործադրում են այն ուրիշների նկատմամբ, և ում իշխանությունը համեմատելի է պետական իշխանության հետ կամ գոնե ժամանակավորապես փոխարինում է պետական իշխանությունը, կամ ում իշխանությունը բխում է նման անձանցից»:

¶ 4.8. Մասնակից պետության համաձայն՝ «ընդհանուր առմամբ համաձայնեցվել է այն, որ տվյալ սահմանումը հարկ է ընդլայնել՝ ներառելով պաշտոնատար անձի կամ պաշտոնյայի դերում հանդես եկող ցանկացած այլ անձի դրոժմամբ կամ համաձայնությամբ կամ չմիջամտությամբ կատարված գործողությունները»: Համաձայնություն ձեռք չի բերվել այն հարցի շուրջ, թե հարկ կա՞ այդ սահմանումը ընդլայնել՝ ներառելով պաշտոնյայի դերում հանդես չեկող մասնավոր անձանց, ինչպես օրինակ՝ սոմալիական զինված խմբերը:

Հեղինակի փաստաբանը հետևյալ կերպ պատասխանեց.

¶ 5.1. Ինչ վերաբերում է դիմումի նյութաիրավական հիմքերին (*ratione materiae*), ապա փաստաբանը կարծում է, որ չնայած կենտրոնական կառավարության բացակայությանը՝ Սոմալիի շրջաններն արդյունավետ կերպով հսկող որոշակի զինված տոհմախմբերը ներառված են «պետական պաշտոնյա» կամ «պաշտոնապես հանդես եկող այլ անձ» հասկացություններում, ինչպես նախատեսված է կոնվենցիայի 1-ին հոդվածով: Իրականում պետության մեջ կենտրոնական կառավարության բացակայության փաստը մեծացնում է այլ մարմինների կողմից կիսապետական լիազորությունների կիրառման հավանականությունը:

¶ 5.2. Փաստաբանը նաև հատուկ նշում է, որ խոշտանգման սահմանման նեղացումը պաշտոնյաներով կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձանցով պայմանավորված է կոնվենցիայի՝ պետական իշխանությունների անունից կամ առնվազն նրանց հանդուրժողականությամբ կատարված գործողություններից պաշտպանելու նպատակով, մինչդեռ սովորաբար ակնկալվում է, որ պետությունը պետք է իր քրեական օրենսդրությամբ սահմանված կարգով քայլեր ձեռնարկի այլ անձանց նկատմամբ խոշտանգման գործողություններ կատարած մասնավոր անձանց դեմ: Հետևաբար, այս սահմանափակման հիմքում ընկած ենթադրությունն այն է, որ բոլոր մնացած դեպքերում պետությունը սովորական միջազգային իրավունքի շրջանակներում «ոչ պաշտոնյա անձանց» կողմից կատարված խոշտանգման գործողությունները պատժելու պարտավորություն է կրում: Այն համատեղելի է վերոնշյալի հետ: Այսպիսով, կոմիտեն նշել է, որ «*Գ.Ռ.Բ.-ն ընդդեմ Շվեդիայի*» (*G.R.B. v Sweden*) գործում «առանց կառավարության համաձայնության կամ նրա թողտվությամբ ոչ պետական մարմնի կողմից պատճառվող ցավի կամ տառապանքի վտանգի տակ կանգնած անձին վտարելուց հրաժարվող մասնակից պետության պարտականության հարցը դուրս է կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակից»: Այնուամենայնիվ, ներկայիս գործը տարբերվում է վերջինից, քանի որ վերաբերում է վերադարձին այն տարածք, որտեղ կենտրոնական կառավարության բացակայության պայմաններում հսկողությունն իրականացնում են այնպիսի ոչ պետական մարմիններ, որոնցից չի կարելի պաշտպանություն ակնկալել:

¶ 5.3. Փաստաբանը նշում է, որ կոնվենցիան մշակելու ժամանակ բոլոր պետությունների միջև համաձայնություն կար գործողություն իրականացնողի շրջանակն ընդլայնել «պաշտոնյա» հասկացությունից, որը նշված է Բոլոր անձանց խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկումից պաշտպանության հռչակագրում՝ դրանով իսկ ներառելով «պաշտոնապես հանդես եկող այլ անձին[անց]»: Սա կներառեր այն անձանց, ովքեր որոշակի շրջաններում կամ պայմաններում օգտվում են փաստացի իշխանությունից և գործադրում են այն ուրիշների նկատմամբ, և ունի իշխանությունը համեմատելի է պետական իշխանության հետ:

¶ 5.4. Միջազգային իրավունքի և միջազգային պետական քաղաքականության ընդհանուր սկզբունքի համաձայն՝ միջազգային և ազգային դատարանները և մարդու իրավունքների վերահսկիչ մարմինները՝ անկախ իրավական դրության խստությունից, պետք է վարչական գործողություններ կատարեն այն տարածքում, որտեղ այդ գործողություններն ազդում են մասնավոր քաղաքացիների առօրյա գործունեության վրա: «*Ահմեդն ընդդեմ Ավստրիայի*» (*Ahmed v Austria*) գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որոշելով, որ Սոմալի արտաքսելը կխախտի խոշտանգումն արգելող Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, նշել է, որ «այսքան է տեղի ունեցել երկրում իշխանության համար մրցակցող մի շարք տոհմախմբերի միջև: Ոչինչ էլի վկայում այն մասին, որ բողոքողների համար հնարավոր վտանգներն այլևս գոյություն չունեն, կամ որևէ պետական պաշտոնյա ի վիճակի է պաշտպանելու [բողոքողին]»:

¶ 5.5. Սոմալիի առնչությամբ շատ փաստեր կան, որ առնվազն 1991 թվականից սկսած՝ տոհմախմբերը որոշակի շրջաններում ստանձնել են իշխանության կամ համանման դերակատարում: Այս տոհմախմբերն իրենց հսկողության տակ գտնվող շրջաններում սահմանել են սեփական օրենքները և իրավապահ մեխանիզմները, ինչպես նաև ստեղծել են սեփական կրթական, առողջապահական և հարկային համակարգերը: Մարդու իրավունքների հանձնաժողովի անկախ փորձագետի զեկույցում նշվում է, որ պետությունները և միջազգային կազմակերպություններն ընդունել են, որ այս գործունեությունը համեմատելի է պետական իշխանության հետ, և «միջազգային հանրությունը դեռևս բանակցում է պատերազմող խմբակցությունների հետ, որոնք, որքան էլ զավեշտալի է, հանդիսանում են Սոմալիի ժողովրդի միջնորդներն արտաքին աշխարհի հետ»:

ՄԻԿ-ը վճիռը կայացրեց հօգուտ հեղինակի.

¶ 6.5. Կոմիտեն համաձայն չէ մասնակից պետության այն տեսակետին, որ կոնվենցիան կիրառելի չէ ներկայիս դեպքում, քանի որ, ըստ մասնակից պետության, խոշտանգման այն գործողությունները, որոնցից վախենում է հեղինակը, դուրս կմնան 1-ին հոդվածում բերված խոշտանգման սահմանման շրջանակից (այսինքն՝ պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի դրդմամբ կամ համաձայնությամբ կամ չմիջամտությամբ պատճառված ցավը կամ տառապանքը, այս պարագայում՝ խտրական նպատակներով): Կոմիտեն նշում է, որ Սոմալիի տարիներ շարունակ կենտրոնական կառավարություն չի ունեցել, միջազգային հանրությունը բանակցում է պատերազմող խմբակցությունների հետ, և Մոգադիշոյում գործող որոշ խմբեր ստեղծել են կիսապետական հաստատություններ և բանակցում են ընդհանուր վարչարարության ստեղծման շուրջ: Ուստի սրանից հետևում է, որ դե ֆակտո այս խմբակցությունները ստանձնում են որոշակի լիազորություններ, որոնք համեմատելի են օրինական կառավարությունների կողմից հանձնառվող բացառիկ իրավունքների հետ: Համապատասխանաբար՝ կոնվենցիայի կիրառման շրջանակներում այս խմբակցությունների անդամները ներառվել են 1-ին հոդվածի «պետական պաշտոնյա կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձինք» բառակապակցության մեջ:

[9.15] Վիճելի է այն հանգամանքը, որ ո՛չ *Գ.Ռ.Բ.-ի* և ո՛չ էլ *Էլմի* գործում կենտրոնական կառավարությունն ի վիճակի չէր պաշտպանելու համապատասխան հեղինակին ոչ պետական խմբերի կողմից իրականացվող խոշտանգումներից: Այս գործերի միջև եղած հիմնական տարբերությունն այն է, որ *Էլմի* գործով հեղինակը հարկադրված էր վերադառնալ մի պետություն (Սոմալի), որտեղ փաստացի կենտրոնական կառավարություն գոյություն չուներ, ինչն էլ արտացոլված է դրանց դատավճիռներում: ԽԴ կոմիտեն «Սենդերո Լումինոսոյի» անդամներին չէր համարի պաշտոնատար անձինք, եթե անգամ նրանք արդյունավետ կերպով կառավարեին Պերուի որոշ շրջաններ, քանի որ «պետական» լիազորությունները Պերուում դե յուրե իրականացվում են Պերուի կառավարության կողմից: Որևէ դե յուրե պետական հսկողության բացակայության դեպքում, ինչպես Սոմալիում *Էլմի* գործով դատավճիռի ժամանակ էր (1999 թ. մայիս), ավելի հավանական է, որ ԽԴ կոմիտեն դե ֆակտո լիազորություններ ունեցող մարդկանց ճանաչի որպես «պաշտոնատար անձինք»²¹: Հետաքրքիր է իմանալ, թե արդյոք ԽԴ կոմիտեն տարածքը հսկող ապստամբ խմբերին «պաշտոնատար անձինք» կհամարե՞ր կենտրոնական կառավարության հետ պատերազմական դրության մեջ գտնվելու պահին²²:

[9.16] Մարդասիրական տեսանկյունից կարևորը տվյալ պարագայում այն հարցն է, թե արդյոք անձը կարո՞ղ է խոշտանգումից պաշտպանվել կառավարության միջոցով, անկախ այն հանգամանքից՝ վտանգը բխում է պետական աշխատակիցներից, թե՞ ոչ պետական խմբերից: «Հավանական պաշտպանության պակասը» գուցե առավել հեշտ է հաստատվում, երբ չկա կենտրոնական կառավարություն, սակայն այն զգացվում է, երբ ճանաչված կենտրոնական կառավարություններն ի վիճակի չեն հսկելու հափշտակիչ ոչ պետական խմբերին: ԽԴԿ-ի շրջանակներում «խոշտանգման» առավել մարդասիրական մեկնաբանության համար, որը հատկապես տեղին է այն դեպքերում, երբ կենտրոնական կառավարությունն ի վիճակի չէ (ավելի շուտ՝ պատրաստակամ չէ) հսկելու ոչ կառավարական ուժերին, անհրաժեշտ կլինեն վերաձևակերպել 1-ին հոդվածում բերված սահմանումը:

[9.17] «Յ. Ս. Յ. Ի.-ն ընդդեմ Ավստրալիայի» (H.M.H.I. v AUSTRALIA, CAT 177/01)

Այս դեպքում *Էլմի* գործն առանձնացվել էր, քանի որ այն ուներ նման փաստեր.

¶ 6.4. Կոմիտեն հիշում է իր նախադեպային բազան, որում 3-րդ հոդվածին համապատասխան մասնակից պետությունը պարտավորություն է կրում հրաժարվելու անձին բռնի վերադարձնելուց մեկ այլ պետություն, որտեղ կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված խոշտանգման վտանգի կասկածներ ունենալու բավարար հիմքեր կան, ինչը պարտադիր ենթադրում է գործողություններ «պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի» կողմից: Համապատասխանաբար՝ «*Գ.Ռ.Բ.-ն ընդդեմ Շվեդիայի*» (*G.R.B. v Sweden*) գործում կոմիտեն համարեց, որ «Սենդերո Լումինոսոյի» Պերուի զգալի հատվածները վերահսկող ոչ պետական միավորի կողմից խոշտանգման վտանգի ենթադրությունները դուրս են կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներից: «*Էլմի* ընդդեմ Ավստրալիայի» (*Elmi v Australia*) գործում կոմիտեն համարեց, որ պետական իշխանության իսպառ բացակայության բացառիկ պարագայում կիսապետական իշխանություն իրականացնող խմբերի գործողությունները կարող են դուրս մնալ 1-ին հոդվածով նախատեսված սահմանումից, ուստի պահանջում են 3-րդ հոդվածի կիրառում: Կոմիտեն համարում է, որ ներկայումս՝ *Էլմի* գործի վճռից երեք տարի անց, Սոմալիի անցումային կառավարության հատուկ իշխանության տակ է, որը հարաբերակցվում է միջազգային հանրության հետ որպես կենտրոնական կառավարություն, թեև որոշ կասկածներ կարող են առաջանալ նրա տարածքային իշխանության շրջանակների և մշտականության վերաբերյալ: Համապատասխանաբար՝ կոմիտեն չի համարում, որ այս գործը հայտնվում է *Էլմի* գործում առկա բացառիկ հանգամանքների շրջանակներում, և ընդունում է այն տեսակետը, որ նման միավորների գործողությունները, ինչպես և այժմ Սոմալիի դեպքում, սովորաբար դուրս են կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակից:

ԳՌԲ.-ի և *Յ.Ս.Յ.Լ.-ի* (*H.M.H.L.*) գործերին կրկին անդրադարձ է կատարվել «*Ս. Ս.-ն ընդդեմ Նիդերլանդների*» (*S.S. v Netherlands, CAT 191/01*) գործի շրջանակներում²³:

²¹ Տե՛ս նաև Բուլեքբաա, վերը, ծնթ. 10, էջ 27-8:

²² Ռադովան Կարաջիչը՝ 1991-1994 թթ. բոսնիական պատերազմի ընթացքում բոսնիացի սերբերի առաջնորդը, որպես «պաշտոնատար անձ» է ընդունվել Սիացյալ Նահանգներում «*Կադիչն ընդդեմ Կարաջիչի*» (*Kadic v Karadzic* 70 F. 3d 232 (2nd Cir, 1995)) գործով (*Alien Torts Claims Act* 1789) խոշտանգման մասին հայցի շրջանակներում:

²³ Պարբ. 4.6:

[9.18] 1-ին հոդվածի սահմանումը բացառում է «իրավական պատժամիջոցներից բխող, դրանց հատուկ կամ բնորոշ ցավը կամ տառապանքը»: Բուլեքսբաան մատնանշում է, որ այս հավելյալ կետում կոնվենցիան մշակողները միտումնավոր բաց են թողել միջազգային չափանիշներին համապատասխանության մասին հղումները²⁴: Ուստի «իրավական պատժամիջոցները» կարող են խոշտանգում չհամարվել, սակայն դեռևս ԽԴԿ-ով կարող են դասակարգվել որպես դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ²⁵: Այդուհանդերձ, անհավանական է թվում, որ ԽԴԿ կոմիտեն այս հավելվածն այնպես մեկնաբաներ, որ պետությունները հնարավորություն ստանային խուսափելու «խոշտանգող» պիտակից՝ սոսկ ընդունելով արատավոր օրենքներ: «Իրավական» հասկացությունը հարկ է մեկնաբանել այնպես, որ այն հնարավորություն տա ԽԴԿ-ով և համապատասխան միջազգային այլ իրավունքով թույլատրվող պատժամիջոցներ²⁶: Օրինակ՝ բավական ծանր հանցագործությունների համար բանտարկությունը բխում է «իրավական» հասկացության նման սահմանումից, այնպես որ կլաուսուրոֆոբիայով (վախ փակ տարածքների հանդեպ) տառապող մարդուն այդ բանտարկությամբ պատճառված ցավը և տառապանքը կբացառվեր սահմանումից: Այնուամենայնիվ, հավելվածը չպետք է ազատի բանտարկությունը որպես «խոշտանգում» դասակարգվելու անհրաժեշտությունից, եթե նման բանտարկության պայմանները չափազանց խիստ են:

[9.19] Խոշտանգման համընդհանուր սահմանման վերջին տարբերակը բերված է 1998 թ. Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրության (Rome Statute of the International Criminal Court) 7-րդ հոդվածի 2-րդ կետի (ե) ենթակետում [ՄՔԴ-ի կանոնադրություն]:

7-րդ ՀՈԴՎԱԾԻ 2-րդ ԿԵՏԻ (Ե) ԵՆԹԱԿԵՏ և ՄՔԴ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

7-րդ ՀՈԴՎԱԾԻ 2-րդ կետի (Ե) ենթակետ

«Խոշտանգում» նշանակում է միտումնավոր մարմնական կամ հոգեկան սաստիկ ցավ կամ տառապանք պատճառել կալանքի կամ հսկողության տակ գտնվող անձին կամ մեղադրյալին, այն բացառությամբ, որ խոշտանգումը չի ներառում իրավական պատժամիջոցներից բխող, դրանց հատուկ կամ բնորոշ ցավ կամ տառապանք:

Խոշտանգման սահմանումն ակնհայտորեն ավելի լայն է Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունում, քան ԽԴԿ-ում: ՄՔԴ-ի կանոնադրության սահմանման մեջ որևէ կերպ չի մեջբերվում «նպատակը» կամ «պաշտոնատար անձի մասնակցությունը»: Այնուամենայնիվ, վերոնշյալ բացթողման առնչությամբ հարկ է հիշել, որ ՄՔԴ-ի կանոնադրությունը վերագրում է ավելի շուտ անձնական, քան պետական պատասխանատվություն:

[9.20] ՄԻԿ-ը 7-րդ հոդվածի շրջանակներում «խոշտանգումը» հստակ չի սահմանել: Իրականում մառորշել էր չտարբերակել 7-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի կամ պատժի երեք աստիճանները:

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Դաշնագիրը չի ներառում 7-րդ հոդվածում ընդգրկված հասկացություններից ոչ մեկի սահմանումը, կոմիտեն նույնպես անհրաժեշտ չի համարում կազմել արգելված գործողությունների ցանկը կամ հստակ տարբերություններ սահմանել վերաբերմունքի կամ պատժի տարբեր տեսակների միջև:

Այսպիսով, տարբերությունները կախված են ցուցաբերված վերաբերմունքի բնույթից, նպատակից և խստությունից: Ելնելով այս մեկնաբանությունից՝ ՄԻԿ-ը հաճախ չի կարողացել մատնանշել, թե 7-րդ

²⁴ Բուլեքսբաա, վերը, ծմթ. 10, էջ 29-35:

²⁵ A. Nai'm, Towards a Cross-Cultural Approach to Defining International Standards of Human Rights. The Meaning of "Cruel Inhuman or Degrading Treatment", in A. Nai'm (ed), *Human Rights in Cross-Cultural Perspectives: a Quest for Consensus* (University of Pennsylvania Press, Philadelphia, Penn., 1992), 29-32:

²⁶ Համեմատել ՄԻԿ-ի՝ «իրավական» հասկացության մեկնաբանությունները [11.59-11.60] և [16.08-16.11] պարբերություններում:

հողվածի որ կետն է խախտվել, քանի որ խախտումները կարող են որակվել պարզապես որպես «7-րդ հողվածի խախտումներ»։ Սրան կարելի է հակադրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հողվածի համարժեք դրույթի մեկնաբանության մասով։ Դատարանը սովորաբար մատնանշում է, թե ինչ տեսակի «վերաբերմունք է տեղի ունեցել»²⁷։ Մյուս կողմից՝ ՄԻԿ-ն ի վիճակի է եղել մշակելու արգելված իրողությունների շրջանակը՝ չսահմանելով տվյալ եզրույթները։

«7-րդ հողված»՝ վերաբերմունք. դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ

[9.21] Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը հետևյալ մեկնաբանություններն է արել 7-րդ հողվածով արգելված գործողությունների սահմանման վերաբերյալ («7-րդ հողվածի վերաբերմունք»)։

¶ 2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հողվածի դրույթների նպատակն է պաշտպանել անձի թե՛ արժանապատվությունը, թե՛ մարմնական ու հոգեկան անձեռնմխելիությունը։ Մասնակից պետության պարտականությունն է օրենսդրական և անհրաժեշտ այլ միջոցներով պաշտպանել յուրաքանչյուրին 7-րդ հողվածով արգելված գործողություններից, անկախ այն հանգամանքից՝ դրանք հասցվել են պաշտոնյայի դերում, պաշտոնյայի դերից դուրս կամ մասնավոր դերում հանդես եկող անձա՞նց կողմից, թե՞ ոչ։ 7-րդ հողվածում բերված արգելքը լրացվում է դաշնագրի 10-րդ հողվածի 1-ին կետում բերված դրական պահանջներով, որոնք ամրագրում են, որ «ազատությունից զրկված բոլոր մարդկանց հարկ է վերաբերվել մարդ էակին հատուկ արժանապատվությունը հարգող մարդասիրությամբ»։

¶ 5. 7-րդ հողվածում բերված արգելքը վերաբերում է ոչ միայն տուժողին մարմնական ցավ, այլև հոգեկան տառապանք պատճառող գործողություններին։

[9.22] *ԽԴԿ, 16-րդ ՀՈԴՎԱԾ*

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավասության տակ գտնվող ցանկացած տարածքում պետք է կանխի դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի գործողությունները՝ 1-ին հողվածի իմաստով խոշտանգում չհամարվող, որտեղ նման գործողությունները կատարվել են պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող անձի դրդումով կամ համաձայնությամբ կամ չմիջամտությամբ։ Մասնավորապես՝ 10-13-րդ հողվածներում բերված պարտավորությունները պետք է կիրառվեն իրար փոխարեն, ասել է թե՛ ինչպես խոշտանգման, այնպես էլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի այլ ձևերի պարագայում։

[9.23] Հետևաբար, «դաժան», «անմարդկային» կամ «նվաստացնող» վերաբերմունքի ոչ մի հստակ սահմանում չի տրվել ՔՔԻՄԴ-ում կամ ԽԴԿ-ում։ Նման վերաբերմունքի փաստը որոշելիս խստության, մտադրության և նպատակի մասով պահանջները ենթադրաբար ավելի մեղմ են կիրառվում։ Օրինակ՝ հնարավոր է, որ նման վերաբերմունքը ցուցաբերվի անփութորեն։

**[9.24] *«ՌՈՒՍԱՍ ԳԱՐՍԻԱՆ ԸՆԴԴԵՍ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ»
(ROJAS GARCIA v COLOMBIA, 687/96)***

Մանրամասն փաստերը բերված են ստորև.

¶ 2.1. 1993 թ. հունվարի 5-ին՝ գիշերվա ժամը 2-ին, քաղաքացիական հագուստով, գլխավոր դատախազությունը ներկայացնող (*Cuerpo Tecnico de Investigacion de la Fiscalia*) զինված տղամարդկանց մի խումբ տանիքից ներխուժում է հեղինակի տուն։ Խումբը սենյակ առ սենյակ խուզարկում է տարածքը՝ վախեցնելով և հայիոյելով հեղինակի ընտանիքի անդամներին, այդ թվում՝ փոքր երեխաներին։ Խուզարկության ընթացքում պաշտոնյաներից մեկը կրակ է արձակում հրազենից։ Եվս երկու հոգի տուն են մտնում առջևի դռնից, որոնցից մեկը, ունենալով ինչ-որ

²⁷ St u Harris *և ուրիշ*., վերը, ծնթ. 14, էջ 56-7։

տպած փաստաթուղթ, ստիպում է ընտանիքի միակ չափահաս տղամարդուն՝ Ալվարո Ռոխասին, ստորագրել այն՝ թույլ չտալով նրան կարողալ այն կամ իր մոտ պահել դրա պատճենը: Իսկ երբ Ալվարո Ռոխասը հարցնում է, թե կարիք կա՞ր գործել նման վայրագությամբ, պատասխանում են, որ այդ հարցով դիմի գլխավոր դատախազ Կարլոս Ֆեռնանդո Մենդոսային: Այդ պահին են միայն ընտանիքի անդամներին տեղեկացնում, որ տունը խուզարկվում է քաղաքապետ Բոչալենմա Սիրո Ալոնսո Կոլմենարեսի սպանության հետաքննության շրջանակներում:

Փաստերը վկայում են, որ ոստիկանությունը ներխուժել է սխալ տուն և այդ հասկանալուն պես դադարեցրել է խուզարկությունը: Այս ներխուժմամբ խախտվել է հեղինակի՝ 17-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի իրավունքը [16.28]: Մեծամասնությունը նաև համարեց, որ ներխուժման ընթացքում հեղինակի և նրա ընտանիքի հանդեպ ցուցաբերված վերաբերմունքով խախտվել է 7-րդ հոդվածը: Պարոնայք Անդոն և Շիրերը չհամաձայնեցին 7-րդ հոդվածի առնչությանը հետևյալ ձևակերպմամբ.

Ինչպես նշում է հեղինակը, օպերատիվ հետախուզական խումբն ակնհայտորեն սխալ տուն է մտել (թիվ 2-36-ի փոխարեն թիվ 2-44-ը), իսկ երբ գիտակցել են, որ այդ տանը բնակվում է տեղական դատախազության աշխատակից, խմբի մի քանի անդամներ ներողություն են խնդրել և հայտնել, որ թյուրիմացություն է եղել (կետ 9.6):

Մեր կարծիքով՝ օպերատիվ հետախուզական խումբը, ըստ էության, տան ներսից ակնկալում էր լուրջ դիմադրություն՝ նույնիսկ հրազենի օգտագործմամբ, քանի որ խմբի ենթադրությամբ քաղաքապետին սպանողը կամ սպանողներն այդտեղ էին թաքնվում: Սրանով են բացատրվում 2.1 կետում շարադրված փաստերը:

Մեր կարծիքով՝ օպերատիվ հետախուզական խումբը բարեխղճորեն է գործել մինչև այն պահը, երբ գիտակցել է, որ նշանակետը սխալ է: Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակի տուն ներխուժումը օրենքին չի հակասում: Մասնակից պետությունը նաև հաստատում է, որ տեղական քննչական ծառայության պետը նախաքննություն է սկսել հրազենային կրակոցի առնչությամբ և համարել այն պատահար, ոչ թե պարտավորությունների թերակատարում (պարբ. 8.3): Հաշվի առնելով այս հանգամանքները՝ մենք եզրահանգում ենք, որ օպերատիվ հետախուզական խումբը չի մտադրվել ահաբեկել հեղինակի ընտանիքին:

Սովորաբար 7-րդ հոդվածը պահանջում է կատարողի մտադրությունն իր գործողության հնարավոր հետևանքների մասով, իսկ նման մտադրության բացակայությունը բացառում կամ թեթևացնում է գործողության անօրինականությունը: Սա կիրառելի է ոստիկանական հետաքննությունների, ինչպես նաև տվյալ դեպքում: Հետևաբար, մեր կարծիքով, այս դեպքում 7-րդ հոդվածի խախտում չի եղել:

Վճիռը ցայտուն կերպով վեր է հանում մտադրության և 7-րդ հոդվածի խախտումների հետ կապված վիճահարույց հարցը: Անշուշտ, *Ռոխաս Գարսիայի* գործում ոստիկանությունը մտադիր էր իրականացնել վիճարկվող գործողությունները, բայց մտադիր չէր այդ գործողություններն իրականացնել փաստացի տուժողների նկատմամբ: ՄԻԿ-ը հազվադեպ է հանգամանակից քննության առել 7-րդ հոդվածով խախտողի մտադրությանը հարցը: Անշուշտ, խախտումներ եղել են մի շարք դեպքերում, երբ հանցագործը ոչ մի մտադրություն չի ունեցել վնասելու փաստացի տուժողին²⁸:

[9.25] Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանության 2-րդ կետում ՄԻԿ-ը նշել է, որ մասնակից պետությունները կրում են մասնավոր անձանց կողմից խոշտանգման, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքն արգելելու դրական պարտավորություն: Հետևաբար, ՄԻԿ-ն առանձնապես գիտակցում է մարմնի անձեռնմխելիության և արժանապատվության վրա մասնավոր» ոտնձգությունների դեմ պայքարելու կարևորությունը: *Գ. Ռ. Բ.-ի* գործի [9.13] հեղինակը գուցե ավելի լավ հնարավորություն կունենար խախտումը հաստատել *ԶԶԻՄԴ*-ի, քան *ԽԴԿ*-ի շրջանակներում:

[9.26] «ՎՈՒՈԼԱՆՆ ԸՆԴԴԵՍ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (VOULANNE v FINLAND, 265/87)

Տասն օր շարունակ կարգապահական նկատառումներով Վուլանը պահվել է փոքրիկ խցում՝ զինվորական կալանքի տակ: Նա պնդում էր, որ այս կալանավորմամբ, ի թիվս այլոց, խախտվել է 7-րդ հոդվածը: Նա հետևյալ կերպ է նկարագրում իր կալանքի պայմանները.

²⁸ Տե՛ս, օր.՝ *Quinteros v Uruguay* (107/81) գործը [9.45]:

¶ 2.6. ... Հեղինակը նշում է, որ իր պատիժն ի կատար է ածվել երկու մասով, որի ընթացքում նա փակվել է փոքր պատուհան ունեցող 2x3 մետր չափսի խցում՝ կահավորված միայն ճամբարային մահճակալով, փոքր սեղանով, աթոռով և ապահովված թույլ էլեկտրական լույսով: Նրան թույլ էին տալիս խցից դուրս գալ միայն ուտելու, զուգարան գնալու և օրական կես ժամով մաքուր օդ շնչելու համար: Արգելված էր խոսել այլ կալանավորների հետ և աղմկել իր խցում: Նա պնդում է, որ մեկուսացումը գրեթե լիակատար էր: Նա նաև նշում է, որ իր հյուծումը մեղմացնելու համար անձնական գրառումներ է արել իրեն մտերիմ մարդկանց հետ իր հարաբերությունների մասին, և դրանք մի գիշեր իրենից խլել է բանտապահներից մեկը ու կարդացել մյուսների համար: Միայն այն բանից հետո, երբ նա հանդիպում է հայցել տարբեր պաշտոնյաների հետ, իր գրառումները վերադարձվել են:

ՄԻԿ-ը 7-րդ հոդվածի մասով որոշում է կայացրել մասնակից պետության օգտին, իսկ 7-րդ հոդվածի բովանդակության վերաբերյալ նշել հետևյալը.

¶ 9.2. Կոմիտեն հիշեցնում է, որ 7-րդ հոդվածով արգելվում են խոշտանգումը և դաժան կամ անմարդկային կամ նվաստացնող այլ վերաբերմունքը: Կոմիտեն նշում է, որ 7-րդ հոդվածից դուրս մնացող անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի փաստի գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես օրինակ՝ տվյալ վերաբերմունքի տևողությունից և ձևից, դրա մարմնական և հոգևոր հետևանքներից, ինչպես նաև տուժողի սեռից, տարիքից և առողջական վիճակից: Սույն դիմումի հանգամանակից ուսումնասիրությունը չի բացահայտել հեղինակի պնդումները հիմնավորող ոչ մի հանգամանք, որ նա հանդիսանում է 7-րդ հոդվածով ամրագրված իրավունքների խախտման գոհ: Չկար պաշտոնատար անձի դրդումով Անթի Վուլանին պատճառած սաստիկ մարմնական կամ հոգեկան ցավ, չի պարզվել նաև, թե հեղինակին մեկուսի բանտարկության ենթարկելը, հաշվի առնելով դրա խստությունը, տևողությունը և նպատակը, որևէ բացասական մարմնական կամ հոգեկան հետևանքներ ունեցե՞լ է նրա վրա, թե՞ ոչ: Ավելին՝ չի հաստատվել, որ պարոն Վուլանին ամարգել են կամ նրա արժանապատվությունը նվաստացրել են, բացի այն ընկճածությունից, որը հետևանք է իր հանդեպ կիրառված կարգապահական միջոցի: Այս կապակցությամբ կոմիտեն արտահայտում է այն տեսակետը, որ պատիժը նվաստացնող համարվելու համար անարգանքը և ստորացումը պետք է գերազանցեն որոշակի մակարդակը և ամեն դեպքում, բացի բուն ազատությունից զրկման փաստից, պետք է ընդգրկեն այլ տարրեր: Ավելին՝ կոմիտեն կարծում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը չեն հիմնավորում այն պնդումը, որ պարոն Վուլանին նկատմամբ կալանքի ընթացքում դրսևորվել է մարդուն հատուկ արժանապատվությանն անհարիր ոչ մարդասիրական և անհարգալից վերաբերմունք՝ դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող իմաստով:

[9.27] Վուլանի (*Vuolanne*) գործը հաստատում է, որ 7-րդ հոդվածում շոշափվող վերաբերմունքի եղելության փաստը մասամբ որոշվում է սուբյեկտիվ գնահատականով: Այնպիսի գործոնները, ինչպիսիք են տուժողի տարիքը կամ հոգեկան առողջությունը, կարող են սաստկացնել որոշակի վերաբերմունքի ազդեցությունը՝ դրանով իսկ պարտադրելով, որ այդ վերաբերմունքը դիտարկվի 7-րդ հոդվածի ներքո:

[9.28] Հարկ է նշել ՄԻԿ-ի այն հայտարարությունը, որ «նվաստացնող վերաբերմունք» հասկացությունը պետք է շատ ավելին ենթադրի, քան պարզապես «ազատագրվումը»: Այնուամենայնիվ, այս հայտարարությունը կարծես հեռու գնացող հավակնություններ ունի: Արդյոք կլաուստրոֆոբիայից խիստ տառապող մարդուն սոսկ կալանավորելու փաստը, նրա կամքը կոտրելուց բացի, առանց որևէ այլ պատճառի կարո՞ղ է խախտել 7-րդ հոդվածը²⁹:

[9.29] 7-րդ հոդվածով վիճարկվող վերաբերմունքի սահմանման հարցում հետագա պարզաբանումները կարելի է ստանալ հաջորդիվ բերված նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից:

ՀՈԴՎԱԾ 7-Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

[9.30] Հոդվածը 7-ը բովանդակում է լիովին հստակ հասկացություններ և թույլ չի տալիս բացառություններ:

²⁹ Տե՛ս նաև *Jensen v Australia* (762/97) [9.48] և *C v Australia* (900/99) [9.49] գործերը:

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. 7-րդ հոդվածի շարադրանքը որևէ սահմանափակում չի թույլատրում: Կոմիտեն նաև վերահաստատում է, որ նույնիսկ արտակարգ դրության պայմաններում, ինչպիսիք նկարագրված են դաշնագրի 4-րդ հոդվածում, 7-րդ հոդվածի դրույթներից որևէ շեղում թույլ չի տալիս, և այդ հոդվածի դրույթները պետք է մնան ուժի մեջ: Կոմիտեն նմանապես կարծում է, որ չի կարելի վկայակոչել 7-րդ հոդվածի խախտման որևէ արդարացում կամ մեղմացուցիչ համաձայն խախտման ցանկացած պատճառի դեպքում, ներառյալ վերադասի կամ պետական իշխանության տված հրամանի վրա հիմնվածները:

Սա՝ «խոշտանգման» առումով, վերահաստատվում է ԽԴԿ-ի 2-րդ հոդվածում:

ԽԴԿ, ՀՈՂՎԱԾ 2

2. Ոչ մի բացառիկ հանգամանք, ինչ էլ այն լինի՝ պատերազմական դրություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում:

3. Վերադաս պետի կամ պետական իշխանության հրամանը չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում:

[9.31] Հետևաբար այնպիսի հասկացություններ, ինչպիսին համաչափությունն է, կիրառելի չեն, երբ դիտարկվում է ԽԴԿ-ի 7-րդ հոդվածի խախտումների առկայության հարցը: Օրինակ՝ օրենքը թույլ է տալիս ահաբեկչության համար կասկածվողներին հարցաքննելիս կիրառել «չափավոր ֆիզիկական կամ հոգեբանական ճնշում»: 1997 թ. Իսրայելը հայտարարեց, որ այդ մեթոդների կիրառումը թույլ տվեց խափանել ծրագրված տասնինը ահաբեկչական հարձակում՝ փրկելով անթիվ կյանքեր³⁰: Այդուհանդերձ, ԽԴԿ կոմիտեն 1997 թ. Իսրայելի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում հարցաքննության այդ մեթոդների որոշ մասը որակեց որպես «խոշտանգում», ինչպես նաև «անմարդկային և նվաստացնող վերաբերմունք»: Համարվեց, որ այդ մեթոդները խախտում են ԽԴԿ-ն, չնայած դրանք նախատեսված էին բնակչությանն առավել մահաբեր ահաբեկչական սպառնալիքից պաշտպանելու համար: ԽԴԿ կոմիտեն նշեց³¹:

¶ 134. Կոմիտեն հասկանում է, թե ինչ սարսափելի երկընտրանքի առջև է կանգնած Իսրայելը՝ իր անվտանգության դեմ ուղղված ահաբեկչական սպառնալիքի պատճառով, սակայն որպես կոնվենցիայի մասնակից պետություն՝ Իսրայելը չի կարող այս կոմիտեին բացառիկ հանգամանքներ ներկայացնել՝ որպես կոնվենցիայի 1-ին հոդվածով արգելված գործողությունների արդարացում: Սա հստակորեն արտահայտված է կոնվենցիայի 2-րդ հոդվածում³²:

[9.32] Այնուամենայնիվ, համաչափությունը ՔՔԻՄԴ-ի 7-րդ հոդվածի խախտումները որոշելիս որոշ դեր խաղում է: Օրինակ՝ վերջույթի անդամահատումը շատ հանգամանքներում համարվում է 7-րդ հոդվածի խախտում: Սակայն վերջույթի անդամահատումը՝ *որպես այդպիսին* (per se), չի համարվում 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունք: Անդամահատումը չի խախտում 7-րդ հոդվածը, եթե արվում է անձի կյանքը փրկելու համար (օր.՝ փտախտի տարածումը դադարեցնելու նպատակով): Հետևաբար, որոշակի գործողություն կատարելու որոշման «հիմնավորվածությունը», նույնիսկ եթե այդ գործողությունը նշանակալի ցավ, տառապանք կամ վիրավորանք է պատճառում, կարող է դեր խաղալ, երբ որոշվում է՝

³⁰ Տե՛ս Իսրայելի երկրորդ պարբերական զեկույցը Խոշտանգումների դեմ դաշնագրի ներքո, CAT/C/33/Add. 2/ Rev. 1, հատկապես պարբ. 2-3-ը և 24-ը:

³¹ ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/18/CRP1/Add. 4: Կիրառված մեթոդները դասակարգելիս ԽԴԿ կոմիտեն հենվել է հասարակական կազմակերպությունների զեկույցների վրա, որոնցում ներկայացված մեթոդներն էին ցավագին պայմաններում պահելը, գլուխը պարկի մեջ պահելը, երկար ժամանակ բարձր երաժշտություն միացնելը, երկար ժամանակ քնից զրկելը, սպառնալիքները (ներառյալ մահվան սպառնալիքները), կոպիտ թափահարելը և «պաղեցնելու նպատակով սառը օդի» օգտագործումը: Համեմատեք «Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի» (Ireland v UK) գործի հետ, վերը, ծնթ. 5: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.93, պարբ. 19:

³² Իսրայելի գերագույն դատարանը՝ որպես արդարադատության բարձր դատարան [High Court of Justice], իր միստում որոշեց, որ ահաբեկչության համար կասկածվողների նկատմամբ մնաց վերաբերմունքը հակասահմանադրական է՝ «Իսրայելի խոշտանգումների դեմ հանրային կոմիտեն ընդդեմ Իսրայելի կառավարության և այլոց» (The Public Committee Against Torture in Israel v The Government of Israel et al, HCJ 5100/94) գործում, 1999 թ. սեպտեմբերի 6-ի վճռով:

տվյալ վերաբերմունքը համարվում է 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունք, թե՞ ոչ³³: Եթե պարզվում է, որ տվյալ գործողությունը 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունք է, ապա խախտման արձանագրումը կանխելու համար չի կարող որևէ արդարացում բերվել: Հետևաբար, համաչափությունը տեղին է, երբ քննվում է գործողության համապատասխան *դասակարգումը*՝ որպես 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունք, ոչ թե երբ քննվում է 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունք դրսևորելու որևէ ենթադրվող *արդարացում*: Նման դատողությունների օրինակ կարելի է գտնել «*Կաբալը և Պասինի Բերտրանը ընդդեմ Ավստրալիայի*» (*Cabal and Pasini Bertran v Australia, 1020/02*) գործում:

¶ 8.2. Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ մասնակից պետությունը խախտել է 7-րդ հոդվածը և 10-րդ հոդվածի 1-ին կետը բանտային պայմանների և վերաբերմունքի պատճառով, որին ենթարկվել են հեղինակները, կոմիտեն նշում է, որ հեղինակներին 12-օդականոց շրթաներով պահելը, որոնք բանտից և հետ բանտ տեղափոխելիս փոխարինվել են 17-օդականոցներով, փաստացիորեն չի ժխտվում մասնակից պետության կողմից: Այնուամենայնիվ, մասնակից պետությունը նման վերաբերմունքի համար հիմնավորում է ներկայացրել՝ բացատրելով, որ կատարվել է հեղինակների փախուստի ռիսկի գնահատում, որովհետև նրանք անցյալում խուսափել են ձերբակալությունից՝ օգտագործելով կեղծ ծանփորդական և անձը հաստատող փաստաթղթեր, զգալի ֆինանսական միջոցներից օգտվելու հնարավորություն են ունեցել, դրան են տվել ուրիշ բանտարկյալների, և բանտի հետախուզական համակարգը տվյալներ է հայտնել այն մասին, որ այլ բանտարկյալների կողմից առաջարկներ են եղել վճարի դիմաց օգնել նրանց փախուստին: Բացի այդ, մասնակից պետությունը պարզաբանել է, որ հեղինակները չեն առանձնացվել խուզարկության նպատակով [ներառյալ ամբողջությամբ մերկացնելով խուզարկությունը և մարմնի խոռոչների ստուգումը], նաև խուզարկություններն արվել են այնպես, որ նվազագույնի հասցնեն նրանց պատճառված անհարմարությունը և իրականացվել են միայն բանտի ապահովությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով: Կոմիտեի գնահատականի համաձայն՝ այդ տեսանկյունից 7-րդ հոդվածի կամ 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել³⁴:

[9.33] «*Մուկոնգն ընդդեմ Կամերունի*» (*Mukong v Cameroon, 458/91*) գործում մասնակից պետությունը փորձում էր բանտային խայտառակ պայմաններն արդարացնել տնտեսական և բյուջետային հիմնախնդիրներով, որոնք առաջացել էին Կամերունի ոչ բավարար զարգացածության պատճառով. չնայած դրան՝ ՄԻԿ-ը որոշեց, որ բանտարկության այն պայմանները, որում պահվում էր Մուկոնգը, խախտում են 7-րդ հոդվածը³⁵:

ՀՈԴՎԱԾԻ 7-Ի ԵՎ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԴԵՍ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՈՐՈՇԱԿԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԸ

[9.34] Լատինական Ամերիկայի երկրների դեմ վաղ շրջանի բազմաթիվ գործերում ՄԻԿ-ը որոշել է, որ հետևյալ գործողությունների տարբեր համադրությունները խոշտանգում են³⁶. պարբերական ծեծը, էլեկտրաշոկը, այրվածքներ հասցնելը, երկար ժամանակ կախված պահելը ձեռքերին կամ ոտքերին ամրացված շղթաներից, կրկնվող ընկղմումները արյան, մեզի, փսխուքի և կղանքի խառնուրդի («սուբմարինո»)* մեջ, շատ երկար ժամանակ կանգնած թողնելը, բեմադրված մահապատիժները և անդամահատումները³⁷: «*Մուտեբան ընդդեմ Չաիրի*» (*Muteba v Zaire, 124/82*), «*Միանգո Մուլոն ընդդեմ Չաիրի*»

³³ Այդ առումով, նկատի ունեցեք, որ թեև «պատճառը» [purpose] «խոշտանգում» հասկացության սահմանման տարր է [9.09], 7-րդ հոդվածում նկարագրված այլ վերաբերմունքի սահմանումների տարր չէ: Այդ մասին ՄԻԿ-ը նշում է իր թիվ 20 Ընդհանուր մեկնաբանության պարբ. 4-ում [9.20]: Տե՛ս նաև [9.23]:

³⁴ Պարոն Սոլարի Յրիգոյենը [Solarí-Yrigoyen] չհամաձայնեց այս կետին և գտավ, որ առկա է թե՛ 7-րդ հոդվածի, թե՛ 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

³⁵ Տե՛ս [9.93]: Իսկապես, տնտեսական հանգամանքները սովորաբար չեն արդարացնում դաշնագրի նորմերից շեղումները. տե՛ս [1.101]:

³⁶ Տե՛ս նաև վերաբերմունքը՝ նկարագրված «*Դոմուկովսկին և այլք ընդդեմ Վրաստանի*» (*Domukovsky et al v Georgia, 623-624, 626, 627/95*) գործում, այստեղ՝ պարբ. 18.6, որը նկարագրվել էր որպես երկուսն էլ՝ «խոշտանգում և անմարդկային վերաբերմունք» (դաժան ծեծ և ֆիզիկական ու բարոյական ճնշումներ՝ ներառյալ ուղեղի ցնցման պատճառով, ոսկորների կոտրվածքներ, այրվածքների և վերքերի պատճառով, սպառնալիքներ ընտանիքի հասցեին):

* submarino, իսպ.՝ սուզանավ (ժան. թարգմ.):

³⁷ Նովակ, վերը, ծմբ. 3՝ մեջբերելով «*Գրիլ Մոտան ընդդեմ Ուրուգվայի*» (*Grille Motta v Uruguay, 11/77*), «*Լուպես Բուրգոսն ընդդեմ Ուրուգվայի*» (*Lopez Burgos v Uruguay, 52/79*), «*Սենդիկն ընդդեմ Ուրուգվայի*» (*Sendic v Uruguay, 63/79*), «*Անխել Էստրելլան ընդդեմ Ուրուգվայի*» (*Angel Estrella v Uruguay, 74/80*), «*Արզուազո Գիլբոան ընդդեմ Ուրուգվայի*» (*Arzuago Gilboa v Uruguay, 147/83*), «*Կարիբոնին ընդդեմ Ուրուգվայի*» (*Cariboni v Uruguay, 159/83*), «*Բերտերեչե Ակոստան ընդդեմ Ուրուգվայի*» (*Berterreche Acosta v Uruguay, 62/83*), «*Էռերա Ռուբիոն ընդդեմ Կոլումբիայի*» (*Herrera Rubio v Colombia, 161/83*), «*Լաֆուենտե Պերարիետան ընդդեմ Բոլիվիայի*» (*Lafuente Perarrieta v Bolivia, 176/84*) գործերը: Տե՛ս

(*Miango Muiyo v Zaire, 194/85*) և «Քանանան ընդդեմ Ջաիթի» (*Kanana v Zaire, 366/89*) գործերում ՄԻԿ-ը որոշեց, որ հետևյալ գործողությունների տարատեսակ համակցությունները խոշտանգում են. ծեծը, սեռական օրգանների էլեկտրաշոկը, կեղծ մահապատիժները, սննդից և ջրից զրկելն ու բթամատները սեղմելը³⁸:

[9.35] «*Լինտոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Linton v Jamaica, 255/87*) գործով հեղինակը ծեծի էր ենթարկվել մինչև գիտակցության կորուստը, նաև ենթարկվել էր կեղծ մահապատիժ, և նրան չէր տրամադրվել համապատասխան բուժօգնություն: «*Բեյլին ընդդեմ Ճամայկայի*» (*Bailey v Jamaica, 334/1988*) գործում հեղինակը, որը բանտարկյալ էր, պարբերաբար ծեծի է ենթարկվել դազանակներով, երկաթե ծողերով և մահակներով, և գլխի ու ձեռքերի ստացած վնասվածքների համար բժշկական որևէ խնամք չի ստացել: «*Հիլտոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Hylton v Jamaica, 407/90*) գործով հեղինակը՝ կրկին բանտարկյալ, դաժանաբար ծեծի է ենթարկվել և պարբերաբար մահվան սպառնալիքներ ստացել բանտապահների կողմից: «*Դեյդրիկն ընդդեմ Ճամայկայի*» (*Deidrick v Jamaica, 619/95*) գործով հեղինակին իր բանտախցում փակված են պահել օրը քսաներեք ժամ՝ առանց ներքնակի կամ անկողնու, կենտրոնացված սանհանգույցի, բնական լույսի, ժամանցի հնարավորության, պատշաճ սննդի և բավարար բժշկական խնամքի³⁹: Բոլոր գործերում ՄԻԿ-ը որոշեց, որ վերաբերմունքը «դաժան և անմարդկային» է եղել:

[9.36] «*Ֆրենսիսն ընդդեմ Ճամայկայի*» (*Francis v Jamaica, 320/88*) գործում ՄԻԿ-ը որոշեց, որ հեղինակը «հարձակման է ենթարկվել զինվորների և պահնորդների կողմից, որոնք նրան ծեծի են ենթարկել, սպիռնով հրել, գլխին մեզով լի դույլ շուռ տվել, նրա սնունդը և ջուրը թափել հատակին, իսկ ներքնակը խցից դուրս գցել»⁴⁰: «*Թոմասն ընդդեմ Ճամայկայի*» (*Thomas v Jamaica, 321/1988*) գործի վերաբերյալ ՄԻԿ-ը որոշեց, որ հեղինակին ծեծի են ենթարկել հրացանի խզակոթով և պատճառված վնասվածքների համար բուժօգնություն չեն տրամադրել⁴¹: «*Յունգն ընդդեմ Ճամայկայի*» (*Young v Jamaica, 615/95*) գործով հեղինակին պահել են փոքր խցում, քիչ թվով այցելուներ են թույլատրել, նա ենթարկվել էր բանտապահների հարձակումներին, գողացել են նրա անձնական իրերը, իսկ անկողինը՝ պարբերաբար քրջել⁴²: «*Պոլայ Կամպոսն ընդդեմ Պերուի*» (*Polay Campos v Peru, 577/94*) գործով հեղինակին լրատվամիջոցներին են ներկայացրել վանդակի մեջ⁴³: Բոլոր չորս գործերում վիճարկվող վերաբերմունքը համարվեց «նվաստացնող վերաբերմունք՝ 7-րդ հոդվածի իմաստով»:

[9.37] «*Ջեմայլը և այլք ընդդեմ Յարավալապիայի*» (*Dzemajl et al v Yugoslavia, CAT 161/00*) [9.12] գործի կապակցությամբ ԽԴ կոմիտեի մեծամասնությունը որոշեց, որ տների դիտավորյալ հրկիզումը և ավերումը, հատկապես երբ կատարվում է ռասայական դրդապատճառներով, «դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ» է, որը հակասում է ԽԴԿ-ի 16-րդ հոդվածին⁴⁴: Փոքրամասնությունը, որը ներկայացնում էին պարոնայք Մարինյոն և Գոնսալես Պոբլետեն, կարծիք հայտնեց, որ այդ գործողությունները խոշտանգում են:

Մենք հրապարակում ենք այս կարծիքը՝ շեշտելու համար, որ մեր դատողությամբ՝ ապօրինի պատահարները, որոնց համար պատասխանատու է Յարավալապիայի պետությունը, «խոշտանգումներ» են՝ կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետի իմաստով, և ոչ պարզապես «դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք», ինչպես սահմանված է 16-րդ հոդվածով: Պետական իշխանությունների չարձագանքելը անձանց կողմից իրականացված բռնի վտարումներին, ստիպողական տեղահանություններին և տների ու սեփականության ոչնչացմանը հավասարազոր են հանցավոր համաձայնության, ինչը, մեր կարծիքով, խախտում է 1-ին հոդվածի 1-ին կետը, մասնավորապես այն ընթերցվում է կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի հետ համակցված:

նաև P.R. Ghandhi, "The Human Rights Committee and Articles 7 and 10(1) of the International Covenant on Civil and Political Rights, 1966" (1990) 13 *Dalhousie Law Journal* 758, 762-6:

³⁸ Նովակ, վերը, ծմբ. 3, 161:

³⁹ Պարբ. 9.3:

⁴⁰ Պարբ. 12.4:

⁴¹ Պարբ. 9.2:

⁴² Պարբ. 3.6, 5.2:

⁴³ Պարբ. 8.5:

⁴⁴ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումները Իսրայելի վերաբերյալ (2003), CCPR/CO/78/ISR, պարբ. 16, որտեղ «գրավյալ տարածքներում» ահաբեկչության համար կասկածվողների ընտանիքների սեփականության ոչնչացումը բնութագրվում է որպես 7-րդ հոդվածի խախտում:

Մենք կարծում ենք, որ իրականում զոհերին պատճառված տառապանքը բավականաչափ ծանր է, որպեսզի համարվի «խոշտանգում», որովհետև.

(ա) Բոզովա Գլավիցա ավանի բնակիչները ստիպված էին շտապ լքել իրենց տները՝ նկատի ունենալով ծանր անձնական և նյութական վնասի ռիսկը.

(բ) Նրանց ավանը և տներն ամբողջությամբ ոչնչացվեցին.

(գ) Փաստորեն ստիպողական տեղահանությունը ոչ միայն կանխեց նրանց վերադարձն իրենց նախնական բնակավայրը, այլև այդ խմբից շատերը ստիպված եղան ապրել աղքատության մեջ, առանց աշխատանքի կամ բնակության մշտական վայրի.

(դ) Հարավսլավիայի՝ այդ կերպ տեղահանված և վնասներ կրած քաղաքացիները տվյալ դեպքերից յոթ տարի անց որևէ փոխհատուցում դեռևս չեն ստացել, թեև դիմել են տեղական իշխանություններին.

(ե) Բռնի կերպով տեղահանված բոլոր բնակիչները պատկանում են ռոմանի [Romani] էթնիկական խմբին (զնչուներ, *ժամ. քարզմ.*), որոնք հայտնի են որպես առանձնապես խոցելի եվրոպայի շատ հատվածներում: Ասվածը նկատի ունենալով՝ պետությունները պետք է նրանց ավելի մեծ պաշտպանություն ցույց տան.

Վերը նշվածը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ առկա է «ծանր տառապանք»՝ բնույթով անկասկած «բարոյական», սակայն անխուսափելիորեն նաև «ֆիզիկական», եթե նույնիսկ տուժողները չեն ենթարկվել ուղղակի ֆիզիկական բռնության:

Այդպիսով, մենք համարում ենք, որ դիտարկվող դեպքերը հարկ է որակել որպես «խոշտանգում»:

Եվ այսպես, վիճարկվող գործողությունների ռասիստական դրդապատճառները, ինչպես նաև տուժողների խոցելիությունը թելադրեցին այնպես ծանրացնել այդ գործողությունների ապօրինի բնույթը, որ դրանք ներառվեցին ԽԴԿ շրջանակներում: Անշուշտ, որոշումը ենթադրում է, որ հրկիզման և ոչնչացման ոչ բոլոր գործողություններն են համարվում ԽԴԿ-ի առարկա:

[9.38] *Ջենայլի* գործը նաև ցույց տվեց, որ պետություններն՝ իրենց անգործությամբ կամ որոշակի գործողություններ կատարելով, կարող են ԽԴԿ-ի, ինչպես նաև 7-րդ հոդվածի խախտումներ թույլ տալ [9.08]:

[9.39] 7-րդ հոդվածին վերաբերող բազմաթիվ գործերում ՄԻԿ-ը հայտնաբերել է այդ հոդվածի խախտումներ՝ առանց հստակեցնելու, թե դրա որ ճյուղն է խախտվել: Օրինակ՝ «*Ուայթն ընդդեմ Մադագասկարի*» (*White v Madagascar, 115/82*) գործի դեպքում տասն ամիս առանց հաղորդակցության որևէ հնարավորության բանտարկությունը, ներառյալ՝ երեքուկես ամիս մենախցում՝ մահճակալի զսպանակին շղթայված, նվազագույն հագուստով և սննդի խստագույն չափաբաժիններով, որին հետևել է հաղորդակցության հնարավորությունից զուրկ մեկամսյա բանտարկությունը մեղ խցում և այնուհետև ևս տասնութ ամսվա բանտարկությունը մեկ այլ անձի հետ 3x3 չափսի խցում՝ առանց արտաքին աշխարհի հետ կապ ունենալու հնարավորության, խախտում է 7-րդ հոդվածը⁴⁵: «*Կանյոն Գարսիան ընդդեմ Էկվադորի*» (*Cargn Garcja v Ecuador, 319/1988*) գործով ՄԻԿ-ը եզրակացրեց, որ քթանցքները աղով շփելը և մի գիշեր աթոռին ձեռնաշթաներով կապված, «առանց նույնիսկ մի բաժակ ջուր տալու» պահելը 7-րդ հոդվածի խախտում է⁴⁶: «*Անրին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Henry v Trinidad and Tobago, 752/97*) գործում հեղինակը բանտի աշխատակիցների կողմից գլխին այնպիսի հարվածներ էր ստացել, որ պահանջվել է կար դնել⁴⁷. այդ արարքով խախտվել է 7-րդ հոդվածը⁴⁸: Ջինվորների կողմից «աչքերը կապելը և ջրանցքում սուզելը» խախտում է 7-րդ հոդվածը «*Վիսենտեն և այլք ընդդեմ Կոլումբիայի*» (*Vicente et al v Colombia, 612/95*) գործում⁴⁹: Կնոջ սեռական օրգանների խեղումը նույնպես հիշատակվել է որպես 7-րդ հոդվածի խախտում⁵⁰: Լեհաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում բանակում

⁴⁵ Պարբ. 15.2, 17 :

⁴⁶ Պարբ. 5.2 :

⁴⁷ Պարբ. 2.1:

⁴⁸ Պարբ. 7.1:

⁴⁹ Պարբ. 8.5:

⁵⁰ Եզրափակիչ դիտարկումներ Լեստոյի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106, պարբ. 12, Եզրափակիչ դիտարկումներ Սուդանի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ, CCPR/C/79/Add. 85, պարբ. 10, Եզրափա-

նորակոչիկների ծիսական վիրավորանքն ու ստորագումները նույնպես համարվել են 7-րդ հոդվածի խախտում⁵¹:

[9.40] Բավական ուսանելի է այնպիսի գործերի դիտարկումը, որոնց կապակցությամբ արձանագրվել են 10-րդ հոդվածի 1-ին կետի, ոչ թե 7-րդ հոդվածի խախտումներ: Այդ գործերում նկարագրվող վերաբերմունքը վատ է այնքան, որ կարող է համարվել 10-րդ հոդվածի խախտում, սակայն ոչ այնքան վատ, որ համարվի «7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունք»:

Ապացույցների առումով պահանջներ

[9.41] 7-րդ հոդվածին առնչվող շատ գործերում ծագում էին փաստի առկայության, ոչ թե օրենքի հետ կապված հարցեր: Նման գործերում ՄԻԿ-ը պետք է պարզեր միայն այն, թե արդյոք բավարար ապացույցներ կա՞ն, որ տվյալ արարքները տեղի են ունեցել, ոչ թե այն, թե արդյոք մեղսագրվող արարքները խախտո՞ւմ են 7-րդ հոդվածը: Դրա պատճառն այն էր, որ բազմաթիվ գործերում ներկայացված մեղադրանքներն այնպիսի ահավոր գործողությունների էին վերաբերում, որոնք, անկասկած, խախտում էին 7-րդ հոդվածը:

[9.42] «ՄՈՒԿՈՆԳՆ ընդդեմ ԿԱՄԵՐՈՒՆ» (MUKONG v CAMEROON, 458/91)

Այս գործը մի շարք օգտակար դիտարկումներ է բովանդակում 7-րդ հոդվածին վերաբերող բոլորը հիմնավորող ապացույցներին ներկայացվող պահանջների առումով:

¶ 9.1. Հեղինակը պնդում է, որ 1988 և 1990 թթ. իր կալանավորման պայմանները 7-րդ հոդվածի խախտում են մասնավորապես կալանավայրերի անառողջ պայմանների, ոստիկանության Յաունդեի առաջին բաժանմունքի կալանախցի գերբնակեցման, սննդից և հագուստից զուրկ պահելու և Դուալայում Կամերունի գաղտնի ոստիկանության [Brigade Mobile Mixte] ճամբարում տրված մահվան սպառնալիքների և առանց հաղորդակցության հնարավորության պահելու պատճառով: Մասնակից պետությունը պատասխանել է, որ նշված մեղադրանքների ապացուցման բեռը [burden of proof] կրում է հեղինակը, իսկ ինչ վերաբերում է կալանավայրերի պայմաններին, ապա դրանք Կամերունի ոչ բավարար զարգացման հետևանք են:

¶ 9.2. Կոմիտեն չի ընդունում մասնակից պետության տեսակետները: Ինչպես կոմիտեն անցյալում այլ առիթներով սահմանել է, ապացուցման բեռը չի կարող դրվել միայն հաղորդման հեղինակի վրա՝ հատկապես հաշվի առնելով, որ հեղինակը և մասնակից պետությունը միշտ չէ, որ ապացույցներ ձեռք բերելու հավասար հնարավորություն ունեն, և հաճախ միայն պետությունն է հնարավորություն ունենում օգտվելու համապատասխան տեղեկություններից (տես Կարծիքներ, հաղորդում թիվ 30/1978-ի վերաբերյալ («Բլեյերն ընդդեմ Ուրուգվայի») (Bleier v Uruguay)) ընդունված 1982 թ. մարտի 29-ին, պարբերություն 13.3.): Պարոն Մուկոնգն իր հանդեպ ցուցաբերված վերաբերմունքի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդել. այս հանգամանքներում մասնակից պետությունն է կրում մեղադրանքները մանրամասնորեն հերքելու պարտականությունը, ոչ թե ապացուցման պարտականությունը դրվում է հեղինակի վրա:

[9.43] «Բեյլին ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (BAILEY v JAMAICA, 709/96)

Այս գործը վերաբերում էր ոչ թե 7-րդ հոդվածի, այլ 10-րդ հոդվածի 1-ին կետի առումով բերված մեղադրանքներին: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ ապացույցների առումով պահանջները նույնն են: Այս գործի վերաբերյալ ՄԻԿ-ի մեծամասնությունը եզրակացրեց, որ հեղինակն ընդունելիության առումով չի հիմնավորել իր պնդումները, ըստ որոնց՝ ինքը ճամայկայի Սբ Կատարինա շրջանային բանտում

կիչ դիտարկումներ Կամերունի վերաբերյալ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ, CCPR/C/79/Add. 116, պարբ. 12, Եզրափակիչ դիտարկումներ Եգիպտոսի վերաբերյալ, (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/76, պարբ. 11, Եզրափակիչ դիտարկումներ Եմենի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/YEM, պարբ. 6, Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/74/SWE, պարբ. 8: Տես նաև [1.104] և [9.44]:

⁵¹ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110, պարբ. 15:

կալանքի տակ է պահվել անմարդկային պայմաններում: Փոքրամասնության կարծիքը՝ ստորագրված տիկին Էվաթի, տիկին Գաիտան դե Պոմբոյի, տիկին Մեդինա Քուիրոզայի և պարոն Յալդենի կողմից, հեղինակի հանդեպ ավելի մեծահոգի էր:

... Հեղինակն իր պնդումների վերաբերյալ որոշակի մանրամասներ չի հաղորդել՝ բացառությամբ իր հաղորդման մեջ «Ամենաթի ինթերնեյշնլ» [Amnesty International] կազմակերպության՝ 1993 թ. այցելության վրա հիմնված զեկույցին և 1990 թ. «Բանտային պայմանները ճանաչելու» զեկույցին արված հղումներին: Այդ զեկույցները, որոնք կցված չեն, վերաբերում են այն ժամանակահատվածին, որի ընթացքում հեղինակը գտնվել է Սբ Կատարինա շրջանային բանտում: Հաշվի առնելով կոմիտեի ավելի վաղ արտահայտած կարծիքները, ըստ որոնց՝ Սբ Կատարինա շրջանային բանտում մահապատժի դատապարտվածների պայմանները խախտում են կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետը,⁵² և մասնակից պետության կողմից հեղինակի մեղադրանքներին չպատասխանելը՝ կարծում են՝ հեղինակի՝ 10 հոդվածի 1-ին կետով ներկայացրած մեղադրանքը բավարար չափով հիմնավորված է և՛ ընդունելիության տեսանկյունից, և՛ նշված դրույթի խախտում արձանագրելու համար:

Բեյլիի գործում ապացույցների առումով մեծամասնության կոշտ դիրքորոշումը կանխատեսելի էր պարոն Անդրյուի ավելի վաղ արտահայտած անհամաձայնությամբ՝ «*Մորգանը և Ուիլյամսն ընդդեմ Ճամայկայի*» (*Morgan and Williams v Jamaica, 720/96*) և «*Յասսինը և Թոմասն ընդդեմ Գայանայի Հանրապետության*» (*Yasseen and Thomas v Republic of Guyana, 676/96*) գործերում: Անդրոն և այժմ ՄԻԿ-ի մեծամասնությունն այնքան էլ հակված չեն, հասարակական կազմակերպության տված ցուցմունքներից ելնելով, եզրակացնելու, որ 7-րդ հոդվածի կամ 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտումներ են տեղի ունեցել, այն դեպքում, երբ բացակայում են որոշակի ապացույցները, որ հեղինակներին անձնական վնաս է հասցվել: *Բեյլիի* գործում փոքրամասնության կարծիքը, թե բանտային որոշ պայմաններ այնքան ահավոր են, որ դրանք վստահաբար «անդրադառնում են» անձամբ հեղինակի վրա, առավել նախընտրելի է:

Կանանց՝ 7-րդ հոդվածով սահմանված իրավունքները

[9.44]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 11. Դաշնագրի 7-րդ, ինչպես նաև երեխաների համար հատուկ պաշտպանություն նախատեսող 24-րդ հոդվածին համապատասխանությունը գնահատելու համար անհրաժեշտ է, որ կոմիտեն տեղեկություններ տրամադրվեն կանանց նկատմամբ ընտանեկան և այլ կարգի բռնության, ներառյալ բռնաբարության վերաբերյալ ազգային օրենսդրության և սովորույթների մասին: Հարկ է նաև, որ կոմիտեն գիտենա, թե արդյոք մասնակից պետությունը բռնաբարության հետևանքով հղիացած կանանց անվտանգ աբորտ իրականացնելու հնարավորություն տալի՞ս է⁵³: Մասնակից պետությունները կոմիտեին պետք է նաև տեղեկություններ ներկայացնեն ստիպողական աբորտը և ստիպողական ամլացումը (ստերիլացումը) կանխելուն ուղղված միջոցառումների մասին: Այն պետությունների դեպքում, որտեղ սեռական օրգանների խեղման սովորույթ գոյություն ունի, հարկ է տեղեկություններ ներկայացնել այդ երևույթի տարածման աստիճանի և այն վերացնելուն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Այս բոլոր հարցերի մասին մասնակից պետությունների ներկայացրած տեղեկությունները պետք է ներառեն այն կանանց համար նախատեսված պաշտպանության միջոցները, այդ թվում՝ իրավական պաշտպանության օրինական միջոցները, որոնց՝ 7-րդ հոդվածով սահմանված իրավունքները խախտվել են:

Մոնդոլիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն ավստսանք էր հայտնում «բռնաբարության մեղադրանքով դատապարտելու համար բռնությունն ապացուցելու» պահանջի, ինչպես նաև «ամուսնական բռնաբարությունը իրավախախտում չհամարելու» կապակցությամբ⁵⁴:

⁵² Տե՛ս, օր.՝ «*Մակթագարտն ընդդեմ Ճամայկայի*» [*McTaggart v Jamaica, 749/97*], պարբ. 8.5-8.6 և ճամայկային վերաբերող այլ գործեր՝ մեջբերված ստորև, ծմթ. 147-ում:

⁵³ Աբորտի վերաբերյալ տե՛ս նաև [8.55-8.57]:

⁵⁴ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 120, պարբ. 8(q) և (t):

Հոգեբանական հալածանք

[9.45] Թե՛ ՄԻԿ-ը, թե՛ ԽԴ կոմիտեն ընդունել են, որ հոգեբանական հալածանքը կարող է նույնչափ դաժան լինել, որքան մարմնական ցավ պատճառելը: Նման հոգեբանական տառապանքի փաստ է տեղ գտել հետևյալ գործում:

«ՔՈՒԻՆՏԵՐՈՍԸ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ» (QUINTEROS v URUGUAY, 107/81)

Այս բողոքը ներկայացվել է մի մոր կողմից՝ իր և դստեր՝ Էլենայի անունից: Էլենան առևանգվել է Ուրուգվայի անվտանգության ուժերի կողմից: Իրականում *Քուինտերոսի* գործով որոշում կայացնելու ժամանակ Էլենան ազատ չի արձակվել, և նրա ճակատագիրն անհայտ էր: ՄԻԿ-ը որոշեց, որ Էլենայի դեպքում խախտվել է 7-րդ հոդվածը: Նրա մայրը՝ Մարիան, իր անունից ներկայացրել է հետևյալ բողոքը:

¶ 1.9. [Յեղիմակը] ավելացնում է, որ ինքն էլ է հանդիսանում 7-րդ հոդվածի խախտումների զոհ (հոգեբանական խոշտանգման, որովհետև չգիտի, թե որտեղ է գտնվում իր դուստրը) . . .

ՄԻԿ-ը 7-րդ հոդվածի խախտումն արձանագրեց նաև մոր կապակցությամբ:

¶ 14. Յեղիմակի կողմից իր իսկ անունից ներկայացված խախտումների առումով կոմիտեն . . . ըմբռնում է այն տառապանքը և ցնցումը, որ պատճառվել է մորը դստեր անհետացմամբ և վերջինիս ճակատագրի ու գտնվելու վայրի շարունակվող անորոշությամբ: Յեղիմակն իրավունք ունի գիտենալ, թե ինչ է պատահել իր դստերը: Այդ առումներով նա նույնպես հանդիսանում է իր դստեր հանդեպ դաշնագրի, մասնավորապես 7-րդ հոդվածի խախտումների զոհ:

[9.46] *Քուինտերոսի* գործում ՄԻԿ-ն արձանագրեց «7-րդ հոդվածի խախտում»՝ մոր կապակցությամբ: Կոմիտեն չմասնավորեցրեց, թե արդյոք մայրը ենթարկվել է խոշտանգման, անմարդկային վերաբերմունքի⁵⁵, թե՞ նվաստացնող վերաբերմունքի: Անշուշտ, Ուրուգվայի իշխանությունները մորը ծանր ցավ և տառապանք պատճառելու հատուկ դիտավորությամբ չեն ունեցել, այնպես որ վերաբերմունքը ԽԴԿ-ի 1-ին հոդվածով չէր դասակարգվել⁵⁵:

[9.47] «ՇԵԴԿՈՆ ընդդեմ ԲԵԼՈՐՈՒՍԻ» (SCHEDKO v BELARUS, 886/99)

Յեղիմակի բողոքը կարելի է տեսնել ՄԻԿ-ի կողմից խախտման արձանագրության մեջ:

¶ 10.2. Կոմիտեն նշում է, որ հեղիմակի այն պնդումը, թե իր ընտանիքը չի տեղեկացվել իր որդու մահապատժի ո՛չ օրվա, ժամի, վայրի մասին, ո՛չ էլ իր որդու հետագա հուղարկավորության ճշգրիտ տեղի մասին, չի վիճարկվել: Մասնակից պետության կողմից այս պնդման որևէ վիճարկման և մահապատժի իրականացման կարգի վերաբերյալ որևէ այլ տեղեկության բացակայության պարագայում առաջնությունը տրվում է հեղիմակի ներկայացրած մեղադրանքին: Կոմիտեն ըմբռնում է հեղիմակին՝ դատապարտված բանտարկյալի մորն իր որդու մահապատժին հանգեցրած հանգամանքների տևական անորոշությամբ, ինչպես նաև վերջինիս հանգչելու վայրի անհայտությամբ պատճառված շարունակական տառապանքն ու հոգեկան սթրեսը: Կոմիտեն համարում է, որ մահապատժի օրվա և թաղման վայրի լիակատար գաղտնիությունը, ինչպես նաև հանգուցյալի մարմինը հողին հանձնելու համար տրամադրվող մեթոդներն ընտանիքներին ահաբեկելու կամ պատժելու ազդեցություն ունեն նրանց դիտավորությամբ անորոշ վիճակում և հոգեկան սթրեսի մեջ պահելու միջոցով: Կոմիտեն համարում է, որ իշխանությունների կողմից նախ հեղիմակին չտեղեկացնելը իր որդու մահապատժի նախատեսված օրվա մասին և հետագայում տևականորեն հեղիմակին չտեղեկացնելը իր որդու գերեզմանի տեղի մասին հեղիմակի նկատմամբ անմարդկային վերաբերմունք է՝ դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում:

⁵⁵ Քուինտերոսի գործը վերջերս օրինակ հանդիսացավ «Եգատեսվարա Սարման ընդդեմ Շրի Լանկայի» (*Jegatheeswara Sarma v Sri Lanka, 950/00*) գործում. տես՝ պարբ. 9.5:

Համանման որոշում կայացվեց նաև «Ստասելովիչն ընդդեմ Բելառուսի» (*Staselovich v Belarus, 887/99*) գործում:

[9.48] Ինչպես «Վուոլանն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Vuolanne v Finland, 265/87*) գործով [9.26], մի շարք բողոքներ են ներկայացվել ազատագրված հետևանքով հոգեբանական տառապանք պատճառելու վերաբերյալ:

«ԵՆՍԵՆՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (*JENSEN v AUSTRALIA, 762/97*)

Հեղինակը ներկայացրել է հետևյալ բողոքը.

¶ 3.4. Հեղինակը նաև պնդում է, որ նախ իրեն մեղադրանք ներկայացնելը ձգձգելը, այնուհետև իրեն Քուինսլենդ տեղափոխելը ձգձգելը և անմիջապես Քուինսլենդում դատավարությունից հետո իրեն Արևմտյան Ավստրալիա չվերադարձնելը, որտեղ ինքը մոտ կլիներ իր ընտանիքին, ճնշող է եղել և հանգեցրել է ծանր զգայական և հոգեբանական վնասվածքների՝ ներառյալ ընկճախտը (դեպրեսիա) և ինքնասպանության մղումները՝ համակցված անքնության, մազաթափության և քիմիաթերապիայի ենթարկվելու հետ: Հեղինակը պնդում է, որ նշվածը դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում է:

Մասնակից պետությունը վիճարկում էր ներկայացված փաստերը՝ նշելով, որ արձանագրությունները ցույց են տալիս՝ հեղինակն ունեցել է միայն թեթև դեպրեսիա և պարբերական անհանգիստ վիճակ⁵⁶: ՄԻԿ-ը նշեց.

¶ 6.2. Հեղինակի այն պնդման վերաբերյալ, համաձայն որի՝ իշխանությունները նրան ենթարկել են խոշտանգման և դրսևորել դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք՝ խախտելով 7-րդ հոդվածը, ինչպես նաև ցուցաբերել այլ անհարիր վերաբերմունք՝ խախտելով 10-րդ հոդվածի 1-ին կետը, կոմիտեն հղում է կատարում իր նախադեպային իրավունքին, ըստ որի՝ բանտարկյալի՝ սույն հոդվածներով մեղադրանքը պետք է կալանավորման սովորական հանգամանքներից բացի հավելյալ ծանրացուցիչ հանգամանք չի ցույց դնի: Ներկա գործում հեղինակը ցույց չի տվել, ընդունելիության իմաստով, որ իր հանդեպ ցուցաբերված վերաբերմունքը որևէ կերպ առանձնանում է բանտարկյալին ցուցաբերվող սովորական վերաբերմունքից: Համապատասխանաբար հաղորդման այս հատվածը համարվում է անընդունելի՝ կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն:

[9.49] «Բ.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (*C v AUSTRALIA, 900/99*)

Այս գործում հեղինակը պնդում էր, որ ապօրինաբար երկիր մուտք գործող օտարերկրացիների նկատմամբ պարտադիր կալանավորում նախատեսող ավստրալիական օրենսդրության համաձայն իրեն կալանավորելով՝ խախտվել է 7-րդ հոդվածը: Փաստորեն այս քաղաքականությունն իրավունք էր տալիս կալանավորելու առանց թույլտվության ապաստան որոնողներին մինչև նրանց ներգաղթային (իմիգրացիոն) կարգավիճակի որոշումը⁵⁷: Հեղինակը սկզբում կալանավորվել էր 1992 թ. հուլիսի 22-ին և չէր արձակվել մինչև 1994 թ. օգոստոսի 10-ը: Նա պնդում էր, որ կալանավորման պատճառով լուրջ հոգեկան հիվանդություն է զարգացել:

¶ 2.4. 1993 թ. օգոստոսի 18-ին գնահատվել է հեղինակի հոգեբանական վիճակը: Գնահատումը վեր է հանել «որոշակի մտահոգություն՝ կապված երկարատև ազատագրված հետևանքով նրա էմոցիոնալ և ֆիզիկական առողջության հետ»: Հեղինակը, որը փորձել է կյանքին վերջ տալ էլեկտրահարվելով, կրկնել է ինքնասպանություն կատարելու փորձը և ցույց տվել «ծայրահեղ ցուցանիշներ դեպրեսիայի չափման բոլոր գործիքներով»: Նրան 1992 թ. օգոստոսին և 1993 թ. մարտ-ապրիլ ամիսներին նշանակվել են հոգեմետ դեղամիջոցներ: Հոգեբանը, որ ախտորոշել է «մեծ տենդ» [coarse tremor], նրա պարանոյան համարել է «ոչ անսպասելի»: Հոգեբանը բացահայտել է «բազմաթիվ երևույթներ, որոնք ցույց են տալիս, թե ինչ է արժեցել տասներկու ամսվա բանտարկությունը նրա համար» և նրան համարել է «ակտիվ ինքնասպանության հակված» և «ինքն իր համար լուրջ վտանգ ներկայացնող»: Նա չէր

⁵⁶ Պարբ. 4.2:

⁵⁷ Տե՛ս նաև [11.16] և [11.17]:

կարողանում հանդիպել իր ընտանիքին, քանի որ զարգացել էր «հետապնդման մտասկեռում և համոզումը, որ նրանք բարձր են խոսում իրեն ցավ պատճառելու համար»: Հոգեբանի եզրակացությամբ՝ «եթե նա ազատ լիներ, կարող էր որոշակիորեն վերագտնել առողջ բանականությունը»:

¶ 2.5. 1994 թ. փետրվարի 15-ին հեղինակի վատթարացող հոգեկան վիճակը կրկին հետազոտվեց: Փորձագետն առաջարկեց «հետագա հոգեբուժական հետազոտություն և անհապաղ բուժում իրականացնել», որոնք դժվար թե օգուտ տային շարունակվող բանտարկության պայմաններում: Հեղինակն «այդ [բանտային] պայմանների անհապաղ ընդմիջման կարիք ուներ», և «անհետաձգելի կարգով պետք էր» գնահատել համապատասխան արտաքին պայմանները՝ խուսափելու համար «ինքնավնասման կամ վարքային խախտումների ռիսկից, եթե չձեռնարկվեն հրատապ քայլեր»: 1994 թ. հունիսի 18-ին, կալանավայրի անձնակազմի դիմումի համաձայն, միևնույն փորձագետը հեղինակին նորից հետազոտեց: Նա զգալի վատթարացում արձանագրեց, որն ուղեկցվում էր ավելի սրված հետապնդման մտասկեռմամբ և «վառ արտահայտված զառանցանքային պատկերացումներով»: Ինչպես նախկինում, առկա էր ցայտուն դեպրեսիա, և փորձագետի կարծիքով՝ հեղինակի վիճակը վատթարացել է մինչև «բացահայտ զառանցանքային խանգարումը՝ զուգակցված դեպրեսիվ ախտանիշներով»: Նրան ակնհայտորեն անհրաժեշտ էին հակապսիխոտիկ դեղամիջոցներ և այնուհետև, հավանաբար, հակադեպրեսանտներ: Քանի որ հեղինակի վիճակը «նշանակալիորեն պայմանավորված էր բանտարկված մնալու հետ կապված շարունակական սթրեսով», փորձագետը գտավ, որ հարկ է նրան ազատ արձակել և բուժումն անցկացնել դրսում: Այնուամենայնիվ, փորձագետն զգուշացրեց՝ «չկա որևէ երաշխիք, որ նրա ախտանիշներն արագորեն կվերանան, եթե նույնիսկ ազատ արձակվի, և արձակվելուն պես անհրաժեշտ կլինի փորձագետ հոգեբույժի խնամք՝ վերահսկելու համար վերականգնման գործընթացը»:

¶ 2.6. 1994 թ. օգոստոսի 10-ին, համաձայն «Միգրացիոն ակտի» բ. 11-ի [s. 11 Migration Act], հեղինակն ազատ արձակվեց և հանձնվեց իր ընտանիքի խնամակալությանը առողջական (հոգեկան) հատուկ կարիքներ ունենալու հիմքով: Այդ պահին հեղինակի վարքագիծը զառանցանքային բնույթ ուներ, և նա ստանում էր հոգեբուժական բուժում.

...

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ իր նկատմամբ իրականացվել է 7-րդ հոդվածի խախտում, [որովհետև] իրեն կալանքի տակ այնպես են պահել և այն այնքան երկար է տևել (1992 թ. հուլիսի 22-ին իր ժամանումից մինչև 1994 թ. օգոստոսի 10-ը), որ իրեն հասցրել է հոգեկան հիվանդության, ինչն ինքը նախկինում չի ունեցել: Բժշկական փաստերը հանգեցնում էին միաձայն եզրակացության, որ նրա ծանր հոգեկան հիվանդությունն ի հայտ է եկել տևական ազատագրվման հետևանքով, ինչն ընդունվել է ՎՎԴ-ի [վարչական գործերով վերաքննիչ դատարան] և այլ դատարանների կողմից: Հեղինակը պնդում է, որ իրեն սկզբնապես բանտարկել են՝ չունենալով որևէ փաստ, որ իր կողմից արդարադատությունից խուսափելու ռիսկ գոյություն ունի, կամ ինքը համայնքի համար որևէ այլ վտանգ է ներկայացնում: Նա կարող էր արձակված լինել համայնք՝ օգտագործելով սովորաբար կիրառվող խափանման այլ միջոցներ, ինչպիսիք են գրավը կամ երաշխավորությամբ ազատ արձակելը կամ բնակության վայրից չհեռանալու և կամ հաշվառման կանգնելու պահանջները. . .

Մասնակից պետությունը պատասխանեց.

¶ 4.2. Ինչ վերաբերում է ներկայացված մեղադրանքների ընդունելիությանն ըստ 7-րդ հոդվածի, ապա մասնակից պետությունը համարում է, որ մեղադրանքների մեծ մասն անընդունելի է: Առաջին մեղադրանքի կապակցությամբ, թե կալանքի տակ տևական ժամանակ պահելը խախտել է 7-րդ հոդվածը, մասնակից պետությունը համարում է, որ մեղադրանքն անհիմն է, այն դուրս է 7-րդ հոդվածի կիրառության ոլորտից, և իրավական պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել: Հեղինակը չի ներկայացրել որևէ փաստ, որ մասնակից պետությունը կատարել է այնպիսի գործողություններ կամ դրսևորել այնպիսի գործելակերպ, որոնք չեն բխել զուտ կալանավորված դրություներից՝ նրա ազատագրվումը դարձնելով հատկապես ծանր կամ դատապարտման արժանի: Միակ փաստն այն է, որ հեղինակի մոտ կալանքի տակ գտնվելու ընթացքում ի հայտ է եկել պարանոիդալ շփոթություն, մինչդեռ չի ներկայացվել որևէ ապացույց, որ նրա հոգեկան հիվանդության պատճառ է դարձել 7-րդ հոդվածով արգելված որևէ ոչ պատշաճ վերաբերմունքի ենթակա լինելը: Երկրորդ՝ քանի որ բողոքն իրականում առնականում է՝ ուղղված, որպես *այդպիսին*, հեղինակի կալանավորման դեմ, այլ ոչ թե դատապարտելի վերաբերմունքի կամ կալանքի որևէ առանձնահատկության, այն դուրս է մնում 7-րդ հոդվածի կիրառության ոլորտից, ինչի մասին նախկինում կոմիտեն որոշում է կայացրել . . .

¶ 4.6. Ինչ վերաբերում է 7-րդ հոդվածով ներկայացված պահանջի առաջին հատվածին (որը հեղինակի կալանավորման մասին է), մասնակից պետությունը մշում է, որ թեև կոմիտեն հստակ սահմանազատում չի արել 7-րդ հոդվածի տարրերի միջև, այնուամենայնիվ ձևակերպել է ընդգրկվում դասեր: Կոմիտեն համարում է, որ խոշտանգումը վերաբերում է դիտավորություն ունեցող վերաբերմունքի, որը նպատակ ունի առանձնակի ուժգնությամբ և դաժանությամբ տառապանք պատճառել՝ հանուն որոշակի նպատակի: Դաժան կամ անմարդկային վերաբերմունքը վե-

րագրելի է այն գործողություններին (հիմնականում կալանքի ընթացքում), որոնք պետք է առնվազն նվազագույն աստիճանի ծանր լինեն, սակայն դրանք խոշտանգում չեն: «Նվաստացնող» վերաբերմունքը կամ պատիժը 7-րդ հոդվածում թվարկված խախտումների «ամենացածր» մակարդակն է, որի դեպքում տառապանքի ծանրությունն ավելի նվազ կարևոր է, քան զոհի ստորացման կամ անարգման աստիճանը:

¶ 4.7. Հետևաբար պարզ է, որ թեև կալանքի հատկապես ծանր պայմանները կարող են 7-րդ հոդվածի խախտում լինել (անկախ այն հանգամանքից՝ պատճառված տառապանքը մարմնակա՞ն, թե՞ հոգեբանական է), կալանքն ինքնին 7-րդ հոդվածի խախտում չէ: «Վուդլանն ընդդեմ Ֆիլանդիայի» գործում կոմիտեն կարծիք էր հայտնել, որ «որպեսզի պատիժը համարվի նվաստացնող, այդ նվաստացումը կամ անարգանքը պետք է գերազանցի որոշակի աստիճանը և պետք է ամեն դեպքում իր հետ բերի նաև այլ տարրեր՝ սոսկ ազատագրելու միջոցով»: Նույն կերպ կոմիտեն հետևողականորեն արտահայտել է այն կարծիքը, որ նույնիսկ «մահապատժի սպասողներին» տևական ժամանակ կալանքի տակ պահելը չի խախտում 7-րդ հոդվածը: Որպեսզի կալանքը խախտի 7-րդ հոդվածը, կալանավորվածների նկատմամբ դրսևորված վերաբերմունքում պետք է դատապարտելիության որոշակի տարր առկա լինի:

¶ 4.8. Ներգաղթյալների (իմիգրանտների) կալանքի ընդհանուր պայմաններն այս չափորոշիչների լույսի ներքո գնահատելով՝ մասնակից պետությունը շեշտում է, որ կալանքի տակ գտնվող ներգաղթյալ բոլոր անձանց պատշաճ կեցությունն ապահովելու նպատակով սահմանել է «Ներգաղթյալների կալանքի չափորոշիչներ», որոնք կարգավորում են իր կալանավայրերում կալանավորվածների կենսական պայմանները և սահմանում այն ծառայությունների տարբերակված բնույթը, որոնք պահանջվում են կալանքի տակ գտնվող ներգաղթյալների միջավայրում: Այդ չափորոշիչները վերաբերում են կալանավորվածների անձնական կյանքի պաշտպանությանը, առողջապահությանը և անվտանգությանը, հոգևոր, սոցիալական, կրթական զբաղվածությանը և ժամանցին, թարգմանիչներին ու կալանավայրերի անձնակազմի վերապատրաստմանը՝ մշակութային բազմազանության և համանման այլ թեմաների գծով: Մասնակից պետությունը հայտարարում է, որ պայմանները ՄՆԿԿ-ում (Մարիբիրոնգի ներգաղթյալների նախնական կալանքի կենտրոն) մարդկային են և այնպիսին, որ ապահովում են այնտեղ մնացողների հարմարավետությունը, մինչ վերջիններս սպասում են մուտքի արտոնագիր ստանալու իրենց դիմումների պատասխանին. . .

¶ 4.10. Անդրադառնալով հեղինակի մոտ պարանոիդալ շիզոֆրենիա ի հայտ գալուն՝ մասնակից պետությունը պնդում է, որ գոյություն ունի պատկառելի քանակի գրականություն, որում ցույց է տրվում, որ հակվածությունը շիզոֆրենիային պայմանավորված է ժառանգականությամբ: Այդպիսով, թեև խորապես ցավալի է, որ հեղինակի մոտ շիզոֆրենիայի ախտանիշներն ի հայտ են եկել կալանքի տակ գտնվելու ընթացքում, ամենայն հավանականությամբ, նա այդ հիվանդության հակում է ունեցել, և դրա ի հայտ գալն անհրաժեշտաբար չի արտացոլում կալանքի տակ պահված լինելու պայմանները: Թեպետ հասկանալի է, որ ամեն ազատագրվում կարող է որոշակի հոգեբանական սթրես պատճառել, նման էմոցիոնալ սթրեսը դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք չէ (և վստահաբար պատիժ չէ): Ամեն դեպքում, բժշկական ապացույցները ցույց են տալիս, որ շիզոֆրենիայի ի հայտ գալը կապ չունի «սթրես պատճառող խոշոր իրադարձություն» ապրելու հետ:

ՄԻԿ-ն այս հարցը որոշեց հոգուտ հեղինակի.

¶ 8.4. Ինչ վերաբերում է հեղինակի այն մեղադրանքներին, որ իր կալանքի առաջին ժամանակահատվածը 7-րդ հոդվածի խախտում է⁵⁸, կոմիտեն նշում է, որ տևական ժամանակահատվածում հեղինակի հոգեբուժական հետազոտումներից բխող փաստերը, որոնք ընդունվել են մասնակից պետության դատարանների և արդարադատության այլ մարմինների կողմից, հանգեցնում են մի եզրակացության, որ հեղինակի հոգեկան հիվանդությունն ի հայտ է եկել ներգաղթային կալանքի տակ երկարաձգված ժամանակահատվածում պահվելու հետևանքով: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը տեղյակ է եղել այն հոգեբուժական խնդիրներին, որոնք ծագել են առնվազն 1992 թ. օգոստոսից, երբ նշանակվել են հոգեմետներ: Իրականում 1993 թ. օգոստոսի դրությամբ ակնհայտ էր, որ կոնֆլիկտ կա հեղինակի շարունակվող կալանքի և նրա առողջ բանակարության միջև: Անուշադրության մատնելով հեղինակի առողջական վիճակի ավելի ու ավելի վատթարացող գնահատականները 1994 թ. փետրվարին և հունիսին (ինչպես նաև ինքնասպանության փորձը)՝ միայն 1994 թ. օգոստոսին է, որ նախարարը օգտվում է իրեն վերապահված բացառիկ լիազորությունից, այն է՝ բժշկական հիմքերով ազատ արձակել նրան ներգաղթյալների համար նախատեսված կալանքից (թեպետ իրավաբանորեն նա շարունակում էր մնալ կալանքի տակ): Ինչպես ցույց տվեցին հաջորդող իրադարձությունները, մինչ այդ պահը հեղինակի հիվանդությունը հասել էր ծանրության այնպիսի աստիճանի, որ նկատվում էին անդամալի հետևանքներ: Կոմիտեի կարծիքով՝ հեղինակի շարունակվող կալանքը, երբ

⁵⁸ Հեղինակը հետագայում կալանքի տակ էր պահվել երկրորդ անգամ: Այդ ժամանակահատվածին վերաբերող բոլորը համարվեց անընդունելի, քանի որ չէին սպառվել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

մասնակից պետությունը տեղյակ էր վերջինիս հոգեկան դրությանը և անհրաժեշտ քայլեր չէր ձեռնարկել հեղինակի հոգեկան դրության վատթարացումը հետ շրջելու համար, դաշնագրի 7-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքների խախտում է:

[9.50] Կոմիտեի երեք անդամներ՝ պարոնայք Անդոն, Քլայնը և Յալդենն այս հարցի շուրջ անհամաձայնություն հայտնեցին:

Կոմիտեն 7-րդ հոդվածի խախտումներ արձանագրեց երկու պատճառով: Առաջինը ներկայացված է կոմիտեի կարծիքների (Committee's Views) պարբերություն 8.4-ում՝ հիմնված հեղինակի տևական կալանքի գնահատման վրա այն բանից հետո, երբ ակներև դարձավ, որ «կոնֆլիկտ կա հեղինակի շարունակվող կալանքի և նրա առողջ բանականության միջև»: Մենք դժվարանում ենք ըմբռնել այս տրամաբանությունը: Թեև ճշմարիտ է, որ հեղինակի հոգեկան առողջությունը վատթարացել է մինչև կալանքից նրա արձակումը և ընտանիքի խնամակալությանը համընկած 1994 թ. օգոստոսի 10-ին, մենք 7-րդ հոդվածի խախտում չենք տեսնում, քանի որ նման եզրակացությունը չափից դուրս կընդլայներ այս հոդվածի գործողության ոլորտը՝ հեղինակի շարունակվող կալանքի և առողջ բանականության միջև կոնֆլիկտը հարթելու միակ ձևը համարելով հեղինակի ազատ արձակումը և պնդելով, որ այլապես մասնակից պետությունը խախտած կլինի նշված դրույթը: Գործի հանգամանքները ցույց են տալիս, որ հեղինակը հոգեբանական գնահատման է ենթարկվել, ինչպես նաև եղել է մշտական հսկողության տակ: Այն փաստը, որ մասնակից պետությունն անմիջապես չի կարգադրել նրան ազատ արձակել, այլ որոշումը կայացրել էր միայն՝ հիմնվելով 1994 թ. հունիսի հոգեբուժական զեկույցի վրա, որն աներկբայորեն հորդորում էր ազատ արձակել և դրսում բուժում իրականացնել (տե՛ս պարբերություն 2.5), մեր կարծիքով, չի կարող համարվել դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում:

Փոքրամասնությունը զիջման էր գնում այն հարցում, որ հեղինակի հոգեկան վիճակը վատթարացել է նրա կալանքի տակ գտնվելու ողջ ընթացքում, և, ինչպես երևում է, թերագնահատում էր կալանքի տակ նրա գտնվելու ողջ ընթացքում պատրաստված զեկույցների նշանակությունը, որոնք միաձայն հորդորում էին ազատ արձակել՝ որպես Ք.-ի ախտանիշների հետընթացի անհրաժեշտ պայման⁵⁹:

[9.51] Այնուամենայնիվ, գրեթե կասկած չկա, որ մեծամասնության որոշումը կապված է իր այն եզրակացության հետ, ըստ որի՝ կալանավորումը կամայական է՝ ի հակադրություն 9-րդ հոդվածի 1-ին կետի [11.61], հետևաբար ազատ արձակումը հատկապես ցանկալի տարբերակ է այս հանգամանքներում: Կասկածելի է, թե արդյոք ՄԻԿ-ը մասնակից պետության կողմից ոչ կամայական հանգամանքներում կալանավորված անձին (օրինակ՝ դատապարտված անձին, որն ազատագրվել է օրինական, ողջամիտ դատավճռի հիման վրա) ազատ չարձակելու մեջ խախտում կգտնե՞ր այն հիմքով, որ կալանքի ընթացքում ապրած սթրեսը լուրջ հոգեբանական խնդիրներ է առաջացրել⁶⁰: Եվ փաստորեն նման սցենարին համապատասխանող բոլորն անհաջողության մատնվեց *Ենսենի* գործում [9.48]:

[9.52] Մասնակից պետության կողմից հեղինակի՝ մահապատժի սպասող կալանավորի հոգեկան դրության լուրջ վատթարացումը հետ շրջելուն ուղղված բժշկական խնամք չտրամադրելը նույնպես «*Ուիլյամսն ընդդեմ Ճամայկայի*» (*Williams v Jamaica, 609/95*) գործում⁶¹ համարվեց նվաստացնող վերաբերմունք և 7-րդ հոդվածի խախտում:

Մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը

[9.53] Մահապատժին ակնհայտ բացառություն է 6-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքից⁶²: Սակայն մահապատժի համատեղելիությունը ՔՔԻՄԴ-ի հետ կարելի է այլընտրանքային ճանապարհով վիճարկել 7-րդ հոդվածի միջոցով: Մասնավորապես, բազմաթիվ գործերում փաստարկվել է, որ «մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը» 7-րդ հոդվածի խախտում է: Մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթի պատճառը տևական կալանքն է մահապատժի դատապարտված-

⁵⁹ Տե՛ս S. Joseph, "Human Rights Committee: Recent Cases" (2003) 3 *Human Rights Law Review* 91, at 98:

⁶⁰ Նույնը:

⁶¹ Պարբ. 6.5:

⁶² Տե՛ս, ընդհանուր առմամբ, [8.19] և հաջորդը:

ների խցում, ինչը, սպասվող մահվան հետ կապված, առաջացնում է հարաճուն հոգեկան անհանգստություն և լարվածություն: Այդ իսկ պատճառով մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը հոգեկան տանջանքի մի տեսակ է, որը կարող է խնդիրներ առաջացնել 7-րդ հոդվածի առումով: Մահապատժի դատապարտվածներին պահելու պահման երևույթի անմարդկային և նվաստացնող բնույթը ճանաչվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի⁶³ և Գաղտնի խորհրդի դատական կոմիտեի* (Judicial Committee of the Privy Council)⁶⁴ կողմից:

[9.54] ՄԻԿ-ի մեծամասնությունը հետևողականորեն ժխտել է, որ մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը խախտում է 7-րդ հոդվածը⁶⁵: «*Բարետը և Սատկլիֆն ընդդեմ Ճամայկայի*» (*Barrett and Sutcliffe v Jamaica, 270, 271/88*) գործով հայցվորները տասը տարի էին անցկացրել մահապատժի դատապարտվածների բանտախցում, և ՄԻԿ-ը մեկ պատճառ բերեց, թե ինչու հակված չէ համարելու, որ մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը խախտում է 7-րդ հոդվածը:

¶ 8.4. ... մահապատժի դատապարտվածների համար նախատեսված խցում խիստ հսկողության ռեժիմով կալանքի նույնիսկ երկար ժամկետներն ընդհանուր առմամբ չեն կարող համարվել դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք, եթե դատապարտված անձն ընդամենը օգուտ է քաղում իրավական պաշտպանության բողոքարկման միջոցներից: ... Կոմիտեի տրամադրության տակ եղած փաստերը ցույց են տալիս, որ . . . [բողոքարկման դատարան] [appellate court] դիմելու հետ կապված ձգձգումը մեծ առումով վերագրվում է հեղինակներին:

Տիկին Շանետը *Բարետի և Սատկլիֆի* գործում այդ կետի վերաբերյալ անհամաձայնություն է հայտնել:

... Բացարձակապես առանց ցինիզմի՝ ես համարում եմ՝ չի կարելի ակնկալել, որ հեղինակը կշտապի բողոքարկման գործում՝ մոտեցնելով իր մահապատժի օրը:

... Մահապատժին սպասելու չափազանց երկար ժամկետը, եթե նույնիսկ այն մասամբ դատապարտված բանտարկյալի՝ իրավական պաշտպանության միջոցներից չօգտվելու հետևանք է, մասնակից պետությանը չի ազատում դաշնագրի 7-րդ հոդվածով ստանձնած պարտավորություններից:

[9.55] Մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթի վերաբերյալ ամենամանրամասն տեսակետը ՄԻԿ-ն արտահայտել է «*Ջոնսոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Johnson v Jamaica, 588/94*) գործում:

«*ՋՈՆՍՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՃԱՄԱՅԿԱՅԻ*» (*JOHNSON v JAMAICA, 588/94*)

Փաստերը ներկայացված են ստորև բերված քաղվածքում:

¶ 8.2. Հարցը, որին պետք է պատասխանել, այն է, թե արդյոք մահապատժի դատապարտվածների խցում դատապարտված անձին պահելու ժամանակահատվածի զուտ տևողությունը կարո՞ղ է մասնակից պետության կողմից 7-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված իր պարտականությունների (այն է՝ անձանց դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չարժանացնել և նրանց հետ մարդասիրաբար վարվել) խախտում համարվել: Սույն հարցին պատասխանելիս հարկ է հաշվի առնել հետևյալ գործոնները:

(ա) Դաշնագիրը չի արգելում մահապատիժը, թեև դրա կիրառումը ենթարկում է խիստ սահմանափակումների: Քանի որ մահապատժի դատապարտվածների խցում պահելը մահապատիժ սահմանելու անհրաժեշտ հետևանք է, անկախ նրանից, թե որքան դաժան, նվաստացնող և անմարդկային կարող է այն թվալ, չի կարող ինքնին դաշնագրի 7-րդ և 10-րդ հոդվածների խախտում համարվել:

⁶³ «*Սոերինգն ընդդեմ ՄԹ-ի*» (*Soering v UK*) Ա մատենաշար, թիվ 161, ներկայացված այստեղ՝ (1989) 11 EHRR 439:

* Միացյալ Թագավորության գերագույն դատարաններից մեկը, որը նաև բարձրագույն վճռաբեկ դատարան է հանդիսանում է Բրիտանական համագործակցության 53 երկրների, ՄԹ-ի օտարերկրյա տարածքների և «Թագի կախյալ տարածքների» համար (ժան. *թարգմ.*):

⁶⁴ «*Փրաթը և Մորգանն ընդդեմ Ճամայկայի գլխավոր դատախազի*» (*Pratt and Morgan v Attorney-General for Jamaica*) [1993] 2 AC 1:

⁶⁵ Տես, օրինակ, «*Քինդլերն ընդդեմ Կանադայի*» (*Kindler v Canada, 470/91*), «*Սիմսն ընդդեմ Ճամայկայի*» (*Simms v Jamaica, 541/93*), «*Ռոջերսն ընդդեմ Ճամայկայի*» (*Rogers v Jamaica, 494/92*) և «*Հիլտոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Hylton v Jamaica*) (600/94) գործերը:

(բ) Թեև դաշնագիրը չի արգելում մահապատիժը, կոմիտեն եկել է այն համոզման, ինչն արտացոլված է դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրության մեջ, որ 6-րդ հոդվածը «ընդհանուր կերպով հղում է կատարում մահապատիժի վերացմանն այնպիսի ձևակերպումներով, որոնք միանշանակ ցույց են տալիս, որ վերացումը մեծապես ցանկալի է» (տե՛ս 1982 թ. հուլիսի 27-ի թիվ 6 Ընդհանուր մեկնաբանությունը (16)). Մաև տե՛ս Ի վերացումն մահապատիժի դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրության մախաբանը): Հետևաբար, մահապատիժ կիրառելու դեպքերի քանակը նվազեցնելը կարող է դիտվել որպես դաշնագրի խնդիրներից և նպատակներից մեկը:

(գ) Դաշնագրի դրույթները պետք է մեկնաբանվեն դաշնագրի խնդիրների և նպատակների լույսի ներքո (Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի հոդված 31): Քանի որ այդ խնդիրներից և նպատակներից մեկը համարվում է մահապատիժի կիրառման նվազեցման խթանումը, անհրաժեշտ է, որտեղ հնարավոր է, խուսափել դաշնագրի որևէ մեկնաբանությունից, որը կարող է խրախուսել մահապատիժը պահպանող մասնակից երկրին կիրառել այդ պատժատեսակը:

¶ 8.3. Այս գործոնների լույսի ներքո պետք է քննենք մահապատիժի դատապարտվածների խցում պահելու ժամկետը՝ *որպես այդպիսին*, 7-րդ և 10-րդ հոդվածների խախտում համարելու հետևանքները: Առաջին և լրջագույն հետևանքն այն է, որ ստացվում է՝ եթե մասնակից պետությունը դատապարտված անձին որոշ ժամանակ պահելուց հետո մահապատիժ է ենթարկում, դա չի համարվում դաշնագրի խախտում, իսկ եթե չի ենթարկում մահապատիժ, խախտում է դաշնագիրը: Դաշնագրի՝ նման արդյունքի հասցնող մեկնաբանությունը չի կարող համապատասխանել դաշնագրի խնդիրներին և նպատակներին: Վերը բերված հետևանքից հնարավոր չի լինի խուսափել, եթե մահապատիժի դատապարտվածներին պահելու կոնկրետ ժամկետ չսահմանվի, որը լրանալուց հետո կենթադրվի, որ մահապատիժի դատապարտվածի պահումը դաժան և անմարդկային վերաբերմունք է: Բաժանարար ժամկետի սահմանումն անշուշտ կսրի խնդիրը և մասնակից պետության համար հստակ վերջնաժամկետ կսահմանի՝ անձին մահապատիժ ենթարկելու առումով, եթե մասնակից պետությունը ցանկանա խուսափել դաշնագրով սահմանված իր պարտավորությունները խախտելուց: Սակայն այս հետևանքի գործառնությունը ոչ թե մահապատիժի դատապարտվածներին պահելու առավելագույն թույլատրելի ժամկետ ամրագրելն է, այլ ժամանակի գործոնը՝ *որպես այդպիսին*, որոշիչ դարձնելը: Եթե առավելագույն թույլատրելի ժամկետն առկախ է մնում, ապա այն մասնակից պետությունները, որոնք ցանկություն են դրսևորում խուսափելու վերջնաժամկետը խախտելուց, կոմիտեի այլ գործերով մախկին որոշումներին անդրադառնալու գաթթակղություն կունենան՝ պարզելու համար, թե մահապատիժի դատապարտվածներին պահելու որ ժամկետներն է կոմիտեն թույլատրելի համարել:

¶ 8.4. Ժամանակի գործոնը՝ *որպես այդպիսին*, որոշիչ դարձնելու, այսինքն՝ այնպիսի գործոն դարձնելու, որը մահապատիժի դատապարտվածներին կալանքի տակ պահելը վերածում է դաշնագրի խախտման, երկրորդ հետևանքն այն է, որ այն մահապատիժը պահպանած մասնակից պետություններին ազդակ է հղում, որ նրանք մահապատիժը սահմանելուց հետո հնարավորինս արագ իրականացնեն այն: Սա այն ազդակը չէ, որ կոմիտեն կուզենար հաղորդել մասնակից պետություններին: Որքան էլ ծանր լինի մահապատիժի դատապարտվածների խցում անցկացրած կյանքը, այն նախընտրելի է մահվանից: Ավելին՝ փորձը ցույց է տալիս, որ մահապատիժի իրականացման ուշացումները կարող են մի շարք գործոնների անհրաժեշտ հետևանքը լինել, որոնցից շատերը կարելի է վերագրել մասնակից պետությանը: Երբեմն մահապատիժի իրականացման մորատորիում է հայտարարվում մինչև մահապատիժի ամբողջական հարցի վերանայումը: Այլ դեպքերում իշխանության գործադիր ճյուղը հետաձգում է մահապատիժների իրականացումը, թեև քաղաքական առումով հնարավոր չի լինում մահապատիժը վերացնել: Կոմիտեն կցանկանար խուսափել նախադեպային իրավունքի այնպիսի գիծ որդեգրելուց, որը կթուլացներ այն գործոնների ազդեցությունը, որոնք կարող են զգալի չափով կրճատել իրականում մահապատիժ ենթարկվող բանտարկյալների թիվը: Անհրաժեշտ է շեշտել, որ այնպիսի մոտեցում որդեգրելով, ըստ որի՝ մահապատիժի դատապարտվածներին երկարատև բանտարկության մեջ պահելը չի կարող, որպես այդպիսին, դաշնագրի համաձայն համարվել դաժան և անմարդկային վերաբերմունք կամ պատիժ, կոմիտեն չի ցանկանում կարծիք ստեղծել, որ բանտարկյալներին երկար տարիներ մահապատիժի դատապարտվածների խցերում պահելը նրանց հանդեպ վերաբերմունքի ընդունելի ձև է: Այն ընդունելի չէ: Այնուամենայնիվ, մահապատիժի դատապարտվածներին պահելու երևույթի դաժանությունն առաջին հերթին դաշնագրով մահապատիժի թույլատրելիության գործառնությ է: Այս իրավիճակը ցավալի հետևանքներ ունի:

¶ 8.5. Վերջապես, որոշելը, որ մահապատիժի դատապարտվածներին երկար ժամանակ բանտարկված պահելը, *որպես այդպիսին*, 7-րդ և 10-րդ հոդվածների խախտում չէ, չի նշանակում, որ մահապատիժի դատապարտվածներին բանտարկված պահելու հետ կապված այլ հանգամանքներ չեն կարող այն վերածել դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժ: Կոմիտեի նախադեպային իրավունքն այնպիսին է, որ երբ նման կերպով պահելու վերաբերյալ համոզիչ հանգամանքներ կան, ապա այն կարող է դաշնագրի խախտում համարվել: Այս նախադեպային իրավունքին հարկ է հետևել հետագա գործերում:

¶ 8.6. Սույն գործում ոչ հեղինակը և ոչ էլ նրա իրավախորհրդատուն չեն ներկայացրել այնպիսի համոզիչ հանգամանքներ (ոչ մահապատժի դատապարտվածին բանտարկված պահելու ժամկետի վերաբերյալ), որոնք պարոն Ջոնսոնի կալանքը կվերածեն 7-րդ և 10-րդ հոդվածների խախտման: Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ նշված դրույթների խախտում տեղի չի ունեցել:

[9.56] Կոմիտեի անդամների զգալի փոքրամասնությունը (Շանե, Ագիլյար Ուրբինա, Բիագվաթի, Բրունի Չելլի և Պրադո Վալեխո) առարկեց, որ մեծամասնության դիրքորոշումը չափազանց անճկուն է: Նրանք նախընտրում էին, որ մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթի համատեղելիությունը որոշվի դեպք առ դեպք սկզբունքով:

[9.57] ՄԻԿ-ի մեծամասնությունը ժամանակ առ ժամանակ գալիս է այն եզրակացության, որ համոզիչ հանգամանքներ կան, որոնք մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը վերածում են 7-րդ հոդվածի խախտման:

«ՖՐԵՆՍԻՍԸ ընդդեմ ՃԱՄԱՅԱՅԻ» (FRANCIS v JAMAICA, 606/94)

¶ 9.1. Կոմիտեն պետք է որոշի, թե արդյոք բանտում հեղինակի հանդեպ վերաբերմունքը՝ հատկապես այն 12 տարիների ընթացքում, որ նա անցկացրել է մահապատժի դատապարտվածների խցում 1981 թ. հունվարի 26-ին իր դատապարտումից մինչև 1992 թ. դեկտեմբերի 29-ին մահապատիժն այլ պատժով փոխարինելը, պարունակո՞ւմ է դաշնագրի 7-րդ և 10-րդ հոդվածների խախտում: «Մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթի» կապակցությամբ կոմիտեն վերահաստատում է իր հիմնավորապես ձևավորված նախադեպային իրավունքը, ըստ որի՝ մահապատժի իրականացման տևական ուշացումները՝ *որպես այդպիսին*, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք չեն: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր գործ հարկ է դիտարկել իր ուրույն հանգամանքների համատեքստում՝ նկատի ունենալով, որ արդարադատության իրականացման ընթացքում ուշացումները, ինչպես նաև տվյալ բանտում պահելու որոշակի պայմանները և դրանց հոգեբանական ազդեցությունը դիտարկվող անձի վրա վերագրելի են մասնակից պետությանը:

¶ 9.2. Սույն գործի վերաբերյալ կոմիտեն եզրակացնում է, որ ճամայկայի վճռաբեկ դատարանի կողմից ավելի քան տասներեք տարի տևողությամբ ժամանակահատվածում գրավոր վճիռ չկայացնելը՝ չնայած պարոն Ֆրենսիսի անունից ներկայացվող պարբերական դիմումներին, պետք է վերագրել մասնակից պետությանը: Թեև տևական ժամանակ մահապատժի սպասումից առաջացած հոգեբանական լարվածությունը տարբեր անձանց վրա կարող է տարբեր աստիճանի ազդեցություն ունենալ, այս գործով կոմիտեի տրամադրության տակ գտնվող փաստերը, ներառյալ հեղինակի շփոթափար և հախուռն մամակագրությունը կոմիտեի հետ ցույց են տալիս, որ նրա հոգեկան առողջությունը բանտարկության ընթացքում մահապատժի սպասելիս լրջորեն վատթարացել է: Հաշվի առնելով հեղինակի՝ բանտային պայմանների նկարագրությունը, ներառյալ բանտապահների կողմից նրան կանոնավոր ծեծի ենթարկելու մասին մեղադրանքները, ինչպես նաև այն ծաղրն ու հոգեկան լարումը, որին նա ենթարկվել էր «մահվան» խցում անցկացրած հինգ օրվա ընթացքում, երբ 1988 թ. փետրվարին սպասում էր իր մահապատժին, ինչը պատշաճ կերպով չի վիճարկվել մասնակից պետության կողմից, կոմիտեն եզրակացնում է, որ այս հանգամանքներն ի հայտ են բերում ճամայկայի՝ դաշնագրի 7-րդ հոդվածով և 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորությունների խախտում:

[9.58]

«ԲԼՈՅՎ ՋՈՆՍՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՃԱՄԱՅԱՅԻ» (CLIVE JOHNSON v JAMAICA, 592/94)

Այս գործով հեղինակն իր դատապարտման ժամանակ 18 տարեկան է եղել, և այդպիսով մահապատժի սահմանումը հակասում է դաշնագրի 6-րդ հոդվածի 5-րդ կետին⁶⁶: Քանի նրա դատապարտումը մահապատժի *աբ ինիցիո*^{*} իրավական ուժ չուներ, նրա՝ որպես մահապատժի դատապարտվածի անցկացրած ութ տարին խախտում է 7-րդ հոդվածը⁶⁷: Պարոն Կրեյցներն ավելի պարզաբանեց որոշումը՝ մեծամասնության համար ընդունելի կարծիքում:

⁶⁶ Հոդված 6(5)-ի վերաբերյալ տես [8.32]:

^{*} ab initio - լատ.՝ ի սկզբանե (*ժան. թարգմ.*):

⁶⁷ Պարբ. 10.4:

[Ե]րբ մասնակից պետությունը խախտում է դաշնագիրը՝ սահմանելով և իրականացնելով մահապատիժ ... մահապատիժի սահմանմամբ կատարված խախտումը զուգակցվում է դատապարտված անձին մահապատիժի դատապարտվածների խցում պահելով...: Մահապատիժն սպասելիս այս բանտարկությունն անշուշտ կարող է դաժան և անմարդկային վերաբերմունք լինել, հատկապես երբ այդ բանտարկությունը տևում է ավելի երկար, քան պահանջվում է մահապատիժի սահմանման մեջ առկա սխալն ուղղելու համար անհրաժեշտ ներպետական դատական գործընթացների համար:

[9.59] Եղել են փոքրամասնությունների ներկայացրած մի քանի կարծիքներ, որոնց համաձայն՝ արձանագրվել են 7-րդ հոդվածի խախտումներ՝ *որպես այդպիսին*, մահապատիժի դատապարտվածների պահելու երևույթի հիման վրա, ինչպես օրինակ՝ հետևյալ գործում:

**«ԼԱ ՎԵՆԴԵՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲԱԳՈՅԻ»
(LA VENDE v TRINIDAD AND TOBAGO, 554/1993)**

Այս գործի կապակցությամբ մեծամասնությունը հետևեց «*Ջոնսոնի*» գործին՝ համարելով, որ բողոքը ներկայացնողի տասնութ տարվա բանտարկությունը մահապատիժի դատապարտվածների խցում 7-րդ հոդվածի խախտում չի ներառում: Պարոնայք Բիազվաթին, Պրադո Վալեխոն և Պոկարը, ինչպես նաև տիկին Շանետը և տիկին Գաիտան դե Պոնթոն անհամաձայնություն հայտնեցին հետևյալ ձևակերպմամբ.

Կոմիտեն ներկա գործերում մեկ անգամ ևս արտահայտում է այն կարծիքը, որ մահապատիժի դատապարտվածներին խցում երկարատև պահելը, *որպես այդպիսին*, դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում չի համարվում: Այդ կարծիքն այնքան էլ ճկուն չէ, ինչը կոմիտեին հնարավորություն չի տա առանձին քննելու յուրաքանչյուր գործի հանգամանքները՝ որոշելու համար, թե արդյոք տվյալ գործում մահապատիժի դատապարտվածների խցում երկարատև բանտարկությունը դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք է՝ վերը նշված դրույթի իմաստով: Տվյալ մոտեցումը կոմիտեին հնարավորություն է տալիս ներկա գործերի առումով եզրակացնել, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումից հետո տասնութ տարվա բանտարկությունը մահապատիժի դատապարտվածների խցում 7-րդ հոդվածի խախտում հայտնաբերելու հիմք չի տալիս: Մենք չենք կարող համաձայնել այդ եզրակացության հետ: Այդքան տարի անձին մահապատիժի սպասման մեջ պահելը՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումից հետո և առանց պատճառների վերաբերյալ մասնակից պետության որևէ բացատրության, ինքնին դաժան և անմարդկային վերաբերմունք է: Մասնակից պետությունը պետք է պարզաբանած լիներ մահապատիժի դատապարտվածին նման երկար ժամկետով պահելու անհրաժեշտությունը կամ հիմնավորող պատճառները: Սակայն ներկա գործերում մասնակից պետությունը որևէ հիմնավորում չի ներկայացրել:

Համանման անհամաձայնություն է արտահայտվել «*Բիկարոոն ընդդեմ Ճամայկայի*» (*Bickaroo v Jamaica, 555/93*) գործի կապակցությամբ, որում մահապատիժն սպասելու ժամանակահատվածը տևել էր տասնվեց տարի: Այդ պատճառով ՄԻԿ-ում նշանակալի կշիռ ունեցող փոքրամասնությունը հակված է կարծելու, որ մահապատիժի դատապարտվածների խցում երկարատև բանտարկությունը *որպես այդպիսին*, խախտում է 7-րդ հոդվածը այն գործերում, որտեղ բանտարկության ժամկետն արտառոտ երկար է⁶⁸:

[9.60] Մարդու մեջ վերահաս մահապատիժով պայմանավորված անհանգստությունը սաստկանում է այն պահից, երբ փաստացի տրվում է մահապատիժին իրականացնելու հրահանգը: Հետևյալ գործերն անդրադառնում են այդ հարցին:

⁶⁸ Տե՛ս նաև պարոն Բանի հայտնած անհամաձայնությունը «*Զոքսն ընդդեմ Կանադայի*» (*Cox v Canada, 539/93*) գործում:

«ՄԱՐՏԻՆՆ ԸՆԴՈՂԵՄ ԾԱՄԱՅԿԱՅԻ» (MARTIN v JAMAICA, 317/88)

¶ 12.3. Հեղինակն այնուհետև պնդում է, որ իր մահապատժի կարգադրության հրապարակումից մինչև դրա կասեցումը 17 օր տևած հետաձգումը, որի ընթացքում իրեն պահել են հատուկ խցում, դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում է: Կոմիտեն կարծում է, որ կարգադրության հրապարակումից հետո դիմում է ներկայացվել մահապատժի կասեցնելու վերաբերյալ, այն հիմքով, որ իրավախորհրդատուն մեկնելու վերաբերյալ միջնորդություն է պատրաստում Գաղտնի խորհրդի դատական կոմիտեին վճռաբեկ բողոք ներկայացնելու նպատակով: Մահապատժի կասեցման դիմումն ի վերջո բավարարվել է: Կոմիտեի տրամադրության տակ եղած տեղեկություններում ոչինչ չի մատնանշվում, որ պատշաճ կերպով չեն կիրառվել համապատասխան ընթացակարգերը, կամ հեղինակին շարունակել են պահել հատուկ խցում մահապատժի կասեցման դիմումը բավարարելուց հետո: Հետևաբար, կոմիտեն կարծում է, որ իր ունեցած փաստերը 7-րդ հոդվածի խախտում չեն բացահայտում:

«ՓԵՆԱՆՏՆ ԸՆԴՈՂԵՄ ԾԱՄԱՅԿԱՅԻ» (PENNANT v JAMAICA, 647/95)

¶ 8.6. ... Հեղինակին երկու շաբաթ պահել են «մահվան» խցում, որտեղից տարել են մահապատժի այն բանից հետո, երբ նրա համար ընթերցվել էր մահապատժին ի կատար ածելու հրահանգը: Կոմիտեն ի գիտություն է ընդունում մասնակից պետության առարկությունը, թե ակնկալելի է, որ նման դեպքում հեղինակին այն պիտի «որոշակի անհանգստություն» պատճառած լիներ, և այնտեղ անցկացված ժամանակը հետևանք է այն բանի, որ «ենթադրաբար» ջանքեր են գործադրվել հեղինակի մահապատժի կասեցնելու ուղղությամբ: Կոմիտեն համարում է, որ հեղինակին «մահվան» խցում երկու շաբաթ պահելու պատճառների վերաբերյալ մասնակից պետության կողմից տրված մանրամասն բացատրության բացակայության պարագայում այն չի կարող համարվել համատեղելի ... դաշնագրի 7-րդ հոդվածի հետ...

Չնայած *Սարտինի* գործով որոշմանը, այժմ տպավորություն է ստեղծվում, որ ՄԻԿ-ն ընդունում է, որ մահապատժին ի կատար ածելու կարգադրությունից հետո «մահվան» խցում պահելն իսկապես 7-րդ հոդվածի խախտում է, եթե այն համարվում է անհիմն երկար: Սպասվող մահապատժի անխուսափելիությունը և դրա հետևանքով ահազանցող անհանգստությունը տարբերվում են մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթի սովորական դեպքերից: Անհիմն երկար պահելը «մահվան» խցում, համաձայն *Փեննանթի* գործի, ընդամենը երկու շաբաթ է: Մասնակից պետությունները չպետք է մահապատժին իրականացնելու կարգադրությունը հրապարակեն ավելի վաղ, քան մահապատժի ակնկալվող օրվանից մի քանի օր առաջ:

[9.61] «*Փրաթը և Մորգանն ընդդեմ ճամայկայի*» (*Pratt and Morgan v Jamaica, 210/86, 225/87*) գործում 7-րդ հոդվածի խախտում արձանագրվեց այն առումով, որ հեղինակներին իրենց մահապատժի կասեցման մասին տեղեկացրել էին քսան ժամ ուշացումով⁶⁹: Հետևաբար, բանտարկյալը կասեցման մասին պետք է տեղեկացվի որքան հնարավոր է շուտ:

**«ԹՈՄՍՈՆՆ ԸՆԴՈՂԵՄ ՍԵՆՏ ՎԻՆՍԵՆՏ ԵՎ ԳՐԵՆԱԴԻՆՆԵՐԻ »
(THOMPSON v ST VINCENT AND THE GRENADINES, 806/98)**

¶ 8.4. Այնքանով, որքանով հեղինակը նպատակ ունի պնդել, որ իր մահապատժին իրականացնելու հրահանգի արձակումից հետո իրեն կախաղանին մոտեցնելու և այնտեղից նախատեսված մահապատժից ընդամենը տասնհինգ րոպե առաջ հեռացնելու փաստը դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք է, կոմիտեն նշում է, որ իր տրամադրության տակ եղած ոչ մի տվյալ չի մատնանշում, որ հեղինակը կախաղանից չի հեռացվել անմիջապես կասեցման որոշումը կայացնելուց հետո: Հետևաբար, կոմիտեն կարծում է, որ իր ունեցած փաստերն այդ առումով 7-րդ հոդվածի խախտում չեն բացահայտում:

Թոմսոնի գործում չկային ապացույցներ, որ մահապատժի կարգադրության արձակման և այն կասեցնելու որոշման միջև ընկած ժամանակը չափազանց երկար է (ինչպես *Փեննանթի* գործում էր), ոչ էլ որևէ

⁶⁹ Պարբ. 13.7:

ուշացում է եղել կասեցման որոշման մասին այն կայացվելուց անմիջապես հետո հեղինակին տեղեկացնելու հարցում (ինչպես *Փենանթի և Մորգանի* գործում էր):

[9.62]

**«Ռ. Ս.-ն ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲԱԳՈՅԻ»
(R.S. v TRINIDAD and TOBAGO, 684/96)**

¶ 7.2. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, որ անմեղսունակ անձին մահապատժի ենթարկելու կարգադրությունը դաշնագրի 6-րդ և 7-րդ հոդվածների խախտում է, կոմիտեն նշում է, որ հեղինակի իրավախորհրդատուն չի պնդում, որ իր պաշտպանյալն անմեղսունակ է եղել մահապատժի սահմանման ժամանակ, և վերջինիս պնդումը վերաբերում է մահապատժի ենթարկելու իրահանգի արձակման ժամանակին: Իրավախորհրդատուն տեղեկություններ է ներկայացրել, որոնցից երևում է, որ մահապատժի կարգադրության ընթերցման ժամանակ հեղինակի հոգեկան վիճակն ակնհայտ է եղել նրան շրջապատողների համար և պիտի որ ակնբախ լիներ բանտի ղեկավարության համար: Այդ տեղեկությունները չեն վիճարկվել մասնակից պետության կողմից: Կոմիտեն այն կարծիքին է, որ այս հանգամանքներում մահապատժի իրականացման կարգադրությունը դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում է:

Մահապատժի կարգադրության և համապատասխան կասեցման միջև ընկած ժամանակահատվածն ընդամենը չորս օր է եղել: Հետևաբար, *Ռ. Ս.-ի* գործն ամրապնդում է այն միտքը, որ հոգեկան հիվանդություն ունեցող անձին մահապատժի ենթարկելու կարգադրություն անելը, որպես *այդպիսին*, 7-րդ հոդվածի խախտում է:

Մահապատժի եղանակը

[9.63]

«ՆԳ-Ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (NG v CANADA, 469/91)

Հեղինակը պնդում էր, որ իր հանձնումը Միացյալ Նահանգներին, որտեղ նա պետք է դատարանի առջև կանգներ սերիական սպանությունների համար և դատապարտվելու դեպքում ամենայն հավանականությամբ ենթարկվեր մահապատժի, խախտում է իր՝ 6-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքը⁷⁰: Հեղինակը պնդում էր նաև, որ այն եղանակը, որով իրեն ամենայն հավանականությամբ մահապատժի կենթարկեն, գազով խեղդելը խախտում է 7-րդ հոդվածը: ՄԻԿ-ի մեծամասնությունը նրան համաձայնեց միայն երկրորդ կետի շուրջ:

¶ 16.1. ... Ներկա գործում պնդում է արվում, որ գազով խեղդելու ճանապարհով մահապատիժը հակասում է մարդկային վերաբերմունքի միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին, և դա այնպիսի վերաբերմունք է, որը խախտում է դաշնագրի 7-րդ հոդվածը: Կոմիտեն նախ նշում է, որ թեև 6-րդ հոդվածի 2-րդ կետը թույլ է տալիս մահապատժի սահմանումը որոշակի սահմանափակ հանգամանքներում, մահապատժի՝ օրենքով նախատեսված յուրաքանչյուր եղանակ պետք է ձևավորված լինի այնպես, որ հակասության մեջ չլինի 7-րդ հոդվածի հետ:

¶ 16.2. Կոմիտեն տեղյակ է, որ, ըստ սահմանման, մահվան դատալծռի յուրաքանչյուր իրականացում կարող է համարվել դաժան և անմարդկային վերաբերմունք՝ դաշնագրի 7-րդ հոդվածի իմաստով. մյուս կողմից՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետը թույլ է տալիս մահապատիժ սահմանելը ամենալուրջ հանցագործությունների համար: Այնուամենայնիվ, կոմիտեն վերահաստատում է, ինչպես արել էր դաշնագրի 7-րդ հոդվածի վերաբերյալ իր թիվ 20[44] Ընդհանուր մեկնաբանությունում (CCPR/C/21/Add. 3, պարբերություն 6), որ մահապատիժ սահմանելիս դատալծռի կատարումը «... պետք է լինի այնպիսին, որ հնարավորինս նվազագույն ֆիզիկական և հոգեկան տառապանք պատճառի»:

¶ 16.3. Սույն գործում հեղինակը մանրամասն տեղեկություններ է ներկայացրել, որ գազով խեղդելու եղանակով իրականացվող մահապատիժը կարող է տևական տառապանք և հոգեվարք պատճառել և չհանգեցնել հնարավորինս արագահաս մահվան, քանի որ ցիանիդի գազով խեղդելը կարող է տևել ավելի քան 10 րոպե . . .

¶ 16.4. Սույն գործով և հենվելով իր տրամադրության տակ եղած տեղեկությունների վրա՝ կոմիտեն եզրակացնում է, որ գազով խեղդելու եղանակով մահապատիժը, եթե հեղինակի համար սահմանվի մահապատիժ, չի համապա-

⁷⁰ Տե՛ս [8.33-8.38]՝ այս հարցի վերաբերյալ ձևավորվող նախադեպային իրավունքի համար:

տասխանում «հնարավորինս նվազագույն ֆիզիկական և հոգեկան տառապանք» պայմանին և դաժան ու անմարդկային վերաբերմունք է, հետևաբար՝ դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում: Համապատասխանաբար Կանադան, որը կարող էր ողջամտորեն կանխատեսել, որ պարոն Նգ.-ն մահապատժի դատապարտվելու դեպքում մահապատժի կենթարկվի այնպիսի եղանակով, որը ներկայացնում է 7-րդ հոդվածի խախտում, չի կատարել դաշնագրով ստանձնած իր պարտավորությունները, երբ հանձնել է պարոն Նգ.-ին՝ չփորձելով ստանալ և չստանալով հավաստիացումներ, որ նա մահապատժի չի ենթարկվի:

[9.64] Պարոնայք Մավրոնատիսը և Սադին, որոնց հետ, ըստ էության, համաձայնեցին պարոնայք Անդոն և Հերնդլը, չհամաձայնեցին այս կետին հետևյալ ձևակերպմամբ.

Մենք չենք կարծում, որ հիմնվելով մեր տրամադրության տակ եղած նյութերի վրա՝ կարելի է պնդել, որ գազով խեղդելու եղանակով իրականացված մահապատիժը դաժան և անմարդկային վերաբերմունք է՝ դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում: 7-րդ հոդվածին հակասում է մահապատժի այնպիսի եղանակը, ինչպիսին է քարկոծելու միջոցով սպանելը, որը նպատակ ունի պատճառել և իրականում պատճառում է երկարատև ցավ ու տառապանք՝ ի հակադրություն 7-րդ հոդվածի:

Մահապատժի ներկայումս կիրառվող յուրաքանչյուր հայտնի եղանակ, ներառյալ մահացու ներարկման միջոցով մահապատիժը, քննադատության է ենթարկվել երկարատև ցավ պատճառելու կամ գործընթացը կրկնելու անհրաժեշտություն առաջացնելու համար: Մենք չենք կարծում, որ կոմիտեն պետք է մահապատժի առումով նման մամուլային դիտարկի, օրինակ՝ որոշի՝ որն է նախընտրելի՝ կարճատև սուր ցավը, թե՞ ավելի մեղմ, բայց երկարատև ցավը, և որը կարող է չափանիշ լինել դաշնագրի խախտման առկայությունը որոշելիս:

ՄԻԿ-ի փոքրամասնություն կազմող անդամների համոզմամբ՝ մահապատժի մեթոդը «դիտավորության» դաժան լինելու դեպքում միայն կարող է խախտել 7-րդ հոդվածը: Սա ԽԴԿ-ի 1-ին հոդվածում ներառված դիտավորության պայմանի արձագանքն է:

[9.65] «*Քոքսն ընդդեմ Կանադայի*» (*Cox v Canada, 539/93*) գործով ՄԻԿ-ը եզրակացրեց, որ մահաբեր ներարկման միջոցով իրականացվող մահապատիժը չի խախտում 7-րդ հոդվածը⁷¹:

[9.66] Իրանի Իսլամական Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն «ափսոսանք է[ր] հայտնում, որ մի շարք մահապատիժներ իրականացվել [են] հրապարակայնորեն»⁷², նշելով, որ հրապարակային մահապատիժները «անմարդկային» կամ առնվազն «նվաստացնող» վերաբերմունք են:

Հանցագործների հանձնում, արտաքսում, հարկադիր հայրենադարձում

[9.67]

ԽԴԿ-ի 3-րդ ՀՈՂՎԱԾ

1. Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի (*հարկադիր հայրենադարձնի*) կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է խոչտանգումների ենթարկվելու վտանգ սպառնալ:

2. Նման հիմքերի առկայությունը որոշելու նպատակով իրավասու իշխանությունները նկատի են առնում գործին առնչվող բոլոր հանգամանքները, ներառյալ, համապատասխան դեպքերում, տվյալ պետությունում մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատում պատկերի գոյությունը:

⁷¹ Պարբ. 17.3:

⁷² (1993) ՄԱԿ-ի փաստաթուղթ, CCPR/C/79/Add. 25, պարբ. 8:

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. Կոմիտեի կարծիքով՝ մասնակից պետությունները չպետք է անհատներին հանձնման, արտաքսման կամ հարկադիր հայրենադարձման միջոցով ենթարկեն խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգին:

[9.68] ԽԴԿ-ի 3-րդ հոդվածն աներկբայորեն կիրառելի է միայն այնպիսի պետություններ հարկադիր վերադարձնելու առումով, որտեղ կանխատեսելի է անձի խոշտանգման ենթարկվելը: «*P. U.-ն ընդդեմ Կանադայի*» գործում (*B.S. v Canada, CAT 166/00*) ԽԴ կոմիտեն հաստատեց, որ 3-րդ հոդվածը կիրառելի է հարկադիր վերադարձը կանխելու համար, եթե վերաբերմունքը չի հասնում խոշտանգման⁷³: Ի հակադրություն՝ թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությունը ցույց է տալիս, որ ՔՔԻՄԴ-ն արգելում է հարկադիր վերադարձը 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունքի բոլոր տեսակների առումով: Չնայած 7-րդ հոդվածով տրված երաշխիքների ակնհայտ ավելի մեծ խորությամբ՝ վտարման և հարկադիր հայրենադարձման հետ կապված բողոքների մեծ մասը ներկայացվել է ԽԴ կոմիտեին, և պատճառը թերևս 3-րդ հոդվածով ապագա վտարվածներին ցուցաբերվող բացահայտ պաշտպանությունն է: Իսկապես, ԽԴ կոմիտեն ներկայացված գործերի մեծ մասը վերաբերում է 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտումներին:

[9.69] «ԹԱԼԱՆ ընդդեմ Շվեդիայի» (TALA v SWEDEN, CAT 43/1996)

Մասնակից պետությունը մերժել է Իրանից հեռացած հեղինակի դիմումը քաղաքական ապաստան տրամադրելու վերաբերյալ և առաջարկել է նրան արտաքսել Իրան: ԽԴ կոմիտեն պաշտպանել է Թալայի ներկայացրած մեղադրանքը, որ նման արտաքսումը 3-րդ հոդվածի խախտում է:

¶ 10.1. Կոմիտեն պետք է ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի որոշի՝ արդյոք բավարար հիմքեր կա՞ն հավատալու, որ պարոն Թալան, Իրան վերադառնալով, կհայտնվի խոշտանգման ենթարկվելու վտանգի տակ: Այդ որոշումը կայացնելիս կոմիտեն պետք է, ըստ 3-րդ հոդվածի 2-րդ կետի, հաշվի առնի բոլոր համապատասխան հանգամանքները, ներառյալ մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատումն պատկերի գոյությունը: Սակայն որոշման նպատակը պարզելն է, թե արդյոք տվյալ անհատը անձամբ կենթարկվի՞ խոշտանգման ռիսկի այն երկրում, ուր ինքը վերադառնում է: Դրանից հետևում է, որ մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատումն պատկերի գոյությունը, որպես այդպիսին, բավարար հիմք չէ որոշելու համար, որ տվյալ անձը, այդ երկրի վերադառնալով, կենթարկվի խոշտանգման վտանգի. անհրաժեշտ է, որ լինեն հավելյալ հիմքեր՝ ցույց տալու համար, որ տվյալ անհատն անձնապես ռիսկի կենթարկվի: Նմանապես, մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատումն պատկերի բացակայությունը չի նշանակում, որ անձը չի կարող համարվել խոշտանգման վտանգի ենթակա իրեն վերաբերող յուրահատուկ հանգամանքներում:

¶ 10.2. Կոմիտեն ի գիտություն է ընդունել մասնակից պետության հավաստիացումը, որ իր իշխանությունները տվյալ անձի վտարել-չվտարելու հարցը որոշելիս գործնականում կիրառում են միևնույն ստուգողական պայմանը, որը նախատեսված է կոնվենցիայի 3-րդ հոդվածով: Այնուամենայնիվ կոմիտեն նշում է, որ հեղինակի գործով Ներգաղթի հարցերով խորհրդի (1990 թ. նոյեմբերի 26-ին) և Օտարերկրացիների բողոքարկման խորհրդի (1992 թ. հունիսի 3-ին և 1995 թ. օգոստոսի 25-ին) կայացրած որոշումների տեքստերը ցույց չեն տալիս, որ պահանջը, ինչպես այն ձևակերպված է կոնվենցիայի 3-րդ հոդվածում (և ինչպես արտացոլված է 1989 թ. «Օտարերկրացիների մասին ակտի» 8-րդ գլխի 1-ին բաժնում), իրականում կիրառվել է հեղինակի ներկայացրած գործի նկատմամբ:

¶ 10.3. Սույն գործի կապակցությամբ կոմիտեն համարում է, որ հեղինակի քաղաքական մասնակցությունը Մոջահեդների ժողովրդական կազմակերպությանը [People's Mujahedin Organisation] և գործունեությունը, նրա կալանավորման և խոշտանգման պատմությունը պետք է հաշվի առնվեն, երբ որոշվում է վերադարձից նրա՝ խոշտանգման վտանգի ենթարկվելու հավանականությունը: Մասնակից պետությունը մատնանշել է հեղինակի ներկայացրած հաղորդման մեջ առկա հակասությունները և անհամապատասխանությունները, սակայն կոմիտեն համարում է, որ հազվադեպ կարելի է լիակատար ճշգրտություն ակնկալել խոշտանգման զոհից, և հեղինակի ներկայացրած փաստերի մեջ գոյություն ունեցող անհամապատասխանությունները կասկած չեն առաջացնում նրա պնդումների ընդ-

⁷³ Պարբ. 7.4: Տե՛ս նաև «Ի. Ս. Օ.-ն ընդդեմ Շվեդիայի» (*I.A.O. v Sweden, CAT 65/97*), պարբ. 14.5. «Վ. Ք. Ն.-ն և Յ. Ն.-ն ընդդեմ Շվեդիայի» (*V.X.N. and H.N. v Sweden, CAT 130-131/99*), պարբ. 13.7:

հանուր ճշմարտացիության վերաբերյալ, քանի որ ցույց է տրվել, որ հեղինակը հետտրավմատիկ համախտանիշ ունի: Ավելին՝ ելնելով բժշկական փաստերից, կոմիտեն նշում է, որ հեղինակի ազդերի սպիները կարող էին առաջացած լինել միայն այրվածքների հետևանքով, իսկ այդ այրվածքները կարող էին պատճառված լինել միայն դիտավորյալմբ այլ անձի կողմից, ոչ թե հեղինակի:

¶ 10.4. Կոմիտեն տեղյակ է Իրանում մարդու իրավունքների հետ կապված լուրջ իրավիճակին, քանի որ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովին այդ մարմնի հատուկ ներկայացուցիչը զեկուցել է, *հ թիվս այլոց*, Իրանի Իսլամական Հանրապետությունում մարդու իրավունքների վիճակի մասին: Կոմիտեն նշում է հանձնաժողովի արտահայտած մտահոգությունը, մասնավորապես, մահապատիժների, խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մեծ թվով դեպքերի կապակցությամբ:

¶ 10.5. Ելնելով այս հանգամանքներից՝ կոմիտեն համարում է՝ բավարար հիմքեր կան հավատալու համար, որ հեղինակը Իրան վերադառնալու դեպքում կհայտնվի խոշտանգման ենթարկվելու վտանգի տակ:

¶ 11. Վերը նշվածի լույսի ներքո, կոմիտեն այն կարծիքին է, որ առկա հանգամանքներում մասնակից պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ պարոն Քավեհ Յարադ Թալային ստիպողաբար Իրան կամ որևէ այլ երկիր վերադարձնելուց, որտեղ վերջինս կենթարկվի արտաքսման կամ Իրան վերադարձվելու իրական ռիսկի:

[9.70] ԽԴ կոմիտեն համանման որոշումների է հանգել *«Խանն ընդդեմ Կանադայի»* (*Khan v Canada, CAT 15/94*) (Կանադան, Խանին Պակիստան արտաքսելով, կխախտեր 3-րդ հոդվածը), *«Ալանն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Alan v Switzerland, CAT 21/95*), *«Այասն ընդդեմ Շվեդիայի»* (*Ayas v Sweden, CAT 97/97*), *«Հայդին ընդդեմ Շվեդիայի»* (*Haydin v Sweden, CAT 101/97*), *«Հ. Դ.-ն ընդդեմ Շվեյցարիայի»* (*H.D. v Switzerland, CAT 112/98*) (3-րդ հոդվածի խախտումներ կարծանագրվելին հեղինակներին Թուրքիա արտաքսելու դեպքում), *«Ս. Ս. Ռ.-ն և Ս. Ս. Ռ.-ն ընդդեմ Շվեդիայի»* (*S.M.R. and M.M.R. v Sweden, CAT 103/98*), *«Էմեյն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Aemei v Switzerland, CAT 34/95*), *«Ֆալակաֆլակին ընդդեմ Շվեդիայի»* (*Falakflaki v Sweden, CAT 89/97*) (3-րդ հոդվածի խախտում՝ հեղինակներին Իրան արտաքսելու հետևանքով), *«Ա.-ն ընդդեմ Նիդերլանդների»* (*A v Netherlands, CAT 91/97*) (3-րդ հոդվածի խախտում՝ կապված Ա.-ին Թունիս վտարելու հետ), *«Մ.-ն ընդդեմ Նիդերլանդների»* (*M. v Netherlands, CAT 41/96*), *«Կիսոկին ընդդեմ Շվեդիայի»* (*Kisoki v Sweden, CAT 41/96*) և *«Մուտոմբոն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Mutombo v Switzerland, CAT 13/93*) (մասնակից պետությունը կխախտեր 3-րդ հոդվածը, եթե հեղինակներին արտաքսեր Ջաիր) գործերով:

[9.71] 3-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված հաղորդումների մեծ մասի դեպքում ԽԴ կոմիտեն եզրակացրել է, որ հեղինակը բավարար կերպով չի հիմնավորել իր արտաքսումից հետո հետապնդման ենթարկվելու կանխատեսումը⁷⁴: ԽԴ կոմիտեն թերևս հակված չէ հակադրվելու ներպետական դատարաններին. դրանք են սովորաբար որոշում նման հարցերը՝ պարզված փաստական հանգամանքների առումով⁷⁵: Որոշ հանգամանքներ կարող են նաև հեղինակի դեմ խոսել: Օրինակ՝ *«Ա. Դ.-ն ընդդեմ Նիդերլանդների»* (*A.D. v Netherlands, CAT 96/97*) գործում հեղինակը պնդում էր, որ իր առաջարկվող վտարումը Շրի Լանկա իրեն կենթարկի այդ երկրում խոշտանգվելու ռիսկի: Նրա պնդումը չընդունվեց ԽԴ կոմիտեի կողմից մասամբ այն պատճառով, որ նախկինում Շրի Լանկայում իր նկատմամբ ոտնձգությունների և խոշտանգման մասին իր ներկայացրած մեղադրանքները վերաբերում էին Շրի Լանկայի նախկին կառավարության գործողություններին: Հաշվի առնելով կառավարության փոփոխությունը՝ վերադարձից հետո նրա ենթադրյալ խոշտանգումը համարվեց չհիմնավորված⁷⁶: *«Ս. Ս.-ն ընդդեմ Նիդերլանդների»* (*S.S. v Netherlands, 191/01*) գործում Շրի Լանկայի կառավարության և Թամիլի ապստամբ խմբավորումների միջև սկսված խաղաղության հաստատման բանակցություններն էապես նվազեցրին Շրի Լանկային թամիլ հեղինակի հանձնումից հետո նրան խոշտանգման ռիսկի ենթարկելու հա-

⁷⁴ Տե՛ս, օրինակ՝ *«Յ.-ն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Y v Switzerland, CAT 18/94*), *«Է. Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի»* (*E.A. v Switzerland, CAT 28/95*), *«Պ. Ք. Լ.-ն ընդդեմ Կանադայի»* (*P.Q.L. v Canada, CAT 57/96*), *«Կ. Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի»* (*K.N. v Switzerland, CAT 94/97*), *«Ջ. Ու. Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի»* (*J.U.A. v Switzerland, CAT 100/97*), *«Ն. Պ.-ն ընդդեմ Ավստրալիայի»* (*N.P. v Australia, CAT 106/98*), *«Ս. Լ. Ն.-ն ընդդեմ Շվեյցարիայի»* (*A.L.N. v Switzerland, CAT 90/97*), *«Ք.-ն, Յ.-ն և Ջ.-ն ընդդեմ Շվեդիայի»* (*X, Y and Z v Sweden, CAT 61/96*) գործերը:

⁷⁵ Տե՛ս նաև [1.47] և [14.50]:

⁷⁶ Պարբ. 7.4:

վանականությունը⁷⁷: «*Չ. Ա. Դ.-ն ընդդեմ Շվեյցարիայի*» (*H.A.D. v Switzerland, 216/99*) գործում ընդունող պետությանը մեղսագրվող նախկին վերաբերմունքի և ներկա օրվա միջև ընկած ժամանակահատվածը (տասնհինգ տարի) ցույց էր տալիս, որ ներկայում իր վերադարձից հետո հեղինակը չի ենթարկվի խոշտանգման ռիսկի⁷⁸:

[9.72] «Չ. Չ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (Z.Z. v CANADA, CAT 123/99)

¶ 8.4. Կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակը որևէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ Աֆղանստան վերադառնալու դեպքում ինքը խոշտանգման ռիսկի կենթարկվի: Կոմիտեն նաև նշում է, որ հեղինակը հայտարարություն չի արել նախկինում իրեն խոշտանգելու մասին: Նա չի պնդել նաև, որ ներգրավված է այնպիսի քաղաքական կամ կրոնական գործունեության մեջ, որը կարող է գրավել Թալիբանի ուշադրությունն այն աստիճանի, որ իրեն կենթարկի խոշտանգման վտանգի:

¶ 8.5. Հեղինակն ընդամենը տեղեկություններ է ներկայացրել Աֆղանստանում առկա ընդհանուր իրավիճակի մասին և պնդել, որ որպես տաջիկ էթնիկական խմբի ներկայացուցիչ՝ Աֆղանստան վերադառնալուց հետո կենթարկվի խոշտանգման: Կոմիտեն ընդունում է, որ Աֆղանստանում որոշ էթնիկ խմբեր դժվարությունների են բախվում, սակայն համարում է, որ տաջիկ էթնիկական խմբին պատկանելու սոսկ պնդումը բավարար չափով չի հիմնավորում հեղինակի վերադառնալուց հետո խոշտանգման ենթարկվելու ռիսկը:

Հետևաբար, այնպիսի խմբի անդամ համոզիսանալու պնդումը, որն ընդհանրապես հետապնդումների է ենթարկվում համապատասխան ընդունող երկրում, հաջողություն չի բերի. հեղինակը պետք է ապացույցներ ներկայացնի իր անձնական ռիսկի վերաբերյալ⁷⁹:

[9.73] ԽԴԿ կոմիտեն անդրադարձել է ԽԴԿ-ի 3-րդ հոդվածին առնչվող ապացույցների խնդրին՝ իր թիվ 1 Ընդհանուր մեկնաբանությունում:

ԽԴԿ ԹԻՎ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Գործի էական հանգամանքների նկատմամբ 3-րդ հոդվածի կիրառության առումով հեղինակն է կրում ապացուցելի գործ ներկայացնելու պարտականությունը: Սա նշանակում է, որ հեղինակի դիրքորոշումը պետք է այնպիսի փաստական հիմք ունենա, որը բավարար լինի մասնակից պետության պատասխանը պահանջելու համար:

¶ 6. Հաշվի առնելով, որ մասնակից պետությունը և կոմիտեն պարտավոր են գնահատել, թե արդյոք բավարար հիմքեր կա՞ն հավատալու, որ հեղինակը կենթարկվի խոշտանգման վտանգի այնտեղ, ուր նրան պիտի արտաքսեն, վերադարձնեն կամ հանձնեն, խոշտանգման ռիսկը պետք է գնահատվի այնպիսի հիմքերով, որոնք ավելին են, քան պարզապես տեսությունը կամ կասկածը: Սակայն պարտադիր չէ, որ ռիսկը բավարարի մեծ հավանականության պայմանը:

¶ 7. Հեղինակը պետք է պարզի, որ ինքը խոշտանգման վտանգի տակ է, դրան հավատ ընծայելու հիմքերը նկարագրված ձևով բավարար են, նման վտանգն անձնական է և ներկայումս առկա է: Այս հարցին վերաբերող բոլոր համապատասխան տեղեկությունները կարող են ներկայացվել կողմերից յուրաքանչյուրի կողմից:

¶ 8. Հետևյալ տեղեկությունները, որոնց ցանկն ամբողջական չէ, համարվում են համապատասխան.

(ա) Արդյոք տվյալ երկրի վերաբերյալ կա՞ն մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատուն պատկեր ստեղծող փաստեր (տե՛ս հոդված 3, կետ 2):

⁷⁷ Պարբ. 6.7, տե՛ս նաև «Ու. Մ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (*U.S. v Finland, 197/02*), պարբ. 7.7:

⁷⁸ Պարբ. 8.6:

⁷⁹ Տե՛ս նաև «Ս. Մ.-ն և Ս. Մ.-ն ընդդեմ Շվեդիայի» (*S.S. and S.A. v Sweden, CAT 142/99*), պարբ. 6.6:

(բ) Արդյոք հեղինակն անցյալում պետական պաշտոնյայի կամ պաշտոնական դիրքերից հանդես եկող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ կամ համաձայնությամբ կամ թողտվությամբ ենթարկվե՞լ է խոշտանգման կամ դաժան վերաբերմունքի: Եթե այո, խոսքը ոչ վաղ անցյալի՞ մասին է:

(գ) Արդյոք կա՞ն բժշկական կամ այլ փաստեր, որոնք հիմնավորում են հեղինակի պնդումը, որ անցյալում իրեն խոշտանգել են կամ դաժան վերաբերմունք են ցույց տվել իր նկատմամբ: Արդյոք խոշտանգումը կողմնակի հետևանքներ ունեցե՞լ է:

(դ) Արդյոք վերը բերված (ա) կետում նկարագրված իրավիճակը փոխվե՞լ է: Արդյոք մարդու իրավունքների առումով ներքին իրադրությունը փոփոխության ենթարկվե՞լ է:

(ե) Արդյոք հեղինակը տվյալ երկրի ներսում կամ երկրից դուրս ներգրավվա՞ծ է եղել այնպիսի քաղաքական կամ այլ գործունեության մեջ, ինչը, ըստ ամենայնի, նրան հատկապես խոցելի է դարձնում խոշտանգման վտանգի տակ հայտնվելու առումով, եթե նա արտաքսվի, վերադարձվի կամ հանձնվի խնդրո առարկա երկիր:

(զ) Արդյոք փաստեր կա՞ն հեղինակի վստահելիության վերաբերյալ:

(է) Արդյոք հեղինակի պնդման (պահանջի) մեջ անհամապատասխանություններ կա՞ն: Եթե այո, դրանք գործի առումով էական են:

¶ 9. Նկատի ունենալով, որ խոշտանգման դեմ կոմիտեն ոչ թե բողոքարկման, քվազիդատական կամ վարչական մարմին է, այլ հենց մասնակից պետությունների կողմից ստեղծված մշտադիտարկման (մոնիթորինգի) մարմին, որն օժտված է ընդամենը դեկլարատիվ լիազորություններով, դրանից հետևում է, որ.

(ա) կոմիտեի 3-րդ հոդվածի համաձայն՝ կոմիտեի նախադեպային իրավունքը կիրառելիս էական նշանակություն է տրվում տվյալ մասնակից պետության մարմինների կողմից ձեռք բերված փաստական հանգամանքներին. սակայն

(բ) կոմիտեն չի սահմանափակվում այդ տեղեկություններով, այլ փոխարենը կոմիտեի 22-րդ հոդվածի 4-րդ կետով լիազորված է փաստերի ազատ գնահատում իրականացնելու՝ հիմնվելով յուրաքանչյուր գործի հանգամանքների ամբողջական համախմբի վրա:

[9.74] 3-րդ հոդվածի խախտումներ արձանագրելիս ԽԴ կոմիտեն հաշվի է առել առաջարկված «ընդունող» երկրների վատ ցուցանիշները՝ մարդու իրավունքների առումով: Իր թիվ 1 Ընդհանուր մեկնաբանության մեջ ԽԴ կոմիտեն էքստրապոլացիա է կատարում ընդունող պետության համապատասխան բնութագրերի վրա:

ԹԻՎ 1 ԽԴԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. Կոմիտեն այն կարծիքին է, որ 3-րդ հոդվածում տեղ գտած «այլ երկիր» արտահայտությունը վերաբերում է այն երկրին, ուր արտաքսվում է, վերադարձվում կամ որին հանձնվում է խնդրո առարկա անձը, ինչպես նաև որևէ այլ երկրի, ուր հեղինակը կարող է ի հետևանս արտաքսվել, վերադարձվել կամ որին կարող է հանձնվել:

¶ 3. 1-ին հոդվածի համաձայն՝ 3-րդ հոդվածի 2-րդ կետում նշված չափանիշը՝ «մարդու իրավունքների կոպիտ, ահադակող կամ զանգվածային խախտումների հաստատում պատկերը» վերաբերում է միայն պետական պաշտոնյայի կամ պաշտոնական դիրքերից հանդես եկող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ կամ համաձայնությամբ կամ թողտվությամբ իրականացված խախտումներին:

Հետևյալ գործերը ներկայացնում են ապացույցների օրինակներ, որոնք ընդունելի են ԽԴ կոմիտեի կողմից 3-րդ հոդվածի խախտում արձանագրելիս:

[9.75]

**«ԱՐԿԱՈՒԶ ԱՐԱՆԱՆ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ»
(ARKAUZ ARANA v FRANCE, CAT 63/97)**

Հեղինակը Ֆրանսիայում դատապարտվել է Իսպանիայի բասկ անջատողականների ահաբեկչական «ԷՏԱ» խմբի անդամ համդիսանալու համար: Ֆրանսիան հեղինակին վտարել է Իսպանիա: Հեղինակը պնդում էր, որ իր վտարումը խախտել է 3-րդ հոդվածը: ԽԴ կոմիտեն համաձայնեց:

¶ 11.4 Կոմիտեն հիշեցնում է, որ կոնվենցիայի 19-րդ հոդվածով Իսպանիայի ներկայացրած երրորդ պարբերական զեկույցը դիտարկելիս կոմիտեն մտահոգություն է արտահայտել խոշտանգման և դաժան վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ հաճախակի ստացվող բողոքների կապակցությամբ: Կոմիտեն նշում է նաև, որ անկախ այն պայմանների իրավական երաշխիքներից, որոնցով դրանք կարող էին սահմանվել, եղել են առանց հաղորդակցության հնարավորության տևական կալանքի դեպքեր, երբ կալանավորված անձը չի կարողացել ստանալ իր ընտրած իրավաբանի օգնությունը, ինչը թերևս նպաստում է խոշտանգման գործելակերպին: Ստացված բողոքների մեծ մասը վերաբերում է նման ժամանակահատվածներում տեղ գտած խոշտանգմանը: Կոմիտեի կողմից համանման մտահոգություններ արդեն իսկ արտահայտվել էին երկրորդ պարբերական զեկույցի ուսումնասիրության ընթացքում, ինչպես նաև Մարդու իրավունքների կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներում, որոնք վերաբերում էին Իսպանիայի ներկայացրած չորրորդ պարբերական զեկույցին՝ համաձայն Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 40-րդ հոդվածի: Ավելին՝ խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) նույնպես տեղեկացնում է խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ 1991-1994 թթ. Իսպանիա կատարած իր այցելությունների ընթացքում ստացված բողոքների մասին, մասնավորապես այն անձանցից, ովքեր կալանավորված էին ահաբեկչական գործողությունների համար: ԽԿԿ-ն եզրակացնում է, որ դեռևս վաղ է հաստատել, թե խոշտանգումը և խիստ վատ վերաբերմունքը վերացվել են Իսպանիայում:

¶ 11.5. Կոմիտեն ի գիտություն է ընդունում այն հատուկ հանգամանքները, որոնց պարագայում տեղի է ունեցել հեղինակի վտարումը: Առաջին՝ հեղինակը դատապարտվել է Ֆրանսիայում «ԷՏԱ»-ի հետ ունեցած կապերի համար, հետախուզվել է Իսպանիայի ոստիկանության կողմից, և կասկածներ են եղել, համաձայն մամուլի, որ նա այդ կազմակերպության մեջ կարևոր դիրք է զբաղեցնում: Կասկածներ են եղել նաև, արտահայտված մասնավորապես որոշ հասարակական կազմակերպությունների կողմից, որ համանման հանգամանքներում, ինչպիսին հեղինակին են, այլ անձինք Իսպանիա վերադարձվելուց հետո և առանց հաղորդակցության հնարավորության կալանքի ընթացքում ենթարկվել են խոշտանգման: Վտարումն իրականացվել է համաձայն վարչական մի ընթացակարգի, որը հետագայում Պոլի* վարչական դատարանի կողմից ճանաչվել է ապօրինի, և ենթադրում էր ուղղակի հանձնում ոստիկանությունից ոստիկանություն՝ առանց դատական իշխանությունների միջամտության և հեղինակին հնարավորություն էր տալիս հաղորդակցվել իր ընտանիքի կամ իրավաբանի հետ: Դա նշանակում է, որ կալանավորված իրավունքները չեն հարգվել, և հեղինակը հայտնվել է այնպիսի դրության մեջ, երբ նա հատկապես խոցելի է հնարավոր դաժան վերաբերմունքի առումով: Կոմիտեն ընդունում է հանցավորության դեմ պայքարի և այդ նպատակով արդյունավետ միջոցների համաձայնեցման համար պետությունների միջև սերտ համագործակցության անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, կոմիտեն կարծում է, որ նման միջոցները պետք է լիովին ապահովեն խնդրո առարկա անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների հարգումը:

¶ 12. Ասվածի լույսի ներքո կոմիտեն հանգել է այն տեսակետին, որ հեղինակի արտաքսումը Իսպանիա այն պայմաններում, որոնցում այն տեղի է ունեցել, մասնակից պետության կողմից կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է:

Ի տարբերություն *Արկաուզ Արանայի* գործի՝ «*Գ. Կ.-ն ընդդեմ Շվեյցարիայի*» (*G.K. v Switzerland, CAT 219/02*) գործը քննելիս ԽԴ կոմիտեն որոշեց, որ «ԷՏԱ»-ի կասկածյալի արտաքսումը Իսպանիա չի խախտել կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Գ. Կ.-ի գործում արտաքսման որոշմանը զուգահեռ կային ընթացակարգային անվտանգության երաշխիքներ, ինչպես օրինակ՝ արտաքսելու վերաբերյալ սկզբնական վարչական որոշման դատական կարգով վերանայումը, ինչը, հետևաբար, այդ գործը տարբերում է *Արկաուզ Արանայի* գործից: Գ. Կ.-ի գործում «իրավական երաշխիքները [ինչպես նաև դատական քննությունը Շվեյցարիայում՝ արտաքսող երկրում] բավարար էին ... խուսափելու համար [հեղինակին] այնպիսի դրության մեջ դնելուց, երբ վերջինս հատկապես խոցելի կլիներ Իսպանիայի իշխանությունների կողմից հնարավոր վատ վերաբերմունքի առումով»⁸⁰:

* Քաղաք Ֆրանսիայում (*ժան. քարզմ.*):

⁸⁰ Պարբ. 6.6:

[9.76]

«Ա. Ս.-ն ընդդեմ Շվեդիայի» (A.S. v SWEDEN, CAT 149/99)

¶ 8.3. Կոմիտեն պետք է ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի որոշի, թե բավարար հիմքեր կա՞ն հավատալու, որ հեղինակը, Իրան վերադառնալով, կհայտնվի խոշտանգման ենթարկվելու վտանգի տակ: Այդ որոշումը կայացնելիս կոմիտեն պետք է հաշվի առնի բոլոր համապատասխան նկատառումները՝ համաձայն կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի, ներառյալ մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատումն պատկերի գոյությունը: Սակայն որոշման նպատակը պարզելն է, թե արդյոք տվյալ անհատն անձամբ կենթարկվի՞ խոշտանգման ռիսկի այն երկրում, ուր ինքը վերադառնում է: Դրանից հետևում է, որ մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատումն պատկերի գոյությունը՝ որպես այդպիսին, բավարար հիմք չէ որոշելու համար, որ տվյալ անձը կենթարկվի խոշտանգման վտանգի՝ այդ երկիր վերադառնալով. անհրաժեշտ են հավելյալ հիմքեր՝ ցույց տալու համար, որ տվյալ անհատն անձամբ կենթարկվի ռիսկի: Նմանապես, մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատումն պատկերի բացակայությունը չի նշանակում, որ անձը չի կարող համարվել խոշտանգման վտանգի ենթակա իրեն վերաբերող յուրահատուկ հանգամանքներում:

¶ 8.4. Հեղինակի ներկայացրած տեղեկություններից կոմիտեն եզրակացնում է, որ նա հանդիսանում է նահատակի այրի և, որպես այդպիսին, աջակցել և ղեկավարել է նահատակների «Բոնյադ-ե Շահիդ» (Bonyad-e Shahid) կոմիտեն: Կոմիտեն ի գիտություն է ընդունում նաև հեղինակի պնդումը, որ իրեն սիդե կամ մութահ ամուսնություն* են պարտադրել, ստիպել են ամուսնական դավաճանություն կատարել և դրա համար դատապարտել են մահվան՝ քարկոծման միջոցով: Թեև հեղինակի՝ Դանիայում ապաստան փնտրող որդու վերջերս տված ցուցմունքին կոմիտեն մոտենում է ծայրահեղ զգուշավորությամբ, այդուհանդերձ կոմիտեն կարծում է, որ տրամադրված հավելյալ տեղեկությունները հաստատում են հեղինակի ներկայացրածը:

¶ 8.5. Կոմիտեն ի գիտություն է ընդունում, որ մասնակից պետությունը կասկածի է ենթարկում հեղինակի վստահելիությունը նախ այն պատճառով, որ վերջինս չի ներկայացնում ստուգման ենթակա տեղեկություններ, և այդ համատեքստում մասնակից պետությունը հղում է անում միջազգային չափորոշիչներին, այսինքն՝ ՄԱՓԳՀԳ «Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկին», որի համաձայն՝ ապաստան որոնողը պարտավոր է ջանքեր գործադրել իր հայտարարություններն առկա փաստերով հիմնավորելու ուղղությամբ և բավարարող բացատրություն ներկայացնել փաստերի ամեն մի բացակայության համար:

¶ 8.6. Կոմիտեն կողմերի ուշադրությունն է հրավիրում 1997 թ. նոյեմբերի 21-ին ընդունված իր Ընդհանուր մեկնաբանության վրա, որը վերաբերում է կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառությանը 22-րդ հոդվածի համատեքստում, համաձայն որի՝ հաղորդման հեղինակն է կրում ապացուցելի գործ ներկայացնելու պարտականությունը: Կոմիտեն ի գիտություն է ընդունում մասնակից պետության այն դիրքորոշումը, ըստ որի՝ հեղինակը չի կատարել ստուգելի տեղեկություններ ներկայացնելու իր պարտականությունը, որը հնարավորություն կտար նրան օգտվելու անմեղության կանխավարկածից: Այնուամենայնիվ, կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակը բավարար մանրամասներ է ներկայացրել իր *սիդե* կամ *մութահ* ամուսնության և ենթադրվող ձեռքապաշտության վերաբերյալ, ինչպես օրինակ՝ անձանց անուններ, նրանց զբաղեցրած պաշտոնները, ամսաթվեր, հասցեներ, ոստիկանության բաժանմունքի անվանումը և այլն, որոնք կարող էին ստուգվել և որոշ չափով ստուգվել են ներգաղթի հարցերով զբաղվող Շվեդիայի իշխանությունների կողմից, որպեսզի փոխանցեն ապացուցելու պարտականությունը: Այս համատեքստում կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետությունը բավարար ջանքեր չի գործադրել՝ որոշելու համար, թե կա՞ն բավարար հիմքեր հավատալու, որ հեղինակը խոշտանգման վտանգի ենթակա կլինի:

¶ 8.7. Մասնակից պետությունը չի վիճարկում, որ Իրանում տեղի են ունեցել մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումներ: Կոմիտեն ի գիտություն է ընդունում, *ի թիվս այլոց*, Մարդու իրավունքների հանձնաժողովի հատուկ ներկայացուցչի 2000 թ. հունվարի 18-ի զեկույցը Իրանում մարդու իրավունքների դրության մասին (E/CN.4/2000/35), որում նշվում է, որ թեև կանանց կարգավիճակի առումով նշանակալի առաջընթաց է նկատվում Իրանում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը և վերապատրաստումը, «աննշան առաջընթաց է նկատվում հավասարության մյուս համակարգային խոչընդոտների» և «հասարակությունում հայրիշխանական տրամադրությունները վերացնելու» առումով: Այնուհետև նշվում է, որ տվյալ զեկույցը և հասարակական կազմակերպությունների բազմաթիվ զեկույցներ հաստատում են, որ վերջերս ամուսնացած կանայք ամուսնական դավաճանության համար դատապարտվել են քարկոծելու միջոցով մահվան:

* Շիա մահմեդականների մոտ ընդունված ժամանակավոր ամուսնություն, որը կարող է տևել մի քանի ժամից մինչև մի քանի տարի: Բառացի «սիդե» արաբերեն նշանակում է բանաձև (որն արտասանում է մոլլան ամուսնությունը վավերացնելիս), և «մութահ»՝ ամուսնություն (իրականում պետք է լինի «նիկա մութահ»՝ ամուսնություն հաճույքի համար): Սուենի մահմեդականներն այն չեն ընդունում՝ համարելով պոռնությունն օրինականացնելու միջոց (*ժան. քարգան.*):

¶ 9. Համարելով, որ հեղինակի տված նկարագրությունը համապատասխանում է կոմիտեի ունեցած տեղեկություններին մարդու իրավունքների առումով Իրանում առկա իրավիճակի վերաբերյալ, բացի այդ, հեղինակը ճշմարտաման բացատրություններ է տվել որոշակի մանրամասներ ներկայացնելու կամ ներկայացնել չկարողանալու մասին, որոնք կարող էին գործի համար էական նշանակություն ունենալ, կոմիտեն այն կարծիքին է, որ ներկա հանգամանքներում մասնակից պետությունը պարտավոր է, կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն, ձեռնպահ մնալ հեղինակին ստիպողաբար Իրան կամ որևէ այլ երկիր վերադարձնելուց, որտեղ նա կենթարկվի Իրան արտաքսվելու կամ վերադարձվելու ռիսկին:

[9.77] «ԱՀՄԵԴ ՔԱՐՈՒԻՆ ընդդեմ Շվեդիայի» (AHMED KAROUI v SWEDEN, CAT185/01)

¶ 8. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կոմիտեն պետք է պարզի, թե արդյոք բավարար հիմքեր կա՞ն հավատալու, որ հեղինակը, Թունիս վերադառնալով, կենթարկվի խոշտանգման վտանգի: Այդ անելու համար կոմիտեն պետք է, ըստ 3-րդ հոդվածի 2-րդ կետի, հաշվի առնի բոլոր համապատասխան հանգամանքները, ներառյալ մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող կամ զանգվածային խախտումների հաստատուն պատկերի գոյությունը: Ավելին՝ կոմիտեն պետք է որոշի, թե արդյոք պարոն Քարուիի արտաքսումը Թունիս ձերբակալության և խոշտանգման իրական և անձնական ռիսկի ենթարկվելու կանխատեսելի հետևանք կունենա՞, եթե հատկապես նկատի առնվի նրա դեմ *ին արսենցիա** կայացված վճիռը:

¶ 9. Կոմիտեն հղում է անում 1997 թ. Թունիսի ներկայացրած զեկույցի իր ուսումնասիրությանը, որում կոմիտեն մտահոգություն էր հայտնել ոստիկանության և անվտանգության ծառայությունների կողմից կիրառվող խոշտանգման և դաժան ու անմարդկային վերաբերմունքի լայն տարածում ստացած դրսևորումների կապակցությամբ: Մարդու իրավունքների վերաբերյալ ավելի ուշ պատրաստված զեկույցները, որոնք ստացվել են վստահելի աղբյուրներից, ցույց են տալիս, որ Թունիսում դեռևս առկա է քաղաքական ընդդիմադիր գործունեության, ներառյալ Ալ Նադիա [Al-Nahdha] շարժման հետ կապեր ունենալու համար մեղադրվող անձանց ձերբակալելու, կալանավորելու, խոշտանգելու և նրանց նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու գործելակերպ:

¶ 10. Կոմիտեն ի գիտություն է ընդունում մասնակից պետության ներկայացրած փաստարկները, որ Շվեդիայում ապաստան ստանալու գործընթացում հայցվորի ներկայացրած տեղեկություններում տեղ գտած անհամապատասխանությունները կասկած են հարուցում նրա պնդումների ճշմարտացիության կապակցությամբ: Այնուամենայնիվ կոմիտեն կարևորություն է տալիս այն բացատրություններին, որոնք հայցվորը ներկայացրել է այդ անհամապատասխանությունների վերաբերյալ, և կրկնում է իր նախադեպային իրավունքը, ըստ որի՝ հազվադեպ կարելի է լիակատար ճշգրտություն ակնկալել խոշտանգման գոհից: Կոմիտեն անհնարին է համարում հայցվորի ներկայացրած որոշ փաստաթղթերի վավերականությունը ստուգելը: Սակայն նկատի ունենալով հայցվորի ներկայացրած նշանակալի թվով վստահելի փաստաթղթերը, ներառյալ բժշկական գրառումները, Շվեդիայի «Ամենաթի Ինթերնեյշնլի» տրամադրած գորակցության մամակը, Ալ Նադիայի ղեկավարից ստացված հաստատումը, կարծում է, որ հայցվորը կարող է օգտվել անմեղության կանխավարկածից, քանի որ բավարար քանակությամբ վստահելի տեղեկություններ է ներկայացրել, որպեսզի ապացուցման պարտականությունը փոխադրվի մեղադրվող կողմի վրա: Կոմիտեն կարևորություն է տալիս անցյալում տեղ գտած խոշտանգումների բժշկական և իրավական վկայակոչումներին և այն ռիսկի գնահատմանը, որ հայցվորի Թունիս վերադառնալուց և նրան կալանավորելուց հետո խոշտանգման կենթարկեն 1999 թ. սեպտեմբերի 15-ի դատավճռի համաձայն կամ որպես Ալ Նադիայի անդամի և Թունիսի ներկայիս կառավարության քաղաքական հակառակորդի:

¶ 11. Այս հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն համարում է՝ բավարար հիմքեր կան հավատալու, որ հայցվորը Թունիս վերադարձվելու դեպքում կհայտնվի խոշտանգման ենթարկվելու սպառնալիքի տակ:

[9.78] «Հ.Ք.Հ.-ն ընդդեմ Շվեդիայի» (H.K.H. v SWEDEN, CAT 204/02)

Ի տարբերություն վերը բերված գործերի՝ այս դեպքը հեղինակի կողմից 3-րդ հոդվածի առնչությամբ բողոքը հիմնավորել չկարողանալու դասական օրինակ է.

¶ 6.3. Կոմիտեն նշում է, որ բողոքը ներկայացնողի՝ Իրան վերադառնալու դեպքում խոշտանգման անձնական ռիսկի ենթարկվելու մտավախության հիմնական պատճառն այն է, որ նա Թեհրանից իր մեկնելուց առաջ ենթադրաբար

* in absentia- լատ.՝ բացակայությամբ (ծան. թարգմ.):

սպանել է զբոսայգիներից մեկի պահակին: Հայցվորն ընդունում է, որ հակասական տեղեկություններ է հաղորդել մասնակից պետությանը քաղաքական գործունեությանն իր ենթադրյալ մասնակցության վերաբերյալ, ինչը վերագրում է խոշտանգման ազդեցությանը, սակայն պնդում է, որ զբոսայգում տեղի ունեցած պատահարի նկարագրության առումով երբևէ անհամապատասխանություն թույլ չի տվել: Կոմիտեն նշում է, որ հայցվորը ներկայացրել է բժշկական տեղեկանք, որում արձանագրված է, որ նրա մարմնի վրա հետքեր կան, սակայն տեղեկանքում չի նշվում, որով կհիմնավորվեր հայցվորի պնդումը, թե ինքը տառապում է հետտրավմատիկ համախտանիշից, ինչը խոշտանգման հետևանք է: Իսկապես, կոմիտեն արձանագրում է մասնակից պետության փաստարկը, որ հայցվորը խոշտանգման որևէ դեպքի մասին չի նշել մինչև Օտարերկրացիների բողոքարկման խորհրդին բողոք բերելը և նույնիսկ այդ ժամանակ ենթադրյալ խոշտանգման վերաբերյալ մանրամասներ չի ներկայացրել: Հայցվորը խոշտանգման որևէ դեպքի վերաբերյալ մանրամասներ չի ներկայացրել նաև կոմիտեին: Հետևաբար, կոմիտեն դժվարանում է հավատալ, որ մասնակից պետությանը և կոմիտեին տրամադրած տեղեկություններում տեղ գտած անհամապատասխանությունները խոշտանգման հետևանք են: Ի լրումն և հակառակ հայցվորի պնդման՝ կոմիտեն նշում է, որ հայցվորն անհետևողական է նաև զբոսայգում տեղի ունեցած պատահարը նկարագրելիս, ներառյալ իր ընկերուհու մասին չնշելը մինչև 2002 թ. կառավարությանը ներկայացրած իր դիմումը: Կոմիտեն նաև համարում է, որ հայցվորը բավականաչափ չի պարզաբանել իր պնդումներում տեղ գտած մեծ թվով այլ անհամապատասխանություններ, ներառյալ մոր մահվան և Իրանից մեկնելու հանգամանքները, ինչը կոմիտեի մեջ նրա վստահելիության հանդեպ կասկածներ է առաջացնում: Վերը բերվածը հաշվի առնելով և ընդունելով հանդերձ, որ Իրանում գոյություն ունեն մարդու իրավունքների համատարած և շարունակական խախտումներ, կոմիտեն կարծում է՝ հայցվորը չի ապացուցել, որ ինքն անձամբ կհայտնվի կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով խոշտանգման ենթարկվելու կանխատեսելի, իրական և անձնական ռիսկի դեմ հանդիման:

[9.79] «ՔՈՐԲԱՆՆ ընդդեմ ՇՎԵԴԻԱՅԻ» (KORBAN v SWEDEN, CAT 88/97)

Այս գործը վերաբերում է 3-րդ հոդվածի հետ այնպիսի պետություն վերադարձի համատեղելիությանը, որտեղից անձի՝ մեկ այլ երկրի վտարվելու հավանականությունը մեծ է, ուր նա կարող է ենթարկվել խոշտանգման:

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ իր վերադարձը Իրաք Շվեդիայի կողմից խոշտանգման դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում կլինի, քանի որ վտանգ կա, որ ինքն այդ երկրում կծերբակալվի և կենթարկվի խոշտանգման: Նա նաև պնդում է, որ քանի որ Հորդանանում բնակվելու թույլտվություն չունի, այդ երկրի վերադառնալն անվտանգ չէ իր համար, և վախենում է, որ իրեն այդտեղից կուղարկեն հետ՝ Իրաք, քանի որ Հորդանանի ոստիկանությունը [sic] սերտորեն համագործակցում է Իրաքի իշխանությունների հետ:

ԽԴ կոմիտեն եզրակացրեց, որ Իրաք վտարումը ԽԴ-ի 3-րդ հոդվածի խախտում կլինի: Հորդանան վտարելու առաջարկության կապակցությամբ կոմիտեն դարձյալ հեղինակի օգտին որոշում կայացրեց.

¶ 6.5. Կոմիտեն ի գիտություն է ընդունում, որ Շվեդիայի ներգաղթային իշխանությունները կարգադրել են արտաքսել հեղինակին Հորդանան, և մասնակից պետությունը ձեռնպահ է մնացել հեղինակին Հորդանանից Իրաք վտարելու ռիսկը գնահատելուց: Ինչպես երևում է կողմերի ներկայացրածից, այնուամենայնիվ մեծ ռիսկը չի կարելի բացառել՝ նկատի առնելով տարբեր աղբյուրների, ներառյալ ՄԱՓԳԳ-ի, կատարած գնահատումները, հենվելով զեկույցների վրա, ըստ որոնց՝ որոշ իրաքցիներ իրենց կամքին հակառակ հետ են ուղարկվել Իրաք Հորդանանի իշխանությունների կողմից, հորդանանցի կնոջ հետ ամուսնությունը չի երաշխավորում Հորդանանում բնակության թույլտվությունը, և իրավիճակը ՄԱՓԳԳ-ի և Հորդանանի իշխանությունների միջև Հորդանանում փախստականների իրավունքների վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո չի բարելավվել: Մասնակից պետությունն ընդունել է, որ Իրաքի քաղաքացիները, որոնք փախստականներ են Հորդանանում, մասնավորապես նրանք, ովքեր Հորդանան են վերադարձվել եվրոպական որևէ երկրից, լիովին պաշտպանված չեն Իրաք վտարվելուց:

¶ 7. Վերը նշվածի լույսի ներքո կոմիտեն հանգել է այն կարծիքի, որ առկա պայմաններում մասնակից պետությունը հեղինակին ստիպողաբար Իրաք չվերադարձնելու պարտավորություն է կրում: Նա նաև պարտավորություն է կրում ձեռնպահ մնալու հեղինակին Հորդանան վերադարձնելուց՝ նկատի առնելով այդ երկրից Իրաք արտաքսվելու ռիսկը: Այդ կապակցությամբ կոմիտեն հղում է անում կոնվենցիայի 3-րդ հոդվածի իրականացմանը վերաբերող Ընդհանուր մեկնաբանության 2-րդ պարբերությանը՝ 2-րդ հոդվածի համատեքստում, համաձայն որի՝ «այլ երկիր» արտահայտությունը վերաբերում է այն երկրին, ուր արտաքսվում, վերադարձվում կամ որին հանձնվում է խնդրո առարկա անձը, ինչպես նաև ցանկացած այլ երկրի, ուր հեղինակը կարող է այդ հետևանքով արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել» [9.74]: Ավելին՝ կոմիտեն նշում է, որ թեև Հորդանանը կոնվենցիայի մասնակից երկիր է,

22-րդ հոդվածում նշված հայտարարությունը չի արել⁸¹: Յետևաբար, հեղինակը հնարավորություն չի ունենա մոր հաղորդում ներկայացնելու կոմիտեին, եթե կանգնի Հորդանանից Իրաք վտարվելու սպառնալիքի առջև:

Այսպիսով Հորդանան վտարումը կխախտի 3-րդ հոդվածը, թեև հեղինակը երբեք չի պնդել, որ Հորդանանում կենթարկվի խոշտանգման ռիսկի: Փոխարենը՝ վախեցել է Հորդանանից Իրաք հետագա վտարումից:

[9.80] Ընդհանուր առմամբ, ԽԴ կոմիտեն, երբ պետության ներսում համապատասխան դատաիրավական գործընթացներում բացակայում են ընթացակարգային թերությունները, ավելի մեծ պատրաստականություն է ցուցաբերում պետական մարմինների՝ փաստական հանգամանքների պարզմանը չհամաձայնելու հարցում, քան ՄԻԿ-ը⁸²: Վերջինս ենթադրաբար «ոչ անվտանգ» երկրներ վտարելու իրողության մեջ 7-րդ հոդվածի խախտումներ տեղ գտնելու վերաբերյալ բողոքներն անհիմն համարեց «*Տոռեսը Ֆինլանդիայի*» (*Torres v Finland, 291/88*), «*Ա. Ռ. Ջ.-ն ընդդեմ Ավստրալիայի*» (*A.R.J. v Australia, 692/96*) և «*Թ. Թ.-ն ընդդեմ Ավստրալիայի*» (*T.T. v Australia, 706/96*) գործերում⁸³: Իրականում, բացի «*Թ.-ն ընդդեմ Ավստրալիայի*» (900/99) գործից (քննարկված անմիջապես ստորև), ՄԻԿ-ը առաջարկվող վտարման մեջ 7-րդ հոդվածի խախտում է արձանագրել միայն մի դեպքում՝ այլ երկրի հանձնման կապակցությամբ «*Նգ.-ն ընդդեմ Կանադայի*» (*Ng v Canada, 469/91*) գործում [9.63]:

[9.81] «Թ.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (C v AUSTRALIA, 900/99)

Այս գործում հեղինակը, որ իրանցի քրիստոնյա ասորի է, ստիպված է եղել Իրանից փախչել Ավստրալիա և այնտեղ փորձել փախստականի կարգավիճակ ստանալ: Քանի որ նա Ավստրալիա ապօրինի է ժամանել, նրան, համաձայն ավստրալիական օրենսդրության, կալանավորել են՝ պահելով երկու տարուց քիչ ավելի: Իր կալանքի ընթացքում նրա մոտ ի հայտ է եկել հոգեկան լուրջ հիվանդություն, ինչը փորձագետների կողմից վերագրվել է կալանքի պատճառած սթրեսին [9.49]: Նա, ի վերջո, ի նշան զբասրության 1994 թ. օգոստոսին ազատ է արձակվել: 1995 թ. մարտին նրան շնորհվել է փախստականի կարգավիճակ, քանի որ ավստրալիական իշխանություններն ընդունել են, որ նա Իրան վերադառնալու պարագայում իր ռասայական պատկանելության և դավանած կրոնի պատճառով հետապնդման ենթարկվելու հիմնավորված մտավախություն ունի. արդյունքում նրան տրվեց պաշտպանության արտոնագիր [protection visa]: Այնուհետև տեղի ունեցան հետևյալ դեպքերը.

¶ 2.7. 1995 թ. մայիսի 20-ին հեղինակը, հոգեկան խաթարման վիճակում և դանակներով զինված, ներխուժեց ընկերոջ և կնոջ կողմից ազգականի՝ տիկին Ա.-ի տուն և թաքնվեց սպասքապահարանում: 1995 թ. օգոստոսի 17-ին նա իրեն մեղավոր ճանաչեց ուրիշին պատկանող տարածքում ապօրինաբար գտնվելու և սեփականությանը վնաս հասցնելու համար և դատապարտվեց ազատազրկման հետ չկապված պատժի՝ համայնքային ծառայության և հոգեբուժական բուժման: 1995 թ. նոյեմբերի 1-ին հեղինակը վերադարձավ տիկին Ա.-ի տուն, վնաս հասցրեց սեփականությանը, սպառնաց սպանել նրան և ձերբակալվեց: 1996 թ. հունվարի 18-ին հեղինակը մորից տիկին Ա.-ին սպանելու սպառնալիքներ տեղացի հեռախոսով և կրկին ձերբակալվեց ու պահվեց կալանքի տակ: Վերջին երկու դեպքերի առնչությամբ 1996 թ. մայիսի 10-ին Վիկտորիայի նահանգի դատարանի կողմից մեղավոր ճանաչվեց ծանրացուցիչ հանգամանքներում տարածք մուտք գործելու և մահվան սպառնալիքների համար և դատապարտվեց կուտակային հաշվարկով [cumulatively] 3,5 տարվա բանտարկության (18 ամիս մինչև վաղաժամկետ ազատվելը): Հեղինակը դատավճիռը չբողոքարկեց:

¶ 2.8. 1996 թ. դեկտեմբերի 16-ին հեղինակի հետ զրույց ունեցավ նախարարի ներկայացուցիչը, որի նպատակն էր նրա՝ որպես քաղաքացի չհանդիսացող անձի, հնարավոր վտարումը, մի անձի, ով Ավստրալիայում բնակվել է 10 տարուց քիչ և հանցագործություն է կատարել ու դատապարտվել նվազագույնը մեկ տարվա բանտարկության: 1996 թ. հոկտեմբերի 21-ին հեղինակը, նախարարի ներկայացուցչի դիմումի համաձայն, ենթարկվեց հոգեբուժա-

⁸¹ 22-րդ հոդվածը նախատեսում է անհատական բողոքների մեխանիզմ ԽԴ կոմիտեի ներքո:

⁸² Տե՛ս, մասնավորապես, [14.51]-ի և [20.49]-ի քննարկումը: Վտարման գործերում ընթացակարգային թերությունների մասին տե՛ս նաև գլուխ 13-ում:

⁸³ Պարունայք Շայնինից, Քլայնից և Կրեյնիցից բաղկացած փոքրամասնությունը որոշեց, որ Թ. Թ.-ի գործում հեղինակը բավարար ապացույցներ է ներկայացրել, որ իրեն Մալայզիա վտարելու դեպքում ՔՔԻՄԴ-ով սահմանված իր իրավունքների խախտման իրական ռիսկ կա:

կան հետազոտման: Եզրակացությունը, որում նշվում էր, որ նախկինում նման հիվանդություն չի եղել, և նրա հիվանդագին հետապնդման մտասևեռումները ի հայտ են եկել կալանքի ընթացքում, հաստատեց, որ «գրեթե կասկած չկա, որ ուղիղ պատճառահետևանքային կապ կա ներկայիս ազատագրված պատճառ դարձած հանցանքի և հետապնդման մտասևեռումների միջև, որոնք հիվանդը ծեռք է բերել իր [պարանոհիդալ շիզոֆրենիա] հիվանդության հետևանքով»: Գնահատման համաձայն՝ բուժման շնորհիվ նվազում էր հիվանդությունից բխող ապագա գործողությունների ռիսկը, սակայն ուշադիր հոգեբուժական վերահսկողության անհրաժեշտություն կա: 1997 թ. հունվարի 24-ին հեղինակը ենթարկվեց համանման հոգեբուժական հետազոտության, որը հանգեց միևնույն եզրակացության: 1997 թ. ապրիլի 8-ին նախարարը հրաման արձակեց հեղինակին այդ հիմքով վտարել:

Վտարման առաջարկության վերաբերյալ հեղինակը ներկայացրեց հետևյալ բողոքը.

¶ 3.2. ... [3]հեղինակը պնդում է, որ Ավստրալիան խախտել է 7-րդ հոդվածը, քանի որ առաջարկվող վտարումն Իրան կկանգնեցնի դաշնագրի՝ առնվազն 7-րդ հոդվածով և հնարավոր է՝ նաև 9-րդ հոդվածով սահմանված իր իրավունքների՝ Իրանի կողմից խախտման իրական սպառնալիքի առջև: Այդ կապակցությամբ նա հղում է անում կոմիտեի նախադեպային իրավունքին, ըստ որի, եթե մասնակից պետությունն իր իրավասության տակ գտնվող անձին երկրից դուրս է հանում և դրա անհրաժեշտ ու կանխատեսելի հետևանքն այդ անձի՝ դաշնագրով սահմանված իրավունքների խախտումն է մեկ այլ երկրի իրավասության ներքո, ապա մասնակից պետությունն այդպիսով ինքը կարող է խախտել դաշնագիրը: Նա համարում է, որ նախարարի ներկայացուցիչը եզրակացրել է, որ հեղինակն Իրանում հետապնդման ենթարկվելու հիմնավորված մտավախություն ունի իր դավանած կրոնի և այն պատճառով, որ իր հոգեբանական վիճակը կարող է իր վրա բեռել իշխանությունների ուշադրությունը, ինչը կարող է հանգեցնել իր ազատագրված ամսական պայմաններում, որոնք հետապնդում են ներկայացնում: Ամենևին չբեկանվելով հետագա դատական գործընթացներում՝ այս դիրքորոշումը փաստացի հաստատվեց [վարչական գործերով վերաբնդիչ դատարանի] կողմից: Ավելին՝ հեղինակը պնդում է, որ Իրանի դրսևորած վարքագիծը նպաստում է այն եզրակացությանը, որ վտարվելու դեպքում ինքը կկանգնի դաշնագրով սահմանված իր իրավունքների խախտման հնարավորության առջև:

Մասնակից պետությունը պատասխանեց.

¶ 4.13. Առաջին՝ հեղինակի փախստականի կարգավիճակի ճանաչումը հիմնված է բազմաթիվ նկատառումների վրա, որոնք այլ էին, քան 7-րդ հոդվածի խախտման ռիսկը: Մասնակից պետությունն առարկում է, որ փախստականի կարգավիճակը շնորհիվ է այն հիմքով, որ նա վերադառնալու դեպքում կարող է ենթարկվել հետապնդման: Մասնակից պետությունը համարում է, որ «հետապնդումը» կարելի է հասկանալ որպես իշխանությունների կողմից կամ նրանց գիտությամբ կատարվող մշտական ոտնձգություններ: «Յետապնդման» առանցքային իմաստը հեշտությամբ ներառում է կյանքից կամ ֆիզիկական ազատությունից զրկելը, սակայն նաև ընդգրկում է այնպիսի ոտնձգություններ, ինչպիսիք են աշխատանքի ընդունվելու, մասնագիտություն կամ կրթություն ստանալու հնարավորություն չտալը և ժողովրդավարական հասարակություններում ավանդաբար երաշխավորված այնպիսի ազատությունների սահմանափակումը, ինչպիսիք են խոսքի, հավաքների, դավանանքի կամ տեղաշարժման ազատությունը: Յեղինակի դիմումը բավարարելիս հաշվի էին առնվել այնպիսի գործոններ, ինչպիսիք են խտրականությունը աշխատանքի ընդունելիս, կրթության և բնակարանային հարցերում, դժվարությունները սեփական կրոնական հանգումները կենսագործելու հարցում և այդ ժամանակ մարդու իրավունքների առումով վատթարացող իրադրությունն Իրանում: Այդպիսով, հետապնդումը շատ ավելի ընդգրկում հասկացություն է, քան այն, որը ներառված է ՔՔԻՄՊ-ի 7-րդ հոդվածում, և փախստականի ճանաչումը չպետք է կոմիտեին հանգեցնի այն եզրակացության, թե հեղինակի Իրան վերադառնալու անհրաժեշտ և կանխատեսելի հետևանքը կլինի 7-րդ հոդվածի խախտումների ենթարկվելը:

Մասնակից պետությունը հղում էր անում նաև որոշ փաստերի, ըստ որոնց՝ Իրանում ասորի քրիստոնյաների դրությունը բարելավվում էր, և հեղինակի անվտանգությունը կապահովվեր այնքան ժամանակ, քանի դեռ ձեռնպահ կլինեին այլոց իր կրոնին դարձնելու փորձերից և իրեն զուսպ կպահեր: Մասնակից պետությունը նաև անդրադարձել է այն փաստին, որ հեղինակը տառապում է հոգեկան հիվանդությամբ.

¶ 4.20. Երրորդ՝ ինչ վերաբերում է հեղինակի հոգեկան դրության հնարավոր հետևանքներին, մասնակից պետությունն Իրանում իր առաքելության տրամադրած տեղեկություններից եզրակացնում է, որ Իրանի առողջապահության ղեկավարությունն ունի հոգեկան հիվանդությունների բավական լավ իմացություն, հոգեկան հիվանդություններից (ներառյալ պարանոհիդալ շիզոֆրենիան) տառապող անձանց համար Իրանում առկա են համապատասխան և համապարփակ առողջապահական ծառայություններ թե՛ տանը, թե՛ հիվանդանոցում: Յիվանդանոց ընդունելու գործընթացում չկա որևէ պահանջ, որ անձը հաղորդի իր կրոնական պատկանելությունը, չկա նաև որևէ փաստ, որ ա-

սորի քրիստոնյաներին թույլ չեն տալիս լիարժեք օգտվել հոգեբուժական հաստատություններից: Որքան տեղյակ է մասնակից պետությունը, չկա մախադեպ, որ ամձանց կամայական կերպով կալանավորեն կամ ենթարկեն 7-րդ հոդվածի խախտումների սուկ նրանց հոգեկան հիվանդությունների պատճառով:

¶ 4.21. Մասնակից պետությունը հայտարարում է, որ ձեռնարկել է բոլոր հնարավոր քայլերը՝ հեղինակին իր դրությամբ բնութիւն ծանոթացնելու և նրա շարունակական բուժմանը նպաստելու համար և նրան կտրամադրի Իրան վերադառնալուց հետո շարունակական բժշկական խնամք ստանալու համար անհրաժեշտ բոլոր բժշկական փաստաթղթերը: Պնդումը, թե նա, Իրան վերադառնալով, չի ձգտի բժշկական օգնություն ստանալ, ընդամենը ենթադրություն է, և հեղինակը Ավստրալիայում, իր բուժման հետ կապված, միշտ պատրաստակամություն է դրսևորել: Որպես այդպիսին՝ որևէ որոշակիությամբ հնարավոր չէ պնդել, որ վերջինիս Իրան վերադարձի անհրաժեշտ հետևանքը բուժումը դադարեցնելը կլինի: Եթե նույնիսկ նա որոշի դադարեցնել բուժումը, դա անհրաժեշտաբար չի հանգեցնի նրա այնպիսի գործողությունների, որոնք խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի սպառնալիք կառաջացնեն: Պարանոհյալ շիզոֆրենիայի բնույթն այնպիսին է, որ յուրաքանչյուր բռնությամբ ուղեկցվող կամ տարօրինակ վարքագիծ ուղղակիորեն կապված է հիվանդի հալյուցիանցիաների հետ: Հետևաբար, պարանոհյալ շիզոֆրենիկները մշտապես ու հետևողականորեն ագրեսիվ և արտառոց վարքագիծ չեն դրսևորում: Յուրաքանչյուր նման վարքագիծ պայմանավորված է նրանց զառանցանքային մտքերի օբյեկտներով: Հեղինակի դեպքում նման վարքագիծը պայմանավորված է միանգամայն որոշակի անձանցով, և նրա վերաբերյալ գրառումները պաշտոնատար անձանց կամ պետական հաստատություններում ընդհանուր առմամբ ագրեսիվ կամ հիստերիկ վարքագծի հիշատակումներ չեն բովանդակում: Հետևաբար, մասնակից պետությունը չի համարում, որ հեղինակի Իրան վերադառնալն անհրաժեշտաբար կհանգեցնի Իրանի իշխանությունների նկատմամբ նրա թշնամական վերաբերմունքին:

Ի պատասխան՝ հեղինակը նշեց, որ «հայտնի չէ՝ իր ստացած դեղորայքը հնարավոր կլինի՞՞ գտնել Իրանում»⁸⁴:

Կոմիտեն որոշեց հօգուտ հեղինակի.

¶ 8.5. Ինչ վերաբերում է հեղինակի փաստարկներին, որ իր վտարումը 7-րդ հոդվածի խախտում կլինի, կոմիտեն ծանրակշիռ է համարում այն փաստը, որ հեղինակին սկզբնապես շնորհվել է փախստականի կարգավիճակ որպես ասորի քրիստոնյա հետապնդման ենթարկվելու հիմնավոր մտավախության հիման վրա՝ զուգակցված վերջինիս հիվանդության նորից ի հայտ գալու հավանական հետևանքների հետ: Կոմիտեի կարծիքով՝ մասնակից պետությունը չի ապացուցել, որ ընդունող երկրում ներկայումս առկա հանգամանքներն այնպիսին են, որ փախստականի շնորհված կարգավիճակն այլևս ուժի մեջ չլինելու անհրաժեշտությունը չունի: Կոմիտեն կարծում է նաև, որ ՎՎԴ-ն [վարչական գործերով վերաբնիչ դատարանը], որի որոշումն ուժի մեջ թողնվեց բողոքարկումից հետո, ընդունել է, որ հավանական չէ, որ Իրանում մատչելի լինեն միակ արդյունավետ դեղամիջոցը (քլոզարիլ [Clozaril]) և օժանդակ բուժումը, և եզրակացրել է՝ «հեղինակը մեղք չունի իր հոգեկան հիվանդության համար», որն «առաջին անգամ գլուխ է բարձրացրել Ավստրալիայում գտնվելիս»: Այն պարագայում, երբ մասնակից պետությունը հեղինակի նկատմամբ ճանաչել է պաշտպանության պարտավորությունը, կոմիտեն համարում է, որ հեղինակի վտարումը մի երկիր, որտեղ հավանական չէ նրա ձեռք բերած հիվանդության համար անհրաժեշտ բուժումը ամբողջությամբ կամ մասամբ ստանալը, մասնակից պետության կողմից հեղինակի իրավունքների ոտնահարման պատճառով կլինի դաշնագրի 7-րդ հոդվածի խախտում:

Այդ կապակցությամբ կոմիտեի երեք անդամներ՝ պարոնայք Անդոն, Քլայնը և Յալդենը, արտահայտեցին իրենց անհամաձայնությունը.

Մենք . . . կարծում ենք, որ [կոմիտեի կողմից] 7-րդ հոդվածի (կետ 8.5) խախտման արձանագրումը տեղին չէ: Կոմիտեի տված զնահատականը հիմնված է մի շարք փաստարկների վրա, որոնցից ոչ մեկը համոզիչ չէ՝ ո՛չ առանձին վերցված, ո՛չ էլ միասին: Մենք չենք կարծում, որ մասնակից պետությունը չի հիմնավորել իր այն եզրակացությունը, որ հեղինակը՝ որպես ասորի քրիստոնյա, Իրան վտարվելուց հետո չի ենթարկվի հետապնդման: Այդ առումով մենք հղում ենք անում կոմիտեի «Կարծիքների» 4.13-4.19 պարբերություններին: Այն պնդման վերաբերյալ, որ հեղինակն արդյունավետ բժշկական օգնություն չի ստանա Իրանում, հղում ենք անում մասնակից պետության ներկայացրած փաստարկներին՝ նշված կոմիտեի «Կարծիքների» 4.20 և 4.21 պարբերություններում: Մենք չենք հասկանում, թե ինչպես կարելի է նման մանրակրկիտ փաստարկներն այդպիսի թեթևությամբ մի կողմ դնել՝ հօգուտ 7-րդ հոդվածի խախտման, ինչպես արվեց մեծամասնության կողմից:

⁸⁴ Պարբ. 5.4:

ՄԻԿ-ի անդամների միջև տարբերությունն այստեղ վերաբերում է երկու կողմերի՝ Ք.-ի և Ավստրալիայի կառավարության ներկայացրած ապացույցներին վերագրված համապատասխան կշռին: Անհրաժեշտ է նշել, ինչպես մեծամասնության, որ մասնակից պետությունն Իրանում *քլոզարիլի* առկայության վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել: Մեծամասնության կարծիքից պարզ է նաև, որ դրա վրա առաջին հերթին մեծ ազդեցություն է ունեցել Ավստրալիայի որոշումը փախստականի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ: Այդ պատճառներով ՄԻԿ-ն ավելի քիչ էր հակված ընդունելու պետության պնդումները, քե պայմաններն այնքան են փոխվել, որ գերակայում են իր իսկ որոշման նկատմամբ⁸⁵:

[9.82] Նիդեռլանդների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է⁸⁶.

¶ 11. Կոմիտեն գնահատում է Ներգաղթի և քաղաքացիության տրամադրման (նատուրալացման) ծառայության հրապարակած նոր ցուցումները, որոնք նպատակ ունեն համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունը բևեռել իգական սեռին պատկանող ապաստան փնտրողների հայտարարությունների՝ իրենց սեռին հատուկ որոշ կողմերին: Այնուամենայնիվ, շարունակում է մտահոգություն առաջացնել, որ կանանց ֆիզիկական անձեռնմխելիությունը և առողջությունը խաթարող սեռական օրգանների խեղման կամ իրենց ծագման երկրում առկա այլ ավանդական սովորույթների (դաշնագրի հոդված 7) առումով հիմնավորված մտավախությունը միշտ չէ, որ հանգեցնում է ապաստան տրամադրելու դրական որոշումների, օրինակ՝ երբ սեռական օրգանների խեղումը, չնայած օրենքով արգելված լինելուն, շարունակում է մնալ հաստատված սովորույթ, որի սպառնալիքի տակ կարող է հայտնվել ապաստան փնտրողը:

Մասնակից պետությունը պետք է անհրաժեշտ իրավական ճշգրտումներ կատարի՝ ապահովելու, որ իգական սեռին պատկանող տվյալ անձինք վայելեն դաշնագրի 7-րդ հոդվածով պահանջվող պաշտպանությունը:

Հետևաբար, ՄԻԿ-ը հստակ նշում է, որ կանայք չպետք է վտարվեն այնպիսի երկրներ, որտեղ ամենայն հավանականությամբ կարող են ենթարկվել սեռական օրգանների ստիպողական խեղման: Նման հանգամանքներում վտարումը 7-րդ հոդվածի խախտում է:

[9.83] Հարկադիր հայրենադարձմանը վերաբերող գործերը սովորաբար ներկայացվում են ապաստան փնտրողների և փախստականի կարգավիճակի համար դիմողների կողմից: Այդ գործերում հաճախ երևան են գալիս հարցեր, որոնք վերաբերում են Միավորված ազգերի կազմակերպության 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիային:

«X-ն ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (X v SPAIN, CAT 23/1995)

X-ը հայտարարում էր, որ իր վտարումն Իսպանիայից Ալժիր խախտում է 3-րդ հոդվածը, քանի որ, ըստ իր պնդման, վերադարձվելուց հետո ինքը խոշտանգման կենթարկվի՝ օրենքից դուրս հայտարարված Իսլամական փրկության ճակատին (ԻՓՃ) անդամակցելու համար: ԽԴ կոմիտեն որոշեց ինչպես մասնակից պետության.

¶ 7.3. Կոմիտեն ... մատնացույց է անում, որ իր լիազորությունների մեջ չի մտնում որոշել՝ այդ երկրի օրենսդրությամբ հայցվորն ապաստան ստանալու իրավունք ունի⁸⁵, թե ոչ, կամ կարո՞ղ է հայցել Փախստականների կարգավիճակի մասին ժնկի կոնվենցիայի պաշտպանությունը:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ կոմիտեն պետք է որոշի՝ արտաքսումը կամ այլ երկրի հանձնումը կարո՞ղ է անձին ենթարկել խոշտանգման ռիսկի:

¶ 7.4. Կոմիտեն նշում է, որ Ք.-ի ներկայացուցիչներն Իսպանիայում մեկ տարի տևած դատական գործընթացներում իրենց փաստարկները հիմնում էին բացառապես ապաստանի վրա և չէին անդրադառնում կոնվենցիայի 3-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքին: Նրանք կոմիտեին չեն ներկայացրել նաև լուրջ հիմքեր, որ Ք.-ն, Ալժիր արտաքսվելու դեպքում, կենթարկվեր խոշտանգման ռիսկի: Չկան պնդումներ, որ Ք.-ն մինչև Մարոկկո և Իսպանիա

⁸⁵ Տե՛ս Ջոզեֆ, վերը, ծնթ. 59, 99:

⁸⁶ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/NET:

մեկնելը Ալժիրում կալանավորվել կամ խոշտանգման է ենթարկվել: Չի նշվում, թե նա որոշակիորեն ինչ է արել ԻՓԾ-ում՝ հիմնավորելու համար նրա խոշտանգվելու մտավախությունը: Մինչդեռ Բ.-ն Մելիլայի* իշխանություններին ներկայացրած իր առաջին հայտարարության ժամանակ իրավաբանի և թարգմանչի ներկայությամբ ասել էր, որ իր մտադրությունը Գերմանիայում աշխատանք որոնելն է, և այդ հայտարարության իսկությունը կասկածի տակ էր առնվել Իսպանիայում ապաստան ստանալու հետ կապված գործընթացում:

¶ 7.5. Կոմիտեն եզրակացնում է, որ Բ.-ի անունից ներկայացված հաղորդումը՝ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման վերաբերյալ պնդման առումով, բավականաչափ հիմնավորված չէ, այլ առավելապես վերաբերում է քաղաքական ապաստանի խնդրին՝ դրանով իսկ հաղորդումն անհամատեղելի դարձնելով խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 22-րդ հոդվածի հետ:

Նմանապես ԽԴ Կոմիտեն իրավասու չէր որոշելու՝ «Մոհամեդն ընդդեմ Հունաստանի» (*Mohamed v Greece, CAT 40/96*) գործում դիմումատուին հանդիսանում էր «փախստական»՝ համաձայն 1951 թ. կոնվենցիայի: Բ.-ի և *Մոհամեդի* գործերը զալիս են հաստատելու, որ ԽԴԿ 3-րդ հոդվածում տրված սահմանումները հայեցակարգային առումով առանձնանում են Փախստականների մասին կոնվենցիայի առնչությամբ ծագող հարցերից⁸⁷:

[9.84] «ՊԱԵՉՆ ընդդեմ Շվեդիայի» (*PAEZ v SWEDEN, CAT 39/96*)

Հեղինակը վիճարկում էր մասնակից պետության՝ իրեն Պերու արտաքսելու որոշումը: Նա պնդում էր, որ Պերու վերադարձվելուց հետո ինքը կենթարկվի խոշտանգման, քանի որ հանդիսանում է «Սենդերո Լուսինոսոյի» («Լուսավոր ուղի») անդամ, որը հակակառավարական ահաբեկչական կազմակերպություն է Պերուում: ՄԻԿ-ը, ըստ գործի էության, կայացրեց հետևյալ որոշումը.

¶ 14.3. Կոմիտեն նշում է, որ հեղինակի՝ ապաստան ստանալու դիմումում բերված փաստերը չեն վիճարկվում: Հեղինակը «Սենդերո Լուսինոսոյի» անդամ է, 1989 թ. նոյեմբերի 1-ին մասնակցել է ցույցի, բաժանել թռուցիկներ ու տարածել ինքնաշեն ռումբեր: Ոստիկանությունը խուզարկել է նրա բնակարանը, իսկ հեղինակն անցել է ընդհատակ և լքել երկիրը՝ ապաստան փնտրելով Շվեդիայում: Չի վիճարկվում նաև, որ հեղինակը սերում է քաղաքականապես ակտիվ ընտանիքից, որ նրա զարմիկներից մեկն անհետացել, իսկ մյուսը սպանվել է քաղաքական դրդապատճառներով, և որ նրա մորն ու քույրերին *դե ֆակտո* փախստականի կարգավիճակ է շնորհվել Շվեդիայում:

¶ 14.4. Մասնակից պետության ներկայացումից և ներգաղթի հարցերով զբաղվող մարմինների՝ սույն գործով կայացված որոշումներից երևում է, որ հեղինակին Շվեդիայում ապաստան տրամադրելու որոշումը հիմնված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիայի 1(գ) հոդվածի բացառություններ սահմանող դրույթի վրա: Դա երևում է այն փաստից, որ հեղինակի մորը և քույրերին Շվեդիայում *դե ֆակտո* ապաստան է շնորհվել, քանի որ մտավախություններ կային, որ նրանք հետապնդման կենթարկվեն, որովհետև պատկանում են «Սենդերո Լուսինոսոյի» հետ կապեր ունեցող ընտանիքի: Մասնակից պետության կողմից որևէ հիմք չի վկայակոչվել, մի կողմից՝ հեղինակի, մյուս կողմից՝ նրա մոր և քույրերի միջև տարբերակում մտցնելու համար՝ բացի «Սենդերո Լուսինոսոյի» շրջանակներում հեղինակի գործունեությունից:

¶ 14.5. Կոմիտեն համարում է, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածում ներառված պայմանը բացարձակ է: Ամեն դեպքում, երբ բավարար հիմքեր կան հավատալու, որ անձը մեկ այլ երկիր արտաքսվելու պարագայում կհայտնվի խոշտանգման ենթարկվելու վտանգի առջև, մասնակից պետությունը պարտավորություն ունի չվերադարձնել տվյալ անձին այդ երկիր: Տվյալ անձի իրականացրած գործունեության բնույթը չի կարող համարվել նյութական հանգամանք կոնվենցիայի 3-րդ հոդվածով որոշում կայացնելիս:

* Իսպանական ինքնավար քաղաք Յուլիսային Աֆրիկայում՝ Միջերկրական ծովի ափին (*ծանոթ. քարգմ.*):

⁸⁷ Մասնակից պետությունը համաձայն փաստարկներ էր ներկայացրել «Բ.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործում (900/99)՝ պարբ. 4.13-ում [9.81]: Հարկադիր հայրենադարձումից ԽԴԿ/ԲԲԻՄԴ-ի և Փախստականների վերաբերյալ կոնվենցիայի տրամադրած պաշտպանության համեմատության համար տես S. Taylor, 'Australia's Implementation of its Non-Refoulement Obligations under the Convention Against Torture and Other Cruel Inhuman or Degrading Treatment or Punishment and the International Covenant on Civil and Political Rights' (1994) 17 *University of New South Wales Law Journal* 432:

Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թ. կոնվենցիայի հոդված 1F-ում նշվում է, որ հետևյալ անձինք չեն կարող համարվել «փախստական» և, հետևաբար, իրավունք չունեն օգտվելու կոնվենցիայով հատկացվող պաշտպանությունից. մարդիկ, ովքեր մինչև ապաստանելու երկիր մուտք գործելը կատարել են պատերազմական հանցագործություններ, հանցագործություններ ընդդեմ խաղաղության, ընդդեմ մարդկության, ծանր ոչ քաղաքական հանցագործություններ կամ այնպիսի գործողություններ, որոնք դեմ են Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին: Իսկ ԽԴԿ-ի 3-րդ հոդվածը բացարձակ պարտականություններ է սահմանում երկրների համար, ըստ որոնց՝ չի կարելի այլ երկրի հանձնել որևէ մարդու, նույնիսկ պատերազմի հանցագործներին և մարդասպաններին, եթե կանխատեսելի է, որ նրանց հանձնելն այլ երկրի կհանգեցնի վերջիններիս խոշտանգման⁸⁸:

[9.85] ԽԴԿ-ի 3-րդ հոդվածը և ՔՔԻՄԴ-ի 7-րդ հոդվածը ապաստանի իրավունքներ չեն շնորհում: ԽԴԿ-ում 3-րդ հոդվածի խախտումների դեմ իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ մեկնաբանություններ է ներկայացրել «*Էմեյն ընդդեմ Շվեյցարիայի*» (*Aemei v Switzerland, 34/95*) գործում.

¶ 11. Կոմիտեի կարծիքը կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման վերաբերյալ որևէ կերպ չի ազդում ազգային իրավասու իշխանությունների՝ ապաստան տրամադրելու կամ այն մերժելու որոշում(ներ)ի վրա: 3-րդ հոդվածի խախտման արձանագրումը հռչակագրային բնույթ ունի: Հետևաբար, մասնակից պետությունը պարտավոր չէ փոփոխել ապաստան տրամադրելու վերաբերյալ իր որոշում(ներ)ը: Մյուս կողմից՝ մասնակից պետությունը պարտավոր է լուծումներ գտնել, որոնք հնարավորություն կտան ձեռնարկելու կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխանելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Այդ լուծումները կարող են լինել իրավական բնույթի (օր.՝ դիմումատուին ժամանակավորապես ընդունելու որոշում), սակայն կարող են լինել նաև քաղաքական բնույթի (օր.՝ քայլեր՝ ուղղված երրորդ երկրի գտնելուն, որը պատրաստ է դիմումատուին իր տարածք ընդունել և ստանձնել նրան չվերադարձնելու կամ չարտաքսելու պարտականությունը):

[9.86] ԽԴԿ-ի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքները պաշտպանելու համար պետությունները չպետք է սահմանեն ընթացակարգեր, որոնք մեքենայորեն արտաքսում են որոշակի դասի պատկանող մարդկանց: Օրինակ՝ ԽԴԿ կոմիտեն քննադատեց Ֆինլանդիայի իշխանություններին «ապահով երկրների ցուցակի» կիրառության համար, որով մեքենայորեն մերժվում էին այդ երկրներից եկած ապաստան խնդրող մարդիկ. հարկ է, որ յուրաքանչյուր քննարկում հաշվի առնի 3-րդ հոդվածի հնարավոր կիրառության հարցը⁸⁹: ՄԻԿ-ը համանման դիտողություններ է արել 7-րդ և 13-րդ հոդվածների հնարավոր խախտումների վերաբերյալ⁹⁰, կապված Եստոնիայի կողմից այն անձանց ապաստանի տրամադրումը մեքենայորեն մերժելու հետ, ովքեր համարվում էին «ապահով» երկրից եկած⁹¹:

[9.87] 3-րդ հոդվածի խախտումները ծագում են այն հիմքով, որ որոշակի երկիր արտաքսելու դեպքում կանխատեսելի է, որ խոշտանգում տեղի կունենա: Սովորաբար նման հաղորդումները ներկայացվում են, և վճիռը կայացվում է մինչև վտարումը, այսինքն՝ խոշտանգման փաստացի իրագործման վերաբերյալ ապացույցներ առկա չեն լինում: Նման ապացույցները որոշիչ դեր խաղացին հետևյալ գործում:

«Թ. Փ. Ս.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (*T.P.S. v CANADA, CAT 99/97*)

Հեղինակը, որը դատապարտված առևանգիչ էր, Կանադայից վտարվել էր Հնդկաստան՝ չնայած ԽԴԿ կոմիտեի միջամեկյալ դիմումին, որը մասնակից պետությանը հորդորում էր ձեռնպահ մնալ նման վտարումից մինչև հաղորդման դիտարկումը⁹²: Մինչ ԽԴԿ կոմիտեի ըստ էության որոշումը հեղինակը Հնդկաստանում ավելի քան երկու տարի մնացել էր ակնհայտորեն առանց խոշտանգման ենթարկվելու:

⁸⁸ Նույնը, 452: Տե՛ս նաև «*Արկաուզ Արանան ընդդեմ Ֆրանսիայի*» (*Arkausz Arana v France, CAT 63/97*) [9.75], որում հեղինակի վտարումը նրա ահաբեկչական կապերի հետևանքով նրան կանգնեցրեց հավանական խոշտանգման վտանգի առաջ:

⁸⁹ ԽԴԿ Եզրափակիչ դիտարկումներ Ֆինլանդիայի վերաբերյալ, (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ A/51/44, պարբ. 62:

⁹⁰ Տե՛ս նաև [13.03]-[13.04]:

⁹¹ Եզրափակիչ դիտարկումներ Եստոնիայի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/77/EST, պարբ. 13:

⁹² Միջամեկյալ դիմումների համար տե՛ս [1.53]-ը:

¶ 15.4. Ինչ վերաբերում է հաղորդման ելթյանը, կոմիտեն նշում է, որ հեղինակը Յնդկաստանում ապրել է ավելի քան երկու տարի: Թեև նա պնդում է, որ այդ ընթացքում ինքը և իր ընտանիքը մի շարք առիթներով ոստիկանության կողմից ոսնծությունների և սպառնալիքների են ենթարկվել, տպավորությունն այնպիսին է, որ իշխանությունների կողմից նրա նկատմամբ վերաբերմունքը փոփոխության չի ենթարկվել: Այս իրավիճակում, հաշվի առնելով հեղինակի տարիանումից ի վեր անցած նշանակալի ժամանակահատվածը, բավարար ժամանակ տալով հեղինակի մտավախությունների իրականացման համար, կոմիտեն այլ բան չի մնում, քան եզրակացնել, որ նրա մեղադրանքներն անհիմն են:

¶ 15.5. Կոմիտեն այն կարծիքին է, որ ավելի քան երկուսուկես տարի անց հավանական չէ, որ հեղինակը դեռևս գտնվելիս լինի խոշտանգման ենթարկվելու սպառնալիքի տակ:

¶ 15.6. Կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը, վավերացնելով կոնվենցիան և կամավոր կերպով ընդունելով կոմիտեի լիազորությունները՝ համաձայն 22-րդ հոդվածի, հանձն է առնում բարեխղճորեն համագործակցել իր հետ՝ ընթացակարգը կիրառելու համար: Կոմիտեի սահմանած ժամանակավոր միջոցներին համապատասխանելն այն դեպքերում, երբ կոմիտեն դրանք տեղին է համարում, առաջնային է խնդրո առարկա անձին անվերականգնելի վնասից պաշտպանելու առումով և ավելին՝ այդ վնասը կարող է ի չիք դարձնել կոմիտեի իրականացրած քննության վերջնական արդյունքը: Կոմիտեն խորապես մտահոգված է այն փաստով, որ մասնակից պետությունը չընդառաջեց թիվ 108 կանոնի 3-րդ պարբերության համաձայն միջանկյալ միջոցների վերաբերյալ իր դիմումին և հեղինակին տեղափոխեց Յնդկաստան:

¶ 15.7. Խոշտանգման դեմ կոմիտեն, առաջնորդվելով Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 22-րդ հոդվածի 7-րդ կետով, եզրակացնում է, որ հեղինակի տեղափոխումը Յնդկաստան կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է:

Պարոն Կամարան չհամաձայնեց.

¶ 16.2. ... [Կ]ոնվենցիայի 3-րդ հոդվածի պայմաններից հստակ երևում է, որ այն հարցը որոշելու ժամանակը, թե «բավարար հիմքեր կա՞ն ենթադրելու, որ [հեղինակին] կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ», արտաքսման, վերադարձման կամ հանձնելու պահն է: Փաստերը պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ Յնդկաստան արտաքսվելու ժամանակ բավարար հիմքեր կային հավատալու, որ հեղինակը խոշտանգման կենթարկվի: Յետևաբար, մասնակից պետությունը, արտաքսելով հեղինակին, խախտել է կոնվենցիայի 3-րդ հոդվածը:

¶ 16.3. Վերջապես, այն փաստը, որ հեղինակը հետագայում խոշտանգման չի ենթարկվել, որևէ կապ չունի այն հարցի հետ, թե մասնակից պետությունը, նրան արտաքսելով, խախտե՞լ է կոնվենցիան: Այն հարցը, թե վտանգը (այս դեպքում՝ խոշտանգման) ի վերջո իրական է, թե՞ ոչ, նշանակություն ունի միայն գոհի կամ լիազորված այլ անձանց կողմից վնասների փոխհատուցման պահանջ ներկայացնելու առումով:

¶ 16.4. Խոշտանգման դեմ կոմիտեի իրավազորությունն անհրաժեշտ է կիրառել նաև կանխարգելման նկատառումներով: 3-րդ հոդվածին վերաբերող գործերում, անշուշտ, ողջամիտ չի լինի սպասել, մինչև խախտումը տեղի ունենա:

Թ. Փ. Մ.-ի գործում մեծամասնությունն անկասկած սխալ էր, երբ եզրակացնում էր, որ հետագայում խոշտանգման բացակայությունն անհրաժեշտաբար նշանակում է, որ խախտում տեղի չի ունեցել: 3-րդ հոդվածը չի պահանջում, որ վերադառնալուց հետո խոշտանգումն *անպայման* տեղի ունենա: Այն ընդամենը պահանջում է, որ խոշտանգումը ողջամիտ կերպով կանխատեսելի լինի *վտարման ժամանակ*: Ավելին՝ Յնդկաստանում խոշտանգման ենթարկվելու հավանականությունը մինչև ըստ էության որոշման կայացումն էմպիրիկ կերպով ստուգելու միակ ձևը Կանադայի կողմից նրա վտարումն էր՝ հակառակ միջանկյալ դիմումի, որը հորդորում էր այդպես չվարվել: Որոշումը, հետևաբար, խրախուսում է Կանադային այս իմաստով անբարեխղճություն ցուցաբերելու համար: *Թ. Փ. Մ.-ի* գործով որոշումը կարող է միայն նպաստել, որ Կանադան այսուհետ ևս շարունակի անտեսել միջանկյալ դիմումները, քանի դեռ իր գնահատականներով վստահ է, որ համապատասխան վտարված անձին վերադարձնելուց հետո խոշտանգում տեղի չի ունենա⁹³:

⁹³ Նման միջանկյալ դիմումների համար, ընդհանուր առմամբ, տե՛ս J. Harrington, 'Punting Terrorists, Assassins, and Other Undesirables: Canada, the Human Rights Committee, and Requests for Interim Measures of Protection' (2003) 48 *McGill Law Journal* 2: Տե՛ս նաև [1.53] և հաջորդը:

[9.88] Վերը բերված քննարկումը կենտրոնացած է ընդունող երկրում ընդունելության խստության աստիճանի, ոչ թե արտաքսող երկիրը լքելու հարկադրանքի խստության շուրջ: Վերջին հարցը բարձրացվեց «*Կանեպան ընդդեմ Կանադայի*» (*Canepa v Canada, 558/93*) գործում:

«ԿԱՆԵՊԱՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (CANEPA v CANADA, 558/93)

Կանեպան՝ Իտալիայի քաղաքացի, իր կյանքի մեծ մասն ընտանիքով Կանադայում է ապրել: Չնայած Կանադայի հետ ունեցած իր կապերին՝ Կանադայի իշխանություններն առաջարկել են վտարել նրան քրեական անցյալի պատճառով: Կանեպան պնդում էր, *ի թիվս այլոց*, որ իր վտարումը կխախտի 7-րդ հոդվածը⁹⁴:

¶ 4.6. Վերջապես, հեղինակը պնդում է, որ վտարման կարգադրության իրականացումը դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք է՝ դաշնագրի 7-րդ հոդվածի իմաստով: Նա հասկանում է, որ կոմիտեն դեռևս չի պարզել, թե անձն իր ընտանիքից և մոտ ազգականներից մշտական բաժանելը և իր իմացած միակ երկրից, որտեղ մեծացել է, աքսորելը կարո՞ղ է դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք համարվել. այնուամենայնիվ, նա հայտարարում է, որ հարցը պետք է քննվի ըստ էության:

Մասնակից պետությունը պատասխանեց այսպես.

¶ 9.1. Մասնակից պետությունը 1995 թ. դեկտեմբերի 21-ին ներկայացրած փաստաթղթերով խնդրում է, որ հեղինակի մեղադրանքները դաշնագրի 7-րդ հոդվածի վերաբերյալ հիմնավորված չեն, քանի որ չկան ապացույցներ, որ հեղինակի անջատումն իր ընտանիքից նրան ենթարկում է հոգեկան կամ ֆիզիկական առողջությանն ուղղված որևէ որոշակի վտանգի: Մասնակից պետությունը պնդում է, որ 7-րդ հոդվածի գործողության ոլորտն այնքան ընդգրկում չէ, որքան ներկայացնում է հեղինակը, և չի վերաբերում ներկա իրավիճակին, քանի որ հեղինակին ընդունող երկրում խոշտանգման կամ լուրջ ոտնձգությունների ենթարկվելու իրական վտանգ չի սպառնում: Հեղինակը ցույց չի տվել, որ վտարման հետևանքով որևէ անհարկի դժվարության կհանդիպի: Մասնակից պետությունն ավելացնում է, որ հեղինակի՝ Կանադա վերադառնալու արգելքը բացարձակ չէ: Ավելին՝ հեղինակի ընտանիքն ակնհայտորեն կարող է հեղինակին միանալ Իտալիայում, ինչպես նշել է հեղինակի հայրը Ներգաղթի հարցերով բողոքարկման խորհրդի միստում: Մասնակից պետությունը պնդում է, որ ընտանիքից բաժանելու հարցն ավելի շուտ այնպիսի հարց է, որին հարկ է անդրադառնալ դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածների լույսի ներքո:

ՄԻԿ-ը հետագայում համաձայնում է մասնակից պետությանը, որ «ներկա գործի փաստերն այն բնույթը [չունեն], որ հանգեցնեն 7-րդ հոդվածին առնչվող հարցի»⁹⁵:

Մարմնական պատիժ

[9.89]

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. ... Կոմիտեի կարծիքով ... [7-րդ հոդվածով] սահմանված արգելքը պետք է տարածվի մարմնական պատժի վրա, ներառյալ չափը գերազանցող կարգապահական պատիժները, որոնք սահմանվում են որպես հանցագործության համար պատիժ կամ որպես դաստիարակչական կամ կարգապահական միջոց: Այս իմաստով տեղին է շեշտել, որ 7-րդ հոդվածը պաշտպանում է, մասնավորապես, երեխաներին, աշակերտներին և հաճախորդներին կրթական և բժշկական հաստատություններում:

ՄԻԿ-ի հղումը «*չափը գերազանցող* կարգապահական պատիժներ»-ին ցույց է տալիս, որ մարմնական պատիժը, *որպես այդպիսին*, չի խախտում 7-րդ հոդվածը: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը, կարելի է ասել, կոշտացրել է իր դիրքորոշումը հետևյալ գործում:

⁹⁴ Այս գործի այլ հանգամանքների վերաբերյալ տես նաև [12.35-12.37] և [20.20]:

⁹⁵ «*Ստյուարտն ընդդեմ Կանադայի*» (*Stewart v Canada, 538/93*) գործով համանման բողոքը նույնպես անընդունելի էր համարվել 7-րդ հոդվածի 11.2 կետի առումով: Ուշադրություն դարձրեք նաև, որ խնամակալության իրավունքներից [custody rights] զրկելը 7-րդ հոդվածի հետ կապված խնդիրներ չառաջացրեց «*Ա. Ջ. Վ. Գ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» գործում (1142/02), պարբ 5.6:

[9.90] «ՀԻԳԻՆՍՈՆՆ ԸՆԴՂԵՄ ԾԱՍԱՅԿԱՅԻ» (HIGGINSON v JAMAICA, 792/98)

¶ 6. ... Հեղինակը պնդում է, որ տամարինդից (հնդկական արմավենի) պատրաստված ճիպոտի օգտագործումը դաժան, անմարդկային և նվաստացնող պատիժ է, և դրան դատապարտելը խախտել է դաշնագրի 7-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները: Մասնակից պետությունը պնդումը չի վիճարկել: Անկախ այն հանգագործության բնույթից, որի համար պիտի պատիժ կիրառվի, կամ ներպետական օրենսդրությամբ մարմնական պատժի թույլատրելիությունից, կոմիտեի միահամուռ կարծիքն այն է, որ մարմնական պատիժը դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ է և հակասում է դաշնագրի 7-րդ հոդվածին: Կոմիտեն կարծում է, որ տամարինդից պատրաստված ճիպոտով ծաղկում սահմանելը կամ կիրառելը հեղինակի՝ 7-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտում է:

Այդպիսով, ՄԻԿ-ը սահմանեց, որ մարմնական պատժի ենթարկելը և պարզապես նման պատիժ *սահմանելը* խախտում են 7-րդ հոդվածը⁹⁶: Նմանապես «Սոոկլալը ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Sooklal v Trinidad and Tobago, 928/00*) գործի կապակցությամբ ՄԻԿ-ը եզրակացրեց, որ կեչու ճիպոտով ծաղկման (տասներկու հարված) սահմանումը խախտում է 7-րդ հոդվածը⁹⁷: Այս որոշումներն ի ցույց են դնում ՔՔԻՄԴ-ում առկա անոմալիան: Մահապատժի սահմանումը թերևս ավելի մեծ հոգեկան տառապանք կարող է պատճառել, քան մարմնական պատժի սահմանումը, սակայն միայն վերջինն է, որպես *այդպիսին*, համարվում 7-րդ հոդվածի խախտում⁹⁸: ՔՔԻՄԴ-ում առկա այս ներքին անհամապատասխանությունը պարտադրված է ՄԻԿ-ին այն փաստի ուժով, որ այդ ավելի ծանր պատիժն աներկբայորեն թույլատրված է ՔՔԻՄԴ-ի 6-րդ հոդվածով⁹⁹:

[9.91] Ավելին՝ Կիպրոսի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է, որ «մարմնական պատիժն արգելվում է դաշնագրով»՝ առանց նման պատժի ծանրության վերաբերյալ որևէ ակնհայտ որակում տալու¹⁰⁰: Լեսոտոյի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն առաջարկում է վերացնել օրենքով սահմանված մարմնական պատժի բոլոր տեսակները՝ անկախ այն հանգամանքից, որ նման պատիժը վերահսկվում է բժիշկների կողմից¹⁰¹: Վերջապես, Իրաքի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը խորապես անհամապատասխան էր Իրաքում դատապարտյալների ձեռքերի անդամահատման և խարանձան դեպքերով¹⁰²: Իսլամական երկրում որպես պատիժ կիրառվող անդամահատման վերաբերյալ մեկնաբանությունները ցույց են տալիս, որ 7-րդ հոդվածով ներկայացված մեղադրանքների դեմ «մշակութային» պաշտպանությունը չի ընդունվում ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից¹⁰³:

Կալանքի պայմաններ

[9.92] Հետևյալ գործերը վերաբերում են 7-րդ հոդվածով ներկայացված մեղադրանքներին, որոնք առնչվում են հեղինակի կալանավորման պայմաններին: Դրանք կարելի է բացահայտել վերը բերված այնպիսի գործերից, ինչպիսիք են *Վուդլանի* [9.26] և *Ենսենի* [9.48] գործերը, քանի որ դրանք վերաբերում են՝ *որպես այդպիսին*, մեղսագրվող անմարդկային վերաբերմունքին՝ դրսևորված կալանքով: Կա-

⁹⁶ Սակայն գործում այս կետի վերաբերյալ շփոթություն կա, քանի որ հեղինակը պարբ. 3.3-ում նշում է, որ պատիժն ի կատար է ածվել:

⁹⁷ Պարբ. 4.6: Պարբ. 6-ում ՄԻԿ-ը նշում է, որ պատիժը դեռևս ի կատար չի ածվել: Տե՛ս նաև «Օսբորնը ընդդեմ Ճամայկայի» (*Osbourne v Jamaica, 759/97*) գործը:

⁹⁸ Տե՛ս [9.53]-ը և հաջորդը:

⁹⁹ Տե՛ս [8.19]-ը և հաջորդը:

¹⁰⁰ Եզրափակիչ դիտարկումներ Կիպրոսի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 88, պարբ. 16: Տե՛ս - նաև «Մաթյունը ընդդեմ Ճամայկայի» (*Matthews v Jamaica, 569/93*), պարբ. 6.5, և Եզրափակիչ դիտարկումներ Լիբիայի Արաբական Ջամահիրիայի (Լիբիայի Հանրապետություն) վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 101, պարբ. 11:

¹⁰¹ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106, պարբ. 20:

¹⁰² (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 84, պարբ. 12:

¹⁰³ Անդամահատման՝ որպես պատժի մասին տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Լիբիայի Արաբական Ջամահիրիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 101, պարբ. 11 և Եզրափակիչ դիտարկումներ Եմենի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/YEM, պարբ. 16: Տե՛ս նաև [1.99]: Տե՛ս նաև, ընդհանուր առմամբ, Նախմ, վերը, ծնթ. 25:

րելի է հիշատակել նաև «Զ-ն ընդդեմ Ավստրալիայի» գործը [9.49], այն իմաստով, որ այն վերաբերում է կալանքի հետևանքներին, ոչ բուն կալանքին:

**[9.93] «ՊՈՐՏՈՐԵԱԼՆ ընդդեմ ԴՈՄԻՆԻԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(PORTORREAL v DOMINICAN REPUBLIC, 188/84)**

¶ 9.2. Պարոն Ռամոն Բ. Մարտինես Պորտոռեալը Դոմինիկյան Հանրապետության քաղաքացի է, իրավաբան և Մարդու իրավունքների դոմինիկյան կոմիտեի պատասխանատու քարտուղարը: 1984 թ. հունիսի 14-ին՝ առավոտյան ժամը 6-ին, նա ձերբակալվում է իր տանը իր՝ որպես իրավապաշտպան կազմակերպության ղեկավարի գործունեության համար և տեղափոխվում գաղտնի ոստիկանության կենտրոնակայանի խուց, որտեղից տեղափոխվում է մեկ այլ խուց՝ 20 մետր երկարությամբ և 5 մետր լայնությամբ, որտեղ պահվում էր 125 մարդ՝ մեղադրված սովորական հանցագործությունների համար, և որտեղ տեղի սղության պատճառով կալանավորվածներից ոմանք ստիպված էին նստել կղանքի վրա: Նրան մինչև հաջորդ օրը պահում են առանց սննդի և ջրի: 1984 թ. հունիսի 16-ին՝ 50 ժամ տևած կալանքից հետո, նրան ազատ են արձակում: Իր կալանքի ողջ ընթացքում նրան չեն տեղեկացնում իր ձերբակալության պատճառների մասին ...

¶ 11. Մարդու իրավունքների կոմիտեն ... այն կարծիքին է, որ այս փաստերը վեր են հանում դաշնագրի 7-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտումներ, որովհետև Ռամոն Մարտինես Պորտոռեալը ենթարկվել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի և իր կալանքի ընթացքում բախվել իր մարդկային արժանապատվության հանդեպ հարգանքի բացակայության: . .

«ՄՈՒԿՈՆԳՆ ընդդեմ ԿԱՄԵՐՈՒՆԻ» (MUKONG v CAMEROON, 458/91)

Այս գործում Մուկոնգի կալանքի պայմանները պարունակում էին 7-րդ հոդվածի խախտում:

¶ 9.3. Ինչ վերաբերում է ընդհանրապես կալանքի պայմաններին, կոմիտեն համարում է, որ, անկախ մասնակից պետության զարգացման աստիճանից, կալանքի պայմանների առումով անհրաժեշտ է ապահովել որոշակի նվազագույն չափորոշիչներ: Դրանք, ՄԱԿ-ի «Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի ստանդարտ նվազագույն կանոնների» թիվ 10, 12, 17, 19 և 20 կանոններին համապատասխան, ներառում են յուրաքանչյուր բանտարկյալի հաշվարկով անհրաժեշտ նվազագույն հատակի մակերեսը և օդի ծավալը, բավարար սանիտարական հարմարությունները, հագուստը, որը չպետք է լինի որևէ առումով նվաստացնող կամ ստորացնող, առանձին անկողնու տրամադրումն ու առողջության և ուժի տեսանկյունից բավարար սննդային արժեք ունեցող պարենի տրամադրումը: Անհրաժեշտ է նշել, որ սրանք այն նվազագույն պահանջներն են, որոնք կոմիտեի կարծիքով պետք է ապահովվեն մշտապես, եթե նույնիսկ տնտեսական կամ ֆինանսական հանգամանքները դժվարացնեն այդ պահանջների կատարումը: Գործից երևում է, որ այդ պահանջները չեն պահպանվել հեղինակի կալանքի ընթացքում՝ 1988 թ. ամռանը և 1990 թ. փետրվար/մարտին:

¶ 9.4. Կոմիտեն նշում է նաև, որ կալանքի ընդհանուր պայմանները դեռ մի կողմ թողած՝ հեղինակը մեկուսացվել է և ենթարկվել բացառիկ կոպիտ և նվաստացնող վերաբերմունքի: Այսպես, նա կալանքի տակ է պահվել առանց հաղորդակցության հնարավորության, ենթարկվել է խոշտանգման և մահվան սպառնալիքների ու ահաբեկման, զրկվել է սննդից և իր խցում փակված է պահվել մի քանի օր շարունակ՝ առանց վերականգնվելու հնարավորության: Այս համատեքստում կոմիտեն հիշեցնում է իր թիվ 20[44] Ընդհանուր մեկնաբանությունը, որն առաջարկում է, որ մասնակից պետությունները պետք է առանց հաղորդակցության հնարավորության կալանքին դնել կանգնեն, և նշում է, որ կալանավորված կամ բանտարկված անձի լիակատար մեկուսացումը կարող է 7-րդ հոդվածով արգելված գործողություն դիտվել . . . Ելնելով վերը նշվածից՝ կոմիտեն համարում է, որ պարոն Մուկոնգը ենթարկվել է դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի՝ ի խախտումն դաշնագրի 7-րդ հոդվածի:

«ԷԴՈՒԱՐԴՍՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (EDWARDS v JAMAICA, 529/93)

¶ 8.3. Սբ Կատարինա շրջանային բանտում կալանքի պայմանների կապակցությամբ կոմիտեն նշում է, որ հեղինակն իր սկզբնական հաղորդման մեջ ներկայացրել է որոշակի մեղադրանքներ կալանքի ողբալի պայմանների կապակցությամբ: Նա պնդում էր, որ 10 տարվա ժամանակահատվածում պահվել է միայնակ՝ 6x14 ոտնաչափ չափսերով խցում, դրսում գտնվելու իրավունք է ունեցել օրական ընդամենը երեքուկես ժամ, զուրկ է եղել ժամանցի

որևէ հնարավորությունից և գրքեր չի ստացել: Մասնակից պետությունն այս մեղադրանքները ժխտելու որևէ փորձ չի արել: Այդ պարագայում կոմիտեն մեղադրանքները համարում է ապացուցված: Կոմիտեն համարում է, որ բանտարկյալին կալանքի մեծ պայմաններում պահելը ոչ միայն 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է, այլև (այդ պայմաններում հեղինակին պահելու ժամկետի պատճառով) 7-րդ հոդվածի խախտում:

«ԲՐԱՈՒՆՆ ընդդեմ ՃԱՄԱՅԱՅԻ» (BROWN v JAMAICA, 775/97)

¶ 6.13. Սակայն հեղինակը բողոքում է նաև Սբ Կատարինա շրջանային բանտում իր կալանքի պայմաններից, որոնց մասնակից պետությունը չի անդրադարձել: Մասնավորապես նա նշում է, որ խցում փակված է պահվում օրական 23 ժամ, որ ներքնակ կամ այլ անկողին, սանիտարական հարմարություններ, օդափոխություն կամ էլեկտրական լուսավորություն չունի, և իրեն թույլ չի տրվում մարզանք անել, ինչպես նաև բժշկական օգնություն, բավարար սնունդ և խմելու մաքուր ջուր ստանալ: Հեղինակը պնդում է նաև, որ իր անձնական իրերը, ներառյալ ասթմայի ինհալյատորը և այլ դեղամիջոցներ, 1997 թ. մարտին ոչնչացրել են բանտի պահնորդները, և ասթմայի նոպայի դեպքում զրկված է եղել շտապ օգնությունից: Թեև մասնակից պետությունը խոստացել է հետաքննել այդ մեղադրանքներից մի քանիսը, կոմիտեն մտահոգությամբ նշում է, որ մասնակից պետության կողմից նախաքննության արդյունքները երբևէ չեն հաղորդվել: Այս պարագայում հարկ է պատշաճ կշիռ վերագրել հեղինակի չվիճարկված մեղադրանքներին, այնքանով, որքանով դրանք հիմնավորված են: Կոմիտեն կարծում է, որ վերը նշվածը դաշնագրի 7-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է:

[9.94] Ճապոնիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է հետևյալը¹⁰⁴.

¶ 27. Կոմիտեն խորապես մտահոգված է Ճապոնիայի բանտային համակարգի մի շարք կողմերով, ինչը լուրջ հարցեր է առաջացնում դաշնագրի 2-րդ հոդվածի 3(ա) կետին, 7-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխանության առումով: Կոմիտեն հատկապես անհանգստացնում է հետևյալը.

(ա) բանտերում վարվեցողության խիստ կանոնները, որոնք սահմանափակում են բանտարկյալների հիմնարար իրավունքները, ներառյալ խոսքի ազատությունը, միավորումներ կազմելու ազատությունը և մասնավոր կյանքի ազատությունը.

(բ) պատժիչ խիստ միջոցները, ներառյալ մեկուսի բանտարկությանը հաճախ դիմելը.

(գ) կանոնների խախտման համար մեղադրվող բանտարկյալների հանդեպ կարգապահական միջոցների վերաբերյալ որոշում կայացնելու արդարացի և բաց ընթացակարգերի բացակայությունը.

(դ) բանտապահների ճնշումներից բողոքող բանտարկյալների անբավարար պաշտպանությունը.

(ե) բանտարկյալների բողոքների հետաքննության վստահելի համակարգի բացակայությունը և

(զ) պաշտպանիչ միջոցների, օրինակ՝ կաշվե ձեռնափոկերի հաճախակի օգտագործումը, որը կարող է դաժան կամ անմարդկային վերաբերմունք համարվել:

[9.95] ՄԻԿ-ի կողմից ըստ էության կայացված առաջին որոշումներից մեկում («Մասերան ընդդեմ Ուրուգվայի» (Massera v Uruguay, 5/77) գործով) ՄԻԿ-ը հաստատեց, որ «առողջության համար վնասակար պայմաններում կալանքը» 7-րդ հոդվածի խախտում է: Սակայն կալանքի ընդհանուր վատ պայմանների վերաբերյալ գործերի մեծ մասի հետ ՄԻԿ-ը գործ է ունեցել հոդված 10(1)-ի կապակցությամբ՝ ցույց տալով, որ հետ է կանգնել Մասերայի գործում որդեգրած դիրքորոշումից¹⁰⁵:

¹⁰⁴ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 102:

¹⁰⁵ Գանդի, վերը, ծմբ. 37, 769: Տե՛ս [9.141]:

[9.96] «ՌՈԲԻՆՍՈՆՆ ԸՆԴՈՂԵՄ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (ROBINSON v JAMAICA, 731/97)

7-րդ հոդվածի, այլ ոչ թե 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտումներ հիմնականում արձանագրվում են, երբ կալանքի ընթացքում կալանավորի հանդեպ բռնություն են կիրառում [9.141-9.142], ինչպես տեղի է ունեցել հետևյալ գործում.

¶ 5.2. 1998 թ. հոկտեմբերի 9-ի իր հաղորդման մեջ հեղինակն առաջադրում է նաև նոր պնդում՝ 7-րդ և 10-րդ հոդվածների լույսի ներքո: Ներկայացված փաստաթղթերում նշվում է, որ 1997 թ. մարտի 5-ին հեղինակը ծեծի է ենթարկվել և գլխին հարվածներ է ստացել ամուսններ չնշված պահնորդների կողմից, որոնց հետևանքով առաջացած պատռվածքին դրվել է տասը կար . . .

¶ 8.2. Մեղսագրվող ծեծի վերաբերյալ մասնակից պետությունը նշում է, որ 1997 թ. մարտի 5-ին հեղինակը իր երեք բանտակիցների հետ փորձ է արել փախուստի դիմել բանտից: Ենթադրաբար նրանք իրենց խցերից հաջողել են դուրս սպրդել երկաթե ճաղավանդակները և խցերի դռան կողպեքները կտրելով, սակայն փորձը տապալվել է, երբ բռնվել են դեպի արհեստանոց տանող դարպասով անցնելիս: Բոլոր չորս բանտարկյալները տեղափոխվել են թիվ 19 խուց: Երբ նրանց խնդրել են դուրս գալ խցից, որպեսզի այն խուզարկվի, ըստ մասնակից պետության, նրանք հրաժարվել են ենթարկվել և սկսել են իրենց սանձարձակ պահել, սպառնալ աշխատակիցներին ու զազարխոսել: Մասնակից պետությունը պնդում է, որ բանտի աշխատակիցները հրահանգը բազմիցս կրկնել են տասնհինգ րոպեի ընթացքում, սակայն բանտարկյալները կրկին հրաժարվել են ենթարկվել և, հետևաբար, պետք է հեռացվեին ուժի կիրառությամբ: Նրանց հեռացնելուց հետո պարզվել է, որ նրանց մոտ եղել են դաշույնի կտոր, երկաթե խողովակի կտոր և մետաղադոցի երկու սայր:

¶ 8.3. Մասնակից պետությունը պնդում է, որ բանտարկյալները վնասվածքներ են ստացել հենց այդ բռնի հեռացման ընթացքում: Վնասվածքների համար բանտարկյալները բժշկական օգնություն են ստացել բանտի բժշկից: Նա վերջիններիս ուղեգրել է իսպանական թաղամասի հիվանդանոց, որտեղ նրանց քննել է ոմն բժիշկ Դոնալդ Նեյլ: Իր արձանագրության մեջ բժիշկ Նեյլը նշում է, որ հեղինակը հիվանդանոց է ընդունվել բանտապահների կողմից ամբողջ մարմնին ստացած շարունակական հարվածներից ունեցած զանգատներով ... «Հետազոտությունները ցույց տվեցին, որ երիտասարդի գիտակցությունը և ռեֆլեքսները պահպանված են, իսկ օրգանիզմի հիմնական ցուցիչները նորմալի սահմաններում են: Մեջքի ստորին հատվածում առկա էին բազմաթիվ սալքարդեր, գունարած այտուցվածությունը և փափկությունը կրծքավանդակի ձախ հետին հատվածում: Փանգի աջ քունքային հատվածում առկա էր 4 սանտիմետրանոց պատռվածք: Բազմակի գծային ճանկվածքներ կային աջ ազդրին, ձախ ոտքի առջևի մակերեսին՝ գունարած այտուցվածությունը և փափկությունը աջ ոտքի ծնկի հատվածում: Փանգի ռենտգեն նկարը կոտրվածքներ չի հայտնաբերել: Բուժումը բաղկացած էր հակափայտացումային անատոքսինից, հակաբիոտիկի ներարկումից և պատռվածքը կարելուց»:

¶ 8.4. Ի վերջո, մասնակից պետությունն ընդունում է, որ հեղինակը ծեծի է ենթարկվել 1997 թ. մարտի 5-ին՝ բանտից փախչելու փորձ կատարելուց հետո: Այնուամենայնիվ, ներկայացվում է, որ ծեծից հնարավոր չէր խուսափել, քանի որ հեղինակը մյուս բանտարկյալների հետ հրաժարվել է ենթարկվել բանտի աշխատակիցների հրահանգներին: Այդպիսով, մասնակից պետությունը «ժխտում է, որ մարտի 5-ի պատահարը 7-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է...»:

¶ 10.3. Հեղինակի այն պնդման վերաբերյալ, որ ինքը 1997 թ. մարտի 5-ին Սբ Կատարինա շրջանային բանտում ծեծի է ենթարկվել մի քանի բանտապահի կողմից, կոմիտեն չի գիտություն է ընդունում, որ մասնակից պետությունը, մեղադրանքները հետաքննելով, պարզել է, որ ծեծը եղել է անխուսափելի, քանի որ հեղինակը և երեք այլ բանտարկյալներ չեն ենթարկվել խցերից մեկը լքելու բազմակի կարգադրությանը: Սակայն կոմիտեն չի գիտություն է ընդունում նաև մասնակից պետության տրամադրած բժշկական զեկույցը, որը բացահայտում է, որ հեղինակը ստացել է գլխի, մեջքի, կրծքավանդակի և ոտքերի վնասվածքներ, որոնք ավելին են, քան անհրաժեշտ էր որևէ մեկին բանտախցից ստիպողաբար հեռացնելու համար: Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ անհամաչափ ուժ է կիրառվել՝ ի խախտումն դաշնագրի 7-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին կետի:

Ինչպես երևում է, ՄԻԿ-ն ընդունում է, որ բանտում կարգապահություն ապահովելու նպատակով կարելի է ուժ կիրառել, սակայն նման ուժը պետք է այդ հանգամանքներին համաչափ լինի:

Մեկուսի բանտարկություն և առանց հաղորդակցության հնարավորության կալանք

[9.97] Թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը նշում է, որ «կալանավորված կամ բանտարկված անձին երկարատև մեկուսի բանտարկության ենթարկելը կարող է հավասարեցվել 7-րդ հոդվածով արգելված գործողություններին»¹⁰⁶: «Կանգն ընդդեմ Կորեայի Հանրապետության» (*Kang v Republic of Korea, 878/99*) գործի հեղինակը տասներեք տարի պահվել է մեկուսի բանտարկության մեջ: ՄԻԿ-ը որոշեց, որ խախտվել է 10-րդ հոդվածի 1-ին կետը՝ առանց նշելու 7-րդ հոդվածի մասին [9.151Ա]: Հնարավոր է, որ ՄԻԿ-ն առաջնորդվել է հեղինակի փաստարկներով, որոնց մեջ 7-րդ հոդվածը տեղ չի գտել:

[9.98] Առանց հաղորդակցության հնարավորության կալանքը կալանավորման ծանր տեսակ է, երբ անպայման չէ, որ անձը պահվի մեկուսի բանտարկության մեջ, սակայն նրան թույլ չի տրվում կապի մեջ լինել ընտանիքի, ընկերների և այլոց (օրինակ՝ իրավաբանների) հետ: «Լաուրեանոն ընդդեմ Պերուի» (*Laureano v Peru, 540/1993*) և «Չիշիմբի ընդդեմ Չաիրի» (*Tshishimbi v Zaire, 542/1993*) գործերում գոհերի ստիպողական անհետացումը, արտաքին աշխարհի հետ կապից նրանց զրկելը պարունակում էին «դաժան և անմարդկային վերաբերմունք»: «Պոլայ Կամպոսն ընդդեմ Պերուի» (*Polay Campos v Peru, 577/94*) գործում, առանց հաղորդակցության հնարավորության մեկ տարի ժամկետով կալանքն «անմարդկային վերաբերմունք» է¹⁰⁷, մինչդեռ երեք տարուց ավելի տևած մեկուսի բանտարկությունը նույնպես խախտում է 7-րդ հոդվածը¹⁰⁸: Վերջապես, կալանավորվածներով գերբնակեցված, խոնավ պայմաններում անցկացված ութ ամիս ժամկետով առանց հաղորդակցության հնարավորության կալանքը «Շոուն ընդդեմ Ճամայկայի» (*Shaw v Jamaica, 704/96*) գործում «անմարդկային և նվաստացնող վերաբերմունք» է¹⁰⁹: Շոուն գործը վերաբերում էր կալանքի ամենակարճ տևողությանը, որի դեպքում առանց հաղորդակցության իրավունքի կալանքը համարվել է 7-րդ հոդվածի խախտում: Առանց հաղորդակցության իրավունքի կալանքին վերաբերող այլ գործերը դիտարկվել են 10-րդ հոդվածով [9.151]:

Չլիազորված բժշկական փորձեր

[9.99] 7-րդ հոդվածի վերջին նախադասությունը հատուկ արգելում է առանց համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը: Այս արգելքը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նացիստական բժիշկների գործած չարագործությունների արձագանքն է¹¹⁰:

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. 7-րդ հոդվածն անվերապահորեն արգելում է առանց անձի ազատ համաձայնության նրան բժշկական կամ գիտական փորձերի ենթարկել: ... Կոմիտեն ... համարում է, որ անհրաժեշտ է հատուկ պաշտպանություն ապահովել այն անձանց համար, ովքեր ունակ չեն իրավաչափ համաձայնություն տալ, և հատկապես այն անձանց համար, ովքեր կալանքի կամ բանտարկության որևէ ձևի տակ են: Նման անձինք չպետք է ենթարկվեն որևէ բժշկական կամ գիտական փորձի, որը կարող է վտանգավոր լինել նրանց առողջության համար:

Այդպիսով, ՄԻԿ-ն արձանագրել է, որ խոցելի անձինք, ինչպիսիք են բանտարկյալները և այլ կալանավորվածները, երբեք չպետք է ենթարկվեն իրենց առողջության համար հնարավոր վնասակար բժշկական փորձերի, քանի որ նման անձանց կողմից տրված ցանկացած համաձայնություն ի սկզբանե կասկածելի է:

¹⁰⁶ Պարբ. 6: Տե՛ս նաև պարբ. 11 [9.103]:

¹⁰⁷ Պարբ. 8.6:

¹⁰⁸ Պարբ. 8.7: Տե՛ս նաև «Մարայիսն ընդդեմ Մադագասկարի» (*Marais v Madagascar, 49/79*) և «Էլ Մեգրեյսին ընդդեմ Լիբիայի Արաբական Համահիրիայի» (*El-Megreisi v Libyan Arab Jamahiriya, 440/90*):

¹⁰⁹ Պարբ. 7.1:

¹¹⁰ Նովակ, վերը, ծմբ. 3, 137-8, մեջբերելով ՄԱԿ-ի փաստաթուղթ A/2929, 31, պարբ. 14:

[9.100] ԱՄՆ-ի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է հետևյալը¹¹¹.

¶ 21. Կոմիտեն մտահոգված է, որ որոշ նահանգներում անչափահասներին կամ հոգեկան հիվանդություն ունեցող անձանց ոչ բուժական հետազոտությունների են ենթարկում՝ հիմնվելով ժառանգության և խնամակալության հարցերով դատավորների [surrogate] համաձայնության վրա՝ ի խախտումն դաշնագրի 7-րդ հոդվածի դրույթների:

Նիդեռլանդների վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է¹¹².

¶ 7. Թեև կոմիտեն ընդունում է, որ մասնակից պետության 1999 թ. «Բժշկական հետազոտության (մարդկանց՝ որպես հետազոտության օբյեկտ օգտագործելու) մասին» օրենքը փորձում է ընդհանուր առմամբ ընդունելի չափորոշիչ գտնել և մշտական վերահսկողության համակարգ ստեղծել՝ Մարդկանց՝ որպես հետազոտության օբյեկտներ ներառող բժշկական հետազոտությունների հարցերով կենտրոնական կոմիտեի կողմից հավաստագրված համապատասխան տեղական կոմիտեների միջոցով, Մարդու իրավունքների կոմիտեն այս օրենքը համարում է խնդրահարույց (դաշնագրի 7-րդ հոդված): Կոմիտեն մտահոգված է ընդհանուր չափանիշով, որով համաչափությունը գնահատվում է հետազոտության օբյեկտի ռիսկերը համադրելով հետազոտության հավանական արժեքի հետ: Կոմիտեն համարում է, որ այս բավական սուբյեկտիվ չափանիշը պետք է ենթարկվի սահմանափակման, որից անդին անձի ռիսկերն այնքան մեծ են, որ ակնկալված որևէ չափով օգուտ չի կարող գերազանցել դրանք: Կոմիտեն մտահոգված է նաև, որ անչափահասները և այլ անձինք, որոնք ունակ չեն իրավաչափ համաձայնություն տալ, որոշակի հանգամանքների դեպքում կարող են ենթարկվել բժշկական հետազոտական աշխատանքների:

Մասնակից պետությունը պետք է իր «Բժշկական հետազոտության (մարդկանց՝ որպես հետազոտության օբյեկտ օգտագործելու) մասին» օրենքը դիտարկի կոմիտեի արտահայտած մտահոգությունների լույսի ներքո, որպեսզի ապահովի, որ նույնիսկ հետազոտության հավանական մեծ արժեքը չօգտագործվի հետազոտության օբյեկտների համար առկա լուրջ ռիսկերն արդարացնելու համար: Մասնակից պետությունը նաև պետք է բացառի անչափահասների և իրավաչափ համաձայնություն տալու անընդունակ այլ անձանց մասնակցությունը որևէ բժշկական փորձի, որն ուղղակիորեն օգուտ չի բերում այդ անձանց (ոչ բուժական բժշկական հետազոտություն): Իր զեկույցում մասնակից պետությունը պետք է կոմիտեին տեղեկացնի ձեռնարկված քայլերի մասին և դրանք հազեցնի մանրամասն վիճակագրությամբ:

[9.101] «Բժշկական փորձերի» արգելումը նշանակալիորեն ավելի նեղ է, քան «բուժման» արգելումը: Ոչ փորձարարական բուժումը, եթե նույնիսկ կատարվում է առանց համաձայնության, պետք է հասնի ծանրության որոշակի աստիճանի՝ մինչև 7-րդ հոդվածը խախտելը: Անշուշտ, առանց համաձայնության կանանց ամլացումը (ստերիլացումը) 7-րդ հոդվածի խախտում է¹¹³:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[9.102]

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 10. Կոմիտեն պետք է տեղեկացված լինի, թե ինչպես են պետությունները բնակչության լայն շերտերի շրջանում տեղեկություններ տարածում խոշտանգման արգելման և 7-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի մասին: Իրավակիրառությունն ապահովող անձնակազմը, բժշկական անձնակազմը, ոստիկանության աշխատակիցները և այլ անձինք, ովքեր առնչություն ունեն ձերբակալության, կալանքի կամ բանտարկության որևէ ձևի ենթարկված որևէ անձի ազատագրված կամ նրա նկատմամբ վերաբերմունքին, պետք է համապատասխան ցուցումներ ստանան և վերապատրաստում անցնեն: Մասնակից պետությունները կոմիտեին պետք է տեղեկացնեն տրված ցուցումների ու անցկացված վերապատրաստման մասին և այն մասին, թե ինչպես է 7-րդ հոդվածով սահմանված արգելքը կազմում այդ անձանց գործառնական կանոնների և էթիկայի չափորոշիչների բաղկացուցիչ մասը:

ԽԴԿ-ի 10-րդ հոդվածն արտացոլում է համանման պարտականություն:

¹¹¹ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50:

¹¹² (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/NET:

¹¹³ Եզրափակիչ դիտարկումներ ճապոնիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 102, պարբ. 31, Եզրափակիչ դիտարկումներ Պերուի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/PER, պարբ. 21, Եզրափակիչ դիտարկումներ Սլովակիայի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/SCK, պարբ. 12:

ՀՈԴՎԱԾ 7-ՈՎ ՍԱՅՄԱՆՎԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՌԻՍԿԵՐԸ ՆՎԱԶՆՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ ՍԱՅՄԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[9.103]

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 11. Ի լրումն 7-րդ հոդվածով արգելված գործողություններից ընդհանուր պաշտպանություն (որի իրավունքն ունի յուրաքանչյուրը) տրամադրելուն ուղղված քայլերի նկարագրության՝ մասնակից պետությունը պետք է մանրամասն տեղեկություններ տրամադրի հատկապես խոցելի անձանց համար նախատեսված հատուկ պաշտպանության երաշխիքների մասին: Հարկ է նշել, որ հարցաքննության կանոնները, ցուցումները, մեթոդները և ընթացակարգերը, ինչպես նաև ձերբակալության, կալանքի կամ բանտարկության որևէ ձևի ենթարկված անձանց ազատագրկամ պայմանները և նրանց նկատմամբ վերաբերմունքը պարբերական վերանայման ենթարկելը խոշտանգման և դաժան վերաբերմունքի դեպքերի կանխման արդյունավետ միջոց է: Կալանավորված անձանց արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որ կալանավորվածները պահվեն այնպիսի վայրերում, որոնք պաշտոնապես ճանաչվել են որպես կալանավայրեր, և կալանավորվածների անունները և կալանքի վայրերը, ինչպես նաև նրանց կալանավորման համար պատասխանատու անձանց անունները պահվեն համապատասխան գրանցամատյաններում (ռեգիստրներում), որոնք մշտապես հասանելի լինեն առնչվող բոլոր անձանց, ներառյալ ազգականների և ընկերների համար: Նույն կերպ պետք է արձանագրվեն բոլոր հարցաքննությունների վայրը և ժամը՝ բոլոր ներկայների անունների հետ միասին, և այդ տեղեկությունները պետք է նույնպես հասանելի լինեն դատական կամ վարչական գործընթացների համար: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նաև առանց հաղորդակցության հնարավորության կալանքի դեմ: Այդ կապակցությամբ մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ կալանքի որևէ վայրում չլինի որևէ սարք, որը նախատեսված է խոշտանգման կամ դաժան վերաբերմունքի համար: Կալանավորվածի պաշտպանությունը պահանջում է նաև, որ անհապաղ և կանոնավոր մուտք ապահովվի բժիշկների և փաստաբանների, ինչպես նաև ընտանիքի անդամների համար՝ համապատասխան վերահսկողության ներքո, երբ դա է պահանջում քննությունը:

[9.104] Համապատասխան պարտականություն կարելի է գտնել ԽԴԿ-ի 11-րդ հոդվածում: ՄԻԿ-ի՝ այս և վերապատրաստման վերաբերյալ վերոնշյալ պարտականությունների [9.102] նկարագրությունը ցույց է տալիս, թե ինչ ապացույցներ պետք է ներկայացնեն պետությունները՝ 7-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված մեղադրանքները ժխտելու համար: Այս ընթացակարգային պարտականությունների կատարումն առաջին հերթին օգնում է ապահովելու, որ 7-րդ հոդվածի նյութական խախտումներ չլինեն, և ապացույցներ ներկայացնելու, որ դրանք չեն եղել¹¹⁴:

Առանց հաղորդակցության հնարավորության կալանքը կանխելու պարտականություն

[9.105] Ընդհանուր մեկնաբանության 11-րդ պարբերության մեջ ՄԻԿ-ը ճանաչում է, որ 7-րդ հոդվածի խախտման ռիսկերը նվազեցնելու համար [9.103] անհրաժեշտ է կանխել առանց հաղորդակցության հնարավորության կալանքը: Մարդիկ, ովքեր կալանավորված են առանց հաղորդակցության հնարավորության, մեծապես խոցելի են «7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունքի» առումով, քանի որ չկան ընթացակարգային երաշխիքներ, որոնք կապահովեն պատասխանատվությունը և այդպիսով կզսպեն 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունքի դրսևորումը: Առանց հաղորդակցության հնարավորության շարունակական կալանքն ըստ էության հավասարեցվում է «անհետացման»: Անհետացումների և 7-րդ հոդվածի միջև կապը մատնանշվում է հետևյալ գործում:

**«ՄՈՒՆԻԿԱՆ ընդդեմ ԴՈՄԻՆԻԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(MOJICA v DOMINICAN REPUBLIC, 449/91)**

ՄԻԿ-ը եզրակացրեց, որ մասնակից պետությունը որոշակի և արդյունավետ միջոցներ չի ձեռնարկել հեղինակի որդու անհետացումը կանխելու համար: Իրականում ծանրակշիռ փաստեր կային, որոնք խո-

¹¹⁴ Տե՛ս մեկնաբանությունները «Հիլը և Հիլն ընդդեմ Իսպանիայի» (Hill and Hill v Spain, 526/93) գործի վերաբերյալ [9.160]:

սում էին անհետացման մեջ պետության ներգրավվածության մասին: Այս գործը ՔՔԻՄԴ-ի բազմաթիվ խախտումներ էր պարունակում¹¹⁵, ներառյալ 7-րդ հոդվածի խախտումը:

¶ 5.7. Ռաֆայել Մոխիկայի անհետացման հանգամանքները, ներառյալ նրա դեմ հնչեցված սպառնալիքները, հիմնավոր տպավորություն են ստեղծում, որ նա խոշտանգվել է ու ենթարկվել անմարդկային վերաբերմունքի: Մասնակից պետությունը չի ներկայացրել ոչինչ, որ ցրեր այդ տպավորությունը: Տեղյակ լինելով բազմաթիվ երկրներում ստիպողական կամ կամքին հակառակ անհետացման բնույթին՝ կոմիտեն վստահաբար եզրակացնում է, որ անձանց անհետացումը անքակտելիորեն կապված է այնպիսի վերաբերմունքի հետ, որը համարվում է 7-րդ հոդվածի խախտում:

[9.106] Կարելի է տարբերել *Մոխիկայի* գործով որոշումը և «*Լաուրեանոն ընդդեմ Պերուի*» (540/1993), «*Չիչինբին ընդդեմ Ջաիրի*» (542/1993) ու «*Շոուն ընդդեմ Ճամայկայի*» (704/96) [9.98] գործերով որոշումները: Վերջին գործերում արձանագրվում էր, որ առանց հաղորդակցության հնարավորության կալանքն ինքնին 7-րդ հոդվածի խախտում է, մինչդեռ *Մոխիկայի* գործում 7-րդ հոդվածին առնչությունը կապվում էր այնպիսի գործողությունների հետ, որոնք ենթադրաբար տեղի էին ունեցել նման կալանքի ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 7-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՔԻ ԿԻՐԱՍՄԱՍԲ ԶԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

[9.107] ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 12. 7-րդ հոդվածի խախտումներից խուսափելու համար կարևոր է, որ օրենքով արգելվեն խոշտանգման կամ այլ արգելված վերաբերմունքի միջոցով ձեռք բերված վկայությունները կամ խոստովանություններն օգտագործելը կամ ընդունելի համարելը դատավարություններում:

Այդ առումով 7-րդ հոդվածը լրացնում է հոդված 14(3)(է)-ն¹¹⁶: ԽԴԿ-ի համապատասխան երաշխիքը 15-րդ հոդվածում է:

[9.108] «Փ. Է.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (P.E. v FRANCE, CAT 193/01)

Տվյալ գործում հեղինակը բողոքում էր Ֆրանսիայի կողմից իրեն Իսպանիային հանձնելու դեմ: Հանձնման դիմումի (1999 թ. մարտին) համար հիմք էր ծառայել Իսպանիայի ոստիկանությանը ոմն Սիքել Պենագարիկանոյի տված վկայությունը, ըստ որի՝ ակնհայտորեն հաստատվում էր հեղինակի մասնակցությունը ահաբեկչական գործողությունների փորձերին: Հեղինակը պնդում էր, որ Պենագարիկանոյի վկայությունը ձեռք է բերվել խոշտանգման միջոցով, և նա հետագայում հրաժարվել է իր վկայությունից: Հեղինակի բողոքը հետևյալն էր.

¶ 3.1. Հայցվորը համարում է, որ իր հանձնումը Իսպանիային կոնվենցիայի 15-րդ հոդվածի խախտում է, քանի որ Իսպանիայի իշխանությունների կողմից իրեն առաջադրված մեղադրանքները հիմնվում են խոշտանգման միջոցով ձեռք բերված վկայությունների վրա:

¶ 3.2. Կոնվենցիայի 15-րդ հոդվածը խոշտանգման բացարձակ արգելման (որի վրա հիմնված է խոշտանգումների դեմ այս կոնվենցիան) մասնավոր հետևանքներից մեկն է: Հոդվածի առաջին մասի նպատակը խոշտանգման գործելակերպը լիովին արժեզրկելն է, երբ անձի նկատմամբ այն կիրառվում է այնպիսի նպատակներով, ինչպիսին է նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ վկայություն կորզելը: Այս համատեքստում խոշտանգման արդյունքում ձեռք բերված վկայությունները պետք է հայտարարվեն բացարձակապես առ ոչինչ:

¹¹⁵ Տե՛ս [8.14]:

¹¹⁶ Տե՛ս [14.128-14.131]:

¶ 3.3. Այս դրույթը կիրառելի է ցանկացած դատական և արտադատական գործընթացում, հատկապես քրեական և վարչական գործընթացներում: Փաստորեն տվյալ դեպքում այն կիրառելի է հանձնման գործընթացում:

¶ 3.4. Հայցվորը կարծում է, որ մասնակից պետության կողմից կոնվենցիայի 15-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար անհրաժեշտ է, որ բավարարվեն մի շարք չափանիշներ.

- Անհրաժեշտ է ապացուցել, որ տվյալ դատավարության ընթացքում որպես ապացույց մեջբերված վկայությունը ձեռք է բերվել խոշտանգման միջոցով.
- Խնդրո առարկա վկայությունը պետք է հաղորդման հեղինակին առաջադրված մեղադրանքների էական տարրը լինի.
- Կոնվենցիայի 15-րդ հոդվածը պետության դատարանների և իշխանությունների համար բացարձակ պարտավորություն է սահմանում, այն է՝ անկողմնակալ, արդարացի և մանրակրկիտ կերպով հավաքել ու քննել այն բոլոր տարրերը, որոնք անհրաժեշտ են ապացուցելու համար, որ վկայությունը ձեռք է բերվել ապօրինի ճանապարհով.
- Կոնվենցիայի 15-րդ հոդվածից հետևում է, որ քննարկվող վկայությունը տվյալ երկրի դատարանների և իշխանությունների կողմից պետք է հայտարարվի բացարձակապես առ ոչինչ.
- Հանձնման գործընթացում անհրաժեշտ է նաև որոշել, թե դիմումը ներկայացրած երկրում խոշտանգում կիրառվում է, և քննել խնդրո առարկա վկայության ձեռք բերման հանգամանքներն ու այն հարցը, թե դիմումը ներկայացրած երկրում դատարանները սովորաբար ընդունում են խոշտանգման միջոցով ձեռք բերված վկայությունները:

¶ 3.5. Սույն գործում այդ բոլոր չափանիշները բավարարված են . . .

Մասնակից պետությունը պատասխանեց.

¶ 4.13. Մասնակից պետությունը համարում է, որ կոնվենցիայի 15-րդ հոդվածով մասնակից պետության պարտավորությունը կիրառելի է միայն այն դեպքում, երբ «ապացուցված» է, որ խնդրո առարկա վկայությունը ձեռք է բերվել խոշտանգման միջոցով: Այդ հոդվածի ձևակերպումը մեծապես տարբերվում է կոնվենցիայի 3-րդ հոդվածի ձևակերպումից, որը մասնակից պետությանն արգելում է անձին վերադարձնել կամ արտաքսել այլ երկիր, եթե բավարար հիմքեր կան հավատալու, որ նրան կարող է «սպառնալ խոշտանգման ենթարկվելու վտանգ»: Սույն գործում հայցվորը չի ապացուցել, որ պարոն Ազուրմենդիի վկայությունները ձեռք են բերվել խոշտանգման միջոցով, և ազատագրվման ընթացքում նրան ներկայացնող իրավաբանի ներկայությունը բավական լուրջ կասկածներ է առաջացնում այդ մեղադրանքների առումով:

¶ 4.14. Ավելին՝ մասնակից պետությունը համարում է, որ կոնվենցիայի 15-րդ հոդվածը որևէ կերպ չի պարտադրում հարցումներ անել երրորդ երկրին՝ պարզելու համար խոշտանգման մեղադրանքների իսկությունը: Այլ երկրի հանձնման առումով երբևէ չի ընդունվել, որ մասնակից պետությունը պետք է միջամտի երրորդ երկրում տեղի ունեցող դատավարությունների ընթացքին: Հետևաբար, ապացուցման պարտականությունը կրում է միայն մեղադրանքների հեղինակը:

¶ 4.15. Քանի որ 15-րդ հոդվածում ներառված պարտավորությունը վերաբերում է միայն այն իրավիճակներին, երբ ապացուցված է, որ վկայությունը ձեռք է բերվել խոշտանգման միջոցով, ապացույցը կարող է բխել միմյանց հետ բավականաչափ համընկնող կողմնակի ապացույցների ամբողջությունից: Տվյալ գործում հայցվորի կողմից վկայակոչված կողմնակի ապացույցներն աննշան են: Հեղինակը հղում է կատարում հիվանդանոցում ազատագրվմանը հետևած խորհրդակցությանը և հաջորդ օրը քննիչի մոտ պարոն Ազուրմենդիի հրաժարման կապակցությամբ իր ասածից: Հայցվորը չի ներկայացրել հերքման բացակայության դեպքում բավարար նվազագույն ապացույցներ, որ ազատագրվման ընթացքում պարոն Ազուրմենդիի առողջությունը վատթարացել է, կամ պատճառահետևանքային կապ կա առողջության վատթարացման և ֆիզիկական բռնության միջև, որին նա ենթադրաբար ենթարկվել է: Քննիչի մոտ պարոն Ազուրմենդիի հրաժարումը կարող է բացատրվել այն փաստով, որ այդ ժամանակ նա որևէ ճնշման ենթակա չէր և, հետևաբար, ունակ էր շատ արագ նվազեցնելու իր նախկին վկայությունների նշանակությունը:

Հեղինակը պատասխանեց.

¶ 5.2. Իր այն փաստարկների անհրաժեշտությունը ցույց տալու համար, ըստ որոնց՝ կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է հարգեն կոնվենցիայի 15-րդ հոդվածը, ներառյալ այլ երկրի հանձնման կամ արտաքսման դեպքերում, հայցվորը կոմիտեի ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ Եվրոպական Միության անդամ երկու այլ երկրներ՝ Բելգիան և Պորտուգալիան, վերջերս, ըստ կոնվենցիայի 15-րդ հոդվածի, հրաժարվել են այլ

երկրի հանձնել «ԷՏԱ»-ին անդամակցելու համար մեղադրվողներին այն հիմքով, որ այլ երկրի հանձնելու դիմումները հիմնված էին խոշտանգման միջոցով ձեռք բերված ապացույցների վրա:

¶ 5.3. Հայցվորը համարում է, որ այն պնդումը, թե Ֆրանսիայի դատարանները պարտավոր չեն երրորդ երկրին հարցումներ անել խոշտանգման մեղադրանքների իսկությունը գնահատելու համար, ծայրահեղ սահմանափակող մեկնաբանություն է, որը հակասում է կոնվենցիայի նպատակին: Նման մեկնաբանությունը խաթարում է կոնվենցիայի հիմնարար սկզբունքը, այն է՝ խոշտանգման բացարձակ արգելումը և դրա հիմնական հետևանքներից մեկը՝ խոշտանգման միջոցով ձեռք բերված ապացույցների ապօրինությունը: Քանի որ այս գործը ներառում է լուրջ և հիմնավոր մեղադրանք առ այն, որ որպես ընթացակարգի հիմք օգտագործվել են խոշտանգման միջոցով ձեռք բերված ապացույցներ, մասնակից պետությունը պետք է օգտագործի իր տրամադրության տակ եղած միջոցները՝ նման մեղադրանքների իսկությունը պարզելու համար: Քննարկման առարկա գործի դեպքում Ֆրանսիայի դատարանները կարող էին, օրինակ՝ դիմել Իսպանիայի իշխանություններին հավելյալ տեղեկություններ տրամադրելու համար, քանի որ այդ ընթացակարգն ընդունված է այլ երկրի հանձնման դեպքերում: Նման քայլը Ֆրանսիայի իշխանություններին հնարավորություն կտար անկողմնակալ, արդարացի և մանրակրկիտ հավաքել ու քննել այն բոլոր տարրերը, որոնք անհրաժեշտ են ապացուցելու համար, որ վկայությունը ձեռք է բերվել ապօրինի ճանապարհով:

ԽԴ կոմիտեն որոշեց հօգուտ մասնակից պետության:

¶ 6.2. Կոմիտեն ի գիտություն է ընդունում հայցվորի մեղադրանքները, որոնք վերաբերում են պարոն Ազուրմենդիի տված վկայությունների հանգամանքներին, նրա բերած փաստերն ապացուցելու համար այդ մեղադրանքները և կողմերի ներկայացրած փաստարկները, որոնք վերաբերում են կոնվենցիայի 15-րդ հոդվածով մասնակից պետությունների պարտավորություններին:

¶ 6.3. Այդ կապակցությամբ կոմիտեն համարում է, որ 15-րդ հոդվածի դրույթների ընդհանրականությունն ածանցվում է խոշտանգման արգելման բացարձակ բնույթից և, որպես հետևանք, յուրաքանչյուր մասնակից պետության համար նախատեսվում է պարտավորություն՝ պարզելու, թե իր լիազորության տակ գտնվող ընթացակարգի ապացույցների մաս կազմող վկայությունները խոշտանգման միջոցով են տրվել, թե՞ ոչ: Կոմիտեն համարում է, որ տվյալ վկայությունները հայցվորին այլ լիազորված երկրի հանձնելու ընթացակարգի ապացույցների մաս են կազմում: Այդ առումով այն մեղադրանքների առնչությամբ, որ այլ երկրի հանձնելու դիմումի՝ առնվազն մասամբ հիմք համարվող վկայությունները ձեռք են բերվել խոշտանգման ճանապարհով, մասնակից պետությունը պարտավոր էր պարզել դրանց իսկությունը:

¶ 6.4. Կոմիտեն նշում է, որ Ֆրանսիայի իշխանությունները՝ և՛ դատական, և՛ վարչական, քննել են հայցվորի ներկայացրած մեղադրանքները և որոշել, որ դրանք բավարար չափով հիմնավորված չեն: Կոմիտեն նշում է նաև, որ պարոն Ազուրմենդիի բողոքը, որը վերաբերում է ազատագրված ընթացքում իր հանդեպ ենթադրաբար դրսևորված վերաբերմունքին, դեռևս ուսումնասիրվում է Իսպանիայի դատական իշխանությունների կողմից, և ակնկալվում է, որ նրանք դատավարության ավարտին կվճռեն՝ պարոն Ազուրմենդիի խոստովանությունը ձեռք է բերվել ապօրինի կերպով, թե՞ ոչ: Կոմիտեն կարծում է, որ հարկ է հաշվի առնել միայն այս դատարանի վճիռը և ոչ թե պարոն Ազուրմենդիի սոսկ հրաժարումը խոստովանությունից, որի տակ նա մինչ այդ ստորագրել էր փաստաբանի ներկայությամբ:

¶ 6.5. Այդ կապակցությամբ կոմիտեն կրկնում է, որ ոչ թե կոմիտեն, այլ կոնվենցիային մասնակից պետությունների դատարաններն են գնահատում որոշակի գործի փաստերը և ապացույցները: Մասնակից պետությունների վճռաբեկ դատարաններն են քննության առնում դատավարության ընթացքը, քանի դեռ չի պարզվել, որ ապացույցների գնահատման ձևը եղել է ակնհայտորեն կամայական կամ արդարադատության մերժում, կամ դատավարությունը վարող դատավորն ակնհայտորեն խախտել է անկողմնակալ լինելու պարտավորությունը:

¶ 6.6. Կոմիտեն նկատի ունենալով, որ հեղինակը պետք է ցույց տա իր մեղադրանքների հիմնավորվածությունը, համարում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերի հիման վրա չի կարող եզրակացնել, որ ապացուցված է խնդրո առարկա վկայությունները խոշտանգման ճանապարհով ձեռք բերելը:

¶ 6.7. Համապատասխանաբար՝ կոմիտեն այն կարծիքին է, որ իր տրամադրության տակ եղած փաստերն իրեն հնարավորություն չեն տալիս արձանագրելու, որ խախտվել է կոնվենցիայի 15-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 7-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրինագիծ անցկացնելու և գործադրելու պարտականություն

[9.109]

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 13. Մասնակից պետություններն իրենց զեկույցները ներկայացնելիս պետք է նշեն սեփական քրեական իրավունքի այն դրույթները, որոնք պատժում են խոշտանգումների և դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժամիջոցների համար՝ հատուկ ներկայացնելով նման գործողությունների դեպքում գործող պատիժները, անկախ այն հանգամանքից՝ դրանք կատարվել են պետական պաշտոնյաների¹⁷, թե՛ այլ անձանց կողմից, ովքեր գործել են պետության անունից կամ որպես մասնավոր անձինք: Նրանք, ովքեր խախտում են 7-րդ հոդվածը՝ խրախուսելով, հրամայելով, հանդուրժելով կամ կատարելով արգելված արարքներ, պետք է ենթարկվեն պատասխանատվության: Համապատասխանաբար՝ նրանք, ովքեր հրաժարվել են հրամաններին ենթարկվելուց, չպիտի պատժվեն կամ ենթարկվեն որևէ բացասական վերաբերմունքի:

Համապատասխան օրինագծեր անցկացնելու և գործադրելու պարտականությունն արտացոլված է նաև Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (ԽՂԿ) 4-րդ հոդվածում և 2-րդ հոդվածի 1-ին կետում:

[9.110] Ընդհանուր մեկնաբանության 13-րդ պարբերությունը կրկին շեշտում է պետությունների պարտավորությունը, այն է՝ արգելել մասնավոր անձանց կողմից 7-րդ հոդվածում նշված վերաբերմունքը [9.21]: Օրինակ՝ 1995 թ. ՄԻԿ-ը Եմենի առնչությամբ մտահոգություն արտահայտեց այն մասին, որ այս մասնակից պետության օրենսդրության մեջ ընտանեկան բռնությանն առնչվող օրենքների պակաս կա¹¹⁷: Յոթ տարի անց ՄԻԿ-ը նշեց, որ Եմենում ընդունվել են ընտանեկան բռնությանը վերաբերող օրինագծեր, սակայն դրանք պատշաճ կերպով չեն գործադրվում¹¹⁸: Ավելին՝ մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որ իրենց օրենքները թույլ չտան հանցագործների՝ 7-րդ հոդվածով նախատեսված վերաբերմունք դրսևորող չարդարացված պաշտպանություն, և հանցանքի լրջությունը բավարար չափով ճանաչվի օրենսդրությամբ: Օրինակ՝ Պերուի դեպքում ՄԻԿ-ը հայտարարեց հետևյալը¹¹⁹.

¶ 15. Կոմիտեն մտահոգությամբ փաստում է, որ օրենքը դեռևս պարունակում է մի դրույթ, որը բռնաբարոդին ազատում է պատժից, եթե նա ամուսնանում է տուժողի հետ, և մեկ այլ դրույթ, ըստ որի՝ բռնաբարոդությունը դասակարգվում է որպես մի հանցանք, որի մեղավորին կարելի է հետապնդել մասնավոր կարգով:

Հոդված 7-ով սահմանված վերաբերմունքի մասով հայտարարություններն ուսումնասիրելու պարտականություն

[9.111]

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 14. 7-րդ հոդվածը հարկ է ընկալել կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետի հետ կապի մեջ: Մասնակից պետություններն իրենց զեկույցներում պետք է ցույց տան, թե ինչպես է իրենց օրենսդրական համակարգը փաստացի երաշխավորում 7-րդ հոդվածով արգելված բոլոր գործողությունների անհապաղ դադարեցումը, ինչպես նաև համարժեք փոխհատուցման տրամադրումը: 7-րդ հոդվածով արգելված ապօրինի վերաբերմունքի դեմ բողոքներ ներկայացնելու իրավունքը պետք է ճանաչվի ներպետական օրենսդրությամբ: Բողոքները պետք է արդյունավետ փոխհատուցում ապահովելու նպատակով պատշաճ և անկողմնակալ քննության ենթարկվեն իրավասու իշխանությունների կողմից: Մասնակից պետությունների զեկույցներում պետք է ներկայացվեն որոշակի տեղեկություններ նման ապօրինի վերաբերմունքից տուժած անձանց համար հասանելի իրավական պաշտպանության միջոցների և այն ընթացակարգի մասին, որին պետք է հետևեն բողոքարկողները, ինչպես նաև պետք է ներառվեն վիճակագրական տվյալներ բողոքների թվի և դրանց արդյունքների վերաբերյալ:

¹¹⁷ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ. CCPR/C/79/Add. 51, պարբ. 14: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Մալիի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/77/MLI, պարբ. 12:

¹¹⁸ Եզրափակիչ դիտարկումներ Եմենի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/YEM, պարբ. 6: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/74/SWE, պարբ. 7:

¹¹⁹ Եզրափակիչ դիտարկումներ Պերուի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 67:

[9.112]

**«ԷՌԵՐԱ ՌՈՒԲԻՈՆ ընդդեմ ԿՈԼՈՄԲԻԱՅԻ»
(HERRERA RUBIO v COLOMBIA, 161/83)**

խոշտանգումների և այլ ապօրինի վերաբերմունքի մասին հայտարարությունները քննելու պարտականությունը վավերացվեց հետևյալ գործում:

¶ 10.5. Կամընտիր արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստից ենթադրվում է, որ մասնակից պետությունները պարտավոր է բարեխղճորեն քննել կոնվենցիայի խախտումների մասին բոլոր հայտարարությունները, որոնք արվել են սեփական պետության և դրա իշխանությունների դեմ և կոմիտեին ապահովել իրեն հասու տեղեկատվությամբ: Մասնակից պետությունը ոչ մի դեպքում չի կարող հրաժարվել ապօրինի վերաբերմունքի բոլոր հայտարարություններն ամբողջությամբ քննելուց այն դեպքում, երբ հաղորդման հեղինակի կողմից նշվում է այն անձը կամ այն անձինք, ովքեր, համաձայն հայտարարության, պատասխանատու են ապօրինի վերաբերմունքի համար: Մասնակից պետությունն այս տեսակետից հստակ տեղեկություններ և զեկույցներ չի տրամադրել, ի թիվս այլոց, բանտարկյալների նկատմամբ ապօրինի վերաբերմունք դրսևորելու մեջ մեղադրվող զինվորական պաշտոնյաներին կամ նրանց վերադասներին հարցաքննելու վերաբերյալ:

[9.113] Համապատասխան պարտականությունն արտացոլված է ԽԴԿ-ի 12-րդ և 13-րդ հոդվածներում:

ՀՈԴՎԱԾ 12, ԽԴԿ

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ իր իրավասու մարմիններն անհապաղ անաչառ քննություն անցկացնեն, երբ բավարար հիմք կա ենթադրելու, որ խոշտանգումը կիրառվել է իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում:

ՀՈԴՎԱԾ 13, ԽԴԿ

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ ցանկացած անձ, ով պնդում է, թե ինքն այդ պետության իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում ենթարկվել է խոշտանգումների, ունենա տվյալ պետության իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու և նրանց կողմից իր գործի անհապաղ ու անաչառ քննության իրավունք: Ձեռնարկվում են միջոցներ՝ ապահովելու համար հայցվորի վկայների պաշտպանությունն ընդդեմ վատ վերաբերմունքի կամ ահաբեկման՝ որպես նրա բողոքի կամ վկայության հետևանքի:

[9.114]

**«ՀԱԼԻՄԻ-ՆԵԶԻԲԻ ընդդեմ ԱՎՍՏՐԻԱՅԻ»
(HALIMI-NEDZIBI v AUSTRIA, CAT 8/91)**

Հեղինակը ձերբակալվել է 1988 թ. ապրիլին և մեղադրվել թմրամիջոցների ապօրինի առևտրի համար: Հեղինակը կատարել է տարբեր հայտարարություններ քննության ընթացքում ոստիկանության կողմից իրականացված խոշտանգումների և այլ անօրինական վերաբերմունքի մասին: Հեղինակը ներկայացրել է նաև հետևյալ բողոքը.

¶ 3. Հեղինակը պնդում է, որ խոշտանգումների մասին իր հայտարարություններն Ավստրիայի իշխանությունների կողմից պատշաճ կարգով չհետաքննվել և առաջին ու երկրորդ ատյանների դատարանների մերժումն իր միջնորդությանը, որով պահանջվում էր իր դեմ որպես ապացույց չընդունել այն վկայությունները, որոնք, ըստ պնդումների, խոշտանգումների հետևանքով արվել են իր և որոշ այլ վկաների կողմից, կոնվենցիայի 12-րդ և 15-րդ հոդվածների խախտում են:

Ըստ էության, ԽԴԿ կոմիտեն համաձայնեց հեղինակի հետ այն կապակցությամբ, որ մասնակից պետությունը չի կատարել անօրինական վերաբերմունքի մասին նրա հայտարարությունները պատշաճ կարգով քննելու պարտավորությունը:

¶ 13.5. Դեռևս հարկ է պարզել, թե արդյոք մասնակից պետությունը կատարե՞լ է իր պարտավորությունը՝ համաձայն կոնվենցիայի 12-րդ հոդվածի, այն է՝ անհապաղ և անաչառ քննել հեղինակի այն հայտարարությունները, ըստ ո-

րոնց՝ ինքը ենթարկվել է խոշտանգումների: Կոմիտեն նշում է, որ հեղինակն իր հայտարարությունները ներկայացրել է գործը քննող դատավորին 1988 թ. դեկտեմբերի 5-ին: Չմայած քննող դատավորը ոստիկանության սպաներին հայտարարությունների առնչությամբ հարցաքննել է 1989 թ. փետրվարի 16-ին, որևէ քննություն չի իրականացվել մինչև 1990 թ. մարտի 5-ը, երբ քրեական գործեր են հարուցվել ոստիկանության սպաների դեմ: Կոմիտեն համարում է, որ խոշտանգումների մասին հայտարարությունների քննության գրանցված 15-ամսյա ուշացումը եղել է անհիմն երկարատև, ինչը հակասել է կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջին:

Հալիմի-Նեժիբի գործով կայացված որոշումը ուշագրավ է, քանի որ ԽԴ կոմիտեն ավելի վաղ եզրակացրել էր, որ անօրինական վերաբերմունքի մասին փաստացի հայտարարություններն անհիմն էին¹²⁰: Այսպիսով, ԽԴ-ի ներքո խոշտանգումների մասին հայտարարությունները քննելու պարտականությունը բացարձակապես կախված չէ խոշտանգելու պարտականությունից:

[9.115] «*BLANCO ABAD V SPAIN, CAT 59/96*» (BLANCO ABAD v SPAIN, CAT 59/96)

Փաստերն ակնառու են դառնում ԽԴ կոմիտեի որոշման հետևյալ հատվածներից.

¶ 8.2. Կոմիտեն նկատում է, որ կոնվենցիայի 12-րդ հոդվածով իշխանությունները պարտավոր են ի պաշտոնե քննություն սկսել բոլոր այն դեպքերում, երբ ողջամիտ հիմքեր կան կարծելու, որ կիրառվել են խոշտանգումներ կամ վատ վերաբերմունք՝ անկախ նման կասկածների աղբյուրից: Համաձայն 12-րդ հոդվածի՝ նաև պահանջվում է, որ քննությունն անցկացվի անհապաղ և անաչառ: Կոմիտեն նշում է, որ անհապաղ լինելն էական նշանակություն ունի, որպեսզի երաշխավորվի, որ այլևս անկարելի է տուժողին ենթարկել նման գործողությունների, ինչպես նաև ընդհանրապես այն պատճառով, որ քանի դեռ գործադրվող միջոցները չունեն մշտական կամ լուրջ ազդեցություն, խոշտանգումների և հատկապես՝ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ֆիզիկական հետքերը շուտով վերանում են:

¶ 8.3. Կոմիտեն նկատում է, որ երբ 1992 թ. փետրվարի 2-ին հեղինակը կանգնեց Ազգային բարձր դատարանի առջև հունվարի 29-ից ի վեր առանց հաղորդակցության հնարավորության պահվելուց հետո, հայտարարեց, որ ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական վատ վերաբերմունքի, ներառյալ՝ բռնաբարության սպառնալիքը: Դատարանը ձեռքի տակ ուներ Ազգային բարձր դատարանին առընթեր այն դատական բժշկի հինգ զեկույցները, որն ամեն օր զննել էր հեղինակին: Նախքան դատարանում վերը հիշատակված ցուցմունք տալը, «Քաղաքացիական գվարդիայի» գրասենյակում անցկացվել էին չորս ստուգումներ, իսկ վերջին ստուգումն անցկացվել էր Ազգային բարձր դատարանի շենքում: Այս զեկույցներում նշվում է, որ հեղինակը բողոքել է վատ վերաբերմունքի ենթարկվելուց, ինչն արտահայտվել է վիրավորանքներով, սպառնալիքներով և ապտակներով, երկար ժամեր նրան պահել են գլուխը ծածկած վիճակում, ստիպել են մնալ մերկ, սակայն բռնության որևէ նշաններ չեն արձանագրվել: Կոմիտեն համարում է, որ այս տարրերը պետք է բավարար լինեին քննություն նախաձեռնելու համար, որը, այնուամենայնիվ, տեղի չի ունեցել:

¶ 8.4. Կոմիտեն նաև դիտարկում է, որ երբ փետրվարի 3-ին բանտի բժիշկը հեղինակի մարմնի վրա նկատել է կապուլներ և սալջարդի հետքեր, այդ փաստը ներկայացվել է դատական իշխանություններին: Այնուամենայնիվ, իրավասու դատավորը մինչև փետրվարի 17-ը չի քննարկել այդ խնդիրը, և թիվ 44 դատարանը գործի նախնական դատաքննություն սկսել է միայն փետրվարի 21-ին:

¶ 8.5. Կոմիտեն կարծում է՝ այն հանգամանքը, որ հեղինակի հայտարարությունները, որոնք առաջին հետազոտությունից հետո և նրա անցած հետագա բժշկական հետազոտությունների ընթացքում նախ ներկայացվել են դատական բժշկին, իսկ ապա կրկնվել են Ազգային բարձր դատարանի դատավորի առջև, թերի են քննվել, ինչպես նաև այն ժամանակը, որն անցել է փաստերի մասին ահազանգելուց մինչև թիվ 44 դատարանի կողմից վարույթ սկսելը, հակասում են կոնվենցիայի 12-րդ հոդվածում սահմանված անհապաղ քննություն ձեռնարկելու պարտավորությանը:

¶ 8.6. Կոմիտեն նշում է, որ կոնվենցիայի 13-րդ հոդվածը չի պահանջում ազգային օրենսդրության մեջ ամրագրված ընթացակարգով խոշտանգումների մասին բողոքի պաշտոնապես ներկայացում, ոչ էլ պահանջում է խախտումից բխող քրեական վարույթ սկսելու և շարունակելու մտադրության մասին ուղղակի հայտարարություն. տուժողի համար բավական է պարզապես փաստերը ներկայացնել տվյալ մասնակից պետության իշխանությունների ուշադ-

¹²⁰ Պարբ. 13.4:

րությանը, որպեսզի վերջինս պարտավոր լինի դրանք համարել տուժողի ցանկության չբարձրաձայնված, սակայն միանշանակ արտահայտություն, որպեսզի այդ փաստերն անհապաղ և անաչառ կարգով քննվեն, ինչպես նախատեսում է կոնվենցիայի սույն դրույթը:

¶ 8.7. Կոմիտեն նկատի է առնում, ինչպես նշվեց վերը, որ հեղինակի կողմից Ազգային բարձր դատարանի դատավորին ուղղված բողոքը չի ուսումնասիրվել, և չնայած թիվ 44 դատարանն ուսումնասիրել է այդ բողոքը, դա չի արել անհապաղ, ինչպես անհրաժեշտ էր: Իսկապես, այն օրից, երբ 1992 թ. փետրվարի 17-ին դատարանն ստացել է ազատագրված վայրից ուղարկված բժշկական արձանագրությունը, անցել է ավելի քան երեք շաբաթ, մինչև մարտի 13-ին հեղինակը բերվել է դատարան և արել իր հայտարարությունը: Այդ նույն օրը դատարանը դիմեց Ազգային բարձր դատարանի 2-րդ բաժին, որպեսզի տրամադրի այդ դատարանի դատական բժշկի՝ հեղինակի առողջության հետազոտությունների արդյունքները, սակայն անցավ ավելի քան երկու ամիս, մինչև մայիսի 13-ին դրանք կցվեցին գործի նյութերին: Հունիսի 2-ին դատավորը պահանջեց, որ իրենց դատարանի դատական բժիշկը զեկուցի վերոնշյալի կապակցությամբ, ինչն արվեց հուլիսի 28-ին: Օգոստոսի 3-ին դատավորը հրավիրեց թիվ 2 դատարանի դատական բժշկին, որն անցկացրել էր վերոնշյալ հետազոտությունները: Այս բժշկի հայտարարությունը լսվեց նոյեմբերի 17-ին: Այդ նույն օրը դատարանը բանտից պահանջեց նշել, թե երբ է հեղինակը հետազոտության ենթարկվել այդ հաստատությունում, և ինչպես են առաջացել վնասվածքները: Այս տեղեկությունները դատարանին փոխանցվել են դեկտեմբերի 23-ին: Հակառակ մասնակից պետության անհամաձայնությանը, ինչպես մեջբերված է պարբերություն 6.4-ում, այն մասին, որ «քննության անցկացման հարցում չի եղել որևէ հապաղում կամ ուշացում», կոմիտեն համարում է, որ վերոշարադրյալ ժամանակագրությունը ցույց է տալիս, որ հետաքննության միջոցները չեն բավարարել բողոքների անհապաղ ուսումնասիրության պահանջը, ինչպես նախատեսված է կոնվենցիայի 13-րդ հոդվածով. մի թերություն, որը չի կարող արդարացվել նման երկար ժամանակահատվածում հեղինակի կողմից որևէ բողոք չարտահայտելու հանգամանքով:

¶ 8.8. Կոմիտեն նաև նկատում է, որ նախնական գործողությունների ընթացքում, ընդհուպ մինչև 1993 թ. փետրվարի 12-ին դրանց դադարեցումը, դատարանը որևէ քայլ չի ձեռնարկել, որ բացահայտի և հարցաքննի «Քաղաքացիական գվարդիայի» որևէ սպայի, ով կարող էր մասնակցած լինել հեղինակի բողոքում ներկայացված գործողություններին: Կոմիտեն այս բացթողումն աններելի է համարում, քանի որ քրեական հետաքննությունը, համաձայն մասնակից պետության սեփական ներպետական օրենսդրության պահանջի, թե՛ պետք է ձգտի պարզել հայտարարվող գործողությունների բնույթը և հանգամանքները, թե՛ բացահայտի ցանկացած անձի ինքնությունը, ով հնարավոր է՝ ներգրավված լինի դրանցում (Քրեադատավարական օրենքի հոդված 789): Ավելին՝ կոմիտեն նկատի է առնում, որ երբ դատաքննությունը 1994 թ. հոկտեմբերին վերսկսվել է, առնվազն երկու դեպքում հեղինակը դիմել է դատավորին, որ վերջինս թույլ տա ներկայացնել վկայություններ՝ որպես բժշկական փորձագետների եզրակացությունների լրացում, այսինքն՝ հեղինակը խնդրել է լսել վկաների, ինչպես նաև ապօրինի վերաբերմունքի հնարավոր կիրառողներին, սակայն նման լուծումների հրահանգ չի տրվել: Այսուհանդերձ կոմիտեն հավատացած է, որ նման վկայությունները միանգամայն տեղին էին, քանի որ, չնայած դատական բժշկի եզրակացությունները՝ որպես խոշտանգման գործողությունների ապացույց, կարևոր են, հաճախ անբավարար են, և կարիք կա դրանք համեմատելու այլ տեղեկությունների հետ և լրացնելու այլ տեղեկություններով: Կոմիտեն այս դեպքում դատական իշխանությունների կողմից այլ և, մասնավորապես, հեղինակի կողմից առաջարկվող ապացույցներ ներկայացնելու մերժման համար որևէ հիմնավորում չի գտել: Կոմիտեն համարում է, որ այս բացթողումներն անհամատեղելի են անաչառ քննություն անցկացնելու պարտավորության հետ, ինչպես նախատեսված է կոնվենցիայի 13-րդ հոդվածում:

¶ 9. Խոշտանգումների դեմ կոմիտեն, որը գործում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 22-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, կարծում է, որ իր դիտարկման առարկա փաստերը բացահայտում են կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածների խախտում:

[9.116] «Բարակետն ընդդեմ Թունիսի» (Baraket v Tunisia, CAT 60/96) գործում նույնպես հայտնաբերվել է 12-րդ և 13-րդ հոդվածների խախտում: Այս դեպքում փաստերն ավելի մտահոգիչ էին, քան *Բլանկո Աբադի* գործում. այստեղ քննությունն ուշացել էր տասն ամսով՝ տեղի ունենալով այն բանից հետո, երբ իշխանություններն առաջին անգամ տեղեկացվել էին տուժողի կողմից հայտարարվող խոշտանգումների (և նրա մահվան) մասին¹²¹: Ավելին՝ գործը քննող դատավորը խախտել է անաչառության պարտավորությունը՝ նախքան հայցը մերժելը առավել խորությամբ չքննելով հայտարարությունները և չօգտագործելով քննության՝ իր տրամադրության տակ եղած միջոցներից որևէ մեկը: Դատավորի՝ դատախազական մարմինների կողմից հայցը մերժելու մասին վճիռը չբողոքարկելը նույնպես ԽԴԿ-ի խախտում է:

¹²¹ Տե՛ս պարբ. 11.5-11.7:

[9.117]

«ՋեՄԱՅԼԸ և այլք ընդդեմ ՅԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ»
(DZEMAJL et al v YUGOSLAVIA, CAT 161/00)

Այս գործում հեղինակների նկատմամբ համապատասխան վատ վերաբերմունքի դեպքերը հիմնական գծերով ներկայացված են վերը՝ կետ [9.12]: Սրա բնորոշ գծերից մեկը վերաբերում էր մասնակից պետության կողմից այս դեպքերը պատշաճ կարգով չքննելու հանգամանքին: Այդ առումով ԽԴ կոմիտեի որոշումը ներկայացված է ստորև.

¶ 9.4. Ինչ վերաբերում է կոնվենցիայի 12-րդ հոդվածի հայտարարվող խախտմանը, կոմիտեն, ինչպես ընդգծել է նախկինում դիտարկված գործերում (տե՛ս, ի թիվս այլոց, «Էնկարնասիոն Բլանկո Աբադը ընդդեմ Իսպանիայի» (*Encarnacion Blanco Abad v Spain*, 59/1996, վճիռը կայացվել է 1998 թ. մայիսի 14-ին), համարում է, որ քրեական հետաքննությունը պետք է ձգտի պարզել ինչպես հայտարարվող գործողությունների բնույթը և հանգամանքները, այնպես էլ յուրաքանչյուր անձի ինքնությունը, ով հնարավոր է՝ ներգրավված լինի դրանցում: Դիտարկվող գործում կոմիտեն նշում է, որ չնայած առնվազն մի քանի հարյուր ոչ զնչունների մասնակցությանը 1995 թ. ապրիլի 15-ի դեպքերին և բազմաթիվ ոստիկանական ուժերի ներկայությանը թե՛ այդ դեպքերի ընթացքում և թե՛ այդ դեպքերի վայրում, որևէ անձ կամ ոստիկանական ուժերի որևէ ներկայացուցիչ մասնակից պետության դատարանների կողմից դատական կարգով չի հետապնդվել: Այս պայմաններում կոմիտեի տեսակետն այն է, որ մասնակից պետության իշխանությունների կողմից անցկացված քննությունը չի բավարարել կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջները:

¶ 9.5. Ինչ վերաբերում է կոնվենցիայի 13-րդ հոդվածի հայտարարվող ոտնահարմանը, կոմիտեն համարում է, որ քննության բացակայությունը, ինչպես նկարագրված է նախորդ պարբերությունում, նույնպես կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում է: Ավելին՝ կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետության կողմից բողոքի հեղինակներին քննության արդյունքների մասին չտեղեկացնելը, ի թիվս այլոց, նրանց չտրամադրելով քննությունը դադարեցնելու մասին որոշումը, փաստորեն նրանց հնարավորություն չի տվել նախաձեռնել «մասնավոր հետապնդում»: Այս հանգամանքներում կոմիտեն կարծում է, որ վերոշարադրյալը կոնվենցիայի 13-րդ հոդվածի մեկ այլ խախտում է:

[9.118] ՄԻԿ-ն իր մի շարք Եզրափակիչ դիտարկումներում շեշտել է ռազմական և/կամ ոստիկանական ուժերի կողմից կիրառված վայրագությունների մասին հայտարարությունների անաչառ, գերադասելի է՝ արտաքին քննությունների կարիքը¹²²: Հոնկոնգի առնչությամբ ՄԻԿ-ը նշում է հետևյալը¹²³.

¶ 11. [ՄԻԿ-ը] փաստում է, որ [ոստիկանության կողմից մարդու իրավունքների ոտնահարումների մասին բողոքների] քննության պատասխանատվություն հենց ինքը՝ ոստիկանությունն է, մինչդեռ դա պետք է իրականացվեր այնպիսի եղանակով, որը կապահովեր գործընթացի անկախությունը և արժանահավատությունը: Հաշվի առնելով ոստիկանության աշխատակիցների դեմ բողոքների զգալի բաժինը, որոնք հետաքննությունն իրականացնող ոստիկանության կողմից համարվել են չհիմնավորված, կոմիտեն իր մտահոգությունն է արտահայտում քննության գործընթացի արժանահավատության կապակցությամբ և համարում է, որ քաղաքացիների՝ ոստիկանության ուժերի կողմից լիազորությունների չարաշահման դեմ բողոքների քննությունը պետք է լինի և պետք է ընկալվի որպես արդար ու անկախ և, հետևաբար, պետք է վստահվի որևէ անկախ մարմնի:

ՄԻԿ-ը նման առաջարկություններ ներկայացրել է նաև Բրազիլիայի կառավարությանը¹²⁴.

¶ 22. Կոմիտեն հաստատակամորեն խորհուրդ է տալիս, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչների անօրինական գործողությունների մասին բոլոր բողոքները քննվեն որևէ անկախ մարմնի կողմից և ոչ հենց նույն անվտանգության ուժերի կողմից: Նման բողոքների ստացման և քննության պաշտոնական մեխանիզմներ պետք է ստեղծվեն երկրի բոլոր մասերում, և դրանց գոյությունը պետք է հրապարակայնացվի: Նման մեխանիզմները պետք է նախատեսեն բողոքարկողների և վկաների արդյունավետ պաշտպանությունը ճնշումներից և պատժամիջոցներից:

¹²² Տե՛ս, օրինակ, Եզրափակիչ դիտարկումներ Միացյալ Թագավորության վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 5, պարբ. 14, Եզրափակիչ դիտարկումներ Չիլիի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104, պարբ. 10:

¹²³ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ. CCPR/C/79/Add. 57: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Չամբիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 62, պարբ. 12, Եզրափակիչ դիտարկումներ Վիետնամի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/ CO/75/VNM, պարբ. 11:

¹²⁴ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 66:

[9.119] «Ռ. Ս.-ն ընդդեմ Ավստրիայի» (*R.S. v Austria, CAT 111/98*) գործում հեղինակը բողոքում էր, որ ոստիկանության կողմից իրեն խոչտանգելու մասին հայտարարությունը ոստիկանության կողմից քննելը խախտել է ԽԴԿ-ի 13-րդ հոդվածը: ԽԴ կոմիտեն գտավ, որ ԽԴԿ-ի խախտում չի եղել, քանի որ հայտարարությունները լիարժեքորեն լսվել էին դատարանում, որի արդյունքում մեղադրվող ոստիկաններն արդարացվել են:

[9.120] Իհարկե, չի կարելի մարդուն նեղել այն պատճառով, որ նա բողոքել է մեկ ուրիշի վերաբերմունքից: Այս առնչությամբ ՄԻԿ-ը մտահոգությանը նշել է, որ Բրազիլիայում¹²⁵,

¶ 12. ... որտեղ անվտանգության պետական մարմինների աշխատողները մեղադրվում են մարդու իրավունքների խախտումների համար, վկաները պաշտպանություն չեն գտնում պատիժներից, ճնշումներից, սպառնալիքներից և բռնությունից ...

Ձոռերին փոխհատուցելու պարտականություն

[9.121]

ՀՈԴՎԱԾ 14, ԽԴԿ

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր օրենսդրական համակարգում ապահովում է, որ խոչտանգումների զոհը փոխհատուցում ստանա և հարկադրանքի միջոցով ապահովվող արդարացի համարժեք փոխհատուցման իրավունք ունենա, ներառյալ հնարավորինս լիակատար արդարացման (ռեաբիլիտացման) միջոցները: Խոչտանգումների պատճառով զոհի մահվան դեպքում փոխհատուցման իրավունքը վերապահվում է նրա խնամառուներին:

2. Սույն հոդվածում ոչինչ չի շոշափում զոհի կամ այլոց փոխհատուցման ցանկացած իրավունք, որը կարող է գոյություն ունենալ ներպետական օրենսդրության մեջ:

[9.122]

«ԶԵՄԱՅԼԸ և այլք ընդդեմ ՅԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ» (DZEMAJL et al v YUGOSLAVIA, CAT 161/00)

Այս գործում առկա փաստերը քննարկվում են վերը՝ [9.12] և [9.117] կետերում: Հայտարարություն էր եղել նաև 14-րդ հոդվածի խախտման մասին: Այնուամենայնիվ, ԽԴԿ-ն անվերապահորեն չի պահանջում փոխհատուցում այն անձանց համար, ովքեր տուժել են այնպիսի վատ վերաբերմունքից, որը չի բավարարում «խոչտանգում» որակմանը: 16-րդ հոդվածը, որը ԽԴԿ-ի այլ դրույթների ընդլայնում է՝ դրանք տարածելով դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ձևերի վրա, նույնքան ակնհայտ չի ընդլայնում 14-րդ հոդվածի գործողության ոլորտը: Այնուամենայնիվ, մասնակից պետության կողմից փոխհատուցում չտրամադրելը ԽԴԿ-ի ոտնահարում է.

¶ 9.6. Ինչ վերաբերում է կոնվենցիայի 14-րդ հոդվածի հայտարարվող խախտմանը, ապա կոմիտեն նշում է, որ նշված դրույթի կիրառման սահմանները ներառում են միայն խոչտանգումը՝ կոնվենցիայի 1-ին հոդվածի սահմանման իմաստով, և չեն տարածվում վատ վերաբերմունքի այլ ձևերի վրա: Ավելին՝ կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին կետը, հստակորեն անդրադառնալով 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներին, որևէ կերպ չի հիշատակում կոնվենցիայի 14-րդ հոդվածը: Այսուհանդերձ, կոնվենցիայի 14-րդ հոդվածը չի նշանակում, թե որևէ մասնակից պետություն պարտավոր չէ կոնվենցիայի 16-րդ հոդվածի ոտնահարումից տուժածին տրամադրել վնասների վերականգնում և արդարացի ու համարժեք փոխհատուցում: Կոնվենցիայի 16-րդ հոդվածից բխող դրական պարտավորությունները ներառում են այդ դրույթը ոտնահարած որևէ գործողության հետևանքով տուժածներին վնասների վերականգնում տրամադրելու և դրանք փոխհատուցելու պարտավորություն [9.22]: Հետևաբար, կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը չի կատարել կոնվենցիայի 16-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները՝ բողոքներ ներկայացնողներին հնարավորություն չտալով ստանալու իրենց կրած վնասների վերականգնում և չապահովելով արդարացի և համարժեք փոխհատուցում:

¹²⁵ Նույն տեղում:

Օրինագանգներին պատժելու պարտականություն

[9.123] Օրինագծեր ընդունելու և գործադրելու պարտականությունից ենթադրվում է, որ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկողները պետք է արժանանան համապատասխան պատիժների: Նման պարտականություն հստակորեն ամրագրված է ԽԴԿ-ի 4-րդ հոդվածում՝ առնվազն խոշտանգումների առումով:

ԹԻՎ 20 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 15. Կոմիտեն նշել է, որ որոշ մասնակից պետություններ համաներում են հայտարարել խոշտանգումների դեպքերի նկատմամբ: Ընդհանրապես համաներումներն անհամատեղելի են մասնակից պետությունների հետևյալ պարտավորությունների հետ. հետաքննել նման գործողությունները, իրենց իրավագործության սահմաններում երաշխավորել նման գործողությունների չենթարկվելու ազատությունը և ապահովել, որ նման գործողություններ չկրկնվեն ապագայում: Պետություններն անձանց չեն կարող զրկել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից, ներառյալ փոխհատուցումը և նրանց իրավունքների հնարավորինս լիարժեք վերականգնումը:

[9.124] ՄԻԿ-ի կողմից համաներումների դատապարտումը հստակ վերաբերում է միայն խոշտանգումներ իրականացրած անձանց, ոչ թե 7-րդ հոդվածում սահմանված այլ վերաբերմունք կիրառածներին: Այնուամենայնիվ, տուժողներին փոխհատուցում տրամադրելու և նրանց տանջողներին պատժելու ընդհանուր պարտավորությունը կարող է փաստորեն արգելել համաներման կիրառումն այն անձանց նկատմամբ, ովքեր այլոց նկատմամբ ցուցաբերել են անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Համաներման մասին օրենքների հարցը ծագեց հետևյալ գործի շրջանակներում:

[9.125] «ՌՈՂԴԻԳԵՍԸ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ» (RODRIGUEZ v URUGUAY, 322/88)

Հեղինակը հաղորդում էր ներկայացրել այն մասին, որ ինքը 1983 թ. հունիսին Ուրուգվայի ոստիկանության կողմից ենթարկվել է խոշտանգման: Նա բանտարկված է եղել 1983 թ. հունիսից մինչև 1984 թ. դեկտեմբերը: 1985 թ. Ուրուգվայում զինվորական *խունտային* փոխարինեց նոր կառավարություն: Հեղինակը բողոքել է այս նոր կառավարության կողմից մախորդ վարչախմբի օրոք տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների դիմաց իրեն որևէ փոխհատուցում չտրամադրելու դեմ:

¶ 2.2. Հեղինակը նշում է, որ իր բանտարկության ընթացքում և նույնիսկ դրանից հետո՝ մինչև ռազմական իշխանությունից դեպի քաղաքացիական իշխանություն անցումը, հնարավոր չէր նախաձեռնել իր գործի որևէ դատական քննություն: 1985 թ. մարտին սահմանադրական երաշխիքների վերականգնումից հետո իրավասու իշխանություններին ներկայացվել է պաշտոնական բողոք: 1985 թ. սեպտեմբերի 27-ին առաջին ատյանի դատարան (Juzgado Letrado de Primera Instancia en lo Penal de 4 Turno) ներկայացվել է խմբահայց, որով առաջ է քաշվել խոշտանգումների մեղադրանք, ներառյալ այն խոշտանգումները, որոնց հեղինակը ենթարկվել էր գաղտնի ոստիկանության շենքում: Դատաքննություն, այնուամենայնիվ, չի նշանակվել դատարանի իրավասության շուրջ ծագած վեճի պատճառով, քանի որ ռազմական ուժերը պնդել են, որ միայն զինվորական դատարանները կարող են օրինական հիմքերով դատաքննություն իրականացնել: 1986 թ. վերջին Ուրուգվայի գերագույն դատարանը վճռեց, որ քաղաքացիական դատարաններն իրավագործ էին քննելու այդ գործը, սակայն միաժամանակ խորհրդարանը 1986 թ. դեկտեմբերի 22-ին ընդունեց թիվ 15,848 օրենքը՝ «Օրենք սահմանափակումների մասին» կամ «Օրենք վաղեմության ժամկետների մասին» (Ley de Caducidad), որը փաստորեն նախատեսում էր նման դեպքերի քննությունների անմիջապես դադարեցում և անհնար դարձրեց ռազմական իշխանության տարիներին գործած այս տեսակի հանցանքների հետապնդումը:

Բողոքը.

¶ 3. Հեղինակը դատապարտում է խոշտանգումների գործողությունները, որոնց ինքը ենթարկվել է դաշնագրի 7-րդ հոդվածի խախտմամբ, և պնդում է, որ իրեն և այլ անձանց չեն տրամադրվել իրավունքների վերականգնման համարժեք միջոցներ, որոնք կներառեին հետևյալը. համաձայն հայտարարության՝ ռազմական իշխանությունների գործած չարաշահումների քննություն, պատասխանատուների պատժում և փոխհատուցում տուժողներին: Այս հա-

մատեքստում հեղինակը նշում է, որ մասնակից պետությունը դատավորներին պարբերաբար տվել է ցուցումներ՝ մշտապես կիրառելու թիվ 15,848 օրենքը և դադարեցնելու կիսատ քննությունները: Ինքը՝ հանրապետության նախագահը, համաձայն հայտարարության, խորհուրդ է տվել առանց բացառությունների բոլոր դեպքերում կիրառել այդ ընթացակարգը: Այնուհետև հեղինակը բողոքում է, որ մասնակից պետությունը չի կարող մի պարզ իրավական նորմի միջոցով ոտնահարել սեփական միջազգային պարտավորությունները և այդպիսով նախորդ ռազմական ռեժիմի իշխանության տարիներին տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումներից տուժած բոլոր անձանց զրկել արդարադատության հնարավորությունից:

Մասնակից պետությունը պաշտպանեց իր համաներման մասին օրենքը.

¶ 8.1. 1992 թ. նոյեմբերի 3-ին մասնակից պետությունը հայտարարեց, [որ] պետության՝ համաներման հռչակելու կամ քրեական վարույթն արգելելու լիազորությունը «բացառապես տվյալ երկրի ներպետական իրավական համակարգին վերաբերող խնդիր է, ինչը, ըստ սահմանման, ունի սահմանադրական առաջնայնություն»:

¶ 8.2. Մասնակից պետությունը շեշտում է, որ պետական հետապնդումների դադարեցման մասին թիվ 15,848 օրենքը 1989 թ. ընդունվել է հանրաքվեի միջոցով, ինչը «Ուրուգվայի ժողովրդի կողմից ուղղակի ժողովրդավարության օրինակելի արտահայտություն էր»: Ավելին՝ 1988 թ. մայիսի 2-ին ընդունված իր որոշմամբ գերագույն դատարանն այդ օրենքը ճանաչեց որպես սահմանադրությանը համապատասխանող: Դատարանը հայտարարում է, որ այդ օրենքը գթասրտության ինքնիշխան գործողություն է, որն ամբողջությամբ համապատասխանում է և ներդաշնակ է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային գործիքներին:

¶ 8.3. Վիճարկվում է, թե համաներման և հետապնդումների դադարեցման մասին օրենքներ քննարկելիս պե՞տք է նկատի առնել ժողովրդավարության և հաշտեցման գաղափարները: Այս համատեքստում մասնակից պետությունը մատնանշում է, որ ընդունվել են այլ առնչվող օրենքներ, ներառյալ՝ 1985 թ. մարտի 15-ին ընդունված թիվ 15,737 օրենքը, որով համաներման հայտարարվեց բոլոր քաղաքական և դրանց առնչվող զինվորական սովորական հանցանքների համար՝ կատարված 1962 թ. հունվարի 1-ից ի վեր և ճանաչեց հայրենիք վերադառնալու ցանկություն ունեցող բոլոր ուրուգվայցիների՝ երկիր վերադառնալու իրավունքը, ինչպես նաև ռազմական կառավարության կողմից աշխատանքից հեռացված բոլոր պետական պաշտոնյաների՝ իրենց նախկին պաշտոններում վերանշանակվելու իրավունքը: Այս օրենքը հստակորեն սահմանեց, որ համաներման չի տարածվում այն հանցանքների վրա, որոնք պարունակում են անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ անձանց անհետացում, որոնց պատասխանատվություն եղել են ոստիկանության աշխատակիցները կամ զինված ուժերի ներկայացուցիչները: 1985 թ. նոյեմբերի 28-ին ընդունված թիվ 15,783 օրենքով այն անձինք, ովքեր քաղաքական, գաղափարախոսական կամ արհմիութենական պատճառներով կամայականորեն հեռացվել էին աշխատանքից, իրավունք ստացան վերականգնվելու իրենց պաշտոններում:

¶ 8.4. Ինչ վերաբերում է դատական երաշխիքներ ունենալու իրավունքին և հետաքննելու պարտավորությանը, ապա մասնակից պետությունը պնդում է, որ թիվ 15,848 օրենքը որևէ կերպ չի սահմանափակում դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դատական պաշտպանության միջոցների համակարգի գործողությունը: Համաձայն այս օրենքի՝ ուժը կորցրեց միայն պետության՝ քրեական մեղադրանք առաջադրելու իրավունքը: Այն ուղորտներում, որոնք գտնվում են քրեական իրավունքի շրջանակից դուրս, այս օրենքը չի վերացրել հանցանքների իրավական հետևանքները: Ավելին՝ պետությունը փաստարկում է, որ իր դիրքորոշումը համապատասխանում է Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի կողմից *Վելասկես Ռոդրիգեսի* գործով կայացրած վճռին, ըստ որի՝ մարդու իրավունքների միջազգային պաշտպանությունը չի կարելի շփոթել քրեական արդարադատության հետ (պարբերություն 174):

¶ 8.5. Այս կապակցությամբ մասնակից պետությունն իր անհամաձայնությունն է հայտնում՝ պնդելով, որ «անցած իրադարձությունների քննումը ... համարժեք է անձանց և խմբերի միջև հակամարտության վերածնունդ: Դա հաստատապես չի նպաստի հաշտեցմանը, խաղաղեցմանը և ժողովրդավարական հաստատությունների ամրապնդմանը»: Ավելին՝ դաշնագրի տեքստում կամ որևէ հատուկ դրույթում «հետաքննելու պարտականություն» չի հանդիպում, և, հետևաբար, գոյություն չունի որևէ կանոն, որով կկարգավորվեր այս գործառույթի իրականացման եղանակը: Ոչ էլ կոնվենցիայի տեքստում կա որևէ հիշատակում, որը վերաբերեր այլ պարտականությունների (օրինակ՝ պատժելու պարտականության) նկատմամբ այդ պարտականության առաջնայնությանը կամ գերակայությանը: Իհարկե, բացակայում է նաև այնպիսի դրույթ, որը կվերաբերեր անկախ իրավական կատեգորիայի որևէ տեսակի և մեկուսացված կլիներ իրավական և քաղաքական համատեքստից, որում մարդու իրավունքները՝ որպես ամբողջություն, գործում են: ...Պետությունը կարող է, ըստ օրենքների և որոշակի հանգամանքներում ձեռնպահ մնալ տվյալ անձին պետական, այլ ոչ թե մասնավոր շահով ղեկավարվող քրեական դատարանում, ֆորմալ կերպով և պաշտոնապես ճշմարտությունը հաստատելու միջոցների տրամադրումից: Իհարկե, սա չի արգելում կամ սահմանափակում մնան անձի կողմից իր անձնական իրավունքների ազատ իրացումը, ինչպիսին է, օրինակ, տեղեկատ-

վություն ստանալու իրավունքը, ինչը շատ դեպքերում ինքնըստինքյան հանգեցնում է ճշմարտության բացահայտմանը, եթե նույնիսկ պետական իշխանության մարմիններն իրենք չեն զբաղվում տվյալ խնդրով»:

¶ 8.6. Ինչ վերաբերում է հեղինակի անհամաձայնությանը, թե թիվ 15,848 օրենքն «ապարդյուն է դարձնում փոխատուցում ստանալու ցանկացած փորձ, քանի որ այս օրենքի կիրարկումը դադարեցնում է իր հայտարարությունների պաշտոնական քննությունը», ապա մասնակից պետությունը պնդում է, որ բազմաթիվ դեպքեր են եղել, երբ հեղինակի պահանջին նման պահանջներ հաջողության են հասել քաղաքացիական հայցերի միջոցով, և արդյունքում տուժողները ստացել են դրամական փոխհատուցում:

Ըստ էության, ՄԻԿ-ն սկզբում որոշեց, որ հեղինակը Ուրուգվայի ռազմական ռեժիմի կողմից, 7-րդ հոդվածի խախտմամբ, ենթարկվել է խոշտանգումների: Կոմիտեն մասնակից պետության համաներման մասին օրենքի վերաբերյալ արեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 12.2. Որպես իրավական պաշտպանության համարժեք միջոց, որը հեղինակը կարող է պահանջել դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, կոմիտեն համարում է, որ թիվ 15,848 օրենքի ընդունումը և Ուրուգվայում դրա հետագա կիրառումը հեղինակի՝ իրավական պաշտպանության համարժեք միջոց ստանալու իրավունքի իրացումը դարձրել են ծայրահեղ դժվարհասանելի:

¶ 12.3. Կոմիտեն չի կարող համաձայնել մասնակից պետության այն մոտեցմանը, թե նա նախորդ վարչախմբի կողմից դաշնագրով սահմանված իրավունքների խախտումների քննության հարցում որևէ պարտավորություն չունի, հատկապես այն դեպքերում, երբ դրանք ընդգրկում են այնպիսի լուրջ հանցագործություններ, ինչպիսիք խոշտանգումներն են: Դաշնագրի 2-րդ հոդվածի 3(ա) կետը հստակ սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է «ապահովել, որ յուրաքանչյուր անձ, որի սույն դաշնագրում ճանաչված իրավունքները կամ ազատությունները խախտվել են, ստանա իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից»: Այս համատեքստում կոմիտեն հղում է անում 7-րդ հոդվածի վերաբերյալ իր թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությանը..., ըստ որի՝ պետությունը պարտավոր է լիարժեք քննության ենթարկել խոշտանգումների մասին հայտարարությունները: ... Մասնակից պետությունն առաջարկել է, որ հեղինակն այնուամենայնիվ կարող է անցկացնել խոշտանգման իր մասնավոր հետաքննությունը: Կոմիտեն կարծում է, որ հետաքննությունների անցկացման պատասխանատվությունը տեղավորվում է մասնակից պետության՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու պարտավորության շրջանակներում: Այս գործի առանձնահատկություններն ուսումնասիրելուց հետո կոմիտեն համարում է, որ հեղինակը իրավական պաշտպանության որևէ արդյունավետ միջոց չի ստացել:

¶ 12.4. Ավելին՝ կոմիտեն վերահաստատում է իր դիրքորոշումը, որ մարդու իրավունքների կոպիտ խախտումների համաներմանը և այնպիսի օրենսդրությունը, ինչպիսին է թիվ 15,848 օրենքը [Ley de Caducidad de la Pretensión Punitiva del Estado], անհամատեղելի են մասնակից պետության՝ դաշնագրով ստանձնած պարտավորությունների հետ: Կոմիտեն խոր մտահոգությամբ նշում է, որ այս օրենքի ընդունումը մի շարք գործերում փաստացի բացառում է մարդու իրավունքների նախկինում կատարված խախտումների քննության հնարավորությունը և այդպիսով մասնակից պետությանը թույլ չի տալիս իրականացնել այդ չարաշահումներից տուժած անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ տրամադրելու իր պարտավորությունը: Ավելին՝ կոմիտեն մտահոգված է, որ, ընդունելով սույն օրենքը, մասնակից պետությունը նպաստել է անպատժելիության մթնոլորտի ստեղծմանը, ինչը կարող է վտանգել ժողովրդավարական կարգը և բերել մարդու իրավունքների նոր լուրջ խախտումների: ...

¶ 13. Մարդու իրավունքների կոմիտեն, ղեկավարվելով կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետով, այն կարծիքին է, որ իրեն ներկայացված փաստերը բացահայտում են 7-րդ հոդվածի խախտում՝ կապված դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի հետ:

¶ 14. Կոմիտեն կարծում է, որ պրն Դուգո Ռոդրիգեսը դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ստանալու իրավունք ունի: Կոմիտեն մասնակից պետությանը կոչ է անում ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ (ա) խոշտանգումների մասին հեղինակի հայտարարությունների պաշտոնական քննություն անցկացնելու համար, որպեսզի բացահայտվեն խոշտանգումների և վատ վերաբերմունքի համար պատասխանատու անձինք, և հեղինակը հնարավորություն ստանա հետամուտ լինելու քաղաքացիաիրավական պաշտպանության միջոց ստանալուն, (բ) պրն Ռոդրիգեսին համարժեք փոխհատուցում տալու համար, (գ) ապահովելու համար, որ նման խախտումներ ապագայում չլինեն:

[9.126] Բազմաթիվ գործերով հաստատվել է, որ ՔՔԻՄԴ-ը մեկ ուրիշին հետապնդման ենթարկելու պահանջի մի առանձին իրավունք չի բովանդակում¹²⁶: Այնուամենայնիվ, ՔՔԻՄԴ-ի հայտարարվող խախտումները¹²⁷ քննելու պարտականությունը որոշ դեպքերում կարող է հանգեցնել որոշակի անձի հետապնդման ենթարկելու պարտականության¹²⁸: Մյուս կողմից՝ ՄԻԿ-ը *Ռոդրիգեսի* գործում հետապնդումը չի մատնանշել որպես «պաշտպանության միջոց»՝ գուցե զիջում կատարելով հանուն համաներման մասին օրենքի ժողովրդավարական բնույթի:

[9.127] ՄԻԿ-ը բազմաթիվ մասնակից պետությունների վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում հետևողականորեն դատապարտել է անպատժելիություն սահմանող օրինագծերը¹²⁹: Նմանապես, ԽԴԿ-ն դատապարտել է համաներման հայտարարող օրինագծերը¹³⁰ և անպատժելիության մշակույթ ունեցող պետություններին¹³¹:

[9.128] 1996 թ. Իսպանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն հայտնեց ոստիկանության՝ մարդու իրավունքների խախտումների համար մեղադրվող աշխատակիցների նկատմամբ մեղմ պատիժներ սահմանելու առնչությամբ:

¶ 10. Երբ անվտանգության ուժերը [վատ վերաբերմունք դրսևորելու և նույնիսկ խոշտանգումներ իրականացնելու հարցում] ճանաչվում են մեղավոր և դատապարտվում ազատագրվման, հաճախ վաղաժամկետ ներում են ստանում կամ ազատ արձակվում, կամ պարզապես չեն կրում իրենց պատիժները: Ավելին՝ նրանք, ովքեր նման գործողություններ են իրականացնում, հազվադեպ են որևէ ժամկետով հեռացվում իրենց պաշտոններից¹³²:

Յետևաբար, 7-րդ հոդվածով սահմանված վերաբերմունք կիրառողները ոչ միայն պետք է պատժվեն, այլև համարժեք պատիժ ստանան¹³³:

[9.128Ա] Իսրայելի վերաբերյալ վերջերս հրապարակված եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն արտահայտեց կասկածյալ ահաբեկիչներին հարցաքննելու նպատակով ոչ իրավաչափ միջոցներ օգտագործելու առնչությամբ, քանի որ մեղադրվող անձինք լայնորեն իրենց օգտին են ծառայեցնում ծայրահեղ անհրաժեշտության հիմքը¹³⁴: ՄԻԿ-ը մշեց հետևյալը:

¶ 18. ... Մասնակից պետությունը պետք է վերանայի իր կողմից «ծայրահեղ անհրաժեշտության» փաստարկի օգնությամբ դիմելը և իր հաջորդ պարբերական զեկույցում կոմիտեին տրամադրի մանրամասն տեղեկություններ, ներառյալ մանրամասն վիճակագրական տվյալներ, որոնք կվերաբերեն նախնական զեկույցի ուսումնասիրությունից

¹²⁶ Տե՛ս, օրինակ՝ «*Ֆ.Ք.Ս.Ա.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*H.C.M.A. v Netherlands*, 213/186), «*Ա.Է.-ն ընդդեմ Արգենտինայի*» (*S.E. v Argentina*, 275/1988) գործերը:

¹²⁷ Այս պարտականությունը հստակորեն հաստատվել է՝ կապված 6-րդ հոդվածի (տե՛ս [8.09-8.14]), ինչպես նաև 7-րդ հոդվածի ([9.111] և հաջորդը) հետ: Ենթադրաբար, պարտականությունը կարող է ծագել նաև՝ կապված ՔՔԻՄԴ-ի այլ ոտնահարումների հետ:

¹²⁸ Այս առնչությամբ տե՛ս [8.16-8.18], տե՛ս նաև «*Վիսենտե և այլք ընդդեմ Կոլումբիայի*» (*Vicente et al v Colombia*, 612/95), պարբ. 8.2-8.3:

¹²⁹ Տե՛ս եզրափակիչ դիտարկումներ Սալվադորի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 34, պարբ. 7, Բոլիվիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 73, պարբ. 15, Լիբանանի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 78, պարբ. 12, Չիլիի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104, պարբ. 7, Սուդանի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/ Add. 85, պարբ. 17, Կամբոջայի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 108, պարբ. 6, Արգենտինայի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/ARG, պարբ. 9:

¹³⁰ Տե՛ս, օրինակ, ԽԴ կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Սենեգալի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/51/44, պարբ. 112:

¹³¹ Տե՛ս, օրինակ, ԽԴ կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Կոլումբիայի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/51/44, պարբ. 80: Տարածաշրջանային համեմատական իրավագիտության վերաբերյալ տե՛ս Lucio Parada Cea et al (El Salvador), գործ թիվ 10.480, Ձեկույց թիվ 1/99, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի 1998 թ. տարեկան զեկույց, OEA/Ser.L/V/II.102 Dec 6 rev. 16, 1999 թ. հունվարի 27, Samuel Alfonso Catalán Lincoleo (Chile), գործ թիվ 11.771, Ձեկույց թիվ 61/01, Annual Report of the Inter-American Commission on Human Rights, OEA/ser.L/V/II.111 doc. 20 rev., 2001 թ. ապրիլի 16:

¹³² (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 61:

¹³³ Տե՛ս նաև «ոստիկանության և բանտերի աշխատակիցների նկատմամբ կիրառված պատժամիջոցների անհամաչափության» քննադատությունը Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում (1998) CCPR/C/79/Add. 94, պարբ. 13:

¹³⁴ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/ISR: Ծայրահեղ անհրաժեշտության կիրառումը ձևակերպվեց «*Իսրայելում խոշտանգումների դեմ պայքարի պետական կոմիտեն ընդդեմ Իսրայելի*» գործում, վերը, ծնթ. 32:

ի վեր անցած ժամանակահատվածին: Մասնակից պետությունը պետք է ապահովի, որ վատ վերաբերմունքի և խոշտանգումների հայտարարվող դեպքերը խստորեն հետաքննվեն իրենց բնույթով անկախ մեխանիզմների միջոցով, և մեծ գործողությունների համար պատասխանատուները ենթարկվեն համապատասխան հետապնդման: Մասնակից պետությունը 2000 թվականից մինչև օրս ընկած ժամանակահատվածի համար պետք է տրամադրի վիճակագրական տվյալներ այն մասին, թե քանի բողոք է ներկայացվել գլխավոր դատախազին, դրանցից քանիսն են մերժվել որպես չհիմնավորված, քանիսն են մերժվել «ծայրահեղ անհրաժեշտության» հիմքի կիրառման պատճառով, քանիսն են ընդունվել վարույթ, և ինչ հետևանքներ են դրանք ունեցել օրինազանցների համար:

ԽՈՇՏԱՆԳՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

[9.129] ԽԴԿ-ի 4-9-րդ հոդվածները սահմանում են պարտականություններ, որոնք վերաբերում են ըստ հայտարարությունների խոշտանգումներ իրականացրած և իրենց տարածքային իրավագործության սահմաններում բռնված անձանց նկատմամբ պետության իրավագործության կիրառմանը: Էական նշանակություն ունեցող դրույթները 4-րդ, 5-րդ և 7-րդ հոդվածներում են:

ՀՈԴՎԱԾ 4, ԽԴԿ

¶ 1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը:

¶ 2. Յուրաքանչյուր մասնակից պետություն այս հանցագործությունների համար սահմանում է համապատասխան պատիժներ՝ հաշվի առնելով դրանց ծանր բնույթը:

ՀՈԴՎԱԾ 5, ԽԴԿ

¶ 1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 4-րդ հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ իր իրավագործությունը հետևյալ դեպքերում հաստատելու համար.

ա) երբ հանցագործությունները կատարվել են նրա իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում կամ տվյալ պետությունում գրանցված նախկին կամ օդանավում,

բ) երբ ենթադրյալ հանցագործը տվյալ պետության քաղաքացի է,

գ) երբ զոհը տվյալ պետության քաղաքացի է, և եթե տվյալ պետությունը նպատակահարմար է գտնում դա:

¶ 2. Յուրաքանչյուր մասնակից պետություն համաձայն կերպով ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր իրավագործությունը մեծ հանցագործությունների նկատմամբ որոշելու համար այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է իր իրավագործությանը ենթակա ցանկացած տարածքում, այդ պետությունը 8-րդ հոդվածին համապատասխան չի հանձնում նրան սույն հոդվածի 1-ին կետում նշված պետություններից որևէ մեկին:

¶ 3. Սույն կոնվենցիան չի բացառում ներպետական օրենսդրությանը համապատասխան ցանկացած քրեական իրավագործության իրականացում:

ՀՈԴՎԱԾ 7, ԽԴԿ

¶ 1. Մասնակից պետությունը, որի իրավագործությանը ենթակա տարածքում հայտնաբերվել է 4-րդ հոդվածում նշված հանցագործություններից որևէ մեկի կատարման մեջ կասկածվող անձը, 5-րդ հոդվածում նշված դեպքերում, եթե չի համձնում նրան, տվյալ գործը հետապնդման նպատակով համձնում է իր իրավասու մարմիններին:

¶ 2. Այս մարմիններն իրենց որոշումը կայացնում են նույն կարգով, ինչ լուրջ բնույթի ցանկացած սովորական հանցագործության դեպքում՝ այդ պետության օրենսդրության համաձայն: 5-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված դեպքերում հետապնդման դատապարտման համար անհրաժեշտ ապացույցներին ներկայացվող պահանջները ոչ մի դեպքում չպետք է լինեն պակաս խիստ, քան նրանք, որոնք կիրառվում են 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված դեպքերում:

¶ 3. Ցանկացած անձի համար, որի նկատմամբ քննություն է կատարվում՝ կապված 4-րդ հոդվածում նշված որևէ հանցագործության հետ, երաշխավորվում է արդարացի վերաբերմունք՝ դատավարության բոլոր փուլերում:

Ի լրումն, 6-րդ հոդվածի համաձայն, պետությունները պարտավոր են կալանավորել խոշտանգումների հայտարարվող կիրառողներին, եթե գոյություն ունեն մեղադրանքները հաստատող բավարար ապացույցներ: 8-րդ հոդվածը սահմանում է, որ խոշտանգումը հանցագործի համձնման հանգեցնող օրինազանցություն է: 9-րդ հոդվածն ամրագրում է, որ մասնակից պետությունները «հնարավոր ամենալայն աջակցություն են ցույց տալիս միմյանց» խոշտանգման կապակցությամբ ձեռնարկվող քրեադատավարական գործերի առնչությամբ: Այսպիսով, մասնակից պետությունները կարող են արդարադատություն իրականացնել՝ հետապնդելով խոշտանգման հայտարարվող մեղավորին, եթե նույնիսկ աշխարհագրական կամ անհատական կապ հանցագործության և տվյալ պետության միջև գոյություն չունի¹³⁵: Երկրորդ հերթին ԽԴԿ-ն մասնակից պետություններից *պահանջում է, որ* կամ մասնակից պետությունները գործի դնեն իրենց արդարադատությունը և դատական կարգով հետապնդում իրականացնելու նպատակով հայտարարվող խոշտանգողի գործն ուղարկեն իրենց իրավասու իշխանություններին, կամ տվյալ անձին համձնեն այն պետությանը, որտեղ նրան դատական կարգով կենթարկեն պատասխանատվության¹³⁶: Իհարկե, հայտարարվող խոշտանգողի համար ապահովվում են որոշակի ընթացակարգային երաշխիքներ: Օրինակ՝ մասնակից պետությունը պարտավոր չէ հայտարարվող խոշտանգողին դատական կարգով հետապնդման ենթարկել կամ համձնել, եթե բացակայում են այդ անձի մեղքը հիմնավորող բավարար ապացույցներ¹³⁷:

[9.130] «ՌՈՍԵՆՄԱՆՆ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (ROSENMAN v SPAIN, CAT 176/00)

Հեղինակը, որ Իսպանիայի քաղաքացի է, պնդել է, որ խաշտանգումների է ենթարկվել Չիլիում գեներալ Պինոչետի վարչախմբի օրոք: 1998 թ. մի իսպանացի դատավոր պահանջեց Պինոչետին արտաքսել

¹³⁵ Աշխարհագրական կապի հարց ծագում է այն դեպքերում, երբ հանցագործությունը տեղի է ունենում տվյալ պետության տարածքի սահմաններում: Անհատական կապ առաջանում է այն դեպքերում, երբ տուժողը կամ հանցագործը այդ պետության քաղաքացի է: Տե՛ս M. Lippman, "The Development and Drafting of the United Nations Convention Against Torture and other Cruel Inhuman and Degrading Treatment or Punishment" (1994) 17 Boston College International and Comparative Law Review 275, էջ 316-17: Համընդհանուր իրավագործության վերաբերյալ տե՛ս H. Steiner and P. Alston, International Human Rights in Context (Clarendon Press, Oxford, 1996), էջ 1021-40: Տե՛ս նաև «Ռ.-ն ընդդեմ Բարթլի և Մետրոպոլիսի ոստիկանության լիազորի և այլոց, Պինոչետի անունից» (R. v Bartle and the Commissioner of Police for the Metropolis and Others, ex parte Pinochet) [1999] 2 WLR 827, որում Լորդերի պալատը որոշեց, որ Միացյալ Թագավորությունը կարող է գեներալ Պինոչետին արտաքսել Իսպանիա, որտեղ նրան ներկայացվել էին խոշտանգումներ իրականացնելու մեղադրանքներ, քանի որ Միացյալ Թագավորության կողմից ԽԴԿ-ն ներպետական իրավունքի մեջ ներառելը վերացրել էր Պինոչետի անձեռնմխելիությունը դատական հետապնդումից: Այնուամենայնիվ, պարզվեց, որ Պինոչետն անկարող է կանգնել դատարանի առջև, և այդ պատճառով նրան 2000 թ. ուղարկեցին հայրենիք՝ Չիլի: 2002 թ. նրան հայտարարեցին մտավոր անընդունակ՝ կանգնելու Չիլիի գերագույն դատարանի առջև, որից հետո Պինոչետը պաշտոնապես ավարտեց իր քաղաքական գործունեությունը:

¹³⁶ Տե՛ս նաև Boulesbaa, վերը, ծնթ. 10, 177-235, Burgers and Danelius, վերը, ծնթ. 9, 129-41: Տե՛ս «Բուզարի ընդդեմ Իրանի Իսլամական Հանրապետության» (Bouzari v Islamic Republic of Iran, 2002) Carswell Ont 1469, Օնտարիոյի գերագույն դատարանի [Ontario Supreme Court of Justice] 2002 թ. մայիսի 1-ի որոշում, որի համաձայն՝ ԽԴ կոմիտեն մասնակից պետություններից չի պահանջում իրենց տարածքներից դուրս կատարված խոշտանգումների դեպքերի համար ներկայացվել հայցի քաղաքացիական հիմնավորումներ (տե՛ս պարբ. 43-56):

¹³⁷ Տե՛ս ԽԴԿ-ի հոդվ. 6(1):

Միացյալ Թագավորությունից, որտեղ նա բժշկական օգնություն էր ստանում: Հեղինակի բողոքը վերաբերում էր Իսպանիայի գործադիր իշխանության կողմից Իսպանիայի դատական համակարգի՝ Պինոչետին արտաքսելուն ուղղված ջանքերին աջակցություն չցուցաբերելու հանգամանքին: Իսկապես, գործադիր իշխանությունը պարբերաբար տեղեկացրել է Միացյալ Թագավորությանը, որ իրենք չեն բողոքարկի գեներալին չարտաքսելու մասին որևէ որոշում, ոչ էլ կփոխանցեն Իսպանիայի դատական իշխանության որևէ բողոք:

¶ 3.1. Բողոքի հեղինակը պնդում է, որ Իսպանիայի օրենսդրության համաձայն՝ դատական իշխանություններն են վերահսկում արտաքսման գործընթացը, գործադիրը պարտավոր է ենթարկվել դատական իշխանություններին: Նա պնդում է, որ դիտարկվող գործում դատական իշխանությունների ցուցումներին չհետևելով և համապատասխան փաստաթղթերն անհապաղ չուղարկելով իր բրիտանական գործընկերոջը՝ Իսպանիայի արտաքին գործերի նախարարը խոչընդոտել է արտաքսման գործընթացը և չի գործել անաչառ կերպով, ինչը հակասում է կոնվենցիայի 8-րդ, 9-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին: ...

¶ 3.3. Բողոքի հեղինակը նաև հիշատակում է կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ի կետը, այն սահմանում է. «Մասնակից պետությունները 4-րդ հոդվածում նշված հանցագործություններից որևէ մեկի առնչությամբ իրականացվող քրեական դատավարության կապակցությամբ միմյանց տրամադրում են առավել լայն աջակցություն»: Փաստարկվում է, որ արտաքսման գործընթացի վարումը Իսպանիայի կողմից չի բավարարել այս պահանջը:

ՄԻԿ-ը որոշում ընդունեց հօգուտ մասնակից պետության.

¶ 6.3. Կոմիտեն նշում է, որ հաղորդման ընդունելիության վերաբերյալ մասնակից պետության առարկություններն ըստ էության քառակի ծանրակշիռ են [կոմիտեն ներկայացրեց երեք պատճառ և ապա հավելեց հետևյալը].

(դ) *ratione materiae* (դիտարկվող նյութի հետ կապված հանգամանքների պատճառով) իրավասության պակաս այն պատճառով, որ կոնվենցիայի որևէ հոդված մասնակից պետության նկատմամբ չի սահմանում խոշտանգումների կատարման մեջ կասկածվող անձի հանձնում պահանջելու պարտավորություն: ...

¶ 6.7. Ինչ վերաբերում է (դ) կետին, կոմիտեն նկատում է, որ մասնակից պետությունն իր քաղաքացիների նկատմամբ կիրառված խոշտանգումների դեպքերի նկատմամբ ունի արտատարածքային իրավազորություն: Կոմիտեն հիշեցնում է, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի առարկաներից մեկը նման գործողություններ իրականացրած անձանց պատժից որևէ կերպ ազատելուց խուսափելն է: Կոմիտեն նկատում է, որ, կախված տվյալ մասնակից պետության օրենսդրությունից և համաձայն կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(գ) կետի և 8-րդ հոդվածի 4-րդ կետի՝ մասնակից պետությունը ձգտում էր հասնել գեներալ Պինոչետի հանձնմանը՝ նրան Իսպանիայում դատելու նպատակով: Հիմքեր կան պնդելու, որ Իսպանիան գեներալ Պինոչետին դատական կարգով հետապնդման կենթարկել, երբ նա հայտնվել իր տարածքում՝ ի հետևանք 1996 թ. հուլիսի 4-ին Իսպանիայի ազգային գերագույն դատարանի գլխավոր դատավորի [Juez Central de la Audiencia Nacional de España] կողմից կայացված մեղադրական եզրակացության: Այնուամենայնիվ, կոմիտեն նշում է, որ, չնայած կոնվենցիան սահմանում է այն անձանց դատական կարգով հետապնդման ենթարկելու պարտավորություն, ովքեր, ըստ հայտարարությունների, իրականացրել են խոշտանգումներ և հայտնաբերվել են իրենց տարածքի սահմաններում, կոնվենցիայի 8-րդ և 9-րդ հոդվածները չեն սահմանում հանձնման պահանջ ներկայացնելու որևէ պարտավորություն կամ նման պահանջի մերժման դեպքում այդ պահանջը պնդելու պարտավորություն՝ հասնելու համար տվյալ անձի հանձնմանը: Այս կապակցությամբ կոմիտեն հիշատակում է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(գ) կետը, որի համաձայն՝ մասնակից պետությունը պարտավոր է ձեռնարկել միջոցներ՝ հաստատելու իր իրավազորությունը 4-րդ հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ այն դեպքերում, երբ «զոհն այդ պետության քաղաքացի է, և եթե այդ պետությունը նպատակահարմար է գտնում» այդ միջոցների ձեռնարկումը: Կոմիտեն համարում է, որ այս դրույթն առավելապես սահմանում է իրավազորություն ըստ հայեցողության, քան հանձնման խնդրագիր ներկայացնելու և այն պնդելու պարտադիր պարտավորություն: Համապատասխանաբար, բողոքը *ratione materiae* պատճառով հայտնվում է բողոքը ներկայացնողի կողմից հիշատակված կոնվենցիայի հոդվածների շրջանակից դուրս:

Այսպիսով, պետությունը *պարտավոր չէ* պահանջել խոշտանգողի հանձնում, նույնիսկ չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունեն խոշտանգողներին կամ դատական կարգով հետապնդելու, կամ խնդրագրի առկայության դեպքում նրանց հանձնելու պարտավորություններ: Այս հարցով պրն Ժիբրիլ Կամառան արտահայտեց իր անհամաձայնությունը.

Իմ կարծիքով՝ մեծամասնությունը հանգել է 5-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների շտապողական մեկնաբանման: Մեծամասնության հանձնմամբ, քանի որ 5-րդ հոդվածը նախատեսում է, որ մասնակից պետությունը, այն

դեպքերում, երբ զոհն այդ պետության քաղաքացի է, կարող է իրավագործություն կիրառել՝ «եթե դա նպատակահարմար է համարում», ապա պետությունը կարող է քննության և դատական կարգով հետապնդման բոլոր փուլերում ըստ իր հայեցողության որոշել՝ մնալ դեպքերում անհրաժեշտ է հետամուտ լինել դատական գործընթացներին: Այս տեսակետն ամուլադրության է մատնում մի շարք խնդիրներ:

(ա) Թվում է, թե կոնվենցիայի կառուցվածքից, ներառյալ 5-րդ հոդվածի և դրան կից հոդվածների զետեղումը, ինչպես նաև 5-րդ հոդվածի ամբողջ տեքստից հետևում է, որ 5-րդ հոդվածի 1(գ) կետով նախատեսված տարբերակը պետություններին հնարավորություն տալիս է, որ կոնվենցիան ներպետական օրենսդրության մեջ ներառելիս ընտրեն, թե խոշտանգումների արտատարածքային զոհեր հանդիսացող սեփական քաղաքացիների նկատմամբ ունեցած իրենց իրավագործությամբ պե՞տք է սկզբունքորեն օժտեն իրենց կառույցները հետաքննություն և դատական հետապնդում իրականացնելու իրավասությամբ: Նախապատրաստական փաստաթղթերը և պետությունների պրակտիկան կարծես հաստատում են, որ 5-րդ հոդվածի 1(գ) կետով նախատեսված տարբերակն ուղղված է քրեական իրավունքի լայնորեն ընդունելի մոդերի որդեգրմանը, որոնց միջոցով տվյալ մասնակից պետությունն իր իշխանություններին օժտում է ցանկացած մնալ դեպք և բոլոր մնալ դեպքերը քննելու և դատական կարգով հետապնդման ենթարկելու կարողությամբ: Իսպանիան, այլ պետությունների շարքում, որոշել է կիրառել նշված տարբերակը և մնալ արտատարածքային իրավասությամբ օժտել հետաքննություն և դատական հետապնդում իրականացնող սեփական կառույցները: Ըստ այս իրավասության էր (այն հաստատվեց սկզբնական շրջանում ազգային զերագույն դատարանում ընթացող դատավարությամբ), որ Իսպանիայի իշխանությունները կարողացան գեներալ Պիոնոչետի նկատմամբ հետաքննություն նախաձեռնել: Հետևաբար, դժվար է հասկանալ, թե ինչու 5-րդ հոդվածի 1(գ) կետով նախատեսված սեփական հայեցողությամբ շարժվելու հնարավորությունն այն մասնակից պետությունների դեպքում, որոնք ընտրել են մնալ իրավասություն ստանձնելու տարբերակը, ըստ այդմ պետք է տարածվի նաև յուրաքանչյուր անհատական գործի նկատմամբ, որը հետաքննվում և դատական կարգով հետապնդման է ենթարկվում համաձայն այս իրավասության: Այս լույսի ներքո թվում է, թե մեծամասնությունը շփոթել է 5-րդ հոդվածի 1(գ) կետի սահմանմանը համապատասխանող գործողությունների հետաքննությանը և դատական կարգով հետապնդմանը վերաբերող ընդհանուր կիրարկման (սովորաբար օրենսդրական) մորմ ընդունելու հնարավորությունը՝ մի կողմից, և յուրաքանչյուր անհատական գործին հետամուտ լինելը՝ մյուս կողմից:

(բ) Դժվար է համաձայնեցնել մեծամասնության բերած այն հիմնավորմանը, թե 5-րդ հոդվածում ամրագրված սեփական հայեցողությամբ որոշում կայացնելու իրավունքն ավելի լայն իմաստ ունի, քան այն, որը ներկայացված է, և կոնվենցիան չի պահանջում, որ ներկայացվի հանձնում իրականացնելու խնդրագիր, ինչպես նաև դժվար է համաձայնել հենց մույն մեծամասնության կողմից կոնվենցիայի՝ անպատժելիությունը բացառող նպատակի շեշտադրմանը, մասնապես կոնվենցիայի ողջ տեքստում առկա մշտական թեմային, ըստ որի՝ մասնակից պետությունները, որոնք իրավասություն ունեն խոշտանգման հայտարարվող գործողության նկատմամբ, պետք է գործադրեն իրենց տրամադրության տակ առկա այնպիսի միջոցներ, որ հայտարարվող օրինազանցին կանգնեցնեն արդարադատության առջև: 5-րդ հոդվածում ամրագրված «հայեցողության» մասին մեծամասնության տեսակետը չապես նվազեցնում է հավանականությունը, որ տարածքից դուրս գտնվող քաղաքացիների նկատմամբ խոշտանգումների դեպքերում հայտարարվող օրինազանցները կկանգնեցվեն արդարադատության առջև, մասնավոր եթե համեմատենք 5-րդ հոդվածի 1(ա) և 1(բ) կետերում նկարագրված դեպքերի հետ, որոնց նկատմամբ կիրառելի է մնալ հայեցողությունը:

Նույնիսկ եթե կոմիտեն ճիշտ է այն հարցում, որ կոնվենցիան մասնակից պետությունից չի պահանջում ներկայացնել հանձնում կատարելու խնդրագիր այն դեպքում, երբ նա սեփական օրենսդրությամբ իրավագործություն ունի, կոմիտեն չի կարողանում բացատրել, թե ինչու պետք է ի լրումն եզրակացնել, որ հանձնմանն ուղղված գործընթացները պետք է հնարավոր լինեն ցանկացած պահի դադարեցնել: Գոյություն ունեն քաղաքականության մշակմանն առնչվող լուրջ պատճառներ, որոնք կրկին բխում են կոնվենցիայի կառուցվածքից և առարկայից, թե ինչու հանձնում կատարելու մասին որևէ խնդրագիր, *եթե ներկայացվում է*, պետք է հետապնդվի բոլոր փուլերով՝ մինչև ավարտ: Չի կարելի եզրակացնել, որ հանձնում կատարելու խնդրագիր ներկայացնելու հարցում հայեցողություն թույլ տալը պահանջում է նաև, որ տրամադրվի ներկայացված խնդրագրի գործողությունը ցանկացած պահի փաստացի դադարեցնելու իրավունք:

Նույնիսկ եթե ճիշտ է այն, որ կոնվենցիան թույլ է տալիս սեփական հայեցողությամբ դադարեցնել հանձնում կատարելու խնդրագրի գործողությունը, մեծամասնությունը, որպես ամբողջություն, ունակ է լուծելու այս գործի առանցքային հարցը, այն է՝ ո՞ր մարմինը պետք է հանդես բերի մնալ հայեցողություն: Բազմաթիվ համատեքստերում կոմիտեն հետևողականորեն զերադասել է դատական կարգով կարգավորել որևէ մասնակից պետության սահմաններում խոշտանգումների մասին հայտարարությունները: Այս դեպքում մասնակից պետության իրավական համակարգը սեփական դատական իշխանությանն օժտում է արտատարածքային բնույթի գործերը հետաքննելու, մնալ դեպքերը դատական կարգով հետապնդման ենթարկելու, օրինազանցներին հանձնելու մասին խնդրագրեր ներկայացնելու, հանձնելու մասին խնդրագրերից բխող որոշումների իրավական հետևանքները գնահատելու և

անհրաժեշտ եզրակացություններ անելու կարողությամբ՝ Համապատասխանաբար՝ տվյալ մասնակից պետության դատական համակարգն այս դեպքում որոշեց, որ հիմքեր կային իրավական կարգով վիճարկելու Մեծ Բրիտանիայի ներքին գործերի նախարարի՝ հանձնման գործընթացները դադարեցնելու մասին որոշումը։ Մասնակից պետության իշխանությունների մեկ այլ ճյուղը, որը մինչ այդ գործում էր, ըստ էության, որպես վարչական իշխանություն, դատական իշխանության՝ ներքին գործերի նախարարի որոշումը բողոքարկելու մասին վճիռը չեղյալ համարեց՝ ձախողելով դրա փոխանցումը բրիտանական իշխանություններին։ Ավելի քան վիճելի է՝ սեփական «հայեցողության» նման կիրառումը համապատասխանում է կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքներին և միջազգային հանրության արտահայտած կամքին՝ վերջ տալու մարդկության դեմ գործած հանցանքների հեղինակների անպատժելիությանը։ Մեծամասնության որոշումը հեղինակին փաստորեն զրկում է բարձրացված խնդիրների առնչությամբ իրավական պաշտպանության տեղական միջոցները սպառելու հնարավորությունից, միջոցներ, որոնք, հենց մասնակից պետության կարծիքով, չեն սպառվել, և, հետևաբար, զրկում է նրան դրանից հետո կոմիտե վերադառնալու հնարավորությունից։

Նշված պատճառներով ես մեծամասնության տեսակետը համարում եմ ... հապճեպ և, ամեն դեպքում, կոմիտեի վերջնական որոշման տեսանկյունից, ոչ անհրաժեշտ¹³⁸։

[9.131] Պարզ չէ և հստակ ձևակերպված դրույթների բացակայության պայմաններում գուցե նաև անհավանական է, որ ԲԲԻՄԴ-ը պետությունների համար սահմանի որևէ պարտավորություն՝ կապված հայտարարվող խոշտանգողների նկատմամբ համընդհանուր իրավագործություն կիրառելու հետ։

Հոդված 10

1. Ազատությունից զրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդ անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք։

2. (ա) Այն դեպքերում, երբ չկան բացառիկ հանգամանքներ, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին, և նրանց առանձին ռեժիմը համապատասխանում է չդատապարտված անձի կարգավիճակին,

(բ) անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և հնարավորինս կարճ ժամկետում հասցվում դատարան՝ որոշում կայացնելու համար։

3. Պատժի համակարգով բանտարկյալների համար նախատեսվում է այնպիսի ռեժիմ, որի էական նպատակը նրանց բարեփոխումն է և սոցիալական վերականգնումը։ Անչափահաս օրինախախտներն առանձնացվում են չափահասներից, և նրանց ռեժիմը համապատասխանում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին։

[9.132] ԲԲԻՄԴ-ի 10-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է, որ պետություններն ազատազրկված անձանց նկատմամբ դրսևորելու են մարդկային և նրանց արժանապատվությունը հարգող վերաբերմունք։ 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերն ամրապնդում են այս իրավունքի որոշակի բաղադրիչները։ Թերևս 1-ին հոդվածն արգելում է պակաս խիստ ռեժիմի կիրառումը, քան 7-րդ հոդվածով արգելված ռեժիմն է։ Այն լրացուցիչ պաշտպանություն է տրամադրում հատկապես մի խոցելի խմբի՝ ազատազրկված անձանց։ Վերջապես, 7-րդ և 10-րդ հոդվածների կարևոր տարբերությունն այն է, որ վերջինն այնպիսի իրավունք է, որը կարելի է զիջել [derogable right]։

[9.133] 10-րդ հոդվածը լրացնում է 9-րդ հոդվածը։ Վերջին հոդվածը կարգավորում է այն պատճառները, որոնց հիման վրա անձը կարող է ձերբակալվել¹³⁹, իսկ 10-րդ հոդվածը կարգավորում է նման կալանքի տակ պահելու պայմանները։

¹³⁸ Պրն Ջիբրիլ Կամառան [Mr Guibril Camara] որոշեց, որ հեղինակը Իսպանիայի կողմից ԽԴԿ-ի որևէ խախտմանը համապատասխանող տուժող չէ, քանի որ նա չի հանդիսացել Իսպանիայի նախաձեռնած այն դատական գործընթացների կողմ, որոնք հանգեցրել են օրինազանցին հանձնելու Միացյալ Թագավորությանը ներկայացված պահանջին։

¹³⁹ Հոդվ. 9-ի վերաբերյալ տես գլուխ 11-ը։

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

[9.134]

ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում է տվյալ պետության իրավունքի և իշխանության ներքո ազատագրված ցանկացած անձանց, ովքեր պահվում են բանտերում, հիվանդանոցներում, մասնավորապես՝ հոգեբուժարաններում, կալանավայր ճամբարներում կամ ուղղիչ աշխատանքային հաստատություններում կամ այլուր: Մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որ մեկնաբանության մեջ ներկայացված սկզբունքը հարգվի իրենց իրավագործության տակ գտնվող բոլոր հաստատություններում և կառույցներում, որտեղ պահվում են այդ անձինք:

Ընդհանուր մեկնաբանության 2-րդ պարբերությունը հաստատում է, որ 10-րդ հոդվածի 1-ին կետը կարգավորում է կալանքի տակ պահելու բոլոր տարբերակների պայմանները: «Մպանդանջիլան և այլք ընդդեմ Ջաիրի» (*Mpandanjila et al v Zaire, 138/83*) գործում ՄԻԿ-ը նույնիսկ 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում հայտնաբերեց, որը բխել էր «աքսորի ժամանակ» ցուցաբերված վատ վերաբերմունքից: Նույնպես *Մպանդանջիլայի* գործի առնչությամբ նշել է, որ «հսկողությունը և միջավայրից մեկուսացումն այնքան դաժան էին, որ իրավիճակն ավելի շուտ կարելի էր համեմատել կալանքի, քան աքսորի հետ»¹⁴⁰:

ԿԱԼԱՆՔԻ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԱՍՏԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[9.135] Ակնհայտորեն, 10-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է պետական կալանավայրերի նկատմամբ: Այնուամենայնիվ, թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությունը հստակեցնում է, որ պետությունները պատասխանատու են «իրենց իրավասության տակ» գտնվող բոլոր կալանավայրերի համար [9.134]: Այժմ բազմաթիվ պետություններ, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունը և Ավստրալիան, թույլատրում են անձանց կալանքի տակ պահել մասնավոր կալանավայրերում: Քանի որ նման կալանքը, այդուհանդերձ, գտնվում է «պետության իրավունքի և իշխանության ներքո», ենթադրվում է, որ կալանքի տակ պահելու նման տարբերակները տեղավորվում են 10-րդ հոդվածի 1-ին կետի գործողության շրջանակներում¹⁴¹:

[9.136] ՄԻԿ-ը հարցում արեց Միացյալ Թագավորությանը՝ կալանավորվածներին առնչվող գործողությունների «կապալի» վերաբերյալ:

¶ 17. Կոմիտեն մտահոգված է, որ մասնակից պետության կողմից պետական այնպիսի առանցքային գործողություններ մասնավոր առևտրային հատվածին պատվիրակելու պրակտիկան, որոնք ներառում են ուժի կիրառում և անձանց կալանավորում, թուլացնում է դաշնագրով սահմանված իրավունքների պաշտպանությունը: Կոմիտեն շեշտում է, որ բոլոր դեպքերում մասնակից պետությունը մնում է պատասխանատու դաշնագրի բոլոր հոդվածները հարգելու համար:

¶ 26. Կոմիտեն առաջարկում է վերանայել բանտարկյալներին կալանքի տակ պահելու, նրանց տեղափոխման և արտաքսման հարցերում մասնավոր առևտրային հատվածի օգտագործումը և առաջարկում է, որ մինչև գործող պայմանագրերի դադարեցումը կալանքի հետ կապված որևէ մոր գործառույթ կառավարության կողմից «կապալով» չտրվի: Մասնակից պետությունը պարտավոր է ապահովել, որ նրանք, ովքեր ներգրավված են բանտարկյալներին կալանքի տակ պահելու գործում, լիակատար իրազեկվեն մասնակից պետության միջազգային պարտավորությունների մասին, որոնք վերաբերում են կալանավորվածներին պահելու ռեժիմին, ներառյալ՝ Միավորված ազգերի կազմակերպության Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները:

Այս մեկնաբանությունը նախատեսում է, որ 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքները տարածվեն մասնավոր կալանավայրերի վրա: Այսուհանդերձ, ՄԻԿ-ն ընդունեց, որ նման հաստատությունների նկատմամբ կարող է իրատեսորեն նվազ պետական վերահսկողություն կիրառվել, և այս

¹⁴⁰ Նովակ, տե՛ս վերը, ծմք. 3, էջ 186:

¹⁴¹ Տե՛ս նաև [22.49]:

պատճառով արտահայտեց իր նախընտրությունը, որ պետությունները «չմասնավորեցնեն» կալանավորվածների հետ կապված գործողությունները:

[9.137] Նոր Զելանդիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը վերահաստատեց իր թերահավատությունը՝ կապված ՔԲԻՄԴ-ին մասնավոր կալանավայրերի համապատասխանության հետ¹⁴²:

¶ 13. Կոմիտեն մտահոգությամբ նշում է, որ մի բանտի և բանտի պահակախմբի ծառայության կառավարումը հանձնվել է մասնավոր ընկերության: Ողջունելով այն տեղեկությունը, որ մասնակից պետությունը 2005 թ. հուլիսին վճռել է սույն պայմանագրի ավարտից հետո բոլոր բանտերի կառավարումն իրականացնել պետության կողմից, և պայմանագրային կառավարումն ստանձնած ընկերությունը պարտավորվել է հարգել Միավորված ազգերի կազմակերպության Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները, կոմիտեն, այսուհանդերձ, շարունակում է մտահոգվել այն հարցի շուրջ, թե արդյոք սեփականաշնորհման պրակտիկան մի ոլորտում, որտեղ պետությունը պատասխանատու է իր կողմից ազատագրված անձանց իրավունքների պաշտպանության համար, բավարարում է դաշնագրով այդ մասնակից պետության ստանձնած պարտավորությունների պահանջները և արդյոք համապատասխանում է յուրաքանչյուր խախտման համար սեփական հաշվետվողականությանը: Այս կոմիտեն նշում է, որ թերևս գոյություն չունի ամենօրյա դիտարկման որևէ արդյունավետ մեխանիզմ՝ ապահովելու, որ բանտարկյալներն արժանաճան մարդկային և անձին ներհատուկ արժանապատվությունը հարգող վերաբերմունքի և ի լրումն՝ օգուտ քաղեն կալանքի գործող ռեժիմից, որի էական նպատակն ուղղված է կալանավորվածների ուղղմանը և նրանց սոցիալական վերականգնմանը:

Մասնակից պետությունը պարտավոր է ապահովել, որ բոլոր ազատագրված անձինք չզրկվեն իրենց տարբեր իրավունքներից, որոնք երաշխավորված են դաշնագրի 10-րդ հոդվածով:

[9.137Ա] «Կաբալը և Պասինի Բերտրանն ընդդեմ Ավստրալիայի» (*Cabal and Pasini Bertran v Australia, 1020/02*) գործում բողոքները վերաբերում էին, *ի թիվս այլոց*, մասնավոր կալանավայրում հեղինակների նկատմամբ կիրառված վերաբերմունքին:

ՄԻԿ-ը վերահաստատեց, որ «մասնավոր առևտրային հատվածին պետական առանցքային այնպիսի գործողությունների կատարումը պատվիրակելը, որոնք ներառում են ուժի կիրառում և անձանց կալանավորում, մասնակից պետությանը չի ազատում դաշնագրի և, մասնավորապես, 7-րդ և 10-րդ հոդվածներով ստանձնած պարտավորություններից...»: Հետևաբար, պետությունն է «դաշնագրով և կամընտիր արժանագրությամբ պատասխանատու Պորտ Ֆիլիպում պահվող բանտարկյալների նկատմամբ «4-ի խմբի» կողմից դրսևորված վերաբերմունքի համար»¹⁴³:

ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

[9.138]

ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. 10-րդ հոդվածի 1-ին կետը մասնակից պետությունների նկատմամբ սահմանում է դրական պարտավորություն՝ այն անձանց կապակցությամբ, ովքեր հատկապես խոցելի են ազատագրված անձի իրենց կարգավիճակի հետևանքով, և նրանց դեպքում հավելում է խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժամիջոցների արգելանքը, որը ներառված է դաշնագրի 7-րդ հոդվածում: Այսպիսով, ազատագրված անձանց ոչ միայն չի կարելի ենթարկել 7-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի, ներառյալ՝ բժշկական կամ գիտական փորձերը, այլև նրանց չի կարելի ենթարկել որևէ զրկանքի կամ սահմանափակման, բացառությամբ ազատագրվածից բխող սահմանափակումները: Մնան անձանց արժանապատվության նկատմամբ հարգանքը պետք է երաշխավորվի նույնպիսի պայմաններով, ինչպիսիք կիրառվում են ազատ մարդկանց դեպքում: Ազատագրված անձինք վայելում են դաշնագրով սահմանված բոլոր իրավունքները՝ ենթակա այն սահմանափակումներին, որոնք անխուսափելի են փակ միջավայրում:

¹⁴² (2002) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/NZL:

¹⁴³ Պարբ. 7.2:

¶ 4. Բոլոր ազատագրված անձանց մարդկայնորեն և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքով վերաբերվելը հիմնարար և համընդհանուր կիրառություն ունեցող կանոն է: Յետևաբար, այս կանոնի կիրառումն առնվազն չի կարող կախված լինել մասնակից պետության տարածքում առկա նյութական ռեսուրսներից¹⁴⁴: Այս կանոնը պետք է կիրառվի առանց որևէ սահմանափակման՝ կախված ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, սեփականությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից:

¶ 5. Մասնակից պետություններին կոչ է արվում իրենց զեկույցներում նշել, թե ինչքանով են կիրառում Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան չափորոշիչները, որոնք առնչվում են բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքին՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ (1957), Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու (1988), Իրավա-կարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագիրք (1978), Ձերբակալված և կալանավորված անձանց խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանության գործում առողջապահական համակարգի աշխատակիցների, մասնավորապես՝ բժիշկների դերին վերաբերող բժշկական էթիկայի սկզբունքներ (1982):

[9.139] 3-րդ պարբերությունը հուշում է, որ 10-րդ հոդվածն արգելում է 7-րդ հոդվածով արգելված վերաբերմունքից պակաս լրջություն ունեցող ձևերը¹⁴⁵: Նշվածը հաստատվել է ստորև ներկայացվող գործով:

«ԳՐԻՖԻՆՆ ԸՆԴՈՂԵՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (GRIFFIN v SPAIN, 493/92)

¶ 3.1. Յեղիմակը պնդում է, որ Մելիլլայի բանտում անցկացրած բանտարկության ընթացքում իրեն ենթարկել են դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատիժների: Ասում են՝ այս բանտում կեցության պայմաններն ավելի վատ են, քան «Կեսգիշերային ճեպընթաց» ֆիլմում պատկերված պայմանները. բանտը 500 տարվա հնություն ուներ, այդ տարիներին այնտեղ գործնականում ոչինչ չէր փոխվել, առնետներ, ոջիլներ, խավարասերներ էին վիստում, վարակներ էին տարածված, մեկ բանտախցում պահվում էր 30 անձ, ներառյալ՝ ծերեր, կանայք, պատանիներ և մի ութամսյա նորածին երեխա, չկային պատուհաններ, այլ միայն ճաղավանդակներ, որոնք բաց էին ցրտի և քամու դիմաց, ինքնասպանությունների, ինքնախեղման, դաժան կռիվների և ծեծի բարձր մակարդակ էր գրանցվում, հատակով մեկ տարածված էր մարդկանց արտաթորանքը, քանի որ զուգարանը, որը գետնի մեջ մի անցք էր, խցանված էր, լողանալու և հաճախ խմելու համար օգտագործվում էր ծովի աղի ջուրը, քնելու համար օգտագործվող սավանները և ներքնակները ներծծված էին մեզով, չնայած պահեստը լցված էր անկողնի նոր սպիտակեղենով, հագուստով և այլն: Նա հավելում է, որ իմացել է, թե խռովությունից հետո բանտը «մաքրվել է», բայց նշում է, որ կոմիտեին կարող է տրամադրել վկաների ցուցակ և նշված բանտում պայմանների ու կատարված դեպքերի մասին ավելի մանրամասն զեկույց:

Ընդունելիության որոշման փուլում ՄԻԿ-ը նշեց հետևյալը.

¶ 6.3. Կոմիտեն ի գիտություն ընդունեց այն, որ հեղիմակը Մելիլլայի բանտի պայմանների և այնտեղ կատարված դեպքերի վերաբերյալ իր հայտարարությունների առնչությամբ հղում է կատարել 7-րդ հոդվածին: Կոմիտեն այսուհանդերձ եզրակացրեց, որ հեղիմակի նկարագրած փաստերն առավելապես տեղավորվում են 10-րդ հոդվածի շրջանակներում:

Ի վերջո, ՄԻԿ-ը որոշեց, որ բանտարկության պայմանները, որոնք ներկայացրել է Գրիֆինը, հանգեցրել են 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտման¹⁴⁶:

[9.140] Վերոշարադրյալ հայցը վերաբերում էր բանտարկության ընդհանուր պայմանների շուրջ բողոքների: Թերևս 10-րդ հոդվածը կիրառելի է այն դեպքերում, երբ բանտարկության պայմաններն ընդհանուր առմամբ անբավարար են, մինչդեռ 7-րդ հոդվածը կիրառելի է այն դեպքերում, երբ հատուկ հեղի-

¹⁴⁴ Տե՛ս նաև [1.101] և [9.33]:

¹⁴⁵ Տե՛ս նաև Գանդի, վերը, ծնթ. 37, 763:

¹⁴⁶ Տե՛ս նաև «Քելլին ընդդեմ ճամայկայի» (Kelly v Jamaica, 253/87), պարբ. 5.7 և «Թեյլորն ընդդեմ ճամայկայի» (Taylor v Jamaica, 707/96), պարբ. 3.7, 3.8 և 8.1:

նակի նկատմամբ դրսևորվել է ավելի վատ վերաբերմունք: Հետևյալ գործը նման բացատրության համար լրացուցիչ հիմքեր է տրամադրում:

**«ՊԻՆՏՈՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(PINTO v TRINIDAD and TOBAGO, 512/92)**

¶ 8.3. Հեղինակը բողոքել է Կառերայի դատապարտյալների բանտում առկա սարսափելի պայմանների և իր նկատմամբ հալածանքների վերաբերյալ: Մասնակից պետությունը սոսկ ընդհանուր ձևակերպումներով է հերքել այս հայտարարությունը: Մյուս կողմից՝ հեղինակը չի կարողացել մանրամասներ տրամադրել իր նկատմամբ դրսևորած վերաբերմունքի մասին, բացառությամբ բանտարկության պայմանների հիշատակումից, որոնց հավասարապես ենթակա են եղել բոլոր բանտարկյալները: Իր տրամադրության տակ եղած նյութի հիման վրա կոմիտեն եզրակացնում է, որ 7-րդ հոդվածի խախտում չի եղել:

Պիմտոյի գործում մասնավորապես ուշադրություն դարձրեք «բանտարկության պայմաններ, որոնք հավասարապես ազդել են բոլոր բանտարկյալների վրա» արտահայտությանը: Արդյոք այս բառերը նշանակում են, որ վերաբերմունքը, որքան էլ սարսափելի լինի, դուրս է մնալու 7-րդ հոդվածի գործողության շրջանակից, եթե այդ վերաբերմունքը կիրառվել է հավասարապես բոլոր բանտարկյալների նկատմամբ: ՄԻԿ-ը հատուկ չնշեց՝ բանտի սարսափելի պայմանները նշանակում են 10-րդ հոդվածի 1-ին կետի ոտնահարում, սակայն սա թերևս բացթողում էր, քանի որ այլ հայտարարությունների կապակցությամբ համարվել է, որ դրանք խախտել են 10-րդ հոդվածի 1-ին կետը [9.156]:

[9.141] Ամենավաղ գրանցված գործերից մեկով («Մասերան ընդդեմ Ուրուգվայի» (*Massera v Uruguay, 5/77*) ՄԻԿ-ը եզրակացրեց, որ «բանտարկությունն այնպիսի պայմաններում, որոնք վնասում են անձի առողջությունը», 7-րդ հոդվածի ոտնահարում է [9.95]: Այնուամենայնիվ, դրան հաջորդած գործերը, ինչպես օրինակ՝ վերը ուղղակիորեն մեջքերվածները, մատնանշում են, որ ՄԻԿ-ը հրաժարվել է այս նախկին դիրքորոշումից: Իսկապես, Նովակը պնդում է, որ 10-րդ հոդվածի 1-ին կետը գլխավորապես ուղղված է անբավարար «ընդհանուր վիճակը կամ կալանքի հաստատությունը»¹⁴⁷ շտկելուն, մինչդեռ 7-րդ հոդվածը մշակվել է, որ պաշտպանի «անձնական անձեռնմխելիության նկատմամբ կատարվող որոշակի, հիմնականում վայրագ հարձակումներից»¹⁴⁸: Ստորև ներկայացվող հայցերը ամրապնդում են Նովակի պնդումը:

¹⁴⁷ Տե՛ս նաև «Փարքանյին ընդդեմ Հունգարիայի» (*Párkányi v Hungary, 410/1990*), պարբ. 8.2, «Բենետն ընդդեմ ճամայկայի» (*Bennett v Jamaica, 590/94*), պարբ. 10.8, «Անրին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Henry v Trinidad and Tobago, 752/97*), պարբ. 7.3-7.4, «Մորգանը և Ուիլյամսն ընդդեմ ճամայկայի» (*Morgan and Williams v Jamaica, 720/96*), պարբ. 7.2, «Բլեյնն ընդդեմ ճամայկայի» (*Blaine v Jamaica, 696/96*), պարբ. 8.4, «Լևին ընդդեմ ճամայկայի» (*Levy v Jamaica, 719/96*), պարբ. 7.4, «Թեյլորն ընդդեմ ճամայկայի» (*Taylor v Jamaica, 705/96*), պարբ. 7.4, «Շոուն ընդդեմ ճամայկայի» (*Shaw v Jamaica, 704/96*), պարբ. 7.2, «Մակթագարտն ընդդեմ ճամայկայի» (*McTaggart v Jamaica, 749/97*), պարբ. 8.5-8.6, «Յասսինը և Թոմասն ընդդեմ Գայանայի Հանրապետության» (*Yasseen and Thomas v Republic of Guyana, 676/96*), պարբ. 7.4, 7.6, «Մեթյունն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Matthews v Trinidad and Tobago, 569/93*), պարբ. 7.3, «Մակլեոդն ընդդեմ ճամայկայի» (*McLeod v Jamaica, 734/97*), պարբ. 6.4, «Պոլայ Կամպոսն ընդդեմ Պերուի» (*Polay Campos v Peru, 577/94*), պարբ. 8.4, «Ջոնսոնն ընդդեմ ճամայկայի» (*Johnson v Jamaica, 653/95*), պարբ. 8.2, «Բենփրեյն ընդդեմ ճամայկայի» (*Campbell v Jamaica, 618/95*), պարբ. 7.2, «Ֆիլիպն ընդդեմ ճամայկայի» (*Phillip v Jamaica, 594/92*), պարբ. 7.4, «Փեննանթն ընդդեմ ճամայկայի» (*Pennant v Jamaica, 647/95*), պարբ. 8.4, «Ֆորբսն ընդդեմ ճամայկայի» (*Forbes v Jamaica, 649/95*), պարբ. 7.5, որում ՄԻԿ-ը գտավ 10-րդ հոդվածի 1-ին կետի, ոչ թե 7-րդ հոդվածի խախտում, որը բխել էր բանտի ահավոր պայմաններից:

¹⁴⁸ Նովակ, վերը, ծմբ. 3, 188, Փանդի, վերը, ծմբ. 37, 769-71: Տե՛ս նաև «Չանգն ընդդեմ ճամայկայի» (*Chung v Jamaica, 591/94*), որում «հեղինակին բանտապահների ձեռքով հասցված վնասվածքները» խախտել են թե՛ 7-րդ հոդվածը և թե՛ 10-րդ հոդվածի 1-ին կետը (պարբերություն 8.2), և «Մակթագարտն ընդդեմ ճամայկայի» (*McTaggart v Jamaica, 749/97*) (հեղինակը ծեծի է ենթարկվել, և այդտեղ են մրա անձնական իրերը), պարբ. 8.7, «Ջոնսոնն ընդդեմ ճամայկայի» (*Johnson v Jamaica, 653/95*) (ծեծ և սպառնալիքներ, բուժօգնություն ցույց չտալը), պարբ. 8.1, «Մորիսոնն ընդդեմ ճամայկայի» (*Morrison v Jamaica, 663/95*) (ծեծ), պարբ. 8.3, «Փեննանթն ընդդեմ ճամայկայի» (*Pennant v Jamaica, 647/95*), պարբ. 8.3 (ծեծ ոստիկանության կողմից), «Գալլիմորն ընդդեմ ճամայկայի» (*Gallimore v Jamaica, 680/96*), պարբ. 7.1:

[9.142]

«Քենեդի ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(KENNEDY v TRINIDAD and TOBAGO, 845/98)

¶ 7.7. Կոմիտեն ի գիտություն է ընդունել հեղինակի հայտարարություններն այն մասին, որ ոստիկանությունում իրականացված ձերբակալությունից հետո ինքը ենթարկվել է ծեծի: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունն այն հայտարարությունները հարցականի տակ չի դրել, որոնց մեջ հեղինակը մանրամասն նկարագրել է իր նկատմամբ դրսևորված վերաբերմունքը, ներառյալ՝ բացահայտելով ոստիկանության այն աշխատակիցներին, ովքեր, համաձայն հայտարարությունների, ներգրավված են եղել, և դատավորը, ում մոտ նրան բերել են 1987 թ. փետրվարի 10-ին, հրահանգել է, որ բուժման նպատակով իրեն տեղափոխեն հիվանդանոց: Կոմիտեն համարում է, որ այն վերաբերմունքը, որին ոստիկանությունում ձերբակալված ժամանակ ենթարկվել է պրն Քենեդին, հավասարազոր է դաշնագրի 7-րդ հոդվածի խախտման:

¶ 7.8. Հեղինակը պնդում է, որ իր բանտարկության պայմանները խախտում են 7-րդ հոդվածը և 10-րդ հոդվածի 1-ին կետը: Այս պնդմանը մասնակից պետությունը ևս մեկ անգամ չի անդրադարձել: Կոմիտեն նշում է, որ հեղինակը նախնական կալանքի տակ պահվել է ընդհանուր առմամբ 42 ամիս, առնվազն հինգ և մինչև տասը կալանավորվածների հետ, մի խցում, որի չափերը եղել են 2x3 քմ, որ գրեթե ութ տարի լինելով մահապատժի դատապարտվածի վիճակում՝ նա ենթարկվել է մենախցային բանտարկության և պահվել մի փոքր խցում, որտեղ բացակայել է կոյուղին, դրա փոխարեն եղել է մի դույլ, բնական լույս չի թափանցել, թույլ են տվել մենախցից դուրս գալ միայն շաբաթը մեկ անգամ, սնունդը եղել է խիստ անբավարար, և հաշվի չեն առնվել բանտարկյալի հատուկ դիետիկ կարիքները: Կոմիտեն կարծում է, որ բանտարկության այդ հարցականի տակ չդրվող պայմանները դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում են:

Կոմիտեն *Քենեդիի* գործի կապակցությամբ բանտային պայմանները, որոնց վրա տարածվում է 10-րդ հոդվածի 1-ին կետը, հստակորեն տարանջատեց բռնության գործադրմամբ կատարված հարձակումներից, որոնց վրա տարածվում է 7-րդ հոդվածը¹⁴⁹:

[9.143]

«Ռ.Ս.-Ն ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(R.S. v TRINIDAD and TOBAGO, 684/96)

¶ 7.3. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդումներին, որ իր բանտարկության տարբեր փուլերում կալանքի տակ պահվելու պայմանները խախտել են 7-րդ հոդվածը և 10-րդ հոդվածի 1-ին կետը, հեղինակի նկարագրած կալանքի պայմանների վերաբերյալ մասնակից պետության կողմից արձագանքների բացակայության պայմաններում կոմիտեն նշում է, որ հեղինակի փաստաբանը տրամադրել է այն բանտի պայմանների մանրամասն նկարագրությունը, որտեղ բանտարկված է եղել հեղինակը, և նաև պնդել է, որ բանտում հոգեբուժական ծառայություն ստանալու հնարավորություն չի եղել: Քանի որ մասնակից պետությունը որևէ փորձ չի ձեռնարկել՝ հերքելու հեղինակի փաստաբանի կողմից արված մանրամասն հայտարարությունները, կամ վիճարկելու, թե այդ պայմանները վերաբերել են հենց հեղինակին, կոմիտեն պարտավոր է փաստաբանի հայտարարությունները համարել պատշաճ չափով արժանահավատ: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք նկարագրված պայմանները խախտո՞ւմ են դաշնագիրը, ապա կոմիտեն որոշում է, ինչպես վարվել է նման այլ հիմնավորված հայտարարությունների առնչությամբ, որ հեղինակի բանտարկության պայմանները, ինչպես դրանք նկարագրված են, խախտում են նրա՝ մարդկային և իր ներհատուկ մարդկային արժանապատվությունը չմվաստացնող վերաբերմունքի արժանանալու իրավունքը, հետևաբար, դրանք հակասում են 10-րդ հոդվածի 1-ին կետին: Հաշվի առնելով այս դիտարկումը՝ կապված դաշնագրի 10-րդ հոդվածի հետ, որը հատուկ անդրադառնում է ազատագրված անձանց վիճակին և նման անձանց վրա տարածում այն տարրերը, որոնք ընդհանուր առմամբ սահմանված են 7-րդ հոդվածով, անհրաժեշտություն չկա առանձին քննարկելու 7-րդ հոդվածից բխող պահանջները:

Ռ.Ս.-ի գործում առկա այս հայտարարությունը բազմիցս շեշտվել է վերջերս դիտարկված բազմաթիվ գործերում¹⁵⁰:

¹⁴⁹ Տե՛ս նաև «Բուդուն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Boodoo v Trinidad and Tobago*, 721/96), պարբ. 6.4-6.5 և «Ռոբինսոն ընդդեմ ճամայկայի» (*Robinson v Jamaica*, 731/97) [9.96]:

¹⁵⁰ «Թիսդեյլ ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Teesdale v Trinidad and Tobago*, 677/96), պարբ. 9, «Թիսդեյլ ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Teesdale v Trinidad and Tobago*, 677/96), պարբ. 9.2, «Ֆրենսիս ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Francis v Trinidad and Tobago*, 899/99), պարբ. 5.6:

[9.144] Այնուամենայնիվ, երկու դրույթների միջև բաժանարար գիծն աղոտացավ ՄԻԿ-ի պրակտիկայում: Որոշ գործերում նկարագրված բանտարկության ընդհանուր պայմաններն այնքան դաժան էին, որ հասնում էին դաժանության այն շեմին, որը ոտնահարում է 7-րդ հոդվածը [9.93]: Ավելին՝ մարդկանց վրա հարձակումների որոշ դեպքերում արձանագրվել են 10-րդ հոդվածի խախտումներ, ինչպես ստորև ներկայացված գործում է:

**«ՈՒՈԼՔԵՐԸ և ՌԻՉԱՐԴՍԸ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ»
(WALKER and RICHARDS v JAMAICA, 639/95)**

¶ 8.1. Դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի հայտարարվող խախտման առնչությամբ, որը վերաբերում է մահապատժի դատապարտվածի բանտարկության ընթացքում անօրինական վերաբերմունքի արժանանալուն, կոմիտեն նշում է, որ պրն Ուոլքերի այն բողոքի կապակցությամբ, թե իրեն 1990 թ. մայիսին ծեծի են ենթարկել, որի հետևանքով նրա վնասվածքի վրա հարկ է եղել հինգ կար դնել, մասնակից պետությունն ընդունել է, որ այդ վնասվածքները հասցվել են բանտում 1990 թ. մայիսին տեղի ունեցած խռովությունների ընթացքում և հանձն է առել հետաքննել նշված դեպքը և տեղեկացնել կոմիտեին: Ապա կոմիտեն նշում է, որ հաղորդումը մասնակից պետության ուշադրությանը ներկայացնելուց 20 ամիս և նկարագրված դեպքերից յոթ տարի անց որևէ տեղեկություն չի ստացվել, որը կբացատրեր տեղի ունեցածը: Այս հանգամանքներում և մասնակից պետության կողմից ներկայացված տեղեկությունների բացակայության պայմաններում կոմիտեն համարում է, որ մահապատժի դատապարտվածի կարգավիճակում պրն Ուոլքերի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է:

Հետևաբար, 10-րդ հոդվածը իրավական պաշտպանություն է ապահովում նաև անձնական հարձակումներից, որոնք չէին համապատասխանել 7-րդ հոդվածում սահմանված՝ դաժանության պայմաններին¹⁵¹:

[9.145] Հաճախ պատահում են 7-րդ և 10-րդ հոդվածների միաժամանակյա խախտումներ¹⁵²: Սա զարմանալի չէ, քանի որ 7-րդ հոդվածը խախտող վերաբերմունքն ամենայն հավանականությամբ կխախտի 10-րդ հոդվածը, եթե տուժողը բանտարկյալ է: Օրինակ՝ «Լինտոնն ընդդեմ Ճամայկայի» (*Linton v Jamaica*, 255/1987) գործում վիճարկվող վերաբերմունքի կապակցությամբ վճռվեց, որ այն դաժան և անմարդկային վերաբերմունք է և հակասում է 7-րդ հոդվածին [9.35]: Ապա ՄԻԿ-ը հայտարարեց, որ այս փաստը «հետևաբար հանգեցրել է նաև 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտման»¹⁵³: Այնուամենայնիվ, հաճախ 7-րդ հոդվածի վերաբերյալ արված բացահայտումը բավարար է, և կարիք չի լինում, որ ՄԻԿ-ը հատուկ հիշատակի կամ դիտարկի 10-րդ հոդվածը¹⁵⁴:

[9.146] «ՍԻՆԳՆԸ ընդդեմ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ» (SINGH v NEW ZEALAND, 791/97)

Հեղինակը, ի թիվս այլոց, ներկայացրել է հետևյալ բողոքները, որոնք վերաբերում են իր բանտարկության պայմաններին, երբ նա դատապարտվել է շաբաթական ութ ժամ բանտարկության՝ կալանավայրում ֆիզիկական աշխատանք կատարելով:

¹⁵¹ «Սոլորզանոն ընդդեմ Վենեսուելայի» (*Solorzano v Venezuela*, 156/83), պարբ. 10.2, 12, «Չապլինն ընդդեմ Ճամայկայի» (*Chaplin v Jamaica*, 596/94), պարբ. 8.2, «Էլահին ընդդեմ Ճամայկայի» (*Elahie v Jamaica*, 553/93), պարբ. 8.3, «Բրաունն ընդդեմ Ճամայկայի» (*Brown v Jamaica*, 775/97), պարբ. 3.2, 6.5, «Ջոնսն ընդդեմ Ճամայկայի» (*Jones v Jamaica*, 585/94), պարբ. 9.4, և «Մարշալն ընդդեմ Ճամայկայի» (*Marshall v Jamaica*, 730/96), պարբ. 6.7, գործերում 10-րդ հոդվածի խախտումից տուժողները տուժել են նաև անձնական հարձակումներից:

¹⁵² Տե՛ս, օրինակ, «Ֆրենսիսն ընդդեմ Ճամայկայի» (*Francis v Jamaica*, 320/1988), «Բեյլին ընդդեմ Ճամայկայի» (*Bailey v Jamaica*, 334/1988), «Սուգրիմն ընդդեմ Տրինիդադի և Տոբագոյի» (*Soogrim v Trinidad and Tobago*, 362/1989), «Թոմասն ընդդեմ Ճամայկայի» (*Thomas v Jamaica*, 321/1988), «Կանանա ընդդեմ Զաիրի» (*Kanana v Zaire*, 366/1989), «Էլ Մեգրեյսին ընդդեմ Լիբիայի Արաբական Զամահիրիայի» (*El-Megreisi v Libyan Arab Jamahiriya*, 440/1990), «Բոզիզն ընդդեմ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության» (*Bozize v Central African Republic*, 428/1990), «Քլանկոն ընդդեմ Նիկարագուայի» (*Blanco v Nicaragua*, 328/1988), «Ռեյնոլդսն ընդդեմ Ճամայկայի» (*Reynolds v Jamaica*, 587/1994), «Օրտեգան ընդդեմ Էկվադորի» (*Ortega v Ecuador*, 481/1991):

¹⁵³ Պարբ. 8.5, շեղատառն ավելացված է:

¹⁵⁴ Օրինակ՝ փաստարկվում է, թե նման բան տեղի է ունեցել «Ռոդրիգեսն ընդդեմ Ուրուգվայի» (*Rodriguez v Uruguay*, 322/1988) գործի շրջանակներում, որում 10-րդ հոդվածով ներկայացված պահանջն առանց բացատրության մերժվել է ընդունելիության որոշման փուլում: «Մուկոնգն ընդդեմ Կամերունի» (*Mukong v Cameroon*, 458/1991) գործում [9.93] թե՛ ՄԻԿ-ը և թե՛ բողոքի հեղինակը կարծես թե անուշադրության են մատնել 10-րդ հոդվածով փաստերի առաջացրած հետևանքները:

¶ 3.20. Հեղինակը բացատրում է, որ ինքն իր պատիժը կրում է ամեն շաբաթ օր կալանավայր ներկայանալով, որտեղ նա ութ ժամով վերցվում է կալանքի տակ, և նրան ստիպում են կատարել ֆիզիկական աշխատանք՝ անկախ եղանակային պայմաններից: Նա պնդում է, որ նկարագրվածը դաշնագրի 7-րդ և 10-րդ հոդվածների խախտում է: Այս համատեքստում նա հայտարարում է, որ իր աշխատավայրում կա ընդամենը մեկ շաբաթական զուգարան՝ «փոսի» տեսքով, որը ծառայում է 8-10 բանտարկյալների կարիքներին, և օժառ կամ լվացող նյութ չի տրամադրվում: Ապա բողոքում է, որ տրվող սնունդն անբավարար է, վատ որակի և պատրաստված հակահիգիենիկ պայմաններում: Նա հայտարարում է, որ ինքը նախաճաշին ստանում է ընդամենը մի բաժակ թեյ, իսկ ճաշին՝ պանրով և խոզապուխտով մի սենդվիչ: Հեղինակը նաև բողոքում է, որ չնայած կատարվող ծանր ֆիզիկական աշխատանքին, անվտանգության որևէ գործիք կամ պաշտպանիչ հանդերձանք իրեն չի տրամադրվում, և բանտարկյալները ստիպված են գնել անվտանգություն ապահովող կոշիկներ: Այնուհետև պնդում է, որ բանտի հատկացրած, սակայն նախկինում այլ բանտարկյալների օգտագործած և չախտահարված ձեռնոց դնելու հետևանքով ստացել է ձեռքերի մաշկի լուրջ վարակ: ...

Մասնակից պետությունը հայտարարությունների առաջին խմբին պատասխանեց հետևյալ կերպ.

¶ 4.17. Մասնակից պետությունը կալանքի տակ պահվելու պայմանների խնդրի կապակցությամբ ամենայն մանրամասնությամբ բացատրում է գոյություն ունեցող ռեժիմը: Քանի որ բանտարկության վայր կղզին արգելոց է, հնարավոր չէ կառուցել մշտական զուգարան, և մեկ այլ տեսակի հարմարություն ստեղծելու կարիք կա: Այդ զուգարանը, որը բավարարել է քաղաքային խորհրդի պահանջները, միանգամայն փակ է, ունի համապատասխան մատակարարում, և տհաճ հոտերից ազատվելու նպատակով «փոսում» կիր է օգտագործվում: Սա նման զուգարանների դեպքում տարածված եղանակ է:

¶ 4.18. Մասնակից պետությունը վիճարկում է այն պնդումը, թե օժառ կամ լվացող նյութեր չեն տրամադրվում, և հայտարարում է, որ, ի լրումն, յուրաքանչյուր անձ նաև սրբիչ է ստանում: Այս բոլոր պաշարները ամեն շաբաթ ստուգվում են և, եթե կարիք կա, համալրվում: Սննդի պատրաստման համար պատասխանատու բանտարկյալին «մթերքի հետ տրամադրվում է մի զույգ ձեռնոց», որը նա պարտավոր է դնել սննդի հետ աշխատանքի ողջ ընթացքում: Այս գործընթացին ուշադիր հետևում է աշխատանքային մասի պատասխանատուն: Մասնակից պետությունը մանրամասն նկարագրում է յուրաքանչյուր կալանավորվածին հատկացվող սննդի չափաբաժինները և հերքում այն պնդումը, թե սնունդն անբավարար է: Նա նաև հայտարարում է, որ հեղինակը երբևէ չի դիմել կրոնական կամ էթնիկական գործոններով պայմանավորված հատուկ սնունդ ստանալու համար, չնայած կարող էր:

¶ 4.19. Մասնակից պետությունը հերքում է, թե բոլոր հանձնարարությունները ներառել են ծանր ֆիզիկական աշխատանք: Ինչ վերաբերում է անվտանգությանը, ապա բոլոր աշխատավայրերը մինչև որևէ աշխատողի տվյալ վայր ուղարկելը ստուգվում են փորձաքննող աշխատակցի կողմից: Այս ստուգման ընթացքում կիրառվում է առողջապահական և անվտանգության ուղեցույց: Այն դեպքերում, երբ ակնհայտ է, որ անհրաժեշտ են պաշտպանիչ սարքավորում կամ հանդերձանք, այդ սարքավորումը տրամադրվում է աշխատողի վերադասին: Ոչ բոլոր աշխատավայրերում պաշտպանիչ հանդերձանքի կարիք կա: Մասնակից պետությունը հերքում է այն պնդումը, թե բանտարկյալներից ակնկալվում է սեփական միջոցներով գնել պաշտպանիչ հանդերձանք, և հայտարարում, որ դա տրամադրվում է ժամանակավոր կալանքի կենտրոնի կողմից: Մասնակից պետությունը նաև պնդում է, որ կոշիկ տրամադրվում է այն անձանց, ովքեր սեփական միջոցներով ի վիճակի չեն դա գնելու, իսկ բանտարկյալները կարող են օգտագործել նաև իրենց սեփական ձեռնոցը, եթե ցանկանում են: Մասնակից պետությունը նաև մատնանշում է, որ որևէ փուլում հեղինակը կենտրոնի որևէ աշխատակցի չի տեղեկացրել մաշկի վարակի մասին, ոչ էլ այդ մասին որևէ բժշկական տեղեկանք է ներկայացրել: Ավելին՝ որևէ աշխատակից այս խնդիրների մասին հեղինակից բանավոր կամ գրավոր բողոք չի ստացել:

Հեղինակը պատասխանեց և արեց հավելյալ հայտարարություններ.

¶ 5.7. Հեղինակը հերքում է մասնակից պետության՝ կալանքի տակ պահելու պայմանների վերաբերյալ բացատրությունը: Նա ասում է, որ ինքը և այլ բանտարկյալներ բազմիցս բողոքել են տրվող անբավարար սննդի կապակցությամբ, սակայն ոչինչ չի արվել: Նա պնդում է, որ բանտապահներին բանավոր և մի քանի անգամ գրավոր պատմել է իր մշակութային հանգստությունների մասին և տեղեկացրել, որ չի կարող տավարի միս ուտել: Այսուհանդերձ, շարունակել են նրան կերակրել դրանով: Հեղինակը նաև պնդում է, որ բանտապահներին ասել է իր մաշկային վարակի մասին և բժշկական տեղեկանքներ է տրամադրել նրանց: Ի լրումն՝ նա նաև նշում է, որ պատժվել է այնպիսի մանր բանի համար, ինչպիսին է այլ բանտարկյալների հետ խոսելը, ինչի համար «իր գլխին պարկ են հագցրել, ստիպել 10 ժամ կանգնած մնալ և իր հասցեին ասել են ռասայական ակնարկներ բովանդակող վիրավորական խոսքեր»:

ՄԻԿ-ը հոգուտ մասնակից պետության որոշման մեջ պարզապես նշեց հետևյալը.

¶ 6.13. Ղաշնագրի 7-րդ և 10-րդ հոդվածների հայտարարվող խախտումների առնչությամբ, որոնց հեղինակը ենթարկվել է իր շաբաթական ութժամյա աշխատանքային ծրագրի պայմանների հետևանքով, կոմիտեն այն տեսակետն ունի, որ ներկայացված հայտարարությունները բավարար չեն, որպեսզի համապատասխան պահանջ ձևակերպվի Ղաշնագրի 7-րդ և 10-րդ հոդվածներով: Նույնը կարելի է ասել պարբերություն 5.7-ում հիշատակված լրացուցիչ պնդումների մասին, որոնք հետագայում ներկայացվեցին հեղինակի կողմից: Հետևաբար, այս պահանջները, համաձայն կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի, անընդունելի են:

Այս դեպքում ՄԻԿ-ի հիմնավորումը թույլ է: Այն ենթադրում է, որ հայտարարություններն ինքնին բավական լուրջ չեն, որպեսզի առաջացնեն 10-րդ հոդվածով կարգավորվող հարցեր, ուր մնաց՝ 7-րդ հոդվածի պահանջները բավարարող խնդիրներ: Այնուամենայնիվ, հայտարարությունների առաջին խումբը, ներառյալ վտանգավոր աշխատանքների մասին պնդումը, կարող էր բավարար չափով լուրջ լինել նշված հոդվածների կիրառման համար, եթե պետությունը չպատասխաներ և պայմանների պարզաբանում չներկայացներ (թեև բանտարկությունը միայն ութ ժամ է տևել): Ավելին՝ պարբերություն 5.7-ում ներառված հայտարարությունները, որոնք վերաբերում էին պարկին և ռասայական ածականների օգտագործմանը, վստահաբար խնդիրներ են առաջացնում հիշատակված իրավական երաշխիքների առնչությամբ: Ավելի քան հավանական է, որ այդ հայտարարության կապակցությամբ ՄԻԿ-ի դիտարկումների իրական պատճառը եղել է այդ պնդման բացարձակ չհիմնավորված և ուշացած լինելու փաստը: ՄԻԿ-ն այս դեպքում պետք է ավելի հստակ հիմնավորումներ տար:

[9.147] Կամբոջայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մասնակից պետությունից պահանջեց ապահովել, որ «կին բանտարկյալները հսկվեն բացառապես իգական սեռի բանտապահների կողմից»¹⁵⁵: Բազմաթիվ մասնակից պետություններ կխախտեին Ղաշնագիրը, եթե կանանց բանտերում իսպառ արգելվեին արական սեռի բանտապահները: Մեկնաբանությունը գուցե հիմնավորվել է Կամբոջայի կանանց կալանավայրերում լայն տարածում գտած բռնաբարությունների մասին վկայություններով¹⁵⁶: Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը նշում է, որ «մասնակից պետությունները պետք է զեկույց ներկայացնեն այն մասին, թե արդյոք կանայք և տղամարդիկ բանտերում միմյանցից առանձին են պահվում, և արդյոք կանայք միայն իգական սեռի բանտապահների կողմից են հսկվում»¹⁵⁷, ինչից կարելի է ենթադրել, որ կանանց կալանավայրերում պետք է աշխատեն միայն իգական սեռի բանտապահներ:

[9.148] Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունել է մի շարք կատարման համար ոչ պարտադիր կանոնադրքեր, որոնք վերաբերում են բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքին¹⁵⁸: ՄԻԿ-ն իր թիվ 21 Ընդհանուր մեկնաբանության 5-րդ պարբերությունում ոչ բացահայտ հավանություն տվեց ՄԱԿ-ի այս կանոնադրքերին [9.138]¹⁵⁹: Ավելին՝ այնպիսի գործերով, ինչպիսին է «Մուկոնգն ընդդեմ Կամերունի» [Mukong v Cameroon]¹⁶⁰, ՄԻԿ-ը մատնանշեց, որ ՄԱԿ-ի ամենահայտնի կանոնադրքում՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններում (1957)¹⁶¹ ներառված նորմերը ներառված են 10-րդ հոդվածով սահմանվող երաշխիքում¹⁶²: ՄԻԿ-ն իր բազմաթիվ եզրափակիչ դիտարկումներում որդեգրել է մի նմանատիպ դիրքորոշում: Օրինակ՝ ԱՄՆ-ի վերաբերյալ ՄԻԿ-ը հայտարարել է հետևյալը¹⁶³.

¹⁵⁵ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 108:

¹⁵⁶ Նույն տեղում, պարբ. 13:

¹⁵⁷ Պարբ. 15:

¹⁵⁸ Ընդհանրապես, տե՛ս՝ S.M. Bernard, "An Eye for an Eye: The Current Status of International Law on the Humane Treatment of Prisoners" (1994) 25 Rutgers Law Journal 759, 770-80:

¹⁵⁹ Տե՛ս նաև պարբ. 13 [9.166]:

¹⁶⁰ Պարբ. 9.3 [9.93]:

¹⁶¹ Տնտնոցխորհի [ECOSOC] բանաձև թիվ 662 (XXIV):

¹⁶² Տե՛ս նաև «Փոթերն ընդդեմ Նոր Զելանդիայի» (Potter v New Zealand, 632/95), պարբ. 6.3-ը հայտարարում է, որ «Նվազագույն ստանդարտ կանոնները» արժեքավոր ուղենիշներ են Ղաշնագրի մեկնաբանության համար:

¹⁶³ ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50, հիշատակված այստեղ՝ (1995) 2 IHR 638: Տե՛ս նաև եզրափակիչ դիտարկումներ Ուկրաինայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 52, պարբ. 24, Մարոկկո, (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 44, պարբ. 21, Գաբոն (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/GAB, պարբ. 14 և եզրափակիչ դիտարկումներ Սիացյալ Թագավորության վերաբերյալ [9.136]:

¶ 34. ... Բանտերում, մասնավորապես առավելագույն խիստ ռեժիմի բանտերում գործող կալանքի պայմանները պետք է մանրամասն ուսումնասիրվեն՝ պարզելու համար, թե արդյոք այդ կալանավայրերում կիրառվում են Բանտարկյալների հետ վարվեցողության մվագագույն ստանդարտ կանոնները և Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագիրքը:

Այսպիսով, կարելի է վստահաբար կարծել, որ Նվագագույն ստանդարտ կանոնները և, հնարավոր է՝ նաև ՄԱԿ-ի այլ կանոնագրքերում ներառված նորմերը դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետում բարձրացվել են միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի մակարդակի:

[9.149] Նվագագույն ստանդարտ կանոնները որոշ չափով հատվում են 10-րդ հոդվածով ուղղակիորեն սահմանված պահանջների հետ: Օրինակ՝ 8-րդ կանոնը նախատեսում է, որ դատապարտված և մինչև դատավարության մեկնարկը բանտում պահվող, ինչպես նաև դեռահաս ու չափահաս բանտարկյալները պետք է պահվեն միմյանցից առանձին: Նվագագույն ստանդարտ կանոնները «մարդկային վերաբերմունքի» չափանիշներ որոշելիս չափազանց օգտակար են¹⁶⁴: Օրինակ, որպես կանոն, բանտարկյալները պետք է ունենան իրենց առանձին խցերը, չնայած որոշ բացառություններ թույլատրելի են¹⁶⁵: Լուսավորությունը, ջեռուցումը, օդափոխումը, ինչպես նաև աշխատելու և քնելու կարգերը պետք է «համապատասխանեն առողջության պահպանման բոլոր պահանջներին»¹⁶⁶: Բանտարկյալները պետք է ապահովվեն անկողնու, հանդերձանքի, սննդի և հիգիենայի «համարժեք» պայմաններով¹⁶⁷: 22-26-րդ կանոնները սահմանում են բանտարկյալներին հասանելիք անհրաժեշտ բժշկական ծառայությունները: 31-34-րդ կանոնները կարգավորում են կարգապահական միջոցները: Բանտարկյալներին պետք է տրամադրվի նաև արտաքին աշխարհի հետ շփման¹⁶⁸, սեփական իրավունքների մասին տեղեկություններ ստանալու¹⁶⁹, բանտի գրադարանից օգտվելու¹⁷⁰, սեփական կրոնը դավանելու¹⁷¹ ողջամիտ հնարավորություն, ինչպես նաև ազատ արձակվելուց հետո իրենց բռնագրավված բոլոր իրերը հետ ստանալու իրավունք¹⁷²: Վերջապես, որևէ բանտարկյալի մահվան կամ լուրջ վնասվածքի դեպքում բանտապահները պարտավոր են այդ մասին տեղեկացնել բանտարկյալի ընտանիքին կամ նշանակված ներկայացուցչին¹⁷³: Բանտարկյալին նաև պետք է թույլ տալ իր բանտարկության և հետագայում որևէ այլ հաստատություն տեղափոխվելու մասին տեղեկացնել իր ընտանիքին կամ ընտանիքի ներկայացուցչին¹⁷⁴: Եվ վերջապես՝ կանոնները պետք է կիրառվեն առանց խտրականության¹⁷⁵:

[9.150] Խորվաթիայի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն էր արտահայտել «որոշ բանտարկյալների կողմից այլ բանտարկյալների նկատմամբ բռնության կիրառման մասին տեղեկությունների առնչությամբ»¹⁷⁶: Այսպիսով, 10-րդ հոդվածի 1-ին կետը մասնակից պետություններին պարտավորեցնում է ապահովել կալանավորվածների պաշտպանությունն այլ կալանավորներից:

[9.150A] Սլովակիայի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն էր արտահայտել «սոցիալական խնամքի կամ հոգեբուժական հաստատություններում, որպես զսպելու միջոց, վանդակ-մահճակալների օգտագործումը շարունակելու առնչությամբ»¹⁷⁷: Նույն կերպ՝ «Կաբալը և Պասինի Բերտրանն ընդդեմ Ավստրալիայի» (*Cabal and Pasini Bertran v Australia, 1020/02*) գործում հեղինակներին բրգաձև վանդակի տեսք ունեցող ժամանակավոր պահման խցում տեղավորելը, որն այնքան

¹⁶⁴ Տե՛ս Բեռնար, վերը, ծնթ. 158, էջ 770-3:

¹⁶⁵ Կանոն 9:

¹⁶⁶ Կանոն 10-11:

¹⁶⁷ Կանոն 15-21:

¹⁶⁸ Կանոն 38-39:

¹⁶⁹ Կանոն 35-36:

¹⁷⁰ Կանոն 40:

¹⁷¹ Կանոն 41-42:

¹⁷² Կանոն 43:

¹⁷³ Կանոն 44: Տե՛ս նաև [8.40-8.41]:

¹⁷⁴ Կանոն 44(3):

¹⁷⁵ Կանոն 6:

¹⁷⁶ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/HRV, պարբ. 14:

¹⁷⁷ (2003) CCPR/CO/78/SVK, պարբ. 13:

փոքր է եղել, որ երկու բանտարկյալները միաժամանակ չեն կարողացել նստել, 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է, չնայած հեղինակներին այդ «վանդակում» պահել են ընդամենը մեկ ժամ¹⁷⁸:

Մեկուսի բանտարկություն և հաղորդակցվելու հնարավորությունից զուրկ կալանք

[9.151] Ընդդեմ Ուրուգվայի ներկայացված մի շարք վաղ շրջանի գործերով ՄԻԿ-ը որոշեց, որ հաղորդակցվելու հնարավորությունից զուրկ [incommunicado] ամիսներ տևող կալանքը 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է¹⁷⁹: Խախտում համարված նման կալանքի ամենակարճ տևողությունը եղել է «Արզու-ազո Գիլբոան ընդդեմ Ուրուգվայի» (*Arzuago Gilboa v Uruguay*, 147/83) գործում և կազմել է տասնհինգ օր¹⁸⁰: Կոմիտեին երբևէ չեն դիմել, որպեսզի նա որոշում կայացնի նման կալանքի ավելի կարճ տևողությամբ դեպքերի համապատասխանության վերաբերյալ¹⁸¹: Այն դեպքում, երբ նման կալանքի տևողությունը կհասնի ութ ամսվա, հաղորդակցվելու հնարավորությունից զուրկ կալանքը կդիտվի որպես 7-րդ հոդվածի խախտում¹⁸²:

[9.151Ա] «Կանգն ընդդեմ Կորեայի Հանրապետության» (*Kang v Republic of Korea*, 878/99) գործով ՄԻԿ-ը որոշեց, որ մենախցային բանտարկության տասներեք տարին, ինչը «այնպիսի լքության և տվյալ անձի վրա այնպիսի հիմնարար ազդեցություն ունեցող միջոց է, որ պահանջում է ամենածանրակշիռ և մանրամասն հիմնավորում» և 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է¹⁸³: 7-րդ հոդվածը որևէ կերպ չհիշատակվեց՝ չնայած մենախցային բանտարկության ծայրահեղ երկար տևողությանը: Հարկ է նշել, որ հեղինակի կալանքը հաղորդակցվելու հնարավորությունից ակնհայտորեն զուրկ չի եղել, և մենախցային բանտարկության մասին հեղինակի փաստարկները սկեռվել են բացառապես 10-րդ հոդվածի 1-ին կետի, ոչ թե 7-րդ հոդվածի վրա:

[9.152] Դանիայի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մենախցային բանտարկության մասին հայտարարեց հետևյալը.

¶ 12. Կոմիտեն հատկապես մտահոգված է դատապարտվելուց հետո ազատագրված անձանց նկատմամբ մենախցային բանտարկության լայնորեն կիրառման առնչությամբ, և հատկապես այն անձանց դեպքում, ովքեր կալանքի տակ են վերցվում մինչև դատավարությունը և դատապարտումը: Կոմիտեի համոզմամբ՝ մենախցային բանտարկությունը խիստ պատժամիջոց է, որն ունենում է լուրջ հոգեբանական հետևանքներ, և հնարավոր է արդարացնել միայն ծայրահեղ կարիքի դեպքում. մենախցային բանտարկության կիրառումը ոչ բացառիկ հանգամանքներում և ոչ սահմանափակ տևողությամբ հակասում է դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետին:

Դանիան պետք է վերանայի մենախցային բանտարկության պրակտիկան և ապահովի, որ այն կիրառվի միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

Ընտանիքի և ընկերների հետ հաղորդակցությունը

[9.153] Հաղորդակցվելու հնարավորությունից զուրկ կալանքի «անմարդկային» բնույթը մեծ մասամբ բխում է այն հանգամանքից, որ կալանավորվածը չի կարողանում հաղորդակցվել իր ընտանիքի և ընկերների հետ: Ընտանիքի հետ հաղորդակցվելու կարևորությունը պարզաբանվել է ստորև ներկայացվող գործում՝ բանտարկյալի անձնական մամակագրության չհիմնավորված գրաքննության համատեքստում:

¹⁷⁸ Պարբ. 8.3:

¹⁷⁹ Տե՛ս, օրինակ, «Վալենտինի դե Բազանոն ընդդեմ Ուրուգվայի» (*Valentini de Bazzano v Uruguay*, 5/77), «Պիետրառոյան ընդդեմ Ուրուգվայի» (*Pietraroia v Uruguay*, 44/79), «Կուբաս Սիմոնեսն ընդդեմ Ուրուգվայի» (*Cubas Simones v Uruguay*, 70/80): Տե՛ս նաև «Պեկարիետան ընդդեմ Բոլիվիայի» (*Pecarrietta v Bolivia*, 176/84):

¹⁸⁰ Պարբ. 14:

¹⁸¹ N. Rodley, "Rights and Responses to Terrorism in Northern Ireland" in D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 130:

¹⁸² Տե՛ս «Շոուն ընդդեմ Ճամայկայի» (*Shaw v Jamaica*, 704/96) [9.98]:

¹⁸³ Պարբ. 7.3:

**«ԱՆԽԵԼ ԷՍՏՐԵԼԼԱ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ»
(ANGEL ESTRELLA v URUGUAY, 74/80)**

¶ 9.2. Միգել Անխել Էստրելայի նամակագրության գրաքննության առնչությամբ կոմիտեն ընդունում է, որ բանտերի դեկավարության կողմից բանտարկյալների նամակագրության վերահսկման և գրաքննության միջոցների կիրառումը նորմալ երևույթ է: Այսուհանդերձ, դաշնագրի 17-րդ հոդվածը նախատեսում է, որ «ոչ ոք չի կարող ենթարկվել իր նամակագրության կամայական կամ անօրինական միջամտության»: Այս դրույթը պահանջում է, որ վերահսկման կամ գրաքննության ցանկացած նման միջոց ենթարկվի կամայական կիրառումից պաշտպանության բավարար իրավական երաշխիքների: ... Ավելին՝ սահմանափակման աստիճանը պետք է բավարարի կալանավորված անձանց նկատմամբ մարդկային վերաբերմունքի չափանիշին, որը պահանջվում է դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետով: Մասնավորապես, բանտարկյալներին պետք է թույլ տալ անհրաժեշտ վերահսկողության պայմաններում պարբերաբար հաղորդակցվել ընտանիքի և հարգված ընկերների հետ՝ ինչպես նամակագրության, այնպես էլ այցելությունների միջոցով: Իր տրամադրության տակ առկա տեղեկությունների հիման վրա կոմիտեն կարծում է, որ Միգել Անխել Էստրելայի նամակագրությունը Լիբերտադ բանտում ենթարկվել է գրաքննության և սահմանափակվել այն աստիճանի, որի համապատասխանությունը դաշնագրի 17-րդ հոդվածին և 10-րդ հոդվածի 1-ին կետին մասնակից պետությունը չի կարողացել հիմնավորել¹⁸⁴:

10-րդ հոդվածի 1-ին կետի մի նմանատիպ խախտում բխեց բանտարկյալին սեփական ընտանիքի և ընկերների հետ նամակագրական կապ հաստատելու թույլտվության մերժումից, որին կարելի է հանդիպել «Կուլոմին ընդդեմ Հունգարիայի» (*Kulomin v Hungary*, 521/92) գործում:

Տեղեկություններ ստանալու հնարավորություն

[9.154] «ԺԵԼՈՒԴԿՈՎԸ ընդդեմ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ» (ZHELUDKOV v UKRAINE, 726/96)

¶ 8.4. 10-րդ հոդվածի 1-ին կետի հայտարարվող խախտման առնչությամբ, որը վերաբերում էր կալանավորված տուժողի նկատմամբ դրսևորված վերաբերմունքին, մասնավորապես՝ նրան բուժօգնություն ցույց տալուն և բժշկական փաստաթղթերին ծանոթանալու հնարավորություն ընձեռելուն, ապա կոմիտեն ի գիտություն է ընդունում մասնակից պետության պատասխանը, ըստ որի՝ պրն Ժելուդկովը կենտրոնում և բանտում պահվելու ընթացքում ստացել է բուժօգնություն, ենթարկվել բժշկական հետազոտությունների և հոսպիտալացվել, և համաձայն խնդրագրի՝ բժշկական գրանցումների հիման վրա 1994 թ. մարտի 2-ին պատրաստվել է բժշկական տեղեկանք: Այնուամենայնիվ, այս հայտարարությունները չեն հերքում հայտարարվող տուժողի անունից ներկայացված այն փաստարկը, որ, չնայած բազմաթիվ խնդրագրերին, մասնակից պետության իշխանությունները տուժողին թույլ չեն տվել ուղղակիորեն ծանոթանալ բժշկական փաստաթղթերին: Կոմիտեն չի կարող որոշել, թե վիճարկվող բժշկական փաստաթղթերը որքանով օգտակար կլինեին պրն Ժելուդկովի կալանքի պայմանները, ներառյալ՝ նրան ցույց տված բուժօգնությունը գնահատելու տեսանկյունից: Նման մերժման որևէ բացատրության բացակայության պայմաններում կոմիտեն կարծում է, որ հեղինակի հայտարարություններին պետք է վերագրվի համարժեք կշիռ: Չետևաբար, սույն հաղորդման հանգամանքներից ելնելով, կոմիտեն եզրակացնում է, որ բժշկական փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունից պրն Ժելուդկովին պարբերաբար և առանց բացատրության զրկելը պետք է բավարար հիմք համարվի՝ հայտարարելու համար, որ խախտվել է դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետը:

S-ն Սեսիլիա Մեդինան նշված դիտարկումը պաշտպանող հատուկ կարծիքով ընդլայնեց այս հիմնավորումը:

Ես համարում եմ, որ կոմիտեի հիմնավորումը մեծապես սահմանափակում է 10-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանումը՝ այդ դրույթի խախտումը կապելով այն հնարավոր կարևորության հետ, որ կարող էր ունեցած լինել տուժողի՝ բժշկական գրանցումներին ծանոթանալու հնարավորությունը բանտում նրա ստացած բուժօգնության տեսանկյունից, որպեսզի հնարավոր լինի գնահատել «պրն Ժելուդկովի կալանքի պայմանները, ներառյալ՝ նրան ցույց տված բուժօգնությունը»:

10-րդ հոդվածի 1-ին կետը մասնակից պետություններից պահանջում է ազատագրված բոլոր անձանց վերաբերվել «մարդասիրաբար և հարգելով նրանց ներհատուկ մարդկային արժանապատվությունը»: Սա, իմ կարծիքով,

¹⁸⁴ Տե՛ս նաև [16.25]:

նշանակում է, որ պետությունները պարտավոր են հարգել և պաշտպանել անձանց բոլոր իրավունքները, քանի որ դրանք արտահայտում են դաշնագրով պաշտպանված մարդկային արժանապատվության տարբեր կողմերը, եթե նույնիսկ տվյալ անձն ազատագրված է: Հետևաբար, այս դրույթը ենթադրում է հարգելու պարտավորություն, որը ներառում է դաշնագրով ճանաչված մարդու բոլոր իրավունքները: Այս պարտավորության ազդեցությունը չի տարածվում որևէ այլ իրավունքի կամ իրավունքների վրա, բացի անձնական ազատության իրավունքից, երբ դրանք մարդուն ազատությունից զրկելու միանգամայն անհրաժեշտ հետևանք են, մի բան, որը հիմնավորելը պետության գործն է:

Անձի՝ սեփական բժշկական փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը կազմում է բոլոր անձանց՝ իրենց վերաբերող անձնական տեղեկություններին ծանոթանալու իրավունքի մի մասը: Պետությունը մնալ հնարավորությունը թույլատրելու հարցում իր մերժումն արդարացնող որևէ պատճառաբանություն չի տվել, իսկ տուժողի կողմից սեփական անձին վերաբերող բժշկական գրանցումներին հասնելու խնդրագիրը պարզապես մերժելը պետության ստանձնած՝ բոլոր անձանց նկատմամբ «մարդասիրական և նրանց մարդկային արժանապատվությունը հարգող վերաբերմունք» դրսևորելու պարտավորության խախտում է, անկախ այն բանից՝ մնալ մերժումը կարո՞ղ է հետևանքներ ունեցած լինել տուժողի բուժման տեսանկյունից, թե՞ ոչ:

Մյուս կողմից՝ պրն Ռիվաս Պոսադան, ում պարոնայք Բիագվաթին և Անդոն համաձայնեցին այս հարցում, հակառակվեց և պնդեց, որ բժշկական տեղեկությունների հասանելիությանը սոսկ խանգարելն ինքնին 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել:

[Որևէ] անձի բժշկական կամ հիվանդանոցային տվյալներն ընդամենը միջոց կամ գործիք են՝ օժանդակելու բուժօգնության կամ բժշկական խնամքի գործընթացին, որոնք պետք է հիմնվեն դրանց վրա: Դրանք ինքնամպատակ չեն, այլ միջոց՝ հասնելու արդյունքի, տվյալ դեպքում՝ անձի առողջության պահպանման կամ վերականգնման:

Դիտարկվող գործում մասնակից պետությունը պնդեց, որ պետությունը պրն Ժելուդկովին ցույց է տվել պատշաճ բժշկական օգնություն, և պարբերություն 8.4-ում կոմիտեն, որպես դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի ուսմահարման հիմք, չի հիշատակում բժշկական օգնության բացակայությունը, այլ միայն բժշկական տվյալների հասանելիությունը մերժելը: Ես կարծում եմ, որ ասելը, թե բժշկական տվյալներ պարունակող տվյալ փաստաթղթերի տրամադրումը մերժելը, որոնք, ենթադրվում է, պահանջվում էին կալանավորվածի պահանջած ուշադրության տեսանկյունից, դաշնագրի խախտում է, և միաժամանակ ոչ բացահայտ կերպով ընդունելը, որ բժշկական օգնությունը եղել է համարժեք, քանի որ հեղինակն իր բողոքը չի հիմնել այդ պնդման վրա, հակասում են միմյանց:

Վերջին տեղում, սակայն ոչ իր կարևորությամբ, քանի որ տվյալ դիտարկումը անհամաձայնություն արտահայտող այս կարծիքի առանցքային կետն է, հետևյալն է. եթե նույնիսկ բժշկական տվյալներին տիրապետելու կարևորությունը կապ չունեն բժշկական խնամքի հետ, որի իրավունքը կալանավորվածն ուներ, ես համաձայն չեմ, որ դաշնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանումը պետք է ընդլայնել՝ այդքան հեռու գնալով: Եզրակացնելը, թե ազատագրված անձին բժշկական տվյալներին ծանոթանալը մերժելը, եթե ենթադրենք, որ մնալ մերժումն ապացուցված է, «անմարդկային» վերաբերմունք է և հակասում է «անձին ներհատուկ մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքին», նշված պարբերության սահմաններից դուրս է և սպառնում է վտանգել մի հիմնարար սկզբունք, որը պետք է վեր լինի տարօրինակ մեկնաբանումներից:

Մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթը

[9.155] Ինչ վերաբերում է մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթին, 7-րդ հոդվածի վերաբերյալ վերոշարադրյալ մեկնաբանությունները հավասարապես կիրառելի են 10-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ¹⁸⁵: Ներկայիս նախադեպային իրավունքը մատնանշում է, որ մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթն ինքնին 10-րդ հոդվածի 1-ին կետի ուսմահարում չէ:

Հալածանք

[9.156] «Պինտոն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Pinto v Trinidad and Tobago*, 512/92) գործում հեղինակն ավելի վաղ ներկայացված՝ «Պինտոն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Pinto v Trinidad and*

¹⁸⁵ Տե՛ս [9.53] և հաջորդը:

Tobago, 232/87) հաղորդման միջոցով հաջողությամբ վիճարկել էր իր դատավարության արդարությունը: Վերջին գործով ՄԻԿ-ը բացահայտեց 10-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, ինչը բխել է հեղինակի հետազա հալածանքից¹⁸⁶:

¶ 8.3. Հեղինակին փոխանցելը, որ ներման բացառիկ իրավունքը չի կիրառվելու, և իր վաղաժամկետ ազատ արձակումը մերժվելու է նրա ներկայացրած մարդու իրավունքներին վերաբերող բողոքների պատճառով, վեր է հանում մարդկայության պակաս և այնպիսի վերաբերմունք է, որը չի հարգում հեղինակի արժանապատվությունը՝ խախտելով 10-րդ հոդվածի 1-ին կետը:

10-րդ ՀԱՄԱՐԻ 1-ին ԿԵՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

[9.157]

ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Կոմիտեն հիշեցնում է, որ զեկույցները պետք է պարունակեն մանրամասն տեղեկություններ ազգային օրենսդրական և վարչական այն դրույթների մասին, որոնք առնչվում են 10-րդ հոդվածի 1-ին կետին: Կոմիտեն նաև համարում է, որ անհրաժեշտ է զեկույցներում մանրամասն ներկայացնել, թե իրավասու իշխանությունների կողմից ինչ որոշակի միջոցներ են ձեռնարկվել՝ դիտարկման ենթարկելու ազատագրված անձանց նկատմամբ վերաբերմունքի կանոնների փաստացի կիրառումը: Մասնակից պետությունները պետք է իրենց զեկույցներում ներառեն տեղեկատվություն քրեակատարողական հիմնարկների վերահսկման համակարգի, խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված որոշակի միջոցառումների վերաբերյալ և այն մասին, թե ինչպես է անաչառ վերահսկողություն ապահովվում:

¶ 7. Ի լրումն՝ կոմիտեն կոչ է անում հիշել, որ զեկույցները պետք է ցույց տան՝ տարբեր կիրառելի դրույթները կազմող են ազատագրված անձանց նկատմամբ իշխանություն ունեցող անձնակազմի հրահանգավորման և վերապատրաստման մի անջակտելի մասը, և արդյոք այդ անձնակազմն իր պարտականությունները կատարելիս խստորեն հետևող է այդ դրույթներին: Տեղին կլինի նաև որոշել՝ ձերբակալված կամ կալանավորված անձինք նման տեղեկություններ ստանալու հնարավորություն և արդյունավետ իրավական միջոցներ ունենա՞ն, որոնք նրանց թույլ են տալիս ապահովել այդ կանոնների հարգումը, բողոքել, եթե այդ կանոններն արհամարհվում են, և ոտնահարման դեպքում ստանալ համարժեք փոխհատուցում:

[9.158] 6-րդ և 7-րդ պարբերություններն արտացոլում են այն պարտավորությունները, որոնք ներկայացված են 7-րդ հոդվածի առնչությամբ¹⁸⁷: ՄԻԿ-ն իր մտահոգությունն է արտահայտել Շրի Լանկայի կողմից 10-րդ հոդվածով ստանձնած դրական պարտավորությունները չկատարելու կապակցությամբ¹⁸⁸:

¶ 18. Կոմիտեն ... ափսոսանք է հայտնում, որ բանտերից տարբերվող կալանավայրերում պայմանները չեն կարգավորվում օրենքով, և դատավորները կամ այլ անկախ մարմինները պարբերաբար չեն այցելում բանտեր և կալանքի այլ հաստատություններ:

[9.159] Եզիպտոսի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն ընդգծել է բանտերն անկախ դիտարկման ենթարկելու կարևորությունը¹⁸⁹:

¶ 15. ... [Կոմիտեն] ափսոսանք է հայտնում Միավորված ազգերի կազմակերպության կողմից ստեղծված մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային և ոչ պայմանագրային մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների բանտեր այցելությունները խոչընդոտող հանգամանքների կապակցությամբ:

[9.160] Կալանավորվածների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքին առնչվող ընթացակարգային պարտականությունների կատարումը նպաստում է 10-րդ հոդվածով սահմանված էական իրավունքների խախտումների կանխարգելմանը: Ամբավարար ընթացակարգերը կարող են նշանակել, որ տվյալ

¹⁸⁶ Հալածանք տեղի էր ունեցել նաև համաձայն «*Էլահի ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Elahie v Trinidad and Tobago, 553/93*) և «*Վուլֆ ընդդեմ Պանամայի*» (*Wolf v Panama, 289/88*), պարբ. 2.8 գործերում առկա փաստերի:

¹⁸⁷ Տե՛ս [9.102] և հաջորդը:

¹⁸⁸ Եզրափակիչ դիտարկումներ Շրի Լանկայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 56:

¹⁸⁹ (2002) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/76/EGY:

պետության համար դժվար կլինի հերքել 10-րդ հոդվածը խախտելու մասին հայտարարությունները: Ստորև ներկայացվող գործում կարելի է հանդիպել պետության կողմից բանտային համապատասխան գրանցումներ չկատարելու փաստացի հետևանքների մի օրինակի:

«ՀԻԼԸ և ՀԻԼՆ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (HILL and HILL v SPAIN, 526/93)

Հեղինակները, այլ հարցերի շարքում, պնդում էին, որ իրենք զրկված են եղել սննդից՝ այն տասն օրերից հինգի ընթացքում, երբ իրենց ձերբակալել և պահել են ոստիկանությունում: Այս մեղադրանքը հերքելու նպատակով մասնակից պետությունը ներկայացրել է փաստաթղթեր, որոնք, ըստ հայտարարության, ստորագրված են հեղինակների կողմից: Հիլերը վիճարկեցին մասնակից պետության ներկայացրած ապացույցները:

¶ 10.4. Նրանք վերահաստատում են, որ որևէ սնունդ կամ խմիչք չեն ստացել հնգօրյա ժամանակահատվածում, իսկ հետո ստացել են խիստ անբավարար չափով, քանի որ հատուկ այս նպատակով հատկացված ֆինանսական միջոցներն ապօրինաբար յուրացվել են: Հեղինակները մատնանշում են, որ մասնակից պետության ներկայացրած ցուցակը չի ներառում առաջին հինգ օրերը, երբ իրենք, ըստ իրենց պնդումների, լիովին զրկված են եղել գոյատևման միջոցներից: Պետության ներկայացրած փաստաթղթերը վերաբերում են 11 օրերի, և միայն դրանցից երկուսի՝ հուլիսի 21-ի և 24-ի դեպքում են առկա հեղինակների ստորագրությունները:

Ըստ էության, ՄԻԿ-ը, 10-րդ հոդվածին վերաբերող հայտարարության առնչությամբ որոշում կայացրեց հօգուտ Հիլ եղբայրների:

¶ 13. Ինչ վերաբերում է հեղինակների այն հայտարարություններին, որոնք առնչվում են բանտարկության ընթացքում, մասնավորապես՝ առաջին տասն օրերին, երբ նրանք ձերբակալվել և պահվում էին ոստիկանությունում, նրանց նկատմամբ դրսևորված վերաբերմունքին ..., ապա կոմիտեն նշում է, որ մասնակից պետության ներկայացրած տեղեկությունները և փաստաթղթերը չեն հերքում հեղինակների այն պնդումը, թե ոստիկանությունում բանտարկության առաջին հինգ օրերի ընթացքում նրանց որևէ սնունդ չեն տվել: Կոմիտեն եզրակացնում է, որ մնացած վերաբերմունքը դաշնագրի 10-րդ հոդվածի խախտում է:

[9.161] ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունը հաստատում է, որ 10-րդ հոդվածով գոյություն ունեն դրական պարտավորություններ, որոնք վերաբերում են հղի ու հետծննդյան շրջանի բանտարկյալներին:

¶ 15. ... Հղի կանայք, ովքեր ենթարկվում են ազատագրկման, պետք է ծննդյանն անմիջապես նախորդող և հաջորդող ողջ ժամանակահատվածում, ինչպես նաև իրենց նորածին երեխային խնամելու ընթացքում արժանաճան մարդասիրական վերաբերմունքի և իրենց ներհատուկ մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի: Մասնակից պետությունները պարտավոր են զեկուցել սա երաշխավորող հարմարությունների առկայության և այդպիսի մայրերի ու նրանց երեխաների նկատմամբ ցուցաբերված բժշկական և առողջապահական խնամքի մասին:

[9.162] Մասնակից պետությունը նաև պատասխանատվություն է կրում իր կալանավորվածների կյանքի և բարօրության համար և պարտավոր է ձեռնարկել ողջամիտ քայլեր՝ ապահովելու համար կալանավորվածներին առողջության պահպանման բավարար պայմաններով¹⁹⁰:

ՀՈԴՎԱԾ 10(2)(Ա). ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑԻՑ

[9.163] ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¹⁹⁰ Տե՛ս «Ֆաբրիկանտն ընդդեմ Կանադայի» (Fabrikant v Canada, 970/01), պարբ. 9.3: Տե՛ս նաև [8.40-8.41A]:

¶ 9. 10-րդ հոդվածի 2(ա) կետը, չհաշված բացառիկ հանգամանքները, նախատեսում է մեղադրյալների առանձնացում դատապարտված անձանցից: Նման առանձնացում պահանջվում է, որպեսզի ընդգծվի նրանց՝ որպես չդատապարտված անձանց կարգավիճակը, ովքեր միևնույն ժամանակ օգտվում են անմեղության կանխավարկածի իրավունքից՝ համաձայն 14-րդ հոդվածի 2-րդ կետի: Մասնակից պետությունների զեկույցները պետք է ցույց տան, թե ինչպես է իրականացվում մեղադրյալների առանձնացումը դատապարտված անձանցից, և բացատրեն, թե ինչպես է մեղադրյալների նկատմամբ վերաբերմունքը տարբերվում դատապարտված անձանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքից¹⁹¹:

[9.164] «ՓԻՆՔՆԻՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (PINKNEY v CANADA, 27/78)

Փինքնին Կանադայում իր դատավճռին սպասող բանտարկյալ էր: Թեև նրա խուցը գտնվում էր դատապարտված բանտարկյալներից առանձնացված տարածքում, դատապարտված բանտարկյալները, այնուամենայնիվ, շենքի այդ հատվածում սնունդ էին մատուցում և աշխատում էին որպես հավաքարար: ՄԻԿ-ը որոշեց, որ այս կարգը չի խախտել դաշնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետը:

¶ 30. Կոմիտեի տեսակետն այն է, որ դաշնագրի 10-րդ հոդվածի 2-րդ կետի այն պահանջը, ըստ որի՝ «մեղադրվող անձինք, չհաշված բացառիկ հանգամանքները, պետք է առանձնացվեն դատապարտված անձանցից», նշանակում է, որ նրանք պետք է պահվեն առանձին բաժիններում (բայց պարտադիր չէ՝ տարբեր շենքերում): Կոմիտեն մասնակից պետության նկարագրած կարգը, ըստ որի՝ դատապարտված անձինք՝ որպես կերակուր մատուցողներ և հավաքարարներ, աշխատում են բանտի այն հատվածում, որտեղ պահվում են դատավճռի սպասող մեղադրյալները, չէր համարի 10-րդ հոդվածի 2-րդ կետին հակասող, եթե բանտարկյալների երկու դասակարգերի միջև հաղորդակցումը խստորեն պահվեր այդ հանձնարարությունները կատարելու համար անհրաժեշտ նվազագույնի սահմաններում:

[9.165] Տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության վերաբերյալ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ն ակնարկեց, որ տղամարդ և կին բանտարկյալները պետք է պահվեն առանձին շինություններում¹⁹²:

ՀՈԴՎԱԾ 10(2)(Բ) ԵՎ 10(3). ԱՆՉԱՓԱՅԱՍ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

[9.166] ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 13. 10-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է, որ անչափահաս մեղադրյալները պետք է առանձնացվեն չափահասներից: Հոդվածը նաև սահմանում է, որ անչափահասների ներգրավվածությամբ գործերը պետք է քննվեն հնարավորինս արագ: Ձեկույցները պետք է մանրամասն ներկայացնեն մասնակից պետությունների ձեռնարկած միջոցները, որոնք ուղղված են եղել այս դրույթի կիրարկմանը: Վերջապես, 10-րդ հոդվածի 3-րդ կետով անչափահաս օրինազանցները պետք է առանձնացվեն չափահասներից և արժանապատիվ վերաբերմունքի, որը համապատասխանում է իրենց տարիքին և իրավական կարգավիճակին, այնքանով, որքանով դա վերաբերում է նրանց բանտարկության պայմաններին. օրինակ՝ ավելի կարճ աշխատանքային ժամերը և հարազատների հետ հաղորդակցությունը, ինչի նպատակը նրանց ուղղումն է և սոցիալական վերականգնումը: 10-րդ հոդվածը չի նշում անչափահասների տարիքի որևէ սահմանափակում: Չնայած յուրաքանչյուր մասնակից պետություն, սեփական սոցիալական, մշակութային և այլ պայմաններից ելնելով, ինքն է որոշում այդ տարիքը, կոմիտեն կարծում է, որ 6-րդ հոդվածի 5-րդ կետն առաջարկում է, որ 18 տարին չլրացած բոլոր անձինք համարվեն անչափահաս առնվազն քրեական արդարադատությանն առնչվող հարցերում: Պետությունները պարտավոր են տեղեկություններ տրամադրել անչափահաս համարվող անձանց տարիքային խմբերի վերաբերյալ: Այս կապակցությամբ մասնակից պետություններին կոչ է արվում նշելու, թե իրենք կիրառում են Միավորված ազգերի կազմակերպության Անչափահասների արդարադատության կազմակերպման նվազագույն ստանդարտ կանոնները [United Nations Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice], որոնք հայտնի են որպես Պեկինյան կանոններ [Beijing Rules] (1987 թ.):

¹⁹¹ «Վուլֆն ընդդեմ Պանամայի» (Wolf v Panama, 289/88) գործում առկա փաստերի հիման վրա հայտնաբերվեց 10-րդ հոդվածի (2)(ա) կետի խախտում, քանի որ հեղինակին պահել էին դատապարտված հանցագործների համար նախատեսված բանտում:

¹⁹² Պարբ. 15:

10-րդ հոդվածն ամրապնդում է ՔՔԻՄԴ-ի 24-րդ հոդվածը, որն ամրագրում է երեխաների իրավունքների ընդհանուր պաշտպանությունը¹⁹³:

[9.167] «*Թոմասն ընդդեմ Ճամայկայի*» (*Thomas v Jamaica*, 800/98) գործում 15-17 տարեկան հասակում չափահաս բանտարկյալների հետ միասին հեղինակի կալանքը խախտել է 10-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետը և 3-րդ կետը¹⁹⁴: Ավելին՝ ՄԻԿ-ը մտահոգություն արտահայտեց Կիպրոսում գործող օրենքների և գործելակերպի վերաբերյալ¹⁹⁵:

¶ 13. Կոմիտեն մտահոգված է ..., որ 16-18 տարեկան անձինք չեն համարվում երեխա կամ անչափահաս օրինազանցներ և ենթարկվում են քրեական պատժամիջոցների:

ՀՈՂՎԱԾ 10(3). ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂԻՉ ՆՊԱՏԱԿԸ

[9.168]

ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 10. Ինչ վերաբերում է 10-րդ հոդվածի 3-րդ կետին, որն առնչվում է դատապարտված անձանց, ապա կոմիտեն ցանկանում է մամրամասն տեղեկություններ ստանալ տվյալ մասնակից պետության քրեակատարողական համակարգի գործունեության վերաբերյալ: Որևէ քրեակատարողական համակարգ չպետք է միայն պատժիչ բնույթի լի-նի. այն նաև, ըստ էության, պետք է ձգտի հասնելու բանտարկյալի ուղղմանը և սոցիալական վերականգնմանը: Մասնակից պետություններին կոչ է արվում ներկայացնել, թե ունենա՞ն ազատ արձակումից հետո անձին օժանդակություն տրամադրելու որևէ համակարգ, և տեղեկություններ տալ այդ համակարգի ունեցած հաջողությունների մասին:

¶ 11. ... Կոմիտեն պահանջում է որոշակի տեղեկություններ տրամադրել, որոնք կվերաբերեն քրեակատարողական հիմնարկների ներսում, ինչպես նաև դրսում բանտարկյալների համար ուսուցում, կրթություն և վերադաստիարակում, մասնագիտական խորհրդատվություն և վերապատրաստում ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցների և աշխատանքի ծրագրերին:

¶ 12. Որպեսզի հնարավոր լինի որոշել՝ 10-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված սկզբունքն ամբողջությամբ հարգվո՞ւմ է, թե՞ ոչ, կոմիտեն նաև պահանջում է տեղեկություններ տրամադրել կալանքի ընթացքում կիրառված հատուկ միջոցառումների վերաբերյալ, օրինակ՝ թե ինչպիսի անհատական վերաբերմունքի են արժանանում դատապարտված անձինք և ինչպես են նրանք դասակարգվում, տեղեկություններ կարգապահական համակարգի, մե-նախցային բանտարկության, խստացված ռեժիմով կալանքի վերաբերյալ, այն պայմանների մասին, որոնց դեպքում ապահովվում է հաղորդակցումը արտաքին աշխարհի (ընտանիք, իրավաբան, սոցիալական և բժշկական ծառայություններ և ոչ կառավարական կազմակերպություններ) հետ:

[9.169] Թվում է, թե 10-րդ հոդվածի 3-րդ կետի ներառումը ՔՔԻՄԴ-ում հակասություն է առաջացնում, քանի որ այն նշանակում է մասնակից պետություններին թելադրել, թե նրանք ինչ քաղաքականություն պետք է որդեգրեն օրինազանցների նկատմամբ վերաբերմունքի առումով: Աշխարհով մեկ անցկացվող «Օրենքի և օրինականության» արշավների գերակշռող մասը ցույց է տալիս, որ բանտային քաղաքականությունը վերջին տարիներին չափազանց քաղաքականացված ոլորտ է դարձել¹⁹⁶: «Վերականգնում» հարացույցը (պարադիգմը) առավելապես տարածված էր, գոնե Արևմուտքի քրեական իրավունքի համակարգերում, այն ժամանակ, երբ 1966 թ. ընդունվեց ՔՔԻՄԴ-ը: Ավելի ուշ բազմաթիվ պետություններում նկատելի էր ավելի խիստ պատժամիջոցների և բանտային պայմանների միտումը, ինչն ակնհայտ էր դարձնում անցումը դեպի քրեական սոցիոլոգիայի «պատժում» մոդելին: Հնարավոր է, որ XXI

¹⁹³ Տե՛ս գլուխ 21-ը: Տե՛ս նաև R. Levesque, "Future Visions of Juvenile Justice: Lessons from International and Comparative Law" (1996) 29 *Creighton Law Review* 1563:

¹⁹⁴ Պարբ. 6.5:

¹⁹⁵ Եզրափակիչ դիտարկումներ Կիպրոսի վերաբերյալ, (1994) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 39:

¹⁹⁶ «Օրենք և օրինականություն»-ը ["Law and order"], օրինակ, Միացյալ Նահանգներում, Միացյալ Թագավորությունում և Ավստրալիայի տարբեր մահացներում վերջին տարիներին անցկացված ընտրություններում եղել է լուրջ հարց:

դարի սկզբին 10-րդ հոդվածի 3-րդ կետի «վերականգնման» մասը մասնակից պետությունները համարում էին անաքրոնիզմ¹⁹⁷:

[9.170] 10-րդ հոդվածի 3-րդ կետը հիշատակվել է կամընտիր արձանագրությամբ դիտարկված փոքրաթիվ գործերում: Իսկապես, թվում է, թե չափազանց դժվար է հայտնաբերել, որ տվյալ անձը «տուժել» է, քանի որ պետությունը չի որդեգրել քրեական իրավունքի վերականգնման մոդելը¹⁹⁸: Պարզվեց, որ տեղի է ունեցել 10-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում վերջերս քննված «Կանգն ընդդեմ Կորեայի Հանրապետության» (*Kang v Republic of Korea, 878/99*) գործում, որն առաջացել էր այն փաստի հետևանքով, որ հեղինակին տասներեք տարի պահել էին մեմախցային բանտարկության պայմաններում, ակնհայտորեն այն պատճառով, որ նա հրաժարվել էր թողնել իր ծախս ուղղվածության քաղաքական հայացքները [18.02A]¹⁹⁹:

[9.171] ՄԻԿ-ը Բելգիայի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում հղում էր արել 10-րդ հոդվածի 3-րդ կետին²⁰⁰:

¶ 16. Վերականգնողական գործառույթի իրականացման նպատակով հարկ է խրախուսել այլընտրանքային պատժամիջոցների կիրառումը, ներառյալ՝ համայնքային ծառայությունը: ...

¶ 19. Նկատի առնելով այն, որ դաշնագրի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բանտարկության առանցքային նպատակը պետք է լինի օրինազանցների ուղղումը և սոցիալական վերականգնումը, կոմիտեն մասնակից պետությանը կոչ է անում մշակել վերականգնման ծրագրեր՝ թե՛ բանտարկության ժամանակահատվածի և թե՛ ազատ արձակմանը հաջորդող ժամանակահատվածի համար, երբ նախկին օրինազանցները պետք է վերաինտեգրվեն հասարակությանը, եթե չեն ցանկանում կրկնահանցագործ դառնալ:

Ի լրումն՝ ՄԻԿ-ը որոշեց, որ Միացյալ Թագավորությունում կալանավորվածներին ձայնի իրավունքից զրկելը «վերածվել է պատժի մի լրացուցիչ տեսակի, և այն չի նպաստում բանտարկյալների ուղղմանը և սոցիալական վերականգնմանը, ինչը հակասում է 10-րդ հոդվածի 3-րդ կետին դաշնագրի 25-րդ հոդվածի հետ միասին»²⁰¹:

[9.172] 10-րդ հոդվածի 3-րդ կետի՝ վերականգնմանը վերաբերող կողմը, դժբախտաբար, անուշադրության է արժանացել ՄԻԿ-ի կողմից: Այնուամենայնիվ, 10-րդ հոդվածի մյուս կողմերի պատշաճ հարգումը, ինչը մանրակրկիտ դիտարկման է ենթարկվել ՄԻԿ-ի կողմից, կհանգեցնի առավել մարդասիրական քրեակատարողական համակարգի, ինչը կնպաստի այնտեղ պահվող անձանց ուղղմանը և վերականգնմանը²⁰²:

Եզրակացություն

[9.173] ՄԻԿ-ը և ԽԴ կոմիտեն ստեղծել են հարուստ նախադեպային իրավունք, որն առնչվում է խոշտանգումների և դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի և պատժի արգելմանը: ՄԻԿ-ը նաև 10-րդ հոդվածով մշակել է նախադեպային իրավունք, որը կալանավորված անձանց համար ապահովում է լրացուցիչ պաշտպանություն:

[9.174] Բազմաթիվ գործեր, ինչպիսիք են սկզբնական շրջանում ընդդեմ Ուրուգվայի ներկայացված բողոքները, վերաբերում էին փաստացի իրավիճակների, որոնք հանգեցրել էին 7-րդ հոդվածի կամ 10-րդի ակնհայտ խախտումների: Այնուամենայնիվ, եղել են գործեր, որոնք առնչվել են առավել սահմանային

¹⁹⁷ Տե՛ս, օրինակ, P. Roberts, "Recent Trends in English Penal Policy" in A. Kwak and R. Dingwall (eds), *Social Change, Social Policy and Social Work in the New Europe* (Ashgate, Aldershot, 1998):

¹⁹⁸ «Լյուիսն ընդդեմ Ճամայկայի» (*Lewis v Jamaica, 708/96*) գործում հոդված 10(3)-ով ներկայացված բողոքը ճանաչվեց անընդունելի, քանի որ հեղինակը չկարողացավ հիմնավորել «զոհակառությունը»:

¹⁹⁹ Պարբ. 7.3:

²⁰⁰ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 99:

²⁰¹ Տե՛ս (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UK, պարբ. 10, տես նաև [22.21]:

²⁰² Նովակ, տես վերը, ծնթ. 3, 192:

իրավիճակների, ինչպիսիք են հոգեբանական անհանգստություն պատճառելու, մահապատժի դատապարտվածներին պահելու երևույթի և ապաստան որոնողների արտաքսման դեպքերի համապատասխանությունը ՔՔԻՄԴ-ին կամ ԽԴԿ-ին:

[9.175] ՄԻԿ-ի ստեղծած նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ բանտային անբավարար պայմանները, որոնք ազդում են բանտի ընդհանուր բնակիչների վրա, ավելի շատ 10-րդ հոդվածի, քան 7-րդ հոդվածի խախտումների հանգեցնելու միտում ունեն: Ավելի հավանական է, որ 7-րդ հոդվածը տեղին է այն դեպքերում, երբ բողոքարկողին քիրախ են ընտրել հատկապես վատ վերաբերմունք ցույց տալու նպատակով: Այնուամենայնիվ, ցավոք, ՄԻԿ-ը լիարժեք հստակությամբ չի սահմանել 7-րդ հոդվածի խախտումների և 10-րդ հոդվածի խախտումների բաժանարար գիծը:

[9.176] Վերջապես, ՔՔԻՄԴ-ի 7-րդ և 10-րդ հոդվածները, ինչպես նաև ԽԴԿ-ն, մասնակից պետությունների համար սահմանում են համապատասխան անձնակազմ վերապատրաստելու, ուղեհարումներից պաշտպանելու ընթացակարգեր կիրառելու, խախտումները քննելու և դրանց հեղինակներին պատժելու բազմաթիվ դրական պարտավորություններ:

Տարբեր իրավունքներ. հոդվածներ 8, 11 և 16

- Հոդված 8. Ստրկությունից, ստրկավաճառությունից և հարկադիր աշխատանքից զերծ լինելու ազատություն [10.01]
- Հոդված 11. Պայմանագրային պարտավորությունը չկատարելու համար բանտարկվելուց զերծ լինելու ազատություն [10.09]
- Հոդված 16. Իրավասուբյեկտության ճանաչման իրավունք [10.10]
- Եզրակացություն [10.16]

Չնայած իրավունքներն իրենց բնույթով տարբեր են, 8-րդ, 11-րդ և 16-րդ հոդվածներն այս գլխում միասին են խմբավորված գործնականում դրանցով նախադեպային իրավունքի բացակայության պատճառով:

Հոդված 8. Ստրկությունից, ստրկավաճառությունից և հարկադիր աշխատանքից զերծ լինելու ազատություն

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունը արգելվում են բոլոր դրսևորումներով:

2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:

3. (ա) Մարդուն չի կարելի պարտադրել կատարելու ստիպողական կամ հարկադիր աշխատանք.

(բ) այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքների հետ, 3-րդ կետի (ա) ենթակետը խոչընդոտ չի հանդիսանում իրավասու դատարանի կողմից նման պատիժ սահմանող դատավճռի հիման վրա տաժանակիր աշխատանքի իրականացմանը.

(գ) սույն կետի նպատակի համար «ստիպողական կամ հարկադիր աշխատանք» չի ներառում.

(i) (բ) ենթակետում չհիշատակված ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը.

(ii) ռազմական բնույթի ցանկացած ծառայություն, և այն երկրներում, որտեղ ճանաչվում է զինվորական ծառայությունից քաղաքական և կրոնական շարժառիթներով հրաժարումը, զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված ցանկացած ծառայություն.

(iii) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում.

(iv) ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը սովորական քաղաքացիական պարտականությունների մաս է կազմում:

[10.01] 8-րդ հոդվածը երաշխավորում է մարդու որոշ ամենահիմնարար իրավունքներ. ստրկությունից, ստրկավաճառությունից և ստիպողական կամ հարկադիր աշխատանքից զերծ լինելու ազատություն: Իսկապես, ստրկության դեմ համաշխարհային պայքարը եղել է «մարդու իրավունքների» պաշտպանության

ամենաառաջին քարոզարշավներից մեկը: Ստրկությունից և ստրկավաճառությունից զերծ լինելու ազատությունն այժմ ճանաչվում է որպես միջազգային սովորության իրավունքի մաս¹: Ի լրումն՝ ՔՔԻՄԴ-ում ամրագրված՝ ստրկությունից և ստրկավաճառությունից զերծ լինելու ազատությունները չսահմանափակվող իրավունքներ են:

[10.02] 8-րդ հոդվածի 1-ին կետն արգելում է ստրկությունը: Ստրկություն տեղի է ունենում այն դեպքերում, երբ մի մարդ հանդիսանում է մեկ այլ անձի փաստացի «սեփականատերը»², այնպես, որ առաջինը կարող է անպատիժ կերպով երկրորդին շահագործման ենթարկել: 8-րդ հոդվածի 2-րդ կետը երաշխավորում է ստրկավաճառությունից զերծ լինելու ազատություն, ինչն ավելի լայն հասկացություն է, քան ստրկությունը: «Ստրկավաճառություն» ասելով՝ հասկանում են տնտեսական ակնհայտ շահագործման կամ գերիշխանության այլ ձևեր, որոնք մեկ անձի կողմից կիրառվում են մեկ ուրիշի նկատմամբ, կամ «ստրկության նմանվող» գործողություններ³:

[10.03] 8-րդ հոդվածի 3-րդ կետն արգելում է ստիպողական կամ հարկադիր աշխատանքը, որը, ըստ էության, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ/ILO) 29-րդ կոնվենցիայով սահմանված է որպես «ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը որևէ պատժի սպառնալիքի տակ ստանում են որևէ անձից, և որի համար տվյալ անձը կամավոր կերպով չի առաջարկել իր ծառայությունները»⁴: Այնուամենայնիվ, 8-րդ հոդվածի 3-րդ կետի (բ)-(գ) ենթակետերը բովանդակում են այս կանոնի մի շարք բացառություններ կամ վերապահումներ: Դժբախտաբար, ՄԻԿ-ն այս բացառությունների ընդգրկման վերաբերյալ կոնսենսուսով ընդունել է մի քանի մեկնաբանություններ: «*Վուլֆը ընդդեմ Պանամայի*» (*Wolf v Panama, 289/88*) գործով ՄԻԿ-ը եզրակացրեց, որ 8-րդ հոդվածի 3-րդ կետի (գ)(ii) ենթակետում ամրագրված բացառությունը կալանավայրերում աշխատանքի վերաբերյալ չի կարող կիրառվել մինչև բանտարկյալի դատավճռի ուժի մեջ մտնելը⁵: 8-րդ հոդվածի 3-րդ կետի (գ)(iii) ենթակետն օգտագործվել է պարտադիր զինվորական ծառայությունից կրոնական-էթնիկական պատճառներով ազատվելու դրույթի գոյությունը դաշնագրում ժխտելու համար՝ չնայած 18-րդ հոդվածի (խղճի ազատություն) հիման վրա հակառակն ապացուցող փաստարկների առկայությանը⁶: ՄԻԿ-ի ավելի ուշ շրջանի մախադեպային իրավունքը, այնուամենայնիվ, հուշում է, որ այժմ կոմիտեն ճանաչում է 18-րդ հոդվածում կրոնական-էթնիկական պատճառներով զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքը⁷:

[10.04] «ՍԻԼՎԱՆ և այլք ընդդեմ ԶԱՄԲԻԱՅԻ» (*SILVA et al v ZAMBIA, 825-8/98*)

Այս գործը մի օրինակ է, թե ինչը *չի կարելի* համարել հարկադիր աշխատանք: Հեղինակի բողոքը հետևյալն էր.

¶ 2.1. Հեղինակները, ովքեր փաստաբան են, հայտարարում են, որ 1991 թ. օգոստոսի 21-ից սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում իրենցից յուրաքանչյուրին առաջարկվել է Զամբիայի Հանրապետության կառավարության իրավաբանական օգնության գծով խորհրդատուի օգնականի պաշտոն: Առաջարկը պարունակել է տեղական արժույթով արտահայտված աշխատավարձ և խրախուսական հավելավճար՝ տարեկան 4,260-7,080 ԱՄՆ դոլարի սահմաններում, որն ամեն ամիս վճարվելու էր Շրի Լանկայում: Դեպի Զամբիա և հակառակ ուղղությամբ ուղևորության վարձը պետք է վճարվեր Զամբիայի կառավարության կողմից, պայմանով, որ հեղինակները առնվազն 24 ամիս գտնվեին ծառայության մեջ:

¹ Տե՛ս American Law Institute, Restatement of Foreign Relations Law (West, St Paul, Minn., 1989), պարբ. 702: Նկատի առնել, որ վերանայումը չի անդադառնում ստրկավաճառության կամ հարկադիր աշխատանքի արգելքներին:

² Y. Dinstein, "The Right to Life, Physical Integrity, and Liberty" in L. Henkin (ed), The International Bill of Rights (Columbia University Press, New York, 1981), at 126: Տե՛ս Ստրկության մասին կոնվենցիան [Slavery Convention], 1926 թ., 60 LNTS 253, հոդվ. 1(1):

³ Տե՛ս Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարեցված հաստատությունների և գործողությունների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա [Supplementary Convention on the Abolition of Slavery, the Slave Trade, and Institutions and Practices Similar to Slavery] 1956, 266 UNTS 3, բաժին III: Տե՛ս նաև M. Nowak, CCPR Commentary (N.P. Engel, Kehl/Strasbourg/Arlington, 1993), at 148:

⁴ ԱՄԿ-ի Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա, 1930 թ., 39 UNTS 55, հոդված 2(1):

⁵ Հեղինակը հայտարարել էր, որ ինքը կատարել է հարկադիր աշխատանք՝ նույնիսկ հաշվի չառնելով այն, որ իր նկատմամբ այդ ժամանակ դեռևս որևէ դատավճիռ չէր կայացվել: ՄԻԿ-ը պարբ. 6.8-ում հայտարարությունը համարեց չհիմնավորված:

⁶ Տե՛ս «*L.S.4.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*L.T.K. v Finland, 185/84*), պարբ. 5.2:

⁷ Տե՛ս մեկնաբանությունն այստեղ՝ [17.22-17.25]:

¶ 2.2. Հեղինակներն ընդունեցին աշխատանքի առաջարկը և ուղևորվեցին Ջամբիա: Պրն Սիլվան իր պարտականությունների կատարումը ստանձնեց 1992 թ. հուլիսի 1-ից, պրն Գոդվինը և պրն դե Սիլվան՝ 1992 թ. մայիսի 6-ից, իսկ պրն Պեռերան՝ 1992 թ. ապրիլի 8-ից:

¶ 2.3. Հեղինակները պնդում են, որ տեղի են ունեցել խրախուսական հավելավճարի վճարման անտեղի ուշացումներ, և սկսած 1993 թ. ապրիլի 1-ից, երբ Ջամբիայում իրենք աշխատել էին ինն ամսից մինչև մեկ տարի տևողությամբ, հավելավճարը պակասեցվել է 35-տոկոսանոց հարկի չափով: Հեղինակներն ընդվզում են՝ նշելով, որ հարկի կիրառումն իրենց և Ջամբիայի կառավարության միջև կնքված համաձայնագրի լրջագույն խախտում է: Հետևաբար, նրանք կառավարությունից պահանջեցին կամ փոխհատուցել հարկի գումարը, կամ խզել իրենց պայմանագրերը և կազմակերպել իրենց վերադարձը Շրի Լանկա:

¶ 2.4. Ըստ հեղինակների՝ կառավարությունը չի պատասխանել իրենց խնդրագրին: Դրա և փողի պակասի պատճառով հեղինակները հնարավորություն չեն ունեցել վերադառնալու Շրի Լանկա մինչև 24-ամսյա ժամկետի լրանալը, ինչպես նախատեսված էր իրենց պայմանագրով: Այսպիսով, հեղինակները հարկադրված են եղել աշխատել այնպիսի պայմաններում, որոնց վերաբերյալ իրենք երբևէ համաձայնություն չեն տվել: Նրանք բոլորն էլ աշխատանքից դուրս եկան 1994 թ. ապրիլից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում և վերադարձան Շրի Լանկա: ...

¶ 3.1. Հեղինակները հայտարարում են, որ 35-տոկոսանոց հարկի չափով իրենց խրախուսական հավելավճարները պակասեցնելու պատճառով մինչև իրենց աշխատանքի 24 ամիսը լրանալն իրենք ի վիճակի չեն եղել վերադառնալու Շրի Լանկա. պայմաններ, որոնք բավարարվելու էին Շրի Լանկա վերադառնալու ուղևորությունից անմիջապես առաջ: Փաստարկվում է, որ եթե մասնակից պետությունը ցանկանար փոփոխել պայմանագրի պայմանները, ապա կարելի էր լուծարել առաջին պայմանագիրը՝ ընձեռելով Շրի Լանկա վերադառնալու հնարավորություն, և պետությունը կարող էր առաջարկներ անել նոր պայմանագրի վերաբերյալ: Այնուամենայնիվ, կառավարությունը նման առաջարկ չարեց, քանի որ, ըստ հայտարարության, նա հեղինակների ծառայությունների կարիքն ուներ: Հայտարարվում է, որ վերոշարադրյալը կարող է որակվել որպես «հարկադիր աշխատանք» և, հետևաբար, դաշնագրի 8-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի ոտնահարում:

ՄԻԿ-ը հայցը մերժեց այն հիմնավորմամբ, որ «հեղինակները հայցի ընդունելիության նպատակով բավարար չափով չեն հիմնավորել, թե ինչպես կարող է իրենց խրախուսական հավելավճարի հարկումը դիտվել որպես հարկադիր աշխատանք՝ ըստ դաշնագրի 8-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի»⁸:

[10.05] Պարտքի դիմաց աշխատանքը կամ պարտքային կախվածությունը մի վիճակ է, որը ծագում է այն դեպքում, երբ պարտապանը, որպես պարտքը վերադարձնելու երաշխիք, պարտավորվում է անձամբ կամ իրեն ենթակա մեկ այլ անձի (հաճախ՝ երեխայի) միջոցով պարտատիրոջը մատուցել ծառայություններ, և եթե այդ ծառայությունների ողջամիտ արժեքը չի համվում պարտքի մարման գումարից, կամ եթե անձնական ծառայությունների տևողությունը և բնույթը սահմանված չեն⁹: Հնդկաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը պարտքային կախվածությամբ աշխատանքի մասին արեց հետևյալ մեկնաբանությունները¹⁰.

¶ 29. Կոմիտեն մտահոգություն է արտահայտում պարտքի դիմաց աշխատանքի տարածվածության, ինչպես նաև այն փաստի կապակցությամբ, որ այս գործելակերպը շատ ավելի հաճախակի է ներկայացվում գերագույն դատարանին, քան նշված է զեկույցի մեջ: Կոմիտեն նաև մտահոգությամբ նշում է, որ այդ երևույթի վերացման նպատակով ձեռնարկված միջոցները պարտքային կախվածության պայմաններում աշխատողների ազատման և նրանց վերականգնման առումով իրական առաջընթացի հասնելու գործում կարծես թե արդյունավետ չեն: Հետևաբար, կոմիտեն առաջարկում է, որ հրատապ կարգով մանրակրկիտ ուսումնասիրություն իրականացվի՝ պարզելու համար պարտքի դիմաց աշխատանքի տարածվածության աստիճանը, ձեռնարկվեն ավելի արդյունավետ միջոցներ՝ վերացնելու այդ գործելակերպը՝ համաձայն «Պարտքի դիմաց աշխատանքի համակարգի (վերացման) մասին» օրենքի [Bonded Labour System (Abolition) Act] (1976 թ.) և դաշնագրի 8-րդ հոդվածի:

⁸ Պարբ. 6.3:

⁹ Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարեցված հաստատությունների և գործողությունների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա [Supplementary Convention on the Abolition of Slavery, the Slave Trade, and Institutions and Practices Similar to Slavery], 1956 թ., վերը, ծնթ. 3, հոդված 1(բ):

¹⁰ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 81:

[10.06]**ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

¶ 12. Նկատի ունենալով 8-րդ հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունները՝ մասնակից պետությունները պետք է կոմիտեին տեղեկացնեն կանանց և երեխաների առևտուրը (թրաֆիքինգը) և հարկադիր մարմնավաճառությունը, երկրի ներսում կամ տարանցիկ, վերացնելու նպատակով ձեռնարկված միջոցների մասին¹¹: Նրանք նաև պարտավոր են տեղեկություններ տրամադրել ձեռնարկված միջոցների մասին, որոնց նպատակն է եղել կանանց և երեխաներին, ներառյալ օտարերկրացի կանանց և երեխաներին պաշտպանել ստրկությունից, որը, իմիջիայլոց, քողարկվում է տնային աշխատանքի կամ անձնական ծառայության այլ տեսակների անվան տակ: Այն մասնակից պետությունները, որտեղ կանայք և երեխաներ են հավաքվում, և որտեղից նրանց տեղափոխում են, և այն մասնակից պետությունները, ուր նրանց տեղափոխում են, պարտավոր են տեղեկություններ տրամադրել այն միջոցների մասին, լինեն դրանք ներպետական թե միջազգային, որոնք ձեռնարկվել են՝ կանխարգելելու համար կանանց և երեխաների իրավունքների ոտնահարումը:

[10.07] Հարկադիր մարմնավաճառությունը 8-րդ հոդվածի խախտման մի աղաղակող ձև է, ինչպես ամբողջովն է Պորտուգալիայի (Մակաո) վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում¹².

¶ 13. Կոմիտեն հատկապես մտահոգված է Մակաոյում կանանց թրաֆիքինգի տարածվածության և մարմնավաճառության նպատակով տարբեր երկրներից Մակաո բերվող կանանց հսկայական թվի վերաբերյալ զեկույցների կապակցությամբ: Կոմիտեն ծայրահեղ մտահոգված է այս կանանց շահագործումը կանխելու և դրա համար պատժելու հարցում իշխանությունների կողմից ցուցաբերվող անգործության կապակցությամբ. մասնավորապես, ներգաղթի հարցերով զբաղվող պաշտոնյաները և ոստիկանությունն արդյունավետ միջոցներ չեն ձեռնարկում, որպեսզի պաշտպանեն այս կանանց և պատժամիջոցներ կիրառեն այն անձանց նկատմամբ, ովքեր, խախտելով դաշնագրի 8-րդ հոդվածը, մարմնավաճառության միջոցով շահագործում են այս կանանց: ...

¶ 19. Ի լրումն՝ կոմիտեն առաջարկում է, որ կառավարությունը պետք է նախաձեռնի և զարգացնի այնպիսի ծրագրեր, որոնք ուղղված լինեն դժվար իրավիճակներում հայտնված կանանց օժանդակություն ցույց տալուն, հատկապես նրանց, ովքեր այլ երկրներից են, և ում Մակաո են տեղափոխվել մարմնավաճառության նպատակով: Պետք է ձեռնարկվեն խիստ միջոցներ՝ կանխարգելելու համար թրաֆիքինգի այս ձևը և պատժելու նրանց, ովքեր այդ կերպ շահագործում են կանանց: Հարկ է պաշտպանություն ապահովել այն կանանց համար, ովքեր տուժել են թրաֆիքինգի այդ տեսակից, որպեսզի նրանք ապաստան և մնալու հնարավորություն ունենան և ի վիճակի լինեն վկայություն տալու քրեական կամ քաղաքացիական կարգով հետապնդվող արարքների համար պատասխանատու անձանց դեմ¹³:

Վերջերս ՄԻԿ-ը Սլովակիայի վերաբերյալ ընդունեց հետևյալ մեկնաբանությունը¹⁴.

¶ 10. ... Կոմիտեն ... նշում է, որ թրաֆիքինգը (մարդկանց առևտուրը) միջազգային հանցագործություն է և, հետևաբար, վերաբերում է ոչ միայն թրաֆիքինգի միջոցով Սլովակիայից այլ երկրներ տեղափոխված կանանց, այլև նրանց, ովքեր հարևան երկրներից թրաֆիքինգի միջոցով բերվում են Սլովակիա: ... Մասնակից պետությունը պետք է ուժեղացնի այն ծրագրերը, որոնք ուղղված են դժվար իրավիճակներում հայտնված կանանց օժանդակություն տրամադրելուն, հատկապես նրանց, ովքեր այլ երկրներից են, և ում տվյալ երկիր են տեղափոխվել մարմնավաճառության նպատակով: Պետք է ձեռնարկվեն խիստ միջոցներ՝ կանխարգելելու համար թրաֆիքինգի այս ձևը և պատժելու նրանց, ովքեր նման ձևով շահագործում են կանանց: Հարկ է պաշտպանություն ապահովել այն կանանց համար, ովքեր տուժել են թրաֆիքինգի այդ տեսակից, որպեսզի նրանք ապաստան և մնալու հնարավորություն ունենան և ի վիճակի լինեն վկայություն տալու քրեական կամ քաղաքացիական կարգով հետապնդվող արարքների համար պատասխանատու անձանց դեմ: Կոմիտեն Սլովակիային հորդորում է շարունակել հարևան պետությունների հետ համագործակցությանն ուղղված իր ջանքերը՝ պետական սահմանները հատող թրաֆիքինգի վերացման նպատակով:

[10.08] Բրազիլիայի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հաստատել է, որ 8-րդ հոդվածով պաշտպանությունը դրական տարր է պարունակում¹⁵.

¹¹ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Մալիի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/77/MLI, պարբ. 17, տե՛ս նաև [21.36] և հաջորդը:

¹² (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 77, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Կամբոջայի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 16:

¹³ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Իտալիայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 37, պարբ. 5:

¹⁴ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/SVK:

¹⁵ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 66, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Դոմինիկյան Հանրապետության վերաբերյալ (1993), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 18, պարբերություն 5:

¶ 31. Կոմիտեն մասնակից պետությանը կոչ է անում գործադրել օրենքներ, որոնք արգելում են հարկադիր աշխատանքը, երեխաների աշխատանքը և երեխաների մարմնավաճառությունը ու իրականացնել ծրագրեր՝ ուղղված մարդու իրավունքների այդ խախտումների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին: Ի հավելումն՝ կոմիտեն մասնակից պետությանը հորդորում է ստեղծել վերահսկողության ավելի արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելու համար ազգային օրենսդրության դրույթների և համապատասխան միջազգային չափանիշների հարգումը: Հրատապ է, որ այն անձինք, ովքեր պատասխանատու են կամ ովքեր ուղղակիորեն շահույթ են ստանում հարկադիր աշխատանքից, երեխաների աշխատանքից և երեխաների մարմնավաճառությունից, պատժվեն օրենքի ողջ խստությամբ¹⁶:

Մասնակից պետությունն իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց պարտավոր է պաշտպանել մասնավոր կառույցների կողմից 8-րդ հոդվածով սահմանված չարաշահումներ իրականացնելուց, ինչպես նաև պարտավոր է ինքն էլ ձեռնպահ մնալ նման չարաշահումների իրականացման մեջ ներգրավվելուց: Իսկապես, հավանական է, որ 8-րդ հոդվածով սահմանված չարաշահումների մեծ մասն առաջանում է մասնավոր տնտեսական շահերի պատճառով¹⁷: Մի լրացուցիչ մտահոգություն է բազմաթիվ մասնակից պետություններում գործատուների վարվեցողությունը տնային աշխատողների, հատկապես՝ անօրինական ներգաղթյալ օտարերկրացիների նկատմամբ¹⁸:

Հոդված 11. Պայմանագրային պարտավորությունը չկատարելու համար բանտարկվելուց զերծ լինելու ազատություն

Ոչ ոք չի կարող ազատագրվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորություն:

[10.09] 11-րդ հոդվածը պաշտպանում է բանտարկությունից՝ որպես որևէ պայմանագրային պարտավորություն կատարելու անկարողության համար պատժից: 11-րդ հոդվածով սահմանված «պայմանագրային պարտավորությունները» ավելի շատ մասնավոր իրավունքի ներքո քաղաքացիական պարտավորություններ են, քան, օրինակ, օրենքով սահմանված պարտավորություններ¹⁹: Քանի որ երաշխիքը հիմնականում ձևակերպվել էր, որպեսզի լուծում տա «պարտապանների բանտեր» երևույթին, «պայմանագրային պարտավորություններն» ակնհայտորեն ընդգրկում են դրամական պարտքերը²⁰: Այնուամենայնիվ, 11-րդ հոդվածը կարող է կիրառվել այլ պայմանագրային պարտավորությունների առնչությամբ, ինչպիսիք են ծառայությունների մատուցումը կամ ապրանքների առաքումը²¹: «Անկարողության» հիշատակումը ցույց է տալիս, որ անձը պետք է անկարող լինի կատարել համապատասխան պայմանագրային պարտավորությունը, ոչ թե պարզապես կատարելու ցանկություն չունենա²²: «Միայն» բառը նշանակում է, որ այս երաշխիքը չի պաշտպանում այն մարդկանց, ովքեր պայմանագրային պարտավորության խախտումից բացի և դրանից առավել կատարել են որևէ այլ օրինազանցություն: Օրինակ՝ եթե մեկը դիտավորությամբ «անկարող» է ձևանում և դիմում խաբեության, այդ անձը 11-րդ հոդվածով պաշտպանված չէ բանտարկությունից²³:

11-րդ հոդվածը մի չսահմանափակվող իրավունք է, որի վերաբերյալ չի ստեղծվել որևէ նշանակալի նախադեպային իրավունք, և այդ պատճառով դրա բնութագրիչները մեծ մասամբ մնում են չձևակերպված:

[10.09Ա] Որևէ պայմանագրային պարտավորություն կատարելու անկարողության հիմքով բանտարկության արգելումը միգրանտ աշխատողներին և նրանց ընտանիքների անդամներին հատուկ օգնելու նպատակով կրկնօրինակվել է Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների մասին միջազգային կոնվենցիայի (1990 թ.) 20-րդ հոդվածի 1-ին կետում, որն ուժի մեջ

¹⁶ Երեխաների մարմնավաճառության և մանկական աշխատուժի արգելման վերաբերյալ տես [21.37-21.38] և [21.43-21.44]:

¹⁷ Տես Նովակ, վերը, ծնթ. 3, էջ 145:

¹⁸ Տես օրինակ, N. Mole, 'Immigration and Freedom of Movement' in D. Harris and S. Joseph, The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law (Clarendon Press, Oxford, 1995), 319-20:

¹⁹ Նովակ, վերը, ծնթ. 3, էջ 194:

²⁰ Նույն տեղում, էջ 193:

²¹ Նույն տեղում, էջ 194:

²² Ղիմշտայն, վերը, ծնթ. 2, էջ 136:

²³ Նովակ, վերը, ծնթ. 3, էջ 195:

մտավ 2003 թ. հուլիսի 1-ին: 20-րդ հոդվածի 2-րդ կետը միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքին ավելացնում է մի երկրորդ տարր՝ արգելելով նրանց արտաքսումը կամ բնակության իրավունքից կամ աշխատանքի թույլտվությունից զրկումը՝ «միայն աշխատանքային պայմանագրից բխող որևէ պայմանագրային պարտավորություն կատարելու անկարողության հիմքով, եթե այդ պարտավորության կատարումը նման իրավունքի կամ թույլտվության տրամադրման պայման չէ»:

Հոդված 16. Իրավասությունների ճանաչման իրավունք

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասությունների ճանաչման իրավունք:

[10.10] 16-րդ հոդվածը յուրաքանչյուրի համար երաշխավորում է նրա՝ որպես անձի իրավասությունների ճանաչման մարդու հիմնարար իրավունքը: Եթե անձն իրավաբանորեն չի ճանաչվում, այդ մարդը կորցնում է իր մյուս իրավունքների իրավաբանորեն ճանաչումը և, հետևաբար, փաստացի զրկվում է դրանց իրացումից: Օրինակ՝ նացիստական Գերմանիայում հրեաները զրկված էին իրավաբանորեն ճանաչումից, իրավաբանորեն ճանաչման այս մերժումը նրանց մյուս մարդու իրավունքների մերժման նախադրյալն էր: 16-րդ հոդվածը ներկայացնում է չսահմանափակվող իրավունք:

[10.11] Վոլիոն պնդում է, որ 16-րդ հոդվածը մասնակից պետություններից պահանջում է իրենց իրավագործության ներքո գտնվող բոլոր մարդկանց վերաբերվել որպես օրենքի պաշտպանությունից օգտվող և իրավական պարտավորություններ կրող անձանց: Հետևաբար, բոլոր մարդիկ կարող են ներգրավվել պայմանագրային հարաբերություններում, նախաձեռնել դատական հետապնդում և ենթարկվել նման հետապնդման²⁴: Նովակը, մյուս կողմից, որդեգրում է 16-րդ հոդվածի ավելի պահպանողական մեկնաբանում և պնդում է, որ այն չի պաշտպանում մարդու՝ գործելու կամ դատական վարույթի հետամուտ լինելու իրավունակությունը: Այդ պատճառով, օրինակ, երեխաների կամ հոգեկան հիվանդ մարդկանց, կամ նույնիսկ հայցամուլ անձանց իրավունակության սահմանափակումները չեն ոտնահարում 16-րդ հոդվածը²⁵: 16-րդ հոդվածը գրված է անվերապահ լեզվով և կարծես թե որևէ բացառություն չի հանդուրժում: Հաշվի առնելով մարդկանց որոշ խմբերի իրավունակության՝ գոյություն ունեցող և լայնորեն տարածված սահմանափակումները՝ Նովակի միմիալիստական մեկնաբանումը ճիշտ է:

[10.12] «ԱՎԵԼԼԱՆԱԼՆ ընդդեմ ՊԵՐՈՒԻ» (AVELLANAL v PERU, 202/86)

¶ 2.1. Հեղինակը Լիմայում երկու բնակելի շենքերի սեփականատեր է, որոնք նա ձեռք է բերել 1974-ին: Մի շարք բնակիչներ... հրաժարվել են վճարել իրենց բնակարանների վարձը: ... 1978-ի սեպտեմբերի 13-ին հեղինակը դատի տվեց բնակիչներին: Առաջին ատյանի դատարանը հայցը վճռեց նրա օգտին և որոշեց, որ բնակիչները պետք է վճարեն 1974-ից ի վեր կուտակված վարձը: 1980-ի նոյեմբերի 21-ին գերագույն դատարանը բեկանեց վճիռն այն դատավարական հիմքով, որ հեղինակը հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, որովհետև, համաձայն Պերուի քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի, երբ կինն ամուսնացած է, միայն ամուսինն իրավունք ունի դատարանում ներկայացնելու ամուսնական սեփականությունը: ... 1984 թ. փետրվարի 15-ին գերագույն դատարանը անփոփոխ թողեց վերին ատյանի դատարանի վճիռը:

Հեղինակը պնդում է, որ վերոշարադրյալ փաստերը, ի թիվս այլոց, խախտել են 16-րդ հոդվածը: ՄԻԿ-ը հայցը 16-րդ հոդվածով համարեց անընդունելի, սակայն այս հոդվածն անհասկանալի պատճառով անուշադրության մատնեց իր ըստ էության որոշման մեջ: Կոմիտեն գտավ 14-րդ հոդվածի 1-ին կետի (դատարանի կողմից գործի քննման իրավունք), 3-րդ և 26-րդ (սեռական խտրականության արգելումներ) հոդվածների խախտումներ²⁶: Տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության վերաբերյալ Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանության հետևյալ հատվածը ցույց է տալիս, որ ՄԻԿ-ը *Ավելանալի* գործում պետք է նկատեր նաև 16-րդ հոդվածի խախտում:

²⁴ F. Volio, "Legal Personality, Privacy, and the Family" in L. Henkin [L. Հենքին], վերը, ծմբ. 2, էջ 188:

²⁵ Նովակ, վերը, ծմբ. 3, էջ 283:

²⁶ Տե՛ս նաև [14.15]:

[10.13]

ՁԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 19. 16-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուրի իրավասությունների ճանաչման իրավունքը, որտեղ էլ նա գտնվելիս լինի, հատկապես տեղին է կանանց դեպքում, ովքեր հաճախ սեռի կամ ընտանեկան դրության պատճառով բախվում են այդ իրավունքի սահմանափակման: Այս իրավունքը ենթադրում է, որ կանանց՝ սեփականություն տնօրինելու, պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու կամ այլ քաղաքացիական իրավունքներից օգտվելու կարողությունը չի կարող սահմանափակվել ընտանեկան դրության կամ որևէ այլ խտրական հիմքով: Այն նաև ենթադրում է, որ կանանց չի կարելի վերաբերվել որպես առարկաների, որոնց կարելի է մահացած ամուսնու սեփականության հետ միասին հանձնել նրա ընտանիքին: Պետությունները պարտավոր են տեղեկություններ տրամադրել այն օրենքների կամ գործելակերպերի վերաբերյալ, որոնք թույլ չեն տալիս կանանց վերաբերվել որպես լիարժեք իրավասությունների, կամ կանանց արգելում են գործել որպես լիարժեք իրավասություններ, ինչպես նաև նման վերաբերմունք թույլատրող օրենքների կամ գործելակերպերի վերացման նպատակով ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

[10.14] **«ԻՆՈՍՏՐՈՍԱՆ և այլք ընդդեմ Չիլի» (INOSTROZA et al v CHILE, 717/96)**

Ըստ այս գործում առկա փաստերի՝ հեղինակների ազգականները, ըստ հայտարարությունների, 1973 թ. սպանվել են չիլիացի զինվորների կողմից: Նրանց մարմինները երբևէ հնարավոր չեղավ վերականգնել: Այս սպանությունների մասին բողոքները կհամարվեն անընդունելի *ratione temporis* (ժամանակի պատճառով), քանի որ Չիլին մինչև 1992 թ. չէր վավերացրել կամընտիր արձանագրությունը²⁷: Հեղինակները բողոքեցին ընդդեմ Չիլիի գերագույն դատարանի 1995 թ. կայացրած որոշման, որն ուժի մեջ թողեց Չիլիի ռազմական տրիբունալի կայացրած որոշումն այն մասին, որ այդ մահվան հանգամանքները չեն հետաքննվելու: Այս որոշման դրդապատճառը 1978 թ. ստորագրված Համաձայնագրի հրամանագիրն էր, որը նման գործողությունների դեպքում, ինչպիսիք են դիտարկվող սպանությունները, Չիլիի զինվորականությանն օժտեց անձեռնմխելիությամբ: Հեղինակներն առաջ քաշեցին հետևյալ փաստարկը.

¶ 3.4. ... Ռազմական տրիբունալի որոշումը, այն է՝ չհետաքննել զոհերի մահվան հանգամանքները, դաշնագրի 16-րդ հոդվածի խախտում է, այսինքն՝ զոհերին՝ որպես իրավասություն տանձանց, ճանաչելը:

ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը որոշեց, որ բողոքն անընդունելի է *ratione temporis*, քանի որ գերագույն դատարանի վճիռը «չի կարելի համարել մի նոր իրադարձություն, որը կարող էր ազդել 1973 թ. սպանվածի իրավունքների վրա»²⁸: Տկն Շանեն իր մասնավոր կարծիքում հայտարարեց հետևյալը.

Ես վիճարկում եմ կոմիտեի կայացրած որոշումը. կոմիտեն երկու հաղորդումները քննարկելիս դիմողներին մերժեց կամընտիր արձանագրությանը Չիլիի միանալու ժամանակ ներկայացված *ratione temporis* վերապահման հիմքով:

Իմ կարծիքով՝ հարցը չի կարելի դիտարկել այս կերպ՝ հաշվի առնելով այն փաստը, որ մասնակից պետության կայացրած դատավճիռներն ընդունվել են նրա կողմից [կամընտիր արձանագրությունը վավերացնելուց] հետո, և դաշնագրի 16-րդ հոդվածի կապակցությամբ բարձրացված խնդիրն առնչվում է մի իրավիճակի, որը, քանի դեռ այն լիակատար ավարտ չի ունեցել, ունենալու է երկարաժամկետ հետևանքներ:

Դիտարկվող գործում, եթե նույնիսկ երկու հաղորդումներում հիշատակված փաստացի հանգամանքները տարբերվում են միմյանցից, անհետացումներից բխող հետևանքների նկատմամբ պետության վերաբերմունքն անհրաժեշտաբար առաջացրեց դաշնագրի 16-րդ հոդվածի հետ կապված մի հարց:

16-րդ հոդվածով յուրաքանչյուր ոք ունի իր իրավասությունների ճանաչման իրավունք:

Չնայած այս իրավունքը չեզոքանում է անձի մահվան պարագայում, այն ունի ազդեցություններ, որոնք շարունակվում են մարդու մահից հետո. մասնավորապես, ասվածը վերաբերում է կտակներին կամ օրգանների նվիրատվության «փշոտ» խնդրին:

Այս իրավունքը շարունակում է գոյատևել *a fortiori* (առավել ևս), երբ անձի բացակայության շուրջ գոյություն ունի անորոշություն. տվյալ անձը կարող է կրկին հայտնվել, և եթե նա նույնիսկ ներկա չէ, ապա չի դադարում օրենքով գո-

²⁷ *Ratione temporis* կանոնի վերաբերյալ տես գլուխ 2-ը:

²⁸ Պարբերություն 6.4: Տես «Ս.Ե.-ն ընդդեմ Արգենտինայի» (*S.E. v Argentina, 275/88*) համեմատելի գործը այստեղ՝ [2.10]:

յություն ունենալուց: Հաստատված բնական մահը ոչ մի պարագայում չի փոխարինում քաղաքացիական մահը (քաղաքացիական իրավունքներից զրկումը):

Այս դիտարկումները չեն ենթադրում, որ նշված իրավունքն ունի անսահմանափակ տևողություն. կամ դիակի ճանաչման արդյունքն անվիճելի է, և արվում է մահվան մասին հայտարարություն, կամ անձի բացակայության կամ դիակի ճանաչման հետ կապված անորոշությունը պահպանվում է, և պետությունը պարտավոր է սահմանել կանոններ, որոնք կգործեն նշված բոլոր դեպքերում: Օրինակ՝ պետությունը կարող է սահմանել մի ժամանակահատված, որից հետո անհետացած անձը համարվում է մահացած:

Սա էր, ինչը կոմիտեն պետք է ձգտեր հայտնաբերել այս կոնկրետ գործում՝ խորությամբ ուսումնասիրելով հանգամանքները:

Պրն Սոլարի Յրիգոյենը նույնպես արտահայտեց իր անհամաձայնությունը՝ նշելով հետևյալը.

Հաղորդումը վերաբերում է հեղինակի՝ ամենուր որպես իրավասուբյեկտ ճանաչման իրավունքի խախտմանը նրա կամ նրա մարմնի գտնվելու վայրի վերաբերյալ կատարված թերի քննության հետևանքով: [16-րդ հոդվածը] հիմնարար իրավունք է, որն ունի յուրաքանչյուր ոք նույնիսկ սեփական մահվանից հետո, և պետք է պաշտպանվի բոլոր դեպքերում, երբ հետամուտ են լինում դրա ճանաչմանը: Այս խնդրի տեսանկյունից հեղինակի հաղորդումն ուսումնասիրելու հարցում [կոմիտեն] *ratione temporis* (ժամանակի պատճառով) կաշկանդված չէ: ...

«Վարգասն ընդդեմ Չիլիի» (*Vargas v Chile, 718/96*) գործը շատ նման էր *Ինսուորոսայի* գործին: ՄԻԿ-ը ներկայացրեց մեծամասնության նման տեսակետ: Տկն Շանեն նույն ձևակերպումներով արտահայտեց իր անհամաձայնությունը, որի տակ ստորագրեց նաև պրն Պոկարը:

[10.15] Իսրայելի վերաբերյալ վերջերս ընդունված եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարեց հետևյալը²⁹.

¶ 21. ... Կոմիտեի հատուկ մտահոգության առարկան այն է, որ պետական անվտանգության պատճառներով վարչական կալանքի տակ պահվող անձանց զոնե մի մասը (և մասնավորապես՝ որոշ լիբանանցիներ) անձամբ չի սպառնում պետական անվտանգությանը, սակայն պահվում է որպես «հաղթաթղթեր»՝ կալանավորված իսրայելցի զինվորներին ազատ արձակելու կամ զոհված զինվորների մարմիններն ստանալու շուրջ այլ կողմերի հետ բանակցություններն առաջ տանելու նպատակով: Կոմիտեն համարում է, որ վարչական կալանքի գոյություն ունեցող կիրառումը անհամատեղելի է դաշնագրի 7-րդ և 16-րդ հոդվածների հետ: ...

Եզրակացություն

[10.16] 8-րդ, 11-րդ և 16-րդ հոդվածներով ստեղծվել է սահմանափակ նախադեպային իրավունք: 11-րդ և 16-րդ հոդվածները սահմանափակ կիրառում ունեն, ինչը կարող է բացատրել ՄԻԿ-ի կողմից դրանք չդիտարկելու հանգամանքը: Այս իրավունքներն ըստ էության հատվում են այլ իրավունքների հետ, ինչպիսիք են խտրականությունից զերծ լինելու ազատությունները (հոդվածներ 2, 3 և 26), արդար դատաքննության իրավունքը (հոդված 14) և երեխաների՝ շահագործումից զերծ լինելու իրավունքը (հոդված 24), որոնք առավել լայն տարածում են ունեցել ՄԻԿ-ի նախադեպային իրավունքում: Այսպիսով, հնարավոր է, որ ՄԻԿ-ը պարզապես որոշում է համապատասխան բողոքներով զբաղվել ՔՔԻՄԴ-ի այլ դրույթների կապակցությամբ: ՄԻԿ-ի կողմից լուծություն պահպանելը կարող է նշանակել նաև, որ այս իրավունքների ոտնահարումն այլևս տարածված երևույթ չէ, սակայն գուցե սա ընդամենը բարի ցանկություն է: Հնարավոր է նաև, որ այս դրույթների խախտումներից տուժածներն այնքան իրավագույր են, որ անտեղյակ են իրավական պաշտպանության միջազգային հնարավորություններին: Այնուամենայնիվ, այս իրավունքները մարդկային արժանապատվությունը պաշտպանող կարևոր երաշխիքներ են: Իրոք, բացառությամբ 8-րդ հոդվածի 3-րդ կետի, դրանք չսահմանափակվող իրավունքներ են³⁰:

²⁹ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 93:

³⁰ Չսահմանափակվող իրավունքների վերաբերյալ տե՛ս [25.62] և հաջորդը:

Կամայական կալանավորումից զերծ լինելու ազատություն. հոդված 9

- Անձնական անձեռնմխելիության իրավունքը [11.03]
- «Ազատության» իրավունքը [11.07]
- Օրինականության պահանջը և կամայականության արգելումը [11.10]
- Քրեական մեղադրանքի մասին տեղեկացված լինելու իրավունքը. հոդված 9(2) [11.24]
- Քրեական մեղադրանքով կալանավորված անձանց շահերը. հոդված 9(3) [11.30]
 - «Սեղմ ժամկետներում» ներկայացումը դատական պաշտոնյային [11.30]
 - Դատավոր կամ օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձ [11.33]
 - Նախադատական կալանավորման ժամկետը [11.35]
 - Մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքը [11.39]
- Կալանավորված անձին դատարանում ներկայացնելու
[Habeas Corpus] իրավունք. հոդված 9(4) [11.44]
 - Անհապաղ քննություն [11.47]
 - Փաստաբանների մատչելիություն [11.53]
 - Ընթացակարգերը պետք է ձեռնարկվեն «դատարանում» [11.57]
 - Կալանավորումը վիճարկելու իրավունքի արդյունավետությունը [11.59]
- Փոխհատուցման իրավունք. հոդված 9(5) [11.66]
- Եզրակացություն [11.70]

ՖՈՐՄԱԾ 9

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

2. Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնում են ձերբակալման պատճառները և շտապ կարգով հաղորդում նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:

3. Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ պաշտոնակատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական իշխանություն իրականացնելու, և ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելն ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատ արձակվելը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:

4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

[11.01] Անձի ազատությունը և անձեռնմխելիությունը պաշտպանված են ՔՔԻՄԴ-ի 9-րդ հոդվածով: Ազատության իրավունքի առումով 9-րդ հոդվածը ձերբակալությունից կամ կալանավորումից լիակատար ազատություն չի տալիս: Ազատությունից զրկումը միշտ եղել է և կշարունակի մնալ տվյալ պետության իրավագործության ներքո գտնվող անձանց նկատմամբ պետության վերահսկողության օրինական եղա-

նակ¹: Փոխարենը՝ 9-րդ հոդվածի 1-ին կետը գործում է որպես էական երաշխիք, որ ձերբակալությունը կամ կալանավորումը կամայական կամ անօրինական չեն լինի: 9-րդ հոդվածի 2-5-րդ կետերը տրամադրում են դատավարական երաշխիքներ, որոնք օգնում են ապահովելու 9-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված էական երաշխիքի իրացումը:

[11.02] 9-րդ հոդվածը սովորաբար հիշատակվում է ազատությունից զրկելու դեպքերի համատեքստում: Այնուամենայնիվ, այս հոդվածը նաև պաշտպանում է անձի անձեռնմխելիության իրավունքը: Այս իրավունքը գործում է կալանքի տակ գտնվող և չգտնվող անձանց նկատմամբ:

Անձնական անձեռնմխելիության իրավունքը

[11.03] Անձնական անձեռնմխելիության իրավունքի հարցը քննարկվել է հետևյալ գործի շրջանակներում:

«ԴԵԼԳԱԴՈ ՊԱԵՍԵ ընդդեմ ԿՈԼՈՄԲԻԱՅԻ» (DELGADO PÁEZ v COLOMBIA, 195/85)

Այս գործում հեղինակը կրոն և էթիկա առարկաների կոլումբիացի ուսուցիչ էր, ով իր նկատմամբ խտրականության վերաբերյալ բողոքներ էր ներկայացրել ընդդեմ եկեղեցական թեմի առաջնորդի և կրթության համար պատասխատանու պետական մարմնի: Այս բողոքների հետևանքով հեղինակը ստացել է մահվան սպառնալիքներ և Բոգոտա քաղաքում ենթարկվել հարձակման: Այն բանից հետո, երբ անհայտ անձինք հարձակվել են հեղինակի գործընկերներից մեկի վրա և հրազենով սպանել նրան, հեղինակը դիմել է փախուստի և քաղաքական ապաստան ստացել Ֆրանսիայում: Հեղինակը ներկայացրել է բողոք, որում հայտարարել է, որ Կոլումբիայի կառավարությունը խախտել է հեղինակի հավասարության, արդարության և կյանքի իրավունքները պաշտպանելու իր պարտավորությունը. հետևաբար, նա ստիպված է եղել լքել երկիրը: Չնայած հեղինակի կողմից 9-րդ հոդվածի 1-ին կետը սկզբում չէր հիշատակվել, ՄԻԿ-ը, հետևյալ ձևակերպմամբ, գտավ այդ հոդվածի խախտում.

¶ 5.5. 9-րդ հոդվածի առաջին նախադասությունն առանձին կետի տեսք չունի: Նշված նախադասության դիրքը՝ որպես այդ կետի մի մաս, կարող է հանգեցնել այն տեսակետին, թե անվտանգության իրավունքը ծագում է միայն ձերբակալության և կալանքի տակ պահելու համատեքստում: Դաշնագրի նախապատրաստական փաստաթղթերը [*travaux préparatoires*] ցույց են տալիս, որ առաջին նախադասության շուրջ քննարկումներն իսկապես սկսվել են այն խնդիրների վրա, որոնք դիտարկվում են 9-րդ հոդվածի այլ դրույթներում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը 3-րդ հոդվածում հիշատակում է կյանքի իրավունքը, ազատության իրավունքը և անձի անձեռնմխելիության իրավունքը: Այս բաղադրիչներին մվիրված են դաշնագրի առանձին հատվածներ: Չնայած դաշնագրում անձի անձեռնմխելիության իրավունքի միակ հիշատակումը 9-րդ հոդվածում է, որևէ հիմք չկա կարծելու, որ դրա նպատակը եղել է *անձի անձեռնմխելիության իրավունք* հասկացության նեղացումը՝ դրա գործողությունը սահմանափակելով միայն ազատությունից պաշտոնապես զրկելու իրավիճակներով: Միաժամանակ, մասնակից պետությունները նախաձեռնել են դաշնագրում սահմանված իրավունքների պաշտպանությունը: Անհնարին է, որ օրենքի ուժով պետություններն իրավունք ունենան արհամարհելու իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքին սպառնացող վտանգները միայն այն պատճառով, որ տվյալ անձը ձերբակալված չէ կամ այլ եղանակով զրկված ազատությունից: Մասնակից պետությունները պարտավորություն են ստանձնել նրանց պաշտպանության նպատակով ձեռնարկել ողջամիտ և համարժեք միջոցներ: 9-րդ հոդվածի այնպիսի մեկնաբանումը, որը որևէ մասնակից պետության թույլ կտար արհամարհել իր իրավագործության ներքո գտնվող, ազատությունից չզրկված անձանց կյանքին սպառնացող վտանգները, դաշնագրով սահմանված երաշխիքները իսպառ կղարծներ առ ոչինչ:

¹ Իրոք, Նովակը պնդում է, որ բանտարկության կարևորությունը մեծացել է, քանի որ այն աստիճանաբար «փոխարինել է պատժի այլ տեսակները, ինչպիսիք են մահապատիժը և մարմնական պատիժը». M. Nowak, CCPR Commentary (N.P. Engel, Kehl, 1993), 159:

¶ 5.6. Մնում է դիտարկվող գործում առկա փաստերի նկատմամբ այս եզրակացության կիրառման հարցը: Ըստ ամենայնի, օբյեկտիվ կարիք է եղել, որ պետությունը պրն Դելգադոյին ապահովի պաշտպանական միջոցներով՝ երաշխավորելու համար նրա անվտանգությունը, հաշվի առնելով նրա հասցեին արված սպառնալիքները, ներառյալ հարձակումը նրա վրա և նրա անմիջական գործընկերոջ սպանությունը: Վիճելի է այն, որ ձգտելով ապահովել նման պաշտպանություն, պրն Դելգադոն չի դիմել իշխանության լիազոր մարմիններին, այլ իր բողոքները հղել է Լետիսիայի ռազմական իշխանությանը, ուսուցիչների միությանը, կրթության նախարարությանը և Կոլումբիայի նախագահին, փոխանակ դրանք գլխավոր դատախազին կամ դատարան ուղղելու: Կոմիտեի համար պարզ չէ՝ այս խնդիրները ներկայացվել են ոստիկանության ուշադրությանը: Կոմիտեն նաև վստահ չէ, որ կառավարության կողմից ձեռնարկվել են որոշ միջոցներ: Այնուամենայնիվ, կոմիտեին այլ բան չի մնում, քան ի գիտություն ընդունել, որ հեղինակը պնդում է, թե հիշատակված սպառնալիքները քննության ենթարկելու և պաշտպանություն ստանալու մասին իր խնդրագրին որևէ պատասխան չի եղել, և մասնակից պետությունը հակառակի մասին չի իրազեկել կոմիտեին: Իսկապես, մասնակից պետությունը չի հարգել կոմիտեի խնդրանքը, այն է՝ տրամադրել տեղեկություններ դաշնագրի 9-րդ հոդվածին համապատասխանող խնդիրներից որևէ մեկի վերաբերյալ: Չնայած կոմիտեն դժկամորեն է խախտման մասին որոշում կայացնում համոզիչ փաստական ապացույցների բացակայության պայմաններում, մասնակից պետությունն է, որ պետք է կոմիտեին իրազեկի, եթե հայտարարվող փաստերը սխալ են կամ, եթե նույնիսկ սխալ չեն, ապա ամեն դեպքում դաշնագրի խախտում չեն նշանակում: Կոմիտեն նախկինում իր նախադեպային իրավունքում հստակորեն նշել է, որ հանգամանքները կարող են կոմիտեին ստիպել փաստերն ընդունել հոգուտ հեղինակի, եթե մասնակից պետությունը չի պատասխանում կամ լուծում տալիս դրանց: Այս դեպքում նկարագրվածին համապատասխանում է այն հանգամանքը, որ պրն Դելգադոն դասավանդման և իր զբաղվածության հարցով իշխանությունների հետ եղել է երկարատև հակամարտության մեջ: Նրան առաջադրվել են քրեական մեղադրանքներ, որոնք ավելի ուշ ճանաչվել են անհիմն, և նրան ժամանակավորապես հեռացրել են աշխատանքից՝ սառեցնելով աշխատավարձը: ... Ապա, հայտնի է, որ նա բազմաթիվ բողոքներ է ներկայացրել Լետիսիայի եկեղեցական և կրթության համակարգի ղեկավարներին: ... Այս գործոններին զուգահեռ՝ հնչել են սպառնալիքներ նրա կյանքին: Եթե մասնակից պետությունը ոչ հերքում է սպառնալիքների առկայությունը, ոչ էլ համագործակցում կոմիտեի հետ՝ բացատրելու համար, թե արդյոք համապատասխան իշխանությունները տեղյակ են եղել դրանց մասին, և եթե այո, ապա ի՞նչ են արել այդ կապակցությամբ, այդ դեպքում կոմիտեն անհրաժեշտաբար ստիպված է ստույգ համարել այն հայտարարությունները, թե սպառնալիքները հայտնի են եղել, և ոչինչ չի ձեռնարկվել: Հետևաբար, լիովին հասկանալով Կոլումբիայում առկա իրավիճակը՝ կոմիտեն կարծում է, որ մասնակից պետությունը չի ձեռնարկել կամ չի կարողացել ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու պրն Դելգադոյի անձնական անձեռնմխելիության իրավունքը՝ համաձայն 9-րդ հոդվածի 1-ին կետի:

Ուշադրություն դարձրեք, որ ՄԻԿ-ը ճանաչեց անվտանգության տեսանկյունից Կոլումբիայում առկա սարսափելի իրավիճակը, որը կարող էր ազդեցություն ունենալ Կոլումբիայի կառավարության՝ անձանց պաշտպանությունն ապահովելու կարողության վրա: Մասնավորապես, կոմիտեն «լիովին հասկանում է Կոլումբիայում առկա իրավիճակը» և նշում, որ գուցե Կոլումբիան «անկարող է եղել ձեռնարկելու» պրն Դելգադոյին պաշտպանելու համապատասխան միջոցներ: Այսուհանդերձ, կոմիտեն որոշեց, որ Կոլումբիան խախտել է 9-րդ հոդվածի 1-ին կետը²:

[11.04] *Դելգադո Պաեսի* գործով ՄԻԿ-ի կայացրած որոշումը ցույց է տալիս, որ անձնական անվտանգության իրավունքը կախված չէ ազատության երաշխիքից. այս առումով այն կիրառվեց հետևյալ գործերում. «*Բվալյան ընդդեմ Չամբիայի*» (*Bwalya v Zambia, 314/88*), «*Բահամոնդեն ընդդեմ Չասարակածային Գվինեայի*» (*Bahamonde v Equatorial Guinea, 468/91*), «*Չիշիմբին ընդդեմ Չաիրի*» (*Tshishimbi v Zaire, 542/93*), «*Լիհոնգն ընդդեմ Ճամայկայի*» (*Leehong v Jamaica, 613/95*), «*Դիասն ընդդեմ Անգոլայի*» (*Dias v Angola, 711/96*), «*Չոնգվեն ընդդեմ Չամբիայի*» (*Chongwe v Zambia, 821/98*) և «*Խիմենես Վական ընդդեմ Կոլումբիայի*» (*Jiménez Vaca v Colombia, 859/99*).

[11.05]

**«ՋԱՅԱՎԱՐԴԵՆՆ ԸՆԴՂԴԵՄ ՇՐԻ ԼԱՆԿԱՅԻ»
(JAYAWARDENE v SRI LANKA, 916/00)**

Հեղինակը, որը Շրի Լանկայի խորհրդարանի անդամ է, ներկայացրել է հետևյալ բողոքը.

² Այս առումով համեմատելի պրն Անդոյի անհամաձայնությունն արտահայտող տեսակետը «*Սանխուան Արևալոն ընդդեմ Կոլումբիայի*» (*Sanjuán Arévalo v Colombia, 181/84*) գործում՝ կյանքի իրավունքի ոտնահարման համատեքստում, հոդված 6, [8.12-8.13]:

¶ 3.1. Հեղինակը բողոքում է, որ պետական լրատվամիջոցներով Շրի Լանկայի նախագահի հայտարարությունները, թե ինքը ներգրավված է LTTE-ի («Թամիլ Էալամի ազատագրական վագերեր» [the Liberation Tigers of Tamil Eelam] անջատողականների խումբը) գործունեության մեջ, վտանգի են ենթարկել իր կյանքը: Նա պնդում է, որ նման հայտարարությունները հավասարազոր են հալածանքների և Շրի Լանկայում մարդու իրավունքների խնդիրների հանդեպ ուշադրություն հրավիրելուն ուղղված իր ջանքերի հետևանք են: Նա պնդում է, որ ինքը որևէ հնարավորություն չի ունեցել դատի տալու նախագահին, քանի որ վերջինս պաշտպանված է դատական հայցերից:

¶ 3.2. Հեղինակը պնդում է, որ մասնակից պետությունը չի պաշտպանել իր կյանքը՝ մերժելով իրեն բավարար մակարդակի անվտանգությամբ ապահովելը, չնայած այն փաստին, որ ինքն ստանում էր մահվան սպառնալիքներ:

¶ 3.3. Ի լրումն՝ հեղինակը պնդում է, որ մասնակից պետությունը չի ուսումնասիրել ոստիկանություն ներկայացված իր բողոքներից ոչ մեկը, որոնք վերաբերել են ստացված մահվան սպառնալիքների հարցին:

Հեղինակը ներկայացրել է նախագահի հայտարարությունների հեռարձակումից հետո իր հասցեին ստացված մահվան սպառնալիքների մանրամասները: ՄԻԿ-ը համաձայնեց, որ խախտվել է 9-րդ հոդվածը:

¶ 7.2. Ինչ վերաբերում է հեղինակի պնդմանը, թե Շրի Լանկայի նախագահի կողմից արված հրապարակային հայտարարությունները վտանգել են իր կյանքը, կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը չի վիճարկել այն փաստը, որ նման հայտարարություններ իրականում արվել են: Մասնակից պետությունը չի համաձայնել, որ հեղինակն ստացել է մահվան սպառնալիքներ՝ ի հետևանք նախագահի հնչեցրած հայտարարությունների, սակայն, հիմնվելով հեղինակի տրամադրած մանրամասն տեղեկությունների վրա, կոմիտեն կարծում է, որ պատշաճ ուշադրություն պետք է դարձվի հեղինակի այն հայտարարություններին, որ նման սպառնալիքները ստացվել են նախագահի ելույթից հետո, և հեղինակը վախենում է սեփական կյանքի համար: Վերոնշյալ պատճառներով, և որովհետև դիտարկվող հայտարարություններն արվել են պետության ղեկավարի կողմից, ով գործել է մասնակից պետության կողմից սահմանված անձեռնմխելիության ներքո, կոմիտեն կարծում է, որ մասնակից պետությունը պատասխանատու է հեղինակի անձի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման համար՝ համաձայն դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի:

¶ 7.3. Ինչ վերաբերում է հեղինակի պնդմանը, թե մասնակից պետությունը ոտնահարել է դաշնագրով սահմանված իր իրավունքները՝ քննության չենթարկելով իր կողմից ոստիկանությանը ներկայացված բողոքները, որոնք վերաբերել են իրեն ուղղված մահվան սպառնալիքներին, ապա կոմիտեն ի գիտություն է ընդունում մասնակից պետության անհամաձայնությունն այն մասին, որ հեղինակը որևէ մահվան սպառնալիք չի ստացել, և նման սպառնալիքների վերաբերյալ բողոքներ կամ զեկույցներ չեն ստացվել: Այնուամենայնիվ, մասնակից պետությունը չի բերել որևէ որոշակի փաստարկ կամ նյութ՝ հերքելու համար հեղինակի մանրամասն զեկույցը, որը վերաբերում էր վերջինիս կողմից ոստիկանությանը ներկայացված առնվազն երկու բողոքներին: Ելնելով նշված հանգամանքներից՝ կոմիտեն եզրակացնում է, որ մասնակից պետության կողմից հեղինակի կյանքի նկատմամբ նշված սպառնալիքները քննության չենթարկելը ոտնահարել է անձնական անձեռնմխելիության նրա իրավունքը՝ համաձայն դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի:

9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված «քննության ենթարկելու» պարտականությունն արտացոլում է կյանքի իրավունքին³ և խոշտանգումներից ու անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու ազատությանը⁴ վերաբերող քննությունների համանման պարտականությունները:

[11.06] *Դելգադո Պանսի* և *Ջայավարդենի* գործերով կայացված որոշումները նաև բացահայտում են, որ պետությունը պարտավոր է այլ մասնավոր անձանց հարձակումներից պաշտպանել ցանկացած անձի անձնական անձեռնմխելիության իրավունքը: Սա կարևոր է, օրինակ, այն մարդկանց համար, ովքեր հետապնդվում են կամ գտնվում են հարձակման ենթարկվելու իրական վտանգի տակ, ինչպես օրինակ՝ մշտապես ծեծվող ամուսինները⁵: Իհարկե, այս իրավունքը գործում է նաև այն դեպքերում, երբ անձի ան-

³ Տե՛ս [8.09-8.10]:

⁴ Տե՛ս [9.111]:

⁵ Տե՛ս, այս կապակցությամբ, Լեհաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում արտահայտված մտահոգությունը ընտանեկան բռնության մակարդակի և «ընտանեկան բռնությունից տուժող ընտանիքի անդամների համար հանրակացարանների և ապաստարանների տրամադրման թերի մակարդակի» առնչությամբ. (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ

ծեռնմխելիությանը սպառնացող վտանգը ծագում է պետական իշխանություն ունեցող որևէ անձից⁶:

«Ազատության» իրավունքը

[11.07] Թիվ 8 Ընդհանուր մեկնաբանությունը ծավալվում է 9-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված ազատության իրավունքի իմաստի շուրջ:

ԹԻՎ 8 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. 9-րդ հոդվածը, որը վերաբերում է անձանց ազատության և անծեռնմխելիության իրավունքներին, մասնակից պետությունների զեկույցներում հաճախ ինչ-որ առումով ընկալվել է նեղ իմաստով, և այդ պատճառով մասնակից պետությունները ներկայացրել են ոչ ամբողջական տեղեկատվություն: Կոմիտեն մատնանշում է, որ 1-ին կետը կիրառելի է ազատությունից զրկելու բոլոր դեպքերի առնչությամբ, լինեն դրանք քրեական գործերի շրջանակներում թե այլ պատճառներով, ինչպիսիք են, օրինակ՝ հոգեկան հիվանդությունը, թափառական կյանքը, թմրամոլությունը, կրթական նպատակները, ներգաղթի վերահսկողությունը և այլն: Ճշմարիտ է այն, որ 9-րդ հոդվածի որոշ դրույթներ (2-րդ կետի մի մասը, ամբողջ 3-րդ կետը) կիրառելի են միայն այն անձանց դեպքում, որոնց նկատմամբ ներկայացվել են քրեական մեղադրանքներ: Սակայն մնացածը և, մասնավորապես, 4-րդ կետում ամրագրված կարևոր իրավական երաշխիքը, այն է՝ կալանքի տակ պահման օրինականությունը դատարանի կողմից վերահսկելու իրավունքը, կիրառելի են ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու միջոցով ազատությունից զրկված բոլոր անձանց դեպքում: Ավելին՝ մասնակից պետությունները, համաձայն 2-րդ հոդվածի 3-րդ կետի, պարտավոր են ապահովել, որ այլ դեպքերում, երբ անհատը պնդում է, որ դաշնագրի խախտմամբ իրեն զրկել են ազատությունից, նրան տրամադրվեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ: ...

¶ 4. Նաև, եթե հասարակական անվտանգության նպատակներով կիրառվում է այսպես կոչված կանխարգելիչ կալանք, այն պետք է վերահսկվի այս նույն դրույթների միջոցով, այսինքն՝ այն չպետք է լինի կամայական և պետք է հիմնված լինի օրենքով սահմանված հիմքերի և ընթացակարգերի վրա (կետ 1), պետք է տրվեն տեղեկություններ պատճառների մասին (կետ 2), պետք է լինի կալանքի վերահսկողություն դատարանի կողմից (կետ 4), ինչպես նաև խախտման դեպքում պետք է տրամադրվի փոխհատուցում (կետ 5): Եվ եթե, ի լրումն, նման դեպքերում առաջ են քաշվում քրեական մեղադրանքներ, անձին պետք է տրամադրվի լիակատար պաշտպանություն՝ համաձայն 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, ինչպես նաև 14-րդ հոդվածի:

[11.08] Դեպքերի մեծ մասում ազատությունից զրկելը կապվել է քրեական արդարադատության նպատակի հետ: Այնուամենայնիվ, մի շարք դեպքերում կալանքի տակ պահելն առնչվել է ներգաղթի վերահսկման նպատակներին, ինչպես դա եղել է «*Տոռեսն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Torres v Finland*, 291/88) [11.49] և «*Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի*» (*A v Australia*, 560/93) [11.16] գործերում: «*Վուլանն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Vuolanne v Finland*, 265/87) գործում կալանքի տակ պահելը առնչվում էր զինվորական կարգապահության նպատակներին [11.58]: «*Ա.-ն ընդդեմ Նոր Զելանդիայի*» (*A v New Zealand*, 54/97) գործում հարկադիր կալանքը վերագրվում էր հոգեբուժական օգնություն ցույց տալուն [11.21]:

[11.09] «ԶԵԼԵՊԼԻՆ ընդդեմ ՇՎԵԴԻԱՅԻ» (CELEPLI v SWEDEN, 456/91)

Այս գործի շրջանակներում պրն Զելեպլին արգելվել էր ազատորեն տեղաշարժվել պետության տարածքում, քանի որ նրա տեղաշարժերը սահմանափակված էին քաղաքի որոշ շրջաններով: Մասնակից պետությունը հայտարարեց հետևյալը.

CCPR/C/79/Add. 110, պարբ. 14: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Վրաստանի վերաբերյալ (2002), CCPR/CO/ 74/ GEO, պարբ. 14:

⁶ Տե՛ս, օրինակ, «*Չիշիմբի ընդդեմ Զաիրի*» (*Tshishimbi v Zaire*, 542/93) գործը, պարբ. 5.4 և «*Չոնգվեն ընդդեմ Զամբիայի*» (*Chongwe v Zambia*, 821/98) գործը, պարբ. 5.3:

¶ 4.5. Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ դաշնագրի՝ անձի ազատությունն ու անվտանգությունը պաշտպանող 9-րդ հոդվածն արգելում է ապօրինի ձերբակալությունը և կալանքը, սակայն չի կիրառվում պարզապես տեղաշարժվելու սահմանափակման դեպքում, ինչն ընդգրկված է 12-րդ հոդվածում: Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակի տեղաշարժվելու ազատության կիրառված սահմանափակումները այնքան խիստ չէին, որպեսզի նրա իրավիճակը հնարավոր լիներ նկարագրել որպես ազատագրվում դաշնագրի 9-րդ հոդվածի սահմանված իմաստով: Ավելին՝ հեղինակը կարող էր լքել Շվեդիան և մեկնել իր ընտրած ցանկացած այլ երկիր:

Հեղինակը պատասխանեց.

¶ 5.3. Ինչ վերաբերում է մասնակից պետության այն փաստարկներին, որ իր տեղաշարժվելու ազատության սահմանափակումներն այնքան խիստ չեն, որ համարվեն ազատագրվում, ապա հեղինակը պնդում է, որ բնակության հարցում սահմանափակումները կարող են համարվել ազատագրվում, երբ դրանց տևողությունը զգալի է, կամ երբ դրանք ունեն լուրջ հետևանքներ: Գրեթե յոթ տարի գտնվելով բնակության սահմանափակման տակ և հինգ տարվա ընթացքում հարկադրված լինելով շաբաթը երեք անգամ ներկայանալ և գրանցվել ոստիկանությունում՝ նա պնդում է, որ իր դրությունն այնքան ծանր էր, որ այն կարելի է համարել ազատագրվում՝ դաշնագրի 9-րդ հոդվածի սահմանված իմաստով:

ՄԻԿ-ը որոշեց, որ տվյալ բողոքն անհամատեղելի է դաշնագրի 9-րդ հոդվածի հետ⁷ և այդ հարցում անվերապահորեն համաձայնեց մասնակից պետությանը: Նմանապես, «*Կարկերն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Karker v France, 833/98*) գործում պարտադիր բնակության կարգադրությունը, որն ուղեկցվել է պետության տարածքում հեղինակի տեղաշարժերի սահմանափակմամբ, խնդիրներ չի առաջացնում 9-րդ հոդվածի շրջանակներում:⁸ Սրանից երևում է, որ 9-րդ հոդվածը կիրառելի է միայն ազատությունից զրկման լուրջ դեպքերի պարագայում, ինչպես որոշակի շենքում բանտարկման դեպքում (օրինակ՝ սեփական տանը⁹, բանտում, հոգեբուժական հաստատությունում, ներգաղթյալներին պահելու կենտրոնում),¹⁰ ոչ թե պետության տարածքում կամ մույնիսկ ավելի փոքր վայրում ազատորեն տեղաշարժվելու սահմանափակման դեպքում: Այս վերջին հանգամանքները կարող են խնդիրներ առաջացնել 12-րդ հոդվածի, ոչ թե 9-րդ հոդվածի շրջանակներում¹¹:

Օրինականության պահանջը և կամայականության արգելումը

[11.10] 9-րդ հոդվածով նախատեսված անձի ազատության իրավունքի հարցում գոյություն ունեն երկու տեսակի ընդունելի սահմանաքանակներ: Առաջին՝ ազատագրվումը պետք է լինի օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան: Ուստի, ձերբակալությունը և հետագա կալանքը պետք է հստակ թույլատրված լինեն և բավականաչափ ամրագրված լինեն օրենքում¹²: Երկրորդ՝ բուն օրենքը և դրա կիրառումը չպետք է լինեն կամայական: Ինչպես և ՔՔԻՄԴ-ի այլ համատեքստերում, «կամայական» ազատագրվման արգելումն ավելին է ընդգրկում, քան «ապօրինի» ազատագրվումը, քանի որ «կամայականությունը» մի սկզբունք է, որն «օրենք» հասկացությունից դուրս է, ոչ թե դրա սահմաններում¹³:

[11.11] Ապօրինի ձերբակալման օրինակ կարելի է տեսնել «*Դոմուկովսկին և այլք ընդդեմ Վրաստանի*» (*Domukovsky et al v Georgia, 623-624/95, 626-627/95*) գործում: Հեղինակներից մեկին Ադրբեջանի տարածքից առևանգել էին Վրաստանի գործակալները՝ խախտելով Ադրբեջանի օրենսդրությունը¹⁴: Եվ ի-

⁷ Պարբ. 6.1:

⁸ Պարբ. 8.5:

⁹ Տե՛ս թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ.14:

¹⁰ Նովակը նշում է կալանավորում «նեղ սահմանափակ տարածքում», վերը, ծմբ. 1, 160:

¹¹ *Celepili* գործի հանգամանքներն ավելի մանրամասն են շարադրված այստեղ՝ [12.11]:

¹² Y. Dinstein, "Right to Life, Physical Integrity, and Liberty", in L. Henkin (ed), *The International Bill of Rights* (Columbia University Press, New York, 1981), 130: Տե՛ս նաև [16.08-16.11]:

¹³ Տե՛ս նաև «կամայական» բառի իմաստն այստեղ՝ [8.04] և [16.12]. Այդուհանդերձ, տե՛ս հանձնաժողովի որոշումը, որում գործնականում հավասարեցվում են «օրինական» և «կամայական» հասկացությունները, այստեղ՝ *A v Australia* (560/93) և *C v Australia* (900/99) 9-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ [11.59-11.65]:

¹⁴ Տե՛ս պարբ. 18.2:

րականում այս գործը վկայում է, որ ձերբակալությունը պետք է «օրինական» լինի ինչպես ձերբակալող պետության օրենսդրությամբ, այնպես էլ այն պետության օրենսդրությամբ, որտեղ տեղի է ունենում ձերբակալությունը: Իհարկե, դեպքերի մեծ մասում խոսքը միևնույն պետության մասին է¹⁵:

[11.12] Տրինիդադ և Տոբագոյի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն իր մտահոգությունը հայտնեց ձերբակալությունների կապակցությամբ ոստիկանությունը տրված սեփական հայեցողությամբ որոշում կայացնելու լիազորությունների աստիճանի վերաբերյալ:

¶ 16. Կոմիտեն մտահոգված է «Ոստիկանության մասին» օրենքի 15.01 բաժնի բովանդակությամբ, որը հնարավորություն է տալիս ոստիկանին բազմաթիվ հանգամանքներում ձերբակալել անձանց առանց սանկցիայի: Այս հանգամանքների վերաբերյալ օրենքում բերված անորոշ ձևակերպումը ոստիկանությանն այս լիազորությունից օգտվելու չափազանց լայն հնարավորություններ է ընձեռում:

¶ Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը սահմանազատի իր օրենսդրությունը և այն համապատասխանեցնի դաշնագրի 9.1 կետին:

Տրինիդադ և Տոբագոյի օրենսդրությունը կարող էր չհամապատասխանել «օրինականության» պահանջին, քանզի ոստիկանության լիազորությունները, ըստ 9-րդ հոդվածի 1-ի կետի, բավարար կերպով չէին ամրագրվել օրենսդրության մեջ: Միաժամանակ, տվյալ օրենսդրությունը կարող էր չբավարարել կամայական ձերբակալություններն արգելելու պահանջը, քանզի սեփական հայեցողությամբ որոշումներ կայացնելու նման լայն լիազորությունները բավարար կերպով չէին պաշտպանում կամայականությունից:

[11.13] «Կամայականություն» հասկացության իմաստը 9-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում ուսումնասիրվում է ստորև ներկայացված գործի շրջանակներում:

«ՎԱՆ ԱԼՓՅԵՆՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (VAN ALPHEN v THE NETHERLANDS, 305/88)

Հեղինակը հոլանդացի փաստաբան էր, որ ձերբակալվել էր հարկման ենթակա եկամուտների մասին տվյալների կեղծման և ներկայացման աջակիցն ու հանցակիցը հանդիսանալու մեղադրանքով: Հեղինակը պահվել է կալանքի տակ ավելի քան ինը շաբաթվա ընթացքում, և այս ժամանակամիջոցում նրան փորձել են ստիպել իշխանություններին տեղեկություններ հայտնել իր որոշ հաճախորդների վերաբերյալ: Հեղինակը պնդում էր, որ իր ձերբակալությունն ու կալանավորումը կամայական էին և խախտում էին, */ թիվս այլոց*, դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետը: Նա այն կարծիքին էր, որ ձերբակալությունը և կալանավորումն իր նկատմամբ կիրառվել են դիտավորյալ, որպեսզի իր վրա ճնշում գործադրելով՝ ստիպեն հայտնել այնպիսի տեղեկություններ, որոնք կարող էին հետաքննության ընթացքում օգտագործվել իր կամ իր հաճախորդների դեմ: Որոշելով, որ տեղի է ունեցել դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, ՄԻԿ-ն արել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 5.6. Կոմիտեի առջև դրված հիմնական հարցն այն է՝ հեղինակի՝ 1983 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 1984 թ. փետրվարի 9-ը տևած կալանավորումը կամայական է, թե՞ ոչ: Անվիճարկելի է այն հանգամանքը, որ Նիդեռլանդների դատական մարմինները հեղինակի կալանքը երկարացնելու մասին որոշում կայացնելիս ամեն անգամ պահպանել են նախադատական կալանքը կարգավորող այն կանոնները, որոնք զետեղված են քրեական դատավարության օրենսգրքում: Մնում է որոշել՝ այլ գործոնների առկայության պարագայում այլ տեսանկյուններից օրինական համարվող կալանավորումը կարելի՞ է դիտել որպես կամայական, և արդյոք հեղինակն օգտվո՞ւմ է գաղտնիությունը պահպանելու իր մասնագիտական պարտավորությունը վկայակոչելու բացարձակ իրավունքից՝ անկախ քրեական հետաքննության հանգամանքներից:

¹⁵ Տե՛ս նաև «Գրիդին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» (*Gridin v Russian Federation*, 770/97), պարբ. 8.1:

¶ 5.7. Տվյալ դեպքում կոմիտեն ուսումնասիրել է մասնակից պետության՝ ինը շաբաթվա ընթացքում հեղինակի կալանավորման պատճառաբանությունը: Կոմիտեն նշում է, որ փաստաբանի և հաճախորդի միջև եղած հարաբերությունները պաշտպանող արտոնությունը պատկանում է իրավական համակարգերի մեծ մասի հենասյուների շարքին: Սակայն այս արտոնությունը միտված է պաշտպանելու հաճախորդին: Ուսումնասիրվող դեպքում հաճախորդը հրաժարվել է այդ արտոնությունից: Կոմիտեն չգիտի հաճախորդի կողմից գաղտնիության պարտականությունից հրաժարվելու հանգամանքներն այս գործի շրջանակներում: Այդուհանդերձ, հեղինակն ինքն էր կասկածյալ հանդիսանում, և թեև նրան ազատել էին գաղտնիությունը պահպանելու պարտականությունից, նա պարտավոր չէր աջակցել պետությանը՝ գործ պատրաստելու իր իսկ դեմ:

¶ 5.8. 9-րդ հոդվածի 1-ին կետի նախագծման պատմությունը հաստատում է, որ «կամայականություն» հասկացությունը չի կարող հավասարեցվել «օրենքին հակասելու» հասկացության հետ, այլ պետք է մեկնաբանվի ավելի լայն իմաստով և ընդգրկի ոչ պատշաճ վերաբերմունքի, անարդարության և կանխատեսելիության պակասի տարրեր: Դա նշանակում է, որ կալանքի տակ պահելն օրինական ձերբակալությունից հետո պետք է ոչ միայն օրինական լինի, այլև ողջամիտ լինի բոլոր հանգամանքներում: Ավելին՝ կալանքի տակ պահվելը պետք է անհրաժեշտ համարվի բոլոր հանգամանքներում, օրինակ՝ փախուստը, ապացույցներին միջամտելը կամ հանցագործության կրկնությունը կանխելու համար: Մասնակից պետությունը ցույց չի տվել, որ այդ գործոնները առկա են եղել տվյալ գործում: Իրականում նա հեղինակի կալանքի տևողությունը պատճառաբանել է նրանով, որ «հայցվորը շարունակում էր վկայակոչել գաղտնիությունը պահպանելու իր պարտականությունը՝ չնայած շահագրգիռ կողմն ազատել էր նրան այս հարցում իր ստանձնած պարտավորություններից», և «քրեական հետաքննության կարևորությունը պահանջում էր հայցվորի կալանքը՝ նրա հասանելիությունն ապահովելու նպատակով»: Թեպետ հեղինակն ազատվել է մասնագիտական գաղտնիությունը պահպանելու իր պարտականությունից, սակայն պարտավոր չէր ապահովել նման համագործակցություն: Ուստի կոմիտեն համարում է, որ ներկայացրած փաստերն ի հայտ են բերում դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

[11.14] Եթե անգամ ձերբակալությունն ի սկզբանե կամայական չի եղել, միևնույն է, դրան հետևած կալանքի ժամկետը կարող է խախտել 9-րդ հոդվածի 1-ին կետը: «Սպակմոն ընդդեմ Նորվեգիայի» (*Spakmo v Norway, 631/95*) գործում հեղինակը երկու անգամ էր ձերբակալվել նշված վայրում քանդման աշխատանքները դադարեցնելու մասին ոստիկանության կարգադրությունը չկատարելու համար: Երկու ձերբակալություններն էլ համապատասխանում էին 9-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին: Այդուհանդերձ, մասնակից պետությունը չկարողացավ ցույց տալ, որ Սպակմոյի ութամյա կալանքը երկրորդ ձերբակալությունից հետո ողջամիտ էր, ուստի համարվեց, որ այն խախտել էր 9-րդ հոդվածի 1-ին կետը¹⁶:

[11.15] 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտումների այլ օրինակների շարքը կարելի է դասել այն դեպքերը, երբ բանտարկյալներին պահել են կալանքի տակ նրանց պատժի ժամկետն ավարտվելուց հետո¹⁷ կամ այն բանից հետո, երբ դատարանը որոշում է կայացրել նրանց ազատ արձակելու մասին,¹⁸ ինչպես նաև պետությունների կողմից իրականացվող ապօրինի առևանգումները,¹⁹ ազգային օրենսդրությամբ հակասող դեպքերը²⁰ և այն դեպքերը, երբ մարդկանց ձերբակալում են իրենց քաղաքական հայացքների համար²¹: «Թշիոնգո ա Մինանգան ընդդեմ Զաիրի» (*Tshiongo a Minanga v Zaire, 366/89*) գործում հեղինակը պահվել էր կալանքի տակ կես օրվա ընթացքում, ըստ երևույթին՝ քաղաքական հետապնդումների հետևանքով: Այս կալանավորումը, թեպետև համեմատաբար կարճ է տևել, համարվեց 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում²²: Ավելին՝ ՄԻԿ-ը քննադատեց Իրանի Իսլամական Հանրապետությանը «որպես կալանքից

¹⁶ Պարբ. 6.3:

¹⁷ Տե՛ս օրինակ՝ *Weismann and Perdomo v Uruguay* (8/77):

¹⁸ Տե՛ս օրինակ՝ *Bazzano v Uruguay* (5/77), *Ramirez v Uruguay* (4/77), *Carballal v Uruguay* (33/78), *de Bouton v Uruguay* (37/78), *Jijon v Ecuador* (277/88):

¹⁹ *López Burgos v Uruguay* (52/79), *Casariago v Uruguay* (56/79):

²⁰ *Bolaños v Ecuador* (238/87); *Gómez Casafranca v Peru* (981/01), պարբ. 7.2:

²¹ Տե՛ս օրինակ՝ *Portorreal v Dominican Republic* (188/84), *Mukong v Cameroon* (458/91), *Blanco v Nicaragua* (328/88): Ուրուգվայի դեմ ներկայացված առաջին բողոքների հիմքում ընկած էին քաղաքական հետապնդումներով պայմանավորված կալանավորումները:

²² Տե՛ս փոքրամասնության կարծիքն այս գործով՝ *Giry v Dominican Republic* (193/85), որում գտնվել է 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, երբ հեղինակին կալանքի տակ են պահել 2 ժամ 40 րոպե՝ այնուհետև ստիպելով նրան նստել դեպի Միացյալ Նահանգներ մեկնող ինքնաթիռ: Մեծամասնությունն այս գործին անդրադարձել էր 13-րդ հոդվածով: Տե՛ս այստեղ՝ [13.20]:

ազատ արձակվելու նախապայման՝ կալանավորների ապաշխարանքը պահանջելու» համար²³։ Ուկրաինայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը դատապարտեց թափառականներին «վարչական կալանքի» ենթարկելու պրակտիկան²⁴։ Նա Պերուին քննադատեց այն օրենքների համար, որոնցով թույլատրվում է անձանց մինչև տասնհինգ օր ժամկետով կանխարգելիչ կալանավորման ենթարկել՝ ևս տասնհինգ օրով այդ ժամկետը երկարացնելու հնարավորությամբ այն դեպքերում, երբ կասկած կա ահաբեկչության, լրտեսության կամ թմրամիջոցների ապօրինի շրջանառության առնչությամբ²⁵։

[11.15Ա]

«ՌԻՍՆ ընդդեմ ՃԱՄԱՅԱՅԻ» (REECE v JAMAICA, 796/98)

Հեղինակի մահապատիժը փոխարինվել է ցմահ բանտարկությամբ ճամայկայի գլխավոր նահանգապետի (Նորին մեծություն թագուհու ներկայացուցիչ) հրամանով, ընդ որում՝ հեղինակը զրկվել է յոթ տարվա ընթացքում ներում հայցելու հնարավորությունից։ Պատժի մեղմացումը տեղի է ունեցել ավելի բարձր ատյանի դատարանի որոշման համաձայն, ըստ որի՝ հեղինակի մահապատժի կատարումը համարվել է սահմանադրությամբ հակասող²⁶։ Հեղինակը բերել է հետևյալ փաստարկները.

¶ 3.7. Հեղինակին որևէ ծանուցում չի տրվել առ այն, թե որտեղ և ինչպես է կայացվել իր դատավճիռը մեղմացնելու որոշումը։ Միաժամանակ նրա փաստաբանին հնարավորություն չի ընձեռվել բանավոր կամ գրավոր միջնորդություններ ներկայացնելու ներում հայցելու արգելքի ժամկետի վերաբերյալ։ Նրան չի հայտնվել ո՛չ ուսումնասիրվող նյութերի կամ հարցերի, ո՛չ էլ գլխավոր նահանգապետի կիրառած սկզբունքների մասին, ընդ որում՝ գործի լսումը կատարվել է դմփակ միատուն։ Ավելին՝ հեղինակի՝ արդեն իսկ նախքան պատժի մեղմացումը կալանքի տակ անցկացրած ժամանակը (ավելի քան 12 տարի) հաշվի չի առնվել ներում հայցելու արգելման ժամկետը որոշելիս, ինչը, նրա պնդմամբ՝ դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իր իրավունքների խախտում է այն մասով, որ նա ենթարկվել է կամայական կալանավորման։ Նա պնդում է, որ իր մահապատիժը մեղմացնելու մասին որոշումն իրականում իր սկզբնական դատավճռի շարունակությունն է, իսկ ներում հայցելու արգելման ժամկետը պետք է սահմանվեր դատավճռի մեղմացման պահից սկսած։

ՄԻԿ-ը չի գտել 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.

¶ 7.7. Կոմիտեն համաձայն չէ այն կարծիքին, որ մահապատժի փոխարինումը ցմահ բանտարկությամբ՝ ապագայում ներում հայցելու հնարավորությամբ, կամայականությամբ կատարված «կրկնակի դատապարտում» է։ Այս եզրակացությունից հետևում է, որ հեղինակի կալանավորման շարունակությունն օրինական է՝ համաձայն սկզբնական դատավճռի պատժի մեղմացման որոշման, որը խնդիր չի հարուցում 9-րդ հոդվածի առնչությամբ²⁷։

[11.16]

«Ա.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (A v AUSTRALIA, 560/93)

Հեղինակը Կամբոջայի քաղաքացի է, որը Կամբոջայի 25 այլ քաղաքացիների հետ 1989 թ. նոյեմբերի 25-ին ապօրինաբար նավով ժամանել է Ավստրալիա։ Իր ժամանելուց կարճ ժամանակ անց նա դիմել է փախստականի կարգավիճակ ստանալու համար։ Այդ դիմումը 1990 թ. մերժել է Փախստականների կարգավիճակի որոշման կոմիտեն։ Հեղինակը կրկին դիմեց փախստականի կարգավիճակի մերժման որոշումը վերանայելու խնդրանքով՝ միաժամանակ օգտվելով իրավական մեխանիզմներից, որպեսզի թույլ չտա կառավարությամբ արտաքսել իրեն երկրից։ Այն ժամանակահատվածում, երբ որոշվում էր հեղինակի փախստականի կարգավիճակը, այսինքն՝ չորս տարվա ընթացքում, նա պահվել է կալանքի տակ։ Ի

²³ Եզրափակիչ դիտարկումներ Իրանի Իսլամական Հանրապետության վերաբերյալ (1993), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 25, պարբ. 11։

²⁴ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 52, պարբ. 13։

²⁵ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 67, պարբ. 18։

²⁶ Տե՛ս *Pratt and Morgan v Attorney General for Jamaica* [1994] 2 AC 1, քննարկվում է այստեղ՝ *Kennedy v Trinidad and Tobago* (845/98) կետ 6.3 [25.29]։

²⁷ ՄԻԿ-ը նաև հրաժարվեց ճանաչել, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, երբ մասնակից պետությունն իր գործով դատավճիռ կայացնելիս չի ապահովել պատշաճ դատավարական իրավունքներով։ Տե՛ս [14.09]։

վերջո, հեղինակն ազատ է արձակվել և 1994 թ. հունվարին ստացել կացության թույլտվություն՝ մարդասիրական հիմունքներով:

Հեղինակը նախ պնդում էր, որ ինքը ենթարկվել է կամայական կալանքի՝ 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իմաստով:

¶ 3.3. Առաջադրվում է այն պնդումը, որ մասնակից պետության քաղաքականությունը նավով ապօրինաբար ժամանած մարդկանց կալանավորելու հարցում պատշաճ չէ, անարդարացի և կամայական է, քանզի դրա հիմնական նպատակն այն է, որ հետ պահի ուրիշներին նավով ապօրինաբար Ավստրալիա ժամանելու փորձերից և թույլ չտա, որ արդեն իսկ երկրում գտնվողները շարունակեն դիմումներ ներկայացնել փախստականի կարգավիճակ ստանալու համար: Ասվում է, որ այս մոր օրենսդրության կիրառումը վերածվում է «մարդկանց զսպելու», քանի որ ապաստան հայցողները պահվում են այնպիսի խիստ պայմաններում և այնքան երկար ժամանակ, որ ապագա ապաստան հայցողները նույնիսկ չեն դիմում փախստականի կարգավիճակ ստանալու համար, իսկ ներկա ապաստան հայցողները կորցնում են բոլոր հույսերը և տուն վերադառնում:

¶ 3.4. Ասվում է, որ վավերական հիմքեր գոյություն չունեն հեղինակի կալանավորման համար... Ավելին՝ կալանավորման տևողությունը, որը 1993 թ. հունիսի 20-ի դրությամբ կազմում էր 1299 օր կամ երեք տարի և 204 օր, հեղինակի պնդմամբ, 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է:

Որպես հեղինակի կալանավորման հիմնավորում՝ Ավստրալիան ներկայացրեց հետևյալ փաստարկները:

¶ 7.1. Մասնակից պետությունը հիշեցնում է, որ Ավստրալիայի՝ ապօրինաբար երկիր ժամանողներին կալանավորելու քաղաքականությունն այդ երկրի ներգաղթային քաղաքականության մասն է: Դրա հիմքում ընկած տրամաբանությունն այն է, որ թույլ չտրվի ապօրինաբար երկիր ներթափանցող անձանց մուտք գործել Ավստրալիայի համագործակցության տարածք մինչև նրանց մուտքի ենթադրյալ իրավունքը պատշաճ կերպով չգնահատվի և չհաստատվի, որ նրանց մուտքը երկիր արդարացված է: Կալանավորման նպատակն է ապահովել, որ առանց թույլտվության Ավստրալիայի տարածք ժամանող յուրաքանչյուր անձ կարողանա երկրում մնալու պահանջ ներկայացնել, իսկ եթե այդ պահանջը մերժվի, ապա տվյալ անձը հասանելի լինի երկրից արտաքսվելու համար: Մասնակից պետությունը նշում է, որ 1989 թ. վերջից արձանագրվել է փախստականի կարգավիճակ հայցող դիմումների անակնկալ և աննախադեպ աճ երկրի ափ ծովային ճանապարհով հասած անձանցից: Այս իրողությունը հանգեցրել է նրան, որ դիմումատուների կալանավորման տևողությունը խիստ ձգձգվել է, և, փաստորեն, կատարվել են երկիր մուտքի արտոնագրերի հայտերը կարգավորող պաշտպանիչ օրենքների և ընթացակարգերի բարեփոխումներ:

¶ 7.2. Ինչ վերաբերում է կալանավորման անհրաժեշտությանը, ապա մասնակից պետությունը հիշեցնում է, որ Ավստրալիայի ափ հասած ապօրինի ներգաղթյալները 1990 թ. և 1991 թ. սկզբին պահվել են միգրանտների տեղավորման առանց ցանկապատի կացարաններում, որտեղ նրանք պարտավոր էին միայն պարբերաբար ներկայանալ և գրանցվել համապատասխան մարմիններում: Այդուհանդերձ, անվտանգության պայմանները պետք է խստացվեին փախուստի դիմած մի շարք կալանավորվածների պատճառով, ինչպես նաև այն պատճառով, որ տեղացի էթնիկական համայնքներից դժվար էր համագործակցություն ակնկալել պարբերաբար ներկայանալու և համապատասխան մարմիններում գրանցվելու պարտավորությունը խախտած անձանց գտնելու համար: 1991 թ. մինչև 1993 թ. հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում նավով ապօրինաբար ժամանած անձանցից 59 հոգի կալանքից դիմել էր փախուստի: Փախստականի կարգավիճակ ստանալու դիմումների ուսումնասիրման ընթացքում երկրի տարածքում բնակվելու ժամանակավոր թույլտվություն և փախստականի կարգավիճակի մերժում ստացած այն 8000 հոգու 27%-ն ապօրինաբար շարունակում էր մնալ Ավստրալիայի տարածքում՝ առանց որևէ թույլտվության:

¶ 7.3. Մասնակից պետությունը մատնանշում է, որ սահմանը հատելուն պես կացության թույլտվություն հայցողների պարտադիր կալանավորման քաղաքականությունը պետք է դիտվի փախստականի կարգավիճակ ստանալու դիմումների ամբողջական և հանգամանալից ուսումնասիրման լույսի ներքո և հաշվի առնելով փախստականի կարգավիճակ ստանալու դիմումներին տրված բացասական պատասխանները բողոքարկելու համար նրանց ընձեռված հնարավորությունները: Եթե հաշվի առնենք գործի բարդությունը, Կամբոջայում շարունակաբար փոխվող իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու համար պահանջվող ժամանակը, հեղինակի իրավախորհրդատուների կողմից միջնորդություններ ներկայացնելու համար պահանջվող ժամկետները, ապա հեղինակի կալանավորման ժամկետը չի կարող համարվել չարաշահման աստիճանի երկար: Ավելին՝ հեղինակի կալանավորման պայմանները խիստ, բանտային կամ այլ կերպ անհամաչափ սահմանափակող չեն եղել:

¶ 7.5. Ինչ վերաբերում է 9-րդ հոդվածի 1-ին կետին, ապա մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակի կալանավորումը օրինական էր և որևէ հիմունքներով կամայական համարվել չի կարող: Հեղինակը մտել է Ավստրալիայի տարածք առանց թույլտվության և հետագայում է դիմել է փախստականի կարգավիճակով կացության թույլտվություն ստանալու համար: Սկզբում, քանի դեռ իր դիմումը ուսումնասիրության գործընթացում էր, պահվել է կալանքի տակ: Իր հետագա կալանավորումը կապված է դիմումի մերժումը բողոքարկող միջնորդություններ ներկայացնելու հետ, ինչը հեղինակին դարձնում էր երկրից արտաքսման ենթակա: Կալանավորումը համարվել է անհրաժեշտ, որպեսզի նրան թույլ չտրվի փախուստի դիմել և ներթափանցել Ավստրալիայի տարածք:

¶ 7.6. Մասնակից պետությունը նշում է, որ 9-րդ հոդվածի 1-ին կետի նախապատրաստական փաստաթղթերում դաշնագրի նախագծողները որոշել են, որ «կամայականություն» հասկացությունն ընդգրկում է «անհամատեղելիություն արդարադատության սկզբունքների կամ մարդ արարածի արժանապատվության հետ»: Ավելին՝ մասնակից պետությունը մեջբերում է կոմիտեի նախադեպային բազան, ըստ որի՝ կամայականության գաղափարը չպետք է նույնացվի «օրենքին հակասող» հասկացության հետ, փոխարենը՝ պետք է մեկնաբանվի ավելի լայն իմաստով՝ ընդգրկելով անհամաչափության, անարդարության կամ անկանխատեսելիություն տարրեր: Հաշվի առնելով այս նախապատմությունը՝ մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակի դեպքում կալանավորումը ոչ անհամաչափ էր, ոչ էլ անարդարացի և միաժամանակ կանխատեսելի էր այն մասով, որ Ավստրալիայի օրենսդրության կիրառելի դրույթները հասանելի են լայն հանրությանը: Հեղինակի փաստաբանի այն փաստարկին, որ ապօրինաբար Ավստրալիայի տարածք ներթափանցած անձանց կալանքի ենթարկելու գործելակերպն ինքնին պատշաճ չէ, մասնակից պետությունը պատասխանում է, որ այդ պնդումը հիմնավորված չէ դաշնագրի որևէ դրույթով:

Հեղինակի փաստաբանը պատասխանեց հետևյալ փաստարկներով.

¶ 8.1. 1996 թ. օգոստոսի 22-ին ներկայացրած իր մեկնաբանություններում հեղինակի փաստաբանը հարցականի տակ է առնում ներգաղթյալների կալանավորման հիմքում ընկած տրամաբանության համար մասնակից պետության տրված բացատրությունը: Հեղինակի կալանավորման պահին ապօրինաբար Ավստրալիայի սահմանը հատող անձանց միակ խումբը, որը ենթակա էր պարտադիր կալանավորման, այսպես կոչված «նավով եկածներն» էին: Փաստաբանը հայտնում է, որ Ավստրալիայի իշխանություններն անհիմն մտավախություն են ունեցել ապօրինաբար նավով ժամանած անձանց ներհոսքի կապակցությամբ, և պարտադիր կալանավորման քաղաքականությունն օգտագործվել է որպես զսպիչ միջոց: Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ 1989 թ. վերջից Ավստրալիայում արձանագրվել է նավով ժամանած անձանց «անմախադեպ ներհոսք», ապա փաստաբանը նշում է, որ եթե հաշվի առնենք, որ 1989-ից 1993 թ. ընկած ժամանակահատվածում ներկայացվել է 33 414 դիմում, ապա այդ թիվն անհամեմատ փոքր է նույն ժամանակահատվածում Արևմտյան Եվրոպայի բազում երկրներում ներկայացված փախստականի կարգավիճակ ստանալու դիմումների քանակից: Ավստրալիան շարունակում է մնալ ապաստան տրամադրող արևմտյան երկրներից միակը, որտեղ գործում է պարտադիր և անվերաճայելի կալանավորման քաղաքականություն:

¶ 8.2. Փաստաբանն ավելացնում է, որ ամեն դեպքում պատրաստականության և համապատասխան ռեսուրսների պակասը չի կարող արդարացնել կամայական կալանավորումից զերծ մնալու իրավունքի շարունակական խախտումը: Նա մեջբերում է կոմիտեի նախադեպային բազան, ըստ որի՝ քրեական արդարադատության վարչարարության համար բյուջետային հատկացումների պակասը չի արդարացնում չորս տարի տևած նախադատական կալանքը:²⁸ Ներկայացված է եղել, որ հեղինակի՝ ապաստան ստանալու հայտի սկզբնական ուսումնասիրության համար պահանջված 77 շաբաթ ժամանակահատվածը, մինչև նա գտնվում էր կալանքի տակ, պայմանավորված էր ռեսուրսների պակասով:

¶ 8.7. Հեղինակի կալանքի «կամայականության» հարցի առնչությամբ փաստաբանը նշում է, որ մասնակից պետությունը փորձում է սխալմամբ հեղինակի կալանքի երկարաձգման համար մեղքը բարդել հենց նրա վրա: Այս համատեքստում նա պնդում է, որ հեղինակը չպետք է երկարացված կալանավորմամբ պատժվեր իր օրինական իրավունքների իրացման համար: Նա նաև մերժում է այն պնդումը, որ կալանավորումն արդարացված է հեղինակի կողմից կալանքի կենտրոնից փախուստի դիմելու ենթադրյալ հավանականությամբ: Ուստի փաստաբանը պնդում է, որ մասնակից պետությունը կարողացել է միայն ընդհանուր հայտարարություններ կատարել այս հարցի կապակցությամբ: Եվ իրականում, փաստաբանի պնդմամբ, երկարատև կալանքի հետևանքներն այնքան ծանր են, որ կալանավորման արդարացումն ապացուցելու բեռը, յուրաքանչյուր դեպքի մասնավոր հանգամանքներում, լիովին դրված է

²⁸ Եվ առհասարակ իրականում տնտեսական դժվարությունները չեն արդարացնում ԶԲԻՄԴ-ի խախտումը, տե՛ս [1.101] և [11.37]:

պետական մարմինների վրա: Ապացույցի այդ բեռը բավարարված չի համարվում անձի ազատ արձակվելու դեպքում նրա կողմից փախուստի դիմելու հավանականության մասին արված ընդհանուր հայտարարություններով:

ՄԻԿ-ը կայացրեց հոգուտ հեղինակի հետևյալ վճիռը.

¶ 9.2. Առաջին հարցի առնչությամբ կոմիտեն հիշեցնում է, որ «կամայականություն» հասկացությունը չպետք է հավասարվի «օրենքին հակասող» հասկացությանը, փոխարենը՝ պետք է մեկնաբանվի ավելի լայն իմաստով և ընդգրկի անհամաչափության և անարդարության տարրեր: Ավելին՝ կալանքի տակ պահվելը կարող է համարվել կամայական, եթե այն անհրաժեշտ չի եղել՝ ելնելով գործի բոլոր հանգամանքներից, օրինակ՝ փախուստը կամ ապացույցներին միջամտությունը կանխելու նկատառումով: Ուստի այս համատեքստում կարևորվում է համամասնության տարրը: Այդուհանդերձ, մասնակից պետությունը փորձում է արդարացնել հեղինակի կալանավորումն այն հանգամանքով, որ նրա մուտքը Ավստրալիայի տարածք ապօրինի է եղել, ինչն էլ պետք է դիտվի որպես դիմումատուի կողմից փախուստի դիմելու շարժառիթ նրա ազատության մեջ մնալու դեպքում: Կոմիտեի առջև դրված հարցն այն է, որ որոշվի, թե այս պատճառները բավարա՞ր են անորոշ և երկարատև կալանավորումն արդարացնելու համար:

¶ 9.3. Կոմիտեն համաձայն է, որ հիմքեր չկան հեղինակի այն պնդման համար, թե ապաստան հայցող անձանց կալանավորումն ինքնին կամայական է: Սովորութական միջազգային իրավունքում նույնպես հիմնավորում չկա, որի համաձայն՝ կալանավորման բոլոր նման դեպքերը պետք է համարվեն կամայական:

¶ 9.4. Այդուհանդերձ, կոմիտեն նշում է, որ անձին կալանքի տակ պահելու մասին յուրաքանչյուր որոշում պետք է պարբերաբար բաց լինի վերանայման համար, որպեսզի գնահատվեն կալանավորման տվյալ դեպքն արդարացնող հիմքերը: Ամեն դեպքում կալանավորումը չպետք է շարունակվի ավելի երկար, քան կարող է պատշաճորեն արդարացվել մասնակից պետության կողմից: Օրինակ՝ երկիր ապօրինաբար ներթափանցելու փաստը կարող է պահանջել հետաքննություն, ինչպես նաև կարող են լինել անհատական այլ գործոններ, օրինակ՝ փախուստի դիմելու հավանականությունը և համագործակցության պակասը, որոնք կարող են արդարացնել որոշ ժամկետով կալանավորումը: Առանց նման գործոնների՝ կալանավորումը կարող է համարվել կամայական, եթե նույնիսկ մուտքը երկիր կատարվել է ապօրինաբար: Տվյալ դեպքում մասնակից պետությունը հեղինակի գործին հատուկ հիմքեր չի բերել, որոնք կարդարացնեին չորս տարվա ընթացքում նրա շարունակական կալանքը, ընդ որում՝ այդ ժամանակահատվածում նրան տեղափոխել են տարբեր կալանավորման կենտրոններ: Ուստի կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի կալանավորումն ավելի քան չորս տարվա ընթացքում կամայական է եղել 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իմաստով:

ՄԻԿ-ը չդատապարտեց ներգաղթյալների կալանավորման բուն գաղափարը, ոչ էլ առանձին դատապարտեց հեղինակի կալանավորման արտառոց երկար ժամկետը: Կոմիտեն առանձնապես մտահոգված էր նրանով, որ հեղինակի գործը չի ենթարկվել անհատական ուսումնասիրման՝ նախքան երկրից արտաքսման մասին որոշում կայացնելը նրան կալանավորելու անհրաժեշտությունը որոշելու նպատակով: ՄԻԿ-ն ըստ էության դատապարտեց մասնակից պետության հեղինակի հետ նման հանգամանքներում հայտնված անխտիր բոլոր անձանց (այսպես կոչված «նավով եկածների») նկատմամբ կալանավորման քաղաքականությունը վարելը²⁹:

[11.17]

«Կ.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (C v AUSTRALIA, 900/99)

Ինչպես «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» (A v Australia) գործում, այնպես էլ այս գործում հեղինակը պարտադիր կալանքի է ենթարկվել Ավստրալիա ապօրինաբար ժամանելուց և այնուհետև ապաստան հայցելուց հետո, քանի դեռ Ավստրալիայի օրենսդրությամբ ապաստան ստանալու նրա իրավունքը ուսումնասիրման գործընթացում էր: Հեղինակը, ինչպես և արձանագրվել է «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործում, պնդում էր, որ իր կալանավորումը խախտում է 9-րդ հոդվածի 1-ին կետը: Մասնակից պետությունը փորձեց արդարացնել հեղինակի կալանավորումը հետևյալ ձևակերպումներով.

²⁹ Այս առնչությամբ տե՛ս նաև «հավաքական հանցատեսակների համար մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ հավաքական պատիժ կիրառելու» գործելակերպի դատապարտումը ՄԻԿ-ի կողմից: Եզրափակիչ եզրակացություններ Լիբիայի Արաբական Զամահիրիայի վերաբերյալ (1999): ՄԱԿ-ի փաստաթուղթ՝ CCPR/C/79/Add. 101, պարբ. 12:

¶ 4.26. Մասնակից պետությունն ընդգծում է, որ ներգաղթյալների պարտադիր կալանավորումը բացառիկ միջոց է, որն առաջին հերթին վերապահված է Ավստրալիա առանց թույլտվության ժամանած անձանց համար: Միգրացիոն համակարգի ամբողջականությունն ապահովելու նկատառումով անհրաժեշտ է, որ Ավստրալիա մուտք գործող անձինք ունենան համապատասխան իրավունքը: Առանց թույլտվության ժամանած անձանց կալանավորումն ապահովում է, որ նրանք չմտնեն Ավստրալիայի տարածք նախքան իրենց պահանջների պատշաճ գնահատումը և իրենց մուտքի իրավունքի հիմնավորումը: Այն նաև թույլ է տալիս, որ այդ անձինք հեշտությամբ հասանելի լինեն պաշտոնատար անձանց համար իրենց դիմումներն ուսումնասիրելու և դրանց անհապաղ ընթացք տալու, իսկ եթե իրենց պահանջները հիմնավորված չեն, ապա հնարավորինս շուտ երկրից հեռացնելու նպատակով: Մասնակից պետությունը պնդում է, որ առանց թույլտվության ժամանած անձանց կալանավորումը համահունչ է ինքնիշխանության հիմնարար չափանիշներին, այդ թվում՝ իր երկրի տարածք մուտքը վերահսկելու իրավունքին: Քանի որ մասնակից պետությունը ինքնություն հաստատող քարտերի որևէ համակարգ կամ սոցիալական ծառայություններից օգտվելու նման համակարգ չունի, ապօրինի ներգաղթյալներին համայնքում հայտնաբերելու, վերահսկելու և բռնելու խնդիրն էլ ավելի է դժվարանում՝ համեմատած նման համակարգ ունեցող երկրների հետ:

¶ 4.27. Մասնակից պետությունը, ելնելով իր ունեցած փորձից, եզրակացրել է, որ եթե կալանավորումը խիստ չվերահսկվի, ապա մեծ հավանականություն կա, որ մարդիկ փախուստի դիմեն և թաքնվեն համայնքի ներսում: Արձանագրվել է մի քանի դեպք, երբ առանց թույլտվության ժամանածներից մի քանիսը, ովքեր տեղավորվել են միգրանտների համար հատկացված անցանկապատ կացարաններում միայն պարբերաբար ներկայանալու և գրանցվելու պարտավորությամբ, փախուստի են դիմել: Նաև դժվար է եղել հասնել տեղի էթնիկական համայնքների համագործակցությանը նման անձանց հայտնաբերելու հարցում: Այսպիսով, հիմնավոր կասկած կար, որ եթե այդ անձինք չկալանավորվեն, այլ ժամանակավոր ազատ արձակվեն՝ համայնքում ապրելու համար, ապա դա նրանց համար զորեղ շարժառիթ կդառնար ազատ արձակվելու պայմանները խախտելու և համայնքի ներսում անհետանալու համար: Մասնակից պետությունը կրկնում է, որ երկիր մտնելու կամ երկրում մնալու բոլոր դիմումները մանրամասն ուսումնասիրվում են անհատական կարգով, և այդպիսով առանց թույլտվության ժամանած անձանց կալանավորելու քաղաքականությունը ողջամիտ է, համարժեք և անհրաժեշտ բոլոր հանգամանքներում: Ուստի այն դրույթները, որոնց համաձայն՝ հեղինակը ենթարկվել է կալանքի, թեև պարտադիր են եղել, սակայն ոչ կամայական՝ լինելով արդարացված և համաչափ վերը շարադրված պատժառնություն:

¶ 4.28. Ի լրումն՝ հեղինակի կալանավորման անհատական գործոնները նույնպես վկայում են կամայականության բացակայության մասին: Նա ժամանել է այցելուի մուտքի արտոնագրով, սակայն առանց օդանավի հետդարձի տոմսի, իսկ երբ նրան օդանավակայանում հարցեր են տվել, ապա պարզվել է, որ նա իր արտոնագրի հայտում արել է մի քանի կեղծ հայտարարություններ: Սրանց թվում է այն պնդումը, որ իր մայրն ու հայրը բնակվում էին Իրանում, մինչդեռ իրականում հայրը մահացել է, իսկ մայրը բնակվում է Ավստրալիայում և դիմել է փախստականի կարգավիճակ ստանալու համար: Նա նաև նշել էր, որ այցելության ժամանակ իր մոտ ունենալու է 5 000 դոլար գումար, սակայն ժամանել է առանց դրամական միջոցների և այդպիսով ստել է հարցազրույցի ժամանակ: Նա նաև գնել է վերադարձի տոմս մուտքի արտոնագիր ստանալու համար, սակայն վերադարձրել էր այն, երբ մուտքի արտոնագիրն արդեն տրված էր: Այսպիսով, հիմնավոր կասկած կար, որ եթե նրան թույլատրվեր մուտք գործել Ավստրալիա, ապա նա կդառնար ապօրինի երկիր ներթափանցած անձ: Համապատասխանաբար, քանի որ կալանքն անհրաժեշտ էր փախուստը կանխելու համար, այն չէր կարող ոչ անհամաչափ, ոչ էլ անկանխատեսելի համարվել՝ ելնելով հետապնդվող նպատակից և հաշվի առնելով, որ կալանավորման մասին դրույթներն արդեն որոշ ժամանակ ուժի մեջ են եղել և հրապարակվել են:

¶ 4.29. Մասնակից պետությունը նաև համարում է, որ փախստականի կարգավիճակ ստանալու դիմումն ուսումնասիրվելու ընթացքում գոյություն են ունեցել նաև շարունակական կալանքը հիմնավորելու այլ հիմքեր: Չէր ակնկալվում, որ նրա դիմումի ընթացքն անհիմն կերկարաձգվի այնքան, որ նպատակահարմար լինի կարգադրել նրան կալանքից ազատ արձակել: Ինչպես որոշում կայացնող առաջին մարմնի, այնպես էլ վերաքննիչ մարմնի կողմից դիմումի ուսումնասիրումն ու վերանայումն իրականացվել են արագ, ինչի արդյունքում հեղինակը կալանքի տակ է պահվել միայն երկու տարվանից փոքր-ինչ ավելի ժամանակամիջոցում: Սկզբնական դիմումն ընթացք է ստացել երկու ամսից պակաս ժամկետում, իսկ դրանով կայացրած առաջին որոշման վերանայումը տևել է մոտ վեց շաբաթ: Փախստականի կարգավիճակ ստանալու համար 1992 թ. հուլիսի 23-ի ամսաթվով առաջին դիմումի ներկայացման պահից մինչև դիմումի սկզբնական ուսումնասիրության և մի քանի վարչական վերանայումների ավարտը պահանջվել է մեկ տարուց պակաս ժամանակ:

¶ 4.31. Թեպետև մասնակից պետությունը համաձայն չէ կոմիտեի տեսակետին «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործում, նշում է, որ այդ գործի համեմատ այստեղ կան փաստացի տարբերություններ: Առաջին՝ կալանավորման տևողությունն զգալիորեն կարճ է՝ 26 ամիս՝ 4 տարվա փոխարեն: Երկրորդ՝ սկզբնական դիմումն ուսումնասիրելու հա-

մար պահանջված ժամկետը զգալիորեն կարճ է՝ 6 շաբաթ՝ 77 շաբաթվա փոխարեն: Երրորդ՝ այս գործում խոսք չի եղել, որ հեղինակի կալանավորման ժամկետը և պայմանները թույլ չեն տվել նրան օգտվել իրավաբանական խորհրդատվությունից կամ իր ընտանիքի անդամների այցելություններից: Եվ, վերջապես, նա իրականում ազատ է արձակվել կալանավորման սովորական վայրերից և անցել իր ընտանիքի անդամների խնամակալության տակ՝ ելնելով գործադիր հայեցողության կիրառման դրույթից³⁰:

ՄԻԿ-ը վերահաստատեց «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով իր որդեգրած դիրքորոշումը և որոշում կայացրեց հոգուտ հեղինակի:

¶ 8.2. Ինչ վերաբերում է կալանավորման սկզբնական ժամանակահատվածին, ապա կոմիտեն հիշեցնում է, որ ըստ 9-րդ հոդվածի 1-ին կետի շուրջ իր ունեցած նախադեպային բազայի, որպեսզի կալանավորումը կամայական չորակվի, այն պետք է շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ պետությունը կարող է պատշաճորեն արդարացնել այդ կալանավորումը: Տվյալ դեպքում հեղինակի՝ որպես մուտքի արտոնագիր չունեցող և քաղաքացի չհանդիսացող անձի պարտադիր կալանավորումը շարունակվել է մինչև այն պահը, երբ նա երկրից արտաքսվել է կամ ստացել կացության թույլտվություն: Թեև մասնակից պետությունը նշում է հատուկ պատճառներ անձի կալանավորումն արդարացնելու համար (4.28 կետը և այլն), կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը ցույց չի տվել այն պատճառները, որոնք արդարացնում են հեղինակի շարունակական կալանավորումը՝ անցած ժամանակի և ի հայտ եկած հանգամանքների լույսի ներքո: Մասնավորապես, մասնակից պետությունը ցույց չի տվել, որ հեղինակի հատուկ պարագայում չեն եղել նույն նպատակին հասնելու պակաս ազդեցիկ միջոցներ, ասել է թե՛ մասնակից պետության ներգաղթային քաղաքականությանը համապատասխան, օրինակ՝ իրավասու մարմիններ ներկայանալու պարտավորության կամ հեղինակի վիճակի վատթարացումը հաշվի առնող այլ պայմանների կիրառմամբ: Այս հանգամանքներում, անկախ սկզբնական կալանավորման պատճառներից, ներգաղթային քաղաքականությամբ պայմանավորված կալանավորումը շարունակելն ավելի քան երկու տարվա ընթացքում՝ առանց անհատական հիմնավորման կամ նյութաիրավական դատական ուսումնասիրության հնարավորության, կոմիտեի կարծիքով՝ կամայական կալանավորում է և խախտում է 9-րդ հոդվածի 1-ին կետը:

[11.17Ա] Կոմիտեն կրկին եզրակացրեց, որ Ավստրալիան թույլ է տվել 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում նույն պատճառաբանությամբ, ինչ «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի», «Կ.-ն ընդդեմ Ավստրալիայի» և «Բաբանն ընդդեմ Ավստրալիայի» (*Baban v Australia, 1014/01*) գործերում³¹: Սակայն պրն Վեջվուդն իր անհամաձայնությունը հայտնեց հետևյալ ձևակերպումներով.

...Հեղինակը չի պնդում, որ ապաստան ստանալու իր դիմումի մերժումը Ավստրալիայի կողմից կամայական է և չի վիճարկում նախարարի՝ մարդասիրական աջակցության մերժումը: Փոխարենը՝ նա պնդում է, որ իր՝ որպես ապաստան հայցող անձի կալանավորումը կամայական է և անխելամիտ, քանզի իր պարագայում վերահսկմամբ պայմանական ազատ արձակումը բավարար կլիներ իր փախուստը կանխելու համար, իսկ դատարանը պետք է հարցը քննելու հնարավորություն ունենար: Այս պնդումը կարող է չափազանց համարձակ համարվել, եթե հաշվի առնենք, որ դրա հեղինակը հետագայում դիմել է փախուստի (Բաբանին հաջողվել էր փախուստի դիմել կալանավայրից, և նրա գտնվելու վայրն անհայտ էր որոշումը կայացնելու պահին): Սակայն ամեն դեպքում Ավստրալիայի խորհրդարանը կարող էր հիմնավորված եզրակացության հանգել, որ ապօրինաբար երկիր մուտք գործող այն անձինք, որոնց ապաստան հայցելու դիմումները մերժվել են վարչական կամ ստորին ատյանի դատարաններում, դժվար թե կրկին ներկայանային երկրից արտաքսվելու համար, երբ բողոքարկման իրենց մատչելի հնարավորությունները սպառված լինեին: Դաշնագրով խորհրդարանի իրավասություններն այն հարցում, թե առավելագույնը որքան ժամանակ կարելի է կալանքի տակ պահել անհաջողակ ապաստան հայցողներին, զուրկ են սահմանափակումներից, երբ անհմար է նրանց վերադարձնել մեկ այլ երկիր: Դաշնագիրը չի արգելում նաև, որ որևէ ողջամիտ ժամկետ սահմանվի բողոքարկումների ուսումնասիրման համար, երբ դիմումատուին գտնվում է կալանքի տակ: Սակայն այս դիմումի հեղինակը նման փաստեր չի ներկայացնում:

Մենք կարող ենք ցանկանալ, որ աշխարհում չլինեն սահմաններ, և այն պայմանները, որոնք ապաստան հայցելու հիմնավորված պատճառ են դառնում, այլևս գոյություն չունենան: Սակայն հատկապես հիմա պետք է ընդունենք, որ պետություններն իրավասու են վերահսկելու մուտքն իրենց երկրի տարածք և կարող են այդ նպատակով ողջամիտ օրենսդրական լծակներ օգտագործել:

³⁰ Տե՛ս նաև այստեղ՝ [9.49] և [9.81]:

³¹ Պարբ. 7.2:

[11.18] Կոմիտեն մի շարք եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել ներգաղթյալների երկարատև կալանավորման կապակցությամբ³²: Օրինակ՝ ճապոնիայի վերաբերյալ իր 1998 թ. մեկնաբանություններում ՄԻԿ-ն իր մտահոգությունը հայտնեց այն փաստի կապակցությամբ, որ ապաստան հայցողները «պահվել են վեց ամսից ավելի, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ երկու տարի»³³: Շվեյցարիայի առնչությամբ կոմիտեն կարծես որդեգրել էր նույնիսկ ավելի խիստ մոտեցում³⁴:

¶ 15. Կոմիտեն անհամաձայնացած նշում է, որ Շվեյցարիայի օրենսդրությունը թույլ է տալիս կացության ժամանակավոր կամ մշտական թույլտվություն չունեցող օտարերկրացիներին, ներառյալ նաև ապաստան հայցողներին և 15 տարին չլրացած անչափահասներին երեք ամիս ժամկետով ենթարկել վարչական կալանքի մինչև նրանց կացության ժամանակավոր թույլտվության վերաբերյալ որոշում կայացնելը, ինչպես նաև ևս վեց ամսով կամ դատական մարմինների համաձայնությամբ նույնիսկ մեկ տարով՝ նախքան նրանց արտաքսումը երկրից: Կոմիտեն նշում է, որ այս ժամկետները պահանջվածից ավելի երկար են, մանավանդ երբ կալանավորումը տեղի է ունենում նախքան արտաքսումը երկրից:

Միացյալ Թագավորության առնչությամբ ՄԻԿ-ն արտահայտել է այն մտահոգությունը, որ ապաստան հայցողների կալանավորումը «տևում է երկար ժամանակ, երբ արտաքսումը երկրից անհնար է իրավական կամ այլ նկատառումներով»՝ նույնիսկ այն իրավիճակներում, երբ նրանց ապաստան ստանալու դիմումն է վերջո մերժվել է³⁵:

[11.19] «ԺԱԼՈՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (JALLOH v NETHERLANDS, 794/98)

Ապաստան հայցող հեղինակը բողոքում է Նիդեռլանդների կառավարության կողմից իրականացված իր երեք ու կես ամսվա կալանավորման պատճառով: Մասնակից պետությունը պատասխանել է, որ նրան կալանավորելու որոշումը կայացվել է, երբ նա փախուստի է դիմել բաց հաստատությունից նրա ինքնությունը հաստատելու առումով առաջացած խնդիրներից հետո, և «լուրջ կասկածներ են եղել ենթադրելու, որ նա կխուսափի երկրից արտաքսվելուց»³⁶ այդ մասին կարգադրություն տրվելու դեպքում: Նա ազատ է արձակվել, հենց որ պարզ է դարձել, որ «նրան արտաքսելու որևէ իրատեսական հեռանկար այլևս չկա»³⁷: ՄԻԿ-ը որոշեց, որ կալանավորման այս դեպքը 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չէ³⁸:

¶ 8.2. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, որ 9-րդ հոդվածով ամրագրված իր իրավունքները ոտնահարվել են, ապա կոմիտեն նշում է, որ նրա կալանավորումն օրինական է Նիդեռլանդների օրենսդրությամբ, այն է՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 26-րդ բաժնի դրույթներով: Կոմիտեն նաև նշում է, որ հեղինակի կալանավորման հարցը երկու անգամ քննվել է դատարանների կողմից. առաջին անգամ կալանավորման սկզբից տասներկու օր անց և երկու ամիս անց: Երկու դեպքում էլ դատարանը որոշեց, որ հեղինակի կալանավորման շարունակությունն օրինական է, քանի որ նա արդեն նախկինում դիմել է փախուստի, կասկածներ կային նրա ինքնության վերաբերյալ, և գոյություն ունեին արտաքսման ողջամիտ հեռանկարներ, քանզի այդ պահին դեռևս ընթանում էր կալանավորի ինքնության հաստատումը: Ուստի հարց է, թե որքանով է նրա կալանավորումը կամայական: Վերհիշելով նախկին գործերով ունեցած իր նախադեպային բազան՝ կոմիտեն նշում է, որ «կամայականությունը» պետք է մեկնաբանվի

³² Նախադեպային պրակտիկայի համեմատության համար տե՛ս *Amuur v France* (1996) 22 EHRR 533 և *Chahal v United Kingdom* (1997) 23 EHRR 413: Տե՛ս նաև *Rafael Merrer-Mazorra et al (United States)*, գործ 9903, գեկույց թիվ 51/01, 2000 թ. Միջամերիկյան մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի տարեկան գեկույց: OEA/ser.L/V/II.111 doc. 20 rev., 4 ապրիլի 2001 թ.: Տե՛ս նաև նույն տարեկան գեկույցում՝ էջ 1415, Chapter VI, Special Studies, Second Progress Report of the Special Rapporteurship on Migrant Workers and their Families in the Hemisphere, Section IX, para 9:

³³ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 102, պարբ. 19: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Մեծ Բրիտանիայի վերաբերյալ (Հոնկոնգ) (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 57, պարբ. 17: Եզրափակիչ դիտարկումներ Մեծ Բրիտանիայի վերաբերյալ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 55, պարբ. 16: Եզրափակիչ դիտարկումներ ԱՄՆ-ի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50, պարբ. 18 և 33: Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 58, պարբ. 15:

³⁴ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ՝ CPR/C/79/Add. 70:

³⁵ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UK, պարբ. 16:

³⁶ Պարբ. 4.2:

³⁷ Պարբ. 2.3, ըստ հեղինակի:

³⁸ Հեղինակը չկարողացավ ապացուցել իր՝ որպես անչափահասի իրավունքների խախտումը՝ հակառակ 24-րդ հոդվածի դրույթների: Տե՛ս [21.10]:

շատ ավելի լայն իմաստով, քան պարզապես որպես «օրենքին հակասող», և պետք է ընդգրկի ոչ խելամիտ մոտեցման տարրեր: Հաշվի առնելով հեղինակի փախուստը բաց հաստատությունից, որտեղ նա տեղավորված էր իր ժամանելու պահից ի վեր մոտ 11 ամիս, կոմիտեն կարծում է, որ ողջամիտ կլինեն կալանավորել նրան սահմանափակ ժամկետով, մինչև նրա գործով ընթացող վարչական գործողությունների ավարտը: Երբ երկրից նրա արտաքսվելու ողջամիտ հեռանկար այլևս չի եղել, նրա կալանավորումը դադարեցվել է: Այս պարագայում կոմիտեն կարծում է, որ հեղինակի կալանավորումը կամայական չէ և, հետևաբար, չի կարող դիտվել որպես դաշնագրի 9-րդ հոդվածի խախտում:

[11.20] «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործում ՄԻԿ-ը պարզ նշել է, որ կալանավորումը կամայական է, եթե այն անհամաչափ է տվյալ գերակշիռ հանգամանքներում: Ուստի կալանքի տակ պահվելու ժամկետը չպետք է լիովին անհամաչափ լինի կատարված հանցագործությանը: Պատիժը պետք է համապատասխանի հանցագործությանը: Այս առումով ուշագրավ է ՄԻԿ-ի հետևյալ մեկնաբանությունը, որն արվել է 2000 թ. Ավստրալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում³⁹.

¶ 522. Արևմտյան Ավստրալիայում և հյուսիսային տարածքներում գործող օրենսդրությունը, որը նախատեսում է պարտադիր բանտարկություն և շատ դեպքերում հանգեցնում է նրան, որ նշանակվում են կատարված հանցագործությունների ծանրությանն անհամաչափ պատիժներ, մի բան, որ չի համապատասխանում մասնակից պետության՝ քրեական արդարադատության համակարգում բնիկ ժողովուրդների ներկայացուցիչների չափից ավելի ներկայության դեմ ուղղված ռազմավարությունների⁴⁰ և լուրջ հարցեր է առաջացնում դաշնագրի տարբեր հոդվածներին դրանց համապատասխանության առումով:

Մասնակից պետությանը կոչ է արվում վերագնահատել պարտադիր բանտարկություն պահանջող օրենսդրությունը՝ դաշնագրի բոլոր իրավունքների իրացումն ապահովելու համար:

[11.20Ա]

**ԲՈԼՈՐ ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 19-ՐԴ ՀՈԴՎԱԾ**

2. Միգրանտ աշխատողի կարգավիճակին վերաբերող մարդասիրական նկատառումները, մասնավորապես նրա կացության և աշխատանքի հնարավորության մասով, պետք է հաշվի առնվեն միգրանտ աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի կողմից կատարված քրեական հանցագործության համար պատիժ սահմանելիս:

Միգրանտ աշխատողների մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ կետը, որն ուժի մեջ մտավ 2003 թ. հունիսի 1-ին, իր համարժեքը չունի ՔՔԻՄԴ-ում: Այն նախատեսում է մի պահանջ, որով մարդասիրական նկատառումները պետք է հաշվի առնվեն միգրանտ աշխատողների կամ նրանց ընտանիքի անդամների կողմից կատարված քրեական հանցագործությունների դիմաց պատիժ սահմանելիս: ՄԻԿ-ը կարող էր հայտնվել այս դրույթի ազդեցության տակ և որպես պարտականություն ընկալել այն, որ մարդասիրական նկատառումները պետք է միշտ հաշվի առնվեն որևէ մեկի նկատմամբ քրեական դատավճիռ կայացնելիս: Օրինակ՝ դատավճիռի հետևանքները անձանցից կախյալների համար կարող են պարտադիր նկատառում լինել դատավճիռը կայացնող դատավորի համար: Թերևս վիճահարույց հարց է՝ արդյոք կայացված դատավճիռը՝ առանց հնարավոր մարդասիրական հետևանքները հաշվի առնելու, կարո՞ղ է «կամայական» համարվել և հակասել 9-րդ հոդվածի 1-ին կետին:

[11.21]

«Ա.-ն ընդդեմ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ» (A v NEW ZEALAND, 754/97)

Այս գործով հեղինակը բանտարկության է դատապարտվել հարձակման և ահաբեկման համար: Բանտարկության ընթացքում Նոր Զելանդիայի «Հոգեկան առողջության մասին» օրենքով նա պետք է կա-

³⁹ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, կետ 522: Տե՛ս նաև [8.29]:

⁴⁰ Տե՛ս նաև [23.40]:

լանքի տակ առնվելը հիվանդանոցի առավելագույն անվտանգության բաժնում: Հեղինակը պնդում էր, որ մասնակից պետությունը պատասխանատու է 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտման համար, քանի որ 1984-1993 թթ. նա ապօրինաբար և կամայականորեն պահվել է հոգեբուժական հաստատություններում: Մասնավորապես նա առաջադրեց հետևյալ պնդումները.

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ նրա սկզբնական կալանավորումը «Հոգեկան առողջության մասին» օրենքով ապօրինի է, և դատավոր Անվինը, համոզված չլինելով, որ ինքը հոգեկան խանգարում ունի, գործել է կամայականորեն ու ապօրինաբար և չի արդարացրել իրեն:

¶ 3.2. Հեղինակը նաև պնդում է, որ հոգեբուժական հանձնաժողովի տարեկան ուսումնասիրություններն անարդար են այն տեսանկյունից, որ իրեն հասանելի չէին այն փաստաթղթերը, որոնց վրա նրանք հիմնվում էին, և ինքն ի վիճակի չէր հօգուտ իրեն հանդես եկող վկա կանչելու: Իր կարծիքով՝ այս լուսնները շինծու էին և կազմակերպված էին իր ապօրինի կալանավորումը շարունակելու նպատակով:

¶ 3.3. Ի նպաստ իր կարծիքի՝ հեղինակը բերում է բազմաթիվ հոգեբույժների վկայություններն առ այն, որ ինքը հոգեկան խանգարում չունեի և ենթակա չէր կալանավորման: Նա շեշտում է, որ իր բանտարկությունը շարունակվում էր՝ չնայած բժշկական առկա ապացույցներին, որ իր հոգեկան վիճակը կալանավորում չէր պահանջում, և հակառակ այն հանգամանքին, որ ինքը ոչ մի բռնի գործողություն չէր կատարել: Նա պնդում է, որ Լեյք Էլիս հիվանդանոցում իր կալանավորման սկզբից տարել է հոգեկան խանգարում, ինչը պայմանավորված էր իր ապօրինի և անհիմն կալանավորմամբ՝ շրջապատված հոգեկան խանգարում ունեցող և նախկինում բռնարարքներ կատարած մարդկանցով, որոնք սպառնում էին իրեն:

ՄԻԿ-ը որոշեց, որ 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել:

¶ 7.2. Կոմիտեի առջև դրված հիմնական հարցն այն է, թե արդյոք հեղինակի՝ 1984 թ. մինչև 1993 թ. տևած կալանավորումը «Հոգեկան առողջության մասին» օրենքի դրույթներով դաշնագրի և, մասնավորապես, 9-րդ հոդվածի խախտո՞ւմ է: Կոմիտեն նշում է, որ հեղինակի զննումը «Հոգեկան առողջության մասին» օրենքով տեղի է ունեցել այն ժամանակ, երբ նա ցուցաբերել է սպառնալի և ագրեսիվ վարքագիծ, և նրան մեկուսացնելու մասին կարգադրությունը տրվել էր օրենքի համաձայն՝ երեք հոգեբույժի եզրակացության հիման վրա: Ավելին՝ հոգեբուժական հանձնաժողովը պարբերաբար զննել է հեղինակի հոգեվիճակը: Ուստի կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակի ազատագրվումը ապօրինի կամ կամայական չի եղել և այդպիսով դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չէ:

Պարոնայք Պոկարը և Շայնինը մասնավոր կարծիք հայտնեցին և համաձայնեցին, որ 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Մենք համաձայն ենք կոմիտեի որդեգրած ընդհանուր ելակետերին: Հիվանդի կամքին հակառակ բուժումը հոգեբուժական հաստատությունում ազատագրվման ձև է և ընկնում է դաշնագրի 9-րդ հոդվածի սահմանման տակ: Առանձին դեպքերում կարող է օրինական հիմք լինել նման կալանավորման համար, իսկ ներպետական օրենսդրությունը պետք է ամրագրի անձին պարտադիր հոգեկան բուժում նշանակելու չափանիշները և ընթացակարգը: Արդյունքում նման բուժումը 9-րդ հոդվածի 1-ին կետով կարող է դիտվել որպես օրինական ազատագրվում:

Հարկադիր հոգեկան բուժման՝ որպես ազատագրվման տեսակի բնույթն այն է, որ բուժումը օրինական է միայն այնքան ժամանակ, որքան գոյություն ունեն այն պահանջող բժշկական չափորոշիչները: Կալանավորումը շարունակելու համար պետք է լինի բժշկական և գիտական հիմքերի պարտադիր ու պարբերական զննում, որպեսզի հոգեկան բուժումը չդառնա 9-րդ հոդվածի 1-ին կետով արգելված կամայական կալանավորում:

Սույն գործում մենք բավարարված ենք նրանով, որ Նոր Զելանդիայի օրենսդրությունը, որն էլ կիրառվել էր այս պարագայում, համապատասխանում է 9-րդ հոդվածի 1-ին կետի բոլոր պահանջներին: Հեղինակը պարբերաբար ենթարկվել է հոգեբույժների հանձնաժողովի փորձագիտական զննմանը: Թեև տարեկան մեկ անգամ զննումը բավական փոքր հաճախականություն է, սակայն գործի փաստերը չեն հիմնավորում այն եզրահանգումը, թե դա ինքնին հանգեցրել է դաշնագրի խախտման:

[11.22] Նոր Զելանդիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշեց⁴¹.

¶ 14. Կոմիտեն մտահոգված է «Քրեական դատավարության մասին» օրենքի դրույթներով, որը նախատեսում է անորոշ տևողությամբ դատավճիռ նույնիսկ մեկ անգամ լուրջ հանցանքի համար դատապարտված այն հանցագործների համար, որոնք հավանաբար կրկին նմանօրինակ հանցանք կգործեն: Հնարավոր ապագա հանցանքների համար պատժի սահմանումը չի համապատասխանում դաշնագրի 9-րդ և 14-րդ հոդվածներին:

Այսպիսով, 9-րդ հոդվածի դրույթների հետ անհամատեղելի է այն, որ մարդկանց դատապարտեն և կալանավորեն կրկին հանցանք գործելու հավանականության հիման վրա⁴²: Անձին չի կարելի կալանավորել և դատապարտել ապագայում «վտանգավոր լինելու» հավանականության հիման վրա: Այդուհանդերձ, «Ա.-ն ընդդեմ Նոր Զելանդիայի» (*A v New Zealand, 754/97*) գործը հաստատում է, որ կարող են ի հայտ գալ հանգամանքներ, որոնց առկայությամբ կալանավորումը հոգեբուժական հաստատություններում ինքնին արդարացված է ՔՔԻՄԴ-ով, օրինակ՝ անձի վտանգավորությունը հաստատված լինելու պարագայում: Հետևաբար, վտանգավոր լինելու հանգամանքի ընդունումը կարող է այն գործոնը դառնալ, որը կարդարացնի անձի հարկադիր կալանավորումը հոգեբուժական հաստատությունում՝ ի տարբերություն բանտում կալանավորման:

[11.23] Իռլանդիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն հայտնեց այն օրենքների առնչությամբ, որոնք թույլ են տալիս անձին ձերբակալել այն բանի համար, որ «պատրաստվում է հանցանք գործել»⁴³: Կրկին ասենք, որ պատժիչ-կանխարգելիչ կալանավորումն անհամատեղելի է 9-րդ հոդվածի հետ:

Քրեական մեղադրանքի մասին տեղեկացված լինելու իրավունքը՝ 9-րդ հոդվածի 2-րդ կետ

[11.24] 9-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է, որ քրեական մեղադրանքով յուրաքանչյուր ձերբակալված անձ պետք է սեղմ ժամկետներում տեղեկացվի իր դեմ առաջադրված մեղադրանքի մասին: Անձը պետք է ողջամտության սահմաններում տեղյակ լինի իր ձերբակալման ստույգ պատճառներին: Օրինակ՝ բավարար չէ հայտնել անձին, որ նա ձերբակալվում է «անվտանգության շտապ միջոցառումների շրջանակներում»՝ չնշելով գործի էությունը» և ձերբակալության պատճառները⁴⁴:

[11.25] «ԲեՐԼԻՆ ընդդեմ ԾԱՍԱՅԿԱՅԻ» (KELLY v JAMAICA, 253/87)

Այս գործում խոսքը ՔՔԻՄԴ-ի բազմաթիվ խախտումների մասին էր⁴⁵: Խախտումներից մեկը վերաբերում էր այն հանգամանքին, որ Բեռլին քսանվեց օրվա ընթացքում չի տեղեկացվել իր դեմ առաջադրված մեղադրանքի մասին: Կոմիտեն 9-րդ հոդվածի 2-րդ կետի և 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի առնչությամբ արեց հետևյալ մեկնաբանությունները⁴⁶.

¶ 5.8. 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետը պահանջում է, որ քրեական մեղադրանքի ենթակա ցանկացած անձ սեղմ ժամկետներում և մանրամասնորեն տեղեկացվի իր դեմ առաջադրված մեղադրանքի մասին: Այնուամենայնիվ, սեղմ ժամկետներում տեղեկացնելու պահանջը կիրառվում է միայն այն դեպքում, երբ անձի դեմ պաշտոնապես առաջադրվում է քրեական մեղադրանք: Սա չի վերաբերում ոստիկանության քննության ընթացքում կալանքի տակ առնված

⁴¹ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 47, պարբ.14:

⁴² Այս առումով տե՛ս Ավստրալիայի վերին դատարանի որոշումը այս գործով՝ *Kable v Director of Public Prosecutions (NSW)* (1996) 189 CLR 51: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Պորտուգալիայի վերաբերյալ (Մակաո), (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 115, պարբ. 12:

⁴³ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, կետ 422-451, 15:

⁴⁴ Այստեղ՝ *Drescher Caldas v Uruguay* (43/79), պարբ.13.2:

⁴⁵ Տե՛ս օրինակ՝ այստեղ՝ [14.83] և [14.113]:

⁴⁶ Ընդհանրապես 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի վերաբերյալ տե՛ս այստեղ՝ [14.74-14.75]:

ամձանց, իսկ նման իրավիճակը կարգավորվում է դաշնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետով: Տվյալ դեպքում մասնակից պետությունը չի հերքել, որ հեղինակին ձերբակալելուց հետո մի քանի շաբաթվա ընթացքում նա չի տեղեկացվել ո՛չ իր ձերբակալության մանրամասների, ո՛չ այն հանցագործության հանգամանքների մասին, որի կապակցությամբ կալանավորվել է, ո՛չ էլ տուժողի ինքնության մասին: Կոմիտեն եզրակացնում է, որ 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները չեն բավարարվել:

[11.26] «ԳՐԱՆՏՆ ԸՆԴՂԵՄ ԾԱՍԱՅԿԱՅԻ» (GRANT v JAMAICA, 597/94)

Գործին առնչվող հանգամանքները պարզ ներկայացված են ՄԻԿ-ի՝ 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում արձանագրող այս եզրակացությունում:

¶ 8.1. Ինչ վերաբերում է հեղինակի հայտարարություններին 9-րդ հոդվածի խախտման վերաբերյալ, ապա կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունն ազատված չէ 9-րդ հոդվածի 2-րդ կետով ստանձնած պարտավորությունից՝ անձին իր ձերբակալման պատճառների և իր դեմ առաջադրվող մեղադրանքի մասին տեղեկացնելուց, եթե ձերբակալող աշխատակիցը կարծում է, թե ձերբակալվողը տեղյակ է այդ պատճառներին: Տվյալ դեպքում հեղինակը ձերբակալվել է սպանությունից մի քանի շաբաթ անց, որի համար նրան հետագայում մեղադրել են, և մասնակից պետությունը չէր վիճարկում այն հանգամանքը, որ հեղինակին տեղեկացրել են իր ձերբակալության պատճառների մասին միայն յոթ օր անց: Տվյալ պարագայում կոմիտեն եզրակացնում է, որ տեղի է ունեցել 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

[11.27] Համեմատել՝ *Գրանտի* գործով կոմիտեի որոշումը «Ստեֆենսն ընդդեմ ճամայկայի» (*Stephens v Jamaica, 373/89*) և «Գրիֆինն ընդդեմ Իսպանիայի» (*Griffin v Spain, 493/92*) գործերով կայացրած որոշումների հետ: «Ստեֆենսն ընդդեմ ճամայկայի» գործում կոմիտեն հերքել է այն պնդումը, թե տեղի է ունեցել 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, այն հիմնավորմամբ, որ հեղինակը լիովին տեղյակ է եղել իր կալանավորման պատճառներին, երբ հանձնվել է ոստիկանությանը, իսկ քննիչը զգուշացրել էր նրան այդ մասին, երբ նա եղել է կալանքի տակ:

«ԳՐԻՖԻՆՆ ԸՆԴՂԵՄ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (GRIFFIN v SPAIN, 493/92)

¶ 9.2. Հեղինակի այն պնդման առնչությամբ, որ իր ձերբակալության պահին թարգմանիչ չի եղել, և իրեն չեն հայտնել իր ձերբակալության պատճառները և իր դեմ առաջադրվող մեղադրանքները, կոմիտեն նշում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկություններով՝ հեղինակը ձերբակալվել է և կալանքի տակ առնվել 1991 թ. ապրիլի 17-ին՝ առավոտյան ժամը 11-ն անց 30-ին, այն բանից հետո, երբ ոստիկանությունը հեղինակի ներկայությամբ խուզարկել էր շարժական տնակը և այնտեղ թմրամիջոցներ հայտնաբերել: Ոստիկանության զեկույցներից երևում է, որ ոստիկանությունը հրաժարվել է ցուցմունք վերցնել հեղինակից թարգմանչի բացակայությամբ, իսկ հաջորդ առավոտյան թմրամիջոցները կշռվել են հեղինակի ներկայությամբ: Նրան տարել են գործը քննող դատավորի մոտ, որտեղ թարգմանչի միջոցով տեղեկացրել են նրա դեմ բերված մեղադրանքի մասին: Կոմիտեն նշում է, որ թեև ձերբակալության պահին թարգմանիչ չի եղել, սակայն ողջամիտ չէր լինի պնդել, թե հեղինակը տեղյակ չի եղել իր ձերբակալության պատճառներին: Ամեն դեպքում նրան սեղմ ժամկետներում իր իսկ լեզվով տեղեկացրել են իր դեմ բերված մեղադրանքների մասին: Ուստի կոմիտեն կարծում է, որ դաշնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում տեղի չի ունեցել:

[11.28] «ՀԻԼԸ և ՀԻԼՆ ԸՆԴՂԵՄ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (HILL and HILL v SPAIN, 526/93)

9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման մասին հայտարարությամբ կոմիտեն որոշում կայացրեց հօգուտ մասնակից պետության:

¶ 12.2. Դաշնագրի 9-րդ հոդվածի ենթադրյալ խախտումների առնչությամբ՝ ներկայացված հեղինակների կողմից, կոմիտեն համարում է, որ հեղինակների ձերբակալությունն ապօրինի կամ կամայական չի եղել: Դաշնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետը պահանջում է, որ յուրաքանչյուր ձերբակալված անձ ձերբակալության պահին տեղեկացվի իր ձերբակալության պատճառների մասին և սեղմ ժամկետներում տեղեկացվի իր դեմ առաջադրված մեղադրանքի մասին: Հեղինակները մասնավորապես նշում են, որ իրենց ձերբակալության պահից անցել է համապատասխանա-

բար երեք ու ութ ժամ, երբ իրենց տեղեկացրել են իրենց ձերբակալության պատճառների մասին, և իրենք որակյալ թարգմանչի բացակայության պատճառով չէին հասկացել իրենց ներկայացված մեղադրանքները: Մասնակից պետության ներկայացրած փաստաթղթերը վկայում են, որ ոստիկանությունում ձևակերպումները քննարկման են ներկայացվել առավոտյան ժամը 6-ից մինչև ժամը 9-ը, երբ եկել է թարգմանիչը, որպեսզի մեղադրյալը պատշաճ կերպով տեղեկացվի իրավախորհրդատուի ներկայությամբ: Ավելին՝ մասնակից պետության ուղարկած փաստաթղթերից երևում է, որ թարգմանիչը պատահական թարգմանիչ չէր, այլ ըստ կանոնակարգի նշանակված պաշտոնական թարգմանիչ, ինչը պետք է երաշխավորեր նրա պատրաստվածությունը: Այս պարագայում կոմիտեն կարծում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերից չի երևում, որ տեղի է ունեցել դաշնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

Հիլ եղբայրները պնդում էին, որ իրենց ձերբակալման պահից անցել է 8 ժամ, մինչև իրենք տեղեկացվել են ձերբակալման պատճառների մասին: Կոմիտեն որոշեց ընդունել մասնակից պետության բերած ապացույցներն առ այն, որ այդ ժամանակամիջոցը եղել է ընդամենը երեք ժամ, ինչպես նաև թարգմանիչն ունեցել է բավարար որակավորում: Ուստի պարզ չէ՝ ութ ժամանոց ուշացումը կարո՞ղ էր դիտվել 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում⁴⁷: 9-րդ հոդվածի 2-րդ կետը խախտած ամենակարճ ժամկետ է համարվել յոթ օրվա ուշացումը Գրանտի գործում [11.26]⁴⁸:

[11.29] «ԼԻԴՈՆԳՆ ընդդեմ ՃԱՄԱՅԱՅԻ» (LEE HONG v JAMAICA, 613/95)

¶ 9.4. Հեղինակը պնդում էր, որ տեղի են ունեցել 9-րդ հոդվածի 2-րդ կետի և 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի խախտումներ, քանի որ ձերբակալության պահին նա տեղյակ չի պահվել իր դեմ առաջադրված մեղադրանքի մասին: Ոստիկանության աշխատակցի սպանությունից հետո հեղինակի դեմ մեղադրանք է առաջադրվել, և նա ձերբակալվել է: Այնուհետև՝ հետաքննությունից հետո, սկզբնական մեղադրանքը հետ է վերցվել ապացույցների բացակայության պատճառով, սակայն հեղինակը մեկ այլ սպանության գործով կասկածյալ է եղել և պահվել է կալանքի տակ [ավելի քան երեք ամիս] նախքան մեկ այլ հանցագործության համար մեղադրվելը: Ելնելով գործի հանգամանքներից և իր տրամադրության տակ եղած տեղեկություններից՝ կոմիտեն եզրակացնում է, որ դաշնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի և 14-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ չեն եղել:

Թեև *Լիհոնգի* գործով կայացված որոշումը ճիշտ է թվում 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետով, [քանի որ նրա դեմ բերվել էին ճիշտ մեղադրանքներ դրանց պաշտոնական ներկայացման պահին], սակայն 9-րդ հոդվածի 2-րդ կետը կարող էր հիմք լինել ոստիկանության կողմից իշխանության չարաշահման վերաբերյալ որոշման համար: Ոստիկանությունը պետք է տեղեկացներ կալանավորին նրան ձերբակալելու և կալանքը ձերբակալությունից հետո շարունակելու պատճառների մասին, եթե այդ պատճառները տարբեր էին⁴⁹:

⁴⁷ Գրիֆինի գործով անցել էր առնվազն 9 ժամ, սակայն ՄԻԿ-ն այդ գործով ընդունեց այն ենթադրությունը, որ Գրիֆինը լիովին տեղյակ էր իր ձերբակալության պատճառներին: Տե՛ս [11.27]:

⁴⁸ 9 օրվա ուշացումը համարվեց 9-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում *Morrison v Jamaica* (663/95) գործում:

⁴⁹ Այդուհանդերձ, արձանագրվել էր 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ դատական պաշտոնյայի առջև նրան բերելու ուշացում: Տե՛ս ստորև «սեղմ ժամկետների» վերաբերյալ [11.30-11.32]:

Քրեական մեղադրանքով կալանավորված անձանց շահերը՝ 9-րդ հոդվածի 3-րդ կետ

ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՅԻՆ

[11.30] Քրեական մեղադրանքով կալանավորված անձինք պետք է սեղմ ժամկետներում բերվեն դատական պաշտոնյայի մոտ, որը որոշում է կայացնում՝ կալանավորումը շարունակել, թե՞ ոչ:

ԹԻՎ 8 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. 9-րդ հոդվածի 3-րդ կետով պահանջվում է, որ քրեական գործերով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ սեղմ ժամկետներում բերվի դատավորի կամ օրենքով դատական լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձի մոտ: Ավելի հստակ ժամկետները մասնակից երկրների մեծ մասում ամրագրվում են օրենքով և, կոմիտեի կարծիքով՝ այդ ժամկետները չպետք է գերազանցեն մի քանի օրվա ժամանակահատվածը:

[11.31] 9-րդ հոդվածի մեկնաբանության առանցքային տարրերից մեկը «սեղմ ժամկետներում» արտահայտության մեկնաբանությունն է: Ընդհանուր մեկնաբանությունն այս առումով բավական անորոշ է արտահայտվում՝ նշելով «մի քանի օրվա ժամանակահատվածը»: «Պորտորեալը ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության» (*Portorreal v Dominican Republic, 188/84*) գործով կոմիտեն եզրակացրեց, որ 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում չի եղել, թեև հեղինակը պահվել է 50 ժամ նախքան դատավորի մոտ տարվելը⁵⁰: «Վան դեր Հուվենն ընդդեմ Նիդերլանդների» (*Van der Houwen v The Netherlands, 583/94*) գործում մինչև դատավորի առջև բերվելու պահն անցած 73 ժամը համարվեց 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում⁵¹: Սակայն դրան հաջորդող «Բորիսենկոն ընդդեմ Հունգարիայի» (*Borisenko v Hungary, 852/99*) գործում հեղինակի կալանավորումը՝ առանց բացատրության, երեք օր մինչև դատական պաշտոնյայի մոտ բերվելը, համարվեց 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում⁵²: Ավելին՝ «Ֆրիմանթլն ընդդեմ ճամայկայի» (*Freemantle v Jamaica, 625/95*) գործում կոմիտեն որոշեց, որ 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում է տեղի ունեցել, երբ հեղինակն առանց հայտարարման պահվել է չորս օր մինչև դատավորի մոտ բերվելու պահը և, փաստորեն, հնարավորություն չի ունեցել կապվելու փաստաբանի հետ⁵³: Նմանապես «Խիխոն ընդդեմ Էկվադորի» (*Jijon v Ecuador, 277/88*) գործում նախքան դատավորի մոտ բերվելու պահն անցած առնվազն հինգ օրվա ժամանակահատվածը համարվեց 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում: Հետևաբար, ՄԻԿ-ի նախադեպային բազան վկայում է այն մասին, որ 9-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխավորված դատական քննության «սեղմ ժամկետների» սահմանները մոտավորապես երեք օրվա հատվածում են:

[11.32] Այդուհանդերձ, իր վերջին եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը որդեգրեց էլ ավելի խիստ մոտեցում: Օրինակ՝ 2000 թ. Գաբոնի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է⁵⁴.

¶ 13. ...Մասնակից պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու, որ ոստիկանությունում կալանքի տևողությունը երբեք չգերազանցի 48 ժամը, իսկ կալանավորվածները փաստաբանի հետ կապվելու հնարավորություն

⁵⁰ Պարբ. 10.2.

⁵¹ Պարբ. 4.3.

⁵² Պարբ. 7.4: Պարոնյաք Անդոն և Բիզավաթին չհամաձայնեցին՝ նշելով, որ մասնակից պետությունը չի ներկայացրել 3 օր տևած կալանավորման հիմքերը, որովհետև հեղինակը չի բողոքել այդ մասին:

⁵³ Պարբ. 7.4:

⁵⁴ ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/GAB: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Զեխիայի Հանրապետության վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/CZE, պարբ. 17, Եզրափակիչ դիտարկումներ Զիմբաբվեի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 89, պարբ. 17, Եզրափակիչ դիտարկումներ Քուվեյթի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/KWT, պարբ. 21, Եզրափակիչ դիտարկումներ Մալիի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/77/MLI, պարբ. 19, Եզրափակիչ դիտարկումներ Լեսոտոյի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106, պարբ. 18:

ունենան իրենց ձեռքակալման պահից: Մասնակից պետությունը պետք է լրիվ փաստացի համապատասխանություն ապահովի դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի հետ:

ԴԱՏԱՎՈՐ ԿԱՍ ՕՐԵՆՔՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ

[11.33] «ԿՈԼՈՄԻՆՆ ԸՆԴՂԻՔԵՄ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ» (KULOMIN v HUNGARY, 521/92)

Հեղինակը Հունգարիայում բնակվող Ռուսաստանի քաղաքացի է, որը ձեռքակալվել է սպանության համար: Նա մեկ տարուց ավելի կալանքի տակ է պահվել մինչև դատարանի առջև կանգնելը: Մասնակից պետությունը բացատրել է, որ հեղինակի ձեռքակալությունը և կալանավորումը կարգավորվում են օրենսդրության այն նորմերով, որոնք լիազորում են դատախազությանը երկարացնել անձի նախադատական կալանավորումը: Տվյալ դեպքում հեղինակի նախադատական կալանավորումը մի քանի անգամ դատախազության կողմից կարգադրվել և հետագայում երկարացվել է: Մասնակից պետությունը պնդում էր, որ 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում չի եղել, քանի որ մեղադրյալը սեղմ ժամկետներում բերվել է «օրենքով լիազորված պաշտոնատար անձի մոտ»: Այս դեպքում մասնակից պետությունը բերում էր այն փաստարկը, որ դատախազությունը համապատասխանում է այս արտահայտության իմաստին:

¶ 10.4. Ինչ վերաբերում է այս ընթացակարգի համատեղելիությանը 9-րդ հոդվածի 3-րդ կետի հետ, ապա մասնակից պետությունը «օրենքով լիազորված այլ պաշտոնյաներ» արտահայտությունը մեկնաբանում է որպես գործադիր իշխանությունից դատարանների նման նույն անկախությունն ունեցող մարմիններ: Այս կապակցությամբ մասնակից պետությունը նշում է, որ 1988 թվականին Հունգարիայում գործող օրենքով գլխավոր դատախազն ընտրվում էր խորհրդարանի կողմից, որին էլ նա հաշվետու էր: Մյուս բոլոր դատախազները ենթարկվում էին գլխավոր դատախազին: Մասնակից պետությունը եզրակացնում է, որ այդ պահին դատախազությունը՝ որպես կազմակերպություն, որևէ կապ չուներ գործադիր իշխանության հետ և անկախ էր նրանից: Հետևաբար, մասնակից պետությունը փաստարկում է, որ պրն Կոլոմինի կալանավորումը շարունակելու մասին որոշում կայացրած դատախազները կարող են դիտվել որպես օրենքով դատական լիազորություններով օժտված պաշտոնատար անձինք՝ 9-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանված իմաստով, և դաշնագրի խախտում չի եղել:

Կոմիտեն մերժեց մասնակից պետության՝ 9-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ բերած փաստարկները՝ անելով հետևյալ մեկնաբանությունները.

¶ 11.3. Կոմիտեն նշում է, որ 1988 թ. օգոստոսի 20-ին տեղի ունեցած ձեռքակալությունից հետո հեղինակի նախադատական կալանավորումը դատախազության կողմից կարգադրվել և մի քանի անգամ երկարացվել է մինչև այն պահը, երբ 1989 թ. մայիսի 29-ին բերվել է դատավորի մոտ: Կոմիտեն համարում է, որ դատական իշխանության պատշաճ իրացմանը ներհատուկ է, որ այն իրականացվի անկախ և քննության տակ գտնվող հարցերի նկատմամբ անկողմնակալ ու անաչառ մարմնի կողմից: Տվյալ գործի համաձայնեցնելու կոմիտեն բավարարված չէ նրանով, որ դատախազությունը կարող է դիտվել որպես ինստիտուցիոնալ անկողմնակալություն և անաչառություն ունեցող մարմին, ինչն անհրաժեշտ է «դատական իշխանության իրականացման լիազորությամբ օժտված մարմին» համարվելու համար՝ 9-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանված իմաստով:

[11.34] Պրն Անդոն չհամաձայնեց հետևյալ ձևակերպումներով.

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է, որ քրեական մեղադրանքով ձեռքակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական իշխանություն իրականացնել: Մասնակից պետությունը «օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձ» արտահայտությունը մեկնաբանում է որպես գործադիր իշխանությունից նույն անկախությունն ունեցող մարմին, ինչ դատարանը:

Եվ իրականում բազմաթիվ մասնակից երկրների ներպետական օրենսդրությամբ դատախազներն օժտված են որոշակի դատական լիազորություններով, այդ թվում և քրեական գործեր հետաքննելու և կասկածյալներին հետապնդելու լիազորություններով: Հունգարիայում 1988 թ. գործող օրենսդրության պարագայում այս լիազորությունները

ներառում էին կասկածյալների նախադատական կալանավորումը մինչև մեկ տարով երկարացնելու լիազորությունը:

Իմ կարծիքով՝ կասկածյալների նախադատական մեկ տարով կալանավորումը չափազանց երկար ժամանակահատված է: Բացի այդ, թեև ես հասկանում եմ, որ 1988 թ. Հունգարիայում գործող օրենսդրությամբ կալանավորումը երկարացնելու որոշում կայացնող դատախազը պետք է մեկ այլ դատախազ լիներ, ոչ թե նա, ով պահանջում էր այդ երկարացումը, սակայն նման համակարգում կալանավորման ժամկետի չափից դուրս ձգծեղը հավանական էր:

Այնուամենայնիվ, ես ի վիճակի չեմ ընդունելու կոմիտեի այն կտրուկ հայտարարությունը, որ հունգարականի պես համակարգում դատախազն անպայման զուրկ է ինստիտուցիոնալ անկողնակալությունից և անաչառությունից, որպեսզի համարվի «դատական իշխանություն իրականացնելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձ»՝ 9-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանված իմաստով: Նույնիսկ այդ համակարգում դատախազի՝ որևէ գործով որևէ կասկածյալի կալանավորման ժամկետի երկարացման մասին որոշումը կարող է անկողնակալ և անաչառորեն հիմնավորված լինել: Նման անկողնակալությունն ու անաչառությունը մերժելու համար կոմիտեն պետք է պարզաբանի տվյալ գործի այն մանրամասն հանգամանքները, որոնց հիման վրա նա ընդունում է այդ որոշումը, սակայն նման պարզաբանումն ընդհանրապես բացակայում է կոմիտեի եզրակացությունում:

Անդոն իրավացի է, երբ քննադատում է մեծամասնության այս մշուշապատ որոշումը 9-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ, որն ամենևին էլ չի լուսաբանում «օրենքով դատական լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձ» արտահայտության իմաստը: Մեծամասնությունը պետք է մանրամասներ, թե հատկապես ինչ առումով է Հունգարիայի դատախազությունը զուրկ բավարար «ինստիտուցիոնալ անկողնակալությունից և անաչառությունից»: Այդուհանդերձ, կարելի է քննադատել հենց Անդոյի որոշումը: Նա «դատաքննելու» և «կասկածյալներին հետապնդելու» լիազորությունները բնութագրում է որպես դատական լիազորություններ: Մինչդեռ այդ լիազորությունները կարծես առավել համապատասխանում են գործադրի լիազորություններին⁵⁵:

ՆԱԽԱԴԱՏԱԿԱՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ

[11.35] Նախադատական կալանավորման առնչությամբ 9-րդ հոդվածի 3-րդ կետում նշվում է, որ անձինք իրավասու են դատարան բերվելու ողջամիտ ժամանակահատվածում կամ ազատ արձակվելու:

ԹԻՎ 8 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. Մեկ այլ հարց է կալանավորման ընդհանուր տևողությունը մինչև դատարանի առջև կանգնելու պահը: Որոշ երկրների առանձին քրեական գործերում այս հարցը որոշակի մտահոգություն է առաջացրել կոմիտեում, և նրա անդամները հարցականի տակ են առել՝ այդ երկրներում կիրառվող պրակտիկան համապատասխանում էր 3-րդ կետով սահմանված «ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու» իրավունքին: Նախադատական կալանքը պետք է բացառություն լինի և տևի հնարավորինս կարճ ժամանակ: Կոմիտեն ողջունում է կալանքի տևողության նվազեցմանն ուղղված առկա լծակների և ձեռնարկվող միջոցների վերաբերյալ տեղեկությունները:

[11.36] 9-րդ հոդվածի 3-րդ կետը շատ առումներով հանդնկնում է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետին: Թեև այս դրույթներից երկրորդը երաշխավորում է, որ քրեական դատաքննությունն իրականացվի մեղադրանքն առաջադրվելուց հետո ողջամիտ ժամկետում, սակայն դրանցից առաջինը երաշխավորում է, որ անձը նախքան դատաքննությունը չպետք է ոչ խելամիտ ժամկետով կալանքի տակ պահվի: Հետևաբար, 9-րդ հոդվածի 3-րդ կետը կարգավորում է նախադատական կալանքի տևողությունը, իսկ 14-րդ հոդվածի 3-րդ կետը կարգավորում է նախքան դատաքննությունն անձի՝ կալանքի տակ անցկացրած ընդհանուր ժամանակահատվածը: 14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետի խախտումների մեծ

⁵⁵ Տես օրինակ՝ P. Hanks and D. Cass, *Australian Constitutional Law: Commentary and Materials* (6th edn, Butterworths, Sydney, 1999), էջ 395:

մասը վերաբերում էր մինչև դատաքննությունը կալանքի տակ պահված անձանց դեպքերին, հետևաբար, այդ գործերն ինքնըստինքյան ներառում էին նաև 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումներ⁵⁶:

[11.37]

«ՖԻԼԼԱՍՏՐԵՆ և ԲԻՉՈՒԱՐՆԵՆ ընդդեմ ԲՈԼԻՎԻԱՅԻ»
(*FILLASTRE and BIZOUARN v BOLIVIA, 336/88*)

Այս գործը վերաբերում է Բոլիվիայում մի շարք հանցանքների համար ձերբակալված և կալանավորված երկու ֆրանսիացի մասնավոր հետախույզների հանդեպ ցուցաբերված վերաբերմունքին: Դիմումը տվել է տուժողներից մեկի կինը: Ներկայացվել է, որ այս երկու անձանց տասն օր պահել են կալանքի տակ՝ առանց տեղեկացնելու իրենց դեմ առաջադրված մեղադրանքների մասին, իսկ առաջին ատյանում այս գործի դատաքննությամբ վճիռը կայացվել է միայն երեք տարի անց: Մասնակից պետությունը պատասխանեց:

¶ 4.6. Ինչ վերաբերում է հեղինակի բողոքին դատական ընթացակարգերի անհիմն ձգձգումների առնչությամբ, ապա մասնակից պետությունը նշում է, որ քրեական հետաքննությունները Բոլիվիայի օրենսդրությամբ իրականացվում են զրավոր տեսքով, ինչը ենթադրում է, որ կարող են լինել վարչական և այլ ձգձգումներ: Ավելին՝ արդարադատության պատշաճ իրականացման համար համարժեք բյուջեի բացակայությունը նշանակում է, որ մի շարք քրեական գործեր և քրեական դատաքննության որոշակի առանձին ընթացակարգային փուլեր ձգձգվել են:

Կոմիտեն համարեց, որ խախտվել են 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը: Կոմիտեն տվեց հետևյալ մեկնաբանությունները մասնակից պետության բյուջետային սահմանափակումների վերաբերյալ.

¶ 6.4. ...Այս գործում էական գործոն է այն հանգամանքը, որ պրն Ֆիլաստրեն և պրն Բիզուարն ենթադրաբար 10 օր պահվել են կալանքի տակ մինչև որևէ դատական ատյան բերվելը և իրենց դեմ առաջադրվող մեղադրանքի մասին տեղեկացվելը: Հետևաբար, թեև կոմիտեն բարյացակամությամբ է վերաբերվում մասնակից պետության այն պնդմանը, որ բյուջետային սահմանափակումները Բոլիվիայում կարող են առաջացնել արդարադատության պատշաճ իրականացման խոչընդոտներ, սակայն կոմիտեն եզրակացնում է, որ պրն Ֆիլաստրեի և պրն Բիզուարնի 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով ճանաչված իրավունքները չեն պահպանվել:

¶ 6.5. 9-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով՝ քրեական մեղադրանքով յուրաքանչյուր ձերբակալված կամ կալանավորված անձ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք ունի: Թե որքան ժամանակն է կազմում «ողջամիտ ժամկետ» ասվածը, ապա դա ենթակա է գնահատման յուրաքանչյուր առանձին դեպքում: Քրեական արդարադատության իրականացման համար բավականաչափ բյուջետային հատկացումների բացակայությունը, ինչպես ակնարկում է մասնակից պետությունը, չի արդարացնում քրեական գործերով վճիռների կայացման ուշացումները: Նաև այն հանգամանքը, որ քրեական գործով հետաքննությունն ըստ էության կատարվում է զրավոր ընթացակարգերի միջոցով, չի արդարացնում նման ուշացումները: Տվյալ դեպքում կոմիտեն չի տեղեկացվել այն մասին, որ առաջին ատյանում որոշումը կայացվել է տուժողի ձերբակալության պահից մոտ չորս տարի անց: Ապացույցների հավաքման նկատառումներով նման երկարատև կալանավորումը չի արդարացվում: Կոմիտեն եզրակացնում է, որ այս առումով եղել է 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

[11.38]

«ԹԻՍԴԵՅԼԵՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(*TEESDALE v TRINIDAD and TOBAGO, 677/96*)

¶ 9.3. Հեղինակին դատարան բերելու ուշացումների առնչությամբ կոմիտեն նշում է, որ հեղինակը կալանավորվել է 1988 թ. մայիսի 28-ին, իսկ 1988 թ. հունիսի 2-ին նրա դեմ առաջադրվել է պաշտոնական մեղադրանք սպանության համար: Նրա գործով դատաքննությունը սկսվել է 1989 թ. հոկտեմբերի 6-ին, իսկ 1988 թ. նոյեմբերի 2-ին նա դատապարտվել է մահվան: Դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետով քրեական մեղադրանքով ամեն ձերբակալված կամ կալանավորված անձ ունի ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունք: Սան Ֆերնանդոյի երվյալ ատենա-

⁵⁶ Տե՛ս ընդհանրապես՝ [14.85]:

կալաների դատարանում լաված գործի արձանագրությունից երևում է, որ մեղադրող կողմի բերած բոլոր ապացույցները հավաքվել են մինչև 1988 թ. հունիսի 1-ը, որից հետո հետագա հետաքննություն չի իրականացվել: 9-րդ հոդվածի 3-րդ կետի համատեքստում, ներկա գործի առանձին հանգամանքներից ելնելով և հաշվի առնելով, որ մասնակից պետությունը որևէ բացատրություն չի տվել այս ուշացման վերաբերյալ, կոմիտեն հարում է այն կարծիքին, որ նախադատական կալանքի տակ հեղինակի անցկացրած ժամկետի տևողությունը խելամիտ չէ և, հետևաբար, այս դրույթի խախտում է:

Այսպիսով, տասնվեց ամիս տևած նախադատական կալանքը խախտում է 9-րդ հոդվածի 3-րդ կետը⁵⁷:

ՄԻՆՉԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՁԱՏ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

[11.39] 9-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է, որ «որպես ընդհանուր կանոն»՝ դատաքննությանը սպասող անձինք չպետք է կալանքի տակ պահվեն: Հետևյալ գործերում ՄԻԿ-ը քննարկում է դեպքեր, երբ շեղումն այս նորմից թույլատրելի է համարվում:

«Ու.Բ.Է.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (*W.B.E. v THE NETHERLANDS*, 432/90)

Հեղինակը պնդում է, որ երեք ամիս տևած իր նախադատական կալանավորումը՝ թմրամիջոցների մաքսանենգության մեղադրանքով, խախտում էր 9-րդ հոդվածի 3-րդ կետը: Կոմիտեն այս պնդումը համարել է անընդունելի և նախադատական կալանավորման թույլատրելիության վերաբերյալ արել հետևյալ մեկնաբանությունները.

¶ 6.3. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, որ իր նախադատական կալանքը խախտում է դաշնագրի 9-րդ հոդվածը, ապա կոմիտեն նշում է, որ 9-րդ հոդվածի 3-րդ կետով նախադատական կալանքը թույլատրվում է որպես բացառություն: Օրինակ՝ նախադատական կալանքը կարող է անհրաժեշտ համարվել դատաքննությանը մեղադրյալի ներկայությունն ապահովելու, ինչպես նաև վկաների և այլ ապացույցների վրա ազդեցությունը և նոր հանցագործությունների կատարումը կանխելու նպատակով: Կոմիտեի տրամադրության տակ եղած տեղեկություններից երևում է, որ հեղինակի կալանավորումը պայմանավորված է եղել այն նկատառումներով, որ լուրջ վտանգ է գոյություն ունեցել, որ ազատ արձակվելու դեպքում նա կկարողանա ազդել իր դեմ եղած ապացույցների վրա:

¶ 6.4. Կոմիտեն համարում է՝ քանի որ ապացույցների վրա ներգործումը կանխելու նպատակով կիրառվող նախադատական կալանավորումը համատեղելի է 9-րդ հոդվածի 3-րդ կետի հետ, և քանի որ հեղինակը չի հիմնավորել իր այն պնդումը, որ կալանավորումը երկարացնելու օրինական հիմքեր գոյություն չունենին, մի բան, որ անհրաժեշտ էր իր գործի ընդունելիությունն ապահովելու համար, ուստի դիմումի այս մասն անընդունելի է կամընտիր արձանագրության 2-րդ և 3-րդ կետերով:

[11.40] «Հիլլ և Հիլլ ընդդեմ Իսպանիայի» (*HILL and HILL v SPAIN*, 526/93)

Մեծ Բրիտանիայի քաղաքացիներ հանդիսացող հեղինակներն Իսպանիայում ձերբակալվել են ավտոմեքենա հրկիզելու կասկածանքով: Հեղինակների պնդումներից մեկն այն է, որ մասնակից պետությունը խախտել է 9-րդ հոդվածի 3-րդ կետը, քանի որ իրենք ձերբակալությունից հետո գրավի դիմաց ազատ չեն արձակվել: Մասնակից պետությունը հեղինակների նախադատական կալանքի երկարացումը հիմնավորում է հետևյալ կերպ.

¶ 9.7. Մասնակից պետությունը նշում է, որ 16 ամիս տևող նախադատական կալանքը արտասովոր երևույթ չէ: Այն արդարացված էր՝ ելնելով գործի բարդություններից. գրավի դիմաց ազատ արձակվելու իրավունք չի շնորհվել,

⁵⁷ Տե՛ս նաև *Lewis v Jamaica* (708/96) և *Sextus v Trinidad and Tobago* (818/98) գործերը [14.91]:

քանի որ վտանգ կար, որ հեղինակները կլքեն Իսպանիայի տարածքը, ինչն էլ նրանք արել են ազատ արձակվելուց հետո:

Մասնակից պետության կայացրած որոշման առնչությամբ կոմիտեն կատարել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 12.3. Ինչ վերաբերում է դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետին, որով ամրագրվում է դատաքննության սպասող անձանց նախադատական կալանքի տակ չպահվելու մասին դրույթը, ապա հեղինակները բողոքում են, որ իրենց գրավի դիմաց ազատ արձակվելու հնարավորություն չի տրվել, և Միացյալ Թագավորություն չվերադառնալու պատճառով իրենց շինարարական ընկերությունը սնանկ է հայտարարվել: Կոմիտեն կրկին հաստատում է իր նախորդ նախադեպային բազան առ այն, որ նախադատական կալանավորումը պետք է բացառություն լինի, և գրավի դիմաց ազատ արձակվելու իրավունք պետք է տրվի, բացի այն դեպքերից, երբ հավանականություն կա, որ մեղադրյալը փախուստի կդիմի և կոչնչացնի ապացույցները, կներագրի վկաների վրա կամ կփախչի մասնակից պետության իրավասության ոլորտից: Միայն այն փաստը, որ մեղադրյալն արտասահմանցի է, ինքնին չի ենթադրում, որ նա պետք է նախքան դատաքննությունը պահվի կալանքի տակ: Մասնակից պետությունն իրոք բերեց այն փաստարկը, որ հիմնավորված մտավախություն կար՝ հեղինակները կլքեն Իսպանիայի տարածքը գրավի դիմաց ազատ արձակվելու դեպքում: Այնուհանդերձ, մասնակից պետությունը տեղեկություններ չի տվել, թե ինչի՞ վրա է հիմնված եղել այդ մտավախությունը, և ինչո՞ւ հնարավոր չէր այս հարցը լուծել՝ համապատասխան գրավ կամ ազատ արձակվելու այլ պայմաններ սահմանելով: Մասնակից պետության այն գույք ենթադրությունը, որ օտարերկրացին գրավի դիմաց ազատ արձակվելու դեպքում կարող է լքել իր իրավագործության ոլորտը, չի հիմնավորում դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված բացառությունը: Այս պարագաներում կոմիտեն կարծում է, որ հեղինակների իրավունքները ոտնահարվել են:

[11.41] Արգենտինայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում կոմիտեն կրկնեց իր այն պահանջը, որ գրավի դիմաց ազատ արձակվելու հնարավորությունը՝ ողջամիտ սահմաններում, պետք է մատչելի լինի որպես նախադատական կալանավորման այլընտրանք⁵⁸:

¶ 14. Կոմիտեն նաև նշում է, որ գրավը սահմանվում է գործած հանցանքի տնտեսական հետևանքներին համապատասխան, ոչ թե պաշտպանյալի դատարան չներկայանալու կամ նրա կողմից արդարադատության պատշաճ իրականացումը խոչընդոտելու հավանականության հիման վրա: Անմեղության կանխավարկածն անհամատեղելի է այն երևույթի հետ, երբ նախադատական կալանքի տևողությունը պայմանավորված չէ գործի բարդությամբ, այլ սահմանվում է դատավճռի հավանական ժամկետի հիման վրա:

Ուստի 9-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ սովորական պայմաններում կալանավորներն ունենան գրավի դիմաց ազատ արձակվելու հնարավորություն: Համարվում է, որ գրավը չպետք է սահմանվի չափից ավելի բարձր, ինչը կարող է զրկել կալանավորին այդ գումարը հայթայթելու հնարավորությունից⁵⁹:

[11.42] «ԿՈՆԵՆ ընդդեմ ՍԵՆԵԳԱԼԻ» (KONÉ v SENEGAL, 386/89)

¶ 8.6. ...Այն հարցը, թե որքան ժամանակ է կազմում «ողջամիտ ժամկետը»՝ 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իմաստով, պետք է ուսումնասիրվի յուրաքանչյուր առանձին գործում:

¶ 8.7. Չորս տարի և չորս ամիս տևող կալանքը չի կարող համատեղելի համարվել 9-րդ հոդվածի 3-րդ կետի հետ, եթե չկան նման ուշացումն արդարացնող հատուկ հանգամանքներ, օրինակ՝ անցյալում մեղադրյալի կամ նրա ներկայացուցչի կողմից հետաքննությունը խոչընդոտելու դեպքեր: Այս գործում նման հանգամանքներ չեն եղել: Հետևաբար, հեղինակի կալանավորումն անհամատեղելի է 9-րդ հոդվածի 3-րդ կետի հետ:

⁵⁸ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 46: Տե՛ս նաև եզրափակիչ դիտարկումներ Էկվադորի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 92, պարբ.13:

⁵⁹ Ղիմշթեյն, վերը, ծմբ. 12, 134:

Կոմեի գործը հաստատում է, որ 9-րդ հոդվածի 3-րդ կետով նախնական կալանքի որևէ թույլատրելի ժամկետ չի նախատեսվում: Սակայն, շատ կասկածելի է, որ երբևէ հնարավոր լինի արդարացնել չորս տարի տևած նախադատական կալանավորումը⁶⁰:

[11.43] Նախադատական երկարատև ու խիստ կալանք կարող է թույլատրվել, եթե կալանավորին մեղադրանք առաջադրվի շատ ծանր հանցանքի համար: Շատ ավելի մեծ վտանգ կա, որ նման մարդիկ դիմեն փախուստի կամ հասարակության համար վտանգ կներկայացնեն, եթե նախքան դատաքննությունն ազատ արձակվեն: Մահապատիժ պահանջող սպանության դեպքում տասնչորս ամիս տևած նախադատական կալանքը չհամարվեց 9-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում⁶¹:

Կալանավորված անձին դատարանում ներկայացնելու իրավունք՝ 9-րդ հոդվածի 4-րդ կետ

[11.44] 9-րդ հոդվածի 4-րդ կետը որևէ պատճառով ձերբակալված կամ կալանավորված անձին իրավունք է տալիս անհապաղ իր կալանավորման օրինականությունը վիճարկել դատարանում: Այս իրավունքը բխում է սովորական իրավունքի «habeas corpus» իրավական սկզբունքից և գոյություն ունի անկախ այն հանգամանքից՝ իրականում ազատագրվումն ապօրինի⁶² է, թե՞ ոչ⁶²:

[11.45] Երբ տեղի է ունենում 9-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված սեղմ ժամկետներում կալանքի օրինականությունը դատական կարգով քննելու պահանջի խախտում, ապա դա իր հետ բերում է նաև 4-րդ կետի խախտում: Այնուամենայնիվ, 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաժամանակյա խախտումներ միշտ չեն հայտնաբերվել: Սա կարող է պայմանավորված լինել կոմիտեի անուշադրությամբ:

[11.46] «ՍՏԵՖԵՆՍԸ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (STEPHENS v JAMAICA, 373/89)

Այս որոշումը հաստատում է, որ 9-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված դատարանների հասանելիության իրավունքը, ի տարբերություն 9-րդ հոդվածի 3-րդ կետի, չպետք է իրականացվի պետության կողմից ի պաշտոն (ex officio): Փոխարենը՝ այս իրավունքն իրականացվում է հեղինակի կամ իր ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Մասնակից պետությունը չի կարող պատասխանատվություն կրել այն բանի համար, որ հեղինակը չի հայցել իր կալանքի օրինականության քննությունը:

¶ 9.7. Ինչ վերաբերում է 9-րդ հոդվածի 4-րդ կետի ենթադրյալ խախտմանը, ապա հարկ է նշել, որ հեղինակն ինքը չի դիմել իր կալանավորման օրինականության քննության համար: 1983 թ. մարտի 2-ին նա իրեն պրն Լորենսի սպանության կասկածի մասին տեղեկացվելուց հետո կարող էր պահանջել շտապ որոշում իր կալանավորման օրինականության վերաբերյալ: Տվյալներ չկան, որ նա կամ նրա օրինական ներկայացուցիչներն արել են դա: Ուստի չի կարելի եզրակացնել, որ պրն Ստեֆենսը զրկվել է իր կալանավորման օրինականությունը դատարանում անհապաղ քննելու հնարավորությունից:

ԱՆՈՒՄԱՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

[11.47] «Համելն ընդդեմ Մադագասկարի» (Hammel v Madagascar, 155/83) գործում երեք օր տևած մեկուսի կալանավորումը, որի ընթացքում հեղինակի համար անհնար էր իր կալանավորման օրինակա-

⁶⁰ Մյուս կողմից՝ նախքան դատարանի առջև կանգնելու պահին անցած չորս տարվա ժամանակահատվածը (քանի դեռ մեղադրյալն այդ ամբողջ ժամանակ ձերբակալված չի եղել) կարող է հիմնավորված համարվել՝ ելնելով գործի բարդություններից և մեղադրյալի կողմից գործը խոչընդոտելու փորձերից: Տե՛ս [14.87]:

⁶¹ Պարբ. 9.6: Համարվեց, որ 12 ամիս տևած ուշացումը մահապատիժ պահանջող մարդասպանության գործում (*McTaggart v Jamaica* (749/97)) չի խախտել 9-րդ հոդվածի 3-րդ կետը, պարբ. 8.2:

⁶² Նովակ, վերը, ծմբ. 1, 178:

նությունը վիճարկել դատարանում, համարվեց 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում: Մյուս կողմից՝ «Պորտորեալն ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության» (*Portorreal v Dominican Republic, 188/84*) գործում, թերևս զարմանալիորեն, կոմիտեն որոշեց, որ 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում չի եղել, երբ հեղինակը հիսուն ժամ պահվել է՝ առանց իր կալանավորումը վիճարկելու հնարավորության:

[11.48] Հետևյալ գործերում խոսքը կալանավորման օրինականության մասին որոշման կայացման թույլատրելի ժամկետների մասին է՝ ի տարբերություն փաստացի դատարան բերվելու ժամկետների:

[11.49] «ՏՈՐԵՍԵՆ ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (TORRES v FINLAND, 291/88)

Տոռեսին պատրաստվում էին արտաքսել Ֆինլանդիայից: Նա իր կալանավորման օրինականությունը վիճարկել էր Ֆինլանդիայի միգրացիոն և հանցագործների հանձնման մասին օրենքներով: Նրա բողոքարկումները բացասական պատասխան ստացան: Նա բերում էր այն փաստարկը, որ իր կալանավորումը խախտում է 9-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներն այն մասով, որ իր կալանավորման օրինականության վերաբերյալ դատարանի որոշումը հրապարակվել է ուշացումով⁶³:

¶ 7.3. Երկրորդ հարցի առնչությամբ կոմիտեն ընդգծում է, որ սկզբունքորեն որևէ գործի դատական կարգով ուսումնասիրումը ցանկացած դատարանում պետք է տեղի ունենա հնարավորինս արագ: Այնուհանդերձ, դա չի նշանակում, որ կարող են սահմանվել վճիռների կայացման հստակ ժամկետներ, որոնց չհետևելու դեպքում անպայման կհիմնավորվի այն եզրակացությունը, որ որոշումն «անհապաղ» չի կայացվել: Փոխարենը՝ որոշման անհապաղ կայացման մասին հարցը պետք է ուսումնասիրվի անհատապես, յուրաքանչյուր առանձին դեպքում: Կոմիտեն նշում է, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի համաձայն՝ ներքին գործերի և գերագույն վարչական դատարանի որոշման դեմ հեղինակի վերաքննիչ բողոքի ներկայացման պահից անցել է գրեթե երեք ամիս: Այս ժամանակահատվածը սկզբունքորեն չափազանց երկար է, սակայն քանի որ կոմիտեն չգիտի այն պատճառները, որոնցով պայմանավորված է վճռի ուշացած՝ միայն 1988 թ. մարտի 4-ին կայացումը, ուստի չի եզրակացնում, որ խախտվել է դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետը:

¶ 7.4. Երրորդ հարցի առնչությամբ կոմիտեն նշում է, որ Հելսինկիի քաղաքային դատարանը քննել է հեղինակի կալանավորումը «Հանցագործների հանձնման մասին» օրենքին համապատասխան՝ երկու շաբաթ մեկ: Կոմիտեն կարծում է, որ նման քննությունները բավարարում են դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները:

Տոռեսի կալանավորման օրինականության վերաբերյալ դատարանի վճռի ուշացումն այս գործում կարծես արժանացավ կոմիտեի շատ անհամարձակ որոշմանը: Մասնակից պետությունը, ըստ երևույթին, պարտավոր էր տեղեկացնել կոմիտեին, թե ինչ պատճառներով էր պայմանավորված նման ուշացումը, և այդ չանելուց մասնակից պետությունը չպետք է օգուտ քաղի: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ Ֆինլանդիան օգուտ չքաղեց այդ իրավիճակից, քանի որ ուշացված վճռի առնչությամբ խախտում չհայտնաբերվեց, թեև «սկզբունքորեն այդ ժամկետը չափազանց երկար էր»:

[11.50] «Ա.-ն ընդդեմ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ» (A v NEW ZEALAND, 754/97)

Այս գործի հանգամանքները ներկայացված են վերը՝ [11.21]: Հեղինակի հետագա բողոքը վերաբերում է այն հանգամանքին, որ նրան հնարավորություն չի տրվել բավարար հաճախականությամբ հոգեբուժարանի առավելագույն անվտանգության բաժնում իր կալանավորումը վիճարկելու համար: ՄԻԿ-ի մեծամասնությունը գտավ, որ 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում չի եղել:

¶ 7.3. Կոմիտեն նաև նշում է, որ հեղինակի կալանքը շարունակելու հարցը պարբերաբար քննվել է դատարանների կողմից, և, հետևաբար, ներկայացված դիմումի հանգամանքները չեն վկայում դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման մասին: Այս համատեքստում կոմիտեն հաշվի է առել հեղինակի այն փաստարկը, որ դատավոր Անվինի ո-

⁶³ Տե՛ս նաև [11.57]:

որոշումը նրա հարկադիր բուժումը չդադարեցնելու մասին, կամայական է եղել: Այդուհանդերձ, կոմիտեն նշում է, որ այս որոշումը և հեղինակի կալանքի շարունակությունը քննվել են այլ դատարանների կողմից, և բոլորն էլ հաստատել են դատավոր Անվիմի որոշումները, ինչպես նաև հեղինակի հարկադիր բուժման անհրաժեշտությունը: Կոմիտեն մեջբերում է իր մշտական նախադեպային բազան այն հարցի առնչությամբ, որ փաստերը քննելու և որևէ առանձին դեպքում օրենքը կիրառելու գործառնությունը վերապահված է մասնակից պետության համապատասխան դատարաններին, ոչ թե կոմիտեին, եթե այդ դատարանների որոշումներն ակնհայտորեն կամայական չեն և չեն վերածվում արդարադատության մերժման: Իր տրամադրության տակ եղած նյութերի հիման վրա կոմիտեն կարծում է, որ հեղինակի հարկադիր բուժման քննությունը «Յոգեկան առողջության մասին» օրենքով չի տուժել նման թերություններին:

[11.51] Պարոնայք Պոկարը և Շայնինը չհամաձայնեցին՝ տեսնելով 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում: Նրանք արեցին հետևյալ մեկնաբանությունները.

Մեր մտահոգության հիմքում ընկած է այն փաստը, որ թեև գոյություն ունեն հեղինակի կարգավիճակի⁶⁴ փորձագիտական քննության ընթացակարգ, նրա կալանքի շարունակումը դատական արդյունավետ և պարբերական քննության առարկա չի դարձել: Հեղինակի բուժումը 9-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներին համապատասխանեցնելու համար ոչ միայն հոգեբուժական, այլև դատական քննությունը պետք է պարբերական լիներ:

Այս պարագայում կարծում ենք, որ տեղի է ունեցել 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում: Նոր Ձեւանդիայի օրենսդրությամբ նախատեսված էին հեղինակի կալանավորումը շարունակելու օրինականության քննության տարբեր դատական լծակներ, սակայն դրանցից ոչ մեկը բավականաչափ արդյունավետ չէր, որպեսզի ապահովեր գործի «անհապաղ» դատական քննությունը: Թեև գոյություն են ունեցել դատական քննության մի քանի ատյաններ, դրանց աշխատանքը չափազանց անկանոն ու դանդաղ է եղել դաշնագրի պահանջները բավարարելու համար: Ինչպես երևում է դատական քննության տարբեր ատյանների հետևյալ ներկայացումից, այս եզրակացությունը պայմանավորված չէ 1989 թ. օգոստոսի 26-ին Նոր Ձեւանդիայում կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելու հանգամանքով:

1984 թ. նոյեմբերից հարկադիր հոգեկան բուժման ենթարկելու մասին որոշման և 1993 թ. փետրվարին բժշկական քննիչ հանձնաժողովի կողմից հեղինակին հարկադիր բուժումից ազատելու որոշման (որից առաջ նա արդեն ազատ էր արձակվել փակ հաստատությունից) միջև ընկած ժամանակահատվածում դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետի չափանիշներին բավարարող ոչ մի դատական քննություն չի եղել:

1985 թ. օգոստոսի 9-ին հեղինակը ներկայացրել է իր կալանավորման օրինականությունը քննելու դիմում (habeas corpus): Անհապաղ որոշման հանգեցնելու փոխարեն այս դիմումն ընդգրկվել է դատական քննության մեկ այլ ընթացակարգում, որն ավարտվել է հեղինակի կալանավորման շարունակումը հաստատող դատական որոշումով՝ ձգձգվելով մինչև 1986 թ. ապրիլի 21-ը:

Հեղինակի կալանավորումը վերանայող մի շարք այլ դատական ընթացակարգեր չեն նախաձեռնվել 1987 թ. դեկտեմբերի սկզբին: Թեև հեղինակն ինքը նպաստել է այդ ուշացմանը, ի թիվս այլոց, փախուստի դիմելով իր կալանավորման հաստատությունից, սակայն 1989 թ. օգոստոսի 9-ին նա կրկին ձերբակալվել է, որից հետո պահանջվել է ևս որոշակի ժամանակ, մինչև 1990 թ. օգոստոսի 15-ին այս ընթացակարգերն ավարտվել են վերին դատարանի դատական որոշմամբ:

1991 թ. ապրիլի 24-ին վերին դատարանի որոշմամբ երրորդ անգամ իրականացվել են մի շարք դատական ընթացակարգեր: Գործից պարզ չէ, թե երբ են մեկնարկել նշված ընթացակարգերը, սակայն բուն որոշումից պարզ է դառնում, որ քննությունը հիմնված է հեղինակի «շտապ հարցման» վրա, իսկ այս գործով լսումն անցկացվել է 1991 թ. փետրվարի 22-ին, ասել է թե՛ որոշումը կայացնելուց գրեթե երկու ամիս առաջ:

Մեր եզրակացությունն առ այն, որ տեղի է ունեցել հեղինակի իրավունքների խախտում՝ ըստ 9-րդ հոդվածի 4-րդ կետի, հիմնված է այն հանգամանքի վրա, որ նախքան 1992 թ. ապրիլին հեղինակի պայմանական ազատումը, նրա՝ կալանավորման օրինականությունը դատական կարգով քննելու պահանջներով անհապաղ որոշում չի կայացվել: Հետևաբար, հեղինակը 9-րդ հոդվածի 5-րդ կետով փոխհատուցման իրավունք ունի:

⁶⁴ Տե՛ս նրանց համընկնող կարծիքն այս հարցի շուրջ այստեղ՝ [11.21]:

[11.52] Քանի որ կամընտիր արձանագրությունը Նոր Զելանդիայում ուժի մեջ է մտել միայն 1989 թ. օգոստոսի 26-ին, կալանքի օրինականությունը քննելու դիմումների (*habeas corpus*) ուշացումները մինչ այդ համարվում են անընդունելի՝ ժամկետային նկատառումներով (*ratione temporis*): Այդուհանդերձ, կոմիտեի փոքրամասնության ներկայացրած ժամանակագրությունը ցույց է տալիս, որ երկու պարագայում կալանավորման օրինականության վերաբերյալ որոշումների ուշացումներ են արձանագրվել 1989 թ. օգոստոսից հետո և տևել են, համապատասխանաբար, մեկ տարի և երկու ամսից ավելի: Ցավալի է, որ ՄԻԿ-ի մեծամասնությունը թույլ է տալիս մասնակից պետությանն անպատիժ մնալ անձի կալանավորման օրինականությանը վերաբերող որոշումներն ուշացնելու համար: Եթե հաշվի առնենք «Ա.-ն ընդդեմ Նոր Զելանդիայի» և *Տոռեսի* գործերը [11.49], ապա ՄԻԿ-ի նախադեպային բազան այս առումով անմխիթաբար կան է:

ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

[11.53] «ԲԵՐՐԻՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (*BERRY v JAMAICA, 0/88*)

Այս դեպքում կոմիտեն իրավական ներկայացուցչության մատչելիությունը հստակորեն կապում է 9-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքն իրացնելու հետ: Փաստորեն, գործնականում մարդիկ չեն կարող առանց իրավական ներկայացուցչության վիճարկել իրենց ձերբակալելու որոշումը:

¶ 11.1. Անդրադառնալով 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին առնչվող հայտարարություններին՝ մասնակից պետությունը չի վիճարկել այն փաստը, որ հեղինակը երկուսուկես ամիս կալանքի տակ է պահվել մինչև իր ձերբակալության հիմքերի օրինականությունը որոշելու համար լիազորված դատավորի կամ դատարանի պաշտոնյայի առջև կանգնելը: Փոխարենը՝ մասնակից պետությունը հաստատել է, որ հեղինակն իր կալանավորման ժամանակահատվածում կարող էր դիմել դատական ատյաններ՝ ձերբակալության հիմքերի օրինականությունը պարզելու նպատակով իրեն դատարան տեղափոխելու կարգադրություն արձակելու հայցով: Այնուհանդերձ, կոմիտեն վկայակոչում է հեղինակի այն անվիճարկելի պնդումը, որ նշված ժամանակահատվածում իրեն մատչելի չէր իրավական ներկայացուցչությունը: Կոմիտեի կարծիքով՝ երկու ամսից ավելի երկար ժամանակահատվածով դատի հետաձգումը հակասում է 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջին, որի համաձայն՝ քրեական հանցագործության մեղադրանքով ձերբակալված յուրաքանչյուր ոք պետք է «անհապաղ» ներկայացվի դատավորին կամ օրենքով դատական իշխանությանը օժտված այլ պաշտոնատար անձի: Կոմիտեն եզրակացրել է, որ տվյալ հանգամանքներում խախտվել է նաև հեղինակի՝ 9-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքը, քանի որ նրան հնարավորություն չի տրվել իր նախաձեռնությամբ ժամանակին ստանալու դատարանի՝ իրեն ձերբակալելու հիմքերի օրինականության վերաբերյալ որոշումը:

«Համելն ընդդեմ Մադագասկարի» (*Hammel v Madagascar, 155/83*) [11.47] գործում առանց հաղորդակցվելու կալանքը նույն սկզբունքով խոչընդոտել է ձերբակալված անձին դատարան փոխադրելու դատական կարգադրության կիրառումը: Հնգօրյա հաղորդակցվելուց զուրկ կալանքը Իսպանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում որակվել է որպես 9-րդ հոդվածի խախտում⁶⁵.

[11.54] 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի⁶⁶ համաձայն՝ քրեական հանցագործության համար մեղադրվող ձերբակալվածներին իրավունք է վերապահվում օգտվելու իրավական ներկայացուցչությունից և որոշ հանգամանքներում՝ փաստաբանական խորհրդատվությունից: Վերոհիշյալ իրավունքներն ի հայտ են գալիս միայն ձերբակալվածներին մեղադրանք ներկայացնելուց հետո: Իռլանդիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հստակ սահմանել է, որ այն կալանավորները, ում դեռևս մեղադրանք չի ներկայացվել, նույնպես կարող են օգտվել իրավական խորհրդատվությունից, եթե նրանք ի վիճակի չեն փաստաբան վարձելու⁶⁷: Դիտարկումներում նշվում է.

⁶⁵ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 61, պարբ. 12:

⁶⁶ Տե՛ս [14.96]:

⁶⁷ Եզրափակիչ դիտարկումներ Իռլանդիայի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, պարբ. 422-451, պարբ. 17-18:

¶ 18. Մասնակից պետությունը պետք է երաշխավորի, որ կալանավորման հետ կապված բոլոր հարցերը, ներառյալ՝ կալանավորման ժամանակահատվածը և իրավական խորհրդատվության մատչելիությունը, լիովին համապատասխանեն դաշնագրի 9-րդ հոդվածին:

Նման իրավունքները կարող են ծագել 9-րդ հոդվածի 4-րդ կետից, թեև ընդունելի է, որ 9-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվում է իրավական ներկայացուցչության մատչելիությունը՝ կամայական ձերբակալությունից զերծ մնալու նպատակով:

[11.55]

«Ա.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (A v AUSTRALIA, 560/93)

Ապօրինի ներգաղթյալ հանդիսացող հեղինակը կալանավորվել է իրեն ապաստան տրամադրելու հայցի վարույթում գտնվելու ընթացքում [11.16]: Նախ հեղինակին կալանավորել են Սիդնեյի շրջանում գտնվող ուղղիչ հաստատությունում: Այնուհետև տեղափոխել են Յուսիսային տարածք՝ մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Դարվին քաղաքը: Յուսիսային տարածքում մնալու ընթացքում նրան փախստականների մի ճամբարից մյուսն են տեղափոխել: Սկզբնական շրջանում հեղինակին իրավական խորհրդատվություն է տրամադրել Նյու Սաութ Ուելզի Իրավական օգնության կոմիտեն, սակայն նրանց միջև կապն ընդհատվել է Յուսիսային տարածք տեղափոխվելու պատճառով: Այնուհետև նա իրավական խորհրդատվություն է ստացել Յուսիսային տարածքի Իրավական օգնության կոմիտեից, սակայն Պորտ Չեդլենդ տեղափոխվելու հետևանքով կորցրել է կապը այդ գրասենյակում աշխատող իր իրավական ներկայացուցիչների հետ: Հեղինակի փաստաբանը պնդում է, որ հեղինակին երկրի տարբեր ուղղիչ կենտրոններ տեղափոխելը նշանակալիորեն խոչընդոտել է նրա հաղորդակցումն իր իրավաբանների հետ, ինչն էլ հանգեցրել է 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման:

¶ 5.7. Փաստաբանը հավատացած է, որ 9-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատական գործ հարուցելու իրավունքի իրացման կարևոր նախապայման է անձի համար մատչելի իրավական խորհրդատվությունը: Եթե անձը ձերբակալվել է, դատավարության մատչելիությունը սովորաբար կարող է երաշխավորել միայն փաստաբանը: Այս համատեքստում փաստաբանը նշում է, որ երաշխավորված է հեղինակի իրավաբանական օգնության համապատասխան մատչելիությունը:

¶ 5.8. Հեղինակի փաստաբանը հավելում է նաև, որ իր պաշտպանյալին երկու անգամ հարկադրաբար հեռացրել են նահանգի վարչական իրավասության սահմաններից, և փաստորեն, զրկել են նրան իր փաստաբանների հետ կապի մատչելիությունից: Հարկ է նշել, որ երբեք նրա փաստաբաններին այդ տարիսանումները չեն պատճառաբանվել: Շատերը կարծում են, որ վերոհիշյալ գործողությունների նպատակն է խոչընդոտել իրավական խորհրդատուների մատչելիությունը:

Այս գործով կոմիտեն որոշում է կայացրել մասնակից պետության օգտին.

¶ 9.6. ...Այն հանգամանքը, որ Ա.-ն պարբերաբար մեկ ուղղիչ կենտրոնից մյուսն է տեղափոխվել և հարկադրված է եղել փոխել իր իրավական ներկայացուցիչներին, չի կարող նսեմացնել այն փաստը, որ նա կապեր է հաստատել իրավական խորհրդատուների հետ: Ծիշտ է, այդ մատչելիությունը հարմար չի եղել, հատկապես՝ Պորտ Չեդլենդի հեռավորության պատճառով, այնուամենայնիվ, այն չի խախտում 9-րդ հոդվածի 4-րդ կետը:

Կոմիտեն բնավ չի համարում, որ Ա.-ի իրավական ներկայացուցչության մատչելիությունն այնպես է վտանգվել, որ նա ի վիճակի չլինի ներկայումս իրեն վերապահված իրավունքով դատարան դիմելու իրեն ձերբակալելու որոշումը վիճարկելու համար: Հարկ է նշել, որ ի տարբերություն տվյալ գործի, Միացյալ Թագավորության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգված է այն հարցով, որ «ապաստան հայցողներին տարբեր վայրերում սփռելու գործելակերպը կարող է բացասաբար անդրադառնալ խորհրդատվություն ստանալու նրանց կարողության և այդ խորհրդատվության որակի վրա»⁶⁸:

⁶⁸ ՄԱԿ-ի փաստաթուղթ (2001), CCPR/CO/73/UK, պարբ. 16:

[11.56] Ավստրալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է⁶⁹.

¶ 526. Կոմիտեն այն կարծիքին է, որ «Քաղաքացի չհանդիսացող, պետության տարածքում անօրինական հիմքերով բնակվող անձանց, ինչպես նաև՝ ապաստան հայցողների մասին» միգրացիոն օրենքով նախատեսված պարտադիր կալանավորումը հարցեր է հարուցում՝ դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին դրա համապատասխանության առումով: Ըստ վերոնշյալ դրույթների՝ ոչ ոք չի կարող կամայական կալանավորման ենթարկվել: Կոմիտեն մտահոգված է մասնակից պետության վարած քաղաքականությամբ՝ պարտադիր կալանավորման, իրավական խորհրդատվություն ստանալու իրավունքը կալանավորներին պարզաբանելու և այդ իրավունքի մասին կալանավորներին տեղեկացնելու մարդու իրավունքների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին թույլտվություն չտալու համատեքստում:

¶ 527. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը վերանայել «քաղաքացի չհանդիսացող, պետության տարածքում անօրինական հիմքերով բնակվող անձանց» պարտադիր կալանավորման վերաբերյալ իր ռազմավարությունը՝ հաշվի առնելով բնականոն ներգաղթային գործընթացը կառավարելու համար անհրաժեշտ այլընտրանքային մեխանիզմների ներդրումը:

Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը տեղեկացնի բոլոր կալանավորներին իրենց օրենքով վերապահված իրավունքների, այդ թվում և՝ փաստաբան հայցելու իրավունքի մասին: Ուստի, զարմանալի չէ ներգաղթածների պարտադիր կալանավորման և 9-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ մեկնաբանությունների առկայությունը, որոնք համապատասխանում են «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» (*A v Australia*, 560/93) [11.16] և «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» (*C v Australia*, 900/99) [11.17] գործերով ՄԻԿ-ի կայացրած որոշումներին: Ներգաղթային կալանավորի համար, վերջինիս կողմից հատուկ հայցի բացակայության դեպքում, իրավական խորհրդակցության մատչելիություն չապահովելու կամայական քաղաքականության դրսևորման հետ կապված մնացած մեկնաբանությունները նոր հարցերի տեղիք են տալիս: Ավստրալիայում խիստ դրված չէ ներգաղթային կալանավորվածներին իրավական խորհրդատվության մատչելիությունից զրկելու հարցը, սակայն նրանք տեղեկացված չեն այս իրավունքի մասին: ՄԻԿ-ը հանդգնած է, որ այս գործելակերպը հակասում է ՔՔԻՄԴ-ի դրույթներին: Ներգաղթային կալանավորվածները սովորաբար ծանոթ չեն կամ շատ վատ գիտեն Ավստրալիայի իրավական համակարգը, ինչպես նաև՝ դրանից բխող իրենց իրավունքները: Շատերը հավանաբար չեն խոսում և չեն հասկանում անգլերեն: Շատերն էլ թերևս գալիս են այնպիսի երկրներից, որտեղ փաստաբանների մատչելիությունն առհասարակ մերժվում է, և նույնիսկ չեն էլ ենթադրում, որ նման հնարավորությունը մատչելի է Ավստրալիայում: Այս բոլոր նկատառումներից ելնելով՝ ճիշտ է ՄԻԿ-ի այն պնդումը, որ ավելի լավ կլինի, եթե այս կալանավորվածները տեղյակ լինեն օրենքով իրենց վերապահված իրավունքների մասին, ոչ թե տուժեն իրազեկության պակասից:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՊԵՏՔԷ «ԴԱՏԱՐԱՆՈՒՄ» ՁԵՆԱՐԿՎԵՆ

[11.57] «ՏՈՌԵՍՆ ԸՆԴԴԵՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (TORRES v FINLAND, 291/88)

Սույն գործով հեղինակը, ում՝ որպես հանցագործի, պետք է հանձնեին, յոթ օր կալանքի տակ է պահվել՝ զրկված իր կալանավորման օրինականության համար դատարան դիմելու հնարավորությունից: Համապատասխան օրենսդրությամբ Տորեսը միայն իրավասու գերատեսչության կողմից քննության իրավունք ուներ:

¶ 7.2. Կոմիտեն հաշվի է առել մասնակից պետության այն պնդումը, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 32-րդ բաժնի համաձայն՝ հեղինակը կարող էր դիմել ներքին գործերի նախարարություն 1987 թ. հոկտեմբերի 7-ին և դեկտեմբերի 3-ին, ինչպես նաև 1988 թ. հունվարի 5-ին կարգադրված կալանավորումները բողոքարկելու համար: Կոմիտեի կարծիքով՝ սա հնարավորություն է ընձեռում ինչ-որ չափով պաշտպանվելու և քննելու կալանավորման օրինականությունը, սակայն այն չի բավարարում 9-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, որոնց համաձայն՝ կալանավորման

⁶⁹ ՄԱԿ-ի փաստաթուղթ (2000) A/55/40, պարբ. 526-527:

օրինականությունը որոշվում է դատարանի կողմից՝ առավել անկողմնակալություն և անկախություն ապահովելու նպատակով: Կոմիտեն նաև նշում է, որ թեև հեղինակը կալանավորվել է ոստիկանության կարգադրությամբ, սակայն նա չէր կարող դատարանում քննել իր կալանավորման օրինականությունը: Դատարանում քննությունը հնարավոր է միայն յոթ օր հետո, երբ կալանավորման կարգադրությունը հաստատվում է նախարարի կողմից: Քանի որ մինչև կալանավորման երկրորդ շաբաթը վերաքննիչ ոչ մի դիմում չէր կարող ներկայացվել, 1987 թ. հոկտեմբերի 8-15-ը, 1987 թ. դեկտեմբերի 3-10-ը, ինչպես նաև 1988 թ. հունվարի 5-10-ը ժամանակահատվածում հեղինակի կալանավորմամբ խախտվել է 9-րդ հոդվածի 4-րդ կետի այն պահանջը, որ կալանավորը «դատարանում իր գործը քննելու իրավունք ունի, որպեսզի դատարանն *անհապաղ* կարողանա որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինական է»: [Շեղատառն ավելացված է:]

[11.58] «ՎՈՒՈԼԱՆՆ ԸՆԴՂԵՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (VUOLANNE v FINLAND, 265/87)

Սույն գործով հեղինակը, որպես ռազմական կարգապահական պատիժ, տասը օրով ձերբակալվել է (բանտարկություն զինվորական կալանատանը՝ առանց ծառայողական պարտականությունների կատարման)՝ իր կայազորն առանց թույլտվության լքելու համար: Հեղինակին միայնակ փակել են խցում և արգելել հաղորդակցվել այլ կալանավորվածների հետ: Նա խնդրել է, որ իր կալանավորումը քննվի վերադաս զինպաշտոնյայի կողմից: Այդուհանդերձ, նրան կալանավորելու որոշումը կայացվել է առանց լսման: Հեղինակը պնդում է, որ եղել է 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում, քանի որ նա կալանքի տակ է պահվել՝ զրկվելով դատարան դիմելու հնարավորությունից: Մասնակից պետությունը մի շարք մեկնաբանություններ է արել 9-րդ հոդվածի 4-րդ կետի վերաբերյալ:

¶ 6.3. Սույն գործի փաստերի նկատմամբ դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառելիության առնչությամբ մասնակից պետությունը բերում է հետևյալ փաստարկները:

Ռազմական կարգապահության ընթացակարգով կալանավորված անձը, ինչպես նշված է վերը, չի կարող իր գործը քննել դատարանում: Գործը քննելու համար դիմում ներկայացնելու համակարգը ազատման միակ միջոցն է: Այլ կերպ ասած՝ Ֆինլանդիայի իշխանությունների դիրքորոշումն այն է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետը ռազմական ընթացակարգերի դեպքում չի կիրառվում:

9-րդ հոդվածի վերաբերյալ 1982 թ. հուլիսի 27-ին արված թիվ 8 (16) Ընդհանուր մեկնաբանությունում կոմիտեն հնարավորություն է ունեցել առանձնացնելու 9-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված կալանավորման տեսակները: Նա թվարկել է հետևյալ հիմքերով իրականացված կալանավորումները, ինչպիսիք են «հոգեկան հիվանդությունը, թափառաշրջկությունը, թմրամոլությունը, կրթական նպատակները, ներգաղթի հսկողությունը և այլն»: Հատկանշական է, որ կոմիտեն այդ ցանկում չի ընդգրկել ռազմական կարգապահության ընթացակարգից բխող ազատազրկումը: Կոմիտեի թվարկած կալանավորման ձևերին միավորում է այն, որ դրանք ենթադրում են ձգձգված, անսահմանափակ կալանավորում: Բացի այդ, կալանավորման այս ձևերը հիմնականում խիստ չեն կարգավորվում, թեև կալանավորման եղանակը կախված է կալանավորման նպատակից (օր.՝ հիվանդության բուժում) և պահանջում է կալանավորող մարմնի հայեցողությունը: Այդուհանդերձ, սա խիստ հակասում է ռազմական կարգապահական ընթացակարգով իրականացվող կալանավորմանը, որի հիմքերը, ժամկետը և եղանակը հստակ սահմանված են ռազմական կանոնակարգերով: Եթե ռազմական մարմիններն անցնում են օրենքով նախատեսված սահմանները, ապա ընձեռվում է սովորական եղանակներով դատաքննության հնարավորություն: Այլ կերպ ասած՝ հնարավոր է, որ «կալանավորման» տարբեր տեսակների ցանկում կոմիտեն չի ներառել ռազմական կարգապահական գործընթացը, քանի որ դրա և կալանավորման այլ ձևերի նյութաիրավական տարբերությունը նա դիտարկել է անձի պաշտպանության անհրաժեշտության տեսանկյունից:

«Սույն գործն ակներևաբար այն դեպքն է, երբ պաշտոնյան՝ հրամանատարը, հանդես է գալիս դատական կամ առնվազն կիսադատական դերում, քանի որ ռազմական կարգապահության ընթացակարգով կարգադրում է կալանավորել անձին: Նմանապես, գործը քննելու համար դիմումի ռուսումնասիրումը համեմատելի է վերաքննիչ բողոքի քննության հետ: Ինչպես բացատրվեց վերը, ռազմական կարգապահական կալանավորման պայմանները և եղանակը հստակ սահմանված են օրենքով: Այս դեպքում պահանջվող հայեցողության աստիճանը զգալիորեն շատ ավելի սահմանափակ է, քան կոմիտեի թվարկած որոշ դեպքերում: Այդ առումով ռազմական կարգապահական ընթացակարգում դատական հսկողության կարիքը նշանակալիորեն ավելի քիչ է, եթե ոչ խիստ մակերեսային, քան, ասենք, հոգեկան հիվանդության հիմքով իրականացված կալանավորման դեպքում»:

Հեղինակը պատասխանել է հետևյալ կերպ.

¶ 7.2. 9-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ հեղինակը մեկնաբանում է մասնակից պետության կողմից 9-րդ հոդվածի վերաբերյալ կոմիտեի թիվ 8 (16) Ընդհանուր մեկնաբանության մեջբերումը և նշում, որ մասնակից պետությունը չի հիշատակում, որ ըստ Ընդհանուր մեկնաբանության՝ 9-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերում է ձերբակալմամբ կամ կալանավորմամբ ազատագրված յուրաքանչյուր անձի: Նա նաև բերում է հետևյալ փաստարկները.

«Ռազմական բանտարկությունը դատարանի կողմից կամ ռազմական կարգապահական ընթացակարգով կարգադրվող պատժամիջոց է»: Պատժի ժամկետը համապատասխանում է սովորական քրեական օրենսդրությամբ սահմանված ամենակարճ բանտարկությանը (Ֆինլանդիայի օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամկետը 14 օր է) և զերազանցում դաշնագրով ընդունելի նախաքննական կալանավորման ժամկետը: Սա վկայում է, որ անձի պաշտպանության անհրաժեշտության տեսանկյունից կալանավորման այս ձևերի միջև նյութաիրավական տարբերություն չկա...

Հեղինակն առաջարկում է նաև հետևյալ մեկնաբանությունները՝ ցույց տալու համար, որ Ֆինլանդիայի ռազմական կարգապահական ընթացակարգը չի համապատասխանում նաև 2-րդ հոդվածի 3-րդ կետին.

«(ա) Մասնակից պետության համաձայն»՝ այն դեպքում, երբ ռազմական մարմիններն անցնում են օրենքով նախատեսված սահմանները, ապա սովորական եղանակներով դատաքննության հնարավորություն է ընձեռվում»: Այս հայտարարությունը շփոթության մեջ է գցում: Հնարավոր չէ, որ ռազմական բանտարկության դատապարտված անձը պատժի օրինականությունը քննելու համար կարողանա դատարան դիմել: Տվյալ ռազմական մարմինների վարքը սկզբունքորեն կարող է վիճարկվել: Սա նշանակում է, որ դատարան պետք է ներկայացնել քաղաքացիական հայց, ոչ թե ցանկացած «դիմում»: Այս ընթացակարգը հստակ չի կարող «սովորական» համարվել, և եթե անգամ գործողությունը ձեռնարկվի, դատարանը չի կարող կարգադրել տուժողին ազատ արձակել:

(բ) Որոշ այլ հայտարարություններ նույնպես մոլորեցնող են: Կալանավորում կարգադրող պաշտոնյան և այն քննելու դիմումն ուսումնասիրող մեկ այլ պաշտոնյա չեն գործում «դատական կամ առնվազն կիսադատական դերում»: Պաշտոնյաներն իրավաբանական կրթություն չունեն: Դատական գործընթացի ամենատարրական պահանջներից շատերը ընթացակարգում նույնիսկ չկան. հայցվորի գործը չի քննվում, իսկ վերջնական որոշումը կայացվում է ոչ անկախ անձի կողմից, սակայն ուն հետ խորհրդակցել են նախքան պատիժը կարգադրելը»:

Հօգուտ հեղինակի կոմիտեն որոշել է հետևյալը.

¶ 9.3. Կոմիտեն նկատի է ունեցել մասնակից պետության այն պնդումը, որ պրն Վուլանի գործը դուրս է մնում դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներից: Կոմիտեն կարծում է, որ այս հարցին պետք է պատասխանել՝ հղում կատարելով դաշնագրի բացահայտ դրույթներին, ինչպես նաև դրա նպատակին: Կոմիտեն նշում է, որ որպես ընդհանուր առաջարկություն՝ դաշնագիրը չի ներառում որևէ դրույթ, որն անձանց որոշակի կարգերին ազատում է դրա կիրառումից: 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագրության տակ գտնվող բոլոր անձանց՝ սույն դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից»: Այս հոդվածի դրույթների ծավալուն բնույթը որևէ հնարավորություն չի ընձեռում անձանց տարբեր կարգեր սահմանելու համար, ինչպիսիք են քաղաքացիական անձինք կամ զինծառայողներ, ինչը հանգեցնում է նրան, որ դաշնագիրը մի դեպքում կիրառվում է, իսկ մյուսում՝ ոչ: Ավելին՝ նախապատրաստական փաստաթղթերը, ինչպես նաև կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունները վկայում են, որ դաշնագրի նպատակն է բոլորի համար հռչակել և սահմանել որոշակի մարդու իրավունքներ և երաշխավորել դրանց կիրառումը: Հետևաբար, պարզ է, որ դաշնագիրը մշակվել է՝ հաշվի առնելով ոչ թե ուն իրավունքներն է պետք պաշտպանել, այլ որ իրավունքները և որքանով: Սա նշանակում է, որ սույն գործով 9-րդ հոդվածի 4-րդ կետը չի կարող բացառվել:

¶ 9.4. Կոմիտեն ընդունում է, որ զինծառայողների համար տեղաշարժվելու ազատության սահմանափակումը բնականոն երևույթ է: Ավնհայտ է, որ այն դուրս է 9-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներից: Ավելին՝ կոմիտեն համաձայն է, որ կարգապահական պատիժը կամ միջոցը, որը քաղաքացիական անձի նկատմամբ կիրառելու դեպքում կալանավորմամբ ազատագրվում կհամարվեր, զինծառայողի նկատմամբ կիրառելու դեպքում որպես այդպիսին չի կարող որակավորվել: Այդուհանդերձ, նման պատիժը կամ միջոցը կարող է հանգեցնել 9-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառմանը, եթե դա սահմանափակում է զինծառայության բնականոն ընթացքը և խաթարում տվյալ մասնակից պետության

զինծառայողների կենսապայմանները: Սա ապացուցելու համար հարկավոր է հաշվի առնել մի շարք գործոններ, ինչպիսիք են տվյալ պատժամիջոցի կամ միջոցի բնույթը, ժամկետը, հետևանքները և իրականացման եղանակը:

¶ 9.5. Կարգապահական միջոցի իրականացմամբ պրն Վուլանին չի թույլատրվել կատարել իր պարտականությունները, և նա ստիպված է եղել տասն օր շարունակ գիշեր-ցերեկ անցկացնել 2 x 3 մ տարածք ունեցող խցում: Նրան թույլ են տվել դուրս գալ խցից միայն ուտելու, զուգարան գնալու և օրը մեկուկես ժամով մաքուր օդ շնչելու համար: Նրան արգելել են խոսել այլ կալանավորների հետ և աղմկել իր խցում: Նամակ գրելիս և գրառումներ անելիս նրան խանգարել են: Նա իր պատիժը կրել է այնպես, ինչպես կկրեր բանտարկյալը: Հեղինակին նշանակված պատիժը զգալի երկար է, որն իր ժամկետով մոտ է Ֆինլանդիայի օրենսդրությամբ սահմանվող ամենակարճ բանտարկությանը: Նման հանգամանքներում կոմիտեն այն կարծիքին է, որ տասն օր շարունակ խցում մեկուկես բանտարկությունն ինքնին դուրս է սովորական ծառայության շրջանակներից և գերազանցում է զինծառայողի կյանքի բնականոն սահմանափակումները: Կարգապահական հատուկ պատիժն ինչ-որ չափով հանգեցրել է հասարակական մեկուսացման, որը 9-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով սովորաբար զուգորդվում է ձերբակալմամբ կամ կալանավորմամբ: Հետևաբար, 9-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով այն պետք է համարվի ազատագրելու: Այս կապակցությամբ կոմիտեն հիշեցնում է թիվ 8 (16) Ընդհանուր մեկնաբանությունը, որի համաձայն՝ 9-րդ հոդվածի դրույթների մեծ մասը կիրառելի է ազատագրված բոլոր դրսևորումների դեպքում՝ անկախ այն հանգամանքից՝ դա տեղի է ունեցել քրեական, թե՛ կալանավորման այլ դեպքերում, օրինակ՝ հոգեկան հիվանդության, թափառաշրջիկության, թմրամոլության, կրթական նպատակներով, ինչպես նաև ներգաղթի հսկողության դեպքում: Կոմիտեն չի կարող ընդունել մասնակից պետության այն պնդումը, թե կարիք չի եղել կիրառել 9-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավական և դատավարական երաշխիքները, քանի որ ռազմական կարգապահական կալանավորումը հստակ կարգավորվում է օրենքով:

¶ 9.6. Կոմիտեն նաև նշում է, որ երբ անձին ազատագրելու որոշումը կայացվում է վարչական մարմնի կամ իշխանության կողմից, 9-րդ հոդվածի 4-րդ կետն անկասկած պարտավորեցնում է տվյալ մասնակից պետությանը կալանավորին ընձեռել դատարան դիմելու իրավունք: Տվյալ գործում կարևոր չէ՝ դատարանը քաղաքացիական է, թե՛ ռազմական: Կոմիտեն չի ընդունում մասնակից պետության այն պնդումը, թե ներկայումս Ֆինլանդիայում գործող «Ռազմական կարգապահական ընթացակարգի մասին» օրենքի համաձայն՝ վերադաս զինպաշտոնյայի կողմից հայցի քննումը համեմատելի է վերաքննիչ բողոքի դատաքննության հետ, և կալանավորումը կարգադրող պաշտոնյաները գործում են դատական կամ կիսադատական կարգով: Պրն Վուլանին գործով կիրառված ընթացակարգը դատական բնույթ չի ունեցել, իսկ 1987 թ. հուլիսի 17-ին պրն Վուլանին դեմ որոշում կայացրած վերահսկող զինպաշտոնյան չի կարող «դատարան» համարվել 9-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով: Հետևաբար, մասնակից պետության իշխանությունները չեն կատարել 9-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պարտավորությունները:

Վուլանին գործով հաստատվում է, որ ռազմական կալանավորումները պետք է համապատասխանեն 9-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դատավարական երաշխիքներին⁷⁰: Կոմիտեն պատրաստ չէր ընդունել այն տեսակետը, որ վերադասի՝ կալանավորելու մասին որոշման քննությունը համատեղելի է 9-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված վերաքննիչ բողոքի դատաքննության հետ: Նման պաշտոնյան անհրաժեշտ դատական կամ կիսադատական դեր կամ կարգավիճակ չունի: Սույն որոշումն զգալի հետևանքներ ունի այն մասնակից պետությունների համար, որոնք արդարադատություն իրականացնելիս քաղաքացիական անձանց և զինծառայողներին խստորեն տարանջատում են:

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՎԻՃԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

[11.59] «Ա.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (A v AUSTRALIA, 560/93)

Հեղինակն ավելի քան չորս տարի կալանքի տակ է պահվել, երբ ապաստան է հայցել Ավստրալիայից [11.16]: 1992 թ. մայիսին Ավստրալիայի խորհրդարանն ընդունեց «Ներգաղթի մասին օրենքի լրամշակման մասին» օրենքը (3-րդ ընթերցմամբ), որով 1958 թ. «Ներգաղթի մասին» օրենքում ավելացվեց նոր՝ 4բ բաժինը: Այդ բաժինը թույլ էր տալիս համապատասխան նախարարին լիազորել «նշված անձանց» կալանավորումը մինչև Ավստրալիայից նրանց մեկնելը կամ մուտքի թույլտվություն ստանալը: Հեղինա-

⁷⁰ Տե՛ս եվրոպական գործի հետ համեմատելու համար՝ *De Jong, Baljet and Van den Brink v Netherlands* (1986) 8 EHRR 20: *Duinhof and Duij v Netherlands* (1991) 13 EHRR 478 և *Van der Sluis, Zuiderveld and Klappe v Netherlands* (1991) 13 EHRR 461.

կը և նման իրավիճակներուն գտնվող այլ «նավով եկած մարդիկ» սահմանվում են որպէս «նշված անձինք»: Հեղինակը պնդում է, որ իրեն մերժել են 9-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իր իրավունքները, քանի որ Ավստրալիայի օրենսդրությունն իրեն չի թույլատրում իրացնել իր կալանավորումը վիճարկելու արդյունավետ իրավունքը: Վիճարկման յուրաքանչյուր փորձ ապարդյուն կլինէր, քանի որ օրենսդրությամբ նախատեսված կալանավորման նկատմամբ իրավասությունների լայն շրջանակներում իր կալանավորումն ինքնաբերաբար օրինական էր:

¶ 3.5. Փաստաբանը նաև պնդում է, որ հեղինակի գործով խախտվել է 9-րդ հոդվածի 4-րդ կետը: 4-ր բաժնի իրավական ուժն այն է, որ բավական է՝ անձը գէթ մեկ անգամ որպէս «նշված անձ» որակվի, որպէսզի նրան կալանավորման այլընտրանք չտրամադրվի, և այն չուսումնասիրվի դատարանի կողմից, քանի որ դատարանները անձին ազատ արձակելու կարգադրության որևէ հայեցողական իրավունք չունեն:

¶ 5.5. 9-րդ հոդվածի 4-րդ կետով ներկայացված պահանջի առնչությամբ դատապաշտպանը բերում է այն փաստարկը, որ այն դեպքում, երբ 1958 թ. «Ներգաղթի մասին» օրենքի 4-ր բաժնով նշված անձին ազատ արձակելու հայեցողական իրավունք չի սահմանվում, ապա ազատ արձակման գործողություններ դատարանում ձեռնարկելն անիմաստ է:

Ի պատասխան 9-րդ հոդվածի 4-րդ կետի՝ մասնակից պետությունը նշել է հետևյալը.

¶ 4.6. Այն առնչությամբ, որ դիմումը փորձում է ապացուցել 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման փաստն այն հիմքով, որ կալանավորման ողջամիտ կամ համապատասխան լինելը դատարանում վիճարկել հնարավոր չէր, մասնակից պետությունը կարծում է՝ այն հանգամանքը, որ դատարանն անձին ազատ արձակելու կարգադրության հայեցողական իրավունք չունի, ոչ մի կերպ ներառված չէ 9-րդ հոդվածի 4-րդ կետում, որը վերաբերում է միայն կալանավորման օրինականության քննությանը:

¶ 7.8. 9-րդ հոդվածի 4-րդ կետով ներկայացված պահանջի առնչությամբ մասնակից պետությունը վերահաստատում է, որ մշտապես հեղինակին կալանավորման օրինականությունը վիճարկող գործողություն ձեռնարկելու հնարավորություն է ընձեռնել, օրինակ՝ դատարանից պահանջելով որոշել, թե արդյոք իր կալանավորման փաստը համապատասխանում էր Ավստրալիայի օրենսդրությանը: Դատարաններն իրավասու էին ազատ արձակել Ա.-ին, եթե նրա կալանավորման անօրինականությունն ապացուցվեր: Մասնակից պետության տեսանկյունից այս դրույթը չի պահանջում, որ նրա դատարանները կալանավորման հարցում խորհրդարանին փոխանցեն իրենց հայեցողական իրավունքը: «Դաշնագիրը չի պահանջում, որ դատարանը կարգադրի կալանավորին ազատ արձակել, եթե նա կալանավորվել է օրենքի համաձայն»:

Գործի նյութաիրավական հիմքերի մասին հօգուտ հեղինակի կայացված որոշման մեջ կոմիտեն մանրամասն ուսումնասիրել է 9-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պահանջները.

¶ 9.5. Կոմիտեն նշում է, որ կալանավորման հիմքերը քննելու համար հեղինակը սկզբունքորեն կարող էր դատարան դիմել մինչև 1992 թ. մայիսի 5-ը՝ «Ներգաղթի մասին օրենքի լրամշակման մասին» օրենքը հաստատվելը. այդ օրվանից հետո ազգային դատարանները պահպանում էին անձին ազատ արձակելու կարգադրության իրավասությունը, եթե ապացուցվում էր Ավստրալիայի օրենսդրությանը կալանավորման հակասելու փաստը: Այդուհանդերձ, դատարանների՝ անձին ազատ արձակելու կարգադրության հսկողությունը և իրավասությունը սահմանափակվում են միայն այն հարցը որոշելով, թե «Ներգաղթի մասին օրենքի լրամշակման մասին» օրենքի իմաստով տվյալ անձը համարվո՞ւմ է «նշված անձ», թե՞ ոչ: Այն դեպքում, երբ նման գնահատականի չափանիշները բավարարված էին, դատարանն անձի շարունակական կալանավորումը քննելու և նրան ազատ արձակելու կարգադրության իրավունք չունէր: Կոմիտեի կարծիքով՝ 9-րդ հոդվածի 4-րդ կետով դատարանում կալանավորման օրինականությունը քննելու գործընթացը, որը պետք է ներառի ազատ արձակելու կարգադրության հնարավորություն, չի սահմանափակվում զուտ ազգային օրենսդրությանը կալանավորման համապատասխանելու հարցի որոշմամբ: Թեև ազգային իրավական համակարգերը կարող են տարբեր եղանակներ սահմանել վարչական կալանավորումը դատարանում քննելու համար, սակայն 9-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներում որոշիչն այն հանգամանքն է, որ իր բոլոր հետևանքներով հանդերձ՝ նման քննությունն իրատեսական է, այլ ոչ պարզապես պաշտոնական: Սահմանելով, որ դատարանն իրավասու է կարգադրել անձին ազատ արձակել, «եթե կալանավորումն անօրինական է», 9-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջում է, որ դատարաններին իրավասություն տրվի կարգադրել անձին ազատ արձակել այն դեպքում, երբ կալանավորումը հակասում է 9-րդ հոդվածի 4-րդ կետին կամ դաշնագրի այլ դրույթների: Սույն եզրակացությունը հիմնավորված է 9-րդ հոդվածի 4-րդ կետի տեսանկյունից, որը կարգավորում է ազգային օրենսդրությամբ կամ դաշնագրի իմաստով «անօրինական»

կալանավորման փոխհատուցման հարցը: Քանի որ մասնակից պետության փաստարկները ցույց են տալիս, որ փաստորեն Ա.-ի՝ դատարանում սեփական գործը քննելու իրավունքը սահմանափակված էր այն ակնհայտ փաստի պաշտոնական գնահատմամբ, որ «Ներգաղթի մասին օրենքի լրամշակման մասին» օրենքի իմաստով հեղինակն իսկապես հանդիսանում է «նշված անձ», կոմիտեն եզրահանգում է, որ հեղինակի՝ դատարանի կողմից իր գործը քննելու իրավունքը՝ սահմանված 9-րդ հոդվածի 4-րդ կետով, խախտվել է:

Արտահայտելով իր համաձայնությունը՝ պարոն Բիզվաթին նշել է իր կարծիքում.

...Պետության անունից նշվել է, որ դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետով ընդամենը պահանջվում է, որ կալանավորվածն իրավունք է հնարավորություն ունենա գործը հանձնելու դատարան՝ իր կալանքի օրինականությունը որոշելու նպատակով, որտեղ օրինականությունը պետք է սահմանափակված լինի միայն ազգային օրենսդրությանը կալանավորման համապատասխանությամբ: 9-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներում կալանավորվածն իրավասու է դատարան դիմել միայն ազգային օրենսդրությանը կալանավորման համապատասխանությամբ՝ անկախ օրենսդրությունից: Սակայն սրանով չափազանց նեղ մեկնաբանվեց 9-րդ հոդվածի 4-րդ կետի բովանդակությունը, որը մարդու իրավունք է մարմնավորում: Ճիշտ չէր լինի մարդու իրավունքի կիրառումը թուլացնող մեկնաբանությունը ընդունել: Այն պետք է մեկնաբանվի լայն և ընդգրկուն իմաստով: Պետության ներկայացրած մեկնաբանությունը հնարավորություն կտա իրեն ընդունելու այնպիսի օրենք, որով օրինական կճանաչվի կալանավորման հատուկ կարգը, իսկ այդ կարգին դասվող կալանավորվածն հաջողությամբ կգրկվի 9-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իր իրավունքից: Հետևաբար, ես լայն եմ մեկնաբանում «օրինական» հասկացությունը, այսինքն՝ կալանավորումը կամայական է կամ հակասում է 9-րդ հոդվածի 4-րդ կետին կամ դաշնագրի այլ դրույթների: 17-րդ հոդվածում դաշնագիրը կազմողները «կամայական» հասկացությունն անկասկած օգտագործել են «ամօրինական» հասկացության հետ մեկտեղ, մինչդեռ 9-րդ հոդվածի 4-րդ կետում «կամայական» բառը բացակայում է: Սակայն պարզ է նաև այն, որ կամայական կալանավորումն ամօրինական է կամ, այլ կերպ ասած, օրենքով չհիմնավորված: Ավելին՝ «օրինականություն» հասկացությունը, որը հարկ է մեկնաբանել է 9-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներում, հանդիպում է դաշնագրում և, հետևաբար, պետք է մեկնաբանվի դաշնագրի դրույթների շրջանակներում և դաշնագրի առարկայի և նպատակի նկատմամբ: Սույն եզրահանգումը, հետևաբար, հիմնավորված է 9-րդ հոդվածի 4-րդ կետի տեսանկյունից, որը կարգավորում է ազգային օրենսդրությամբ կամ դաշնագրի իմաստով «ամօրինական» ճանաչված կալանավորման փոխհատուցումը:

[11.60] 9-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվում է, որ անձն իրավունք ունենա դատարանի առջև վիճարկել իր կալանավորման օրինականությունը: Սույն գործով հեղինակին ընծեռվել է այդ հնարավորությունը: Այդուհանդերձ, Ավստրալիայի համապատասխան օրենսդրությամբ, որով թույլատրվում է կալանավորել Ա.-ի դրության մեջ գտնվող օտարերկրացիներին, դրական պատասխանը բացառված էր, քանի որ ազգային օրենսդրությամբ Ա.-ի կալանավորումն ինքնըստինքյան օրինական է: Կոմիտեի՝ 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման մասին որոշումը հաստատում է, որ 9-րդ հոդվածի 4-րդ կետում «օրինականություն» հասկացությունը սահմանափակվում է դաշնագրով և տարբերվում է ազգային օրենսդրությամբ սահմանված «օրինականություն» հասկացությունից: Այս իմաստով 9-րդ հոդվածի 4-րդ կետում նշված «օրինականություն» հասկացությունը կարծես հավասարազոր է «ոչ կամայական» հասկացությանը. այս եզրահանգումը վերահաստատվում է կոմիտեի կողմից 9-րդ հոդվածի 5-րդ կետում բերված 9-րդ հոդվածի 1-ին կետի մեջբերմամբ, ինչպես նաև պրն Բիզվաթիի հատուկ կարծիքով⁷¹:

[11.61] «Ա.-ն ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (C v AUSTRALIA, 900/99)

Չնայած «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով կայացված որոշմանը՝ Ավստրալիայի կառավարությունն իր օրենսդրության մեջ 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման համար իրավական պաշտպանությունն ապահովելու նպատակով փոփոխություններ չկատարեց: Սույն գործով հայտնաբերվեց, որ իրականացված կալանավորումը 9-րդ հոդվածի 1-ին կետին հակասող կամայական կալանավորում է [11.17]: Միևնույն հայտարարությունն արվել է նաև 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման մասին: Մասնակից պետությունը պատասխանել է՝ գրոհելով «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով ներկայացված փաստարկների վրա.

⁷¹ Համեմատելք «օրինական» բառի գերակշռող մեկնաբանությունը 17-րդ հոդվածի շրջանակներում այստեղ [16.08-16.11] և [16.34]: Ավստրալիայի կառավարությունը պատասխանել է Ա.-ի որոշմանը՝ միանշանակ ժխտելով կոմիտեի՝ «օրինական» բառի լայն մեկնաբանությունը. տես R. Piotrowicz, 'The Detention of Boat People and Australia's Human Rights Obligations' (1998) 72 *Australian Law Journal* 417, 423-5:

¶ 4.34. 9-րդ հոդվածի 4-րդ կետով ներկայացված պահանջի առնչությամբ մասնակից պետությունը նշում է, որ թույլ է տալիս անձին ստուգել իր կալանավորման օրինականությունը: Մասնակից պետությունը մերժում է կոմիտեի «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով այն առաջարկը, որ այս դրույթում «օրինականություն» հասկացությունը սահմանափակված չէ միայն ազգային օրենսդրությանը համապատասխանությամբ, այլ պետք է համապատասխանի նաև 9-րդ հոդվածի 1-ին կետին և դաշնագրի այլ դրույթների: Մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրի կառուցվածքում, նախապատրաստական փաստաթղթերում կամ կոմիտեի ընդհանուր մեկնաբանություններում որևէ դրույթ չկա, որով կիսմեկնավորվի մասն մոտեցումը:

Կոմիտեի մեծամասնությունը վերահաստատեց «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով 9-րդ հոդվածի 4-րդ կետի մասին իր որոշումը և որոշում կայացրեց հօգուտ հեղինակի:

¶ 8.3. 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման մասին հեղինակի այն հետագա պնդումների առնչությամբ, որոնք վերաբերում են կալանավորման այս ժամանակահատվածին, կոմիտեն անդրադառնում է գործի ընդունելիության մասին իր քննարկմանը և նշում, որ հեղինակին հասանելի դատական քննումը սահմանափակված է եղել հարցի զուտ պաշտոնական գնահատմամբ, այսինքն՝ քննության առարկա անձն առանց մուտքի թույլտվության համարվում է «ոչ քաղաքացի», թե՞ ոչ: Կոմիտեն նշում է, որ դատարանն իրավասու չէր իր հայեցողությամբ նյութաիրավական տեսանկյունից քննել հեղինակի կալանավորման շարունակման հարցը, ինչն իր 1994 թ. հունիսի 15-ի որոշմամբ հաստատել է հենց լիակազմ դատարանը: Կոմիտեն կարծում է, որ 9-րդ հոդվածի 1-ին կետին հակասող կալանավորումը դատարանում վիճարկելու անկարողությունը 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում է:

[11.62] Սըր Նայջլ Ռոդլին ակնարկել է, որ ինքը համաձայն չէ այս հարցի շուրջ «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով ձևավորված նախադեպային բազային:

Կոմիտեն եզրակացրեց, որ խախտվել է 9-րդ հոդվածի 4-րդ կետը՝ օգտագործելով այնպիսի ձևակերպումներ, որոնք միտված էին 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտումն *ipso jure* համարել «անօրինական» 9-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով: Այս առումով կոմիտեն հետևեց «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» (560/1993) գործով ի հայտ եկած միտմանը:

Իմ կարծիքով՝ այդ միտումը չափազանց լայն է: Դաշնագրի շրջանակներում այն նույնպես չի հիմնավորվել: 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված «կամայական» հասկացությունն իր մեջ անշուշտ ամփոփում է «անօրինականություն»: Դա ակնհայտ երևում է բուն կամայականություն հասկացությունից և նախապատրաստական փաստաթղթերից: Սակայն ես չեմ հասկանում, թե ինչո՞վ սխալ չէ նաև հակառակը: Նախապատրաստական փաստաթղթերում դա հիմնավորող որևէ դրույթ չկա: Մինչդեռ դա է «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով որդեգրված մոտեցումը, որը կոմիտեն կարծես վերահաստատել է սույն գործով:

Կոմիտեի մոտեցման հետ կապված այս դժվարությունները դեռևս չեն նշանակում, որ ես ընդունում եմ այն տեսակետը, թե 9-րդ հոդվածի 1-ին կետը երբեք չի կարող կիրառվել մի գործով, որում անձը կալանավորվել է մասնակից պետության կողմից, քանի դեռ հարցի իրավական կողմն ապահովված է: Օրինակ՝ ես կարող եմ պատկերացնել, որ կալանավորվածի խոշտանգումը կարող է հիմնավորել իրավական պաշտպանության այն միջոցներին դիմելը, որոնք հարցականի տակ կառնեն կալանավորման շարունակման օրինականությունը:

Այդուհանդերձ, սըր Նայջլ Ռոդլին իրականում անհամաձայնություն չի հայտնել այս կետի շուրջ: Փոխարենը՝ նա նշել է.

Իմ այս փաստարկը պարզապես այն է, որ սույն գործով կարիք չկար անդրադառնալու այս հարցին՝ հատկապես հաշվի առնելով այն, որ կալանավորումը դատարանում վիճարկելու հնարավորության բացակայությունը 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին որոշման փաստարկների մասն էր:

Պրն Կրեցմերը համաձայնել է սըր Նայջլ Ռոդլինին, որ 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին որոշման լույսի ներքո «կարիք չկար անդրադառնալու այն հարցին թե արդյոք [դատական] քննության բացակայությունը նո՞ւյնպես ենթադրում է 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում»: «Բ.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով իր մասնակի տարակարծությունը սըր Նայջլ Ռոդլին ավելի ուշ հաստատել է «Բաբանն ընդդեմ Ավստրալիայի» (*Baban v Australia, 1014/01*) գործով:

[11.63] Այս երկու առանձին կարծիքները ենթադրում են, որ պարտադիր չէ, որ ՄԻԿ-ը հանգի 9-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դատավարական իրավունքի խախտման (կամ չխախտման) մասին եզրա-

կացության այն հանգամանքներում, երբ ի հայտ է եկել 9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված համապատասխան նյութաիրավական իրավունքի խախտում: Թեև նման մեկնաբանումը կարող է լուրջ հետևանքներ չունենալ տուժողի համար, մեծապես օգնում է իրավաբանության ոլորտում տեսական և գործնական մասնագետներին առավել լավ պատկերացնել ՔՔԻՄԴ-ի երաշխիքները: Նման մոտեցումը կարող է հանգեցնել ՔՔԻՄԴ-ով նախատեսված շատ դատավարական իրավունքների թերի մեկնաբանությունների⁷²:

[11.64] Սըր Նայջլ Ռոդլին առաջարկում է, որ «*Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի*» գործով ներկայացված և «*Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի*» գործով հիմնավորված 9-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությունը աղավաղում է այդ հոդվածի իմաստը: Անձի կալանավորման օրինականությունը վիճարկելու իրավունքը հավասարազոր չէ կալանավորման կամայականությունը վիճարկելու իրավունքին: Վերջինս իր ձևակերպմամբ չի հանգեցնում 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման: Եվ իսկապես, ՄԻԿ-ը բազմիցս համաձայնել է, որ անօրինական վարքը կամայական վարքի ենթատեսակ է,⁷³ հետևաբար, ներառում է գործողությունների ավելի սահմանափակ շրջանակ: Սըր Նայջլ Ռոդլին նշում է, որ, փոխարենը, իմաստալից դատական քննության որևէ հնարավորության բացակայությունը մի գործոն է, որը սովորաբար (նույնիսկ մշտապես) հանգեցնում է նրան, որ կալանավորումը բնութագրվում է որպես կամայական՝ դրանով իսկ հակասելով 9-րդ հոդվածի 1-ին կետին:

[11.65] Սըր Նայջլ Ռոդլի մասնավոր կարծիքում բարձրացված առավել ծավալուն հարց է ՔՔԻՄԴ-ում հաճախ հանդիպող «օրինական» հասկացության իրական իմաստը: Այն դեպքում, երբ 9-րդ հոդվածի 4-րդ կետում «օրինականությունը» վերաբերում է ազգային օրենսդրության օրինականությանը, ապա մասնակից պետությունը թերևս կարող է ժխտել դրույթի արդյունավետությունը՝ հաստատելով գործադիր մարմնի կողմից որևէ կալանավորում թույլատրող օրենսդրությունը⁷⁴: Նմանապես, 17-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված անձի պատվի և հեղինակության դեմ «անօրինական» ոտնձգության արգելումը կարող է խափանվել պետության կողմից, որի օրենսդրությամբ թույլատրվում է պատվի և հեղինակության դեմ որևէ ոտնձգություն⁷⁵: Այս պարագայում «օրինականություն» հասկացության նպատակաբանական ընդարձակ մեկնաբանությունը թերևս հիմնավորված է, ինչը թույլ չի տա պետություններին, սխալ օրենքներ հաստատելով, ձեռնպահ մնալ ՔՔԻՄԴ-ով սահմանված որոշ պարտավորություններից: Մյուս կողմից՝ հնարավոր է, որ նման սխալ օրենքները ՄԻԿ-ը, առանց ՔՔԻՄԴ-ի բովանդակությունը խեղաթյուրելու, դասակարգի որպես ՔՔԻՄԴ-ով նախատեսված այլ իրավունքների խախտումներ, ինչի օրինակը բերված է սըր Նայջլ Ռոդլիի՝ 9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի փոխազդեցության մասին կարծիքում:

[11.65Ա] «*Բաբանն ընդդեմ Ավստրալիայի*» (*Baban v Australia, 1014/01*) գործով ՄԻԿ-ի մեծամասնությունը հետևել է «*Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի*» և «*Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի*» գործերով 9-րդ հոդվածի 4-րդ կետի մասին կայացրած որոշումներին: Տկն Ուեջուդը չի համաձայնել՝ նշելով.

Ես չեմ կարող համաձայնել կոմիտեի այն ենթադրությանը, որ անօրինական ճանապարհով երկիր մուտք գործողների ցանկացած կարգի կալանավորումը պահանջող և ընթացքի մեջ գտնվող ներգաղթի գործողություններում դատարանի հայեցողական իրավունքը սահմանափակող որևէ իրավական չափանիշ ինքնին պարտադիր խախտում են դաշնագրի 9-րդ հոդվածը: Կոմիտեի կարծիքով՝ կամայական կալանավորման դեմ 9-րդ հոդվածի երաշխիքը ոչ միայն պահանջում է, որ անձն իրավունք ունենա դիմելու դատարանի քննությանը, այլև դատարանի գնահատման չափանիշները չկաշկանդվեն: Վերահսկելի ազատման քաղաքականությունների հաջողության կամ ձախողման

⁷² Տե՛ս S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2003) 3 *Human Rights Law Review* 91, 96:

⁷³ Տե՛ս օրինակ՝ թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 4:

⁷⁴ Նման օրենքը չի կարող նույնիսկ վիճարկվել այն հիմքով, որ այն բավարար չափով հստակ չի ձևակերպված:

⁷⁵ ՔՔԻՄԴ-ի այլ դրույթներն են 9-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ կետերը, որոնցով արգելվում են անօրինական և ոչ այնքան կամայական գործողությունները, և որոնք, հետևաբար, կարող են քայքայվել օրենքների պատճառով: Տե՛ս նաև «խոշտանգում» հասկացության սահմանումը 1984 թ. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին կոնվենցիայի (ԽՂԿ) 1-ին հոդվածը, որում ներառված չէ «միայն օրինական պատժամիջոցներից բխող, դրանց ներհատուկ կամ դրանց բնորոշ ցավ կամ տառապանք» (շեղագիրն ավելացված է): Տե՛ս «կամայական» և «օրինական» վերաբերմունքի այս երկճյուղավորումն այստեղ՝ [11.10-11.12] և [16.08-16.16]: Տե՛ս նաև [9.18] և [13.09]:

կամ անօրինական ճանապարհով երկիր մուտք գործողների որոշակի կարգերի չհաշվառվելու հետ կապված խնդիրների մասին օրենսդիր մարմնի փաստացի եզրակացություններն ըստ երևույթին ծանրակշիռ չեն:

Այս նույն տրամաբանությունը կարելի է կիրառել քրեական գործերում ցանկացած պարտադիր դատավճիռ վիճարկելու համար, քանի որ այդտեղ նույնպես դատարանի իրավասությունների շրջանակը սահմանափակված է փաստերի գնահատմամբ՝ առանց այդ փաստերից բխող հանգամանքները փոխելու հայեցողական իրավունքի:

Թեև դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը կարող են պահանջել հղումներ ազգային օրենսդրության շրջանակից դուրս մնացող նյութաիրավական չափանիշներին, քանի որ գործողությունը, ըստ դաշնագրի, կարող է կամայական լինել, եթե անգամ այն համապատասխանում է ազգային օրենսդրությանը, սակայն դաշնագրում չկա որևէ դրույթ, որը պահանջի՝ դատարանները լինեն անօրինական ներգաղթի մեծ խրթին ոլորտների քաղաքականության մասին բոլոր որոշումների և չափանիշների պահեստ:

Փոխհատուցման իրավունք՝ 9-րդ հոդվածի 5-րդ կետ

[11.66] 9-րդ հոդվածի 5-րդ կետով փոխհատուցման իրավունք է նախատեսվում յուրաքանչյուր անձի համար, ով անօրինական ձևով զրկվել է իր ազատությունից: Բազմաթիվ գործերով հաստատվել է, որ 9-րդ հոդվածի 5-րդ կետով փոխհատուցում է տրամադրվում 9-րդ հոդվածի յուրաքանչյուր կետի խախտման դեպքում⁷⁶:

[11.67] 9-րդ հոդվածի 5-րդ կետը նախատեսում է փոխհատուցել «անօրինական» կալանքները, որոնք ներառում են պետության ազգային օրենսդրությամբ անօրինական համարվող կալանքներ, եթե անգամ 9-րդ հոդվածի շրջանակներում թույլատրվում է այլ բան⁷⁷: «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով (560/93) ՄԻԿ-ը նշել է, որ 9-րդ հոդվածի 5-րդ կետը նախատեսում է նաև փոխհատուցել ազգային օրենսդրությամբ «օրինական» համարվող, սակայն դաշնագրին հակասող կալանավորման դեպքում⁷⁸: Ուստի, ինչպես և 9-րդ հոդվածի 4-րդ կետի պարագայում, 9-րդ հոդվածի 5-րդ կետում ՄԻԿ-ը պատժամիջոց սահմանեց «կամայական, սակայն օրինական կալանքների» համար, չնայած դրույթում «կամայական կալանավորումներին» ոչ մի հղում չի տրվում⁷⁹: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը վերջերս «Սոթելի Չամբալան ընդդեմ Չամբիայի» (*Soteli Chambala v Zambia, 856/99*) գործով կասկածի տակ առավ այդ եզրակացությունը: Հեղինակը՝ Սոթելի Չամբալան, քսաներկու ամիս այնպիսի հանգամանքներում է կալանքի տակ պահվել, որոնք ՄԻԿ-ի որոշմամբ կամայական էին և, հետևաբար, հակասում էին 9-րդ հոդվածի 1-ին կետին⁸⁰: Իր ազատ արձակումից երկու ամիս առաջ Չամբիայի գերագույն դատարանը որոշեց, որ ազգային օրենսդրությամբ հեղինակին կալանքի տակ պահելու հիմքեր այլևս չկան: Այդուհանդերձ, երկու ամիս անց Սոթելի Չամբալան ազատ չի արձակվել: ՄԻԿ-ը նշել է.

¶ 7.3. Կոմիտեն նշում է, որ երբ գերագույն դատարանը որոշել էր, որ հեղինակին կալանքի տակ պահելու հիմքեր չկան, հետագա երկու ամիսների նրա կալանավորումը 9-րդ հոդվածի 1-ին կետով կամայական լինելուց բացի, նաև հակասում է Չամբիայի ազգային օրենսդրությանը, ինչը հանգեցնում է 9-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված փոխհատուցման իրավունքի խախտմանը:

⁷⁶ «Սանտուլո Վալկադան ընդդեմ Ուրուգվայի» (*Santullo Valcada v Uruguay, 9/77*) գործով պետք է փոխհատուցում տրամադրվեր 9-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման համար: «Պորտորեալն ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության» (*Portorreal v Dominican Republic, 188/84*) գործով կոմիտեն որոշեց, որ 9-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված փոխհատուցումը պետք է վճարվի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտումների համար: «Բոլանիոսն ընդդեմ Եկվադորի» (*Bolaños v Ecuador, 238/87*) գործով կոմիտեն որոշեց, որ փոխհատուցում պետք է վճարվի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համար: Տե՛ս նաև «Ֆրիմանթլն ընդդեմ Ճամայկայի» (*Freemantle v Jamaica, 625/95*) գործով պրն Քլեյնի մասնավոր կարծիքը:

⁷⁷ Այս առնչությամբ տե՛ս ՔՔԻՄԴ-ի 5-րդ հոդվածի 1-ին կետը: Տե՛ս նաև «Ադուայոմը և այլք ընդդեմ Տոգոյի» (*Aduayom v Togo, 422/90*) գործով պրն Պոկարի որոշումը [11.69]:

⁷⁸ Տե՛ս 9.5 պարբերությունը և «Ա.-ն ընդդեմ Ավստրալիայի» գործով պրն Բիազվաթիի համընկնող կարծիքը [11.59]:

⁷⁹ Տե՛ս նաև Nowak, վերը, ծնթ. 1, էջ 181:

⁸⁰ Պարբ. 7.2, հեղինակին ազատազրկման մեջ էին պահել՝ այդ ամբողջ ժամանակահատվածում մեղադրանք չներկայացնելով:

9-րդ հոդվածի 5-րդ կետի խախտումը վերաբերում էր հեղինակի կալանավորման միայն վերջին երկու ամիսներին: Թեև քսաներկու ամիս կալանքի տակ պահելն ամբողջությամբ կամայական էր և հակասում էր 9-րդ հոդվածի 1-ին կետին, սակայն վերջին երկու ամիսները կարող են որակվել որպես «անօրինական» կալանավորում: Ուստի Սոթելի Չամբալայի գործով 9-րդ հոդվածի 5-րդ կետի խախտումը, ըստ երևույթին, կախված էր Ջամբիայի օրենսդրությամբ կալանավորման անօրինականությունից:

[11.68]

«ԱԴՈՒԱՅՈՄՆ ընդդեմ ՏՈԳՈՅԻ» (ADUAYOM v TOGO, 422/90)

Սույն գործով ժամկետային նկատառումներով կոմիտեն հնարավորություն չի ունեցել քննելու 9-րդ հոդվածի մասին բողոքը, քանի որ հեղինակների հայցերի հիմքում ընկած էին այնպիսի իրադարձություններ, որոնք տեղի էին ունեցել մինչև Տոգոյում կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը: Հետևաբար, կոմիտեն որոշեց, որ հնարավորություն չի ունեցել քննելու 9-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև միևնույն հոդվածի 5-րդ կետով ներկայացված դիմումը: Այնուամենայնիվ, պրն Պոկարը չհամաձայնեց հետևյալ նկատառումներով⁸¹.

...Մեծամասնության նման ենթադրելով, որ ժամկետային նկատառումներով կոմիտեն հնարավորություն չի ունեցել քննելու հեղինակների՝ դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետով ներկայացրած հայցը, սխալ կլինե՞ր եզրակացնել, որ կոմիտեն հավասարապես հնարավորություն չի ունեցել քննելու 9-րդ հոդվածի 5-րդ կետով նրանց ներկայացրած հայցը: Թեև փոխհատուցման իրավունքը, որին իրավասու է անօրինական ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ, կարող է նաև մեկնաբանվել որպես 2-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով իրավական պաշտպանության հստակեցում, այսինքն՝ դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքի խախտման համար իրավական պաշտպանություն նախատեսելով՝ դաշնագիրը պատճառահետևանքային կապ չի հաստատում 9-րդ հոդվածի երկու դրույթների միջև: Փոխարենը՝ 9-րդ հոդվածի 5-րդ կետի ձևակերպումը ենթադրում է, որ դրա կիրառումը կախված չէ 9-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին որոշումից. ձերբակալման կամ կալանավորման անօրինականությունն անշուշտ կարող է բխել ոչ միայն դաշնագրի, այլև ազգային օրենսդրության դրույթների խախտումից: Վերջինիս դեպքում փոխհատուցման իրավունքը կարող է գոյություն ունենալ անկախ այն հանգամանքից՝ ձերբակալումը կամ կալանավորումը հիմք է 9-րդ հոդվածի 1-ին կետով հայց ներկայացնելու համար, թե՛ ոչ, սակայն ազգային օրենսդրությամբ այն պետք է անօրինական լինի: Այլ կերպ ասած՝ 9-րդ հոդվածի 5-րդ կետի չորանակներում կոմիտեն հնարավորություն ունի ուսումնասիրելու ձերբակալման կամ կալանավորման անօրինականությունը, եթե նույնիսկ հնարավորություն չունենար քննելու այն դաշնագրի այլ դրույթների ներքո: Սա նաև կիրառելի է այն դեպքում, երբ այլ դրույթներին դիմելն անհնար է, քանի որ ձերբակալումը կամ կալանավորումը տեղի է ունեցել մինչև դաշնագրի կամ, մեծամասնության կարծիքով, կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը: Քանի որ սույն գործով հեղինակների ձերբակալման և կալանավորման օրինականությունը վիճելի չէ ազգային օրենսդրությամբ, եզրակացնում են, որ հեղինակների՝ դաշնագրի 9-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված փոխհատուցման իրավունքը խախտվել է, և կոմիտեն պետք է այդ մասին որոշում կայացներ:

[11.69] Պրն Պոկարն ուշադրությունը հրավիրում է 9-րդ հոդվածի 5-րդ կետը դաշնագրում ներառելու փաստի վրա, ինչպես նաև դաշնագրի ցանկացած դրույթի խախտման համար իրավական պաշտպանության ընդհանուր իրավունքի՝ նախատեսված 2-րդ հոդվածի 3-րդ կետով: 2-րդ հոդվածի 3-րդ կետը դաշնագրում անկախ «իրավունք» չէ: 2-րդ հոդվածի 3-րդ կետով անձն իրավասու չէ իրավական պաշտպանություն ստանալ, եթե դաշնագրի նյութաիրավական իրավունքի խախտում տեղի չի ունեցել⁸²: Պրն Պոկարը պնդում է հակառակը, այն է՝ 9-րդ հոդվածի 5-րդ կետն անկախ իրավունք է: Հետևաբար, 9-րդ հոդվածի 5-րդ կետի խախտման մասին որոշում կայացնելը չպետք է կախված լինի դաշնագրի մեկ այլ իրավունքի, մասնավորապես՝ 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտումից: Պոկարի պնդումը հիմնավորված է նրանով, որ 9-րդ հոդվածի 5-րդ կետը դաշնագրում առանձին է ձևակերպված: Եվ իսկապես, անհավանական է թվում, որ 9-րդ հոդվածի 5-րդ կետը մշակվել է զուտ 9-րդ հոդվածի սահմանափակ շրջանակներում 2-րդ հոդվածի 3-րդ կետը կրկնելու նպատակով: Աղուայոմի գործով մեծամասնությունը չի արտահայտվել այս հարցի շուրջ, սակայն գործի անընդունելիության մասին որոշումից կարելի է

⁸¹ Տե՛ս նաև [2.04]:

⁸² Տե՛ս օրինակ՝ «Մ. Գ. Բ.-ն և Մ. Պ.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (M.G.B. and S.P. v Trinidad and Tobago, 268/87) և «Մ. Է.-ն ընդդեմ Արգենտինայի» (S.E. v Argentina, 275/88) գործերը, տես [1.19]:

ենթադրել, որ 9-րդ հոդվածի 5-րդ կետն այնքան էլ անկախ իրավունք չէ: Մեծամասնության որոշումը՝ որպես այլընտրանք, կարող է պարզապես վկայել, որ դաշնագրի կամ ազգային օրենսդրության շրջանակներում կալանավորման «օրինականությունը» չի ուսումնասիրվի, եթե այն տեղի է ունեցել մինչև կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելը: Հետևաբար, նման հանգամանքներում նրանք չեն կարող որոշել՝ 9-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում տեղի՞ ունեցել է, թե՞ ոչ:

Եզրակացություն

[11.70] ՄԻԿ-ը կամընտիր արձանագրության բազմաթիվ որոշումներ է ընդունել 9-րդ հոդվածի դրույթների հայեցակետերի մեծ մասի վերաբերյալ: Դրանց մեծ մասը առնչվում է քրեական արդարադատության նպատակով կալանավորմանը, թեև ի հայտ են եկել նաև կալանավորման այլ տեսակներ (ինչպես օրինակ՝ օտարերկրացիների կալանավորում և հարկադիր հոգեբուժական բուժման նպատակով կալանավորում): Այնուամենայնիվ, 9-րդ հոդվածի դրույթների մեկնաբանության վերաբերյալ դեռ բազմաթիվ անորոշություններ կան, ինչպիսիք են «habeas corpus»-ը, այսինքն՝ անձի անձեռնմխելիության մասին ներկայացրած հայցի մասին որոշում կայացնելու համար դատարանին անհրաժեշտ թույլատրելի ժամանակը:

Տեղաշարժվելու իրավունք. հոդված 12

- Պետության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունք [12.02]
- Բնակության վայրն ընտրելու ազատություն [12.06]
- 12-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումն օտարերկրացիների նկատմամբ [12.09]
- Երկրից մեկնելու իրավունք՝ 12-րդ հոդվածի 2-րդ կետ [12.14]
- 12-րդ հոդվածի 3-րդ կետ՝ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում [12.23]
- 12-րդ հոդվածի 4-րդ կետ՝ սեփական երկիր մուտք գործելու իրավունք [12.27]
- Եզրակացություն [12.38]

ՖՈՐՄԱԾ 12

1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու ազատություն:
2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական երկրից մեկնելու իրավունք:
3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, և համատեղելի են սույն դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:
4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր երկիր մուտք գործելու իրավունքից:

[12.01] 12-րդ հոդվածը երաշխավորում է մարդկանց տեղաշարժվելու իրավունքը, ներառյալ՝ պետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակության վայրն ընտրելու ազատությունը, ինչպես նաև երկիր մուտք գործելու և երկրից մեկնելու նպատակով պետության սահմանները հատելու իրավունքները:

Պետության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունք

[12.02]

ԹԻՎ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Ազատ տեղաշարժվելու իրավունքը տարածվում է պետության ամբողջ տարածքի վրա, ներառյալ դաշնային պետությունների բոլոր տարածաշրջանները: 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մարդիկ օժտված են ազատ տեղաշարժվելու իրավունքով և բնակության վայր ընտրելու ազատությամբ: Սույն իրավունքի կիրառումը կախված չէ անձի՝ տեղաշարժվելու կամ որևէ վայրում բնակություն հաստատելու նպատակից կամ պատճառից: Ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի 3-րդ կետի պահանջներին:

¶ 7. 12-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն՝ պետության տարածքում բնակություն հաստատելու իրավունքը ենթադրում է պաշտպանվածություն երկրի ներսում բռնի տեղահանման բոլոր ծնեքից: Այս իրավունքով արգելվում է նաև տարածքի որոշակի հատված մարդկանց մուտք գործելու կամ այնտեղ բնակություն հաստատելու խափանումը: Այնուհանդերձ, օրինական կալանավորումն առավելապես առնչվում է անձնական ազատության իրավունքին, որին անդրադառնում է դաշնագրի 9-րդ հոդվածը: Որոշ դեպքերում 12-րդ և 9-րդ հոդվածները կարող են կիրառվել զուգահեռաբար:

[12.03] Ազատ տեղաշարժվելու իրավունքը պետության տարածքով անխափան տեղաշարժվելու իրավունքի մաս է կազմում: Այս իրավունքը որոշ չափով համընկնում է 9-րդ հոդվածում ամրագրված անձնական ազատության երաշխիքի հետ: «Չելեպլին ընդդեմ Շվեդիայի» (*Celepli v Sweden, 456/91*) գործում ՄԻԿ-ը հաստատել է, որ 9-րդ հոդվածը վերաբերում է տեղաշարժվելու իրավունքի ավելի լուրջ սահմանափակումներին, քան 12-րդ հոդվածը [11.09]։ Անշուշտ, մի շարք դեպքերում, երբ ազատագրվումը թույլատրված է 9-րդ հոդվածով, 12-րդ հոդվածը չի խախտվում:

[12.04] «ԱԿԼԱՆ ընդդեմ ՏՈԳՈՅԻ» (ACKLA v TOGO, 505/92)

ՄԻԿ-ի հետևյալ որոշումը ներկայացնում է երկրի ներսում տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումների առնչությամբ հարուցված գործերի ակնառու նմուշ:

¶ 10. Կոմիտեն նշում է հեղինակի այն անվիճելի այն պնդումը, որ նրան արգելվում է մուտք գործել Լա Կոզայի շրջան և դրա տարածքում գտնվող իր հայրենի գյուղը: Պաշտպանի 12-րդ հոդվածի համաձայն՝ պետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայրն ընտրելու ազատություն: Մասնակից պետության կողմից հեղինակի հանդեպ կիրառված սահմանափակումներն արդարացնող բացատրությունների բացակայության պայմաններում, ղեկավարվելով 12-րդ հոդվածի 3 կետով, կոմիտեն այն կարծիքին է հարում, որ հեղինակի ազատ տեղաշարժվելու իրավունքի և բնակության վայրն ընտրելու ազատության սահմանափակումը հակասում է դաշնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետին:

Նման գործերի շարքը կարելի է դասել «Մպակա-Նսուսուն ընդդեմ Զաիրի» (*Mpaka-Nsusu v Zaire, 157/1983*) և «Մպանդանջիլան և այլք ընդդեմ Զաիրի» (*Mpandanjila et al v Zaire, 138/1983*) գործերը, որոնք վերաբերում են 12-րդ հոդվածի 1-ին կետը խախտող կամայական վտարման գործողությունների²⁵:

[12.05] ԹԻՎ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Մասնակից պետությունը պետք է ապահովի 12-րդ հոդվածով երաշխավորվող իրավունքների պաշտպանությունը ոչ միայն պետական, այլև մասնավոր խոչընդոտներից: Պաշտպանելու այս պարտավորությունը հատկապես վերաբերում է կանանց իրավունքներին: Օրինակ՝ կնոջ ազատ տեղաշարժվելու իրավունքի և բնակության վայրն ընտրելու ազատության՝ օրենքով սահմանված կամ գործնականում կախվածությունը մեկ այլ անձից, ներառյալ՝ բարեկամից, հակասում է 12-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին²:

Թիվ 27 Ընդհանուր մեկնաբանությունը հաստատում է, որ 12-րդ հոդվածը դաշնագրով նախատեսված գրեթե բոլոր երաշխիքների նման ունի «հորիզոնական ազդեցություն»: Պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացումը խոչընդոտելուց, այլև պաշտպանել այդ իրավունքն այլ անձանց ոտնձգություններից³:

Բնակության վայրն ընտրելու ազատություն

[12.06] Բնակության վայրն ընտրելու իրավունքը ենթադրում է մասնակից պետության տարածքի սահմաններում ցանկացած վայրում մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու ազատություն: Իսրայելի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարում է⁴:

¶ 23. Արևելյան Երուսաղեմում բնակվող պաղեստինցիների առնչությամբ կոմիտեն մտավախություն ունի, որ մշտական բնակություն հաստատելու իրավունքի շարունակաբար աճող սահմանափակումների, ընտանիքի վերա-

²⁵ Տե՛ս նաև՝ Եզրափակիչ դիտարկումներ Իրանի Իսլամական Հանրապետության վերաբերյալ (1993), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 25, պարբ. 14:

² Տե՛ս նաև՝ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 16:

³ Տե՛ս հորիզոնական պարտավորությունների քննարկումն այստեղ՝ [1.77]:

⁴ Եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 93:

⁵ Անգլ. Israel Lands Administration (ILA)

միավորման հայցերի մերժման և հրեաներից բացի այլ ազգերի համար կառուցապատման թույլտվություն և կացարան ձեռք բերելու հետ կապված դժվարությունների հետևանքով աճել է գրավյալ տարածքներում տեղահանված անձանց թիվը: Կոմիտեն լուրջ մտավախություն է հայտնում ներքին գործերի նախարարության այն չտպագրված հրահանգի կապակցությամբ, որի համաձայն՝ պաղեստինցիները կարող են զրկվել քաղաքում ապրելու իրավունքից, եթե չկարողանան ապացուցել, որ վերջին յոթ տարիների ընթացքում մշտապես բնակվել են Արևելյան Երուսաղեմում: Կոմիտեն նշում է, որ այս քաղաքականությունը հետադարձ ուժով կիրառվում է և՛ արտասահմանում, և՛ արևմտյան ափին կամ Երուսաղեմի մոտակա արվարձաններում բնակվող պաղեստինցիների հանդեպ, սակայն չի վերաբերում իսրայելաբնակ հրեաներին կամ Արևելյան Երուսաղեմում մշտական բնակություն հաստատած սփյուռքի հրեաներին: Կոմիտեն առաջարկում է, որ մշտական բնակության կարգավիճակին առնչվող կանոնները և ընթացակարգերը կիրառվեն առանց խտրականության:

¶ 24. Կոմիտեն դատապարտում է, որպես պատժամիջոց, արաբների տների քանդումը: Նա դատապարտում է նաև արաբների «ապօրինի հիմքերով» կառուցած տները մասնակի կամ ամբողջական քանդելու գործելակերպը: Կոմիտեն ափսոսանքով է նշում այն դժվարությունները, որոնց բախվում են օրինական ճանապարհով կառուցապատման թույլտվություն հայցող պաղեստինցի ընտանիքները: Կոմիտեն համարում է, որ տների քանդումը ուղղակիորեն հակասում է մասնակից պետության՝ կացարանի հարցում կամայական ոտնձգություններից պաշտպանվածության իրավունքի անխտիր երաշխավորման (հոդված 17), բնակության վայր ընտրելու ազատության (հոդված 12), օրենքի առաջ բոլորի հավասարության և օրենքով նախատեսված հավասար պաշտպանվածության ապահովման (հոդված 26) ուղղությամբ ստանձնած պարտավորություններին:

¶ 25. Կոմիտեն մտահոգված է նաև այն իրողությամբ, որ Իսրայելի տարածքի 93 տոկոսի տնօրինման համար պատասխանատու Իսրայելի տարածքային կառավարման վարչությունում բացակայում են արաբ ներկայացուցիչները, և հրեական փոքր քաղաքների և բնակավայրերի զարգացման նպատակով Իսրայելի կողմից հողերի վարձակալության կամ վերավարձակալության տալու արդյունքում վերջին տարիներին միայն մի քանի արաբական բնակավայրեր են հիմնվել: Կոմիտեն առաջարկում է անհետաձգելի քայլերի դիմել հողի և կացարանի հարցերում առկա զգալի անհավասարությունը և խտրականությունը հաղթահարելու համար:

[12.07] Անշուշտ, անձի բնակության վայրի ընտրության իրավունքը ենթակա է մի շարք սահմանափակումների, որոնք մասամբ ներկայացված են հետևյալ գործում:

«ԼՈՎԼԵՅՍԸ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (LOVELACE v CANADA, 24/77)

Գործը վերաբերում է հեղինակին՝ մալիսիտ ցեղի հնդկացուն, Կանադայում հնդկացիների համար նախատեսված արգելոցում բնակվելու իրավունքից զրկելուն:

¶ 15. ... Կոմիտեն ընդունում է իշխանությունների կողմից արգելոցում բնակություն հաստատելու իրավունք ունեցող անձանց կարգը սահմանելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ռեսուրսների և ժողովրդի ինքնության պահպանումը:

Այս գործի կապակցությամբ կոմիտեն նշում է, որ բնակության վայրն ընտրելու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով սահմանված կարգով՝ ազգային փոքրամասնությունների հատուկ խմբերի համար բնակավայր ապահովելու նպատակով: Այնուհանդերձ, Լովլեյսի դեպքում խախտվել են փոքրամասնություն ներկայացնող համապատասխան խմբին պատկանող անձի իրավունքները: Որոշում կայացնելիս կոմիտեն առաջնորդվել է ոչ այնքան դաշնագրի 12-րդ հոդվածով, որքան փոքրամասնություն կազմող ժողովուրդների իրավունքներին վերաբերող 27-րդ հոդվածով [24.12]⁵:

[12.08] ԿԱՐԿԵՐՆ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (KARKER v FRANCE, 833/98)

Գործի հանգամանքները ներկայացված են ստորև.

¶ 2.1. 1987 թ. պրն Կարկերը, որը «Էննահոլա» քաղաքական շարժման համահիմնադիրն է, ապաստան գտնելու նպատակով փախել է Թունիսից, որտեղ նրան հեռակա կարգով մահապատժի էին դատապարտել: 1988 թ. Ֆրան-

⁵ Տե՛ս նաև՝ թիվ 27 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 16 [12.24]:

սիայի իշխանությունները նրան ճանաչել են քաղաքական վտարանդի: 1993 թ. հոկտեմբերի 11-ին ահաբեկչական շարժման ակտիվորեն աջակցելու կասկածանքով ներքին գործերի նախարարը նրան վտարելու հրատապ հրաման է արձակել: Այնուհանդերձ, վտարելու հրամանն ի կատար չածվեց, և մեկ այլ հրամանով պրն Կարկերը հարկադիր բնակության է ենթարկվել Ֆինիստեր դեպարտամենտում: 1993 թ. նոյեմբերի 6-ին պրն Կարկերը նշված հրամանները բողոքարկելու հայցեր է ներկայացրել Փարիզի վարչական դատարան: 1994 թ. դեկտեմբերի 16-ին դատարանը մերժել է հայցերը՝ հաստատելով նախորդ հրամանների օրինականությունը:

Ի թիվս այլ հանգամանքների՝ հեղինակը նշել է, որ բնակության վայր ընտրելու ազատության վերոնշյալ սահմանափակումները հակասում են 12-րդ հոդվածին: ՄԻԿ-ը որոշում է կայացրել հոգուտ մասնակից պետության:

¶ 9.2. Կոմիտեն նշում է, որ պրն Կարկերին արտաքսելու հրամանն արձակվել է 1993 թ. հոկտեմբերին, սակայն նրան արտաքսելու անհնարինության հետևանքով Ֆրանսիայում բնակվելու ընթացքում սահմանափակվել է նրա տեղաշարժվելու իրավունքը: Մասնակից պետությունը պնդել է, որ հեղինակի իրավունքի սահմանափակումները բխել են ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից: Այս գործի կապակցությամբ պետությունը ներպետական դատական ատյաններ ասպացույցներ է ներկայացրել առ այն, որ պրն Կարկերը ահաբեկչական գործելակերպ որդեգրած շարժման ակտիվ կողմնակից է: Հարկ է նաև նշել, որ չնայած տեղաշարժվելու սահմանափակմանը՝ պարոն Կարկերը համեմատաբար ընդարձակ տարածքում բնակություն հաստատելու հնարավորություն է ունեցել: Ավելին՝ պարոն Կարկերի տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները քննվել են պետության դատական ատյաններում, որոնք, հաշվի առնելով բոլոր ասպացույցները, հաստատել են, որ վերը նշված սահմանափակումների կիրառումը թելադրված էր ազգային անվտանգության պահանջներով: Պարոն Կարկերը բողոքարկել է այս գործով դատարանի կայացրած միայն սկզբնական վճիռը և նախընտրել է պետության դատարաններում չբողոքարկել տեղաշարժվելու իրավունքը սահմանափակող հետագա հրամանները: Նման պարագայում կոմիտեն կարծում է, որ սույն գործով առկա նյութերից չի կարելի եզրակացնել, որ մասնակից պետությունը սխալ է կիրառել 12-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված սահմանափակումները:

12-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումն օտարերկրացիների նկատմամբ

[12.09] 12-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է «պետության տարածքում օրինական գտնվող» բոլոր անձանց նկատմամբ: Ուստի, պետությունը կարող է սահմանափակել մուտքի իրավունքը, քանի որ դաշնագիրը, ըստ էության, չի երաշխավորում տվյալ պետության տարածքում բնակություն հաստատելու իրավունքը:

ԹԻՎ 15 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Սույն դաշնագրով չի ճանաչվում օտարերկրացիների մուտքը որևէ մասնակից պետության տարածք և այդ պետության սահմաններում բնակություն հաստատելու իրավունքը: Պետությունը սկզբունքորեն պետք է որոշի, թե ում թույլ տալ մուտք գործել իր տարածք: Այնուհանդերձ որոշ դեպքերում դաշնագրով նախատեսվում է օտարերկրացիների պաշտպանությունը պետություն մուտք գործելու կամ նրա տարածքում բնակություն հաստատելու հարցերում, օրինակ՝ այն դեպքերում, երբ առաջանում են խտրականության, անմարդկային վերաբերմունքը կանխելու և ընտանեկան կյանքի իրավունքը հարգելու հետ կապված հարցեր⁶:

¶ 6. Պետության տարածք մուտք գործելու թույլտվությունը կարող է տրվել որոշակի վերապահումներով, օրինակ՝ երկրում տեղաշարժվելու, բնակություն հաստատելու և աշխատելու առումով: Այնուհանդերձ, մասնակից պետության տարածք մուտք գործելու իրավունքն իրացնելուն պես օտարերկրացիները իրավասու են օգտվելու դաշնագրում ամրագրված իրավունքներից:

[12.10]

ԹԻՎ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Որևէ պետության տարածքում օրինական գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայրը ընտրելու ազատություն: Պետության քաղաքացիները

⁶ Տե՛ս այստեղ՝ [9.67]: Տե՛ս նաև՝ [20.15]:

սկզբունքորեն օրինական հիմքերով են գտնվում տվյալ պետության տարածքում: Որևէ պետության տարածքում օտարերկրացու գտնվելու «օրինականությունը» կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ, որով կարող է սահմանափակվել օտարերկրացու մուտքը պետության տարածք՝ տվյալ պետության ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան: Այս գործի կապակցությամբ կոմիտեն այն կարծիքին է, որ որևէ պետության տարածքում ապօրինի մուտք գործած այն օտարերկրացու գտնվելը, ում կարգավիճակը կարգավորվել է, հարկ է համարել օրինական՝ 12-րդ հոդվածի շրջանակներում⁷: Պետության տարածք օրինական հիմքերով մուտք գործած անձի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով երաշխավորված իրավունքների որևէ սահմանափակում, ինչպես նաև նրա նկատմամբ տվյալ պետության քաղաքացիների հանդեպ վերաբերմունքից տարբերվող վերաբերմունքը պետք է համապատասխանի 12-րդ հոդվածի 3-րդ կետի շրջանակներում սահմանված կանոնների պահանջներին: Ուստի շատ կարևոր է, որ մասնակից պետություններն իրենց զեկույցներում նշեն այն դեպքերը, երբ իրենք այս առումով տարբեր կերպ են վարվում օտարերկրացիների ու քաղաքացիների պարագայում, և հիմնավորեն այդ տարբերությունը:

Վերը նշվածից հետևում է, որ ՄԻԿ-ն ընդունում է, որ «պետության տարածքում օրինական գտնվող օտարերկրացիները» կարող են օգտվել քաղաքացիներին հատուկ, բայց սահմանափակ տեղաշարժվելու տարբեր իրավունքներից: Նման իրավիճակ է ի հայտ եկել նաև հետևյալ գործում:⁸

[12.11] «ՉԵԼԵՊԼԻՆ ընդդեմ ՇՎԵԴԻԱՅԻ» (CELEPLI v SWEDEN, 456/91)

Գործի փաստերը շարադրված են ստորև ներկայացված հատվածներում.

¶ 1. Բողոքի հեղինակը շվեդաբնակ քուրդ Իսմետ Չելեպլին է, որը Թուրքիայի քաղաքացի է: Նա պնդում է, որ Շվեդիան խախտել է մարդու իրավունքները:

¶ 2.1. 1975 թ. հեղինակը ժամանել է Շվեդիա՝ փախչելով Թուրքիայում իր նկատմամբ ծավալված քաղաքական հետապնդումից. նա ստացել է Շվեդիայում բնակվելու թույլտվություն, սակայն չի ստացել փախստականի կարգավիճակ: 1984 թ. հունիսին Ուփսալայում տեղի ունեցած Քրդստանի բանվորական կուսակցության (ԶԲԿ) նախկին հետևորդներից մեկի սպանությունից հետո հեղինակի՝ ահաբեկչական գործողություններին մասնակցության վերաբերյալ կասկածներն էլ ավելի են ամրապնդվել: 1984 թ. սեպտեմբերի 18-ին հեղինակը ձերբակալվել է կալանավորվել է «Օտարերկրացիների մասին» ակտի դրույթներին համապատասխան: Նրան որևէ հանցագործություն կատարելու վերաբերյալ մեղադրանք չի ներկայացվել: 1984 թ. դեկտեմբերի 10-ին Շվեդիայի «Օտարերկրացիների մասին» օրենքի 30-րդ և 47-րդ մասերի դրույթների համաձայն՝ հրաման է արձակվել նրան և ևս ութ քրդերի երկրից արտաքսելու մասին: Սակայն երկրից արտաքսելու մասին հրամանն ի կատար չի ածվել, քանի որ կարծիքներ են արտահայտվել, որ Թուրքիա վերադառնալու դեպքում նրանք կարող են քաղաքական հետապնդումների ենթարկվել: Փոխարենը՝ Շվեդիայի իշխանությունները սահմանափակումներ և պայմաններ են նախատեսել քրդերի՝ բնակվելու վայրի ընտրության կապակցությամբ:

¶ 2.2. Այս սահմանափակման հետևանքով հեղինակը կարող էր ազատ տեղաշարժվելու իրավունքն իրացնել միայն Ստոկհոլմից 25 կիլոմետր հարավ գտնվող, 10000 բնակիչ ունեցող Վեստեր-Յանինգե քաղաքի սահմաններում և շաբաթական երեք անգամ պարտավոր էր ներկայանալ ոստիկանություն: Առանց ոստիկանությունից նախապես ստացված թույլտվության՝ նա իրավունք չուներ փոխելու բնակության վայրը կամ աշխատանքը:

¶ 2.3. Շվեդիայի օրենսդրության համաձայն՝ ահաբեկչական գործունեության մեջ կասկածվող անձին երկրից արտաքսելու կամ նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակող որոշումը ենթակա չէ բողոքարկման: 1989 թ. օգոստոսին հեղինակի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները մեղմացվել են, և նա արդեն շաբաթական միայն մեկ անգամ էր պարտավոր ներկայանալ ոստիկանություն: 1991 թ. սեպտեմբերի 5-ին երկրից արտաքսելու մասին հրամանը չեղյալ է հայտարարվել, ինչի հետևանքով վերացվել են տեղաշարժվելու ազատության սահմանափակումները և ոստիկանություն ներկայանալու պարտավորությունը:

¶ 3.1. Հայտարարվել է, որ իշխանությունների՝ հեղինակին երկրից արտաքսելու մասին որոշումը կայացվել է Ստոկհոլմի քաղաքային դատարանում նրան հարցաքննելուց հետո, որն էլ համապատասխան տեղեկություններ էր ստացել հիմնականում Շվեդիայի անվտանգության ծառայությունից: Հեղինակը պնդում է, որ իրեն դատարան տեղափոխելուց առաջ բանտախցում տեղի ունեցած դատալուծման ավելի շատ նման էր հարցաքննության: Ազգային անվտան-

⁷ Տե՛ս *Celepli v Sweden* (456/91) գործը [12.11]:

⁸ Տե՛ս նաև՝ *Karker v France* (833/98) գործը [12.08]:

գության նկատառումներից ելնելով՝ մերժվել է նրա՝ 9 քրդերի վերաբերյալ կասկածները հիմնավորող տեղեկատվություն տրամադրելու խնդրանքը: Հեղինակը, որ պնդում է, թե երբևէ ներգրավված չի եղել ահաբեկչական գործողություններում, հաստատում է, որ սահմանափակել են իր բնակության վայրն ընտրելու ազատությունը, թեև չեն հայտնել իր հանդեպ նման միջոցներ կիրառելու դրդապատճառները, և իրեն զրկել են իր անմեղությունն ապացուցելու և անկախ ու անաչառ դատարանի առջև իրեն պաշտպանելու հնարավորությունից: Ավելին՝ նա պնդում է, որ իրեն իրավունք չի ընձեռվել բողոքարկելու կառավարության որոշումը: Նա ընդգծում է, որ իրեն որևէ մեղադրանք չի ներկայացվել:

Մասնակից պետությունը ներկայացրել է հետևյալ փաստարկները.

¶ 4.2. Մասնակից պետությունը նշում է, որ հեղինակի հանդեպ կիրառված սահմանափակումները համապատասխանում են 1980 թ. ընդունված «Օտարերկրացիների մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետին, որում ասվում է. «Ելնելով ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից՝ իշխանություններն իրավունք ունեն երկրից արտաքսելու օտարերկրացուն կամ սահմանափակումներ և պայմաններ նախատեսելու նրա բնակության վայրի, զբաղվածության, ինչպես նաև ոստիկանություն ներկայանալու պարտավորության կապակցությամբ»: 1989 թ. հուլիսին այս օրենքը փոխարինվեց 1989 թ. «Օտարերկրացիների մասին» նոր օրենքով: Այս նոր լրամշակված օրենքի համաձայն՝ պետությունն այլևս լիազորված չէր սահմանել օտարերկրացու բնակության վայրը: Մասնակից պետությունն ընդգծում է, որ ահաբեկչական կազմակերպություններին անդամակցելու կասկածանքով ձերբակալված օտարերկրացիների հանդեպ ձեռնարկվող միջոցները մշակվել են 1973 թ.՝ ի պատասխան Շվեդիայում արձանագրված ահաբեկչության աճին: Սակայն դրանք միայն բացառիկ դեպքերում են կիրառվել, երբ լուրջ հիմքեր են եղել կասկածելու, որ տվյալ անձը մեծ դեր է խաղացել ահաբեկչական գործողությունները նախապատրաստելու, մշակելու կամ իրականացնելու գործում:

¶ 4.3. Մասնակից պետությունը հայտնում է, որ 1989 թ. օգոստոսի 31-ին որոշում է կայացվել, որով հեղինակին թույլատրվել է բնակություն հաստատել ամբողջ Ստոկհոլմի շրջանի սահմաններում, իսկ ոստիկանություն ներկայանալու պարտավորության հաճախականությունը կրճատվել է՝ հասնելով շաբաթական մեկ անգամի: 1991 թ. սեպտեմբերի 5-ին հեղինակի գործով կայացված վտարման որոշումը չեղյալ է համարվել:

¶ 4.6. Անդրադառնալով հեղինակի այն պնդմանը, որ ինքը տուժել է դաշնագրի 12-րդ հոդվածի դրույթների խախտումներից, մասնակից պետությունը վկայակոչում է այն հանգամանքը, որ այս հոդվածը կիրառելի է «որևէ պետության տարածքում օրինական գտնվող» անձանց նկատմամբ:

Մասնակից պետությունը հաստատում է, որ 1984 թ. դեկտեմբերի 10-ին հեղինակին երկրից արտաքսելու մասին որոշում կայացնելուց հետո նա օրինական հիմքերով գտնվել է միայն Հանինգե քաղաքում, իսկ 1984 թ. օգոստոսի 31-ից հետո՝ Ստոկհոլմի շրջանում: Մասնակից պետությունը պնդում է, որ 12-րդ հոդվածով հեղինակի՝ սահմանված իրավունքներն իրացնելու հետ կապված պահանջը չի համապատասխանում դաշնագրի դրույթներին, քանի որ հեղինակը կարող է համարվել պետության տարածքում օրինական հիմունքներով գտնվող անձ միայն այնքանով, որքանով կատարել է իր նկատմամբ կիրառված սահմանափակումները:

¶ 4.7. Ավելին՝ մասնակից պետությունը վկայակոչում է 12-րդ հոդվածի 3-րդ կետը, որով 12-րդ հոդվածով սահմանված իրավունքների իրացումը կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և ազգային անվտանգության ու հասարակական կարգի պահպանման անհրաժեշտությունից ելնելով, ինչպես տվյալ գործում: Ուստի, մասնակից պետությունը պնդում է, որ այս սահմանափակումները չեն հակասում 12-րդ հոդվածի 3-րդ կետին, և հեղինակի պահանջը հիմնավորված չէ կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված իմաստով:

Ելնելով գործի հանգամանքներից՝ կոմիտեն հաստատել է տվյալ գործով մասնակից պետության կայացրած որոշումը:

¶ 9.2. Կոմիտեն նշում է, որ 1984 թ. դեկտեմբերի 10-ին հեղինակին երկրից արտաքսելու մասին որոշում է կայացվել, սակայն այն ուժի մեջ չի մտել, և հեղինակին թույլ են տվել մնալ Շվեդիայում՝ սահմանափակելով նրա ազատ տեղաշարժվելու իրավունքը: Կոմիտեն այն կարծիքին է, որ դաշնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում հեղինակն օրինական հիմքերով էր գտնվում Շվեդիայի տարածքում միայն արտաքսման մասին որոշումը կայացնելուց հետո մասնակից պետության կողմից իր հանդեպ սահմանափակումների կիրառումից հետո: Ավելին՝ քանի որ մասնակից պետությունը հեղինակի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը հիմնավորում է ազգային անվտանգության երաշխավորման պահանջով, կոմիտեն կարծում է, որ վերոհիշյալ սահմանափակումները համապատասխանում են դաշնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթներին: Այս հարցի կապակցությամբ

յամբ կոմիտեն նաև նշում է, որ մասնակից պետությունը սեփական նախաձեռնությամբ վերանայել է այդ սահմանափակումները և, ի վերջո, վերացրել է դրանք:

[12.12] Լիտվայի առնչությամբ ՄԻԿ-ն արել է հետևյալ հայտարարությունը⁹.

¶ 15. ...Կոմիտեն նաև իր մտահոգությունն է արտահայտում այն առնչությամբ, որ սահմանափակվում է փախստականի ժամանակավոր կարգավիճակով քաղաքական ապաստան հայցող անձանց տեղաշարժվելու ազատությունը, և այդ սահմանափակումները չկատարելու դեպքում ապաստան տրամադրելու հայցը կարող է մերժվել:

Կարելի է համարել, որ այս մեկնաբանությունը դատապարտում է բոլոր քաղաքական ապաստան հայցողների ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակող ամխտիր բոլոր նորմերը՝ ընդգծելով, որ նման սահմանափակումներ կարելի է կիրառել միայն յուրաքանչյուր քաղաքական ապաստան հայցողի գործն ուսումնասիրելուց հետո¹⁰: Այս մեկնաբանությամբ նախատեսվում է նաև, որ օտարերկրացիները չպետք է ենթարկվեն անհամաչափ պատժամիջոցների ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակող դրույթները խախտելու համար:

[12.13] Մեքսիկայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարել է¹¹.

¶ 13. Կոմիտեն մտահոգված է Մեքսիկայի տարածքում օտարերկրացիների, հատկապես՝ մարդու իրավունքների խախտման դեպքերն ուսումնասիրող հասարակական կազմակերպությունների անդամների և ներկայացուցիչների ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման խոչընդոտման և, մասնավորապես՝ նմանօրինակ պատճառաբանությամբ ժամանակավոր կացության թույլտվությունների և մուտքի արտոնագրերի մերժման փաստերի կապակցությամբ: Մասնակից պետությունը պարտավոր է վերացնել մուտքի և գործունեության հետ կապված բոլոր սահմանափակումները մարդու իրավունքների խախտման դեպքերն ուսումնասիրելու նպատակով Մեքսիկա ժամանած անձանց հանդեպ:

Ուշագրավ է ՄԻԿ-ի քննադատությունը Մեքսիկայի կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերն ուսումնասիրող օտարերկրացիներին մուտքի արտոնագրի մերժման կապակցությամբ, քանի որ այն կասկածելի է դարձնում պետության՝ իր տարածք մուտք գործող օտարերկրացիներին ընտրելու ինքնիշխան իրավունքի անձեռնմխելիությունը¹²:

Երկրից մեկնելու իրավունք՝ 12-րդ հոդվածի 2-րդ կետ

[12.14]

ԹԻՎ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. Պետության տարածքից հեռանալու ազատությունը չի կարող սահմանափակվել որևէ հատուկ մտադրությամբ կամ այն ժամանակահատվածով, որով անձը նախընտրում է բացակայել երկրից: Վերը նշված դրույթով նախատեսվում են արտասահման մեկնելու, ինչպես նաև այնտեղ մշտական բնակություն հաստատելու դեպքերը: Նմանապես, օրենքը երաշխավորում է անձի՝ նպատակակետ երկիրն ընտրելու իրավունքը: Քանի որ 12-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթները կիրառվում են ոչ միայն տվյալ պետության տարածքում օրինական հիմքերով գտնվող անձանց հանդեպ, ուստի օրենքով սահմանված կարգով երկրից արտաքսված օտարերկրացին նույնպես կարող է օգտվել հյուրընկալող պետություն ընտրելու իրավունքից: Այդ իրավունքի կիրառումը կախված է տվյալ պետության համաձայնությունից...

¶ 10. Պետությունների որդեգրած գործելակերպից պարզ է դառնում, որ օրենքով սահմանված կանոնները և վարչական միջոցները բացասաբար են անդրադառնում պետությունից, հատկապես՝ սեփական երկրից անձի մեկնելու իրավունքի վրա: Հետևաբար, հույժ կարևոր է, որ մասնակից պետությունները զեկուցեն և՛ իրենց քաղաքացիների, և՛ օտարերկրացիների հանդեպ կիրառվող մեկնելու իրավունքի՝ օրենքով նախատեսված և գործնականում կիրառվող ամեն տեսակ սահմանափակումների մասին, որպեսզի կոմիտեն կարողանա որոշել՝ այդ կանոնները և գործնականում ընդունված գործողությունները համապատասխանո՞ւմ են 12-րդ հոդվածի 3-րդ կետին: Մասնակից պետությունները պարտավոր են նաև իրենց զեկույցներում տեղեկատվություն տրամադրել այն միջազ-

⁹ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1997) CCPR/C/79/Add. 87:

¹⁰ Համենատի՛ր *A v Australia* (560/93) [11.16] գործով կայացրած վճռի հետ:

¹¹ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1999) CCPR/C/79/Add. 109:

¹² Տե՛ս նաև թիվ 15 ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 5 [12.09]:

գային փոխադրողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ, որոնք իրենց երկրներ են բերում պահանջվող փաստաթղթեր չունեցող անձանց, եթե այդ միջոցները սահմանափակում են այլ երկրից մեկնելու իրավունքը¹³:

[12.15] Երկրից մեկնելու իրավունքը ենթադրում է և՛ կարճատև և՛ տևական ուղևորությունների, ինչպես նաև երկրից ժամանակավոր կամ մշտական մեկնելու ազատություն: Այդ ազատությունից կարող են օգտվել թե՛ տվյալ պետության քաղաքացիները, թե՛ օտարերկրացիները, նույնիսկ պետության տարածքում անօրինական հիմքերով գտնվող անձինք: Կարելի է օրինակ բերել «*Olo Bahamonde v Equatorial Guinea*, 468/91» գործը, որով հեղինակի անձնագրի տրամադրման անհիմն ձգձգումը 12-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում է համարվել, քանի որ հեղինակին կամայականորեն զրկել են Հասարակածային Գվինեայից մեկնելու իրավունքից: Իրաքին քննադատել են անձնագրի վերականգնման համար խոշոր պետական տուրքեր գանձելու համար¹⁴: Իսկ Գաբոնի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը դատապարտել է այն պահանջը, որով օտարերկրացի աշխատողները պետք է ելքի արտոնագիր ստանան երկրից մեկնելու թույլտվություն ստանալու համար¹⁵:

[12.16]

ԹԻՎ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. Ե՛վ բնակության պետությունը, և՛ քաղաքացիության պետությունը անձի կողմից 12-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված իրավունքների իրացումն ապահովելու պարտավորություն են կրում: Քանի որ երկրից դեպի այլ երկիր մեկնելու համար անհրաժեշտ են համապատասխան փաստաթղթեր, մասնավորապես՝ անձնագիր, ուստի երկրից մեկնելու իրավունքը ենթադրում է անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու իրավունք: Քաղաքացիության պետությունը պարտավոր է անձնագիր տրամադրել: Եթե պետությունը մերժի անձնագրի տրամադրումը կամ արտասահմանում բնակվող քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը երկարացնելը, ապա անձը կարող է զրկվել բնակության երկրից մեկնելու իրավունքից: Այս դեպքում պետությունը չի կարող վկայակոչել այն հանգամանքը, որ քաղաքացին կարող է վերադառնալ երկիր առանց անձնագրի:

Ուստի քաղաքացիներն իրավունք ունեն երկրից մեկնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ստանալ իրենց իսկ պետությունից:

[12.17]

***«ՎԻՂԱԼ ՄԱՐՏԻՆՍԸ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ»
(VIDAL MARTINS v URUGUAY, 57/79)***

¶ 6.2. Կոմիտեն որոշել է առաջնորդվել հետևյալ փաստերով, որոնք կարելի է առանձնացնել հեղինակի պարզաբանումներից, ինչպես նաև այս գործի առնչությամբ Ուրուգվայի իշխանությունների կազմած պաշտոնական փաստաթղթից: Ներկայումս Մեքսիկայում բնակվող Ուրուգվայի քաղաքացի Սոֆի Վիդալ Մարտինսը 1971 թ. Շվեդիայում ստացել է 10-ամյա վավերականությամբ անձնագիր՝ այն պայմանով, որ 5 տարուց անձնագրի վավերականության ժամկետը պետք է հաստատվի: Սակայն Ուրուգվայի իշխանություններն անհիմն պատճառաբանություններով մի քանի անգամ մերժել են հաստատել այն 1975-1977 թթ. ընթացքում: Այնուհետև՝ 1978 թ., հեղինակը Մեքսիկայում Ուրուգվայի հյուպատոսարան է դիմել նոր անձնագիր ստանալու համար: Ըստ հեղինակի՝ նոր անձնագիր տրամադրելու համար անհրաժեշտ է պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների համաձայնությունը: Դիմումը ներկայացնելու օրից երկու ամիս անց Սոֆի Վիդալ Մարտինսին տեղեկացրել են, որ ներքին գործերի նախարարությունը մերժել է իրեն նոր անձնագիր տրամադրել: Մարտինսը բողոքարկել է այդ որոշումը, սակայն Ուրուգվայի արտաքին գործերի նախարարությունը պաշտոնապես պաշտպանել է այդ որոշումը՝ առանց որևէ հիմնավորման: Հեղինակին առաջարկել են մեկ այլ փաստաթուղթ տրամադրել, որի միջոցով նա կկարողանար Ուրուգվայ վերադառնալ, սակայն այլևս չէր կարողանա մեկնել երկրից: Հեղինակը չի համաձայնել այդ պայմաններին անձնական անվտանգության նկատառումներով:

¶ 9. Ելնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներից՝ Մարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ 1976

¹³ Տե՛ս Եզրափակիչ դիտարկումներ Ավստրիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CPR/CD/79/Add. 103, պարբ. 11:

¹⁴ Եզրափակիչ դիտարկումներ Իրաքի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 84, պարբ. 14:

¹⁵ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1996), CCPR/C/79/Add. 71, պարբ. 16:

թվականի մարտի 23-ին Ուրուգվայում դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո ի հայտ եկած և իր կողմից հայտնաբերված փաստերը վկայում են, որ խախտվել են դաշնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, քանի որ Սոֆի Վիդալ Մարտինսին անհիմն պատճառներով մերժել են անձնագիր տրամադրել՝ զրկելով նրան որևէ երկրից, ներառյալ իր սեփական երկրից, հեռանալու իրավունքից:

Նմանօրինակ տրամաբանություն է նկատվում Ուրուգվայում արձանագրված այլ «անձնագրային» գործերում, որոնցից են՝ «Մոնտերոն ընդդեմ Ուրուգվայի» (*Montero v Uruguay, 106/81*), «Լիքսթենշտեյն ընդդեմ Ուրուգվայի» (*Lichtensztein v Uruguay, 77/80*) և «Վարել Նունյեսն ընդդեմ Ուրուգվայի» (*Varel Nunez v Uruguay, 108/81*) գործերը: Այս գործերով կայացված որոշումները հաստատել են, որ մասնակից պետությունները պարտավոր են անձնագրեր տրամադրել իրենց երկրի տարածքում կամ տարածքից դուրս գտնվող անձանց [4.14]:

[12.18] «Լիքսթենշտեյն ընդդեմ Ուրուգվայի» (*Lichtensztein v Uruguay, 77/80*) և «Վարել Նունյեսն ընդդեմ Ուրուգվայի» (*Varel Nunez v Uruguay, 108/81*) գործերում Մեքսիկան և Իտալիան համապատասխանաբար մարդասիրական նկատառումներով ճանապարհորդական այլընտրանքային փաստաթղթեր են տրամադրել հեղինակներին: Կոմիտեն եզրակացրել է, որ այդ այլընտրանքային փաստաթղթերը չեն կարող փոխարինել Ուրուգվայի անձնագրին: Օրինակ՝ հեղինակներին որևէ երաշխիք չեն տվել այդ փաստաթղթերի վավերականության ժամկետի երկարացման վերաբերյալ: Ուստի, մեկ այլ պետության կողմից ճանապարհորդական այլընտրանքային փաստաթղթերի տրամադրման դեպքում քաղաքացիության պետությունը չի ազատվում իր քաղաքացիներին անձնագրով ապահովելու պարտավորություններից: Թերևս այլ իրավիճակ է առաջանում, երբ երկրորդ պետությունն է մեկ այլ անձնագիր տրամադրում, քանի որ նման իրողությունը վկայում է երկքաղաքացիության մասին¹⁶:

[12.19]

**«ԳՈՆՍԱԼԵՍ դել Ռիոն ընդդեմ Պերուի»
(*GONZÁLEZ del RÍO v PERU, 263/87*)**

Հեղինակին ձերբակալելու մասին կարգադրությունը յոթ տարուց ավելի է՝ առկախ է մնացել, ինչի հետևանքով նա չէր կարողանում մեկնել Պերուից: Ելնելով 12-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ կոմիտեն ներկայացրել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 5.3. 12-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով երաշխավորվում է ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկրից, անձի մեկնելու իրավունքը: Հեղինակը պնդում է, որ ձերբակալության կարգադրության վարույթի ընթացքի ձգձգման պատճառով ինքը չի կարողանում հեռանալ Պերուի տարածքից: 12-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն՝ որևէ պետությունից մեկնելու իրավունքը կարող է սահմանափակվել ազգային անվտանգության ապահովման և հասարակական կարգի պահպանման նկատառումներով: Կոմիտեն համարում է, որ դեռևս վարություն գտնվող դատավարությունների դեպքում կարելի է հիմնավորել անձի՝ երկրից մեկնելու իրավունքի սահմանափակումը: Սակայն երկրից մեկնելու իրավունքի սահմանափակումը չի կարող հիմնավորված համարվել, եթե դատավարությունները չափազանց երկար ժամկետներով են ձգձգվում: Տվյալ դեպքում պարոն Գոնսալեսի՝ Պերուից մեկնելու իրավունքի սահմանափակումն ուժի մեջ է մնացել յոթ տարի շարունակ, և հայտնի չէ, թե երբ է այն վերանալու: Կոմիտեի կարծիքով՝ այս իրավիճակում խախտվում են հեղինակի՝ 12-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով սահմանված իրավունքները: Այս համատեքստում կոմիտեն նշում է նաև, որ հեղինակի՝ 12-րդ հոդվածի դրույթներով նախատեսված իրավունքների խախտումը կարելի է կապել 14-րդ հոդվածով ամրագրված արդար դատավարության իրավունքի հետ:

[12.20] 12-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև 12-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով երաշխավորվող իրավունքներն օժտված են հորիզոնական ազդեցությամբ [12.05]: Օրինակ՝ ՄԻԿ-ը դատապարտել է Լիբանանի կողմից ընդունված օրենքը, որը սահմանափակում էր կնոջ՝ առանց ամուսնու համաձայնության երկրից մեկնելու իրավունքը¹⁷: Կոմիտեն հայտարարել է¹⁸.

¹⁶ Ուշագրավ է, որ երկքաղաքացիությունը տարբեր հիմնավորումներով արգելվում է բազմաթիվ մասնակից պետություններում:

¹⁷Տե՛ս նաև՝ Եզրափակիչ դիտարկումներ Լիբանանի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CPR/C/79/Add. 78, պարբ. 18, Եզրափակիչ դիտարկումներ Սուդանի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 85, պարբ. 14: Տե՛ս նաև՝ [1.77]:

¹⁸(1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 78:

¶ 22. Կոմիտեն մտահոգությամբ է նշում Լիբանանում աշխատող շատ օտարերկրացիների առջև ծառացած դժվարությունների մասին. խոսքը վերաբերում է այն անձանց, ում անձնագրերը գործատուները բռնագրավել են: Այս գործելակերպը, որին, իշխանությունների հայտարարությամբ՝ պետք էր ավելի բարեխղճորեն անդրադառնալ, հակասում է դաշնագրի 12-րդ հոդվածի դրույթներին: Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը հետևողական քայլերի դիմի՝ այս օտարերկրացիների իրավունքները պաշտպանելու նպատակով և այդպիսով կանխարգելի նման բնույթի բռնագրավումները, ինչպես նաև արդյունավետ ու մատչելի միջոցներ ապահովի անձնագրերի վերականգնման համար:

[12.21] Անշուշտ, անձի՝ երկրից մեկնելու իրավունքը ենթակա է սահմանափակման՝ 12-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին համապատասխան: Հետևյալ գործի շրջանակներում կարելի է դիտարկել հասարակական կարգի պահպանման անհրաժեշտությամբ հիմնավորված սահմանափակումները:

«ՊԵԼՏՈՆԵՆՆ ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (PELTONEN v FINLAND, 492/92)

Փաստերը ներկայացված են հետևյալ հատվածներում.

¶ 2.1. 1990 թ. հունիսին հեղինակը անձնագիր տրամադրելու դիմում է ներկայացրել Ստոկհոլմում Ֆինլանդիայի դեսպանությանը: Դեսպանությունը մերժել է անձնագրի տրամադրումը՝ այդ որոշումը հիմնավորելով այն փաստով, որ պրն Պելտոնենը սահմանված ժամկետում ծառայության չի ներկայացել Ֆինլանդիայի զինված ուժերում: 1986 թ. ընդունված «Անձնագրի մասին» օրենքի 9-րդ մասի 1-ին ենթամասի 6-րդ կետի դրույթների համաձայն՝ 17-30 տարեկան անհատների «անձնագիր ստանալու դիմումը կարող է մերժվել», եթե նրանք ի վիճակի չեն ապացուցելու, որ իրենք չունեն զինված ուժերում ծառայության հետ կապված այնպիսի խնդիրներ, որոնց առկայության դեպքում անձնագիր չի տրամադրվում:

¶ 2.3. Հեղինակը նշում է, որ իր գործը քննող դատական և վարչական աստիճանները հիմնավորված չեն համարել անձնագիր տրամադրելու մերժումը: Գերագույն վարչական դատարանի որոշման մեջ պարզապես նշվում է, որ 9-րդ մասի 1-ին ենթամասի 6-րդ կետի համաձայն՝ դեսպանությունն իրավունք ունի անձնագիր չտրամադրելու հեղինակին, քանի որ նա զորակոչիկ էր և չէր կարողացել ապացուցել, որ չունի անձնագրի ձեռքբերումը խոչընդոտող խնդիրներ՝ կապված զինված ուժերում ծառայության հետ: Այս համատեքստում նշվում է, որ 1990 թ. հոկտեմբերին դաշնագրի 40-րդ հոդվածին վերաբերող երրորդ պարբերական զեկույցը վերանայելիս Ֆինլանդիայի իշխանությունները հայտնել են, որ «զինված ուժերում ծառայելու պարտավորության հարցը հավանաբար սխալ է մեկնաբանվել: Զորակոչիկին կամ արդեն ծառայող անձին կարող է անձնագիր տրամադրվել, սակայն զինված ուժերում ծառայության ընթացքում այն պետք է ժամանակավորապես անվավեր ճանաչվի: Զորակոչիկը ոչ մի դեպքում չի կարող զինված ուժերում ծառայության ընթացքում դե ֆակտո հեռանալ երկրից, ուստի միայն 8-12 ամիս տևող այդ ժամանակահատվածում վավերական անձնագիր տրամադրելու մերժումը չի կարող 12-րդ հոդվածի խախտում համարվել»:

¶ 2.4. Ըստ հեղինակի՝ 9-րդ մասի 1-ին ենթամասի 6-րդ կետի «կարող է մերժվել» արտահայտության գերագույն դատարանի մեկնաբանությունից հետևում է, որ աշխարհի երկրներում գտնվող Ֆինլանդիայի դեսպանություններն իրենց հայեցողությամբ կարող են 30 տարին չլրացած ֆինն քաղաքացիներին մերժել անձնագիր տրամադրելու հարցում: Անձնագիր տրամադրելու մերժման տևողությունը կարող է գերազանցել «ուրիշ տասնմեկ ամիս» ժամկետը, ինչպես տվյալ դեպքում: Հեղինակն ընդունում է, որ զինված ուժերում ծառայությունից խուսափելը պատժվում է Ֆինլանդիայի «Զինապարտության մասին» օրենքով: Այնուհանդերձ նա նշում է, որ իշխանությունները կարող էին քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկել իրեն: Նրա կարծիքով՝ այդ քայլին չդիմելը դարձյալ հաստատում է, որ անձնագիր տրամադրելու մերժումը եղել է և շարունակում է մնալ դե ֆակտո պատիժ:

¶ 3. Հեղինակը պնդում է, որ անձնագիր տրամադրելու մերժումը (ա) որպես պատժամիջոց չի համապատասխանում զինծառայության չներկայանալու իրավախախտման համար սահմանված պատժին, (բ) խախտում է հեղինակի՝ որևէ երկրից մեկնելու իրավունքը՝ սահմանված դաշնագրի 12-րդ հոդվածով, և (գ) որպես պատժամիջոց՝ նախատեսված չէ օրենսդրությամբ:

Ի պատասխան՝ մասնակից պետությունն արձագանքել է հետևյալ կերպ.

¶ 6.1. ...Մասնակից պետությունը պարզաբանում է Ֆինլանդիայի համապատասխան օրենքի կիրառումը, որով երաշխավորվում է Ֆինլանդիայի քաղաքացիների՝ երկրից մեկնելու իրավունքը: Այդ հարցի լրացուցիչ մեկնաբանությունը ներկայացված է «Անձնագրի մասին» օրենքում (642/1986) և «Անձնագրի մասին» որոշման մեջ (643/86), որոնցով կարգավորվում է արտասահման մեկնելու իրավունքը: Սահմանադրական ակտը կարգավորում է ֆինն քաղաքացիների՝ երկրի պաշտպանությանը մասնակցելու պարտավորությունը, որը պարզաբանվում է «Զինծառայությու-

յան մասին» և «Այլընտրանքային զինծառայության մասին» օրենքներում: Ձինված ուժերում ծառայելու օրինական պարտավորության շրջանակներում երկու օրենքներով էլ նորակոչիկների տեղաշարժվելու ազատության որոշակի սահմանափակում է նախատեսվում: Մասնակից պետությունը հավելում է, որ սկանդինավյան պետությունները համաձայնության են եկել՝ սկանդինավյան երկրների տարածքում ճանապարհորդող իրենց քաղաքացիների համար անձնագրային կարգը վերացնելու հարցի շուրջ: Արդյունքում վերացել են նաև անձնագրերի ստուգումները:

¶ 6.2«Անձնագրի մասին» օրենքի համաձայն՝ Ֆինլանդիայի պետությունը պարտավոր է անձնագիր տրամադրել յուրաքանչյուր քաղաքացու՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ինչպես արդեն նշվել է (տե՛ս 2-րդ կետի առաջին ենթակետը), անձնագիրը կարող է չտրամադրվել 17-30 տարեկան անձանց, եթե նրանք ի վիճակի չեն ապացուցելու, որ չունեն զինված ուժերում ծառայության հետ կապված այնպիսի խնդիրներ, որոնց առկայության դեպքում անձնագիր չի տրամադրվում (9-րդ մասի 1-ին ենթամասի 6-րդ կետ): Նման դեպքերում անձնագիր ստանալու դիմումը պետք է զուգորդվի, օրինակ, ոստիկանություն բերման չենթարկվելու մասին վկայականով, զինվորական գրքույկով, զորակոչին ներկայանալու վկայականով, զինծառայության անցնելու մասին կարգադրությամբ, դիմողին խաղաղ պայմաններում զինծառայությունից ազատելու վկայականով, դիմողին ընդհանրապես զինծառայությունից ազատող վկայականով կամ այլընտրանքային ծառայության մասին վկայականով («Անձնագրի մասին» որոշման 4-րդ մաս): Ուստի արտասահմանում բնակվող 9-րդ մասի 1-ին ենթամասի 6-րդ կետով սահմանված կարգի պահանջներին համապատասխան՝ Ֆինլանդիայի քաղաքացիները պետք է զինապարտության ենթակա չլինելու մասին տեղեկանք ստանան Ֆինլանդիայում իրենց վերջին բնակության վայրի ոստիկանության բաժանմունքից:

¶ 6.3. Անդրադառնալով անձին անձնագիր տրամադրելու հարցում իշխանություններին վերապահված հայեցողությանը՝ մասնակից պետությունը նշում է, որ 9-րդ մասի 1-ին ենթամասով նախատեսված կարգը դասվող քաղաքացու՝ անձնագիր ստանալու դիմումն ուսումնասիրելիս օրենքի 10-րդ մասով հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ փաստերին. «Ճանապարհորդության կարևորությունը դիմողի ընտանեկան հարաբերությունների, առողջական վիճակի, գոյատևման, մասնագիտական և այլ հանգամանքների շրջանակներում»: Այսպիսով, անձնագիր տրամադրելու հարցում դեսպանությանը վերապահված հայեցողության ազատությունն անսահմանափակ չէ, քանի որ «Անձնագրի մասին» օրենքը հստակ սահմանում է անձնագիր ստանալու դիմումի մերժման անհրաժեշտ նախադրյալները:

¶ 6.4. Ժամկետների կապակցությամբ հարկ է նշել, որ «Անձնագրի մասին» օրենքի 9-րդ մասի 1-ին ենթամասի 6-րդ կետի դրույթների կիրառումը չի կարող սահմանափակվել միայն զինծառայության ժամանակահատվածով, այլ հարկ է, որ տարածվի զինծառայությունից առաջ և հետո ընկած ավելի տևական ժամանակաշրջանի վրա՝ ապահովելով զորակոչիկի ծառայության բնականոն ընթացքը: Մասնակից պետությունը պարզաբանում է, որ զինծառայություն կամ այլընտրանքային ծառայություն զորակոչվելու կամ, օրինակ, երեք տարով տարկետում ստացած անձը կարող է անձնագիր ստանալ մինչև 28 տարին լրանալը: 28 տարին լրացած զինապարտ անձի անձնագրի վավերականության ժամկետը սովորաբար ավելի կարճ է, ուստի նա պարտավոր է մինչև 30 տարին լրանալը կատարել իր զինվորական պարտքը: 30 տարեկանից բարձր տարիքի անձինք սովորաբար չեն զորակոչվում:

¶ 6.5. Մասնակից պետությունը նշում է, որ պարոն Պելտոնենը չի արձագանքել 1987 թ. իրեն ներկայացված զորակոչին, և անտեսել է հաջորդած բոլոր զորակոչերը: Ավելին՝ մասնակից պետությունը նշում է, որ հեղինակը չի ապացուցել, որ իր զինապարտ լինելու հանգամանքը խոչընդոտ չէ անձնագիր ստանալու համար, և իր գործում չեն արձանագրվել այնպիսի փոփոխություններ, որոնք կարողանային այլ եզրակացությունների հանգեցնել: Ի լրումն՝ հարկ է նշել, որ նրա հայցը չի համապատասխանում 10-րդ մասում սահմանված դրույթներին: Այս համատեքստում մասնակից պետությունն ընդգծում է, որ հեղինակին անձնագիրն անհրաժեշտ է ոչ թե աշխատանքային կամ մասնագիտական նկատառումներով, այլ միայն արձակուրդին ճանապարհորդության մեկնելու համար:

¶ 6.6. Մասնակից պետությունն անհիմն է համարում այն պնդումը, թե անձնագիր տրամադրելու մերժումը որպես դե ֆակտո պատժամիջոց է կիրառվել հեղինակի կողմից զինծառայության չներկայանալու համար: Պետությունը նշում է, որ անձնագիր տրամադրելու մերժումը հիմնավորված է սահմանադրական և «Անձնագրի մասին» օրենքների և «Անձնագրի մասին» որոշման դրույթներով, որոնք վերաբերում են նաև «Զինծառայության մասին» օրենքին: Անձնագիր տրամադրելու մերժումն իրենից ոչ պատիժ է ներկայացնում, ոչ էլ որևէ այլ կերպ փոխարինելու է գալիս զինծառայությանը չներկայանալու օրինախախտման հետաքննությանը և համապատասխան պատժամիջոցին: Եթե հեղինակը Շվեդիայից Ֆինլանդիա վերադառնա և ձերբակալվի, ապա նրա կողմից զորակոչին չներկայանալու փաստով հետաքննություն կանցկացվի և նրա հանդեպ համապատասխան պատժամիջոց կսահմանվի: Այնուհանդերձ, այդ օրինախախտումը չի կարող հիմք լինել նրան հանձնելու պահանջի համար:

¶ 6.7. Մասնակից պետությունը նշում է, որ համաձայն դաշնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետի՝ որևէ երկրից մեկնելու իրավունքը կարող է սահմանափակվումների ենթարկվել օրենքով նախատեսված դեպքերում՝ ազգային անվտանգության երաշխավորման և հասարակական կարգի պահպանման նկատառումներից ելնելով և չի հակասում դաշնագրով ճանաչվող այլ իրավունքներին: Մասնակից պետության համար վերոհիշյալից պարզ է, որ խորհրդարանի

ընդունած «Անձնագրի մասին» օրենքի հիմքում ընկած է «Սահմանադրության մասին» օրենքը, և այն առնչվում է «Զինծառայության մասին» օրենքին, համապատասխանում է «օրենքով սահմանված» պահանջներին: Մասնակից պետությունը հավելում է, որ իրավասու իշխանությունները և դատական ատյանները փաստել են, որ «Անձնագրի մասին» օրենքով սահմանված դրույթները պատշաճ իրավական հիմք են տվյալ դեպքում, և դրանց միջոցով գործի զննատականը և՛ իրատեսական է, և՛ հիմնավորված:

¶ 6.8. Խոսելով վերոհիշյալ սահմանափակման նպատակի օրինականության հարցի շուրջ՝ մասնակից պետությունը հաստատում է, որ անձնագիր տրամադրելու մերժումը հիմնավորվում է «հասարակական կարգը» պահպանելու դրույթով՝ 12-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իմաստով, քանի որ զորակոչիկին անձնագիր տրամադրելու դիմումի մերժումը, զուցե և ոչ անմիջականորեն, սակայն առնչվում է «ազգային անվտանգության» ապահովման անհրաժեշտությանը: Պետությունը հավաստիացնում է, որ իշխանությունների կողմից հեղինակին անձնագիր տրամադրելու դիմումի մերժումը թելադրված է հասարակական կարգի պահպանման անհրաժեշտությամբ և հանգեցրել է հեղինակի՝ երկրից մեկնելու իրավունքի խախտմանը՝ սահմանված «Անձնագրի մասին» օրենքով: Այնուամենայնիվ, այդ սահմանափակումները համարվել են հիմնավորված:

Մասնակից պետությունը եզրակացրել է, որ այս դեպքում անձնագիր տրամադրելու մերժումն ուղեկցվել է հեղինակի՝ ցանկացած երկրից մեկնելու իրավունքի սահմանափակմամբ, որը չի հակասում դաշնագրով ծանաչվող այլ իրավունքներին:

¶ 8.2. ...Որոշ հանգամանքներում պետությունը կարող է ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով մերժել քաղաքացուն անձնագիր տրամադրելու դիմումը...

¶ 8.3. Դաշնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետի նախապատրաստական փաստաթղթերից պարզ է դառնում, որ երկրից մեկնելու իրավունքը չի կարող հայցի հարուցման առարկա դառնալ, ի թիվս այլոց, զինված ուժերում ծառայելու և նման կարգի պարտավորություններից խուսափելու նպատակով: (Տե՛ս E/CN.4/SR.106, էջ 4 (ԱՄՆ); E/CN.4/SR.150, կետ 41 (ԴԿ); E/CN.4/SR.151, կետ 4 (Ս); E/CN.4/SR.315, էջ 12 (ԱՄՆ): Այսպիսով, դաշնագրի այն մասնակից պետությունները, որոնց օրենսդրությամբ նախատեսված է զինված ուժերում ծառայելու պարտադիր համակարգ, կարող են 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ հիմնավորված սահմանափակումներ կիրառել ծառայություն չանցած անձանց՝ երկրից մեկնելու իրավունքների համդեպ:

¶ 8.4. Տվյալ դեպքում կոմիտեն նշում է, որ Ֆինլանդիայի իշխանությունների կողմից հեղինակին անձնագիր տրամադրելու մերժումն անուղղակիորեն խախտում է հեղինակի՝ երկրից մեկնելու իրավունքը՝ սահմանված 12-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, քանի որ նա ի վիճակի չէ լքելու իր բնակության երկիրը՝ Շվեդիան, և այլ երկիր մուտք գործել, բացառությամբ վավերական անձնագիր չպահանջող երկրներից: Կոմիտեն հավելում է, որ Ֆինլանդիայի իշխանությունները հեղինակին անձնագրի տրամադրումը մերժելու հարցում առաջնորդվել են «Անձնագրի մասին» օրենքի 9-րդ մասի 1-ին ենթամասի 6-րդ կետով, հետևաբար, հեղինակի իրավունքի սահմանափակումները կիրառվել են օրենքով նախատեսված կարգով: Կոմիտեն կարծում է, որ զինծառայություն չանցած անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը սկզբունքորեն կապված է ազգային անվտանգության և հասարակական կարգի ապահովման հետ: Կոմիտեն տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հեղինակը հայտարարել է, որ անձնագիրն իրեն անհրաժեշտ է արձակուրդի ընթացքում ծանապարհորդելու համար, սակայն չի պնդել, որ իշխանությունների՝ իրեն անձնագիր չտրամադրելու որոշումը խտրական է կամ խախտում է դաշնագրով ամրագրված իր այլ իրավունքները: Այդ իսկ պատճառով այս գործի հանգամանքներին ծանոթանալուց հետո կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակի՝ որևէ երկրից հեռանալու իրավունքի սահմանափակումները կիրառվել են դաշնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

[12.22] Պելտոնենի հիմնավորումները բացասող համոզիչ փաստարկը ներկայացնելիս Նովակը հայտարարել է¹⁹.

Հետևյալ հարցը բազմաթիվ կասկածների տեղիք է տալիս. արդյոք անձի՝ երկրից մեկնելու ազատությունը կարո՞ղ է սահմանափակվել՝ հաշվի առնելով այլ անձանց կամ պետության հանդեպ զուտ քաղաքացիական իրավունքով ամրագրված պարտավորությունները, ինչպես նաև հարկային պարտավորությունները, եթե անձը չի կասկածվում հանցագործություն կատարելու մեջ, օրինակ՝ հարկ վճարելուց խուսափելու, կեղծ սնանկացման: Եթե քաղաքացիության կամ բնակության պետությանն առնչվող պարտավորություններն առնվազն մեկ անգամ հասարակական կարգով նախատեսված օրինական հիմք համարվեն մարդկանց՝ երկրից մեկնելու իրավունքը սահմանափակելու

¹⁹ Մ. Նովակ, *CCPR-ի ծնթ.* (N.P. Engel, Kehl, 1993), 214: Նովակը գրել է Պելտոնենի գործով որոշման ընդունումից առաջ: Տե՛ս նաև՝ Պելտոնենի գործով պրն Վեններգրենի արտահայտած հակառակ կարծիքը:

²⁰ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1995) CCPR/C/79/Add. 54:

համար, ապա կմեծանա այդ իրավունքի դրույթների չարաշահման և ամբողջական խախտման հավանականությունը: Պետությունը միշտ էլ կարող է իրեն առնչվող ինչ-որ «պարտքեր» պահանջել, օրինակ՝ պետության կողմից այդ անձանց ուսման մեջ «ներդրած» գումարները:

Այդ հարցի շուրջ ՄԻԿ-ի նախադեպային բազան իսկապես անհետևողական է: Պելտոնենի գործով որոշում կայացնելուց մեկ տարի անց Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարել է.²⁰

¶ 20. ...Կոմիտեն ափսոսանք է հայտնում, որ զինված ուժերում ծառայություն չանցած բոլոր անձինք սկզբունքորեն չեն կարող իրացնել երկրից մեկնելու իրավունքը:

12-րդ հոդվածի 3-րդ կետ՝ տեղաշարժվելու ազատության սահմանափակում

[12.23] 12-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված են 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված «վերոհիշյալ իրավունքների» ընդունելի սահմանափակումները: 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում են այդ հոդվածի իրավունքները սահմանափակող միջոցներ, որոնք կարող են իրականացվել «ոչ կամայական» միջոցներով²¹:

[12.24]

ԹԻՎ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջերս ՄԻԿ-ը մանրամասն ուղեցույց է հրատարակել 12-րդ հոդվածի՝ 12-րդ հոդվածի 3-րդ կետով թույլատրելի սահմանափակումների կիրառման վերաբերյալ:

¶ 2. Թույլատրելի սահմանափակումները, որոնք կարող են կիրառվել 12-րդ հոդվածում պաշտպանված իրավունքների նկատմամբ, չպետք է խախտեն տեղաշարժվելու ազատության սկզբունքը, և պետք է առաջնորդվել 12-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված անհրաժեշտության պահանջով ու դաշնագրով ճանաչված այլ իրավունքներին համապատասխանությամբ:

¶ 11. 12-րդ հոդվածի 3-րդ կետում ներկայացված են այն բացառիկ հանգամանքները, որոնցով 1-ին և 2-րդ կետերում ամրագրված իրավունքները ենթակա են սահմանափակման: Այս կետերի դրույթներով պետությունը լիազորված է սահմանափակել վերոհիշյալ իրավունքները՝ միայն ազգային անվտանգության ապահովման, հասարակական կարգի, հասարակական առողջության կամ բարոյականության պահպանման և այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատառումներով: Թույլատրելի են համարվում այն սահմանափակումները, որոնք նախատեսված են օրենքով, որոնց կիրառումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում վերը նշված նպատակներն իրագործելու համար, և այն սահմանափակումները, որոնք չեն հակասում դաշնագրով ճանաչված բոլոր այլ իրավունքներին (տես կետ 18):

¶ 12. Իրավունքները սահմանափակելու պայմանները պետք է որոշվեն օրենքով: Այդ իսկ պատճառով պետությունների զեկույցներում պետք է մասնավորեցվեն այն իրավական նորմերը, որոնց վրա են հիմնվում սահմանափակումները: Օրենքով չնախատեսված կամ 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող սահմանափակումները խախտում են 1-ին և 2-րդ կետերում ամրագրված իրավունքները:

¶ 13. 12-րդ հոդվածի 3-րդ կետով թույլատրվող սահմանափակումների վերաբերյալ օրենքներ ընդունելիս պետությունները պետք է միշտ առաջնորդվեն այն սկզբունքով, որի համաձայն՝ սահմանափակումները չպետք է փոխեն իրավունքի էությունը (համեմատության համար տես՝ 5-րդ հոդվածի 1-ին կետը): Իրավունքի և սահմանափակման փոխհարաբերությունը, օրինաչափության և բացառության փոխհարաբերությունը չեն կարող հակադարձվել: Սահմանափակումների կիրառումը երաշխավորող օրենքները պետք է ճշգրիտ չափանիշներ սահմանեն և չեն կարող սահմանափակումների կիրառումը վերապահել դրանք իրականացնողների ազատ հայեցողությանը²²:

²¹ Ստորև՝ [12.27] պարբերության շրջանակներում, ներկայացված է 12-րդ հոդվածի 4-րդ կետը:

²² Տես Սուդանի քննադատությունը տեղաշարժվելու ազատության այն սահմանափակումների վերաբերյալ, որոնք կիրառվել են «տարբեր գործադիր վարչությունների կողմից և չեն համապատասխանել որևէ հստակ օրենսդրական չափանիշի», ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 85, պարբ. 14: Տես նաև. «Փինքնին ընդդեմ Կանադայի» (*Pinkney v Canada*, 27/78) գործը [16.10]:

¶ 14. 12-րդ հոդվածի 3-րդ կետում պարզ նշվում է, որ սահմանափակումները ոչ միայն պետք է ծառայեն թույլատրելի նպատակներին, այլև պաշտպանեն այդ իրավունքները: Սահմանափակող միջոցները պետք է համապատասխանեն համաչափության սկզբունքին: Անհրաժեշտ է, որ դրանք պաշտպանական գործառնություն ստանան: Այդ միջոցները պետք է կիրառվեն ծայրահեղ դեպքերում՝ ցանկալի արդյունքին հասնելու համար միջոցները սպառվելուց հետո: Դրանք պետք է լինեն այն միջոցներից ամենամեղմը, որոնցով հնարավոր է հասնել դրված նպատակին: Դրանք պետք է համաչափ լինեն պաշտպանվելիք շահերին:

¶ 15. Համաչափության սկզբունքը պետք է հարգվի ոչ միայն սահմանափակումները որոշող օրենքի շրջանակներում, այլև՝ օրենքը կիրառող վարչական և դատական իշխանությունների կողմից: Պետությունները պետք է երաշխավորեն իրավունքների սահմանափակումների գործածմանը վերաբերող յուրաքանչյուր գործողության արագությունը և սահմանափակող միջոցների գործածման պատճառների ներկայացումը:

¶ 16. Պետություններին հաճախ չի հաջողվել ապացուցել, որ 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված իրավունքները սահմանափակող իրենց օրենքների կիրառումը համապատասխանում է 12-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված բոլոր պահանջներին: Յուրաքանչյուր առանձին դեպքում պետությունը պարտավոր է հստակ օրենքով հիմնավորել սահմանափակումների կիրառումը: Այն պետք է նաև արդարացի այդ միջոցների կիրառման անհրաժեշտությունը և բավարարի համաչափության բոլոր պահանջները: Այս պայմանները կարող են չպահպանվել, եթե, օրինակ, այն անձը, անկախ սեռից, ունի չի թույլատրվում լքել իր երկրի տարածքը միայն այն հիմնավորմամբ, որ նա հանդիսանում է «պետական գաղտնիքների» կրող, կամ եթե անձին արգելվում է ճանապարհորդել ամբողջ աշխարհում համապատասխան թույլտվություն չունենալու դեպքում²³: Սյուս կողմից՝ տվյալ պայմանները կարող են անտեսվել ռազմական նշանակության տարածք մուտք գործելու իրավունքի սահմանափակման դեպքում՝ ազգային անվտանգության ապահովման նկատառումներով, կամ էլ բնիկ կամ փոքրամասնություն կազմող ժողովուրդներով բնակեցված տարածքներում բնակության վայր ընտրելու ազատության սահմանափակման դեպքում [12.07]:

¶ 17. Օրենքի տարբեր մեկնաբանությունների հնարավորությունը և վարչարարական բնույթի զանազան արգելքները, որոնք անհարկի խոչընդոտում են անձանց ազատ տեղաշարժվելու, յուրաքանչյուր, ներառյալ՝ իրենց երկրից մեկնելու և որևէ երկրում բնակության վայր ընտրելու իրավունքի իրացումը, մտահոգության տեղիք են տալիս: Անդրադառնալով երկրի տարածքում տեղաշարժվելու իրավունքին՝ կոմիտեն քննադատել է այն դրույթները, որոնց համաձայն՝ բնակության վայրը փոխելու համար անձը պետք է համապատասխան թույլտվություն հայցի կամ տեղական իշխանություններին դիմի տեղափոխման նպատակակետի համար հավանություն ստանալու համար, ինչպես նաև նման գրավոր դիմումների ընթացքում առաջացող ուշացումները: Պետություններում արձանագրված պրակտիկայում մի շարք այլ դեպքեր են լուսաբանվում, երբ հարաճուն խոչընդոտներն էլ ավելի են բարդացնում երկրից մեկնելու կարգը, ինչի հետևանքով ավելի շատ են տուժում տվյալ պետության քաղաքացիները: Ի թիվս այլ խնդիրների՝ այս կանոններն ու գործընթացները ներառում են մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են դիմումատուների շրջանում իրավասու մարմիններին դիմելու հնարավորության և պայմանների վերաբերյալ տեղեկատվության պակասով: Առկա են մնում նաև հետևյալ հարցերը. հատուկ ձևերի համար դիմելու պահանջը, որոնց հիման վրա հնարավոր է ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը անձնագրի վավերականության համար, գործատուի կողմից ընտանիքի անդամների վերաբերյալ լրացուցիչ տեղեկանքի պահանջը, ճանապարհորդության երթուղու ճշգրիտ նկարագիրը, անձնագրի վավերականության ժամկետի երկարացումը միայն մեծ գանձավճարներ մուծելու դեպքում, որոնք գերազանցում են համապատասխան պետական վարչության կողմից տրամադրվող ծառայության վճարը, ճանապարհորդական փաստաթղթերի վավերացման անհիմն ուշացումները, ընտանիքի անդամների՝ իրար հետ ճանապարհորդելու սահմանափակումները, հայրենիք վերադառնալու համար կանխավճար տրամադրելու պահանջը կամ վերադարձի տոմսը, նպատակակետ պետության կամ այդտեղ ապրող անձանց կողմից հրավերի առկայությունը, դիմումատուի վրա ճնշման գործադրումը, օրինակ՝ ֆիզիկական ահաբեկում, ծերբակալություն, գործազրկություն կամ երեխաների դպրոցից կամ համալսարանից հեռացում, անձնագիրը վավերացնելու դիմումի մերժում այն հիմնավորմամբ, որ դիմողը վարկաբեկում է երկրի հեղինակությունը: Նման պրակտիկայի լույսի ներքո մասնակից պետությունները պետք է վստահ լինեն, որ իրենց կողմից կիրառվող բոլոր սահմանափակումները որևէ կերպ չեն հակասում 12-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին:

¶ 18. 12-րդ հոդվածի 3-րդ կետով թույլատրելի սահմանափակումների կիրառումը պետք է չհակասի դաշնագրով երաշխավորված այլ իրավունքներին, ինչպես նաև՝ հավասարության և խտրական վերաբերմունք չցուցաբերելու հիմնարար սկզբունքներին: Այսպիսով, դաշնագրի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված իրավունքների յուրաքանչյուր սահմանափակում ռասայի, գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ հանդուժմունքների,

²³ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Բեյառուսի վերաբերյալ (1992), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 5, պարբ. 6, Եզրափակիչ դիտարկումներ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 54, պարբ. 20 և 37, Եզրափակիչ դիտարկումներ Ուկրաինայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 52, պարբ. 16, Եզրափակիչ դիտարկումներ Լիտվայի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 87, պարբ. 15:

ազգային կամ հասարակական ծագման, ունեցվածքի կամ այլ համագամքների հիման վրա կորակվել որպես ակնհայտ խախտում: Պետությունների բննարկվող զեկույցներում կոմիտեն որոշ դեպքերում հայտնաբերել է կանանց տեղափոխվելու ազատությունը կամ երկրից մեկնելու իրավունքն արգելող միջոցների կիրառում, որոնք պայմանավորված են տղամարդու թույլտվության կամ ուղեկցության պահանջով, ինչը խախտում է 12-րդ հոդվածը²⁴:

[12.25] 12-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված սահմանափակումները կարելի է կապել 18-րդ, 19-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածներում համարակալված դրույթների հետ: 12-րդ հոդվածը խախտելու գործերով նախադեպային իրավունքը և, հետևաբար, նրա սահմանափակումները համեմատաբար քիչ են հանդիպում: «*Չելեպլին ընդդեմ Շվեդիայի*» (*Celepli v Sweden*) [12.11] և «*Կարկերն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Karker v France*) [12.08] գործերի շրջանակներում իրավունքի սահմանափակումները կիրառվել են ազգային անվտանգության ապահովման նկատառումներով, մինչդեռ «*Պելտոնեն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Peltonen v Finland, 492/1992*) գործում իրավունքի սահմանափակումները կիրառվել են հասարակական կարգի պահպանման անհրաժեշտությունից ելնելով [12.21]²⁵: «*Գոնսալես դել Ռիոն ընդդեմ Պերուի*» (*González del Río v Peru, 263/87*) գործի առնչությամբ կոմիտեն հստակ հայտնել է, որ չավարտված դատական վարույթը կարող է անձի՝ երկրից մեկնելու իրավունքի նկատմամբ կիրառված սահմանափակումները հիմնավորել ենթադրաբար հասարակական կարգի պահպանման նկատառումներով, բայց ոչ այն դեպքում, երբ վարույթն առժամանակ և ապօրինաբար ձգձգվում է [12.19]: Կարելի է ենթադրել, որ այլ կարևոր սահմանափակումները, ինչպիսիք են, օրինակ, հասարակության առողջության²⁶, հասարակական բարոյական նորմերի²⁷ պահպանման և այլոց իրավունքների ու ազատությունների²⁸ պաշտպանության հետ կապված իրավունքների սահմանափակումները, կմեկնաբանվեն նույն ձևով, ինչպես և ՔՔԻՄԴ-ի այլ իրավունքների համատեքստում²⁹:

[12.25Ա] Իսրայելի վերաբերյալ վերջերս կազմած եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել գրավյալ տարածքներից ահաբեկչական վտանգներին ի պատասխան՝ տեղաշարժվելու իրավունքի հանդեպ կիրառված սահմանափակումների վերաբերյալ³⁰: ՄԻԿ-ը հայտարարել է.

¶ 19. Եվս մեկ անգամ ընդունելով մասնակից պետության անվտանգության հետ կապված հարցի լրջությունը, ինչով պայմանավորված են տեղաշարժվելու իրավունքի առկա սահմանափակումները՝ արտահայտված, օրինակ, պարետային ժամ հայտարարելով կամ ճանապարհներին լրացուցիչ արգելակետերի տեղադրմամբ, կոմիտեն կարծում է, որ «հատման գոտու» միակողմանի ճանապարհի կառուցումը և կանաչ գծի մյուս կողմում պատի մասնակի կառուցումը գրավյալ տարածքներում բնակվողների, հատկապես պաղեստինցիների համար տեղաշարժվելու իրավունքի ավելորդ և անարդար խիստ սահմանափակումների է հանգեցնում: «Հատման գոտին» վնասակար ազդեցություն է թողնում պաղեստինցիների կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, մասնավորապես՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի բազմաթիվ սահմանափակումներով, բուժօգնության, մերառյալ շտապ բուժօգնության անմատչելիությամբ, ինչպես նաև ջրից օգտվելու պայմանների բացակայությամբ: Կոմիտեի կարծիքով՝ վերոհիշյալ սահմանափակումները հակասում են դաշնագրի 12-րդ հոդվածին:

Մասնակից պետությունը պետք է հարգի 12-րդ հոդվածով երաշխավորված ազատ տեղաշարժվելու իրավունքը: Հետևաբար, գրավյալ տարածքներում պետք է դադարեցնել «հատման գոտու» կառուցումը:

[12.26] Ստորև ներկայացված ընդհանուր միջոցները հավանաբար կվերածվեն ազատ տեղաշարժվելու իրավունքի թույլատրելի սահմանափակումների. անվտանգ երթևեկության կանոններ, բնական պաշարներից օգտվելու կամ կենդանիների արգելոցներ, մուտքի սահմանափակում, երկրաշարժի կամ սողանքի

²⁴ Տե՛ս նաև՝ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 16:

²⁵ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 93, պարբ. 22-23. Տե՛ս [18.29-18.39] օրինակները, թե ինչպես է կոմիտեն կարգավորել հասարակական կարգի պահպանման և ազգային անվտանգության ապահովման նկատառումներով խոսքի ազատության իրավունքի սահմանափակման հարցը:

²⁶ Տե՛ս «*Սինգհ Բինդերն ընդդեմ Կանադայի*» (*Singh Bhinder v Canada, 208/86*) գործը [17.17]:

²⁷ Տե՛ս, օրինակ, «*Հերցբերգը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Hertzberg et al v Finland, 61/79*) գործը [18.22] և հաջորդող մեկնաբանությունը:

²⁸ Տե՛ս [18.40]:

²⁹ Տե՛ս թիվ 27 Ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 2 [12.24], տե՛ս նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթների սահմանափակման և Սիրակուզայի սկզբունքները (1985) 7 *HRQ* 3, որում նշվում է, որ ՔՔԻՄԴ-ի շրջանակներում բոլոր իրավունքների սահմանափակումները պետք է նույն կերպ մեկնաբանվեն:

³⁰ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/ISR:

գոտիներ, կարանտինային և անկարգությունների գոտիներ այցելելու ողջամիտ սահմանափակումներ³¹ և, իհարկե, մասնավոր ունեցվածք ապօրինի մուտք գործելու սահմանափակումներ³²: Բացի այդ, մարդկանց որոշակի դասի, ինչպես օրինակ՝ դատապարտված հանցագործների և զինծառայության մեջ գտնվող անձանց³³ տեղաշարժելու ազատությունը ենթակա է օրինական սահմանափակումների:

12-րդ հոդվածի 4-րդ կետ՝ սեփական երկիր մուտք գործելու իրավունք

[12.27]

ԹԻԿ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 19. Անձի՝ սեփական երկիր մուտք գործելու իրավունքով ճանաչվում է նրա հատուկ կապը այդ պետության հետ, ուստի այս իրավունքը տարբեր դրսևորումներ է ստանում: Սա ենթադրում է անձի՝ իր երկրում մնալու իրավունքը: Բացի այդ, այն նախատեսում է ոչ միայն երկրից հեռանալուց հետո վերադառնալու իրավունքը, այլև կարող է այլ երկրում ծնված անձին առաջին անգամ երկիր մուտք գործելու իրավունք շնորհել, եթե, օրինակ, նա տվյալ երկրի քաղաքացի է: Վերադառնալու իրավունքը մեծ կարևորություն է ստանում կամավոր հայրենադարձության ձգտող փախստականների դեպքում: Սույն իրավունքով արգելվում է նաև բնակչության հարկադրական տեղահանումը կամ դեպի այլ երկրներ զանգվածային արտաքսումը:

¶ 21. Անձին ոչ մի դեպքում չի կարելի կամայականորեն զրկել իր երկիր մուտք գործելու իրավունքից: Այս համատեքստում «կամայականություն» հասկացության նպատակն է ընդգծել, որ այն կիրառելի է պետության բոլոր՝ օրենսդիր, վարչական և դատական գործողությունների դեպքում: Այն երաշխավորում է, որ մույնիսկ օրենքով նախատեսված դեպքերում վերոհիշյալ իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի դաշնագրի դրույթներին, նպատակներին և խնդիրներին և ամեն դեպքում պետք է հիմնավորված լինի որոշակի հանգամանքներով: Կոմիտեն կարծում է, որ եթե մույնիսկ գոյություն ունեն անձին իր երկիր մուտք գործելու իրավունքից զրկելը հիմնավորող հանգամանքներ, ապա դրանք շատ քիչ են: Մասնակից պետությունը չի կարող, անձին քաղաքացիությունից զրկելով կամ որևէ երրորդ երկիր արտաքսելով, կամայականորեն խոչընդոտել նրա վերադարձը:

12-րդ հոդվածի 4-րդ կետով հստակորեն սահմանվում են իրավունքներից զրկելու դեպքերը. այդ զրկումը պետք է լինի հիմնավորված և, հետևաբար, չի կարող կամայական համարվել: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը ենթադրում է, որ 21-րդ կետը չի սահմանում իրավունքից զրկումը հիմնավորող հանգամանքները:

[12.28] Դոմինիկյան Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտնել է, որ «արտաքսումը որպես պատժամիջոց կիրառելը հակասում է դաշնագրի դրույթներին»³⁴: Նոր Զելանդիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է, որ «մշտական բնակիչներին և մույնիսկ որոշ քաղաքացիներին ներկայացվող ելքի արտոնագրի պահանջից բխող հարցերը կարգավորվում են 12-րդ հոդվածի 4-րդ կետով»³⁵:

[12.29]

«Զ. Մ.-ն ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (J.M. v JAMAICA, 165/84)

Գործով առկա փաստերը ներկայացված են ստորև բերված հատվածներում.

¶ 1.2. Փաստերը շարադրված են հետևյալ կերպ: 1983 թ. հունիսի 22-ին անձնագրից զրկվելուց հետո Զ. Մ.-ն մույն օրն ևեթ անձը հաստատող փաստաթուղթ է ստացել Փարիզում ճամայկայի հյուպատոսարանից: Փաստաթուղթը տրամադրվել է Բելգիայի մայրաքաղաք Բրյուսել մեկնելու հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով, ուր հեղինակն ուղևորվել է ճամայկայի դեսպանությունից մոր անձնագիր ստանալու հույսով: 1983 թ. հուլիսի 7-ին Բրյուսելում ճամայկայի դեսպանությունը մերժել է Զ. Մ.-ին մոր անձնագիր տրամադրելու դիմումը՝ նրա ծննդյան վկայականի բացակայության պատճառով: Հեղինակը պնդում է, որ ինքը դիմել է այդ հարցով դեսպանության պատասխանատու պաշտոնյային Քինգստոնի իրավասու ծառայությունների հետ կապ հաստատելու և իրեն մոր

³¹ Որպես այլընտրանք՝ 12-րդ հոդվածի մասնակի չեղյալ հայտարարումը կարող է գործողության մեջ դրվել հասարակական վտանգի ժամանակ:

³² Տե՛ս վերը՝ Նովակ, ծմբ. 19, 215-16: Եվ իրականում մնան մուտքի իրավունքը սահմանափակվում է սեփականատիրոջ՝ մասնավոր կյանքի իրավունքով: Տե՛ս [16.17-16.19]:

³³ Տե՛ս «Վուլանն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Vuolanne v Finland*, 265/87) գործը, կետ 9.4 [11.58]:

³⁴ (1993) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/790/Add, պարբ. 6:

³⁵ (2002) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/NZL, պարբ. 12:

ծննդյան վկայական տրամադրելու խնդրանքով: Այնուհանդերձ, հեղինակը հայտնել է, որ իրեն վտարել են դեսպանության տարածքից, ինչից հետո իրեն ձերբակալել է Բելգիայի ոստիկանությունը: 1983 թ. հուլիսի 8-27-ը նրան պահել են Բելգիայի տարբեր բանտերում և այնուհետև արտաքսել Ֆրանսիա: Նա կրկին դիմել է Փարիզում ճամայկայի հյուպատոսարան, որը կրկին հրաժարվել է նրան օգնության ձեռք մեկնելուց: Այնուհետև հեղինակը ձերբակալվել է Ֆրանսիայի ոստիկանության կողմից հյուպատոսության կարգադրությամբ և 2 օրով բանտարկվել: 1983 թ. օգոստոսի 18-ին նա մեկնել է ճամայկայի Քինգստոն քաղաք վերադարձի չվերթով, սակայն նրան արգելել են մուտք գործել երկիր անձնագրի բացակայության և իբր առկա փաստաթղթերի ֆրանսերեն և ոչ թե անգլերեն լինելու պատճառով: Այնուհետև նրան հարկադրաբար նստեցրել են «Աերոֆլոտի» չվերթով դեպի Մոսկվա մեկնող ինքնաթիռը: Հաջորդ օրը Մոսկվայի օդանավակայանում ինքնաթիռի վայրէջքից հետո նրան հարկադրել են Լյուքսեմբուրգ մեկնել, որտեղից էլ նա Փարիզ է թռել: 1983 թ. օգոստոսի 23-ին հեղինակը վերադարձել է Բրյուսել և ապաստան է ստացել Եվրամիությունում: 1983 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին և 1983 թ. հունվարին անձնագիր ստանալուն ուղղված նրա բոլոր ջանքերը, ինչպես նաև Բելգիացի փաստաբանի միջամտությունը, ապարդյուն են անցել:

Հեղինակը պնդում է, որ վերոհիշյալ փաստերը վկայում են, որ ճամայկայի իշխանությունները խախտել են 12-րդ հոդվածի 4-րդ կետը: Ի պատասխան՝ մասնակից պետությունը հայտնել է.

¶ 5.2. Հեղինակի հայցի ելքյան կապակցությամբ մասնակից պետությունը պարզաբանել է, որ «թեև իրեն տվյալ երկրի քաղաքացի համարող անձը պարտավոր է հիմնավորել իր քաղաքացիությունը, երկրի կառավարությունն իր հնարավորությունների սահմաններում մանրագնին հետաքննություն է անցկացրել՝ Ջ. Մ.-ի ծննդավայրի հետ կապված հարցը պարզելու համար: Համապատասխան փաստաթղթերի որոնման արդյունքում ճամայկայում Ջ. Մ.-ի ծնվելու, ինչպես նաև նրան ճամայկայի քաղաքացու անձնագիր տրամադրելու փաստերն արձանագրող որևէ փաստաթուղթ չի հայտնաբերվել»:

¶ 5.3. Բացի այդ, մասնակից պետությունը պարզաբանել է, որ Ջ. Մ.-ն «ճամայկա է ժամանել 1983 թվականի օգոստոսի 18-ին, սակայն նրան թույլ չեն տվել մուտք գործել երկրի տարածք, քանի որ նա չի կարողացել հիմնավորել ճամայկայի քաղաքացի լինելու մասին պնդումը»: Մասնակից պետությունը հավելել է, որ «թեև Ջ. Մ.-ն նշել է, որ ինքը կորցրել է ճամայկայի քաղաքացու անձնագիրը, և Ներգաղթի ծառայությունում հայտնել է, որ ճամայկա գալուց առաջ ինքը մոտ երեք տարի ապրել է այդ երկրում, չի կարողացել նույնիսկ ամենաընդհանուր տեղեկություններ հայտնել ճամայկայի վերաբերյալ: Այսպես օրինակ՝ նա չի կարողացել ասել՝ որտեղ է ծնվել և ապրել, որ դպրոցն է հաճախել նախքան երկրից հեռանալը և չի կարողացել նշել իրեն ճանաչող անձանց անունները»:

Ակնհայտ է, որ կոմիտեն համաձայն է մասնակից պետության փաստարկներին և բողոքն անընդունելի է համարել: Այս գործից պարզ է դառնում, որ տուժածը պետք է 12-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված իրավունքներն իրացնելու համար ապացուցի, որ տվյալ պետությունն իսկապես իր քաղաքացիության երկիրն է: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ ճամայկայի իշխանությունները, ըստ երևույթին, մեծ ջանքեր են թափել Ջ. Մ.-ի կարգավիճակը պարզելու համար՝ այդպիսով ազատվելով ապացույց ներկայացնելու պարտավորությունից:

[12.30]

ԹԻՎ 27 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 20. 12-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները որևէ տարբերություն չեն դնում քաղաքացիների և օտարերկրացիների միջև՝ գործածելով «ոչ ոք» արտահայտությունը: Այսպիսով, այս իրավունքով օժտված անձանց կարգը կարող է որոշվել միայն «սեփական երկիր» արտահայտության մեկնաբանությամբ, որի իմաստն ավելի ընդգրկում է, քան «քաղաքացիության երկիր» արտահայտության իմաստը: Առաջինը չի սահմանափակվում քաղաքացիության ձևական իմաստով, այն է՝ ծնունդով կամ շնորհմամբ ստացած քաղաքացիությամբ: Ծայրահեղ դեպքում այն կարող է տարածվել նաև այն անձանց վրա, ովքեր տվյալ երկրի հետ ունեցած յուրահատուկ կապերի կամ դրա հանդեպ ներկայացրած պահանջների շնորհիվ չեն կարող պարզապես օտարերկրացի համարվել: Այս շարքը կարելի է դասել, օրինակ, այն անձանց, որոնց քաղաքացիության երկիրը զրկել է քաղաքացիությունից՝ խախտելով միջազգային իրավունքի նորմերը, և այն անձանց, որոնց քաղաքացիության երկիրը միացել կամ վերափոխվել է այլ պետական միավորի և մերժում է նրանց քաղաքացիություն տալու դիմումը: 12-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներն ավելի լայն մեկնաբանության տեղիք են տալիս, ինչը կարող է ընդգրկել երկարաժամկետ բնակիչների այլ կարգեր, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում քաղաքացիություն չունեցող անձանցով, որոնց կամայականորեն զրկել են նման բնակության երկրի քաղաքացիություն ստանալու իրավունքից: Հաշվի առնելով այն փաստը, որ որոշ հանգամանքներում այլ գործոնների արդյունքում անձի և պետության միջև կարող են սերտ և կայուն կապեր հաստատվել, մասնակից պետությունները պետք է իրենց զեկույցներում տեղեկատվություն տրամադրեն մշտական բնակիչների՝ իրենց բնակության երկիր վերադառնալու իրավունքի վերաբերյալ:

[12.31] «ԹՈԱԼԱՆ ընդդեմ ՆՈՐ ՁԵԼԱՆԴԻԱՅԻ» (TOALA v NEW ZEALAND, 675/95)

Ստորև մանրամասն ներկայացված են այս գործի փաստերը.

¶ 2.1. Բոլոր հեղինակները ծնվել են Արևմտյան Սամոայում. պրն Թոալան ծնվել է 1932 թ., տիկին Թոալան՝ 1934 թ., նրանց որդեգրած դուստրը՝ Էկա Թոալան՝ 1984 թ., պրն Թոֆաեոնոն ծնվել է 1934 թվականին, իսկ տիկին Թոֆաեոնոն՝ 1933 թ.: Բոլորը ներկայացնելու պահին ընտանիքները բնակվում էին Նոր Ձեւանդիայում, որտեղ վերջերս նրանց հանդեպ կիրառվել է արտաքսման կարգադրություն: Նոր Ձեւանդիայում ընտանիքները թաքնվել են արտաքսումից խուսափելու նպատակով: Հեղինակները պնդում են, որ իրենք Նոր Ձեւանդիայի քաղաքացիներ են, և իշխանությունների՝ երկրից իրենց արտաքսելու վերաբերյալ որոշումները հակասում են դաշնագրի դրույթներին:

¶ 2.5. Հեղինակները պնդում են, որ իրենք Նոր Ձեւանդիայի քաղաքացիներ են «Լեսան ընդդեմ Նոր Ձեւանդիայի գլխավոր դատախազի» (*Lesa v The Attorney-General of New Zealand, 1983, 2 A.C.20*) գործով Գաղտնի խորհրդի դատական կոմիտեի կայացրած որոշման համաձայն: Այս գործի առնչությամբ Գաղտնի խորհուրդը հաստատել է, որ 1928 թ. ընդունված «Նոր Ձեւանդիայի տարածքում Բրիտանիայի քաղաքացիության և օտարերկրացիների կարգավիճակի մասին» օրենքով՝ 1924 թ. մայիսի 13-ից մինչև 1929 թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Արևմտյան Սամոայում ծնված անձինք և նրանց հետնորդները Նոր Ձեւանդիայի քաղաքացի են համարվում:

¶ 2.6. Ինչպես նշվում է, 1982 թ. հուլիսին Լեսայի գործով Գաղտնի խորհրդի կայացրած վճիռը բավական անբարենպաստ արձագանք է առաջացրել Նոր Ձեւանդիայում: Հաշվարկները վկայում են, որ որոշման հետևանքով Սամոայի 160 000 բնակիչներից 100 000-ը կտուժի:

¶ 2.7. Ի պատասխան՝ Նոր Ձեւանդիայի իշխանությունները բանակցություններ են վարել Արևմտյան Սամոայի հետ Բարեկամության համաձայնագրին կից արձանագրության վերաբերյալ: 1982 թ. սեպտեմբերի 13-ին կողմերը վավերացրել են արձանագրությունը: Մեկ ամիս չանցած՝ Նոր Ձեւանդիայի իշխանություններն ընդունել են «Արևմտյան Սամոայի քաղաքացիության մասին» օրենքը, որի շնորհիվ արձանագրությունն ուժի մեջ է մտել Նոր Ձեւանդիայի տարածքում, և չեղյալ է համարվել Լեսայի գործով կայացրած որոշումը, որն ուժի մեջ է մնացել միայն տիկին Լեսայի և սահմանափակ թվով անձանց համար:

¶ 3.1. Հեղինակները պնդում են, որ 1982 թ. ընդունված «Քաղաքացիության մասին» Արևմտյան Սամոայի օրենքով մոտ 100 000 սամոացի զրկվել է Սամոայի և Նոր Ձեւանդիայի քաղաքացիությունից, որը դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ և 26-րդ կետերի խախտում է:

Հետագա հայտարարություններում հեղինակների փաստաբանը հավելել է հետևյալը.

¶ 9.2. Փաստաբանը շարունակում է նախկինի պես պնդել, որ հեղինակները սամոացիներ են, և Գաղտնի խորհրդի դատական կոմիտեն պարզ հայտարարել է, որ Նոր Ձեւանդիան հեղինակների երկիրն է: Նա հավաստիացնում է նաև, որ հեղինակներին Նոր Ձեւանդիայի քաղաքացիությունից զրկելու մասին երկրի իշխանությունների ընդունած օրենքով հեղինակները դասվել են օտարերկրացիների կարգը, որոնց կարելի է օրենքով նախատեսված դեպքերում արտաքսել Նոր Ձեւանդիայից: Այդ կապակցությամբ նա նշում է, որ հեղինակները զրկվել են դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետով իրենց վերապահված իրավունքներից: Փաստաբանն առարկում է՝ հաստատելով, որ 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է, որ քաղաքացիություն ստացած անձինք չեն կարող զրկվել դրանից, եթե դրա հետևանքով սահմանափակվում են քաղաքացիության և երկրի մուտք գործելու իրավունքները: Ահա այսպես է վարվել Նոր Ձեւանդիայի խորհրդարանը շատ մարդկանց, այդ թվում՝ հեղինակների հետ:

Ի պատասխան 12-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանության՝ մասնակից պետությունն ասել է հետևյալը.

¶ 8.1. 1999 թ. փետրվարի 12-ին արված հայտարարության շրջանակներում մասնակից պետությունը նշում է, որ հեղինակների բողոքների առանցքը նրանց այն պնդումն է, թե Արևմտյան Սամոայի «Քաղաքացիության մասին» օրենք ընդունելով՝ Նոր Ձեւանդիայի իշխանությունները սխալ և կամայականորեն են գործել՝ խախտելով դաշնագիրը:

¶ 8.2. Մասնակից պետությունը մանրամասն ապացույցներ է ներկայացնում, որոնք վկայում են, որ Արևմտյան Սամոան սովորաբար չի դասվել Մեծ Բրիտանիայի թագուհու տիրապետության տակ գտնվող տարածքների շարքը, և նշված ժամանակահատվածներում Արևմտյան Սամոայի բնակիչները Մեծ Բրիտանիայի հպատակ կամ Նոր Ձեւանդիայի քաղաքացիներ չեն համարվել: Փոխարենը՝ նրանց շնորհվել է դատարանի որոշմամբ և համաձայնագրով սահմանված մեկ այլ կարգավիճակ: Մասնակից պետությունը հավելում է, որ շատերի ակնկալիքով 1962 թ. անկա-

խություն ձեռք բերելուց հետո բնակիչները հանդիսացել և պետք է հանդիսանան միայն այդ երկրի քաղաքացիներ: 1982 թ. Արևմտյան Սամոայի հետ խորհրդակցելուց և նրա համաձայնությունը ստանալուց հետո *Լեսայի* գործով որոշմամբ առաջացած թյուրիմացությունները շտկելու նպատակով Նոր Զելանդիայի կառավարության կողմից ընդունված օրենսդրական ակտը կոչված էր կարգավորելու այդ որոշումից բխող, միանգամայն անսպասելիորեն առաջ եկած երկքաղաքացիության խնդիրը: Մասնակից պետությունը հավելում է, որ այս տեսանկյունից իր որոշումները հիմնված էին ողջամիտ և իրատեսական չափանիշների վրա, համապատասխանում էին ընդհանուր միջազգային իրավունքի նորմերին և առհասարակ օրինական էին դաշնագրի դրույթների, ներառյալ՝ ինքնորոշման իրավունքն ամրագրող 1-ին հոդվածի համաձայն: Այսպիսով, այդ որոշումները դաշնագրով արգելվող խտրականություն չեն դնում գործում մասնակցող անձանց միջև: Ուստի մասնակից պետությունը նշում է, որ այդ որոշումները չեն խախտել դաշնագրի 26-րդ հոդվածը և 2-րդ հոդվածի 1-ին կետը³⁶:

¶ 8.3. Անդրադառնալով դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետին՝ մասնակից պետությունը պնդում է, որ 1987 թ. ընդունած «Ներգաղթի մասին» Նոր Զելանդիայի օրենքի դրույթներն իսկապես կարող են կիրառվել Նոր Զելանդիայի քաղաքացի չհանդիսացող հեղինակների հանդեպ: Այդ օրենքով հիմնավորվում է հեղինակների արտաքսումը Նոր Զելանդիայից և Արևմտյան Սամոա նրանց մուտք գործելու իրավունքը: Ուրեմն 12-րդ հոդվածի 4-րդ կետի խախտմամբ սեփական երկիր մուտք գործելու իրավունքից նրանց զրկելը չի կարող կամայական համարվել:

ՄԻԿ-ը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին:

¶ 11.3. Կոմիտեն նշում է, որ *Լեսայի* գործով 1982 թ. ընդունած որոշմամբ հեղինակներից չորսն ի ծնե Նոր Զելանդիայի քաղաքացի են հանդիսացել: Հինգերորդ հեղինակը՝ Էկա Թուալան, ծնվել է 1984 թ., ուստի *Լեսայի* գործով որոշումը չի տարածվել նրա վրա: Լեսայի գործով որոշման շնորհիվ Նոր Զելանդիայի քաղաքացիությամբ օժտված չորս հեղինակներին երկիր մուտք գործելու իրավունք է վերապահվել: 1982 թ. ընդունված օրենքով Նոր Զելանդիայի քաղաքացիությունից զրկվելու հետևանքով նրանք զրկվել են նաև քաղաքացու կարգավիճակով երկիր մուտք գործելու իրավունքից: Սույն օրենքն ընդունելուց հետո երկիր մուտք գործելու նրանց իրավունքը կարգավորվել է Նոր Զելանդիայի ներգաղթային օրենքներով:

¶ 11.4. Կոմիտեի՝ 12-րդ հոդվածի վերաբերյալ ընդհանուր մեկնաբանության մեջ նշվում է, որ մասնակից պետությունը չի կարող, անձին քաղաքացիությունից զրկելով և որևէ երրորդ երկիր նրան արտաքսելով, կամայականորեն խոչընդոտել սեփական երկիր նրա վերադարձը: Այս գործով կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ 12-րդ հոդվածի 4-րդ կետի համատեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել Նոր Զելանդիայի քաղաքացիության շնորհման և քաղաքացիությունից զրկելու հանգամանքները:

¶ 11.5. Կոմիտեն նշում է, որ 1982 թ. դրությամբ հեղինակները որևէ կապ չեն ունեցել Նոր Զելանդիայի հետ՝ ծննդյան, ծագման կամ բարեկամների և բնակության առումով: Լեսայի գործով որոշում կայացնելու պահին նրանք անտեղյակ էին Նոր Զելանդիայի քաղաքացիություն ստանալու պահանջի վերաբերյալ և ականա երկրի քաղաքացի են դարձել: Պարզվում է նաև, որ պրն Թուալայից բացի՝ հեղինակներից ոչ ոք երբևէ չի եղել Նոր Զելանդիայում: Այս հանգամանքները վիճելի են դարձնում այն պնդումը, որ Լեսայի գործով որոշման համաձայն՝ Նոր Զելանդիան պետք է դառնա «նրանց երկիրը»: Սակայն, ամեն դեպքում, կոմիտեն այն կարծիքին չէ, որ հեղինակներին Նոր Զելանդիայի քաղաքացիությունից զրկելու որոշումը կամայական բնույթ ունի: Ի լրումն վերոհիշյալ հանգամանքների՝ պետք է նշել, որ *Լեսայի* գործով որոշում կայացնելու և 1982 թ. օրենքն ընդունելու ժամանակահատվածում հեղինակներից ոչ ոք չի բնակվել Նոր Զելանդիայում: Նրանք երբեք չեն դիմել իշխանություններին Նոր Զելանդիայի անձնագիր ստանալու և քաղաքացու իրավունքներն իրացնելու հարցով: Այդ իսկ պատճառով կոմիտեն այն կարծիքին է, որ տվյալ դեպքում չեն խախտվել հեղինակների՝ 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավունքները:

Ահա ինչու ՄԻԿ-ը հանգել է այն եզրակացության, որ 1982 թ. ընդունված «Քաղաքացիության մասին» Արևմտյան Սամոայի օրենքի կիրառումը կամայական չէ: Հեղինակներից ոչ ոք կապեր չի ունեցել Նոր Զելանդիայի հետ այն կարճ ժամանակահատվածում, երբ նրանք այդ երկրի քաղաքացիներ էին, և ոչ ոք երբեք չի ձգտել օգտվել քաղաքացու իրավունքներից: Ի թիվս այլ փաստերի՝ ՄԻԿ-ը նշել է, որ *Լեսայի* գործով որոշման և օրենքի ընդունման միջև ընկած ժամանակահատվածում, երբ հեղինակները Նոր Զելանդիայի քաղաքացի էին, կասկածելի է այն փաստը, որ քաղաքացու և պետության կապի բացակայու-

³⁶ Իր բողոքում հեղինակը պնդել է նաև, որ Նոր Զելանդիայի կողմից իր հանդեպ կիրառված միջոցները խտրականություն են ենթադրում՝ ռասայական և ազգային պատկանելության հողի վրա: Բողոքը չի ընդունվել, քանի որ ՄԻԿ-ն ի վերջո եզրակացրել է, որ Նոր Զելանդիայի օրենսդրության նորմերի կիրառումը հեղինակների հանդեպ կամայական չէր (կետ 11.6): Քաղաքացիության իրավունքից նրանց զրկելու որոշումն ինքնին պայմանավորված է ոչ թե ռասայական կամ ազգային պատկանելության հատկանիշով խտրականությամբ, այլ Նոր Զելանդիայի հետ կապի բացակայությամբ: Այս եզրակացությունը բխում է ստորև հատված առ հատված ներկայացված 11.5 պարբերության եզրահանգումներից:

թյան պատճառով այդ երկիրը չի վերածվել «նրանց երկրի»: Այսպիսով, քաղաքացիությունը չի կարող համարվել 12-րդ հոդվածի 4-րդ կետով «անձի երկիր» հասկացության առկայության վճռորոշ ապացույց³⁷:

[12.32] *Թուալայի* գործով որոշումը հաստատում է այն փաստը, որ պետության նախկին գաղութներում բնակվող անձինք կարող են զրկվել քաղաքացիությունից և բնակության վայր ընտրելու իրավունքից՝ առանց 12-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման, հատկապես այն դեպքերում, երբ իրավունքից զրկելու պահին նրանց և պետության միջև բացակայում է իսկական կապը: Այնուհանդերձ, այս գործով որոշումը չի արդարացնում բոլոր նախկին գաղութների բնակիչների քաղաքացիության և բնակության վայր ընտրելու իրավունքի բացարձակ խախտումը, քանի որ այս դեպքում կխախտվեր 12-րդ հոդվածի 4-րդ կետը և 26-րդ հոդվածը³⁸:

[12.33] «ՍՏՅՈՒՄՐՏԸ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (STEWART v CANADA, 538/93)

Յեղիմակը Մեծ Բրիտանիայի քաղաքացի է, որը բնակվել է Օնտարիոյում, ուր տեղափոխվել է 7 տարեկան հասակում: Նա ապրել է իր հիվանդ մոր և հաշմանդամ եղբոր հետ, ունեցել է մաս երկու փոքր զավակ, որոնք ապրել են իր նախկին կնոջ հետ: Կանադայի «Ներգաղթի մասին» օրենքով ինքնակազմ արտաքսման է ենթարկվել, քանի որ նրան մեղադրանք է ներկայացվել քառասուններկու մանր հանցագործությունների՝ թմրամիջոցներ պահելու, մարմնական վնասվածք հասցնելու և երթևեկության կանոնները խախտելու համար: Փաստաբանը պնդում է, որ այս իրավախախտումները հիմնականում հեղինակի՝ թմրամիջոցներից ունեցած կախվածության հետևանք են, և ինքնակազմ ցանկանում է բուժվել: Ի պատասխան ինքնակազմ գործով քրեական արձանագրություններին՝ պետությունն արձակել է նրան արտաքսելու հրաման: Յեղիմակը պնդում է, որ արտաքսվելու դեպքում իրեն կարգելվեր Կանադա վերադառնալ: Մասնակից պետությունը բացասել է նրա վերադարձի բացարձակ արգելման հնարավորությունը: Ամեն դեպքում, նրա վերադառնալու հարցը կարող էր կախված լինել մասնակից պետության բարյակակամությունից, այսպիսով, նրան կարող էին վերադառնալու «իրավունք» չտալ:

Անդրադառնալով 12-րդ հոդվածի 4-րդ կետին՝ ինքնակազմ ներկայացրել է հետևյալ փաստարկները.

¶ 3.4. Յեղիմակը նշել է, որ 12-րդ հոդվածի 4-րդ կետը համապատասխանում է իր դեպքին, քանի որ գործնականում Կանադան իր հայրենի երկիրն է: Կանադայից իր արտաքսումը կարող է հանգեցնել Կանադա մուտք գործելու բացարձակ արգելքին: Այդ համատեքստում նշվում է, որ 12-րդ հոդվածի 4-րդ կետով չի սահմանվում անձի՝ իր ազգության կամ ծննդյան երկիր մուտք գործելու իրավունքը: Այսպիսով, անձն իրավունք ունի մուտք գործել միայն «իր երկիրը»: Փաստաբանը պնդում է, որ Մեծ Բրիտանիան այլևս ինքնակազմ «հայրենի երկիրը» չէ, այն պահից, երբ նա յոթ տարեկան հասակում լքել է այն, և նրա ամբողջ կյանքը մկրված է Կանադայում բնակվող իր ընտանիքին: Ուստի, չնայած այն հանգամանքին, որ նա ձևականորեն կանադացի չի հանդիսանում, պետք է դե ֆակտո համարվի Կանադայի քաղաքացի:

Ի պատասխան՝ մասնակից պետությունը հայտնել է հետևյալը.

¶ 5.3. Թեև մասնակից պետությունը համարում է, որ որևէ երկրում մնալու իրավունքը կարող է ընդգրկվել բացարձակապես դաշնագրի կիրառման շրջանակներում, հարկ է նշել, որ այս դեպքում մնալու հանգամանքներ գոյություն չունեն: Պրն Ստյուարտին արտաքսելու որոշումը հիմնավորված է «դեպքին առնչվող փաստերով և Կանադայի իշխանությունների» հասարակական կարգը պահպանելու ու հասարակության անվտանգությունն ապահովելու պարտավորությամբ: Կանադայի դատական ատյանները հաստատել են, որ կառավարության ամենակարևոր նպատակն է իր քաղաքացիների անվտանգության երաշխավորումը: Այս հայտարարությունը համահունչ է Կանադայի գերագույն դատարանի արտահայտած այն տեսակետին, որ կառավարության՝ որպես գործադիր մարմնի գործառնությունը գերակշռում է իր քաղաքացիների անվտանգությանը վերաբերող հարցերում, և ներգաղթի իրավունքի առավել հիմնական սկզբունքն այն է, որ քաղաքացիություն չունեցող անձինք օժտված չեն երկիր մուտք գործելու կամ մնալու բացարձակ իրավունքով»:

³⁷ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2001) 1 *HRLR* 83, 89.

³⁸ Ելույն տեղում՝ 89-90:

Կոմիտեն մեծամասնության համաձայնությամբ որոշում է կայացրել մասնակից պետության օգտին:

¶ 12.2. Դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է. «Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից»: Այս հոդվածը ուղղակիորեն չի վերաբերում անձի արտաքսմանը կամ տեղահանմանը: Անշուշտ, կարելի է վստահությամբ ասել, որ մասնակից պետության՝ անձին արտաքսելու միջոցին դիմելուց խուսափելու պարտավորությունն այս դրույթի իրականացման անմիջական նախապայմանն է, և անձին մուտք գործելու թույլտվություն տալու պարտավորությունն ստանձնած մասնակից պետությանն արգելվում է արտաքսել վերոհիշյալ անձին: 12-րդ հոդվածի 4-րդ կետի վերաբերյալ ստորև ներկայացված եզրակացությունից հետո կոմիտեն պարտավոր չէ առաջնորդվել սույն գործում առկա տվյալ փաստարկով: Կոմիտեն կարող է միայն ենթադրել, որ եթե 12-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերեր հեղինակի գործին, ապա մասնակից պետությունը չէր կարողանա արտաքսել նրան:

¶ 12.3. Այժմ հարց է ծագում՝ Կանադան կարո՞ղ է համարվել պրն Ստյուարտի հայրենի երկիրը: 12-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանության մեջ կարևոր է նշել, որ «անձի երկիր» արտահայտության շրջանակն ավելի լայն է, քան «քաղաքացիության երկիր» հասկացությունը, որն ընդգրկում է «հայրենի երկիրը», և որը գործածվում է նաև ազատ տեղաշարժվելու իրավունքներին վերաբերող որոշ պայմանագրերի մեջ՝ երկիր մուտք գործելու իրավունքը երաշխավորելու համար: Ավելին՝ 12-րդ հոդվածի 4-րդ կետը հասկանալու համար պետք է հաշվի առնել դաշնագրի 13-րդ հոդվածի ձևակերպումը: Այդ դրույթը վերաբերում է «տվյալ մասնակից պետության տարածքում օրինական հիմքերով գտնվող օտարերկրացուն» և սահմանափակում է պետության տարածքում օրինական հիմքերով կամայականորեն արտաքսելու իրավունքը: Այսպիսով, պարզ է դառնում, որ «իր երկիր» եզրույթը՝ որպես հասկացություն, վերաբերում է տվյալ երկրի քաղաքացիներին և այն անձանց որոշակի կարգերին, ովքեր փաստացի այդ երկրի քաղաքացի չեն հանդիսանում, սակայն, միաժամանակ չեն կարող «օտարերկրացի» համարվել 13-րդ հոդվածի իմաստով, թեև այլ դեպքերում համարվում են³⁹:

¶ 12.4. Քանի որ «իր երկիր» հասկացությունը ձևականորեն չի սահմանափակվում քաղաքացիությամբ, այսինքն՝ ի ծնե կամ շնորհված քաղաքացիությամբ, ուստի տարածվում է առնվազն այն անձանց վրա, ովքեր տվյալ երկրի հետ հատուկ կապերի կամ կապ հաստատելու պահանջների շնորհիվ չեն կարող պարզապես օտարերկրացի համարվել: Այս հասկացությունը կիրառելի կլիներ, օրինակ, այն անձանց նկատմամբ, ովքեր զրկվել են իրենց քաղաքացիությունից միջազգային իրավունքը խախտելու կամ մեկ այլ պետության հետ իրենց քաղաքացիության պետության միավորվելու կամ առանձին պետական միավորի վերածվելու հետևանքով: Մի խոսքով՝ թեև այս անձինք ձևականորեն չեն կարող տվյալ պետության քաղաքացի համարվել, սակայն 13-րդ հոդվածի համաձայն՝ չեն համարվում օտարերկրացի: 12-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը ավելի ընդգրկում մեկնաբանության տեղիք է տալիս, ավելին՝ կարող է ընդգրկել երկարաժամկետ բնակություն հաստատած, հատկապես քաղաքացիություն չունեցող, իրենց երկարաժամկետ բնակության պետության քաղաքացիություն ստանալու իրավունքից անհիմն կերպով զրկված անձանց այլ կարգեր:

¶ 12.5. Տվյալ դեպքում հարցը հետևյալն է. որևէ երկրի ներգաղթային օրենսդրության համաձայն տվյալ երկիր մուտք գործած անձը, որը ենթակա է այդ օրենսդրության պայմաններին, կարո՞ղ է այն համարել իր երկիր, եթե չի ստացել այդ երկրի քաղաքացիությունը և շարունակում է պահպանել իր ծագման երկրի քաղաքացիությունը: Հավանաբար պատասխանը կարող էր դրական լինել, եթե ներգաղթի երկիրն անհիմն նկատառումներով խոչընդոտեր վերոհիշյալ անձի՝ քաղաքացիություն ձեռք բերելու գործընթացը: Սակայն եթե, ինչպես տվյալ դեպքում է, ներգաղթի երկիրը պարզեցնում է իր քաղաքացիության ձեռքբերման գործընթացը, իսկ ներգաղթած անձը քաղաքացիություն չի հայցում իր իսկ կամքով կամ այնպիսի արարքներ գործելու հետևանքով, որոնց պատճառով կզրկվի քաղաքացիություն ստանալու հնարավորությունից, ապա դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով ներգաղթի երկիրը չի կարող վերածվել «նրա երկրի»: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետը ձևակերպելու ընթացքում մերժվել է «քաղաքացիության երկիր» եզրույթը, ինչպես նաև անձի մշտական բնակության երկիրն անդրադառնալու առաջարկը:

¶ 12.6. Պարոն Ստյուարտը Մեծ Բրիտանիայի քաղաքացի է հանդիսանում իր և իր ծնողների ծննդյան հիմունքով: Թեև նրա կյանքի մեծ մասն անցել է Կանադայում, երբեք դիմում չի ներկայացրել Կանադայի քաղաքացիություն ձեռք բերելու համար: Անշուշտ, ավելի հասուն տարիքում նա հավանաբար կզրկվեր Կանադայի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքից դատվածություն ունենալու պատճառով: Այնուհանդերձ փաստերը վկայում են, որ նա երբեք էլ չի փորձել տվյալ երկրի քաղաքացիություն ստանալ: Բացի այդ, եթե անգամ դիմեր, և նրա դիմումը մերժվեր դատվածության պատճառով, ապա այդ իրավունքից զրկվելու պատճառը հենց ինքը կլիներ: Հետևաբար, Կանադայի ներգաղթային օրենսդրությունը չի կարող կամայական կամ անհիմն համարվել դատվածություն ունեցող անձանց Կանադայի քաղաքացիության մերժման հարցում:

³⁹ Տե՛ս գլուխ 13, հոդվ. 13:

¶ 12.7. Այս գործի շրջանակներում չէին առաջանա Կանադայից պրն Ստյուարտի արտաքսման հետ կապված մարդու իրավունքներին առնչվող բացահայտ հարցեր, եթե նրան ավելի վաղ արտաքսած լինեին: Եթե կոմիտեն, վերոհիշյալ փաստարկներով առաջնորդվելով, այդ ժամանակ թույլ չտար Կանադային արտաքսել, ապա կհիմնավորվեր մի սկզբունք, որը կարող էր բացասական նշանակություն ունենալ աշխարհի բոլոր ներգաղթյալների համար, որոնց առաջին առնչությունն օրենքի հետ կարող է հանգեցնել արտաքսման, եթե միայն չշարունակեին ապրել տվյալ երկրում՝ վերածվելով 12-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պաշտպանության իրավունքն իրացնող անձանց:

¶ 12.8. Կանադայի նման երկրները, որոնք երկրում որոշակի ժամանակ բնակվելուց հետո քաղաքացիություն ստանալու հնարավորություն են ընձեռում ներգաղթած անձանց, իրավունք ունեն ակնկալելու, որ նման անձինք պատշաճ կերպով ձեռք են բերելու քաղաքացիությամբ վերապահված բոլոր իրավունքները և ստանձնելու են բոլոր պարտավորությունները: Այն անձինք, ովքեր չեն օգտվում իրենց ընձեռված հնարավորություններից և այդպիսով խուսափում են քաղաքացիներին վերապահված պարտավորություններից, կարող են համարվել Կանադայում օտարերկրացու կարգավիճակով բնակվող անձինք: Նրանք իրավասու են ընտրելու իրենց կարգավիճակը, սակայն պետք է նաև պատասխանատվություն կրեն հետևանքների համար: Քրեական դատվածություն ունենալու պատճառով Կանադայի քաղաքացիությունից զրկված պրն Ստյուարտը չի կարող ավելի կարևոր իրավունքներից օգտվել, քան այն օտարերկրացիները, որոնք այս կամ այն պատճառով որոշել են չհայցել Կանադայի քաղաքացիությունը: Այս դեպքում անձանց պետք է տարբերել վերոնշյալ 12-րդ հոդվածի 4-րդ կետում մեջբերված անձանց կարգերից:

¶ 12.9. Կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Կանադան չի կարող համարվել պրն Ստյուարտի երկիրը, և մասնակից պետությունը որևէ կերպ չի խախտել հոդվածի դրույթները:

Ավելին՝ կոմիտեն պարզել է, որ արտաքսումից անխուսափելիորեն բխող միջամտությունը պրն Ստյուարտի ընտանեկան հարաբերություններին չի կարող համարվել դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածների խախտում⁴⁰:

[12.34] Տիկնայք Էվաթը և Քուիրոզան, որոնց հետ, ըստ էության, համաձայն են օրիորդ Շանեն և պրն Պրադո Վալեխոն, այլ՝ հակառակ կարծիք են արտահայտել, որին հարում է նաև պրն Ագիլար Ուրբինան:

¶ 1. Մենք չենք կարող համաձայնել կոմիտեի այն եզրակացությանը, ըստ որի՝ հեղինակը չի կարող պահանջել 12-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված պաշտպանության իրավունքի իրացումը:

¶ 2. Առաջնային հարցը հետևյալն է. արդոք որևէ անձի իր երկրից կամայական արտաքսումը պե՞տք է հավասարվի այդ երկիր մուտք գործելու իրավունքի կամայական խախտման հետ այն դեպքերում, երբ մուտքի կամ կրկնամուտքի որևէ փորձ դեռևս չի ձեռնարկվել: Այս հարցի շուրջ կոմիտեն չի հանգել որևէ եզրակացության. նա միայն ընդունում է, որ եթե հեղինակը համապատասխաներ 12-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին, ապա պետությունը կկանխեր նրա արտաքսումը (պարբ. 12.2): Կանադայի կողմից ձեռնարկված տարբեր գործընթացների և ի կատար ածված իրահանգների հետևանքով հեղինակը զրկվել է բնակության վայր ընտրելու իրավունքից և արտաքսվել է: Նա այլևս չի կարող մուտք գործել Կանադա, և անգամ կորցրել է կարճ ժամկետով մուտք գործելու թույլտվության հեռանկարը: Մեր կարծիքով՝ երկիր մուտք գործելու իրավունքն ինչպես ապագայի, այնպես էլ ներկայի համար նախատեսված իրավունք է, և անձը կարող է զրկվել այդ իրավունքից տվյալ գործում առկա հանգամանքներում մուտքի մերժումից անկախ: Եթե մասնակից պետությունը որևէ անձի թույլ է տվել մուտք գործել երկիր, ապա իրավունք չունի արտաքսելու նրան: Մեր կարծիքով՝ և՛ Կանադայում մնալու, և՛ արդեն արտաքսված լինելու դեպքում հեղինակը զրկվում է Կանադա մուտք գործելու իրավունքից:

¶ 3. 13-րդ հոդվածի առնչությամբ հեղինակի բողոքն անընդունելի է համարվել, և այդ փաստը վիճարկող որևէ հարց չի ծագել: Կոմիտեն, այսուամենայնիվ, այն կարծիքին է, որ 12-րդ հոդվածի 4-րդ կետը վերաբերում է ոչ միայն քաղաքացիներին, այլև նրանց, ովքեր պաշտոնապես քաղաքացի չեն համարվում, սակայն 13-րդ հոդվածի (պարբ. 12.3) մեկնաբանությամբ չեն կարող օտարերկրացի համարվել: Այս տեսանկյունից երկու եզրակացություն է բխում: Առաջինն այն է, որ անձի և պետության միջև գոյություն ունեցող հարաբերությունը կարող է հաստատվել ոչ միայն քաղաքացու կամ օտարերկրացու (նաև քաղաքացիություն չունեցողի) միջև, այլև կարող է ընդգրկվել անսահմանափակ կարգի մեջ: Մենք չենք կարծում, որ այն երաշխավորվում է դաշնագրի 12-րդ հոդվածով կամ ընդհանուր միջազգային իրավունքով: Կոմիտեի եզրակացությունից հետևում է, որ անձը չի կարող հայցել երկու՝ 12-րդ հոդվածի 4-րդ կետի և 13-րդ հոդվածի պաշտպանությունը: Մենք համաձայն չենք այս մեկնաբանությանը և կարծում ենք, որ 13-րդ հոդվածով երաշխավորվում է անհրաժեշտ նվազագույն պաշտպանության մակարդակը որևէ պետության տա-

⁴⁰ Տե՛ս [20.17] - [20.19]:

րածքում օրինական հիմքերով բնակվող օտարերկրացուն արտաքսելու դեպքում: Բացի այդ, 13-րդ հոդվածի որևէ ձևակերպումից չի կարելի ենթադրել, որ այն օտարերկրացիների համար գործող իրավունքի բացառիկ աղբյուր է, կամ այն, որ պետության տարածքում օրինական հիմքերով բնակվող օտարերկրացին չի կարող պահանջել 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պաշտպանությունը այն դեպքում, եթե նա կարողանա ապացուցել, որ Կանադան իր երկիրն է: Յուրաքանչյուր դրույթ ամհրաժեշտ է մեկնաբանել ամբողջական իմաստով:

¶ 4. Կոմիտեն փորձում է սահմանել 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավունքներից օգտվող անձանց հաջորդ կարգը՝ հայտարարելով, որ ամձը չի կարող պնդել, որ տվյալ պետությունը իր երկիրն է 12-րդ հոդվածի 4-րդ կետով արտահայտված իմաստով, եթե տվյալ պետության քաղաքացի չի հանդիսանում կամ գրկվել է իր քաղաքացիությունից, կամ եթե վերը նշված հանգամանքներում պետությունը մերժել է նրա քաղաքացիության դիմումը (կետ 12.4): Կոմիտեն նաև այն կարծիքին է, որ եթե քաղաքացիություն հայցող ներգաղթած անձի համար անհիմն խոչընդոտներ են ստեղծվել, ներգաղթային օրենսդրության համաձայն տվյալ պետություն մուտք գործող և քաղաքացիություն ստանալու հնարավորություն ունեցող յուրաքանչյուր անձ չի կարող վկայակոչել այդ պետությունը որպես իր երկիր, եթե նրան չի հաջողվել ձեռք բերել այդ երկրի քաղաքացիությունը (կետ 12.5):

¶ 5. Մեր կարծիքով՝ կոմիտեն շատ նեղ է դիտել 12-րդ հոդվածի 4-րդ կետը և չի հիմնավորել իր ձևակերպումը: Հեղինակները չպետք է գրկվեին «իրենց երկիր» մուտք գործելու իրավունքից, քանի որ անընդունելի է համարվում որևէ անձի գրկել իր ընտանիքի կամ ընկերների հետ հաղորդակցվելու իրավունքից, ընդհանուր առմամբ, նրա հասարակական շրջապատը կազմող հարաբերությունների շրջանակից: Սիա թե ինչու այդ իրավունքը մեկնաբանվում է 12-րդ հոդվածում, որը հասցեագրված է իրենց բնակության պետության տարածքում օրինական հիմքերով բնակվող անձանց, և ոչ թե նրանց, ովքեր ձևական կապեր ունեն այդ պետության հետ: 12-րդ հոդվածում ներկայացված իրավունքների համար պետության հետ ունեցած ձևական կապի գոյությունն անտեղի է: Դաշնագիրն այստեղ անդրադառնում է այն խիստ անձնական և զգացմունքային կապերին, որոնք կարող են առաջանալ անձի և պետության միջև՝ բնակության տարածքի և հասարակական հանգամանքների ազդեցությամբ: Սիա սա է պաշտպանում 12-րդ հոդվածի 4-րդ կետը:

¶ 6. 12-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը կրկին հաստատում է սահմանված իրավունքի նպատակն ու խնդիրները: Այդ կետում կամ առհասարակ 12-րդ հոդվածում ոչ մի դրույթ չի նախատեսում, որ դրա կիրառումը պետք է սահմանափակվի կոմիտեի կողմից ենթադրվող ձևով: Թեև «անձի երկիր» հասկացությունն անկասկած կարող է ներառել քաղաքացիության երկիրը, սակայն քաղաքացիությունից բացի գոյություն ունեն նաև այլ գործոններ, որոնք կարող են սերտ և երկարաժամկետ կապեր հաստատել անձի և պետության միջև, որոնք կարող են քաղաքացիությունից ավելի ամուր լինել: Վերջապես, ամձը կարող է մի քանի երկրների քաղաքացի լինել և միաժամանակ իր տան և ընտանիքի տեսանկյունից թույլ կապեր ունենալ կամ իրական կապեր չունենալ մեկ կամ ավելի պետությունների հետ: «Իր երկիր» արտահայտությունը հիշեցնում է այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են երկարատև բնակության հաստատումը, անձնական և ընտանեկան սերտ կապերը և այդ կապերի շարունակական ընթացքը կամ էլ ընդհանրապես դրանց բացակայությունը: Այն դեպքում, երբ ամձը երկրի քաղաքացի չէ, ապա կապերը պետք է բավականին ամուր լինեն, որպեսզի հնարավորություն տան տվյալ պետությունը համարելու «իր երկիր»: Ամեն դեպքում մենք այն կարծիքին ենք, որ ցանկացած օտարերկրացի կարող է նշել, թե գոյություն ունեն պետության հետ հիմնավոր կապեր, որոնց առկայության պարագայում կարելի է պահանջել 12-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքի պաշտպանությունը:

¶ 7. Հեղինակն ապացուցելու համար, որ Կանադան իր երկիրն է, նշում է հետևյալ հանգամանքները. ինքը երեսուն տարուց ավելի ապրել է այդ երկրում, 7 տարեկան հասակից կրթություն է ստացել, ամուսնացել և ամուսնալուծվել է այդ երկրում: Իր երեխաները, մայրը և անդամալույծ եղբայրը շարունակում են բնակվել այդ երկրում: Հեղինակը կապեր չի ունեցել որևէ այլ երկրի հետ, բացի Միացյալ Թագավորության քաղաքացիությունից: Մի քանի տարի առաջ նրա կատարած իրավախախտման հանգամանքները շարադրված են 2.2 կետում: Այդ իրավախախտումների պատճառով պարզ չէ, թե հեղինակին երբևէ քաղաքացիության դիմում ներկայացնելու իրավունք կշնորհվի⁴¹, թե՞ ոչ: Նշված կապերը հիմնավորվում են այն փաստով, որ մասնակ հասակում հեղինակը և նրա ընտանիքը ներգաղթյալների կարգավիճակ են ստացել Կանադայում, և նա իրականում ընդգրկվել է Կանադայի հասարակության մեջ: Նա չի ծանաչում որևէ այլ երկիր: Ամեն դեպքում, կարծում ենք, հեղինակին հաջողվել է ապացուցել, որ Կանադան իր երկիրն է:

¶ 8. Արդյոք Կանադա մուտք գործելու իրավունքից հեղինակին գրկելու որոշումը կամայական⁴² բնույթ է ունեցել: Մեկ այլ համատեքստում կոմիտեն «կամայական» բառի նշանակությունը դիտում է որոշակի հանգամանքներով չհիմնավորված կամ դաշնագրի նպատակներին և խնդիրներին հակասող (17-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանություն):⁴³ Այդ մոտեցումը կիրառելի է նաև 12-րդ հոդվածի 4-րդ կետի համատեքստում: Քաղաքացիներին ար-

⁴¹ Տե՛ս [16.12], տե՛ս նաև թիվ 27 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 21 [12.27]:

տաքսելու մասին որոշումն այս իմաստով միայն սակավաթիվ դեպքերում կարող է հիմնավորված համարվել: Օտար-երկրացուն արտաքսելու որոշումը կարող է կամայական համարվել այն դեպքում, եթե նա անհիմն զրկվել է երկիր մուտք գործելու և դրա տարածքում մնալու իրավունքից՝ ի տարբերություն այն հանգամանքների, որոնց շնորհիվ տվյալ երկիրը վերածվում է նրանց երկրի:

¶ 9. Մասնակից պետությունը վկայակոչում է հեղինակի՝ իրավախախտում գործելու փաստը՝ նրան արտաքսելու որոշումը հիմնավորելու համար: Կասկածելի է՝ արդյոք միայն իրավախախտում գործելու փաստը հիմնավորողն է ամօին իր երկրից արտաքսելու մասին որոշումը, եթե պետությունն ի վիճակի չլինի ապացուցելու, որ նման միջոցը պայմանավորված է հասարակական կարգի պահպանման և ազգային անվտանգությունն ապահովելու նկատառումներով: Հեղինակի կատարած իրավախախտումներն ինքնին չեն արդարացնում նման եզրահանգումը: Ամեն դեպքում Կանադայի իշխանությունները հավանաբար չեն կարողանա ապացուցել, որ հեղինակի գործում տվյալ պատճառներով պարտադիր արտաքսում է նախատեսվում, քանի որ մեկ այլ համատեքստում նրանք պնդել են, որ կարելի էր հեղինակին կարճ ժամանակահատվածով մուտքի արտոնագիր տրամադրել, որպեսզի նա կարողանար այցելել իր ընտանիքին: Ավելին՝ քանի որ արտաքսման ընթացակարգերը ճիշտ չեն ընթացել, դրանք կարգավորելու համար առաջարկել են, որ հեղինակն ինքն ապացուցի «երկրի տարածք մուտք գործելու իր իրավունքը»: Այսպիսով, ապացուցելու պարտավորությունը ստանձնեց հեղինակը: Կարծում ենք, որ տվյալ դեպքում հեղինակին արտաքսելու որոշումը կամայական բնույթ ունի և հակասում է 12-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքներին:

[12.35] «ԿԱՆԵՊԱՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (CANEPA v CANADA, 558/93)

Այս գործի փաստերը շատ նման են Ստյուարտի գործին: Հեղինակը 5 տարեկան հասակում ընտանիքի հետ արտագաղթել է Կանադա և դատապարտվել է Իտալիա արտաքսվելու՝ թմրամիջոցների հետ կապված մի շարք հանցագործություններ կատարելու պատճառով: Նա երբեք չի օգտվել Կանադայի քաղաքացիություն ստանալու հնարավորությունից: Մեծամասնությունը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին և հայտարարել է.

¶ 11.3. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, որ Կանադայից նրա արտաքսումը խախտում է դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետը, ապա կոմիտեն հիշեցնում է, որ *Ստյուարտի* գործով ձևավորված նախադեպում այն կարծիքն է արտահայտել, որ պետության որևէ տարածք տվյալ պետության ներգաղթային օրենսդրությամբ մուտք գործող և այդ օրենքներին ենթարկվող անձը չի կարող այդ պետությունը համարել իր երկիրը, եթե չի ստացել այդ երկրի քաղաքացիությունը և շարունակում է մնալ իր ծագման երկրի քաղաքացին: Բացառություններ են լինում միայն սակավաթիվ դեպքերում, եթե, օրինակ, անհիմն պատճառներով խոչընդոտում են քաղաքացիության ձեռքբերումը: Նման որևէ հանգամանք երևան չի եկել կոմիտեի ուսումնասիրած ոչ նախորդ և ոչ էլ ներկա գործում: Հեղինակին չեն խոչընդոտել Կանադայի քաղաքացիություն ձեռք բերելու հարցում, նրան կամայականորեն չեն զրկել իր երկրի քաղաքացիությունից: Տվյալ հանգամանքներում կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետով հեղինակը հիմքեր չունի պնդելու, որ Կանադան իր երկիրն է:

Պրն Շայնին համանման կարծիք է արտահայտել, թեև թվում է, որ մեծամասնության համեմատ, նա ավելի մեծ ցանկություն է հայտնել այն հանգամանքները կանխատեսելու համար, որոնց դեպքում օտարերկրացուն կարելի է կրկին երկիր մուտք գործելու իրավունք վերապահել: Օրինակ՝ նա նշել է, որ «բնակության երկրի լեզվին տիրապետող, բայց իր երկրի *[դե յուրե]* պետության լեզուն չիմացող որևէ կույր կամ խուլ անձին երկրից արտաքսելու որոշումը կամայական կլինի»:

[12.36] Տիկնայք Էվաթը և Մեդինա Քուրոգան կրկին հակառակ կարծիք են հայտնել *Ստյուարտի* գործով իրենց որոշման վերաբերյալ: Տիկին Շանեն նույնպես հակառակ կարծիք է արտահայտել և, բացի այդ, կասկածի է տակ է առել մեծամասնության բերած փաստարկները.

Իմ կարծիքով՝ դաշնագրի 12-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառումը, անկախ ազգությունից և քաղաքացիությունից, չափազանց դյուրին լուծում է և չի համապատասխանում տեքստի բուն իմաստին, որում սահմանափակող բնույթ լինելու պարագայում կօգտագործվեին քաղաքացիությանը վերաբերող համապատասխան եզրույթներ, քանզի քաղաքացիությունը դյուրին սահմանվող իրավաբանական հասկացություն է: Ավելին՝ ոչ հստակ և, հետևաբար, ավելի ընդգրկուն եզրույթը կամայականորեն գործածելու փաստն ընդգծում է, որ դաշնագիրը մշակողները չեն ցանկացել կոմիտեի կողմից որոշված եղանակով սահմանափակել տեքստի կիրառման շրջանակները:

[12.37] Թիվ 27 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը հռչակում է, որ «այն անձինք, որոնց քաղաքացիության երկիրը միացվել կամ վերածվել է այլ պետական կազմավորման, և որոնք գրկվել են քաղաքացիությունից, կարող են իրացնել 12-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրենց իրավունքները [12.30]: Այս անձանց շարքը կարելի է դասել գաղութներում⁴² և մեկ այլ պետության կողմից գրավյալ տարածքներում բնակվող ժողովուրդներին պատկանող անձանց, օրինակ՝ արևմտյան ափին կամ Գազայի հատվածում բնակվող պաղեստինցիներին: Պաղեստինցիների՝ Իսրայելի տարածք վերադառնալու իրավունքի վերաբերյալ հակասական հարցի կապակցությամբ ՄԻԿ-ը պարզապես նշել է⁴³.

¶ 22. Ընդունելով անվտանգության ապահովման նկատառումներով տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը՝ կոմիտեն ափսոսանքով է անդրադառնում ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացումը շարունակաբար խոչընդոտող միջոցներին, որոնց ազդեցությունը հիմնականում տարածվում է Արևելյան Երուսաղեմի, Գազայի հատվածի և արևմտյան ափի տարածքում ճանապարհորդող պաղեստինցիների վրա, և որոնք անդրադարձել են պաղեստինցիների կյանքի բոլոր բնագավառների վրա: Կոմիտեի կարծիքով՝ այս փաստը 12-րդ հոդվածով ամրագրված իրավունքների լուրջ խախտումներ է բացահայտում: Կոմիտեն կոչ է անում Իսրայելին ճանաչելու վերոհիշյալ տարածքներում բնակվող անձանց՝ 12-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, այդ թվում և իրենց երկիր վերադառնալու իրավունքը:

Դժբախտաբար, պաղեստինցիների՝ «իրենց երկիր վերադառնալու» իրավունքի վերաբերյալ ՄԻԿ-ի մի տողով թվարկած պայմանները շատ անորոշ են: Կոմիտեն չի անդրադառնում այն կարևոր հարցին, թե 1948 թ. Իսրայելի ստեղծումից հետո երկրի տարածքը լքած պաղեստինցիները և նրանց հետնորդները վերադառնալու իրավունք ունե՞ն, թե՞ ոչ: Թերևս զարմանալի չէ, որ ՄԻԿ-ը քիչ է խոսում տվյալ հարցի շուրջ. դա կարելի է բացատրել այս առնչությամբ առաջացած վիճաբանության խիստ հուզական, քաղաքական և նույնիսկ բռնի բնույթով: ՄԻԿ-ի, ինչպես նաև շատ այլ միջազգային կազմակերպությունների որոշումները ենթակա են իրական քաղաքականությունից բխող քաղաքականության ազդեցությանը: Եվ, իսկապես, Իսրայելի վերաբերյալ 2003 թ. օգոստոսին լույս տեսած եզրափակիչ դիտարկումներում որևէ հարց չէր առնչվում «իրենց երկիր վերադառնալու իրավունքին»: ՄԻԿ-ի կայացրած վճռի համաձայն՝ Իսրայելի տարածք պաղեստինցիների մուտք գործելու իրավունքը պայմանավորված է վերոհիշյալ տարածքի հետ անձի ունեցած իրական կապի առկայությամբ և այդ անձին արտաքսելու վերաբերյալ ամեն մի որոշման հիմնավորմամբ:

Եզրակացություն

[12.38] ՄԻԿ-ը 12-րդ հոդվածին առնչվող համեմատաբար քիչ գործերով է որոշում կայացրել: 1999 թ. 12-րդ հոդվածի վերաբերյալ թիվ 27 Ընդհանուր մեկնաբանությունը շատ ողջունելի ձեռքբերում էր: Չնայած ազատ տեղաշարժվելու և երկրից մեկնելու իրավունքների սահմանափակման մեկնաբանությունները հակիրճ են ներկայացված, մասնակից պետություններին հաջողվել է տվյալ պայմաններում հիմնավորել այս իրավունքների սահմանափակումները, ինչպես օրինակ՝ «*Չելեպլին ընդդեմ Շվեդիայի*» (*Celepli v Sweden, 492/92*), «*Պելտոնենն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Peltonen v Finland, 492/92*) և «*Կարկերն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Karker v France, 833/98*) գործերում: 12-րդ հոդվածով ՄԻԿ-ի կայացրած ամենահակասական վճիռը վերաբերում էր 12-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված «երկիր մուտք գործելու» իրավունքին: «*Ստյուարտն ընդդեմ Կանադայի*» (*Stewart v Canada, 538/93*) գործում տեղ գտած, մեծամասնության կողմից ընդունելի «սեփական երկիր» եզրույթի մեկնաբանությունը ավելի խիստ է թվում, քան պետության տարածքում երկարաժամկետ բնակություն հաստատած օտարերկրացիներ եզրույթը: Բացի այդ, «*Թոալան ընդդեմ Նոր Զելանդիայի*» (*Toala v New Zealand, 675/95*) գործով կայացրած որոշումը հաստատում է, որ անձի և պետության կապը պետք է իսկապես ամուր լինի, որպեսզի տվյալ պետությունը համարվի անձի «բնակության երկիրը»: Բացառություն կազմող դեպքերում նույնիսկ քաղաքացիությունն ինքնին չի կարող նման ուժեղ կապ երաշխավորել:

⁴² Տե՛ս Նովակ , նաև վերը նշված 19. 220-1:

⁴³ Եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 93:

Դատաիրավական իրավունքներ արտաքսման դեմ. հոդված 13

- 13-րդ հոդվածով սահմանված իրավունքների շրջանակը [13.02]
- 13-րդ հոդվածով պաշտպանության իրավունք ունեցող օտարերկրացիներ [13.07]
- «Օրենքին» համապատասխան արտաքսում [13.08]
- Իրավասու մարմնի կողմից գործը քննելու իրավունք [13.10]
- Իրավասու մարմնի կողմից գործը վերանայելու իրավունք [13.13]
- Ներկայացուցչության իրավունքներ [13.15]
- 13-րդ հոդվածով սահմանված իրավունքների չեղյալ հայտարարումը
«պետական անվտանգության հրամայական նկատառումների» դեպքում [13.16]
- Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների
պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի համապատասխան դրույթներ [13.21]
- Եզրակացություն [13.24]

13-ՐԴ ՖՈԴՎԱԾ

Սույն դաշնագրի մասնակից որևէ պետության տարածքում օրինական գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն օրենքին համապատասխան կայացված որոշման համաձայն և, եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու, իրավասու մարմնի կամ նրա նշանակված անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու և այդ նպատակով այդ մարմնի, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք:

[13.01] 13-րդ հոդվածը մասնակից պետության տարածքում օրինական գտնվող օտարերկրացիներին տրամադրում է դատաիրավական իրավունքներ նրանց արտաքսումից պաշտպանելու համար: Նման օտարերկրացիների արտաքսումը պետք է համապատասխանի մասնակից պետության օրենսդրությանը: Այս օտարերկրացիները նաև ունեն արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու և իրենց գործը պետության իրավասու մարմնի կողմից վերանայելու իրավունք: «Վերանայման» այս իրավունքները կարող են չեղյալ համարվել, «եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները» դա պահանջեն:

13-րդ հոդվածով սահմանված իրավունքների շրջանակը

[13.02] 13-րդ հոդվածով արտաքսման նյութաիրավական ազատություն չի նախատեսվում: Ուստի 13-րդ հոդվածը օտարերկրացուն արտաքսումից չի պաշտպանում, քանի դեռ կան արտաքսումը վիճարկելու համար դատաիրավական երաշխիքներ: Դատաիրավական երաշխիքների պահպանումը հնարավորություն է տալիս կամայական չկիրառել մասնակից պետության՝ արտաքսման մասին նյութաիրավական օրենսդրությունը: Այդուհանդերձ հայտնի չէ՝ 13-րդ հոդվածով արգելվո՞ւմ է մասնակից պետության կողմից այնպիսի օրենքների ընդունումը և կիրառումը, որոնցով թույլատրվում է կամայական արտաքսումը: Օրինակ՝ 13-րդ հոդվածը կարող է չարգելել ռասայական խտրականություն դրսևորող արտաքսման մասին օրենքներ ընդունել, չնայած դրանով իսկ 13-րդ հոդվածով նախատեսված դատաիրավական երաշխիքները փաստորեն կարող են օգտակար չլինել այդ հիմքերի վրա արտաքսված օտարերկրացիների համար¹: ԲԲԻՄԴ-ի այլ դրույթներ սահմանափակում են մասնակից պետության կողմից արտաքսման

¹ Այնուամենայնիվ տե՛ս [13.04] և [13.06]:

մասին կամայական օրենքների ընդունումը: Օրինակ՝ 26-րդ հոդվածով արգելվում է արտաքսման մասին բացահայտ խտրական օրենքների ընդունումը: 7-րդ հոդվածով արգելվում է արտաքսումը մի պետության, որտեղ հետագայում արտաքսյալը կարող է խոչտանգումների ենթարկվել²: Որոշ հանգամանքներում 23-րդ և 24-րդ հոդվածներով կարող են արգելվել այն արտաքսումները, որոնք հանգեցնում են ընտանիքի մասնատմանը³: 12-րդ հոդվածի 4-րդ կետով արգելվում է այն օտարերկրացիների արտաքսումը, ովքեր կարող են պնդել, որ արտաքսող պետությունն «իրենց երկիրն» է⁴:

[13.03]

ԹԻՎ 15 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. 13-րդ հոդվածը կիրառելի է այն ընթացակարգերում, որոնք ուղղված են օտարերկրացու պարտադիր մեկնելուն՝ անկախ այն հանգամանքից՝ դա ազգային օրենսդրության մեջ սահմանված է որպես արտաքսում, թե՞ ոչ: Եթե նման ընթացակարգերը ենթադրում են ձերբակալում, ապա դաշնագրով նախատեսված երաշխիքները ազատությունից զրկելու վերաբերյալ (9-րդ և 10-րդ հոդվածներ) նույնպես կարող են կիրառվել: Եթե ձերբակալումն իրականացվում է հատուկ արտաքսման նպատակով, ապա կարող են կիրառվել ազգային և միջազգային իրավունքի այլ դրույթներ: Արտաքսված օտարերկրացուն սովորաբար պետք է թույլատրվի մեկնել ուզած երկիրը, որը կհամաձայնի նրան ընդունել:

¶ 10. 13-րդ հոդվածով ուղղակի կարգավորվում է միայն արտաքսման ընթացակարգը, ոչ թե դրա էական հիմունքները: Այդուհանդերձ թույլատրելով միայն «օրենքին համապատասխան կայացված որոշման» համաձայն իրականացված ընթացակարգերը՝ այն հստակ միտված է կամայական արտաքսումները կանխելուն: Մյուս կողմից՝ այն յուրաքանչյուր օտարերկրացու իրավունք է ընձեռնում հավակնելու իր գործով որոշման, հետևաբար, 13-րդ հոդվածը չի բավարարվի հավաքական կամ զանգվածային արտաքսումներ նախատեսող օրենքներով կամ որոշումներով: Կոմիտեի կարծիքով՝ 13-րդ հոդվածի նման ընկալումը հաստատվում է արտաքսման դեմ փաստարկների ներկայացման և իրավասու մարմնի կամ նրա նշանակած անձի կողմից որոշումը վերանայելու մասին հետագա դրույթներով:

[13.04] Տե՛ս 13-րդ հոդվածին հակասող զանգվածային արտաքսումների վերաբերյալ 10-րդ պարբերության մեջբերումը⁵: ՄԻԿ-ն այստեղ ընդունում է, որ զանգվածային արտաքսումները չեն կարող բավարարել 13-րդ հոդվածի դատաիրավական պահանջները, որոնցով քննվում է յուրաքանչյուր հնարավոր արտաքսյալի գործը: Սա ցույց է տալիս, թե ինչպես են դատաիրավական երաշխիքները գոնե ինչ-որ չափով էական պատասխանատվության տարր ներմուծում: Չանգվածային արտաքսումների արգելումը թերևս թույլ չի տալիս պետությանը մարդկանց արտաքսել այնպիսի անփոփոխ հատկանիշի հիման վրա, ինչպիսին է ռասան:

[13.05] Տե՛ս «արտաքսման» մասին ընդհանուր մեկնաբանության 9-րդ կետի մեջբերումը [13.03]: ՄԻԿ-ի մեծամասնությունը «Գիրին ընդդեմ Դոմինիկյան Հանրապետության» (*Giry v Dominican Republic, 193/85*) և «Քինդլերն ընդդեմ Կանադայի» (*Kindler v Canada, 470/91*) գործերով հաստատել է, որ 13-րդ հոդվածով սահմանված իրավունքները կիրառելի են արտաքսման դեպքում: Օրինակ՝ *Քինդլերի* գործով մեծամասնությունը նշել է հետևյալը⁶.

¶ 6.6. Կոմիտեն նաև եզրակացրեց, որ նախապատրաստական աշխատանքներից ակնհայտ է, որ դաշնագրի 13-րդ հոդվածը միտված չէր նսեմացնելու արտաքսման բնականոն աշխատանքները: Այդուհանդերձ անկախ այն հանգամանքից՝ օտարերկրացին երկրի տարածքից վտարվո՞ւմ է, թե՞ արտաքսվում, կիրառելի են ինչպես 13-րդ հոդվածի երաշխիքները, այնպես էլ՝ ամբողջ դաշնագրի պահանջները:

² Տե՛ս [9.67]:

³ Տե՛ս, օրինակ՝ «Ուինատան ընդդեմ Ավստրալիայի» (*Winata v Australia, 930/00*) գործը [20.21]:

⁴ Տե՛ս [12.27]:

⁵ Տե՛ս նաև եզրափակիչ դիտարկումներ Դոմինիկյան Հանրապետության վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/DOM, պարբ. 16 և եզրափակիչ դիտարկումներ Էստոնիայի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/77/EST, պարբ. 13, որում առանձին նշվում է ապաստանի համար ներկայացված յուրաքանչյուր դիմումի անհատական քննության անհրաժեշտությունը:

⁶ Քինդլերի գործում պրն Ազիլյար Ուրբինան այս կետի մասով տարակարծություն է ունեցել:

[13.06]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 17. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ 13-րդ հոդվածով նախատեսված արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու և գործը վերանայելու իրավունքը հավասարապես ապահովվի նաև օտարերկրացի կանանց համար: Այս առումով նրանք պետք է իրավասու լինեն ներկայացնել փաստարկներ՝ հիմք ընդունելով դաշնագրի զենդերային խախտումները, ինչպես օրինակ՝ վերոնշյալ 10-րդ և 11-րդ կետերի խախտումները [օր.] բռնաբարություն, հարկադիր ամլացում կամ օժիտի հետ կապված սպանություններ]⁷:

Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը նշում է, որ 13-րդ հոդվածով նախատեսված երաշխիքն ունի էական տարր, քանի որ զենդերային խախտումները պետք է արտաքսումը կանխելու համար ընդունելի պատճառ լինեն: Որպես այլընտրանք՝ նման իրավունքների աղբյուր կարող են ծառայել ՔՔԻՄԴ-ի այլ դրույթներ, ինչպես օրինակ՝ 7-րդ հոդվածը⁸:

13-րդ հոդվածով պաշտպանության իրավունք ունեցող օտարերկրացիներ

[13.07]

ԹԻՎ 15 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. 13-րդ հոդվածի տվյալ իրավունքները պաշտպանում են միայն այն օտարերկրացիներին, ովքեր օրինական են գտնվում մասնակից պետության տարածքում: Սա նշանակում է, որ այդ պաշտպանության շրջանակները որոշելիս հարկ է հաշվի առնել երկիր մուտք գործելու և այնտեղ մնալու գործընթացները կարգավորող ազգային օրենսդրությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այս դրույթները կիրառելի չեն մասնավորապես օրենքով կամ թույլտվությամբ սահմանված ժամկետից ավելի մնացած կամ ապօրինի ճանապարհով երկիր մուտք գործած օտարերկրացիների դեպքում: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ օտարերկրացու՝ երկիր մուտք գործելու կամ մնալու օրինականությունը վիճելի է, այս հարցի շուրջ ցանկացած որոշում, որը հանգեցնում է նրա արտաքսմանը կամ վտարմանը, պետք է հաշվի առնի 13-րդ հոդվածը: Մասնակից պետության իրավասու մարմինները պարտավոր են ազգային օրենսդրությունը կիրառել և մեկնաբանել բարեխղճորեն և իրենց իրավասությունների շրջանակներում՝ միաժամանակ բավարարելով դաշնագրով սահմանված պահանջները, ինչպես օրինակ՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը (26-րդ հոդված):

13-րդ հոդվածը թերևս այնքան էլ օգտակար չէ այն բազում ապաստան հայցողների համար, ովքեր ստիպված են անհապաղ լքել իրենց հայրենիքը և ապօրինի ճանապարհով հատել պետության սահմանները: Երկրից սեփական վտարումը կանխելու համար նման ապաստան հայցողները կարող են փորձել կիրառել 7-րդ հոդվածը: 7-րդ հոդվածով արգելվում է անձին արտաքսել այնպիսի պետություն, որտեղ նա կարող է ենթարկվել խոշտանգումների կամ անմարդկային և կամ նվաստացնող վերաբերմունքի⁹:

«Օրենքին» համապատասխան արտաքսում[13.08] **«ՄԱՐՈՒԳԻԴՈՒՆ ընդդեմ ՇՎԵԴԻԱՅԻ» (MAROUFIDOU v SWEDEN, 58/79)**

Փաստերը բերված են ստորև.

¶ 8. Կոմիտեն, սույն դիմումը ուսումնասիրելով կամքնոտի արձանագրության 5-րդ հոդվածի 1-ին կետով կողմերի ներկայացրած ողջ տեղեկատվության լույսի ներքո, որոշում է հիմնվել մասնակից պետության հաստատած հետևյալ փաստերի վրա. Հունաստանի քաղաքացի Աննա Մարուֆիդուն, ով եկել էր Շվեդիա ապաստան գտնելու նպատակով, 1976 թ. ստացել է բնակության թույլտվություն: Հետագայում՝ 1977 թ. ապրիլի 4-ին, նա ձերբակալվել է նախկինում Շվեդիայի կառավարության անդամին առևանգելու նպատակով ահաբեկչական խմբի նախագծին մասնակցելու կասկածանքով: Սույն հանգամանքներում Ներգաղթման կենտրոնական տեսչությունը 1977 թ. ապրիլի 28-ին հարց է բարձրացրել Շվեդիայից նրա արտաքսման մասին՝ նշելով, որ բավարար հիմքեր կան հավատալու, որ նա կամ պատկանում է ահաբեկչական կազմակերպության խմբի, կամ աշխատել է նրանց համար, և վտանգ կա, որ Շվե-

⁷ Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն, 10-րդ կետը [8.49] պարբերությունում է, իսկ 11-րդ կետը՝ [9.44]-ում:

⁸ Տես [9.44]:

⁹ Տես [9.67]:

դիայում նա կմասնակցի «Օտարերկրացիների մասին» օրենքի 20-րդ և 29-րդ բաժիններում հիշատակված ահաբեկչական գործողության իրականացմանը: Օրենքի համաձայն՝ իրավաբան է նշանակվել դատավարությունում նրան ներկայացնելու համար: 1977 թ. մայիսի 5-ին Շվեդիայի կառավարությունը որոշել է վտարել նրան երկրից, և որոշումն անմիջապես իրականացվել է:

¶ 9.2. Չի վիճարկվում այն հանգամանքը, որ 1977 թ. ապրիլին Աննա Մարուֆիդուի արտաքսման հարցի բարձրացման պահին նա եղել է Շվեդիայի օրինական բնակիչ: Սույն գործով չի վիճարկվում նաև այն, որ մասնակից պետությունը պատշաճ կերպով պահպանել է 13-րդ հոդվածով սահմանված դատաիրավական երաշխիքները: Վիճարկման ենթակա միակ հարցն այն է, թե որքանով է արտաքսումն իրականացվել «օրենքին համապատասխան»:

¶ 9.3. Այս իմաստով «օրենքի» մեջբերումը վերաբերում է տվյալ մասնակից պետության ազգային օրենսդրությանը, սույն գործով՝ Շվեդիայի օրենսդրության, թեև, անշուշտ, ազգային օրենսդրության համապատասխան դրույթներն ինքնին պետք է համապատասխանեն դաշնագրի դրույթներին: 13-րդ հոդվածով պահանջվում է բավարարել օրենսդրության ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատաիրավական պահանջները:

¶ 10.1. Աննա Մարուֆիդուն պնդում է, որ իրեն երկրից վտարելու որոշմամբ խախտվել է դաշնագրի 13-րդ հոդվածը, քանի որ այն «օրենքին համապատասխան» չի իրականացվել: Իր ներկայացրած փաստարկներում նա նշում է, որ դրա հիմքում ընկած էր «Օտարերկրացիների մասին» Շվեդիայի օրենքի սխալ մեկնաբանությունը: Կոմիտեն կարծում է, որ ազգային օրենսդրության մեկնաբանությունն իրապես տվյալ մասնակից պետության դատարանների և իշխանությունների գործն է: Կոմիտեի իրավասությունը կամ գործառույթը չէ գնահատել, թե համապատասխան մասնակից պետության իրավասու մարմինները կամ ընտիր արձանագրության շրջանակներում ճիշտ են մեկնաբանել և կիրառել ազգային օրենսդրությունը իրենց ներկայացված գործում, քանի դեռ չի հաստատվել, որ նրանք այն բարեխղճորեն չեն մեկնաբանել կամ կիրառել, կամ տեղի է ունեցել իշխանության ակնհայտ չարաշահում:

¶ 10.2. Ելնելով անձի ներկայացրած գրավոր տեղեկություններից, ինչպես նաև տվյալ մասնակից պետության բացատրություններից և դիտարկումներից՝ կոմիտեն բավարարված է, որ Աննա Մարուֆիդուն երկրից վտարելու մասին որոշումը կայացնելիս Շվեդիայի իշխանությունները բարեխղճորեն և ողջամտորեն են մեկնաբանել և կիրառել Շվեդիայի օրենսդրության համապատասխան դրույթները, այսինքն՝ որոշումը կայացվել է «օրենքին համապատասխան»՝ դաշնագրի 13-րդ հոդվածով նախատեսված կարգով:

¶ 11. Հետևաբար Մարդու իրավունքների կոմիտեն, գործելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամ ընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, այն կարծիքին է, որ վերոնշյալ փաստերով դաշնագրի և, մասնավորապես, 13-րդ հոդվածի որևէ խախտում չի բացահայտվում:

Մարուֆիդուի գործով որոշումը վեր է հանում այն իրողությունը, որ դատաիրավական հստակ թերությունների բացակայության դեպքում ՄԻԿ-ն առհասարակ պատրաստակամ չէ բեկանելու ազգային դատարանի որոշումները¹⁰:

[13.09] Որոշումը նաև ամրապնդում է 13-րդ հոդվածի դատաիրավական բնույթը: Քանի որ «օրենքը» մեկնաբանվում է որպես պետության ազգային օրենսդրություն, այն, կարծես չի խանգարում պետությանն ընդունել թերի նյութաիրավական օրենսդրություն¹¹:

Իրավասու մարմնի կողմից գործը քննելու իրավունք

[13.10] 13-րդ հոդվածը չի հստակեցնում, որ հնարավոր արտաքսյալը դատական մարմնի կողմից իր գործի քննության իրավունք ունի: Պետությունների փորձը ցույց է տալիս, որ ներգաղթի բողոքարկման հետ կապված հարցերը քննելու համար հաճախ օգտագործվում են վարչական ընթացակարգեր¹²: Ավելի լին՝ «*Մարուֆիդուն ընդդեմ Շվեդիայի*» (*Maroufidou v Sweden*, 58/79) գործով արտաքսման կարգադրությամբ

¹⁰ Այս առումով տես նաև [1.47] և [14.51]:

¹¹ 13-րդ հոդվածի շրջանակներում ՄԻԿ-ի «օրենքի» մեկնաբանությունը կարելի է համեմատել ՔՔԻՄԴ-ի այլ երաշխիքների շրջանակներում ավելի ուշ գործերով «օրենքի» և «օրինական» հասկացությունների մեկնաբանությունների հետ: Տես [11.59-11.65] և [16.08-16.11]:

¹² Մի շարք պետություններում ընդունված ներգաղթի մասին օրենքի շուրջ ընդհանուր պատկերացում կազմելու համար տես C. Avery, 'Refugee Status Decision-Making: The System of Ten Countries' (1983) 19 *Stanford Journal of International Law* 235: Տես նաև D. Campbell and J. Fisher (eds), *International Immigration and Nationality Law* (loose-leaf service) (Kluwer Law International, The Hague, 1999):

յան վարչական «վերանայումն» իրականացվել է 13-րդ հոդվածը բավարարելու նպատակով: Արտաքսման կարգադրության դատական քննման յուրաքանչյուր իրավունք պետք է թիվ 14-րդ, ոչ թե 13-րդ հոդվածից: Այս առումով հարկ է նշել, որ ՄԻԿ-ը հստակ չի որոշել՝ «Վ.Մ.Ռ.Բ.-ն ընդդեմ Կանադայի» (*V.M.R.B. v Canada, 236/87*) գործով «ներգադրի մասին դատաքննությունները և արտաքսման գործողությունները» կարող են համարվել «քաղաքացիական հայց» 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, թե՞ ոչ¹³:

[13.11]

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

¶ 10. Օտարերկրացուն պետք է տրամադրվեն բոլոր լծակներն արտաքսման դեմ իր իրավական պաշտպանության համար, որպեսզի գործի բոլոր հանգամանքներում ապահովվի իր իրավունքի արդյունավետությունը: 13-րդ հոդվածի՝ արտաքսման դեմ բողոքարկման և իրավասու մարմնի կողմից գործը վերանայելու իրավասության վերաբերյալ սկզբունքներից կարելի է շեղվել միայն այն ժամանակ, երբ այդ են պահանջում «ազգային անվտանգության հրամայական նկատառումները»: 13-րդ հոդվածը կիրառելիս չպետք է խտրականություն դրսևորվի օտարերկրացիների տարբեր կարգերի նկատմամբ:

10-րդ կետի վերջին նախադասությունը կարող է կրկին վկայել, որ 13-րդ հոդվածով արգելվում է արտաքսման մասին էապես խտրական օրենքների ընդունումը: Այդուհանդերձ, նախադասությունը կարող է պարզապես հաստատել, որ 13-րդ հոդվածով սահմանված դատաիրավական իրավունքները չեն կարող իրականացվել խտրականության դրսևորմամբ:

[13.12] «ՀԱՄԵԼՆ ընդդեմ ՄԱԴԱԳԱՍԿԱՐԻ» (*HAMMEL v MADAGASCAR, 155/83*)

Սույն գործով հեղինակը երկրից իր արտաքսման մասին տեղեկացվել է ընդամենը երկու ժամ առաջ:

¶ 18.2. Պահակախումբը հեղինակին ուղեկցում է տուն, որտեղ նա երկու ժամվա ընթացքում պետք է հավաքեր իր իրերը: Այդ նույն երեկո նա արտաքսվում է Ֆրանսիա: Նրան ոչ մեղադրանք է ներկայացվել, ոչ էլ որևէ մեղադրանքով դատարան են կանչել. արտաքսվելուց առաջ նրան հնարավորություն չի ընձեռվել վիճարկելու արտաքսման կարգադրությունը:

Համելի արտաքսման որոշումը վերանայվել է և պահպանվել իր արտաքսումից հետո չորս տարվա ընթացքում: ՄԻԿ-ը հաստատել է, որ խախտվել է 13-րդ հոդվածը այն առումով, որ Համելին «չի թույլատրվել իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնել և գործը հանձնել իրավասու մարմիններին ողջամիտ ժամկետներում վերանայելու համար»¹⁴: Որոշումը հստակ չի պարզաբանում՝ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունը կարող է ի հայտ գալ արտաքսումից *հետո* «ողջամիտ ժամկետներում», թե՞ ոչ: Ի վերջո, հնարավոր է, որ արտաքսյալն արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնի արտասահմանից: Այդուհանդերձ թվում է, որ գործի՝ անձի բացակայությամբ իրականացված վերանայումները չեն բավարարում արտաքսման դեմ իրավական պաշտպանության համար «բոլոր լծակները» հնարավոր արտաքսյալներին տրամադրելու անհրաժեշտության վերաբերյալ պահանջը՝ թիվ 15 Ընդհանուր մեկնաբանության 10-րդ կետին համապատասխան [13.11]:

Իրավասու մարմնի կողմից գործը վերանայելու իրավունք

[13.13] Թիվ 15 Ընդհանուր մեկնաբանության 10-րդ պարբերությունը [13.11] վերաբերում է հնարավոր արտաքսյալի «բողոքարկման» և «վերանայման» իրավունքներին: Այնուամենայնիվ պարզ է, որ բողոքարկման և վերանայման այս գործընթացը վերաբերում է օտարերկրացու՝ արտաքսման դեմ փաստարկների ուսումնասիրությանը կամ այն հարցին, թե այդ բառերը վերաբերո՞ւմ են այն վերանայմանը,

¹³ Տես [14.07], ինչպես նաև նախորդ մեկնաբանությունը:

¹⁴ 20-րդ պարբ.:

որը *հաջորդել է* այդ փաստարկները հաշվի առած սկզբնական որոշմանը¹⁵: Հնարավոր է, որ օտարերկրացու վերանայման իրավունքը պարզապես նշանակում է արտաքսման մասին սկզբնական որոշման վերանայում, որը գուցե կայացվել է՝ օտարերկրացուն հակափաստարկներ ներկայացնելու հնարավորություն չընձեռելով:

[13.14] «Մարուֆիդու ընդդեմ Շվեդիայի» (*Maroufidou v Sweden, 58/79*) գործով հեղինակին թույլ է տրվել փաստարկներ ներկայացնել իրեն առաջարկված արտաքսման դեմ: Այդուհանդերձ նրան արտաքսել են հենց առաջին ատյանի դատարանում արտաքսման հաստատման օրը: Այս սկզբնական որոշումը նա բողոքարկել է անօրինական ճանապարհով Շվեդիա վերադառնալուց *հետո* միայն: Այնուամենայնիվ ՄԻԿ-ը որոշել է, որ մասնակից պետությունը միանգամայն ապահովել է 13-րդ հոդվածով նախատեսված դատաիրավական երաշխիքները [13.08]: Ուստի հեղինակի երկրորդ վերանայման իրավունքը, առկայության դեպքում, ըստ երևույթին կարող է կիրառվել արտաքսումից հետո:

Ներկայացուցչության իրավունքներ

[13.15] Դանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է¹⁶.

¶ 17. Կոմիտեն նշում է, որ ապաստան հայցողներն իրավաբանական աջակցություն ստանալու իրավասություն ունեն: Մասնակից պետությունը պետք է տեղեկություն տա դիմումի ներկայացման կարգի փուլերի մասին, որոնց արդյունքում իրավաբանական աջակցություն է տրամադրվում, ինչպես նաև այն մասին, թե այն բոլոր փուլերում անվճար է դրա հնարավորությունը չունեցող անձանց համար (13-րդ հոդված):

13-րդ հոդվածով սահմանված իրավունքների չեղյալ հայտարարումը «պետական անվտանգության հրամայական նկատառումների» դեպքում

[13.16] 13-րդ հոդվածով հստակ թույլատրվում է չեղյալ հայտարարել «վերանայման» պահանջներն այն դեպքում, երբ «ազգային անվտանգության նկատառումները» ստիպում են դրանք չբավարարել: Ազգային անվտանգության նկատառումներով իրականացվող արտաքսումները, միևնույն է, պետք է համապատասխանեն մասնակից պետության ազգային օրենսդրությանը:

[13.17] «Վ.Մ.Ռ.Բ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ (*V.M.R.B. v CANADA, 236/87*)

Սույն գործով ՄԻԿ-ը որոշեց, որ արտաքսված հեղինակը Կանադայի տարածքում գտնվել է անօրինական ճանապարհով ուստի 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունք չունի: Կոմիտեն նաև եզրակացրեց, որ 13-րդ հոդվածն ամեն դեպքում բավարարվել է: Այդուհանդերձ առավել ուշագրավ են հետևյալ մեկնաբանությունները.

¶ 6.3. Ավելին՝ մասնակից պետությունը բացատրել է նրան արտաքսելու գործողություններում ազգային անվտանգության նկատառումների մասին: Կոմիտեն չէ, որ պետք է փորձաստուգի պետության՝ օտարերկրացու անվտանգության գնահատականը: Այս արտահայտությունը բառացիորեն կրկնվել է «Ջ.Ռ.Կ-ն ընդդեմ Կոստա Ռիկայի» (*J.R.C. v Costa Rica, 296/88*) գործում¹⁷:

[13.18] Առաջին հայացքից թվում է, որ Վ.Մ.Ռ.Բ.-ի գործով մասնակից պետության՝ օտարերկրացիների անվտանգության գնահատականի մասին հայտարարությունը նման պնդումները ՔՔԻՄԴ-ի տեսանկյունից

¹⁵ «Թրունգն ընդդեմ Կանադայի» (*Truong v Canada, 743/97*) գործով ՄԻԿ-ը խուսափել է դիրքորոշում հայտնել այն հարցի շուրջ, թե արդյոք 13-րդ հոդվածը երաշխավորում է հետագա բողոքարկման իրավունք (պարբ. 7.6): M. Nowak, UN Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary (N.P. Engel, Kehl, 1993), պնդում է, որ 13-րդ հոդվածով ներմուծվում է անհապաղ իրավունք հաջորդ բողոքարկման մեջ, էջ 229:

¹⁶ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/DNK, տե՛ս նաև եզրափակիչ դիտարկումներ Միացյալ Թագավորության վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 55, կետ 16:

¹⁷Պարբ. 8.4:

չի հիմնավորում: Այդ դեպքում դա կարող է խիստ նսեմացնել 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը: Այն հնարավորություն է տալիս մասնակից պետություններին 13-րդ հոդվածի խախտումների մասին հայտարարությունները պաշտպանել ազգային անվտանգության մասին կեղծ պնդումներով, քանզի նրանք հավատացած են, որ ՄԻԿ-ը չի ուսումնասիրելու այդ պնդումների հիմքերը: Ավելին՝ այն նսեմացնում է «հրամայական» բառի այն իմաստը, որ մասնակից պետությունները պարտավոր են համոզիչ փաստեր ներկայացնել ազգային անվտանգության սպառնալիքների վերաբերյալ¹⁸: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ ինչպես Վ.Մ.Ռ.Բ-ի, այնպես էլ Ջ.Ռ.Կ-ի գործով մասնակից պետությունները ՄԻԿ-ին ներկայացրել են ազգային անվտանգության իրենց գնահատականների որոշ հիմքեր: Պետությունները չեն կարող «ազգային անվտանգության» մասին պնդումներ անել ՔՔԻՄԴ-ի իրավունքների սահմանափակումն արդարացնելու համար՝ չնշելով այդ պնդումը հիմնավորող որևէ պատճառ¹⁹:

[13.19] Վ.Մ.Ռ.Բ-ի գործով հայտարարությունը վառ օրինակ է այն երկրներանքի, որն առկա է մարդու իրավունքի վերաբերյալ ազգային անվտանգության բացառություններում: Ազգային անվտանգությունը հաճախ գործադիր կառավարության ազգային մարմնի կողմից գնահատվում է նվազագույն դատական քննման պայմաններում²⁰: Եթե գործադիր իշխանությունները պատրաստ չեն նույնիսկ սեփական դատական իշխանության առջև բացահայտել ազգային անվտանգության որոշումների հիմքում ընկած փաստերը, ապա խիստ անհավանական է, որ նման փաստեր կբացահայտեն ՄԻԿ-ի նման միջազգային մարմնի մոտ:

[13.20]

«ԳԻՐԻՆ ընդդեմ ԴՈՄԻՆԻԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(*GIRY v DOMINICAN REPUBLIC, 193/85*)

Հեղինակը ներկայացրել է հետևյալ փաստերը և պնդել, ի թիվս այլոց, որ դրանք հանգեցրել են 13-րդ հոդվածի խախտման.

¶ 3.1. Ըստ հեղինակի՝ 1985 թ. փետրվարի 2-ին ինքը ժամանում է Դոմինիկյան Հանրապետություն, երկու օր մնում այնտեղ և հետո՝ փետրվարի 4-ին, գնում օդանավակայան՝ դեպի Սուրբ Բարդուղիմեոս կղզի տոմս գնելու և երկրից մեկնելու նպատակով: Դոմինիկյան Հանրապետության ոստիկանությունը կամ մաքսային ծառայությունը ներկայացնող երկու համազգեստով գործակալ նրան տանում են օդանավակայանում գտնվող ոստիկանության կետ, որտեղ նա ենթարկվում է մանրակրկիտ խուզարկության: Երկու ժամ քառասուն րոպե հետո հետմանուղեով նրան դուրս են բերում ուղիղ թռիչքուղի և ստիպում նստել «Արևելյան ավիաուղիների» Պուերտո Ռիկո մեկնող օդանավը: Պուերտո Ռիկո ժամանելուն պես նրան ձերբակալում են և մեղադրանք ներկայացնում դավադրության և մաքսանենգ ճանապարհով Միացյալ Նահանգներ թմրամիջոցներ ներմուծելու համար:

¶ 3.2. Հեղինակին դատում են Պուերտո Ռիկոյի Սան Խուան քաղաքում գտնվող Միացյալ Նահանգների տարածքային դատարանում և մեղադրում Միացյալ Նահանգներ կոկաին ներմուծելու նպատակով դավադրությանը մասնակցելու և այն կատարելու համար հաղորդակցության միջոցից՝ հեռախոսից օգտվելու համար:

¶ 3.3. 1986 թ. ապրիլի 30-ին նրան դատապարտում են 28 տարվա ազատազրկման և ներկայացնում 250 000 ԱՄՆ դոլարի տուգանք: Այժմ նա իր պատիժն է կրում Նյու Յորք Յորք մահանգի Ռայ Բրուք քաղաքում գտնվող ուղղիչ հաստատությունում:

Մասնակից պետությունը չի վիճարկել փաստերի հեղինակի վարկածը: 13-րդ հոդվածի մասին պնդումները պետությունը պաշտպանել է հետևյալ կերպ.

¶ 4.3. Դաշնագրի 13-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ մասնակից պետությունը պնդում է, որ խախտում չի եղել, և մեջբերում է դրույթի այն հատվածը, որով ազգային անվտանգության հրամայական նկատառումներով թույլատրվում է արագ արտաքսումներ իրականացնել: Նշվում է, որ պրն Գիրին սպառնում է Դոմինիկյան Հան-

¹⁸ Տես S. Jagerskiold, 'Freedom of Movement', in L. Henkin (ed), *The International Bill of Rights: The Covenant on Civil and Political Rights* (Columbia University Press, New York, 1981), 184.

¹⁹ Ազգային անվտանգության նկատառումներն ինքնին հիմնավորվում են ՔՔԻՄԴ-ի տեսանկյունից, ինչը երևում է 19-րդ հոդվածի մասով ՄԻԿ-ի որոշումներից [18.35-18.39]:

²⁰ Տես, օր.՝ *Council of Civil Service Unions v Minister for Civil Service* [1985] AC 374 (House of Lords) և առհասարակ H. P. Lee, P. Hanks, and V. Morabito, *In the Name of National Security* (Law Book Company, Sydney, 1995), գլուխ 7:

րապետության ազգային անվտանգությանը, որը, որպես անկախ պետություն, իրավասու է անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու ազգային անվտանգությունը, հասարակական կարգը, և հասարակության առողջությունը և բարոյականությունը պաշտպանելու համար:

¶ 4.4. Մասնակից պետությունը նաև պնդում է, որ իր գործողությունները պետք է ընդունել որպես միջազգային գործողություն՝ ուղղված թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող անձանց ձերբակալմանը, որը պետք է դիտվի որպես համընդհանուր իրավասություններ պահանջող համընդհանուր հանցագործություն:

13-րդ հոդվածի կապակցությամբ ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշում կայացրեց հոգուտ հեղինակի²¹.

¶ 5.5. Կոմիտեն նշում է, որ թեև մասնակից պետությունը ազգային անվտանգության նկատառումներով բացառության կարգով որոշում է կայացրել [պրն Գիրիի] ստիպել ԱՄՆ մեկնող ինքնաթիռ նստել՝ նրան ԱՄՆ-ի ընդդատությանը հանձնելու համար, սակայն հեղինակն ինքը մտադրվել էր կամավոր Դոմինիկյան Հանրապետությունից մեկնել այլ պետություն: Չնայած բազմաթիվ պահանջներին՝ մասնակից պետությունը չի ներկայացրել Դոմինիկյան Հանրապետության տարածքից հեղինակին հեռացնելու մասին որոշումը կամ չի ապացուցել, որ այդ որոշումը կայացվել է «օրենքին համապատասխան», ինչպես պահանջվում է դաշնագրի 13-րդ հոդվածով: Ավելին՝ ակնհայտ է, որ արտաքսման հանգամանքներում հեղինակին հնարավորություն չի ընձեռվելու իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնել կամ գործը հանձնել իրավասու մարմնի վերանայմանը: Պրն Գիրիի գործի հատուկ հանգամանքներում 13-րդ հոդվածի դրույթի խախտման մասին որոշում կայացնելիս կոմիտեն շեշտում է, որ պետությունները լիովին իրավասու են իրենց տարածքը վճռականորեն պաշտպանելու թմրամիջոցների առևտրի սպառնալիքից՝ հանցագործների հանձնման համաձայնագրեր կնքելով այլ պետությունների հետ: Սակայն նման համաձայնագրերով իրականացվող գործողությունները պետք է համապատասխանեն դաշնագրի 13-րդ հոդվածին, ինչն իրականում կապահովվեր, եթե սույն գործով կիրառված լիներ Դոմինիկյան Հանրապետության համապատասխան օրենքը:

Գիրիի գործը թերևս ցույց է տալիս, որ սույն գործով ՄԻԿ-ն ավելի վճռական մոտեցում է ցուցաբերում 13-րդ հոդվածով ներկայացվող ազգային անվտանգության մասին պնդումների վերահսկողությանը, քան Վ.Մ.Ռ.Բ-ի գործով: Այնուամենայնիվ, Գիրիի գործի փաստերն անշուշտ վկայում են, որ ազգային անվտանգության հրամայական նկատառումներով հեղինակի արտաքսման մասին պնդումն օբյեկտիվորեն կեղծ է: Ավելին՝ ազգային իշխանությունը ազգային անվտանգության մասին ոչ մի «օրենք» չի մեջբերել:

Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի համապատասխան դրույթներ

[13.21] *22-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝ ԲՈԼՈՐ ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱ*

1. Միգրանտ աշխատողները և նրանց ընտանիքների անդամները չպետք է ենթարկվեն հավաքական արտաքսման միջոցների: Արտաքսման յուրաքանչյուր գործ պետք է ուսումնասիրվի և որոշվի առանձին:
2. Միգրանտ աշխատողները և նրանց ընտանիքների անդամները մասնակից պետության տարածքից կարող են արտաքսվել միայն իրավասու մարմնի՝ օրենքին համապատասխան կայացրած որոշման համաձայն:
3. Որոշումը պետք է նրանց ներկայացվի իրենց հասկանալի լեզվով: Այն դեպքում, երբ դա օրենքով չի նախատեսված, նրանց խնդրանքով որոշումը պետք է ներկայացվի գրավոր, իսկ ազգային անվտանգության բացառիկ հանգամանքներում պետք է նշվեն նաև այդ որոշման հիմքում ընկած պատճառները: Տվյալ անձինք պետք է տեղեկացվեն այս իրավունքների մասին նախքան որոշումն ընդունելը կամ ամենաուշը՝ որոշումն ընդունելու պահին:
4. Բացառությամբ դատական իշխանության ներկայացրած վերջնական որոշման դեպքերի, տվյալ անձն ունի իրեն չարտաքսելու մասին փաստարկ ներկայացնելու և իր գործը իրավասու մարմնի վերանայմանը հանձնելու իրա-

²¹ ՄԻԿ-ի չորս անդամներից կազմված փոքրամասնությունը եզրակացրեց, որ 13-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ Գիրիի հարկադիր արտաքսումը չի իրականացվել որևէ վարչական որոշման (այսինքն՝ որևէ իրավական մարմնի) համաձայն: Հետևաբար, տվյալ գործով խախտվել են 9-րդ և 12-րդ հոդվածները, քանի որ հարկադիր արտաքսումը պետք է որակվեր որպես «բռնի գործողություն»:

վունք, եթե ազգային անվտանգության հրամայական նկատառումներն այլ բան չեն պահանջում: Այդ վերանայման ընթացքում տվյալ անձն ունի այդ հրավումքը մինչև կամ ամենաուշը որոշման ընդունման պահին:

5. Այն դեպքում, երբ արդեն իրականացված արտաքսման մասին որոշումը հետագայում չեղյալ է հայտարարվել, տվյալ անձն իրավասու է օրենքով հատուցում պահանջելու, և ավելի վաղ կայացված որոշումը չպետք է օգտագործվի տվյալ պետություն իր վերադարձը կանխելու համար:

6. Արտաքսման դեպքում տվյալ անձը պետք է ողջամիտ հնարավորություն ունենա մինչև երկրից մեկնելը կամ մեկնելուց հետո կարգավորել իրեն հասանելիք աշխատավարձի և այլ նպաստների հետ կապված յուրաքանչյուր հարց կամ ցանկացած ընթացիկ պարտավորություն:

7. Արտաքսման որոշումն առանց խտրականության իրականացնելու համար միգրանտ աշխատողը կամ նրա ընտանիքի անդամը, ով ենթակա է այդ որոշմանը, կարող է պահանջել մուտք գործել իր ծննդավայրը չհանդիսացող մեկ այլ պետություն:

8. Միգրանտ աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի արտաքսման դեպքում նա չպետք է հոգա արտաքսման ծախսերը: Տվյալ անձից կարող է պահանջվել հոգալ սեփական ճանապարհածախսը:

9. Գործատու պետությունից արտաքսումը չպետք է իրականացվի միգրանտ աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի՝ տվյալ պետության օրենսդրությամբ ծեռք բերված որևէ իրավունքի, այդ թվում՝ աշխատավարձ և իրեն հասանելիք այլ նպաստներ ստանալու իրավունքի նկատմամբ խտրականության դրսևորմամբ:

Սույն դրույթը, որը 2003 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ Միգրանտ աշխատողների մասին կոնվենցիան (ՄԻԱԿ) ստորագրած մասնակից պետությունների համար, զգալիորեն շատ ավելի մանրամասն է, քան ՔՔԻՄԴ-ի 13-րդ հոդվածով ամրագրված համանման դրույթը: Մանրամասնության աստիճանը պայմանավորված է առանց պատշաճ գործընթացի իրականացվող զանգվածային արտաքսումների հարցում միգրանտ աշխատողների պատմական խոցելիությամբ: Այնուամենայնիվ հնարավոր է, որ միգրանտ աշխատողներին և նրանց ընտանիքներին անդամներին պաշտպանելու համար ՄԻԱԿ-ի 22-րդ հոդվածով նախատեսված հատուկ իրավունքներն ընդհանուր առմամբ ներառված են ՔՔԻՄԴ-ի 13-րդ հոդվածում: 13-րդ հոդվածով անշուշտ արգելվում են հավաքական արտաքսումները [13.04]: Եթե ՄԻԱԿ-ի 22-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավունքը ներառվեր ՔՔԻՄԴ-ի 13-րդ հոդվածում՝ միգրանտ աշխատողներից բացի առհասարակ կիրառվելու համար, ապա այն կհակասեր Մարուֆիդուի գործով ՄԻԿ-ի՝ ավելի վաղ կայացրած որոշմանը: Այդ գործով Մարուֆիդուի արտաքսման կարգադրությունն իրականացվել է դրա ստորագրման օրը, հետևաբար անհնար է թվում, որ նրան այդ կարգադրության հետաձգումը պահանջելու հնարավորություն են ընձեռել [13.14]:

[13.22]

**23-ՐԴ ՀՈԴՎԱԾ՝ ԲՈԼՈՐ ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

Միգրանտ աշխատողները և նրանց ընտանիքների անդամներն իրավասու են սույն կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման դեպքում դիմելու իրենց ծննդավայրը հանդիսացող պետության կամ դրա շահերը պաշտպանող պետության հյուպատոսարանների կամ դեսպանատների պաշտպանությանը կամ աջակցությանը: Մասնավորապես՝ արտաքսման դեպքում տվյալ անձը պետք է անհապաղ տեղեկացվի իր իրավունքի մասին, իսկ արտաքսող պետության իշխանությունները պետք է ապահովեն այդ իրավունքի կիրառումը:

Կարևոր է նշել, որ ՄԻԱԿ-ի 23-րդ հոդվածով չի բացառվում ազգային անվտանգությունը: Մյուս կողմից՝ հնարավոր է, որ ՔՔԻՄԴ-ի 13-րդ հոդվածով արտաքսման առաջ կանգնած բոլոր օտարերկրացիների համար նախատեսվում է դատապաշտպանի աջակցություն ստանալու իրավունք: Վիճելի է՝ նման աջակցությունն անհրաժեշտ է, որ օտարերկրացիները պատշաճ օգտվեն 13-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից: Այնուամենայնիվ ավելի դժվար է պնդել, որ նման իրավունքը կիրառելի է նույնիսկ «ազգային անվտանգության հրամայական նկատառումների» դեպքում, քանի որ 13-րդ հոդվածով ամրագրված արտաքսման կարգադրությանը դիմադրելու ողջ իրավունքը կարծես այդպես է որակված:

[13.23] ՄԻԱԿ-ի 56-րդ հոդվածի 3-րդ կետով պահանջվում է, որ միգրանտ աշխատողին կամ նրա ընտանիքի անդամին արտաքսելու մասին որոշում ընդունելիս պետությունները հաշվի առնեն մարդասիրական նկատառումները և գործատու պետությունում անձի կացության տևողությունը: Սույն իրավունքը, ի տարբերություն 22-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված իրավունքների, կիրառելի է միայն այն միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների նկատմամբ, ովքեր գործատու պետությունում հաշվառված են կամ ունեն օրինական կարգավիճակ (36-րդ հոդված): Հնարավոր է, որ այդ պահանջն ընթերցվի ՔՔԻՄԴ-ի 13-րդ հոդվածի հետ մեկտեղ: Այդուհանդերձ, ՄԻԱԿ-ի 56-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավունքը, թվում է, ավելի է հեռանում 13-րդ հոդվածի բովանդակությունից և, հետևաբար, պակաս հստակ է, քան ՄԻԱԿ-ի 22-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված դատաիրավական իրավունքները:

Եզրակացություն

[13.24] 13-րդ հոդվածով օտարերկրացիների համար արտաքսման դեմ երաշխիք չի նախատեսվում: Եվ իսկապես, դրա դատաիրավական բնույթը կարող է նշանակել, որ կամայական արտաքսման դեմ այն նույնիսկ համապարփակ երաշխիք չի հանդիսանում: Այդուհանդերձ, ՄԻԿ-ի որոշակի հայտարարությունները ենթադրաբար ինչ-որ չափով էական տարր են հաղորդել 13-րդ հոդվածին: Ամեն դեպքում կամայական արտաքսումն արգելված է ՔՔԻՄԴ-ի այլ երաշխիքներով, հատկապես 26-րդ հոդվածով: Հայտնի է, թե 13-րդ հոդվածով նախատեսված դատաիրավական իրավունքների շրջանակներում օտարերկրացիներ քանի «վերանայման» իրավունք ունի: Եվ, վերջապես, ՄԻԿ-ը շատ վաղ կայացված մի որոշման մեջ նշել է, որ կհետաձգի գործի քննությունը, մինչև պետությունը ներկայացնի օտարերկրացու մասին ազգային անվտանգության մարմնի գնահատականը: Այս տարբերությունը, պետությունների կողմից չարաշահվելու դեպքում, կարող է զգալի կերպով նսեմացնել 13-րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

Արդար դատավարության իրավունք. հոդված 14

- 14-րդ հոդվածի 1-ին կետ [14.03]
 - «Քաղաքացիական հայցեր» [14.03]
 - Հավասարություն դատարանի առջև [14.10]
 - Դատարան դիմելը [14.14]
 - Դատարաններին ներկայացվող պարտադիր պահանջներ [14.28]
 - Ռազմական դատարաններ [14.34]
 - Արդար դատավարության տարրեր..... [14.38]
 - Դատական սխալ կամ թերացում [14.50]
 - Արագացված դատավարություններ [14.58]
 - Հրապարակային դատավարություն..... [14.61]
- 14-րդ հոդվածի 2-րդ կետ՝ անմեղության կանխավարկած [14.70]
- 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետ՝ մեղադրանքի մասին տեղեկացված լինելու իրավունք..... [14.74]
- 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետ՝ նախապատրաստում պաշտպանությանը [14.76]
 - Ի՞նչ է «բավարար ժամանակը» [14.79]
 - Ի՞նչ է «բավարար հնարավորությունը» [14.81]
 - Անձի ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու իրավունք [14.83]
- 14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետ՝ դատ առանց չարդարացված հապաղման [14.85]
- 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետ՝ [14.96]
 - անձի ներկայությամբ դատ..... [14.98]
 - Անձի ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու իրավունք [14.101]
 - Բավարար միջոցներ չունեցող ամբաստանյալների՝ իրավական աջակցություն ունենալու իրավունք..... [14.107]
 - Իրավասու ներկայացուցչության երաշխիք..... [14.112]
- 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետ՝ վկաների ներկայանալու և հարցաքննման իրավունքներ [14.121]
- 14-րդ հոդվածի 3-րդ կետի (զ) ենթակետ՝ անհրաժեշտության դեպքում թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք [14.126]
- 14-րդ հոդվածի 3-րդ կետի (է) ենթակետ՝ պարտադրված չլինել սեփական անձի դեմ ցուցմունք տալու..... [14.128]
- 14-րդ հոդվածի 4-րդ կետ՝ անչափահաս մեղադրյալների իրավունքները [14.132]
- 14-րդ հոդվածի 5-րդ կետ՝ քրեական գործերը բողոքարկելու իրավունք [14.133]
- 14-րդ հոդվածի 6-րդ կետ՝ դատական սխալի համար փոխհատուցում ստանալու իրավունք [14.143]
- 14-րդ հոդվածի 7-րդ կետ՝ ազատում կրկնապարտումից..... [14.148]
- Եզրակացություն..... [14.151]

ՖՈՂԱԾ 14

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակային քննության իրավունք: Մամուլին ու հասարակայնությանը կարող է արգելվել մասնակցելու ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը, կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը: Նման արգելումը կատարվում է այն չափով, որչափ, դատարանի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ դատական ցանկացած որոշում պետք է լինի հրապարակային, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան, կամ գործը վերաբերում է ամուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

- (ա) շտապ կարգով և մանրակրկիտ, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվել իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի ու հիմքի մասին,
- (բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար,
- (գ) դատվել առանց չարդարացված հապաղման,
- (դ) դատվել իր ներկայությամբ և իրեն պաշտպանել անձամբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. պաշտպան չունենալու դեպքում տեղեկացվել այդ իրավունքի մասին, և ցանկացած դեպքում, ելնելով արդարադատության շահերից, ունենալ իր համար նշանակված պաշտպան՝ նրա համար անվճար բոլոր այն դեպքերում, եթե նա բավականաչափ միջոցներ չունի վճարելու այդ պաշտպանին,
- (ե) հարցաքննել իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննվեն, և կանչել ու հարցաքննել իր օգտին ցուցմունք տվող վկաներին՝ նույն պայմաններով, ինչ առկա են իր դեմ ցուցմունք տվող վկաների համար,
- (զ) օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով,
- (է) պարտադրված չլինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու:

4. Անչափահասների դեպքում դատավարությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի հաշվի առնվեն նրանց տարիքը և նրանց վերադաստիարակությանն աջակցելու ցանկությունը:

5. Հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից, օրենքի համաձայն:

6. Եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձն օրենքի համաձայն ստանում է փոխհատուցում, եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

7. Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

[14.01] Արդարացի դատավարության և դատարանի առջև հավասարության իրավունքները պատմականորեն համարվել են իրավունքի հիմնարար կանոններ: ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդվածը սահմանում է մի շարք իրավունքներ, որոնք պարտադիր պետք է երաշխավորվեն ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական դատավարություններում: Այս դրույթները միտված են ապահովելու արդարատության պատշաճ իրականացումը¹: 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է ընդհանուր երաշխիքը, իսկ 14-րդ հոդվածի 2-7-րդ կետերով՝ քրեական դատավարությունների և քրեական բողոքարկումների հետ կապված երաշխիքները²: 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքները կիրառելի են յուրաքանչյուր դատարանում ընթացող դատավարությունների բոլոր փուլերում: Դրանք նաև լրացնում են 14-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ դրսևորվելով որպես մնացորդային երաշխիք³:

[14.02]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. 14-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունը նախատեսում է, որ «յուրաքանչյուր ոք ունի արդարացի և հրապարակային քննության իրավունք»: Հոդվածի 3-րդ կետը մանրամասնում է քրեական մեղադրանքների որոշման մասով «արդարացի քննության» պահանջները: Այդուհանդերձ, 3-րդ կետը նվազագույն երաշխիքներ է պահանջում, որոնց պահպանումը միշտ չէ, որ բավարար է 1-ին կետով նախատեսված քննության արդարությունն ապահովելու համար⁴:

14-րդ հոդվածի 1-ին կետ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑԵՐ

[14.03]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. Ընդհանուր առմամբ, մասնակից պետություններն իրենց զեկույցներում չեն ընդունում այն հանգամանքը, որ 14-րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն անձի դեմ ներկայացված քրեական մեղադրանքի, այլև քաղաքացիական հայցում իր իրավունքներն ու պարտականությունները որոշող դատավարություններում: Այս հարցերի հետ առնչվող օրենքները և փորձը խիստ տարբերվում են՝ կախված պետությունից: Այս տարբերության պարագայում էլ ավելի անհրաժեշտ է դառնում, որ մասնակից պետությունները տրամադրեն ցանկացած համապատասխան տեղեկություն և առավել մանրամասն բացատրեն, թե ինչպես են մեկնաբանվում «քրեական մեղադրանք» և «դատական գործով նախատեսված իրավունքներ և պարտականություններ» հասկացություններն իրենց իրավական համակարգերում:

[14.04] 14-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է տարբեր իրավունքներ, որոնք վերաբերում են քրեական դատաքննության մեջ անձի իրավունքների և պարտականությունների որոշմանը, ինչպես նաև՝ «քաղաքացիական հայցերին»: Վերջինիս նշանակությունը չափազանց կարևոր է, քանի որ այն 14-րդ հոդվածի միակ տարրն է, որը հստակ առնչվում է ոչ քրեական դատավարություններին: «Քաղաքացիական հայց» հասկացության սահմանումն ի հայտ է եկել հետևյալ գործում:

«Ի. Լ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (Y.L. v CANADA, 112/81)

Սույն գործով կոմիտեն քննում էր, թե արդյոք նախկին զինծառայողի՝ հաշմանդամության համար թոշակ ստանալու դիմումը «քաղաքացիական հայց» է: Ի.Լ.-ն հեռացվել է Կանադայի բանակից իր առողջական

¹ Թիվ 13 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 1:

² «Գերարդուս Ստրիկն ընդդեմ Նիդերլանդների» (*Gerardus Strik v Netherlands, 1001/01*) գործով ՄԻԿ-ը հաստատել է, որ 14-րդ հոդվածի 2-7-րդ կետերի, ինչպես նաև 15-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն զբաղվածության գծով կարգապահական միջոցների դեպքում, այլ կիրառելի են միայն քրեական մեղադրանքների դեպքում (7.3 կետ):

³ D. McGoldrick, *The Human Rights Committee* (Clarendon Press, Oxford, 1994), 417. Տե՛ս, օր.՝ «Սալկին ընդդեմ Իտալիայի» (*Maleki v Italy, 699/96*) գործը [14.99], որով վճիռ է կայացվել 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին, չնայած մինչ այդ վերապահում էր ներառվել 14-րդ հոդվածի 3-րդ կետում:

⁴ Տե՛ս նաև «Կարտունեն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Karttunen v Finland, 387/89*) գործում պրն Վեններգրենի հատուկ կարծիքը:

վիճակի պատճառով: Ի.Լ.-ի հաշմանդամության համար թոշակ ստանալու դիմումը մերժվել է թոշակների հանձնաժողովի կողմից: Այս որոշումը հաստատվել է բողոքարկման ատյանում: Մերժվել են նաև թոշակների հանձնաժողով ներկայացված հետագա երկու դիմումները: Հանձնաժողովի նպաստների հարցերով խորհրդին ներկայացված դիմումը նույնպես բացասական պատասխանի է արժանացել, իսկ թոշակների քննման խորհուրդը, բողոքարկմանն ի պատասխան, հաստատել է նախկինում կայացրած որոշումները: Հեղինակը հայտնել է, որ դատավարություններն անարդար են անցկացվել, և դրանով իսկ խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին կետը:

Մասնակից պետությունը հայտնել է, որ բողոքը պետք է անընդունելի համարվի հետևյալ պատճառներով.

¶ 4. Կանադայի կառավարությունը պահանջում է, որ դիմումը համարվի անընդունելի: Թոշակների քննման խորհրդի դեմ իրականացված գործողությունների առնչությամբ կառավարությունը հիմնականում բերում է այն փաստարկը, որ հեղինակի բողոքները դուրս են դաշնագրի կիրառման շրջանակներից նյութաիրավական հիմունքներով, քանի որ այս գործողությունները դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված «քաղաքացիական հայց» չեն:

ՄԻԿ-ն ի վերջո եզրակացրեց, որ հեղինակի դիմումն անընդունելի է, քանի որ թոշակների խորհրդի որոշման քննության փաստը նշանակում է, որ նա չէր կարող դիմում ներկայացնել կանոնադրված արժանագրության 2-րդ կետով⁵: «Քաղաքացիական գործ» արտահայտության կապակցությամբ կոմիտեն արել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 9.1. Դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված «օրենքի հիման ստեղծված իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի և հրապարակային քննության» երաշխիքների ենթադրյալ խախտման առնչությամբ ճիշտ է նշվել, որ այս երաշխիքները սահմանափակված են «քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ ցանկացած որոշումով»: Այս արտահայտությունն ունի տարբեր ձևակերպումներ դաշնագրի թարգմանություններում, և դրանցից յուրաքանչյուրը հավասարապես վավերական է՝ ըստ 53-րդ հոդվածի:

¶ 9.2. Նախապատրաստական աշխատանքները չեն լուծում թարգմանություններում առկա անհիմա պատասխանության խնդիրը: Կոմիտեի կարծիքով՝ «քաղաքացիական հայց» հասկացության կամ այլ լեզուներում դրա համարժեքի հիմքում ընկած է տվյալ իրավունքի բնույթը, ոչ թե կողմերից մեկի իրավական կարգավիճակը (պետական, կիսապետական կամ անկախ իրավաբանական անձինք) կամ էլ այն ատյանը, որտեղ առանձին իրավական համակարգերով կարող է նախատեսվել, որ դատարանը վճիռ կայացնի տվյալ իրավունքի մասով. հատկապես ընդհանուր օրենքի համակարգերում, որոնցում հանրային և մասնավոր իրավունքի միջև չկա անկապտելի տարբերություն, և դատարանները սովորաբար հսկում են դատավարություններն ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ վերաքննիչ ատյանում, ինչը հստակ նախատեսված է կանոնադրությամբ կամ էլ դատական քննման միջոցով: Այս առումով յուրաքանչյուր դիմում պետք է քննվի՝ ելնելով դրա առանձնահատկություններից:

¶ 9.3. Սույն գործում թոշակ ստանալու դիմումով հեղինակի՝ արդարացի քննության իրավունքը պետք է դիտել համընդհանուր տեսանկյունից, անկախ այն տարբեր քայլերից, որոնք հեղինակը ստիպված է եղել ձեռնարկել, որպեսզի դատարանն իր թոշակ ստանալու դիմումի կապակցությամբ ի վերջո որոշում կայացնի:

[14.05] Պարոնայք Գրեֆրատը, Պոկարը և Տոմուշատն իրենց հատուկ կարծիքում ընդունել են այն դիրքորոշումը, ըստ որի՝ կասկածահարույց դատական գործողությունները «քաղաքացիական գործ» չեն:

¶ 3. Հեղինակի և Կանադայի միջև վեճն ընդգրկված չէ դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակության մեջ: Տվյալ կետում ներառված երաշխիքները կիրառելի են ինչպես ցանկացած քրեական մեղադրանքի, այնպես էլ քաղաքացիական գործով իրավունքներն ու պարտականությունները որոշելիս: Թեև այս արտահայտությունն անգլերեն և ռուսերեն տարբերակներում վերաբերում է դատավարությանը, սակայն ֆրանսերեն և իսպաներեն ձևակերպումների հիմքում ընկած է տվյալ դատավարության առարկա հանդիսացող իրավունքի կամ պարտականության բնույթը: Հաշվի առնելով սույն գործի հանգամանքները՝ կարիք չկա պարզաբանել տարբեր լեզուներում օգտագործված տարբեր եզրույթների ընդհանուր նշանակությունը, որոնք ըստ դաշնագրի 53-րդ հոդվածի՝ հավասարապես վավերական են: Ինչպես մասնակից պետության, այնպես էլ հեղինակի փաստարկներից բավական հստակ երևում է, որ

⁵ Պարբ. 9.4: Նման փաստը կարող է նաև հարցեր առաջացնել դատաիրավական պաշտպանության ներպետական միջոցների կապակցությամբ (տե՛ս առիասարակ գլուխ 6-ը):

Կանադայում, անկախ այն համգամանքից՝ տվյալ զինծառայողը զորացրված է, թե՞ շարունակում է ծառայել, նրա և թագավորական իշխանության միջև հարաբերություններն ունեն բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք Կանադայի օրենսդրությամբ էապես տարբերվում են աշխատանքային պայմանագրով սահմանված հարաբերություններից: Ավելին՝ հայտնի է, որ Թոշակների քննման խորհուրդը հանդիսանում է Կանադայի կառավարության գործադիր ծյուղում գործող վարչական մարմին, որը դատարանին բնորոշ հատկանիշներ չունի: Ուստի սույն գործով երկու չափանիշներից ոչ մեկը չի բավարարվել, որոնք հնարավորություն կտային անվիճելիորեն որոշելու դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակները: Հետևաբար հարկ է եզրակացնել, որ թոշակ ստանալու իրավունքի առնչությամբ Թոշակների քննման խորհրդի դեմ ձեռնարկված գործողությունները չեն կարող վիճարկվել դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդարացի քննության պահանջների խախտման պատճառաբանությամբ:

[14.06] Փոքրամասնության տեսակետը շատ ավելի նեղ իմաստ է հաղորդում 14-րդ հոդվածի 1-ին կետին՝ կենտրոնանալով դիմումի ներքին՝ կանադական դասակարգման վրա: Մեծամասնությունը, որն անշուշտ ակնարկել է այն մասին, որ Թոշակների քննման խորհրդի գործողությունները վերաբերում են «քաղաքացիական հայցին», հակառակը՝ կենտրոնացել է իրավունքի բնույթի և այն հարցի վրա, թե արդյոք հայցն իր տեսակի մեջ ենթակա էր դատական վերահսկողության, թե՞ ոչ⁶: Գերադասելի է հենց մեծամասնության տեսակետը, քանի որ այն թույլ չի տալիս ներքին թյուր դասակարգումներով բովանդակագրվել 14-րդ հոդվածի 1-ին կետի իրավունքները:

[14.07] «ԿԱԶԱՆՈՎԱՍՆ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (CASANOVAS v FRANCE, 441/90)

Սույն գործը վերաբերում է վարչական տրիբունալների միջոցով հեղինակին՝ Ֆրանսիայի քաղծառայողին, պաշտոնից ազատելու փաստի վիճարկմանը:

¶ 5.2. Կոմիտեն հիշեցրել է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետով «քաղաքացիական հայց» հասկացության հիմքում ընկած է տվյալ իրավունքի բնույթը, ոչ թե կողմերից մեկի իրավական կարգավիճակը: Կոմիտեն համարել է, որ աշխատանքից ազատման ընթացակարգերը քաղաքացիական գործի իրավունքների և պարտավորությունների որոշում են՝ դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իմաստով: Ըստ այդմ, 1993 թ. հուլիսի 7-ին կոմիտեն հայտնել է, որ դիմումն ընդունելի է:

«Ջ.Լ.-ն ընդդեմ Ավստրալիայի» (*J.L. v Australia, 491/92*) գործով ՄԻԿ-ը պետք է որոշեր, թե դատարանի կողմից իրավաբանական անձ հանդիսացող մասնագիտական մարմնի գործունեության կարգավորումը 14-րդ հոդվածի խախտո՞ւմ է, թե՞ ոչ: Կոմիտեն որոշեց, որ բողոքն անընդունելի է: Այդուհանդերձ, նշել է, որ «դատարանի կողմից մասնագիտական մարմինների գործունեության կարգավորումը և նման կարգավորման ուսումնասիրությունը կարող է հարցեր առաջացնել մասնավորապես դաշնագրի 14-րդ հոդվածի առումով»⁷: «Վ.Մ.Ռ.Բ.-ն ընդդեմ Կանադայի» (*V.M.R.B. v Canada, 235/87*) գործով ՄԻԿ-ը չի բացառել, որ երկրից արտաքսման ընթացակարգերը կարող են «քաղաքացիական հայց» համարվել: «Գարսիա Պոնսն ընդդեմ Իսպանիայի» (*Garcia Pons v Spain, 454/91*) գործով ՄԻԿ-ը որոշել է, որ սոցիալական ապահովության որոշման դատավարությունների իրականացումն ամրագրող 14-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման մասին բողոքն ընդունելի է: Թեև գործի էության մասով ոչ մի խախտում չի հայտնաբերվել, սակայն պարզ է, որ դատարանի առջև իրականացվող նման ընթացակարգերը «քաղաքացիական հայց» են: «Յանսեն-Գիելեն ընդդեմ Նիդեռլանդների» (*Jansen-Gielen v Netherlands, 846/99*) գործով ՄԻԿ-ն ըստ երևույթին գտավ, որ այն ընթացակարգերը, որոնցով որոշվում է աշխատանքը կատարելու համար մարդու հոգեկան կարողությունը, համարվում են քաղաքացիական գործ, քանի որ հայտնաբերվել է 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում [14.48]:

⁶ Տե՛ս McGoldrick, վերը, ծմք. 3 415:

⁷ Պարբ. 4.2:

[14.07Ա] «ԿՈԼԱՆՈՎՍԿԻՆ ընդդեմ ԼեՅՍՍՏԱՆԻ» (KOLANOWSKI v POLAND, 837/98)

Հեղինակը հանդիսանում է ոստիկանության աշխատակից, ում պաշտոնի բարձրացման դիմումը մերժվել է: Ելնելով այն հանգամանքից, որ իրեն թույլ չի տրվել բողոքարկել այդ մերժումը, նա հայց է ներկայացրել 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ: Մասնակից պետությունը պաշտպանել է այս պահանջը:

¶ 4.4. Դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման առնչությամբ մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ ցանկացած ազգային իրավական կարգ տարբերակում է երկու տեսակի օրենք. օրենքներ, որոնք գտնվում են վարչական մարմինների ներքին իրավասության ներքո, և օրենքներ, որոնք դուրս են այդ շրջանակներից [օր.՝ դատական քննության առկայության դեպքում]: Հեղինակի պաշտոնը չբարձրացնելու հարցը բացառապես ներքին վարչական բնույթ ունի, որն արտահայտվում է վերադասների նկատմամբ հեղինակի ենթակայությամբ: Որպես ներքին օրենքներ՝ անձի պաշտոնի բարձրացման կամ բարձրացման մասին որոշումները չեն կարող բողոքարկվել դատարաններում, այլ միայն վերադաս մարմիններում, որոնց հաշվետու է որոշում կայացնող մարմինը:

¶ 4.5. Մասնակից պետությունն առանձին նշում է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ գործով սեփական իրավունքների ու պարտավորությունների որոշման ընթացքում արդարացի քննության իրավունքը: Ելնելով այն հանգամանքից, որ այս դրույթն իրապես վերաբերում է քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների որոշմանը, սույն գործը, ունենալով բացառապես վարչական բնույթ, դուրս է 14-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներից: Ավելին՝ մասնակից պետությունը հայտնում է, որ հեղինակի՝ պաշտոնի չբարձրացման մասին բողոքը ոչ մի կապ չունի *իրավունքի* որոշման հետ, քանի որ ոստիկանները և համազգեստ կրող այլ ծառայողներն այդ բարձրացումը որպես *իրավունք* պահանջելու իրավասություն չունեն:

ՄԻԿ-ը համաձայնել է մասնակից պետության հետ.

¶ 6.4. 14-րդ հոդվածի 1-ին կետի մասով հեղինակի հայցերի առնչությամբ կոմիտեն նշում է, որ դրանք վերաբերում են հեղինակի պաշտոնի բարձրացման պահանջի մերժումը վիճարկելու փորձերին: Հեղինակը ոչ ազատվել է աշխատանքից, ոչ էլ դիմել ավելի բարձր պաշտոնի հայտարարված թափուր տեղի համար: Նման հանգամանքներում կոմիտեն համարում է, որ հեղինակի գործը պետք է տարբերել «Կազանովասն ընդդեմ Ֆրանսիայի» (*Casanovas v France*) գործից: Կրկնելով իր այն տեսակետը, որ 14-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում «գործ» հասկացության հիմքում ընկած է տվյալ իրավունքի բնույթը, ոչ թե կողմերից մեկի իրավական կարգավիճակը, կոմիտեն համարում է, որ Լեհաստանի ոստիկանությունում պաշտոնի բարձրացման պահանջի մերժումը վիճարկելու նպատակով հեղինակի կողմից ձեռնարկված ընթացակարգերը քաղաքացիական գործով իրավունքների և պարտավորությունների որոշման դեպք չեն՝ դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իմաստով:

Հետևաբար դիմումի այս մասը հակասում է այդ դրույթին և անընդունելի է՝ ըստ կամընտիր արձանագրության 3-րդ կետի: Ուստի ՄԻԿ-ը տարբերել է հանրային ծառայության ոլորտում պաշտոնի նշանակման և բարձրացման մասով պահանջվող իրավունքները նույն ոլորտում աշխատանքից ազատման իրավունքներից, որոնք *Կազանովասի* [14.07], ինչպես նաև «Պաստուխովն ընդդեմ Բելառուսի» (*Pastukhov v Belarus, 814/98*) (դատավորի աշխատանքից ազատման մասին) գործերում հանգեցրել են պաշտպանության 14-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում: «Կազանցիսն ընդդեմ Կիպրոսի» (*Kazantzis v Cyprus, 972/01*) գործով ՄԻԿ-ը կրկին վճիռ է կայացրել, որ հանրային ծառայության պաշտոնների նշանակման կարգը (տվյալ գործով նշանակումները դատական համակարգում) «ընդգրկված չէ քաղաքացիական հայցով իրավունքների և պարտավորությունների որոշման հասկացության մեջ»⁸:

[14.08] Գործերում հստակ ցուցումներ չկան, թե ինչպես սահմանել «քաղաքացիական հայց» հասկացությունը: Հարիսը հանդիչ փաստարկ է բերում, որ «քաղաքացիական հայց» հասկացությունը ներառում է տվյալ իրավունքի բնույթի քննում, ինչը սահմանման մեջ ներմուծում է մասնավոր իրավունքի իրավունքներ (ինչպես օրինակ՝ քաղաքացիական իրավախախտման կամ պայմանագրի դեպքում): Այնուամենայնիվ, հանրային իրավունքի կարգը դասվող իրավունքները որոշվում են 14-րդ հոդվածի 1-ին կետով այն դեպքում, երբ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի իրավական հա-

⁸ Պարբ. 6.5: Նշանակման և պաշտոնի բարձրացման հետ կապված իրավունքները կիրառելի են 26-րդ հոդվածի և քաղաքացիական ծառայության մասին 25-րդ հոդվածի (գ) կետի առնչությամբ:

մակարգում այդ որոշումն իրականացվում է դատարանի կողմից, կամ երբ այդ իրավունքների վարչական որոշումը ենթակա է քննության դատական կարգով: Այդուհանդերձ 14-րդ հոդվածի 1-ին կետը չի երաշխավորում ղեկավարների կամ վարչական տրիբունալների կողմից հանրային իրավունքի որոշումների դատական քննության իրավունքը, կամ այդ քննությունը ենթադրում է վճռի էության գնահատումը⁹:

[14.09] «*Քենեդիի ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Kennedy v Trinidad and Tobago*, 845/98)¹⁰, «*Էվանսի ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Evans v Trinidad and Tobago*, 908/00)¹¹ և «*Ռիսի ընդդեմ Ճամայկայի*» (*Reece v Jamaica*, 796/98)¹² գործերով ՄԻԿ-ը հաստատել է, որ գործադիր մարմնի կողմից մահապատժի մեղմացման հնարավորության քննումն այնպիսի «քաղաքացիական հայց» չէ, որով պահանջվում է 14-րդ հոդվածով սահմանված իրավունքների կիրառումը:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ

[14.10] 14-րդ հոդվածի 1-ին կետը հստակ երաշխավորում է հավասարություն դատարանի առջև, ասել է թե՛ օրենքը պետք է դատարանի կողմից կիրառվի առանց խտրականության¹³: Այս իրավունքն ավելի մեղ իմաստ ունի, քան 26-րդ հոդվածում սահմանված օրենքի առջև հավասարության նմանատիպ իրավունքը¹⁴: Վերջինս կիրառելի է արդարադատության իրականացման գործընթացին մասնակցող բոլոր մարմինների, այդ թվում՝ դատախազության և ոստիկանության դեպքում, իսկ 14-րդ հոդվածը հատուկ վերաբերում է դատական մարմինների աշխատողների կողմից դատական իշխանության կիրառման և դատարանում դատաքննության արդարությանը:

[14.11] «ԿԱՎԱՆԱՆ ԸՆԴԴԵՄ ԻՐԼԱՆԴԻԱՅԻ» (KAVANAGH v IRELAND, 819/98)

Այս գործում խոսքը հեղինակին տարբեր իրավախախտումների համար դատելու նպատակով հատուկ քրեական դատարան դիմելու մասին է, որտեղ գործող ընթացակարգը տարբերվում է Իռլանդիայում գործող սովորական քրեական դատարանի ընթացակարգից (օր.՝ առանց երդվյալ ատենակալների): Մեծամասնությունը բացահայտեց, որ եղել է 26-րդ հոդվածի խախտում, և հետևաբար չորոշեց՝ եղե՞լ է 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, թե՞ ոչ [23.109]: Փոքրամասնություն կազմող պարոնայք Ջենկինը, Լալաիը, Թոֆիկ Խալիլը և Վելան, ինչպես նաև տիկին Մեդինա Քուիրոգան, նույնպես որոշեցին, որ խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին կետը:

¶ 2. Դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետն իր առաջին իսկ նախադասությամբ հռչակում է դատական համակարգի հավասարության սկզբունքը: Այդ սկզբունքն առավել ընդգրկում է և լրացնում է 14-րդ հոդվածի այլ կետերով նախատեսված դատաքննության արդարությունը, մեղքի ապացույցը, դատաիրավական և ապացուցիչ երաշխիքները, բողոքարկելու և քննելու իրավունքը, ինչպես նաև կրկնադատման արգելումը ղեկավարող սկզբունքները: Հավասարության այս սկզբունքը ոտնահարվում է, եթե միևնույն իրավախախտումը կատարած բոլոր անձինք դատվում են ոչ թե այդ հարցում իրավասություն ունեցող սովորական, այլ հատուկ դատարանի կողմից՝ գործադիր իշխանության հայեցողությամբ: Սա անփոփոխ է՝ անկախ այն հանգամանքից՝ գործադիր իշխանության կողմից հայեցողության գործադրումը ենթակա՞ է դատարանի քննությանը, թե՞ ոչ:

Նմանապես, Միացյալ Թագավորության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մշել է, որ «մեղադրող մարմինները պետք է օբյեկտիվ և ողջամիտ հիմքեր ցույց տան՝ տվյալ գործերում տարբեր քրեական ընթացակարգերի կիրառումը հիմնավորելու համար»¹⁵:

⁹ St'iu D. Harris, *Cases and Materials on International Law* (5th edn, Sweet and Maxwell, London, 1998), 672. St'iu նաև S. Bailey, 'Rights in the Administration of Justice', in D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 212-3.

¹⁰ Պարբ. 7.4:

¹¹ Պարբ. 6.6:

¹² Պարբ. 7.7, տե՛ս նաև [11.15U]:

¹³ M. Nowak, *CCPR Commentary* (N.P Engel, Kehl, 1993), 239:

¹⁴ St'iu առհասարակ [23.105]ff:

¹⁵ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UK, պարբ. 18:

[14.12] Ղատարանի առջև հավասարության իրավունքի խախտման մասին որոշում է կայացվել «*Վայսն ընդդեմ Ավստրիայի*» (*Weiss v Austria, 1086/02*) գործով, որում մեղադրող կողմն ի վիճակի էր բողոքարկելու տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը, իսկ համապատասխան ամբաստանյալը՝ ոչ:¹⁶

[14.13] Ձամբիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է¹⁷.

¶ 10. Սահմանադրության 43-րդ բաժինը, որը սահմանափակում է դատարանում նախագահի՝ որպես անձի կողմից կատարված ցանկացած արարքի համար նրա դեմ դատաիրավական պաշտպանության քաղաքացիական միջոցներ ձեռնարկելու իրավունքը, հակասում է դաշնագրի 14-րդ հոդվածին:

Ուստի այն փաստը, որ անձը լիովին անձեռնմխելի է գործի նկատմամբ, հակասում է 14-րդ հոդվածին¹⁸: Հայտնի չէ, թե պաշտոնի շնորհիվ ձեռք բերվող անձեռնմխելիությունը, ինչպես օրինակ՝ գործադիր ակտերի հարցում նախագահի անձեռնմխելիությունը, համատեղելի¹⁹ է 14-րդ հոդվածի 1-ին կետի հետ, թե՞ ոչ:

ՊԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼ

[14.14] «*ԲԱՀԱՄՈՆԴԵՆ ընդդեմ ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԳՎԻՆԵԱՅԻ*» (*BAHAMONDE v EQUATORIAL GUINEA, 468/91*)

¶ 9.4. Հեղինակը հայտնել է, որ չնայած Հասարակածային Գվինեայի դատարաններում դատական կարգով սահմանադրական իրավունքի վերականգնման մի շարք փորձերին, իր բոլոր քայլերն անհաջողության են մատնվել: Կոմիտեն նշում է, որ դատարանի և տրիբունալի առջև հավասարության գաղափարն ընդգրկում է զուտ դատարան դիմելու իրավունքը, և այն, որ իրավասու ատյաններում անձի բողոքները քննելու փորձերը կանոնավոր կերպով խափանվում են, հակասում է 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխիքներին:

[14.15] «*Ավելանալն ընդդեմ Պերուի*» (*Avellanal v Peru, 202/86*) գործով ակնհայտ խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին կետը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Պերուի օրենսդրությամբ՝ ամուսնացած կանանց թույլ չի տրվում դատարան դիմել ամուսնական գույքի մասին գործերի առնչությամբ: Այս օրենքով նույնպես ոտնահարվել է 14-րդ հոդվածի 1-ին կետի այն պահանջը, որ յուրաքանչյուր ոք հավասար է դատարանի և տրիբունալի առջև¹⁹:

[14.16] «*ԿՅՈՒՐԻՆ ընդդեմ ՃԱՍՍՅԱՅԻ*» (*CURRIE v JAMAICA, 377/89*)

Հեղինակը հանդիսանում էր ճամայկայում մահվան դատապարտված բանտարկյալ: Նրա հայտարարությամբ՝ այն փաստը, որ իրեն իրավաբանական օգնություն ցույց չի տրվել դատաքննության արդարությունը վիճարկելու նպատակով իր կողմից առաջարկված սահմանադրական միջնորդություն կատարելու համար, 14-րդ հոդվածի խախտում է: Հեղինակը բերել է հետևյալ փաստարկները.

¶ 12.2. Հեղինակի՝ դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում ներկայացրած այն հայցի առնչությամբ, որ իրեն չի թույլատրվել դատարան դիմել իր մարդու իրավունքների սահմանադրական վերականգնումը պահանջելու նպատակով, հեղինակը բերել է այն փաստարկը, որ սահմանադրական վերականգնում պահանջելը դուրս է իր ֆինանսական կարողություններից, և ոչ մի իրավաբանական օգնություն չի տրամադրվում սահմանադրական միջնորդությունների համար: Նա նաև պնդում է, որ սահմանադրական իրավունքի վերականգնման համակարգի բարդությունը հնարավորություն չի տալիս իրեն դրանով զբաղվելու առանց իրավաբանական աջակցության: Նա նշում է, որ թեև դաշնագիրը չի նախատեսում, որ մասնակից պետություններն իրավաբանական օգնություն տրամադրեն քաղաքա-

¹⁶ Պարբ. 9.6:

¹⁷ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 62:

¹⁸ Այս առումով, տե՛ս նաև ԱՄՆ գերագույն դատարանի որոշումը «*Բլինթոն ընդդեմ Ջոնսի*» (*Clinton v Jones, 1997, 117 S. Ct 1636*) գործով, որը հաստատում է, որ նախագահ Բլինթոնը քաղաքացիական անձեռնմխելիություն չունի ոչ պաշտոնական դերում կատարված իր ենթադրյալ գործողությունների համար:

¹⁹ Այս գործի մանրամասների համար տե՛ս [10.12]: Տե՛ս նաև թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունը, կետ 18:

ցիական գործերով, մասնակից պետությունները պարտավոր են ապահովել դաշնագրով սահմանված իրավունքները և դատաիրավական պաշտպանության միջոցները: Հեղինակը նշում է, որ սահմանադրական միջնորդություն կատարելու համար իրավաբանական աջակցության և սահմանադրական իրավունքի վերականգնում պահանջելու պարզ ու մատչելի ընթացակարգի բացակայությունը հնարավորություն չի տալիս իրեն արդյունավետ կերպով դիմելու սահմանադրական դատարան, ինչի հետևանքով ինքը չի կարող իր իրավունքներն ու պարտավորությունները որոշելու համար օգտվել 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար և հրապարակային քննության իր իրավունքից:

ՄԻԿ-ը որոշեց, ի թիվս այլոց, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

¶ 13.2. Հեղինակը պնդել է, որ սահմանադրական միջնորդության դիմում ներկայացնելու նպատակով իրավաբանական աջակցության բացակայությունն ինքնին դաշնագրի դրույթների ոտնահարում է: Կոմիտեն նշում է, որ դաշնագիրը չի ներառում այնպիսի հստակ պարտավորություն, որով պետությունը պարտավոր լինի ցանկացած գործով անձին իրավաբանական աջակցություն տրամադրել, փոխարենը՝ այն նախատեսում է միայն քրեական մեղադրանքի որոշման դեպքում՝ արդարադատության շահերից ելնելով, ըստ 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի:

¶ 13.3. Կոմիտեն տեղյակ է, որ սահմանադրական դատարանի դերը բուն քրեական մեղադրանքը որոշելը չէ, այլ յուրաքանչյուր գործով հայցվորների համար արդարացի քննության ապահովելը՝ անկախ այն հանգամանքից՝ դա քրեական, թե՛ քաղաքացիական գործ է: Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով՝ մասնակից պետությունը պարտավոր է սահմանադրական դատարանում ապահովել հիմնարար իրավունքների խախտման դատաիրավական պաշտպանության միջոցների հասանելիությունը և արդյունավետությունը:

¶ 13.4. Սահմանադրական դատարանում իրավունքների որոշման ընթացակարգերը պետք է համապատասխանեն 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդար քննության պահանջներին: Տվյալ գործով սահմանադրական դատարան դիմում է ներկայացվելու, որպեսզի որոշվի, թե քրեական գործով հեղինակին դատապարտելով խախտվե՞լ են արդար քննության երաշխիքները, թե՛ ոչ: Նման դեպքերում սահմանադրական դատարանում արդար քննության պահանջը պետք է համապատասխանի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետում ամրագրված սկզբունքներին: Հետևաբար այն դեպքում, երբ քրեական դատավարության ընթացքում տեղ գտած անհամապատասխանությունները սահմանադրական դատարանում քննելու պահանջ ներկայացրած դատապարտյալը բավարար միջոցներ չունի՝ իր սահմանադրական պաշտպանությունը պահանջելու նպատակով իրավաբանական աջակցության ծախսերը հոգալու համար, և երբ դա են պահանջում արդարադատության շահերը, պետությունը պետք է իրավաբանական աջակցություն ապահովի: Սույն գործով իրավաբանական աջակցության բացակայությունը հնարավորություն չի տվել հեղինակին սահմանադրական դատարանում արդարացի քննությամբ փորձաստուգելու իր քրեական դատավարության համապատասխանությունները, ուստի սույն գործով խախտվել են 14-րդ հոդվածի 1-ին կետի և 2-րդ հոդվածի 3-րդ կետերը:

Կյուրիի (Currie) գործով կայացված վճիռն ի հայտ է եկել նաև մի շարք այլ գործերում²⁰: Ուստի «*Դուգլասը, Ջենթլսը և Էռն ընդդեմ Ճամայկայի*» (*Douglas, Gentles and Kerr v Jamaica, 352/89*) գործով վերանայվել է կայացված նախորդ վճիռը²¹, ըստ որի՝ կարիք չկա իրավաբանական օժանդակություն տրամադրել մահապատժի վճռով ավարտվող դատավարությունները Կարիբյան կղզիների սահմանադրական դատարանում վիճարկելու համար²²:

[14.17] «Բահամոնդեն ընդդեմ Հասարակածային Գվինեայի» (*Bahamonde v Equatorial Guinea, 468/91*) [14.14] գործով հեղինակը ենթարկվել է քաղաքական հետապնդման, իսկ «*Ավելանալն ընդդեմ Պերուի*» (*Avellanal v Peru, 202/86*) [14.15] գործը վերաբերում է սեռական խտրականության բացահայտ դրսևորմանը: Իրավաբանական աջակցության մասին գործերը վերաբերում էին հարստության հատկանիշով խտրականության դրսևորմանը: Ուստի «դատարան դիմելու» մասին նման գործերով հեղինակին հավասար հնարավորություն չի տրվել օրենքով սահմանված իր իրավունքներից օգտվելու համար: Հետևա-

²⁰ Տե՛ս «*Թեյլորն ընդդեմ Ճամայկայի*» (*Taylor v Jamaica, 707/96*) գործը, կետ 8.2, «*Շոուն ընդդեմ Ճամայկայի*» (*Shaw v Jamaica, 704/96*), կետ 7.6, «*Հենրին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Henry v Trinidad and Tobago, 752/97*) գործը, «*Էնենդին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Kennedy v Trinidad and Tobago, 854/98*) գործը:

²¹ Պարբ. 11.2, սույն գործով վճիռ է կայացվել միայն *Կյուրիի* գործի մեկ նիստի մասով:

²² Այնուամենայնիվ «*Թեյլորն ընդդեմ Ճամայկայի*» (*Taylor v Jamaica, 705/96*) և «*Շոուն ընդդեմ Ճամայկայի*» (*Shaw v Jamaica, 704/96*) գործերով փոքրամասնություն կազմող պարոնայք Անդոն, Բիագվաթին, Բյուրգենթալը և Կրեցմերը մերժեցին այն միտքը, որ ճամայկան պետք է իրավաբանական աջակցություն տրամադրեր սահմանադրական միջնորդությունների համար:

բար, նման գործերում «դատարան դիմելու» իրավունքներն անկապտելիորեն կապված են «դատարանի առջև հավասարության» երաշխիքի հետ:

[14.18] *Կյուրիի (Currie)* գործով ՄԻԿ-ի վճռի կայացման վրա ազդել է այն հանգամանքը, որ հեղինակի սահմանադրական դատավարությունը միտված էր վիճարկելու մահապատժի դատապարտման փաստը: Պարզ է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետով քաղաքացիական դատավարության համար նախատեսված իրավաբանական աջակցություն ստանալու իրավունքը մասամբ պայմանավորված է դատավարության լրջության աստիճանով: Սա արտացոլում է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետում սահմանված քրեական դատավարության վերաբերյալ կանոնը [14.107]: Ստորև բերված եզրափակիչ դիտարկումները Նորվեգիայի վերաբերյալ ցույց են տալիս, որ քաղաքացիական դատավարությունները լուրջ հիմք են իրավաբանական օժանդակություն ստանալու իրավունք երաշխավորելու համար, երբ դրանք վերաբերում են ՔՔԻՄԴ-ով պաշտպանված որևէ իրավունք հաստատելու փորձին²³:

¶ 16. Սամի ժողովրդի՝ դաշնագրի 27-րդ հոդվածով նախատեսված ավանդական կենսամիջոցների հայթայթման իրավունքը, ըստ երևույթին, լիովին պաշտպանված չէ հողերի հանրային և մասնավոր նպատակներով օգտագործման իրար հակասող եղանակների պատճառով²⁴: Հողի մասնավոր սեփականատերերի կողմից հարուցված հայցերը հատուկ մտահոգություն են առաջացնում բավարար իրավաբանական օժանդակության բացակայության պայմաններում, քանի որ դրանք հանգեցնում են հյուսիսային եղջերուների արածեցման արգելմանը և սամիների համար իրավաբանական աջակցության անմատչելիությանը:

[14.19] «ԼԻՆԴՈՆՆ ԸՆԴՈՂԵՄ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (LINDON v AUSTRALIA, 646/95)

Հեղինակը հայտնել է, որ ուրիշի սեփականություն ներթափանցելու համար քրեական դատավճիռը բողոքարկելու արդյունքում իրեն ներկայացրած ծախսերի հատուցման կարգադրությամբ խախտվել են 14-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները:

¶ 6.4. Հեղինակի՝ 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին այն պնդման առնչությամբ, որ մասնակից պետությունը պահանջել է վճարել կատարված ծախսերի համար, իսկ դատարանները այն հաստատել են, կոմիտեն նշում է, որ եթե մասնակից պետության վարչական, դատախազական կամ դատական ատյանների կողմից անձի վրա դրված ծախսային բեռը նրան դե ֆակտո հնարավորություն չի տվել դատարան դիմելու, ապա դա կարող է հարցեր առաջացնել 14-րդ հոդվածի 1-ին կետի մասով: Այդուհանդերձ կոմիտեն այն կարծիքին է, որ սույն գործով հեղինակը չի հիմնավորել իր բողոքի ընդունելիությունը: Հեղինակին ներկայացրած ծախսերը հիմնականում գոյացել են իր իսկ կողմից հարուցված դատավարության հետևանքով, ինչը որևէ ուղղակի կապ չունի մասնավոր սեփականության իրավունքի խախտման համար հեղինակի դեմ առաջադրված մեղադրանքի մասով նրա պաշտպանության հետ: Հետևաբար, դիմումի այս մասն անընդունելի է՝ ըստ կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի:

Լինդոնի գործին կարելի է հակադրել հետևյալ գործը:

[14.20] «ԱԱՐԵԼԱՆ և ՆԱԿԱԼԱՅԱՐՎԻՆ ԸՆԴՈՂԵՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (ÄÄRELÄ and NÄKKÄLÄJÄRVI v FINLAND, 779/97)

Հեղինակները ներկայացրել են, ի թիվս այլոց, սամի ժողովրդի՝ որպես փոքրամասնության իրավունքների վերաբերյալ դատավեճում իրենց ներկայացված ծախսերի հատուցման կարգադրության մասին հետևյալ բողոքը²⁵.

¶ 3.2. Հեղինակները նաև նշում են, որ առաջին ատյանի դատարանից հետո նոր միայն վերաքննիչ մարմնում իրենց ծախսերի հատուցման կարգադրություն ներկայացնելու փաստը կողմնակալության դրսևորում է և էապես թույլ չի

²³ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 112:

²⁴ Տե՛ս [24.23-24.24] և [24.31-24.33]:

²⁵ Սույն դիմումի փոքրամասնության իրավունքներին առնչվող հարցերի վերաբերյալ տե՛ս [24.34]:

տալիս սամի ժողովրդի մյուս ներկայացուցիչներին կիրառել դաշնագրով սահմանված իրենց իրավունքները՝ սեփական մշակույթը և ապրուստը պաշտպանելու համար: Պետությունը ոչ մի աջակցություն ցույց չի տալիս կարիքավոր հայցվորներին վճարման ծախսերը հոգալու համար:

Մասնակից պետությունը բերել է հետևյալ փաստարկը.

¶ 4.11. Ծախսերի հատուցման կարգադրության ներկայացման առնչությամբ մասնակից պետությունը մատնանշում է, որ իր օրենսդրության շրջանակներում պարտվող կողմը պարտավոր է պահանջի դեպքում հոգալ հաղթող կողմի իրավաբանական ծախսերը: Ըստ օրենքի՝ իրավիճակը չի փոխվում, եթե նույնիսկ կողմերը հանդիսանում են մասնավոր անձ և հանրային իշխանություն, կամ եթե գործը վերաբերում է մարդու իրավունքների հետ կապված հարցերին: Այս նույն սկզբունքները գոյություն ունեն շատ այլ պետություններում, այդ թվում՝ Ավստրիայում, Գերմանիայում, Նորվեգիայում և Շվեդիայում, և հիմնավորվում են որպես ավելորդ դատավարություններից և ձգձգումներից խուսափելու միջոց: Մասնակից պետությունը պնդում է, որ այս մեխանիզմը՝ իրավաբանների ծախսերը հոգալու համար անվճար իրավաբանական օգնության հետ մեկտեղ, դատարանում հավասարություն է ապահովում հայցվորների և ամբաստանյալների միջև: Այդուհանդերձ մասնակից պետությունը նշում է, որ օրենքում կատարված փոփոխությունը, 1999 թ. հունիսի 1-ից սկսած, հնարավորություն կտա դատարանին *ex officio* կրճատելու ծախսերի հատուցման այն կարգադրությունը, որն այլապես բացահայտ կերպով ոչ ողջամիտ կամ անարդարացի կլիներ դատավարության արդյունքում ի հայտ եկող փաստերի, կողմերի դիրքորոշման և հարցի կարևորության առումով:

Հեղինակները պատասխանել են.

¶ 5.5. 14-րդ հոդվածի շրջանակներում դիմումում բարձրացված հարցերի մասով մասնակից պետության փաստարկների առնչությամբ հեղինակը պարզաբանում է իրավաբանական ծախսերի ներկայացման փաստը՝ նշելով, որ այժմ փոփոխված և առավել ճկուն ծախսերի հատուցման ռեժիմը չի կիրառվել իր նկատմամբ: Այդ փոփոխությունը կատարվել է մասամբ սույն դիմումի ներկայացման արդյունքում: Հեղինակները մատնանշում են, որ ծախսերը ներկայացնելու մասին որոշումը հաստատելիս Անտառապահության տեսչությունը հրապարակավ հայտարարել է, որ պահանջել է «կանխել ավելորդ քննությունները»: Այնուամենայնիվ, այն փաստը, որ հեղինակները հաղթահարել են առաջին ատյանի դատարանը, ցույց է տալիս, որ այս քննությունն առնվազն չի կարող ավելորդ համարվել:

ՄԻԿ-ը վճիռ կայացրեց հօգուտ հեղինակների հետևյալ կետով.

¶ 7.2. Հեղինակների այն փաստարկի առնչությամբ, որ վերաքննիչ մարմնում իրենց ներկայացված զգալի ծախսերի հատուցման փաստի հաստատումը խախտել է դատարանի առջև հավասարության մասով 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրենց իրավունքները, կոմիտեն համարում է, որ հաղթող կողմի ծախսերը ներկայացնելու օրենքով սահմանված խիստ պարտականությունը կարող է զսպող ազդեցություն ունենալ այն անձանց վրա, ովքեր հայտարարում են դաշնագրով սահմանված իրենց իրավունքների խախտման մասին՝ դատարանում իրավական պաշտպանության միջոցից օգտվելու նպատակով: Կոմիտեն տվյալ գործով նշում է, որ հեղինակները հանդիսանում են մասնավոր անձ, նրանք հայց են ներկայացրել դաշնագրի 27-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների մասին: Նման հանգամանքներում կոմիտեն համարում է, որ վճռաբեկ դատարանի կողմից զգալի ծախսեր նշանակելը, հաշվի չառնելով տվյալ հեղինակների վրա դրա հետևանքները կամ նման իրավիճակում հայտնված այլ հայցվորների վրա դատարանի դիմելու առումով դրա ազդեցությունը, դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով և 2-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտում է: Կոմիտեն նշում է, որ 1999 թ. դատավարության կարգը ղեկավարող օրենքում կատարված փոփոխություններով այժմ մասնակից պետության դատարաններն ունեն այդ տարրերը յուրաքանչյուր գործով հաշվի առնելու հայեցողական իրավասություն:

¶ 8.2. Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի վերաբերյալ կոմիտեն կարծում է, որ հեղինակներն իրավասու են օգտվելու իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից: Հեղինակներին ներկայացված ծախսերի առումով կոմիտեն համարում է, որ, ելնելով նրանից, որ ծախսերի ներկայացմամբ խախտվել է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը, ավելին՝ այն հաջորդվել է դատավարությամբ՝ դրանով իսկ խախտելով 14-րդ հոդվածի 1-ին կետը, մասնակից պետությունը պարտավոր է հեղինակներին վերադարձնել արդեն հատուցված ծախսերի մասը և չպահանջել մնացած մասի վճարումը:

Արտահայտելով իր համաձայնությունը՝ պարոն Բհագվաթին նշել է իր կարծիքում.

Պարզ է, որ տվյալ ժամանակահատվածում գործող օրենքով դատարանը հայեցողական իրավասություն չուներ ծախսերը նշանակելու համար: Դատարանն օրենքով պարտավոր է ծախսերը շնորհել հաղթող կողմին: Դատարանը

չէր կարող հարմարեցնել ծախսերը պարտվող կողմին և նույնիսկ չներկայացնել նրան ծախսերը՝ հաշվի առնելով դատավեճի բնույթը, հանրության շահը և կողմի ֆինանսական դրությունը: Նման իրավական դրույթը անհանգստացնում է ոչ այնքան հարուստ, մասնավորապես՝ *actio popularis** հիմքով հայց ներկայացրած հայցվորների դատարան դիմելու իրավունքի տեսանկյունից: Սույն գործի պարագայում, երբ հանրության շահից ելնելով՝ սամի ժողովրդի երկու անդամ հայց է ներկայացրել՝ իրենց մշակութային իրավունքներն իրենց որակմամբ լուրջ խախտումից պաշտպանելու համար, նման կոպիտ և կուրորեն կիրառվող իրավական դրույթի շրջանակներում զգալի ծախսերի ներկայացումը, իմ կարծիքով, 14-րդ հոդվածի 1-ին կետի և 2-րդ հոդվածի ակնհայտ խախտում է: Հարկ է բավարարվել նրանով, որ նման իրավիճակ ապագայում չի առաջանա, քանզի մեզ հայտնել են, որ ծախսերի նշանակման մասին օրենքն արդեն փոփոխվել է: Այժմ դատարանը կարող է իր հայեցողությամբ որոշել, թե ընդհանրապես պե՞տք է ներկայացնել պարտվող կողմի վճարմանը հաղթող կողմի ծախսերը, իսկ ներկայացնելու դեպքում որոշել՝ այդ ծախսերը կախվա՞ծ են տարբեր հանգամանքներից, ինչպես օրինակ՝ իմ կողմից վերը հիշատակված հանգամանքներից:

ՄԻԿ-ը որոշեց, որ մասնակից պետության՝ մինչև 1999 թ. հունիսը գործող ծախսերի հատուցման կարգադրությունները կարգավորող ոչ ճկուն կանոնները կարող էին զսպել մարդկանց ՔՔԻՄ-ով սահմանված իրենց իրավունքների խախտումների համար իրավական պաշտպանության ազգային միջոցներ պահանջելու հարցում: Այս փաստը հանգեցրել է նրան, որ մարդու իրավունքների վերականգնման համար անձի՝ դատարան դիմելու իրավունքը զգալիորեն սահմանափակվել է, ինչը հակասում է 14-րդ հոդվածի 1-ին կետին (2-րդ հոդվածով սահմանված դատաիրավական պաշտպանության միջոց ստանալու իրավունքի հետ մեկտեղ): «Ջսպման» այս փորձաստուգման շրջանակներում անձի՝ ծախսերը հատուցելու փաստացի կարողությունը նշանակություն չունի: Եթե նույնիսկ այն անձը, ում ներկայացվել են ծախսերը, շատ հարուստ է, միևնույն է, այն փաստը, որ պարտության դեպքում նա կարող է դրամական պատժի ենթարկվել, որպես զսպման միջոց է ծառայում, թեև այն, անշուշտ, այնքան էլ ուժեղ զսպման միջոց չէ, ինչպես պակաս ունևոր մարդու համար²⁶:

[14.21] ՄԻԿ-ի վեց անդամ (տիկին Շանեն և պարոնայք Ամորը, Անդոն, Քլեյնը, Շիրերը և Յալդենը) իրենց անհամաձայնությունը հայտնեցին Աարելայի գործով:

Թեև մենք համաձայն ենք ծախսերի ներկայացման կապակցությամբ կոմիտեի ընդհանուր մոտեցմանը (տե՛ս նաև «*Լինդոն ընդդեմ Ավստրալիայի*» (*Lindon v Australia*, 646/1995) գործը), չենք կարող համաձայնել, որ սույն գործով համոզիչ փաստարկներ են բերվել, և ապացուցվել է, որ բողոքարկման ատյանում կայացված վճիռն իրականում այնքան խիստ է եղել հեղինակների նկատմամբ, որ նրանք չեն կարողացել կամ ապագայում չեն կարողանա դատարան դիմել: Մեր կարծիքով՝ նրանք չեն հիմնավորել ֆինանսական դժվարությունների մասին պնդումը:

Ապագայում հեղինակների և հնարավոր այլ հեղինակների վրա զսպման հավանական ազդեցության առնչությամբ հարկ է նշել դատավարական օրենսգրքի փոփոխությունը, որով դատարանն իրավասու է կրճատել ծախսերի հատուցման այն չափը, որն ակնհայտորեն ոչ ողջամիտ և անարդարացի կլիներ՝ հաշվի առնելով տվյալ գործի հատուկ հանգամանքները (տե՛ս վերը 4.11 պարբերությունը):

Փոքրամասնությունը որոշեց, որ 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտումն ի հայտ է եկել միայն այն ժամանակ, երբ ծախսերի հատուցման կարգադրությունն այնքան խիստ է եղել, որ հնարավորություն չի տվել անձին *դե ֆակտո* դատարան դիմելու: Այս փորձաստուգման մասին նախկինում նշվել է *Լինդոնի* գործով [14.19]: Ջսպումն ինքնին կարծես չի բավարարում այս փորձաստուգմանը: Հետևաբար, այն անձի հարուստ լինելու փաստը, ում վճարման են ներկայացվել ծախսերը, մի հանգամանք է, որը հարկ է հաշվի առնել: Առավել մեծ ծախսերի հատուցման հավանականությունը կարող է զսպել հարուստին, սակայն չի արգելի նրան դիմել դատարան, եթե նա տեսնի, որ կարող է իրեն թույլ տալ նման ծախսեր կատարել: Ուստի փոքրամասնության տեսանկյունից ծախսերի հատուցման կարգադրությամբ չի խախտվել ՔՔԻՄ-ը, քանի որ հեղինակները չեն հիմնավորել այն հանգամանքը, որ իրենց ֆինանսական դրությունն այնքան ծանր է, որ վճռականորեն թույլ չի տվել իրենց հետագայում դատարան դիմել:

* *Actio popularis* հասկացությունը դատաիրավական միջոց է, ինստիտուտ, որը կարելի է կիրառել քաղաքացիական օրենսդրության, ինչպես նաև սպառողների և բնապահպանության պաշտպանության շրջանակներում (*ծնք. քարզմ.*):

²⁶ Սույն պարբերությունը վերցված է՝ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2002) 2 *Human Rights Law Review* 287 at 299-300:

[14.22] Նշված է, որ *Սարելայի* գործով ծախսերի հետ կապված հարցով գերադասելի է մեծամասնության վճիռը: Ծախսերի հատուցման կարգադրությունները չպետք է այնպես կազմվեն, որ զսպեն մարդկանց օրինական ճանապարհով ազգային դատարաններում մարդու իրավունքների չարաշահումների համար վերականգնում պահանջելու փորձերը: Թեև 1999 թ. հունիսին Ֆինլանդիայում կատարված փոփոխությունները հեռակա կարգով անդրադարձել են այդ հարցին, սակայն հեղինակներն իրավունք ունեն, որ իրենց ներկայացված ծախսերի մասով խախտման փաստն ընդունվեր դատարանի կողմից մինչև 1999 թ. հունիսը գործող ՔՔԻՄԴ-ին հակասող իրավական ռեժիմի շրջանակներում²⁷:

[14.23]

**«ՄԱՅՈՒԿԱՆ ընդդեմ ՆՈՐ ՋԵԼԱՆԴԻԱՅԻ»
(MAHUIKA v NEW ZEALAND, 547/93)**

Սույն գործը վերաբերում է վարույթում գտնվող քաղաքացիական գործերի հարկադիր կարճմանը: 1992 թ. Ուայթանգի համաձայնագրի (ձկնորսության մասին հայցեր) կարգավորման մասին օրենքի (այսուհետև՝ համաձայնագիր) ընդունման պահին հեղինակների գործը գտնվում էր Նոր Ջելանդիայի դատարանների վարույթում՝ ընդհանուր իրավունքով սահմանված իրենց ձկնորսական իրավունքը որոշելու նպատակով: Համաձայնագրով դադարեցվել էին ընդհանուր իրավունքով նախատեսված հայցապատճառները՝ փոխարինելով դրանք օրենքով սահմանված նոր իրավունքներով: Հեղինակները, ի թիվս այլոց, ներկայացրել են հետևյալ բողոքը²⁸.

¶ 6.5. Հեղինակները բերել են այն փաստարկը, որ նախքան 1992 թ. Ուայթանգի դաշնագրի (*ձկնորսության մասին հայցեր*) կարգավորման մասին օրենքի հաստատումը իրենք ունեին դատարան կամ տրիբունալ դիմելու իրավունք, ինչն ամրագրված է «Ձկնորսության մասին» օրենքի 88-րդ բաժնով՝ ընդհանուր իրավունքով և Ուայթանգի դաշնագրով սահմանված ձկնորսական իրենց իրավունքները կամ շահերը պաշտպանելու, ինչպես նաև դրանց բնույթը և շրջանակը որոշելու և հաստատելու համար: Այն փաստը, որ 1992 թ. օրենքով չեղյալ է համարվել այս բաժինը, խոչընդոտում և սահմանափակում է դատական գործում իրավունքների և պարտավորությունների արդար և հրապարակային դատավարության իրենց իրավունքը, որը երաշխավորված է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով: Սա պայմանավորված է նրանով, որ օրենքն այլևս չի նախատեսում որևէ շրջանակ, որում կարող է հայց հարուցվել այս իրավունքների կամ շահերի առնչությամբ:

Մասնակից պետությունը պատասխանել է.

¶ 7.8. Մասնակից պետությունը հավելում է, որ հեղինակների բողոքը միտված է 1992 թ. համաձայնագրի առանցքային տարրի խեղաթյուրմանը: Մասնակից պետության կարծիքով՝ հեղինակների այն փաստարկը, որ համաձայնագրով դադարեցվել է արդեն գոյություն ունեցող հայցերով դատարան դիմելու իրավունքը, անտեսում է այն փաստը, որ համաձայնագիրն իրականում բավարարել է այդ հայցերը՝ երաշխավորելով առևտրային ձկնորսությամբ զբաղվելու իրավունքը: Քանի որ այդ հայցերը բավարարվել են, դատարան դիմելու իրավունքն այլևս չի կարող կիրառվել այս իրավունքների ընդլայնումը պահանջելու նպատակով: Այնուամենայնիվ, մասնակից պետությունը բացատրում է, որ թեև արդեն գոյություն ունեցող որևէ հայց այլևս չի կարող հիմք ծառայել նոր հայցապահանջի համար, սակայն մարդիկների ցեղի ձկնորսական խնդիրները մնում են դատարանի իրավասության շրջանակներում:

ՄԻԿ-ը վճիռ կայացրեց հօգուտ մասնակից պետության.

¶ 9.10. Հեղինակի՝ ձկնորսության իրավունքին վերաբերող հայցերով դատարանների վարույթում գտնվող գործերի կարճման վերաբերյալ բողոքները պետք է դիտվեն վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո: Թեև մասնակից պետության կողմից դատարանի վարույթում գտնվող գործերն օրենքով կարճելը տեսականորեն վիճելի է և խախտում է դատարան դիմելու իրավունքը, սակայն տվյալ գործի հատուկ հանգամանքներում այն կարճվել է հենց այն հայցերի բավարարման համազգային շրջանակում, որոնք գտնվում էին դատարանների վարույթում, և որոնց հետաքննությունը հետաձգվել էր մինչև բանակցությունների արդյունքի պարզ դառնալը: Նման իրավիճակում կոմիտեն կարծում է, որ հեղինակների գործերի կարճումը չի խախտել դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը:

²⁷ Այս վերջին երկու պարբերությունները վերցված են նույն տեղից, էջ 300:

²⁸ Հեղինակները նաև բողոքել են 27-րդ հոդվածով [24.20] նախատեսված համաձայնության նյութաիրավական հետևանքների առնչությամբ:

իրավունքի խախտման ոչ մի դեպք չի արձանագրվել *Մահուիկայի* գործով, քանի որ գործի կարծումը պայմանավորված է եղել վարույթում գտնվող տվյալ իրավական հայցի բավարարման ուղղված օրենսդրության հաստատումով: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը նշում է, որ առանց անձի համաձայնության՝ գործի հարկադիր կարծումը հիմնականում խախտում է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատարան դիմելու իրավունքը²⁹:

[14.24] Պարոն Շայնինը չհամաձայնեց և գտավ, որ դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը խախտվել է, քանի որ վարույթում գտնվող գործը հարկադրաբար կարճվել է՝ առանց հայցվորների համաձայնության, և գործում կիրառվել է այնպիսի օրենք, ըստ որի՝ հայցվորները զրկվել են «դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից»: Այդ օրենքով փաստորեն սահմանափակվեց հեղինակների՝ ձկնորսությամբ զբաղվելու իրավունքը և միաժամանակ ընդլայնվեցին առհասարակ մատրի ժողովրդի՝ ձկնորսությամբ զբաղվելու իրավունքները: Թեպետ Շայնինը համաձայն էր մեծամասնության այն տեսակետին, որ հեղինակների՝ 27-րդ հոդվածով նախատեսված փոքրամասնության իրավունքների խախտումը պայմանավորված չէր մատրիների իրավունքների ընդլայնմամբ [24.20], սակայն համաձայն չէր, որ տվյալ հանգամանքը կարող է գերակայել հեղինակների՝ պատշաճ գործընթացի պահպանման իրավունքների նկատմամբ:

[14.25] Արդյոք դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է դատարան դիմելու նյութաիրավական իրավունքները: Օրինակ՝ պետության կողմից դատարանում քաղաքացիական իրավախախտման դիմաց վնասի հատուցման իրավունքը վերացնելը, ինչը սահմանափակում է վնասի հատուցում պահանջելու նպատակով դատարան դիմելու անձի նյութաիրավական իրավունքը, համարվում է 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Դատարան դիմելու իրավունքի բուն հարցն արծարծվել է *Մահուիկայի* գործում: Մասնակից պետությունը բերել է հետևյալ փաստարկը.

¶ 7.7. Ի պատասխան հեղինակների այն պնդման, որ իրենք տուժել են դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտումից, մասնակից պետությունը բերել է այն փաստարկը, որ հեղինակների բողոքը սկզբունքորեն սխալ է և հոդվածին այնպիսի մի բովանդակություն հաղորդելու փորձ է, որը չի համապատասխանում տվյալ հոդվածի ձևակերպմանը և չի նախատեսվել դաշնագիրը կազմելու պահին: Ըստ մասնակից պետության՝ օրենքով սահմանված իրավունքների և իրավասությունների բացակայության պարագայում 14-րդ հոդվածը դատարան դիմելու որևէ ընդհանուր իրավունք չի նախատեսում: Փոխարենը՝ 14-րդ հոդվածը սահմանում է այն դատավարական չափանիշները, որոնք պետք է պահպանվեն արդարադատության պատշաճ իրականացման ապահովման համար: 14-րդ հոդվածի պահանջները հենց այնպես չեն առաջանում: Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ հոդվածի ներածական մասը հստակեցնում է, որ այս դատավարական չափանիշները երաշխավորվում են միայն այն ժամանակ, երբ հեռանկարում կա քրեական կամ քաղաքացիական հետաքննություն, այսինքն՝ համապատասխան իրավասություններով օժտված դատարանում հայցապահանջի առկայության դեպքում: Հեղինակների ներկայացրած այս դիրքորոշումը կհանգեցնի նրան, որ պետության օրենսդիր մարմինը չի կարողանա որոշել իր դատարանների իրավասությունների շրջանակը, ինչից հետո կոմիտեն կսկսի նյութաիրավական որոշումներ ընդունել ազգային իրավական համակարգերով նախատեսված իրավունքների դատաքննելիության մասին, մի բան, որ դուրս է դաշնագրով նախատեսված երաշխիքների շրջանակից:

ՄԻԿ-ը պատասխանել է.

¶ 9.11. Հեղինակների այն պնդման առջնությամբ, որ օրենքով չի թույլատրվում ձկնորսությամբ զբաղվելու իրավունքների վերաբերյալ հայց ներկայացնել դատարան, կոմիտեն նշում է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետը ներառում է դատական գործի իրավունքների և պարտավորությունների որոշման նպատակով դատարան դիմելու իրավունքը: Որոշ հանգամանքներում այդ իրավունքները և պարտավորությունները որոշելու նպատակով մասնակից պետության կողմից իրավասու դատական աստիճան չստեղծելու հանգամանքը կարող է համարվել 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Սույն գործով առևտրային ձկնորսության վերաբերյալ մատրի ժողովրդի պնդումների հիմնավորվածությունը որոշելու հարցում դատարանների իրավասությունը բացառված է, քանզի օրենքն իսկ նախատեսված է մնալ հայցերը կարգավորելու համար: Կոմիտեն կարծում է, որ անկախ այն հանգամանքից՝ ձկնորսությամբ զբաղվելու մասին հայցերը կարող են համարվել գործի սահմանման շրջանակից դուրս, թե՛ ոչ, 1992 թ. օրենքն իր հատուկ դրույթներով օրակարգից հանում է ձկնորսության վերաբերյալ դաշնագրի հայցերի որոշման հարցը: Չնայած դա-

²⁹ Տե՛ս նաև S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2001) 1 *Human Rights Law Review* 83, 87:

տարան դիմելու իրավունքը, միևնույն է, տրամադրվում է ձկնորսությամբ զբաղվելու իրավունքի հետ կապված այլ հարցերի, օրինակ՝ քվոտայի հատկացման դեպքում: Հեղինակները չեն հիմնավորել այն փաստարկը, որ մոր օրենսդրական դաշտի հաստատումը խոչընդոտել է 14-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներից դուրս մնացած որևէ հարցով դատարան դիմելու իրենց իրավունքի կիրառումը: Հետևաբար, կոմիտեն կարծում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը չեն վկայում 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին:

Ուստի *Մահուիկայի* գործը վկայում է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որ «որոշակի հանգամանքներում» պետությունը սատարի տվյալ հայցապահանջները և իրավասու դատարաններ տրամադրի դրանց քննության համար: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը չի մատնանշում, թե որոնք են այդ «որոշակի հանգամանքները»:

[14.26] Անշուշտ, անձը երաշխավորված է իր «դեմ ներկայացված որևէ քրեական մեղադրանքի քննության համար» դատարան դիմելու իրավունքով: Ինչպես նշված է անմիջապես վերևում, *Մահուիկայի* գործը վկայում է այն մասին, որ որոշակի քաղաքացիական հայցապահանջներով դատարան դիմելու իրավունքը նույնպես երաշխավորված է: Անցյալ գործերը ցույց են տվել, որ նման պարտադիր հայցապահանջները չափազանց քիչ են, եթե չասենք՝ իսպառ բացակայում են: Կամընսթիր արձանագրության ներքո ներկայացված մի շարք դիմումներ վերաբերում են համաներման մասին կանոնադրություններին կամ այլ օրենքներին, որոնք սահմանափակում են հեղինակի՝ մարդու իրավունքների այն ենթադրյալ խախտումների մասով փոխհատուցում պահանջելու իրավունքները, որոնք տեղի են ունեցել տվյալ պետության դեպքում մինչև կամընսթիր արձանագրության ուժի մեջ մտնելը: Այս դիմումներով, որպես կանոն, կայացվել է անընդունելիության որոշում՝ *ratione temporis*³⁰ պատճառաբանությամբ: 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված լինելու դեպքում դատարան դիմելու նյութաիրավական իրավունքը կարող է գործարկվել մինչև կամընսթիր արձանագրության ուժի մեջ մտնելն առաջացող հարցերի առնչությամբ, այն պայմանով, որ դատարան դիմելու իրավունքը կիրառվի ուժի մեջ մտնելուց հետո: Հետևաբար, *Մահուիկայի* գործին նախորդող կամընսթիր արձանագրության շուրջ ստեղծված դատաիրավական բազան վկայում է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետը չի երաշխավորում բուն քաղաքացիական հայցապահանջներ³¹:

[14.27] «Ի. Պ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (*I.P. v Finland, 450/91*) գործով հեղինակը բողոքել է, որ չի կարողացել վիճարկել իր հարկվող եկամուտների գնահատման մասին վարչական դատարանի որոշումը: Ելնելով այն հանգամանքից, որ այս հետաքննությունները չեն ներառել դատական քննություն, պարզ չէ, թե դրանք ներառված են 14-րդ հոդվածի [14.08] շրջանակներում: ՄԻԿ-ը նշել է, որ «եթե նույնիսկ այս հարցերը 14-րդ հոդվածի նյութաիրավական շրջանակներից դուրս են, ապա բողոքարկելու իրավունքը վերաբերում է քրեական մեղադրանքին, որն էլ այստեղ չի քննարկվում: Ուստի դիմումի այս մասն անընդունելի է»³²: Այսպիսով, ստացվում է՝ անձը չունի քաղաքացիական հարցերով բողոքարկելու ընդհանուր իրավունք: *Մահուիկայի* գործն իհարկե վկայում է, որ այս իրավունքը կարող է իրացվել «որոշակի հանգամանքներում» [14.25]:

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅԱՆՋՆԵՐ

[14.28]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. Մասնակից պետությունները պետք է մատնանշեն համապատասխան սահմանադրական և իրավական այն նյութերը, որոնք նախատեսում են դատարանների ստեղծում և ապահովում դրանց անկախությունը, անկողմնակալությունը և իրավասությունը, հատկապես դատավորների նշանակման կարգի, նշանակման համար անհրաժեշտ ո-

³⁰ Տե՛ս [2.06-2.11], հատկապես [2.10]:

³¹ Դատարան դիմելը որոշակի հանգամանքներում երաշխավորված է ՔՔԻՄԴ-ի այլ իրավունքներով, ինչպես օրինակ՝ 9-րդ հոդվածի 4-րդ կետով (տե՛ս [11.44-11.45]ff բերված քննարկումը): Ավելին՝ ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքի չարաշահման համար մասնակից պետության կողմից իրավական պաշտպանության միջոց չտրամադրելը ավելի շուտ այդ իրավունքի խախտում է 2-րդ հոդվածի 3-րդ կետի հետ միասին (տե՛ս, օրինակ՝ *Rodriguez v Uruguay* (322/88), 12.3-րդ պարբ. [9.125]), և ոչ թե 14-րդ հոդվածի խախտում: Այնուամենայնիվ, 2-րդ հոդվածի 3-րդ կետն անկախ իրավունք չէ, որը կարող է առանձին կիրառվել [1.23]: Այն չի խախտվում, եթե անձին դատաիրավական պաշտպանության միջոց չեն տրամադրել դաշնագրով չերաշխավորված իրավունքի համար:

³² Պարբ. 6.2.

րակավորումների և ծառայության ժամկետի, նրանց գործառույթների բարձրացման, փոխանցման կամ դադարեցման պայմանների, ինչպես նաև գործադիր և օրենսդիր մարմիններից դատական մարմնի փաստացի անկախության առումով:

[14.29]

«BAHAMONDE v EQUATORIAL GUINEA, 468/91»

¶ 9.4. Կոմիտեն նշել է հեղինակի այն փաստարկը, որ Հասարակածային Գվինեայում այս մասնակից պետության նախագահն է հսկում դատական իշխանությունը: Կոմիտեն համարում է, որ այն իրողությունը, երբ դատական և գործադիր մարմինների գործառույթները և լիազորությունները հստակ տարբերակված չեն, կամ գործադիր մարմինը կարող է հսկել կամ ուղղորդել դատական մարմնին, հակասում է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով անկախ և անկողմնակալ դատարան հասկացությանը:

Ռումինիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը կրկին հաստատել է դատական իշխանության առանձնացման մասին իր համոզմունքը, ինչն էական է 14-րդ հոդվածի պահանջները բավարարելու տեսանկյունից: Կոմիտեն մտահոգություն է հայտնել դատական հարցերում «գործադիր մարմնի միջամտության» շուրջ և առաջարկել «հստակ տարանջատել գործադիր և դատական մարմինների լիազորությունները»³³:

[14.30] Ավստրիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել, որ «տասը տարի աշխատելուց հետո են միայն դատավորներն օգտվում անկախության սկզբունքից»³⁴: Նմանապես, Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում նշվում է, որ բաց քվեարկությամբ ընտրությունը վեց տարի «անկախություն և անկողմնակալություն չի ապահովում»³⁵: Ջամբիայի առնչությամբ ՄԻԿ-ը մտահոգված էր, որ նախագահը կարող է դատավորներին ազատել աշխատանքից առանց որևէ անկախ դատական վերահսկողության³⁶: ԱՄՆ-ի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է³⁷.

¶ 23. Կոմիտեն մտահոգված է, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ որոշ մահապատիժներում դատավորների ընտրության ներկայիս համակարգը դաշնագրի 14-րդ հոդվածով նախատեսված իրավունքների վրա, և ողջունում է մի շարք մահապատիժների ըստ արժանիքների ընտրության համակարգի ընդունմանն ուղղված ջանքերը: Կոմիտեն նաև մտահոգված է նրանով, որ շատ գյուղական վայրերում արդարադատությունն իրականացվում է որակավորում և պատրաստվածություն չունեցող անձանց կողմից:

Հետևաբար, ՄԻԿ-ը մեծապես սատարում է դատական ոլորտում պաշտոնավարման ժամկետի սահմանումը՝ որպես անկախ դատական իշխանության պարտադիր պայման³⁸:

[14.31] Սլովակիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է³⁹.

¶ 18. Կոմիտեն անհանգստությամբ է նշում, որ խորհրդարանի հավանությամբ կառավարության կողմից դատավորների նշանակումը կարգավորող ներկայիս կանոնները կարող են բացասաբար ազդել դատական իշխանության անկախության վրա: Հետևաբար, կոմիտեն առաջարկում է, որ համապատասխան օրենքների ընդունմամբ քաղաքա-

³³ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 111, կետ 10:

³⁴ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 95, կետ 14:

³⁵ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 100, 8, տես նաև եզրափակիչ դիտարկումներ Պերուի վերաբերյալ (1-996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 67, կետ 14:

³⁶ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 62, կետ 16:

³⁷ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50:

³⁸ Տես նաև եզրափակիչ դիտարկումները Ռումինիայի վերաբերյալ (1993), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 30, կետ 12, Կորեայի ժողովրդավարական Հանրապետություն, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/PRK, պարբ. 8, Սիրիայի Արաբական Հանրապետություն (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/SYR, պարբ. 15, Պերու (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/PER, պարբ. 10, Մոլդովայի Հանրապետություն (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/MDA, պարբ. 12, Վիետնամ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/VNM, պարբ. 10: Տես նաև «Պատուխովն ընդդեմ Բելառուսի» (*Pastukhov v Belarus, 814/98*) գործի պարբ. 7.3-ը և «Բուսյոն և այլք ընդդեմ Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետության» (*Busyo et al v Democratic Republic of the Congo, 933/00*) գործի պարբ. 5.2-ը:

³⁹ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 79:

կանության մեջ ներառվեն դատական իշխանության անդամների նշանակումը, վարձատրությունը, պաշտոնավարումը, աշխատանքից ազատումը և կարգապահությունը կարգավորող հստակ միջոցներ, որոնք կերաշխավորեն դատական իշխանության անկախությունը և կպաշտպանեն դատավորներին քաղաքական ազդեցության ամեն մի ձևից:

Սլովակայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը քննադատում է գործադիր մարմնի կողմից դատավորների նշանակման գործելակերպը, ինչը սովորական երևույթ է մասնակից պետությունների շրջանում, այդ թվում՝ Ավստրալիայում և Միացյալ Թագավորությունում: ԱՄՆ-ում գործադիր մարմնի կողմից գերագույն դատարանի համար առաջադրված թեկնածուները քննարկվում են Սենատում: ՄԻԿ-ը կարող է միայն առաջարկել, որ մասնակից պետություններն օբյեկտիվ իրավական չափանիշներ սահմանեն դատավորների նշանակման և պաշտոնավարման պայմանների համար՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով «քաղաքական» նշանակումների հնարավորությունը:

[14.32] Սուդանի վերաբերյալ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է⁴⁰.

¶ 21. Կոմիտեն մտահոգված է, որ փաստորեն դատական մարմինն իրականում անկախ չէ, որ շատ դատավորներ հիմնականում չեն ընտրվել իրավագիտության բնագավառում իրենց որակավորման հիման վրա, որ դատավորները կարող են ճնշումների ենթարկվել կառավարության կողմից ղեկավարվող վերահսկողական գերատեսչության կողմից, և շատ քիչ թվով ոչ մահմեդականներ և կանայք են պաշտոն զբաղեցնում դատական համակարգում: Հետևաբար, հարկավոր է միջոցներ ձեռնարկել դատական մարմնի անկախությունը և տեխնիկական իրավասությունը, այդ թվում նաև՝ կանանց և փոքրամասնության ներկայացուցիչներից որակյալ դատավորների նշանակման իրավիճակը բարելավելու համար⁴¹: Բոլոր դատավորները, իրավապահ մարմինների աշխատակիցները և իրավաբանությամբ զբաղվող անձինք պետք է վերապատրաստվեն մարդու իրավունքների բնագավառում:

Սուդանի վերաբերյալ դիտարկումներում ՄԻԿ-ն առանձնահատուկ շեշտել է բազմակարծիք դատական մարմնի կարևորությունը, ինչն ապահովում է դատական իշխանությունում տարբեր արժեքների ներկայացումը:

[14.33] Դատավորներն անշուշտ պետք է պաշտպանված լինեն դժգոհ հայցվորների սպառնալիքներից և ճնշումներից⁴²:

ՈԱԶՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

[14.34] ԹԻԿ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. 14-րդ հոդվածի դրույթները այդ հոդվածի շրջանակներում կիրառելի են բոլոր դատարաններում՝ ինչպես սովորական, այնպես էլ հատուկ: Կոմիտեն նշում է, որ շատ երկրներում գոյություն ունեն քաղաքացիական անձանց դատելու իրավասությամբ օժտված ռազմական կամ հատուկ դատարաններ: Սա կարող է լուրջ խնդիրներ առաջացնել արդար, անկողմնակալ և անկախ արդարադատության իրականացման տեսանկյունից: Շատ հաճախ նման դատարանների ստեղծումը պայմանավորված է այնպիսի բացառիկ դատավարությունների իրականացման անհրաժեշտությամբ, որոնք չեն համապատասխանում արդարադատության նորմալ չափանիշներին: Թեև դաշնագրով արգելված չէ այդ կարգի դատարանների գոյությունը, սակայն դաշնագրով սահմանված պայմանները հստակ ցույց են տալիս, որ նման դատարանների կողմից քաղաքացիական գործերը պետք է լսվեն բացառիկ դեպքերում և պետք է տեղի ունենան այնպիսի պայմաններում, որոնք լիովին ապահովում են 14-րդ հոդվածում սահմանված երաշխիքները: Կոմիտեն նշել է, որ այս առումով որոշ մասնակից պետությունների զեկույցներում տեղեկատվության լուրջ պակաս կա, և այդ պետությունների դատական հաստատությունների շարքում կան քաղաքացիական անձանց դատելու իրավասությամբ օժտված նման դատարաններ: Որոշ երկրներում այս ռազմական և հատուկ դատարանները 14-

⁴⁰ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 85:

⁴¹ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումները Կոմիտեի Հանրապետության վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 118, պարբ.14, որտեղ ՄԻԿ-ն առանձնահատուկ նշում է դատավորների «համապատասխան ուսուցման» անհրաժեշտության մասին:

⁴² Եզրափակիչ դիտարկումներ Բրազիլիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 66, պարբ. 11:

րդ հողվածի պահանջներին համապատասխանող պատշաճ արդարադատության խիստ երաշխիքներ չեն տալիս, որոնք էական նշանակություն ունեն մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

[14.35]

**«ՖԱԼՍ ԲՈՐԴԱ ԵՎ ԱՅԼԲ ընդդեմ ԿՈԼՈՄԲԻԱՅԻ»
(FALS BORDA et al v COLOMBIA, 46/79)**

14-րդ հողվածով արված պնդումները հստակ երևում են ստորև բերված քաղվածքներում.

¶ 1.5. Հեղինակը պնդում է, որ [մի շարք կոլումբիացիներ, այդ թվում՝ դոկտոր Ֆալս Բորդան] տուժել են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հողվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերի խախտումից՝ ոչ իրավասու, անկախ և անկողմնակալ ռազմական դատարանի առջև կանգնելու և Կոլումբիայի սահմանադրությամբ և դաշնագրով սահմանված դատավարական երաշխիքներից ենթադրաբար զրկված լինելու հետևանքով:

¶ 9.2. Հեղինակները բերել են այն փաստարկը, որ] դաշնագրի 14-րդ հողվածի 1-ին կետը խախտվել է, երբ «Անվտանգության կանոնադրության» շրջանակներում պարունակում է տիկին Բորդաները դարձել են ռազմական կամ արտակարգ իրավիճակներում քրեական դատավարության առարկա:

Նախ՝ քաղաքացիական անձանց դատող ռազմական դատարանները, համաձայն «Անվտանգության կանոնադրության» 9-րդ հողվածի, ինչպես նաև ցամաքային, ջրային և օդային ուժերի հրամանատարներին (11-րդ հողված) և ոստիկանության պետերին (12-րդ հողված) տրված դատական իշխանության լիազորությունները, անվավեր են դարձնում իրավասու, անկախ և անկողմնակալ դատարան դիմելու իրավունքը: Թիվ 1923 որոշման 9-րդ, 11-րդ և 12-րդ հողվածներն անտեսում են ոչ միայն համընդհանուր ճանաչում ունեցող *nemo iudex in sua causa*^{*} սկզբունքը, այլ նաև բնական և դատական տրիբունալ դիմելու իրավունքը, որը սահմանված է Կոլումբիայի սահմանադրության 26-րդ հողվածով. «Ոչ ոք չպետք է դատվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավարությունն իրականացվում է գործող օրենքների համաձայն, նախքան այլ գործողության կատարումը, որի համար անձին մեղադրանք է ներկայացվել համապատասխան իրավասություններ ունեցող դատարանի կողմից և յուրաքանչյուր գործին համապատասխան բոլոր ձևակերպումների համաձայն»:

Համապատասխանաբար, իրավասու, անկախ և անկողմնակալ միակ դատարաններն ընդհանուր իրավասություններով օժտված դատարանները կամ դատավորներն են, որոնք ստեղծվել են Կոլումբիայի սահմանադրության «Արդարադատության իրականացում» խորագիրը կրող XV բաժնի տակ և քրեական դատավարության օրենսգրքի «Իրավասության ոլորտ և իրավասության շրջանակներ» 11-րդ հողվածի համաձայն (թիվ 409 որոշում՝ ընդունված 1971 թ.): Սրա հիմքում ընկած է ոչ միայն իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքը, այլև Կոլումբիայի սահմանադրության 58-րդ հողվածը. «Արդարադատությունն իրականացվում է գերագույն դատարանի, վերադաս տարածքային դատարանների և օրենքով սահմանված այլ դատարանների և տրիբունալների կողմից օրենքով սահմանված կարգով»:

Կոլումբիայի սահմանադրությունը թույլ չի տալիս քաղաքացիների նկատմամբ ռազմական կամ արտակարգ իրավիճակներում քրեական դատաքննություն իրականացնել: Կոլումբիայի սահմանադրության 170-րդ հողվածը նախատեսում է ռազմական տրիբունալի լիազորություններ միայն «ակտիվ ծառայության կամ այդ ծառայության առնչությամբ ռազմական աշխատակազմի կողմից կատարված իրավախախտումների» դեպքում:

Այդուհանդերձ, Կոլումբիայում գործում են ռազմական կամ զինվորական դատարաններ՝ մասնավորապես, 1978 թ. ընդունված թիվ 1923 որոշման համաձայն («Անվտանգության կանոնադրություն») քաղաքական ընդդիմադիրներին դատելու համար, ինչը խախտում է երկրի սահմանադրությունը, օրենքները ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Այս իրողությունը Միավորված ազգերի կազմակերպության Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հողվածի խախտում է:

Երկրորդ՝ թիվ 1923 որոշման՝ «Անվտանգության կանոնադրության» 9-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված ռազմական կամ արտակարգ իրավիճակների դատարաններն իրավասու, անկախ և անկողմնակալ չլինելուց զատ (դաշնագրի 14-րդ հողվածի 1-ին կետ), նաև չեն ստեղծվել Կոնգրեսի կողմից ընդունված համապատասխան օրեն-

^{*} *Nemo iudex in sua causa*-ն բնական արդարադատության սկզբունք է, որը ենթադրում է, որ ոչ ոք չի կարող դատավոր լինել մի գործում, որով հանդիսանում է կողմերից մեկը (*ծնթ. քաղաք.*):

քով, ինչն իրականում փոխում կամ չեղյալ է դարձնում քրեական դատավարության օրենսգիրքը (1971 թ. ընդունված թիվ 409 որոշում): «Անվտանգության կանոնադրությունը» սովորաբար պատերազմական դրությունում ընդունվող որոշումն է, որը մասնավորապես իր ամորոշ ձևակերպմամբ ուսմահարում է դաշնագրով նախատեսված օրինականության երաշխիքը, և որի 1-ին հոդվածում կարելի է տեսնել 30 տարվա ազատազրկում նախատեսող դատավճիռներ: Ընդ որում, այս դրույթը բացակայում է քրեական դատավարության օրենսգրքում:

ՄԻԿ-ը համարեց, որ 14-րդ հոդվածը չի խախտվել: Այս հոդվածի առնչությամբ կոմիտեն արել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 13.3. Դատական երաշխիքների և արդարացի դատավարության մասին դաշնագրի 14-րդ հոդվածի դրույթների խախտման մասին հայտարարությունները, ըստ երևույթին, հիմնված են այն նախադրյալի վրա, որ քաղաքացիական անձինք չեն կարող ենթարկվել ռազմական քրեադատավարության, իսկ երբ նրանք դրան ենթարկվում են, ապա քաղաքացիական անձինք փաստորեն զրկվում են արդարացի դատավարության այն տարրական դատական երաշխիքներից, որոնք կտրամադրվեն նրանց նորմալ դատական համակարգում, ինչը պայմանավորված է ռազմական դատարանների իրավասու, անկախ և անկողմնակալ չլինելով: Հեղինակի՝ այս հայտարարությունների հիմնավորման մասին փաստարկները բերված են ընդհանուր հիմունքներով և հիմնականում կապված են թիվ 1923 որոշման սահմանադրականության հարցի հետ: Այդուհանդերձ, նա որևէ հատուկ միջադեպ կամ փաստ չի մեջբերում, որը կպաշտպաներ տվյալ գործում թիվ 1923 որոշման կիրառման մասով 14-րդ հոդվածով նախատեսված դատական երաշխիքների անտեսման մասին հայտարարությունները: Ելնելով այն հանգամանքից, որ կոմիտեն զբաղվում է ոչ թե սահմանադրականության, այլ օրենքի և դաշնագրի համաձայնության հետ կապված հարցերով, ինչը կիրառելի է տվյալ գործի դեպքում, կոմիտեն չի կարող որևէ վճիռ կայացնել դաշնագրի 14-րդ հոդվածի խախտման վերաբերյալ:

Ֆալս Բորդայի գործով վճիռը կարող է քննադատության արժանանալ, քանի որ ՄԻԿ-ը, ըստ երևույթին, հերքում է տվյալ գործում ռազմական դատարանների սահմանադրականության հետ կապված հարցերի տեղին լինելը: 14-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ անձը պետք է դատվի «օրենքով սահմանված» տրիբունալների առջև: Հետևաբար, տրիբունալի գոյության սահմանադրականությունը կամ օրինականությունը այն հարցն է, որը պետք է մտահոգի ՄԻԿ-ին:

[14.36] Չնայած Ֆալս Բորդայի գործով կայացրած իր վճիռն, մի շարք եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել որոշակի ռազմական դատարանների իրավասությունների լայն շրջանակների կապակցությամբ: Օրինակ՝ Չիլիի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում⁴³.

¶ 9. Զինվորականների դատական հետապնդման վերաբերյալ բոլոր գործերով զբաղվելու, ինչպես նաև քաղաքացիական դատարաններում հարուցված բոլոր գործերի մասին եզրակացություն անելու մասով ռազմական դատարանների իրավասությունների լայն շրջանակները նպաստում են նրան, որ դատավորները չեն պատժվում մարդու իրավունքների լուրջ խախտումների համար: Ավելին՝ քաղաքացիներին դատելու մասով Չիլիի ռազմական դատարանների շարունակական իրավասությունները հակասում են դաշնագրի 14-րդ հոդվածին: Հետևաբար.

Կոմիտեն առաջարկում է, որ օրենքում կատարվեն այնպիսի փոփոխություններ, որոնք կսահմանափակեն ռազմական դատարանների իրավասությունների շրջանակը՝ նրանց վերապահելով միայն բացառապես ռազմական բնույթի իրավախախտումներում մեղադրված զինվորականներին դատելու իրավասությունը⁴⁴:

Թերևս ամենախիստ դիրքորոշումը ՄԻԿ-ը հայտնել է Սլովակիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում⁴⁵.

¶ 20. Կոմիտեն առաջարկում է այնպիսի փոփոխություններ կատարել քրեական օրենսգրքում, որ ցանկացած պարագայում արգելվի ռազմական տրիբունալների կողմից քաղաքացիական անձանց դատելը:

⁴³ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104:

⁴⁴ Տես նաև Եզրափակիչ դիտարկումները Լիբանանի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 78, Եզրափակիչ դիտարկումները Լեհաստանի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110, պարբ. 21 և Եզրափակիչ դիտարկումները Կաներունի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 116, պարբ. 21:

⁴⁵ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 79, տես նաև Եզրափակիչ դիտարկումները Պերուի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/PER, պարբ. 12, Եզրափակիչ դիտարկումները Սլովակիայի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/SVK, պարբ. 14:

[14.37] ՄԻԿ-ը հայտնաբերել է 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում, որը բողոքարկելու իրավունք է երաշխավորում քրեական գործերում, օրինակ՝ «Մանսարաջը և այլք ընդդեմ Սիերա Լեոնեի» (*Mansaraj et al v Sierra Leone, 839-841/98*) գործում ռազմական դատարանի կողմից մահապատժի նշանակման դեպքում⁴⁶: Հնարավոր է, որ բողոքարկելու իրավունքը կիրառելի լինի բոլոր ռազմական դատարանների դեպքում:

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԸ

[14.38] **«Բ. Դ. Բ.-ն ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»**
(*B.D.B. v THE NETHERLANDS, 273/88*)

Այս գործում կոմիտեն մատնանշում է, որ 14-րդ հոդվածը վերաբերում է դատավարական երաշխիքներին, ոչ թե դատարանների կայացրած վճռի հիմնավորմանը: Կոմիտեն արել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 6.4. Դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման առնչությամբ կոմիտեն նշում է, որ թեև հեղինակները բողոքել են դատավարության արդյունքից, սակայն ընդունում են, որ դրանում պահպանվել են դատավարական երաշխիքները: Կոմիտեն նշում է, որ դաշնագրի 14-րդ հոդվածը երաշխավորում է դատարանի առջև հավասարություն, սակայն այն չի կարող մեկնաբանվել որպես իրավասու տրիբունալի կողմից դատավարության արդյունքների հավասարության կամ սխալների բացակայության երաշխավորում: Ուստի հեղինակի դիմումի այս տեսանկյունը դուրս է 14-րդ հոդվածի կիրառման շրջանակներից և ուրեմն անընդունելի՝ ըստ կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի:

[14.39] **ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

¶ 3. Կոմիտեն օգտակար է համարում այն, որ հետագա զեկույցներում մասնակից պետություններն ավելի մանրամասն տեղեկություններ տրամադրեն ձեռնարկված այն քայլերի մասին, որոնք ապահովում են օրենքով սահմանված և գործնականում երաշխավորված հավասարությունը դատարանների առջև, այդ թվում՝ դատարան դիմելու հավասար իրավունքը, արդար և հրապարակային դատավարությունները, ինչպես նաև դատավորների իրավասությունը, անկողմնակալությունը և անկախությունը:

[14.40] «Ռիչարդսն ընդդեմ ճամայկայի» (*Richards v Jamaica, 535/93*) գործով իր հայտարարության մեջ պրն Անդոն նշել է արդար քրեական դատավարության հետևյալ տարրերը (մեծամասնությունը չի առարկել)⁴⁷.

Իմ կարծիքով՝ քրեական դատավարության նպատակն է որոշել, թե ինչ է իրականում տեղի ունեցել տվյալ գործում, այսինքն՝ հայտնաբերել գործի «իրական փաստերը», որոնք ընկած են դատապարտման և պատժի նշանակման հիմքում: Անշուշտ, ամբաստանյալի ներկայացրած «իրական փաստերը» հավանաբար կտարբերվեն մեղադրող կողմի ներկայացրած «իրական փաստերից», և քանի որ ամբաստանյալները մեղադրող կողմի հետ համեմատած առհասարակ պակաս շահավետ դիրքում են, գոյություն ունեն արդար դատավարության ապահովման տարբեր դատավարական երաշխիքներ: Դատարանի առջև կողմերի հավասարությունը, ապացույցների ներկայացման կանոնները, դատավարության հսկողությունը անկախ և անկողմնակալ դատավորների կողմից, չեզոք երդվյալ ատենակալների կողմից գործի քննարկումը և վճռի կայացումը, ինչպես նաև բողոքարկման համակարգը այս երաշխիքների մասն են կազմում:

[14.41] **«ՄՈՐԱԵԼԸ ընդդեմ ՖՐԱՆՍԻՅՅԻ» (MORAEI v FRANCE, 207/86)**

Սույն գործով հեղինակը հանդիսանում է ճգնաժամի մեջ հայտնված մի ֆինանսական ընկերության վարչական տնօրենը: Ընկերության պարտքերի համար պատասխանատու անձին որոշելուն ուղղված հետա-

⁴⁶ Պարբ. 5.6:

⁴⁷ Տե՛ս մեծամասնության կարծիքը [14.46]:

զա քաղաքացիական դատավարություններում հեղինակից պահանջել են վճարել ընկերության պարտքերի մի մասը: ՄԻԿ-ին ներկայացված գործի շրջանակներում հեղինակը պնդել է, որ գրկվել է արդար դատավարության իրավունքից, քանի որ Ֆրանսիայի «Սնանկացման մասին» օրենքով իր կարգավիճակում հայտնված տնօրենները ենթակա են պատասխանատվության կանխավարկածի: Հեղինակը նաև հայտնել է, որ բողոքարկման ատյանում իր պարտավորությունների շրջանակն ընդլայնվել է, և իրեն չի տրվել այդ իրողությունը վիճարկելու որևէ հնարավորություն:

¶ 2.1. Դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ հեղինակը հարցականի տակ է դրել Ֆրանսիայի իրավական համակարգը, որն իր նկատմամբ կիրառված տեսքով չի երաշխավորում արդար դատավարության իրավունքը, մասնավորապես այն պատճառով, որ ընկերությունների նկատմամբ դատական վերահսկողություն սահմանող դատավարությունում չի եղել «դատարանի առջև կողմերի հավասարություն», և թիվ 67-563 օրենքի 99-րդ հոդվածն ամարդար ձևով սխալ կանխավարկած է դրել ընկերության աշխատակիցների վրա՝ չպահանջելով ապացուցել նրանց պարտականությունների իրական չարաչափման փաստը: Այս կապակցությամբ հեղինակը պնդում է, որ վճարել դատարանը սխալ է մեկնաբանել «պատշաճ հոգատարություն» հասկացությունը՝ եզրահանգելով, որ հեղինակի կողմից կատարված ցանկացած սխալ չի ներառել հոգատարություն մույնիսկ այն դեպքում, երբ ինքն անփութություն չի դրսևորել իր պարտականությունները կատարելիս: Հեղինակը պնդում է, որ «պատշաճ հոգատարություն» այս չափազանց խիստ մեկնաբանությունը խտրականություն է դրսևորում ընկերության աշխատակիցների նկատմամբ, որոնց տնտեսական զարգացումների մասով կայացրած սխալ որոշումը պատժվում է մույն կերպ, ինչ կերպ կպատժվեր անփութության դեպքում: Հեղինակը բերում է այն փաստարկը, որ ցանկալի արդյունքին հասնելու պարտավորություն իր վրա դնելը հավասարազոր է իրականում իր ցուցաբերած «պատշաճ հոգատարությունը» ապացուցելու որևէ հնարավորությունից զրկելուն: Հեղինակը պնդում է, որ խիստ անարդարացի է իրեն պատասխանատվության կանչել ընկերության ֆինանսական դրության համար, որն արդեն իսկ աղետալի վիճակում էր իրեն վարչական տնօրեն նշանակելու պահին, ինչն ինքը փորձել է շտկել իր աշխատանքով, սակայն, ի վերջո, դա չի հաջողվել իր հսկողությունից դուրս գտնվող գործոնների պատճառով, ինչպես օրինակ՝ զբաղվածության տեսչության կողմից աշխատակազմի օպտիմալացման արգելումը և դրան հաջորդած գործադուլները:

¶ 2.2. Հեղինակը պնդում է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետի մեկ այլ ենթադրյալ խախտում է կատարվել, երբ դատարանը նոր և ավելի բարձր գումար է սահմանել ընկերության պարտավորությունների համար՝ չտալով իրեն այդ որոշումը վիճարկելու հնարավորություն:

Մասնակից պետությունն իր պատասխանում բերել է հետևյալ փաստարկները.

¶ 4.4. Ֆրանսիայի կառավարության տեսանկյունից ընկերության տնօրենների վրա դրված պարտավորության կանխավարկածը չի հակասում արդար դատավարության սկզբունքին՝ հակառակ հեղինակի պնդման: Ընդունելի է, որ նման կարգի դատավարությունում տվյալ անձանց պարտավորության հարցը կարող է բարձրացվել առանց տնօրենների կողմից մեղքն ապացուցելու: Սակայն այսպիսին է կարգը ռիսկի համար պարտավորություն կամ «օբյեկտիվ» պարտավորություն մախատեսող յուրաքանչյուր համակարգում: Ավելին՝ օրենքով սահմանված նման կանխավարկածի բուն գոյությունը որևէ կերպ չի հակասում արդար դատավարության կանոնին, քանի որ դատավարությունը տեղի է ունենում այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են տվյալ անձի կողմից իր իրավունքների լրիվ իրացումը: Բացի այդ, սույն գործում այս կանխավարկածը անվիճարկելի չէ, քանի որ տվյալ տնօրենները կարող են, փաստորեն, ազատել իրենց պարտավորությունից՝ բոլոր միջոցներով ապացուցելով, որ իրենց ողջ եռանդը և ջանասիրությունը գործադրել են ընկերության կառավարման համար: Տրիբունալը, որը վերահսկվում է վճարել դատարանի կողմից, ազատ կարող է գնահատել ներկայացված ապացույցը՝ հաշվի առնելով այն բոլոր տարրերը, որոնք ազդել են գործում հանդես եկող տնօրենների վարքի վրա:

ՄԻԿ-ը վճիռ է կայացրել, որ 14-րդ հոդվածը չի խախտվել: Եզրահանգումը ձևակերպելիս կոմիտեն «արդար դատավարություն» հասկացությունը մեկնաբանել է հետևյալ կերպ:

¶ 9.3. Կոմիտեի առջև դրված առաջին հարցը վերաբերում էր նրան, թե արդյոք հեղինակը հանդիսանում է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտումից տուժող, որովհետև, հեղինակի ներկայացմամբ, նրա գործը չի արժանացել արդար դատավարության տվյալ կետի իմաստով: Կոմիտեն այս կապակցությամբ նշում է, որ տվյալ կետը կիրառելի է ոչ միայն քրեական հարցերի, այլև քաղաքացիական բնույթի իրավունքների և պարտավորությունների շուրջ դատավեճի դեպքում: Չնայած 14-րդ հոդվածը չի բացատրում, թե ինչ է նշանակում «արդար դատավարություն» հասկացությունը դատական գործում (հակառակ մույն հոդվածի 3-րդ կետի, որը վերաբերում է քրեական մեղադրանքների որոշմանը), դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով արդար դատավարություն հասկացությունը պետք է մեկնաբանվի որպես մի շարք պայմաններ սահմանող կետ, ինչպես օրինակ՝ դատարանի առջև կողմե-

րի հավասարություն, հավաքական դատավարությունների սկզբունքի նկատմամբ հարգանք, *ex officio reformatio in pejus*⁴⁸ արգելում, ինչպես նաև արագ դատավարություն: Գործի հանգամանքները պետք է համապատասխանաբար ստուգվեն այդ չափանիշների կիրառմամբ:

¶ 9.4. Քննարկվում է 1967 թ. հուլիսի 13-ին ընդունված «Սնանկացման մասին» օրենքի հոդվածի 3-րդ կետի կիրառումը, որով սահմանվել է դատական հսկողության տակ գտնվող ընկերությունների տնօրենների սխալի կանխավարկածը՝ պահանջելով, որ նրանց ապացուցեն, որ իրենց ողջ եռանդը և ջանասիրությունը գործադրել են ընկերության կառավարման համար, ինչը չանելու դեպքում նրանց պատասխանատվության կկանգնեն ընկերության կրած կորուստների համար: Այս առումով հեղինակը պնդում է, որ վճռաբեկ դատարանը չափազանց խիստ է մեկնաբանել «պատշաճ հոգատարություն» գաղափարը, ինչը հավասարազոր է նրան, որ հեղինակին զրկել են իր ցուցաբերած հոգատարությունն ապացուցելու ամեն հնարավորությունից: Այդուհանդերձ կոմիտեին վերապահված չէ որոշել հեղինակի ցուցաբերած հոգատարության ապացույցի հիմնավորվածությունը կամ հարցականի տակ առնել նրան պարտավորությունից ազատելու համար ներկայացրած ապացույցների բավարարությունը: Ինչ վերաբերում է հավաքական դատավարության սկզբունքը հարգելուն, ապա կոմիտեն նշում է, որ, ըստ իր ունեցած տեղեկությունների, դատավարությանը վերաբերող փաստերում չկա ոչինչ, ինչը կվկայեր այն մասին, որ հեղինակը հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր տրամադրության տակ եղած ապացույցները, կամ դատարանն իր վճիռը հիմնել է այնպիսի ապացույցների վրա, որոնք ենթակա չէին կողմերի վիճարկմանը: Ելնելով նրանից, որ հավաքական դատավարության սկզբունքն անտեսվել է, քանի որ վճռաբեկ դատարանը բարձրացրել է հեղինակի կողմից վճարվելիք գումարի չափը, և թեև փոփոխությունը չի կատարվել դատարանի կողմից նշանակված կառավարչի պահանջով և չի ներկայացվել կողմերին առարկության համար, սակայն կոմիտեն նշում է, որ վճռաբեկ դատարանը սահմանել է հեղինակի կողմից վճարվելիք գումարի չափը՝ հաշվի առնելով դատավարության ընթացքից բխող պարտավորությունները, քանի որ առաջին ատյանի դատարանը որոշել է, որ պարտավորությունների մասին հայտարարության մեջ հավաստագրումը չի վիճարկվել կողմերի կողմից, և ընկերության ընդհանուր պարտքերի մոտ 10 տոկոսը կազմող վերջնական գումարը պահանջվել է միայն հեղինակից, մինչդեռ առաջին ատյանի դատարանի պահանջով վճարումը պետք է կատարվեր մյուս տնօրենների հետ միասին, ինչը կարող էր պահանջել, որ հեղինակը վճարի ընկերության ընդհանուր պարտքերի 40 տոկոսն այն դեպքում, երբ անհնարին լինեին համապարտապաններից գանձել հեղինակի կողմից վճարվող ընկերության մասնաբաժինները: Այս պարագայում կասկածելի է, թե հեղինակից գանձվող գումարի աճ է եղել կամ անտեսվել են հավաքական դատավարության և մեղադրյալի բացակայությամբ նրան ի վնաս դատավճռի վերանայումն արգելող սկզբունքները:

Մորաելի գործը հաստատում է, որ քաղաքացիական գործերում ապացույցի բեռն ամբաստանյալի վրա դնելը թույլատրելի է 14-րդ հոդվածի 1-ին կետով: Եվ իսկապես, հետագայում *Մորաելի* գործով կոմիտեն բացահայտ հաստատել է քաղաքացիական գործերում խիստ պարտավորության գոյությունը, ինչը հատուկ է մի շարք դատական համակարգերին [14.73]:

[14.42] «ՖեՅՆ ընդդեմ ԿՈԼՈՄԲԻԱՅԻ» (*FEI v COLOMBIA, 514/92*)

Հեղինակը ներգրավված է խնամակալության շուրջ վեճում իր նախկին ամուսնու հետ, ում տրվել է իրենց երեխաների խնամակալության իրավունքը: Նա հայտնել է, ի թիվս այլոց, որ Կոլումբիայում խնամակալության շուրջ դատավարություններում խախտվել է 14-րդ հոդվածը: Նրա բողոքները հստակ արտացոլված են այս հարցով ՄԻԿ-ի կողմից հոգուտ նրա ընդունված որոշման մեջ:

¶ 8.4. Այնուամենայնիվ, 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «արդար դատավարություն» հասկացությունը ներառում է նաև այլ տարրեր: Ինչպես կոմիտեն առիթ ունեցավ հիշատակելու (Կարծիքներ՝ թիվ 203/1986 դիմումի (*Munoz v Peru*) պարբ. 11.3-ի և թիվ 207/1986 դիմումի (*Moraal v France*) պարբ. 9.3-ի վերաբերյալ), այդ տարրերը ներառում են հարգանք դատարանի առջև կողմերի հավասարության, հավաքական դատավարության և արագ դատավարությունների սկզբունքի նկատմամբ: Սույն գործով կոմիտեն բավարարված չէ, որ դատարանի առջև հավասարության և արագ դատավարության պահանջը չի կատարվել: Հարկ է նշել, որ տարիներ են պահանջվել՝ հեղինակի կողմից հարուցված յուրաքանչյուր դատական գործով դատավճիռ կայացնելու համար, իսկ հեղինակի հետ կապ հաստատելու դժվարությունները, որոնք պայմանավորված են նրա՝ մասնակից պետության տարածքից դուրս բնակվելու հանգամանքով, չեն բացատրում մեծ ձգձգումները, քանի որ նա Կոլումբիայում ապահովել էր օրինական ներկայությունը: Մասնակից պետությունը չի բացատրել այս ձգձգումները: Մյուս կողմից՝ հեղինակի նախկին ամուսնու և իր երեխա-

⁴⁸ Մեղադրյալի բացակայությամբ ավելի վաղ կայացված վճռի խստացում:

ների կողմից կամ նրանց անունից հարուցված գործողությունները լսվել են և շատ ավելի արագ են արժանացել դատարանի որոշման: Ինչպես նշել է կոմիտեն գործի ընդունելիության մասին իր որոշման մեջ, խնամակալության կամ բաժանված ծնողին երեխաներին տեսակցելու հնարավորություն ընձեռելու շուրջ դատավարությունների բնույթը պահանջում է, որ բողոքի առարկա դարձած հարցերի մասով վճիռն արագ կայացվի: Հաշվի առնելով հեղինակի հայցերով կայացրած որոշումների ձգձգումները՝ կոմիտեն այն կարծիքին է, որ այս դեպքում դա տեղի չի ունեցել:

¶ 8.5. Կոմիտեն նաև նշել է, որ մասնակից պետության իշխանությունները չեն ապահովել, որ հեղինակի նախկին անուսինը կատարի դատարանի կարգադրությունները, որոնցով հեղինակին իրավունք պետք է ընձեռվեր տեսնելու իր երեխաներին, օրինակ՝ 1982 թ. մայիսի դատարանի կարգադրությունը կամ 1989 թ. մարտի 13-ի Բոգոտայի առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռը: Հեղինակի՝ մասն կարգադրությունները չկատարելու մասին բողոքները, ըստ երևույթին, դեռ շարունակում են ուսումնասիրվել ներկայացման պահից ավելի քան 30 ամիս անց կամ մնալ չկիրարկված, ինչը կրկին վկայում է այն մասին, որ դատարանի առջև կողմերի հավասարության և արագ դատավարության պահանջը չի բավարարվել:

¶ 8.6. Եվ, վերջապես, հարկ է նշել, որ Կոլումբիայի սահմանադրության 86-րդ հոդվածի շրջանակներում հեղինակի դուստրերի անունից ներկայացված հայցերով դատավարությունները տեղի են ունեցել 1993 թ. դեկտեմբերին, իսկ դրանց մասով վճիռները կայացվել են 1993 թ. դեկտեմբերի 16-ին՝ հեղինակի առարկությունների համար սահմանված ժամկետը լրանալուց առաջ: Մասնակից պետությունը չի անդրադարձել այս կետին, ուստի հեղինակի վարկածը չի վիճարկվել: Կոմիտեի կարծիքով՝ այն, որ տիկին Ֆեյին հնարավորություն չի տրվել ներկայացնելու իր փաստարկները մինչև վճռի կայացումը, հակասում է հավաքական դատավարության սկզբունքին և, հետևաբար, դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետին:

[14.43] «Ուոլֆն ընդդեմ Պանամայի» (*Wolf v Panama, 289/88*) գործով եղել է 14-րդ հոդվածի 1-ին կետի ակնհայտ խախտում, ինչը պայմանավորված է նրանով, որ մասնակից պետությունը թույլ չի տվել հեղինակին մասնակցել համապատասխան դատավարություններին և պատշաճ կերպով խորհրդակցել իր փաստաբանների հետ⁴⁹: «Թոմասն ընդդեմ Ճամայկայի» (*Thomas v Jamaica, 272/88*) գործով բացահայտ կերպով խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին կետը, ինչը պայմանավորված է նրանով, որ մասնակից պետությունը բողոքարկման օրվա մասին հեղինակին տեղեկացրել է միայն բողոքարկման գործընթացի ավարտից հետո:

[14.44] Ստորև բերված գործերը վերաբերում են 14-րդ հոդվածի 1-ին կետի առանձին խախտումներին, որոնց թվում են վկաների նկատմամբ մեղադրող կողմի գործադրած ճնշումները, ամբաստանյալի՝ իրեն մեղավոր ճանաչելու դիմաց մեղմացում ստանալու գործարքի չարաշահումը դատախազության կողմից, դատարանի դահլիճում տիրող թշնամանքի մթնոլորտը, գործում վճռորոշ նշանակություն ունեցող ապացույցը չընդունելը դատարանի կողմից, ինչպես նաև դատավեճում հակառակ կողմի բերած փաստարկներին մեկնաբանություններ ներկայացնելու արգելքը:

[14.45]

«Ջոն Քեմպբելն ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ»
(*JOHN CAMPBELL v JAMAICA, 307/88*)

14-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին ՄԻԿ-ի վճռի հիմքում ընկած են հետևյալ փաստերը.

¶ 6.3. Հեղինակի այն փաստարկի առնչությամբ, որ իր որդի Ուեյնին կալանավորել են, որպեսզի ստիպեն նրան իր դեմ ցուցմունք տալ, կոմիտեն նշում է, որ սա լուրջ հայտարարություն է, որը հեղինակը փորձել է հիմնավորել, և որը հաստատվել է իր որդու հայտարարությամբ: Մասնակից պետության կողմից որևէ տեղեկության բացակայության պարագայում կոմիտեն իր վճիռը հիմնավորում է հեղինակի ներկայացրած փաստերով:

¶ 6.4. Դաշնագրի 14-րդ հոդվածը յուրաքանչյուրին տրամադրում է արդար և հրապարակային դատավարության իրավունք՝ իրեն ներկայացված քրեական մեղադրանքը որոշելու համար: Արդար դատավարության սկզբունքի անբաժանելի մասն է դատարանի առջև մեղադրող և պաշտպանող կողմերի հավասարությունը: Կոմիտեն նշում է, որ վկաների կալանքը՝ ցուցմունք ստանալու նպատակով, համարվում է բացառիկ միջոց, որն օրենքով և գործնական-

⁴⁹ Պարբ. 6.6:

նում պետք է կարգավորվի խիստ չափանիշներով: Կոմիտեի տրամադրության տակ եղած տեղեկություններից հստակ չի երևում, թե հատուկ հանգամանքներ են եղել հեղինակի անչափահաս երեխայի կալանքը հիմնավորելու համար: Ավելին՝ այն փաստը, որ նա հրաժարվել է իր խոսքերից, լուրջ հարցեր է առաջացնում հնարավոր ճնշումների և մասն հանգամանքներում ձեռք բերված ցուցմունքների հավաստիության կապակցությամբ: Յետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի՝ արդարացի դատավարության իրավունքը ոտնահարվել է:

Իր մասնավոր կարծիքում Վեներգրենն ավելի է մանրամասնել ոտնահարման մասին վճռի հիմնավորումները:

Դատարանում ցուցմունք տալը քաղաքացիական պարտականություն է, և բոլոր իրավական համակարգերում նախատեսվում են որոշակի հարկադիր միջոցներ՝ այդ պարտականության կատարումը երաշխավորելու համար: Դատականը և բանտարկությունն ամենահաճախ կիրառվող հարկադիր միջոցներն են, որոնք, ելնելով մեղադրող և պաշտպանող կողմերի շահերից, պետք է հավասար օգտագործվեն այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ է ապացույցները երդվյալ ատենակալներին ներկայացնելու համար, վերջիններս էլ այդ ապացույցների հիման վրա որոշում են ամբաստանյալների մեղավոր կամ անմեղ լինելը: Իր Կարծիքներում կոմիտեն նշում է, որ վկաների կալանքը համարվում է բացառիկ միջոց, որն օրենքով և գործնականում պետք է կարգավորվի խիստ չափանիշներով, և չի երևում, որ հատուկ հանգամանքներ են եղել հեղինակի գործում 13-ամյա անչափահասի կալանքը հիմնավորելու համար: Իմ կարծիքով՝ դժվար է պատկերացնել այնպիսի հանգամանքներ, որոնք կհիմնավորեն սեփական հոր դեմ ցուցմունք կորզելու համար երեխայի կալանքի փաստը: Ամեն դեպքում, այս գործով մասն հանգամանքներ ոչ մի կերպ չեն բացահայտվում, հետևաբար, հարկ է համարել, որ դատավորը ոտնահարել է օրենքի պատշաճ իրականացման սկզբունքը, ինչպես նաև 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդար դատավարության պահանջները: Խախտումը փաստորեն վկայի իրավունքների ոտնահարում է, սակայն դատավարության իրականացման վրա դրա բացասական ազդեցությունն այնպիսին է, որ դատավարությունը դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով համարվեց ոչ արդարացի⁵⁰:

[14.46] «ՌԻՉԱՐԴՍՆ ԸՆԴՈՒՆ ԵՆԱՅՎԱՅԻ» (RICHARDS v JAMAICA, 535/93)

Այս գործում հեղինակը մեղավոր է ճանաչվել սպանություն կատարելու համար և դատապարտվել մահապատժի: Յեղինակը պնդում է, որ ինքը զրկվել է արդար դատավարության իրավունքից, ինչը հակասում է 14-րդ հոդվածին: ՄԻԿ-ը համաձայնել է հետևյալ կետերով:

¶ 7.2. Յեղինակը պնդել է, որ իր դատավարությունն ընթացել է ոչ արդարացի, քանի որ մեղադրող կողմը գործը կարճելու մասին միջնորդությամբ է հանդես եկել, երբ հեղինակն ընդունել է իր մեղքը՝ սպանության մեղադրանքը [առիթ տվել սպանության գործով նոր հետաքննություն սկսելու համար]: Յեղինակը պնդում է, որ իր մեղքն ընդունելու մասին հայտարարության շուրջ ԶԼՄ-ների լուսաբանման չափը խախտել է անմեղության կանխավարկածի և արդար դատավարության իր իրավունքը: Ճանայկայի վճռաբեկ դատարանն ընդունել է, որ հեղինակը դատավարության ընթացքում իր պաշտպանությունը ներկայացնելիս թերևս հայտնվել է ոչ շահեկան վիճակում, սակայն նշել է, որ ոչինչ չի վկայում այն մասին, որ երդվյալ ատենակալները տեղյակ էին այդ մասին: Ճանայկայի դատարանները և Փաղտնի խորհրդի դատական կոմիտեն վճիռ կայացրին, որ մեղադրողի կողմից գործի քննության դադարեցումը թույլատրելի է իրավական տեսանկյունից, քանի որ Ճանայկայի օրենսդրությամբ հեղինակը վերջնականապես դատապարտվում է միայն վճիռը կայացվելուց հետո: Կոմիտեի առջև դրված հարցը տվյալ հանգամանքներում այս գործի օրինականությունը չէ, այլ այն, թե այն հակասո՞ւմ է դաշնագրով սահմանված արդար դատավարության երաշխիքներին: Մեղադրանքից հրաժարվելու ընթացակարգը հնարավորություն է տալիս մեղադրող կողմին հրապարակայնորեն կասեցնել քրեական հետաքննությունը: Մասնակից պետությունը պնդում է, որ այն կարող է օգտագործվել ի նպաստ արդարադատության, իսկ այս գործով այն օգտագործվել է արդարադատության սխալ իրականացումը կանխելու նպատակով: Այդուհանդերձ կոմիտեն նշել է, որ տվյալ գործում մեղադրող կողմը լիովին տեղյակ էր պարոն Ռիչարդսի գործի հանգամանքներին և համաձայնել էր ընդունել սպանության կատարման մասին իր հայտարարությունը: Մեղադրանքից հրաժարվելու ընթացակարգն օգտագործվել է ոչ թե հեղինակի դեմ ուղղված դատավարությունը կասեցնելու, այլ նրա դեմ անմիջապես մի նոր հետաքննության սկիզբը հնարավոր դարձնելու համար, այն նույն մեղադրանքով, որը նա արդեն ընդունել էր՝ ոչ կանխամտածված սպանություն կատարելը, որն էլ ընդունվել էր դատարանի կողմից: Ուստի դրա նպատակը և հետևանքը այդ հայտարարության հետևանքները շրջանցելն էր, որն արվել էր ճանայկայի օրենքի և պրակտիկայի համաձայն: Կոմիտեի կարծիքով՝ մասն հանգամանքներում մեղադրանքից հրաժարվել-

⁵⁰ Տե՛ս նաև Նորվեգիայի վերաբերյալ դիտարկումները, որոնք համառոտ ներկայացված են [21.38]՝ հաստատելով, որ պետության օրենսդրությունը պետք է համապատասխան վերաբերմունք նախատեսի երեխա վկաների նկատմամբ:

լու ընթացակարգին դիմելը և հեղինակի դեմ նոր մեղադրանք առաջադրելը հակասում է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատավարության պահանջներին:

[14.47]

**« ԳՐԻԴԻՆՆ ԸՆԴՈՂԵՄ ՌՈՒՍԱՍՏՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ »
(GRIDIN v RUSSIAN FEDERATION, 770/97)**

Հեղինակը բողոքել է, որ դատարանի դաշխիժում տիրող թշնամանքի մթնոլորտը զրկել է իրեն արդար դատավարությունից: ՄԻԿ-ը համաձայնել է.

¶ 3.5. 1989 թ. նոյեմբերի 26-30-ն ընկած ժամանակահատվածում ռադիոկայանները և թերթերը հայտարարեցին, որ հեղինակը «Վերելակի տղա» մականունով ենթադրյալ մարդասպանն է, ով բռնաբարել է մի քանի աղջիկների և սպանել նրանցից երեքին: Ըստ հեղինակի՝ դատարանի դաշխիժը լցված է եղել մարդկանց մեծ բազմությամբ, ովքեր իրենց աղաղակներով պահանջում էին, որ ինքը դատապարտվի մահապատժի: Նա նաև նշում է, որ մեղադրող կողմը և տուժողները սպառնում էին վկաներին և պաշտպանող կողմին, իսկ դատավորը ոչինչ չէր ձեռնարկել այս ամենին վերջ դնելու համար: Սրա պատճառով որևէ պատշաճ հնարավորություն չի եղել դատարանում հիմնական վկաներին քննելու համար:

¶ 8.2. Հեղինակի այն փաստարկի առնչությամբ, որ խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատավարության իր իրավունքը, մասնավորապես այն պատճառով, որ դատը վարող դատարանը չի կարգավորել դատարանի դաշխիժում տիրող թշնամանքի մթնոլորտը և այնտեղ նստած հանրության ճնշումները, ինչը թույլ չի տվել դատապաշտպանին պատշաճ ձևով խաչաձև հարցաքննության ենթարկելու վկաներին և ներկայացնելու իր պաշտպանական խոսքը, կոմիտեն նշում է, որ գերագույն դատարանը շոշափել է այս հարցը, սակայն հեղինակի բողոքարկումը լսելիս դրան հատուկ չի անդրադարձել: Կոմիտեն համարում է, որ վերոնշյալ դատավարության իրականացման կարգը ոտնահարել է հեղինակի՝ արդար դատավարության իրավունքը՝ 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

[14.48]

**« ՅԱՆՍԵՆ-ԳԻԵԼԵՆՆ ԸՆԴՈՂԵՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ »
(JANSEN-GIELEN v NETHERLANDS, 846/99)**

Հեղինակը վարչական դատավարության մեջ էր, որտեղ որոշվում է իր աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ հոգեկան կարողությունը: Նրա բողոքը վերաբերում է այն հանգամանքին, որ համապատասխան տրիբունալը որպես ապացույց չի ընդունել վճռորոշ նշանակություն ունեցող հոգեկան վիճակի մասին զեկույցը: ՄԻԿ-ը նշել է.

¶ 8.2. Հեղինակը պնդել է, որ այն փաստը, որ վերաքննիչ կենտրոնական տրիբունալը դատավարությունից երկու օր առաջ գործին չի կցել իր դատապաշտպանի ներկայացրած զեկույցը հոգեկան վիճակի մասին, արդար դատավարության իր իրավունքի ոտնահարում է: Կոմիտեն նշել է մասնակից պետության այն փաստարկը, որ դատարանը վճռել է, որ դատավարությունից երկու օր առաջ զեկույցն ընդունելն անտեղի խոչընդոտ կստեղծեր մյուս կողմի համար այս գործի քննության առումով: Այնուամենայնիվ, կոմիտեն նշում է, որ գործին կիրառելի դատաիրավական իրավունքով փաստաթղթերի ներկայացման որևէ ժամկետ չէր սահմանվում: Հետևաբար, վճռաբեկ դատարանը կրում էր ժամկետային սահմանափակում չունեցող պարտականություն, այն է՝ յուրաքանչյուր կողմի համար ապահովել որպես ապացույց բերված այն փաստաթղթերի վիճարկման հնարավորությունը, որոնք ներկայացրել կամ ցանկանում է ներկայացնել մյուս կողմը, իսկ անհրաժեշտության դեպքում հետաձգել դատավարությունը: Դատավարության շրջանակներում ապացույցների ներկայացման առումով դատարանի առջև կողմերի հավասարության երաշխիքի բացակայության այս պայմաններում կոմիտեն կարծում է, որ խախտվել է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը:

[14.49]

**« ԱԱՐԵԼԱՆ և ՆԱԿԱԼԱՅԱՐԿԻՆ ԸՆԴՈՂԵՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ »
(ÄÄRELÄ and NÄKKÄLÄJÄRVI v FINLAND, 779/97)**

14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում արձանագրելով՝ ՄԻԿ-ը նշեց.

¶ 7.4. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, թե վերաքննիչ դատարանը, հնարավորություն չտալով հեղինակներին ներկայացնելու իրենց դիտողությունները անտառային տնտեսության ղեկավարության կողմից հանձնման վերջնաժամկետի ավարտից հետո ներկայացված գործի՝ իրավական փաստարկներ պարունակող համառոտ նկարագ-

րության վերաբերյալ, խախտել է հեղինակի՝ արդար դատաքննության իրավունքը, որը սահմանված է 14-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, կոմիտեն նշում է, որ դատարանների հիմնարար պարտականությունն է կողմերի միջև հավասարության ապահովումը, ներառյալ հակառակ կողմի ներկայացրած բոլոր փաստարկները և փաստերը վիճարկելու հնարավորությունը: Վերաքննիչ դատարանը նշում է, որ «հատուկ պատճառ» է ունեցել կողմերից մեկի ներկայացրած այդ փաստաթղթերն ընդունելու համար, սակայն համարել է, որ մյուս կողմի պատասխանը ներգրավելու «անհրաժեշտություն ակնհայտորեն չկար»: Դրա հետևանքով հեղինակները հնարավորություն չստացան պատասխանելու գործի՝ մյուս կողմի ներկայացրած նկարագրությանը, որը դատարանը հաշվի առավ հոգուտ այն ներկայացնող կողմի վճիռ կայացնելիս: Կոմիտեն համարում է՝ տվյալ հանգամանքները ցույց են տալիս, որ վերաքննիչ դատարանը լիարժեք հնարավորություն չի տվել կողմերից յուրաքանչյուրին վիճարկելու մյուսի ներկայացրած փաստաթղթերը՝ դրանով իսկ խախտելով դատարանի առջև հավասարության և արդար դատաքննության սկզբունքները, որոնք սահմանված են դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով...

¶ 8.2. Ինչ վերաբերում է 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտմանը, որը տեղի է ունեցել վերաքննիչ դատարանի կողմից վարած գործընթացում, երբ վերջինս ընդունել է գործի՝ անտառային տնտեսության ծառայության ուշ ներկայացրած հակիրճ նկարագրությունը (պարբ. 7.4), կոմիտեն համարում է, որ վերաքննիչ դատարանի որոշումն արատավորվել է արդար դատաքննության վերաբերյալ դրույթների նշանակալի խախտմամբ, ուստի մասնակից պետությունը պարտավոր է վերանայել հեղինակների պահանջները:

ԴԱՏԱԿԱՆ ՍԽԱԼ ԿԱՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՉ ԻՐԱՎԱԶԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[14.50] Կամընսոիր արձանագրությանը վերաբերող բազմաթիվ գործերում հեղինակներն ընդհանուր բնույթի բողոքներ են ներկայացրել անարդար դատաքննության և դատարանի կողմնակալության վերաբերյալ՝ մատնանշելով, օրինակ, դատավարությունը կողմնակալ դատավորների կամ ատենակալների մասնակցությամբ, դատավորների կողմից ատենակալներին ոչ պատշաճ ցուցումներ տալը կամ փաստերի և օրենքների սխալ գնահատականը ներպետական դատարանների կողմից: ՄԻԿ-ը սովորաբար մերժել է նման բողոքները, ինչպես կարելի է տեսնել հետևյալ գործից մեջբերված հատվածներից:

«ԺԵԼՈՒԴԿՈՎԸ ընդդեմ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ» (ZHELUDKOV v UKRAINE, 726/96)

¶ 5.3. Հեղինակի պնդման վերաբերյալ, ըստ որի՝ ոստիկանության աշխատակիցներն իր որդուն ծեծի են ենթարկել 1992 թ. սեպտեմբերին նրա ծերբակալության ժամանակ և նրան ստիպել են խոստովանություն կատարել, կոմիտեն նշում է, որ թեև մասնակից պետությունն անվերապահորեն չի հերքում այդ մեղադրանքները, առաջին ատյանի դատարանի վճիռը ցույց է տալիս, որ հեղինակի մեղադրանքները քննվել են դատարանի կողմից և համարվել անհիմն: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ դատախազությունը հրաժարվել է ենթադրյալ հարձակվողների նկատմամբ քրեական գործ հարուցելուց, կոմիտեն նշում է, որ դատախազությունն ուսումնասիրել է հեղինակի դիմումը և եզրակացրել, որ քրեական գործ հարուցելու հիմքեր չկան: Այն պարագայում, երբ հստակորեն ցույց չի տրվում, որ դատարանը կամ դատախազությունը կողմնակալություն են դրսևորել կամ ոչ իրավաչափ գործողություններ են կատարել, կոմիտեն իրավասու չէ կասկածի տակ առնելու փաստերի նրանց գնահատումը և կարծում է, որ հաղորդման այս հատվածն անընդունելի է՝ համաձայն կամընսոիր արձանագրության 2-րդ հոդվածի:

«Ջ. Բ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (J.K. v CANADA, 174/84)

¶ 7.2. Կոմիտեն նաև կարծում է, որ իր իրավասությունից դուրս է ազգային դատարանների կողմից պարզված փաստական հանգամանքները վերանայելը կամ որոշելը, թե որքանով են ազգային դատարանները պատշաճ կերպով գնահատել բողոքարկման ժամանակ ներկայացված փաստերը:

«Ռ. Մ.-ն ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (R.M. v FINLAND, 301/88)

¶ 6.4. Կոմիտեն նաև կարծում է, որ վճռաբեկ դատարան չի հանդիսանում, և այն մեղադրանքները, թե ներպետական դատարանները փաստական կամ իրավական առումով սխալներ են թույլ տվել, ըստ էության դաշնագրի խախտման հարցեր չեն բարձրացնում, եթե նաև չի ենթադրվում, որ չեն կատարվել 14-րդ հոդվածի որոշ պահանջներ:

**«ՎԱՆ ՄՅՈՒՐՍԸ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(VAN MEURS v THE NETHERLANDS, 215/86)**

¶ 7.1. Հեղինակի այն պնդումների վերաբերյալ, թե իր գործի լսումներն արդարացի չեն եղել, կոմիտեն հղում է անում իր հաստատումն նախադեպային իրավունքին, համաձայն որի՝ կոմիտեն «չորրորդ ատյանի» դատարան չէ և իրավասու չէ վերագնահատելու պարզված փաստական հանգամանքները կամ վերանայելու ներպետական օրենսդրության կիրառումը . . .

**«ՊԻՆՏՈՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲԱԳՈՅԻ»
(PINTO v TRINIDAD and TOBAGO, 232/87)**

¶ 12.3. ...Սկզբունքորեն կոմիտեն չէ, որ պետք է վերանայի երդվյալների դատարանում դատավորի կողմից ատենակալներին տրված որոշակի ցուցումները, եթե չի կարելի վստահաբար ասել, որ ատենակալներին տրված ցուցումները հստակ կողմնակալ են կամ արդարադատության մերժում են: Կոմիտեի կարծիքով՝ գործերում, որոնցում կարող է մեղադրյալի մահապատժի դատավճիռ ընթերցվել, դատավորների ցուցումները՝ տրված երդվյալ ատենակալներին, պետք է մանրամասնության և անկողմնակալության առումով հատկապես բարձր չափորոշիչների համապատասխան են ...

«Գ. Ս.-ն ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (G.S. v JAMAICA, 369/89)

¶ 3.2. Ատենակալների դատարանում դատավորի՝ ատենակալներին տված ցուցումների կամ կողմնակալության վերաբերյալ ընդհանուր բնույթի պնդումների վերանայումը կոմիտեի կողմից 14-րդ հոդվածի կիրառության ոլորտից դուրս է:

[14.51] Գործից վերը բերված մեջբերումներն ամրապնդում են այն հիմնավորումը, որ 14-րդ հոդվածի 1-ին կետը, ըստ էության, ընթացակարգային, ոչ թե նյութական իրավունք է: Անձի՝ արդար դատաքննության իրավունքը երաշխավորվում է համապատասխան ընթացակարգերին հետևելով. անձը չունի այնպիսի իրավունք, որով դատարանը պետք է նրա գործում ճիշտ արդյունքի հանգի: Դատական սխալից զերծ լինելու քաղաքացիական իրավունք գոյություն չունի, քանի դեռ համապատասխան ընթացակարգերը, որոնք ընդհանրապես նախատեսված են սխալները նվազագույնի հասցնելու համար, պահպանվում են: Ավելին՝ ՄԻԿ-ը պատրաստակամություն չի դրսևորի գործում կողմնակալության կամ այլ թերության առկայությունը ընդունելու հարցում, եթե չկան անարդարության հստակ օրինակներ: Իսկապես, ՄԻԿ-ը թերևս չափազանց դժկամ է եղել ներպետական դատարանների որոշումները քննադատելու հարցում⁵¹: Մի շարք գործերում ՄԻԿ-ի անվճռականությունը թույլ չի տվել իրեն 4-րդ հոդվածի 1-ին կետի խախտումներ արձանագրել՝ չնայած դատավարական ակնհայտ թերություններին: Ուշադրություն դարձրեք, օրինակ, որ պարոն Շայնինի կողմից «Սակթագարտն ընդդեմ Ճամայկայի» (*McTaggart v Jamaica, 749/97*) գործում համապատասխան դատավարության հանգամանքների առավել խիստ մանրակրկիտ ուսումնասիրությունը հանգեցրեց նրան, որ վերջինս, անհամաձայնություն հայտնելով, որոշեց, որ առկա է 14-րդ հոդվածի խախտում: ՄԻԿ-ի մեծամասնությունը արդար դատաքննությանը վերաբերող մեղադրանքների մեծ մասը համարել է անընդունելի և ըստ էության քննության արդյունքում 14-րդ հոդվածի որևէ խախտում չի արձանագրել⁵²:

[14.52]

**«ՀԵՆԴՐԻԿՍԸ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(HENDRIKS v THE NETHERLANDS, 201/85)**

Այս գործի վերաբերյալ պարոն Վակոն առանձին կարծիք հրապարակեց, որում իր մտահոգություններն

⁵¹ Տե՛ս P. R. Ghandhi, *The Human Rights Committee and the Right of Individual Communication*, (Ashgate, Dartmouth, 1998), 216: Տե՛ս նաև [1.47]:

⁵² Տե՛ս նաև պարոն Սոլար Յրիգոյենի տարածայնությունը «Թոմասն ընդդեմ Ճամայկայի» (*Thomas v Jamaica, 614/95*) գործում:

արտահայտեց ընտանեկան հարցերով դատավարություններում տեղական դատարանների հանդեպ ՄԻԿ-ի ցուցաբերած հարգանքի առնչությամբ⁵³:

¶ 3. Իմ առաջին մտահոգությունն այն է, որ թեև ՄԻԿ-ի՝ տեղական դատարանների որոշումները չվերանայելու գործելակերպը շրջահայաց և տեղին է, թելադրված չէ կամընտիր արձանագրությամբ: Այն գործերում, որտեղ փաստերը հստակ են, և կողմերը տրամադրել են համապատասխան բոլոր վճիռների ու որոշումների տեքստերը, կոմիտեն պետք է պատրաստ լինի քննելու դրանց համատեղելիությունը դաշնագրի՝ հեղինակի կողմից վկայակոչված որոշակի դրույթներին: Այդպիսով, կոմիտեն չի գործի որպես «չորրորդ ատյան», որը որոշում է, թե որքանով է մասնակից պետության դատարանի կայացրած որոշումը համապատասխանում տվյալ երկրի օրենսդրությանը, այլ միայն կքննի, թե խախտվե՞լ են արդյոք դաշնագրի՝ ենթադրյալ տուժողի կողմից նշված դրույթները:

[14.53] «ԿԱՐՏՈՒՆԵՆԸ ԸՆԴՂԵՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (KARTTUNEN v FINLAND, 387/89)

Սա այն գործերից է, որոնց առնչությամբ դատարանի կողմնակալությունը փաստացի ապացուցվել է բողոքը ներկայացնողի կողմից: Հեղինակը պնդում էր, որ իր քաղաքացիական գործի դատավարությունն անարդար է հետևյալ պատճառներով:

¶ 2.3. Պարոն Կարտունենի գործում դատարանը բաղկացած էր մեկ մասնագետ դատավորից [career judge] և հինգ դատավորներից, որոնք իրավաբան չէին [lay judges]: Ոչ մասնագետ դատավորներից մեկը՝ Վ. Ս.-ն, է. Ս.-ի մորեղբայրն էր, ով իր հերթին «Սեկիոյոհտո» ՍՊԸ ընկերության [Säkhöjyhto Ltd. Partnership Company] գործընկերներից մեկն էր, նա էլ հեղինակի դեմ բողոք ներկայացնողն էր: Հեղինակի կնոջը որպես վկա հարցաքննելիս Վ. Ս.-ն, ըստ պնդման, ընդհատել է նրան՝ ասելով. «Նա ստում է»: Այս արտահայտությունը, համեմայն դեպք, բացակայում է դատավարության սղագրությունում և դատական մյուս բոլոր փաստաթղթերում: Ոչ մասնագետ դատավորներից մյուսը՝ Թ. Ռ.-ն, համաձայն պնդման, մինչև դատավարությունն անուղղակիորեն ներգրավված է եղել գործում, քանի որ նրա եղբայրը հանդիսացել է Ռեեկիլայի կոոպերատիվ բանկի [Räikkylä Cooperative Bank] խորհրդի անդամ այն ժամանակ, երբ հեղինակը եղել է այդ բանկի հաճախորդը: Եղբայրը խորհրդի կազմից դուրս է եկել 1984 թ. հունվարի 1-ին: 1986 թ. հունիսին բանկը նույնպես հանդես է եկել որպես հայցվոր ընդդեմ հեղինակի:

¶ 2.4. Հեղինակը երկու ոչ մասնագետ դատավորների վերաբերյալ վերապահումները չի ներկայացրել շրջանային դատարանում [District Court] ընթացող դատավարության ընթացքում: Նա այդ արել է վերաքննիչ դատարանում: Հեղինակը խնդրել է նաև, որ վերաքննիչ փուլում դատավարությունը լինի հրապարակային: Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանը, փաստերն *ին տոտո*^{*} վերազնահատելուց հետո եզրակացրել է, որ չնայած, համաձայն դատավարության օրենսգրքի 13-րդ բաժնի 1-ին պարբերության, Վ. Ս.-ին չպետք է թույլատրվեր հանդես գալ հեղինակի գործում որպես ոչ մասնագետ դատավոր, այդ թերությունը բացասաբար չի անդրադարձել շրջանային դատարանի վճռի վրա: Դատարանը գտել է նաև, որ Թ. Ռ.-ի մասնակցությունը դատավարությանը չի բացառվել, քանի որ նրա եղբայրը Ռեեկիլայի կոոպերատիվ բանկի խորհրդի կազմից դուրս է եկել 1984 թ. հունվարի 1-ին՝ դատավարության մեկնարկից շատ ավելի վաղ: Հետևաբար, վերաքննիչ դատարանի 1988 թ. մարտի 31-ի վճիռն ուժի մեջ է թողել ավելի ցածր ատյանի դատարանի որոշումը և մերժել հեղինակի՝ հրապարակային քննություն անցկացնելու վերաբերյալ դիմումը:

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ գործի արդար քննություն չի կատարվել ո՛չ Ռեեկիլայի շրջանային դատարանի, ո՛չ էլ վերաքննիչ դատարանի կողմից՝ ի խախտումն դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին պարբերության:

¶ 3.2. Հեղինակը հայտարարում է, որ Ռեեկիլայի շրջանային դատարանի կատարած քննությունն անկողմնակալ չի եղել, քանի որ երկու ոչ մասնագետ դատավորները՝ Վ. Ս.-ն և Թ. Ռ.-ն, պետք է հեռացված լինեին այդ գործի քննությունից: Հեղինակը, մասնավորապես, պնդում է, որ դատարանում տիկին Կարտունենի վկայություն տալու ընթացքում Վ. Ս.-ի արած արտահայտությունը դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: Այս համատեքստում նա փաստարկում է, որ երբ դատավարության օրենսգրքի 13-րդ բաժնի 1-ին կետը սահմանում է, որ դատավորն իրավունք չունի մասնակցելու գործի քննությանը, եթե նախկինում առնչվել է գործին, ապա տարբերակում չի մտցնում մասնագետ և ոչ մասնագետ դատավորների միջև: Եթե դատարանը բաղկացած է ընդամենը հինգ ոչ մասնագետ դատավորներից, ապա երկու ոչ մասնագետ դատավորները կարող են նշանակալիորեն ազդել դատարանի

⁵³ Տե՛ս նաև [20.49]:

^{*} *in toto*՝ լատ. ամբողջությամբ (ծան. թարգմ.):

վճռի վրա, քանի որ յուրաքանչյուր ոչ մասնագետ դատավոր մեկ ծայն ունի: Յեղիմակը պնդում է նաև, որ վերաքննիչ դատարանը սխալվել է, երբ համարել է, որ՝ (ա) ոչ մասնագետ դատավորներից մեկին՝ Թ. Ռ.-ին, գործի քննությունից հեռացնելու անհրաժեշտություն չկա, և (բ) շրջանային դատարանի կողմից շահերի բախման պատճառով ոչ մասնագետ դատավորներից մեկին գործի քննությունից չհեռացնելը չի ազդել դատավարության ելքի վրա:

ՄԻԿ-ը համաձայնեց հեղինակի հետ:

¶ 7.1. Կոմիտեից պահանջվում է որոշել՝ ոչ մասնագետ դատավոր Վ. Ս.-ին գործի քննությունից չհեռացնելը և նրա կողմից հեղինակի կնոջ վկայությամբ ենթադրաբար խանգարելը ազդե՞լ են ապացույցների՝ Ռեեկիլայի շրջանային դատարանի գնահատման և դատավճռի կայացման վրա այն աստիճան, որ խախտել են 14-րդ հոդվածը, և վերաքննիչ դատարանի կողմից հեղինակի՝ գործի բանավոր քննություն իրականացնելու վերաբերյալ դիմումը մերժելը խախտե՞լ է հեղինակի արդար դատաքննության իրավունքը: Քանի որ նշված երկու հարցերը սերտորեն կապակցված են, կոմիտեն դրանք դիտարկում է միասին: Կոմիտեն երախտագիտություն է հայտնում մասնակից պետությանը հեղինակի գործը դիտարկելիս ցուցաբերած անշահախնդիր համագործակցության համար:

¶ 7.2. Դատարանի անկողմնակալությունը և դատավարության հրապարակայնությունը 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով արդար դատաքննության իրավունքի կարևոր կողմերից են: Դատարանի «անկողմնակալությունը» նախատեսում է, որ դատավորները չպետք է կանխակալ կարծիք ունենան իրենց ներկայացրած հարցի վերաբերյալ և չպետք է գործեն այնպես, որ առաջ մղեն կողմերից մեկի շահերը: Այն դեպքում, երբ գործից դատավորի հեռացման հիմքերը սահմանված են օրենքով, դատարանն *էքս օֆիցիո*^{*} պարտավոր է դիտարկել այդ հիմքերը և փոխել հեռացման չափանիշներին համապատասխանող դատավորներին: Դատավարությունը, որն արատավորվել է դատավորի մասնակցությամբ, որը, համաձայն ներպետական օրենսդրության, պետք է հեռացված լիներ գործի քննությունից, որպես կանոն, չի կարող համարվել արդար կամ անկողմնակալ՝ 14-րդ հոդվածի իմաստով:

¶ 7.3. Վերաքննիչ ատյանները կարող են շտկել ավելի ցածր ատյանների դատարանների քննությունների ընթացքում թույլ տրված խախտումները: Ներկա գործում վերաքննիչ դատարանը, հիմնվելով զրավոր ապացույցների վրա, համարել է, որ ոչ մասնագետ դատավոր Վ. Ս.-ի ներկայությունը չի ազդել շրջանային դատարանի վճռի վրա՝ միաժամանակ ընդունելով, որ Վ. Ս.-ն ակնհայտորեն պետք է հեռացված լիներ գործի քննությունից: Կոմիտեն համարում է, որ հեղինակը վերաքննիչ դատարանում իր գործի բանավոր քննության իրավունք ուներ: Ինչպես ընդունում է նաև մասնակից պետությունը, միայն այդ ընթացակարգը թույլ կտար դատարանին վերագնահատել կողմերի ներկայացրած բոլոր ապացույցները և որոշել՝ ընթացակարգային թերությունն իրականում ազդե՞լ է շրջանային դատարանի կայացրած վճռի վրա: Վերը նշվածի լույսի ներքո կոմիտեն եզրակացնում է, որ խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին կետը:

[14.54] «ԳՈՆՍԱԼԵՍ դել Ռիոն ընդդեմ Պերուի» (GONZÁLES del RÍO v PERU, 263/87)

¶ 2.7. Յեղիմակը նշում է, որ ... [ա]1985 թվականից քրեական գործն առկախ է, և թեև հետաքննությունը չի հանգեցրել որևէ մեղադրանքի պաշտոնական առաջադրման, նրա ծերբակալության հրահանգն առկախ է, որի հետևանքով նա չի կարող հեռանալ Պերուի տարածքից: Ըստ հեղինակի՝ սա է իրերի ներկա դրությունը: 1990 թ. սեպտեմբերի 20-ի նամակում նա նշում է, որ գերագույն դատարանը տարիներ շարունակ «թաղել» է իր գործը, և դատարանի նախագահին արված հարցմանն ի պատասխան իրեն, ըստ հեղինակի, հայտնել են, որ քանի դեռ նա է [դատարանի նախագահը] որոշողը, դատավարությունը «կհետաձգվի հնարավորինս երկար ժամանակով», քանի որ հարցը տվյալ դեպքում քաղաքական է, և նա չի ցանկանում, որ մամուլն անդրադառնա վերջնական վճռին, քանի որ այն ակնհայտորեն լինելու է պրն Գոնսալեսի օգտին ... Յեղիմակը պնդում է, որ գերագույն դատարանը շահագրգռված չէ ընդունելու, որ իր սեփական դիրքորոշումն իրավական առումով անհիմն է, և դա ցույց է տալիս վերջինիս անգործությունը. . .

¶ 3.3. Պնդում է արվում նաև, որ գործի վարումը հեղինակի համար ոչ արդարացի է եղել, ո՛չ էլ անկողմնակալ՝ ի խախտումն 14-րդ հոդվածի 1-ին կետի, ինչը տեսանելի է մագիստրատների (հաշտարարներ) և դատավորների՝ քաղաքական շարժառիթներ ունեցող հայտարարություններից ...

¶ 5.2. Կոմիտեն ի գիտություն է ընդունել հեղինակի պնդումը, որ Պերուի դատարանները նրա նկատմամբ չեն պահպանել հավասարության սկզբունքը, և մասնակից պետությունը չի հերքել նրա ներկայացրած մեղադրանքը, ըստ որի՝ գործին ներգրավված որոշ դատավորներ մատնանշել են գործի ելքի քաղաքական հետևանքները (տես վերը բերված պարբերություն 2.7-ը) և դրանով հիմնավորել դատարանների անգործությունն ու դատավարության ձգձգու-

^{*} *ex officio*՝ լատ. ի պաշտոնե (ծան. քարզմ):

մը: Կոմիտեն հիշեցնում է, որ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից քննության իրավունքը բացարձակ իրավունք է, որը ենթակա չէ որևէ բացառության: Կոմիտեն համարում է, որ գերագույն դատարանի դիրքորոշումն այդ պահանջի հետ անհամատեղելի է եղել և շարունակում է մնալ այդպիսին: Կոմիտեն այն կարծիքին է մաս, որ դատական համակարգում հեղինակի առնչությամբ ձգձգումները 1985 թ. ի վեր խախտում են նրա՝ 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքը: Այդ կապակցությամբ կոմիտեն նշում է, որ 1992 թ. աշնան դրությամբ այս գործով առաջին աստիճանի դատարանը որևէ որոշում չի կայացրել:

[14.55] «ՆԱՐԱՅՆԵՆՆ ԸՆԴՈՂԵՆ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ» (NARRAINEN v NORWAY, CERD 3/91)

Նարայնենի գործով վճիռը Ռասայական խտրականության դեմ կոմիտեի որոշում է՝ 1966 թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի ներքո⁵⁴: Անկասկած, այն որոշակի նշանակություն կունենա ՄԻԿ-ի կողմից 14-րդ հոդվածի 1-ին կետի հետագա մեկնաբանությունների առումով:

¶ 9.2. Կոմիտեն համարում է, որ սույն գործով կոմիտեի առջև դրված սկզբունքային հարցը այն է, թե արդյոք պրն Նարայնենի գործով դատավարության ընթացքում հարգվե՞լ է նրա՝ կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ա) կետով սահմանված դատարանի և արդարադատություն իրականացնող մյուս բոլոր մարմինների առջև հավասարության իրավունքը՝ առանց ռասայական, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ պատկանելության հատկանիշով տարբերակման: Կոմիտեն նշում է, որ 5-րդ հոդվածի (ա) կետով սահմանված կանոնը վերաբերում է դատավարական գործընթացների բոլոր տեսակներին, ներառյալ դատավարությունը երդվյալների դատարանում: Հաղորդման հեղինակի կողմից բարձրացված մյուս մեղադրանքները, կոմիտեի կարծիքով, դուրս են կոնվենցիայի գործողության ոլորտից:

¶ 9.3. Եթե ատենակալները կասկածվում են մեղադրյալի հանդեպ ռասայական հիմքով կողմնակալություն ցուցաբերելու կամ այն բարձրաձայնելու համար, ազգային դատական իշխանությունները պարտավոր են ուսումնասիրել հարցը և որակազրկել ատենակալին, եթե կասկածներ լինեն, որ ատենակալը խտրական է:

¶ 9.4. Ներկա գործում ատենակալ տիկին Յ.-ի [J.] թույլ տված թշնամական բովանդակության ռեպլիկները [ենթադրյալ քամահրական արտահայտությունները հեղինակի մաշկի գույնի վերաբերյալ] ներկայացվել են Էյդսիվատինգի բարձր դատարանի [Eidsivating High Court] ուշադրությանը, որն իրավացիորեն կասեցրել է դատավարությունը, ուսումնասիրել խնդիրը և լսել տիկին Յ.-ի ենթադրյալ թշնամական արտահայտություններին վերաբերող վկայությունները: Կոմիտեի տեսակետն այն է, որ տիկին Յ.-ի հայտարարությունը կարող է դիտվել որպես ռասայական նախապաշարմունքի նշան, և կոնվենցիայի հոդված 5(ա)-ի դրույթի լույսի ներքո այդ արտահայտությունը կարող էր բավարար համարվել ատենակալին որակազրկելու համար: Համենայն դեպս, Նորվեգիայի համապատասխան դատական մարմինները քննել են վիճարկվող արտահայտությունների բնույթը և դրանց հնարավոր ազդեցությունը դատավարության ընթացքի վրա:

¶ 9.5. Հաշվի առնելով, որ կոմիտեի գործառնությունների մեջ չի մտնում ատենակալների որակազրկմանը վերաբերող Նորվեգիայի քրեադատավարական կանոնների մեկնաբանությունը, ինչպես նաև որոշելը, թե անհրաժեշտ է ատենակալին որակազրկել այդ հիմքով, կոմիտեն չի կարող իր տրամադրության տակ եղած տեղեկությունների հիման վրա եզրակացնել, որ կոնվենցիան խախտվել է: Այնուամենայնիվ, 9.4 պարբերության մեջ տեղ գտած դիտարկումների լույսի ներքո ներկայացնում է հետևյալ առաջարկությունները ...

¶ 10. Կոմիտեն մասնակից պետությանն առաջարկում է անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի կանխվի ռասայական հիմքով կողմնակալության որևէ ձևի մուտքը դատավարական գործընթաց, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ հավասարության և անխտրականության հիմունքներով արդարադատության իրականացման վրա: Հետևաբար, կոմիտեն առաջարկում է այնպիսի քրեական գործերում, ինչպիսին դիտարկվածն է, պատշաճ ուշադրություն դարձնել ատենակալների անկողմնակալությանը՝ կոնվենցիայի հոդված 5(ա)-ի հիմքում ընկած սկզբունքներին համապատասխան:

Նարայնենի գործով որոշումը քննադատության է արժանացել Նորվեգիայի ազգային դատարանների հանդեպ դրսևորած պատկառանքի համար. «Մի՞թե միջազգային մարմնի գործառնությունների շարքին չի դասվում... օբյեկտիվություն հաղորդելը իրավական որոշմանը և փաստերի պարզմանը, երբ ներպետա-

⁵⁴ Ընդհանուր առմամբ տե՛ս 23-րդ գլուխը:

կան դատախիզական համակարգում առկա է համակարգային ռասիզմ»⁵⁵:

[14.56] «*Քոքսն ընդդեմ Կանադայի*» (*Cox v Canada, 539/93*) գործով հեղինակը հայտարարում էր, որ Փենսիլվանիայում մահապատժի հետ առնչություն ունեցող գործերի համար «մահապատժի սահմանելու տեսանկյունից համապատասխան ատենակալներ» [‘death qualified jury’] պահանջելու գործելակերպը խախտում է մահապատժի ենթադրող գործով արդար դատաքննության իր իրավունքը⁵⁶: «Մահապատժի սահմանելու տեսանկյունից համապատասխան ատենակալների» շարքերում բացառվում են այն մարդիկ, ովքեր գիտակցաբար մերժում են մահապատժը, որպեսզի ատենակալները համապատասխան հանցագործությունների համար միաձայն մահապատժի սահմանելու հնարավորություն ունենան: Քոքսի հաղորդման այս հատվածն ակնհայտորեն անընդունելի էր, թեև ՄԻԿ-ը բացահայտ չէր անդրադարձել հենց այդ բողոքին: Ցավոք, հարցը չքննվեց ըստ էության: «Մահապատժի սահմանելու տեսանկյունից համապատասխան» ատենակալները, ենթադրաբար անհամաչափորեն, հանդիսանում են քաղաքական առումով պահպանողական հայացքների տեր, հետևաբար, կարելի է բարձրացնել նրանց անկողնակալության հարցը:

[14.57] «ՌԱՅԹՆ ընդդեմ ՃԱՄԱՅԱՅԻ» (WRIGHT v JAMAICA, 349/89)

Այս գործը հաղորդման այն հազվագյուտ օրինակներից է, երբ ՄԻԿ-ը կարծում է, որ ներպետական դատավորի ցուցումները խախտել են 14-րդ հոդվածի 1-ին կետը: Հեղինակը դատապարտվել էր սպանության համար: Նրա մեղադրանքները հստակ կարելի է տեսնել ՄԻԿ-ի արտահայտած կարծիքում.

¶ 8.1. Դաշնագրի ենթադրվող խախտումների առումով [մի շարք] հարցեր են դրված կոմիտեի առջև. (ա) արդյոք դատավորը կանխակալությամբ է դրսևորել՝ ապացույցների իր գնահատման կամ ատենակալներին տրված ցուցումների մեջ, (բ) արդյոք մահվան ժամանակի նշանակությունն անուշադրության մատնելը հեղինակի՝ արդար դատաքննության իրավունքի խախտում չի՞ եղել...

¶ 8.3. Ձոհի մահվան ժամանակի նշանակության առնչությամբ կոմիտեն, որպես սկիզբ, նշում է, որ մահացածի [հեղինակի ենթադրյալ զոհի] դիակներում կատարվել է 1981 թ. սեպտեմբերի 1-ին, մոտավորապես ժամը 13:00-ին, և փորձագետը եզրակացրել է, որ մահը վրա է հասել քառասունյոթ ժամ առաջ: Նրա եզրակացությունից բխում էր, որ հեղինակն արդեն գտնվել է ոստիկանության բաժանմունքում, երբ զոհի վրա կրակ է բացվել: Այդ տեղեկությունը հասանելի է եղել դատարանին: Ելնելով հետևանքների լրջությունից՝ դատարանը պետք է ատենակալների ուշադրությունը հրավիրեր դրա վրա, նույնիսկ եթե այդ մասին դատապաշտպանը չէր նշել . . . Հաշվի առնելով բոլոր հանգամանքները և հատկապես ելնելով նրանից, որ հեղինակը դատարանի առջև է կանգնել մահապատժի նախատեսող հանցագործության մեղադրանքով, այդ բացթողումը, կոմիտեի կարծիքով, պետք է համարել արդարադատության մերժում, և այն, որպես այդպիսին, դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: Ասվածը մնում է ուժի մեջ, նույնիսկ եթե այս ապացույցն ատենակալներին տրամադրելը, այդ պարագայում, չփոխեր նրանց վճիռը և գործի ելքը:

ԱՐԱԳԱՑՎԱԾ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[14.58] Առանց անհարկի հետաձգման քրեական դատավարությունների որոշակի երաշխիք է պարունակում հոդված 14(3)(գ)-ն: Սակայն արդար քաղաքացիական դատավարության հայեցակարգի տարրերից մեկը՝ ընդգծված կոմիտեի կողմից, այն է, որ արդարադատությունն իրականացվի անհապաղ, ինչպես ցույց է տրված հետևյալ գործում.

⁵⁵ F.F. Martin et al, International Human Rights Law and Practice (Kluwer, The Hague, 1997), 543:

⁵⁶ Կետ 8(2)(գ): Հետևաբար, Քոքսը պնդում էր՝ քանի որ Փենսիլվանիայի իշխանություններին հանձնելն իրեն կանխատեսելիորեն կանգնեցնում է նման խախտման վտանգի առջև, բուն հանձնումը խախտում է 14-րդ հոդվածը: Նման կարգի բողոքների քննարկման համար տես [8.33] և հաջորդը:

«ՄՈՒՆՅՈՍ ՅԵՐՄՈՍԱՆ ընդդեմ ՊԵՐՈՒ» (MUÑOZ HERMOZA v PERU, 203/86)

Այս գործում հեղինակը հանդիսանում էր քաղաքացիական գվարդիայի (ոստիկանություն) նախկին սերժանտ, որ աշխատանքից հեռացվել էր իր վերադասին վիրավորելու համար: Յեղինակը տասը տարի շարունակ առանց հաջողության փորձել էր վերականգնվել՝ դիմելով վարչական և դատական մարմիններ: ՄԻԿ-ն արձանագրեց, որ 14-րդ հոդվածի խախտում կա:

¶ 11.3. Ինչ վերաբերում է արդար դատաքննության պահանջին, ինչպես սահմանված է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով, կոմիտեն նշում է, որ արդար դատաքննության հայեցակարգն անհրաժեշտաբար ենթադրում է, որ արդարադատությունն իրականացվի առանց չարդարացված հապաղման: Այս կապակցությամբ կոմիտեն արձանագրում է, որ Մունյոսի գործի վարչական վերանայումն առկա է մնացել յոթ տարի, և այն ավարտվել է ի վնաս հեղինակի որոշմամբ, այն հիմքով, որ վերջինս դատական գործընթաց է սկսել: Յոթ տարի տևողությամբ հապաղումը համարվում է չարդարացված: Ավելին՝ դատական կարգով վերանայման առնչությամբ կոմիտեն նշում է, որ սահմանադրական երաշխիքների դատարանը հօգուտ հեղինակի որոշում է կայացրել 1986 թ., և մասնակից պետությունը տեղեկացրել է կոմիտեին, որ այդ որոշմամբ սպառվել են դատական պաշտպանության միջոցները ... Այնուամենայնիվ, իրականացման հարցում ձգձգումը շարունակվել է, և սահմանադրական երաշխիքների դատարանի որոշումից երկուսուկես տարի անց հեղինակը դեռևս չի վերականգնվել իր աշխատանքում: Այս հապաղումը, որը մասնակից պետությունը չի պարզաբանել, գործի արդար քննության սկզբունքի հետագա ծանրացում է: Կոմիտեն այնուհետև նշում է, որ 1987 թ. սեպտեմբերի 24-ին Կուսկոյի քաղաքացիական պալատը, ի կատարումն սահմանադրական երաշխիքների դատարանի որոշման, կարգադրել է վերականգնել հեղինակին: արդյունքում 1988 թ. մարտի 7-ի գրավոր կարծիքում դատախազը հայտարարել է, որ Կուսկոյի քաղաքացիական պալատի որոշումն իրավաչափ է, և հեղինակի «ամպարոյի»^{*} հայցը [action of *amparo*] հիմնավոր է: Սակայն նույնիսկ այս հստակ որոշումներից հետո Պերուի կառավարությունը չի վերականգնել հեղինակին: Փոխարենը՝ թույլատրվել է ևս մեկ հատուկ բողոքարկում՝ այս անգամ *ի պաշտոնե* (*էքս օֆիցիո*) տրված ի «պաշտպանություն պետության», ... որը 1988 թ. ապրիլի 15-ին հանգեցրել է Պերուի գերագույն դատարանի հակադիր որոշմանը, ըստ որի՝ հեղինակի «ամպարոյի» հայցը ժամանակին չի ներկայացվել և, հետևաբար, անընդունելի է: Սակայն այս ընթացակարգային խնդրի առնչությամբ սահմանադրական երաշխիքների դատարանն արդեն իսկ որոշում էր կայացրել 1986 թ., և հիմա հեղինակը կրկին գործ է ներկայացրել այդ դատարան, այն ընթացքի մեջ է: Առյուծների նման անվերջանալի թվացող տեղապառնայություն և որոշումները շարունակաբար չիրականացնելը անհամատեղելի են գործի արդար քննության հայեցակարգի հետ⁵⁷:

Առանց հետաձգման դատաքննության երաշխիքը ոտնահարվել է նաև «Ֆեյն ընդդեմ Կոլումբիայի» (*Fei v Colombia*, 514/92) [14.42] և «Գոնսալես դել Ռիոն ընդդեմ Պերուի» (*González del Río v Peru*, 263/87) [14.54] գործերում:

[14.59] «Կազանովան ընդդեմ Ֆրանսիայի» (*Casanovas v France*, 441/90) գործով համապատասխան դատական գործընթացները վերաբերում էին հեղինակի ազատմանը Ֆրանսիայի քաղաքացիական ծառայությունից: 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտումն չարձանագրվեց այն ժամանակահատվածի վերաբերյալ (երկու տարի և ինն ամիս), որը ձգվում էր «ապօրինի ազատման դեմ բողոք ներկայացնելուց մինչև վերականգնման [վերջնական] որոշումը»⁵⁸: «Մորաելն ընդդեմ Ֆրանսիայի» (*Moraël v France*, 207/86) գործի կապակցությամբ ՄԻԿ-ը, ելնելով «հանգամանքներից և ... սնանկության վերաբերյալ գործի բարդությունից», համաձայնեց, որ վճիռը կայացնելու համար պահանջված ժամանակը (չորս տարուց քիչ պակաս) ողջամիտ է⁵⁹:

[14.60] Խորվաթիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է⁶⁰.

* Ամպարոյի հայցը հիմնականում իսպանալեզու աշխարհում կիրառվող սահմանադրական գործընթաց է, որը նախատեսված է քաղաքացիների սահմանադրական իրավունքների պաշտպանության համար: Ամպարո բառը իսպաներենից կարելի է թարգմանել որպես պաշտպանություն, ապաստան կամ հովանավորություն (*ծան. թարգմ.*):

⁵⁷ Տե՛ս նաև «Մուկունտոն ընդդեմ Զամբիայի» (*Mukunto v Zambia*, 768/97) գործը, որով հեղինակի փոխհատուցման պահանջը լուծում չէր ստացել 18 տարի՝ լինելով 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում (պարբ. 6.4):

⁵⁸ Պարբ. 7.4:

⁵⁹ Պարբ. 9.4:

⁶⁰ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/HRV. տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Բրազիլիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 66, պարբ. 24:

¶ 16. Կոմիտեն խորապես անհանգստացած է խորվաթիայի դատարաններում լավելուն սպասող գործերի, հատկապես քաղաքացիական բնույթի, մեծ կուտակումներով: Արդարադատության իրականացման հարցում այս ձգձգումներն ակնհայտորեն խորանում են վաղեմության ժամկետի կիրառության հետևանքով, քանի որ այն նախատեսում է կասեցնել կամ դադարեցնել այն գործերը, որոնք, հաճախ կողմերին չառնչվող պատճառներով, չեն ներկայացվել դատարանի քննությանը:

Գնահատելով, որ մասնակից պետությունն ընդունում է, որ արդարադատության իրականացումը երկրում անհապաղ շտկման կարիք ունի, կոմիտեն շեշտում է, որ մասնակից պետությունը պետք է ապահովի դաշնագրի 14-րդ հոդվածի բոլոր պահանջների կատարումը: Այդ առումով կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանն արագացնել դատական համակարգի բարեփոխումը, ի թիվս այլոց, նաև ընթացակարգերի պարզեցման, դատավորների և դատարանների անձնակազմերի՝ գործերի արդյունավետ վարման մեթոդների գծով վերապատրաստման միջոցով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[14.61]

ԹԻԿ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Դատական գործերի քննության հրապարակայնությունն ի շահ անհատի և լայն հասարակության գործող կարևոր երաշխիքներից է: Միաժամանակ, 14-րդ հոդվածի 1-ին կետով ընդունվում է, որ դատարաններն իրավասու են բացառել հանրության մասնակցությունը ողջ դատավարությանը կամ նրա որևէ փուլին՝ նշված կետում նկարագրված պատճառներով: Անհրաժեշտ է ընդգծել, որ բացի նման բացառիկ հանգամանքներից, կոմիտեն համարում է, որ գործի քննությունը պետք է բաց լինի լայն հասարակայնության, ներառյալ լրատվամիջոցների ներկայացուցիչների համար և չպետք է, օրինակ, սահմանափակվի միայն որոշակի դասի պատկանող մարդկանցով: Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ այն դեպքերում, երբ հանրության մասնակցությունը գործի քննությանը բացառված է, վճիռը պետք է, որոշակի խստորեն սահմանված բացառություններով, լինի հրապարակային:

[14.62]

«ՌՈՂՐԻԳԵՍ ՕՐԵԽՈՒԵԼԱՆ ընդդեմ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ» (RODRÍGUEZ OREJUELA v COLOMBIA, 848/99)

¶ 7.3. Հեղինակը հայտարարում է, որ իր դեմ դատական գործը վարվել է միայն գրավոր՝ բացառելով գործի թե՛ բանավոր, թե՛ հրապարակային որևէ լսում: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը չի հերքել այդ մեղադրանքները, այլ ընդամենը նշել է, որ որոշումները հայտնի են դարձել հանրությանը: Ըստ կոմիտեի, որպեսզի երաշխավորվեն դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետում ընդգրկված պաշտպանության իրավունքները, մասնավորապես, (դ) և (ե) ենթակետերում եղածները, քրեական բոլոր դատավարությունները պետք է քրեական հանցագործության համար մեղադրվող անձին գործի բանավոր լսումների իրավունք տան, որոնց նա կարող է ներկայանալ անձամբ կամ ներկայացված լինել դատապաշտպանի կողմից և կարող ապացույցներ ներկայացնել ու հարցաքննել վկաներին: Հաշվի առնելով այն փաստը, որ հեղինակը դատավարության ընթացքում գործի նման քննություն չի ունեցել, ինչի բարձրակետն է եղել նրա դատապարտումը և պատժի նշանակումը, կոմիտեն համարում է, որ խախտվել է հեղինակի՝ դաշնագրի 14-րդ հոդվածին համապատասխան արդար դատաքննության իրավունքը:

[14.63] «Ռ.Մ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (R.M. v Finland, 301/88) գործով ՄԻԿ-ը հաստատում է, որ վերաքննիչ դատավարությունները, ի հակադրություն սկզբնական դատավարությունների, ինչպես «Ռոդրիգես Օրիխուելայի» գործում էր, կարող են իրականացվել գրավոր ներկայացումների հիման վրա, եթե դատավարությունները և փաստաթղթերը բաց են հանրության համար [14.142]:

[14.64] «Կավանան ընդդեմ Իռլանդիայի» (Kavanagh v Ireland, 819/98) գործով հեղինակը բողոքում էր, ի թիվս այլոց, հատուկ քրեական դատարանում իրեն դատելու վերաբերյալ պետական մեղադրանքի գծով տնօրենի [Director of Public Prosecutions] կայացրած որոշման գաղտնիության դեմ⁶¹: ՄԻԿ-ը նշեց, որ հրապարակային քննության իրավունքը «չի վերաբերում դատախազների և պետական մարմինների մինչդատական որոշումներին»⁶²:

⁶¹ Տե՛ս նաև [23.109]:

⁶² Պարբ. 10.4:

[14.65] «ՊՈԼԱՅ ԿԱՄՊՈՍԸ ընդդեմ ՊԵՐՈՒԻ» (POLAY CAMPOS v PERU, 577/94)

Հաղորդումը ներկայացվել է ենթադրյալ տուժողի կնոջ կողմից: Այն վերաբերում է տուժողի՝ «անդեն» կամ անամուն (անոնիմ) դատավորների խմբի կողմից վարված դատավարությանը:

¶ 2.2. 1993 թ. ապրիլի 3-ին Յանամայոյի բանտում կայացել է Վիկտոր Ալֆրեդո Պոլայ Կամպոսի դատավարությունը, որը վարել է այսպես կոչված «անդեն դատավորների դատարանը»՝ ստեղծված հատուկ հակաահաբեկչական օրենսդրության համաձայն: Նման մարմինը կազմված է դատավորներից, ովքեր իրավունք ունեն ծածկելու իրենց դեմքը՝ երաշխավորելու համար իրենց գաղտնիությունը և կանխելու ահաբեկչական խմբավորումների ակտիվ անդամների կողմից իրենց նկատմամբ հարձակումները: Պարոն Պոլայ Կամպոսը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ցմահ բանտարկության: Հայտնվում է, որ նրա՝ իրավաբանական ներկայացուցչությունից օգտվելու և իր պաշտպանության նախապատրաստմանը մասնակցելու հնարավորությունը խիստ սահմանափակվել է: Թեև հեղինակը չի մասնավորեցնում այն հանցագործություն(ներ)ը, որոնց համար դատապարտվել է իր ամուսինը, ներկայացված գործից երևում է, որ վերջինս դատապարտվել է «ծանրացուցիչ հանգամանքներում ահաբեկչության» համար ...

ՄԻԿ-ը վեր հանեց հետևյալը:

¶ 8.8. Ինչ վերաբերում է 1993 թ. ապրիլի 3-ին պրն Պոլայ Կամպոսի՝ «անդեն դատավորների» հատուկ դատարանի կողմից վարված դատավարությանը և դատապարտմանը, մասնակից պետության կողմից որևէ տեղեկություն չի տրամադրվել՝ չնայած այդ առնչությամբ կոմիտեի խնդրանքին, որը ներառված էր ընդունելիության վերաբերյալ 1996 թ. մարտի 15-ի որոշման մեջ: [Ա]նդեն դատավորներից բաղկացած հատուկ դատարանների կողմից իրականացված նման դատավարություններն անհամատեղելի են դաշնագրի 14-րդ հոդվածի հետ: Հեղինակի դեմ չի կարող գործել այն հանգամանքը, որ նա սուղ տեղեկություններ է ներկայացրել իր ամուսնու դատավարության վերաբերյալ: Իրականում հեռավոր բանտում «անդեն դատավորների» կողմից իրականացվող դատավարությունների համակարգի բուն էությունը հիմնված է դատական գործընթացից հանրության բացառման մտայնության վրա: Այդ իրավիճակում մեղադրյալները չգիտեն, թե ովքեր են իրենց գործը քննող դատավորները, և իրենց պաշտպանության և իրավաբանների հետ չփնտռում համար ստեղծվում են անթույլատրելի խոչընդոտներ: Ավելին՝ այս համակարգը չի երաշխավորում դաշնագրի 14-րդ հոդվածի իմաստով արդար դատաքննության կարևորագույն կողմերից մեկը, այն է՝ դատարանը պետք է լինի և պետք է երևա, որ անկախ և անկողմնակալ է: «Անդեն դատավորների» կողմից իրականացվող դատավարությունների համակարգում չի երաշխավորվում դատավորների թե՛ անկախությունը, թե՛ անկողմնակալությունը, քանի որ այդ դատարանը՝ ստեղծված *պահի թելադրանքով* (*ad hoc*), կարող է բաղկացած լինել զինված ուժերում ծառայողներից: Կոմիտեի կարծիքով՝ նման համակարգը չի ապահովում նաև անմեղության կանխավարկածը, ինչը երաշխավորված է 14-րդ հոդվածի 2-րդ կետով: Գործի առնչությամբ առկա հանգամանքներում, ինչպես եզրակացնում է կոմիտեն, խախտվել են դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3(բ) ու 3(դ) կետերը:

Իրոք, ՄԻԿ-ը նախկինում էլ Պերուի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում դատապարտել է «անդեն դատավորների» դատավարությունների գործելակերպը⁶³:

¶ 12. Կոմիտեն խիստ մտահոգություն է արտահայտում թիվ 25,475 և թիվ 25,659 դատական որոշումների վերաբերյալ, որոնք լրջորեն խաթարում են ահաբեկչության համար մեղադրվող անձանց՝ դաշնագրում ամփոփված իրավունքների պաշտպանությունը և շատ առումներով հակասում դաշնագրի 14-րդ հոդվածի դրույթներին: Թիվ 25,475 դատական որոշումը ահաբեկչության շատ լայն սահմանում է պարունակում, որի համաձայն՝ կալանավորվել ու շարունակում են կալանավորված մնալ անմեղ մարդիկ: Այն ստեղծում է «անդեն դատավորների» կողմից իրականացվող դատավարությունների համակարգ, որտեղ մեղադրյալները չգիտեն, թե ովքեր են իրենց դատավարությունն իրականացնող դատավորները, և զրկվում են իրենց գործի հրապարակային քննության հնարավորությունից: Այս որոշումը օրենքով և փաստացի լուրջ խոչընդոտներ է ստեղծում մեղադրյալների՝ իրենց պաշտպանությունը նախապատրաստելու և իրենց իրավաբանների հետ հաղորդակցվելու հնարավորության համար: Համաձայն թիվ 25,659 դատական որոշման՝ պետական դավաճանությանը վերաբերող գործերը քննվում են ռազմական դատարանների կողմից՝ անկախ այն հանգամանքից՝ մեղադրյալը քաղաքացիական անձ է, թե՛ զինված ուժերի կամ անվտանգության ուժերի անդամ: Այդ կապակցությամբ կոմիտեն խիստ անհանգստություն է հայտնում, որ պետական դավաճանության համար մեղադրվող անձանց դատավարությունն իրականացնում են նույն զինված ուժերը, որոնք կալանավորել և մեղադրանք են առաջադրել նրանց, որ ռազմական դատարանների անդամները ծառայության մեջ գտնվող սպաներ են, որ նրանց մեծ մասը իրավական հարցերով վերապատրաստում չի անցել, և ավելին՝ չկա դրույթ, որը հնարավորություն

⁶³ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 67:

կտար սահմանված պատիժը վերանայելու ավելի բարձր ատյանի դատարանում: Այս թերությունները լուրջ կասկածներ են առաջացնում ռազմական դատարանների դատավորների անկախության և անկողմնակալության առնչությամբ: Կոմիտեն շեշտում է, որ զինված ուժերին չպատկանող անձանց դատավարությունները պետք է իրականացվեն քաղաքացիական դատարաններում, անկախ և անկողմնակալ դատական մարմինների կողմից:

ՄԻԿ-ի կողմից անդեմ դատավորների դատապարտումը կրկնվեց «Առեդոնդոն ընդդեմ Պերուի» (*Arredondo v Peru, 688/96*), «Գուտիերես Վիվանկոն ընդդեմ Պերուի» (*Gutiérrez Vivanco v Peru, 678/96*) և «Գոմես Կասաֆրանկան ընդդեմ Պերուի» (*Gómez Casafranca v Peru, 981/01*) գործերում:

[14.66] Գիշտ այնպես, ինչպես անդեմ դատավորները, անընդունելի են նաև «անանուն վկաները»: Նիդեռլանդների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է⁶⁴.

¶ 12. Կոմիտեն ծայրաստիճան մտահոգված է մասնակից պետության քրեական դատավարության մեջ անանուն վկանների օգտագործման ընծեռված լայն շրջանակներով: Կոմիտեն նշում է, որ վկաններին հարցաքննում են նախաքննության ընթացքում՝ մինչև դատավարությունը՝ առանց մեղադրյալի, փաստաբանի կամ դատախազի ներկայության: Վկանների ինքնությունը, համապատասխանաբար, հայտնի է լինում միայն քննիչին [examining magistrate], հետևաբար, անհայտ է մնում նույնիսկ գործը քննող դատավորի համար: Չբացառելով անանուն վկանների օգտագործումը համապատասխան դեպքերում՝ կոմիտեն համարում է, որ այս գործելակերպը չափազանց ընդգրկում է և դժվարություններ է առաջացնում դաշնագրի 14-րդ հոդվածի առումով:

Մասնակից պետությունը պետք է ավելի մեծ ջանքեր գործադրի, որպեսզի ապահովի պաշտպանական կողմի արդար դատաքննության իրավունքն այնպիսի միջոցներով, որոնք, թեև համապատասխան և անհրաժեշտ դեպքերում պաշտպանում են վկանների ինքնությունը, ավելի մեծ հնարավորություն են ստեղծում ապացույցների ստուգման և վիճարկման համար: Մասնակից պետությունը պետք է նաև հավելյալ տեղեկություններ ներկայացնի, թե ինչպես է կայացվում որոշումը, որով վկան պետք է անանուն լինի, և նման որոշումը բողոքարկելու կամ վերանայելու ինչ հնարավորություններ կան: Մասնակից պետությունը պետք է ցույց տա, թե ինչու են վկանների պաշտպանության սովորական միջոցները, ինչպիսիք են ոստիկանության ապահոված անվտանգությունը կամ վկանների պաշտպանության և վերաբնակեցման ծրագրերը, համարվել ոչ տեղին այն գործերում, որտեղ վկանների հանդեպ ենթադրյալ սպառնալիքների պատճառով պահանջվել է անանունություն:

Կարելի է նշել, որ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 68-րդ հոդվածը թույլատրում է վկանների անանունությունը, երբ դա անհրաժեշտ է վկայի պաշտպանության համար, քանի դեռ «[ն]ման միջոցները կիրառվում են այնպիսի եղանակով, որը չի վնասում կամ հակասում մեղադրյալի՝ արդար և անկողմնակալ դատաքննության իրավունքին»⁶⁵:

[14.67]

«ՎԱՆ ՄՅՈՒՐՄՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (*VAN MEURS v THE NETHERLANDS, 215/86*)

Այս գործը վերաբերում է դատավարությանը հետևողների համար բավարար տեղի և տեղեկատվության ապահովմանը:

¶ 6.1. Ենթաշրջանային դատարանի անցկացրած լսումների վերաբերյալ հեղինակի ներկայացրած հայցի կապակցությամբ կոմիտեն համարում է, որ երբ աշխատանքային վեճերի վերաբերյալ գործի բանավոր քննություն է անցկացվում դատարանում, այն համապատասխանում է 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջին, ըստ որի՝ դատարանում գործերի քննությունը պետք է լինի հրապարակային: Մասնակից պետության պարտականությունն է ապահովել գործի քննության հրապարակայնությունը՝ անկախ այն հանգամանքից՝ շահագրգիռ կողմն այդ կապակցությամբ որևէ դիմում ներկայացրե՞լ է, թե՞ ոչ: Թե՛ ներպետական օրենսդրությունը, թե՛ դատավարական պրակտիկան պետք է հանրության մասնակցության հնարավորություն նախատեսեն, եթե հանրության ներկայացուցիչները նման ցանկություն են արտահայտում: Սույն գործի վերաբերյալ կոմիտեն նշում է, որ թեև Նիդեռլանդների քաղաքացիական օրենսգրքի նախկին 1639w հոդվածը ոչինչ չէր ասում դատավարությունների հրապարակային կամ ոչ հրապարակային բնույթի

⁶⁴ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/72/NET. տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Կոլումբիայի վերաբերյալ, (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 75, պարբ. 21:

⁶⁵ Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, հոդվ. 68(5):

մասին, ըստ ամենայնի, հանրությունը գործնականում չի մասնակցել: Այս գործում ամենևին պարզ չէ՝ լսումները եղել են *դռնփակ* (*in camera*), թե՞ ոչ: Հեղինակի հաղորդման մեջ չի նշվում, որ ինքը կամ իր դատապաշտպանը պաշտոնապես դիմել են դատավարությունը հրապարակային անցկացնելու համար, կամ ենթաշրջանային դատարանը դատավարությունը *դռնփակ* անցկացնելու վերաբերյալ որևէ հրահանգ է տվել: Իր տրամադրության տակ եղած տեղեկությունների հիման վրա կոմիտեն չի կարող արձանագրել, որ հեղինակի գործով դատավարությունն անհամատեղելի է «հրապարակային քննության» պահանջի հետ՝ 14-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

¶ 6.2. Կոմիտեն համարում է, որ դատարանները պետք է գործի քննության տեղի և ժամանակի վերաբերյալ տեղեկությունները մատչելի դարձնեն հանրությանը և ողջամտության սահմաններում հանրության հետաքրքրված անդամների մասնակցության համար պատշաճ տեղ ապահովեն՝ հաշվի առնելով, օրինակ, հանրության հնարավոր հետաքրքրությունը գործի նկատմամբ, բանավոր քննության տևողությունը և գործի հրապարակային քննության վերաբերյալ դիմումի ներկայացման ժամանակը: Դատարանի կողմից դատական մեծ դահլիճներ չտրամադրելը հրապարակային քննության իրավունքի խախտում չէ, եթե իրականում հանրության որևէ հետաքրքրված անդամ չի զրկվում բանավոր դատաքննությանը մասնակցելու հնարավորությունից:

[14.68] Մասնակից պետություններն են կրում *դռնփակ* դատավարությունները հիմնավորելու պարտականությունը⁶⁶: «*Չ.Փ.-ն ընդդեմ Կանադայի*» (*Z.P. v Canada, 341/88*) գործով հեղինակը բողոքում էր, որ իր՝ բռնաբարության մեղադրանքով դատավարությունը «հրապարակային» չի եղել⁶⁷: Մասնակից պետությունը պատասխանել էր, որ «բարոյական նկատառումներով հանրությանը կարող է արգելվել ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին մասնակցելը. նման դիմում հաճախ ներկայացվում և բավարարվում է սեռական ոտնձգություններին վերաբերող գործերով»⁶⁸: ՄԻԿ-ը եզրակացրեց, որ հեղինակի բողոքը բավարար չափով հիմնավորված չէ⁶⁹:

[14.69] «*Մակքագարտն ընդդեմ ճամայկայի*» (*McTaggart v Jamaica, 749/97*) գործով հեղինակը բողոքում էր, որ հակաքարոզչությունն իրեն զրկել է արդար դատաքննությունից: Քանի որ հակաքարոզչությունը, բացի ճամայկայից, տեղ է գտել նաև այլ երկրում (Կանադայում), որևէ խախտում չարձանագրվեց⁷⁰: Սակայն կայացված վճիռը ենթադրում է, որ հակաքարոզչությունը երբեմն կարող է այնքան ուժգին լինել, որ անդադնալիորեն վնասի գործի քննությունը [14.47]:

Հոդված 14(2). անմեղության կանխավարկած

[14.70]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. Կոմիտեն 14-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ տեղեկությունների պակաս է արձանագրել և որոշ դեպքերում նույնիսկ գտել է, որ անմեղության կանխավարկածը, ինչը հիմնարար նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համար, արտահայտված է բավական անորոշ եզրերով կամ ենթադրում է պայմաններ, որոնք այն անարդյունավետ են դարձնում: Անմեղության կանխավարկածի պատճառով մեղադրանքն ապացուցելու պարտականությունը մեղադրող կողմն է կրում, և ամբաստանյալը կասկածի հոգուտ իրեն մեկնաբանվելու իրավունք ունի: Չի կարելի ենթադրել, թե որևէ մեղավորություն կա, քանի դեռ մեղադրանքը չի ապացուցվել առանց հիմնավոր կասկածի: Ավելին՝ անմեղության կանխավարկածը ենթադրում է այդ սկզբունքին համապատասխան վերաբերմունքի արժանանալու իրավունք: Հետևաբար, պետական իշխանության բոլոր մարմինների պարտականությունն է մինչև դատավարության ելքը զերծ մնալ կանխակալ դատողություններից:

⁶⁶ «*Էստրելան ընդդեմ Ուրուգվայի*» (*Estrella v Uruguay, 74/80*), պարբ. 10:

⁶⁷ Պարբ. 3.3(ժ):

⁶⁸ Պարբ. 4.6:

⁶⁹ Պարբ. 5.6:

⁷⁰ Պարբ. 8.4:

[14.71]

**«ԳՐԻԴԻՆԸ ընդդեմ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ»
(GRIDIN v RUSSIAN FEDERATION, 770/97)**

Ինչպես մանրամասն ներկայացված է ստորև, հեղինակը բողոքում էր, որ իրավապահ մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների կողմից իր մեղավորության վերաբերյալ հրապարակային հավաստիացումները խախտել են 14-րդ հոդվածի 2-րդ կետը: ՄԻԿ-ը համաձայնեց:

¶ 3.5. Հեղինակը պնդում է, որ խախտվել է իր անմեղության կանխավարկածի իրավունքը: 1989 թ. նոյեմբերի 26-30-ը ռադիոկայանները և լրագրերը հայտարարել են, որ հեղինակն է այն սարսափելի «վերելակավար» մարդասպանը, ով մի խումբ աղջիկների է բռնաբարել և սպանել նրանցից երեքին:

Ի լրումն՝ 1989 թ. դեկտեմբերի 9-ին ոստիկանության պետը հայտարարել է, թե վստահ է, որ հենց հեղինակն է այդ մարդասպանը, և դա հեռարձակվել է հեռուստատեսությամբ: Ավելին՝ հեղինակը պնդում է, որ գործը վարող քննիչը հեղինակին մեղավոր է հայտարարել մինչև դատարանում գործի քննությունը և հանրությանը կոչ է արել մեղադրողներ ներգրավել: Հեղինակը նշում է, որ դրա հետևանքով իր դատավարությանը ներկա է եղել տասը համարային մեղադրող, մինչդեռ իրեն պաշտպանել է մեկ համարային պաշտպան, ով հետագայում ստիպված է եղել լքել դատարանի դահլիճը...

¶ 8.3. Անմեղության կանխավարկածի խախտման վերաբերյալ մեղադրանքի առնչությամբ, ներառյալ իրավապահ համակարգի բարձրաստիճան ներկայացուցիչների՝ լրատվամիջոցներով տարածած հայտարարությունները, որոնցում հեղինակը մեղավոր էր ներկայացվում, կոմիտեն նշում է, որ գերագույն դատարանն արժարժեք է այդ հարցը, սակայն հեղինակի բողոքարկումը լսելիս որոշակիորեն չի անդրադարձել դրան: Կոմիտեն հղում է անում 14-րդ հոդվածի վերաբերյալ իր թիվ 13 Ընդհանուր մեկնաբանությանը, որում նշել է. «Հետևաբար, պետական իշխանության բոլոր մարմինների պարտականությունն է մինչև դատավարության ելքը կանխակալ դատողություններից ձեռնպահ մնալ»: Ներկա գործում կոմիտեն համարում է, որ իշխանությունները չեն հետևել այն սահմանափակմանը, որ 14-րդ հոդվածի 2-րդ կետը պահանջում է նրանցից, և որ այդպիսով խախտվել են հեղինակի իրավունքները:

[14.72]

**«ՔԱԳԱՍԸ, ԲՈՒՏԻՆԸ ԵՎ ԱՍՏԻԼԻԵՐՈՆ ընդդեմ ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ»
(CAGAS, BUTIN and ASTILLERO v PHILIPPINES, 788/97)**

¶ 7.3. 14-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման մասին պնդման վերաբերյալ, գրավի կիրառման մերժման առնչությամբ, կոմիտեն կարծում է, որ այդ մերժումն *ապրիորի*^{*} չի ազդում հեղինակների՝ անմեղ ենթադրվելու իրավունքի վրա: Այդուհանդերձ, կոմիտեն այն կարծիքին է, որ կանխարգելիչ կալանքի չափազանց երկար տևողությունը, որը գերազանցում է ինը տարին, իսկապես ազդում է անմեղության կանխավարկածի իրավունքի վրա և, հետևաբար, վեր է հանում 14-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

[14.73] 14-րդ հոդվածի 2-րդ կետը վերաբերում է միայն քրեական դատավարություններին և կիրառելի չէ քաղաքացիական դատավարություններում, ինչպես կարելի է տեսնել հետևյալ գործում:

«ՄՈՐԱԵԼՆ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (MORAEL v FRANCE, 207/86)

Հեղինակն այս գործում պնդում էր, որ ընկերության պարտքերի համար իր պատասխանատվությունը մատնանշող քաղաքացիական գործի հանգամանքները [14.41] խախտում են 14-րդ հոդվածի 2-րդ կետը:

¶ 2.3. Հեղինակը 14-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ հայտարարում է, որ թիվ 67-563 ակտի (օրենքի) 99-րդ հոդվածը ոչ միայն քաղաքացիական, այլև քրեական բնույթ ունի, և այդ կապակցությամբ հիշատակում է այն փաստը, որ պետական մեղադրողը (*Ministère public*) հանդես էր եկել Դուկերիի առևտրային դատարանում ընթացող դատավարության ընթացքում: Նա հայտարարում է նաև, որ վճարել դատարանի որոշումը, որն իրեն պարտադրում էր 3 միլիոն ֆրանսիական ֆրանկ վճարել, քրեական պատժամիջոց է: Հետևաբար, նա պնդում է, որ պետք է օգտված լիներ

^{*} a priori՝ լատ. փորձից առաջ (ծան. թարգմ.):

անմեղության կանխավարկածից:

ՄԻԿ-ը չհամաձայնեց, որ հեղինակի պատիժը «քրեական» է.

¶ 9.5. Ինչ վերաբերում է բողոքին, որ հեղինակի դեմ ներկայացված փոխհատուցման հայցը խախտել է դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ կետում տեղ գտած անմեղության կանխավարկածի սկզբունքը, կոմիտեն նշում է, որ այդ դրույթը վերաբերում է միայն քրեական հանցագործության համար հետապնդվող անձանց: «Սնանկության մասին» նախկին օրենքի 99-րդ հոդվածը նախատեսում էր պատասխանատվության կանխավարկած ընկերության կառավարիչների համար նրանց ջանասիրության վերաբերյալ ապացույցների բացակայության պարագայում: Սակայն այդ կանխավարկածը չէր վերաբերում քրեական հանցագործության համար որևէ մեղադրանքի: Ընդհակառակը, կանխավարկածը վերաբերում էր անձի գործողություններից բխող ռիսկի համար պատասխանատվության համակարգին, որը բավականին լավ հայտնի է մասնավոր իրավունքում, նույնիսկ բացարձակ կամ օբյեկտիվ պատասխանատվության ծնով, որը մի կողմ է դնում հակառակը վկայող բոլոր ապացույցները: Խնդրո առարկա իրավիճակում պատասխանատվությունը սահմանվել է հօգուտ պարտատերերի, և կառավարիչներին ներկայացված գումարային պահանջները համապատասխանում էին պարտատերերի կրած վնասներին և պետք է վճարվեին ընկերության պարտավորությունները մարելու համար: «Սնանկության մասին» օրենքի 99-րդ հոդվածի օբյեկտը վերաբերում էր պարտատերերի փոխհատուցմանը, սակայն նախատեսում էր նաև այլ տուգանքներ, որոնք, սակայն, քաղաքացիական իրավունքի, ոչ թե քրեական իրավունքի տուգանքներ էին: Յետևաբար, 14-րդ հոդվածի 2-րդ կետի անմեղության կանխավարկածին վերաբերող դրույթը չի կարող կիրառվել խնդրո առարկա գործում: Այդ եզրակացության վրա չի կարող ազդել այն պնդումը, թե «Սնանկության մասին» օրենքի 99-րդ հոդվածի դրույթը հետագայում փոփոխության է ենթարկվել՝ մեղքի կանխավարկածի վերացմամբ՝ այն անարդար համարելով պարտավորության նյութական կարգավորման տեսանկյունից, քանի որ այդ հանգամանքն ինքնին չի ենթադրում, որ ավելի վաղ եղած դրույթը հակասում է դաշնագրի վերը նշված դրույթներին:

Նմանապես, «Ու. Զ. Դ.-ն ընդդեմ Նիդերլանդների» (*W.J.H v The Netherlands, 408/90*)⁷¹ և «Ու. Բ. Է.-ն ընդդեմ Նիդերլանդների» (*W.B.E. v The Netherlands, 432/90*)⁷² գործերի կապակցությամբ ՄԻԿ-ը որոշեց, որ 14-րդ հոդվածի 2-րդ կետը չի վերաբերում արդարադատության ենթադրյալ սխալի դիմաց փոխհատուցման դատավարություններին:

Հոդված 14(3)(ա). մեղադրանքի մասին տեղեկացված լինելու իրավունք

[14.74]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. Քրեական դատավարությունների առումով 3-րդ կետով նախատեսված երաշխիքների մեջ առաջինը վերաբերում է յուրաքանչյուրի՝ ներկայացված մեղադրանքի մասին իրեն հասկանալի լեզվով տեղեկացված լինելու իրավունքին (ենթակետ (ա))։ Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունների զեկույցներում հաճախ չի պարզաբանվում, թե ինչպես է հարգվում կամ ապահովվում այդ իրավունքը։ 14-րդ հոդվածի 3(ա) կետը վերաբերում է քրեական մեղադրանքի բոլոր դեպքերին, ներառյալ կալանքի տակ չգտնվող անձանց ներկայացվածները։ Կոմիտեն նշում է նաև, որ ներկայացված մեղադրանքի մասին տեղեկացված լինելու իրավունքը պահանջում է, որ այդ տեղեկությունը «շտապ կարգով» նկարագրված տրամադրվի՝ հենց որ պատկան մարմինն առաջին անգամ ներկայացնի մեղադրանքը։ Կոմիտեի կարծիքով՝ այս իրավունքը պետք է ծագի, երբ հետաքննության ընթացքում դատարանը կամ դատախազությունը որոշում է ընթացակարգային քայլեր ձեռնարկել հանցագործության համար կասկածվող անձի դեմ կամ հրապարակայնորեն նրան այդպես է կոչում։ Երրորդ ենթակետի որոշակի պահանջները կարող են կատարվել՝ մեղադրանքը բանավոր կամ գրավոր նշելով, պայմանով, որ այդ տեղեկությունը ներառի թե՛ այն օրենքը, թե՛ այն փաստերը, որոնց վրա հիմնվում է այն։

[14.75] 14-րդ հոդվածի 3(ա) կետը պահանջում է, որ անձը տեղեկացվի իր դեմ ներկայացված մեղադրանքների մասին անմիջապես իշխանությունների կողմից քրեական մեղադրանք առաջադրելու որոշումից հետո։ Այն կարելի է տարբերել 9-րդ հոդվածի 2-րդ կետից, որը կիրառվում է մինչև մեղադրանք ներկայացնելը. այն պահանջում է, որ մարդկանց տեղեկացնեն նրանց քրեական մեղադրանքի հետ

⁷¹ Պարբ. 6.2:

⁷² Պարբ. 6.6:

կապված ձերբակալման պատճառների մասին⁷³: Կարելի է նկատել նաև, որ 14-րդ հոդվածի 3(ա) կետի պահանջներն «ավելի ճշգրիտ» են, քան 9-րդ հոդվածի 2-րդ կետը⁷⁴: Ձերբակալված անձի համար բավարար է իմանալ իր ձերբակալման պատճառների մասին՝ ըստ 9-րդ հոդվածի 2-րդ կետի, մինչդեռ 14-րդ հոդվածի 3(ա) կետի պահանջները բավարարելու համար անձին պետք է պաշտոնապես մեղադրանք առաջադրվի⁷⁵:

Հոդված 14(3)(բ). պաշտպանության նախապատրաստում

[14.76]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. 14-րդ հոդվածի 3(բ) կետը սահմանում է, որ մեղադրյալը պետք է բավարար ժամանակ և հնարավորություններ ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար: Թե որն է «բավարար ժամանակը», կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից, սակայն հնարավորությունները պետք է ներառեն այն փաստաթղթերից և այլ ապացույցներից օգտվելու հնարավորությունը, որոնք մեղադրյալին անհրաժեշտ են իր գործը նախապատրաստելու համար, ինչպես նաև պաշտպան ներգրավելու և նրա հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Երբ մեղադրյալը չի ցանկանում ինքն իրեն պաշտպանել կամ դիմել իր ընտրած անձին կամ միավորմանը, պետք է հնարավորություն ունենա դիմելու իրավաբանի օգնությանը: Ավելին՝ այս ենթակետը պահանջում է, որ պաշտպանի և մեղադրյալի հաղորդակցությունը տեղի ունենա նրանց հաղորդակցության գաղտնիության լիակատար հարգման պայմաններում: Իրավաբանները պետք է կարողանան իրենց հաճախորդներին պաշտպանել և ներկայացնել իրենց մասնագիտական սահմանված չափորոշիչներին և դատողությանը համապատասխան՝ առանց որևէ կողմից որևէ սահմանափակման, ազդեցության, ճնշումների կամ անհարկի միջամտության:

[14.77]

«ԳՐԻԴԻՆԸ ԸՆԴՈՂԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ» (GRIDIN v RUSSIAN FEDERATION, 770/97)

¶ 8.5. Ինչ վերաբերում է այն մեղադրանքին, որ հեղինակն իր ձերբակալությանը հետևած առաջին հինգ օրերի ընթացքում փաստաբան չի ունեցել, կոմիտեն նշում է, որ ըստ մասնակից պետության պատասխանի՝ հեղինակն օրենքով սահմանված կարգով ներկայացուցիչ է ունեցել: Այնուամենայնիվ, մասնակից պետությունը չի հերքել հեղինակի պնդումը, որ նա փաստաբան է պահանջել իրեն կալանելուց ոչ շատ անց, սակայն նրա պահանջն անտեսվել է: Մասնակից պետությունը չի հերքել նաև հեղինակի այն պնդումը, որ նրան հարցաքննել են առանց թույլ տալու, որ խորհրդակցի փաստաբանի հետ, մինչդեռ նա բազմիցս դիմել է նման խորհրդակցության համար: Կոմիտեն կարծում է, որ հեղինակին փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորություն չտալը, երբ նա դիմել է նման հնարավորություն ստանալու համար, և նրան այդ ժամանակ հարցաքննելը հեղինակի՝ 13-րդ հոդվածի 3(բ) կետով սահմանված իրավունքի խախտում է: Ավելին՝ կոմիտեն համարում է, որ հեղինակի՝ իր փաստաբանի հետ առանձին խորհրդակցել չկարողանալու փաստը մի մեղադրանք է, որը չի հերքվել մասնակից պետության կողմից, նույնպես դաշնագրի 13-րդ հոդվածի 3(բ) կետի խախտում է:

[14.78]

«ՖԻԼԻՊՆ ԸՆԴՈՂԵՄ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ» (PHILLIP v TRINIDAD and TOBAGO, 594/92)

¶ 7.2. Կոմիտեն նշում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկությունները ցույց են տալիս, որ հեղինակի պաշտպանը դիմել է դատարան՝ խնդրելով հետաձգել դատավարությունը կամ հեռացնել իրեն գործից, որովհետև պատրաստ չէ այն պաշտպանելու, քանի որ ինքը նշանակվել է 1988 թ. հունիսի 10-ին՝ ուրբաթ, իսկ դատավարությունը սկսվել է 1988 թ. հունիսի 13-ին՝ երկուշաբթի: Դատավորը չի բավարարել դիմումը, հավանաբար, որովհետև կարծել է, որ հեղինակը չի կարող սեփական ընտրությամբ դատապաշտպան ունենալ: Կոմիտեն հիշեցնում է, որ թեև 14-րդ հոդվածի 3(դ) ենթակետը մեղադրյալին թույլ չի տալիս ընտրել իրեն անվճար տրամադրված պաշտպանին, դատարանը պետք է ապահովի, որ փաստաբանի մասնակցությունը դատավարությանը անհամատեղելի չլինի

⁷³ Տե՛ս «Բելլին ընդդեմ Ճամայկայի» (*Kelly v Jamaica, 253/87*), այստեղ՝ [11.25]:

⁷⁴ «ՄակԼաուրենսն ընդդեմ Ճամայկայի» (*McLawrence v Jamaica, 702/96*), պարբ. 5.9:

⁷⁵ Տե՛ս նաև «Վիսենտեն և այլք ընդդեմ Կոլումբիայի» (*Vicente et al v Colombia, 612/95*), պարբ. 8.7:

արդարադատության շահերի հետ: Կոմիտեն համարում է, որ մահապատիժ նախատեսող գործի պարագայում, երբ մեղադրյալի պաշտպանը, որ նման գործերում փորձառու չէ, խնդրում է ժամանակ տրամադրել, քանի որ գործին պատրաստ չէ, դատարանը պետք է ապահովի, որ մեղադրյալին հնարավորություն տրվի նախապատրաստվելու իր պաշտպանությանը: Կոմիտեն այն կարծիքին է, որ տվյալ գործում պրն Ֆիլիպի պաշտպանին պետք է ժամանակ տրվեր գործին պատրաստվելու համար: Այս հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն համարում է, որ պրն Ֆիլիպը դատավարության ընթացքում արդյունավետ չի ներկայացվել՝ ի խախտումն դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (դ) ենթակետերի:

ԻՆՉ Է «ԲԱՎԱՐԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ»

[14.79] «ՍՄԻԹՆ ԸՆԴՂԵՆ ԾԱՄԱՅԱՅԻ» (SMITH v JAMAICA, 282/88)

¶ 10.4. Ինչ վերաբերում է հեղինակի պնդումներին, թե իրեն բավարար ժամանակ չի տրամադրվել պաշտպանությանը նախապատրաստվելու համար, և դրա հետևանքով մի խումբ առանցքային վկաների հնարավոր չի եղել գտնել կամ կանգնել վկայություն տալու, կոմիտեն հիշեցնում է իր նախկին նախադեպային իրավունքը, ըստ որի՝ մեղադրվող անձի՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ հնարավորություններ ունենալու իրավունքը արդար դատաբանության երաշխիքի կարևոր տարրերից մեկն է և կողմերի հավասարության սկզբունքի էմանացիան: [Տե՛ս Զադորդումներ թիվ 253/1987 («Փոլ Քելլին ընդդեմ ճամայկայի») (Paul Kelly v Jamaica), Կարծիքներ՝ ընդունված 1991 թ. ապրիլի 8-ին, պարբերություն 5.9, թիվ 283/1988 («Ասթոն Լիթլն ընդդեմ ճամայկայի») (Aston Little v Jamaica), Կարծիքներ՝ ընդունված 1991 թ. նոյեմբերի 1-ին, պարբերություն 8.3]: Որոշելու համար, թե որն է «բավարար ժամանակը», անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր գործի հանգամանքները: Սույն գործում չի վիճարկվում, որ դատավարության պաշտպանությունը պատրաստվել է դատավարության առաջին օրը: Կոմիտեի տրամադրության տակ եղած նյութերը բացահայտում են, որ դատարանի կողմից նշանակված պաշտպաններից մեկը մյուս պաշտպանին խնդրել է փոխարինել իրեն: Ավելին՝ հեղինակին ներկայացնելու համար նշանակված մյուս փաստաբանը դատավարությունից մեկ օր առաջ հրաժարվել է գործից: Երբ առափոյան ժամը 10-ին դատավարությունն ուր որ է պիտի սկսվեր, հեղինակի պաշտպանը հետաձգում է խնդրել մինչև ժամը 14:00-ը, որպեսզի կարողանա մասնագիտական օգնություն ապահովել և հանդիպել իր պաշտպանյալին, քանի որ բանտի ղեկավարությունն իրեն թույլ չի տվել հանդիպել նրան նախորդ օրը՝ ուշ երեկոյան: Կոմիտեն նշում է, որ դատավորը բավարարել է դիմումը՝ նպատակ ունենալով թեթևացնել դատարանի օրակարգում առաջացած կուտակումները: Այդպիսով, ատենակալների խմբի հավաքվելուց հետո պաշտպանն ուներ ընդամենը չորս ժամ՝ օգնություն փնտրելու և հեղինակի հետ հաղորդակցվելու համար, ինչը կարող էր միայն հապշտապ կերպով անել: Այդ [ժամանակը], կոմիտեի կարծիքով, բավարար չէր մահապատիժ նախատեսող գործում պաշտպանությանը պատշաճ կերպով նախապատրաստվելու համար: Առկա տեղեկություններից երևում է նաև, որ այն ազդել է դատապաշտպանի հնարավորության վրա՝ որոշելու, թե որ վկային կանգնել: Կոմիտեի կարծիքով՝ սա դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետի խախտում է:

[14.80] «ՍՈՅԵՐՍԸ, ՄԱԿԼԻՆԸ և ՄԱԿԼԻՆՆ ԸՆԴՂԵՆ ԾԱՄԱՅԱՅԻ» (SAWYERS, MCLEAN and MCLEAN v JAMAICA, 226, 256/87)

Այս գործի վերաբերյալ կոմիտեն նշում է⁷⁶.

¶ 13.6. ... Որոշելը, թե ինչ է «բավարար ժամանակը», կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքների գնահատումից: Թեև չի վիճարկվում, որ մեղադրյալներից ոչ ոք մինչև դատավարությունն իր փաստաբաններին չի հանդիպել երկուսից ավելի անգամ, կոմիտեն չի կարող եզրակացնել, որ փաստաբանները հայտնվել են այնպիսի դրության մեջ, որը նրանց թույլ չի տվել պատշաճ կերպով նախապատրաստվել գործի պաշտպանությանը: Մասնավորապես, կոմիտեի տրամադրության տակ եղած նյութերը ցույց չեն տալիս, որ անբավարար ժամանակի հիմքով դիմում է ներկայացվել դատավարության հետաձգման վերաբերյալ, ոչ էլ պնդում է արվել, որ դատավորը կներժեռ նման դիմումը...

Մի շարք գործերում, որոնցում մեղադրյալը չի դիմել դատավարության հետաձգման համար, ՄԻԿ-ը հող-

⁷⁶ Տե՛ս նաև «Գրանտն ընդդեմ ճամայկայի» (Grant v Jamaica, 353/88), պարբ. 8.4:

ված 14(3)(բ)-ի ոտնահարում չի արձանագրել⁷⁷: Հետաձգման համար չդիմելը թերևս նման է դատական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելուն, որի համար պետությունը չի կարող պատասխանատու համարվել:

ՈՐՈՇՔ ԵՆ «ԲԱՎԱՐԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

[14.81] «ՅԱՍԻՆԸ և ԹՈՄԱՍՆ ընդդեմ ԳԱՅԱՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» (YASSEEN and THOMAS v REPUBLIC of GUYANA, 676/96)

¶ 7.10. Ինչ վերաբերում է կորսված օրագրերին և նոթատետրերին, կոմիտեն ի գիտություն է ընդունում հեղինակների այն պնդումը, թե դրանք կարող էին անմեղության ապացույցներ պարունակել: Մասնակից պետությունը չի անդրադարձել այս մեղադրանքին: Մասնակից պետության կողմից որևէ բացատրության բացակայության պարագայում կոմիտեն համարում է, որ անհրաժեշտ է պատշաճ կշիռ վերագրել հեղինակների ներկայացրած մեղադրանքներին, և ուստի կանոնադրության ժամանակ (1992 թ.) առաջին դատավարության (1988 թ.) ընթացքում ներկայացված փաստաթղթերը չներկայացնելը, որոնք կարող էին հեղինակների օգտին ապացույցներ պարունակել, 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (ե) ենթակետերի խախտում է, քանի որ խոչընդոտել է հեղինակների ինքնապաշտպանության նախապատրաստումը:

[14.82] «ՀԱՐՎԱՐԴՆ ընդդեմ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ» (HARWARD v NORWAY, 451/91)

¶ 9.4. Դաշնագրի 14-րդ հոդվածը պաշտպանում է արդար դատաքննության իրավունքը: Այդ իրավունքի կարևորագույն տարրերից մեկն այն է, որ մեղադրյալը պետք է բավարար ժամանակ և հնարավորություններ ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, ինչպես որ արտացոլված է 14-րդ հոդվածի 3(բ) կետում: Այնուամենայնիվ, 14-րդ հոդվածն ակնհիշ իրավունք չի բովանդակում ամծի դեմ դատավարության նախապատրաստման մեջ օգտագործված բոլոր փաստաթղթերին իրեն հասկանալի լեզվով ուղղակիորեն ծանոթանալու վերաբերյալ: Կոմիտեն առջև ծառացած հարցն այն է, թե արդյոք հեղինակի գործի առանձնահատուկ հանգամանքներում դատավարության նախապատրաստման մեջ օգտագործված բոլոր փաստաթղթերի գրավոր թարգմանությունները մասնակից պետության կողմից չտրամադրելը խախտե՞լ է այն Հարվարդի արդար դատաքննության իրավունքը, իսկ ավելի որոշակի՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար հնարավորություններ ունենալու իրավունքը՝ սահմանված 14-րդ հոդվածի 3(բ) կետով:

¶ 9.5. Կոմիտեն կարծիքով՝ արդար դատաքննության երաշխավորման համար կարևոր է, որ պաշտպանական կողմը հնարավորություն ունենա ծանոթանալու մեղադրյալի դեմ առկա փաստաթղթային ապացույցներին: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ մեղադրյալը, որ չի հասկանում դատարանում գործածվող լեզուն, իրավունք ունի ստանալու քրեական հետաքննության բոլոր համապատասխան փաստաթղթերի թարգմանությունները՝ պայմանով, որ այդ համապատասխան թարգմանությունները տրամադրվեն նրա պաշտպանին: Կոմիտեն նշում է, որ այն Հարվարդին ներկայացրել է իր ընտրած նորվեգացի իրավաբանը, ով հնարավորություն է ունեցել ծանոթանալու ողջ գործին, և որ իրավաբանին, այն Հարվարդի հետ հանդիպումների ժամանակ, օգնել է թարգմանիչը: Հետևաբար, պաշտպանական կողմի փաստաբանը հնարավորություն է ունեցել ծանոթանալու գործին և, անհրաժեշտ համարելու դեպքում, այն Հարվարդի համար իրենց հանդիպումների ընթացքում կարդալու նորվեգերեն փաստաթղթերը, այնպես որ այն Հարվարդը թարգմանության շնորհիվ կարող էր նշումներ կատարել դրանց բովանդակության վերաբերյալ: Եթե պաշտպանը պաշտպանությունը նախապատրաստելու համար իր տրամադրության տակ եղած ժամանակը (վեց շաբաթից քիչ ավելի) անբավարար համարած լիներ գործին ամբողջությամբ ծանոթանալու համար, նա կարող էր դատավարությունը հետաձգելու միջնորդություն ներկայացնել, ինչը չի արել: Կոմիտեն եզրակացնում է, որ գործի առանձնահատուկ հանգամանքներում այն Հարվարդի արդար դատաքննության իրավունքը, ավելի որոշակի՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար հնարավորություններ ունենալու իրավունքը չի խախտվել:

⁷⁷ Տե՛ս, օր., «Ուայթն ընդդեմ Ճամայկայի» (Wright v Jamaica, 349/1989), պարբ. 8.4, «Հենրին ընդդեմ Ճամայկայի» (Henry v Jamaica, 230/87), պարբ. 8.2, «Թոմասն ընդդեմ Ճամայկայի» (Thomas v Jamaica, 272/88), պարբ. 11.4:

ԱՆՁԻ ԸՆՏՐԱԾ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

[14.83] «ՔԵԼԼԻՆ ընդդեմ ՃԱՄԱՅՎԱՅԻ» (KELLY v JAMAICA, 537/93)

¶ 9.2. ... Ըստ գործի նյութերի՝ ... հեղինակը 1988 թ. մարտի 24-ին Համնոլերի ոստիկանական բաժանմունք բերվելուց հետո ոստիկանության աշխատակիցներին ասել է, որ ցանկանում է խոսել իր փաստաբանի՝ պրն Մաքլետոյի հետ, սակայն ոստիկանությունը հինգ օր շարունակ անուշադրության է մատնել նրա խնդրանքը: Այդ հանգամանքներում կոմիտեն եզրակացնում է, որ խախտվել է հեղինակի՝ 14-րդ հոդվածի 3(բ) կետով սահմանված իր ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու իրավունքը:

Այս իրավունքն էապես համընկնում է 14-րդ հոդվածի 3(դ) կետում ընդգրկված իրավունքների հետ և կշարունակվի դիտարկվել ստորև:

[14.84] Կոմիտեն բազմիցս հաստատել է, որ առանց հաղորդակցության հնարավորության կալանքը խախտում է 14-րդ հոդվածի 3(բ) կետը, քանի որ այդ պարագայում անհնարին է դառնում իրավաբանական օգնությունը: Առանց հաղորդակցության հնարավորության կալանքի ամենակարճ ժամկետը, որը համարվել է այդ հոդվածի խախտում, կազմել է քառասուն օր և տեղ է գտել «*Դրեսչեր Կալդաս ընդդեմ Ուրուգվայի*» (*Drescher Caldas v Uruguay, 43/79*) գործում⁷⁸: Կարելի է ենթադրել, որ այդ դրույթի խախտում կհամարվի նաև ավելի կարճ ժամանակահատվածը, ինչպիսին է *Քելլի* գործում տեղ գտած հինգ օրը: Համեմայն դեպք, նման գործեր ՄԻԿ-ին դեռևս չեն ներկայացվել:

Հոդված 14(3)(գ). դատ առանց անհարկի հետաձգումների**[14.85] ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

¶ 10. 14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետը սահմանում է, որ մեղադրյալը պետք է դատվի առանց անհարկի հետաձգման: Այս երաշխիքը վերաբերում է ոչ միայն նրան, թե դատավարությունը երբ է սկսվում, այլև թե երբ է ավարտվում և երբ է կայացվում դատավճիռը: Այս բոլոր փուլերը պետք է տեղի ունենան «առանց անհարկի հետաձգման»: Այս իրավունքն արդյունավետ դարձնելու համար պետք է գոյություն ունենա ընթացակարգ, որը կապահովի, որ դատավարությունն «առանց անհարկի հետաձգման» ընթանա թե՛ առաջին ատյանում, թե՛ բողոքարկման փուլում:

[14.86] 14-րդ հոդվածի 3(գ) կետը նշանակալիորեն համընկնում է 9-րդ հոդվածի 3-րդ կետին, որը երաշխավորում է նախնական կալանքի տակ գտնվողների՝ «ողջամիտ ժամկետում» դատվելու իրավունքը⁷⁹: Սակայն 9-րդ հոդվածի 3-րդ կետը կարգավորում է միայն մինչև դատավարությունը կալանքի տնտղությունը: Մինչդեռ 14-րդ հոդվածի 3(գ) կետը կարգավորում է ձերբակալության և դատավարության միջև ընկած ժամանակահատվածը՝ անկախ այն հանգամանքից՝ անձը կալանքի տակ է, թե ոչ:

[14.87] «Անհարկի հետաձգման» որոշումը կախված է գործի հանգամանքներից և բարդությունից: Այդ առումով քրեական գործերում «չհապաղելու» [“expedition”] կանոնը 14-րդ հոդվածի 1-ին կետում ներառված «չհապաղելու» կանոնի հայելային արտացոլումն է, որը վերաբերում է քաղաքացիական գործերով դատավարություններին [14.58-14.60]: «*Վուլֆ ընդդեմ Պանամայի*» (*Wolf v Panama, 289/88*) գործում ձերբակալության և զեղծարարության գործով դատավճռի կայացման միջև ընկած չորսուկես տարվա հապաղումը չի խախտում 14-րդ հոդվածի 3(գ) կետը, քանի որ ՄԻԿ-ը համարել է, «որ զեղծարարության վերաբերյալ մեղադրանքների ուսումնասիրությունը կարող է բարդ լինել, և հեղինակը ցույց չի տվել, որ փաստերը չեն առաջացրել երկարացված դատավարության անհրաժեշտություն»⁸⁰:

⁷⁸ St u N. Rodley, 'Rights and Responses to Terrorism' in D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 129: St u նաև «*Կարբալալ ընդդեմ Ուրուգվայի*» (*Carballal v Uruguay, 33/78*), «*Իսկիերդոն ընդդեմ Ուրուգվայի*» (*Izquierdo v Uruguay, 73/80*) և «*Մաչադոն ընդդեմ Ուրուգվայի*» (*Machado v Uruguay, 83/80*) գործերը:

⁷⁹ St u [11.35-11.38]:

⁸⁰ Պարբ. 6.4:

[14.88] «ՀԻԼԸ և ՀԻԼՆ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (HILL and HILL v SPAIN, 526/93)

Այս գործում հեղինակի բողոքը, որը վերաբերում էր հոդված 14(3)(գ)-ի խախտմանը, բավարարվեց ՄԻԿ-ի կողմից ձեռքարկության և վերջնական բողոքարկման միջև երեք տարի տևողությամբ հապաղումից հետո:

ՄԻԿ-ն այդ հարցի կապակցությամբ ներկայացրեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 12.4. Հեղինակները ձեռքարկվել են 1985 թ. հուլիսի 15-ին, և նրանց պաշտոնապես մեղադրանք է ներկայացվել 1985 թ. հուլիսի 19-ին: Նրանց դատավարությունը չի սկսվել մինչև 1986 թ. նոյեմբերը, իսկ նրանց բողոքարկումը չի քննարկվել մինչև 1988 թ. հուլիսը: Այս ժամկետի ընդամենը մի փոքր հատվածը կարելի է վերագրել հեղինակների՝ իրենց փաստաբաններին փոխելու որոշմանը: Մասնակից պետությունը պնդել է, որ հապաղումը պայմանավորված էր «գործի բարդությամբ», սակայն չի տրամադրել որևէ տեղեկություն, որը ցույց կտար վկայակոչված բարդությունների բնույթը: Ուսումնասիրելով իր տրամադրության տակ եղած բոլոր տեղեկությունները՝ կոմիտեն չի տեսնում, թե ինչ առումով կարելի է այս գործը համարել բարդ: Գործով անցնող միակ վկան ակամատեսն է, ով վկայություն է տվել 1985 թ. հուլիսին՝ գործի լսման ժամանակ, և ոչինչ չի մատնանշում, որ գործի լսման ավարտից հետո անհրաժեշտ է եղել լրացուցիչ քննություն անցկացնել: Այս հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը խախտել է հեղինակների՝ 14-րդ հոդվածի 3(գ) կետով սահմանված առանց անհարկի հետաձգման դատվելու իրավունքը:

[14.89] Կոմիտեն՝ *Վուլֆի* և *Հիլի* գործերով որոշումները համատեղելի չեն թվում ապացուցման պարտականության առումով: *Վուլֆի* գործով հեղինակը պարտավոր էր ցույց տալ, որ դատավարությունը չպետք է այդքան երկար տևեր, մինչդեռ *Հիլի* գործում ապացուցման համընթաց պարտականությունը՝ ցույց տալը, որ դատավարությունը պետք է այդքան երկար տևեր, կրում էր պետությունը: Տարբերության պատճառը կարող էր լինել Վուլֆին վերագրվող հանցագործությանը՝ զեղծարարությանը ներհատուկ բարդությունը՝ համեմատած Հիլ եղբայրներին վերագրվող հանցագործության՝ ռումբերով մեքենայի հրկիզման հետաքննության հարաբերական «պարզության» հետ: Սա նաև ի ցույց է դնում կամընտիր արձանագրությանը վերաբերող գործերում ապացուցելու պարտականության առումով ՄԻԿ-ի կողմից ժամանակ առ ժամանակ դրսևորվող անհետևողականությունը⁸¹:

[14.90] «ԲԵԼԼԻՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (KELLY v JAMAICA, 253/87)

¶ 5.11. ... Հեղինակը հայտարարում է, որ 14-րդ հոդվածի 3(գ) կետով սահմանված իր իրավունքը ... խախտվել է, որովհետև իր ձեռքարկությունից մինչև դատավարությունն սկսվելն անցել է տասնութ ամիս: ...[Կոմիտեն] չի կարող եզրակացնել, որ ձեռքարկության և դատավարության մեկնարկի միջև ընկած մեկուկես տարի ժամկետը «անհարկի հետաձգում» է, քանի որ ոչինչ ցույց չի տալիս, որ հետաքննությունը կարող էր ավելի վաղ ավարտված լինել, կամ հեղինակն այդ առումով բողոքել է իշխանություններին:

[14.91] «ՍԵՔՍՏՈՒՄՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ» (SEXTUS v TRINIDAD and TOBAGO, 818/98)

Հեղինակը բողոքում է քսաներկու ամիս տևած հետաձգումից, որը տեղ է գտել նրա ձեռքարկության և առաջին ատյանի դատարանի դատավարության միջև, և առաջին դատի ու բողոքարկման միջև ընկած չորս տարի և յոթ ամիս տևած ընդմիջումից: Մասնակից պետությունը փորձել է արդարացնել այդ հանգամանքը.

¶ 4.2. Ինչ վերաբերում է հետաձգման վերաբերյալ պնդումների էությանը, մասնակից պետությունը հայտարարում է, որ նշված ժամանակամիջոցներից ոչ մեկը արդարացված չէր այն հանգամանքներում, որոնք այն ժամանակ գերիշխում էին մասնակից պետությունում հեղաշրջման փորձին անմիջապես հաջորդած տարիներին: Հանցագործություն-

⁸¹ Այդ առումով, տե՛ս նաև [6.43]-ը և քաղվածքները նախորդ գործից:

ների աճն այդ ժամանակահատվածում մեծ ծանրաբեռնվածություն ստեղծեց դատարանների համար, որի հետևանքով գործերի կուտակումներ առաջացան: Ամբողջական և ճշգրիտ դատական գրառումների ժամանակին նախապատրաստման հարցում առկա դժվարությունները գործերը դատական քննության ներկայացնելու և բողոքարկումները լսելու հետաձգումների հանգեցրին: Մասնակից պետությունը նշում է, որ նման հետաձգումներից խուսափելու նպատակով իրականացրել է ընթացակարգային բարեփոխումներ, ներառյալ նոր դատավորների նշանակումը դատաքննության և բողոքարկման մակարդակներում: Ֆինանսական և այլ ռեսուրսների աճը, ներառյալ համակարգչային սղագրության հնարավորությունը, հանգեցրել են նրան, որ ներկայումս բողոքները լսվում են դատապարտման մեկ տարվա ընթացքում: Հարկ է արժանին մատուցել տեղ գտած բարելավումներին:

ՄԻԿ-ը որոշում է ընդունել հոգուտ հեղինակի:

¶ 7.2. Ինչ վերաբերում է հետաքննության փուլում անհարկի հետաձգմանը, կոմիտեն հիշեցնում է իր նախադեպային իրավունքը, ըստ որի՝ «[ա]յն գործերում, որոնցում խոսքը լուրջ մեղադրանքների մասին է, ինչպիսիք են սպանությունը կամ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունը, և երբ դատարանը մեղադրյալին մերժում է ազատ արձակել գրավի դիմաց, մեղադրյալի դատավարությունը պետք է անցկացվի որքան հնարավոր է անհապաղ [expeditious]»⁸²: Ներկա գործի առնչությամբ, երբ հեղինակին ձերբակալել են իրավախախտման կատարման օրը, ներկայացրել սպանության մեղադրանք և պահել մինչև դատավարությունը, և փաստական ապացույցներն ուղղակի էին և ակնհայտորեն փոքրածավալ ոստիկանական քննություն էին պահանջում, կոմիտեն համարում է, որ պետք է ծանրակշիռ պատճառներ ներկայացնել՝ արդարացնելու համար մինչև դատավարությունը 22 ամիս տևողությամբ հետաձգումը: Մասնակից պետությունն ընդամենը մատնացույց է անում ընդհանուր խնդիրները և անկայունությունը, որը հետևել էր հեղաշրջման փորձին, և ընդունում է տեղ գտած հապաղումները: Այս հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի իրավունքները՝ ամրագրված 9-րդ հոդվածի 3-րդ կետով և 14-րդ հոդվածի 3 (գ) կետով, խախտվել են:

[14.92] «*Թոմասն ընդդեմ Ճամայկայի*» (*Thomas v Jamaica, 614/95*)⁸³ և «*Բրաունն ընդդեմ Ճամայկայի*» (*Brown v Jamaica, 775/97*) գործերում⁸⁴ ձերբակալության և դատավարության միջև տեղ գտած քսաներեք ամիս տևողությամբ հետաձգումը խախտել է 14-րդ հոդվածի 3(գ) կետը: «*Յասինը և Թոմասն ընդդեմ Գայանայի Հանրապետության*» (*676/96*) գործում կրկնակի դատաքննության վերաբերյալ կարգադրության և այդ դատաքննության բողոքարկման վերաբերյալ եզրակացության միջև ընկած երկու տարվա հետաձգումը խախտել է 14-րդ հոդվածի 3(գ) կետը⁸⁵, չնայած հեղինակի պաշտպանն էր պատասխանատու հետաձգման երեք ամսվա համար⁸⁶: Մյուս կողմից՝ տասնչորս ամիս տևողությամբ հետաձգումը «*Հանկլն ընդդեմ Ճամայկայի*» (*Hankle v Jamaica, 10/96*) գործում 14-րդ հոդվածի 3(գ) կետի խախտում չէ⁸⁷, ոչ էլ, իհարկե, տասնութ ամիս տևողությամբ հապաղումը *Քելլիի* գործում [14.90]: Ավելին՝ «*Հուսեյնն ընդդեմ Մավրիկիոսի*» (*Hussain v Mauritius, 980/01*) գործում⁸⁸ տասնմեկ ամիս տևողությամբ հետաձգման վերաբերյալ բողոքն անընդունելի համարվեց դաշնագրի խախտման ապացույցներ չներկայացնելու պատճառով:

Այսպիսով, քսաներկու ամիս (ինչպես *Սեքստուսի* գործում [14.91]) կամ ավելի տևողությամբ հետաձգումը, որ տեղ է գտել ձերբակալության և առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտման միջև⁸⁹ կամ դատապարտման և բողոքարկման վերաբերյալ եզրակացության միջև, *պրիմա ֆացիե*^{*} խախտում է 14-րդ հոդվածի 3(գ) կետը: Բացառիկ հանգամանքները, ինչպես օրինակ՝ գործի ծայրահեղ բարդությունը, կարող են արդարացնել ավելի երկար տևողությամբ հետաձգումները: Ավելի կարճ տևողությամբ հա-

⁸² Սեքսերված է «*Դել Գոմեսն ընդդեմ Պանամայի*» (*Del Cid Gómez v Panama, 473/91*) գործից, պարբ. 8.5:

⁸³ Պարբ. 9.5:

⁸⁴ Պարբ. 6.11:

⁸⁵ Պարբ. 7.11:

⁸⁶ Պարբ. 5.7:

⁸⁷ Պարբ. 6.6: Ձերբակալության և դատավարության միջև մեկ տարվա հապաղումը «*Մակթագարտն ընդդեմ Ճամայկայի*» (*McTaggart v Jamaica, 749/97*) գործում համարվեց «անցանկալի», բայց ոչ խախտում (պարբ. 8.2): Տե՛ս նաև «*Էնփրեյլն ընդդեմ Ճամայկայի*» (*Campbell v Jamaica, 248/87*) գործը (ոտմահարում չարձանագրվեց դատապարտման և հեղինակի ներկայացրած բողոքարկման մերժման միջև ընկած 10-ամսյա հապաղման առումով (պարբ. 6.8)):

⁸⁸ Պարբ. 6.5:

⁸⁹ *Յասինի* գործը կարող է ցույց տալ, որ 21 ամիսը բավական է խախտման համար. տե՛ս ծնթ. 85-ի տեքստը:

* [prima facie՝ լատ. առաջին հայացքից, առաջին տպավորությամբ (ծան. թարգմ.):

պաղումները, ինչպես երևում է, համատեղելի են 14-րդ հոդվածի 3(գ) կետի հետ:

[14.93] «ԲՐԱՈՒՆՆ ԸՆԴՂԵՆ ԾԱՍԱՅԱՅԻ» (BROWN v JAMAICA, 775/97)

¶ 6.11. ...Ինչ վերաբերում է, ըստ պնդումների, քրեադատավարական գործընթացում տեղ գտած այլ հետաձգումներին, կոմիտեն նշում է, որ հեղինակի կրկնակի դատաքննությունը նշանակված է եղել 1994 թ. նոյեմբերի 23-ին՝ վերաքննիչ դատարանի վճռից չորս ամիս անց, սակայն այն մի քանի անգամ հետաձգվել է պաշտպանական կողմի խնդրանքով: Ելնելով այդ հանգամանքներից՝ կոմիտեն համարում է, որ վերաքննիչ դատարանի վճռի և կրկնակի դատաքննության մեկնարկի միջև ընկած մեկ տարի և ինն ամիս տևած հետաձգումը չի կարող բացառապես վերագրվել մասնակից պետությանը, և այն դաշնագրի խախտում չի դրսևորում:

«ՍՏԵՖԵՆՍՆ ԸՆԴՂԵՆ ԾԱՍԱՅԱՅԻ» (STEPHENS v JAMAICA, 373/89)

¶ 9.8. Վերջապես, հեղինակը պնդում է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի 3(գ) և (5) կետերի խախտում՝ կապված իր դատավարության և բողոքարկման միջև տեղ գտած հետաձգման հետ: Այդ համատեքստում կոմիտեն նշում է, որ լոնդոնցի մի փաստաբանի կողմից Գաղտնի խորհրդի դատական կոմիտեին* [Judicial Committee of the Privy Council] բողոք ներկայացնելու հատուկ թույլտվության համար հեղինակի խնդրագիրը նախապատրաստելիս դատարանում պրն Ստեֆենսի իրավաբանական ներկայացուցչին պարբերաբար, սակայն ապարդյուն դիմում է հղվել՝ խնդրելով բացատրել դատավարության և 1986 թ. դեկտեմբերին բողոքի լսման միջև հետաձգումները: Թեև ցավալի է ու անհանգստացնող, որ մահապատիժ նախատեսող գործում տեղի է ունեցել երկու տարի և 10 ամիս տևողությամբ հապաղում դատավարության և բողոքարկման միջև, կոմիտեն չի կարող, հենվելով իր տրամադրության տակ եղած նյութերի վրա, եզրակացնել, որ այդ հապաղումը հիմնականում վերագրելի է մասնակից պետությանը, ոչ թե հեղինակին:

Այդպիսով, այն դեպքերում, երբ հապաղումը վերագրելի է հեղինակին կամ հեղինակի պաշտպանին, 14-րդ հոդվածի 3(գ) կետի խախտում չկա⁹⁰:

[14.94] Ճանայկային վերաբերող մի շարք գործեր են եղել, որոնցում հեղինակների՝ ճանայկայի վերաքննիչ դատարանից Գաղտնի խորհրդի դատական կոմիտեին բողոքարկում ներկայացնելու իրավունքը ի չիք է դարձել վերաքննիչ դատարանի կողմից գրավոր հիմքեր չտրամադրելու պատճառով: Գաղտնի խորհրդի դատական կոմիտե ներկայացված բողոքարկումն անխուսափելիորեն ձախողվել է դատական այդ փաստաթղթերի բացակայության պատճառով⁹¹: Այդ հետաձգումները հետևողականորեն համարվել են 14-րդ հոդվածի 3(գ) կետի, ինչպես նաև քրեական գործերում բողոքարկման իրավունքի՝ 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում: Օրինակ՝ մինչև փաստաթղթերի տրամադրումը քառասունհինգ ամիս տևած հապաղումը «Փրաթը և Մորգանն ընդդեմ Ճանայկայի» (*Pratt and Morgan v Jamaica*, 210/86, 225/87) գործում դարձավ թե՛ 14-րդ հոդվածի 3(գ) կետի, թե՛ 5-րդ կետի խախտում⁹²: «Ռոջերսոնն ընդդեմ Ավստրալիայի» (*Rogerson v Australia*, 802/98) գործում Յուսիսային տարածքի վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված երկու տարի տևողությամբ հետաձգումը գործի լսման և որոշման կայացման միջև համարվեց 14-րդ հոդվածի 3(գ) կետի ոտնահարում⁹³: Մյուս կողմից՝ «Ռեյնոլդսն ընդդեմ Ճանայկայի» (*Reynolds v Jamaica*, 229/87) գործում փաստաթղթերը տրամադրելու առնչությամբ տեղ գտած երեք տարի տևողությամբ հետաձգումը չխախտեց 14-րդ հոդվածի 3(գ) կետը: Երաշխիքը նույնիսկ չէր հիշատակվել, ինչից կա-

* Միացյալ Թագավորության գերագույն դատարաններից մեկը, որը նաև բարձրագույն վճռաբեկ դատարան է Բրիտանական համագործակցության 53 երկրների, ՄԹ-ի օտարերկրյա տարածքների և «Թագի կախյալ տարածքների» համար (ծան. թարգմ.):

⁹⁰ Տե՛ս նաև «Բերրին ընդդեմ Ճանայկայի» (*Berry v Jamaica*, 330/88), «Վ.Բ.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*V.B. v Trinidad & Tobago*, 485/91) և «Ջոնսն ընդդեմ Ճանայկայի» (*Jones v Jamaica*, 585/96) գործերը:

⁹¹ Տե՛ս, օրինակ, «Մ. Ֆ.-ն ընդդեմ Ճանայկայի» (*M.F. v Jamaica*, 233/88), պարբ. 5.2, «Ռեյնոլդսն ընդդեմ Ճանայկայի» (*Reynolds v Jamaica*, 229/87), պարբ. 5.1, «Էլլին ընդդեմ Ճանայկայի» (*Kelly v Jamaica*, 253/87), պարբ. 5.1:

⁹² Տե՛ս նաև «Շալտոն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Shalto v Trinidad*, 447/91), պարբ. 7.2 («գրեթե չորս տարի» տևած հապաղում), «Լիթլն ընդդեմ Ճանայկայի» (*Little v Jamaica*, 283/88) (5 տարվա հապաղում), «Էլլին ընդդեմ Ճանայկայի» (*Kelly v Jamaica*, 253/87) (5 տարի):

⁹³ Պարբ. 9.3:

րելի է եզրակացնել, որ դա թերացում էր ՄԻԿ-ի կողմից: Եթե նկատի առնվեն այլ գործերը, որոնց պարագայում համարվել է, որ երկու տարուց քիչ տևողությամբ հետաձգումը կարող է խախտել 14-րդ հոդվածի 3(գ) կետը, ապա *Ռեյնոլդսի* գործով որոշումը տարօրինակ կթվա⁹⁴:

[14.95] «ԼՈՒԲՈՒՏՈՆ ընդդեմ ԶԱՄԲԻԱՅԻ» (LUBUTO v ZAMBIA, 390/90)

Մասնակից պետությունը հետևյալ արդարացումը ներկայացրեց հեղինակի ձերբակալության և նրա վերջնական բողոքարկման մերժման միջև տեղ գտած ութ տարի տևողությամբ հետաձգման համար.

¶ 5.1. 1994 թ. դեկտեմբերի 29-ին ներկայացրած փաստաթղթերում մասնակից պետությունն ընդունում է, որ պրն Լուբուտոյի գործով դատական գործընթացը բավական երկար է տևել: Մասնակից պետությունը կոմիտեին խնդրում է հաշվի առնել իր՝ որպես զարգացող երկրի դրությունը և խնդիրները, որոնք ծառանում են արդարադատություն իրականացնելիս: Բացատրություն է ներկայացվում, որ ներկա գործը բացառիկ չէ, և թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական գործերի բողոքարկումը նշանակալի ժամանակ է խլում մինչև դատարանների կողմից վերջնական որոշման կայացումը: Ըստ մասնակից պետության՝ դա տեղի է ունենում դատական մարմիններին ցույց տրվող վարչական օժանդակության պակասի հետևանքով: Դատավորները ստիպված են արձանագրել դատարանում հնչած տառացիորեն յուրաքանչյուր բառը, որովհետև սղագրողներ չկան: Այդ արձանագրությունները հետագայում տպագրվում են և ստուգվում դատավորների կողմից՝ առաջ բերելով չափից դուրս երկար հապաղումներ: Մասնակից պետությունը հիշատակում է նաև դատական փաստաթղթերի պատրաստման ծախսերը:

¶ 5.2. Այնուհետև մասնակից պետությունը նշում է, որ աճել է հանցավորությունը, և բազմապատկվել է դատարանների որոշմանը սպասող գործերի թիվը: Երկրում տիրող աննպաստ տնտեսական վիճակի պատճառով գործերի ավարտումն արագացնելու համար հնարավոր չի եղել անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ ապահովել: Մասնակից պետությունը հայտարարում է, որ փորձում է բարելավել իրավիճակը. վերջերս ձեռք է բերել ինը համակարգիչ և ակնկալում է ևս 40-ի ձեռքբերումը:

¶ 5.3. Մասնակից պետությունը եզրակացնում է, որ հեղինակի՝ իր գործով որոշում կայացնելու առնչությամբ տեղ գտած հետաձգումներն անխուսափելի էին վերը նկարագրված իրավիճակի պատճառով: Մասնակից պետությունն այնուհետև հայտարարում է, որ ներկա գործում 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում տեղի չի եղել, քանի որ հեղինակի բողոքարկումը, թող որ հապաղումով, սակայն լսվել է գերագույն դատարանում:

ՄԻԿ-ն այս կետի վերաբերյալ վճռեց հօգուտ հեղինակի.

¶ 7.3. Կոմիտեն ի գիտություն է ընդունել մասնակից պետության բացատրությունները հեղինակի դեմ դատական գործում տեղ գտած հետաձգման վերաբերյալ: Կոմիտեն ըմբռնումով է մոտենում մասնակից պետության տնտեսական դժվարին կացությանը, սակայն ցանկանում է շեշտել, որ դաշնագրում ամրագրված իրավունքներն այն նվազագույն չափորոշիչներն են, որոնք մասնակից պետությունները համաձայնել են ապահովել: 14-րդ հոդվածի 3(գ) կետը սահմանում է, որ բոլոր մեղադրյալներն իրավունք ունեն դատվելու առանց հետաձգման, և այդ պահանջը հավասարապես վերաբերում է դատապարտման և պատժի սահմանման վերաբերյալ իրավունքին, որը երաշխավորված է 14-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ: Կոմիտեն համարում է, որ 1980 թ. փետրվարին հեղինակի ձերբակալության և 1988 թ. փետրվարին գերագույն դատարանի՝ բողոքարկումը մերժելու որոշման միջև ութ տարվա ժամանակահատվածն անհամատեղելի է 14-րդ հոդվածի 3(գ) կետի պահանջների հետ:

Այդպիսով, տնտեսական դժվարությունները պետությանը չեն ազատում 14-րդ հոդվածով սահմանված իր պարտավորությունների ամբողջական կատարումից⁹⁵:

⁹⁴ Հեղինակը հենց այդ մասին էր հայտարարում հետագա բողոքում, որը նոր մեղադրանքներ վեր հանեց դատավարական հետագա գործընթացների վերաբերյալ «*Ռեյնոլդսն ընդդեմ Ճամայկայի*» (597/94) գործում:

⁹⁵ Տե՛ս նաև. «*Սեքստուն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» գործը [14.91] և «*Մուկունտոն ընդդեմ Զամբիայի*» (*Mukunto v Zambia, 768/97*) գործը, պարբ. 6.4: Իսկապես, տնտեսական դժվարությունները շատ հազվադեպ են պետությանն ազատում ԶԲԻՄԴ-ով ստանձնած իր յուրաքանչյուր պարտավորությունից [1.101]:

Հոդված 14(3)(դ)

[14.96]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 11. Ոչ բոլոր զեկույցներում են ներկայացվել 3(դ) կետով սահմանված պաշտպանության իրավունքի բոլոր կողմերը: Կոմիտեն ոչ միշտ է բավարար տեղեկություններ ստացել մեղադրյալի՝ իրեն ներկայացված մեղադրանքի որոշման ժամանակ ներկա լինելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ, ոչ էլ այն մասին, թե ինչպես է իրավական համակարգը ապահովում մեղադրյալի՝ իրեն անձամբ պաշտպանելու կամ իր ընտրած պաշտպանի օգնությունից օգտվելու իրավունքը, կամ թե ինչ քայլեր են ձեռնարկվում, եթե անձը բավարար միջոցներ չունի իրավաբանական օգնության դիմաց վճարելու համար: Մեղադրյալը կամ նրա փաստաբանը պետք է ջանադրաբար և առանց վախենալու գործելու իրավունք ունենան պաշտպանության առկա բոլոր միջոցներն իրականացնելիս և գործի վարումը վիճարկելու իրավունք, եթե կարծում են, որ այն անարդար է: Երբ բացառապես հիմնավորված պատճառներով անցկացվում են *ին աբսենցիա (in absentia)* դատավարություններ, առավել ևս անհրաժեշտ է դառնում պաշտպանության իրավունքների ապահովումը:

[14.97] Ինչպես երևում է, 14-րդ հոդվածի 3(դ) կետը կիրառելի է դառնում միայն այն դեպքում, երբ անձին ներկայացվում է քրեական մեղադրանք: Մինչև մեղադրանքի առաջադրումը իրավաբանական ներկայացուցիչ ունենալու իրավունքները, առնվազն այնքանով, որքանով անձը կալանավորվել է այդ կապակցությամբ, ծագում են 9-րդ հոդվածից [11.54]:

ԱՆՁԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԴԱՏ

[14.98]

«ՄԲԵՆԳԵՆ ԸՆՈՂՈՒՄ ԶԱԻՐԻ» (MBENGE v ZAIRE, 16/77)

¶ 14.1. ...[Ի]ն աբսենցիա դատավարությունները որոշ հանգամանքներում (օրինակ՝ երբ մեղադրյալը, չնայած դատավարության մասին բավականաչափ վաղ տեղեկացված լինելուն, հրաժարվում է ներկա գտնվելու իր իրավունքից օգտվելուց) թույլատրելի են՝ ելնելով արդարադատության պատշաճ իրականացման շահերից: Այդուհանդերձ, 14-րդ հոդվածով սահմանված իրավունքների արդյունավետ իրականացումը նախատեսում է, որ պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեն մեղադրյալին նրա դեմ ձեռնարկված դատավարության վերաբերյալ նախօրոք տեղեկացնելու ուղղությամբ ... Ին աբսենցիա դատավարությունը պահանջում է, որ, չնայած մեղադրյալի բացակայությանը, նա պատշաճ կերպով ծանուցվի իր դատավարության ժամանակի և տեղի մասին, և հայցվի նրա ներկայությունը...

[14.99]

«ՄԱԼԵԿԻՆ ԸՆՈՂՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ» (MALEKI v ITALY, 699/96)

Հեղինակն *ին աբսենցիա* դատապարտվել էր թմրամիջոցների առևտրի մեղադրանքով: ՄԻԿ-ը որոշեց, որ խախտվել է 14-րդ հոդվածի 1-ին կետը.

¶ 9.3. Կոմիտեն նախկինում սահմանել է, որ *ին աբսենցիա* դատավարությունը համատեղելի է 14-րդ հոդվածի հետ միայն այն դեպքում, երբ մեղադրյալը հրավիրվել է ժամանակին և տեղեկացվել է իր նկատմամբ նախաձեռնված դատավարության մասին (հաղորդում թիվ 16/79 («Մբենգեն Ընողում Զաիրի»)): Որպեսզի մասնակից պետությունը բավարարի արդար դատաքննության պահանջները, երբ անձի հանդեպ իրականացնում է *ին աբսենցիա* դատավարություն, պետք է ցույց տա, որ այդ սկզբունքները հարգվել են:

¶ 9.4. Մասնակից պետությունը չի ժխտել, որ պրն Մալեկին դատվել է *ին աբսենցիա*. Այնուամենայնիվ, մասնակից պետությունը ցույց չի տվել, որ հեղինակը հրավիրվել է ժամանակին և տեղեկացված է եղել իր դեմ նախաձեռնված դատավարության մասին: Մասնակից պետությունը պարզապես մշել է, թե «ենթադրում է», որ հեղինակն իր դեմ Իտալիայում ձեռնարկված դատավարության մասին տեղեկացել է պաշտպանի միջոցով: Սա միանգամայն անբավարար է մասնակից պետության պարտականությունը կատարված համարելու համար, եթե այն պետք է հիմնավորի մեղադրյալին *ին աբսենցիա* դատելը: Գործը քննող դատարանը պարտավոր էր հավաստիանալ, որ հեղինակը տեղեկացվել է դատաքննության մեջ գտնվող գործի մասին մինչև *ին աբսենցիա* դատավարությանն անցնելը: Չունենալով ապացույցներ, որ դատարանն այդպես է վարվել, կոմիտեն կարծում է, որ հեղինակի՝ իր դատավարությանը ներկա լինելու իրավունքը խախտվել է:

¶ 9.5. Այդ կապակցությամբ կոմիտեն ցանկանում է ավելացնել, որ հեղինակի՝ իր դատավարությանը ներկա լինելու իրավունքի խախտումը կարող էր վերացվել, եթե նրան իր մասնակցությամբ կրկնակի դատավարության իրավունք տրվեր, երբ նա ձերբակալվել էր Իտալիայում: Մասնակից պետությունը նկարագրել է *ին արսենցիա* դատված մեղադրյալի՝ կրկնակի դատավարության համար դիմելու իրավունքին վերաբերող իր օրենսդրությունը: Սակայն մասնակից պետությունը չի պատասխանել հեղինակի ներկայացրած նամակին՝ գրված իտալացի իրավաբանի կողմից, համաձայն որի՝ ներկա գործի հանգամանքներից ելնելով, հեղինակը կրկնակի դատավարության իրավունք չուներ: Ուստի նամակում ներկայացված իրավական կարծիքին պետք է պատշաճ կշիռ տրվի: Սկզբունքորեն կրկնակի դատավարության իրավունքի վերաբերյալ դրույթների գոյությունը չի կարող հեղինակի համար իրավական պաշտպանության հնարավոր միջոց համարվել՝ հաշվի առնելով չվիճարկված ապացույցը, որ այդ դրույթները կիրառելի չեն հեղինակի դեպքում:

¶ 10. Մարդու իրավունքների կոմիտեն, գործելով համաձայն Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ պարբերության, այն կարծիքին է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը վեր են հանում դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Գործը վճռվեց 14-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ 14-րդ հոդվածի 3(դ) կետի ավելի որոշակի երաշխիքի փոխարեն: Սրա պատճառն այն էր, որ մասնակից պետությունը համապատասխան վերապահում էր մտցրել 14-րդ հոդվածի 3(դ) կետի վերաբերյալ [25.12]:

[14.100] Ֆինլանդիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է⁹⁶.

¶ 15. Կոմիտեն մտահոգություն է հայտնում, որ ինչպես ինքն է հասկանում, որոշակի հանցագործությունների համար մեղադրված անձը պատշաճ ծանուցումից հետո Ֆինլանդիայի դատարանների կողմից կարող է դատվել *ին արսենցիա*, եթե նրա ներկայությունն անհրաժեշտ չէ, և դատապարտվել տուգանքի կամ մինչև երեք ամիս բանտարկության՝ առանց 30 օր հետո կրկնակի դատաքննության իրավունքի: Կոմիտեն համարում է, որ մինչև անձը հստակորեն չհամաձայնի այդ ընթացակարգին, և դատարանը լիովին տեղեկացված չլինի իրավախախտման հանգամանքների մասին, դատավարության այս եղանակը կարող է առաջացնել դաշնագրի 14-րդ հոդվածի 3(դ) և 3(ե) կետերի հետ համատեղելիության հարցեր:

Այդպիսով, *ին արսենցիա* քրեական դատավարությունները կարող են հանդուրժվել միայն այն դեպքում, երբ մեղադրյալին բավարար ծանուցում է ներկայացվում և դատավարությանը մասնակցելու համարժեք հնարավորություն է տրվում⁹⁷:

ՍԵՓԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՇՏՊԱՆՆԻ ԻՐԱՎՈՒՆԵ

[14.101] 14-րդ հոդվածի 3(դ) կետը մեծ չափով համընկնում է 14-րդ հոդվածի 3(բ) կետի երաշխիքի հետ՝ հատկապես անձի՝ իրավական ներկայացուցիչ ունենալու իրավունքի առումով: Այդպիսով, հաճախ կարելի է ակնհայտել լինել այդ երկու ենթակետերի համաժամանակյա խախտման:

[14.102] «*Էստրելան ընդդեմ Ուրուգվայի*» (*Estrella v Uruguay, 74/80*) գործով հեղինակի՝ պաշտպան ընտրելու հնարավորությունը սահմանափակվել է պաշտոնապես նշանակված երկու փաստաբաններից մեկի ընտրությամբ: Հեղինակն իր պաշտպանին երկու տարվա ընթացքում հանդիպել է ընդամենը չորս անգամ: Կոմիտեն կարծիք է հայտնել, որ կատարվել է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (դ) ենթակետերի խախտում: «*Լոպես Բուրգոսն ընդդեմ Ուրուգվայի*» (*López Burgós v Uruguay, 52/79*) գործում ՄԻԿ-ը 14-րդ հոդվածի 3(դ) կետի խախտում գտավ, որովհետև հեղինակին ստիպել էին որպես իր պաշտպան ընդունել որոշակի անձի, չնայած այն հանգամանքին, որ այդ փաստաբանը կապված էր կառավարությանը: Հեղինակը չէր կարող օգտվել կառավարության հետ կապ չունեցող քաղաքացիական փաստաբանի ծառայություններից: Նմանապես «*Պինտոն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Pinto v Trinidad and Tobago, 232/87*) գործով հեղինակին չպետք է ստիպելին ընդունել դատարանի նշանակած պաշտպանին, որն իրեն վատ էր դրսևորել առաջին ատյանի դատարանում, երբ հեղինակը «կատարել էր անհրաժեշտ քայլեր,

⁹⁶ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 91:

⁹⁷ Տե՛ս նաև «*Ուոլֆն ընդդեմ Պանամայի*» (*Wolf v Panama, 289/88*), պարբ. 6.6:

որպեսզի վերաքննիչ դատարանում իրեն այլ պաշտպան ներկայացնի»⁹⁸: Այդպիսով, չի կարելի անձին ստիպել ընդունել *էքս օֆիցիո* (*ex officio*) պաշտպանի⁹⁹:

[14.103] 14-րդ հոդվածի 3(դ) կետը մեղադրյալին իրավունք չի վերապահում ընտրելու իր պաշտպանին, եթե հեղինակին տրամադրվում է իրավաբանական օգնություն ցույց տրվող փաստաբան, և հեղինակը չի կարող իրավաբանական ներկայացուցիչ ունենալ¹⁰⁰:

[14.104] 14-րդ հոդվածի 3(դ) կետը նաև անձանց իրավունք է տալիս ինքնուրույն պաշտպանելու իրենց, ինչպես ճանաչվել է ՄԻԿ-ի կողմից հետևյալ գործում:

« ՀԻԼԸ և ՀԻԼՆ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ » (HILL and HILL v SPAIN, 526/93)

¶ 14.2. Կոմիտեն հիշեցնում է Մայքլ Հիլի պնդումը, որ նա ցանկացել է ինքնուրույն պաշտպանվել թարգմանչի միջոցով, սակայն դատարանը մերժել է նրա դիմումը: Մասնակից պետությունը պատասխանել է, որ դատական միտի սղագրության մեջ նման դիմումի վերաբերյալ հիշատակություն չկա, և Իսպանիան ճանաչում է ինքն իրեն պաշտպանելու (*auto defence*) իրավունքները՝ «համաձայն դաշնագրի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, սակայն նման պաշտպանությունը պետք է իրականացվի կոմպետենտ պաշտպանի միջոցով, որն անհրաժեշտության դեպքում վճարվում է պետության կողմից»՝ այդպիսով ընդունելով, որ երկրի օրենսդրությունը թույլ չի տալիս մեղադրյալին ինքնուրույն պաշտպանվել, ինչպես նախատեսված է դաշնագրով: Կոմիտեն, համապատասխանաբար, եզրակացնում է, Մայքլ Հիլի՝ իրեն անձամբ պաշտպանելու իրավունքը չի հարգվել՝ ի հակադրություն դաշնագրի 14-րդ հոդվածի 3(դ) պարբերության:

[14.105] « ՏՈՐԵԳՐՈՍԱ ԼԱՖՈՒԵՆՏԵՆ և այլք ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ » (TORREGROSA LAFUENTE et al v SPAIN, 866/99)

Հեղինակին թույլ չէր տրվել սահմանադրական դատարանում անձամբ, առանց պաշտպանի, ներկայացնել իրեն: Ազգային օրենսդրությունը սահմանում էր, որ միայն այն անձինք, ովքեր բարձրագույն իրավաբանական կրթություն ունեն, կարող են այդ դատարանում ինքնուրույն պաշտպանել իրենց: ՄԻԿ-ի մեծամասնությունը հաղորդումն անընդունելի համարեց և հայտարարեց:

¶ 6.3. Ինչ վերաբերում է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետի և 26-րդ հոդվածի խախտման վերաբերյալ մեղադրանքներին՝ այն հիմքով, որ հեղինակներին թույլ չի տրվել օգտվել, առանց պաշտպանների կողմից ներկայացվելու, սահմանադրական դատարանի առջև կանգնելու հնարավորությունից, կոմիտեն համարում է, որ հեղինակի կողմից տրամադրված տեղեկություններում չի նկարագրվում այնպիսի իրադրություն, որը այդ հոդվածների գործողության ոլորտում է: Հեղինակը պնդում է, որ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձանց պարագայում սահմանադրական դատարանում պաշտպանի կողմից ներկայացված չլինելը խտրականություն է, այն դեպքում, երբ նման պահանջ ներկայացվում է բարձրագույն իրավաբանական կրթություն չունեցող անձանց դեպքում: Սահմանադրական դատարանի որոշումը բացատրում է Սահմանադրական դատարանի կազմակերպության մասին օրենքի (Constitutional Court Organization Act) 81-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի պատճառը, այն է՝ *viz*^{*} ապահովել, որ դատարանում պաշտպանության միջոցի համար դիմելու պատասխանատուն լինի իրավաբանության իմացությամբ օժտված անձը: Կոմիտեն չի համարում, որ հեղինակի ներկայացրած մեղադրանքները, որ նման պահանջը հիմնված չէ օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա, ընդունելիության տեսանկյունից բավականաչափ հիմնավորված են: Հետևաբար, կոմիտեն համարում է, որ հաղորդման այդ հատվածն անընդունելի է:

Այս որոշումը կարծես թե հակասում է *Հիլի* գործով կայացված որոշմանը: ՄԻԿ-ին թերևս շեղել է

⁹⁸ Պարբ. 12.5:

⁹⁹ Տե՛ս նաև « *Դոմուկովսկին և այլք ընդդեմ Վրաստանի* » (*Domukovsky et al v Georgia*, 623-624, 626-627/95), պարբ. 18.9: Տե՛ս նաև « *Բելլին ընդդեմ Ճամայկայի* » (253/87) [14.113]:

¹⁰⁰ Տե՛ս « *Փրաթը և Մորգան ընդդեմ Ճամայկայի* » (*Pratt and Morgan v Jamaica*, 210, 225/87), « *Թիսդելլը ընդդեմ Տրինիդադի և Տոբագոյի* » (*Teesdale v Trinidad and Tobago*, 677/96), պարբ. 9.6:

* viz՝ լատ. կրճատ, videlicet բառից (*ժամ. թարգմ.*):

խտրականության վերաբերյալ բողոքը՝ համաձայն 26-րդ հոդվածի (իրավաբանական կրթություն ունեցող և չունեցող անձանց միջև), և նա վիճարկվող օրենսդրությունը չի վերլուծել 14-րդ հոդվածի 1-ին կետի տեսանկյունից¹⁰¹: Անընդունելիության համաձայն որոշումներ են կայացվել «Մարին Գոմեսն ընդդեմ Իսպանիայի» (*Marín Gómez v Spain, 865/99*) և «Սանչես Գոնսալեսն ընդդեմ Իսպանիայի» (*Sánchez González v Spain, 1005/01*) գործերով:

[14.106] «Բեյլին ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (*BAILEY v JAMAICA, 709/96*)

Հեղինակը սպանության համար 1977 թ. դատապարտվել է մահապատժի: Նոր օրենսդրության համաձայն՝ 1993 թ. նրա կատարած հանցագործությունը որակվում էր որպես մահապատիժ չնախատեսող: Հեղինակը բողոքում էր վերաորակման օրվանից հետո, առանց պայմանական վաղաժամկետ ազատման իրավունքի, քսան տարի ժամկետ սահմանելու դեմ: ՄԻԿ-ը համաձայնեց նրա բողոքին՝ արձանագրելով 14-րդ հոդված 1-ին և 3(դ) կետերի խախտում¹⁰²:

¶ 7.5. Հեղինակը պնդում է նաև, որ 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իր իրավունքները խախտվել են վերաորակման ընթացակարգում, որում հեղինակի հանցանքը որակվել է որպես մահապատիժ չնախատեսող՝ համաձայն 1992 թ. «Անձի դեմ հանցագործությունների մասին (փոփոխված)» օրենքի [Offenses Against the Person (Amendment) Act] 7-րդ բաժնի, և սահմանվել է առանց պայմանական վաղաժամկետ ազատման իրավունքի 20 տարի տևողությամբ ժամանակաշրջան [վերաորակման օրվանից հաշված]: Պնդում է արվել, որ հեղինակին չի ներկայացվել առանց պայմանական վաղաժամկետ ազատման իրավունքի ժամանակաշրջանի նման տևողություն սահմանելու որևէ պատճառ և հնարավորություն չի տրվել մասնակցություն ունենալու մեկ դատավորի կողմից կիրարկվող այդ ընթացակարգին: Չնայած որպես մահապատիժ չնախատեսող վերաորակված հանցանքների համար օրենքով սահմանված է ցմահ բանտարկություն, կոմիտեն նշում է, որ դատավորը, երբ սահմանում է առանց պայմանական վաղաժամկետ ազատման իրավունքի ժամկետը, կիրառում է դիսկրեցիոն իրավասություն՝ շնորհված իրեն 1992 թ. «Փոփոխության մասին» օրենքով, և կայացնում է որոշում, որն առանձին է ներման մասին որոշումից և կազմում է քրեական մեղադրանքի իսկության որոշման կարևոր մասը: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը չի վիճարկել, որ հեղինակին հնարավորություն չի տրվել որևէ փաստարկ կամ փաստաթուղթ ներկայացնելու միջև դատավորի որոշումը: Այդ հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն կարծում է, որ խախտվել են 14-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերը:

Այդպիսով, անձը քրեական մեղադրանքից պաշտպանվելիս ներկայացուցիչ ունենալու իրավունք և իր նկատմամբ սահմանված պատժի ու առանց պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունքի ժամկետի վերաբերյալ փաստարկներ ներկայացնելու իրավունք ունի:

ԲԱՎԱՐԱՐ ՎՃԱՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՍԲԱՍԱՆՅԱԼՆԵՐԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

[14.107] «ԲՈՐԻՍԵՆԿՈՆ ընդդեմ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ» (*BORISENKO v HUNGARY, 852/99*)

Ուկրաինայի քաղաքացի հանդիսացող հեղինակին ներկայացվել է գողության մեղադրանք: Նա կալանքի տակ է պահվել երեք օր՝ մինչև դատավորին ներկայացնելը, ով թույլատրել է շարունակել կալանքը: Ընդհանուր առմամբ, նրան կալանքի տակ են պահել տասնվեց օր՝ մինչև Հունգարիայից արտաքսելը:

¶ 7.5. Ինչ վերաբերում է հեղինակի պնդմանը, որ իրեն իրավական ներկայացուցիչ չեն տրամադրել իր ձերբակալության պահից մինչև կալանքից ազատելը, ինչը ներառում էր կալանքի հարցի լսումը, որի ժամանակ նա ստիպված էր ինքն իրեն ներկայացնել, կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը հաստատել է, որ թեև հեղինակին փաստաբան է հատկացրել, սակայն վերջինս չի ներկայացվել հարցաքննությանը և կալանքի հարցի լսմանը: Անցյալում տեղ գտած իր նախադեպային իրավունքում [14.113] կոմիտեն հստակ նշել է, որ մասնակից պետության պարտականություն է ապահովել, որ պետության կողմից տրամադրված իրավական ներկայացուցչությունը երաշխավորի արդյունավետ ներկայացում: Կոմիտեն հիշեցնում է իր նախկին նախադեպային իրավունքը, ըստ որի՝ իրավաբանական օգ-

¹⁰¹ Տիկին Շանեյ [Chanet] առարկեց և գործն ընդունելի համարեց 14-րդ և 26-րդ հոդվածներով:

¹⁰² Տե՛ս նաև «Գալլիմորն ընդդեմ Ճամայկայի» (*Gallimore v Jamaica, 680/96*), պարբ. 7.2:

նությունը պետք է առկա լինի քրեական դատավարության բոլոր փուլերում: Հետևաբար, կոմիտեն կարծում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը վեր են հանում դաշնագրի 14-րդ հոդվածի 3(դ) կետի խախտում:

[14.108]

«*O. F.-ն ընդդեմ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ*» (*O.F. v NORWAY, 158/83*)

Այս գործով հեղինակին մեղադրանք է ներկայացվել երթևեկության թույլատրելի արագությունը գերազանցելու համար: Նա պնդում էր, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի 3(դ) կետի խախտում, քանի որ իրեն ներկայացված մեղադրանքներից պաշտպանվելու համար իրավաբանական օգնություն չի տրամադրվել: Մասնակից պետությունը հակափաստարկներ է ներկայացրել:

¶ 3.4. ... Ինչ վերաբերում է 14-րդ հոդվածի 3(դ) կետին, կասկածից վեր է, որ հեղինակը ներկա է եղել իր դատավարությանը, պաշտպանել է իրեն և տեղյակ է եղել իր՝ իրավաբանական օգնության միջոցով պաշտպանվելու իրավունքի մասին: Հետևաբար, ենթադրվում է, որ հեղինակի կողմից այդ դրույթին հղում կատարելու պատճառը պետք է լիներ այն, որ արդարադատության շահերից ելնելով՝ իրեն պետք է տրամադրված լիներ անվճար իրավաբանական օգնություն: Փաստը, որ հեղինակին չի տրամադրվել անվճար իրավաբանական օգնություն, պետք է դիտել այն հանգամանքների բնույթի լույսի ներքո, որոնց համար մեղադրվում էր հեղինակը: Երկու մեղադրանքն էլ առօրեական և հասարակ էին և գործնականում կարող էին հանգեցնել ընդամենը փոքր տուգանքների ...

Նույնիսկ եթե մեղադրյալը մանր զանցանքների դեպքում սովորաբար անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք չի ունենում, մա, անշուշտ (քրեական դատավարության օրենսգրքի [Criminal Procedure Act] բաժին 99), իր միջոցների հաշվին իրավունք ունի իր ընտրությամբ պաշտպանի օգնությանը դիմելու՝ հետապնդման ցանկացած փուլում, ներառյալ գործի հիմնական լուծումը ...

Հետևաբար, կառավարությունն այն կարծիքին է, որ գործի փաստերը 14-րդ հոդվածի 3(դ) կետի ներքո հարցեր չեն առաջացնում:

ՄԻԿ-ը համաձայնեց մասնակից պետության դիտարկմանը, որ գործն անընդունելի է¹⁰³:

«*ԼԻՆԴՈՆՆ ԸՆԴԴԵՄ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ*» (*LINDON v AUSTRALIA, 646/95*)

¶ 6.5. Կոմիտեն դիտարկել է հեղինակի պնդումը, որ ինքը հանդիսանում է 14-րդ հոդվածի 3(դ) կետի խախտման զոհ, քանի որ իրեն Բարձրագույն վերաքննիչ դատարանում [Full Court] 1989 թ. սեպտեմբերին անցկացված դատավարության ժամանակ մերժել են իր ընտրած իրավաբանական օգնություն ցույց տվող փաստաբանին տրամադրելը: Կոմիտեն նշում է, որ դատավարությունը վերաբերել է հեղինակի միջանկյալ դիմումներին՝ կապված սահմանազանցության մեղադրանքի դեմ (որի համար տույժ էր նախատեսված) իր պաշտպանության հետ, և այդ հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն կարծում է, որ հեղինակը, ընդունելիության առումով, չի հիմնավորել իր պնդումը, որ արդարադատության շահերը պահանջում են իրեն իրավաբանական օգնություն տրամադրել: Ուստի հաղորդման այս հատվածը համարվում է անընդունելի՝ կամընտիր արժանագրության 2-րդ հոդվածի համաձայն:

Այդպիսով՝ հանցանքի ծանրությունը կարևոր է, երբ որոշվում է՝ «հանուն արդարադատության շահերի» մեղադրյալին պե՞տք է տրամադրել իրավական ներկայացուցիչ՝ պետության հաշվին¹⁰⁴: Սլովակիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն ափսոսանք է հայտնում այն փաստի կապակցությամբ, որ իրավաբանական օգնություն տրամադրվում է միայն այն հանցագործությունների համար, որոնց դեպքում որպես հնարավոր պատիժ սահմանված է հինգ տարի և ավելի ժամկետով բանտարկություն¹⁰⁵:

[14.109] «*2. Փ.-ն ընդդեմ Կանադայի*» (*Z.P. v Canada, 341/88*) գործում մասնակից պետությունը հեղինակին մերժել էր իրավաբանական օգնությունը՝ բռնաբարության համար դատապարտումը բողոքարկելու համար: ՄԻԿ-ը որոշեց, որ «հեղինակը բավականաչափ չի հիմնավորել իր մեղադրանքը»՝ 14-րդ հոդվածի

¹⁰³ Պարբ. 5.6:

¹⁰⁴ Տե՛ս նաև [14.18]:

¹⁰⁵ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 79, պարբ. 19:

3(դ) կետի առումով «ընդունելիության նկատառումներով»¹⁰⁶: Իրավական օգնությունը մերժելու ներպետական որոշումը հիմնված էր նրա բողոքում էական ընկալված հանգամանքների բացակայության վրա¹⁰⁷: Այդպիսով, մասնակից պետությունը պարտավոր չէ իրավաբանական օգնություն տրամադրել լուրջ հանցանք բողոքարկող անձին, եթե այդ բողոքը հաջողության որոշ օբյեկտիվ շանսեր չունի¹⁰⁸:

[14.110] *Չ. Փ.-ի* կանոնը, որը վերաբերում էր բողոքարկման ժամանակ իրավաբանական օգնությանը, այնուամենայնիվ, կարող է չվերաբերել մահապատիժ նախատեսող հանցանքների համար դատապարտված մարդկանց, որոնց համար թերևս պետք է ապահովվի բողոքարկման բոլոր հնարավոր միջոցներից օգտվելու հնարավորություն՝ վիճարկելու համար իրենց դատապարտումը կամ պատիժը¹⁰⁹: Դիտարկենք հետևյալ գործը.

**«ԼԱՎԵՆԴԵՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(LAVENDE v TRINIDAD and TOBAGO, 554/93)**

¶ 5.8. 14-րդ հոդվածի 3(դ) կետով ներկայացված պնդման վերաբերյալ մասնակից պետությունը չի ժխտել, որ հեղինակին մերժվել է իրավաբանական օգնության տրամադրումը՝ բողոքարկման հատուկ թույլտվություն ստանալու համար Փաղտնի խորհրդի դատական կոմիտեին դիմելու նպատակով: Կոմիտեն հիշեցնում է, որ մահապատիժ դատապարտված բանտարկյալին իրավաբանական օգնություն տրամադրելն իմպերատիվ բնույթ ունի, և դա վերաբերում է դատավարության բոլոր փուլերին: ...Տրինիդադ և Տոբագոյի սահմանադրության 109-րդ բաժինը նախատեսում է բողոքարկման համար Փաղտնի խորհրդի դատական կոմիտեին դիմելը: Չի վիճարկվում, որ սույն գործում ազգային անվտանգության նախարարությունը մերժել է հեղինակին իրավաբանական օգնության տրամադրումը՝ Դատական կոմիտեին *ին ֆորմա պաուպերիս** դիմելու համար, դրանով փաստացիորեն մերժելով նրան իրավաբանական օգնության տրամադրումը բողոքարկման դատական գործընթացի հաջորդ փուլի համար, ինչը նախատեսված է սահմանադրությամբ: Կոմիտեի կարծիքով՝ այս մերժումը խախտում է 14-րդ հոդվածի 3(դ) կետը, որի երաշխիքները վերաբերում են բողոքարկման միջոցով դատական պաշտպանության բոլոր փուլերին: Յետևանքն այն է, որ նրա՝ դատապարտումը և դատավճիռը «օրենքի համաձայն վերադաս դատական ատյանի կողմից» վերանայվելու իրավունքը՝ սահմանված 14-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ, նույնպես խախտվել է, քանի որ Դատական կոմիտեին բողոք ներկայացնելու համար իրավաբանական օգնության մերժումը փաստացի կանխել է այդ մարմնի կողմից պրն Լավենդեի դատապարտման և դատավճռի վերանայումը:

Մահապատիժ նախատեսող հանցանքի պատճառով դատապարտված մարդկանց համար նախատեսված իրավաբանական օգնությունը պետք է տրամադրվի նրանց, ովքեր գործին վերաբերող նախնական լսումների բավարար միջոցներ չունեն¹¹⁰, ինչպես նաև դատաքննության և բողոքարկման ժամանակ¹¹¹:

[14.111] 14-րդ հոդվածի 3(դ) կետում տեղ գտած իրավաբանական օգնության երաշխիքը կիրառելի է միայն քրեական դատավարությունների նկատմամբ: Սակայն մի քանի գործերում, ինչպիսին է «*Քարրի ընդդեմ Ճամայկայի*» (*Currie v Jamaica, 377/89*) գործը, ՄԻԿ-ը որոշել է, որ 14-րդ հոդվածի 1-ին կետն անձին իրավաբանական օգնության իրավունք է տալիս քաղաքացիական դատավարությունների

¹⁰⁶ Պարբ. 5.4:

¹⁰⁷ Պարբ. 4.4: Մեղադրյալը Մոնրեալի իրավաբանական օգնության խորհրդին (Montreal Legal Aid Board) չէր տեղեկացրել բողոքարկման որևէ վիճարկելի հիմքի մասին:

¹⁰⁸ Տե՛ս նաև A. De Zayas, 'The United Nations and the Guarantees of a Fair Trial in the International Covenant on Civil and Political Rights and the Convention Against Torture, and other Cruel, Inhuman and Degrading Treatment', in D. Weissbrodt and R. Wölfrum (eds), *The Right to a Fair Trial*, (Springer, New York, 1997), at 686:

¹⁰⁹ Տե՛ս նաև [14.18]-ը և նախորդող մեջբերումները գործից:

* *in forma pauperis*՝ լատ. չքավորի ձևով (ծան. *թարգմ.*):

¹¹⁰ Տե՛ս «*Ռայթը և Հարվին ընդդեմ Ճամայկայի*» (*Wright and Harvey v Jamaica, 459/91*), պարբ. 10.2, «*Լևին ընդդեմ Ճամայկայի*» (*Levy v Jamaica, 719/96*), պարբ. 7.2, «*Մարշալն ընդդեմ Ճամայկայի*» (*Marshall v Jamaica, 730/96*), պարբ. 6.2:

¹¹¹ Տե՛ս նաև «*Թոմասն ընդդեմ Ճամայկայի*» (532/93), պարբ. 6.4; «*Ջոնսոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Johnson v Jamaica, 592/94*), պարբ. 10.2 (իրավաբանական օգնությունը մերժվել է նախնական դատաքննության ժամանակ), «*Ռոբինսոնն ընդդեմ Ճամայկայի*» (*Robinson v Jamaica, 223/87*) (հեղինակին իրավաբանական օգնության իրավունք տրվել է, սակայն այն կպահանջեր դատավարության հետաձգում), պարբ. 10.4:

որոշ տեսակների դեպքում [14.16]:

ԿՈՄՊԵՏԵՆՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

[14.112] ԱՄՆ-ի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է¹¹².

¶ 23. ... Կոմիտեն ... նշում է արդյունավետ միջոցների բացակայությունը՝ ուղղված լուրջ քրեական դատավարություններում, հատկապես պետական դատարաններում ընչազուրկ ամբաստանյալների՝ կոմպետենտ պաշտպանի կողմից ներկայացվելու ապահովմանը:

«Վասիլսկիսն ընդդեմ Ուրուգվայի» (*Vasilskis v Uruguay, 80/80*) գործում ՄԻԿ-ը 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (դ) ենթակետերի խախտում արձանագրեց, քանի որ դատարանը հեղինակին հատկացրել էր պաշտպան, որը որակավորված փաստաբան չէր:

[14.113] «ՔեՆԼԻՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (*KELLY v JAMAICA, 253/87*)

¶ 5.10. ... Կոմիտեն այն կարծիքին է, որ թեև 14-րդ հոդվածի 3(դ) կետը մեղադրյալին իրավունք չի տալիս ընտրելու իրեն անվճար տրամադրված պաշտպան, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որ պաշտպանը նշանակվելուց հետո արդյունավետ ներկայացուցչություն իրականացնի՝ ի շահ արդարադատության: Դա ներառում է մեղադրյալի հետ խորհրդակցելը և նրան տեղեկացնելը, եթե պաշտպանը մտադիր է հրաժարվել բողոքարկումից, կամ վերաքննիչ դատարանում վիճարկելը, որ բողոքարկումն էական հիմքեր չի պարունակում:

Այդպիսով, երբ իրավական ներկայացուցչությունը տրամադրվում է պետության կողմից, այն պետք է *արդյունավետ* լինի:

[14.114] «ԲԵՄՓԵՆԼՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (*CAMPBELL v JAMAICA, 618/95*)

Հեղինակը մի շարք մեղադրանքներ է ներկայացրել մահապատիժ նախատեսող դատավարությունում իրեն իրավաբանական օգնություն ցույց տվող պաշտպանի ոչ կոմպետենտության վերաբերյալ: Հեղինակը հավելում է.

¶ 5.3. Ինչ վերաբերում է պաշտպանի կողմից պաշտպանության իրականացմանը դատաքննության կամ բողոքարկման ընթացքում, պնդում է արվում, որ մասնակից պետությունը պետք է կրի պաշտպանի կատարած աշխատանքի համար պատասխանատվությունը, քանի որ վերջինս իրավաբանական օգնություն է տրամադրում այնքան փոքր վարձատրության դիմաց, որ պաշտպանությունը մնում է անբավարար ռեսուրսներով, և պաշտպանները, ովքեր ստանձնում են մահապատիժ նախատեսող գործերի պաշտպանությունը, այնքան մեծ աշխատանքային ծանրաբեռնվածության տակ են ընկնում, որ չեն կարողանում պատշաճ և բավարար կերպով ներկայացնել իրենց հաճախորդներին:

ՄԻԿ-ը փաստաբանների ենթադրյալ ոչ կոմպետենտության առումով խախտում չարձանագրեց.

¶ 7.3. Հեղինակը պնդում է, որ իր պաշտպանի կողմից իրականացված պաշտպանության ցածր որակը հանգեցրել է իրեն արդար դատաքննությունից զրկելուն: Մասնավորապես, հղում է արվում ենթադրաբար պաշտպանի կողմից հեղինակի ընկերուհուն չհարցաքննելուն և մեղադրող կողմի վկաներին պատշաճ կերպով խաչաձև հարցաքննության չենթարկելուն՝ կապված առերեսման իրականացման և հեղինակի ենթադրյալ բանավոր հայտարարության հետ: Կոմիտեն հիշեցնում է իր նախադեպային իրավունքը, ըստ որի՝ մասնակից պետությունը չի կարող պատասխանատվության կանչվել փաստաբանի կողմից կատարված պաշտպանության ենթադրյալ սխալների համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատավորի համար ակնհայտ է կամ պետք է որ ակնհայտ եղած լիներ, որ փաստաբանի պահվածքն անհամատեղելի է արդարադատության շահերի հետ: Կոմիտեի տրամադրության տակ եղած նյութերը ցույց

¹¹² (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50:

չեն տալիս, որ ներկա գործում այդ դեպքն է եղել, հետևաբար, այդ առումով 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ), (դ) և (ե) ենթակետերի խախտումն արձանագրելու հիմք չկա:

[14.115] «ՀՈՒՍԵՅՆ ընդդեմ ՄԱՎՐԻԿԻՈՍԻ» (HUSSAIN v MAURITIUS, 980/01)

Հեղինակը բողոքում էր, որ իրեն իրավաբանական օգնություն ցույց տվող փաստաբանը անհրաժեշտ փաստաթղթերը ստացել է իր դատավարությունից ընդամենը հինգ օր առաջ և ընդհանուր առմամբ գործի պաշտպանությունը վատ է վարել: ՄԻԿ-ը որոշեց, որ բողոքն անընդունելի է:

¶ 6.3. Ինչ վերաբերում է հեղինակի պնդմանը, որ իր պաշտպանը բավարար ժամանակ չի ունեցել իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, քանի որ գործի նյութերը նրան են հանձնվել դատական առաջին նիստից ընդամենը հինգ օր առաջ, ինչը կարող է հարցեր հարուցել դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (դ) ենթակետերի առումով, կոմիտեն, ելնելով երկու կողմերի ներկայացրած տեղեկություններից, նշում է, որ պաշտպանը հնարավորություն է ունեցել վկային խաչաձև հարցաքննության ենթարկելու, ինչպես նաև դիմելու դատավարության հետաձգման համար, ինչը չի արել: Այդ առումով կոմիտեն հղում է անում իր նախադեպային իրավունքին, ըստ որի՝ մասնակից պետությունը չի կարող պատասխանատվության կանչվել պաշտպանության փաստաբանի վարքի համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատավորի համար ակնհայտ է կամ պետք է որ ակնհայտ եղած լիներ, որ փաստաբանի պահվածքն անհամատեղելի է արդարադատության շահերի հետ: Ներկա գործում կոմիտեն համար հիմք չկա հավատալու, որ հեղինակի պաշտպանը բարեխիղճ չի եղել: Ավելին՝ կոմիտեն նշում է, որ հեղինակն ի վերջո որոշել է ընդունել իր մեղքը՝ հակառակ պաշտպանի խորհրդի: Ուստի, կոմիտեն համարում է, որ հեղինակը բավարար չափով չի հիմնավորել իր պնդումը դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (դ) ենթակետերի առնչությամբ: Ուրեմն, հաղորդման այս հատվածը պետք է հայտարարվի անընդունելի՝ ըստ կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի:

[14.116] Վերը բերված որոշումները 14-րդ հոդվածի 3(ե) կետի վերաբերյալ ՄԻԿ-ի նախադեպային իրավունքի հետ միասին¹¹³ ցույց են տալիս, որ իրավաբանական օգնություն ցույց տվող կոմպետենտ պաշտպանի առումով պետության երաշխիքը սահմանափակ է¹¹⁴: Իսկապես, 14-րդ հոդվածի 3(դ) կետի խախտման արձանագրման են հանգեցրել միայն բացահայտ անհարիր պահվածքը կամ ոչ կոմպետենտությունը, ինչպես օրինակ՝ առանց խորհրդակցելու բողոքարկման դադարեցումը¹¹⁵, բացակայությունը դատավորի եզրափակիչ խոսքի ժամանակ¹¹⁶ կամ բացակայությունը վկաների հարցաքննության ժամանակ¹¹⁷, նույնիսկ գործի նախնական քննության ընթացքում¹¹⁸: Դատական ռազմավարության առումով ոչ կոմպետենտության համար մեղադրանքները մինչ այժմ չեն ընդունվել, և ՄԻԿ-ն այն թողել է պաշտպանի մասնագիտական հայեցողությանը:

[14.117] Հետևյալ գործն անդրադառնում է մասնավոր կերպով վարձված փաստաբանի ոչ կոմպետենտության հետ կապված բողոքներին:

«Հ. Բ.-ն ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (H.C. v JAMAICA, 383/89)

¶ 6.3. Ինչ վերաբերում է հեղինակի՝ իր իրավական ներկայացուցչության վերաբերյալ պնդմանը, կոմիտեն համա-

¹¹³ Տե՛ս ստորև՝ [14.122]:

¹¹⁴ Տե՛ս նաև «Թիսթեյլն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Teesdale v Trinidad and Tobago, 677/96), պարբ. 9.7, «Ռիքեթսն ընդդեմ Ճամայկայի» (Ricketts v Jamaica, 667/965), պարբ. 7.3, «Շոուն ընդդեմ Ճամայկայի» (Shaw v Jamaica, 704/96), պարբ. 7.5, «Բեյլին ընդդեմ Ճամայկայի» (Bailey v Jamaica, 709/96), պարբ. 7.1:

¹¹⁵ Տե՛ս նաև «Բոլինսն ընդդեմ Ճամայկայի» (Collins v Jamaica, 356/89), պարբ. 8.2, «Սթիմանն ընդդեմ Ճամայկայի» (Steadman v Jamaica, 528/93), պարբ. 10.3, «Սմիթը և Ստյուարտն ընդդեմ Ճամայկայի» (Smith and Stewart v Jamaica, 668/95), պարբ. 7.3, «Մորիսոնը և Գրեհեմն ընդդեմ Ճամայկայի» (Morrison and Graham v Jamaica, 461/91), պարբ. 10.3, «Մորիսոնն ընդդեմ Ճամայկայի» (Morrison v Jamaica, 663/95), պարբ. 8.6, «Մակլեոդն ընդդեմ Ճամայկայի» (McLeod v Jamaica, 734/97), պարբ. 6.3, «Ջոնսն ընդդեմ Ճամայկայի» (Jones v Jamaica, 585/94), պարբ. 9.5, «Սուկլալն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Sooklal v Trinidad and Tobago, 928/00), պարբ. 4.10:

¹¹⁶ «Բրաունն ընդդեմ Ճամայկայի» (Brown v Jamaica, 775/97), պարբ. 6.8:

¹¹⁷ «Հենդրիքսն ընդդեմ Գայանայի» (Hendricks v Guyana, 838/98), պարբ. 6.4:

¹¹⁸ «Բրաունն ընդդեմ Ճամայկայի» (775/97), «Սիմպսոնն ընդդեմ Ճամայկայի» (Simpson v Jamaica, 695/96):

րում է, որ հեղինակի փաստաբանը մասնավոր կերպով է վարձվել, և հեղինակին ենթադրաբար պատշաճ կերպով չներկայացնելը չի կարելի վերագրել մասնակից պետությանը: Յետևաբար, հաղորդման այս հատվածը համարվում է անընդունելի:

[14.118] 7. *Ք-ի* գործը ցույց է տալիս, որ տարբեր «չափորոշիչներ» կարելի է կիրառել իրավաբանական օգնություն ցույց տվող փաստաբանների և մասնավոր կերպով ներգրավված փաստաբանների համար: Թերևս մասնակից պետությունը կարող է պարտավոր լինել՝ կոմպետենտության նվազագույն աստիճան երաշխավորելու միայն այն փաստաբանների համար, ում նա տրամադրում է մեղադրյալ անձանց¹¹⁹: *Քելլի*ի գործով իր մասնավոր կարծիքում [14.113] պրն Սադին նշում է հետևյալը.

Թեև համամիտ լինելով այն տեսակետին ... որ լուրջ հանցագործությունների համար դատավարություններում, հատկապես մահապատիժ մախատեսող գործերում արդար դատաքննության սկզբունքի համաձայն մեղադրվող անձանց պետք է տրամադրվի արդյունավետ դատապաշտպան, եթե մեղադրյալներն ի վիճակի չեն մասնավոր դատապաշտպան ներգրավելու, մասնակից պետության՝ դատապաշտպան տրամադրելու պատասխանատվությունը չի կարող մեղադրվող անձանց դատապաշտպան նշանակելիս բարեխղճորեն գործելու պատասխանատվությունից անդին լինել: Դատարանի կողմից նշանակված պաշտպանի դատողությունների առումով որևէ սխալ չի կարող վերագրվել մասնակից պետությանը ավելի մեծ չափով, քան կարող են վերագրվել մասնավոր կարգով ներգրավված պաշտպանի թույլ տված սխալները: Դատական գործընթացում գործող մրցակցության սկզբունքի պարագայում ցավալի փաստ է, որ անմեղ մարդիկ կախաղան են հանվում իրենց փաստաբանների գործած սխալների պատճառով, մասնապես, երբ հանցագործները կախաղանից խույս են տալիս պարզապես այն պատճառով, որ նրանց փաստաբանները խելացի են: Այս արատը խորապես ներթափանցել է դատական գործընթացում գործող մրցակցության համակարգ, որը կիրառվում է դաշնագրին մասնակից պետությունների մեծամասնության կողմից: Եթե դատարանի կողմից նշանակված փաստաբանների նկատմամբ պատասխանատվության ավելի բարձր աստիճան կիրառվի, քան նրանց մասնավոր գործընկերների, և այդպիսով մասնակից պետությունը պատասխանատու դառնա նրանց որևէ տրամաբանական սխալի համար, ապա, վախենամ, կոմիտեն կիրառի կրկնակի չափորոշիչներ:

Մասնակից պետությունը Սադիի դիտողությունները կրկնեց «*Գրանտն ընդդեմ Ճամայկայի*» (*Grant v Jamaica*, 353/88) գործով իր փաստարկներում¹²⁰:

[14.119] «ԹեՅԼՈՐՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (TAYLOR v JAMAICA, 705/96)

¶ 6.2. Այն պնդման վերաբերյալ, որ հեղինակը բավարար հնարավորություն չի ունեցել իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, և նրա ներկայացուցիչը առանձնապես ջանք չի թափել նրա հետ խորհրդակցելու, նրա ցուցումներին հետևելու կամ վկաներին գտնելու և կանչելու համար, կոմիտեն հիշեցնում է, որ պաշտպանն ի սկզբանե ներգրավվել է մասնավոր կարգով: Կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետությունը չի կարող պատասխանատվության կանչվել մեղադրյալի պաշտպանության մեջ ենթադրաբար տեղ գտած որևէ թերության կամ պաշտպանության փաստաբանի ենթադրաբար թույլ տված սխալների համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատը վարող դատավորի համար ակնհայտ է, որ փաստաբանի պահվածքն անհամատեղելի է արդարադատության շահերի հետ: Ներկա գործում ոչինչ չի մատնանշում, որ հեղինակի պաշտպանը, ով արքայական դատապաշտպան էր [Queen's Counsel], գործել է այլ կերպ, քան համաձայն իր մասնագիտական բանականության՝ որոշելով անուշադրության մատնել հեղինակի որոշ ցուցումներ և չկանչել վկաներից մեկին: Պնդումը, համապատասխանաբար, անընդունելի է՝ ըստ կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի:

[14.120] *Թեյլորի* գործով որոշումը մեծապես նման է վերը բերված *Քենիդեյի* գործով որոշմանը [14.114], որը վերաբերում էր իրավաբանական օգնություն ցույց տվող փաստաբանին: Յետևաբար, ՄԻԿ-ը, ըստ էության, կարծես թե պետությունից չի պահանջում կոմպետենտության տարբեր չափորոշիչներ երաշխավորել մասնավոր և պետական փաստաբանների համար¹²¹: Պաշտպանների կոմպետենտությունը, անկախ այն հանգամանքից՝ մասնավոր կերպով են ներգրավված, թե՞ ոչ, բողոքի հիմք կարող է դառնալ միայն այն դեպ-

¹¹⁹ Տե՛ս նաև «*Հենրին ընդդեմ Ճամայկայի*» (*Henry v Jamaica*, 230/87), պարբ. 8.3, «*Բերրին ընդդեմ Ճամայկայի*» (*Berry v Jamaica*, 330/88), պարբ. 11.3:

¹²⁰ Պարբ. 6.3:

¹²¹ Տե՛ս նաև «*Պերերան ընդդեմ Ավստրալիայի*» (*Perera v Australia*, 536/93), պարբ. 6.3:

քում, երբ նրանց գործողությունները բացահայտ հակառակ են արդարադատության շահերին¹²²:

Չոդված 14(3)(ե). վկաների ներկայանալուն և հարցաքննությանը վերաբերող իրավունքներ

[14.121]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 12. 3-րդ կետի (ե) ենթակետը սահմանում է, որ մեղադրյալն իրավունք ունի հարցաքննելու կամ հարցաքննել տալու իր դեմ ցուցմունք տվող վկաներին և ապահովելու իր օգտին ցուցմունք տվող վկաների ներկայանալուն և հարցաքննումը՝ միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տվող վկաներին: Այս դրույթի նպատակն է վկաների մասնակցությունը ապահովելու և յուրաքանչյուր վկայի հարցաքննությունն ու խաչաձև հարցաքննությունն իրականացնելու առումով մեղադրյալի համար միևնույն իրավասությունները երաշխավորելը, ինչ առկա են մեղադրող կողմի համար:

« ԳՈՐԴՈՆՆ ԸՆԴՈՂԵՄ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (GORDON v JAMAICA, 237/87)

¶ 6.3. Ինչ վերաբերում է հեղինակի ներկայացրած մեղադրանքին, որ ինքը չի կարողացել ապահովել վկաների՝ իր անունից վկայություն տալը, թեև մեկ վկա՝ կապրալ Աֆլիքը, պատրաստ էր այդ անել, հարկ է նշել, որ վերաքննիչ դատարանը, ինչպես ցույց է տրված նրա գրավոր որոշման մեջ, համարել է, որ դատը վարող դատավորն իրավամբ է մերժել կապրալ Աֆլիքի վկայությունն ընդունելը, քանի որ այն չի կազմում *ռես գեստեի** մաս: Կոմիտեն նկատում է, որ 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից պահանջված յուրաքանչյուր վկայի մասնակցությունն ապահովելու անսահմանափակ իրավունք չի նախատեսում: Կոմիտեի տրամադրության տակ եղած տեղեկություններից ակնհայտ չի դառնում, որ դատարանի կողմից կապրալ Աֆլիքին լսելու մերժումը խախտել է կողմերի հավասարության սկզբունքը մեղադրող և պաշտպանվող կողմերի միջև: Այդ հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն չի կարող եզրակացնել, որ խախտվել է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետը:

Այդպիսով, 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետը չի վերաբերում, որպես *այդպիսին*, վկաներ կանչելու իրավունքին. այն վերաբերում է վկաներ կանչելու առումով պաշտպանության և մեղադրող կողմերի միջև իրավունքների հավասարությանը: Չեղինակի խնդիրն է որոշել, որ դատարանի կողմից որոշակի վկայի հարցաքննությունը չթույլատրելը խախտել է «կողմերի հավասարության» սկզբունքը¹²³:

[14.122]

« ՓՐԱԹԸ և ՄՈՐԳԱՆՆ ԸՆԴՈՂԵՄ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (PRATT and MORGAN v JAMAICA, 210, 225/87)

¶ 13.2. . . . [Կոմիտեն] իրավասու չէ պարզել՝ այն, որ պրն Փրաթի փաստաբանը միջև գործի փակումը չի պնդել, որ կանչվի մեղադրյալի ալիքին ապահովող վկան, մասնագիտական դիրքորոշմա՞ն, թե՞ անփութության հարց է: Այն փաստը, որ վերաքննիչ դատարանը չի պնդել այդ վկայի ներգրավումը, կոմիտեի կարծիքով, դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետի խախտում չէ:

¹²² Տե՛ս [14.116], տե՛ս նաև «Ռիսն ընդդեմ Ճամայկայի» (*Reece v Jamaica*, 796/98), պարբ.-եր 7.2 և 7.4: Տե՛ս, այնուամենայնիվ, «Գրիֆինն ընդդեմ Իսպանիայի» (493/92) [6.10], որը իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնի կիրառության առումով վերաբերում է տարբեր պոտենցիալ չափորոշիչներին: Ա. դե Ջայասը (վերը, ծմթ. 108) 686-րդ էջում ենթադրում է, թե մասնավոր կերպով ներգրավված փաստաբանի գործողությունները երբեք չեն հանգեցնում պետության պատասխանատվության: Այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ պետության պատասխանատվության հարց առաջանում է, երբ դատարանը գիտակցաբար անուշադրության է մատնում մասնավոր փաստաբանի վատ աշխատանքը [poor conduct]:

* *res gestae*՝ լատ. փիճելի հարցի էությունը ցույց տվող փաստի հետ կապված հանգամանքներ (*ժան. քարզմ.*):

¹²³ «Պարկանյին ընդդեմ Յունգարիայի» (*Párkányi v Hungary*, 410/90), պարբ. 8.5:

«ՓԻՐԹԸ և ՓԻՐԹՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ»
(PEART and PEART v JAMAICA, 464, 482/91)

¶ 11.3. Հեղինակի պնդման վերաբերյալ, թե օդերևութաբանական ծառայության փորձագետ վկայի բացակայությունը դաշնագրի 14-րդ հոդվածի խախտում է, կոմիտեն նշում է, որ դատական միստի արձանագրությունից երևում է, որ պաշտպանական կողմը կապվել է վկայի հետ, սակայն չի ապահովել նրա ներկայությունը դատարանում, և կարճ ընդմիջումից հետո դատավորի օգնականին կարգադրել է դատարան ներկայանալու ծանուցագիր պատրաստել վկայի համար ու հետաձգել է դատական միստը: Երբ միստը վերսկսվել է, և վկան չի ներկայացել, պաշտպանը դատավորին տեղեկացրել է, որ նա կարող է շարունակել առանց վկայի: Այդ հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը չի կարող պատասխանատվության կանչվել պաշտպանության փորձագետ վկայի չներկայանալու համար:

Այդպիսով, ՄԻԿ-ը չի անդրադառնում պաշտպանի կողմից կարևոր վկաներին չկանչելու խնդրին, եթե նույնիսկ պաշտպանը տրամադրվել է պետության կողմից¹²⁴, քանի որ դա, ըստ էության, պաշտպանի մասնագիտական դատողության խնդիր է: Եթե պաշտպանը վկային չի կանչում, ներպետական դատարանի խնդիրը չէ դա *էքս օֆիցիո* (*ex officio*) անելը¹²⁵:

[14.123] Հետևյալ գործերն ի ցույց են դնում 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետի խախտումներ:

«ԳՐԱՆՏՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (GRANT v JAMAICA, 353/88)

¶ 8.5. Հեղինակը ... պնդում է, որ ի վիճակի չի եղել ապահովելու իր օգտին ցուցմունք տվող վկաների, մասնավորապես՝ իր ընկերուհուն՝ Փ. Դ.-ի մասնակցությունը: Կոմիտեն, ելնելով դատական միստի սղագրությունից, նշում է, որ հեղինակի դատապաշտպանը իրոք կապ է հաստատել նրա ընկերուհու հետ և դատավարության երկրորդ օրը դատավորին միջնորդել է Փ. Դ.-ին դատարան հրավիրել: Այնուհետև դատավորը ուստիկանությանը ցուցում է տվել կապ հաստատել վկայի հետ, որը ... միջոցներ չի ունեցել մասնակցելու: Կոմիտեն այն կարծիքին է, որ տվյալ հանգամանքներից ելնելով և հաշվի առնելով, որ այս գործում կարող է մահապատիժ սահմանվել, դատավորը պետք է հետաձգած լիներ գործի լսումը և դատարան հրավիրելու ծանուցագիր ուղարկել՝ ապահովելու համար Փ. Դ.-ի ներկայությունը դատարանում: Ավելին՝ կոմիտեն համարում է, որ ուստիկանությունը պետք է Փ. Դ.-ի համար փոխադրամիջոց ապահովեր: Այնքանով, որ Փ. Դ.-ի դատարան չներկայանալը վերագրելի է մասնակից պետության իշխանություններին, կոմիտեն համարում է, որ հեղինակի դեմ քրեական դատավարությունը խախտել է դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը և 3-րդ կետի (ե) ենթակետը:

[14.124] **«ՓԻՐԹԸ և ՓԻՐԹՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ»**
(PEART and PEART v JAMAICA , 464, 482/91)

¶ 11.4. Մեղադրող կողմի ներկայացրած հիմնական վկայի տված վկայության վերաբերյալ կոմիտեն նշում է, որ դատական միստի սղագրությունից երևում է, որ պաշտպանության կողմից իրականացված խաչաձև հարցաքննության ընթացքում վկան ընդունել է, որ պատահարի գիշերը ուստիկանություն գրավոր հայտարարություն է ներկայացրել: Պաշտպանն այնուհետև պահանջել է այդ հայտարարության պատճենը, ինչը մեղադրող կողմը հրաժարվել է տրամադրել. դատը վարող դատավորը, այնուհետև, որոշել է, որ պաշտպանության ներկայացուցիչը չի ներկայացրել որևէ պատճառաբանություն, թե ինչու պետք է տրամադրվի այդ հայտարարության պատճենը: Դատը շարունակվել է առանց պաշտպանական կողմին հայտարարության պատճենը տրամադրելու:

¶ 11.5. Հայտարարության պատճենից, որը պաշտպանի մոտ հայտնվել է միայն այն բանից հետո, երբ վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը, և նախնական դիմում է ներկայացվել Գաղտնի խորհրդի դատական կոմիտեում բողոքարկելու հատուկ թույլտվության համար, երևում է, որ վկան այլ մարդու է նշել որպես հանգուցյալին զնդակահարողի, որ նա ենթադրել է, թե էնդրյու Փիրթի ծեռքին ատրճանակ է եղել, և նա ոչինչ չի նշել սպանությանը Գարֆիլդ

¹²⁴ Տե՛ս նաև «Յանգն ընդդեմ Ճամայկայի» (*Young v Jamaica, 615/95*), պարբ. 5.5, տե՛ս «Պերերան ընդդեմ Ավստրալիայի» (*Perera v Australia, 536/93*), պարբ. 6.3՝ մասնավոր կերպով ներգրավված պաշտպանի առումով համանման որոշման վերաբերյալ:

¹²⁵ Տե՛ս «Վան Սյուրսն ընդդեմ Նիդեռլանդների» (215/86), պարբ. 7.2:

Փիրթի մասնակցության կամ ներկայության մասին: Կոմիտեն նշում է, որ միակ ականատեսի կողմից դատավարության ընթացքում ներկայացված փաստերը առաջնային կարևորություն են ստանում լրացուցիչ ապացույցների բացակայության պարագայում: Կոմիտեն համարում է, որ վկայի՝ ոստիկանությանն արված հայտարարությունը պաշտպանական կողմին չտրամադրելը լրջորեն խանգարել է պաշտպանությանը վկային խաչաձև հարցաքննության ենթարկելիս՝ այդպիսով թույլ չտալով ամբաստանյալների արդար դատաքննությունը: Հետևաբար, կոմիտեն համարում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը վեր են հանում դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետի խախտում:

[14.125] «ՖՈՒԵՆԶԱԼԻԴԱՆ ընդդեմ ԷԿՎԱԴՈՐԻ» (FUENZALIDA v ECUADOR, 480/91)

Հեղինակը բողոքում է, որ իր նկատմամբ դատավարությունը, որի արդյունքում ինքը դատապարտվել է բռնաբարության համար, անարդար է եղել:

¶ 3.5. Հեղինակը պնդում է նաև, որ նկատի առնելով զոհից վերցված փորձանմուշների (արյան և սերմնահեղուկի) և իրենից իր կամքին հակառակ վերցված արյան և մազերի փորձանմուշների լաբորատոր հետազոտության հաշվետվությունը՝ ներկայացված զոհի կողմից, որը ցույց էր տալիս այնպիսի էնզիմի առկայություն, որը չկա իր արյան մեջ, ինքը դիմել է դատարան իր արյան և սերմնահեղուկի հետազոտություն նշանակելու համար. միջնորդություն, որը դատարանը մերժել է...

Այս կետի առնչությամբ ՄԻԿ-ը որոշեց հոգուտ հեղինակի և ընդգծեց փորձագիտական ապացույցների կարևորությունը արդար դատաքննության համար:

¶ 9.5. Կոմիտեն դիտարկել է օրինական որոշումները և 1991 թ. ապրիլի 30-ին կայացված դատավճռի տեքստը, հատկապես դատարանի մերժումը՝ գործի համար կենսական կարևորություն ունեցող փորձագիտական վկայություն ապահովելու առնչությամբ և եզրակացնում է, որ այդ մերժումը դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) ենթակետի և 5-րդ կետի խախտում է:

Հոդված 14(3)(գ). անհրաժեշտության դեպքում թարգմանչի անվճար ծառայություններից օգտվելու իրավունք

[14.126] ԹԻԿ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 13. Երրորդ կետի (գ) ենթակետը սահմանում է, որ եթե մեղադրյալը չի հասկանում կամ խոսում դատարանում գործածվող լեզվով, ապա նա իրավունք ունի օգտվելու թարգմանչի անվճար ծառայությունից: Այս իրավունքը կախված չէ դատավարության ելքից և վերաբերում է ինչպես օտարերկրացիներին, այնպես էլ տեղացիներին: Այն էական կարևորություն ունի այն դեպքում, երբ դատարանում գործածվող լեզվի չիմացությունը կամ այն հասկանալու դժվարությունը կարող են պաշտպանության իրավունքի համար խոշոր խոչընդոտ դառնալ:

Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ պաշտոնական ոստիկանական արձանագրությունները և մեղադրական ձևաթղթերն առկա լինեն պետության ներսում սովորաբար գործածվող բոլոր լեզուներով¹²⁶:

[14.127] «ԳԵՍԴՈՆՆ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (GUESDON v FRANCE, 219/86)

¶ 10.2. Դատարանում մեկ լեզու օգտագործելու վերաբերյալ դրույթը, կոմիտեի կարծիքով, չի խախտում 14-րդ հոդվածը: Եվ ոչ էլ արդար դատաքննության պահանջն է մասնակից պետություններին թելադրում թարգմանչի ծառայություններ ապահովել այն քաղաքացու համար, ում մայրենի լեզուն տարբերվում է դատարանի պաշտոնական լեզվից, եթե այդ քաղաքացին կարող է բավարար կերպով արտահայտվել դատարանի պաշտոնական լեզվով: Միայն այն դեպքում, երբ մեղադրյալը կամ պաշտպանական կողմի հրավիրած վկան դատարանի լեզուն հասկանալու

¹²⁶ Եզրափակիչ դիտարկումներ ՄԹ-ի (Հոնկոնգ) վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 57, պարբ. 13: Տե՛ս նաև [24.47]:

կամ այդ լեզվով արտահայտվելու դժվարություններ են ունենում, պետք է ապահովվեն թարգմանչի ծառայությունները:

Գեստրոնի գործով որոշումը հաստատվել է բազմաթիվ գործերում՝ ներկայացված բրետոնյան ակտիվիստների կողմից, ովքեր պահանջում էին Ֆրանսիայի դատարաններում ֆրանսերենի փոխարեն բրետոներեն խոսելու «իրավունք»¹²⁷:

Հոդված 14(3)(է). ազատություն սեփական անձի դեմ ցուցմունք տալու պարտադրանքից

[14.128]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 14. Երրորդ կետի (է) ենթակետը սահմանում է, որ մեղադրյալին չի կարելի ստիպել ինքն իր դեմ ցուցմունք տալ կամ իրեն մեղավոր ճանաչել: Այս երաշխիքը դիտարկելիս հարկ է մտապահել 7-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները: Մեղադրյալին իրեն մեղավոր ճանաչել կամ ինքն իր դեմ ցուցմունք տալ ստիպելու համար հաճախ կիրառվում են մեթոդներ, որոնք խախտում են այդ դրույթները: Օրենքով պետք է սահմանվի, որ նման մեթոդների կամ պարտադրանքի որևէ այլ ձևի միջոցով ձեռք բերված ապացույցները լիովին անընդունելի են¹²⁸:

¶ 15. Որպեսզի երաշխավորվեն մեղադրյալների՝ 14-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով սահմանված իրավունքները, դատավորները պետք է օժտված լինեն իրավասությամբ՝ դիտարկելու հետապնդման յուրաքանչյուր փուլում մեղադրյալի իրավունքների խախտման վերաբերյալ յուրաքանչյուր պնդում:

[14.129] Ռումինիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է¹²⁹.

¶ 13. Կոմիտեն մտահոգված է նաև այնպիսի օրենսդրության բացակայությամբ, որն անվավեր կդարձներ դաշնագրի 7-րդ հոդվածի խախտմամբ մեղադրյալներից կորզված որևէ ցուցմունք: Մասնակից պետությունը պետք է համապատասխան օրենսդրություն ընդունի, որի միջոցով պետության վրա պարտականություն դրվի՝ ապացուցելու, որ քրեական գործով անցնող մեղադրյալների տված ցուցմունքը տրվել է նրանց ազատ կամքով և ապահովելու, որ դաշնագրի 7-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված ցուցմունքները հանվեն ապացույցների շարքից:

Այդպիսով, պետությունն է կրում ապացուցելու պարտականությունը, որ խոստովանությունը ձեռք է բերվել առանց պարտադրանքի: Որոշակի ընթացակարգերի կիրառումը, ինչպիսիք են ոստիկանության հարցաքննությունների տեսա- և ձայնագրումը, օգնում է թեթևացնելու այդ պարտականությունը:

[14.130] Միացյալ Թագավորության (ՄԹ) վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է¹³⁰.

¶ 28. Կոմիտեն մտահոգությամբ է նշում, որ սկզբնապես Զյուսիսային Իռլանդիայում կիրառվող օրենսդրության գործողության աշխարհագրությունն ընդլայնող «Քրեական դատավարության և հասարակական կարգի մասին» 1994 թ. օրենքի [Criminal Justice and Public Order Act] դրույթները, որոնք թույլ են տալիս եզրակացություններ անել հանցագործության համար մեղադրվող անձանց լռությունից, խախտում են դաշնագրի 14-րդ հոդվածի տարբեր դրույթներ՝ չնայած օրենսդրության մեջ ներառված մի շարք ապահովագրող դրույթներին և օրենքով ընդունված կանոններին:

¹²⁷ Տե՛ս, օր.՝ «Կադորեն և Լե Բիհանն ընդդեմ Ֆրանսիայի» (*Cadore and Le Bihan v France*, 221/87, 323/88), «Բարցիգն ընդդեմ Ֆրանսիայի» (*Barzigh v France*, 327/88), «Կ. Լ. Դ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*C.L.D. v France*, 439/90), տե՛ս նաև «Դոմուկովսկին և այլք ընդդեմ Վրաստանի» (*Domukovsky et al v Georgia*, 623-624, 626-627/95), պարբ. 18.7 և «Ջուման ընդդեմ Ավստրալիայի» (*Juma v Australia*, 984/01), պարբ. 7.3: Տե՛ս նաև [9.107]: «Դիերգարդտն ընդդեմ Նամիբիայի» (*Diernaardt v Namibia*, 760/97) գործում, ՄԻԿ-ը խախտում չհայտնաբերեց Նամիբիայում ընթացող դատավարության ընթացքում աֆրիկական փոխարեն պարտադիր անգլերեն գործածելու մեջ (պարբ. 10.9): Գործը վերաբերում էր 14-րդ հոդվածի 1-ին կետին, ոչ թե 14-րդ հոդվածի 3-րդ կետի (զ) ենթակետին, քանի որ Նամիբիական համապատասխան դատական գործընթացը քաղաքացիական էր, ոչ թե քրեական:

¹²⁸ Հոդվածներ 7-ը և 10-ի 1-ին կետը արգելում են անձանց հանդեպ անմարդկային վերաբերմունքի տարբեր աստիճաններ. տե՛ս, ընդհանրապես, գլուխ 9:

¹²⁹ (1999) ՄԱԿ փաստաթուղթ CCPR/C/79/Add. 111:

¹³⁰ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 55:

Լռություն պահպանելու իրավունքի սահմանափակումները վտանգում են մարդու՝ սեփական անձի դեմ ցուցմունք տալու պարտադրանքից ազատ լինելու իրավունքը: Դրանք հավանաբար վտանգում են նաև մարդու՝ անմեղության կանխավարկածի իրավունքը: ՄԹ-ի վերաբերյալ ՄԻԿ-ի դիտարկումները ցույց են տալիս, որ անձի լռության իրավունքի կարևորագույն կողմը, անձի լռությունից ելնելով, նրա համար վնասակար հետևություններ կատարելուց զերծ լինելու իրավունքն է¹³¹:

[14.131] «ՍԱՆՉԵՍ ԼՈՊԵՍԸ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (SÁNCHEZ LÓPEZ v SPAIN, 777/97)

Հեղինակը ներկայացրել էր հետևյալ բողոքը.

¶ 2.1. 1990 թ. մայիսի 5-ին հեղինակը վարել է իր մեքենան 80 կմ/ժամ արագությամբ այնպիսի վայրում, որտեղ արագության սահմանափակումը 60 կմ/ժամ է: Ոստիկանական ռադարի կողմից ֆիքսվելուց հետո մեքենան լուսանկարվել է: Երթևեկության գլխավոր վարչությունը [General Department of Traffic] (Ներքին գործերի նախարարության) դիմել է նրան՝ որպես այն մեքենայի սեփականատիրոջ, որով կատարվել է խախտումը, որպեսզի վերջինս նշի խախտումը կատարած անձին կամ մեքենայի դեկի առաջ եղած անձին, այլ կերպ ասած՝ ինքն իրեն: Պահանջը ներկայացվել է՝ հիմնվելով Արքայական օրենսդրական թիվ 339/1990 որոշման («Ծանապարհային անվտանգության մասին» օրենք (Road Safety Act - Ley de Seguridad Vial (LSV)) 72-րդ հոդվածի 3-րդ կետի վրա, որը սահմանում է. «Տրանսպորտային միջոցի սեփականատերը, երբ նրան պատշաճ կերպով դիմում են, պարտավոր է նշել խախտման համար պատասխանատու վարորդին. եթե նա հրաժարվում է այդ անել՝ առանց հիմնավոր պատճառ ներկայացնելու, ապա ենթակա է տույժի լուրջ զանցանք կատարելու համար»:

¶ 2.2. Այս դիմումին համապատասխան և օգտվելով մեղքը չխոստովանելու իր հիմնարար իրավունքից՝ պրն Սանչես Լոպեսը երթևեկության վարչություն է ուղարկել նամակ, որում նշել է, որ ինքը չի հանդիսացել տրանսպորտային միջոցի վարորդը և չի կարող նշել, թե խախտումը կատարելիս ով է այն վարել, քանի որ այդ ժամանակահատվածում իր մեքենան տվել է մի շարք անձանց: Որպես լուրջ զանցանք կատարած անձի՝ նրան տուգանել են 50,000 պեսետի չափով (թույլատրված արագությունը գերազանցելու համար տուգանքը կազմում էր 25,000 պեսետ)...

¶ 3.1. Խորհուրդը համարում է, որ հեղինակը հանդիսանում է դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (է) ենթակետի խախտման զոհ, քանի որ ստիպված է եղել խոստովանել իր մեղքը այնքանով, որքանով խախտումը կատարած անձին նշելու դիմումն ուղղված է եղել տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, ով տվյալ դեպքում իրականում հանդիսանում է խախտման համար պատասխանատու վարորդը: Այս դեպքում նրան ստիպում են սեփական անձի դեմ ցուցմունք տալ, ինչը հակասում է դաշնագրով պաշտպանված իրավունքին:

Մասնակից պետությունը ներկայացրել էր հետևյալ փաստարկները.

¶ 4.2. ... Մասնակից պետությունը չի վիճարկում ներկայացված փաստերը, սակայն համարում է, որ դաշնագրով պաշտպանված որևէ իրավունք չի խախտվել, քանի որ շարժիչավոր տրանսպորտային միջոցների հնարավոր վտանգը պահանջում է խստորեն վերահսկել ճանապարհային երթևեկությունը:

¶ 4.3. [Մասնակից պետությունը] ուշադրություն է հրավիրում Իսպանիայի օրենսդրությամբ սահմանված այն պահանջին, ըստ որի՝ իրավախախտումը պետք է «անձնավորված» լինի: Խախտումը չի կարող ինքնաբերաբար վերագրվել տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, իսկ օրենքը պահանջում է, որ բուն խախտումն իրականացնողի անձը բացահայտվի: Վերջինս կարող է հանդիսանալ կամ չհանդիսանալ տրանսպորտային միջոցի սեփականատեր, և եթե սեփականատերը իրավաբանական անձ է, ապա դրանք վստահաբար չեն լինի նույնը ...

ՄԻԿ-ը վճռեց հոգուտ մասնակից պետության.

¹³¹ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Իռլանդիայի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, պարբ. 422-451, պարբ. 15, և Եզրափակիչ դիտարկումներ ՄԹ-ի վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UK, պարբ. 17, տե՛ս նաև S. Bailey, 'Rights in the Administration of Justice', Հարրիս և Ջոզեֆ, (խմբ.) գրքում, վերը, ծնթ. 78, 232-4: Ռոդլին (վերը, ծնթ. 78, էջ 137-9) պնդում է, որ Յուսիսային Իռլանդիայում լռություն պահպանելու իրավունքի վերացումը խախտում է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (է) ենթակետը, ինչպես նաև 14-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անմեղության կանխավարկածի երաշխիքը:

¶ 6.4. Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ Իսպանիայի կողմից խախտվել են հեղինակի՝ անմեղության կանխավարկածին վերաբերող իրավունքները և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը՝ պաշտպանված դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ կետով և 3-րդ կետի (է) ենթակետով, քանի որ նրան ստիպել են նշել ճանապարհային երթևեկության կանոնները խախտած մեքենայի վարորդին, կոմիտեն համարում է, որ իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը ցույց են տալիս, որ հեղինակին պատժել են իշխանությունների հետ չհամագործակցելու համար, ոչ թե երթևեկության կանոնների խախտման: Մարդու իրավունքների կոմիտեն կարծում է, որ այդ կերպ իշխանությունների հետ չհամագործակցելու համար սահմանված տուգանքը դուրս է դաշնագրի վերոնշյալ կետերի գործողության ոլորտից: Համապատասխանաբար, հաղորդումն անընդունելի է ճանաչվում՝ ըստ կամընտիր արձանագրության 1-ին հոդվածի:

Հեղինակը դատապարտվել է ոչ թե արագությունը գերազանցելու, այլ իշխանությունների հետ չհամագործակցելու համար: Դատապարտումն առաջ է եկել, որովհետև նա հրաժարվել էր նշել, թե ով է եղել արագությունը գերազանցած մեքենայի վարորդը, այսինքն՝ հրաժարվել էր բացահայտել իր մեղքը: ՄԻԿ-ի եզրակացությունը, թերևս, մի նուրբ կետ է բացահայտում հեղինակի դեմ ընդունված մեղադրանքի վերաբերյալ: ՄԻԿ-ի վրա կարող էին ազդած լինել Իսպանիայի բերած փաստարկները, որոնք իրավամբ մատնանշում էին, որ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կողմից վարորդի պարտադիր բացահայտումը, որը ժամանակ առ ժամանակ կարող է հանգեցնել ինքնաբացահայտման, այժմ ոստիկանական ռադարների կողմից «բռնված» կարգազանց վարորդներին բացահայտելու միակ ճանապարհն է: ՄԻԿ-ն այնուհետև անուղղակի կերպով հաստատում է, որ ոստիկանական ռադարները և տեսախցիկները ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումն ապահովելու իրավաչափ միջոցներ են: Պետք է հուսալ, որ ժամանակակից տեխնոլոգիաները չեն հանգեցնի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (է) ենթակետի գործողության ոլորտի կրճատման ավելի լուրջ իրավախախտումների առնչությամբ:

Հոդված 14(4). անչափահաս մեղադրյալների իրավունքները

[14.132]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 16. 14-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ անչափահասների դեպքում դատապարտությունը պետք է լինի այնպիսին, որ հաշվի առնի նրանց տարիքը և այն, որ ցանկալի է նպաստել նրանց վերականգնմանը (ռեաբիլիտացիային): Քիչ թվով զեկույցներ են բավարար տեղեկություններ ներկայացրել գործին վերաբերող այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են նվազագույն տարիքը, երբ անչափահասին կարող է քրեական մեղադրանք առաջադրվել, առավելագույն տարիքը, երբ անձը դեռևս համարվում է անչափահաս, հատուկ դատարանների և ընթացակարգերի առկայությունը, անչափահասների դեմ ընթացակարգերը կարգավորող օրենքները, և թե ինչպես են անչափահասների համար ստեղծված այդ բոլոր հատուկ միջոցները հաշվի առնում «այն, որ ցանկալի է նպաստել նրանց վերականգնմանը»: Անչափահասները պետք է օգտվեն առնվազն այն մույն երաշխիքներից և պաշտպանությունից, որոնք տրվում են չափահասներին՝ համաձայն 14-րդ հոդվածի:

14-րդ հոդվածի 4-րդ կետը 10-րդ հոդվածի 3-րդ կետի հայելային արտացոլումն է, որը հատուկ կալանավայրեր է նախատեսում անչափահասների համար¹³²: 24-րդ հոդվածն ընդհանրապես պաշտպանում է երեխաների իրավունքները և թերևս ներառում է 14-րդ հոդվածի 4-րդ կետով տրված երաշխիքը¹³³:

Հոդված 14(5). քրեական գործերը բողոքարկելու իրավունք

[14.133]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 17. 14-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք ի-

¹³² Տե՛ս [9.166-9.167]: Տե՛ս նաև «Վ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (*V v UK*) և «Թ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (*T v UK*) գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1999 թ. դեկտեմբերի 16-ի վճիռները, որոնք վերաբերում էին անչափահասների իրավունքներին քրեական դատապարտություններում, (2000) 30 EHRR 121:

¹³³ Տե՛ս գլուխ 21, տե՛ս նաև, ընդհանուր առմամբ, R. Levesque, 'Future Visions of Juvenile Justice: Lessons from International and Comparative Law' (1996) 29 *Creighton Law Review* 1563:

րավունք ունի, որ իր դատապարտումը և դատավճիռը օրենքի համաձայն վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից: Հատուկ ուշադրություն է դարձված «հանցագործություն» բառի այլալեզու տարբերակներին («infraction», «delito», «преступление»), որոնք ցույց են տալիս, որ այդ երաշխիքը չի սահմանափակվում միայն ամենալուրջ իրավախախտումներով: Այդ առումով անբավարար տեղեկություններ են ներկայացվել բողոքարկման ընթացակարգերի, մասնավորապես՝ վերանայող դատարանների մատչելիության և նրանց իրավասությունների մասին, թե ինչ պահանջներ է պետք բավարարել դատավճիռը բողոքարկելու համար, և թե ինչպես են վերանայող դատարաններում կիրառվող ընթացակարգերը հաշվի առնում 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար և հրապարակային դատաքննության պահանջները:

14-րդ հոդվածի 5-րդ կետը վերաբերում է միայն քրեական գործերով բողոքարկումներին: Քաղաքացիական գործերով դատավարությունների բողոքարկման իրավունքի համար միակ հնարավոր պաշտպանությունն ածանցվում է 14-րդ հոդվածի 1-ին կետից: «Ի. Փ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (*I.P. v Finland*, 450/91) գործի կապակցությամբ ՄԻԿ-ը նշել է, որ ՔՔԻՄԴ-ը չի երաշխավորում քաղաքացիական գործերով դատավարություններում բողոքարկման իրավունքը¹³⁴: Քաղաքացիական գործերով դատավարությունների բողոքարկման իրավունքի համար միակ հնարավոր պաշտպանությունն ածանցվում է 14-րդ հոդվածի 1-ին կետից¹³⁵:

[14.134] Հետևյալ գործերը, 14-րդ հոդվածի 5-րդ կետի նկատառումներով, մանրամասներ են ներկայացնում բողոքարկման պահանջների վերաբերյալ:

«ՌԵՅԴԵՆ ընդդեմ ՃԱՄԱՅԱՍԻ» (REID v JAMAICA, 355/89)

¶ 14.3. ... Կոմիտեն համարում է, որ թեև բողոքարկման եղանակավորությունները մասնակից պետությունների ներպետական օրենսդրական համակարգերում կարող են տարբեր լինել, համաձայն 14-րդ հոդվածի 5-րդ կետի, մասնակից պետությունները պարտավորություն ունեն էականորեն վերանայելու դատապարտումը և դատավճիռը ... :

«ՊԵՐԵՐԱՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (PERERA v AUSTRALIA, 536/93)

¶ 6.4. ...Կոմիտեն համարում է, որ 14-րդ հոդվածի 5-րդ կետը չի պահանջում, որ վերաքննիչ դատարանն անցկացնի փաստացի կրկնակի դատավարություն, այլ դատարանն իրականացնի դատավարության ընթացքում ներկայացված ապացույցների և դատավարության անցկացման գնահատում ... :

**«ԴՈՄՈՒԿՈՎՍԿԻՆ և այլք ընդդեմ ՎՐԱՍՏԱՆԻ»
(DOMUKOVSKY et al v GEORGIA, 623-4, 626-7/95)**

¶ 18.11. Կոմիտեն, հիմնվելով իր տրամադրության տակ եղած տեղեկությունների վրա, նշում է, որ հեղինակները չէին կարող բողոքարկել իրենց դատապարտումը և դատավճիռը, սակայն օրենքը նախատեսում է միայն դատական վերանայում, որն ակնհայտորեն տեղի է ունենում առանց լսումների և վերաբերում է միայն օրենքին առնչվող հարցերին: Կոմիտեն այն կարծիքին է, որ վերանայման այս ձևը չի համապատասխանում դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ապացույցների և դատավարության անցկացման ամբողջական գնահատման վերաբերյալ պահանջներին, հետևաբար տեղի է ունեցել այդ դրույթի խախտում յուրաքանչյուր հեղինակի առնչությամբ:

**«ԳՈՄԵՍ ՎԱՍԿԵՍԸՆ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ»
(GÓMEZ VAZQUEZ v SPAIN, 701/96)**

¶ 11.1. ... Մասնակից պետության ներկայացրած տեղեկությունները և փաստաթղթերը չեն հերքում հեղինակի բողոքը,

¹³⁴ Տե՛ս [14.27]:

¹³⁵ ՄԻԿ-ին դեռևս չեն դիմել՝ պարզելու, թե արդյոք քաղաքացիական գործերով բողոքարկումներ պահանջվում են 14-րդ հոդվածի 1-ին կետով:

ըստ որի՝ նրա դատապարտումը և սահմանված պատիժը ամբողջությամբ չեն վերանայվել: Կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի դատապարտումը և դատավճիռն ամբողջությամբ վերանայելու հնարավորության բացակայությունը ..., այն դեպքում, երբ վերանայումը սահմանափակվում է դատապարտման ֆորմալ կամ իրավական կողմերով, նշանակում է, որ դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետով տրված երաշխիքները չեն ապահովվել: Չեղարկվել են հեղինակի դատապարտման և դատավճռի վերանայման իրավունքը՝ ի հակասություն դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ պարբերության¹³⁶:

« Յ. Թ. Բ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ » (H.T.B. v CANADA, 534/93)

¶ 4.3. Ինչ վերաբերում է հեղինակի պնդմանը, որ խախտվել է նրա՝ արդար դատաքննության իրավունքը, որովհետև նրան թույլ չի տրվել Օնտարիոյի վերաքննիչ դատարանին ներկայացնել իր խելագարության վերաբերյալ ապացույցներ, կոմիտեն նշում է, որ պաշտպանության կոչված այդ ապացույցները հեղինակի տրամադրության տակ են եղել դեռևս առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում, սակայն նա գիտակցված որոշում է կայացրել չօգտագործել դրանք: Կոմիտեն նշում է նաև, որ հեղինակի դատապարտումը և դատավճիռը վերանայվել են Օնտարիոյի վերաքննիչ դատարանի կողմից, և դատարանը որոշում է կայացրել չընդունել խելագարության տարբերակի պաշտպանությանն ուղղված ապացույցները՝ համաձայն Կանադայի օրենսդրության, որը սահմանում է, որ նոր ապացույցները, ընդհանուր առմամբ, չեն ընդունվում, եթե դրանք կարող էին ներկայացված լինել դատավարության ընթացքում: ...Ներկա գործի համաձայնեցնող ելնելով՝ կոմիտեն եզրակացնում է, որ հաղորդման այս հատվածը, հետևաբար, անընդունելի է՝ համաձայն կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի:

Այդպիսով, անձն իր դատապարտման և իր դատավճռի վերանայման իրավունք ունի: Այնուամենայնիվ, անձը չունի իր գործի *դե նոյո*^{*} քննության իրավունք: Օրինակ՝ նոր ապացույցների ընդունելիությունը բողոքարկման փուլում կարող է սահմանափակվել, եթե այդ ապացույցներն իրականում մատչելի են եղել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ¹³⁷:

[14.135] 14-րդ հոդվածի 5-րդ կետը երաշխավորում է բողոքարկելու իրավունքը՝ «օրենքի համաձայն», ինչը ենթադրաբար վերաբերում է մասնակից պետության ներպետական օրենսդրությանը: Այդ դեպքում հնարավոր է արդյոք, որ պետությունը թուլացնի 14-րդ հոդվածի 5-րդ կետով ապահովվող պաշտպանությունը՝ ընդունելով այնպիսի սխալ օրենք, որը թույլ չտա բողոքարկել քրեական գործերը¹³⁸: Այս կետը պարզաբանվում է հաջորդ գործում:

**« ՍԱԼԳԱՐ դե ՄՈՆՏԵՅՈՆ ընդդեմ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ »
(SALGAR de MONTEJO v COLOMBIA, 64/79)**

¶ 7.1. ... [Մասնակից պետությունը [փաստարկում է], որ դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է ավելի բարձր ատյանի դատարանի կողմից վերանայման ընդհանուր սկզբունքը՝ առանց նման վերանայումը պարտադիր դարձնելու քրեական հանցագործություն ներառող բոլոր հնարավոր գործերում, քանի որ «համաձայն օրենքի» արտահայտությունը ազգային օրենսդրությանն է թողնում որոշել, թե ո՞ր դեպքերում և հանգամանքներում է հնարավոր ավելի բարձր ատյանի դատարանի վերանայումը: Մասնակից պետությունը բացատրում է, որ Կոլումբիայում ուժի մեջ եղած իրավական ռեժիմով քրեական հանցագործությունները բաժանվում են երկու դասի՝ *դելիտոս*^{*} և *կոնտրավենսիոնես*^{*}, և բոլոր *դելիտոսի* համար ու *կոնտրավենսիոնեսի* մեծ մասի համար դատապարտումները ենթակա են ավելի բարձր ատյանի դատարանի կողմից վերանայման: Մասնակից պետությունն ավելացնում է նաև, որ Կոնսուելո Սալգար դե Մոնտեյոն կատարել է այնպիսի *կոնտրավենսիոն*, որը, համաձայն համապատասխան իրավական գործիքի՝ 1978 թ. թիվ 1923 որոշման, ենթակա է ավելի բարձր ատյանի դատարանի կողմից վերանայման ...

¹³⁶ Այս որոշումն է ուղենիշ եղել «Սեմեյն ընդդեմ Իսպանիայի» (*Semey v Spain, 986/01*) և «Սինեյրո Ֆերնանդեսն ընդդեմ Իսպանիայի» (*Sineiro Fernández v Spain, 1007/01*) գործերում:

^{*} *de novo*՝ լատ. նորից, սկզբից (*ծան. քարզմ.*):

¹³⁷ Տե՛ս նաև «Բերրին ընդդեմ Ճամայկայի» (*Berry v Jamaica, 330/88*), պարբ. 11.6:

¹³⁸ Տե՛ս նաև [11.60]-ը և [16.08-16.11]-ը՝ ՔՔԻՄԴ-ի այլ իրավունքների համատեքստում «իրավաչափ» [*lawful*] բառի մեկնաբանության համար:

^{*} *delitos*՝ իսպ. հանցանքներ (*ծան. քարզմ.*):

^{*} *contravenciones*՝ իսպ. խախտումներ, զանցանքներ (*ծան. քարզմ.*):

ՄԻԿ-ը 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում արձանագրեց և հետևյալ կերպ պատասխանեց պետության փաստարկներին.

¶ 10.4. Կոմիտեն համարում է, որ 14-րդ հոդվածի 5-րդ կետում տեղ գտած «օրենքի համաձայն» արտահայտությունը նախատեսված չէ բողոքարկման իրավունքի բուն գոյությունը մասնակից պետությունների հայեցողությանը թողնելու համար, քանի որ իրավունքները նրանք են, որոնք ճանաչված են դաշնագրով և ոչ միայն ներպետական օրենսդրությամբ: Ընդհակառակը՝ այն, ինչ պետք է որոշվի «համաձայն օրենքի», եղանակավորություններն են, որոնցով ավելի բարձր ատյանի դատարանը պետք է իրականացնի վերանայումը: Ճշմարիտ է, որ 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտներն տեքստը ... խոսում է «*un delitto*»-ի մասին, մինչդեռ անգլերեն տեքստում նշվում է «*crime*», իսկ ֆրանսերենում՝ «*une infraction*»: Այդուհանդերձ, կոմիտեն այն կարծիքին է, որ տիկին Կոնտելլո Սալզար դե Մոնտեխոյի բանտարկության դատավճիռը, անկախ այն հանգամանքից, որ կատարված իրավախախտումը ներպետական օրենսդրությամբ դասակարգվում է որպես *կրնտրավենսիոն*, բավականաչափ լուրջ է, ամեն դեպքում, ավելի բարձր ատյանի դատարանի կողմից վերանայում պահանջելու համար, ինչպես նախատեսված է դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետով:

Մոնտեխոյի գործով վճիռը ցույց է տալիս, որ մարդուն պետք է թույլ տրվի բողոքարկել «լուրջ իրավախախտումների» համար դատապարտումը, որը բնորոշվում է որպես բանտարկության հանգեցնող (տիկին Մոնտեխոյի բանտարկությունը մեկ տարի ժամկետով էր): Անհատակ է, թե արդյոք հնարավոր ծանր տույժ կամ որոշ իրավունքների (օր.՝ աշխատանքի անցնելու) դադարեցում սահմանող դատավճիռը իրավախախտմանն այնքան լրջություն կտա՞ր, որը բավարար լիներ բողոքարկման հնարավորություն պահանջելու համար¹³⁹:

[14.136] Հետևյալ գործն անդրադառնում է դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետի համատեղեցիությանը այնպիսի համակարգերի հետ, ինչպիսիք են ընդհանուր իրավունքի [common law] համակարգերը, որտեղ անձի համար բողոքարկումն իրավունք չէ, և նա պետք է բողոքարկման թույլտվություն ստանա:

«*ԼԱՄԼԻՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ*» (*LUMLEY v JAMAICA, 662/95*)

¶ 7.3. Ներկայացված փաստաթղթերից երևում է նաև, որ դատավորը միանձնյա մերժել է բողոքարկման թույլտվության դիմումը, որի որոշումը այնուհետև ուժի մեջ է թողել վերաքննիչ դատարանը: Դատավորը մերժել է դիմումը միայն դատավարության ընթացքում ներկայացված ապացույցների վերանայումից հետո և դատավորի՝ ատենակալներին ուղղված ցուցումների գնահատումից հետո: Թեև 14-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա յուրաքանչյուր դատապարտված անձ ավելի բարձր ատյանի դատարանի կողմից իր դատապարտման և դատավճռի վերանայման իրավունք ունի ըստ օրենքի, այնպիսի համակարգը, որտեղ բողոքարկման իրավունքը մեքենայորեն չի տրվում, նույնպես կարող է համապատասխանել 14-րդ հոդվածի 5-րդ կետին, եթե բողոքարկման թույլտվության համար դիմումի բավարարումը դատապարտման և դատավճռի ամբողջական վերանայում է նախատեսում, այսինքն՝ և՛ ապացույցների, և՛ օրենքի հիման վրա, և եթե ընթացակարգը թույլ է տալիս պատշաճ կերպով դիտարկել գործի բնույթը: Այդպիսով, տվյալ հանգամանքներից ելնելով, կոմիտեն համարում է, որ այս առումով 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում չի եղել:

Լամլիի գործին այդ առումով հաջորդեց «*Ռոջերսոնն ընդդեմ Ավստրալիայի*» (*Rogerson v Australia, 802/98*) գործը¹⁴⁰:

[14.137] Հետևյալ գործն անդրադառնում է այն հարցին, թե անձը 14-րդ հոդվածի 5-րդ կետով մեկից ավելի բողոքարկման իրավունք ունի՞, թե՞ ոչ:

«*ՀԵՆՐԻՆ ընդդեմ ՃԱՄԱՅԿԱՅԻ*» (*HENRY v JAMAICA, 230/87*)¹⁴¹

¶ 8.4. Կոմիտեի հայեցողությանն է մնում որոշել, թե արդյոք ճամայկայի վերաքննիչ դատարանի կողմից գրավոր դա-

¹³⁹ Մակգոլդրիկ, վերը, ծնթ. 3, 431:

¹⁴⁰ Պարբ. 7.5: Տե՛ս նաև «*Ջուման ընդդեմ Ավստրալիայի*» (*Juma v Australia, 984/01*), պարբ. 7.5:

¹⁴¹ Տե՛ս նաև «*Դուգլասը, Ջենթլսը և Քերնն ընդդեմ ճամայկայի*» (*Douglas, Gentles and Kerr v Jamaica, 352/89*), պարբ. 11.2:

տավճիռ չհրապարակելը խախտե՞լ է հեղինակի՝ դաշնագրով սահմանված որևէ իրավունք: Դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետը երաշխավորում է դատապարտված անձանց՝ «ավելի բարձր ատյանի դատարանի կողմից օրենքի համաձայն» իրենց դատապարտման և դատավճռի վերանայման իրավունքը: Այս համատեքստում հեղինակը պնդում է, որ գրավոր դատավճռի բացակայության պատճառով ինքը զրկված է եղել արդյունավետ կերպով Գաղտնի խորհրդի դատական կոմիտեին բողոքարկում ներկայացնելու հնարավորությունից, որը, ենթադրաբար, որպես կանոն, մերժում է այն բոլոր դիմումները, որոնց կցված չէ ավելի ստորին ատյանի դատարանի կայացրած գրավոր դատավճիռը: Այդ կապակցությամբ կոմիտեն քննել է այն հարցը, թե արդյոք 14-րդ հոդվածի 5-րդ կետը մե՞կ բողոքարկում է երաշխավորում ավելի բարձր ատյանի դատարան, թե՞ երաշխավորում է նաև հետագա բողոքարկումները, երբ դրանք նախատեսված են տվյալ երկրի օրենսդրությամբ: Կոմիտեն կարծում է, որ դաշնագիրը մասնակից պետություններին չի պարտադրում բողոքարկման մի քանի ատյաններ նախատեսել: Այնուամենայնիվ, 14-րդ հոդվածի 5-րդ կետի «օրենքի համաձայն» բառերը պետք է մեկնաբանվեն այնպես, որ նշանակեն՝ եթե ներպետական օրենսդրությունը նախատեսում է բողոքարկման մի քանի ատյաններ, դատապարտված անձը պետք է ունենա դրանցից յուրաքանչյուրից օգտվելու արդյունավետ հնարավորություն: Ավելին՝ այդ իրավունքից արդյունավետ կերպով օգտվելու համար դատապարտված անձն իրավունք ունի ողջամիտ ժամկետներում ստանալու պատշաճ կերպով պատճառաբանված գրավոր վճիռները բողոքարկման բոլոր ատյանների համար: Այդպիսով, թեև պրն Յենրին իսկապես օգտվել է «ավելի բարձր ատյանի դատարան» բողոքարկելու իրավունքից, երբ Փորթլանդի շրջանային դատարանի վճիռը վերանայվել է ճանայկայի վերաքննիչ դատարանի կողմից, նա դեռևս ավելի բարձր ատյանում բողոքարկելու իրավունք ունի դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ, որովհետև ճանայկայի սահմանադրության 110-րդ հոդվածը ճանայկայի վերաքննիչ դատարանի որոշումը Լոնդոնում գտնվող Գաղտնի խորհրդի դատական կոմիտեում բողոքարկելու հնարավորություն է նախատեսում: Ուստի կոմիտեն համարում է, որ պրն Յենրիի՝ 14-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված իրավունքը խախտվել է վերաքննիչ դատարանի կողմից գրավոր դատավճիռ չկայացնելու հետևանքով:

Այդպիսով, անձը 14-րդ հոդվածի 5-րդ կետով միայն մեկ բողոքարկման իրավունք ունի: Այնուամենայնիվ, երբ մասնակից պետության օրենսդրությունը մեկից ավելի բողոքարկում է նախատեսում, հեղինակին պետք է արդարացի հնարավորություն տրվի օգտվելու այդ բողոքարկումներից:

[14.138] *Յենրիի* գործը հաստատում է, որ ապագա բողոքարկողների համար պետք է մատչելի լինեն բոլոր վճիռները և փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են «բողոքարկման իրավունքից արդյունավետ կերպով օգտվելու համար»¹⁴²: Անշուշտ, բողոքարկման ավարտին կամ երբ բողոքարկման դիմումը մերժվել է, պետք է ներկայացվեն հիմքերը¹⁴³:

[14.139] «ԷՍՏԵՎԻԼԼ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ» (ESTEVILL v SPAIN, 1004/01)

Այս գործը ցույց է տալիս, որ անձը կարող է հրաժարվել 14-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված իր իրավունքներից՝ համաձայնելով կամ պահանջելով, որ առաջին ատյանի դատավարությունը տեղի ունենա երկրի բարձրագույն դատարանում:

¶ 6.2. Յեղիմակի միակ բողոքը վերաբերում է դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետին... Կոմիտեն նշում է, որ մասնակից պետության իրավական համակարգը հեղինակին բողոքարկման իրավունք կվերապահեր, եթե հեղինակի գործը լավեր Կատալոնիայի բարձր դատարանի կողմից: Սակայն հենց հեղինակն է պարբերաբար պնդել, որ իր գործը լավի անմիջապես գերագույն դատարանի կողմից: Ելնելով այն հանգամանքից, որ հեղինակը նախկին դատավոր է՝ օժտված մեծ փորձով, կոմիտեն համարում է, որ պնդելով, որ գործը քննի միայն գերագույն դատարանը, հեղինակը հրաժարվել է բողոքարկման իր իրավունքից: Կոմիտեն համարում է, որ տվյալ պարագայում հեղինակի ներկայացրած մեղադրանքը ... հաղորդում ներկայացնելու իրավունքի չարաշահում է՝ համաձայն կանոնադրության 3-րդ հոդվածի:

[14.140] Ինչպես սահմանափակ են անձի իրավունքները առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ, այնպես էլ սուղ է քրեական գործի բողոքարկման ժամանակ բանիմաց պաշտպան ունենալու իրավունքը: ՄԻԿ-ը ձեռնպահ է մնում այն մտքից, որ բողոքարկման ժամանակ պաշտպանի մարտավարությունը ոտնահարում է մեղադրյալի բողոքարկման իրավունքը: Այդ մարտավարությամբ

¹⁴² «Լամին ընդդեմ ճանայկայի» (662/95), պարբ. 7.5:

¹⁴³ «Ռեյդն ընդդեմ ճանայկայի» (Reid v Jamaica, 355/89), պարբ. 14.3:

յունը, ըստ էության, պաշտպանի մասնագիտական դատողության խնդիրն է¹⁴⁴:

[14.141] 14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետով սահմանված առանց հետաձգման քրեական դատավարության իրավունքի վերաբերյալ շատ գործեր առնչվել են բողոքարկման գործընթացում տեղ գտած հետաձգումներին: Չետևաբար, այդ գործերում արձանագրվել են մաև 14-րդ հոդվածի 5-րդ կետի խախտումներ¹⁴⁵:

[14.142] Վերջապես, «Ռ. Մ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (*R.M. v Finland, 301/88*)¹⁴⁶ և «Բրինն ընդդեմ Նորվեգիայի» (*Bryhn v Norway, 789/97*)¹⁴⁷ գործերով ՄԻԿ-ը հաստատել է, որ բողոքարկումները կարող են անցկացվել գրավոր՝ բանավորի փոխարեն¹⁴⁸:

Չոդված 14(6). արդարադատության իրականացման սխալի* համար փոխհատուցում ստանալու իրավունք

[14.143]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 18. 14-րդ հոդվածի 6-րդ կետը օրենքի համաձայն փոխհատուցում է նախատեսում արդարադատություն իրականացնելիս թույլ տրվող որոշ սխալների դեպքում, ինչպես նկարագրված է այդ կետում: Պետությունների ներկայացրած զեկույցներից այն տպավորությունն է ստեղծվում, որ այս իրավունքը հաճախ ներպետական օրենսդրությամբ չի իրականացվում կամ ոչ բավարար չափով է երաշխավորվում: Պետությունները պետք է, երբ անհրաժեշտ է, լրացնեն այս ուղղությամբ վերաբերող իրենց օրենսդրությունը՝ այն համապատասխանեցնելու դաշնագրի դրույթներին:

[14.144] Հստակ չէ, թե արդյոք «արդարադատության իրականացման սխալ» կարող է տեղի ունենալ պետության կողմից ոչ իրավաչափ գործողության որևէ ձևի բացակայության պարագայում, ինչպիսիք են ոստիկանության կամ դատախազության ոչ իրավաչափ գործողությունները՝ համապատասխան հետաքննության կամ դատավարության ընթացքում (օր.՝ կասկածյալի նկատմամբ կեղծ գործ սարքելը, պաշտպանական կողմից ապացույցները թաքցնելը): Իհարկե, ամենը մարդուն կարող են մեղավոր ճանաչել մաև այնպիսի դատավարության արդյունքում, որտեղ պահպանվում են բոլոր կիրառելի ընթացակարգային իրավունքները, և պետության ներկայացուցիչները պատշաճ կերպով են հանդես գալիս: Արդյոք այդ դեպքում էլ պետությունը պետք է պատասխանատվություն կրի՝ նման համաձայնություն ստիպված լինելով վճարել այդ ամենը մարդուն¹⁴⁹:

Ավելին՝ անհատակ է, թե «ամենողության» որ աստիճանն է անհրաժեշտ, որպեսզի գործի դրվի 14-րդ հոդվածի 6-րդ կետը: Ըստ Ստավրոսի առաջարկի՝ 14-րդ հոդվածի 6-րդ կետի շահառուն պետք է «հստակորեն ամենող» համարված լինի, ոչ թե այնպիսի մեկը լինի, ով պարզապես մոր կասկածներ է հարուցել իր մեղքի վե-

¹⁴⁴ Տե՛ս, օր.՝ «Տոմլին ընդդեմ Ճամայկայի» (*Tomlin v Jamaica, 589/94*), պարբ. 8.2:

¹⁴⁵ Տե՛ս մաև [14.94]:

¹⁴⁶ Պարբ. 6.4:

¹⁴⁷ Պարբ. 7.2. տե՛ս մաև [14.63]:

¹⁴⁸ 14-րդ հոդվածի 1-ին կետի խախտում արձանագրվեց «Կարտունեն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Karttunen v Finland, 387/89*) գործում, որը վերաբերում էր պետության կողմից քաղաքացիական գործում բանավոր բողոքարկում չնախատեսելուն, սակայն համապատասխան դատավարության վրա ստվեր էր ընկել այլ պատճառներով՝ այդպիսով բողոքարկման պարագայում առաջացնելով հարցերի մանրամասն վերազնադատման անհրաժեշտություն [14.53]:

* Դաշնագրի հայերեն թարգմանության մեջ «miscarriage of justice» թարգմանված է «դատական սխալ»: Այնուամենայնիվ, այս գրքի շարադրանքից պարզ է դառնում, որ «miscarriage of justice» արտահայտությունը կիրառվում է մաև, օրինակ, ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների առնչությամբ: Բացի այդ, սույն գրքում գործածվում է մաև «judicial error» արտահայտությունը, որը շատ ավելի է համապատասխանում «դատական սխալ» թարգմանությանը, ինչը և մենք արել ենք: Միևնույն փոփոխությունը կատարել ենք մաև դաշնագրի 14-րդ հոդվածի 6-րդ կետի տեքստը մեջբերելիս: (Ծան. բարձր.):

¹⁴⁹ Տե՛ս մաև D. Harris, 'The Right to a Fair Trial in Criminal Procedures as a Human Right' (1967) 16 ICLQ 352, 375: Նովակը՝ (վերը, ծմբ. 13, 271), ընդամենը նշում է, որ հոդված 14(6)-ը չի վերաբերում այն դեպքերին, երբ փաստը թաքցնելը կարելի է վերագրել դատապարտված անձին, ով կարող է թաքցնել իր անմեղությունը՝ մեկ այլ անձի չղավաճանելու համար: Տե՛ս մաև [14.51]:

րաբերյալ¹⁵⁰:

[14.145] «ՄՈՒՀՈՆԵՆՆ ԸՆԴՈՂԵՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (MUHONEN v FINLAND, 89/81)

Հեղինակը դատապարտվել է Ֆինլանդիայում զինվորական ծառայությունից խուսափելու համար: Նա առաջին ատյանի դատարանում չի ապացուցել, որ զինվորական ծառայությունից հրաժարվում է գաղափարական նկատառումներով, ինչը կարող էր նրան ազատել ծառայելու պարտականությունից: Զինվորական ծառայությունից գաղափարական նկատառումներով հրաժարվող ճանաչվելու վերաբերյալ նրա երկրորդ դիմումը բավարարվել է, երբ նա իր տասնմեկամյա պատժաչափից ութ ամիսն արդեն կրել էր: Հեղինակին ներում են շնորհել և երկու շաբաթ անց ազատ են արձակել: Նա բողոք է ներկայացրել 14-րդ հոդվածի 6-րդ կետի խախտման վերաբերյալ՝ կապված ծառայության մեջ անցկացրած ժամանակի համար պետության կողմից դրամական փոխհատուցման տրամադրումը մերժելու հետ: ՄԻԿ-ը վճռեց հոգուտ մասնակից պետության հետևյալ պատճառաբանությամբ:

¶ 11.2. ...[14-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված] փոխհատուցման իրավունքը կարող է ծագել քրեական հանցագործության առնչությամբ, եթե անձի նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ «նրան ներում է շնորհվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ անվիճելիորեն ապացուցում է արդարադատության իրականացման սխալի առկայությունը»: Ինչ վերաբերում է առաջին տարբերակին, կոմիտեն համարում է, որ պրն Մուհոնենի դատապարտումը, ինչպես շարադրվել է Յոենսուուի քաղաքային դատարանի [city court of Joensuu] 1978 թ. հեկտեմբերի 13-ի դատավճռում և հաստատվել Արևելյան Ֆինլանդիայի բարձր դատարանի կողմից 1979 թ. հոկտեմբերի 26-ին, որևէ այլ՝ ավելի ուշ դատական որոշմամբ երբեք չի վերացվել: Ավելին՝ պրն Մուհոնենը չի արդարացվել այն պատճառով, որ նրա դատապարտումը հիմնված է եղել արդարադատության իրականացման սխալի վրա: Համաձայն համապատասխան ֆիննական ստատուտի՝ օրենքի, որը վերաբերում է այն նորակոչիկներին պատժելուն, ովքեր մերժում են զինվորական ծառայությունը (23/72), յուրաքանչյուր անձ, ով խուսափում է զինվորական ծառայությունից՝ առանց Քննական խորհրդի [Examining Board] կողմից որպես զինվորական ծառայությունը գաղափարական նկատառումներով մերժող անձ ճանաչվելու, կատարում է պատժելի արարք: Սա նշանակում է, որ զինվորական ծառայությունը մերժելու իրավունքը ինքնաբերաբար չի ծագում, երբ բավարարվում են նախատեսված նշանակալի պահանջները, այլ միայն այն դեպքում, երբ իրավասու վարչական մարմինը պատշաճ կերպով հետազոտում և ճանաչում է ներկայացված էփիկական հիմքերը: Հետևաբար, նախագահի համաներումը չի ենթադրում, որ տեղի է ունեցել արդարադատության իրականացման սխալ: Ինչպես նշել է մասնակից պետությունն իր 1984 թ. հոկտեմբերի 22-ի հաղորդման մեջ, պրն Մուհոնենի ներումը պայմանավորված է արդարության նկատառումներով:

¶ 11.3. Վստահ եղեք, որ պրն Մուհոնենի դատապարտումն առաջ եկավ Քննական խորհրդի 1977 թ. հոկտեմբերի 18-ի որոշման հետևանքով, որով մերժվում էր նրան զինվորական ծառայությունից գաղափարական նկատառումներով հրաժարվող անձի կարգավիճակ տրամադրելը: Այդ որոշումը հիմնված է այն ժամանակ Քննական խորհրդի տրամադրության տակ եղած ապացույցների վրա: Պրն Մուհոնենին հաջողվեց Քննական խորհրդին համոզել, որ զինվորական ծառայությունից հրաժարվելու էփիկական պատճառներ ունի, երբ անձամբ ներկայացավ այդ մարմնին 1980 թ. աշնանը նորացված դիմումից հետո, մինչդեռ 1977 թ. նա չէր օգտվել Քննական խորհրդի կողմից իր գործի քննությանը ներկա լինելու հնարավորությունից:

¶ 12. Համապատասխանաբար, Մարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ պրն Մուհոնենն իրավունք չունի ստանալու այն փոխհատուցումը, որը Ֆինլանդիայի իշխանությունները հրաժարվել են տրամադրել նրան, և հետևաբար դաշնագրի 14-րդ հոդվածի 6-րդ կետը չի խախտվել:

[14.146] «Ու. Հ. Յ. Վ-ն ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (W.J.H. v THE NETHERLANDS, 408/90)

Այս գործով հեղինակը առաջին ատյանի դատարանում դատապարտվել է մի շարք իրավախախտումների համար, ներառյալ կեղծումը և զեղծարարությունը: Սակայն նա, բացի հետաքննության փուլում երկու ամիս կալանքից, կալանքի տակ չի գտնվել: Հետագայում գերագույն դատարանը դատավճիռը բեկանել

¹⁵⁰ S. Stavros, The Guarantees of Accused Persons under Article 6 of the European Convention on Human Rights (Martinus Nijhoff, Dordrecht, 1993), 300:

է, գործը հետ է ուղարկվել ավելի ստորին ատյանի դատարաններ, որոնք հետագայում արդարացրել են նրան ընթացակարգային հիմքերով, քանի որ նրա դեմ ներկայացված որոշ ապացույցներ ձեռք են բերվել խախտումներով¹⁵¹: Հեղինակը, *ի թիվս այլոց*, պնդում էր, որ խախտվել է 14-րդ հոդվածի 6-րդ կետը, քանի որ իրեն փոխհատուցում չի տրվել նախնական «սխալ» դատապարտման համար: ՄԻԿ-ն այս բողոքը անընդունելի համարեց:

¶ 6.3. Ինչ վերաբերում է հեղինակի՝ 14-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն փոխհատուցում ստանալու պահանջին, ... կոմիտեն համարում է, որ այդ հոդվածի կիրառման պայմաններն են.

(ա) վերջնական որոշմամբ դատապարտումը քրեական հանցագործության համար.

(բ) նման դատապարտման հետևանքով պատժի կրումը և

(գ) հետագայում դատավճռի բեկանումը կամ ներման շնորհումն այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ անվիճելիորեն ապացուցում է արդարադատության իրականացման սխալի առկայությունը:

Կոմիտեն համարում է, որ քանի որ այս գործում վերջնական որոշումը՝ ընդունված վերաքննիչ դատարանի կողմից 1988 թ. մայիսի 11-ին, արդարացրել է հեղինակին, և քանի որ նա 1985 թ. դեկտեմբերի 24-ի իր ավելի վաղ դատապարտման արդյունքում որևէ պատիժ չի կրել, հեղինակի պնդումը դուրս է դաշնագրի 14-րդ հոդվածի 6-րդ կետի գործողության ոլորտից:

Այդպիսով, արդարադատության իրականացման սխալը կարող է տեղ գտնել միայն այն դեպքում, երբ գործն անցնում է բողոքարկման բոլոր հնարավոր դատարաններով: Ուշադրություն դարձրեք, որ այս դեպքում հեղինակի դատապարտումը չէր վերջնական որոշումը: Համապատասխան վերջնական որոշումը մի շարք բողոքարկումներից հետո նրա արդարացումն էր: Հետևաբար, արդարադատության իրականացման սխալը կարելի է տարբերել բողոքարկման արդյունքում արդարացումներից: Ավելին՝ 14-րդ հոդվածի 6-րդ կետի նկատառումներով մինչդատական կալանքը և քրեական դատավարությունում ստիպված ինքն իրեն պաշտպանելու համար կատարված ծախսերը «պատիժ» չեն համարվում¹⁵²: Ու. Ջ. Դ. ի գործին հետևեց «*Յուբերգանգն ընդդեմ Ավստրալիայի*» (*Uebergang v Australia, 963/01*) գործը:

[14.147] «ԻՐՎԻՆԳՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (*IRVING v AUSTRALIA, 880/99*)

Հեղինակը իրավախախտման համար դատապարտվել է Քուինզլենդում Քաիրնսի շրջանային դատարանի կողմից, և այդ դատապարտումը 1994 թ. ապրիլի 20-ին ուժի մեջ է թողնվել Քուինզլենդի վերաքննիչ դատարանի կողմից: Հեղինակը դիմում է հղել Ավստրալիայի բարձր դատարանում բողոքարկելու թույլտվություն ստանալու համար, որը մինչև 1997 թ. դեկտեմբերի 8-ը չի բավարարվել: Հապաղման պատճառը հեղինակն է, որ սպառնում էր այդ բողոքարկման համար իրավաբանական օգնություն ձեռք բերելու փորձերը: Ի վերջո, նա ինքն է ներկայացրել իրեն բարձր դատարանում¹⁵³: Բարձր դատարանը այն նույն օրը, երբ ընդունել է բողոքարկումը թույլատրելու դիմումը, թույլատրել է բողոքարկումը, վերացրել դատապարտումը և գործն ուղարկել կրկնակի քննության: Դեկտեմբերի 11-ին հեղինակը բանտից ազատ է արձակվել: 1998 թ. հոկտեմբերի 2-ին Քուինզլենդում պետական մեղադրանքի գծով տնօրենը հայտարարել է, որ կրկնակի քննություն չի արվի: Հեղինակն այնուհետև իր սխալ դատապարտման համար փոխհատուցում ստանալու անհաջող փորձ է ձեռնարկել: Այդ հանգամանքներից ելնելով՝ հեղինակը պնդում էր, որ խախտվել է 14-րդ հոդվածի 6-րդ կետը: Մեծամասնությունն այդ բողոքն անընդունելի համարեց, քանի որ դատապարտումը բեկանվել էր բարձր դատարանի կողմից, որը ներկայացնում էր «վերջնական» որոշումը: Պարոնայք Հենկինը և Շայնինը առարկեցին հետևյալ կերպ.

¹⁵¹ Պարբ 2.2:

¹⁵² Մինչդատական կամայական կալանքի համար փոխհատուցում կարելի է ստանալ համաձայն հոդված 9(5)-ի: Տե՛ս [11.66-11.69]:

¹⁵³ Կոմիտեն նշում է, որ փաստերը վեր հանեցին «լուրջ հարց՝ մասնակից պետության կողմից դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետին համապատասխանելու վերաբերյալ» (պարբ. 8.2), սակայն հեղինակն այդ առումով որևէ պնդում չէր արել:

Մենք այն կարծիքին ենք, որ պրն Իրվինգի դատապարտումը «վերջնական» էր: Մեր կարծիքով՝ 14-րդ հոդվածի 6-րդ կետում նշված «վերջնական» բառը չի կարող հասկացվել այնպես, որ միայն այն դատապարտումն է համարվում վերջնական, որը չի կարող բեկանվել: Եթե այդպես լիներ, վերջնական որոշման բեկանմանը վերաբերող հղումը իմաստ չէր ունենա: Կարծում ենք, որ իրավական համակարգերի տարբերությունների պատճառով չի կարող լինել մի չափանիշ, թե այս համատեքստում որն է վերջնական դատապարտումը: Հետևաբար, կոմիտեն պետք է դեպք առ դեպք սկզբունքով գնահատման միջոցով որոշի՝ դատապարտումը վերջնական է դարձել, թե՞ ոչ:

Սույն գործում պրն Իրվինգը դատապարտվել է Քաիրնսի շրջանային դատարանի կողմից 1993 թ. դեկտեմբերին: Քուինզլենդի վերաքննիչ դատարանը մերժել է նրա բողոքարկումը 1994-ի ապրիլին: Ավստրալիայի բարձր դատարանում հետագա բողոքարկումը հնարավոր էր միայն բողոքարկման հատուկ թույլտվության միջոցով, որի համար պրն Իրվինգն անհաջող կերպով փորձել էր իրավաբանական օգնություն ստանալ: Բողոքարկման գործընթացի ժամանակ պրն Իրվինգն ակնհայտորեն իր պատիժը կրել է բանտում:

Մեր կարծիքով՝ պրն Իրվինգի դատապարտումը դարձել է «վերջնական», երբ սպառվել է այն սովորական ժամանակահատվածը, որի ընթացքում պետք է դիմում ներկայացվեր բողոքարկման թույլտվություն ստանալու համար, և իրավաբանական օգնության տրամադրումը մերժելու հետևանքով պրն Իրվինգն ի վիճակի չի եղել դիմելու բողոքարկման թույլտվության համար: Դատավարության բնականոն ընթացքի պայմաններում 1994 թ. այս չնշված ամսաթիվն է այն օրը, երբ դատապարտումը դարձել է «վերջնական»: Միայն 1997 թ. դեկտեմբերին է, որ բարձր դատարանը վերացրել է սկզբնական դատապարտումը և գործն ուղարկել կրկնակի քննության:

Որոշելու համար՝ դատապարտումը վերջնական է, թե ոչ, մենք հղում ենք անում կոմիտեի կողմից ավելի վաղ դիտարկված «Ու. Ջ. Հ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» գործին (հաղորդում թիվ 408/1990)՝ որպես այլընտրանքային հիմքի: Այս գործում կոմիտեն որդեգրել էր մի դիրքորոշում, ըստ որի՝ առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտումը վերջնական չի համարվում, *ի թիվս այլոց*, այն պատճառով, որ հեղինակն այդ դատապարտմամբ «որևէ պատիժ չի կրել» (պարբերություն 6.3):

14-րդ հոդվածի 6-րդ կետի տեքստը անհստակ է այն առումով, թե «նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ»-ը վերաբերում է միայն ներմա՞նը, թե՞ նաև բեկանման դեպքին: Ներկա գործում կոմիտեի մեծամասնությունն այն տեսակետը որդեգրեց, որ 14-րդ հոդվածի 6-րդ կետը նոր կամ նոր բացահայտված փաստ է պահանջում թե՛ բեկանման, թե՛ ներման առումով:

Մեր համոզմունքն այն է, որ պատշաճ մեկնաբանության պարագայում այս պահանջը վերաբերում է միայն ներմանը և ոչ բեկանմանը: Մեր կարծիքով՝ այս մոտեցումը հաստատվել է կոմիտեի կողմից «Պաավո Սուհոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» գործում (հաղորդում թիվ 89/1981) [14.145], որում կոմիտեն խնդրո առարկա դրույթը մեկնաբանել է որպես բեկանման դեպքը նոր կամ նոր բացահայտված փաստի պահանջից անկախ դիտարկող (պարբերություն 11.2):

Հոդված 14(7). ազատում կրկնապարտումից

[14.148]

ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 19. Մասնակից պետությունների զեկույցները դիտարկելիս տարբեր կարծիքներ են արտահայտվել 14-րդ հոդվածի 7-րդ կետի գործողության ոլորտի վերաբերյալ: Որոշ մասնակից պետություններ նույնիսկ անհրաժեշտություն են զգացել վերապահումներ կատարելու քրեական գործերի վերսկսման ընթացակարգերի վերաբերյալ: Կոմիտեն այն տպավորությունն ունի, որ մասնակից պետությունների մեծ մասը հստակ տարանջատում է դատավարության վերսկսման՝ հիմնավորված բացառիկ հանգամանքները նորից դատելուց, որն արգելված է *նե բիս ին իդեմ*¹⁵⁴ սկզբունքով, ինչպես այն տրված է 7-րդ կետում: *Նե բիս ին իդեմ*-ի իմաստի այդ ըմբռնումը կարող է դրդել մասնակից պետություններին վերադիտարկել 14-րդ հոդվածի 7-րդ կետի վերաբերյալ իրենց վերապահումները¹⁵⁴:

* *ne bis in idem*՝ լատ., բառացի՝ ոչ երկու անգամ նույն բանի համար (*ծան. քարզմ.*):

¹⁵⁴ Տե՛ս, օր.՝ «Կամպորա Շվեյցերն ընդդեմ Ուրուգվայի» (*Cnmpora Schweizer v Uruguay*, 66/80) գործը, որտեղ դատավարությունն ավարտին հասցնելու չափազանց երկար հապաղումը չէր խախտել հոդված 14(7)-ը, սակայն խախտել էր հոդված 14(3)(գ)-ն, տե՛ս նաև Սակզոլդրիկ, վերը, ծնթ. 3, 435:

[14.149] «Ա. Պ.-ն ընդդեմ ԻՏԱԼԻԱՅԻ» (A.P. v ITALY, 204/86)

Փաստերը ներկայացված են ստորև.

¶ 2.1. Հեղինակը նշում է, որ ինքը դատապարտվել է 1979 թ. սեպտեմբերի 27-ին Լուգանոյի քրեական դատարանի կողմից, Շվեյցարիայում, 1978 թ. Իտալիայում առևանգված մի անձի արձակման դիմաց վճարված գումարի՝ 297,650,000 լիր արժողությամբ թղթադրամների փոխանակման ծրագրված հանցագործությանը մեղսակից լինելու համար: Նա դատապարտվել է երկու տարվա ազատազրկման, որը պատշաճ կարգով կրել է: Այնուհետև նրան Շվեյցարիայից արտաքսել են:

¶ 2.2. Պնդում է արվում, որ Իտալիայի կառավարությունը, ի խախտումն *ճե բիս ին իդեմ* սկզբունքի, այժմ փորձում է հեղինակին պատժել այն նույն հանցագործության համար, որի համար նա արդեն պատիժ է կրել Շվեյցարիայում: 1981 թ. նրա մեղադրական եզրակացությունն ընթերցել է Իտալիայի մի դատարան (որից հետո հեղինակը, ըստ ամենայնի, Իտալիայից տեղափոխվել է Ֆրանսիա), իսկ 1983 թ. մարտի 7-ին Սիլանի վերաքննիչ դատարանը նրան դատապարտել է *ին աքսենցիա* ...

ՄԻԿ-ը որոշեց, որ 14-րդ հոդվածի 7-րդ կետում ձևակերպված սկզբունքը կիրառելի չէ.

¶ 7.3. Ինչ վերաբերում է հաղորդման ընդունելիությանը՝ ըստ կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի, կոմիտեն քննել է մասնակից պետության առարկությունը, ըստ որի՝ հաղորդումն անհամատեղելի է դաշնագրի դրույթների հետ, քանի որ դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետը, որին հղում է կատարել հեղինակը, *ճե բիս ին իդեմ* սկզբունքը չի երաշխավորում երկու և ավելի պետությունների ազգային օրենսդրության առնչությամբ: Կոմիտեն համարում է, որ այդ դրույթը կրկնապարտումն արգելում է միայն այն իրավախախտման դեպքում, որի վերաբերյալ վճիռ է կայացվել տվյալ երկրում:

Սարդասիրության տեսանկյունից *Ա. Պ.-ի* գործում կիրառված սկզբունքը ցավալի է: Եթե որևէ պետություն իրավախախտում կատարած անձի համար համարժեք պատիժ է սահմանել, չպետք է թույլատրվի այդ անձին միևնույն հանցանքի համար մեկ այլ երկրում դատելը¹⁵⁵: Այդուամենայնիվ, ՄԻԿ-ը «*Ա. Ռ. Ջ.-ն ընդդեմ Ավստրալիայի*» (*A.R.J. v Australia, 692/96*) գործում հետևեց *Ա. Պ.-ի* գործով որոշմանը¹⁵⁶:

[14.150] «*Խիխոն ընդդեմ Էկվադորի*» (*Jijon v Ecuador, 277/88*) գործով հեղինակին կրկին ներկայացված մեղադրանքն այն նույն հանցանքի համար, որի համար նա արդեն դատապարտվել էր, ի վերջո վերացվել է գերագույն դատարանի կողմից: Այդպիսով, 14-րդ հոդվածի 7-րդ կետի խախտումն չարձանագրվեց¹⁵⁷:

Եզրակացություն

[14.151] ՄԻԿ-ն ավելի մեծ ծավալի նախադեպային իրավունք է կուտակել 14-րդ հոդվածի վերաբերյալ, քան ԶԲԻՄԴ-ի որևէ իրավունքի: Այդ նախադեպային իրավունքը, այնուամենայնիվ, աղճատված է մահապատժի դատապարտված անձանց կողմից իրենց գործերի քննության արդարության վերաբերյալ բողոքների գերակշռությամբ: Այդ կարգի դատական գործերին ներհատուկ ծանրությունը նշանակում է, որ նման գործերից կուտակված նախադեպային իրավունքը կարող է անհրաժեշտաբար կիրառելի չլինել ավելի քիչ ծանրության գործերում: Այդուհանդերձ, 14-րդ հոդվածի վերաբերյալ ավելի քան 200 գործերը զգալիորեն միս ու արյուն են տվել 14-րդ հոդվածի մերկ երաշխիքներին:

¹⁵⁵ Իսկապես, *Ա. Պ.-ի* գործում կիրառված սկզբունքը թերևս չի համապատասխանում Միջազգային քրեական դատարանի մասին Հռոմի ստատուտի *ճե բիս ին դեմ* սկզբունքին (հոդվ. 20), որն արգելում է երկրներին որևէ մեկին դատել միևնույն հանցագործության համար, որի համար նա արդեն դատվել է Միջազգային դատարանի կողմից, և որը Դատարանին արգելում է դատել որևէ մեկին, ով միևնույն արարքի համար արդեն դատվել է պետության կողմից (վերջին սկզբունքը ենթակա է որոշ սահմանափակումների): Տե՛ս Ֆ. Ֆ. Մարտին և այլք, վերը, ծնթ. 55, 634: Ընդհանուր առմամբ, տե՛ս C. van den Wyngaert and G. Stessens, 'The International Non [sic] Bis in Idem Principle: Resolving Some of the Unanswered Questions' [4. վան դեն Վինգարտ և Գ. Ստեսենս, «Նոն [sic] բիս ին դեմ միջազգային սկզբունքը. լուծելով որոշ անպատասխան հարցեր»] (1999) 48 ICLQ 779:

¹⁵⁶ Պարբ 6.4:

¹⁵⁷ Պարբ 5.4:

Հետադարձ ուժ ունեցող քրեական օրենքների արգելում. հոդված 15

- Հետադարձ ուժ ունեցող քրեական օրենքներ[15.01]
- Հետադարձ ուժ ունեցող պատժամիջոցներ.....[15.05]
- Հոդված 15(2).....[15.11]
- Եզրակացություն[15.13]

ՀՈՂՎԱԾ 15

1. Ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե գործողության կամ անգործության պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:

2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալուն և պատժելուն ցանկացած գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել են քրեական հանցագործություն:

Հետադարձ ուժ ունեցող քրեական օրենքներ

[15.01] 15-րդ հոդվածում հետադարձ ուժ ունեցող քրեական օրենքների արգելումը հաստատում է քրեական իրավունքում վաղուց ճանաչում գտած *nullum crimen sine lege* (չկա հանցագործություն առանց օրենքի) և *nulla poena sine lege* (չկա պատիժ առանց օրենքի) սկզբունքները¹: Քրեական օրենքների հետադարձ գործողությամբ կիրառումը (*ex post facto* քրեական օրենքներ) խախտում է նշված երկու սկզբունքները: Ավելի ծանր պատժամիջոցի նշանակումը, քան այն միջոցի, որը «կիրառելի էր քրեական հանցագործության կատարման պահին», խախտում է երկրորդ սկզբունքը: Ի լրումն՝ մասնակից պետությունները նաև պարտավոր են հետադարձ գործողությամբ կիրառել ավելի թեթև պատիժներ: Նովակն ավելացրել է, որ 15-րդ հոդվածն արգելում է պատիժ նշանակել ըստ չափազանց անորոշ օրենքների, որոնք հստակ չեն սահմանում այն արարքը, որի համար անձը պատժվել է²:

[15.02] 15-րդ հոդվածն առանձնացված է 14-րդ հոդվածում ամրագրված արդարացի քննության այլ իրավունքներից: Թերևս սրա պատճառն այն է, որ 15-րդ հոդվածը, ի տարբերություն 14-րդ հոդվածի, չսահմանափակվող իրավունք է³:

[15.03] 15-րդ հոդվածը բացառապես վերաբերում է հետադարձ ուժ ունեցող քրեական օրենքներին և

¹ M. Nowak, CCPR Commentary (N.P. Engel, Kehl, 1993), էջ 275:

² Նույն տեղում, էջ 276: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Պրոտուգալիայի (Մակաոյի) վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 115, պարբ. 12, որում ՄԻԿ-ը քննադատության ենթարկեց որոշ անորոշ ձևակերպված «վերացական» օրինազանցություններ: 15-րդ հոդվածով նմանատիպ մի բողոք համարվեց չհիմնավորված «Կիվենմաան ընդդեմ Ֆինլանդիայի» (*Kivenmaa v Finland*, 412/90) և «Կրույտ-Ամեսն ընդդեմ Նիդեռլանդների» (*Kruyt-Amesz v The Netherlands*, 66/95) գործերում:

³ Նովակ, տե՛ս վերը, ծմբ. 1, էջ 275:

կիրառելի չէ քաղաքացիական գործերով հետադարձ գործողության առումով⁴:

[15.04] 15-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ ստեղծված նախադեպային իրավունքը աղքատիկ է: Ընդդեմ Ուրուգվայի հարուցված վաղ շրջանի մի շարք գործերում հետադարձ գործողության քրեական իրավունքը ակնհայտորեն խախտվել է այն դեպքերում, երբ մարդիկ մեղադրվել և դատապարտվել են «հակակառավարական կազմակերպությունների» անդամակցելու համար, այսինքն՝ այնպիսի քաղաքական կուսակցությունների, որոնց գործունեությունն *ավելի ուշ* կասեցվեց⁵: «*Բաունգարտենն ընդդեմ Գերմանիայի*» (*Baumgarten v Germany, 960/00*) գործով վերջերս կայացված որոշումը վերաբերում է 1996 թ. Արևելյան Գերմանիայի նախկին պաշտոնյայի դատապարտմանը Գերմանիայում (որն ուժի մեջ է մնացել վերաքննիչ բողոքից հետո), քանի որ նա պատասխանատու է եղել արևելագերմանական սահմանն անօրինական կերպով անցնել փորձող մարդկանց սպանելու կամ սպանության փորձեր կատարելու համար: Հեղինակի հակափաստարկն այն էր, որ դատավճիռը խախտել է 15-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ սպանությունների և սպանությունների փորձերի ժամանակ, Արևելյան Գերմանիայի քրեական օրենսդրության համաձայն, ինքն ազատված է եղել պատասխանատվությունից: Այս գործը քննարկվում է ստորև՝ պարզաբանելով դրա համապատասխանությունը 15-րդ հոդվածի 2-րդ կետին [15.12]:

Հետադարձ ուժ ունեցող պատժամիջոցներ

[15.05] 15-րդ հոդվածի հետ կապված վաղ շրջանի բոլոր կարևոր գործերը վերաբերել են հետադարձ ուժ ունեցող պատժամիջոցների մասին դրույթներին: *Ա.Ռ.Ս.-ի* գործը վերաբերում էր հետադարձ գործողությամբ ավելի ծանր պատժամիջոցի սահմանմանը, մինչդեռ *Վան Դյուզենի [Van Duzen]* և *Մակայզելի [MacIsaac]* գործերը վերաբերում էին, ըստ հայտարարության, ավելի թեթև պատժամիջոցների հետադարձ գործողությամբ կիրառմանը⁶:

[15.06] «Ա.Ռ.Ս.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (A.R.S. v CANADA, 91/81)

Այս գործում հեղինակը պնդում էր, որ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման հետադարձ գործողությամբ կիրառումը՝ «պայմանական վաղաժամկետ ազատ արձակման մասին» Կանադայի օրենքի [Canadian Parole Act] պարտադիր վերահսկողության ներքո, ավելի ծանր պատիժ է, ինչը 15-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: Հեղինակի փաստարկն ընդհանուր գծերով ներկայացված է անմիջապես ստորև.

¶ 2.2. 1982 թ. սեպտեմբերի 8-ին հեղինակի ազատ արձակումը կախված է նրա կողմից «պարտադիր վերահսկման հավաստագրի» ստորագրումից. մի պահանջ, որը, հեղինակի պնդմամբ, գոյություն չի ունեցել խնդրի առարկա օրինազանցությունների կատարման ժամանակ: Նա, հետևաբար, առարկում է, որ «պարտադիր վերահսկումը» հավասարազոր է ավելի ծանր պատիժի, քան այն, որը կիրառելի էր քրեական հանցագործությունների կատարման ժամանակ, և այս «ավելի ծանր պատիժն» իր դեպքում դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: Ի լրումն՝ հեղինակը պնդում է, որ «պարտադիր վերահսկումը» պատժամիջոցի կրկնակի կիրառում է, որը պետք է համարվեր կասեցված, և որ այն պահանջը, որ ինքը ստորագրի պարտադիր վերահսկման հավաստագիրը (ըստ նրա՝ մի փաստաթուղթ, որը կդառնար չկատարելու համար պատիժներ նախատեսող պայմանագիր), այլապես ստիպված կլինի պատիժն ամբողջությամբ՝ մինչև 1988 թ. փետրվարի 3-ը կրել, ահաբեկում հանդիսացող քրեական հանցագործություն է, որը խախտում է Կանադայի քրեական օրենսգրքի 382-րդ մասը և դաշնագրի 11-րդ հոդվածը: Վերջապես, հեղինակը հայտարարում է, որ իրեն զրկել են դատարանում վիճարկելու իրավունքից այն հիմնական իրա-

⁴ Տե՛ս «*Ա. Զ. վ. Գ.-ն ընդդեմ Նիդերլանդների*» (*A. J. v G. v Netherlands, 1142/02*), պարբ. 5.7:

⁵ Տե՛ս, օրինակ, «*Ուայնբերգեր Վեյսն ընդդեմ Ուրուգվայի*» (*Weinberger Weisz v Uruguay, 28/78*): Տե՛ս նաև Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 277:

⁶ *Վան Դյուզենի* և *Մակայզելի* գործերի մանրամասն քննարկման համար տե՛ս T. Opsahl and A. De Zayas, 'The Uncertain Scope of Art 15(1) of the International Covenant on Civil and Political Rights' [1983] *Canadian Human Rights Yearbook* 237: Հոդված 15(1)-ի խախտման մի դեպք վերջերս հաստատվեց «*Գոմես Կասաֆրանկան ընդդեմ Պերուի*» (*Gómez Casafranca v Peru, 981/01*) գործում, որում հեղինակին դատապարտել էին ակնհայտորեն ավելի ծանր պատիժի, քան ուժի մեջ էր եղել նրա հայտարարվող հանցագործության ժամանակ:

վաբանական ենթադրությունը, որ բանտարկության ժամկետը, չնայած պատժի կասեցմանը, որն ինքը վաստակել էր, շարունակում է ուժի մեջ մնալ ազատ արձակման օրից մինչև պատժի ժամկետի ավարտը՝ խախտելով դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերը:

ՄԻԿ-ը հայցն անընդունելի համարեց հիմնականում այն պատճառով, որ համարեց՝ հեղինակը ՔՔԻՄԴ-ով սահմանված իր իրավունքների որևէ ոտնահարման «զոհ» չէ⁷: ՄԻԿ-ը հավելեց, որ պարտադիր վերահսկումը 15-րդ հոդվածի սահմանման իմաստով «պատիժ» չէ: Կոմիտեն այս կապակցությամբ տվեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 5.3. Կոմիտեն նաև նշում է, որ պարտադիր վերահսկումը չի կարող համարվել պատժի համարժեք, այն ավելի շուտ սոցիալական օժանդակության միջոց է, որը նախատեսված է դատապարտված անձի ռեաբիլիտացիայի համար՝ նրա իսկ շահերից ելնելով: Այն փաստը, որ մույնիսկ պատժի կասեցման արժանանալու դեպքում տվյալ անձն իր ազատ արձակումից հետո շարունակում է ենթարկվել վերահսկման և չի վերանվաճում նախապայմաններով չսահմանափակված իր ազատությունը, չի կարող, հետևաբար, բնութագրվել որպես դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված իրավական երաշխիքներին հակասող պատժամիջոցի կիրառում կամ վերակիրառում:

[15.07] «ՎԱՆ ԴՅՈՒԶԵՆՆ ԸՆԴՈՂԵՆ ԿԱՆԱԴԱՅԻ» (VAN DUZEN v CANADA, 50/79)

Փաստերը չեն վիճարկվել և հեղինակի կողմից ընդհանուր գծերով ներկայացվել են հետևյալ կերպ.

¶ 2.2. 1967 թ. մայիսի 17-ին և 1968 թ. հունիսի 12-ին տարբեր հանցագործություններ կատարելու մեղադրանքով հեղինակը դատապարտվել է, համապատասխանաբար, երեք տարի և տասը տարի ժամկետով ազատազրկման: Վերջին ժամկետը հեղինակը պետք է կրեր նախորդ ժամկետին զուգահեռ. այդպիսով, միավորված ժամկետները պետք է լրանային 1978 թ. հունիսի 11-ին: 1971 թ. մայիսի 31-ին հեղինակը, այն ժամանակ գործող «Վաղաժամկետ ազատ արձակման մասին» օրենքի [Parole Act 1970] համաձայն, վաղաժամ ազատ արձակվեց: 1974 թ. դեկտեմբերի 13-ին, դեռևս գտնվելով պայմանական վաղաժամկետ ազատ արձակված վիճակում, հեղինակը մեղադրվեց քրեական հետապնդման ենթակա օրինազանցություն՝ կոտորանքով ուղեկցված ներխուժում կատարելու համար և 1974 թ. դեկտեմբերի 23-ին դատապարտվեց երեք տարի ժամկետով ազատազրկման: 1970 թ. ընդունված «Վաղաժամկետ ազատ արձակման մասին» օրենքի 17-րդ բաժնի կիրառմամբ նրա վաղաժամ ազատ արձակումը 1974 թ. դեկտեմբերի 13-ին չեղյալ է համարվել: Արդյունքում հաշվարկվել է, որ հեղինակի ազատազրկման միավորված ժամկետները լրանում են 1985 թ. հունվարի 4-ին: 1977 թ. «Վաղաժամկետ ազատ արձակման մասին» օրենքի (1970 թ.) մի քանի բաժիններ, որոնց թվում և 17-րդ բաժինը, վերացվեցին: Նոր դրույթներն ուժի մեջ մտան 1977 թ. հոկտեմբերի 15-ին («Քրեական օրենսգրքի լրամշակման մասին» օրենք [Criminal Law Amendment Act] 1977):

¶ 2.3. Ըստ հեղինակի՝ նոր օրենքի հավաքական հետևանքն այն էր, որ վերացվեց վաղաժամկետ ազատ արձակման իրավունքից զրկումը, և մեղմացվեց պայմանական վաղաժամկետ ազատ արձակված ժամանակ քրեական հետապնդման ենթակա օրինազանցություն կատարելու համար պատիժը, պայմանով, որ քրեական հետապնդման ենթակա օրինազանցությունը կատարվել է 1977 թ. հոկտեմբերի 15-ին կամ դրանից հետո, որովհետև, *ի թիվս այլոց*, նոր դրույթների համաձայն, 1977 թ. հոկտեմբերի 15-ից հետո և նախքան պայմանական վաղաժամկետ ազատ արձակման կասեցումը պայմանական վաղաժամկետ ազատ արձակման մեջ անցկացրած ժամանակը համարվել է ազատազրկման պայմաններում անցկացրած ժամանակ: Հետևաբար չի պահանջվում, որ պայմանական վաղաժամկետ ազատ արձակված անձին, ում պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը չեղյալ է համարվել այդ օրվանից հետո, համարժեք ժամկետով բանտարկության ենթարկել նախորդ դատավճռով:

¶ 2.4. Հեղինակը հայտարարում է, որ, հետադարձ գործողությամբ «ավելի մեղմ պատիժ» չկիրառելով այն անձանց նկատմամբ, ովքեր մինչև 1977 թ. հոկտեմբերի 15-ը, պայմանական վաղաժամկետ ազատ արձակված լինելով, կատարել են քրեական հետապնդման ենթակա օրինազանցություններ, Կանադայի խորհրդարանն ընդունել է մի օրենք, որը նրանց զրկում է դաշնագրի 15-րդ հոդվածով սահմանված պաշտպանությունից, և այդպիսով խորհրդարանը չի կատարել դաշնագրի 2-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունը՝ հարգել իր տարածքի սահմաններում և իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց այն իրավունքները, որոնք ճանաչվել են սույն դաշնագրում, և անհրաժեշտ քայլեր կատարել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ ձեռնարկելու համար, որոնք անհրաժեշտ կլինեն դաշնագրում ճանաչվող իրավունքների իրականացման համար:

Մասնակից պետությունը ներկայացրեց հետևյալ փաստարկները՝ սկսեմելով 15-րդ հոդվածի 1-ին կետից:

⁷ Տե՛ս [3.30]:

տի «պատժամիջոց» բառի իմաստի վրա.

¶ 8.1. Կամընտիր արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետով 1981 թ. փետրվարի 18-ով թվագրված իր բացատրության մեջ մասնակից պետությունը, *ի թիվս այլոց*, ներկայացնում է Կանադայի պայմանական վաղաժամկետ ազատ արձակման համակարգին վերաբերող օրենքը և հայտարարում է, որ այն չի խախտում Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով ստանձնած իր պարտավորությունները: Մասնակից պետությունը առարկում է՝ պնդելով.

(ա) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածը վերաբերում է միայն որոշակի քրեական հանցագործություն կատարելու համար քրեական դատարանի կողմից սահմանված քրեական պատիժներին՝ համաձայն քրեական դատավարության.

(բ) պայմանական վաղաժամկետ ազատ արձակման վերացումը դաշնագրի 15-րդ հոդվածի իմաստով քրեական պատժամիջոց չէ.

(գ) պայմանական վաղաժամկետ ազատ արձակումից զրկելը վաղաժամկետ ազատ արձակման իրավունքի վերականգնումով փոխարինել չի նշանակում, որ պետությունը փոխարինել է «պայմանական վաղաժամկետ ազատ արձակված լինելով քրեական հետապնդման ենթակա օրինազանցություն կատարելու համար ավելի մեղմ պատիժը»:

¶ 8.2. Ի լրումն՝ մասնակից պետությունը դիտարկում է «պատժամիջոց» բառի սահմանումը, ինչպես այն օգտագործված է դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետում.

¶ 8.3. Մասնակից պետությունը հայտարարում է, որ գոյություն ունեն տարբեր պատժամիջոցներ. դրանք կարող են լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական: Քրեական պատիժների և վարչական կամ կարգապահական պատժամիջոցների տարբերակումը, ըստ մասնակից պետության պնդման, ընդհանուր առմամբ ընդունելի է: Այնուհետև նա հայտարարում է, որ քրեական պատիժները երբեմն հիշատակվում են որպես «ֆորմալ պատժամիջոցներ», մինչդեռ վարչական պատժամիջոցներն անվանում են «ոչ ֆորմալ պատժամիջոցներ»:

¶ 8.4. Մասնակից պետությունը հավելում է, որ դաշնագրի 15-րդ հոդվածի շրջանակը կամ համատեքստը քրեական իրավունքն է: «Մեղավոր», «քրեական հանցագործություն» և «օրինազանց» բառերը վկայում են, որ երբ «պատժամիջոց» բառն օգտագործվում է 15-րդ հոդվածի համատեքստում, նկատի է առնվում «քրեական պատժամիջոցը»: Մասնակից պետությունն անընդունելի է համարում պրն Վան Դյուզենի ենթադրությունն այն մասին, որ «պատժամիջոց» բառը դաշնագրի 15-րդ հոդվածում պետք է ստանա լայն մեկնաբանում, ինչը կնշանակի, որ 15-րդ հոդվածը կկիրառվի քրեական մեղադրանքների արդյունքում օրենքով սահմանված վարչական կամ կարգապահական պատժամիջոցների դեպքում:

Հեղինակի պատասխանը ներկայացվում է ստորև.

¶ 9.2. Հեղինակը կարծում է, որ 15-րդ հոդվածի 1-ին կետում «քրեական» բառը կապվում է «հանցագործության», ոչ թե «պատժամիջոցի» հետ: Հոդվածի ձևակերպումները չեն նպաստում մասնակից պետության՝ «պատժամիջոց» բառի իմաստը նեղացնելու փորձին: Հայտարարվում է, որ եթե օրինազանցությունը, համաձայն հոդվածի իմաստի, քրեական բնույթի է, ապա այդ հանցագործության համար սահմանված ցանկացած պատժամիջոց հոդվածի իմաստին համապատասխանող պատժամիջոց է: Մասնակից պետությունն ընդունում է, որ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման իրավունքից զրկումը և չեղյալ հայտարարումը եղել են պատժամիջոցներ, և դրա չեղյալ հայտարարումը շարունակում է պատժամիջոց լինել, սակայն մասնակից պետությունը փորձում է պատժամիջոցները բաժանել կարգերի, ինչի իրավասությունը, համաձայն հոդվածի ձևակերպումների, նախադեպերի կամ տրամաբանության, նա չունի: ...

¶ 9.6. Ի լրումն՝ հեղինակը հայտարարում է, որ ֆորմալ պատժամիջոցների (որոնք սահմանվում են դատարանների միջոցով) և ոչ ֆորմալ պատժամիջոցների (որոնք կիրառվում են միջանձնային և ինստիտուցիոնալ բազմապիսի համատեքստերում) տարբերակումը շեղվում է այս հաղորդման բուն բովանդակությունից: Այստեղ խնդրո առարկա պատժամիջոցը հստակ հանգեցնում է «հանցագործության համար պատիժ»: Տարբերակումը կախված չէ այն կառույցից, որը վարույթ է իրականացնում կամ սահմանում է պատժամիջոցը: Առանցքային գործոններն են պատժամիջոցի բնույթը, դրա կապը հանցագործության և հետևանքների հետ, ոչ թե այն կառույցը, որը սահմանում է տվյալ պատժամիջոցը:

Որոշելով, որ հայցն ընդունելի է, ՄԻԿ-ը ոչ բացահայտ որոշեց, որ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման պայմանները կարող են համարվել դաշնագրի 15-րդ հոդվածի նպատակներին համապատասխանող «պատժամիջոցներ»⁸: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը, ի վերջո, որոշեց, որ այս հարցի կապակցությամբ որոշում կայացնելու անհրաժեշտություն չկար, քանի որ 1981 թ., երբ կայացվել էր ընդունելիության մասին որոշումը, հեղինակին, պատժի սահմանված ժամկետն ամբողջությամբ կրելու փոխարեն, բաց էին թողել պարտադիր վերահսկողության տակ⁹: Կոմիտեն կատարեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 10.1. Մարդու իրավունքների կոմիտեն նշում է, որ սույն հաղորդման մեջ բարձրացված և ընդունելի հայտարարված հիմնական հարցն այն է, թե արդյոք դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետում ներառված «ավելի մեղմ պատժի» հետադարձ գործողության մասին դրույթը կիրառելի¹⁰ է դիտարկվող գործում: Այս կապակցությամբ կոմիտեն հիշեցնում է, որ Կանադայի օրենսդրությունը, որով պայմանական վաղաժամկետ ազատ արձակված ժամանակ կատարված հանցագործությունների դեպքում վերացվել է պատժի ժամկետի ինքնաբերաբար կրճատման իրավունքը կամ պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը, ուժի մեջ է մտել 1977 թ. հոկտեմբերի 15-ից. այդ ժամանակ արված հայտարարության համաձայն՝ տուժողը կրում էր ավելի վաղ գործող օրենսդրությամբ իր նկատմամբ սահմանված պատիժը: Այժմ հեղինակը պնդում է, որ 15-րդ հոդվածի 1-ին կետով նա պետք է օգտվի օրենքի այդ հետագա փոփոխությունից:

¶ 10.2. Ի լրումն՝ կոմիտեն նշում է, որ իր կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մեկնաբանումը և կիրառումը պետք է հիմնված լինեն այն սկզբունքի վրա, որ դաշնագրի ձևակերպումները և հայեցակարգերը պետք է անկախ լինեն որևէ որոշակի ազգային համակարգից կամ օրենսդրությունից ու բոլոր բառարանային սահմանումներից: Չնայած դաշնագրում օգտագործվող ձևակերպումները բխում են բազմաթիվ ազգերի մեջ գոյություն ունեցող ավանդույթներից, կոմիտեն այժմ պարտավոր է դրանց վերաբերվել որպես ինքնուրույն իմաստ ունեցողի: Մասնակից պետությունները ներկայացրել են ծավալուն առաջարկություններ, մասնավորապես՝ «պատժամիջոց» բառի իմաստի և Կանադայի համապատասխան օրենսդրության և իրավական պրակտիկայի վերաբերյալ: Կոմիտեն զննատու է դրանց կարևորությունը այս վիճահարույց խնդրի վրա լույս սփռելու տեսանկյունից¹⁰: Մյուս կողմից՝ Կանադայի օրենսդրության մեջ «պատժամիջոց» բառի իմաստը, որպես այդպիսին, եական չէ: Այն հարցը, թե 15-րդ հոդվածի 1-ին կետում «պատժամիջոց» բառը հարկ է մեկնաբանել նեղ, թե՛ լայն իմաստով, կամ արդյոք դաշնագրով այն վերաբերում է տարբեր պատժամիջոցների՝ «քրեական» և «վարչական», պետք է կախված լինի այլ գործոններից: Բացի 15-րդ հոդվածի 1-ին կետի տեքստից, պետք է հաշվի առնվեն, *ի թիվս այլոց*, դրա առարկան և նպատակը:

¶ 10.3. Այնուամենայնիվ, կոմիտեի կարծիքով, դիտարկվող գործի նպատակներից ելնելով, հարկ չկա խորամուխ լինել բարձրացված չափազանց բարդ այն հարցերում, որոնք վերաբերում են 15-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանմանը և կիրառմանը: Այս տեսանկյունից ուշադրություն պետք է դարձվի այն փաստին, որ հեղինակը հետագայում ազատ է արձակվել, և դա տեղի է ունեցել նույնիսկ նախքան այն օրը, երբ, ըստ հեղինակի պնդման, նա պետք է ազատ արձակվեր: Անկախ այն հանգամանքից՝ այս պահանջը ըստ դաշնագրի պետք է համարել հիմնավորված, թե՛ ոչ, կոմիտեն համարում է, որ, չնայած հեղինակի ազատ արձակումը ենթակա է որոշ պայմանների, գործնական նպատակներից ելնելով և գերծ լինելով 15-րդ հոդվածի 1-ին կետի ճիշտ մեկնաբանման վերաբերյալ կանխակալ կարծիքներից՝ նա փաստորեն ստացել է այն օգուտը, որը պահանջել է: Այնուամենայնիվ, կոմիտեի կարծիքով, քանի որ կրկին բանտարկվելու հնարավոր վտանգը պայմանավորված է նրա անձնական վարքով, այդ վտանգը չի կարող ներկա հանգամանքներում նրա կողմից հիշատակված իրավունքի փաստացի ոտնահարում լինել¹¹:

[15.08] «ՄԱԿԱՅՁԵԿՆ ԸՆԴՐՈՒՄ ԿԱՆԱԴԱՅԻ» (MacISAAC v CANADA, 55/79)

Այս գործով ՄԻԿ-ին կրկին խնդրեցին քննարկել այն հարցը, թե Կանադայի քրեական իրավունքով պայմանական վաղաժամկետ ազատ արձակման մասին օրենքների ազատականացումը պե՞տք է հետադարձ գործողությամբ կիրառվի: Ցավոք, այս գործով նույնպես ՄԻԿ-ը կարողացավ խուսափել իրավական հարցի դիտարկումից՝ որոշելով, որ հեղինակը չի կարողացել ապացուցել, որ պայմանական

⁸ Օփսալ և դե Ջայաս [Opsahl and De Zayas], տես վերը, ծմթ. 6, էջ 240:

⁹ «Հարկադիր վերահսկողության» արդյունքի վերաբերյալ ՄԻԿ-ի մեկնաբանության համար տես «Ա.Ռ.Ս.-ն ընդդեմ Կանադայի» (A.R.S. v Canada, 91/81), պարբ. 5.3 [15.06]:

¹⁰ Այս հաղորդումներից մեջքերումներ չեն կատարվել:

¹¹ Գուցե հնարավոր է, որ վան Դյուզենն այս խնդրի վերաբերյալ ներկայացրած լինել մի մոր բողոք, եթե հետագայում վերստին չբանտարկվեր. Օփսալ և դե Ջայաս, տես վերը, ծմթ. 6, էջ 242:

վաղաժամկետ ազատ արձակման մասին ավելի ազատական օրենքների հետադարձ գործողությամբ կիրառումը կհանգեցնե՝ իր ավելի վաղ ազատ արձակմանը: ՄԻԿ-ը ներկայացրեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 11. Դիտարկվող գործով հեղինակի կողմից ավելի ճշգրիտ բացատրությունների բացակայության պայմաններում կոմիտեն փորձել է քննել, թե ենթադրյալ տուժողի կարգավիճակի վրա ի՞նչ ազդեցություն է ունեցել այն իրավիճակը, որի դեմ է նա հիմնականում բողոքում, եթե առհասարակ որևէ ազդեցություն եղել է: Կոմիտեն նշում է, որ կրկնահանցագործներով զբաղվող համակարգը 1977 թ. ընդունված օրենքով ենթարկվել է փոփոխության՝ այն ավելի ճկուն դարձնելու նպատակով: Լրամշակված օրենքը, պայմանական վաղաժամկետ ազատ արձակման իրավունքից ինքնաբերաբար զրկելու փոխարեն, նախատեսում է պայմանական վաղաժամկետ ազատ արձակման կասեցում, ինչը թողնված է Պայմանական վաղաժամկետ ազատ արձակման հարցերով պետական խորհրդի [National Parole Board] հայեցողությամբ, և ազատազրկում կրկնահանցագործության համար, ինչը թողնված է դատավորի հայեցողությամբ: Այսուհանդերձ, կրկնահանցագործին չի կարելի ստիպել, որ նա նորից պատիժ կրի այն ամբողջ ժամկետով, որքան անց է կացրել պայմանական վաղաժամկետ ազատ արձակված վիճակում: Ակնհայտորեն տվյալ գործում հեղինակի պահանջն այն է, որ նա ավելի վաղ ազատ արձակված կլինե՝ հիմնվելով այն վարկածի վրա, որ նոր դրույթները նրա նկատմամբ պետք է կիրառված լինեին հետադարձ գործողությամբ: Կոմիտեն մատնանշում է, որ հստակ չէ, թե դա ինչպես պետք է արվեր: Այնուամենայնիվ, այստեղ անհրաժեշտ է համեմատություն անցկացնել մինչև 1977 թ. գոյություն ունեցած համակարգի հետ: Հին համակարգի պայմաններում դատավորն իր հայեցողությամբ որոշում էր կիրառվելիք պատժի ժամկետը: Պրն Մակայգեյի գործում, ում երկրորդ պատժի դատավճիռը կայացվեց 1975 թ., կրկնահանցագործության հնարավոր պատժը կարող էր հասնել մինչև 14 տարվա ազատազրկման: Ի գիտություն ընդունելով այն հանգամանքը, որ պրն. Մակայգեյի պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը կասեցվել էր, դատավորը 1975 թ. նրան դատապարտեց 14 ամսվա ազատազրկման: Կոմիտեն նշում է, որ չի կարելի սևեռվել միայն հիպոթետիկ իրավիճակի նպաստավոր կողմերի վրա և հաշվի չառնել այն, որ կրկնահանցագործության համար պրն Մակայգեյի նկատմամբ 14-ամսյա պատժի սահմանումը ակնհայտորեն կապված էր պայմանական վաղաժամկետ ազատ արձակման իրավունքից զրկելու հետ: Կանադայի օրենսդրության մեջ կրկնահանցագործության համար չկա որևէ մեկ հաստատված պատժ: Օրենքը նման օրինազանցությունների համար նախատեսում է պատժամիջոցների մի սանդղակ և դատավորի լիակատար հայեցողությանն է թողնում բանտարկության ժամկետի որոշումը (օրինակ՝ մինչև 14 տարի՝ կոտրանքով ուղեկցված ներխուժման ու գողության հանցագործության համար, ինչպես պրն Մակայգեյի դեպքում էր): Սրանից հետևում է, որ պրն Մակայգեյը չի ապացուցել այն վարկածը, որ եթե պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը չկասեցվեր, դատավորը կնշանակեր նույն 14-ամսյա պատժը, և, հետևաբար, ինքը փաստացի ազատ կարձակվեր նախքան 1979 թ. մայիսը: Կոմիտեն տեղյակ չէ, և ոչ էլ նրան կոչ են արել ենթադրել, թե հեղինակին ավելի վաղ պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը կասեցնելու փաստն ինչպես կարող էր ազդել այն պատժի վրա, որը նշանակվեց պայմանական վաղաժամկետ ազատ արձակված լինելու ընթացքում կատարած օրինազանցության համար: Հեղինակն է պատասխանատու ապացուցելու համար, որ 1977 թ. իրեն զրկել են նոր օրենքով սահմանված արտոնությունից, և այս պատճառով նա «տուժող» է: Կոմիտեի գործառնությունների մեջ չի մտնում վերացական գնահատականներ տալը, թե ինչ կլինե, եթե նրա նկատմամբ կիրառվեր լրամշակված օրենքը:

¶ 12. Այս լույսի ներքո 1977 թ. ընդունված Կանադայի «Քրեական օրենսգրքի լրամշակման մասին» օրենքը [Criminal Law Amendment Act], համաձայն մասնակից պետության բացատրության, հանգեցնում է միայն կրկնահանցագործների գործերով զբաղվող համակարգի մասնակի ձևափոխման և կրկնահանցագործի նկատմամբ դատավճիռ կայացնող դատավորի հայեցողությանն է թողնում այն հարցը՝ որոշակի անձանց դեպքում այդ փոփոխության գումարային արդյունքն «ավելի մեղմ պատժ» կլինի, թե՞ ոչ: Նոր օրենքն այն անձանց դեպքում, ում նկատմամբ այն կիրառելի է, ինքնընտանքային չի հանգեցնում ավելի մեղմ պատժի՝ համեմատած նախկին օրենսդրությամբ սահմանվող պատժի հետ: Այն դատավորը, ում տրվել է կրկնահանցագործի նկատմամբ դատավճիռ կայացնելու լիազորություն, ինչպես այժմ, այնպես էլ նախկինում, պարտավոր է հաշվի առնել յուրաքանչյուր գործում առկա փաստերը, ներառյալ, իհարկե, պայմանական վաղաժամկետ ազատ արձակման կասեցումը կամ դրա իրավունքից զրկումը, և պարտավոր է իր հայեցողությամբ, օրենքով սահմանված նվազագույն և առավելագույն պատժամիջոցների ընդունված սանդղակով, որոշել պատժի չափը:

¶ 13. Այս նկատառումները հանգեցնում են այն եզրակացության, որ հնարավոր չէ պնդել, թե փաստորեն կամ իրավաբանորեն ենթադրյալ տուժողը զրկվել է «ավելի մեղմ» պատժի արտոնությունից, ինչի իրավունքը նա կունենար սույն դաշնագրով¹²:

[15.09] Վերոշարադրյալ գործերում ՄԻԿ-ը հավատարիմ մնաց իր սովորական գործելակերպին, ըստ որի՝ իրավական հարցերը կոմիտեն վճռում է միայն այնքանով, որքանով փաստերն են ստեղծում դրա

¹² «Չոհի» պահանջի վերաբերյալ, ընդհանուր առմամբ, տես գլուխ 3-ը:

անհրաժեշտությունը՝ համաձայն ՄԻԿ-ի մեկնաբանության¹³։ Հետևաբար, մի շարք կարևոր հարցեր մնում են անպատասխան։ Օրինակ՝ կարևոր է իմանալ հետադարձ գործողությամբ «ավելի մեղմ պատիժներ» կիրառելու հարցում մասնակից պետության ժամանակային սահմանափակումները։ Օփսալը և դե Ջայասը [Opsahl and de Zayas] նշում են, որ հենց 15-րդ հոդվածի 1-ին կետում ժամանակի որևէ սահմանափակում չկա¹⁴։ Այնուամենայնիվ, որևէ ժամանակային սահմանափակում կիրառելը պարտադիր է, այլապես 15-րդ հոդվածի 1-ին կետը կստեղծի մի ծանրաբեռնող պարտականություն, որն անտեղի կխանգարի օրենսդրական բարեփոխումների անցկացումը։ «Ազգային օրենսդիրը չպիտի բախվի հետևյալ անախորժ խնդրին. ընտրություն անել որևէ ավելի մեղմ պատիժ չսահմանելու և անցյալն առանց սահմանափակման վերաբացելու միջև»¹⁵։ Ուստի Օփսալը և դե Ջայասն առաջարկում են¹⁶։

... դրա նվազագույն ընդգրկումը պետք է լինի այնպիսին, որ կիրառելի լինի քննության ընթացքում գտնվող գործերի նկատմամբ նախքան վճռի կայացումն առաջին ատյանի դատարանում։ Թվում է՝ բաց է այն հարցը, թե արդյոք դա կիրառելի՞ է նաև այն դեպքերում, երբ օրենքը փոփոխվել է նախքան վերջնական վճռի կայացումը և վերաքննիչ բողոքի ներկայացումից հետո, սակայն այս հարցում ցանկացած դժվարություն դեռևս կառավարելի է։ Վերջնական վճռի կայացումից հետո այն կարող է կիրառվել միայն որպես նշանակված պատժի վերանայման իրավունքի ընձեռում։ Նման իրավունքի իրականացման հարցում գործնական դժվարությունները զգալիորեն կավելանան, գոնե այն դեպքերում, երբ պատիժն արդեն իսկ կիրառվում է, կամ այն կրում են։

Նույն նկատառումները չեն ծագում՝ կապված հետադարձ գործողությամբ ավելի խիստ պատիժների նշանակումն արգելելու հետ։ Նման պարտականության ժամանակային սահմանափակումը հստակ է. ավելի խիստ պատիժը կարող է կիրառվել միայն դրա ընդունումից հետո կատարված հանցագործությունների դեպքում¹⁷։

[15.10] Մեկ այլ խնդիր է առաջանում «ավելի մեղմ» և «ավելի խիստ» պատիժների մեկնաբանման կապակցությամբ։ Հեշտ է որոշել պատժամիջոցների համեմատական խստությունը, եթե դրանք միևնույն տեսակի են։ Երկու տարվա բանտարկությունն ակնհայտորեն ավելի խիստ պատիժ է, քան մեկ տարվա ազատազրկումը։ Այսուհանդերձ, դժվարություն կարող է ծագել տարբեր տեսակի պատժամիջոցների համեմատական խստությունը գնահատելիս։ Արդյոք խոշոր տուգանքը պակաս խիստ պատիժ է, քան կարճաժամկետ բանտարկությունը։ Այս հարցի պատասխանը կարող է կախված լինել դատապարտվող անձի անհատական հանգամանքներից¹⁸։ Իհարկե, որոշ հանգամանքներում ճիշտ կլինի ՄԻԿ-ից ակնկալել, որ նա ենթադրություն անի մի պատժամիջոցի համեմատ մյուսի առավել խիստ լինելու վերաբերյալ, օրինակ, եթե մահապատիժը պետք է փոխարինի պատժի մեկ այլ տեսակով¹⁹։

Հոդված 15(2)

[15.11] 15-րդ հոդվածի 2-րդ կետը բովանդակում է 15-րդ հոդվածի 1-ին կետի մի ակնհայտ բացառություն. բացառյալ թույլատրում է մարդկանց դատը և դատապարտումը միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների ոտնահարումների մեղադրանքով՝ անկախ տվյալ ներպետական օրենսդրության մեջ նման գործողությունների քրեական կարգավիճակից։ 15-րդ հոդվածի 2-րդ կետի թիրախը հստակ այն անձինք են, ովքեր կատարել են միջազգային մարդասիրական իրավունքի լրջագույն խախտումներ, ինչպիսիք են պատերազմական հանցագործությունները կամ մարդկության դեմ հանցանքները²⁰։

¹³ Օփսալ և դե Ջայաս, տես վերը, ծմբ. 6, էջ 242։

¹⁴ Նույն տեղում, էջ 245։

¹⁵ Նույն տեղում, էջ 247։ Տե՛ս նաև էջ 245։

¹⁶ Նույն տեղում, էջ 248։ Տե՛ս նաև Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 279։

¹⁷ Տե՛ս Օփսալ և դե Ջայաս, վերը, ծմբ. 6, էջ 252։

¹⁸ Տե՛ս Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 278։

¹⁹ Օփսալ և դե Ջայաս, վերը, ծմբ. 6, էջ 249-50։

²⁰ Տե՛ս H.A.N. Muhammed, 'Due Process of Law for Persons Accused of Crime', in L. Henkin (ed), *The International Bill of Rights* (Columbia University Press, New York, 1981), 164։ Տե՛ս նաև «Պոլյուկովիչն ընդդեմ Ավստրալիայի համագործակցության» (*Polyukhovich v Commonwealth of Australia*, 1991) 172 CLR 501, Ավստրալիայի Բարձր դատարանի [High Court of Australia] վճիռ, որը վերաբերում է Եվրոպայում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կատարված պատերազմական հանցագործությունների քրեականացմանն Ավստրալիայում հետադարձ գործողությամբ։

Այսուհանդերձ, 15-րդ հոդվածի 1-ին կետը նույնպես կարծես թե թույլատրում է նման դատավարություններ և դատապարտումները, քանի որ արգելում է միայն անձանց դատավարություններ և դատապարտումներ այնպիսի գործողությունների կամ բացթողումների համար, որոնք չեն քրեականացվել թե՛ ներպետական, թե՛ միջազգային իրավունքում: Իսկապես, 15-րդ հոդվածի 1-ին կետում «միջազգային իրավունքի» հիշատակումը հավանաբար ավելի հեռուն է գնում, քան 2-րդ կետում սահմանված բացառությունը, քանի որ կարող է հղում անել ընդհանուր և սովորական միջազգային իրավունքին, ինչպես նաև միջազգային պայմանագրային իրավունքին²¹:

[15.12]

«BAUMGARTEN v GERMANY, 960/00»
(BAUMGARTEN v GERMANY, 960/00)

1979-1990 թթ. հեղինակը եղել է նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության (ԳԴՀ, Արևելյան Գերմանիա) պաշտպանության փոխնախարարը և սահմանապահ զորքերի հրամանատարը: 1996 թ. սեպտեմբերին (միավորված) Գերմանիայի դատարանները նրան դատապարտել են «մարդասպանության և մարդասպանության փորձի մի քանի դեպքերի համար, որ տեղի են ունեցել 1980-1989 թթ. ժամանակահատվածում»: Հեղինակին մեղավոր են ճանաչել ԳԴՀ-ից Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն (ԳՖՀ, Արևմտյան Գերմանիա), ներառյալ՝ Արևմտյան Բեռլին փախչելու փորձ կատարած և ԳԴՀ-ի սահմանապահների կողմից գնդակահարված կամ ականների վրա պայթած անձանց մահվան կամ նրանց նկատմամբ սպանության փորձեր կատարելու համար: Հեղինակը 1979-1990 թթ. ստորագրել է բազմաթիվ հրամաններ՝ լիազորելով սահմանապահների կողմից նման ուժի կիրառումը, եթե դա անհրաժեշտ է սահմանի անօրինական հատման դեպքերի կանխարգելման համար: Նպատակը եղել է սահմանն անցնելու դեպքերի կանխումը, ոչ թե սահմանն անցնող անձանց սպանությունը: Անխուսափելիորեն նման ուժի կիրառման հետևանքով բազմաթիվ մարդիկ են մահացել:

Հեղինակը պնդում էր, որ ԳԴՀ-ի օրենսդրությունը, որն ուժի մեջ է եղել 1979-1990 թթ., իրեն ազատել է մահվան դեպքերի և սպանության փորձերի համար դատապարտվելուց: Հեղինակը նկարագրել է ԳԴՀ-ի այն համապատասխան օրենքները, որոնք ուժի մեջ են եղել սպանությունների և սպանության փորձերի ժամանակ. նկարագրությունն ամփոփված է հետևյալ կերպ: ԳԴՀ-ի քրեական իրավունքն արգելում էր դիտավորյալ և ոչ դիտավորյալ սպանությունները: Ի լրումն՝ ԳԴՀ-ի քրեական օրենսգրքի 95-րդ բաժնի համաձայն, այն անձինք, ովքեր ոտնահարել են «մարդու կամ հիմնարար իրավունքները [և/կամ] միջազգային պարտավորությունները», իրավունք «չունեն որպես արդարացում վկայակոչելու ստատուտային իրավունքը, որևէ հրաման կամ հրահանգ. նման անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության»: Մյուս կողմից՝ քրեական օրենսգրքի (ԳԴՀ-ի) 258-րդ հոդվածի համաձայն, զինված ուժերի ներկայացուցիչները չէին կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այնպիսի արարքների համար, որոնք «գործել են ի կատարումն վերադասի արձակած հրամանի, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ հրամանի կատարումը բացահայտ ոտնահարում է միջազգային հասարակական իրավունքի ճանաչված կանոնները կամ քրեական օրենքը»: Իհարկե, հրազենի օգտագործումը կարգավորվում էր ԳԴՀ-ի օրենքներով: «Ժողովրդական ոստիկանության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում էր, որ հրազենի օգտագործումն արդարացվում է «ծանր հանցագործության» կատարումը կանխելու դեպքում: ԳԴՀ-ի օրենքներով սահմանի անօրինական անցումը որոշ դեպքերում (օրինակ՝ «Սահմանի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն) որակվել է որպես ծանր հանցագործություն: Ականապատումը չէր կարգավորվում օրենքով: Փոխարենը՝ սահմանի վրա ականապատումը լիազորվում էր «մի շարք կանոնակարգերով և հրամաններով, որոնք նախատեսում էին սահմանային կառույցների ապահովության երաշխավորում ականների միջոցով», ինչպես նաև, անշուշտ, հրազենի օգտագործման միջոցով²²:

Հեղինակը հավելեց հետևյալը.

²¹ Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 276: Այնուամենայնիվ, տե՛ս նաև էջ 281-ը, որտեղ Նովակը նշում է, որ միջազգային համաձայնագրերի մեծ մասն արգելում է հետադարձ գործողության կիրառումը:

²² Պարբ. 3.6:

¶ 3.10. ԳԴՀ-ում սահմանապահ գործերի որևէ ծառայող երբևէ չի դատապարտվել հրազենի կիրառման հրաման տալու կամ նման հրաման կատարելու համար:

Յեղիմակի կողմից 15-րդ հոդվածով ներկայացված բողոքը հետևյալն է.

¶ 5.1. Յեղիմակը պնդում է, որ ինքը տուժել է դաշնագրի 15-րդ և 26-րդ հոդվածների ոտնահարումից, որովհետև իրեն դատապարտել են այնպիսի գործողությունների համար, որոնք իրականացվել են ծառայողական պարտականություններ կատարելիս, ինչը ԳԴՀ-ի օրենքներով կամ միջազգային իրավունքով քրեական հանցագործություն չի համարվել:

¶ 5.2. Ինչ վերաբերում է դաշնագրի 15-րդ հոդվածի հայտարարվող ոտնահարմանը, հեղիմակը պնդում է, որ դատապարտելով իր գործողությունները՝ մասնակից պետության դատարանները ԳԴՀ-ի համապատասխան օրենսդրությունը զրկեցին իր նախնական իմաստից՝ փոխարինելով այն արդարության իրենց ընկալմամբ: Նա պնդում է, որ դատարանների բերած հիմնավորումը հանգում է մի անհեթեթ հայտարարության, թե Արևելյան Գերմանիայի խորհրդարանը զինված ուժերի ծառայողներին ենթարկել է կրկնակի վտանգի՝ ընդունելով այնպիսի քրեական օրենքներ, որոնք նրանցից պահանջում էին կատարել իրենց ծառայողական պարտականությունները, և միաժամանակ քրեականացնում են այդ կատարումը՝ վերջին հաշվով միայն այն նպատակով, որ իրավական հիմնավորումների միջոցով կանխեն նման պարտականությունների իրագործման համար դատական հետապնդումը: Յեղիմակը հայտարարում է, որ ծառայողական պարտականությունների կատարումը ԳԴՀ-ի իրավունքի շրջանակներում երբեք չի համարվել քրեական հանցագործություն, քանի որ այն չի հակասել հասարակության շահերին, ինչպես պահանջվում է (ԳԴՀ-ի) քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ:

Ընդհակառակը՝ պետական սահմանների պաշտպանությունը կարգավորող ծառայողական կանոնակարգերը կամ հրամանները չկատարելն ինքնին հանգեցնում էր քրեական պատասխանատվության, իսկ միակ բացառությունն այն դեպքերն էին, երբ տվյալ հրամանը բացահայտորեն ոտնահարում էր միջազգային հասարակական իրավունքի ճանաչված կանոնները կամ քրեական օրենքը (ԳԴՀ-ի քրեական օրենսգրքի 258-րդ հոդված):

¶ 5.3. Յեղիմակը պնդում է, որ միջազգային իրավունքը չի արգելել ականապատումը երկու այնպիսի ինքնավար պետությունների բաժանարար սահմանի երկայնքով, որոնք, առավել ևս, արտահայտել են պատմության ընթացքում գոյություն ունեցած երկու խոշորագույն ռազմական դաշինքների միջև բաժանարար գիծը և տեղադրվել են Վարշավայի դաշնագրի գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով: Նա նշում է, որ ականներն օգտագործվել են միայն ռազմականացված գոտիներում, հստակ մատնանշված են եղել զուշացման նշաններով, և պատահականորեն դրանց բախվելը կանխվել է բարձր ցանկապատերի միջոցով: Ապա հեղիմակը պնդում է, որ 1983 թ. ԳԴՀ-ի երկրորդ հերթական զեկույցը քննարկելիս կոմիտեն եզրակացրել է, որ Արևելյան Գերմանիայի սահմանի վերահսկողության համակարգը համապատասխանում է դաշնագրին:

¶ 5.4. Ավելին՝ հեղիմակը փաստարկում է, որ քրեական դիտավորությունը պահանջում է որոշակի հիմնական սոցիալական նորմերի բացահայտ և միտումնավոր արհամարհում, ինչը, ակնհայտորեն, տեղի չի ունեցել այն դեպքերում, երբ անձը կատարել է սեփական ծառայողական պարտականությունները:

¶ 5.5. Ըստ հեղիմակի՝ այն ժամանակահատվածում, երբ 1990 թ. հոկտեմբերի 3-ին ուժի մեջ է մտել Գերմանիայի Միավորման համաձայնագիրը [Unification Treaty], գոյություն չի ունեցել իր գործողությունների դատական հետապնդման որևէ հիմք: ԳԴՀ-ի իրավական համակարգը չէր նախատեսում քրեական պատասխանատվություն սոսկ բնական իրավունքի հայեցակարգերի հիման վրա, որը որևէ հիմք չի ունեցել ԳԴՀ-ի պոզիտիվ իրավունքում: Երբ ԳՖՀ-ն համաձայնեց Միավորման համաձայնագրում ներառել իր քրեական իրավունքի հետադարձ կիրառման արգելման դրույթը, նա այդպես վարվեց երկու գերմանական պետությունների միավորման պատմականորեն բացառիկ հնարավորության լույսի ներքո՝ ընդունելով, որ արդարադատության սեփական հայեցակարգերը չէին կարող կիրառվել նախկին ԳԴՀ-ում իրականացված գործողությունների նկատմամբ: Յեղիմակը եզրակացնում է, որ իր դատապարտման իրավական հիմքերը Միավորման համաձայնագրում թերի են եղել:

¶ 5.6. Ինչ վերաբերում է դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետում «միջազգային իրավունքի» հիշատակմանը և 15-րդ հոդվածի 2-րդ կետում առկա սահմանափակող նորմին, ապա հեղիմակը հայտարարում է, որ կատարման ժամանակ իր գործողությունները քրեական բնույթ չեն կրել ո՛չ միջազգային իրավունքի և ո՛չ էլ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների տեսանկյունից:

Մասնակից պետությունն առարկեց.

¶ 6.2. Ինչ վերաբերում է դաշնագրի 15-րդ հոդվածի հայտարարվող խախտմանը, ապա մասնակից պետությունը հիշեցնում է, որ Բեռլինի տարածաշրջանային դատարանը չի որոշել, որ հեղիմակի գործողությունները, դրանց կա-

տարման ժամանակ, պատժելի են եղել ՊՌՀ-ի օրենսդրությամբ: Մասնակից պետությունը բազմիցս մեջբերում է դաշնային դատարանի մի ուղենշային վճիռ, որին հղում կա նաև Բեռլինի շրջանային դատարանի վճռում: Այդ վճռի համաձայն՝ 27-րդ հոդվածի 2-րդ կետում առկա «Սահմանի մասին» օրենքի իրավական հիմնավորումը, ինչպես դա արվել է ՊՌՀ-ի պետական պրակտիկայում, օրենքի գործադրման ժամանակ պետք է մատնվի անուշադրության, քանի որ այն ոտնահարել է արդարադատության և մարդասիրության հիմնարար գաղափարները մի այնպիսի անթույլատրելի ձևով, որ պոզիտիվ իրավունքը պետք է տեղը զիջի արդարադատությանը (այսպես կոչված՝ «Ռադբրուխի բանաձևը» [*Radbruch formula*]): Եական արդարադատության հետ հակասությունը գնահատելիս դատարանը հղում է կատարում դաշնագրին, մասնավորապես՝ 6-րդ և 12-րդ հոդվածներին՝ որպես գնահատման «ավելի որոշակի չափանիշների»՝ եզրակացնելով, որ ՊՌՀ-ի սահմանափակող անցագրային քաղաքականությունը չի համապատասխանել դաշնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետում ներառված սահմանափակումների դրույթին, քանի որ սեփական երկիրը լքելու ազատության նախատեսվող բացառությունները դարձրել է ընդհանուր կանոն՝ այդպիսով արհամարհելով երկու պետություններում բնակվող գերմանացիների միջև գոյություն ունեցած մոտ հարաբերությունները, ովքեր պատկանել են միևնույն ազգությանը: Նույն կերպ, դատարանը վճռեց, որ հրազենի կիրառումը սահմանախախտների նկատմամբ, իր անմասնադատ կատարելությամբ, հակասել է 6-րդ հոդվածին, քանի որ ինքնին համարժեք չի եղել ապօրինի նպատակին՝ զսպել երրորդ անձանց կողմից առանց լիազորագրի սահմանի հատումը: Այս հիմնավորմամբ դատարանը որոշեց, որ «Սահմանի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետը, որպես արդարացման հիմք, պետք է հաշվի չառնվի, որովհետև ՊՌՀ-ն ինքը պետք է այդ դրույթը մեկնաբանած լիներ սահմանափակ իմաստով՝ իր միջազգային պարտավորությունների, իր սահմանադրական նորմերի և սահմանադրության 30-րդ հոդվածի 2-րդ կետում ու «Սահմանի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված իրավաչափության սկզբունքի հիման վրա: Դատարանի կարծիքով՝ 27-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասությունը պետք է մեկնաբանվի հետևյալ կերպ. «Սահմանապահ իրավունք ունի փախուստի կանխման նպատակով հրազեն կիրառելու այդտեղ հիշատակված դեպքերում, սակայն արդարացման հիմնավորումը հասավ իր սահմանին, երբ սպանելու պայմանական կամ ոչ պայմանական միտումով կրակոցներ էին արձակվել մի փախստականի վրա, ով տվյալ իրավիճակում եղել է անզեն և նաև որևէ այլ կերպ վտանգ չի ներկայացրել այլոց կյանքին և առողջությանը»:

¶ 6.3. Մասնակից պետությունը վկայակոչում է մեկ այլ վճիռ, որում դաշնային դատարանը հիշատակել է, որ ՊՌՀ-ն մշտապես հայտարարել է, որ ընդունել է Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքները, և ՊՌՀ-ի սահմանադրության 91-րդ հոդվածը հռչակում էր, որ մարդկության դեմ գործած հանցանքների և պատերազմական հանցագործությունների համար պատիժների վերաբերյալ միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող կանոնները ուղղակիորեն կիրառելի օրենք են: Մասնակից պետությունը երկու վճիռներից էլ եզրակացնում է, որ դաշնային դատարանը չի հենվել միջազգային իրավունքի վրա, այլ իր գնահատականն այն մասին, որ հեղինակի գործողությունները եղել են պատժելի, բխեցրել է ՊՌՀ-ի ներպետական իրավունքից: Այն փաստը, որ այս օրինազանցությունները չեն դատապարտվել ՊՌՀ-ում, չի նշանակում, որ դրանք չեն եղել քրեական հանցագործություններ:

¶ 6.4. Մասնակից պետությունը հիշատակում է այդ խնդրի վերաբերյալ դաշնային սահմանադրական դատարանի ուղենշային վճիռը, որն ընդգծում էր, որ չպատժվելու օրինական ակնկալիքի բացակայության պայմաններում հիմնական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ կետում քրեական օրենքների հետադարձ կիրառման արգելումը կիրառելի չէր այնպիսի իրավիճակներում, երբ մյուս պետությունը (ՊՌՀ-ն) օրենքով նախատեսել էր քրեական հանցագործություն հասկացությունը տարածել ամենածանր քրեական ապօրինությունների վրա, բայց միաժամանակ բացառել էր քրեական պատասխանատվությունը արդարացման ամրագրված նորմերից դուրս հիմքերով, դրդել էր նման ապօրինություններ կատարելու և ոտնահարել միջազգային հանրության կողմից ճանաչված մարդու իրավունքները: Հանուն էական արդարադատության, հոդված 103-ի 2-րդ կետի խստիվ կատարումը պետք է դադարեցվեր: Այլապես Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում քրական արդարադատության իրականացումը հակասության մեջ կհայտնվեր իր սեփական օրենքի գերակայության նախադրյալների հետ: Չնայած ներգերմանական սահմանին հրազենի օգտագործման վերաբերյալ ՊՌՀ-ի իրավական նորմերի ձևակերպումը համապատասխանում էր ուժի կիրառման մասին ԳՖՀ-ի իրավական նորմերին, ՊՌՀ-ի գրված օրենքները, փաստորեն, ստվերվեցին քաղաքական նպատակահարմարության պահանջներով, որոնք անձի կյանքի իրավունքը ստորադասել են պետության շահին, այն է՝ կանխել իր սահմանների անօրինական հատումը: Սահմանին կատարված սպանությունների որևէ ընդունելի հիմնավորման բացակայության պայմաններում հեղինակի գործողությունների նկատմամբ կիրառվել է քրեական օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներում ընդգրկված մարդասպանության սահմանումը:

¶ 6.5. Մասնակից պետությունը հիշատակում է, որ համաձայն կոմիտեի նախադեպային իրավունքի՝ հիմնականում մասնակից պետության դատարանները և իշխանությունները պետք է մեկնաբանեն և կիրառեն ներպետական իրավունքը: Եթե, սակայն, նման մեկնաբանումը կամ կիրառումը կամայական է, կոմիտեն իրավունք ունի միջամտելու: Գերմանիայի դատարանների՝ հեղինակին վերաբերող վճիռները, այնուամենայնիվ, կամայական չէին:

¶ 6.6. Մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրի 15-րդ հոդվածը կիրառելի է միայն այն դեպքում, եթե տվյալ անձը օրենքի ձևակերպումից տրամաբանորեն չի կարող հավաստիանալ, որ իր գործողությունները պատժելի են,

և չի կարող կանխատեսել, որ իր գործողությունների համար ինքը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Եթե նկատի առնվի հեղինակի՝ որպես ուսյալ և որակյալ բարձրաստիճան «ռազմական գիտնականի» դիրքը, ապա նրա համար պետք է ակնհայտ լիներ, որ իր հրամանները հակասում են դաշնագրի 6-րդ և 12-րդ հոդվածներին, և նա կարող էր հետապնդվել իր գործողությունների համար, եթե ԳԴՀ-ում գոյություն ունեցող քաղաքական հանգամանքները փոխվեին: ...

¶ 6.8. Մասնակից պետությունը եզրակացնում է, որ համաձայն կոմիտեի թիվ 6 Ընդհանուր մեկնաբանության, ինչպես նաև կոմիտեի անփոփոխ նախադեպային իրավունքի, պետությունը դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետով իրավական պարտավորություն է ստանձնել դատական հետապնդման և դատապարտման ենթարկել նրանց, ովքեր նախկին ԳԴՀ-ի քաղաքացիներին զրկել են կյանքից²³: Ի լրումն՝ պետությունը պնդում է, որ հեղինակի դատապարտումը կարող էր տեղի ունենալ դաշնագրի 15-րդ հոդվածի 2-րդ կետով, եթե նրա գործողությունները իրական ժամանակում լինեին քրեական՝ համաձայն միջազգային հանրության կողմից ճանաչված արդարադատության ընդհանուր սկզբունքների: Այս առումով մասնակից պետությունն ընդգծում է «Նյուրնբերգյան սկզբունքների» [Nuremberg Principles] և «Ռադբրուքի բանաձևի» [Radbruch formula] միջև գոյություն ունեցող կապը և փաստարկում է, որ սահմանի վերահսկողության համակարգը հանգեցրել է մարդու իրավունքների լրջագույն ոտնահարումների:

Յեղիմակն առարկեց.

¶ 7.4. Յեղիմակն ընդունում է, որ ԳԴՀ-ն կաշկանդված էր դաշնագրով ստանձնած իր իրավական պարտավորություններով: Այսուհանդերձ, քանի որ ինքը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, նույնական չի եղել ԳԴՀ-ի հետ, դաշնագիրը չէր կարող իր համար իրավունքներ կամ պարտականություններ նախատեսել, առավել ևս՝ ԳԴՀ-ի ներպետական իրավունքի մեջ այդ իրավական գործիքի ներառման բացակայության պայմաններում հաստատել իր քրեական պատասխանատվությունը: Յեղիմակն նշում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի [European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms] 2-րդ հոդվածի (բ) կետի համաձայն՝ կյանքից զրկումը չի ոտնահարում մարդու կյանքի իրավունքը, երբ այն ուժի կիրառման հետևանք է, որը միանգամայն անհրաժեշտ է օրինական ձերբակալություն իրականացնելու կամ օրինական կալանքի տակ գտնվող անձի փախուստը կանխելու համար:

¶ 7.5. Յեղիմակն պնդում է, որ ներգերմանական սահմանում ականապատումը կանխարգելիչ ռազմական միջոցառում էր՝ ուղղված ՆԱՏՕ-ի ուժերի կողմից հնարավոր հարձակման դեմ: Նա ժխտում է, թե ականները նախատեսված էին մարդկանց սպանելու համար: Ընդհակառակը՝ դրանք առանձնացվել էին ցանկապատերով և տեղադրվել էին հստակ տեսանելի նախազգուշացնող նշաններ, որպեսզի կանխվի սահմանախախտների մուտքը ականապատ գոտիներ: Ոչ ոք չէր ստիպում սահմանախախտներին մտնել ականապատ դաշտեր, որոնց վտանգը հայտնի էր նրանց: Յեղիմակն հիշեցնում է, որ սահմանապահներից երբեք չի պահանջվել չափից դուրս օգտագործել իրենց հրազենը: Սահմանախախտները միշտ նախազգուշացվել են կանգ առնելու կոչերով և առնվազն նախազգուշական կրակոցով: Նրանք միշտ էլ կարող էին դադարեցնել սահմանը հատելու իրենց փորձերը՝ կրակոցի թիրախ չդառնալու համար. կրակոցները միշտ ուղղված են եղել ոտքերին: Ըստ հեղինակի՝ սահմանը հատելու փորձ ձեռնարկած մարդկանց մահվան դեպքերը ավելի շուտ բացառություն են, քան տարածված կանոն:

¶ 7.6. Յեղիմակն պնդում է, որ հրամանների բարդ շղթայի պատճառով զինված ուժերի որևէ բարձրաստիճան պաշտոնյա երբեք չի կարող անմիջականորեն վերահսկել հրազենի օգտագործումը յուրաքանչյուր առանձին դեպքում, այլ նրա դերը սահմանափակվում է նման օգտագործման համար պահանջների սահմանմամբ, որոնք պետք է պահպանվեն յուրաքանչյուր զինվորի կողմից: Չնայած հրազենի օգտագործումը հաճախ ենթադրում է կյանքին սպառնացող վտանգ, նման օգտագործման հրաման տալը չի կարող հավասարեցվել տվյալ անձի միտումնավոր սպանությանը: Ավելին՝ հեղինակը փաստարկում է, որ ինքը չի կարող պատասխանատվություն կրել ԳԴՀ-ի անցագրային քաղաքականության համար:

ՄԻԿ-ը պաշտպանեց մասնակից պետության փաստարկները և եզրակացրեց, որ 15-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել.

¶ 9.3. ... [Կ]ոմիտեն նշում է, որ դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետի ցանկացած խախտման որոշակի բնույթը պահանջում է, որ կոմիտեն ուսումնասիրի, թե արդյոք որևէ առանձին վերցված դեպքում տեղական դատարանների կողմից համապատասխան քրեական իրավունքի մեկնաբանումը և կիրառումը բացահայտում են հետադարձ գործողությամբ պատժի կամ որևէ այլ կերպ օրենքի վրա չհիմնված պատժամիջոցի արգելման ոտնահարում: Այսպես վարվելով՝ կոմիտեն կսահմանափակվի այն հարցով, թե արդյոք հեղինակի գործողությունները, դրանց կատարման

²³ Տե՛ս [8.02] և [8.09]ff:

իրական ժամանակ, եղե՞լ են բավարար չափով սահմանված քրեական հանցագործություններ՝ ըստ ԳԴՀ-ի քրեական իրավունքի կամ միջազգային իրավունքի:

¶ 9.4. Սպանությունները տեղի են ունեցել մի համակարգի համատեքստում, որը, փաստացի կերպով, ԳԴՀ-ի բնակչությանը գրկել է սեփական երկիրն ազատորեն լքելու իրավունքից: Այս համակարգը գործադրող իշխանությունները և անձինք պատրաստ են եղել գործադրելու մահացու ուժ, որպեսզի կանխեն անձանց կողմից սեփական երկիրը լքելու իրավունքի ոչ բռնի իրացումը: Կոմիտեն հիշեցնում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ մահացու ուժը կիրառվում է որպես վերջին միջոց, այն, դաշնագրի 6-րդ հոդվածի համաձայն, կարող է օգտագործվել միայն համարժեք սպառնալիք դիմագրավելու նպատակով: Ապա կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունները պարտավոր են կանխել իրենց սեփական անվտանգության ուժերի կողմից մարդկանց կամայական սպանությունները: Վերջապես, կոմիտեն նշում է, որ մահացու ուժի անհամաչափ կիրառումն այն ժամանակ, երբ հեղինակն արդեն կատարել է իր գործողությունները, ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների՝ քրեական է:

¶ 9.5. Մասնակից պետությունը ճիշտ է, երբ պնդում է, որ սպանությունները ոտնահարել են ԳԴՀ-ի՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ դաշնագրի 6-րդ հոդվածը: Ապա կոմիտեն պնդում է, որ այդ նույն պարտավորությունները պահանջում են այդ սպանությունների համար պատասխանատու լինելու մեջ կասկածվող անձանց դատական հետապնդում: Մասնակից պետության դատարանները եզրակացրել են, որ այս սպանությունները ոտնահարել են ԳԴՀ-ի քրեական օրենսգրքի մարդասպանության մասին դրույթները: Այդ դրույթները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն իրավունքի համապատասխան նորմերի համատեքստում, ինչպիսիք են քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածը, որը մարդու իրավունքների ոտնահարումների դեպքում բացառում է օրենքով պաշտպանությունը (տե՛ս կետ 3.3) և «Սահմանի մասին» օրենքը, որը կարգավորում էր սահմանի վրա ուժի կիրառումը (տե՛ս կետ 3.5): Մասնակից պետության դատարանները «Սահմանի մասին» օրենքի՝ ուժի կիրառման վերաբերյալ դրույթները մեկնաբանել են այնպես, որ մարդասպանություն հանցագործության բովանդակությունը ներառում է մահացու կամ հնարավոր մահացու ուժի անհամաչափ կիրառումը՝ մարդու իրավունքներին առնչվող այդ պարտավորությունների խախտմամբ: Հետևաբար, «Սահմանի մասին» օրենքի դրույթները չեն խանգարել, որ դատարաններն այդ սպանությունները համարեն քրեական օրենսգրքի՝ մարդասպանության վերաբերյալ դրույթները ոտնահարող: Կոմիտեն չի կարող համարել, որ օրենքի նման մեկնաբանումը և դրա հիման վրա հեղինակի դատապարտումը հակասել են դաշնագրի 15-րդ հոդվածին:

Բաունգարտենի [Baumgarten] գործով ՄԻԿ-ը ի վերջո պաշտպանեց Գերմանիայի դատարաններում կայացված եզրակացությունն այն մասին, որ ԳԴՀ-ի սահմանի վրա կատարված սպանությունները և սպանության փորձերը համապատասխան ժամանակահատվածում ԳԴՀ-ի օրենքներով քրեականացվել են: Այն փաստը, որ ԳԴՀ-ի օրենքները չեն գործադրվել այնպես, որ մարդկանց պատժեն սահմանի վրա կատարված սպանությունների համար, համարվեց գործին չվերաբերող հանգամանք: Հետևաբար, 15-րդ հոդվածի 1-ին կետով որևէ խնդիր չի ծագել: Եթե ՄԻԿ-ը եզրակացներ, որ ԳԴՀ-ի օրենքները, տվյալ հանգամանքներում, հեղինակին իսկապես ազատում են քրեական պատասխանատվությունից, ապա հավանաբար պիտի եզրակացներ նաև, որ հեղինակի դատապարտումը համապատասխանում է դաշնագրին՝ 15-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա:

Եզրակացություն

[15.13] 15-րդ հոդվածում ներառված պարտականությունների վրա լույս սփռող նախադեպային իրավունքը սահմանափակ է: Կանադայի վաղաժամկետ պայմանական ազատ արձակման կարգի փոփոխությունները առաջ բերեցին կամընտիր արձանագրությամբ դիտարկվող մի շարք հայցեր և որոշակի բանավեճ 15-րդ հոդվածում ներառված «պատիժ» բառի իմաստի շուրջ: Երկար ընդմիջումից հետո, երբ 15-րդ հոդվածով որևէ հայց չներկայացվեց, 15-րդ հոդվածը կրկին դիտարկվեց «*Բաունգարտենն ընդդեմ Գերմանիայի*» (*Baumgarten v Germany*, 960/00) կարևոր գործում: Այդ գործի ամենահետաքրքիր կողմը ՄԻԿ-ի քննարկումն է ներպետական և միջազգային իրավունքների փոխհարաբերությունների շուրջ:

Հետգրություն

Շեղումների վերաբերյալ թիվ 29 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը 15-րդ հոդվածի մասին նշում է, որ այն ներառում է պահանջ, ըստ որի՝ «քրեական պատասխանատվությունը և պատիժը պետք է սահմանափակվեն տվյալ գործողության կամ անգործության ժամանակ առկա և կիրառելի օրենսդրության հստակ և ճշգրիտ դրույթներով»²⁴: Այդ իսկ պատճառով քրեորեն պատժելի վարքագիծն անհրաժեշտ է սահմանել և դրա համար պատիժ նախատեսել «բավարար ճշգրտությամբ, որպեսզի կանխվի կամայական իրավակիրառությունը»²⁵: ՄԻԿ-ն իր վերջերս հրապարակած եզրափակիչ դիտարկումներում անհամգստություն է հայտնել հակաահաբեկչական օրենսդրության մշակման ճշգրտության առնչությամբ: Օրինակ՝ Իսրայելի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է²⁶:

14 Կոմիտեն մտահոգված է Իսրայելի օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում տրված սահմանումների անհստակությամբ: Չնայած դրանց կիրառությունը ենթակա է դատական վերանայման, դրանք մի շարք առումներով հակասում են օրինականության սկզբունքին՝ դրույթների երկիմաստ ձևակերպումների և ի վնաս պատասխանողի՝ մի շարք ապացուցողական նշանակության կանխավարկածների օգտագործման պատճառով: Սա վնասակար հետևանքներ է ունենում դաշնագրի 15-րդ հոդվածով պաշտպանված իրավունքների համար, որից, համաձայն դաշնագրի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության, շեղում չի թույլատրվում: Մասնակից պետությունը պետք է ապահովի, որ ահաբեկչական գործողությունների դեմ մշակված միջոցները լիովին համապատասխանեն դաշնագրին՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք ընդունվել են Անվտանգության խորհրդի թիվ 1373 (2001) բանաձևի կապակցությամբ, թե՞ ընթացող զինված հակամարտության համատեքստում:

Անշուշտ, հարցը կարևոր է, քանի որ մեծ թվով պետություններ հակաահաբեկչական օրենքներ են ընդունել կամ վերանայել՝ ի պատասխան 2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում և Վաշինգտոնում տեղի ունեցած հարձակումների:

²⁴ Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 7:

²⁵ UN, *Digest of Jurisprudence of the United Nations and Regional Organizations on the Protection of Human Rights while Countering Terrorism*, (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ HR/PUB/03/1, էջ 66:

²⁶ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/ISR (2003); տե՛ս նաև եզրափակիչ դիտարկումներ էստոնիայի վերաբերյալ, (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/77/EST, պարբ. 8:

Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք. հոդված 17

- Անձնական կյանքի անձեռնմխելիության իմաստը [16.01]
- 17-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության սահմանափակումներ.
Ի՞նչ է նշանակում «կամայական կամ անօրինական միջամտություն».....[16.08]
- Պետության՝ անձնական կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու նպատակով
դրական միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը[16.17]
- Անձնական կյանքի անձեռնմխելիության յուրահատկություններ[16.20]
 - Ընտանիք և բնակարան[16.20]
 - Նամակագրություն [16.23]
 - Խուզարկություններ..... [16.27]
 - Պատիվ և հեղինակություն[16.30]
 - Սեռական կյանքի անձեռնմխելիություն[16.35]
 - Տվյալների պաշտպանություն[16.39]
 - ԴՆԹ-ի ստուգում[16.40]
 - Գաղտնապահության մասնագիտական պարտականություններ[16.41]
- Եզրակացություն [16.42]

ՀՈՂՎԱԾ 17

1. Արգելվում է կամայական կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ:

2. Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվածության իրավունք:

Անձնական կյանքի անձեռնմխելիության իմաստը

[16.01] Անձնական կյանքի անձեռնմխելիությունը մի եզրույթ է, որը հայտնի է իր սահմանման բարդությամբ¹: Այն դասակարգվել է որպես որոշակի ընտրություն, զործառույթ, ցանկություն, իրավունք, պայման և/կամ կարիք²: Անձնական կյանքի անձեռնմխելիությունը նաև սահմանվել է որպես անհատների՝ առանձնություն, մտերիմ հարաբերություններ, գաղտնիություն վայելելու, անանուն մնալու ցանկություն³: Ավելի լայն իմաստով՝ այն սահմանվել է որպես «մենակ մնալու իրավունք»⁴, իսկ ավելի նեղ իմաստով՝ սեփական անձի մասին տեղեկությունները վերահսկելու իրավունք⁵: Փոխհամաձայնեցված

¹ Տե՛ս, օրինակ՝ K. Gormley, “One Hundred Years of Privacy” [1992] *Wisconsin Law Review* 1335, at 1397:

² A. Bartzis, “Escaping the Panopticon”, unpublished LLM thesis, Monash University, 1997, 26:

³ J. Michael, “Privacy”, in D. Harris and S. Joseph (eds) *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), at 333:

⁴ S. D. Warren and L. D. Brandeis, “The Right to Privacy” (1890) 4 *Harvard Law Review* 193, 195:

⁵ A. F. Westin, *Privacy and Freedom* (Athenaeum, New York, 1967), 7, տե՛ս նաև C. Fried, “Privacy”, (1968) 77 *Yale Law Journal*, 475, 483:

սահմանում կարելի է համարել այն, որ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը ներառում է «ազատություն այնպիսի գործունեության նկատմամբ չլիազորված և չհիմնավորված միջամտություններից, որը հասարակությունը ճանաչում է որպես անհատական ինքնավարության ոլորտ»⁶: «Անհատական ինքնավարության ոլորտը» նկարագրվել է որպես «այն գործողությունների դաշտ, [որոնք] չեն դիպչում այլոց ազատությանը», որտեղ անձը կարող է առանձնապես մյուսներից՝ «սեփական կյանքն իր սեփական (եսակենտորն) ցանկությունների և ակնկալիքների համապատասխան ձևավորելու համար»⁷:

[16.02] Ինչ վերաբերում է ՔՔԻՄԴ-ին, ապա 17-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իմաստը դեռևս խորությամբ չի սահմանվել ո՛չ Ընդհանուր մեկնաբանության մեջ և ո՛չ էլ նախադեպային իրավունքում: Պրն Յերնդլը «*Քոերիելը և Աուրիկն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Coeriel and Aurik v The Netherlands*, 453/91) գործում անհամաձայնություն արտահայտող իր կարծիքում նշում է.

Կոմիտեն իրականում չի հստակեցրել «անձնական կյանքի անձեռնմխելիություն» հասկացությունը 17-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանության մեջ, որում նա փաստորեն զերծ է մնում այդ հասկացության սահմանումից: Իր Ընդհանուր մեկնաբանության մեջ Կոմիտեն փորձում է սահմանել 17-րդ հոդվածում օգտագործված մյուս բոլոր եզրույթները, ինչպիսիք են «ընտանիքը», «բնակարանը», «անօրինականը» և «կամայականը»: Ապա անդրադառնում է անձնական «պատվի» և «հեղինակության» պաշտպանությանը, որոնք նույնպես հիշատակված են 17-րդ հոդվածում, սակայն Կոմիտեն բաց է թողնում այդ հոդվածում ամրագրված հիմնական իրավունքի, այն է՝ «անձնական կյանքի անձեռնմխելիության» իրավունքի սահմանումը:

[16.03]

**«ՔՈԵՐԻԵԼԸ և ԱՈՒՐԻԿՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(COERIEL and AURIK v THE NETHERLANDS, 453/91)**

Այս գործում հեղինակները կրոնական պատճառներով ցանկացել էին փոխել իրենց ազգանունները. նրանք հայտարարել են, որ մասնակից պետությունը, հրաժարվելով իրենց դա թույլատրելուց, ոտնահարել է 17-րդ հոդվածը: Կոմիտեի անդամների մեծամասնությունը ընդունեց, որ տեղի է ունեցել դաշնագրի 17-րդ հոդվածի խախտում: Այն հարցի վերաբերյալ, թե արդյոք անձի ազգանունը և ինքնությունը գտնվում են «անձնական կյանքի անձեռնմխելիության» տիրույթում, Կոմիտեն արեց հետևյալ մեկնաբանությունները.

¶ 10.2. Առաջին հարցը, որը պետք է որոշի Կոմիտեն, այն է, թե արդյոք դաշնագրի 17-րդ հոդվածը պաշտպանում է անձի՝ սեփական անունն ընտրելու և փոխելու իրավունքը: Կոմիտեն նկատում է, որ 17-րդ հոդվածը նախատեսում է, ի թիվս այլոց, որ ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական կամ անօրինական միջամտության իր անձնական անձեռնմխելիությանը, ընտանեկան կյանքին, բնակարանին կամ մասնակազրությանը: Կոմիտեն համարում է, որ անձնական կյանքի անձեռնմխելիություն հասկացությունը վերաբերում է անձի կյանքի այն ոլորտին, որտեղ նա կարող է ազատորեն արտահայտել իր ինքնությունը՝ այլոց հետ հարաբերությունների մեջ մտնելով կամ մեկնալ: Կոմիտեի տեսանկյունից անձի ազգանունը սեփական ինքնության կարևոր բաղադրիչներից մեկն է, և անձնական կյանքի անձեռնմխելիությանը կամայական կամ անօրինական միջամտությունից անձի պաշտպանությունը ընդգրկում է սեփական անունն ընտրելու և փոխելու իրավունքի նկատմամբ կամայական կամ անօրինական միջամտությունից պաշտպանությունը: Օրինակ, եթե պետությունը բոլոր օտարերկրացիներին ստիպեր փոխել իրենց ազգանունները, ապա դա կլիներ մի միջամտություն, որը կհակասեր 17-րդ հոդվածին:

Կոմիտեն վերջին հարցին տվեց հաստատական պատասխան: Նրա՝ ըստ էության կայացրած որոշումն ուրվագծված է ստորև [16.15]:

⁶ S. E. Wilborn, "Revisiting the Public/Private Distinction: Employee Monitoring in the Workplace" (1998) 32 *Georgia Law Review*, 825, 833:

⁷ M. Nowak, *UN Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 288: Տե՛ս նաև F. Volio, "Legal Personality, Privacy, and the Family", in L. Henkin (ed), *The International Bill of Rights* (Columbia University Press, New York, 1981), որտեղ թվարկվում են անձնական կյանքի անձեռնմխելիության տարբեր կողմերը և բերվում են անձնական կյանքի անձեռնմխելիության ոտնահարման օրինակներ, էջ 193-5:

[16.04] *Քոերիելի և Աուրիկի [Coeriel and Aurik]* գործի շրջանակներում անհամաձայնություն արտահայտող իր կարծիքում պրն Ջերնդլը ավելի մանրակրկիտ ներկայացրեց 17-րդ հոդվածում ամրագրված՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իմաստը և ընդգրկումը:

17-րդ հոդվածը դաշնագրի անձնաանհասկանալի դրույթներից մեկն է: Մասնավորապես՝ «անձնական կյանքի անձեռնմխելիություն» եզրույթը թերևս բաց է մեկնաբանման համար: Իսկապես, ի՞նչ է նշանակում անձնական կյանքի անձեռնմխելիություն:

Իր «Մարդու իրավունքների և քաղաքացիական իրավունքների համընդհանուր պաշտպանությունը» [“Global Protection of Human Rights and Civil Rights”] աշխատության մեջ Լիլիչը անձնական կյանքի անձեռնմխելիությունը համարում է «մի հայեցակարգ, որը մինչ օրս այնքան ամոքժ է, որ հնարավոր չէ ընդունել որպես միջազգային սովորույթային իրավունքի մի մաս» (Richard B. Lillich, Civil Rights, in: Human Rights in International Law, Legal and Policy Issues [Ռիչարդ Բ. Լիլիչ, Քաղաքացիական իրավունքներ, «Մարդու իրավունքները միջազգային իրավունքում, իրավական և քաղաքականության մշակման հարցեր» գրքում], խմբ.՝ T. Meron [Թ. Մերոն], 1984, էջ 148): Այնուամենայնիվ, նա հավելում է, որ *նեղ իմաստով (stricto sensu)* անձնական կյանքի անձեռնմխելիությունը որոշելիս եվրոպական կոնվենցիայի պրակտիկան կարող է ունենալ սահմանափակ օգտակարություն: Եվ այդտեղ նա նշում է, թե առաջարկվել է, որ, օրինակ, «անվան օգտագործումը» դիտվի որպես անձնական կյանքի անձեռնմխելիություն հասկացության մի մաս: Սա, իմիջիայլոց, Յակոբսից արված մեջբերում էր, ով, հղում անելով Եվրոպական կոնվենցիայի նմանատիպ դրույթին (հոդված 8), պնդում է, որ «կոնվենցիայի համար պատասխանատու մարմինները չեն զարգացրել անձնական կյանքի անձեռնմխելիության հայեցակարգը» (Francis G. Jacobs, The European Convention on Human Rights [Ֆրենսիս Գ. Յակոբս, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան], 1975, էջ 126):

Այն, ինչ ճշմարիտ է Եվրոպական կոնվենցիայի դեպքում, հավասարապես ճշմարիտ է դաշնագրի պարագայում: Դաշնագրի վերաբերյալ իր մեկնաբանության մեջ Նովակը հայտարարում է, որ 17-րդ հոդվածի կապակցությամբ իր մշակման ընթացքում գործնականում որևէ բանավեճ չի ծավալվել, և անհատական հաղորդումների վերաբերյալ նախադեպային իրավունքն այս հասկացության ճշգրիտ իմաստը պարզելու գործին որևէ կերպ չի օգնում (Nowak, CCPR Commentary [Նովակ, «ԲԲԻՄԴ-ի մեկնաբանություն»], 1993, էջ 294, բաժին 15):

Յետևաբար, անհիմն չէ մասնակից պետության այն պնդումը, թե 17-րդ հոդվածը անհրաժեշտաբար չի ներառում մարդու՝ սեփական ազգանունը փոխելու իրավունքը (տե՛ս «Կարծիքների» պարբ. 7.1) [16.15]: ...

Կոմիտեն իրականում 17-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանության մեջ չի հստակեցրել անձնական կյանքի անձեռնմխելիություն հասկացությունը, նա փաստորեն զերծ է մնում այս հասկացության սահմանումից: ... Չնայած ճշմարիտ է այն, որ կոմիտեն իր Ընդհանուր մեկնաբանության տարբեր հատվածներում հիշատակում է «անձնական կյանքը» և տալիս է դեպքերի օրինակներ, երբ պետությունները պարտավոր են զերծ մնալ անձնական կյանքի որոշակի կողմերին միջամտելուց, այն հարցը, թե արդյոք անձի անունը իսկապես պաշտպանված է 17-րդ հոդվածով, և, մասնավորապես, արդյոք, ի լրումն, գոյություն ունի՞ սեփական անունը փոխելու իրավունք, Ընդհանուր մեկնաբանության մեջ ընդհանրապես չի արծարծվում:

Ես բարձրացնում եմ վերոնշյալ խնդիրները, որպեսզի ցույց տամ, որ կոմիտեն, ինչպես դիտարկվող որոշման մեջ, 17-րդ հոդվածը մեկնաբանելիս իրականում կանգնած չէ ապահով իրավական հիմքի վրա: Այնուամենայնիվ, ես համամիտ եմ այն տեսակետին, որ անձի անունը մարդու ինքնության կարևոր բաղադրիչներից է, որի պաշտպանությունը 17-րդ հոդվածի առանցքային գործառույթներից է: Յետևաբար, Նովակը ճիշտ է, երբ պնդում է, որ անձնական կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանում է մարդկային գոյության հատուկ, անհատական որակները և անձի ինքնությունը: Ակնհայտորեն, ինքնությունն ընդգրկում է անձի անունը (Nowak, նշվ. տեղում, բաժին 17, էջ 294):

Այսպիսով, 17-րդ հոդվածը պաշտպանում է անձի անունը, և պարտադիր չէ, որ պաշտպանի անձի՝ սեփական անունը վայրկենական փոխելու ցանկությունը: Կոմիտեն, թեպետ անուղղակիորեն, ասվածն ընդունում է սեփական որոշման մեջ: Կոմիտեի կողմից վկայակոչվող օրինակը, որը հիշատակվում է ցուցադրելու համար 17-րդ հոդվածով և ի խախտումն այդ հոդվածի՝ անձի իրավունքներին պետության միջամտության մի հնարավոր դեպք, հետևյալն է. «... Եթե պետությունը բոլոր օտարերկրացիներին ստիպեր փոխել իրենց ազգանունները ...» (տե՛ս «Տեսակետների» պարբ. 10.2): Այս տեսակետը ճիշտ է, բայց ակնհայտ է, որ այն չի կարող վերաբերել այն դեպքերին, երբ պետությունը, ելնելով ընդհանուր կիրառման պետական քաղաքականությունից, պաշտպանելու համար անձանց՝ գոյություն ունեցող անունները, մերժում է անձանց՝ անվան փոփոխություն թույլատրելու խնդրագրերը:

Այսուամենայնիվ, կարելի է պնդել, որ տեղին կլիներ ենթադրել, որ «անձնական կյանքի անձեռնմխելիություն» եզրույթը, այնքանով, որքանով համապատասխան պաշտպանության նպատակով ներառում է անձի անունը՝ որպես նրա ինքնության մի մաս, միաժամանակ ներառում է նաև այդ անունը փոխելու իրավունքը: ...

Հերնդլի ըստ էության որոշումն ուրվագծված է ստորև [16.16]:

[16.05] Պրն Անդոն [Mr Ando] նույնպես ներկայացրեց անհամաձայնությունն արտահայտող տեսակետ:

Ես չեմ կարծում, որ ազգանունը պատկանում է միայն տվյալ անհատ մարդուն, ում անձնական կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանված է 17-րդ հոդվածով: Արևմտյան հասարակությունում կարող է համարվել, որ ազգանունը անձի ինքնությունը հաստատելու ընդամենը մի տարր է, հետևաբար, ինքնության հաստատման այլ միջոցներով, ինչպիսիք են համարը կամ կողը, փոխարինելի: Այնուամենայնիվ, աշխարհի այլ հատվածներում անուններն ունեն սոցիալական, պատմական և մշակութային բազմաթիվ հետևանքներ, և մարդիկ իրենց անուններին տալիս են որոշակի արժեքներ: Ասվածը հատկապես ճշմարիտ է ազգանունների դեպքում: Այսպես, եթե ընտանիքի մի որևէ անդամ փոխում է իր ազգանունը, հավանական է, որ այդ քայլն ազդի ընտանիքի այլ անդամների, ինչպես նաև ազգանվան հետ կապվող արժեքների վրա: Հետևաբար, ինձ համար դժվար է եզրակացնել, որ անձի ազգանունը բացառապես պատկանում է անձնական կյանքի անձեռնմխելիության ոլորտին, որը պաշտպանված է 17-րդ հոդվածով:

Անդոյի որոշումն ակնհայտորեն սահմանափակում է «մասնավոր ոլորտը»՝ հասցնելով այն անհատի անձնական ոլորտի, ոչ թե անհատի՝ որպես որևէ խմբի, ինչպիսին է ընտանիքը, անդամի ոլորտի: Նրա ներկայացրած սահմանումը թվում է անհիմն նեղացված այն փաստի լույսի ներքո, որ 17-րդ հոդվածը հստակորեն պաշտպանություն է տրամադրում ընտանիքին⁸: Արդյոք Անդոյի որոշումն ուրիշ կլիներ, եթե հեղինակների ընտանիքները հավաքականորեն ցանկանային փոխել իրենց ազգանունները:

[16.06] «*Օայուն և Բեսերն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Hopu and Bessert v France, 549/93*) գործով հեղինակները հայտարարեցին, որ հյուրանոցի նախագծումն իրենց նախնիների սուրբ գերեզմանների տարածքում խախտել է, ի թիվս այլոց, իրենց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքները: ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը համաձայնեց, քանի որ հեղինակների կապն իրենց նախնիների հետ նրանց ինքնության մի կարևոր մասն է⁹: Անհամաձայնությունն արտահայտող իրենց կարծիքում պարունայք Կրեցմերը, Բյուրգենթալը, Անդոն և լորդ Քոլվիլը արեցին հետևյալ մեկնաբանությունները.

¶ 6. Հակառակ կոմիտեի կարծիքի՝ մենք չենք կարող ընդունել, որ հեղինակների պնդումն այն մասին, թե տեղի է ունեցել միջամտություն իրենց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքին, հիմնավորված է: Տրամադրված միակ պատճառաբանությունը, որը հիմնավորում է այս կապակցությամբ կոմիտեի եզրակացությունը, հեղինակների այն պնդումն է, թե իրենց կապը նախնիների հետ կարևոր դեր է խաղում իրենց ինքնության մեջ: Անձնական կյանքի անձեռնմխելիությունը հասկացությունը պատկանում է անհատի կյանքի կամ այլոց հետ հարաբերությունների այն կողմերի պաշտպանության շուրջ, որոնք տվյալ մարդը որոշում է հեռու պահել հասարակության աչքից կամ արտաքին միջամտությունից: Այն չի ընդգրկում համարային սեփականության մուտքի հնարավորություն՝ անկախ այդ սեփականության բնույթից կամ մնա՞ն մուտքի նպատակից: Ի լրումն՝ սոսկ այն փաստը, որ այցելությունները մի որոշակի վայր կարևոր դեր են խաղում անձի ինքնության համար, մնա՞ն այցելությունները չի վերածում անհատի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի: Կարելի է մտաբերել բազմաթիվ գործողություններ, ինչպիսին է մասնակցությունը հրապարակային կրոնական արարողություններին կամ մշակութային միջոցառումներին, որոնք տարբեր հասարակություններում կարևոր դեր են խաղում անհատների ինքնության հարցում: Թեպետ մնա՞ն միջոցառումներին միջամտությունը կարող է պարունակել 18-րդ կամ 27-րդ հոդվածների ոտնահարում, դա միջամտություն չէ մարդու անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

[16.07]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության մասին թիվ 28 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը բնորոշել է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի որոշակի սեռահենք ոտնահարումներ:

¶ 20. Մասնակից պետությունները պարտավոր են տեղեկություններ տրամադրել, որպեսզի կոմիտեին հնարավորություն տան զննատեսելու, թե ինչ ազդեցություն կունենան յուրաքանչյուր օրենք և գործելակերպ, որոնք կարող են խոչընդոտել կանանց՝ տղամարդկանց հետ հավասարության հիման վրա անձնական կյանքի անձեռնմխելիութ-

⁸ Տե՛ս Մաեյ Մայքլ [Michael], վերը, ծնթ. 3, էջ 334:

⁹ Տե՛ս [20.11–20.12]:

յունից և այլ իրավունքներից օգտվելու իրավունքը՝ պաշտպանված 17-րդ հոդվածով: Նման խոչընդոտ ծագում է այն դեպքերում, երբ օրինական իրավունքների և իրավական պաշտպանության երաշխիքների, ներառյալ բռնաբարությունից պաշտպանության չափը որոշելիս դիտարկվում է կնոջ սեռական կյանքը: Մեկ այլ ոլորտ, որտեղ պետությունները գուցե չհարգեն կանանց անձնական կյանքի անձեռնմխելիությունը, առնչվում է նրանց վերարտադրողական ֆունկցիաներին. օրինակ, երբ ամլացման որոշում կայացնելու համար գոյություն ունի ամուսնու լիազորությունը ստանալու պահանջ, երբ կանանց ամլացման համար սահմանվում են ընդհանուր պահանջներ, ինչպես օրինակ՝ որոշակի թվով երեխաներ ունենալու կամ որոշակի տարիքի հասած լինելու պահանջները, կամ երբ մասնակից պետությունները բժիշկների և առողջապահության ոլորտի այլ աշխատողների նկատմամբ սահմանում են իրավական պարտականություն՝ հայտնելու հղիության արհեստական ընդհատման (աբորտի) դիմած կանանց մասին: Նման դեպքերում կարող են վտանգվել դաշնագրով սահմանված այլ իրավունքներ, ինչպիսիք են 6-րդ և 7-րդ հոդվածներում ամրագրվածները¹⁰: Կանանց անձնական կյանքի անձեռնմխելիությունը կարող են խոչընդոտել նաև մասնավոր կառույցները, օրինակ՝ այն գործատուները, որոնք կնոջն աշխատանքի ընդունելուց առաջ պահանջում են անցնել հղիության թեստ¹¹: Մասնակից պետությունները պետք է զեկույց ներկայացնեն յուրաքանչյուր օրենքի և պետական կամ մասնավոր գործողության մասին, որոնք խոչընդոտում են կանանց կողմից 17-րդ հոդվածով սահմանված իրավունքներից հավասարապես օգտվելը, ինչպես նաև այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվում են նման միջամտությունը վերացնելու և նմանատիպ որևէ խոչընդոտից կանանց պաշտպանություն ապահովելու նպատակով¹²:

Ընդհանուր մեկնաբանությունը նաև հաստատում է, որ անձնական կյանքի անձեռնմխելիությունից բխում են սեփական մարմնի նկատմամբ ինքնավարության իրավունքներ:

17-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության սահմանափակումներ. Ի՞նչ է նշանակում «կամայական կամ անօրինական միջամտություն»

[16.08] 17-րդ հոդվածն արգելում է միջամտություններն անձնական կյանքի անձեռնմխելիությանը, որոնք «անօրինական» և «կամայական» են:

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. «Անօրինական» եզրույթը նշանակում է, որ չի կարող կատարվել որևէ միջամտություն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պետությունների կողմից լիազորված միջամտություն կարող է տեղի ունենալ օրենքի հիման վրա, որն ինքնին պետք է համապատասխանի դաշնագրի նորմերին, նպատակներին և խնդիրներին:

[16.09] Կոմիտեն շարունակեց՝ ամրագրելով, որ օրենքը պետք է լինի ճշգրիտ և սահմանափակող, որպեսզի անձնական կյանքի անձեռնմխելիությանը միջամտելու լիազորություններ տալիս չափից ավելի ինքնուրույնություն չտա որոշումներ կայացնողներին:

¶ 8. [3]ամապատասխան օրենսդրությունը պետք է մանրամասն սահմանի այն ճշգրիտ հանգամանքները, որոնց դեպքում նման միջամտությունները թույլատրվում են: Նման լիազորված միջամտությունից օգտվելու որոշում պետք է կայացնի բացառապես օրենքով լիազորված մարմինը՝ ելնելով որոշակի դեպքերի առանձնահատկություններից:

Օրինակ՝ կոմիտեն Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում արեց հետևյալ մեկնաբանությունը¹³:

¹⁰ Տե՛ս [855]ff:

¹¹ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Մեքսիկայի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 109, պարբ. 17:

¹² Մասնավոր հատվածից անձնական կյանք ներխուժելու դեպքերը կանխելու ընդհանուր պարտավորության վերաբերյալ տե՛ս [16.17–16.19]:

¹³ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 54:

¶ 19. ... [Կոմիտեն] մտահոգված է, որ դեռևս գոյություն ունեն մասնավոր հեռախոսային գրույցին միջամտելու մեխանիզմներ՝ առանց հստակ օրենսդրության, որը կսահմաներ անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ օրինական միջամտությունների պայմանները և կնախատեսեր ապօրինի միջամտություններից պաշտպանվելու իրավական երաշխիքներ:

Նմանապես, ճամայկային խնդրեցին «ընդունել հստակ օրենսդրություն», որով կկարգավորվեր հեռախոսագրույցների գաղտնալսման կազմակերպումը¹⁴:

[16.10] «ՓԻՆԵՆԻՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (PINKNEY v CANADA, 27/78)

Այս գործը ցույց է տալիս, թե անձնական կյանքի անձեռնմխելիության «օրինական» միջամտությունները ինչպես պետք է բավարար չափով սահմանափակվեն, որպեսզի համապատասխանեն 17-րդ հոդվածով սահմանված իրավական երաշխիքին: Հեղինակը, որ կրկնակի դատապարտված բանտարկյալ է, բողոքել է իր նամակների գրաքննության և դրանից բխող՝ նամակագրության հետ կապված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման դեմ [16.24]: Մասնակից պետությունը բացատրեց համապատասխան օրենքը, որով կարգավորվում է կալանավորվածների նամակագրության գրաքննությունը:

¶ 31. Պրն Փինքնին՝ որպես դատավճռին սպասող անձ, իր ծերբակալման պահին գործող 1961 թ. ընդունված՝ «Բանտարկության կանոնների և կարգերի» 1.21(դ), Բրիտանական Կոլումբիայի թիվ 73/61 կանոնակարգի համաձայն, իրավունք ուներ «ստանալու գրելու նյութեր՝ նամակների միջոցով (իր) ընկերների հետ հաղորդակցվելու կամ (իր) պաշտպանության հետ կապված նշագրումներ կատարելու նպատակով»: Կանադայի կառավարությունը չի ժխտում, որ պրն Փինքնին ուղարկված նամակները ենթարկվել են ստուգման և, հավանաբար, նույնիսկ գրաքննված լինեն: 1961 թ. ընդունված՝ «Բանտարկության կանոնների և կարգերի» 2.40(բ) հոդվածն այս հարցում հստակ է:

«2.40(բ) Բանտարկյալի ուղարկված կամ նրա ստացած յուրաքանչյուր նամակ պետք է (բացառությամբ փաստաբանին ուղղված կամ փաստաբանից ստացված որոշ նամակագրության պարագայում, ինչպես հետայսու նախատեսված է սույն կանոնակարգով) ընթերցվի բանտապահի կամ վերջինիս կողմից այդ նպատակով լիազորված պատասխանատու աշխատակցի կողմից, և բանտապահն իր հայեցողությամբ կարող է արգելել որևէ նամակի կամ դրա որևէ հատվածի ուղարկումը կամ ստացումը, կամ գրաքննության ենթարկել որևէ նամակ կամ դրա որևէ հատված այն հիմքով, որ դրա բովանդակությունը առարկություններ առաջացնող է, կամ նամակը չափազանց երկար է»:

ՄԻԿ-ը որոշեց, որ 2.40(բ) հոդվածը ոտնահարում է դաշնագրի 17-րդ հոդվածը: Այնուամենայնիվ, դրա փոխարինումը նոր դրույթով չտեղ է այս իրավիճակը:

¶ 34. Պրն Փինքնին չի տրամադրել որևէ որոշակի ապացույց հիմնավորելու համար, որ իր նամակագրությունը ենթարկվել է այնպիսի ստուգման կամ գրաքննության, որոնք չեն համապատասխանել մասնակից պետության կողմից նկարագրված գործելակերպին: Այնուամենայնիվ, դաշնագրի 17-րդ հոդվածը ոչ միայն նախատեսում է, որ «արգելվում է կանայական կամ անօրինական միջամտությունը նամակագրության անձեռնմխելիությանը», այլև «յուրաքանչյուր ոք ունի մեծ միջամտությունից օրենքով պաշտպանության իրավունք»: Պարզվում է, որ Կանադայի հարավային տարածաշրջանի ուղղիչ կենտրոնում պրն Փինքնինի կալանքի ընթացքում ուժի մեջ գտնվող միակ օրենքը, որը կարգավորել է բանտարկյալների նամակագրության վերահսկումը և գրաքննությունը, եղել է 1961 թ. ընդունված՝ «Բանտարկության կանոնների և կարգերի» 2.40(բ) հոդվածը: Այս հոդվածի չափազանց ընդհանուր ձևակերպումներում որևէ իրավական նորմ, կոմիտեի կարծիքով, ինքնըստինքյան չի նախատեսել կանայական կիրառումից պաշտպանող բավարար իրավական երաշխիքներ, չնայած, ինչպես արդեն նշել է կոմիտեն, որևէ ապացույց գոյություն չունի, որը կհիմնավորեր, որ արդյունքում ինքը՝ պրն Փինքնին, տուժել է դաշնագրի խախտումից: Կոմիտեն նաև մատնանշում է, որ Ուղղիչ կենտրոնի կանոնների և կարգերի 42-րդ հոդվածը, որն ուժի մեջ է մտել 1978 թ. հուլիսի 6-ին, այժմ զգալիորեն ավելի հստակեցրել է համապատասխան օրենքի ձևակերպումները:

Նոր նորմը սահմանեց նամակագրության գրաքննության հիմնավորումները. բանտարկյալի նամակագրությունը կարող է գրաքննվել, եթե այն վտանգ է ներկայացնում աշխատակազմի կամ բանտի աշխա-

¹⁴ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 83, պարբ. 20:

տանքի համար: Բանտապահի՝ գրաքննություն իրականացնելու հայեցողության սահմանները, որոնք ծայրահեղ ընդարձակ էին 2.40(բ) հոդվածով, նվազագույնի հասցվեցին նոր 42-րդ հոդվածով:

[16.11] Անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ «անօրինական» միջամտությունների արգելումը միայն մասամբ է պաշտպանում մարդու իրավունքները, քանի որ մասնակից պետությունները տեսականորեն հնարավորություն ունեն ներպետական օրենսդրությամբ լիազորելու անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ չափազանց ճնշող միջամտություններ՝ սոսկ ապահովելով, որ օրենքները ձևակերպված լինեն անհրաժեշտ ճշգրտությամբ¹⁵: Հետևաբար, արգելումն անհրաժեշտաբար պետք է ուղեկցվի անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ կամայական միջամտությունների արգելմամբ:

[16.12]

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. «Կամայական միջամտություն» արտահայտությունն առնչվում է նաև 17-րդ հոդվածում ամրագրված իրավունքի պաշտպանությանը: Կոմիտեի կարծիքով՝ «կամայական միջամտություն» արտահայտությունը կարող է նաև տարածվել օրենքով նախատեսված միջամտությունների վրա: Կամայականություն հասկացության ներմուծումը նպատակ ունի երաշխավորելու, որ նույնիսկ օրենքով նախատեսված միջամտությունները պետք է համապատասխանեն դաշնագրի նորմերին, նպատակներին ու խնդիրներին և յուրաքանչյուր դեպքում պետք է տվյալ հանգամանքների առումով լինեն ողջամիտ:

Այսպիսով, անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ կամայական միջամտությունների արգելումը ողջամտության հասկացություն է ներմուծում 17-րդ հոդված: «Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի» (*Toonen v Australia*, 488/92) գործում կոմիտեն ողջամտության հարցը քննարկեց հետևյալ կերպ¹⁶.

¶ 8.3. Կոմիտեն ողջամտության պահանջը մեկնաբանում է այսպես. այդ պահանջը ենթադրում է, որ անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ յուրաքանչյուր միջամտություն պետք է համաչափ լինի առաջադրված նպատակին և դիտարկվող յուրաքանչյուր դեպքի հանգամանքներից բխելով՝ լինի անհրաժեշտ:

[16.13]

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թիվ 16 Ընդհանուր մեկնաբանության մեջ կոմիտեն մատնանշեց, թե ինչպես կարելի է գնահատել անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ միջամտությունների ողջամիտ լինելը.

¶ 7. Պետական իշխանության լիազորված մարմինները պետք է իրավունք ունենան պահանջելու որևէ անհատի անձնական կյանքին առնչվող միայն այնպիսի տեղեկություններ, որոնց իմացությունն էական նշանակություն ունի հասարակության շահերի տեսանկյունից, ինչպես վերջինս ընկալվում է դաշնագրով...

[16.14] Ի տարբերություն ՔՔԻՄԴ-ի այլ դրույթների՝ թվարկված չեն անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի թույլատրելի սահմանափակումներ: Սա տարբերվում է ՔՔԻՄԴ-ով սահմանված այլ իրավական երաշխիքներից, ինչպիսիք են 12-րդ և 19-րդ հոդվածները, որոնցում սահմանափակումներ թույլատրված են միայն հատուկ նպատակներով, օրինակ՝ հասարակական կարգի կամ հասարակության բարոյականության պաշտպանությունը: «Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի» (*Toonen v Australia*, 488/92) գործի շրջանակներում համաձայնություն արտահայտող իր հատուկ կարծիքում պրն Վեններգրենը նշեց.

¹⁵ Այնուամենայնիվ, թիվ 16 Ընդհանուր մեկնաբանության մեջ [16.08] ՄԻԿ-ը հավելում է, որ օրենքն ինքնին պետք է համապատասխանի դաշնագրին: Սա պարզապես կարող է վերաբերել այն փաստին, որ օրենքը չպիտի լինի կամայական: Այլ կերպ ասած, դրանից պետք է եզրակացնել, որ «օրինական» նշանակում է «օրինական» մարդու իրավունքների ներպետական և միջազգային իրավունքում: Տե՛ս [11.59–11.60]:

¹⁶ ՔՔԻՄԴ-ով սահմանված իրավական այլ երաշխիքների համատեքստում «կամայականություն» եզրույթի մեկնաբանության վերաբերյալ տե՛ս նաև [8.04] և [11.13]ff:

17-րդ հոդվածի 1-ին կետը սոսկ պարտադրում է, որ ոչ ոք չենթարկվի կամայական կամ անօրինական միջամտության իր անձնական անձեռնմխելիության, ընտանեկան կյանքի և այլնի նկատմամբ: Ի լրումն՝ այս դրույթը, ի տարբերություն դաշնագրի այլ հոդվածների, չի բնորոշում, թե ինչ հիմքով կարող է մասնակից պետությունը միջամտել օրենսդրության միջոցով:

Այս իսկ պատճառով մասնակից պետություններն սկզբունքորեն ազատ են՝ օրինական կերպով միջամտելու յուրաքանչյուր մարդու անձնական կյանքի անձեռնմխելիությանը՝ իրենց հայեցողությամբ որևէ հիմնավորմամբ, ոչ թե միայն հասարակական անվտանգությանը, կարգի պահպանմանը, բնակչության առողջությանը, բարոյականությանը կամ այլոց հիմնարար իրավունքներին և ազատություններին առնչվող հիմքերով, ինչպես դրանք ձևակերպված են դաշնագրի այլ հոդվածներում: Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 1-ին կետով դաշնագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, թե այն նախատեսում է, որ մասնակից պետությունն իրավունք ունի ձեռնարկել ցանկացած գործողություն՝ ուղղված դաշնագրում ճանաչված իրավունքներից և ազատություններից որևէ մեկի սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է դաշնագրով:

Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի թույլատրելի սահմանափակումները թերևս շատ մեծ են ՔՔԻՄԴ-ում ներառված այլ իրավական երաշխիքներում թվարկված սահմանափակումներին¹⁷: ՔՔԻՄԴ-ում ներառված բոլոր ոչ բացարձակ իրավունքները կարող են սահմանափակվել համաչափ միջոցներով, որոնք ձևակերպված են այնպես, որ հնարավոր լինի հասնել օրինական արդյունքի: Օրինակ՝ 19-րդ հոդվածի (կարծիք արտահայտելու ազատություն) թվարկված սահմանափակումները թույլատրելի են միայն, եթե համարվում են «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»: Համարվում է, որ վերջին բառերը 19-րդ հոդված են ներմուծում ողջամտության և համաչափության զաղափարները¹⁸, ինչը հավասարեցվում է 17-րդ հոդվածում «կամայականորեն» բառին տրված իմաստին: Եթե 17-րդ հոդվածում ներառված սահմանափակումների թույլատրելի սահմանները բաց են, ապա 19-րդ հոդվածի այդ թույլատրելի սահմաններն այնքան ընդարձակ են (օրինակ, «այլոց իրավունքների» պաշտպանությունը), որ հավասար են բաց լինելուն:

[16.15]

«ՔՈՆԵՐԻԵԼԸ և ԱՈՒՐԻԿՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (COERIEL and AURIK v THE NETHERLANDS, 453/91)

Կոմիտեի կողմից «կամայական» միջամտության մեկնաբանման մի օրինակ վերցված է այս գործից: Հեղինակների կողմից նկարագրված փաստերը ներկայացված են անմիջապես ստորև.

¶ 2.1. Հեղինակներն ընդունել են հինգուկուրոն և հայտարարում են, որ ցանկանում են սովորել, որպեսզի Հնդկաստանում դառնան հինգուկուր դավանող հոգևորականներ («փանդիտներ»): Նրանք դիմել են Ռոբերտոնգի շրջանային դատարան (*Arrondissements Rechtbank*)՝ խնդրելով փոխել իրենց առաջին անունները հինդուական անուններով՝ համաձայն իրենց կրոնի պահանջների: Այս խնդրանքը դատարանը բավարարել է 1986 թ. նոյեմբերի 6-ին:

¶ 2.2. Այնուհետև հեղինակները արդարադատության նախարարին խնդրել են իրենց ազգանունները փոխել հինդուական անունների: Նրանք պնդում էին, որ հինգուկուր սովորել և դավանել ցանկացող և հինդուիստ հոգևորական դառնալ ձգտող անձանց համար պարտադիր է հինդուական անուն վերցնելը: 1988 թ. օգոստոսի 2-ի և դեկտեմբերի 14-ի որոշումներով, համապատասխանաբար, արդարադատության նախարարը մերժել է հեղինակների խնդրագրերը այն հիմքով, որ նրանց դեպքերը չեն բավարարում «Ազգանվան փոփոխության ուղեցույցի գուցումներում» (*Richtlijnen voor geslachtsnaamwijziging*, 1976) ամրագրված պահանջները: Ի լրումն՝ որոշման մեջ ասվում էր, որ դրական պատասխանը կարող է հիմնավորվել միայն բացառիկ հանգամանքներով, որոնք բացակայում են հեղինակների գործերում: Նախարարը համարել է, որ հեղինակների առկա ազգանունները արգելք չեն հինդուական ուսմունքն ուսանելու համար, քանի որ հեղինակները կարող են կրոնական անուններ ստանալ, որոնք կտրվեն իրենց գուրուի կողմից ուսումնական ավարտելու կապակցությամբ, եթե նրանք դա ցանկանան:

¶ 3. Հեղինակները պնդում են, որ Հոլանդիայի իշխանությունների կողմից իրենց ներկա ազգանունները փոխելու խնդրագրի մերժումն իրենց թույլ չի տալիս խորացնել իրենց ուսումը հինդուական հոգևորականության ասպարե-

¹⁷ Տե՛ս [1.68]: Տե՛ս նաև P. Hassan, 'International Covenant on Civil and Political Rights: Background Perspectives on Article 9(1)' (1973) 3 *Denver Journal of International Law and Policy* 153, որտեղ մանրամասն ներկայացվում է դաշնագրի մշակման պատմությունը, երբ «կամայական» բառը ներառվել է հոդված 9(1)-ում, էջ 153:

¹⁸ Տե՛ս [18.20]:

գում և, հետևաբար, ունահարում է դաշնագրի 18-րդ հոդվածը¹⁹: Նրանք նաև պնդում են, որ հիշատակված մերժումը անօրինական կամ կամայական միջամտություն է իրենց անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Մասնակից պետությունը, ի պաշտպանություն իր գործողությունների, ներկայացրեց հետևյալ փաստարկները.

¶ 7.1. Մասնակից պետությունը իր ներկայացրած 1994 թ. փետրվարի 24-ով թվագրված փաստաթղթում պնդում է, որ դաշնագրի 17-րդ հոդվածը չի պաշտպանում սեփական ազգանուն ընտրելու և փոխելու իրավունքը: Մասնակից պետությունը հիշատակում է նախապատրաստական փաստաթղթերը, որոնցում որևէ նշում չկա այն մասին, որ 17-րդ հոդվածին պետք է տրվի նման լայն մեկնաբանում, սակայն այդ հոդվածից պարզ է դառնում, որ պետությունները պետք է նշանակալի ազատություն ստանան՝ որոշելու, թե ինչպես պետք է կիրառվեն 17-րդ հոդվածի սկզբունքները: Մասնակից պետությունը նաև հիշատակում է 17-րդ հոդվածի վերաբերյալ կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունը, որում ամրագրված է, որ անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանությունն անհրաժեշտաբար հարաբերական է: ...

¶ 7.2. Որպես լրացում՝ մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակներին իրենց ազգանունները պաշտոնապես փոխելու թույլտվություն տալու մերժումը անօրինական չի եղել, ոչ էլ՝ կամայական: Մասնակից պետությունը ... հայտարարում է, որ որոշումը կայացվել է ըստ համապատասխան Ուղենշային ցուցումների, որոնք հրապարակվել են Կառավարության տեղեկատուի 1990 թ. մայիսի 9-ի համարում և հիմնված են քաղաքացիական օրենսգրքի դրույթների վրա: Հեղինակներին ազգանունները փոխելու թույլտվություն չտալու որոշումը, այսպիսով, համահունչ է ներպետական օրենսդրությանը և կանոնակարգերին:

¶ 7.3. Ինչ վերաբերում է որոշման հնարավոր կամայականությանը, մասնակից պետությունը համարում է, որ նախորդ պարբերության մեջ հիշատակված կանոնակարգերն ընդունվել են հենց այն նպատակով, որ կանխեն կամայականությունը և այս ուղրտում պահպանեն անհրաժեշտ կայունությունը: Մասնակից պետությունն առարկում է՝ համարելով, որ եթե անվան փոփոխությունը կատարվի չափազանց հեշտությամբ, ապա դա անտեղի անորոշություն և շփոթ կառաջացնի թե՛ սոցիալական և թե՛ վարչարարական իմաստով: Այս կապակցությամբ մասնակից պետությունը հիշատակում է այլոց շահերը պաշտպանելու պարտավորությունը: Մասնակից պետությունը հայտարարում է, որ տվյալ դեպքում հեղինակները չեն կարողացել բավարարել այն չափանիշները, որոնք հնարավորություն կտային կատարելու իրենց ազգանունների փոփոխությունը, և նրանք ցանկացել են վերցնել այնպիսի անուններ, որոնք հատուկ նշանակություն ունեն հնդկի հասարակության մեջ: «Այսպիսի խնդրագրին դրական լուծում տալը, հետևաբար, կհակասեր Նիդեռլանդների կառավարության քաղաքականությանը, այն է՝ ձեռնպահ մնալ որևէ գործողությունից, որը կարող է մեկնաբանվել որպես միջամտություն այլ մշակույթների ներքին գործերին»: Մասնակից պետությունը եզրակացնում է, որ հաշվի առնելով ներգրավված բոլոր շահերը՝ հնարավոր չէ պնդել, որ անունը փոխելու թույլտվություն չտալու որոշումը կամայական է²⁰:

ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը որոշում կայացրեց հօգուտ հեղինակների.

¶ 10.3. Այժմ կոմիտեն ձեռնամուխ է լինում այն հարցի ուսումնասիրմանը, թե արդյոք սույն գործի պայմաններում մասնակից պետության կողմից հեղինակների՝ սեփական ազգանունները փոխելու խնդրագրի մերժումը կարելի՞ է որակել որպես կամայական կամ անօրինական միջամտություն նրանց անձնական կյանքի անձեռնմխելիությանը: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետության որոշումը հիմնված է եղել Նիդեռլանդներում գործող օրենքների և կանոնակարգերի վրա, և միջամտությունը, այդպիսով, չի կարող համարվել անօրինական: Մնում է որոշել՝ այն կամայակա՞ն է եղել, թե՞ ոչ:

¶ 10.4. Կոմիտեն ի գիտություն է ընդունում այն, որ հանգամանքները, որոնց պայմաններում ազգանվան փոփոխությունը կճանաչվի, «Ուղենշային ցուցումներում» սահմանված են նեղ իմաստով, և այլ դեպքերում սեփական հայեցողությամբ գործելը սահմանափակված է միայն բացառիկ դեպքերով: Կոմիտեն հիշեցնում է 17-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանությունը, որում նշել է, որ կամայականություն հասկացությունը «նախատեսված է երաշխավորելու համար, որ նույնիսկ օրենքով նախատեսված միջամտությունը պետք է համապատասխանի դաշնագրի նորմերին, նպատակներին և խնդիրներին, և յուրաքանչյուր դեպքի տվյալ հանգամանքներում պետք է լինեն ողջամիտ»: Այսպիսով, անձի անվան փոփոխությունը ճանաչելու խնդրագիրը կարող է մերժվել միայն այնպիսի հիմքերով, որոնք տվյալ դեպքի որոշակի հանգամանքներում ողջամիտ են:

¹⁹ Տե՛ս [17.18]:

²⁰ Պետության ներկայացրած այլ փաստարկներն ակնհայտ են դառնում պրն Հերնդլի՝ անհամաձայնություն արտահայտող տեսակետից [16.16]:

¶ 10.5. Դիտարկվող գործում հեղինակների խնդրագիրը՝ ճանաչել իրենց անունները հինգուսական անուններով փոխելը, որպեսզի իրենք հետամուտ լինեն իրենց կրոնական դասընթացներին, բավարարվել է 1986 թ.: Մասնակից պետությունը հեղինակների՝ իրենց ազգանունները նույնպես փոխելու մասին խնդրագիրը մերժելու իր որոշումը հիմնավորեց այն փաստարկներով, որ հեղինակները ցույց չեն տվել, որ պահանջվող փոփոխություններն էական նշանակություն են ունեցել իրենց ուսումնական նպատակներին հասնելու տեսանկյունից, որ անուններն ունեցել են կրոնական ենթաիմաստներ և «հոլանդական հնչողություն» չեն ունեցել: Կոմիտեն կարծում է, որ նման եղանակով հեղինակների՝ 17-րդ հոդվածով սահմանված իրավունքները սահմանափակելու հիմքերը ողջամիտ չեն: Դիտարկվող գործի հանգամանքներից ելնելով հեղինակների խնդրագրի մերժումը, հետևաբար, եղել է կամայական՝ համաձայն դաշնագրի 17-րդ հոդվածի 1-ին կետի:

[16.16] Պրն Ջերնդլը հետևյալ ձևակերպումներով արտահայտեց իր անհամաձայնությունը.

(ա) ...Կարելի է պնդել, թե տեղին կլիներ ենթադրել, թե քանի որ «անձնական կյանքի անձեռնմխելիություն» եզրույթը, համապատասխան պաշտպանություն ապահովելու նպատակով, տարածվում է անհատի անվան՝ որպես նրա ինքնության մի մասի վրա, ապա այն տարածվում է նաև անձի՝ այդ անունը փոխելու իրավունքի վրա: Այս առումով հարկ է ավելի ուշադիր ուսումնասիրել «Ազգանվան փոփոխության ուղենշային ցուցումները», որոնք 1990 թ. հրապարակվել են Նիդեռլանդների կառավարության տեղեկագրում և Նիդեռլանդներում կիրառվել որպես ընդունված գործելակերպ: Սկզբունքորեն Նիդեռլանդների քաղաքականությունը հիմնված է այն կանխավարկածի վրա, որ անձը պետք է պահպանի ծնվելուց հետո ստացած իր անունը՝ հանուն իրավական և սոցիալական կայունության: ... Որպես այդպիսին՝ այս քաղաքականությունը դժվար թե համարվի 17-րդ հոդվածը խախտող: Հակառակը՝ այն պաշտպանում է ձեռք բերած իրավունքները, ինչպիսին է որոշակի անուն ունենալու իրավունքը, և թվում է, թե մեծապես համահունչ է 17-րդ հոդվածի սկզբունքներին:

Համաձայն «Ուղենշային ցուցումների»՝ անվան փոփոխումը կթույլատրվի, եթե առկա անունը ա) անվայելուչ է, բ) ծիծաղելի է, գ) այնքան տարածված է, որ կորցրել է իր տարբերակիչ հատկանիշը և դ) հոլանդական հնչողություն չունի: Այս հիմքերից ոչ մեկը հեղինակների կողմից չի հիշատակվել, երբ նրանք դիմել են իրենց ազգանունները փոխելու թույլտվություն ստանալու համար:

«Ուղենշային ցուցումների» համաձայն՝ անվան փոփոխությունը կարող է թույլատրվել նաև «բացառիկ դեպքերում», օրինակ՝ «այն դեպքերում, երբ ազգանունը փոխելու թույլտվություն չտալը կսպառնա դիմողի հոգեկան կամ ֆիզիկական առողջությանը» կամ «այն դեպքերում, երբ մերժումը կդիտվի որպես ոչ ողջամիտ՝ նկատի առնելով թե՛ դիմողի և թե՛ պետության շահերը»: ... Քանի որ հեղինակները քննության ընթացքում պետական իշխանության մարմիններին ակնհայտորեն չեն կարողացել ցույց տալ նման «բացառիկ հանգամանքներ», նրանց խնդրագիրը մերժվել է: Նրանց պնդումը, թե իրենք ազգանվան փոփոխման կարիք ունեն, որպեսզի դառնան հինգուսիստ հոգևորականներ, ակնհայտորեն հիմնավորված չէ: ... Մյուս կողմից՝ Հոլանդական հինգուսիստ ղեկավարների առաջ քաշած պայմանները չեն կարող վերաբերել Հոլանդիայի իշխանություններին: ...

Հետևաբար, անունը փոխելու խնդրագիրը օրինական հիմքերով մերժվել է, քանի որ հեղինակները Հոլանդիայի իշխանություններին չեն կարողացել ցույց տալ «բացառիկ հանգամանքներ», ինչպես պահանջվում է օրենքով: Մերժումը չի կարող դիտվել որպես 17-րդ հոդվածի խախտում: Հակառակ որոշում կայացնելը հավասարազոր կլիներ ճանաչելուն, որ յուրաքանչյուր ոք գրեթե բացարձակ իրավունք ունի ըստ պահանջի և վարկենական փոխելու իր անունը: Իմ կարծիքով՝ նման տեսակետի համար որևէ հիմք դաշնագրում հնարավոր չէ գտնել:

(բ) Մասնակից պետության գործողությունը՝ դիտարկված 17-րդ հոդվածով պաշտպանված իրավունքներին (պետության) թույլատրելի միջամտության չափանիշների տեսանկյունից:

Ելնելով այն ենթադրությունից, որ գոյություն ունի անձի՝ սեփական անունը փոխելու իրավունք, այն հարցը, թե այդ իրավունքի նկատմամբ ինչ չափով «միջամտությունն» է համարվում թույլատրելի, պետք է դառնա ուսումնասիրության առարկա (և, իսկապես, կոմիտեն սույն «Տեսակետներում» անդրադառնում է դրան):

Այդ դեպքում որո՞նք են (պետության) միջամտության համար սահմանված չափանիշները: Դրանք երկուսն են և միայն այդ երկուսը: 17-րդ հոդվածը արգելում է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ կամայական կամ անօրինական միջամտությունը:

Ակնհայտ է, որ Հոլանդիայի իշխանությունների որոշումը՝ թույլատրել անվան փոփոխություն, չի կարող ինքնըստինքյան (*per se*) համարվել «կամայական կամ անօրինական» միջամտություն հեղինակների՝ 17-րդ հոդվածով պաշտպանված իրավունքներին: Որոշումը հիմնված է Նիդեռլանդներում գործող օրենքի վրա: Հետևաբար, այն անօրինական չէ: Կոմիտեն ինքն է այդպես ասում (տես «Տեսակետների» պարբ. 10.3-ը): Պայմանները, որոնցով Նիդեռլանդներում կթույլատրվի անվան փոփոխություն, սահմանված են ընդհանուր կիրառություն ունեցող և հրապարակային «Ազգանվան փոփոխության ուղենշային ցուցումներում», որոնք, որպես այդպիսին, բացահայտորեն

կամայական չեն: Այս «Ուղենիշային ցուցումները» կիրառվել են սույն գործում, և որևէ նշան չկա, թե դրանք կիրառվել են խտրական ձևով: Այսպիսով, հավասարապես դժվար է այդ որոշումը որակել կամայական: Այնուամենայնիվ, կոմիտեն այդպես է վարվում «սույն գործի հանգամանքներից ելնելով» (տե՛ս «Տեսակետների» պարբ. 10.5-ը): Նման որոշման հանգեցրել համար կոմիտեն ներմուծում է մի նոր հասկացություն՝ «ողջամտություն»: Կոմիտեն կարծում է, որ «հեղինակների» 17-րդ հոդվածով ճանաչված իրավունքները սահմանափակելու հիմքերը ողջամիտ չեն» (տե՛ս «Կարծիքների» պարբ. 10.5-ը):

Այսպիսով, կոմիտեն փորձում է ընդլայնել 17-րդ հոդվածի սահմանները՝ ավելացնելով մի տարր, որն այդ հոդվածի մաս չի կազմում: Միակ փաստարկը, որ կոմիտեն կարող է ներկայացնել այս համատեքստում, մի պարզ հղում է (*renvoi*) 17-րդ հոդվածի վերաբերյալ իր սեփական Ընդհանուր մեկնաբանությանը, որտեղ նա հայտարարել է, որ «նույնիսկ օրենքով նախատեսված միջամտությունը ... յուրաքանչյուր դեպքում պետք է տվյալ հանգամանքներում լինի ողջամիտ»: Ինձ համար դժվար է համակերպվել այս փաստարկման հետ և նման փաստարկման վրա խարսխել մի եզրակացություն, թե մասնակից պետությունը ոտնահարել է դաշնագրի այս որոշակի դրույթը:

Ինքնության բնույթի և անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ միջամտության խնդրի վերաբերյալ Հերնդլի լավ փաստարկված վերլուծությունն այն սակավաթիվ դեպքերից է, երբ կոմիտեի որևէ անդամ խորությամբ անդրադառնում է այս խնդրին: Այնուամենայնիվ, Հերնդլը հավանություն է տալիս «կամայական» բառի մեկ այլ իմաստի, որը տարբերվում է կոմիտեի մյուս անդամների կողմից ընդունված իմաստից: Նա համաձայն չէ, որ «կամայականությունը» հավասարեցվում է «ողջամտությանը»: Փոխարենը՝ նա սահմանում է, որ «կամայական» նշանակում է «խտրական»: Հերնդլի առաջ քաշած՝ ավելի նեղ իմաստով սահմանումը չի կիրառվել կամընտիր արձանագրությամբ քննված որևէ այլ գործում²¹:

Պետության՝ անձնական կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու նպատակով դրական միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը

[16.17] 17-րդ հոդվածի 1-ին կետը մասնակից պետություններին հստակորեն արգելում է իրենց կողմից մարդու անձնական կյանք ներխուժումը: 17-րդ հոդվածի տեքստում գոյություն ունեն մեկ դրական պարտավորություններ:

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. 17-րդ հոդվածը նախատեսում է յուրաքանչյուր մարդու՝ իր անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի անձեռնմխելիության կամ մամակագրության գաղտնիության նկատմամբ կամայական կամ անօրինական միջամտությունից, ինչպես նաև իր պատվի և հեղինակության նկատմամբ անօրինական ոտնձգություններից պաշտպանված լինելու իրավունք: Կոմիտեի տեսանկյունից պահանջվում է երաշխավորել այս իրավունքի պաշտպանությունը նմանատիպ բոլոր միջամտություններից և ոտնձգություններից՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք բխում են պետական իշխանություններից, թե՞ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից: Այս հոդվածով սահմանված պարտավորությունները պետությունից պահանջում են որդեգրել օրենսդրական և այլ միջոցներ՝ նման միջամտությունների և ոտնձգությունների արգելումը, ինչպես նաև այս իրավունքի պաշտպանությունը կիրարկելու համար:

Ի լրումն՝ 17-րդ հոդվածի 2-րդ կետը ակնառու կերպով երաշխավորում է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ միջամտություններից օրենքով պաշտպանության իրավունքը:

[16.18] Մասնակից պետությունները պարտավոր են տրամադրել մասնավոր հատվածում անձնական կյանքի նկատմամբ կամայական ոտնձգություններից իրավական պաշտպանության քաղաքացիական կամ քրեական որևէ միջոց: Սա կարևոր է, քանի որ անձնական կյանքի անձեռնմխելիության բազմաթիվ

²¹ Տե՛ս նաև [16.12–16.13]: *Քոերիելի* գործով կոմիտեի անդամների մեծամասնության որոշումը տրամագծորեն տարբերվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռից՝ կայացված «Ստյերնան ընդդեմ Ֆինլանդիայի» (*Stjerna v Finland*, 1997, 24 EHRR 195) գործով, ըստ որի՝ Ստյերնան անվան փոփոխությունը թույլատրելու խնդրանքի մերժումը Ֆինլանդիայի կողմից չի հանգեցրել ՄԻԵԿ-ի որևէ դրույթի ոտնահարման:

կոպիտ խախտումներ տեղի են ունենում մասնավոր հատվածի, մասնավորապես՝ լրատվամիջոցների ցուցումով: Մինչ օրս այս դրական պարտավորությանն առնչվող որևէ գործ չի եղել²²:

[16.19]

ԹԻԿ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Կոմիտեն համարում է, որ հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկություններ իշխանությունների և պետության իրավական համակարգի ներսում ստեղծված այն մարմինների վերաբերյալ, որոնք իրավասու են լիազորել օրենքով նախատեսված միջամտություններ: Պարտադիր է նաև տեղեկություններ ստանալ իշխանության այն մարմինների վերաբերյալ, որոնք իրավագործված են վերահսկողություն իրականացնելու նման միջամտությունների նկատմամբ՝ խստորեն հետևելով օրենքին դրանց համապատասխանությանը, ինչպես նաև իմանալ, թե ինչ եղանակով և որ մարմինների միջոցով տուժող անձինք կարող են բողոքել դաշնագրի 17-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքի ոտնահարման դեմ: Պետություններն իրենց հաշվետվություններում պետք է հստակ ներկայացնեն, թե որքանով է փաստացի գործելակերպը համապատասխանում օրենքին: Մասնակից պետությունների զեկույցները պետք է պարունակեն նաև տեղեկություններ այն բողոքների վերաբերյալ, որոնք ներկայացվել են կամայական կամ անօրինական միջամտությունների առնչությամբ, այդ կապակցությամբ բացահայտումների քանակը, ինչպես նաև նման դեպքերում տրամադրված իրավական պաշտպանության միջոցները:

Ընդհանուր մեկնաբանության 6-րդ պարբերությունը հաստատում է, որ պետությունները պարտավոր են անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ խախտումների դեմ բողոքների համարժեք համակարգեր ունենալ և տրամադրել իրավական պաշտպանության համարժեք միջոցներ:

ԱՆՃՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՃԵՌՆՄԽԵԼԻՈՒՅԱՆ յՈՐԱԽԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆ

[16.20]

ԹԻԿ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Ինչ վերաբերում է «ընտանիք» եզրույթին, ապա դաշնագրի խնդիրները պահանջում են, որ 17-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ այս եզրույթը ստանա ընդարձակ մեկնաբանում և ներառի բոլոր այն անձանց, ովքեր տվյալ մասնակից պետության հասարակությունում ընկալվում են որպես ընտանիքի անդամներ: Անգլերեն «home», արաբերեն «manzel», չինարեն «zhùzhǐ», ֆրանսերեն «domicile», ռուսերեն «жилище» և իսպաներեն «domicilio» բառերը, ինչպես օգտագործված են դաշնագրի 17-րդ հոդվածում, պետք է ընկալվեն որպես այն վայրը մատնանշող, որտեղ անձն ապրում է կամ իրականացնում է իր սովորական աշխատանքը: Այս կապակցությամբ կոմիտեն պետություններին կոչ է անում իրենց զեկույցներում նշել այն իմաստը, որ իրենց հասարակություններում տրվում է «ընտանիք» և «բնակարան» եզրույթներին:

Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը որդեգրում է «բնակարան» բառի ազատական մեկնաբանում, որպեսզի այն ներառի մարդու աշխատավայրը²³:

17-րդ հոդվածով դիտարկված գործերի մեծ մասը, որ վերաբերել է ընտանեկան կյանքի անձեռնմխելիության նկատմամբ կատարված միջամտություններին, առնչվել է նաև 23-րդ հոդվածի 1-ին կետին, որը ընտանիքների համար երաշխավորում է պաշտպանված լինելու իրավունքներ: Այդ իրավունքի ավելի մասնագիտացված բնույթի պատճառով «ընտանեկան իրավունքներին» առնչվող գործերի մեծ մասը քննարկվում է 20-րդ գլխում (որը վերաբերում է 23-րդ հոդվածին):

²² Մասնավոր հատվածի կողմից ՔՔԻՄԴ-ի ոտնահարումների մասին ընդհանուր քննարկման համար տե՛ս [1.77–1.84]: «*Գոն-սալես դել Ռիոն ընդդեմ Պերուի*» (Gonzales del Rio v Peru, 263/87) գործում հեղինակը բողոքել էր կառավարության աջակցությունը վայելող լրագրերի կողմից իր նկատմամբ գրապարտիչ հարձակումների դեմ: Հիմնական առարկությունն այն էր, որ պետությունն ուղղակիորեն պատասխանատու էր այդ հարձակումների խրախուսման համար, ոչ թե այն, որ պետությունը չի կարողացել վերահսկել լրագրերը: Հայցը մերժելով՝ ՄԻԿ-ը նշեց, որ հեղինակը լրագրերի դեմ իր պայքարում չի կարողացել քննադատել լինել իրավական պաշտպանության ներպետական միջոցներին:

²³ Տե՛ս նաև Նովակ, վերը, ծնթ. 7, էջ 302–3:

[16. 21]

**«ԱՌՄԵԵՐՈՒԴԻ-ՑԻՖՐԱՆ և այլք ընդդեմ ՄԱՎՐԻԿԻՈՍԻ»
(AUMEERUDDY-CZIFFRA et al v MAURITIUS, 35/78)**

Այս բողոքը վերաբերում է Մավրիկիոսում գործող այն օրենսդրությանը, որը մավրիկիացիների հետ ամուսնացած օտարերկրացի տղամարդկանց և կանանց համար սահմանում էր բնակության տարբեր կարգավիճակներ: Մավրիկիոսում օտարերկրացի տղամարդկանց հատկացվում էին բնակության ավելի անկայուն պայմաններ, քան օտարերկրացի կանանց: Հեղինակների թվում էին քսան մավրիկիացի կանայք, որոնցից երեքն ամուսնացած էին օտարերկրացիների հետ: Հեղինակները բարձրացնում էին հետևյալ հարցերը.

¶ 1.1. Նրանք պնդում էին, որ 1977 թ. Մավրիկիոսի ընդունած «Ներգաղթի մասին» (լրամշակված) օրենքը և 1977 թ. ընդունած «Արտաքսման մասին» (լրամշակված) օրենքը ուժի մեջ մտցնելը հանգեցրել է մավրիկիացի կանանց նկատմամբ սեռի հատկանիշով խտրականության, ընտանիք և տուն ստեղծելու իրավունքի ոտնահարման և դատարանի միջոցով պաշտպանության վերացման, ինչի արդյունքում խախտվել են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 17-րդ, 23-րդ, 25-րդ և 26-րդ հոդվածները: Հեղինակները պնդում են, որ իրենք տուժել են այդ հայտարարվող ոտնահարումներից: Նրանք հայտարարում են, որ իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառվել են:

¶ 1.2. Հեղինակները պնդում են, որ նախքան հիշյալ օրենքների ուժի մեջ մտնելը մավրիկիացիների հետ ամուսնացած օտարերկրացի տղամարդիկ և կանայք ստանում էին բնակության միևնույն կարգավիճակը, այլ խոսքով՝ իրենց ամուսնության շնորհիվ երկու սեռերի օտարերկրացի ամուսիններն օրենքով պաշտպանված իրավունք ունեին ապրելու երկրում իրենց մավրիկիացի ամուսինների կամ կանանց հետ: Հեղինակները բողոքում են, որ նոր օրենքների համաձայն՝ մավրիկիացի կանանց հետ ամուսնացած օտարերկրացի տղամարդիկ կորցրել են բնակության իրենց նախկին կարգավիճակը և այժմ պարտավոր են դիմել «բնակության թույլտվություն» ստանալու համար, որի հատկացումը ներքին գործերի նախարարի կողմից կարող է մերժվել կամ ամեն պահի վերացվել: Այնուամենայնիվ, նոր օրենքները չեն ազդում մավրիկիացի ամուսին ունեցող օտարերկրացի կանանց կարգավիճակի վրա, ովքեր պահպանում են այդ երկրում բնակվելու օրինական իրավունքը: Ի լրումն՝ հեղինակները բողոքում են, որ նոր օրենքների համաձայն՝ մավրիկիացի կանանց օտարերկրացի ամուսինները կարող են արտաքսվել նախարարի հրամանով, որը դատական կարգով բողոքարկման ենթակա չէ:

17-րդ հոդվածին վերաբերող այս խնդրի կապակցությամբ մասնակից պետությունը ներկայացրեց հետևյալ փաստարկը.

¶ 5.5. Ի լրումն՝ մասնակից պետությունը պնդում է, որ Մավրիկիոսի օրենքներում ոչինչ որևէ քաղաքացու չի զրկում ցանկացած մարդու հետ ամուսնանալու և ընտանիք ստեղծելու իրավունքից: Մասնակից պետությունը ժխտում է, որ տեղի է ունեցել 17-րդ և 23-րդ հոդվածների որևէ խախտում. նա պնդում է, որ այս մեղադրանքը հիմնված է այն ենթադրության վրա, որ «ամուսինը և կինը ստանում են սեփական երկրներում միասին ապրելու իրավունք, և բնակության այս իրավունքը պետք է ապահովագրված լինի»: Մասնակից պետությունը վերահաստատում է, որ Մավրիկիոսում մնալու իրավունքն այն իրավունքներից չէ, որոնք երաշխավորվում են դաշնագրի նորմերով, բայց ընդունում է, որ անձի արտաքսումը որևէ երկրից, որտեղ ապրում են նրա ընտանիքի հարազատ անդամները, կարող է հանգեցնել այդ անձի՝ դաշնագրի 17-րդ հոդվածով ամրագրված այն իրավունքի ոտնահարմանը, ըստ որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի իր ընտանեկան կյանքին կամայական կամ անօրինական միջամտության: Մասնակից պետությունը, այնուամենայնիվ, առարկում է, որ յուրաքանչյուր դեպք պետք է դիտարկվի ըստ տվյալ գործի էության:

¶ 5.7. Մասնակից պետության կարծիքով՝ եթե քաղաքացիություն չունեցող անձի արտաքսումը օրինական է (քանի որ որևէ երկրում մնալու իրավունքը դաշնագրի նորմերով երաշխավորված իրավունքներից չէ), ապա մնան արտաքսումը (անվտանգության կամ հասարակական շահի հիմքերով) չի կարող համարվել կամայական կամ անօրինական միջամտություն իր համերկրացիների ընտանեկան կյանքին՝ խախտելով դաշնագրի 17-րդ հոդվածը:

ՄԻԿ-ը որոշեց, որ ամուսիններ հանդիսացող հեղինակների առնչությամբ տեղի է ունեցել 17-րդ հոդվածի խախտում²⁴, և արեց հետևյալ մեկնաբանությունները.

²⁴ Մյուս կանայք ծանաչվեցին որպես կամընտիր արձանագրությամբ ներկայացված բողոքի նպատակներին չհամապատասխանող տուժողներ: Տե՛ս [3.31]:

¶ 9.2.(բ) 2(ii) 1 Նախ՝ իրենց ամուսինների հետ հարաբերությունները հստակ առնչվում են «ընտանիքի» ոլորտին, ինչպես այն օգտագործված է դաշնագրի 17-րդ հոդվածի 1-ին կետում: Հետևաբար, դրանք պաշտպանված են այն երևույթից, որն այդ հոդվածում անվանվում է «կամայական կամ անօրինական միջամտություն» այս ոլորտի նկատմամբ:

¶ 9.2.(բ) 2(ii) 2 Կոմիտեն պաշտպանում է այն տեսակետը, որ ամուսնու և կնոջ համատեղ բնակությունը պետք է համարվի ընտանիքի նորմալ վարքագիծ: Հետևաբար, ինչպես ընդունել է մասնակից պետությունը, անձի հեռացումը մի երկրից, որտեղ ապրում են նրա ընտանիքի հարազատ անդամները, կարող է համարվել միջամտություն ըստ դաշնագրի 17-րդ հոդվածի իմաստի: Սկզբունքորեն, 17-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է նաև այն դեպքում, երբ ամուսիններից մեկն օտարերկրացի է: Այն հանգամանքից, թե որքանով են ընտանիքի անդամի բնակության վրա ազդեցություն ունեցող ներգաղթի վերաբերյալ օրենքների գոյությունը և կիրարկումը համահունչ դաշնագրին, կախված է այն հարցը, թե որքանով է նման միջամտությունը «կամայական կամ անօրինական», ինչպես սահմանված է 17-րդ հոդվածի 1-ին կետում, կամ որևէ այլ կերպ հակասության մեջ մասնակից պետության՝ դաշնագրով ստանձնած պարտավորությունների հետ:

¶ 9.2.(բ) 2(ii) 3 Դիտարկվող գործերում ոչ միայն արտաքսման ապագա հնարավորությունը, այլև Մավրիկիոսում օտարերկրացի ամուսինների բնակության առկա երեքում կարգավիճակը, կոմիտեի կարծիքով, մասնակից պետության իշխանությունների կողմից միջամտություն են մավրիկիացի կանանց և նրանց ամուսինների ընտանեկան կյանքին: Վիճահարույց օրենքները խնդրին առնչվող ընտանիքների համար անորոշ են թողնում այն հարցը, թե արդյոք նրանց համար հնարավոր կլինի՝ շարունակել իրենց ընտանեկան կյանքը՝ միասին ապրելով Մավրիկիոսում, և եթե այո, ապա որքա՞ն ժամանակով: Ավելին, ... նույնիսկ տարիներ տևող ուշացումը և բնակության թույլտվություն տվող դրական որոշման բացակայությունը պետք է դիտվեն որպես լուրջ անհարմարություն, ի թիվս այլոց, նաև այն պատճառով, որ աշխատելու թույլտվություն ստանալը և, հետևաբար, ամուսնու կողմից ընտանիքի կեցությունն ապահովելու գործին մասնակցելու հնարավորությունը կախված են բնակության թույլտվությունից, և որովհետև առանց դատական բողոքարկման իրավունքի արտաքսումը հնարավոր է ամեն պահի:

¶ 9.2.(բ) 2(ii) 4 Այնուամենայնիվ, քանի որ այս իրավիճակը բխում է բուն օրենսդրությունից, ներկա գործերի շրջանակներում որևէ հարց չի կարող ծագել այս միջամտությունն «անօրինական» համարելու առումով՝ համաձայն 17-րդ հոդվածի 1-ին կետի իմաստի: Դեռ հարկ է որոշել, թե այն «կամայական» է կամ որևէ կերպ հակասո՞ւմ է դաշնագրին:

¶ 9.2.(բ) 2(ii) 5 Այս առումով անձանց հասանելիք պաշտպանությունը ենթակա է սեռերի նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքին, ինչը հետևում է դաշնագրի մի քանի դրույթներից: Մասնակից պետությունների՝ 2-րդ հոդվածի 1-ին կետով ստանձնած պարտավորություններից է, ընդհանուր առմամբ, հարգելը և ապահովելը դաշնագրով ճանաչված իրավունքները «առանց որևէ տարբերակման, ինչպիսին է ... (ի թիվս այլոց) սեռը», իսկ ավելի որոշակի, ըստ 3-րդ հոդվածի, «ապահովել տղամարդկանց և կանանց հավասար իրավունքները՝ օգտվելով» բոլոր այս իրավունքներից, ինչպես նաև, ըստ 26-րդ հոդվածի, «առանց որևէ տարբերակման» ապահովել «օրենքով հավասար պաշտպանություն»:

¶ 9.2.(բ) 2(ii) 6 Հեղինակները, ովքեր ամուսնացած են օտարերկրացիների հետ, տուժում են վերը քննարկված օրենքների բացասական հետևանքներից միայն այն պատճառով, որ կին են: Իրենց ամուսինների բնակության անկայուն կարգավիճակը, որն ազդում է նրանց ընտանեկան կյանքի վրա, ինչպես նկարագրվեց վերը, հետևանք է 1977 թ. ընդունված օրենքների, որոնք օտարերկրացի կանանց նկատմամբ չեն սահմանում վերահսկման միևնույն միջոցները: Այս կապակցությամբ կոմիտեն նշել է, որ Մավրիկիոսի սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ սեռը այն հիմքերից չէ, որոնց դեպքում խտրականությունն արգելվում է: ...

¶ 9.2.(բ) 2(ii) 8 ... Այստեղ էական չէ, թե հնարավոր կլինե՞ր արդարացնել որևէ որոշակի միջամտություն, որպես այդպիսին, եթե այն կիրառվեր առանց խտրականության: Այն դեպքերում, երբ դաշնագրով երաշխավորված որևէ իրավունքի հարցում կիրառվում են սահմանափակումներ, դա պետք է արվի առանց սեռի հիմքով խտրականության: Այն հարցը՝ տվյալ սահմանափակումն ինքնին կխախտի՞ առանձին վերցրած այդ իրավունքը, թե՞ ոչ, այս առումով վճռորոշ չէ: Իրավունքներից օգտվելն է, որ պետք է ապահովվի առանց որևէ խտրականության: Հետևաբար, այստեղ բավարար է նշել այն, որ ներկա իրավիճակում գործադրվում է սեռով պայմանավորված անբարենպաստ տարբերակում, ինչն իր ազդեցությունն է թողնում հայտարարվող տուժողների՝ իրենց իրավունքներից մեկից օգտվելու վրա: Չի տրվել այս տարբերակման որևէ բավարար հիմնավորում: Կոմիտեն այդ դեպքում պարտավոր է վճռել, որ խախտվել է դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ հոդվածը՝ 17-րդ հոդվածի 1-ին կետի հետ միասին:

[16.22] *Մավրիկիացի կանանց գործով (Mauritian Women's Case)* կոմիտեի որոշման վրա ազդել է օրենսդրության խտրական բնույթը²⁵: Կոմիտեն որոշում չկայացրեց այն մասին, թե ընտանիքի անդամների բնակության իրավունքները սահմանափակող օրենսդրությունն *ինքնին* խախտո՞ւմ է 17-րդ հոդվածը: Այնուամենայնիվ, հետագայում Ջիմբաբվեի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հաստատեց, որ օտարերկրացի ամուսինների բնակության համար չափազանց սահմանափակող պահանջները, նույնիսկ եթե դրանք խտրական բնույթ չունեն, կխախտեն 17-րդ հոդվածը [20.15]:

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

[16.23]

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. 17-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների կատարումը պահանջում է, որ դե յուրե և դե ֆակտո երաշխավորվեն նամակագրության անձեռնմխելիությունը և գաղտնիությունը: Նամակները պետք է հասցեատիրոջը հասնեն առանց ճանապարհին առգրավման և առանց դրանք բացելու կամ այլ կերպ կարդալու: Հսկողությունը, լինի էլեկտրոնային, թե այլ կերպ, հեռախոսային, հեռագրական կամ այլ եղանակով հաղորդակցման որսումը, գաղտնալսումը և խոսակցությունների ձայնագրումը պետք է արգելվեն:

[16.24] Ինչպես նկարագրված է Ընդհանուր մեկնաբանության մեջ, պետությունը պարտավոր է օրենքով պաշտպանություն ապահովել նամակագրությանը միջամտելուց, որպեսզի պաշտպանի դրա գաղտնիությունը: Կոմիտեն որոշակի մեկնաբանություններ է տվել նամակագրության անձեռնմխելիության վերաբերյալ այնպիսի գործերի շրջանակներում, որոնք ընդգրկում են բանտարկյալների՝ անձնական նամակագրություն ունենալու իրավունքները: «*Փինքնին ընդդեմ Կանադայի*» (*Pinkney v Canada*, 27/78) գործի վերաբերյալ կոմիտեն եզրակացրեց, որ որոշ իրավական նորմեր չեղյալ հայտարարվելու պատճառով նամակագրությանը կամայական միջամտելուց պաշտպանող բավարար իրավական երաշխիքներ չեն ապահովել [16.10]:

[16.25] «*Անյեստ Էստրելան ընդդեմ Ուրուգվայի*» (*Angel Estrella v Uruguay*, 74/80) գործով ՄԻԿ-ը վճռեց, որ բանտարկյալներին պետք է թույլ տալ անհրաժեշտ վերահսկողությամբ, առանց միջամտության, պարբերաբար նամակագրական կապ ունենալ իրենց ընտանիքների և վստահելի ընկերների հետ: Այս գործով հեղինակը հնարավոր հարյուր գրաքննված նամակներից ստացել է միայն երեսուհինգը, իսկ յոթամսյա ժամանակահատվածում որևէ նամակ չի ստացել: Ելնելով փաստերից՝ ՄԻԿ-ը որոշեց, որ հեղինակի նամակագրությունը ենթարկվել է գրաքննության և այնքան է սահմանափակվել, որ խախտվել է դաշնագրի 17-րդ հոդվածը՝ 10-րդ հոդվածի 1-ին կետի հետ միասին, որը երաշխավորում է կալանավորվածների նկատմամբ մարդկային վերաբերմունք²⁶:

[16.26] Լեհաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարեց հետևյալը²⁷.

¶ 22. Ինչ վերաբերում է հեռախոսային խոսակցությունների գաղտնալսմանը, կոմիտեն մտահոգված է, (ա) որ դատախազը (առանց դատարանի համաձայնության) կարող է թույլ տալ հեռախոսի գաղտնալսում, և (բ) գոյություն չունի հեռախոսների ողջ համակարգի օգտագործման անկախ մշտադիտարկում (մոնիթորինգ):

Ջիմբաբվեի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարեց հետևյալը²⁸.

¶ 25. Կոմիտեն մտահոգությամբ փաստում է, որ երկրի փոստի ղեկավարը [Postmaster-General] լիազորված է հասարակական անվտանգության կամ օրենքի պահպանման հիմքերով որսալու փոստով առաքվող ցանկացած առարկա կամ հեռագիր և այդ նյութերը հանձնելու մի հատուկ պետական պաշտոնյայի: Կոմիտեն խորհուրդ է տալիս ձեռնարկել քայլեր՝ ապահովելու, որ նամակագրության առգրավումը ենթարկվի դատական խիստ վերահսկողության, և առնչվող օրենքները համապատասխանեցվեն դաշնագրին:

²⁵ Տե՛ս նաև [23.43]:

²⁶ Տե՛ս նաև [9.153]:

²⁷ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110:

²⁸ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 89:

Այսպիսով, հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը և փոստային առաքումների առգրավումը, հակառակ թիվ 16 Ընդհանուր մեկնաբանության բառապաշարի, չեն հակասում 17-րդ հոդվածին [16.23] այնքան ժամանակ, քանի դեռ այդ գործողությունները խստորեն հսկվում և վերահսկվում են անկախ և, գերադասելի է, դատական մարմինների կողմից²⁹:

ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[16.27]

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. Անձի բնակարանի խուզարկությունները պետք է սահմանափակվեն անհրաժեշտ ապացույցների որոնմամբ, և չպետք է թույլ տալ, որ դրանք վերաճեն ճնշումների: Ինչ վերաբերում է անձնական և մարմնի խուզարկությանը, արդյունավետ միջոցները պետք է ապահովեն, որ նման խուզարկությունները կատարվեն այնպիսի եղանակներով, որոնք չեն վնասում այն անձի արժանապատվությունը, ում խուզարկում են: Անձինք, ովքեր պետական պաշտոնյաների կամ պետության խնդրանքով գործող բժշկական աշխատողների կողմից ենթարկվում են մարմնի խուզարկության, պետք է խուզարկվեն միայն նույն սեռի անձանց կողմից:

[16.28] «*Ռոխաս Գարսիան ընդդեմ Կոլումբիայի*» (*Rojas Garcia v Colombia*, 687/96) գործում Կոլումբիայի ոստիկանությունը սխալ հասցեով, ակնհայտորեն սխալմամբ կատարված շուրջկալի շրջանակներում ուժով մտել և խուզարկել է հեղինակի տունը³⁰: Չնայած մասնակից պետության կողմից շուրջկալի օրինականության վերաբերյալ ներկայացված մանրամասն առարկությանը՝ ՄԻԿ-ը համարեց, որ «մասնակից պետության փաստարկները չկարողացան հիմնավորել նկարագրված գործողությունները», հետևաբար, շուրջկալը հեղինակի ընտանիքի տան նկատմամբ կամայական միջամտություն է եղել³¹: Անորոշ է՝ այս որոշումը նշանակո՞ւմ է, որ սխալմամբ իրականացված բոլոր խուզարկությունները խախտում են 17-րդ հոդվածը: Մասնակից պետությունը չի կարողացել ներկայացնել որևէ բացատրություն, թե ինչո՞ւ կամ ինչպե՞ս է տեղի ունեցել նշված սխալը, հետևաբար չկար որևէ ապացույց, որի հիման վրա ՄԻԿ-ը կարող էր եզրակացնել, թե սխալմամբ կատարված խուզարկությունը կամայական չէր³²:

[16.29] Միացյալ Թագավորության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում կոմիտեին անհամաձայնություն էր և՛ ահաբեկիչների զինադադարից հետո «անվտանգությանը սպառնացող ցածր ռիսկի համատեքստում» Յուլիսիային Իռլանդիայում բանտարկյալներին մերկացնելով խուզարկելու գործելակերպի շարունակման մասին հաղորդումները³³: 1995 թ. կոմիտեի՝ ահաբեկչության ռիսկի վերաբերյալ լավատեսական գնահատականը թերևս վաղաժամ էր, սակայն կոմիտեի մեկնաբանությունը հաստատում է, որ մերկացնելով խուզարկություններ պետք է անցկացվեն միայն համարժեք հանգամանքներում:

ՊԱՏԻՎ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

[16.30]

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 11. 17-րդ հոդվածը նախատեսում է անձնական պատվի և հեղինակության պաշտպանություն, և այս նպատակին հասնելու համար մասնակից պետությունները պարտավոր են ապահովել համարժեք օրենսդրություն: Պետք է նաև ապահովել, որ յուրաքանչյուրն ունակ լինի իրեն արդյունավետորեն պաշտպանելու ամեն մի պատահած ահաբեկչական ոտնձգությունից, ինչպես նաև ունենա դրա պատասխանատվությունից պաշտպանվելու արդյունավետ միջոցներ: Մասնակից պետությունները պարտավոր են իրենց զեկույցներում մատնանշել, թե որքանով է օրենքով պաշտպանված անձանց պատվը կամ արժանապատվությունը, և, համաձայն իրենց իրավական համակարգի, ինչպես է իրականացվում այդ պաշտպանությունը:

²⁹ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Լեստոյի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106, պարբ. 24:

³⁰ Տե՛ս պարբերություններ 2.1 և 9.6:

³¹ Պարբ. 10.3:

³² Տե՛ս նաև [9.24]:

³³ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 55, պարբ. 12:

Նովակը համարում է, որ «պատիվ» բառը վերաբերում է մարդու՝ իր մասին սուբյեկտիվ կարծիքին (անձի ինքնագնահատական), մինչդեռ «հեղինակությունը» վերաբերում է տվյալ անձի այլոց գնահատականին³⁴:

[16.31] «*Թշխեկեդին ընդդեմ Ջաիրի*» (*Tshisekedi v Zaire, 241–242/87*) գործը, ի թիվս այլոց, առնչվում էր նաև ընդդիմության առաջնորդներից մեկը հանդիսացող պրն Թշխեկեդիի հեղինակության դեմ կատարված ոտնձգություններին: Նա ձերբակալվել էր Կինշասայում ընթացող ցույցերին իր մասնակցության համար: Իր բանտարկության ընթացքում նրան ենթարկվել էին հոգեբուժական փորձաքննության, և ձեռնարկվել էին հոգեբուժական հաստատությունում նրան պահելու փորձեր: Մասնակից պետությունը փորձեց հիմնավորել իր անցկացրած հոգեբուժական ստուգումները՝ հայտարարելով, թե քանի որ հեղինակը ցուցադրել է «հոգեկան խանգարման նշաններ, դատական իշխանությունները որոշեցին, որ նա պետք է ենթարկվի հոգեբուժական փորձաքննության՝ ելնելով նրա առողջության պահպանման նկատառումից և արդար քննություն ապահովելու համար»³⁵: Չնայած պետության՝ պրն Թշխեկեդիին կալանքի տակ պահելուն ուղղված փորձերն անհաջող էին, կառավարությունը շարունակում էր հայտարարել, թե նա խելագար է, նույնիսկ այն դեպքում, երբ «բժշկական տեղեկանքները հակասում էին նման ախտորոշմանը»³⁶: Կոմիտեն որոշեց, որ պետության կատարած այդ գործողությունը ոտնահարել է պրն Թշխեկեդիի՝ պատվի և հեղինակության իրավունքը, ինչը խախտել է 17-րդ հոդվածը: Դժբախտաբար, այդ գործը բացահայտ կերպով վեր չի հանում՝ արդյոք կառավարության այս գործողությունը Ջաիրի օրենսդրության համաձայն «անօրինական» էր, թե՞ ոչ:

[16.32] «*Ի.Պ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*I.P. v Finland, 450/91*) գործում կոմիտեն դիտարկեց այն հարցը, թե հարկային իշխանությունների կողմից դիմողի հարկային կարգավիճակի մասին տեղեկությունների զաղտնազերծումը կարելի՞ է որակել որպես միջամտություն նրա անձնական կյանքի անձեռնմխելիությանը և անօրինական ոտնձգություն նրա պատվին և հեղինակությանը: Կոմիտեն որոշեց, որ հայցն անընդունելի է, քանի որ 17-րդ հոդվածի հետ կապված բոլորը բավարար չափով հիմնավորված չէ: Այս գործն ամրապնդում է այն փաստարկը, որ 17-րդ հոդվածով անձի պատվի և հեղինակության պաշտպանությունը սահմանափակվում է միայն անօրինական ոտնձգություններով և չի ներառում կամայական ոտնձգությունները³⁷: Քանի որ զաղտնազերծման համար գոյություն ունեն օրինական իշխանություն, ապա 17-րդ հոդվածի խախտում չի եղել:

[16.33] «*Ռ.Լ.Մ.-ն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*R.L.M. v Trinidad and Tobago, 380/89*) գործում հեղինակը, որ փաստաբան էր, պնդում էր, որ դատավորի կողմից իր քննադատությունը դատարանում գտնվելու ժամանակ եղել է անօրինական ոտնձգություն իր պատվի և հեղինակության նկատմամբ: Կոմիտեն որոշեց, որ հայցն անընդունելի է, քանի որ քննադատությունն անօրինական ոտնձգություն չէ: Դատավորի մեկնաբանություններն անձեռնմխելի էին, և, հետևաբար, չէին կարող դիտվել որպես անօրինական³⁸:

[16.34] Կամընստի արձանագրության ներքո գործերը ցույց են տալիս, որ 17-րդ հոդվածի համատեքստում «անօրինական» նշանակում է «անօրինական»՝ ներպետական իրավունքում: Եթե այդպես է, ապա պատվի և հեղինակության պաշտպանությունն իր հնարավորություններով չափազանց թույլ է [16.11]: Այնուամենայնիվ, վերջերս ՄԻԿ-ը մեկնաբանել է 9-րդ հոդվածի 4-րդ կետի համատեքստում «օրինական» բառը. այն նշանակում է ավելին, քան պարզապես համապատասխանություն ներպետական օրենսդրությանը³⁹: Սա կարող է նախանշել ապագայում 17-րդ հոդվածով ամրագրված պատվի և հեղինակության պաշտպանության համատեքստում «անօրինական» բառի ավելի ընդարձակ մեկնաբանումներ:

³⁴ Նովակ, վերը, ծմբ. 7, էջ 306:

³⁵ Պարբ. 4.3:

³⁶ Պարբ. 12.7:

³⁷ Տե՛ս Մայքլ [Michael], վերը, ծմբ. 3, էջ 352 և Նովակ [Nowak], վերը, ծմբ. 7, էջեր 305-6:

³⁸ Տե՛ս նաև «*Սիմոնսն ընդդեմ Պանամայի*» (*Simons v Panama, 460/91*) գործը, որում կոմիտեն դիտարկեց հեղինակի բողոքն այն մասին, որ իր դեմ սկսված քրեական վարույթը հիմնված է եղել կեղծ ապացույցների վրա, հետևաբար ոտնձգություն է իր պատվին և մասնագիտական հեղինակությանը: Հայցը համարվել է անընդունելի:

³⁹ Տե՛ս [11.59–11.60]:

ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆԵՐԻ ՆԻՍՏԱԿԱՆ

[16.35] Անձնական կյանքում տեղի ունեցող սեռական վարքագծի կանոնակարգումը կարող է անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ միջամտություն համարվել: Այս առումով կարելի է հիշատակել փոքրամասնության տեսակետը «*Հերցբերգը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Hertzberg et al v Finland*, 61/79) գործում, որում նշված էր, որ 17-րդ հոդվածը պաշտպանում է «տարբերվելու և համապատասխանաբար ապրելու իրավունքը»⁴⁰: Նման կանոնակարգումը կարող է առնչվել տարասեռամուկների [heterosexuals], համասեռամուկների [homosexuals], մանկամուկների [paedophiles], մարմնավաճառների [prostitutes], պոռնոկադիրների [pornographers] և սադոմազոխիստների [sado-masochists] սեռական կանոնակարգմանը⁴¹:

[16.36] «ՏՈՈՆԵՆՆ ԸՆԴՈՂԵՄ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (TOONEN v AUSTRALIA, 488/92)

Այս հայցը վերաբերում էր Թասմանիայի այն օրենքների վիճարկմանը, որոնք քրեականացնում էին փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերությունները տղամարդկանց միջև: Հեղինակը ներկայացրել է հետևյալ փաստերը.

¶ 2.1. Հեղինակը համասեռամուկների իրավունքների առաջնության ակտիվիստ է Թասմանիայում՝ Ավստրալիայի վեց հիմնադիր նահանգներից մեկում: Նա վիճարկում է Թասմանիայի քրեական օրենսգրքի երկու դրույթները՝ 122-րդ հոդվածի (ա) և (գ) կետերը և 123-րդ հոդվածը, որոնք քրեականացնում են տղամարդկանց միջև սեռական կապերի տարբեր ձևերը, ներառյալ՝ համասեռամուկ չափահաս տղամարդկանց միջև փոխադարձ համաձայնությամբ գաղտնի սեռական կապերի բոլոր տեսակները:

¶ 2.2. Հեղինակը նկատում է, որ Թասմանիայի քրեական օրենսգրքի վերոնշյալ երկու հոդվածները Թասմանիայի ոստիկանության աշխատակիցներին իրավունք են տալիս հետախուզելու իր անձնական կյանքի ինտիմ կողմերը և բանտարկելու իրեն, եթե նրանք հիմք ունենան ենթադրելու, որ ինքը ներգրավվել է այնպիսի սեռական գործողություններում, որոնք հակասում են վերը հիշատակված հոդվածներին: Նա հավելում է, որ պետական դատախազության տնօրենը 1988 թ. օգոստոսին հայտարարել է, թե 122-րդ հոդվածի (ա) և (գ) կետերի և 123-րդ հոդվածի համաձայն՝ կծեռնարկվի բնություն, եթե հանցագործության կատարման վերաբերյալ լինեն բավարար ապացույցներ:

Տոոնենն ընդունեց, որ այդ օրենքը տարիներ ի վեր չի գործադրվել, սակայն պնդեց, որ, այնուամենայնիվ, ինքը դարձել է այդ օրենքի խարանող ազդեցության զոհ⁴²:

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ Թասմանիայի քրեական օրենսգրքի 122-րդ և 123-րդ հոդվածները խախտում են դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետը, 17-րդ և 26-րդ հոդվածները, որովհետև.

(ա) Դրանք տարբերություն չեն դնում մասնավոր [in private] և հասարակական [in public] պայմաններում կատարված սեռական գործողությունների միջև, և խիստ անձնական գործողություններում են հանրային դաշտ: Գործադրման դեպքում այս դրույթները հանգեցնում են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարման, քանի որ դրանք ոստիկանությանն իրավազորում են մտնել մարդու բնակարան ստնկ այն կասկածի հիման վրա, որ համաձայնության եկած երկու չափահաս համասեռամուկ տղամարդ գուցե քրեական հանցանք են կատարում: Նկատի առնելով այն խարանդ, որ Ավստրալիայի հասարակության մեջ (և հատկապես Թասմանիայում) դրվում է համասեռամուկների վրա, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարումը կարող է առաջացնել անօրինական ոտնձգություններ ներգրավված անձանց պատվի և հեղինակության նկատմամբ:

(բ) Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքն իրացնելու հարցում դրանք տարբերակում են կատարում անհատների միջև՝ սեռական վարքի, սեռական կողմնորոշման և սեռական ինքնության հիման վրա:

⁴⁰ Տե՛ս [18.25]:

⁴¹ Տե՛ս Նովակ, վերը, ծմբ. 7, էջ 298-9: Տե՛ս նաև «*Լասկին, Ջագարդը և Բրաունն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*Laskey, Jaggard and Brown v UK*, 1997, 24 EHRR 39) գործը, որով որոշ սադոմազոխիստական գործողությունների նկատմամբ ՄԹ-ի կողմից սահմանված արգելանքները ճանաչվել են ՄԻԵԿ-ով ճանաչված՝ անձնական կյանքի անձեռնմխելիության երաշխիքին համապատասխանող (ՄԻԵԿ-ի հոդված 8):

⁴² Այս գործում առկա «զոհ» հասկացության վերաբերյալ տե՛ս [3.38]:

Մասնակից պետության փաստարկները բացառիկ էին, քանի որ ըստ էության հաստատեցին հեղինակի պնդումները: Մասնակից պետությունը պնդեց հետևյալը.

¶ 6.1. ...Մասնակից պետությունն ընդունում է, որ հեղինակը տուժել է իր անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ անօրինական միջամտությունից, և նրա կողմից վիճարկվող իրավական նորմերը չեն կարող արդարացվել հանրային առողջության կամ բարոյականության պահպանման հիմքերով: Մասնակից պետությունը իր պատասխանում ներառել է թասմանիայի կառավարության դիտարկումները, նա ժխտում է, որ հեղինակը տուժել է դաշնագրի խախտումից:

¶ 6.2. Ինչ վերաբերում է 17-րդ հոդվածին, ապա դաշնային կառավարությունը նշում է, որ Թասմանիայի կառավարությունը պնդում է, որ 17-րդ հոդվածը «անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք» չի ստեղծում, այլ միայն անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ կամայական կամ անօրինական միջամտությունից զերծ լինելու ազատություն, և քանի որ վիճարկվող օրենքներն ընդունվել են ժողովրդավարական գործընթացի արդյունքում, դրանք չեն կարող անօրինական միջամտություն լինել մարդու անձնական կյանքի անձեռնմխելիությանը: Դաշնային կառավարությունը 17-րդ հոդվածի նախապատրաստական փաստաթղթերը վերանայելուց հետո միանում է «մասնավոր» բառի հետևյալ սահմանմանը. այն հարցերը, որոնք անհատական են, անձնական կամ կոնֆիդենցիալ, կամ որոնք զերծ են պահվում կամ հեռացվում են հասարակական դիտարկումից: Մասնակից պետությունն ընդունում է, որ այս սահմանման հիման վրա 17-րդ հոդվածում ամրագրված «անձնական կյանքի անձեռնմխելիություն» հասկացությունը ներառում է մասնավոր պայմաններում փոխհամաձայնությամբ կատարվող սեռական գործողություններ:

¶ 6.4. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք հեղինակի անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ միջամտությունը կամայական կամ անօրինական էր, ապա մասնակից պետությունը հղում է կատարում 17-րդ հոդվածի նախապատրաստական փաստաթղթերին և նկատում, որ Մարդու իրավունքների հանձնաժողովում այդ դրույթի նախագծի մշակման պատմությունը ցույց է տալիս, որ «կամայական» եզրույթը նպատակ ուներ ներառելու այն միջամտությունները, որոնք, Ավստրալիայի օրենսդրությամբ, կրնա գրկվել «ոչ ողջամիտ» հասկացության սահմաններում: Ի լրումն՝ Մարդու իրավունքների կոմիտեն 17-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանության մեջ նշում է, որ «կամայականություն հասկացությունը կոչված է երաշխավորելու համար, որ նույնիսկ օրենքով նախատեսված միջամտությունը պետք է համապատասխանի [դաշնագրի] նորմերին, նպատակներին և խնդիրներին և պետք է ... տվյալ հանգամանքներում լինի ողջամիտ»: Սեքսբերվածի և «ողջամտություն» հասկացության վերաբերյալ կոմիտեի նախադեպային իրավունքի հիման վրա մասնակից պետությունը անձնական կյանքի անձեռնմխելիության նկատմամբ «ողջամիտ» միջամտությունները մեկնաբանում է որպես միջոցառումներ, որոնք հիմնված են ողջամիտ և առարկայական չափանիշների վրա և համարժեք են այն նպատակին, որին հասնելու համար ընդունվում են: ...

¶ 6.6. Այսուամենայնիվ, մասնակից պետությունը զգուշացնում է, որ 17-րդ հոդվածի ձևակերպումը անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի որոշ խախտումների հնարավորություն է տալիս, եթե դրանց համար գոյություն ունեն ողջամիտ հիմքեր, և տեղական սոցիալական ավանդույթները կարող են կարևոր նշանակություն ունենալ անձնական կյանքի անձեռնմխելիության որևէ միջամտության ողջամիտ լինելու հարցում: Մասնակից պետությունը նկատում է, որ չնայած նախկինում Ավստրալիայի այլ նահանգներում գոյություն են ունեցել օրենքներ, որոնք պատիժ են սահմանել համասեռամոլության համար, այդ ժամանակներից ի վեր դրանք չեղյալ են հայտարարվել՝ բացառությամբ Թասմանիայի: Ի լրումն՝ համասեռամոլության կամ սեռական կողմնորոշման հիման վրա խտրականությունն անօրինական է Ավստրալիայի վեց նահանգներից երեքում և Ավստրալիայի երկու ներքին ինքնավար տարածքներում: Դաշնային կառավարությունը հայտարարել է, որ սեռական նախապատվությունը համարվում է ԱՄԿ-ի թիվ 111 կոնվենցիայով (Կոնվենցիա զբաղվածության կամ աշխատանքի ոլորտում խտրականության մասին) հիշատակվող խտրականության հիմնավորում, և ստեղծեց մի մեխանիզմ, որի միջոցով աշխատանքում սեռական կողմնորոշման հիման վրա խտրականության վերաբերյալ բողոքները կարող են դիտարկվել Ավստրալիայի Մարդու իրավունքների և հավասար հնարավորությունների հարցերով հանձնաժողովի կողմից:

¶ 6.7. Վերջապահապես հիման վրա մասնակից պետությունը առարկում է՝ նշելով, որ այժմ Ավստրալիայում ընդհանուր առմամբ ընդունվում է այն, որ որևէ անձ իր սեռական կողմնորոշման հիման վրա չպետք է հայտնվի ավելի աննպաստ վիճակում: Հաշվի առնելով ամբողջ Ավստրալիայում, բացառությամբ Թասմանիայի, առկա իրավական և սոցիալական իրավիճակը, մասնակից պետությունն ընդունում է, որ որպեսզի պահպանվի Ավստրալիայի հասարակության բարոյական կառուցվածքը, տղամարդկանց միջև սեռական գործողությունների լիակատար արգելման անհրաժեշտություն չկա: Մասնակից պետությունը «չի փորձում պնդել, որ վիճարկվող օրենքները հիմնված են ողջամիտ և առարկայական չափանիշների վրա»:

¶ 6.8. Վերջապես, 17-րդ հոդվածի համատեքստում մասնակից պետությունն ուսումնասիրում է, թե արդյոք վիճարկվող օրենքները համարժեք են այն նպատակին, որին ձգտում են հասնել: Մասնակից պետությունը չի ընդունում Թասմանիայի իշխանությունների այն փաստարկը, թե Թասմանիայի քրեական օրենսգրքի 122-րդ և 123-րդ հոդ-

վածներով առաջացած անձնական կյանքի անձեռնմխելիության միջամտությունների աստիճանը համարժեք է Թասմանիայի հասարակության բարոյական չափանիշների սպառնալիքի ընկալմանը: Այս համատեքստում մասնակից պետությունը նշում է, որ միայն այն փաստը, որ նշված օրենքները չեն գործադրվում գաղտնի պայմաններում փոխհամաձայնեցված սեռական գործողություններով զբաղվող անձանց նկատմամբ, ցույց է տալիս, որ նշված օրենքներն այդ հասարակության բարոյական չափանիշների պաշտպանության տեսանկյունից էական նշանակություն չունեն: Ողջ վերոշարադրյալի լույսի ներքո մասնակից պետությունը եզրակացնում է, որ վիճարկվող օրենքները տվյալ հանգամանքներում ողջամիտ չեն, և միջամտություն անձնական կյանքի անձեռնմխելիությանը կամայական է: Մասնակից պետությունը նշում է, որ վերջին ժամանակներս Թասմանիայի իշխանությունները տարբեր առիթներով առաջարկել են չեղյալ հայտարարել այդ օրենքները: ...

¶ 8.4. Թեև մասնակից պետությունն ընդունում է, որ վիճարկվող նորմերը միջամտություն են պրն Տոոնենի անձնական կյանքի անձեռնմխելիությանը, Թասմանիայի իշխանությունները հայտարարում են, որ վիճարկվող օրենքները արդարացվում են հանրային առողջության և բարոյականության պահպանման հիմքերով, քանի որ դրանք մասամբ նախատեսված են Թասմանիայում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի տարածումը կանխելու համար, և այն պատճառով, որ 17-րդ հոդվածում որոշակի սահմանափակման բացակայության պայմաններում բարոյական հարցերը պետք է համարվեն պետության ներքին որոշելիք խնդիրներ:

ՄԻԿ-ը որոշեց, որ Թասմանիայի *քրեական օրենսգրքի* համապատասխան դրույթները ոտնահարել են Տոոնենի՝ 17-րդ հոդվածով ճանաչված իրավունքները:

¶ 8.2. Այնքանով, որքանով խնդիրն առնչվում է 17-րդ հոդվածին, անվիճելի է, որ մասնավոր պայմաններում չափահասների միջև փոխհամաձայնության հիման վրա տեղի ունեցող սեռական գործողությունները տեղավորվում են «անձնական կյանքի անձեռնմխելիության» հասկացության շրջանակներում, և պրն Տոոնենը փաստորեն ներկայումս տուժում է Թասմանիայի նշված օրենքների հարատևությունից: Կոմիտեն համարում է, որ Թասմանիայի քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածի (ա), (գ) կետերը և 123-րդ հոդվածը «միջամտում» են հեղինակի անձնական կյանքի անձեռնմխելիությանը, եթե նույնիսկ այդ նորմերը չեն գործադրվել մեկ տասնամյակ: Այս համատեքստում կոմիտեն նշում է, որ պետական դատախազության՝ համասեռական մասնավոր գործողությունների համար քրեական վարույթ չնախաձեռնելու քաղաքականությունը երաշխիք չէ, որ ապագայում գործողություններ չեն ձեռնարկվի համասեռամուլների դեմ, մասնավոր 1988 թ. Թասմանիայի պետական դատախազության տնօրենի և Թասմանիայի խորհրդարանի անդամների արած հայտարարությունների լույսի ներքո, որոնք չեն վիճարկվել: Վիճարկվող նորմերի գոյությունը, հետևաբար, շարունակաբար և ուղղակիորեն «միջամտում» է հեղինակի անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

¶ 8.3. Մասնավոր պայմաններում համասեռական վարքի արգելումը նախատեսված է օրենքով, այն է՝ Թասմանիայի քրեական օրենսգրքի 122-րդ և 123-րդ հոդվածներով: Ինչ վերաբերում է այն հարցին, թե կարելի՞ է դա համարել կամայական, կոմիտեն հիշում է, որ 17-րդ հոդվածի վերաբերյալ իր թիվ 16(32) Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ «կամայականություն հասկացության ներմուծումը նպատակ ունի երաշխավորելու, որ նույնիսկ օրենքով նախատեսված միջամտությունները պետք է համապատասխանեն դաշնագրի նորմերին, նպատակներին ու խնդիրներին և յուրաքանչյուր դեպքում պետք է տվյալ հանգամանքներում ողջամիտ լինեն»: Կոմիտեն ողջամտության պահանջը մեկնաբանում է այնպես, որ յուրաքանչյուր միջամտություն մարդու անձնական կյանքի անձեռնմխելիությանը պետք է համարժեք լինի այն նպատակին, որին ձգտում են հասնել, և յուրաքանչյուր առանձին վերցրած գործի հանգամանքներում պետք է լինի անհրաժեշտ: ...

¶ 8.5. Ինչ վերաբերում է Թասմանիայի իշխանությունների՝ հանրային առողջության պահպանման վերաբերյալ փաստարկին, ապա կոմիտեն նշում է, որ համասեռական վարքագծի քրեականացումը չի կարող համարվել ողջամիտ միջոց կամ համարժեք միջոցառում՝ հասնելու ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելման նպատակին: Ավստրալիայի կառավարությունը նկատում է, որ համասեռական գործողությունները քրեականացնող օրենքները միտում ունեն խոչընդոտելու հանրային առողջության պահպանման ուղղված ծրագրերը՝ «ընդհատակ մղելով վարակման վտանգի ենթակա շատ մարդկանց»: Այսպիսով, պարզվում է, որ համասեռական գործողությունների քրեականացումը հակառակ ազդեցություն է գործում ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխարգելմանը նվիրված արդյունավետ կրթական ծրագրերի իրականացման վրա: Երկրորդ՝ կոմիտեն նշում է, որ համասեռական գործողությունների շարունակվող քրեականացման և ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի վիրուսի տարածման արդյունավետ վերահսկման միջև որևէ կապ ցույց չի տրվել:

¶ 8.6. Կոմիտեն չի կարող ընդունել նաև, որ դաշնագրի 17-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ բարոյական հարցերը բացառապես ներպետական դիտարկման առարկա են, քանի որ սա ճանապարհ կհարթի դեպի այնպիսի հավանական իրավիճակ, երբ անձնական կյանքի անձեռնմխելիությանը միջամտող մեծ թվով օրենքներ դուրս մնան կոմիտեի մշտական զննման դաշտից: Բացի այդ, կոմիտեն նշում է, որ բացառությամբ Թասմանիայի, Ավստրալիայում չեղյալ են հայտարարվել բոլոր այն օրենքները, որոնք քրեականացնում էին համասեռամուլությունը, և ակնհայտ է, որ նույնիսկ Թասմանիայում գոյություն չունի փոխհամաձայնություն այն հարցում, թե արդյոք 122-րդ և 123-րդ հոդվածները նոսրացնում են չեղյալ հայտարարված: Ապա հաշվի առնելով այն, որ ներկայումս այս նոր-

մերը չեն գործադրվում, ինչը ենթադրում է, որ դրանք Թասմանիայում բարոյականության պաշտպանության տեսանկյունից եական չեն համարվում, կոմիտեն եզրակացնում է, որ նշված դրույթները տվյալ գործի հանգամանքներում չեն բավարարում «ողջամտության» պահանջները և կամայականորեն միջամտում են պրն Տոոնենի՝ 17-րդ հոդվածի 1-ին կետով ճանաչված իրավունքը:

[16.37] Կոմիտեն մերժեց Թասմանիայի ներկայացրած այն փաստարկը, ըստ որի՝ հասարակական բարոյականությունը բացառապես ներպետական խնդիր է: Հակառակ որոշումը կարող էր պետություններին հնարավորություն տալ արդարացնելու ծայրահեղ հալածող միջոցները հասարակական բարոյականության տեսանկյունից կասկածելի հիշատակումներով: «[Այդ դեպքում] պետության կողմից բարոյականությամբ հիմնավորման պնդումները հնարավոր կլինեին քննել միայն այն առումով, թե որքանով են բարեխիղճ եղել. բարոյականության հիմնավորումից բխող ցանկացած ակնառու ոչ ողջամիտ որոշում կհամարվի անհիմն»⁴³: Սա շեշտակիորեն կփոքրացնեի անհատի՝ դաշնագրով ամրագրված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

[16.38] Որոշման 8.6-րդ պարբերությունում կոմիտեն նշել է այն մասին, որ համասեռամոլությունն Ավստրալիայում լայնորեն ընդունվում է, և դա ապացույց է այն իրողության, որ արվամոլների միջև սեռական կապերի արգելումը հասարակական բարոյականության պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ չէր: Սա ցույց է տալիս, որ հասարակական բարոյականությունը հարաբերական արժեք է⁴⁴: Այդպիսով, «ավելի քիչ հանդուրժողական» պետության դեպքում արվամոլների միջև սեռական կապերի արգելումը գուցե հաջողության հասներ⁴⁵: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ն իր վերջին եզրափակիչ դիտարկումներից մեկում թերևս հաստատել է *Տոոնենի* դեպքի համաշխարհային կիրառումը: ՄԻԿ-ը քննադատել է արվամոլների միջև սեռական կապերի արգելքները *Լեսոտոյում*⁴⁶, *Տանզանիայում*⁴⁷ և *Եգիպտոսում*⁴⁸, ինչպես նաև սեռական կողմնորոշումը որպես խտրականության արգելված հիմնավորում չհիշատակելը *Լեհաստանի* սահմանադրության մեջ⁴⁹ և *Հոնկոնգում*⁵⁰:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

[16.39]

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 10. Համակարգիչներում, տվյալների շտեմարաններում և այլ կրիչներով անձնական տեղեկությունների հավաքումն ու պահպանումը պետական իշխանությունների կամ մասնավոր անձանց և կամ կառույցների կողմից պետք է կարգավորվի օրենքով: Մասնակից պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու, որ մարդու անձնական կյանքի մասին տեղեկությունները չհայտնվեն այնպիսի անձանց ձեռքին, ովքեր օրենքով լիազորված չեն ստանալու, մշակելու և օգտագործելու դրանք, և ապահովելու, որ տեղեկությունները երբեք չօգտագործվեն դաշնագրի հետ անհամատեղելի նպատակներով: Սեփական անձնական կյանքն ամենաարդյունավետ կերպով

⁴³ S. Joseph, 'Gay Rights Under the ICCPR—Commentary on Toonen v Australia' (1994) 13 *University of Tasmania Law Review* 392, at 397:

⁴⁴ Տե՛ս նաև [18.27]:

⁴⁵ Տե՛ս Ջոզեֆ, վերը, ծնթ. 43, էջ 407:

⁴⁶ Եզրափակիչ դիտարկումներ Լեսոտոյի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106, պարբ. 13:

⁴⁷ Եզրափակիչ դիտարկումներ Տանզանիայի Միացյալ Հանրապետության վերաբերյալ (1998) CCPR/C/79/Add. 97, պարբ. 23:

⁴⁸ Եզրափակիչ դիտարկումներ Եգիպտոսի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/76/EGY, պարբ. 19:

⁴⁹ Եզրափակիչ դիտարկումներ Լեհաստանի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110, պարբ. 22:

⁵⁰ Եզրափակիչ դիտարկումներ Հոնկոնգի (Չինաստան) վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 117, պարբ. 15: Տե՛ս նաև [1.99]:

Նմանատիպ տարածաշրջանային համեմատական մախաղեպային իրավունքի համար տե՛ս «*Դադեոն ընդդեմ ՄԻԿ-ի*» (*Dudgeon v UK*, 1982, 4 EHR 149) գործը, «*Նորիսն ընդդեմ Իռլանդիայի*» (*Norris v Ireland*, 1991, 13 EHR 186) գործը, «*Մոդինոսն ընդդեմ Կիպրոսի*» (*Modinos v Cyprus*, 1993, 16 EHR 485) գործը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես գտել է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքների ոտնահարումներ՝ կապված խտրականության իրավունքի հետ, որը վերաբերում է տարասեռական տղամարդկանց և համասեռամոլ տղամարդկանց դեպքերում համաձայնության գալու տարբեր տարիքներին: «*Լ.-ն և Վ.-ն ընդդեմ Ավստրիայի*» (*L and V v Austria*) և «*Ս.Լ.-ն ընդդեմ Ավստրիայի*» (*S.L. v Austria*) գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը՝ կայացված 2003 թ. հունվարի 9-ին:

Տե՛ս նաև «*Ա.Դ.Թ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*A.D.T. v United Kingdom*, 2001, 31 EHR 803) գործը:

պաշտպանելու նպատակով յուրաքանչյուր անհատ պետք է իրավունք ունենա պարզելու իրեն հասկանալի ձևով, թե արդյոք տվյալների մեքենայացված շտեմարաններում հավաքվե՞լ են անձնական տեղեկություններ, և եթե հավաքվել են, ի՞նչ տեղեկություններ են դրանք և ի՞նչ նպատակով են հավաքվել: Ի լրումն՝ յուրաքանչյուր անհատ պետք է ունակ լինի պարզելու, թե ո՞ր պետական հաստատությունները կամ անհատ անձինք կամ կառույցներն են վերահսկում կամ իրավունք ունեն վերահսկելու իր անձնական գործը: Եթե նման անձնական գործերը պարունակում են ոչ ճիշտ տվյալներ կամ հավաքվել ու մշակվել են օրենքի նորմերին հակասող եղանակներով, ապա յուրաքանչյուր անձ պետք է սխալների շտկում կամ վերացում պահանջելու իրավունք ունենա⁵¹:

Ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաները ահռելի ծավալներով անձնական տեղեկություններ հավաքելու և պահելու հնարավորություն են տալիս: Տվյալների պաշտպանության ոլորտում 17-րդ հոդվածի կիրառումը, հետևաբար, չափազանց կարևոր է⁵²:

ԴՆԹ-Ի ՍՏՈՒԳՈՒՄ

[16.40] ՄԻԿ-ը ԴՆԹ-ի ստուգման խնդրին անդրադարձել է միայն մեկ անգամ՝ Դանիայի չորրորդ հերթական զեկույցի վերաբերյալ երկխոսության շրջանակներում: ՄԻԿ-ը հայտարարել է հետևյալը⁵³.

¶ 15. Կոմիտեն նշում է, որ համաձայն «Օտարերկրացիների մասին օրենքի» հոդված 40(գ)-ի՝ ներգաղթի հարցերով պետական մարմինը կարող է պահանջել դիմողի և այն անձանց ԴՆԹ-ի ստուգում, ուն հետ ամուսնական կապերի մասին է հավաստիացնում դիմողը, ինչի հիման վրա կայացվում է որոշում բնակության թույլտվության մասին:

¶ ԴՆԹ-ի ստուգումը կարող է դաշնագրի 17-րդ հոդվածով ամրագրված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի համար կարևոր հետևանքներ ունենալ: Դանիան պարտավոր է ապահովել, որ նման ստուգումն օգտագործվի միայն անհրաժեշտության դեպքում, և եթե դա տեղին է, ընտանեկան կապի բացահայտման համար, ինչի հիման վրա կայացվում է բնակության թույլտվության մասին որոշումը (հոդված 23)⁵⁴:

ՄԻԿ-ը դեռևս չի մեկնաբանել ԴՆԹ-ի ստուգման այլ կիրառումները, օրինակ՝ դրա օգտագործումը հանցագործությունների բացահայտման և հիվանդությունների ախտորոշման նպատակով:

ԳԱՐՏՆԱԴԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[16.41] ՄԻԿ-ն ընդունել է մի քանի մեկնաբանություններ գաղտնապահության մասնագիտական պարտականությունների վերաբերյալ: Նման պարտականությունները անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի մի կարևոր մասն են, ինչպես վերահաստատվեց Պորտուգալիայի վերաբերյալ նրա վերջին մեկնաբանություններում⁵⁵:

¶ 18. Կոմիտեն մտահոգված է, որ Քրեական դատավարության օրենսգրքում չափազանց ընդարձակ սահմանումներով նկարագրված շրջանակներում իրավաբաններից և բուժող բժիշկներից կարող են պահանջել վկայություն տալ՝ հակառակ նրանց՝ գաղտնիք պահելու պարտականության (դաշնագրի հոդված 17):

Մասնակից պետությունը պարտավոր է լրամշակել իր օրենսդրությունն այնպես, որ այն ճշգրտորեն բնորոշի այն հանգամանքները, որոնց դեպքում իրավաբանների և բուժող բժիշկների մասնագիտական արտոնության նկատմամբ սահմանափակումներ են կիրառվում:

⁵¹ Տե՛ս նաև Եգրափակիչ դիտարկումներ Կորեայի Հանրապետության վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 114, պարբ. 17, որտեղ ՄԻԿ-ը քննադատում է «տվյալների շտեմարաններում ոչ ճիշտ տեղեկությունների շտկման միջոցով կամ դրանց սխալ օգտագործման, կամ չարաշահման դեմ իրավական պաշտպանության համարժեք միջոցների» պակասը:

⁵² Ընդհանուր առմամբ, տե՛ս L.A. Bygrave, "Data Protection Pursuant to the Right to Privacy in Human Rights Treaties" [Լ.Ա. Բայգրեյվ, «Մարդու իրավունքների համաձայնագրերում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքով տվյալների պաշտպանությունը»], (1998) 6 International Journal of Law and Information Technology 247, մասնավորապես՝ էջ 252-4:

⁵³ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/DNK:

⁵⁴ Ընտանիքի վերամիավորման իրավունքների վերաբերյալ տե՛ս [20.13]ff:

⁵⁵ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/PRT:

Եզրակացություն

[16.42] ՄԻԿ-ը հաստատել է, որ անձնական կյանքի անձեռնմխելիության «կամայական» միջամտությունների արգելումը վերաբերում է նաև այլ միջամտությունների, որոնք նույնիսկ թույլատրված են ներպետական օրենսդրությամբ: Կիրառվող նախադեպային իրավունքն անդրադարձել է անձնական կյանքի անձեռնմխելիության որոշակի կողմերի, ինչպիսիք են տվյալների պաշտպանությունը, անձի անվան վերահսկողությունը, նամակագրությունը, սեռական կյանքի անձեռնմխելիությունը, պատիվը, հեղինակությունը, ինչպես նաև անձնական կյանքի անձեռնմխելիությունը ընտանիքի ներսում: Այսուհանդերձ, անձնական կյանքի անձեռնմխելիությանն առնչվող բազմաթիվ վիճահարույց իրավունքներ դիտարկման համար դեռևս չեն հասունացել. դրանցից են այն իրավունքները, որոնք վերաբերում են հիվանդի համար օգտակար բուժմանը՝ առանց նրա համաձայնության, կամ տրանսսեռական անձի սեռային վերակողմնորոշման մասին պաշտոնական ծանուցմանը⁵⁶:

⁵⁶ Տե՛ս [20.30]:

Մտքի, խղճի և կրոնի ազատություն. հոդված 18

- Մտքի, խղճի և կրոնի ազատություն.....[17.02]
- Կրոն կամ համոզմունքներ ունենալու կամ ընդունելու ազատություն[17.06]
- Հարկադրանքի արգելում[17.07]
- Կրոնի կամ համոզմունքների դավանումը[17.10]
- Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատության
սահմանափակումներ[17.13]
 - Հասարակական անվտանգություն և առողջության պահպանում..... [17.17]
 - Հասարակական կարգուկանոն[17.18]
 - Հասարակական բարոյականություն.....[17.19]
- Կրոնի հաստատում.....[17.20]
- Կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից
հրաժարվելու իրավունք[17.22]
- Կրոնական և բարոյական դաստիարակությանը վերաբերող իրավունքներ.
հոդված 18(4)[17.28]
- Եզրակացություն[17.33]

ՀՈԴՎԱԾ 18

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ միատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի և քարոզչության միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:

3. Կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնարար իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

4. Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:

[17.01] 18-րդ հոդվածում մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի պաշտպանությունը լրացվում է ՄԱԿ-ի Կրոնի կամ համոզմունքների հիման վրա խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագրով՝ ընդունված 1981 թ.: Այնուամենայնիվ, այս հռչակագիրը տասնութ տարի անց հող չստեղծեց պարտադիր այնպիսի մի համաձայնագրի համար, որը համեմատելի լիներ ռասայական և գենդերային խտրականության վերացման մասին կոնվենցիաների հետ¹:

¹ Այս կոնվենցիաների վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների համար տես գլուխ 23:

Այսուհանդերձ, կասկած չկա, որ ՄԻԿ-ի վրա հռչակագիրն ազդեցություն է ունեցել, մասնավորապես՝ 18-րդ հոդվածն իր թիվ 22 Ընդհանուր մեկնաբանության մեջ պարզաբանելիս²:

Մտքի, խղճի և կրոնի ազատություն

[17.02]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. 18-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը (որն ընդգրկում է սեփական համոզմունքների ազատությունը) ունի հեռահար և խորը ազդեցություն. այն ներառում է բոլոր հարցերի շուրջ մտքի ազատությունը, անձնական համոզմունքը և նվիրվածությունը կրոնին կամ հավատամքին՝ անկախ այն հանգամանքից՝ դրանց դավանումը կատարվում է անհատապես, թե այլոց հետ կազմած խմբով: Կոմիտեն մասնակից պետությունների ուշադրությունը սևեռում է այն փաստին, որ մտքի ազատությունը և խղճի ազատությունը պաշտպանված են կրոնի և համոզմունքների ազատության հետ հավասարապես: Այս ազատությունների հիմնարար հատկանիշն արտացոլված է նաև այն փաստում, որ այս նորմը չի կարող սահմանափակվել, նույնիսկ արտակարգ իրավիճակների դեպքում, ինչպես ամրագրված է դաշնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետում:

¶ 2. 18-րդ հոդվածը պաշտպանում է աստվածապաշտական (թեիստական), ոչ աստվածապաշտական (ոչ թեիստական) և անաստվածական (աթեիստական) համոզմունքները, ինչպես նաև որևէ կրոն կամ համոզմունքներ չդավանելու իրավունքը: «Համոզմունք» և «կրոն» եզրույթները հարկ է ընկալել լայն իմաստով: 18-րդ հոդվածն իր կիրարկման մեջ չի սահմանափակվում ավանդական դավանանքներով կամ այնպիսի կրոններով և համոզմունքներով, որոնք, ավանդական կրոնների նման, ունեն ինստիտուցիոնալ հատկանիշներ կամ պրակտիկա: Դետեյմալ, կոմիտեն մտահոգիչ է համարում որևէ կրոնի կամ համոզմունքի նկատմամբ որևէ հիմքով խտրական վերաբերմունք դրսևորելու որևէ միտում, ներառյալ այն փաստը, որ դրանք նորաստեղծ են կամ ներկայացնում են կրոնական փոքրամասնություններ, որոնք գերիշխող կրոնական համայնքի կողմից կարող են ենթարկվել թշնամական վերաբերմունքի:

¶ 3. 18-րդ հոդվածը մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատությունը տարբերում է կրոնը կամ համոզմունքը դավանելու ազատությունից: Այն թույլ չի տալիս սեփական ընտրությամբ որևէ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատության անխտիր որևէ սահմանափակում: Նշված ազատությունները պաշտպանված են առանց որևէ նախապայմանի, ինչպես յուրաքանչյուրի՝ 19-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված իրավունքը, այն է՝ անարգել հավատարիմ մնալ սեփական կարծիքներին: 18-րդ հոդվածի 2-րդ կետի և 17-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի հարկադրանքի՝ բացահայտելու սեփական մտքերը կամ որևէ կրոնի կամ համոզմունքների դավանումը³:

[17.03] Քանի որ 18-րդ հոդվածը պաշտպանում է անձի կրոնի, մտքի և խղճի ազատությունը, ՄԻԿ-ը, զուցե խելամտորեն, որոշել է չսահմանել «կրոն» եզրույթը: Ուստի կոմիտեն «գլուխ չի կտրել» այն հարցի շուրջ, թե հետևյալ գործոնները որքանով են առնչվում այդ սահմանմանը. դավանողների թիվը, համապատասխան համոզմունքի ճշմարտացիությունը կամ կեղծ լինելը և համապատասխան շարժման պատմական հիմքը⁴:

[17.04]

«Մ.Ա.Բ.-ն, Վ.Ա.Թ.-ն և Ժ.-Ա.Ի.Տ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (M.A.B., W.A.T and J-A.Y.T v CANADA, 570/93)

¶ 2.1. Դեղինակները «Տիեզերական եկեղեցու վեհաժողով» [Assembly of the Church of the Universe] ղեկավար անդամներ և «լիազորներ» են, ում հավատը և կրոնական գործունեությունը ներառում են եկեղեցու «Սուրբ խորհրդի»

² Տե՛ս B. Dickson, "The United Nations and Freedom of Religion" (1995) 44 ICLQ 341, at 345-6:

³ Հոդված 17-ը պաշտպանում է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. ընդհանուր առմամբ տե՛ս գլուխ 16: Տե՛ս նաև [18.02]:

⁴ Ընդհանուր առմամբ տե՛ս W. Sadurski, 'On Legal Definitions of Religion' (1989) 63 *Australian Law Journal* 834: Կրոնների «պատմական հիմքերի» վերաբերյալ ՄԻԿ-ն ընդունել է, որ «նորաստեղծ» շարժումները կարող են համարվել կրոններ (պարբ. 2, թիվ 22 Ընդհանուր մեկնաբանություն): Տե՛ս նաև P. Cumper, 'Freedom of Thought, Conscience, and Religion', in D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 359:

[“Sacrament”] նկատմամբ հոգատարությունը, տարածումը, դավանումը, ցրումը, պահպանումը, դրա նկատմամբ հավատարմությունը և դրա պաշտամունքը: Չնայած հեղինակներն այս «խորհուրդը» անվանում են նաև «Աստծո կենաց ծառ», այն հայտնի է *cannabis sativa* կամ մարիխուանա անվամբ:

¶ 2.2. Եկեղեցու հիմնադրումից ի վեր դրա անդամներից մի քանիսը հակամարտության մեջ են մտել օրենքի հետ, քանի որ մարիխուանայի հետ նրանց կապի և մարիխուանայի պաշտամունքի վրա տարածվում է «Թմրամիջոցների վերահսկման» Կանադայի օրենքի նորմերի գործողությունը:

¶ 2.3. 1990 թ. հոկտեմբերի 17-ին եկեղեցուն միանալու և «Եկեղեցու Սուրբ զաղտնիքը» ձեռք բերելու ցանկության պատրվակով Կանադայի արքայական ոստիկանության հեծելազորի [Royal Canadian Mounted Police (RCMP)] մի կոնստեբլ մուտք է գործել այս եկեղեցու՝ Օնտարիո նահանգի Յամիլտոն քաղաքում գտնվող գրասենյակ: Ոստիկանին մի քանի գրամ մարիխուանա են առաջարկել, ինչը հանգեցրել է Վ.Ա.Թ.-ի և Ժ.-Ա.Ի.Տ.-ի ձերբակալությանը և կալանքին: Նրանց մոտ հայտնաբերված ամբողջ մարիխուանան և գումարը առգրավվել է, իսկ վերոնշյալ երկու անձանց նկատմամբ հարուցվել է դատական վարույթ՝ համաձայն «Թմրամիջոցների վերահսկման» օրենքի 4-րդ հոդվածի: Եկեղեցու գործունեության և գույքի հետագա քննությունը հանգեցրել է նաև Մ.Ա.Բ.-ի ձերբակալությանը և կալանքին:

Չեղիմակները ՄԻԿ-ին բողոք են ներկայացրել՝ հայտարարելով, *ի թիվս այլոց*, որ ուտնահարվել է իրենց դավանանքի ազատությունը: ՄԻԿ-ը կարճ ժամանակ անց մերժել է այս հայցը:

¶ 4.2. Նկատի առնելով կամընտիր արձանագրության 2-րդ և 3-րդ հոդվածներում սահմանված պահանջները՝ կոմիտեն ուսումնասիրել է այն հարցը, թե ներկայացված փաստերը առաջին հայացքից [*prima facie*] խնդիրներ առաջացնո՞ւմ են դաշնագրի որևէ դրույթով: Կոմիտեն եզրակացնում է, որ չեն առաջացնում: Մասնավորապես, մի հավատ, որն առաջին հերթին կամ բացառապես բաղկացած է թմրամիջոցի պաշտամունքից և տարածումից, ակնհայտորեն չի կարող տեղավորվել դաշնագրի 18-րդ հոդվածի (կրոնի և խղճի ազատություն) շրջանակներում: Իսկ թմրամիջոց պահելու և տարածելու համար ձերբակալությունն ակնհայտորեն համադրվում է դաշնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի (կամայական ձերբակալությունից և կալանքից զերծ լինելու ազատություն) հետ:

Թմրամիջոցի օգտագործումը կարող է լինել կրոնական վարքականոն: Իսկապես, ռաստաֆարյանականությունը [Rastafarianism] մի կրոն է, որում մարիխուանայի սպառումը կարևոր է, քանի որ այն նպաստում է մեղիտացիային և Աստծո անունը («Յահ» [“Jah”]) մտահայելուն: Չաշվի առնելով պաշտամունքների և այլ կեղծ կրոնական շարժումների տարածվածությունն աշխարհում՝ գուցե կոմիտեի կողմից խելամիտ չէր լինի նման խմբերին «կրոն» կարգավիճակից զրկելը, հատկապես եթե նման զրկումը պայմանավորված է կոմիտեի կողմից տվյալ խմբի գործունեության նկատմամբ վերապահումներով: Գուցե ավելի հեռատեսական կլիներ, 18-րդ հոդվածի նպատակներից ելնելով, որդեգրել «կրոն» հասկացության մի ավելի ընդգրկուն սահմանում՝ նկատի առնելով այն, որ որևէ կրոն դավանելու ազատությունը կարող է ենթակա լինել բազմաթիվ թույլատրելի սահմանափակումների⁵: Օրինակ՝ այս դեպքում ՄԻԿ-ը կարող էր «Վեհաժողովը» դասակարգել որպես «կրոն», սակայն պաշտպանեց այդ կրոնը դավանելու (մարիխուանա օգտագործելու) նկատմամբ կանադական սահմանափակումները՝ որպես հասարակական առողջությունը կամ հասարակական կարգուկանոնը պաշտպանելուն ուղղված օրինական միջոց:

[17.05] «Ռոսն ընդդեմ Կանադայի» (*Ross v Canada*, 736/97) գործում հեղինակը, որ դպրոցի ուսուցիչ է, ներկայացրել է մի բողոք, որը վերաբերում էր Կանադայի տեղական իշխանությունների կողմից իրեն կարգապահական տույժի ենթարկելուն՝ իր աշխատություններում հրատարակված այն համոզմունքի հիմքով, որի համաձայն՝ հուդայականությունը և սիոնիզմը սպառնալիք են քրիստոնեությանը⁶: Պետությունը պնդել է, որ հետագայում Ռոսի կողմից 18-րդ հոդվածով ներկայացված բողոքն անընդունելի է, քանի որ 18-րդ հոդվածը կապ չունի տվյալ խնդրի հետ: Պետության կարծիքով՝ Ռոսի կողմից արտահայտված տեսակետները որևէ կրոնական հավատ չեն ներկայացնում: Օրինակ՝ պետությունը պնդել է, որ հակասեմականությունը քրիստոնեական հավատքի մաս չէ⁷: Վերջիվերջո, ՄԻԿ-ը որևէ խախտում չի գտել, քանի որ Ռոսի մեկնաբանումը համապատասխանում է 18-րդ հոդվածով նախատեսված սահմա-

⁵ Տե՛ս մեկնաբանությունն այստեղ՝ [17.13]ff:

⁶ Այս գործից մեջբերված հատվածների համար տե՛ս [18.57]:

⁷ S. Joseph, ‘Human Rights Committee: Recent Cases’ (2001) 1 HRLR 83, 92:

նափակումներին⁸: Այդ իսկ պատճառով ՄԻԿ-ը վերջնական պատասխան չի տվել այն հարցին, թե Ռուսի համոզմունքները կարող էին բնորոշվել որպես «կրոն»:

[17.05Ա] 18-րդ հոդվածը, որպես կանոն, ծագում է այն գործերում, որոնք վերաբերում են կրոնական համոզմունքներին: Այնուամենայնիվ, 18-րդ հոդվածի 1-ին կետի խախտում հայտնաբերվել է «*Կանգն ընդդեմ Կորեայի Հանրապետության*» (*Kang v Republic of Korea*, 878/99) գործում. դա բխել է հեղինակի՝ պետության «գաղափարախոսական փոխակերպման համակարգին» ենթարկվելու հանգամանքից, որով սահմանվել էին խթաններ և պատիժներ, որպեսզի քաղաքական տեսակետների փոփոխություն թելադրեն որոշակի բանտարկյալների շրջանում [18.02Ա]:

Կրոն կամ համոզմունքներ ունենալու կամ ընդունելու ազատություն

[17.06]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Կոմիտեն նկատում է, որ որևէ կրոն կամ համոզմունք «ունենալու կամ ընդունելու» ազատությունը անհրաժեշտաբար հանգեցնում է կրոն կամ համոզմունք ընտրելու ազատության, ներառյալ՝ մարդու առկա կրոնը կամ համոզմունքը այլ կրոնով կամ համոզմունքով փոխարինելու կամ աթեիստական հայացքներ որդեգրելու իրավունքը, ինչպես նաև սեփական կրոնը կամ համոզմունքը պահպանելու իրավունքը: 18-րդ հոդվածը արգելում է հարկադրանքը, որը կվնասի մարդու՝ որևէ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու իրավունքը, ներառյալ՝ ֆիզիկական ուժի կամ պատժամիջոցների կիրառումը կամ դրանց կիրառման սպառնալիքը՝ ստիպելու համար հավատացյալներին կամ ոչ հավատացյալ մարդկանց, որ հավատարիմ մնան իրենց կրոնական համոզմունքներին և ծխական համայնքներին, հրաժարվեն իրենց կրոնից կամ համոզմունքից կամ դավանափոխ լինեն: Նույն նպատակը կամ հետևանքն ունեցող քաղաքականությունը կամ գործողությունները, ինչպիսիք են, օրինակ՝ կրթությունից օգտվելու, բժշկական օգնություն, զբաղվածություն ստանալու հնարավորությունները կամ 25-րդ հոդվածով և դաշնագրի այլ դրույթներով երաշխավորված իրավունքները սահմանափակող գործողությունները նմանապես հակասում են 18-րդ հոդվածի 2-րդ կետին: Միևնույն պաշտպանությունը վայելում են ոչ կրոնական բնույթի համոզմունքներ ունեցող բոլոր մարդիկ:

ՄԻԿ-ն իր բազմաթիվ ընդհանուր մեկնաբանություններում շեշտել է, որ մարդը, հակառակ մի շարք խլամական պետություններում գործող կարգի, սեփական կրոնը⁹ փոխելու բացարձակ իրավունք ունի¹⁰:

Հարկադրանքի արգելում

[17.07] 18-րդ հոդվածի 2-րդ կետն արգելում է հարկադրանքը, որը վնասում է մարդու՝ որոշակի կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու իրավունքը: Որևէ դավանանքի հարելը, որպես այդպիսին, բացարձակ իրավունք է, հետևաբար, ոչ ոք որևէ կրոն դավանելու համար չպետք է որևէ կերպ տուժի: Այս առումով 18-րդ հոդվածի 2-րդ կետում օգտագործված «հարկադրանք» եզրույթը նշանակում է ֆիզիկական կամ անուղղակի հարկադրանք¹¹: Օրինակ՝ Մարոկկոյի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը դատապարտել է միջկրոնական ամուսնությունների նկատմամբ կիրառվող սահմանափակումները¹²: Ինչ վերաբերում է Իռլանդիայի Հանրապետությանը, ապա ՄԻԿ-ը դատապարտել է

⁸ Պարբ. 11.7:

⁹ Տե՛ս, օրինակ՝ Եզրափակիչ դիտարկումներ Հորդանանի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 53, պարբ. 10, Եզրափակիչ դիտարկումներ Իրանի Իսլամական Հանրապետության վերաբերյալ (1993), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 25, պարբ. 16, Եզրափակիչ դիտարկումներ Նեպալի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 42, պարբ. 11, Եզրափակիչ դիտարկումներ Լիբիայի Արաբական Ջամախիրիայի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 45, պարբ. 13, Եզրափակիչ դիտարկումներ Մարոկկոյի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 44, պարբ. 14, Եզրափակիչ դիտարկումներ Եմենի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/YEM, պարբ. 20:

¹⁰ Տե՛ս նաեւ [1.99]

¹¹ M. Nowak, CCPR Commentary (N.P. Engel, Kehl, 1993), 318:

¹² (1994) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 44, պարբ. 14:

այն պահանջը, ըստ որի՝ երկրի նախագահը և դատավորները մինչև իրենց պաշտոնը ստանձնելը տալիս են կրոնական երդում¹³։ Հայաստանի վերաբերյալ ՄԻԿ-ը հայտարարել է հետևյալը¹⁴։

¶ 19. Կոմիտեն մտահոգված է, որ պահանջվում է կրոնական կազմակերպությունների գրանցում, և տվյալ կազմակերպության անդամների թիվը, որ պահանջվում է գրանցման համար, ավելացվել է։ Կոմիտեն նաև նշում է, որ չճանաչված կրոնների նկատմամբ ցուցաբերվում է խտրականություն, որը վերաբերում է նրանց՝ մասնավոր սեփականություն տնօրինելու և օտարերկրյա աղքատներից ֆինանսական միջոցներ ստանալու իրավունքին¹⁵։

Վերջապես, Գերմանիայի առնչությամբ ՄԻԿ-ը դատապարտել է այն փաստը, որ «սոսկ» անդամակցությունը որոշ աղանդներին անձին զրկում է որոշակի պետական պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունից¹⁶։

[17.08] Նովակը պնդում է, որ 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը պետություններից պահանջում են կանխարգելել մասնավոր անձի կողմից մեկ ուրիշի նկատմամբ որևէ կրոն, համոզմունք, դավանանք կամ կարծիք ունենալու կամ ընդունելու հարկադրանքը¹⁷։ Նովակի առարկությունն ամենայն հավանականությամբ ճիշտ է, քանի որ ՔՔԻՄԴ-ով ճանաչված այլ իրավունքների մեծ մասը մեկնաբանվել է որպես «հորիզոնական ազդեցություն» ունեցող¹⁸։ Այնուամենայնիվ, հետաքրքիր է կարծիքներ փոխանակել այն հարցի շուրջ, թե որքան հեռուն կարող է հասնել պետությունը՝ ներխուժելով մասնավոր ոլորտ, որպեսզի կանխի նման հարկադրանքը։ Արդյոք պետությունն իրատեսորեն կարող է կանխել ծնողների կողմից բաժանվելու կամ ժառանգությունից զրկվելու սպառնալիքներով սեփական երեխաներին հարկադրելը, որպեսզի նրանք ընդունեն իրենց ծնողների կրոնը¹⁹։

[17.09] Տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության վերաբերյալ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը 18-րդ հոդվածում ճանաչված կրոնական իրավունքների առնչությամբ հայտարարել է, որ կանայք «չպետք է ենթարկվեն սահմանափակումների, *ի թիվս այլոց*, այնպիսի կանոնների միջոցով, որոնք պահանջում են երրորդ կողմի թույլտվությունը կամ հայրերի, ամուսինների, եղբայրների կամ այլոց կողմից միջամտությունը»²⁰։

Կրոնի կամ համոզմունքների դավանումը

[17.10]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Կրոն կամ համոզմունք դավանելու ազատությունը կարող է գործնականում իրացվել «կա՛մ անհատապես, կա՛մ այլոց հետ միասին, հրապարակավ կամ մասնավոր պայմաններում»։ Պաշտամունքի իրականացման, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների կատարման միջոցով կրոն կամ համոզմունքներ դավանելու ազատությունը ներառում է գործողությունների մի ընդարձակ շարք։ Պաշտամունք հասկացությունը տարածվում է ծիսական և արարողակարգային գործողությունների վրա, որոնք ուղղակիորեն արտահայտում են հավատը, ինչպես նաև նման գործողությունների մաս կազմող տարբեր սովորույթների վրա, ներառյալ՝ պաշտամունքի վայրերի կառուցումը, ծիսական կարգախոսների և առարկաների կիրառումը, խորհրդանիշների ցուցադրությունը, տոնական և հանգստի օրերի նշումը։ Կրոնի կամ համոզմունքի դավանումը և պրակտիկան կարող են ներառել ոչ միայն ծիսական գործողություններ, այլև այնպիսի սովորույթներ, ինչպիսիք են սննդակարգի կանոնների հարգումը, տարբերակիչ հագուստի կամ գլխանոցների կրումը, մասնակցությունը կյանքի որոշակի փուլերին առնչվող

¹³ (1994) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 21, պարբ. 15։ Այս քննադատությունը (դատավորների առնչությամբ) կրկնվեց 2000 թ. այստեղ՝ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, պարբ. 422–451, պարբ. 29(բ)։

¹⁴ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 100։

¹⁵ ՄԻԿ-ը նաև մտահոգված էր կրոնական կազմակերպությունների գրանցման պահանջի կապակցությամբ, որը գոյություն ուներ Ուզբեկստանում։ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/UZB, պարբ. 24։

¹⁶ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 73, պարբ. 16։

¹⁷ Նովակ, վերը, ծնթ. 11, էջ 314–15։

¹⁸ Այս մասին ընդհանուր տեղեկությունների համար տես՝ [1.77–1.84]։

¹⁹ Տես նաև [23.83]։

²⁰ Պարբ. 21։

ծեսերին և հատուկ լեզվի օգտագործումը, որով ավանդաբար խոսում է տվյալ խումբը: Ի լրումն՝ կրոնի կամ համոզմունքի պրակտիկան և վարդապետությունը ընդգրկում են գործողություններ, որոնք կրոնական խմբերի հիմնարար աշխատանքների իրականացման բաղադրիչ մասն են, ինչպիսիք են իրենց հոգևոր առաջնորդներին, հոգևորականներին և կրոնի ուսուցիչներին ընտրելու ազատությունը, ճեմարաններ կամ կրոնական դպրոցներ հիմնելու ազատությունը և հոգևոր տեքստեր կամ հրատարակություններ պատրաստելու և տարածելու ազատությունը:

[17.11] Որևէ կրոնի դավանումը կարող է համարվել մարդու կրոնական ազատության «ակտիվ» բաղադրիչ՝ ի հակադրություն «պասիվ» բաղադրիչի, որը սոսկ որոշակի համոզմունքների հավատարիմ լինելն է²¹: Կրոնի կամ համոզմունքի «դավանումն» ընդգրկում է որոշակի համոզմունքների պաշտամունքը, ուսուցումը և բնորոշ վարքականոմների կամ կրոնական ծեսերի հարգումը²²: Քանի որ նշված գործողությունները կարող են միջամտել այլոց իրավունքներին կամ նույնիսկ սպառնալիք լինել հասարակությանը, կրոն կամ համոզմունք դավանելու ազատությունը բացարձակ չէ:

[17.12] Հետևյալ գործում որոշվել է, որ տեղի է ունեցել 18-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որը վերաբերել է բանտում հեղինակի՝ իր մահմեդական հավատը դավանելու հնարավորության սահմանափակումներին.

**«ԲՈՒԴՈՒՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(BOODOO v TRINIDAD and TOBAGO, 721/96)**

¶ 6.6. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, թե իրեն արգելել են մորուք պահել և կրոնական արարողությունների ժամանակ կատարել պաշտամունքի գործողություններ, և խլել են իր աղոթագրքերը, ապա կոմիտեն վերահաստատում է, որ պաշտամունքի իրականացման, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների միջոցով կրոն կամ համոզմունքներ դավանելու ազատությունը ներառում է գործողությունների մի մեծ շարք, և պաշտամունք հասկացությունը տարածվում է ծիսական և արարողակարգային գործողությունների վրա, որոնք արտահայտում են հավատը, ինչպես նաև նման գործողությունների մաս կազմող տարբեր սովորույթների վրա: Մասնակից պետության կողմից հեղինակի հայտարարությունների վերաբերյալ որևէ բացատրության բացակայության պայմաններում ... կոմիտեն եզրակացնում է, որ տեղի է ունեցել դաշնագրի 18-րդ հոդվածի ոտնահարում:

**Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու
ազատության սահմանափակումներ**

[17.13]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. 18-րդ հոդվածի 3-րդ կետը կրոն կամ համոզմունք դավանելու ազատության հարցում սահմանափակումներ է թույլ տալիս, եթե դրանք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են հասարակական անվտանգության, կարգուկանոնի, առողջության կամ բարոյականության պահպանման կամ այլ անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար: Կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու հարկադրանքից զերծ լինելու ազատությունը և ծնողների ու խնամակալների՝ կրոնական և բարոյական կրթություն ապահովելու ազատությունը չեն կարող սահմանափակվել: Թույլատրելի սահմանափակումներին վերաբերող դրույթների սահմանները բացահայտելիս մասնակից պետությունները պետք է ելնեն դաշնագրով երաշխավորված իրավունքների, ներառյալ՝ 2-րդ, 3-րդ և 26-րդ հոդվածներում ամրագրված հավասարության և որևէ հիմքով խտրականությունից զերծ լինելու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից: Գործադրվող սահմանափակումները պետք է ամրագրվեն օրենքով և կիրառվեն այնպես, որ չաղճատեն 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները: Կոմիտեն նկատում է, որ 18-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի խստորեն. չեն թույլատրվում սահմանափակումներ այնպիսի հիմքերով, որոնք նախատեսված չեն այդ պարբերությամբ, եթե անգամ դրանք թույլատրվում են որպես դաշնագրով պաշտպանված այլ իրավունքների սահմանափակումներ, օրինակ՝ ինչպիսին ազգային ան-

²¹ Նովակը (վերը, ծմբ. 11) կատարում է այս տարբերակումը էջ 315-19-ում:

²² Նույն տեղում, էջ 320-1:

վտանգությունն է: Սահմանափակումներ կարելի է կիրառել միայն այն նպատակներով, որոնց համար դրանք սահմանվել են և պետք է ուղղակիորեն առնչվեն ու համարժեք լինեն այն կոնկրետ կարիքին, որի հիման վրա հաստատվում են: Սահմանափակումներ չեն կարող գործադրվել խտրականություն իրականացնելու նպատակներով կամ կիրառվել խտրական ձևով: ... Այն անձինք, ինչպիսիք են բանտարկյալները, ում նկատմամբ արդեն իսկ կիրառվում են օրինական սահմանափակումներ, շարունակում են տվյալ սահմանափակման յուրահատուկ բնույթին չհակասող և հնարավորինս լիարժեք չափով օգտվել սեփական կրոնը կամ համոզմունքը դավանելու իրենց իրավունքներից: Մասնակից պետությունների զեկույցները պետք է տրամադրեն տեղեկություններ 18-րդ հոդվածի 3-րդ պարբերությանն առնչվող սահմանափակումների ամբողջական ընդգրկման և ազդեցության վերաբերյալ, ինչպես օրենսդրության, այնպես էլ որոշակի հանգամանքներում դրանց կիրառման տեսանկյունից:

[17.14] Սեփական կրոնը դավանելու ազատությունը օրինական կերպով կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, որոնք նախատեսված են 18-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ: Նախ՝ սահմանափակումները պետք է լինեն «օրենքով նախատեսված»: Սա նշանակում է, որ իրավական միջոցները պետք է սահմանված լինեն հասանելի իրավական գործիքներով կամ որոշումներով²³: Այս եզրույթը ՄԻԿ-ում 18-րդ հոդվածի տեսանկյունից լայն քննարկումների առարկա չի դարձել: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ի նախադեպային իրավունքը, որին բնորոշ է ՔՔԻՄԴ-ով ճանաչված այլ իրավունքների համատեքստում գործածվող բառապաշարը, բավական լավ ցույց է տալիս, թե ինչպես այդ եզրույթը կմեկնաբանվեր 18-րդ հոդվածի համատեքստում²⁴: Երկրորդ՝ սահմանափակումները պետք է ձևակերպվեն այնպես, որ հնարավոր լինի հասնել այդ նորմում թվարկված նպատակներից մեկին, այսինքն՝ «հասարակական անվտանգության, կարգուկանոնի, առողջության կամ բարոյականության պահպանման կամ այլ անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար»: 18-րդ հոդվածի վերաբերյալ նախադեպային իրավունքը պարզաբանել է այս սահմանափակումներից միայն մի քանիսը: ՄԻԿ-ը կարող էր մյուս եզրույթները մեկնաբանել նույն կերպ, ինչ կերպ այդ եզրույթները մեկնաբանվել են ՔՔԻՄԴ-ով ճանաչված այլ իրավունքների համատեքստում²⁵: Վերջապես, սահմանափակող միջոցները պետք է լինեն «անհրաժեշտ»՝ համապատասխան նպատակին հասնելու համար: Սա նշանակում է, որ օրենքը պետք է լինի «համարժեք այն որոշակի կարիքին, որի հիման վրա այն հաստատվում է»՝ համաձայն թիվ 22 Ընդհանուր մեկնաբանության 8-րդ պարբերության:

[17.15] ՄԻԿ-ն Ընդհանուր մեկնաբանության 8-րդ պարբերությունում մատնանշում է, որ 18-րդ հոդվածի 3-րդ կետում, որպես բացահայտ սահմանափակում, բացակայում է «ազգային անվտանգությունը»: Ազգային անվտանգությունը, որպես թույլատրելի սահմանափակող նպատակ, նշվում է ՔՔԻՄԴ-ով ճանաչված այլ իրավունքների դեպքում, ինչպիսիք են խոսքի ազատությունը (հոդված 19), հավաքների իրավունքը (հոդված 21) և միավորումներ կազմելու իրավունքը (հոդված 22): Այնուամենայնիվ «ազգային անվտանգությանն» ուղղված բազմաթիվ միջոցներ թերևս կարելի է արդարացնել որպես սահմանափակումներ, որոնք ձևակերպվել են «հասարակական կարգուկանոն» հաստատելու նպատակով:

[17.16] Ցավալի է, որ ՄԻԿ-ը հրապարակել է միաձայն (կոնսենսուսով) ընդունված փոքրաթիվ մեկնաբանություններ, որոնք վերաբերել են կրոն կամ համոզմունք դավանելու ազատության սահմանափակումներին: Օրինակ՝ օգտակար կլիներ, որ ՄԻԿ-ը հրապարակեր կարծիքներ այնպիսի կրոնական գործունեության թույլատրելիության վերաբերյալ, ինչպիսիք են բազմակնությունը, կենդանիների զոհաբերումը կամ եկեղեցական աստիճանակարգերում կանանց մասնակցության բացառումը²⁶:

²³ Այս կապակցությամբ տե՛ս [12.24], [16.10] և [18.19]: Տե՛ս նաև [1.67]:

²⁴ Տե՛ս 'Siracusa Principles on the Limitation and Derogation Provisions in the International Covenant on Civil and Political Rights' (1985) 7 HRQ 3, որը մատնանշում է, որ ՔՔԻՄԴ-ում առկա բոլոր սահմանափակող դրույթները պետք է յուրաքանչյուր իրավունքի առնչությամբ մեկնաբանվեն միևնույն ձևով:

²⁵ Տե՛ս [12.24] և [18.18]ff:

²⁶ Տե՛ս Դիքսոն [Dickson], վերը, ծնթ. 2, էջ 356: ՄԻԿ-ը մատնանշել է, որ բազմակնության սովորությունը խախտում է դաշնագիրը. տե՛ս [20.38]:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄ

[17.17]

**«ՍԻՆԳԴ ԲՀԻՆԴԵՐՆ ԸՆԴՈՂԵՄ ԿԱՆԱԴԱՅԻ»
(SINGH BHINDER v CANADA, 208/86)**

Հեղինակը սիքի է, այդ իսկ պատճառով կրոնը նրան պարտադրում էր հատուկ գլխաշոր՝ չալմա կապել: Մյուս կողմից՝ Կանադայի օրենսդրությունը պահանջում է, որ նա, որպես դաշնային աշխատող, աշխատելիս դներ անվտանգություն ապահովող սաղավարտ («ամուր գլխարկ»), որպեսզի պաշտպանված լինեի վնասվածքներից և հոսանքահարումից: Հեղինակը պնդում էր հետևյալը.

¶ 3. Հեղինակը պնդում է, որ դաշնագրի 18-րդ հոդվածի 1-ին կետով սեփական կրոնական համոզմունքները դավանելու իր իրավունքը սահմանափակվել է սաղավարտ դնելու կանոնակարգի կիրառման հետևանքով, և այդ սահմանափակումը չի բավարարում 18-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները: Մասնավորապես, նա պնդում է, որ հասարակական անվտանգությունն ապահովելու համար այդ սահմանափակումն անհրաժեշտ չէր, քանի որ անվտանգության հետ կապված յուրաքանչյուր ռիսկ, որը բխում է ապահով սաղավարտ դնելու հարցում իր մերժումից, ազդում է միայն իր վրա:

Այսուհանդերձ, ՄԻԿ-ը որոշում կայացրեց հեղինակի դեմ՝ հիմնվելով հետևյալի վրա.

¶ 6.2. Անկախ այն հանգամանքից՝ խնդրին մոտենում ենք 18-րդ կամ 26-րդ հոդվածի տեսանկյունից, թե ոչ, ըստ կոմիտեի, պետք է համզել միևնույն եզրակացության: Եթե սաղավարտ դնելու պահանջին վերաբերվում ենք որպես 18-րդ հոդվածով խնդիրներ հարուցող, ապա դա մի սահմանափակում է, որն արդարացվում է 18-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված հիմքերով: Եթե սաղավարտ դնելու պահանջը դիտվում է որպես *փաստացի* խտրականություն սիքի կրոնի հետևորդների նկատմամբ՝ ըստ 26-րդ հոդվածի, ապա կիրառելով կոմիտեի նախադեպային իրավունքում ներկայումս լայն տարածում ստացած չափանիշները՝ օրենսդրությունը, որը դաշնային զբաղվածություն ունեցող աշխատողներից պահանջում է սաղավարտ դնելով պաշտպանվել վնասվածքներից և հոսանքահարումից, պետք է համարել ողջամիտ և ուղղված այնպիսի առարկայական նպատակների, որոնք համահունչ են դաշնագրին²⁷:

Ավստ, որ ՄԻԿ-ը մանրամասն չի սահմանել, թե հատկապես ինչպես է այդ սահմանափակումը համապատասխանում 18-րդ հոդվածի 3-րդ կետին: Չնայած կարելի է պնդել, որ սաղավարտը մի միջոց է, որը պաշտպանել է Սինգհի *անձնական* առողջությունն ու անվտանգությունը, կոմիտեն չի անդրադարձել այն հարցին, թե հեղինակի կողմից նշված միջոցը չկիրառելը ինչպես կարող էր վտանգել *հասարակական* անվտանգությունը և առողջության պահպանումը: Գուցե այդ միջոցը հասկացվել է որպես հասարակական կարգուկանոն ապահովող միջոց, որը նախատեսվել է աշխատողների՝ փոխհատուցում ստանալու պահանջները նվազագույնի հասցնելու նպատակով: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ի ներկայացրած հիմնավորումը՝ ըստ 18-րդ հոդվածի, համոզիչ չէ, և կարելի է պնդել, որ օրենքներն իրականում համարժեք չեն վերոնշյալ նպատակին²⁸:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆ

[17.18]

**«ԶՈԵՐԻԵԼԸ և ԱՌԻԲԿՆ ԸՆԴՈՂԵՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(COERIEL and AURIK v THE NETHERLANDS, 453/91)**

Հեղինակներն ընդունել են հինդու կրոնը և ուսանել են, որպեսզի Հնդկաստանում դառնան հինդուիզմ դավանող հոգևորականներ: Նրանք դիմել են Նիդեռլանդների արդարադատության նախարարին, որպեսզի թույլ տա փոխել իրենց անունները, քանի որ հինդու հոգևորական դառնալու համար դա պար-

²⁷ 26-րդ հոդվածն արգելում է, ի թիվս այլոց, կրոնից բխող խտրականությունը: Ընդհանրապես, տե՛ս գլուխ 23-ը և մասնավորապես՝ [23.36]:

²⁸ Նկատի առեք, որ Կանադայի մարդու իրավունքների դատարանը վճռել է, որ չի հաջողվել այդ միջոցները «ողջամտորեն հարմարեցնել» սիքիերին (տե՛ս պարբ. 2.8-2.10): Այսուհանդերձ, դատարանի վճիռը «*Քինդերն Ընդդեմ Կանադայի ազգային երկաթգծի ընկերության*» (*Bhinder v Canadian National Railway Co.*) գործում չեղյալ հայտարարվեց Կանադայի զերագույն դատարանի կողմից [1985], 2 SCR 561: *Սինգհ Քինդերնի* գործով վճռի վերաբերյալ տե՛ս նաև B.G. Tahzib, Freedom of Religion or Belief [Բ.Գ. Թահզիբ, «Կրոնի կամ համոզմունքի ազատություն»] (Martinus Nijhoff, The Hague, 1996), էջ 296-7:

տադիր է: Նախարարը մերժել է այն հիմքով, որ նրանց դեպքերը չեն բավարարում ազգանվան փոփոխությունը կարգավորող հոլանդական օրենքների պահանջները:

¶ 3. Հեղինակները պնդում են, որ Հոլանդիայի իշխանությունների կողմից իրենց ազգանունները փոխելու խնդրագրի մերժումը հնարավորություն չի տալիս իրենց խորացնելու ուսումը հիմնականում հոգևորականության ասպարեզում, ուստի խախտում է դաշնագրի 18-րդ հոդվածը: Նրանք նաև պնդում են, որ հիշատակված մերժումն անօրինական կամ կամայական միջամտություն է իրենց անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Չնայած ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշում կայացրեց հոգուտ հեղինակների՝ կապված նրանց՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ՝ սահմանված 17-րդ հոդվածով, կոմիտեն մերժեց 18-րդ հոդվածով ներկայացված հայցը²⁹:

¶ 6.1. Իր 48-րդ նստաշրջանում կոմիտեն դիտարկեց այս հաղորդման ընդունելիությունը: Հեղինակների կողմից դաշնագրի 18-րդ հոդվածով ներկայացված հայցի վերաբերյալ կոմիտեն որոշել է, որ ազգանունների և դրանց փոփոխման կարգավորումը բացարձակապես հասարակական կարգուկանոնի խնդիր է, հետևաբար, ըստ 18-րդ հոդվածի 3-րդ պարբերության, սահմանափակումները թույլատրելի են: Ավելին՝ կոմիտեն որոշեց, որ մասնակից պետությանը չէր կարելի պատասխանատվության ենթարկել այն սահմանափակումների համար, որոնք հոգևոր պաշտոններ ստանձնելու նկատմամբ սահմանվել են մեկ այլ երկրի կրոնական առաջնորդների կողմից: Այդպիսով, հաղորդման այս հատվածը հայտարարվեց անընդունելի:

Միգրացիոն հիմնավորված է ՄԻԿ-ի այն տեսակետը, ըստ որի՝ անձի կողմից սեփական ազգանունը փոխելու կարողության նկատմամբ պետական սահմանափակումները թույլատրելի են հասարակական կարգուկանոնի հիմնավորմամբ, քանի որ ազգանունների հաճախակի փոփոխությունները կարող են առաջ բերել վարչական շփոթ: Այնուամենայնիվ թվում է, որ 18-րդ հոդվածի առնչությամբ ՄԻԿ-ի կայացրած որոշման վրա առավելապես ազդել է այն փաստը, որ համապատասխան կրոնական կանոնները սահմանել են երկրից դուրս գտնվող կրոնական առաջնորդները³⁰: Նման սկզբունքը լրջորեն սահմանափակում է 18-րդ հոդվածի արդյունավետությունը, քանի որ կրոնական պահանջները հաճախ բխում են պետությունից դուրս գտնվող աղբյուրներից³¹: Օրինակ՝ կաթոլիկ վարքականոնները հաստատվում են Վատիկանում գտնվող կրոնական իշխանությունների կողմից: Հի կարող պատահել, որ որևէ պետության կողմից, բացառությամբ Վատիկանի, կաթոլիկ վարքականոնների նկատմամբ կիրառվող սահմանափակումներն արդարացվեն նրանով, որ համապատասխան կրոնական կանոնները սահմանվում են Վատիկանի առաջնորդների կողմից: Հույս կա, որ ապագայում չեն հետևի *Կոերիելի* այս սկզբունքին:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[17.19]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. ... Կոմիտեն նկատում է, որ բարոյականություն հասկացությունը բխում է բազմաթիվ սոցիալական, փիլիսոփայական և կրոնական ավանդույթներից, ուստի բարոյականության պաշտպանության նպատակով կրոն կամ համոզմունք դավանելու ազատության սահմանափակումները պարտադիր պետք է հիմնված լինեն այնպիսի սկզբունքների վրա, որոնք չեն բխում բացառապես մեկ ավանդույթից: ...

Ահա թե ինչու «հասարակական բարոյականությանն» ուղղված միջոցները պետք է արտացոլեն ոչ թե մեկ առանձին կրոնական մշակույթի, այլ բազմակարծիք հասարակության տեսակետը³²:

²⁹ Այս գործի՝ «անձնական կյանքի անձեռնմխելիությանն» առնչվող կողմի վերաբերյալ տե՛ս [16.03–16.05] և [16.15–16.16]:

³⁰ Իսկապես, 18-րդ հոդվածին առնչվող այս որոշման իսկական պատճառը գուցե հենց դա է եղել՝ նկատի առնելով այն, որ նույն սահմանափակումները համարվեցին 17-րդ հոդվածին հակասող «կամայական» միջամտություններ անձնական կյանքի անձեռնմխելիությանը, չնայած հասարակական կարգուկանոնի պահպանման փաստարկներին. նույն տեղում:

³¹ F. Martin et al, International Human Rights Law and Practice (Kluwer Law International, The Hague, 1997), 153:

³² Տե՛ս «Տոոնենն ընդդեմ Ավստրալիայի» (*Toonen v Australia*, 488/92) գործը [16.36–16.38]: Տե՛ս նաև, այնուամենայնիվ, «Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի» (*Delgado Páez v Colombia*, 195/85) գործը, որը քննարկվում է այստեղ՝ [18.27]:

Կրոնի հաստատում

[17.20]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. Այն փաստը, որ կրոնը ճանաչվում է որպես պետական կրոն կամ համարվում է պաշտոնական կամ ավանդական կրոն, կամ տվյալ կրոնի հետևորդները կազմում են բնակչության մեծամասնությունը, դաշնագրով, ներառյալ՝ 18-րդ և 27-րդ հոդվածներով ճանաչված որևէ իրավունքից օգտվելու հարցում չպետք է հանգեցնի որևէ սահմանափակման, ոչ էլ այլ կրոնների հետևորդների կամ անհավատների նկատմամբ որևէ խտրականության: Մասնավորապես, վերջիններիս նկատմամբ խտրականության դրսևորման որոշակի միջոցներ, ինչպիսիք են պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունքը գերիշխող կրոնի հետևորդներով սահմանափակելու կամ նրանց տնտեսական արտոնություններ տալու միջոցները կամ այլ կրոններ դավանելու նկատմամբ հատուկ սահմանափակումներ կիրառելը չեն համապատասխանում կրոնի կամ համոզմունքի հիման վրա խտրականության արգելման նորմին և 26-րդ հոդվածով նախատեսված հավասար պաշտպանվածության իրավական երաշխիքին: Դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված միջոցները կարևոր երաշխիքներ են ընդդեմ կրոնական փոքրամասնությունների և այլ կրոնական խմբերի՝ 18-րդ և 27-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքներից օգտվելու իրավունքի խախտումների և ընդդեմ բռնարարների կամ հետապնդումների, որոնք ուղղված են այդ խմբերի դեմ: Նույն կերպ, որպեսզի կոմիտեն գնահատի, թե որքանով են մասնակից պետություններն իրականացնում մտքի, խղճի, կրոնի և համոզմունքների ազատության իրավունքը, անհրաժեշտ են տեղեկություններ 27-րդ հոդվածով կրոնական փոքրամասնությունների իրավունքների հարգման վերաբերյալ: Դիտարկվող մասնակից պետությունները պետք է իրենց զեկույցներում ներառեն նաև տեղեկություններ, որոնք կվերաբերեն իրենց օրենքներով և նախադեպային իրավունքով որպես աստվածամարգություն հետապնդվող գործողություններին³³:

¶ 10. Եթե համոզմունքների մի համախումբ սահմանադրություններում, օրենքներում, իշխող կուսակցության հայտարարություններում և այլ աղբյուրներում կամ փաստացի իրականացմամբ համարվում է պաշտոնական գաղափարախոսություն, դա չպետք է հանգեցնի 18-րդ հոդվածով սահմանված ազատությունների կամ դաշնագրով ճանաչված որևէ այլ իրավունքների որևէ սահմանափակման, ոչ էլ պաշտոնական գաղափարախոսությունը չընդունող կամ դրան հակադրվող անձանց նկատմամբ խտրականության:

[17.21] Այսպիսով, որևէ կրոնի «հաստատումը» որպես պետական կրոն պաշտոնապես չի հակասում 18-րդ հոդվածին, քանի դեռ դա չի հանգեցրել խտրականության այն անձանց նկատմամբ, ովքեր չեն ընդունել այդ կրոնը³⁴: Արգենտինայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշեց հետևյալը³⁵.

¶ 16. Կոմիտեն վերստին հայտնում է իր մտահոգությունն այն մասին, որ այլ կրոնական հոսանքների նկատմամբ կաթոլիկ եկեղեցուն ցուցաբերվող նախապատվությունը, ներառյալ՝ ֆինանսական սուբսիդավորմամբ, կրոնական խտրականություն է՝ ըստ դաշնագրի 26-րդ հոդվածի:

Իսրայելի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարեց հետևյալը³⁶.

¶ 28. Կոմիտեն մտահոգված է կրոնական կառույցներին ֆինանսական միջոցներ հատկացնելիս հուդայականներին տրվող նախապատվությամբ՝ ի վնաս մահմեդականների, քրիստոնյաների, դրուզների [Druze] և այլ կրոնական խմբերի: Կոմիտեն առաջարկում է, որ ֆինանսավորման կանոնակարգը և չափանիշները հրապարակվեն և հավասար հիմունքներով կիրառվեն բոլոր կրոնական խմբերի նկատմամբ:

³³ Տե՛ս նաև [18.28]:

³⁴ Տե՛ս նաև Նովակ, վերը, ծնթ. 11, էջ 317:

³⁵ ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/ARG: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Զիլիի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ, CCPR/C/79/Add. 104, պարբ. 24, Եզրափակիչ դիտարկումներ Վենեսուելայի վերաբերյալ (2001), պարբ. 25:

³⁶ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 93:

Կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք

[17.22] Վաղ շրջանի բազմաթիվ գործեր ցույց տվեցին, որ 18-րդ հոդվածը չի երաշխավորում կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, երբ դա վերաբերում է անձի՝ կրոնական համոզմունքների հիմքով ռազմական ուժից հրաժարվելու հիման վրա պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքին:

«L.S.Կ.-ն ընդդեմ ՖինԼԱՆԴԻԱՅԻ» (L.T.K. v FINLAND, 185/84)

¶ 1. 1984 թ. հոկտեմբերի 18-ին ստացված այս հաղորդման (կազմելու ամսաթիվը բացակայում է) հեղինակը L.S.Կ.-ն է, ով Ֆինլանդիայի քաղաքացի է և ապրում է Ֆինլանդիայում: Նա հայտարարում է, որ տուժել է Ֆինլանդիայի կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 18-րդ և 19-րդ հոդվածների խախտումից՝ պնդելով, որ իր՝ կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողի կարգավիճակը չի ճանաչվել Ֆինլանդիայում, և զինվորական ծառայություն անցնելու մերժման պատճառով իրեն ենթարկել են քրեական պատասխանատվության:

ՄԻԿ-ը եզրակացրեց, որ բողոքն անընդունելի է հետևյալ տեսանկյունից.

¶ 5.2. Մարդու իրավունքների կոմիտեն այս կապակցությամբ նկատում է, որ համաձայն հեղինակի սեփական հաշվետվության՝ նրան քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել ոչ թե իր համոզմունքների կամ տեսակետների համար, այլ որովհետև նա հրաժարվել է զինվորական ծառայությունից: Դաշնագիրը չի նախատեսում կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք. ոչ դաշնագրի 18-րդ հոդվածը, ոչ 19-րդ հոդվածը, հատկապես հաշվի առնելով 8-րդ հոդվածի 3(գ)(ii) կետը, չեն կարող մեկնաբանվել որպես նման իրավունք նախատեսող դրույթներ³⁷: Հեղինակը չի պնդում, թե քրեական քննության ընթացքում իր դեմ կատարվել է որևէ ընթացակարգային բացթողում, որն ինքնին կարող էր դաշնագրի նորմերից որևէ մեկի խախտում լինել, կամ թե իրեն դատապարտել են օրենքի խախտմամբ:

¶ 6. Մարդու իրավունքների կոմիտեն հաղորդումը մանրամասնորեն ուսումնասիրելուց հետո եզրակացրեց, որ հեղինակի կողմից իր պահանջի հիմնավորման նպատակով ներկայացված փաստերը որևէ խնդիր չեն հարուցում Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթներից որևէ մեկի առնչությամբ: Հետևաբար, հայցը չի համապատասխանում դաշնագրի նորմերին:

¶ 7. Ուստի Մարդու իրավունքների կոմիտեն որոշում է, որ հաղորդումն անընդունելի է:

[17.23]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 11. Բազմաթիվ անհատներ պնդել են իրենց՝ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը (կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունք) այն հիմքով, որ նման իրավունքը բխում է 18-րդ հոդվածով ճանաչված իրենց իրավունքներից: Նման պնդումներին ի պատասխան՝ աճում է այն պետությունների թիվը, որոնք իրենց օրենսդրությամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատում են իսկապես այնպիսի կրոնական կամ այլ համոզմունքներ ունեցող քաղաքացիներին, որոնք արգելում են զինվորական ծառայություն անցնելը, և պարտադիր զինվորական ծառայությունը փոխարինում են այլընտրանքային պետական ծառայությամբ: Դաշնագիրը բացահայտ կերպով չի հիշատակում կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, սակայն կոմիտեն կարծում է, որ նման իրավունք կարող է բխել 18-րդ հոդվածից, հաշվի առնելով այն, որ մահացու զենք օգտագործելու պարտավորությունը կարող է լրջորեն հակասել խղճի ազատությանը և սեփական կրոնը կամ համոզմունքը դավանելու իրավունքին: Այն դեպքերում, երբ այս իրավունքը ճանաչվում է օրենքով կամ գործնական կիրառությամբ, որևէ տարբերակում չպետք է կատարվի կրո-

³⁷ 8-րդ հոդվածի (3ա) կետն արգելում է հարկադիր կամ ստիպողական աշխատանքը: Այնուամենայնիվ, հոդված 8(3)(գ)(ii)-ն ամրագրում է, որ (ա) կետը չի արգելում պարտադիր զինվորական ծառայությունը կամ այլընտրանքային ծառայությունն «այն երկրներում, որտեղ ճանաչվում է կրոնական համոզմունքների հիմքով հրաժարվելու իրավունքը»: Ընդհանրապես տես [10.03]:

նական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողների միջև՝ կախված նրանց համոզմունքների բնույթից. նմանապես արգելվում է կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողների նկատմամբ որևէ խտրականություն այն պատճառով, որ նրանք հրաժարվել են զինվորական ծառայությունից: Կոմիտեն մասնակից պետություններին կոչ է անում զեկուցել այն պայմանների վերաբերյալ, որոնց դեպքում անձինք 18-րդ հոդվածով ճանաչված իրենց իրավունքների հիման վրա կարող են ազատվել զինվորական ծառայությունից, ինչպես նաև այլընտրանքային պետական ծառայության բնույթի և ժամկետի վերաբերյալ:

Այսպիսով, կարող է ստացվել, որ ՄԻԿ-ն այժմ մերժի *L.S. Կ.-ի* նախկինում ներկայացրած հայցը³⁸:

[17.24] Իսկապես, վերջերս ընդունված Եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հստակ ճանաչեց 18-րդ հոդվածով կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու «իրավունքը»: Բազմաթիվ Եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն արդեն հստակ ցույց է տվել, որ փաստորեն փոխել է կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու «իրավունքի» վերաբերյալ իր դիրքորոշումը: Օրինակ՝ կոմիտեն Դոմինիկյան Հանրապետության առնչությամբ հայտարարել է հետևյալը³⁹.

¶ 21. Կոմիտեն ի գիտություն է ընդունում այն փաստը, որ օրենքում ոչինչ չի նախատեսվում կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողի կարգավիճակի առումով, որն օրինական հիմքերով կարելի է պահանջել համաձայն դաշնագրի 18-րդ հոդվածի:

[17.25] «*Ուեստերմանն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Westerman v Netherlands, 682/96*) գործով ՄԻԿ-ը որոշել է, որ հեղինակի խղճի դեմ նրա հարկադիր զինվորական ծառայությանը վերաբերող բողոքն ընդունելի է: Կոմիտեի անդամների մեծամասնությունը ի վերջո որոշում է կայացրել հօգուտ մասնակից պետության, քանի որ հեղինակը չի կարողացել ցույց տալ, որ ինքն ունեցել է «զինվորական ծառայության նկատմամբ խղճի հիման վրա անհաղթահարելի առարկություն»⁴⁰: Այսուհանդերձ, ընդունելիության մասին որոշումը կարծես հաստատում է, որ ճշմարիտ «հրաժարվողին» կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողի կարգավիճակ չտալը կխախտեր 18-րդ հոդվածը: Կոմիտեի՝ փոքրամասնություն կազմող վեց անդամներ որոշեցին, որ հեղինակը ցույց է տվել կրոնական համոզմունքների հիմքով իր հակառակվելը զինվորական ծառայությանը, հետևաբար գտել են 18-րդ հոդվածի խախտում, որը բխել է Ֆրանսիայի ռազմական ուժերում հեղինակի հարկադիր ծառայությունից և հետագա հրամանները չկատարելու համար նրա պատժվելու հանգամանքից:

[17.26] Կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելը, բացի պարտադիր զինվորական ծառայությունը մերժելուց, ունենում է նաև այլ ձևեր: Ուշադրություն դարձրեք Զամբիայի վերաբերյալ հետևյալ մեկնաբանությանը⁴¹.

¶ 18. Երկրի պետական օրհներգը երգելու և դրոշմ պատվի առնելու պահանջը որպես պետական դպրոց հաճախելու պայման դնելը, չնայած կրոնական համոզմունքների հիմքով հրաժարմանը, թվում է ոչ ողջամիտ պահանջ և դաշնագրի 18-րդ և 24-րդ հոդվածներին հակասող⁴²:

³⁸ Տե՛ս նաև Թահգիր, վերը, ծնթ. 28, էջ 351:

³⁹ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/DOM: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Իսպանիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 61, պարբ. 15, Բելառուսի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 86, պարբ. 16, Մեքսիկայի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 109, պարբ. 20, Ռումինիայի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 111, պարբ. 17, Վենեսուելայի վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/VEN, պարբ. 26, Քուվեյթի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/69/KWT, պարբ. 44, և Վիետնամի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/VNM, պարբ. 17:

⁴⁰ Պարբ. 9.5:

⁴¹ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 62:

⁴² 24-րդ հոդվածը պաշտպանում է երեխայի իրավունքները. ընդհանրապես տե՛ս գլուխ 21-ը:

[17.27]

«Զ.Փ.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (J.P. v CANADA, 446/91)

¶ 2.1. Հեղինակն անդամակցում է «Ընկերների (Քվակերների) կազմակերպությանը»: Նրա կրոնական համոզմունքների պատճառով նրան մերժել են որևէ ձևով Կանադայի ռազմական գործողություններին մասնակցելը: Համապատասխանաբար, նա հրաժարվել է վճարել իր գնահատված հարկերի մի որոշակի տոկոսը, որը հավասար է Կանադայի դաշնային բյուջեից ռազմական նպատակներով հատկացված միջոցների տոկոսին: Փոխարենը՝ այս կերպ չվճարված հարկերի գումարը փոխանցվել է Կանադայի խաղաղության հարկերից կազմվող «Խղճի հիմնադրամ» (Peace Tax Fund of Conscience Canada, Inc.) ոչ կառավարական կազմակերպության հաշվեհամարին:

Հեղինակը պնդում էր, որ համաձայն 18-րդ հոդվածի՝ չվճարված հարկերի ստիպողաբար վճարումը կխախտի իր խղճի ազատությունը: ՄիԿ-ն առարկել է և հայցը ճանաչելով անընդունելի՝ նշել հետևյալը.

¶ 4.2. Չնայած դաշնագրի 18-րդ հոդվածը հաստատապես պաշտպանում է տեսակետներ և համոզմունքներ ունենալու, արտահայտելու և տարածելու իրավունքը, ներառյալ կրոնական համոզմունքների հիմքով զինվորական գործունեությունից և ծախսերից հրաժարվելը, կրոնական համոզմունքների հիմքով հարկերի վճարումից հրաժարվելը ակնհայտորեն դուրս է այս հոդվածով սահմանված պաշտպանության սահմաններից:

Զ.Փ.-ի գործով կայացված վճիռը վերահաստատվել է «Զ. վ. Ք.-ն և Կ.-Ս.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (J. v K. and C.M.G. v K.-S. v Netherlands, 483/91)⁴³ և «Կ.Վ.-ն և Ս.Վ.-ն ընդդեմ Գերմանիայի» (K.V. and C.V. v Germany, 560/93) գործերով⁴⁴:

Կրոնական և բարոյական դաստիարակությանը վերաբերող իրավունքներ. 18-րդ հոդվածի 4-րդ կետ

[17.28]

ԹԻՎ 22 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Կոմիտեն այն կարծիքին է, որ 18-րդ հոդվածի 4-րդ կետը թույլ է տալիս պետական դպրոցներում այնպիսի առարկաների դասավանդումը, ինչպիսիք են կրոնի ընդհանուր պատմությունը և էթիկան, եթե դրանք ներկայացվում են չեզոք և օբյեկտիվ ձևով: Ծնողների կամ օրինական խնամակալների՝ իրենց երեխաների կրոնական և բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան ապահովելու ազատությունը, որն ամրագրված է 18-րդ հոդվածի 4-րդ կետում, առնչվում է 18-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված կրոն կամ համոզմունք ուսուցանելու ազատության իրավական երաշխիքներին: Կոմիտեն նշում է, որ պետական կրթությունը, որն ընդգրկում է որևէ հատուկ կրոնի կամ համոզմունքի ուսուցում, չի համապատասխանում 18-րդ հոդվածի 4-րդ կետին, եթե նախատեսված չեն դասերից ազատման խտրականությունից զերծ հնարավորություններ կամ այլընտրանքներ, որոնք կբավարարեն ծնողների և խնամակալների ցանկությունները:

[17.29]

**«ՀԱՐՏԻԿԱՅՆԵՆԸ և այլք ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ»
(HARTIKAINEN et al v FINLAND, 40/78)**

Փաստերն ակնհայտ են հետևյալ մեջբերված հատվածներից.

¶ 2.1. Հեղինակը պնդում է, որ Ֆինլանդիայի 1968 թ. հուլիսի 26-ին ընդունված «Դպրոցական համակարգի մասին օրենքի» 6-րդ կետը խախտում է դաշնագրի 18-րդ հոդվածի 4-րդ կետը, քանի որ ֆիննական դպրոցներում կրոնի պատմության և էթիկայի դասերին այն երեխաների պարտադիր հաճախում է սահմանում, որոնց ծնողներն աթեիստ են: Հեղինակը հայտարարում է, որ քանի որ դասագրքերը, որոնց հիման վրա ուսուցանվում են նշված առարկաները, գրվել են քրիստոնյաների կողմից, ապա դասավանդումն իր բնույթով անխուսափելիորեն կրոնական է եղել:

⁴³ Պարբ. 4.2:

⁴⁴ Պարբ. 4.3: Այս որոշումները Թահզիբի [Tahzib] կողմից քննադատության են արժանացել դրանցում վերլուծության պակասի պատճառով, տես վերը, ծմբ. 28, էջ 287-92:

Ֆինլանդիան իր օրենքները պաշտպանել է հետևյալ կերպ:

¶ 7.2. Համապատասխան օրենսդրության վերաբերյալ մասնակից պետությունը հայտարարում է, որ կարելի է ասել, թե կրոնական կրթությունը Ֆինլանդիայում պարտադիր չէ: Պետությունը հավելում է, որ այնուամենայնիվ հնարավորություն կա, որ աշակերտները, ովքեր «կրոնական ազատության մասին» օրենքի ուժով ազատվել են կրոնի դասընթացներից, ուսում ստանան կրոնի պատմություն և էթիկա առարկաներից. նման ուսման հնարավորությունը նախատեսվել է այն նկատառումով, որ աշակերտներն այնպիսի ընդհանուր գիտելիքներ ստանան, որոնք՝ որպես նրանց հիմնական կրթության մի մաս, օգտակար են համարվում մի հասարակությունում, որի ճնշող մեծամասնությունը պատկանում է որևէ կրոնական հոսանքի: Մասնակից պետությունը պնդում է, որ Կրթության ազգային խորհրդի կողմից իրականացվող դասավանդման հիմնական նպատակների վերաբերյալ ընդունված հրահանգները ցույց են տալիս, որ դասավանդումն իր բնույթով կրոնական չէ: Այնուամենայնիվ, մասնակից պետությունը բացատրում է, որ որոշ դեպքերում դժվարություններ են ծագել այս առարկայի ուսումնական ծրագիրը գործնականում կիրառելու հարցում, և 1979 թ. հունվարին Կրթության ազգային խորհուրդը ստեղծել է մի աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել են թե՛ կրոնական և թե՛ ոչ կրոնական հայացքներ ունեցող անդամներ, որպեսզի ուսումնասիրեն այս խնդիրները և վերանայեն ուսումնական ծրագիրը:

ՄԻԿ-ը համարեց, որ 18-րդ հոդվածի 4-րդ կետի որևէ խախտում չի եղել.

¶ 10.4. Կոմիտեն չի համարում, որ Ֆինլանդիայի օրենսդրության համապատասխան դրույթների այն պահանջը, ըստ որի՝ կրոնական դասավանդման փոխարեն դպրոցների այն աշակերտներին, ում ծնողները կամ օրինական խնամակալները դեմ են կրոնական դասավանդմանը, պետք է ուսուցանվեն կրոնի պատմություն և էթիկա առարկաները, ինքնին չի հակասում 18-րդ հոդվածի 4-րդ կետին, եթե նման այլընտրանքային դասավանդումն իրականացվում է չեզոք և օբյեկտիվ եղանակով և հարգում է այն ծնողների և խնամակալների համոզմունքները, ովքեր որևէ կրոն չեն դավանում: Ամեն դեպքում «Դպրոցական համակարգի մասին» օրենքի 6-րդ կետը յուրաքանչյուր ծնողի կամ խնամակալի, ով չի ցանկանում, որ իր երեխան ստանա կրոնական ուսուցում, նաև չի ցանկանում, որ նրան դասավանդեն կրոնի պատմություն և էթիկա առարկաները, հստակորեն թույլատրում է ազատվել նշված դասերից՝ կազմակերպելով, որ երեխան դրա փոխարեն ստանա համեմատելի կրթություն դպրոցից դուրս:

¶ 10.5. Մասնակից պետությունն ընդունում է, որ այս դրույթների կենսագործման տեսանկյունից առկա ուսումնական ծրագրի հետ կապված որոշակի դժվարություններ են ծագել (քանի որ ուսումնական ծրագիրը կարծես, առնվազն մասամբ, իր բնույթով կրոնական է), սակայն կոմիտեն հավատացած է, որ դժվարությունները հաղթահարելու նպատակով ձեռնարկվում են համապատասխան միջոցներ, և կոմիտեն որևէ պատճառ չի տեսնում՝ եզրակացնելու, թե այդ միջոցները դաշնագրի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան և գործող օրենքների շրջանակում հաջողության չեն հանգեցնի:

Հետևաբար, պարտադիր կրոնական կամ բարոյական կրթությունը չի հակասում 18-րդ հոդվածի 4-րդ կետին, եթե այն ապահովում է կրոնի բազմակարծիք ներկայացում⁴⁵:

[17.30] «Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի» (Delgado Pnez v Colombia, 195/85) գործով ՄԻԿ-ը հայտարարել է հետևյալը.

¶ 5.7. ... Կոլումբիան կարող է, առանց խախտելու [18-րդ հոդվածը], հոգևոր առաջնորդներին թույլ տալ որոշել, թե ով իրավունք ունի դասավանդելու կրոն, և ինչ եղանակով այն պետք է դասավանդվի:

Ենթադրաբար, 18-րդ հոդվածի 4-րդ կետը ծնողներին թույլ կտար իրենց երեխաներին ազատել Կոլումբիայում իրականացվող կրոնական կրթությունից: Այնուամենայնիվ, թվում է, որ *Դելգադո Պաեսի* գործով ընդունված հայտարարությունը հակասում է Կոստա Ռիկայի առնչությամբ ընդունված հետևյալ հայտարարությանը⁴⁶.

¶ 13. Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը քայլեր ձեռնարկի՝ ապահովելու, որ կրոնական կրթություն ստանալու իրավունքն իրացնելիս որևէ խտրականություն չկիրառվի, մասնավորապես՝ կաթոլիկ ուսմունքից բացի այլ կրոնական ուսմունքների ծանոթանալու հնարավորության առումով: Ներկայումս գործող կարգը, որով

⁴⁵ Նովակ, վերը, ծնթ. 11, էջ 333:

⁴⁶ Եզրափակիչ դիտարկումներ Կոստա Ռիկայի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 31:

կրոն առարկան դասավանդողների ընտրությունը ենթակա է Ազգային հոգևորական ժողովի հաստատմանը, չի համապատասխանում դաշնագրի նորմերին:

[17.31] Նորվեգիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է հետևյալը⁴⁷.

¶ 10. Կոմիտեն ընդգծում է, որ սահմանադրության 2-րդ հոդվածը, որը նախատեսում է, որ ավետարանչական-լուսնային կրոն դավանող անձինք պարտավոր են իրենց երեխաներին դաստիարակել որպես նույն հավատքի հետևորդների, բացահայտորեն հակասում է դաշնագրի 18-րդ հոդվածին:

Թվում է, թե Նորվեգիայի վերաբերյալ մեկնաբանության նշանակետն այն օրենքներն են, որոնք սահմանափակում են ավետարանչական-լուսնային ծնողների երեխաների կրթության իրենց հասանելի տարբերակները: Այնուամենայնիվ, այս մեկնաբանությունը կարող է մասն ուղղված լինել ավետարանչական-լուսնային ծնողների երեխաների իրավունքներին: Իսկապես, ՄԻԿ-ը երբեք չի բացատրել, թե որտեղ են ավարտվում ծնողների՝ 18-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքները, և որտեղ են սկսվում երեխաների՝ 18-րդ հոդվածի 1-ին կետով ճանաչված իրավունքները, եթե մասն իրավունքների միջև բախում կա⁴⁸:

[17.32] «Ուոլդմենն ընդդեմ Կանադայի» (*Waldman v Canada, 694/96*) հայցը վերաբերում է Կանադայում գործող այլ կրոնական փոքրամասնությունների դպրոցների համեմատությամբ (Հռոմի) կաթոլիկ եկեղեցու դպրոցների արտոնյալ ֆինանսավորմանն առնչվող բողոքին: ՄԻԿ-ը, առաջնորդվելով բացառապես 26-րդ հոդվածով, որոշել է մերժել հայցը⁴⁹:

Եզրակացություն

[17.33] 18-րդ հոդվածով ճանաչված իրավունքների կապակցությամբ ՄԻԿ-ի կողմից կոնսենսուսով ընդունված նախադեպային իրավունքի դեպքերը շատ չեն: Այս թեմայով կոմիտեի ամենահամապարփակ հայտարարությունը թիվ 22 Ընդհանուր մեկնաբանության մեջ է: Այս Ընդհանուր մեկնաբանությունը բացահայտում է անձի կրոնի և համոզմունքների պաշտպանության նկատմամբ մի ավելի վճռական մոտեցում, քան արտահայտվել է կամընտիր արձանագրությամբ դիտարկված համապատասխան գործերով, որոնք ցույց էին տվել ՄԻԿ-ի համեմատաբար պահպանողական մոտեցումը:

⁴⁷ (1993) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 27: Այս քննադատությունները կրկնվեցին Նորվեգիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումների հաջորդ փաթեթում, այստեղ՝ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 1112, պարբ. 13:

⁴⁸ St'u G. Van Beuren, 'The International Protection of Family Members' Rights as the 21st Century Approaches' (1995) 17 HRQ 732, էջ 743-7: Նովակը (վերը, ծմբ. 11) էջ 318-ում ընդունում է ծնողների և երեխաների կրոնական իրավունքների միջև հնարավոր բախումը: Տե՛ս նաև Թահգիբ, վերը, ծմբ. 28, էջ 364: Տե՛ս նաև [17.08]:

⁴⁹ Տե՛ս [23.63]:

Ազատ արտահայտվելու իրավունք. հոդվածներ 19 և 20

• Հոդված 19.....	[18.01]
• Սեփական կարծիք ունենալու ազատություն	[18.02]
• «Ազատ արտահայտվելու իրավունքի» իմաստը.....	[18.03]
• Տեղեկատվություն հաղորդելու ազատություն	[18.11]
• Մամուլի ազատություն.....	[18.12]
• Ազատ արտահայտվելու իրավունքի թույլատրելի սահմանափակումներ	[18.18]
• Հանրային բարոյականություն.....	[18.22]
• Հասարակական կարգը և ազգային անվտանգությունը	[18.29]
• Այլոց իրավունքներն ու հեղինակությունը.....	[18.40]
• 20-րդ հոդվածը և ատելության քարոզչությունը.....	[18.47]
• Հոլոքոստի ժխտումը	[18.58]
• Գեներալային ատելություն սերմանող հայտարարություններ	[18.63]
• Եզրակացություն	[18.64]

ՀՈՂՎԱԾ 19

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի առանց միջամտության սեփական կարծիքներ ունենալ:

2. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր թե տպագիր, լինի արվեստի թե իր ընտրած ցանկացած այլ միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության: Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն միայն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

բ) պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

[18.01] Ազատ արտահայտվելու իրավունքը մարդկանց մտքեր և տեղեկատվություն ստանալու և հաղորդելու հնարավորություն է տալիս: Այս իրավունքը կարևոր է անձի կայացումն ապահովելու և բազմակարծիք ու հանդուրժողական հասարակություն ձևավորելու համար՝ բազմազան մտքերի ու գաղափարախոսությունների մատչելիությամբ: Այդուհանդերձ, 19-րդ հոդվածի 3-րդ կետով բացահայտ ընդունվում է, որ ազատ արտահայտվելու իրավունքը կարող է չարաշահվել այլոց իրավունքները վնասելու նկատառումով. «[Ի]րավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության»: 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքները կարող են սահմանափակվել մի շարք պատճառներով: Եվ իրականում ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածով նախատեսվում է որոշ արտահայտման եղանակների սահմանափակում, մասնավորապես՝ ատելություն սերմանող արտահայտությունների պարագայում¹:

¹ Տե՛ս [18.47]:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

[18.02]

ԹԻՎ 10 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. Հոդվածի 1-ին կետը պահանջում է, որ պաշտպանվի յուրաքանչյուրի՝ «առանց միջամտության սեփական կարծիքներ ունենալու» իրավունքը: Այս իրավունքի մասով դաշնագիրը որևէ բացառություն կամ սահմանափակում չի թույլատրում:

Կարծիք ունենալը պասիվ վարքագիծ է և բացարձակ ազատություն: Այս իրավունքի բացարձակ բնույթն անմիջապես դադարում է, հենց որ անձն արտահայտում է կամ այլ կերպ դրսևորում իր կարծիքները²: Այդ գործունեությունը տեղափոխվում է «ազատ արտահայտվելու իրավունքի» տիրույթ: Այնուամենայնիվ, Նովակը նշում է, որ դժվար է տարբերել կարծիք ունենալու ազատության իրավունքին անթույլատրելիորեն միջամտող գործողությունը (օրինակ՝ «ուղեղների լվացումը») այնպիսի գործողությունից, որով պարզապես փորձ է արվում ներգործել կարծիքների ձևավորման վրա (որպես օրինակ՝ կարելի է դիտարկել ՋԼՄ-ների քարոզչությունը տեղեկատվական «ռմբակոծման» միջոցով)³: Խախտումները կարելի է սահմանափակել այն դեպքերով, որոնցում կարծիքների վրա ներգործումն իրականացվում է անկանխամտածված⁴:

[18.02Ա]

«ԿԱՆԳԸ ԸՆԴՈՂԵՄ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (KANG v REPUBLIC OF KOREA, 878/99)

Կասկածում էին, որ հեղինակը հանդիսանում է Հյուսիսային Կորեայի կոմունիստական վարչակարգի համակիր, և մեղադրում էին նրան Կորեայի Հանրապետության ազգային անվտանգության դեմ վնասակար սադրիչ գործողությունների համար: Դրան հաջորդած բանտարկության ընթացքում հեղինակին իր ենթադրյալ կոմունիստական համոզմունքներից հետ պահելու նպատակով ճնշման են ենթարկել այսպես կոչված «գաղափարախոսական դավանափոխության համակարգի» մեթոդով: Նա տասներեք տարվա ընթացքում պահվել է մենախցում, ըստ երևույթին, որպես պատիժ դավանափոխ լինելու մերժման համար: ՄԻԿ-ը որոշել է, որ տեղի է ունեցել 19-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

¶ 7.2. Ինչ վերաբերում է հեղինակի այն պնդմանը, որ «գաղափարախոսական դավանափոխության համակարգը» խախտում է 18-րդ, 19-րդ և 26-րդ հոդվածներով նախատեսված իր իրավունքները, ապա կոմիտեն նշում է, որ նման համակարգը և դրան հետևած, այսպես կոչված, «օրինապահության երդման համակարգը», որը կիրառվում է խտրականորեն բանտարկյալի քաղաքական համոզմունքները փոխելու նկատառումով՝ առաջարկելով նրան արտոնյալ վերաբերմունք կալանավայրում և վաղաժամկետ ազատ արձակվելու ավելի մեծ հավանականություն, խտրական և հարկադրական բնույթ ունի: Կոմիտեն համարում է, որ նման համակարգը, որի գոյությունը մասնակից պետությունը չի կարողացել արդարացնել 18-րդ և 19-րդ հոդվածներում թվարկվող թույլատրելի սահմանափակող նպատակներով, խախտում է ազատ արտահայտվելու և համոզմունքները դրսևորելու իրավունքը և դրանով իսկ ոտնահարում է 18-րդ և 19-րդ հոդվածների 1-ին կետերը՝ 26-րդ հոդվածի համակցությամբ:

«ԱԶԱՏ ԱՐՏԱՀԱՅՏԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ» ԻՄԱՍՏԸ

[18.03]

ԹԻՎ 10 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. 2-րդ կետով պահանջվում է ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանություն, ինչն ընդգրկում է ոչ միայն ամեն տեսակի տեղեկատվություն և մտքեր հաղորդելու ազատությունը, այլև «անկախ պետական սահմաններից»՝ դրանք «փնտրելու» և «ստանալու» ազատությունը ցանկացած տեսքով՝ «լինեն դրանք բանավոր, գրավոր թե տպագիր, լինի արվեստի թե իր ընտրած ցանկացած այլ միջոցով»:

[18.04] Բազմաթիվ գործեր, այդ թվում՝ «Մպանձանջիլան և այլք ընդդեմ Չաիրի» (*Mpandanjila et al v Zaire, 138/83*), «Կալենգան ընդդեմ Չամբիայի» (*Kalenga v Zambia, 326/88*), «Ժաոնան ընդդեմ Մադա-

² Stéu D. McGoldrick, *The Human Rights Committee* (Clarendon Press, Oxford, 1994), 460: Այստեղ մեջբերվում են ՄԻԿ-ի նախկին նախագահ Անդրեաս Մավրոմատիսի խոսքերը:

³ M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 340.

⁴ Նույնը:

գասկարի» (*Jaona v Madagascar, 132/82*), «Կիվենմանն ընդդեմ Ֆինլանդիայի» (*Kivenmaa v Finland, 412/90*) [18.06], և «Ադուայոմը և այլք ընդդեմ Տոգոյի» (*Aduayom et al v Togo, 422–424/90*), հաստատել են, որ արտահայտվելու եղանակների պաշտպանված տեսակների շարքում ընդգրկվում է նաև քաղաքական հայացքների արտահայտումը⁵:

[18.05]

**«ԲԱԼԱՆԹԱՅՆԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(*BALLANTYNE et al v CANADA, 359, 385/89*)**

Այս գործում խոսքը Կանադայի Քվեբեկ նահանգի այն օրենքների վիճարկման մասին էր, որոնցով սահմանափակվում էր, ֆրանսերենից բացի, այլ լեզվով գովազդելը:

¶ 11.3. Դաշնագրի 19-րդ հոդվածով յուրաքանչյուրն ունի ազատ արտահայտվելու իրավունք, և այդ իրավունքը կարող է ենթարկվել սահմանափակումների, որոնց պայմանները բերված են 19-րդ հոդվածի 3-րդ կետում: Քվեբեկի կառավարությունը հաստատել է, որ առևտրային գործունեության ոլորտը, որին էլ պատկանում է արտաքին գովազդը, դուրս է 19-րդ հոդվածի դրույթների շրջանակից: Կոմիտեն համաձայն չէ այս կարծիքին: 19-րդ հոդվածի 2-րդ կետը պետք է մեկնաբանվի այնպես, որ ընդգրկի այլոց փոխանցվող այն սուբյեկտիվ գաղափարների և կարծիքների ձևերը, որոնք համատեղելի են դաշնագրի 20-րդ հոդվածի հետ, լինեն դրանք նորություններ թե տեղեկատվություն, առևտրային հայտարարություն, գովազդ թե արվեստի գործ և այլն: Այս դրույթը չպետք է սահմանափակվի քաղաքական, մշակութային կամ գեղարվեստական ոլորտներում արտահայտվելու միջոցներով: Կոմիտեի կարծիքով՝ արտաքին գովազդի ձևով արտահայտվելու առևտրային գործոնը չի կարող անդրադառնալ պաշտպանված ազատության շրջանակներում արտահայտվելու իրողության վրա: Կոմիտեն համաձայն չէ, որ արտահայտման վերոհիշյալ ձևերը կարող են ենթարկվել տարբեր աստիճանի սահմանափակման, ինչի հետևանքով արտահայտման որոշ ձևեր կարող են ենթարկվել ավելի լայն սահմանափակումների, քան մյուսները:

[18.06]

**«ԿԻՎԵՆՄԱՆՆ ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ»
(*KIVENMAA v FINLAND, 412/90*)**

Յեղիմակը բողոքում էր, որ ձերբակալվել է թուլացիկներ բաժանելու և պաստառ փակցնելու համար, որոնք քննադատում էին երկիր այցելող պետության ղեկավարի՝ մարդու իրավունքների առնչությամբ ցուցաբերած նախկին վարքագիծը: Այս երկու գործողությունները տեղի են ունեցել ցույցի ժամանակ: Տվյալ դեպքում գործը վերաբերում էր 21-րդ հոդվածով երաշխավորված ազատորեն հավաքներ անցկացնելու իրավունքի հնարավոր խախտումներին: Ֆինլանդիան 19-րդ հոդվածը խախտելու պնդման դեմ բերել է հետևյալ փաստարկը.

¶ 7.4. ... Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ ցույցն անպայման ենթադրում է կարծիքի արտահայտում, սակայն ելնելով դրան ներհատուկ բնույթից՝ այն պետք է դիտվի որպես խաղաղ հավաքների իրավունքի իրացում: Այս կապակցությամբ մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրի 21-րդ հոդվածը պետք է դիտվի որպես հատուկ օրենքի դրույթ (*lex specialis*)՝ 19-րդ հոդվածի համակցությամբ, ուստի ցույցի համատեքստում կարծիք արտահայտելու իրողությունը պետք է դիտվի դաշնագրի 21-րդ հոդվածի, ոչ թե 19-րդ հոդվածի շրջանակներում:

ՄԻԿ-ի մեծամասնությունը գտել է, որ այս դեպքում տեղի են ունեցել 19-րդ և 21-րդ հոդվածների խախտումներ⁶: Այսպիսով հաստատվում է, որ ոչ բանավոր արտահայտվելու իրավունքը պաշտպանված է 19-րդ հոդվածով⁷: 19-րդ հոդվածի առնչությամբ կոմիտեն հայտարարել է հետևյալը.

¶ 9.3. Անձի՝ իր քաղաքական հայացքներն արտահայտելու իրավունքը, ինչպես նաև, անշուշտ, մարդու իրավունքների հարցի շուրջ իր կարծիքներն արտահայտելու իրավունքը դաշնագրի 19-րդ հոդվածով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքի մաս են կազմում: Տվյալ դեպքում դիմումի հեղինակն այդ իրավունքն իրացրել է՝ իր գլխավերևում բարձրացնելով մի պաստառ: Ճիշտ է, որ 19-րդ հոդվածը թույլատրում է որոշ հանգամանքներ

⁵ Տե՛ս նաև այստեղ մեջբերվող գործերը՝ [18.35-18.39]:

⁶ Տե՛ս այս գործի հայեցակետը 21-րդ հոդվածով՝ [19.06]:

⁷ «Բաբանն ընդդեմ Ավստրալիայի» (*Baban v Australia, 1014/01*) գործում ՄԻԿ-ը պատրաստ էր ընդունելու, սակայն չհաստատեց այն դիրքորոշումը, որ «հացադուլը կարող է դասվել ազատ արտահայտվելու իրավունքի կարգը» (կետ 6.7): Գործի հանգամանքների հիման վրա ՄԻԿ-ը որոշեց, որ 19-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել, և այդպիսով կարիք չուներ որոշելու՝ հացադուլը «արտահայտվելու» դրսևորում էր, թե ոչ [18.31Ա]:

րում օրենքով սահմանափակել ազատ արտահայտվելու իրավունքը: Այդուհանդերձ, տվյալ դեպքում մասնակից պետությունը չի մեջբերել որևէ օրենք, որով այս ազատությունը պետք է սահմանափակվեր, և չի նշել, թե որքանով էր օրինորդ Կիվենմայի հանդեպ կիրառած սահմանափակումն անհրաժեշտ դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետի (ա) և (բ) ենթակետերում նշված իրավունքները և ազգային հրամայականները պաշտպանելու համար:

Եվ իրականում մասնակից պետությունը լիովին իրավացի էր, երբ նախկինում նշել էր.

¶ 7.2. ... ազատ արտահայտվելու իրավունքը կախված չէ արտահայտման ձևից կամ այդ եղանակով արտահայտված ուղերձի բովանդակությունից:

[18.07] *Կիվենմայի* գործով մեծամասնության կարծիքը վկայում է, որ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումներն առանձին հարցեր են հարուցում 19-րդ հոդվածի շրջանակներում, նույնիսկ եթե այդ սահմանափակումները խնդրահարույց չեն ՔՔԻՄԴ-ի այլ հոդվածների առնչությամբ⁸: Այս կապակցությամբ տե՛ս նաև «Մ.Ա.-ն ընդդեմ Իտալիայի» (*M.A. v Italy, 117/81*) գործը, որում Մ.Ա.-ի քաղաքական կուսակցությունն արգելվել էր: Այս իրողությամբ սահմանափակվել էր նրա՝ ազատ արտահայտվելու իրավունքը, ինչպես նաև 22-րդ հոդվածով ամրագրված միավորումներ կազմելու և 25-րդ հոդվածով նախատեսված քաղաքական մասնակցության ազատությունները⁹:

[18.08] Տեղեկատվության հասանելիության իրավունքները՝ տեղեկատվություն փնտրելը և ստանալը, նույնպես պաշտպանված են 19-րդ հոդվածով¹⁰: Նման իրավունքի խախտում է արձանագրվել նաև «Գոտիեն ընդդեմ Կանադայի» (*Gauthier v Canada*) գործում [18.31]:

[18.09] 19-րդ հոդվածով չի նախատեսվում, որ անձը դատարանին իր ընտրած լեզվով դիմելու իրավունք ունենա («Գուեզդոնն ընդդեմ Ֆրանսիայի» (*Guesdon v France, 219/86*)), եթե տվյալ անձը խոսում է դատարանի պաշտոնական լեզվով¹¹: Նման իրավունքը, ըստ էության, դրական լեզվական չափանիշներ կրներ պետության վրա վերջինիս հանրային գործառույթների իրականացման հարցում¹²:

[18.10] «Ս.Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*S.G. v France, 347/88*) և «Գ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*G.B. v France, 348/89*) գործերի հեղինակները ձերբակալվել են Ֆրանսիայում բրետոներենի ցածր կարգավիճակի դեմ բողոքի ակցիայի շրջանակներում ճանապարհային նշանները ջնջելու համար: Երկու դեպքում էլ ՄԻԿ-ը որոշել է, որ «ճանապարհային նշանները ջնջելը որևէ խնդիր չի առաջացնում 19-րդ հոդվածի շրջանակներում»¹³: Արդյոք երբևէ հնարավոր կլինի՞ 19-րդ հոդվածով պաշտպանել գրաֆիտիները:

Տեղեկատվություն հաղորդելու ազատություն

[18.11] «ԼԱՊՏԵՎԻՉՆ ընդդեմ ԲԵԼԱՐՈՒՍԻ» (LAPTSEVICH v BELARUS, 780/97)

¶ 3.1. Հեղինակը ենթարկվել է պատժամիջոցների «Մամուլի և զանգվածային այլ լրատվամիջոցների մասին» օրենքի («Մամուլի օրենք») 26-րդ հոդվածում ամրագրված պահանջները չկատարելու համար: Այս դրույթը պահանջում է.

«Տպագիր պարբերական հրատարակության յուրաքանչյուր օրինակ պետք է պարունակի հետևյալ տվյալները.

⁸ Պրն Հերնդլը չհամաձայնեց՝ համարելով, որ 21-րդ հոդվածով նախատեսված հավատքի ազատության իրավունքը «lex specialis» բնույթի իրավունք է և չի դասվում 19-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտվելու ընդհանուր իրավունքի շարքը:

⁹ Մ.Ա.-ի բողոքը բարեհաջող ավարտ չունեցավ, տե՛ս այստեղ՝ [18.33]:

¹⁰ Տե՛ս ընդհանուր՝ G. Malinverni, 'Freedom of Information in the European Convention on Human Rights and in the International Covenant on Civil and Political Rights' (1983) 4 *HRLJ* 443.

¹¹ Կետ 7.2: Տե՛ս նաև՝ «Կադորեն և Լե Բիհանն ընդդեմ Ֆրանսիայի» (*Cadoret and Le Bihan v France 221/87, 323/88*) գործը, կետ 5.2: 14-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետը նախատեսում է թարգմանչի ծառայություններ, եթե անձը «չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»: Տե՛ս [14.126-14.127]:

¹² Տե՛ս F. De Varennes, 'Language and Freedom of Expression' (1994) 16 *HRQ* 163, 179: Նման պարտավորություն կարող է ծագել փոքրամասնության լեզուների առնչությամբ՝ 27-րդ հոդվածով սահմանված կարգով: Տե՛ս [24.46] և [18.46]:

¹³ Տե՛ս «Ս.Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*S.G. v France*) գործի 5.2 կետը և «Գ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» գործի 5.1. կետը:

«1) Հրատարակության համարը, 2) հիմնադրի (համահիմնադիրների) անունը, 3) գլխավոր խմբագրի կամ նրա տեղակալի լրիվ անունը, 4) հրատարակության հերթական համարը և թողարկման ամսաթիվը, ինչպես նաև, թերթերի դեպքում, տպագրության ամսաթիվը, մեկ համարի (օրինակի) գինը կամ համապատասխան նշում՝ «գինը սահմանված չէ» կամ «անվճար», 6) տպաքանակը, 7) ինդեքսը (փոստով առաքվող հրատարակությունների դեպքում), 8) հրատարակչության և տպագրատան լրիվ հասցեները, 9) գրանցման համարը»...

Մասնակից պետությունը համաձայնել է, որ հեղինակը պատժամիջոցների է ենթարկվել ներպետական օրենսդրության համապատասխան դրույթը խախտելու համար, և իր կողմից ներկայացրել է հեղինակի հրապարակած գրաքննության շատ հակիրճ հիմնավորումը:

¶ 5.2. Մասնակից պետությունը հայտնում է, որ «հեղինակի բաժանած թուղթիկները բովանդակում են Բելառուսի պետության կազմավորման պատմության խեղաթուրված փաստեր՝ բոլշևիկների ենթադրյալ զավթման նկարագրություն և Բելառուսների զինված պայքար «զավթիչների» դեմ, ինչպես նաև կոչ են անում կրկնել «այդ պայքարը» ներկայումս Բելառուսի անկախությանը հասնելու համար»:

¶ 8.1. Կոմիտեին առաջադրված առաջին հարցը հետևյալն էր. արդյոք «Մամուլի մասին» օրենքի 26-րդ հոդվածի կիրառումը հեղինակի դեպքում, ելնելով դրանից՝ թուղթիկների առգրավումը և այնուհետև տուգանքը 19-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իմաստով հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակում է: Կոմիտեն նշում է, որ տվյալ օրենքի 1-ին հոդվածով պարբերականների հրատարակիչներից պահանջվում է ընդգրկել որոշակի տվյալներ հրատարակության վերաբերյալ, այդ թվում՝ ինդեքսն ու գրանցման համարը, որոնք, ըստ հեղինակի, հնարավոր է ստանալ միայն վարչական մարմիններից: Կոմիտեի կարծիքով՝ սահմանվելով նման պահանջներ մի թուղթիկի համար, որի տպաքանակը չի գերազանցում 200 օրինակը, մասնակից պետությունը ստեղծել է այնպիսի արգելքներ, որոնք սահմանափակում են հեղինակի՝ 19-րդ հոդվածի 2-րդ կետով պաշտպանվող ազատորեն տեղեկատվություն հաղորդելու իրավունքը:

¶ 8.4. Մասնակից պետության՝ վերոնշյալ 5.2 կետում բերված չափազանց համառոտ հայտարարությունը ենթադրում է, որ պատժամիջոցներն անհրաժեշտ են եղել ազգային անվտանգությունը պաշտպանելու համար, և այդ առումով վկայակոչվում է հեղինակի գրած նյութերի բովանդակությունը: Սակայն կոմիտեին ներկայացված նյութերում ոչինչ չի վկայում, որ ոստիկանության արձագանքը կամ դատարանների որոշումները, բացի պահանջվող հրատարակչական տվյալների բացակայությունից, հիմնված են այլ գործոնների վրա: Հետևաբար, կոմիտեին առաջադրված միակ հարցն այս էր՝ պատժամիջոցները կիրառվել են հեղինակի նկատմամբ «Մամուլի մասին» օրենքով հասարակական կարգի պահպանման և այլոց իրավունքների կամ հեղինակության նկատմամբ հարգանքի համար անհրաժեշտ համարվող տվյալները չընդգրկելու համար, թե՞ ոչ:

¶ 8.5. Այս առնչությամբ կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը բերել է այն փաստարկեր, որ «Մամուլի մասին» օրենքի 26-րդ հոդվածում թվարկված պահանջներն ընդհանուր առմամբ լիովին համապատասխանում են դաշնագրի դրույթներին: Այդուհանդերձ, մասնակից պետությունը որևէ կերպ չի փորձել հատուկ ուսումնասիրել հեղինակի առանձին գործը և պատճառաբանել, թե ինչու նա նախքան 200 օրինակ տպաքանակով թուղթիկ տպելու ու տարածելը պարտավոր էր գրանցել իր հրատարակությունը վարչական մարմիններում և ստանալ ինդեքսն ու գրանցման համար: Ավելին՝ մասնակից պետությունը չի բացատրել, թե ինչո՞ւ էր այս պահանջն անհրաժեշտ 19-րդ հոդվածի 3-րդ կետում նշված օրինական նպատակներից մեկի իրականացման համար, և ինչո՞ւ է սահմանված պահանջների խախտումը նախատեսում ոչ միայն դրամական պատժամիջոցների կիրառում, այլև հեղինակին պատկանող թուղթիկների առգրավում: Գրանցման պահանջները և ձեռնարկված միջոցները հիմնավորող պատճառաբանության բացակայության պայմաններում կոմիտեն հակվում է այն կարծիքին, որ այս գործողությունները չեն կարող անհրաժեշտ համարվել հասարակական կարգի և այլոց իրավունքների կամ հեղինակության պաշտպանության համար: Ուստի կոմիտեն եզրակացնում է, որ տվյալ գործում տեղի է ունեցել 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

Մամուլի ազատություն

[18.12] Իր Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ն ընդգծել է ազատ արտահայտվելու իրավունքի կարևոր հայեցակետերից մեկը:

ԹԻՎ 10 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. ... Արդի զանգվածային լրատվամիջոցների զարգացման պայմաններում անհրաժեշտ է կանխել այդ լրատվամիջոցների այնպիսի վերահսկումը, որը միջամտում է նրանց ազատ արտահայտվելու իրավունքին՝ հակասելով 3-րդ կետի դրույթներին:

Օրինակ՝ պետության՝ լրատվամիջոցների սեփականատիրության մենաշնորհն ակնհայտորեն անհամատեղելի է 19-րդ հոդվածի դրույթների հետ¹⁴:

[18.13] Լիբանանի առնչությամբ ՄԻԿ-ը նշել է.¹⁵

¶ 24. Կոմիտեն մտահոգությամբ նշում է 1994 թ. նոյեմբերին ընդունված «Լրատվամիջոցների մասին» թիվ 382 օրենքի և 1996 թ. փետրվարին ընդունված թիվ 7997 որոշման դրույթները, որոնց հիման վրա հեռուստատեսային և ռադիոկայանների արտոնագրումը սահմանափակվել է համապատասխանաբար 3 և 11 կայաններով, ինչը չի համապատասխանում դաշնագրի 19-րդ հոդվածում ընդգրկված երաշխիքներին, քանի որ արտոնագրերի շնորհման համար ողջամիտ և անաչառ չափանիշներ գոյություն չունեն: Արտոնագրման գործընթացը փաստորեն հանգեցրել է լրատվամիջոցների բազմակարծության և ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման: Այս համատեքստում կոմիտեն նշում է նաև, որ ռադիո- և հեռուստակայանների երկու տարբեր կարգերի սահմանումը, ըստ որի՝ դրանցից մի քանիսը կարող են նորություններ և քաղաքական հաղորդումներ հեռարձակել, իսկ մյուսները՝ ոչ, մերժելի է 19-րդ հոդվածի դրույթներով:

¶ 25. Ուստի կոմիտեն հանձնարարական է տալիս մասնակից պետությանը՝ վերանայել և լրամշակել 1994 թ. նոյեմբերին ընդունած «Լրատվամիջոցների մասին» օրենքը, ինչպես նաև դրա իրականացման վերաբերյալ ընդունած որոշումը՝ դրանք դաշնագրի 19-րդ հոդվածի դրույթներին համապատասխանեցնելու նկատառումով: Կոմիտեն մասնակից պետությանն առաջարկում է ստեղծել հեռարձակումների արտոնագրման անկախ մարմին, որը լիազորություն ունենա ուսումնասիրելու հեռարձակման հայտերը և արտոնագրեր շնորհելու ողջամիտ և անաչառ չափանիշներով:

Լեսոտոյի առնչությամբ ՄԻԿ-ը հայտարարել է¹⁶.

¶ 23. Կոմիտեն մտահոգված է, որ «Տպագրության և հրատարակության մասին» օրենքով նախատեսված համապատասխան մարմինը, հակառակ դաշնագրի 19-րդ հոդվածի դրույթների, օժտված է սեփական հայեցողությամբ թերթի գրանցումը թույլատրելու կամ մերժելու անսահմանափակ լիազորություններով: Կոմիտեն հանձնարարական է տալիս մասնակից պետությանը սեփական հայեցողության կիրառման և գրանցման մերժման պատճառաբանությունն արդյունավետորեն վերանայելու հրահանգներ ներկայացնել և օրենսդրությունը համապատասխանեցնել դաշնագրի 19-րդ հոդվածի դրույթներին¹⁷:

[18.14] Լեսոտոյի վերաբերյալ այլ մեկնաբանություններում ՄԻԿ-ը հավելել է¹⁸.

¶ 22. Կոմիտեն լրջորեն մտահոգված է Լեսոտոյի կառավարության հասցեին քննադատությամբ հանդես եկող լրագրողների դեմ իրականացվող հետապնդումների և հերյուրանքի մեղադրանքով շարունակ ընթացող դատավարությունների կապակցությամբ¹⁹: Նմանապես կոմիտեն խիստ մտահոգված է այն տեղեկություններով, որ պետական և կիսապետական ընկերությունները հրաժարվում են զովագրել կառավարության դեմ բացասական դիրքորոշում որդեգրած թերթերը, և պետական հիմնարկներում աշխատող այն լրագրողներին, որոնց տեսնում են ընդդիմության ցույցերի ժամանակ, ստիպում են ազատվել աշխատանքից: Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը հարգել մամուլի ազատությունը և զերծ մնալ մամուլի ազատությունը ոտնահարող յուրաքանչյուր գործողությունից:

ՄԻԿ-ի մեջբերումը Լեսոտոյի պետական և կիսապետական կազմակերպությունների զովագրային գործունեության մասին հետաքրքրական է նրանով, որ ցույց է տալիս, թե ինչպես ազատ արտահայտվելու իրավունքի իրացումը բացահայտ արգելվելու փոխարեն կարող է ենթարկվել ավելի նուրբ միջամտությունների: Օրինակ՝ հնարավոր է, որ անձին զրկեն պետական պայմանագրերից (օր.՝ զովագրային պայմանագրերից) օգտվելու արտոնությունից՝ նրա կողմից ազատ արտահայտվելու իրավունքի իրացմանն ի պատիժ: Լեսոտոյի վերաբերյալ մեկնաբանությունը հաստատում է, որ ոչ մի անձ չպետք է տուժի պետությունից՝ ազատ արտահայտվելու իր իրավունքն իրացնելու պատճառով: Նմանապես Ուկրաինայի առնչությամբ ՄԻԿ-ը նշել է, որ «մտահոգված է նրանով, որ մամուլի կազմակերպությունների պետական սուբսիդավորման համակարգը կարող է օգտագործվել արտահայտվելու ազատությունը սահմանափակելու համար»: Հետևաբար.²⁰

¹⁴ Տե՛ս օրինակ՝ Եզրափակիչ դիտարկումներ Գվիյանայի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 121, պարբ. 19:

¹⁵ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 78:

¹⁶ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106:

¹⁷ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումները Դոլըզստանի վերաբերյալ (2000), CCPR/CO/69/KGZ, պարբ. 20:

¹⁸ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 106:

¹⁹ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումները Դոլըզստանի վերաբերյալ, (2000) CCPR/CO/70/KGZ, կետ 20:

²⁰ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UKR:

¶ 22. ... (գ) Մասնակից պետությունը պետք է ապահովի, որ մամուլին տրվող պետական սուբսիդավորման վճարման և դադարեցման համար հաստատվեն հստակ չափանիշներ, որպեսզի նման սուբսիդավորումը չտրամադրվի իշխանությունների հասցեին հնչող քննադատությունը լռեցնելու համար:

[18.15] Քուվեյթի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ն առանձնացրել է լրագրողական աշխատանքի մի կարևոր հայեցակետ՝ իր մտահոգությունը հայտնելով լրագրողների դեմ ձեռնարկվող այն քրեական հետապնդումների կապակցությամբ, որոնցով նրանցից պահանջվում է բացահայտել իրենց աղբյուրները²¹:

[18.16] Մամուլի ազատության առնչությամբ ՄԻԿ-ի արտահայտած մտահոգությունների մեծ մասը վերաբերում է իշխանությունների կողմից լրատվամիջոցների ավելորդ վերահսկման փաստերին²²: Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նաև նշել է լրատվամիջոցների պատկանելությունը մասնավոր լրատվական ընկերությունների խոշոր միավորումներին, ինչը սպառնալիք է ազատ արտահայտվելու իրավունքի համար²³:

¶ 10. Կոմիտեն մտահոգված է զանգվածային լրատվամիջոցների չափազանց կենտրոնացմամբ մարդկանց փոքր խմբի ձեռքում: Ավելին՝ ՄԻԿ-ը նշում է, որ նման կենտրոնացումը կարող է անդրադառնալ դաշնագրի 19-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտվելու իրավունքի և տեղեկատվության ազատության վրա:

¶ 17. Մարդկանց փոքր խմբի ձեռքում զանգվածային լրատվամիջոցների չափազանց կենտրոնացմանը բնորոշ վտանգներից խուսափելու համար կոմիտեն ընդգծում է ռեսուրսների անկողմնակալ բաշխմանն ուղղված միջոցների, լրատվամիջոցների արդարացի հասանելիության և լրատվամիջոցները կարգավորող հակամենաշնորհային օրենսդրության ընդունման կարևորությունը:

[18.17] Տեղեկատվության ազատությունը մամուլի ազատության կարևոր հայեցակետ է: Լրատվամիջոցները բավական անգոր են, եթե չունեն «իմանալու իրավունք»: Մամուլի ազատության այս հայեցակետն արծարծվել է «*Գոտիեն ընդդեմ Կանադայի*» (*Gauthier v Canada*) գործում [18.31].

ԱԶԱՏ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՅՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

[18.18] ԹԻՎ 10 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. 3-րդ կետում հստակ ընդգծվում է, որ ազատ արտահայտվելու իրավունքի իրացումն իր հետ բերում է հատուկ պարտականություններ և պարտավորություններ, հետևաբար, տվյալ իրավունքի նկատմամբ թույլատրելի են որոշ սահմանափակումներ, որոնք կապված են այլ անձանց կամ ամբողջ համայնքի շահերի հետ: Այդուհանդերձ, եթե մասնակից պետությունը ազատ արտահայտվելու իրավունքի որոշ սահմանափակումներ է անում, ապա դա չի կարող վտանգի տակ դնել բուն իրավունքը: 3-րդ կետում բերված են այն պայմանները, որոնց առկայության դեպքում միայն կարող են սահմանափակումներ արվել. դրանք պետք է «սահմանվեն օրենքով», կարող են դրվել միայն 3-րդ կետի (ա) և (բ) կետերում նշված պատճառներով և տվյալ մասնակից պետության համար պետք է հիմնավորված լինեն որպես «անհրաժեշտ» այդ նպատակներից որևէ մեկի շրջանակում:

19-րդ հոդվածի 3-րդ կետը թույլ է տալիս, որ ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակվի օրենքով նախատեսված միջոցներով և համաչափորեն ուղղված լինի (ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը կամ (բ) ազգային անվտանգությունը, հասարակական կարգը, բնակչության առողջությունը կամ բարոյականությունը պաշտպանելուն:

[18.19] ՄԻԿ-ը չի անդրադարձել այն հարցին, թե ինչ է նշանակում 19-րդ հոդվածի սահմանափակումների «օրենքով սահմանվածը»: Գուցե այս պահանջը պետք է մեկնաբանվի ՔՔԻՄԴ-ի այլ երաշխիքների համատեքստում, ասել է թե՛ չափավորումը պետք է բավական սահմանազատված լինի պետության օրենսդրությամբ²⁴: ՄԻԿ-ը հաստատել է, որ համապատասխան օրենքը կարող է ընդգրկել ստատուտային

²¹ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/69/KWT, կետ 36:

²² Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Շրի Լանկայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 56, կետ 22, Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 100, կետ 21, Եզրափակիչ դիտարկումներ Ջիմբաբվեի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 89, կետ 22:

²³ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ UN doc. CCPR/C/79/Add. 37:

²⁴ 17-րդ հոդվածի առնչությամբ տե՛ս մասնավորապես «Փինքնին ընդդեմ Կանադայի» (*Pinkney v Canada*, 27/78) գործը այս-

իրավունք՝ ազգային դատական մարմինների մեկնաբանությամբ²⁵, և կարող է ընդգրկել խորհրդարանային արտոնության մասին օրենք²⁶:

[18.20] «*Ֆորիսոն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Faurisson v France, 550/93*) գործով հատուկ եզրակացությունում տիկնայք էվատը և Մեդինա Քուիրոզան, ինչպես նաև պրն Քլայնը հաստատել են, որ «անհրաժեշտ» բառը 19-րդ հոդվածի 3-րդ կետում ներմուծում է «համաչափության տարր», ասել է թե՛ օրենքը պետք է համարժեք լինի և համապատասխանի 19-րդ հոդվածում թվարկված նպատակներին²⁷: Նույն գործի շրջանակներում պրն Լալահը արել է խորհրդավոր ձևակերպումներով շղարշված հետևյալ նախազուշացումը.

¶ 13. 19-րդ հոդվածի 3-րդ կետով սկզբունքորեն թույլատրված սահմանափակումների կիրառումը բախվում է դժվարությունների և հակված է վերացնելու հենց այն իրավունքը, որը սահմանափակելու փորձ է արվում: Սեփական կարծիք ունենալու և ազատ արտահայտվելու իրավունքը ամենաարժեքավոր իրավունքն է և կարող է չափազանց փխրուն դառնալ չափից դուրս հաճախ դրա սահմանափակման անհրաժեշտությունը 19-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) և (բ) ենթակետերով նախատեսված ոլորտներում քարոզելու հետևանքով:

Լալահն ակնարկում է այն փաստը, որ ազատ արտահայտվելու իրավունքը չափավորող օրենքների մեծ մասն ընդունվում է անվերապահորեն թույլատրվող սահմանափակումներ իրականացնելու նպատակով: Այսպիսով, նման սահմանափակումներն ի չիք կդարձնեն այս իրավունքը, եթե խիստ չզսպվեն համաչափության սկզբունքի կիրառմամբ:

[18.21] 19-րդ հոդվածով ներկայացված գործերից ոչ մեկում անդրադարձ չկա սահմանափակմանը՝ «բնակչության առողջության» վկայակոչմամբ: Հավանաբար, այս սահմանափակումը մեկնաբանվելու է ՔՔԻՄԴ-ով նախատեսված այլ իրավունքների վերաբերյալ արված մեկնաբանություններին համապատասխան²⁸: Նովակը ենթադրում է, որ առողջությանը սպառնացող գործողությունների վերաբերյալ ապատեղեկատվությունը և վտանգավոր նյութերի, օրինակ՝ ծխախոտի գովազդը գուցե հիմնավորված կլինի այս սահմանափակմամբ²⁹:

Հանրային բարոյականություն

[18.22] «Հերցբերգը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի» (*HERTZBERG et al v FINLAND, 61/79*)

¶ 1. Այս դիմումի հեղինակները հինգն են, որոնց շահերը ներկայացնում է ՍՀԿ-ն (Սեռական հավասարության հարցերով կազմակերպությունը, անգլ.՝ SETA):

¶ 2.1. Բոլոր հինգ գործերի փաստերն ըստ էության չեն վիճարկվում: Կողմերը տարածայնություններ ունեն միայն դրանց գնահատման շուրջ: Դիմումի հեղինակների պնդմամբ՝ Ֆինլանդիայի իշխանությունները, այդ թվում նաև՝ պետության հսկողության տակ գտնվող Ֆինլանդիայի հեռաձայնային ընկերության (ՖՀԸ, անգլ.՝ FBC) մարմինները, միջամտել են ազատ արտահայտվելու և տեղեկատվություն ստանալու նրանց իրավունքին՝ ամրագրված դաշնագրի 19-րդ հոդվածով, գրաքննության ենթարկելով համասեռականության հարցերին նվիրված ռադիո- և հեռուստահաղորդումները: Բանավեճի հիմքում ընկած է Ֆինլանդիայի քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 9-րդ կետը, որը նախատեսում է հետևյալը.

(1) Եթե որևէ անձ հրապարակավ զբաղվում է սեռական բարոյականությունը խախտող գործողությամբ և դրանով իսկ հանցանք է գործում, ապա այդ անձը սեռական բարոյականությունը հրապարակավ խախտելու համար դատապարտվում է առավելագույնը վեց ամսվա ազատազրկման կամ ենթարկվում է տուգանքի:

տեղ՝ [16.10] և [1.67]: Տե՛ս նաև «Ռոսս ընդդեմ Կանադայի» (*Ross v Canada, 736/97*), կետ 11.3 և 11.4, այստեղ՝ [18.57]:

²⁵ Տե՛ս [18.62] և նախորդող պարբերությունները:

²⁶ Տե՛ս «Գոտիեն ընդդեմ Կանադայի» (*Gauthier v Canada, 633/95*) գործը, կետ 13.5 [18.31], որտեղ նշվում է, որ այս սահմանափակումը «ենթադրաբար» նախատեսված էր օրենքով:

²⁷ Կետ 8, տե՛ս [18.59]:

²⁸ Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում սահմանափակումների և վերապահումների Սիրակուզայի սկզբունքները» (1985) 7 *HRQ* 3, որտեղ նշվում է, որ ՔՔԻՄԴ-ի բոլոր սահմանափակող դրույթները յուրաքանչյուր իրավունքի առնչությամբ պետք է մեկնաբանվեն նույն կերպ: Տե՛ս այստեղ՝ [17.17] հանրային առողջության գործի վերաբերյալ:

²⁹ Նովակ, վերը, ծնթ. 3:

(2) Յուրաքանչյուր անձ, ով հրապարակավ խրախուսում է նույն սեռին պատկանող երկու անձի միջև անվայել պահվածքը, դատապարտվում է նույն սեռին պատկանող անձանց միջև անվայել պահվածքի համար 1-ին ենթակետում սահմանված կարգով:

Հեղինակները բողոքում էին հեռարձակող ընկերության՝ իրենց նյութը (ռադիոհաղորդում և հեռուստատեսային տեսաշար) գրաքննության ենթարկելու որոշման դեմ այն հիմնավորմամբ, որ այդ նյութի հեռարձակումը կխախտի Ֆինլանդիայի քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետը:

Մասնակից պետությունը օրենքը հիմնավորեց հետևյալ կերպ.

¶ 6.1. Ֆինլանդիան շեշտում է, որ նույն սեռին պատկանող անձանց անվայել պահվածքի հրապարակավ խրախուսման արգելումն արտացոլում է Ֆինլանդիայում գերակշռող բարոյական պատկերացումները՝ խորհրդարանի և ազգաբնակչության մեծ զանգվածի մեկնաբանությամբ: Մասնակից պետությունը նաև նշում է, որ «խրախուսում» բառը պետք է մեկնաբանվի նեղ իմաստով: Ավելին՝ խորհրդարանի օրենսդրական կոմիտեն միանշանակ հայտարարել է, որ օրենքը չպետք է խոչընդոտի համասեռականության վերաբերյալ փաստացի նյութերի ներկայացումը:

ՄԻԿ-ը որոշում կայացրեց հօգուտ մասնակից պետության:

¶ 10.2. Տիկին Նիկուլայի և Մարկո և Տուոկի Պուտկոնենի պատրաստած երկու հաղորդումների առնչությամբ, որոնք ենթարկվել են գրաքննության, կոմիտեն ընդունում է հեղինակների պնդումը, որ դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրենց իրավունքները սահմանափակվել են: Թեև ամեն անձ չի կարող իրեն իրավասու համարել արտահայտվելու հեռուստատեսության պես լրատվամիջոցով, որում ժամանակը սահմանափակ է, սակայն այլ հարց է, երբ ծրագիրը պատրաստվում է հեռարձակող ընկերության շրջանակներում՝ պատասխանատու մարմինների ընդհանուր հավանությամբ: Մյուս կողմից՝ 19-րդ հոդվածի 3-րդ կետը որոշակի սահմանափակումներ է նախատեսում 19-րդ հոդվածի 2-րդ կետով պաշտպանված իրավունքների համար, եթե այդ սահմանափակումները նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են հասարակական կարգի կամ հանրային առողջության կամ բարոյականության պաշտպանության համար: Տվյալ դիմումի համատեքստում Ֆինլանդիայի կառավարությունը հատուկ վկայակոչել է հանրային բարոյականությունը՝ որպես բողոքի առարկա համարվող գործողությունների հիմնավորում: Կոմիտեն ուսումնասիրել է՝ այս գործողությունների անհրաժեշտությունը գնահատելու համար անհրաժեշտ է կողմերից պահանջել գրաքննության ենթարկված ծրագրերի ամբողջ տեքստը: Իրականում այդ նյութերի հիման վրա միայն հնարավոր կլիներ որոշել, թե գրաքննության ենթարկված ծրագիրը հիմնականում կամ բացառապես բովանդակել է համասեռականության հարցերի վերաբերյալ փաստացի տեղեկատվություն, թե՞ ոչ:

¶ 10.3. Այդուհանդերձ, կոմիտեն կարծում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկությունները բավարար են դիմումի վերաբերյալ կարծիք կազմելու համար: Առաջին՝ հարկ է նշել, որ հանրային բարոյականությունը, պայմանավորված վայրով, շատ տարբեր է: Գոյություն չունի համընդհանուր ընդունված որևէ չափանիշ: Ուստի պատասխանատու ազգային մարմիններին այս առումով պետք է սեփական հայեցողության որոշակի լուսանցք տրվի:

¶ 10.4. Կոմիտեն համարում է, որ չի կարող հարցականի տակ առնել Ֆինլանդիայի հեռարձակման ընկերության պատասխանատու մարմինների որոշումն առ այն, որ ռադիոն և հեռուստատեսությունն այն տեղը չեն, որտեղ վայել է քննարկել համասեռականության հետ կապված հարցերն այն աստիճան, որ տվյալ հաղորդումը կարելի լինի համարել համասեռական վարքագիծը խրախուսող: 19-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ 19-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքների իրացումն իր հետ բերում է որոշակի պարտականություններ և պարտավորություններ այդ մարմինների համար: Ռադիո- և հեռուստահաղորդումների պարագայում չի կարելի վերահսկել հանդիսատեսին: Մասնավորապես, անհնար է բացառել այդ հաղորդումների վնասակար հետևանքներն անչափահասների վրա:

¶ 11. Համապատասխանաբար, Մարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ դիմումի հեղինակների՝ դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքների խախտում տեղի չի ունեցել:

[18.23] Սա միակ դեպքն է, երբ ՄԻԿ-ը նշել է, որ ԲԵԻՄԴ-ին անդամակցող մասնակից պետություններն ունեն «հայեցողության լուսանցք»: Այս «լուսանցքը» կարծես կրկնում է Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի (ՄԻԵԿ-ին) մասնակից պետություններին տրվող «գնահատման լուսանցքը»: Գնահատման լուսանցքն իր էությամբ մոտ է պետությանը տրվող կասկածի արտոնությանը կամ, այլ կերպ ասած, մի ոլորտ է, որի առնչությամբ եվրոպական դատարանը ավելի մեղմ է քննում բողոքի առարկա հանդիսացող գործողության համապատասխանությունը ՄԻԵԿ-ի դրույթներին³⁰: Մարդու իրավունքների

³⁰ Տե՛ս T. Jones, 'The Devaluation of Human Rights under the European Convention' [1995] *Public Law* 430, 430-1. ՄԻԵԿ-ի 11-րդ արձանագրությամբ եվրոպական համակարգը վերակազմավորվել է այնպես, որ դատարանը ներկայումս կարողանա

եվրոպական դատարանը հաստատել է, որ մասնակից պետությունները հանրային բարոյականությունը պաշտպանելու նպատակով ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելիս գնահատման լայն լուսանցք ունեն³¹:

[18.24] ՄԻԿ-ն իր վարույթում չի ունեցել կամընտիր արձանագրության շրջանակներում քննվող որևէ այլ գործ, որում հղում արվեր մասնակից պետության «հայեցողության լուսանցքին»: Եվ իրականում հայեցողության լուսանցքի կիրառելիությունը մերժվել է ՔՔԻՄԴ-ով նախատեսված այլ իրավունքների առնչությամբ ավելի ուշ քննված մի գործում³²: Նման գաղափարախոսությունը խարխլում է մարդու իրավունքների պաշտպանությունը: Ավելին՝ կարելի է նկատել, որ ՄԻԿ-ի շրջանակներում այս մոտեցումը հաճախ է կիրառվում, երբ ՄԻԿ-ին անդամակցող պետություններից որևէ մեկում հատուկ քննարկվող իրավունքի վերաբերյալ որևէ ընդհանուր գործելակերպ գոյություն չի ունենում: Խելամիտ չէր լինի կիրառել նման գաղափարախոսությունը ՔՔԻՄԴ-ի շրջանակներում, որտեղ հազվադեպ կարելի է որոշել, թե որն է ընդհանուր գործելակերպ այս համընդհանուր համաձայնագրին անդամակցող շատ տարբեր մասնակից պետություններում³³:

[18.25] Պրն Օփսալն առանձին համանման կարծիք առաջադրեց Յերցբերգի գործով, որին համաձայնեցին պարոնայք Լալահը և Տարնոպուսկին:

Այս եզրակացությունը չի կանխորոշում դաշնագրի 17-րդ հոդվածով պաշտպանված տարբերվելու և համապատասխանաբար ապրելու իրավունքը, ոչ էլ ազատ արտահայտվելու ընդհանուր իրավունքը, որը պաշտպանված է դաշնագրի 19-րդ հոդվածով: 19-րդ հոդվածի 2-րդ կետով և 19-րդ հոդվածի 3-րդ կետի վերապահումներով յուրաքանչյուրը պետք է սկզբունքորեն համասեռականության վերաբերյալ տեղեկատվություն և մտքեր հաղորդելու իրավունք ունենա անկախ այն հանգամանքից՝ դրանք դրակա՞ն են, թե՞ բացասական, ինչպես նաև պետք է իրավունք ունենա իր ընտրած միջոցով և սեփական պատասխանատվությամբ ազատորեն քննարկելու դրան առնչվող յուրաքանչյուր խնդիր:

Ավելին՝ 19-րդ հոդվածի 3-րդ կետում մեջբերվող «հանրային բարոյականություն» հասկացությունը և դրա բովանդակությունը հարաբերական են ու փոփոխական: Ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները պետության կողմից պետք է հաշվի առնեն այս հանգամանքը և չպետք է կիրառվեն նախապաշարմունքներն արմատավորելու և անհանդուրժողականությունը խթանելու համար: Հատկապես կարևոր է ազատ արտահայտվելու իրավունքը պաշտպանել փոքրամասնությունների հայացքների առնչությամբ, այդ թվում՝ այնպիսի հայացքների արտահայտումը, որոնք վիրավորում, վրդովում կամ խանգարում են մեծամասնությանը: Ուստի, եթե նույնիսկ Ֆինլանդիայի քրեական օրենսգրքի 20-րդ գլխի 9-րդ կետի 2-րդ ենթակետի նման օրենքները կարող են արտացոլել գերակշռող բարոյականության հայացքները, դա ինքնին բավարար չէ այս իրողությունը 19-րդ հոդվածի 3-րդ կետով հիմնավորելու համար: Հարկ է ցույց տալ, որ սահմանափակման կիրառումը «անհրաժեշտ է»:

Այդուհանդերձ, կոմիտեն նշել է, որ այս օրենքը չի կարող ուղղակիորեն կիրառվել ենթադրյալ տուժողներից ոչ մեկի նկատմամբ: Հարց է մնում, թե այս օրենքն ավելի անուղղակի կերպով անդրադարձե՞լ է նրանց վրա այն չափով, որ հնարավոր լինի արձանագրել այս օրենքի միջամտությունն ազատ արտահայտվելու իրավունքին, և եթե այո, ապա արդյոք դրա հիմքերը կարո՞ղ էին արդարացվել:

Պարզ է, որ ոչ ոք և մասնավորապես ոչ մի պետություն դաշնագրով պարտավորություն չի կրում խթանելու ամեն տեսակ տեղեկատվության և մտքերի հրապարակալարությունը: Այլ անձանց կողմից գործարկվող լրատվամիջոցների հասանելիությունը միշտ և ըստ էության ավելի սահմանափակ է, քան ազատ արտահայտվելու ընդհանուր իրավունքը: Սրանից հետևում է, որ նման հասանելիությունը կարող է վերահսկվել այնպիսի հիմունքներով, որոնք պարտադիր չէ արդարացնել 19-րդ հոդվածի 3-րդ կետի սահմաններում:

Գիշտ է, որ լրատվամիջոցների հրապարակման կամ ներքին ծրագրային քաղաքականության վրա ինքնուրույն

ուսումնասիրել բոլոր բողոքները: Եվրոպական հանձնաժողովը դադարեցրեց գործերի քննումը 1999 թ. հոկտեմբերի 31-ից:

³¹ Տե՛ս *Handyside Case*, Series A (1979-80) 1 EHRR 737, կետ 48:

³² Տե՛ս «*Լանսմանն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Länsman v Finland*, 511/92) գործը, որով ՄԻԿ-ը մերժեց 27-րդ հոդվածով նախատեսված փոքրամասնության իրավունքների առումով հայեցողության լուսանցքի կիրառումը 9.4 կետում, այստեղ՝ [24.31-24.32]: 1994 թ. ՄԻԿ-ի նախկին անդամ Ռոզալին Յիզինսը մերժեց, որ հայեցողության լուսանցքի մոտեցումը շարունակում է գործել ՔՔԻՄԴ-ի շրջանակներում: Տե՛ս S. Joseph, 'Toonen v Australia: Gay Rights under the ICCPR' (1994) 13 *University of Tasmania Law Journal* 392, 406: Յիզինսը ներկայումս Արդարադատության միջազգային դատարանի դատավոր է: Տե՛ս նաև [16.37]:

³³ Տե՛ս L. Helfer and A. Miller, 'Sexual Orientation and Human Rights: Toward a United States and Transnational Jurisprudence' (1996) 6 *Harvard Human Rights Journal* 61, 74: Այստեղ նշվում է, որ հավանական չէ, որ 1996 թ. ՄԻԿ-ը հետևի 1982 թ. Յերցբերգի գործով իր կայացրած որոշման օրինակին:

դրվող սահմանափակումները կարող են վտանգել արտահայտվելու ազատության ոգին: Այնուամենայնիվ, ողջամիտ է ենթադրել, որ մեծանորություններն ամբողջովին դուրս են կոմիտեի վերահսկողությունից կամ պետք է ընդունվեն ավելի մեծ չափով, քան արտաքին աղբյուրներից պարտադրվող սահմանափակումները, ինչպես օրինակ՝ քրեական օրենսդրության կամ պաշտոնական գրաքննության պարագայում, որոնցից ոչ մեկն էլ տվյալ դեպքում չի արձանագրվել: Նույնիսկ պետության կողմից վերահսկվող լրատվամիջոցը չի կարող դաշնագրով պարտավորված լինել հրապարակելու այն ամենը, ինչ կարող է հրապարակվել: Անհնար է ինքնուրույն արված սահմանափակումների պարագայում կիրառել 19-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված չափանիշները: «Յանրային բարոյականության» խնդրից զատ՝ չի կարելի պահանջել, որ այդ չափանիշները բավարարեն միայն «օրենքով նախատեսված» և որևէ հատուկ նպատակի համար «անհրաժեշտ» լինելու պահանջը: Ուստի ես գերադասում եմ որևէ կարծիք չարտահայտել տվյալ գործում բողոքի առարկա հանդիսացող որոշումների հնարավոր պատճառների վերաբերյալ:

Յանրային բանավեճում զանգվածային լրատվամիջոցների դերը կախված է լրագրողների և հրապարակման ենթակա նյութերն ընտրող վերադասի միջև եղած հարաբերություններից: Ես համաձայն եմ դիմումի հեղինակների հետ, որ լրագրողների ազատությունը կարևոր է, սակայն այս առնչությամբ ծագող հարցերը դաշնագրի 19-րդ հոդվածի շրջանակներում կարելի է քննել միայն մասնակիորեն:

Փոքրամասնությունը գործի վերաբերյալ որոշում կայացրեց այլ հիմնավորմամբ՝ հաշվի առնելով լրատվամիջոցների սեփականատերերի՝ հեռարձակման ենթակա նյութերն ընտրելու ազատությունը: Նրանց որոշումը կարծես հակասում է Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ի հայտնած մտահոգություններին [18.16]:

[18.26] ՄԻԿ-ի մեծամասնությունը նշել է, որ մասնակից պետությունը պատասխանատու է Ֆինլանդիայի հեռարձակման ընկերության կայացրած գրաքննական որոշումների համար, քանի որ հենց նրան է պատկանում ընկերության բաժնետոմսերի 90 տոկոսը, իսկ ընկերությունը գտնվում է կառավարության հատուկ հսկողության տակ³⁴: Փոքրամասնությունը հավանական տարբերակում մտցրեց լրատվամիջոցների պետական և ոչ պետական սեփականատերերի միջև: Այս որոշումը թերևս ընդգծում է ՔԲԻՄԴ-ի հարաբերական թուլությունը մասնավոր, բայց ոչ պետական հատվածում³⁵:

[18.27]

**«ԴԵԼԳԱԴՈ ՊԱԵՍԸ ընդդեմ ԿՈԼՈՄԲԻԱՅԻ»
(DELGADO PÁEZ v COLOMBIA, 195/85)**

Մասնագիտությամբ մանկավարժ հեղինակը պնդում էր, որ ենթարկվում է հետապնդումների³⁶, ընդ որում՝ բողոք էր ներկայացրել 19-րդ հոդվածով կրոնի դասավանդման եղանակն ընտրելու հարցում իր ակադեմիական ազատության սահմանափակումների վերաբերյալ: ՄԻԿ-ը 19-րդ հոդվածի շրջանակներում չընդունեց բողոքը հետևյալ ձևակերպմամբ.

¶ 5.8. Ի թիվս այլոց, 19-րդ հոդվածը պաշտպանում է ազատ արտահայտվելու և սեփական կարծիք ունենալու իրավունքը: Սա սովորաբար ընդգրկում է նաև ուսուցիչների՝ սեփական պատկերացումների համաձայն և առանց միջամտության իրենց առարկաները դասավանդելու ազատությունը: Սակայն, ելնելով տվյալ գործի հատուկ հանգամանքներից և հաշվի առնելով Կոլումբիայում եկեղեցու և պետության միջև եղած առանձնահատուկ հարաբերությունները, որոնք ամրագրված են համապատասխան համաձայնագրով, կոմիտեն եզրակացնում է, որ եկեղեցու այն պահանջը, թե կրոնը պետք է դասավանդվի որոշակի եղանակով, չի խախտում 19-րդ հոդվածը:

Այս գործը վկայում է, թե ինչպես «հանրային բարոյականություն» հասկացությունը կարող է տարբերվել՝ կախված պետությունից, ուստի 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքների այս բացահայտ թույլատրելի սահմանափակումների կիրառումը նույնպես կարող է տարբերվել՝ կախված պետությունից³⁷:

[18.28] Անվայել կամ պոռնկագրական բնույթի նյութերի սահմանափակումը կարող է հանրային բարոյականության պաշտպանության հիմնավորմամբ 19-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված սահմա-

³⁴ Պարբ. 9.1:

³⁵ Այդուհանդերձ, այս որոշումը կայացվել է շատ վաղուց: Ստեղծվում է այն տպավորությունը, որ ներկայումս ՄԻԿ-ն ավելի տեղյակ է ՔԲԻՄԴ-ի իրավունքների հորիզոնական հետևանքներին: Տե՛ս [1.77-1.84]:

³⁶ Այս գործի առնչությամբ տե՛ս [11.03] և [22.54]:

³⁷ Տե՛ս նաև «Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի» (Toonen v Australia, 488/92) գործի բացատրությունը այստեղ՝ [16.36]:

նափակման դասական օրինակ ծառայել³⁸: Սրբապղծության արգելումը նույնպես կարող է հիմնավորվել «հանրային բարոյականությամբ», թեև այս հիմնավորումը շատ պետություններում ավելի վիճահարույց է, եթե հաշվի է առնվում բազմաթիվ ժամանակակից հասարակությունների աշխարհիկ բնույթը³⁹:

Հասարակական կարգը և ազգային անվտանգությունը

[18.29] «Հասարակական կարգը» կարելի է բնութագրել որպես կանոնների մի ամբողջություն, որն ապահովում է հասարակության խաղաղ և արդյունավետ գործունեությունը⁴⁰: Ֆրանսերենում այս արտահայտության համարժեքն է «Ordre public» դարձվածքը, թեպետև այն ճշգրիտ թարգմանություն չէ, քանի որ կիրառելի է ավելի շատ մասնավոր, քան ընդհանուր իրավունքի հասկացության դեպքում⁴¹: Ուստի ֆրանսերեն «ordre public» հասկացությունը կարծես ավելի լայն շրջանակ ունի, քան անգլերեն «public order»-ը: Այդուհանդերձ, ֆրանսերեն «ordre public» հասկացությամբ ենթադրվող ավելի խոր իմաստը թերևս որևէ կերպ չի անդրադարձել կանոնադրության արձանագրությամբ քննվող որևէ գործի արդյունքի վրա:

[18.30] 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքների ընդհանուր սահմանափակումները՝ հասարակական կարգի մասով, ընդգրկում են այն հայտարարությունների արգելումը, որոնք կարող են հանցագործություն, բռնություն կամ զանգվածային խուճապ հրահրել: Առանց արտոնագրի զանգվածային հեռարձակման արգելումը նույնպես կարելի է հիմնավորել որպես հասարակական կարգի միջոց՝ ազդանշանների աղավաղումը և եթերային ալիքների խցանումը կանխելու համար⁴²:

[18.31] «ԳՈՏԻՆԵՆ ԸՆԴՂԷՆ ԿԱՆԱԴԱՅԻ» (GAUTHIER v CANADA, 633/95)

Այս գործի հանգամանքները բերված են ստորև.

¶ 2.1. Հեղինակը 1982 թ. հիմնադրված «Նեշնլ քեփիթլ Նյուզ» (*National Capital News*) թերթի հրատարակիչն էր: Նա դիմել է «խորհրդարանական մամուլի սրահ» մասնավոր ընկերակցությանն անդամակցելու համար, որը զբաղվում էր խորհրդարանի մուտքի հավատարմագրման հարցերով: Նրան տրվել է ժամանակավոր անցագիր և միայն սահմանափակ արտոնություններ: Նրա՝ այլ լրագրողների և հրատարակիչների հետ հավասար հիմունքներով մուտքի իրավունք ստանալու բազմաթիվ խնդրանքները մերժվել են:

¶ 2.2. Հեղինակը նշում է, որ ժամանակավոր անցագիրը չի ապահովում մուտքի նույն իրավունքը, ինչ մշտական անդամակցությունը, քանի որ այն, ի թիվս այլոց, մամուլ սրահի մատյանում գրանցվելու և մամուլ հաղորդումներ ստանալու համար փոստարկղից օգտվելու հնարավորություն չի տալիս:

¶ 3. Հեղինակը պնդում էր, որ խորհրդարանում մամուլի ծառայություններից հավասար հիմունքներով օգտվելու խնդրանքի մերժումը դաշնագրի 19-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների խախտում է:

Մասնակից պետությունն իրավիճակի հիմնավորումը ներկայացրեց հետևյալ ձևակերպումներով.

¶ 11.1. 1998 թ. հուլիսի 14-ին ներկայացված իր նյութերում մասնակից պետությունը պատասխան է տալիս դիմումի հիմնավորվածության վերաբերյալ: Մասնակից պետությունը կրկնում է իր նախկին դիտարկումները և բացատրում, որ Համայնքների պալատի խոսնակն օժտված է խորհրդարանային արտոնությամբ և վերահսկում է խորհրդարանի տարածքի այն մասերը, որոնք զբաղեցնում են Համայնքների պալատի կամ նրա անունից: Խոսնակի պարտականություններից մեկն է վերահսկել այդ տարածքները: Մասնակից պետությունն ընդգծում է, որ խորհրդարանի բացարձակ իրավասությունն իր իսկ ընթացակարգերի հարցում Կանադայի ընդհանուր սահմանադրական կառույցի առանցքային և հիմնարար սկզբունքն է:

¶ 11.2. Ինչ վերաբերում է խոսնակի և մամուլի սրահի միջև եղած հարաբերություններին, ապա մասնակից պե-

³⁸ Տե՛ս [18.63]:

³⁹ Տե՛ս սրբապղծության վերաբերյալ [17.20]:

⁴⁰ Տե՛ս «Սիրակուզայի սկզբունքները» վերը, ծմթ. 28, 5:

⁴¹ B. Lockwood Jr, J. Finn, and G. Jubinsky, 'Working Paper for the Committee of Experts on Limitation Provisions' (1985) 7 *HRQ* 35, 57-9. Օրինակ՝ ֆրանսերեն «ordre public» ատրահայտությունը կարող է օգտագործվել մասնավոր իրավունքի տիրույթին պատկանող պայմանագրերը մերժելու համար՝ «առավել բարձր հրամայականների շահերից ելնելով», մինչդեռ անգլերեն «public order» հասկացությունը նույն եղանակով չի օգտագործվում սովորական իրավունքի իրավասություններում:

⁴² Նովակ, վերը, ծմթ. 3, 356:

տությունը բացատրում է, որ այս հարաբերությունը պաշտոնական բնույթ չի կրում և սահմանված չէ օրենքով: Թեև խոսնակը բացարձակ իրավասություն ունի լրատվամիջոցների համար նախատեսված տարածք ֆիզիկապես մուտք գործելու հարցում, սակայն չի մասնակցում այդ ծառայությունների ընդհանուր շահագործմանը, և դրանք ամբողջապես ղեկավարվում և գործարկվում են մամուլի սրահի կողմից:

¶ 11.3. Լրատվամիջոցների ծառայությունների համար մուտքի թույլտվություն չնորհող մամուլի անցագրերը տրվում են միայն մամուլի սրահի անդամներին: Մասնակից պետությունը կրկնում է, որ մամուլի սրահին անդամակցությունը ներքին հարց է, և խոսնակը միշտ որդեգրել է չմիջամտելու խիստ դիրքորոշում: Մասնակից պետությունը հայտնում է, որ հեղինակը՝ որպես հանրության անդամ, կարող է մուտք գործել խորհրդարանի այն տարածքները, որոնք բաց են հանրության համար, և կարող է ներկա գտնվել Համայնքների պալատի բաց նիստերին:

¶ 11.4. Այս կապակցությամբ մասնակից պետությունը կրկնում է, որ Համայնքների պալատի լսումները հեռարձակվում են հեռուստատեսությամբ, և յուրաքանչյուր լրագրող գործնականում կարող է, առանց խորհրդարանի մամուլի ծառայություններից օգտվելու, լուսաբանել Համայնքների պալատում ընթացող լսումները: Մասնակից պետությունը հավելում է, որ Համայնքների պալատի քննարկումների արձանագրությունը հաջորդ օրը հրապարակվում է համացանցում: Վարչապետի ելույթները և մամուլի հաղորդումները տեղադրվում են սրահում, որը բաց է հանրության համար, ինչպես նաև հրապարակվում են համացանցում: Կառավարության զեկույցները և մամուլի հաղորդումները նույնպես հրապարակվում են համացանցում:

¶ 11.5. Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակը չի զրկվել տեղեկատվություն ստանալու և հաղորդելու իր ազատությունից: Թեև նա հանրության անդամ է, չի կարող գրառումներ կատարել, երբ գտնվում է Համայնքների պալատի հանրային սրահում, բայց նա կարող է դիտել պալատում ընթացող լսումները և լուսաբանել դրանք: Մասնակից պետությունը բացատրում է, որ «գրառումներն ավանդաբար արգելվել են Համայնքների պալատի հանրային սրահներում՝ կարգապահության, գեղագիտության և անվտանգության նկատառումներից ելնելով (օրինակ՝ խորհրդարանի անդամների վրա վերևի սրահից առարկաների նետելը կանխելու համար)»: Ավելին՝ հեղինակի փնտրած տեղեկությունները հասանելի են ուղիղ եթերում հեռարձակվող հաղորդումների միջոցով, ինչպես նաև հասանելի են համացանցում:

¶ 11.6. Միաժամանակ մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակի՝ տեղեկատվություն ստանալու և հաղորդելու կարողության յուրաքանչյուր սահմանափակում, որը բխում է Համայնքների պալատի հանրային սրահում գրառումներ անելու արգելքից, նվազագույնի է հասցված և արդարացված է ազատ արտահայտվելու իրավունքի և խորհրդարանի արդյունավետ և արժանավայել աշխատանքը, ինչպես նաև նրա անդամների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտության հավասարակշռումով: Ըստ մասնակից պետության՝ պետությունների համար արդյունավետ կառավարման և անվտանգության հարցերը որոշելիս մեծ ճկունություն պետք է նախատեսվի, քանի որ հենց նրանք են լավագույն դիրքում ռիսկերն ու կարիքները որոշելու համար:

Գործի նյութաիրավական հիմնավորմամբ ՄԻԿ-ը որոշում կայացրեց հօգուտ հեղինակի:

¶ 13.3. Կոմիտեին առաջադրված հարցը հետևյալն էր. որպեսզի որոշվի՝ խորհրդարանում մամուլի ծառայությունների սրահ հեղինակի մուտքի սահմանափակումը դաշնագրի 19-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվություն փնտրելու, ստանալու և հաղորդելու իրավունքի խախտո՞ւմ է, թե՞ ոչ:

¶ 13.4. Այս առնչությամբ կոմիտեն նաև հիշատակում է հանրային գործերին մասնակցելու իրավունքը, որն ամրագրված է դաշնագրի 25-րդ հոդվածով և, մասնավորապես, թիվ 25 (57) Ընդհանուր մեկնաբանությունը, որում ասվում է. «25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքների լրիվ իրացումն ապահովելու համար էական է հանրային և քաղաքական հարցերի շուրջ քաղաքացիների, թեկնածուների և ընտրված ներկայացուցիչների միջև տեղեկատվության և մտքերի ազատ փոխանակումը: Սա ենթադրում է ազատ մամուլ և այլ լրատվամիջոցներ, որոնք պետք է կարողանան հանրային հարցերն ազատորեն մեկնաբանել՝ առանց գրաքննության կամ սահմանափակումների և իրազեկել հանրությանը»: Թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության 25-րդ կետ՝ ընդունված կոմիտեի կողմից 1996 թ. հուլիսի 12-ին⁴³: 19-րդ հոդվածի հետ մեկտեղ ընթերցմամբ՝ սա ենթադրում է, որ քաղաքացիները և, մասնավորապես, լրատվամիջոցները պետք է տեղեկատվության լայն հասանելիություն ունենան և ընտրովի մարմինների և նրանց անդամների վերաբերյալ տեղեկատվություն և կարծիքներ տարածելու հնարավորություն ունենան: Այդուհանդերձ, կոմիտեն ընդունում է, որ նման մուտքը չպետք է միջամտի ընտրյալ մարմինների գործառնությունների իրականացմանը, և որ այսպիսով մասնակից պետությունն իրավասու է սահմանափակել այդ մուտքը: Սակայն մասնակից պետության կողմից դրված յուրաքանչյուր սահմանափակում պետք է համապատասխանի դաշնագրի դրույթներին:

¶ 13.5. Տվյալ դեպքում մասնակից պետությունը սահմանափակել է հանրային ֆինանսավորմամբ գործող լրատվամիջոցների համար նախատեսված ծառայություններից օգտվելու իրավունքի իրացումը, այդ թվում՝ խորհրդարանի նիստերի ընթացքում գրառումներ կատարելու իրավունքը «Կանադայի մամուլի սրահ» (Canadian Press Gallery) մասնավոր կազմակերպության անդամ հանդիսացող լրատվամիջոցների ներկայացուցիչներով: Հեղինակի՝ մամու-

⁴³ 25-րդ հոդվածի վերաբերյալ տե՛ս ընդհանուր 22-րդ գլուխը:

լի սրահի լիիրավ անդամակցության հայտը մերժվել է: Նրան տրվել է ժամանակավոր անդամակցություն, որի շնորհիվ նա ստացել է կազմակերպության որոշ, բայց ոչ բոլոր ծառայություններից օգտվելու հնարավորություն: Երբ նա չի օգտվում թեկուզ ժամանակավոր անդամակցությունից, չի կարող մուտք գործել լրատվամիջոցների համար նախատեսված տարածք և խորհրդարանային լսումների ժամանակ գրառումներ կատարել: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետության պնդմամբ՝ հեղինակը որևէ զգալի անհարմարություն չի ունենում տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում, որի շնորհիվ խորհրդարանի աշխատանքի վերաբերյալ տեղեկատվությունը միանգամայն մատչելի է հանրությանը: Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակը կարող է լուսաբանել խորհրդարանի աշխատանքը՝ օգտվելով հեռարձակման ծառայություններից կամ դիտելով խորհրդարանի միստերը: Այդուհանդերձ, հաշվի առնելով ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության կարևորությունը, կոմիտեն չի ընդունում մասնակից պետության այդ փաստարկը և հակված է այն կարծիքին, որ հեղինակի բացառումը դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված տեղեկատվության հասանելիության իրավունքի սահմանափակում է: Հարց է՝ այս սահմանափակումն արդարացվա՞ծ է 19-րդ հոդվածի 3-րդ կետով: Բերվում է այն փաստարկը, որ սահմանափակումը թելադրված է օրենքով, ըստ որի՝ խորհրդարանի տարածքից կամ դրա որևէ հատվածից անձանց բացառումը՝ խոսնակի իրավասությանը, բխում է խորհրդարանային արտոնության մասին օրենքի դրույթներից:

¶ 13.6. Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ սահմանափակումները պայմանավորված են ազատ արտահայտվելու իրավունքի և խորհրդարանի արդյունավետ ու արժանավայել աշխատանքը, ինչպես նաև խորհրդարանի անդամների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտության հավասարակշռումով, իսկ մասնակից պետությունը գտնվում է լավագույն դիրքում համապատասխան ռիսկերն ու կարիքները գնահատելու համար: Ինչպես նշվել է վերը, կոմիտեն համաձայն է, որ խորհրդարանային ընթացակարգերի պաշտպանությունը կարող է դիտարկվել որպես հասարակական կարգի պահպանման ուղղված օրինական նպատակ, իսկ հավատարմագրման համակարգը կարող է այս առումով արդարացված համարվել՝ որպես այդ նպատակին հասնելու միջոց: Այդուհանդերձ, քանի որ հավատարմագրման համակարգը 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքների սահմանափակում է դնում, դրա գործարկումը և կիրառումը պետք է անհրաժեշտ և համաչափ լինի տվյալ նպատակին և չպետք է կամայական լինի: Կոմիտեն չի ընդունում, որ այս հարցի որոշումը բացառապես վերապահված է պետությանը: Հավատարմագրման չափանիշները պետք է հստակ լինեն, արդարացի և ողջամիտ, իսկ դրանց կիրառումը պետք է թափանցիկ լինի: Տվյալ պարագայում մասնակից պետությունը, առանց միջամտության, թույլ է տվել, որ մասնավոր կազմակերպությունը վերահսկի խորհրդարանում մամուլի ծառայությունների մատչելիությունը: Այս ձևաչափը չի երաշխավորում, որ խորհրդարանում լրատվամիջոցների ծառայություններից օգտվելու կամայական մերժում չի լինի: Այս հանգամանքներում կոմիտեն այն կարծիքին է, որ ցույց չի տրվել, որ հավատարմագրման համակարգը անհրաժեշտ և համաչափ է դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավունքների սահմանափակման իմաստով և ապահովում է խորհրդարանի աշխատանքի արդյունավետ ընթացքն ու դրա անդամների անվտանգությունը: Ուստի խորհրդարանի մամուլի ծառայությունների հասանելիության մերժումը հեղինակին այն պատճառաբանությամբ, թե նա Կանադայի մամուլի սրահի ընկերակցության անդամ չի հանդիսանում, դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում է:

¶ 13.7. Այս կապակցությամբ կոմիտեն նշում է, որ ո՛չ դատարաններին, ո՛չ էլ խորհրդարանին այս հարցով դիմելու հնարավորություն գոյություն չունի, որպեսզի որոշվի այս բացառման օրինականությունը կամ դրա անհրաժեշտությունը դաշնագրի 19-րդ հոդվածում ամրագրված նպատակների շրջանակներում: Կոմիտեն հիշեցնում է, որ դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով մասնակից պետությունները պարտավորվել են ապահովել, որ յուրաքանչյուր անձ, ում իրավունքները խախտվել են, պետք է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ունենա, իսկ դրանից օգտվելու պահանջ ներկայացնող յուրաքանչյուր անձի իրավունքը պետք որոշվի իրավասու մարմինների կողմից: Համապատասխանաբար, ամեն անգամ, երբ դաշնագրով ճանաչված իրավունքը տուժում է պետության գործակալի գործողությունից, պետության կողմից պետք է ստեղծվի ընթացակարգ և հնարավորություն տրվի այն անձին, ում իրավունքը խախտվել է, պահանջ ներկայացնել իրավասու մարմնին իր իրավունքների խախտման առնչությամբ:

¶ 14. Մարդու իրավունքների կոմիտեն, որը գործում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետով, այն կարծիքին է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը խոսում են դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման մասին:

[18.31Ա] «*Բաբանը ընդդեմ Ավստրալիայի*» (*Baban v Australia, 1014/01*) գործով հեղինակը կալանավորված էր ներգաղթյալների համար նախատեսված կալանավորման հաստատությունում: Նա պնդում էր, որ իր հարկադիր տեղափոխումը մի հաստատությունից մյուսը՝ որպես պատիժ հացադուլին իր մասնակցության համար, 19-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: ՄԻԿ-ը որոշել է, որ նրա տեղափոխումը համապատասխանում է 19-րդ հոդվածի 3-րդ կետին, քանի որ մտահոգություն է եղել, որ հացադուլը կարող է վտանգել «կալանավորվածների, այդ թվում նաև՝ փոքր երեխաների առողջությունն ու անվտանգությունը»⁴⁴:

⁴⁴ Պարբ. 6.7:

[18.32] *Գոտիեի* և *Բաբանի* գործերով մասնակից պետությունները վկայակոչում են «հասարակական կարգ» հասկացությունը, ընդ որում՝ երկրորդ դեպքում հաջողությամբ, դաշնային խորհրդարանի և կալանավորման հաստատության տարածքում այդ կարգը պաշտպանելու ներքին համատեքստում: Սովորաբար «հասարակական կարգ» հասկացությունը վկայակոչվում է ավելի լայն համատեքստում և ենթադրում է ամբողջ պետության մեջ հասարակության պաշտպանության իրողությունը, ինչը երևում է ստորև ներկայացված գործերից:

[18.33] «Մ.Ա.-ն ընդդեմ ԻՏԱԼԻԱՅԻ» (M.A. v ITALY, 117/81)

Գործի հանգամանքները բերված են ստորև.

¶ 1.2. Ենթադրյալ տուժող Մ.Ա.-ն 1952 թ. հունիսի 20-ի քրեական օրենքով արգելված «լուծարված ֆաշիստական կուսակցության վերակազմավորմանը» մասնակցելու մեղադրանքով դատապարտվել է և դիմումը ներկայացնելու պահին կրում էր իր պատիժը: Ֆլորենցիայի վերաքննիչ դատարանի կարգադրությամբ Մ.Ա.-ն պայմանականորեն ազատ է արձակվել և 1983 թ. հուլիսի 29-ին դրվել պարտադիր վերահսկողության տակ:

¶ 1.3. Հեղինակները չեն մատնանշում, թե դաշնագրի որ հոդվածներն են մասնավորապես խախտվել: Ընդհանուր առմամբ պնդումն այն է, որ Մ.Ա.-ն ազատագրված էր դատապարտվել միայն իր հայացքների համար և զրկված է եղել իր քաղաքական համոզմունքները քարոզելու իրավունքից:

ՄԻԿ-ը Մ.Ա.-ի հայցը համարեց անընդունելի:

¶ 13.3. ...Կոմիտեի համար պարզ է դարձել, որ այն գործողությունները, որոնց համար Մ.Ա.-ն դատապարտվել է (լուծարված ֆաշիստական կուսակցության վերակազմավորում), հանված են դաշնագրի 5-րդ հոդվածի պաշտպանության շրջանակից, և ամեն դեպքում դրանք արդարացիորեն են արգելվել Իտալիայի օրենսդրությամբ՝ հաշվի առնելով քննարկվող իրավունքներին դաշնագրի 18-րդ հոդվածի 3-րդ կետով, 19-րդ հոդվածի 3-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ կետով և 25-րդ հոդվածով կիրառելի սահմանափակումները: Հետևաբար, այս առումով դիմումն անընդունելի է կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածով, քանի որ գործի նյութաիրավական հիմքերը (*ratione materiae*) անհամատեղելի են դաշնագրի դրույթների հետ:

5-րդ հոդվածով արգելվում է ՔՔԻՄԴ-ի դրույթների այնպիսի մեկնաբանությունը, որը մարդկանց իրավունք է տալիս զբաղվելու այլ անձանց ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքների վերացմանը կամ սահմանափակմանն ուղղված գործունեությամբ: Մակգոլդրիկն իրավացիորեն քննադատեց «Մ.Ա.-ն ընդդեմ Իտալիայի» (*M.A. v Italy, 117/81*) գործը՝ նշելով, որ 5-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված իրավունքները պետք է ուսումնասիրվեին գործի արժանիքների գնահատման փուլում⁴⁵: ՄԻԿ-ը պետք է ավելի մանրամասն տեղեկություններ ստանար Իտալիայի նոր ֆաշիստական կուսակցության փաստացի գործունեության մասին նախքան այդ գործունեության արգելման փաստն ընդունելը: Իտալիան ներկայացրել է միայն, որ ֆաշիստական կուսակցությունը ցանկանում էր «վերացնել ժողովրդավարական ազատությունները և հաստատել տոտալիտար վարչակարգ»⁴⁶: ՄԻԿ-ը չանդադարձավ Մ.Ա.-ի այն պնդմանը, որ օրենքը խտրական է կիրառվել և բացառապես ուղղված է եղել աջ թևի կազմակերպությունների, ոչ թե բոլոր «հակաժողովրդավարական» կուսակցությունների դեմ, ինչպիսիք են, օրինակ, անարխիստներն ու լենինիստները⁴⁷:

[18.34] «Ազգային անվտանգությունը» վկայակոչվում է որպես սահմանափակման հիմնավորում, երբ վտանգի տակ են պետության քաղաքական անկախությունը կամ տարածքային ամբողջականությունը⁴⁸: Ազգային անվտանգությամբ պայմանավորված սովորական սահմանափակումները ներառում են «պաշտոնական գաղտնիքների» փոխանցման արգելումը: Հաճախ «ազգային անվտանգությունը» վկայակոչվում է «հասարակական կարգ» հասկացության փոխարեն՝ որպես որոշակի տեսակի քաղաքական խոսքի սահմանափակման արդարացում:

⁴⁵ Մակգոլդրիկ, վերը, ծնթ. 2, 166-7:

⁴⁶ Պարբ. 72:

⁴⁷ Տե՛ս պարբ. 9(բ): Այդ պնդումը կարող էր խնդիրներ հարուցել դաշնագրի՝ անխտրականության մասին 2-րդ հոդվածի 1-ի կետի և 26-րդ հոդվածի դրույթների շրջանակներում:

⁴⁸ «Սիրակուզայի սկզբունքներ», վերը, ծնթ. 28, 6:

[18.35]

«ԿԻՄ ընդդեմ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(KIM v REPUBLIC OF KOREA, 574/94)

Հեղինակը բողոքում էր, որ «Ազգային անվտանգության մասին» օրենքի համաձայն՝ դատապարտվել է «հակապետական կազմակերպության», մասնավորապես՝ Կորեայի ժողովրդադեմոկրատական Հանրապետության (Հյուսիսային Կորեա) վերաբերյալ համակիր հայացքներ արտահայտելու համար: Մասնակից պետությունը բերեց հեղինակի դատապարտման հիմնավորումը:

¶ 10.4. Փաստաբանի այն փաստարկի առնչությամբ, որ մասնակից պետությունը չի կարողացել հաստատել հեղինակի և Հյուսիսային Կորեայի միջև կապի գոյությունը և այն պնդումը, որ հեղինակի գործողությունները լուրջ վտանգ էին ներկայացնում ազգային անվտանգության համար, մասնակից պետությունը նշում է, որ Հյուսիսային Կորեան փորձել է ապակայունացնել երկիրը՝ կոչ անելով տապալել Հարավային Կորեայի «ռազմական ֆաշիստական վարչակարգը» և ստեղծել «ժողովրդավարական կառավարություն», որը կիրականացնի «հայրենիքի միավորումը» և «ժողովրդի ազատագրումը»: Հեղինակի կողմից տարածվող փաստաթղթերում շեշտվում էր, որ Հարավային Կորեայի կառավարությունը հետամուտ է երկրի շարունակական պառակտմանը և դիկտատորական վարչակարգի հաստատմանը, և Կորեայի ժողովուրդը վերջին հիսուն տարում պայքարում է ԱՄՆ-ի և Ճապոնիայի նորգաղութային ազդեցության դեմ, որն ուղղված է Կորեական թերակղզու շարունակական պառակտմանը և դրա ժողովրդի ճնշմանը, որ միջուկային զենքը և ամերիկացի զինվորականները պետք է հեռանան Հարավային Կորեայից, որովհետև վերջիններիս ներկայությունը մեծ վտանգ է ազգային գոյատևման և ժողովրդի համար, և համատեղ զորավարությունները Հարավային Կորեայի և ԱՄՆ-ի միջև պետք է դադարեցվեն:

¶ 10.5. Մասնակից պետությունը հայտարարում է, որ հետամուտ է խաղաղ միավորմանը, ոչ թե պառակտման շարունակմանը, ինչպես պնդում է հեղինակը: Մասնակից պետությունը նաև խնդրահարույց է համարում հեղինակի սուբյեկտիվ հանգումները ԱՄՆ-ի զինված ուժերի ներկայության և Ճապոնիայի ազդեցության առնչությամբ: Մասնակից պետությունը նշում է, որ ԱՄՆ-ի զինված ուժերի ներկայությունը արդյունավետ զսպող գործոն է, որը հետ է պահում Հյուսիսային Կորեային ամբողջ թերակղզում ռազմական ուժի կիրառմամբ կոմունիստական վարչակարգ հաստատելու փորձերից:

¶ 10.6. Ըստ մասնակից պետության՝ ակնհայտ է, որ հեղինակի փաստարկները նույնն են, ինչ Հյուսիսային Կորեայի բերած փաստարկները, իսկ նրա գործողությունները նպաստել են Հյուսիսային Կորեայի ռազմավարությանը և վարվելակերպին: Մասնակից պետությունը համաձայն է, որ ժողովրդավարությունը նշանակում է, որ պետք է լսվեն տարբեր կարծիքներ արտահայտող ձայներ, սակայն պնդում է, որ պետք է սահման նախատեսել որոշակի գործողությունների համար՝ ազգային գոյատևման տեսանկյունից անհրաժեշտ տարրական կարգը չխաթարելու համար: Մասնակից պետությունը հայտնում է, որ Հյուսիսային Կորեայի գաղափարախոսությունը փառաբանող և ջատագովող տպագիր նյութերի պատրաստումն ու տարածումն արգելված են, քանի որ այդ նյութերը ծառայում են Հարավային Կորեայում ազատ և ժողովրդավարական համակարգը քայքայելու նպատակին: Մասնակից պետությունը նաև բերում է այն փաստարկը, որ նման գործողությունները, որոնք ուղղված են այս բռնի նպատակներին նպաստելուն, չեն կարող որպես խաղաղ մեկնաբանվել:

Լրացուցիչ ակնհայտ հիմնավորումներ կարելի է տեսնել պրն Անդոյի մասնավոր կարծիքում [18.36]: Այդուհանդերձ, ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշում է կայացրել հօգուտ հեղինակի⁴⁹:

¶ 12.4. Կոմիտեն նշում է, որ հեղինակը դատապարտվել է այնպիսի տպագիր նյութեր բարձրաձայն կարդալու և տարածելու համար, որոնք, ըստ երևույթին, համընկել են այն քաղաքական հայտարարություններին, որոնք արել է Կորեայի ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը (Հյուսիսային Կորեա), որի հետ մասնակից պետությունը պատերազմական դրության մեջ է: Հեղինակը դատարանի կողմից դատապարտվել է այն եզրակացության հիման վրա, որ նա արել է այդ ամենը՝ լինելով Կորեայի ժողովրդադեմոկրատական Հանրապետության գործողությունների կողմնակիցը: Գերագույն դատարանը վճռել է, որ Հյուսիսային Կորեայի համար այդ գործողությունների օգտակարությունը իմանալու փաստն ինքնին բավարար չէր մեղքը հաստատելու համար: Նույնիսկ նկատի ունենալով այս հանգամանքը՝ կոմիտեն պետք է ուսումնասիրի, թե արդյոք հեղինակի քաղաքական հայտարարությունները և քաղաքական փաստաթղթերի տարածումն իրենց բնույթով պահանջո՞ւմ են 19-րդ հոդվածի 3-րդ կետով ազգային անվտանգության պաշտպանության համար կիրառելի սահմանափակում: Պարզ է, որ Հյուսիսային Կորեայի քաղաքականությունը լավ հայտնի է մասնակից պետության տարածքում, և պարզ չէ, թե ինչ (չսահմանված) «օգուտ» կարող էր քաղել Հյուսիսային Կորեան սեփական հայացքներին մամուլով հայացքների հրապարակումից, և ինչ վտանգ էին առաջացնում դրանք ազգային անվտանգության համար, պարզ չէ նաև, թե ինչ բնույթի ու աստիճանի են այդ վտանգները: Ոչ մի հիշատակում չկա այն, որ դատարանները որևէ մակարդակում անդրադարձել են այդ հարցերին կամ ուսումնասիրել են, թե արդյոք խոսքի կամ փաստաթղթերի բովանդակությունը որևէ լրացուցիչ ազդեցություն ունեցե՞լ է

⁴⁹ Տե՛ս նմանատիպ գործ՝ «Պարկն ընդդեմ Կորեայի Հանրապետության» (Park v Republic of Korea, 628/95), պարբ. 10.3-10.4:

ունենդիրների կամ ընթերցողի վրա՝ սպառնալիք ներկայացնելով պետական անվտանգությանը, որի պաշտպանությունն էլ դաշնագրի շրջանակներում կարդարացներ այս սահմանափակումը՝ որպես անհրաժեշտ միջոց:

¶ 12.5. Ուստի կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը չի կարողացել հստակ նշել հեղինակի կողմից իր ազատ արտահայտվելու իրավունքի իրացման արդյունքում առաջացած ենթադրյալ սպառնալիքը, ոչ էլ հստակ հիմնավորումներ է տվել, թե ինչու է հեղինակը հետապնդվել է «Հավաքների և ցույցերի մասին» օրենքի և «Բռնի գործողությունների դիմաց պատժի մասին» օրենքի խախտման համար (ինչը հեղինակի բողոքի մաս չի կազմում), և որքանով էր դա անհրաժեշտ ազգային անվտանգության համար: Ուստի կոմիտեն համարում է, որ հեղինակի՝ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը չի համապատասխանում դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին⁵⁰:

[18.36] Պրն Անդոն չի համաձայնել հետևյալ ձևակերպումներով.

... Ինչպես նշել է մասնակից պետությունը, հեղինակը «դատապարտվել է [«Հավաքների և ցույցերի մասին» և «Բռնի գործողությունների համար պատժի մասին» օրենքներով] 1989 թ. հունվարից մինչև 1990 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում մի քանի անգամ ապօրինի ցույցեր կազմակերպելու և բռնի գործողություններ իրահրելու համար: Այդ ցույցերի ժամանակ դրանց մասնակիցները ոստիկանության և կառավարական այլ շենքերի վրա նետել են հազարավոր հրկիզող հեղուկով լի շշեր («մոլոտովի կոկտեյլներ») և քարեր: Նրանք նաև հրկիզել են ավտոմեքենաներ և վնասվածքներ են հասցրել 134 ոստիկանի» (կետ 4.2). . .

Հեղինակի փաստաբանը պնդում է, որ «հեղինակի դատապարտումը «Հավաքների և ցույցերի մասին» և «Բռնի գործողությունների համար պատժի մասին» օրենքներով չի արժարժվում այս դիմումի շրջանակներում», և «հեղինակի դատապարտումն այդ օրենքներով չի կարող արդարացնել նրա [լրացուցիչ] դատապարտումը «Ազգային անվտանգության մասին» օրենքով նրա ենթադրյալ թշնամապատ արտահայտությունների համար» (կետ 9.1):

Այդուհանդերձ, հեղինակի կողմից նշված տպագիր նյութերի բարձրաձայն կարդալն ու տարածելը, ինչի համար նա դատապարտվել է վերոնշյալ օրենքներով, միակ գործողությունները չեն, որոնց համար նա դատապարտվել է «Ազգային անվտանգության մասին» օրենքով, և որոնք հանգեցրել են մասնակից պետության նկարագրած հասարակական կարգի խախտման: Փաստորեն փաստաբանը չի հերքում, որ նշված տպագիր նյութերի բարձրաձայն կարդալը և տարածելը հեղինակի կողմից իրականում հանգեցրել է հասարակական կարգի խախտման, ինչը մասնակից պետության կողմից կարող էր համարվել սպառնալիք ազգային անվտանգությանը:

Ես համամիտ եմ հեղինակի փաստաբանի այն մտահոգությանը, որ «Ազգային անվտանգության մասին» օրենքի որոշ դրույթներ չափազանց անորոշ են ձևակերպված և չեն բացառում չարաշահման նպատակով կիրառումն ու մեկնաբանությունը: Սակայն, դժբախտաբար, փաստը մնում է այն, որ 1950-ական թվականներին Հյուսիսային Կորեան ներխուժել էր Հարավային Կորեա, իսկ Արևմուտքի և Արևելքի միջև լարվածության թուլացումը դեռ ամբողջովին չէր զգացվում Կորեական թերակղզում: Ամեն դեպքում կոմիտեն ապացուցող տեղեկություններ չունի, որ հեղինակի վերոնշյալ գործողությունները չեն հանգեցրել հասարակական կարգի խախտման, իսկ դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետով «հասարակական կարգի», ինչպես նաև «ազգային անվտանգության» պաշտպանությունը օրինական պատճառ են ազատ արտահայտվելու իրավունքի իրացումը սահմանափակելու համար:

Կիմի գործով որոշումը կարելի է հակադրել «*Մ.Ա.-ն ընդդեմ Իտալիայի*» (*M.A. v Italy, 117/81*) գործով հեղինակի հանդեպ կարեկցանքի պակասի դրսևորմանը: Հնարավոր է, որ ՄԻԿ-ն առավել հանդուրժողական լինի ծախս թևի հակաժողովրդավարական հայացքների, քան աջ թևի ֆաշիստական հայացքների հանդեպ⁵¹:

[18.37] «ՄՈՒԿՈՆԳՆ ընդդեմ ԿԱՄԵՐՈՒՆԻ» (MUKONG v CAMEROON, 458/91)

Գործի հանգամանքները բերված են ստորև.

¶ 2.1. Հեղինակը լրագրող և գրող է, որ երկար ժամանակ եղել է Կամերունում գործող միակուսակցական համակարգի ընդդիմադիր: Նա հաճախ և հրապարակավ ջատագովել է իր երկրում բազմակուսակցական ժողովրդավարության հաստատումը և աշխատել է նոր քաղաքական կուսակցության հիմնման ուղղությամբ: Նա պնդում է, որ իր գրած գրքերից մի քանիսն արգելվել կամ հանվել են շրջանառությունից:

⁵⁰ *Կիմի* գործով կայացրած որոշումն էլ ավելի է հիմնավորվում Կորեայի Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում: (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ՝ CCPR/C/79/Add. 114, պարբ. 9:

⁵¹ Տես մեկնաբանությունը այստեղ՝ [18.33]:

Հեղինակը բողոքում էր ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքների մի շարք ենթադրյալ խախտումներից.

¶ 3.4. Հեղինակը նշում է, որ իր ձերբակալությունները 1988 թ. հունիսի 16-ին և 1990 թ. փետրվարի 26-ին կապված էին բազմակուսակցական ժողովրդավարության ջատագովման գործունեության հետ և պնդում է, որ դրանք իշխանության՝ ընդդիմադիր յուրաքանչյուր գործողություն ճնշելու փորձեր են և խախտում են դաշնագրի 19-րդ հոդվածը: Սա նաև վերաբերում է 1985 թ. կառավարության կողմից հեղինակի գրքի («Հանցանք չգործած բանտարկյալը» վերնագրով) արգելմանը, որում նա նկարագրում է 1970-76 թթ. ընկած ժամանակահատվածում իր բանտարկությունը տեղի բանտերում:

Մասնակից պետությունը փորձեց արդարացնել Մուկոնգի արտահայտվելու իրավունքի այս ակնհայտ ճնշումը:

¶ 6.7. Այս համատեքստում մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ հեղինակի ձերբակալությունը տեղի է ունեցել դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետում նշված գործողությունների և արտահայտման ձևերի հետևանքով: Մասնակից պետությունը պնդում է, որ ազատ արտահայտվելու իրավունքի իրացման հարցում պետք է հաշվի առնվի երկրում տվյալ պահին տիրող քաղաքական իրավիճակը: Անկախություն հռչակելուց և Կամբուժի հետ վերամիավորվելուց հետո երկիրն անընդհատ պայքար է մղել ազգի միասնությունն ամրապնդելու համար, սկզբում՝ ֆրանսիախոս և անգլիախոս համայնքների, այնուհետև Կամբուժի ազգաբնակչությունը կազմող ավելի քան 200 էթնիկական խմբերի և ցեղերի մակարդակով:

ՄԻԿ-ը որոշում է կայացրել հոգուտ հեղինակի.

¶ 9.6. Հեղինակը պնդում էր, որ տեղի է ունեցել սեփական կարծիքն ազատ արտահայտելու իր իրավունքի խախտում, և ինքը հետապնդվել է բազմակուսակցական ժողովրդավարության ջատագովման և մասնակից պետության իշխանությունների համար անբարենպաստ հայացքների արտահայտման համար: Մասնակից պետությունը պատասխանել է, որ հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները հիմնավորված են 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով:

¶ 9.7. ...Մասնակից պետությունն անուղղակի կերպով արդարացրել է իր գործողությունները ազգային անվտանգության և հասարակական կարգի նկատառումներով՝ բերելով այն փաստարկը, որ հեղինակի կողմից ազատ արտահայտվելու իրավունքի իրացումն իրականացվել է՝ հաշվի առնելով երկրի քաղաքական իրավիճակը և շարունակական պայքարը միասնության համար: Թեև մասնակից պետությունը նշել է, որ հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները նախատեսված են օրենքով, սակայն դեռ պետք է որոշել՝ հեղինակի դեմ ձեռնարկված միջոցներն անհրաժեշտ էին ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պահպանման համար: Կոմիտեն համարում է, որ ազգային միասնության ենթադրյալ խոցելի վիճակը պաշտպանելու համար անհրաժեշտ չի եղել հեղինակին ենթարկել ձերբակալության, շարունակական կալանավորման և 7-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի: Կոմիտեն կարծում է նաև, որ բարդ քաղաքական պայմաններում ազգային միասնությունը պաշտպանելու և ուժեղացնելու արդար նպատակը չի կարող իրականացվել բազմակուսակցական ժողովրդավարության, ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ջատագովման լռեցնելու փորձերով: Այս առնչությամբ հարց չի ծագում, թե որ միջոցներն են նման իրավիճակում անցնում «անհրաժեշտության» փորձաքննությունը: Ելնելով հեղինակի գործի հանգամանքներից՝ կոմիտեն եզրակացնում է, որ տեղի է ունեցել դաշնագրի 19-րդ հոդվածի խախտում:

Հաճախ բերվում է այն փաստարկը, որ զարգացող երկրները, ելնելով իրենց տնտեսական զարգացման թերություններից, պետք է թույլտվություն ստանան «հետաձգելու» կամ «փոխարինելու» իրենց ստանձնած որոշ քաղաքական իրավունքները հարգելու պարտավորությունները: «Այս տեսությունը պնդում է, որ տնտեսական զարգացման առաջնահերթությունը ենթադրում է քաղաքական կայունություն և դրանով իսկ արդարացնում անձնական իրավունքների խախտումները»⁵²: Մուկոնգի գործով կայացրած որոշմամբ ՄԻԿ-ը ժխտում է, որ թերի զարգացումը կարող է արդարացում լինել քաղաքական ճնշումների և միակուսակցության պարտադրման համար:

[18.38]

**«ՍՈՆՆ ընդդեմ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(SOHN v REPUBLIC OF KOREA, 518/92)**

Այս գործով հեղինակը ձերբակալվել էր աշխատանքային վեճին միջամտելու համար: Փաստերը բերված են ստորև.

⁵² A. Pollis, 'Cultural Relativism Revisited: Through a State Prism' (1996) 18 *HRQ* 316, 317: Տե՛ս նաև՝ J. Donnelly, 'Human Rights and Development: Complementary or Competing Concerns?' (1984) 36 *World Politics* 255, 258:

¶ 2.1. Յեղիմակը, սկսած 1990 թ. սեպտեմբերի 27-ից, եղել է «Կունիո» ընկերության արհմիության նախագահը և «խոշոր ընկերությունների արհմիությունների համերաշխության համաժողովի» հիմնադիր անդամ է: 1991 թ. փետրվարի 8-ին Քյունգսանգ-Նամ-Ռո գավառում գտնվող Գուիջե կղզու «Daewoo» ընկերության նավաշինարանում հայտարարվել է գործադուլ: Կառավարությունը հայտնել է, որ ոստիկանության զորքեր է ուղարկելու գործադուլը ցրելու համար: Այս հայտարարությունից հետո՝ 1991 թ. փետրվարի 9-ին, Յեղիմակը հանդիպում է ունեցել համերաշխության համաժողովի այլ անդամների հետ, ընդ որում, այդ հանդիպումը տեղի է ունեցել Սեուլ քաղաքում՝ գործադուլի անցկացման վայրից 400 կիլոմետր հեռավորության վրա: Յանդիպման ավարտին նրանք հայտարարություն են տարածել, որով սատարել են գործադուլը և դատապարտել իշխանությունների՝ զորքեր ուղարկելու սպառնալիքը: Այս հայտարարությունը ֆաքսով փոխանցվել է «Daewoo» ընկերության նավաշինարանի աշխատողներին: «Daewoo» ընկերության նավաշինարանի գործադուլը խաղաղ ավարտվել է 1991 թ. փետրվարի 13-ին:

¶ 2.2. 1991 թ. փետրվարի 10-ին Յեղիմակը համերաշխության համաժողովի մոտ 60 այլ անդամների հետ ծերբակալվել է հանդիպման անցկացման վայրից դուրս գալու պահին: 1991 թ. փետրվարի 12-ին նրա և վեց այլ անձանց դեմ մեղադրանք է ներկայացվել «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքով (թիվ 1327 օրենք՝ ընդունված 1963 թ. ապրիլի 13-ին, 1987 թ. նոյեմբերի 28-ի լրամշակումներով), որով գործատուից, աշխատողից, արհմիությունից կամ օրենքով լիազորված անձից բացի որևէ մեկին արգելվում է միջամտել աշխատանքային վեճերին՝ փորձելով հրահրել մասնակից կողմերին կամ ազդել նրանց վրա: Նրան նաև մեղադրանք է ներկայացվել «Հավաքների և ցույցերի մասին» օրենքը (ընդունված 1989 թ. մարտի 29-ին, թիվ 4095) խախտելու համար, սակայն Յեղիմակը նշում է, որ իր դիմումը վերաբերում է միայն «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքին: Յեղիմակի գործով մեղադրվող անձանցից մեկը մահացել է կալանավորման ընթացքում, ըստ Յեղիմակի՝ կասկածելի հանգամանքներում:

Յեղիմակը դատապարտվել է «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման համար:

¶ 3.1. Յեղիմակը պնդում է, որ «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետն օգտագործվում է աշխատավորների շարժումների սատարումը պատժելու և աշխատավորներին մեկուսացնելու համար: Նա պնդում է, որ այս դրույթը երբեք չի օգտագործվել այն անձանց դեմ մեղադրանք ներկայացնելու համար, ովքեր աշխատանքային վեճում ներկայացնում են ղեկավարության կողմը: Յեղիմակը նաև պնդում է, որ այս դրույթի անորոշությունը, ըստ որի՝ արգելվում է կողմերի վրա ազդելուն ուղղված յուրաքանչյուր գործողություն, խախտում է օրինականության սկզբունքը (*nullum crimen, nulla poena sine lege*):

¶ 3.2. Յեղիմակը նաև պնդում է, որ այս դրույթը օրենքում ընդգրկվել է աշխատավորներին սատարողներին կամ արհմիություններին ազատ արտահայտվելու իրավունքից զրկելու համար: Այս առնչությամբ նա հղում է կատարում «Աշխատանքային միությունների մասին» օրենքին, որով արգելվում է երրորդ անձանց աջակցությունն արհմիություն կազմակերպելու համար: Յեղիմակը եզրակացնում է, որ աշխատավորներին կամ արհմիություններին ցույց տրված յուրաքանչյուր աջակցություն կարող է պատժվել «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքով գործադուլների անցկացման ժամանակ, իսկ այլ պահերին՝ «Աշխատանքային միությունների մասին» օրենքով:

¶ 3.3. Յեղիմակը պնդում է, որ իր դատապարտումը խախտում է դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետը: Նա ընդգծում է, որ ազատ արտահայտվելու իրավունքի իրացումը չի խախտել այլոց իրավունքները կամ վարկը, ոչ էլ սպառնալիք է հանդիսացել ազգային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության կամ բարոյականության համար:

Մասնակից պետությունը, ի պաշտպանություն վիճահարույց դրույթների, ներկայացրել է հետևյալը.

¶ 7.3. Մասնակից պետությունը բացատրում է, որ «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքը, որն արգելում է երրորդ անձանց միջամտությունը աշխատանքային վեճերին, նախատեսված է գործատուի և աշխատողի միջև աշխատանքային վեճի անկախ բնույթը պահպանելու համար: Մասնակից պետությունը նշում է, որ այս դրույթով չի արգելվում մասնակից կողմերին խորհրդատվություն տրամադրելը:

¶ 7.4. Մասնակից պետությունը վկայակոչում է դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետը, որում ամրագրված է, որ ազատ արտահայտվելու իրավունքը կարող է ենթակա լինել որոշակի սահմանափակումների, ի թիվս այլոց, ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պահպանության համար:

¶ 9.1. 1995 թ. հունիսի 20-ին ներկայացրած նյութերով մասնակից պետությունը բացատրում է, որ աշխատավորական շարժումը Կորեայի Հանրապետությունում կարելի է բնութագրել որպես քաղաքականապես կողմնորոշված և գաղափարախոսությամբ պայմանավորված: Այս կապակցությամբ նշվում է, որ Կորեայում աշխատավորական ակտիվիստները, առանց վարանելու, աշխատավորներին հրահրում են ծայրահեղ գործողությունների՝ հայտարարելով ուժի և բռնության կիրառման անհրաժեշտ գործադուլներ, որոնք նրանց քաղաքական նպատակներին հասնելու կամ

գաղափարախոսական սկզբունքներն իրականացնելու նպատակ են հետապնդում: Ավելին՝ մասնակից պետությունները բերում է այն փաստարկը, որ արձանագրվել են հաճախակի դեպքեր, երբ պրոլետարական հեղափոխության գաղափարը սերմանվել է աշխատավորների ուղեղներում:

¶ 9.2. Մասնակից պետությունները բերում է այն փաստարկը, որ եթե երրորդ կողմը միջամտում է աշխատանքային վեճին աշխատավորների որոշումները թելադրելու, հրահրելու կամ խոչընդոտելու չափով, ապա նման վեճն աղավաղվում է այդ երրորդ կողմի նպատակներին ծառայելու նպատակով: Ուստի մասնակից պետությունը բացատրում է, որ հաշվի առնելով աշխատավորական շարժման ընդհանուր բնույթը՝ իրեն պարտավորված է զգացել պահպանել երրորդ անձանց միջամտությունն արգելող օրենքը:

¶ 9.3. Ավելին՝ մասնակից պետությունը հայտնում է, որ տվյալ դեպքում 1991 թ. փետրվարին տարածված գրավոր հայտարարությունը՝ ի պաշտպանություն «Daewoo» ընկերության նավաշինարանի արհմիության, օգտագործվել է բոլոր աշխատավորների մասնակցությամբ համազգային գործադուլ հրահրելու համար: Մասնակից պետությունը պնդում է, որ «եթե համազգային գործադուլ տեղի ունենար որևէ այլ երկրում՝ անկախ անվտանգության իրավիճակից, բավական հիմքեր կլինեին կարծելու, որ դա սպառնալիք կլիներ ազգային անվտանգության և հասարակական կարգի համար»:

¶ 9.4. Մասնակից պետությունը Ազգային անվտանգության հարցերով օրենսդիր խորհրդի կողմից «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի ընդունման առնչությամբ պնդում է, որ սահմանադրության վերանայման միջոցով խորհրդի ընդունած օրենքների արդյունավետությունն ընդունվել է հանրության կողմից: Ավելին՝ մասնակից պետությունը պնդում է, որ երրորդ անձանց միջամտությունն արգելող դրույթը կիրառվել է արդար հիմունքներով, ինչպես աշխատավորների, այնպես էլ ղեկավարության օգտին հանդես եկող կողմերի հանդեպ: Այս առնչությամբ մասնակից պետությունը մեջբերում է ներկայումս գործատուի կողմից հանդես եկած անձի դեմ ընթացող դատավարության մի դեպք:

Պրն Սոնը պատասխանել է.

¶ 8.4. Հեղինակը ժխտում է, որ Համերաշխության համաժողովի հայտարարությունները սպառնալիք էին ներկայացնում Հարավային Կորեայի ազգային անվտանգության և հասարակական կարգի համար: Նշվում է, որ հեղինակը և Համերաշխության համաժողովի այլ անդամները քաջ տեղյակ էին, որ իրավիճակը շատ նուրբ է Հյուսիսային Կորեայի հետ հակամարտության լուսի ներքո: Հեղինակը չի հասկանում, թե ինչպես գործադուլը սատարող և այդ առումով գործատուի ու կառավարության գործողությունները քննադատող հայտարարությունը կարող էր սպառնալիք լինել ազգային անվտանգության համար: Այս կապակցությամբ հեղինակը նշում է, որ գործադուլի ոչ մի մասնակցին մեղադրանք չի ներկայացվել «Ազգային անվտանգության մասին» օրենքի խախտման համար: Հեղինակը նշում է, որ սահմանադրությամբ նախատեսված գործադուլի իրավունքի լուսի ներքո ոստիկանության կողմից ուժային միջամտությունը կարող էր իրավացիորեն քննադատվել: Ավելին՝ հեղինակը պնդում է, որ Համերաշխության համաժողովի հայտարարությունը հասարակական կարգի սպառնալիք չէր ներկայացնում, հակառակը՝ սեփական կարծիքն ազատ և խաղաղ արտահայտելու իրավունքն ամրացնում է հասարակական կարգը ժողովրդավարական հասարակությունում:

¶ 8.5. Հեղինակը նշում է, որ Կորեայի Հանրապետությունում աշխատողների միջև համերաշխությունն արգելվում և պատժվում է ենթադրաբար «աշխատանքային վեճի անկախ բնույթը պահպանելու համար», սակայն գործատուի օգտին աշխատողների իրավունքները ճնշելու իրողությունը խրախուսվում և պաշտպանվում է:

ՄԻԿ-ը որոշում կայացրեց հօգուտ պրն Սոնի.

¶ 10.4. ...Թեև մասնակից պետությունը նշել է, որ այդ սահմանափակումներն արդարացված էին ազգային անվտանգությունը և հասարակական կարգը պահպանելու տեսանկյունից և նախատեսված են եղել օրենքով՝ «Աշխատանքային վեճերի կարգավորման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով, սակայն կոմիտեն դեռ պետք է որոշի՝ հեղինակի հանդեպ գործադրած միջոցներն անհրաժեշտ էին նշված նպատակի համար: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը վկայակոչել է ազգային անվտանգությունը և հասարակական կարգը՝ նշելով աշխատավորական շարժման ընդհանուր բնույթը և պնդելով, որ այլոց հետ համատեղ արված հեղինակի հայտարարությունը համազգային գործադուլի հրահրման քողարկված կոչ է: Կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը չի կարողացել մատնանշել հեղինակի՝ իր ազատ արտահայտվելու իրավունքի իրացման արդյունքում ներկայացրած սպառնալիքի ճշգրիտ բնույթը, և կարծում է, որ մասնակից պետության փաստարկներից ոչ մեկը բավարար չէ հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխանեցնելու համար:

¶ 11. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությո-

յան 5-րդ հոդվածի 4-րդ կետի շրջանակներում գործող Մարդու իրավունքների կոմիտեն համարում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը վկայում են դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման մասին:

[18.39] Վերոնշյալ դեպքերը վկայում են, որ ՄԻԿ-ը հակված չէ թույլատրելու ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումներ ազգային անվտանգության և հասարակական կարգը պահպանելու նպատակով՝ առնվազն մասնակից պետության բերած մանրամասն հիմնավորումների բացակայության պարագայում⁵³: Ազգային անվտանգությունը և հասարակական կարգը թերևս այն սահմանափակումներն են, որոնք առավել հաճախ են չարաշահումների առարկա դառնում: Դրանք հաճախ վկայակոչվում են այդ պահին իշխող կառավարության գերակա դիրքը պաշտպանելու, ոչ թե պետության ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու համար⁵⁴:

Այլոց իրավունքներն ու հեղինակությունը

[18.40] 19-րդ հոդվածի 3-րդ կետով անվերապահորեն ընդունվում է, որ ազատ արտահայտվելու իրավունքի իրականացումը «հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության», հետևաբար, թույլատրվում են այդ իրավունքի տարբեր սահմանափակումներ: 19-րդ հոդվածի 3-րդ կետով ընդունվում է, որ մեկ անձի՝ ազատ արտահայտվելու իրավունքի իրացումը կարող է բխվել մեկ այլ անձի հավասարապես կարևոր իրավունքների իրացումից⁵⁵: Օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքը թերևս կարող է սահմանափակվել հերյուրանքի մասին համաչափ օրենքներով (որը պաշտպանում է 17-րդ հոդվածով պաշտպանվող անձնական կյանքի իրավունքները և «այլոց հեղինակությունը»), ինչպես նաև դատարանի հանդեպ անարգանքի մասին օրենքներով (որոնք պաշտպանում են 14-րդ հոդվածով նախատեսված արդարադատության իրականացման իրավունքը): Մեկ այլ օրինակ կարելի է տեսնել վերոնշյալ Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում [18.16], որոնք վերաբերում են մասնավոր լրատվամիջոցների կողմից լիազորությունների չարաշահման դեպքերին: Մասնավոր լրատվամիջոցները կարող են չարաշահել իրենց լիազորությունները, ինչպես նաև ազատ արտահայտվելու իրենց իրավունքը՝ այլոց ազատ արտահայտվելու և տեղեկատվություն ստանալու իրավունքը խոչընդոտելու համար⁵⁶:

[18.41] «Այլոց իրավունքների» թույլատրելի սահմանափակումը համընդգրկուն սահմանափակում է և թերևս չափազանց լայն շրջանակներ ունի: ՄԻԿ-ը երբեք մեկնաբանություն չի տվել դրա արտաքին սահմանների մասին: Պետք է հուսալ, որ այդ «իրավունքները» վերաբերում են այլ մարդու իրավունքներին, թեև ամենևին էլ պարտադիր չէ, որ դրանք ընդգրկված լինեն ՔՔԻՄԴ-ում⁵⁷: Մարդու ազատ արտահայտվելու իրավունքը չպետք է որակավորման ենթակա լինի մեկ այլ պակաս նշանակալի, օրինակ՝ պարզապես ազգային օրենսդրությամբ նախատեսված իրավունքով⁵⁸:

[18.42]

**«*FULLAN ԹԱՅՆԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ*»
(*BALLANTYNE et al v CANADA, 359, 385/89*)**

Գործի հանգամանքները բերված են ստորև.

¶ 1. Դիմումների հեղինակներն են Ջոն Բալանթայնը, Էլիզաբեթ Դևիդսոնը և Գորդոն Մակինթայրը, որոնք Կանադա-

⁵³ Լիովին տարբերվում է «*Վ.Մ.Ռ.Բ.-ն ընդդեմ Կանադայի*» գործով կայացրած որոշումից (*V.M.R.B. v Canada, 236/87*), տես [13.17-13.19]: Տես օրինակ՝ «Սիրակուզայի սկզբունքները», վերը, ծնթ. 28, 6, «ազգային անվտանգության վերաբերյալ»:

⁵⁴ Տես օրինակ՝ «Սիրակուզայի սկզբունքները», վերը, ծնթ. 28, 6, «ազգային անվտանգության» առնչությամբ:

⁵⁵ 19-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը կարելի է հակադրել Միացյալ Նահանգների իրավունքների օրինաչափի առաջին ուղղմամբ նախատեսվող բացարձակ իրավունքին:

⁵⁶ Տես Նովակ, վերը, ծնթ. 3, 350: Տես նաև D. Feldman, 'Freedom of Expression', in D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 396:

⁵⁷ Օրինակ՝ հեղինակային իրավունքը սահմանափակում է ազատ արտահայտվելու իրավունքը՝ 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ճանաչված գույքային իրավունքները պաշտպանելու նպատակով: Տես նաև *Ross v Canada* (736/97) [18.57] և *Faurisson v France* (550/93) [18.58]՝ այլոց իրավունքները պաշտպանելու նկատառումով խոսքի ազատության այլ սահմանափակումների օրինակներ գտնելու համար:

⁵⁸ Այս առնչությամբ տես Եվրոպական հանձնաժողովի որոշումը «Համասեռամուլների նորություններ» (Gay News) գործով «*X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*X v U.K., 1982*) 28 DR 77), որտեղ համասեռամուլների ամսագրի ազատ արտահայտվելու իրավունքը թույլատրելի կերպով սահմանափակվեց տեղի հայցվոր Մերի Ուայթհուզի՝ սրբապղծության համար մասնավոր կարգով հետապնդում մեկնարկելու ներպետական օրինական իրավունքով: Առարկվում է, որ տիկին լայթհուզի իրավունքը չի դասվում մարդու իրավունքների շարքը և չպետք է օգտագործվեր «Համասեռականների նորություններ» ամսագրի ազատ արտահայտվելու իրավունքները սահմանափակելու համար:

յի Քվեբեկ նահանգում բնակվող Կանադայի քաղաքացիներ են: Յեղիմակները, որոնցից առաջինը նկարիչ է, երկրորդը՝ դիզայնի մասնագետ, իսկ երրորդը՝ հուշարկավորության բյուրոյի տեր, իրենց մասնագիտական գործունեությունն են ծավալում Քվեբեկի Սաթոն և Յանթինգտոն քաղաքներում: Յեղիմակների, ինչպես նաև նրանց շատ հաճախորդների մայրենի լեզուն անգլերենն է: Յեղիմակները պնդում են, որ իրենք Կանադայի դաշնային կառավարության կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ, 19-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածների խախտումների գոհ են դարձել, քանի որ իրենց արգելվում է գովազդի համար, ասել է թե՛ իրենց պատկանող հաստատությունների՝ դրսում փակցվող առևտրային նշաններում կամ ընկերության անվանման մեջ օգտագործել անգլերենը:

Քվեբեկի կառավարությունը Կանադայի կառավարության միջոցով ՄԻԿ-ին⁵⁹ ներկայացրած իր փաստարկներում պնդում է, որ առևտրային բնույթ կրող խոսքը չի պաշտպանվում 19-րդ հոդվածով [18.05]: Նա նաև բերել է այն փաստարկը, որ այդ միջոցներն անհրաժեշտ են Քվեբեկի ֆրանսիաներ մշակույթը պաշտպանելու համար:

¶ 8.7. Քվեբեկի կառավարությունը նշում է, որ լեզվի բնագավառում դե ֆակտո հավասարություն հասկացությունը բացառում է զուտ ծնական հավասարությունը և պահանջում է, որ տարբեր իրավիճակներում կիրառվի տարբեր վերաբերմունք՝ հավասարակշռության հանգեցնող արդյունք ստանալու նկատառումով: Նա պնդում է, որ Ֆրանսերենի մասին խարտիան՝ թիվ 178 օրինագծի լրամշակմամբ, «չափազրված օրենսդրական արձագանք է Քվեբեկի հասարակությունում տիրող հատուկ հանգամանքներին, որոնք Յուլիսային Ամերիկայի համատեքստում և անգլերենի գերակայության, ինչպես նաև դրանից բխող մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական ճնշումների պայմաններում «ֆրանսիականացումը» դեռևս թողնում են խոցելի դիրքում»:

¶ 8.8. Ասվում է, որ թիվ 178 օրինագծի 58-րդ և 69-րդ բաժինների պահանջները դիտավորյալ սահմանափակվում են արտաքին հանրային և առևտրային գովազդով, քանի որ հենց այնտեղ է լեզուն առավել ընկալվում որպես հավաքական մույնականացման միջոց և նպաստում է ֆրանսիախոսների մշակութային ինքնության պահպանմանը: «Գովազդի միջոցով փոխանցվող լեզվական կերպարը կարևոր գործոն է, որը նպաստում է սովորույթների և վարքագծի ձևավորմանը, որոնք էլ անդրադառնում կամ ազդում են լեզվի օգտագործման վրա»: Այս կետի հիման վրա Քվեբեկը եզրակացնում է, որ թիվ 178 օրինագիծը լեզվական հավասարակշռություն է հաստատում երկու համայնքների միջև, որոնցից մեկը գտնվում է գերակա ժողովրդագրական դիրքում՝ երկրի և մայրցամաքի մակարդակով: Ասվում է, որ այս նպատակը ողջամիտ է և համապատասխանում է դաշնագրի 26-րդ հոդվածին⁶⁰:

¶ 8.9. Քվեբեկը հավելում է, որ պատմության ընթացքը և այն փաստը, որ Կանադայում լեզվական հարաբերությունների զարգացումը քաղաքական փոխզիջում է, չի արդարացնում այն եզրակացությունը, որ արտաքին առևտրային գովազդը որոշակի կերպով իրականացնելու պահանջը 19-րդ հոդվածի խախտում է: . .

Այդուհանդերձ, ՄԻԿ-ը որոշել է, որ Քվեբեկում գործող օրենքը 19-րդ հոդվածի խախտում է⁶¹:

¶ 11.4. Ազատ արտահայտվելու իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է բավարարի հետևյալ պահանջները. այն պետք է նախատեսված լինի օրենքով, պետք է ծառայի 19-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) և (բ) ենթակետերում թվարկվող նպատակներին և անհրաժեշտ լինի օրինական նպատակին հասնելու համար: Թեև արտաքին գովազդի սահմանափակումներն իսկապես նախատեսված են օրենքով, սակայն հարկ է անդրադառնալ այն հարցին, թե որքանով են դրանք անհրաժեշտ այլոց իրավունքները պաշտպանելու համար: 27-րդ հոդվածի համաձայն՝ այլոց իրավունքները կարող են ընդգրկել միայն Կանադայի ֆրանսիախոս փոքրամասնության իրավունքները: Սա սեփական լեզուն օգտագործելու իրավունքն է, որը վտանգված չէ, երբ այլ անձինք իրենց գովազդը ֆրանսերենից բացի ներկայացնում են այլ լեզվով: Կոմիտեն որևէ հիմք չունի կարծելու, որ ֆրանսերենից բացի այլ լեզվով արտաքին առևտրային գովազդ ներկայացնելը կվտանգի հասարակական կարգը: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը չի փորձում թիվ 178 նախագիծը պաշտպանել այս հիմունքներով: Ամեն դեպքում, 19-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) և (բ) ենթակետերի համաձայն, պետք է ապացուցվի, որ յուրաքանչյուր սահմանափակում անհրաժեշտ է: Կոմիտեն կարծում է, որ անգլերեն գովազդի արգելումն անհրաժեշտ չի եղել Կանադայում ֆրանսիախոս հանրության խոցելի դիրքը պաշտպանելու համար: Այս պաշտպանությունը կարելի է ապահովել այլ ճանապարհներով՝ չբացառելով առևտրի նման բնագավառներում ընտրված լեզվով արտահայտվելու ազատությունը: Օրինակ՝ հնարավոր է, որ օրենքի պահանջով գովազդը լինի ինչպես ֆրանսերեն, այնպես էլ անգլերեն: Պետությունը կարող է ընտրել մեկից ավելի պաշտոնական լեզու, սակայն չի կարող բացառել հանրային կյանքից դուրս ընտրած լեզվով արտահայտվելու ազատությունը: Կոմիտեն համապատասխանաբար եզրակացնում է, որ տեղի է ունեցել 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

⁵⁹ Տե՛ս նաև դաշնային պետություններում ՔՔԻՄԴ-ի կիրառման վերաբերյալ [1.28]:

⁶⁰ Տե՛ս ընդհանուր՝ [23.41]:

⁶¹ Պրն Նդիայեն չհամաձայնեց՝ ելնելով փոքրամասնությունների իրավունքները պաշտպանող Քվեբեկի օրենսդրությունից: Նրա անհամաձայնությունն առանձին բերված է այստեղ՝ [24.50]:

[18.43] Բալանթայնի գործով ՄԻԿ-ը չի ժխտել, որ ֆրանսերենի պահպանումը օրինական օրենսդրական նպատակ է: Այդուհանդերձ, այս դեպքում ՄԻԿ-ը նշել է, որ ֆրանսիախոս մշակույթը կարելի էր պահպանել՝ պահանջելով նշումները կատարել երկու լեզվով, ոչ թե արգելելով ֆրանսերենից բացի այլ լեզուներով գրությունները: Ուստի կոմիտեի որոշումը վկայում է, որ ազատ արտահայտվելու իրավունքի վրա ամենաչնչին ազդեցությունը համաչափության փորձաքննության բաղադրիչ է և հարցականի տակ է առնում է 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքների սահմանափակումների վավերականությունը⁶²:

[18.44] Քվեբեկում գործող օրենքների մեկ այլ վիճարկման դեպք է արձանագրվել «Սինգերն ընդդեմ Կանադայի» (*Singer v Canada, 455/91*) գործում: Այդուհանդերձ, ՄԻԿ-ի կողմից որոշում կայացնելու պահին օրենքներն արդեն լրամշակվել էին, և այդպիսով գործի ավարտը զուտ տեսական նշանակություն ունեցավ: Այդուհանդերձ, մոր դրույթները (որոնց վերաբերյալ Սինգերն բողոք չէր ներկայացրել) կարող էին խնդիրներ առաջացնել 19-րդ հոդվածով, քանի որ առևտրային գովազդը դեռևս պետք է ֆրանսերեն լիներ, բայց կարող էր ուղեկցվել այլ լեզվով: Ավելին, (ա) ճանապարհի եզրին տեղակայված մեծ գովազդային վահանակների վրա և (բ) ամեն տեսակի հասարակական տրանսպորտում կամ դրան հարակից վայրերում, օրինակ՝ ավտոբուսի կանգառներում, գովազդը թույլատրվում է միայն ֆրանսերեն⁶³: Արդյոք այս օրենքները համաչափ միջոց են ֆրանսիախոսների փոքրամասնական իրավունքները Կանադայում պաշտպանելու համար և այդպիսով համատեղելի՞ են 19-րդ հոդվածի դրույթների հետ:

[18.45] Բալանթայնի գործը կարելի է տարբերել «Գեսդոնն ընդդեմ Ֆրանսիայի» գործից (*Guesdon v France, 219/86*) [18.09], որում խոսքը մասնավոր բնագավառում, և ոչ հանրային ոլորտում, լեզվի օգտագործման սահմանափակումների մասին էր⁶⁴: Մասնավոր նպատակներով լեզվի օգտագործման սահմանումները, ինչպես առևտրային բնույթի գրությունների վրա, հազվադեպ է թույլատրվում 19-րդ հոդվածի դրույթներով, մինչդեռ լեզվի օգտագործումը «հանրային» ոլորտում, ինչպես դատավարության ընթացքում, երբեմն կարող է հիմնավորված համարվել, օրինակ՝ հասարակական կարգի նկատառումներով:

[18.46] «Դիերգաարդտն ընդդեմ Նամիբիայի» (*Diergaardt v Namibia, 760/97*) գործում ներկայացված բողոքներից մեկը վերաբերում է Նամիբիայի վարչական գործերում միայն անգլերենի օգտագործմանը: Այս կանոնը վերաբերում էր ամբողջ մասնակազրությանը, այդ թվում նաև՝ հեռախոսային զանգերին: Մեծամասնությունը գտավ 26-րդ հոդվածի խախտում (խտրականությունից զերծ մնալու իրավունք) և չի՝ չատակեց 19-րդ հոդվածը: ՄԻԿ-ի չորս անդամների՝ Եվաթի, Քլայնի, Կրեցմերի և Մեդինա Քուիրոգայի եզրակացությունները համընկան և նրանք եզրակացրին, որ շարադրված փաստերը ենթադրում են 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, քանի որ սահմանափակվել է հեղինակների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը⁶⁵: Մյուս կողմից պարոնայք Քիագվաթին, Յալդենը և լորդ Քոլվիլը նշեցին հետևյալը.

¶ 6. ...Յենց որ մասնակից պետությունն ընդունում է որևէ առանձին լեզու կամ լեզուներ՝ որպես իր պաշտոնական լեզու կամ լեզուներ, տվյալ պետության համար օրինական է դառնում պաշտոնական նպատակներով որևէ այլ լեզվի օգտագործումն արգելելը, և եթե տվյալ մասնակից պետությունը հենց այդպես է վարվում, ապա այդ գործողությունները չի կարելի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում համարել:

20-րդ հոդվածը և ատելության քարոզչությունը

1. Պատերազմի յուրաքանչյուր քարոզչություն արգելվում է օրենքով:
2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության որևէ քարոզչություն, որ խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում է, արգելվում է օրենքով:

[18.47] 20-րդ հոդվածը բովանդակում է ազատ արտահայտվելու իրավունքի *պարտադիր* սահմանա-

⁶² Նվազագույն վնասի մոտեցումը կիրառվում է Կանադայի սահմանադրական իրավունքում խարտիայով նախատեսված իրավունքների սահմանափակումները մեկնաբանելիս: Տե՛ս օրինակ՝ *R v Big M Drug Mart* [1985] 1 SCR 295, at 352, և *R v Oakes* [1986] 26 DLR (4d) 200, at 227 (Կանադայի գերագույն դատարանի որոշումներ):

⁶³ Տե՛ս *Singer*, պարբ. 9.2-9.4:

⁶⁴ Դվարեն, վերը, ծմբ. 12, 178-9: Սակայն տե՛ս նաև՝ [24.48]:

⁶⁵ Պրն Անդրոն կարծում էր, որ այս գործը կարող է «խնդիրներ հարուցել 19-րդ հոդվածի շրջանակներում», սակայն նա այս առումով որևէ որոշում չի կայացրել, քանզի հեղինակներն իրենք չեն արձարծել 19-րդ հոդվածի հարցը:

փակումներ: Այն պահանջում է մասնակից պետություններից ապօրինի հայտարարել պատերազմի քարոզչությունը, ինչպես նաև ազգայնական, ռասայական կամ կրոնական հիմունքներով մարդկանց նկատմամբ ատելություն սերմանելը: ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման որոշ եղանակների կործանարար բնույթը:

[18.48] Այդուհանդերձ, 20-րդ հոդվածը հակասում է բազմաթիվ պետությունների սահմանադրություններում ամրագրված արտահայտման առավել ազատական երաշխիքներին, ինչպես նաև բախվում է արևմտյան ազատական տեսությունում խոսքի ազատությանը հատկացվող բարձր դիրքին: Այս իրողությունը 20-րդ հոդվածի մի շարք սահմանափակումների տեղիք է տվել այնպիսի մասնակից պետություններում, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ն, Բելգիան, Դանիան, Ֆինլանդիան և Իսլանդիան⁶⁶:

[18.49]

ԹԻՎ 11 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. ... Հաշվի առնելով 20-րդ հոդվածի բնույթը՝ մասնակից պետությունները պարտավոր են ընդունել անհրաժեշտ օրենսդրական միջոցներ՝ այդ հոդվածում նշվող գործողություններն արգելելու նպատակով: . . .

¶ 2. Դաշնագրի 20-րդ հոդվածում նշվում է, որ պատերազմի քարոզչությունը, ինչպես նաև ազգային, ռասայական կամ կրոնական խտրականության դավաճանությունը խտրականության, թշնամության կամ բռնության հրահրում են և պետք է արգելվեն օրենքով: Կոմիտեի կարծիքով՝ այս պահանջվող արգելքները լիովին համատեղելի են 19-րդ հոդվածում ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի հետ, որի իրացումը ենթադրում է հատուկ պարտականություններ և պատասխանատվություն: 1-ին կետով նախատեսված արգելքը տարածվում է սպառնալիքներ բովանդակող կամ ազդեցիկ գործողության և կամ խաղաղության խախտման հանգեցնող քարոզչության բոլոր այն ձևերի վրա, որոնք հակասում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը, մինչդեռ 2-րդ կետն ուղղված է խտրականություն, թշնամություն կամ բռնություն հրահրող ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ջատագովման դեմ՝ անկախ այն համգամայնից՝ այդ քարոզչության կամ ջատագովման թիրախները գտնվում են երկրի ներսում, թե՛ դրսում: 20-րդ հոդվածի դրույթների 1-ին կետը չի արգելում ինքնապաշտպանության ինքնիշխանական իրավունքի կամ ժողովուրդների ինքնորոշման կամ անկախության ջատագովումը՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Որպեսզի 20-րդ հոդվածը լրիվ մտնի ուժի մեջ, անհրաժեշտ է մի օրենք, որով պարզ սահմանվի, որ վերոշարադրյալ քարոզչությունը և ջատագովումը հակասում են պետական քաղաքականությանը, իսկ այն խախտելու պարագայում պետք է սահմանվի համապատասխան պատժամիջոց: Հետևաբար, կոմիտեն կարծում է, որ այն մասնակից պետությունները, որոնք դեռևս 20-րդ հոդվածում ամրագրված պարտավորությունների կատարման ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել, կանեն այդ և զերծ կմնան նման քարոզչությունից կամ ջատագովումից:

[18.50] Ընդհանուր մեկնաբանությունում նշվում է, որ «պատերազմները», որոնց համար ՄԱԿ-ի կանոնադրությամբ պատժամիջոցներ են նախատեսվում, «պատերազմներ» չեն համարվում 20-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում: Այսպիսով, ինքնապաշտպանական պատերազմների քարոզչությունը թույլատրելի է: Ուրեմն տրամաբանական է, որ Անվտանգության խորհրդի կողմից կանոնադրության 7-րդ գլխի շրջանակներում հովանավորված պատերազմական գործողությունները, օրինակ՝ 1990 թ. դաշնակից ուժերի՝ ի պաշտպանություն Քուվեյթի Իրաքի դեմ գործողությունները, նույնպես թույլատրելի են: Ապօրինի պատերազմների քարոզչությունն անշուշտ տեղավորվում է 20-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում: Օրինակ, եթե վերցնենք 2003 թ. ԱՄՆ-ի ղեկավարած «կամավորների համադաշինքի» կողմից Իրաքի զավթումը, ուրեմն ի գորակցություն այդ պատերազմի հնչած որոշ հայտարարություններ թերևս հակասում էին 20-րդ հոդվածին: Եվ իրականում ցավալի է, որ ՄԻԿ-ը չօգտվեց հնարավորությունից և իր Ընդհանուր մեկնաբանություններում չսահմանեց «պատերազմի քարոզչություն» արտահայտության իմաստը: Արդյոք այն ընդգրկում է պատերազմի ընթացքում տարածվող տեղեկատվությունը, թե՞ այն տեղեկատվությունը, որը նախորդում է պատերազմին՝ նպաստելով և հրահրելով դրա սկիզբը: Բոլոր պետությունները ներկայացնում են բարենպաստ զեկույցներ պատերազմին առնչվող իրենց գործողությունների վերաբերյալ, թեև այդ գործողությունները կարող են համարվել քարոզչություն այն պատերազմների ընթացքում, որոնց նրանք մասնակցում են:

[18.51] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1966 թ. միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ) 4-րդ կետը բովանդակում է ավելի մանրամասն պարտավորություն պետությունների համար՝ ռասայական ատելության դեմ օրենքներ ընդունելու և իրագործելու առումով: ՌԽՎ կոմիտեն 4-րդ

⁶⁶ Վերապահումների վերաբերյալ տե՛ս ընդհանուր 25-րդ գլուխը:

հողվածի իմաստը բացատրել է իր թիվ 15 Ընդհանուր մեկնաբանությունում:

ՌԽՎԿ-ի ԹԻՎ 15 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. Երբ [1966 թ.] ընդունվում էր Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, 4-րդ հոդվածը դիտվում էր որպես ռասայական խտրականության դեմ պայքարի կենտրոնական տարր: Այդ ժամանակ տիրում էր ավտորիտար գաղափարախոսությունների վերակենդանացման համատարած վախը: Ռասայական գերազանցության մասին գաղափարների տարածման և ռասայական հատկանիշով բռնություն հրահրող գործունեության արգելումն իրավացիորեն համարվում էր առանցքային: Այդ ժամանակից ի վեր կոմիտեն ստացել է էթնիկական ծագման հատկանիշով կազմակերպված բռնության և էթնիկական տարբերությունների քաղաքական շահագործման փաստերի ապացույցներ: Յետևաբար, 4-րդ հոդվածի իրագործումը ներկայումս ավելի մեծ կարևորություն է ստացել:

ՌԽՎ կոմիտեն բացատրում է 4-րդ հոդվածի պատշաճ իրագործման հետ կապված որոշ պարտականություններ:

¶ 2. ... Այս պարտավորությունները կատարելու համար մասնակից պետությունները ոչ միայն պետք է համապատասխան օրենսդրություն մշակեն, այլև ապահովեն, որ այն արդյունավետ իրագործվի: Քանի որ սպառնալիքները և ռասայական բռնության գործողությունները հետևության հանգեցնում են ուրիշ նման գործողությունների, միայն անհապաղ միջամտությամբ է հնարավոր բավարարել արդյունավետ արձագանքի առումով ստանձնած պարտավորությունները:

¶ 3. 4-րդ հոդվածի (ա) կետը պահանջում է մասնակից պետություններից պատժամիջոցներ նախատեսել հետևյալ չորս կարգի հանցավոր գործողությունների համար. (i) ռասայական գերազանցության վրա հիմնված գաղափարների կամ ատելության տարածումը, (ii) ռասայական ատելության հրահրումը, (iii) որևէ ռասայի ներկայացուցիչների կամ այլ մշակույթին պատկանող կամ էթնիկական ծագում ունեցող անձանց նկատմամբ բռնի գործողությունները և (iv) նման գործողությունների հրահրումը:

¶ 5. 4-րդ հոդվածի (ա) կետը նաև պատժամիջոցներ է նախատեսում ռասիստական բնույթի գործունեության համար, ինչը, կոմիտեի մեկնաբանությամբ, ներառում է վերոնշյալ 3-րդ կետում հիշատակվող բոլոր գործողությունները, ասել է թե՛ էթնիկական և ռասայական տարբերություններից բխող գործողությունները:

¶ 6. Որոշ պետություններ պնդում էին, որ իրենց մոտ գործող իրավական կարգով հնարավոր չէ կազմակերպությունը հայտարարել ապօրինի, քանի դեռ նա չի խթանել կամ հրահրել ռասայական խտրականություն: Կոմիտեն հակված է այն կարծիքին, որ 4-րդ հոդվածի (բ) կետը պետությունների վրա պարտավորություն է դնում աջակցել լինել և նման կազմակերպությունների դեմ գործել վաղ փուլում: Այդ կազմակերպությունները, ինչպես նաև այլ կազմակերպված քարոզչական գործողությունները պետք է հայտարարվեն ապօրինի և արգելվեն: Այդ կազմակերպություններին անդամակցելն իսկ պետք է պատժվի:

[18.52]

«Լ.Կ.-ն ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (L.K. v THE NETHERLANDS, ՌԽՎԿ 4/91)

¶ 2.1. 1989 թ. օգոստոսի 9-ին հեղինակը, որ մասնակի հաշմանդամություն ուներ, այցելում է Նիկոլաս Ռույկավերստար փողոցում գտվող մի տուն, որը նրան և իր ընտանիքին առաջարկել էին վարձակալել. այդտեղ գտնվում էին Ուտրեխտի քաղաքապետարանի միջոցներով սուբսիդավորված բնակարանները: Նրան ուղեկցում էր իր ընկեր Ա.Բ.-ն: Երբ նրանք ժամանեցին դեպքի վայր, շենքի մոտ հավաքվել էր մոտ 20 հոգի: Այցելության ընթացքում հեղինակը լսում է, թե ինչպես մի քանիսը գոռում են. «Այլևս ոչ մի արտասահմանցի»: Մյուսները նրան հասկացնում են, որ եթե ընդունի այդ տունը վարձակալելու առաջարկը, ապա իրենք կիրկիզեն նրա բնակարանը և կվճարեն նրա մեքենան: Հեղինակը և Ա.Բ.-ն վերադառնում են մուսիցիպալ բնակարանների գրասենյակ և խնդրում են գործի համար պատասխանատու աշխատակցին ուղեկցել իրենց այդ փողոց: Այնտեղ տեղի բնակիչներից մի քանիսն այդ աշխատակցին ասում են, որ իրենք չեն կարող ընդունել հեղինակին որպես իրենց հարևան՝ ելնելով այն ենթադրյալ կանոնից, որ փողոցի բնակիչներից միայն հինգ տոկոսը կարող է արտասահմանցի լինել: Աշխատակիցն ասում է, որ նման կանոն գոյություն չունի, իսկ փողոցի բնակիչները խնդրագիր են կազմում, որում նշվում է, որ հեղինակին չեն կարող ընդունել և առաջարկում են նրա ընտանիքին հատկացնել մեկ այլ տուն:

¶ 2.2. Նույն օրը հեղինակը բողոք է ներկայացնում Ուտրեխտի քաղաքային ոստիկանություն այն հիմնավորմամբ, որ նա դարձել է ռասայական խտրականության զոհ՝ քրեական օրենսգրքի (Wetboek van Strafrecht) 137-րդ հոդվածի

(գ) և (դ) կետերով: Բողոքն ուղղված էր այն անձանց դեմ, ովքեր ստորագրել էին խնդրագիրը և հավաքվել էին շենքի մոտ: Հեղինակը հայտնում է, որ սկզբում ոստիկանության աշխատակիցը հրաժարվում է գրանցել բողոքը, և պահանջվել է տեղի հակախտրական խմբի միջնորդությունը, որպեսզի ոստիկանությունը համաձայնի զեկույց պատրաստել:

Այնուհետև հեղինակը մանրամասն նկարագրում է բողոքի դանդաղ ընթացքը Նիդեռլանդների իրավական համակարգում: Այդ մանրամասներից մի քանիսն ակնհայտ են դառնում ստորև բերված փաստարկներից: Լ.Կ-ի բողոքը ի վերջո մերժվել է Նիդեռլանդների վերաքննիչ դատարանի կողմից՝ ներկայացվելու պահից գրեթե երկու տարի անց:

¶ 3.1. Հեղինակը հայտնում է, որ փողոցի բնակիչների նկատողությունները և հայտարարությունները ռասայական խտրականություն են կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանված իմաստով, ինչպես նաև Նիդեռլանդների քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի (գ), (դ) և (ե) կետերով. այս վերջին հոդվածի դրույթներն արգելում են հրապարակավ վիրավորել որևէ խմբի միայն վերջինիս ռասայական պատկանելության հիման վրա, ինչպես նաև արգելում են մարդկանց նկատմամբ ռասայի հատկանիշով հրապարակավ ատելություն մերշնչել և այդ խմբի հասցեին ռասիստական բնույթի վիրավորանքներ բովանդակող փաստաթղթեր հրապարակել:

¶ 3.2. Հեղինակը պնդում է, որ դատական մարմինները և դատախազությունը պատշաճ կերպով չեն ուսումնասիրել գործի բոլոր հանգամանքները կամ նույնիսկ ներկայացված բողոքի կապակցությամբ որևէ հիմնավորված որոշում չեն ձևակերպել: Մասնավորապես, հեղինակը հայտնում է, որ ոստիկանության հետաքննությունը ոչ մանրակրկիտ, ոչ էլ ամբողջական է եղել: Այսպիսով, Ա.Բ.-ն չի հարցաքննվել, իսկ փողոցի բնակիչները հարցաքննվել են միայն խնդրագրի, ոչ թե 1989 թ. օգոստոսի 8-ին և 9-ին հեղինակի այցելության ժամանակ շենքի մոտ տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ: Երկրորդ՝ հեղինակը պնդում է, որ դատախազության՝ քրեական գործ չհարուցելու մասին որոշումը մնացել է առանց բացատրության: Երրորդ՝ ասվում է, որ դատախազը 1989 թ. դեկտեմբերին տեղական թերթին տված հարցազրույցում հեղինակի համոզեալ փողոցի բնակիչների ենթադրյալ մտադրությունների վերաբերյալ մոլորեցնող հայտարարություններ է արել: Չորրորդ՝ ասվում է, որ վերաքննիչ դատարանում գլխավոր դատախազն անհիմն ձգձգել է գործի ընթացքը՝ ավելի քան մեկ տարվա ընթացքում ոչինչ չնախաձեռնելով: Եվ, վերջապես, ասվում է, որ վերաքննիչ դատարանը հիմնվել է ոչ ամբողջական ապացույցների վրա:

¶ 3.3. Հեղինակի փաստաբանը պնդում է, որ վերոնշյալ հանգամանքները վկայում են 2-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետի, ինչպես նաև 4-րդ և 6-րդ հոդվածների խախտումների մասին: Փաստաբանը նշում է, որ 4-րդ և 6-րդ հոդվածները պետք է ընթերցվեն 2-րդ հոդվածի առաջին մասի հետ միասին, ինչը հանգեցնում է այն եզրակացության, որ կոնվենցիայով մասնակից պետության ստանձնած պարտավորությունները չեն համարվում կատարված, եթե ռասայական խտրականությունը պարզապես քրեականացվում է: Փաստաբանը հայտնում է, որ թեև դաշնագիրը չի բացառում հետապնդելու կամ չհետապնդելու իրավունքը, որը հայտնի է որպես նպատակահարմարության սկզբունք, սակայն վավերացնելով կոնվենցիան՝ մասնակից պետությունը համաձայնում է ռասայական խտրականության դեպքերին անդրադառնալ հատուկ ուշադրությամբ և, ի թիվս այլոց, ապահովել մնացած գործերի արագ վարույթը ներպետական դատական ատյաններում:

Մասնակից պետությունը հայտնել է, որ իր գործակալները՝ ոստիկանությունը, դատախազությունը և դատարանները, ներկայացված բողոքի կապակցությամբ գործել են պատշաճ կերպով:

¶ 4.5. Մասնակից պետությունը նշում է, որ Նիդեռլանդների օրենսդրությունը բավարարում է կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետի պահանջները, իսկ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի (գ) և այլ կետերով ռասայական խտրականությունը համարվում է քրեորեն պատժելի հանցանք: Այդուհանդերձ, որևէ քրեական հանցանքի փաստով քրեական հետապնդում սկսելու համար պետք է բավարար ապացույցներ լինեն: Կառավարության կարծիքով՝ կոնվենցիայի 4-րդ և 6-րդ հոդվածների խախտման մասին խոսք չի կարող լինել, քանի որ, ինչպես նշված է դատախազության՝ 1990 թ. հունիսի 25-ի նամակում, բավարար կերպով չի հաստատվել 1989 թ. օգոստոսի 8-ին և 9-ին քրեական հանցանք կատարելու փաստը, ոչ էլ հաստատվել են այդ հանցանքի մասնակիցները:

¶ 4.6. Մասնակից պետության կարծիքով՝ այն փաստը, որ ռասայական խտրականությունը քրեականացվել է քրեական օրենսգրքի շրջանակներում, բավարար է կոնվենցիայի 4-րդ հոդվածում ամրագրված պարտավորության կատարումը հաստատելու համար, քանզի այդ դրույթը չի կարող ընթերցվել այն իմաստով, որ քրեական գործ պետք է հարուցվի ամեն տեսակ վարքագծի համար, որի առնչությամբ կարող է կիրառվել տվյալ դրույթը: Այս համատեքստում:

⁶⁷ ՌԽՎՄԿ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետը մասնակից պետություններից պահանջում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը որևէ անձի, խմբի կամ կազմակերպության կողմից ռասայական խտրականությունն արգելելու համար: ՌԽՎՄԿ-ի 6-րդ հոդվածը երաշխավորում է մասնակից պետության իրավասության ներքո յուրաքանչյուրի համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ՝ ՌԽՎՄԿ-ով նախատեսված իրենց իրավունքների խախտումներից պաշտպանվելու նկատառումով:

տում մասնակից պետությունը նշում է, որ քրեական հետապնդում սկսելու վերաբերյալ որոշումները կայացվում են նպատակահարմարության սկզբունքով: Հեղինակը ի վիճակի է եղել օգտվելու կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից և ունեցել է այդ հնարավորությունը, որից էլ օգտվել է՝ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածին համապատասխան՝ բողոքելով դատախազության՝ քրեական հետապնդում սկսելու դիմումի մերժման դեմ: Մասնակից պետությունն ընդգծում է, որ վերաքննիչ դատարանի կողմից գործի ուսումնասիրությունը եղել է համընդգրկուն և քննության ոլորտով սահմանափակված չի եղել:

ՌԽՎ կոմիտեն որոշում է կայացրել հօգուտ *Լ.Կ.*-ի հետևյալ ձևակերպումներով.

¶ 6.3. Կոմիտեն համարում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկություններով՝ 1989 թ. օգոստոսի 8-ին և 9-ին *Լ.Կ.*-ի հասցեին հնչած հայտարարությունները և սպառնալիքները ռասայական խտրականություն են և մաշկի այլ գույնի կամ այլ էթնիկական ծագում ունեցող անձանց հանդեպ բռնի գործողությունների հրահրում, ինչը հակասում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածի (ա) կետին, ինչպես նաև ոստիկանության և դատախազության մարմինների կողմից այս միջադեպերի առնչությամբ կատարած հետաքննությունը ամբողջական չի եղել:

¶ 6.4. Կոմիտեն չի կարող ընդունել այն պնդումը, որ ռասայական խտրականությունը որպես քրեորեն պատժելի արարք դիտարկող օրենքի ընդունումն ինքնին մասնակից պետության կողմից կոնվենցիայով ստանձնած պարտավորության կատարում է:

¶ 6.5. Կոմիտեն վերահաստատում է 1987 թ. օգոստոսի 10-ի «*Յիլմազ-Դոգանն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Yilmaz-Dogan v The Netherlands, 1/1984*) գործով [23.86] հայտնած իր այն կարծիքը, որ «քրեական հանցանքները հետապնդելու որոշման ազատությունը, որը հայտնի է որպես նպատակահարմարության սկզբունք, ուղղորդվում է պետական քաղաքականության դիտարկումներով, և նկատում է, որ կոնվենցիան չի կարող մեկնաբանվել որպես այդ սկզբունքի խսկությունը վիճարկող փաստաթուղթ: Այդուհանդերձ, ռասայական խտրականության յուրաքանչյուր ենթադրյալ գործում այդ սկզբունքը պետք է կիրառվի կոնվենցիայում ընդգրկված երաշխիքների լույսի ներքո»:

¶ 6.6. Երբ արվում են ռասայի հատկանիշով պայմանավորված բռնության սպառնալիքներ, և հատկապես երբ դրանք արվում են հրապարակավ և որևէ խմբի կողմից, պետությունը պարտավոր է պատշաճ հոգատարությամբ և ջանասիրությամբ հետաքննել այդ միջադեպը: Տվյալ դեպքում մասնակից պետությունը դա չի արել:

¶ 6.7. Կոմիտեն կարծում է, որ հաշվի առնելով տեղի ունեցած միջադեպին անհամապատասխան արձագանքելու հանգամանքը՝ ոստիկանությունը և դատական մարմիններն այս գործում չեն ապահովել դիմումատուի համար արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված իմաստով:

¶ 6.8. Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը վերանայի ենթադրյալ ռասայական խտրականության գործերով որոշում կայացնելու իր քաղաքականությունը և ընթացակարգերը՝ կոնվենցիայի 4-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների լույսի ներքո:

¶ 6.9. Կոմիտեն մասնակից պետությանը նաև հանձնարարական է տալիս դիմումատուին տրամադրել իր կրած բարոյական վնասին համաչափ փոխհատուցում:

[18.53] «ԱՀՄԱԴՆ ընդդեմ ԴԱՆԻԱՅԻ» (*AHMAD v DENMARK, ՌԽՎ 16/99*)

Հեղինակը և իր ընկերները ծագումով պակիստանցի Դանիայի քաղաքացիներ էին: Երբ նրանք դպրոցի մոտ իրենց ընկերներին են սպասել, ոմն ուսուցիչ պահանջել է, որ հեռանան: Այդ ուսուցիչը (պրն Կ.Պ.) և դպրոցի տնօրենը (պրն Օ.Տ.) ենթադրաբար նրանց անվանել են «կապիկներ»: Բողոքի բովանդակությունը շարադրված է ստորև.

¶ 3.1. Հայտնվում է, որ գործը պատշաճ կերպով չի ուսումնասիրվել ազգային մարմինների կողմից և հեղինակն այդպես էլ ներողություն, բավարար հատուցում կամ փոխհատուցում չի ստացել: Այսինքն՝ մասնակից պետությունը խախտել է կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետով և 6-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները:

¶ 3.2. Փաստաբանը պնդում է, որ ոչ Հվիդոլրի ոստիկանության բաժանմունքը, ոչ էլ դատախազությունը չեն ուսումնասիրել հետևյալ հարցերը. (ա) արդյոք պրն Օ.Տ.-ն և պրն Կ.Պ.-ն ասե՞լ են, որ հեղինակը և իր եղբայրը «կապիկների հավաքածու» են և չեն կարող ճիշտ արտահայտվել, (բ) դա ասվել է հեղինակի և նրա եղբոր ծագումով

պակիստանցի լինելու առնչությամբ, (գ) արդյո՞ք այս արտահայտությունը հեղինակի և նրա եղբոր վերաբերյալ խտրական կարծիք էր: Ըստ փաստաբանի՝ ոստիկանությունում բավարարվել են նրանով, որ հարցաքննել են պրն Օ.Տ.-ին և պրն Կ.Պ.-ին և նույնիսկ չեն մտածել հարցաքննել հեղինակին ու նրա եղբորը կամ այն վեց վկաներին, ում անունները և հասցեները նրանց հայտնի են եղել:

Մասնակից պետությունը պատասխանել է.

¶ 4.9. Մասնակից պետությունը հայտնում է, որ ներկա դիմումի կենտրոնական տարր են պրն Կ.Պ.-ի և պրն Օ.Տ.-ի ենթադրյալ հայտարարությունները: Եթե այս հայտարարություններն իրականում արվել են, ապա դրանք կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի և 5-րդ հոդվածի (ե) և (ե(v)) ենթակետերին հակասող այն տարբերակիչ վերաբերմունքը չեն, որը խտրականություն է: Ավելի տեղին է տվյալ հայտարարությունները գնահատել կոնվենցիայի 4-րդ հոդվածի (ա) կետի առնչությամբ, որը պահանջում է մասնակից պետություններից պատժել որոշակի տեսակների անվայել պահվածքը: Կոնվենցիան վավերացնելու նպատակով Դանիան լրամշակել է իր քրեական օրենսգրքի 266-րդ բաժնի (բ) ենթակետը, ինչպես նաև այլ բաժիններ: 266-րդ բաժնի (բ) ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, ով հրապարակավ կամ հանրության լայն շրջաններում տարածելու մտադրությամբ այնպիսի հայտարարություններ կամ այլ հաղորդումներ է անում, որոնք մարդկանց որևէ խմբի հասցեին սպառնալիք են պարունակում, վիրավորանք կամ անվայել արտահայտություններ՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության կամ էթնիկական ծագման հատկանիշով, ենթակա է պատժի:

¶ 4.10. Անհրաժեշտ պայման է, որ տվյալ հայտարարությունն ուղղված լինի որևէ խմբի հասցեին՝ ռասայի կամ այլ հատկանիշով: Առանձին անձի հասցեին ուղղված հայտարարությունները, եթե դրանք չեն կարող դիտարկվել որպես վիրավորանքի կամ հետապնդման արտահայտություն այն խմբի հասցեին, որին պատկանում է տվյալ անձը, պետք է գնահատվեն մասնավոր կյանքի միջամտության և անձի վարկաբեկման մասով քրեական օրենսգրքով նախատեսված ընդհանուր կանոններով: Եթե գնահատվում է, թե որոշ հայտարարություններ պե՞տք է դիտվեն որպես 266-րդ բաժնի (բ) ենթակետին հակասող, ապա անհրաժեշտ է հստակ գնահատել այդ հայտարարությունների էությունը, այդ թվում՝ այն համատեքստը, որում դրանք արվել են: Նման գնահատական անցկացվել է տարածքային ոստիկանապետի և դատախազի կողմից, երբ որոշում է կայացվել հետաքննության դադարեցման մասին: Կառավարությունը լիովին համաձայն է այդ գնահատականների արդյունքներին և համարում է, որ հեղինակը չի հիմնավորել կամ պատշաճ հավանականությամբ ցույց տվել, որ տուժել է կոնվենցիային հակասող ռասիստական բնույթի հայտարարություններից, քանի որ դրանք ուղղված չեն եղել որևէ խմբի հասցեին՝ ռասայի կամ էթնիկական ծագման հատկանիշով: Այսպիսով, հեղինակը չի կարողացել հաստատել առաջին հայացքից (prima facie) հիմնավորված պահանջ՝ իր դիմումի ընդունելիությունն ապահովելու նկատառումով:

¶ 4.11. Մասնակից պետությունը տեղյակ է, որ կոնվենցիան նախատեսում է որոշակի պահանջներ իշխանություններին՝ անձանց կողմից ենթադրյալ ռասայական խտրականության վերաբերյալ ներկայացվող տեղեկությունների հարցում ցուցաբերվող վերաբերմունքի մասով: Այդուհանդերձ, ոստիկանության իրականացրած հետաքննությունը լիովին բավարարել է կոնվենցիայից բխող պահանջը՝ կոմիտեի պրակտիկայում արձանագրված մեկնաբանությամբ: Ոստիկանության տրամադրության տակ են եղել ենթադրյալ հայտարարությունների բուն բովանդակության մանրամասները՝ հեղինակի ու իր փաստաբանի, ինչպես նաև ուսուցչի և դպրոցի տնօրենի վարկածներով: Հեղինակը առանձին նշել է, որ ոստիկանությունը պետք է գնահատեր այն հանգամանքը, թե բողոքի տեղիք տված հայտարարությունները իրականում արվե՞լ են, թե՞ ոչ: Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ ոստիկանության և դատախազության գնահատականով անհրաժեշտ չի եղել վերջնականապես որոշել՝ այդ հայտարարություններն իրականում արվե՞լ են, թե՞ ոչ, և եթե անգամ այդ հայտարարություններն արվել են, միևնույն է, դրանք քրեորեն հետապնդելի չեն եղել 266-րդ բաժնի (բ) ենթակետով:

ՌԽՎ կոմիտեն որոշել է, որ տեղի է ունեցել ՌԽՎՄԿ-ի 6-րդ հոդվածի խախտում, որը պայմանավորված է միջադեպի անհամապատասխան հետաքննության հանգամանքով:

¶ 6.1. Մասնակից պետությունը հայտնում է, որ պրն Կ.Պ.-ն չի հերքել, որ հեղինակին և իր խմբին անվանել է «կապիկներ»: Մասնակից պետությունը նաև հայտնում է, որ պրն Օ.Տ.-ն նույնպես չի հերքում նման ինչ-որ մի բան ասելու հանգամանքը:

Հաստատվել է նաև այն հանգամանքը, որ այս հայտարարություններն արվել են դպրոցի միջանցքում տեղի ունեցած լարված միջադեպի ընթացքում, մի քանի վկաների ներկայությամբ: Այսպիսով, կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակը վիրավորվել է հրապարակավ առնվազն պրն Օ.Տ.-ի կողմից:

¶ 6.2. Տարածքային դատախազությունը չի որոշել, թե արդյոք հեղինակի հասցեին հնչած վիրավորանքն արվել է նրա ազգային պատկանելությամբ կամ էթնիկական ծագմամբ՝ հիման վրա՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետի խախտմամբ: Կոմիտեն այն կարծիքին է, որ եթե գործով զբաղվող ոստիկանությունը չդադարեցներ

հետաքննությունը, ապա հնարավոր կլիներ որոշել՝ հեղինակը վիրավորվել է ռասայական պատկանելության պատճառով, թե՞ ոչ:

¶ 6.3. Մասնակից պետության 14-րդ պարբերական զեկույցում (CERD/C/362/Add.1) ներկայացված տեղեկություններից կոմիտեն եզրակացնում է, որ որոշ դեպքերում ներկա գործում հնչած վիրավորանքներին մամուլով նվաստացնող հայտարարությունների համար Դանիայի դատարաններն անձանց դատապարտել են քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի (բ) ենթակետով: Ուստի կոմիտեն համաձայն չէ մասնակից պետության այն կարծիքին, որ քննարկման առարկա դարձած հայտարարությունները դուրս են քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի (բ) ենթակետի շրջանակներից:

¶ 6.4. Քանի որ ոստիկանությունը չի շարունակել իր հետաքննությունը, իսկ դատախազությունը բողոքարկման իրավունքը բացառող վերջնական որոշում է կայացրել, հեղինակը գրկվել է որևէ հնարավորությունից՝ հաստատելու, որ կոմիտեից հայտնի ճշտված իր իրավունքները խախտվել են: Սրանից հետևում է, որ մասնակից պետությունը գրկել է հեղինակին ռասայական խտրականությունից արդյունավետ պաշտպանվելու իրավական համապատասխան միջոցներից:

¶ 7. Կոմիտեն համարում է, որ հեղինակը կազմել է առաջին հայացքից (*prima facie*) հիմնավորված գործ և ապահովել է դրա ընդունելիությունը: Կոմիտեն նաև համարում է, որ ընդունելիության պայմանները բավարարվել են: Ուստի կոմիտեն որոշում է, որ իր ընթացակարգերի 91-րդ կանոնի համաձայն՝ դիմումն ընդունելի է:

¶ 8. Ինչ վերաբերում է գործի նյութաիրավական հիմնավորմանը, ապա կոմիտեն կարծում է, որ վերոնշյալ եզրակացությունների լույսի ներքո ներկայացված փաստերը դաշնագրի 6-րդ հոդվածի խախտում են:

¶ 9. Կոմիտեն մասնակից պետությանը հանձնարարում է ապահովել, որ ոստիկանությունը և դատախազությունը պատշաճ կերպով հետաքննեն ռասայական խտրականության հետ կապված այն գործողությունները, որոնք պատժելի են համարվում կոմիտեից հայտնի 4-րդ հոդվածով:

[18.54] «ՀԱԳԱՆՆ ԸՆԴՈՂԵՄ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (HAGAN v AUSTRALIA, ՌԽՎԿ 26/02)

Հեղինակը բնիկ ավստրալիացի է: Նա ներկայացրել է հետևյալ բողոքը.

¶ 2.1. 1960 թ. հեղինակի բնակավայրում՝ Քվինսլենդի մահանգի Թուվուբա քաղաքում գտնվող նշանավոր մարզադաշտի հիմնական տրիբունան կոչվել է «Է. Ս. «Նիգգեր» Բրաունի անվան տրիբունա»՝ ի պատիվ մարզաշխարհում և քաղաքացիական գործունեության համար ճանաչված անձնավորության՝ պրն Է. Ս. Բրաունի: Տրիբունայի վերին մասում կախված մեծ պաստառի վրա գրված է «Նիգգեր» «վիրավորական եզրույթը»: Պրն Բրաունը, որը նաև մարզահրապարակի վերահսկիչ մարմնի անդամ է եղել և մահացել է 1972 թ., սերում էր սպիտակ անգլո-սաքսոնացիներից և վերոնշյալ վիրավորական մականունը ստացել է «կամ իր սպիտակ մաշկի և խարտյաշ մազերի, կամ էլ «Նիգգեր Բրաուն» կոչվաքսուքը գործածելու հակում ունենալու պատճառով»: Այս վիրավորական եզրույթը կրկնվում է նաև բանավոր խոսքում՝ մարզադաշտի վերաբերյալ հանրային հայտարարություններում և մրցախաղերի մեկնաբանություններում:

Հեղինակի՝ տեղական իշխանություններին ներկայացրած բողոքն առ այն, որ տրիբունայի անվանումն իրեն վիրավորանք է պատճառում, ապարդյուն է եղել:

¶ 3.1. Հայցվորը պնդում է, որ տրիբունայի անվանման մեջ և այդ առնչությամբ բանավոր խոսքում սույն վիրավորական եզրույթի գործածմամբ խախտվում է դաշնագրի 2-րդ հոդվածի, հատկապես՝ 1-ին կետի (գ) ենթակետը, 4-րդ կետը, 5-րդ կետի (դ) կետի (i) և (ix) ենթակետերը, (ե) կետի (vi) և (f) ենթակետերը, 6-րդ և 7-րդ կետերը: Նա պնդում է, որ «ռասայական տեսանկյունից դա անգլերեն արտահայտված ամենավիրավորական մակդիրն է կամ ամենավիրավորական մակդիրներից մեկը»: Հետևաբար, իր ու իր ընտանիքի համար վիրավորական է մարզադաշտի տրիբունայի անվանման մեջ այդ մակդիրի գործածումը, և իրենք չեն կարողանում մասնակցել այդ տարածքում ամենանշանավոր մարզադաշտում անցկացվող միջոցառումներին: Նա պնդում է, որ անկախ 1960 թ. առկա իրավիճակից, մեր ժամանակներում վերոնշյալ վիրավորական մակդիրի ցուցադրումը և գործածումը «ծայրահեղ վիրավորական է հատկապես բնիկ ժողովրդի համար և համապատասխանում է կոմիտեից հայտնի 1-ին հոդվածում ներառված ռասայական խտրականության սահմանմանը»:

¶ 3.2. Հեղինակը պարզաբանում է, որ ինքը դեմ չէ պրն Բրաունի մեծարմանը կամ ֆուտբոլի մարզադաշտի տրիբունաներից մեկը նրա պատվին անվանելուն, սակայն պնդում է, որ այն ժամանակ, երբ պրն Բրաունը ստացել է «Նիգգեր» մականունը, ոչ բնիկ ավստրալիացիները «կամ տեղյակ չէին բնիկներին այդ մակդիրի գործածմամբ պատճա-

ռած ցավի և վիրավորանքի մասին, կան էլ անտարբեր էին դրա նկատմամբ»: Բացի այդ, նա պնդում է, որ պրն Բրաունին մեծարելու համար կարիք չկա կրկնելու նրա մականունը, քանի որ հանրահայտ մարզիկների պատվին անվանակոչված այլ մարզադաշտեր սովորաբար կոչվում են նրանց իսկական անուններով և ոչ թե մականուններով:

¶ 3.3. Նա պնդում է, որ հատկապես 2-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի համաձայն՝ կոմպենցիայի յուրաքանչ-յուր մասնակից պետություն պարտավոր է բարեփոխել ռասայական խտրականության հաստատմանը նպաստող օրենքները: Նա համոզված է, որ տվյալ վիրավորական մակդիրի նման բառերի հրապարակավ գործածումը նպաստում է այդ մակդիրի պաշտոնական գործածման թուլությունը կամ հավանությունը: Բառերը գաղափարներ են արտահայտում, որոշակի լիքք են պարունակում և ազդում են մտքերի և համոզմունքների վրա: Դրանց միջոցով կարող է հաստատվել ռասիզմի գաղափարախոսությունը, կարող են նաև խորանալ ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարմունքները: Այն հանգամանքը, որ այդ մակդիրի գործածումն օրինական է համարվում ներպետական օրենսդրության շրջանակներում, նույնպես հակասում է 7-րդ հոդվածի դրույթներին, որոնք ամրագրում են մասնակից պետությունների՝ ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարմունքների դեմ պայքարելու պարտավորությունը:

¶ 3.4. Այնուհետև հայցվորը հավելում է, որ օրենքի 18-րդ մասի 1-ին կետի (բ) ենթակետը, որով ավստրալիական օրենսդրության մեջ ներմուծվել են ՌԽՎՄԿ-ի դրույթները, և որի համաձայն՝ վիրավորական վարքագիծը պայմանավորված է ռասայական խտրականության հատկանիշով, ավելի նեղ իմաստ է արտահայտում, քան կոմպենցիայի 1-ին հոդվածում ռասայական խտրականության սահմանման մեջ տեղ գտած «ռասայական խտրականության վրա հիմնված» կարգի եզրույթները: Ի թիվս այլ հիմքերի, վիրավորական եզրույթի՝ «ռասայական խտրականության հատկանիշով» պայմանավորված չլինելու պատճառով իր բողոքի մերժումը նա բնութագրում է որպես «տեխնիկական»:

¶ 3.5. Իրավական պաշտպանության միջոցներով հայցվորը հետապնդում է այն նպատակը, որ իշխանությունները ցուցանակից վերացնեն վիրավորական մակդիրը, ներդրություն խնդրեն իրենից, ինչպես նաև այնպիսի փոփոխություններ կատարեն Ավստրալիայի օրենսդրության մեջ, որ այն նախատեսի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ռասայական տեսանկյունից վիրավորական համարվող նման դրսևորումներից:

Մասնակից պետությունը պաշտպանել է Ավստրալիայի դատական իշխանությունների՝ հակախտրականության գծով ներպետական օրենսդրությամբ հեղինակի հայցը մերժելու մասին կայացրած որոշումը:

¶ 4.10. Մասնակից պետությունը անդրադառնում է համատեքստից բխող հետևյալ տարրերին. (i) «այն փաստին, որ վիրավորական մակդիրը ներկայացված է որպես «այն անձի անվան անբաժան մաս, ում ակնհայտորեն մեծարում են»՝ նրա անվամբ անվանելով մարզադաշտի տրիբունան, (ii) դաշնության դատարանի այն եզրակացությանը, որ «եթե նույնիսկ նախկինում պրն Բրաունին տրված «Նիգգեր» մականունն ունեցել է ռասայական տարբերակման կամ անգամ ռասայական խտրականության ենթատեքստ, ապա այժմ ապացուցված է, որ արդեն հեղինակի բողոքից տասնամյակներ առաջ այդ մականվան՝ որպես պրն Բրաունի ինքնությունը նշող սովորական բառի գործածումը ձերբազատվել է նման ենթատեքստից», (iii) տեղացի բնիկների հարցումներին, (iv) «Բնիկների տարածքային ռեգրիի միության» նախկին հայտնի գործիչներից մեկի վկայությանը, որը խնդրահարույց չի համարում այդ անունը, այլ կարծում է, որ այն պարզապես «պատմության բաղկացուցիչ մասերից մեկն է», և (v) այն փաստին, որ չնայած նախորդ մի քանի տարվա ընթացքում արձանագրված ազատական տրամադրությունների և արտահայտվելու պատրաստականության աճին՝ հեղինակի բողոքից առաջ այդ անվան հետ կապված որևէ բողոք չի ներկայացվել, թեև 40 տարուց ավելի այդ անունը գրված էր հիմնական տրիբունայի ցուցանակին, և տեղացիներից շատերը հաճախ են եկել այդ մարզադաշտ:

ՌԽՎ կոմիտեն ակնհայտորեն որոշում է կայացրել հոգուտ հեղինակի, թեև նրա եզրակացությունն աչքի է ընկել անսովոր հակասականությամբ, ընդ որում՝ կոմիտեն հեշտությամբ կարող էր ՌԽՎՄԿ-ի դրույթների խախտում չարձանագրել:

¶ 7.2. Կոմիտեն պատշաճ կարգով հաշվի է առել այն համատեքստը, որի շրջանակներում 1960 թ. գրվել է վիրավորական մակդիր պարունակող ցուցանակը, և հատկապես այն փաստը, որ ամենայն հավանականությամբ կոչկաքսուք արտադրող ընկերության անվան հետ առնչվող և որպես մականուն օգտագործվող վիրավորական մակդիրը նախատեսված չէր այն կրողին՝ պրն Բրաունին անարգելու կամ ստորացնելու համար, որը ոչ սևամորթ էր, ոչ էլ տեղացի: Կոմիտեն նշել է նաև, որ պրն Բրաունը տարիներ շարունակ՝ իր մահվանը նախորդող 12 տարվա ընթացքում, և հասարակության ավելի լայն հատվածի ներկայացուցիչները հայցվորի բողոքին նախորդող 39 տարվա ընթացքում չեն առարկել ցուցանակի բովանդակությանը:

¶ 7.3. Այնուամենայնիվ, կոմիտեն այն կարծիքին է, որ վիրավորական մակդիրը գործածելու միտումի պաշտպանութ-

յունը կարող է արդի պայմաններում անարգանք և նվաստացում համարվել, եթե անգամ երկար ժամանակ այն այլ կերպ էր ընկալվում: Կոմիտեն փաստորեն համարում է, որ կոմկենցիան որպես գործող փաստաթուղթ մեկնաբանելիս և գործածելիս հարկ է հաշվի առնել ժամանակակից հասարակական իրավիճակը: Այս համատեքստում կոմիտեն իր պարտքն է համարում հիշեցնել տվյալ վիրավորական մակդիրների նման այլ բառերի նկատմամբ հարաճուն զգայականության մասին:

¶ 8. Այդ իսկ պատճառով կոմիտեն գոհունակությամբ է խոսում 1999 թ. հունիսի 29-ին Թուվումբայում տեղի ունեցած հանրային ժողովի մասնակիցների կողմից ընդունված բանաձևի մասին, որի նպատակն է հաշտեցման նպատակով ապագայում արգելել ռասայական հավասարության սկզբունքի տեսանկյունից նվաստացուցիչ կամ վիրավորական մակդիրների գործածումը բանավոր կամ գրավոր խոսքում: Միաժամանակ կոմիտեն կարծում է, որ նշանավոր մարզիկի հիշատակը կարելի է հարգել առանց ռասայական հավասարության սկզբունքի տեսանկյունից վիրավորական համարվող բառի գործածման կամ պաշտպանություն եմթադրող միջոցների: Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու վերոնշյալ ցուցանակից վիրավորական մակդիրի վերացումը և կոմիտեին տեղեկացնել այս բնագավառում ձեռնարկված քայլերի մասին:

ՌԽՎ կոմիտեն որևէ կերպ չի նշել, որ վիճարկելի բառերն այնքան վիրավորական են և կարող են վերածվել ՌԽՎՄԿ-ի 4-րդ հոդվածի դրույթներով նախատեսված ռասայական անարգանքի դրսևորման: Ուստի այս դեպքը վկայում է, որ ռասայական խտրականությունը կարող է դրսևորվել վիրավորական համարվող որևէ միջոցով կամ միջադեպով, եթե այդ վիրավորանքը ռասայական խտրականության բնույթ ունի: Այնուհանդերձ, այս գործի անսովոր բնույթը հանգեցրել է ՌԽՎ կոմիտեի անվճռական պատասխանի:

[18.55] ՄԻԿ-ին ներկայացված ռասայական անարգանքի վերաբերյալ գործերով որոշումները հաճախ կայացվել են՝ հաշվի առնելով 19-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները, ոչ թե 20-րդ հոդվածը խախտելու համար նախատեսված դրույթները, քանի որ դրանցով ռասայական հատկանիշով անարգանքը չի արգելվում: ՄԻԿ-ը թիվ 11 Ընդհանուր մեկնաբանության 2-րդ կետում ամրագրել է, իսկ ՌԽՎ կոմիտեն իր թիվ 15 Ընդհանուր հանձնարարականի մեջ հաստատել է ատելություն ներշնչող արտահայտությունների սահմանափակմանն առնչվող դրույթների համապատասխանությունն ազատ արտահայտվելու իրավունքին:

**[18.56] «Ջ. Ռ. Թ.-ն և Վ. Գ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՂԵՆ ԿԱՆԱԴԱՅԻ»
(J.R.T. and the W.G. PARTY v CANADA, 104/81)**

Գործի հանգամանքները ներկայացված են ստորև.

¶ 1. Հայցադիմումը ներկայացրել են Կանադայում բնակվող և այդ պետության քաղաքացի հանդիսացող 69-ամյա պրն Թ.-ն և 1976 թվականից սկսած՝ նրա ղեկավարած չգրանցված Վ. Գ. կուսակցության անդամները:

¶ 2.1. Վ. Գ. քաղաքական կուսակցությունը հիմնադրվել է որպես կուսակցություն 1972 թ. փետրվարին Կանադայի Օնտարիոյի նահանգի Տորոնտո քաղաքում: Կուսակցության հիմնադիր անդամները և պրն Թ.-ն մի քանի տարի շարունակ փորձել են անդամներ հավաքել և կուսակցության ռազմավարությունը տարածել ուղերձների միջոցով, որոնք պրն Թ.-ն ձայնագրել և միացրել է Կանադայի Օնտարիոյի նահանգի Տորոնտո քաղաքի «Bell» հեռախոսային համակարգին: Հասարակության յուրաքանչյուր անդամ կարող էր լսել ուղերձը՝ հավաքելով համապատասխան հեռախոսահամարը: Ժամանակ առ ժամանակ ուղերձները փոփոխվում էին, սակայն նրանց իմաստը մնում էր նույնը, այն է՝ վերոնշյալ համարով զանգահարած անձանց զգուշացնել «համաշխարհային ընդհանուր ֆինանսական համակարգի, բոլոր երկրներում հրեաների՝ ամբողջ աշխարհում պատերազմներ հրահրող, գործազրկության, դրամի արժեզրկման, միջազգային նշանակություն ունեցող արժեքների և սկզբունքների քայքայման հանգեցնող գործունեության մասին»:

¶ 2.2. «Մարդու իրավունքների մասին» Կանադայի օրենքը հրապարակվել է 1978 թ. մարտի 1-ին: Օրենքի 13-րդ մասի 1-ին կետով սահմանվում են հետևյալ դրույթները.

Այլ մարդկանց հետ հեռախոսակապով պարբերաբար հաղորդակցվելու կամ այլ մարդկանց իրենց հետ հաղորդակցվել հարկադրելու միջոցով մեկ կամ մի խումբ անձանց այնպիսի գործունեությունը, որը պետության խորհրդարանի օրենսդրական լիազորությունների շրջանակներում կարող է որևէ անձի կամ անձանց նկատմամբ ատելություն կամ այնպիսի արհամարհական վերաբերմունք սերմանել, որը տարբերակում է նրանց այլ մարդկանցից արգելված խտրական հատկանիշով, համարվում է խտրական:

¶ 2.3. Վ. Գ. Կուսակցությունը և պրն Թ.-ն գրկվել են հեռախոսակապի ծառայություններից՝ համաձայն այս դրույթների հետ մեկտեղ կիրառված օրենքի 3-րդ մասի դրույթների, որոնցում թվարկվում են այն հասկացությունները, «որոնց հատկանիշով չի կարելի խտրական վերաբերմունք սերմանել. «ռասա, ազգային ծագում կամ պատկանելությունը որևէ ժողովրդին, մաշկի գույն, կրոն, տարիք, սեռ, ամուսնական կարգավիճակ, ներման արժանացած դատվածություն և ֆիզիկական արատ»:

Պրն Թ.-ն պնդել է, որ վերոհիշյալ փաստերով խախտվել են ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածներով սահմանված իր իրավունքները: Այնուամենայնիվ, կոմիտեն այս գործով դիմումն անընդունելի է համարել՝ առաջնորդվելով հետևյալ դրույթներով:

¶ 8(b). ...Այն գաղափարները, որոնք պրն Թ.-ն ձգտում է տարածել հեռախոսով, հստակ ենթադրում են ռասայական և կրոնական ատելության քարոզում, որը Կանադան պարտավոր է արգելել դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Ուստի կոմիտեն կարծում է, որ այս պահանջի լույսի ներքո դիմումը չի համապատասխանում դաշնագրի դրույթներին՝ կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի սահմանված իմաստով:

[18.57]

«ՌՈՍՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (ROSS v CANADA, 36/97)

1976 թ. մինչև 1991 թ. Մալբուրն Ռոսը ուսուցիչ է աշխատել Նյու Բրանսուիկի դպրոցական շրջանում⁶⁸: Այդ ժամանակահատվածում նա մի շարք գրքեր ու գրքույկներ է հրատարակել, որոնցում տեղ են գտել նրա վիճահարույց կարծիքները կրոնի վերաբերյալ: Իր գրքերում նա մասնավորապես այն կարծիքն է արտահայտել, որ հուդայականությունն արմատապես վտանգել է քրիստոնեական հավատքը, թեև նա երբեք իր գաղափարները դասավանդման ընթացքում չի տարածել, այլ քարոզել է դասասեյակից դուրս:

Այս ժամանակաշրջանում աշակերտների ծնողները մի շարք բողոքներ են ներկայացրել Ռոսի դեմ: 1988 թ. Ռոսի դպրոցական շրջանում սովորող ազգությամբ հրեա երեխաների ծնող պրն Դավիդ Էթիսը բողոք է ներկայացրել Նյու Բրանսուիկի Մարդու իրավունքների կոմիտեին Ռոսին աշխատանքի ընդունած դպրոցական խորհրդի դեմ: Էթիսը պնդել է, որ խորհրդի հապաղումը Ռոսի դեմ միջոցներ ձեռնարկելու հարցում բարենպաստ ազդեցություն է ունեցել վերջինիս հակահրեական գաղափարների տարածման համար, հետևաբար խախտվել են Նյու Բրանսուիկի մարդու իրավունքների օրենսգրքի 5-րդ մասի դրույթները, որոնց համաձայն, ի թիվս այլ հարցերի, արգելվում է կրթության ոլորտում աշխատանքի ժամանակ անձի նկատմամբ ծագման հիման վրա խտրականության դրսևորումը: Էթիսը նշել է, որ դպրոցական խորհուրդը հրեա աշակերտների կրոնական ծագման հիման վրա խտրական վերաբերմունք է ցուցաբերել՝ կապված նրանց կրթական ծառայություններ մատուցելու հետ:

Հետաքննության հարցերով Մարդու իրավունքների խորհուրդը («խորհուրդ») ընդունել է Էթիսի բողոքը: Խորհուրդը համաձայնել է, որ դպրոցում Ռոսի գործունեությունը չի կարող հիմք ծառայել խտրության մասին բողոքի համար, սակայն տրամաբանական է այն կարծիքը, որ աշխատանքից դուրս Ռոսի արտահայտած հակահրեական գաղափարները նպաստել են դպրոցական շրջանում «թունավոր մթնոլորտի» ստեղծմանը, ինչը խոչընդոտել է այդ շրջանում հրեա երեխաներին և նրանց ծնողներին կրթական ծառայությունների տրամադրումը⁶⁹: Այսպիսով, Խորհուրդը հանգել է այն եզրակացության, որ դպրոցական խորհուրդն անուղղակիորեն պատասխանատու է 5-րդ մասի դրույթները խախտող Ռոսի խտրական գործողությունների համար: Իր հաջորդ կարգադրության 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը հրահանգել է, որ (ա) Ռոսին հարկ էր իր հաշվին արձակուրդ ուղարկել տասնութ ամիս ժամկետով, առանց վարձատրության, (բ) նա չպետք է նշանակվի ուսուցչի պաշտոնի, (գ) տասնութ ամսից նա պետք է ազատվի աշխատանքից ոչ ուսուցողական բնույթի այլ աշխատանքի բացակայության դեպքում, և (դ) Ռոսը պետք է անմիջապես ազատվի աշխատանքից, եթե շարունակի տարածել հակահրեական գաղափարներ: Արդյունքում, կարգադրության համաձայն, Ռոսին մեկ շաբաթով իր հաշվին արձակուրդ ուղարկեցին, իսկ այնուհետև նշանակեցին մանկավարժությանը չառնչվող պաշտոնի («Կարգադրություն»):

⁶⁸ Այս գործին առնչվող փաստերի ներքոհիշյալ ներկայացումը վերցված է այստեղից՝ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2001) 1 *Human Rights Law Review* 83, 90-1: Ավելի հավանական է, որ փաստերը շարադրված են, ոչ թե մեջբերված, քանի որ տվյալ գործից մեջբերված հատվածները շատ երկար են:

⁶⁹ Այս հարցի առնչությամբ երկու հրեա աշակերտներ պատմում են շարունակական վիրավորանքների, ինչպես նաև անարգանքների, գրատախտակի վրա սվաստիկա նկարելու, սեղաններին այդ նշանը փորագրելու և ընդհանուր ահաբեկման փաստերի մասին:

Ռոսը հետամուտ էր Խորհրդի կարգադրությունների դատական վերանայմանը այն պնդումով, որ այդ կարգադրությունները խախտում են Իրավունքների և ազատությունների Կանադայի խարտիայի 2-րդ մասի (ա) կետը, որով երաշխավորվում է խղճի և կրոնի ազատության իրավունքը, ինչպես նաև՝ 2-րդ մասի (բ) կետը, որով սահմանվում է իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը: Այս իրավունքները, ինչպես խարտիայում ամրագրված բոլոր այլ իրավունքները, կարող են սահմանափակվել ըստ 1-ին մասի. այն է՝ «օրենքով նախատեսվող այնպիսի սահմանափակումներով, որոնք ազատ և ժողովրդավարական պետություններում կարող են ապացույցներով հիմնավորվել»:

Մի շարք վերաքննիչ բողոքարկումների և հակառակ կողմի պատասխան բողոքարկումներից հետո Ռոսի գործը հայտնվել է Կանադայի գերագույն դատարանում: Գերագույն դատարանն ընդունել է, որ Խորհրդի կարգադրությունները սահմանափակել են Ռոսի կրոնի ազատության և իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքները: Այնուհանդերձ, դատարանն ընդունել է այդ կարգադրությունները հիմնավորող փաստերը: Առաջին՝ աշխատանքից ուսուցիչներից հնարավոր է ակնկալել բարձր չափանիշներ բավարարող վարքագիծ՝ հաշվի առնելով նրանց հանդեպ երեխաների վստահությունը և նրանց ազդեցիկ դիրքը: Աշխատանքից դուրս վարքի չափանիշները չպետք է ծայրահեղ բնույթ ունենան և ենթադրեն որևէ նշանակալի միջամտություն ուսուցչի անձնական կյանքին, սակայն ուսուցչի հանդեպ կիրառված պատժամիջոցը հարկ է հիմնավորված համարել, եթե աշխատանքից դուրս նրա վարքագիծը հանգեցրել է դասարանում թշնամական մթնոլորտի առաջացման: Բացի այդ, Խորհուրդը հիմնավորված է համարել այն ենթադրությունը, որ հեղինակի հետագա մանկավարժական գործունեությունը կարող էր հանգեցնել դպրոցական շրջանում խտրական վերաբերմունքի առաջացման՝ պայմանավորված նրա արտահայտված գործունեությամբ: Իր վերջնական որոշման մեջ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Խորհրդի կարգադրությունների 2-րդ կետի (ա), (բ) և (գ) ենթակետերը երաշխավորված են խարտիայի 1-ին մասի դրույթներով: Այնուամենայնիվ, 2-րդ կետի (դ) ենթակետը հիմնավորված չէ, քանի որ այն ենթադրում է Ռոսի սահմանադրական իրավունքների անհամաչափ սահմանափակում:

Ռոսը բողոք է ներկայացրել ՄԻԿ-ին հետևյալ հիմքերով.

¶ 5.1. Յեղիմակը պնդում է, որ խախտվել են դաշնագրի 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իր իրավունքները, քանի որ ինքը գրկվել է իր կրոնական գաղափարներն ազատ արտահայտելու իրավունքից: Այդ համատեքստում նրա փաստաբանն ընդգծում է դատարանի կողմից ընդունված այն փաստը, որ հեղիմակը երբեք դասարանում չի արտահայտել իր կարծիքները և նա՝ որպես ուսուցիչ, բարի համբավ է ունեցել: Բացի այդ, փաստաբանը պնդում է, որ գոյություն չունի որևէ ապացույց, ըստ որի՝ հեղիմակի աշխատությունները բացասական ազդեցություն են ունեցել դպրոցի աշակերտներից որևէ մեկի վրա, կամ հեղիմակը երբևէ խտրական վերաբերմունք է դրսևորել: Այս համատեքստում ընդգծվում է, որ հեղիմակի դասարանում հրեա աշակերտներ չեն եղել:

¶ 5.2. Փաստաբանը պնդում է, որ տրամաբանական կապ գոյություն չունի կրոնի վերաբերյալ խտրական կարծիք արտահայտելու (այսինքն՝ այս կրոնը ճշմարիտ է, իսկ այս մեկը՝ կեղծ) և խտրականություն արարելի միջև (այսինքն՝ որևէ մեկի հանդեպ այլ վերաբերմունք ցուցաբերել կրոնի հատկանիշով): Այդ հարցի առնչությամբ նշվել է, որ հեղիմակի կարծիքները անկեղծ են և կրոնական բնույթ են կրում՝ հակառակվելով հուդայականության փիլիսոփայությանը, քանի որ նա կարծում է, որ սիոնիստական շահերը մեծ վտանգ են ներկայացնում քրիստոնեության համար: Յեղիմակի փաստաբանը հաստատում է, որ եթե աշխատանքից դուրս խղճի և կրոնի ազատության իրավունքը ենթարկվի իշխանությունների վերահսկմանը և գործատուի կարգավորմանը, ապա այն կկորցնի իր նշանակությունը:

¶ 5.4. Այնուհետև փաստաբանը պնդում է, որ եթե Յետաքննության խորհուրդը համոզված էր, որ դպրոցի աշակերտների շրջանում հակահրեական մթնոլորտ է ստեղծվել, ապա պետք է միջոցներ ձեռնարկել նման խտրական արարքներ կատարող աշակերտներին պատժելու համար: Յեղիմակը ժխտում է, որ իր հայացքները, ինչպես նաև աթեիզմը և հենց հուդայականությունը ռասիստական բնույթ են կրում: Բացի այդ, նա նշում է, որ կրոնի տեսանկյունից հուդայականության կամ սիոնիզմի քննադատությունը չի կարող հավասարազոր համարվել հակահրեականությանը: Յեղիմակը կարծում է, որ իր նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորվել, քանի որ համոզված է, որ քրիստոնեությունը հրապարակայնորեն քննադատող ուսուցչի հանդեպ նման պատիժ չէին սահմանի:

Ի սկզբանե մասնակից պետությունը փորձել է ապացուցել Ռոսի դիմումի անընդունելի լինելու փաստը.

¶ 6.2. Մասնակից պետությունը հայտնում է, որ այդ դիմումը հարկ է անընդունելի համարել դաշնագրի դրույթներից չհամապատասխանելու պատճառով, քանի որ հեղիմակի հրապարակումները համընկնում են դաշնագրի 20-րդ

հողվածի 2-րդ կետի դրույթների հետ, այն է՝ «...ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որը ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում»։ Այս կապակցությամբ, մասնակից պետությունն ընդգծում է, որ Կանադայի գերագույն դատարանը եզրակացրել է, որ հրապարակումները քննադատում են հրեա ժողովրդի հավատն ու կրոնական համոզմունքները և «խկական քրիստոնյաներին» կոչ են անում ոչ միայն կասկածի տակ ամենել այդ կրոնական համոզմունքների իսկությունը, այլև չհարգել հուդայական հավատի հիմնադրույթները։ Ավելին՝ մասնակից պետությունը պնդել է, որ հեղինակը որպես թշնամի է որակել հուդայականությունը և կոչ է արել «քրիստոնյաներին» միանալ պայքարին։

¶ 6.3. Մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրի 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածները հարկ է մեկնաբանել հետևողականորեն, ուստի չի կարելի համարել, որ 20-րդ հոդվածի դրույթներին հետևելով՝ նա խախտել է 18-րդ և 19-րդ հոդվածները։ Մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրի դրույթներով սահմանված կրոնի ազատության և սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը մեկնաբանելիս հարկ է նշել, որ այն չի ենթադրում ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզում և խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում։ Այդ կապակցությամբ մասնակից պետությունը վկայակոչում է դաշնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետը և պնդում է, որ 18-րդ և 19-րդ հոդվածները մեկնաբանելիս հարկ է նշել, որ դրանց դրույթներով չի պաշտպանվում քրիստոնեության քողի տակ հակահրեական գաղափարների տարածումը, ինչը խախտում է հրեաների՝ իրենց կրոնը դավանելու իրավունքը, վախ է ներշնչում հրեաներին ու այլ կրոնական փոքրամասնություններին և խեղաթյուրում է քրիստոնեական հավատը ... :

Չնայած 6.2 և 6.3 կետերի դրույթների պետության վիճարկմանը՝ ՄԻԿ-ն ընդունելի է համարել այս գործով դիմումը։

¶ 10.5. ... Մասնակից պետությունը հիշատակում է դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետը՝ պնդելով, որ հեղինակի հրապարակումները հարկ է համարել «խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում ներկայացնող ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչություն»։ Մասնակից պետությունը նշում է, որ վերոհիշյալից ելնելով՝ դիմումը հարկ է անընդունելի համարել կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն, քանի որ այն հակասում է դաշնագրի դրույթներին։

¶ 10.6. Նշելով, որ իսկապես նման մոտեցում կիրառվել է «*Ջ. Ռ. Թ-ն և Վ. Գ.-ն ընդդեմ Կանադայի*» գործում՝ կոմիտեն ընդունելի է համարում հավանաբար 20-րդ հոդվածով սահմանված իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի սահմանափակումները 19-րդ հոդվածի 3-րդ կետի շրջանակներում, որում ամրագրված են ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումների օրինականությունը որոշելու համար անհրաժեշտ պահանջները։ Անշուշտ, այդ դրույթները կիրառելու գործում մեծ դեր է խաղում նաև այն փաստը, որ սահմանափակումը բխում է 20-րդ հոդվածից։ Տվյալ դեպքում սահմանափակումներ կիրառելու թույլատրելիության հարցը հարկ է քննարկել ըստ արժանվույն։

Անդրադառնալով գործի ըստ արժանվույն քննարկմանը՝ մասնակից պետությունը պնդել է, որ Ռոսի իրավունքների սահմանափակումները հիմնավորված են 19-րդ հոդվածի 3-րդ կետով։

¶ 6.9. ...Սահմանափակումների կիրառումը (i) նախատեսվել է օրենքով, (ii) սահմանվել է ճանաչված նպատակի համար և (iii) անհրաժեշտ է դրված նպատակին հասնելու համար։ Մասնակից պետությունը պնդում է, որ այս հարցի կապակցությամբ կոմիտեի կողմից կատարվելիք վերլուծությունը շատ նման կլինի Կանադայի խարտիայի 1-ին բաժնի դրույթներով գերագույն դատարանի կողմից արված վերլուծությանը, և կոմիտեն պետք է պատշաճ կերպով հաշվի առնի դատարանի կայացրած որոշումը։

¶ 6.10. Անդրադառնալով բոլոր սահմանափակումներին՝ օրենքով նախատեսված լինելու պահանջին՝ մասնակից պետությունը նշում է, որ հեղինակի աշխատությունները և հրապարակային հայտարարությունները որակվել են որպես խտրական և ստեղծում են թունավոր մթնոլորտ՝ խախտելով Նյու Բրանսուիկի «Մարդու իրավունքների մասին» օրենքի 5-րդ ենթամասի 1-ին կետը։ Ի լրումն՝ պետությունը հայտարարել է, որ Յետաքննության խորհրդի կարգադրությունը 5-րդ ենթամասի 1-ին կետի դրույթները խախտելու դիմաց կիրառված իրավական պաշտպանության միջոց է և համապատասխանում է օրենքին։

¶ 6.11. Անդրադառնալով 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով ամրագրված իրավունքները սահմանափակելու պահանջին՝ մասնակից պետությունը նշել է, որ կարգադրության նպատակն է այլոց հիմնական իրավունքների և հասարակական բարոյականության պաշտպանությունը։ Ինչ վերաբերում է առաջին գաղափարին, ապա մասնակից պետությունը նշում է, որ հեղինակի համոզել են կարգադրությամբ սահմանված դրույթները, կրոնի ազատության և իր կարծիքն ազատ արտահայտելու հրեական համայնքի իրավունքը, հրեական համայնքի հավասարության իրավունքը, ինչպես նաև հրեա ծնողների՝ իրենց երեխաներին կրթության տալու հիմնարար իրավունքների ու ազատությունների և հրեա երեխաների՝ առանց կանխակալ վերաբերմունքի, նախապաշարունակների ու

անհանդուրժողականության հանրակրթական համակարգում կրթություն ստանալու իրավունքը պաշտպանելու նպատակով: Ինչ վերաբերում է հասարակության բարոյականության պաշտպանությանը, ապա մասնակից պետությունը պնդում է, որ Կանադայի հասարակությունը կազմված է բազմազան մշակութային և լեզվաբանական, հաստատուն բարոյական կառույց է, որտեղ բոլոր կանադացիներն օժտված են հավասար իրավունքներով՝ առանց ռասայի, կրոնի կամ ազգության հատկանիշով խտրականության:

¶ 6.12. ... Բացի այդ, մասնակից պետությունը պնդել է, որ հեղինակին հարկ էր գրել դասավանդելու իրավունքից նրա գրավոր և իրապարակային հայտարարությունների հետևանքով առաջացած թունավոր մթնոլորտը շտկելու համար: Այս վերջին հարցի կապակցությամբ մասնակից պետությունը վկայակոչում է գերագույն դատարանի այն եզրակացությունը, որ ուսուցիչները վստահություն ու հավատ են ներշնչում աշակերտներին և մեծ ազդեցություն են գործում նրանց վրա: Հետևաբար, ինչպես նշվել է, ուսուցիչները պետք է բարձր պահեն իրենց վարքը դասավանդելու, ինչպես նաև՝ դասարանից դուրս գործունեության ժամանակ: Մասնակից պետության համաձայն՝ հեղինակը՝ որպես հանրակրթական դպրոցի ուսուցիչ, կարող էր ազդեցություն գործել երիտասարդների վրա, որոնք դեռևս զինված չէին անհրաժեշտ գիտելիքներով և ի վիճակի չէին ճիշտ դատողություններ անելու՝ տվյալ համատեքստում իրենց տեսակետները և կարծիքներն արտահայտելու համար: Ավելին՝ Հետաքննության խորհուրդը լսել է վկաներին, որոնց ցուցմունքները հաստատել են, որ հեղինակի հայտարարությունները հանգեցրել են իրենա աշակերտների ահաբեկմանը, խաթարել նրանց ինքնավստահությունը և կրթական համակարգին մասնակցելու ցանկությունը: Նշվում է, որ այս իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ էր արձակել վերոնշյալ կարգադրությունը:

ՄԻԿ-ն ընդունել է, որ Ռոսի իրավունքները չեն խախտվել:

¶ 11.1. Անդրադառնալով հեղինակի՝ դաշնագրի 19-րդ հոդվածի դրույթների վրա հիմնված բողոքին՝ կոմիտեն նկատում է, որ դաշնագրի այդ հոդվածի համաձայն՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է ընդհանուր առմամբ համապատասխանի 3-րդ կետի մի քանի պայմաններին: Ուստի կոմիտեի առջև ծառացած ամենակարևոր հարցը հետևյալն է. հեղինակի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը սահմանափակվե՞լ է 1991 թ. օգոստոսի 28-ին Հետաքննության խորհրդի կողմից արձակած և Կանադայի գերագույն դատարանի հաստատած կարգադրությամբ: Այս կարգադրության արդյունքում հեղինակին մեկ շաբաթով արձակուրդ են ուղարկել իր հաշվին, իսկ հետագայում ազատել մանկավարժական աշխատանքից և նշանակել այլ պաշտոնի: Թեև կոմիտեն հաշվի է առնում մասնակից պետության այն փաստարկը, որ չի սահմանափակվել հեղինակի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը (տես վերոնշյալ 6.8 կետը), քանի որ նա կարող էր ազատ արտահայտել իր մտքերը ոչ մանկավարժական բնագավառում աշխատելու դեպքում, սակայն կոմիտեն չի կարող ընդունել, որ ուսուցչի պաշտոնից հեղինակին ազատելու փաստն ըստ էության չի հանգեցրել նրա ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակմանը: Ուսուցչի պաշտոնից ազատվելու փաստն ավելի մեծ վնաս է հասցրել հեղինակին, քան աննշան նյութական վնասը, եթե նույնիսկ այդպիսին առկա էր: Հեղինակը տուժել է իր կարծիքներն արտահայտելու պատճառով, իսկ կոմիտեի կարծիքով՝ դաշնագրի դրույթներով նրա իրավունքի այդպիսի սահմանափակումը պետք է հիմնավորվեր դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով:

¶ 11.2. Կոմիտեի առջև ծառացած հաջորդ հարցը հետևյալն է. հեղինակի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի սահմանափակումը համահունչ է 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին, ասել է թե՛ դրա կիրառումը սահմանված է եղել օրենքով, որի համար այն պետք է հետապնդի 3-րդ կետի (ա) և (բ) ենթակետերում ամրագրված որևէ նպատակ (հարգանք այլոց իրավունքների և հեղինակության նկատմամբ, ազգային անվտանգության և հասարակական կարգի կամ բնակչության առողջության կամ հանրային բարոյականության պահպանում), ինչպես նաև այն հարցը, թե արդյոք այն կիրառվո՞ւմ է օրենքին չհակասող նպատակին հասնելու համար:

¶ 11.3. Ինչ վերաբերում է այն պահանջին, որ սահմանափակումը պետք է ամրագրված լինի օրենքով, ապա կոմիտեն նշում է, որ հեղինակի իրավունքների սահմանափակումը, որ դրսևորվել է ուսուցչի աշխատանքից ազատելու իրողությամբ, հիմնավորված է մի շարք օրենքներով. Հետաքննության խորհուրդը հանգել է այն եզրակացության, որ աշխատանքից դուրս պայմաններում հեղինակի արտահայտած գաղափարները քննադատել են իրենա ժողովրդի հավատը և անբարենպաստ ազդեցություն են թողել դպրոցում տիրող մթնոլորտի վրա: Հետաքննության խորհուրդը եզրակացրել է, որ դպրոցական խորհուրդը անուղակիորեն պատասխանատու է իր աշխատողի խտրական գործողությունների համար և ուղղակիորեն խտրական վերաբերմունք է ցուցաբերել դպրոցական շրջանի իրենա աշակերտների նկատմամբ՝ խախտելով Նյու Բրանսուիկի «Մարդու իրավունքների մասին» օրենքի 5-րդ մասի դրույթները, ինչը պայմանավորված է ժամանակին և պատշաճ ձևով հեղինակին չպատժելու իրողությամբ: Նույն օրենքի 20-րդ մասի 6.2 կետի համաձայն՝ Հետաքննության խորհուրդը կարգադրել է դպրոցական խորհրդին վերացնել խտրականությունը՝ ձեռնարկելով վերոնշյալ 4.3 կետով սահմանված միջոցներ: Եվ իրականում, ինչպես արդեն նշվել է, խտրականությունը վերացվել է հեղինակին մեկ շաբաթով առանց վարձատրության իր հաշվին արձակուրդ ուղարկելով և նրան ուսուցչի պաշտոնից ազատելով:

¶ 11.4. ...Կոմիտեն պարտավոր է նաև հաշվի առնել այն, որ գերագույն դատարանը գործը քննել է բոլոր տեսանկյուններից և հանգել այն եզրակացության, որ ներպետական իրավունքում գոյություն ունեն բավարար հիմքեր արձակած կարգադրության տարրերը հիմնավորելու համար: Կոմիտեն նաև նշում է, որ հեղինակը մասնակցել և

վկայություն է տվել այդ գործով դատարանի բոլոր նիստերին, և նրան ընձեռվել է կայացրած որոշումը բողոքարկելու իրավունք, որը նա իրացրել է: Այս պարագայում կոմիտեն իրավասու չէ վերաբերելով տվյալ գործով գերագույն դատարանի եզրակացությունները, ուստի կարծում է, որ հեղինակի իրավունքի սահմանափակումը կիրառվել է օրենքի շրջանակներում:

¶ 11.5. Անդրադառնալով այն հարցին, թե հեղինակի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի սահմանափակումը համապատասխանում է դաշնագրի դրույթներին, կոմիտեն նախ և առաջ նշում է, որ այլ անձանց իրավունքը կամ հեղինակությունը, որոնց պաշտպանության նկատառումով կարող են սահմանափակվել 19-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, կարող է վերաբերել այլ անձանց կամ մի ամբողջ համայնքի: Օրինակ՝ «*Ֆորիսոնը ընդդեմ Ֆրանսիայի*» (*Faurisson v France*) [18.58] գործում սահմանափակումները կարող են թույլատրելի համարվել իրենց բնույթով հակահրեական տրամադրություններ սերմանող և դրանք խորացնող հայտարարությունների դեպքում հրեական համայնքի՝ կրոնական ատելությունից զերծ մնալու իրավունքը պաշտպանելու նպատակով: Նման սահմանափակումները հաստատված են նաև դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով թելադրված սկզբունքներով: Կոմիտեն նշում է, որ Հետաքննության խորհուրդը և գերագույն դատարանը հանգել են այն եզրակացության, որ հեղինակի հայտարարությունները հուղայականության ու հրեաների կրոնական համոզմունքների վերաբերյալ խտրական բնույթ են կրել և կոչ են արել իսկական քրիստոնյաներին ոչ միայն կասկածի տակ առնել հրեաների համոզմունքների և կրոնական ուսմունքի հիմնավորվածությունը, այլև արհամարհել հրեական կրոնի հետևորդներին և հրեա ազգին պատկանող անձանց՝ ազատությունը, ժողովրդավարությունը և քրիստոնեական համոզմունքներն ու արժեքները նսեմացնելու նկատառումով: Կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի իրավունքը սահմանափակվել է հրեական կրոն դավանող անձանց «իրավունքները կամ լավ հեղինակությունը», այդ թվում՝ հանրակրթական դպրոցում առանց կանխակալ կարծիքի, նախապաշարմունքների և անհանդուրժողականության կրթություն ստանալու իրավունքը պաշտպանելու նպատակով:

¶ 11.6. Կոմիտեի առջև դրված վերջնական հարցը հետևյալն է. արդյոք հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ էր հուղայականություն դավանող անձանց իրավունքը կամ հեղինակությունը պաշտպանելու համար: Տվյալ պարագայում կոմիտեն հիշեցնում է, որ ազատ արտահայտվելու իրավունքի կիրառումը հատուկ պարտականություններ և պարտավորություններ է ենթադրում: Այս հատուկ պարտականություններն ու պարտավորությունները կարևոր նշանակություն են ստանում հատկապես կրթական համակարգում, մասնավորապես՝ տարրական դպրոցի աշակերտներին դասավանդելիս: Կոմիտեի կարծիքով՝ վերոհիշյալ սահմանափակումները կարելի է հիմնավորել աշակերտների հանդեպ դպրոցի ուսուցիչների ունեցած ազդեցությամբ: Այդ սահմանափակումներն ապացուցում են, որ կրթական համակարգն օրինական չի համարում խտրական հայտարարությունները: Տվյալ դեպքում կոմիտեն նշում է, որ գերագույն դատարանը հիմնավորված է համարում այն փաստը, որ պատճառահետևանքային կապ գոյություն ունի հեղինակի արտահայտությունների և հրեա երեխաների համար դպրոցական շրջանում ստեղծված «թունավոր մթնոլորտի» միջև: Այս համատեքստում ուսուցչի պաշտոնից հեղինակին ազատելու փաստը կարող է դիտվել որպես հրեա երեխաների՝ առանց կանխակալ կարծիքի, նախապաշարմունքի և անհանդուրժողականության կրթություն ստանալու իրավունքը պաշտպանելու միջոց: Բացի այդ, կոմիտեն նշում է, որ առանց վարձատրության հարկադիր արձակուրդ վերցնելուց հետո նվազագույն ժամանակահատվածում հեղինակը նշանակվել է մանկավարժական գործունեության հետ չառնչվող պաշտոնի, և նրա իրավունքների սահմանափակումն անհամաչափ չէ իրավունքի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներին: Հետևաբար, Մարդու իրավունքների կոմիտեն եզրակացնում է, որ տվյալ գործով առկա փաստերը չեն վկայում 19-րդ հոդվածի դրույթների խախտման մասին:

Հաշվի առնելով, որ ՄԻԿ-ի որոշումներում բերված պատճառաբանությունը սովորաբար զուսպ է, 19-րդ հոդվածի 3-րդ կետի փորձաքննության խոր ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ներթափանցելու կոմիտեի խորհրդատվական ընթացակարգեր⁷⁰:

Հոլոքոստի ժխտումը

[18.58] «*Ֆորիսոնը ընդդեմ Ֆրանսիայի*» (FAURISSON v FRANCE, 550/93)

Այս գործում խոսքը հոլոքոստը ժխտելու մասին է⁷¹: Ֆորիսոնը մեղավոր է ճանաչվել Ֆրանսիայի օրենսդրությամբ, որը հետևյալ կերպ է մեկնաբանվել մասնակից պետության կողմից.

⁷⁰ Տե՛ս վերոնշյալ ծանուցումը՝ Joseph 67, 93: Տե՛ս նաև՝ [1.114]:

⁷¹ Համապատասխան եվրոպական օրենսդրությանը ծանոթանալու համար տե՛ս «*Գարուդին ընդդեմ Ֆրանսիայի*» (*Garaudy v France*, App. N 65831/01) գործը, 2003 թ. հուլիսի 7-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից գործն անընդունելի ճանաչելու մասին կայացրած վճիռը: Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ պրն Գարուդիի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմում հրեաների հանդեպ մարդկության դեմ կատարված հանցագործության ժխտմամբ Եվրոպական կոմիսիայի 10-րդ հոդվածը խախտելու վերաբերյալ բողոքը հիմնավորված չէ, ուստի՝ անընդունելի: Տե՛ս նաև՝ «*Լեիդյուն և Իզորնին ընդդեմ Ֆրանսիայի*» (*Lehideux and Isorni v France*, 2000, 30 EHRR 665) գործը:

¶ 7.10. Այն իրավախախտումը, որի համար դատապարտվել է հեղինակը, սահմանվել է հստակ ձևակերպումներով և հիմնված է անաչառ չափանիշների վրա, ինչը հնարավորություն է ընձեռում խուսափելու այն պատժելի արարքի վերաբերյալ կարծիք արտահայտելու հետ կապված իրավագանգությունների կարգը դասելուց: Արարքը հանցավոր է համարվում, եթե այն ենթադրում է. (ա) միջազգային մակարդակով սահմանված և ընդունված մարդկության դեմ հանցագործությունների ժխտում [1945 թ. օգոստոսի 8-ի Լոնդոնի խարտիայով] և այն, որ (բ) մարդկության դեմ ուղղված այդ հանցագործությունները դատապարտվել են Նյուրնբերգյան միջազգային ռազմական դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ 1990 թ. հուլիսի 13-ին ընդունված օրենքով չի պատժվում սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, սակայն պատժվում է համընդհանուր ճանաչում ունեցող պատմական իրողության ժխտումը: Մասնակից պետության կարծիքով՝ այդ դրույթի ընդունումն անհրաժեշտ էր ոչ միայն այլոց իրավունքները և հեղինակությունը պաշտպանելու, այլև՝ պետական կարգը և հասարակական արժեքները պահպանելու համար:

Հեղինակը ներկայացրել է հետևյալ բողոքը.

¶ 2.1. Մինչև 1973 թ. հեղինակը գրականություն էր դասավանդում Փարիզի Սորբոնի համալսարանում, իսկ Լիոնի համալսարանում՝ մինչև 1991 թ.՝ իր ամբիոնից հեռացվելը: Քաջատեղյակ լինելով հոլոքոստի պատմական նշանակության մասին՝ նա ապացույցներ էր փնտրել հրեաներին սպանելու միջոցների, հատկապես՝ գազով խեղդամահ անելու մասին: Նա չի ժխտում ախտահանման նպատակներով գազի գործածումը՝ միաժամանակ կասկածի տակ առնելով մարդկանց ոչնչացնելու համար նախատեսված գազախցերի գոյությունը Աուշվիցում և նացիստական այլ համակենտրոնացման ճամբարներում:

¶ 2.2. Հեղինակը նշում է, որ իր կարծիքները մերժվել են բազմաթիվ գիտական հանդեսներում և ծաղրի են արժանացել պարբերական մամուլում, հատկապես՝ Ֆրանսիայում: Այնուհանդերձ, նա շարունակել է հարցականի տակ առնել ոչնչացման համար նախատեսված գազախցերի գոյությունը: Նա հայտարարել է, որ իր կարծիքների շուրջ առաջացած հասարակական քննարկումների և դրանք ուղեկցող բանավեճերի հետևանքով, 1978 թվականից սկսած, ինքը մահվան սպառնալիքների թիրախ է դարձել, և ութ անգամ ֆիզիկական բռնության ենթարկվել: Նա պնդում է, որ մի անգամ՝ 1989 թ., ինքը ծանր վնասվածքներ է ստացել, ինչպես նաև ծնոտի կոտրվածք, ինչի պատճառով իրեն հիվանդանոց են տեղափոխել: Նա նշում է, որ թեև այդ հարձակումների մասին իրավասու դատական մարմինները տեղեկացվել են, գործի լուրջ քննություն չի կատարվել, և հարձակումների համար պատասխանատու անձանցից ոչ ոք չի ձերբակալվել և դատական կարգով չի հետապնդվել: 1992 թ. նոյեմբերի 23-ին Ռիոնի վճռաբեկ դատարանը բավարարել է Քյուսեի գերագույն դատարանի դատախազի պահանջը և որոշում է կայացրել X-ի դեմ իշխանությունների կողմից հարուցված գործը կարճելու մասին:

¶ 2.3. 1990 թ. հուլիսի 13-ին Ֆրանսիայի օրենսդիր մարմինն ընդունել է այսպես կոչված «Գետյի օրենքը»՝ 1881 թ. ընդունված «Մամուլի ազատության մասին» օրենքը լրամշակելու նպատակով՝ այն համալրելով 24-րդ հոդվածով, որի դրույթներով 1945 թ. օգոստոսի 8-ին ընդունված Լոնդոնի խարտիայով հռչակված մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կարգի գոյությունը հերքելը հանցագործություն է համարվում: Իմիջիայլոց, 1945-1946 թթ. այդ խարտիայի հիման վրա Նյուրնբերգյան միջազգային ռազմական դատարանում դատվել և դատապարտվել են նացիստական պարագլուխները: Հեղինակը պնդում է, որ «Գետյի օրենքը», ըստ էության, դոգմայի է վերածում Նյուրնբերգյան դատավարությունը և դրանով կայացրած վճիռները՝ քրեական պատժամիջոց սահմանելով նրանց համար, ովքեր կհամարձակվեն վիճարկել դրանց եզրակացությունները և դրույթները: Պրն Ֆորիսոնը հայտնում է, որ ինքը բավական լուրջ հիմքեր ունի ենթադրելու, որ Նյուրնբերգյան դատավարության տվյալները կարող են իսկապես վիճելի համարվել, և հարկ է հարցականի տակ առնել նացիզմի պարագլուխների մասին, ինչպես նաև Աուշվիցի զոհերի թվի մասին առկա վկայությունները:

¶ 2.5. «Գետյի օրենքն» ուժի մեջ մտնելուց կարճ ժամանակ անց պրն Ֆորիսոնը հարցազրույց է տվել «Լե շոք դյու մուա» (Ֆրանս. Le Choc du Mois) ամսագրին, որը տպագրվել է 1990 թ. սեպտեմբերի թիվ 32 համարում: Նոր օրենքով հետազոտություն անցկացնելու և ազատ արտահայտվելու իրավունքը վտանգվելու մասին իր մտահոգությունն արտահայտելուց զատ, հեղինակը կրկին նշել է իր անձնական կարծիքը, որ նացիստական համակենտրոնացման ճամբարներում գոյություն չեն ունեցել մահաբեր գազախցեր հրեաներին ոչնչացնելու համար: Այդ հարցազրույցը տպագրվելուց հետո ֆրանսիական Դիմադրության մարտիկների և գերմանական համակենտրոնացման ճամբարներ արտաքսվածների տասնմեկ միության անդամները մասնավոր քրեական հայց են ներկայացրել պրն Ֆորիսոնի և «Լե շոք դյու մուա» ամսագրի խմբագիր Պատրիս Բուազոյի դեմ: 1991 թ. ապրիլի 18-ին կայացրած վճռով Փարիզի գերագույն դատարանի 17-րդ ուղղիչ պալատը մեղավոր է ճանաչել պարոնայք Ֆորիսոնին և Բուազոյին «մարդկության դեմ հանցագործությունների փաստը վիճարկելու» համար և սահմանել է տուգանք՝ 326,832 ֆրանսիական ֆրանկի չափով:

¶ 2.6. Հեղինակին մեղավոր ճանաչելու մասին որոշումը, ի թիվս այլ փաստարկների, հիմնավորված է Ֆորիսոնի հետևյալ հայտարարություններով.

«... Ոչ ոք չի կարող հարկադրել ինձ ընդունել, որ երկուսին գումարած երկու հավասար է հինգի, որ երկրագունդը տափակ է, կամ Նյուրնբերգյան դատարանն անսխալ է: Ես լուրջ հիմքեր ունեմ չհավատալու հրեաների ոչնչացման այդ քաղաքականությանը կամ մտացածին գազախցերին...»:

«Կցանկանայի, որ Ֆրանսիայի քաղաքացիների 100 տոկոսը հասկանար, որ գազախցերի առասպելը խարդախ կեղծիք է (ֆրանս.՝ «est une gredinerie»), որը 1945-46 թթ. Նյուրնբերգում հաստատել են հաղթանակած պետությունները և 1990 թ. հուլիսի 14-ին պաշտոնապես ճանաչվել է Ֆրանսիայի կառավարության կողմից՝ «պատմաբան-դատավորների» հավանությամբ:

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ «Գետոյի օրենքի» դրույթներով խախտվում է իր ազատ արտահայտվելու իրավունքը, ինչպես նաև առհասարակ գիտական հետազոտություններ կատարելու իրավունքը, և կարծում է, որ օրենքն անձամբ իր դեմ է ուղղված (ֆրանս.՝ «lex Faurissonia»): Նա բողոքում է, որ մեղադրանքի կետը պարունակում է անընդունելի գրաբնություն, որը խոչընդոտում և պատիժ է սահմանում գիտական հետազոտությամբ զբաղվելու համար:

Մասնակից պետությունը ներկայացրել է հետևյալ հակափաստարկները.

¶ 4.1. Թիվ 91 կանոնի վերաբերյալ իր հայտարարության մեջ մասնակից պետությունը ներկայացնում է տվյալ գործով փաստերի ժամանակագրական վերանայումը և 1990 թ. հուլիսի 13-ին ընդունված օրենքով սահմանված դրույթները: Այս վերջին համատեքստում նա նշում է, որ տվյալ օրենքը լրացնում է քրեական պատժամիջոցների պակասը՝ քրեականացնելով այն անձանց գործողությունները, ովքեր հարցականի տակ են առնում հրեաների ողջակիզումը և գազախցերի գոյությունը: Այս վերջին համատեքստում պետությունը նաև հավելում է, որ այսպես կոչված «վերանայողական» դրույթները նախկինում չէին ենթադրում որևէ քրեական որակում, քանի որ դրանց իրավասությունը չէր տարածվում, օրինակ, ռասայական խտրականության արգելքի, ռասայական հողի վրա առելության քարոզչության, պատերազմների կամ մարդկության դեմ ուղղված ռազմական հանցագործությունների փառաբանության վրա:

¶ 4.2. Այնուհետև մասնակից պետությունը նշում է, որ որևէ հրապարակած կարծիք որպես իրավախախտում որակելուց խուսափելու համար օրենսդիր մարմինը որոշել է հստակ սահմանել իրավախախտման նյութական տարրը՝ քրեականացնելով միայն 1881 թ. «Մամուլի ազատության մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթներով սահմանված որևէ միջոցով մարդկության դեմ ուղղված մեկ կամ մի քանի հանցագործությունների ժխտումը (ֆրանս.՝ «contestation»)՝ Միջազգային ռազմական դատարանի կանոնադրության 6-րդ հոդվածով սահմանված իմաստով: Դատավորի դերը սահմանափակվում է այն փաստերի հաստատմամբ, որոնք կարող են վերաբերել նոր օրենքին, և դատավորը չի կարող միջամտել գիտական կամ պատմական քննարկմանը, այլ պետք է պարզի, թե արդյոք վիճելի հրապարակումները ժխտում են միջազգային դատական կառույցների կողմից ճանաչված մարդկության դեմ կատարված հանցագործությունները: Մասնակից պետությունը նշում է, որ 1990 թ. հուլիսի 13-ի օրենքը 1994 թ. մարտին արժանացել է Ռասայական խտրականության վերացման կոմիտեի հավանությանը:

¶ 7.2. ...Ըստ կառավարության՝ այս վերանայողական դրույթները «ժամանակակից հակահրեականության դրսևորման խորամանկ մի ձև...» են, որը մինչև 1990 թ. հուլիսի 13-ը չէր կարող արգելվել Ֆրանսիայի քրեական օրենսդրության որևէ կետով:

¶ 7.3. Արդարադատության նախկին նախարար պրն Արպայանժը ճիշտ ժամանակին է ամփոփել կառավարության դիրքը և հայտարարել, որ անհնար էր ամբողջությամբ չնվիրվել ռասիզմի դեմ պայքարին, ինչպես նաև ավելացրել է, որ ռասիզմը կարծիք չէ, այլ՝ ազդեցիկ, որը հրապարակայնորեն արտահայտվելու հնարավորություն ունենալու դեպքում անմիջապես խիստ կվտանգեր հասարակական կարգը:

¶ 7.5. Մարտահրավեր նետելով երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հրեաների ոչնչացման փաստերի ճշմարտացիությանը՝ հեղինակն ընթերցողներին հրահրում է հակահրեական վարքի ցուցաբերման, ինչը հակասում է դաշնագրին և Ֆրանսիայի վավերացրած այլ միջազգային կոնվենցիաներին:

¶ 7.13. Մասնակից պետությունը եկել է այն եզրակացության, որ հեղինակին մեղավոր ճանաչելը լիովին հիմնավորված է ոչ միայն Նյուրնբերգյան միջազգային ռազմական դատարանի վճռի և այդպիսով նացիզմի հետևանքները վերապրածների և զոհերի հետնորդների նկատմամբ տածած հարգանքով, այլև հասարակության համախմբվածության և հասարակական կարգի ապահովման անհրաժեշտությամբ:

Ի պատասխան՝ պրն Ֆորիսոնն ասել է հետևյալը.

¶ 8.1. Իր մեկնաբանություններում հեղինակը հավաստիացնում է, որ մասնակից պետության դիտարկումները հիմնավորվում են թյուրիմացությամբ. նա ընդունում է, որ մտքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքն

իսկապես ունի որոշակի սահմաններ, սակայն ինքն ավելի շատ վկայակոչում է կասկածներ ունենալու իրավունքը և հետազոտություն անցկացնելու իրավունքը, որոնք, իր կարծիքով, որևէ սահմանափակում չեն ենթադրում: Վերոնշյալ իրավունքներից վերջին երկուսը սահմանափակվում են 1990 թ. հուլիսի 13-ի օրենքով, որը ձգտում է հաստատել մի խումբ անձանց՝ Միջազգային ռազմական դատարանների դատավորների կողմից նախապես ընդունված միակ և անառարկելի ճշմարտությունը: Պրն Ֆորիսոնը նշում է, որ Իսպանիայի և Միացյալ Թագավորության կառավարությունները վերջերս ընդունել են, որ Ֆրանսիայի օրենսդրության՝ որոշումը կամ օրենքը վերանայելու իրավունքը բացառող մոդելը օրենքի և պատմության տեսանկյունից հետընթաց քայլ է:

¶ 8.2. Հեղինակը կրկնում է, որ հակահրեականության դեմ պայքարելու ձգտումը չի արդարացնում հրեական կազմակերպությունների համար ակնհայտ հետաքրքրություն ներկայացնող հետազոտություն անցկացնելու իրավունքի ցանկացած սահմանափակում, և «չափազանց մեծ» է համարում «գրաքննության գերակայությունը», որից շահում են Ֆրանսիայի հրեական համայնքի ներկայացուցիչները: Նա նշում է, որ իրեն ծանոթ որևէ այլ թեմայի հետազոտություն իրականում երբեք չի արգելվել մեկ այլ քաղաքական կամ կրոնական համայնքի կողմից: Ըստ հեղինակի՝ ոչ մի օրենքով չի կարելի արգելել ցանկացած թեմայի ուսումնասիրությունը՝ առաջնորդվելով միայն այն պատրվակով, որ այն արդեն ամբողջովին հետազոտված է:

¶ 8.3. Պրն Ֆորիսոնը հավաստիացնում է, որ մասնակից պետությունը չի կարողացել ապացուցել, որ իր աշխատությունները և հետազոտության դրույթները «ժամանակակից հակահրեականության դրսևորման խորամանկ ձև...» են (տե՛ս վերոնշյալ 7.2 կետը): Նա մեղադրում է մասնակից պետության իշխանություններին իր աշխատությունները որպես «կեղծ գիտական» (ֆրանս.՝ *prétendument scientifique*) որակելու համար և հավելում է, որ ինքը չի ժխտում որևէ իրողություն, այլ պարզապես վիճարկում է այն, ինչը պետությունը «բոլորի կողմից ընդունված ճշմարտություն» (ֆրանս.՝ *une réalité universellement reconnue*) է համարում: Բացի այդ, հեղինակը նկատում է, որ վերջին քսան տարվա ընթացքում որոշումները վերանայող համձնաժողովը կասկածելի կամ սխալ է համարել «բոլորի կողմից ընդունված իրողության» այնքան շատ տարրեր, որ վերոնշյալ վիճարկելի օրենքն էլ ավելի անհիմն է թվում:

¶ 8.7. Պրն Ֆորիսոնը պնդում է, որ սխալ կլիներ իր գործը քննել միայն օրենքի տեսանկյունից: Նա առաջարկում է իր դեպքը քննել ավելի լայն համատեքստում: Որպես օրինակ՝ նա հիշատակում է Գալիլեյին, որը ճիշտ հայտնագործություններ է արել, և նշում, որ նրան դատապարտող որևէ օրենք իր ողջ բնույթով սխալ կամ անհեթեթ կլիներ:

Տվյալ գործի փաստերն ըստ արժանվույն քննելուց հետո ՄԻԿ-ը որոշում է կայացրել Ֆորիսոնի դեմ.

¶ 9.3. Թեև կոմիտեն չի վիճարկում այն փաստը, որ «Գեսոյի օրենքի» դրույթների կիրառումը, որոնց համաձայն՝ Նյուրնբերգյան միջազգային ռազմական դատարանի եզրակացությունները և վճիռը վիճարկելը կարող է քրեական հանցանք համարվել, այս դեպքից տարբերվող այլ հանգամանքներում կարող է հանգեցնել դաշնագրին հակասող որոշումների և միջոցների, սակայն կոմիտեն իրավասու չէ վերացականորեն քննադատել մասնակից պետություններում ուժի մեջ մտած օրենքները: Կոմիտեի՝ կամընտիր արձանագրությամբ սահմանված պարտականությունն է պարզել, թե իրեն ներկայացված գործերը համապատասխանո՞ւմ են ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելու պայմաններին:

¶ 9.4. Ազատ արտահայտվելու իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է ընդհանուր առմամբ համապատասխանի հետևյալ պայմաններին. այն պետք է սահմանված լինի օրենքով, հետապնդի 19-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) և (բ) ենթակետերում սահմանված որևէ նպատակ, և այդ սահմանափակման կիրառումը պետք է անհրաժեշտ լինի օրենքով սահմանված նպատակին հասնելու համար:

¶ 9.5. Հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումն իսկապես հիմնավորված է օրենքով, այսինքն՝ 1990 թ. հուլիսի 13-ին ընդունված օրենքով: Կոմիտեի հաստատումն իրավասության համաձայն՝ իրավունքի սահմանափակումներ կիրառելու մասին օրենքն ինքնին պետք է համահունչ լինի դաշնագրի դրույթներին: Այս գործով Փարիզի գերագույն դատարանի 17-րդ ուղղիչ պալատի հրապարակած վճռի հիման վրա կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի մեղավորության մասին եզրակացությունը հիմնավորված է նրա հետևյալ երկու հայտարարություններով. «...Ես լուրջ հիմքեր ունեմ չհավատալու հրեաների ոչնչացման այդ քաղաքականությանը կամ մտացածին գազախցերին... կցանկանայի, որ Ֆրանսիայի քաղաքացիների 100 տոկոսը հասկանա, որ գազախցերի առասպելը խարդախ կեղծիք է»: Ուստի նրա համոզմունքները չեն ազդել իր՝ ընդհանուր բնույթի կարծիքներ արտահայտելու իրավունքի վրա, այլ դատարանը դատապարտել է պրն Ֆորիսոնին այլոց իրավունքները խախտելու և հեղինակությունը վարկաբեկելու համար: Այդ իսկ պատճառով կոմիտեն գոհունակությամբ է նշում, որ Ֆրանսիայի դատարանների կողմից հրապարակված, մեկնաբանված և հեղինակի գործով որոշում կայացնելիս կիրառված «Գեսոյի օրենքը» համապատասխանում է դաշնագրի դրույթներին:

¶ 9.6. Անդրադառնալով դաշնագրի դրույթներին հանցավոր համոզմունքների հետևանքով հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումների համապատասխանելու հարցին՝ կոմիտեն նախ նշում է,

ինչպես նշել է թիվ 10 Ընդհանուր մեկնաբանությունում, որ իրավական պաշտպանության իրավունքների շրջանակներում ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները, որոնք ամրագրված են 19-րդ հոդվածի 3-րդ կետով, կարող են բխել այլ անձանց, ինչպես նաև ամբողջ համայնքի շահերից: Քանի որ հեղինակի՝ ամբողջ համատեքստով ընթերցված հայտարարություններն իրենց բնույթով հաստատում են հակահրեական տրամադրությունները, նրա իրավունքը սահմանափակվել է հրեական համայնքի՝ հակահրեական տրամադրությունների վախի մթնոլորտից զերծ ապրելու իրավունքը պաշտպանելու նպատակով: Ուստի կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի՝ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը թույլատրելի է դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի դրույթներով:

¶ 9.7. Ի վերջո, կոմիտեն պետք է որոշի, թե արդյոք անհրաժեշտ էր սահմանափակել հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքը: Այս հարցում կոմիտեն հաշվի է առնում մասնակից պետության այն փաստարկը, որ «Գետոյի օրենքի» կիրառումն անհրաժեշտ էր ռասիզմի և հակահրեականության դեմ պայքարելու համար: Կոմիտեն նաև վկայակոչում է Ֆրանսիայի կառավարության պաշտոնատար անձանցից մեկի՝ այդ ժամանակ արդարադատության նախարարի հայտարարությունը, որում հոլոքոստի ժխտումը բնութագրվել է որպես հակահրեականության հիմնական շարժիչ ուժ: Մասնակից պետության դիրքորոշման օրինականությունը վիճարկող որևէ նյութի բացակայության պայմաններում կոմիտեն համոզված է, որ պրն Ֆորիստնի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ էր դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով:

¶ 10. Առաջնորդվելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կանոնադրության 5-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով՝ Սարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ իր կողմից ուսումնասիրված փաստերը չեն վկայում Ֆրանսիայի իշխանությունների կողմից դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները խախտելու մասին:

[18.59] Այս գործով կայացրած որոշման վերաբերյալ որոշ անհատներ ներկայացրել են իրենց հակառակ կարծիքները: Տիկին Էվաթն ու պրն Կրեցմերը պաշտպանում են հետևյալ կարծիքը, որին հարում էր նաև պրն Քլայնը.

¶ 3. Մասնակից պետությունը պնդել է, որ հեղինակի դատապարտումը հիմնավորված է «Նյուրնբերգյան միջազգային ռազմական դատարանի վճռի և այդպիսով նացիզմի հետևանքները վերապրածների և զոհերի հետնորդների նկատմամբ տածած հարգանքը պաշտպանելու անհրաժեշտությամբ»: Թեև կասկածից վեր է, որ հեղինակի հայտարարությունները խիստ վիրավորական են և՛ հոլոքոստը վերապրածների, և՛ հոլոքոստի զոհերի հետնորդների, և՛ շատ այլ մարդկանց համար, կոմիտեն առջև ծառանում է հետևյալ հարցը. արդյոք այս դրույթներով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը կարող է անհրաժեշտ համարվել այլոց իրավունքները հարգելու համար:

¶ 4. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի չենթարկվել ռասայական, կրոնական և ազգային խտրականության, ինչպես նաև՝ նման խտրականության հրահրումների: Այդ դրույթը հստակ սահմանվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ հոդվածում: Դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով մասնակից պետություններին վերապահված պարտավորությունները ենթադրում են օրենքով արգելել խտրականություն, թշնամանք և բռնություն ներշնչող ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ամեն կարգի քարոզչությունը: «Գետոյի օրենքով» հեղինակին ներկայացված մեղադրանքում հստակորեն չեն առանձնացվում հեղինակի՝ անօրինական հրահրումներ անելու կետը և նրան դատապարտելու համար հինք հանդիսացող հայտարարությունները, որոնք մասնակից պետությունը ստիպված էր արգելել 20-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այսուհանդերձ, անձի՝ ռասայական, կրոնական և ազգային խտրականության չենթարկվելու իրավունքը որոշ հանգամանքներում չի կարող երաշխավորվել 20-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից բխող անօրինական գործողություններ հրահրելու վերաբերյալ նեղ իմաստով մեկնաբանվող ամփոփ օրենքի դրույթներով: Այդ է պատճառը, որ որոշակի սոցիալական և պատմական համատեքստում խտրականության կոչն անօրինական համարելու համար անհրաժեշտ իրավական չափանիշներին լիովին չհամապատասխանող հայտարարությունները կարելի է դիտարկել որպես տվյալ ռասայական, կրոնական կամ ազգային խմբի հասցեին հնչած խտրականության կոչերի դրսևորում կամ էլ այն դեպքում, երբ թշնամանքի և ատելության գաղափարներ տարածող անձինք գործածում են այնպիսի խորամանկ խոսքային միջոցներ, որոնց համար պատիժ չի սահմանվում ռասայական խտրականություն հրահրելու կոչերն արգելող օրենքով, թեև այդ արտահայտությունները կարող են հանգեցնել համանման և նույնիսկ ավելի վտանգավոր հետևանքների:

¶ 5. Ֆրանսիայի սենատում «Գետոյի օրենքի» քննարկման ընթացքում այդ ժամանակ արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցնող պրն Արպայանը, ի թիվս այլ դրույթների, պարզաբանել է հոլոքոստի ժխտումն արգելող վերոհիշյալ օրենքի ընդունման անհրաժեշտությունը, քանի որ հոլոքոստի ուրացումը ռասիզմի և հակահրեական տրամադրությունների ժամանակակից դրսևորում է: Բացի այդ, Փարիզի վճռաբեկ դատարանն ուսումնասիրել է հեղինակի՝ ռասայական և կրոնական ատելություն արտահայտող հայտարարությունները և եզրահանգել, որ նման հայտարարությունները նացիստական ուսմունքի և ռասայական խտրականության գաղափարները վերածնելու միտում ունեն և կարող են խոչընդոտել Ֆրանսիայում տարբեր խմբերի գոյակցությունը:

¶ 6. Չի կարելի անտեսել այն գաղափարը, որ Ֆրանսիայի ներկայիս իրականության մեջ հոլոքոստի ժխտումը կարող է հանգեցնել հակահրեական տրամադրությունների որևէ ձևի հրահրման: Այս ամենը հետևում է ոչ միայն տարբեր հանգմունքներ ունեցող և տարբեր ազգությունների պատկանող պատմաբանների, ինչպես նաև միջազգային և ներպետական դատարանների կողմից հաստատված անվիճարկելի պատմական իրողությունները պարզապես վիճարկելուց, այլև այն համատեքստից, որով անկողմնակալ գիտական հետազոտության քողի տակ ենթադրվում է, որ նացիզմի զոհերը մեղավոր էին ստոր խարդախության համար, և նրանց հետապնդման մասին հայտարարությունները առասպել են, իսկ այն գազախցերը, որտեղ սպանվել է այդքան մարդ, մտացածին:

¶ 7. Ինչպես թիվ 10 Ընդհանուր մեկնաբանության մեջ, այս դեպքում ևս կոմիտեն իրավացիորեն ընդգծում է, որ իրավական պաշտպանության գծով իրավունքը, որի շրջանակներում 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով նախատեսվում են սեփական կարծիքն ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումներ, կարող է վերաբերել ամբողջ համայնքին: Այդ պնդումը ճիշտ է մասնավորապես այն դեպքերում, երբ պաշտպանված իրավունքը ռասայական, ազգային կամ կրոնական խտրականության հրահրումներից զերծ մնալու իրավունքն է: Ֆրանսիայի դատարանները վերլուծել են հեղինակի ներկայացրած հայտարարությունները և եզրակացրել, որ դրանք իրենց բնույթով կարող են բարձրացնել կամ խորացնել հակահրեական միտումները: Ուստի, պարզվում է, հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումն ուղղված էր Ֆրանսիայում հրեական համայնքի՝ հակահրեական խտրականության հրահրումների վախից զերծ մնալու իրավունքի պաշտպանությանը: Վերոնշյալ փաստերից կարելի է եզրակացնել, որ մասնակից պետությունն ապացուցել է, որ հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի՝ 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով ամրագրված սահմանափակումները հետապնդում էին այլ մարդկանց իրավունքները պաշտպանելու նպատակ: Ավելի դժվար է պատասխանել այն հարցին, թե նման հայտարարությունների համար հեղինակին պատասխանատվության կանչելը բխե՞լ է այդ իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությունից:

¶ 8. 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով մասնակից պետություններին վերապահված ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելու լիազորությունը չի կարելի մեկնաբանել որպես հասարակական համակրանք չվայելող ելույթը կամ բնակչության որոշ հատվածների ներկայացուցիչների կողմից վիրավորական համարվող հրապարակումներն արգելելու թույլտվություն: Խիստ վիրավորական կարող է համարվել այն հրապարակումը, որով վտանգվում է 19-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) կամ (բ) ենթակետերի դրույթներով ամրագրված արժեքներից որևէ մեկը՝ այլոց իրավունքները կամ հեղինակությունը, ազգային անվտանգությունը, հասարակական կարգը, բնակչության առողջությունը կամ հանրային բարոյականությունը: Ուստի դաշնագրով սահմանվում է, որ այդ արժեքներից որևէ մեկը պաշտպանելու նպատակն ինքնին չի կարող հիմնավորել ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը: Իրավունքի սահմանափակումը պետք է պայմանավորված լինի տվյալ արժեքը պաշտպանելու անհրաժեշտությամբ: Անհրաժեշտության առկայության այդ պահանջը համաչափության սկզբունք է ենթադրում: Ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման շրջանակը պետք է համաչափ լինի այն արժեքին, որի պաշտպանությանն է ուղղված նշված իրավունքի սահմանափակումը և չպետք է գերազանցի այդ արժեքի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցը: Ինչպես կոմիտեն նշում է իր թիվ 10 Ընդհանուր մեկնաբանությունում՝ սահմանափակումը չպետք է վտանգի տվյալ իրավունքը:

¶ 9. «Գետյի օրենքը» շարադրված է ընդլայնված իմաստով, և թվում է, թե նրա դրույթներով արգելվում է Նյուրնբերգյան դատարանում քննված գործերի մասին իսկական հետազոտության հրատարակումը: Եթե նույնիսկ արգելքն ուղղված է հակահրեական տրամադրությունների հրահրումներից զերծ մնալու իրավունքի պաշտպանությանը, միևնույն է, հեղինակի իրավունքի սահմանափակումները չեն անցնում համաչափության փորձաքննությունը: Այդ սահմանափակումներով հեղինակի մտադրություններին հակահրեականության հրահրումներ չեն վերագրվում, ոչ էլ նրա գաղափարների միտումներին: Բացի այդ, օրենքով սահմանված միջոցը կարելի էր կիրառել ավելի մեղմ պատժամիջոց սահմանող դրույթներով, որոնք չհանգեցնեին այն եզրակացությանը, որ մասնակից պետությունը փորձել է անառարկելի օրենսդրական կարծրատիպի վերածել պատմական իրողությունները և իրադարձությունները՝ անկախ վիճարկվող հարցից և դրա հնարավոր հետևանքներից: Այնուհանդերձ, տվյալ գործի շրջանակներում մենք խոսում ենք ոչ թե ընդհանրապես «Գետյի օրենքի» մասին, այլ միայն «Լե շոք դյու մուա» ամսագրին տված հարցազրույցի ընթացքում արած հայտարարությունների համար դատապարտված հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակման մասին: Արդյոք այս սահմանափակումը կիրառվե՞լ է համաչափության սկզբունքին համապատասխան:

¶ 10. Հեղինակի հայտարարությունները մանրագնին ուսումնասիրվել են Ֆրանսիայի դատարաններում: Նրանց կայացրած որոշումներն ու հարցազրույցն ինքնին հերքում են հեղինակի այն փաստարկը, թե ինքն առաջնորդվել է սոսկ պատմական հետազոտություն անցկացնելու հետաքրքրությամբ: Իր տված հարցազրույցում հեղինակը պահանջել է դատական կարգով հետապնդել այն պատմաբաններին, «հատկապես՝ հրեա պատմաբաններին» (ֆրանս.՝ *les historiens, en particulier juifs*), ովքեր ընդունում են, որ Նյուրնբերգյան դատարանը մի քանի գործերով սխալ եզրակացությունների է հանգել: Հեղինակն անդրադարձել է նաև «մտացածին գազախցերին» (ֆրանս.՝ *la magique chambre à gaz*) և «գազախցերի առասպելին» (ֆրանս.՝ *le mythe des chambres à gaz*)՝ դրանք որակելով որպես հաղթանակած պետությունների կողմից Նյուրնբերգում հաստատված խարդախ կեղծիք: Այս հայտարար-

րություններում հեղինակն առանձնացնում է հրեա պատմաբաններին և բացահայտ նշում, որ մացիզմի զոհ դարձած հրեաները, իրենց շահերից դրդված, հնարել են զազախցերի մասին պատմությունը: Նույնիսկ ընդունված պատմական ճշմարտությունները վիճարկելու և դրանով մարդկանց վիրավորելու պարագայում կան իսկական պատմական հետազոտություն կատարելու իրավունքը սահմանափակումներից պաշտպանելու բոլոր հիմքերը, սակայն հեղինակը լիազորված չէ այդ իրավունքի ներքո իրենց բնույթով այլ անձանց իրավունքները խախտող հակահրեական հայտարարություններ անել: Հեղինակի իրավունքի սահմանափակումներն ուղղված չեն ազատ արտահայտվելու բուն իրավունքի և ոչ էլ հետազոտություն անցկացնելու իրավունքի դեմ, այլ անմիջականորեն առնչվում են պաշտպանվող արժեքներին, այն է՝ ռասիզմից կամ հակահրեական տրամադրությունների հրահրումներից զերծ մնալու իրավունքներին, որոնք տվյալ հանգամանքներում հնարավոր չէր պաշտպանել ավելի մեղմ միջոցներով: Այդ իսկ պատճառով մենք համամիտ ենք կոմիտեի հետ և հանգում ենք այն եզրակացության, որ հաշվի առնելով գործի հատուկ հանգամանքները՝ հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները չեն հակասում համաչափության սկզբունքին, և դրանց կիրառումն անհրաժեշտ էր այլոց իրավունքները պաշտպանելու համար:

Պարոնայք Անդրոն և Լալահը մասնավոր համընկնող կարծիքներ են արտահայտել և հիմնական հարցերում համաձայնել են տիկին Էվաթի և պարոնայք Կրեցների ու Քլայնի հետ:

[18.60] Տիկին Մեդինա Քուիրոզան նույնպես համաձայնել է վերոնշյալ կարծիքի հետ և ավելացրել հետևյալ դիտողությունները.

¶ 2. Կցանկանայի հավելել, որ իմ դիրքորոշումը հիմնավորված է այն փաստով, որ թեև «Գեսոյի օրենքի» տվյալ ձևակերպման կիրառումը կարող էր հանգեցնել դաշնագրի 19-րդ հոդվածի դրույթների խախտման, պրն Ֆորիսոնի գործը քննող Ֆրանսիայի դատարանն այդ օրենքի մեկնաբանումը և կիրառումը համապատասխանեցրել է դաշնագրի դրույթներին՝ այդպիսով այդ օրենքը հարմարեցնելով ազատ արտահայտվելու իրավունքին առնչվող Ֆրանսիայի ստանձնած միջազգային պարտավորություններին:

[18.61] Պրն Բիազվաթին նույնպես ներկայացրել է իր մասնավոր հակադիր կարծիքը.

...Արդյոք հեղինակի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ էր հրեական համայնքի իրավունքները և շահերը պաշտպանելու համար: Պատասխանն ակնհայտորեն դրական է: Եթե չկիրառվեր «Գեսոյի օրենքով» ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը և չպատժվեին հոլոքոստի իրողությունը և զազախցերում խեղդամահ արված հրեաների ոչնչացումը ժխտող հայտարարությունները, ապա հեղինակը և նրա մեծան ալ վերանայողական հայացքների տեր անձինք կարող էին շարունակել հեղինակի դատապարտմանը հանգեցրած նախորդ հայտարարություններին մեղավոր նոր հայտարարություններ անել, որոնց անխուսափելի հետևանքը կլիներ Եվրոպայում տիրող իրավիճակի համատեքստում հակահրեական տրամադրությունների խորացումը, ինչի մասին մասնակից պետությունը համառորեն պնդում է իր հայտարարություններում: Ուստի «Գեսոյի օրենքով» ամրագրված սահմանափակումն անհրաժեշտ է հրեական համայնքի՝ մարդկային արժանապատվությունը հարգող և հակահրեականության մթնոլորտից զերծ հասարակությունում ապրելու իրավունքները պաշտպանելու համար:

Ուստի պարզ է, որ «Գեսոյի օրենքի» դրույթների համաձայն՝ հեղինակի դատապարտումը չի հանգեցրել 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի խախտման: Ես մեծ դժկամությամբ եմ հանգել այս եզրակացությանը, քանի որ հաստատ հանդգնած եմ, որ խոսքի ազատությունը և ազատ արտահայտվելու իրավունքը գերագույն արժեք ներկայացնող իրավունք է և պետք է ամեն գնով պաշտպանվի և խրախուսվի, հատկապես Վոլտերի հայրենիքում: Իսկապես, ցավալի է, որ այժմյան աշխարհում, երբ գիտության և տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ ընդլայնվել են գիտելիքների շրջանակները, և մարդկությունը սկսել է գիտակցել, որ կարող են երջանկության հասնել միայն մեկը մյուսին ապավինելով և համագործակցելով, թուլանում է հանդուրժողականության շենը: Ժամանակն է, որ մարդը գիտակցի իր հոգևոր աշխարհի մեծությունը, դառնությունն ու ատելությունը փոխարինի սիրով և կարեկցանքով, հանդուրժողականությամբ և ներողամտությամբ:

[18.62] Թեև մասնակից պետությունը շահել է «*Ֆորիսոնն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Faurisson v France*) գործը, սակայն ՄԻԿ-ի բոլոր անդամները մտահոգություն են հայտնել վիճարկված օրենքն ընդլայնված իմաստով կիրառելու վերաբերյալ: Հաշվի առնելով այն փաստը, որ պրն Ֆորիսոնի հարցազրույցը կարող էր օրենքով սահմանված կարգով գրաքննության ենթարկվել, 19-րդ հոդվածի դրույթների խախտում ենթադրող արտահայտությունը նույնպես կարող էր սկզբունքորեն ըստ օրենքի գրաքննության ենթարկվել: Գուցե վիճահարույց է այն, որ Ֆորիսոնի խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները բավականաչափ հիմնավորված և օրենքով նախատեսված չեն եղել, քանի որ օրենքի

դրույթների շրջանակները չափազանց լայն են [18.19]: Այդուհանդերձ, ՄԻԿ-ը համապատասխան «օրենքը» մեկնաբանել է որպես Ֆրանսիայի դատարանի կողմից ներկայացված օրենք: Տվյալ դեպքում դատարանի որոշմամբ «շտկվել են» այս գործի շրջանակներում կիրառվող օրենքի թերությունները:

Գենդերային ատելություն ներշնչող հայտարարություններ

[18.63]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 22. 19-րդ հոդվածով ամրագրված իրավունքներին առնչվող հարցերում մասնակից պետությունները պարտավոր են տեղեկացնել կոմիտեին բոլոր այն օրենքների կամ այլ գործոնների մասին, որոնք կարող են խոչընդոտել այս հոդվածի դրույթներով ամրագրված իրավունքների հավասար հիմունքներով իրացումը կամանց կողմից: Քանի որ կամանց և աղջիկներին որպես բռնության կամ մվաստացնող և անմարդկային վերաբերմունքի առարկա պատկերող անպարկեշտ և պոռնկագրական նյութերը հավանաբար հանգեցնում են կամանց և աղջիկների հանդեպ մամոթիմասկ վերաբերմունքի խորացմանը, մասնակից պետությունները պետք է տեղեկություններ տրամադրեն նման նյութերի հրատարակումը կամ տարածումը սահմանափակող իրավական միջոցների մասին:

Սա ՄԻԿ-ի առաջին հայտարարությունն է պետության՝ չափահասներին պատկերող պոռնկագրությունը «վերահսկելու» պարտավորության վերաբերյալ⁷²: Թերևս պոռնկագրության վերահսկումը դիտվում է որպես ավելի քան թույլատրելի ազատ արտահայտվելու իրավունքի թույլատրելի սահմանափակում⁷³: Թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունում նշվում է, որ պոռնկագրական որոշ դրսևորումներ ատելություն ներշնչող հայտարարությունների նմանվող ազատ արտահայտման ձևեր են և պետք է արգելվեն:

Եզրակացություն

[18.64] ՄԻԿ-ը սովորաբար բավական ազատական դիրքորոշում է որդեգրել 19-րդ հոդվածի դրույթները մեկնաբանելիս և արձանագրել է դրանց բազմաթիվ խախտումներ: Մասնավորապես՝ կոմիտեն, որպես կանոն, մերժել է պետությունների այն փաստարկները, որոնց միջոցով նրանք ձգտել են հիմնավորել ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները հասարակական կարգը կամ ազգային անվտանգությունը պաշտպանելու անհրաժեշտությամբ: Առ այսօր պետությունները վերոնշյալ իրավունքի սահմանափակումն ավելի մեծ հաջողությամբ են հիմնավորել՝ վկայակոչելով հասարակության բարոյականությունը պահպանելու անհրաժեշտությունը:

[18.65] ՄԻԿ-ը դեռևս 20-րդ հոդվածի դրույթների հավանական խախտման դեպքի չի առնչվել: Չետագայում ամենայն հավանականությամբ առաջնորդվելու է ՌԽՎՄԿ-ի 4-րդ հոդվածին համապատասխան՝ Ռասայական խտրականության վերացման կոմիտեի տրամադրության տակ եղած նախադեպերով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 20-րդ հոդվածն իր ազդեցությունն է թողել ՄԻԿ-ի իրավասության վրա, ինչի արդյունքում 19-րդ հոդվածի 3-րդ կետով հիմնավորված են համարվել ռասիստական բնույթի հայտարարությունների հեղինակների ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները: Եվ իրականում ծայրահեղ աջերի հայացքների նկատմամբ ՄԻԿ-ի ակնհայտ բացասական վերաբերմունքը կարող է պայմանավորված լինել դաշնագրի 20-րդ հոդվածի առկայությամբ, թեև կոմիտեն երբեք նման հայացքներ արտահայտելու իրավունքը սահմանափակելու վերաբերյալ որևէ դիմումով դրական որոշում չի կայացրել:

⁷² Տե՛ս մանկական պոռնկագրության վերաբերյալ՝ [21.37]-[21.39]:

⁷³ Տե՛ս նաև [18.28]:

Հավաքների և միավորումներ կազմելու ազատություններ. հոդվածներ 21 և 22

• Հոդված 21	[19.02]
• «Հավաքի» նշանակությունը	[19.02]
• Հավաքների ազատության սահմանափակումները	[19.04]
• 21-րդ հոդվածի մեկնաբանությունը	[19.06]
• Հոդված 22	[19.11]
• «Միավորումներ կազմելու» նշանակությունը	[19.11]
• Միավորումներ կազմելու ազատության սահմանափակումները	[19.12]
• Արհմիությունների իրավունքները	[19.15]
• Գործադուլի իրավունք	[19.18]
• Միավորումներին չմիանալու ազատությունը	[19.26]
• Եզրակացություն	[19.29]

[19.01] 21-րդ հոդվածը երաշխավորում է խաղաղ հավաքների, իսկ 22-րդ հոդվածը՝ միավորումներ կազմելու ազատությունը: Քաղաքացիական և քաղաքական հասարակության մեջ անձի մասնակցության տեսանկյունից երկու ազատություններն էլ առանցքային են: Այդուհանդերձ, ազատություններից ոչ մեկը ՔԲԻՄԴ-ի նախադեպային մեծ բազա չի ձևավորել:

ՀՈԴՎԱԾ 21

ճանաչվում է խաղաղ հավաքների իրավունքը: Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահի պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

«ՀԱՎԱՔԻ» ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

[19.02] 21-րդ հոդվածը պաշտպանում է խաղաղ հավաքների իրավունքը: Նովակի բնորոշմամբ՝ այն անձի՝ հատուկ նպատակով միտումնավոր և ժամանակավոր հավաքվելու իրավունքն է¹: Օրինակ՝ 18-րդ հոդվածը պաշտպանում է կրոնական հավաքները, 17-րդ հոդվածը՝ խիստ մասնավոր հավաքները, ինչպիսիք են բարեկամների և ընկերների հավաքությունները, իսկ 22-րդ հոդվածը՝ միավորումների հավաքները²: Հետևաբար, 21-րդ հոդվածը կարող է կիրառվել նշված հոդվածների շրջանակներից դուրս եղած հավաքները պաշտպանելու համար: Նովակը նշում է, որ 21-րդ հոդվածն ուղղված է մասնավորապես գաղափարների քննարկման կամ հռչակման նպատակ հետապնդող հավաքներին³:

[19.03] Հավաքները կարող են տեղի ունենալ տարբեր վայրերում: Դրանք կարող են անցկացվել փակ սենյակներում, դրսում, ինչպես նաև՝ հանրային կամ մասնավոր սեփականության տարածքում: Հավաքները կարող են լինել թե՛ շարժական (երթերի և շքերթների դեպքում), թե՛ ստատիկ: Մասնակցությունը կարող է ունենալ սահմանափակումներ կամ լինել բոլորի համար բաց:

¹ M. Nowak, *UN Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 373.

² Նույն տեղում, էջ 374:

³ Նույն տեղում:

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

[19.04] Հավաքների ազատությունը բացարձակ իրավունք չէ: Առաջին՝ ազատությունը վերաբերում է միայն խաղաղ հավաքներին, այսինքն՝ հավաքները չպետք է լինեն բռնի: Օրինակ՝ չեն պաշտպանվում խռովությունները և հասարակական վայրերում վեճերը: Սույն դրույթով հնարավոր է պաշտպանել առանց ուժի գործադրման արտահայտված քաղաքացիական անհնազանդությունը⁴: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ բռնի հավաքները վերահսկելիս պետություններն ազատված են մարդու իրավունքների առնչությամբ ստանձնած պարտավորություններից: Դանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մեկնաբանել է⁵:

¶ 14. Կոմիտեն նաև իր մտահոգությունն է հայտնում ամբոխը վերահսկելու նպատակով ոստիկանության կիրառած միջոցների, այդ թվում՝ տարբեր ցույցերում և հանրահավաքներում մասնակիցների դեմ շներ հանելու կապակցությամբ, ինչը որոշ դեպքերում հանգեցրել է ամբոխի մարդկանց, ինչպես նաև կողմնակի անցորդների լուրջ վնասվածքների:

¶ 21. Կոմիտեն հորդորում է մասնակից պետության կառավարությանը շարունակել ոստիկանների պատրաստումը ամբոխները վերահսկելու և օրինազանցների, այդ թվում՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց հետ վարվելու միջոցների, ինչպես նաև այդ հարցերը մշտական ուշադրության տակ պահելու ուղղությամբ: Կոմիտեն առաջարկում է իշխանություններին վերանայել ամբոխների դեմ շներ հանելու գործելակերպը:

Վերոնշյալ մեկնաբանությունները վկայում են, որ բռնի հավաքին մասնակցող խաղաղ ցուցարարները կարող են պաշտպանվել 21-րդ հոդվածով, և բոլոր մասնակիցները պաշտպանված են ՔՔԻՄԴ-ի այլ դրույթներով, ինչպիսին է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքն արգելող 7-րդ հոդվածը:

[19.05] Հավաքների ազատության իրավունքը ենթակա է նաև մի շարք հատուկ սահմանափակումների: Դրանք կրկնում են 12-րդ, 18-րդ, 19-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները: Ենթադրվում է, որ սահմանափակումները կմեկնաբանվեն այլ դրույթների համապատասխան մեկնաբանությունների նման⁶: 21-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները պետք է լինեն «օրենքին համապատասխան»: Այս արտահայտությունը տարբերվում է 12-րդ, 18-րդ, 19-րդ և 22-րդ հոդվածներում նշված այն արտահայտությունից, որով պահանջվում են օրենքով «սահմանված» կամ «նախատեսված» սահմանափակումներ: Նովակի կարծիքով՝ ձևակերպման այս տարբերությունը հնարավորություն է տալիս վարչական լծակներով առավել մեծ հայեցողություն կիրառել 21-րդ հոդվածը սահմանափակելու համար, քան նշված մյուս հոդվածների դեպքում, որոնց համաձայն՝ սահմանափակումները պետք է առավել զգույշ արվեն օրենքով⁷: Սահմանափակումները պետք է նաև «անհրաժեշտ [լինեն] ժողովրդավարական հասարակության մեջ»: 19-րդ հոդվածում միևնույն բառերը մեկնաբանվել են որպես ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումներում համաչափության հասկացություն ներմուծելու փորձ⁸: Հավաքների ազատության համատեքստում բառերի նշանակությունը ենթադրաբար նույնն է⁹:

21-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

[19.06] «Կիվեմման ընդդեմ Ֆինլանդիայի» գործը միակն է 21-րդ հոդվածով:

⁴ Նույն տեղում, էջ 375:

⁵ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 68, պարբ. 14:

⁶ Տե՛ս [12.24] և [18.18] թվարկված միևնույն սահմանափակումների մեկնաբանության համար: Տե՛ս 'Siracusa Principles on the Limitation and Derogation Provisions in the International Covenant on Civil and Political Rights' (1985) 7 *HRQ* 3, որը ցույց է տալիս, որ ՔՔԻՄԴ-ում սահմանափակում պարունակող բոլոր կետերը պետք է յուրաքանչյուր կետի մասով մեկնաբանվեն միևնույն կերպ:

⁷ Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 378, և K. Partsch, 'Freedom of Conscience and Expression, and Political Freedoms', in L. Henkin (ed), *The International Bill of Rights* (Columbia University Press, New York, 1981), 232. Հայեցողության անթույլատրելի սահմանների վերաբերյալ տե՛ս «Փինքնի ընդդեմ Կանադայի» (Pinkney v Canada, 27/78) գործը, [16.10]. տե՛ս նաև [1.67]:

⁸ Տե՛ս [18.20]: Տե՛ս նաև [12.24]:

⁹ Տե՛ս վերը «Սիրակուզայի սկզբունքները», ծմբ. 6:

«ԿԻՎԵՆՄԱԱՆ ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (KIVENMAA v FINLAND, 412/90)

Բողոքարկողի կողմից բերված փաստերը հետևյալն են.

¶ 1. Դիմումի հեղինակ, Ֆինլանդիայի քաղաքացի օրիորդ Օուլի Կիվենմաանը սոցիալ-դեմոկրատական երիտասարդական կազմակերպության գլխավոր քարտուղարն է: Նա պնդում է, որ տուժել է Ֆինլանդիայի կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 15-րդ և 19-րդ հոդվածների խախտումից: Նրա շահերը ներկայացնում էր փաստաբանը:

Գործի հանգամանքները հետևյալն են.

¶ 2.1. 1987 թ. սեպտեմբերի 3-ին, օտար պետության ղեկավարի այցի և Ֆինլանդիայի նախագահի հետ հանդիպման առիթով, հեղինակը և իր կազմակերպության մոտ 25 անդամ, շրջապատված մեծաթիվ ամբոխով, հավաքվել են նախագահական նստավայրի դիմաց, որտեղ ընթանում էր ղեկավարների հանդիպումը, թուցիկներ են բաժանել և հյուր եկած պետության ղեկավարի՝ մարդու իրավունքների ոլորտում գործունեությունը քննադատող ցուցապատառ բարձրացրել: Ոստիկանությունն անմիջապես իջեցրել է ցուցապատառը և հարցրել, թե ով է պատասխանատու անձը: Հեղինակը ներկայացել է, որից հետո նրան մեղադրանք են ներկայացրել առանց նախնական ծանուցման «հանրահավաք» անցկացնելու և, հետևաբար, «Հանրահավաքների մասին» օրենքը խախտելու համար:

¶ 2.2. «Հանրահավաքների մասին» վերոնշյալ օրենքը ո՛չ 1921 թ. ի վեր, ո՛չ դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո չի փոփոխվել: Հանրահավաքից առնվազն վեց ժամ առաջ ոստիկանությանը չժանուցելու դեպքում այն օրենքի 12-րդ բաժնի 1-ին ենթաբաժնով համարվում է պատժելի իրավախախտում: Նախնական ծանուցման պահանջը վերաբերում է միայն բացօթյա հանրահավաքներին (3-րդ բաժին): Հավաքը չի համարվում հանրահավաք, եթե դրան կարող են մասնակցել միայն իրավիքված անձինք (1-ին բաժնի 2-րդ ենթաբաժին): 1-ին բաժնի 1-ին ենթաբաժինը սահմանում է, որ «հավաքի» նպատակն է հանրային հարցեր քննարկելը և դրանց շուրջ որոշումներ կայացնելը: Օրենքի 10-րդ բաժնով նախնական ծանուցման պահանջը տարածվում է նաև հանդիսավոր շքերթների և երթերի վրա:

¶ 2.3. Թեև հեղինակը պնդում էր, որ ինքը հանրահավաք չի կազմակերպել, այլ ընդամենը քննադատել է այցելած ղեկավարի՝ մարդու իրավունքների խախտումները, սակայն 1988 թ. հունվարի 27-ին ազգային դատարանը նրան մեղավոր ճանաչեց և 438 մարկ տուգանք նշանակեց: Դատարանն այն կարծիքին էր, որ 25 հոգուց բաղկացած խումբն իր վարքով տարբերվել է ամբոխից, ուստի կարող է համարվել հանրահավաքի մասնակից: Դատարանը չի անդրադարձել հեղինակի այն առարկությանը, որ իր դատապարտմամբ խախտվում են դաշնագրի դրույթները:

Կիվենմաայի բողոքը հիմնականում հիմնվում է այն հանգամանքի վրա, որ համապատասխան հավաքը (այցելու պետության ղեկավարի դեմ քսանհինգ հոգանոց բողոքի ցույցը) դուրս է «Հանրահավաքների մասին» օրենքում («օրենքը») նշված «հանրահավաք» արտահայտության սահմանման շրջանակից: Այդ իսկ պատճառով նա պնդում է, որ տվյալ հանգամանքներում օրենքի կիրառումը՝ 21-րդ հոդվածի իմաստով, - «օրենքին համապատասխան» չէ:

¶ 3. Հեղինակը պնդում է, որ, եթե նույնիսկ միջոցառումը մեկնաբանվի որպես հավաքների ազատության կիրառում, միևնույն է, ինքը պարտավոր չէր ոստիկանությանը տեղեկացնել, քանի որ ցույցն օրենքով սահմանված իմաստով հանրահավաք կամ հանրային երթ չի եղել:

¶ 8.5. Եզրափակելով՝ հեղինակը նշում է, որ չի վիճարկում խաղաղ հավաքի իրավունքի կիրառումը սահմանափակելու հիմնավորվածությունը և հանրահավաքների մասին նախնական ծանուցումը՝ որպես այդ սահմանափակումը կիրառելու օրինական եղանակ: Այդուհանդերձ, նա վիճարկում է իր գործով «Հանրահավաքների մասին» օրենքի - կիրառման բուն փաստը: Նա բերում է այն փաստարկը, որ այս հնացած, անհստակ և երկիմաստ օրենքը ոստիկանության համար իրավական հիմք է ծառայել այցելու ղեկավարի պետությունում մարդու իրավունքների իրավիճակի կապակցությամբ մտահոգության արտահայտմանը միջամտելու համար: Նա պնդում է, որ այս միջամտությունը օրենքին չի համապատասխանում, ինչպես նաև դաշնագրի 21-րդ հոդվածի իմաստով ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ չէ: Այս կապակցությամբ կրկին շեշտվում է, որ ցուցապատառն իջեցնելով՝ ոստիկանությունը հնարավորինս արդյունավետ է գործել և միջամտել հեղինակի կարծիքի արտահայտմանը:

Մասնակից պետությունը պաշտպանել է 21-րդ հոդվածի վերաբերյալ իր դիրքորոշումը: Նախ նա պաշտպանել է բուն օրենքը.

¶ 7.6. Հեղինակի այն հայտարարության առնչությամբ, որ ինքը հանդիսանում է դաշնագրի 21-րդ հոդվածի խախտ-

ման գոհ, մասնակից պետությունը հիշեցնում է, որ 21-րդ հոդվածով թույլատրվում է սահմանափակել խաղաղ հավաքի իրավունքի կիրառումը: «Հանրահավաքների մասին» օրենքը Ֆինլանդիայում երաշխավորում է հասարակական վայրերում խաղաղ հավաքվելու իրավունքը՝ միաժամանակ ապահովելով հասարակական կարգը և անվտանգությունը և կանխելով հավաքվելու իրավունքի չարաշահումը: Սույն օրենքով հանրահավաքն ընկալվում է որպես օրինական նպատակով մեկ հոգուց ավելի մարդկանց խմբի հավաքվելը՝ այնպիսի հասարակական վայրում, որից, հավաքի մասնակիցներից բացի, կարող են օգտվել նաև այլ անձինք: Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ այս օրենքի ընդունված մեկնաբանությունում օրենքը նաև վերաբերում է որպես հանրահավաք կամ փողոցային երթ կազմակերպված ցույցերին: Ըստ օրենքի 3-րդ հոդվածի՝ ոստիկանությունը պետք է նախապես ծանուցվի բացօթյա հասարակական վայրում անցկացվող յուրաքանչյուր հանրահավաք սկսելուց առնվազն վեց ժամ առաջ: Ծանուցումը պետք է ներառի տվյալներ հավաքի անցկացման ժամի և տեղի, ինչպես նաև կազմակերպչի մասին: Հավաքը սկսելուց առնվազն վեց ժամ առաջ ոստիկանությանը չտեղեկացնելով հանրահավաք անցկացնելը օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետով համարվում է պատժելի իրավախախտում: Մասնակից պետությունն առանձնահատուկ շեշտում է, որ օրենքը չի վերաբերում միայն մեկ անձի մասնակցությամբ խաղաղ ցույցերին:

¶ 7.7. Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ նախնական ծանուցման պահանջը հնարավորություն է տալիս ոստիկանությանն անհրաժեշտ միջոցներ, օրինակ՝ երթևեկության կարգավորում ձեռնարկել՝ հավաքի անցկացումն ապահովելու և, ավելին՝ հավաքների ազատության իրավունքի իրականացման հարցում խմբին պաշտպանելու նպատակով: Այս համատեքստում մասնակից պետությունը պնդում է, որ օտար պետության ղեկավարի պարագայում միջոցառման մասին ոստիկանությանը նախապես ծանուցելը գործնական տեսանկյունից - խիստ կարևոր է:

¶ 7.8. Մասնակից պետությունը պնդում է, որ ոստիկանությանը նախապես տեղեկացնելու պահանջը չի սահմանափակում հանրահավաքի իրավունքը: Մասնակից պետությունն առանձնահատուկ շեշտում է, որ նախնական ծանուցումն անհրաժեշտ է հանրահավաքի խաղաղ ընթացքը երաշխավորելու համար:

Երկրորդ՝ մասնակից պետությունը պաշտպանել է Կիվենմաայի և Նրա խմբի նկատմամբ օրենքը կիրառելու փաստը:

¶ 7.9. Ինչ վերաբերում է սույն գործի հատուկ հանգամանքներին, ապա մասնակից պետությունն այն կարծիքին է, որ «Հանրահավաքների մասին» օրենքի 1-ին հոդվածի իմաստով՝ ինդիանալի և Նրա ընկերների փաստացի վարքը հանգեցրել է հանրահավաքի: Այս համատեքստում մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ «Հանրահավաքների մասին» օրենքում «ցույց» բառի նշված չլինելը դեռևս չի նշանակում, որ ցույցերը դուրս են մնում օրենքի շրջանակներից: Այս կապակցությամբ մասնակից պետությունն անդրադառնում է իրավական մեկնաբանության ընդհանուր սկզբունքներին: Բացի այդ, նա նշում է, որ դաշնագրի 21-րդ հոդվածը «ցույցներին»՝ որպես հավաքի եղանակի, առանձնակի չի վերաբերում: Եվ, վերջապես, մասնակից պետությունը պնդում է, որ նախնական ծանուցման պահանջը համապատասխանում է 21-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջներին: Այս համատեքստում մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ պահանջը օրենքով է նախատեսված, և այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ օրինական նպատակների, հատկապես հասարակական կարգի:

Կիվենմաայի օգտին ՄԻԿ-ը նյութաիրավական հիմնավորումների մասով բավական հակիրճ որոշում կայացրեց.

¶ 9.2. Կոմիտեն կարծում է, որ հասարակական վայրում անցկացվելիք ցույցի սկզբից վեց ժամ առաջ ոստիկանությանը ծանուցելու պահանջը կարող է համատեղելի լինել դաշնագրի 21-րդ հոդվածով թույլատրված սահմանափակումների հետ: Տվյալ գործի հանգամանքներում կողմերի տրամադրած տեղեկություններից ակնհայտ է, որ մասնակից պետության իշխանությունների կողմից նախապես հրապարակված պետական այցելության ընթացքում օտար պետության ղեկավարի հանդիսավոր ընդունելության վայրում մի քանի անձանց հավաքույթը չի կարող ցույց համարվել: Մասնակից պետության այն պնդման առնչությամբ, որ ցուցապաստառ բարձրացնելը նրանց ներկայությունը վերածում է ցույցի, կոմիտեն նշում է, որ հավաքվելու իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է համապատասխանի 21-րդ հոդվածի՝ սահմանափակման մասին դրույթներին: Ցույցի մասին նախապես ծանուցելու պահանջը սովորաբար պայմանավորված է ազգային անվտանգության կամ հասարակական ապահովության, հասարակական կարգի նկատառումներով, ինչպես նաև հասարակության առողջապահության կամ բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ: Հետևաբար, ցույցերի մասին Ֆինլանդիայի օրենսդրությունը նման հավաքի նկատմամբ կիրառելը չի կարող համարվել դաշնագրի 21-րդ հոդվածով թույլատրված սահմանափակում:

Ցավոք, 21-րդ հոդվածի առումով ՄԻԿ-ի՝ նյութաիրավական հիմնավորումների մասին միակ որոշումը

չափազանց աղոտ է¹⁰: ՄԻԿ-ը, ըստ երևույթին, համաձայնել է Կիվենմայի այն պնդմանը, որ համապատասխան հավաքույթը «ցույց» չէ և հետևաբար սխալ մեկնաբանվելու հետևանքով դիտարկվել է Ֆինլանդիայի օրենսդրության շրջանակներում: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ը սովորաբար հարցականի տակ չի առնում ազգային դատարանների իրավական կամ փաստական եզրակացությունները¹¹: Սույն գործով կոմիտեի՝ Ֆինլանդիայի դատարանի վճիռը բեկանելու պատճառները հայտնի չեն:

[19.07] Պրն Չերնոլը իր անհամաձայնությունն արտահայտող խիստ կարծիքում անդրադարձել է մեծամասնության որոշման որոշ թերություններին:

Ա. 21-րդ հոդվածի հնարավոր խախտման հարցը

¶ 2.1. Կոմիտեի այն եզրակացությունը, որ հեղինակի նկատմամբ 1907 թ. ընդունված «Հանրահավաքների մասին» օրենքը (այսուհետև՝ 1907 թ. օրենք) կիրառելով և օրենքի 12-րդ բաժնի համաձայն տուգանք նշանակելով՝ Ֆինլանդիան խախտել է դաշնագրի 21-րդ հոդվածը, հիմնված է փաստերի սխալ գնահատման և ավելին՝ 21-րդ հոդվածի իմաստով «խաղաղ հավաք» հասկացության սխալ ընկալման վրա:

¶ 2.3. Իրավական խնդրի կենտրոնում ընկած է այն հարցը, թե արդյոք հեղինակի գործողությունները, այսինքն՝ այն փաստը, որ նա «և իր կազմակերպության մոտ 25 անդամ, շրջապատված առավել մեծաթիվ ամբոխով, հավաքվել էին, թուցիկներ բաժանել և ցուցապաստառ բարձրացրել» (տե՛ս Կարծիքների 2-րդ կետի 1-ին ենթակետը), արդյոք պե՞տք է 1907 թ. օրենքի իմաստով «հանրահավաք» կամ դաշնագրի 21-րդ հոդվածի իմաստով «խաղաղ հավաք» որակվի, թե՞ ոչ:

¶ 2.4. Այս առնչությամբ իր Կարծիքների 9-րդ կետի 2-րդ ենթակետում (երկրորդ նախադասություն) կոմիտեն նշում է, որ «կողմերի տրամադրած տեղեկություններից ակնհայտ է, որ մասնակից պետության իշխանությունների կողմից նախապես իրապարակված պետական այցելության ընթացքում օտար պետության ղեկավարի հանդիսավոր ընդունելության վայրում մի քանի անձանց հավաքը չի կարող ցույց համարվել»: Ցավոք, ես չեմ հասկանում այս փաստարկումը:

¶ 2.5. Հեղինակը չի վիճարկում, որ ինքը և իր կազմակերպությունը ներկայացնող և իր հավաքած մի խումբ մարդիկ զնացել են նախագահական նստավայր զուտ թուցիկներ բաժանելու և ցուցապաստառ բարձրացնելու և հետևաբար Ֆինլանդիայում օտար պետության ղեկավարի ներկայությունը իրապարակավ պախարակելու նպատակով, ում գործունեությունը մարդու իրավունքների ասպարեզում նրանք քննադատել են: Եթե սա դաշնագրի 21-րդ հոդվածի իմաստով ցույց, հանրահավաք չի համարվում, ապա ուրեմն ի՞նչն է դաշնագրի իմաստով «խաղաղ հավաք» և 1907 թ. օրենքի իմաստով համապատասխանաբար «հանրահավաք» համարվում:

¶ 2.7. Ի տարբերություն քիչ թե շատ պատահական հավաքույթի (օր.՝ մարդիկ ավտոբուսի են սպասում, երաժշտական խմբի ելույթ են լսում և այլն)՝ «հավաքի» բնորոշման համար որոշիչ տարրն ակնհայտորեն հավաքված անձանց մտադրությունն է և նպատակը: Հեղինակին ընդհատել են և չեն թույլատրել պնդել, որ նա (և իր խումբը) ամբողջի նման դիտորդ է եղել, որի ուշադրությունը, ըստ երևույթին, գրավել էր Ֆինլանդիայի նախագահին այցելող օտար պետության ղեկավարի հայտնվելը: Ընդհանուր համաձայնությամբ՝ նա և իր խումբը միացել են միջոցառմանը՝ քաղաքական ցույց անելու նպատակով: Սա նախագահական նստավայրի առջև նրանց հայտնվելու միակ նպատակն էր: Հետևաբար, մասնակից պետությունը ճիշտ է նշել, որ սա «գաղափարապես» ցույց է:

[19.08] Հնարավոր է, որ մեծամասնության որոշման վրա ազդել է Ֆինլանդիայի օրենքի լայն շրջանակը: Այնուամենայնիվ, պրն Չերնոլը պնդել է, որ թե՛ հեղինակը և թե՛ մեծամասնությունն ընդունել են օրենքով սահմանված պարտավորությունների ողջամիտ լինելը:

¶ 2.2. Իր Կարծիքների 9-րդ կետի 2-րդ ենթակետի առաջին նախադասությունում կոմիտեն ճիշտ է նշում, որ «հասարակական վայրում անցկացվելիք ցույցի մասին դրա սկսվելուց վեց ժամ առաջ ոստիկանությանը ծանուցելու պահանջը կարող է համատեղելի լինել դաշնագրի 21-րդ հոդվածով թույլատրված սահմանափակումների հետ»: Հանրահավաքի մասին դրա սկսվելուց մի քանի ժամ առաջ իշխանություններին ծանուցելու զուտ պահանջը, որը ներառված է 1907 թ. օրենքում, ակնհայտորեն համապատասխանում է դաշնագրի 21-րդ հոդվածին, որով նախատեսվում է խաղաղ հավաքի իրավունքը սահմանափակելու հնարավորությունը, ինչը «օրենքին համապատասխան անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունք-

¹⁰ T. Murphy, 'Freedom of Assembly', in D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 443.

¹¹ Տե՛ս [14.51]:

ների ու ազատությունների պաշտպանության» համար: 1907 թ. օրենքն անշուշտ պատկանում է այս կարգին: Ի դեպ, սա ընդունել է հենց ինքը՝ հեղինակը, ով պնդում է, որ ինքը չի վիճարկում, որ խաղաղ հավաքի իրավունքի կիրառումը սահմանափակելը հիմնավորված է, և հանրահավաքների մասին նախնական ծանուցումը այդ սահմանափակումն օրինական կիրառելու եղանակ է (տե՛ս Կարծիքների 8-րդ կետի 5-րդ ենթակետը): Իր վերջին դիմումում նա հստակ նշում է, որ տեսականորեն չի վիճարկում նաև 1907 թ. օրենքի վավերականությունը:

[19.09] Թեև ՄԻԿ-ն ընդունել է, որ օրենքն ինքնին կարող էր ներառվել 21-րդ հոդվածի թույլատրելի սահմանափակումների շրջանակում, սակայն ըստ երևույթին կարծել է, որ տվյալ հանգամանքներում օրենքի կիրառումը դուրս կընկնի այդ շրջանակից: Այսինքն՝ ՄԻԿ-ն ընդունել է, որ նախնական ծանուցման պահանջները կարող են հիմնավորվել ազգային անվտանգության և հասարակական կարգի տեսանկյունից, սակայն հաշվի առնելով «հասարակական կարգի» նկատմամբ հավաքության նվազագույն ռիսկերը՝ Կիվենմասայի հավաքի նկատմամբ նման պահանջներ ներկայացնելը տեղին չէր: Նման որոշումը մեծապես հենվում է նախկին փորձի վրա: ՄԻԿ-ի որոշման այս հայեցակետի շուրջ Հերնդլի արտահայտած հակառակ տեսակետը հետևյալն է.

¶ 2.8. Ես [չեմ կարող] հասկանալ կոմիտեի՝ 9-րդ կետի 2-րդ ենթակետում (4-րդ և 5-րդ նախադասություններում) բերված այն պնդումը, որով փորձ է արվել կապ հաստատել սահմանափակող օրենսդրության նպատակի (ուստիև օրինականության) և տվյալ գործով դրա կիրառման միջև: «Ցույցի մասին նախապես ծանուցելու պահանջը սովորաբար պայմանավորված է ազգային անվտանգության և այլոց նկատառումներով» ասելը և հետո «հետևաբար ցույցերի մասին Ֆինլանդիայի օրենսդրությունը նման հավաքի առնչությամբ կիրառելը չի կարող համարվել դաշնագրի 21-րդ հոդվածով թույլատրված սահմանափակում» շարունակելը, մեղմ ասած, հակասական է:

¶ 2.9. Եթե սահմանափակող օրենսդրությունն ինքնին (ներկայիս գործով 1907 թ. «Հանրահավաքների մասին» օրենքը) համարվում է 21-րդ հոդվածի շրջանակներին համապատասխանող (հեղինակի կողմից չվիճարկված և կոմիտեի կողմից ընդունված փաստ), դրա շրջանակներին պատկանող բոլոր գործերի դեպքում համապատասխան օրենքն ակնհայտորեն պետք է կիրառվի միանման ձևով: Այլ կերպ ասած՝ եթե 1907 թ. օրենքը և դաշնագրի 21-րդ հոդվածով թույլատրված հավաքի ազատության իրացումը սկսվելուց առաջ «հանրահավաքի» մասին ծանուցելու պարտավորությամբ սահմանափակելը վավերական են, ապա այդ դրույթների ֆորմալ կիրառումը չի կարող դաշնագրի խախտում համարվել՝ անկախ նախնական ծանուցման պահանջի իրական պատճառներից (իշխանությունների տեսանկյունից):

Ծանուցման պահանջների առումով Ֆինլանդիայի իշխանություններին բացահայտ որևէ հայեցողություն չի տրվել, քանի որ բոլոր հանրահավաքներն այդ պահանջներին ինքնըստինքյան ենթակա են: Նման հանգամանքներում, տարբերակելով օրենքի պահանջները և դրանց կիրառումը, թվում է, ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը սխալ է գործել:

[19.10] Անդամների մեծամասնության որոշումը գուցե կարելի է հասկանալ՝ այն համարելով հանրահավաքների մասին նախապես ծանուցելու ձևական պահանջը դատապարտելու անհաջող փորձ:

Եվ իսկապես, ինքը՝ Կիվենմասան, նշել էր, որ օրենքն «անընդունելի լայն» է, քանի որ կարող է կիրառվել «առնվազն երեք հոգով դրսում տեղի ունեցող գրեթե ցանկացած քննարկման» դեպքում¹²: Մավրիկիոսի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում կոմիտեն ավելի շատ փաստեր է ներկայացրել առ այն, որ նման պահանջները հակասում են դաշնագրին: ՄԻԿ-ը քննադատել է այն օրենքը, որով պահանջվում է հանրահավաքների մասին տեղեկացնել յոթ օր առաջ¹³: Տվյալ դեպքում ծանուցման ժամկետը զգալիորեն ավելի երկար է, քան Կիվենմասայի գործում Ֆինլանդիայի օրենքով պահանջվող ժամկետը (վեց ժամ): Դրողզստանի Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը քննադատել է, որ հանրահավաքներ անցկացնելու թույլտվություն չստացած դեպքերը բողոքարկելու մեխանիզմներ չկան¹⁴:

¹² Պարբ. 8.4.:

¹³ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 60, պարբ. 20, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Բելառուսի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 86, պարբ. 18, որտեղ ցույցի մասին նախապես՝ 15 օր առաջ իրազեկելու պահանջը հակասում էր «21-րդ հոդվածի արժեքներին»: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Մարոկկոյի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 113, պարբ. 24, Եզրափակիչ դիտարկումներ Մոլդովայի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/75/MDA, պարբ. 15:

¹⁴ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/69/KGZ, պարբ. 22:

22-րդ հոդված

1. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության նպատակով դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքի իրականացման օրինական սահմանափակումների կիրառումն այն անձանց համար, ովքեր մտնում են զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1948 թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վնաս օրենսդրական ակտեր կամ օրենքը կիրառելու ի վնաս այդ երաշխիքների:

«ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ» ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

[19.11] Միավորումներ կազմելու ազատությունը հնարավորություն է տալիս անձանց ընդհանուր շահեր հետապնդելու նպատակով ձևավորելու ֆորմալ խմբեր: Նման խմբերը կարող են լինել քաղաքական կուսակցություններ, մասնագիտական կամ մարզական ակումբներ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ և ընկերություններ: Իրավունքը կարող է սահմանափակ կիրառում ունենալ՝ ընդգրկելով միայն «հանրային» նպատակներով ձևավորված խմբերը. միայն մասնավոր շահ հետապնդող խմբերը, ինչպիսիք են ընտանեկան խմբերը, հավանաբար, պաշտպանվում են առանձին 17-րդ հոդվածով¹⁵: Օրինակ՝ «Պ.Ս.-ն ընդդեմ Դանիայի» (*P.S. v Denmark, 397/90*) գործով ՄԻԿ-ը որոշել է, որ հոր՝ սեփական որդու հետ հաղորդակցվելու կարողության սահմանափակումների վերաբերյալ բողոքը 22-րդ հոդվածով խնդիր չի հարուցում¹⁶: Պարզ չէ՝ դա պայմանավորված էր հարաբերությունների բնույթով, թե՞ «միավորումներ» կազմելու համար անհրաժեշտ մարդկանց չափազանց քիչ թվով:

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

[19.12] 22-րդ հոդվածի 2-րդ կետը ներառում է միավորումներ կազմելու ազատության իրավունքի թույլատրելի սահմանափակումների ցանկ, որը կրկնում է 12-րդ, 18-րդ, 19-րդ և 21-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումների ցանկը: Նշված այլ դրույթների վերաբերյալ թվարկված սահմանափակումների մեկնաբանությունը կրկնվում է 22-րդ հոդվածում¹⁷: Օրինակ՝ «Ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ» սահմանափակումների մասին պահանջը ներառում է միավորումներ կազմելու ազատության սահմանափակումների համաչափ լինելու մասին գաղափարը¹⁸: «Ս.Ա.-ն ընդդեմ Իտալիայի» (*M.A. v Italy, 117/81*) գործով որոշում է կայացվել, որ միավորումներ կազմելու ազատության սահմանափակումները թույլատրելի են: Վճռի համաձայն՝ իտալական ֆաշիստական կուսակցությունն արգելելը չի հակասում 22-րդ հոդվածին ենթադրաբար հասարակական կարգի և պետական անվտանգության նկատառումներով¹⁹:

[19.13] 22-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին նախադասությամբ զինված ուժերին և ոստիկանությանը թույլատրվում է «օրինական» կերպով սահմանափակել միավորումներ կազմելու ազատության իրավունքի իրականացումը: Սա հավանաբար նշանակում է, որ այս սահմանափակումները պետք է ընդամենը օրենքով նախատեսված լինեն և համաչափության կամ ողջամտության որևէ պահանջի չենթարկվեն:

¹⁵ Գաղտնիության վերաբերյալ ընդհանուր առմամբ տես 16-րդ գլուխը:

¹⁶ Պարբ. 5.3.: Մյուս բողոքները, ինչպիսիք են 17-րդ (գաղտնիություն) և 23-րդ (ընտանիքին առնչվող իրավունքներ) հոդվածներով ներկայացված բողոքներ, անընդունելի էին՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառնալու պատճառաբանությամբ:

¹⁷ Տես վերը «Սիրակուզայի սկզբունքները», ծնթ. 6:

¹⁸ Տես [18.20] և [19.05]:

¹⁹ Այս գործը քննարկվում է այստեղ՝ [18.33]:

վեց²⁰։ Ավելին՝ օրինական սահմանափակումները կարող են իրականացվել ցանկացած պատակով, ոչ թե թվարկված նպատակներից որևէ մեկով։ Հնարավոր է, որ այս միջոցները մշակվել են ապահովելու համար, որ ոստիկանությունում և զինված ուժերում քաղաքական չեզոքության պահպանմանն ուղղված օրենքները համապատասխանեն ՔՔԻՄԴ-ին²¹։ Այնուամենայնիվ, 22-րդ հոդվածի 2-րդ կետի ներկայիս ձևակերպմամբ գուցե հնարավոր է զինված ուժերին և ոստիկանությանն օրենքով արգելել ընդդիմադիր կուսակցություններին միանալը գործադիր իշխանության իրավապահ ճյուղում քաղաքական հավատարմություն սերմանելու նպատակով։ Նման սահմանափակումների նկատմամբ համաչափության պահանջը պահպանելը հավանաբար խելամիտ կլիներ։ Ձինված ուժերի և ոստիկանության համար այս հատուկ կանոնների մասին ՄԻԿ-ը որևէ մեկնաբանություն չի արել։

[19.14] Բելառուսի և Լիտվայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն է արտահայտել հասարակական կազմակերպությունների և արհմիությունների դժվարին «գրանցման ընթացակարգերի» կապակցությամբ²²։ Միավորումները ճանաչելու ընթացակարգային ձևակերպումները չպետք է այնքան ծանրաբեռնող լինեն, որ հանգեցնեն 22-րդ հոդվածով ամրագրված իրավունքների էական սահմանափակումների։

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

[19.15] 22-րդ հոդվածի 1-ին կետը հատուկ պաշտպանում է տվյալ տեսակի միավորումների՝ արհմիությունների անդամներին։ Արհմիությունները աշխատավորների կազմակերպություններ են, որոնք միտված են իրենց անդամների ընդհանուր շահերն առաջ տանելուն։ 22-րդ հոդվածի 1-ին կետում նրանց հիշատակելը վկայում է արհմիությունների հետապնդման նախկին փորձի մասին։ Աշխատանքային իրավունքների պաշտպանությունը և իրականացումը հաճախ հակասում են մեծ ընկերությունների և կառավարությունների շահերին։

[19.16] 22-րդ հոդվածի 3-րդ կետով հատուկ պահպանվում է 1948 թ. ԱՄԿ-ի 87-րդ կոնվենցիայով ամրագրված պարտավորությունների անձեռնմխելիությունը։ Այս կոնվենցիան երաշխավորում է աշխատավորների կազմակերպությունների և դրանց անդամների որոշ իրավունքներ, այդպիսով 22-րդ հոդվածի 3-րդ կետը կարծես շեշտում է արհմիությունների՝ 22-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության փաստը։ Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 2-րդ կետի տեսանկյունից, որով մասնակից պետություններին արգելվում է այլ համաձայնագրերով ամրագրված պարտավորություններից խուսափելու համար ՔՔԻՄԴ-ը որպես պատրվակ օգտագործել, 22-րդ հոդվածի 3-րդ կետը մակերեսային է թվում²³։

[19.17] Սենեգալի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է արհմիությունների պաշտպանության համար 22-րդ հոդվածով նախատեսված լրացուցիչ տարրերի մասին²⁴։

¶ 16. Կոմիտեն մտահոգված է այն իրողությամբ, որ միավորումներ կազմելու ազատության իրավունքը հնարավոր չէ լիարժեք իրականացնել, և, մասնավորապես, այն հանգամանքով, որ օտարերկրացի աշխատողներին չեն թույլատրում արհմիություններում պաշտոններ զբաղեցնել, և տնօրենը կարող է արհմիությունները լուծարել։

ԳՈՐԾԱՊՈՒԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ

[19.18] Թեև 22-րդ հոդվածը երաշխավորում է անձի «[նրա] շահերի պաշտպանության համար արհմիություններ կազմելու և դրանց միանալու» իրավունքը, հարկ է հարցնել, թե որքանով է 22-րդ հոդվածը պաշտպանում այն միջոցները, որոնցով արհմիությունների անդամները կարող են հետապնդել իրենց ընդհանուր շահերը։ «*Ջ. Բ.-ն և այլք ընդդեմ Կանադայի*» (*J.B. et al v Canada, 118/82*) գործը՝ «Ալբերտա միության գործը», բարձրացրել է այն հարցը, թե արդյոք 22-րդ հոդվածը պաշտպանում է գործադուլի իրավունքը։

²⁰ Համեմատե՛ք [16.08-16.11] և [11.59-11.65] բերված մեկնաբանությունները։

²¹ Նովակ, վերը, ծնթ. 1, էջ 397։

²² Եզրափակիչ դիտարկումներ Բելառուսի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 86, պարբ. 19, Եզրափակիչ դիտարկումներ Լիտվայի վերաբերյալ, (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 87, պարբ. 20։

²³ Նովակ, վերը, ծնթ. 1, էջ 399-400։

²⁴ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 82։

[19.19] «Ջ. Բ.-ն և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (J.B. et al v CANADA, 118/82)

Անմիջապես ստորև բերված են գործի փաստերը.

¶ 1.1. Դիմումի հեղինակներն են (նախնական մամակը՝ թվագրված 1982 թ. հունվարի 5-ով, և դրան հաջորդող յոթ մամակները) Ջ. Բ.-ն, Փ. Դ.-ն, Լ. Ս.-ն, Թ. Մ.-ն, Դ. Փ.-ն և Դ. Ս.-ն, ովքեր հանդես են եկել որպես անհատ և Կանադայի նահանգային աշխատողների «Ալբերտա» միության գործադիր կոմիտեի անդամներ: Նրանց ներկայացնում է նահանգային աշխատողների «Ալբերտա» միությունը՝ փաստաբանի միջոցով:

¶ 1.2. Հեղինակներն անդադարաբար են այն հանգամանքին, որ 1977 թ. «Ալբերտայի հանրային ծառայողների հարաբերությունների մասին» օրենքով Ալբերտայի նահանգում հանրային ծառայողներին արգելված է գործադուլ անել, և պնդում են, որ նման արգելքով Կանադան խախտում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածը:

ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը վճռել է, որ 22-րդ հոդվածը գործադուլ անելու որևէ իրավունք չի պարունակում:

¶ 6.2. Կոմիտեին առաջադրված հարցն այս է. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածով գործադուլ անելու իրավունքը երաշխավորված է, թե՞ ոչ:

Քանի որ գործադուլի իրավունքը 22-րդ հոդվածում հատուկ ներառված չէ, ապա կոմիտեն պետք է մեկնաբանի՝ միավորումներ կազմելու ազատության իրավունքը գործադուլի իրավունք ենթադրո՞ւմ է, ինչպես պնդում են դիմումի հեղինակները: Նրանք բերել են այն փաստարկը, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության հովանու ներքո ընդունված աշխատանքային օրենսդրության մասին համաձայնագրերի շրջանակը և նշանակությունը մեկնաբանելիս նման եզրակացությունը պաշտպանվում է ԱՄԿ-ի մարմինների որոշումներով: Մարդու իրավունքների կոմիտեն չի կասկածում, որ տվյալ մարմինների՝ այդ համաձայնագրերի մեկնաբանությունը ճիշտ է և արդար: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր միջազգային համաձայնագիր, այդ թվում նաև՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ունի իր ուրույն տեղը և օրենքով նախատեսված լինելու դեպքում պետք է ազդել և արդար մեկնաբանվի այդ դրույթների վերահսկման իրավասություն ունեցող մարմնի կողմից:

¶ 6.3. 22-րդ հոդվածի շրջանակները մեկնաբանելիս կոմիտեն ուշադրություն է դարձրել հոդվածի համատեքստում, ինչպես նաև դրա առարկայի և նպատակի լույսի ներքո հոդվածի յուրաքանչյուր տարրի «սովորական նշանակություն» հասկացությանը (Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդված): Կոմիտեն դիմել է նաև մեկնաբանության օժանդակ միջոցների (Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 32-րդ հոդված) և ուսումնասիրել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նախապատրաստական փաստաթղթերը [ՄԻԿ-ն այնուհետև ուսումնասիրել է 22-րդ հոդվածի նախապատրաստական փաստաթղթերը և գործադուլի իրավունքի մասին որևէ հիշատակում չի գտել]: Ուստի կոմիտեն նախապատրաստական փաստաթղթերից չի կարող եզրակացնել՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը մշակողները մտադրվե՞լ են երաշխավորել գործադուլի իրավունքը, թե՞ ոչ:

¶ 6.4. Հոդվածի մշակման պատմության հիման վրա արվող եզրակացությունները հիմնավորված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի ու Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի համեմատական վերլուծությամբ: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետով ամծի՝ տնտեսական և սոցիալական շահերը առաջ տանելու և պաշտպանելու համար արհմիություններ կազմելու և դրանց միանալու իրավունքից բացի, ճանաչվում է նաև գործադուլի իրավունքը, ինչը հստակեցնում է, որ գործադուլի իրավունքը արհմիություններ կազմելու և դրանց միանալու իրավունքի ենթադրյալ բաղադրիչ համարվել չի կարող: Ուստի այն փաստը, որ 22-րդ հոդվածի 1-ին կետով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը գործադուլի իրավունքը նույն ձևով հատուկ չի նախատեսում, ցույց է տալիս, որ այդ իրավունքը ներառված չէ տվյալ հոդվածի շրջանակներում, և այն պաշտպանվում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի ընթացակարգերով ու մեխանիզմներով և ենթակա է այդ դաշնագրի 8-րդ հոդվածով նախատեսված հատուկ սահմանափակումներին:

¶ 7. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Մարդու իրավունքների կոմիտեն եզրակացնում է, որ դիմումը համատեղելի չէ դաշնագրի դրույթների հետ, ուստի կամընտիր արժանագրության 3-րդ հոդվածով ամրնդունելի է նյութաիրավական հիմնավորումների բացակայության պատճառաբանությամբ:

[19.20] Հեղինակները պնդել են, որ 22-րդ հոդվածի 3-րդ կետը ենթադրում է այդ հոդվածում գործադուլի իրավունքի ընդգրկումը.

¶ 5.1. Հեղինակները նշում են, որ դիմումն իսկապես համատեղելի է դաշնագրի դրույթների հետ, և անդրադառնում է գործի առնչությանը 22-րդ հոդվածի 3-րդ կետին: Նրանք պնդում են՝ ենթադրվում է, որ գործադուլի իրավունքը մերժելը բացասաբար է անդրադառնում ԱՄԿ-ի թիվ 87 կոնվենցիայով ամրագրված երաշխիքների վրա: Ավելին՝ դաշնագրի 22-րդ հոդվածի 1-ին կետը մեկնաբանելիս նաև հարկ է հաշվի առնել միջազգային այլ գործիքներ, այդ թվում՝ ԱՄԿ-ի թիվ 87 կոնվենցիան, որում մանրամասն մշակված են միջազգային իրավունքի՝ միավորումներ կազմելու ազատության սկզբունքները: Նշվում է, որ մի շարք որոշումներով ԱՄԿ-ի Միավորումներ կազմելու ազատության կոմիտեն վճռել է, որ գործադուլ անելու իրավունքը բխում է ԱՄԿ-ի թիվ 87 կոնվենցիայի 3-րդ հոդվածից, որն աշխատողների համար էական միջոց կարող է ծառայել իրենց մասնագիտական շահերն առաջ տանելու և պաշտպանելու համար: Մասնավորապես, հեղինակները նշում են, որ Միավորումներ կազմելու ազատության կոմիտեն չորս գործով հաշվի է առել «Ալբերտայի հանրային ծառայողների հարաբերությունների մասին» օրենքի դրույթները և որոշել, որ օրենքը չի համապատասխանում թիվ 87 կոնվենցիայով սահմանված ազատ միավորումներ կազմելու երաշխիքին: Ազատ միավորումներ ձևավորելու գծով կոմիտեն համապատասխանաբար դիմել է Կանադայի կառավարությանը՝ առաջարկելով «կրկին ուսումնասիրել քննվող դրույթները՝ եզրույթի խստագույնս իմաստով էական նշանակություն ունեցող ծառայությունների՝ գործադուլների վրա դրված արգելքը սահմանափակելու նպատակով»: ԱՄԿ-ի Կոնվենցիաների և առաջարկությունների կիրառման փորձագետների կոմիտեն վերահաստատել է նաև ոչ էական նշանակություն ունեցող հանրային ծառայությունների գործադուլ անելու իրավունքի կարևորությունը:

ՄԻԿ-ի պատասխանը այս փաստարկին հաստատում է 22-րդ հոդվածի 3-րդ կետի նվազագույն նշանակությունը [19.16].

¶ 6.5. Ինչ վերաբերում է այն կարևորությանը, որը հեղինակները հաղորդում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածի 3-րդ կետին (տե՛ս վերը 5-րդ կետի 1-ին ենթակետը), կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունն ընդհանրապես չի պնդել, որ օրենսդրական միջոցներ ձեռնարկելը կամ ԱՄԿ-ի թիվ 87 կոնվենցիայով նախատեսված երաշխիքների դեմ օրենքը կիրառելը թույլատրվում է 22-րդ հոդվածով:

[19.21] Տկն Հիգինսի և պարոնայք Լալահի, Մավրոմատիսի, Օփսալի և Վաքկոյի ներկայացրած զգալի փոքրամասնությունն անհամաձայնություն է հայտնել է հետևյալ ձևակերպմամբ.

¶ 1. Իր որոշման մեջ կոմիտեն նշում է, որ իր առջև դրված խնդիրը որոշելն է, թե արդյոք գործադուլի իրավունքը Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածով երաշխավորված է, թե՞ ոչ, և որոշելով, որ դա այդպես չէ, կոմիտեն հայտարարում է դիմումի անընդունելիության մասին:

¶ 2. Ցավում ենք, որ չենք կարող համաձայնել սույն գործով բարձրացված հարցերի նկատմամբ որդեգրված այս մոտեցմանը: Նշում ենք, որ Կանադայում, ինչպես և շատ այլ երկրներում, գործադուլ անելու իրավունքը տեսականորեն գոյություն ունի, և հեղինակների բողոքը վերաբերում է նրան, որ «Ալբերտայի հանրային ծառայողների հարաբերությունների մասին» օրենքով հանրային ծառայողներին արգելված է առհասարակ օգտվել այդ իրավունքից: Մենք կարծում ենք՝ այն հարցը, որին այս պահի դրությամբ պետք է պատասխանի կոմիտեն, այն է, թե արդյոք առանձին 22-րդ հոդվածով կամ դաշնագրի այլ դրույթների հետ միասին համապատասխան հանգամանքներում գործադուլի իրավունքը պարտադիր բացառվում է, թե՞ ոչ:

¶ 3. 22-րդ հոդվածը նախատեսում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության նպատակով դրանց անդամակցելու իրավունքը»: Ուստի, արհմիություններ կազմելու և դրանց միանալու իրավունքը միավորումներ կազմելու ազատության առավել ընդհանուր իրավունքի դրսևորում է: Այնուհետև ավելի է հստակեցվում, որ արհմիություններին միանալու իրավունքը պայմանավորված է անձի շահերի պաշտպանության նպատակով: Այս համատեքստում հարկ է նշել, որ «արհմիություններից» հետո ստորակետ դրված չէ, և քերականության տեսանկյունից «իր շահերի պաշտպանության նպատակով» արտահայտությունը վերաբերում է «արհմիություններ կազմելու և դրանց միանալու» արտահայտությանը, ոչ թե ընդհանրապես միավորումներ կազմելու ազատությանը: Անշուշտ, սա ցույց է տալիս, որ 22-րդ հոդվածում գործադուլ անելու իրավունքի մասին որևէ հիշատակում չկա, ինչպես հիշատակված չեն տարբեր այլ գործողություններ, ինչպիսիք են ժողովները կամ խմբակային գործարքները, որոնց կարող է մասնակցել արհմիության անդամն իր շահերը պաշտպանելու նպատակով: Այնուամենայնիվ, այս իրավունքի կիրառումը պահանջում է, որ թույլատրվեն որոշ չափով փոխհամաձայնեցված միջոցառումներ, այլապես այն իր նպատակներին չի ծառայի: Մեր կարծիքով՝ սա 22-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավունքին ներհատուկ կողմ է: Այս իրավունքի կիրառման համար էական գործողությունները չեն կարող նախապես թվարկվել և պետք է ուսումնասիրվեն սոցիալական հարթությունում ու այս հոդվածի այլ կետերի լույսի ներքո:

¶ 4. Հոդվածի մշակման պատմությունը հստակ ցույց է տալիս, որ միավորումներ կազմելու իրավունքին անդրադարձել են արհմիություններ կազմելու և դրանց միանալու իրավունքից առանձին: Նախապատրաստական փաստաթղթերը վկայում են, որ 1952 թ. գործադուլ անելու իրավունքն առաջարկվել է միայն արհմիությունների մասին

հողվածի նախագծի համար: Մեր կարծիքով՝ այդպես էլ պետք է լիներ: Այն ժամանակ դա մերժվել է: Նախապատրաստական փաստաթղթերը նաև ցույց են տալիս, որ 1957 թ., երբ գործադուլի իրավունքը (որը ենթակա էր որոշ սահմանափակումների) ընդունվել էր որպես լրամշակում արհմիություններ կազմելու և դրանց միանալու իրավունքի մասին հողվածի նախագծում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի նախագծում այդ լրամշակումը ոչ ներմուծվել է, ոչ էլ քննարկվել: Մեր գնահատմամբ՝ պատճառը պարզ է և հիմնավորված, այսինքն՝ քանի որ այն, ինչն այժմ ներկայանում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդված, վերաբերում է առհասարակ միավորումներ կազմելու իրավունքին, ներառյալ ակումբները և կազմակերպությունները, ինչպես նաև արհմիությունները, և որոշակի գործողություն նշելը, ինչպիսին է գործադուլը, անտեղի կլիներ:

¶ 5. Ուստի մենք կարծում ենք, որ նախապատրաստական փաստաթղթերը կոմիտեի առջև դրված խնդրի համար որոշիչ չեն: Այն դեպքերում, երբ քննվող հարցին առնչվող հողվածը մշակողների մտադրությունները լիովին հստակ չեն, ապա Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածը նույնպես մեր ուշադրությունը հրավիրում է համաձայնագրի առարկայի և նպատակի վրա: Մեր կարծիքով՝ համաձայնագրում մարդու իրավունքների խթանման տեսանկյունից սա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ իրավունքների կամ դրանց իրականացման սահմանափակումը կամ պետության կողմից կոմիտեի՝ տվյալ գործողության արգելքն ուսումնասիրելու իրավասությունը ինքնըստինքյան ենթադրված չէ:

¶ 6. Նշում ենք, որ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածում ընդգծվում է յուրաքանչյուրի՝ արհմիություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհմիության անդամակցելու իրավունքը, այնուհետև նշվում է «գործադուլի իրավունքը՝ այն տվյալ երկրի օրենքներին համապատասխան իրականացնելու պայմանով»: Թեև այս վերջին արտահայտությունը որոշ իրավական բարդ հարցեր է առաջացնում, ներկայիս նպատակի համար բավարար է, որ միավորումներ կազմելու հայեցակետը, որը Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածում շոշափվում է որպես առանձին իրավունք, առնչվում է 8-րդ հոդվածի համար հատկանշական մի շարք իրավունքների, սակայն պարտադիր չէ, որ բոլոր հանգամանքներում բացառի գործադուլի իրավունքը:

¶ 7. Մենք նաև տեղյակ ենք, որ ԱՄԿ-ի Միավորումներ կազմելու ազատության կոմիտեն, որը նման հարցերի շուրջ հեղինակավոր կարծիք հայտնելու համար առանձնահատուկ նպաստավոր դիրքում է, նշել է, որ «Ալբերտայի համարային ծառայողների հարաբերությունների մասին» օրենքով գործադուլներն ընդհանրապես արգելվել համահունչ չէ ԱՄԿ-ի թիվ 87 կոնվենցիայի 10-րդ հոդվածին, «քանի որ այն զգալիորեն սահմանափակում է արհմիությունների՝ իրենց անդամների շահերն առաջ տանելու և պաշտպանելու հնարավորությունները»: Թեև այս պահին մենք նյութաիրավական հիմնավորումները մեկնաբանելու նպատակ չունենք, սակայն չենք կարող չնկատել, որ ՄԱԿ-ի եզրակացության հիմքում ընկած է արհմիությունների անդամների շահերն առաջ տանելը և պաշտպանելը, իսկ 22-րդ հոդվածը նաև պահանջում է մեզնից հաշվի առնել, որ արհմիությանը միանալու նպատակը անձի շահերը - պաշտպանելն է: Կրկին նշենք, որ մենք որևէ պատճառ չենք տեսնում, թե համեմատելի դեպքերում ինչո՞ւ պետք է 22-րդ հոդվածի մեկնաբանությունը տարբերվի ԱՄԿ-ի մեկնաբանությունից: Այս առումով հարկ է նշել, որ 22-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված է, որ հողվածում ոչինչ չթույլատրի մասնակից պետությանը ԱՄԿ-ի թիվ 87 կոնվենցիայով ձեռնարկել այնպիսի օրենսդրական միջոցներ կամ օրենքն այնպես կիրառել, որ դրանք բացասաբար ազդեն այդ կոնվենցիայով նախատեսված երաշխիքների վրա:

¶ 8. Մենք չենք հասկանում, թե ինչո՞ւ է իրավունք կիրառելու եղանակը որոշ առաջնային և լայնորեն ընդունված միջազգային փաստաթղթերով տեսականորեն համարվել համապատասխան, իսկ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հետ՝ անհամատեղելի:

¶ 9. 22-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում է միավորում կազմելու ազատության իրավունքին, իսկ 2-րդ կետը՝ իրավունքի իրականացման շրջանակին, որը պարտադիր ներառում է այն միջոցները, որոնց արհմիության անդամը կարող է դիմել իր շահերը պաշտպանելու համար:

¶ 10. Հարց է՝ գործադուլի իրավունքը հեղինակների շահերի պաշտպանության համար անհրաժեշտ տա՞րր է, թե՞ ոչ, և եթե այդպես է, դրա անտեղի կամ տեղին սահմանափակումը վերաբերո՞ւմ է նյութաիրավական հիմնավորումներին, այսինքն՝ Կանադայում կիրառված սահմանափակումը 22-րդ հոդվածի 2-րդ կետով հիմնավորվա՞ծ է, թե՞ ոչ: Սակայն մենք չենք կարծում, որ դիմումն այս հիմքով անընդունելի է:

Անընդունելիության հնարավոր այլ նյութաիրավական հիմնավորումներն ուսումնասիրելուց հետո կոմիտեի փոքրամասնությունը որոշում է կայացրել, որ բողոքն ընդունելի է:

[19.22] Գործի ընդունելիության քննության ընթացքում ՄԻԿ-ը պետք է շեշտը դնել բոլոր միավորումներին պաշտպանող 22-րդ հոդվածի շրջանակի վրա: 22-րդ հոդվածով արհմիությունների հատուկ պաշտպանու-

թյանն առնչվող հարցերը չպետք է ուսումնասիրվեն նախքան նյութաիրավական հիմնավորումները քննելու փուլը: Ահա թե ինչու կոմիտեի անդամների փոքրամասնությունը, որը մասնավորապես արհմիությունների պաշտպանության շրջանակը որոշելու փոխարեն ուշադրությունը սևեռել էր զուտ միավորումների պաշտպանության շրջանակի վրա, մեկնաբանության առավել հետևողական եղանակ է կիրառել:

[19.23] Անշուշտ կասկածելի է, որ 22-րդ հոդվածով արհմիությունների գործողությունների համար նախատեսված նվազագույն պաշտպանությունը կոմիտեի անդամների մեծամասնության որոշումով տարածվում է բոլոր միավորումների գործողությունների վրա: Այլապես մեծամասնությունը 22-րդ հոդվածը կրնա քննարկել շատ նեղ և ոչ նպատակային ձևով: Միավորումներին միանալու ազատությունը բավականին - նեղ է, եթե երաշխավորված է միայն միավորման գոյությունը, սակայն ոչ միավորման համար անհրաժեշտ գործողությունները: Մյուս կողմից՝ արհմիությունները, ի վնաս դրանց, առանձնացնելու որևէ հիմնավորված պատճառ չկա, որն ըստ երևույթին արել է կոմիտեի անդամների մեծամասնությունը:

[19.24] ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը չափազանց մտահոգված էր ՔՔԻՄԴ-ի և նրա ուղեկից դաշնագրի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՏՄՄԻՄԴ) խնդրո առարկաները տարանջատելով: Գործադուլի իրավունքը հստակ պաշտպանված է ՏՄՄԻՄԴ-ի 8-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետով: Այն որպես տնտեսական և սոցիալական իրավունք դասակարգվել կարծես թույլ չի տվել մեծամասնությանը գործադուլի իրավունքը ներառել որպես քաղաքացիական և քաղաքական իրավունքի կողմ: Ի տարբերություն՝ 26-րդ հոդվածին առնչվող հետագա գործերով կայացրած որոշումներով²⁵ ՄԻԿ-ը պաշտոնապես ճանաչել է, որ երկու դաշնագրերի խնդրո առարկաները զգալիորեն համընկնում են:

[19.25] 1986 թ. Ալբերտայի միությունների գործը հայտարարվել է անընդունելի: Իռլանդիայի, Գվատեմալայի, Գերմանիայի և Չիլիի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել գործադուլի իրավունքի սահմանափակումների կապակցությամբ²⁶: Սա թերևս նշանավորի արհմիությունների անդամների պաշտպանության մասին 22-րդ հոդվածի շրջանակի վերաբերյալ տրամադրությունների փոփոխությունը:

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՉՄԻԱՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

[19.26] «ԳՈՏԻԵՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (GAUTHIER v CANADA, 633/95)

Հեղինակի բողոքը վերաբերում էր «խորհրդարանական մամուլի սրահ» մասնավոր կազմակերպության լիարժեք անդամությունից զրկվելուն: Անդամությունից զրկվելու պատճառով նրան չեն թույլատրել լիարժեք օգտվել խորհրդարանի մամուլի ծառայություններից, քանի որ խորհրդարանի կանոնների համաձայն՝ դրանցից կարող են օգտվել միայն մամուլի սրահի անդամները: Հեղինակը նշել է, որ փաստերի հանրագումարում, *ի թիվս այլոց*, սահմանափակվել է միավորում կազմելու ազատության իր իրավունքը²⁷: Մասնակից պետությունը պնդել է.

¶ 11.8. Դաշնագրի 22-րդ հոդվածի առնչությամբ մասնակից պետությունը նշում է, որ կառավարությունը չի ստիպում հեղինակին որևէ միավորման միանալ: Նա ազատ կարող է չմիանալ մամուլի սրահին, լրագրողությամբ զբաղվելու իր կարողությունը նույնպես որևէ կերպ պայմանավորված չէ մամուլի սրահին անդամակցությամբ:

ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշել է, որ 22-րդ հոդվածին առնչվող դիմումը հիմնավորված չէ: Այնուամենայնիվ, կոմիտեի անդամների՝ զգալի թիվ կազմող փոքրամասնությունը որոշել է, որ փաստերը վկայում են 22-րդ հոդվածի խախտման մասին: Տկն Էվաթը, տկն Մեդինա Քուրոգան, պարոնայք Սոլարի Յրիգոյենը և Բիագվաթին, ինչպես նաև լորդ Քոլվիլը նշել են հետևյալը, ինչին էապես համաձայնել են պարոնայք Կրեցմերը և Լալահը:

²⁵ Տե՛ս, օր.՝ «Բրուկսն ընդդեմ Նիդեռլանդների» (*Broeks v Netherlands*, 172/84) գործով որոշումը [23.10]: Տե՛ս նաև [1.60]:

²⁶ Եզրափակիչ դիտարկումներ Իռլանդիայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 21, պարբ. 17, Եզրափակիչ դիտարկումներ Գվատեմալայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 63, պարբ. 23, Եզրափակիչ դիտարկումներ Գերմանիայի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 73, պարբ. 18, Եզրափակիչ դիտարկումներ Չիլիի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104, պարբ. 25:

²⁷ Սույն գործի առավել լիակատար մանրամասների համար տե՛ս [18.31]:

22-րդ հոդվածի առնչությամբ հեղինակը պնդում է, որ խորհրդարանի մամուլի ծառայությունների հնարավորություններից օգտվելու համար «Մամուլի սրահ» միավորմանն անդամակցելու պահանջը խախտել է 22-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի հետ միասին ընթերցմամբ, նախատեսված իր իրավունքները: Միավորում կազմելու ազատության իրավունքը ենթադրում է, որ ընդհանուր առմամբ պետությունը չի կարող որևէ մեկին ստիպել միանալ միավորմանը: Այն դեպքերում, երբ տվյալ մասնագիտությամբ զբաղվելու կամ կոչմանը հետևելու համար պահանջվում է միավորման անդամ լինել, կամ երբ միավորման անդամ չլինելու համար կան պատժամիջոցներ, հարկավոր է կոչ անել մասնակից պետությանը ցույց տալ, որ պարտադիր անդամությունն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ դաշնագրով թույլատրված շահը հետապնդելու համար: Այս հարցում կոմիտեի քննարկումները՝ բերված Կարծիքների 13-րդ կետի 6-րդ ենթակետում²⁸, հստակեցնում են, որ մասնակից պետությունը ցույց չի տվել, որ տվյալ կազմակերպությանն անդամագրվելու պահանջը՝ նշված նպատակներով մամուլի սրահ մուտքը սահմանափակելու համար, 22-րդ հոդվածի 2-րդ կետով անհրաժեշտ սահմանափակում է: Հետևաբար, հեղինակի նկատմամբ կիրառված սահմանափակումները խախտել են դաշնագրի 22-րդ հոդվածը:

[19.27] ՄԻԿ-ի անդամների մեծամասնությունը նախապես *ex officio* որոշեց, որ 22-րդ հոդվածի հարցն ընդունելի է²⁹:

¶ 9.4. Կոմիտեն հետազայում գտավ, որ այն հարցը, թե որպես տեղեկություններ պահանջելու և ստանալու ազատությունից օգտվելու պայման՝ մասնակից պետությունը կարող է պահանջել անդամագրվել մասնավոր կազմակերպությանը, պետք է ուսումնասիրվի՝ հաշվի առնելով նյութաիրավական նկատառումները, քանի որ այն կարող է հարցեր առաջացնել ոչ միայն դաշնագրի 19-րդ հոդվածով, այլև 22-րդ և 26-րդ հոդվածներով:

Կոմիտեի հետագա որոշումն այն մասին, որ 22-րդ հոդվածով դիմումը հիմնավորված չէ, շփոթեցնում է: Քանի որ որոշման փոփոխության համար ոչ մի պատճառ չի ներկայացվում, այս կապակցությամբ գերադասելի են կոմիտեի փոքրամասնության կարծիքները: Հնարավոր է, որ կոմիտեի անդամների մեծամասնությունը համարել է, որ ըստ 22-րդ հոդվածի՝ *մասնավոր* կազմակերպությանն անդամագրվելուց բխող հարցերի համար պետությունը չի կարող պատասխանատու լինել³⁰: Սակայն դաշնագրով ամրագրված այլ իրավունքների առնչությամբ մասնավոր դաշտում դաշնագրի կիրառումը հաստատվել է³¹: Ավելին՝ հեղինակի բողոքն ավելի շատ վերաբերում է անդամությունից իրեն հեռացնելու հետևանքներին, որոնց համար պետությունը միանշանակ մեղավոր է, այլ ոչ թե բուն հեռացման փաստին: Ամեն դեպքում, հաշվի առնելով ընդունելիության մասին որոշումը, հնարավոր է, որ մեծամասնությունը համաձայն է, որ 22-րդ հոդվածն ազատություն է երաշխավորում որոշ միավորումներին չմիանալու հետևանքներից:

[19.28] 22-րդ հոդվածով միություններին պարտադիր անդամագրվելն արգելվում է, թե՛ ոչ (այսինքն՝ երբ անձին իր մասնագիտությամբ արդյունավետ աշխատանքը մերժում են, քանի դեռ նա չի միանում համապատասխան արհմիությանը): Միություններին պարտադիր անդամագրումը հզորացնում է արհմիությունների՝ իրենց անդամների շահերը պաշտպանելու կարողությունը. որքան ավելի մեծ է միությունը, այնքան ավելի մեծ է նրա բանակցելու ուժը: Այնուամենայնիվ, միություններին պարտադիր անդամագրվելը կարող է հակասել անձի՝ միավորում կազմելու «ազատության» գաղափարին, որը ենթադրում է կազմակերպություններին ազատորեն միանալու կամ չմիանալու իրավունք: Հաշվի առնելով *Գոտիեի* գործով ՄԻԿ-ի կայացրած որոշումը դիմումի ընդունելիության մասին և գործում առկա սուր հակասությունները՝ կարելի է ենթադրել, որ ՄԻԿ-ը կքննադատի քողարկված գործելակերպը³²: Մյուս կողմից՝ միություններին պարտադիր անդամակցելը կարող է ենթադրաբար հիմնավորվել որպես «այլոց իրավունքների պաշտպանություն», ինչպիսիք են աշխատանք կամ բավարար աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքը³³:

²⁸ Նույն տեղում;

²⁹ Հեղինակն ի սկզբանե 22-րդ հոդվածը չի բարձրացրել՝ փոխարենը հենվելով 19-րդ հոդվածով ամրագրված արտահայտվելու ազատության իրավունքների վրա:

³⁰ Սա մասնակից պետության՝ գործի ընդունելիության դեմ ուղղված փաստարկներից մեկն էր, պարբ. 4.3-4.10:

³¹ Ընդհանուր առմամբ տե՛ս [1.77-1.84]:

³² Նման գործելակերպը դատապարտել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, օր.՝ «*Յանգը, Ջեյմսը և Ուեբստերն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*Young, James and Webster v UK, 1982, 4 EHRR 38*) գործով:

³³ Այս իրավունքները երաշխավորված են համապատասխանաբար ՏՄԻՄԴ-ի 6-րդ և 7-րդ հոդվածներով:

Եզրակացություն

[19.29] Ցավոք, ՄԻԿ-ի՝ 21-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսված բազան չափազանց աղքատիկ է: 21-րդ հոդվածով միակ գործը «*Կիվենմաան ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Kivenmaa v Finland, 412/90*) գործն է, որի փաստարկման հիմքը թույլ է և այնքան էլ չի նպաստում հոդվածի մեկնաբանությանը: 22-րդ հոդվածով հիմնական գործը «*Ջ. Բ.-ն և այլք ընդդեմ Կանադայի*» (*J.B. et al v Canada, 118/82*) գործն է, որն առնչվում է արհմիության անդամների իրավունքներին: Կոմիտեի անդամների մեծամասնությունը 22-րդ հոդվածը բավական նեղ է մեկնաբանել, որպեսզի ապահովի ոչ թե արհմիությունների գոյության, այլ դրանց գործողությունների նվազագույն պաշտպանությունը: Այնուամենայնիվ, բոլորովին վերջերս թողարկված Եզրափակիչ դիտարկումները թերևս կարող են նշանավորել Ջ. Բ.-ի գործով պահպանողական փաստարկման նահանջը: Եվ, վերջապես, «*Գոտիեն ընդդեմ Կանադայի*» (*Gauthier v Canada, 633/95*) գործը լրջորեն վկայում է, որ 22-րդ հոդվածը ազատություն է երաշխավորում նաև միավորումներին ստիպողաբար միանալուց:

[19.30] Կարելի է միայն ենթադրել, որ այս դրույթների սահմանափակումները կմեկնաբանվեն այնպես, ինչպես միևնույն ձևակերպումներով այլ դրույթները, ինչպես օրինակ՝ 19-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու երաշխիքը: Եթե այսուհետև էլ համապատասխան գործեր չլինեն, ապա ՄԻԿ-ը պետք է Ընդհանուր մեկնաբանություններ հրապարակի այս երկու հոդվածների նշանակությունը զարգացնելու համար:

Ընտանիքի պաշտպանություն. հոդված 23

- Ընտանիքի սահմանումը[20.06]
- Ընտանիքի միասնության պաշտպանության իրավունք..... [20.13]
 - Որևէ երկրի տարածքում մնալու իրավունք և ընտանիքի միասնության իրավունք..... [20.13]
 - Երեխաների հարկադիր հեռացումը ծնողից..... [20.27]
- Հոդված 23, կետ 2. Ամուսնության իրավունք..... [20.28]
- Հոդված 23, կետ 2. Ընտանիք կազմելու իրավունք..... [20.33]
- Հոդված 23, կետ 3. Փոխադարձ համաձայնությունը՝ որպես ամուսնության նախապայման [20.37]
- Հոդված 23, կետ 4. Ամուսինների իրավահավասարություն [20.39]
 - Ամուսնալուծությունից հետո երեխայի հետ շփվելու և խնամակալության իրավունք . [20.45]
- Եզրակացություն [20.56]

ՀՈՂՎԱԾ 23

1. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար խմբային միավորն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք:
2. Ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց համար ճանաչվում է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:
3. Ոչ մի ամուսնություն չի կարող կայանալ առանց ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության:
4. Սույն դաշնագրի մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ՝ ապահովելու ամուսինների իրավունքների և պարտականությունների հավասարությունը ամուսնության պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում: Ամուսնալուծության դեպքում պետք է նախատեսվի երեխայի անհրաժեշտ պաշտպանություն:

[20.01] 23-րդ հոդվածը երաշխավորում է ընտանիքի պաշտպանված լինելու իրավունքը, ինչպես նաև ամուսնության հետ առնչվող և ամուսինների իրավահավասարության իրավունքները: Թեև 23-րդ հոդվածը մեծ նշանակություն է հաղորդում ընտանիքին՝ որպես հիմնարար հասարակական ինստիտուտի, այն չի կարող խոչընդոտել օրենքով սահմանված դեպքերում «ընտանիքի» հանդեպ իրավական միջամտության կիրառումը, ինչպես օրինակ՝ ներընտանեկան բռնության¹ կամ երեխային անտեսելու և նրա հանդեպ դաժան վերաբերմունքի² դեմ պայքարելու նպատակով գործադրվող միջոցները:

[20.02]

ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 23-րդ հոդվածը ճանաչում է, որ ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար խմբային միավորն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք: Ընտանիքի և նրա անդամների պաշտպանությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն երաշխավորված է նաև սույն դաշնագրի այլ դրույթներով: Այսպես, 17-րդ հոդվածով արգելվում է կամա-

¹ Ներընտանեկան բռնությունից տուժողներն օգտվում են փոխհատուցման իրավունքներից, ինչպիսիք են օրինակ՝ մարդու անվտանգությանը վերաբերող իրավունքները՝ սահմանված 9-րդ հոդվածի 1-ին կետով [11.03]: Տե՛ս G. Van Beuren, 'The International Protection of Family Members' Rights as the 21st Century Approaches' (1995) 17 *HRQ* 732, 748-56:

² Տե՛ս [21.34]:

յական կամ անօրինական միջամտությունն ընտանեկան կյանքին: Ավելին՝ դաշնագրի 24-րդ հոդվածը նվիրված է հատուկ երեխայի իրավունքներին՝ որպես այդպիսին կամ որպես ընտանիքի անդամի: Մասնակից պետություններն իրենց զեկույցներում հաճախ բավարար տեղեկատվություն չեն տրամադրում այն մասին, թե ինչպես են պետությունն ու հասարակությունը կատարում ընտանիքի և դրա անդամների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունը:

[20.03] Ինչպես արդեն նշվել է թիվ 19 Ընդհանուր մեկնաբանության մեջ, սույն դաշնագրով սահմանվում են ընտանիքին վերաբերող նաև այլ իրավունքներ, մասնավորապես, 17-րդ հոդվածով ամրագրված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքով արգելվում են «կանայական միջամտությունները» որևէ մեկի ընտանեկան կյանքին: 17-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձանց՝ պետության կանայական միջամտություններին չենթարկվելու բացասական իրավունքը: 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մարդիկ օրենքով պաշտպանված են «նման միջամտություններից», այդպիսով, հոդվածի այս կետը սահմանում է դրական պարտավորություն³: 23-րդ հոդվածն էլ ավելի է ընդլայնում վերոհիշյալ դրական պարտավորությունների շրջանակը՝ երաշխավորելով ընտանիքների պաշտպանության դրական իրավունքները, ինչպես օրինակ՝ հատուկ դրամական օգնության կամ հարկային արտոնությունների տրամադրումը⁴: Այնուամենայնիվ, չնայած 17-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված երաշխիքների ակնհայտ որակական տարբերությանը՝ ընտանեկան կյանքի իրավունքը խախտելու դեպքերը մեծ մասամբ առնչվել են այս երկու հոդվածների շրջանակներում պետությունների կողմից իրավունքի խախտումներին կամ իրավունքների վերականգնմանը⁵:

[20.04]

ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. Յարկ է, որ մասնակից պետությունները օրենսդրական, վարչական և այլ բնույթի միջոցներ ձեռնարկեն դաշնագրի 23-րդ հոդվածում սահմանված պաշտպանությունը երաշխավորելու համար: Այդ պետությունները պետք է մանրամասն տեղեկատվություն տրամադրեն նման միջոցների բնույթի և դրանց արդյունավետ կիրառումը երաշխավորող եղանակների մասին: Քանի որ դաշնագրով ճանաչվում է նաև ընտանիքի՝ հասարակությունից պաշտպանվելու իրավունքը, մասնակից պետությունների զեկույցներում, փաստորեն, պետք է նշվի, թե ինչպես են պետությունը և հասարակական այլ հաստատություններն ապահովում անհրաժեշտ պաշտպանությունը, և պետությունը ֆինանսական կամ այլ բնույթի աջակցություն ցույց տալիս է նման հաստատությունների գործունեությունը՝ բարելավելու նպատակով, իսկ եթե ցույց է տալիս, ապա ի՞նչ ծավալով և ինչպե՞ս է երաշխավորում այդ գործունեության համապատասխանությունը դաշնագրի դրույթներին:

[20.05] ՄԻԿ-ը «*Աումեերուդդի-Ցիֆրան և այլք ընդդեմ Մավրիկիոսի*» (*Aumeeruddy-Cziffra et al v Mauritius, 35/78*) գործով կայացրած որոշման մեջ 23-րդ հոդվածի կիրառման շրջանակների առնչությամբ հայտնել է.

¶ 9.2(բ) 2 (ii) 1. ...Կոմիտեն կարծում է, որ հասարակության կամ պետության կողմից ընտանիքին տրամադրվող իրավական պաշտպանությունը կամ միջոցները կարող են տարբերվել՝ կախված երկրից և թելադրված են սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային տարբեր պայմաններով և սովորույթներով:

23-րդ հոդվածը թերևս ԶԶԻՄԴ-ի՝ «տնտեսական տեսանկյունից միակ պայմանական» իրավունքն է, քանի որ այդ իրավունքն իրացնողների մակարդակը կարող է տարբերվել՝ մասնակից պետությունների պայմաններին համապատասխան⁶: Եվ իրոք, վիճելի է մնում հետևյալ հարցը. արդյոք դրամական օգնություն ստանալու իրավունքը երբևէ ըստ էության կամրագրվի՞ 23-րդ հոդվածով: «*Ուլայինը և Կայսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Oulajin and Kaiss v Netherlands 406, 426/90*) գործի առնչությամբ ՄԻԿ-ն այն կարծիքին է, որ թեև պետությանը չի հաջողվել պաշտպանել արտասահմանում գտնվող հեղինակի հոգեզավակների՝ հեղինակի զարմիկների շահերը, 17-րդ կամ ենթադրաբար 23-րդ հոդվածներով սահմանված

³ Տե՛ս մեկնաբանությունն այստեղ՝ [16.17-16.19]:

⁴ 17-րդ և 23-րդ հոդվածների բացասական և դրական իրավունքների տարբերակման վերաբերյալ տե՛ս նաև M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 406: Այնուհանդերձ, նա ընդունում է, որ «գործնականում դժվար է պահպանել այդ տարբերակումը»: Տե՛ս նաև F. Olsen, 'The Myth of State Intervention in the Family' (1985) 18 *Michigan Journal of Law Reform* 835, որը պնդում է, որ տարբերությունն ընտանեկան կյանքին «միջամտելու» և «չմիջամտելու» միջև անձնաձև է:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս տնտեսության հարաբերականությունը՝ [1.101]:

ընտանիքի պաշտպանությանը վերաբերող դրույթների շրջանակներում հարցեր չեն ծագել⁷:

Ընտանիքի սահմանումը

[20.06]

ԹԻՎ 16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Ինչ վերաբերում է «ընտանիք» եզրույթին, ապա սույն դաշնագրի խնդիրներից ելնելով, 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հարկ է ավելի լայն իմաստով մեկնաբանել այն՝ ընտանիքի՝ տվյալ մասնակից պետության հասարակության կողմից ճանաչված բոլոր անդամներին ներառելու նպատակով:

ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 2. Կոմիտեն նշում է, որ «ընտանիք» հասկացությունը կարող է որոշ իմաստով տարբեր լինել տարբեր պետություններում և նույնիսկ միևնույն պետության շրջաններում, հետևաբար անհնար է տվյալ հասկացությունը սահմանել կայուն բնորոշմամբ: Այնուհանդերձ, կոմիտեն ընդգծում է, որ պետության օրենսդրությամբ և պրակտիկայում ընտանիք համարվող մարդկանց խումբը պետք է իրացնի 23-րդ հոդվածով սահմանված պաշտպանության իր իրավունքը: Ուստի մասնակից պետություններն իրենց զեկույցներում պետք է ներկայացնեն իրենց հասարակության համար ընդունելի և իրավական համակարգով սահմանված «ընտանիք» հասկացության և դրա շրջանակների մեկնաբանությունը: Եթե տվյալ պետությունն ընդունում է «միայն ծնողներից և երեխաներից բաղկացած ընտանիք» և «ընդլայնված ընտանիք» տարբեր հասկացությունները, ապա պետք է մեկնաբանի երկուսի համար էլ սահմանված պաշտպանության աստիճանը: Հաշվի առնելով ընտանիքի տարբեր տեսակների գոյությունը, ինչպես օրինակ՝ չամուսնացած զույգերից և նրանց երեխաներից կամ մեկ ծնողից և երեխաներից բաղկացած ընտանիքները, մասնակից պետությունները պետք է նաև նշեն՝ արդյոք ներպետական օրենսդրությունը և իրավական պրակտիկան ճանաչում և պաշտպանում են նման ընտանիքները և նրանց անդամներին, և եթե պաշտպանում են, ապա ի՞նչ չափով⁸:

Իր Ընդհանուր մեկնաբանություններում ՄԻԿ-ը մշակութային առումով որոշակի ազատություն է վերապահում պետություններին 23-րդ հոդվածի շրջանակներում «ընտանիք» հասկացությունը սահմանելու հարցում: Այնուամենայնիվ, մասնակից պետությունը չի կարող բացառող իրավասություն մշակել, այլապես 23-րդ հոդվածի դրույթներով երաշխավորված իրավունքները կարող են նշանակալիորեն սահմանափակվել: Որևէ պետություն չի կարող նեղացնել սահմանման շրջանակը՝ կիրառելով մարդու իրավունքների միջազգային չափանիշները խախտող կառույցներ կամ արժեքներ⁹: Ավելին՝ պետությունը չի կարող ավելի նեղ իմաստով սահմանել «ընտանիք» հասկացությունը, քան ընդունված է տվյալ պետության հասարակության կողմից¹⁰:

[20.07]

«ՀԵՆԴՐԻԲՍԸ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (HENDRIKS v NETHERLANDS, 201/85)

¶ 10.3. 23-րդ հոդվածի 1-ին կետում առկա «ընտանիք» բառը բովանդակում է ոչ միայն «ընտանիք» հասկացությունն ամուսնության ընթացքում, այլև անպայման պետք է ներառի ծնողների և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Թեև ապահարգանք օրենքով լուծարում է ամուսնությունը, սակայն այն չի կարող վերացնել հոր կամ մոր և երեխայի միջև եղած կապը, քանի որ այդ կապը պայմանավորված է ծնողների ամուսնության շարունակականությամբ: Այս ամենից հետևում է, որ երեխայի շահերի պաշտպանությանն ուղղված այս արտոնությունը - չի հակասում տվյալ կանոնին:

⁷ Պարբ. 4.1: Այս գործով տե՛ս՝ [23.65]:

⁸ Տե՛ս նաև թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 27:

⁹ Տե՛ս վերը նշված թիվ 1 ծանոթագրությունը՝ Van Bueren 734-5: Գոյություն ունեն «ընտանիք» հասկացության նշանակությունը մեկնաբանող բազմաթիվ գիտական նյութեր, օրինակ, տե՛ս M. Minow, 'All in the Family and in all Families: Membership, Loving and Owning' (1992) 95 *West Virginia Law Review* 278:

¹⁰ Տե՛ս *Hopu and Bessert v France* (549/93) գործը [20.11]:

Ուստի «ընտանիք» հասկացության սահմանումը չի կարելի սահմանափակել «ամուսնություն» հասկացությամբ: Պետությունները կարող են ճանաչել բազմազան կենցաղային պայմաններ, որոնք կարող են «ընտանիք» համարվել, և որոնց, դաշնագրի դրույթների համաձայն, պաշտպանության իրավունք է վերապահվում: Այնուհանդերձ, ՄԻԿ-ը դեռևս չի հաստատել՝ երեխաներ ունեցող կամ չունեցող համասեռական զույգերի միությունները կարող են ընտանիք համարվել¹¹:

[20.08] Թեև թե՛ միայն ծնողներից և երեխաներից բաղկացած ընտանիքի շրջանակներում և թե՛ այդ շրջանակներից դուրս կենցաղային պայմանները ներկայանում են «ընտանիք» հասկացության ներքո, սակայն 23-րդ հոդվածով սահմանված պաշտպանությունը կարող է տարբեր լինել՝ ըստ տվյալ ընտանիքի տեսակի: Օրինակ՝ շատ դեպքերում ՄԻԿ-ը մերժել է չամուսնացած զույգերի ներկայացրած բողոքներն այն մասին, որ նյութական օգնություն տրամադրելու հարցում Հոլանդիայի օրենսդրությունը տարբեր վերաբերմունք է վերապահում իրենց և ամուսնացած զույգերի նկատմամբ¹²: Հարկ է նաև հաշվի առնել, որ 23-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը ամուսնացած զույգերին ամուսնության շրջանակներում հատուկ իրավունքներ են վերապահում¹³:

[20.09] «Ա.Ս.-ն ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (A. S. v CANADA, 68/80)

Այս գործով հեղինակը բողոք է ներկայացրել այն կապակցությամբ, որ Կանադայի ներգաղթային ծառայությունը չի թույլատրել իր որդեգրած լեհ դստերը և թոռանը մշտական բնակություն հաստատել իր մոտ՝ Կանադայում: Մասնակից պետությունը առարկել է բողոքի համապատասխանությանը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործի փաստերի արդյունքում 23-րդ հոդվածի իրավունքների որևէ խախտում չի արձանագրվել:

¶ 5.1. ...Ինչ վերաբերում է 23-րդ հոդվածին, որն ապահովում է ընտանիքի՝ պետության կողմից պաշտպանվելու իրավունքը, հարկ է նշել, որ նման պաշտպանության նախապայմանն այն է, որ ընտանիքի անդամներն ապրեն փաստացի ընտանեկան կյանքով: Տվյալ գործի փաստերից չի կարելի եզրակացնել, որ Բ.-ն և նրա որդին փաստացի ընտանեկան կյանքով են ապրել Ա.Ս.-ի հետ, քանի որ 1959 թ. Ա. Ս.-ի կողմից որդեգրվելուց հետո Բ.-ն ընդամենը երկու տարի է ապրել Կանադայում նրա հետ: Այնուհետև՝ 1961 թ., երկրից հեռանալով՝ նա վերադարձել է Լեհաստան, որտեղ ամուսնացել և որդի է ունեցել: Այն փաստը, որ Ա.Ս.-ն և Բ.-ն 17 տարի շարունակ ապրել են առանձին, հստակ ապացուցում է, որ նրանք չեն ապրել երկարատև ընտանեկան կյանքով, ուստի հեղինակը չի կարող նշել 23-րդ հոդվածի որևէ խախտում:

ՄԻԿ-ը համաձայնել է մասնակից պետության որոշմանը.

¶ 8.2 (բ) 17-րդ և 23-րդ հոդվածները երաշխավորում են, որ ոչ ոք չի կարող ենթարկվել ընտանեկան կյանքի կամայական կամ անօրինական միջամտության, և որ ընտանիքն ունի պետության կողմից պաշտպանվելու իրավունք: Վերոհիշյալ հոդվածներով սահմանված իրավունքները չեն կարող կիրառվել լինել տվյալ դեպքում, քանի որ Ա.Ս.-ը և նրա որդեգրած դուստրը միասին չեն ապրել ընտանեկան կյանքով, բացառությամբ այն 2 տարիների, որոնք մոտ 17 տարի առաջ նախորդել են երկրից Բ.-ի հեռանալուն:

Պարզ չէ՝ արդյոք Ա.Ս.-ի գործով կայացրած որոշումն ինչ-որ չափով պայմանավորված էր այն փաստով, որ Բ.-ն Ա.Ս.-ի հարազատ դուստրը չէր: Չնայած Ա. Ս.-ի գործով կայացրած որոշմանը՝ 23-րդ հոդվածով ենթադրաբար նախատեսվում է, որ ընտանիքը կարող է բաղկացած լինել որդեգրված անդամներից¹⁴:

¹¹ ՄԻԿ-ն անդրադարձել է միայն այն հարցին, թե արդյոք համասեռամուլ զույգերն ամուսնանալու իրավունք ունեն, տե՛ս *Joslin v New Zealand* (902/99) գործը [20.29]:

¹² *Danning v Netherlands* (180/84), *Sprenger v Netherlands* (395/90), *Hoofdman v the Netherlands* (602/94): Այս գործերով տե՛ս [23.66]:

¹³ Տե՛ս *Balaguer Santacana v Spain* (417/90) գործը, պարբ. 10.4 [20.51]:

¹⁴ Տե՛ս Van Bueren, վերը, ծմբ. 1, 738:

[20.10]

«ԲԱԼԱԳԵՐ ՍԱՆՏԱԿԱՆԱՆ ընդդեմ ԻՍՊԱՆԻԱՅԻ»
(BALAGUER SANTACANA v SPAIN , 417/90)

Գործի փաստերը ներկայացված են ստորև [20.51].

¶ 10.2. Մասնակից պետությունը պնդել է, որ 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը կիրառելի չեն այս գործի շրջանակներում, քանի որ հեղինակի անկանոն հարաբերությունները տիկին Մոնտավոյի հետ չի կարելի դիտարկել «ընտանիք» եզրույթի ներքո, նրանց միջև երբեք ամուսնական կապ չի եղել: Կոմիտեն նախ նշում է, որ «ընտանիք» եզրույթը հարկ է հասկանալ լայն իմաստով, և կրկին հաստատում, որ տվյալ հասկացությունը վերաբերում է ոչ միայն ամուսնության ընթացքում կազմված ընտանիքին կամ կենակցությանը, այլև, ընդհանուր առմամբ, ծնողների և երեխաների միջև առկա հարաբերություններին: Այդուհանդերձ, ընտանիքի գոյությունը թելադրում է որոշակի նվազագույն նախապայմաններ, որոնցից են՝ միասին ապրելը, տնտեսական կապերը, կայուն և սերտ հարաբերությունները և այլն:

Ուստի ձևական ընտանեկան հարաբերությունները բավարար չեն 23-րդ հոդվածով սահմանված իրավունքներին համապատասխան ընտանեկան կապեր որակելու համար: Որոշ չափով անհրաժեշտ է փաստացի ընտանեկան կյանքի առկայություն:

[20.11]

«ՕՊՅՈՒՆ և ԲԵՍԵՐՆ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ»
(HOPU and BESSERT v FRANCE, 549/93)

Այս գործով հեղինակները պնդել են, որ իրենք տուժել են Ֆրանսիայի իշխանությունների կողմից դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածների դրույթները խախտելու պատճառով: Նրանք կոմիտեին են ներկայացրել հետևյալ փաստերը և բողոքը.

¶ 2.1. Հեղինակները Թաիթի կղզում՝ Նուուրոայում գտնվող Թեթաթափու անունը կրող, մոտավորապես 4,5 հեկտար տարածք զբաղեցնող հողամասի սեփականատերերի հետնորդներն են: Նրանք պնդում են, որ 1961 թ. հոկտեմբերի 6-ին Պափեթի առաջին ատյանի քաղաքացիական դատարանի կայացրած աճուրդի մասին վճռով (*jugement de licitation*) իրենց նախնիները զրկվել են սեփականության իրավունքից: Դատավճռի համաձայն՝ հողամասը սեփականության իրավունքով փոխանցվել է Հարավխաղաղօվկիանոսյան հյուրանոցային ընկերությանը (Ֆրանս.՝ *Socintra hotelière du Pacifique sud*) (SHPS): 1988 թվականից մինչ այսօր այդ ընկերության միակ բաժնետերեր Պոլինեզիայի տարածքն է:

¶ 2.2. 1990 թ. Հարավխաղաղօվկիանոսյան հյուրանոցային ընկերությունը հողամասը վարձակալության իրավունքով փոխանցել է Հյուրանոցային գործի ուսումնասիրության և զարգացման ընկերությանը (Ֆրանս. *Société d'étude et de promotion hotelière*), որն էլ իր հերթին այն վարձով է տվել Հյուրանոցային ընկերությանը (*Société hotelière, RIVNAC*): RIVNAC-ը մտադրված է ծովալճակին հարող տարածքում որքան հնարավոր է արագ սկսել շքեղ հյուրանոցային համալիրի շինարարական աշխատանքները: Արդեն որոշ չափով կատարվել են նախապատրաստական աշխատանքները. հատվել է մի քանի ծառ, շինարարական հրապարակը մաքրվել է թփերից և ցանկապատվել:

¶ 2.3. 1992 թ. հուլիսին հեղինակները և հողամասի նախկին սեփականատերերի այլ հետնորդները, ի նշան բողոքի ընդդեմ նախատեսված հյուրանոցային համալիրի շինարարության, խաղաղ ձևով զբաղեցրել են տարածքը: Նրանք պնդում են, որ այդ հողամասին և դրան հարող ծովալճակին մեծ տեղ է հատկացվում իրենց պատմության մեջ, մշակութային և անձնական կյանքում: Նրանք հավելում են, որ նշված հողամասի տարածքում գտնվում է նախաեվրոպական ժամանակաշրջանի գերեզմանոց, և լճակը շարունակում է մնալ ավանդական ձկնորսատեղի և գոյատևման միջոց մոտակայքում բնակվող մոտ երեսուն ընտանիքի համար:

¶ 3.2. Հեղինակները պնդելով, որ խախտվել են 17-րդ հոդվածի 1-ին կետով և 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքները, առաջնորդվում են այն հիմնավորմամբ, որ վիճելի տարածքից իրենց հարկադիր հեռացումը և հյուրանոցային համալիրի կառուցումը կհանգեցնեն գերեզմանոցի վերացմանը, որտեղ, իրենց խոսքերով, թաղված են իրենց ընտանիքի անդամները, և նման հեռացման դեպքում կխախտվեն իրենց անձնական և ընտանեկան կյանքի իրավունքները:

Հեղինակների կարծիքով՝ ՄԻԿ-ը լայն իմաստով է մեկնաբանել «ընտանիք» եզրույթը, հետևաբար, այն ընդգրկում է նաև անձի նախնիներին: Մեծամասնությունը ներկայացրել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 10.3. Հեղինակները նշում են, որ վիճելի տարածքում հյուրանոցային համալիրի կառուցումը կհանգեցնի իրենց նախնիների գերեզմանոցի վերացմանը, որին մեծ տեղ է հատկացվում պատմության մեջ, մշակութային և անձնական կյանքում, ինչպես նաև կհանգեցնի 17-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված իրենց անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքների կամայական խախտմանը: Նրանք նաև պնդում են, որ այդ տարածքում են գտնվում իրենց ընտանիքի անդամների գերեզմանները: Կոմիտեն նշում է, որ դաշնագրի խնդիրներից ելնելով՝ «ընտանիք» եզրույթի մեկնաբանությունը հարկ է ներկայացնել լայն իմաստով՝ տվյալ հասարակության կողմից ճանաչված ընտանիքի բոլոր անդամներին ներառելու նպատակով: Այս ամենից հետևում է, որ որոշ դեպքերում «ընտանիք» եզրույթը սահմանելիս հարկ է հաշվի առնել մշակութային ավանդույթները: Հեղինակների խոսքից պարզ է դառնում, որ նրանք նախնիների հետ ազգակցական կապերն իրենց ինքնության հիմնական տարրն են համարում և հավատացած են, որ դրանք մեծ դեր են խաղում իրենց ընտանեկան կյանքում: Մասնակից պետությունը չի վիճարկել այս հարցը, ոչ էլ այն փաստարկը, որ վերոհիշյալ գերեզմանոցը կարևոր տեղ է զբաղեցնում հեղինակների ազգի պատմության մեջ, նրանց մշակութային և անձնական կյանքում: Մասնակից պետությունը վիճարկել է հեղինակների բողոքը՝ ելնելով միայն այն փաստից, որ նրանց չի հաջողվել ապացուցել ազգակցական կապն այն մարդկանց հետ, որոնց աճյունները հայտնաբերվել են գերեզմանոցում: Կոմիտեն կարծում է, որ տվյալ բողոքի շրջանակներում վերոհիշյալ հանգամանքը չի կարող գործել ի վնաս հեղինակների, քանի որ այդ գերեզմանոցը նախորդում է եվրոպացիների մուտքին, և այդտեղ են հանգչում Թաիթի կղզու ներկա պոլիմեզյան բնակիչների նախնիների աճյունները: Ուստի կոմիտեն համոզում է այն եզրակացության, որ հեղինակների նախնիների գերեզմանոցի տարածքում հյուրանոցային համալիրի կառուցումը, արդարև, կհանգեցնի նրանց ընտանեկան և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքների խախտմանը: Մասնակից պետությունը որևէ կերպ չի հիմնավորել տվյալ հանգամանքներում իրավունքների նման սահմանափակումը, իսկ կոմիտեի տրամադրության տակ եղած տվյալները վկայում են, որ մասնակից պետությունը հյուրանոցային համալիր կառուցելու համար այդ տարածքը վարձակալության տալու որոշումը կայացնելիս պատշաճ կերպով հաշվի չի առել հեղինակների համար գերեզմանոցի նշանակությունը: Կոմիտեն եզրակացնում է, որ 17-րդ հոդվածի 1-ին կետի և 23-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ կամայականորեն սահմանափակվել են հեղինակների ընտանեկան և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքները:

[20.12] Պարոնայք Կրեցները, Բյուրգենթալը, Անդոն և լորդ Քոլվիլը հետևյալ մեկնաբանություններն են ներկայացրել իրենց առարկող կարծիքում.

¶ 3. Հեղինակների բողոքի էությունն այն է, որ մասնակից պետությունը չի պահպանել նախնիների գերեզմանոցը, որը կարևոր դեր ունի նրանց ժառանգության մեջ: Կարող է թվալ, թե այս բողոքից հարց է առաջանում՝ արդյոք մասնակից պետության այդ արարքը ենթադրո՞ւմ է կրոնական կամ ազգային փոքրամասնությունների՝ իրենց խմբի այլ անդամների հետ միասին իրենց մշակութային արժեքները վայելելու կամ իրենց կրոնը դավանելու իրավունքի ամտեսում: Այդուհանդերձ, վերը նշված հիմնավորումները խոչընդոտում են կոմիտեի կողմից գործի հետաքննումը: Փոխարենը՝ կոմիտեն ընդունում է, որ գերեզմանոցում շինարարության թույլտվությունը հեղինակների ընտանեկան և անձնական կյանքի իրավունքների կամայական խախտում է: Այս պնդումներն անընդունելի են մեզ համար:

¶ 4. Հանգեցվել այն եզրակացության, թե տվյալ գործով փաստերը չեն ապացուցում, որ խախտվել են հեղինակների ընտանեկան և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքները, մենք չենք ժխտում դաշնագրի 17-րդ հոդվածի վերաբերյալ կոմիտեի թիվ 16 Ընդհանուր մեկնաբանության շրջանակներում արտահայտված այն կարծիքը, որ հարկ է «ավելի լայն իմաստով մեկնաբանել «ընտանիք» եզրույթը՝ տվյալ մասնակից պետության հասարակության կողմից ընդունված բոլոր անդամներին ներառելու համար»: Այսպիսով, Ֆրանսիայի մաս կազմող Պոլինեզիայի բնիկ ժողովրդի համար կիրառվող «ընտանիք» եզրույթը պետք է ներառի նաև այն ազգականներին, որոնք ընտանիքի անդամ չեն համարվում այլ հասարակության մեջ, այդ թվում և մայրցամաքային Ֆրանսիայում: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ «ընտանիք» եզրույթն ավելի լայն իմաստով սահմանվի, այն առանձին մշակակություն կարտահայտի: Այն չի նշի որևէ անձի ազգային կամ մշակութային խմբի բոլոր անդամներին: Ամենևին էլ պարտադիր չէ նաև, որ այդ հասկացությունը նշի որևէ մեկի բոլոր նախնիներին՝ սկսած անհիշելի ժամանակներից: Այն պնդումը, որ որևէ տարածքում գտնվել է ազգային կամ մշակութային խմբի նախնիների գերեզմանոցը, ինքնին չի ենթադրում, որ այդտեղ են գտնվում հեղինակների ընտանիքի անդամների գերեզմանները: Հեղինակները չեն ապացուցել, որ այդ գերեզմանոցը ավելի շատ առնչվում է իրենց ընտանիքների, քան տարածքի ամբողջ բնիկ ժողովրդի հետ: Եթե նույնիսկ հաշվի առնենք այն փաստը, որ տվյալ դեպքում «ընտանիք» հասկացությունը տարբերվում է - այլ հասարակարգերում ընդունված սահմանումներից, ապա հեղինակների այն միահամուռ պնդումը, որ այդ գերեզմանոցում են ամփոփված իրենց ընտանիքների անդամների աճյունները, բավարար չէ իրենց և վերոհիշյալ անձանց միջև ազգակցական կապն ապացուցելու համար: Հետևաբար մենք չենք կարող ընդունելի համարել կոմիտեի այն կարծիքը, որ հեղինակները հիմնավորել են իրենց պնդումն առ այն, որ գերեզմանոցի տարածքում շինարարության թույլտվությունը խախտում է իրենց ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

¶ 5. Կոմիտեն մեջբերում է հեղինակների այն պնդումը, որ «նրանք նախնիների հետ կապն իրենց անհատականության հիմնական բաղադրատարրն են համարում և հավատացած են, որ այն մեծ դեր է խաղում իրենց ընտանեկան

կյանքում»։ Առաջնորդվելով այն փաստով, որ մասնակից պետությունը չի վիճարկել ո՛չ այս պնդումը, ո՛չ էլ հեղինակների ներկայացրած այն փաստարկը, որ գերեզմանոցը կարևոր դեր է կատարում նրանց պատմության, մշակույթի մեջ և անձնական կյանքում, կոմիտեն եզրակացնում է, որ գերեզմանոցի տարածքում հյուրանոցային համալիրի - կառուցումը խախտում է ընտանեկան և անձնական կյանքի անձեռնմխելիության հեղինակների իրավունքները։ Կոմիտեի կողմից հեղինակների ազգային պատմության, մշակույթի և անձնական կյանքի վկայակոչումը բացահայտում է գործի էությունը, քանի որ այն ապացուցում է, որ պաշտպանության ենթակա արժեքները ոչ թե սոսկ ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքներ են, այլ՝ մշակութային արժեքներ։ Մենք նույնպես, ինչպես կոմիտեն, մտահոգված ենք այս արժեքների պահպանման առնչությամբ։ Այնուամենայնիվ, այս արժեքները ամրագրված են դաշնագրի 27-րդ հոդվածում, ոչ թե կոմիտեի որոշումը հիմնավորող դրույթներով։ Ցավալի է, որ կոմիտեն չի կարող կիրառել 27-րդ հոդվածը¹⁵ տվյալ գործով։

¶ 7. Մենք որոշ վերապահումով համգել ենք այն եզրակացության, որ տվյալ բողոքի շրջանակներում չեն խախտվել դաշնագրով սահմանված հեղինակների իրավունքները։ Մենք նույնպես, ինչպես կոմիտեն, մտահոգված ենք այն հարցով, որ մասնակից պետությունը հաշվի չի առել տվյալ տարածքի ակնհայտ կարևորությունը Ֆրանսիայի կազմում գտնվող Պոլինեզիայի բնիկ ժողովրդի մշակութային ժառանգության համար։ Այնուհանդերձ, հավատացած ենք, որ այս մտահոգությունը չի արդարացնում «ընտանիք» և «անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք» եզրույթների իմաստի աղավաղումը՝ այս բառերի սովորական և ընդունելի նշանակության անտեսմամբ¹⁶։

Ընտանիքի միասնության պաշտպանության իրավունք

ՈՐԵՎԷ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԵ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

[20.13] Ինչպես հետևում է Շվեյցարիայի վերաբերյալ սույն եզրափակիչ մեկնաբանությունից, ընտանիքի միասնության պաշտպանության իրավունքը 23-րդ հոդվածի կարևոր սկզբունքներից է¹⁷։

¶ 18. Կոմիտեն նաև նշում է, որ ընտանիքի վերամիավորման իրավունքն անմիջապես չի շնորհվում Շվեյցարիայում բնակություն հաստատած օտարերկրյա աշխատողներին, այլ՝ միայն 18 ամիս անց, քանի որ դա, կոմիտեի կարծիքով, չափազանց մեծ ժամանակահատված է ընտանիքից անջատ ապրելու համար։

[20.14]

**«ԱՌՄԵՆԵՐԱԴԻ-ՑԻՖՐԱՆ և այլք ընդդեմ ՄԱՎՐԻԿԻՈՍԻ»
(AUMEERUDDY-CZIFFRA et al v MAURITIUS, 35/78)¹⁸**

Հեղինակները, այդ թվում՝ օտարերկրացիների հետ ամուսնացած երեք կին, բողոք են ներկայացրել Մավրիկիոսի օրենսդրության դեմ, որը երկրում կացության տարբեր իրավունքներ է սահմանում օտարերկրացիների համար՝ կախված նրանց սեռից։ Օտարերկրացի կանանց ինքնաբերաբար շնորհվում են տվյալ երկրում բնակվելու իրավունքներ, մինչդեռ օտարերկրացի ամուսինները զրկված են այդ իրավունքներից։ ՄԻԿ-ն այն կարծիքին է, որ տվյալ օրենսդրությունը խախտում է ՔՔԻՄԴ-ի մի շարք հոդվածների դրույթները¹⁹։ Անդրադառնալով 23-րդ հոդվածին՝ ՄԻԿ-ն արել է հետևյալ հայտարարությունը.

¶ 9.2 (բ) 2 (ii) 1... դաշնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն՝ վերոհիշյալ զույգերից, ինչպես նաև երեխա ունեցող զույգերից յուրաքանչյուրը, առնվազն տիկին Աումեներադի-Ցիֆրայի դեպքում, նույնպես «ընտանիք» է համարվում։ Ուստի նրանք՝ որպես այդպիսիք, ունեն հասարակության և պետության կողմից պաշտպանվելու իրավունք։

¶ 9.2 (բ) 2 (ii) 2. Այնուամենայնիվ, կրկին կիրառվում է երկու սեռի ներկայացուցիչների հանդեպ 2-րդ հոդվածի 1-ին

¹⁵ Ֆրանսիան սահմանել է 27-րդ հոդվածի վերապահում, որը խոչընդոտում է այս բողոքի դիտարկումը տվյալ հոդվածի շրջանակներում։ Տե՛ս [25.09-25.11]։

¹⁶ «Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի» վերաբերյալ փոքրամասնության մեկնաբանությունները մեջբերված են այստեղ [16.06]։

¹⁷ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1996)՝ CCPR/C/79/Add. 70։

¹⁸ Այս գործը հայտնի է *Mauritian Women's Case* անվամբ։

¹⁹ Տե՛ս նաև [16.21] և [23.43]։

կետով, 3-րդ և 26-րդ հոդվածներով ամրագրված հավասար վերաբերմունքի սկզբունքը, ընդ որում՝ վերջին հոդվածը նույնպես առնչվում է այս գործին, քանի որ վերաբերում է հատկապես «օրենքի հավասար կիրառման» սկզբունքի պաշտպանությանը: Եթե դաշնագրի դրույթներով ամրագրված է հիմնական պաշտպանություն, ինչպես 23-րդ հոդվածի դեպքում, ապա այդ դրույթներից հետևում է, որ նման պաշտպանության իրավունքը պետք է սահմանվի հավասարապես, այսինքն՝ չի կարող կիրառվել խտրականության որևէ ձևով, օրինակ՝ սեռական խտրականությամբ:

¶ 9.2 (բ) 2 (ii) 3. Այս ամենից հետևում է, որ փաստարկի այս մասով կոմիտեն նույնպես պետք է հասնի այն արդյունքին, որ ընտանիքի պաշտպանված լինելու իրավունքը հավասարապես կիրառվի ամուսինների հանդեպ՝ առանց սեռական խտրականության: Թեև Մավրիկիոսի տարածք օտարերկրացիների մուտքի սահմանափակումը և նրանց արտաքսումը կարելի է հիմնավորել անվտանգության նկատառումներով, կոմիտեն այն կարծիքին է, որ միայն մավրիկիացի կանանց այլազգի ամուսինների իրավունքները սահմանափակող և մավրիկիացի տղամարդկանց այլազգի կանանց իրավունքները ճանաչող օրենսդրությունը խտրական վերաբերմունք է ենթադրում մավրիկիացի կանանց հանդեպ և չի կարող հիմնավորվել անվտանգության նկատառումներով:

¶ 9.2 (բ) 2 (ii) 4. Ուստի կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ խախտվել են նաև երեք ամուսնացած համաձայնագրերի՝ 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքին առնչվող դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի, 3-րդ և 26-րդ հոդվածների դրույթները:

[20.15] Մավրիկիացի կանանց գործով (*Mauritian Women's Case*) կայացված որոշումը կրում է օրենքի խտրական կիրառման ազդեցությունը, քանի որ այն տարբեր կանոններ է սահմանել մավրիկիացիների այլազգի ամուսինների և կանանց համար²⁰: Զինբաբվեի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է, որ մավրիկիացիների բոլոր այլազգի ամուսինների՝ երկրում բնակվելու ինքնաբերաբար ընդունելի իրավունքն անտեսող անխտրական օրենքները նույնպես խախտում են 23-րդ հոդվածի դրույթները²¹:

¶ 19. Կոմիտեն մտահոգությամբ է նշում, որ «*Ռեթիգանը և այլք ընդդեմ Ներգաղթային ծառայության պետի և այլք*» (*Rattigan and Others v Chief Immigration Officer and Others*) գործով գերագույն դատարանի որոշումը չէղյալ է համարվել սահմանադրական լրացմամբ, որի համաձայն՝ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց օտարերկրացի ամուսինները զրկվում են քաղաքացիության իրավունքից, այսինքն՝ կարող է սահմանափակվել նրանց՝ Զինբաբվեի տարածք մուտք գործելու և երկրում բնակություն հաստատելու իրավունքը: Կոմիտեն համարում է, որ տվյալ լրացումը հակասում է դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածների դրույթներին: Կոմիտեն առաջարկում է քայլեր ձեռնարկել վերոհիշյալ օրենսդրությունը դաշնագրի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

[20.16] Իսրայելի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտնել է.²²

¶ 26. Կոմիտեն ցավում է, որ իշխանությունները փաստորեն խոչընդոտում են ընտանիքի վերամիավորման իրավունքի իրացումը Իսրայելի քաղաքացիների և այլազգիների ամուսնության դեպքում, ինչի հետևանքով վերջիններս չեն օգտվում իրենց վերադառնալու իրավունքներից: Այս խոչընդոտները երկարատև մուտքի արտոնագրեր ստանալու համար ենթադրում են «ամուսնության իսկությունը հաստատելու նպատակով ամուսինների համատեղ կյանքի 5 տարուց ավելի ձգվող փորձաշրջան» և հետագայում քաղաքացիություն ստանալու համար անհրաժեշտ ժամանակաշրջան, և ավելի հետևողականորեն են կիրառվում արաբ քաղաքացիների, հատկապես գրավյալ տարածքներում բնակվող անձանց հետ ամուսնացած արաբների հանդեպ: Կոմիտեն համարում է, որ իրավունքների նման սահմանափակումները հակասում են 17-րդ և 23-րդ հոդվածներին, և առաջարկում է իշխանություններին վերանայել պետության ռազմավարությունը՝ բոլոր քաղաքացիների և երկրի տարածքում մշտական բնակություն հաստատած անձանց ընտանիքների վերամիավորման հարցին լուծում տալու նպատակով:

Ավելի ուշ Իսրայելի վերաբերյալ ընդունված եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտնել է²³.

¶ 21. Կոմիտեն մտահոգված է 2002 թ. մայիսին Իսրայելի իշխանությունների ընդունած ժամանակավոր կասեցման կարգադրությամբ, որը 2003 թ. հուլիսի 31-ին ուժի մեջ է մտել «Քաղաքացիության և երկրի մուտք գործելու մասին» Իսրայելի օրենքի (ժամանակավոր կանոն) շրջանակներում: Այն մեկ տարի ժամանակահատվածով կասեց-

²⁰ Տե՛ս նաև «*Լովլեյսն ընդդեմ Կանադայի*» (*Lovelace v Canada, 24/77*) գործով պրն Բուզիբիի մասնավոր կարծիքը և եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ (1998), CCPR/C/79/Add. 93, պարբ. 27:

²¹ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1998) CCPR/C/79/Add. 89:

²² ՄԱԿ-ի փաստաթուղթ (1998) CCPR/C/79/Add. 93:

²³ ՄԱԿ-ի փաստաթուղթ (2003) CCPR/CO/78/ISR:

նում է ընտանիքի վերամիավորման հնարավորությունը, որի դեպքում կան սահմանափակ և սուբյեկտիվ բացառություններ, հատկապես Իսրայելի քաղաքացու և Արևմտյան ափի կամ Գազայի հատվածում բնակվող անձի ամուսնության դեպքերում: Կոմիտեն մտահոգությամբ է նշում, որ 2002 թ. մայիսին Իսրայելի իշխանությունների կողմից ընդունված ժամանակավոր կասեցման կարգադրության պատճառով արդեն տուժել են հազարավոր ընտանիքներ և ամուսնություններ:

Հարկ է, որ մասնակից պետությունը չեղյալ համարի 2003 թ. հուլիսի 31-ին ուժի մեջ մտած «Քաղաքացիության և երկիր մուտք գործելու մասին» Իսրայելի օրենքը (ժամանակավոր կանոնը), որի հետևանքով հարցեր են առաջանում դաշնագրի 17-րդ, 23-րդ և 26-րդ հոդվածների շրջանակներում: Հարկ է, որ մասնակից պետությունը վերանայի իր ռազմավարությունը՝ բոլոր քաղաքացիների և երկրի տարածքում մշտական բնակություն հաստատած անձանց ընտանիքների վերամիավորման հարցին լուծում տալու նպատակով: Նա պետք է մանրամասն վիճակագրական տվյալներ ներկայացնի՝ նախնական զեկույցի ուսումնասիրությանը հաջորդած ժամանակահատվածի կտրվածքով:

[20.17] ՄԻԿ-ը քննադատել է Կանադայի իշխանություններին 23-րդ հոդվածի դրույթներն անտեսելու և երկրում տեղական բնակություն հաստատած օտարերկրացիներին արտաքսելու ռազմավարության համար²⁴: Արտաքսելու մասին նման մի որոշում վիճարկվել է ստորև ներկայացված գործում:

«ՍՏՈՒՄՐՏՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (STEWART v CANADA, 538/93)

Հեղինակը ծնվել է Շոտլանդիայում, սակայն յոթ տարեկան հասակում մոր հետ արտագաղթել է Կանադա: Նա միշտ իր հայրենիքը համարել է Կանադան, որտեղ ապրել է հիվանդ մոր և հաշմանդամ եղբոր հետ: Նա ուներ նաև երկու փոքր երեխա, որոնք ապրում էին իր նախկին կնոջ հետ: Հեղինակն իրեն Կանադայի քաղաքացի է համարել և միայն այն ժամանակ է հասկացել, որ ինքը պարզապես օրինական ճանապարհով երկրի տարածքում մշտական բնակություն հաստատած անձ է, երբ իր հետ կապվել են ներգաղթային ծառայության աշխատակիցները: Նրան արտաքսել են՝ ղեկավարվելով «Ներգաղթի մասին» Կանադայի օրենքով, որով արտաքսում է նախատեսվում հստակ սահմանված հանցանքներ գործելու դեպքում: Հեղինակը պնդում է, որ իրեն արտաքսելու որոշումը խախտում է մի շարք հոդվածների, այդ թվում՝ 17-րդ և 23-րդ հոդվածների դրույթները²⁵: Հեղինակը ներկայացրել է հետևյալ փաստարկները.

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ մասնակից պետությունը չի ապահովել օրենքով ընտանիքի պաշտպանությունը՝ 23-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Նա հավատացած է, որ նման օրենսդրության բացակայության պայմաններում, որը կկարևորեր ընտանիքի շահերը վարչական գործերում, օրինակ՝ ներգաղթի և փախստականների հանձնաժողովի կողմից դիտարկվող գործերում, առաջին հայացքից հարց է առաջանում՝ արդյոք Կանադայի օրենսդրությունը համապատասխանում է ընտանիքի պաշտպանության պահանջին:

¶ 3.2. Հեղինակն անդրադարձել է նաև կոմիտեի՝ 17-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանությանը, ըստ որի՝ «ընտանեկան և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում, որոնք իրենց հերթին պետք է համապատասխանեն դաշնագրի դրույթներին, խնդիրներին և նպատակներին»: Նա հավաստիացնում է, որ որևէ օրենք չի երաշխավորում, որ Կանադայից իրեն արտաքսելու վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնեն իր կամ իր ընտանիքի անդամների օրինական շահերը: Միայն Ներգաղթի ծառայության հայցադիմումների բաժնին չնչին ազատություն է վերապահվել գործի հանգամանքները քննելու համար, որը բավարար չի համարվում հեղինակի ընտանեկան շահերը պետության օրինական այլ շահերին համապատասխանեցնելու համար: Ներգաղթի ծառայության հայցադիմումների բաժինը ենթադրաբար պատշաճ ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ հեղինակի մայրը և եղբայրը հաշմանդամ են, ընդհակառակը՝ որոշել է. «[Հ]աշվի առնելով այն փաստը, որ բողոքարկուն չունի խնամառու և որևիցե մեկից նյութական օգնություն չի ստանում, հայցադիմումների բաժինը բավարար հիմքեր չի տեսնում երկրում բողոքարկուի ներկայությունը հիմնավորելու համար»:

¶ 3.3. Հեղինակն այն կարծիքին է, որ «տուն» բառը հարկ է մեկնաբանել լայն իմաստով՝ ընդգրկելով այն ամբողջ համայնքը, որի մի մասնիկն է կազմում տվյալ անձը: Այս իմաստով նա համարում է, որ Կանադան իր հայրենիքն է:

²⁴ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1999) CCPR/C/79/Add. 105, պարբ. 15, տե՛ս [21.32]:

²⁵ Տե՛ս նաև «Կանեպան ընդդեմ Կանադայի» (*Canepa v Canada, 558/93*) նմանօրինակ գործը [9.88] և այս գործով այլ հայցադիմումները [12.33]:

Յեղիմակը հավելում է, որ իր անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը ենթադրում է, որ կարող է բնակվել իր համայնքում՝ առանց իր իրավունքների կամայական կամ անօրինական սահմանափակման: Քանի որ Կանադայի - օրենսդրությամբ օտարերկրացիները պաշտպանված չեն իրավունքների մասն սահմանափակումներից, հեղիմակը 1-7-րդ հոդվածի դրույթների խախտում է արձանագրում:

Ի պատասխան՝ մասնակից պետությունը ներկայացրել է հետևյալ մեկնաբանությունները.

¶ 9.2. Ճիշտ չի լինի համարել, որ պետության՝ օտարերկրացուն արտաքսելու իրավունքը հակասում է դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածների դրույթներին, եթե հաշվի առնվի որոշման համապատասխանությունը դաշնագրի 13-րդ հոդվածին²⁶: Կանադայի օրենսդրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք պաշտպանված է անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի կամայական կամ անօրինական սահմանափակումներից՝ 17-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Մասնակից պետությունը հայտնում է, որ կամայական չի կարող համարվել օտարերկրացուն արտաքսելու մասին այն որոշումը, որը կայացվել է դաշնագրի դրույթներին ինքնին չհակասող օրենքների և ռազմավարության, ամբողջական և արդար դատավարության արդյունքում և պետության ակնհայտ կարևոր շահերը համապատասխանացրել է դաշնագրով անձին վերապահված իրավունքներին: Այս համատեքստում մասնակից պետությունը հայտնում է, որ Կանադայի տարածքում երկրի քաղաքացի չհանդիսացող օտարերկրացիների բնակության հետ կապված հարցերը կարգավորող օրենքների դրույթները հիմնավորված են և անաչառ, - իսկ իշխանությունների կողմից այդ օրենքի կիրառումն ընդհանուր առմամբ չի հակասում դաշնագրի դրույթներին:

¶ 9.3. Մասնակից պետությունն ընդգծում է, որ պրն Ստյուարտին արտաքսելու առաջարկը կապված է Կանադայի իշխանությունների հապճեպ ընդունած որոշման հետ ոչ այնքան, որքան գործին առնչվող բոլոր գործոնների քննարկման, դաշնագրի 13-րդ հոդվածի դրույթների համապատասխան ամբողջական և արդար դատավարության արդյունքում ընդունված որոշման հետ: Յեղիմակի շահերը ներկայացրել էր նրա փաստաբանը, որը ծանրակշիռ փաստարկ է ներկայացրել՝ հիմնավորելով այն պնդումը, որ հեղիմակի արտաքսման դեպքում կսահմանափակվեն նրա անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքները: Կանադայի իրավասու դատարանը դիտարկել է պրն Ստյուարտի շահերը և պետության շահերի հետ դրանք համեմատելով՝ պաշտպանել է հանրության շահերը:

¶ 9.4. Անդրադառնալով Կանադայի՝ ընտանիքի պաշտպանության իրավունքն ապահովելու պարտավորությանը՝ սահմանված դաշնագրի 23-րդ հոդվածի դրույթներով՝ նշվում են համապատասխան օրենքները և իրավական պրակտիկան, այդ թվում՝ Կանադայի սահմանադրությունը և Կանադայի մարդու իրավունքների խարտիան: Կանադայի օրենսդրությունը երաշխավորում է ընտանիքի պաշտպանված լինելու իրավունքը, որը համահունչ է 23-րդ - հոդվածի պահանջներին: Այնուհանդերձ, 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պաշտպանության իրավունքը բացարձակ բնույթ չի կրում: Յեղիմակին արտաքսելու մասին կարգադրությունը դիտարկելիս Կանադայի իրավասու դատարանները մեծ տեղ են հատկացրել հեղիմակի արտաքսումից բխող հետևանքներին՝ համեմատելով ընտանիքի շահերը և հասարակության պաշտպանության ու ներգաղթի կարգավորումից բխող պետության շահերը: Այս համատեքստում մասնակից պետությունը նշում է, որ հեղիմակի գործին բնորոշ առանձնահատուկ փաստերը, այդ թվում՝ նրա տարիքը և խնամառուների բացակայությունը, ենթադրում են, որ տվյալ դեպքում ընտանեկան կապերը կարող են պատշաճ կարգով պահպանվել նամակագրության, հեռախոսազանգերի և Կանադայում բնակվող իր ընտանիքի անդամներին այցելելու միջոցով, ընդ որում՝ այդ այցերի իրավունքը երաշխավորված է «Ներգաղթի մասին» Կանադայի օրենքով:

Կոմիտեի կողմից դաշնագրի որևէ դրույթի խախտում չի արձանագրվել: Մեծամասնությունը հետևյալ մեկնաբանություններն է ներկայացրել 17-րդ և 23-րդ հոդվածների առնչությամբ.

¶ 12.10. Պրն Ստյուարտի արտաքսումն անկասկած սահմանափակում է նրա կապերը Կանադայում բնակվող ընտանիքի հետ: Այնուամենայնիվ, հարց է ծագում՝ վերոհիշյալ խախտումը անօրինակա՞ն է, թե՞ կամայական: «Ներգաղթի մասին» Կանադայի օրենքը հստակ սահմանում է, որ քաղաքացի չհանդիսացող անձանց մշտական բնակություն հաստատելու կարգավիճակը կարող է կասեցվել, և այնուհետև տվյալ անձը կարող է արտաքսվել Կանադայից, եթե դատապարտվել է ծանր հանցագործություն կատարելու համար: Բողոքարկման գործընթացում ներգաղթային հայտերի բողոքարկումների բաժինը լիազորված է չեղյալ համարել արտաքսման մասին որոշումը՝ «հաշվի առնելով այս գործի բոլոր հանգամանքները»: Տվյալ գործով վարույթի ընթացքում պրն Ստյուարտին լիարժեք հնարավորություն է ընձեռվել ներգաղթային հայտերի բողոքարկումների բաժնին ապացույցներ ներկայացնելու իր ընտանեկան կապերի մասին: Իր հիմնավորված որոշմամբ ներգաղթային հայտերի բողոքարկումների բաժինը դիտարկել է ներկայացված ապացույցները, սակայն հանգել է այն եզրակացության, որ Կանադայում պրն Ստյուարտի ունեցած ընտանեկան կապերով չի կարելի հիմնավորել նրան արտաքսելու մասին կարգադրության կասեցումը: Կոմիտեն այն

²⁶ Տե՛ս՝ ընդհանուր առմամբ 13-րդ գլուխը:

կարծիքին է, որ պրն Ստյուարտին արտաքսելու հետևանքով նրա ընտանեկան կապերի անխուսափելի սահմանափակումը չի կարող անօրինական կամ կամայական համարվել, քանի որ վերոհիշյալ կարգադրությունն ընդունվել է պետության օրինական շահերի պաշտպանությունը երաշխավորող օրենքին համապատասխան, և վարույթի ընթացքում պատշաճ կարգով ուսումնասիրվել են արտաքսման ենթակա անձի ընտանեկան կապերը: Ուստի դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածների դրույթների խախտում չի արձանագրվել:

[20.18] Շատերը հակառակ կարծիք են արտահայտել²⁷: Տիկին Էվաթի և տիկին Մեդինա Քուիրոզայի գրավոր կարծիքում, որի տակ ստորագրել է նաև պրն Ագիլյար Ուրբինան, և որին համաձայն են տիկին Շանեն և պրն Պրադո Վալեխոն, 17-րդ և 23-րդ հոդվածների վերաբերյալ ներկայացված են հետևյալ մեկնաբանությունները.

¶ 10. Մենք համաձայն ենք կոմիտեի հետ այն հարցում, որ հեղինակի արտաքսումը անխուսափելիորեն կհանգեցնի Կանադայում նրա ընտանեկան կապերի սահմանափակմանը (կետ 12.10), սակայն չենք կարող ընդունել, որ այդ սահմանափակումը կամայական չէ, քանի որ մենք այն եզրակացությանն ենք հանգել, որ հեղինակի ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը կամայական է: Ուստի մեզ մնում է եզրակացնել, որ Կանադան նույնպես խախտել է հեղինակի՝ 17-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված իրավունքները:

[20.19] Չնայած 1999 թ. ընդունված Կանադայի վերաբերյալ եզրափակիչ մեկնաբանություններում [21.29] Կանադայի արտաքսման քաղաքականության առնչությամբ ՄԻԿ-ի արտահայտած մտահոգությանը՝ մեծամասնությունը հանգել է այն եզրակացության, որ Ստյուարտի արտաքսման մասին կարգադրությունը չի խախտում հոդվածի դրույթները: *Ստյուարտի* գործով որոշումն արտացոլում է ՄԻԿ-ի՝ պետությունների դատական ատյանների կայացրած որոշման կատարման ժամկետը հետաձգելու պատրաստակամությունը, եթե չկան դատավարական բնույթի այդ թերությունների ապացույցներ²⁸: Ուստի ընտանիքի անդամների արտաքսումը թույլատրվում է 17-րդ և 23-րդ հոդվածների դրույթներով, եթե այդ որոշումը - օրինական է, ակնհայտորեն կամայական բնույթ չի կրում և հաշվի է առնում արտաքսման հետևանքները խնամառուի ընտանեկան կապերի համար:

[20.20] «ԿԱՆԵՊԱՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (CANEPA v CANADA , 558/93)

Այս գործով փաստերը շատ նման են Ստյուարտի գործին: Մի շարք հանցագործություններ կատարելու պատճառով հեղինակն իր ծնողների և եղբոր հետ 5 տարեկան հասակից Կանադայում բնակվելուց հետո կանգնած էր Իտալիա արտաքսվելու փաստի առջև: Տվյալ գործի շրջանակներում ՄԻԿ-ը չի արձանագրել ո՛չ 17-րդ և ո՛չ էլ 23-րդ հոդվածների դրույթների խախտում:

¶ 11.5. Գործի հանգամանքներից պարզ է դառնում, որ հեղինակը գործել է բազմաթիվ հանցանքներ, հիմնականում՝ հերոինի իր պահանջը բավարարելու համար փող ձեռք բերելու նպատակով ապօրինաբար մուտք գործելու և գողության ձևով: Նրան արտաքսելու որոշումը անհրաժեշտ է համարվել հասարակական շահերի և հեղինակի հետագա հանցավոր արարքներից հասարակությանը պաշտպանելու համար: Նա 17 տարեկանից մինչև 31 տարեկանն ունեցել է դատվածության գրեթե շարունակական շարան, այսինքն՝ մինչև Կանադայից նրա արտաքսումը, բացառությամբ 1987-88 թթ. ընկած ժամանակաշրջանի: Հեղինակը, որ Կանադայում ո՛չ կին, ո՛չ էլ երեխաներ ունի, Իտալիայում ընտանիք է կազմել: Նա չի հիմնավորել այն փաստը, որ իր արտաքսումն Իտալիա անդամալիորեն կկտրի իր կապերը Կանադայում բնակվող իր ընտանիքի մյուս անդամների հետ: Նրա ընտանիքն ի վիճակի չէր նշանակալի օգնություն ցույց տալու նրան հանցավոր մտադրություններից հետ կանգնելու և թմրամիջոցների կախվածությունից ձերբազատվելու հարցում: Նա չի հիմնավորել, որ այս հարցում իր ընտանիքի աջակցությունն ու խրախուսանքը կարող են օգնել իրեն հետագայում, կամ ընտանիքից իր բաժանումը կարող է վատթարացնել իրավիճակը: Նրա ընտանեկան կապերը ֆինանսական կախվածության որևէ ձև չեն ենթադրում: Թվում է, թե գոյություն չունեն հեղինակին կամ նրա ընտանիքին վերաբերող հանգամանքներ, որոնց հիման վրա կոմիտեն կարողանար եզրակացնել, որ Կանադայից հեղինակի արտաքսումը նրա ընտանեկան և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքների կամ բնակության վայր ընտրելու իրավունքի կամայական սահմանափակում է:

ՄԻԿ-ի հայտարարությունները Կանադայում բնակվող Կանեպայի ընտանիքի վերաբերյալ անտեղի են, մակերեսային և անհամապատասխան: Անտեղի է եզրակացնել, որ Կանեպայի շարունակական շփումն իր

²⁷ Այս հակառակ կարծիքները ներկայացված են այստեղ՝ [12.34]:

²⁸ Մեկնաբանությունը տես՝ [20.49] և [20.54]:

ընտանիքի հետ կարող էր ապարդյուն լինել նրա համար՝ հաշվի առնելով հերոհինց նրա կախվածության կործանարար բնույթը: Եվ իրոք, հարց է ծագում՝ ընտանեկան իրավունքները պետք է վերափոխվե՞ն՝ համապատասխանեցվելով ընտանիքի պատշաճ գործառույթների մասին ՄԻԿ-ի որոշմանը²⁹:

[20.21] «ՈՒԻՆԱՏԱՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (WINATA v AUSTRALIA, 930/00)

Յենդրիկ Ուինատան և Սո Լան Լին Ինդոնեզիայի քաղաքացիներ էին և մուտք էին գործել Ավստրալիա, համապատասխանաբար, 1985 թ. տուրիստական արտոնագրով և 1987 թ. ուսանողական արտոնագրով³⁰: Նրանց արտոնագրերով նախատեսված ժամկետները սպառվել են, և նրանք ապօրինաբար են մնացել Ավստրալիայում: Նրանք ծանոթացել են և փաստացի հարաբերություններ հաստատել Ավստրալիայում, և 1988 թ. հունիսի 2-ին ծնվել է նրանց որդին՝ Բարրին: 1998 թ. հունիսի 2-ին Բարրին ծննդավայրի սկզբունքով և երկրում անընդմեջ տասը տարի փաստացի բնակվելու նախապայմանով ստացել է Ավստրալիայի քաղաքացիություն: Հաջորդ օրն և եթ նրա ծնողները փախստականների արտոնագրին նմանվող պաշտպանության արտոնագիր ստանալու դիմում են ներկայացրել, որն ի վերջո մերժվել է 2000 թ.³¹: 1998 թ. հոկտեմբերի 15-ին Ուինատան և Լան Լին դիմել են «ծնողական արտոնագիր» ստանալու համար, սակայն նման արտոնագրերը տրամադրվում են միայն երկրից դուրս գտնվող անձանց: Հավանական է, որ եթե ընդհանրապես այդ արտոնագիրը տրամադրվի, ապա դա կլինի տարիներ հետո նման արտոնագրեր ստանալու իրավունք ունեցող նեգադյալների թվի սահմանափակման հետևանքով: Այդ արտոնագիրը չունենալու պատճառով ծնողները պետք է արտաքսվեին՝ որպես անօրինական ներգաղթյալներ: Ծնողները հետևյալ պահանջն են ներկայացրել իրենց և Բարրիի անունից.

¶ 3.1. Յեղիմակները պնդում են, որ իրենց՝ Ինդոնեզիա արտաքսելու դեպքում կխախտվեն այդ որոշումից բխող երեք ենթադրյալ տուժողների իրավունքները՝ ըստ 17-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածների 1-ին կետերի:

¶ 3.4. Յեղիմակները պնդում են, որ իրենց արտաքսելու դեպքում Բարրիից բաժանումից խուսափելու միակ ճանապարհը նրան իրենց հետ Ինդոնեզիա տեղափոխելն է: Այդուհանդերձ, նրանք պնդում են, որ Բարրին լիովին ինտեգրված է ավստրալիական հասարակությանը, չի խոսում ոչ Ինդոնեզիայի լեզվով, ոչ էլ չինարեն, և Ինդոնեզիայի հետ մշակութային կապեր չունի, քանի որ միշտ բնակվել է Ավստրալիայում: Հոգեբանն իր զեկույցում Բարրիին նկարագրում է որպես «արևմտյան Սիդնեյի պատմական մասի բազմաթիվ մշակութային ներկայացուցիչների հետ հաղորդակցվող ավստրալիաբնակ չինացի տղա՝ այդ մշակույթին և ենթամշակույթին բնորոշ բոլոր դրական առանձնահատկություններով, ով ամելանելի կացության մեջ կհայտնվի Ինդոնեզիա արտաքսվելու դեպքում: Յեղիմակները համոզված են, որ իրենց ընտանեկան միավորի քայքայումը և Բարրիին Ավստրալիայում թողնելով՝ Ինդոնեզիա վերադառնալը հարցի դաժան և շատ վնասակար լուծում է: Յեղիմակների խոսքով՝ արտաքսումը բոլոր դեպքերում կամայական և անհիմն է լինելու:

Մասնակից պետությունն առարկել է, որ առաջարկվող արտաքսումը չի խախտում ԲԲԻՄԴ-ի դրույթները.

¶ 4.8. Ինչ վերաբերում է «իրավունքների սահմանափակմանը», մասնակից պետությունը փաստում է, որ հեղիմակների արտաքսման դեպքում այն չի խոչընդոտի Բարրիին իրենց հետ Ինդոնեզիա տանելու նախաձեռնությունը, որտեղ ընտանիքը կարող է շարունակել միասին ապրել: Յեղիմակները չեն ապացուցել այն փաստը, որ Ինդոնեզիայում իրենք ի վիճակի չեն լինի ապրելու ընտանեկան կյանքով, և չի համարում, որ նրանք կարող են հետապնդումների ենթարկվել վերոհիշյալ երկրում: Գիտակցելով այս դեպքում Բարրիի կրթությանը հասցվող վնասը՝ մասնակից պետությունը պնդում է, որ դա չի կարող «ընտանեկան խոչընդոտ» համարվել: Մասնակից պետությունն ընդգծում է, որ շատ դեպքերում բոլոր տարիքի երեխաները տարբեր պատճառներով ծնողների հետ երկրից երկիր են տեղափոխվում:

²⁹ «Գործառույթներ չունեցող ընտանեկան կյանք» և «ոչ լիարժեք ընտանեկան կյանք» հասկացությունների տարբերությունն այն է, որ վերջինի դեպքում բացակայում են իսկական ընտանեկան կապերը՝ [20.09]: Ընտանիքի անձեռնմխելիության իրավունքները, անշուշտ, պետք է սահմանափակվեն այն դեպքում, երբ ընտանիքի իրական գործառույթն իսպառ բացակայում է, ինչպես օրինակ՝ դաժան վերաբերմունքը երեխայի կամ անուսիններից որևէ մեկի հանդեպ:

³⁰ Գործի հիմնական նկարագրության աղբյուրն է՝ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2001) 2 *Human Rights Law Review* 305, 313:

³¹ Բողոքը չէր առնչվում պաշտպանության արտոնագիր ստանալու դիմումին:

¶ 4.9. Մասնակից պետությունը նշում է, որ Բարրին Ավստրալիայում իր ծնողներից բացի ոչ մի բարեկամ չունի, մինչդեռ Ինդոնեզիայում բնակվում է նրա մերձավոր ազգականների նշանակալի մասը, որոնց հետ հեղինակները կապ են պահպանում, և որոնց շնորհիվ Բարրիի ընտանեկան կյանքը կոառնա ավելի ամբողջական: Ուստի, մասնակից պետության համոզմամբ, Եվրոպական կոնվենցիայի նման, սույն դաշնագիրը նույնպես հարկ է մեկնաբանել ոչ թե որպես որոշակի երկրում ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, այլ պարզապես ցանկացած պետությունում լիարժեք ընտանեկան կյանքի երաշխիք³²:

¶ 4.10. Այլընտրանքային տարբերակով, եթե Բարրին մնար Ավստրալիայում, նրա ընտանիքի անդամները նրան այցելելու հնարավորություն կունենային և ամեն դեպքում կկարողանային շփվել նրա հետ: Նման իրավիճակում են հայտնվում գիշերօթիկներում սովորող շատ երեխաներ, և նման ֆիզիկական բաժանումը չի նշանակել, որ ընտանեկան միավորը գոյություն չունի: Բոլոր դեպքերում, ծնողներն իրենք են ընտրում նշված տարբերակներից որևէ մեկը, և մասնակից պետությունը որևէ կերպ չի միջամտում այդ որոշման ընտրությանը, հետևաբար չի կարող «խոչընդոտ» համարվել: Ավելին՝ ցանկացած որոշման դեպքում մասնակից պետությունը որևէ կերպ չի խոչընդոտի ընտանեկան հարաբերությունների բնականոն ընթացքը և զարգացումը:

¶ 4.11. Մասնակից պետությունը նշում է, որ եթե անգամ արտաքսումը խոչընդոտ համարվի, գործողությունը կամայական չի լինի: Չեղիմասկներն Ավստրալիա են եկել կարծաժամկետ արտոնագրերով՝ քաջատեղյակ լինելով, որ արտոնագրերի ժամկետը լրանալուց հետո պետք է լքեն Ավստրալիան: Հայցվորների արտաքսումը պայմանավորված է արտոնագրերով նախատեսված ժամկետի ավարտից հետո երկրում մնալով, թեև նրանք քաջատեղյակ էին, որ իրենք միայն ժամանակավոր մնալու թույլտվություն ունեն: Այդուհանդերձ, 10 տարուց ավելի նրանք անօրինական հիմքերով են մնացել Ավստրալիայում (10 տարի ժամանակահատվածում չի ներառվում այն ժամանակը, որի ընթացքում հեղինակներին թույլատրվել է մնալ Ավստրալիայում իրենց կարգավիճակը օրինականացնելու ուղիներ փնտրելու համար): Տվյալ հանգամանքներում նրանց հանդեպ կիրառվող արտաքսման օրենքները հիմնավորված են և ընդհանուր առմամբ կիրառելի: Արտաքսումը կարգավորող այս օրենքների կիրառումը ո՛չ քմահաճ է, ո՛չ էլ անկանխատեսելի և ողջամիտ ու համապատասխան միջոց է օրենքին համահունչ դաշնագրի նպատակներն իրագործելու, այսինքն՝ ներգաղթի վերահսկում հաստատելու համար:

¶ 4.12. Տվյալ գործի հանգամանքները վկայում են, որ Բարրիի ծննդյան ժամանակ հեղինակները քաջատեղյակ էին, որ հավանաբար չեն կարողանա մնալ Ավստրալիայում և մեծացնել Բարրիին: Նրանք չեն հիմնավորել Ինդոնեզիայում ընտանիք կազմելու անհնարինությունը, բացի այդ, համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում նրանց կրկին Ինդոնեզիայի քաղաքացիություն կշնորհվի: Երկու հեղինակներն էլ միջնակարգ կրթությունը ստացել են Ինդոնեզիայում, խոսում, կարդում և գրում են այդ երկրի լեզվով և աշխատել են այդ երկրում: Նրանք ի վիճակի կլինեն Բարրիին մեծացնել այն երկրում, որի լեզուն ու մշակույթը ծանոթ են իրենց և հոգեհարազատ են ընտանիքի այլ անդամներին: Բարրին որոշ չափով հասկանում է իր մայրենի լեզուն, հետևաբար լուրջ լեզվական խոչընդոտի չի հանդիպի, և եթե նույնիսկ հանդիպի, հեշտությամբ կհաղթահարի այն, մանավանդ իր փոքր տարիքի պարագայում: Չեղիմասկների՝ երեխային Ավստրալիայում թողնելու որոշումը նույնպես կարող է հիմնավորված լինել, քանի որ նա ծնողների հետ հաղորդակցվելու հնարավորություն կունենար և կօգտվեր ծնողներից բաժանված երեխաներին վերապահված օգնության բոլոր միջոցներից:

¶ 4.14. ...Բացի այդ, բավականին ծանրակշիռ է հետևյալ հարցը՝ արդյոք վերոհիշյալ անձինք ակնկալե՞լ են ընտանիքով հանդերձ *օրինական հիմքերով* բնակվել տվյալ պետության տարածքում ... [Շեղագիրն ավելացված է:]

¶ 4.16. Այս փաստարկներից ելնելով՝ մասնակից պետությունը պնդում է, որ որևէ պետության տարածքում անօրինական ճանապարհով բնակվելու և ընտանիք կազմելու փաստը լուրջ հնարավորություն է ընձեռնում տվյալ պետությանը դիմելու այնպիսի միջոցների, որոնք այլ դեպքում, եթե տվյալ ընտանիքն օրինական հիմքերով բնակվեր տվյալ պետության տարածքում, կհակասեին 17-րդ հոդվածին: Ինչպես նշել է Եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը չի երաշխավորում անձի՝ առավել հարմար վայրում բնակվելու իրավունքը (տե՛ս «*Ահմութն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Ahmud v The Netherlands*) գործով 1996 թ. նոյեմբերի 28-ին կայացված որոշումը, դիմումի համարը՝ N 21702/93), և զույգը չի կարող իրացնել իր ընտանիքի համար բնակության վայր ընտրելու իրավունքը՝ պարզապես անօրինական հիմքերով մնալով այն պետության տարածքում, որտեղ ցանկանում է ընդլայնել իր ընտանիքը և մեծացնել իր զավակներին: Այս ամենից հետևում է, որ Ավստրալիայում անօրինական հիմքերով բնակվող հեղինակները, որոնք քաջատեղյակ են, որ հնարավոր չի լինի մնալ ու իրենց ընտանիքը մեծացնել նշված երկրում, չեն ակնկալում օրինական հիմքերով մնալ այդ երկրում, և նրանց արտաքսումը չի կարող կամայական համարվել և չի հակասում 17-րդ հոդվածի դրույթներին:

¶ 4.17. ...Միջազգային իրավունքի դրույթներին համապատասխան՝ ինչպես 17-րդ հոդվածը, այնպես էլ 23-րդ հոդվածը հարկ է մեկնաբանել ի վնաս Ավստրալիայի՝ օտարերկրացիների՝ երկիր մուտք գործելու, այդ երկրում բնակվելու

³² Եվրոպայում դիտարկված նմանատիպ գործերից է՝ *Family X v UK* [1983] D & R 30 գործով Եվրոպական կոմիտեի որոշումը:

և նրանց արտաքսելու հետ կապված հարցերը վերահսկելու նպատակով համապատասխան միջոցների դիմելու իրավունքի:

¶ 4.18. Ինչ վերաբերում է 24-րդ հոդվածի 1-ին կետին, ապա Ավստրալիայից հեղինակների արտաքսումն ուղղված չէ Բարրիի դեմ, որը, 1998 թ. հունիսից Ավստրալիայի քաղաքացի հանդիսանալով, օգտվում է Ավստրալիայում բնակվելու իրավունքից՝ անկախ իր ծնողների բնակության վայրից: Ավելի հավանական է, որ հեղինակների արտաքսումը դիտվի որպես Ավստրալիայում անօրինական հիմքերով մնալու և ոչ թե երեխաների պաշտպանության համապատասխան միջոցներ չապահովելու հետևանք: Բարրիի ծննդյան ժամանակ հեղինակները տեղյակ են եղել, որ մի օր հարկադրված կլինեն վերադառնալ Ինդոնեզիա:

¶ 4.20. Ընդունելով 17-րդ հոդվածի դրույթներով սահմանված ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի «սահմանափակման» վերաբերյալ իր փաստարկները՝ մասնակից պետությունը պնդում է, որ որևէ գործոն զգալիորեն չի խոչընդոտում, որ Բարրին շարունակի բնականոն կյանքով ապրել իր ընտանիքի հետ Ինդոնեզիայում: Մասնակից պետությունը վիճարկում է հոգեբանի եզրակացությունն առ այն, որ հեղինակների հետ Ինդոնեզիա վերադառնալու դեպքում Բարրին «անելանելի կացության մեջ կհայտնվի, և նրա կյանքին վտանգ կսպառնա»: Պետությունը պնդում է, որ թեև առօրյա կյանքի փոփոխության պատճառով հավանական է, որ տեղափոխության սկզբնական շրջանում Բարրին դժվարություններ ապրի, սակայն նրա տարիքը, տարբեր մշակույթների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու փորձը և Ինդոնեզիայի լեզուն հասկանալը կօգնեն նրան արագ հարմարվելու նոր միջավայրին: Նա կարող է կրթությունը շարունակել պատշաճ ուսումնական հաստատություններում՝ այդ երկրում ծնված, մեծացած և կյանքի մեծ մասն ապրած հեղինակների և այլ մերձավոր ազգականների նյութական ու հոգևոր աջակցությամբ: Մյուս տարբերակն ընտրելու դեպքում, որպես Ավստրալիայի քաղաքացու, նրան կվերապահվի այդ երկրում բարձրագույն համալսարանական կրթություն ստանալու իրավունքը: Այս դեպքում նա կբաժանվի հեղինակներից, սակայն հարկ է նշել, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու տարիներին երիտասարդները սովորաբար ծնողներից առանձին են ապրում, և Հարավարևելյան Ասիայի երկրների երեխաների և երիտասարդների մեծ մասը միջնակարգ և բարձրագույն կրթություն է ստանում Ավստրալիայում: Որպես Ավստրալիայի քաղաքացի՝ նա կօգտվի երկրի օրենսդրությամբ սահմանված իրավունքների պաշտպանությունից, որը չի տարբերվի նշված երկրում առանց ծնողների բնակվող ավստրալիացի երեխաներին վերապահված իրավական պաշտպանությունից:

Ի պատասխան՝ հեղինակը հավելել է.

¶ 5.3. Անդրադառնալով ծնողների միասնական արտոնագրի հարցին՝ հեղինակը նշում է, որ հեղինակները ստիպված կլինեն հեռանալ Ավստրալիայից դիմումի պատասխանը ստանալուց առաջ, և եթե նույնիսկ այն դրական լինի, իրենք ստիպված կլինեն Ավստրալիա վերադառնալուց առաջ մի քանի տարի մնալ Ինդոնեզիայում: Ամեն դեպքում, ներգաղթային ծառայության վիճակագրական տվյալները վկայում են, որ 2000 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2001 թ. փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում Ջակարտայում Ավստրալիայի իշխանությունների ներկայացուցիչները ոչ ոքի չեն տրամադրել ծնողական արտոնագիր, և աշխարհի բոլոր երկրներում այս կարգի արտոնագրեր տրամադրելու վերաբերյալ հայցադիմումների դիտարկումը մոտ չորս տարի է տևում:

¶ 5.6. Հեղինակների կարծիքով՝ հարցի բուն էության վերաբերյալ մասնակից պետության հիմնական տեսակետն այն է, որ հեղինակներին արտաքսելու դեպքում որևէ գործոն չի խոչընդոտում Բարրիի վերադարձը և Ինդոնեզիայում իր ընտանիքի հետ բնակվելը: Հեղինակներն առարկում են, որ նրա վերադարձն անհարկ է հոգեբանի վկայությամբ՝ կցված ներգաղթային ծառայության նախարարին ներկայացված դիմումին: Անդրադառնալով երկրի վերադառնալու մասին իրենց դիմումի դիտարկման ժամանակահատվածում Բարրիին Ավստրալիայում առանց վերահսկողության թողնելու առաջարկին՝ հեղինակները պնդում են նաև, որ այդ տարբերակը երբեք չի կարող կիրառվել և հակասում է Բարրիի շահերին: Նրանք ի վիճակի չեն վճարելու փակ ուսումնական հաստատություններում Բարրիի կրթության համար անհրաժեշտ գումարները, և չկա մեկը, որ նրանց բացակայության ժամանակ հոգ տանի Բարրիի մասին:

ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշում է կայացրել հեղինակների օգտին:

¶ 7.1. Անդրադառնալով 17-րդ հոդվածի դրույթների խախտմանը՝ կոմիտեն նշում է մասնակից պետության փաստարկներն առ այն, որ իրավունքների որևէ սահմանափակում չի արձանագրվել, քանի որ ծնողների հետ Ինդոնեզիա վերադառնալու կամ Ավստրալիայում մնալու որոշումը, որը երկրորդ դեպքում կարող է հանգեցնել անձանց ֆիզիկական բաժանման, ընտանեկան խնդիր է և չի կարող պարտադրվել պետության կողմից: Կոմիտեն ընդգծում է, որ մասնակից պետության՝ ընտանիքի անդամներից մեկին իր տարածքում մնալու մերժումը որոշ դեպքերում իրոք հանգեցնում է այդ անձի ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման: Այնուհանդերձ, այն փաստը, որ ընտանիքի անդամներից մեկը լիազորված է մնալու որևէ մասնակից պետության տարածքում, ինքնին չի ենթադրում, որ ընտանիքի այլ անդամներին ներկայացվող երկրից հեռանալու պահանջով խախտվում են վերո-

հիշյալ իրավունքի դրույթները:

¶ 7.2. Տվյալ գործի վերաբերյալ կոմիտեն այն կարծիքին է, որ ծնողներին արտաքսելու որոշումը, ինչպես նաև ընտանիքին պարտադրվող երկընտրանքը մասնակից պետությունում տասը տարի բնակվելուց հետո քաղաքացիություն ձեռք բերած տասներեքամյա երեխային այդ պետությունում միայնակ թողնելու կամ իր ծնողների հետ Ինդոնեզիա տեղափոխելու մասին, հարկ է համարել ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի «սահմանափակում», համեմայն դեպս, նման հանգամանքներում, երբ վերոհիշյալ երկու տարբերակներն էլ կարող են էական փոփոխություններ առաջացնել կայացած ընտանիքների համար: Ուստի հարց է ծագում՝ արդյոք նման սահմանափակումը կամայական է և հակասո՞ւմ է դաշնագրի 17-րդ հոդվածի դրույթներին:

¶ 7.3. Դաշնագիրը, անշուշտ, անառակելի է համարում մասնակից պետության տարածքում թույլատրված ժամկետից ավելի երկար մնացած անձանց արտաքսելու մասին օրենսդրությամբ սահմանված պահանջը: Անառակելի է նաև, որ երեխայի ծննդյան փաստը կամ ծնվելու պահին կամ ծնվելուց հետո այդ երեխային քաղաքացիության շնորհումն ինքնին բավարար չէ մեկ կամ երկու ծնողի արտաքսումը կամայական համարելու համար: Այսպիսով, մասնակից պետություններին որոշակի իրավունքներ են վերապահված իրենց ներգաղթային քաղաքականությունը հաստատելու և պետության տարածքում անօրինական հիմքերով մնացող անձանց արտաքսելու համար: Այնուհանդերձ, այդ ազատությունն անսահմանափակ չէ և որոշ հանգամանքներում կարող է կամայական բնույթ ստանալ: Տվյալ դեպքում երկու հեղինակները բնակվել են Ավստրալիայում ավելի քան տասնչորս տարի: Ավստրալիայում է մեծացել հեղինակների որդին և իր ծննդյան օրվանից 13 տարի շարունակ ապրել է այդ երկրում: Յուրաքանչյուր սովորական երեխայի նման նա ևս հաճախել է ավստրալիական դպրոց, հետևաբար նրա համար հատուկ հասարակական հարաբերություններ են ձևավորվել: Հաշվի առնելով դիմումի դիտարկման տևական ընթացակարգը՝ մասնակից պետությունը պարտավոր է երկու ծնողի արտաքսումը հիմնավորող այնպիսի լրացուցիչ փաստեր ներկայացնել, որոնք ներգաղթային օրենսդրությամբ կիրառման ենթակա չեն՝ կամայականության բնութագրումից խուսափելու նկատառումով: Ուստի, նման հատուկ պայմաններից ելնելով, կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետության՝ հեղինակներին արտաքսելու մասին որոշումն իրագործվելու դեպքում այն կարող է վերածվել ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի կամայական խախտման, հակասել բոլոր ենթադրյալ տուժածների վերաբերյալ դաշնագրի 23-րդ հոդվածին առնչվող 17-րդ հոդվածի 1-ին կետին, խախտել Բարրի Ուինստայի իրավունքներին առնչվող 24-րդ հոդվածի 1-ին կետը՝ նրան՝ որպես փոքր երեխայի, պաշտպանության համապատասխան միջոցներով չապահովելու համար:

¶ 8. Առաջնորդվելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Մարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետության՝ հեղինակներին արտաքսելու մասին որոշումն իրագործվելու դեպքում կարող է հանգեցնել դաշնագրի 17-րդ, 23-րդ հոդվածների 1-ին կետերի և 24-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների խախտման:

¶ 9. Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի համաձայն՝ մասնակից պետությունը պարտավոր է հեղինակներին ապահովել պաշտպանության արդյունավետ միջոցներով, այդ թվում՝ Ավստրալիայից նրանց արտաքսման հետաձգումը, մինչև ուսումնասիրվեն ծնողական արտոնագիր ստանալու մասին նրանց դիմումները՝ հաշվի առնելով Ուինստայի՝ երեխայի կարգավիճակով պայմանավորված պաշտպանության պատշաճ մակարդակը: Մասնակից պետությունը պարտավոր է երաշխավորել, որ ապագայում դաշնագրի դրույթները չեն խախտվի նման իրավիճակներում:

[20.22] Պարոնայք Բիազվաթին, Խալիլը, Կրեցները և Յալդենը հակառակ կարծիք են արտահայտել:

¶ 3. ...Ամենևին էլ ապացուցված չէ այն պնդումը, թե մասնակից պետության գործողությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում կայացած ընտանիքի կյանքում, սահմանափակում են ընտանիքի իրավունքները, քանի որ չեն խոչընդոտում ընտանեկան միասնության պահպանումը: Տվյալ դեպքում անհրաժեշտ չենք համարում այս հարցի կապակցությամբ վերջնական կարծիք արտահայտել, այնուամենայնիվ, եթե նույնիսկ սահմանափակվել է հեղինակների ընտանեկան անձեռնմխելիության իրավունքը, մենք այն կարծիքին ենք, որ բավականաչափ հիմքեր չկան մասնակից պետության որոշումը կամայական համարելու համար:

¶ 4. Կոմիտեն չի հիմնավորում և չի ապացուցում իր այն հայտարարությունը, որի համաձայն՝ իր որոշման «կամայական» որակումից խուսափելու համար մասնակից պետությունը պարտավոր է այնպիսի լրացուցիչ փաստեր ներկայացնել, որոնք ենթակա չեն ներգաղթային օրենսդրությամբ կիրառման: Իսկապես, որոշ բացառիկ դեպքերում ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումն այնքան մեծ է, որ պետության տարածքում անօրինական հիմքերով բնակվող ընտանիքի անդամներից մեկին ուղղված տարածքից հեռանալու պահանջը կհակասի մասնակից պետության շահերին՝ իր ներգաղթային օրենսդրությունը հարգելու հարցում: Նման դեպքերում հնարավոր է, որ ընտանիքի անդամներից մեկին տվյալ պետության տարածքից արտաքսելու մասին որոշումը կամայական համարվի: Այնուամենայնիվ, մենք չենք կարող ընդունել, որ մասնակից պետության տարածքում անօ-

րինական հիմքերով բնակվող անձանց ընտանիք կազմելու փաստն ինքնին կարող է մասնակից պետությունից - պահանջել «երկու ծնողի արտաքսումը հիմնավորող այնպիսի լրացուցիչ փաստեր ներկայացնել, որոնք ներգաղթային օրենսդրությամբ կիրառման ենթակա չեն՝ կամայականության բնութագրումից խուսափելու նկատառումով»։ Կոմիտեի կողմից ընդունված այս մեկնաբանություններից հետևում է, որ եթե մասնակից պետության տարածքում անօրինական հիմքերով բնակվող անձինք ընտանիք են կազմել, և նրանց հաջողվել է երկար ժամանակ խուսափել բացահայտումից, նրանք, փաստորեն, այդտեղ մնալու իրավունք են ստանում։ Մենք կարծում ենք, որ նման մեկնաբանությունը անտեսում է միջազգային իրավունքի գերիշխող չափանիշները, որոնք թույլ են տալիս պետություններին կարգավորել իրենց տարածքում օտարերկրացիների՝ երկիր մուտք գործելու և բնակություն հաստատելու հարցերը։

¶ 5. Ինչպես արդեն նշվել է, մասնակից պետության որոշումը ոչ մի դեպքում չի ենթադրում ընտանիքի անդամների բաժանում։ Թեև ճիշտ է, որ որդու հետ միասին հեղինակների՝ Ինդոնեզիա վերադառնալու դեպքում երեխան կարող էր դժվարությունների հանդիպել՝ կապված նոր միջավայրին հարմարվելու խնդիրների հետ, սակայն դրանք այնպիսի դժվարություններ չեն, որոնք կարող են խախտել մասնակից պետության տարածքից հեղինակներին հեռացնելու մասին որոշման համապատասխանությունը իր օրինական շահերին։ Այս որոշումը չի կարող կամայական համարվել, ուստի մենք չենք կարող համաձայնել կոմիտեի այն կարծիքին, թե մասնակից պետությունը խախտել է հեղինակների և նրանց որդու՝ դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված իրավունքները։

¶ 6. Եզրակացության հանգելուց առաջ կցանկանայինք հավելել, որ բացի 17-րդ հոդվածում նշված «ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակում» և «կամայականություն» եզրույթների իմաստազրկումից, կարծում ենք, կոմիտեն անհաջող մոտեցում է ցուցաբերում այդ եզրույթներին։ Առաջին՝ նա պատժամիջոցներ է - սահմանում այն մասնակից պետությունների նկատմամբ, որոնք ակտիվորեն չեն փնտրում անօրինական ներգաղթյալներին՝ նրանց արտաքսելու համար, այլ նախընտրում են վստահել այցելուների պատասխանատվությանը օրենսդրությանը և իրենց երկիր մուտք գործելու թույլտվության պայմաններին ենթարկվելու հարցում։ Կոմիտեն պատժամիջոցներ է սահմանում նաև այն մասնակից պետությունների նկատմամբ, որոնց օրենսդրությունը չի պահանջում, որ բոլոր անձինք իրենց հետ միշտ ունենան անձը հաստատող փաստաթուղթ և իշխանությունների հետ ամեն անգամ - առնչվելիս հիմնավորեն իրենց կարգավիճակը, քանի որ այս դեպքում իսկապես մեծանում է սահմանափակ ժամկետով արտոնագրեր ունեցող այցելուների՝ մասնակից պետության տարածքում երկար ժամանակ աննկատ բնակվելու հնարավորությունը։ Երկրորդ՝ կոմիտեի նման մոտեցումը կարող է անհավասար առավելություն տալ այն ամձանց, ովքեր անտեսում են մասնակից պետության ներգաղթային օրենքների պահանջները և ավելի նախընտրում են անօրինական հիմքերով մնալ այդ պետության տարածքում, քան հետևել մասնակից պետության՝ հնարավոր ներգաղթյալների համար նախատեսված օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին։ Այդ առավելությունը կարող է հատկապես խնդրահարույց դառնալ այն դեպքում, եթե մասնակից պետությունը որդեգրի ներգաղթողների թիվը սահմանափակող քաղաքականություն, որը հիմնված է ամեն տարվա ընթացքում երկիր մուտք գործած ներգաղթյալների թվաքանակի վրա։ Այս դեպքում հնարավոր ներգաղթյալներին հաջողվում է «շրջանցել հերթը»՝ շարունակելով մասնակից պետության տարածքում անօրինական հիմքերով բնակվել։

[20.23] Փոքրամասնությունն ավելի, քան մեծամասնությունը, պատրաստակամ էր ընդունելու այն համաձայնաձևը, որ Ավստրալիան իր երկրի ներգաղթային քաղաքականության ինքնիշխան իրավունք ունի։ Փոքրամասնությունը թույլատրելի է համարում Ավստրալիայի իշխանությունների կողմից կոպիտ քաղաքականության կիրառումը, չնայած ընդունում է հեղինակների ընտանեկան կյանքի և հատկապես Բարրիի վրա այդ քաղաքականության վնասակար ազդեցությունը։ Փոքրամասնությունը կասկածի տակ չի առնում ներգաղթային քաղաքականության բուն կամայական բնույթը³³։ Մյուս կողմից՝ քանի որ մեծամասնությունը «իրենց երկրների ներգաղթային քաղաքականությունը հզորացնելու նպատակով որոշ իրավունքներ է վերապահել մասնակից պետություններին», ապա եզրակացրել է, որ ազատությունն անսահմանափակ չէ և կարող է տվյալ պայմաններում կիրառվել կամայականորեն»³⁴։ Մեծամասնությունը ցանկանում էր պարզել «ներգաղթային քաղաքականության» երկրորդ իմաստը՝ որոշելու համար, թե արդյոք տվյալ պայմաններում քաղաքականության կիրառումը ողջամի՞տ էր, համաչափ և ոչ կամայական։ Մեծամասնության որոշումից պարզ է դառնում, որ Ավստրալիական իշխանություններից պահանջվում է իրենց ներգաղթային քաղաքականության կիրառման շրջանակներում ավելի բարձր մակարդակով դիտարկել անձնական հանգամանքները։ Ավստրալիայից դուրս ծնողական արտոնագրեր տրամադրելու առանց վերապահումների պահանջը հարմար չէր կիրառել ՄԻԿ-ին ներկայացված տվյալ գործում՝ հաշվի առնելով երկար ժամկետները։

³³ Այս եզրակացությունները մեջբերված են վերը նշված ծանոթագրություններից՝ Joseph 30, 315-18

³⁴ Տե՛ս նաև *Toala v New Zealand* (675/95) գործում փոքրամասնության եզրակացությունը, որ երկու տարեց անձանց և քրոջ/եղբոր արտաքսումը այդ անձանց կամայականորեն կբաժաներ Նոր Զելանդիայում բնակվող իրենց ընտանիքից։

[20.24] *Ուինատայի* գործում մեծամասնությունը կարևորել է Ավստրալիայում տասներեք տարի շարունակ Բարրիի՝ ամբողջ կյանքի ընթացքում և այժմ օրինական բնակության փաստը, ինչպես նաև թե՛ պետությունից հեռանալու, թե՛ այդ պետությունում առանց ծնողների բնակվելու բացասական ազդեցությունը: Այդուհանդերձ, այս ամենը հստակ չի նշվում որոշման մեջ, որը նաև ծնողների մնալու փաստն ինքնին արտաքսման կամայականությունը որոշող գործոն է համարում: Թվում է, որ փոքրամասնության կողմից մեծամասնության հասցեին հնչած քննադատության կիզակետում է հայտնվել մեծամասնության որոշման երկրորդ հայեցակետը: Այնուամենայնիվ, անհավանական է թվում, որ մեծամասնությունը հավատա, թե ՔՔԻՄԴ-ով երաշխավորվում են անօրինական հիմքերով պետության տարածքում բնակվող այն ներգաղթյալների միջազգային «գաղթականների իրավունքները», ում տարիներ շարունակ հաջողվել է խուսափել բացահայտումից՝ մեղմացնող հանգամանքների բացակայության այնպիսի պարագայում, ինչպես օրինակ՝ երեխայի գոյությունը, որը ոչ իր մեղքով բացասական հետևանքների կհանգեցնի այս իրավունքներից հրաժարվելու դեպքում: Մեծամասնությունն անընդունելի է համարել բողոքի այս մասը իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու պատճառով:

[20.25] Սույն գործի շրջանակներում հիմնավորվել է այն ենթադրությունը, որ պետության հետ քաղաքացի երեխայի կապերին առնչվող հարցերը պետք է լուծել այնպես, որ դա չհանգեցնի երեխայի ֆիզիկական կամ հոգեկան խանգարումների: Ուինատայի կարգի գործերը հավանաբար հազվադեպ են հանդիպում: Եթե Բարրին ավելի կրտսեր տարիքի լիներ, հոգեկան խանգարումներն ավելի մվազ կարտահայտվեին³⁵: Եթե Բարրին ավելի մեծ լիներ, Ավստրալիայում առանց ծնողների բնակվելու տարբերակն ավելի նպատակահարմար կլիներ: Երկու դեպքում էլ ավելի հավանական է, որ գործով առկա փաստերով չէին խախտվի ՔՔԻՄԴ-ի դրույթները: Ուինատայի գործով Բարրիին առնչվող հանգամանքների կարևորությունը հաստատվել է հետևյալ գործերով կայացված որոշումներում:

[20.26] «ՍԱՀԻԴՆ ընդդեմ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ» (SAHID v NEW ZEALAND, 893/99)

Հեղինակը բողոք է ներկայացրել իր՝ բնակության արտոնագիր տրամադրելու մասին դիմումը մասնակից պետության կողմից մերժվելու վերաբերյալ: Առաջին անգամ նա երկիր է ժամանել այցելուի արտոնագրով, Նոր Զելանդիայի քաղաքացի հանդիսացող իր ավագ դստերն այցելելու նպատակով: Այնուհետև նա 11 տարի շարունակ բնակվել է Նոր Զելանդիայում և այդ ընթացքում սպառել է իրավական պաշտպանության միջոցները՝ փորձելով ձեռք բերել բնակության արտոնագիր: Նա պնդել է, որ դրան հաջողված իր արտաքսումը խախտում է 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքները: Նրա դստեր և թոռան կողմից ներկայացված մմանօրինակ բողոքները չեն ընդունվել դրանք ներկայացնող հեղինակի իրավասության բացակայության պատճառով³⁶: Վերջնական եզրակացությամբ ՄԻԿ-ը տվյալ դեպքում 23-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների խախտում չի արձանագրել:

¶ 8.2. Անդրադառնալով 23-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով ընդունելի համարվող հայցադիմումներին՝ կոմիտեն նշում է «Ուինատան ընդդեմ Ավստրալիայի» (*Winata v Australia*) գործով նախկինում ընդունված որոշումը, որի համաձայն՝ արտակարգ հանգամանքներում մասնակից պետությունը պետք է իր իրավասության շրջանակներում հիմնավորի անձանց արտաքսելու հանգամանքները, որոնք տվյալ պետության ներգաղթային օրենսդրությամբ ենթակա են պարզ հարկադրական կիրառման՝ կամայականության որակավորումից խուսափելու համար: *Ուինատայի* գործով արտակարգ հանգամանքը մասնակից պետության՝ մասնակից երկրում ծնված երեխայի ծնողներին արտաքսելու մտադրությունն էր, որը տվյալ երկրում օրենքով սահմանված տասը տարի բնակվելուց հետո այդ երկրի քաղաքացի է դարձել: Տվյալ դեպքում հեղինակի արտաքսումից հետո Նոր Զելանդիայում մնացել է նրա թոռը իր մոր և նրա ամուսնու հետ: *Ուինատայի* գործով առկա գործոնների մման արտակարգ գործոնների բացակայության հետևանքով կոմիտեն եզրակացնում է, որ մասնակից պետության կողմից հեղինակի արտաքսումը չի հակասել դաշնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին:

³⁵ Այս դեպքում անհմար է հստակորեն ասել՝ ինչպիսին կլինեն գործով կայացրած որոշումը, եթե Բարրին 10 տարեկանից փոքր լիներ և Ավստրալիայի քաղաքացի չլիներ:

³⁶ Տե՛ս [3.20]:

[20.26Ա]

«ՌԱՋԱՆԸ և ՌԱՋԱՆՆ Ընդդեմ ՆՈՐ ՁԵԼԱՆԴԻԱՅԻ»
(RAJAN and RAJAN v NEW ZEALAND, 820/98)

1992 թ. փետրվարի 2-ին երկու հեղինակները՝ պրն և տիկին Ռաջանները, Նոր Զելանդիայում կացության թույլտվություն են ստացել պրն Ռաջանի գործած խարդախության միջոցով³⁷: Ավելի ուշ՝ 1992 թ. և դրանից հետո, Նոր Զելանդիայի իշխանությունները բացահայտել են խարդախության փաստը և քայլեր ձեռնարկել կացության թույլտվությունը չեղյալ համարելու և հեղինակներին Ֆիջի արտաքսելու ուղղությամբ: 1994 թ. տիկին Ռաջանը և Ռաջանների առաջին երեխան՝ Վիկին, Նոր Զելանդիայի քաղաքացիություն են ստացել, ընդ որում՝ նրանց այդ լիազորությունը պայմանավորված էր կացության իրավունքներով: Այնուհանդերձ, նրանք չեն կարողացել պարզաբանել իրենց կացության իրավունքների հետ կապված բարդ իրավիճակը: Այսպիսով, 1995 թ. Նոր Զելանդիայի ներքին գործերի նախարարը հրաման է արձակել տիկին Ռաջանի և Վիկիի քաղաքացիություն ստանալու իրավունքը չեղյալ համարելու մասին՝ հաշվի առնելով, որ այն ձեռք է բերվել խարդախ ճանապարհով: Ռաջանների երկրորդ երեխան՝ Աշնիթան, ծնվել է 1996 թ., Նոր Զելանդիայում, ուստի այդ երկրի քաղաքացիություն է ստացել: Հեղինակները պնդել են, որ կացության թույլտվությունը և քաղաքացիության իրավունքները չեղյալ համարելու մասին առաջարկվող որոշումը և դրան հաջորդող արտաքսումը կխախտեն իրենց ընտանիքի պաշտպանության իրավունքները, ինչպես նաև՝ իրենց երեխաների իրավունքները: Ի վերջո, ՄԻԿ-ն անընդունելի է համարել բողոքը:

¶ 7.3. Անդրադառնալով հեղինակների այն պնդմանը, որ իրենց արտաքսելու դեպքում կխախտվեն իրենց երեխաների՝ 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պաշտպանության իրավունքները, կոմիտեն նշում է, որ հեղինակները բավարար փաստարկներ չեն ներկայացրել այս հարցում իրենց իրավունքները խախտելու վերաբերյալ, բացի այն հայտարարությունից, որ իրենց արտաքսելու դեպքում իրենց փոքրահասակ երեխաները մույնպես ստիպված կլինեն հեռանալ Նոր Զելանդիայից: Պետության իշխանությունների որոշումներից պարզ է դառնում, որ այդ գործով վարույթի բոլոր փուլերում՝ գերագույն դատարանում, վճռաբեկ դատարանում, արտաքսման մասին որոշումները քննող դատարանում և բոլորովին վերջերս հեղինակի հայտը նախարարի կողմից դիտարկելու փուլում, հաշվի են առնվել ընտանիքի պաշտպանության իրավունքը և հատկապես երեխաների պաշտպանության իրավունքները...: Կոմիտեն նշում է, որ ավելի վաղ՝ Աշնիթայի ծնվելուց մի քանի տարի առաջ, մասնակից պետության իշխանությունները հայտ են ներկայացրել հեղինակների խարդախ արարքը բացահայտելուց անմիջապես հետո նրանց արտաքսելու մասին: Կոմիտեն նաև նշում է, որ դրան հաջորդած ժամանակաշրջանում Նոր Զելանդիայում բնակվելու ընթացքում նրանք զբաղված էին կա՛մ մատչելի պաշտպանության միջոցներ փնտրելով, կա՛մ թաքնվելով: Բացի այդ, յուրաքանչյուր պնդում, որ պրն Ռաջանի գործած խարդախությանը չմասնակցելու պարագայում տիկին Ռաջանը, հավանաբար, հետապնդում էր այդ ժամանակահատվածով պայմանավորված իր առանձին շահը, կորցնում է իր նշանակությունը հանցավոր արարքները պատժելու համար մասնակից պետության կողմից ներգաղթային օրենքներն արագ կիրառվելու պատճառով: Հետևաբար, կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակներին չի հաջողվել հիմնավորել իրենց պնդումն առ այն, որ դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածների 1-ին կետերը և 24-րդ հոդվածի 1-ին կետը խախտելու հետևանքով տուժել են իրենց երեխաները: Այդ իսկ պատճառով այս պնդումները հիմնավորված չեն և անընդունելի են կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի դրույթներով:

Ուստի պարզ է, որ ծնողները չեն կարող խուսափել արտաքսումից միայն այն պատճառով, որ իրենց փոքրահասակ երեխաները այդ պետության քաղաքացիներ են:

[20.26Բ]

**ՀՈԴՎԱԾ 50, ԲՈԼՈՐ ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՏ
 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
 ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

1. Միգրանտ աշխատողի մահվան կամ ամուսնալուծության դեպքում աշխատանք տրամադրող պետությունը պարտավոր է նրա օգտին կայացնել նրա ընտանիքի անդամներին կացության թույլտվություն շնորհելու մասին որոշումը՝ հիմք ընդունելով ընտանիքի վերամիավորման սկզբունքը և հաշվի առնելով այն ժամկետը, որի ընթացքում նրանք արդեն բնակվել են տվյալ պետության տարածքում:

³⁷ Նոր Զելանդիայում կացության թույլտվություն ստանալը պայմանավորված է Ռաջանների՝ Ավստրալիայի կացության կարգավիճակով: Այնուամենայնիվ, ավելի վաղ պրն Ռաջանին Ավստրալիայում կացության թույլտվություն է շնորհվել մի ավստրալիացի կնոջ հետ փաստացի կապի ստանդի հայտի հիման վրա: Տիկին Ռաջանը Ավստրալիայում կացության թույլտվություն է ստացել պրն Ռաջանի հետ ամուսնանալուց հետո:

2. Այդ իրավունքից զրկված ընտանիքի անդամներին հարկ է թույլ տալ մեկնելուց առաջ որոշ ժամանակ մնալ աշխատանք տրամադրող պետության տարածքում՝ այդ պետության հետ իրենց հարցերը կարգավորելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերը չեն կարող մեկնաբանվել ի վնաս աշխատանք տրամադրող պետության օրենսդրությամբ կամ այդ պետության համար կիրառելի երկկողմ և բազմակողմ պայմանագրերով ընտանիքի անդամների համար սահմանված կացության և աշխատանքի իրավունքների:

50-րդ հոդվածով սահմանված իրավունքները, որոնք ուժի մեջ են մտել 2003 թ. հուլիսի 1-ից Միգրանտ աշխատողների մասին կոնվենցիայի հետ միասին, կիրառելի են միայն այն դեպքերում, երբ ...«միգրանտ աշխատողները և նրանց ընտանիքների անդամներն ունեն համապատասխան փաստաթղթեր կամ մշտապես բնակվում են աշխատանք տրամադրող պետության տարածքում» (36-րդ հոդված): Միգրանտ աշխատողների մասին կոնվենցիայի 50-րդ հոդվածի գոյությունը կարող է ենթադրել ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածում ավելի ընդհանուր և ոչ միայն միգրանտ աշխատողներին վերաբերող համապատասխան իրավունքի գոյությունը:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ՀԵՌԱՑՈՒՄԸ ԾՆՈՂԻՑ

[20.27] «*ԲԱԲԼՆ ընդդեմ ՆՈՐ ՉԵԼԱՆԴԻԱՅԻ*» (BUCKLE v NEW ZEALAND, 858/99)

Այս գործում խոսքը հեղինակին իր երեխաների խնամակալության իրավունքից զրկելու մասին է: Գործում նման հանգամանքի առկայության հետևանքով, անշուշտ, հարցեր են առաջանում երեխաների իրավունքները երաշխավորող 17-րդ և 24-րդ հոդվածների շրջանակներում³⁸: Հեղինակը ներկայացրել է հետևյալ բողոքները.

¶ 2.1. 1994 թ. հեղինակի վեց երեխաները, որոնք այդ ժամանակ 1-8 տարեկան էին, զրկվել են նրա խնամակալությունից ենթադրաբար այն պատճառով, որ հեղինակն ի վիճակի չէր համապատասխան պայմաններ ապահովելու նրանց - համար...

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ իրեն իր վեց երեխաների խնամակալությունից զրկելու դեպքում կխախտվեն դաշնագրի 17-րդ և 23-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները, քանի որ այդ զրկումը ենթադրաբար կհամարվի մոր իրավունքների կամայական սահմանափակում: Հեղինակը կարծում է, որ անկախ այն պայմաններից, որոնցում ապրում էին երեխաները իր հետ բնակվելու ժամանակ, ինքը՝ որպես մայր, իրավունք ունի ապրելու իր երեխաների հետ, և հնարավոր չէ որևէ պատճառաբանությամբ զրկել իրեն երեխաների խնամակալությունից

¶ 3.3. Ապա հեղինակը պնդում է, որ խախտվել են դաշնագրի 24-րդ հոդվածով սահմանված իր վեց երեխաների իրավունքները, քանի որ իր խնամակալությունից նրանց հեռացնելու հետևանքով նրանք կզրկվեն իրենց հարազատ մոր խնամքից:

Մասնակից պետությունը հիմնավորել է հեղինակին խնամակալությունից զրկելու մասին իր որոշումը.

¶ 5.3. Անդրադառնալով 17-րդ հոդվածի ենթադրյալ խախտմանը՝ պետությունն ընդունում է, որ ծնողի խնամակալությունից երեխաներին զրկելը կարող է իրավունքների սահմանափակում համարվել: Սակայն նա պնդում է, որ տվյալ դեպքում ձեռնարկված միջոցներն ապօրինի չեն, ոչ էլ կամայական, և իրավունքների սահմանափակումն օրինական է դաշնագրի սահմանված իմաստով, հատկապես 24-րդ հոդվածի շրջանակներում: Այս հարցի առնչությամբ մասնակից պետությունը պնդում է, որ տվյալ գործում հեղինակից երեխաներին հեռացնելու միջոցը կիրառվել է ճշգրիտ օրենքին համապատասխանությամբ: Ավելի վաղ ընտանիքին օգնելու փորձեր են ձեռնարկվել՝ առանց դատական միջամտության: Հասարակական աշխատողները ոչ պաշտոնական հանդիպումներ են կազմակերպել հեղինակի ընտանիքի անդամներին հետ՝ նվազագույն միջամտության և ընտանիքին աջակցելու նպատակ հետապնդող ռազմավարությամբ համապատասխան երեխաների խնդիրները լուսաբանելու համար: Այդ հանդիպումների արդյունքում մասնակիցները համաձայնության են եկել ընտանիքի աջակցության ցանցն ավելի մեծացնելու, բժշկական խնամքին և հասարակական աշխատանքի ընթացքում երեխաների հետ հաղորդակցվելուն ավելի մեծ ուշադրություն դարձնելու և ավելի կայուն հետադարձ կապ ապահովելու կամար: Երբ պարզ է դարձել, որ հեղինակի պայմանների աճող վատթարացման պարագայում այս միջոցները բավարար չեն երեխաներին խնամելու համար, ընտանեկան խորհրդակցություն է հրավիրվել: Խորհրդակցությամբ մասնակցել է ութ անձ, որոնք համաձայնության են եկել դատարան հայց ներ-

³⁸ Ծնողների միջև խնամակալության հարցերով վեճերի վերաբերյալ տե՛ս նաև՝ [20.45]ff :

կայացնելու և երեխաների մեծ մասին ընտանիքի անդամների խնամակալությանը հանձնելու վերաբերյալ: Ցավոք, հեղինակը չի բարելավել երեխաների խնամքի պայմանները, և երեխաներին խնամակալներին հանձնելու որոշումը - հաստատվել է օրենքով սահմանված պարբերական վերանայումներով ու հեղինակի կողմից դատարանի որոշումների բողոքարկմամբ:

¶ 5.4. Մասնակից պետությունը պնդում է, որ իրավունքների խախտումը կամայական չէ, այլ գուցե պայմանավորված է այն հարցով, թե «իրավունքների խախտման նախապայմանն ընդհանուր առմամբ օրինակա՞ն է դաշնագրի դրույթների համաձայն, կանխատեսելի՞ է օրենքի գերակայության տեսանկյունից և հատկապես՝ հիմնավորվա՞ծ է կամ համապատասխանո՞ւմ է առաջադրված նպատակներին»:

¶ 5.5. Մասնակից պետությունը նշում է, որ 1989 թ. ընդունված «Երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների մասին» օրենքի համաձայն՝ ընդհանուր առմամբ իրավունքները չեն կարող սահմանափակվել առանց նախազգուշացման կամ անսպասելիորեն: Դատարան դիմելուց առաջ Ընտանիքի խմբի խորհրդաժողովը քննարկում է առկա այլընտրանքները, և այս դեպքում էլ նույն սկզբունքով է գործել: Իրավունքները սահմանափակելու մասին դատարան ներկայացվող հայցի անհրաժեշտ իրավասության նախապայմանները շարադրված են օրենքի 14-րդ մասում և ներառում են հետևյալը.

Երեխան կամ երիտասարդը հոգատարության կամ պաշտպանության կարիք ունի ..., եթե.

- (ա) Երեխան կամ երիտասարդը իրականում կամ հավանաբար նվաստացուցիչ (ֆիզիկական, հոգեկան կամ սեռական բնույթի) կամ վատ վերաբերմունքի է արժանանում, բռնաբարության ենթարկվում կամ լուրջ զրկանքներ կրում, կամ
- (բ) Երեխայի կամ երիտասարդի զարգացումը կամ ֆիզիկական, մտավոր կամ հոգեկան առողջությունը իրականում կամ հավանաբար վատթարանում է կամ անտեսվում, և այդ վատթարացումն ու անտեսումն իրականում կամ հավանաբար լուրջ են և դրանցից հնարավոր է խուսափել, կամ . . .
- (գ) Ծնողները կամ խնամակալները կամ երեխայի կամ երիտասարդի մասին հոգ տանող այլ անձինք չեն ցանկանում կամ ի վիճակի չեն հոգալու երեխայի կամ երիտասարդի հոգսերը»:

¶ 5.6. Մասնակից պետությունն այն կարծիքն է արտահայտում, որ քանի որ այդ պայմանները լայն իմաստ են ենթադրում, անհնար է ավելի յուրահատուկ կամ ճշգրիտ մոտեցում ցուցաբերել՝ հաշվի առնելով դրանց միջոցով կարգավորվող իրավիճակների բազմազան բնույթը: Նոր Զելանդիայի օրենսդրության համաձայն՝ գոյություն ունեն մի շարք պաշտպանության ընթացակարգային միջոցներ, որոնք մատչելի են հայց ներկայացնելուց առաջ և դրան հաջորդող բազմազան դիմումների և վերաքննությունների մեխանիզմներ կիրառելու ընթացքում: Վերոհիշյալ պաշտպանության միջոցները ներառում են խնամակալության և պաշտպանության հարցերով դիմումների, խնամակալության պայմանավորվածությունների պարբերական վերաքննությունների և կարգադրությունների վերաքննելու հայց ներկայացնելու իրավունքների հարցերով դատին ներկա լինելու իրավունք: Բացի այդ՝ CYPF օրենքը երաշխավորում է, որ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը համապատասխանում է անհրաժեշտ միջոցներին: Օրենքով նախատեսված իրավունքի խախտումը կիրառվում է միայն որպես վերջին փաստարկ (*ultima ratio*), եթե դատարանը համոզվում է, որ իրատեսական կամ հարմար չէ երեխայի կամ երիտասարդի խնամքը կամ պաշտպանությունն իրականացնել այլ միջոցներով: Կարգադրությունների ճշտությունը որոշելիս դատարանը ղեկավարվում է այն սկզբունքներով, որ ընտանիքը պետք է լիազորված լինի ընդունելի որոշումներ կայացնելու իրավունքով, և երեխային կամ երիտասարդին կարելի է հեռացնել ծնողից միայն բոլոր միջոցները սպառելու դեպքում: Հարկ է, որ երեխայի կամ երիտասարդի բարեկեցությունը և շահերը ուշադրության կենտրոնում լինեն:

¶ 5.7. Մասնակից պետությունը պնդում է, որ 1992 թ. հոկտեմբերին առաջին անգամ հայտարարելով, որ երեխաները խնամքի և պաշտպանության կարիք ունեն, դատարանը հռչակել է ընտանիքի և ընտանեկան խորհրդակցության աշխատողների նախապես ընդունած դրույթների կիրառումը: Երկու ավագ դուստրերը հանձնվել են իրենց մորական տատի և պապի, իսկ մյուս դուստրը՝ իր մորաքրոջ և մորեղբոր խնամակալությանը: Մնացածներին հանձնել են մոր կողքին բնակվող խնամակալների հոգատարությանը: Պահպանվել են նաև հեղինակի խնամակալության իրավունքները, որոնք կարող էին իրացվել այլ խնամակալներին վերապահված իրավունքների հետ մեկտեղ: Իրավիճակը փոխվել է 1997 թ. դեկտեմբերին, երբ 1997 թ. օգոստոսի 18-ին գերագույն դատարանի կայացրած վճռի համաձայն՝ երեխաներին հանձնել են «Հասարակական բարեկեցության» գլխավոր տնօրենի բացառիկ խնամակալությանը, ինչի հետևանքով էլ հեղինակն իրականում ժամանակավորապես զրկվել է խնամակալության իրավունքներից: Չնայած խնամակալության իրավունքի ժամանակավոր սահմանափակմանը՝ հեղինակին դեռևս խնամակալական իրավունքներ են վերապահված՝ պայմանավորված երեխաների հետ կապված հարցերում նրա խորհրդակցական ծայնի իրավունքով: Սակայն նա հրաժարվել է այդ իրավունքից: Երեխաների իրավիճակի պարբերական վերանայումները համապատասխանում են օրենքին: 1998 թ. փետրվարի 25-ին մերժվել է հեղինակի՝ գերագույն դատարանի վճիռը բողոքարկելու մասին դիմումը: Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակն օգտագործել է գոյություն ու-

նեցող բոլոր մեխանիզմները՝ վերը նկարագրված իր երեխաների իրավիճակը վերանայելու համար: Այնուհանդերձ, ամեն դեպքում, նրան չի հաջողվել ապացուցել, որ նշանակալիորեն բարելավվել է երեխաներին խնամելու իր կարողությունը, ինչը կարող էր երաշխավորել նրա խնամակալության վերականգնումը: Իրականում փաստերը հակառակն են ապացուցել, այն է՝ հեղինակի խնամակալության իրավունքի վերականգնումը չէր բխում երեխաների շահերից և կարող էր հոգեկան տրավմայի հանգեցնել ու վնասակար ազդեցություն թողնել նրանց բարեկեցության վրա: 1997 թվականի օգոստոսին գերագույն դատարանի հարուցված գործով տասնութ վկա է հարցաքննվել:

ՄԻԿ-ը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին:

¶ 9.1. Անդրադառնալով դաշնագրի 17-րդ հոդվածի շրջանակներում հեղինակի ներկայացրած բողոքին՝ կոմիտեն նշում է մասնակից պետության տարածած տեղեկությունը՝ հեղինակի գործում բազմակողմ ընթացակարգեր պահպանելու վերաբերյալ: Կոմիտեն նաև նշում է, որ իրավիճակը պարբերաբար վերանայվում է, և հեղինակին հնարավորություն է ընձեռվել շփում պահպանելու իր երեխաների հետ: Տվյալ դեպքում կոմիտեն անօրինական կամ կամայական չի համարում հեղինակի ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանափակումը, ուստի այն չի խախտում դաշնագրի 17-րդ հոդվածը:

¶ 9.2. Հեղինակը նաև պնդել է, որ խախտվել են դաշնագրի 23-րդ հոդվածի դրույթները: Կոմիտեն գիտակցում է մորից երեխաներին բաժանելու որոշման նշանակությունը, սակայն նշում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկատվությունն ապացուցում է, որ մասնակից պետության իշխանությունները և դատարանները ուշադիր քննել են իրենց ներկայացրած բոլոր նյութերը և առաջնորդվել երեխաների շահերով, և ոչինչ չի վկայում, որ նրանք խախտել են իրենց՝ 23-րդ հոդվածով սահմանված ընտանիքի պաշտպանության պարտականությունը:

¶ 9.3. Անդրադառնալով դաշնագրի 24-րդ հոդվածի դրույթների ենթադրյալ խախտմանը՝ կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակի փաստարկների և դրանց մախորդող տեղեկությունների շրջանակներում այնպիսի հարցեր չեն առաջացնում, որոնք կարելի է տարանջատել վերոնշյալ արդյունքներից:

Հոդված 23(2). Ամուսնության իրավունք

[20.28]

ԹԻԿ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Դաշնագրի 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներն ամրագրում են ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը...: Այս կապակցությամբ կոմիտեն կցանկանար նշել, որ մամն օրինական պայմանները պետք է համահունչ լինեն դաշնագրով երաշխավորված այլ իրավունքների ամբողջական գործածմանը, օրինակ՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր պետության օրենսդրությունը պետք է երաշխավորի թե՛ կրոնական, թե՛ քաղաքացիական ամուսնությունների հնարավորությունը: Այնուհանդերձ, կոմիտեն կարծում է, թե պետության այն պահանջը, որ կրոնական ծեսերով նշանավորվող ամուսնությունը կայանա, հաստատվի կամ գրանցվի նաև քաղաքացիական օրենքներով, չի հակասում է դաշնագրի դրույթներին: Պետություններից պահանջվում է նաև այդ թեմայի մասին տեղեկություններ ընդգրկել իրենց զեկույցներում:

[20.29]

«ՋՈՍԼԻՆԸ և այլք ընդդեմ ՆՈՐ ՉԵԼԱՆԴԻԱՅԻ» (JOSLIN et al v NEW ZEALAND, 902/99)

Այս դեպքում հեղինակները՝ չորս կանայք, պնդել են, որ Նոր Չելանդիայի ամուսնանալու իրավունքը, որը ամուսնություններ է թույլ տալիս միայն հակառակ սեռի ներկայացուցիչների միջև, խախտել է սույն դաշնագրի մի շարք դրույթներ:

¶ 3.8 Հեղինակները 23-րդ հոդվածի 2-րդ կետի և 2-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների խախտում են արձանագրում: Նրանք պնդում են, որ տղամարդկանց և կանանց ամուսնանալու իրավունքը պետք է մեկնաբանվի 2-րդ հոդվածի 1-ին կետով, որով արգելվում է տարբեր տեսակի խտրականություններ սահմանել: Քանի որ «Ամուսնության - մասին» Նոր Չելանդիայի օրենքը սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրական մոտեցում է ենթադրում, խախտվել են հեղինակների իրավունքները...: Ավելին՝ դաշնագրի տեքստն ուսումնասիրելով՝ կարելի է նկատել, որ 23-րդ հոդվածի 2-րդ կետում գործածվող «տղամարդիկ և կանայք» արտահայտությունը չի նշանակում, որ տղամարդիկ կարող են ամուսնանալ միայն կանանց հետ, այլ՝ տղամարդիկ՝ որպես խումբ, և կանայք՝ որպես

խումբ, կարող են ամուսնանալ:

ՄԻԿ-ը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին:

¶ 8.2. Հեղինակների հիմնական պահանջն այն է, որ դաշնագիրը մասնակից պետություններին պարտադրի համասեռամուլ զույգերին ամուսնանալու թույլտվություն տալ և ընդունի, որ հեղինակներին այդ հնարավորությունից զրկելով՝ մասնակից պետությունը խախտում է նրանց՝ դաշնագրի 16-րդ, 17-րդ, 23-րդ հոդվածների 1-ին և 2-րդ կետերի և 26-րդ հոդվածի դրույթներով սահմանված իրավունքները: Կոմիտեն նշում է, որ դաշնագրի 23-րդ հոդվածի 2-րդ կետը հստակորեն անդրադառնում է ամուսնանալու իրավունքին:

Հաշվի առնելով դաշնագրում ամրագրված հատուկ դրույթը ամուսնանալու իրավունքի վերաբերյալ՝ տվյալ իրավունքի խախտման մասին յուրաքանչյուր բողոք պետք է դիտարկել այդ դրույթի ներքո: Դաշնագրի 23-րդ հոդվածի 2-րդ կետը դաշնագրի միակ հիմնական դրույթն է, որը իրավունք սահմանելիս գործածում է «տղամարդիկ և կանայք» եզրույթները և ոչ թե «յուրաքանչյուր մարդ արարած», «յուրաքանչյուր ոք» և «բոլորը» բառերը: «Տղամարդիկ և կանայք» եզրույթը՝ ի տարբերություն դաշնագրի III մասի այլ դրույթներում հանդիպող ընդհանուր եզրույթների, համատարած ընկալում է գտել և նշում է, որ մասնակից պետությունների՝ դաշնագրի 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով սահմանված պայմանագրային պարտավորությունն է ամուսնություն համարել միայն ամուսնանալու ցանկություն ունեցող տղամարդու և կնոջ միությունը:

¶ 8.3. Ըստ դաշնագրի 23-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ամուսնանալու իրավունքի՝ կոմիտեն չի կարող համարել, որ համասեռամուլ զույգերին ամուսնանալու թույլտվություն չտվող մասնակից պետությունը խախտել է հեղինակների՝ դաշնագրի 16-րդ, 17-րդ, 23-րդ հոդվածների 1-ին և 2-րդ կետերի կամ 26-րդ հոդվածի դրույթներով սահմանված իրավունքը:

ՄԻԿ-ն ընդունել է մասնակից պետության հետևյալ փաստարկը³⁹.

¶ 4.5. Մասնակից պետությունը շեշտում է, որ 23-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված եզրույթները, որոնք հստակ նշում են, որ ամուսնական զույգերը պետք է բաղկացած լինեն տարբեր սեռի ներկայացուցիչներից, պետք է ազդեն սույն դաշնագրով ամրագրված այլ իրավունքների մեկնաբանության վրա: Առաջնորդվելով *generalia specialibus non derogant* սկզբունքով մեկնաբանությամբ և ընդհանուր դրույթները հատուկ դրույթների իմաստից չառանձնացնելու նպատակով՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետը հատուկ իմաստով բացառում է դաշնագրի այլ՝ ավելի ընդհանուր դրույթներից բխող հակասական բացատրությունը:

Կարելի է նշել, որ ՄԻԿ-ը հետևողականորեն չի ընդունել *generalia specialibus non derogant* սկզբունքը⁴⁰:

[20.30] Հստակ չէ, թե ՄԻԿ-ն ի՞նչ սեռ է համարելու սեռը փոխած անձին 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով. արդյոք նա պետք է հաշվի առնի ծննդյան՝ պահի սեռը, թե՞ վիրահատության միջոցով փոփոխված սեռը: Գերազանց կլիներ, եթե ՄԻԿ-ն առաջադիմական դիրք ընդուներ և նման դեպքերում հաշվի առներ անձի փոփոխված սեռը⁴¹:

[20.31] 23-րդ հոդվածի 2-րդ կետն ընդհանուր իրավունք է սահմանում: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ թույլատրելի լինեն որոշակի ընդհանուր սահմանափակումներ, ինչպես օրինակ՝ արյունակից ազգականների արյունապիղծ ամուսնությունների կամ արդեն ամուսնացած անձանց ամուսնանալու իրավունքի սահմանափակումները⁴²:

³⁹ Համեմատի՜ր A. Burton, 'Gay Marriage — a Modern Proposal: Applying Baehr v Lewin to the International Covenant on Civil and Political Rights' (1995) 3 *Indiana Journal of Global Studies* 177, 204-5.

⁴⁰ Տե՛ս, մասնավորապես՝ ՄԻԿ-ի ձևավորվող նախադեպային բազան զինվորական ծառայությունից խլճի նկատառումով հրաժարվելու հնարավոր իրավունքի վերաբերյալ [17.22]ff: Տե՛ս նաև՝ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2003) 3 *Human Rights Law Review* 91, 101-2:

⁴¹ Պետք է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերջերս փոխել է իր դիրքորոշումը այս հարցի վերաբերյալ: «Քրիստին Գուդվինն ընդդեմ Միացյալ թագավորության» (*Christine Goodwin v UK*, 2002, 35 *EHRR* 18) և «Ի-Ն ընդդեմ Միացյալ թագավորության» գործերով (*I v United Kingdom*, 2003, 36 *EHRR* 53), եվրոպական դատարանը որոշում է կայացրել, որ Միացյալ Թագավորության իշխանությունները խախտել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը և 12-րդ հոդվածով սահմանված ամուսնանալու իրավունքը՝ օրենքով չճանաչելով հայցվորների փոփոխված սեռը:

⁴² Տե՛ս Nowak, վերը, ծնթ. 4, 409-10.

[20.32] Քանի որ բազմաթիվ մասնակից պետություններում արգելված է երկամուսնությունը, ամուսնալուծության արգելումը կարող է անձին զրկել կրկին ամուսնանալու իրավունքից: Ուստի Նովակը փաստում է, որ «ամուսնալուծվելու իրավունքը» կարող է մեկնաբանվել 23-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված «ամուսնանալու իրավունքի» հիման վրա⁴³:

Հոդված 23(2). Ընտանիք կազմելու իրավունք

[20.33]

ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Ընտանիք կազմելու իրավունքը սկզբունքորեն ենթադրում է սերնդի շարունակության և միասին ապրելու հնարավորություն: Եթե մասնակից պետությունները ընտանիք կազմելու քաղաքականություն են որդեգրել, ապա այն պետք է համահունչ լինի դաշնագրի դրույթներին և, առավել ևս, չի կարող խտրական կամ հարկադրական լինել: Միասին ապրելու հնարավորությունը նմանապես ենթադրում է ներպետական մակարդակով համապատասխան չափանիշների ընդունում, ինչպես նաև որոշ դեպքերում այլ պետությունների հետ համագործակցելու արդյունքում՝ ընտանիքների միասնության կամ վերամիավորման ապահովում, եթե մանավանդ նրանց անդամները բաժանված են քաղաքական, տնտեսական կամ ման ալ պատճառներով:

Հետևաբար, բնակչությանը վերահսկելու հարկադրական միջոցների կիրառումը հակասում է 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին:

[20.34] 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով երաշխավորված «ընտանիք կազմելու իրավունքը» կիրառելի է այն անձանց հանդեպ, ովքեր նույն ենթակետի դրույթներով լիազորված են ամուսնանալու իրավունքով: Այնուամենայնիվ, ընտանիք կազմելու իրավունքը պայմանավորված չէ ամուսնությամբ, այլ՝ ամուսնանալու «իրավունքով»⁴⁴: Ուստի «Ջոսլինը ընդդեմ Նոր Զելանդիայի» (*Joslin v New Zealand*, 902/99) գործում [20.29] նշվում է, որ համասեռամուլ տղամարդիկ և կանայք զրկվել են ընտանիք կազմելու իրավունքից⁴⁵:

[20.35] Ինչ վերաբերում է ամուսնանալու իրավունքին, չափահաս տղամարդկանց և կանանց ընտանիք կազմելու իրավունքը չի ենթադրում որևէ բացահայտ սահմանափակում: Սակայն այս դեպքում ևս կասկածելի է այդ իրավունքի համընդհանուր կիրառումը: Որոշակի ընդհանուր սահմանափակումներ կարող են թույլատրելի համարվել, ինչպես օրինակ՝ երեխա որդեգրելու իրավունքի կամ արհեստական բեղմնավորման միջոցների մատչելիության սահմանափակումը⁴⁶:

[20.36] 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով սահմանվում է ընտանեկան միասնության կամ վերամիավորման իրավունքը: Այսպիսի իրավունք է վերապահվում նաև 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով⁴⁷:

Հոդված 23(3). Փոխադարձ համաձայնությունը՝ որպես ամուսնության նախապայման

[20.37]

ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. ... 23-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով սահմանվում է, որ ամուսնությունը չի կարող օրինական համարվել ա-

⁴³ Տե՛ս նույն տեղում՝ 411-12: ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածով սահմանված ամուսնանալու իրավունքը չի կարող ենթադրել ամուսնալուծվելու իրավունք «Ջոնսթոնը ընդդեմ Իռլանդիայի» գործի շրջանակներում (*Series A N 112* (1987), 9 EHRR 20-3): Այնուհանդերձ, ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածը բավականին տարբերվում է 23-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից, քանի որ այն «պետության համապատասխան օրենքների համաձայն» այդ իրավունքը սահմանափակելու նախապայման է ընդունում:

⁴⁴ Տե՛ս Nowak, վերը, ծնթ. 4, 412-13:

⁴⁵ Տե՛ս նաև Joseph, վերը, ծնթ. 40, 101:

⁴⁶ Տե՛ս Nowak, վերը, ծնթ. 4, 414:

⁴⁷ Տե՛ս *Aumeeruddy-Cziffra et al v Mauritius* (35/78) [20.14]:

ռանց ենթադրյալ ամուսինների ազատ և լիակատար համաձայնության: Հարկ է, որ մասնակից պետություններն իրենց զեկույցներում նշեն՝ իրենց մոտ կա՞ն ամուսնամալու իրավունքի իրացման սահմանափակումներ կամ խախտումներ՝ կապված ազգակցական կապով, մտավոր հետամնացությամբ պայմանավորված անիրավունական կամ այլ հատուկ գործոնների հետ: Դաշնագիրը հստակ ամուսնական տարիք չի սահմանում ո՛չ տղամարդկանց, ո՛չ կանանց համար, սակայն այդ տարիքը որոշելիս հարկ է հաշվի առնել ենթադրյալ ամուսինների՝ օրենքով սահմանված կարգով ազատ և լիակատար համաձայնություն տալու իրավունքը⁴⁸:

[20.38]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 23. Հարկ է, որ պետությունները հավասար վերաբերմունք ցուցաբերեն տղամարդկանց և կանանց հանդեպ՝ համաձայն 23-րդ հոդվածի դրույթների, որոնք հետագայում կատարելագործվել են 1990 թ. ընդունված թիվ 19 Ընդհանուր մեկնաբանության շրջանակներում: Տղամարդիկ և կանայք կարող են ամուսնանալ միայն ազատ և լիակատար համաձայնության առկայության դեպքում, և պետությունը պարտավոր է երաշխավորել այդ իրավունքի հավասար կիրառումը: Գոյություն ունեն բազմաթիվ գործոններ, որոնք կարող են խոչընդոտել կնոջ՝ ամուսնամալու հարցում ազատ որոշում կայացնելու իրավունքը: Գործոններից մեկն առնչվում է ամուսնամալու նվազագույն տարիքին: Այդ տարիքը որոշելիս պետությունը պետք է առաջնորդվի տղամարդկանց և կանանց համար հավասար չափորոշիչներով: Այդ չափորոշիչները պետք է պայմաններ ապահովեն կնոջ գիտակցված և ինքնուրույն որոշման համար: Որոշ պետություններում մեկ այլ նման գործոն է այն հանգամանքը, որ օրենքի կամ սովորույթային իրավունքի համաձայն՝ կնոջ փոխարեն ամուսնամալու համաձայնություն է տալիս խնամակալը, որը սովորաբար տղամարդ է, դրա հետևանքով խախտվում է կնոջ՝ ազատ ընտրություն կատարելու իրավունքը:

¶ 24. Ազատ և լիակատար համաձայնությունից հետո կանանց ամուսնամալու իրավունքները սահմանափակող մեկ այլ գործոն է հասարակական այնպիսի վերաբերմունքը, որով բռնաբարության զոհ դարձած կանանց մեկուսացնում են և ճնշում գործադրելով՝ հարկադրում ամուսնամալու համաձայնություն տալ: Ամուսնության հարցում կնոջ ազատ և լիակատար համաձայնության իրավունքը կարող է խախտվել նաև այն օրենքներով, որոնց համաձայն՝ բռնաբարության հանցագործության համար մեղադրվող անձը կարող է խուսափել պատժից կամ ավելի թեթև պատժի արժանանալ տուժած կնոջ հետ ամուսնամալու դեպքում: Մասնակից պետությունները պետք է նշեն՝ զոհի հետ ամուսնամալու դեպքում վերանում կամ մեղմացվո՞ւմ է քրեական պատասխանատվությունը, և բռնաբարության հետևանքով նվազեցվո՞ւմ է զոհի ամուսնամալու համար սահմանված տարիքը, եթե նա փոքրահասակ է, հատկապես այն պետություններում, որտեղ բռնաբարության զոհերը մեկուսացվում են հասարակությունից: Մեկ այլ տեսանկյունից ամուսնամալու իրավունքը կարող է խախտվել այն դեպքում, եթե պետությունները սահմանափակեն կանանց կրկին ամուսնամալու իրավունքը տղամարդկանց մույն իրավունքը չփոփոխելու պարագայում: Ամուսնամալու իրավունքը կարող է սահմանափակվել նաև օրենքով կամ սովորույթներով, որոնք խոչընդոտում են որևէ կրոն դավանող կնոջ ամուսնությունը մի տղամարդու հետ, ով ոչ մի կրոն չի ընդունում կամ այլ կրոնի է պատկանում: Պետությունները պետք է տեղեկություններ տրամադրեն օրենքների և պրակտիկայի, ինչպես նաև կանանց՝ միայն ազատ և լիակատար համաձայնության պարագայում ամուսնամալու իրավունքը խախտող սովորույթների վերացման վերաբերյալ: Ի լրումն՝ հարկ է նշել, որ ամուսնության նկատմամբ հավասար վերաբերմունքը ենթադրում է, որ բազմամուսնությունը հակասում է այդ սկզբունքին, քանի որ նսեմացնում է կանանց արժանապատվությունը և անընդունելի խտրականության դրսևորում է կնոջ նկատմամբ: Հետևաբար, այն անվերապահորեն պետք է վերացվի բոլոր այն պետություններում, որտեղ դեռևս ընդունված է⁴⁹:

Հոդված 23(4). Ամուսինների իրավահավասարություն

[20.39]

ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Դաշնագրի 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով սահմանվում է, որ մասնակից պետությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ ամուսնամալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում ամուսինների համար հավասար իրավունքներ և պարտականություններ սահմանելու ուղղությամբ: Անդրադառնալով ամուսնության ընթացքում ամուսինների իրավահավասարությանը՝ կոմիտեն կցանկանա հատկապես նշել, որ ամուսնամալու հետևանքով քաղաքացիություն ստանալու կամ դրանից զրկվելու կապակցությամբ չպետք է կիրառվի որևէ իրավունքի՝ սեռական խտրականությամբ պայմանավորված սահմանափակում: Նմանապես, հարկ է երաշխավորել յուրաքանչյուր ամուսնու՝ նախնական ազգանունը պահպանելու կամ մոր ազգանուն ընտրելու հավասար իրավունքը: Ամուսնության ընթացքում ամուսինները ընտանիքում պետք է ունենան հավասար իրավունք-

⁴⁸ Տե՛ս՝ [21.17]:

⁴⁹ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Նիգերիայի վերաբերյալ (1996), CCPR/C/79/Add. 65, պարբ. 2:

ներ և պարտականություններ: Այդ իրավահավասարությունը վերաբերում է նրանց հարաբերություններից բխող բոլոր հարցերին, ինչպիսիք են՝ բնակության վայրի ընտրությունը, տնային տնտեսությունը վարելու հետ կապված հարցերը, երեխաների կրթությունը և ունեցվածքի տնօրինումը: Ամուսինների այդ իրավահավասարությունը պահպանվում է օրինական ապահարգանքի կամ ամուսնալուծության պարագայում: Այդպիսով, հարկ է արգելել յուրաքանչյուր խտրական վերաբերմունք ապահարգանքի կամ ամուսնալուծության, երեխաների խնամակալության, նրանց սնունդը հոգալու, ալիմենտ ստանալու, այցելության իրավունքի, ծնողական իրավունքներից զրկելու կամ դրանց վերականգնման հիմքերի և ընթացակարգերի նկատմամբ՝ պաշտպանելով երեխաների գերագույն շահերը: Իրենց զեկույցներում մասնակից պետությունները պետք է տեղեկատվություն հաղորդեն ամուսնալուծության կամ ամուսինների ապահարգանքի պարագայում երեխաների անհրաժեշտ պաշտպանությունն ապահովելու համար ձեռնարկված միջոցների մասին:

[20.40]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 25. 23-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրենց պարտավորությունները կատարելու համար պետությունները պետք է երաշխավորեն, որ ամուսնական կարգավիճակով երկու ամուսինների համար հավասար իրավունքներ և պարտականություններ են նախատեսված՝ երեխաների խնամակալության և հոգատարության, նրանց կրոնական և բարոյական դաստիարակության, երեխաներին ծնողների քաղաքացիությունը, ընդհանուր կամ ամուսիններից մեկին պատկանող սեփականությունը ու տնօրինման իրավունքը փոխանցելու մասով: Պետությունները պետք է վերանայեն իրենց օրենսդրությունը՝ անհրաժեշտության դեպքում մեծ ունեցվածքի սեփականության և տնօրինման նկատմամբ ամուսնացած կանանց հավասար իրավունքները երաշխավորելու համար: Պետությունները նաև պետք է երաշխավորեն, որ ամուսնանալու շնորհիվ ամուսինների քաղաքացիություն ստանալու կամ դրանից զրկվելու, բնակության վայր ընտրելու իրավունքի, իրենց նախնական ազգանունը պահպանելու կամ մոր ազգանուն ընտրելու հավասար իրավունքի կապակցությամբ չպետք է կիրառվի սեռական խտրականությամբ պայմանավորված որևէ սահմանափակում: Ամուսնության ընթացքում իրավահավասարությունը ենթադրում է, որ ընտանիքին առնչվող հարցերում ամուսինը և կինը պետք է ունենան հավասար իրավունքներ և պարտականություններ:

¶ 26. Պետությունները պետք է նաև երաշխավորեն ամուսինների իրավահավասարությունը ամուսնալուծության պարագայում, որով բացառվում է ապահարգանք միակողմանի դիմումի հիման վրա: Ամուսնալուծության և ապահարգանքի հիմքերը պետք է նույնը լինեն տղամարդու և կնոջ համար, ինչպես նաև ունեցվածքի բաշխման, ալիմենտների և երեխաների խնամակալության իրավունքի հարցերում: Երեխաների և խնամակալ չհանդիսացող ծնողի շփվելու անհրաժեշտությունը պետք է երաշխավորվի հավասար սկզբունքներով⁵⁰: Կինը պետք է նաև ժառանգության հավասար իրավունքներ ունենա այն դեպքում, եթե ամուսնության լուծարման պատճառը ամուսիններից մեկի մահն է:

[20.41] 23-րդ հոդվածի 4-րդ կետը տարբերվում է ՔՔԻՄԴ-ի այլ հոդվածների կետերից, քանի որ նրա տեքստը, թվում է, աճող պարտավորություններ է ենթադրում: Պետություններից պահանջվում է «համապատասխան քայլեր ձեռնարկել» ամուսինների միջև իրավահավասարություն հաստատելու համար: Բազմաթիվ պետություններում հասարակական նորմերն անկասկած աստիճանակարգում են ենթադրում. տղամարդը կնոջից վեր է ամուսնության մեջ: 23-րդ հոդվածի 4-րդ կետն ընդունում է, որ պետությունների համար ժամանակ է պահանջվելու հասարակության մեջ այդ կառուցվածքի վերացման համար: Այսուհանդերձ, նույն խնդիրն ի հայտ է գալիս դաշնագրի այլ իրավունքների, օրինակ՝ 26-րդ հոդվածում ամրագրված խտրականությունից զերծ մնալու ընդհանուր իրավունքի կապակցությամբ, ընդ որում՝ այդ իրավունքները ձևակերպվել են որպես անմիջական պարտավորություններ և իրականում հնարավոր է, որ 26-րդ հոդվածով սահմանված երաշխիքը վերաբերի 23-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված երաշխիքին⁵¹: Ամեն դեպքում, թիվ 19 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը չի ճանաչում 23-րդ հոդվածի 4-րդ կետի ակնհայտ աստիճանական բնույթը⁵²:

[20.42] Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿՆԽՎԿ/CEDAW) նույնպես 16-րդ հոդվածի շրջանակներում հավասարություն է երաշխավորում ամուսնության ընթացքում:

⁵⁰ Երեխաների հետ շփվելու հավասար իրավունքի մասին տե՛ս՝ [20.45]ff.

⁵¹ Ընդհանուր առմամբ տե՛ս գլ. 23-ը:

⁵² Այնուհանդերձ, տե՛ս ստորև՝ [20.48]:

ՅՈՒՆԱՏՈՒՄ 16, ԿՆԽՎԿ (CEDAW)

¶ 1. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը ամուսնությանն ու ընտանեկան հարաբերություններին վերաբերող բոլոր հարցերում և, մասնավորապես, տղամարդկանց ու կանանց հավասարության հիման վրա ապահովում են.

- (ա) ամուսնության միևնույն իրավունքը,
- (բ) ամուսնու ազատ ընտրության և միայն իր ազատ ու լիակատար համաձայնությամբ ամուսնանալու միևնույն իրավունքը,
- (գ) ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս միևնույն իրավունքներն ու պարտականությունները,
- (դ) տղամարդկանց և կանանց համար միևնույն իրավունքներն ու պարտականությունները որպես ծնողներ՝ անկախ նրանց ամուսնական կարգավիճակից. իրենց երեխաներին վերաբերող հարցերում բոլոր դեպքերում երեխաների շահերը գերակշռող են,
- (ե) երեխաների թվի և նրանց ծննդի միջև ընկած ժամանակամիջոցի հարցը ազատորեն ու պատասխանատվությամբ լուծելու միևնույն իրավունքը և այդ իրավունքներն իրականացնելու հնարավորություն ընծեռող տեղեկատվություն, կրթություն և միջոցներ ստանալու իրավունքը,
- (զ) երեխաների խնամակալության, հոգաբարձության և որդեգրման կամ համանման գործառույթներ իրականացնելու միևնույն իրավունքներն ու պարտականությունները, երբ դրանք նախատեսված են ազգային օրենսդրությամբ. բոլոր դեպքերում երեխաների շահերը գերակշռող շահեր են,
- (է) միևնույն անձնական իրավունքները՝ որպես ամուսին և կին, այդ թվում՝ ազգանվան, մասնագիտության և զբաղմունքի ընտրության իրավունքը,
- (ը) ամուսինների հավասար իրավունքները գույքի սեփականության, ծեռքբերման, տիրապետման, տնօրինման, դրանից ինչպես անվճար, այնպես էլ վարձով օգտվելու և տնօրինելու կապակցությամբ:

[20.43] Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն Ընդհանուր հանձնարարական է ներկայացրել ամուսնության և ընտանեկան հարաբերություններին առնչվող հարցերում ամուսինների իրավահավասարության մասին: Հանձնարարականն ընդհանուր առմամբ ընդունում է, որ ընտանեկան պարտականությունների, երեխաների դաստիարակության և ընտանեկան կյանքը կազմակերպելու հարցերում ամուսինների իրավահավասարության բացակայության պարագայում խոսք չի կարող լինել կանանց տնտեսական, կրթական, ֆիզիկական և հոգեկան բարեկեցության մասին:

ԿԱՆԱՆՑ ԵԿԱՏՄԱՐԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՈՐ ՁԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 21 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

¶ 14. Մասնակից պետությունների ղեկույցներում բացահայտվում է նաև այն փաստը, որ մի շարք երկրներում ընդունված է բազմակնությունը: Նման ամուսնությունները հանգեցնում են ամուսինների իրավահավասարության խախտման և կնոջ ու նրա խնամառուների համար շատ լուրջ հոգեկան և նյութական հետևանքների, ուստի բազմակնությունը չպետք է խրախուսվի, այլ պետք է արգելվի: Կոմիտեն մտահոգությամբ է փաստում, որ որոշ պետություններում, որոնց սահմանադրությամբ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ են վերապահվում, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքով կամ սովորության իրավունքով թույլատրվում է բազմակնություն, ինչի հետևանքով խախտվում են կանանց սահմանադրական իրավունքները և կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ա) կետով սահմանված դրույթները....⁵³:

¶ 39. Մասնակից պետությունները պարտավոր են նաև պահանջել քաղաքացիական, սովորության կամ կրոնական օրենքներով կայացված բոլոր ամուսնությունների գրանցումը: Այդպես պետությունը կարող է երաշխավորել ամուսնությունների համապատասխանությունը կոնվենցիայի դրույթներին, հռչակել ամուսինների իրավահավասարությունը, որոշել ամուսնության նվազագույն տարիքը, արգելել երկամուսնությունն ու բազմամուսնությունը և ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը ...

⁵³ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ա) կետի դրույթների համաձայն՝ պետությունները պարտավոր են պայքարել կանանց նկատմամբ խտրականության սոցիալական և մշակութային կարծրատիպերի դեմ: ՄԻԿ-ը դատապարտել է նաև բազմակնությունը: Տե՛ս թիվ 28 Ընդհանուր մեկնաբանության 24-րդ պարբերությունը [20.38], Եզրափակիչ դիտարկումներ Լիբիայի Արաբական Ջամախիրիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 101, պարբ. 17, Եզրափակիչ դիտարկումներ Կամերունի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 116, պարբ. 10:

¶ 44. Հարկ է, որ մասնակից պետությունները վճռականորեն բացառեն իրենց օրենսդրությամբ, կրոնական օրենքներով, մասնավոր իրավունքով կամ սովորույթային իրավունքով հաստատված յուրաքանչյուր գաղափար, որ ենթադրում է կնոջ և տղամարդու անհավասարություն, և հասնեն զարգացման այն փուլին, երբ վերանան հատկապես 16-րդ հոդվածի վերապահումները:

[20.44] Պերուի վերաբերյալ եզրափակիչ մեկնաբանություններում ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել ամուսնալուծությանը վերաբերող օրենքների մասին, որոնք կարող են հանգեցնել 23-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման⁵⁴:

¶ 16. Կոմիտեն մտահոգությամբ է խոսում այն օրենքի մասին, ըստ որի՝ հավանաբար ամուսնալուծությամբ ավարտվող (ֆիզիկական կամ հոգեկան վատ վերաբերմունք, ամարգանք և անպատշաճ վարվելակերպ) գործերով լսումների ընթացքում դատավորները պետք է հաշվի առնեն ամուսինների կրթվածության մակարդակը, սովորությունները և վարվելակերպը, և համարում է, որ այդ պահանջը կարող է խտրական վերաբերմունք առաջ բերել սոցիալ-տնտեսական ցածր խավերին պատկանող կանանց նկատմամբ:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԵՐԵՆԱՅԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

[20.45]

«ՀԵՆԴՐԻԿՍԸ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (HENDRIKS v THE NETHERLANDS, 201/85)

Ամուսնալուծությունից հետո հեղինակին զրկել են իր կրտսեր որդու հետ շփվելու իրավունքից նախկին կնոջ առարկության պատճառով: 12 տարի շարունակ ձգձգվող դատավարության արդյունքում Հոլանդիայի դատարանները չեն կայացրել հեղինակի՝ որդու հետ շփվելու իրավունքի իրացման վերաբերյալ նախկին կնոջ թույլտվությունը երաշխավորող կարգադրություններ՝ վկայակոչելով այն պատճառաբանությունը, թե հեղինակի հետ շփումը կարող է անհարկի լարում առաջացնել երեխայի մեջ: Հեղինակը բողոք է ներկայացրել ՄԻԿ-ին՝ պնդելով, որ մասնակից պետությունը խախտել է իր զավակի հետ ընտանեկան ազգակցական կապեր պաշտպանելու իր իրավունքը: Հետևյալ փաստերից ելնելով՝ ՄԻԿ-ը՝ որոշում է կայացրել ի վնաս հեղինակի:

¶ 10.4. Առանձին դեպքերում մասնակից պետությունների դատարաններն ընդհանուր առմամբ իրավասու են գնահատելու գործերի հանգամանքները: Այսուհանդերձ, կոմիտեի կարծիքով խիստ անհրաժեշտ է, որ օրենքով նախատեսվեն որոշակի չափանիշներ, որոնց հիման վրա դատավորներին կարելի է օժտել դաշնագրի 23-րդ հոդվածի - դրույթները լիակատար չափով կիրառելու իրավունքով: Էական այն է, որ բոլոր դեպքերում, բացի արտակարգ հանգամանքներից, այդ չափանիշները պետք է ենթադրեն երեխայի և ծնողի միջև անձնական ազգակցական կապերի պահպանում և անմիջական ու պարբերական շփում:

¶ 10.5. Քննարկվող դեպքում կոմիտեն նշում է, որ Հոլանդիայի դատարանները, ինչպես նաև ավելի վաղ գերագույն դատարանը ճանաչել են երեխայի՝ իր ծնողների հետ մշտապես հաղորդակցվելու իրավունքը, ինչպես նաև խնամակալություն չիրականացնող ծնողի հետ շփվելու իրավունքը, սակայն համարել են, որ տվյալ դեպքում, երեխայի շահերից ելնելով, այդ իրավունքները չեն կարող կիրառվել: Այսպիսին է, բոլոր հանգամանքները հաշվի առնելով, դատարանի կայացրած եզրակացությունը, չնայած հեղինակի անվայել վարքի դրսևորում չի արձանագրվել:

¶ 11. Ուստի կոմիտեն չի կարող եզրակացնել, որ մասնակից պետությունը խախտել է 23-րդ հոդվածը, սակայն կոմիտեի ուշադրության կենտրոնում է օրենսդրության լրացման անհրաժեշտությունը, որի մասին խոսվում է 10.4 կետում:

[20.46] Տվյալ գործի կապակցությամբ մի շարք անձնական կարծիքներ են արտահայտվել: Պրն Վակոն համակարծիք է մեծամասնության հետ, սակայն ասել է հետևյալը.

¶ 5. Ինձ մտահոգում է այն հարցը, թե արդյոք Նիդեռլանդների օրենսդրությունը՝ Հենդրիքսների ընտանիքի նկատմամբ կիրառված ձևով, չի՞ հակասում դաշնագրի դրույթներին: Նիդեռլանդների քաղաքացիական օրենսգրքի 161-րդ մասի 5-րդ կետի դրույթները չեն երաշխավորում խնամակալություն չիրականացնող ծնողի՝ երեխայի հետ շփ-

⁵⁴ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1996) CCPR/C/79/Add. 72: Տե՛ս նաև՝ եզրափակիչ դիտարկումներ ճապոնիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 102, պարբ. 16, այստեղ ՄԻԿ-ը քննադատել է ճապոնիայի այն օրենքները, որոնց համաձայն՝ կանանց արգելվում է ամուսնանալ նախորդ ամուսնության լուծարումից կամ չեղյալ համարելուց հետո 6 ամսվա ընթացքում:

վելու ստատուտային իրավունքը, այլ երեխային այցելելու իրավունքն ամբողջությամբ թողնում են դատավորի հայեցողությանը: Նիդեռլանդների օրենսդրությամբ սահմանված չեն հստակ չափանիշներ երեխայի հետ շփվելու իրավունքը չեղյալ համարելու համար: Ուստի հարց է ծագում՝ արդյոք վերոնշյալ ընդհանուր օրենսդրությունը կարելի՞ է բավարար համարել՝ երեխաների պաշտպանությունը, հատկապես, երկու ծնողի հետ էլ շփվելու իրավունքը, ինչպես նաև՝ ամուսնալուծության պարագայում՝ դաշնագրի 23-րդ և 24-րդ հոդվածների դրույթներով սահմանված ամուսինների իրավահավասարությունը երաշխավորելու համար: Իմ կարծիքով՝ երեխայի և խնամակալությունը չիրականացնող ծնողի միջև շարունակական հաղորդակցման հարցը չափազանց կարևոր է, և այն չի կարելի թողնել բացառապես դատավորի հայեցողությանը: Այս հարցը պետք է կարգավորվի հատուկ օրենքներով կամ հստակ չափանիշներով, դրանցով պայմանավորված համապատասխան միջազգային նորմերով, մասնավորապես՝ ծնողների կողմից երեխաների առևանգման մասին միջազգային կոնվենցիաներով, երեխային այցելելու իրավունքները կարգավորող երկկողմ պայմանագրերով և հատկապես՝ երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախագծով, որի 6-րդ հոդվածի 3-րդ կետում ասվում է. «Ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխան երկու ծնողների հետ էլ անձնական ազգակցական կապեր պահպանելու և պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվելու իրավունք ունի, բացի արտակարգ հանգամանքներից»⁵⁵:

¶ 6. Կոմիտեին ներկայացված այս գործով փաստերը չեն վկայում որևէ արտակարգ հանգամանքի առկայություն, որի միջոցով հնարավոր լիներ արդարացնել ավագ Վիմ Յենդրիքսի և կրտսեր Վիմ Յենդրիքսի անձնական հաղորդակցման մերժումը: Նիդեռլանդների դատարաններն իրենք էլ հիմնավորված են համարել հեղինակի՝ երեխայի հետ շփվելու իրավունքը վերականգնելու մասին հայցը, սակայն մերժել են այն երեխայի մոր առարկության հիման վրա: Թեև Նիդեռլանդների դատարանները կարող էին այս հարցում ճիշտ կիրառել ներպետական օրենսդրությունը, ինձ շարունակում է մտահոգել այն հարցը, որ Նիդեռլանդների օրենսդրությունը չի նախատեսում երեխայի հետ շփվելու խնդիրը կարգավորող օրենքով սահմանված որևէ իրավունք, ոչ էլ խնամակալություն չիրականացնող ծնողի և երեխայի միջև երկկողմանի հաղորդակցումն արգելող որևէ հստակ չափանիշ: Կարող եմ գոհունակությամբ նշել, որ ներկայումս Նիդեռլանդների կառավարությունը քննարկում է նոր օրենսդրությունը, որն օրենքով երաշխավորում է երեխայի հետ շփվելու իրավունքը և որոշ ցուցումներ տալիս դատավորներին արտակարգ հանգամանքներում այդ իրավունքի իրացումը մերժելու հիմքերի վերաբերյալ: Հաստատվելու դեպքում այս օրենսդրությունն ավելի լավ կարտացոլի դաշնագրի էական դրույթները:

[20.47] Պարոնայք Դիմիտրիսիչը, Էլ Շաֆեյը, Ջիեյիմսկին և տիկին Ջիզինսը նույնպես անհամաձայնություն են հայտնել նախորդ կարծիքին համապատասխանող իրենց դատողության շրջանակներում:

¶ 1. Մեր կարծիքով՝ այս գործի հիմնական խնդիրն այն է, որ որոշ դեպքերում ներպետական դատարանների՝ «երեխայի շահերից ելնելու» սկզբունքով առաջնորդվելու աներկբայելի իրավունքի և պարտականության արդյունքում խնամակալություն չիրականացնող ծնողը կարող է զրկվել 23-րդ հոդվածով սահմանված իրավունքից:

¶ 2. Ներպետական օրենսդրությամբ սահմանված որոշակի դեպքերում ընտանիքի քայքայման փաստն ինքնին հանգեցնում է խնամակալություն չիրականացնող ծնողի՝ երեխայի հետ շփվելու իրավունքի խախտման՝ անկախ երեխայի վրա ծնողի վարքագծի ազդեցությունից: Այնուհանդերձ, դաշնագրի 23-րդ հոդվածով սահմանվում է ոչ միայն երեխայի պաշտպանության, այլև ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Մենք համակարծիք ենք կոմիտեի հետ այն հարցում, որ ծնող-երեխա հարաբերություններում երեխայի պաշտպանության և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կիրառելի է նաև ամուսնության լուծարումից հետո:

¶ 3. Այս դեպքում Ամստերդամի շրջանային դատարանը մերժել է հեղինակի՝ իր երեխայի հետ շփվելու հայցը, թեև նշել է, որ այն հիմնավորված է և ընդհանրապես պետք է բավարարվեր: Մեր տրամադրության տակ առկա բոլոր փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ պարոն Յենդրիքսի հայցի մերժումը զուցե հիմնված է նման հաղորդակցման, «նույնիսկ չեզոք հիմքերով երեխայի և հոր մեկ հանդիպման» վերաբերյալ երեխայի մոր անհամաձայնությամբ պայմանավորված լարվածությամբ, թեև 1978 թ. դեկտեմբերի 20-ին ընդունված որոշման համաձայն՝ Երեխաների հոգատարության և պաշտպանության հարցերով հանձնաժողովը կթույլատրեր նման հանդիպումը և համապատասխան երաշխիքներ կառաջարկեր»: Հաշվի առնելով այն փաստը, որ պարոն Յենդրիքսի բնավորությունը կամ վարքը չեն կարող անցանկալի հետևանքներ ունենալ նրա որդու համար, մենք այն կարծիքին ենք, որ միակ «արտակարգ հանգամանքը» կրտսեր Վիմ Յենդրիքսի մոր արձագանքն է՝ ի պատասխան հեղինակի՝ երեխայի հետ շփվելու ծնողական իրավունքի հավանական վերականգնմանը, և այդ արձագանքով է պայմանավորված երեխայի շահերից բխող լավագույն որոշման ըմբռնումը:

¶ 4. Մենք իրավասու չենք պնդելու, որ դատարանները սխալ են գնահատել երեխայի էական շահերը՝ ավելի առաջնահերթ համարելով ընթացիկ բարդ ու լարված իրավիճակը, քան երեխայի համար ծնողի հետ հաղորդակցվելու տևական կարևորությունը ներկայացնող հարցը: Այնուհանդերձ, չենք կարող չնշել, որ այս մոտեցումը չի նպաստում

⁵⁵ Տե՛ս երեխայի իրավունքների մասին վերջնական կոնվենցիայի 9-րդ հոդվածը՝ [21.26]:

դաշնագրի 23-րդ հոդվածի դրույթներով պրն Յենդրիքսի և նրա որդու իրավունքների իրացմանը:

[20.48] ՄԻԿ-ի կողմից մասնակից պետության արդարացումը կարող է անսպասելի թվալ՝ հաշվի առնելով բոլոր անդամ պետությունների քննադատությունը: Նովակը ենթադրում է, որ որոշումը «նպատակահարմար կլինի միայն այն դեպքում, եթե համարվի, որ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով սահմանվում է իրավունքի աստիճանական իրագործման պարտավորություն»⁵⁶:

[20.49] Նիդեռլանդների օգտին ՄԻԿ-ի կայացրած բարենպաստ որոշման պատճառներից մեկն էլ այն է, որ կոմիտեն ընդունել է ընտանեկան հարցերով դատարանների որոշումը: Կոմիտեն ներպետական դատական համակարգում ընթացակարգային թերությունների բացակայության պարագայում այս կարգով է առաջնորդվում⁵⁷: Իր կարծիքը ներկայացնելիս պրն Վակոն մեկնաբանել է այդ մոտեցման հետևանքները...

¶ 3. Ինձ ավելի շատ մտահոգում է այն հարցը, որ թեև կոմիտեի՝ տեղական դատարանների որոշումները չվերանայելու գործելակերպը հարմար է և շրջահայաց, սահմանված չէ կաճող արձանագրությամբ: Այն դեպքերում, երբ փաստերը պարզ են, և մասնակից պետությունները ներկայացնում են գործին առնչվող բոլոր կարևոր կարգադրությունների և որոշումների վերանայումները, կոմիտեն պետք է պատրաստ լինի ստուգելու դրանց համապատասխանությունը հեղինակի կողմից վկայակոչված դաշնագրի հատուկ դրույթներին: Այսպիսով, կոմիտեն հանդես չի գալիս որպես «չորրորդ ատյան»՝ ներպետական օրենսդրության հետ պետության որոշման համապատասխանությունը ստուգելու համար, այլ միայն պետք է պարզի՝ իսկապե՞ս խախտվել են ենթադրյալ տուժողի վկայակոչած դաշնագրի դրույթները:

¶ 4. Տվյալ դեպքում կոմիտեն ընդունելի է համարել պրն Յենդրիքսի հայցադիմումը՝ այդպիսով ընդգծելով, որ պատրաստ է ըստ արժանվույն վերանայելու գործը: Այսուհանդերձ, կոմիտեն, ըստ էության, կարծում է, որ իրավասու է ստուգելու հեղինակին իր որդուն այցելելու իրավունքներով չլիազորելու մասին Յուլանդիայի դատարանների որոշումների համապատասխանությունը ընտանիքի և երեխաների պաշտպանությունն ամրագրող դաշնագրի 23-րդ և 24-րդ հոդվածների դրույթներին: Որոշման 10.3 կետում արտահայտված է կոմիտեի՝ 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի դրույթների կիրառման շրջանակի և «ընտանիք» հասկացության ըմբռնումը: 10.4 կետում կոմիտեն ընդգծում է երկու ծնողների հետ երեխայի մշտական անձնական շփումների կարևորությունը՝ բացառությամբ արտակարգ հանգամանքների: Բացի այդ, նշում է, որ ծնողներից մեկի միակողմանի հակազդեցությունը, որն ակնհայտորեն առկա է այս դեպքում, չի կարող նման արտակարգ հանգամանք համարվել: Այդ իսկ պատճառով կոմիտեն պետք է այդ չափանիշներով առաջնորդվեր Յենդրիքսի գործով փաստերը վերանայելու ժամանակ և այդ միջոցով պարզեր՝ արդյոք խախտվե՞լ են դաշնագրի հոդվածները: Այնուամենայնիվ, կոմիտեն, հիմք ընդունելով տեղական դատարանների հայեցողությունը կասկածի տակ չառնելու փաստը, հանգել է այն եզրակացության, որ որևէ խախտում տեղի չի ունեցել:

[20.50] «ՖեՅՆ ընդդեմ ԿՈԼՈՄԲԻԱՅԻ» (FEI v COLOMBIA, 514/92)

Կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ արձանագրվել է 23-րդ հոդվածի 4-րդ կետի հետևյալ խախտումը.

¶ 8.9. Անդրադառնալով 23-րդ հոդվածի 4-րդ կետի վկայակոչված խախտմանը՝ կոմիտեն հիշեցնում է, որ այս դրույթը երաշխավորում է ամուսնավուծությունից հետո իր երկու ծնողների հետ երեխայի պարբերական շփման իրավունքը, բացառությամբ արտակարգ հանգամանքների: Ծնողներից մեկի միակողմանի առարկությունը սովորաբար չի համարվում նման արտակարգ հանգամանք [Տե՛ս՝ Կարծիքներ «Յենդրիքսն ընդդեմ Նիդեռլանդների» (Hendriks v The Netherlands, 201/85) գործով 1988 թ. հուլիսի 27-ին կայացված որոշման 10.4 կետի վերաբերյալ]:

¶ 8.10. Տվյալ դեպքում հեղինակի նախկին ամուսինն է փորձում խոչընդոտել հեղինակի՝ իր դուստրերի հետ պարբերաբար շփվելու իրավունքը, թեև վերջինիս այդ իրավունքը հաստատված է դատարանի որոշմամբ: Յուլ մերժումը, ելնելով կոմիտեին ներկայացված նյութից, ակնհայտորեն հիմնավորված է՝ հաշվի առնելով «առավելապես երեխաների շահերից ելնելու սկզբունքը»: Կոմիտեն չի կարող համաձայնել այդ գնահատականին, քանի որ չի ներկայացվել հեղինակի՝ իր երեխաների հետ շփվելու իրավունքի սահմանափակումն արդարացնող որևէ հատուկ իրական ապացույց: Ընդհակառակը՝ պարզվում է, որ հեղինակի նախկին ամուսինը փորձել է իր տրամադրության տակ եղած բոլոր

⁵⁶ Տե՛ս Nowak, վերը, ծնթ. 4, 419:

⁵⁷ Տե՛ս ընդհանուր ծանոթագրությունը՝ [14.51], նաև «Դրալն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Drbal v The Czech Republic, 49-8/92) գործը [21.27-21.29]:

միջոցներով կասեցնել հեղինակի կապը աղջիկների հետ կամ հեռացնել նրան երեխաներից: Տիկին Ֆեյի՝ իր դուստրերի հետ հազվադեպ հանդիպումների հանդեպ նրա նախկին ամուսնու կիրառած խիստ սահմանափակումներն ավելի են ամրապնդում այս եզրակացությունը: Կնոջ՝ նախկին ամուսնու դեմ դատական գործ հարուցելու փորձերը, քանի որ վերջինս հաշվի չի առել դատարանի՝ կնոջը երեխային այցելելու իրավունք տվող կարգադրությունը, խափանվել են գործի ձգձգման և դատախազության անգործության հետևանքով: Տվյալ հանգամանքներում անհմաստ կլինեն ակնկալել, որ նա կհետևեր քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավական պաշտպանության որևէ միջոցի: Կոմիտեի կարծիքով՝ հատուկ հանգամանքների բացակայության պայմաններում, որոնցից ոչ մեկն էլ առկա չէ տվյալ գործում, ծնողներից մեկին երեխաների հետ շփվելու իրավունքից փաստացի զրկելը չի կարող բխել «երեխայի գերագույն շահերից»: Այն հանգամանքը, որ 1992-1993 թթ. սկսած՝ տիկին Ֆեյը դադարեցրել է իր երեխաների հետ շփվելու իրավունքը պաշտպանելու փորձերը, կոմիտեի կարծիքով, չի կարող օգտագործվել ի վնաս նրա: Անդրադառնալով գործի բոլոր հանգամանքներին՝ կոմիտեն եզրակացնում է, որ տեղի է ունեցել 23-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում: Բացի այդ, խախտվել է նաև դաշնագրի 17-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ դատախազության աշխատակիցները չեն ապահովել հեղինակի՝ իր դուստրերի հետ մշտապես հաղորդակցվելու իրավունքը:

Ֆեյի գործով փաստերը կարելի է տարբերել Յենդրիքսի գործից, քանի որ ակնհայտ է, որ Կոլումբիայի համապատասխան ներպետական դատական ընթացակարգերն անարդար են եղել⁵⁸: Այսպիսով, ՄԻԿ-ը հակված չէ ընդունելու տեղական դատարանների որոշումները և նախաձեռնությունները: Նման իրավիճակ ամենայն հավանականությամբ կծագեր այն դեպքում, եթե տեղական դատարանի որոշումները կայացվեին անարդար օրենսդրության հիման վրա:

[20.51]

«BALAGUER SANTACANA v SPAIN, 417/90»

1983 թ. հեղինակը և Մարիա դել Կարմեն Մոնտալվո Քվինյոնեսը որոշել են միասին ապրել: 1985 թ. հոկտեմբերի 15-ին տիկին Մոնտալվոն աղջիկ է ունեցել: Երկու ծնողներն էլ ճանաչել են երեխային և գրանցել են նրան Բարսելոնում Մարիա դել Կարմեն Բալագեր Մոնտալվո անունով: Երեխայի ծնունդից հետո նրանց հարաբերությունները խզվել են: 1986 թ. հոկտեմբերին տիկին Մոնտալվոն երեխայի հետ լքել է տունը: Դրան հաջորդել են վիճաբանություններ խնամակալության վերաբերյալ, և հեղինակը ներկայացրել է հետևյալ բողոքը.

¶ 3. Եղինակը պնդում է, որ ինքը տուժել է դաշնագրի 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ հոդվածների դրույթները խախտելու հետևանքով, քանի որ Իսպանիայի դատարանները մերժել են ընտանեկան անձեռնմխելիության և երեխայի խնամակալության հարցում հավասար վերաբերմունքի իր իրավունքների վերականգնումը և պատշաճ միջոցներ չեն ձեռնարկել ծնողի այցելությունների համապատասխան կարգ հաստատելու համար: ...Բացի այդ, նա պնդում է, որ Իսպանիայի օրենսդրությունը պատշաճ կարգով չի երաշխավորում երեխայի հետ շփվելու իրավունքը, և ինչպես վկայում է իր գործը և շատ այլ մարդկանց գործեր, ներպետական դատարանների իրավական պրակտիկայում դատավորներն ավելի հակված են բարենպաստ որոշումներ կայացնելու մայրերի և ոչ թե հայրերի օգտին: Թեև հեղինակն առանձնապես չի հիշատակում դաշնագրի 26-րդ հոդվածը, նրա պնդումները վերաբերում են նաև այս դրույթին:

Հաշվի առնելով հետևյալ փաստերը՝ ՄԻԿ-ը որոշում է կայացրել ի վնաս հեղինակի.

¶ 10.1. Կոմիտեի առջև առաջադրված հարցերն առնչվում են 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին, այսինքն՝ այն հարցին, թե արդյոք այդ դրույթները երաշխավորում են ամուսնալուծված կամ բաժանված ծնողի՝ երեխայի հետ շփվելու չսահմանված իրավունքը և երեխայի՝ ծնողների հետ հաղորդակցվելու իրավունքը: Մեկ այլ հարց է՝ արդյոք տվյալ դեպքում խնամակալության և երեխայի հետ շփվելու իրավունքները հիմնավորված են հայրերի և մայրերի տարբերակման սկզբունքով, և եթե այդպես է, ապա արդյոք այդ տարբերակումը պայմանավորված է դաշնագրի 26-րդ հոդվածի դրույթներով ամրագրված չափանիշների կիրառմամբ...

¶ 10.3. Տվյալ դեպքում, անկախ տիկին Մոնտալվոյի հետ հեղինակի կապից, կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը միշտ ընդունել է, որ հեղինակի և դստեր միջև հարաբերությունները պաշտպանված են օրենքով, և 1986-1990 թթ. մայրը երբեք չի խոչընդոտել իր դստեր հետ հեղինակի հաղորդակցումը: Հեղինակի կինը խնամակալության իրավունքի վերականգնման բացառիկ միջոցների է դիմել, և անվիճելի հարցերով դատական ընթացակար-

⁵⁸ Եվ իսկապես, ՄԻԿ-ն արձանագրել է արդար դատավարության իրավունքի խախտում [14.42]:

գերը կասեցվել են միայն այն ժամանակ, երբ պրն Բալագերը շարունակաբար անտեսել է երեխայի հետ շփվելու իր իրավունքի դրույթները և առարկել դրանք: Կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ 23-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի արձանագրվել:

¶ 10.4. Բացի այդ, կոմիտեն նշում է, որ 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները կիրառելի չեն տվյալ դեպքում, քանի որ պրն Բալագերը և տիկին Մոնտալվոն ամուսնացած չեն: 23-րդ հոդվածի ամբողջական համատեքստում 4-րդ կետի դրույթները դիտարկելու դեպքում պարզ է դառնում, որ երկրորդ նախադասության մեջ նշված պաշտպանության իրավունքը կիրառելի է երեխաների հանդեպ միայն ամուսնության լուծարման դեպքում: Ամեն դեպքում կոմիտեի տրամադրության տակ եղած նյութերը հիմնավորում են այն եզրահանգումը, որ այս գործով խնամակալության և երեխայի հետ շփվելու իրավունքի վերաբերյալ որոշում կայացնելիս մասնակից պետության իշխանությունները միշտ հաշվի են առել երեխայի գերագույն շահերը: Նույն սկզբունքով են կայացվել նաև հեղինակի կողմից առանձնացված Բադալոնայի դատարանի երրորդ պալատի որոշումները:

ՄԻԿ-ը կրկին չէր ցանկանում միջամտել ընտանեկան վեճերի վերաբերյալ ներպետական դատավարական գործընթացներին: ՄԻԿ-ը նաև հաստատել է, որ 23-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված իրավունքների կիրառման շրջանակը սահմանափակվում է ամուսնացած կամ նախկինում ամուսնացած զույգերով: Ուստի չամուսնացած զույգերի իրավահավասարության և երեխաների հետ շփվելու իրավունքները սահմանվում են ՔՔԻՄԴ-ի այլ երաշխիքներով, ինչպես օրինակ՝ 23-րդ հոդվածի 1-ին կետով, երեխայի իրավունքներին առնչվող 24-րդ հոդվածով և անխտրականության վերաբերյալ 26-րդ հոդվածի դրույթներով:

[20.52]

«Լ. Պ.-ն ընդդեմ ՉեխիԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(*L.P v CZECH REPUBLIC, 946/00*)

Տվյալ գործով որոշ փաստեր նման են Հենդրիքսի գործով փաստերին [20.45], բացի գործի էության վերաբերյալ միանգամայն տարբեր որոշումներից: Հեղինակը բողոք է ներկայացրել 17-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտման վերաբերյալ, սակայն խախտվել են նաև 23-րդ հոդվածի դրույթները: Բողոքը հիմնավորող փաստերը ներկայացված են ստորև.

¶ 2.1. Հեղինակը՝ գործարար, «Արդար վերաբերմունք երեխաների հանդեպ» ոչ կառավարական կազմակերպության առաջատար ներկայացուցիչ և «Ընտանիքի պաշտպանության ընկերություն» կազմակերպության հիմնադիր անդամներից մեկը, ունի մեկ որդի, որը ծնվել է 1989 թ.: Քանի որ 1991 թ. մարտին հեղինակը բաժանվել է իր որդու մորից՝ տիկին Ռ.Փ.-ից, նրանց որդին մնացել է մոր խնամակալության տակ, և հեղինակին արգելել են պարբերաբար հաղորդակցվել երեխայի հետ:

¶ 2.2. 1993 թ. հուլիսի 12-ին Պրահայի Արևմտյան շրջանի տարածքային դատարանի կայացրած նախնական որոշման հիման վրա, որը հաստատվել է 1995 թ. հոկտեմբերի 2-ին դատարանի հաջորդ նախնական որոշմամբ, հեղինակին շնորհված էր երկու շաբաթը մեկ հանգստյան օրերին՝ շաբաթ օրվա առավոտից մինչև կիրակի օրվա առավոտ, իր որդու հետ հանդիպելու իրավունք: Այնուհանդերձ, տիկին Ռ. Փ.-ն հաշվի չի առել վերոնշյալ որոշումները և այդ ժամանակից սկսած՝ անտեսել է հեղինակի՝ երեխայի հետ կանոնավորված սկզբունքով շփվելու իրավունքը: Միայն 1994 և 1995 թթ. միջև ընկած ժամանակահատվածում է հեղինակին թույլատրվել ազատ այցելել իր որդուն, իսկ այնուհետև՝ միայն տիկին Ռ.Փ.-ի ընտանիքի անդամներից որևէ մեկի կամ անվտանգության զինված սպաների վերահսկողությամբ: Տիկին Ռ.Փ.-ն մի քանի անգամ տուգանվել է դատարանների որոշումն անտեսելու համար:

¶ 2.3. 1994 թ. քրեական օրենսգրքի 3-րդ մասի 171-րդ կետի (N 140/1961 Coll.) հիման վրա հեղինակը կնոջ դեմ քրեական գործ հարուցելու հայց է ներկայացրել դատարանի վերոնշյալ որոշումները չընդունելու պատճառով: Գործի հետաքննությունը կատարել է տարածքային դատարանը, որը 2002 թ. փետրվարի 9-ին հեղինակի կողմից կոմիտեին հաղորդում ներկայացնելու պահին դեռևս որոշում չէր կայացրել. . .

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ խախտվել են ընտանեկան կյանքի անձեռնմխելիության պաշտպանության, ներառյալ՝ իր իրավունքը:

¶ 3.2. Հեղինակը նաև նշում է, որ Չեխիայի Հանրապետության իշխանությունները հրաժարվել են դատարանի՝ իր որդու հետ պարբերաբար շփվելու իրավունք վերապահող որոշումներով առաջնորդվելուց՝ այդպիսով խախտելով դաշնագրի 17-րդ հոդվածով երաշխավորված ընտանեկան անձեռնմխելիության, ինչպես նաև՝ 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու իր և իր որդու իրավունքը:

¶ 5.1. ... Այս գործով էական փաստն այն է, որ 11 տարի շարունակ հեղինակը զրկվել է իր որդու հետ հանդիպելու հնարավորությունից, և Չեխիայի Հանրապետության իշխանություններն անտեսել են նրա իրավունքները պաշտպանելու հարցը և չեն անցկացրել համապատասխան հետաքննություն նրա ներկայացրած հայտարարությունների իսկությունը պարզելու համար:

ՄԻԿ-ը որոշում է կայացրել հեղինակի օգտին:

¶ 7.3. Կոմիտեն կարծում է, որ 17-րդ հոդվածի դրույթներն ընդհանուր առմամբ ենթադրում են հեղինակի՝ իր փոքրահասակ զավակի հետ պարբերաբար հաղորդակցվելու իրավունքը: Թեև որոշ արտակարգ հանգամանքներում - նման հաղորդակցման արգելքը բխում է երեխայի շահերից, և այդ իրավունքի խախտումը չի կարող ամօրինական կամ ապօրինի համարվել, տվյալ դեպքում մասնակից պետության ներպետական դատարանների կայացրած որոշման համաձայն՝ հարկ էր պահպանել նման հաղորդակցումը: Ուստի կոմիտեի առջև ծառանում է հետևյալ հարցը. - արդյոք մասնակից պետությունը երաշխավորե՞լ է հեղինակի՝ իր որդու հետ հանդիպելու իրավունքի արդյունավետ պաշտպանությունը՝ ներպետական դատարանի որոշումների համաձայն:

¶ 7.4. Թեև դատարանները բազմիցս տուգանել են հեղինակի կնոջը հեղինակի՝ իր որդու հետ շփվելու իրավունքը կարգավորող նախնական կարգադրության դրույթները անտեսելու համար, սակայն այդ տուգանքները ոչ միայն լիովին չեն պարտադրվել որպես պատժամիջոց, այլև չեն էլ փոխարինվել հեղինակի իրավունքների երաշխավորման ուղղված միջոցներով: Հաշվի առնելով տվյալ հանգամանքներում դատական գործընթացների տարբեր փուլերում տեղ գտած նշանակալի ձգձգումները՝ կոմիտեն հանգում է այն եզրակացության, որ հեղինակի՝ դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի հետ մեկտեղ 17-րդ հոդվածով սահմանված իրավունքների պաշտպանությունը չի երաշխավորվել: Ուստի, կոմիտեն կարծում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը վկայում են դաշնագրի 2-րդ հոդվածի հետ մեկտեղ 17-րդ հոդվածի դրույթների խախտման մասին:

¶ 8. Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի համաձայն՝ մասնակից պետությունը պարտավոր է երաշխավորել հեղինակի իրավական արդյունավետ պաշտպանության միջոցները, որոնք պետք է ներառեն հեղինակի՝ որդու հետ հաղորդակցվելու իրավունքի վերաբերյալ դատարանի կարգադրությունների արագ կատարումը երաշխավորող միջոցները:

Ռ.Պ.-ի գործով ՄԻԿ-ը պատրաստակամություն է հայտնել միջամտելու ընտանեկան իրավունքի նուրբ հարցերի վերաբերյալ վեճերին, ինչը նա չէր արել Հեղինիքսի և Բալագեր Սանտականայի գործերում:

[20.53] Ի պատասխան *Ռ.Պ.*-ի գործով հեղինակի հայցադիմումին՝ մասնակից պետությունն ասել է հետևյալը.

¶ 4.8. Պետական մեղադրողը հեղինակի ներկայացրած քրեական մեղադրանքների հիման վրա ևս մեկ քրեական գործ է հարուցել երեխայի մոր դեմ: Այնուհանդերձ, քննիչը որոշել է կարճել գործը՝ հաշվի առնելով կլինիկական հոգեբանի կարծիքը, որը պնդում է, որ հեղինակի որդին վճռական է տրամադրված և հրաժարվում է դատարանի կողմից սահմանված ժամանակահատվածում հեղինակի հետ հաղորդակցվելուց:

Պարոնայք Անդոն և Բիագվաթին հակադիր կարծիք են արտահայտել *Ռ.Պ.*-ի գործի վերաբերյալ.

Թեև մեզ համար անհասկանալի է մնում, թե ինչու է երեխայի մայրը այդպիսի համառությամբ խոչընդոտել հեղինակի՝ իր որդուն այցելելու իրավունքը, սակայն մենք հաշվի ենք առնում այն փաստը, որ վերոհիշյալ այլ մեղադրանքներով գործերի վարույթի ընթացքում կլինիկական հոգեբանը պնդել է, որ երեխան վճռական է տրամադրված և հրաժարվում է հեղինակի հետ հաղորդակցվելուց դատարանի կողմից սահմանված ժամանակահատվածում...: Հաշվի առնելով այն փաստը, որ 10 տարին լրացած հեղինակի որդին պետք է որ արդեն ի վիճակի լինի ինքնուրույն դատողություններ անելու, և նրա հայրը որևէ կերպ չի մեկնաբանել այս առանձին կետը, կարծում ենք, որ կոմիտեն պետք է պատշաճ ուշադրություն դարձնի երեխայի ցանկությանը: Այդ կապակցությամբ կցանկանայինք նշել, որ այս դեպքում առավել կարևոր է «երեխայի գերագույն շահերի» սկզբունքը և Չեխիայի դատարանները հստակ նյութերի կարիք ունեն տվյալ գործով որոշում կայացնելու համար, այնինչ հեղինակը բավարար նյութեր չի տրամադրել կոմիտեին՝ դատարանների կայացրած վճիռները չեղյալ համարելու համար: Ամեն դեպքում, կոմիտեի ընդունված իրավասության համաձայն՝ տվյալ գործով առկա փաստերը և ապացույցները պետք է գնահատի ոչ թե կոմիտեն, այլ՝ համապատասխան ներպետական դատարանները, եթե միայն այդ գնահատումը կողմնապահ չլինի և չիրականացվի անարդար սկզբունքներով: Տվյալ դեպքում նման հանգամանք գոյություն չունի:

[20.54] Եվ իսկապես, գուցե անհրաժեշտ է, որ ՄԻԿ-ը խելամոռորեն մոտենա ներպետական ընտանեկան

դատարանների բացառիկ նուրբ գործերին վերաբերող որոշումները փոփոխելու հարցին, ինչպիսիք են՝ երեխայի խնամակալության և սեփականության իրավունքները կարգավորող հարցերը: Կամընսթի արձանագրությամբ սահմանված դեպքերում ապացույցները ներկայացվում են գրավոր: փաստորեն ՄԻԿ-ը վկաներին լսելու և նրանց վարքը գնահատելու հնարավորություն չունի: Բացի այդ, պետք է նշել, որ իրավական վեճի մասնակից կողմերը սովորաբար անձինք են, օրինակ՝ ամուսնալուծված կանայք և ամուսինները: Այն դեպքում, երբ կողմերից մեկը կամընսթի արձանագրությամբ նախատեսված պայմաններում հայցադիմում է ներկայացնում ՄԻԿ-ին, մյուս կողմին չի կարելի հարկադրել մասնակցել կոմիտեի կողմից անցկացվող գործի վերաքննությանը, և գործը շարադրել իր տեսանկյունից⁵⁹: Ընտանեկան օրենսդրության կարևոր բնագավառում կարող է ամարդար և անիմաստ թվալ ՄԻԿ-ի կողմից ընտանեկան հարցերով դատարանների կայացրած որոշումների փոփոխումը այդ գործերին առնչվող բոլոր կողմերի վկայությունները չլսելու պարագայում:

[20.55] 23-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ ծնողների ամուսնալուծության դեպքում պետք է պատշաճ դրույթներ մշակվեն երեխաների իրավունքները պաշտպանելու համար: Հոդվածի այս մասով ՄԻԿ-ը որևէ մեկնաբանություն չի ներկայացրել: Այս իրավունքը հավանաբար ենթադրվում է երեխայի պաշտպանության իրավունքի 24-րդ հոդվածով:

Եզրակացություն

[20.56] ՄԻԿ-ը հաստատել է, որ պետությունը ստանձնում է 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված «ընտանիքի պաշտպանության» իրավունքը, որը լայն իմաստով է մեկնաբանվում: Այսպես օրինակ՝ պետությունները պետք է համապատասխան միջոցներ նախաձեռնեն ընտանիքի միասնությունն ու վերամիավորումը երաշխավորելու համար: Որոշ հանգամանքներում, ինչպես օրինակ՝ «Ուինատան ընդդեմ Ավստրալիայի» (*Winata v Australia*, 930/00) գործում [20.21], պետությունները պետք է հրաժարվեն իրենց ներգաղթային օրենսդրությունից՝ ընտանիքների իրավունքների անհիմն խախտումից խուսափելու համար: Այնուհանդերձ, «Ստյուարտն ընդդեմ Կանադայի» (*Stewart v Canada*, 538/93) [20.17] և «Սահիդն ընդդեմ Նոր Զելանդիայի» (*Sahid v New Zealand*, 893/99) [20.26] գործերը վկայում են, որ ընտանիքի վերամիավորման հարցում պարտավորությունները բացարձակ բնույթ չունեն: 23-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի շրջանակներում միակ դեպքն առնչվել է 23-րդ հոդվածի 2-րդ կետին՝ «Ջոսլինն ընդդեմ Նոր Զելանդիայի» (*Joslin v New Zealand*, 902/99) գործին, որով ՄԻԿ-ը ժխտել է այն փաստը, որ ՔՔԻՄԴ-ի դրույթները երաշխավորում են համասեռամուկների ամուսնանալու իրավունքը [20.29]: Ավելին՝ ՄԻԿ-ն - առհասարակ դժկամությամբ է միջամտել պետության դատարանների՝ ընտանեկան հարցերով կայացրած վճիռներին, որոնք խախտում են 23-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված իրավունքները: Տեղական դատարանների կայացրած վճիռները վիճարկելու առնչությամբ ՄԻԿ-ի շրջահայաց մոտեցումը կարելի է բացատրել ընտանեկան օրենսդրության անձնական և զգայական բնույթով [20.54]: Այնուհանդերձ, Ռ. Պ. ի գործը [20.52] կարող է վկայել այս առնչությամբ ներպետական դատական ընթացակարգերը փոփոխելու պատրաստակամության մի նոր միտումի մասին, առնվազն այն դեպքերում, երբ պարզ է, որ հեղինակի հանդեպ վերաբերմունքը կամայական է և անարդարացի:

⁵⁹ Ցանկացած նման հայց պետք է ներկայացվի մասնակից պետության օժանդակությամբ:

Երեխաների պաշտպանություն. հոդված 24

• Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա	[21.02]
• Հոդված 24-ի օժանդակ բնույթը	[21.07]
• Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները և հոդված 24-ը	[21.11]
• Չափահասության տարիք	[21.15]
• Անխտրականության իրավունք	[21.19]
• Երեխաների իրավունքներն ընտանիքում	[21.24]
• Երեխայի շահագործում	[21.36]
• Սեռական շահագործում	[21.37]
• Երեխայի աշխատանք	[21.43]
• Օգտագործումը թմրամիջոցների առևտրում	[21.45]
• Առևանգում	[21.46]
• Երեխա զինվորներ	[21.48]
• Գրանցման և անվան իրավունք. հոդված 24(2)	[21.51]
• Քաղաքացիության իրավունք. հոդված 24(3)	[21.55]
• Եզրակացություն	[21.57]

ՀՈԴՎԱԾ 24

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանվածության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անչափահասի:

2. Յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է գրանցվի և ունենա անուն:

3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ծնեք բերելու իրավունք:

[21.01] Ի լրումն դաշնագրի այլ հատվածներում ներառված պաշտպանության՝ 24-րդ հոդվածը երեխային շնորհում է հատուկ պաշտպանություն, որը բխում է նրա՝ որպես անչափահասի կարգավիճակից: Թեև պատմականորեն միջազգային իրավունքը լայնորեն չի արտացոլել երեխաների քաղաքացիական և քաղաքական իրավունքները, իրավիճակն այլևս ուրիշ է: Երեխաներին ավանդաբար բնորոշել են որպես ոչ իրավունակի և ոչ որպես միջազգային իրավունքի ոլորտում իրավունք կրողի¹: Սակայն ՔՔԻՄԴ-ը և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ցույց են տալիս, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքները կիրառելի են երեխաների համար՝ և՛ որպես «մարդիկ»՝ ընդհանուր իմաստով, և՛, որտեղ տեղին է, հատուկ որպես անչափահաս կարգավիճակի ուժով: Այս գլուխը կենտրոնացնում է երեխաների քաղաքացիական և քաղաքական *հատուկ* իրավունքների վրա, երբ երեխաների իրավունքները տարբերվում են ընդհանրապես երեխաներին և չափահասներին շնորհված իրավունքներից²:

¹ Տե՛ս G. Van Bueren *The International Law on The Rights of the Child* (Martinus Nijhoff, Dordrecht, 1995), at 145:

² Բացի Վան Բոյրենի ներկայացրած մանրակրկիտ վերլուծությունից, *նույնը տեղում*, միջազգային իրավունքի ներքո նշանակալի ծավալով մեկնաբանություններ կան երեխայի իրավունքների վերաբերյալ. տե՛ս *International Journal of Children's Rights*; P. Alston, *The Best Interests of the Child: Reconciling Culture and Human Rights* (Clarendon, Oxford, 1994). P. Alston, S. Parker, and J. Seymour, *Children, Rights and the Law* (Clarendon, Oxford, 1992); M. Freeman *The Moral Status of*

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

[21.02] Երեխաների իրավունքներին վերաբերող առաջնային միջազգային գործիքը Միավորված ազգերի կազմակերպության 1989 թ. ընդունած Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան է (ԵԻԿ)³: Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները հիմնված են այն գաղափարի վրա, որ երեխաները, քանի որ չեն հասել ֆիզիկական և մտավոր վերջնական ձևավորման, հատուկ պաշտպանության ու հոգածության կարիք ունեն, ներառյալ՝ համապատասխան իրավական պաշտպանությունը և ըմբռնումը, որ բոլոր երկրներում կան երեխաներ, որոնք ապրում են բացառիկ ծանր պայմաններում⁴: ԵԻԿ-ը ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքներին վերաբերող հիմնական համաձայնագրերի շարքում ամենամեծ թվով մասնակից պետություններ ունեցողն է⁵:

[21.03] ԵԻԿ-ը զբաղվում է չորս հիմնական նպատակներով՝ մասնակցություն, պաշտպանություն, կանխարգելում և տրամադրում⁶: Այդպիսով, կոնվենցիան ներառում է մարդու նյութական [substantive] իրավունքների ներկայանալը՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային: Մշտադիտարկում (մոնիթորինգ) իրականացնող մարմինը՝ Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեն (ԵԻՊԿ), վերահսկում է մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը⁷: Պետությունները պարտավոր են զեկույցներ ներկայացնել հինգ տարին մեկ, որոնք քննվում են ԵԻՊԿ-ի հետ հրապարակային երկխոսության միջոցով⁸: ՔՔԻՄԴ-ի ներքո գործող կանոնադրության մոնիթորինգի մեխանիզմը ԵԻԿ-ը չունի, հետևաբար անհատական բողոքների ընթացակարգ գոյություն չունի⁹:

[21.04] ԵԻԿ-ի բոլոր մասնակից պետությունները ստանձնում են երեխայի և ոչ թե ծնողների կամ պետության գնահատմամբ «Երեխայի լավագույն շահերը» առաջ մղելու պարտավորությունը:

ՊՊԿԱԾ 3, ԵԻԿ

1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Children: Essays on the Rights of the Child (Martinus Nijhoff, The Hague, 1997); A. G. Mower *The Convention on the Rights of the Child: International Law Support for Children* (Greenwood Press Westport, Conn., 1997):

³ G.A. res. 44/25, հավելված, 44 U.N. GAOR Supp. (No. 49) էջ 167, ՄԱԿ-ի փաստ. A/44/49 (1989): Տե՛ս ավելին, Մաուեր, վերը, ծնթ. 2, L. LeBlanc, *The Convention on the Rights of the Child: United Nations Lawmaking on Human Rights* (University of Nebraska Press, Lincoln, Neb., 1995):

⁴ Տե՛ս ԵԻԿ-ի նախաբանը:

⁵ 2003 թ. սեպտեմբերի դրությամբ (2008 թ. դեկտեմբերի դրությամբ իրավիճակը չէր փոխվել, *ծան. թարգմ.*), կոնվենցիան չէին վավերացրել միայն ԱՄՆ-ն և Սոմալիան: ԱՄՆ-ի արտառոց դիրքորոշման պատճառների մասին (հիմնական աջ ուժերի մտավախությունները՝ կապված ԵԻԿ-ի միջոցով ծնողների հնարավոր իրավագրվման և «ընտանիքի» արժեզրկման հետ) տե՛ս այստեղ՝ S. Kilbourne, 'United States Failure to Ratify the UN Convention on the Rights of the Child: Playing Politics with Children' (1996) 6 *Transnational Law and Contemporary Problems* 437: Այնուամենայնիվ, կան նշանակալի վերապահումներ, որոնք ձևավորվում են ԵԻԿ-ի կիրառումը մասնակից պետություններում: Դրանք համակողմանի ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել այստեղ՝ L.J. Leblanc, 'Reservations to the Convention on the Rights of the Child: A Macroscopic View of State Practice' (1996) 4 *International Journal of Children's Rights* 357: Թե՛ ԱՄՆ-ն (1995 թ. փետրվարի 16-ին), թե՛ Սոմալիան (2002 թ. մայիսի 9-ին) ստորագրել են ԵԻԿ-ը:

⁶ «Երեխաների մասնակցություն իրենց ճակատագրի վրա ազդող որոշումների կայացմանը, երեխաների պաշտպանություն շահագործումից և հոգատարության բացակայության ու շահագործման ցանկացած ձևից, երեխաներին պատճառվող վնասի կանխարգելում, նրանց հիմնական կարիքների համար օգնության տրամադրում» Վան Բոյրեն, վերը, ծնթ. 1, էջ 15:

⁷ Դոդվ. 43:

⁸ Դոդվ. 44(2): Զեկույցների ներկայացման համակարգը խոր վերլուծության է ենթարկվել այստեղ՝ Մաուեր, վերը, ծնթ. 2:

⁹ Տե՛ս նաև J. Todres, 'Emerging Limitations on the Rights of the Child: The UN Convention on the Rights of the Child and its Early Case Law' [1998] *Columbia Human Rights Law* 159, որը մանրամասնում է, թե ինչպես է կիրառվել ԵԻԿ-ը ներպետական իրավահամակարգերում:

3. Մասնակից պետություններն ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների համապատասխանությունը իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես անվտանգության և առողջապահության բնագավառներում դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու հսկողություն սահմանելու իմաստով:

ՅՈՒՆԱԾ 12, ԵԻԿ

1. Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

2. Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, ունկնդրվել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

ԵԻԿ-ի 12-րդ հոդվածում պարփակված ընթացակարգային կարողությունը¹⁰ և հատկապես 3-րդ հոդվածում ներառված «լավագույն շահերի» սկզբունքը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ միջազգային հանրությունն այլևս երեխաներին «դիտում է ոչ թե բարեգործության, այլ անքակտելի իրավունքների տեսանկյունից»¹¹:

[21.05] Երեխաների քաղաքացիական և քաղաքական իրավունքներին որոշակի անդրադարձ է արվում ԵԻԿ-ում՝ արտացոլելով ՔՔԻՄԴ-ով ընձեռնվող համանման իրավունքները¹²: ԵԻԿ-ը, զբաղվելով երեխաների ընդհանուր բարեկեցությամբ, նաև բովանդակում է կարևոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, այնպես որ այն զգալիորեն հատվում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՍՍՄԻՄԴ) հետ¹³:

ՅՈՒՆԱԾ 4, ԵԻԿ

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ սույն կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կապակցությամբ մասնակից պետություններն այդպիսի միջոցներ ձեռնարկում են իրենց տրամադրության տակ եղած ռեսուրսների առավելագույն չափով և, անհրաժեշտության դեպքում, միջազգային համագործակցության շրջանակներում:

ԵԻԿ-ի ներքո տնտեսական, սոցիալական և մշակութային պարտավորությունների աստիճանական [progressive] բնույթն արտացոլում է ՍՍՄԻՄԴ-ի իրավունքների աստիճանական բնույթը¹⁴:

[21.06] Կարելի է ենթադրել, որ ՄԻԿ-ը 24-րդ հոդվածը մեկնաբանելիս կկրի ԵԻԿ-ի ազդեցությունը: Այդ իսկ պատճառով ստորև, ըստ անհրաժեշտության, մեջբերված են ԵԻԿ-ի նաև այլ դրույթներ:

¹⁰ Այդ առումով տե՛ս նաև ՄԻԿ-ի որոշումը «*Դե Գալիչիոն և Վիկարիոն ընդդեմ Արգենտինայի*» (*De Galicchio and Vicario v Argentina, 400/90*) գործով, պարբ. 10.3 [21.52]:

¹¹ Մաուեր, վերը, ծնթ. 2, էջ 5:

¹² Այսպես, ԵԻԿ-ի 13-րդ հոդվածը համապատասխանում է ՔՔԻՄԴ-ի՝ արտահայտման ազատությանը վերաբերող 19-րդ հոդվածին, ԵԻԿ-ի 14-րդ հոդվածը՝ ՔՔԻՄԴ-ի կրոնի ազատության մասին 18-րդ հոդվածին, ԵԻԿ-ի 15-րդ հոդվածը՝ ՔՔԻՄԴ-ի՝ հավաքների և միավորումներ կազմելու ազատությանը վերաբերող 21-րդ հոդվածին, ԵԻԿ-ի 16-րդ հոդվածը՝ ՔՔԻՄԴ-ի՝ մասնավոր կյանքի վերաբերյալ 17-րդ հոդվածին, ԵԻԿ-ի 6-րդ հոդվածը՝ ՔՔԻՄԴ-ի՝ կյանքի իրավունքի մասին 6-րդ հոդվածին, ԵԻԿ-ի 37-րդ հոդվածը՝ ՔՔԻՄԴ-ի՝ խոշտանգումից պաշտպանության և ազատության ու արդար դատաքննության իրավունքների վերաբերյալ 7-րդ, 9-րդ և 14-րդ հոդվածներին, ԵԻԿ-ի 30-րդ հոդվածը՝ ՔՔԻՄԴ-ի՝ փոքրամասնության իրավունքների պաշտպանությանը վերաբերող 27-րդ հոդվածին, իսկ ԵԻԿ-ի 40-րդ հոդվածը, որ վերաբերում է դատական գործընթացներում պաշտպանությանը, ՔՔԻՄԴ-ի 14-րդ հոդվածին:

¹³ Տե՛ս, օր.՝ ԵԻԿ-ի հոդվ. 24, 26-29 և 31:

¹⁴ Տե՛ս ՍՍՄԻՄԴ-ի հոդվ. 2(2)-ը՝ քննարկված [1.16]-ում:

24-րդ հոդվածի օժանդակ բնույթը

[21.07] 2-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ դաշնագիրը վերաբերում է պետության իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց, և այդպիսով այն վերաբերում է նաև անչափահասներին: ՄԻԿ-ը պարզաբանում է 24-րդ հոդվածի օժանդակ դերը:

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 24-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա, առանց որևէ խտրականության, իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանվածության այնպիսի միջոցների իրավունք ունի, որոնք անհրաժեշտ են նրան՝ որպես անչափահաս: Հետևաբար, այս դրույթի իրականացումը ենթադրում է երեխաների պաշտպանության համար հատուկ միջոցների ընդունում՝ ի լրումն այն միջոցների, որոնք պետությունները, համաձայն 2-րդ հոդվածի, պարտավոր են ձեռնարկել՝ ապահովելու համար յուրաքանչյուրի օգտվելը դաշնագրով նախատեսված իրավունքներից: Մասնակից պետությունների ներկայացրած զեկույցները հաճախ կարծես թերագնահատում են այդ պարտավորությունը և համապատասխան տեղեկություններ չեն ներկայացնում այն մասին, թե ինչպես է ապահովվում երեխաների օգտվելը հատուկ պաշտպանության իրենց իրավունքից:

¶ 2. Այդ կապակցությամբ կոմիտեն մատնացույց է անում, որ 24-րդ հոդվածով նախատեսված իրավունքները միակը չեն, որ դաշնագիրը ճանաչում է երեխաների համար, և որպես անհատներ՝ երեխաներն օգտվում են դաշնագրով հռչակված բոլոր իրավունքներից: Դաշնագրի որոշ դրույթներ, իրավունքը նախատեսելով, բացահայտ նշում են այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկեն պետությունները անչափահասներին չափահասներից ավելի մեծ պաշտպանություն ընձեռելու նպատակով: Այսպես, կյանքի իրավունքի պարագայում մահապատիժ չի կարող սահմանվել 18 տարին չլրացած անձի կատարած հանցագործության համար¹⁵: Նմանապես, օրինական ազատագրկման դեպքում անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և ունեն հնարավորինս արագ դատվելու իրավունք. հաջորդը՝ դատապարտված անչափահաս իրավախախտները ենթակա են այնպիսի ուղղիչ ազատագրկման համակարգի, որն առանձնացնում է նրանց չափահասներից և համապատասխան է նրանց տարիքին ու իրավական կարգավիճակին. նպատակը նպաստելն է ուղղմանը և սոցիալական վերականգնմանը¹⁶: Այլ դեպքերում երեխաները պաշտպանված են դաշնագրով ճանաչված իրավունքի սահմանափակման հնարավորությամբ՝ պայմանով, որ նման սահմանափակումը հիմնավորված է, ինչպիսին, օրինակ, դատական գործով կամ քրեական գործով դատավճիռը հրապարակային դարձնելու իրավունքն է, որից կարելի է բացառություն անել, երբ անչափահասի շահն այդպես է պահանջում¹⁷:

[21.08] Ընդհանուր մեկնաբանությունը սահմանում է, որ ՔՔԻՄԴ-ում ներառված «բոլոր քաղաքացիական իրավունքները» կիրառելի են երեխաների դեպքում, ինչը, թերևս ակնարկ է, որ երեխաները չեն կարող օգտվել դաշնագրում ներառված քաղաքական իրավունքներից: Իսկապես, երեխաները սովորաբար չեն օգտվում 25-րդ հոդվածում տեղ գտած ընտրելու և ընտրվելու իրավունքներից¹⁸:

[21.09] 24-րդ հոդվածն ապահովում է երեխայի իրավունքները՝ պաշտպանության այնպիսի միջոցների նկատառումով, որոնք պահանջվում են նրա ընտանիքից, հասարակությունից և պետությունից: Սա ավելին է, քան դաշնագրի այլ մասերում երաշխավորված իրավունքների սոսկ ամրապնդումը. մասնակից պետության օրենքները պետք է արտացոլեն անչափահասի հատուկ կարգավիճակը և երեխային շնորհեն հատուկ պաշտպանություն¹⁹: Իրոք, այն տպավորությունն է, որ 24-րդ հոդվածը ՔՔԻՄԴ-ի այլ երաշխիքներով երեխաներին տրվող այլ քաղաքացիական իրավունքների «պսակն է», որ ավելի բացահայտ պահանջում է պաշտպանության դրական միջոցներ²⁰: Օրինակ, ըստ 7-րդ հոդվածի՝ երեխան իրավունք ունի ազատ լինելու չափն անցնող մարմնական պատիժից [9.89]: Մինչդեռ Դրղըզստանի Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը բխեցնում է, որ երեխաների որևէ մարմնական պատիժ արգելված է 24-րդ հոդվածով²¹:

¹⁵ Տե՛ս ՔՔԻՄԴ-ի հոդվ. 6(5)՝ համառոտ [8.32]-ում:

¹⁶ Տե՛ս [9.166]:

¹⁷ Տե՛ս ՔՔԻՄԴ-ի հոդվ. 14(4)՝ քննարկված [14.132]-ում:

¹⁸ Տե՛ս [22.19]:

¹⁹ M. Nowak *UN Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary* (Engel, Kehl, 1993), at 424–5.

²⁰ Տե՛ս, օր.՝ «*Դե Գալիչիոն և Վիկարիոն ընդդեմ Արգենտինայի*» (*De Gallicchio and Vicario v Argentina*, 400/90), պարբ. 10.5 [21.52], տե՛ս նաև «*Լաուրեանոն ընդդեմ Պերուի*» (*Laureano v Peru*, 540/93), պարբ. 8.7, որտեղ կյանքի իրավունքի (հոդվ. 6) խախտումը ծանրացել է, քանի որ կատարվել է երեխայի նկատմամբ:

²¹ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/69/KGZ, պարբ. 19:

[21.10] «ՅԱԼԼՈՂՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (JALLOH v NETHERLANDS, 794/98)

Յեղիմակն ապաստան փնտրող է, ով Նիդեռլանդների կողմից երեքուկես ամիս կալանքի տակ է պահվել՝ մինչև իրեն ապաստան տրամադրելու հարցի որոշումը: Կալանքի ժամանակ նա 17 տարեկան էր: Յեղիմակը չի կարողացել ապացուցել, որ իր կալանքը խախտել է 9-րդ հոդվածի դրույթները, որոնցով տրվում է ազատության իրավունք [11.07]: Յեղիմակը պնդում է նաև, որ տեղի է ունեցել 24-րդ հոդվածի խախտում: Պնդումը մերժելով՝ ՄԻԿ-ը նշել է.

¶ 8.3. Յեղիմակը բողոքել է նաև իր կալանքի դեմ, քանի որ դրանով խախտվել է մասնակից պետության պարտավորությունը՝ սահմանված 24-րդ հոդվածով, որով իրեն՝ որպես անչափահասի, պետք է տրամադրվեին պաշտպանության հատուկ միջոցներ: ... Մասնակից պետությունն առարկել է՝ նշելով, որ կասկածներ կային հեղիմակի տարիքի վերաբերյալ, և վստահաբար պարզ չէր, որ նա մինչև 1997 թ. հունիսի 4-ի բժշկական հետազոտությանը հետևած դատարանի վճիռը անչափահաս է, և ամեն դեպքում «Օտարերկրացիների մասին» [Նիդեռլանդիայի] օրենքի 26-րդ հոդվածը չի արգելում անչափահասների կալանքը: Կոմիտեն նշում է, որ բացի հեղիմակի՝ կալանքի մասին հայտարարությունից, նա որևէ տեղեկություն չի ներկայացնում կալանքի վայրի մասին, [որտեղ] իրեն պահել են, կամ իր կալանքի որոշակի պայմանների մասին: Այդ կապակցությամբ կոմիտեն ի գիտություն է ընդունում մասնակից պետության բացատրությունը, որ անչափահասների կալանքը կիրառվում է մեծ սահմանափակումներով: Կոմիտեն այնուհետև նշում է, որ անչափահասի կալանքը, որպես այդպիսին, դաշնագրի 24-րդ հոդվածի խախտում չէ: Գործի հանգամանքներից ելնելով (կասկածներ կային՝ կապված հեղիմակի ինքնության հետ, երբ նա նախկինում փորձել է խուսափել արտաքսումից, քանի որ արտաքսման հիմնավոր հեռանկար կար, և ինքնությունը պարզելու հետաքննությունը դեռևս ընթացքի մեջ էր)՝ կոմիտեն եզրակացնում է, որ հեղիմակը չի հիմնավորել իր պնդումը, որ իր երեքուկես ամսվա կալանքը նշանակում է, որ մասնակից պետությունն իրեն չի տրամադրել պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք պահանջվում են իր անչափահասի կարգավիճակով: Յետևաբար, կոմիտեն կարծում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը դաշնագրի 24-րդ հոդվածի 1-ին կետի խախտում վեր չեն հանում:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները և 24-րդ հոդվածը**[21.11] ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

¶ 3. Դեպքերի մեծ մասում, ... դաշնագիրը չի սահմանում ընդունվելիք միջոցները, և յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում դրանք իր տարածքում և իր իրավագործության ներքո գտնվող երեխաների պաշտպանության կարիքների լույսի ներքո: Կոմիտեն այդ կապակցությամբ նշում է, որ նման միջոցները, թեև առաջին հերթին նախատեսված են ապահովելու համար, որ երեխաները լիովին օգտվեն դաշնագրով հռչակված այլ իրավունքներից, կարող են լինել նաև տնտեսական, սոցիալական ու մշակութային: Օրինակ՝ անհրաժեշտ է ձեռնարկել ամեն մի հնարավոր տնտեսական և սոցիալական միջոց՝ մանկամահացությունը կրճատելու, երեխաների թերսնումը վերացնելու, նրանց նկատմամբ բռնության և դաժան ու անմարդկային վերաբերմունքի դրսևորումները կամ ստիպողական աշխատանքի կամ պոռնկության միջոցով կամ թմրամիջոցների ապօրինի առևտրի մեջ նրանց օգտագործելու և կամ ցանկացած այլ միջոցով նրանց շահագործումը կանխելու համար: Մշակութային ոլորտում անհրաժեշտ է ձեռնարկել հնարավոր ամեն միջոց՝ նրանց անհատականության զարգացումը խթանելու և կրթության այնպիսի մակարդակ ապահովելու համար, որը հնարավորություն կտա նրանց օգտվելու դաշնագրով ճանաչված իրավունքներից, հատկապես՝ կարծիքի և արտահայտման ազատության իրավունքից...

[21.12] Այդպիսով, 24-րդ հոդվածը երեխաների իրավունքների պաշտպանության մեջ ներառում է տնտեսական, սոցիալական և մշակութային տարր, ինչպես հաստատված է Կանադայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում²²:

¶ 18. Կոմիտեն մտաժող է, որ ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների համար նախատեսված «Երեխայի ազգային նպաստի հավելման» [National Child Benefit Supplement] կիրառության մեջ տեղ գտած տարբերությունները կարող են հանգեցնել նրան, որ որոշ երեխաներ կզրկվեն այդ նպաստից: Սա կարող է հանգեցնել դաշնագրի 24-րդ հոդվածի հետ անհամապատասխանության...

¶ 20. ...Միայնակ մայրերի շրջանում աղքատության շատ բարձր մակարդակը նրանց երեխաներին զուրկ է թողնում դաշնագրով հասանելիք պաշտպանությունից...

²² (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 105:

Տե՛ս նաև Վրաստանի վերաբերյալ հետևյալ մեկնաբանությունը²³.

¶ 23. Կոմիտեն մտահոգված է այն երեխաների թվի աճով, որոնք կրում են աղքատության և սոցիալական կարգերի փլուզման ազդեցությունը, ինչպես նաև փողոցաբնակ երեխաների, կարգազանցների ու թմրամոլների թվի համընթաց աճով:

[21.13] Թիվ 17 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը նշում է, որ կրթությունը հիմնարար կարևորություն ունի երեխայի անհատականության պատշաճ զարգացման համար: Թեև կրթության իրավունքը տնտեսական և սոցիալական իրավունք է, մեծ կարևորություն ունի քաղաքացիական և քաղաքական իրավունքների իրականացումն ապահովելու համար և 24-րդ հոդվածով ընձեռնվող պաշտպանության կարևոր տարրերից մեկն է: Օրինակ՝ Ջամբիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է²⁴.

¶ 17. Կոմիտեն անհանգստացած է նաև, որ որևէ միջոց չի ձեռնարկվում՝ ապահովելու, որ հղիությունը և ծնող դառնալը չազդեն երեխաների շարունակական կրթության վրա:

Նմանապես Կոստա Ռիկայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է²⁵.

¶ 19. Կոմիտեն նկատում է նաև աշխատող երեխաների ու դպրոցից դուրս մնացողների թվի մեծացումը և պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայությունը²⁶:

Այս վերլուծությունը նաև ընդգծում է տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների և քաղաքացիական ու քաղաքական իրավունքների անբաժանելիությունն ու փոխափանցելիությունը²⁷:

[21.14] ՔՔԻՄԴ-ի 24-րդ հոդվածով սահմանված կրթության իրավունքների և 18-րդ հոդվածի 4-րդ կետով ծնողներին տրված կրոնական կրթության իրավունքի փոխառնչության կապակցությամբ չլուծված խնդիր կա²⁸:

Չափահասության տարիք

[21.15] Չափահասության տարիքը 24-րդ հոդվածով սահմանված չէ: ՄԻԿ-ը թողնում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն ինքը իրավական նկատառումներով որոշի երեխայի չափահաս դառնալու տարիքը:

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Պաշտպանության հատուկ միջոցների իրավունքը, շնորհիվ անչափահասի կարգավիճակի, պատկանում է յուրաքանչյուր երեխայի: Այդուհանդերձ, դաշնագիրը չի նշում այն տարիքը, թե երբ է երեխան դառնում չափահաս: Դա որոշվում է յուրաքանչյուր մասնակից պետության կողմից՝ համապատասխան սոցիալական և մշակութային պայմանների լույսի ներքո: Այդ առնչությամբ պետություններն իրենց զեկույցներում պետք է նշեն, թե որ տարիքում է երեխան դառնում չափահաս՝ քաղաքացիական հարցերի առումով, և ունակ՝ ստանձնելու քրեական պատասխանատվություն: Պետությունները պետք է նշեն նաև, թե որ տարիքում է երեխան օրինականորեն աշխատելու իրավունք ստանում և որ տարիքում է աշխատանքային օրենսդրությամբ դիտվում չափահաս: Պետությունները պետք է նշեն նաև, թե որ տարիքում է երեխան համարվում չափահաս՝ 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի նկատառումներ:

²³ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 74:

²⁴ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 62:

²⁵ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 107:

²⁶ Տե՛ս քննարկումը [21.43–21.44]-ում, որտեղ ՄԻԿ-ը երեխաների աշխատանքի վերաբերյալ իր մտահոգությունները կապում է երեխայի կրթության վրա դրա ունեցած վնասակար ազդեցության հետ:

²⁷ Տե՛ս [1.75]:

²⁸ Տե՛ս նաև ԵԻԿ-ի թիվ 1 Ընդհանուր մեկնաբանությունը՝ «Կրթության նպատակները»՝ թողարկված 2001 թ. ապրիլի 17-ին, և G. Van Beuren, 'The International Protection of Family Members' Rights as the 21st Century Approaches' (1995) 17 *HRQ* 732 743–7: Կրթության միջազգային իրավունքի վերաբերյալ մեծ ծավալով մեկնաբանություններ կան, տե՛ս, օր.՝ D. Hodgson, 'The International Human Right to Education and Education Concerning Human Rights' (1996) 4 *International Journal of Children's Rights*, 237, և D. Hodgson, *The Human Right to Education* (Aldershot 1998): Տե՛ս նաև [17.28]:

րով: Սակայն կոմիտեն ընդգծում է, որ վերը նշված նպատակների առումով տարիքը չպետք է սահմանվի անհիմն ցածր, և ամեն դեպքում մասնակից պետությունը չի կարող իրեն ազատել դաշնագրով սահմանված պարտավորություններից, որոնք վերաբերում են 18 տարեկանից ցածր անձանց՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք ներպետական օրենսդրության համաձայն հասել են չափահասության տարիքի, թե՞ ոչ²⁹:

ՉՈՂՎԱԾ 1, ԵԿԿ

Սույն կոնվենցիայի նկատառումներով երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե երեխային վերաբերող օրենսդրության համաձայն՝ ավելի վաղ չի հասնում չափահասության:

[21.16] ՄԻԿ-ն իր մտահոգությունն է արտահայտել, երբ քրեական պատասխանատվություն կրելու տարիքը չափազանց ցածր է եղել³⁰: Օրինակ՝ Գայանայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է³¹:

¶ 16. Կոմիտեն լուրջ մտահոգություն է արտահայտում առ այն, որ երեխաները, ներառյալ 10 տարին չլրացած, պահվում են նախնական կալանքի տակ:

Մասնակից պետությունը պետք է անհապաղ քայլեր ձեռնարկի՝ ապահովելու համար, որ երեխաները կալանքի տակ չպահվեն չափահասների հետ մեկտեղ, իսկ փոքրահասակ երեխաները՝ առհասարակ կալանքի տակ չպահվեն (10-րդ հոդվածի 2-րդ կետ և 24-րդ հոդված):

Համանման հայտարարություններ են հնչեցվել Շրի Լանկայի առնչությամբ³²:

¶ 20. Քրեական պատասխանատվություն կրելու ցածր տարիքը և քրեական օրենսգրքով սահմանված դրույթները, համաձայն որոնց՝ 8 տարեկանից բարձր և 12 տարեկանից ցածր երեխան կարող է քրեական պատասխանատվություն կրել իր արարքի բնույթն ու հետևանքները հասկանալու առումով երեխայի հասունության վերաբերյալ դատավորի որոշմամբ, կոմիտեն խորապես մտահոգող հարցեր են:

[21.17] ՄԻԿ-ը հաճախ է իր մտահոգությունն արտահայտել չափազանց ցածր «ամուսնական տարիքի» կապակցությամբ³³: Վենեսուելայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է³⁴:

¶ 18. Նվազագույն ամուսնական տարիքը, որ աղջիկների համար սահմանված է 14 և տղաների համար՝ 16 տարեկանը, և այն փաստը, որ այդ տարիքը աղջիկների հղիության և մայրամալու դեպքում կարող է իջեցվել առանց սահմանափակման, խնդիրներ է առաջացնում մասնակից պետության կողմից 24-րդ հոդվածի 1-ին կետով իր պարտավորությունների կատարման, այսինքն՝ անչափահասներին պաշտպանելու, առումով: Նման վաղ հասակում ամուսնությունը համատեղելի չէ դաշնագրի 23-րդ հոդվածի հետ, որը պահանջում է ապագա ամուսինների ազատ և լիակատար համաձայնությունը: Կոմիտեն մտահոգված է նաև սեռական կյանքի թույլատրելիության առումով աղջիկների համար սահմանված վաղ տարիքով (12):

Մասնակից պետությունը պետք է փոփոխի իր համապատասխան օրենքները՝ համապատասխանեցնելու համար դաշնագրի 23-րդ, 24-րդ և 3-րդ հոդվածներին:

²⁹ Որոշակի տարիքի հղում է կատարվում 6-րդ հոդվածի 5-րդ կետում, որն արգելում է «տասնութ տարին չլրացած» անձանց մահապատիժը: Մանկության սահմանման պատմական և ժամանակակից չափորոշիչներն ուսումնասիրված են այստեղ՝ Վան Բոյրեն, վերը, ծնթ. 1, էջ 32–8:

³⁰ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Բելգիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 99, պարբ. 21, Եզրափակիչ դիտարկումներ Ջամբիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 62, պարբ. 19:

³¹ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 121, պարբ. 16:

³² (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 56, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Կիպրոսի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 39, պարբ. 13 (կրկնված (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 88, պարբ. 16-ում): Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Հոնկոնգի (Չինաստան) վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 117, պարբ. 17 (որտեղ քննադատվում է պատասխանատվության համար սահմանված տարիքը՝ 7 տարեկան): Տե՛ս նաև «Վ.-ն ընդդեմ ՄԻԿ-ի» (*V v UK*) և «Թ.-ն ընդդեմ ՄԻԿ-ի» (*T v UK*, 2000) 30 EHRR 121, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ՝ թվագրված 16 դեկտեմբերի, 1999 թ., քրեական դատավարություններում մեղադրյալ անչափահասների իրավունքների վերաբերյալ:

³³ Տե՛ս նաև [20.37–20.38]-ը՝ 23-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (ԿՆԽԿԿ) 16-րդ հոդվածի 2-րդ կետը նույնպես արգելում է «երեխային նշանել կամ ամուսնացնել»:

³⁴ (2001) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/VEN, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Շրի Լանկայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 56, պարբ. 25 և 38, Եզրափակիչ դիտարկումներ Սիրիայի Արաբական Հանրապետության վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/SYR, պարբ. 20:

Ավելին՝ արական և իգական սեռի ներկայացուցիչների համար ամուսնական տարբեր տարիքների սահմանումը ուսմահարում է 23-րդ և 24-րդ հոդվածները: Ֆրանսիայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է³⁵:

¶ 25. Կոմիտեն մտահոգ է, որ քաղաքացիական օրենսգիրքը ամուսնության համար տարբեր նվազագույն տարիք է սահմանում աղջիկների (15) և տղաների (18) համար, և որ նման ցածր տարիք է սահմանում աղջիկների համար: . . .

[21.18] Ո՛չ ԵԻԿ-ը, ո՛չ էլ ՔՔԻՄԴ-ը նշանակալի բացահայտ փորձ չեն կատարում՝ վեր հանելու չճշմարիտ երեխաների իրավունքները: ԵԻԿ-ի նախաբանն իրականում հղում է կատարում համապատասխան իրավական պաշտպանության անհրաժեշտությանը՝ «ծնվելուց առաջ և հետո»: Սակայն նախաբանը, ըստ էության, ներկայացնում է փոխզիջում՝ երկրների երկու խմբի անհաշտ տեսանկյունների միջև, որոնք վերաբերում են մանկության սկիզբը համարվող պահին: Այն դժվար թե հնարավոր լինի մեկնաբանել որպես աբորտն արգելող³⁶: Անշուշտ, ՄԻԿ-ի մեկնաբանությունները ցույց են տվել, որ աբորտի *արգելումն* ավելի մեծ հավանականությամբ կարող է ուսմահարել ՔՔԻՄԴ-ը, քան աբորտի *թույլատրումը*³⁷:

Անխտրականության իրավունք

[21.19]

ԹԻԿ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Դաշնագիրը պահանջում է, որ երեխաները պաշտպանված լինեն ցանկացած հիմքով խտրականությունից, լինի այդ հիմքը ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, ազգային կամ սոցիալական պատկանելությունը, գույքային դրությունը թե ծնունդը: Այդ կապակցությամբ կոմիտեն նշում է՝ քանի որ դաշնագրով նախատեսված իրավունքներից օգտվելիս անխտրականությունը բխում է նաև, երեխաների պարագայում, 2-րդ հոդվածից և օրենքի առջև նրանց հավասարությունից՝ ըստ 26-րդ հոդվածի, ապա 24-րդ հոդվածի բովանդակած անխտրականությանը վերաբերող կետը որոշակիորեն վերաբերում է այդ հոդվածում հիշատակվող պաշտպանության միջոցներին: Մասնակից պետությունների զեկույցները պետք է ցույց տան, թե ինչպես են օրենսդրությունը և գործելակերպերն ապահովում, որ պաշտպանության միջոցներն ուղղված լինեն ողջ խտրականությունը վերացնելուն բոլոր ոլորտներում, ներառյալ՝ ժառանգությունը, հատկապես քաղաքացի հանդիսացող և չհանդիսացող երեխաների միջև և օրինական երեխաների ու արտամուսնական կապից ծնված երեխաների միջև:

[21.20]

ՀՈԴՎԱԾ 2, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները հարգում և ապահովում են սույն կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խտրականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խտրականության բոլոր ձևերից կամ պատժից՝ նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ համոզմունքի հիմքով:

[21.21]

ԹԻԿ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 28. Պետությունների՝ երեխաներին պաշտպանելու պարտավորությունը (հոդված 24) պետք է հավասարապես կատարվի տղաների և աղջիկների համար: Պետությունները պետք է զեկույցեն ձեռնարկված միջոցների վերաբեր-

³⁵ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 80: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Կամերունի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 117, պարբ. 10, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Չիլիի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104, պարբ. 21:

³⁶ Տե՛ս N. Cantwell, 'The Origins, Development, and Significance of the United Nations Convention on the Rights of the Child' in S. Detrick (ed), *The United Nations Convention on the Rights of the Child: A Guide to the Travaux Préparatoires* (Martinus Nijhoff, Dordrecht, 1992), at 26:

³⁷ Տե՛ս [8.55]:

յալ, որոնք նպատակ ունեն ապահովել, որ տղաներին և աղջիկներին հավասար վերաբերմունք ցուցաբերվի կրթության, սննդի և առողջապահության ոլորտներում, և այդ կապակցությամբ կոմիտեին ներկայացնեն տարաբաժանված [disaggregated] տվյալներ: Պետությունները, օրենսդրության և ցանկացած այլ համապատասխան միջոցներով, պետք է վերացնեն այն բոլոր մշակութային և կրոնական սովորույթները, որոնք վտանգում են իգական սեռի երեխաների ազատությունն ու առողջությունը:

[21.22] ԵԻԿ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետը, ՔՔԻՄԴ-ի բովանդակած անխտրականությանը վերաբերող դրույթների համեմատությամբ, ավելացնում է խտրականության արգելման ևս մեկ բացահայտ հիմք՝ հաշմանդամությունը: Հաշմանդամ երեխաների առնչությամբ ԵԻԿ-ի մտահոգությունը սահմանված է նաև ԵԻԿ-ի 23-րդ հոդվածում:

ՅՈՂՎԱԾ 23, ԵԻԿ

1. Մասնակից պետություններն ընդունում են, որ մտավոր կամ ֆիզիկական խեղումներով երեխան պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին:

ԵԻԿ-ի 23-րդ հոդվածի 2-4-րդ կետերում շարադրված են դրական պարտավորություններ, ինչպիսին է համապատասխան խնամքի հաստատությունների տրամադրումը, որոնք նախատեսված են հաշմանդամ երեխաների կարիքները հոգալու համար: Ինչպես անխտրականության բոլոր երաշխիքների դեպքում, դրական միջոցներն անհրաժեշտ են համակարգային պատմական թերությունն իրապես շտկելու համար³⁸:

[21.23] ՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանությունը և Եզրափակիչ դիտարկումներն արտահայտում են որոշակի մտահոգություն՝ կապված արտամուսնական կապից ծնված երեխաների նկատմամբ վերաբերմունքի հետ, քանի որ օրինավորությամբ պայմանավորված ցանկացած տարբերակում խտրականություն է՝ «ծնունդի» պատճառով: Լիբիայի Արաբական Ջամահիրիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է.³⁹

¶ 18. Կոմիտեն իր մտահոգությունն է արտահայտում օրենսդրության մեջ և գործելակերպերում արտամուսնական կապից ծնված երեխաների հանդեպ խտրականության առկայության վերաբերյալ, ինչն անհամատեղելի է դաշնագրի 24-րդ և 26-րդ հոդվածների հետ: Կոմիտեն առաջարկում է ուշադրություն դարձնել այս իրավիճակի արագ շտկմանը՝ երեխաներին շնորհված բոլոր իրավունքների առումով:

Ֆրանսիայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է⁴⁰.

¶ 25. ... Կոմիտեն առաջարկում է, որ արտամուսնական կապից ծնված բոլոր երեխաներին տրվեն ժառանգության բոլոր իրավունքները, որոնք տրվում են ամուսնական կապից ծնվածներին:

Երեխաների իրավունքներն ընտանիքում

[21.24] ՔՔԻՄԴ-ի 24-րդ հոդվածը զգալիորեն խաչաձևվում է 23-րդ հոդվածի հետ, որն ընտանիքը ճանաչում է որպես «հասարակության բնական ու հիմնարար խմբային միավոր»:

Թե՛ ՄԻԿ-ի, թե՛ ԵԻԿ-ի տեքստերում ընդունվում է, որ ընտանիքն է սովորաբար ապահովում երեխայի պատշաճ զարգացման համար անհրաժեշտ միջավայրը:

³⁸ Համեմատեք [23.87]-ը և «համակարգային անհավասարության» հարցերի մասին հաջորդ պարբերությունը ՔՔԻՄԴ-ի և ԿՆԽՎԿ-ի առնչությամբ:

³⁹ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 101:

⁴⁰ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 80, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Իսլանդիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 98, պարբ. 11:

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. Երեխաների համար անհրաժեշտ պաշտպանություն ապահովելու պատասխանատվությունը կրում են ընտանիքը, հասարակությունը և պետությունը: Թեև դաշնագիրը չի նշում, թե ինչպես պիտի բաշխվի այդ պատասխանատվությունը, այն առաջին հերթին կրում է ընտանիքը, որը լայնորեն է մեկնաբանվում՝ ընդգրկելով խնդրո առարկա մասնակից պետության հասարակության մեջ այն կազմավորող բոլոր անձանց և հատկապես՝ ծնողներին, որպեսզի պայմաններ ստեղծվեն երեխայի անհատականության ներդաշնակ զարգացմանը և դաշնագրով ճանաչված իրավունքներից երեխայի օգտվելուն նպաստելու համար:

ՉՈՂՎԱԾ 5, ԵԻԿ

Մասնակից պետությունները հարգում են ծնողների, համապատասխան դեպքերում նաև տեղական սովորույթներով նախատեսված ընդլայնված ընտանիքի կամ համայնքի անդամների, խնամակալների կամ երեխայի համար օրենքով պատասխանատու այլ անձանց պատասխանատվությունը, իրավունքները և պարտականությունները՝ երեխայի զարգացող ունակություններին համապատասխան ուղղություն տալու երեխային նրա կողմից սույն կոմպենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս:

ՉՈՂՎԱԾ 18, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները կամ, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալները երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են:

[21.25] Շատ հասարակություններում ավելի ու ավելի մեծ տարածում է գտնում երկու ծնողների՝ տնից դուրս աշխատելը: Թե՛ ՄԻԿ-ը, թե՛ ԵԻԿ-ի տեքստը շեշտում են, որ պետությունը պետք է ապահովի, որ երեխաների խնամքով զբաղվող պատշաճ հաստատությունների և այլ ինստիտուցիոնալ աջակցություն լինի՝ նման ծնողներին իրենց երեխաներին մեծացնելու գործում օգնելու համար:

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. ...Բայց քանի որ հոր և մոր համար բավականին տարածված է տնից դուրս վճարովի աշխատանք կատարելը, մասնակից պետությունների զեկույցները պետք է ցույց տան, թե ինչպես են հասարակությունը, սոցիալական հաստատությունները և պետությունը թեթևացնում նրանց պատասխանատվությունը՝ օգնելով ընտանիքին ապահովելու երեխայի պաշտպանությունը: . . .

ՉՈՂՎԱԾ 18, ԵԻԿ

2. Սույն կոմպենցիայում շարադրված իրավունքները երաշխավորելու և դրանց իրականացմանը նպաստելու նպատակով մասնակից պետությունները ծնողներին և օրինական խնամակալներին անհրաժեշտ օգնություն են տրամադրում երեխայի դաստիարակության իրենց պարտականությունները կատարելու գործում և ապահովում են երեխաների խնամքի հաստատությունների և ծառայությունների զարգացումը:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապահովվի աշխատող ծնողների երեխաների իրավունքը՝ օգտվելու նրանց համար նախատեսված երեխաների խնամքի ծառայություններից:

Նկատի առնելով մասնակից պետություններից շատերի աղքատությունը՝ հետաքրքիր կլինի տեսնել, թե ինչպես են մեկնաբանվում այս պարտավորությունները կամընտիր արձանագրությամբ հաղորդակցության համատեքստում:

[21.26] Թե՛ ՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանությունը, թե՛ ԵԻԿ-ի 9-րդ հոդվածը ցույց են տալիս, որ ծնողների բաժանման դեպքում անհրաժեշտ է երաշխավորել երեխայի շփումը երկու ծնողների հետ:

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. ... Ամուսնալուծության պարագայում անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ նկատի ունենալով երեխայի գերագույն շահը, որպեսզի նրան տրվի անհրաժեշտ պաշտպանություն, և, որքանով հնարավոր է, երաշխավորել անձնական հարաբերությունները երկու ծնողների հետ ...

ՉՈԴՎԱԾ 9, ԵԻԿ

3. Մասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխայի իրավունքը՝ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին:

4. Այն դեպքերում, երբ այդպիսի բաժանումը հետևանք է մասնակից պետության որևէ գործողության, ինչպիսին է մեկ կամ երկու ծնողների կամ երեխայի կալանքը, ազատազրկումը, աքսորը, տեղահանությունը կամ մահը (ներառյալ տվյալ անձի՝ պետության վերահսկողության տակ գտնվելու ժամանակ ցանկացած պատճառով վրա հասած մահը), այդ մասնակից պետությունը ծնողներին, երեխային կամ, եթե դա անհրաժեշտ է, ընտանիքի այլ անդամին, նրանց խնդրանքով տրամադրում է համապատասխան տեղեկատվություն ընտանիքի բացակա անդամի (անդամների) գտնվելու վայրի վերաբերյալ, եթե այդպիսի տեղեկատվությունը վնաս չի հասցնում երեխայի բարեկեցությանը: Մասնակից պետությունները հետազայում ապահովում են, որ այդ խնդրանքով դիմելն ինքնըստիմյալ չհամագեցնի անբարենպաստ հետևանքների համապատասխան անձի (անձանց) համար:

[21.27]

«ԴՐԲԱԼ ընդդեմ ՉեխիԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» (DRBAL v THE CZECH REPUBLIC, 498/92)

¶ 3.3. Չեղինակը պնդում է, որ դատարանների կողմից իրեն երեխայի խնամակալ չնշանակելը, հաշվի չառնելով փորձագետների վերջերս տված կարծիքներն առ այն, որ մայրն ունակ չէ հոգալու երեխայի կարիքները, մարդու իրավունքների խախտում է: Նա մեղադրում է, որ Չեխիայի իշխանություններն այն կարծիքին են, որ երեխան ցանկացած պարագայում պետք է մնա մոր հետ, և չեն պաշտպանում երեխայի շահերը:

ՄԻԿ-ը մերժեց հեղինակի գործը հետևյալ ձևակերպմամբ.

¶ 6.3. Կոմիտեն ... ի գիտություն է ընդունում, որ հեղինակը պնդում է, թե դատարաններն իր հանդեպ կողմնակալ են և սխալմամբ որոշել են իր դստեր խնամակալությունը տալ նրա մորը, ոչ թե իրեն, և չփոխել իր դստեր բնակության պաշտոնական վայրը: Այդ պնդումները հիմնականում վերաբերում են դատարանների կողմից փաստերի և ապացույցների գնահատմանը: Կոմիտեն հիշեցնում է, որ ընդհանուր առմամբ, ոչ թե կոմիտեի, այլ դաշնագրին մասնակից պետությունների դատարանների գործն է որոշակի գործում առկա փաստերն ու ապացույցները գնահատելը, քանի դեռ ակնհայտ չէ, որ դատարանների որոշումները բացահայտ կամայական են կամ ներկայացնում են արդարադատության մերժում [denial of justice]: Ներկա գործում, որը վերաբերում է երեխայի խնամակալության բարդ խնդրին, կոմիտեի տրամադրության տակ եղած տեղեկությունները ցույց չեն տալիս, որ Չեխիայի դատարանների որոշումները կամ Չեխիայի իշխանությունների վարքը կամայական է եղել կամ ներկայացրել է արդարադատության մերժում: Համապատասխանաբար հաղորդումն անընդունելի է՝ համաձայն կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածի:

[21.28] Պրն Վեններգրենը արտահայտեց իր առարկությունը.

Չեղինակի հաղորդումը Չեխիայի դատարանների որոշումների դեմ է, որոնցով նրա դուստր ժիտկայի [Jitka]՝ ծնված 1983 թ. մարտի 6-ին, խնամակալությունը հանձնվել է աղջկա մորը՝ Յանա Դրբալովային [Jana Drbalova]: Չեղինակի բողոքներն առաջին հերթին ուղղված են Բռնո-վենկովի շրջանային դատարանի (Brno-venkov District Court, P 120/85), Բռնոյի տարածաշրջանային դատարանի (Regional Court in Brno, N 12 CO 626/86) և Բռնոյի քաղաքային դատարանի (Town Court of Brno, 1991 թ. հունիսի 24-ի որոշում) որոշումների և այդ դատարանների կողմից դատավարությունն անցկացնելու ձևի դեմ: Իմ կարծիքով՝ հաղորդումը, որպես այդպիսին, նույնքան վերաբերում է նրա դստեր շահերին:

Յեղիմակը կոմիտեին տեղեկացրել է, որ մայրը ժիտկային լավ չի վերաբերվել, և 1985 թ. տեղի բժիշկներից մեկը՝ դոկտոր Աննա Վրբիկովան, ահագանգել է շրջանային իշխանությունների երեխաների խնամքի բաժին: Երբ ժիտկայի մորը հետազայում տեղավորել են հոգեբուժական հիվանդանոցում, հեղիմակը ժիտկայի հետ տեղափոխվել է իր ծնողների մոտ և ապրել այնտեղ: Նա Բռնո-վենկովի շրջանային դատարանին խնդրել է իրեն հանձնել ժիտկայի խնամակալությունը: Իր հանդեպ մոր հոգածության ենթադրյալ բացակայությունից հետո ժիտկան պետք է կանոնավոր ոչ ստացիոնար խնամք ստանար Բռնոյի համալսարանական հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում՝ գլխավոր բժիշկ դոկտոր Վրատիսլավ Վրագալի հսկողության ներքո: Դոկտոր Վրագալը դատական նիստում վկայություն է տվել:

Ըստ հեղիմակի՝ նա մշել է, որ ժիտկան բավարարված է հեղիմակի հետ իր կյանքով, և բժշկական տեսանկյունից նա խորհուրդ չի տա երեխային վերցնել հորից: Փորձագիտական մեկ այլ կարծիք է տրամադրել դոկտոր Վերա Կապոնին, ով մշել է, որ ժիտկայի մայրն ունակ է խնամելու նրան, և մայրն ավելի լավ կարող է այդ անել, քան հեղիմակը: 1986 թ. սեպտեմբերի 8-ին դատարանը որոշում է կայացրել ժիտկայի խնամակալությունը հանձնել նրա մորը: Բռնոյի տարածաշրջանային դատարանը հաստատել է այդ վճիռը իր 1987 թ. մարտի 11-ի որոշմամբ: Յեղիմակը, սակայն, հրաժարվել է ժիտկային հանձնել մորը: 1988 թ. հուլիսի 13-ին փորձ է արվել հարկադիր կատարել դատարանի որոշումները և ժիտկային ոստիկանության օգնությամբ հանձնել մորը: Դրան ներկա է եղել շրջանային իշխանությունների երեխաների խնամքի բաժնի ներկայացուցիչը, ինչպես նաև դատարանի նախագահը, ժիտկայի մայրը և նրա իրավախորհրդատուն: Ժիտկան, որն այդ ժամանակ 5 տարեկան էր, հրաժարվել է թողնել հայրական տունը, և փորձն անցել է ապարդյուն: Դրանից երկու ամիս առաջ հեղիմակը դիմում էր ներկայացրել շրջանային դատարան՝ խնամակալին փոխելու խնդրանքով: Հոգեբուժության և հոգեբանության ոլորտների երկու փորձագետ՝ դոկտոր Մարթա Յոլանովան և դոկտոր Մարթա Սկուլովան, հաշվետվություն են ներկայացրել՝ թվագրված 17-ը հուլիսի 1989 թ., որում, ըստ հեղիմակի, հաստատել են, որ հեղիմակն ունակ է միայնակ մեծացնելու իր երեխային, և երեխային հորից ուժով հեռացնելու դեպքում մանկան առողջությանը վտանգ կսպառնա: Դատարանը նրա դիմումը կրկնակի լսման է ուղարկել Բռնոյի քաղաքային դատարան, որն այն մերժել է 1991 թ. հունիսի 24-ին: Ժիտկան այդ ժամանակ 8 տարեկան էր, իսկ այժմ՝ 11 տարեկան է. նա դեռևս ապրում է հեղիմակի և վերջինիս ծնողների հետ:

Կոմիտեին ներկայացված նյութից ակնհայտ չի դառնում, որ դատարանների որոշումները բացահայտ կամայական կամ արդարադատության մերժում են եղել: Այնուամենայնիվ, ո՛չ դատական նիստերի արձանագրությունները, ո՛չ դատարանների որոշումները և այդ որոշումների հիմքերը կոմիտեին չեն տրամադրվել: Ամենայն հավանականությամբ, դրանք հագիվ թե կոպիտ անարդարություններ բացահայտեին: Փոխարենը, ինչն ինձ իսկապես անհանգստացնում է, այն է, որ իրավիճակը, դատարանի որոշումներից և հարկադրանքի չստացված փորձից հետո, վերաճել է փաստացի անոմալիայի, որը կարող է վտանգել երեխայի առողջ, ճիշտ և անվտանգ զարգացումը: Յեղիմակը պնդում է, որ քանի դեռ մայրն է հանդիսանում օրինական խնամակալը, նրա դուստրը շարունակում է գտնվել առողջության վնասման հնարավոր վտանգի տակ: Նա չի կարողանում ազատ տեղաշարժվել, հատկապես դպրոցում, քանի որ մշտապես ենթարկվում է ուժով դուրս հանվելու և անհայտ միջավայր տեղափոխվելու ռիսկին: Նա չի ճանաչում իր մորը: Այս ամենի հետևանքով երեխան հոգեկան տառապանքներ է կրում: Այս ոչ բնականոն իրավիճակն անհանգստացնող է և միտումնավոր թե ոչ, դատարանի կողմից հարցը, ինչպես այժմ ակնհայտ է, պատշաճ կերպով չլուծելու հետևանք է: Թերացումը, իմ կարծիքով, վնասում է երեխայի լավագույն շահերը: Յետևաբար հաղորդումը, իմ կարծիքով, դաժնագրի 24-րդ հոդվածի 1-ին կետի հետ կապված հարցեր է առաջացնում, որը յուրաքանչյուր երեխայի պաշտպանության այնպիսի միջոցների իրավունք է տալիս, որոնք պահանջվում են նրա ընտանիքից, հասարակությունից և պետությունից: Այդ առումով ես հաղորդումը համարում եմ ընդունելի:

[21.29] Վեներգորենը ՄԻԿ-ի միակ անդամն էր, ով *Դրբալի* գործն ընդունելի էր համարել: Նկատի առնելով երեխայի համար իրավիճակի ակնհայտ լրջությունը՝ կարելի է ափսոսալ, որ ՄԻԿ-ի մեծամասնությունը հաշվի է նստել ներպետական դատարանների վճիռների հետ⁴¹: Մյուս կողմից՝ *Դրբալի* գործը թերևս հաստատում է, որ միջազգային մարմինները, որոնք քննությունը գրավոր են վարում, մեծապես զգուշանում են «բեկանել» ներպետական դատարանների որոշումներն այնպիսի նուրբ ոլորտներում, ինչպիսիք են երեխաների հետ շփումը, երեխաների խնամակալությունը կամ, ինչպես ցույց է տրված հետևյալ գործում, երեխայի խնամքի համար նախատեսված դրամական նպաստը (ալիմենտ) [child maintenance]⁴²:

⁴¹ Սա ՄԻԿ-ի ընդունված գործելակերպն է. տե՛ս [14.51]-ը:

⁴² Տե՛ս նաև [20.54]-ը. տե՛ս, ընդհանուր առմամբ, [20.45] և հաջորդը այն մասին, թե ինչպես է լուծվել երեխաների հետ ծնողների շփման հարցը՝ ըստ 23-րդ հոդվածի, որը վերաբերում է «ծնողների իրավունքներին»:

[21.30]

«ԲԻՐՆԸ և ԼԱԶԱՐԵՍԿՈՒՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(BYRNE and LAZARESCU v CANADA, 742/97)

¶ 6.3. Կոմիտեն նշում է, որ հեղինակների հիմնական բողոքն այն է, որ հարկման արդյունքում իրենք երեխայի խնամքի համար նախատեսված նպաստի ավելի մեծ գումար են վճարել, քան իրենց նախկին կողակիցները: Կոմիտեն կարծում է, որ երեխայի խնամքի համար նախատեսված նպաստի վճարման համամասնությունը ծնողների համար սահմանում է ընտանեկան դատարանը [Family Court], ոչ թե հարկային մարմինները: Կոմիտեի կարծիքով՝ հեղինակների դեպքում ենթադրյալ անհավասար վճարումները հետևանք են երեխայի խնամքի համար վճարում սահմանող կարգադրության և «եկամտահարկի մասին» օրենքի փոխհարաբերության: Սա պետք է վճարման չափերը սահմանելիս հաշվի առնվի դատարանի կողմից: Կոմիտեի խնդիրը չէ վերագնահատել դատարանի կողմից սահմանված վճարման չափերը: Այս համատեքստում կոմիտեն նշում է, որ եթե դատարանը հաշվի չի առել հարկային հետևանքները, ինչպես առաջարկվել է հեղինակների կողմից, հեղինակներն այդ հիմքով կարող էին դիմել այդ կարգադրության փոփոխման համար:

¶ 6.4. Կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակների ներկայացրած փաստերը չեն հիմնավորում նրանց պնդումը, որ իրենք դարձել են դաշնագրի 26-րդ հոդվածի կամ էլ 23-րդ և 24-րդ հոդվածների խախտման զոհ:

[21.31]

ՊՈԴՎԱԾ 10, ԵԻԿ

1. 9-րդ հոդվածի 1-ին կետով մասնակից պետությունների ստանձնած պարտավորության համաձայն՝ ընտանիքի վերամիավորման նպատակով երեխայի կամ նրա ծնողների դիմումները մասնակից պետություն ժամանելու կամ այնտեղից մեկնելու մասին մասնակից պետությունների կողմից պետք է քննարկվեն դրական, մարդասիրական և արագ կարգով: Մասնակից պետությունն այնուհետև ապահովում է, որ այդ խնդրանքով դիմելը դիմողի և նրա ընտանիքի անդամների համար չհանգեցնի անբարենպաստ հետևանքների:

2. Երեխան, որի ծնողները բնակվում են տարբեր պետություններում, իրավունք ունի կանոնավոր կերպով, բացառությամբ հատուկ հանգամանքների, անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանել երկու ծնողների հետ: Այդ նպատակով և համաձայն 9-րդ հոդվածի 2-րդ կետի, մասնակից պետությունների ստանձնած պարտավորության, մասնակից պետությունները հարգում են ցանկացած, այդ թվում նաև սեփական երկրից հեռանալու և սեփական երկրի վերադառնալու՝ երեխայի և նրա ծնողների իրավունքը: Ցանկացած երկրից հեռանալու իրավունքը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի (ordre public), բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար և համատեղելի են սույն կոմիտեի կողմից ճանաչված այլ իրավունքների հետ:

[21.32] ՄԻԿ-ը մտահոգություն է արտահայտել նաև, որ պետությունները «զգայուն» կանոններ են ընդունում սահմանի տարբեր կողմերում գտնվող ծնողների՝ հանուն երեխաների վերամիավորման առնչությամբ⁴³: Օրինակ՝ Կանադայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է⁴⁴.

¶ 15. Կոմիտեն շարունակում է մտահոգվել Կանադայում գործող այն քաղաքականության կապակցությամբ, որը վերաբերում է երկարաժամկետ օտարերկրացի ռեզիդենտների վտարմանը՝ առանց դեպքերից յուրաքանչյուրում դաշնագրի բոլոր, մասնավորապես՝ 23-րդ և 24-րդ հոդվածներով սահմանված իրավունքների պաշտպանությունն ամբողջապես դիտարկելու:

[21.33] Պետության օրենքները չպետք է անհարկի սպառնան երեխայի ընտանեկան շրջապատի կայունությանը: Օրինակ՝ Շվեյցարիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշում է⁴⁵.

¶ 19. Կոմիտեն մտահոգ է արտասահմանում պարզեցված որդեգրման ռեժիմով երեխա որդեգրած անձանց ներկայացվող պահանջով, ըստ որի՝ նրանք պետք է Շվեյցարիայում ամբողջական որդեգրման դիմում ներկայացնեն, եթե ցանկանում են, որ որդեգրումն այդ երկրում ճանաչվի: Այդ ընթացակարգի համաձայն՝ հիմնական որդեգրմանը նախորդում է երկու տարվա փորձաշրջանը, որի ընթացքում որդեգրող ծնողները կարող են որոշել չշարունակել որ-

⁴³ Տե՛ս ընտանիքի միասնությանը վերաբերող իրավունքների քննարկումը՝ [20.13–20.27]:

⁴⁴ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 105. տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Դանիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 68, պարբ. 19: Տե՛ս նաև «Ուինատան ընդդեմ Ավստրալիայի» (Winata v Australia, 930/00) [20.21] և հաջորդը:

⁴⁵ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 70:

դեգրումը, իսկ երեխան ընդամենը օտարերկրացիներին տրվող բնակության ժամանակավոր և թարմացման ենթակա թույլտվության իրավունք ունի: Կոմիտեն իր մտահոգությունն է արտահայտում, քանի որ այդ երկու գործոնները երեխայի դրությունը չափազանց երերուն են դարձնում թե՛ իրավական, թե՛ հուզական տեսանկյունից: . . .

¶ 30. Կոմիտեն առաջարկում է ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական միջոցներ՝ ապահովելու, որ արտասահմանում որդեգրված երեխաներին Շվեյցարիա ժամանելուն պես տրվի կամ Շվեյցարիայի քաղաքացիություն, եթե ծնողները շվեյցարացի են, կամ ժամանակավոր, կամ հիմնական բնակության թույլտվություն, եթե ծնողներն ունեն մեկ թույլտվություն, և հիմնական որդեգրմանը նախորդող երկամյա փորձաշրջանը չկիրառվի նրանց նկատմամբ:

[21.34] Թեև երեխաների խնամքի առումով առաջնային պատասխանատվությունը կրում է ընտանիքը, ցավոք, ի հայտ են գալիս հանգամանքներ, երբ ՔՔԻՄԴ-ին և ԵԻԿ-ին մասնակից պետություններից պահանջվում է միջամտել՝ երեխային սեփական ընտանիքից պաշտպանելու համար: Պետության իրավասությամբ երեխաներին իրենց ծնողներից անջատելուն վերաբերող հիմնական գործը «*Բաքլն ընդդեմ Նոր Զելանդիայի*» (*Buckle v New Zealand, 858/99*) գործն է: Այն քննարկվել է [20.27]-ում, քանի որ ՄԻԿ-ն իր հիմնավորումներում առավելապես կենտրոնացնում է 23-րդ հոդվածի վրա, ոչ թե 24-րդի:

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. ... Ավելին՝ այն դեպքերում, երբ ծնողները և ընտանիքը լրջորեն թերանում են իրենց պարտականություններում, վատ են վերաբերվում երեխային կամ հոգ չեն տանում նրա մասին, պետությունը պարտավոր է միջամտել և սահմանափակել ծնողների իրավասությունները, իսկ երեխան կարող է առանձնացվել ընտանիքից, երբ հանգամանքներն այդ են պահանջում: ...

ՊԴԿԱԾ 9, ԵԻԿ

1. Մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները, գործող օրենքի և ընթացակարգի համաձայն, կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշումը կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները դաժանորեն են վարվում երեխայի հետ կամ հոգ չեն տանում նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ցանկացած քննության ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերին հնարավորություն է տրվում մասնակցել քննությանը և ներկայացնել իրենց տեսակետները:

[21.35] Երբ երեխան առանձնացվում է ընտանիքից, պետությունը կրում է այդ երեխային համապատասխան այլընտրանքային խնամք տրամադրելու դրական պարտավորություն:

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6. ... Կոմիտեն օգտակար է համարում, որ մասնակից պետությունների ղեկույցները տեղեկություններ ներկայացնեն պաշտպանության հատուկ միջոցների մասին, որոնք ընդունվել են այն երեխաներին պաշտպանելու համար, ովքեր լքվել են իրենց ընտանիքների կողմից կամ առանձնացվել են իրենց ընտանեկան միջավայրից, որպեսզի հնարավորություն տան նրանց զարգանալու այնպիսի պայմաններում, որոնք ամենամոտեն են ընտանեկան միջավայրը բնորոշող պայմաններին:

ՊԴԿԱԾ 20, ԵԻԿ

1. Ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան միջավայրից զրկված կամ իր լավագույն շահերի տեսանկյունից այդպիսի միջավայրում մնալ չկարողացող երեխան պետության կողմից տրամադրվող հատուկ պաշտպանության և օգնության իրավունք ունի:

2. Մասնակից պետություններն իրենց ներպետական օրենքներին համապատասխան ապահովում են այլընտրան-

քային խնամք այդպիսի երեխայի համար:

3. Այդպիսի խնամքը կարող է ներառել, ի թիվս այլ միջոցների, խնամակալության սահմանումը, «ղափալան»՝ ըստ իսլամական իրավունքի, որդեգրումը կամ, անհրաժեշտության դեպքում, երեխաների խնամքի համար նախատեսված համապատասխան հաստատություններում տեղավորելը: Այս կամ այն լուծումն ընտրելիս պատշաճ կերպով հաշվի է առնվում երեխայի դաստիարակության հաջորդայնությունն ապահովելու ցանկալիությունն ու նրա էթնիկական ծագումը, կրոնական ու մշակութային պատկանելությունը և մայրենի լեզուն:

Երեխայի շահագործում

[21.36] Պետությունների պարտականությունն է երեխաներին պաշտպանել նրանց ներհատուկ խոցելիությունից օգտվող անձանց շահագործումից:

ՅՈՂՎԱԾ 19, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները՝ պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:

2. Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի՝ վերջինից ղեկավարող կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման համձնելու, հետաքննելու, բուժելու, և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության, դատական գործ հարուցելու համար:

ՅՈՂՎԱԾ 36, ԵԻԿ

Մասնակից պետությունները երեխային պաշտպանում են նրա բարեկեցությունը որևէ տեսանկյունից վնասող շահագործման բոլոր այլ ձևերից:

ՍԵՌԱԿԱՆ ՇԱՅԱԳՈՐԾՈՒՄ

[21.37] Պարզ է, ինչպես սահմանված է թիվ 17 Ընդհանուր մեկնաբանության 3-րդ պարբերությանը [21.11], որ երեխաները հատուկ պաշտպանություն են պահանջում սեռական և ֆիզիկական ոտնձգություններից⁴⁶:

ՅՈՂՎԱԾ 34, ԵԻԿ

Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն.

- ա) երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,
- բ) շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,

⁴⁶ Ընդհանուր առմամբ, տե՛ս R. Levesque, 'Sexual Use, Abuse, and Exploitation of Children: Challenges in Implementing Children's Rights' (1994) 60 *Brooklyn Law Review* 959: Տե՛ս նաև [10.07–10.08]:

զ) շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

[21.38] Այդ առնչությամբ ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել Շրի Լանկայի վերաբերյալ⁴⁷.

¶ 24. Թեև կոմիտեն ողջունում է երեխաների դեմ կատարված այնպիսի հանցագործություններին վերաբերող օրենսդրության առաջարկված փոփոխությունները, ինչպիսիք են արյունապղծությունը (ինցեստ) և երեխաների սեռական շահագործումը, մտահոգված է երեխաների տնտեսական և սեռական շահագործման իրադրությամբ՝ թե՛ կենցաղային սպասարկման ոլորտում երեխաների օգտագործման, թե՛ տղաների մարմնավաճառության առումով:

Ճապոնիայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է հետևյալը⁴⁸.

¶ 29. Երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի դեմ ծրագրված մոր օրենսդրության վերաբերյալ մասնակից պետության տրամադրած տեղեկությունների լույսի ներքո կոմիտեն մտահոգություն է հայտնում, որ մեծ միջոցները չեն պաշտպանի 18 տարին չլրացած երեխաներին, երբ սեռական հարաբերություններում ներգրավվելու տարիքային սահմանափակումը շատ ցածր է՝ 13 տարեկան: Կոմիտեն մտահոգված է նաև հատուկ իրավական դրույթների բացակայությամբ, որոնք կարգելեին օտարերկրացի երեխաներին մարմնավաճառության նպատակով ճապոնիա բերելը՝ անկախ այն փաստից, որ երեխաների առևանգումը և սեռական շահագործումը քրեորեն պատժելի են: Կոմիտեն առաջարկում է շտկել իրավիճակը՝ ապահովելով համատեղելիությունը մասնակից պետության՝ դաշնագրի 9-րդ, 17-րդ և 24-րդ հոդվածներով սահմանված պարտավորությունների հետ:

Նորվեգիայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է⁴⁹.

¶ 9. Կոմիտեն ողջունում է մասնակից պետությանը 1998 թ. իրականացված մոր համակարգի համար, որը վերաբերում է սեռական ոտնձգությունների մանկահասակ զոհերի հարցաքննությանը դատավարությունների ընթացքում . . .

[21.39] ՄԱԿ-ի մարմինները համարում են, որ ողջ աշխարհում մանկական պոռնոգրաֆիան դարձել է երեխաների հանդեպ անհարիր վերաբերմունքի և ոտնձգությունների գերակայող ձևը⁵⁰: Օրինակ՝ Բելգիայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է⁵¹.

¶ 27. Կոմիտեն շարունակում է մտահոգված մնալ պեդոպոռնոգրաֆիայի պատրաստման, վաճառքի և տարածման կապակցությամբ: Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանը արդյունավետ միջոցներ ձեռնարկել այդ քրեական նյութերի տիրապետումն ու տարածումը նվազեցնելու ուղղությամբ:

[21.40] Չքավոր կամ լքված երեխաները հատկապես հաճախ են հայտնվում սեռական ոտնձգություններին մեծ վտանգի տակ: Օրինակ՝ Մեքսիկայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է⁵².

¶ 15. Կոմիտեն նաև ցավ է հայտնում փողոցային երեխաների դրության կապակցությամբ, որը հաստատում կերպով վատթարանում է: Դրանք այն երեխաներն են, որոնք սեռական բռնության ամենամեծ ռիսկի տակ են և հանդիսանում են սեռական թրաֆիքինգի թիրախ:

Պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի այդ երեխաների պաշտպանության և վերականգնման համար՝ դաշնագրի 24-րդ հոդվածին համապատասխան, ներառյալ այն միջոցները, որոնք ուղղված են մարմնավաճառության, մանկական պոռնոգրաֆիայի և երեխաների առևտրի վերացմանը:

[21.41] Կոստա Ռիկայի առնչությամբ ընդգծվել է երեխաների հետ սեռական հարաբերություններ հետապնդող տուրիզմը⁵³.

¶ 18. Կոմիտեն խորապես անհանգստացած է Կոստա Ռիկայում երեխաների առևտրային սեռական շահագործման դեպքերի բարձր հաճախականությամբ, որոնք ակնհայտորեն մեծ մասամբ կապված են տուրիզմի հետ: Կոմիտեն ի գիտություն է ընդունում Երեխայի պաշտպանության ազգային խորհրդի ստեղծումը և քրեական օրենսգրքի փոփո-

⁴⁷ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 56:

⁴⁸ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 102:

⁴⁹ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 112:

⁵⁰ Մաուեր, վերը, ծնթ. 2, էջ 41:

⁵¹ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 99:

⁵² (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 109:

⁵³ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 107:

խությունները, որոնք քրեական պատասխանատվություն են սահմանում երեխաների սեռական շահագործման համար: Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանը լրացուցիչ քայլեր ձեռնարկել այս երևույթի վերացման ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում դիտարկվող հանցագործությունների բացահայտման և պատասխանատվության ենթարկելու հարցում համագործակցելով այլ պետությունների հետ:

[21.42] 2000 թ. մայիսին Գլխավոր ասամբլեան ընդունեց Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը երեխաների վաճառքի, մանկական պոռնկության և պոռնոգրաֆիայի մասին, որն ակնհայտորեն ուղղված է երեխայի սեռական շահագործման չարիքի դեմ պայքարին: Լրացնելով անհրաժեշտ տասը վավերացումները՝ այս կամընտիր արձանագրությունն ուժի մեջ մտավ 2002 թ. հունվարի 18-ին:

ԵՐԵՒԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔ

[21.43] Մանկահասակ աշխատողներին հաճախ մերժում են բավարար չափով վճարել իրենց աշխատանքի համար, և զուգահեռաբար նրանց սովորելու հնարավորություն չի տրվում: Նրանց ֆիզիկական և հոգեկան առողջությունն ու զարգացումը նույնպես կարող են վնասվել⁵⁴:

ՅՈՒՆԱԾ 31, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքը:

2. Մասնակից պետությունները հարգում և խրախուսում են երեխայի՝ մշակութային և ստեղծագործական կյանքին բազմակողմանիորեն մասնակցելու իրավունքը և նպաստում են մշակութային ու ստեղծագործական գործունեության, հանգստի և ժամանցի համար համապատասխան և հավասար հնարավորությունների տրամադրմանը:

ՅՈՒՆԱԾ 32, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությունը կամ վնասել նրա առողջությունը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացումը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցառումներ՝ սույն հոդվածի իրականացումն ապահովելու համար: Այդ նպատակով և, հաշվի առնելով այլ միջազգային փաստաթղթերի համապատասխան դրույթները, մասնակից պետությունները, մասնավորապես.

- ա) սահմանում են աշխատանքի ընդունելու նվազագույն տարիք կամ նվազագույն տարիքներ,
- բ) նախատեսում են աշխատանքային ժամերի և աշխատանքի պայմանների կանոնակարգում,
- գ) սույն հոդվածի արդյունավետ իրականացումն ապահովելու համար նախատեսում են համապատասխան պատժամիջոցներ կամ այլ պատասխանատվության ձևեր:

[21.44] Երեխաների պաշտպանությունը տնտեսական շահագործումից նույնպես տեղավորվում է ՔՔԻՄԴ-ի 24-րդ հոդվածի շրջանակներում: Թեև այն ընդամենը անուղղակի կերպով է դատապարտվում թիվ 17 Ընդհանուր մեկնաբանության մեջ, ՄԻԿ-ի դիրքորոշումն ավելի անթաքույց է Հնդկաստանին ուղղված հետևյալ քննադատության մեջ⁵⁵.

¶ 34. Կոմիտեն մտահոգություն է արտահայտում առ այն, որ չնայած մասնակից պետության ձեռնարկած քայլերին՝

⁵⁴ Տե՛ս նաև *Աշխատանքի ընդունման նվազագույն տարիքի մասին կոնվենցիան* [Convention concerning Minimum Age for Admission to Employment] (ՄԱԿ թիվ 138 կոնվենցիա), 26 հունիսի, 1973 թ.:

⁵⁵ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 81, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Բրազիլիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 66, պարբ. 31, Եզրափակիչ դիտարկումներ Տանզանիայի Միացյալ Հանրապետության վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 97, պարբ. 25:

շատ փոքր առաջընթաց է գրանցվել 1986 թ. «Երեխաների աշխատանքի (արգելման և կարգավորման) մասին» օրենքի [Child Labour (Prohibition and Regulation) Act] իրականացման գործում: Այդ առումով կոմիտեն առաջարկում է շուտափույթ քայլեր ձեռնարկել վտանգավոր աշխատանքներից բոլոր երեխաներին հեռացնելու ուղղությամբ, անհապաղ քայլեր ձեռնարկել Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի առաջարկությունն իրականացնելու ուղղությամբ, որ հարգվի սահմանադրական պահանջը, համաձայն որի՝ 14 տարին չլրացած բոլոր երեխաների հիմնարար իրավունքը պետք է լինի անվճար և պարտադիր կրթությունը, և հզորացնել ջանքերը՝ ուղղված երեխաների աշխատանքի վերացմանը թե՛ արդյունաբերության ոլորտում, թե՛ գյուղական վայրերում: Կոմիտեն առաջարկում է նաև դիտարկել երեխաների աշխատանքը և պարտքի դիմաց աշխատանքը [bonded labour] վերացնելուն ուղղված օրենքների իրականացման մշտադիտարկման և կիրարկման արդյունավետ ազգային իրավասություններով օժտված անկախ մեխանիզմ ստեղծելու հնարավորությունը:

Էկվադորի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է հետևյալը⁵⁶.

¶ 17. Կոմիտեն մտահոգված է, որ չնայած օրինական պահանջի առկայությանը, այն է՝ 14 տարին չլրացած երեխաներին աշխատանքի վերցնելու համար պահանջվում է դատարանի թույլտվություն, զբաղվածության ոլորտում շարունակում է տեղ գտնել երեխաների շահագործումը:

Կոմիտեն առաջարկում է Երեխաների աշխատանքի աստիճանական վերացման ազգային կոմիտեին [Comite Nacional para la Eradicacion Progresiva del Trabajo Infantil] տրամադրել անհրաժեշտ միջոցներ՝ իրականացնելու համար երեխաներին աշխատեցնելու գործելակերպը վերացնելու մանդատը:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԵՎՏՐՈՒՄ

[21.45] Երեխաները հատուկ պաշտպանության կարիք ունեն արգելված դեղամիջոցների կամ նյութերի օգտագործման հետ կապված շահագործումից: Երեխաների համար պաշտպանություն է պահանջվում թմրամիջոցների չարաշահումից և թմրամիջոցների պատրաստման կամ թրաֆիքինգի մեջ շահագործումից⁵⁷:

ՅՈՂՎԱԾ 33, ԵԻԿ

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ՝ օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները, որպեսզի երեխաներին պաշտպանեն թմրանյութերի և հոգեմեդիկամենտ նյութերի ապօրինի օգտագործումից, ինչպես դրանք սահմանված են միջազգային փաստաթղթերում, և կանխեն երեխաների ներգրավումը այդպիսի նյութերի ապօրինի արտադրության ու առևտրի մեջ:

ԱՌԵՎԱՆԳՈՒՄ

[21.46] Երեխաների առևանգումը և թրաֆիքինգը կարող են ընդունել կասկածելի, ապօրինի կամ ոչ պաշտոնական որդեգրման ձևեր: Դրանք կարող են ներառել նորածինների «վաճառքը» չքավոր ծնողների կողմից կամ ուղղակի երեխաների գողությունը⁵⁸:

ՅՈՂՎԱԾ 11, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում երեխաների ապօրինի տեղափոխումների և արտասահմանից չվերադառնալու դեմ պայքարելու համար:

2. Այդ նպատակով մասնակից պետությունները նպաստում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքմանը կամ գործող համաձայնագրերին միանալուն:

⁵⁶ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 92:

⁵⁷ Տե՛ս թիվ 17 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 3 [21.11]:

⁵⁸ Տե՛ս նաև 1980 թ. ընդունված *Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին Հաագայի կոնվենցիա*:

ՀՈԴԿԱԾ 35, ԵԻԿ

Մասնակից պետություններն ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երեխաների առևանգումը, նրանց վաճառքը կամ ցանկացած նպատակով և ցանկացած ձևով նրանց առուվաճառքը կանխելու համար:

[21.47] Առևանգումը կանխարգելելու համար անհրաժեշտ են խնամակալության և որդեգրման վերաբերյալ պատշաճ օրենքներ, ինչպես ցույց է տրված Արգենտինայի վերաբերյալ ստորև բերված մեկնաբանություններում⁵⁹.

¶ 16. Կոմիտեն մասնակից պետությանը հորդորում է ... հրատապ կարգով ավարտին հասցնել անհետացած անձանց երեխաների ապօրինի որդեգրման մեղադրանքների հետաքննությունը և համապատասխան քայլեր ձեռնարկել:

ՀՈԴԿԱԾ 21, ԵԻԿ

Որդեգրման համակարգն ընդունող և/կամ թույլատրող մասնակից պետություններն ապահովում են, որ երեխայի լավագույն շահերը հաշվի առնվեն առաջնահերթ կերպով, և նրանք.

ա) ապահովում են, որ երեխայի որդեգրումը թույլատրվի միայն իրավասու մարմինների կողմից, որոնք կիրառվող օրենքի և ընթացակարգի համաձայն և գործին առնչվող ողջ հավաստի տեղեկատվության հիման վրա որոշում են որդեգրման թույլատրելիությունը՝ ելնելով երեխայի կարգավիճակից՝ կապված ծնողների, հարազատների և օրինական խնամակալների հետ, և այն, որ անհրաժեշտության դեպքում, շահագրգիռ անձինք տվել են որդեգրման վերաբերյալ իրենց համաձայնությունը հնարավոր անհրաժեշտ խորհրդատվության հիման վրա,

բ) ընդունում են, որ այլ երկրում որդեգրումը կարող է դիտվել որպես երեխայի նկատմամբ խնամքի այլընտրանքային միջոց, եթե երեխայի նկատմամբ չի կարող խնամակալություն սահմանվել կամ երեխան չի կարող տեղավորվել որդեգրող ընտանիքում, և եթե երեխայի ծագման երկրում որևէ պատշաճ կերպով խնամքի ապահովումն անհնար է,

գ) երաշխավորում են, որ այլ երկրում որդեգրվող երեխան օգտվի այնպիսի պաշտպանությունից ու ստանդարտներից, որոնք համարժեք են ներպետական որդեգրման դեպքում գործող պաշտպանությանը և ստանդարտներին,

դ) ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի այլ երկրում որդեգրման դեպքում երեխայի տեղավորումն ընտանիքում չհանգեցնի դրա հետ կապված անձանց համար չարդարացված ֆինանսական օգուտներ ստանալուն,

ե) անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի նպատակներին նպաստում են երկկողմ և բազմակողմ պայմանավորվածությունների և համաձայնագրերի կնքման միջոցով և դրա շրջանակներում ձգտում են երաշխավորել, որ երեխային այլ երկրում տեղավորելն իրականացվի իրավասու իշխանությունների կամ մարմինների կողմից:

ԵՐԵՒԱ ԶԻՆՎՈՐՆԵՐ**[21.48]****ԹԻԿ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

¶ 3. ... Ավելին՝ կոմիտեն ցանկանում է մասնակից պետությունների ուշադրությունը հրավիրել նրանց զեկույցներում այնպիսի միջոցների վերաբերյալ տեղեկություններ ներառելու անհրաժեշտության վրա, որոնք ընդունվել են ապահովելու համար, որ երեխաներն ուղղակի մասնակցություն չունենան զինված հակամարտություններին:

ՀՈԴԿԱԾ 38, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները պարտավորվում են հարգել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, ո-

⁵⁹ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 46:

րոնք կիրառվում են զինված ընդհարումների դեպքում և առնչվում են երեխաներին, և ապահովել դրանց նկատմամբ հարգանքը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի տասնհինգ տարին չլրացած անձինք ուղղակի մասնակցություն չունենան մարտական գործողություններին:

3. Մասնակից պետությունները ձեռնպահ են մնում տասնհինգ տարին չլրացած ցանկացած անձի՝ իրենց զինված ուժերում ծառայության զորակոչելուց: Տասնհինգ տարին լրացած, բայց դեռ տասնութ տարին չլրացած անձանց թվից զորակոչելիս մասնակից պետությունները ձգտում են նախապատվություն տալ ավելի բարձր տարիք ունեցողներին:

4. Ձինված ընդհարումների ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության առիթով միջազգային մարդասիրական իրավունքով, իրենց ստանձնած պարտավորությունների համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ զինված ընդհարումից տուժող երեխաների պաշտպանությունն ու խնամքն ապահովելու նպատակով:

Նույնիսկ երբ երեխաները կամավոր են ցանկանում ստանձնել նման պարտականություններ, ապա հաճախ պատճառն այն է, որ նրանք սննդի, ապաստանի, հագուստի և նույնիսկ ինքնություն ձեռք բերելու կարիք ունեն, ինչը խոսում է նման մասնակցության «կամավորության» դեմ⁶⁰:

[21.49] Երեխա զինվորների հավաքագրումը նույնպես արգելված է միջազգային մարդասիրական օրենսդրությամբ: Ժնևի կոնվենցիաների Լրացուցիչ արձանագրության 77-րդ հոդվածի 2-րդ կետն արգելում է մինչև 15 տարեկան զինվորների հավաքագրումը: Միջազգային դատարանի մասին Հռոմի ստատուտը հոդված 8(2)(բ)(xxvi)-ում 15 տարին չլրացած զինվորների հավաքագրումը կամ «օգտագործումը» սահմանում է որպես «պատերազմական հանցագործություն»: 2000 թ. հունիսին ՄԱԿ-ն ընդունեց Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը, որի նպատակն էր արգելել 18 տարին չլրացած անձանց հավաքագրումը զինված ուժերում: Այդ արձանագրությունն ուժի մեջ մտավ 2002 թ. փետրվարի 12-ին:

[21.50] Երեխա զինվորների վերաբերյալ ՄԻԿ-ն արտահայտել է իր մտահոգությունները Կոլումբիայի առնչությամբ⁶¹.

¶ 27. Կոմիտեն լուրջ մտահոգություն է արտահայտում Կոլումբիայում երեխաների դրության և դաշնագրով սահմանված նրանց իրավունքների պաշտպանության բավարար միջոցների բացակայության կապակցությամբ: Այդ առումով կոմիտեն նշում է, որ դեռևս շատ բան կա անելու երեխաներին ընտանիքներում և ընդհանրապես հասարակությունում բռնությունից, պարտիզանական և զինված խմբավորումների կողմից ստիպողական հավաքագրումից ու օրենքով թույլատրված նվազագույն տարիքից ցածր տարիքում աշխատանքի վերցվելուց պաշտպանելու համար և, հատկապես, փողոցային երեխաներին քաղաքացիական ինքնապաշտպանական խմբերի կամ անվտանգության ուժերի կողմից սպանվելուց կամ նրանց այլ ոտնձգություններից պաշտպանելու համար . . .

¶ 42. Կոմիտեն կառավարությանը հորդորում է արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու դաշնագրի 24-րդ հոդվածի լիակատար իրականացումը, ներառյալ՝ կանխարգելիչ և պատժիչ միջոցները՝ երեխաների սպանության և նրանց վրա հարձակման բոլոր դրսևորումների առումով, և պաշտպանական, կանխարգելիչ և պատժիչ միջոցները՝ պարտիզանական և զինյալ խմբավորումների գործողություններում նկատված երեխաների առումով: Կոմիտեն նաև հատուկ առաջարկում է արդյունավետ միջոցներ ձեռնարկել երեխաներին աշխատանքի վերցնելու երևույթի վերացման համար և այդ նպատակով ստեղծել ստուգման մեխանիզմներ:

Գրանցման և անվան իրավունք. հոդված 24(2)

[21.51]

ԹԻԿ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. ՔՔԻՄԴ-ի 24-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է

⁶⁰ Ընդհանուր առմամբ տե՛ս S. Maslen, 'The Use of Children as Soldiers: the Right to Kill and be Killed?' (1998) 4 *International Journal of Children's Rights* 455, և I. Cohn and G. Goodwin-Gill, *Child Soldiers* (Clarendon Press, Oxford, 1994):

⁶¹ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 76, տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Կոնգոյի Հանրապետության վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 118, պարբ. 19:

գրանցվի և անուն ունենա: Կոմիտեի կարծիքով՝ այս դրույթը պետք է մեկնաբանվի որպես պաշտպանության հատուկ միջոցների իրավունքի վերաբերյալ դրույթին սերտորեն կապված և նախատեսված երեխայի իրավական ինքնության ճանաչմանը նպաստելու համար: Անուն ունենալու իրավունքի սահմանումը հատկապես կարևոր է արտամուսնական կապերից ծնված երեխաների պարագայում: Երեխաներին ծնունդից հետո գրանցելու հիմնական նպատակը երեխաների առևանգման, վաճառքի կամ թրաֆիքինգի և կամ դաշնագրով նախատեսված իրավունքների կիրառման հետ անհամատեղելի վերաբերմունքի այլ տեսակների վտանգի նվազեցումն է: Մասնակից պետությունների զեկույցները պետք է մանրամասն նկարագրեն այն միջոցները, որոնք ապահովում են իրենց տարածքում ծնված երեխաների անհապաղ գրանցումը:

ՉՈՂՎԱԾ 7, ԵԻԿ

1. Երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

2. Մասնակից պետություններն այդ իրավունքների իրականացումն ապահովում են իրենց ներպետական օրենսդրության և այս բնագավառում համապատասխան միջազգային փաստաթղթերով ստանձնած իրենց պարտավորությունների համաձայն, մասնավորապես այն դեպքում, եթե այլ կերպ երեխան քաղաքացիություն չունենա:

ՉՈՂՎԱԾ 8, ԵԻԿ

1. Մասնակից պետությունները պարտավորվում են օրենքով նախատեսված կարգով՝ առանց անօրինական միջամտության, հարգել երեխայի իրավունքը՝ պահպանելու իր ինքնությունը, ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը:

2. Եթե երեխան անօրինական կերպով զրկվում է իր ինքնության որոշ կամ բոլոր տարրերից, մասնակից պետությունները տրամադրում են համապատասխան աջակցություն և պաշտպանություն՝ շուտափույթ կերպով նրա ինքնությունը վերականգնելու նպատակով:

[21.52] «ԴԵ ԳԱԼԻՉԻՈՆ և ՎԻԿԱՐԻՈՆ ընդդեմ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ» (DE GALLICCHIO and VICARIO v ARGENTINA, 400/90)

Փաստերը վեր են հանված ստորև բերված քաղվածքներում և մեկնաբանություններում.

¶ 2.1. 1977 թ. փետրվարի 5-ին Խիմենա Վիկարիոյի [Ximena Vicario] մայրը, այն ժամանակ դեռևս ինն ամսական երեխայի հետ միասին, տարվել է Բուենոս Այրեսում գտնվող դաշնային ոստիկանության կենտրոնական (Departamento Central de la Policía Federal): Հաջորդ օրը Ռոզարիո քաղաքում ձերբակալվել է նրա հայրը: Ծնողներն այդպիսով անհետ կորան, ու թեև 1983 թ. դեկտեմբերից հետո Անհետ կորած անձանց հարցերի ազգային հանձնաժողովը [National Commission on Disappeared Persons] հետաքննել է գործը, նրանց գտնվելու վայրն այդպես էլ չի պարզվել: Ի վերջո, հեղինակի նախաձեռնած հետաքննությունը 1984 թ. կարողացավ պարզել Խիմենա Վիկարիոյի գտնվելու վայրը, որ այդ ժամանակ բնակվում էր մի բուժքրոջ՝ Ս. Ս.-ի [S.S.] տանը, ով պնդում էր, որ խնամել է երեխային նրա ծննդյան օրից: Արյան գենետիկական թեստերը ... 99,82 տոկոս հավանականությամբ ցույց տվեցին, որ երեխան հեղինակի թոռնուհին է:

Հեղինակի բողոքի մի հատվածը վերաբերում էր երեխայի ապօրինի որդեգրման հանգամանքներին: Այդ բողոքները *ռազիոնե տեմպորիս* [ratione temporis] անընդունելի էին ⁶²: Հետևյալ հանգամանքները նույնպես բողոք էին հարուցել.

¶ 2.3. 1989 թ. հունվարի 2-ին երեխայի խնամակալությունը «պայմանականորեն» հանձնվել է հեղինակին: Ս. Ս.-ն, սակայն, անմիջապես դիմել է այցելության իրավունք ստանալու համար, ինչը նրան տրվել է գերագույն դատարանի 1989 թ. սեպտեմբերի 5-ի կարգադրությամբ: Այդ որոշմամբ գերագույն դատարանը նաև վճռել էր, որ հեղինակն իրավունակ չէ մասնակցելու երեխայի խնամակալությանը վերաբերող դատական գործընթացին, քանի որ թիվ 10.903 օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ միայն ծնողները և օրինական խնամակալն ունեն պրոցեսուալ

⁶² Ուադիոնե տեմպորիս պահանջի վերաբերյալ տե՛ս, ընդհանուր առմամբ, գլուխ 2-ը:

իրավունակություն և կարող են ուղղակիորեն մասնակցել դատավարությանը:

¶ 2.4. 1989 թ. սեպտեմբերի 23-ին հեղինակը, հիմնվելով խիմենա Վիկարիոյին Ս. Ս.-ի այցելությունների վերաբերյալ հոգեբուժական հաշվետվությունների վրա, դատարանին խնդրեց կարգադրել, որ այդ այցելությունները դադարեցվեն: Նրա գործը մերժվեց իրավունակության բացակայության հիմքով: ...

¶ 3.1. ...Այն փաստը, որ հեղինակին մերժվել է խնամակալության վերաբերյալ դատավարությունում հանդես գալու իրավունակությունը, համարվում է օրենքի առջև հավասարության սկզբունքը խախտող, որը երաշխավորված է Արգենտինայի սահմանադրության 16-րդ հոդվածով և դաշնագրի 14-րդ և 26-րդ հոդվածներով:

¶ 3.2. ...Հեղինակը պնդում է, որ խախտվել են նաև իր թոռնուհու իրավունքները, ով, ըստ հեղինակի, ամեն անգամ, երբ նրան այցելում է Ս. Ս.-ն, ենթարկվում է մի բանի, որը կարելի է ձևակերպել որպես հոգեբանական խոշտանգում՝ ի խախտումն դաշնագրի 7-րդ հոդվածի: Դաշնագրի մեկ այլ ենթադրվող խախտում վերաբերում է 16-րդ - հոդվածին, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավասություն ունի իրավունք ունի՝ ինքնության, անվան և ընտանիքի իրավունքի հետ. այն, որ խիմենա Վիկարիոն պետք է մինչև դատաիրավական գործընթացների ավարտը շարունակի կրել Ս. Ս.-ի կողմից իրեն տրված անունը, նշվում է որպես նրա ինքնության իրավունքի խախտում: Ավելին՝ նրա օրինական ինքնության հարցում ստեղծված անորոշությունը հնարավորություն չէր տվել, որ իր իրական անունով անձնագիր ստանա:

Կոմիտեի եզրակացությունները հետևյալն էին.

¶ 10.3. Ինչ վերաբերում է Դարվինիա Ռոզա Մոնակո դե Գալիչիոյի [Darwinia Rosa Mónaco de Gallicchio] պնդմանը, որ խախտվել է իր իրավասությունների իրավունքը, կոմիտեն նշում է, որ թեև երեխայի խնամակալության հարցով իր թոռնուհուն դատարանում ներկայացնելու իրավունակությունը մերժվել է 1989 թ., դատարանները իր թոռնուհուն ներկայացնելու իրավունակությունը ճանաչել են մի շարք դատավարություններում, ներառյալ՝ վերջինիս հայցը՝ որդեգրումն անվավեր ճանաչելու պահանջով, և նրան է հանձնվել խիմենա Վիկարիոյի խնամակալությունը: Թեև այդ հանգամանքները դաշնագրի 16-րդ հոդվածով խնդիրներ չեն հարուցում, տիկին Մոնակոյի իրավունակության սկզբնական մերժումը խիմենա Վիկարիոյին գործնականում թողել է առանց համապատասխան ներկայացվածության՝ դրանով զրկելով իրեն՝ որպես անչափահասի շնորհված պաշտպանությունից: Ստորև բերված 10.5 պարբերությունում նշված հանգամանքների հետ միասին վերցված՝ տիկին Մոնակոյի իրավունակության մերժումը դաշնագրի 24-րդ հոդվածի խախտում է: ...

ՄԻԿ-ը հաշվի նստեց ներպետական դատարանի եզրակացության հետ, որը վերաբերում էր երեխային Ս. Ս.-ի շարունակվող այցերի (որոնք ի վերջո դադարեցվեցին) համատեղելիությանը ՔՔԻՄԴ-ի հետ:

¶ 10.4. ...Ինչ վերաբերում է Ս. Ս.-ին տրված այցելության իրավունքին, կոմիտեն նկատում է, որ Արգենտինայի իրավասու դատարաններն առաջին հերթին փորձել են պարզել փաստերը և հավասարակշռել ներգրավված անձանց մարդկային շահերը, այդ քննության հետ կապված մի շարք միջոցներ են ընդունվել՝ խիմենա Վիկարիոյին և նրա տատին բավարարում բերելու համար, ներառյալ՝ Ս. Ս.-ին տրված այցելության իրավունքի ռեժիմի վերացումը, որը հետևել է հոգեբանների առաջարկներին և խիմենա Վիկարիոյի անձնական ցանկությամբ: Այդուհանդերձ, այդ արդյունքը տեղ է գտել ուշացումով, ինչը այցելություն շնորհող կարգադրությունը վիճարկելիս տիկին Մոնակոյի իրավունակության սկզբնական մերժման հետևանք է:

¶ 10.5. Թեև կոմիտեն զննատու է այն լրջությունը, որով Արգենտինայի դատարանները նախաձեռնել են օրիորդ Վիկարիոյին և նրա տատին հասցված վնասի վերականգնումը, կոմիտեն նկատում է, որ տարբեր դատավարությունների տևողությունը գերազանցել է 10 տարին, և մի քանիսը դեռևս չեն ավարտվել: Կոմիտեն նշում է, որ այդ ընթացքում օրիորդ Վիկարիոն, ով հայտնաբերվելու պահին եղել է 7 տարեկան, չափահասության տարիքի է հասել (18 տարեկան) 1994 թ., և նրա օրինական ինքնությունը՝ որպես խիմենա Վիկարիո, պաշտոնապես ճանաչվել է ընդամենը 1993 թ.: Գործի յուրահատուկ հանգամանքներից ելնելով՝ կոմիտեն կարծում է, որ երեխաների պաշտպանությունը, որը սահմանված է դաշնագրի 24-րդ հոդվածով, պահանջում է, որ մասնակից պետությունը գործողություն ձեռնարկի օրիորդ Վիկարիոյին իր դժվարություններից շուտափույթ և արդյունավետ ազատելու համար: Այդ համատեքստում կոմիտեն հիշեցնում է իր Ընդհանուր մեկնաբանությունը 24-րդ հոդվածի վերաբերյալ, ... որում կոմիտեն շեշտում է, որ յուրաքանչյուր երեխա՝ որպես անչափահաս, իր կարգավիճակի շնորհիվ, պաշտպանության հատուկ միջոցների իրավունք ունի: Այդ հատուկ միջոցները լրացնում են այն միջոցները, որոնք պետությունները պարտավոր են ձեռնարկել ըստ 2-րդ հոդվածի՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուրն օգտվի դաշնագրով տրվող իրավունքներից: Հաշվի առնելով օրիորդ Վիկարիոյի արդեն իսկ կրած տառապանքը, որ մասնակից պետությանը վերագրելի ողբերգական հանգամանքներում կորցրել է երկու ծնողներին, կոմիտեն կարծում է, որ դաշնագրի 24-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող հատուկ միջոցներն Արգենտինայի կողմից անհապաղ չեն կիրառվել, և տիկին Մոնակոյի իրավունակության մերժումը խնամակալությանը և այցե-

լուծարումներին վերաբերող դատավարություններում, օրիորդ Վիկարիոյի իրական անվան օրինական հաստատման ու ինքնությունը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործընթացում տեղ գտած հապաղումը ցույց են տալիս նաև, որ խախտվել է դաշնագրի 24-րդ հոդվածի 2-րդ կետը, որի նպատակն է խթանել երեխայի իրավասուբյեկտության ճանաչումը:

¶ 11.1. Մարդու իրավունքների կոմիտեն, առաջնորդվելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետով, եզրակացնում է, որ իրեն տրամադրված փաստերը վեր են հանում դաշնագրի 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտում Արգենտինայի կողմից:

[21.53] Երեխայի անվան պատշաճ օրինական ճանաչման կապակցությամբ ՄԻԿ-ը մտահոգություն է արտահայտել Ռումինիայի առնչությամբ⁶³:

¶ 5. Կոմիտեի լուրջ մտահոգության առարկան է փողոցային և լքյալ երեխաների դրությունը՝ մի չափազանց սուր խնդիր, որը Ռումինիայում շարունակում է չլուծված մնալ (հոդվ. 24):

Մասնակից պետությունը պետք է դաշնագրի 24-րդ հոդվածին համապատասխանելու համար ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ պաշտպանելով և վերականգնելով այդ երեխաներին, նրանց համար անուն երաշխավորելով և ապահովելով, որ Ռումինիայում պատշաճ կերպով գրանցվեն բոլոր ծնունդները:

Ուրուգվայի վերաբերյալ ՄԻԿ-ը նշում է⁶⁴:

¶ 11. Կոմիտեն, որ թեև ընդունում է մասնակից պետության առաջընթացը երեխաների իրավունքների և, մասնավորապես, անչափահասների վերաբերյալ ապագա օրենսգրքի (*Código del Menor*) առումով, շարունակում է մտահոգվել պատվիրակության ներկայացրած տեղեկություններով, ըստ որոնց՝ ապագա օրենսգրքը խտրական է իգական սեռին պատկանող անչափահասների հանդեպ և լիարժեք չի պաշտպանում նորածիններին, քանի որ չամուսնացած անչափահաս մայրերը կարող են գրանցել իրենց երեխաներին ցանկացած տարիքում, մինչդեռ անչափահաս հայրերն այդ կարող են անել միայն 16 տարեկանից սկսած:

Կոմիտեն հորդորում է մասնակից պետությանը օրենսգրքի մշակման ընթացքում այն իր ամբողջության մեջ լիովին համապատասխանեցնել դաշնագրի 3-րդ և 24-րդ հոդվածներին: Կոմիտեն ցանկություն է հայտնում ընդունվելուց հետո ստանալ օրենսգրքի տեքստը:

[21.54] Այդպիսով, մասնակից պետությունները պարտավոր են արագացնել երեխայի պատշաճ անվան ճանաչումը ինքնությունը հաստատող փաստաթղթերի տրամադրման միջոցով, որպեսզի նպաստեն երեխայի իրավասուբյեկտության պաշտոնական ճանաչմանը և նվազագույնի հասցնեն երեխաների խայտառակ շահագործման հնարավորությունը:

Քաղաքացիության իրավունք. հոդված 24(3)

[21.55]

ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. Երեխաներին տրամադրվելիք պաշտպանության համատեքստում հարկ է հատուկ ուշադրություն դարձնել նաև յուրաքանչյուր երեխայի՝ քաղաքացիություն ստանալու իրավունքին, ինչպես սահմանված է 24-րդ հոդվածի 3-րդ կետով: Թեև այս դրույթի նպատակը հասարակության և պետության կողմից երեխային, նրա քաղաքացիություն չունենալու պատճառով, ավելի քիչ պաշտպանություն տրամադրելու կանխումն է, այն անհրաժեշտաբար չի պարտադրում պետությանը քաղաքացիություն շնորհել իր տարածքում ծնված յուրաքանչյուր երեխայի: Սակայն պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները, թե՛ ներսում, թե՛ համագործակցելով այլ պետությունների հետ, ապահովելու համար, որ ծնված յուրաքանչյուր երեխա քաղաքացիություն ունենա: Այդ կապակցությամբ ներքին օրենսդրությամբ չի կարող թույլատրվել լինել որևէ խտրականություն՝ օրինական երեխաների և արտանուսնական կապից ծնված երեխաների կամ քաղաքացիություն չունեցող ծնողների երեխաների միջև կամ հիմնվելով մեկ կամ երկու ծնողի քաղաքացիության կարգավիճակի վրա: Մասնակից պետությունների զեկույցներում մշտապես անհրաժեշտ է հիշատակել այն միջոցները, որոնք ընդունվել են՝ ապահովելու համար երեխաների

⁶³ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 111:

⁶⁴ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 90:

քաղաքացիություն ունենալը⁶⁵:

[21.56] Մասնակից պետությունները պարտավոր են քաղաքացիություն չնորհել իրենց տարածքում գտնվող քաղաքացիություն չունեցող երեխաներին: Նովակը պնդում է, որ այս պարտավորությունը ստորադասվում է այն պարտավորություններին, որոնք կարող են ծագել այլ մասնակից պետությունում, եթե երեխան սերման կամ ուժեղ կապով կապված է այդ երկրին⁶⁶: Սրան լրացնելու է գալիս ԵԻԿ-ի 7-րդ հոդվածի 2-րդ կետը [21.51]: Ավելին՝ ՄԻԿ-ը Էկվադորի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում նշում է⁶⁷:

¶ 18. Կոմիտեն մտահոգ է, որ փաստաթղթեր չունեցող փախստականներից Էկվադորում ծնված երեխաների ծնունդները հաճախ չեն գրանցվում, քանի որ ծնողները վախենում են վտարվել երկրից: Այս իրադրությունը երեխաներին հնարավորություն չի տալիս Էկվադորի քաղաքացիություն ստանալու, ինչը, համաձայն Էկվադորի օրենսդրության, Էկվադորում ծնված յուրաքանչյուր երեխայի իրավունքն է:

Կոմիտեն մասնակից պետությանը խորհուրդ է տալիս միջոցներ ձեռնարկել, որոնք կերաշխավորեն փաստաթղթեր չունեցող փախստականների՝ Էկվադորում ծնված բոլոր երեխաների քաղաքացիության իրավունքը:

ՄԻԿ-ն ավելի է ուղղամիտ է Կոլումբիայի պարագայում⁶⁸:

¶ 44. Կոմիտեն շեշտում է մասնակից պետության պարտականությունը, այն է՝ ապահովել, որ Կոլումբիայում ծնված յուրաքանչյուր երեխա օգտվի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքից՝ սահմանված դաշնագրի 24-րդ հոդվածի 3-րդ կետով: Ուստի Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը դիտարկի Կոլումբիայում ծնված և քաղաքացիություն չունեցող երեխաներին Կոլումբիայի քաղաքացիություն չնորհելու հարցը:

ՄԻԿ-ը նաև դատապարտել է Զինբաբվեի օրենքները, որոնք մերժում են Զինբաբվեի քաղաքացիության տրամադրումը զինբաբվեցիներից արտասահմանում ծնված երեխաներին⁶⁹:

Եզրակացություն

[21.57] 24-րդ հոդվածը հատուկ կերպով քաղաքացիական և քաղաքական իրավունքներ է տալիս երեխաներին՝ լրացնելով դաշնագրի այլ երաշխիքներով նրանց ստացած մյուս իրավունքները, որոնք նրանք ստանում են չափահասների հետ միասին: ԵԻԿ-ի տեքստն անկասկած ազդել է ՄԻԿ-ի 24-րդ հոդվածի մեկնաբանության վրա: ՄԻԿ-ը 24-րդ հոդվածի կապակցությամբ համեմատաբար փոքր թվով գործերի է առնչվել: Այնուամենայնիվ, նրա թիվ 17 Ընդհանուր մեկնաբանությունը և Եզրափակիչ դիտարկումները պարզաբանել են 24-րդ հոդվածի կարևոր կողմերը, ինչպիսիք են երեխաների շահագործման բացարձակ արգելումը և չափահասության տարիքի վերաբերյալ ուղեցույցը: Վերջապես, 24-րդ հոդվածը և ԵԻԿ-ը հանրային և միջազգային քննության համար բացել են ընտանիքը և նրա վերաբերմունքն ու պատասխանատվությունը երեխաների հանդեպ⁷⁰: Մասնակից պետությունները պարտավոր են բավականաչափ ակտիվ դեր ստանձնել իրենց ընտանիքներում երեխաների զարգացմանը նպաստելու և պաշտպանությունն ապահովելու առումով: Այնուամենայնիվ, կարող է այնպես դասավորվել, որ ՄԻԿ-ի պես միջազգային մարմինները հազվադեպ համարձակվեն բեկանել տեղական ընտանեկան դատարանների կայացրած որոշումներն այնպիսի զգայուն հարցերի վերաբերյալ, ինչպիսին է, օրինակ, երեխայի խնամակալությունը:

⁶⁵ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Քուվեյթի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/69/KWT, պարբ. 31:

⁶⁶ Նովակ, վերը, ծմբ. 19, 434: Նման հանգամանքներում միանգամայն վիճելի է, որ երեխան գտնվում է այլ պետության «իրավասության ներքո», իրավասության առումով պահանջների մասին, ընդհանուր առմամբ, տե՛ս գլուխ 4-ում: Ավելին՝ Նովակը կասկածի տակ է առնում այդ պարտականության չափը այն դեպքում, երբ երեխան քաղաքացիության հետ կապված սերման կամ այլ պահանջ ունի այնպիսի երկրի հանդեպ, որը դաշնագրի մասնակից չի հանդիսանում:

⁶⁷ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 92: Համաձայն մեկնաբանություններ են արվել Կոլումբիայի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 76, պարբ. 44:

⁶⁸ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 75:

⁶⁹ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 89, պարբ. 19:

⁷⁰ Տե՛ս Լավենսք, վերը, ծմբ. 46, 987–97:

Քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքներ. հոդված 25

- Քաղաքացիություն հասկացությունը[22.02]
- Իրավունքի բնույթը[22.05]
- Հոդված 25(ա). Պետական գործերի վարմանը մասնակցելու ընդհանուր իրավունք [22.07]
 - Անուղղակի մասնակցություն պետական գործերի վարմանը ընտրված ներկայացուցիչների միջոցով[22.10]
 - Անմիջական մասնակցություն պետական գործերի վարմանը[22.14]
- Հոդված 25(բ). Քվեարկելու իրավունքը[22.19]
 - Քվեարկելու իրավունքի սահմանափակումներ[22.19]
 - Քվեարկելու հնարավորություն[22.23]
 - Քվեի որակը[22.25]
- Հոդված 25(բ). Ընտրություններում առաջադրվելու իրավունք[22.30]
- Հոդված 25(բ). Ընտրողների կամքն արտահայտող պարբերական ճշմարիտ ընտրություններ[22.37]
 - Գաղտնի քվեարկություն[22.42]
 - Քաղաքական կուսակցությունների և լրատվամիջոցների ազդեցությունը[22.43]
- Հոդված 25(գ). Պետական ծառայության մտնելու հավասար հնարավորություններ[22.47]
- Հասարակական կյանքին մասնակցության հարցում համակարգային անհավասարության շտկումը[22.56]
- Եզրակացություն[22.57]

ՀՈԴՎԱԾ 25

Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, իրավունք և հնարավորություն ունի.

(ա) մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով.

(բ) ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը.

(գ) իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության:

[22.01] 25-րդ հոդվածը մասնակից պետությունների քաղաքացիների համար երաշխավորում է քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքներ: 25-րդ հոդվածի (ա) կետը տալիս է այս իրավունքի ընդհանուր ձևակերպումը և երաշխավորում է մասնակից պետությունների կառավարությունների կողմից որոշ ժողովրդավարական հաշվետվողականություն¹: 25-րդ հոդվածի (բ) և (գ) կետերը վերաբերում են քաղաքական կյանքին մասնակցելու որոշակի կողմերին՝ իսկական ընտրություններում քվեարկելու և ընտրվելու իրավունքին և պետական ծառայության մտնելու հնարավորություն ունենալու իրավունքին:

¹ M. Nowak, UN Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary (N.P. Engel, Kehl, 1993), 441:

Քաղաքացիություն հասկացությունը

[22.02] 25-րդ հոդվածով ճանաչված իրավունքներից կարող են օգտվել միայն մասնակից պետությունների քաղաքացիները: Այդպիսով դրանք տարբերվում են ՔՔԻՄԴ-ով սահմանված այլ իրավունքներից, որոնք տարածվում են տվյալ մասնակից պետության իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց վրա:

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. ...Պետությունների զեկույցները պետք է ընդհանուր գծերով ներկայացնեն այն իրավական նորմերը, որոնց միջոցով սահմանվում է քաղաքացիությունը՝ 25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքների համատեքստում: Այս իրավունքներից օգտվելու հարցում արգելվում է որևէ խտրականություն՝ ռասայի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի հիմքերով: Տարբերակումները, որ կարվեն իրենց ծագմամբ քաղաքացիության իրավունք ունեցող և հպատակագրման միջոցով նման իրավունք ձեռք բերած անձանց միջև, կարող են հարուցել 25-րդ հոդվածին համապատասխանության հարցեր:

[22.03] Այդ իսկ պատճառով դաշնագիրը չի սահմանում, թե պետությունն ինչպես որոշի քաղաքացիությունը, չնայած դաշնագիրը, այնուամենայնիվ, արգելում է այդ որոշման ընթացքում որևէ խտրականությունը: Մարդու իրավունքների կոմիտեն էստոնիայի առնչությամբ մատնանշել է նաև, որ քաղաքացիություն տալու պահանջները չպետք է լինեն չափազանց ծանրաբեռնող²:

¶ 12. Կոմիտեն մտահոգություն է արտահայտում այն մասին, որ բնակչության մի զգալի հատված, մասնավորապես՝ ռուսախոս փոքրամասնության անդամները, չեն կարողանում օգտվել էստոնիայի քաղաքացիությունից՝ օրենքով սահմանված ավելորդ չափանիշների և լեզվի իմացության չափանիշի խստության պատճառով, ինչպես նաև մտահոգ է այն հարցով, որ «Քաղաքացիության մասին» օրենքով քաղաքացիություն ստանալու խնդրագիրը մերժող վարչական որոշման դեմ իրավական պաշտպանության որևէ միջոց գոյություն չունի:

[22.04] Ապա ՄԻԿ-ն իր Ընդհանուր մեկնաբանության մեջ ընդունում է, որ քաղաքական մասնակցության ներպետական իրավունքներ կարող են տրվել քաղաքացի չհանդիսացող անձանց:

¶ 3. ...Պետությունների ներկայացրած զեկույցներում պետք է նշվի, որ մարդկանց որևէ խումբ, ինչպիսիք են մշտապես բնակվողները, այս իրավունքներից օգտվում է սահմանափակ կարգով, օրինակ՝ իրավունք ունենալով քվեարկելու տեղական ընտրություններում կամ ստանձնելու պետական ծառայության որոշակի պաշտոններ:

Քաղաքական կյանքին մասնակցության իրավունքները, որոնցից օգտվում են քաղաքացի չհանդիսացող անձինք, չեն կարող կիրառվել խտրական ձևով: Չնայած նման կիրառումը չի արգելվում 25-րդ հոդվածով, որը պաշտպանում է միայն «քաղաքացիներին», դա կարգելվի դաշնագրի՝ խտրականությունից զերծ լինելու մասին ընդհանուր դրույթների միջոցով³:

Իրավունքի բնույթը

[22.05] «ԴԻԵՐԳԱԱՐԴՏԵ ընդդեմ ՆԱՄԻԲԻԱՅԻ» (DIERGAARDT v NAMIBIA, 760/97)

Հեղինակները Նամիբիայի տարածքում ապրող մի էթնիկական փոքրամասնության՝ ռեհոբոթ քաստերների [Rehoboth Basters] ներկայացուցիչներ են:

¶ 2.1. Ռեհոբոթ քաստերների համայնքի անդամները բնիկ խոհների [Khoi] և եկվոր աֆրիկանների [Afrikaans] ժառանգներն են, ովքեր նախկինում ապրում էին Քեյփում [Cape], սակայն հետագայում՝ 1872 թ., տեղափոխվել են իրենց ներկայիս բնակատեղին: Նրանք ղեկավարվում էին իրենց «հայրական օրենքներով», որոնք նախատեսում

² (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 59, պարբ. 12:

³ Ընդհանրապես, տես գլուխ 23:

էին հրամանատարի ընտրություն, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներ և պարտականություններ: Ներկայումս համայնքը բաղկացած է մոտ 35,000 մարդուց, իսկ նրանց զբաղեցրած տարածքը (Ուինդհոեկից [Windhoek] հարավ) ունի 14,216 քառ. կմ մակերես: Այս տարածքում բաստերները զարգացել են սեփական հասարակություններ, մշակույթ, լեզուն և տնտեսությունը, որոնց միջոցով նրանք հիմնականում պահպանել են սեփական կառույցները, ինչպիսիք են դպրոցները և համայնքային կենտրոնները: ...

1976 թ. ռեհոբոթ բաստերները Նամիբիայի տարածքում Հարավային Աֆրիկայի կողմից (որը փաստացի վերահսկում էր այդ տարածքը) ստացան ինքնակառավարման իրավունք:

¶ 2.4. Համաձայն փաստաբանի՝ 1989 թ. ռեհոբոթ բաստերները ծայրահեղ քաղաքական ճնշման տակ ընդունեցին իրենց օրենսդիր և գործադիր իշխանության ժամանակավոր փոխանցումը Հարավարևմտյան Աֆրիկայի գլխավոր վարչարարին՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 435 (1978) բանաձևի: Ռեհոբոթի խորհրդի կողմից 1989 թ. հունիսի 30-ին ընդունված միջնորդագրով գլխավոր վարչարարին խնդրեցին տարածքը կառավարել որպես կապիտանի լիազոր և Ռեհոբոթի նկատմամբ կիրառելի որևէ օրենք կամ կարգ չընդունել՝ առանց հրամանատարի, կառավարության և խորհրդի համաձայնության, իսկ մանդատի ավարտին Ռեհոբոթի կառավարությունը կվերաստանձնե իշխանությունը: Գլխավոր վարչարարի՝ 1989 թ. օգոստոսի 30-ով թվագրված Ռեհոբոթի օրենսդիր և գործադիր իշխանության լիազորությունները փոխանցելու մասին հայտարարությունը Օրենսդիր խորհրդի և հրամանատարի ղեկավարած Ռեհոբոթի խորհրդի լիազորությունները դադարեցնում է «մինչև տարածքի անկախացման օրվան անմիջապես նախորդող օրը»: Հետևաբար, հայտարարվում է, որ այս փոխանցման գործողությունը դադարեց Նամիբիայի անկախության հռչակման նախորդ օրը, և այդպիսով 1990 թ. մարտի 20-ին ավանդական իրավակարգը և 1976 թ. ընդունված թիվ 56 օրենքը Ռեհոբոթի տարածքում ուժի մեջ էին: Ռեհոբոթի ժողովրդական ասամբլեայի կողմից 1990 թ. մարտի 20-ին ընդունվեց հրամանատարի, նրա ղեկավարած խորհրդի և Օրենսդիր խորհրդի իշխանությունը վերականգնող մի որոշում: 1990 թ. մարտի 21-ին Նամիբիան ձեռք բերեց անկախություն, և ուժի մեջ մտավ սահմանադրությունը:

Այսպիսով, համաձայն ռեհոբոթ բաստերների օրենսդիր մարմնի (Ռեհոբոթի խորհուրդ), Ռեհոբոթի ժողովուրդը Նամիբիայի տարածքում վերականգնեց իր լիակատար անկախությունը 1990 թ. Նամիբիայի կողմից անկախություն ստանալու նախորդ օրը:

¶ 2.5. Հեղինակները հայտարարում են, որ Նամիբիայի կառավարությունը չճանաչեց իրենց անկախությունը և նախկինում գոյություն ունեցած կարգավիճակը [*status quo ante*], այլ սահմանադրության 5-րդ հավելվածի կիրառման միջոցով առգրավեց համայնքին պատկանող բոլոր հողերը...

¶ 3.2. Այս համատեքստում հեղինակները պնդում են, որ տուժել են Նամիբիայի կառավարության կողմից դաշնագրի 1-ին հոդվածի ոտնահարման հետևանքով: Նրանք մատնանշում են, որ Նամիբիայի բարձր դատարանը նրանց ճանաչել է որպես իրավական հիմք ունեցող առանձին համայնք [մի դատաքննության ընթացքում, որը վերաբերում էր իրենց հողերի հայտարարվող առգրավմանը]⁴: Նրանք պնդում են, որ ոտնահարվել է իրենց՝ Նամիբիայի Հանրապետության տարածքում ինքնորոշման (այսպես կոչված՝ ներքին ինքնորոշման) իրավունքը, քանի որ իրենց թույլ չեն տվել հետամուտ լինել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը, ինչպես նաև արգելվում է ազատորեն տնօրինել իրենց համայնքի ազգային հարստությունը և ռեսուրսները: 1996 թ. տարածքային կառավարման մասին օրենքի ընդունմամբ Ռեհոբոթի 124-ամյա գոյությունը, որպես մշտապես ինքնակազմակերպված տարածք, դադարեցվեց: Այժմ տարածքը բաժանված է երկու տարածաշրջանների՝ այդպիսով բաստերներին թույլ չտալով տարածաշրջանի մակարդակով արդյունավետ մասնակցելու հասարակական կյանքին, քանի որ վերոնշյալ երկու նոր շրջաններում էլ նրանք փոքրամասնություն են կազմում: Փաստաբանը պնդում է, որ նշված դաշնագրի 25-րդ հոդվածի խախտում է:

ՔՔԻՄԴ-ի 1-ին հոդվածով հեղինակների ներկայացրած հայցը մերժվեց որպես կամընտիր արձանագրությամբ ոչ ընդդատելի, որովհետև ՔՔԻՄԴ-ի 1-ին հոդվածով ճանաչված իրավունքները տարածվում են ժողովուրդների, ոչ թե անհատների վրա. մինչդեռ ԿԱ-ի ներքո միայն վերջիններն ունեն իրավունքներ [7.22]: Ինչ վերաբերում է 25-րդ հոդվածին, ապա ՄԻԿ-ը որոշում կայացրեց հօգուտ մասնակից պետության:

¶ 10.8. Հեղինակները նաև պնդել էին, որ իրենց համայնքի ինքնորոշման դադարեցումը և տարածքի բաժանումը երկու շրջանների, որոնք իրենք նույնպես միավորվել էին ավելի խոշոր տարածաշրջանների մեջ, կիսել է բաստերների համայնքը և այն վերածել փոքրամասնությունների՝ բացասական ազդեցություն գործելով դաշնագրի 25-րդ

⁴ Հողերի առգրավումը 27-րդ հոդվածով ներկայացված հայցի էությունն էր. տե՛ս [24.25–24.27]:

հողվածի (ա) և (գ) կետերով ճանաչված իրավունքների վրա: Դաշնագրի 25-րդ հոդվածի (ա) կետով նախատեսված իրավունքը պետական գործերի վարմանն անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իրավունքն է, իսկ 25-րդ հոդվածի (գ) կետով նախատեսված իրավունքը սեփական երկրում հավասարության ընդհանուր պայմաններով պետական ծառայության անցնելու հավասար հնարավորություններ ունենալու իրավունքն է: Սրանք անհատական իրավունքներ են: Չնայած շատ հավանական է, որ այն ժամանակ, երբ Նամիբիան ձեռք բերեց ինքնավարություն, բաստերների համայնքի՝ որպես առանձին համայնքի ազդեցությունը պետական կյանքի վրա կարող էր տուժել իրենց շրջանն այլ շրջանների միացնելու հետևանքով, պնդումը, թե սա վնասակար ազդեցություն է ունեցել համայնքի անհատ անդամների՝ պետական գործերի վարմանը մասնակցելու կամ իրենց երկրի այլ քաղաքացիների հետ հավասարության պայմաններով պետական ծառայության մտնելու հնարավորություն ունենալու իրավունքից օգտվելու վրա, չի հիմնավորվել: Հետևաբար, կոմիտեն գտնում է, որ իր տրամադրության տակ առկա փաստերը ցույց չեն տալիս, որ այս հարցի կապակցությամբ տեղի է ունեցել 25-րդ հոդվածի խախտում:

Դիրքաարդյոքի գործով կայացված վճիռը վերահաստատում է 25-րդ հոդվածով ճանաչված իրավունքի անհատական բնույթը: Հեղինակներն անկարող էին ապացուցել, որ իրենց խմբի քաղաքական իշխանության հնարավոր նվազումը կրճատել է 25-րդ հոդվածով իրենց՝ որպես անհատների, փաստացի քաղաքական իրավունքները, համարվել է, որ յուրաքանչյուր անձ ձևական տեսանկյունից օգտվում է նույն քաղաքական իրավունքներից, որոնք հասանելի են Նամիբիայի սահմաններում գտնվող այլ անձանց (այլ էթնիկական խմբեր ներկայացնող)⁵:

[22.06] Շատ հավանական է, որ ՄԻԿ-ի որոշման վրա ազդել են Նամիբիայի՝ որպես անկախ պետության ձևավորման հետ կապված հանգամանքները: Իրոք, այդ տարածքի նկատմամբ Հարավային Աֆրիկայի վերահսկողությունը Արդարադատության միջազգային դատարանը համարեց ապօրինի⁶. մի փաստ, որը հեղինակներն իրենց բողոքում չէին հիշատակել: Շատ փոքր էր հավանականությունը, որ ՄԻԿ-ը կխրախուսեր Հարավային Աֆրիկայի ապարտեյդի վարչախմբի կողմից Նամիբիան անօրինական անեքսիայի ենթարկելու ընթացքում ժողովուրդների համար սահմանված քաղաքական իրավունքները: Այս փաստը իր առանձին կարծիքում հիշատակել է պրն Լալահը [Mr. Lallah].

¶ 9. Երբ հեղինակների իրական բողոքը, որն առնչվում էր 26-րդ հոդվածին⁷, դիտարկվում է նրանց այլ բողոքների համատեքստում [ներառյալ՝ 25-րդ հոդվածով ներկայացվածը]⁸, ապա պարզվում է, որ նրանք դեռևս շարունակում են տենչալ մի արտոնյալ և բացառիկ կարգավիճակ, ինչպիսին ունեցել են նախկինում հատվածական ինքնավարությունների համակարգի պայմաններում հողերի տնօրինման, ինքնավարության և լեզվի կիրառման հետ կապված հարցերում, ինչն ապարտեյդի պայմաններում թույլատրվում էր: Նման համակարգ իրենց երկրի սահմանադրության համաձայն ստեղծված միավորված պետության պայմաններում այլևս չի գործում:

Հոդված 25(ա). Պետական գործերի վարմանը մասնակցելու ընդհանուր իրավունք

[22.07]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. ... 25-րդ հոդվածն ընկած է հասարակական համաձայնության հիման վրա գոյություն ունեցող և դաշնագրի սկզբունքներին համապատասխանող ժողովրդավարական կառավարման առանցքում: ...

¶ 5. Պարբերություն (ա)-ում հիշատակված պետական գործերի վարումն լայն հասկացություն է, որն առնչվում է քաղաքական իշխանության, մասնավորապես՝ օրենսդիր, գործադիր և վարչական իշխանության գործադրմանը: Այն ներառում է պետական կառավարման բոլոր կողմերը և միջազգային, պետական, մարզային և տեղական մակարդակներում քաղաքականության մշակումը և իրականացումը: Իշխանության բաժանումը և այն միջոցները, որոնց օգնությամբ անհատ քաղաքացիներն իրացնում են պետական գործերի վարմանը մասնակցելու իրենց իրավունքը,

⁵ Տե՛ս նաև [7.24]:

⁶ Տե՛ս Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South-West Africa) notwithstanding Security Council Resolution 276, Advisory Opinion, ICJ Rep. 1971, 16:

⁷ Հեղինակները բողոք ներկայացրեցին 26-րդ հոդվածով՝ կապված լեզվական իրավունքների հետ: Կոմիտեի մեծամասնությունը որոշեց, որ տեղի է ունեցել իրավունքի ոտնահարում [23.56], մինչդեռ պրն Լալահը [Mr Lallah] և հինգ այլ անդամներ այս հարցով արտահայտեցին իրենց անհամաձայնությունը [23.57]:

⁸ Հեղինակները նաև բողոք ներկայացրին 27-րդ հոդվածով, որը հաջողություն չունեցավ. տե՛ս [24.48]:

որը պաշտպանված է 25-րդ հոդվածով, պետք է սահմանվեն սահմանադրությամբ և այլ օրենքներով: ...

[22.08] Ընդհանուր մեկնաբանությունը հաստատում է, որ 25-րդ հոդվածի (ա) կետը չի նախատեսում կառավարման որևէ որոշակի համակարգ, քանի դեռ մասնակից պետությունը գործում է որպես ժողովրդավարություն: Իրականում իշխանության բաժանման եղանակները և քաղաքացիների քաղաքական մասնակցության իրավունքները պետք է «սահմանվեն սահմանադրությամբ և այլ օրենքներով»: 25-րդ հոդվածը խստորեն չի թելադրում այդ օրենքների բովանդակությունը: Բազմաթիվ քաղաքական համակարգեր, թվում է, համապատասխանում են հոդված 25(ա)-ին⁹, ներառյալ «վեստմինստերյան» (խորհրդարանական), «նախագահական», երկպալատ, միապալատ, ունիտար և դաշնային համակարգերը:

[22.09] Ընդհանուր մեկնաբանությունը հաստատում է, որ «պետական գործերի վարումը» լայն հասկացություն է, որը ներառում է իշխանության բոլոր ճյուղերով բոլոր մակարդակներում պետական իշխանության իրականացումը: Օրինակ՝ «պետական գործերի վարումն» ընդգրկում է կենտրոնական կառավարությունների կողմից քաղաքականությունների ձևակերպումը, որոնք վերաբերում են պաշտպանությանը և արտաքին գործերին, ինչպես նաև որևէ տեղական ավագանու որոշումները, որոնք վերաբերում են աղբահավաքման հաճախականությանը:

ԱՆՈՒՂԱԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

[22.10] Հոդված 25(ա)-ն ամրագրում է, որ մասնակցությունը պետական գործերի վարմանը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի՝ ընտրված ներկայացուցիչների միջոցով: Ժամանակակից կառավարման բարդության պատճառով որևէ մասնակից պետության համար գործնականում անհնար է կառավարել միայն կամ մույնիսկ հիմնականում քաղաքացիների ուղղակի մասնակցության միջոցով: Ուստի հոդված 25(ա)-ն փաստորեն պարտադրում է, որ բոլոր մասնակից պետություններն անուղղակի քաղաքական մասնակցության համար նախատեսեն համապատասխան ուղիներ:

[22.11]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. Այն դեպքերում, երբ քաղաքացիները պետական գործերի վարմանը մասնակցում են ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, 25-րդ հոդվածի իմաստից ենթադրվում է, որ այդ ներկայացուցիչներն իսկապես իրականացնում են պետական իշխանություն, և ընտրությունների գործընթացի միջոցով հաշվետու են իրենց կողմից այդ իշխանությունը կիրառելու համար: Ոչ բացահայտ կերպով ընկալվում է նաև այն, որ ներկայացուցիչները գործադրում են միայն այն իշխանությունը, որն իրենց տրվել է ըստ սահմանադրական նորմերի: Ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցությունն իրականացվում է քվեարկության գործընթացի միջոցով, որը պետք է սահմանվի (բ) կետին համապատասխանող օրենքներով:

Հետևաբար, 25-րդ հոդվածի (ա) կետը մասնակից պետությունների կառավարություններից պահանջում է մի որևէ եղանակով հաշվետու լինել սեփական քաղաքացիների առջև¹⁰: Բռնակալական վարչակարգերը, որոնք քաղաքացիների քաղաքական մասնակցության համար որևէ հնարավորություն չեն ընձեռում, չեն բավարարում (ա) կետի պահանջները¹¹: Այս տեսակետը հաստատվում է Ընդհանուր մեկնաբանության առաջին պարբերությամբ [22.07]:

[22.12] Ժողովրդի կողմից ընտրված մարմինը կամ մարմինները պարտավոր են «փաստացի իրականացնել պետական իշխանություն»։ ընտրովի մարմինը չի կարող լինել սոսկ խորհրդատվական մարմին՝ առանց օրինականորեն գործադրելի լիազորությունների: Ժողովրդի քվեով ընտրված մարմինը կամ պարտավոր է կենսական դեր խաղալ պետության կառավարման գործում, կամ վերահսկել նման

⁹ Տե՛ս H. Steiner, "Political Participation as a Human Right" (1988) 1 Harvard Human Rights Yearbook 77, 87:

¹⁰ Նովակ, վերը, ծնթ. 1, էջ 441:

¹¹ Նույն տեղում: Տե՛ս նաև T. Franck, 'The Emerging Right to Democratic Governance' (1992), 86 *American Journal of International Law* 46, էջեր 63-4:

դեր ունեցող մարմինը¹²: Օրինակ՝ «վեստմինստերյան» համակարգերը, որտեղ ընտրովի օրենսդիր մարմինն ինքն է ընտրում կամ վերջին հաշվով վերահսկում գործադիր իշխանությունը, համապատասխանում են 25-րդ հոդվածին: Այնուամենայնիվ, Նովակը նշել է, որ կարող է դժվար լինել ընտրովի մարմնի կողմից իրականացվող փաստացի վերահսկողությունը չափելը¹³: Օրինակ՝ «վեստմինստերյան» համակարգերում գործադիր իշխանությունը, որը կազմված է իշխող կուսակցության առաջնորդներից, հաճախ գործնականում գերակայում է օրենսդիր մարմնի նկատմամբ, եթե ունի բավարար մեծամասնություն: 25-րդ հոդվածը կարծես բավարար չափով զարգացած մեխանիզմ չէ ժամանակակից քաղաքական համակարգերում առկա կառուցվածքային արատներից շատերի շտկման համար¹⁴:

[22.13] Ավելին՝ ոչ ժողովրդավարական կառույցները չպետք է ունենան նշանակալի քաղաքական իշխանություն: Օրինակ՝ ՄԻԿ-ը Չիլիի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում Չիլիի նշանակովի Սենատի մասին նշեց հետևյալը¹⁵:

¶ 8. Կոմիտեն խորապես մտահոգված է նախկին զինվորական ռեժիմի անդամների կողմից իշխանության «օջախների» պահպանման խնդրով: Կոնգրեսի կողմից ընդունված նախաձեռնությունները արգելափակելու լիազորությունները՝ տրված Սենատին և կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության խորհրդի կողմից գործադրվող լիազորությունները հակասում են դաշնագրի 25-րդ հոդվածին: Սենատի կազմը նույնպես խոչընդոտում է իրավական բարեփոխումները, որոնք մասնակից պետությանը հնարավորություն կտային ավելի լիարժեք բավարարելու դաշնագրով ստանձնած պարտավորությունները:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆԸ

[22.14] *«ՄԱՐՇԱԼԸ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (MARSHALL v CANADA, 205/86)¹⁶*

Հեղինակները հնդկացիական միկմաք ցեղախմբի ներկայացուցիչներ են: Փաստերը և բողոքը ներկայացված են անմիջապես ստորև.

¶ 2.2. 1982 թ. ընդունված Սահմանադրական օրենքի համաձայն՝ Կանադայի կառավարությունը «ճանաչեց և հաստատեց» «Կանադայի բնիկ ժողովուրդների գոյություն ունեցող ցեղախմբային և պայմանագրային իրավունքները» (հոդված 35(1)), ինչը վերաբերում էր Կանադայի հնդկացի [Indian], ինյուիթ [Inuit] և մետիս [Métis] ժողովուրդներին (հոդված 35(2)): Այս իրավունքներն ավելի նույնականացնելու և հստակեցնելու նպատակով Սահմանադրական օրենքը նախատեսում էր մի գործընթաց, որը պետք է ներառեր Կանադայի վարչապետի կողմից իրավիրվող սահմանադրական համաժողով, որին պետք է մասնակցեին Կանադայի նահանգների առաջին նախարարները և «Կանադայի բնիկ ժողովուրդների իրավիրյալ ներկայացուցիչներ»: Կանադայի կառավարությունը և նահանգների կառավարությունները պարտավորվեցին հարգել այն սկզբունքը, ըստ որի՝ այնպիսի խնդիրների շուրջ, որոնք ուղղակի ազդեցություն ունեն բնիկ ժողովուրդների վրա (ներառյալ՝ այդ ժողովուրդների իրավունքների նույնականացումը և սահմանումը), քննարկումներ պետք է տեղի ունենային մի այդպիսի համաժողովում մինչև որևէ սահմանադրական փոփոխություն կատարելը և այդ փոփոխությունները Կանադայի սահմանադրության մեջ մտցնելը (հոդված 35(1) և հոդված 37(1) և (2)): Իրականում հետագա տարիներին Կանադայի վարչապետի կողմից գումարվեցին մի քանի նման համաժողովներ, որոնց մասնակցելու համար նա իրավիրեց չորս ազգային միություններ՝ ներկայացնելու մոտավորապես 600 բնիկ ժողովուրդների շահերը: Այս ազգային միությունները հետևյալն էին. «Առաջին ազգերի ասամբլեան» [Assembly of First Nations] (որը իրավիրվել էր՝ ներկայացնելու հիմնականում կարգավիճակից զուրկ հնդկացիներին), «Մետիսների ազգային խորհուրդը» [Métis National Council] (որը իրավիրվել էր՝ ներկայացնելու մետիսներին) և «Ազգային հարցերով ինյուիթների կոմիտեն» [Inuit Committee on National Issues] (որը իրավիրվել էր՝ ներկայացնելու ինյուիթներին): Որպես կանոն՝ Կանադայում սահմանադրական համաժողովներին մասնակցում են միայն դաշնային կառավարության և պրովինցիաների կառավարությունների ընտրված առաջնորդները: Բնիկների խնդիրներին նվիրված համաժողովներն այս կանոնից բացառություն էին: Դրանց ուշադրության առանցքում բնիկների ինքնակառավարման խնդիրն էր և այն, թե արդյոք Կանադայի սահմանադրության մեջ հա՞րկ է ամրագրել բնիկների ինքնակառավարման ընդհանուր իրավունքը: ...

¹² St' u S. Joseph, "Rights of Political Participation", in՝ D. Harris and S. Joseph (eds), The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law (Clarendon Press, Oxford, 1995), 543:

¹³ Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 454:

¹⁴ St' u նաև ստորև՝ [22.46] և [22.56]:

¹⁵ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104:

¹⁶ Հայտնի է նաև որպես «Միկմաքների ցեղախմբի միությունն ընդդեմ Կանադայի» (*Mikmaq Tribal Society v Canada*):

Բողոքը.

¶ 3.1. Յեղիմակները՝ որպես միկմաք ժողովրդի ներկայացուցիչներ, ձգտել են սահմանադրական համաժողովներին մասնակցելու իրավեր ստանալ, սակայն հաջողության չեն հասել: Բողոքի հիմնավորումը սահմանադրական համաժողովներում միկմաքների հատուկ ներկայացվածության համար մասնակից պետության թույլտվություն չտալն է...

¶ 4.2. Յեղիմակները բողոքում են, *ի թիվս այլոց*, որ [համաժողովին մասնակցելու հարցում] սահմանափակումները անհիմն են, և իրենց շահերը պատշաճ կերպով ներկայացված չեն եղել սահմանադրական համաժողովներում: Առաջին հերթին նրանք ընդգծում են, որ իրենք հնարավորություն չեն ունեցել ընտրելու, թե «ազգային միություններից» որը ներկայացնի իրենց, և ապա իրենք Առաջին ազգերի ասամբլեան (ԱԱԱ) չեն օժտել իրենց շահերը ներկայացնելու որևէ իրավունքով: Երկրորդ՝ երբ միկմաքներին չի թույլատրվել ունենալ անմիջական ներկայացուցիչներ, նրանք փորձել են ազդել Առաջին ազգերի ասամբլեայի վրա, սակայն հաջողության չեն հասել: Մասնավորապես՝ նրանք հիշատակում են 1987 թ. կայացած լսումները, որոնք համատեղ անցկացվել են ԱԱԱ-ի և Կանադայի կառավարության մի քանի ստորաբաժանումների կողմից, որոնց ընթացքում միկմաքների առաջնորդները ներկայացրել են սահմանադրական փոփոխությունների առաջարկների մի փաթեթ և «ամենախիստ ձևակերպումներով առարկություններ են արել միկմաքների անմիջական մասնակցության բացակայության պայմաններում սահմանադրական համաժողովներում միկմաքներին առնչվող համաձայնագրերի որևէ քննարկման» վերաբերյալ: Այնուամենայնիվ, ԱԱԱ-ն միկմաքների դիրքորոշումներն արտահայտող փաստաթղթերից որևէ մեկը չի ներկայացրել սահմանադրական համաժողովներում, ոչ էլ ներառել է դրանք սեփական դիրքորոշումներում:

Ի պատասխան՝ մասնակից պետությունն առարկեց, որ 25-րդ հոդվածը «չի կարող պահանջել, որ երկրի բոլոր քաղաքացիները իրավիքներն որևէ սահմանադրական համաժողով»¹⁷:

ՄԻԿ-ը վճռեց հօգուտ մասնակից պետության.

¶ 5.2. Դիտարկվող գործում խնդիրն այն է, թե արդյոք ... հեղիմակները կամ Միկմաքների ցեղախմբային միության կողմից այդ նպատակով ընտրված այլ ներկայացուցիչներ, ըստ հոդված 25(ա)-ի, իրավունք ունեն՝ հաճախելու նշված համաժողովներին: ...

¶ 5.4. Դեռևս հարկ է պարզել, թե որո՞նք են յուրաքանչյուր քաղաքացու կողմից պետական գործերի վարմանն անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, առանց անհիմն սահմանափակումների մասնակցելու իրավունքի սահմանը: Վստահաբար, դա չի կարող լինել դաշնագրի հոդված 25(ա)-ի բովանդակությունը, ըստ որի՝ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի որոշելու՝ անմիջականորեն՝ մասնակցել պետական գործերի վարմանը, թե՞ այդ գործը պատվիրակել ազատորեն ընտրված ներկայացուցիչներին: Տվյալ մասնակից պետության իրավական և սահմանադրական համակարգն է, որ պետք է նախատեսի նման մասնակցության եղանակները:

¶ 5.5. Անվիճարկելի պետք է լինի այն, որ ժողովրդավարական պետության մեջ պետական գործերի վարումը ժողովրդի՝ այդ նպատակով ընտրված ներկայացուցիչների և օրենքի համաձայն նշանակված պետական պաշտոնյաների գործն է: Առանց բացառության, պետական գործերի վարումն ազդում է բնակչության խոշոր հատվածների կամ նույնիսկ ողջ բնակչության շահերի վրա, մինչդեռ այլ դեպքերում այն ավելի անմիջականորեն է ազդում հասարակության ավելի առանձնահատուկ խմբերի շահերի վրա: Չնայած շահագրգիռ խմբերի մեծամասնության հետ նախօրոք անցկացվող խորհրդակցությունները (ինչպիսիք են հանրային լսումները կամ քննարկումները) կարող են նախատեսված լինել օրենքով կամ պետական գործերի վարման ընթացքում ձևավորվել որպես հանրային քաղաքականություն, դաշնագրի հոդված 25(ա)-ն չի կարելի մեկնաբանել այնպես, թե անմիջական առնչություն ունեցող ցանկացած խումբ՝ մեծ թե փոքր, պետական գործերի վարմանը մասնակցելու եղանակներն ընտրելու անվերապահ իրավունք ունի: Դա, փաստորեն, կլինեք քաղաքացիների անմիջական մասնակցության իրավունքի տարածումն հոդված 25(ա)-ի սահմաններից անդին: Չնայած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի, առանց խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, մասնակցելու պետական գործերի վարմանը, կոմիտեն եզրակացնում է, որ այս գործի առանձնահատուկ պարագայում մասնակից պետության կողմից միկմաքների ցեղախմբային հանրության ներկայացուցիչներին բնիկների խնդիրների թեմայով անցկացված սահմանադրական համաժողովներին չհրավիրելը, որոնք պետական գործերի վարում են համարվում, չի խախտել հեղիմակների կամ միկմաքների ցեղախմբային հանրության այլ անդամների այդ իրավունքը: Ավելին՝ կոմիտեի կարծիքով՝ այս համաժողովներին մասնակցելը և այնտեղ ներկայացված լինելը անհիմն սահմանափակումների չեն ենթարկվել: Յետևաբար, կոմիտեն այն կարծիքին է, որ հաղորդումը չի բացահայտում 25-րդ հոդվածի կամ դաշնագրի որևէ այլ նորմի խախտում:

¹⁷ Պարբ. 4.1:

Մարշալի գործով վճիռը հաստատում է, որ 25-րդ հոդվածը քաղաքացու համար չի երաշխավորում պետական գործերի վարմանն անմիջականորեն մասնակցելու իրավունք, բացի այն առանձին դեպքերից, որոնք հիշատակված են 25-րդ հոդվածի (բ) և (գ) կետերում¹⁸:

[22.15] Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը էքստրապոլացիայի ենթարկեց 27-րդ հոդվածում ամրագրված փոքրամասնությունների իրավունքների նորմը: Նշված փաստաթղթի 7-րդ կետում [24.22] ՄԻԿ-ն ընդունում է, որ ի լրումն փոքրամասնությունների մշակութային գործունեությունը պաշտպանելու պարտականության, պետությունները նաև պարտավոր են որդեգրել «միջոցներ՝ ապահովելու փոքրամասնություն կազմող համայնքների անդամների արդյունավետ մասնակցությունն այնպիսի որոշումների կայացմանը, որոնք ազդեցություն ունեն իրենց վրա»: «*Լանսմանը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Länsman v Finland*, 511/92)¹⁹ և «*Լանսմանը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Länsman et al v Finland*, (671/95)²⁰ գործերում այս ձևակերպման մեկնաբանումները մատնանշում են, որ փոքրամասնությունները, ներառյալ՝ բնիկ ժողովուրդները, իսկապես *ունեն* իրավունք անմիջականորեն մասնակցելու այնպիսի որոշումների կայացմանը, որոնք կարող են ազդեցություն ունենալ իրենց ավանդական մշակույթի վրա: Այս որոշումները հետևում են Մարշալի գործին և ակնհայտորեն նրանում որդեգրված պահպանողական դիրքորոշումից նահանջի ազդանշան են: Այդպիսով, ուղղակի մասնակցության իրավունքները գուցե կարելի է բխեցնել եթե ոչ 25-րդ հոդվածից, ապա 27-րդ հոդվածից: Այս առումով ուշադրություն դարձրեք նաև ՄԻԿ-ի կողմից վերջերս ընդունված մի մեկնաբանության վրա, որը վերաբերում է Շվեդիային²¹:

¶ 15. Կոմիտեն մտահոգված է այն սահմանափակ դերով, որ սամիների խորհրդարանը կարող է ունենալ այնպիսի խնդիրների մասին որոշումների կայացման գործընթացում, որոնք ազդում են բնիկ սամի ժողովրդի ավանդական հողերի և տնտեսական գործունեության վրա, ինչպիսիք են հիդրոէներգետիկայի, հանքարդյունաբերության և անտառտնտեսության բնագավառներում իրականացվող նախագծերը, ինչպես նաև հողերի սեփականաշնորհումը: ...

[22.16]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը նշեց, որ 25-րդ հոդվածի (բ) և (գ) կետերում ամրագրված պարտադիր ուղիներից բացի, գոյություն ունեն բազմաթիվ այլ եղանակներ, որոնց միջոցով պետությունը *կարող է* քաղաքացիների անմիջական մասնակցության ուղիներ գտնել:

¶ 6. Քաղաքացիները պետական գործերի վարմանն անմիջականորեն մասնակցում են այն դեպքում, երբ իշխանություն են բանեցնում որպես օրենսդիր մարմինների անդամներ կամ ստանձնում են պաշտոններ գործադիր իշխանության մարմիններում: Անմիջական մասնակցության այս իրավունքն ամրապնդվում է (բ) կետով: Քաղաքացիները պետական գործերի վարմանն անմիջականորեն մասնակցում են նաև այն ժամանակ, երբ (բ) կետին համապատասխանող կարգով ընտրում կամ փոխում են իրենց երկրի սահմանադրությունը կամ հանրաքվեի կամ այլ ընտրական գործընթացի միջոցով որոշում են կայացնում որևէ հանրային հարցի կապակցությամբ: Քաղաքացիները պետական գործերի վարման գործընթացում կարող են անմիջականորեն ներգրավվել՝ մասնակցելով հանրային ժողովների, որոնք լիազորված են որոշումներ կայացնել տեղական մշակութային հարցերի կամ որևէ առանձին համայնքի գործերի վերաբերյալ, ինչպես նաև մասնակցելով այնպիսի մարմինների աշխատանքներին, որոնք ստեղծվել են, որպեսզի իշխանությունների հետ համատեղ խորհրդատվությունների միջոցով ներկայացնեն քաղաքացիներին: ...

¶ 8. Քաղաքացիները պետական գործերի վարմանը մասնակցում են նաև իրենց ներկայացուցիչների հետ հանրային քննարկումների և երկխոսության միջոցով ազդեցություն գործելով կամ ինքնակազմակերպման իրենց կարողության միջոցով: Այդ մասնակցությունն ամրապնդվում է խոսքի, հավաքների և միավորումներ կազմելու ազատությունների ապահովմամբ:

¹⁸ St'u M. Turpel, 'Indigenous Peoples and Rights of Political Participation and Self-Determination: Recent International Legal Developments and the Continuing Struggle for Recognition' (1992), 25 Cornell International Law Journal 579, 596: St'u նաև Տոգեթ, վերը, ծնթ. 12, էջ 539: Այնուամենայնիվ, տես [24.36] և եզրափակիչ դիտարկումները Մեքսիկայի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 32, պարբ. 18 (հատվածը վերցված է այստեղից՝ [24.42]):

¹⁹ Պարբ. 9.5 և 9.6 [24.31]:

²⁰ Պարբ. 10.4 և 10.5 [24.33]:

²¹ Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/74/SWE:

[22.17] Չնայած տվյալ մասնակից պետությունը կարող է 25-րդ հոդվածով պարտավոր չլինել որոշակի ուղիներ գտնել անմիջական քաղաքական մասնակցության համար, պետությունը ստանձնում է պարտավորություններ, եթե իրականում տրամադրում է անմիջական քաղաքական մասնակցության հավելյալ ուղիներ:

¶ 6. Այն դեպքերում, երբ քաղաքացիների անմիջական մասնակցության որևէ ուղի է գտնվում, արգելվում է, քաղաքացիների մասնակցության առումով, 2-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված հիմքերով քաղաքացիների միջև որևէ խտրականության և որևէ չհիմնավորված սահմանափակման կիրառումը:

[22.18] Ընդհանուր մեկնաբանությունը չի հիշատակում քաղաքական մասնակցության առումով ամենամեծ սպառնալիքներից մեկը՝ կոռուպցիան: Կոռուպցիայի քաղաքական գործընթացները մարդկանց կանոնավորապես զրկում են պետական գործերի վարմանը արդարության և հավասարության հիմունքներով մասնակցելու իրավունքից: Որպեսզի լիարժեք բավարարվեն 25-րդ հոդվածի պահանջները, մասնակից պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել՝ կանխելու կոռուպցիայի և կաշառակերության դեպքերը և պատժելու մեղավորներին:

Հոդված 25(բ). Քվեարկելու իրավունքը

ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

[22.19] *ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

¶ 4. Այն պայմանները, որոնք կիրառելի են 25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքների իրացման համար, պետք է հիմնված լինեն ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա: Օրինակ՝ կարող է ողջամիտ լինել որոշակի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու համար ավելի բարձր տարիքային շեմ պահանջելը, քան սահմանված է քվեարկելու իրավունքից օգտվելու համար, որը պետք է մատչելի լինի յուրաքանչյուր չափահաս քաղաքացուն: Քաղաքացիների կողմից այս իրավունքների իրացումը չի կարող առկալվել կամ վերացվել, բացառությամբ այն հիմքերի, որոնք նախատեսված են օրենքով և օբյեկտիվ ու ողջամիտ են: Օրինակ՝ հաստատված մտավոր անկարողությունը կարող է հիմք լինել անձին քվեարկելու կամ պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելու համար: ...

¶ 10. Ընտրություններում և հանրաքվեների ժամանակ քվեարկելու իրավունքը պետք է ամրագրվի օրենքով և կարող է ենթարկվել միայն ողջամիտ սահմանափակումների, ինչպիսին է քվեարկելու իրավունքի նվազագույն տարիքային շեմի սահմանումը: Անընդունելի է քվեարկելու իրավունքը սահմանափակել ֆիզիկական հաշմանդամության հիմքով կամ սահմանել գրագիտության, կրթության կամ սեփականության պարտադիր պահանջներ: Կուսակցական պատկանելությունը քվեարկելու իրավունակության պայման կամ այդ իրավունքից զրկելու հիմք չպետք է լինի:

¶ 14. Իրենց զեկույցներում մասնակից պետությունները մատնանշում և բացատրում են այն օրենսդրական նորմերը, որոնք քաղաքացիներին կարող են զրկել քվեարկելու իրավունքից: Իրավունքից մասն զրկումը պետք է լինի օբյեկտիվ և ողջամիտ: Եթե հանցագործություն կատարած լինելու մեղադրանքը քվեարկության իրավունքն առկալվելու հիմք է, ապա մասն առկալված ժամկետը պետք է համարժեք լինի հանցագործությանը և պատժին: Ազատությունից զրկված այն անձինք, ովքեր դեռևս չեն դատապարտվել, չպիտի զրկվեն քվեարկելու իրավունքից օգտվելու հնարավորությունից:

[22.20] «*Լանդինելի Սիլվան ընդդեմ Ուրուգվայի*» (*Landinelli Silva v Uruguay, 34/78*) և «*Պիետրառոյան ընդդեմ Ուրուգվայի*» (*Pietraroia v Uruguay, 44/79*) գործերում ընդդիմադիր կուսակցությունների անդամներին տասնհինգ տարով բոլոր քաղաքական իրավունքներից, ներառյալ՝ քվեարկելու իրավունքից զրկումը համարվեց 25-րդ հոդվածի խախտում: ՄԻԿ-ը նաև որպես 25-րդ հոդվածի խախտում է որակել այն սահմանափակումները, որոնք կիրառվում են ռազմական ուսումնական հաստատությունների ուսանողների քվեարկելու իրավունքի նկատմամբ²²:

[22.21] Ինչ վերաբերում է դատապարտված անձանց քվեարկելու իրավունքի սահմանափակումներին, որոնք բնորոշ են բազմաթիվ մասնակից պետությունների, ապա ՄԻԿ-ն այս կապակցությամբ նշել է, որ

²² Եզրափակիչ դիտարկումներ Պարագվայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 48, պարբ. 23:

Հոնկոնգի այն օրենքները, որոնք դատապարտյալներին մինչև տասը տարի ժամկետով զրկել են քվեարկելու իրավունքներից, «կարող են համարվել 25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքների ոչ համարժեք սահմանափակում»²³:

[22.22] Քվեարկելու իրավունքի վերաբերյալ մինչ օրս կայացված ամենակարևոր որոշումը եղել է «*Գիլոտ և այլք ընդդեմ Ֆրանսիայի*» (*Gillot et al v France*, 932/00) գործով: ՄԻԿ-ը երկարատև քննարկումներից հետո վճռեց, որ Նոր Կալեդոնիա ֆրանսիական գաղութի ապագա քաղաքական կարգավիճակը որոշելու նպատակով անցկացված հանրաքվեներում քվեարկելու իրավունքի որոշակի սահմանափակումները՝ կախված բնակչության կարգավիճակից, չեն հակասել 25-րդ հոդվածին: Այս սահմանափակումների հիմնական արդարացումը հետևյալն էր. դրանք սահմանվել են, որպեսզի հանրաքվեները բաց լինեն միայն Նոր Կալեդոնիայի առնչությամբ ՔՔԻՄԴ-ի 1-ին հոդվածով ինքնորոշման իրավունք ունեցող համապատասխան ժողովուրդների համար [7.07]:

ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

[22.23] 25-րդ հոդվածի նախաբանը սահմանում է, որ քաղաքացիները պետք է նաև իրենց քվեարկելու իրավունքից օգտվելու համարժեք հնարավորություն ունենան:

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 11. Պետությունները պարտավոր են արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու, որ քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անձինք այդ իրավունքից օգտվելու հնարավորություն ունենան: Այն դեպքերում, երբ պահանջվում է քվեարկողների գրանցում, այդ գործընթացը պետք է հեշտացված լինի, և այդ գրանցման հարցում չպետք է խոչընդոտներ առաջանան: Եթե գրանցման համար սահմանվում են բնակչության կարգավիճակի որոշակի պահանջներ, դրանք պետք է լինեն հիմնավորված և չպետք է կիրառվեն այնպիսի եղանակով, որ դրա հետևանքով անտույնները զրկվեն քվեարկելու իրավունքից: Քրեական օրենսդրությամբ պետք է արգելվի յուրաքանչյուր բռնի միջամտություն գրանցման գործընթացին կամ քվեարկությանը, ինչպես նաև ընտրողների նկատմամբ որևէ ճնշում կամ ահաբեկում, իսկ այդ օրենքները պետք է խստորեն կիրառվեն: Ընտրողների կրթությանը և գրանցման ուղղված քարոզարշավներն անհրաժեշտ են, որպեսզի ապահովվի տեղեկացված համայնքի կողմից 25-րդ հոդվածով ճանաչված իրավունքների փաստացի իրացումը:

¶ 12. Խոսքի, հավաքների և միավորումներ կազմելու ազատությունները քվեարկելու իրավունքի արդյունավետ իրացման համար էական նշանակություն ունեցող պայմաններ են և պետք է լիարժեք պաշտպանվեն: Հարկ է ձեռնարկել ակտիվ միջոցներ՝ հաղթահարելու այնպիսի որոշակի դժվարություններ, ինչպիսիք են անգրագիտությունը, լեզվական արգելքները, աղքատությունը կամ տեղաշարժվելու ազատության խոչընդոտները, որոնք քվեարկելու իրավունք ունեցող անձանց հնարավորություն չեն տալիս գործնականում իրացնելու իրենց իրավունքները: Քվեարկության վերաբերյալ տեղեկատվությունը և նյութերը պետք է փոքրամասնությունների լեզուներով հասանելի լինեն: Պետք է օգտագործվեն հատուկ միջոցներ, ինչպիսիք են լուսանկարները և խորհրդանիշները՝ հավաստիանալու համար, որ անտառաճանաչ ընտրողները բավարար չափով տեղեկացված են, որպեսզի ընտրություն կատարեն: Մասնակից պետությունները պետք է իրենց զեկույցներում նշեն այն եղանակը, որով լուծվում են այս պարբերության մեջ հիշատակված դժվարությունները:

¶ 13. Պետությունների զեկույցները պետք է նկարագրեն քվեարկելու իրավունքը կարգավորող կանոնները, ինչպես նաև այդ կանոնների կիրառումն այն ժամանակահատվածում, որին վերաբերում է տվյալ զեկույցը: Պետությունների ներկայացրած զեկույցները նաև պետք է նկարագրեն այն գործոնները, որոնք խանգարում են քաղաքացիներին իրացնել քվեարկելու իրավունքները, ինչպես նաև այդ գործոնները հաղթահարելու նպատակով ձեռնարկված ակտիվ միջոցները:

[22.24] 13-րդ կետը բացահայտ ամրագրում է, որ մասնակից պետությունները հոդված 25(բ)-ով ակտիվ պարտականություններ ունեն, որոնք ավելին են, քան ընտրության գործընթացի հարմարությունները տրամադրելը: Պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ ապահովելու, որ կարիքավոր քաղաքացիները հնարա-

²³ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 57, պարբ. 19: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Լյուքսեմբուրգի վերաբերյալ (2003), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/77/LUX, պարբ. 8, Եզրափակիչ դիտարկումներ Միացյալ Թագավորության վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UK, պարբ. 10:

վորություն ունենան քվեարկելու և օգտվելու այնպիսի տեղեկություններից, որոնք կնպաստեն քվեարկելու իրենց իրավունքն իմաստալից կերպով իրացնելուն: Օրինակ՝ ՄԻԿ-ն առաջարկել է, որ Իռլանդիան²⁴.

¶ 23. ... ձեռնարկի լրացուցիչ հակակշռող գործողություններ [affirmative action]՝ ուղղված «ճամփորդ համայնքի» [‘Travelling Community’] վիճակի բարելավմանը և, մասնավորապես՝ պետական գործերի վարմանը «ճամփորդների» մասնակցության, ներառյալ՝ ընտրական գործընթացի օժանդակմանը և ընդլայնմանը²⁵:

ՔՎԵԻ ՈՐԱԿԸ

[22.25]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 21. Չնայած դաշնագիրը որևէ որոշակի ընտրական համակարգ չի պարտադրում, որևէ մասնակից պետությունում գործող յուրաքանչյուր ընտրական համակարգ չպետք է հակասի 25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքներին և իրավական ուժ պետք է տա ընտրողների կամքի ազատ արտահայտման արդյունքներին: Պետք է գործի «մեկ անձ՝ մեկ քվե» սկզբունքը, և յուրաքանչյուր մասնակից պետության ընտրական համակարգի շրջանակներում մեկ ընտրողի քվեն պետք է հավասար լինի մեկ ուրիշի մեկ քվեին: Ընտրատարածքների սահմանների որոշումը և քվեների տեղաբաշխման եղանակը չպետք է աղավաղեն ընտրողների բաշխվածությունը կամ խտրական լինեն որևէ խմբի նկատմամբ և չպետք է անհիմն կերպով բացառեն կամ սահմանափակեն քաղաքացիների՝ սեփական ներկայացուցիչներին ազատորեն ընտրելու իրավունքը:

21-րդ պարբերությունն ամրագրում է, որ բազմաթիվ ընտրական համակարգեր համապատասխանում են 25-րդ հոդվածի (բ) կետին, ներառյալ՝ համամասնական ներկայացվածությունը («ՀՆ»), ընտրատարածքների հիման վրա գործող քվեարկության համակարգերը, վարկանիշային քվեարկության համակարգերը, պարզ մեծամասնությամբ հաղթելու հիման վրա գործող համակարգերը, ընտրողների խորհուրդների հիման վրա գործող համակարգերը²⁶, և այս համակարգերի զանազան համադրումները: Այսպես է, չնայած բոլոր համակարգերը, բացառությամբ զուտ ՀՆ համակարգերի, արդյունքում տալիս են քաղաքական իշխանության այնպիսի տեղաբաշխումներ, որոնք աղավաղում են ընտրություններում քվեարկության փաստացի կաղապարները²⁶: Ընդհանուր մեկնաբանությունը նշում է միայն, որ արգելվում է ընտրողների բաշխման աղավաղումը, որը, հավանաբար, վերաբերում է միտումնավոր «ջերիմանդերինգին» [gerrymandering] (ընտրատարածքների աշխարհագրության միտումնավոր աղավաղումը)²⁷. այն կարծես թե չի վերաբերում ընտրությունների աղավաղված արդյունքներին:

[22.26] Հոդված 25(բ)-ն սահմանում է «ընտրության համահավասար իրավունք»: Ընդհանուր մեկնաբանությունը հաստատում է, որ բոլոր ընտրողներն ունեն հավասար ձայնի իրավունք: Այս դրույթի առնչությամբ ՄԻԿ-ը քննադատել է Հոնկոնգում Չինաստանին փոխանցվելուց առաջ կիրառված «գործառութային ընտրազանգվածներ» [‘functional constituencies’] երևույթը²⁸, որը «ոչ համարժեք կշիռ է տվել գործարար համայնքի տեսակետներին» և առաջացրել խտրականություն ընտրողների միջև՝ «կախված սեփականությունից և գործառութային ընտրազանգվածներից»: «Գործառութային ընտրազանգվածներ» երևույթը խախտել է հոդված 25(բ)-ն²⁸:

²⁴ (1994) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 21:

²⁵ «ճամփորդները» թափառական կյանքով են ապրում և հաճախ համարվում են ժամանակակից հիպիներ:

²⁶ ԱՄՆ-ում նախագահին և փոխնախագահին անմիջականորեն ընտրող մարմին, որի կազմում 538 անձինք են (*ժամ. քաղաք.*):

²⁷ Հոնկոնգի և Մակաոյի քաղաքական համակարգերում գործառութային ընտրազանգվածը մասնագիտական և հատուկ շահեր հետապնդող խմբեր են, որոնք ներգրավված են ընտրական գործընթացում: Գործառութային ընտրազանգվածում քվեարկելու իրավունք ունեցողները կարող են ընդգրկել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց, ինչպիսիք են կազմակերպությունները և կորպորացիաները:

²⁸ Տե՛ս Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 448:

²⁹ Հոնկոնգի և Մակաոյի քաղաքական համակարգերում գործառութային ընտրազանգվածը մասնագիտական և հատուկ շահեր հետապնդող խմբեր են, որոնք ներգրավված են ընտրական գործընթացում: Գործառութային ընտրազանգվածում քվեարկելու իրավունք ունեցողները կարող են ընդգրկել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց, ինչպիսիք են կազմակերպությունները և կորպորացիաները:

²⁸ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 57, պարբ. 19:

[22.27] «ՄԱԹՅՈՒՄՆ ԸՆԴՂԵՆՔ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ» (MÁ TYUS v SLOVAKIA, 923/00)

Բողոքը ներկայացվում է անմիջապես ստորև.

¶ 2.1. Հեղինակը պնդում է, որ 1998 թ. նոյեմբերի 5-ին Ռոնյավայի քաղաքային խորհուրդը [Roňáava Town Council] ընդունել է թիվ 193/98 որոշումը, ըստ որի՝ Ռոնյավայի քաղաքային խորհրդի՝ 1998 թ. դեկտեմբերի 18-ին և 19-ին կայանալիք ընտրությունների համար տարածաշրջանում ստեղծվել են հինգ ընտրատարածքներ և ընդհանուր առմամբ 21 ներկայացուցիչներ: ...

¶ 2.2. Ըստ հեղինակի, երբ ինքը համեմատել է Ռոնյավա քաղաքի առանձին ընտրատարածքներում մեկ ներկայացուցչի հաշվարկով բնակիչների թիվը, ստացել է հետևյալ թվերը. մեկ ներկայացուցիչ՝ թիվ 1 ընտրատարածքի յուրաքանչյուր 1,000 բնակչի հաշվով, մեկ ներկայացուցիչ՝ թիվ 2 ընտրատարածքի յուրաքանչյուր 800 բնակչի հաշվով, մեկ ներկայացուցիչ՝ թիվ 3 ընտրատարածքի յուրաքանչյուր 400 բնակչի հաշվով, մեկ ներկայացուցիչ՝ թիվ 4 ընտրատարածքի յուրաքանչյուր 200 բնակչի հաշվով, և մեկ ներկայացուցիչ՝ թիվ 5 ընտրատարածքի յուրաքանչյուր 200 բնակչի հաշվով: Յուրաքանչյուր ընտրատարածքում ներկայացուցիչների թիվը, հետևաբար, համամասնորեն չի բաշխվել ըստ տվյալ ընտրատարածքում բնակվողների թվի: Հեղինակը թիվ 3 ընտրատարածքում գրանցված թեկնածու է եղել, սակայն չի կարողացել ընտրվել, քանի որ ստացած ձայների քանակով գրավել է ութերորդ տեղը, և այդ ընտրատարածքից ընտրվել է միայն յոթ պատգամավոր: ...

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ «Ռոնյավայի քաղաքացիների»՝ դաշնագրի 25-րդ հոդվածի (ա) և (գ) կետերով ճանաչված իրավունքները ոտնահարվել են, քանի որ քաղաքացիները հավասար հնարավորություն չեն ունեցել ազդելու ընտրությունների արդյունքների վրա, երբ իրացրել են ներկայացուցիչների ընտրության միջոցով պետական գործերի վարմանը մասնակցելու իրավունքը: Ի լրումն՝ հեղինակը հայտարարում է, որ իրենց իրավունքները ոտնահարվել են, քանի որ իրենց չի տրվել հավասար հնարավորություն՝ օգտվելու քաղաքային խորհրդի պաշտոններում ընտրվելու իրավունքից:

¶ 3.2. Հեղինակը հայտարարում է, որ ոտնահարվել են 25-րդ հոդվածի (ա) և (գ) կետերում ամրագրված իրավունքները, քանի որ քաղաքային խորհրդի կազմում ընտրվելու համար ինքը զգալիորեն ավելի շատ քվեների կարիք ուներ, քան այլ ընտրատարածքներում առաջադրված թեկնածուները: Պատճառն այն է, որ յուրաքանչյուր ընտրատարածքում ներկայացուցիչների թիվը, ըստ ընտրատարածքի բնակիչների թվի, համամասնորեն չի բաշխվել: Հեղինակը պնդում է, որ այս փաստը հանգեցրել է ընտրություններում իր պարտությանը:

Մասնակից պետությունն ընդունեց, որ ընտրատարածքները սահմանվել են սխալ ձևով: ՄԻԿ-ը որոշեց, որ տեղի է ունեցել 25-րդ հոդվածի խախտում:

¶ 9.2. Ինչ վերաբերում է այն հարցին՝ խախտվել է դաշնագրի 25-րդ հոդվածը, թե՞ ոչ, կոմիտեն նշում է, որ մասնակից պետության Սահմանադրական դատարանը վճռել է, որ, նույն համայնքային խորհրդի համար ընտրատարածքներ սահմանելով բնակիչների՝ մեկ ընտրվող ներկայացուցչի հաշվով թվաքանակի նշանակալի տարբերություններով, թեև ընտրական օրենսդրությունը պահանջել է, որ այդ ընտրատարածքներն արտահայտեն բնակիչների թվաքանակի համամասնությունները, ոտնահարվել են մասնակից պետության սահմանադրությամբ սահմանված համահավասար ընտրական իրավունքները: Այս պաշտոնական հայտարարության լույսի ներքո, ելնելով այն սահմանադրական նորմից, որը նման է դաշնագրի 25-րդ հոդվածում ամրագրված հավասարության պահանջին, և մասնակից պետության կողմից Ռոնյավայի տարբեր հատվածներում մեկ ընտրված ներկայացուցչին բաժին ընկնող բնակիչների կամ գրանցված ընտրողների թվաքանակի տարբերությունները բացատրող գործոնների որևէ հիշատակման բացակայության պայմաններում կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետությունը ոտնահարել է հեղինակի՝ դաշնագրի 25-րդ հոդվածով ճանաչված իրավունքները...

¶ 11. Կոմիտեն ընդունում է, որ ընտրությունների անվավեր ճանաչումն այն բանից հետո, երբ դրանք արդեն կայացել են, ընտրություններում անհավասարության փաստի դեպքում միշտ չէ, որ իրավական պաշտպանության ճիշտ միջոց է, հատկապես երբ անհավասարությունը ներառված է ընտրություններից առաջ ընդունված օրենքներում և կանոնակարգերում, ոչ թե բուն ընտրությունների գործընթացում գրանցված խախտումներում: Ավելին՝ այս գործի որոշակի հանգամանքներում, հաշվի առնելով 1998 թ. դեկտեմբերին կայացած ընտրություններից հետո անցած ժամանակահատվածը, կոմիտեն կարծում է, որ իրավունքի ոտնահարումն իր կողմից հաստատելն ինքնին իրավունքի պաշտպանության բավարար միջոց է: Մասնակից պետությունը պարտավոր է կանխել ապագայում նմանօրինակ ոտնահարումների կրկնությունը:

[22.28] Ընտրական համակարգերը չպետք է թույլ տան տարբեր ընտրատարածքներում ընտրողների

թվի զգալի տարբերություններ²⁹։ Սա նշանակում է, որ պետությունները չպետք է կիրառեն «դրական խտրականության» միջոցներ՝ ընդլայնելու պակաս արտոնություններ ունեցող խմբերի կամ փոքրամասնությունների քաղաքական ներկայացվածությունը։ Օրինակ՝ շոտլանդացի և ուելսցի ընտրողները Վեստմինստերյան խորհրդարանի ընտրություններում օգտվում են առավելությունից՝ պակաս բնակեցված ընտրատարածքների ձևով³⁰։ Արևմտյան Ավստրալիա նահանգի ընտրատարածքների սահմանները որոշվել են այնպես, որ առավելություն տան գյուղական բնակչությանը³¹։ Թիվ 25 Ընդհանուր մեկնաբանությունը մատնանշում է, որ նման միջոցներն անթույլատրելի են։ Չնայած 25-րդ հոդվածով որոշ տեսանկյուններից թույլատրվում է դրական խտրականությունը³², թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության տեքստը կարծես թե անձի քվեի արժեքի համատեքստում նման խտրականություն չի թույլատրում։

[22.29] Ընդհանուր մեկնաբանությունում չկա պնդում, որ բոլոր քվեները պետք է ունենան հավասար «արդյունք»³³։ Ընտրատարածքների հիման վրա գործող համակարգերում, որտեղ ընտրովի մարմնում սահմանային տեղերի համար տրված քվեների ազդեցությունը միշտ ավելի մեծ է, քան «ապահովագրված» տեղերի համար տրված քվեների ազդեցությունը, սա կլինեի կատարման համար անհնարին մի պահանջ։ Փոխարենը՝ ընտրողների ձայները բնութագրվում են որպես «համահավասար», ինչի համաձայն՝ քանակական արժեքով բոլոր քվեները հավասար են, չնայած յուրաքանչյուր քվեի ազդեցությունը կարող է տարբեր լինել։

Հոդված 25(բ). Ընտրություններում առաջադրվելու իրավունք

[22.30]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 15. Ընտրովի պաշտոններում առաջադրվելու իրավունքի և հնարավորության արդյունավետ իրականացումն ապահովում է, որ քվեարկելու իրավունք ունեցող անձինք ունենան թեկնածուների ազատ ընտրություն։ Ընտրություններում առաջադրվելու իրավունքի որևէ սահմանափակում, ինչպիսին է նվազագույն տարիքը, պետք է հնարավոր լինի օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների հիման վրա արդարացնել։ Այն անձինք, ովքեր ընտրություններում առաջադրվելու իրավունք ունեն, չպետք է դուրս թողնվեն ոչ ողջամիտ և այնպիսի խտրական պահանջների պատճառով, ինչպիսիք են կրթությունը, բնակությունը կամ ծագումը, կամ քաղաքական կողմնորոշման հետևանքով։ Որևէ մեկն իր թեկնածության առաջադրման պատճառով չպիտի տուժի որևէ տեսակի խտրականությունից կամ անբարենպաստ վիճակից։ Մասնակից պետությունները պետք է ցույց տան և բացատրեն այն օրենսդրական նորմերը, որոնք մարդկանց որևէ խմբի կամ կատեգորիայի գրկում են ընտրովի պաշտոններում առաջադրվելու հնարավորությունից։

¶ 16. Թեկնածության առաջադրման ժամկետներին, վճարներին կամ գրավին վերաբերող պայմանները պետք է լինեն ողջամիտ և ոչ խտրական։ Եթե գոյություն ունեն ողջամիտ հիմքեր, որպեսզի որոշակի ընտրովի պաշտոններ համարվեն անհամատեղելի այլ հատուկ պաշտոնների (օրինակ՝ դատական համակարգում, բարձրաստիճան գինվորական պաշտոններում, պետական ծառայության մեջ) վարման հետ, ապա շահերի բախումներից խուսափելու նպատակով ձեռնարկվող միջոցները չպետք է անհիմն կերպով սահմանափակեն (բ) կետով պաշտպանված իրավունքները։ Ընտրված պաշտոնյաներին հեռացնելու հիմքերը սահմանվում են օրենքով, օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների հիման վրա և ընդգրկվում արդարացի ընթացակարգեր։

¶ 17. Անձանց՝ ընտրություններում առաջադրվելու և քվեարկվելու իրավունքն անհիմն կերպով չի կարելի սահմանափակել՝ պահանջելով, որ թեկնածուները լինեն կուսակցությունների կամ որոշակի կուսակցությունների անդամ։ Եթե առաջադրվելու համար թեկնածուից պահանջվում է ունենալ որոշակի նվազագույն թվով աջակիցներ, ապա նման պահանջը պետք է լինի հիմնավորված և չպետք է խոչընդոտ դառնա թեկնածության գրանցման համար։

²⁹ Այս առումով ուշադրություն դարձրեք ՄԻԿ-ի՝ Ձիմբաբվեին ուղղված պահանջագրին՝ հավելյալ տեղեկություններ տրամադրել իր ընտրական համակարգում ընտրատարածքների չափերի վերաբերյալ, տես Եզրափակիչ դիտարկումներ Ձիմբաբվեի վերաբերյալ, (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 89, պարբ. 23։

³⁰ Ջոզեֆ, վերը, ծմբ. 12, էջ 547։

³¹ Նման սահմանների սահմանադրականությունը հաստատվել է *«Մակքինտոնի ընդդեմ Արևմտյան Ավստրալիայի» (McGinty v Western Australia, (1996), 186 CLR 140)* գործով։

³² Տես, օրինակ, [22.35]-ում մեկնաբանությունը և *«Ստալա Կոստան ընդդեմ Ուրուգվայի» (Stalla Costa v Uruguay)* գործով վճիռը [22.50]։

³³ Տես նաև K. Partsch, 'Freedom of Conscience and Expression, and Political Freedoms' [Կ. Պարտշ, «Խղճի և խոսքի ազատությունը և քաղաքական ազատությունները»], այստեղ՝ L. Henkin (ed), *The International Bill of Rights: The International Covenant on Civil and Political Rights* [Լ. Հենկին (խմբ.), «Իրավունքների միջազգային օրինադրար. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը»] (Columbia University Press, New York, 1981), էջ 240։

Առանց դաշնագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ կանխակալ կարծիքի, քաղաքական հայացքները չեն կարող օգտագործվել որպես հիմք՝ ընտրություններում առաջադրվելու իրավունքից որևէ մեկին զրկելու համար:

Ուշադրություն դարձրեք նաև Ընդհանուր մեկնաբանության 4-րդ պարբերությանը, որում ՄԻԿ-ը նշել է, որ ընտրություններում առաջադրվելու իրավունքի սահմանափակումները կարող են ավելի ծանրաբեռնող լինել, քան քվեարկելու իրավունքի սահմանափակումները [22.19]:

[22.31] «ԲՎԱԼՅԱՆ ընդդեմ ԶԱՄԲԻԱՅԻ» (BWAL YA v ZAMBIA, 314/88)

Համապատասխան փաստերն ակնհայտ են ՄԻԿ-ի որոշումից, ըստ որի՝ խախտվել է 25-րդ հոդվածը:

¶ 6.6. Ինչ վերաբերում է դաշնագրի 25-րդ հոդվածի հայտարարվող խախտմանը, կոմիտեն նշում է, որ հեղինակին, ով նախկին նախագահին ընդդիմադիր քաղաքական կուսակցության առաջնորդներից էր, թույլ չի տրվել մասնակցել համընդհանուր ընտրական արշավին, ինչպես նաև նախապատրաստել սեփական թեկնածությունը իր կուսակցության համար: Նշվածը որակվել է որպես հեղինակի՝ «պետական գործերի վարմանը մասնակցելու» իրավունքի անհիմն սահմանափակում, ինչը մասնակից պետությունը չի կարողացել բացատրել կամ հիմնավորել: Մասնավորապես՝ մասնակից պետությունը ի վիճակի չի եղել բացատրելու ընտրություններին մասնակցելու համար անհրաժեշտ պայմանները: Հետևաբար պետք է ենթադրել, որ պրն Բվալյան կալանավորվել է և զրկվել Չիֆուբուի [Chifubu] ընտրատարածքից խորհրդարանի պատգամավորական տեղի համար մրցապայքարին մասնակցելու իրավունքից սոսկ այն պատճառով, որ անդամակցել է ոչ պաշտոնապես ճանաչված քաղաքական կուսակցության: Այս համատեքստում կոմիտեն նկատում է, որ ճանաչված քաղաքական կուսակցությունից դուրս քաղաքական գործունեության նկատմամբ սահմանափակումներն արդեն իսկ պետական գործերի վարմանը մասնակցելու իրավունքի անհիմն սահմանափակում են:

Բվալյայի գործը հաստատում է, որ միակուսակցական համակարգերը հակասում են 25-րդ հոդվածին³⁴:

[22.32] «Մ.Ա.-ն ընդդեմ Իտալիայի» (M.A. v Italy, 117/81) գործում համարվել է, որ Իտալիայի ֆաշիստական կուսակցության վերակազմակերպման արգելումը չի հակասում 25-րդ հոդվածին: Ենթադրաբար, ծայրահեղ աջ այս խմբի վերակազմակերպման ներկայացրած սպառնալիքը հասարակական կարգուկանոնին և ազգային անվտանգությանը հնարավորություն տվեց, որ արգելմանը համարժեք սահմանափակվեն 25-րդ հոդվածով ճանաչված իրավունքները³⁵: Այս առումով հարկ է նշել թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության 17-րդ պարբերությունում դաշնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի հիշատակումը [22.30]: Այն ամրագրում է, որ դաշնագիրը չի կարող որևէ խմբի կողմից օգտագործվել որպես պատրվակ՝ ներգրավվելու այնպիսի գործունեության մեջ կամ իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են այլոց՝ ՔՔԻՄԴ-ով ճանաչված իրավունքների վերացմանը: Ծայրահեղ աջերի պատմության մեջ կան այնպիսի քաղաքականության վարման էջեր, որի նպատակն է այլոց քաղաքացիական և քաղաքական իրավունքների խարխուլումը³⁶:

[22.33] ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել «հսկայական ֆինանսական ծախսերի» առնչությամբ, որոնք կապված են Միացյալ Նահանգներում պետական պաշտոնում ընտրվելու ձգտման հետ: Այս ծախսերը «բացասական ազդեցություն ունեն անձանց՝ ընտրություններում թեկնածու լինելու իրավունքի վրա»³⁷:

[22.34] Թիվ 25 Ընդհանուր մեկնաբանությունը 16-րդ պարբերությունը [22.30] անդրադառնում է պետական ծառայողների նկատմամբ գործող սահմանափակումներին, որոնք վերաբերում են թեկնածու առաջադրվելուն: Նման մի սահմանափակում էր դիտարկվում հետևյալ գործի շրջանակներում:

³⁴ Տե՛ս նաև [18.37]:

³⁵ Տե՛ս նաև [18.33]:

³⁶ Տե՛ս նաև [1.22]:

³⁷ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50, պարբ. 24:

**«ԴԵՐԵԶԵՆԻՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(DEBRECZENY v THE NETHERLANDS, 500/92)**

Պրն Դերեզենին ազգային ոստիկանության սերժանտ էր: «Տեղական խորհրդի ենթակայության ներքո որպես քաղաքացիական ծառայող» զբաղվածության պատճառով նրան զրկել էին Դոլանդիայի համայնքներից մեկի խորհրդում ընտրվելու հնարավորությունից:

¶ 3.1. Դեղինակը հայտարարում է, որ Դանտումադեելի [Dantumadeel] տեղական խորհրդին իր անդամությունն ընդունելու մերժումը ուսմահարում է դաշնագրի 25-րդ հոդվածի (ա) և (բ) կետերով ամրագրված իր իրավունքները: Նա պնդում է, որ յուրաքանչյուր քաղաքացի, համապատասխան կերպով ընտրվելու դեպքում, պետք է այն համայնքի տեղական խորհրդի անդամ դառնալու իրավունք ունենա, որտեղ բնակվում է, և իր նկատմամբ կիրառված համապատասխան կանոնակարգերն այս իրավունքի չհիմնավորված սահմանափակում են՝ դաշնագրի 25-րդ հոդվածում ամրագրված իմաստով:

¶ 3.2. Ըստ հեղինակի՝ իր ենթակայությունը Դանտումադեելի քաղաքապետին զուտ ծնական բնույթ ունի. քաղաքապետը հազվադեպ է անմիջական հրաման տալիս ոստիկանության սերժանտներին: Ի պաշտպանություն իր փաստարկի՝ նա հայտարարում է, որ ազգային ոստիկանների նշանակումները կատարում է արդարադատության նախարարը, և քաղաքապետը ազգային ոստիկանության սպաների նկատմամբ իշխանություն ունի միայն հասարակական կարգի պահպանման առնչությամբ: Այս իշխանության գործադրման համար քաղաքապետը հաշվետու է քաղաքային խորհրդին, այլ հաշվետու է ներքին գործերի նախարարին:

Մասնակից պետությունն ընտրովի պաշտոններին վերաբերող այս սահմանափակումը հիմնավորեց հետևյալ կերպ:

¶ 7.1. 1994 թ. օգոստոսի 17-ին ներկայացված փաստաթղթում մասնակից պետությունը վերահաստատում է, որ Նիդեռլանդների սահմանադրությունը երաշխավորում է քվեարկելու և ընտրություններում առաջադրվելու իրավունքը, և «Համայնքների մասին» օրենքի [Municipalities Act] 25-րդ հոդվածը, որն ուժի մեջ է եղել պրն Դերեզենիի ընտրության ժամանակ, սահմանում է այն պաշտոնները, որոնք համարվում են համայնքային խորհրդի անդամության հետ անհամատեղելի: Այս հոդվածի համաձայն՝ համայնքային իշխանության ենթակայության տակ գտնվող պաշտոնյաներին արգելվում է դառնալ համայնքային խորհրդի անդամ: Մասնակից պետությունը հիշատակում է, որ մարդկանց որոշակի կատեգորիաների համայնքային խորհրդի անդամությունից զրկելու հիմնավորումը համայնքային կառույցների շիտակությունը երաշխավորելն է և այդպիսով որոշումների կայացման ժողովրդավարական գործընթացն ապահովագրելը շահերի բախումների կանխարգելման միջոցով:

¶ 7.2. Մասնակից պետությունը բացատրում է, որ օրենքի 25-րդ հոդվածում օգտագործված «համայնքային իշխանություն» եզրույթը ներառում է համայնքային խորհուրդը, համայնքի գործադիր մարմինը և համայնքապետին: Մասնակից պետությունը մատնանշում է, որ եթե խորհրդից բացի, համայնքային այլ վարչական մարմինների ենթակայության ներքո պաշտոններ զբաղեցնողները դառնային խորհրդի անդամ, ապա դա կխաթարեր նաև համայնքի վարչական իշխանության ամբողջականությունը, քանզի խորհուրդը՝ որպես բարձրագույն վարչական իշխանություն, կարող է նման մարմիններից պահանջել հաշվետու լինել իրեն:

¶ 7.3. Մասնակից պետությունը բացատրում է, որ ազգային ոստիկանական ուժերի սպաները, ինչպիսին պրն Դերեզենին է, նշանակվում են արդարադատության նախարարի կողմից, սակայն համաձայն «Ոստիկանության մասին» օրենքի 35-րդ հոդվածի, որն ուժի մեջ է եղել պրն Դերեզենիի ընտրության ժամանակ, նրանք եղել են համայնքային իշխանության մի հատվածի՝ քաղաքապետի ենթակայության տակ այն հարցերում, որոնք վերաբերել են հասարակական կարգուկանոնի պահպանմանը և արտակարգ իրավիճակներում իրենց պարտականություններին: Քաղաքապետը նշված նպատակներով ոստիկանության աշխատակիցներին հրահանգներ տալու, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ հրամանները և կանոնակարգերը ընդունելու լիազորություն ունի. ձեռնարկված բոլոր միջոցների համար նա հաշվետու է խորհրդին: Այդ իսկ պատճառով՝ ոստիկանության աշխատակիցները, որպես համայնքային խորհրդի անդամներ, մի կողմից՝ պարտավոր կլինեին ենթարկվել քաղաքապետին, իսկ մյուս կողմից՝ հաշվետվության կանչել նրան: Ըստ մասնակից պետության՝ նման իրավիճակը շահերի անընդունելի բախում կառաջացներ, իսկ որոշումների կայացման ժողովրդավարական գործընթացը կկորցներ իր ամբողջականությունը: Այդպիսով, մասնակից պետությունը պնդում է, որ ոստիկանության աշխատակիցներին իրենց աշխատանքի վայր հանդիսացող համայնքի խորհրդի անդամ լինելու հնարավորությունից զրկելու նպատակով սահմանափակումները հիմնավորված են և դաշնագրի 25-րդ հոդվածի խախտում չեն:

ՄԻԿ-ն ըստ էության վճիռ կայացրեց հոգուտ մասնակից պետության՝ հետևյալ հիմնավորմամբ.

¶ 9.2. Կոմիտեին ներկայացված խնդիրն այն է, թե արդյոք «Համայնքապետարանների մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները, ինչի հետևանքով հեղինակը զրկվել է Դանտումադեելի համայնքային խորհրդում (որի համար ընտրվել էր) տեղ զբաղեցնելու հնարավորությունից, ոտնահարել՝ է հեղինակի՝ դաշնագրի հոդված 25(բ)-ով ճանաչված իրավունքը: Կոմիտեն նշում է, որ 25-րդ հոդվածով նախատեսված իրավունքը բացարձակ իրավունք չէ, և այս իրավունքի սահմանափակումներ թույլատրվում են այնքանով, որքանով դրանք խտրական կամ անհիմն չեն:

¶ 9.3. Կոմիտեն ի գիտություն է ընդունում այն, որ համայնքային խորհրդում ընտրվելու իրավունքի սահմանափակումները կարգավորվում են օրենքով և դրանք հիմնված են օբյեկտիվ չափանիշների վրա, այն է՝ ընտրված անձի նշանակված լինելը համայնքային իշխանության կողմից կամ ենթակայությունը այդպիսի իշխանության մարմնին: Ի գիտություն ընդունելով մասնակից պետության կողմից այս սահմանափակումների հիմնավորման համար հիշատակված պատճառները, մասնավորապես՝ շահերի բախումից խուսափելու միջոցով որոշումների կայացման ժողովրդավարական գործընթաց երաշխավորելը, կոմիտեն կարծում է, որ նշված սահմանափակումները հիմնավորված են և համապատասխանում են օրենքի նպատակին: ... Կոմիտեն նկատում է, որ Դանտումադեելի խորհրդի կազմում իր ընտրության ժամանակահատվածում հեղինակն ազգային ոստիկանական ուժերում ծառայում էր որպես ոստիկանության սպա, տեղակայված էր Դանտումադեելում և ի պաշտոնե հասարակական կարգուկանոնին առնչվող հարցերում գտնվում էր Դանտումադեելի քաղաքապետի ենթակայության տակ, ով նշված հարցերով ձեռնարկված միջոցների համար հաշվետու էր համայնքի խորհրդին: Ելնելով այս հանգամանքներից՝ կոմիտեն կարծում է, որ իսկապես կարող էր ծագել շահերի բախում, և հեղինակի նկատմամբ սահմանափակումների կիրառումը դաշնագրի 25-րդ հոդվածի խախտում չէ:

[22.35] Հնդկաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հստակ հավանություն տվեց սահմանադրական մի փոփոխության, ըստ որի՝ նախատեսվում է, որ կանայք ստանալու են ընտրովի տեղական մարմինների տեղերի առնվազն մեկ երրորդը, ինչպես նաև որոշակի թվով ընտրովի պաշտոնների հատկացումը «ճանաչված կաստաների և ցեղախմբերի ["scheduled castes and tribes"] անդամներին»³⁸: «Քվոտավորման» այս միջոցառումները դրական խտրականության միջոցներ են, որոնք մշակվել են կարիքավոր խմբերի քաղաքական ներկայացվածությունն ապահովելու համար: Դրական խտրականության (հակակշռման) ողջամիտ միջոցները, այսպիսով, ընտրություններում առաջադրվելու իրավունքի համատեքստում չեն հակասում 25-րդ հոդվածին և համապատասխանում են դաշնագրի այն հատուկ նորմերին, որոնք արգելում են խտրականությունը³⁹:

[22.36] «ԻԳՆԱՏԱՆԵՆ ընդդեմ ԼՍՏՎԻԱՅԻ» (IGNATANE v LATVIA, 884/99)

Այս հայցը վերաբերում էր տեղական ընտրություններում քաղաքական թեկնածուներին ներկայացվող լեզվի իմացության պահանջներին:

¶ 2.1. Խնդրո առարկա իրադարձությունների ժամանակ տկն Իգնատանեն Ռիգայում աշխատում էր որպես ուսուցչուհի: 1993 թ. նա ներկայացել է հավաստագրման խորհուրդ՝ հանձնելու լատիշերենի քննություն, ապա ստացել է լեզվական գիտելիքների մասին հավաստագիր, որը հաստատում է, որ տկն Իգնատանեն ունի 3-րդ աստիճանի լեզվահմացություն (ամենաբարձր աստիճանն է):

¶ 2.2. 1997 թ. հեղինակի թեկնածությունն առաջադրվեց մարտի 9-ին կայանալիք տեղական ընտրություններում՝ որպես Լատվիայում սոցիալական արդարության և հավասար իրավունքների շարժման ցուցակում ընդգրկված թեկնածու: 1997 թ. փետրվարի 11-ին, հենվելով Լեզվի պետական խորհրդի [State Language Board (SLB/LŅu)] կարծիքի վրա, ըստ որի՝ տկն Իգնատանեն պետական լեզվի իմացության պահանջվող մակարդակ չունի, Ռիգայի ընտրական հանձնաժողովն իր որոշմամբ նրան հանեց ընտրական ցուցակից: ...

¶ 3. Հեղինակը պնդում է, որ, զրկելով իրեն տեղական ընտրություններում առաջադրվելու հնարավորությունից, Լատվիան խախտել է դաշնագրի 2-րդ և 25-րդ հոդվածները:

Մասնակից պետությունը պաշտպանեց Իգնատանեի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքը:

³⁸ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 81, պարբ. 11:

³⁹ Տե՛ս նաև [23.68]ff: Տե՛ս նաև «Ստալա Կոստան ընդդեմ Ուրուգվայի» (Stalla Costa v Uruguay) [22.50] գործով կայացված վճիռը և ԿՆԿԿԿ-ի վերաբերյալ թիվ 23 Ընդհանուր հանձնարարականը (CEDAW General Recommendation) [22.56]:

¶ 4.3. Մասնակից պետությունն այն համոզման է, որ վերը հիշատակված օրենքի նորմերը համապատասխանում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի պահանջներին, ինչպես նախատեսվում է դաշնագրի 25-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 25 Ընդհանուր մեկնաբանությամբ, որում նշվում է, որ «ցանկացած պայմաններ, որոնք կիրառելի են 25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքների իրացման համար, պետք է հիմնված լինեն օբյեկտիվ և հիմնավորված չափանիշների վրա»: Ըստ մասնակից պետության՝ մասնակցությունը պետական գործերի վարմանը պահանջում է պետական լեզվի իմացության բարձր մակարդակ, և նման նախապայմանը հիմնավորված է ու հիմնված օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք ամրագրված են պետական լեզվի իմացության հավաստագրման կանոններում: Մասնակից պետությունը հայտարարում է, որ համաձայն այդ կանոնների՝ անձանց մի քանի կատեգորիաների, ներառյալ՝ ընտրվող ներկայացուցիչների դեպքում պահանջվում է պետական լեզվի իմացության 3-րդ մակարդակ: Իմացության բարձրագույն մակարդակը (3-րդ մակարդակ) ցույց է տալիս պետական լեզվով սահուն խոսելու, պատահականորեն ընտրված տեքստեր հասկանալու և պետական լեզվով սեփական պաշտոնական պարտականություններին առնչվող տեքստեր կազմելու կարողությունը...

¶ 4.6. Ինչ վերաբերում է հեղինակի հավաստագրի և Լեզվի պետական խորհրդի եզրակացությունների միջև ենթադրաբար գոյություն ունեցող հակասությանը, ապա մասնակից պետությունը նշում է, որ ԼՊԽ-ի եզրակացությունները վերաբերում են միայն թեկնածուի իրավասության խնդրին և որևէ կերպ չեն ենթադրում հավաստագրի՝ մեքենայաբար որակագրկմանը, ոչ էլ կարող են օգտագործվել որպես դրա ճշգրտությունը վերանայելու հիմք, եթե նման ցանկություն չի հայտնում հավաստագիրն ստացած անձը:

ՄԻԿ-ը որոշում կայացրեց հօգուտ հեղինակի.

¶ 4.3. ...Ըստ մասնակից պետության՝ մասնակցությունը պետական գործերի վարմանը պահանջում է պետական լեզվի իմացության բարձր մակարդակ, այդպիսով, ընտրություններում որպես թեկնածու առաջադրվելու համար լեզվական պահանջը հիմնավորված և օբյեկտիվ է: Կոմիտեն նշում է, որ 25-րդ հոդվածը յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովում է իսկական պարբերական ընտրություններում ընտրվելու իրավունքը և հնարավորությունը՝ գերծ լինելով 2-րդ հոդվածում նշված որևէ խտրականությունից, ներառյալ՝ լեզվի հիմքով խտրականությունը:

¶ 7.4. Կոմիտեն նշում է, որ այս գործում մեկ տեսուչի որոշումը, որը կայացվել է ընտրություններից մի քանի օր առաջ և հակասել է լեզվի իմացության հավաստագրին, որը դրանից մի քանի տարի առաջ գործողության անսահմանափակ ժամկետով տրվել է լատիշերենի մասնագետների խորհրդի կողմից, բավարար է եղել, որ Ընտրական հանձնաժողովը որոշեր հեղինակին հանել համայնքային ընտրություններում թեկնածուների ցուցակից: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը չի վիճարկում հավաստագրի իսկությունը, քանի որ այն կապված է հեղինակի մասնագիտական դիրքի հետ, սակայն տեսուչի դիտարկման արդյունքների հիման վրա առարկում է հեղինակի իրավասության հարցի կապակցությամբ: Կոմիտեն նաև նշում է, որ մասնակից պետությունը չի վիճարկել փաստաբանի այն փաստարկը, որ Լատվիայի օրենսդրությունը ընտրություններում առաջադրվելու համար չի նախատեսում պաշտոնական լեզվի իմացության առանձին մակարդակներ, և կիրառում է ուրիշ դեպքերում օգտագործված չափանիշները և հավաստագրումը: Վերանայման արդյունքները հանգեցրել են այն բանին, որ հեղինակը գրկվել է դաշնագրի 25-րդ հոդվածով ճանաչված պետական գործերի վարմանը մասնակցելու իր իրավունքի իրացումից: Կոմիտեն նշում է, որ 1993 թ. առաջին քննությունը անցկացվել է համաձայն պաշտոնական պահանջների և գնահատվել է հինգ փորձագետների կողմից, մինչդեռ 1997 թ. վերանայումը անցկացվել է *ad hoc* ձևով, իսկ գնահատումը կատարվել է մեկ անձի կողմից: Հեղինակի թեկնածության չեղյալ հայտարարումը մի վերանայման հետևանքով, որը հիմնված չի եղել օբյեկտիվ չափանիշների վրա, և որի ընթացակարգային ճշգրտությունը մասնակից պետությունը չի ցուցադրել, հակասում է մասնակից պետության կողմից դաշնագրի 25-րդ հոդվածով ստանձնած պարտավորություններին:

¶ 7.5. Կոմիտեն եզրակացնում է, որ 1997 թ. տկն Իգնատանին գրկելով Ռիգա քաղաքում տեղական ընտրություններում առաջադրվելու հնարավորությունից՝ նրան հասցվել է մի առանձնահատուկ վիրավորանք, քանի որ թեկնածուների ցուցակից նրա անունը հանվել է պաշտոնական լեզվի իմացության ամբավարար մակարդակի պատճառով: Մարդու իրավունքների կոմիտեն կարծում է, որ հեղինակը տուժել է դաշնագրի 25-րդ հոդվածի խախտումից՝ 2-րդ հոդվածի համակցությամբ:

Մինչ ՄԻԿ-ը բացահայտ մտահոգված էր լեզվի քննության առանձնահատկությունների կապակցությամբ, որոնք պայմանավորել էին հեղինակի քաղաքական թեկնածության առաջադրման իրավասությունը, կոմիտեն նաև մատնանշեց, որ լեզվի իմացության պահանջներն *ինքնին* հակասում են 25-րդ հոդվածին: Կարելի է ենթադրել, որ ՄԻԿ-ը կարծում է, որ ընտրողների ազատ կամքը բավարար երաշխիք է, որպեսզի չընտրվեն այնպիսի թեկնածուներ, ովքեր կարող են բացարձակապես անօգուտ լինել համապատասխան լեզվի իմացության պակասի պատճառով:

Հոդված 25(բ). Ընտրողների կամքն արտահայտող պարբերական ճշմարիտ ընտրություններ

[22.37]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 19. Պարբերություն (բ)-ի համաձայն՝ ընտրությունները պետք է անցկացվեն պարբերաբար, լինեն ազատ և արդար այնպիսի օրենքների շրջանակներում, որոնք երաշխավորում են քվեարկելու իրավունքների արդյունավետ իրացումը: Քվեարկելու իրավունք ունեցող անձինք պետք է ազատ լինեն՝ ծայն տալու ցանկացած թեկնածուի օգտին և կողմ կամ դեմ քվեարկելու ցանկացած առաջարկի, որը դրված կլինի հանրաքվեի կամ պլեբիսցիտի, ինչպես նաև պետք է ազատ լինեն՝ իրենց աջակցությունը հայտնելու կամ ընդդիմանալու կառավարությանը՝ առանց որևէ անհարկի ազդեցության կամ ճնշման ենթարկվելու, որը կարող է աղավաղել ընտրողի կամքի ազատ արտահայտումը կամ խոչընդոտել այն: Քվեարկողները պետք է ունակ լինեն՝ անկախ կերպով, որևէ կարգի բռնությունից կամ բռնության սպառնալիքից, հարկադրանքից, անհարկի շարժառիթներից կամ մանիպուլյատիվ միջամտությունից զերծ պայմաններում ձևավորելու իրենց կարծիքը: Քարոզարշավի ծախսերի ողջամիտ սահմանափակումները կարող են արդարացվել այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է երաշխավորելու համար, որ ընտրողների ազատ ընտրությունը չի խաթարվում կամ ժողովրդավարական գործընթացը չի աղավաղվում որևէ անհատ թեկնածուի կամ կուսակցության կողմից անհամաչափ ծախսերի հետևանքով: Հարկ է հարգել և կենսագործել ճշմարիտ ընտրությունների արդյունքները:

¶ 20. Պետք է ստեղծել ընտրական անկախ մարմին, որը կվերահսկի ընտրական գործընթացը և կապահովի, որ այն անցկացվի արդար, անկողմնակալ և համաձայն ընդունված օրենքների, որոնք համապատասխանում են դաշնագրին: ...

[22.38] Կարելի է իրագործել բազմաթիվ միջոցառումներ, որպեսզի բարձրացվի որևէ ընտրության իսկության աստիճանը: Օրինակ՝ ՄԻԿ-ը Մեքսիկայի կապակցությամբ առաջարկեց, որ իշխանությունները «քվեարկության ընթացքում ընդունեն միջազգային դիտորդների»։ դա «կնպաստեր ընտրությունների թափանցիկությանը»⁴⁰:

[22.39] ՄԻԿ-ը թիվ 19 Ընդհանուր մեկնաբանությունում ընդունում է, որ քարոզարշավի ծախսերի սահմանափակումները կարող են արդարացվել, որպեսզի պահպանվի ընտրական գործընթացի լիարժեքությունը և շիտակությունը: Այս առումով ուշադրություն դարձրեք ՄԻԿ-ի մտահոգություններին, որոնք վերաբերում են Միացյալ Նահանգներում քարոզարշավի նպատակով արվող ծախսերի հսկայական ծավալին [22.33]:

[22.40] Պետությունների փորձը ցույց է տալիս, որ ընտրությունների միջև երեքից յոթ տարվա դադարներն ընդունելի են⁴¹:

[22.41] Ինչպես նշվեց վերը [22.25], բոլոր ընտրական համակարգերը, գուցե բացառությամբ զուտ համասնական ներկայացվածության (ՀՆ) համակարգերի, կարող են աղավաղել ընտրությունների արդյունքներն այնպես, որ դրանք ճշգրտորեն չարտահայտեն «ընտրողների կամքը», ինչը կարող է խաթարել տվյալ ընտրության իսկությունը: Այնուամենայնիվ, մեծ աղավաղումը, եթե այն չի հասնում ծայրահեղ չափերի, կարծես թե համապատասխանում է 25-րդ հոդվածին:

ԳԱՂՏՆԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

[22.42]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 20. Պետությունները պարտավոր են ձեռնարկել միջոցներ՝ երաշխավորելու ընտրությունների ընթացքում քվեարկության գաղտնիության պահանջի կատարումը, ներառյալ՝ հեռակա քվեարկությունն այնտեղ, որտեղ մեծ համակարգ գոյություն ունի: Սա ենթադրում է, որ ընտրողները պետք է պաշտպանված լինեն ցանկացած եղանակով իրականացվող ճնշումներից կամ հարկադրանքից՝ բացահայտելու, թե ինչպես են պատրաստվում քվեարկել կամ ինչպես են քվեարկել, ինչպես նաև քվեարկության գործընթացին որևէ ապօրինի կամ կամայական միջամտություն:

⁴⁰ (1994) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 32, պարբ. 16:

⁴¹ Ջոզեֆ, վերը, ծնթ. 12, էջ 554:

միջ: Այս իրավունքներից զրկումը հակասում է դաշնագրի 25-րդ հոդվածին: Պետք է երաշխավորվի քվեատուփերի ապահովությունը, իսկ քվեների հաշվարկը պետք է կատարվի թեկնածուների կամ նրանց ներկայացուցիչների ներկայությամբ: Պետք է ապահովվի քվեարկության և քվեների հաշվարկի անկախ վերահսկում, պետք է ապահովվի դատական կարգով վիճարկման կամ համարժեք այլ գործընթացի հնարավորություն, որպեսզի ընտրողները վստահ լինեն քվեարկության և քվեների հաշվարկի անվտանգության հարցում: Հաշմանդամներին, կույրերին կամ անգրագետներին ցուցաբերվող օժանդակությունը պետք է իրականացվի անկախ անձանց կողմից: Ընտրողները պետք է լիարժեք տեղեկացված լինեն այս երաշխիքների մասին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

[22.43]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 25. Որպեսզի ապահովվի 25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքներից լիարժեք օգտվելը, էական նշանակություն ունի հասարակական և քաղաքական հարցերի վերաբերյալ տեղեկությունների և գաղափարների ազատ փոխանակումը քաղաքացիների, թեկնածուների և ընտրված ներկայացուցիչների միջև: Սա ենթադրում է ազատ մամուլի և այլ լրատվամիջոցների գոյություն, որոնք ունակ են հանրային խնդիրները մեկնաբանել առանց գրաքննության կամ սահմանափակումների և ձևավորել հասարակական կարծիքը: Դա պահանջում է հարգանք դաշնագրի 19-րդ, 21-րդ և 22-րդ հոդվածների նկատմամբ և դրանցից լիարժեք օգտվելու հնարավորություն, ներառյալ՝ անհատապես կամ քաղաքական կուսակցությունների և այլ կազմակերպությունների միջոցով քաղաքական գործունեության մեջ ներգրավվելու ազատությունը, պետական գործերի շուրջ բանավիճելու ազատությունը, խաղաղ ցույցեր և հանրահավաքներ անցկացնելու ազատությունը, քննադատելու և ընդդիմանալու ազատությունը, քաղաքական նյութեր հրատարակելու, նախընտրական քարոզչություն իրականացնելու և քաղաքական գաղափարներ տարածելու ազատությունը:

¶ 26. Միավորումներ կազմելու ազատություն ունենալու իրավունքը, ներառյալ՝ քաղաքական և հասարակական հարցերին առնչվող կազմակերպություններ և միություններ ստեղծելու և դրանց միանալու իրավունքը, էական լրացում է 25-րդ հոդվածով պաշտպանված իրավունքներին: Քաղաքական կուսակցությունները և կուսակցություններին անդամակցությունը հսկայական դեր են խաղում պետական գործերի վարման ընթացքում և ընտրությունների գործընթացում: Պետությունները պարտավոր են ապահովել, որ իրենց ներկուսակցական կառավարման մեջ քաղաքական կուսակցությունները հարգեն 25-րդ հոդվածի համապատասխան նորմերը, որպեսզի քաղաքացիներին հնարավորություն տան օգտվելու դրանում ամրագրված իրենց իրավունքներից:

[22.44] «Իրական» ընտրություններ հասկացությունը վեր է հանում մի քանի չափազանց բարդ խնդիրներ: Օրինակ՝ պետությունների մեծ մասում համապետական ընտրություններում հավանական հաղթողները ներկայացնում են սահմանափակ թվով քաղաքական կուսակցություններ, որոնք սահմանափակ օրակարգեր ունեն: Արդյոք հաղթողների *դե ֆակտո* սահմանափակությունը ապահովո՞ւմ է իրական ընտրություն⁴²: Շտայները նշել է, որ «մրցակցային ընտրությունները նշանակում են, որ մարդիկ ընտրություն ունեն, սակայն քաղաքական վերնախավը, ոչ թե ժողովուրդն է որոշում, թե ինչերի միջև է այդ ընտրությունը»⁴³: Իսկապես, ՄԻԿ-ն իր Ընդհանուր մեկնաբանության 26-րդ պարբերությունում ընդունում է, որ քաղաքական կուսակցությունների համատարած ազդեցությունը չի հակասում 25-րդ հոդվածին, չնայած շեշտում է, որ այդ կուսակցություններն իրենք պետք է գործեն համաձայն դաշնագրի դրույթների:

[22.45] 25-րդ պարբերությունում ՄԻԿ-ը ճանաչում է լրատվամիջոցների ազդեցությունը ընտրությունների արդյունքների որոշման վրա: Կոմիտեի մեկնաբանություններն ընդգծում են, որ լրատվամիջոցները պետք է ազատ լինեն իշխանությունների ազդեցությունից⁴⁴: Ընդհանուր մեկնաբանությունում հատուկ անդրադարձ չկա հասարակական կարծիքի ձևավորման վրա մասնավոր հատվածը ներկայացնող լրատվական մոնոպոլիաների վնասակար ազդեցությանը: Այսուհանդերձ, ՄԻԿ-ը ժամանակ առ ժամանակ մեկնաբանել է այն, թե ինչպես են նման մենաշնորհային ընկերությունները խաթարում 19-րդ հոդվածով

⁴² Տե՛ս G. Fox, 'The Right to Political Participation in International Law' (1992), 17 *Yale Journal of International Law* 539, 557, որտեղ մեջբերված է հետևյալ աշխատությունը՝ S. Mubako, 'Zambia's Single-Party Constitution - A Search for Unity and Development' (1973) 5 *Zambia Law Journal* 82: Տե՛ս նաև Նովակ, վերը, ծմբ. 1, էջ 454:

⁴³ Շտայներ, վերը, ծմբ. 9, էջ 101:

⁴⁴ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի վերաբերյալ, (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 100, պարբ. 21:

նախատեսված արտահայտվելու (խոսքի) ազատության իրավունքները⁴⁵: 25-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից օգտվելու տեսանկյունից 19-րդ հոդվածով ճանաչված իրավունքներից լիարժեք օգտվելու կարևորությունը հստակ ճանաչված է Ընդհանուր մեկնաբանության 8-րդ պարբերությունում [22.16]:

[22.46] Անհավանական է թվում, որ ՄԻԿ-ը կնախաձեռնի մի համալիր ուսումնասիրություն, որն անհրաժեշտ է որոշելու համար, թե տվյալ ընտրությունները, որոնք անցկացվել են առանց ընթացակարգային խախտումների, այդուամենայնիվ տուժե՞լ են էական թերություններից՝ կապված քաղաքական և տնտեսական իշխանության անհավասար բաշխման միջոցով որոշակի անձանց համակարգված իշխանագրկման հետ⁴⁶: ՄԻԿ-ը կարող է ոչ բացահայտ ընդունել, որ ժամանակակից կառավարման բարդությունները առաջացնում կամ նույնիսկ անհրաժեշտ են դարձնում որոշակի օրակարգերի և որոշակի ծայրերի փաստացի դուրսմղումը: Ի հակադրություն՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն [Committee on the Elimination of all Forms of Discrimination against Women] (ԿԵՄԿ կոմիտե/CEDAW Committee), որն ստեղծվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի ներքո, ցուցադրել է իրազեկության բարձր մակարդակ այն կառուցվածքային հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք բացասական ազդեցություն ունեն անբարենպաստ պայմաններում գտնվող մեկ խմբի՝ կանանց հասարակական և քաղաքական մասնակցության վրա [22.56]:

Հոդված 25(գ). Պետական ծառայության մտնելու հավասար հնարավորություններ

[22.47]

ԹԻՎ 25 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 23. 25-րդ հոդվածի (գ) ենթակետն անդրադառնում է քաղաքացիների՝ հավասարության ընդհանուր պայմաններով պետական ծառայության պաշտոնի մատչելիության իրավունքին ու հնարավորությանը: Հավասարության ընդհանուր պայմաններով հասանելիություն ապահովելու նպատակով պաշտոնի նշանակման, առաջխաղացման, ժամանակավոր կասեցման և աշխատանքից հեռացման չափանիշները և գործընթացները պետք է լինեն օբյեկտիվ և հիմնավորված: Երբ տեղին է, կարող են կիրառվել առավելություններ տվող միջոցառումներ՝ երաշխավորելու, որ բոլոր քաղաքացիների համար գոյություն ունեն պետական ծառայության անցնելու հավասար հնարավորություններ: Պետական ծառայության անցնելու հասանելիությունը հավասար հնարավորությունների և արժանիքների ընդհանուր սկզբունքների վրա հիմնվել և ապահով պաշտոնավարում տրամադրելը երաշխավորում են, որ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք զերծ լինեն քաղաքական միջամտություններից կամ ճնշումներից: Հատկապես կարևոր է ապահովել, որ մարդիկ 25-րդ հոդվածի (գ) ենթակետով ամրագրված իրենց իրավունքներն իրացնելիս չտուժեն խտրականությունից 2-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված հիմքերից որևէ մեկով:

Ինչպես հաստատվեց «Կալն ընդդեմ Լեհաստանի» (*Kall v Poland*, 552/93) գործով⁴⁷, հոդված 25(գ)-ն անձի համար պետական ծառայության ոլորտում մի որևէ փաստացի աշխատատեղ չի երաշխավորում. այն երաշխավորում է նման աշխատանք ձեռք բերելու արդար հնարավորություններ:

[22.48] Ուշադրություն դարձրեք Ընդհանուր մեկնաբանության 4-րդ պարբերությանը [22.19], որում ՄԻԿ-ն ընդունեց, որ պետական ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունքի նկատմամբ սահմանափակումները կարող են ավելի ծանրաբեռնող լինել, քան քվեարկելու իրավունքի նկատմամբ սահմանված սահմանափակումները: Օրինակ՝ հիմնավորված է դատավորներին որոշակի կրթական պահանջներ ներկայացնելը:

[22.49] ՄԻԿ-ը չի սահմանել «պետական ծառայություն» եզրույթը: Թվում է, թե այն ներառում է գործադիր, դատական, օրենսդիր իշխանություններում և պետական կառավարման այլ ոլորտներում առկա բոլոր պաշտոնները: Օրինակ՝ դպրոցների ուսուցիչները և պետական համալսարաններում աշխատող դասախոսները 25-րդ հոդվածի (գ) ենթակետով պաշտպանված են եղել, համապատասխանաբար, «Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի» (*Delgado Páez v Colombia*, 195/85) [22.54] և «Ադուայոնն ընդ-

⁴⁵ Տե՛ս նաև [18.16]:

⁴⁶ Ջոզեֆ, վերը, ծմբ. 12, էջ 553-4: Տե՛ս նաև Շտայներ, վերը, ծմբ. 9, էջ 112-13:

⁴⁷ Պարբ. 13.2:

դեմ *Snqnyj*» (*Aduayom v Togo, 422–424/90*) գործերում: Սեփականաշնորհման քաղաքականությունները կրճատում են պետական հատվածը և հետևաբար կարծես թե կրճատում են հողված 25(գ)-ի ընդգրկումը: Հողված 25(գ)-ն չի սահմանում պետական/մասնավոր հատվածների որևէ կատարյալ բաժանում:

[22.49A] «*Բ.դ.Բ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*B.d.B. v Netherlands, 273/88*) գործում ՄԻԿ-ն ասել է, որ որևէ մասնակից պետություն «չի ազատվում դաշնագրով ստանձնած պարտավորություններից, երբ իր գործառույթների մի մասը պատվիրակում է այլ ինքնավար մարմինների»⁴⁸: Համապատասխան «ինքնավար մարմինը» մի արդյունաբերական խորհուրդ էր, որը կազմված էր գործատուների և աշխատավորների կազմակերպությունների ներկայացուցիչներից, որոնք որևէ պաշտոնական առնչություն չունեին կառավարության հետ: Չնայած այս գործը 25-րդ հողվածով խնդիրներ չհարուցեց, այն կարող է նշանակել, որ կառավարությունները չեն կարող կրճատել 25-րդ հողվածի ընդգրկումը՝ իրենց ավանդական գործառույթների մի մասը պատվիրակելով մասնավոր կառույցների⁴⁹: Իսկապես, հավանական է, որ «պետական ծառայություն» եզրույթն ունի մի առանձին ինքնուրույն իմաստ, որը մասնակից պետությունները չեն կարող ամբողջությամբ կառավարել⁵⁰: Օրինակ՝ հավանական չէ, որ որևէ պետություն կարող է «մասնավորեցնել» բանակը կամ ոստիկանական ուժերը և պնդել, թե այդ կառույցներում գոյություն ունեցող պաշտոնների վրա չի տարածվում հողված 25(գ)-ն:

[22.50]

**«USULLU ԿՈՍՏԱՆ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ»
(*STALLA COSTA v URUGUAY, 198/85*)**

Փաստերը շարադրված են անմիջապես ստորև.

¶ 2.1. Հեղինակը հայտարարում է, որ ինքն աշխատանքի ընդունվելու դիմումներ է ներկայացրել պետական իշխանության տարբեր մարմիններ, որպեսզի աշխատանք ստանալու հնարավորություն ունենա և ստանա իր երկրի պետական ծառայությունում: Ըստ հայտարարության՝ նրան ասել են, որ ներկայումս պետական ծառայության ընդունվում են միայն նախկին պետական ծառայողները, ովքեր աշխատանքից հեռացվել են 1977 թ. հունիսին ընդունված «Թիվ 7 ինստիտուցիոնալ օրենքի» կիրառման հետևանքով: Այս կապակցությամբ նա հիշատակում է 1985 թ. մարտի 22-ին ընդունված թիվ 15.737 օրենքի 25-րդ հողվածը, որը նախատեսում է, որ «Թիվ 7 ինստիտուցիոնալ օրենքի» կիրառման հետևանքով աշխատանքից հեռացված բոլոր պետական ծառայողներն իրավունք ունեն վերականգնվելու իրենց համապատասխան պաշտոններում:

¶ 2.2. Հեղինակը պնդում է, որ թիվ 15.737 օրենքի 25-րդ հողվածն ավելի շատ իրավունքներ է տալիս նախկին պետական ծառայողներին, քան այլ անհատներին, ինչպիսին հենց ինքը՝ հեղինակն է, և, հետևաբար, այն խտրական բնույթ ունի և խախտում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25(գ) և 26-րդ հողվածները:

ՄԻԿ-ը բողոքը մերժեց դրա էության քննարկման փուլում.

¶ 10. Կոմիտեի առջև ծառացած հիմնական հարցն այն է, թե արդյոք հաղորդման հեղինակը տուժե՞լ է դաշնագրի 25(գ) հողվածի ոտնահարումից այն պատճառով, որ, ինչպես ինքն է հայտարարում, իրեն թույլ չեն տվել ընդհանուր հավասարության հիմունքներով հասնել պետական ծառայության: Հաշվի առնելով ռազմական իշխանության տարիներին Ուրուգվայում առկա սոցիալական և քաղաքական իրավիճակը, մասնավորապես՝ բազմաթիվ պետական ծառայողների աշխատանքից հեռացումը ըստ «Թիվ 7 ինստիտուցիոնալ օրենքի»՝ կոմիտեն հասկանում է 1985 թ. մարտի 22-ին Ուրուգվայի նոր ժողովրդավարական իշխանության կողմից թիվ 15.737 օրենքի ընդունումը՝ որպես իրավունքների վերականգնման միջոց: Իսկապես, կոմիտեն նկատում է, որ Ուրուգվայի այն պետական ծառայողները, ովքեր աշխատանքից հեռացվել էին գաղափարախոսական, քաղաքական կամ արհմիութենական հիմքերով, տուժել են դաշնագրի 25-րդ հողվածի ոտնահարումներից և, այդպիսով, դաշնագրի 2-րդ հողվածի 3(ա) կետով ճանաչված իրավունքների արդյունավետ վերականգնման իրավունք ունեն: Օրենքը հարկ է դիտել որպես իրավունքների վերականգնման միջոց: Այս օրենքի կենսագործումը, հետևաբար, չի կարող համարվել դաշնագրի 25(գ) հողվածում հիշատակված «հավասարության ընդհանուր պայմաններ» դրույթին: Ի լրումն՝ օրենքի կիրարկումը չի

⁴⁸ Պարբ. 6.6: Տե՛ս նաև «*Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի*» (*Lindgren et al v Sweden, 298–99/88*), պարբ. 10.4:

⁴⁹ Տե՛ս նաև մասնավոր բանտերի վերաբերյալ ՄԻԿ-ի մեկնաբանություններն այստեղ՝ [9.135–9.137]:

⁵⁰ Ձոգե՛ք, վերը, ծնթ. 12, էջ 556:

կարող համարվել կողմնակալ տարբերակում 2-րդ հոդվածի 1-ին կետով կամ խտրականություն՝ դաշնագրի 26-րդ հոդվածի ձևակերպմամբ⁵¹:

[22.51] *Ստալա Կոստայի* գործը պետական ծառայության անցնելու հնարավորության առնչությամբ հարուցում է քաղաքական հայացքների հիմքով խտրականության հարցեր և ցույց է տալիս, որ նման խտրականությունը 25-րդ հոդվածով արգելված է⁵²: Այս թեմայի առնչությամբ ուշադրություն դարձրեք նաև ՄԻԿ-ի՝ Էստոնիայի վերաբերյալ հետևյալ մեկնաբանություններին⁵³:

¶ 14. Կոմիտեն մտահոգված է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների որևէ պաշտոնում նշանակման կամ աշխատանքի պայմանները, մասնավորապես՝ այն անձանց մեքենայորեն հեռացումը, ովքեր անկարող են բավարարելու մախկինում (մախորդ վարչախմբի օրոք) իրենց իրականացրած գործունեության վերաբերյալ գրավոր ներկայացվող խղճի երդման պահանջները, կարող է հանգեցնել առանց խտրականության պետական ծառայության անցնելու հնարավորություն ունենալու իրավունքի չհիմնավորված սահմանափակման:

Այնուամենայնիվ, բոլոր պետություններում պետական ծառայությունում որոշակի նշանակումները կրում են տվյալ թեկնածուի քաղաքական հայացքների ազդեցությունը. նման պաշտոններից է, օրինակ, որևէ պետության գաղտնի ծառայության ղեկավարի պաշտոնը⁵⁴: ՄԻԿ-ը երբեք չի նշել, թե նման տարբերակումները թույլատրելի են⁵⁵, չնայած վիճելի է, որ նման տարբերակումները 25-րդ հոդվածով ճանաչված իրավունքների հիմնավորված և արդարացված սահմանափակումներ են:

[22.52] «ՄԱԶՈՒՆ ընդդեմ ԿԱՄԵՐՈՒՆԻ» (MAZOU v CAMEROON, 630/95)

Չեղինակը դատավոր էր Կամերունում: 1984 թ., առանց որևէ ապացույցի, նրան մեղավոր են ճանաչել իր հետապնդվող եղբորը թաքցնելու համար (ով կասկածվում էր հեղաշրջման փորձում ներգրավված լինելու մեջ) և դատապարտել են հինգ տարի ժամկետով ազատազրկման: 1987 թ. հունիսի 2-ին՝ իր բանտարկության ընթացքում, մախագահի հրամանագրով նրան պաշտոնապես հեռացրել են իր պաշտոնից: Չետագա փաստերը նկարագրված են անմիջապես ստորև.

¶ 2.3. 1990 թ. ապրիլի 23-ին հեղինակին բանտից ազատ արձակեցին, սակայն նրան իր ծննդավայր Յագուայում [Yagoua]՝ երկրի հեռավոր հյուսիսային շրջանում, ենթարկեցին տնային կալանքի: Կիրառված սահմանափակումները չվերացվեցին մինչև 1991 թ. ապրիլի վերջը, երբ 1991 թ. ապրիլի 23-ին ընդունվեց «Համաներման մասին» օրենք (թիվ 91/002): Հաղորդումը կոմիտեին հանձնելու օրը, այնուամենայնիվ, մախագահի 1987 թ. հունիսի 2-ի հրամանագիրը մնում էր ուժի մեջ, և հեղինակին չէին թույլատրել կրկին ստանձնել իր պարտականությունները:

¶ 2.4. 1991 թ. հունիսի 12-ին հեղինակը խնդրագիր ներկայացրեց երկրի մախագահին՝ վերականգնելու իրեն քաղաքացիական ծառայության մեջ: 1991 թ. հուլիսի 18-ին նա դիմում ներկայացրեց արդարադատության մախարարություն՝ խնդրելով չեղյալ հայտարարել մախագահի 1987 թ. հունիսի 2-ի հրամանագիրը: Չստանալով որևէ պատասխան՝ նա 1991 թ. սեպտեմբերի 9-ին իրավունքների դատական վերականգնման համար դիմեց գերագույն դատարանի վարչական ստորաբաժանմանը՝ խնդրելով վճռել, որ նշված հրամանագիրը ապօրինի է և հետևաբար պետք է չեղյալ հայտարարվի: Չեղինակը մատնանշում է, որ չնայած գերագույն դատարանը պարբերաբար վճիռներ է կայացրել այն մասին, որ նման հրամանագրերը պետք է չեղյալ հայտարարվեն, 1994 թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ հայցը դեռևս չէր բավարարվել:

¶ 2.5. 1992 թ. մայիսի 4-ին ընդունվեցին թիվ 92/091 և թիվ 92/092 հրամանագրերը, որոնք սահմանում էին այն անձանց պաշտոններում վերականգնման և վնասների փոխհատուցման պայմանները, ում վրա տարածվել էր «Համաներման մասին» օրենքը:

¶ 2.6. 1992 թ. մայիսի 13-ին հեղինակն իր պաշտոնում վերականգնվելու համար դիմել է արդարադատության մախարարություն: Թիվ 92/091 հրամանագրի համաձայն՝ նրա դիմումը փոխանցվել է այն կոմիտեին, որը պատասխանատու էր քաղաքացիական ծառայության մեջ անձանց վերականգնումը քննարկելու համար: 1993 թ. մայիսի 12-ին

⁵¹ Տե՛ս նաև [23.73]:

⁵² Տե՛ս նաև «Ադուայոմ ընդդեմ Տոգոյի» (Aduayom v Togo, 422-424/90) գործը:

⁵³ Եզրափակիչ դիտարկումներ Էստոնիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 59, պարբ. 14:

⁵⁴ Նովակ, վերը, ծնթ. 1, էջ 451:

⁵⁵ Իսկապես, տե՛ս Գերմանիայի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումներն այստեղ՝ [22.53]:

այդ կոմիտեն հրապարակել է իր տեսակետը, որով հավանություն է տվել հեղինակի վերականգնմանը քաղաքացիական ծառայության մեջ: Այդուհանդերձ, ըստ հեղինակի, նախարարությունն այս տեսակետի հիման վրա որևէ գործողություն չի ձեռնարկել:

¶ 2.7. 1992 թ. սեպտեմբերի 22-ին հեղինակը գերագույն դատարանի վարչական ստորաբաժանմանը դիմել է վարույթ սկսելու համար՝ վիճարկելու թիվ 92/091 և թիվ 92/092 հրամանագրերը: Նրա կարծիքով՝ հրամանագրերը 1991 թ. ապրիլի 23-ին ընդունված «Համաձայնեցման մասին» օրենքի ամբողջական կիրարկման արգելք դառնալու փորձ են, որը, ըստ հեղինակի պնդման, նախատեսում էր աշխատանքում մեխանիկորեն վերականգնում: Հեղինակի հաղորդման ներկայացման ժամանակ այս դիմումի պատասխանը նույնպես դեռ չէր ստացվել: ...

¶ 2.10. Իր հաղորդումը հանձնելուց ի վեր, այդուհանդերձ, հեղինակի համար իրավիճակը զգալիորեն բարելավվել է. 1998 թ. ապրիլի 16-ին նրան վերականգնել են իր պաշտոնում՝ համաձայն գերագույն դատարանի 1997 թ. հունվարի 30-ի վճռի. դրանով չեղյալ է հայտարարվել թիվ 87/747 հրամանագիրը, որի հիման վրա նրան հեռացրել էին իր պաշտոնից:

Չնայած այս վերականգնմանը՝ հեղինակը բողոքել է, որ Կամերունը ոտնահարել է և շարունակում է ոտնահարել 25-րդ հոդվածի (գ) կետը:

¶ 7.2. Նախ՝ հեղինակը հաստատում է, որ ինքը փաստացի վերականգնվել է արդարադատության նախարարությունում, և ղեկավարությունն իսկապես վճարել է իր աշխատավարձը՝ հաշվարկված 1987 թ. ապրիլի 1-ից:

¶ 7.3. Այսուհանդերձ, հեղինակը համարում է, որ նախարարության ղեկավարությունը լիովին չի ընկալել գերագույն դատարանի 1997 թ. հունվարի 30-ի վճռի նշանակությունը: Նկատի առնելով այն, որ այդ վճռի արդյունքներն հետադարձ ուժ ունեին, հեղինակը կարծում է, որ ինքն իր կարիերայի վերականգնման իրավունք ունի, այսինքն՝ վերականգնվի այնպիսի ավելի բարձր պաշտոնում, որը նա կզբաղեցներ, եթե աշխատանքից չհեռացվեր: Թեև այս նպատակին հասնելու համար արդարադատության նախարարությանն ուղղված նրա դիմումներին, հեղինակին դեռևս որևէ որոշման մասին չեն տեղեկացրել:

ՄԻԿ-ը պաշտպանեց հեղինակի բողոքը.

¶ 8.4. Ինչ վերաբերում է հեղինակի այն հայտարարություններին, թե մասնակից պետությունը խախտել է դաշնագրի թե՛ 2-րդ հոդվածը և թե՛ 25-րդը, ապա կոմիտեն կարծում է, որ գործի քննությունը գերագույն դատարանում, որը հանգեցրել է 1997 թ. հունվարի 30-ի վճռին, որով բավարարվել է հեղինակի հաղորդման մեջ ներկայացված դիմումը, անհիմն կերպով ուշացվել է՝ տեղի ունենալով ավելի քան 10 տարի այն բանից հետո, ինչ հեղինակին հեռացրել էին իր աշխատանքից, և դատարանի վճռին չի հետևել աշխատատեղում հաստատելուց հետո հեղինակի կարիերայի վերականգնումը, ինչի իրավունքը իրավական տեսանկյունից նա ուներ՝ հաշվի առնելով 1997 թ. հունվարի 30-ին ընդունված չեղյալ հայտարարելու մասին վճիռը: Հետևաբար, նման դատական գործընթացը չի կարող համարվել իրավունքների վերականգնման բավարար միջոց՝ դաշնագրի 2-րդ և 25-րդ հոդվածների իմաստով:

¶ 9. Այսպիսով, մասնակից պետությունը պարտավոր է հաղորդման հեղինակին վերականգնել նրա կարիերայում՝ Կամերունի օրենսդրությամբ դրան ուղեկցող բոլոր արդյունքներով հանդերձ, և պետք է ապահովի, որ նմանօրինակ ոտնահարումներ ապագայում չկրկնվեն:

[22.53] Հոդված 25(գ)-ին վերաբերող բոլոր վճռված գործերը հաստատել են, որ այն երաշխավորում է ոչ միայն պետական ծառայության հասանելիություն, այլև պետական ծառայության աշխատատեղի պահպանում՝ այլոց հետ հավասար պայմաններով⁵⁶: Գերմանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը վերահաստատեց, 25-րդ հոդվածին համապատասխանելու տեսանկյունից, հստակ օրենքների կարևորությունը, որոնք կսահմանեն պետական ծառայությունում պաշտոնավարման պայմանները⁵⁷:

⁵⁶ Տե՛ս նաև «Չիրա Վարգաս Մաչուկան ընդդեմ Պերուի» (*Chira Vargas Machuca v Peru*, 906/00) գործը, «Տորո Գեդումբեն ընդդեմ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության» (*Toro Gedumbe v Democratic Republic of the Congo*, 641/95) գործը, «Պաստուխովն ընդդեմ Բելառուսի» (*Pastukhov v Belarus*, 814/98) գործը, «Բուսյոն և այլք ընդդեմ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության» (*Busyo et al v Democratic Republic of the Congo*, 933/00) գործը, պարբ. 5.2 և «Մուձո-Յոս Էրմոսան ընդդեմ Պերուի» (*Muñoz Hermosa v Peru*, 203/86) գործով պրն Վեններգրենի որոշումը (մեծամասնությունն այս գործի վերաբերյալ որոշում կայացրեց 14-րդ հոդվածով [14.58]):

⁵⁷ Եզրափակիչ դիտարկումներ Գերմանիայի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 73, պարբ. 17:

¶ 17. Կոմիտեն մտահոգություն է հայտնում այն մասին, որ նախկին ԳԴՀ-ի (Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն) պետական ծառայողներին, ներառյալ՝ դատավորներին և ուսուցիչներին, աշխատատեղերում պահելու կամ աշխատանքից հեռացնելու խնդիրը գնահատելու համար օգտագործվող չափանիշները հստակ չեն և դավանած կամ արտահայտած քաղաքական հայացքների հիման վրա զբաղվածությունից զրկելու հնարավորություն են տալիս: Ուստի կոմիտեն առաջարկում է, որ նախկին ԳԴՀ-ի պետական ծառայողներին աշխատանքից հեռացնելու չափանիշները դառնան ավելի ճշգրիտ, որպեսզի որևէ պետական ծառայող աշխատանքից չհեռացվի իր դավանած կամ արտահայտած քաղաքական հայացքների համար:

[22.54] «*Դելգադո Պաեսն ընդդեմ Կոլումբիայի*» (*Delgado Páez v Colombia, 195/85*) գործով ՄԻԿ-ը որոշեց, որ «[հեղինակի] անձի նկատմամբ մշտական հետապնդումները և սպառնալիքները (որոնց առնչությամբ մասնակից պետությունը պաշտպանություն չտրամադրեց) հեղինակի կողմից դասավանդումը՝ որպես պետական ծառայություն, շարունակելը դարձրել են անհնար»⁵⁸: Այսպիսով, ՄԻԿ-ը համարեց, որ տեղի է ունեցել հոդված 25(գ)-ի խախտում:

[22.55] «*Կալն ընդդեմ Լեհաստանի*» (*Kall v Poland, 552/93*) գործի փաստերը ցույց են տալիս, որ մինչև 1990 թ.՝ կոմունիստական իշխանության տարիներին, հեղինակը պետական ծառայողի պաշտոն է ունեցել: 1990-ին հեղինակի պաշտոնը դասակարգվել է որպես գաղտնի ոստիկանության մի մաս: Գաղտնի ոստիկանությունը 1990 թ. լուծարվել է, և այդպիսով հեղինակը կորցրել է իր աշխատատեղը: Հեղինակը հայտարարում էր, որ իր աշխատատեղի կորուստը հանգեցրել է հոդված 25(գ)-ի խախտման: Հեղինակը չկարողացավ բավարար ապացույցներ տրամադրել՝ ցույց տալու համար, որ մասնակից պետության կողմից իրեն շարունակաբար այլ պաշտոնում վերստին աշխատանքի չվերցնելը եղել է, ինչպես ինքն էր պնդում, խտրականություն իր ծախ ուղղվածության քաղաքական հայացքների համար⁵⁹: Թե՛ հեղինակը և թե՛ կոմիտեն համաձայնեցին, որ գաղտնի ոստիկանության կազմալուծումը, որի հետևանքով շատերը կորցրին իրենց աշխատանքը, չի հակասել հոդված 25(գ)-ին: Կոմիտեն ընդունեց մասնակից պետության փաստարկը, որ գաղտնի ոստիկանության կազմալուծումն անհրաժեշտ էր՝ օժանդակելու համար պետության «հիմնովին քաղաքական փոխակերպմանը»՝ ներկայացուցչական ժողովրդավարության և վերականգնելու համար «ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը»⁶⁰:

Հասարակական կյանքին մասնակցության հարցում համակարգային անհավասարության շտկումը

[22.56] Հասարակական կյանքին ոչ լիարժեք մասնակցությունը տվյալ թերմերկայացված խմբի համար հանգեցնում է նշանակալի և շարունակական անբարենպաստ վիճակի. թերմերկայացված խմբերի քաղաքական շահերը հաճախ մարգինալացվում և արհամարհվում են: Կանանց նկատմամբ խտրականության կոմիտեն հրապարակել է մի Ընդհանուր հանձնարարական, որն անդրադառնում է «քաղաքական և հասարակական կյանքում» կանանց նկատմամբ խտրականությանը, ինչն արգելվում է ԿՆԽՎԿ-ի 7-րդ և 8-րդ հոդվածներով⁶¹:

ԿՆԽՎԿ ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

¶ 13. Կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքն ամրագրվել է երկրների մեծ մասի սահմանադրություններում և օրենքներում և բոլոր միջազգային իրավական գործիքներում: Այդուհանդերձ, վերջին 50 տարիներին կանայք չեն հասել հավասարության, իսկ նրանց և տղամարդկանց անհավասարությունը խորացել է քաղաքական և հասարակական կյանքում կանանց մասնակցության ցածր մակարդակի հետևանքով: Տղամարդկանց կողմից միայնակ մշակվող քաղաքականությունները և ընդունվող որոշումները արտահայտում են մարդկային փորձի

⁵⁸ Պարբ. 5.1: Այս գործի վերաբերյալ տե՛ս նաև [11.03]:

⁵⁹ Տե՛ս պարբ. 13.6:

⁶⁰ Տե՛ս պարբ. 7.2 և 13.3:

⁶¹ 7-րդ հոդվածը պետություններից պահանջում է շտկել սեռի հատկանիշով խտրականությունը պետության ներսում՝ համայնքների քաղաքական և հասարակական կյանքում: Այն ըստ էության երաշխավորում է 25-րդ հոդվածով ճանաչված իրավունքների նման իրավունքներ հատուկ կանանց համար: 8-րդ հոդվածը պետություններից պահանջում է շտկել սեռահեն խտրականությունը միջազգային կառույցներում ներկայացվածության տեսանկյունից: Տե՛ս նաև թիվ 28 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 29:

և ներուժի միայն մի մասը: Հասարակության արդարացի և արդյունավետ կազմակերպումը պահանջում է դրա բոլոր անդամների ներգրավում և մասնակցություն:

¶ 14. Ոչ մի քաղաքական համակարգ կանանց չի օժտել լիարժեք և հավասար մասնակցության իրավունքով և չի շնորհել դրա ընձեռած օգուտները: Չնայած ժողովրդավարական համակարգերը բարելավել են կանանց՝ քաղաքական կյանքում ներգրավվելու հնարավորությունները, այն բազմաթիվ տնտեսական, սոցիալական և մշակութային արգելքները, որոնց շարունակում են բախվել կանայք, լրջորեն սահմանափակել են նրանց մասնակցությունը: Նույնիսկ պատմականորեն կայուն ժողովրդավարությունները չեն կարողացել լիարժեք և հավասարապես ինտեգրել բնակչության իգական կեսի տեսակետները և շահերը: Այն հասարակությունները, որոնցում կանայք դուրս են մղված հասարակական կյանքից և որոշումների կայացման գործընթացից, չի կարելի բնութագրել որպես ժողովրդավարական: Ժողովրդավարության գաղափարը իրական և դիմամիկ իմաստ և երկարատև ազդեցություն կունենա միայն այն ժամանակ, երբ քաղաքական որոշումների կայացման գործընթացին համատեղ մասնակցեն կանայք և տղամարդիկ, և եթե հավասարապես հաշվի առնի երկու սեռի շահերը: Մասնակից պետությունների զեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ գոյություն ունի կանանց լիարժեք և հավասար մասնակցություն հասարակական կյանքին և որոշումների կայացման գործընթացին, բարելավվում է վերջիններիս իրավունքների իրականացումը և համապատասխանությունը կոնվենցիային:

Ժամանակավոր հատուկ միջոցներ

¶ 15. *Ղե յուրե* արգելքների վերացումն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Կանանց լիարժեք և հավասար մասնակցության հասնելու անկարողությունը կարող է միտումնավոր չլինել, այլ հետամնաց գործելակերպերի ու ընթացակարգերի արդյունք լինել, որոնք ոչ դիտավորյալ կերպով առաջ են մղում տղամարդկանց: 4-րդ հոդվածով կոնվենցիան խրախուսում է ժամանակավոր հատուկ միջոցների օգտագործումը, որպեսզի 7-րդ և 8-րդ հոդվածները լիարժեք գործեն: Այն դեպքերում, երբ երկրները, հավասար մասնակցության հասնելու նպատակով, մշակել են արդյունավետ ժամանակավոր ռազմավարություններ, իրականացրել են միջոցառումների մի մեծ շարք, ներառյալ՝ կին թեկնածուների հավաքագրումը, նրանց ֆինանսական աջակցությունը և ուսուցումը, ընտրական ընթացակարգերի լրամշակումը, հավասար մասնակցությանն ուղղված քարոզարշավների կազմակերպումը, քանակապես չափելի նպատակների և քվոտաների սահմանումը, պետական պաշտոններում, օրինակ՝ դատական համակարգում կամ բոլոր հասարակությունների ամենօրյա կյանքում էական դեր խաղացող այլ մասնագիտական խմբերում կանանց նպատակային նշանակումը: Իրենց հասարակությունների համրային կյանքում տղամարդկանց և կանանց հավասար մասնակցությունը խրախուսելուն ուղղված ժամանակավոր հատուկ միջոցների ներդրումը և արգելքների պաշտոնական վերացումը քաղաքական կյանքում ճշմարիտ հավասարության հասնելու էական նախապայմաններ են: Այնուամենայնիվ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել հասարակական կյանքում արական սեռի՝ դարեր տևած գերակայությունը, կանայք նաև հասարակության բոլոր հատվածների աջակցության և նրանց կողմից խրախուսման կարիքն ունեն՝ հասնելու համար լիարժեք և արդյունավետ մասնակցության: Խրախուսում, որի առաջնորդը պետք է լինեն կոնվենցիայի մասնակից պետությունները, ինչպես նաև քաղաքական կուսակցությունները և պետական պաշտոնյաները: Մասնակից պետությունները պարտավորություն ունեն, այն է՝ ապահովել, որ ժամանակավոր հատուկ միջոցները մշակվեն՝ հավասարության սկզբունքին հստակ օժանդակելու համար և հետևաբար համապատասխանեն սահմանադրական սկզբունքներին, որոնք երաշխավորում են բոլոր քաղաքացիների հավասարությունը:

Ամփոփում

¶ 16. Խնդիրը, որն ընդգծված է Պեկինի գործողությունների պլատֆորմում [Beijing Platform for Action]⁶², *ղե յուրեի* և *ղե ֆակտոյի* միջև գոյություն ունեցող անջրպետն է կամ իրավունքը՝ ի հակադրություն քաղաքականության մեջ և հասարակական կյանքում կանանց մասնակցության իրական պատկերի: Հետազոտությունները ցույց են տալիս, որ եթե կանանց մասնակցության աստիճանը հասնում է 30-35 տոկոսի (այն ընդհանրապես անվանում են «կրիտիկական զանգված»), իրական ազդեցություն է արձանագրվում քաղաքականության ոճի և որոշումների բովանդակության վրա, իսկ քաղաքական կյանքը վերածնվում է:

¶ 17. Հասարակական կյանքում լայն ներկայացվածության հասնելու համար կանայք պետք է քաղաքական և տնտեսական իշխանություն ունենալու հարցում վայելեն լիարժեք հավասարություն: Նրանք պետք է լիարժեք և հավասարապես ներգրավված լինեն թե՛ ներպետական և թե՛ միջազգային ասպարեզներում որոշումների կայացման բոլոր մակարդակներում, որ կարողանան իրենց նպաստը բերել հավասարության, զարգացման և խաղաղության հասնելու նպատակներին: Գեներային խնդրին ուշադրություն դարձնելը վճռորոշ նշանակություն ունի, եթե ցանկանում ենք հասնել այս նպատակներին, և եթե պետք է ապահովվի ճշմարիտ ժողովրդավարություն: Ուստի

⁶² Report of the Fourth World Conference on Women, Beijing, 1995 թ. սեպտեմբերի 4-15 (A/CONF.177/20 և Add. 1), գլուխ I, բանաձև 1, հավելված I:

էական նշանակություն ունի կանանց ներգրավումը հասարակական կյանքում, որպեսզի հնարավոր լինի օգտվել նրանց բերած նպաստից, հավաստիանալ, որ նրանց շահերը պաշտպանված են, և իրագործել այն երաշխիքը, ըստ որի՝ բոլոր մարդիկ, անկախ սեռից, կարող են օգտվել մարդու իրավունքներից: Կանանց լիարժեք մասնակցությունն էական է ոչ միայն նրանց իրավագործման տեսանկյունից, այլև՝ ողջ հասարակության առաջընթացի:

Ինչ վերաբերում է պետությունների կողմից միջազգային կառույցներում կանանց նշանակմանը, ապա ԿՆԽՎԿ-ն ամրագրեց հետևյալը.

¶ 39. Ժամանակակից աշխարհի գլոբալացումը տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց ներգրավումը և միջազգային կազմակերպություններում նրանց մասնակցությունը դարձնում է ավելի ու ավելի կարևոր: Բոլոր միջազգային կառույցների օրակարգերում գենդերային խնդրի և կանանց իրավունքների ներառումը հրամայական է կառավարությունների համար: Համաշխարհային խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են խաղաղարարությունը և հակամարտությունների կարգավորումը, ռազմական ծախսերը և միջուկային սպառնալուծության կրճատումը, զարգացումը և շրջակա միջավայրի պահպանությունը, արտաքին օժանդակությունը և տնտեսական վերակառուցումը, բազմաթիվ կարևորագույն որոշումներ կայացվում են կանանց սահմանափակ մասնակցության պայմաններում: Սա խիստ տարբերվում է այս ոլորտներում ոչ կառավարական կազմակերպությունների մակարդակով նրանց մասնակցությունից:

¶ 40. Կանանց կրիտիկական զանգվածի ներգրավումը միջազգային բանակցություններում, խաղաղարար գործունեության մեջ, կանխարգելիչ դիվանագիտության, միջնորդական գործունեության բոլոր մակարդակներում, մարդասիրական օգնության, սոցիալական հաշտեցման բնագավառներում, խաղաղության նպատակով բանակցություններում և միջազգային քրեական դատարանի համակարգում կհանգեցնի տեսանելի փոփոխությունների: Զինված և այլ հակամարտությունների կարգավորման ընթացքում գենդերային տեսանկյունը և վերլուծությունն անհրաժեշտ են՝ հասկանալու համար կանանց և տղամարդկանց վրա դրանց ունեցած ազդեցության տարբերությունները:

ԿՆԽՎԿ-ի որոշ հատվածների գործողությունը կարելի է տարածել, որպեսզի դրանք հուշեն լուծումներ, թե ինչպես է տեղի ունենում որոշակի խմբերի քրոնիկական թերներկայացվածությունը, և ինչպես կարող է այն վերացվել: Քրոնիկական թերներկայացվածության պատճառներն ընդհանրապես նույնն են, ինչ կյանքի այլ բնագավառներում համակարգային անհավասարության պատճառները⁶³:

Եզրակացություն

[22.57] Հոդված 25(ա)-ն ընդհանրապես երաշխավորում է բոլոր մարդկանց՝ հաշվետու իշխանությունների կողմից ժողովրդավարական սկզբունքներով կառավարվելու իրավունքը: Այս առումով ՄԻԿ-ը 25-րդ հոդվածը մեկնաբանել է այնպես, որ այն տարածվի տարբեր տեսակի քաղաքական և ընտրական ավանդույթների վրա: 25-րդ հոդվածի (բ) և (գ) կետերը երաշխավորում են ավելի առանձնահատուկ իրավունքներ, ինչպիսիք են քվեարկելու իրավունքը և պետական պաշտոնի նշանակվելու իրավունքը: Քաղաքական իմաստալից մասնակցությանը վերաբերող առավել բարդ խնդիրների որոշ մասին ՄԻԿ-ը դեռևս չի անդրադարձել: Օրինակ՝ բոլոր համակարգերը կարծես թե ունեն համակարգային թերություններ, որոնք երկարաձգում են որոշակի վերնախավերի իշխանությունը: Անորոշ է այն, թե նման հիմնախնդիրներն ինչքանով կարող են շտկվել 25-րդ հոդվածով:

⁶³ Համակարգային անհավասարությունը քննարկվում է այստեղ՝ [23.87]ff:

Անխտրականության իրավունքներ. հոդվածներ 2(1), 3 և 26

• Խտրականության սահմանումը	[23.04]
• ՔՔԻՄԴ-ի անխտրականության դրույթների գործողության ոլորտը	[23.09]
• Խտրականության արգելված հիմքերը	[23.20]
• Անուղղակի խտրականություն	[23.31]
• Թույլատրելի տարբերակում	[23.41]
• Փոխհատուցողական գործողություններ	[23.68]
• Հակադարձ խտրականություն	[23.72]
• Մասնավոր հատվածում խտրականության հակազդմանն ուղղված միջոցներ	[23.80]
• Համակարգային անհավասարություն	[23.87]
• Կրթական պարտականություններ	[23.96]
• Խտրականության հետաքննություն	[23.100]
• Խտրականությունից տուժողների համար իրավական պաշտպանության միջոցներ	[23.101]
• Հավասարեցում՝ ըստ նվազագույն չափանիշի	[23.104]
• Հավասարությունն օրենքի առջև	[23.105]
• Եզրակացություն	[23.112]

ՀՈԴՎԱԾ 2

1. Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց՝ սույն դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրույթունից:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

ՀՈԴՎԱԾ 26

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրույթունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

[23.01] ՔՔԻՄԴ-ը խտրականության վերաբերյալ համապարփակ արգելք է բովանդակում 2-րդ հոդվածի 1-ին կետում և 26-րդ հոդվածում: Այդ երաշխիքներն ամրապնդում են 3-րդ հոդվածը (սեռական խտրականության արգելում), 4-րդ հոդվածի 1-ին կետը (շեղումների [derogations] առումով խտրականության

արգելում)¹ և 23-րդ, 24-րդ ու 25-րդ հոդվածները², որոնք երաշխավորում են անխտրականությունը՝ որոշակի նյութական [substantive] իրավունքների առումով: Վերջապես, կարելի է նշել, որ 20-րդ հոդվածը պահանջում է, որ պետություններն արգելեն խտրականության հրահրման տարբեր ձևերը³: Պնդում է արվում, որ «հավասարությունը և անխտրականությունը դաշնագրի միակ դոմինանտ թեման են»⁴: ՔՔԻՄԴ-ում անխտրականության խիստ շեշտադրումը տեղին է. խտրականությունը գործնականում ընկած է մարդու իրավունքների բոլոր ոտնահարումների հիմքում:

[23.02] խտրականության և ՔՔԻՄԴ-ի այլ ոտնահարումների միջև ամենաթափանց կապն է ցույց է դրված թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունում, որը վերաբերում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը:

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 13. Մասնակից պետությունները տեղեկություններ են տրամադրում կանանց հրապարակային հագուստի յուրաքանչյուր կանոնակարգման վերաբերյալ: Կոմիտեն շեշտում է, որ նման կանոնակարգումը կարող է խախտել դաշնագրով սահմանված մի շարք իրավունքներ, ինչպիսիք են 26-րդ հոդվածը անխտրականության վերաբերյալ, 7-րդ հոդվածը, եթե մարմնական պատիժ է սահմանվում նման կանոնակարգումը կիրարկելու նպատակով⁵, 9-րդ հոդվածը, երբ կանոնակարգմանը չհետևելը պատժվում է ազատազրկմամբ, 12-րդ հոդվածը, երբ տեղաշարժվելու ազատությունը ենթակա է նման սահմանափակման, 17-րդ հոդվածը, որը յուրաքանչյուրի համար երաշխավորում է կանայական կամ ապօրինի միջամտությունից զերծ անձնական կյանքի [privacy] իրավունք, 18-րդ և 19-րդ հոդվածները, երբ կանանց համար սահմանվում են հազուկապիս վերաբերող այնպիսի պահանջներ, որոնք չեն համապատասխանում նրանց կրոնին կամ ինքնարտահայտման իրավունքին և, վերջապես, 27-րդ հոդվածը, երբ հազուկապիս վերաբերող պահանջները հակասության մեջ են այն մշակույթի հետ, որին հավակնում է պատկանել այդ կինը:

[23.03] Միավորված ազգերի կազմակերպության երկու այլ համաձայնագրեր որոշակիորեն վերաբերում են խտրականությանը. 1966 թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (ՌԽՎՄԿ) և 1979 թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿՆԽՎԿ): Այդ կոնվենցիաները լրացուցիչ մանրամասնում են անխտրականության պարտավորությունների շրջանակը ռասայի և սեռի ոլորտում: Հարկ է ընդունել, որ ՄԻԿ-ը մեծապես ազդվել է ՌԽՎՄԿ-ի և ԿՆԽՎԿ-ի նախադեպերից ՔՔԻՄԴ-ի համապատասխան երաշխիքների իր մեկնաբանությունում, այնպես որ որոշ հղումներ կարվեն ՌԽՎՄԿ և ԿՆԽՎԿ համապատասխան կոմիտեների նախադեպային իրավունքին: Իսկապես, հնարավոր է, որ ՔՔԻՄԴ-ի պարտավորությունները խոշոր առումով ներառում են ՌԽՎՄԿ և ԿՆԽՎԿ պարտավորությունները և նշանակալիորեն առաջ են անցնում՝ խտրականությունն արգելելով ավելի մեծ թվով հիմքերով:

խտրականության սահմանումը

[23.04]

ԹԻՎ 18 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. Կոմիտեն կարծում է, որ «խտրականություն» եզրը, ինչպես այն գործածված է դաշնագրում, պետք է հասկացվի որպես ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախընտրություն՝ որևէ հիմքով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական պատկանելությունը, սեփականությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը, որը նպատակ ունի կամ որի հետևանքն է յուրաքանչյուր անձի՝ բոլոր իրավունքներից և ազատություններից հավասար հիմունքներով օգտվելու կամ դրանք իրականացնելու վերացումը կամ խաթարումը:

¶ 13. Վերջապես, կոմիտեն համարում է, որ վերաբերմունքի ամեն մի տարբերակում չէ, որ խտրականություն է, եթե

¹ Շեղումների վերաբերյալ տե՛ս գլուխ 25-ը:

² Տե՛ս, համապատասխանաբար, գլուխներ 20, 21 և 22:

³ Տե՛ս գլուխ 18:

⁴ B. Ramcharan, 'Equality and Non-Discrimination' in L. Henkin (ed), *The International Bill of Rights: The Covenant on Civil and Political Rights*, (Columbia University Press, New York 1981), 246:

⁵ Մարմնական պատժի վերաբերյալ տե՛ս [9.89–9.91]-ը:

ման տարբերակման չափանիշները ողջամիտ [reasonable] և օբյեկտիվ են, և եթե նշանակետն այնպիսի նպատակի հասնելն է, որն օրինական է դաշնագրով:

[23.05] 3-րդ հոդվածը երաշխավորում է կանանց և տղամարդկանց «հավասարության» իրավունքը: Արդյոք «հավասարությունը» «անխտրականությունից» նշանակալիորեն տարբերվո՞ղ հայեցակարգ է: Լեզվաբանական առումով՝ հավասարություն հասկացությունը թերևս ավելի մեծ թվով դրական պարտավորություններ է ներառում, քան «անխտրականություն» հասկացությունը⁶:

[23.06] «Ուոլդմանն ընդդեմ Կանադայի» (*Waldman v Canada, 694/96*) գործում մեղսագրվող խտրականությունը վերաբերում էր Հռոմի կաթոլիկ եկեղեցու դպրոցներին փոքրամասնություն կազմող այլ կրոնական խմբերի հանդեպ առավելություն տալուն [23.63]: 26-րդ հոդվածի խախտում արձանագրելով՝ ՄԻԿ-ը հաստատեց, որ երբ առավելություն ստացած խումբը համեմատական փոքրամասնություն է, անձը նույնքան խտրականության զոհ է, որքան որ երբ առավելություն ստացած խումբը մեծամասնություն է կազմում⁷:

[23.07] Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանությունը, որը պատրաստվել է ՌԽՎՄԿ-ի ներքո, հաստատում է, որ սեգրեգացիան խտրականության ձև է [23.95]: ՄԱԿ-ի մարմինները չեն ընդունի այն փաստարկը, որ սեգրեգացված խմբերը «բաժանված են, սակայն հավասար»⁸:

[23.08] Խտրականությունը կարող է արտահայտվել նաև վիրավորական խոսքով, որը խթանում է մարդկանց հանդեպ պարսավանքը [vilification] և ատելությունը՝ արգելված հիմքով: Առավել ակնհայտորեն ՔԲԻՄԴ-ի 20-րդ հոդվածը և ՌԽՎՄԿ-ի 4-րդ հոդվածն արգելում են ռասայական պարսավանքը և, վերջինիս պարագայում, պարսավանքը՝ կրոնական կամ ազգային հիմքով: Խտրականության ման դեպքերը քննարկված են 18-րդ գլխում, ինչը կապված է արտահայտման ազատության վրա դրանց ունեցած անժխտելի ազդեցության հետ⁹:

ՔԲԻՄԴ-ի անխտրականության դրույթների գործողության ոլորտը

[23.09] 2-րդ հոդվածի 1-ին կետը որոշակի հիմքերով արգելում է խտրականությունը դաշնագրի թվարկված հոդվածներն (այսինքն՝ հոդվածներ 6-27-ը) իրականացնելիս: 3-րդ հոդվածն ընդգծում է սեռական խտրականության արգելումը՝ երաշխավորելով, որ կանայք և տղամարդիկ հավասարապես օգտվեն դաշնագրի բոլոր իրավունքներից: 26-րդ հոդվածը զգալիորեն ավելի լայն ընդգրկում ունի, քան 2-րդ հոդվածի 1-ին կետը և 3-րդ հոդվածը. դա գալիս է հաստատելու հետևյալ գործը:

[23.10] «ԲՐՈԷԿՍՆ ԸՆԴԴԵՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (*BROEKS v THE NETHERLANDS, 172/84*)

Փաստերը բերված են անմիջապես ստորև.

¶ 2.3. Տիկին Բրուկսը պնդում է, որ ըստ գործող օրենսդրության («Գործազրկության նպաստի մասին» օրենքի (ԳՆՕ) բաժին 13-ի ենթաբաժին 1(1) և 1976 թ. ապրիլի 5-ի թիվ 61 452/IIIa որոշում, որն ուժի մեջ է մտցնում «Գործազրկության նպաստի մասին» օրենքի բաժին 13-ի ենթաբաժին 1(1)-ը)՝ սեռի և կարգավիճակի հիման վրա անթույլատրելի տարբերակում է տեղ գտել: Նա իր պնդումը հիմնավորում է հետևյալով. եթե ինքը տղամարդ լիներ, ամուսնացած թե չամուսնացած, խնդրո առարկա օրենսդրությունը իրեն չէր զրկի գործազրկության նպաստից: Սակայն քանի որ կին է և դիտարկվող ժամանակահատվածում ամուսնացած է եղել, օրենքն իրեն զրկում է գործազրկության նպաստից:

⁶ Lord Lester of Herne Hill QC and S. Joseph, 'Obligations of Non-Discrimination' in D. Harris and S. Joseph (eds), *The International Covenant on Civil and Political Rights and United Kingdom Law* (Clarendon Press, Oxford, 1995), 565: Դրական պարտավորությունների մասին ընդհանուր առմամբ տես [23.68] և հաջորդը: Տես նաև Ռամշարան, վերը, ծնթ. 4, 254:

⁷ Այնուամենայնիվ, տես «Թադմանն ընդդեմ Կանադայի» (*Tadman v Canada, 816/98*) գործը [3.05]:

⁸ Տես, օրինակ, ԱՄՆ գերագույն դատարանի վարած «Բրաունն ընդդեմ Կրթական խորհրդի» (*Brown v Board of Education, 347 US 483 (1954)*) արգասաբեր գործը:

⁹ Տես [18.47] և հաջորդը:

տից: Սա, ըստ հեղինակի պնդման, իրեն դարձնում է դաշնագրի 26-րդ հոդվածի խախտման գոհ՝ սեռի և կարգավիճակի հիման վրա: Նա պնդում է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածը նպատակ ունի անձանց պաշտպանություն տրամադրել դաշնագրում թվարկված որոշակի քաղաքացիական և քաղաքական իրավունքներից անդին:

Մասնակից պետությունը, ի պատասխան տիկին Բրուկսի մեղադրանքների, որ խախտվել է 26-րդ հոդվածը, մի շարք պատասխաններ է ներկայացրել:

¶ 4.1. 1985 թ. մայիսի 29-ի իր փաստարկման մեջ մասնակից պետությունն ընդգծել է, ի թիվս այլոց.

(ա) Սկզբունքը, որ սոցիալական ապահովության իրավունքի իրականացման մեջ խտրականության տարրերը պետք է վերացվեն, ամփոփված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածում՝ 2-րդ և 3-րդ հոդվածների հետ միասին:

(բ) Նիդեռլանդների Թագավորության կառավարությունը համաձայնել է իրականացնել այդ սկզբունքը՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի պայմանների համաձայն: Ըստ այդմ, մասնակից պետությունները պարտավորվում են իրենց ունեցած առավելագույն ռեսուրսների սահմաններում, առանձնապես և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ՝ աստիճանաբար հասնելու դաշնագրով ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը (հոդվ. 2, պարբ. 1):

(գ) Հնարավոր առավելագույն ռեսուրսների սահմաններում աստիճանական իրականացման գործընթացը Նիդեռլանդներում բավական հաջող է ընթանում: Իրավունքների իրականացման մեջ խտրականության դեռևս պահպանված տարրերն աստիճանաբար վերացվում են և կվերացվեն:

(դ) Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը մասնակից պետությունների պարտավորությունների կատարման միջազգային վերահսկողության սեփական համակարգն է ստեղծել: Մասնակից պետությունները պարտավորվել են Տնտեսական և սոցիալական խորհրդին զեկույցներ ներկայացնել իրենց ընդունած միջոցների և գրանցած առաջընթացի վերաբերյալ: Նիդեռլանդների Թագավորությունն իր առաջին զեկույցը ներկայացրել է 1983 թ.¹⁰: ...

¶ 8.3. Դաշնագրի 26-րդ հոդվածի գործողության ոլորտի կապակցությամբ մասնակից պետությունը առարկում է, ի թիվս այլոց, հետևյալ կերպ.

Նիդեռլանդների կառավարությունն այն կարծիքին է, որ դաշնագրի 26-րդ հոդվածն իրոք խտրականությունից խուսափելու պարտավորություն է ենթադրում, սակայն քաղաքացիական և քաղաքական իրավունքների ոլորտում այդ հոդվածը կարելի է վկայակոչել միայն դաշնագրի կամընտիր արձանագրությամբ, որը պարտադիր չէ, որ սահմանափակվի դաշնագրում տեղ գտած քաղաքացիական և քաղաքական իրավունքներով: Կառավարությունը կարող է, օրինակ, նախատեսել հարկային ոլորտում խտրականությանը վերաբերող բոլորի ընդունելիությունը կամընտիր արձանագրությամբ: Սակայն նա չի կարող ընդունել տնտեսական, սոցիալական կամ մշակութային իրավունքներից օգտվելուն վերաբերող բոլորի ընդունելիությունը: Իրավունքների վերջին դասը Միավորված ազգերի կազմակերպության այլ դաշնագրի առարկա է: Տիկին Բրուկսի բողոքը վերաբերում է սոցիալական ապահովության ոլորտի իրավունքներին, որոնք տեղավորվում են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի շրջանակներում: Դաշնագրի 2-րդ, 3-րդ և 9-րդ հոդվածներն այստեղ հատկապես տեղին են: Այդ դաշնագիրը պետությունների կողմից պարտավորությունների կատարման միջազգային մշտադիտարկման (մոնիթորինգի) սեփական համակարգը և սեփական մարմինն ունի և միտումնավոր անհատական բողոքների ընթացակարգ չի նախատեսում:

Կառավարությունը և՛ դաշնագրերի և՛ կամընտիր արձանագրության նպատակների հետ անհամատեղելի է համարում, որ սոցիալական ապահովության իրավունքին վերաբերող անհատական բողոքը, ինչպես նկարագրված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածում, դիտարկվի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից որպես կամընտիր արձանագրությամբ բերված անհատական բողոք՝ հիմնված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածի վրա:

Նիդեռլանդների կառավարությունը Տնտեսական և սոցիալական խորհրդին զեկույցներ է ներկայացնում այն հարցերի մասին, որոնք վերաբերում են սոցիալական ապահովության իրավունքի առնչությամբ իր պարտականությունների կատարմանը՝ համաձայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային

¹⁰ ՏՄՄԻՄԴ-ով ստանձնած պարտավորությունների կատարման մշտադիտարկումը ներկայումս իրականացնում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն [Committee on Economic, Social and Cultural Rights]:

դաշնագրի համապատասխան կանոնների: . . .

Եթե Մարդու իրավունքների կոմիտեն կարծում է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածը պետք է ավելի լայն մեկնաբանություն ունենա, այնպես, որ այդ հոդվածը կիրառելի լինի սոցիալական ապահովության ոլորտում խտրականությանը վերաբերող բողոքների պարագայում, ապա կառավարությունը նկատում է, որ այդ դեպքում 26-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի նաև Միավորված ազգերի կազմակերպության այլ համեմատելի կոնվենցիաների լույսի ներքո, որոնք սահմանում են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում խտրականության դեմ պայքարելու և այն վերացնելու պարտավորություններ: Կառավարությունը հատկապես մատնացույց է անում Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան և Կանադացի կատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան:

Եթե Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածը կիրառելի համարվեր այդ կոնվենցիաների ոլորտում ազգային օրենսդրության մեջ խտրականության տարրերին վերաբերող բողոքների դեպքում, ապա դա վստահաբար չէր կարող նշանակել, որ մասնակից պետությունը դաշնագրի վավերացման պահին այդ ոլորտներում իր օրենսդրությունից պետք է վերացրած լիներ խտրականության բոլոր հնարավոր տարրերը: Տարիների աշխատանք է պահանջվում խտրականության տարրեր գտնելու նպատակով ազգային օրենսդրության ողջ համակարգն ուսումնասիրելու համար: Նմանապես, այդ որոնումը երբեք հնարավոր չէ ավարտին հասցնել, քանի որ օրենսդրության մեջ տեղ գտնող տարբերակումները, որոնք, երբ դրանք առաջին անգամ մտցվում են, կարելի է արդարացի գերակայող սոցիալական հայացքներով ու պայմաններով և կարող են վիճելի դառնալ, երբ հասարակության մեջ հայացքների փոփոխություններ տեղի ունենան: . . .

Եթե Մարդու իրավունքների կոմիտեն որոշի, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածը պարտավորություններ է ենթադրում տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներին առնչվող օրենսդրության առումով, նման պարտավորությունները, կառավարության կարծիքով, չեն կարող լինել ավելին, քան պետությունների՝ դաշնագրի վավերացումից հետո իրենց ազգային օրենսդրությունը պարբերական ուսումնասիրության ենթարկելու պարտավորությունը, որի նպատակը խտրականության տարրերի հայտնաբերումն է և հայտնաբերելու դեպքում, պետության ռեսուրսների առավելագույն սահմաններում, դրանց վերացմանն ուղղված աստիճանական միջոցների ձեռնարկումը: Նման ուսումնասիրություններ Նիդեռլանդներում կատարվում են խտրականության ամենատարբեր դրսևորումների առնչությամբ, ներառյալ՝ խտրականությունը կանանց և տղամարդկանց միջև:

¶ 8.4. Ինչ վերաբերում է իր չփոփոխված տեսքով ՊՆՕ-ի 13-րդ բաժնի ենթաբաժին 1(1)-ի կապակցությամբ դաշնագրի 26-րդ հոդվածում շարադրված հավասարության սկզբունքին, մասնակից պետությունը պարզաբանում է ՊՆՕ-ի օրենսդրական պատմությունը և, մասնավորապես, «ընտանիքը կերակրողի» [‘breadwinner’] հայեցակարգի սոցիալական հիմնավորումն այդ օրենքի մշակման ժամանակ: Մասնակից պետությունը պնդում է, որ «ընտանիքը կերակրողի» հայեցակարգով «պատշաճ հավասարակշռություն է ապահովվել, մի կողմից, առկա պետական սահմանափակ միջոցների (ինչն առաջացնում է դրանց սահմանափակ, լավ կշռադատված և ընտրողական գործածության անհրաժեշտություն) և մյուս կողմից՝ կառավարության՝ սոցիալական ապահովություն տրամադրելու պարտավորության միջև»: Կառավարությունը չի ընդունում, որ «ընտանիքը կերակրողի» հայեցակարգը, որպես այդպիսին, «խտրական» է այն իմաստով, որ համանման դեպքերն օրենքի կողմից տարբեր վերաբերմունքի են արժանանում: Ավելին՝ պնդում է արվում, որ ՊՆՕ-ի դրույթները «հիմնված են սոցիալական և տնտեսական ողջամիտ նկատառումների վրա, որոնք ի բնե խտրական չեն: Սահմանափակումը, որը թույլ չի տալիս դիտարկվող դրույթը կիրառել տղամարդկանց նկատմամբ, ծագել է ոչ թե տղամարդկանց օգտին և ի վնաս կանանց խտրականություն մտցնելու ցանկությունից, այլ *դե ֆակտո* սոցիալական և տնտեսական իրավիճակից, որը գոյություն է ունեցել օրենքն ընդունելու ժամանակ և անիմաստ կդարձներ այդ դրույթը տղամարդկանց վրա տարածելը: Այն ժամանակ, երբ տիկին Բրուկսը դիմել է գործազրկության նպաստ ստանալու համար, *դե ֆակտո* իրավիճակն առանձնապես տարբեր չի եղել: Յետևաբար, դաշնագրի 26-րդ հոդվածի խախտում տեղ չունի: Ասվածի վրա չի ազդում այն փաստը, որ վերջին տարիներին սոցիալական նոր միտում է նկատվում, որն անցանկալի է դարձնում այդ դրույթն ուժի մեջ պահելը ներկա սոցիալական համատեքստում»:

Վիճարկվող օրենքն իրականում փոփոխության է ենթարկվել 1985 թ.՝ հետադարձ ուժ ունենալով մինչև 1984 թ. դեկտեմբերի 23-ը: Քանի որ տիկին Բրուկսին վճարումները դադարեցվել էին 1980 թվականից, փոփոխությունն ընդամենը մասնակիորեն է բավարարել նրա բողոքը:

ՄԻԿ-ն այս գործով ըստ էության որոշում կայացրեց հօգուտ տիկին Բրուկսի:

¶ 12.1. Մասնակից պետությունը պնդում է, որ 26-րդ հոդվածի դրույթները և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի դրույթները նշանակալիորեն համընկնում են:

Կոմիտեն այն կարծիքին է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն այնուամենայնիվ կիրառելի է, եթե նույնիսկ որոշակի թեմային հղում է կատարվում կամ այդ թեման տեղ է գտնում այլ միջազգային գործիքներում, օրինակ՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայում կամ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում կամ, ինչպես ներկա գործում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում: Չնայած երկու դաշնագրերի մշակման փոխադրական պատմությանը, կոմիտեն անհրաժեշտ է համարում ամբողջությամբ կիրառել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի պայմանները: Այդ կապակցությամբ կոմիտեն նկատում է, որ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի դրույթները չեն խանգարում Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածի ամբողջական կիրառմանը:

ՄԻԿ-ն այնուհետև նշում է, որ ՔՔԻՄԴ-ի նախապատրաստական փաստաթղթերը [*travaux préparatoires*] 26-րդ հոդվածի գործողության ոլորտի առումով վերջնական չէին:

¶ 12.3. 26-րդ հոդվածի գործողության ոլորտը սահմանելու նպատակով կոմիտեն հաշվի է առել հոդվածի յուրաքանչյուր տարրի «սովորական իմաստը»՝ դրա համատեքստում և դրա խնդրի և նպատակի լույսի ներքո (Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի [Vienna Convention on the Law of Treaties] 31-րդ հոդված):

Կոմիտեն նախ նշում է, որ 26-րդ հոդվածը պարզապես չի կրկնօրինակում 2-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսված երաշխիքները: Այն ածանցվում է առանց խտրականության օրենքի պաշտպանության սկզբունքից, ինչպես ձևակերպված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ հոդվածում, որն արգելում է օրենքով կամ գործնականում խտրականությունը պետական իշխանությունների կողմից կանոնակարգվող կամ պաշտպանվող որևէ ոլորտում: Այդպիսով, 26-րդ հոդվածը վերաբերում է պետությունների՝ օրենսդրությունների առումով սահմանված պարտավորություններին և դրանց կիրառմանը:

¶ 12.4. Թեև 26-րդ հոդվածը պահանջում է, որ օրենսդրությունն արգելի խտրականությունը, այն որևէ պարտավորություն չի պարունակում, որը կվերաբերեր օրենսդրությամբ նախատեսվող հարցերի: Այդպիսով, այն չի կարող, օրինակ, որևէ պետությունից պահանջել, որ այն ընդունի սոցիալական ապահովություն տրամադրող օրենսդրություն: Այնուամենայնիվ, երբ նման օրենսդրություն է ընդունվում պետության սուվերեն իշխանության կիրառության արդյունքում, ապա նման օրենսդրությունը պետք է համապատասխանի դաշնագրի 26-րդ հոդվածին:

¶ 12.5. Կոմիտեն այդ կապակցությամբ նկատում է, որ դիտարկվող հարցն այն չէ, թե սոցիալական ապահովությունը պետք է աստիճանաբար՝ իրականացվի Նիդեռլանդներում, թե՞ ոչ, այլ՝ արդյոք սոցիալական ապահովությունը նախատեսող օրենսդրությունը խախտում է խտրականության արգելքը, որը բովանդակում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածը, և խտրականության դեմ հավասար ու արդյունավետ պաշտպանության երաշխիքը, որը տրվում է յուրաքանչյուր անձի:

¶ 13. Օրենքի առջև հավասարության և օրենքով առանց որևէ խտրականության հավասար պաշտպանության իրավունքը վերաբերմունքի բոլոր տարբերությունները չի վերաժում խտրականության: Տարբերակումը, որը հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա, 26-րդ հոդվածի իմաստով արգելված խտրականություն չէ:

¶ 14. Հետևաբար, կոմիտեին մնում է որոշել, թե արդյոք Նիդեռլանդների օրենսդրության մեջ առկա տարբերակումը՝ դիտարկվող ժամանակահատվածում և կիրառված տիպին Բրուկսի հանդեպ, խտրականություն է 26-րդ հոդվածի իմաստով: Կոմիտեն նշում է, որ Նիդեռլանդների օրենսդրության մեջ Նիդեռլանդների քաղաքացիական օրենսգրքի 84-րդ և 85-րդ հոդվածների դրույթները ամուսինների համատեղ եկամտի առումով հավասար իրավունքներ և պարտականություններ են սահմանում երկու ամուսինների համար էլ: «Գործազրկության նպաստի մասին» օրենքի (ԳՆՕ) 13-րդ բաժնի ենթաբաժին 1(1)-ի համաձայն, որպեսզի ամուսնացած կինը ԳՆՕ-ի նպաստներ ստանա, պետք է ապացուցի, որ ինքը հանդիսանում «ընտանիքը կերակրողը»։ պայման, որը չի կիրառվում ամուսնացած տղամարդկանց նկատմամբ: Այդպիսով, տարբերակումը, որը մի մակարդակում հիմնված է կարգավիճակի վրա, փաստացի սեռի հիման վրա տարբերակում է, որն ամուսնացած կանանց դնում է ամուսնացած տղամարդկանց համեմատությամբ ավելի վատ դրության մեջ: Նման տարբերակումը ողջամիտ չէ, և դա, թերևս, ըստ էության ծանաչել է ինքը՝ մասնակից պետությունը՝ 1985 թ. ապրիլի 29-ին ուժի մեջ մտցնելով օրենքի փոփոխությունը, որը հետադարձ ուժ ունի մինչև 1984 թ. դեկտեմբերի 23-ը . . .

¶ 15. Հանգամանքները, որոնք առկա էին տիպին Բրուկսի նյութերի ներկայացման և այդ պահին դեռևս ուժի մեջ գտնվող Նիդեռլանդական օրենքի կիրառության ժամանակ, նրան դարձնում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածի՝ սեռի հիման վրա խախտման զոհ, որովհետև մերժել են նրան տղամարդկանց հետ հավասար սոցիալական ապահովության նպաստ տրամադրել:

¶ 16. Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը նպատակ չի ունեցել խտրականություն ցուցաբերել կանանց նկատմամբ, և զննահատանքով նշում է նաև, որ օրենսդրության մեջ տեղ գտած խտրական դրույթները, որոնք կիրառվել են տիկին Բրուկսի հանդեպ, ի վերջո վերացվել են: Թեև այդպիսով մասնակից պետությունը ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ այն խտրականությանը վերջ դնելու համար, որից տուժել է նաև տիկին Բրուկսը բողոքի ներկայացման ժամանակ, կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետությունը պետք է տիկին Բրուկսին պատշաճ փոխհատուցում առաջարկի:

[23.11]

ԹԻՎ 18 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բրուկսի գործով որոշումը շատ վիճահարույց էր¹¹: Սակայն այն օժանդակություն գտավ թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությունում, որում ՄԻԿ-ը նշում է հետևյալը.

¶ 12. Թեև 2-րդ հոդվածը այն իրավունքների շրջանակը, որոնք պետք է պաշտպանվեն խտրականությունից, սահմանափակում է դաշնագրով նախատեսվածներով, 26-րդ հոդվածը նման սահմանափակումներ չի սահմանում: Այսինքն՝ 26-րդ հոդվածը սահմանում է, որ բոլոր անձինք հավասար են օրենքի առջև, օրենքով առանց խտրականության հավասարապես պաշտպանվելու իրավունք ունեն, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն թվարկված որևէ հիմքով խտրականությունից: Կոմիտեի կարծիքով՝ 26-րդ հոդվածը պարզապես չի կրկնօրինակում 2-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսված երաշխիքը, այլ ինքնուրույն իրավունք է պարունակում: Այն արգելում է խտրականությունը օրենքում կամ գործնականում պետական իշխանությունների կողմից կանոնակարգվող կամ պաշտպանվող յուրաքանչյուր ոլորտում: Հետևաբար, 26-րդ հոդվածը վերաբերում է մասնակից պետությունների՝ նրանց օրենսդրության առումով սահմանված պարտավորություններին և դրանց կատարմանը: Այդպիսով, երբ մասնակից պետությունն օրենսդրություն է ընդունում, այդ օրենսդրությունը պետք է համապատասխանի 26-րդ հոդվածի պահանջին, ըստ որի՝ դրա բովանդակությունը չի կարող խտրական լինել: Այլ կերպ ասած՝ 26-րդ հոդվածի բովանդակած անխտրականության սկզբունքի կիրառությունը չի սահմանափակվում այն իրավունքներով, որոնք նախատեսված են դաշնագրով:

[23.12] 26-րդ հոդվածի «օրենքի առջև հավասարության» երաշխիքը հավասարություն է երաշխավորում օրենքի *կատարման* [enforcement] տեսանկյունից: Դատավորները կամ իրավական այլ վարչարարները օրենսդրությունը չպետք է կիրառեն կամայական կամ խտրական կերպով¹²: «Օրենքով հավասարապես պաշտպանվածության» երաշխիքը երաշխավորում է *դե յուրե* հավասարությունը, այնպես, որ օրենքը բոլորին իրավունքներ և պարտականություններ բաշխի՝ առանց խտրականության¹³: 26-րդ հոդվածում անխտրականությունը «օրենքից վեր սկզբունք է», որը սահմանագծում է հենց օրենքների օրինականությունը [legitimacy]¹⁴:

[23.13] 26-րդ հոդվածը կարելի է տարբերել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածից, որն անխտրականությունը երաշխավորում է միայն դաշնագրի այլ իրավունքների առումով: Ի հակադրություն՝ 26-րդ հոդվածը անխտրականության անկախ երաշխիք է, որը վերաբերում է բոլոր իրավունքներին: Բազմաթիվ գործեր հաստատել են *Բրուկսի* գործով որոշումը, որ 26-րդ հոդվածը խտրականությունից պաշտպանում է տնտեսական և սոցիալական իրավունքների, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքների առումով: Օրինակ՝ ՄԻԿ-ն ընդունելի է համարել *ՔԲԻՄԴ-ի* կողմից առանձին չերաշխավորված հետևյալ «իրավունքների» վերաբերյալ խտրականության մեղադրանքները. կենսաթոշակները («*Յոհաննես Վոսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Johannes Vos v Netherlands, 786/97*)), աշխատանքից ազատվելու նպաստը [severance pay] («*Վալենսուելան ընդդեմ Պերուի*» (*Valenzuela v Peru, 309/88*))), գործազրկության նպաստները («*Բրոեքսը, «Զվասան դե Վրիսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Broeks, Zwaan-de-Vries v Netherlands, 182/84*)), «*Կավալկանտի Արաուխո-Յոնգենն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Cavalcanti Araujo-Jongen v Netherlands, 418/90*)), «*Գարսիա*

¹¹ Տե՛ս M. Schmidt, 'The Complementarity of the Covenant and the European Convention on Human Rights—Recent Developments' այստեղ՝ Հարից և Ջոզեֆ (խմբ.-եր), վերը, ծմբ. 6, էջ 637–9: Տե՛ս նաև T. Opsahl, 'Equality in Human Rights Law with Particular Reference to Article 26 of the International Covenant on Civil and Political Rights', in M. Nowak, D. Steurer, and H. Tretter (eds), *Festschrift für Felix Ermacora* (N.P. Engel, Strasbourg, 1988), 51:

¹² M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 466–7: Այնքանով, որքանով այդ պարտականությունը վերաբերում է դատավորներին, այն արտացոլում է 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված «դատարանների առջև հավասարության» միևնույն իրավունքները (տե՛ս [14.10]): Տե՛ս նաև ստորև՝ [23.105] և հաջորդը:

¹³ Լեստեր և Ջոզեֆ, վերը, ծմբ. 6, 566:

¹⁴ Օփսալ, վերը, ծմբ. 11, 61:

Պոնսն ընդդեմ Իսպանիայի» (*García Pons v Spain*, 454/91), հաշմանդամության թոշակները («*Դանինգն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Danning v Netherlands*, 180/84), «*Վոսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Vos v Netherlands*, 218/86)), կրթաթոշակները (կրթական սուբսիդիաները) («*Բլոմն ընդդեմ Շվեդիայի*» (*Blom v Sweden*, 191/85), «*Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի*» (*Lindgren et al v Sweden*, 298–9/88), «*Ուոլդմանն ընդդեմ Կանադայի*» (*Waldman v Canada*, 694/96)), զբաղվածությունը («*Բվալյան ընդդեմ Զամբիայի*» (*Bwalya v Zambia*, 314/88), «*Վակենհայմն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Wackenheim v France*, 854/99)), վետերանների թոշակները («*Գուեյե և այլք ընդդեմ Ֆրանսիայի*» (*Gueye et al v France*, 196/85)), առողջության պետական ապահովագրությունը («*Շպրենգերն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Sprenger v Netherlands*, 395/90)), վերապրածների թոշակները («*Փաուգերն ընդդեմ Ավստրիայի*» (*Pauger v Austria*, 415/90), «*Պեպելսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Pepels v Netherlands*, 484/91), «*Հոոֆդմանն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Hoofdman v Netherlands*, 602/94), երեխաների նպաստները («*Ուլաջին և Կայսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Oulajin & Kaiss v Netherlands*, 406, 426/90)) և սեփականության իրավունքները («*Սիմունեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*» (*Simunek v Czech Republic*, 516/92), «*Ադամն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*» (*Adam v Czech Republic*, 586/94)): Փոքրամասնությունը որոշեց, որ «*Քինդլերն ընդդեմ Կանադայի*» (*Kindler v Canada*, 470/91) գործում «այլ երկրի հանձնվելուց ազատությունը» կարող է 26-րդ հոդվածով բողոքի հիմք լինել. մեծամասնությունն այս կետը չի մեկնաբանել¹⁵: Իրականում 26-րդ հոդվածին վերաբերող որևէ հաղորդում բացահայտ անընդունելի չի ճանաչվել համապատասխան «իրավունքը» (որի առումով ենթադրաբար տեղ է գտել խտրականությունը) վեր հանել չկարողանալու պատճառաբանությամբ:

[23.14] Այնուամենայնիվ, փոքրամասնության մի շարք կարծիքներ, որոնք մեջբերված են անմիջապես ստորև, մարտահրավեր են նետել *Բրոնքսի* գործով տեղ գտած հիմնավորմանը:

«ՇՊՐԵՆԳԵՐՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (SPRENGER v THE NETHERLANDS, 395/90)

Շպրենգերի գործում հեղինակը պնդում էր, որ Նիդեռլանդների գործազրկության նպաստներին վերաբերող օրենքը խտրական է իր հանդեպ իր ամուսնական կարգավիճակի պատճառով: ՄԻԿ-ն այս գործում, ի վերջո, ՔՔԻՄԴ-ի որևէ խախտում չգտավ [23.66]: Պարոնայք Անդոն, Հերմոլլը և Նդիայեն կցեցին հետևյալ մասնավոր կարծիքը 26-րդ հոդվածի գործողության ոլորտի վերաբերյալ.

Անկասկած, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն իրականությունը, որ սոցիալ-տնտեսական և մշակութային կարիքներն անընդհատ աճում են, այնպես որ օրենսդրությունը, մասնավորապես՝ սոցիալական ապահովության ոլորտում, կարող է բավական հետ մնալ և հաճախ հետ է մնում զարգացումներից: Համապատասխանաբար, դաշնագրի 26-րդ հոդվածը չպետք է մեկնաբանվի որպես այդ ոլորտում բոլոր ժամանակներում բացարձակ հավասարություն կամ անխտրականություն պահանջող. փոխարենը՝ դրան պետք է նայել որպես դաշնագրին մասնակից պետությունների՝ կանոնավոր կերպով իրենց օրենսդրությունը վերանայելու ընդհանուր նախաձեռնություն՝ ապահովելու, որ այն համապատասխանի հասարակության հարափոփոխ կարիքներին: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ոլորտում մասնակից պետությունը պարտավոր է հարգել դաշնագրի իրավունքները (ինչպիսիք են արդար դատաբնության իրավունքը, արտահայտման ազատության և կրոնի ազատության իրավունքները) անմիջապես դաշնագրի ուժի մեջ մտնելու օրվանից և պարտավոր է այդ անել առանց խտրականության: Մյուս կողմից՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում ներառված իրավունքների առնչությամբ հիմնականում համարվում է, որ մասնակից պետություններին ժամանակ է անհրաժեշտ՝ այդ իրավունքների աստիճանական իրականացման և համապատասխան օրենսդրությունը փոխելու հարմարեցնելու համար. ավելին՝ մշտական ջանքեր են անհրաժեշտ՝ ապահովելու համար, որ տարբերակումները, որոնք ողջամիտ և օբյեկտիվ էին սոցիալական ապահովությանը վերաբերող դրույթի ընդունման ժամանակ, հասարակության սոցիալ-տնտեսական էվոլյուցիայի արդյունքում չդառնան ոչ ողջամիտ և խտրական:

Վերջապես, մենք կարծում ենք, որ օրենսդրության վերանայումը բարդ գործընթաց է, որը բազմաթիվ գործոններ է ենթադրում, ներառյալ՝ սահմանափակ ֆինանսական ռեսուրսները և փոփոխությունների հնարավոր ազդեցությունը առկա այլ օրենքների վրա:

¹⁵ Տե՛ս [8.33]-ը՝ *Քինդլերի* գործի հանգամանքների մեկնաբանության համար: Տե՛ս նաև պրն Լալաիի հանձնկնող մասնավոր կարծիքը «*Ջաջն ընդդեմ Կանադայի*» (*Judge v Canada*, 829/98) գործում:

Փոքրամասնության համանման կարծիք էր արտահայտվել «Ուլաջինը և Կայսն ընդդեմ Նիդեռլանդների» (406, 426/90) գործում պարոնայք Յերնդլի, Մյուլլերսոնի, Նդիայեի և Սադիի կողմից¹⁶:

[23.15]

**«Ջ. Ֆ. Ու.-ն ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(J.H.W. v THE NETHERLANDS, 501/92)**

Այս գործում բողոքը վերաբերում էր ենթադրյալ սեռական խտրականությանը՝ եկամտահարկի գնահատման առումով: Գործը համարելով անընդունելի՝ ՄԻԿ-ը նշեց հետևյալը.

¶ 5.2. ... [Կ]ոմիտեն ի գիտություն է ընդունում, որ մասնակից պետությունը 1989 թ. միջոցներ է ձեռնարկել ներկա հաղորդման խնդրո առարկա հարկից ազատումը վերացնելու համար: Հաշվի առնելով, որ սոցիալական ապահովությանը վերաբերող օրենսդրությունը և դրա կիրառումը սովորաբար հետ են մնում հասարակության մեջ առկա սոցիալ-տնտեսական զարգացումներից և որ չեղյալ հայտարարված ազատումն իր ժամանակին ընդհանուր առմամբ խտրական չի համարվել, կոմիտեն համարում է, որ հաղորդման մեջ հեղինակի արծարծած հարցը վիճելի է, և հեղինակը կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածով որևէ պահանջ չի ներկայացրել:

[23.16] *Ջ. Ֆ. Ու.-ի* գործի հիմնավորումը չի համապատասխանում *Բրուկսի* գործում տեղ գտածին և որոշման ընդունման ժամանակ (1993 թ. հուլիս) կարող էր մեկնաբանվել որպես *Շպրենգերի* և *Ուլաջինի* և *Կայսի* գործերով ավելի պահպանողական փոքրամասնության կարծիքների ամրագրում: *Բրուկսի* գործով հիմնավորումը աջակցություն է ստացել ավելի ուշ ի հայտ եկած գործերում, ինչպիսին է «*Յո-հաննես Վոսն ընդդեմ Նիդեռլանդների*» (786/97) գործը, որում ամուսնացած տղամարդիկ պետք է ավելի բարձր տարիքի հասնեին, քան կանայք, որպեսզի կենսաթոշակի իրավունք ստանային: ՄԻԿ-ը 26-րդ հոդվածում ուղեկցող արձանագրեց, որը տեղ էր գտել կենսաթոշակային խտրական օրենքներում¹⁷: Իսկապես, խախտում արձանագրվեց, չնայած այդ դրույթները համապատասխանում էին Եվրոպական Միության օրենսդրությանը, որը սովորաբար շատ առաջադիմական է համարվում սեռական խտրականությանը վերաբերող հարցերում:

[23.17] *Բրուկսի* գործում տեղ գտած 26-րդ հոդվածի մեկնաբանությունը վիճահարույց է մնում: «*Վակեն-հեյմն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Wackenheim v France*, 854/99) գործում, որի առումով որոշումը կայացվել է *Բրուկսի* գործից ավելի քան տասնհինգ տարի անց, Ֆրանսիայի կառավարությունը ներկայացնում էր.

¶ 4.4. ... [Մ]ասնակից պետությունը շեշտում է, որ Պետական խորհուրդը [Council of State] այդ հոդվածում տեղ գտած անխտրականության վերաբերյալ կետը համարում է 2-րդ հոդվածի 1-ին կետի կրկնակը, և, ինչպես 2-րդ հոդվածի դեպքում, 26-րդ հոդվածի կիրառության ոլորտը սահմանափակվում է դաշնագրով պաշտպանված իրավունքներով:...

ՄԻԿ-ն արձագանքեց՝ կրկնելով, որ «26-րդ հոդվածում ներառված անխտրականության սկզբունքի կիրառումը չի սահմանափակվում այն իրավունքներով, որոնք սահմանված են դաշնագրով»¹⁸:

[23.18] Այն իրավունքի բնույթը, որին է կցված խտրականության վերաբերյալ պնդումը, կարող է ազդել ՄԻԿ-ի որոշման վրա, թե որքանով է տվյալ տարբերակումը ողջամիտ և, հետևաբար, դաշնագրով ընդունելի: ՄԻԿ-ը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների առումով շատ տարբերակումներ չի գտել, որոնք 26-րդ հոդվածի խախտումներ կլինեին: Սա կարող է լինել շատ բողոքներում էական հանգամանքների բացակայության պատճառով:

Կամ էլ խնդիրը կարող է լինել այն, որ ՄԻԿ-ն առավել հակված է համաձայնելու մասնակից պետության քաղաքականության հետ, երբ գործ է ունենում տնտեսական ոլորտում տեղ գտած խտրականության վերաբերյալ բողոքների հետ, ինչպես առաջարկում է պրն Անդոն «*Ադամն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*» (*Adam v Czech Republic*, 586/94) գործով ներկայացրած իր հատուկ կարծիքում [23.44]:

¹⁶ Տե՛ս նաև պրն Անդոյի որոշումը «*Լովն ընդդեմ Ավստրալիայի*» (*Love v Australia*, 983/01) գործում:

¹⁷ Պարբ. 7.6:

¹⁸ Պարբ. 6.6:

[23.19] Թե՛ ՌԽՎՄԿ-ի, թե՛ ԿՆԽՎԿ-ի 1-ին հոդվածը և այդ կոնվենցիաներում տեղ գտած այլ նյութական [substantive] իրավունքների մեծ մասը հաստատում են, որ երկու համաձայնագրերն էլ արգելում են համապատասխանաբար ռասայական և սեռական խտրականությունը՝ բոլոր քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների առումով¹⁹:

Խտրականության արգելված հիմքերը

[23.20] Երրորդ հոդվածն արգելում է սեռի հիման վրա խտրականությունը: Երկրորդ հոդվածի 1-ին կետը և 26-րդ հոդվածն ավելի առաջ են անցնում և թերևս ծածկում են 3-րդ հոդվածը: Երկու հոդվածն էլ խտրականության արգելված հիմքերի համանման թվարկում են պարունակում. ռասա, մաշկի գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային կամ սոցիալական պատկանելություն, սեփականություն, ծնունդ կամ «ցանկացած այլ կարգավիճակ»:

[23.21] «Վոսն ընդդեմ Նիդեռլանդների» (218/86) գործում ներկայացրած իրենց հատուկ կարծիքում պարոնայք Ագիլյար Ուրբինան և Վեններգրենը «այլ կարգավիճակի» իմաստի մասին նշում են հետևյալը.

¶ 1. Դաշնագրի 26-րդ հոդվածը մեկնաբանվել է որպես խտրականության դեմ պաշտպանություն տրամադրող, երբ օրենքները, որոնք տարբերակում են մտցնում մարդկանց խմբերի կամ դասերի միջև, չեն համապատասխանում օբյեկտիվ չափանիշներին: Հոդվածը մեկնաբանվել է նաև այն իմաստով, որ երբ վերաբերմունքի մեջ արտահայտվող տարբերությունը չի ազդում մարդկանց խմբի վրա, այլ միայն առանձին անհատների, դրույթը, որպես այդպիսին, չի կարող համարվել խտրական. մեկ անձի վրա թողած բացասական ազդեցությունը չի կարող դիտվել որպես խտրականություն 26-րդ հոդվածի շրջանակներում:

Ե՞րբ է անջատ մարդկանց խումբը դառնում առանձնացված խումբ՝ պայմանավորված ընդհանուր «կարգավիճակով»: Արդյոք ֆուտբոլային ակումբի կամ փիլիսոփայական ընկերության անդամները համարվո՞ւմ են առանձնացված խումբ:

[23.22] ՄԻԿ-ը «ցանկացած այլ կարգավիճակի» իմաստի վերաբերյալ մանրամասն, բոլորի կողմից ընդունելի մեկնաբանություն չի հրապարակել՝ նախընտրելով «գործ առ գործ» սկզբունքով որոշել՝ բողոքը խտրականության տեղի՞ն հիմք է վեր հանում, թե՞ ոչ:

[23.23] «ՎԱՆ ՕՐԴՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (VAN OORD v THE NETHERLANDS, 658/95)

Բողոքը, *ի թիվս այլոց*, վերաբերում է Նիդեռլանդների նախկին քաղաքացիների այն թոշակների կապակցությամբ տարբերակված վերաբերմունքին, որոնք մշանակվել են Նիդեռլանդների և այլ պետությունների միջև տարբեր երկկողմ համաձայնագրերի հիման վրա: ՄԻԿ-ը որևէ խախտում չի արձանագրել:

¶ 8.5. Այդ պնդման առնչությամբ կոմիտեն նկատում է, որ չի վիճարկվում հեղինակի՝ թոշակ ստանալու իրավունքը որոշող չափանիշների հավասարապես կիրառվելը ԱՄՆ-ում բնակվող Նիդեռլանդների բոլոր նախկին քաղաքացիների նկատմամբ: ... Ըստ հեղինակների՝ այն փաստը, որ Նիդեռլանդների նախկին քաղաքացիները, ովքեր ներկայումս բնակվում են Ավստրալիայում, Կանադայում կամ Նոր Զելանդիայում, օգտվում են [ավելի բարձր թոշակով արտահայտված] արտոնությունից, խտրականություն է պարունակում: Այնուամենայնիվ, կոմիտեն նկատում է, որ համեմատության մեջ դրվող մարդկանց դասերը տարբերակելի են [distinguishable], և խնդրո առարկա արտոնությունները [Յոլանդիայի թոշակները Նիդեռլանդների՝ արտասահմանում գտնվող քաղաքացիների համար] արձագանք են առանձին-առանձին բանակցված երկկողմ համաձայնագրերի, որոնք անհրաժեշտաբար արտացոլում են փոխադարձության վրա հիմնված պայմանագրերը: Կոմիտեն հիշեցնում է իր նախադեպային իրավունքը, ըստ որի՝ ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա հիմնված տարբերակումը 26-րդ հոդվածի իմաստով արգելված խտրա-

¹⁹ Տե՛ս, օր.՝ ՌԽՎՄԿ-ի հոդվ. 5(դ) և (ե):

կանություն չէ:

¶ 8.6. Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ փաստերը ... խնդիր չեն հարուցում դաշնագրի 26-րդ հոդվածով...

Վան Օրդի գործում ՄԻԿ-ը տվեց «այլ կարգավիճակների» սահմանման բանալին՝ ցույց տալով, որ անծին կարելի է մեկ այլ անծից տարբեր կերպ վերաբերվել, եթե վերջինիս կարգավիճակը համեմատաբար «տարբերակելի» է: Վան Օրդի գործում համապատասխան տարբերություններն ակնհայտորեն առկա էին Նիդեռլանդների՝ ԱՄՆ-ում բնակվող քաղաքացիների և այլ պետություններում բնակվող քաղաքացիների միջև՝ նրանց թոշակների առումով հարկային պարտավորությունների հաշվարկման տեսանկյունից: Այնուամենայնիվ, հավանական չէ, թե «համեմատաբար տարբերակելիության» պայմանը որևէ չափով ավելի հեշտ կիրառելի է, քան Վոսի գործում տեղ գտած «խմբի» պատկանելու պայմանը: Իսկապես, տարբերակման տեղին լինելը թերևս փոփոխվում է՝ կախված դիտարկվող «իրավունքից»: Օրինակ՝ թեև խելամիտ կարող էր լինել թոշակի հարկման տեսանկյունից տարբերությունը դնել Նիդեռլանդներից հեռացած անձանց արտասահմանում բնակության վայրերի միջև, նման անձանց միջև տարբերությունը դնելը թերևս անիմաստ կլիներ Նիդեռլանդներում ընտրություններին նրանց մասնակցելու իրավունքը պարզելու տեսանկյունից²⁰:

[23.24] Դաշնագրի անխտրականությանը վերաբերող դրույթների խախտման մասին բողոքների ընդունելիության տեսանկյունից ՄԻԿ-ն «այլ կարգավիճակներ» է համարել հետևյալը. տարիքը («Շմիտց դե Յոնգն ընդդեմ Նիդեռլանդների») (*Schmitz-de Jong v Netherlands, 855/99*)²¹, «Լովն ընդդեմ Ավստրալիայի» (*Love v Australia, 983/01*)²², ազգությունը («Գուեյե և այլք ընդդեմ Ֆրանսիայի») (*Gueye et al v France, 196/85*), «Ադամն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (*Adam v Czech Republic, 586/94*), «Կարակուրտն ընդդեմ Ավստրիայի» (*Karakurt v Austria, 965/00*)²³, ամուսնական կարգավիճակը («Դանինգն ընդդեմ Նիդեռլանդների») (*Danning v Netherlands, 180/84*), «Շպրենգերն ընդդեմ Նիդեռլանդների» (*Sprenger v Netherlands, 395/90*), «Հոոֆդմանն ընդդեմ Նիդեռլանդների» (*Hoofdmann v Netherlands, 602/94*), գաճաճությունը («Վակենհեյմն ընդդեմ Ֆրանսիայի») (*Wackenheim v France, 854/99*), պետության ներսում բնակության վայրը («Լինդգրեն և այլք ընդդեմ Շվեդիայի») (*Lindgren et al v Sweden, 298–99/88*)²⁴, տարբերակումը «վերցնովի» և «իսկական» երեխաների միջև («Ուլաջինը և Կայսն ընդդեմ Նիդեռլանդների») (*Oulajin & Kaiss v Netherlands, 406, 426/90*), պետական և մասնավոր դպրոցների սովորողների միջև տարբերությունը («Բլոմն ընդդեմ Շվեդիայի») (*Blom v Sweden, 191/85*), «Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի» (*Lindgren et al v Sweden, 298–99/88*), զբաղվածությունը ունեցող և գործազուրկ անձանց միջև տարբերությունը («Կավալկանտի Արաուխո-Յոնգենն ընդդեմ Նիդեռլանդների») (*Cavalcanti Araujo-Jongen v Netherlands, 418/90*)²⁵, տարբերությունը մարդկանց միջև, ովքեր իրենց պարտադիր ազգային ծառայությունը անցնում են զինված ուժերում և քաղաքացիական կարգավիճակով («Յարվինենն ընդդեմ Ֆինլանդիայի») (*Järvinen v Finland, 295/88*), «Ֆուայնն ընդդեմ Ֆրանսիայի» (*Foin v France, 666/95*) և ազգականներով ձևավորված տնային տնտեսությունների և այլոց կողմից ձևավորված տնային տնտեսությունների միջև տարբերությունը («Նիիֆսն ընդդեմ Նիդեռլանդների») (*Neefs v Netherlands, 425/90*):

[23.25] «Տոոնենն ընդդեմ Ավստրալիայի» (*Toonen v Australia, 488/92*) գործը վերաբերում էր, ի թիվս

²⁰ Տե՛ս նաև «Կարակուրտն ընդդեմ Ավստրիայի» (965/00) գործը [23.50]:

²¹ ՄԻԿ-ն ի վերջո որևէ խախտում չարձանագրեց՝ կապված տարեց քաղաքացիներին մշտական տոմսերի տրման տարիքային սահմանափակման հետ, որը կազմում էր 65 տարեկան և 60 տարեկան՝ մյուս ամուսնու համար: Հեղինակը 44 տարեկան կին էր և ամուսնացած էր 65-ն անց տղամարդու հետ:

²² Իր առարկող կարծիքում պրն Անդոն Ժյատուն էր, որ տարիքը, ՔՔԻՄԴ-ի համաձայն, «այլ կարգավիճակ» է, որովհետև «տարիքը վերագրելի է բոլոր մարդ արարածներին»:

²³ Ի հակադրություն՝ տե՛ս «Բ. Մ. Ս. ընդդեմ Ավստրալիայի» (*B.M.S. v Australia, CERD 8/96*), որում արտասահմանցի բժիշկների համար սահմանված քվոտային համակարգը չհամարվեց խտրական՝ ռասայի կամ ազգային պատկանելության հիմքով, քանի որ այն հավասարապես կիրառվում էր արտասահմանում կրթություն ստացած բոլոր բժիշկների նկատմամբ՝ անկախ նրանց ռասայից կամ ազգային պատկանելությունից (տե՛ս պարբ. 9.2):

²⁴ Այնուամենայնիվ, նկատի առնել, որ դաշնային պետության տարբեր մասերում վաղեմության ժամկետի մասին օրենքի [statute of limitations law] տարբերությունները 26-րդ հոդվածի առումով խնդիրներ չհարուցեցին «Հեսսենն ընդդեմ Ավստրալիայի» (*Hesse v Australia, 1087/02*) գործում՝ պարբերություն 4.2-ում:

²⁵ Ինչևէ, համամասն բողոքն անընդունելի համարվեց «Ջ. Ա. Մ. ընդդեմ Նիդեռլանդների» (*J.A.M.B.-R. v Netherlands, 477/91*) և «Ա. Փ. Լ. վ դ. Մ. ընդդեմ Նիդեռլանդների» (*A.P.L. v d.M. v Netherlands, 478/91*) գործերում:

այլոց, սեռական կողմնորոշման հիմքով խտրականության համար մեղադրանքին²⁶: ՄԻԿ-ը որոշեց, որ 2-րդ հոդվածի 1-ին կետում և 26-րդ հոդվածում «սեռի» հիշատակումը պետք է հասկանալ որպես սեռական կողմնորոշումը ներառող: Այնուամենայնիվ, «սեռական կողմնորոշումը» կարծես թե ավելի ճիշտ է դասակարգել որպես «այլ կարգավիճակ», քան անձի սեռի բաղկացուցիչ: «*Յանգն ընդդեմ Ավստրալիայի*» (*Young v Australia, 941/00*) գործում ՄԻԿ-ն ավելի հստակ հաստատեց, որ «սեռական կողմնորոշումը» խտրականության արգելված հիմք է դաշնագրով [23.67Ա]²⁷: Եզրափակիչ դիտարկումները նույնպես ցույց են տվել, որ հետևյալը «այլ կարգավիճակ» են, որոնք վայելում են ՔՔԻՄԴ-ի անխտրականության պաշտպանությունը. ընտանիքի պատասխանատվությունը²⁸, հղիությունը և ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով վարակված լինելը²⁹, հաշմանդամությունը³⁰ և ապօրինածնությունը³¹ (թեև վերջինս կիրառվում է «ծննդի»՝ որպես խտրականության արգելված հիմքի բացահայտ հիշատակությամբ):

[23.25Ա] ՔՔԻՄԴ-ում խտրականության ակնհայտ արգելված հիմքերը կրկնվում են ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ համաձայնագրերում: ՌԽՎՄԿ-ն արգելում է նաև խտրականությունը «ժառանգորդության» [‘descent’] հիմքով, ինչը, համաձայն ՌԽՎԿ-ի կողմից նրա թիվ 29 Ընդհանուր մեկնաբանության մեջ տրված սահմանման, ներառում է «համայնքների անդամների հանդեպ խտրականությունը՝ հիմնված սոցիալական շերտավորման ձևերի վրա, ինչպիսիք են կաստաները և ժառանգված կարգավիճակի համանման համակարգերը»: «ժառանգորդությունը» կարող է ծածկվել ՔՔԻՄԴ-ում «ծննդին» արված հղմամբ: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան 2-րդ հոդվածում արգելում է երեխաների նկատմամբ խտրականությունը հաշմանդամության հիման վրա [21.22]: Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին 1990 թ. միջազգային կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ 2003 թ. հուլիսի 1-ին, իր 1-ին և 7-րդ հոդվածներում «ազգությունը», «տարիքը» և «տնտեսական դրությունը» սահմանում է որպես խտրականության հավելյալ արգելված հիմքեր: Հավանական է, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ համաձայնագրերում թվարկված մյուս բոլոր հիմքերը տեղավորվում են ՔՔԻՄԴ-ի «այլ կարգավիճակների» շրջանակներում: Իսկապես, ասվածը հաստատվել է այդ հիմքերից մի քանիսի պարագայում, այն է՝ տարիքի, ազգության և հաշմանդամության [23.25]:

[23.26]

**«Հ. Ա. Է. Դ. Յ.-ն ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(H.A.E.D.J. v THE NETHERLANDS, 297/88)**

Հեղինակը գաղափարական նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարված անձ էր և այլընտրանքային քաղաքացիական ծառայություն էր անցնում: Նա բողոքում էր իրեն՝ որպես այլընտրանքային ծառայություն իրականացնողի, վճարվող կենսապահովման նպաստի [living allowance] և սովորական քաղաքացիներին վճարվող կենսապահովման նպաստի տարբերության դեմ: Հետևաբար, խտրականության ենթադրյալ հիմքը հեղինակի՝ որպես զինակոչի կարգավիճակն էր (թեև խոսքը այլընտրանքային ծառայության մասին էր) և սովորական քաղաքացիների կարգավիճակը:

¶ 8.2. Կոմիտեն նշում է, որ հեղինակը պնդում է, թե հանդիսանում է «այլ կարգավիճակի» հիմքով խտրականության

²⁶ *Տոնենի* գործի հանգամանքների համար տե՛ս [16.36]:

²⁷ Պարբ. 10.4. տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Ավստրիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 103, պարբ. 13: Եզրափակիչ դիտարկումներ Ձիմբաբվեի վերաբերյալ, (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 89, պարբ. 24: Եզրափակիչ դիտարկումներ Լեհաստանի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110, պարբ. 23: Եզրափակիչ դիտարկումներ Դոմինիկյան Հանրապետության վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/DOM, պարբ. 14:

²⁸ Եզրափակիչ դիտարկումներ Հոնկոնգի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 57, պարբ. 13 (այդ հիմքի վերաբերյալ անխտրականության դրույթներ չընդունելու քննադատություն): Այդ քննադատությունը կրկնվեց Հոնկոնգը Չինաստանի ժողովրդական Հանրապետությանը հանձնելուց հետո, այստեղ՝ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 117, պարբ. 15:

²⁹ ՄԻԿ-ը քննադատության է ենթարկել Տրինիդադ և Տոբագոյին՝ այդ հիմքերով խտրականությունը չարգելելու համար՝ ի լրումն «տարիքի» և «սեռական կողմնորոշման», այստեղ՝ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/70/TTTO, պարբ. 11:

³⁰ Տե՛ս Եզրափակիչ դիտարկումներ Իռլանդիայի վերաբերյալ (2000), ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, պարբ. 422–451, պարբ. 29(ե). հաշմանդամության հիմքով խտրականությանը վերաբերող բողոքը «*Ցիկլին ընդդեմ Կանադայի*» (*Cziklin v Canada, 741/97*) անընդունելի համարվեց դատական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու պատճառով:

³¹ Եզրափակիչ դիտարկումներ ՄԹ-ի արտասահմանյան տարածքների [UK’s Overseas Territories] վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/73/UKOT, պարբ. 30:

գոհ (դաշնագրի 26-րդ հոդվածն *ընդհանուր առմամբ* [in fine]), որովհետև, որպես զինվորական ծառայությունից զաղափարական նկատառումներով իրաժարված անձի, և այն ժամանակահատվածում, երբ նա այլընտրանքային ծառայություն է իրականացրել, նրան չեն վերաբերվել որպես քաղաքացիական անձի, այլ վերաբերվել են որպես զինակոչիկի, և այդպիսով նա չի կարողացել օգտվել «Ընդհանուր օգնության մասին» օրենքի [General Assistance Act] համաձայն տրամադրվող հավելյալ նպաստներից: Կոմիտեն նկատում է, ինչպես որ արել էր թիվ 245/1987 («Ռ. Տ. Ջ.-ն ընդդեմ Նիդեռլանդների») (R. T. Z. v the Netherlands) և թիվ 267/1987 («Մ. Յ. Գ.-ն ընդդեմ Նիդեռլանդների») (M. J. G. v the Netherlands) հաղորդումների կապակցությամբ, որ դաշնագիրը պետություններին չի արգելում պարտադիր զինվորական ծառայության ինստիտուտը, որը որոշակի համեստ դրամական վճարներ է ենթադրում: Սակայն անկախ այն հանգամանքից՝ պարտադիր ազգային ծառայությունն իրականացվում է որպես զինվորական ծառայություն, թե՞ որպես թույլատրված այլընտրանքային ծառայություն, անձին իրավունք չի վերապահվում վճարվել այնպես, ինչպես մասնավոր քաղաքացիական կյանք վարելիս: Կոմիտեն այդ կապակցությամբ նկատում է, ինչպես արել է թիվ 218/1986 («Վոսն ընդդեմ Նիդեռլանդների») հաղորդման կապակցությամբ, որ 26-րդ հոդվածի գործողության ոլորտը չի տարածվում այն տարբերությունների վրա, որոնք առաջ են գալիս սոցիալական ապահովության նպաստների տրամադրման գործում օրենքների համահավասար կիրառության արդյունքում: Սույն գործում ոչինչ չի խոստում այն մասին, որ «Ընդհանուր օգնության մասին» օրենքը հավասարապես չի կիրառվում այլընտրանքային ծառայություն իրականացնող բոլոր քաղաքացիների նկատմամբ: Այդպիսով, կոմիտեն եզրակացնում է, որ հաղորդումն անհամատեղելի է դաշնագրի դրույթների հետ և անընդունելի է կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածով:

«Ռ. Տ. Ջ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (R.T.Z. v Netherlands, 245/87) և «Մ. Յ. Գ.-ն ընդդեմ Նիդեռլանդների» (M.J.G. v Netherlands, 267/87) գործերի առնչությամբ ՄԻԿ-ն անընդունելի գտավ բողոքները, որ զինծառայողները չեն կարողանում բողոքարկել ռազմական դատարանների՝ դատարան ներկայանալու ծանուցագրերը [summonses], ի տարբերություն քաղաքացիական անձանց, որոնք կարող են բողոքարկել քաղաքացիական ծանուցագրերը: «Դրեյքը և Ջուլիանն ընդդեմ Նոր Զելանդիայի» (Drake and Julian v New Zealand, 601/94) գործում պատերազմից տուժած քաղաքացիական անձանց և զինվորականների միջև տարբերության վերաբերյալ բողոքը՝ թոշակային վճարումների նկատառումներով, նույնպես անընդունելի համարվեց:

[23.27] Արդյոք վերը բերված որոշումները ցոլյց են տալիս, որ «զինվորական» կարգավիճակը, ի հակադրություն «քաղաքացիական» կարգավիճակի, ՔԲԻՄԴ-ի նկատառումներով երբեք չի համարվում «այլ կարգավիճակ», եթե անգամ անձը չհիմնավորված վերաբերմունքի է արժանանում բացառապես իր զինվորական կարգավիճակի պատճառով: Դիտարկեք հետևյալ գործը.

«ՎՈՒՈԼԱՆՆ ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (VUOLANNE v FINLAND, 265/87)

Այս գործը մեծ հաշվով վերաբերում էր 7-րդ և 9-րդ հոդվածներով բերված մեղադրանքներին, որոնք առնչվում էին հեղինակի ռազմական կալանքի հետ կապված հանգամանքներին³²: Ըստ էության, իր հիմնավորման մեջ ՄԻԿ-ը նշում է.

¶ 9.3. Համաձայն 2-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց՝ սույն դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ հանգամանքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից»: Այս հոդվածի պայմանների համընդգրկուն բնույթը տեղ չի թողնում անձանց տարբեր դասերի միջև, ինչպիսիք են քաղաքացիական անձինք և զինվորականները, այն աստիճանի տարբերակում մտցնելու համար, որ դաշնագիրը մի դեպքում կիրառվի, իսկ մյուս դեպքում՝ ոչ:

[23.28] Կարելի է պնդել, որ «հիմքերի» հարցը վիճարկվող տարբերակման ընդունելիության կամ ողջամտության կողմերից մեկն է³³: «Խտրականության» սահմանումը՝ տրված թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությունում [23.04], «ցանկացած հիմքի» իր հիշատակմամբ պաշտպանում է այդ գաղափարը: Եթե այդպես է, ապա «հիմքերի» հարցը կարող է ամբողջովին կլանվել ողջամտության հարցով. ոչ ողջամիտ տարբերակումը կարող է 26-րդ հոդվածի խախտում առաջացնել՝ անկախ այն հատկանիշներից, որոնց

³² Տե՛ս [9.26]-ը և [11.58]-ը:

³³ Տե՛ս, օր.՝ փոքրամասնության կարծիքը «Նահլիկն ընդդեմ Ավստրիայի» (Nahlik v Austria, 608/95) գործում:

հիման վրա է մտցվել այդ տարբերակումը: «Հիմքերը» կարևոր են այնքանով, որ օգնում են հաստատել կամ ժխտել ողջամտությունը: Վերջերս կայացված որոշումները ցույց են տալիս, որ դա կարող է լինել ընդհանուր առմամբ ՄԻԿ-ի որդեգրած ռազմավարությունը³⁴:

[23.29] ՄԻԿ-ը տարբերակման որոշ հիմքեր թերևս համարում է ի բնե ավելի կասկածելի և ավելի մանրազնին դիտարկման արժանի, քան մյուսները³⁵: Այլ կերպ ասած՝ ինչպես երևում է, տարբերակման որոշ հիմքերի պարագայում ավելի հավանական է խախտումներ հայտնաբերել, քան այլ հիմքերի պարագայում: Ըստ էության, թերևս ավելի կարևոր է պաշտպանություն ապահովել որոշ «հիմքերով» խտրականությունից, ինչպիսիք են թվարկված հիմքերը³⁶ և «այլ կարգավիճակները», ինչպես, ասենք, ազգությունը, սեռը, տարիքը կամ հաշմանդամությունը, քան պաշտպանել այլ հիմքերով խտրականությունից, ինչպիսին է տարբերակումը պետական և մասնավոր դպրոցների սովորողների միջև: Ինչևէ, ամենակարևոր «հիմքերին» դժվար է ընդհանուր բնութագրիչներ վերագրել: Որոշ ամենակարևոր հիմքեր անփոփոխ են, ինչպես օրինակ՝ անձի ռասան կամ մաշկի գույնը: Անշուշտ, հատկապես կարևոր է, որ մարդը չենթարկվի խտրականության՝ կապված այնպիսի բնութագրիչների հետ, որոնք նա չի կարող փոխել: Սակայն այլ կարևոր հիմքեր մարդու էությունը ներհատուկ բնութագրիչներ են, ինչպիսիք են անձի կրոնը կամ քաղաքական հայացքները կամ նույնիսկ «սեփականությունը», եթե այդ եզրը հավասարության մեջ է դրվում «ունեցվածքի» կամ «դասի» հետ: Կարևոր «հիմքի» թերևս ամենաընդհանուր բնութագրիչն այն է, որ «հիմքը» նկարագրում է այնպիսի խումբ, որը պատմականորեն ենթարկվել է արդարացուն չունեցող խտրականության և, հետևաբար, հատկապես խոցելի է մեծ վերաբերմունքի դեպքում:

[23.30] Ինչպես նշված է ստորև, ՄԻԿ-ը, ըստ ամենայնի, խտրականության հստակ «հիմք» չի պահանջում, երբ բոլորը վերաբերում է «օրենքի առջև հավասարությանը»՝ 26-րդ հոդվածին [23.108]:

Անուղղակի խտրականություն

[23.31] Ուղղակի խտրականությունը ներառում է բոլորքողի նկատմամբ, արգելված հիմքերով, նվազ նպաստավոր վերաբերմունք, քան համեմատելի հանգամանքներում մեկ այլ անձի հանդեպ արտահայտված վերաբերմունքն է: Անուղղակի խտրականությունը տեղի է ունենում, երբ գործելակերպը, կանոնը, պահանջը կամ պայմանն արտաքինից չեզոք է, սակայն անհամաչափ ազդեցություն ունի որոշակի խմբերի վրա³⁷: Օրինակ՝ դիտարկենք այսպիսի մի հիպոթետիկ օրենք: Միայն վեց ոտնաչափից բարձր հասակ ունեցող մարդիկ կարող են հաճախել համալսարան: Այս օրենքն ուղղակի խտրականություն է՝ հասակի հիման վրա: Այն մասն անուղղակի խտրականություն է սեռի հիման վրա, քանի որ կանայք ընդհանուր առմամբ ավելի ցածրահասակ են, քան տղամարդիկ, և ավելի քիչ հավանական է, որ որպես խումբ՝ կհամապատասխանեն հասակի համար սահմանված չափանիշին:

[23.32] ՔՔԻՄԴ-ն արգելում է անուղղակի խտրականությունը: Ուշադրություն դարձրեք «խտրականության» սահմանմանը թիվ 18 Ընդհանուր մեկնաբանության մեջ.

«խտրականությունը» . . . պետք է հասկացվի որպես յուրաքանչյուր տարբերակում ... որևէ հիմքի վրա ... որը *նպատակ ունի կամ որի արդյունքն է* յուրաքանչյուր անձի՝ բոլոր իրավունքներից և ազատություններից հավասար հիմունքներով օգտվելու կամ դրանք իրականացնելու վերացումը կամ խաթարումը: [Շեղատառն ավելացված է:]

Անուղղակի խտրականությունը տեղի է ունենում, երբ խտրականությունն օրենքի «արդյունքն» է, ոչ թե երբ խտրականությունը օրենքի ցուցադրական «նպատակն» է:

[23.32Ա] ՄԻԿ-ն անուղղակի խտրականության անընդունելիությունն ամենից հստակ ձևակերպել է «Ալտհամերն ընդդեմ Ավստրիայի» (*Althammer v Austria, 998/01*) գործի առնչությամբ.

³⁴ Տե՛ս [23.61–23.67]-ը:

³⁵ A. Bayefsky, 'The Principle of Equality and Non-Discrimination in International Law' (1990) 11 *Human Rights Law Journal* 1, 18–24. Լեստեր և Ջոզեֆ, վերը, ծմբ. 6, 589–90:

³⁶ Այդ առումով տե՛ս «Մյուլլերը և Էնգելհարդն ընդդեմ Նամիբիայի» (*Müller and Engelhard v Namibia, 919/00*), պարբ. 6.7 [23.62]:

³⁷ Լեստեր և Ջոզեֆ, վերը, ծմբ. 6, 575:

¶ 10.2. ...Կոմիտեն հիշեցնում է, որ 26-րդ հոդվածի խախտումը կարող է նաև արդյունք լինել այնպիսի կանոնի կամ միջոցի խտրական ազդեցության, որն արտաքինից չեզոք է կամ խտրականության միտումնալից չունի: Սակայն նման անուղղակի խտրականության մասին կարելի է ասել, որ այն հիմնված է 26-րդ հոդվածում թվարկված հիմքերի վրա ... եթե կանոնի կամ որոշման վնասակար ազդեցությունը բացառապես կամ անհամաչափորեն ազդում է այն անձանց վրա, ովքեր պատկանում են յուրահատուկ ռասայի, ունեն յուրահատուկ մաշկի գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային կամ սոցիալական պատկանելություն, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակ: Ավելին՝ նման ազդեցություն ունեցող կանոնները կամ որոշումները խտրականություն չեն համարվում, եթե օբյեկտիվ կամ ողջամիտ հիմքեր ունեն....

[23.33] *Ալտհաների* գործի և Ընդհանուր մեկնաբանության տված սահմանումները նույնպես հաստատում են, որ արգելված խտրականությունը կարող է տեղ գտնել առանց դիտավորության կամ չարակամության³⁸: Սա բազմիցս է հաստատվել, ներառյալ՝ «Սիմունեկը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (*Simunek et al v Czech Republic, 516/92*) գործում:

¶ 11.7. Մասնակից պետությունը հակադարձում է, որ դաշնագրի խախտում տեղի չի ունեցել, քանի որ Չեխիայի և Սլովակիայի օրենսդիրները խտրականության որևէ դիտավորություն չեն ունեցել թիվ 87/1991 օրենքի ընդունման ժամանակ: Կոմիտեն, այնուամենայնիվ, այն կարծիքին է, որ միայն օրենսդրի դիտավորությունը չէ որոշիչ (դիսպոզիտիվ) դաշնագրի 26-րդ հոդվածի խախտում արձանագրելու հարցում: Քաղաքական շարժառիթներ ունեցող տարբերակումը դժվար թե համատեղելի լինի 26-րդ հոդվածի հետ: Սակայն որևէ օրենք, որը քաղաքական շարժառիթներ չունի, նույնպես կարող է հակասել 26-րդ հոդվածին, եթե դրա հետևանքները խտրական են:

[23.34] Հետևյալ գործը, այդուհանդերձ, ցույց է տալիս, որ ՄԻԿ-ի վրա կարող է ազդեցություն ունենալ այն փաստը, որ միջոցը խտրական է ոչ դիտավորությամբ:

«ՎԱԿԵՆՀԵՅՄԸ ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (*WACKENHEIM v FRANCE, 854/99*)

Հեղինակի բողոքը հետևյալն է.

¶ 2.1. Հեղինակը, ով գաճաճություն ունի, 1991 թ. հուլիսին սկսեց հայտնվել «գաճաճ նետելու» միջոցառումներում, որոնք կազմակերպում էր «Ջվարճալիքների արտադրության ընկերություն» [Société Fun-Productions] կազմակերպությունը: Հազնելով համապատասխան պաշտպանիչ հարմարանքներ՝ նա թույլ էր տալիս, որ միջոցառումն անցկացնող հաստատության (դիսկոտեկի) հաճախորդները կարճ տարածությունից իրեն շարժվելու փոխարեն փչովի ներքնակի վրա:

¶ 2.2. 1991 թ. նոյեմբերի 27-ին Ֆրանսիայի ներքին գործերի նախարարությունը մի շրջաբերական թողարկեց հանրային, մասնավորապես՝ գաճաճներ նետելու միջոցառումների ոստիկանական հսկողության վերաբերյալ, որով պրեֆեկտներին հրահանգում էր իրենց ոստիկանական լիազորություններն օգտագործել քաղաքապետներին ցուցումներ տալու համար, որ նրանք ուշադիր հետևեն իրենց համայնքներում բեմադրվող միջոցառումներին: Շրջաբերականում ասվում էր, որ գաճաճներ նետելը պետք է արգելվի, այլ պատճառների հետ միասին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա [որը, *ի թիվս այլոց*, արգելում է նվաստացնող վերաբերմունքը]:

Հեղինակն այնուհետև նկարագրում է վարչական և դատական գործընթացների շարքը, որի արդյունքում պահպանվել է գաճաճներ նետելու վրա դրված արգելքը.

¶ 2.6. ... Չնայած շարունակելու իր ցանկությանը՝ հեղինակն այդ ժամանակից ի վեր մնացել է անգործ, քանի որ ոչ ոք չի ցանկացել գաճաճ նետելու միջոցառումներ կազմակերպել:

¶ 3. Հեղինակը հաստատում է, որ իր աշխատանքի արգելումը վնասաբեր ազդեցություն է ունեցել իր կյանքի վրա և վիրավորանք է հասցնում իր արժանապատվությանը: Նա պնդում է, որ հանդիսանում է Ֆրանսիայի կողմից իր ազատության, զբաղվածության, մասնավոր կյանքի հանդեպ հարգանքի և աղեկվատ կենսամակարդակի իրավունքների խախտման և խտրականության ակտի զոհ: Նա հայտարարում է նաև, որ Ֆրանսիայում գաճաճների համար աշխատանք չկա, և իր աշխատանքը մարդկային արժանապատվության նվաստացում չէր, քանի որ արժանապատվությունն այն է, երբ աշխատանք ունես: . . .

³⁸ Տե՛ս նաև, օր., «*Բրուկսն ընդդեմ Նիդերլանդների*» (172/84), պարբ. 16:

¶ 5.2. Փաստաբանն ասում է, որ պրն Վակենհեյմի գործում սկզբունքային հարցերի շուրջ կայացված կարևոր որոշումները հիասթափեցնող են: Ֆրանսիայում հասարակական կարգի եռանդամ կառուցվածքին, ինչպես այն սովորաբար պատկերվում է՝ կարգուկանոն (անդորր), ապահովություն (անվտանգություն) և հանրային առողջություն, ավելացվել է չորրորդ բաղադրիչը՝ հանրային բարոյականությունը, որն ընդգրկում է մարդկային արժանապատվության հանդեպ հարգանքը: Այս տեսակի նախադեպային իրավունքը, XXI-րդ դարի արշալույսին, վերակենդանացնում է բարոյական կարգի հասկացությունը, նշում է փաստաբանը, որն ուղղված է այնպիսի մի գործունեության դեմ, որը և՛ լուսանցքային է, և՛ անվնաս, երբ համեմատում ենք այն իրապես բռնացող, ագրեսիվ վարքուբարքի բազմաթիվ ձևերի հետ, որոնք հանդուրժում է ժամանակակից ֆրանսիական հասարակությունը: Արդյունքը, շարունակում է փաստաբանը, նոր ոստիկանական լիազորություն սահմանելն է, որը սպառնում է դուռ բացել ամեն տեսակ չարաշահումների համար. մի՞թե քաղաքացիները դառնալու են հանրային բարոյականության գրաքննիչներն ու մարդկային արժանապատվության պաշտպանները: Մի՞թե դատարաններն են որոշելու մարդկանց երջանկությունը: Սինգ այժմ, ասում է փաստաբանը, դատարաններն ունակ են եղել հաշվի առնելու հանրային բարոյականության պաշտպանությունն այնքանով, որքանով այն աղերսներ է ունեցել հասարակական անդորրի հետ: Գաճաճների նետման միջոցառումների դեպքում, պնդում է փաստաբանը, այդ պահանջը չի բավարարվել:

ՄԻԿ-ը որոշում կայացրեց հոգուտ մասնակից պետության.

¶ 7.3. ... Ներկա գործում հարցն այն է, թե արդյոք մասնակից պետության դրած արգելքի տակ մտնող անձանց և այդ արգելքից զերծ անձանց միջև տարբերակումը կարելի՞ է պատշաճ կերպով հիմնավորել:

¶ 7.4. Մասնակից պետության կողմից նման նետումների վրա դրված արգելքը վերաբերում է միայն գաճաճներին (ինչպես նկարագրված է կետ 2.1-ում): Սակայն պատճառը, որ այդ անձինք ենթակա են արգելքին, երբ մյուսները բացառվում են, այն է, որ միայն այդ անձանց է հնարավոր է նետել: Այդպիսով, արգելքին ենթակա անձանց, այսինքն՝ գաճաճների, և այն անձանց, ում վրա արգելքը չի տարածվում, այսինքն՝ գաճաճություն չունեցողների միջև տարբերակումը հիմնված է օբյեկտիվ պատճառի վրա և իր նպատակով խտրական չէ: Կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը տվյալ գործում ցույց է տվել, որ գաճաճների նետման վրա (որ իրականացնում էր հեղինակը) սահմանված արգելքը վիրավորական միջոց չէ, այլ անհրաժեշտ է եղել հասարակական կարգը պաշտպանելու համար, ինչը մարդկային արժանապատվությանը վերաբերող հարցադրումներ է առաջ բերում, որոնք համատեղելի են դաշնագրի խնդիրների հետ: Կոմիտեն, համապատասխանաբար, եզրակացնում է, որ հեղինակի և այն անձանց միջև տարբերակումը, ում վրա մասնակից պետության սահմանած արգելքը չի տարածվում, հիմնված է օբյեկտիվ և ողջամիտ հիմքերի վրա:

¶ 7.5. Կոմիտեն տեղեկացված է այն փաստի վերաբերյալ, որ կան գործունեության այլ տեսակներ, որոնք արգելված չեն, սակայն կարող էին արգելված լինել այնպիսի հիմքերով, որոնք համանման են գաճաճների նետումների արգելքն արդարացրած հիմքերին: Այնուամենայնիվ, կոմիտեն այն կարծիքին է, որ ելնելով այն հանգամանքից, որ գաճաճների նետումների արգելքը հիմնված է օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա, և հեղինակը չի ապացուցել, որ այդ միջոցն իր նպատակով խտրական է, լոկ այն փաստը, որ կարող են լինել գործունեության այլ տեսակներ, որոնք ենթակա են արգելման, ինքնին բավարար չէ գաճաճների նետման արգելքին խտրական բնույթ վերագրելու համար: Այդ պատճառներից ելնելով՝ կոմիտեն համարում է, որ ներկա գործում մասնակից պետությունը, վերը նշված արգելքը սահմանելով, չի խախտել հեղինակի՝ դաշնագրի 26-րդ հոդվածում տեղ գտած իրավունքները:

[23.35] Դժբախտաբար, ՄԻԿ-ի նախադեպային իրավունքը հետևողական չի եղել անուղղակի խտրականության արգելման հարցում, ինչը երևում է հետևյալ գործերում:

[23.36]

«ՄԻՆԳԴ ԲՅԻՆԴԵՐՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(*SINGH BHINDER v CANADA, 208/86*)

Գործի փաստերը բերված են անմիջապես ստորև.

¶ 1. 1968 թ. հունիսի 6-ով թվագրված հաղորդման հեղինակը՝ Քարնել Սինգի Բինդերը, Կանադայի քաղաքացիություն ստացած մարդ է, որ ծնվել է Դնդկաստանում 1942 թ. և արտագաղթել Կանադա 1974-ին: Նա պնդում է, որ հանդիսանում է Կանադայի կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի խախտման զոհ: Դավանանքով լինելով սիքհ՝ նա իր առօրյա կյանքում գլխին չալմա է դրել և իրաժարվել է աշխատավայրում անվտանգությունն ապահովող սաղավարտ դնել: Դա հանգեցրել է նրա աշխատանքային պայմանագրի դադարեցմանը:

Կոմիտեն բողոքն ընդունելի համարեց և իր փաստարկներն ամբողջացրեց գործով ըստ էության որոշ-

ման մեջ.

¶ 6.1. Կոմիտեն նշում է, որ տվյալ գործի պարագայում օրենսդրությունը, որն արտաքնապես չեզոք է այն առումով, որ վերաբերում է բոլորին՝ առանց տարբերակման, ըստ պնդման՝ իրականում այնպես է գործում, որ խտրականություն է բանեցնում սիքի կրոնական դավանանքի տեր անձանց հանդեպ: Հեղինակը պնդում է, որ տեղի է ունեցել դաշնագրի 18-րդ հոդվածի խախտում: Կոմիտեն խնդիրը քննել է նաև դաշնագրի 26-րդ հոդվածի առնչությամբ:

Գործն ընդունելի համարելու որոշումը հաստատում է, որ անուղղակի խտրականությունը կարող է խախտել դաշնագիրը: Թեև պաշտպանիչ սաղավարտ դնելու պահանջը վերաբերում էր բոլոր համապատասխան աշխատողներին, այն անհամաչափորեն է ազդում սիքիերի վրա նրանց դավանանքի կիրառության տեսանկյունից: Սակայն հեղինակը գործը տանուլ տվեց՝ ըստ էության քննության արդյունքում³⁹:

**[23.37] «ԿԱՎԱԼԿԱՆՏԻ ԱՐԱՈՒԽՈՅՈՆՅՈՆԳԵՆՆ ԸՆԴՂԵՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(CAVALCANTI ARAUJO-JONGEN v THE NETHERLANDS, 418/90)**

ՄԻԿ-ի որոշակիորեն անհետևողական մոտեցումն անուղղակի խտրականության հարցին հստակ երևում է *Կավալկանտի* գործում: Փաստերը հետևյալն են: Հոլանդիայի օրենսդրության համաձայն՝ հեղինակին՝ որպես ամուսնացած գործազուրկ կնոջ, մերժվել է գործազրկության նպաստի հատկացումը 1983 թ. օգոստոսից մինչև 1984 թ. ապրիլ այնպիսի հանգամանքներում, երբ ամուսնացած գործազուրկ տղամարդն այդ նպաստը կստանար այդ ժամանակ Հոլանդիայի օրենսդրության մեջ առկա «ընտանիքը կերակրողի չափանիշի» շնորհիվ: Իրականում այդ օրենքը հաջողությամբ վիճարկվել է ՄԻԿ-ում *Բրուկս* գործով [23.10]: 1985 թ. «ընտանիքը կերակրողով» պայմանավորված տարբերակումը համապատասխան օրենսդրությունից հանվեց՝ հետադարձ ուժով մինչև 1984 թ. դեկտեմբերի 23-ը: Այդ ամսաթիվն ընտրվել է՝ համապատասխանելու համար Եվրոպական համայնքի համապատասխան դիրեկտիվին: Սակայն այդ ամենը տիկին Կավալկանտին չօգնեց:

¶ 3.5. Հեղինակը պնդում է, որ «Գործազրկության մասին» օրենքի (ԳՆՕ) խտրական դրույթների կիրառման հետևանքով վնաս է կրել այն առումով, որ իրեն չեն վճարվել ԳՆՕ նպաստները 1983 թ. օգոստոսից մինչև 1984 թ. ապրիլի 24-ն ընկած ժամանակահատվածում: Նա պահանջում է, որ այդ նպաստները տրվեն կանանց, տղամարդկանց հետ հավասար, 1979 թ. մարտի 11-ից ի վեր (այդ օրը դաշնագիրն ուժի մեջ է մտել Նիդեռլանդներում), իր դեպքում՝ 1983 թ. օգոստոսի 1-ից ի վեր՝ անկախ կառավարության ընդունած միջոցից, որով ամուսնացած կանանց հավասարապես տրվում է ԳՆՕ նպաստների իրավունք 1984 թ. դեկտեմբերի 23-ից:

1991 թ., մինչ բողոքը ՄԻԿ-ում սպասում էր լուծմանը, կատարվեցին օրենսդրության նոր փոփոխություններ:

¶ 5.2. Մասնակից պետությունը հայտնում է, որ ԳՆՕ-ի 13-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին ենթաբաժինը, որի վրա էր հիմնված հեղինակին գործազրկության նպաստ տրամադրելու մերժումը, վերացվել է 1985 թ. ապրիլի 24-ի օրենքով: Այնուամենայնիվ, այդ օրենքով սահմանվում էր, որ մինչ այդ օրը ուժի մեջ եղած օրենքը՝ ներառյալ վիճահարույց 13-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին ենթաբաժինը, շարունակում է գործել այն ամուսնացած կանանց նկատմամբ, ովքեր գործազուրկ են դարձել մինչև 1984 թ. դեկտեմբերի 23-ը: Քանի որ այդ անցումային դրույթները մեծապես քննադատվում էին, դրանք վերացվեցին 1991 թ. հունիսի 6-ի օրենքով: Արդյունքում այն կանայք, ովքեր անցյալում ընտանիքը կերակրողի չափանիշի պատճառով իրավունք չունեին օգտվելու ԳՆՕ գործազրկության նպաստներից, կարող են հետադարձ կերպով պահանջել այդ նպաստները՝ պայմանով, որ բավարարեն օրենքի մյուս պահանջները: Մյուս պայմաններից մեկն այն է, որ դիմողը պետք է դիմումը ներկայացնելու ժամանակ գործազուրկ լինի:

¶ 5.3. Հետևաբար մասնակից պետությունը պնդում է, որ եթե հեղինակը գործազուրկ է եղել ԳՆՕ-ի նպաստ ստանալու համար դիմում ներկայացնելու օրը, նա հետադարձ ուժով իրավունք կունենար ստանալու նպաստը՝ 1983 թ. փետրվարի 1-ից գործազուրկի իր կարգավիճակի հիման վրա: Սակայն քանի որ նա այլ աշխատանք է գտել 1984 թ. ապրիլից, ապա չի կարող ԳՆՕ-ի համաձայն ստանալ հետադարձ ուժով հատկացվող նպաստը: Մասնակից պետությունը շեշտում է, որ 1991 թ. հունիսի 6-ին օրենքի փոփոխությունից ի վեր հեղինակի՝ նպաստ ստանալու խոչընդոտն այլևս ընտանիքը կերակրողի չափանիշը չէ, այլ օրենքով սահմանված այլ պահանջները չբավարարելը, ո-

³⁹ Ըստ էության որոշման վերաբերյալ տե՛ս [17.17]-ը:

րոնք վերաբերում են բոլորին՝ կանանց և տղամարդկանց հավասարապես:

¶ 5.4. Մասնակից պետությունը հայտնում է, որ այդ առումով օրենքի փոփոխություն կատարելով՝ համապատասխանել է դաշնագրի 26-րդ հոդվածով սահմանված օրենքի առջև հավասարության սկզբունքին:

Տիկին Կավալկանտիի փաստաբանը պատասխանում է.

¶ 6.2. Փաստաբանը հայտնում է, որ նույնիսկ փոփոխված օրենքի համաձայն՝ հեղինակը, ով նոր աշխատանք է գտել, չի կարող ստանալ նպաստը, որն իրեն մերժել էին նախկինում: Այդ կապակցությամբ նա մատնանշում է, որ հեղինակն իր գործազրկության շրջանում չի դիմել նպաստը ստանալու համար, որովհետև այդ ժամանակ օրենքը նրան որևէ իրավունք չէր տալիս օգտվելու ՊՆԾ-ի նպաստներից: Հեղինակը նպաստի համար դիմել է այն բանից հետո, երբ 1984 թ. դեկտեմբերի 23-ից վերացվել է ընտանիքը կերակրողի պահանջը, սակայն այդ ժամանակ արդեն նոր աշխատանք էր գտել: Հետևաբար, պնդում է նա, ՊՆԾ-ի նշված դրույթի խտրական բնույթն իր համար չի վերացել, այլ դեռևս շարունակվում է:

ՄԻԿ-ին իր ըստ էության որոշումը կայացրեց հոգուտ մասնակից պետության.

¶ 7.4. Կոմիտեն համարում է, որ նույնիսկ եթե 1983 թ. ուժի մեջ գտնվող օրենքը չէր համապատասխանում դաշնագրի 26-րդ հոդվածի պահանջներին, թերությունը չտևել է 1991 թ. հունիսի 6-ի հետադարձ ուժ ունեցող փոփոխությամբ: Կոմիտեն ի գիտություն է ընդունում հեղինակի պնդումը, որ փոփոխված օրենքը շարունակում է ամուլղակի կերպով խտրականություն դրսևորել նրա հանդեպ, որովհետև պահանջում է, որ դիմողները դիմումը ներկայացնելու ժամանակ գործազուրկ լինեն, և այդ պահանջն ըստ էության զրկում է նրան նպաստներից հետադարձ ուժով օգտվելու հնարավորությունից: Կոմիտեն կարծում է, որ նպաստի համար դիմելու ժամանակ գործազուրկ լինելու պայմանը, որպես այդպիսին, ողջամիտ է և օբյեկտիվ՝ ելնելով դիտարկվող օրենսդրության խնդրից, որ է գործազուրկ անձանց օգնություն տրամադրելը: Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ իր տրամադրության տակ եղած փաստերը դաշնագրի 26-րդ հոդվածի խախտում չեն բացահայտում:

ՄԻԿ-ն այստեղ «ներկա զբաղվածության» վրա հիմնված տարբերակումը համարել է ողջամիտ և օբյեկտիվ և, հետևաբար, դաշնագրով ընդունելի: Սակայն ՄԻԿ-ը բացահայտ չի դիտարկել օրենքում թաքնված (լատենտ) գեղեցիկ վրա հիմնված որևէ տարբերակման «ողջամտությունը»: Օրենքը փաստորեն նաև ամուլղակի խտրականություն էր դրսևորում անուսնացած կանանց նկատմամբ: Որպեսզի նրանք հետադարձ ուժով գործազրկության նպաստ պահանջեին մինչև 1984 թ. դեկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածի համար, պետք է ներկայունս գործազուրկ լինեին: Նման որևէ սահմանափակում չէր կիրառվում անուսնացած տղամարդկանց նկատմամբ⁴⁰: Իրականում այս բողոքը կարող է ուղղակի խտրականություն վեր հանել անուսնացած կանանց հանդեպ: Կարելի է պնդել, որ «ընտանիքը կերակրողի» չափանիշը, որն ուղղակի խտրականություն էր առաջացնում անուսնացած կանանց հանդեպ, պարզապես փոխարինվել է «ներկա զբաղվածության» չափանիշով, որը կրկին ազդում է միայն անուսնացած կանանց վրա: Միակ տարբերությունն այն է, որ «ընտանիքը կերակրողի» օրենսդրական դրույթը բացահայտ վերաբերում էր միայն կանանց: Այդպիսով, *Կավալկանտիի* գործով որոշումը չի համապատասխանում *Բրուկսի* գործով որոշմանը:

[23.38] *Կավալկանտիի* գործում ՄԻԿ-ի հիմնավորմանը սատարում են վերջինիս որոշումները «*Վոսն ընդդեմ Նիդեռլանդների*» (218/86), «*Ջ.Ա.Մ.Բ.-Ռ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (*J.A.M.B.-R. v The Netherlands*, 477/91) և «*Ա.Փ.Լ.-վ դ. Մ.-ն ընդդեմ Նիդեռլանդների*» (478/91) գործերով: Այդ գործերում սոցիալական ապահովության օրենքների «միատեսակ կիրառությունը» հանգեցրել էր նրան, որ իգական սեռին պատկանող բողոքողները սոցիալական ապահովության ավելի քիչ նպաստներ էին ստացել, քան նույն դրության մեջ գտնվող տղամարդիկ: ՄԻԿ-ը պետք է ավելի շատ կենտրոնանար Հոլանդիայի համապատասխան օրենսդրության խտրական ազդեցության վրա, քան այդ օրենքների ֆորմալ առումով չեզոք կիրառության⁴¹:

⁴⁰ Տե՛ս ստորև՝ «ներկա զբաղվածության» չափանիշի կիրառության պատեհության և հիմնավորվածության քննարկման համար [23.59]:

⁴¹ Լեստեր և Ջոզեֆ, վերը, ծմբ. 6, 576:

[23.39]

**«ԲԱԼԱՆԹԱՅՆԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(BALLANTYNE et al v CANADA, 359, 385/89)**

Յեղիմակները բողոքում էին Քվեբեկի օրենքի դեմ, որն արգելում էր ոչ ֆրանսերեն առևտրային վահանակներ տեղադրել: ՄԻԿ-ը 26-րդ հոդվածի ուսմահարում չհայտնաբերեց⁴²:

¶ 11.5. Յեղիմակները պնդում են, որ խախտվել է օրենքի առջև հավասարության իրավունքը՝ ըստ 26-րդ հոդվածի: Քվեբեկի կառավարությունը հակադարձել է, որ թիվ 178 օրինագծի [Bill 178] 1-ին և 6-րդ բաժիններն ընդհանուր միջոցներ են, որոնք կիրառելի են բոլորի նկատմամբ, ովքեր զբաղվում են առևտրով՝ անկախ նրանց լեզվից: Կոմիտեն նշում է, որ թիվ 178 օրինագծի 1-ին և 6-րդ բաժիններն արգելում են առևտրային արտաքին գովազդը ոչ ֆրանսերենով: Այդ արգելքը վերաբերում է ֆրանսիախոսներին, ինչպես նաև անգլիախոսներին, այնպես որ ֆրանսիախոս անձը, ով ցանկանում է գովազդվել անգլերենով, որպեսզի հասնի իր հնարավոր հաճախորդներին, չի կարող այդ անել: Համապատասխանաբար, կոմիտեն կարծում է, որ հեղիմակների նկատմամբ խտրականություն չի դրսևորվել նրանց լեզվի հիման վրա, և եզրակացնում է, որ դաշնագրի 26-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Բալանթայնի գործում վիճարկվող օրենքը կարող է անուղղակի խտրականության օրինակ ծառայել: Բոլոր հեղիմակներն անգլիախոսներ են, ովքեր պնդում էին, որ իրենց հաճախորդների մեծ մասն անգլիախոս է: Եթե փաստերը ցույց տային, որ անգլիախոս առևտրականները շատ ավելի մեծ թվով անգլիախոս հաճախորդներ ունեն, քան ֆրանսիախոս առևտրականները, օրենքը, թերևս, ավելի ծանր ազդեցություն կունենար այդ անգլիախոս առևտրականների վրա: Իրականում հավանական է, որ *Բալանթայնի* գործում վիճարկվող օրենքն ուղղակի խտրականություն է լեզվի հիման վրա՝ իրեն ներհատուկ կողմնակալության պատճառով: ՄԻԿ-ի ավելի ուշ կայացրած որոշումը «*Դիերգաարդտն ընդդեմ Նամիբիայի*» (*Diergaardt v Namibia*, 760/97) գործով այդ առումով փաստացի տարբերվում է *Բալանթայնի* գործից [23.56]:

[23.40] Ռես կոմիտեն հաստատում է, որ ՌեսՎՄԿ-ն թիվ 14 Ընդհանուր հանձնարարականի մեջ (1993) արգելում է անուղղակի խտրականությունը ռասայի հիման վրա:

¶ 2. ... Որոշելիս, թե արդյոք տվյալ գործողությունն ունի՞ հետևանքներ, որոնք հակասում են դաշնագրին, կոմիտեն դիտարկում է, թե այդ գործողությունը չարդարացվող անհամեմատելի ազդեցություն ունի՞ ռասայի, գույնի, մաշկիների կամ ազգային կամ էթնիկ պատկանելության հատկանիշով կազմված խմբի նկատմամբ:

Օրինակ՝ 2000 թ. Ավստրալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում Ռես կոմիտեն նշում է հետևյալը⁴³.

¶ 16. Կոմիտեն մտահոգություն է հայտնում նվազագույն պարտադիր դատապարտման համակարգի կապակցությամբ, որը նախատեսված է սեփականության հետ կապված ոչ ծանր օրինախախտումների հետ և գործում է Արևմտյան Ավստրալիայում և, մասնավորապես, Յյուսիսային Տարածքում [Northern Territory]: Պարտադիր դատապարտման համակարգերն ուղղվում են այնպիսի իրավախախտումների դեմ, որոնք անհամաչափորեն շատ են կատարվում բնիկ ավստրալիացիների կողմից՝ հատկապես անչափահասների դեպքում ռասայական առումով խտրական ազդեցություն թողնելով ազատագրված ցուցանիշների վրա: Կոմիտեն խստագույն կասկածի տակ է առնում այդ օրենքների համատեղելիությունը մասնակից պետության՝ դաշնագրով ստանձնած պարտավորությունների հետ⁴⁴...

Պարտադիր դատապարտման օրենքներն ուղղակիորեն չէին նշանառում հենց բնիկ իրավախախտների: Այնուամենայնիվ, օրենքները բնիկների վրա ունեցած խտրական ազդեցության հետևանքով հակասում էին դաշնագրին:

Թույլատրելի տարբերակում

[23.41] Ինչպես հաստատված է թիվ 18 Ընդհանուր մեկնաբանության 13-րդ պարբերության մեջ [23.04],

⁴² Տե՛ս [18.42]-ը:

⁴³ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ CERD/C/56/Misc. 42/Rev. 3: Անուղղակի խտրականությունն արգելված է նաև ԿնեսՎԿ-ով: Տե՛ս [23.89] և հաջորդը:

⁴⁴ Տե՛ս նաև [11.20]-ը:

«ողջամիտ և օբյեկտիվ» տարբերակումները ՔՔԻՄԴ-ի նկատառումներով արգելված խտրականություն չեն: Այսպիսով, օրինական նպատակ հետապնդող համաչափ միջոցները թույլատրելի են⁴⁵:

[23.42] «Ողջամիտ և օբյեկտիվ» պայմանը պոտենցիալ առումով շատ սուբյեկտիվ է: ՄԻԿ-ն այդ պայմանին անդրադարձել է դեպք առ դեպք սկզբունքով: Այդ առումով ՄԻԿ-ի նախադեպային իրավունքը հնարավոր չէ հեշտությամբ այնպես միահյուսել, որ հնարավոր լինի ճշգրիտ կանխատեսել պայմանի ապագա կիրառությունների ելքը: Գործերից բերված հետևյալ քաղվածքները ցույց են տալիս այդ պայմանը գործողության մեջ:

[23.43] *«Աումենբուրգի-Ցիֆրան և այլք ընդդեմ Մավրիկիոսի»*
(*AUMEERUDDY-CZIFFRA et al v MAURITIUS, 35/78*)

Հեղինակները բողոքում են, որ Մավրիկիոսի ներգաղթային օրենքները խտրական են մավրիկիացի կանանց հանդեպ, քանի որ օտարերկրացիների կանանց մեքենայորեն իրավունք է տրվում բնակություն հաստատելու Մավրիկիոսում, մինչդեռ օտարերկրացիների ամուսիններին նման իրավունք չի տրվում⁴⁶:

¶ 9.2.(բ) 2 (ii) 3 ...[Դ]աշնագիրը պետք է այնպիսի արդյունքի հանգեցնի, որ ընտանիքի պաշտպանությունը չտարբերվի՝ պայմանավորված ամուսիններից մեկի կամ մյուսի սեռով: Թեև Մավրիկիոսի տեսանկյունից անվտանգության նկատառումներով կարող է արդարացված լինել իր տարածք օտարերկրացիների մուտքը սահմանափակելը և նրանց իր տարածքից արտաքսելը, կոմիտեն այն կարծիքին է, որ եթե օրենքն այդ սահմանափակումներին ենթակա է դարձնում միայն մավրիկիացի կանանց օտարերկրացի ամուսիններին և ոչ մավրիկիացի տղամարդկանց օտարերկրացի կանանց, խտրական է մավրիկիացի կանանց հանդեպ և չի կարող արդարացվել անվտանգության պահանջներով:

¶ 9.2.(բ) 2 (ii) 4 Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ երեք ամուսնացած համահեղինակների՝ 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքի հետ համակցված՝ խախտվել են նաև դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետը և 3-րդ ու 26-րդ հոդվածները:

[23.44] *«ԱԴԱՄՆ ընդդեմ ՉեխիԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»*
(*ADAM v THE CZECH REPUBLIC, 586/94*)

Փաստերը հետևյալն են.

¶ 2.1. Հեղինակի հայրը՝ Վլատիսլավ Ադամը, Չեխիայի քաղաքացի էր, ում ունեցվածքը և բիզնեսը Չեխոսլովակիայի իշխանությունները 1949 թ. բռնագրավել են: Պրն Ադամը փախել է երկրից և ի վերջո տեղափոխվել Ավստրալիա, որտեղ էլ ծնվել են նրա երեք որդիները, այդ թվում և սույն հաղորդման հեղինակը: 1985 թ. Վլատիսլավ Ադամը մահացավ՝ Չեխիայում իր ունեցվածքը կտակելով երեք տղաներին (դա նրա վերջին կամքն էր): Այդ ժամանակից ի վեր նրա որդիները փորձում են հետ բերել իրենց ունեցվածքը, բայց ապարդյուն:

¶ 2.2. 1991 թ. Չեխիայի և Սլովակիայի Հանրապետությունն օրենք ընդունեց, որով արդարացվում էին Չեխիայի այն քաղաքացիները, ովքեր լքել էին երկիրը կոմունիստական ճնշման տակ, և վերականգնվում էր նրանց սեփականությունը, կամ դրա դիմաց փոխհատուցում էր տրվում: 1991 թ. դեկտեմբերի 6-ին հեղինակը և նրա եղբայրները չեխ փաստաբանների միջոցով իրենց սեփականության վերականգնման պահանջ ներկայացրին: Նրանց պահանջը մերժվեց այն հիմքով, որ նրանք չեն բավարարում այդ ժամանակ ուժի մեջ գտնվող թիվ 87/91 օրենքի կրկնակի պահանջը, ըստ որի՝ դիմումատուները պետք է հանդիսանան Չեխիայի քաղաքացի և մշտապես բնակվեն Չեխիայի Հանրապետությունում:

¶ 3. Հեղինակը պնդում է, որ օրենքի այն դրույթի կիրառումը, համաձայն որի՝ ունեցվածքը վերադարձվում կամ փոխհատուցվում է միայն այն դեպքում, երբ դիմողները Չեխիայի քաղաքացիներ են, իրեն և իր եղբայրներին դարձնում է խտրականության զոհ՝ դաշնագրի 26-րդ հոդվածի համաձայն:

Մասնակից պետությունը ներկայացրեց վիճարկված օրենքի իր պաշտպանությունը:

⁴⁵ Լեստեր և Ջոզեֆ, վերը, ծմբ. 6, 585–6:

⁴⁶ Տե՛ս նաև [16.21]-ը և [20.14]-ը:

¶ 9.1. Մասնակից պետությունը փորձում է նաև բացատրել գործի ավելի լայն քաղաքական և իրավական համագամանքները և պնդում, որ հեղինակի ներկայացրած փաստերը խեղաթյուրված են: Երբ 1989 թ. նոյեմբերին սկսվեց ժողովրդավարացման գործընթացը, Չեխիայի և Սլովակիայի Հանրապետությունը և հետագայում Չեխիայի Հանրապետությունը լուրջ ջանքեր են գործադրել կոմունիստական ռեժիմի պատճառած անարդարությունների մի մասը (սեփականության հետ կապված) վերացնելու ուղղությամբ: Ունեցվածքը վերադարձնելու նախաձեռնությունը, ինչպես սահմանված էր «Ռեաբիլիտացիայի մասին» օրենքով, մասամբ կառավարության կամավոր և բարոյական քայլ էր և ոչ պարտականություն կամ իրավական պարտավորություն: «Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ հնարավոր չէր և, հաշվի առնելով Չեխիայի ներկա Հանրապետության քաղաքացիների արդարացի շահերի պաշտպանությունը, նույնիսկ ցանկալի էլ չէր վերացնել նախկին վարչակարգի քառասուն տարվա ընթացքում կատարած բոլոր անարդարությունները»:

¶ 9.2. Վերադարձման կամ փոխհատուցման համար քաղաքացիության նախապայմանը չպետք է մեկնաբանվի որպես դաշնագրի 26-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելքի խախտում: . . .

ՄԻԿ-ը որոշում ընդունեց հօգուտ պրն Ադամի.

¶ 12.5. Քննելիս, թե որքանով են վերադարձման կամ փոխհատուցման պայմանները համապատասխանում դաշնագրին, կոմիտեն պարտավոր է դիտարկել բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ՝ հեղինակի հոր սկզբնական իրավունքը խնդրո առարկա ունեցվածքի նկատմամբ և բռնագրավման բնույթը: Մասնակից պետությունն ինքն է ընդունել, որ կոմունիստական վարչակարգի օրոք իրականացված բռնագրավումներն անարդարացի էին, և դա էր պատճառը, որ հատուկ օրենք ընդունվեց՝ վնասի վերականգնման ինչ-որ ձև ապահովելու համար: Կոմիտեն նկատում է, որ նման օրենքը չպետք է տարբերություն դնի անցյալում իրականացված բռնագրավումների զոհերի միջև, քանի որ բոլոր զոհերը բավարարում ստանալու իրավունք ունեն՝ առանց կամայական տարբերությունների: Հաշվի առնելով, որ հեղինակի՝ ժառանգության միջոցով ստացված սկզբնական իրավունքն իր ունեցվածքի նկատմամբ պայմանավորված չէր քաղաքացիությամբ, կոմիտեն կարծում է, որ թիվ 87/1991 օրենքի՝ քաղաքացիության վերաբերյալ պայմանը ողջամիտ չէ:

¶ 12.6. Այդ համատեքստում կոմիտեն հիշեցնում է իր հիմնավորումները թիվ 516/1992 հաղորդման վերաբերյալ («Միմունեկը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության») կարծիքներում, որոնցում նշվում է, որ այդ գործի հեղինակները և շատ շատերը համանման իրավիճակում լքել են Չեխոսլովակիան իրենց քաղաքական հայացքների պատճառով և քաղաքական հաշվեհարդարից փրկություն են փնտրել այլ երկրներում, որտեղ էլ աստիճանաբար հաստատվել են և նոր քաղաքացիություն ձեռք բերել: Հաշվի առնելով, որ մասնակից պետությունն է պատասխանատու 1949 թ. հեղինակի ծնողների հեռանալու համար, դաշնագրին անհարիր կլինի պահանջելը, որ նա և նրա եղբայրները Չեխիայի քաղաքացիություն ստանան՝ որպես իրենց սեփականության վերականգնման կամ, այլընտրանքային տարբերակով, համապատասխան փոխհատուցման վճարման նախապայման:

Ադամի գործով մեծամասնության որոշումն ըստ էության պաշտպանեց «Միմունեկը ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (516/92) գործով ավելի վաղ կայացված որոշումը: Երկու գործերին էլ հետևեցին «Բլաժեկը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (*Blazek et al v Czech Republic, 857/99*) և «Դես Ֆորս Վալդերոդեն և Կամերլանդերն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (*Des Fours Walderode and Kammerlander v Czech Republic, 747/97*) գործերում:

[23.45] Պրն Նիսուկե Անդոն Ադամի գործով հատուկ կարծիք ներկայացրեց.

Հաշվի առնելով Մարդու իրավունքների կոմիտեի կարծիքը թիվ 516/1992 («Միմունեկը ընդդեմ Չեխիայի Հանրապետության») հաղորդման վերաբերյալ՝ ես չեմ հակառակվում կոմիտեի կողմից ներկա գործով կարծիքի ընդունմանը: Այնուամենայնիվ կցանկանայի մատնացույց անել հետևյալը.

Առաջին՝ համաձայն միջազգային ընդհանուր իրավունքի ներկա կանոնների՝ պետություններն ազատ են իրենց տնտեսական համակարգն ընտրելու հարցում: Իրականում, երբ Միավորված ազգերի կազմակերպությունը 1966 թ. ընդունեց Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, այն ժամանակվա սոցիալիստական պետություններն ունեին պլանային տնտեսություն, որի պարագայում մասնավոր սեփականությունը մեծապես սահմանափակված էր կամ սկզբունքորեն արգելված: Նույնիսկ մեր օրերում քիչ չեն այն պետությունները, ներառյալ՝ նրանք, որոնք շուկայականին ուղղված տնտեսություն են որդեգրում, որոնք սահմանափակում կամ արգելում են օտարերկրացիների կողմից իրենց տարածքում անշարժ գույքի՝ որպես մասնավոր սեփականության ձեռքբերումը:

Երկրորդ՝ հետևաբար, մասնակից պետության համար անհնարին չէ իր տարածքում գտնվող անշարժ գույքի

նկատմամբ սեփականության իրավունքը միայն իր հպատակներով և քաղաքացիներով սահմանափակելը՝ այդպիսով թույլ չտալով նրանց այլ հպատակություն կամ քաղաքացիություն ունեցող կանանց և երեխաներին ժառանգել կամ որպես կտակ ստանալ այդ գույքը: Նման ժառանգությունը կամ կտակը կանոնակարգվում են դիտարկվող պետությունների միջազգային մասնավոր իրավունքի նորմերով, և ինձ հայտնի չէ որևէ համընդհանուր կերպով ճանաչված «մասնավոր սեփականության կտակման կամ ժառանգման բացարձակ իրավունք»:

Երրորդ՝ թեև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն ընդգրկում է անխտրականության և օրենքի առջև հավասարության սկզբունքը, այն չի արգելում «օրինական տարբերակումները»՝ հիմնված օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա: Եվ դաշնագիրն էլ, որպես այդպիսին, չի սահմանում կամ պաշտպանում է տնտեսական իրավունքները: Սա նշանակում է, որ Մարդու իրավունքների կոմիտեն պետք է ծայրահեղ զգուշավորություն ցուցաբերի տնտեսական ոլորտում խտրականությանը վերաբերող հարցերի դեպքում: Օրինակ՝ տնտեսական իրավունքների, ներառյալ՝ ժառանգության կամ կտակելու իրավունքի որոշ սահմանափակումներ կամ արգելքներ, որոնք հիմնված են հպատակության կամ քաղաքացիության վրա, միանգամայն կարելի է հիմնավորել որպես օրինական տարբերակումներ:

Չնայած իր ակնհայտ մտավախություններին՝ Անդրոն «չի հակառակվել» մեծամասնության որոշմանը: Ակնհայտորեն, դա *Սիմունեկի* նախադեպի գոյության հետևանք էր⁴⁷:

[23.46] «ԴՐՈԲԵԿՆ ԸՆԴՂԵՄ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ» (DROBEK v SLOVAKIA, 643/95)

Այս գործով հեղինակը բողոքում էր, որ իրավունք չունի վերստանալու սեփականությունը, որը Չեխիայի կառավարությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերցրել էր իր՝ ազգությամբ գերմանացի ընտանիքից: Բողոքը ներկայացնելու պահին Սլովակիայի օրենսդրությունը նախատեսում էր միայն կոմունիստական կառավարության կողմից վերցված սեփականության վերականգնումը: Հեղինակը պնդում էր.

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ հանդիսանում է Սլովակիայի կառավարության կողմից դաշնագրի 2-րդ և 26-րդ հոդվածների խախտման զոհ, որովհետև կառավարությունը թույլատրել է մինչև կոմունիզմի ստեղծումը տեղ գտած էթնիկ խտրականությունը՝ ընդունելով օրենք, որը բավարարում է տալիս նրանց, ում հողերը բռնագրավվել են տնտեսական գաղափարախոսության հիման վրա, և չի տալիս նրանց, ովքեր նույն կերպ տուժել են էթնիկ հիմքերով: ...[Դ]աշնագրի ուժի մեջ մտնելուց առաջ տեղի ունեցած ոտնահարումը կրկնվել է 1991 թ. խտրական օրենսդրության ընդունմամբ և 1993 և 1995 թթ. Սլովակիայի դատարանների ընդունած որոշումներով:

ՄԻԿ-ը 26-րդ հոդվածի խախտում չի հայտնաբերել:

¶ 6.4. Թիվ 516/1992 («Սիմունեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության») հաղորդման մասին իր կարծիքում կոմիտեն որոշել է, որ 1991 թ. օրենքը խախտում է դաշնագիրը, քանի որ իր կիրառության ոլորտից բացառում էր այն անձանց, ում սեփականությունը բռնագրավվել է 1948 թվականից հետո, սոսկ այն պատճառով, որ նրանք 1989 թ. կոմունիստական վարչակարգի անկումից հետո չեն հանդիսացել այդ երկրի հպատակ կամ քաղաքացի: Սույն գործը տարբերվում է վերը բերված գործի վերաբերյալ կարծիքից այն առումով, որ սույն գործի հեղինակը չի պնդում, որ սեփականության բռնագրավված տեսանկյունից խտրական վերաբերմունք է տեղ գտել 1948-ից հետո: Փոխարենը՝ նա պնդում է, որ 1991 թ. օրենքը խտրական է, քանի որ այն չի փոխհատուցում մինչև կոմունիստական վարչակարգի կողմից 1945 թ. իրականացված բռնագրավումների զոհերին:

¶ 6.5. Կոմիտեն հետևողականորեն սահմանել է, որ վերաբերմունքի ոչ բոլոր տարբերություններն ու տարբերակումներն են խտրականություն համարվում 2-րդ և 26-րդ հոդվածների իմաստով: Կոմիտեն ներկա գործի առնչությամբ համարում է, որ Չեխոսլովակիայում կոմունիստական վարչակարգի անկումից հետո ընդունված օրենսդրությունը, որը նպատակ ուներ փոխհատուցում տալ այդ վարչակարգի զոհերին, 26-րդ հոդվածի իմաստով խտրական չէ *պրիմա ֆացիե*^{*} միայն այն պատճառով, որ, ինչպես պնդում է հեղինակը, այն չի փոխհատուցում ենթադրաբար ավելի վաղ վարչակարգերի կատարած անարդարությունների զոհերին: Հեղինակը չի հիմնավորել նման պնդումը 2-րդ և 26-րդ հոդվածների առումով:

[23.47] «Մալիկն ընդդեմ Չեխոսլովակիայի» (Malik v Czechoslovakia, 669/95) և «Շլոսերն ընդդեմ Չե-

⁴⁷ Տե՛ս նաև [1.63–1.65]-ը ՔՔԻՄԴ-ի նախադեպային իրավունքի վրա նախադեպի ազդեցության վերաբերյալ:

^{*} *prima facie*- լատ.՝ առաջին հայացքից, առաջին տպավորությամբ (*ժան. քարզմ.*):

խիայի Ֆանրապետության» (Schlosser v Czech Republic, 670/95) գործերում հեղինակները բողոքում էին, որ Չեխիայի օրենսդրությունը փոխհատուցում է նախատեսում կոմունիստական վարչակարգի զոհերի համար, սակայն ոչ այլ վարչակարգերի կողմից հանիրաժի էքսպրոպրիացիայի զոհերին, ինչպիսին էր կոմունիստականին նախորդած մագիստրական վարչակարգը: ՄԻԿ-ը երկու գործերն էլ անընդունելի է համարել այն հիմքով, որ ողջամիտ է, երբ Չեխիայի օրենսդրությունը տարբերակում է անարդարության զոհերին՝ ըստ անարդարության աղբյուրների, ինչպես արվել է *Դորքեկի* գործում: Համեմատեք այդ գործերը հետևյալ գործի հետ:

**[23.48] «ԲՐՈԿԱ և ԲՐՈԿՈՎԱ ընդդեմ ՉԵԽԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(BROK and BROKOVA v CZECH REPUBLIC, 774/97)**

1939 թ. Պրագայում մագիստրները բռնագրավել են հեղինակի ծնողների գույքը, որովհետև նրանք հրեա էին: 1945 թ. Բենեշի թիվ 5/1945 դեկրետի [Benes Decree**] համաձայն ռասայական հետապնդումների հիման վրա մագիստրների կողմից ձեռնարկված սեփականության փոխանցման դեպքերի մեծ մասը չեղյալ է հայտարարվել: Սակայն հեղինակի ծնողների սեփականությունն ազգայնացվել է մինչև 1945 թ., իսկ դեկրետը նման սեփականության վրա չէր տարածվում: Հեղինակի բողոքը ներկայացված է անմիջապես ստորև.

¶ 2.4. Ժողովրդական կառավարման անցնելուց և վերականգնմանը վերաբերող օրենսդրության ընդունումից հետո հեղինակը, թիվ 87/1991 օրենքի համաձայն, որը փոփոխության է ենթարկվել թիվ 116/1994 օրենքով, դիմեց սեփականության վերականգնման համար: Նշված օրենքը վերականգնում և փոխհատուցում է տրամադրում կոմունիստական վարչակարգի կողմից (1948 թ. փետրվարի 25-ից 1990 թ. հունվարի 1-ը) քաղաքական նպատակներով իրականացված ապօրինի բռնագրավումների զոհերին: Օրենքը սեփականության վերականգնում կամ փոխհատուցում է նախատեսում նաև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ռասայական հետապնդումների զոհ դարձածներին, ովքեր նման իրավունք ունեն թիվ 5/1945 դեկրետի ուժով: Դատարանները (չրջանային դատարանի 1995 թ. նոյեմբերի 20-ի որոշում 26 C 49/95 և Պրահայի քաղաքային դատարանի 1996 թ. փետրվարի 28-ի որոշում 13 Co 34/94-29), սակայն, մերժեցին հեղինակի պահանջը: Շրջանային դատարանն իր որոշման մեջ նշում է, որ փոփոխված օրենքով վերականգնման իրավունքը տարածվում է այն անձանց վրա, ովքեր իրենց սեփականությունը կորցրել են գերմանական օկուպացիայի ժամանակ և չեն կարողացել վերականգնել այն քաղաքական հետապնդման պատճառով, կամ ովքեր դատավարական այնպիսի գործընթացներով են անցել, որոնք խախտել են նրանց մարդու իրավունքները 1948 թ. փետրվարի 25-ից հետո այն պայմանի պատճառով, որ նրանք համապատասխանեն թիվ 87/1991 օրենքով սահմանված պահանջներին: Մինչդեռ դատարանն այն կարծիքին էր, որ հեղինակը վերականգնման իրավունք չունի, որովհետև սեփականությունն ազգայնացվել է մինչև 1948 թ. փետրվարի 25-ը՝ թիվ 87/1991 օրենքի 1-ին բաժնի 1-ին պարբերությամբ և 6-րդ բաժնով ներկայացված պահանջների համար հետադարձ ուժով սահմանված վերջնաժամկետը: Այդ որոշումը հաստատեց Պրահայի քաղաքային դատարանը: ...

¶ 3.1. Հեղինակը մեղադրանք է ներկայացնում, որ այս գործում դատարանի որոշումները խտրականության պատճառով ուժ չունեն, և դատարանների կողմից փաստերի բացասական մեկնաբանությունը ակնհայտորեն կամայական և օրենքին հակասող է:

¶ 3.2. Հեղինակի այրին պնդում է, որ թիվ 87/1991 օրենքը՝ փոփոխության ենթարկված թիվ 116/1994 օրենքով, Չեխիայի բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասարապես չի կիրառվում: Նա ակնհայտ է համարում այն, որ Ռոբերտ Բրոկը համապատասխանել է օրենքով սեփականության վերականգնման համար սահմանված բոլոր պայմաններին, սակայն պնդում է, որ Չեխիայի դատարանները չեն ցանկացել այդ միևնույն չափանիշները կիրառել այս գործում՝ խախտելով դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը և 26-րդ հոդվածը: ՄԻԿ-ը համաձայնեց, որ վիճարկվող օրենքները խախտել են հեղինակի՝ 26-րդ հոդվածով սահմանված իրավունքները.

¶ 7.2. Կոմիտեի առջև ծառացած հարցն այն է, թե արդյոք թիվ 116/1994 օրենքով փոփոխության ենթարկված թիվ 87/1991 օրենքի կիրառությունը հեղինակի դեպքում ներառե՞լ է նրա՝ օրենքի առջև հավասարության և օրենքով հավասարապես պաշտպանվածության իրավունքի խախտում:

* * Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Չեխոսլովակիայի արտաքսված կառավարության ղեկրետներ՝ թողարկված նախագահ Էդվարդ Բենեշի կողմից, որոնք ստացել են հավաքական՝ «Բենեշի դեկրետներ» անվանումը (ծան. թարգմ.):

¶ 7.3. Այս օրենքները սեփականության վերականգնում կամ փոխհատուցում են տրամադրում կոմունիստական վարչակարգի օրոք քաղաքական դրդապատժառներով ապօրինի բռնագրավման զոհերին: Օրենքը սեփականության վերականգնում կամ փոխհատուցում է նախատեսում նաև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ռասայական հետապնդումների զոհ դարձածներին, ովքեր նման իրավունք ունեն Բենեշի թիվ 5/1945 դեկրետի համաձայն: Կոմիտեն կարծում է, որ օրենսդրությունը չպետք է խտրականություն դրսևորի դրա կիրառությունից առաջ տեղ գտած բռնագրավման զոհերի հանդեպ, քանի որ բոլոր զոհերն իրավունք ունեն բավարարում ստանալու՝ առանց կամայական տարբերակման:

¶ 7.4. Կոմիտեն ի գիտություն է ընդունում, որ թիվ 87/1991 օրենքը՝ փոփոխության ենթարկված թիվ 116/1994 օրենքով, առաջ է բերել հեղինակի սեփականության վերականգնման պահանջը, որը մերժվել է այն հիմքով, որ ազգայնացումը՝ տեղի ունեցած 1946-47 թթ., Բենեշի թիվ 100/1945 դեկրետի հիման վրա, դուրս է 1991 և 1994 թթ. օրենքների գործողության ոլորտից: Այդպիսով, հեղինակը չի կարողացել օգտվել վերականգնման մասին օրենքի առավելություններից, թեև 1946-47 թթ. չեխական ազգայնացումը կարող էր իրականացվել միայն այն իրողության շնորհիվ, որ հեղինակի սեփականությունը բռնագրավվել էր գերմանական օկուպացիայի տարիներին մացիստական իշխանությունների կողմից: Կոմիտեի կարծիքով՝ սա խտրական վերաբերմունք է վեր հանում հեղինակի նկատմամբ՝ այն անձանց համեմատությամբ, ում սեփականությունը բռնագրավվել էր մացիստական իշխանությունների կողմից անմիջապես պատերազմից հետո՝ առանց ենթարկվելու չեխական ազգայնացման, և ովքեր կարող էին օգտվել 1991 և 1994 թթ. օրենքներից: Անկախ այն հանգամանքից՝ դիտարկվող կամայականությունը ներհատուկ էր բուն օրենքին, թե՞ արդյունք էր մասնակից պետության դատարանների կողմից օրենքի կիրառության, կոմիտեն կարծում է, որ հեղինակին մերժվել է նրա՝ օրենքով հավասարապես պաշտպանվածության իրավունքը՝ ի խախտումն դաշնագրի 26-րդ հոդվածի:

¶ 9. Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի համաձայն՝ մասնակից պետությունը պարտավոր է հեղինակին տրամադրել արդյունավետ իրավական պաշտպանություն: Նման պաշտպանությունը պետք է ներառի սեփականության վերականգնում կամ փոխհատուցումը, ինչպես նաև համապատասխան փոխհատուցում այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում հեղինակը և նրա այրին զրկված են եղել իրենց սեփականությունից, այսինքն՝ սկսած դատարանի որոշման օրվանից՝ 1995 թ. նոյեմբերի 20-ից և ավարտած այն օրով, երբ կավարտվի սեփականության վերականգնումը: Մասնակից պետությունը պետք է վերանայի իր համապատասխան օրենսդրությունը և վարչական գործելակերպը՝ ապահովելու, որ ոչ օրենքը, ոչ դրա կիրառությունը խտրականություն չբովանդակեն՝ հակասելով դաշնագրի 26-րդ հոդվածին:

[23.49] Մինչև 1994 թ. ոչ կոմունիստական վարչակարգերի կողմից խտրական բռնագրավման չեխ զոհերն իրավունք չունեին Չեխիայի կառավարության միջոցով ապահովելու իրենց սեփականության օրինական վերականգնումը: Հետևաբար, նրանց բոլորի հանդեպ հավասար վերաբերմունք էր դրսևորվում: *Դորբեկի, Մալիկի և Շլոսերի* գործերում ՄԻԿ-ը չի ընդունել, որ նրանց հանդեպ վերաբերմունքը, որը տարբերվում էր կոմունիստական վարչակարգի զոհերի հանդեպ վերաբերմունքից, 26-րդ հոդվածով բողոքի տեղիք է տալիս: Այնուամենայնիվ, *Բրոկի* գործում մացիստների զոհերի մի մասը փոխհատուցման իրավունք ուներ, իսկ մյուսը՝ ոչ: Այդ պարագայում ՄԻԿ-ը կարծում է, որ վերջին խումբը ենթարկվում է վրդովեցուցիչ խտրականության: *Բրոկի* և մյուս երեք գործերի արդյունքների միջև տարբերությունը լույս է սփռում անխտրականության իրավունքի բնույթի վրա: *Բրոկի* գործով խտրականություն արձանագրվեց ոչ կոմունիստական վարչակարգի զոհի նկատմամբ, չնայած Չեխիայի օրենսդրությունն այժմ ավելի բարեհաճ է նման զոհերի հանդեպ, քան նախկին գործերում, որոնցում խախտում չէր արձանագրվել: Խտրականություն գոյություն չունի, երբ մարդկանց հավասարապես վատ են վերաբերվում:

[23.50] «ԿԱՐԱԿՈՒՐՏՆ ԸՆԴՂԵՄ ԱՎԱՏՐԻԱՅԻ» (KARAKURT v AUSTRIA, 965/00)

Փաստերը վեր են հանվում հետևյալ մեջբերումներում:

¶ 3.1. Հեղինակը (բացառապես) Թուրքիայի քաղաքացիություն ունի, թեև Ավստրիայում բնակության անժամկետ բույլտվություն ունի: Նա հանդիսանում է Լինց [Linz] քաղաքի «Արտասահմանցիների աջակցության ասոցիացիա» 10 աշխատակիցներից մեկը: 1994 թ. մայիսի 24-ին ընտրվել է ասոցիացիայի աշխատանքային խորհուրդը ('Betriebsrat'), որն օրինական իրավունքներ և պարտականություններ ունի աշխատակազմի շահերին հետամուտ լինելու և աշխատանքային պայմանների համապատասխանությունը վերահսկելու առումով: Հեղինակը, ով համապատասխանում էր 19 տարին լրացած լինելու ֆորմալ իրավական պահանջին և աշխատակից էր հանդիսանում վեց ամսից ավելի, և մեկ այլ աշխատակից՝ պրն Վլադիմիր Պոլակը, միասին ընտրվել են՝ զբաղեցնելով աշխատանքային խորհրդում առկա երկու թափուր տեղերը:

¶ 3.2. 1994 թ. հուլիսի 1-ին պրն Պոլակը դիմել է Լինցի տարածաշրջանային դատարան [Linz Regional Court]՝ հեղինակին իր ընտրված պաշտոնից զրկելու համար, այն հիմքով, որ վերջինս իրավունակ չէ աշխատանքային խորհրդի անդամի թեկնածու լինելու համար: 1994 թ. սեպտեմբերի 15-ին դատարանը բավարարել է դիմումը՝ հիմնվելով համապատասխան աշխատանքային օրենքի՝ «Արդյունաբերական հարաբերությունների մասին» օրենքի [Industrial Relations Act] (Arbeitsverfassungsgesetz) 53(1) հոդվածի վրա և մեծ աշխատանքային խորհուրդների կազմում ընտրվելու իրավունք ունեցողներին սահմանափակել Ավստրիայի հպատակություն ունեցողներով կամ Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏՏ) [European Economic Area (EEA)] անդամներով: Համապատասխանաբար, հեղինակը, որ չէր բավարարում չափանիշներից ոչ մեկը, զրկվեց աշխատանքային խորհրդում ընտրվելու իրավունքից:

¶ 4.1. Հեղինակը պնդում է, որ օրենքի 53(1) հոդվածը և մասնակից պետության դատարանների որոշումները, որոնցով կիրառվում է այդ հոդվածը, խախտում են իր՝ օրենքի առջև հավասարության և խտրականությունից զերծ լինելու իրավունքը, որը սահմանված է դաշնագրի 26-րդ հոդվածում: ... Հեղինակը պնդում է, որ մասնակից պետության օրենքում աշխատանքային խորհրդի կազմում ընտրվելու վերաբերյալ արված տարբերակումը Ավստրիայի/ԵՏՏ հպատակություն ունեցողների և այլ հպատակություն ունեցողների միջև ռացիոնալ և օբյեկտիվ հիմք չունի....

¶ 4.2. Հեղինակը պնդում է, որ երբ աշխատակիցը տրված ծայրի ձևով ստանում է իր գործընկերների վստահությունը՝ նրանց շահերը աշխատանքային խորհրդում ներկայացնելու համար, այդ ընտրությունը չպետք է մերժվի օրենքով սույլ քաղաքացիության հիմքով: Հայտարարվում է, որ օրենքի այն ենթադրության համար, ըստ որի՝ Ավստրիայի/ԵՏՏ հպատակություն ունեցող անձինք ավելի լավ կարող են ներկայացնել աշխատակիցների շահերը, որպես հիմնավորում չի կարող ծառայել: Բացի այդ, ըստ հեղինակի, օրենքը այլահպատակների բացառումը չի սահմանափակում, օրինակ, այն անձանցով, ովքեր իրավասությունների ժամկետի համար բավարար բնականության օրինական թույլտվություն չունեն կամ չեն տիրապետում գերմաներենին, և ուրեմն բացառումը չափազանց լայն է: ...

Մասնակից պետությունը պատասխանել է հետևյալ կերպ.

¶ 5.5. ...[Մ]ասնակից պետությունը ներկայացնում է, որ երբ կոմիտեն ձեռնամուխ լինի գնահատելու, թե արդյոք հեղինակի և Ավստրիայի/ԵՏՏ հպատակություն ունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի տարբերությունն արդարացված է եղել, հարկ է նկատել, որ այդ տարբերակումը հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ հիմքերի վրա: Մասնակից պետությունը նշում է, որ ԵՏՏ հպատակություն ունեցողներին տրված արտոնությունը միջազգային իրավական պարտավորության արդյունք է, որը մասնակից պետությունը ստանձնել է փոխադարձության սկզբունքով, և Եվրոպական համայնքում/ԵՏՏ անդամ պետություններում աշխատավորների հանդեպ վերաբերմունքի տարբերությունների վերացման օրինական նպատակ է հետապնդում: Մասնակից պետությունը հղում է կատարում կոմիտեի նախադեպային իրավունքին [*Վան Օրդի* գործով որոշմանը]՝ հայտարարելով, որ որոշ պետությունների անդամների արտոնյալ դրությունը, որն առաջացել է միջազգային իրավունքի շրջանակներում համաձայնագրի արդյունքում, թույլատրելի է 26-րդ հոդվածի տեսանկյունից: Կոմիտեն տվյալ պարագայում գտել է, որ փոխադարձության հիման վրա արտոնյալ անձանց շոշափելի դասերի ստեղծումը տեղի է ունեցել ողջամիտ և օբյեկտիվ հիմքով:

ՄԻԿ-ը որոշեց հոգուտ հեղինակի.

¶ 8.4. Ներկա գործում մասնակից պետությունը հեղինակին, ով Ավստրիայի/ԵՏՏ հպատակ չի հանդիսանում, իր տարածքում անսահմանափակ ժամկետով աշխատանքի իրավունք է տվել: Կոմիտեն առաջադրված հարցն այն է, թե արդյոք կա՞ որևէ ողջամիտ և օբյեկտիվ հիմք, որը կարողացներ հեղինակի բացառումը մասնակից պետությունում զբաղվածության հետ կապված փակ և բնական իրադարձությունից, որին կարող էին մասնակցել ԵՏՏ հպատակություն ունեցողները, այսինքն՝ համապատասխան աշխատանքային խորհրդի կազմում ընտրվելու իրավունքից՝ բացառապես քաղաքացիության հիմքով: Եթե կոմիտեն մեկ գործում (թիվ 658/1995, «*Վան Օրդն ընդդեմ Նի-դեռլանդների*») [23.23] գտել է, որ միջազգային համաձայնագրերը, որոնք նախընտրելի վերաբերմունք են տարածում այդ համաձայնագրին մասնակից պետության հպատակություն ունեցող անձանց վրա, կարող են տարբերական ողջամիտ և օբյեկտիվ հիմք լինել, դրանից չի կարելի է բխեցնել ընդհանուր կանոն՝ այն իմաստով, որ մեծ համաձայնագիրն ինքնին բավարար հիմք կլինի՝ դաշնագրի 26-րդ հոդվածի պահանջների առումով: Հակառակը՝ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործ վճռել իր փաստերի հիման վրա: Ձեռքի տակ եղած գործի առնչությամբ կոմիտեն պետք է հաշվի առնի աշխատանքային խորհրդի անդամի գործառույթը, որը աշխատակազմի շահերի հետապնդումն է և աշխատանքային պայմանների համապատասխանության վերահսկումը (տե՛ս պարբ. 3.1): Այդ նկատի ունենալով՝ ողջամիտ չէ աշխատանքային խորհրդի կազմում ընտրվելու իրավունք ունենալու առումով օտարերկրացիների միջև տարբերակումը՝ բացառապես նրանց տարբեր հպատակություն ունենալու հիման վրա: Համապատասխանաբար, կոմիտեն կարծում է, որ հեղինակը ենթարկվել է խտրականության՝ ի խախտումն 26-րդ հոդվածի:

[23.51] «ԳՈՒԵՅԸ և այլք ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (GUEYE et al v FRANCE, 196/85)

Այս հաղորդումը նույնպես վերաբերում էր քաղաքացիության հիմքով խտրականությանը.

¶ 9.2. Հեղինակները Սենեգալի քաղաքացիություն ունեցող զորացրված զինծառայողներ են, ովքեր ծառայել են ֆրանսիական բանակում նախքան 1960 թ. Սենեգալի անկախությունը: 1951 թ. զինվորական կենսաթոշակների օրենսգրքի համաձայն՝ ֆրանսիական բանակի զորացրված անդամների նկատմամբ կիրառվում էր միևնույն ռեժիմը՝ անկախ Ֆրանսիայի կամ Սենեգալի քաղաքացի լինելու համաձայն: Նախքան 1974 թ. դեկտեմբերը, երբ զործողության մեջ դրված նոր օրենքը Սենեգալի քաղաքացիների համար նախատեսեց այլ ռեժիմ, Սենեգալի քաղաքացի հանդիսացող զինծառայողներն ունեին նույն կենսաթոշակային իրավունքները, ինչ Ֆրանսիայի քաղաքացի հանդիսացող զինծառայողները: 1979 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 79/1102 օրենքը նախկինում Ֆրանսիական միության մեջ մտնող ևս չորս պետությունների, այդ թվում՝ Սենեգալի նկատմամբ տարածեց, այսպես կոչված, զինվորական կենսաթոշակների «ամրագրման» ռեժիմը, որը 1961 թ. հունվարի 1-ից արդեն իսկ կիրառվում էր համապատասխան մյուս պետությունների քաղաքացիների նկատմամբ: ...

«Ամրագրման» օրենսդրական կարգավորման նպատակը Սենեգալի քաղաքացի հանդիսացող վետերանների կենսաթոշակը՝ 1975 թ. հունվարի 1-ի դրությամբ վճարվող դրույքաչափով, սառեցնելն էր: Նման սառեցում չէր կիրառվում ֆրանսիացի վետերանների կենսաթոշակների նկատմամբ:

¶ 9.3. Կոմիտեի կողմից քննարկման ենթակա հիմնական հարցը հետևյալն է. արդյոք հեղինակները դաշնագրի 26-րդ հոդվածի իմաստով խտրականության զոհե՞ր են, կամ արդյոք ֆրանսիական բանակի նախկին անդամների նկատմամբ կիրառվող կենսաթոշակային ռեժիմի տարբերությունը՝ կախված Ֆրանսիայի քաղաքացի լինելու հանգամանքից, պե՞տք է համարվի դաշնագրի պահանջների հետ համատեղելի: Այս հարցի լուծմանը հանգեցիս կոմիտեն հաշվի է առել հետևյալ նկատառումները:

¶ 9.4. Կոմիտեն դիտարկել է հեղինակների պնդումն այն մասին, որ իրենց նկատմամբ խտրական վերաբերմունք է կիրառվել՝ ռասայական հիմքով, այսինքն՝ 26-րդ հոդվածում ուղղակիորեն թվարկված հիմքերից մեկով: Կոմիտեն կարծում է, որ պետության կողմից հեղինակների նկատմամբ ռասայական հիմքով խտրական վարվելակերպի կիրառումը հաստատող հիմքեր չկան: Այնուամենայնիվ, դեռ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք իրավիճակը, որում հայտնվել են հեղինակները, պե՞տք է դիտարկվի 26-րդ հոդվածի համատեքստում: Կոմիտեն նկատի է ունենում, որ հեղինակները, ընդհանուր առմամբ, չեն գտնվում Ֆրանսիայի իրավագործության ներքո, բացառությամբ այն հանգամանքի, որ իրենց կենսաթոշակային իրավունքները որոշելու նպատակով նրանք հիմնվում են Ֆրանսիայի օրենսդրության վրա: Կոմիտեն նկատի է ունենում, որ քաղաքացիությունը՝ որպես այդպիսին, նշված չէ խտրականության՝ 26-րդ հոդվածում թվարկվող արգելված հիմքերի շարքում, և դաշնագրով չի պաշտպանվում կենսաթոշակի իրավունքը՝ որպես այդպիսին: 26-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով հավասարապես պաշտպանվածության առումով խտրականությունն արգելվում է այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային վիճակը, ծնունդը կամ այլ հանգամանք: Տվյալ դեպքում տարբերակում է կատարվել անկախության հիման վրա ձեռք բերված քաղաքացիության հիմքով: Կոմիտեի կարծիքով՝ նման տարբերակման վրա տարածվում է 26-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում նշված «այլ հանգամանքը»: Ինչպես թիվ 182/1984 հաղորդման մեջ («*Չվաան դե Վրիսն ընդդեմ Նիդեռլանդների*» (*Zwaan-de-Vries v The Netherlands*)), այստեղ նույնպես կոմիտեն հաշվի է առնում, որ «օրենքի առջև հավասարության և առանց խտրականության օրենքով հավասարապես պաշտպանվածության իրավունք» չի նշանակում, որ բոլոր տարբերակված ռեժիմները խտրական են: Ողջամիտ և օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա կատարվող տարբերակումը 26-րդ հոդվածի իմաստով արգելված խտրականությունն չէ:

¶ 9.5. Որոշելու համար՝ հեղինակների նկատմամբ կիրառված ռեժիմը հիմնվա՞ծ է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա, թե՞ ոչ, կոմիտեն նկատի է ունենում, որ հեղինակներին կենսաթոշակ տրամադրելու հիմքում եղել է ոչ թե նրանց քաղաքացիությունը, այլ նրանց կողմից նախկինում մատուցված ծառայությունները: Նրանք ֆրանսիական զինված ուժերում ծառայել են նույն պայմաններով, ինչ Ֆրանսիայի քաղաքացիները. Սենեգալի անկախությանը հաջորդող 14 տարիների ընթացքում կենսաթոշակային իրավունքների առումով նրանց նկատմամբ կիրառվել է նույն ռեժիմը, ինչ նրանց ֆրանսիացի զործնկերների նկատմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ նրանք Սենեգալի, ոչ թե Ֆրանսիայի քաղաքացի էին: Քաղաքացիության հետագա փոփոխությունն ինքնին չի կարող տարբեր ռեժիմի կիրառման հիմնավորում լինել, քանի որ կենսաթոշակի տրամադրման հիմքը այն նույն ծառայությունն էր, որ մատուցել էին նրանք և Ֆրանսիայի քաղաքացիությունը պահպանած զինծառայողները: Ֆրանսիայի և Սենեգալի տնտեսական, ֆինանսական և սոցիալական պայմանների տարբերությունները նույնպես չեն կարող վկայակոչվել որպես իրավաչափ հիմնավորում: Սենեգալում ապրող և Սենեգալի քաղաքացի հանդիսացող զորացրված զինծառայողների և Սենեգալում գտնվող ու Ֆրանսիայի քաղաքացի հանդիսացող զորացրված զինծառայողների դրության համեմատությունը ցույց կտար, որ նրանք գտնվում են տնտեսական և սոցիալական նույն պայմաններում:

Զնայած դրան՝ նրանց կենսաթոշակային իրավունքները կտարբերվեն: Ի վերջո, մասնակից պետության այն պնդման փաստը, որ նա այլևս չի կարող իրականացնել ինքնության և ընտանեկան դրության ստուգումներ՝ կենսաթոշակային համակարգերի իրականացման ընթացքում չարաշահումները կանխելու նպատակով, չի կարող տարբերակված ռեժիմի հիմնավորում լինել: Կոմիտեի կարծիքով՝ վարչարարական անհարմարությունը կամ կենսաթոշակային իրավունքների չարաշահման հավանականությունը ինքնին չեն կարող վկայակոչվել որպես անհավասար վերաբերմունքի հիմնավորում: Կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակների նկատմամբ տարբերակված ռեժիմի կիրառումը հիմնված չէ ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա և դաշնագրով արգելված խտրականություն է:

[23.52] «ՅԱՐՎԻՆԵՆՆ ԸՆԴՐՈՒՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (JÄRVINEN v FINLAND, 295/88)

Ֆինլանդիայի նոր օրենսդրության համաձայն՝ համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողները պետք է 16 ամսով անցնեն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն, մինչդեռ զինվորական ծառայություն անցնողներից պահանջվում էր ծառայել միայն ութ ամիս: Որպես համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող՝ Յարվինենը պնդում էր, որ այդ օրենքը խտրականություն է՝ փիլիսոփայական հայացքների հիմքով:

Նոր օրենքի հիմնավորումը հետևյալն էր.

¶ 2.2. ... Քանի որ քաղաքացիական ծառայության դիմած զինապարտների համոզմունքներն այլևս չեն քննվելու, այդ համոզմունքների գոյության մեջ պետք է հավաստիանալ այլ եղանակով, որպեսզի նոր ընթացակարգը չնպաստի զինապարտների կողմից միայն անձնական շահի կամ հարմարության նկատառումներով զինվորական ծառայությունից ազատում հայցելուն: Հետևաբար, նման ծառայության ժամկետի համապատասխան երկարաձգումը համարվել է զինապարտի համոզմունքների ամենահարմար ցուցիչը:

ՄԻԿ-ը ըստ էության հավանություն տվեց մասնակից պետության փաստարկներին.

¶ 6.4. Որոշելու համար՝ պոն Յարվինենի նկատմամբ կիրառված N 647/85 ակտով այլընտրանքային ծառայության ժամկետը 12 ամսից 16 ամիս դարձնելը հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա, թե՛ ոչ, կոմիտեն, մասնավորապես, հաշվի է առել ակտի հիմնավորումները (տես վերը շարադրված 2.2 պարբերությունը) և որոշել է, որ նոր կարգավորումները նախատեսված են հեշտացնելու համար այլընտրանքային ծառայության հետ կապված վարչարարությունը: Օրենսդրությունը հիմնված է գործնական նկատառումների վրա և խտրական վերաբերմունք ցուցաբերելու նպատակ չունի:

¶ 6.5. Կոմիտեն, այնուամենայնիվ, գիտակցում է, որ օրենսդրական տարբերակման հետևանքով տուժում են իսկապես իրենց համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողները, որոնց սկզբունքները նրանց ստիպելու են անցնել քաղաքացիական ծառայություն: Միաժամանակ նոր կարգավորումները չեն բխում բացառապես պետության հարմարության նկատառումներից: Դրանք համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողներին ազատել են քննող խորհրդին իրենց համոզմունքների իսկությունն ապացուցելու հաճախ դժվարին պարտականությունից և մարդկանց հավանական ավելի լայն շրջանակի հնարավորություն են տվել դիմելու այլընտրանքային ծառայության:

¶ 6.6. Բոլոր հանգամանքների հաշվառմամբ՝ այլընտրանքային ծառայության երկարաձգված ժամկետը անողջամիտ չէ և ոչ էլ պատժիչ բնույթ ունի:

Վերջին գործով մեծամասնության դիրքորոշմանը չհամընկնող հատուկ կարծիքում պարոնայք Ագիլար Ուրբինան և Պոկարը նշել են հետևյալը.

Օրենքի հիմքում ընկած տրամաբանությունը, ամենայն հավանականությամբ, դիմողների՝ համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարման անկեղծության ստուգման նախկին մեթոդը վարչարարական տեսանկյունից հարմար ընթացակարգով փոխարինելն է: Մինչդեռ քաղաքացիական ծառայության երկարաձգված ժամկետը հանգեցնում է համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողների նկատմամբ պատժամիջոցի կիրառման: Ժամկետի նման երկարաձգումը, մեր կարծիքով, անհավասար վերաբերմունք է, որն անհամատեղելի է դաշնագրի 26-րդ հոդվածով նախատեսված հայացքների հիմքով խտրականության արգելքի հետ:

Գուեյի և Յարվինենի գործերով որոշումներն անհետևողական են թվում: Երկու վիճարկվող օրենքներն էլ ընդունվել են վարչարարական հարմարությանը նպաստելու ակնհայտ նպատակով⁴⁸: Այնուամենայնիվ, Յարվինենի գործով օրենքը համարվեց իրավաչափ՝ չնայած Գուեյի գործով 9.5 պարբերությունում այն պնդմանը, որ «վարչարարական անհարմարությունը ... ինքնին չի կարող վկայակոչվել որպես անհավասար վերաբերմունքի հիմնավորում»: Հավանաբար, կարևոր նշանակություն ունի այն փաստը, որ Յարվինենի գործով խտրականության գոհերը որոշակի առավելություն էին ստանում օրենքով (նրանք այլևս ստիպված չէին ապացուցել իրենց համոզմունքները), մինչդեռ Գուեյը և Սենեգալի քաղաքացի հանդիսացող վետերանները որևէ առավելություն չէին ստանում Ֆրանսիայի վիճարկվող օրենքով: Ամեն դեպքում, հետևյալ որոշմամբ ՄԻԿ-ը շեղվեց Յարվինենի գործով իր տված հիմնավորումներից:

[23.53]

«ՖՈԻՆՆ ԸՆԴՈՂԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (FOIN v FRANCE, 666/95)

Ֆուանը պնդում էր, որ իր նկատմամբ խտրական վերաբերմունք է կիրառվում իր հայացքների և խղճի հիմքով հետևյալ պատճառաբանությամբ.

¶ 3.1. Ըստ հեղինակի՝ զինապարտության օրենսգիրքը [National Service Code] (1983 թ. հուլիսի դրությամբ գործող տարբերակով, որը քաղաքացիական ծառայության համար սահմանում էր 24 ամիս տևողությամբ ժամկետ) խախտում է դաշնագրի 18-րդ, 19-րդ և 26-րդ հոդվածները՝ 8-րդ հոդվածի հետ համադրությամբ, քանի որ այն զինվորական ծառայության համեմատությամբ կրկնապատկում է համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողների այլընտրանքային ծառայությունների տևողությունը:

ՄԻԿ-ը հավանության արժանացրեց հեղինակի փաստարկները հետևյալ կերպ.

¶ 10.3. Կոմիտեի կողմից քննարկման ենթակա հարցադրումը հետևյալն է. այն հատուկ պայմանները, որոնց համաձայն հեղինակը պետք է այլընտրանքային ծառայություն անցներ, արդյոք դաշնագրի խախտո՞ւմ են:

Կոմիտեն նկատում է, որ դաշնագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները կարող են նախատեսել զինվորական բնույթի ծառայություն, իսկ համոզմունքների հիմքով դրանից հրաժարվելու դեպքում՝ այլընտրանքային զինվորական ծառայություն՝ պայմանով, որ նման ծառայությունը խտրական բնույթ չունենա: Հեղինակը պնդել է, որ Ֆրանսիայի օրենքով նախատեսված 12 ամիս ժամկետով զինվորական ծառայության փոխարեն 24 ամիս տևողությամբ այլընտրանքային զինվորական ծառայությունը խտրական է և խախտում է օրենքի առջև հավասարության և օրենքով հավասարապես պաշտպանվածության սկզբունքը՝ նախատեսված դաշնագրի 26-րդ հոդվածով: Կոմիտեն վերահաստատում է իր տեսակետն այն մասին, որ 26-րդ հոդվածը չի արգելում ցանկացած անհավասար վերաբերմունք: Այդուհանդերձ, ցանկացած տարբերակում, ինչպես կոմիտեն առիթ է ունեցել բազմիցս նշելու, պետք է հիմնված լինի ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա: Տվյալ համատեքստում կոմիտեն ընդունում է, որ օրենքով կամ գործելակերպի արդյունքում զինվորական ծառայության և այլընտրանքային զինվորական ծառայության միջև կարող են ձևավորվել տարբերություններ, և այդ տարբերությունները կարող են, մասնավոր դեպքում, ծառայության ավելի երկար ժամկետով արդարացում լինել, պայմանով, որ տարբերակումը հիմնված լինի ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա, ինչպես օրինակ՝ տվյալ ծառայության բնույթը կամ այդ ծառայությունն իրականացնելու համար հատուկ պատրաստվածություն անցնելու անհրաժեշտությունը: Ներկա դեպքում, սակայն, մասնակից պետության ներկայացրած պատճառաբանությունները չեն անդրադառնում նման չափորոշիչների կամ անդրադառնում են ընդհանուր գծերով՝ առանց հեղինակի դեպքին հատուկ անդրադարձի և, փոխարենը, դրանք հիմնվում են այն փաստարկի վրա, որ ժամկետի կրկնապատկումը անձի համոզմունքների անկեղծությունը ստուգելու միակ միջոցն էր: Կոմիտեի կարծիքով՝ նման փաստարկը չի բավարարում այն պահանջը, որ տվյալ դեպքում առկա անհավասար վերաբերմունքը պետք է հիմնված լիներ ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա: Այս պարագայում կոմիտեն կարծում է, որ տեղի է ունեցել 26-րդ հոդվածի խախտում, քանի որ հեղինակի նկատմամբ կիրառվել է խտրական վերաբերմունք՝ նրա կրոնական համոզմունքների հիմքով:

⁴⁸ Տե՛ս նաև վերը, *Բալսկի*, ծնթ. 35, պարբ. 15, որտեղ նշվում է, որ «*Վոսն Ընդդեմ Նիդեռլանդների*» (*Vos v Netherlands, 218/86*) գործով որոշումը, որում խախտում չէր արձանագրվել, ի վերջո հիմնավորվում էր վարչարարական հարմարությամբ: *Վոսի* գործում հաշմանդամ այրուն մերժվել էր հաշմանդամության նպաստի տրամադրումը, քանի որ նա այրիության հիմքով նպաստ ստանալու իրավունք ուներ: Հեղինակի բողոքը չէր վերաբերում երկու նպաստներից էլ օգտվելու հնարավորության բացակայությանը: Փոխարենը՝ նա մտահոգված էր այրիության նպաստի փոխարեն հաշմանդամության նպաստն ընտրելու հնարավորության բացակայությամբ. վերջինն առավել կարևոր էր նրա համար, քան առաջինը: Համակարգն ավելի արդարացի կլիներ, եթե անձին հնարավորություն տրվեր ստանալու այն նպաստը, որով նա ամենամեծ գումարը կստանար, եթե նույնիսկ դա լիներ վարչարարության տեսանկյունից ամենաբարդ համակարգը: Այսպիսով, հաշմանդամ այրիներին նպաստների հատկացման վերաբերյալ *Վոսի* կանոնը արդարացված է թվում միայն վարչարարական հարմարության հիմքով:

[23.54] Պարոնայք Անդոն, Քլայմը և Կրեցները *Ֆուլանի* գործով ներկայացրել են մեծամասնության դիրքորոշման հետ չհամընկնող հետևյալ հատուկ կարծիքը.

¶ 3. Քանի որ զինվորական ծառայությունից ազատումը կարող է սահմանափակվել համոզմունքների հիմքով դրանից հրաժարվողների համար, ակնհայտ է թվում, որ պետությունը կարող է նախատեսել ողջամիտ մեխանիզմներ՝ անընդունելի պատճառներով զինվորական ծառայությունից խուսափողներին համոզմունքների հիմքով դրանից հրաժարվողներից տարբերելու նպատակով: Նման մեխանիզմներից մեկը կարող է լինել պատասխանատու մարմնի ստեղծումը, որը քննում է զինվորական ծառայությունից ազատվելու մասին դիմումները և որոշում, թե որքանով է համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու մասին դիմումն անկեղծ: Նման պատասխանատու մարմինները շատ խնդրահարույց են, քանի որ դրանց գործունեությունը կարող է ներառել միջամտություն անձնական կյանքի անձեռնմխելիության և խղճի հետ կապված հարցերին: Հետևաբար, միանգամայն ողջամիտ է թվում մասնակից պետության կողմից այլընտրանքային մեխանիզմի ընդունումը, ինչպես օրինակ՝ զինվորական ծառայությունից ազատվելու համար դիմած անձանց ծառայության ավելի երկար ժամկետ նախատեսելը (տե՛ս կոմիտեի Կարծիքները թիվ 295/1988 հաղորդման մեջ, «*Յարվինեն ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Järvinen v Finland*)): Նման մոտեցման նպատակը համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից ազատումը հարմարության նկատառումներով չարաչափելու հավանականության նվազեցումն է: Այդուհանդերձ, նույնիսկ նման մոտեցման ընդունման պարագայում համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողներից պահանջվող լրացուցիչ ծառայությունը չպետք է պատժիչ բնույթ ունենա: Այն չպետք է ստեղծի այնպիսի իրավիճակ, որ իսկապես համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողները ստիպված լինեն զերծ մնալ նման հրաժարումից:

¶ 4. Սույն դեպքում զինվորական ծառայության ժամկետը 12 ամիս է, մինչդեռ համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվողներից պահանջվող ծառայության ժամկետը՝ 24 ամիս: Եթե պետության կողմից լրացուցիչ ծառայության համար միակ պատճառաբանությունը լիներ ընտրելու մեխանիզմը, մենք հակված կլինեինք կարծելու, որ լրացուցիչ ժամանակը չափազանց երկար է և կարող է պատժիչ համարվել: Այնուամենայնիվ, գնահատելու համար՝ հեղինակի և զինված ուժերում ծառայողների նկատմամբ տարբերակված մոտեցման կիրառումը հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել տվյալ դեպքի համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Կոմիտեն անուշադրության է մատնել վերջին հանգամանքը:

¶ 5. Մասնակից պետությունը փաստարկել է, որ այլընտրանքային ծառայության պայմանները տարբերվում են զինվորական ծառայության պայմաններից (տե՛ս կոմիտեի Կարծիքների 8.8 պարբերությունը): Մինչ զինծառայողներն իրենց պաշտոններում նշանակվում էին առանց ընտրության հնարավորության, համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվածներն իրենց պաշտոնն ընտրելու լայն հնարավորություն ունեին: Նրանք կարող էին իրենք առաջարկել իրենց գործատուներին և կարող էին ծառայություն անցնել իրենց մասնագիտական ոլորտում: Ավելին՝ նրանք ավելի բարձր էին վարձատրվում, քան զինված ուժերում ծառայողները: Նշվածին պետք է ավելացնել այն, որ զինվորական ծառայությունն իր էությանը ենթադրում է այնպիսի ծանրություններ, որոնք չեն կրում այլընտրանքային ծառայություն անցնողները, ինչպես օրինակ՝ զօրուգիշեր գործող զինվորական կարգապահությունը, ինչպես նաև զինվորական վարժանքների կամ ռազմական գործողությունների ժամանակ վնասվածք ստանալու կամ նույնիսկ կյանքից զրկվելու վտանգը: Հեղինակը չի հերքել զինվորական ծառայության և այլընտրանքային ծառայության միջև գոյություն ունեցող տարբերությունների վերաբերյալ փաստարկը...

¶ 6. Այս գործի բոլոր հանգամանքների հաշվառմամբ՝ փաստարկը, համաձայն որի՝ զինվորական ծառայության և համոզմունքների հիմքով դրանից հրաժարվողներից պահանջվող ծառայության ժամկետի միջև 12 ամսվա տարբերությունը խտրականություն է, անհամոզիչ է: Զինված ուժերում ծառայողների և համոզմունքների հիմքով դրանից հրաժարվողների միջև կատարված տարբերակումը հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա և խտրականություն չէ: Ուստի մենք չէինք կարող միանալ կոմիտեին այս գործով դաշնագրի 26-րդ հոդվածի խախտում արձանագրելու հարցում:

[23.55] Մեծամասնության որոշումը կարծես հերքում է *Յարվինենի* գործով որոշումը, ինչպես նկատում է փոքրամասնությունը, չնայած նախադեպից շեղումը ուղղակիորեն չի նշվում այդ որոշման մեջ: Մեծամասնության և փոքրամասնության նմանատիպ որոշումներ են կայացվել նաև «*Մեյն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Maille v France, 689/96*) և «*Վենիեն և Նիկոլան ընդդեմ Ֆրանսիայի*» (*Venier and Nicolas v France, 690–91/97*) գործերով ⁴⁹:

⁴⁹ Պրն Զախիան միացել է երկու գործերով էլ ներկայացված մեծամասնության դիրքորոշման հետ չհամընկնող հատուկ կարծիքներին:

[23.56] «ԴԻԵՐԳԱՐԴՏԵՆ ընդդեմ ՆԱՄԻԲԻԱՅԻ» (DIERGAARDT v NAMIBIA, 760/97)

¶ 3.4. ...Փաստաբանը նշում է, որ Նամիբիայի սահմանադրության 3-րդ հոդվածով անգլերենը հայտարարվում է որպես Նամիբիայում միակ պաշտոնական լեզու: Այդ հոդվածի 3-րդ կետով թույլատրվում է այլ լեզուների գործածությունը պառլամենտի ընդունած օրենսդրության հիման վրա: Փաստաբանը նշում է, որ անկախությանը հաջորդող յոթ տարիների ընթացքում նման օրենք չի ընդունվել, և պնդում է, որ դա խտրականություն է ոչ անգլիախոսների նկատմամբ: Ըստ փաստաբանի՝ ընդդիմության՝ նման օրենսդրություն գործողության մեջ դնելուն ուղղված ջանքերը խոչընդոտվել են կառավարության կողմից, որը հայտարարել է, թե մտադիր չէ որևէ օրենսդրական քայլ ձեռնարկել այդ հարցի առնչությամբ: Այդ կապակցությամբ փաստաբանը վկայակոչում է 1991 թ. մարդահամարը, որի համաձայն՝ Նամիբիայի բնակչության միայն 0,8 տոկոսն է անգլերենը գործածում որպես մայրենի լեզու:

¶ 3.5. Հետևանքն այն է, որ հեղինակները զրկվել են իրենց մայրենի լեզուն վարչական մարմինների հետ հարաբերություններում, արդարադատության համակարգում, կրթության և հանրային կյանքում գործածելու հնարավորությունից: Նշվում է, որ դա դաշնագրի 26-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսված իրենց իրավունքների ոտնահարում է:

Այս հարցում կոմիտեի վճիռը հեղինակների օգտին էր: Ինչպես պարզ է դառնում հետագա շարադրանքից, կոմիտեի վրա մեծ ազդեցություն է գործել փաստաբանի ներկայացրած «Ռեհոբոթի կենտրոնական շրջանում [Central Region, Rehoboth] 1992 թ. մարտի 4-ին շրջանային կոմիսարի կողմից թողարկված թռուցիկի օրինակը, որում ուղղակիորեն արգելվում է աֆրիկան լեզվի գործածումը շրջանային պետական մարմինների հետ հեռախոսային խոսակցություններում»⁵⁰:

¶ 10.10. Հեղինակները ... պնդել են, որ Նամիբիայում լեզվի վերաբերյալ օրենսդրության բացակայությունը հանգեցրել է այն իրողության, որ իրենք զրկվել են իրենց մայրենի լեզուն վարչական մարմինների հետ հարաբերություններում, արդարադատության համակարգում, կրթության և հանրային կյանքում գործածելու հնարավորությունից: Կոմիտեն նկատի է ունենում, որ հեղինակները ցույց են տվել, որ մասնակից պետությունը քաղաքացիական ծառայողներին հրահանգել է չպատասխանել հեղինակների՝ պետական մարմինների հետ աֆրիկանների լեզվով գրավոր կամ բանավոր հաղորդակցությանը, եթե անգամ նրանք բոլոր հնարավորություններն ունեն դա անելու: Աֆրիկանների լեզվի գործածությունն արգելող այս հրահանգները վերաբերում են ոչ միայն պաշտոնական փաստաթղթերի ընդունմանը, այլև նույնիսկ հեռախոսային խոսակցություններին: Մասնակից պետության կողմից որևէ պատասխանի բացակայության պայմաններում կոմիտեն պետք է պատշաճ ուշադրության արժանացնի հեղինակների այն պնդմանը, որ խնդրո առարկա թռուցիկը հատուկ ուղղված է պետական մարմինների հետ հարաբերություններում աֆրիկանների լեզվի գործածության հնարավորությունը բացառելուն: Ուստի կոմիտեն կարծում է, որ հեղինակները՝ որպես աֆրիկանների լեզուն գործածողներ, դաշնագրի 26-րդ հոդվածի խախտման գոհ են:

Եթե *Դիերգաարդտի* գործով որոշման մեջ կիրառվեր *Բալանթայնի* [23.39] գործով կիրառված մոտեցումը, հնարավոր է, որ որևէ խախտում չարձանագրվեր: Հարցումներին պատասխանելիս աֆրիկան լեզվի գործածության սահմանափակումը կիրառվում էր անկախ այն հանգամանքից, թե ով է հարցման հեղինակը: *Դիերգաարդտի* գործով կոմիտեն որոշեց, որ այդ կանոնը վնասակար ազդեցություն կունենար աֆրիկանների լեզու գործածողների վրա, մինչդեռ *Բալանթայնի* գործով չընդունեց, որ ցուցանակների վերաբերյալ օրենքը անհամաչափ ազդեցություն կունենար ոչ ֆրանսիախոսների վրա:

[23.57] Պարոնայք Ամորը, Անդրոն, Բիզվաթին, Յալդենը, Լալահը և լորդ Քոլվիլը *Դիերգաարդտի* գործով 26-րդ հոդվածի առնչությամբ ներկայացրել են մեծամասնության դիրքորոշման հետ չհամընկնող հատուկ կարծիք: Փոքրամասնության կարծիքը պրն Ամորը ներկայացրել է հետևյալ բացատրություններում.

¶ 1. Իր սահմանադրության 3-րդ հոդվածում Նամիբիան, որն իր անկախությունը հռչակել է 1991 թ. մարտի 21-ին, անգլերենը հայտարարել է երկրի պաշտոնական լեզու՝ ելնելով ինտեգրման հնարավորությունները մեծացնելու իրավաչափ նպատակից: Համարվում էր, որ երկրի բազմաթիվ այլ փոքրամասնությունների կամ ցեղերի լեզուներից մեկին արտոնություն կամ հատուկ կարգավիճակ չնորոգելը, ամենայն հավանականությամբ, կնպաստեր խտրականությանը և խոչընդոտ կլիներ պետության կառուցման ճանապարհին: Այդ պահից ի վեր անգլերենից բացի բոլոր լեզուները սահմանադրությամբ նույն կարգավիճակն ունեին. ոչ մի արտոնություն և ոչ մի խտրականություն: Դա վերաբերում է բոլոր լեզուներին, այդ թվում՝ աֆրիկաներին, որի ներմուծումը Նամիբիա սերտորեն կապված

⁵⁰ Տե՛ս, սակայն, այն փաստարկը, որ ՄԻԿ-ի մեծամասնությունը սխալ է մեկնաբանել այդ թռուցիկը [23.57]:

է գաղութացման պատմության հետ, և որը ամեն դեպքում 1991 թ. մարտի 21-ից այլևս չի գործածվել որպես պաշտոնական լեզու: ...

¶ 3. Փոքրամասնությունների լեզուների գործածությունը, որպես այդպիսին, չի սահմանափակվել, առավել ևս, պաշտոնական մակարդակից բացի, որևէ այլ մակարդակում: Միմյանց միջև և այլ անձանց հետ իրենց անձնական հարաբերություններում միևնույն լեզվով հաղորդակցվող մարդիկ կարող են գործածել այդ լեզուն առանց պետական մարմինների կողմից որևէ միջամտության, ինչը, ամեն դեպքում, դժվար կլիներ պատկերացնել: Այլ խոսքով՝ ոչինչ չի սահմանափակում բաստերների (այն փոքրամասնությունը, որին պատկանում են հեղինակները) կողմից, իրենց ընտրությամբ, աֆրիկյան լեզվի գործածությունը միմյանց միջև կամ այդ լեզվին տիրապետող և նրանց հետ այդ լեզվով հաղորդակցումը նախընտրող անձանց հետ հարաբերություններում:

¶ 4. Ինչ օրենսդրական թերություններ էլ որ գոյություն ունեցած լինեն մինչև այժմ, մայրենի լեզուն գործածելու իրավունքը պետական հաստատությունների հետ փոխհարաբերություններում չի կարող գերակայել երկրի պաշտոնական լեզվի նկատմամբ, որը հանդիսանում է կամ պետք է հանդիսանա բոլորի լեզուն և բոլոր քաղաքացիների համար ընդհանուր հայտարարը: Պետությունը կարող է բոլորից պահանջել միևնույն լեզվի գործածություն: Նա իրավունք ունի թույլ չտալու, որ փոքրաթիվ մարդիկ սահմանեն օրենքը:

Այլ կերպ ասած՝ բոլոր մարդիկ հավասար են պաշտոնական լեզվի գործածության առումով, և լեզվական ցանկացած արտոնություն, եթե չի կիրառվում բոլորի նկատմամբ (այդ դեպքում այն կդադարեր արտոնություն լինելուց), կլիներ անհիմն և խտրական: Բաստերների բողոքն այն մասին է, որ իրենք հնարավորություն չունեն գործածելու իրենց մայրենի լեզուն վարչական մարմինների հետ հարաբերություններում և դատարանում: Սակայն նրանք միակը չեն, որ նման իրավիճակում են: Ծիշտ մույն իրավիճակում են նաև այլ փոքրամասնությունների լեզուներով հաղորդակցվողները...

Մեծամասնության վրա ազդեցություն է գործել թուլացիկը, որով վարչական մարմինները իրենց հաղորդակցության մեջ աֆրիկյան լեզու չգործածելու հատուկ հրահանգ են ստանում: Մեծամասնությունը կարծել է, որ այդպիսով աֆրիկյանների լեզու գործածողները հատուկ ընտրվել են որպես թիրախ, և պետության կողմից նման ընտրության հիմնավորման բացակայության պայմաններում արձանագրել է, որ 26-րդ հոդվածի խախտում է տեղի ունեցել⁵¹: Փոքրամասնության կարծիքով՝ մեծամասնությունը սխալ է մեկնաբանել թուլացիկը: Բհագվաթին, Յալդենը և Քոլվիլը տվել են հետևյալ բացատրությունը.

¶ 8. Վերը նշված թուլացիկի վկայակոչումը նույնպես չէր օգնի հեղինակներին ըստ 26-րդ հոդվածի իրենց պնդումը հիմնավորելու հարցում: Թուլացիկը հստակ նպատակ ունի նշելու, որ բոլոր պաշտոնական հեռախոսազանգերը, ինչպես նաև հաղորդակցությունը պետք է կատարվեն անգլերենով, որը պետության պաշտոնական լեզուն է: Դա է թուլացիկի հիմնական տրամաբանությունը և նպատակը, և այդ նպատակի իրականացմանն է ուղղված թուլացիկի այն հրահանգը, որ պետական ծառայողները պաշտոնական հեռախոսազանգերին և հաղորդակցությանը պատասխանելիս պետք է զերծ մնան աֆրիկյանների լեզուն գործածելուց: Թուլացիկը վերաբերում է հատուկ աֆրիկյանների լեզվին և նպատակ ունի արգելելու պետական ծառայողների կողմից պաշտոնական հեռախոսազանգերի, ինչպես նաև հաղորդակցության մեջ աֆրիկյանների լեզվի գործածությունը, քանի որ միայն աֆրիկյանների լեզվի պարագայում գոյություն ուներ նման հիմնախնդիր. այն ժամանակին՝ մինչև անգլերենով փոխարինվելը, եղել է պաշտոնական լեզու, և պետական ծառայողները շարունակում էին այն գործածել պաշտոնական հեռախոսազանգերում և հաղորդակցության մեջ, չնայած այն դադարել էր պետության պաշտոնական լեզու լինելուց: Նման խնդիր ակնհայտորեն գոյություն չունեի ցեղային լեզուների հետ կապված, քանի որ դրանք երբևէ չեն գործածվել վարչարարության մեջ կամ ծառայողական նպատակներով: Սակայն աֆրիկյանների լեզուն պաշտոնական նպատակներով նախկինում գործածվում էր, այդ իսկ պատճառով պետության համար անհրաժեշտ դարձավ թուլացիկի թողարկումը, որով արգելվում էր աֆրիկյանների լեզվի գործածությունը պաշտոնական հեռախոսազանգերում և հաղորդակցության մեջ: Ահա թե ինչու թուլացիկը հատուկ վերաբերում էր միայն աֆրիկյաններին և ոչ մյուս լեզուներին: Դա ակնհայտ է դառնում նաև թուլացիկում արված այն նշումից, որ աֆրիկյաններենն այժմ ունի մույն կարգավիճակը, ինչ մյուս ցեղային լեզուները: Հետևաբար, ճիշտ չէ ասել, որ թուլացիկով աֆրիկյաններենի նկատմամբ, ի տարբերություն մյուս լեզուների, կիրառվում է անբարենպաստ մոտեցում, այն առումով, որ հատուկ աֆրիկյանների լեզվի դեմ ուղղված խտրականություն է դրսևորվում: Սենք, հետևաբար, եզրակացնում ենք, որ 26-րդ հոդվածով նախատեսված հավասարության և խտրականությունից զերծ մնալու սկզբունքի խախտում տեղի չի ունեցել:

Փոքրամասնության որոշումները ձգտում են հետևել դատական քննության ընթացքում պաշտոնական լեզուների գործածության վերաբերյալ նախորդ որոշումներին [18.09]: Այդուհանդերձ, դրանք չեն հա-

⁵¹ Նամիբիան իսկապես բացարձակապես որևէ տեղեկություն չի ներկայացրել այս հաղորդման առնչությամբ:

մապատասխանում 27-րդ հոդվածի համաձայն փոքրամասնությունների լեզուների պաշտպանության մասին ՄԻԿ-ի փոխհամաձայնեցված հայտարարություններին [24.47]:

[23.58] «Բրուկսն ընդդեմ Նիդեռլանդների» (*Broeks v Netherlands*, 172/84) գործում [23.10] ՄԻԿ-ը մերժեց սեռային խտրականության դրսևորում հանդիսացող այն փաստարկները, համաձայն որոնց՝ տղամարդկանց և կանանց սոցիալական ապահովության վճարները պետք է տարբեր լինեն, քանի որ տղամարդիկ ընտանիքի «կերակրողներն» են: «Կերակրողի» տեսության վրա հիմնված օրենսդրությունը համարվեց 26-րդ հոդվածի խախտում նաև «Զվասն դե Վրիսն ընդդեմ Նիդեռլանդների» (*Zwaan-de-Vries v Netherlands*, 182/84) և «Պաուզերն ընդդեմ Ավստրիայի» (*Pauger v Austria*, 415/90) գործերով. առաջինը, ըստ էության, նույնական էր *Բրուկսի* գործին: Վերջին գործում «կերակրողի» տեսության վրա հիմնված ենթադրությունը նշանակում էր, որ Նիդեռլանդների՝ կերակրողին կորցնելու համար նպաստի վերաբերյալ օրենսդրության համաձայն՝ այրի տղամարդկանց նկատմամբ կիրառվում է այրի կանանց համեմատությանը առավել անբարենպաստ կարգ: Դա համարվեց 26-րդ հոդվածի խախտում⁵²: Հետևաբար, տղամարդկանց և կանանց ֆինանսական դերի վերաբերյալ ենթադրությունները չեն արդարացնում առերևույթ սեռային խտրականության դրսևորում համարվող տարբերակումները, զոնե արևմտյան պետություններում, ինչպիսին է Նիդեռլանդները, որտեղ նման ենթադրությունները ակնհայտորեն հնացած են:

[23.59] 26-րդ հոդվածի վերաբերյալ գործերի մեծ մասը ներառել է սոցիալական վճարների մասով խտրականության մասին պնդումներ: Կարելի է ենթադրել, որ սոցիալական ապահովության առնչությամբ օրենսդրական տարբերակում կատարելու տարածված պատճառ է փողի խնայողությունը: *Բրուկսի* [23.10] և ավելի ուշ «Յոհաննես Վոսն ընդդեմ Նիդեռլանդների» (*Johannes Vos v Netherlands*, 786/97) [23.16] և «Ուոլդմանն ընդդեմ Կանադայի» (*Waldman v Canada*, 694/96) [23.63] գործերով ՄԻԿ-ը նվազ ուշադրության է արժանացրել, որպես այդպիսին, միջոցների սահմանափակ լինելու վրա հիմնված փաստարկները: Այդուհանդերձ, *Կավալկանտիի* գործում [23.37] օրենսդրական վիճարկվող տարբերակումը թերևս կարող է արդարացվել բացառապես միջոցների սահմանափակ լինելու հիմքով: Այդ գործում ՄԻԿ-ը գտավ, որ զբաղված և չզբաղված անձանց միջև տարբերակումը՝ կապված նախկին գործազրկության համար նպաստ ստանալու հետադարձ ուժ ունեցող իրավունքի հետ, ողջամիտ և օբյեկտիվ է: Ի՞նչ կարևորություն ունի անձի զբաղվածության ներկա կարգավիճակը անցյալ գործազրկության համար նպաստ ստանալու իրավունքը որոշելու առումով, մանավանդ եթե գործազրկության նպաստի տրամադրումը սկզբնապես մերժվել է սեռային խտրականության դրսևորման հիմքով:

[23.60] «ԼՈՎՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (LOVE v AUSTRALIA, 983/01)

Հեղինակը բողոքել է ավիափոխադրող ընկերության կողմից իրեն 60 տարեկանում աշխատանքից ազատելու դեմ:

¶ 3. Հեղինակները պնդում են, որ Ավստրալիան խախտել է 26-րդ հոդվածով նախատեսված տարիքային հիմքով խտրականության չենթարկվելու իրավունքը՝ չպաշտպանելով իրենց այս անօրինական հիմքով աշխատանքից հեռացվելուց:

ՄԻԿ-ը որոշեց, որ 26-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

¶ 8.2. Կոմիտեի կողմից վճռվելիք խնդիրը ըստ էության վերաբերում է այն հարցին, թե արդյոք հեղինակ(ներ)ը⁵³ ենթարկվե՞լ են խտրականության՝ հակառակ դաշնագրի 26-րդ հոդվածի: Կոմիտեն վկայակոչում է իր անփոփոխ նախադեպային իրավունքն առ այն, որ ամեն տարբերակում չէ, որ խտրականություն է՝ ի խախտումն 26-րդ հոդվածի, բայց այդ տարբերակումները պետք է արդարացվեն ողջամիտ և օբյեկտիվ հիմքերով՝ հետամուտ լինելով դաշնագրով օրինական ճանաչված նպատակի: Թեպետ տարիքը՝ որպես այդպիսին, չի նշվում իբրև արգելված խտրակա-

⁵² Նույն հեղինակը հաջողությամբ պնդեց, որ մասնակից պետությունը չի ապահովել պետության կողմից իր իրավունքների ոտնահարման հետևանքների համարժեք հատուցում և իրականում շարունակել է իրականացնել նմանօրինակ խտրականություն, ինչպես «Պաուզերն ընդդեմ Ավստրիայի» (*Pauger v Austria*, 716/96) գործում:

⁵³ Բողոքը փաստորեն վերաբերում էր մի խումբ օդաչուների աշխատանքից հեռացմանը: Այսուհանդերձ, միայն պրն Լո-վին աշխատանքից հեռացնելու մասին հաղորդումն էր ընդունելի, քանի որ մյուս օդաչուների դեպքերը տեղի էին ունեցել նախքան Ավստրալիայի կողմից կամընտիր արձանագրության վավերացումը:

նության՝ 26-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում թվարկված հիմքերից մեկը, կոմիտեն այն կարծիքին է, որ տարիքի հետ կապված տարբերակումը, որը հիմնված չէ ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա, կարող է համարվել խտրականություն՝ ըստ դիտարկվող դրույթի «այլ կարգավիճակի» հիմքով, կամ օրենքի հավասար պաշտպանության մերժում՝ 26-րդ հոդվածի առաջին նախադասության բովանդակության շրջանակներում: Այդուհանդերձ, որևէ կերպ չի հստակեցվում, որ պարտադիր կենսաթոշակային տարիքը, որպես կանոն, տարիքային խտրականություն կհամարվի: Կոմիտեն ուշադրության է առնում այն փաստը, որ պարտադիր կենսաթոշակային տարիքի համակարգերը կարող են ներառել աշխատողների պաշտպանության կետ՝ սահմանափակելով ցկյանն աշխատաժամանակը, հատկապես երբ գոյություն ունեն սոցիալական ապահովության համապարփակ ծրագրեր, որոնք ապահովում են այդ տարիքին հասած աշխատողների կենսամիջոցները: Ավելին՝ պարտադիր կենսաթոշակային տարիքի վերաբերյալ օրենսդրության կամ քաղաքականության հիմքում կարող են լինել զբաղվածության քաղաքականությանն առնչվող հիմնավորումներ: Կոմիտեն նշում է, որ չնայած Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) ստեղծել է զբաղվածության ոլորտում խտրականությունից պաշտպանության լավ մշակված աշխատակարգ, կենսաթոշակի անցնելու նվազագույն տարիքը ակնհայտորեն չի արգելվում ԱՄԿ-ի որևէ կոմպենցիայով: Այս դիտարկումները, անկասկած, կոմիտեին չեն ազատում կենսաթոշակի անցնելու նվազագույն տարիքի որևէ առանձին կարգի խտրական բնույթը դաշնագրի 26-րդ հոդվածով գնահատելու պարտավորությունից:

¶ 8.3. Դիտարկվող գործում, ինչպես նշում է մասնակից պետությունը, ուղևորների, ինքնաթիռի անձնակազմի և թռիչքին որևէ այլ կերպ առնչվող անձանց անվտանգությունն առավելագույնի հասցնելու նպատակը դաշնագրով վավեր նպատակ է: Ինչ վերաբերում է տարիքի հիմքով արվող տարբերակման ողջամիտ և օբյեկտիվ բնույթին, ապա կոմիտեն նկատի է առնում հեղինակին աշխատանքից հեռացնելու ժամանակ [sic] լայնորեն տարածված ազգային և միջազգային գործելակերպը, այն է՝ կենսաթոշակի անցնելու նվազագույն տարիք սահմանել 60-ը: Այդ ժամանակ տեղի ունեցած աշխատանքից հեռացնելու դեպքերի արդարացման նպատակով մասնակից պետությունը վկայակոչել է [Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության] այն աշխատակարգը, որն ուղղված էր թռիչքների անվտանգությունն առավելագույն մակարդակի հասցնելուն և ընկալվում էր այդպես: Ներկա հանգամանքներում կոմիտեն չի կարող եզրակացնել, որ կիրառված տարբերակումը պոն Լովին աշխատանքից հեռացնելու ժամանակ հիմնված չի եղել ողջամիտ և օբյեկտիվ հանգամանքների վրա: Յետևաբար, կոմիտեն այն կարծիքին է, որ հնարավոր չէ արձանագրել դաշնագրի 26-րդ հոդվածի խախտում:

¶ 8.4. Այն վերոնշյալ եզրակացության լույսի ներքո, որ պոն Լովը չի տուժել դաշնագրի 26-րդ հոդվածի խախտմանը իրականացված խտրականությունից, անհրաժեշտություն չկա որոշում կայացնելու այն մասին, թե արդյոք աշխատանքից հեռացնելը կարելի է վերագրել անմիջականորեն մասնակից պետությանը, կամ արդյոք մասնակից պետության պատասխանատվությունը կտուժե՞ր երրորդ անձի կողմից խտրականությունը չկանխելու հետևանքով⁵⁴:

[23.61] Ինչպես նախապես ներկայացվեց վերը [23.28], տարբերակումների ողջամտության վերաբերյալ որոշումների մի մասը շաղկապվել է խտրականության հայտարարվող հիմքերի հետ: Այս միտումն ակնհայտ է հետևյալ գործերում⁵⁵:

**[23.62] «ՄՅՈՒԼԼԵՐՆ ու ԷՆԳԵԼՀԱՐԴՆ ընդդեմ ՆԱՄԻԲԻԱՅԻ»
(MÜLLER and ENGELHARD v NAMIBIA, 919/00)**

Յեղիմակի բողոքը հետևյալն էր.

¶ 3.1. Պոն Մյուլլերը պնդում է, որ ինքը դաշնագրի 26-րդ հոդվածի խախտման գոհ է, քանի որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնի 1(ա) պարբերության համաձայն՝ պոն Մյուլլերը չի կարող իր կնոջ ազգանունն ընտրել որպես իր ազգանուն՝ առանց նկարագրված ընթացակարգի համաձայն համապատասխան պետական ծառայություն դիմում ներկայացնելու, մինչդեռ իրենց ամուսինների ազգանունը որպես իրենց ազգանունն ընտրել ցանկացող կանայք կարող են դա անել առանց այդ ընթացակարգին հետևելու: Նմանապես, տկն Էնգելհարդը բողոքում է, որ իր ազգանունը, ի խախտումն 26-րդ հոդվածի, չի կարող գործածվել որպես ամուսինների ընդհանուր ազգանուն՝ առանց այդ նույն ընթացակարգին հետևելու:

⁵⁴ Երրորդ անձանց կողմից իրականացվող խտրական գործողությունների համար պետության պատասխանատվության վերաբերյալ տես [23.80]ff:

⁵⁵ Տես նաև «Նիիֆան ընդդեմ Նիդերլանդների» (Neefs v Netherlands, 425/90), «Սոմերսն ընդդեմ Հունգարիայի» (Somers v Hungary, 566/93), «Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի» (Lindgren et al v Sweden, 298–99/88), պարբ. 10.4, «Դեբրեչենին ընդդեմ Նիդերլանդների» (Debrezeny v Netherlands, 500/92), պարբ. 9.4, «Դրեյքը և Ջուլիանն ընդդեմ Նոր Զելանդիայի» (Drake and Julian v New Zealand, 601/94), պարբ. 8.5, «Գարսիա Պոնսն ընդդեմ Իսպանիայի» (Garcia Pons v Spain, 454/91), պարբ. 9.5: Տես նաև Բակսկի, վերը, ծնթ. 35, էջ 18–24:

Նրանք պնդում են, որ օրենքի այդ բաժինը ուղղակի և խտրական կերպով տարբերակում է կատարում տղամարդկանց և կանանց միջև այն առումով, որ ամուսնանալիս կանայք կարող են իրենց ամուսինների ազգանունն ինքնաբերաբար ընտրել որպես իրենց ազգանուն, մինչդեռ տղամարդիկ ստիպված են սահմանված կարգով դիմում ներկայացնել: Ընթացակարգը տղամարդուց, որը ցանկանում է իր կնոջ ազգանունն ընտրել որպես իր ազգանուն, պահանջում է հետևյալը.

(i) նա պետք է պաշտոնական տեղեկագրի երկու հաջորդական թողարկումներում և երկու օրաթերթում սահմանված կարգով հայտարարություն հրապարակի ազգանունը փոխելու մտադրության ու դրա պատճառների վերաբերյալ և պետք է վճարի այդ հայտարարությունների համար.

(ii) նա պետք է հիմնավորում ներկայացնի պետական ծառայության գլխավոր տնօրենին կամ վերջինիս կողմից այդ նպատակով լիազորված պաշտոնատար անձին.

(iii) շրջանային ոստիկանության կոմիսարը և մագիստրատը պետք է հեղինակի վերաբերյալ զեկուցագրեր ներկայացնեն.

(iv) անձի կողմից մեկ այլ ազգանուն որպես իր ազգանուն ընտրելու դեմ ցանկացած առարկություն պետք է կցվի մագիստրատի զեկուցագրին.

(v) պետական ծառայության գլխավոր տնօրենը կամ նրա կողմից այդ նպատակով լիազորված պաշտոնատար անձն այդ հիմնավորման և զեկուցագրերի հիման վրա պետք է համոզվեն, որ հեղինակը դրական բնութագիր ունի, և առկա են բավարար պատճառներ նրա կողմից մեկ այլ ազգանուն որպես իր ազգանուն ընտրելու համար.

(vi) դիմողը պետք է վճարի սահմանված տուրքերը և կատարի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ցանկացած այլ լրացուցիչ պահանջ: ...

¶ 5.4. 26-րդ հոդվածի վերաբերյալ ներկայացվել է, որ բացառապես սեռի հիմքով կատարվող ցանկացած տարբերակման դեպքում պետք է առկա լինի չափազանց ծանրակշիռ և իրավաչափ պատճառաբանություն: Պետք է քննարկվի, թե արդյոք մասնակից պետության նշած նպատակները բավականաչափ կարևոր են՝ սեռի հիմքով այս տարբերակումն արդարացնելու համար: Վիճարկման առարկա չէ այն, որ անձի ազգանունը նրա ինքնության կարևոր բաղադրիչներից է, այնուամենայնիվ հայտարարվում է, որ այդ պատճառով ամուսնական զուգընկերների՝ իրենցից յուրաքանչյուրի ազգանունը որպես ընդհանուր ազգանուն ընտրելու իրավունքը արժանի է ամենաբարձր մակարդակի պաշտպանության:

¶ 5.5. Ավելին՝ մասնակից պետության կողմից առաջ քաշված «արմատացած ավանդույթի» գաղափարը չի արդարացնում անհավասար մոտեցումը, քանի որ այդ ավանդույթը առաջ է եկել XIX դարի կեսին միայն, իսկ համաձայն եվրոպական դատարանի «*Բուրգհարցն ընդդեմ Շվեյցարիայի*» (*Burghartz v Switzerland, Series A.280B*) գործով որոշման՝ մեկնաբանությունը պետք է կատարվի ներկայիս համատեքստում, ինչը հատկապես կարևոր է խտրականության արգելքի սկզբունքի առումով: Որպես խտրական օրենքները և գործելակերպը ավանդույթով արդարացնելու անթույլատրելիությունը հիմնավորող օրինակ՝ հեղինակները հիշատակում են ապարտեիդը՝ որպես Յարավային Աֆրիկայի կողմից նախկինում կիրառվող ավանդական մոտեցում, որի նպատակն էր գործողության մեջ դնել ռասայական խտրականության դրսևորման գործընթացները հավերժացնելու ուղղված օրենքներ:

Մասնակից պետությունն իր օրենքը հիմնավորեց հետևյալ կերպ.

¶ 4.4. Դաշնագրի 26-րդ հոդվածի խախտման մասին հեղինակի պնդման վերաբերյալ մասնակից պետությունը հայտարարում է, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնի 1-ին պարբերությամբ տղամարդկանց և կանանց միջև տարբերակում կատարելու փաստն իր կողմից չի ժխտվում: Այդուհանդերձ, հայտարարվում է, որ այդ տարբերակումը ողջամտորեն արդարացված է հասարակական, տնտեսական և իրավական կարևոր գործառնություններ իրականացնելու առաքելությամբ: Ազգանունն օգտագործվում է անձի ինքնությունը այնպիսի նպատակներով պարզելու համար, ինչպիսիք են սոցիալական ապահովությունը, ապահովագրությունը, լիցենզիաները, ամուսնությունը, ժառանգությունը, ընտրելը և ընտրվելը, անձնագրերը, հարկերը և պետական արխիվները և հետևաբար անձի ինքնության կարևոր բաղադրիչ է. տե՛ս «*Թոերիելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*» (*Coeriel et al v The Netherlands*) գործը [16.15]: «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժինը կիրարկում է Նամիբիայի հասարակությունում արմատացած ավանդույթը, որի համաձայն՝ կինն է իր ամուսնու ազգանունն ընտրում որպես իր ազգանուն, և 1937 թ. «Օտարերկրացիների մասին» օրենքն ուժի մեջ մտնելուց հետո որևէ ամուսին ցանկություն չի հայտնել կնոջ ազգանունն ընտրել որպես իր ազգանուն: «Օտարերկրացիների մասին» օրենքով կատարված տարբերակման նպատակը իրավական ապահովության և անձի ինքնության որոշակիության հասնելն է, և հետևաբար այն հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա:

¶ 4.5. Այնուհետև հայտարարվում է, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնի 1-ին կետը պրն Մյուլլերին չի արգելում իր կնոջ ազգանունն ընտրել որպես իր ազգանուն, այլ նախատեսում է պարզ ընթացակարգ, որը հեղինակին հնարավորություն է տալիս իրականացնելու իր ցանկությունը: Սույն գործը տարբերվում է «*Բուրգ-հարցն ընդդեմ Շվեյցարիայի*» գործից այն առումով, որ այդ գործում հեղինակը գրկված էր որևէ իրավական միջոցից, որպեսզի որպես իր ազգանուն ընտրեր իր և իր կնոջ՝ գծիկով առանձնացվող ազգանունները ներառող ազգանուն:

¶ 4.6. Մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրի 26-րդ հոդվածում բնութագրվում են անարդար, կողմնակալ և ոչ ողջամիտ վերաբերմունքի տարրեր, ինչը կիրառելի չէ հեղինակի գործի նկատմամբ, և չի հայտարարվել, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնի 1-ին պարբերության նպատակը Նամիբիայում արական սեռի ներկայացուցիչների՝ որպես անհատների կամ որպես խմբի համար անբարենպաստ միջավայրի ստեղծումն է:

ՄԻԿ-ը որոշում ընդունեց հեղինակների օգտին:

¶ 6.7. Հեղինակի՝ դաշնագրի 26-րդ հոդվածի համաձայն ներկայացված պնդման կապակցությամբ կոմիտեն նկատի է առնում գործի մասնակիցների կողմից չվիճարկվող այն փաստը, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնի 1-ին պարբերությամբ կատարվում է սեռի հիմքով տարբերակում՝ արական կամ իգական սեռի ներկայացուցիչների՝ ամուսնանալիս իրենց ամուսնու ազգանունը որպես իրենց ազգանուն ընտրելու իրավունքի առումով: Կոմիտեն վերահաստատում է իր անփոփոխ գործելակերպը, որի համաձայն՝ օրենքի առջև հավասարության և առանց խտրականության օրենքով հավասարապես պաշտպանվածության իրավունքը չի նշանակում, որ ցանկացած տարբերակված մոտեցում խտրական բնույթ ունի: Ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների հիման վրա կատարված տարբերակումը 26-րդ հոդվածի իմաստով արգելված խտրականություն չէ: Այդուհանդերձ, դաշնագրի 26-րդ հոդվածի 2-րդ կետում հատուկ թվարկված որևէ հիմքով կատարված ցանկացած տարբերակում պետության վրա դնում է այդ տարբերակումը պատճառաբանելու ծանր պարտականություն: Կոմիտեն, հետևաբար, պետք է քննարկի այն հարցը, թե արդյոք 9-րդ բաժնի 1-ին պարբերությամբ ամրագրված գենդերային տարբերակման հիմքում ընկած պատճառների ուժով այդ դրույթը կարող է չհամարվել խտրական:

¶ 6.8. Կոմիտեն նկատի է առնում մասնակից պետության փաստարկը, համաձայն որի՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնի 1-ին պարբերության խնդիրը հասարակական և իրավական իրավաչափ նպատակների իրագործումն է, մասնավորապես՝ իրավական ապահովության ստեղծումը: Կոմիտեն նաև հաշվի է առնում մասնակից պետության այն հայտարարությունը, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնով կատարված տարբերակումը հիմնված է այն արմատացած ավանդույթի վրա, որի համաձայն՝ Նամիբիայում կանայք որպես իրենց ազգանուն ընտրում են իրենց ամուսնու ազգանունը, մինչդեռ մինչև այժմ տղամարդիկ երբեք չեն ցանկացել որպես իրենց ազգանուն ընտրել իրենց կնոջ ազգանունը: Այսպիսով, օրենքը, առնչվելով իրերի բնական կարգի հետ, ընդամենը արտացոլում է Նամիբիայի հասարակությունում հանդիմանալի տարածում գտած իրավիճակը: Ջույզի՝ որպես ընդհանուր ազգանուն կնոջ ազգանունն ընտրելու անսովոր ցանկությանը ընթացք կտրվեր «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված ընթացակարգով ազգանունը փոխելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում: Կոմիտեի համար, այնուամենայնիվ, պարզ չէ, թե «Օտարերկրացիների մասին» օրենքի 9-րդ բաժնի 1-ին պարբերությամբ որդեգրված սեռային մոտեցումը ինչպես կարող է ծառայել իրավական ապահովության ստեղծման նպատակի իրագործմանը, քանի որ կնոջ ազգանունն ընտրելու փաստը կարող է գրանցվել նույն կերպ, ինչ ամուսնու ազգանվան ընտրությունը: Տղամարդկանց և կանանց հավասարության սկզբունքի կարևորությունը հաշվի առնելով՝ արմատացած ավանդույթի փաստարկը չի կարող ընդունվել որպես տղամարդկանց և կանանց նկատմամբ դաշնագրին հակասող անհավասար վերաբերմունքի ընդհանուր արդարացում: Կնոջ ազգանունը որպես ընդհանուր ազգանուն ընտրելու հնարավորության համար այլընտրանքային տարբերակի (ամուսնու ազգանվան ընտրության) համեմատ առավել խիստ և ծանր պայմաններ նախատեսելը չի կարող համարվել ողջամիտ. տարբերակման պատճառը ցանկացած պարագայում բավականաչափ կարևոր չէ, որպեսզի գերակայի սեռային մոտեցումը բացառելու ընդունված գործելակերպի նկատմամբ:

ՄԻԿ-ն անկասկած առաջնորդվել է ակնհայտ խտրականության հիմքով՝ սեռի (կամ գենդերի): 6.7 պարբերությունում նա հստակ նշում է, որ թվարկված հիմքերից մեկով խտրականությունը, նախքան ՔՔԻՄԴ-ին դրա համապատասխանության հաստատումը, պահանջում է առավել հիմնավոր արդարացում, քան խտրականությունն «այլ հանգամանքի» հիմքով:

[23.63] «ՈՒՈԼՂՄԱՆՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (WALDMAN v CANADA, 694/96)

Ուոլդմանի բողոքը վերաբերում էր տարբեր կրոնական դավանանքների պատկանող դպրոցներին հատկացվող կրթական սուբսիդիաների տարբերություններին: Նա իր բողոքը ներկայացրել է հետևյալ կերպ.

¶ 1.2. Հեղինակը երկու դպրոցահասակ երեխաների հայր է ու հուդայական կրոնի հետևորդ և իր երեխաներին ուսման է հանձնել մասնավոր հրեական ցերեկային դպրոց: Կանադայի Օնտարիոյի մահանգում Հռոմի կաթոլիկ դպրոցները միակ ոչ աշխարհիկ դպրոցներն են, որոնք ստանում են լիարժեք և ուղղակի պետական ֆինանսավորում: Այլ կրոնական դավանանքների պատկանող դպրոցները պարտավոր են ֆինանսավորվել մասնավոր աղքատներին, ներառյալ՝ ուսման վարձերը: ...

Հեղինակը ներկայացրեց Օնտարիոյում դպրոցների ֆինանսավորման համապատասխան պատմության մանրամասները:

¶ 2.1. Օնտարիոյի պետական դպրոցների համակարգն անվճար կրթություն է առաջարկում Օնտարիոյի բոլոր բնակիչներին՝ առանց կրոնական կամ որևէ այլ հիմքով խտրականության: Պետական դպրոցներին արգելվում է ներգրավվել որևէ կրոնական քարոզչության մեջ: Ամիսներն օգտվում են մասնավոր դպրոց հիմնելու և իրենց երեխաներին այդպիսի դպրոց ուղարկելու ազատությունից՝ պետական դպրոց ուղարկելու փոխարեն: Օնտարիոյում մասնավոր դպրոց բացելու միակ օրենսդրական պահանջը «մասնավոր դպրոց գործարկելու մտադրության մասին ծանուցում» ներկայացնելն է: Օնտարիոյի մասնավոր դպրոցները չեն արտոնագրվում, և դրանց համար մախօրք կառավարության թույլտվություն չի պահանջվում: 1989 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ 64,699 աշակերտ հաճախում էր Օնտարիոյի 494 մասնավոր դպրոց: Մասնավոր դպրոցներ հաճախելությունը կազմում է Օնտարիոյում ցերեկային դպրոցներում հաճախումների ընդհանուր ծավալի 3.3 տոկոսը:

¶ 2.2. Օնտարիոյի մահանգում դպրոցների ֆինանսավորման առանձնացված համակարգի արմատները Կանադայի 1867 թ. սահմանադրության դրույթներում են: 1867 թ. կաթոլիկները կազմում էին Օնտարիոյի բնակչության 17%-ը, մինչդեռ բողոքականները՝ 82%-ը: Մնացած բոլոր կրոնները՝ միասին վերցրած, ներկայացնում էին բնակչության 0.2%-ը: Համադաշնության (կոնֆեդերացիայի) տարիներին մտահոգության առարկա էր այն, որ նոր Օնտարիոյի մահանգը կվերահսկվեր բողոքական մեծամասնության կողմից, որը կարող էր իր իշխանությունը գործադրել կրթության համակարգի նկատմամբ՝ կաթոլիկ կրոնին պատկանող փոքրամասնությանն իրենց իրավունքներից զրկելու նպատակով: Լուծումը կրոնական դավանանքների համար կրթության իրավունքները երաշխավորելն էր և այդ իրավունքները սահմանելը՝ հղում կատարելով Կոնֆեդերացիայի տարիների իրավունքի վիճակին:

¶ 2.3. Հետևանքն այն է, որ Կանադայի 1867 թ. սահմանադրությունը բաժին 93-ում պարունակում է կրոնական դավանանքներին առնչվող կրթության հստակ երաշխիքներ: 1867 թ. սահմանադրական օրենքի բաժին 93-ը Կանադայի յուրաքանչյուր մահանգի օժտում է կրթությանն առնչվող օրենքներ ընդունելու բացառիկ իրավասությամբ, ինչը սահմանափակվում է միայն կրոնական դավանանքներին առնչվող կրթության իրավունքներով՝ տրված 1867 թ.: Օնտարիոյում բաժին 93-ով տրված իշխանությունը կենսագործվում է «Կրթության մասին» օրենքի միջոցով: «Կրթության մասին» օրենքով յուրաքանչյուր դպրոց լիարժեք պետական ֆինանսավորման իրավունք ունի: «Կրթության մասին» օրենքում ամրագրված է հետևյալը. «1.(1) «առանձնացված դպրոցական խորհուրդ» նշանակում է մի խորհուրդ, որը գործում է որպես դպրոցական խորհուրդ հռոմեական կաթոլիկների համար...122.(1) Յուրաքանչյուր առանձնացված դպրոց պարտավոր է մասնակցել օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհներին այնպես, ինչպես պետական դպրոցները»: Ի հետևանս՝ Հռոմի կաթոլիկ դպրոցները կրոնական դավանանքի պատկանող միակ դպրոցներն են, որոնք նույնպիսի պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեն, ինչ աշխարհիկ պետական դպրոցները:

¶ 2.4. Հռոմի կաթոլիկ դպրոցների առանձնացված համակարգը մասնավոր դպրոցների համակարգ չէ: Ինչպես պետական դպրոցների համակարգը, այն ֆինանսավորվում է հանրությանը հաշվետու, ժողովրդավարական ճանապարհով ընտրված կրթության խորհրդի միջոցով: Առանձնացված դպրոցների խորհուրդներն ընտրվում են հռոմեական կաթոլիկ հարկատուների կողմից, և այս դպրոցական խորհուրդներն իրավունք ունեն կառավարելու առանձնացված դպրոցների կրոնական հարցերը: Ի տարբերություն մասնավոր դպրոցների, հռոմեական կաթոլիկ առանձնացված դպրոցները հետևում են մախարարության բոլոր ուղեցույցներին և կանոնակարգերին: Ոչ 1867 թ. սահմանադրական օրենքի 93-րդ բաժինը, ոչ «Կրթության մասին» օրենքը չեն նախատեսում հռոմեական կաթոլիկ մասնավոր/անկախ դպրոցների պետական ֆինանսավորում: Օնտարիոյում գործում են տասը մասնավոր/անկախ դպրոցներ, և այս դպրոցները չեն ստանում որևէ պետական ֆինանսական աջակցություն: ...

¶ 3.1. Հեղինակը պնդում է, որ օրենսդրորեն Հռոմի կաթոլիկ դպրոցները ֆինանսավորելու լիազորություն տալը, որը թույլատրվեց Կանադայի 1867 թ. սահմանադրական օրենքի 93-րդ բաժնով և իրականացվեց (Օնտարիոյի) «Կրթության մասին» օրենքի 122-րդ և 128-րդ հոդվածներով, ոտնահարում է դաշնագրի 26-րդ հոդվածը: Հեղինակը հայտարարում է, որ այս դրույթները տարբերակում կամ նախապատվություն են ստեղծում, որը հիմնված է կրոնի վրա, և դրա ազդեցությունը խաթարում է բոլոր մարդկանց կողմից հավասարության պայմաններով իրենց կրոնական դավանանքների իրավունքներն ու ազատությունները վայելել կամ գործածելը: Նա փաստարկում է, որ չի կարելի շարունակել օգուտների հատկացումը մեկ առանձին վերցրած կրոնական խմբի: Երբ մասնակից պետությունը ճանաչում է պետական ֆինանսավորմամբ կրոնական կրթություն ստանալու իրավունքը, որևէ տարբերակում չպիտի

կատարվի անհատների միջև՝ կախված նրանց որոշակի դավանանքների բնույթից: Հեղինակը պնդում է, որ բացառապես Հռոմի կաթոլիկ դպրոցներին ամբողջական ֆինանսավորում տրամադրելու մասին դրույթը չի կարող համարվել հիմնավորված: Օնտարիոյի կառավարության խտրական ֆինանսավորման գործելատեղի պատմական հիմնավորումը, այն է՝ հռոմեական կաթոլիկ փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը բողոքական մեծամասնությունից, այժմ վերացել է, և նույնիսկ հակառակը՝ դրանք պետք է փոխանցել Օնտարիոյում գոյություն ունեցող կրոնական այլ փոքրամասնությունների համայնքներին: Մեջբերվում է 1991 թ. անցկացված մարդահամարը, որը ցույց է տվել, որ բնակչության 44%-ը բողոքական է, 36%-ը՝ կաթոլիկ, իսկ 8%-ն ունի այլ կրոնական պատկանելություն: Դա նաև հիմնավորված չէ այն փաստի լույսի ներքո, որ Կանադայի այլ նահանգները և տարածքները խտրականություն չեն կիրառում կրոնի հիման վրա, երբ բաշխում են կրթության ֆինանսավորման միջոցները⁵⁶:

Մասնակից պետությունը պաշտպանեց Օնտարիոյի խնդրո առարկա օրենքները հետևյալ կերպ.

¶ 4.3.4. Բացի 1867 թ. սահմանադրական օրենքով ստանձնած իր պարտավորություններից, մասնակից պետությունը որևէ ուղղակի ֆինանսավորում չի տրամադրում կրոնական դպրոցներին: Նման հանգամանքներից ելնելով՝ մասնակից պետությունը պնդում է, որ խտրականություն չէ կրոնական դպրոցների ֆինանսավորումը մերժելը: Իր որոշումը կայացնելիս մասնակից պետությունը ձգտում է հասնել այն նույն արժեքներին, որոնք առաջ են մղվում 26-րդ հոդվածով, ձգտում է հանդուրժողական հասարակության ստեղծման, որտեղ գոյություն ունի հարգանք և հավասարություն բոլոր կրոնական դավանանքների համար: Մասնակից պետությունը պնդում է, որ հենց 26-րդ հոդվածի նպատակների դեմ կլինի, եթե կոմիտեն որոշի, որ 1867 թ. սահմանադրական օրենքի այն դրույթների պատճառով, որոնք պահանջում են ֆինանսավորել Հռոմի կաթոլիկ դպրոցները, մասնակից պետությունն այժմ պարտավոր է ֆինանսավորել բոլոր մասնավոր կրոնական դպրոցները՝ այդպիսով թուլացնելով այնպիսի հանդուրժողական հասարակություն ստեղծելու և առաջ մղելու իր կարողությունը, որն իսկապես պաշտպանում է կրոնական ազատությունները. մինչդեռ 1867 թ. սահմանադրական նորմի բացակայության դեպքում պետությունը դաշնագրով ընդհանրապես որևէ պարտավորություն չի ունենա՝ ֆինանսավորելու որևէ կրոնական դպրոց: ...

¶ 4.4.5. [Այլ] մասնակից պետությունը փաստարկում է, որ եթե Օնտարիոյի նահանգը ստիպված եղավ ֆինանսավորել մասնավոր կրոնական դպրոցները, սա վնասակար ազդեցություն կունենա նահանգի պետական դպրոցների և հետևաբար հանդուրժողական, բազմամշակույթ, խտրականությունից զերծ հասարակություն ձևավորելու վրա՝ այդպիսով խախտելով այլոց հիմնարար իրավունքները և ազատությունները: Մասնակից պետության կարծիքով՝ գտնվել է ճիշտ հավասարակշռություն՝ ֆինանսավորելով պետական դպրոցների համակարգը, որտեղ բոլոր խմբերի ներկայացուցիչները կարող են սովորել միասին՝ միաժամանակ պահպանելով ծնողների՝ իրենց երեխաներին սեփական ծախսերով մասնավոր կրոնական դպրոց ուղարկելու ազատությունը, եթե այդպես են ցանկանում:

Պետության կողմից վերը մեջբերված փաստարկներն ուղղակիորեն չեն պատասխանում հեղինակի բողոքին: Հեղինակը բողոքում է Հռոմի կաթոլիկ դպրոցների և այլ կրոնական փոքրամասնությունների դպրոցների տարբերակման դեմ, այսինքն՝ դպրոցների և, հետևաբար, տարբեր կրոնական համոզմունքներ ունեցող աշակերտների առկա տարբերակման դեմ: Մասնակից պետությունն իր վերոնշյալ փաստարկներում անդրադառնում է այնպիսի տարբերակման, որը նման է ավելի վաղ դիտարկված *Բլոմֆիլդ* [23.64] գործում բարձրացված՝ պետական աշխարհիկ դպրոցների և մասնավոր կրոնական դպրոցների պետական ֆինանսավորման տարբերակմանը: Հետագա բանավեճերում մասնակից պետությունն ավելի ուղղակիորեն անդրադարձավ հեղինակի բողոքին.

¶ 8.2. Մասնակից պետությունը նշում է, որ ... հեղինակը ... մատնացույց է անում, որ հայտարարվող խտրականության հնարավոր շտկում կարող էր լինել հռոմեական կաթոլիկ առանձնացված դպրոցների ֆինանսավորման վերացումը: Մինչ օրս մասնակից պետության պատասխանը հեղինակի հաղորդմանը սևեռվել է նրա այն պնդման վրա, որ ֆինանսավորումն ընդլայնելու անկարողությունը եղել է դաշնագրի խախտում, ոչ թե այն պնդման վրա, որ հռոմեական կաթոլիկ առանձնացված դպրոցների համակարգի ֆինանսավորումը դադարեցնելու անկարողությունը խախտում է դաշնագիրը: ...

¶ 8.3. ... Այս համատեքստում մասնակից պետությունը բացատրում է, որ առանց հռոմեական կաթոլիկ փոքրամասնության իրավունքների պաշտպանության՝ Կանադայի հիմնադրումն անհնար կլիներ, և առանձնացված դպրոցների համակարգը մնում է հակասական խնդիր, որը ժամանակ առ ժամանակ վտանգում է ազգային միասնականությունը: Մասնակից պետությունը բացատրում է, որ հռոմեական կաթոլիկ համայնքի կողմից ֆինանսավորումը դիտվում է որպես պատմական անարդարության շտկում:

¶ 8.4. Մասնակից պետությունը պնդում է, որ Օնտարիոյի հռոմեական կաթոլիկ առանձնացված դպրոցների ֆինան-

⁵⁶ Քվեբեկում և Նյուֆաունդլենդում գործում են սահմանադրորեն հաստատված, նշվածից տարբեր կարգեր:

սավորումը չվերացնելու համար գոյություն ունեն հիմնավոր և օբյեկտիվ հիմքեր: Ֆինանսավորման դադարեցումը կրկնվելու որպես հրաժարում Կոնֆեդերացիայում ձեռք բերված համաձայնությունից, ըստ որի՝ պաշտպանվեն նահանգի խոցելի փոքրամասնության շահերը, և այդ քայլը հռոմեական կաթոլիկ համայնքի կողմից կրկնվելու ցատկոմով ու դիմադրությամբ: Դա նաև կհանգեցնեք որոշ չափով տնտեսական խառնաշփոթի, ներառյալ՝ Զոմի կաթոլիկ դպրոցներին հատկացված շինությունների կամ հողերի փոխհատուցման պահանջները: Ավելին՝ փոքրամասնությունների իրավունքների, ներառյալ՝ փոքրամասնությունների կրոնական և կրթական իրավունքների պաշտպանությունը մի սկզբունք է, որն ընկած է Կանադայի սահմանադրական կարգի հիմքում և խոչընդոտում է Զոմի կաթոլիկ առանձնացված դպրոցների ֆինանսավորման վերացումը: Օնտարիոյի առանձնացված դպրոցների ֆինանսավորման դադարեցումը հետագայում կհանգեցնեք Կանադայի այլ նահանգների նկատմամբ ճնշումների, որպեսզի վերջիններս վերացնեն իրենց սահմաններում բնակվող փոքրամասնություններին տրամադրվող պաշտպանությունը:

ՄԻԿ-ը վճիռ կայացրեց հոգուտ հեղինակի հետևյալ ձևակերպմամբ.

¶ 10.2. Կոմիտեն ներկայացված խնդիրն այն է, թե Զոմի կաթոլիկ դպրոցների պետական ֆինանսավորումն այն դեպքում, երբ չեն ֆինանսավորվում հեղինակի դավանած կրոնին պատկանող դպրոցները, ինչի պատճառով նա ստիպված է անձամբ ամբողջությամբ վճարել կրոնական դպրոցի ուսման վարձը, հեղինակի՝ դաշնագրով ճանաչված իրավունքների ոտնահարում է, թե՞ ոչ:

¶ 10.3. Մասնակից պետությունը փաստարկել է, որ որևէ խտրականություն տեղի չի ունեցել, քանի որ կիրառվող տարբերակումը հիմնված է օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա. Զոմի կաթոլիկ դպրոցների նկատմամբ ցուցաբերվող արտոնյալ վերաբերմունքն ամրագրված է սահմանադրության մեջ: Քանի որ Զոմի կաթոլիկ դպրոցները պետական դպրոցների համակարգում ներառված են որպես մի առանձին բաղադրիչ, տարբերությունը մասնավոր և պետական դպրոցների միջև է, ոչ թե Զոմի կաթոլիկ մասնավոր դպրոցների և այլ կրոնական դավանանքների պատկանող մասնավոր դպրոցների միջև, իսկ աշխարհիկ կրթության պետական համակարգի նպատակները համահունչ են դաշնագրին:

¶ 10.4. Կոմիտեն նախ նշում է, որ սահմանադրության մեջ որևէ տարբերակման ամրագրվելու փաստը դեռևս այն հիմնավորված և օբյեկտիվ չի դարձնում: Տվյալ դեպքում տարբերակումը սահմանվել է 1867 թ.՝ պաշտպանելու համար Օնտարիոյի հռոմեական կաթոլիկներին: Կոմիտեի տրամադրության տակ եղած նյութերը ցույց չեն տալիս, որ հռոմեական կաթոլիկ համայնքի անդամները կամ այդ համայնքի որևէ ճանաչելի հատված այժմ անբարենպաստ վիճակում են՝ համեմատած իրենական համայնքի այն անդամների հետ, ովքեր ցանկանում են իրենց երեխաների կրթությունը վստահել կրոնական դպրոցների: Այսպիսով, կոմիտեն մերժում է մասնակից պետության այն փաստարկը, թե Զոմի կաթոլիկ դպրոցների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքը խտրական բնույթի չէ, քանի որ այն սահմանադրական պարտավորություն է:

¶ 10.5. Ինչ վերաբերում է մասնակից պետության այն փաստարկին, թե պետական ֆինանսական միջոցները բաշխելիս մասնավոր և պետական դպրոցների միջև տարբերակում կատարելը հիմնավորված է, ապա կոմիտեն նշում է, որ հռոմեական կաթոլիկ համայնքի անդամներից բացի, այլ կրոնական դավանանքների պատկանողների համար անհնար է իրենց մասնավոր կրոնական դպրոցները մտցնել պետական դպրոցական համակարգի մեջ: Դիտարկվող գործում հեղինակն իր երեխաներին ուղարկել է մասնավոր կրոնական դպրոց ոչ թե այն պատճառով, որ իր երեխաներին ցանկանում է տալ մասնավոր, կառավարությունից անկախ կրթություն, այլ որովհետև պետական ֆինանսավորմամբ դպրոցական համակարգը իր կրոնական դավանանքին համապատասխանող կրթություն չի տրամադրում, մինչդեռ Զոմի կաթոլիկ հավատքի հետևորդների համար գոյություն ունեն պետական ֆինանսավորմամբ կրոնական դպրոցներ: Իր տրամադրության տակ եղած փաստերի հիման վրա կոմիտեն որոշում է, որ վերաբերմունքի այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն հռոմեական կաթոլիկ կրոնական դպրոցների (որոնք, որպես պետական կրթության համակարգի մի առանձին մաս, ստանում են պետական ֆինանսավորում) և հեղինակի կրոնին համապատասխանող դպրոցների (որոնք անհրաժեշտաբար մասնավոր են) միջև, չեն կարող համարվել հիմնավորված և օբյեկտիվ:

¶ 10.6. Կոմիտեն ի գիտություն է ընդունել մասնակից պետության այն փաստարկը, որ մասնակից պետության աշխարհիկ պետական կրթության համակարգի նպատակները համահունչ են դաշնագրում ամրագրված խտրականություն չկիրառելու սկզբունքին: Կոմիտեն անհամաձայնություն չի հայտնում այս փաստարկին, սակայն նշում է, որ համակարգի հայտարարված նպատակները չեն արդարացնում հռոմեական կաթոլիկ կրոնական դպրոցների բացառիկ ֆինանսավորումը: Կոմիտեն նաև նկատի է առել հեղինակի այն պնդումը, որ Օնտարիոյի պետական դպրոցների համակարգը կունենար ավելի մեծ ռեսուրսներ, եթե կառավարությունը դադարեցնեք որևէ կրոնական դպրոցի ֆինանսավորումը: Այս համատեքստում կոմիտեն նկատում է, որ դաշնագիրը պետություններին չի պարտավորեցնում ֆինանսավորել կրոնական հիմքի վրա ստեղծված դպրոցները: Այնուամենայնիվ, եթե որևէ մասնակից պետություն որոշում է պետական ֆինանսավորում տրամադրել կրոնական դպրոցներին, նա պետք է այդ ֆինանսավոր-

րումը տրամադրի առանց խտրականության: Սա նշանակում է, որ մի կրոնական խմբի պատկանող դպրոցներին ֆինանսավորում տրամադրելը, իսկ մեկ այլ խմբի դպրոցներին՝ չտրամադրելը, պետք է հիմնված լինեն ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա: Տվյալ դեպքում կոմիտեն եզրակացնում է, որ իր տրամադրության տակ եղած նյութերը ցույց չեն տալիս, որ Հռոմի կաթոլիկ հավատքի և հեղինակի կրոնական դավանանքի միջև տարբերակումը հիմնված է մեծ չափանիշների վրա: Ուրեմն՝ տեղի է ունեցել հեղինակի՝ դաշնագրի 26-րդ հոդվածով ճանաչված խտրականությունից հավասարապես և արդյունավետորեն պաշտպանված լինելու իրավունքի ոտնահարում:

Իրավունքի ոտնահարումը շտկելու համար Օնտարիոն կա՛մ պետք է ավելացնի ֆինանսավորումը և ընդգրկի բոլոր կրոնական դպրոցները (ինչը մեծ ազդեցություն կունենար Օնտարիոյի բյուջեի վրա), պետական դպրոցական համակարգում թույլատրի բոլոր կրոնական խմբերի համար նախատեսված կրթությունը (հակառակ իր երկրում գերիշխող աշխարհիկ մոդելի), կա՛մ դադարեցնի Հռոմի կաթոլիկ դպրոցների ֆինանսավորումը⁵⁷: Վերջին լուծումը, եթե ընդունվի, պետք է լինի քաղաքական, և, հաշվի առնելով *Կանադայի 1867 թ. սահմանադրության* 93-րդ բաժինը, իրավական տեսանկյունից դժվար իրականացվող⁵⁸: «Ուոլդմանի» գործով իր հետագա պատասխանում Կանադայի կառավարությունը ՄԻԿ-ին տեղեկացրեց, որ Օնտարիոյի կառավարությունը, ըստ էության, չի պատրաստվում իրագործել *Ուոլդմանի* գործով կայացված որոշումը⁵⁹:

[23.64] «*ԲԼՈՄՆ ընդդեմ ՇՎԵԴԻԱՅԻ*» (*BLOM v SWEDEN, 191/85*)

Փաստերն ակնհայտ են ՄԻԿ-ի՝ ըստ էության կայացրած որոշումից⁶⁰.

¶ 10.2. Կոմիտեին ներկայացված հիմնական հարցն այն է, թե արդյոք հաղորդման հեղինակը տուժե՞լ է դաշնագրի 26-րդ հոդվածի խախտումից, որն առաջացել է կրթական նպաստների վերաբերյալ Շվեդիայի կանոնակարգերի և նշված նորմի, ըստ հայտարարության, անհամապատասխանության պատճառով: Որոշելիս, թե արդյոք տվյալ մասնակից պետությունը խախտե՞լ է 26-րդ հոդվածը, երբ հեղինակին՝ որպես մասնավոր դպրոցի աշակերտի, 1981-82 թթ. ուսումնական տարվա համար մերժել է ուսման նպաստի տրամադրումը, այն դեպքում, երբ պետական դպրոցների աշակերտներն իրավունք են ունեցել այդ նույն ժամանակահատվածի համար ստանալու կրթական նպաստներ, կոմիտեն իր բացահայտումները հիմնում է հետևյալ դիտարկումների վրա:

¶ 10.3. Մասնակից պետության կրթական համակարգը նախատեսում է թե՛ մասնավոր և թե՛ պետական կրթության հնարավորություն: Չի կարելի համարել, որ մասնակից պետությունը գործել է խտրական ձևով, եթե սուբսիդիաների նույն մակարդակը չի տրամադրում հաստատությունների այս երկու տեսակներին, այն դեպքում, երբ մասնավոր համակարգը դուրս է պետության վերահսկողությունից: ...

Բլոմի գործը *Ուոլդմանի* գործից տարբերվում է այն առումով, որ *Ուոլդմանի* գործում խնդրո առարկա տարբերակումը թվարկված կրոնների հիմքով էր: *Բլոմի* գործում խնդրո առարկա տարբերակումը մասնավոր դպրոցների և պետական դպրոցների աշակերտների միջև է: Դժվար թե զարմանալի լինի այն, որ ՄԻԿ-ն առաջին տարբերակումն ընդունեց առավել լրջորեն: Նույն ճակատագիրն ունեցան հետևյալ գործերում ներկայացված խնդրո առարկա տարբերակումները:

[23.65] «*ՈՒԼԱՋԻՆԸ և ԿԱՅՍՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ*» (*OULAJIN and KAISS v THE NETHERLANDS, 406, 426/90*)

Հեղինակները բողոքում էին Հոլանդիայի օրենսդրության մեջ՝ անձի հարազատ զավակի համար տրվող

⁵⁷ Տե՛ս M. Valpy, 'Axworthy Draws Flak for Comments on Ontario', Globe and Mail, 19 January 2000.

⁵⁸ 93-րդ բաժնի փոփոխություն կարող է տեղի ունենալ ներգրավված մահանգի և դաշնային կառավարության համաձայնության դեպքում (պարբ. 5.5): Նման փոփոխություններ վերջին ժամանակներս տեղի են ունեցել Քվեբեկում և Նյուֆաունդլենդում: Կանադայի գերագույն դատարանը վճռել է, որ Հռոմի կաթոլիկ դպրոցների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքը չի խախտում Կանադայի իրավունքների և ազատությունների խարտիան [Canadian Charter of Rights and Freedoms], քանի որ Օնտարիոն սահմանադրորեն պարտավոր էր կիրառել նման նախապատվություն. տե՛ս *Reference Re Bill 30, An Act to amend the Education Act (Ont.)* [1987] 1 SCR 1148, «*Ադլերն ընդդեմ Օնտարիոյի*» (*Adler v Ontario*) [1996] 3 SCR 609: Տե՛ս նաև *Ուոլդմանի* գործը, պարբ. 2.6-2.11-ը:

⁵⁹ (2000) ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/40, հատոր I, պարբ. 608:

⁶⁰ Տե՛ս նաև «*Լինդգրենը և այլք ընդդեմ Շվեդիայի*» (*Lindgren et al v Sweden, 298-99/88*), պարբ. 10.3:

երեխայի նպաստի և անձի խնամակալության տակ գտնվող երեխայի համար տրվող նպաստի անհամապատասխանության դեմ: Հեղինակներն ապրում էին Նիդեռլանդներում, իսկ նրանց հարազատ և խնամակալության տակ գտնվող երեխաները բնակվում էին Մարոկկոյում: Խնամակալության տակ գտնվող երեխաները հեղինակների զարմիկներն էին, որոնց համար հեղինակները ստանձնել էին ֆինանսական պատասխանատվություն: Հեղինակները բողոքում էին այն իրողության դեմ, որ իրենք նպաստ ստանում են միայն իրենց հարազատ զավակների համար: Նրանք չէին բավարարել իրենց խնամակալության տակ գտնվող երեխաների անունով նպաստ ստանալու համար օրենսդրությամբ սահմանված քննության պահանջները, ըստ որոնց՝ պետք է ապացուցեին, որ բավարար մտերիմ հարաբերություններ ունեն խնամակալության տակ գտնվող երեխաների հետ, բավարար նրանց դաստիարակության վրա ազդեցություն ունենալու համար:

¶ 3.1. ... [Հ]եղինակները պնդում են, որ իրենց դեպքում կիրառվում է մի անթույլատրելի տարբերակում «սեփական երեխաների» և «խնամակալության տակ գտնվող երեխաների» միջև, երբ բոլորն են պատկանում են Մարոկկոյում բնակվող միևնույն ընտանիքին:

¶ 3.2. Հեղինակները նշում են, որ փաստացի վիճակը, որում ապրում են խնդրին առնչվող երեխաները, չի տարբերվում, և *դե ֆակտո*, երկուսի ծնողներն էլ նույնն են: Հոլանդիայի իշխանությունները սեփական ծնողներից առանձին և արտասահմանում ապրող երեխաների համար վճարում են երեխայի նպաստ՝ անկախ այն հանգամանքից՝ Նիդեռլանդներում բնակվող ծնողը մասնակցո՞ւմ է երեխայի խնամքին, թե՞ ոչ: Հեղինակների կարծիքով՝ «տարբերակված վերաբերմունքը» հիմնված չէ «ողջամիտ և օբյեկտիվ» չափանիշների վրա:

¶ 3.3. Հեղինակները փաստարկում են, որ երեխային նպաստ հատկացնելու կամ չհատկացնելու հարցը որոշելիս պետք է հաշվի առնվեն ոչ միայն «արևմտյան չափորոշիչները»: Նրանք իրենց հարազատներին տարել են իրենց ընտանիք՝ համաձայն Մարոկկոյում տարածված ավանդույթների:

Մասնակից պետությունը ոտնահարման մասին հայտարարություններին պատասխանեց հետևյալ կերպ.

¶ 5.2. Մասնակից պետությունն ընդունում է, որ հեղինակների հայտարարությունները վեր են հանում երկու խնդիր.

(1) արդյոք դիմողի սեփական երեխաների և նրա խնամակալության տակ գտնվող երեխաների միջև կիրառվող տարբերակումը Նիդեռլանդներում կարելի՞ է որակել որպես դաշնագրի 26-րդ հոդվածի խախտում.

(2) արդյոք խնամակալության տակ գտնվող երեխաների համար երեխայի նպաստ ստանալու իրավունքը կարգավորող կանոնակարգերը, ինչպես դրանք կիրառվում են Նիդեռլանդներում, այնտեղ բնակվող ոչ հոլանդացիների դեպքում հանգեցնո՞ւմ են չարդարացվող անբարենպաստ վիճակի:

¶ 5.3. Ինչ վերաբերում է առաջին հարցին, մասնակից պետությունն ընդունում է, որ որպեսզի դիմողն իր խնամակալության տակ գտնվող երեխաների համար երեխայի նպաստ ստանալու իրավունք ունենա, տվյալ անձը պետք է խնդրո առարկա երեխաներին խնամի այնպես, որ դա համեմատելի լինի այն եղանակին, որով նորմալ դեպքերում ծնողները մեծացնում են իրենց երեխաներին: Այս պահանջը չի տարածվում դիմողի հարազատ զավակների վրա: Մասնակից պետությունը փաստարկում է, որ այս տարբերակումը չի ոտնահարում դաշնագրի 26-րդ հոդվածը: Նա պնդում է, որ համապատասխան կանոնակարգերի նպատակն է որոշել օբյեկտիվ չափանիշների հիման վրա, թե արդյոք խնամակալության տակ գտնվող երեխայի և խնամակալ ծնողի միջև գոյություն ունեցող հարաբերությունները մտերիմ են այնքան, որ տեղին լինի երեխայի նպաստ վճարել այնպես, ինչպես խնամակալ ծնողի հարազատ զավակի դեպքում կլիներ:

¶ 5.4. Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, ապա մասնակից պետությունը նկատում է, որ գոյություն չունեն տվյալներ, որոնք ցույց կտային, որ կանոնակարգերն ավելի շատ ազդում են միգրանտ աշխատողների, քան հոլանդացիների վրա: Մասնակից պետությունը պնդում է, որ այն օրենքի պահանջները, որով կարգավորվում է խնամակալության տակ գտնվող երեխաների համար նպաստ ստանալու իրավունքը ունենալու հարցը, խստորեն կիրառվում են՝ անկախ դիմողի ազգությունից կամ խնամակալության տակ գտնվող երեխաների բնակության վայրից: Մասնակից պետությունը նկատում է, որ նախադեպային իրավունքը մատնանշում է, որ Նիդեռլանդներում բնակվող հոլանդացի դիմողները նույնպես իրենց խնամակալության տակ գտնվող և արտասահմանում բնակվող երեխաների համար երեխայի նպաստ ստանալու իրավունքից զուրկ են ճանաչվում: Ավելին՝ եթե ծնողներից մեկը կամ երկուսն էլ դեռևս ողջ են, սկզբունքորեն ենթադրվում է, որ հարազատ ծնողը ծնողական կապի մեջ է երեխայի հետ, ինչը, որպես կանոն, խնամակալ ծնողին հնարավորություն չի տալիս բավարարելու «երեխայի նպաստի մասին» օրենքի պահանջները:

ՄԻԿ-ը որոշում կայացրեց հոգուտ մասնակից պետության.

¶ 7.4. Ինչ վերաբերում է «Երեխայի նպաստի մասին» օրենքին, ապա մասնակից պետությունը նկատում է, որ գոյություն ունեն օբյեկտիվ տարբերություններ անձի սեփական երեխաների և խնամակալության տակ վերցված երեխաների միջև, որոնք էլ արդարացում են վերաբերումնքի՝ օրենքով սահմանված տարբերությունը: Կոմիտեն ընդունում է, որ տարբերակումն օբյեկտիվ է, և կարիք կա միայն ուշադրությունը կենտրոնացնելու ողջամտության չափանիշի վրա: Նկատի առնելով այն, որ նպաստների հատկացման հարցում որոշակի սահմանափակումները կարող են անխուսափելի լինել, կոմիտեն քննարկել է, թե արդյոք ողջամիտ է անձի սեփական երեխաների և խնամակալության տակ վերցված երեխաների միջև «Երեխայի նպաստի մասին» օրենքով սահմանված տարբերակումը, մասնավորապես՝ այն պահանջը, որ որպես նպաստի հատկացման նախապայման՝ խնամակալ ծնողը պետք է ներգրավված լինի խնամակալության տակ գտնվող երեխաների դաստիարակության գործում: Մասնակից պետության կողմից ներկայացված բացատրությունների լույսի ներքո կոմիտեն եզրակացնում է, որ «Երեխայի նպաստի մասին» օրենքում սահմանված տարբերակումները անհամատեղելի չեն դաշնագրի 26-րդ հոդվածի հետ:

¶ 7.5. Անձի սեփական երեխաների և խնամակալության տակ վերցված երեխաների միջև «Երեխայի նպաստի մասին» օրենքով սահմանված տարբերակումը կանխում է դիմող խնամակալ ծնողի հետ չբնակվող խնամակալության տակ գտնվող երեխաների համար երեխայի նպաստի հատկացումը: Այդ կապակցությամբ հեղինակները հայտարարում են, որ այս պահանջի կիրառումը գործնականում խտրական բնույթ ունի, քանի որ ավելի մեծ չափով ազդում է միգրանտ աշխատողների, քանի հոլանդացիների վրա: Կոմիտեն նշում է, որ հեղինակները չեն կարողացել իրենց հայցի հիմնավորում ներկայացնել, ավելին՝ նկատում է, որ «Երեխայի նպաստի մասին» օրենքը որևէ տարբերակում չի սահմանում հոլանդացիների և ոչ հոլանդացիների, օրինակ՝ միգրանտ աշխատողների միջև: Կոմիտեն համարում է, որ դաշնագրի 26-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում այն տարբերությունների վրա, որոնք ծագում են նպաստների բաշխման ժամանակ ընդհանուր կանոնների հավասարապես կիրառման արդյունքում:

[23.66]

**«ԴԱՆԻՆԳՆ ԸՆԴՈՂԵՆ ՆԻՆԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(DANNING v THE NETHERLANDS, 180/84)**

Փաստերը ներկայացված են ստորև.

¶ 2.2. [Յեղիմակը] հայտարարում է, որ, ի հետևանք 1979 թ. տեղի ունեցած ավտոմոբիլային պատահարի, ինքը հաշմանդամ է դարձել և գամվել անվասայլակին: Պատահարին հաջորդած առաջին տարվա ընթացքում նա վճարումներ է ստացել իր գործատուի տրամադրած ապահովագրությունից: Առաջին տարին անցնելուց հետո վճարումները ստացվել են մեկ այլ ապահովագրական ծրագրի շրջանակում, որը նախատեսված է այն աշխատողների համար, ովքեր բժշկական եզրակացությամբ հայտարարվել են անգործունակ: Նշված ծրագիրը ամուսնացած շահառուների համար ավելի խոշոր վճարումներ է նախատեսում: Յեղիմակը պնդում է, որ 1977 թ. ի վեր ինքը նշանված է եղել օրիորդ Էսթեր Վերշուրենի հետ, և իրենք ապրում են համատեղ՝ քաղաքացիական ամուսնությամբ: Յետևաբար, պնդում է նա, իրեն պետք է ապահովագրական նպաստ հատկացնեն որպես ամուսնացած մարդու և ոչ թե որպես ամուրիի: Այդպիսի նպաստներ նրան, այդուհանդերձ, հրաժարվել են վճարել, և նա հայց է ներկայացրել Նիդեռլանդներում գործող իրավասու մարմիններին: Ռոտերդամում գործող «Ռաադ վան Բերոպ» գրասենյակը (մի մարմին, որը զբաղվում է զբաղվածության ոլորտին առնչվող վարչական դիմումներով) 1981 թ. որոշել է, որ Դանինգի հայցի հիմնավորումը թերի է: Յեղիմակը հետագայում դիմել է Ուտրեխտում տեղակայված «Ցենտրալ Ռաադ վան Բերոպ» գրասենյակ, որը 1983-ին հաստատել է իր ստորադաս մարմնի որոշումը: Յեղիմակը հայտարարում է, որ իր բողոքը սպառել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

Նիդեռլանդների կառավարությունը բացատրել է հաշմանդամներին վերաբերող ազգային օրենսդրության համաձայն ամուսնացած և չամուսնացած զույգերի միջև տարբերությունը.

¶ 8.4. Ինչ վերաբերում է դաշնագրի 26-րդ հոդվածում ամրագրված խտրականության գաղափարին, ապա մասնակից պետությունը հոլանդական իրավունքի մեջ սահմանված տարբերակումները բացատրեց հետևյալ կերպ.

Նիդեռլանդներում այն փաստը, որ մարդիկ համատեղ ապրում են որպես ամուսնացած կամ չամուսնացած զույգեր, վաղուց համարվել է բավարար գործոն, որից բխել են որոշակի իրավական հետևանքներ: Որպես չամուսնացած կենակիցներ միասին ապրող անձինք հնարավորություն ունեն ազատորեն ընտրելու՝ ստեղծել ամուսնական կապեր, թե՛ ոչ՝ այդպիսով իրենց դնելով օրենքների մեկ կամ մյուս համախմբի ազդեցության տակ: Այս երկուսի միջև եղած տարբերությունները հսկայական են. ամուսնացած անձանց համատեղ բնակությունը ենթակա է զգալիորեն ավելի մեծ իրավական կարգավորման, քան չամուսնացած կենակցումը: Օրինակ՝ ամուսնացած մարդը պարտավոր է իր ամուսնու համար նախատեսել գոյության միջոցներ, ամուսինները համատեղ պատասխանատվություն են

կրում այն պարտքերի համար, որոնք առաջացել են համատեղ սեփականության առնչությամբ, ամուսնացած մարդու դեպքում մաս պահանջվում է ամուսնու թույլտվությունը կամ համագործակցությունը որոշակի ձեռնարկումների համար, ինչպիսիք են երկարաժամկետ ապառիկով իրերի գնումը, որը սովորական պայմաններում համարվում է տնային տնտեսության ձեռքբերումների բաղադրիչը, առնչվում է ընտանեկան օջախին և այլն: Քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է բազմաթիվ կանոններ, որոնցով կանոնակարգվում է սեփականությանը վերաբերող ընտանեկան իրավունքը: Ամուսնությունն ամուսնալուծությամբ ավարտելու իրավական հետևանքները նույնպես ենթակա են քաղաքացիական օրենսգրքի բազմաթիվ նորմերի գործողությանը, ներառյալ՝ մի դրույթ, որը թույլ է տալիս նախկին ամուսնու գոյության ապահովման նպատակով ալիմենտի վճարում պարտադրել: Ժառանգությանն առնչվող օրենքը նույնպես ամբողջությամբ կախվածության մեջ է անձի ֆորմալ կարգավիճակից: Կառավարությունը չի կարող ընդունել այն, որ Նիդեռլանդների օրենսդրության տեսակետից ամուսնացած և չամուսնացած կենակիցների նկատմամբ վերաբերմունքի վերոշարադրյալ տարբերությունները կարող են որակվել որպես «խտրականություն»՝ այդ եզրույթի իրավական իմաստով, որն ամրագրված է դաշնագրի 26-րդ հոդվածով: Գոյություն չունի այնպիսի խնդիր, թե իբր «հավասարազոր դեպքերի» նկատմամբ օրենքի ներքո կիրառվում են տարբեր մոտեցումներ: Գոյություն ունի ամուսնացած և չամուսնացած կենակիցների իրավական դիրքերի տարբերության օբյեկտիվ հիմնավորում, որը նախատեսվում է Նիդեռլանդների օրենսդրությամբ:

ՄԻԿ-ն ըստ էության որոշում կայացրեց հոգուտ Նիդեռլանդների:

¶ 14. Հետևաբար մնում է, որ կոմիտեն որոշի՝ դիտարկվող ժամանակահատվածում Նիդեռլանդների օրենսդրության մեջ սահմանվող և պրն Դանինգի նկատմամբ կիրառված տարբերակումը խտրականություն է 26-րդ հոդվածի իմաստով: Ամուսնացած և չամուսնացած զույգերի միջև Նիդեռլանդների օրենսդրությամբ սահմանված տարբերակումների առնչությամբ մասնակից պետության ներկայացրած բացատրությունների (վերոնշյալ պարբ. 8.4), լույսի ներքո կոմիտեն համոզված է, որ այն տարբերակումը, որի դեմ բողոքել է պրն Դանինգը, հիմնված է օբյեկտիվ և ողջամիտ չափանիշների վրա: Կոմիտեն այս կապակցությամբ նկատում է, որ ամուսնության միջոցով իրավական որոշակի կարգավիճակ ստանալու որոշումը, որը, համաձայն Նիդեռլանդների օրենսդրության, տալիս է թե՛ որոշակի օգուտներ և թե՛ սահմանում որոշակի պարտականություններ և պատասխանատվություն, կայացնում են բացառապես կենակցող անձինք: Ընտրելով չամուսնանալու տարբերակը՝ պրն Դանինգը և նրա կենակիցը, համաձայն օրենքի, չեն ստանձնել ամուսնացած զույգերի վրա տարածվող պարտականությունների և պատասխանատվության ողջ ծավալը: Հետևաբար պրն Դանինգը չի ստանում այն բոլոր օգուտները, որոնք Նիդեռլանդների օրենսդրությամբ նախատեսված են ամուսնացած զույգերի համար: Կոմիտեն ամփոփում է եզրակացությամբ, որ տարբերակումը, որի դեմ բողոքել է պրն Դանինգը, խտրականություն չէ դաշնագրի 26-րդ հոդվածում ամրագրված իմաստով:

Նմանօրինակ որոշումներ ընդունվեցին «Սպրենգերն ընդդեմ Նիդեռլանդների» (*Sprenger v the Netherlands, 395/90*) գործով (որը վերաբերում էր Նիդեռլանդների օրենսդրությամբ սահմանված տարբերություններին ամուսնացած և չամուսնացած զույգերին տրվող գործազրկության նպաստների միջև) և «Հոոֆդմանն ընդդեմ Նիդեռլանդների» (*Hoofdmann v the Netherlands, 602/94*) գործով (որը վերաբերում էր ամուսնացած և չամուսնացած զույգերին կերակրողին կորցնելու դեպքում տրվող նպաստների միջև գոյություն ունեցող տարբերություններին):

[23.67] Այնուամենայնիվ ուշադրություն դարձրեք *Հոոֆդմանի* գործով տկն Էվաթի՝ դժկամությամբ համաձայնություն արտահայտող կարծիքին.

Ընդունելով հանդերձ այս խնդրի շուրջ կոմիտեի կայացրած որոշումը՝ կցանկանալի ընդգծել, որ մասնակից պետությունն ընդունել է, որ կենակիցները որոշ դեպքերում պետք է համարվեն ընտանեկան միավոր: Այս գործունը պետք է նկատի առնվի, երբ ուսումնասիրվում է, թե ողջամիտ և օբյեկտիվ են ամուսնացած զույգերի և կենակիցների միջև առկա տարբերակումը պահպանելու համար հիշատակված հիմքերը՝ կապված խնդրո առարկա նպաստի հետ: Այս առումով չեն կարծում, որ մասնակից պետության փաստարկները՝ հիմնված ամուսնության իրավական հետևանքների կամ ժառանգության մասին օրենքի վրա, համոզիչ են կամ առանձնապես տեղին են՝ կապված այն նպաստի հատկացման հետ, որը ձևակերպվել է, որպեսզի ժամանակավորապես մեղմի մահվան հետևանքով զուգընկերոջ կորուստը: Որպեսզի ընտանեկան խմբերի միջև տարբերակումները համարվեն ողջամիտ և օբյեկտիվ, դրանք պետք է լինեն տրամաբանված և հաշվի առնեն սոցիալական իրականությունը:

Տկն Էվաթի տեսակետը ակնարկում է այն փաստը, որ ողջամիտ տարբերակումները կարող են ժամանակի ընթացքում դառնալ ոչ ողջամիտ: Օրինակ՝ զուցե ժամանակին տղամարդկանց և կանանց՝ որպես «կերակրողի» տարբերակումը Նիդեռլանդներում, թոշակ ստանալու իրավունքի որոշման նպատակներից ելնելով, եղել է «ողջամիտ»: Այնպիսի գործերը, ինչպիսիք են *Բրուկսի* և *Պաուզերի* գործերը, հաստատել են, որ այս տարբերակումը ներկայումս կորցրել է իր արդիականությունը և չի համապատասխանում Հոլանդիայի առկա սոցիալական իրականությանը [23.58]: *Հոոֆդմանի* գործով տկն Էվաթը

զգուշացրեց, որ *դե ֆակտո* զույգերի նկատմամբ Նիդեռլանդների սոցիալական ապահովության օրենսդրության մեջ 1990-ական թվականներին տարածված խտրականությունը մույնպես չէր համապատասխանում Հոլանդիայի առկա սոցիալական բարքերին և այդպիսով մոտ է հատելու «ողջամիտ» և «ոչ ողջամիտ, անթույլատրելի» խտրականության միջև գոյություն ունեցող սահմանը⁶¹:

[23.67Ա] «ՅԱՆԳՆ ընդդեմ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ» (YOUNG v AUSTRALIA, 941/00)

Հեղինակը երեսուներեք տարի շարունակ համասեռական հարաբերությունների մեջ է եղել պրն Բ-ի [Mr. C] հետ: Պրն Բ-ն, ով պատերազմի վետերան էր, մահացել է 1998 թ. դեկտեմբերին: 1999 թ. մարտի 1-ին հեղինակը՝ որպես վետերանի խնամառու [dependant], դիմում է ներկայացրել թոշակ ստանալու համար: Համապատասխան օրենսդրությունը՝ «Վետերանների իրավունքների մասին» օրենքը [Veteran's Entitlement Act], նախատեսում է վետերանի զուգընկերոջ թոշակավորում միայն այն դեպքում, եթե այդ անձն ամուսնացած է եղել տվյալ վետերանի հետ կամ *փաստացի* կապի մեջ է եղել հակառակ սեռի վետերանի հետ: Հեղինակը բողոքել է, որ օրենսդրությունն իր նկատմամբ դրսևորում է խտրական վերաբերմունք՝ իր սեռական կողմնորոշման հիմքով: ՄԻԿ-ը համաձայնեց.

¶ 10.2. Հեղինակը պնդում է, որ մասնակից պետության կողմից իրեն թոշակավորելու մերժումն այն հիմքով, որ ինքը չի համապատասխանում «խնամառու» սահմանմանը, քանի որ համասեռական հարաբերությունների մեջ է եղել պրն Բ-ի հետ, ոտնահարում է դաշնագրի 26-րդ հոդվածով ճանաչված իր իրավունքները՝ կապված իր սեռական կողմնորոշման հետ: ... [Կ]ոմիտեն մշում է, որ հեղինակի հայցի մերժման՝ տեղական իշխանությունների բերած միակ հիմնավորումը հիմնված է եղել այն փաստարկի վրա, որ հեղինակը չի բավարարել «հակառակ սեռին պատկանող անձի հետ ապրելու» պայմանը: ...

¶ 10.4. Կոմիտեն հիշատակում է իր մախկին մախադեպային պրակտիկան, ըստ որի՝ խտրականության արգելումը 26-րդ հոդվածով մույնպես խտրականություն է՝ սեռական կողմնորոշման հիմքով: Կոմիտեն հիշեցնում է, որ մախորդ հաղորդումներում ՄԻԿ-ը գտել է, որ ամուսնացած զույգերի և տարասեռական չամուսնացած զույգերի միջև նպաստների ստացման հարցում գոյություն ունեցող տարբերությունները ողջամիտ և օբյեկտիվ չեն, քանի որ դիտարկվող զույգերը կարող էին ընտրել ամուսնանալու տարբերակը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: [«Վետերանների իրավունքների մասին» օրենքի] խնդրահարույց հատվածներից ակնհայտ է դառնում, որ այն անհատները, ովքեր ամուսնացած զույգի կամ համատեղ բնակվող տարասեռական զույգի մաս են կազմում (ովքեր կարող են ապացուցել, որ իրենց միջև գոյություն ունեն «ամուսնության նման» հարաբերություններ), թոշակ ստանալու նպատակից ելնելով՝ համապատասխանում են «զույգի անդամ» սահմանմանը և, հետևաբար, «խնամառու» սահմանմանը: Ներկա գործում հստակ է, որ հեղինակը՝ որպես համասեռական զուգընկեր, հնարավորություն չի ունեցել մտնելու ամուսնական կապի մեջ: Ելնելով թոշակ ստանալու նպատակից և սեռի կամ սեռական կողմնորոշման պատճառով նրան մաս չեն ճանաչել որպես պրն Բ-ի հետ կենսակցող զուգընկեր: Կոմիտեն հիշատակում է իր անփոփոխ գործելակերպը, ըստ որի՝ ամեն տարբերակում չէ, որ կարող է դաշնագրով որակվել որպես արգելված խտրականություն, քանի դեռ այն հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա: Մասնակից պետությունը որևէ փաստարկ չի տրամադրում այն մասին, թե ինչպես է ողջամիտ և օբյեկտիվ այն տարբերակումը, որ արվում է մույն սեռի պատկանող զուգընկերների (ովքեր, օրենքի համաձայն, զրկվում են թոշակավորման իրավունքից) և չամուսնացած տարասեռական զուգընկերների (ովքեր ստանում են նման թոշակավորում) միջև, և չի ներկայացնում որևէ ապացույց, որը մատնացույց կաներ այնպիսի գործոնների գոյությունը, որոնք կհիմնավորեին նման տարբերակման կիրառումը: Այս համատեքստում կոմիտեն կարծում է, որ մասնակից պետությունը, սեռի կամ սեռական կողմնորոշման հիմքով հեղինակին մերժելով թոշակի տրամադրումը, խախտել է դաշնագրի 26-րդ հոդվածը: ...

¶ 12. Համաձայն դաշնագրի 2-րդ հոդվածի 3(ա) կետի՝ կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակը՝ որպես դաշնագրի 26-րդ հոդվածի խախտումից տուժած անձ, արդյունավետ հատուցում ստանալու իրավունք ունի, ներառյալ՝ թոշակավորման իր դիմումի վերադիտարկումը՝ առանց իր սեռի կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության ենթարկվելու և, եթե անհրաժեշտ է, օրենքի լրամշակման միջոցով: Մասնակից պետությունը պարտավոր է ապահովել, որ ապագայում դաշնագրի նմանօրինակ խախտումներ չկրկնվեն:

[23.67Բ] Մասնակից պետությունը չի պնդել, որ համասեռական զույգերի և տարասեռական զույգերի միջև օրենսդրությամբ ամրագրված տարբերակումը վավերական է: Փոխարենը՝ պնդել է, որ հեղինակը չի հանդիսացել վետերանի խնամառու՝ համաձայն օրենսդրությամբ սահմանված այլ չափանիշների:

⁶¹ Համեմատեք Նիդեռլանդների կառավարության փաստարկները՝ բերված *Բրուկսի* գործով, պարբ. 8.3 [23.10] և փոքրամասնության տեսակետը՝ արտահայտված *Սայրենգերի* գործով [23.14]:

Մասնակից պետության փաստարկների սահմանափակությունը վեր հանվեց տվյալ Ուեդգուդի և պրն Դե-պասկուալեի հատուկ, սակայն համաձայնություն հայտնող կարծիքով:

Տվյալ դեպքում դիտարկվող գործում գուցե զարմանալի թվա, որ Ավստրալիան որոշել է չմտնել դաշնագրի 26-րդ հոդվածով ներկայացված հայցի էության շուրջ ծավալված բանավեճի մեջ՝ արտահայտելով կողմ կամ դեմ դիրքորոշում: Ավստրալիան որևէ տեսակետ չի ներկայացրել՝ կապված պրն Յանգի այն փաստարկի հետ, թե համասեռական և տարասեռական կենսակից զուգընկերների միջև օրենքով ամրագրված տարբերակումը հիմնավորված չէ, և կոմիտեն ըստ էության վճիռ է կայացրել՝ առանց պատասխանող կողմի ներկայության: Համաձայն դաշնագրի նախադեպային իրավունքի՝ մասնակից պետությունը պարտավոր է սեռի կամ ... սեռական կողմնորոշման հիմքերով որևէ տարբերակում սահմանելու համար առաջարկել «ողջամիտ և օբյեկտիվ չափանիշներ»: Այսուամենայնիվ, ինչպես կոմիտեն նկատում է պրն Յանգի սույն հայցի 10.4 պարբերությունում. «Մասնակից պետությունը չի տրամադրում որևէ փաստարկ առ այն, թե ինչպես է ողջամիտ և օբյեկտիվ այն տարբերակումը, որ արվում է նույն սեռի պատկանող զուգընկերների (ովքեր օրենքի համաձայն զրկվում են թոշակավորման իրավունքից) և չամուսնացած տարասեռական զուգընկերների (ովքեր ստանում են նման թոշակավորում) միջև, և չի ներկայացնում որևէ ապացույց, որը մատնացույց կաներ այնպիսի գործոնների գոյությունը, որոնք կհիմնավորեին նման տարբերակման կիրառումը»: Ցանկացած բանական իմաստով սա վիճարկվող գործ չէ:

Բարի կամք հանդես բերող բազմաթիվ կառավարություններ և բազմաթիվ մարդիկ շահագրգիռ կլինեն գտնել մի համարժեք բարոյական և իրավական պատասխան այն հարցերին և հակասություններին, որ ծագում են՝ կապված համասեռական և տարասեռական զույգերի միջև տարբեր պետական նպաստների համահավասարեցման հետ, ներառյալ այն վիճահարույց պնդումը, թե գոյություն ունի բոլոր պետություններում համասեռամուկների միջև անունությունները ճանաչելու իրավունք [trans-jurisdictional right] [20.29]: Բազմաթիվ ժողովրդավարական հասարակություններում առկա է մի հավասարապես գրավիչ բանավեճ այն հարցի շուրջ, թե արդյոք զինվորական ծառայության իրավունքը պե՞տք է շարունակի սահմանափակվել միայն տարասեռական անձանցով:

Տվյալ գործի շրջանակներում կոմիտեն նպատակ չի ունեցել ներկայացնել «ողջամիտ և օբյեկտիվ» փաստարկների ողջ ներկայակեր, որ այս խնդիրների կապակցությամբ այլ պետություններ և այլ հայցվորներ կարող են առաջարկել ապագայում նույն համատեքստում, ինչ պրն Յանգի հայցն էր, կամ այլ համատեքստերում: Կամընսթի արձանագրությամբ ներկայացված անհատական հաղորդումները դիտարկելիս կոմիտեն պետք է շարունակի ուշադիր լինել յուրաքանչյուր գործի դեպքում իր կողմից ընդունված կամ չընդունված որոշումների շրջանակի հարցում:

Յանգի գործն առաջինն է, որի առնչությամբ ՄԻԿ-ը որոշել է, որ համասեռական զույգերի և տարասեռական զույգերի միջև տարբերակումը խախտել է դաշնագրի 26-րդ հոդվածը: Ինչպես կանխատեսում են առանձին համաձայնություն արտահայտող տեսակետի հեղինակները, անհավանական է, որ սա լինի կիրառված տարբերակումները վիճարկող վերջին գործը:

Փոխհատուցողական գործողություններ

[23.68] Հասարակության մեջ խտրականությունը կարող է այնքան արմատացած լինել, որ կարիք լինի ձեռնարկել «դրական» կամ «հատուցող» գործողություններ, որպեսզի համարժեքորեն շտկվի այն պատմականորեն ձևավորված անբարենպաստ վիճակը, որից տուժել են որոշ խմբեր: Փոխհատուցողական գործողությունները նշանակում են պետության կողմից ձեռնարկված դրական քայլեր: Փոխհատուցողական գործողությունների դասական քաղաքականություններից մեկը «դրական» խտրականություն կիրառելն է՝ հօգուտ անբարենպաստ վիճակում գտնվող խմբերի: Այս հանգամանքը քննարկվում է հաջորդ բաժնում: Այնուամենայնիվ «փոխհատուցողական գործողությունները» հոմանիշ չեն «դրական» կամ «հակադարձ» խտրականությանը: Օրինակ՝ հաշմանդամ անձանց համար հասարակական վայրերի հասանելիությունն ապահովելու համար թեքահարթակների ապահովումը դրական միջոց է, որը փոխհատուցում է հաշմանդամ անձանց համար անբարենպաստ վիճակը: Այդուհանդերձ, դա «դրական խտրականության» միջոց չէ, քանի որ այդ միջոցը ֆիզիկապես առողջ մարդկանց չի ենթարկում խտրականության⁶²: Նույն կերպ երեխաների խնամքի ավելի շատ հարմարությունների ապահովումը կմեղմի զբաղվածության հնարավորության առումով մայրերի նկատմամբ իրականացվող խտրականությունը: Այդուհանդերձ, նման ապահովումը տղամարդկանց չի ենթարկում խտրականության:

⁶² Լեստեր և Ջոզեֆ, վերը, ծմբ. 6, էջ 582:

[23.69] ՄԻԿ-ը հաստատել է, որ փոխհատուցողական գործողությունները դաշնագրով անկասկած թույլատրելի են, և գուցե այդպիսով մատնանշել է, որ որոշ հանգամանքներում պետությունների համար նման գործողությունների դիմելը պարտադիր է⁶³:

ԹԻՎ 18 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 10. Կոմիտեն նաև ցանկանում է մատնանշել, որ հավասարության սկզբունքը երբեմն մասնակից պետություններից պահանջում է իրականացնել փոխհատուցողական գործողություններ, որպեսզի մեղմվեն կամ վերացվեն այնպիսի պայմանները, որոնք հանգեցնում են կամ օգնում են հետամուտ լինել դաշնագրով արգելված խտրականության: Օրինակ՝ մի պետությունում, որտեղ բնակչության մի հատվածի ընդհանուր կենսապայմանները հնարավորություն չեն տալիս կամ խանգարում են այդ հատվածին օգտվելու սեփական մարդու իրավունքներից, ապա պետությունը պարտավոր է ձեռնարկել հատուկ գործողություններ՝ շտկելու այդ պայմանները:

ԹԻՎ 3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թիվ 3 Ընդհանուր մեկնաբանությունը վերաբերում է պետությունների՝ ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածով ստանձնած պարտավորություններին:

¶ 1. ... Կոմիտեն անհրաժեշտ է համարում մասնակից պետությունների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ դաշնագրով ստանձնած պարտավորությունը չի սահմանափակվում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքով. մասնակից պետությունները նաև համաձայնել են ապահովել, որ իրենց իրավագրության ներքո գտնվող բոլոր անձինք օգտվեն այդ իրավունքներից: Այս հայեցակետը մասնակից պետություններից պահանջում է հատուկ գործողություններ, որոնց նպատակն է հնարավորություն ընձեռել անձանց օգտվելու իրենց իրավունքներից: ...

ԹԻՎ 4 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանությունը վերաբերում է պետությունների՝ ՔՔԻՄԴ-ի 3-րդ հոդվածով ստանձնած պարտավորություններին:

¶ 2. Առաջին հերթին, ինչպես 2-րդ հոդվածի 1-ին կետը և 26-րդ հոդվածը, այնքանով, որքանով դրանք հիմնականում վերաբերում են մի շարք հիմքերով, այդ թվում՝ սեռի հիմքով խտրականության կանխարգելմանը, 3-րդ հոդվածը պահանջում է ոչ միայն պաշտպանությանն ուղղված միջոցների ձեռնարկում, այլև փոխհատուցողական գործողություններ, որոնք մշակվեն՝ ապահովելու իրավունքների դրական իրացումը: Սրան հնարավոր չէ հասնել սոսկ օրենքների ընդունմամբ: Այսպես, որպես կանոն պահանջվել է ավելի շատ տեղեկատվություն՝ կապված գործնականում կանանց դերի հետ, որոշելու համար, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել կամ ձեռնարկվելու են՝ ի լրումն պաշտպանության զուտ օրենսդրական միջոցների, որպեսզի ուժի մեջ մտնեն 3-րդ հոդվածով ստանձնած ճշգրիտ և դրական պարտավորությունները, և որպեսզի պարզվի, թե ինչպիսի առաջընթաց է գրանցվում, կամ ի՞նչ գործոններ կամ դժվարություններ են հանդիպում այդ ճանապարհին:

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս մեկնաբանությունը վերաբերում է «Տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարությանը».

¶ 3. Դաշնագրով ճանաչված իրավունքները բոլոր անձանց համար երաշխավորելու պարտավորությունը, որն ամրագրված է դաշնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներում, մասնակից պետություններից պահանջում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի բոլոր անհատները հնարավորություն ունենան օգտվելու իրենց իրավունքներից: Այս քայլերն ընդգրկում են այդ իրավունքներից յուրաքանչյուրից հավասարապես օգտվելու խոչընդոտների վերացում, բնակչության և պետական պաշտոնյաների կրթում մարդու իրավունքների գծով և ներպետական օրենսդրության համապատասխանեցում այնպես, որ դաշնագրում ամրագրված պարտավորություններն ստանան իրավական ուժ: Մասնակից պետությունը ոչ միայն պարտավոր է որդեգրել պաշտպանության միջոցներ, այլև դրական միջոցներ բոլոր բնագավառներում, որպեսզի հնարավոր լինի հասնել կանանց փաստացի և հավասար իրավագոր-

⁶³ Բաևսկին պնդում է, որ փոխհատուցողական գործողությունները դաշնագրով պարտադիր են, վերը, ծնթ. 35, էջ 30:

ման: Մասնակից պետությունները պարտավոր են տրամադրել տեղեկություններ հասարակության մեջ կանանց իրական դերի մասին, որպեսզի կոմիտեն կարողանա որոշել, թե ի լրումն օրենսդրական նորմերի՝ ինչ միջոցներ են ձեռնարկվել կամ ձեռնարկվելու են, որպեսզի ուժի մեջ մտնեն այդ պարտավորությունները, և պարզվի, թե ինչ առաջընթաց է գրանցվել, ինչ դժվարություններ են հանդիպել այդ ճանապարհին և ինչ քայլեր են ձեռնարկվում դրանք հաղթահարելու համար:

[23.70] Փոխհատուցողական գործողությունները թույլատրված են Ռասայական խտրականության բռնի ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ/ICERD) 1-ին հոդվածի 4-րդ կետով և կրում է հստակ պարտադիր բնույթ այն ժամանակ, «երբ հանգամանքները պահանջում են»՝ համաձայն ՌԽՎՄԿ-ի 2-րդ հոդվածի 2-րդ կետի: Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՌԽ կոմիտեն ճանաչում է խնդրին առնչվող ուսուցում տրամադրելու դրական պարտականությունը, որպեսզի իրավապահ պաշտոնյաների շրջանում ապահովվի իրազեկություն ռասայական խտրականությունն սոցիալական չարիքի վերաբերյալ: Փոխհատուցողական գործողությունները ԿՆԽՎԿ-ի 4-րդ հոդվածով կարծես ավելի շուտ թույլատրելի են, քան պարտադիր: Այնուամենայնիվ ԿՆԽՎԿ-ի այլ ավելի հատուկ դրույթներ, ինչպիսին է 12-րդ հոդվածի 2-րդ կետը, թերևս սահմանում են կատարման համար պարտադիր փոխհատուցողական գործողությունների դիմելու պարտավորություններ:

[23.71] ՄԻԿ-ը հետևյալ բաժիններում մեջբերված գործերում և Եզրափակիչ դիտարկումներում որոշ չափով մատնանշել է, թե ինչ օրինական ձևեր կարող են ընդունել փոխհատուցողական գործողությունները, և ինչ իրավիճակներում պետք է իրականացնել նման գործողություններ:

Հակադարձ խտրականություն

[23.72]

ԹԻՎ 18 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 10. ... [Փոխհատուցողական] գործողությունները կարող են ընդգրկել առանձին հարցերում ազգաբնակչության տվյալ հատվածի նկատմամբ արտոնյալ վերաբերմունք ցուցաբերելը՝ ի տարբերություն ազգաբնակչության մնացած հատվածի: Այդուհանդերձ, քանի դեռ նման գործողություններն անհրաժեշտ են փաստացի խտրականությունը շտկելու համար, դրանք ներկայացնում են դաշնագրով թույլատրված տարբերակիչ վերաբերմունքի դեպք:

[23.73] «Ստալա Կոստան ընդդեմ Ուրուգվայի» (*Stalla Costa v Uruguay, 198/1985*) գործում հեղինակը բողոքում էր, որ իրեն հնարավորություն չի տրվել Ուրուգվայում հավասար հիմունքներով քաղաքացիական ծառայության անցնել, քանզի այդ երկրի օրենքներով նախապատվությունը տրվում է նախկին վարչակարգի կողմից քաղաքական նկատառումներով քաղաքացիական ծառայությունից ազատված անձանց⁶⁴: ՄԻԿ-ը համարեց, որ 26-րդ հոդվածի խախտում չի եղել, քանի որ Ուրուգվայի օրենսդրությամբ դա նախատեսված էր որպես «իրավունքի վերականգնման միջոց»՝ նախկինում խտրականությունից տուժած անձանց համար: Ուստի օրենքը ներկայացնում է դրական կամ հակադարձ խտրականության թույլատրելի միջոց:

[23.74]

«ԲԱԼԱՆԹԱՅՆԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (BALLANTYNE et al v CANADA, 359, 385/89)

Այս գործը վերաբերում է Քվեբեկում գործող այն օրենքներին, որոնցով արգելվում էր գովազդը ֆրանսերենից բացի որևէ այլ լեզվով տեղադրելը: Քվեբեկի կառավարությունը մասնակից պետության միջոցով ներկայացրած իր հայտարարությունում բերում էր այն փաստարկը, որ այս միջոցներն անհրաժեշտ են ֆրանսերենի կարգավիճակը պաշտպանելու համար⁶⁵: Այլ կերպ ասած՝ Քվեբեկը պնդում էր, որ այդ օրենքները ներկայացնում են փոխհատուցողական միջոցառումներ, որոնք կոչված էին պաշտպանելու ֆրանսիախոսների խոցելի խումբը: Հեղինակի փաստաբանը, հակառակ դրան, բերեց այս փաստարկը.

⁶⁴ Այս դիմումի մանրամասները կարելի է տեսնել այստեղ՝ [22.50]:

⁶⁵ Այս փաստարկների մեջբերումը բերված է այստեղ՝ [18.40]:

¶ 9.6. Իր հետագա մեկնաբանության մեջ պրն Սակինթայրի փաստաբանը կրկնում է, որ թիվ 178 օրինագիծը խախտում է դաշնագրով պաշտպանված հիմնարար իրավունքները: Նա պնդում է, որ թեև Քվեբեկը բերել է Կանադայում ֆրանսերենի գործածման անկման մասին վկայող թվեր, սակայն չի նշել, որ Քվեբեկում ֆրանսերենը անգլերենի համեմատ գերիշխող դիրք է ունեցել, իսկ անգլիախոս համայնքն անկում է ապրում: Ավելին՝ թեև Քվեբեկը 1982 թ. սահմանադրական ուղղումները ներկայացրել է որպես գրոհ ֆրանսերենի դեմ, սակայն, դրան հակառակ, կարելի է պնդել, որ լրամշակված Իրավունքների և ազատությունների մասին խարտիայի 23-րդ բաժինը հատկապես արդյունավետ դեր է խաղում Քվեբեկից դուրս գտնվող ֆրանսիախոս ազգաբնակչությանն աջակցելու տեսանկյունից:

¶ 9.7. ...Ավելին՝ թեև ֆրանսիախոս փոքրամասնությունները Կանադայի այլ մասերում հաճախ արժանացել են անարդար վերաբերմունքի, սակայն այդ իրավիճակը ներկայումս դեպի լավն է փոխվում: Հետևաբար, փաստաբանը մերժում է, որ պատմական կամ իրավական փաստերը կհիմնավորեն թիվ 178 օրինագիծը արված սահմանափակումները՝ ըստ դաշնագրի 19-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածների:

¶ 9.8. Փաստաբանը կրկնում է, որ որևէ կապ գոյություն չունի վիճահարույց օրենսդրական դրույթների և ֆրանսերենի ողջամիտ պաշտպանության միջև:

Թեև ՄԻԿ-ը մերժեց Բալանթայնի պահանջը 26-րդ հոդվածի մասով [23.39], սակայն նաև հրաժարվեց ընդունելուց ՔՔԻՄԴ-ով նախատեսված ազատ արտահայտվելու իրավունքի խախտման վերաբերյալ ներկայացրած բողոքին ի պատասխան որպես հիմնավորում ներկայացված այն փաստարկը, թե խոսքը փոխհատուցողական գործողությունների մասին է⁶⁶: ՄԻԿ-ը ենթադրաբար ընդունեց հեղինակի փաստաբանի հակառակ փաստարկները:

[23.75] *Ստալա Կոստայի* գործով ՄԻԿ-ը եզրակացրեց, որ փոխհատուցողական գործողությունները համաչափ են նախկին վարչակարգի օրոք հետապնդումների ենթարկված անձանց հանդեպ արդարությունը վերականգնելու տեսանկյունից: *Բալանթայնի* գործով ՄԻԿ-ը եզրակացրեց, որ փոխհատուցողական գործողությունները անհամաչափ են հետապնդվող նպատակներին, քանի որ Քվեբեկի ֆրանսիախոս բնակիչների հանդեպ կիրառված պատմական խտրականությունը չի արդարացնում տվյալ օրենքը: Ինչ վերաբերում է այլ տարբերակումներին, ապա փոխհատուցողական գործողությունների թույլատրելիությունը որոշվում է «ողջամիտ և անաչառ» փորձաքննությամբ:

[23.76] «*Ուոլդմանն ընդդեմ Կանադայի*» (*Waldman v Canada, 694/96*) գործով վիճահարույց տարբերակումը վերաբերում է Հռոմի կաթոլիկ եկեղեցու դպրոցների նկատմամբ Օնտարիոյում ցուցաբերվող արտոնյալ վերաբերմունքին՝ ի տարբերություն այլ կրոնական փոքրամասնությունների դպրոցների [23.63]: ՄԻԿ-ը որոշեց, որ վիճահարույց օրենքները խտրականություն են մտցնում Հռոմի կաթոլիկ և այլ կրոնական փոքրամասնությունների միջև, ինչը հակասում է 26-րդ հոդվածին: Հատուկ համընկնող կարծիքում պրն Շայնինը նշեց.

¶ 5. Իմ կարծիքով՝ տվյալ դեպքում կոմիտեի եզրակացությունները կիրարկելիս մասնակից պետությունը պետք է մտապահի այն, որ 27-րդ հոդվածը պետությունների վրա դրական պարտավորություն է դնում՝ խթանելու կրոնական կրթությունը փոքրամասնական կրոններում, և մեծ կրթության ապահովումը կամընտիր կարգով պետական կրթական համակարգում այս նպատակին ծառայող միակ թույլատրելի միջոցն է⁶⁷: Պետական միջոցներով ֆինանսավորվող կրթությունը փոքրամասնությունների լեզուներով նրանց համար, ովքեր ցանկանում են մեծ կրթություն ստանալ, ինքնին խտրական չէ, թեպետև հարկ է, անշուշտ, ուշադրություն դարձնել, որ տարբեր փոքրամասնությունների լեզուների միջև հնարավոր տարբերակումները հիմնված լինեն անաչառ և ողջամիտ չափանիշների վրա: Նույն կանոնը կիրառվում է փոքրամասնություն կազմող կրոններին միջնակարգ կրթության նկատմամբ: Որոշ, բայց ոչ բոլոր փոքրամասնությունների համար կրոնական (կամ լեզվական) կրթության ֆինանսավորման հարցում խտրականությունից խուսափելու համար պետությունները պետք է որպես օրինական հիմք ընդունեն հետևյալ հանգամանքը. մեծ կրթության համար գոյություն ունի՝ շարունակական պահանջարկ, թե՞ ոչ: Բազմաթիվ կրոնական փոքրամասնությունների համար լիովին աշխարհիկ այլընտրանքի գոյությունը պետական դպրոցական համակարգում բավարար է, քանի որ տվյալ համայնքները ցանկանում են կրոնական կրթությունը կազմակերպել արտադասարանական կարգով և դպրոցի տարածքից դուրս: Իսկ եթե ի հայտ է գալիս կրոնական դպրոցների կարիքը, ապա որոշելու համար, թե փոքրամասնության համար պետական դպրոց չհիմնադրելը կամ մասնավոր դպրոցին պետական ֆինանսավորում չտրամադրելը արդյոք խտրականություն է կլինի, գոյություն ունի մեկ օրինական չափանիշ, այն է՝ որոշել, թե մեծ կրթոց հաճախելու ցանկություն ունեցող երեխաների թիվը բավարար՞ է, որ այդ դպրո-

⁶⁶ Նույն տեղում: Տե՛ս նաև պրն Նդիայեի անհամաձայնությունն այստեղ՝ [24.50]:

⁶⁷ Տե՛ս 27-րդ հոդվածի վերաբերյալ գլուխ 24:

ցը գործի որպես ընդհանուր կրթական համակարգի գործուն մաս: Ներկա պարագայում այս պայմանը բավարարված է⁶⁸: Հետևաբար, հեղինակի երեխաների կրթության համար հատկացված անուղղակի պետական ֆինանսավորման մակարդակը խտրականություն է, եթե համեմատենք այդ ֆինանսավորումը Հռոմի կաթոլիկ դպրոցներին հատկացվող լրիվ պետական ֆինանսավորման հետ:

Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետևորդների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքն ի հայտ է եկել պատմական համաձայնագրի արդյունքում, որը զետեղված է Կանադայի սահմանադրության մեջ՝ համադաշնության կազմում բողոքականների համեմատությամբ կաթոլիկների փոքրամասնական կարգավիճակի լույսի ներքո վերջիններիս մշակույթը պաշտպանելու նպատակով: *Ուղղմանի* գործով որոշումը վկայում է այն մասին, որ պետությունները չեն կարող նախապատվություններ նախատեսել որևէ մեկ փոքրամասնական խմբին պաշտպանելու համար, եթե անգամ նման նախապատվությունը հիմնավորված է պատմականորեն՝ չնախատեսելով նմանատիպ նախապատվություն համեմատելի այլ փոքրամասնական խմբերի համար: Այլ կերպ ասած՝ փոխհատուցողական ծրագրեր իրականացնելիս պետությունները չպետք է համեմատելի խմբերի նկատմամբ խտրականություն ցուցաբերեն:

[23.77] Ինչպես ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 2-րդ կետը, այնպես էլ ԿՆԽՎԿ-ի 4-րդ հոդվածը նախատեսում են, որ անհավասար կամ տարբեր չափանիշների պահպանումը տարբեր խմբերի նկատմամբ պետք է դադարեցվի անմիջապես, երբ իրականացվում է հավասար հնարավորությունների և վերաբերմունքի ձևավորման նպատակը:

[23.78] «Հակադարձ» կամ «դրական» խտրականության ծրագրերը նախատեսված են անբարենպաստ դիրքում հայտնված խմբերի շահերին ծառայելու համար: Ինչպես է վիճելի դեպքերում որոշվում՝ որևէ անհատ պատկանո՞ւմ է որոշակի խմբին, թե՞ ոչ: Օրինակ՝ արդյոք մեկ տասնվեցերորդ համաձայնությանը բնիկ ժողովրդի արյուն ունեցող անձը դրական խտրականության ծրագրի շրջանակներում դասվո՞ւմ է «բնիկ ժողովուրդների» կարգը, թե՞ ոչ: ՔՔԻՄԴ-ի կոմիտեն անդրադարձել է այս հարցին ռասայական և էթնիկական խմբերի համատեքստում թիվ 8 Ընդհանուր հանձնարարականում (1990)։

...նման նույնացումը պետք է հիմնվի տվյալ անձի ինքնանույնականացման վրա, եթե չկա հակառակն ապացուցող որևէ հանգամանք⁶⁹:

[23.79] Սովորաբար հակադարձ խտրականության կիրառումը դրսևորվում է որոշակի խմբերի համար որոշակի հաստատություններում քվոտաների սահմանմամբ: ՄԻԿ-ն իր անվերապահ հավանությունն է տվել Հնդկաստանում ընդունված սահմանադրական ուղղմանը, ըստ որի՝ տեղական ընտրովի մարմիններում տեղերի մեկ երրորդը պետք է վերապահված լինի կանանց, ինչպես նաև որոշակի ցեղախմբերի և կաստաների ներկայացուցիչների⁷⁰: ԿՆԽՎ կոմիտեն իր թիվ 23 Ընդհանուր հանձնարարականում միանշանակ ջատագովում է հանրային և քաղաքական մարմիններում գենդերային հավասարակշռության ձևավորմանն ուղղված քվոտաների սահմանումը: Օրինակ՝ 23-րդ կետում նա կոչ է անում մասնակից պետություններին որդեգրել մի «կանոն, ըստ որի որևէ սեռի ներկայացուցիչները չեն կարող որևէ պետական մարմնի անդամների 40 տոկոսից պակաս կազմել»⁷¹:

Մասնավոր հատվածում խտրականության հակազդմանն ուղղված միջոցներ⁷²

[23.80] Եթե թույլատրվում է, որ խտրականությունը տարածվի մասնավոր հատվածում, ապա հասարակությունը չի կարողանա հասնել հնարավորությունների և վերաբերմունքի իրական հավասարության: ՔՔԻՄԴ-ն ակնհայտորեն արգելում է խտրականության ցուցաբերումը պետության օրենսդրության շրջանակներում պետական գործակալությունների կողմից: ՔՔԻՄԴ-ը նաև պարտադրում է մասնակից պե-

⁶⁸ Հեղինակը հրեա էր: Պարզ է, որ Օնտարիոյում կար հրեական դպրոցների բավական մեծ պահանջարկ՝ ըստ այնտեղի հրեական բնակչության թվաքանակի:

⁶⁹ Տե՛ս նաև [24.13]:

⁷⁰ Եզրափակիչ դիտարկումներ Հնդկաստանի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 81, պարբ. 10:

⁷¹ Տե՛ս ընդհանուր՝ [22.56]:

⁷² Տե՛ս նաև այստեղ՝ [1.77-1.84]:

տություններին դրական քայլեր ձեռնարկել մասնավոր հատվածում գործող դերակատարների կողմից խտրականության դրսևորումը կանխելու ուղղությամբ: Նման համեմատության կարելի է հանգել՝ ելնելով ՔՔԻՄԴ-ի՝ բոլոր իրավունքները բոլոր անձանց համար «հարգելու և ապահովելու» պարտավորությունից՝ ամրագրված 2-րդ հոդվածով, ինչպես նաև 26-րդ հոդվածով. «...օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից...»⁷³:

[23.81]

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Մասնակից պետությունները պատասխանատու են իրավունքների հավասար իրացումն առանց որևէ խտրականության ապահովելու համար: 2-րդ և 3-րդ հոդվածները պարտադրում են մասնակից պետություններին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, այդ թվում նաև՝ արգելել խտրականությունը սեռի հատկանիշով՝ հանրային և մասնավոր հատվածում իրավունքների հավասար իրացումը խոչընդոտող խտրական գործողություններին վերջ տալու նկատառումով:

¶ 31. ...Պետությունները պետք է վերանայեն իրենց օրենսդրությունն ու ընդունված վարվելակերպը և դեկլարեն կանանց նկատմամբ խտրականության վերացման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները բոլոր բնագավառներում, օրինակ՝ արգելեն խտրականության դրսևորումը մասնավոր դերակատարների կողմից այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ աշխատանքը, կրթությունը, քաղաքական գործունեությունը, ինչպես նաև կացարանի, ապրանքների և ծառայությունների մատուցումը:

Ավելին՝ թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության նախագծում ՄԻԿ-ը նշում է. «Առնվազն առօրյա կյանքի տարրական իրողությունների վրա ազդող բնագավառներում, ինչպիսիք են աշխատանքը կամ բնակարանը, անհատները պետք է պաշտպանված լինեն 26-րդ հոդվածում թվարկվող խտրականության համապատասխան տեսակներից»⁷⁴:

[23.82] Հետևյալ գործը թերևս ավելի մանրամասն է իմաստավորում «առօրյա կյանքի տարրական իրողությունների վրա ազդող բնագավառներում» պետությունների՝ մասնավոր հատվածում խտրականությունն արգելելու պարտավորության մասին անորոշ արտահայտությունը, որ առկա է թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության նախագծում:

«ՆԱՀԼԻԿՆ ընդդեմ ԱՎՍՏՐԻԱՅԻ» (NAHLIK v AUSTRIA, 608/95)

Այս գործի շրջանակներում հեղինակը բողոքում էր հանրային սակարկման պայմանագրում տեղ գտած խտրականության դեմ: Մասնակից պետությունը գործի ընդունելիության դեմ բերում էր հետևյալ փաստարկները.

¶ 4. Այդուհանդերձ, [մասնակից պետությունը] պնդում է, որ դիմումն անընդունելի է, քանի որ հեղինակը վիճարկում է հանրային պայմանագրում գործող կանոնը, որի վրա մասնակից պետությունը որևէ ազդեցություն չունի: Մասնակից պետությունը բացատրում է, որ հանրային պայմանագրերը մասնավոր իրավունքի վրա հիմնված համաձայնագրեր են և բացառապես պայմանագրի կողմ հանդիսացող անձանց հայեցողության տակ են: Ուստի մասնակից պետությունը եզրակացնում է, որ դիմումն անընդունելի է կամընտիր արձանագրության 1-ին հոդվածով, քանի որ խոսք չի կարող լինել մասնակից պետության կողմից կատարված խախտման մասին: ՄԻԿ-ը մերժեց վերոնշյալ փաստարկը հետևյալ ձևակերպումներով.

¶ 8.2. Կոմիտեն նկատի է ունեցել մասնակից պետության փաստարկն առ այն, որ դիմումն անընդունելի է կամընտիր արձանագրության 1-ին հոդվածով, քանի որ այն վերաբերում է ենթադրյալ խտրականությանը մասնավոր պայմանագրի շրջանակներում, որի վրա մասնակից պետությունն ազդեցություն չունի: Կոմիտեն նշում է, որ դաշնագրի 2-րդ և 26-րդ հոդվածներով մասնակից պետությունը պարտավորություն ունի ապահովել, որ իր տարածքում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձինք զերծ լինեն խտրականությունից, հետևաբար մասնակից պետութ-

⁷³ Տե՛ս նաև Նովակ, վերը, ծնթ. 12, 475-9:

⁷⁴ Պարբ. 7: Տե՛ս այստեղ՝ [1.83]: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Վենետեկյան վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/VEN, կետ 23:

յունների դատարանները պարտավորություն ունեն պաշտպանել անձանց խտրականությունից, անկախ այն հանգամանքից՝ այն տեղի է ունենում հանրային ոլորտում, թե՞ մասնավոր անձանց շրջանում՝ կիսահանրային հատվածում, օրինակ՝ զբաղվածության բնագավառում: Կոմիտեն նաև նշում է, որ տվյալ դեպքում հիշատակվող հանրային պայմանագիրը կարգավորվում է օրենքով և ուժի մեջ է մտնում միայն աշխատանքի և սոցիալական հարցերի դաշնային նախարարի վավերացումից հետո: Ավելին՝ կոմիտեն նշում է, որ հանրային պայմանագիրը վերաբերում է սոցիալական ապահովություն խորհրդի անձնակազմին, որ պետական քաղաքականությունն իրականացնող հանրային իրավական հաստատություն է: Այդ իսկ պատճառով կոմիտեն չի կարող համաձայնել մասնակից պետության այն փաստարկին, որ դիմումը պետք է կամընտիր արձանագրության 1-ին հոդվածով անընդունելի հայտարարվի⁷⁵:

[23.83] Նախկին գործի 8.2 կետում նշված «կիսահանրային» ոլորտի հիշատակումը շատ բանի մասին է խոսում, սակայն այն անորոշ է: Թեև դաշնագիրը պահանջում է կարգավորել մասնավոր հատվածում դրսևորվող խտրականությունը այնպիսի «կիսահանրային» ոլորտներում, ինչպիսիք են զբաղվածությունը, բնակարանը կամ ապրանքների և ծառայությունների հանրային մատչելիությունը, սակայն այն կարող է պահանջել հատկապես կարգավորել «լիովին մասնավոր» կամ անձնական ոլորտները, օրինակ՝ ներտնային կյանքը, ընտանեկան կյանքը կամ այլ մասնավոր հարաբերություններ⁷⁶: Օրինակ՝ ինչպե՞ս կարող է պետությունը կարգավորել այն դեպքերը, երբ ծնողները հավանություն չեն տալիս իրենց երեխայի ընտրությանը նրա ամուսնու կամ տիկնոջ ռասայի առնչությամբ: Եվ իրականում զուտ մասնավոր ոլորտներում խտրականության վրա լավագույնս ներազդելու համար թերևս անհրաժեշտ են կրթական միջոցառումներ, ոչ թե հարկադրական օրենքներ⁷⁷: Անշուշտ, անձնական բնագավառում ճշացող խտրականության կամ մարդու իրավունքների խախտման դեպքերը, օրինակ՝ ընտանեկան բռնությունը, պետք է արգելվեն [23.90]:

[23.84] Իր տարբեր եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հանձնարարականներ է տվել մասնակից պետություններին միջոցներ ձեռնարկել մասնավոր ոլորտում խտրականությունը սանձելու համար: Օրինակ՝ Մավրիկիոսի առնչությամբ ՄԻԿ-ը նշել է⁷⁸.

¶ 23. ... Նա նաև հանձնարարական է տալիս, որ [Մավրիկիոսի սահմանադրությունը] լրամշակվի և համապատասխանեցվի դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետին, 3-րդ հոդվածին և 26-րդ հոդվածին, և միջոցներ ձեռնարկվեն դաշնագրով պաշտպանված բոլոր պետական և մասնավոր բնագավառներում համալիր հակախտրական օրենքներ ներմուծելու համար:

[23.85] ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածը նախատեսում է ռասայի, կրոնի կամ ազգության հատկանիշով խտրականություն իրահրող ելույթների դեմ ուղղված օրենք ընդունելու հստակ պարտականություն⁷⁹:

[23.86] ՌԽՎՄԿ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետը և ԿՆԽՎԿ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետը հատուկ պարտավորություն են նախատեսում մասնակից պետությունների համար, այն է՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անձանց, խմբերի կամ կազմակերպությունների կողմից դրսևորվող ռասայական և սեռական խտրականությունը վերացնելու ուղղությամբ: Մասնավոր հարթությունում դրսևորվող խտրականությունը շտկելու պարտականությունն ամրագրված է այս երկու համաձայնագրերի այլ դրույթներում: ՌԽՎՄԿ-ի շրջանակներում նախատեսված պարտականության օրինակ կարելի է գտնել հետևյալ գործում:

⁷⁵ Նախկին գործն անընդունելի է ճանաչվել պնդումների չհիմնավորված լինելու պատճառով:

⁷⁶ Տե՛ս Ռամշարան, վերը, ծնթ. 4, 262: Սա չի նշանակում, որ պետությունը կարող էր օրենսդրություն ընդունել, որով հաղթահարվեր կամ խթանվեր խտրականությունը «լիովին մասնավոր» կամ անձնական ոլորտում, դա նշանակում է միայն, որ պետությունը պարտավոր չէ կարգավորել մասնավոր անձանց դրսևորած խտրականությունն այդ ոլորտում: Այդուհանդերձ, տե՛ս [20.39] ամուսինների միջև հավասարությունը խթանելու պարտականությունների մասին:

⁷⁷ Տե՛ս ստորև՝ [23.96-23.99].

⁷⁸ Եզրափակիչ դիտարկումներ Մավրիկիոսի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 60: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Չիլիի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 104, պարբ. 23, Եզրափակիչ դիտարկումներ Կոստա Ռիկայի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 107, պարբ. 15, Եզրափակիչ դիտարկումներ Կորեայի Զանրապետության վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 114, պարբ. 10:

⁷⁹ Տե՛ս ընդհանուր 18-րդ գլուխը:

**«ՅԻԼՄԱԶ-ԴՈԳԱՆ ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ»
(YILMAZ-DOGAN v THE NETHERLANDS, ՌԽՎՄԿ 1/84)**

¶ 9.3. 5-րդ հոդվածի (ե)(i)⁸⁰ ենթակետի ենթադրյալ խախտումների առնչությամբ կոմիտեն նշում է, որ հայցվորին աշխատանքից ազատելու հարցով վերջնական որոշումը կայացվել է ենթաշրջանային դատարանում 1982 թ. սեպտեմբերի 29-ին: ...Կոմիտեն նշում է, որ այս որոշումը չի անդրադառնում գործատուի՝ հայցվորի աշխատանքային պայմանագրի դադարեցման պահանջ ներկայացնող 1982 թ. հուլիսի 19-ի նամակում դրսևորված ենթադրյալ խտրականությանը: Մանրագին քննությունից հետո կոմիտեն համարում է, որ հայցվորին աշխատանքից ազատելը գործի բոլոր հանգամանքները հաշվի չառնելու հետևանք է: Ուստի նրա աշխատանքի իրավունքը՝ նախատեսված 5-րդ հոդվածի (ե)(i) ենթակետով, չի պաշտպանվել:

Մասնակից պետությունը, Յիլմազ-Դոգանի գործով հաշվի չառնելով հեղինակի մասնավոր հատվածի գործատուի կողմից դրսևորված ռասայական խտրականությունը, որն էլ հավանաբար նրա աշխատանքից ազատվելու պատճառ է դարձել, խախտել է ՌԽՎՄԿ-ի 5-րդ հոդվածի ե(i) ենթակետը:

Համակարգային անհավասարություն

[23.87] Բոլոր հասարակություններն իրենց հիմքում հասարակական գերիշխող արժեքների ազդեցության տակ են: Այդ գերիշխող արժեքները միշտ արական սեռը, տարասեռականությունը և առողջությունը սատարող ուղղվածություն ունեն: Այդ արժեքները նաև արտացոլում են պետությունում գերակշռող ռասան, կրոնը և լեզուն: Օրինակ՝ Միացյալ Նահանգներում, Միացյալ Թագավորությունում և Ավստրալիայում գերիշխող ուղղությունն արտացոլում է սպիտակամորթ քրիստոնյա անգլիախոսների արժեքները: Պետության մեջ հասարակությունը սովորաբար ամրապնդում է սեփական գերիշխող արժեքները, օրինակ՝ սովորույթների ամրագրման և այդ գերիշխող արժեքներն արտացոլող օրենքների ձևավորման միջոցով: Գերիշխող նորմերի ամրապնդումն առաջացնում է համակարգային խտրականություն, ուստի համակարգային անհավասարություն այն մարդկանց համար, ովքեր դուրս են գերիշխող նորմից: Համակարգային անհավասարության պատճառներն ու հետևանքները կարող են չափազանց նուրբ և նույնիսկ անտեսանելի լինել հասարակության տարբեր հատվածներում, քանի որ նման անհավասարությունը պատմականորեն ընկալվում է որպես «բնականոն» ինչպես գերիշխող, այնպես էլ մեկուսացված խմբերին պատկանող անձանց կողմից:

[23.88] Համակարգային անհավասարության պատճառներն այնքան բարդ են, որ հազիվ թե հնարավոր լինի այն հաջողությամբ վիճարկել ՄԻԿ-ի առջև կանգնած արձանագրության շրջանակներում ներկայացվող բոլոր միջոցով՝ հաշվի առնելով անուղղակի խտրականության առնչությամբ ՄԻԿ-ի կայացրած առանձին որոշումների անհամաչափությունը⁸¹: Նաև կարող է դժվար լինել ապացուցել, որ անձը համակարգային խտրականության «զոն» է դարձել: «Տուժողի» մեկնաբանության «անհատական» և ուղղակի բնույթը չի համապատասխանում հասարակության մեջ գոյություն ունեցող արմատական և համակարգային հիմնախնդիրների առնչությամբ ներկայացվող բոլորներին⁸²: Այս իրողությունը կարող է վիճարկվել մակրոմակարդակում զեկույցների ներկայացման և գնահատման ընթացքում և նշվել արդյունքում մշակված եզրափակիչ դիտարկումներում: Օրինակ՝ Հնդկաստանի առնչությամբ ՄԻԿ-ը դատապարտել է բազմաթիվ օրենքներ և մշակութային սովորույթներ, որոնք նպաստում են կանանց և ցածր կաստաներին պատկանող անձանց շարունակական հպատակեցմանը⁸³: Լեհաստանի առնչությամբ ՄԻԿ-ը նշել է սեռերի միջև անհավասարության մասին վկայող վիճակագրությունը (օրինակ՝ կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 70 տոկոսը):⁸⁴ Այդուհանդերձ, միայն վիճակագրությունը թերևս բավարար չէ խտրականության որևէ անհատական դեպք ապացուցելու համար:

⁸⁰ 5-րդ հոդվածի ե(i) ենթակետով արգելվում է ռասայական խտրականությունը, ի թիվս այլոց, աշխատանքի իրավունքի առնչությամբ:

⁸¹ Տե՛ս [23.35-23.39]:

⁸² Ընդհանրապես կանգնած արձանագրությամբ ընդունելի համարվելու համար «տուժողի» պահանջի վերաբերյալ տե՛ս 3-րդ գլուխը:

⁸³ (1985) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 81, պարբ. 15-17:

⁸⁴ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110, պարբ. 12:

[23.89] ՄԻԿ-ը համակարգային անհավասարության հիմնախնդիրն ընդունել է թիվ 18 Ընդհանուր մեկնաբանությունում և թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունում [23.69]: Այդուհանդերձ, ՄԱԿ-ի բոլոր պայմանագրային մարմիններից հենց ԿՆԽՎ կոմիտեն է առավել մեծ իրազեկություն ցուցաբերել համակարգային անհավասարության առնչությամբ: Այդ իրողությունը հազիվ թե զարմանալի է, քանի որ կանայք տուժում են համակարգային խտրականությունից բոլոր հասարակություններում: Օրինակ՝ հասարակության լուռ համաձայնությունը, հավանությունը կամ նույնիսկ անտարբերությունը գենդերային բռնության հարցում համակարգային խտրականության և անհավասարության պատճառ են դառնում: ԿՆԽՎ – կոմիտեն իր թիվ 19 Ընդհանուր հանձնարարականում ուշադրությունը հրավիրում է սեռական խտրականության և կանանց դեմ բռնության միջև գոյություն ունեցող կապերին: Սա մարդու իրավունքների բոլոր պայմանագրային մարմինների կողմից թողարկված ամենամանրամասն Ընդհանուր հանձնարարականներից մեկն է: Այս մեկնաբանությունը նաև ընդգծում է խտրականության և մարդու իրավունքների ոտնահարման այլ ձևերի չափազանց սերտ կապը:

[23.90]

***ԿՆԽՎ, ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ
«ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ»***

Ընդհանուր մեկնաբանություններ

¶ 6. Կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է կանանց նկատմամբ խտրականությունը: Խտրականության սահմանումն ընդգրկում է գենդերային բռնությունը, ասել է թե՛ բռնություն, որն ուղղված է կնոջ դեմ նրա կին լինելու պատճառով կամ որն անհամաչափորեն ազդում է հենց կանանց վրա: Այն ընդգրկում է այնպիսի գործողություններ, որոնք պատճառում են ֆիզիկական, մտավոր կամ սեռական վնաս կամ տառապանք, նման գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք և ազատությունից զրկելու այլ եղանակներ: Գենդերային բռնությամբ կարող են խախտվել կոնվենցիայի առանձին դրույթներ՝ անկախ այն հանգամանքից՝ դրանցում հատուկ հիշատակվո՞ւմ է բռնությունը, թե՞ ոչ:

¶ 7. Գենդերային բռնությունը, որ վնասում կամ ի չիք է դարձնում կանանց համար ընդհանուր միջազգային իրավունքով կամ մարդու իրավունքներին վերաբերող այլ կոնվենցիաներով նախատեսված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացումը, խտրականություն է՝ կոնվենցիայի 1-ին հոդվածում սահմանված իմաստով:

Հատուկ հանձնարարականներ

¶ 24. Այս մեկնաբանությունների լույսի ներքո Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն հետևյալ հանձնարարականներն է տալիս.

(ա) Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան և արդյունավետ միջոցներ հանրային կամ մասնավոր բնագավառում գենդերային բռնության բոլոր ձևերը հաղթահարելու ուղղությամբ:

(բ) Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ ընտանեկան բռնության և չարաշահումների, բռնաբարության, սեռական հարձակման և գենդերային բնույթի բռնության այլ տեսակների դեմ ուղղված օրենքները պատշաճ պաշտպանություն ապահովեն բոլոր կանանց համար և հարգեն նրանց արժանապատվությունը: Տուժողներին պետք է մատուցվեն պաշտպանության և աջակցության համապատասխան ծառայություններ: Դատական և իրավապահ մարմինների և հանրային այլ մարմինների պաշտոնատար անձանց պատրաստումը գենդերային հարցերում անհրաժեշտ է կոնվենցիայի արդյունավետ իրագործման համար:

(գ) Մասնակից պետությունները պետք է խրախուսեն վիճակագրական տվյալների և հետազոտությունների պատրաստումը բռնության տարածման աստիճանի, դրա հետևանքների, ինչպես նաև բռնության կանխարգելմանն ուղղված միջոցների արդյունավետության վերաբերյալ:

(դ) Արդյունավետ միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի լրատվամիջոցները հարգանք ցուցաբերեն կանանց նկատմամբ և խթանեն այդ հարգանքը:

(ե) Իրենց զեկույցներում մասնակից պետությունները պետք է մատնանշեն այն մոտեցումների, ավանդույթների և սովորույթների բնույթն ու տարածման աստիճանը, որոնք խրախուսում են կանանց դեմ ուղղված բռնությունը և դրանցից բխող բռնության տեսակները: Նրանք իրենց զեկույցներում պետք է նշեն բռնության հաղթահարման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների և դրանց արդյունքների մասին:

(զ) Արդյունավետ միջոցներ պետք է ձեռնարկվեն այդ մոտեցումները և սովորույթները հաղթահարելու համար: Պետությունները պետք է ներդնեն կրթական և հանրային տեղեկատվական ծրագրեր՝ կանանց հավասարությունը խոչընդոտող նախապաշարմունքների վերացմանը նպաստելու համար (հանձնարարական թիվ 3, 1987 թ.):

(է) Հատուկ կանխարգելիչ և պատժիչ միջոցներ են անհրաժեշտ թրաֆիքինգը և սեռական շահագործումը հաղթահարելու համար:

(ը) Մասնակից պետություններն իրենց զեկույցներում պետք է նկարագրեն այս բոլոր հիմնախնդիրների տարածման աստիճանը, ինչպես նաև մարմնավաճառությամբ զբաղվող կամ թրաֆիքինգի կամ սեռական շահագործման այլ ձևերի զոհ դարձած կանանց պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվող միջոցները, այդ թվում՝ քրեական օրենսգրքի դրույթները, կանխարգելիչ և վերականգնողական միջոցները: Այս միջոցների արդյունավետությունը նույնպես պետք է նկարագրվի:

(թ) Պետք է տրամադրվեն բողոքների ներկայացման արդյունավետ ընթացակարգեր և իրավական պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ փոխհատուցում:

(ժ) Մասնակից պետությունները պետք է իրենց զեկույցներում տեղեկություններ ընդգրկեն սեռական հետապնդումների և աշխատավայրում կանանց սեռական հետապնդումներից և բռնության կամ հարկադրման այլ ձևերից պաշտպանելուն ուղղված միջոցների վերաբերյալ:

(ժա) Մասնակից պետությունները պետք է ստեղծեն ծառայություններ կամ աջակցություն ցուցաբերեն նման ծառայություններին ընտանեկան բռնության, բռնաբարության, սեռական բնույթի հարձակումների և գենդերային բռնության այլ ձևերի զոհերի, այդ թվում՝ փախստականների համար, տրամադրեն հատուկ պատրաստություն անցած բուժաշխատողներ, վերականգնում և խորհրդատվություն:

(ժբ) Մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն նման գործողությունները հաղթահարելու համար և առողջապահության հարցերին նվիրված զեկույցներում պետք է հաշվի առնեն կոմիտեի հանձնարարականը կանանց թլպատման առնչությամբ (հանձնարարական թիվ 14):

(ժգ) Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ միջոցներ ձեռնարկվեն մայրության և վերարտադրության հարցերում հարկադրանքը կանխելու ուղղությամբ, ինչպես նաև ապահովեն, որ վերարտադրողականության վերահսկման համապատասխան ծառայությունների բացակայության պատճառով կանայք ստիպված չլինեն դիմելու անապահով բժշկական ընթացակարգերի, ինչպիսին է ապօրինի աբորտը:

(ժդ) Մասնակից պետություններն իրենց զեկույցներում պետք է նշեն այդ հիմնախնդիրների տարածման աստիճանը, ինչպես նաև պետք է նշեն ձեռնարկված միջոցները և դրանց արդյունքները:

(ժե) Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ բռնության զոհերի համար նախատեսված ծառայությունները մատչելի լինեն գյուղաբնակ կանանց համար, և անհրաժեշտ հատուկ ծառայությունները մատուցվեն մեկուսի համայնքներին:

(ժզ) Նրանց բռնությունից պաշտպանելու համար նախատեսված միջոցների շարքում պետք է ընդգրկեն վերապատրաստման և զբաղվածության հնարավորություններ, ինչպես նաև տնային աշխատողների աշխատանքային պայմանների վերահսկողություն:

(ժէ) Մասնակից պետությունները պետք է զեկույցն գյուղաբնակ կանանց սպառնացող վտանգների մասին, ինչպես նաև նրանց տարած բռնության և չարաշահումների տարածման աստիճանի և բնույթի, աջակցության և այլ ծառայությունների կարիքի և մատչելիության, ինչպես նաև բռնության հաղթահարմանն ուղղված միջոցների արդյունավետության մասին:

(ժը) Ընտանեկան բռնության հաղթահարմանն ուղղված միջոցների շարքում պետք է ընդգրկվեն՝

- (i) անհրաժեշտության դեպքում քրեական պատժամիջոցներ և իրավական պաշտպանության քաղաքացիական միջոցներ ընտանեկան բռնության դեպքերում,
- (ii) ընտանիքի իգական սեռի անդամի վրա հարձակման կամ նրա սպանության դիմաց պատվի պաշտպանություն նախատեսող օրենսդրության վերացում,
- (iii) ընտանեկան բռնության զոհերի համար անվտանգության ապահովում, ներառյալ՝ ապաստարանները, խորհրդատվությունը և վերականգնողական ծրագրերը,
- (iv) վերականգնողական ծրագրեր ընտանեկան բռնություն իրականացնողների համար,
- (v) աջակցության ծառայություններ այնպիսի ընտանիքների համար, որտեղ տեղի են ունեցել արյունապղծության և սեռական բռնության դեպքեր:

(ժթ) Մասնակից պետությունները պետք է զեկուցեն ընտանեկան բռնության և սեռական չարաշահումների տարածման աստիճանի, ինչպես նաև դրանց դեմ ուղղված կանխարգելիչ, պատժիչ և վերականգնողական միջոցների մասին:

(ի) Այդ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն ամեն իրավական և այլ անհրաժեշտ միջոցներ կանանց գենդերային բռնությունից արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար, ի թիվս այլոց՝

(i) արդյունավետ իրավական միջոցներ, այդ թվում՝ քրեական պատժամիջոցներ, իրավական պաշտպանության քաղաքացիական միջոցներ և փոխհատուցողական դրույթներ կանանց ամեն տեսակի բռնությունից, այդ թվում, ի թիվս այլոց, ընտանեկան բռնությունից և չարաշահումներից, սեռական բնույթի հարձակումներից և աշխատավայրում սեռական հետապնդումներից պաշտպանելու համար,

(ii) պաշտպանական միջոցներ, այդ թվում՝ հանրային տեղեկատվական և կրթական ծրագրեր կանանց և տղամարդկանց դերերի և կարգավիճակի հարցում տիրող վերաբերմունքը փոխելու ուղղությամբ,

(iii) պաշտպանական միջոցներ, այդ թվում՝ ապաստարաններ, խորհրդատվություն, վերականգնման և աջակցության ծառայություններ բռնության զոհ դարձած կամ բռնության վտանգի տակ գտնվող կանանց համար:

(իա) Այդ մասնակից պետությունները պետք է զեկույցներ ներկայացնեն գենդերային բռնության բոլոր ծևերի վերաբերյալ և պետք է ընդգրկեն այդ զեկույցներում բոլոր առկա տվյալները բռնության յուրաքանչյուր տեսակի տարածվածության և դրա զոհ դարձած կանանց կրած հետևանքների վերաբերյալ:

(իբ) Մասնակից պետությունները պետք է տեղեկատվություն ներառեն իրավական, կանխարգելիչ և պաշտպանական միջոցների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են կանանց նկատմամբ բռնությունը հաղթահարելու համար, ինչպես նաև տեղեկություններ ներկայացնեն նման միջոցների արդյունավետության վերաբերյալ:

[23.91] Ինչպես նշված է 24-րդ հոդվածի 1-ին կետում, ԿՆԽՎ կոմիտեն նախկինում դատապարտել է կանանց թլպատման սովորույթը թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունում՝ սահմանելով այն որպես «կանանց և երեխաների առողջության համար վնասակար» սովորույթ:

[23.92] Բազում եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը սատարել է ԿՆԽՎ-ով գենդերային բռնության դատապարտումը: Օրինակ՝ Եմենի առնչությամբ ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել երկրի որոշ շրջաններում կանանց սեռական օրգանների խեղման տարածված սովորույթի և այն իրողության վերաբերյալ, որ «Եմենի օրենսդրությունը դրույթ չի պարունակում ընտանեկան բռնության դեմ»⁸⁵: Գվատեմալայի առնչությամբ դիտարկումներում ՄԻԿ-ը «կոչ է անում, որ կանանց նկատմամբ բռնության (հատկապես ընտանիքի ներսում) և խտրականության դեպքերը սահմանվեն որպես քրեորեն պատժելի հանցատեսակներ»⁸⁶: ՄԻԿ-ը մտահոգված է այն հանգամանքով, որ «ճապոնիայում դատարանները ընտանեկան բռնությունը, ներառյալ՝ բռնի սեռական հարաբերությունները համարում են ամուսնական կյանքի սովորական միջադեպ»⁸⁷: Լեհաստանի վերաբերյալ դիտարկումներում ՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել «ընտանեկան բռնության զոհերի համար կացարանների և ապաստարանների պակասի» առնչությամբ⁸⁸: Կիպրոսի առնչությամբ ՄԻԿ-ը հանձնարարական է տվել⁸⁹:

¶ 12. ... բարեփոխել «Ապացույցների մասին» օրենքն այնպես, որ այնտեղ հաշվի առնվի մի ամուսնու կողմից մյուսի դեմ ընտանեկան բռնության վերաբերյալ ցուցմունք տալու խոչընդոտների վերացման հնարավորությունը:

⁸⁵ (1995) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 51, պարբ. 14:

⁸⁶ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 63, պարբ. 33:

⁸⁷ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 102, պարբ. 30: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Տանզանիայի Միավորված Հանրապետության վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 97, պարբ. 11, որում դատապարտվում է մասնակից պետության կողմից ամուսնական բռնաբարությունը և կանանց սեռական օրգանների խեղումը չքրեականացնելը: Եզրափակիչ դիտարկումներ Ուրուգվայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 90, պարբ. 9D և Եզրափակիչ դիտարկումներ Վենեսուելայի վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/VEN, պարբ. 20, որում դատապարտվում է այն հանգամանքը, որ բռնաբարողի և իր զոհի հետագա ամուսնությունը կազատի հանցագործին և բռնաբարության այլ մասնակիցներին հետագա պատասխանատվությունից:

⁸⁸ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 110, պարբ. 14:

⁸⁹ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 88:

[23.93]

**ԹԻՎ 13 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ՝
«ՀԱՎԱՍԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՍԱՐԱՐԺԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄԱՑ»**

¶ 2. Պետությունները պետք է ձեռնամուխ լինեն աշխատանքի՝ գեղեցիկ չափանիշների վրա հիմնված գնահատման այնպիսի համակարգերի ուսումնասիրմանը, մշակմանն ու ընդունմանը, որոնք կհեշտացնեն այն տարբեր բնույթի աշխատատեղերի համեմատությունը, որոնցում կանայք ներկայումս գերակշիռ տեղ են զբաղեցնում, այն աշխատատեղերի հետ, որոնցում ներկայումս գերակշիռ տեղ են զբաղեցնում տղամարդիկ, և ստացված արդյունքները պետք է ընդգրկեն Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին ուղղված իրենց զեկույցներում:

ԿնիսՎ կոմիտեի հանձնարարականը ճանաչում է, որ խտրականությունը կարող է տեղի ունենալ նույնիսկ հատուկ խտրական պահանջի բացակայության պայմաններում: Օրինակ՝ ենթադրենք կանանց գերակշիռ հարաբերակցությամբ մասնագիտություններով զբաղվող անձանց վճարում են ավելի քիչ, քան տղամարդկանց գերակշիռ հարաբերակցությամբ մասնագիտություններով զբաղվող անձանց, թեպետև այս մասնագիտություններն օբյեկտիվորեն հավասարապես «արժեքավոր» են և պահանջում են հավասար հմտություններ: Խտրականությունն ի հայտ է գալիս որպես արդյունք, թեև դրա պատճառները կարող են վերագրվել հատուկ կանոններին կամ պայմաններին⁹⁰:

[23.94]

**ԿՆԻՍՎ, ԹԻՎ 17 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ՝
«ԿԱՆԱՆՑ ՀՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՐԿՆ ՈՒ ՀԱՓՈՒՄԸ
ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԱՄԱԽԱՌՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ»**

[ԿնիսՎ կոմիտեն հ]աստատում է, որ կանանց՝ յուրաքանչյուր երկրի զարգացմանը նպաստող տնային չվարձատրվող աշխատանքի հաշվարկն ու չափումը կօգնեն բացահայտելու կանանց փաստացի տնտեսական դերակատարումը:

Կոմիտեն համոզված է, որ նման հաշվարկն ու չափումը հիմք կդառնան կանանց առաջխաղացման հետ կապված հետագա քաղաքականությունների ձևավորման համար:

Նշելով վիճակագրական հանձնաժողովի XXV նստաշրջանում ծավալված քննարկումները՝ նվիրված ազգային հաշվետվությունների համակարգին և կանանց վերաբերյալ վիճակագրության զարգացման հարցերին՝

Կոմիտեն մասնակից պետություններին հանձնարարական է տալիս.

(ա) Ըստ սեռերի տարաբաժանված վիճակագրական տվյալների հավաքման միջոցով խրախուսել և սատարել կանանց տնային աշխատանքի արժեքը չափելու և գնահատելու ուղղությամբ կատարվող հետազոտությունները և փորձարարական ուսումնասիրությունները, օրինակ՝ տնային տնտեսությունների հարցումների ազգային ծրագրերի շրջանակներում իրականացնելով հարցումներ ծախսած ժամանակի վերաբերյալ, ինչպես նաև տնային տնտեսության աշխատանքների և աշխատաշուկայում ծախսած ժամանակի վերաբերյալ:

(բ) Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի և Կանանց դրության բարելավման ոլորտում Նայրոբիի հեռանկարային ռազմավարությունների դրույթներին համապատասխան՝ միջոցներ ձեռնարկել՝ չափելու կանանց չվարձատրվող տնային աշխատանքը և ընդգրկելու այն համախառն ազգային արդյունքում:

(գ) Կոնվենցիայի 18-րդ հոդվածի շրջանակներում ներկայացված իրենց զեկույցներում տեղեկատվություն ներառել հետազոտությունների և փորձարարական ուսումնասիրությունների վերաբերյալ՝ ուղղված չվարձատրվող տնային աշխատանքի չափմանը և գնահատմանը, ինչպես նաև ազգային ցուցանիշների հաշվարկների մեջ կանանց չվարձատրվող տնային աշխատանքի ընդգրկմանը:

Նմանապես, ԿնիսՎ-ի թիվ 16 Ընդհանուր հանձնարարականը ուշադրություն է հրավիրում ընտանիքի տղամարդ անդամին պատկանող ընտանեկան ձեռնարկություններում չվարձատրվող կին աշխատողների գերակշռությանը:

⁹⁰ Տե՛ս նաև Եվրոպական դատարանի որոշումն այս գործով՝ «Էնդերբին ընդդեմ Ֆրանսիայի առողջապահության գերատեսչության» *Enderby v Frenchay Health Authority* [1994] 1 CMLR 8:

[23.95] Համակարգային խտրականության առանձին մի դրսևորում սահմանվեց Ռասայական խտրականության վերացման կոմիտեի թիվ 19 Ընդհանուր համձնարարականում:

ՈՒՍԿ ԹԻՎ 19 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

¶ 3. Կոմիտեն նշում է, որ թեև լրիվ կամ մասնակի ռասայական տարանջատման պայմանները որոշ երկրներում կարող են ստեղծվել պետական քաղաքականության հետևանքով, այնուամենայնիվ մասնակի տարանջատման պայմաններ կարող են ստեղծվել նաև մասնավոր անձանց ոչ միտումնավոր գործողությունների հետևանքով: Շատ քաղաքներում բնակեցման օրինաչափությունները կախված են խմբերի ունեցած տարբեր եկամուտներից, որոնք երբեմն ուղեկցվում են ռասայի, մաշկի գույնի, հասարակական, ազգային կամ էթնիկական ծագման տարբերություններով, ինչի հետևանքով բնակիչները կարող են խարանվել, իսկ անհատները՝ տուժել խտրականության մի այնպիսի ձևից, որով ռասայական նկատառումները խառնվում են այլ նկատառումներին:

¶ 4. Ուստի կոմիտեն պնդում է, որ ռասայական տարանջատման պայմաններ կարող են ի հայտ գալ առանց պետական իշխանությունների որևէ նախաձեռնության կամ ուղղակի մասնակցության: Կոմիտեն կոչ է անում պետություններին մշտադիտարկել այն բոլոր միտումները, որոնք կարող են ռասայական տարանջատման տեղիք տալ և աշխատել դրանից բխող ցանկացած բացասական հետևանքի վերացման ուղղությամբ՝ նկարագրելով այդ գործողություններն իրենց պարբերական զեկույցներում:

[23.95Ա] Սլովակիայի վերաբերյալ արված հետևյալ մեկնաբանությունը համակարգային խտրականության հարցում կոմիտեի մոտեցման վառ օրինակ է ծառայում⁹¹:

¶ 18. Մասնակից պետությունը պետք է ամեն անհրաժեշտ միջոց ձեռնարկի գնչուների նկատմամբ դրսևորվող խտրականությունը վերացնելու և նրանց կողմից դաշնագրով նախատեսված իրավունքների գործնական իրացումն ապահովելու ուղղությամբ: Մասնակից պետությունը պետք է առավել ջանքեր գործադրի, որպեսզի գնչուների համար պաշտոնական հաղորդագրություններում իրենց լեզվից օգտվելու, նրանց համար սոցիալական ծառայությունները մատչելի դարձնելու, ինչպես նաև աշխատանքային վերապատրաստման և աշխատանքի տեղավորման հնարավորություններ ստեղծի: Կոմիտեն կցանկանար տեղեկություններ ստանալ որդեգրված քաղաքականությունների բոլոր մանրամասների և այդ քաղաքականությունների գործնական արդյունքների մասին:

Կրթական պարտականություններ

[23.96] Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանության 2-րդ կետում ՄԻԿ-ը նշում է, որ դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով, 3-րդ և 26-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների դրական իրացումը «չի կարող ապահովվել սոսկ օրենքների ընդունմամբ» [23.69]: Այս մեկնաբանությունը կարող է ենթադրել օրենքների պատշաճ հարկադրում: Այն նաև կարող է ենթադրել դրական, արտաօրենսդրական միջոցների կիրառում՝ խտրականության դեմ պայքարելու նկատառումով: Նման արտաօրենսդրական միջոցները պետք է ներառեն կրթական կամ խթանիչ պարտավորություններ, օրինակ՝ ոչ նպաստավոր իրավիճակում գտնվող խմբերի հանդեպ կարծրատիպային պատկերացումները վերացնելու նպատակով: Խթանիչ պարտականությունները չափազանց կարևոր են խտրականության դեմ պայքարում: Իրավական պաշտպանության միջոցները կարող են սահմանափակ դեր ունենալ, քանզի դատական գործերն անդադառնում են համեմատաբար քիչ թվով անհատների վրա, իսկ խտրականությունն ապացուցելը միշտ դժվար խնդիր է: Ավելին՝ ակնկալվում է, որ իրավական սկզբունքների համալրումը հակախտրական աջալուրջ սկզբունքներով կխթանի հասարակություններում հիմնարար, կամավոր (ոչ թե հարկադրված) անխտրականությամբ:

[23.97] 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում ահաբեկչական գործողություններից հետո Շվեդիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է հետևյալը⁹²:

⁹¹ (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/78/SVK:

⁹² (2002) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/74/SWE:

¶ 12.(c) Մասնակից պետությունը պետք է կրթարշավ կազմակերպի զանգվածային լրատվամիջոցներում օտարերկրյա ծագում ունեցող անձանց, մասնավորապես՝ արաբներին և մահմեդականներին ահաբեկչության, ծայրահեղականության և մոլեռանդության հետ կապող կարծրատիպերից պաշտպանելու համար:

[23.98] Ռասայական և սեռական խտրականության առնչությամբ խթանման և կրթության պարտականությունները նախատեսված են ՌԽՎՄԿ-ի 2-րդ հոդվածի (ե) ենթակետով և 7-րդ հոդվածով, ինչպես նաև ԿՆԽՎԿ-ի 5-րդ հոդվածով և 10-րդ հոդվածի (գ) ենթակետով:

[23.99] ԿՆԽՎԿ-ի Ընդհանուր հանձնարարականը գեներային բռնության վերաբերյալ ընդգծում է կրթարշավների կարևորությունը [23.90]: ՄԻԿ-ը նույնպես առաջարկել է պետություններին ձեռնարկել խթանիչ արշավներ: Օրինակ՝ Մավրիկիոսի առնչությամբ⁹³:

¶ 23. Հանձնարարական է տրվում է նաև, որ առաջարկվող հավասար հնարավորությունների հարցերի հանձնաժողովն ուսումնասիրի, թե արդյոք փոխհատուցողական միջոցներին ուղղված գործողությունները, այդ թվում՝ կրթական միջոցներն անհրաժեշտ են հավասարության մնացած խոչընդոտները հաղթահարելու, օրինակ՝ կանանց դեռակատարման և կարգավիճակի վերաբերյալ հետամնաց վերաբերմունքը վերացնելու համար:

Ֆինլանդիայի առնչությամբ ՄԻԿ-ը նշել է⁹⁴:

¶ 16. ... Կոմիտեն հանձնարարական է տալիս, որ ձեռնարկվեն հետագա դրական միջոցներ խտրական և օտարադաս լից մոտեցումներն ու նախապաշարմունքները հաղթահարելու և հանդուրժողականությունը խթանելու համար:

Խտրականության հետաքննություն

[23.100] Խտրական վերաբերմունքի պնդումները պատշաճ կերպ հետաքննելու պարտավորությունը պետք է ենթադրվի ՔՔԻՄԴ-ի, ՌԽՎՄԿ-ի և ԿՆԽՎԿ-ի ամխտրականության և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների մասին համապատասխան դրույթներից:

«ԱՀՄԵԴ ՀԱԲԱՍՍԻՆ ընդդեմ ԴԱՆԻԱՅԻ» (AHMED HABASSI v DENMARK, ՌԽՎԿ 10/97)

Բանկը մերժել է հեղինակի՝ փոխառություն ստանալու մասին դիմումը նրա օտարերկրացի լինելու հիման վրա: Նա հայտնել էր այդ միջադեպի մասին ոստիկանությանը՝ պնդելով, որ այդ գործողությունը Դանիայի օրենսդրությանը հակասող ռասայական խտրականության դրսևորում է: ՌԽՎՄԿ-ի շրջանակներում ներկայացված բողոքը վերաբերում է այդ գործի ոչ պատշաճ հետաքննությանը: Մասնակից պետությունը բացատրել է.

¶ 7.4. Մասնակից պետությունը հիշեցնում է, որ տարածքային դատախազը որևէ հիմք չգտավ ոստիկանապետի որոշումը չեղյալ համարելու համար և մասնավորապես բերեց այն փաստարկը, որ ոչ «խտրականության դեմ» օրենքը, ոչ էլ դաշնագիրը չեն ներառում քաղաքացիությունը որպես խտրականության առանձին հատկանիշ: Այս համատեքստում հարկ է ենթադրել, որ օտարերկրացի քաղաքացիների հանդեպ խտրականությունը խախտում է նշված օրենքը միայն այնքանով, որքանով այն կարող է նույնացվել ազգային ծագման հողի վրա կամ 1-ին բաժնի 1-ին ենթակետում թվարկվող այլ հատկանիշով խտրականության հետ: Այս օրենքի օրենսդրական նախապատմության համաձայն՝ կարելի է ենթադրել, որ տարբերակիչ վերաբերմունքի որոշ ձևեր կարող են համարվել օրինական, եթե դրանք հետապնդել են օրինական նպատակ՝ տվյալ օրենքի շրջանակներում: Փոխառություն ստանալու դիմումների պարագայում Դանիայի հետ տվյալ դիմումատուի ունեցած կապերը կարող են կարևորություն ունենալ, ի թիվս այլոց, պարտատիրոջ պահանջն ի կատար ածելու հնարավորությունը գնահատելու տեսանկյունից: Հաշվի առնելով այս իրողությունը՝ դիմումատուի քաղաքացիության վերաբերյալ տվյալներն օբյեկտիվորեն արդարացված են:

Այնուամենայնիվ, ՌԽՎԿ-ն որոշում կայացրեց հօգուտ հեղինակի.

⁹³ (1996) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 60:

⁹⁴ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 91:

¶ 9.3. Սույն գործում հեղինակին մերժել են փոխառություն տրամադրելը դանիական բանկում միայն նրա Դանիայի քաղաքացի չլինելու պատճառով, ընդ որում՝ նրան ասվել է, որ քաղաքացիության պահանջը պայմանավորված է վարկի մարումն ապահովելու անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ, կոմիտեի կարծիքով՝ քաղաքացիությունն այն առավել պատշաճ պահանջը չէ, որով պետք է զնախառվի որևէ անձի՝ վարկը մարելու պատրաստակամությունը կամ կարողությունը: Այս համատեքստում ավելի տեղին է հաշվի առնել դիմումատուի մշտական բնակության կամ աշխատանքի վայրը, ինչպես նաև իր սեփականության և ընտանիքի գտնվելու վայրը: Երկրի քաղաքացին կարող է արտասահման տեղափոխվել կամ տեղափոխել մեկ այլ երկիր իր ողջ ունեցվածքը և այդպիսով խուսափել վարկը մարելու պահանջի ի կատար ածելու բոլոր փորձերից: Համապատասխանաբար՝ կոմիտեն կարծում է, որ դաշնագրի 2-րդ հոդվածի (դ) ենթակետի հիման վրա հարկ է պատշաճ հետաքննություն իրականացնել՝ պարզելու այն իրական պատճառները, որոնք ընկած են երկրում բնակվող արտասահմանցիների նկատմամբ բանկի վարկային քաղաքականության հիմքում և որոշել, թե արդյոք այդ չափանիշներն ընդգրկում են ռասայական խտրականության դրսևորում՝ դաշնագրի 1-ին հոդվածով սահմանված իմաստով:

¶ 9.4. Կոմիտեն նշում է, որ հեղինակը, այս միջադեպը համարելով Դանիայի «խտրականության դեմ» օրենքով նախատեսված հանցանք, հայտնել է դրա մասին ոստիկանությանը: Նախ՝ ոստիկանությունը, իսկ այնուհետ՝ նաև Վիբոր քաղաքի դատախազությունն ընդունել են բանկի ներկայացուցչի բացատրությունները և որոշել են չկատարել գործի հետազոտ հետաքննությունը: Այդուհանդերձ, կոմիտեի կարծիքով՝ ոստիկանության և դատախազության ձեռնարկած քայլերը բավարար չէին որոշելու՝ խտրականության դրսևորում եղե՞լ է, թե՞ ոչ:

¶ 10. Տվյալ պարագայում կոմիտեն այն կարծիքին է, որ հեղինակին զրկել են կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով սահմանված արդյունավետ պաշտպանության միջոցից՝ 2-րդ հոդվածի (դ) ենթակետի առնչությամբ:

խտրականությունից տուժողների համար իրավական պաշտպանության միջոցներ

[23.101] ՔՔԻՄԴ-ով հստակ չեն սահմանվում խտրականությունից տուժածների համար պահանջվող իրավական պաշտպանության միջոցները, մասնավորապես՝ 2-րդ հոդվածի 3-րդ կետում իրավական պաշտպանության ստանդարտ միջոցների մասին դրույթից զատ⁹⁵: ՌԽՎՄԿ-ի 6-րդ հոդվածը նմանապես պահանջում է մասնակից պետություններից ապահովել արդյունավետ պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ ռասայական «խտրականության հետևանքով պատճառված որևէ վնասի արդար և համարժեք հատուցում կամ բավարարում», մինչդեռ 2-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետը պահանջում է պետություններից ձեռնարկել արդյունավետ միջոցներ կառավարության քաղաքականության վերանայման, ինչպես նաև խտրականության առաջացմանը կամ հավերժացմանը հանգեցնող ցանկացած օրենք և ենթաօրենսդրական ակտ փոփոխելու, վերացնելու կամ չեղյալ հայտարարելու համար: Նմանապես ԿՆԽՎԿ-ի 2-րդ հոդվածի (գ) և (ե) կետերը պահանջում են պետություններից փոփոխել կամ չեղյալ հայտարարել այն օրենքները կամ դրույթները, որոնք կանանց նկատմամբ խտրականության դրսևորում են: Տարօրինակ է, բայց ԿՆԽՎԿ-ի ոչ մի դրույթ միանշանակ չի պահանջում խտրականությունից տուժողներին փոխհատուցում վճարել:

[23.102]

ԿՆԽՎԿ, ԹԻՎ 26 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱՎԱՆ (2000 թ.)

¶ 1. Ռասայական խտրականության վերացման կոմիտեն կարծում է, որ ռասայական խտրականությունից և ռասայական հողի վրա արված վիրավորանքներից տուժող կողմի արժանապատվությանը և հեղինակությանը հասցված վնասի աստիճանը հաճախ թերագնահատվում է:

¶ 2. Կոմիտեն տեղեկացնում է մասնակից պետություններին, որ իր կարծիքով՝ արդար և համապատասխան փոխհատուցում կամ նման խտրականության հետևանքով կրած վնասի դիմաց հատուցում հայցելու իրավունքը, որն ամփոփված է դաշնագրի 6-րդ հոդվածում, ամենևին էլ ապահովված չէ խտրական գործողություն կատարած անձին պատժելով: Միաժամանակ դատարանները և այլ իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում պետք է տուժողի կողմից կրած նյութական կամ բարոյական վնասի ֆինանսական փոխհատուցում նախատեսեն:

⁹⁵ Տե՛ս այստեղ՝ [1.19-1.20]:

[23.103]**«Բ.Ջ.-ն ընդդեմ ԴԱՆԻԱՅԻ» (B.J. v DENMARK, CERD 17/99)**

Չեղինակին թույլ չեն տվել դիսկոտեկ մտնել իր ռասայական պատկանելության պատճառով: Այդ արարքը գործած անձին վերջին հաշվով ենթարկել են տուգանքի, սակայն հեղինակի՝ փոխհատուցում ստանալու պահանջը մերժվել է Դանիայի դատարաններում: Մասնակից պետությունը փոխհատուցման բացակայությունը հիմնավորում էր հետևյալ կերպ.

¶ 4.4. Չեղինակի այն պնդման առնչությամբ, որ տուգանքի զուտ խորհրդանշական բնույթը հատուցում կամ փոխհատուցում չի ապահովում, մասնակից պետությունը պնդում է, որ կոնվենցիան չի կարող մեկնաբանվել այն իմաստով, որ այն պահանջի ռասայական խտրականության դրսևորման գործողությունների դիմաց կիրառվող պատժի որևէ որոշակի ձև (օրինակ՝ ազատությունից զրկել կամ տուգանք) կամ պատժի որոշակի խստություն կամ ժամկետ (օրինակ՝ իրական կամ պայմանական ազատազրկման պատիժ, տուգանքի որոշակի չափ կամ նման այլ չափանիշներ): Մասնակից պետության տեսանկյունից որոշակի տեսակի կամ խստության պատժի մասին պահանջը անհնար է բխեցնել դաշնագրի ձևակերպումից, 14-րդ հոդվածի շրջանակներում ներկայացրած դիմումների ուսումնասիրման նախադեպային պրակտիկայից կամ կոմիտեի տված ընդհանուր մեկնաբանություններից:

¶ 4.6. Համապատասխան պատժամիջոցների ընտրությունն առանձին դեպքերում մասնակից պետության գնահատման լուսանցքի տիրույթում է: Ազգային լիազոր մարմիններն օգտվում են ուղղակի կապի հնարավորությունից բոլոր ներգրավված անձանց հետ և ավելի մեծ հնարավորություններ ունեն գնահատելու տվյալ դեպքում հարմար պատժամիջոցը: Ավելին՝ մասնակից պետությանն է վերապահված որոշելու, թե ինչ պատժամիջոց կարող է համարվել բավականաչափ զսպիչ կամ պատժիչ: Այդուհանդերձ, ընդունվում է այն հանգամանքը, որ սեփական հայեցողության լուսանցքը չպետք է կիրառվի այնպես, որ խաթարի կոնվենցիայի 6-րդ հոդվածի բուն էությունը:

¶ 4.7. Դռնապահի համար սահմանված պատժամիջոցը սույն գործում համապատասխանում է նմանատիպ գործերում կիրառելի ներպետական նախադեպային իրավունքին և կարող է համեմատվել ռասիստական բնույթի հայտարարությունների դիմաց քրեական օրենսգրքի 266-րդ մասի (բ) կետով նախատեսված պատժամիջոցների կիրառման հետ: Ուստի տուգանքը չի կարող դիտվել «զուտ խորհրդանշական բնույթի» տուգանք:

ՌԽՎ կոմիտեն որոշում կայացրեց հօգուտ մասնակից պետության, սակայն որոշակի երկիմաստություններով:

¶ 6.2. Կոմիտեն համարում է, որ հանցավոր արարք կատարած անձի դատապարտումը և պատիժը (տուգանքի վճարման միջոցով) և տուժողին ֆինանսական փոխհատուցում վճարելու հրահանգը տարբեր գործառնություններ և նպատակներ հետապնդող իրավական պատժամիջոցներ են: Բոլոր հանգամանքներում չէ, որ տուժողը պարտադիր փոխհատուցման իրավունք ունի՝ ի լրումն հանցավոր արարքը գործած անձի նկատմամբ քրեական պատժամիջոցի: Այդուհանդերձ, դաշնագրի 6-րդ հոդվածին համապատասխան՝ տուժողի փոխհատուցման պահանջը պետք է դիտարկվի յուրաքանչյուր դեպքում, այդ թվում՝ այն դեպքերում, երբ չի պատճառվել մարմնական վնասվածք, սակայն տուժողը ենթարկվել է նվաստացման, անարգանքի կամ իր հեղինակության կամ արժանապատվության դեմ այլ ոտնձգության:

¶ 6.3. Ընդհանուր հանրության համար նախատեսված և ծառայություններ մատուցող հաստատություն մուտքի արգելումը՝ միայն անձի ազգային կամ էթնիկական ծագման հիման վրա, նվաստացնող գործողություն է, որը, կոմիտեի կարծիքով, կարող է արժանանալ տնտեսական փոխհատուցման և չի կարող համաչափորեն հատուցվել կամ բավարարվել միայն հանցավոր արարքը գործած անձի նկատմամբ քրեական պատժամիջոցի կիրառմամբ:

¶ 7. Թեև, կոմիտեի կարծիքով, ներկա դիմումում շարադրված դեպքերը չեն վկայում մասնակից պետության կողմից կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման մասին, սակայն կոմիտեն մասնակից պետությանը հանձնարարական է տալիս ձեռնարկել անհրաժեշտ քայլեր և ապահովել, որ ռասայական խտրականությունից տուժած անձինք, որոնք դիմում են դաշնագրի 6-րդ հոդվածով նախատեսված արդար և համաչափ հատուցում կամ բավարարում ստանալու համար, արժանանան իրենց դիմումների այնպիսի ուսումնասիրման, որով պատշաճ կերպով հարգվի այն իրավիճակը, որում խտրականությունը ոչ թե ֆիզիկական վնաս է պատճառել, այլ նվաստացում կամ նմանատիպ տառապանք:

ՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄ ԸՍՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ շԱՓԱՆԻՇԻ

[23.104] Ստեղծվում է այն տպավորությունը, որ գոյություն ունի ԹԲԻՄԴ-ի անխտրականության դրույթների խախտումները շտկելու երկու այլընտրանքային ճանապարհ. բարձրացնել տուժող կողմի իրա-

վունքների մակարդակը և հասցնել այն իրենից լավ վերաբերմունքի արժանացող անձանց մակարդակին կամ նվազեցնել այլոց իրավունքները՝ հասցնելով դրանք տուժող անձի իրավունքների մակարդակին: Այս վերջին լուծումով նվազեցվում է այլոց իրավունքները, թեպետև սա հաճախ քիչ օգուտ է բերում բուն տուժողին⁹⁶: 5-րդ հոդվածի 2-րդ ենթակետը արգելում է մասնակից պետությանը վկայակոչել դաշնագիրը՝ որպես պետության իրավագործության ներքո գտնվող անձի հիմնարար մարդու իրավունքները նվազեցնելու հիմնավորում: 5-րդ հոդվածի 2-րդ կետը կարող է թույլ չտալ պետություններին շտկել 2-րդ հոդվածի 1-ին կետի, 3-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի խախտումները՝ ըստ նվազագույն չափանիշի⁹⁷: Այդուհանդերձ, ՄԻԿ-ն ինքն է «Ուոլդման ընդդեմ Կանադայի» (*Waldman v Canada*) [23.63] գործի 10.6 պարբերությունում հիշատակել ըստ նվազագույն չափանիշի հավասարեցնելու տարբերակը՝ որպես իրավական պաշտպանության պատշաճ միջոց, այնպես որ նման իրավական պաշտպանության միջոցները համապատասխան արձագանք են հայտնաբերված խախտումներին⁹⁸:

Հավասարությունն օրենքի առջև

[23.105] Կամընսի արձանագրության շրջանակներում ուսումնասիրված գործերի մեծ մասը վերաբերում է «օրենքով հավասար պաշտպանության», ոչ թե «օրենքի առջև հավասարության» սկզբունքին: Այս վերջին իրավունքը երաշխավորում է հավասարություն և արդարություն օրենքի կիրառման տեսանկյունից: Դատավորները և օրենքը կիրառող այլ պաշտոնատար անձինք չպետք է օրենսդրությունը կիրառեն կամայական կամ խտրական եղանակով⁹⁹: Դատավորների մասով այս պարտավորությունն արտացոլում է 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված «դատարանների առջև հավասարության» իրավունքները:

[23.106] Օրենքի առջև անհավասարության դեպքերը հաճախ վերաբերում են անձի և ոչ թե խմբի նկատմամբ պետական մարմինների ցուցաբերած կամայական վարքագծին: Այսպիսով, անհրաժեշտ է քննել, թե արդյոք «օրենքի առջև հավասարության» սկզբունքին վերաբերող բոլորը պահանջում է որևէ առանձին «հատկանիշի» սահմանում, ըստ որի՝ անձն արժանացել է անհավասար վերաբերմունքի: Այս հարցն ի հայտ եկավ հետևյալ երկու գործերում:

[23.107]

«Բ.Բ.Բ. և այլք ընդդեմ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ» (*B.d.B et al v THE NETHERLANDS*, 273/88)

Այս գործի շրջանակներում հեղինակները բողոքում էին վարչական սխալի հետևանքով իրենց կրած վնասի կապակցությամբ: Հեղինակները ֆիզիոթերապևտներ էին, ովքեր պետք է կատարեին նմանօրինակ հանգամանքներում այլ ֆիզիոթերապևտներից չպահանջվող ապահովագրական մուծումներ:

¶ 6.6. Հեղինակները բողոքում էին այն իրողության դեմ, որ իրենց նկատմամբ կիրառվել են հարկադիր բնույթ ունեցող իրավական նորմեր, որոնք անբացատրելի պատճառներով միանման կերպով ենթադրաբար չեն կիրառվել այլ ֆիզիոթերապևտների նկատմամբ:

¶ 6.7. ...Կոմիտեն նշում է, որ հեղինակները չէին պնդում, որ իրենց նկատմամբ կիրառված տարբեր վերաբերմունքը վերագրելի է այն բանին, որ իրենք դասվում էին որևէ այլ կարգի, ինչը դաշնագրի 26-րդ հոդվածում հիշատակվող հիմքերով կամ «այլ կարգավիճակով» կարող էր նրանց խտրականության առարկա դարձնել: Ուստի կոմիտեն կարծում է, որ հեղինակների բողոքի այս հայեցակետն անընդունելի է կամընսի արձանագրության 3-րդ հոդվածի շրջանակներում:

⁹⁶ Տե՛ս վերը՝ «Lester and Joseph», ծնթ. 6, 594:

⁹⁷ Նույն տեղում:

⁹⁸ «Պաուզերն ընդդեմ Ավստրիայի» (*Pauger v Austria*), 415/90 գործում պրն Անդրե ընդունում է ըստ նվազագույն չափանիշի հավասարեցնելու հնարավորությունը որպես 26-րդ հոդվածի խախտումների իրավական պաշտպանության միջոց, սակայն նշում է, որ նման միջոցները հազիվ թե հանդուրժելի լինեն համապատասխան հասարակության համար:

⁹⁹ Մ. Նովակ, վերը, ծնթ. 12, 466-7. Տե՛ս նաև [23.12]:

Բ.դ.Բ.-ի գործով բողոքարկողները չեն կարող ապացուցել, որ իրենց՝ որպես ընդհանուր «այլ կարգավիճակով» միավորված խմբի անդամների նկատմամբ խտրականություն է ցուցաբերվել: Այնուհանդերձ, կարելի է Բ.դ.Բ.-ի գործը համեմատել հետևյալ գործի հետ:

[23.108]

«ՖԱԲՐՅՈՎԱՆ ընդդեմ ՉեխիԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»
(*FÁBRYOVÁ v CZECH REPUBLIC, 765/97*)

Բողոքը վերաբերում էր հեղինակի հոր՝ կոմունիստական վարչակարգի կողմից սեփականության բռնազանձման դիմաց Չեխիայի օրենսդրությամբ փոխհատուցում ստանալու անկարողությանը: Փոխհատուցում ստանալու նրա դիմումը մերժվել էր հողային վարչության 1994 թ. հոկտեմբերի 14-ի որոշմամբ: Հետագայում սահմանադրական դատարանը հեղինակին չվերաբերող դատավարության շրջանակներում որոշում էր կայացրել առ այն, որ հողային վարչության՝ համապատասխան օրենսդրության մեկնաբանությունը սխալ է եղել: Հետևաբար 1994 թ. որոշումը փոխարինվել է Կենտրոնական հողային վարչության 1997 թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ: Այդուհանդերձ, հեղինակը բացատրում է, թե ինչու 1997 թ. որոշումն իր համար անօգուտ էր:

¶ 5.2. Հաջորդ դիմումին կից հեղինակը ներկայացրել է գյուղատնտեսության նախարարության 1998 թ. մայիսի 25-ի մամակը, որում իրեն տեղեկացվում է, որ 1997 թ. հոկտեմբերի 9-ին Կենտրոնական հողային վարչության կայացրած 1994 թ. հոկտեմբերի 14-ի որոշմանը փոխարինող որոշումը հանձնվել է բոլոր շահագրգիռ կողմերին նախկին որոշումից երեք տարի անց և կորցրել էր իր իրավաբանական ուժը:

ՄԻԿ-ը որոշում կայացրեց հօգուտ հեղինակի.

¶ 9.2. Կոմիտեն նշում է՝ մասնակից պետությունն ընդունում է, որ թիվ 243/1992 օրենքով հեղինակի իրավիճակում հայտնված անձինք սահմանադրական դատարանի հետագա մեկնաբանության արդյունքում փոխհատուցման իրավունք ունեն (կետ 4.4): Մասնակից պետությունը նաև ընդունում է, որ 1994 թ. հոկտեմբերի 14-ին Ջիլլավայի հողային վարչության կայացրած որոշումը սխալ էր, և հեղինակին պետք է Ջիլլավայի հողային վարչություն նոր դիմում ներկայացնելու հնարավորություն ընձեռվեր: Հեղինակը կրկնեց փոխհատուցում ստանալու իր փորձը, սակայն այդ փորձը ձախողվեց հենց մասնակից պետության կողմից, որը գյուղատնտեսության նախարարության 1998 թ. մայիսի 25-ի մամակով հայտնեց հեղինակին, որ Ջիլլավայի հողային վարչության 1994 թ. հոկտեմբերի 14-ի կայացրած որոշումը վերջնական է համարվում այն հիմնավորմամբ, որ տվյալ որոշմանը փոխարինող Կենտրոնական հողային վարչության որոշումը հանձնվել է ուշացումով:

¶ 9.3. Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ կոմիտեն եզրակացնում է, որ եթե Ջիլլավայի որոշմանը փոխարինող Կենտրոնական հողային վարչության որոշումը հանձնվել է ուշացումով, ապա դա վերագրելի է լիազոր մարմինների վարչական սխալին: Հեղինակը գրկվել է մնացած իրավիճակում հայտնված այլ անձանց հետ մեկտեղ նախկինում բռնագրավված սեփականության հարցում հավասար վերաբերմունքի արժանանալու իրավունքից, ինչը խախտում է նրա՝ դաշնագրի 26-րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

26-րդ հոդվածի խախտումն արժանագրելու համար ՄԻԿ-ը չի մեջբերել կամ միանշանակ պահանջել որևէ տարբերակիչ հատկանիշ: Ֆաբրիովայի գործով կայացրած որոշումը կարող է վկայել այն մասին, որ ՄԻԿ-ը հետզհետե ավելի շատ է գործածում 26-րդ հոդվածում նախատեսված օրենքի առջև հավասարության սկզբունքը, եթե նույնիսկ այդ դրույթն ակնհայտորեն չի հիշատակվում նրա բերած պատճառաբանությունում: Հետևյալ գործերից ստեղծվում է այն տպավորությունը, որ ՄԻԿ-ը օրենքի առջև հավասարության սկզբունքին վերաբերող գործերում առանձին տարբերակիչ հատկանիշ չի պահանջում¹⁰⁰:

[23.109]

«ԿԱՎԱՆԱՆ ընդդեմ ԻՐԼԱՆԴԻԱՅԻ» (*KAVANAGH v IRELAND, 819/98*)

Գործի հանգամանքների նախապատմությունը շարադրված է ստորև հեղինակի կողմից.

¶ 2.1. Իռլանդիայի սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է հատուկ դատարանների ստեղծում այնպիսի հանցանքների դատաքննության համար, որոնց դեպքում, ըստ օրենքի, հնարավոր է որոշել, որ սովոր-

¹⁰⁰ Տե՛ս նաև՝ *Pezoldova v Czech Republic* (757/97):

րական դատարանները «հարմար չեն արդարության արդյունավետ իրականացումը և հանրային կարգն ապահովելու համար»: 1972 թ. մայիսի 26-ին կառավարությունը կիրառեց 1939 թ. «Պետության դեմ հանցանքների մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) հռչակագիր անելու իր լիազորությունը, ինչը հանգեցրեց հատուկ քրեական դատարանների ստեղծմանը՝ որոշակի տեսակի հանցանքների քննության համար:

¶ 2.2. Օրենքի 47-րդ բաժնի 1-ին կետի համաձայն՝ հատուկ քրեական դատարանն իրավասություն ունի «նախատեսված հանցատեսակի» (այսինքն՝ ցուցակում թվարկվող հանցանքի) հարցում այն դեպքում, երբ գլխավոր դատախազը «ճիշտ է համարում», որ նման մեղադրյալի գործը քննվի հատուկ քրեական, ոչ թե սովորական դատարանների կողմից: [Այս հանցատեսակներից շատերը հաճախ կապված էին ահաբեկչության հետ, թեև որոշ հանցատեսակներ կարող էին ծագել քաղաքական բնույթ չունեցող հանցագործությունների կատարման ընթացքում:] Հատուկ քրեական դատարանը լիազորություն ունի չնախատեսված այն հանցատեսակների հարցում, որոնց վերաբերյալ գլխավոր դատախազը, օրենքի 47-րդ բաժնի 2-րդ կետի համաձայն, հաստատում է, որ իր կարծիքով սովորական դատարանները «հարմար չեն նման մեղադրանքով անձի դատաքննությունում արդարադատության արդյունավետ իրականացումն ապահովելու համար»: Պետական դատախազության տնօրենն այս լիազորություններն իրականացնում է գլխավոր դատախազի լիազորությամբ:

¶ 2.3. Ի տարբերություն երդվյալ ատենակալների մասնակցությամբ քրեական գործեր քննելու իրավասություն ունեցող սովորական դատարանների՝ հատուկ քրեական դատարանները բաղկացած են երեք դատավորներից, որոնք որոշում են կայացնում քվեարկությամբ: Հատուկ քրեական դատարանները նաև կիրառում են սովորական քրեական դատարաններից տարբերվող ընթացակարգ, որտեղ մեղադրյալը չի կարող օգտվել որոշակի վկաների տված ցուցմունքի վերաբերյալ նախնական քննության ընթացակարգերից:

Ստորև բերված են հեղինակի դիմումի և բողոքի պատճառ դարձած փաստերը.

¶ 3.2. 1994 թ. հուլիսի 19-ին հեղինակը ձերբակալվել էր միջադեպին առնչվող յոթ մեղադրանքով, մասնավորապես՝ ազատության ապօրինի սահմանափակում, կողոպուտ, սպառնալիքներով ուղեկցվող դրամաշորթություն, սպառնալիքներով ուղեկցվող դրամաշորթություն կազմակերպելու դավադրություն և ազատության ապօրինի սահմանափակման մտադրությամբ հրազենի տիրապետում: Առաջադրված մեղադրանքներից վեցն ընդգրկված չէին ցուցակում, իսկ յոթերորդ մեղադրանքը՝ ազատության ապօրինի սահմանափակման մտադրությամբ հրազենի տիրապետումը, «նախատեսված հանցատեսակ» էր:

¶ 3.3. 1994 թ. հուլիսի 20-ին, օրենքի 47-րդ բաժնի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, նախատեսված և չնախատեսված հանցատեսակներ կատարելու համար պետական դատախազության տնօրենի 1994 թ. հուլիսի 15-ին տրված հրամանով հեղինակին մեղադրանք առաջադրվեց հատուկ քրեական դատարանի առջև բոլոր յոթ հանցատեսակների մասով:

¶ 4.1. Հեղինակը պնդում է, որ դատախազության տնօրենի հրամանը հատուկ քրեական դատարանի առջև իր դատաքննության վերաբերյալ խախտել է արդարության և հավասարության սկզբունքները, որոնք պաշտպանված են դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով: Հեղինակը բողոքում է, որ ինքը հայտնվել է խիստ անբարենպաստ իրավիճակում՝ համեմատած նմանատիպ կամ նույն քրեական հանցանքների համար մեղադրվող այն անձանց հետ, որոնց դատաքննությունն իրականացվել է սովորական դատարանների կողմից, և ովքեր, հետևաբար, կարող էին օգտվել երաշխիքների ավելի լայն շրջանակից: Հեղինակն ընդգծում է, որ իր գործում երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատաքննությունը, ինչպես նաև վկաների նախնական քննության հնարավորությունն առանձնապես կարևոր դեր էին խաղում: Մի քանի առանցքային վկաների ցուցմունքների արժանահավատության գնահատումն իր գործի հիմնական խնդիրն էր: Այսպիսով, հեղինակը պնդում է, որ իր հնարավորությունները կամայականորեն սահմանափակվել են, և ինքն արժանացել է անհավասար վերաբերմունքի իր դատավարական իրավունքների մասով, քանզի պետական դատախազության տնօրենն իր կայացրած որոշման համար որևէ պատճառաբանություն կամ հիմնավորում չի ներկայացրել:

¶ 4.7. Հեղինակը նաև պնդում է, որ տեղի է ունեցել 26-րդ հոդվածով նախատեսված անխտրականության սկզբունքի խախտում, քանզի ինքն առանց օբյեկտիվ պատճառաբանության գրկվել է այլ նմանատիպ հանցանքների համար մեղադրվող անձանց համար հասանելի կարևոր իրավական երաշխիքներից:

Մասնակից պետությունն արդարացրեց հատուկ քրեական դատարանների գոյությունը.

¶ 7.4. Հեղինակի այն փաստարկի առնչությամբ, որ իր իրավունքները խախտվել են «սովորական» հանցանքների համար իրեն հատուկ քրեական դատարանի կողմից դատելու իրողությամբ, մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ արդարադատության պատշաճ իրականացումը պետք է պաշտպանված լինի այն խաղիչի սպառնալիքներից, այդ թվում՝ հասարակության ներսում գործող սադրիչ խմբերից, կազմակերպված հանցավորությունից

և երդվյալ ատենակալների ահաբեկման վտանգից: Այն գործում, որում գոյություն ունի երդվյալ ատենակալների մասնակցությամբ սովորական դատավարության ամբողջականության սպառնալիք, որը, պետական դատախազության տնօրենի պնդմամբ, գոյություն ունի տվյալ գործի պարագայում, մեղադրյալի իրավունքները փաստորեն ավելի լավ են պաշտպանված երեք անկողմնակալ դատավորների կողմից, որոնք պակաս խոցելի են ոչ պատշաճ արտաքին ազդեցության համար, քան երդվյալ ատենակալները: Մասնակից պետությունը մատնանշում է, որ սովորական դատարանների անհամապատասխանությունը, որում պետական դատախազության տնօրենը պետք է համոզված լինի նախքան հատուկ քրեական դատարան գումարելը, կարող է ի հայտ գալ ոչ միայն «քաղաքական», «սադրիչ» կամ զինվորական բնույթ ունեցող հանցատեսակների համար, այլև «սովորական բանդիտիզմի կամ լավ ֆինանսավորված ու կազմակերպված թմրամիջոցների վաճառքով զբաղվող կազմակերպությունների դեպքում, ինչպես նաև այլ իրավիճակներում, երբ հիմք կա կարծելու, որ երդվյալ ատենակալները որևէ ապօրինի պատճառով կամ սպառնալիքների ներքո կամ ապօրինի միջամտության հետևանքով կարող են զրկվել արդարադատության իրականացնելու հնարավորությունից»:

ՄԻԿ-ը հաստատեց Կանադայի բողոքը 26-ը հողվածի մասով և հետևաբար անհրաժեշտ չհամարեց անդրադառնալ նրա պնդումներին 14-րդ հողվածի 1-ին կետի մասով:

¶ 10.1. ... Կոմիտեի կարծիքով՝ սովորական դատարաններից բացի, այլ դատարանների առջև դատաքննությունն ամենևին էլ արդար դատավարության իրավունքի խախտում չէ, իսկ ներկա գործի փաստերը չեն վկայում այն մասին, որ տեղի է ունեցել նման խախտում:

¶ 10.2. Հեղինակի այն պնդումը, որ տեղի է ունեցել 14-րդ հողվածի 1-ին կետով նախատեսված դատարանների և տրիբունալների առջև հավասարության պահանջի խախտում, կրկնօրինակում է իր՝ 26-րդ հողվածով նախատեսված օրենքի առջև հավասարության և օրենքով հավասար պաշտպանության իրավունքի խախտման մասին պնդումը: Պետական դատախազության տնօրենի՝ հեղինակին հատուկ քրեական դատարանում դատաքննելու որոշումը հանգեցրել է նրան, որ հեղինակը կանգնել է դատական արտակարգ կազմի և ընթացակարգի առջև: Այս տարբերությունը զրկել է հեղինակին ներպետական օրենսդրությամբ սահմանված որոշակի ընթացակարգերից՝ տարբերելով հեղինակին սովորական դատարաններում մամառիպ հանցատեսակների համար մեղադրվող այլ անձանցից: Մասնավորապես՝ մասնակից պետության իրավասության ներքո երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատաքննությունը համարվում է մեղադրյալներին հասանելի կարևոր պաշտպանության միջոց: Ուստի 26-րդ հողվածի շրջանակներում մասնակից պետությունը պարտավոր է ցույց տալ, որ անձին այլ ընթացակարգով դատելու որոշումը հիմնված է եղել ողջամիտ և օբյեկտիվ պատճառների վրա: Այս առնչությամբ կոմիտեն նշում է, որ մասնակից պետության օրենսդրությամբ՝ «Պետության դեմ հանցանքների մասին» օրենքով, նախատեսված են մի շարք հանցատեսակներ, որոնց դեպքում դատաքննությունը կարող է պետական դատախազության տնօրենի հայեցողությամբ իրականացվել հատուկ քրեական դատարաններում: Այդ օրենքով նաև նախատեսվում է, որ ցանկացած այլ հանցանքի դատաքննությունը հատուկ քրեական դատարանին կարող է փոխանցվել, եթե սովորական դատարանները «չեն համապատասխանում արդարության արդյունավետ իրականացումն ապահովելուն»: Կոմիտեն խնդրահարույց է համարում այն հանգամանքը, որ նույնիսկ եթե տարաբաժանված քրեական համակարգը որոշակի լուրջ հանցատեսակների համար ընդունելի է համարվում՝ արդարացի լինելու պայմանով, սակայն խորհրդարանը օրենսդրությամբ նախատեսել է որոշակի լուրջ հանցատեսակներ, որոնք պետք է անցնեն հատուկ քրեական դատարանների իրավասության տակ՝ պետական դատախազության տնօրենի անսահմանափակ հայեցողությամբ («ճիշտ է համարում»), և նույնիսկ թույլ է տալիս, որ այլ հանցատեսակներով նույնպես նշանակվի այսպիսի դատաքննություն, եթե պետական դատախազության տնօրենը սովորական դատարանները համարում է անհամապատասխան: Որևէ պատճառաբանություն չի պահանջվում հիմնավորելու այն որոշումը, որով հատուկ քրեական դատարանները «համապատասխան», իսկ սովորական դատարանները «անհամապատասխան» են համարվում, և տվյալ դեպքում նման որոշման համար որևէ պատճառաբանություն չի ներկայացվել կոմիտեին: Ավելին՝ պետական դատախազության տնօրենի որոշումների դատական քննությունը սահմանափակվում է ամենաբացառիկ և գործնականում անցուցադրելի հանգամանքներով:

¶ 10.3. Կոմիտեն համարում է, որ մասնակից պետությունը չի կարողացել ցույց տալ, որ հեղինակին հատուկ քրեական դատարան բերելու որոշումը պայմանավորված է եղել ողջամիտ և օբյեկտիվ պատճառներով: Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ հեղինակի՝ 26-րդ հողվածով նախատեսված օրենքի առջև հավասարության և օրենքով հավասար պաշտպանության իրավունքը խախտվել է: Հաշվի առնելով 26-րդ հողվածի վերաբերյալ այս եզրակացությունը՝ կարիք չկա այս գործի շրջանակներում քննել դաշնագրի 14-րդ հողվածի 1-ին կետում զետեղված «դատարանների և տրիբունալների առջև» հավասարության իրավունքի խախտման հարցը:

¶ 12. Դաշնագրի 2-րդ հողվածի 3-րդ կետի (ա) ենթակետին համապատասխան՝ մասնակից պետությունը պարտավորություն է կրում հեղինակին ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցով: Մասնակից պետությունը նաև պարտավորություն է կրում է ապահովելու, որ նման խախտումներն ապագայում չկրկնվեն: Այն

պետք է ապահովի, որ մեղադրյալները չկանգնեն հատուկ քրեական դատարանի առջև, եթե չկան այդ որոշումը կայացնելու ողջամիտ և օբյեկտիվ պատճառներ:

Այսպիսով, մասնակից պետությունը չի կարողացել հիմնավորել հատուկ քրեական դատարանում Կավանային դատելու որոշումը: ՄԻԿ-ը պատրաստ չէր ենթադրելու, որ պետական դատախազության տնօրենի որոշումը հիմնված է ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա՝ այդ որոշման դատական քննության բացակայության կամ պետական դատախազության տնօրենի կայացրած որոշման պատճառների բացահայտման բացակայության պայմաններում¹⁰¹:

Մասնակից պետությունը բերեց հետևյալ փաստարկը.

¶ 7.6. ... Ցանկալի չէր լինի պահանջել, որ պետական դատախազության տնօրենի որոշումը հիմնավորվեր կամ բացատրվեր, քանի որ դա գաղտնի բնույթի տեղեկություններ կբացահայտեր և հետևանքներ կունենար անվտանգության համար՝ դրանով իսկ զրոյի հավասարեցնելով հատուկ քրեական դատարանների ստեղծման բուն նպատակը և առհասարակ չէր ծառայի հանրության շահերին:

Ըստ երևույթին, ՄԻԿ-ը չընդունեց այն փաստարկը, որ պատճառները չիրապարակելը արդարացված է անվտանգության նկատառումներով: Նման պատճառների բացակայության պարագայում հատուկ քրեական դատարանի առջև Կավանայի դատաքննությունը չէր կարող համարվել հիմնված ողջամիտ և օբյեկտիվ պատճառների վրա, ուստի արձանագրվել է 26-րդ հոդվածի խախտում¹⁰²:

Կավանայի գործը վկայում է, որ սոսկ «անվտանգության նկատառումների» վկայակոչումն այն քողը չէ, որի տակ թույլատրելի են պետության բոլոր գործողությունները¹⁰³:

[23.110] «ԳՈՏԻԵՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (GAUTHIER v CANADA, 633/95)

Չեղինակը բողոքում էր, որ իրեն անդամակցություն չի թույլատրվում մամուլի սրահի ընկերակցությունում, ինչը նշանակում է, որ նա զրկված է եղել խորհրդարանական մամուլի ծառայություններից օգտվելու հնարավորությունից: ՄԻԿ-ի մեծամասնությունն արձանագրեց 19-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտվելու իրավունքի խախտում¹⁰⁴: Ջուզահեռաբար կոմիտեի փոքրամասնությունը գտավ, որ տեղի է ունեցել 26-րդ հոդվածի խախտում: Պրն Սոլարի Յրիգոյենը, տիկին Էվաթը, օրիորդ Մեդինա Քուիրոզան և լորդ Քոլվիլը, որոնց հետ, ըստ էության, համաձայն էին պարոնայք Լալահը և Բիագվաթին, նշեցին հետևյալը.

Դաշնագրի 26-րդ հոդվածը սահմանում է, որ բոլոր անձինք հավասար են օրենքի առջև: Հավասարությունը ենթադրում է, որ օրենքների և կանոնների կիրառումը, ինչպես նաև կառավարության պաշտոնյաների վարչական որոշումները չպետք է կամայական լինեն, այլ պետք է հիմնվեն հետևողական հիմքերի վրա և ապահովեն ցուցաբերվող վերաբերմունքի հավասարություն: Չեղինակին, ով խորհրդարանական լսումները լուսաբանելու ցանկություն ունեցող լրագրող է, խորհրդարանական մամուլի ծառայություններ մուտք գործելու հնարավորությունից զրկելը՝ առանց որևէ հատուկ պատճառաբանության, կամայականություն է: Ավելին՝ գոյություն չունեի այդ որոշման վերանայման որևէ ընթացակարգ: Այս հանգամանքներում մենք հարում ենք այն կարծիքին, որ դաշնագրի 26-րդ հոդվածով պաշտպանված օրենքի առջև հավասարության սկզբունքը չեղինակի պարագայում խախտվել է:

Փոքրամասնության այս եզրակացությունը շեշտը դնում է կառավարության որոշման կամայականության վրա և կարծես նվազեցնում է խտրականության արգելված «հատկանիշ» սահմանելու կարևորությունը¹⁰⁵:

¹⁰¹ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2001) 1 *HRLR* 305, 311-12.

¹⁰² Նույն տեղում, 312: Տե՛ս նաև *Tinnelly & Sons and McElduff v UK* (1999) 27 *EHRR* 249, *Fitt v UK* (2000) 30 *EHRR* 480, և *Rowe and Davis v UK* (2000) 30 *EHRR*. 1: Տե՛ս նաև A. Sherlock, 'Access to Court in Cases involving National Security Considerations' (1999) 24 *European Law Review* 106:

¹⁰³ Նույն տեղում, 312: Տե՛ս նաև [18.29]: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Միացյալ Թագավորության վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/73/UK, պարբ. 18 ([14.11] ծնթ. 13):

¹⁰⁴ Տե՛ս այստեղ՝ [18.31]:

¹⁰⁵ Պարոնայք Լալահը և Բիագվաթին նույնպես բացահայտեցին 26-րդ հոդվածի խախտում՝ այս գործում սահմանելով անդամակցությունը մասնավոր կազմակերպությանը որպես խտրականության արգելված հատկանիշ:

Մյուս կողմից՝ արն Կրեցմերը մեկ այլ հատուկ եզրակացությունում նշեց հետևյալը.

Ես համամիտ չեմ վերոնշյալ փոքրամասնության այն կարծիքին, թե 26-րդ հոդվածի խախտումն ըստ էության ապացուցված է եղել: Իմ կարծիքով՝ 26-րդ հոդվածի խախտումն ըստ էության ապացուցելու համար բավարար չէ պարզապես հայտարարել, որ տվյալ որոշման համար որևէ պատճառաբանություն չի տրվել: Ավելին՝ ստեղծվում է այն տպավորությունը, որ 26-րդ հոդվածով հեղինակի պահանջն ըստ էության 19-րդ հոդվածի մասով պահանջի կրկնություն է: Այն վերածվում է այն փաստարկին, որ թեև այլ անձինք ստացել են մամուլի սրահ մուտք գործելու թույլտվություն, սակայն հեղինակին թույլ չեն տվել այնտեղ մուտք գործել: Ընդունել, թե սա 26-րդ հոդվածի խախտում է, կնշանակեր, որ գրեթե ամեն դեպքում, երբ անձի իրավունքները խախտվում են դաշնագրի այլ հոդվածների մասով, տեղի է ունենում նաև 26-րդ հոդվածի խախտում: Ես, հետևաբար, միանում եմ կոմիտեի այն կարծիքին, որ հեղինակի՝ 26-րդ հոդվածի խախտման պահանջը չի հիմնավորվել:

Կրեցմերի եզրակացությունը նախազգուշացնում է, որ չպետք է չափազանց լայն մեկնաբանել 26-րդ հոդվածը, որպեսզի այն չկորցնի դաշնագրով պաշտպանված առանձին երաշխիքի կարգավիճակը:

[23.111] «*Թիսդեյլն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Teesdale v Trinidad and Tobago, 677/96*) գործում հեղինակը պնդում էր, որ տեղի էր ունեցել 26-րդ հոդվածի խախտում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մահապատիժը փոխարինվել է յոթամասունհինգ տարի ժամկետով ազատազրկմամբ՝ առանց վաղաժամկետ պայմանական ազատ արձակվելու հնարավորության, մինչդեռ հիսուներեք այլ անձանց դատավճիռը փոխարինվել է «ցմահ բանտարկությամբ», ինչը նշանակում էր, որ նրանք վաղաժամկետ պայմանական ազատ արձակվելու հնարավորություն կունենան տասնհինգից քսան տարում¹⁰⁶: ՄԻԿ-ի մեծամասնությունը որևէ խախտում չգտավ, քանի որ հեղինակն այլ գործերի բնույթի մասին մանրամասներ չէր տրամադրել¹⁰⁷: Պարոնայք Կրեցմերից, Շիրերից և Սոլարի Յրիգոյենից բաղկացած փոքրամասնությունը որոշեց, որ խախտում է եղել, քանզի մասնակից պետությունը «որևէ բացատրություն չի տվել հեղինակի և մահվան դատապարտված այլ անձանց նկատմամբ վերաբերմունքի ենթադրյալ տարբերության առնչությամբ»: Այսպիսով, ՄԻԿ-ի մեծություն տարածայնությունը ապացույցի բեռի համապատասխան բաշխման հարցում էր:

Եզրակացություն

[23.112] ՄԻԿ-ը, ինչպես նաև ՌԽՎ և ԿՆԽՎ կոմիտեները անխտրականության իրավունքների վերաբերյալ մեծ իրավական բազա է ստեղծել: ՔՔԻՄԴ-ը խտրականության արգելման հարցում մի քայլ ավելի է արել, քան ՌԽՎՄԿ-ն և ԿՆԽՎԿ-ն, քանի որ այդ արգելքը, ռասայի և սեռի հատկանիշներից բացի, տարածում է այլ հատկանիշների վրա: ՔՔԻՄԴ-ը պարտադրում է մասնակից պետություններին կանխել և շտկել պետությունների օրենսդրության շրջանակներում գործող պետական և մասնավոր մարմինների ցուցաբերած վրդովեցնող խտրականությունը: Որոշ հանգամանքներում կարող են պահանջվել դրական կամ «փոխհատուցողական» գործողություններ՝ ցուցաբերված խտրականությունը պատշաճ կերպով շտկելու համար: ՄԻԿ-ը մեծահոգաբար ընդունելի է համարել խտրականության վերաբերյալ գործերը բազմաթիվ հատկանիշների մասով և բազմաթիվ իրավունքների իրացման առնչությամբ: Այդուհանդերձ, նա վերջին հաշվով արձանագրել է, որ ենթադրյալ խտրականության դեպքերի մեծ մասը խարսխված է եղել հիմնավորված «ողջամիտ և օբյեկտիվ» տարբերությունների վրա: Սակայն այս միտումը վերջին տարիներին հակառակ ընթացք է ստացել, և 26-րդ հոդվածի ավելի շատ խախտումներ են արձանագրվում կամընտիր արձանագրության շրջանակներում քննարկվող գործերում:

¹⁰⁶ Պարբ. 3.9:

¹⁰⁷ Պարբ. 9.8:

Փոքրամասնությունների իրավունքներ. հոդված 27

- 27-րդ հոդված և ՔՔԻՄԴ-ի այլ հոդվածներ [24.02]
- Փոքրամասնության սահմանումը [24.06]
- Փոքրամասնության կազմ [24.12]
- Բնիկ ժողովուրդ և 27-րդ հոդված [24.15]
- Անհատական և խմբային իրավունքներ [24.18]
- 27-րդ հոդվածի իրավական նշանակությունը. որո՞նք են 27-րդ հոդվածով
ամրագրված իրավունքները [24.22]
- Մշակույթ [24.22]
 - Տնտեսական զարգացում և դրա ազդեցությունը մշակույթի վրա [24.28]
 - Բնիկների պահանջները՝ կապված հողային իրավունքների հետ [24.39]
- Կրոն [24.45]
- Լեզու [24.46]
- Իրավական պաշտպանության դրական միջոցներ [24.51]
- Եզրակացություն [24.53]

ՅՈՒՆԱԾ 27

Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը:

[24.01] 27-րդ հոդվածը պաշտպանում է փոքրամասնությունների իրավունքները, այսինքն՝ պաշտպանում է փոքրամասնություն հանդիսացող խմբերին պատկանող անձանց՝ ի լրումն դաշնագրով առհասարակ բոլոր անձանց իրավունքների պաշտպանությանը¹: Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը բացատրել է 27-րդ հոդվածի այս լրացուցիչ հատկանիշը:

ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. Կոմիտեն նշում է, որ 27-րդ հոդվածը սահմանում և ճանաչում է փոքրամասնություն հանդիսացող խմբերին պատկանող անձանց տրված իրավունքները, որոնք տարբերվում և լրացնում են մնացած բոլոր այն իրավունքները, որոնք արդեն իսկ շնորհված են նրանց՝ որպես անհատների:

¶ 9. 27-րդ հոդվածով սահմանված իրավունքների պաշտպանությունն ուղղված է տվյալ փոքրամասնությունների մշակութային, կրոնական և հասարակական ինքնության գոյությունը և շարունակական զարգացումը ապահովելուն՝ դրանով իսկ հարստացնելով հասարակությունը: Ըստ այդմ՝ կոմիտեն նշում է, որ այս իրավունքները պետք է պաշտպանվեն, և դրանք չպետք է շփոթել դաշնագրով բոլորին շնորհված անհատական այլ իրավունքների հետ:

¹ Մշակութային իրավունքները որոշ առումով ճանաչված են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՏՄՄԻՄԴ) 3-րդ և 15-րդ հոդվածներով: Փոքրամասնությունների մշակութային կամ լեզվական իրավունքներն առավել մանրամասնեցված են Միավորված ազգերի կազմակերպության՝ Ազգային կամ էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագրում (GA Res, 18 Dec 1992): Փոքրամասնության իրավունքներն ընդհանուր առմամբ շատ աշխատություններում մանրամասն ուսումնասիրված են, օրինակ՝ W. Kymlicka (ed), *The Rights of Minority Cultures* (Oxford University Press, Oxford, 1995), A. Phillips and A. Rosas (eds), *Universal Minority Rights* (Institute for Human Rights, մո Ակադեմի University, Finland, 1995); P. Thornberry, *International Law and the Rights of Minorities* (Oxford University Press, Oxford, 1991); and P. Alston (ed), *People's Rights* (OUP, Oxford, 2001):

27-րդ հոդվածը և Ընդհանուր մեկնաբանությունը հստակեցնում են, որ փոքրամասնությունների ինքնությունը պահպանելու և պաշտպանելու իրավունքն էական նշանակություն ունի: Փոքրամասնության ինքնության հիմնարար բաղադրիչներն են դրա մշակութային, կրոնական և լեզվական դրսևորումները, որոնք հարկավոր է պաշտպանել²:

27-րդ հոդված և ՔՔԻՄԴ-ի այլ հոդվածներ

[24.02]

ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻԿ-ը բացատրում է 1-ին հոդվածով երաշխավորված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և փոքրամասնությունների իրավունքի տարբերությունը:

¶ 2. Կամընտիր արձանագրության շրջանակներում կոմիտեին ներկայացրած որոշ դիմումներում 27-րդ հոդվածով պաշտպանված իրավունքը շփոթվել է դաշնագրի 1-ին հոդվածով հռչակված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հետ:

¶ 3.1. Ինքնորոշման իրավունքը և 27-րդ հոդվածով պաշտպանված իրավունքները տարբերակված են դաշնագրում: Առաջինը ձևակերպված է որպես ժողովուրդներին պատկանող իրավունք, որը շոշափվում է դաշնագրի առանձին մասում (Մաս I): Ինքնորոշումը կամընտիր արձանագրությանը ընդդատյա իրավունք չէ: Մյուս կողմից՝ 27-րդ հոդվածը վերաբերում է անձանց շնորհված իրավունքներին և անհատներին շնորհված այլ անձնական իրավունքներին վերաբերող հոդվածների մասն ընդգրկված է դաշնագրի 3-րդ մասում և կամընտիր արձանագրությանը ենթադատ է:

¶ 3.2. 27-րդ հոդվածին առնչվող իրավունքների իրացումը բացասաբար չի անդրադառնում մասնակից պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վրա: Միաժամանակ այդ հոդվածով պաշտպանված անհատների իրավունքների տարբեր հայեցակետերը, օրինակ՝ պատկանելությունը տվյալ մշակույթին, կարող են ենթադրել այնպիսի կենսակերպ, որը սերտորեն կապված է տվյալ պետության տարածքի կամ դրա ռեսուրսների օգտագործման հետ: Սա կարող է վերաբերել մասնավորապես փոքրամասնություն հանդիսացող բնիկ համայնքների անդամներին:

[24.03] Հետևաբար, 27-րդ հոդվածը տարբերվում է 1-ին հոդվածից, ի թիվս այլոց, այն հիմնված է, որ առաջինը երաշխավորում է անձնական, ոչ թե հավաքական իրավունքներ: Այնուամենայնիվ, ելնելով այն հանգամանքից, որ 27-րդ հոդվածով պաշտպանված իրավունքները կիրառելի են փոքրամասնության անդամների համար, դրանք մասամբ կարող են դիտարկվել որպես հավաքական իրավունքներ, որոնք կարելի է իրականացնել անհատական կարգով³: 1-ին հոդվածի մեկնաբանության առումով սա հավասարապես ուժեղ փաստարկ է⁴: Ինչպես կարելի է տեսնել ստորև⁵, փոքրամասնության որոշ պնդումների անհերքելի «խմբային» հայեցակետը կարող է երբեմն հակասել միևնույն խմբի անձանց՝ 27-րդ հոդվածով բերված պնդումներին:

[24.04] Ընդհանուր մեկնաբանությունում նաև տարբերակվում են 27-րդ հոդվածը և անխտրականության իրավունքներ սահմանող 2-րդ հոդվածի 1-ին կետն ու 26-րդ հոդվածը:

¶ 4. Դաշնագիրը տարբերակում է նաև 27-րդ հոդվածով պաշտպանված իրավունքները և 2-րդ հոդվածի 1-ին կետի ու 26-րդ հոդվածով սահմանված երաշխիքները: Այս հոդվածներով ամձանց շնորհվում են անխտրականության իրավունքներ՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք պատկանում են 27-րդ հոդվածում նշված փոքրամասնություններին⁶, թե՛ ոչ: Որոշ մասնակից պետություններ, որոնք պնդում են, թե իրենք էթնիկական, լեզվական կամ կրոնական խտրականություն չեն դրսևորում, լոկ դրա վրա հիմնվելով՝ թյուրիմացաբար պնդում են, որ իրենք փոքրամասնություններ չունեն:

[24.05] 25-րդ (քաղաքական մասնակցության իրավունքներ)⁶, 17-րդ (անձնական կյանքի իրավունք),

² Տե՛ս P. Thornberry, 'The UN Declaration on the Rights of Persons Belonging to National or Ethnic, Religious and Linguistic Minorities: Background, Analysis, Observations and an Update' այստեղ՝ Phillips and Rosas, վերջ, ծմբ. 1, էջ 20-5:

³ Տե՛ս թիվ 23 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 9 [24.01], տե՛ս նաև Thornberry, վերջ, ծմբ. 1, էջ 173-6:

⁴ Տե՛ս նաև 1-ին հոդվածի անենթադատելիության մասին [7.22-7.24]:

⁵ Տե՛ս [24.18]:

⁶ Տե՛ս «Մարշալն ընդդեմ Կանադայի» (Marshall v Canada, 205/86) գործը (նաև հայտնի է որպես «Միկմաք ցեղի ընկերակ-

ինչպես նաև 23-րդ հոդվածով ներկայացված գործերը (ընտանիքի իրավունքներ)⁷ արժարժեք են նաև այնպիսի հարցեր, որոնք, հնարավոր է՝ համընկնեն փոքրամասնության իրավունքների հետ կապված հարցերին: Կարելի է նաև ակնկալել, որ կրոնական փոքրամասնությունների առնչությամբ դրանք կհամընկնեն կրոնի ազատության իրավունք սահմանող 18-րդ հոդվածին⁸:

Փոքրամասնության սահմանումը

[24.06] 27-րդ հոդվածը հատուկ չի սահմանում, թե ինչ է իրենից ներկայացնում փոքրամասնությունը: Ընդհանուր մեկնաբանությունից հստակ երևում է, որ փոքրամասնությունն այս համատեքստում ընկալվում է որպես «խմբին պատկանող և ընդհանուր մշակույթ, կրոն կամ լեզու ունեցող անձինք»⁹:

[24.07]

«ԲԱԼԱՆՏԱՅՆԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(*BALLANTYNE et al v CANADA, 359, 385/89*)

Այս գործում հեղինակները փորձել են առաջ քաշել այն փաստարկը, որ Քվեբեկի լեզվի մասին օրենքները, ի թիվս այլոց, խախտում են 27-րդ հոդվածը: Հեղինակները ներկայացնում են Քվեբեկի անգլիախոս փոքրամասնությունը: 15.600 բնակչությամբ քաղաքում ապրում էր 5600 անգլիախոս բնակիչ: Խնդրո առարկա օրենքը հեղինակներին թույլ չի տվել անգլերեն առևտրային նշաններ տեղադրել: Նրանց պնդմամբ՝ իրենք հայտնվել են ոչ շահեկան վիճակում՝ համեմատած ֆրանսիախոս մրցակիցների հետ, որոնց թույլատրված է առանց սահմանափակումների օգտագործել իրենց մայրենի լեզուն:

Կոմիտեն հանգել է եզրակացության բողոքի՝ 27-րդ հոդվածի հայեցակետի առնչությամբ.

¶ 11.2. Սույն դրույթը վերաբերում է պետության փոքրամասնություններին: Դաշնագրի 50-րդ հոդվածով նախատեսված է, որ դրա դրույթները վերաբերում են դաշնային պետությունների բոլոր վարչական միավորներին՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության: Ըստ այդմ՝ 27-րդ հոդվածում նշված փոքրամասնությունները հանդիսանում են ոչ թե ցանկացած շրջանի, այլ տվյալ պետության փոքրամասնություններ: Խուճաբը կարող է շրջանում մեծամասնություն կազմել, իսկ պետությունում՝ փոքրամասնություն, և հետևաբար իրավունք ունենա օգտվելու 27-րդ հոդվածից: Կանադայի անգլիախոս քաղաքացիները չեն կարող լեզվական փոքրամասնություն համարվել: Ուրեմն հեղինակները չեն կարող դիմում ներկայացնել դաշնագրի 27-րդ հոդվածի շրջանակներում:

Այսպիսով, փոքրամասնությունը ներկայացնում է սակավաթիվ խումբ ամբողջ պետության, ոչ թե վարչական միավորի կտրվածքով:

[24.08] *Բալանթայնի* գործով խիստ անհամաձայնություն է արտահայտել տկն Էլիզաբեթ Էվաթը, նրան միացել են պարոնայք Անդրե, Բրունի Չելլին և Դիմիտրիևիչը:

Ես դժվարությամբ եմ հասկանում այս որոշումը, քանի որ 27-րդ հոդվածում բերված «փոքրամասնություններ» եզրույթի մեկնաբանությունը հիմնված է զուտ խնդրո առարկա մասնակից պետությունում գտնվող խմբի անդամների թվի վրա: Փաստարկի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ անգլիախոս կանադացիները Կանադայում քանակական փոքրամասնություն չեն հանդիսանում, ուստի 27-րդ հոդվածի իմաստով նրանք փոքրամասնություն համարվել չեն կարող:

Այնուամենայնիվ համաձայն չեմ, որ անձը 27-րդ հոդվածով չպետք է պաշտպանվի այն դեպքում, երբ պետության որևէ անկախ շրջանում նրա խումբը էթնիկական, լեզվական կամ մշակութային փոքրամասնություն է, սակայն առանձին վերցված պետությունում փոքրամասնություն չի կազմում: Կոմիտեն դեռևս չի ուսումնասիրել՝ ի՞նչ չափա-

ցությունն ընդդեմ Կանադայի» (*Mikmaq Tribal Society v Canada*) [22.14]:

⁷ «Հոպյուն և Բեսերն ընդդեմ Ֆրանսիայի» (*Hopu and Bessert v France, 549/93*) [20.11] և [24.38]:

⁸ Ընդհանուր առմամբ տես զլուխ 17:

⁹ «Փոքրամասնություն» եզրույթն այլ տեքստերում սահմանվել է որպես «խումբ», որը «թվաքանակով ստորադաս է պետության մնացած բնակչությանը, գտնվում է ոչ գերակշռող դիրքում, և որի անդամները, լինելով պետության քաղաքացիներ, ունեն էթնիկական, կրոնական կամ լեզվական առանձնահատկություններ, որոնք տարբերվում են մնացած բնակչության առանձնահատկություններից, և որոնք վկայում են, մույնիսկ եթե ոչ ակնհայտորեն, նրանց մշակույթի, ավանդույթների, կրոնի կամ լեզվի պահպանությանն ուղղված համերաշխության մասին»: F. Caporoti, *Study on the Rights of Persons Belonging to Ethnic, Religious and Linguistic Minorities* (United Nations, New York, 1991), կետ 568:

նիշներով է որոշվում, թե պետությունում ինչն է փոքրամասնություն համարվում (27-րդ հոդվածով սահմանված իմաստով), ինչը չպետք է պայմանավորել տվյալ գործով կայացված այս որոշմամբ և ամեն դեպքում կարող է այլ հիմքերով որոշվել:

[24.09] *Բալանթայնի* գործում ՄԻԿ-ի անդամների մեծամասնության համաձայն [24.07]՝ այն խումբը, որը պետությունում մեծամասնություն է կազմում, երբևէ չի կարող որպես փոքրամասնություն դասակարգվել, չնայած 1-ին հոդվածի իմաստով այդ խումբը հավանաբար կդասակարգվեր որպես «ժողովուրդ»: Այս փաստարկման թերությունն այն է, որ 1-ին հոդվածով սահմանված իրավունքները կամընտիր արձանագրությամբ չեն կարող կենսագործվել [7.22], ուստի ճնշումների ենթարկվող մեծամասնությունների իրավունքները կարող են անտեղի սահմանափակվել *Բալանթայնի* գործով բերված դատողությամբ: Այնուամենայնիվ, հաճախ կիրառելի են այլ իրավունքներ, ինչպիսիք են անխտրականության և քաղաքական մասնակցության իրավունքները կամ ազատ արտահայտվելու իրավունքը, ինչպես Բալանթայնի գործում¹⁰:

[24.10]

ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5.2. 27-րդ հոդվածով իրավունքներ է ընծեռվում մասնակից պետությունում «գոյություն ունեցող» փոքրամասնություններին պատկանող անձանց: Ելնելով այդ հոդվածով նախատեսված իրավունքների բնույթից և շրջանակներից՝ տեղի չէ որոշել տևականության աստիճանը, որն արտահայտում է «գոյություն ունեցող» եզրը: Այդ իրավունքները պարզապես նախատեսում են, որ տվյալ փոքրամասնություններին պատկանող անձինք, իրենց խմբի անդամների հետ միասին, չպետք է զրկվեն սեփական մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և իրենց լեզվով խոսելու իրավունքից: Ինչպես որ պարտադիր չէ քաղաքացի լինել, այնպես էլ պարտադիր չէ մշտական բնակիչ լինել: Ուստի մասնակից պետությունում մեծ փոքրամասնություն հանդիսացող աշխատող միգրանտները կամ նույնիսկ այցելուներն իրավունք ունեն չզրկվելու այդ իրավունքներից: Տվյալ մասնակից պետությունում էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնության գոյությունը կախված չէ այդ մասնակից պետության որոշումից, սակայն պարտադիր պետք է սահմանված լինի օբյեկտիվ չափանիշներով:

[24.11] «*S. Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի*» (*T.K. v France, 220/87*) գործի վերաբերյալ իր մասնավոր եզրակացության մեջ տեղի Չիզիմսը նշել է.

Մի քանի մասնակից պետությունների առնչությամբ կոմիտեն մերժել է այն հասկացողությունը, որ փոքրամասնությունների գոյությունն ինչ-որ չափով հաստատվում է խտրականության փաստի ընդունմամբ: Փոխարենը՝ կոմիտեն պնդել է, որ 27-րդ հոդվածի իմաստով փոքրամասնությունների գոյությունը փաստական հարց է, և մեծ փոքրամասնությունները կարող են իսկապես գոյություն ունենալ մասնակից պետություններում, որոնք օրենսդրությամբ և գործնականում պարտավորություն են ստանձնել իրենց իրավասության տակ գտնվող բոլոր անձանց նկատմամբ ցուցաբերել լիովին հավասար վերաբերմունք:

Ֆրանսիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է.¹¹

¶ 24. Այնուամենայնիվ կոմիտեն չի կարող համաձայնել, որ Ֆրանսիան մի երկիր է, որտեղ չկան էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ: Այս կապակցությամբ կոմիտեն ցանկանում է հիշեցնել, որ զուտ այն փաստը, որ բոլոր անձանց հավասար իրավունքներ են շնորհվում, և բոլոր անձինք հավասար են օրենքի առջև, չի բացառում երկրում փոքրամասնությունների, ինչպես նաև իրենց խմբի անդամների հետ միասին իրենց մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու կամ իրենց լեզուն օգտագործելու իրավունքի գոյությունը:

Սլովենիայի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում կոմիտեն նշել է.¹²

¶ 12. Մասնակից պետությունը հատուկ պաշտպանության նկատառումով խտլացիներին և հունգարացիներին առանձնացնում է՝ որպես փոքրամասնության, ներառյալ քաղաքական դաշտում ներկայացված լինելու իրավունքը: Գնչուներին՝ որպես փոքրամասնության, նույնպես տրված է որոշակի հատուկ պաշտպանություն: Թեև պաշտպա-

¹⁰ *Բալանթայնի* գործով 19-րդ հոդվածի ճյուղավորումները տես [18.42]:

¹¹ Եզրափակիչ դիտարկումներ Ֆրանսիայի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 80: Այնուհանդերձ, Ֆրանսիան օգտվել է 27-րդ հոդվածի վերապահումից, տես օրինակ՝ «*S. Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի*» (*T.K. v France, 220/87*) գործը [25.09]:

¹² (1994) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 40, տես նաև Եզրափակիչ դիտարկումներ Էստոնիայի վերաբերյալ, CCPR/C/79/Add. 5 (1995), պարբ. 23, Եզրափակիչ դիտարկումներ Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 54 (1995), պարբ. 23:

նությունը ցանկալի է, սակայն 27-րդ հոդվածի շրջանակներում բոլոր փոքրամասնություններն արդեն իսկ իրենց իրավունքները պաշտպանելու իրավունք ունեն: 27-րդ հոդվածի իմաստով փոքրամասնություն հանդիսացող ներգաղթյալ համայնքներն իրավունք ունեն օգտվելու այդ հոդվածից:

Եվ, վերջապես, Ավստրիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը նշել է.¹³

¶ 14. Կոմիտեն մտահոգությամբ է նշում այն փաստը, որ մասնակից պետությունն ըստ էության սահմանափակում է փոքրամասնություններ հասկացությունը իրավաբանորեն ընդունված որոշ խմբերով:

Ուստի կոմիտեն արտահայտել է իր մտահոգությունը փոքրամասնություններ հասկացությունը սահմանափակող պետական օրենսդրությամբ¹⁴ կամ համապատասխան պետությունում փոքրամասնություն հանդիսացող միայն որոշ խմբերին ընդունող օրենքների շուրջ: Այս օրենքների տեսակները հաճախ սահմանափակում կամ բացառում են այն հնարավորությունը, որով առանձնահատուկ մշտական և ոչ մշտական բնակիչները լիովին կընդունվեն որպես փոքրամասնության իրավունքներ ունեցող փոքրամասնություն հանդիսացող խմբեր:

Փոքրամասնության կազմ

[24.12] «ԼՈՎԷՅՍԵ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ» (LOVELACE v CANADA, 4/77)

Այս գործով հաստատվում է, որ մասնակից պետությունները չեն կարող սահմանափակել «փոքրամասնություններ» հասկացությունը և սահմանել փոքրամասնության կազմը: Փաստերը բերված են ստորև.

¶ 1. Դիմումի հեղինակը Կանադայում ապրող 32-ամյա կին է: Նա ծնվել և գրանցվել է որպես «մալիսիյան հնդկացի», սակայն 1970 թ. մայիսի 23-ին ամուսնանալով ոչ հնդկացու հետ՝ նա կորցրել է հնդկացու իրավունքները և կարգավիճակը՝ ըստ «Հնդկացիների մասին» օրենքի 12-րդ բաժնի 1-ին կետի (բ) ենթակետի:

Մասնակից պետությունը պատասխանել է հետևյալ կերպ.

¶ 5. Կանադայի արձանագրության՝ գործի նյութաիրավական հիմքերի վերաբերյալ 4-րդ հոդվածի 2-րդ կետով ներկայացված դիմումի կապակցությամբ մասնակից պետությունն ընդունել է, որ «Հնդկացիների մասին» օրենքի շատ դրույթներ, ներառյալ 12-րդ բաժնի 1-ին կետի (բ) ենթակետը, անհրաժեշտ է լրջորեն վերանայել և բարեփոխել: Այնուամենայնիվ, մասնակից պետությունը շեշտել է, որ «Հնդկացիների մասին» օրենքն անհրաժեշտ գործիք է, որը մշակվել է հնդկացի փոքրամասնությանը դաշնագրի 27-րդ հոդվածի համաձայն պաշտպանելու նպատակով: Հնդկացու սահմանում անխուսափելի էր հնդկացիների համայնքներին շնորհվող հատուկ արտոնությունների, մասնավորապես՝ արգելաբնակավայրեր զբաղեցնելու իրավունքի տեսանկյունից: Ըստ ավանդույթի՝ իրավական դիմումների արդյունքը որոշելիս հաշվի էին առնվում հայրական կողմի ընտանեկան հարաբերությունները: Բացի այդ, քանի որ XIX դարի ֆերմերային հասարակություններում արգելաբնակավայրերին ավելի շատ սպառնում էին ոչ թե հնդկացի չհանդիսացող կանայք, այլ հնդկացի չհանդիսացող տղամարդիկ, ուստի 1869 թ. ի վեր օրենքով նախատեսվել է, որ հնդկացի չհանդիսացող տղամարդու հետ ամուսնացած հնդկացի կինը կկորցնի հնդկացու կարգավիճակը: Այս պատճառները դեռևս գործում են: Օրենքը կարող է փոփոխվել միայն հնդկացիների հետ խորհրդակցությամբ, որոնք, այնուամենայնիվ, տարբեր կարծիքներ ունեն հավասար իրավունքների հարցի շուրջ: Հնդկացիական համայնքն օրենսդրական փոփոխություններով չպետք է վտանգվի: Հետևաբար, թեև կառավարությունը սկզբունքորեն պարտավորվել է փոփոխել «Հնդկացիների մասին» օրենքի 12-րդ բաժնի 1-ին կետի (բ) ենթակետը, սակայն արագ և անմիջական որևէ օրենսդրական գործողություն ակնկալել չի կարելի:

ՄԻԿ-ը որոշում կայացրեց հօգուտ հեղինակի.

¶ 13.1. Կոմիտեն համարում է, որ ներկայիս բողոքի էությունը վերաբերում է հնդկացիների մասին օրենքի շարունակական ազդեցությանը, մասնավորապես այն պատճառով, որ Սանդրա Լովլեսը, զրկվելով հնդկացու իրավական կարգավիճակից, չի կարող պահանջել օրենքով նախատեսված իրավունքը՝ ապրել իր ցանկացած վայրում՝ Տո-

¹³ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 103:

¹⁴ Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Ուկրաինայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 52, պարբ. 18, Եզրափակիչ դիտարկումներ Սենեգալի վերաբերյալ (1997), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 5, պարբ. 17, Եզրափակիչ դիտարկումներ Լիբիայի Արաբական Ջամահիրիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 101, պարբ. 19:

բիկի արգելաբնակավայրում... Այս առնչությամբ նշանակալի է նրա այն պնդումը, որ «անձի՝ այլևս հնդկացի չլինելու հիմնական կորուստը հնդկացիական համայնքում ապրելու մշակութային դրական կողմերի, տան, ընտանիքի, ընկերների և հարևանների հետ զգացմունքային կապերի, ինչպես նաև ինքնության կորուստ է»:

¶ 13.2. Հարկ է որոշել՝ արդյոք Տոբիկի արգելաբնակավայրում բնակվելու իրավունքից զրկվելու պատճառով Սանդրա Լովլեյսն այդպիսով զրկվե՞լ է 27-րդ հոդվածով փոքրամասնություն հանդիսացող անձանց երաշխավորված իրավունքից, այսինքն՝ իրենց խմբի այլ անդամների հետ միասին սեփական մշակույթից օգտվելու և սեփական լեզուն օգտագործելու իրավունքից:

¶ 14. Ղաշնագրի 27-րդ հոդվածով նախատեսված իրավունքները պետք է ապահովվեն փոքրամասնություն «հանդիսացող անձանց» համար: Ներկայումս Կանադայի օրենսդրությամբ Սանդրա Լովլեյսը հնդկացի չի համարվում: Այնուամենայնիվ, «Հնդկացիների մասին» օրենքը հիմնականում ազդում է մի շարք արտոնությունների վրա, որոնք, ինչպես նշված է վերևում, ղաշնագրով նախատեսված չեն: Հետևաբար հարկ է տարբերել «Հնդկացիների մասին» օրենքով և ղաշնագրի 27-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունները: Այն անձինք, ովքեր արգելաբնակավայրում են ծնվել և դաստիարակվել, կապված են եղել իրենց համայնքին և ցանկանում են պաշտպանել այդ կապերը, սովորաբար պետք է ղաշնագրի իմաստով փոքրամասնություն համարվեն: Քանի որ Սանդրա Լովլեյսն ազգությամբ մալիսիայից հնդկացի է և իր ամուսնության ընթացքում ընդամենը մի քանի տարով է բացակայել իր տունը համարվող արգելաբնակավայրից, ուստի, կոմիտեի կարծիքով, իրավունք ունի համարվելու այս փոքրամասնությանը «պատկանող» անդամ և պահանջել ղաշնագրի 27-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները: Այն հարցը՝ արդյոք զրկվե՞լ է նա այդ երաշխիքներից, թե ոչ, կախված է դրանց շրջանակից:

¶ 15. Արգելաբնակավայրում ապրելու իրավունքը ղաշնագրի 27-րդ հոդվածով երաշխավորված չէ: Ավելին՝ «Հնդկացիների մասին» օրենքն ուղղակիորեն չի միջամտում այդ հոդվածում հատուկ նշված գործառնություններին: Այնուամենայնիվ, կոմիտեի կարծիքով, Սանդրա Լովլեյսի՝ իր մշակույթը և մայրենի լեզուն «այլ անդամների հետ միասին» օգտագործելու իրավունքի իրացման իրականում միջամտել են և շարունակում են միջամտել, որովհետև Տոբիկի արգելաբնակավայրից դուրս նման համայնք գոյություն չունի: Մյուս կողմից՝ ամեն մի միջամտություն չէ, որ կարող է 27-րդ հոդվածի իմաստով իրավունքների մերժում համարվել: Ազգային օրենսդրության միջոցով բնակության իրավունքի սահմանափակումները չեն կարող բացառվել ղաշնագրի 27-րդ հոդվածի շրջանակներում: Սա նաև բխում է ղաշնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետի սահմանափակումներից, որոնք թվարկված են 12-րդ հոդվածի 3-րդ կետում: Կոմիտեն ընդունում է արգելաբնակավայրում ապրելու իրավունք ունեցող մարդկանց կարգը սահմանելու անհրաժեշտությունը, որը, ինչպես նշել է կառավարությունը, պայմանավորված է կառավարության ռեսուրսների և մարդկանց ինքնության պահպանման նկատառումներով: Այնուամենայնիվ կառավարության՝ ղաշնագրով ստանձնած պարտավորությունները նույնպես պետք է հաշվի առնվեն:

¶ 16. Այս առնչությամբ կոմիտեն այն կարծիքին է, որ տվյալ փոքրամասնությանը պատկանող անձի՝ արգելաբնակավայրում ապրելու իրավունքի վրա ազդող օրենքով նախատեսված սահմանափակումները պետք է ունենան ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում, ինչպես նաև ընդհանուր ընթերցմամբ համապատասխանեն ղաշնագրի այլ դրույթներին: 27-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի և կիրառվի վերոնշյալ այլ դրույթների, ինչպես օրինակ՝ 12-րդ, 17-րդ և 23-րդ հոդվածների լույսի ներքո՝ կախված նրանից, թե որքանով են դրանք համապատասխանում տվյալ գործին, ինչպես նաև խտրականության դեմ դրույթների, օրինակ՝ 2-րդ, 3-րդ և 26-րդ հոդվածներին՝ կախված գործի բնույթից: Այնուհանդերձ, կարիք չկա ընդհանուր առմամբ որոշելու, թե որ սահմանափակումները կարելի է դաշնագրով հիմնավորել, մասնավորապես՝ ամուսնության արդյունքում կիրառված սահմանափակումները, քանի որ ներկայիս գործի հանգամանքները հատուկ են:

¶ 17. Սանդրա Լովլեյսի գործը պետք է դիտարկել այն փաստի լույսի ներքո, որ նրա ամուսնությունը ոչ հնդկացու հետ չի հաջողվել: Բնական է, որ նման իրավիճակում նա ցանկանում է վերադառնալ այն միջավայր, որտեղ ծնվել է, մասնավորապես՝ իր ամուսնալուծությունից հետո իր մշակութային հիմնական կապը կրկին մալիսիայի խումբն է: Անկախ նրանից, թե որոնք են այլ առումներով «Հնդկացիների մասին» օրենքի նյութաիրավական հիմքերը, կոմիտեին չի թվում, որ արգելաբնակավայրում բնակվելու իրավունքից զրկելը ողջամիտ է կամ անհրաժեշտ է ցեղախմբի ինքնությունը պահպանելու համար: Հետևաբար, կոմիտեն եզրակացնում է, որ Լովլեյսին թույլ չտալով ընդունվել որպես այդ խմբին պատկանող անձ՝ նրան չհիմնավորված կերպով զրկում են ղաշնագրի 27-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներից՝ հիշատակված այլ դրույթների հետ ընդհանուր ընթերցմամբ:

Ուստի կոմիտեն որոշեց, որ տկն Լովլեյսի՝ իր բնիկ մշակույթից և լեզվից օգտվելու իրավունքը չհիմնավորված կերպով սահմանափակվել է «Հնդկացիների մասին» օրենքով՝ դրանով իսկ խախտելով 27-րդ հոդվածը: Այս որոշումն ակնհայտորեն սահմանափակ կիրառում ուներ՝ ելնելով Լովլեյսի արտաքսման հատուկ հանգամանքներից, որը ներառում էր ոչ հնդկացի ամուսնուց նրա ամուսնալուծության փաստը: Այնուամենայնիվ, ըստ երևույթին, եթե «Հնդկացիների մասին» օրենքը կիրառվել է սեռի հատկանիշի

շեշտադրմամբ, ապա ամեն դեպքում դաշնագիրը խախտվել է¹⁵:

[24.13] Կանադայի՝ «Հնդկացիների մասին» օրենքը հետագայում փոփոխվել է՝ Լովլեյսի գործով ընդունված որոշմամբ արժարժված հարցերը բավարարելու նպատակով: Փոփոխությունները հնարավորություն տվեցին մինչև 1985 թ. հնդկացի չհանդիսացող անձանց հետ ամուսնացած կանանց վերամիավորվելու իրենց խմբերի հետ, սակայն սահմանափակում դրեցին 1985 թ. հետո միջոցառական ամուսնությունների արդյունքում ծնված երեխաների ընդունելիության վրա: Հետաքրքրական է, որ «*R. L. et al v Canada, 358/89*» գործում հեղինակները բողոքել են, թե փոփոխությունը սահմանափակել է խմբի՝ սեփական կազմը որոշելու իրավունքը: Ի վերջո, որոշվել է, որ բողոքն անընդունելի է դատաիրավական պաշտպանության տեղական միջոցները չսպառնալու պատճառով¹⁶: Ցավալի է, որ ՄԻԿ-ը հաշվի չի առել բողոքի նյութաիրավական հիմքերը: Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանության 5-րդ պարբերության 2-րդ կետում նշվում է, որ փոքրամասնության կազմի դասակարգումը «օբյեկտիվ» է [24.10]: Քանի դեռ այս օբյեկտիվությունը հստակ թույլ չի տալիս պետությանը 27-րդ հոդվածի իմաստով եզրափակիչ սահմանում տալ փոքրամասնությանը, այն գուցե թույլ չի տալիս նաև փոքրամասնություն հանդիսացող խմբին եզրափակիչ սահմանում տալ իր կազմին, հատկապես այն հանգամանքներում, որոնք թուլացնում են ենթադրյալ անդամի փոքրամասնական իրավունքները¹⁷:

[24.14] 1999 թ. Կանադայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը մեկնաբանել է Լովլեյսի գործին հաջորդող փոփոխությունները¹⁸:

¶ 20. Չնայած ամուսնության պատճառով իրենց կարգավիճակը կորցրած կանայք վերականգնել են այն, այս փոփոխությունն ազդում է միայն կնոջ և նրա երեխաների, ոչ թե հետագա սերունդների վրա, որոնք դեռ կարող են զրկվել համայնքի անդամ դառնալու իրավունքից: Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունն անդրադառնա այս հարցերին:

Բնիկ ժողովուրդ և 27-րդ հոդված

[24.15] Միջազգային համատեքստում «բնիկ ժողովուրդ» արտահայտությունը կարող է ընկալվել որպես «այժմ այլոց ենթակայության տակ գտնվող հողատարածքներում նախքան դրանց զավթումն ապրող բնակիչների կենդանի հետնորդներ»¹⁹: 27-րդ հոդվածի կիրառման իմաստով՝ բնիկ ժողովուրդը համարվում է «փոքրամասնություն»՝ չնայած բնիկ ժողովրդի որոշ ներկայացուցիչների այն պնդումներին, որ իրենք «փոքրամասնություն» չեն, սակայն միջազգային իրավունքի շրջանակներում ունեն տարբեր և հատուկ կարգավիճակ: Թեև ժամանակակից որոշ գործիքներ, ինչպիսիք են ՄԱԿ-ի Բնիկների իրավունքների մասին հռչակագրի նախագիծը, ԱՄԿ-ի Անկախ երկրներում բնիկ ժողովուրդների և ցեղերի մասին կոնվենցիան (թիվ 169) և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան²⁰, բնիկ ժողովրդին անդրադառնում են որպես փոքրամասնություններից ընդհանուր առմամբ տարբերվող անջատ խմբավորում, միևնույն է, ՄԻԿ-ը չի ընդունել այս վերլուծությունը: Թիվ 23 Ընդհանուր մեկնաբանության 3-րդ պարբերության 2-րդ կետում [24.02] և 7-րդ պարբերությունում [24.22] ՄԻԿ-ը հաստատել է, որ 7-րդ հոդվածի իմաստով բնիկ ժողովուրդները հանդիսանում են փոքրամասնություն: 27-րդ հոդվածին առնչվող գործերից շատերն անշուշտ վերաբերել են բնիկների փոքրամասնության իրավունքներին²¹:

¹⁵ Դրույթները հավանաբար կխախտեին 27-րդ հոդվածը՝ անխտրականության երաշխիքներ նախատեսող 2-րդ հոդվածի 1-ին կետի, 3-րդ և 26-րդ հոդվածների հետ ընդհանուր ընթերցմամբ: Տե՛ս, օր.՝ [23.42]: Տե՛ս նաև թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունը, պարբ. 32:

¹⁶ Տե՛ս ընդհանուր առմամբ տեղական դատաիրավական պաշտպանության միջոցների մասին կանոնը, գլուխ 6:

¹⁷ Տե՛ս, օր.՝ [24.18]:

¹⁸ (1999) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 105:

¹⁹ S. J. Anaya, *Indigenous People and International Law* (Oxford University Press, New York, 1996), էջ 3: Անայան բացատրում է, որ բնիկ ժողովուրդները «զրկվել են ընդարձակ հողատարածքներից և կենսական կարևորություն ունեցող ռեսուրսներից, տուժել են նրանց քաղաքական և մշակութային հաստատությունների վրա ակտիվ ճնշումներից: Դրանց հետևանքով բնիկ ժողովուրդները տնտեսապես և սոցիալապես դարձել են հաշմանդամ, նրանց համայնքային միասնականությունը վնասվել և վտանգվել է, իսկ մշակույթների ամբողջականությունը՝ թուլացել», էջ 4:

²⁰ Տե՛ս Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 30-րդ հոդվածը:

²¹ Ի լրումն Անայայի բազմաբովանդակ վերլուծության, վերը, ծմբ. 19, միջազգային իրավունքում գոյություն ունեն բնիկ ժողովուրդների իրավունքների բնույթի մեծ թվով մեկնաբանություններ, օրինակ՝ տե՛ս R. Barsh, 'Indigenous Peoples in the 1990s: From Object to Subject of International Law?' (1994) 7 *Harvard Human Rights Journal* 33, I. Brownlie, *Treaties and Indigenous Peoples* (Clarendon Press, Oxford, 1992), J. Crawford (ed), *The Rights of Peoples* (Clarendon Press, Oxford, 1988), H. Hannum, 'Minorities, Indigenous Peoples and Self Determination' in L. Henkin et al (eds), *Human Rights: An Agenda for the Next Century* (ASIL, Studies in Transnational Legal Policy No 26, Washington, DC, 1994), S. Pritchard

[24.16] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում կոմիտեն հրապարակել է Բնիկների իրավունքների մասին ընդհանուր հանձնարարականը:

ՌԻԿ-ի ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

¶ 3. Կոմիտեն գիտակցում է այն փաստը, որ աշխարհի շատ տարածաշրջաններում բնիկ ժողովուրդները ենթարկվել և դեռևս ենթարկվում են խտրականության, զրկվել և զրկվում են իրենց մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից և մասնավորապես կորցրել են իրենց հողերը և ռեսուրսները՝ դրանք հանձնելով գաղութաբնակներին, առևտրային ընկերություններին և պետական ձեռնարկություններին: Հետևաբար, նրանց մշակույթի և պատմական ինքնության պահպանումը եղել և մնում է հարցականի տակ:

¶ 4. ՌԻԿ կոմիտեն կոչ է անում մասնավորապես մասնակից պետություններին՝

ա. ճանաչել և հարգել բնիկների ուրույն մշակույթը, պատմությունը, լեզուն և կենսակերպը, ինչը հարստացնում է պետության մշակութային ինքնությունը, ինչպես նաև խթանել դրա պահպանմանը,

բ. ապահովել, որ բնիկ ժողովուրդների ներկայացուցիչները ազատ և հավասար հիմունքներով օգտվեն իրենց արժանապատվությունից և իրավունքներից, ինչպես նաև չենթարկվեն որևէ խտրականության, մասնավորապես՝ ծագման կամ ինքնության հիման վրա,

գ. ապահովել բնիկ ժողովուրդներին այնպիսի պայմաններով, որոնք նպաստում են նրանց մշակութային հատկանիշներին համապատասխան կայուն տնտեսական և սոցիալական զարգացմանը,

դ. ապահովել, որ բնիկ ժողովուրդների ներկայացուցիչները հավասար իրավունքներ ունենան՝ հասարակական կյանքում արդյունավետ մասնակցության առումով, և առանց նրանց տեղեկացված համաձայնության՝ նրանց իրավունքներին ուղղակիորեն վերաբերող որևէ որոշում չընդունվի,

ե. ապահովել, որ բնիկ համայնքները կարողանան իրականացնել իրենց մշակութային ավանդույթները և սովորույթները կիրառելու և վերականգնելու, ինչպես նաև իրենց լեզուն պահպանելու և օգտագործելու իրավունքները:

[24.17] Չնայած 27-րդ հոդվածի գերակշռությանը՝ բնիկ ժողովուրդների բողոքների, ինչպես նաև կանոնադրական արձանագրությամբ ներկայացված և բավարարված մնալով բողոքների թիվը չափազանց փոքր է, ինչպես նշված է ստորև: Հնարավոր է, որ բնիկ ժողովուրդների՝ մարդու իրավունքների մասով արձանագրված անհաջողությունների համակարգային բնույթի պատճառով կամ ընտրի արձանագրությունը, որն անդրադառնում է ոչ այնքան համակարգային, որքան անհատական բնույթի խախտումներին [1.86], ոչ բավարար միջոց է դարձել մնալով խախտումներին արձագանքելու համար: Ի տարբերություն ՄԻԿ-ի՝ ՌԻԿ կոմիտեն դեռևս պետք է որոշում կայացնի նյութաիրավական հիմքերի մասին անհատական դիմումում, որը բխում է բնիկ ժողովուրդների իրավունքների ենթադրյալ խախտումներից:

ԱՆՃՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ԽԱՐՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

[24.18] «ԿԻՏՈԿՆ ԸՆԴՈՂԵՄ ՇՎԵԴԻԱՅԻ» (KITOK v SWEDEN, 197/85)

Փաստերը երևում են ՄԻԿ-ի՝ ստորև բերված որոշումից:

¶ 9.1. Կոմիտեի առջև դրված հիմնական հարցն այն է, թե արդյոք դիմումի հեղինակը հանդիսանում է դաշնագրի 27-րդ հոդվածի խախտման զոհ, քանի որ, նրա հավաստմամբ, իրեն կամայականորեն զրկել են սամի համայնքին վաղ ժամանակներից շնորհված իրավունքներից, մասնավորապես՝ սամիների համայնքին հաղորդակից լինելու և հյուսիսային եղջերուներ բուծելու իրավունքներից: Բացահայտելու համար դիմումի հեղինակի՝ դաշնագրի 27-րդ հոդվածով նախատեսված «սեփական մշակույթից օգտվելու» իրավունքից զրկվելու փաստը, ինչպես նաև որոշելու

(ed), *Indigenous Peoples, the United Nations and Human Rights* (Zed Books, London, 1998), S. Pritchard and C. Heindow Dolman, 'Indigenous Peoples and International Law: A Critical Overview' (1998) 3 *Australian Indigenous Law Reporter* 473510; B. Kingsbury, 'Reconciling Five Competing Conceptual Structures of Indigenous Peoples' Claims in International and Comparative Law' (2001) 34 *NYU Journal of International Law and Politics* 189, and the work of the United Nations Working Group on Indigenous Populations.

համար, թե արդյոք 1971 թ. «Հյուսիսային եղջերուներ բուծելու մասին» օրենքի 12-րդ բաժնի 2-րդ կետը, որի համաձայն՝ սամիների համայնքի հետ հաղորդակցվելուց զրկելու մասին որոշումը կարող է բողոքարկվել միայն մեկ հաղորդակցություն թույլ տալու համար հատուկ պատճառների առկայության դեպքում, խախտել է դաշնագրի 27-րդ հոդվածը, թե՛ ոչ, կոմիտեն իր բացահայտումներում հիմնվում է հետևյալ նկատառումների վրա.

¶ 9.5. Մասնակից պետության համաձայն՝ «Հյուսիսային եղջերուներ բուծելու մասին» օրենքի նպատակն է տնտեսական և բնապահպանական նկատառումներով սահմանափակել հյուսիսային եղջերու բուծողների թիվը և ապահովել սամիների փոքրամասնության պահպանումը և բարեկեցությունը: Երկու կողմերն էլ համաձայն են, որ արդյունավետ միջոցներ են անհրաժեշտ հյուսիսային եղջերուների բուծման ապագան և այն մարդկանց կեցությունն ապահովելու համար, որոնց համար հյուսիսային եղջերուներ բուծելը եկամտի առաջնային աղբյուր է: Այս նպատակներն ապահովելու համար մասնակից պետությունը կողմից ընտրված եղանակը սահմանափակում է սամիների գյուղերի բնակիչների՝ հյուսիսային եղջերուներ բուծելու իրավունքը: Կոմիտեն այն կարծիքին է, որ այս բոլոր նպատակները և միջոցները ողջամիտ են և համապատասխանում են դաշնագրի 27-րդ հոդվածին:

¶ 9.6. Այնուհանդերձ, կոմիտեն լուրջ կասկածներ ուներ առ այն, թե արդյոք «Հյուսիսային եղջերուներ բուծելու մասին» օրենքի որոշ դրույթներ և հեղինակի նկատմամբ դրանց կիրառումը համապատասխանում է դաշնագրի 27-րդ հոդվածին: «Հյուսիսային եղջերուներ բուծելու մասին» օրենքի 11-րդ բաժնով նախատեսված է, որ.

Սամիների համայնքի ներկայացուցիչը հանդիսանում է՝

«1. անձ, որն ունի հյուսիսային եղջերուներ բուծելու իրավունք և համայնքի արոտավայրում մասնակցում է հյուսիսային եղջերուներ բուծելու աշխատանքներին»,

«2. անձ, որն ունի հյուսիսային եղջերուներ բուծելու իրավունք, որը գյուղի արոտավայրում մասնակցել է հյուսիսային եղջերուներ բուծելու աշխատանքներին, դրանով զբաղվելը եղել է իր հիմնական աշխատանքը և չի զբաղվել տնտեսական որևէ այլ հիմնական գործունեությամբ»,

«3. անձ, որն ունի հյուսիսային եղջերուներ բուծելու իրավունք և հանդիսանում է 1-ին կամ 2-րդ բաժնով բնորոշված ներկայացուցչի տանը ապրող ամուսինը կամ երեխան կամ մահացած ներկայացուցչի կենդանի ամուսինը կամ անչափահաս երեխան»:

Օրենքի 12-րդ բաժնով նախատեսված է, որ.

Սամիների համայնքը կարող է 11-րդ բաժնում նշված անձանցից բացի ընդունել նաև հյուսիսային եղջերուներ բուծելու իրավունք ունեցող անձի, եթե նա մտադրված է համայնքի արոտավայրի տարածքում արածեցնել սեփական հյուսիսային եղջերուները:

«Եթե դիմողը չի ընդունվում համայնքի կազմում, ապա հատուկ պատճառների առկայության դեպքում գյուղի խորհուրդը կարող է թույլ տալ նրան անդամակցել տվյալ համայնքին»:

¶ 9.7. Հետևաբար, կարելի է տեսնել, որ էթնիկական փոքրամասնության կյանքին մասնակցելու համար օրենքով նախատեսված են որոշակի չափանիշներ, որոնցով էթնիկական ծագումով սամի հանդիսացող անձը կարող է օրենքի իմաստով սամի չճանաչվել: Կոմիտեին մտահոգել է այն փաստը, որ փոքրամասնության կազմը որոշելիս օբյեկտիվ էթնիկական չափանիշներն անտեսելը և նշված օրենքները պրն Կիտոկի նկատմամբ կիրառելը, հնարավոր է՝ չի համապատասխանում օրենսդրությամբ նախատեսված իրավական նպատակներին: Կոմիտեն նաև նշել է, որ պրն Կիտոկը մշտապես կապի մեջ է գտնվել սամիների համայնքի հետ՝ մշտական բնակություն հաստատելով սամիների հողատարածքներում և ֆինանսական նպաստավոր պայմանների դեպքում փորձելով վերսկսել լրիվ դրույքով հյուսիսային եղջերուներ բուծելը:

¶ 9.8. Այս խնդիրը լուծելիս, որում ակնհայտորեն հակասություն կա այն օրենսդրության հետ, որը կարծես ընդհանուր առմամբ պաշտպանում է փոքրամասնության իրավունքները և կիրառվում է տվյալ փոքրամասնության մեկ ներկայացուցչի նկատմամբ, կոմիտեն ուղղորդվել է Լովլեյսի գործի որոշման հիմքում ընկած դատողությամբ (*ratio decidendi*), այսինքն՝ պետք է ցույց տրվի, որ փոքրամասնության անհատ ներկայացուցչի իրավունքի սահմանափակումը ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում ունի և անհրաժեշտ է ողջ փոքրամասնության շարունակական կենսունակության և բարեկեցության համար: Տվյալ գործում առկա բոլոր տարրերն ուշադիր ուսումնասիրելուց հետո կոմիտեն այն կարծիքին է, որ մասնակից պետությունը չի խախտել 27-րդ հոդվածը: Այս համատեքստում կոմիտեն նշում է, որ պրն Կիտոկին թույլատրվում է, թեև իրավունք չի տրվում, արածեցնել և պահել իր հյուսիսային եղջերուները, զբաղվել որսորդությամբ և ձկնորսությամբ:

[24.19] Կիտոկի գործն ուղղակիորեն բարձրացնում է անձի և խմբի՝ փոքրամասնության իրավունքների

միջև հնարավոր բախման հետ կապված հարցեր²²։ Գործն անշուշտ ցույց է տալիս, թե ինչպես կարող է անձի փոքրամասնության իրավունքները հիմնավորված կերպով սահմանափակվել՝ փոխհատուցելով դրանք խմբի փոքրամասնության իրավունքներով, թեև կոնվենցիայով պաշտպանված իրավունքներն ընդհանուր առմամբ ընկալվում են որպես անձանց, այլ ոչ թե խմբերին պատկանող իրավունքներ։ Ուստի 27-րդ հոդվածով պաշտպանված խմբային իրավունքները մշտապես լարվածություն են առաջացնելու²³։ Այս նույն լարվածության մասին է վկայում Լովլեյսի գործի բողոքի և «Ռ. Լ.-ն ընդդեմ Կանադայի» անընդունելի գործի համեմատությունը, որում բողոքի առարկան Լովլեյսի գործով պայմանավորված օրենսդրական փոփոխություններն էին [24.13]։ Նշված խմբի ներսում անդամների փոքրամասնությունների իրավունքների բախումը առկա է նաև հաջորդ գործում։

[24.20] «ՄԱՅՈՒԿԱՆ ընդդեմ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ» (MAHUIKA v NEW ZEALAND, 547/93)

Այս գործի հեղինակները յոթ տարբեր իվի ցեղերի պատկանող տասնինը մաորիներ են։ Նրանք պնդել են, որ 1992 թ. ընդունված Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենքի (NZ) 27-րդ հոդվածի խախտմամբ չեղյալ են հայտարարվել ձկնորսության իրենց ավանդական իրավունքները²⁴։

Այս բողոքը հիմնավորված է հետևյալ փաստարկներով։ 1840 թ., երբ անգլիացիները գաղութացրել են Նոր Զելանդիան, Բրիտանական կայսրության և բնիկ մաորի ժողովրդի միջև կնքվել է Վայթանգիի համաձայնագիրը, որով երաշխավորվում է մաորիների ինքնորոշման իրավունքը, ներառյալ՝ ցեղային ձկնորսատեղիները վերահսկելու իրավունքները։ Համաձայնագիրն ինքնին չի կարելի հարկադրաբար ներմուծել Նոր Զելանդիայի օրենսդրության մեջ, սակայն այն օժտված է մեծ քաղաքական և բարոյական ուժով։

1980-ական թվականների վերջին և 1990-ական թվականների սկզբին Նոր Զելանդիայի իշխանությունները և մաորի ժողովրդի կողմից բանակցողները ձգտել են համաձայնություն ձեռք բերել առևտրային և ոչ առևտրային նպատակներով իրականացվող ձկնորսության հարցում մաորիների իրավունքների տարածման հստակ շրջանակի վերաբերյալ։ Ձկնապաշարների նվազման կապակցությամբ մտահոգություններին արձագանքելու նպատակով կիրառվել է քվոտաների համակարգը, որի նախկին դրսևորումների հետևանքով, ինչպես պարզվել է, խախտվել են մաորիների իրավունքները։

Ի վերջո, բանակցությունների արդյունքում 1992 թ. ընդունվել է Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենք՝ «Կարգավորում», որով մաորիներին վերապահվել է Նոր Զելանդիայի առևտրային նպատակներով իրականացվող ձկնորսության չափաբաժնի 40 տոկոսից ավելին։ Ոչ առևտրային նպատակներով իրականացվող ձկնորսության հարցը կարգավորվելու էր մաորիների հետ խորհրդակցություններին հաջորդող կարգադրություններով։ Օրենքով սահմանվել է մաորիների՝ առևտրային և ոչ առևտրային նպատակներով իրականացվող ձկնորսությունը վերահսկելու բոլոր պահանջների վերջնական կարգավորումը, այդպիսով մաորիների ձկնորսության ավանդական իրավունքներն այլևս ենթակա չեն քննության առաջին ատյանի դատարաններում։ Բանակցությունների ընթացքում մաորիների կողմից բանակցողները ձևական պատասխանատվություն են կրել վերոնշյալ հարցի կարգավորման առնչությամբ մաորիների անհրաժեշտ համաձայնությունը ստանալու համար։ 1992 թ. բանակցողները զեկուցել են, որ 50 ցեղեր՝ ի դեմս 208.681 մաորիների, կողմ են արտահայտվել առաջարկվող կարգավորմանը, տասնհինգ ցեղեր՝ ի դեմս 24.501 մաորիների, առարկել են, իսկ 84.225 հոգուց բաղկացած յոթ ցեղերի մաորիները տարբեր կարծիքներ են արտահայտել։ Ստանալով այս զեկույցը՝ Նոր Զելանդիայի իշխանությունները համոզվել են, որ մաորիներին բավականին մեծ լիազորություն է վերապահված այս կարգավորումն ընդունելու համար։ 1992 թ. սեպտեմբերի 23-ին իշխանությունները և մաորի ժողովրդի ներկայացուցիչները կազմել են Կարգավորման փաստաթուղթ, որի պայմաններն ամրագրված էին «Կարգավորում» օրենքով։

²² Տե՛ս նաև J. Debeljak, 'Barriers to the Recognition of Indigenous Peoples' Human Rights at the United Nations' (2000) 26 *Monash University Law Review* 159, էջ 169։

²³ Տե՛ս նաև թիվ 23 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 9 [24.01]։

²⁴ Այս դեպքի հիմնական նկարագրությունը և գործի ներածությունը քաղված են՝ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2001) 1 *Human Rights Law Review* 83, էջ 83-4։

«Մահուիկան ընդդեմ Նոր Զելանդիայի» (*Mahuika v New Zealand*) գործով բողոքի հեղինակները համադես են եկել կարգավորման դեմ արտահայտվող ցեղերի անունից: Ավելին՝ նրանք պնդել են, որ համաձայնության հասնելու գործընթացն անցել է ոչ պատշաճ կարգով:

¶ 5.8. Ըստ հեղինակների՝ Փոխըմբռնման հուշագրի բովանդակությունը միշտ չէ պատշաճ կարգով մեկնաբանվել կամ բացատրվել ցեղերի և նրանց ենթացեղերի անդամներին: Ուստի Փոխըմբռնման հուշագրում ներկայացված առաջարկների վերաբերյալ իրազեկված որոշում կայացնելու գործընթացի շրջանակներում որոշ դեպքերում մեծ խոչընդոտներ են առաջացել: Հեղինակներն ընդգծում են, որ թեև իվի ցեղի որոշ ներկայացուցիչներ կողմ են արտահայտվել առաջարկվող Սիլորդսի գործարքին²⁵, սակայն բավական մեծ թվով ցեղեր և ենթացեղեր կա՛մ վճռականորեն դեմ են արտահայտվել գործարքին, կա՛մ էլ պատրաստ էին միայն պայմանական հավանություն տալ դրան: Հեղինակները հավելում են, որ մաորիների կողմից բանակցողները ջանասիրաբար փորձել են բացատրել, որ իրենք լիազորված չէին և մտադրություն չունեին ներկայացնելու առանձին ցեղերը և ենթացեղերը Սիլորդսի գործարքի որևէ հայեցակետի հարցում, ներառյալ՝ Կարգավորման փաստաթղթի մշակման և ստորագրման հարցում:

¶ 5.9. Փաստաթուղթը ստորագրել է 110 անձ, այդ թվում՝ ձկնորսության իրավունքների պահանջ ներկայացնող մաորիների կողմից ութ բանակցող՝ չորս ներկայացուցիչ և նրանց տեղակալները, նրանցից երկուսը ներկայացրել են համամաորիական կազմակերպություններ, որոնցից են Մաորիների ազգային կոնգրեսը՝ մոտ 45 իվի ցեղերի ներկայացուցիչներ ներառող հասարակական կազմակերպությունը, և Նոր Զելանդիայի մաորիների շրջանային խորհուրդները ներկայացնող Նոր Զելանդիայի մաորիների խորհուրդը: Փաստաթուղթը ստորագրած անձանցից են նաև ձկնորսության իրավունքների գործով Բրիտանական կայսրության դեմ դատավարության 31 հայցվոր, ներառյալ՝ 11 իվի ցեղերի ներկայացուցիչ, 17 իվի ցեղերի 43 ներկայացուցիչ և փաստաթուղթն ավելի ուշ ստորագրած 9 իվի ցեղերի ներկայացուցիչներ: Հեղինակները նկատում են, որ Կարգավորման փաստաթուղթը ստորագրած ցեղերի հստակ թիվը ճշտելու հետ կապված դժվարությունները պայմանավորված են ցեղերի անունից փաստաթուղթը ստորագրելու լիազորության ստուգմամբ, ինչպես նաև այն փաստարկով, որ պայմանագիրը ստորագրած մի շարք անձինք ակնհայտորեն օժտված չէին նման լիազորությամբ, կամ նրանց այդ լիազորությունը կասկածի տակ էր առնվում: Հեղինակները նշում են, որ այդ փաստաթուղթը չեն ստորագրել մեծ ձկնապաշարների պահանջ ներկայացնող ցեղերը:

27-րդ հոդվածի համաձայն՝ ներկայացվել է հետևյալ բողոքը.

¶ 6.2. Հեղինակները պնդում են, որ դաշնագրի 27-րդ հոդվածը խախտող իշխանությունների գործողությունները սպառնում են իրենց ապրելակերպին և իրենց ցեղերի մշակույթին: Նրանք նշում են, որ ձկնորսությունն իրենց մշակույթի էական բաղադրատարրերից է, ներկայումս իրենք իրենց շահերն են հետապնդում ձկնորսության բնագավառում և մեծ ցանկություն ունեն ձկնորսության մշակույթը դրսևորելու իրենց բոլոր ավանդական տարածքներում: Բացի այդ, նրանք հավելում են, որ իրենց ավանդական մշակույթը ներառում է նաև առևտրային բաղադրատարրեր և հստակ տարբերակում չի դնում առևտրային և ոչ առևտրային ձկնորսության միջև: Նրանք ներկայացնում են այն փաստարկները, որ նոր օրենսդրությամբ խախտվում է օրենքի լայն իմաստով նախատեսված իրենց ավանդական ձկնորսության իրավունքը, և ձկնորսության քվոտայի դիմաց իրենք զրկվում են ձկնորսության առևտրային հայեցակետից:

Մասնակից պետությունը պաշտպանել է օրենսդրությունը.

¶ 7.1. Անդրադառնալով 27-րդ հոդվածով հեղինակի ներկայացրած բողոքին՝ մասնակից պետությունն ընդունում է, որ մաորիների մշակույթին հաղորդակից լինելը ենթադրում է նաև ձկնորսությամբ զբաղվելու իրավունք, և պետությունը դրական պարտավորություններ է ստանձնել այս իրավունքների ճանաչումը երաշխավորելու համար: Պետությունը պնդում է, որ ձկնապաշարները կարգավորող օրենքի միջոցով իրագործել է իր նպատակը: Մասնակից պետության համաձայն՝ քվոտաների միջոցով եկամուտ ստանալու իրավունքը, Սիլորդսի գործարքում մաորիների մասնակցության հետ մեկտեղ, առևտրային նպատակներով ձկնորսային գործունեություն ծավալելու նրանց պահանջների արդիական մարմնավորումն է: Ձկնապաշարները կարգավորող օրենքի արդյունքում Նոր Զելանդիայի բնակչության մոտ 15 տոկոսը կազմող մաորիներին այժմ իրավունք է վերապահվել արդյունավետորեն վերահսկելու այդ պետության ամենամեծ, խորը ձկնատեղիները և Նոր Զելանդիայի ձկնորսության համար հատկացրած քվոտայի 40 տոկոսից ավելին: Կարգավորող օրենքի միջոցով երաշխավորվել է մաորիների առաջադրված պայմաններով նրանց մասնակցությունը առևտրային նպատակներով ձկնորսային արդյունաբերությանը այն ընկերության կազմում, որում մաորիներն արդյունավետ վերահսկողություն են սահմանում բաժնետերերի և տնօրենների խորհրդում իրենց ներկայացուցիչների միջոցով: Մասնակից պետության համաձայն՝ ձկնապաշարները կարգավորող օրենքով մաորիները հայտնվել են անմախաղեպ դրության մեջ, որը նրանց հնարավորություն է տալիս ձեռք բերելու

²⁵ «Կարգավորումը» հաճախ անվանում են նաև «Սիլորդսի գործարք», քանի որ այդ փաստաթղթով նախատեսվում էր, որ մաորիները գնեն Նոր Զելանդիայի «Սիլորդս» անվամբ առաջատար ձկնորսական ընկերության մի մասը:

հավելյալ քվոտաներ և ձկնորսական գործունեություն ծավալելու միջոցներ, ինչպես նաև միջազգային ձկնորսության, ձկնաարդյունաբերության և իրացման զանազանության միջոցով ընդլայնելու իրենց դիրքերը շուկայում: Ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները կարգավորող օրենքով նախատեսվում է նաև մատրինների՝ ոչ առևտրային նպատակներով ձկնորսության իրավունքների հատուկ պաշտպանություն, և մշակվել են օրենքի վրա հիմնված հրահանգներ, որոնք երաշխավորում են ավանդական սնունդ հայթայթելու իրավունքը և ճանաչում են մատրինների ու ավանդական սննդի հայթայթման համար կարևոր վայրերի միջև հատուկ փոխհարաբերությունները:

¶ 7.2. Բացի այդ, մասնակից պետությունը նշում է, որ փոքրամասնությունների՝ 27-րդ հոդվածով սահմանված իրավունքներն անսահմանափակ չեն և կարող են ենթարկվել հիմնավորված կարգավորումների և վերահսկողության այլ միջոցների կամ սահմանափակումների, եթե այդ միջոցները հաստատված են ամուր և օբյեկտիվ հիմքերով, համահունչ են դաշնագրի այլ դրույթներին և չեն հանգեցնում տվյալ իրավունքի հերքման: Ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները կարգավորող օրենքով մասնակից պետությունը մի շարք կարևոր պարտավորություններ է ստանձնել: Հարկ էր հավասարակշռություն պահպանել պետության՝ մատրինների հանդեպ ստանձնած ձկնապաշարները վերահսկելու պահանջների բանաձևի կիրառումը երաշխավորելու ընդհանուր պարտավորությունների մասին այլախոհ անհատների մտահոգությունների և այդ պաշարների պահպանումը երաշխավորող միջոցների անհրաժեշտության միջև:

¶ 7.3. Ավելին՝ մասնակից պետությունը շեշտում է, որ Փոխընթերցման հուշագրից ակնհայտ է դառնում, որ իշխանությունները և ձկնապաշարները վերահսկելու պահանջ ներկայացնող մատրինների կողմից բանակցողները համակարծիք են, որ կարգավորումը պայմանավորված է բանակցողների՝ բոլոր մատրինների անունից գործելու լիազորության հաստատմամբ: Այսպիսի հաստատման ենթակա առաջարկ-նախագծով սահմանվել է, որ «Սիլորդս» ընկերությունը գնելու արդյունքում կկարգավորվեն Նոր Զելանդիայի բոլոր մատրինների՝ առևտրային նպատակներով ձկնորսության հետ կապված իրավունքները և շահերը, կարգավորումը կհանգեցնի 1983 թ. ընդունված «Ձկնորսության իրավունքների մասին» օրենքի 88-րդ բաժնի 2-րդ կետը չեղյալ դարձնող օրենսդրության և բոլոր մատրինների ձկնորսության իրավունքների և շահերի օրինական իրավունքի վերապահումը հաստատող այլ օրենսդրության ընդունմանը, ինչպես նաև առևտրային նպատակներով ձկնորսության և Քվոտաների կառավարման համակարգը հաստատելու բնագավառում մատրինների իրավունքների կամ շահերի իրագործման հետ կապված բոլոր վեճերի կարճամաճը: Մասնակից պետությունը վկայակոչում է «*Տե Ռունանգա օ Վարեկաուրի Ռեկոհու ընդդեմ գլխավոր դատախազի*» (*Te Runanga o Wharekauri Rekohu v Attorney-General*) գործով վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը, որի համաձայն՝ իշխանությունների և ձկնապաշարները վերահսկելու պահանջ ներկայացնող մատրինների կողմից բանակցողների քննարկած առաջարկ-նախագիծը համահունչ է Վայթանգիի համաձայնագրով իշխանությունների ստանձնած պարտավորությանը, և «Սիլորդս» ընկերությունը գնելու մատչելի հնարավորությունից չօգտվելը կհակասեր այդ պարտավորությանը: Ի լրումն՝ մասնակից պետությունը վկայակոչում է Վայթանգիի դատարանի նման կարծիքները:

¶ 7.4. Ինչ վերաբերում է հեղինակների այն պնդմանը, որ կարգավորումը միայն մասամբ է արժանացել մատրինների հավանությանը, պետությունը վկայակոչում է Փոխընթերցման հուշագրի սկզբնատառերով ստորագրմանը հաջորդած խորհրդակցությունների գործընթացը՝ կազմակերպված մատրի բանակցողների կողմից, որի հիման վրա մատրի բանակցողները և հետագայում նաև Բրիտանական կայսրությունը եզրակացրել են, որ բանակցողներին բավականաչափ իրավասություն էր վերապահված Կարգավորման փաստաթուղթը քննարկելու և ձևակերպելու համար: Մասնակից պետությունը հիշատակում է Վայթանգիի դատավորների կարծիքը, որի համաձայն՝ մատրինների կողմից բանակցողների զեկույցն այն տպավորությունն է թողել, որ վերջիններս իսկապես օժտված են եղել Կարգավորման փաստաթուղթը մշակելու իրավասությամբ այն դեպքում, եթե կողմերը փոխզիջումների միջոցով համաձայնության չհասնեին համաձայնագրի վերաբերյալ, և եթե զեկույցի լույսի ներքո Բրիտանական կայսրությունը հիմքեր ունենար եզրակացնելու, որ այն հիմնավորված է ընթացակարգային տեսանկյունից: Մասնակից պետությունն անդրադառնում է նաև Վայթանգիի դատարանի այն եզրակացությանը, որ այլախոհների՝ «անկախ ինքնորոշման (*rangatiratanga*) նյութական և ոչ նյութական արժեքները վերահսկելու իրավասության հարցով անխուսափելի փոխզիջումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունից ելնելով՝ հարկ է ընթացք տալ այդ կարգավորմանը»: Հաշվի առնելով, որ այս դեպքում կարգավորումը ներկայացնելու է ցեղերի համար բարենպաստ նոր ազգային քաղաքականություն, որը միտված է իրավունքների կատարելագործմանը, ոչ թե դրանց չեղյալ հայտարարմանը, ինչպես նաև սովորական իրավունքի դիրքորոշման պաշտպանությանը, մեր կարծիքով, այս կարգավորումը կարելի է դիտարկել ոչ թե պարզապես իվիների առանձին ցեղախմբերի մակարդակով, այլ համաիվիական ցեղի մակարդակով, որի դեպքում որպես նախապայման չի պահանջվում իվի ցեղի յուրաքանչյուր ներկայացուցչի համաձայնությունը, այլ կարելի է վստահել ընդհանուր համաձայնությանը: Մասնակից պետությունը շեշտում է, որ իշխանություններն ուղղակիորեն չեն առնչվել մատրինների ներքին կարգով որոշում կայացնելու գործընթացին, այլ պետք է առաջնորդվեին բանակցողների զեկույցով: Բացի այդ, մասնակից պետությունն անդրադառնում է «*Պոնալդ Մարշալը և այլք ընդդեմ Կանադայի*» (*Donald Marshall et al v Canada*) [22.14] գործով որոշմանը, որի շրջանակներում Մարդու իրավունքների կոմիտեն մերժել է բնիկ ժողովուրդների իրավունքների հետ կապված հարցերով խորհրդակցություններին բոլոր ցեղախմբերին մասնակցելու իրավունք վերապահելու պահանջը:

¶ 7.9. Ի վերջո, մասնակից պետությունը հավաստիացնում է, որ ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները կարգավորող օրենքով չեն խախտվել հեղինակների կամ այլ մատրիների՝ դաշնագրով սահմանված իրավունքները: Ընդհակառակը՝ մասնակից պետությունն ընդունում է, որ կարգավորումը հարկ է դիտարկել որպես մատրիների՝ Վայթանգիի համաձայնագրի սկզբունքներին համապատասխանող իրավունքների ճանաչման բնագավառում վերջին տարիների ամենադրական ձեռքբերումներից մեկը: Մասնակից պետությունը հավաստիացնում է, որ նվիրված է մատրիների բողոքները պատվաբեր և արդար եղանակով լուծելու գործին: Պետությունն ընդունում է, որ երկու կողմերի փոխզիջման որոշակի մակարդակ և պայմաններ ենթադրող նման ցանկացած կարգավորում հավանաբար չի արժանանա մատրիների լիակատար համաձայնությանը: Այս համատեքստում մասնակից պետությունը ներկայացնում է այն փաստարկը, որի համաձայն՝ Նոր Զելանդիայի՝ մատրիների ցեղին չպատկանող ազգաբնակչությունը նույնպես լիակատար հավանություն չի տվել Կարգավորման փաստաթղթին: Իրականում այդ ժամանակ հանրության արձագանքից ակնհայտ էր, որ Նոր Զելանդիայի՝ մատրիների ցեղին չպատկանող բավական մեծ թվով բնակիչներ դեմ են արտահայտվել Կարգավորման փաստաթղթին և չեն ընդունել, որ Նոր Զելանդիայի ձկնապաշարները վերահսկելու բնագավառում մատրիներին հարկ է առանձնահատուկ իրավունքներ վերապահել: Այնուհանդերձ, մասնակից պետությունը նշում է, որ չի կարող իրեն թույլ տալ կասեցնել իր գործունեությունը միայն լիակատար համաձայնության բացակայության պատճառով, և մի քանի մատրի կամ ոչ մատրի այլախոհների կողմից համաձայնագրի անտեսմամբ չի արդարացնի մատրիների բողոքներին արձագանքելու նպատակով դրական միջոցներ չձեռնարկելը այն դեպքում, երբ շահագրգիռ մատրիների մեծամասնությունը հստակ հավանություն է տվել նման միջոցների ձեռնարկմանը: Ուստի, մասնակից պետության կարծիքով, անհրաժեշտ է, որ կոմիտեն մերժի հեղինակների բողոքները:

Այսպիսով, հեղինակները հետևյալ պատասխանն են տվել.

¶ 8.3. Նրանք վիճարկում են մասնակից պետության այն դիրքորոշումը, որի համաձայն՝ 1992 թ. ընդունված Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենքի և 1989 թ. ընդունված «Մատրիների ձկնորսության իրավունքի մասին» օրենքի դրույթներով «սահմանվել է» մատրիների՝ ձկնորսական գործունեություն ծավալելու իրավունքը: Իրականում նրանք պնդում են, որ այս իրավունքներն ըստ էության չեղյալ են հայտարարվել կամ խախտվել են, և օրենքով մատրիներին վերապահված առավելությունները չեն հանգեցնում իրավական պարտավորությունների կատարման: Նշվել է նաև, որ 1992 թ. ընդունված Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենքով նախատեսվում է նրանց ձկնորսության իրավունքների և շահերի արհեստական բաժանում, որով հաշվի չի առնվում հեղինակների ու նրանց ձկնորսատեղիների միջև և՛ անհատական, և՛ ցեղային փոխհարաբերության վսեմ բնույթը: Այդ օրենքով էապես սահմանափակվում է հեղինակների և նրանց ցեղերի ու ենթացեղերի՝ գալիք սերունդների համար իրենց ձկնորսատեղիները պահպանելու իրավասությունը, կորցնում է ուժը և/կամ էապես սահմանափակվում են նրանց ընդհանուր իրավունքը և Վայթանգիի համաձայնագրով սահմանված իրավունքներն ու շահերը: Այն ազդում է նաև, իրենց մշակույթային ու կրոնական ավանդույթների և սովորույթների համաձայն, ձկնորսությամբ զբաղվելու և ձկնորսատեղիները վերահսկելու իրավասության վրա և այնպիսի հայեցակարգ է սահմանում, որի դեպքում մատրիների ձկնորսատեղիները կառավարելու լիազորությունը փոխանցվում է ձկնորսատեղիների գլխավոր կառավարչին:

ՄԻԿ-ը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին.

¶ 9.3. Ուստի կոմիտեի քննարկմանը ներկայացվող հիմնական հարցը հետևյալն է. արդյոք դաշնագրի 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները խախտվե՞լ են ձկնորսության իրավունքը կարգավորող օրենքով, որի դրույթները սահմանված են Կարգավորման փաստաթղթով և 1992 թ. ընդունված Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենքով: Անվիճելի է այն հարցը, որ դաշնագրի 27-րդ հոդվածի իմաստով հեղինակները փոքրամասնություն են կազմում: Բացի այդ, անվիճելի է նաև, որ ձկնորսատեղիների վերահսկումը նրանց մշակույթի էական տարրն է: Այս համատեքստում կոմիտեն հիշեցնում է, որ տնտեսական գործունեության իրավունքը կարող է սահմանվել 27-րդ հոդվածով, եթե այդ գործունեությունը տվյալ համայնքի մշակույթի էական բաղադրատարրն է: Վայթանգիի համաձայնագրով մատրիների՝ ձկնորսատեղիները վերահսկելու իրավունքների ճանաչմամբ ամրապնդվում է այն փաստը, որ այդ իրավունքի իրացումը մատրիների մշակույթի հիմնական բաղադրատարրերից է: Այնուհանդերձ, կոմիտեն իրավասու չէ որոշելու Վայթանգիի համաձայնագրի հետ 1992 թ. ընդունված օրենքի համապատասխանության հարցը:

¶ 9.5. Կոմիտեն ընդունում է, որ 1992 թ. ընդունված Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենքով և նրա մեխանիզմներով սահմանափակվում են հեղինակների՝ իրենց մշակույթին հաղորդակից դառնալու իրավունքները:

¶ 9.6. Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունը խորհրդակցությունների մի բարդ գործընթաց է նախաձեռնել՝ համազգային մակարդակով ձկնորսական գործունեությունը հաստատելու և կարգավորելու համար: Իշխանութ-

յունները խորհրդակցել են մաորիների համայնքների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնց առաջարկները մեծապես ազդել են համաձայնագրի նախագծի վրա: Կարգավորման փաստաթուղթը ստորագրվել է միայն մաորիների ներկայացուցիչների զեկույցից հետո, որի համաձայն՝ մաորիների ընդհանուր թվի նշանակալի մասը հավանություն է տվել Կարգավորման փաստաթղթին: Բազմաթիվ մաորիներ այդ օրենքը համարել են իրենց պահանջների ընդունելի կարգավորում: Կոմիտեն վկայակոչել է հեղինակների այն փաստարկները, որ իրենք և իրենց ցեղերի անդամների մեծ մասը համաձայն չեն Կարգավորման փաստաթղթի դրույթներին, և խախտվել են մաորիների փոքրամասնության ներկայացուցիչների իրավունքները: Նման հանգամանքներում, երբ անձանց՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը տարբերվում է փոքրամասնության այլ անդամների կամ բոլոր ներկայացուցիչների համանման իրավունքների իրացումից, կոմիտեն կարող է քննարկել այն հարցը, թե տվյալ դեպքում իրավունքների սահմանափակումը բխո՞ւմ է արդյոք փոքրամասնության բոլոր ներկայացուցիչների շահերից, և արդյոք բացասական վերաբերմունքից իրենց տուժած համարող անձանց իրավունքների դեպքում դա հիմնավորվա՞ծ է օբյեկտիվ պատճառներով:

¶ 9.7. Անդրադառնալով համաձայնագրի հետևանքներին՝ կոմիտեն նշում է, որ Կարգավորման փաստաթղթի ընդունմանը հանգեցրած բանակցություններից առաջ դատարանի կայացրած որոշման համաձայն՝ Քվոտաների կառավարման համակարգով թերևս խախտվում էին մաորիների իրավունքները, քանի որ նրանք իրականում չափաբաժին չունեին, հետևաբար, զրկված էին իրենց ձկնորսատեղիները վերահսկելու իրավունքից: Կարգավորման փաստաթղթով մաորիներին քվոտայի մեծ տոկոս է վերապահվել, որի արդյունքում նրանց վերադարձվել է ձկնորսատեղիների նշանակալի մասը: Կարգավորման փաստաթղթի շնորհիվ մաորիների՝ առևտրային նպատակներով իրականացվող ձկնորսության հարցում համաձայնագրով ամրագրված լիազորությունը և վերահսկողության ավանդական միջոցները փոխարինվել են վերահսկողության նոր կառույցով, որի դեպքում մաորիներին, ըստ էության, վերապահվում է ոչ միայն ձկնորսատեղիների հարցում իրենց շահերը պաշտպանելու, այլև արդյունավետ վերահսկողություն իրականացնելու իրավունք: Ինչ վերաբերում է ոչ առևտրային նպատակներով իրականացվող ձկնորսությանը, ապա փաստաթղթով ամրագրված են Վայթանգիի համաձայնագրով Բրիտանական կայսրության ստանձնած պարտավորությունները, և սահմանվում են ավանդական սննդի հայթայթման հարցին առնչվող հատուկ դրույթներ:

¶ 9.8. Խորհրդակցությունների արդյունքում հատուկ ուշադրության է արժանացել մաորիների կյանքում ձկնորսության մշակութային և կրոնական նշանակության հարցը, ի թիվս այլ նպատակների, մաորիների համայնքներին և անհատներին ոչ առևտրային ձկնորսական գործունեություն ծավալելու հնարավորություն տալու համար: Յարկ է նշել, որ Կարգավորման փաստաթուղթը և այն ընդունելու գործընթացը երկպառակություն են առաջացրել մաորիների շրջանում և մտահոգության տեղիք են տվել: Այնուհանդերձ, կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ օրենքի ընդունմանն առնչվող ընթացակարգերին անցնելուց առաջ խորհրդակցությունների լայնածավալ գործընթաց նախաձեռնելով և մաորիների ծավալած ձկնորսական գործունեության նպատակահարմարությանը հատուկ ուշադրություն դարձնելով՝ մասնակից պետությունն անհրաժեշտ քայլեր է ձեռնարկել ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները կարգավորող փաստաթղթի, ներառյալ Քվոտաների կառավարման համակարգի ընդունումը և օրենքով սահմանված կարգով կիրառումը 27-րդ հոդվածի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

¶ 9.9. Կոմիտեն շեշտում է, որ շարունակում են ուժի մեջ մնալ 27-րդ հոդվածով մասնակից պետության ստանձնած պարտավորությունները, որով ամրագրված է, որ Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենքը կիրառելիս հարկ է պատշաճ ուշադրություն դարձնել մաորիների համար ձկնորսության մշակութային և կրոնական նշանակությանը: Կոմիտեն նաև շեշտում է, որ մաորիների տնտեսական գործունեությունը 27-րդ հոդվածի դրույթներին համապատասխանեցնելու համար հարկ է այնպես ծավալել այն, որ հեղինակներն ի վիճակի լինեն իրենց ցեղախմբի այլ ներկայացուցիչների նման իրացնելու իրենց մշակույթին հաղորդակից լինելու և իրենց կրոնը դավանելու իրավունքը: Մասնակից պետությունը պարտավոր է հաշվի առնել այս դրույթները հետագայում Վայթանգիի համաձայնագիրը (ձկնորսության իրավունքները վերականգնելու պահանջները) կարգավորող օրենքը կիրառելիս:

Ինչպես *Կիտոկի* դեպքում, այնպես էլ *Մահուիկայի* գործի շրջանակներում փոքրամասնություն կազմող հեղինակների իրավունքները, ըստ էության, սահմանափակվել են այլ մաորիների փոքրամասնության հակառակ իրավունքների պատճառով:

[24.21] Գուցե ՄԻԿ-ը նույն եզրակացության կհանգեր սեփական ավանդական իրավունքները ճանաչելու վերաբերյալ այլ երկրների բնիկ ժողովուրդների ներկայացրած խիստ պահանջների հարցով որոշում կայացնելիս, եթե բնիկ ժողովուրդների խմբերը չկարողանային ապացուցել Կարգավորման փաստաթղթի ընդունմանն աջակցելու իրենց պատրաստակամությունը: Կարգավորման փաստաթղթի ընդունման փաստից ակնհայտ էր, որ նման մտադրություն կար Մահուիկայի գործում²⁶: Այդուհանդերձ, նման կար-

²⁶ Տե՛ս նաև «*Լանսմանը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի*» (*Lansman et al v Finland*, 671/95) գործ, կետ 10.5 [24.33]: Համեմա-

գավորման փաստաթղթերը միշտ էլ վիճահարույց են լինելու հնարավոր վիճաբանությունների պարագայում՝ կապված բնիկների բանակցողների՝ իրենց ժողովրդի անունից գործելու լիազորության և բանակցությունների արդյունքում մշակվող համաձայնագրերի համար անհրաժեշտ լիակատար հավանության բացակայության հետ: Այնուհանդերձ, ցանկալի է օրենսդրական ճանապարհով արդար կարգավորումներ սահմանել՝ հաշվի առնելով օրենսդրական գործընթացին հաջորդող կայունությունը, որն առնչվում է բնիկ ժողովրդի և ոչ բնիկ ժողովրդի հակասական պահանջներին ու շահերին և պատմական անարդարությունների հետևանքով բնիկ ժողովրդի կրած վնասի փոխհատուցման հետ կապված գործնական դժվարություններին²⁷:

27-րդ հոդվածի իրավական նշանակությունը. որո՞նք են 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները

ՄՇԱԿՈՒՅՑ

[24.22]

ԹԻԿ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. Անդրադառնալով 27-րդ հոդվածով ամրագրված մշակութային իրավունքների իրացմանը՝ կոմիտեն նշում է, որ գոյություն ունեն մշակույթի դրսևորման բազմաթիվ ձևեր, ներառյալ, կապված հողային պաշարների հետ, հատկապես բնիկ ժողովուրդներին բնորոշ որոշակի ապրելակերպը: Այդ իրավունքով կարող է նախատեսվել այնպիսի ավանդական գործունեություն ծավալելու իրավունք, ինչպիսին է ձկնորսությունը կամ որսորդությունը, և օրենքով սահմանված արգելոցներում բնակվելու իրավունքը: Այդ իրավունքների իրացման համար կարող են պահանջվել իրավական պաշտպանության դրական միջոցներ և փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչների՝ իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացին արդյունավետ մասնակցությունը երաշխավորող միջոցներ:

[24.23] Սկանդինավյան սամիների ժողովուրդներին և հյուսիսային եղջերու արածեցնելու նրանց սովորություններին առնչվող մի շարք դեպքերում ՄԻԿ-ը հարկադրված էր որոշել՝ արդյոք հյուսիսային եղջերու բուծելը կարելի՞ է վերագրել 27-րդ հոդվածի շրջանակներում ամրագրված մշակութային գործունեությանը: «Կիտոկն ընդդեմ Շվեդիայի» (*Kitok v Sweden*, 197/85) գործով կայացված որոշման համաձայն՝ այս հարցին դրական պատասխան է տրվել:

¶ 9.2. Տնտեսական գործունեությունը սովորաբար կարգավորում է միայն պետությունը: Այդուհանդերձ, եթե այդ գործունեությունը որևէ ժողովրդի համայնքի մշակույթի էական բաղադրատարրերից է, որևէ անձի ծավալած նման գործունեությունը կարող է համահունչ լինել դաշնագրի 27-րդ հոդվածի դրույթներին:

[24.24] *Կիտոկի* գործով որոշմամբ տրվում է 27-րդ հոդվածի շրջանակներում «մշակույթ» հասկացության լայն և ճկուն մեկնաբանություն: «Մշակույթ» հասկացությունն անշուշտ ենթադրում է ավանդական համոզմունքների և սովորույթների պահպանում, սակայն ներառում է նաև տվյալ խմբի սովորույթի մաս կազմող սոցիալական և տնտեսական գործունեությունը²⁸: «Լանսմանը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի» (*Lansman et al v Finland*, 511/92) գործին անդրադառնալով՝ ՄԻԿ-ը փաստորեն հետևյալ հայտարարությունն է արել սամի ժողովրդի՝ հյուսիսային եղջերու արածեցնելու մշակութային իրավունքների վերաբերյալ:

¶ 9.3. Անձի՝ իր մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը չի կարելի որոշել վերացական իմաստով, այլ հարկ է դիտարկել որոշակի համատեքստում: Այս հարցի կապակցությամբ կոմիտեն նշում է, որ 27-րդ հոդվածը միտված է ոչ միայն ազգային փոքրամասնությունների ավանդական գոյատևման միջոցների պաշտպանությանը, ինչպես նշվում է մասնակից պետության հայտարարությունում: Ուստի այն հանգամանքը, որ հեղինակները կարող էին տարիների ընթացքում հյուսիսային եղջերու արածեցնելու իրենց եղանակները համապատասխանեցնել արդի տեխնոլոգիաների միջոցներին, չի խոչընդոտում նրանց կողմից դաշնագրի 27-րդ հոդվածով սահմանված իրա-

տի՝ «Ազգային տիտղոսի իրավունքների մասին» օրենքի հետ 1993 (Cth), որով երաշխավորվում է Ավստրալիայի բնիկ ժողովուրդների ազգային տիտղոսի իրավունքների իրավական հիմքը: Բնիկները չեն ստորագրել որևէ հավասարազոր փաստաթուղթ, ուստի օրենքն ընդունելու նրանց համաձայնության շրջանակը վիճահարույց էր: Անշուշտ, կասկած չկա, որ քիչ բնիկներ հավանություն կտան 1998 թ. լրամշակված օրենքով սահմանված ազգային տիտղոսի իրավունքների վերականգնմանը, տես [24.41]:

²⁷ Տես Joseph, վերը, ծնթ. 24, 86:

²⁸ Տես B. Kingsbury, 'Claims by non-State Groups in International Law' (1992) 25 *Cornell ILJ* 481, էջ 491:

վունքների իրացումը...

«Մահուիկան ընդդեմ Նոր Ջեյլանդիայի» (*Mahuika v New Zealand, 547/93*) գործով կայացրած որոշման մեջ ՄԻԿ-ը կրկին հաստատել է, որ 27-րդ հոդվածով նախատեսվում է ավանդական քաղաքակրթությունների մշակույթների համապատասխանեցումը «ժամանակակից ապրելակերպին»²⁹:

[24.25] «ԴԻԵՐԳԱՐԴՏԵ ընդդեմ ՆԱՄԻԲԻԱՅԻ» (*DIERGAARDT v NAMIBIA, 760/97*)

Գործի փաստերը ներկայացված են ստորև.

¶ 2.1. Ռեհոբոթ բասթեր համայնքի ներկայացուցիչները բնիկ խոհերի և աֆրիկական ժողովրդի հետնորդներն են, որոնք նախկինում ապրել են Բարեհուտ հրվանդանում, սակայն 1872 թ. բնակություն են հաստատել ներկա տարածքում: Նրանք ապրում էին «պապենական օրենքներով», որոնցով նախատեսվում էին առաջնորդի ընտրություններ, և իրավունքներ ու պարտականություններ էին վերագրվում քաղաքացիներին: Ներկայումս համայնքում հաշվում են մոտավորապես 35.000 մարդ, իսկ նրանց զբաղեցրած Վինդհուկից դեպի հարավ ձգվող տարածքը կազմում է 14.216 քկմ: Այս տարածքում են Բասթեր համայնքի ներկայացուցիչները հիմնել իրենց հասարակությունը, զարգացրել իրենց մշակույթը, լեզուն և տնտեսությունը, որի շնորհիվ ամրապնդել են իրենց սեփական հաստատությունները, որոնցից են՝ դպրոցները և համայնքային կենտրոնները:

XX դարում Նամիբիայի տարածքը հիմնականում գտնվել է Զարավային Աֆրիկայի Զանրապետության արդյունավետ վերահսկողության տակ: Նամիբիայի գործով 1970 թ. Արդարադատության միջազգային դատարանի կայացրած վճռի համաձայն՝ Զարավային Աֆրիկայի Զանրապետության կողմից իրականացվող տարածքային վերահսկողությունը համարվել է միջազգային իրավունքի խախտում³⁰: 1976 թ. Զարավային Աֆրիկայի Զանրապետությունն ինքնավարություն է շնորհել ռեհոբոթ ժողովրդին: 1989 թ. ռեհոբոթ ժողովուրդը «մեծ քաղաքական ճնշման տակ համաձայնել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 435 բանաձևի պահանջները կատարելու նպատակով (1978 թ.) ժամանակավորապես իր օրենսդիր և գործադիր լիազորությունները փոխանցել Զարավարևմտյան Աֆրիկային՝ հանձնել այդ պետության գլխավոր կառավարչի»³¹: Այդուհանդերձ, հեղինակները պնդել են, որ իրենց օրենսդրական որոշման համաձայն՝ այս փոխանցումը ժամանակավոր բնույթ է կրել, և դրա վավերականության ժամկետը լրացել է 1990 թ.: Նամիբիայի անկախացման նախորդ օրը: Ուստի, հեղինակների համոզմամբ, իրենք օժտված էին Նամիբիայում բնակվող անկախ ժողովրդի իրավական կարգավիճակով:

¶ 2.5. Զեղինակները հայտարարել են, որ Նամիբիայի իշխանությունները չեն ճանաչել իրենց անկախությունը և *quo ante* կարգավիճակի վերականգնումը, այլ սահմանադրության թիվ 5 հավելվածի դրույթների կիրառմամբ բռնագրավել են համայնքի ամբողջ հողատարածքը:

Փաստաբանի կարծիքով՝ այս գործողությունները միտված էին համայնքի ապրելու միջոցների ոչնչացմանը, քանի որ չեն ճանաչել համայնքային հողատարածքը և սեփականությունը:

¶ 3.1. Փաստաբանը նշում է, որ այս քաղաքականությունը վտանգում է հիմնականում խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ զբաղվող գյուղացիների հանրույթի տեսքով հանդես եկող համայնքի ավանդական գոյությունը: Նա պարզաբանում է, որ երաշտի ժամանակ (իենց այդ ժամանակ է ներկայացվել դիմումը) համայնքին անհրաժեշտ է համայնքային հող, որտեղ համայնքի ներկայացուցիչներին հերթով արոտավայրերում անասուններն արածեցնելու իրավունք է տրվում: Զամայնքային հողի բռնագրավումը և դրան հաջորդած սեփականաշնորհումը, ինչպես նաև տարածքում անփորձ նորաբնակների կողմից հողի սխալ մշակումը հանգեցրել են համայնքի բազմաթիվ գյուղացիների հարստահարման, որոնք ստիպված էին մորթել իրենց անասունները: Այս ամենի հետևանքով վերջիններս չեն կարողանում վճարել նախկինում համայնքին պատկանող, իսկ այժմ պետության սեփականություն դարձած «Դևելոպմենթ քորպորեյշնի» (*Development Corporation*) կողմից իրենց տրամադրված փոխառությունների տոկոսները, հետագայում նրանց տները վաճառվում են բանկերին, և նրանք տնանկ են մնում:

Փաստաբանը շեշտում է, որ համայնքի ընդհանուր սեփականությունը հանդիսացող ամբողջ ունեցվածքի բռնա-

²⁹ Պարբ. 9.4:

³⁰ Տե՛ս Խորհրդատվական կարծիք [1971] ICJ Rep. 16, Անվտանգության խորհրդի թիվ 276 բանաձևին հակասող Նամիբիայի տարածքում Զարավաֆրիկյան Զանրապետության (Զարավարևմտյան Աֆրիկայի) շարունակական վերահսկողության իրավական հետևանքների մասին:

³¹ Պարբ. 2.4:

գրավմամբ համայնքի ներկայացուցիչները կողոպտվել են գոյատևման նյութական միջոցների տեսանկյունից, որոնք էլ իրենց հերթին համայնքի մշակութային, սոցիալական և ժողովրդագրական առանձնահատկության հիմքն են: Համարվում է, որ վերոնշյալ միջոցներով խախտվել են 27-րդ հոդվածի դրույթները:

Կոմիտեն որոշում է կայացրել մասնակից պետության օգտին:

¶ 10.4. Հեղինակները կոմիտեին են ներկայացրել բողոքարկման վերաբերյալ 1996 թ. մայիսի 14-ին գերագույն դատարանի կայացրած դատավճիռը, որով հաստատվել է համայնքային սեփականության հանդեպ բասթեր համայնքի պահանջը: Փաստերը գնահատելուց հետո այդ դատարանները մի շարք փաստացի եզրակացությունների են հանգել և որոշ չափով մեկնաբանել են կիրառելի ներպետական օրենսդրությունը: Հեղինակները հայտարարել են, որ առգրավվել է իրենց համայնքի հողամասը, ինչի հետևանքով խախտվում են իրենց՝ որպես փոքրամասնության ներկայացուցիչների իրավունքները, քանի որ իրենց մշակույթը փոխկապակցված է իրենց համայնքի ներկայացուցիչներին բացառիկ իրավունքով պատկանող համայնքային հողատարածքի օգտագործման հետ: Նրանք պնդում են, որ հողատարածքի առգրավմամբ խախտվել է դաշնագրի 27-րդ հոդվածը:

¶ 10.6. Բողոքի այս հայեցակետի վերաբերյալ իր եզրակացության մեջ կոմիտեն նշում է, որ ներպետական դատարաններին է վերապահված պետական օրենքների մեկնաբանությանը համապատասխանող և այդ համատեքստում փաստեր փնտրելու պարտավորությունը: Հայտնաբերված փաստերի համաձայն, եթե նույնիսկ կատարվել է «առգրավում», ապա դա եղել է 1976 թ. կամ, բոլոր դեպքերում, Նամիբիայում դաշնագրի և կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ 1995 թ. փետրվարի 28-ից առաջ: Ինչ վերաբերում է տվյալ դեպքում հողօգտագործման մասին պատշաճ հարցին, ապա հեղինակներն արձանագրել են 27-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով, որ խոշոր եղջերավոր անասուններին արածեցնելու նպատակներով ռեհոբոթի համայնքի կողմից ավանդաբար օգտագործվող հողատարածքների մի մասն այլևս բացառիկ օգտագործման իրավունքով չի պատկանում համայնքի անդամներին: Անասնաբուծությունը համարվում է համայնքի մշակույթի էական բաղադրատարրերից մեկը: Ինչպես վկայում է կոմիտեի, ավելի վաղ ընդունած նախադեպային իրավունքը, 27-րդ հոդվածով փոքրամասնության ներկայացուցիչներին վերապահված մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը հատկապես բնիկ ժողովուրդների դեպքում ենթադրում է հողօգտագործման հետ կապված որոշակի ապրելակերպի պաշտպանություն, որն առնչվում է տնտեսական գործունեություն ծավալելու նպատակներով հողի պաշարների օգտագործմանը, օրինակ՝ որսորդության կամ ձկնորսության նպատակներով: Այսուհանդերձ, տվյալ դեպքում կոմիտեն ի վիճակի չէ եզրակացնելու, որ հեղինակները կարող են 27-րդ հոդվածով հիմնավորել տվյալ արոտավայրերը բացառիկ իրավունքով օգտագործելու իրենց պահանջը: Այս եզրակացությունը հիմնված է կոմիտեի՝ հեղինակների ապրելակերպի և նրանց կողմից պահանջվող հողերի միջև փոխառնչության գնահատման վրա: Թեև վերոնշյալ հողերի հետ ռեհոբոթների կապը հաստատվել է մոտավորապես 125 տարի առաջ, այն չի առաջացել տարբեր քաղաքակրթության զարգացմանը նպաստող առնչությունների արդյունքում: Բացի այդ, հարկ է նշել, որ թեև ռեհոբոթների համայնքն օժտված է ինքնավարության առանձնահատուկ իրավունքով, հեղինակներին չի հաջողվել այս գործոնները հիմնավորել իրենց՝ խոշոր եղջերավոր անասուններ բուծելու միջոցներով: Ուստի կոմիտեն եզրակացնում է, որ տվյալ դեպքում դաշնագրի 27-րդ հոդվածի որևէ խախտում չի արձանագրվել:

[24.26] Ռեհոբոթ բասթերների առանձնահատուկ մշակութային սովորությունները սկզբնավորվել են միայն 125 տարի առաջ, դա կարճ ժամանակահատված է, եթե համեմատվում է սամիներ և մաորիներ բնիկ ժողովուրդների դեպքում դիտարկվող մշակութային իրավունքների հետ: Բացի այդ, նշված մշակութային գործունեությունը՝ խոշոր եղջերավոր անասուններ արածեցնելը, բավականաչափ «ինքնատիպ» չի համարվել 27-րդ հոդվածի դրույթներին համապատասխանելու համար: Ցավոք, այս դեպքում ՄԻԿ-ի դատողությունները վճռական են և չեն հուշում ընթերցողին, թե ինչպես է որոշվում առանձնահատկությունը³²: Տիկին Էվաթն ու տիկին Մեդինա Քուիրոզան իրենց հակառակ կարծիքում որոշ անհրաժեշտ տեղեկություններ են տրամադրել այս հարցի վերաբերյալ:

Փաստերից և 1996 թ. գլխավոր դատարանի կայացրած որոշումից պարզ է դառնում, որ Նամիբիայի իշխանությունները սեփականացրել են համայնքային հողերը դաշնագրի և կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց առաջ, և հեղինակները չեն կարող առգրավման պատճառաբանությամբ որևէ կերպ հիմնավորել իրենց պահանջը: Սակայն 27-րդ հոդվածի շրջանակներում հեղինակների պահանջի էական հայեցակարգն այն է, որ վերոնշյալ ամսաթվից սկսած՝ նրանք զրկվել են այն հողատարածքները, որոշակի գրասենյակներն ու դահլիճներն օգտագործելու իրավունքից, որոնք պետությունը բացառիկ իրավունքով նախապես վերապահել է համայնքի անդամներին: Նրանք նշում են, որ այլ մարդկանց կողմից հողի մասնավորեցման և սխալ օգտագործման հետևանքով իրենք զրկվել են անասուններ արածեցնելու ավանդական գործունեությունը ծավալելու հնարավորությունից: Նրանք այն փաստարկն են բերում, որ իրենց գործունեության տնտեսական հիմքի կորստյան պատճառով իրենք զրկվել են այլոց նման իրենց մշակույթին հաղորդակից դառնալու իրավունքից: Այս պնդումը հանգեցնում է մի քանի բարդ հարցերի,

³² Տե՛ս նաև [22.05]:

օրինակ՝ ինչպե՞ս սահմանել դաշնագրով ամրագրված փոքրամասնության մշակույթը, և այդ մշակույթի շրջանակներում ինչ՞ դեր է վերապահվում տնտեսական գործունեությանը: Այս հարցերին ավելի դյուրին է պատասխանել, եթե խոսքը բնիկ ժողովուրդների համայնքների մասին է, որոնց հաճախ հաջողվում է ապացուցել, որ իրենց ուրույն ապրելակերպը կամ մշակույթը՝ թե՛ տնտեսական, թե՛ այլ մշակութային և հոգևոր գործունեությամբ, երկար ժամանակ կապված են եղել որոշակի հողատարածքների հետ, այնպես, որ հողն օգտագործելու իրավունքի մերժմամբ խախտվում է նաև, բոլոր հայեցակարգերով, նրանց՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը: Տվյալ դեպքում հեղինակներն իրենց մշակույթը բնութագրել են գրեթե միայն խոշոր եղջերավոր անասուններ արածեցնելու հետ կապված տնտեսական գործունեության տեսանկյունից: Նրանք չեն կարողացել ապացուցել, որ իրենք հաղորդակից են մի առանձնահատուկ մշակույթի, որն անքակտելիորեն կապված կամ պայմանավորված է վերոնշյալ հատուկ հողատարածքների օգտագործմամբ, որտեղ իրենց նախնիները տեղափոխվել են մեկ դարից մի քիչ առաջ, կամ հողատարածքն օգտագործելու հնարավորության սահմանափակմամբ կասեցվել է իրենց՝ այդ մշակութային հաղորդակից լինելու իրավունքը: Նրանց պահանջը, ըստ էության, տնտեսական է, ոչ թե մշակութային, և չի համապատասխանում 27-րդ հոդվածով սահմանված պաշտպանության շրջանակներին:

[24.27] Ուստի, թեև *Կիտոկի* և այլ գործերով կայացված որոշումները հաստատել են, որ մշակույթը կարող է տնտեսական գործունեություն ենթադրել [24.24], տնտեսական գործունեությունն ինքնին հավասարազոր չէ մշակութային գործունեությանը: Ռեհոբոթ բասթերները չեն կարողացել, տնտեսական պարզ նպատակից բացի, մշակութային կամ հոգևոր տեսանկյունից որևէ կերպ հիմնավորել խոշոր եղջերավոր անասուններ արածեցնելու գործունեությունը:

Տնտեսական զարգացում և դրա ազդեցությունը մշակույթի վրա

[24.28] «ՕՄԻՆԱՅԱԿ ՑԵՂԱՊԵՏԸ և ԼՅՈՒԲԻԿՈՆ ԼՃԻ ՑԵՂԱԽՈՒՄԲՆ ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(*CHIEF OMINAYAK and the LUBICON LAKE BAND v CANADA, 167/84*)

Իրենց առաջնորդի՝ Բեռնար Օմինայակի գլխավորությամբ Կանադայի Ալբերտա նահանգի հյուսիսային շրջանի Լյուբիկոն լճի շրջակայքում բնակվող կրի ցեղի հնդկացիները բողոքել են իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքների խախտման կապակցությամբ: Նրանք պնդել են, որ Ալբերտայի շրջանի, ինչպես նաև Կանադայի³³ իշխանությունները թույլ են տվել, որ մասնավոր անձանց կողմից նավթի և գազի հանքեր հայտնաբերելու նպատակով ծավալված գործունեությունը վտանգի իրենց ապրելակերպը, հետևաբար և մշակույթը: Իրավունքների այդ խախտումը դրսևորվել է ցեղախմբի համայնքի տնտեսական հիմքը քայքայելու և բնիկների ավանդույթներն ու սովորույթները վերացնելու սպառնալիքով՝ այդպիսով վտանգելով ցեղախմբի՝ որպես ժողովրդի գոյությունը: Գործն ըստ արժանվույն դիտարկելուց հետո կոմիտեն հանգել է հետևյալ եզրակացության.

¶ 32.2. Կոմիտեն ընդունում է, որ 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները ներառում են ուրիշներին տրվող տնտեսական և սոցիալական գործունեություն ծավալելու իրավունքը՝ հաշվի առնելով, որ այդ գործունեությունը տվյալ համայնքի մշակույթի մասն է կազմում:

¶ 33. Մասնակից պետության կողմից վկայակոչված պատմական անարդարությունները և վերջերս ի հայտ եկած որոշ նոր իրադարձություններ վտանգում են Լյուբիկոն լճի շրջակայքում բնակվող ցեղերի ապրելակերպն ու մշակույթը և շարունակում են խախտել 27-րդ հոդվածի դրույթները:

Օմինայակի գործով կայացված որոշումը չափազանց հակիրճ էր: Այսուհանդերձ, այն հաստատել է, որ տնտեսական զարգացման ծրագիրը կարելի է անտեսել պետության՝ 27-րդ հոդվածով սահմանված մշակութային իրավունքները պաշտպանելու պարտականության օգտին:

[24.29] Օմինայակի գործով կայացրած որոշման 33-րդ պարբերությունում ՄԻԿ-ը հավելել է, որ «մասնակից պետությունն առաջարկում է իրավիճակը շտկել իրավական պաշտպանության այնպիսի միջոցների կիրառմամբ, որոնք, կոմիտեի կարծիքով, համահունչ են դաշնագրի 2-րդ հոդվածի իմաստին»: Առաջարկվող իրավական պաշտպանության միջոցով նախատեսվում էր փոխհատուցել Լյուբիկոն լճի ցեղախմբի՝ իննսունհինգ քառակուսի մղոն մակերեսով հողատարածքի վիճահարույց առգրավումը: Չավեշտական է այն փաստը, որ ընդունելիության տեսանկյունից իրավական պաշտպանության այդ նույն

³³ Տե՛ս Դաշնային պետություններում ՔԶԻՄԴ-ի կիրառման վերաբերյալ քննարկումը [1.28]:

միջոցը նախկինում անարդյունավետ է համարվել [6.16]³⁴:

[24.30] Պարոն Անդոն Օմինայակի գործով հակառակ կարծիք է արտահայտել.

Իմ կարծիքով՝ որևէ մեկի՝ սեփական մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի հասկացողությունը չպետք է լինի այն, որ հարկ է ամեն գնով պահպանել ցեղախմբերի ավանդական ապրելակերպի իրավունքը: Մարդկության անցած պատմական ուղին վկայում է, որ տեխնիկական առաջընթացը հանգեցրել է գոյություն ունեցող ապրելակերպի զանազան փոփոխությունների, ուստի բացասական ազդեցություն է թողել այդ ապրելակերպով ամրագրված մշակույթի վրա: Եվ իրոք, տվյալ հասարակության որևէ խմբի կողմից իր ավանդական ապրելակերպը փոխելու հարցը կտրականապես մերժելու դեպքում կարող է խանգարվել ամբողջ հասարակության տնտեսական զարգացումը: Այդ իսկ պատճառով կցանկանայի ներկայացնել իմ վերապահումը այն վճռական հայտարարության կապակցությամբ, որ վերջերս տեղի ունեցած իրադարձությունները վտանգել են Լյուբիկոն լճի շրջակայքում բնակվող ցեղախմբի կյանքը և խախտում են 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները:

Թվում է, թե հասարակության մեծամասնության կարիքները հաշվի առնող 27-րդ հոդվածով ամրագրված պաշտպանության բնորոշումը՝ առաջարկված Անդոյի կողմից, ժխտում է հոդվածի հիմնավորումը, այսինքն՝ փոքրամասնություն կազմող խմբի³⁵ առանձնահատկության պահպանման համար անհրաժեշտ յուրահատուկ և միայն իրեն բնորոշ տարրերի պաշտպանությունը: Եվ իսկապես, բավականին պարզ է, որ փոքրամասնությունների իրավունքների պատշաճ կարգով պաշտպանությունը հաճախ հանգեցնում է այլոց՝ օրենքով սահմանված իրավունքների սահմանափակման³⁶: Այնուհանդերձ, Անդոն հարց չի բարձրացնում 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքների բացարձակ բնույթի մասին: Իրականում ՔՔԻՄԴ-ով սահմանված շատ քիչ իրավունքներ բացարձակ բնույթ ունեն և սովորաբար համաչափ սահմանափակումների են ենթարկվում³⁷: Ինչպես նշվել է, 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները կարող են սահմանափակվել միևնույն փոքրամասնության անդամների փոխհատուցող իրավունքներով: Բացի այդ, հետևյալ գործերում նշվում է, թե ինչպես 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները կարող են սահմանափակվել ՄԻԿ-ի կողմից համաչափ համարվող օրենքներով կամ իրավական նորմերով:

[24.31] «ԼԱՆՍՄԱՆՆ ԸՆԴՂԵՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ» (LÄNSMAN v FINLAND, 511/92)

Այս գործով բողոքի հեղինակները՝ Իլմարի Լանսմանը, Մուոքքաթունթուրի հովիվների կոմիտեի քառասունյոթ անդամ և անգելիների տեղական համայնքի ներկայացուցիչները, պնդել են, որ իրենք տուժել են Ֆինլանդիայի կողմից 27-րդ հոդվածը խախտելու հետևանքով, երբ իշխանությունները թույլ են տվել քարհանք շահագործելու աշխատանքներ իրականացնել, ինչը խանգարել է հեղինակների՝ հյուսիսային եղջերու արածեցնելու ավանդական սովորույթի իրականացմանը: ՄԻԿ-ը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին: Այդ որոշման հետևյալ քաղվածքներից պարզ են դառնում գործին առնչվող փաստերը.

¶ 9.1. Կոմիտեն քննել է այս դիմումը կողմերի տրամադրած բոլոր տեղեկությունների լույսի ներքո: Հարկ է, որ կոմիտեն որոշի, թե արդյոք էթելա-Ռիոթուսվաարա լեռան լանջին արդյունահանման աշխատանքներ ծավալելու դեպքում մինչև այժմ թույլատրված ծավալով կամ քարհանքը շահագործելու մտադրություն արտահայտած ընկերությանը թույլատրված ծավալով, այսինքն՝ մոտավորապես 5000 խորանարդ մետրի չափի դեպքում, կխախտվե՞ն հեղինակների՝ դաշնագրի 27-րդ հոդվածով սահմանված իրավունքները:

¶ 9.2. Անվիճելի փաստ է, որ 27-րդ հոդվածի իմաստով հեղինակները փոքրամասնություն են կազմում և, որպես այդպիսին՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունք ունեն: Անվիճելի է նաև, որ հյուսիսային եղջերուի անասնաբուծությունը նրանց մշակույթի հիմնական բաղադրատարրն է: Այս համատեքստում կոմիտեն հիշեցնում է, որ 27-րդ հոդվածով կարող է տնտեսական գործունեություն ճանաչվել միայն այն դեպքում, եթե այն ազգային համայնքի մշակույթի էական բաղադրատարրն է (1988 թ. հուլիսի 27-ին ընդունված «Կարծիքներ թիվ 197/1985 դիմումի մասին», «Կիտոկն ընդդեմ Շվեդիայի» (*Kitok v Sweden*) գործ, պարբ. 9.2):

¶ 9.3. Անձի՝ իր մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը չի կարող սահմանվել վերացական կարգով, այլ պետք

³⁴ Տե՛ս նաև Debeljak, վերը, ծնթ. 22, էջ 179-80:

³⁵ Տե՛ս Thornberry, վերը, ծնթ. 1, 141:

³⁶ Տե՛ս օրինակ՝ Շվեդիայի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումների 18-րդ պարբերությունը, [24.42]:

³⁷ Տե՛ս [1.68]:

է հանդես գա որոշակի համատեքստում: Այս հարցի առնչությամբ կոմիտեն նկատում է, որ ինչպես նշված է մասնակից պետության հայտարարության մեջ, 27-րդ հոդվածով նախատեսվում է ոչ միայն ազգային փոքրամասնությունների ավանդական գոյատևման միջոցների պաշտպանությունը: Ուստի այն հանգամանքը, որ հեղինակները կարող էին տարիների ընթացքում հյուսիսային եղջերու արածեցնելու իրենց եղանակները համապատասխանեցնել ժամանակակից տեխնոլոգիաներին, չի խոչընդոտում նրանց կողմից դաշնագրի 27-րդ հոդվածով սահմանված իրավունքների իրացումը: Բացի այդ, Ռիուբոսվաարա լեռը շարունակում է նրանց մշակույթի շրջանակներում պահպանել իր հոգևոր նշանակությունը: Կոմիտեն նշում է նաև հեղինակների այն մտավախությունը, որ հյուսիսային եղջերուի մսի որակը կարող է ենթարկվել խաթարված շրջակա միջավայրի բացասական ազդեցությանը:

¶ 9.4. Հասկանալի է, որ պետությունը կարող է տնտեսական զարգացումը խրախուսելու կամ ձեռնարկությունների կողմից ծավալվող տնտեսական գործունեությունը թուլատրելու ցանկություն հայտնել: Այս հարցում նրա ազատությունը հարկ է սահմանել ոչ թե ըստ գնահատման նվազագույն սահմանագծի, այլ 27-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների: 27-րդ հոդվածի դրույթներով ամրագրված է, որ չի կարելի որևէ փոքրամասնության ներկայացուցչի արգելել իրացնել իր մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը: Հետևաբար՝ այս իրավունքը ժխտելուն միտված միջոցները համահունչ չեն 27-րդ հոդվածի դրույթներին: Այդուհանդերձ, այն միջոցները, որոնք որոշակի սահմանափակ ազդեցություն են գործում անձանց ապրելակերպի վրա, միշտ չէ, որ հանգեցնում են 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքի ժխտմանը:

¶ 9.5. Ուստի այս դեպքում հարց է ծագում, թե արդյոք քարհանք շահագործելու աշխատանքներն այնքան մեծ ազդեցություն են գործում Ռիուբոսվաարա լեռան վրա, որ էապես խանգարեն հեղինակներին այդ տարածքում իրացնել իրենց մշակութային իրավունքները: Կոմիտեն վկայակոչում է 27-րդ հոդվածի վերաբերյալ իր հրապարակած Ընդհանուր մեկնաբանության 7-րդ պարբերությունը, ըստ որի՝ փոքրամասնությունների կամ բնիկ ժողովուրդների խմբերն ունեն որսորդության, ձկնորսության կամ, ինչպես տվյալ դեպքում, հյուսիսային եղջերու բուծելու ավանդական գործունեության պաշտպանության իրավունք, և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ «իրենց առնչվող հարցերի մասին որոշումներ ընդունելու գործընթացին փոքրամասնության ներկայացուցիչների արդյունավետ մասնակցությունը երաշխավորելու համար»:

¶ 9.6. Այս հիմքերով կոմիտեն եզրակացնում է, որ այսօրվա դրությամբ առկա ծավալով Ռիուբոսվաարա լեռան լանջերին իրականացվող արդյունահանման աշխատանքներով չի անտեսվում հեղինակների՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը՝ սահմանված 27-րդ հոդվածով: Կոմիտեն հատկապես շեշտում է, որ քարհանք շահագործելու թույլտվությանը նախորդող ընթացակարգի ժամանակ հաշվի են առնվել Մուոքքաթունթորի հովիվների կոմիտեի և հեղինակների շահերը, վերջիններիս հետ խորհրդակցություններ են անցկացվել, և պարզվել է, որ նման արդյունահանման աշխատանքները բացասական հետևանքներ չեն ունեցել այդ տարածքում հյուսիսային եղջերու արածեցնելու համար:

¶ 9.7. Անդրադառնալով իշխանությունների կողմից ապագայում հավանաբար թուլատրելի գործունեությանը՝ կոմիտեն հավելում է, որ իր տրամադրության տակ եղած տեղեկություններից հետևում է, որ մասնակից պետության իշխանությունները ձգտել են թուլատրել միայն այնպիսի արդյունահանման աշխատանքներ, որոնք նվազագույն ազդեցություն կթողնեն Հարավային Ռիուբոսվաարայում հյուսիսային եղջերուի արածեցման հետ կապված գործողությունների և շրջակա միջավայրի վրա: Այդ տարածքում քարհանքի շահագործումից հյուսիսային եղջերուի արածեցման հետ կապված գործողությունների կրած ազդեցությունը նվազեցնելու մտադրությունն արտահայտվում է արդյունահանման աշխատանքների թուլտվությամբ ամրագրված պայմաններով: Ավելին՝ հաստատվել է, որ նման արդյունահանման աշխատանքների մեծ մասը հարկ է ծավալել այդ տարածքում հյուսիսային եղջերուի արածեցման համար նախատեսված ժամանակահատվածից հետո: Որևէ հանգամանքով չի ենթադրվում, որ Մուոքքաթունթորի հովիվների կոմիտեի կողմից հյուսիսային եղջերուի արածեցման միջոցների փոփոխությունը չի կարելի համաձայնեցնել տեղական անտառապահ ծառայության ղեկավարության կամ ընկերության հետ:

¶ 9.8. Անդրադառնալով հետագա գործողությունների առնչությամբ հեղինակների մտահոգությանը՝ կոմիտեն նշում է, որ տնտեսական գործունեությունը 27-րդ հոդվածի դրույթներին համապատասխանեցնելու համար հարկ է այն կազմակերպել այնպես, որ հեղինակները շարունակեն իրացնել հյուսիսային եղջերու բուծելու իրենց իրավունքը: Բացի այդ, եթե իշխանությունները հավանություն տան Անգելիի տարածքում անցկացվելիք մեծածավալ հանքարդյունաբերական աշխատանքներին, և եթե շահագործման թույլտվությունն ստացած ընկերությունները նշանակալիորեն ընդլայնեն այդ աշխատանքների ծավալը, ապա կխախտվեն հեղինակների՝ 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, հատկապես՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը: Մասնակից պետությունը պարտավոր է հաշվի առնել այս հանգամանքը գործող պայմանագրերը երկարացնելու կամ նորերը կնքելու ժամանակ:

ՄԻԿ-ը, ըստ էության, որոշել է, որ բողոքարկման առարկա հանքարդյունաբերական աշխատանքները անօրինական չեն և վնասակար ազդեցություն չեն գործում սամիների մշակութային գործունեության վրա: Այս որոշումը հիմնավորված է մասնակից պետության ներկայացրած այն փաստարկներով, որ հանքարդյունաբերական աշխատանքներն իրականացվել են միայն այն ժամանակահատվածներում,

երբ հյուսիսային եղջերուների հոտերն այդ տարածքից դուրս են գտնվել³⁸, ինչպես նաև այն հայտարարություններով, որ այդ աշխատանքները ծավալվել են համեմատաբար փոքր տարածքում, որտեղ ստացվել է քարի համեմատաբար փոքր քանակություն³⁹:

[24.32] Ի պաշտպանություն՝ մասնակից պետությունը ներկայացրել է հետևյալ փաստարկները.

¶ 7.12. Մասնակից պետությունը պնդում է, որ *Կիտոկի* գործով [գործ N 197/1985] Մարդու իրավունքների կոմիտեի «Կարծիքները» ենթադրում են, որ կոմիտեն պաշտպանում է այն սկզբունքը, որ 27-րդ հոդվածի կիրառման հարցում մասնակից պետությանը որոշ ազատություն է վերապահված, ինչը ճիշտ է տնտեսական գործունեության ամեն տեսակի կարգավորումների դեպքում: Մասնակից պետության համաձայն՝ այս կարծիքը հաստատված է դաշնագրին անդամակցող մասնակից պետությունների բարձրագույն ատյանների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական համձնաժողովի որոշումներով:

¶ 7.13. Մասնակից պետությունը եզրակացնում է, որ 27-րդ հոդվածի պահանջները «շարունակաբար հաշվի են առնվել պետական իշխանությունների կողմից ներպետական օրենքները և վերոնշյալ միջոցները կիրառելիս և իրազորելիս»: Նա կրկին նշում է, որ իր հայեցողությամբ գործելու ազատության սահմանների որոշումը, անգամ 27-րդ հոդվածի կիրառման հարցում, հարկ է վերապահել պետական իշխանություններին: Ինչպես բազմաթիվ դեպքերում հաստատել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որոշում կայացնելիս ներպետական դատարանի դատավորն ավելի բարենպաստ դիրք է զբաղեցնում, քան միջազգային ատյանի դատավորը: Տվյալ դեպքում երկու վարչական մարմիններ և Գերագույն վարչական դատարանը քննել են թույլտվության տրամադրման և դրան առնչվող միջոցառումները և հաստատել են դրանց օրինականությունն ու համապատասխանությունը: Հեղինակները կարող են շարունակել հյուսիսային եղջերուների բուծումը և ստիպված չեն հրաժարվել իրենց ապրելակերպից: Հանքարդյունաբերությունն ու հին անտառային ճանապարհի շահագործումը կամ առանձին ուղու հնարավոր կառուցումը աննշան են կամ լավագույն դեպքում խիստ սահմանափակ ազդեցություն են գործում նրանց գոյատևման միջոցների վրա:

Թեև ակնհայտ է՝ ՄԻԿ-ն ընդունել է, որ 9.4 կետի համաձայն՝ հանքարդյունաբերական գործունեության ազդեցությունը «խիստ սահմանափակ է», նա մերժել է այն փաստարկը, որի համաձայն՝ այս գործը կարելի է կարգավորել՝ վկայակոչելով մասնակից պետության՝ «իր հայեցողությամբ գործելու ազատության սահմանները»⁴⁰: Ուստի ՄԻԿ-ը նշել է, որ շարունակելու է հետևողականորեն վերահսկել 27-րդ հոդվածի կիրառման մշտադիտարկումը: Ամեն դեպքում, ինչպես պարզվում է, ՄԻԿ-ը ցանկանում է նաև որոշ չափով գործողությունների ազատություն տալ մասնակից պետություններին մինչ եզրակացնելը, որ զարգացման ուղղված միջոցները 27-րդ հոդվածը խախտելու աստիճան վտանգում են փոքրամասնությունների ավանդական մշակույթը: ՄԻԿ-ի այս դիրքորոշումը պարզ արտահայտված է Լանսմանի երկրորդ գործով կայացրած որոշման մեջ: Այդ որոշման քաղվածքները շարադրված են անմիջապես ստորև:

[24.33] «ԼԱՆՍՄԱՆԸ և այլք ընդդեմ ՖինԼԱՆԴԻԱՅԻ» (LÄNSMAN et al v FINLAND, 671/95)

Ֆինլանդիայում բնակվող սամիները կրկին բողոք են ներկայացրել ՄԻԿ-ին՝ վկայակոչելով Լանսմանի առաջին գործով [24.31] կայացրած որոշման 9.8 պարբերությունը, որը մեկնաբանվել է որպես մասնակից պետությանն ուղղված զգուշացում՝ բնիկ սամիների կենսապայմանների վրա բացասական ազդեցություն գործող մոր միջոցների կիրառման կապակցությամբ: Լանսմանի երկրորդ գործով կայացված որոշման առնչությամբ հեղինակներն առարկել են Ֆինլանդիայի կենտրոնական անտառային խորհրդի մտադրության դեմ, որով նախատեսվում էր հավանություն տալ փայտամթերմանը և ճանապարհաշինությանը Մուոքթաթունթուրիի հովիվների կոմիտեին պատկանող 3.000 հեկտար ձմեռային արոտավայրերում: ՄԻԿ-ը հետևյալ կարծիքն է արտահայտել.

¶ 10.1. Հարկ է պատասխանել այն հարցին, թե արդյոք Մուոքթաթունթուրիի հովիվների կոմիտեին պատկանող մոտ 3.000 հեկտար տարածքում արդեն իրականացված և հետագայում սպասվող փայտամթերմամբ խախտվո՞ւմ են հեղինակների՝ դաշնագրի 27-րդ հոդվածով սահմանված իրավունքները: Իմիջիայլոց, այս գործով հեղինակները նույնպես անդամակցում են Մուոքթաթունթուրիի հովիվների կոմիտեին:

³⁸ Կետ 7.4:

³⁹ Կետ 7.5 և 7.9:

⁴⁰ Իր հայեցողությամբ գործելու ազատության կամ զնահատման սահմանափակման վերաբերյալ տես [18.23-18.24]:

¶ 10.3. 27-րդ հոդվածի դրույթներով սահմանվում է, որ փոքրամասնության ներկայացուցիչները չպետք է զրկվեն իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքից: Այն միջոցները, որոնց կիրառման հետևանքով հերքվում է տվյալ իրավունքը, համահունչ չեն 27-րդ հոդվածով սահմանված պարտավորություններին: Ինչպես կոմիտեն արդեն նշել է Լանսմանի առաջին գործով որոշման մեջ, այնուհանդերձ փոքրամասնություն կազմող անձանց ապրելակերպի և գոյատևման միջոցների վրա սահմանափակ ազդեցություն գործող միջոցները միշտ չէ, որ հանգեցրել են 27-րդ հոդվածի իրավունքների ժխտման:

¶ 10.4. Այս գործի շրջանակներում հարկ է պատասխանել այն հարցին, թե արդյոք դիմումում նշված տարածքում արդեն իրականացված փայտամթերումը, ինչպես նաև հավանության արժանացած ապագա աշխատանքներն այնպիսի՝ չափերի են հասնում, որ զրկում են այդ տարածքում բնակվող հեղինակներին իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքից: Կոմիտեն հիշեցնում է 27-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանության 7-րդ պարբերության պայմանները, որոնց համաձայն՝ փոքրամասնությունների կամ բնիկ ժողովուրդների խմբերն ունեն որսորդության, ձկնորսության կամ հյուսիսային եղջերու բուծելու ավանդական գործունեության պաշտպանության իրավունք, և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել «իրենց առնչվող հարցերի մասին որոշումներ ընդունելու գործընթացին փոքրամասնության ներկայացուցիչների արդյունավետ մասնակցությունը երաշխավորելու համար»:

¶ 10.5. Կողմերի ներկայացրած նյութերի մանրագնին քննությունից հետո կոմիտեն պատշաճ կարգով նշել է, որ կողմերը համաձայնություն ձեռք չեն բերել արդեն իրականացված կամ նախատեսված փայտամթերման աշխատանքների տևական ազդեցության վերաբերյալ: Կոմիտեն նաև նշել է, որ ի վիճակի չէ եզրակացնելու, որ արդեն իրականացված աշխատանքներով, ինչպես նաև նախատեսվող գործունեությամբ ժխտվել է հեղինակների՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը: Անվիճելի է այն փաստը, որ փայտամթերման աշխատանքների նախագծման ժամանակ իշխանությունները խորհրդակցել են Մուռքաթունթուրիի հովիվների կոմիտեի հետ, որին անդամակցում են հեղինակները, և վերջինս բացասաբար չի արձագանքել այդ նախագծերին: Այն հանգամանքը, որ հեղինակներն այս խորհրդակցական գործընթացը բավարար հիմք չեն համարել, և նրանց կարծիքով՝ այն կարող էր ավելի մեծ փոխկապվածության հանգեցնել, չի ազդել կոմիտեի գնահատականի վրա: Ակնհայտ է, որ անտառային տնտեսության կառավարման առավել պատշաճ միջոցները, այսինքն՝ փայտամթերման միջոցները, փայտամթերման աշխատանքների ծավալման տարածքները և այդ տարածքներում ճանապարհաշինության հարցերը քննարկելիս մասնակից պետության իշխանությունները չեն գնահատել հեղինակների՝ բողոքում նշված տարածքին առնչվող շահերը, ինչպես նաև համընդհանուր տնտեսական շահերը: Ներպետական դատարանների հատուկ քննարկման առարկան այն էր, թե արդյոք առաջարկված գործողություններով ժխտվե՞լ են 27-րդ հոդվածով սահմանված իրավունքները: Իր տրամադրության տակ եղած փաստերի հիման վրա կոմիտեն չի կարող եզրակացնել, որ փայտամթերման աշխատանքների նախագծերի արդյունքում անտեսվել են հեղինակների՝ 27-րդ հոդվածով սահմանված իրավունքները, կամ 27-րդ հոդվածի դրույթները վճռաբեկ դատարանի կայացրած և գերագույն դատարանի կողմից հաստատված վճռում դատարանի տրամադրության տակ եղած փաստերի լույսի ներքո սխալ են մեկնաբանվել կամ կիրառվել:

¶ 10.6. Անդրադառնալով հետագայում նախատեսված փայտամթերման աշխատանքներին՝ կոմիտեն, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած տվյալները, նշում է, որ մասնակից պետության անտառտնտեսության պատասխանատու մարմինները հավանություն են տվել փայտամթերման աշխատանքների այնպիսի կազմակերպմանը, որով դրանք չեն վտանգի հյուսիսային եղջերուի բուծումը, թեև այդ ամենի հետևանքով հեղինակները և եղջերու բուծող այլ հովիվներ ստիպված կլինեն ավելի շատ աշխատել և ավելի մեծ ծախսեր անել: Կոմիտեի տրամադրության տակ եղած տեղեկությունները վկայում են, որ նման անասնաբուծական գործունեության ցածր տնտեսական եկամտաբերությունը պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ մասնակից պետությունը խրախուսում է տվյալ տարածքում այլ կարգի տնտեսական գործունեությունը, այլ ուրիշ արտաքին գործոններով:

¶ 10.7. Կոմիտեն կարծում է, որ եթե իշխանությունները հավանություն տային հետագա տարիների ընթացքում տվյալ տարածքում իրականացվելիք և նախորդների համեմատ ավելի մեծածավալ փայտամթերման աշխատանքներին, կամ եթե ապացույցներ լինեին առ այն, որ արդեն նախատեսված փայտամթերման աշխատանքները նախատեսվածից ավելի լուրջ հետևանքների են հանգեցրել, ապա միայն այդ դեպքում հնարավոր կլիներ որոշել, թե արդյոք կխախտվե՞ր հեղինակների՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը՝ սահմանված 27-րդ հոդվածի իմաստով: Նախորդ դիմումներից կոմիտեին հայտնի է դարձել, որ սամիների բնակության տարածքում նախատեսվում և իրականացվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն գործող այլ մեծածավալ հանքարդյունաբերական աշխատանքներ, ինչպես օրինակ՝ քարհանքի շահագործումը: Թեև տվյալ բողոքի առնչությամբ կոմիտեն եզրակացրել է, որ գործի փաստերը չեն վկայում հեղինակների իրավունքների խախտման մասին, նա մեծ կարևորությամբ է նշում, որ 27-րդ հոդվածով սահմանված իրավունքների վրա ազդող քայլեր ձեռնարկելիս հարկ է, որ մասնակից պետությունը հաշվի առնի այն փաստը, որ թեև տարբեր գործողություններն ինքնին չեն կարող խախտել այս հոդվածի դրույթները, միասին վերցրած կարող են սահմանափակել սամիների՝ սեփական մշակույթին հաղորդակից լինելու իրավունքները:

¶ 11. Առաջնորդվելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կա-

մընտիր արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Մարդու իրավունքների կոմիտեն հանգել է այն եզրակացության, որ իր տրամադրության տակ եղած փաստերը չեն վկայում դաշնագրի 27-րդ հոդվածի դրույթների խախտման մասին:

Ուստի ՄԻԿ-ը փաստացի խախտում չի հայտնաբերել, սակայն զգուշացրել է մշակութային իրավունքների հնարավոր վերացման մասին:

**[24.34] «ԱՄՐԵԼԱՆ և ՆԱԿԱԼԱՅԱՐՎԻՆ ընդդեմ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ»
(ÄARELÄ and NÄKKÄLÄJÄRVI v FINLAND, 779/97)**

Այս գործով փաստերը համընկնում են Լանսմանի երկու գործերի փաստերի հետ: ՄԻԿ-ը պետք է պարզեր՝ փայտամթերման որոշակի աշխատանքներն այն աստիճան վնասակա՞ր են հյուսիսային եղջերու արածեցնելու հետ կապված հեղինակների գործունեության համար, որ խախտում են 27-րդ հոդվածի դրույթները: Ինչպես Ֆինլանդիայի հետ կապված նախորդ դեպքերում, այս գործով ևս ՄԻԿ-ը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին:

¶ 7.5. Անդրադառնալով այն պնդմանը, որ Կարիսելկա տարածքում այդ փայտամթերման աշխատանքների իրականացմամբ խախտվել են 27-րդ հոդվածի դրույթները, կոմիտեն որպես անվիճելի փաստ նշում է, որ հեղինակները հաղորդակից են փոքրամասնություն կազմող ժողովրդի մշակույթին, և որ հյուսիսային եղջերուի բուծումը նրանց մշակույթի էական տարրերից է: Իր նախկին մոտեցմամբ կոմիտեն ձգտել է պարզել, թե արդյոք այդ արդյունահանման գործին մասնակից պետության միջամտությունն ինչքան էական է, որ նրան չի հաջողվել պաշտպանել հեղինակների՝ իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքները: Ուստի կոմիտեի առջև ծառանում է հետևյալ հարցը. արդյոք 92 հեկտար զբաղեցնող Կարիսելկա տարածքում իրականացվող փայտամթերման աշխատանքները կարո՞ղ են հանգեցնել նման հետևանքների:

¶ 7.6. Կոմիտեն նշում է, որ անտառային տնտեսության ծառայության մշակած փայտամթերման նախագիծը գնահատելու ընթացքում խորհրդակցություններ են անցկացվել հեղինակների և այլ հիմնական շահառուների խմբերի հետ, և այդ նախագիծը մասամբ փոփոխվել է՝ հաշվի առնելով նշված կողմերի քննադատությունը: Հաշվի առնելով տեղում իրականացված զննման հետ մեկտեղ փորձագետների որոշ չափով հակասական վկայությունները՝ շրջանային դատարանը որոշել է, որ Կարիսելկա տարածքն անհրաժեշտ է հեղինակների՝ 27-րդ հոդվածով նախատեսված մշակութային իրավունքներն իրացնելու համար: Վճռաբեկ դատարանն այլ տեսանկյունից է դիտարկել վկայությունները և 27-րդ հոդվածի դրույթների շրջանակներում հանգել է այն եզրակացության, որ առաջարկվող փայտամթերման աշխատանքները մասամբ կնպաստեն հյուսիսային եղջերուների բուծմանը, հատկապես քարաքոսի վերականգնմանը, և ավելին՝ անասնաբուծության տեսանկյունից տվյալ տարածքը առաջնային կարևորություն չի ներկայացնում հովիվների կոմիտեի հողերի ամբողջ համատեքստում: Հեղինակների և մասնակից պետության հայտարարությունների հիման վրա կոմիտեն կարծում է, որ ինքը բավականաչափ տեղեկություններ չունի, որոնց հիման վրա հնարավոր կլիներ անկախ եզրակացություններ անել անասնաբուծության հարցում տվյալ տարածքի կարևորության, անասնաբուծության վրա երկարաժամկետ ազդեցության գործոնների և 27-րդ հոդվածով նախատեսված հետևանքների վերաբերյալ: Ուստի կոմիտեն ի վիճակի չէ եզրակացնելու, որ այս հանգամանքներում մասնակից պետությունը 92 հեկտար զբաղեցնող տարածքում փայտամթերման աշխատանքների իրականացման հետևանքով կխախտի դաշնագրի 27-րդ հոդվածի դրույթները՝ չկարողանալով պատշաճ կարգով պաշտպանել հեղինակների՝ սամի մշակույթին հաղորդակցվելու իրավունքը:

[24.35] Համաչափության վերաբերյալ եզրակացությունները պայմանավորված են փաստերի հայտնաբերմամբ և մեկնաբանությամբ, ոչ թե օրենքի հետևողական կիրառմամբ⁴⁰: ՄԻԿ-ը, որը քննում է գրավոր ձևով ներկայացված փաստարկները, ի վիճակի չէ անկախ եզրահանգումներ անելու որևէ փաստի վերաբերյալ այն դեպքում, եթե առկա են իրարամերժ վկայություններ և փաստերի հակադիր մեկնաբանություններ: Եվ իրականում ՄԻԿ-ը սովորաբար հաստատել է տեղական դատարանների վճիռները: Ակնհայտ սխալների⁴¹ բացակայության դեպքում կոմիտեն հազվադեպ է հանդես գալիս որպես «չորրորդ իրավասության դատարան», ուստի զարմանալի չէ, որ նա ի վերջո հաստատել է Աարելայի գործով Ֆինլանդիայի դատարանների կայացրած վերջնական որոշումները: Լանսմանի գործերը քննելիս ՄԻԿ-ը նույնպես չի կարողացել որոշում կայացնել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք առաջարկված միջոցներն այնքան անբարենպաստ հետևանքներ են ունեցել մշակութային գործունեության համար, որ խախ-

⁴¹ Այս և հաջորդ պարբերություններում ներկայացված մեկնաբանությունները քաղված են՝ S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2002) 2 *Human Rights Law Review* 287, at 297-98:

⁴²Տե՛ս [1.47] և [14.51]:

տե՛ն 27-րդ հոդվածը:

[24.36] Ֆինլանդիայում արձանագրված և 27-րդ հոդվածը խախտող վերոնշյալ բոլոր դեպքերում ակնհայտ է, որ ՄԻԿ-ի եզրակացության վրա ազդել է այն փաստը, որ փոքրամասնության ներկայացուցիչներն «արդյունավետ կերպով մասնակցել են իրենց համար բացասական հետևանքների հանգեցրած վիճահարույց որոշումների ընդունմանը»⁴²: Ի տարբերություն վերոնշյալ դեպքերի՝ «*Օմինայակն ընդդեմ Կանադայի*» (*Ominayak v Canada*, 167/84) գործի շրջանակներում չի ապացուցվել, որ Լյուբիկոն լճի ցեղախումբը, որը վիճարկել է Ալբերտա նահանգի կառավարության որոշումը իրենց տարածքներում զագի և նավթի արդյունահանման աշխատանքների թույլտվությունը, մասնակցել է նման որոշումների ընդունմանը: Հատկանշական է, որ ՄԻԿ-ն այդ դեպքում եզրակացրել է, որ վիճարկված որոշումներով խախտվել են 27-րդ հոդվածի դրույթները [24.28]: Ուստի որոշումներ կայացնելիս պատշաճ խորհրդակցական գործընթացներին հետևելը փոքրամասնությունների իրավունքների վրա ազդող հետագա որոշումների համար 27-րդ հոդվածին համապատասխանության լավ ցուցիչ է: Որոշումներ կայացնելու գործընթացը, որ ընդգծում է ՄԻԿ-ը, ի հակադրություն մշակութային իրավունքների վրա որոշման գործած ազդեցության էական հարցին, կարելի է վերագրել այն հանգամանքին, որ այդ դեպքում ավելի դյուրին է անկողմնակալ գնահատական տալ գործընթացների պատշաճության, ոչ թե վիճարկված հետևանքների հարցին: Խորհրդակցության միջոցով, անշուշտ, հնարավոր չէ կանխարգելել բացահայտ անհամաչափ միջոցներ ձեռնարկելու հետևանքով 27-րդ հոդվածի խախտումը: Այնուհանդերձ, նման խախտումների «բացահայտ բնույթը» հազվադեպ է ի հայտ գալիս, քանի որ տուժած հեղինակը և պետությունը սովորաբար ներկայացնում են փաստացի իրադրության տարբեր մեկնաբանություններ:

[24.37] Չիլիի մասին եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հայտարարել է հետևյալը⁴⁴.

¶ 22. Կոմիտեն մտահոգված է հիդրոէլեկտրական և այլ բնագավառների զարգացումներով, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ մապուչիների և այլ բնիկ ժողովուրդների համայնքների ապրելակերպի և իրավունքների վրա: Տվյալ դեպքում դաշնագրի 27-րդ հոդվածի դրույթները չխախտելու համար հավանաբար հարկ է դիմել վերաբնակեցման և վնասի հատուցման պատշաճ միջոցների:

Հետևաբար, բնիկ ժողովուրդների համայնքների ներկայացուցիչներին առնչվող գործունեություն մշակելիս մասնակից պետությունը պարտավոր է նախ և առաջ ուշադրություն դարձնել բնիկ ժողովրդի մշակույթի և ապրելակերպի պահպանմանը, ինչպես նաև իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացին բնիկների համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:

[24.38] «*Հոպյուն և Բեսերն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Hopu and Bessert v France*, 549/93) գործով բողոքի հեղինակները պնդել են, որ իրենց նախնիների սուրբ գերեզմանոցների տարածքում հյուրանոց կառուցելու հետևանքով խախտվել են իրենց անձնական կյանքի անձեռնմխելիության և ընտանիքի պաշտպանության իրավունքները: ՄԻԿ-ի մեծամասնությունը համամիտ է նրանց⁴⁵: Տվյալ գործի փաստերից ակնհայտորեն բխում են փոքրամասնության հետ կապված հարցեր: Այնուամենայնիվ Ֆրանսիան վերապահում է արել 27-րդ հոդվածի դրույթների վերաբերյալ, ուստի այս դեպքում չի կարելի հաշվի առնել այդ երաշխիքը: Սակայն վերոնշյալ բողոքը փաստորեն ՄԻԿ-ի քննությանը ներկայացված «փոքրամասնության իրավունքների հետ կապված փոքրաթիվ գործերից է», և զավեշտալի կլիներ կարծել, որ չի քննարկվել 27-րդ հոդվածին դրա համապատասխանության հարցը:

Բնիկների պահանջները՝ կապված հողային իրավունքների հետ

[24.39] Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերի ենթահանձնաժողովի նախկին զեկուցող պրն Խոսե Ռ.Մարտինեզ Կոբոն այսպես է նշել բնիկ ժողովուրդների առանձնահատուկ կապն իրենց ավանդական տարածքների հետ⁴⁶.

⁴³ Տե՛ս թիվ 23 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 7 [24.22]: Համեմատի՛ր «*Մարշալն ընդդեմ Կանադայի*» (*Marshall v Canada* 205/86) գործի հետ [22.14]:

⁴⁴ ՄԱԿ-ի փաստաթուղթ (1999) CCPR/C/79/Add.104:

⁴⁵ Տե՛ս [20.11-20.12] և [16.06]:

⁴⁶ Բնիկ ժողովուրդների դեմ խտրականության խնդրի ուսումնասիրում, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/Sub.2/1986/7 (1986), Vol V, կետ 196 և 197:

Շատ կարևոր է իմանալ և հասկանալ բնիկ ժողովուրդների և նրանց հոգևոր կյանքում մեծ դեր ունեցող տարածքների առկա յուրահատուկ փոխառնչությունները, որոնք՝ որպես այդպիսիք, նրանց կյանքի, բոլոր կրոնական համոզմունքների, սովորույթների և մշակույթի էական բաղադրատարրն են:

Այդ մարդիկ հողը չեն համարում միայն ունեցվածք կամ բերք ստանալու միջոց: Բնիկների հոգևոր կյանքի և մայր հողի փոխառնչությունները շատ մեծ իմաստ են ամփոփում: Նրանք հողը համարում են ոչ թե ձեռքբերովի հարմարություն, այլ ազատ օգտվելու համար նախատեսված նյութական տարր:

Բնիկ ժողովուրդների հարցերով աշխատանքային խմբի նախկին նախագահ-գեկուցող տիկին Էրիկա-Իրեն Ա. Դանսի կողմից ավելի ուշ ներկայացված «Բնիկ ժողովուրդների մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրավիճակի մասին» գեկուցում բնիկ ժողովուրդների և հողի փոխադարձ կապի մի շարք յուրահատուկ տարրեր են առանձնացվել⁴⁷:

(i) բնիկ ժողովուրդների և նրանց հողի, տարածքների և բնական պաշարների միջև գոյություն ունի ամուր կապ,

(ii) այս կապն ունի սոցիալական, մշակութային, հոգևոր, տնտեսական և քաղաքական կարևորություն և ենթադրում է պարտավորություններ,

(iii) մեծ է այդ կապի նշանակությունը և

(iv) նման կապի միջսերնդային հայեցակարգը նույնպես կարևոր դեր է խաղում բնիկ ժողովուրդների ինքնության, գոյատևման և մշակութային կենսունակության հարցերում: Հնարավոր է նաև, որ գոյություն ունեն այլ չսահմանված տարրեր, որոնք առնչվում են բնիկ ժողովուրդների և իրենց հողերի, տարածքների ու բնական պաշարների միջև կապին:

[24.40] Բնիկ ժողովուրդների մշակույթի և հողերի կապի առկայությունը հաստատվել է նաև ՌԽՎ կոմիտեի-ի կողմից նրա թիվ 23 Ընդհանուր հանձնարարականի շրջանակներում:

ՌԽՎ Կոմիտեի-ի ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

¶ 5. Կոմիտեն մասնավորապես կոչ է անում մասնակից պետություններին ճանաչել և պաշտպանել բնիկ ժողովուրդների՝ նրանց համայնքային հողերը, տարածքները և բնական պաշարները տիրապետելու, մշակելու և վերահսկելու իրավունքները: Այն դեպքերում, եթե նրանք զրկվել են ավանդաբար իրենց պատկանող հողերից և տարածքներից, կամ այդ տարածքներում այլ անձանց են բնակեցրել, կամ գործածել են դրանք առանց բնիկներին տեղեկացնելու և նրանց համաձայնությունը ստանալու, հարկ է միջոցներ ձեռնարկել այդ տարածքները և հողերը վերադարձնելու համար: Այդ հողերի իրավունքների վերականգնումը հարկ է փոխարինել արդար, ազնիվ և անհապաղ փոխհատուցման իրավունքով միայն այն դեպքում, եթե առաջինն անհնար է օբյեկտիվ պատճառներով: Նման փոխհատուցումը պետք է հնարավորինս հողերի և տարածքների տեսքով իրականացվի:

[24.41] Ընդհանուր հանձնարարականին համապատասխան՝ ՌԽՎ կոմիտեն քննադատել է Ավստրալիայի օրենսդրությունը, որով սահմանափակվել են բնիկ ավստրալիացիների տիտղոսային իրավունքները⁴⁸:

¶ 6. 1998 թ. ընդունված «Բնիկների տիտղոսային իրավունքների մասին» օրենքի մի շարք լրացումներ քննարկելուց հետո կոմիտեն մտահոգություն է հայտնել մասնակից պետության՝ կոնվենցիայով ստանձնած միջազգային պարտավորությունների հետ լրամշակված «Բնիկների տիտղոսային իրավունքների մասին» օրենքի համապատասխանության վերաբերյալ: Թեև «Բնիկների տիտղոսային իրավունքների մասին» նախկին օրենքը ճանաչում և ձգտում էր պաշտպանել տիտղոսային իրավունքները, սակայն լրամշակված օրենքը լի է բնիկների տիտղոսային իրավունքներն անտեսող կամ սահմանափակող դրույթներով: Թեև 1993 թ. ընդունված և այժմ գործող «Բնիկների տիտղոսային իրավունքների մասին» օրենքով հմտորեն հավասարակշռված էին տեղաբնիկների և ոչ տեղաբնիկների տիտ-

⁴⁷ Աշխատանքային խմբի վերջնական փաստաթուղթ բնիկ ժողովուրդների և հողի փոխառնչությունների մասին, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/Sub.2/2001/21, 2001 թ. հունիսի 11, պարբ. 20: Դանսը նաև առանձնացնում է հողի հետ բնիկ ժողովուրդների հարաբերությունները, հողի մատչելիությունը և սովորույթների պահպանումը երաշխավորելու հարցում պետությունների դերը և պարտավորությունները, պարբ. 121-141:

⁴⁸ Թիվ 2(54) որոշում Ավստրալիայի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստաթուղթ A/54/18, կետ 21(2): Տե՛ս նաև S. Hoffman, 'United Nations Committee on the Elimination of Racial Discrimination: Consideration of Australia under its Early Warning Measures and Urgent Action Procedures' (2000) 6 *Australian Journal of Human Rights* 13.

դոսային իրավունքներ կրողների իրավունքները, սակայն լրամշակված օրենքով փաստորեն իշխանությունների և երրորդ կողմերի համար օրինական երաշխիք է հաստատվում տեղաբնիկների տիտղոսային իրավունքների հաշվին:

¶ 11. Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը այս մտահոգությունները դիտարկել որպես չափազանց մեծ կարևորություն ներկայացնող հարց: Շատ ավելի կարևոր է այն, որ բնիկ ժողովուրդների վերաբերյալ կոմիտեի XXIII Ընդհանուր հանձնարարականի համաձայն՝ կոմիտեն շտապեցնում է մասնակից պետությանը հետաձգել 1998 թ. ընդունված լրացումները և վերսկսել տեղաբնիկ և Թորեսի նեղուցի կղզիաբնակ ժողովուրդների ներկայացուցիչների հետ բննարկումները բնիկ ժողովուրդների համար ընդունելի և Ավստրալիայի՝ կոմվենցիայով ստանձնած պարտավորություններին համահունչ լուծումներ գտնելու նպատակով:

[24.42] ՄԻԿ-ը հրապարակել է նաև մի շարք եզրափակիչ դիտարկումներ 27-րդ հոդվածով սահմանված տեղաբնիկ ժողովուրդների հողային իրավունքների պաշտպանության վերաբերյալ⁴⁹: Այսպես օրինակ՝ 1995 թ. կոմիտեն հետևյալ հայտարարությունն է արել Շվեդիայի վերաբերյալ⁵⁰.

¶ 18. Կոմիտեն նշում է, որ Ռիքսդագի կողմից վերջերս ընդունված և յուրաքանչյուրի՝ հասարակական վայրերում ձկնորսությամբ և որսորդությամբ զբաղվելու իրավունքը երաշխավորող օրենսդրական դրույթները կարող են բացասական հետևանքներ ունենալ սամի ժողովրդի անդամների ավանդական իրավունքների համար:

¶ 26. Կոմիտեն առաջարկում է դաշնագրի 27-րդ հոդվածով պաշտպանել սամի ժողովրդի բոլոր ճանաչված սովորական իրավունքները:

Յոթ տարի անց անդրադառնալով Շվեդիայի հարցին՝ ՄԻԿ-ը նշել է ⁵¹.

¶ 15. Կոմիտեն մտահոգված է բնիկ սամի ժողովրդի ավանդական հողատարածքներին և տնտեսական գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացում սամիների խորհրդարանի մասնակցության սահմանափակ շրջանակով: Այս գործունեությունը ենթադրում է հիդրոէլեկտրականության, հանքարդյունաբերության և փայտամթերման, ինչպես նաև հողատարածքների սեփականաշնորհման բնագավառի ծրագրեր:

Հետևյալ մեկնաբանության մեջ արտացոլված է բնիկ ժողովուրդների հանդեպ Բրազիլիայի վերաբերմունքը⁵².

¶ 15. Կոմիտեին հատկապես անհանգստացնում է սևամորթ և տեղաբնիկ անձանց հանդեպ ռասայական և այլ տեսակի խտրականության առկայության հարցը: Նա նշում է, որ մասնակից պետության իշխանությունները նախաձեռնել են Բրազիլիայի բնիկ ժողովուրդներին պատկանող հողերի սահմանագատման գործընթացը՝ որպես բնիկ ժողովուրդների համայնքների իրավունքների կարգավորման միջոց, սակայն նա ափսոսանք է հայտնում, որ այդ գործընթացը դեռևս ավարտին չի մոտենում:

¶ 32. Կոմիտեն մասնակից պետությանն առաջարկում է անհապաղ քայլեր ձեռնարկել ռասայական փոքրամասնությունների և բնիկ ժողովուրդների համայնքներին պատկանող անձանց իրավունքները և, հատկապես՝ առողջապահության և կրթության բնագավառում որակյալ ծառայությունների մատչելիությունը երաշխավորելու համար: Նման քայլերով հարկ է երաշխավորել դպրոցներում երեխաների ավելի մեծածավալ ներգրավումը և դպրոցից աշակերտների դուրս մնալու դեպքերի նվազումը: Կոմիտեն կարծում է, որ հարկ է ձեռնարկել դաշնագրի 27-րդ հոդվածով ամրագրված բոլոր անհրաժեշտ միջոցները բնիկների հողատարածքների սահմանագատման գործընթացի արագ և արդարացի կարգավորումը երաշխավորելու նպատակով:

Անդրադառնալով Մեքսիկայի հարցին՝ ՄԻԿ-ը հայտարարել է⁵³.

⁴⁹ Տե՛ս նաև ՄԻԿ-ի եզրափակիչ դիտարկումներ ճապոնիայի վերաբերյալ (1998), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 102, պարբ. 14: Բացի այդ, տե՛ս J. Cornet and T. Primeau, 'Indigenous "Sovereignty" and International Law: Revised Strategies for Pursuing "Self-Determination"' (1995) 17 *HRQ* 343, and C. Scott, 'Indigenous Self Determination and Decolonisation of the International Imagination: A Plea' (1996) 18 *HRQ* 814:

⁵⁰ Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add.58: Տարածաշրջանում հանձնատական իրավասության համար տե՛ս նաև *«Մայանա (Սումո) Ավաս Թինյոնի համայնքն ընդդեմ Նիկարագուայի»* (*Mayagna (Sumo) Awas Tingni Community v Nicaragua*) գործով 2001 թ. ապրիլի 16-ին Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի կայացրած վճիռը՝ C/N 79: *«Մերի և Բերրի Դենն»* (*Mary and Carrie Dann*) (*Միացյալ Նահանգներ*), գործ N 11.140, զեկույց N 75/02, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովի 2002 թ. տարեկան զեկույց, OEA/ser.L/V/III.117 փաստաթուղթ. 5 rev. 1, 27 դեկտեմբերի 2002 թ.: *«Յանոմանի ցեղի հնդկացիներն ընդդեմ Բրազիլիայի»* (*Yanomani Indians v Brazil*), գործ N 7615 (1985), Մարդու իրավունքների միջամերիկյան տարեգիրք 264:

⁵¹ Եզրափակիչ դիտարկումներ Շվեդիայի վերաբերյալ (2002), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/74/SWE:

⁵² Եզրափակիչ դիտարկումներ Բրազիլիայի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 66:

⁵³ Եզրափակիչ դիտարկումներ Մեքսիկայի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 32:

¶ 12. Ի վերջո, կոմիտեն մտահոգություն է հայտնել բնիկ ժողովուրդների իրավունքների վիճակի վերաբերյալ: Սահմանադրության 27-րդ հոդվածը, որ առնչվում է ագրարային բարեփոխմանը, հաճախ կիրառվում է ի վնաս մեծ խմբերի պատկանող անձանց: Հողամասերի բաշխման հետ կապված խնդիրների լուծումը հետաձգելու հետևանքով թուլացել է այս անձանց հավատը և՛ տեղական, և՛ պետական իշխանությունների հանդեպ: Ավելին՝ հատկապես Չիպատուն այս անձանց հանդեպ հատուկ օրենքներ են կիրառվում, ինչը կարող է խտրականության իրավիճակի հանգեցնել՝ դաշնագրի 26-րդ հոդվածի իմաստով:

¶ 18. Կոմիտեի առաջարկի համաձայն՝ հարկ է, որ մասնակից պետության իշխանություններն ագրարային բարեփոխման ներքո քննարկեն հողի ավելի արդարացի բաշխումը և հաշվի առնեն այդ հարցում բնիկ ժողովուրդների իրավունքներն ու ակնկալիքները... Հարկ է հնարավորություն տալ բնիկ ժողովուրդներին մասնակցելու իրենց հարցերին առնչվող որոշումների կայացմանը⁵⁴:

[24.43] «ՋՈՆԱՍՆԵՆ և այլք ընդդեմ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ» (JONASSEN et al v NORWAY, 942/00)

Այս դիմումն առնչվել է հեղինակների ավանդական հողային իրավունքները ճանաչելու և պաշտպանելու հարցում մասնակից պետության ենթադրյալ ծախողմանը: Թեև այս գործի արդյունքում առաջ են գալիս 26-րդ հոդվածով սահմանված իրավունքների խտրականության մասին առանձին պահանջներ, գործի փաստարկները պատշաճ ձևով հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել այդ բոլոր հարցերը:

Հեղինակը ներկայացրել է հետևյալ փաստերը.

¶ 2.1. Սամիները Նորվեգիայում ազգային փոքրամասնություն կազմող բնիկ ժողովուրդ են, և հյուսիսային եղջերուների բուծումը համարվում է սամիների մշակույթի էական բաղադրատարրը: Այս գործունեությունը տվյալ տարածքում սամիների բնակության հիմնական նախապայմանն է: Նորվեգիայում կան հյուսիսային եղջերուների բուծման համար նախատեսված վեց տարբեր տարածքներ, որոնք բաժանված են ավելի փոքր մասերի՝ արոտավայրերի, որտեղ սամիների մեկ կամ մի քանի խումբ իրավունք ունեն արածեցնելու իրենց նախիրները:

¶ 2.2. Հեղինակները հյուսիսային եղջերուների բուծմամբ զբաղվող սամիներ են: Նրանք բնակվում են Ռիասթ-Հիլլինգ արոտավայրերի գոտում, որն ամեն տարվա մարտ կամ ապրիլ ամիսներից մինչև դեկտեմբեր կամ հունվար ամիսներն ավանդաբար օգտագործվում է որպես հյուսիսային եղջերուների արոտավայր: Ռիասթ-Հիլլինգ արոտավայրերի գոտու սահմանները որոշվել են 1894 թ. հուլիսի 10-ին արձակված թագավորական հրահանգով, և այն զբաղեցնում է մոտավորապես 1900 քառակուսի կիլոմետր: Հեղինակները որպես ձմեռային արոտավայր օգտագործում են հյուսիսային եղջերուների համար նախատեսված Ֆերմունդ և Էսսանդ արոտավայրերը, որոնցից վերջինն օգտագործվում է նաև որպես ամառային արոտավայր: Հյուսիսային եղջերուների Ֆերմունդ արոտավայրը զբաղեցնում է 1100 քառակուսի կիլոմետր տարածություն: XVII դարի սկզբից սկսած՝ հեղինակների նախնիները, իսկ հետագայում նաև հեղինակները նախիրներ են արածեցրել Ռիասթ-Հիլլինգ և Ֆերմունդ արոտավայրերի գոտիներում: Էլգայի սահմանների հետ միասին հյուսիսային եղջերուների Ռիասթ-Հիլլինգ, Էսսանդ և Ֆերմունդ արոտավայրերը կազմում են Սոեր-Թրոենդելագ-Հեդմարք արոտավայրը, որն ամենահարավայինն է Նորվեգիայի հյուսիսային եղջերուների արոտավայրերից:

¶ 2.3. Ներկայումս հեղինակներն ունեն 10 նախիր, որոնցում հաշվվում է մոտավորապես 4500 անասուն (հորթածնությամբ նախորդող ձմռան տվյալներով): Ռիասթ-Հիլլինգի արոտավայրերի գոտում սամիների ավանդական եղջերվաբուծությունը մոտավորապես 45 սամիների գոյատևման և եկամտի միջոց է:

¶ 2.4. 1978 թ. հունիսի 9-ին ընդունված «Հյուսիսային եղջերուներ բուծելու մասին» Նորվեգիայի օրենքով սամի հովիվներին հատուկ նախատեսված արոտավայրերի գոտիներում եղջերվաբուծությամբ զբաղվելու իրավունք է վերապահվում: Սակայն 1988 թ. նոյեմբերի 18-ին «Կորսոյոֆելի գործով» Նորվեգիայի գերագույն դատարանի կայացրած որոշման համաձայն՝ սամի հովիվներն այդ գոտու տարածքում իրենց հյուսիսային եղջերուներն արածեցնելու իրավունք ունեն միայն այն դեպքում, եթե Նորվեգիայի օրենսդրությամբ նրանց վերապահված է տվյալ տարածքն օգտագործելու իրավունք: Այս ամենը նշանակում է, որ եթե տվյալ հողատարածքի սեփականատերը պնդի, որ սամի հովիվներն իրավունք չունեն իրենց նախիրներն արածեցնելու այդ տարածքում, ապա վերջիններս ստիպված կլին-

⁵⁴ 18-րդ կետում ներկայացված առաջարկն ավելի հետաքրքիր է *Միկմաքի* գործով կայացրած որոշման մեջ լուսաբանված մասնակցության իրավունքների հանդեպ ՄԻԿ-ի ավելի վաղ մշակված մոտեցման համեմատությամբ, տե՛ս «Մարշալն ընդդեմ Կանադայի» (*Marshall v Canada*, 205/86) գործը, որը հայտնի է նաև որպես *Միկմաք ցեղախումբն ընդդեմ Կանադայի»* (*Mikmaq Society v Canada*) [22.14]:

ենն ապացուցել, որ Նորվեգիայի՝ հին ժամանակներից հողօգտագործման շնորհիվ իրավունքներ ձեռք բերելու օրենքով իրենց վերապահված են մնան իրավունքներ: 1996 թ. խորհրդարանի ընդունած մոր կանոնի համաձայն՝ այն դեպքում, երբ իր տրամադրության տակ եղած բոլոր ապացույցները քննելուց հետո դատավորը դեռևս տատանվի, առավելությունը պետք է տրվի սամիների փաստարկներին:

¶ 2.5. «Կորսյոֆյելի գործն» առնչվում էր Ֆերմունդ հյուսիսային եղջերուների արոտավայրերի գոտու տարածքի մեծ մասին: Հողատարածքների սեփականատերերը պնդել են, որ հեղինակներն իրավունք չունենին իրենց նախիրներն արածեցնելու արոտավայրի գոտու արևմտյան հատվածներում, որոնք նպատակահարմար է օգտագործել որպես ձմեռային արոտավայրեր: Գերագույն դատարանը որոշում է կայացրել, որ հեղինակներն այդ տարածքում իրենց նախիրներն արածեցնելու իրավունք չունենին: Այդ տարածքը զբաղեցնում է 119 քառակուսի կիլոմետր և մոտավորապես կազմում է արոտավայրի գոտու ամբողջ տարածքի 11 տոկոսը՝ չհաշված Կորսյո լճային ջրամբարը:

¶ 2.6. 1997 թ. հոկտեմբերի 24-ին գերագույն դատարանը վճիռ է կայացրել «1997 թ. Աուրսունդենի գործի» վերաբերյալ, որն առնչվել է Ռիասթ-Յիլլինգ ամառային արոտավայրերի գոտուն հյուսիսային եղջերուներ արածեցնելու իրավունքին: Հողատարածքի սեփականատերը պնդել է, որ հեղինակներին իրավունք չէր վերապահվում իրենց նախիրներն արածեցնելու այդ տարածքի սեփականաշնորհված դաշտերում: 1994 թ. հոկտեմբերի 25-ին Սիդդոր Գուդալ առաջին ատյանի շրջանային դատարանը որոշում է կայացրել ի վնաս հեղինակների: Վերջիններս բողոք են ներկայացրել վերաքննիչ դատարան, որը 1995 թ. դեկտեմբերի 15-ին մերժել է բողոքը: Այնուհետև հեղինակները վճռաբեկ բողոք են ներկայացրել գերագույն դատարան՝ մատնանշելով թե՛ օրենքի կիրառման և թե՛ վերաքննիչ դատարանի կողմից փաստերի վերականգնման ընթացքում թույլ տրված սխալները: 1997 թ. հոկտեմբերի 24-ին կայացրած վճռի շրջանակներում գերագույն դատարանը եզրակացրել է, որ հեղինակներն օժտված չէին տվյալ տարածքում հյուսիսային եղջերու արածեցնելու իրավունքով, և մեծամասնության որոշմամբ (4 կողմ, 1 դեմ) մերժել է բողոքը:

¶ 2.7. «1997 թ. Աուրսունդենի գործով» կայացրած որոշման շրջանակներում գերագույն դատարանը մեծ կարևորություն է տվել վիճելի տարածքի արևմտյան մասում հյուսիսային եղջերուներ արածեցնելու հետ կապված իրավունքների վերաբերյալ 1897 թ. հուլիսի 6-ին կայացված դատավճռին: Դատավորների կարծիքով՝ «մեկ դար առաջ դատարանները համեմատաբար ավելի մոտ էին ճշմարտությանը», և «հարկ է զգուշություն ցուցաբերել 1897 թ. Գերագույն դատարանի կողմից փաստերի վերլուծությունը թերագնահատելիս»: Մինչդեռ 1897 թ. վիճելի համարվող տարածքի սահմաններն ավելի շատ են ընդլայնվել արևմտյան ուղղությամբ՝ 1997 թ. Գերագույն դատարանին ներկայացրած գործով պահանջի համեմատությամբ: Անդրադառնալով 1997 թ. գործով վիճելի համարվող տարածքի արևելյան հատվածում հյուսիսային եղջերու արածեցնելու հարցին, որը չի դիտարկվել 1897 թ. Գերագույն դատարանի կայացրած վճռում, դատարանը եզրակացրել է, որ այդ վճիռը «պետք է փոքրիշատե օժտված լինի նույն իրավական ուժով»:

¶ 2.8. Այնուամենայնիվ, գերագույն դատարանի՝ հակադիր կարծիք արտահայտած դատավոր Մաթնինգսդալը պնդել է. «Ի տարբերություն առաջին վճիռը կայացրած դատավորի՝ ես նվազ կարևոր եմ համարում գործի փաստերը գնահատելու հարցում գերագույն դատարանի վճռի նշանակությունը: Եթե որպես ելակետ համարենք այն փաստը, որ օրենքը չի նախատեսում տվյալ տարածքի՝ արևելյան մասում եղջերու արածեցնելու իրավունքը, ապա հարկ է վերագնահատել բոլոր փաստերը՝ առանց կանխակալ մոտեցում դրսևորելու 1897 թ. գերագույն դատարանի կայացրած վճռի շրջանակներում կատարված փաստերի գնահատման արդյունքների հանդեպ»: Թեև «1997 թ. Աուրսունդենի գործի» կապակցությամբ մեծամասնությունը պնդել է, որ վիճարկվող հարցի դեպքում մի շարք պատճառներով հարկ է անդրադառնալ 1897 թ. Գերագույն դատարանի կայացրած որոշմանը հանգեցրած վճռին, սակայն որոշում կայացնելիս առաջնորդվել է գործող օրենսդրությամբ:

¶ 2.9. «1997 թ. Աուրսունդենի գործի» շրջանակներում վիճելի տարածքը կազմում է հյուսիսային եղջերուների համար նախատեսված Ռիասթ-Յիլլինգ արոտավայրերի գոտու տարածքի 4-5 տոկոսը, սակայն, հեղինակների կարծիքով, շատ ավելի կարևոր է այդ տարածքի որպես արոտավայր հանդես գալու նշանակությունը: Բացի այդ, «Ստորակարվեն տարածքում» հեղինակներին եղջերու արածեցնելու իրավունքներից զրկելու դեպքը վիճարկվել է թե՛ «1997 թ. Աուրսունդենի գործով» կայացված որոշմամբ, թե՛ 1897 թ. դատավճռով և բավականին սահմանափակ բնույթ է կրում: Այդ իրավազրկման հետևանքով անհնար է դառնում շրջակա ընդարձակ արոտավայրերի գոտիներ մուտք գործելը, որոնց գործնականում կարելի է հասնել միայն արգելված տարածք ներխուժելու միջոցով:

¶ 2.10. «1997 թ. Աուրսունդենի գործով» գերագույն դատարանի կայացրած վճռի հետևանքով հեղինակները զրկվել են Ռիասթ-Յիլլինգ եղջերուների արոտավայրերի գոտու մոտավորապես 120 քառակուսի կիլոմետր կազմող դաշտերից: Բացի այդ, մեկ այլ դատական գործով՝ «Տամնես գործով» ('Tamnes Case') 1997 թ. նոյեմբերի 6-ին կայացրած որոշման հետևանքով հեղինակների հողերից օտարվել է մոտավորապես 33 քառակուսի կիլոմետր տարածք:

¶ 2.14. Վերոնշյալ «1997 թ. Աուրսունդենի գործով» վճիռ կայացնելիս գերագույն դատարանն առաջնորդվել է 1897

թ. դատավճռով, իսկ երկրորդ դեպքում գերագույն դատարանը վկայակոչել է նույն տարածքի վերաբերյալ գերագույն դատարանի կողմից 1892 թ. ընդունված որոշումը: Ե՛վ 1897 թ., և՛ 1892 թ. գործերով գերագույն դատարանին ներկայացված նյութի մի մասը կազմում էր ազգագրության պրոֆեսոր Ինգվար Նիլսենի 1888 թ. լույս ընծայած ուսումնասիրությունը՝ նվիրված հարավային Նորվեգիայի սամի ժողովուրդներին: Այս ուսումնասիրության արդյունքում պրոֆեսոր Նիլսենը նախորդ տեսակետներին հակադրում է նոր տեսություն, որով ենթադրվում է, որ XVIII դ. կեսերին սամի ժողովուրդը հյուսիսից տեղափոխվել է Ռոռոս տարածք և գրավել այն: 1889 թ. նշանակված հանձնաժողովը հավանություն է տվել տեսությանը: Հեղինակները հավատացած են, որ գերագույն դատարանը շատ կարևոր է համարել այս տեսությունը և դատավճիռ կայացնելիս առաջնորդվել է այն փաստով, որ գյուղացիները սամիներից առաջ են բնակություն հաստատել տվյալ տարածքում: Այնուհանդերձ, վերջերս անցկացրած հետազոտությունը վկայում է, որ սամիները հարավային Նորվեգիայի տարածք մուտք են գործել ավելի քան 150 տարի առաջ, իսկ հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում նշվում է, որ սկսած միջին դարերին նախորդող ժամանակահատվածից՝ սամի ժողովուրդն արդեն բնակվել է Նորվեգիայի հարավում:

¶ 2.15. Սամի ժողովրդի հանդեպ հանձնաժողովի մոտեցումը լուսաբանելու նպատակով հեղինակները ներկայացրել են հանձնաժողովի զեկույցի 33-րդ էջի հետևյալ թարգմանված քաղվածքը. «...ցանքի ժամանակ իր դժվարին աշխատանքի ընթացքում գյուղացին հաճախ ծանր բեռներ է կրում, մինչդեռ լապլանդացին, որի ապրելակերպում զուգորդված են դժվարությունները և ծուլությունը, սովորաբար խուսափում է դրանցից»:

¶ 2.16. 41-րդ էջում նշվում է. «...անկասկած հենց լապլանդացիներն են հակադրվել գյուղացիներին և այդ ամբողջ ժամանակահատվածում անհանգստություն պատճառել նրանց»:

¶ 2.17. Ներքին գործերի նախարարությունը 1869 թ. փետրվարի 2-ին հայտնել է, որ անկասկած «քոչվոր ժողովուրդների մշակույթը մեծ բեռ է Նորվեգիայի համար, և այնպիսի նշանակալի առավելություններ չունի, որ առանց որևէ անհրաժեշտության այն վերացնելու գայթակղություն չառաջացնի»:

Հեղինակները ներկայացրել են հետևյալ բողոքը,

¶ 3.1. Հեղինակները վկայակոչում են դաշնագրով սահմանված իրենց իրավունքների խախտումը՝ նշելով, որ մասնակից պետությունը չի ճանաչել և չի պաշտպանել իրենց ավանդական արտավայրերում նախիրներ արածեցնելու իրավունքը, ինչը խախտում է 27-րդ հոդվածի, ինչպես նաև դաշնագրի 2-րդ հոդվածի դրույթները: Ավելին՝ նրանք պնդում են նաև, որ խախտվել է 26-րդ հոդվածը, քանի որ Նորվեգիայի գերագույն դատարանն առաջնորդվել է XIX դ. փաստերի գնահատմամբ, որի դեպքում սամիների հանդեպ խտրականություն է դրսևորվել, և բավարարվել է հողատարածքների սեփականատերերի՝ մասնավոր սեփականության իրավունքների հետ կապված պահանջը:

¶ 3.2. Հեղինակները պնդում են, որ մասնակից պետությունը 27-րդ հոդվածի հետ մեկտեղ խախտել է դաշնագրի 2-րդ հոդվածի դրույթները, քանի որ նրան չի հաջողվել երաշխավորել իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը:

¶ 3.3. Հեղինակները մասնավորապես հիշեցնում են, որ կոմիտեն ճանաչել է 27-րդ հոդվածով մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունները, որոնց շրջանակներում հարկ է, որ նրանք ոչ միայն երաշխավորեն բնիկ ժողովուրդների հոգևոր մշակույթի պաշտպանությունը, այլև միջոցներ առաջարկեն այդ մշակույթի նյութական հիմքերի իրավական պաշտպանության համար: Այնուհետև, սույն դաշնագրի 27-րդ հոդվածի մեկնաբանության նպատակով, հեղինակները վկայակոչում են դաշնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետը, որի դրույթները սահմանում են, որ բոլոր ժողովուրդները պետք է կարողանան ազատ տնօրինել իրենց բնական հարստությունները և պաշարները, և չի կարելի նրանց զրկել իրենց բնորոշ գոյատևման միջոցներից:

¶ 3.4. Անդրադառնալով «Լանսմանն ընդդեմ Ֆինլանդիայի» երկու գործերին, որոնց դեպքում կոմիտեն 27-րդ հոդվածի որևէ խախտում չի արձանագրել, հեղինակները չորս տարբերություն են առանձնացնում այդ գործերի և տվյալ գործի միջև: Առաջին՝ նրանք պնդում են, որ Լանսմանի երկու գործերի հիմնահարցը հետևյալն էր. արդյոք մասնակից պետության անջատողական չհամաձայնեցված գործողություններով ժխտվե՞լ են 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, մինչդեռ տվյալ դեպքում, ըստ հեղինակների, վերոնշյալ իրավունքները խախտվում են արդի արդարադատության համակարգի մակարդակով: Երկրորդ՝ Լանսմանի գործերում նշված հյուսիսային եղջերու արածեցմանը խանգարել են միայն տվյալ տարածքում ծավալված աշխատանքները, մինչդեռ այս գործի հեղինակները զրկվել են հյուսիսային եղջերուների արտավայրերից: «1997 թ. Աուրսունդենի գործի», «Կորսյոֆյելի գործի» և «Տամնեսի գործի» բացասական արդյունքների, ինչպես նաև «Սելբուի» և «Հոլթալենի» առկա գործերի հավանական բացասական արդյունքների հետևանքով սահմանափակվել են հեղինակների՝ հյուսիսային եղջերուներ արածեցնելու հետ կապված իրավունքները:

¶ 3.5. Բացի այդ, քանի որ արտավայրերի առումով Աուրսունդենի տարածքը Ռիասթ-Հիլլինգի գոտու կարևորա-

գույն նշանակություններ կայացնող հատվածներից է, Աուրսունդենի տարածք մուտք գործելու արգելքը փաստորեն վերոնշյալ տարածքներն անհասանելի է դարձնում հեղինակների համար: Ուստի վտանգված է հեղինակների եղջերավարությունն տնտեսությունը: Նրանք պնդում են, որ «1997 թ. Աուրսունդենի գործի» և «Կորսայոֆելի գործի» շրջանակներում վիճահարույց համարվող տարածքներում հյուսիսային եղջերուների արածեցումը կանխարգելելու միակ միջոցը կամ տարածքի արտաքին սահմանների ցանկապատումն է, կամ էլ նախիրների ավելի ուշադիր հսկողությունը: Ըստ հեղինակների՝ այս տարբերակներից ոչ մեկն էլ իրատեսական չէ, քանի որ ծնանը ցանկապատերը կծածկվեն ձյունով, իսկ հսկողությունը չափազանց մեծ ծախսեր է ենթադրում:

¶ 3.6. Երրորդ՝ հարկ է նշել, որ ի տարբերություն Լանսմանի երկու գործի՝ «1997 թ. Աուրսունդենի գործի» դեպքում գերագույն դատարանը մերժել է վճռաբեկ բողոքը՝ չքննարկելով անգամ հեղինակների՝ դաշնագրի 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները: Ի վերջո, հեղինակներն ընդգծում են այն փաստը, որ «1997 թ. Աուրսունդենի գործով» որոշում կայացնելիս Գերագույն դատարանը հույժ կարևոր է համարել գերագույն դատարանի 1897 թվականի վճիռը, որի համաձայն՝ սամիներն ակնբախ խտրականության են ենթարկվել:

¶ 3.7. Նրանք այն փաստարկն են բերում, որ Նորվեգիայի գերագույն դատարանին և առհասարակ մասնակից պետությանը չի հաջողվել դաշնագրի 27-րդ և 2-րդ հոդվածներով ամրագրված դրույթներին համապատասխան պաշտպանել երկրի հարավում բնակվող սամիների մշակույթի նյութական հիմքը: Նրանք կարևորում են այն ժամանակահատվածում կատարված գնահատումը, որը բնորոշվում է սամի ժողովրդի հանդեպ կիրառված խտրականությամբ, նրանց հարկադրական ինտեգրմամբ և այն պաշտոնական տեսակետով, որ սամիների ծավալած հյուսիսային եղջերուների բուծման գործունեությունը մեծ դժվարություններ է առաջացնում Նորվեգիայի գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության համար:

¶ 3.8. Հեղինակները պնդում են նաև, որ Նորվեգիայի՝ հիմնվուրց ժամանակներից հողօգտագործմամբ պայմանավորված իրավունքներ ձեռք բերելու մասին օրենսդրությունը՝ այդ երկրի դատարանների մեկնաբանությամբ և գործելակերպով, ինքնին 27-րդ հոդվածի խախտում է: Անտեսելով սամիների մշակույթը և նրանց կողմից օրենքի ըմբռնումը, ինչպես նաև հյուսիսային եղջերու արածեցնելու հարցում նրանց ներկայացնելով նույն պահանջները, ինչ մասնավոր սեփականության իրավունքի այլ բնագավառներին առնչվող դեպքերում, Նորվեգիայի դատարանները, հաշվի առնելով սամի ժողովրդի ապրելակերպի քոչվոր բնույթը, հեղինակներին և սամիներին իսկապես զրկել են բազմաթիվ տարածքներում իրենց նախիրներն արածեցնելու օրինական իրավունքներ ձեռք բերելու և արդյունքում իրենց մշակույթին հաղորդակից լինելու հնարավորությունից:

¶ 3.9. Տվյալ տարածքում, հիմնվուրց ժամանակներից հողօգտագործմամբ պայմանավորված, հյուսիսային եղջերու արածեցնելու օրինական իրավունքներ ձեռք բերելու նպատակով հեղինակները հարկադրված կլինեն դատարանին ապացուցել, որ իրենք տվյալ տարածքն օգտագործել են հարյուր տարուց ավելի: Պարզվել է, որ գործնականում դա շատ բարդ է, քանի որ հիմնվուրց ժամանակներից հողօգտագործմամբ պայմանավորված իրավունքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ պահանջներով հաշվի չեն առնվում ո՛չ հյուսիսային եղջերուների բուծման, ո՛չ սամիների մշակույթի և ո՛չ էլ հողային իրավունքների ըմբռնման առանձնահատկությունները: Վերոնշյալ պահանջները հիմնավորված են խոշոր եղջերավոր անասուններ արածեցնելու իրավունքներով, ուստի եզակի դեպքերը բավարար չեն համարվում արածեցման օրինական իրավունքները սահմանելու համար:

¶ 3.10. Հյուսիսային եղջերուներ արածեցնելու համար մեծ մակերեսով արոտավայրեր են պահանջվում, բացի այդ, հարկ է նշել, որ հյուսիսային եղջերուները երբեք երկու տարի շարունակ նույն վայրում չեն արածում, այլ տարածվում են արոտավայրի համար նախատեսված ամբողջ տարածքով: Հյուսիսային եղջերուներն իրենց բնությամբ հարմարվում են շրջակա միջավայրին, տեղագրական առանձնահատկություններին, արոտավայրի պայմաններին, եղանակին և քանու ուղղությանը: Այս համգամաքներով է պայմանավորված արոտավայրի տարածքի մեծությունը: Քանի որ հեղինակների մշակույթը պահպանելու համար տարածք է անհրաժեշտ, հողատարածք ձեռք բերելու մասին Նորվեգիայի օրենսդրության պահանջների հետևանքով հեղինակները զրկվում են դաշնագրի 27-րդ հոդվածով սահմանված իրենց հիմնական իրավունքներից: Հեղինակները վկայակոչում են սամիների խորհրդարանի 1997 թ. նոյեմբերի 27-ի հայտարարությունը:

¶ 3.11. Հեղինակները պնդում են, որ դժվար է ապացուցել նախկինում վիճելի տարածքներում իրենց բնակվելու փաստը, քանի որ իրենց հյուղակները և ցանկապատերը կառուցվել են քայքայվող նյութից, և սամի ժողովուրդը երբեք գրավոր մշակույթ չի ունեցել:

¶ 3.12. Նրանք հավելում են, որ մասնակից պետությունը խուսափել է իրենց իրավունքները պաշտպանելու գործում նշանակալի դեր ստանձնելուց և չի միջամտել այն բազմաթիվ ընդհարումներին, որոնք առաջ են եկել վերջին տասը տարիների ընթացքում հյուսիսային եղջերուների համար նախատեսված արոտավայրերի գոտու սեփականատերերի բողոքներով հարուցված գործերի հետևանքով: Տարիներ շարունակ հեղինակները և ընդհանրապես բոլոր սամիները տնտեսական վնաս են կրել և անձամբ են տուժել ընդհարումներից և դատական կարգով հետապնդումներից: Այս ամենի պատճառն այն է, որ մասնակից պետությունը չի ցանկացել գործին միջամտել ընդհարումների

մասին գերագույն դատարանի կողմից վճիռ կայացնելուց առաջ:

¶ 3.13. Հեղինակները պահանջել են մասնակից պետությունից օտարել «Կորսյոֆյելի գործով» և «1997 թ. Աուրսունդենի գործով» նշված տարածքներում հյուսիսային եղջերու արածեցնելու իրավունքը, սակայն վարչական մարմիններում քննության ենթակա այդ հայցադիմումները դեռևս առկա չեն:

¶ 3.14. Ի վերջո, հեղինակները պնդում են, որ մասնակից պետությունը խախտել է 27-րդ հոդվածի հետ համադրությամբ 2-րդ հոդվածի դրույթները, քանի որ նա չի երաշխավորել իրենց մշակույթին հաղորդակից լինելու իրավունքը:

¶ 3.15. Դաշնագրի 26-րդ հոդվածի դրույթների խախտման մասին իրենց պնդման առնչությամբ հեղինակները հավելում են, որ «1997 թ. Աուրսունդենի գործով» գերագույն դատարանի կայացրած վճռով չի երաշխավորվել խտրականության դրսևորումներից հեղինակների պաշտպանված լինելու իրավունքը, քանի որ վերոնշյալ դատարանն իր փաստերի հաստատումը հիմնավորել է 1897 թ. գերագույն դատարանի կողմից իրականացված փաստերի գնահատմամբ, իսկ այդ ժամանակ սամիների վերաբերյալ ընդհանուր առմամբ խտրական կարծիք էր արտահայտվել: Նրանք պնդում են, որ հեղինակների և վիճելի տարածքի մասնավոր սեփականատերերի միջև տարբերակումը զուրկ է անկողմնակալ և խելամիտ հիմքերից:

Ի պատասխան՝ մասնակից պետությունը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ:

¶ 4.3. Մասնակից պետությունը հիշեցնում է, որ դիմումում հիշատակված բոլոր դատական գործերն առնչվել են Նորվեգիայի «Մասնավոր սեփականության մասին» օրենքով սահմանված՝ սեփականաշնորհված տարածքներում հյուսիսային եղջերու արածեցնելու իրավունքներին: Մասնակից պետությունը շեշտում է այն հանգամանքը, որ նման դեպքերում հարկ է հավասարակշռություն պահպանել, մի կողմից, սամի բնակչության օրինական մասնավոր շահերի, և մյուս կողմից՝ սեփականատերերի՝ իրենց մասնավոր սեփականությունը պաշտպանելու իրավունքի միջև: Պետությունը հիշեցնում է, որ մասնավոր սեփականության իրավունքն ամրագրված է Նորվեգիայի սահմանադրությամբ, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից առաջին կամընտիր արձանագրության մաս է կազմում, որն իր հերթին ներկայացված է Նորվեգիայի օրենսդրության մեջ: Մասնակից պետության կարծիքով՝ այս դրույթները հարկ է հաշվի առնել քաղաքացիական իրավունքի այն չափանիշները կիրառելու հարցում մասնակից պետությունների պարտավորության շրջանակը սահմանելիս, որոնց դեպքում անձանց որևէ խումբ կարող է արտոնյալ վերաբերմունքի արժանանալ իր ազգային պատկանելության շնորհիվ:

¶ 4.4. Մասնակից պետությունը հիշեցնում է նաև, որ հյուսիսային եղջերուների արոտավայրերի գոտու վերականգնումն ինքնին չի ենթադրում այդ գոտու տարածքում անասուն արածեցնելու իրավունքների սահմանում: Որևէ արոտավայրի գոտի հովիվներին վերագրելու պայմանից բացի՝ հարկ է նաև, որ Նորվեգիայի օրենսդրությամբ օրինական հիմքով, ինչպես, օրինակ՝ չգրված օրենքով, պայմանագրով կամ սեփականագրվմամբ, երաշխավորվեն հովիվների՝ անասուն արածեցնելու իրավունքները, որոնք առնչվում են հողատարածքի սեփականատերերի իրավունքներին: Այս համատեքստում պետությունը նշում է, որ թե՛ «Կորսյոֆյելի գործով» և թե՛ «1997 թ. Աուրսունդենի գործով» կայացրած վճիռներում գերագույն դատարանը եզրակացրել է, որ հեղինակներին չեն վերապահվել վիճելի տարածքներում անասուններ արածեցնելու իրավունքներ, այսինքն՝ հեղինակները երբեք նման իրավունքներ չեն ունեցել տվյալ տարածքներում, իսկ այս պնդումն ակնհայտորեն հակասում է դիմումում ներկայացված այն ենթադրությանը, թե նրանք զրկվել են անասուն արածեցնելու իրավունքներից:

¶ 4.5. Անդրադառնալով հեղինակների՝ 2-րդ և 26-րդ հոդվածների շրջանակներում ներկայացրած պահանջներին՝ մասնակից պետությունը պնդում է, որ «1997 թ. Աուրսունդենի գործով» որոշման շրջանակներում գերագույն դատարանի կողմից 1897 թ. վճիռն վերագրված ակնհայտ կարևորությունը պայմանավորված է հեղինակների այն փաստարկներով, որ գերագույն դատարանը սխալ գնահատական է տվել 1897 թ. գործի փաստերին: Հեղինակների փաստարկները, ըստ էության, հակասում են 1897 թ. որոշմանը և ենթադրում, որ հիմնավոր ժամանակներից այդ հողատարածքն օգտագործվելու արդյունքում իրենց վերապահվել են տվյալ տարածքում անասուններ արածեցնելու իրավունքները: 1997 թ. գերագույն դատարանը հետևյալ հայտարարությունն է արել 1897 թ. գործի առնչությամբ.

¶ 4.6. «Այս գործի շրջանակներում բազմաթիվ փաստարկներ են ներկայացվել ինչպես սամիների, այնպես էլ հողատարածքների սեփականատերերի կողմերի և վկաների ցուցմունքների հետ մեկտեղ: Բացի այդ, հարկ է նշել, որ առաջին ատյանի դատարանն այցելել է վիճելի տարածքներ: Այն ժամանակ ևս քննարկվել է այդ տարածքներում սամիների բնակության հարցը: Ես մեծ նշանակություն եմ տալիս այն հանգամանքին, որ մեկ դար առաջ դատարանները շատ ավելի մոտ էին իրական փաստերի, հատկապես հյուսիսային եղջերու արածեցնելու նպատակով տվյալ վիճելի տարածքի ենթադրյալ օգտագործման փաստի բացահայտմանը»: Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում ցուցմունքներ տված վկաներից մի քանիսն անձամբ առնչվել են 1820-ական թվականներին գոյություն ունեցող այդ իրավիճակին, ընդ որում՝ գերագույն դատարանի վճիռը հիմնավորված է առաջին ատյանի դատարանի որոշմամբ»:

¶ 4.7. Մասնակից պետության համաձայն՝ 1997 թ. գերագույն դատարանը քննել է նաև 26-րդ և 2-րդ հոդվածներին համապատասխան՝ կոմիտեին ներկայացված հեղինակների հայցերը և հանգել այն եզրակացության, որ 1897 թ. փաստերի գնահատման հարցում գերագույն դատարանի դատավորների կողմնապահ վերաբերմունքն ապացուցող որևէ փաստ չի արձանագրվել: 1997 թ. գերագույն դատարանը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ:

¶ 4.8. «1897 թ. գերագույն դատարանի կայացրած դատավճռից հետևում է, որ վերոնշյալ դատարանն ամենայն լրջությամբ է վերաբերվել վիճելի տարածքում հյուսիսային եղջերու արածեցնելու դեպքերի իրականության և հաճախականության մասին հետևողական ցուցմունքներին: Ուստի հիմքեր չկան ենթադրելու, որ դատարանն ի սկզբանե կողմնապահություն է դրսևորել փաստերի գնահատման հարցում»:

¶ 4.9. Մասնակից պետությունը պնդում է, որ հեղինակները դե ֆակտո հայցում են վերանայել գործի փաստերի մասին դատարանի եզրակացությունը: Առաջնորդվելով այն փաստով, որ հեղինակները չեն ներկայացրել գերագույն դատարանի եզրակացությունը վերանայելու համար հիմք ծառայող որևէ փաստարկ, մասնակից պետությունը պնդում է, որ դաշնագրի 26-րդ և 2-րդ հոդվածներին համապատասխան ներկայացված հայցերը հարկ է անընդունելի համարել՝ չհիմնավորված լինելու պատճառով:

¶ 4.10. Պետությունն անդրադարձել է դաշնագրի 24-րդ հոդվածի շրջանակներում հեղինակների ներկայացրած այն փաստարկներին, որ ինքը չի կատարել տվյալ հոդվածով ստանձնած դրական պարտավորությունները, հատկապես՝ սամինների կողմից հողօգտագործման իրավունքներ ձեռք բերելու հարցում սահմանելով այն մույն պահանջները, որոնք առկա են մասնավոր սեփականության իրավունքի հետ կապված այլ հարցերում: Այս համատեքստում մասնակից պետությունը հայտարարել է, որ եթե մույնիսկ հնարավոր լիներ ենթադրել, որ վերոնշյալ պարտավորությունները կիրառելի են տվյալ դեպքում, դա չէր նշանակի, որ պետությունը հարկադրված է կատարել այդ պարտավորությունները՝ սամինների հարցով սահմանափակելով մասնավոր սեփականության ներպետական օրենսդրությամբ ամրագրված պայմանները: Փոխարենը՝ սեփականագրված ինստիտուտի միջոցով նա պաշտպանել է սամինների շահերը, այն դեպքում, երբ նախկինում պատշաճ կարգով չեն սահմանվել հյուսիսային եղջերուների արոտավայրերին առնչվող իրավունքները:

Մասնակից պետությունը հավելել է, որ հեղինակները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները և պետությանը չեն դիմել 1996 թ. օրենքով համապատասխան հողատարածքներն օտարելու հայցով:

ՄԻԿ-ը որոշում է կայացրել մասնակից պետության օգտին:

¶ 8.3. Անդրադառնալով 26-րդ և 2-րդ հոդվածներին՝ կոմիտեն վկայակոչում է հեղինակների այն փաստարկները, որ «1997 թ. Աուրսունդենի գործով» կայացրած վճռում գերագույն դատարանը կարևորում է գերագույն դատարանի 1897 թ. ընդունած որոշումը, և վերջինիս հիմքում ընկած է սամինների հանդեպ խտրական վերաբերմունքը: Այնուամենայնիվ, հեղինակները այնպիսի տեղեկություններ չեն տրամադրել, որոնց հիման վրա հնարավոր լիներ կասկածի տակ առնել «1997 թ. Աուրսունդենի գործով» գերագույն դատարանի այն եզրակացությունը, որ 1897 թ. որոշման մեջ գերագույն դատարանը կողմնակալ մոտեցում չի դրսևորել սամինների հանդեպ: Կոմիտեն իրավասու չէ վերագնահատել «1997 թ. Աուրսունդենի գործով» որոշման շրջանակներում գերագույն դատարանի կողմից հաշվի առնված փաստերը և կարծում է, որ հեղինակները չեն կարողացել պատշաճ կարգով հիմնավորել իրենց հայցի այս կետը, ուստի կանընտիր արձանագրության 2-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ նրանց դիմումն անընդունելի է:

Այս որոշման միջոցով կոմիտեն արտահայտում է չորրորդ ատյանի դատարանի դերում հանդես գալու իրավասությունից հրաժարվելու իր վճռականությունը. նա առհասարակ չի վերանայելու փաստերի և տեղական ինքնավարության իրավունքի վերաբերյալ ներպետական դատարանների կայացրած որոշումները [1.48]: ՄԻԿ-ը հրաժարվել է վերանայել գերագույն դատարանի որոշումը ավելի վաղ՝ 1897 թ. ընդունված որոշման մեջ սամինների հանդեպ խտրականության դրսևորումները բացահայտելու նպատակով՝ չնայած XIX դարի վերջին սամինների հանդեպ Ֆինլանդիայի պետական մարմինների կողմից նվաստացնող վերաբերմունքի մասին վկայող բավականին շատ ապացույցների առկայությանը: Այս որոշումը խոստումնալից չէ հետագայում հողային իրավունքների առնչությամբ ՄԻԿ-ին ներկայացվելիք հայցերի համար, քանի որ դրանք հաճախ ենթադրում են տեղական դատարանի կայացրած վճռի վերանայում փաստերի, օրենքի և տվյալ պետության պատմությանն առնչվող համապարփակ հարցերի շրջանակներում: ՄԻԿ-ի կողմից նման դատավճիռները վերանայելու հետևողական ձգձգումը կարող է խոչընդոտել 27-րդ հոդվածի արդյունավետ կիրառումը, որի դրույթներով նախատեսված է կարևոր նշանակություն ունեցող իրավունքների և բնիկ ժողովուրդների հողային իրավունքների պաշտպանությունը:

[24.44] Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման հարցում ՄԻԿ-ը նույնպես

համակարծիք է մասնակից պետության հետ [6.04]: Պարոնայք Յենկինը, Շայնինը և Սոլարի Յրիգոյենը հակառակ կարծիք են արտահայտել և պնդել են, որ դիմումը հարկ էր ընդունելի համարել 27-րդ հոդվածով [6.04]:

ԿՐՈՆ

[24.45] 27-րդ հոդվածի դրույթներն ակնհայտորեն միտված են կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: ՄԻԿ-ը շատ չի տարածվում 27-րդ հոդվածի այս առանձնահատուկ տարրի առնչությամբ⁵⁵: Կրոնական հողի վրա ճնշումների հետ կապված հարցերը կարգավորվել են 18-րդ հոդվածով ամրագրված կրոնի ազատության դրույթների անկախ երաշխիքներով⁵⁶: Եթե որևէ պետություն փոքրամասնությանը հարկադրի դավանել պետական կրոնը, ապա դա կհանգեցնի 18-րդ և 27-րդ հոդվածների խախտման⁵⁷:

ԼԵՁՈՒ

[24.46]

ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5.3. Լեզվական փոքրամասնություն կազմող անձանց՝ իրենց շրջապատում կամ հասարակական վայրերում միմյանց հետ մայրենի լեզվով հաղորդակցվելու իրավունքը տարբերվում է դաշնագրով ամրագրված լեզվին առնչվող այլ իրավունքներից: Այդ իրավունքները հարկ է տարբերել հատկապես 19-րդ հոդվածով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքից, որով օժտված են բոլոր անձինք՝ անկախ այն հանգամանքից՝ փոքրամասնություն են կազմո՞ւմ, թե՞ ոչ: Բացի այդ, 27-րդ հոդվածով ամրագրված իրավունքները հարկ է տարբերել այն առանձին իրավունքից, որի շրջանակներում դաշնագրի 14.3 հոդվածի (գ) ենթակետով մեղադրյալներին թարգմանության մատչելիություն է վերապահվում այն դեպքերում, երբ նրանք չեն հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չեն խոսում այդ լեզվով: Սակայն բոլոր այլ հանգամանքներում 14.3 հոդվածի (գ) ենթակետով մեղադրյալներին չի վերապահվում դատավարության ընթացքում իրենց լեզուն գործածելու կամ այդ լեզվով հաղորդակցվելու իրավունքը⁵⁸:

[24.47] Լեզվի իրավունքների պաշտպանության օրինակներից մեկը ներկայացված է Սուդանի մասին ՄԻԿ-ի եզրափակիչ դիտարկումներում⁵⁹:

¶ 20. Կոմիտեն մտահոգված է այն հարցով, որ օրենքը չի ճանաչում պաշտոնական դիմումներում կամ էլ դատական և կամ վարչական ընթացակարգերում բնիկների լեզուներն օգտագործելու իրավունքը, և կրոնական փոքրամասնությունները կարող են տուժել մի շարք հայեցողական վարչական գործողությունների հետևանքով, այդ թվում՝ քաղաքի նախագծման կարգավորումներով պատճառաբանված դպրոցների և կրթական հաստատությունների վերացմամբ: Ուստի հարկ է, դաշնագրի 27-րդ հոդվածի համապատասխան, ընդգծել Սուդանի ցանկացած հատվածում բնակվող ազգային կամ կրոնական փոքրամասնությունների՝ իրենց ավանդույթները, մշակույթը և լեզուն պահպանելու և զարգացնելու կարիքները:

Ալժիրի վերաբերյալ ՄԻԿ-ը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ⁶⁰:

⁵⁵ «Ուոլդմանն ընդդեմ Կանադայի» (*Waldman v Canada* 694/96) գործի մասին ընդհանուր որոշման հետ համընկնող իր առանձին որոշման մեջ պրն Շայնինն այն ենթադրությունն է հայտնել, որ «27-րդ հոդվածով պետությունները դրական պարտավորություններ են ստանձնում փոքրամասնությունների կրոնական սկզբունքները զարգացնելու հարցում»: Այնուհանդերձ, ՄԻԿ-ը մերժել է այս որոշումը, որն առնչվել է 26-րդ հոդվածին [23.63] համապատասխան՝ Կանադայում բնակվող այլ կրոնական փոքրամասնությունների համեմատությամբ Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետևորդների հանդեպ դրսևորվող արտոնյալ վերաբերմունքին:

⁵⁶ Տե՛ս, ընդհանուր առմամբ, գլուխ 17:

⁵⁷ Տե՛ս M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 500; J. Packer, 'The Concept of Minority Rights' in J. Raikka (ed), *Do We Need Minority Rights? Conceptual Issues* (Martinus Nijhoff, The Hague, 1996); N. Rodney, 'Conceptual Problems in the Protection of Minorities: International Legal Developments' (1995) 17 *HRQ* 48, at 53:

⁵⁸ «Գուեսդոնն ընդդեմ Ֆրանսիայի» (*Guesdon v France* 219/86) գործի հեղինակը հայցել է Ֆրանսիայի դատարաններին իր հայեցողությամբ ընտրած լեզվով դիմելու իրավունքը նախատեսող 27-րդ հոդվածով սահմանված պաշտպանությունը: ՄԻԿ-ն անընդունելի է համարել նրա բողոքը՝ հաշվի առնելով 27-րդ հոդվածը և այդ հոդվածի հանդեպ Ֆրանսիայի ներկայացրած վերապահումը: 14-րդ հոդվածով բողոքն ընդունելի է համարվել, թեև այդ դեպքում այն չէր բավարարում ըստ արժանվույն գնահատվելու պայմանը, տե՛ս [14.127]:

⁵⁹ (1997) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 85:

⁶⁰ (1998) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 95:

⁶¹ (1993) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 27:

15. Կոմիտեն վկայակոչում է պատվիրակության այն հայտարարությունը, ըստ որի՝ 1998 թ. հուլիսի 5-ին ուժի մեջ մտած «Լեզվի մասին» արաբական որոշումը միտված էր պետական լեզվի կարգավիճակի բարձրացմանը: Այնուհանդերձ, կոմիտեն նշում է, որ հասարակական գործունեության բոլոր բնագավառներում այդ լեզվի հարկադրական, անմիջական և բացառիկ գործածումը կխոչընդոտի բերբեր լեզվով կամ ֆրանսերենով հաղորդակցվող բնակչության մեծ զանգվածների՝ դաշնագրի 19-րդ, 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումը:

Կոմիտեն առաջարկում է անմիջապես վերանայել օրենքը՝ դրանից բխող բացասական հետևանքները վերացնելու նպատակով:

Նորվեգիայի վերաբերյալ ՄԻԿ-ը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ⁶¹.

¶ 6. Կոմիտեն ողջունում է սամիների համայնքի ներկայացուցիչների կյանքին և մշակույթին առնչվող հարցերը քննելու լիազորությունը սամիների օրենսդիր մարմնին՝ Սամեթինգեթին փոխանցելու նախաձեռնությունը և գոհունակությամբ նշում, որ սամիները պետական մարմինների հետ հաղորդակցվելիս, ինչպես նաև դատարաններում կարող են գործածել իրենց լեզուն:

Էստոնիայի վերաբերյալ ՄԻԿ-ը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ⁶².

¶ 16. Թեև կոմիտեն ողջունում է ընտրություններին թեկնածուի կարգավիճակով մասնակցելու համար էստոներենին տիրապետելու պահանջի վերացումը և պատվիրակության այն պնդումը, որ այլ լեզուներով կազմված հայտարարությունների և ցուցանակների գործածումը կամ ծավալը չի սահմանափակվում, այնուհանդերձ կոմիտեն մտահոգված է գործնական նպատակներով, այդ թվում և մասնավոր հատվածում, էստոներենը բարձր մակարդակով կիրառելու պահանջներով և աշխատանք գտնելու հարցում ռուսախոս փոքրամասնության համար դրանից բխող հետևանքներով: Նրան անհանգստացնում է նաև այն հարցը, որ ռուսաց լեզվով չեն կազմված այն հասարակական վայրերում գետնոված ցուցանակները, որտեղ փոքրամասնությունների մշակակալի մասը ռուսախոսներն են:

Կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը երաշխավորել, որ փոքրամասնությունները կարողանան գործնականում իրացնել դաշնագրի 27-րդ հոդվածով իրենց վերապահված մշակութային իրավունքները և գործածել իրենց մայրենի լեզուն: Բացի այդ, կոմիտեն կոչ է անում մասնակից պետությանը երաշխավորել, որ լեզուների գործածման հետ կապված իրավասությունը չհանգեցնի դաշնագրի 26-րդ հոդվածի դրույթներին հակասող խտրականության:

[24.48] Ավելին՝ «*Դիերգաարդտն ընդդեմ Նամիբիայի*» (*Diegaardt v Namibia*, 760/97) գործով կայացրած որոշումից կարելի է եզրակացնել, որ ՄԻԿ-ի մեծամասնությունը 26-րդ հոդվածով ամրագրված անխտրականության երաշխիքի խախտում է արձանագրել, որը պայմանավորված է «պետական մարմիններում, արդարադատության, կրթության և հասարակական կյանքի այլ ոլորտներում» բացառապես անգլերենի գործածման մասին Նամիբիայի իշխանությունների կայացրած որոշմամբ⁶³: Սակայն ուշագրավ է նաև այն փաստը, որ այս գործով բազմաթիվ հակառակ կարծիքներ են արտահայտվել, որոնցում ՄԻԿ-ի փոքրամասնության ներկայացուցիչները վճռականորեն հաստատում են պետության՝ մեկ պաշտոնական լեզու ընդունելու իրավունքը [23.56]: Այդ այլախոհներից մեկը՝ պրն Լալաիդ, հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

¶ 5. Յարկ է նկատել, որ ըստ հեղինակների՝ 26-րդ հոդվածից բացի, խախտվել է նաև 27-րդ հոդվածը: Կոմիտեն ենթադրաբար չի արձանագրել 27-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը, ի թիվս այլոց, կազդեր նրանց խմբի այլ ներկայացուցիչների հետ իրենց մայրենի լեզվով հաղորդակցվելու իրավունքը երաշխավորող հոդվածի վրա: Եվ իսկապես, պաշտոնական լեզվի առկայության պայմաններում տվյալ պետության պաշտոնական-գործնական ոլորտներում ոչ պետական որևէ այլ լեզու, օրինակ՝ աֆրիկանս լեզուն գործածելու վերաբերյալ իշխանություններին ներկայացվող պահանջը ենթադրում է 27-րդ հոդվածով սահմանված դրույթների իմաստի ընդլայնում: Շատ հավանական է, որ կոմիտեն նման պահանջ է ներկայացրել: Այս հարցի առնչությամբ հարկ է նշել, որ հենց կոմիտեն Ընդհանուր մեկնաբանության 10.9 պարբերությունում եզրակացնում է, որ հեղինակները համապատասխան ապացույցներ չեն ներկայացրել առ այն, որ դատավարական ընթացակարգերում անգլերենի գործածման հետևանքով սահմանափակվել է արդար դատաքննության իրավունքը: Իսկ արդար դատաքննության իրավունքի դրույթների համաձայն՝ անձը պետք է հասկանա այն ամենը, ինչ կատարվում է դատարանում, որպեսզի կարողանա իր իրավաբանական ներկայացուցիչին համապատասխան ցուցումներ տալ գործի հետագա ընթացքի վերաբերյալ:

⁶² (2003) ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/77/EST, կետ 16:

⁶³ Պարբ. 10.10. տե՛ս [23.56]:

Վեց անձանցից բաղկացած նշանակալի փոքրամասնության մոտեցումն արտահայտող այդ կարծիքները չեն համապատասխանում Սուդանի և Ալժիրի մասին վերոնշյալ հայտարարություններին:

[24.49] Լեզվի իրավունքները երաշխավորող 27-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, անշուշտ, զուրկ չեն սահմաններից:

«Ս. Լ. Դ.-ն ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (C.L.D. v FRANCE, 228/87)

Տիկին Ջիզինսի և պարոնայք Դիմիտրիևիչի, Մավրոմատիսի, Պոկարի ու Վեններգրենի աջակցությամբ պրն Բիրամն Լոհայեն մասնավոր կարծիք է արտահայտել և հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.⁶⁴

Անշուշտ, 27-րդ հոդվածը չի պահանջում, որ մասնակից պետությունների փոստի բաժանմունքներն անդորրագրեր թողարկեն պաշտոնական լեզու չհանդիսացող որևէ այլ լեզվով, կամ որ իշխանություններն ընդունեն այլ լեզվով շարադրված տեղեկատվություն:

[24.50]

**«ԲԱԼԱՆԹԱՅՆԸ և այլք ընդդեմ ԿԱՆԱԴԱՅԻ»
(BALLANTYNE et al v CANADA, 359, 385/89)**

Այս դեպքում Քվեբեկի ներպետական օրենսդրությամբ արգելվել է ֆրանսերենից բացի այլ լեզվով ձևակերպված գովազդային ցուցանակների գործածումը: Ի թիվս այլ իրավախախտումների, հեղինակները մատնանշել են իրենց՝ որպես Քվեբեկում բնակվող անգլիախոս փոքրամասնության իրավունքների, ինչպես նաև 19-րդ հոդվածով ամրագրված իրենց ազատ արտահայտվելու իրավունքի խախտումը: Քվեբեկի կառավարությունը փաստել է, որ նշված միջոցների ձեռնարկումը պայմանավորված էր անգլիախոսների մեծամասնության պայմաններում Կանադայում ֆրանսիախոսների մշակութային ինքնությունը պահպանելու անհրաժեշտությամբ: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ի մեծամասնությունը եզրակացրել է, որ խախտվել է 19-րդ հոդվածը, սակայն չի արձանագրել 27-րդ հոդվածի դրույթների խախտում [24.07]: Մեծամասնությունը եզրակացրել է նաև, որ ձեռնարկված միջոցներն անհամաչափ են ֆրանսերենը պահպանելու նպատակի համեմատ⁶⁵: Պրն Լոհայեն, այնուհանդերձ, արմատապես հակառակ կարծիք է արտահայտել: Նա պնդում է, որ օրենքով նախատեսվում են 19-րդ հոդվածի դրույթները թույլատրելի սահմանափակումների ենթարկելու դեպքեր, քանի որ այն ըստ էության երաշխավորում է 27-րդ հոդվածով սահմանված ֆրանսիախոս փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը:

Անդրադառնալով կոմիտեին ներկայացրած գործերին ... Քվեբեկը նշում է. «1763 թվականից սկսած՝ պատմական իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանում էլ ավելի է մեծանում ֆրանսիախոսների՝ իրենց լեզուն և մշակույթը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ գտնելու կարիքը: Ուստի թիվ 178 նախագծով լրամշակված «Ֆրանսերենի խարտիայի» նպատակը հանձնկնում է դաշնագրի 27-րդ հոդվածի նպատակի հետ, որի ուժի մեջ մտնելու ժամանակ անհրաժեշտության դեպքում հարկ է, 19-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան, սահմանափակել ազատ արտահայտվելու իրավունքը:

19-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) և (բ) ենթակետերով ամրագրված սահմանափակումները կիրառելի են Կանադայում ֆրանսախոս փոքրամասնության գործի դեպքում: Եվ, ինչպես պնդել է թերևս ազատ արտահայտվելու իրավունք հասկացության մասին չափազանց նեղ պատկերացում ունեցող տվյալ երկիրը. «Ֆրանսերենի լրամշակված խարտիան կարող է անհրաժեշտ միջոցներ տրամադրել Քվեբեկին իր յուրահատուկ լեզվական նկարագիրը պահպանելու համար, ինչպես նաև երաշխավորել լեզվական տեսանկյունից ֆրանսիախոսների ապահովության զգացումը»: Այդ միջոցները հիմնավորված են և համահունչ դաշնագրի, ավելի ճիշտ՝ դաշնագրի 27-րդ հոդվածի դրույթներին:

Ցավոք, Մարդու իրավունքների կոմիտեն չի հաստատել մասնակից պետության տեսակետը և չի համաձայնել իր որոշման մեջ ընդգրկել 27-րդ հոդվածի դրույթները կիրառելու պայմանները: Ըստ կոմիտեի՝ Կանադայում գոյություն չունի լեզվի հետ կապված որևէ խնդիր, իսկ եթե անգամ մնան խնդիր կա, ապա այն չափազանց աննշան է և

⁶⁴ Մեծամասնությունն անընդունելի է համարել այս գործով ներկայացված բողոքը, քանի որ հեղինակները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, և չի մեկնաբանել 27-րդ հոդվածի դրույթներին այդ բողոքի համապատասխանության հարցը:

⁶⁵ Քվեբեկի իշխանությունների փաստարկների և ՄԻԿ-ի մեծամասնության որոշման մասին տե՛ս [18.42]:

արժանի չէ այս դեպքում տվյալ պետության իշխանությունների դրսևորած վերաբերմունքին: Ես միայն կարող եմ չհամաձայնել նրա եզրակացություններին:

Իրավական պաշտպանության դրական միջոցներ

[24.51]

ԹԻՎ 23 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 6.1. Թեև 27-րդ հոդվածով ամրագրված են բացասական իրավունքներ, այնուամենայնիվ, այն ճանաչում է որևէ «իրավունք» գոյությունը և պահանջում, որ այն չժխտվի: Յետևաբար, մասնակից պետությունը պարտավոր է երաշխավորել, որ չժխտվեն կամ չխախտվեն տվյալ իրավունքի գոյությունն ու կիրառումը: Ուստի իրավական պաշտպանության դրական միջոցներն անհրաժեշտ են ոչ միայն հենց մասնակից պետության օրենսդիր, դատական կամ վարչական իշխանությունների գործողություններից, այլև պետության սահմաններում գտնվող այլ անձանց բացասական արարքներից մարդկանց պաշտպանելու համար:

¶ 6.2. Թեև 27-րդ հոդվածով սահմանված իրավունքներն անհատական են, դրանք իրենց հերթին պայմանավորված են փոքրամասնություն կազմող խմբի՝ սեփական մշակույթը, լեզուն կամ կրոնը պաշտպանելու իրավասությամբ: Յետևաբար պետության կողմից կիրառվող դրական միջոցները կարող են անհրաժեշտ լինել նաև փոքրամասնության ինքնությունը պահպանելու, ինչպես նաև նրա մշակութային իրավունքներն իրացնելու, լեզուն զարգացնելու և խմբի այլ անդամների հետ միասին իրենց կրոնը դավանելու իրավունքները պաշտպանելու համար: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ նման դրական միջոցները պետք համահունչ լինեն դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի և 26-րդ հոդվածի դրույթներին՝ տարբեր փոքրամասնությունների, ինչպես նաև նրանց պատկանող անձանց ու բնակչության մյուս մասի միջև հարաբերություններին առնչվելու տեսանկյունից: Այնուհանդերձ, քանի դեռ վերոնշյալ միջոցները միտված են այն պայմանների ուղղմանը, որոնք խոչընդոտում կամ սահմանափակում են 27-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների իրացումը, նրանք, դաշնագրի համաձայն, կարող են օրինական տարբերակում ներկայացնել տրամաբանական և անկողմնակալ չափանիշների վրա հիմնված լինելու դեպքում:

Բացի այդ, թիվ 23 Ընդհանուր մեկնաբանության 7-րդ կետի դրույթները հաստատում են, որ որսորդության և ձկնորսության նման ավանդական գործունեությունը պահպանելու համար անհրաժեշտ են «իրավական պաշտպանության օրինական դրական միջոցներ» [24.22]:

[24.52] Ուստի մասնակից պետությունները պարտավոր են ձեռնարկել այնպիսի դրական միջոցներ, որոնք անհրաժեշտ են իրավական պաշտպանության միջոցներով փոքրամասնության կարգավիճակից բխող որևէ խոչընդոտ վերացնելու և ձուլման հետ կապված ճնշումներին հակազդելու համար⁶⁶: Պետություններն ավելի մեծ պարտավորություններ են ստանձնում, քան փոքրամասնության իրավունքների արտահայտությամբ հանդուրժողականության կամ անհանդուրժողականության երաշխավորումը: Յետևաբար, հարկ է «հատուկ միջոցներ» ձեռնարկել՝ գործնականում փոքրամասնության խմբերի ներկայացուցիչներին հանդիպած դժվարություններին արձագանքելու նպատակով⁶⁷: Այսպես օրինակ՝ ՄԻԿ-ն առաջարկել է դրական քայլեր ձեռնարկել ԱՄՆ-ի բնիկ հնդկացիների փոքրամասնության իրավունքները պաշտպանելու համար⁶⁸:

¶ 25. Կոմիտեն մտահոգում է այն հարցը, որ տեղաբնիկներին հատուկ բնիկ հնդկացիների իրավունքները կարող են օրենքով վերացվել Կոնգրեսի կողմից: Նրան անհանգստացնում է նաև բնիկ հնդկացիների շրջանում աղքատության, հիվանդությունների և գինեմոլության բարձր տոկոսը՝ չնայած Ինքնավարության դրսևորման նախագծի շնորհիվ ձեռք բերված արդյունքներին:

¶ 37. Կոմիտեն առաջարկում է միջոցներ ձեռնարկել նախկինում ճանաչված բնիկների իրավունքները չեղյալ հայտարարելուց պաշտպանելու համար: Կոմիտեն կոչ է անում իշխանություններին երաշխավորել վերոնշյալ ցեղերը դաշնային մակարդակով ճանաչելու հարցի՝ օրենքով սահմանված ամբողջական դատական վերանայումը: Հարկ է նպաստել Ինքնավարության դրսևորման նախագծի և նմանօրինակ ծրագրերի իրականացմանը՝ բնիկ հնդկացիների շրջանում աղքատությունը, հիվանդությունները և գինեմոլության բարձր տոկոսը վերացնելու համար:

¶ 38. Կոմիտեն հույս է հայտնել, որ փոքրամասնությունների և կանանց իրավունքների պաշտպանության համար

⁶⁶ Տե՛ս Thornberry, վերը, ծնթ. 1, էջ 24-5:

⁶⁷ Տե՛ս նաև նույնը [23.72], հակառակ խտրականության մասին:

⁶⁸ Եզրափակիչ դիտարկումներ Ամերիկայի Միացյալ Նահանգների վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 50:

նախատեսված հակադարձ խտրականության շրջանակներում ներկայումս թույլատրելի ծրագրերի դադարեցման հարցը որոշելիս հաշվի կառնվի գործնականում, ինչպես նաև օրենքով դաշնագրի իրավունքները երաշխավորելու պարտավորությունը:

Եզրակացություն

[24.53] Նախադեպային իրավունքի և 27-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԿ-ի հրապարակած Ընդհանուր մեկնաբանության մեջ նշվում է այն հիմնական իրավասությունը, որը նպաստում է պետությունների և համայնքների հիմնական «կառուցվածքի» բաղադրատարրը հանդիսացող փոքրամասնության ինքնության և արժեքային բազմազանության պաշտպանությանը: ՄԻԿ-ը պարզաբանել է, որ պետությունները ստանձնել են փոքրամասնությունների իրավունքները մարդու հիմնական իրավունքների հետ մեկտեղ երաշխավորելու և ամրապնդելու դրական պարտավորություններ: Մի շարք դեպքերում բողոքներ են ներկայացվել մշակույթի, հատկապես՝ բնիկների խմբերի մշակույթի պաշտպանության վերաբերյալ: Թեև ՄԻԿ-ն ընդունել է, որ «մշակույթ» հասկացությունն ունի մի շարք դրսևորումներ, որոնք տեսակա-նորեն արժանի են պաշտպանության, չի ցանկացել *Լանսմանի* և *Աարելայի* նման գործերով վերջերս ընդունված որոշումներում հաստատել 27-րդ հոդվածի խախտումները: Ըստ այդ որոշումների՝ 27-րդ հոդվածի իրավունքները հակակշռելու են փոխհատուցվող շահերին, որոնցից են, օրինակ, տնտեսա-կան զարգացման առնչվող շահերը: Այսուհանդերձ, մնում է միայն հուսալ, որ ՄԻԿ-ը թույլ չի տա, որ այս «հավասարակշռությունը» չափազանց շատ անցնի տնտեսական շահերի կողմը: Բացի այդ, *Ջոնա-սենի* գործով կայացրած որոշումից հետո հարցականի տակ է առնվում ՄԻԿ-ի՝ փոքրամասնությունների դեմ իրականացված պատմական անարդարությունների փոխհատուցման հարցում, առնվազն կամըն-տիր արձանագրության շրջանակներում, արդյունավետ միջոցներ երաշխավորելու իրավասությունը:

Մաս IV

**ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտականությունների
փոփոխում**

Վերապահումներ, չեղյալ հայտարարում, իրավահաջորդություն և մասնակի չեղյալ հայտարարում

• Վերապահումներ	[25.02]
• Հռչակագրեր	[25.08]
• Վերապահումների մեկնաբանություն	[25.12]
• Պետության՝ վերապահումներ կատարելու իրավունքի սահմանափակումներ	[25.14]
• Անհամապատասխան վերապահումների սահմանում	[25.15]
• Ո՞ր վերապահումներն են անհամատեղելի ՔՔԻՄԴ-ի դրույթների հետ	[25.23]
• Վերապահումներ առաջին կամընտիր արձանագրության վերաբերյալ	[25.28]
• Վերապահումներ երկրորդ կամընտիր արձանագրության վերաբերյալ	[25.32]
• Անհամատեղելի վերապահման նշանակությունը	[25.33]
• Վերապահումներ ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին այլ պայմանագրերի վերաբերյալ	[25.36]
• Եզրակացություն	[25.37]
• Չեղյալ հայտարարում	[25.38]
• Իրավահաջորդություն	[25.43]
• Մասնակի չեղյալ հայտարարում	[25.49]
• Մասնակի չեղյալ հայտարարման իրավաբանական ուժի էական սահմանափակում ...	[25.51]
• Բնակչության կյանքը վտանգող արտակարգ իրավիճակներ	[25.51]
• Համաչափության պայման	[25.54]
• Համապատասխանություն միջազգային իրավունքի նորմերին	[25.58]
• Անխտրականություն մասնակի չեղյալ հայտարարման միջոցների պայմաններում ..	[25.60]
• Անառարկելի իրավունքներ	[25.62]
• 4-րդ հոդվածի դրույթների համար անհրաժեշտ ընթացակարգային պահանջներ	[25.69]
• Ապացուցման բեռը և ՄԻԿ-ի վերահսկիչ դերը	[25.74]
• Եզրակացություն	[25.75]

[25.01] ՔՔԻՄԴ-ը վավերացնելիս մասնակից պետությունը կարող է սահմանափակել իր իրավական պարտավորությունները՝ կատարելով վերապահումներ: Դաշնագիրը ստորագրելուց հետո մասնակից պետությունը կարող է փոփոխել իր պարտավորությունները պետության արտակարգ իրավիճակներում՝ 4-րդ հոդվածի համաձայն մասնակիորեն չեղյալ հայտարարելով ՔՔԻՄԴ-ով սահմանված իր պարտականությունները, քանի դեռ բավարարված են 4-րդ հոդվածի խիստ պահանջները: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ն այն կարծիքն է արտահայտել, որ մասնակից պետությունները չեն կարող հրաժարվել ՔՔԻՄԴ-ով սահմանված իրենց պարտավորություններից և չեղյալ հայտարարել դաշնագրի իրենց վավերացումը: Հետևյալ մեկնաբանությունը վերաբերում է մասնակից պետությունների՝ ՔՔԻՄԴ-ով և երկու կամընտիր արձանագրություններով ստանձնած պարտավորությունները փոփոխելու իրավասությանը: Այն վերաբերում է նաև ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտավորությունների իրավահաջորդության հարցին, այսինքն՝ այն իրադրությանը, երբ որևէ պետություն ստանձնում է որպես իրավահաջորդ մեկ այլ պետության՝ ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտավորությունները՝ առանց դաշնագիրը վավերացնելու անհրաժեշտության:

Վերապահումներ

[25.02] ՔՔԻՄԴ-ը վավերացնելիս պետությունը կարող է վերապահումներ անել դրա որոշ դրույթների վերաբերյալ: Վերապահումը ոչ պարտադիր է դարձնում վերապահված դրույթները: Վերապահումը կարող

է նաև մասամբ նվազեցնել որոշակի երաշխիքի իրավական ազդեցությունը, բայց ոչ թե լիովին կասեցնել դրա կիրառումը:

[25.03] Վերապահումներն անկասկած նվազեցնում են պայմանագրերի արդյունավետությունը: Միջազգային պայմանագրային իրավունքի շրջանակներում վերապահումներ սահմանելու թույլատրելիությունը, ըստ էության, ներկայացնում է փոխզիջում որևէ պայմանագրի իրավական ուժի և պայմանագրի վավերացումների առավելագույն թվի միջև:

[25.04] «Վաքենհայմն ընդդեմ Ֆրանսիայի» (*Wackenheim v France*, 854/99) գործի շրջանակներում մասնակից պետությունը բողոքին ի պատասխան ներկայացրած իր հայտարարության մեջ չի կարողացել համապատասխան վերապահում վկայակոչել: ՄԻԿ-ը պնդել է, որ «այդ իսկ պատճառով վերապահումը խոչընդոտ չի եղել կոմիտեի կողմից այդ հայցադիմումի քննարկման համար»¹:

[25.05] ՄԻԿ-ն Ընդհանուր մեկնաբանություն է հրապարակել ՔՔԻՄԴ-ի վերապահումների վերաբերյալ: Այդ Ընդհանուր մեկնաբանությունը վիճելի հարցեր է հարուցել: Միացյալ Թագավորությունը, ԱՄՆ-ն և Ֆրանսիան ՄԻԿ-ի թիվ 24 Ընդհանուր մեկնաբանությանը պաշտոնական պատասխան են ներկայացրել²: Բացի այդ, Միջազգային իրավունքի հանձնաժողովը (ՄԻՀ) հրապարակել է «Նախնական եզրակացություններ»՝ «մարդու իրավունքների մասին իրավական բազմակողմ պայմանագրերի վերապահումների, ներառյալ՝ մարդու իրավունքների մասին պայմանագրերի վերաբերյալ»³: Այս եզրակացությունները որոշ չափով հակասում են թիվ 24 Ընդհանուր մեկնաբանությանը:

[25.06]

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. 1994 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 127 մասնակից պետություններից 46-ն իրենց միջև դաշնագրով ստանձնվող պարտավորությունների 150 տարբեր նշանակության վերապահում են սահմանել: Այս վերապահումներից մի քանիսը բացառում են դաշնագրով սահմանված որոշ իրավունքներ պաշտպանելու և երաշխավորելու պարտականությունը: Մյուս վերապահումները, որոնք հաճախ միտված են որոշ ներպետական իրավական դրույթների շարունակական գերակայությանը, սքոդված են ավելի ընդհանուր ձևակերպումներով: Որոշ վերապահումներ էլ վերաբերում են կոմիտեի իրավասությանը: Վերապահումների թիվը, դրանց բովանդակությունը և շրջանակը կարող են վտանգել դաշնագրի արդյունավետ կիրառումը և ուղղվել մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների հանդեպ հարգանքը թուլացնելուն: Շատ կարևոր է, որ մասնակից պետությունները հստակ իմանան իրենց և այլ մասնակից պետությունների փաստացի ստանձնած պարտավորությունները: Ավելին՝ դաշնագրի 40-րդ հոդվածով կամ կանոնադրական արձանագրություններով սահմանված պարտականությունները կատարելիս կոմիտեն պետք է իմանա, թե որևէ պետություն ստանձնե՞լ է տվյալ պարտավորությունը, իսկ եթե ստանձնել է, ապա ի՞նչ չափով: Այս հարցում հարկ է հստակեցնել՝ միակողմանի հայտարարությունը վերապահո՞ւմ է համարվում, թե՞ մեկնաբանական հռչակագիր և դրա ընդունելության ու ազդեցության սահմանում:

¶ 4. Վերապահումներ սահմանելու հնարավորությունը կխրախուսի այն պետություններին, որոնք կարծում են, թե դժվարությունների են հանդիպում դաշնագրով սահմանված բոլոր իրավունքները երաշխավորելու հարցում, այսուհանդերձ, ընդունել այդ փաստաթղթով սահմանված պարտավորությունների ընդհանուր բնույթը: Վերապահումները կարող են հանդես գալ որպես օգտակար գործառնություն, որը հնարավորություն կտա պետություններին իրենց օրենքների հատուկ տարրերը համապատասխանեցնել դաշնագրով յուրաքանչյուրին վերապահված անօտարելի իրավունքներին: Այնուհանդերձ, սկզբունքորեն ցանկալի է, որ պետությունները ստանձնեն պարտավորությունների ողջ շրջանակը, քանի որ մարդու իրավունքների նորմերը յուրաքանչյուր անհատին վերապահված հիմնական իրավունքների իրավական դրսևորումներն են:

[25.07] Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ՄԻԿ-ն ընդունում է, որ ՔՔԻՄԴ-ի դրույթների վերապահումներն անհաջող, սակայն անհրաժեշտ չարիք են: Արդարև, ՔՔԻՄԴ-ի վերապահ-

¹ Կետ 6.2: Համապատասխան վերապահումն իրականում ավելի շատ վերաբերում էր ԿԱ-ին, քան ՔՔԻՄԴ-ին, սակայն հիմնավորումը կիրառելի է բոլոր վերապահումների համար այն անհավանական դեպքում, եթե պետությունն էական նյութաիրավական վերապահում չի կատարել ՔՔԻՄԴ-ի շրջանակներում:

² Տես ԱՄՆ դիտարկումները թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության վերաբերյալ (1996) 3 IHRR 265 (այսուհետ՝ «ԱՄՆ»), ՄԹ դիտարկումները թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության վերաբերյալ (այսուհետ՝ «ՄԹ»), (1995) 3 IHRR 261, և Ֆրանսիայի դիտարկումները թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության վերաբերյալ (այսուհետ՝ «Ֆրանսիա»), (1997) 4 IHRR 6:

³ UN doc. A/52/10 (1997), պարբ. 157: Վերջին գեկույցը Միջազգային իրավունքի հանձնաժողովի 2003 թ. գեկույցի հրապարակման պահին պատրաստ չի եղել:

հումների վերաբերյալ նրանց հակակրանքը հստակորեն դրսևորվում է թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության վերջին կետում:

¶ 20. ...Ցանկալի է, որ վերապահում ներկայացնող պետությունը հստակորեն նշի այն ներպետական օրենքները կամ գործելակերպը, որոնք ըստ նրա՝ անհամատեղելի են դաշնագրի այն պարտավորության հետ, որի նկատմամբ էլ արվել է այդ վերապահումը: Ցանկալի է նաև, որ այդ պետությունը նշի այն ժամանակահատվածը, որը նրան անհրաժեշտ է իր օրենքներն ու իրավական ցուցումները դաշնագրին համապատասխանեցնելու համար կամ բացատրի, թե ինչու ինքն ի զորու չէ դրանք համապատասխանեցնել դաշնագրին: Պետությունները պետք է նաև երաշխավորեն, որ պարբերաբար վերանայվի վերապահումները պահպանելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով իրենց զեկույցները քննարկելու ժամանակ կոմիտեի ներկայացրած ամեն մի դիտողություն և վերապահում: Հարկ է, որ վերապահումները հնարավորինս արագ չեղյալ հայտարարվեն: Անհրաժեշտ է նաև, որ կոմիտեին ներկայացվող զեկույցներում տեղեկություններ տրամադրվեն վերապահումները վերանայելու կամ չեղյալ հայտարարելու ուղղությամբ ձեռնարկած գործողությունների վերաբերյալ:

ՀՈՉԱԿԱԳՐԵՐ

[25.08] Ինչպես նշվել է թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության 1-ին կետում [25.06], վերապահումները կարելի է տարբերել վավերացման ժամանակ մասնակից պետությունների ներկայացրած հայտարարություններից, որոնք հաճախ անվանվում են «մեկնաբանություններ» կամ «հռչակագրեր»: Վերջին հայտարարությունները, ըստ էության, նախորդում են դաշնագրի մեկնաբանությանը պետության կողմից:

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 3. Վերապահումը միշտ չէ հեշտ տարբերել որևէ պետության կողմից որևէ դրույթի մեկնաբանության ընկալմանը վերաբերող հռչակագրից կամ քաղաքականության ուղղության մասին արված հայտարարությունից: Այս դեպքում հարկ է ավելի մեծ ուշադրություն դարձնել պետության մտադրությանը, քան փաստաթղթի ձևին: Եթե, անկախ անվանումից կամ վերնագրից, հայտարարության նպատակն է բացառել կամ փոփոխել որևէ համաձայնագրի իրավական նշանակությունը պետության համար դրա կիրառման տեսանկյունից, ապա դա վերապահում է: Եվ հակառակը, եթե այսպես կոչված վերապահումը պարզապես ենթադրում է պետության կողմից որևէ դրույթի ըմբռնում, սակայն չի բացառում կամ ձևափոխում տվյալ պետության համար այդ դրույթի կիրառումը, ապա իրականում դա վերապահում չէ:

[25.09] «Տ. Կ.-ն ընդդեմ ՖՐԱՆՍԻԱՅԻ» (T.K. v FRANCE, 220/87)

Այս գործի շրջանակներում ՄԻԿ-ին դիմել են, որ նա որոշում կայացնի ԲԶԻՄԴ-ի վավերացման ժամանակ Ֆրանսիայի կողմից արված հետևյալ հայտարարության ազդեցության վերաբերյալ:

Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրության 2-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ Ֆրանսիայի կառավարությունը հայտարարում է, որ 27-րդ հոդվածը կիրառելի չէ Հանրապետության համար:

Տ. Կ.-ի գործով ՄԻԿ-ի մեծամասնությունը հայտարարել է հետևյալը.

¶ 8.3. ... Դաշնագրին ինքնին որևէ ցուցում չի անում այն հարցի վերաբերյալ, թե արդյոք դաշնագրին միանալու մասին որևէ մասնակից պետության միակողմանի հայտարարությունը պե՞տք է կանխարգելիչ նշանակություն ունենա, անկախ այն փաստից՝ բնորոշվում է «վերապահո՞ւմ», թե՞ «հռչակագիր» եզրույթով: Այս հարցի առնչությամբ կոմիտեն նկատում է, որ հայտարարության բնույթը որոշվում է ոչ թե ձևական նշանակությամբ, այլ դրա ենթադրյալ ազդեցությամբ: Եթե հայտարարությունն արտահայտում է մասնակից պետության՝ պայմանագրի որոշակի դրույթի իրավական նշանակությունը բացառելու կամ փոփոխելու հստակ մտադրություն, ապա այն հարկ է համարել պարտադիր վերապահում, եթե նույնիսկ հայտարարությունը շարադրված է հռչակագրի ձևով: Տվյալ դեպքում դաշնագրին միանալու մասին Ֆրանսիայի կառավարության հայտարարությունը հստակ է, քանի որ թվում է, թե բացառում է Ֆրանսիայի հանդեպ 27-րդ հոդվածի կիրառումը և իմաստաբանորեն ընդգծում է այդ բացառումը «կիրառելի չէ» բառերով: Հայտարարության մտադրությունը հստակ է, ուստի այն կանխարգելիչ ազդեցություն ունի՝ անկախ գործածված եզրութաբանությունից: Բացի այդ, 1989 թ. հունվարի 15-ին մասնակից պետության հայտարարությունում նույնպես խոսվում է 27-րդ հոդվածի վերաբերյալ Ֆրանսիայի վերապահումների մասին: Հետևաբար, կոմիտեն ի-

րեն իրավասու չի համարում դաշնագրի 27-րդ հոդվածի դրույթների ենթադրյալ խախտումների առնչությամբ Ֆրանսիայի դեմ ուղղված բողոքները քննարկելու համար:

[25.10] Տիկին Յիգինն արմատապես հակառակ կարծիք է ներկայացրել այս հարցի վերաբերյալ.

... Չեմ կարող համաձայնել կոմիտեի այն եզրակացությանը, որ 1980 թ. նոյեմբերի 4-ին ընդունված Ֆրանսիայի հռչակագիրը թույլ չի տալիս դիտարկել հեղինակի՝ դաշնագրի 27-րդ հոդվածի վերաբերյալ դիմումը: Այն փաստը, որ դաշնագիրն ինքնին չի տարբերակում վերապահումներն ու հռչակագրերը, չի նշանակում, որ դաշնագիրն վերաբերող հարցերում այս հասկացությունների միջև որևէ տարբերություն չկա: Իմ կարծիքով՝ հարցը չի լուծվում մալ Չամաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի վկայակոչմամբ, որն ընդգծում է, որ հավանաբար ավելի կարևոր է նպատակը, և ոչ թե անվանումը:

1982 թ. հունվարի 4-ի ծանուցման ուսումնասիրությունը վկայում է, որ Ֆրանսիայի Չանրապետության կառավարությունը հետապնդում էր երկու նպատակ՝ ներկայացնել որոշակի վերապահումներ և անել որոշ մեկնաբանական հայտարարություններ: Այսպիսով, 4-րդ հոդվածի 1-ին կետի, 9-րդ, 14-րդ և 19-րդ հոդվածների դեպքում մա գործածում է «վերապահում է սահմանում» արտահայտությունը: Այլ կետերում հայտարարում է, թե իր կարծիքով՝ ինչպե՞ս պետք է հասկանալ դաշնագրի եզրույթները Ֆրանսիայի սահմանադրության, Ֆրանսիայի օրենսդրության կամ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված պարտավորությունների շրջանակներում: Վկայակոչելով Վիեննայի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետը և նշելով, որ վերապահման շարադրանքը և անվանումը մեծ դեր չեն խաղում, չի կարելի այս մեկնաբանական հայտարարությունները վերածել վերապահումների, քանի որ դրանց բովանդակությունը հստակ համապատասխանում է հռչակագրերի բովանդակությանը: Բացի այդ, Ֆրանսիայի ծանուցումը վկայում է, որ միտումնավոր են տարբեր ոճեր գործածվել, և դրանք ծառայում են տարբեր իրավական նպատակների: Որևէ հիմք չկա ենթադրելու, որ տարբեր կետերում «վերապահում» և «հռչակագիր» բառերի հակասական գործածումը լիովին մտածված չէ, ընդ որում՝ հանրապետության իշխանությունները քաջատեղյակ էին դրա իրավական հետևանքների մասին...:

[25.11] Ֆրանսիայի հայտարարության վերաբերյալ մեծամասնության և փոքրամասնության մանօրինակ կարծիքներ են արտահայտվել «Մ.Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*M.K. v France*, 222/87), «Ս. Գ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*S.G. v France*, 347/88) և «Գ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*G.B. v France*, 348/89) գործերի շրջանակներում: Մեծամասնության որոշումները դարձյալ հաստատվել են հակառակ որոշումների բացակայությամբ «Ռ.Լ.Մ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*R.L.M. v France*, 363/89) և «Ս. Լ. Դ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*C.L.D. v France*, 439/90) գործերի շրջանակներում:

ՎԵՐԱՊԱՅՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[25.12] **«ՄԱԼԵԿԻՆ ընդդեմ ԻՏԱԼԻԱՅԻ» (*MALEKI v ITALY*, 699/96)**

Յեղիմակը բողոքել է իր բացակայությամբ մասնակից պետության կողմից իր գործով դատավարություն անցկացնելու պատճառով: Դաշնագիրը վավերացնելիս ժամանակ Իտալիան հայտարարել էր, որ պետության՝ մեղադրյալի ներկայությամբ դատավարություն անցկացնելու գործելակերպը համապատասխանում է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի դրույթներին: Իտալիան պնդել է, որ այս հայտարարությունը վերապահում է, որը կարող է պաշտպանել իրեն հեղինակի բողոքից: ՄիԿ-ը չի բացահայտել, թե տվյալ հայտարարությունը հռչակագիր է, թե՞ վերապահում: Կոմիտեն կայացրել է հետևյալ որոշումը.

¶ 9.2. Մասնակից պետությունը բերում է այն փաստարկը, որ է 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի դրույթներին վերաբերող իր հռչակագիրը ներկայացնում է վերապահում, որը թույլ չի տալիս և կոմիտեին ուսումնասիրել հեղինակի այն պնդումը, որ հեռակա կարգով իրեն դատելն անարդար էր: Այնուամենայնիվ, այդ հռչակագիրը վերաբերում է միայն 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետին և չի առնչվում 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին...: Այս կետի դրույթների համաձայն՝ պետք է պահպանվեն արդար դատավարության հիմնական պահանջները, եթե նույնիսկ հեռակա կարգով դատավարության փաստի բերումով (*ipso facto*) չեն խախտվում մասնակից պետության ստանձնած պարտավորությունները: Այս պահանջները ներառում են մեղադրյալին ժամանակին դատարան կանչելը և նրա դեմ հարուցած դատական գործի մասին տեղեկացնելը:

Այսպիսով, մասնակից պետության «վերապահումը» դատավարությանն առնչվող 14-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետով սահմանված իրավունքների վերաբերյալ չի խոչընդոտել 14-րդ հոդվածի 1-ին կե-

տի ավելի ընդհանուր երաշխիքի և դրա համապատասխանության ուսումնասիրությամբ⁴։ Այս ամենը վկայում է, որ ՄԻԿ-ը կաշխատի մանրագնին ուսումնասիրել վերապահումները։

[25.13] «*Հոպյուն և Բեսերն ընդդեմ Ֆրանսիայի*» գործը (*Hopu and Bessert v France*, 549/93) դարձյալ, ի թիվս այլոց, վերաբերում է 27-րդ հոդվածի վերաբերյալ Ֆրանսիայի վերապահմանը⁵։ Հեղինակները բողոքել են Ֆրանսիայի գաղութներից մեկում՝ Թաիթիում, իրենց իրավունքների խախտման դեմ։ Մեծամասնության մեկնաբանությունից հետևում է, որ այդ վերապահումը կիրառելի է Ֆրանսիայում և նրա տիրապետության տակ գտնվող բոլոր տարածքներում, ներառյալ Թաիթիում, ուստի 27-րդ հոդվածի վերաբերյալ ներկայացված բողոքն անընդունելի է։ Փոքրամասնությունն՝ ի դեմս տիկին Էվաթի, տիկին Մեդինա Քուիրոգայի և պարոնայք Պոկարի, Շայնինի և Յալդենի, հանգել է այն եզրակացության, որ վերապահումը կիրառելի չէ Թաիթիում։

Անկախ մայրցամաքային Ֆրանսիայի տարածքում 27-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ Ֆրանսիայի հռչակագրի իրավաբանական հիմնավորվածությունից՝ մենք չենք կարծում, որ վերոնշյալ հռչակագրում ներկայացված հիմնավորումը կիրառելի է նաև Ֆրանսիայի տիրապետության տակ գտնվող տարածքների համար։ Վերոհիշյալ հռչակագրի տեքստում վկայակոչվում է 1958 թ. Ֆրանսիայի սահմանադրության 2-րդ հոդվածը, որն ընկալվում է որպես օրենքի առջև Ֆրանսիայի քաղաքացիների միջև խտրականության բացառում։ Այնուամենայնիվ, նույն սահմանադրության 74-րդ հոդվածը հատուկ դրույթ է ներառում անդրծովյան տարածքների վերաբերյալ, որի համաձայն՝ վերջիններս ունեն հատուկ կառույց, որը հաշվի է առնում նրանց շահերը հանրապետության համընդհանուր շահերի շրջանակում։ Ինչպես Ֆրանսիան նշել է տվյալ դիմումի առնչությամբ իր հայտարարություններում, այդ հատուկ կառույցը կարող է հիմք ծառայել մեկ այլ օրենսդրության համար՝ հաշվի առնելով այս տարածքների աշխարհագրական, սոցիալական և տնտեսական առանձնահատկությունները։ Այսպիսով, Ֆրանսիան հիմնավորում է հենց հռչակագիրը, ինչի շնորհիվ դաշնագրի 27-րդ հոդվածը կիրառելի է դառնում անդրծովյան տարածքներում։

Պարզվում է, որ ՄԻԿ-ը կարող է բառացիորեն մեկնաբանել Ֆրանսիայի վերապահումը, որը, մեծամասնության պնդմամբ, հարկ է հռչակագրի անվանել, որպես Ֆրանսիայի տիրապետության տակ գտնվող տարածքներում իրավական նշանակություն չունեցող փաստաթուղթ։ Ուստի, ՄԻԿ-ը միշտ չէ հնարավորին չափ մանրագնին ուսումնասիրում վերապահումները։

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

[25.14] Գոյություն ունեն պետության՝ վերապահումներ կատարելու ազատության սահմանափակումներ, որոնք ներկայացրած են թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության շրջանակներում։

Թիվ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 5. Դաշնագրի դրույթներով չի արգելվում վերապահումներ կատարել, ոչ էլ նշվում է որևէ թույլատրելի վերապահման տեսակ։ Նույնը վերաբերում է նաև առաջին կամընտիր արձանագրությանը։

¶ 6. Վերապահումներ կատարելու արգելքի բացակայությունը չի նշանակում, որ ցանկացած վերապահում կարող է թույլատրելի լինել։ Դաշնագրի և առաջին կամընտիր արձանագրության վերաբերյալ վերապահումներ կատարելու հարցը կարգավորվում է միջազգային իրավունքով։ Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 19-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է համապատասխան ցուցումներ։ Այդ կետի դրույթներով սահմանվում է, որ եթե վերապահումը արգելված չէ պայմանագրի դրույթներով կամ համապատասխանում է հատուկ թույլատրելի կարգերին, ապա պետությունը կարող է վերապահում կատարել այն դեպքում, եթե այն չի հակասում պայմանագրի առարկային և նպատակին։ Թեև, ի տարբերություն մարդու իրավունքների մասին որոշ այլ համաձայնագրերի՝ դաշնագիրը հատուկ չի սահմանում առարկայի և նպատակի ստուգման հայեցակարգ, որով կարգավորվի վերապահումների մեկնաբանության և ընդունելիության հարցը։

1969 թ. ընդունված Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի («Վիեննայի կոնվենցիայի») 19-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներն ուժի մեջ են մտել 1980 թ.՝ դաշնագրի ուժի մեջ մտնելու պահից հետո։ Այնուհանդերձ, այդ դրույթներում արտացոլվում է վերապահումների մասով սովորուբա-

⁴ Տե՛ս [14.99]։

⁵ Տե՛ս [25.09]։

կան իրավունքը⁶, իսկ դաշնագրով վերջինիս համապատասխանության հարցը վերապահումներին անվիճարկելի է:

Դաշնագրին չհամապատասխանող վերապահումների սահմանում

[25.15] ՄԻԿ-ը հաստատել է, որ պետությունը չի կարող ներկայացնել այնպիսի վերապահումներ, որոնք չեն համապատասխանում ՔՔԻՄԴ-ի առարկային և նպատակին: Ինչպե՞ս պետք է սահմանվի նման համապատասխանությունը:

Թիվ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 16. Կոմիտեն կարևոր է համարում անդրադառնալ նրան, թե որ մարմինն է իրավասու որոշելու հատուկ վերապահումների համապատասխանությունը դաշնագրի առարկային և նպատակին: Ինչ վերաբերում է ընդհանրապես միջազգային պայմանագրերին, ապա Արդարադատության միջազգային դատարանը «Վերապահումներ ցեղասպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ» գործի (1951 թ.) շրջանակներում նշել է, որ պայմանագրի առարկային և նպատակին չհամապատասխանելու պատճառով վերապահումն առարկող պետությունը կարող է առարկելու միջոցով իրավական նշանակությունից զուրկ համարել այդ պայմանագիրն իր և տվյալ վերապահումը ներկայացնող պետության միջև: 1969 թ. ընդունված Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 20-րդ հոդվածի 4-րդ կետը ներառում է տվյալ գործին համապատասխանող շատ դրույթներ վերապահումների առարկության ընդունելիության մասին, ինչը հնարավորություն է ընձեռում որևէ պետության առարկելու մեկ այլ պետության կողմից ներկայացված վերապահումը: 21-րդ հոդվածը վերաբերում է պետությունների կողմից ներկայացված վերապահումների վերաբերյալ այլ պետությունների առարկումների իրավական նշանակությանը: Վերապահումը, ըստ էության, խոչընդոտում է վերապահում կատարող պետության և այլ պետությունների միջև վերապահման ենթարկված դրույթի գործածումը, և դրա դեմ առարկությունը հանգեցնում է վերապահման այն դրույթների գործածմանը, որոնց նկատմամբ առարկություն չի ներկայացվել:

¶ 17. Ինչպես արդեն նշվել է, վերապահումների սահմանումը, ինչպես նաև այլ հատուկ դրույթների բացակայության պայմաններում առարկայի և նպատակի ստուգման կիրառումը նախատեսված է Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայով: Սակայն կոմիտեն հավատացած է, որ կոնվենցիայի դրույթները պետությունների՝ վերապահումներին առնչվող առարկությունների վերաբերյալ հարմարեցված չեն մարդու իրավունքներին վերաբերող համաձայնագրերում վերապահումներ ամելու հիմնախնդրին անդրադառնալու համար: Նման պայմանագրերը և հատկապես սույն դաշնագիրը փոխադարձ պարտավորությունների միջպետական փոխանակումների ցանց չեն ներկայացնում, այլ վերաբերում են անձանց իրավունքներով լիազորելուն: Միջպետական փոխադարձության սկզբունքը այստեղ տեղին չէ, թերևս բացառությամբ կոմիտեի՝ 41-րդ հոդվածով սահմանված իրավասության հայտարարությունների վերաբերյալ վերապահումների սահմանափակ համատեքստի⁷: Եվ քանի որ վերապահումների վերաբերյալ դասական կանոններն այդչափ չեն համապատասխանում դաշնագրին, ուստի պետությունները հաճախ որևէ իրավական հետաքրքրություն կամ անհրաժեշտություն չեն տեսնում վերապահման դեմ առարկելու համար: Պետության կողմից բողոքների բացակայությունը չի կարող վկայել դաշնագրի առարկային կամ նպատակին վերապահման համապատասխանության կամ անհամապատասխանության մասին: Առարկությունները հազվադեպ են ներկայացվել որոշ, սակայն ոչ բոլոր պետությունների կողմից, և դրանց հիմքերը միշտ չեն հստակեցվել: Ներկայացվող առարկությունը հաճախ չի հստակեցնում իրավական հետևանքը կամ երբեմն նույնիսկ նշում է, որ առարկող կողմն այնուհանդերձ չի համարում, որ տվյալ կողմերի հարցում դաշնագիրը զուրկ է իրավական նշանակությունից: Մի խոսքով, այս համակարգն այնքան անորոշ է, որ չի կարելի վստահաբար ենթադրել, որ առարկությունն չներկայացնող պետությունը որևէ վերապահում ընդունելի է համարում: Կոմիտեի կարծիքով, դաշնագրի՝ որպես մարդու իրավունքների մասին պայմանագրի հատուկ բնորոշման բերումով կասկածի տակ է այն հարցը, թե ինչ իրավական նշանակություն ունեն վերապահումները պետությունների փոխհարաբերություններում: Այնուամենայնիվ, որևէ վերապահման դեմ պետությունների առարկությունը կարող է որոշ ցուցումներ ներկայացնել կոմիտեի համար դաշնագրի առարկային և նպատակին այդ վերապահման համապատասխանության մեկնաբանության հարցում:

[25.16] ՄԹ-ն և Ֆրանսիան վիճարկել են ՄԻԿ-ի այն տեսակետը, որ Վիեննայի կոնվենցիայի կանոնները լիովին չեն վերաբերում ՔՔԻՄԴ-ի վերաբերյալ վերապահումների օրինակաճանության սահմանմանը⁸:

⁶ Տե՛ս «Վերապահումներ ցեղասպանության վերաբերյալ» գործը, [1951] ICJ Rep. 15:

⁷ 41-րդ հոդվածը սահմանում է ներպետական բողոքների ընթացակարգը, որը դեռևս չի կիրառվել: Տե՛ս քննարկում [1.43] ներքո:

⁸ Տե՛ս ՄԹ, վերը, ծմբ. 2, կետ 2, Ֆրանսիա, վերը, ծմբ. 2, կետ 6:

Նրանց նման է վարվել նաև ՄԻՅ-ի՝ պայմանագրերի վերաբերյալ վերապահումների մասին հատուկ զեկուցողը.

ՄԻՅ-ի ԱՄԵՆԱՄՅԱ ԶԵԿՈՒՅՑ 1997

¶ 75. ...Հատուկ զեկուցողը կուզենար իմանալ, թե արդյոք մյուս կողմից հատուկ կանոնները կիրառելի կլինե՞ն մարդու իրավունքների մասին պայմանագրերով ձևավորված իրավական պայմանագրերի «հատուկ» կարգի պարագայում: Անդրադառնալով այդ հարցին՝ նա նշել է, որ անկախ մարդու իրավունքների մասին պայմանագրերի վերաբերյալ վերապահումներին բնորոշ կարգի հարցում մարդու իրավունքների ոլորտի մասնագետների բացահայտ միջնորդությունից, որևէ փաստարկում համոզիչ հիմքեր չեն առաջարկվել նման յուրահատուկ հայեցակարգ հիմնավորելու համար: Իրականում հարցականի տակ են առնվել Վիեննայի հայեցակարգի բացթողումները և երկիմաստությունները և ոչ թե դրանց կապը պայմանագրերի որոշակի կարգերի հետ:

¶ 76. Հատուկ զեկուցողը նշել է, որ հարցին իր պատասխանը բացասական է՝ հաշվի առնելով հետևյալ պատճառները.

(ա) Վիեննայի հայեցակարգը մշակվել է համընդհանուր և որևէ բացառություն չենթադրող կիրառության համար: Ավելին, հարկ է հիշել, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի վերաբերյալ վերապահումների մասին Արդարադատության միջազգային դատարանի եզրակացության ելակետային դրույթը, այսինքն՝ խորհրդատվական եզրակացությունը վերաբերում էր մարդու հիմնական իրավունքների մասին պայմանագրին:

(բ) Վիեննայի կոնվենցիաներն ընդունելու պահից մարդու իրավունքների մասին պայմանագրերի հարցում Վիեննայի հայեցակարգի կիրառելիությունը չի վիճարկվել ո՛չ միջպետական պրակտիկայում, ո՛չ դատական պրակտիկայում և նույնիսկ մարդու իրավունքների պայմանագրային մարմինների կողմից: Ավելին՝ Վիեննայի կոնվենցիաներն ընդունելուց հետո կնքված մարդու իրավունքների մասին պայմանագրերի մեծ մասը կա՛մ ներառել է Վիեննայի կոնվենցիային առնչվող վերապահումների, կա՛մ կոնվենցիայով սահմանված պայմանագրի «առարկայի և նպատակի» չափորոշիչը կրկնող հստակ դրույթներ, կա՛մ որևէ դրույթներ չի ենթադրել վերապահումների վերաբերյալ, սակայն նպաստել է Վիեննայի հայեցակարգի՝ որպես «սովորական իրավունքի» դրսևորման արդյունավետ կիրառմանը, ինչը պարզ էր դառնում նաև այդ փաստաթղթերի նախապատրաստական աշխատանքներից: Այդ կապակցությամբ հիմնական զեկուցողը նշել է, որ նույնիսկ Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 24 Ընդհանուր մեկնաբանությունը, որը վիճարկվել է այլ պատճառներով, մի շարք դեպքերում անդրադարձել է Վիեննայի կոնվենցիաներին:

[25.17] Իր նախնական եզրակացություններում ՄԻՅ-ը համաձայնել է հատուկ զեկուցողի հետ:

ՄԻՅ-ի ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¶ 1. Հանձնաժողովը կրկին հաստատում է իր այն կարծիքը, որ Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիաների 19-րդ և 23-րդ հոդվածների դրույթներով կարգավորվում են պայմանագրերի վերաբերյալ վերապահումները, և հատկապես պայմանագրի առարկան և խնդիրը վերապահումների ընդունելիությունը որոշելու չափորոշիչներից ամենակարևորն են:

¶ 2. Հանձնաժողովը կարծում է, որ այս հայեցակարգն իր ճկունության շնորհիվ համապատասխանում է բոլոր պայմանագրերի պահանջներին՝ անկախ դրանց առարկայից կա՛մ բնույթից, և բավարար հավասարաչափություն է հաստատում պայմանագրի տեքստի ամբողջականության վերաբերյալ վերապահումների նպատակների և պայմանագրին միանալու համընդհանուր պայմանների միջև:

¶ 3. Հանձնաժողովը կարծում է նաև, որ վերապահումների դեպքում այս նպատակները հավասարապես առնչվում են բազմակողմ իրավական պայմանագրերին, ներառյալ՝ մարդու իրավունքների ոլորտի համաձայնագրերը, և դրա հետևանքով վերոնշյալ Վիեննայի կոնվենցիաներում ձևակերպված ընդհանուր կանոններով կարգավորվում են նման փաստաթղթերի վերապահումները:

[25.18] Քանի որ ՄԻԿ-ը հավատացած էր, որ մասնակից պետության առարկությունները անհարմար միջոց են վերապահումների անհամապատասխանությունը որոշելու համար, սկսեց հաստատել նման անհամապատասխանությունը սահմանելու իր իրավասությունը:

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 18. Անհրաժեշտ է, որ կոմիտեն որոշի՝ արդյոք տվյալ վերապահումը համապատասխանում է դաշնագրի առարկային և նպատակին: Դա մասամբ պայմանավորված է վերոնշյալ հանգամանքով, որ մարդու իրավունքների մասին համաձայնագրերի ոլորտում դա մասնակից պետությունների համար ոչ պատշաճ գործառնություն է, և մասամբ էլ այն պատճառով, որ կոմիտեն չի կարող անտեսել այն իր գործառնություններն իրականացնելիս: Պետության՝ առաջին կամ ընդհանուր արձանագրության 40-րդ հոդվածի կամ որևէ դրույթի համապատասխանության հարցը դիտարկելու պարտականությունների շրջանակը պարզելու նպատակով կոմիտեն պարտավոր է հաշվի առնել վերապահման համապատասխանությունը դաշնագրի առարկային և խնդրին և ընդհանուր միջազգային իրավունքին: Մարդու իրավունքներին վերաբերող պայմանագրերի հատուկ բնույթի լույսի ներքո հարկ է օբյեկտիվորեն հաստատել որևէ վերապահման համապատասխանությունը դաշնագրի առարկային և խնդրին՝ իրավական սկզբունքների շրջանակներում, և կոմիտեն առավել հարմար դիրք է զբաղեցնում այս գործառնությոնը կատարելու համար:

ՄԻԿ-ի դիրքորոշումը հաստատվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Մարդու իրավունքների ամերիկյան դատարանի կայացրած որոշումներում, որոնց շրջանակներում ներկայացվում է նրանց՝ մարդու իրավունքներին վերաբերող համապատասխան պայմանագրերում վերապահումների համապատասխանությունը որոշելու իրավասությունը հաստատող նմանօրինակ հիմնավորում⁹:

[25.19] Այնուհանդերձ, Ֆրանսիան չի ընդունել ՄԻԿ-ի՝ սույն դաշնագրին վերապահումների համապատասխանության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը, քանի որ ՔՔԻՄԴ-ով հստակորեն նման լիազորություն չի վերապահվել¹⁰: ՄԹ-ն¹¹ և ՄԻՅ-ը ավելի հաշտարար կարծիքներ են արտահայտել ՄԻԿ-ի դիրքորոշման վերաբերյալ:

ՄԻՅ-Ի ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¶ 4. Այնուհանդերձ, հանձնաժողովը կարծում է, որ մարդու իրավունքների մասին շատ պայմանագրերի համաձայն՝ մշտադիտարկման մարմինների հիմնումը հանգեցրել է իրավական հարցերի՝ կապված պետությունների ձևակերպած վերապահումների ընդունելիության գնահատման հետ, որոնք չեն նախատեսվել այդ համաձայնագրերի նախագծման պահին:

¶ 5. Հանձնաժողովը նաև կարծում է, որ այն դեպքերում, երբ այդ համաձայնագրերը որևէ դիրքորոշում չեն սահմանում տվյալ հարցի շուրջ, դրանց միջոցով հիմնված մշտադիտարկման մարմիններն իրավասու են, ի թիվս այլոց, մեկնաբանել և առաջարկություններ ներկայացնել պետությունների կողմից ձևակերպված վերապահումների ընդունելիության վերաբերյալ՝ իրենց վերապահված գործառնությոնը կատարելու նպատակով:

¶ 6. Հանձնաժողովն ընդգծում է, որ մշտադիտարկման մարմինների այս իրավասությունը չի բացառում կողմերի վերահսկողության ավանդական եղանակները և որևէ կերպ չի ազդում դրանց վրա, իսկ համապատասխան դեպքերում՝ նաև 1969 և 1986 թթ. Վիեննայի կոնվենցիաներով ստեղծված կարգավորող մարմինների՝ վեճեր կարգավորելու իրավասությունը:

¶ 7. Հանձնաժողովն առաջարկում է հատուկ դրույթներ ավելացնել բազմակողմ նորմատիվային համաձայնագրերում, մասնավորապես՝ մարդու իրավունքներին վերաբերող համաձայնագրերում, կամ առկա համաձայնագրերին կից արձանագրություններ մշակել, եթե պետությունները ձգտում են մշտադիտարկում իրականացնող մարմինն որևէ վերապահման ընդունելիությունը գնահատելու կամ որոշելու իրավասություն շնորհել:

¶ 8. Հանձնաժողովը նշում է, որ վերապահումների կապակցությամբ իրենց լիազորությունները կիրառելու հարցում մշտադիտարկում իրականացնող մարմինների եզրակացությունների իրավական ուժը չի կարող գերազանցել մշտադիտարկման ընդհանուր գործառնության համար նրանց վերապահված լիազորությունների իրավական ուժը:

⁹ Տե՛ս «*Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի*» (1988) [*Belilos v Switzerland*] գործ, 10 EHRR 466, 485-7; Տե՛ս Խորհրդատվական կարծիք Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի ուժի մեջ մտնելու վերաբերյալ վերապահումների իրավական նշանակության մասին [*Advisory Opinion on the Effect of Reservations on the Entry into Force of the American Convention on Human Rights*] (1982) 22 ILM 37, at 47: Տե՛ս նաև *W. Schabas, 'Invalid Reservations to the International Covenant on Civil and Political Rights: Is the United States Still a Party?'* (1995) 21, *Brooklyn Journal of International Law*, 277, 310-16:

¹⁰ Տե՛ս վերը, ծնթ. 2, կետ 7, տե՛ս նաև «*Մ.Լ.Դ.-ն ընդդեմ Ֆրանսիայի*» (*C.L.D. v France*, 228/87) գործի վերաբերյալ պրն Նդիայեի մասնավոր կարծիքը, կետ 4, որով նա անընդունելի է համարում ՄԻԿ-ի՝ վերապահումները կասկածի տակ առնելու իրավասությունը:

¹¹ Տե՛ս, վերը, ՄԹ, ծնթ. 2, կետ 11-12:

¶ 9. Հանձնաժողովը կոչ է անում պետություններին համագործակցել մշտադիտարկում իրականացնող մարմինների հետ և պատշաճ կերպով քննարկել նրանց առաջարկները կամ ընդունել ցուցումները, եթե ապագայում այդ մարմիններին նման իրավասություն վերապահվի:

Այսպիսով, ՄԻՀ-ն ընդունել է, որ ՄԻԿ-ի նման համաձայնագրային մարմինները կարող են եզրակացություններ ներկայացնել դաշնագրին վերապահումների համապատասխանության վերաբերյալ: Այնուհանդերձ, այս տեսակետները ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների բոլոր կարծիքների նման զուրկ են պարտադիր իրավական ուժից, քանի որ ՄԱԿ-ի պայմանագրային մարմինները դատարաններ չեն¹²:

[25.20] Այդ մարմիններին վերապահված իրավական դերակատարման բացակայության փաստը իրավամբ ընդգծվել է Նախնական եզրակացությունների 12-րդ կետում, որի շրջանակներում ՄԻՀ-ը հայտարարում է, որ իր մեկնաբանությունները չեն վերաբերում «տարածաշրջանային համատեքստում մշտադիտարկում իրականացնող մարմիններին»: Պարզ է, որ ՄԱԿ-ի մշտադիտարկում իրականացնող մարմինների և մարդու իրավունքների ոլորտի տեղական մարմինների տարբերությունն այն է, որ վերջիններս դատական բնույթ ունեն: Կարելի է նշել, որ ՄԻԿ-ը հետևյալ կերպ է արձագանքել 12-րդ կետին¹³:

...Կոմիտեն կարծում է, որ մշտադիտարկում իրականացնող տարածքային մարմինները միակ միջպետական հաստատությունները չեն, որ մասնակցում և նպաստում են իրավական պրակտիկայի և կանոնների զարգացմանը: Մարդու իրավունքների կոմիտեի նման մշտադիտարկում իրականացնող համաշխարհային մարմինները պակաս կարևոր դեր չեն խաղում նման իրավական պրակտիկայի և կանոնների զարգացման գործընթացում, ուստի նրանց նույնպես իրավունք է վերապահվում մասնակցելու և նպաստելու այդ գործընթացին: Այս համատեքստում հարկ է ընդունել, որ հանձնաժողովի՝ Նախնական եզրակացությունների 12-րդ կետում ներկայացրած առաջարկը ենթակա է փոփոխության, քանի որ համաշխարհային և տեղական մշտադիտարկում իրականացնող կազմակերպությունների մշակած ցուցումները և կանոններն ընդունվում են բոլորի կողմից:

Այս հարցի կապակցությամբ հարկ է ընդգծել երկու կարևոր դրույթ.

Առաջին՝ մշտադիտարկում իրականացնող մարմնի ստեղծում նախատեսող մարդու իրավունքներին առնչվող համաձայնագրերի դեպքում համաձայնագրի մեկնաբանության գծով այդ մարմնի գործունեությունը նպաստում է պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակը սահմանելուն՝ Վիեննայի կոնվենցիային համապատասխան: Ուստի, վերապահումների համապատասխանության հարցի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնող մարմինների կարծիքներն անպայման պատշաճ միջազգային իրավական պրակտիկայի և կանոնների մաս են կազմում: Երկրորդ՝ հարկ է ընդգծել, որ մշտադիտարկում իրականացնող համաշխարհային մարմինները, ինչպիսին է Մարդու իրավունքների կոմիտեն, պետք է իմանան մասնակից պետությունների պարտավորությունների շրջանակը՝ դրանք հաստատող համաձայնագրով ամրագրված իրենց գործառնություններն իրականացնելու համար:

Մարդու իրավունքների կոմիտեն համամիտ է Նախնական եզրակացությունների 5-րդ կետում Միջազգային իրավունքի հանձնաժողովի արտահայտած այն կարծիքին, որ մարդու իրավունքներին վերաբերող համաձայնագրերով ստեղծված մշտադիտարկում իրականացնող մարմինները «իրավասու են, ի թիվս այլոց, մեկնաբանել և առաջարկներ ներկայացնել պետությունների կողմից ներկայացված վերապահումների ընդունելիության վերաբերյալ՝ իրենց վերապահված գործառնությունները կատարելու նպատակով»: Այս ամենից հետևում է, որ մասնակից պետությունները պետք է հարգեն փաստաթղթին վերապահումների համապատասխանությունը ստուգելու իրավասությամբ ժողոված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմնի եզրակացությունները՝ նրա մանդատի շրջանակներում:

[25.21] Կարող է թվալ, թե թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության հրապարակմամբ ՄԻԿ-ն ամենամեծ մարտահրավերն է նետել՝ վիճարկելով դատական բնույթից զուրկ իր պաշտոնական դերակատարումը: Գործն էլ ավելի է բարդանում ՄԻՀ-ին ուղղված պատասխանով, որում ՄԻԿ-ն ակնարկում է, որ քսան տարվա փորձի շնորհիվ իր պրակտիկայի և կանոնների իրավական նշանակությունը փոխվել է, ըստ այդմ այն հավասարազոր է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նման տարածքային մարմինների որոշումների իրավական կարգավիճակին:

[25.22] Ստորև շարադրված գործում ՄԻԿ-ը հաստատել է իր համոզմունքն առ այն, որ ինքն իրավասու է որոշելու վերապահումների օրինականությունը:

¹² Տե՛ս [1.50-1.51]:

¹³ Մարդու իրավունքների կոմիտեի ամենամյա զեկույց, մաս 1, 1999, ՄԱԿ-ի փաստաթուղթ, A/54/40, Հավելված VI:

**«ՔԵՆԵԴԻՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(KENNEDY v TRINIDAD and TOBAGO, 845/98)**

Քենեդին վկայակոչում է ՔՔԻՄԴ-ի մի շարք դրույթների խախտումներ՝ կապված իր գործով մահապատժի դատավճիռ կայացնելու և մահապատժի սպասման ընթացքի հետ: Մասնակից պետությունն առարկել է բողոքի ընդունելիության դեմ, քանի որ այն համապատասխան վերապահում է ներկայացրել կանոնադրության վերաբերյալ¹⁴:

¶ 4.2. Մասնակից պետությունը պնդում է, որ վերապահման պատճառով կոմիտեն իրավասու չէ քննարկել տվյալ բողոքը: Նշվում է, որ կոմիտեն, իր ընթացակարգային կանոնների 86-րդ կանոնի համաձայն գրանցելով բողոքը և մտադիր լինելով ժամանակավոր միջոցներ ձեռնարկել, գերազանցել է իր լիազորությունները, ուստի մասնակից պետությունը անվավեր և պարտադիր իրավական ուժից զուրկ է համարում կոմիտեի՝ բողոքի հետ կապված գործողությունները:

ՄԻԿ-ը վճռական պատասխանով է արձագանքել մասնակից պետության հայտարարությանը.

¶ 6.4. Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության մեջ արտահայտված կարծիքի համաձայն՝ կոմիտեն որպես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և դրան կից կամընտիր արձանագրության համաձայնագրային մարմին՝ իրավասու է մեկնաբանել և որոշել վերոհիշյալ պայմանագրերի վերապահումների օրինականությունը: Կոմիտեն չի ընդունում մասնակից պետության պնդումն առ այն, որ բողոքը գրանցելով և ընթացակարգային կանոնների 86-րդ կանոնի համաձայն ժամանակավոր միջոցների կիրառում հայցելով՝ գերազանցել է իր լիազորությունները: Այս հարցի առնչությամբ կոմիտեն ակնհայտ է համարում բողոքը գրանցելու իր իրավասությունը՝ վերապահման պատճառով դրա ընդունելիությունը պարզելու համար: Ինչ վերաբերում է վերապահման օրինականությանը, ապա ակնհայտ է, որ եթե այն վավերական է, ապա այս վերապահման արդյունքում կոմիտեն կգրկվի ներկա բողոքն ըստ արժանվույն դիտարկելու իրավասությունից, ինչին հեղինակն ինքը չի առարկել: Այնուհանդերձ, կոմիտեն պետք է որոշի, թե արդյոք մեծ վերապահումն օրինակա՞ն է, թե՞ ոչ:

Ստորև ներկայացվում են քաղվածքներ ՄԻԿ-ի եզրահանգումներից դաշնագրին Տրինիդադի վերապահման համապատասխանության վերաբերյալ [25.29]:

Ի՞նչ վերապահումներ չեն համապատասխանում ՔՔԻՄԴ-ին

[25.23]

Թիվ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. Բազմաթիվ քաղաքացիական և քաղաքական իրավունքներ ամրագրող որևէ փաստաթղթում բազում հոդվածներից յուրաքանչյուրի և դրանց փոխադրեցության շնորհիվ երաշխավորվում է դաշնագրի նպատակների իրականացումը: Դաշնագրի առարկան և նպատակն է հաստատել մարդու իրավունքների՝ պարտադիր իրավական ուժով օժտված չափանիշներ՝ սահմանելով որոշակի քաղաքացիական և քաղաքական իրավունքներ և դրանք դասելով այդ դաշնագիրը վավերացնող պետություններում պարտադիր պարտավորությունների շարքը: Դաշնագրի նպատակն է նաև ապահովել ստանձնած պարտավորությունների վերահսկողության արդյունավետ մեխանիզմ:

[25.24] Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության 7-րդ կետում ՄԻԿ-ը լայն իմաստով ներկայացնում է սույն դաշնագրի «առարկան և նպատակը»: Հաջորդ կետերում ՄԻԿ-ը մասնավորեցնում է այն հատուկ վերապահումները, որոնց դեպքում չեղյալ են հայտարարվում վերոհիշյալ առարկան և նպատակը.

¶ 8. Անառարկելի նորմերը խախտող վերապահումներն անհամատեղելի են դաշնագրի առարկայի և նպատակի հետ: Թեև պետությունների միջև պարզապես պարտավորությունների փոխանակման նպատակով կնքված պայմանագրերով կողմերն իրավունք ունեն փոխադարձաբար վերապահումներ կատարել ընդհանուր միջազգային դրույթների վերաբերյալ, սակայն դրանք չեն կարող նույն կերպ վարվել մարդու իրավունքներին վերաբերող պայմանագրերի դեպքում, որոնց նպատակն է նպաստել այդ պետությունների իրավասության ներքո գտնվող մարդկանց բարօրությանը: Ուստի հնարավոր է, որ միջազգային սովորութեական իրավունքը ներկայացնող դաշնագրի դրույթները և հատկապես անառարկելի նորմերի բնույթ կրող դրույթները չենթարկվեն վերապահումների: Հետևաբար, պետությունը չի կարող իրեն վերապահել մարդկանց ստրկացման, խոշտանգման, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերման:

¹⁴ Այս վերապահման հանգամանքների վերաբերյալ տե՛ս [25.29] և [25.40]:

տացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու, նրանց կամայականորեն կյանքից զրկելու, ծեղրակալելու և կալանավորելու, մտքի, խղճի և կրոնի ազատությունը խախտելու, իր անմեղությունը չապացուցելու դեպքում անձին մեղավոր ճանաչելու, հղի կանանց կամ երեխաներին մահապատժի ենթարկելու, ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն քարոզելու պաշտպանության, ամուսնական տարիքի հասած անձանց ամուսնանալու իրավունքից զրկելու կամ փոքրամասնությունների՝ իրենց մշակույթին հաղորդակից դառնալու, իրենց կրոնը դավանելու կամ մայրենի լեզվով խոսելու իրավունքը ոտնահարելու իրավունքը: Թեև 14-րդ հոդվածի որոշակի դրույթների վերապահումները կարող են ընդունելի լինել, սակայն արդար դատաքննության իրավունքն անառարկելի է:

[25.25] Ինչպես պարզվել է, «մարդու իրավունքների անառարկելի նորմերի» վերապահումների մասին ՄԻԿ-ի տեսակետը վիճահարույց է:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ **ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

¶ 2. 8-րդ կետն այնպես է նախագծվել, որ այն շփոթություն առաջացնելու աստիճան չադկապում է երկու տարբեր իրավական իրողություններ ներկայացնող «անառարկելի նորմեր» և «միջազգային սովորութական իրավունքի կանոններ» հասկացությունները:

Շփոթության որևէ վտանգ կանխելու նպատակով Ֆրանսիան կցանկանար բարձրացնել հետևյալ հարցերը.

Միջազգային սովորութական իրավունքն ապացուցում է, որ համընդհանուր գործելակերպը վերածվել է իրավունքի: Հարկ է գիտակցել, որ որքան էլ ցավալի է, սակայն մարդու իրավունքների ոլորտում շատ բարդ է առանձնացնել այն սովորությունները, որոնք հստակորեն համապատասխանում են այս սահմանմանը: Մեղմ ասած՝ սխալ կլիներ պնդել, որ զեկույցում ներկայացված բոլոր օրինակները համապատասխանում են վերոնշյալ միջազգային սովորութական իրավունքի սահմանմանը:

Թեև կարելի է ընդունել, որ սովորութական իրավունքի սկզբունքները ձևակերպված են մարդու իրավունքներին վերաբերող որոշ համաձայնագրերում, սակայն դա չի մշակում, որ պետության՝ ընդհանուր սովորութական իրավունքի որևէ սկզբունքին հետևելու պարտականությունը կարելի է շփոթել համաձայնագրում այդ սկզբունքն արտահայտող պարտավորություններ ստանձնելու իր համաձայնության հետ և մանավանդ նման ձևակերպումներով ենթադրվող զարգացումների և պարզաբանումների հետ:

Ի վերջո, ինքնըստինքյան հասկանալի է, որ սովորութական իրավունքի կանոն հասկացությունը ոչ մի դեպքում չի կարելի հավասարազոր համարել միջազգային իրավունքի անառարկելի նորմին:

Կարելի է նշել, որ Ֆրանսիան վերապահում է սահմանել 27-րդ հոդվածի՝ փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման հարցում: Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության հրապարակումից առաջ ՄԻԿ-ն ակնհայտորեն ճանաչել է այս վերապահման օրինականությունը՝ հրաժարվելով քննարկել «Տ.Կ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (*T.K. v France*, 220/87) [25.09] գործի նման այլ գործերի շրջանակներում 27-րդ հոդվածի խախտումների առնչությամբ բրետոնացիների ներկայացրած բողոքները: Կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունում նշվում է, որ այժմ կարելի է չեղյալ հայտարարել այդ դրույթը: Այնուամենայնիվ, վերապահման օրինականությունը վերահաստատվել է «Հոպու և Բեսերն ընդդեմ Ֆրանսիայի» (*Hopu and Bessert v France*, 549/93) գործով կայացրած որոշման մեջ, որը հետևել է թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության հրապարակմանը [25.13]:

[25.26] ԱՄՆ-Ի ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պարզ է, որ որևէ պետություն չի կարող դաշնագրի նկատմամբ վերապահում կատարելու միջոցով ազատվել միջազգային իրավունքի անառարկելի նորմով սահմանված պարտավորություններից: Սակայն ամենևին հասկանալի չէ, թե ինչու պետությունը չի կարող բացառել որոշակի նորմերի հարկադրման որևէ միջոց՝ վերապահումներ կատարելով դաշնագրով սահմանված իր պարտավորությունների շրջանակներում այդ նորմերը ներառելու հարցում¹⁵:

Ավելին՝ միջազգային սովորութական իրավունքին հակասող դրույթների հստակ բնորոշումը շատ ավելի կարևոր

¹⁵ Միացյալ Թագավորությունը համաձայնել է իր մեկնաբանություններում, վերը, ծնթ. 2, կետ 5:

հարց է, քան նշվում է մեկնաբանությունում: Նույնիսկ այն դեպքում, եթե որևէ կանոն ընդհանուր առմամբ հաստատվել է միջազգային սովորութեական իրավունքի շրջանակներում, թերևս հարկ կլինի քննարկել սովորութեական իրավունքի սկզբունքի հստակ ուղղագիծը և նշանակությունը:

Այնուհանդերձ, 8-րդ կետը սպառնիք կերպով հաստատում է, որ մի շարք առաջարկներ միջազգային սովորութային իրավունքի մաս են կազմում, սակայն, ճիշտն ասած, իրականում այդպես չէ: Օրինակ, թեև ցավալի է, սակայն պրակտիկան կամ այլ հիմնավոր աղբյուրները չեն կարող հաստատել, որ որևէ բացահայտ գործողությամբ կամ նախապատրաստմամբ չուղեկցվող ազգային, ռասայական կամ կրոնական ատելության պարզ դրսևորումն արգելվում է միջազգային սովորութեական իրավունքի դրույթներով: Թվում է, թե կոմիտեն ենթադրում է, որ 20-րդ հոդվածի վերաբերյալ մի շարք մասնակից պետությունների կատարած վերապահումներն ըստ էության անօրինական են: Նմանապես, թեպետ շատերն ընդհանուր առմամբ դեմ են մահապատժին և հատկապես անչափահասների մահապատժին, պետությունների փորձն ապացուցում է, որ ներկայումս միջազգային սովորութեական իրավունքը որևէ անվերապահ արգելք չի սահմանում այդ առումով¹⁶: Միջազգային իրավունքի հանդեպ նման անազգույն մոտեցումն ինքնին լուրջ մտահոգությունների է հանգեցնում կոմիտեի կիրառած մեթոդաբանության, ինչպես նաև նրա ունեցած լիազորության կապակցությամբ:

[25.27] Պարզվում է, որ այլ հատուկ վերապահումների անհամատեղելիության վերաբերյալ ստորև ներկայացված ՄԻԿ-ի մեկնաբանությունները պակաս վիճահարույց են:

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. Դաշնագրի դրույթների հանդեպ առարկայի և նպատակի ստուգումն ավելի ընդհանուր կարգով կիրառելիս կոմիտեն նշում է, որ, օրինակ, իրենց քաղաքական կարգավիճակը որոշելու և իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման նպատակը հետապնդող ժողովուրդների իրավունքները հերքող 1-ին հոդվածի վերապահումը չի համապատասխանում դաշնագրի առարկային և նպատակին: Նմանապես, անընդունելի է իրավունքները հարգելու և երաշխավորելու և այդ հարցում անխտրական վերաբերմունք դրսևորելու (2-րդ հոդվածի 1-ին կետ) պարտավորության նկատմամբ վերապահումը: Պետությունը չի կարող նաև վերապահում անել դաշնագրով սահմանված իրավունքները ներպետական մակարդակում կիրառելու համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու լիազորության նկատմամբ (2-րդ հոդվածի 2-րդ կետ):

¶ 10. Բացի այդ, կոմիտեն ուսումնասիրել է այն հարցը, թե արդյոք վերապահումների կարգերը կարող են խախտել համաձայնագրի «առարկայի և նպատակի» ստուգումը և հատկապես զբաղված է այն հարցի քննարկմամբ, թե արդյոք դաշնագրի անառարկելի դրույթների վերապահումները համատեղելի՞ են դրա «առարկայի և նպատակի» հետ: Այս կարգին է պատկանում հենց 4-րդ հոդվածի դրույթներում արված վերապահումը, որով հստակորեն որոշվում է արտակարգ իրավիճակներում պետության շահերի և անձի իրավունքների հավասարակշռությունն ապահովելու պահանջը: Նման բնույթ են կրում նաև որոշ անվիճարկելի իրավունքներ, որոնց նկատմամբ ոչ մի դեպքում չի կարելի վերապահում անել անառարկելի մորմի կարգավիճակի պատճառով: Այդ իրավունքների շարքը կարելի է դասել խոշտանգումների և կամայականորեն կյանքից զրկելու արգելքը: Թեև անվիճարկելի դրույթների վերապահումները և դաշնագրի առարկան ու խնդիրը խախտող վերապահումները ինքնաբերաբար փոխկապակցված չեն, սակայն պետությունը ստանձնում է նման վերապահումը հիմնավորելու ծանր պարտավորություն:

¶ 11. Դաշնագիրը բաղկացած է ոչ միայն սոսկ հստակեցված իրավունքներից, այլև՝ կարևոր նշանակություն ունեցող օժանդակ երաշխիքներից: Այս երաշխիքներն անհրաժեշտ հիմք են ապահովում դաշնագրով ամրագրված իրավունքները պաշտպանելու համար, ուստի կազմում են դաշնագրի առարկայի և նպատակի էական բաղադրատարրը: Այդ երաշխիքների մի մասն ապահովվում է պետական, մի մասն էլ՝ համաշխարհային մակարդակով: Ուստի այս երաշխիքները վերացնելուն միտված վերապահումներն անընդունելի են: Հետևաբար, որևէ պետություն չի կարող վերապահում անել դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների նկատմամբ և նշել, որ իր գործողությունները միտված չեն իրավական պաշտպանության միջոցներ նախատեսելուն մարդու իրավունքների խախտումների դեպքում: Նման երաշխիքները դաշնագրի կառույցի անբաժանելի մասն են և ապահովում են դրա օրինականությունը: Առաջադրված նպատակներն իրագործելիս առավել բարձր արդյունքների հասնելու համար դաշնագիրը նաև մշտադիտարկում իրագործելու գործառնություն է վերապահում կոմիտեին: Դաշնագրի առարկայի և նպատակի հետ անհամատեղելի են նաև այն վերապահումները, որոնց միջոցով պետությունը ձգտում է խուսափել դաշնագրի նախագծի այդ կարևոր բաղադրատարրից, որով, ի թիվս այլոց, երաշխավորվում է իրավունքների կիրառումը: Պետությունը չի կարող իրեն վերապահել կոմիտեի քննարկմանը զեկույց չներկայացնելու իրավունք: Կոմիտեի՝ թե՛ դաշնագրի 40-րդ հոդվածով, թե՛ կամընտիր արձանագրություններով սահմանված դերակատարումն անպայման

¹⁶ ԱՄՆ-ն փաստորեն վերապահումներ է արել 20-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 5-րդ կետի վերաբերյալ, որով արգելվում է անչափահասների հանդեպ մահապատժի սահմանելը. այսպիսով նրա մեկնաբանությունները հավանաբար մասնակիորեն նախատեսված էին սեփական վերապահումների օրինականությունը պաշտպանելու համար:

ենթադրում է դաշնագրի դրույթների մեկնաբանություն և իրավասության մշակում: Ուստի կոմիտեի՝ դաշնագրի յուրաքանչյուր դրույթի պայմանները մեկնաբանելու իրավասությունը ժխտող յուրաքանչյուր վերապահում մույնպես հակասում է այդ համաձայնագրի առարկային և նպատակին:

¶ 12. Դաշնագրով նախատեսվում է, որ դրանում ամրագրված իրավունքները պետք է երաշխավորվեն տվյալ մասնակից պետության իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց համար: Այդ նպատակն իրագործելու համար, հավանաբար, անհրաժեշտ կլինեն որոշակի կից համաձայնագրեր: Դաշնագրով սահմանված պահանջներն արտահայտելու համար թերևս կարիք կառաջանա համապատասխան փոփոխությունների ենթարկել ներպետական օրենքները, և անհրաժեշտ կլինեն ներպետական մակարդակի մեխանիզմներ՝ տվյալ պետության տարածքում դաշնագրով սահմանված իրավունքների հարկադիր կիրառումը երաշխավորելու նպատակով: Վերապահումների միջոցով հաճախ բացահայտվում է պետությունների՝ որևէ օրենք փոխելուց խուսափելու միտումը: Երբեմն էլ այդ միտումը վերածվում է ընդհանուր քաղաքականության ուղղության: Հատկապես մեծ մտահոգության տեղիք են տալիս լայն իմաստով ձևակերպված վերապահումները, որոնք, ըստ էության, անվավեր են դարձնում դաշնագրով սահմանված բոլոր այն իրավունքները, որոնք ներպետական օրենսդրության որևէ փոփոխություն են ենթադրում՝ դաշնագրով սահմանված պարտավորություններին օրենքների համապատասխանությունը երաշխավորելու համար: Այսպիսով, որևէ լուրջ միջազգային իրավունք կամ պարտավորություն չի ընդունվել: Իսկ եթե բացակայում են դաշնագրով սահմանված իրավունքների խախտման կապակցությամբ ներպետական դատարաններում գործ հարուցելու երաշխիքները, և բացի այդ, չի թույլատրվում անհատական բողոքներ ներկայացնել կոմիտեին՝ առաջին կամ ընտիր արձանագրության դրույթների համաձայն, ապա այս ամենը մշանակում է, որ չեղյալ են դարձել դաշնագրով նախատեսված երաշխիքների բոլոր էական տարրերը¹⁷:

¶ 19. Հարկ է, որ վերապահումները լինեն հստակ ու թափանցիկ, և կոմիտեին, ինչպես նաև վերապահում կատարող պետությանը և այլ մասնակից պետություններին իրավասության տակ գտնվող անձանց հասկանալի լինի, թե ինչ պարտավորություններ է ստանձնել տվյալ պետությունը մարդու իրավունքների ոլորտում: Այսպիսով, վերապահումները կարող են ընդհանուր չլինել, սակայն պետք է վերաբերեն դաշնագրի որոշակի դրույթի և հստակորեն նշեն իրենց տարածման ոլորտը: Դաշնագրի առարկային և նպատակին հնարավոր վերապահումների համապատասխանության հարցը քննելիս հարկ է, որ պետությունները հաշվի առնեն մի շարք վերապահումների ընդհանուր ազդեցությունը, ինչպես նաև դաշնագրի ամբողջականության վրա յուրաքանչյուր վերապահման ազդեցությունը, ինչը շարունակում է մնալ լուրջ քննարկման առարկա: Պետությունները չպետք է կատարեն այնքան շատ թվով վերապահումներ, որ իրականում ընդունեն մարդու իրավունքներին առնչվող միայն սահմանափակ թվով պարտավորություններ և ոչ թե դաշնագիրը՝ որպես այդպիսին: Որպեսզի վերապահումները չհանգեցնեն մարդու իրավունքների միջազգային չափանիշների մշտական օտարման, հարկ է, որ դրանք պարբերաբար չնվազեցնեն ստանձնած պարտավորությունները՝ պահպանելով միայն ներպետական իրավունքի ոլորտում պակաս խիստ չափանիշներով ստանձնած պարտավորությունները: Մեկնաբանող հռչակագրերը կամ վերապահումները չպետք է նաև միտված լինեն դաշնագրով սահմանված պարտավորությունների ինքնուրույն մշանակությունը չեղյալ դարձնելուն՝ ուղեկցվելով այն հայտարարությամբ, որ դրանք համընկնում կամ ընդունելի են միայն ներպետական իրավունքի դրույթներին նման լինելու պատճառով: Անհրաժեշտ է, որ պետությունները վերապահումների կամ մեկնաբանող հռչակագրերի միջոցով չձգտեն հաստատել, որ դաշնագրի որևէ դրույթի մշանակությունը համընկնում է որևէ այլ միջազգային համաձայնագրային մարմնի կազմակերպության կողմից սահմանված դրույթի մշանակության հետ:

Առաջին կամ ընտիր արձանագրության վերապահումներ

[25.28]

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 13. Հարց է ծագում՝ արդյոք վերապահումները թույլատրելի են առաջին կամ ընտիր արձանագրության համաձայն, իսկ եթե թույլատրելի են, ապա արդյոք որևէ վերապահում կարող է հակասել դաշնագրի կամ մույն առաջին կամ ընտիր արձանագրության առարկային և նպատակին: Պարզ է, որ առաջին կամ ընտիր արձանագրությունն էլ միջազգային համաձայնագիր է, որը տարբերվում է դաշնագրից, սակայն սերտորեն փոխկապակցված է դրա հետ: Դրա առարկան և նպատակն այն է, որ ճանաչվի կոմիտեի՝ մասնակից պետության կողմից դաշնագրով սահմանված որևէ իրավունքի խախտումից իրենց տուժած համարող անհատների բողոքներն ընդունելու և քննարկելու իրավասությունը: Պետություններն ընդունում են անհատների՝ դաշնագրով, ոչ թե առաջին կամ ընտիր արձանագրությամբ սահմանված հիմնական իրավունքները: Առաջին կամ ընտիր արձանագրության գործառույթն է թույլատրել կոմիտեի քննությանը ներկայացնել այդ իրավունքների խախտման դեպքերին վերաբերող դիմումներ: Այսպիսով, պետության՝ դաշնագրով սահմանված որևէ իրավունք իրացնելու և դրա կիրառումը երաշխավորելու պարտա-

¹⁷ Վիեննայի կոնվենցիայի 27-րդ հոդվածի դրույթներով արգելվում է համաձայնագրերի խախտումներն արդարացնելու համար ներպետական իրավունքի վկայակոչումը: Միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամներից մի քանիսը համարել են, որ այս կանոնը կարող էր փոխանցվել վերապահումներին՝ այդպիսով պաշտպանելով ՄԻԿ-ի տեսակետը: ՄԱԿ-ի փաստաթուղթ A/52/10, կետ 140:

վորության նկատմամբ առաջին կամընտիր արձանագրության համաձայն արված որևէ վերապահում, դաշնագրով սահմանված միևնույն իրավունքների վերաբերյալ նախապես չենք կայացվելու դեպքում, չի ազդում պետության՝ հիմնական պարտավորությունը կատարելու պարտականության վրա: Չի կարելի կամընտիր արձանագրության միջոցով վերապահում սահմանել դաշնագրի դրույթների նկատմամբ, նման վերապահման կիրառումը կհաստատեր, որ առաջին կամընտիր արձանագրության համաձայն՝ կոմիտեն իրավասու չէ վերահսկելու պետության կողմից այդ պարտավորության կատարումը: Եվ քանի որ առաջին կամընտիր արձանագրության առարկան և նպատակն է թույլատրել կոմիտեին վերահսկել դաշնագրով սահմանված պետության պարտադիր իրավունքների կիրառումը, այդ նպատակը խոչընդոտող որևէ վերապահում հակասում է առաջին կամընտիր արձանագրության և նույնիսկ դաշնագրի առարկային և նպատակին: Կարող է թվալ, որ հիմնական պարտավորության վերաբերյալ առաջին կամընտիր արձանագրության շրջանակներում առաջին անգամ արված վերապահումն արտահայտում է տվյալ պետության մտադրությունը, այն է՝ խանգարել կոմիտեին առանձին դեպքերում կարծիք արտահայտել դաշնագրի որևէ հոդվածի վերաբերյալ:

Ֆրանսիան հիմնովին համաձայն չէ 13-րդ կետին, որը հռչակում է, որ «միջազգային իրավունքի որևէ դրույթ պարտադիր կարգով չի արգելում պետությանը վերապահումներ կատարել կամ սահմանափակել առաջին կամընտիր արձանագրությունն ընդունելու պայմանները»¹⁸:

[25.29]

**«ՔԵՆԵԴԻՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ»
(KENNEDY v TRINIDAD and TOBAGO, 845/98)**

Այս գործում խոսքը հեղինակի մահապատժի դատավճռի հետ կապված տարբեր հարցերի վերաբերյալ հայտարարությունների մասին է: ՄԻԿ-ը պետք է որոշեր առաջին կամընտիր արձանագրության կապակցությամբ Տրինիդադի հետևյալ վերապահման օրինականությունը.

¶ 4.1. 1999 թ. ապրիլի 8-ի իր հայտարարության մեջ մասնակից պետությունը վկայակոչում է կամընտիր արձանագրությանը միանալու մասին 1998 թ. մայիսի 26-ին ընդունված իր փաստաթուղթը, որը ներառել է հետևյալ վերապահումը:

«...Տրինիդադ և Տոբագոն կրկին միանում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրությանը 1-ին հոդվածի վերապահմամբ՝ այն իմաստով, որ Մարդու իրավունքների կոմիտեն չպետք է իրավասու լինի ընդունելու և քննելու մահապատժի դատապարտված որևէ բանտարկյալի դատական հետապնդման, բանտարկման, դատի, դատապարտման, դատավճռի կամ նրա մահապատժի դատավճռի իրագործման և նման որևէ այլ հարցով բողոքները:

Անմիջապես ստորև շարադրված են այս վերապահմանը հանգեցնող հանգամանքները.

¶ 6.2. 1998 թ. մայիսի 26-ին Տրինիդադ և Տոբագոյի կառավարությունը չեղյալ է հայտարարել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրությունը: Նույն օրը նա կրկին միացել է արձանագրությանը՝ իր միացումը հաստատող փաստաթղթում ներառելով վերոնշյալ 4.1 կետում ներկայացրած վերապահումը:

¶ 6.3. Այս միջոցների հիմնավորման նպատակով մասնակից պետությունը վկայակոչում է «Փրաթը և Մորգանն ընդդեմ Ճամայկայի գլխավոր դատախազի» (*Pratt and Morgan v the Attorney General for Jamaica* 2 A.C. 1) գործով 1994թ. Գաղտնի խորհրդի դատական կոմիտեի որոշումը, որում նշվել է, որ «դատավճիռը կայացնելու պահից հինգ տարին գերազանցող ժամկետում մահապատիժը որևէ պատճառով չիրագործելու դեպքում լուրջ հիմքեր են առաջանում ենթադրելու, որ այդ հետաձգումը «անմարդկային կամ նվաստացնող պատիժ կամ այլ վերաբերմունք» է, ինչը խախտում է Ճամայկայի սահմանադրության 17-րդ բաժնի դրույթները¹⁹: Ըստ Տրինիդադ և Տոբագոյի՝ որոշման իրավական նշանակությունն այն է, որ մահապատժի իրագործման չափազանց երկար հետաձգումների հետևանքով խախտվում է Տրինիդադ և Տոբագոյի սահմանադրության 5-րդ բաժնի 2-րդ կետի (բ) ենթակետը, որը ներառում է Ճամայկայի սահմանադրության 17-րդ բաժնում ամրագրված դրույթի նման մի դրույթ: Իր բացատրություններում մասնակից պետությունը նշում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գաղտնի խորհրդի դատական կոմիտեի որոշումը սահմանադրական չափանիշ է ներկայացնում Տրինիդադ և Տոբագոյի համար, այդ պետության կառավարությունը լիազորված է համակարգում հետաձգումները վերացնելու միջոցով երաշխավորելու բողոքարկ-

¹⁸ Ֆրանսիա, վերը, ծնթ. 2, կետ 4:

¹⁹ Մարդու իրավունքների հետ «մահապատժի սպասման ընթացք»՝ հասկացության համատեղելիության մասին Մարդու իրավունքների կոմիտեի տեսակետը տարբերվում է Գաղտնի խորհրդի տեսակետից, տե՛ս այստեղ [9.53]:

ման գործընթացի ավելի արագ ընթացք՝ Տրինիդադ և Տոբագոյի օրենքների համաձայն կայացված մահապատժի դատավճիռներն իրագործելու նպատակով: Այսպիսով, մասնակից պետությունը որոշել է չեղյալ հայտարարել կամ- ընտիր արձանագրությունը:

«Տվյալ հանգամանքներում ցանկանալով պաշտպանել իր ներպետական իրավունքը, ըստ որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի անմարդկային կամ նվաստացնող պատժի կամ վերաբերմունքի, և այդպիսով կատարել Քաղա- քացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածով սահմանված իր պարտավորությունները՝ Տրինիդադ և Տոբագոյի կառավարությունը ստիպված էր չեղյալ հայտարարել կամ- ընտիր արձանագրությունը: Այնուհանդերձ, նախքան այդ քայլին դիմելը, այսինքն՝ 1998 թ. մարտի 31-ին նա խորհրդակցություններ է անցկացրել Մարդու իրավունքների կոմիտեի նախագահի և վարչության հետ՝ ձգ- տելով երաշխիքներ ստանալ առ այն, որ մահապատժի դատավճիռներն արագ իրագործվեն, այն է՝ գրանց- ման պահից 8 ամսվա ընթացքում: Որոշ պատճառներով, որոնց Տրինիդադ և Տոբագոյի կառավարությունը հարգանքով է վերաբերվում, հնարավոր չէր երաշխավորել ներկայացված ժամկետում այս գործերով դատա- վճիռների իրագործումը»:

Տրինիդադի վերապահումը պայմանավորված էր մահապատժի սպասող բանտարկյալների համար մա- հապատժի իրագործման հետ կապված հետաձգումները վերացնելու ցանկությամբ, Գաղտնի խորհրդի որոշումը կատարելու նպատակով, որի համաձայն՝ հինգ տարին գերազանցող հետաձգումները հակա- սում են ճանաչելի սահմանադրությամբ, ինչպես նաև Տրինիդադ ու Տոբագոյի սահմանադրությամբ: Մահապատժի սպասման ընթացքում բանտարկյալների համար կամընտիր արձանագրությամբ սահ- մանված բողոքի մեխանիզմների շարունակական մատչելիությունն էլ ավելի է երկարացրել մահապատ- ժի սպասման ընթացքով բանտարկությունը, քանի որ Տրինիդադ և Տոբագոն պարտավոր էր այդ ան- ծանց մահապատժի չենթարկել ՄԻԿ-ի կողմից նրանց բողոքների քննության ժամանակահատվածում²⁰: ՄԻԿ-ի մեծամասնությունը Քենեդիի գործով որոշում է կայացրել վերապահումների անօրինականության մասին՝ հաշվի առնելով հետևյալ փաստարկները.

¶ 6.7. Տվյալ վերապահումը, որն արվել է թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության հրապարակումից հետո, միտված է եղել ոչ թե դաշնագրով սահմանված որոշակի դրույթի, այլ, թերևս, հայցվորների որոշակի խմբի, ավելի ստույգ՝ մահապատժի դատապարտված բանտարկյալների հարցում կամընտիր արձանագրությամբ կոմիտեին վերապահ- ված իրավասության բացառմանը: Այդպիսով այդ վերապահումը հակասում է կամընտիր արձանագրության առար- կային և նպատակին: Կոմիտեն չի կարող ընդունել մի վերապահում, որով մի խումբ անձանց համար ընթացակար- գային պաշտպանության ավելի նեղ շրջանակ է նախատեսվում, քան ազգաբնակչության մյուս մասի համար: Կոմի- տեի կարծիքով՝ դա խտրականություն է, որը հակասում է դաշնագրով և դրան կից արձանագրություններով ամրա- գրված որոշ սկզբունքներին: Այդ իսկ պատճառով վերապահումը չի կարող համատեղելի համարվել կամընտիր ար- ձանագրության առարկայի և նպատակի հետ: Այս ամենից հետևում է, որ չպետք է կոմիտեին արգելել կամընտիր արձանագրության համաձայն քննարկել տվյալ բողոքը:

[25.30] Քենեդիի գործով հակառակ կարծիք են արտահայտել պարոնայք Անդոն, Բիագվաթին, Քլայնը և Կրեցները²¹:

¶ 6. ...Այն հանգամանքը, որ պետությունն ստանձնում է դաշնագրով ամրագրված բոլոր իրավունքների կիրառումը երաշխավորելու և պաշտպանելու պարտավորությունը, կոմիտեին անհատական դիմումներ քննարկելու իրավա- սություն չի վերապահում: Նման իրավասություն կարող է վերապահվել միայն այն դեպքում, եթե դաշնագրի մաս- նակից պետությունն անդամակցի նաև կամընտիր արձանագրությանը: Եթե մասնակից պետությունն ազատ է մշտադիտարկման միջազգային որևէ մեխանիզմ ընդունելու հարցում, ապա անհասկանալի է, թե ինչու պետությու- նը չի կարող այդ մեխանիզմները կիրառել միայն որոշ իրավունքների կամ իրավիճակների դեպքում՝ հաշվի առնե- լով այն հանգամանքը, որ համաձայնագիրն ինքնին չի բացառում նման հնարավորությունը: Ամեն ինչ կամ ոչինչ սկզբունքն անընդունելի է մարդու իրավունքների ոլորտում:

¶ 7. Կոմիտեն հաշվի է առնում այն փաստը, որ տվյալ դեպքում մասնակից պետության վերապահումն անընդունելի է, քանի որ այն ազգաբնակչության մյուս մասի համեմատ ընթացակարգային պաշտպանության ավելի նեղ շրջա- նակ է նախատեսում անձանց որևէ մի խմբի, այն է՝ մահվան դատապարտվածների համար: Կոմիտեի տրամաբա-

²⁰ Տե՛ս [1.53] մահապատժի դեպքերում հաճախ արձակվող ժամանակավոր կարգադրությունների մասին: Տրինիդադ և Տոբագոն անտեսել է ՄԻԿ-ի նախնական խնդրանքը կամընտիր արձանագրության շրջանակներում «*Էշլին ընդդեմ Տրինի- դադ և Տոբագոյի*» (*Ashley v Trinidad and Tobago*) գործով հայցվորին մահապատժի չենթարկելու մասին, տե՛ս A/49/40, կետեր 410-411:

²¹ 2003 թ. այս հակառակ կարծիքին հավանություն է տվել ՄԻԿ-ին մոր անդամակցած տիկին Ուեդգուդը «*Էվանսն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի*» (*Evans v Trinidad and Tobago*, 908/00) գործի շրջանակներում:

նությամբ դա խտրականություն է, որը հակասում է դաշնագրով և կից արձանագրություններով ամրագրված մի շարք հիմնական սկզբունքներին: Մենք համոզիչ չենք համարում այս փաստարկը:

¶ 8. Ինքնընտանիքային հասկանալի է, որ մասնակից պետությունը չէր կարող այնպիսի վերապահումներ կայացնել, որը խախտեր միջազգային իրավունքի անառարկելի կանոնները: Այսպես, օրինակ՝ կամընտիր արձանագրության նկատմամբ արված այնպիսի վերապահումը, որը խտրականություն է դնում մարդկանց միջև ռասայի, կրոնի կամ սեռի հողի վրա, համարվում է անվավեր: Այնուամենայնիվ, դա, իհարկե, չի նշանակում, որ մասնակից պետության կատարած խախտումների հետևանքով հնարավոր տուժածների կարգերի միջև որևէ տարբերակում անընդունելի է: Ամեն ինչ կախված է բուն տարբերակումից և այդ տարբերակման օբյեկտիվ հիմքերից:

¶ 9. Դաշնագրի 26-րդ հոդվածով արգելված խտրականության հետ կապված հարցերում կոմիտեն հետևողականորեն պնդել է, որ մարդկանց միջև ամեն մի տարբերակում չէ, որ վերածվում է խտրականության: Տվյալ դեպքում բավարար հիմք չկա այս մոտեցումը բացառելու համար: Քանի որ խոսքը կամընտիր արձանագրության մասին է, ոչ թե ինքնին դաշնագրի վերապահման մասին, հարկ է, որ մենք դիտարկենք ոչ թե մահապատժի դատապարտվածների և այլ անձանց հիմնական իրավունքների միջև տարբերությունները, այլ՝ մահապատժի դատապարտվածների և այլ անձանց ներկայացրած դիմումների տարբերակման առկայության հարցը: Կոմիտեն նախընտրել է անտեսել գործի այս կետը, որն ընկած է մասնակից պետության վերապահման հիմքում:

¶ 10. Մասնակից պետության կողմից կամընտիր արձանագրությունը չեղյալ հայտարարելու հիմքերը ներկայացված են «Կոմիտեի կարծիքների» 6.3 կետում, և դրանք այստեղ կրկնելու կարիք չկա: Պարզ է միայն, որ մահվան դատապարտվածների և այլ անձանց ներկայացրած դիմումների տարբերությունը պայմանավորված է դրանց տարբեր հետևանքներով: Մասնակից պետության սահմանադրությամբ ամրագրված սահմանափակումների պատճառով մահապատժի դատապարտված անձի դիմումն ընդունելն անգամ կարող է խոչընդոտել մասնակից պետության կողմից դատավճիռն իրագործելուն, եթե նույնիսկ պարզվի, որ մասնակից պետությունն այդ քայլին դիմել է դաշնագրով սահմանված իր պարտավորությունների շրջանակներում: Այլ կերպ ասած՝ դիմումի հետևանքները կախված չեն կոմիտեի՝ խախտման առկայության վերաբերյալ կարծիքից և այդ դեպքում առաջարկվող իրավական պաշտպանության միջոցից, այլ՝ պարզապես դիմումը ներկայացնելուց: Այս ամենը չի վերաբերում այն դեպքերին, երբ դիմում են ներկայացնում այլ կարգի պատկանող մարդիկ:

¶ 11. Հարկ է նշել, որ եթե սահմանադրական սահմանափակումների պատճառով մասնակից պետությունը հայտնվեր մի այնպիսի իրավիճակում, որ խախտեր դաշնագրի հիմնական իրավունքները, ապա կամընտիր արձանագրության չեղյալ հայտարարումը և հետագայում կրկին դաշնագրին միանալը օրինական չէին լինի, քանի որ դրա առարկան հնարավորություն կընձեռներ մասնակից պետությանն անպատիժ շարունակել դաշնագրի դրույթների խախտումը: Բարեբախտաբար, այս դեպքում իրավիճակն այլ է: Թեև «Կոմիտեի կարծիքների» 6.3 կետում [9.55] նշված կարծիքն առ այն, որ մահապատժի սպասման ժամկետը դաժան և անմարդկային պատժի է վերածում մահապատժի իրագործման հետաձգումը, տարբերվում է Գաղտնի խորհրդի կարծիքից, սակայն Գաղտնի խորհրդին համամիտ մասնակից պետությունը չի խախտում դաշնագրով սահմանված իր պարտավորությունները:

¶ 12. Հաշվի առնելով վերը նշվածը՝ մենք հիմք չենք տեսնում եմթադրելու, որ մասնակից պետության վերապահումը չի համապատասխանում կամընտիր արձանագրության առարկային և նպատակին: Քանի որ վերապահումը հստակորեն առնչվում է տվյալ դիմումին, և հեղինակը չի վիճարկել այդ փաստը, անընդունելի ենք համարում բողոքը:

[25.31]

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 14. Կոմիտեն կարծում է, որ առաջին կամընտիր արձանագրությամբ սահմանված ընթացակարգային վերապահումները անհամատեղելի են դրա առարկայի և նպատակի հետ: Կոմիտեն պետք է վերահսկի կամընտիր արձանագրությամբ սահմանված իր ընթացակարգերը և ընթացակարգային կանոնները: Այսուհանդերձ, վերապահումներով եմթադրվում էր կոմիտեի իրավասության սահմանափակում՝ հաստատելով դրա տարածումը միայն տվյալ պետությունում կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո ընդունված օրենքների և իրադարձությունների վրա: Կոմիտեի կարծիքով՝ դա վերապահում չէ, այլ ավելի հաճախ արտահայտվում է ժամկետի նկատառումների իր բնականոն իրավասությանը համապատասխանող հայտարարության ձևով: Միաժամանակ կոմիտեն հաստատել է իր իրավասությունը նույնիսկ նման հայտարարությունների կամ դիտարկումների դեպքում, եթե առաջին կամընտիր արձանագրության ուժի մեջ մտնելուց առաջ ընդունված օրենքները կամ տեղի ունեցած իրադարձությունները այդ ամսաթվից հետո շարունակել են ազդել տուժողի իրավունքների վրա: Կատարվել են այնպիսի վերապահումներ, որոնք հավելյալ արդյունավետ հիմք են ներկայացնում 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն անընդունելիության համար՝ խոչընդոտելով դիմումի քննումն այն դեպքում, երբ նույն գործն արդեն քննվել է մեկ այլ համահունչ ընթացակարգի շրջանակներում: Քանի որ ամենահիմնական պարտավորությունը եղել է անկախ երրորդ մարմնի կողմից անձանց՝ մարդու իրավունքների վերանայման երաշխավորումը, դաշնագրի և մեկ այլ միջազգային փաստաթղթի

օրինական իրավունքի և առարկայի համընկնման դեպքում կոմիտեն համարել է, որ նման վերապահմամբ չեն խախտվում առաջին կամընտիր արձանագրության առարկան և նպատակը:

14-րդ կետի վերջում ՄԻԿ-ը վկայակոչում է այն փաստը, որ կամընտիր արձանագրությանը միացած մի շարք եվրոպական մասնակից պետություններ այնպիսի վերապահումներ են կատարել, որոնք խանգարում են ՄԻԿ-ին քննել մի բողոք, որը նախկինում դիտարկվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շրջանակներում: Պարզվել է, որ այս վերապահումները համահունչ են առաջին կամընտիր արձանագրությանը²²:

Երկրորդ կամընտիր արձանագրության վերապահումներ

[25.32]

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 15. Երկրորդ կամընտիր արձանագրության առաջնային նպատակն է ընդլայնել սույն դաշնագրով ստանձնած կյանքի իրավունքին վերաբերող հիմնական պարտավորությունների շրջանակը մահապատժի դատավճռի իրագործումն արգելելու և մահապատիժը վերացնելու միջոցով: Արձանագրությունը հատուկ դրույթ է ներառում վերապահումների մասին, որը սահմանում է թույլատրելի պայմանները: 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ թույլատրելի է վերապահումների միայն մեկ կարգ, այն է՝ պատերազմի ժամանակ ռազմական բնույթի լուրջ հանցանք գործելու համար անձին մեղավոր ճանաչելու հետևանքով պատերազմի ժամանակ մահապատժի կիրառելու իրավունք վերապահող կարգը: Այն մասնակից պետությունները, որոնք ցանկանում են օգտվել նման վերապահումների իրավունքից, ստանձնում են երկու ընթացակարգային պարտավորություն: 2-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն՝ նման ցանկություն արտահայտող պետությունը պարտավոր է տեղյակ պահել գլխավոր քարտուղարին պատերազմական իրադրություններում իր պետական օրենսդրության համապատասխան դրույթները վավերացնելու կամ ընդունելու ժամանակ: Ակնհայտ է, որ այս պարտավորության նպատակն է երաշխավորել վերապահումների յուրահատկությունը և թափանցիկությունը, և կոմիտեն կարծում է, որ նման տեղեկատվությամբ չուղեկցվող ենթադրյալ վերապահումը զուրկ է իրավական նշանակությունից: 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթներով նախատեսվում է, որ նման վերապահում կատարող պետությունը պետք է տեղյակ պահի գլխավոր քարտուղարին իր տարածքում պատերազմական իրադրության սկզբի և ավարտի մասին: Կոմիտեի կարծիքով՝ որևէ պետություն չի կարող ձգտել օգտվել նման վերապահում կատարելու, այսինքն՝ պատերազմի ժամանակ օրինական հիմքերով մահապատժի կիրառելու իր իրավունքից 2-րդ հոդվածի 3-րդ կետի ընթացակարգային պահանջները չբավարարու դեպքում:

Անհամատեղելի վերապահման իրավական նշանակությունը

[25.33] Ցեղասպանության կոնվենցիայի առնչությամբ վերապահումների մասին Արդարադատության միջազգային դատարանի (անգլ.՝ ICJ) խորհրդատվական կարծիքում նշվում է, որ պետությունը չի կարող համարվել համապատասխան համաձայնագրի մասնակից, եթե նա ընդունել է համաձայնագրին հակասող վերապահում²³: Սակայն ՄԻԿ-ը համաձայն չէ, որ այս հայեցակարգը կիրառվի ՔՔԻՄԴ-ի հատկությամբ:

ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 18. ...Անընդունելի վերապահման բնականոն հետևանքն ամենևին էլ չի հանգեցնում վերապահում կատարող մասնակից պետության համար դաշնագրի իրավական նշանակության նեղացմանը, այլ նման վերապահումը սովորաբար մասնակի բնույթ է կրում այն իմաստով, որ վերապահումից անկախ՝ դաշնագիրը վավերական կլինի վերապահում կատարած մասնակից պետության համար:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դատական պրակտիկան որոշ չափով պաշտպանում է ՄԻԿ-ի դիրքորոշումը: «*Լուզիդու ընդդեմ Թուրքիայի*» (*Louizidou v Turkey*) գործով եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (անգլ.՝ ECHR) առնչությամբ Թուրքիայի կատարած որոշ վերապահումներ համահունչ չէին ՄԻԵԿ-ի առարկա-

²² Այս վերապահումների հատուկ քննարկումը տե՛ս այստեղ՝ [5.09]:

²³ [1951] Արդարադատության միջազգային դատարանի զեկույցներ, 15, 29:

յին և նպատակին²⁴: Այսուհանդերձ Թուրքիան շարունակել է մնալ ՄԻԵԿ-ի մասնակից պետություն, իսկ նրա անվավեր վերապահումներն առանձնացվել են՝ անփոփոխ թողնելով «վերապահված» դրույթներով սահմանված պարտավորությունները: Այս եզրահանգման շրջանակներում դատարանը դիրքորոշման ստուգում է անցկացրել և պարզել, որ համաձայնագիրը վավերացնելու պահին նման առանձնացման դեպքում Թուրքիան կցանկանար մնալ մասնակից պետություն²⁵:

[25.34] Բոլոր երեք պատասխանող պետություններն առարկել են անվավեր վերապահումների իրավական նշանակության վերաբերյալ ՄԻԿ-ի փաստարկների դեմ²⁶: Անհամաձայնություն է հայտնել նաև Միջազգային իրավունքի հանձնաժողովը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¶ 10. Հանձնաժողովը նշում է նաև, որ վերապահման անընդունելիության դեպքում միջոցներ ձեռնարկելու համար պատասխանատու է վերապահում կատարող պետությունը: Օրինակ՝ այդ միջոցները կարող են ենթադրել կամ պետության կողմից իր վերապահման վերափոխում դրա անընդունելիությունը վերացնելու նպատակով, կամ վերապահման չեղյալ հայտարարում, կամ էլ վերապահման կատարում համաձայնագրին միանալուց առաջ:

[25.35]

«ՔԵՆԵԴԻՆ ընդդեմ ՏՐԻՆԻԴԱԴ և ՏՈԲԱԳՈՅԻ» (KENNEDY v TRINIDAD and TOBAGO, 845/98)

ՄԻԿ-ի մեծամասնությունը հաստատել է իր կարծիքն այս դեպքում արված անվավեր վերապահման իրավական նշանակության մասին՝ Տրինիդադի կողմից առաջին կամընտիր արձանագրության [25.29] ընդունումից լիովին առանձնացնելով այդ վերապահումը: Հակառակ կարծիք արտահայտող փոքրամասնությունը՝ պարունայք Անդոն, Բիագվաթին, Քլայնը և Կրեցմերը, ավելի մանրամասն են մեկնաբանել անվավեր վերապահման իրավական նշանակությունը:

¶ 15. Թիվ 24 Ընդհանուր մեկնաբանությունում կոմիտեն քննարկել է այն գործոնները, որոնց դեպքում վերապահումը չի համապատասխանում դաշնագրի առարկային և նպատակին: 18-րդ կետում կոմիտեն դիտարկում է անհամատեղելի վերապահման հետևանքները և հայտարարում հետևյալը.

«Անընդունելի վերապահման բնականոն հետևանքով դաշնագիրն ամենևին էլ չի կորցնի իր ուժը վերապահում անող մասնակից պետության համար, այլ նման վերապահումը սովորաբար կառանձնացվի այն իմաստով, որ վերապահումից անկախ՝ դաշնագիրը ուժի մեջ կմնա վերապահում կատարող պետության համար»:

Գաղտնիք չէ, որ կոմիտեի նման մոտեցումը լուրջ քննադատության է արժանացել: Միջազգային իրավունքի ոլորտի շատ փորձագետներ կարծում են, որ այս մոտեցումը հակասում է ցանկացած համաձայնագրի հայեցակարգի նախադրյալներին, որոնց համաձայն՝ պետության՝ համաձայնագրով սահմանված պարտավորություններն արտահայտում են համաձայնագրի՝ այդ պարտավորությունները ստանձնելու գործառույթը: Քննադատները պնդում են, որ եթե վերապահումն անհամատեղելի է համաձայնագրի առարկային և նպատակին, ապա վերապահում կատարած մասնակից պետությունը կարող է միանալ համաձայնագրին միայն այդ վերապահումը չեղյալ հայտարարելու դեպքում: Քննադատների կարծիքով՝ դաշնագրի առնչությամբ վերապահումների հարցում անիմաստ է խախտել համաձայնագրային իրավունքի սկզբունքները:

¶ 16. Մեր նպատակն է տվյալ գործի շրջանակներում կրկին քննել թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության առարկան ներկայացնող ամբողջ հարցը: Բավական է ասել, որ նույնիսկ բուն դաշնագրի դրույթների վերաբերյալ վերապահումների հարցում կոմիտեն չէր կարծում, որ ցանկացած դեպքում անընդունելի վերապահումը կանտեսվի, և վերապահում կատարող պետությունը կկարողանա, առանց վերապահումից օգտվելու, մասնակցել դաշնագրին: Ինչպես կարելի է դատել թիվ 24 Ընդհանուր մեկնաբանության վերը մեջբերված բաժնի դրույթներից, կոմիտեն պարզապես պնդել է, որ հիմնականում այդպես է լինում: Հիմնականում ենթադրվում է, որ վավերացումը կամ ընդունումը կախված չեն վերապահման ընդունելիությունից, և վերապահման անընդունելիության հետևանքով վերապահում

²⁴ (1995) 20 ՄԻԵԿ 99, կետ 89:

²⁵ Նույնը, կետ 90-98, Schabas (Շաբաս), վերը, ծմբ. 9, 321-2:

²⁶ Տե՛ս Միացյալ Թագավորություն, վերը, ծմբ. 2, կետ 14, ԱՄՆ, վերը, ծմբ. 2, կետի թիվը նշված չէ, Ֆրանսիա, վերը, ծմբ. 2, կետ 7:

կատարող պետության՝ դաշնագրին միանալու համաձայնագիրը չի կորցնի իր իրավական ուժը: Այնուհանդերձ, այս ենթադրությունը չի գործում այն դեպքերում, երբ ակնհայտ է, որ մասնակից պետության՝ դաշնագրին միանալու համաձայնությունը պայմանավորված է վերապահման ընդունելիությամբ: Նույնը վերաբերում է նաև կամընտիր արձանագրության վերապահումներին:

¶ 17. Ինչպես պարզվում է 1998 թ. մայիսի 26-ի «Կոմիտեի կարծիքների» [25.29] 6.2 կետից, մասնակից պետությունը չեղյալ է հայտարարել կամընտիր արձանագրությունը և վերապահում կատարելով՝ անմիջապես կրկին միացել համաձայնագրին: Պարզաբանվում է նաև այն հարցը, թե ինչու մասնակից պետությունը չէր կարող ընդունել կոմիտեի՝ մահապատժի դատապարտված անձանց դիմումները քննելու իրավասությունը: Այս հստակ հանգամանքներում հասկանալի է, որ Տրինիդադ և Տոբագոն պատրաստ չէր, առանց համապատասխան վերապահման, միանալու կամընտիր արձանագրությանը, և դաշնագրին կրկին միանալը պայմանավորված էր այդ վերապահման ընդունելիությամբ: Այս ամենից հետևում է, որ կոմիտեի՝ վերապահման անվավեր լինելու մասին կարծիքն ընդունելու դեպքում ստիպված կլինեինք հաստատել, որ Տրինիդադ և Տոբագոն կամընտիր արձանագրության մասնակից չէ, ինչը, անշուշտ, անընդունելի կդարձներ դիմումը:

ՎԵՐԱՊԱՅՈՒՄՆԵՐ ՄԱԿ-Ի ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՅԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

[25.36] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի այլ համաձայնագրերը հստակ սահմանում են վերապահումներին առնչվող դրույթները: 1966 թ. ընդունված Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ) 20-րդ հոդվածի 2-րդ կետով արգելվում են այն վերապահումները, որոնք անհամատեղելի են կոնվենցիայի դրույթներին: Նման անհամատեղելիություն է առաջանում այն ժամանակ, երբ մասնակից պետությունների երկու երրորդը կամ ավելին դեմ են այդ վերապահմանը: 1979 թ. ընդունված Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (ԿՆԽՎԿ) 28-րդ հոդվածի և 1989 թ. ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (ԵԻԿ) 51-րդ հոդվածի դրույթներով նույնպես արգելվում են համապատասխան կոնվենցիայի առարկային և նպատակին հակասող վերապահումները: Կոնվենցիան չի հստակեցնում ո՛չ նման անհամատեղելիությունը որոշելու եղանակները, ո՛չ էլ դրա հետևանքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

[25.37] ՄԻԿ-ի Ընդհանուր մեկնաբանությունը հաստատում է, որ արձանագրությունը վավերացնելիս մասնակից պետություններն իրավունք ունեն սահմանելու ՔՔԻՄԴ-ով ամրագրված իրենց պարտավորությունների շրջանակը նեղացնող վերապահումներ: Սակայն նա առանձնացնում է նաև անընդունելիության շատ դեպքեր, երբ վերապահումները զրկվում են իրենց իրավական ուժից: Ընդհանուր մեկնաբանությունում իսկապես նշվում է, որ այժմ գոյություն ունեցող շատ «վերապահումներ» փաստորեն անվավեր են և այդ իսկ պատճառով չեն կարող ազդել վերապահում կատարող պետության՝ ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտավորությունների ներկա շրջանակի վրա: ՄԻԿ-ի մեծամասնությունն ավելի մեծ հավատ է ընծայել Ընդհանուր մեկնաբանության հանդեպ «Քենեդիի ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Kennedy v Trinidad and Tobago*, 845/98) գործի ընդունելիության մասին իր որոշման մեջ²⁷: Այնուամենայնիվ, հարկ է նշել Ընդհանուր մեկնաբանությունը վիճարկող փաստարկների մասին, այդ թվում՝ այդ փաստաթղթի շրջանակներում միջազգային իրավունքի դրույթների խախտումների մասին, որոնք նշված են ԱՄԴ-ի Խորհրդատվական կարծիքում և Վիեննայի կոնվենցիայում²⁸:

ՔՔԻՄԴ-ի վերաբերյալ վերապահումների հարցը պարուրված է անորոշությամբ, որը վկայում է բացահայտ հակասության մասին վերապահումների սովորութական իրավունքը հաշվի առնող պետությունների միջև երկկողմ և բազմակողմ հարաբերություններ հաստատող համաձայնագրերի մասին դասական տեսակետի և այն ժամանակակից տեսակետի միջև, ըստ որի՝ մարդու իրավունքների մասին համաձայնագրերն ըստ էության երկկողմ և բազմակողմ հարաբերություններ են հաստատում մասնակից պետությունների և անձանց միջև:

²⁷ Տե՛ս [25.22], [25.29] և [25.35]:

²⁸ Տե՛ս S. Joseph, 'A Rights Analysis of the Covenant on Civil and Political Rights' (1999) 5 *Journal of International Legal Studies* 58՝ 91:

Չեղյալ հայտարարում

[25.38] Համաձայնագիրը չեղյալ է համարվում այն դեպքում, երբ որևէ մասնակից պետություն դուրս է գալիս համաձայնագրից: 1997 թ. օգոստոսին Կորեայի ժողովրդագրամոկրատական Հանրապետության (Հյուսիսային Կորեա) աննախադեպ որոշումը միտված էր ՔՔԻՄԴ-ի չեղյալ հայտարարմանը, որի հետևանքով այդ պետությունը կազատվեց ՔՔԻՄԴ-ով ստանձնած պարտավորություններից²⁹: Ի պատասխան Հյուսիսային Կորեայի արարքի՝ ՄԻԿ-ը ընդհանուր մեկնաբանություն է հրապարակել չեղյալ հայտարարման մասին:

ԹԻՎ 26 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը որևէ դրույթ չի ներառում իր ուժի դադարեցման վերաբերյալ և չի նախատեսում չեղյալ հայտարարում կամ մասնակից պետությունների անդամակցության դադարեցում: Հետևաբար, սույն դաշնագրի դադարեցման, չեղյալ հայտարարման կամ պետությունների անդամակցության դադարեցման հնարավորությունը հարկ է քննարկել Համաձայնագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայում նշված միջազգային սովորութական իրավունքի կիրառելի կանոնների լույսի ներքո: Այդ կանոնների համաձայն՝ դաշնագիրը ենթակա չէ չեղյալ հայտարարման, և մասնակից պետությունը չի կարող դադարեցնել իր անդամակցությունը, եթե չհաստատվի, որ մասնակից պետությունները մտադիր են եղել ընդունել չեղյալ հայտարարման կամ համաձայնագրից դուրս գալու հնարավորությունը, կամ համաձայնագիրը նման իրավունք է վերապահում:

¶ 2. Այն հանգամանքը, որ դաշնագրի մասնակից պետությունները որոշում չեն կայացրել համաձայնագիրը չեղյալ հայտարարելու հնարավորության մասին, և նրանց ուշադրությունից պարզապես չեն վրիպել չեղյալ հայտարարման վերաբերյալ տեղեկությունները, հաստատվում է այն փաստով, որ դաշնագրի 41-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով մասնակից պետությանը չի թույլատրվում, համապատասխան ծանուցում ներկայացնելով, անտեսել կոմիտեի՝ միջպետական դիմումներ քննարկելու իրավասությունը, քանի որ գոյություն չունի դաշնագիրը չեղյալ հայտարարելու կամ դաշնագրից դուրս գալու որևէ դրույթ: Ավելին՝ դաշնագրի հետ միաժամանակ քննարկվող և ընդունված կից կամընտիր արձանագրությամբ մասնակից պետություններին իրավունք է վերապահվում չեղյալ հայտարարել այն: Ի լրումն՝ հարկ է համեմատության կարգով նշել, որ դաշնագրից մեկ տարի առաջ ընդունված Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի դրույթներով հստակորեն նախատեսվում է այդ փաստաթղթի չեղյալ հայտարարումը: Ուստի կարելի է եզրակացնել, որ դաշնագրի կազմողները դիտարկել են բացառել այդ փաստաթուղթը չեղյալ հայտարարելու հնարավորությունը: Նույնը վերաբերում է նաև երկրորդ կամընտիր արձանագրությանը, որը նախագծելիս դիտարկելու անտեսել են չեղյալ հայտարարմանը վերաբերող դրույթը:

¶ 3. Ավելին՝ հասկանալի է, որ դաշնագիրն իր էությամբ համաձայնագրի այնպիսի տարատեսակ չէ, որն իրավունքի չեղյալ հայտարարում է ենթադրում: Միաժամանակ նախագծված և ընդունված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի հետ մեկտեղ սույն դաշնագիրը համաձայնագրի տեսքով համակարգում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ամրագրված համընդհանուր մարդու իրավունքները: Որպես այդպիսին՝ դաշնագիրը ժամանակավոր բնույթ չունի, ինչը բնորոշ է այն համաձայնագրերին, որոնք, չնայած առանձին դրույթի բացակայության, չեղյալ հայտարարման իրավունք են ենթադրում:

¶ 4. Դաշնագրով ամրագրված իրավունքները վերաբերում են մասնակից պետության տարածքում բնակվող անձանց: Ինչպես վկայում է Մարդու իրավունքների կոմիտեի մեծ փորձը, կոմիտեն հետևողականորեն որդեգրել է այն կարծիքը, որ դաշնագրով սահմանված իրավունքների պաշտպանությունից օգտվելու դեպքում նման պաշտպանությունը տարածվում է տվյալ պետության վրա, և այդ մարդիկ շարունակում են օգտվել այդ իրավունքներից՝ անկախ մասնակից պետության կառավարության փոփոխությունից, ներառյալ համաձայնագրից մեկ կամ մի քանի պետության դուրս գալը, պետության իրավահաջորդությունը կամ մասնակից պետության ցանկացած հետագա գործողությունը, որը միտված է մարդկանց՝ դաշնագրով երաշխավորված իրավունքներից զրկելուն:

¶ 5. Ուստի կոմիտեն խորապես հավատացած է, որ միջազգային իրավունքի դրույթներով անթույլատրելի է, որ դաշնագրին միացած կամ այն վավերացրած պետությունը չեղյալ հայտարարի այն կամ դուրս գա համաձայնագրից:

Հետևաբար, ՄԻԿ-ը կարծում է, որ Հյուսիսային Կորեայի կողմից դաշնագրի դիտարկելու չեղյալ հայտարարումը որևէ կերպ չի ազդում ՔՔԻՄԴ-ով ստանձնած նրա պարտավորությունների վրա: Մասնակից

²⁹ ՄԱԿ-ի քարտուղարությունը ծանուցում է ներկայացրել բոլոր պետություններին Հյուսիսային Կանադայի՝ համաձայնագրից դուրս գալու մասին C.N.1997.TREATIES-10 of 12 խորագրի ներքո, 1997 թ. նոյեմբերին:

պետությունները լիազորված չեն դաշնագիրը չեղյալ հայտարարելու միջոցով ազատվելու ԲՔԻՄԴ-ով ստանձնած իրենց պարտավորություններից³⁰։ Մասնակից պետությունները չեն կարող չեղյալ հայտարարել նաև երկրորդ կամընտիր արձանագրությունը։

[25.39] Եվ հակառակը՝ 12-րդ հոդվածը մասնակից պետություններին իրավունք է վերապահում չեղյալ հայտարարելու առաջին կամընտիր արձանագրությունը։ 1998 թ. օգոստոսի 26-ին այդ իրավունքից օգտվել է Տրինիդադ և Տոբագոն, որը նույն օրը կրկին միացել է առաջին կամընտիր արձանագրությանը՝ ներկայացնելով մեկ այլ վերապահում մահապատժի վերաբերյալ³¹։ Գվիյանան դուրս է եկել և կրկին միացել կամընտիր արձանագրությանը՝ մահապատժի վերաբերյալ 1999 թ. ապրիլի 5-ի դրությամբ վերապահումների ազդեցությամբ։ 1997 թ. հոկտեմբերի 23-ին ճամայկան նույնպես դուրս է եկել առաջին կամընտիր արձանագրությունից, սակայն կրկին չի միացել 2003 թ. հունիսի դրությամբ³²։ Բոլոր մասնակի չեղյալ հայտարարումներն արտացոլվել են «Փրաթը և Մորգանը ընդդեմ ճամայկայի գլխավոր դատախազի» գործով Գաղտնի խորհրդի որոշման մեջ³³։

[25.40] 2000 թ. մարտի 27-ին Տրինիդադ և Տոբագոն կրկին չեղյալ է հայտարարել կամընտիր արձանագրությունը՝ ենթադրաբար ի պատասխան «Քենեդին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Kennedy v Trinidad and Tobago*) գործով կայացրած որոշման [25.29]։ Այս նոր չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտել 2000 թ. հունիսի 27-ին։ Ուստի մինչ այդ ամսաթիվը շարունակում է ուժի մեջ մնալ կոմիտեի՝ Տրինիդադ և Տոբագոյի դեմ ներկայացված բողոքներն ըստ արժանվույն քննելու իրավասությունը, նույնիսկ այն դեպքում, եթե այդ գործով կայացրած իր որոշումը կոմիտեն ներկայացնի այդ ամսաթվից հետո³⁴։

[25.41] «ԹՈՄԱՍՆ ԸՆԴԴԵՄ ՃԱՄԱՅԿԱՅԻ» (THOMAS v JAMAICA, 800/98)

Այս գործի շրջանակներում հաստատվել է ճամայկայի կողմից արձանագրության չեղյալ հայտարարման իրավական նշանակությունը։ Հեղինակի պնդումներն առ այն, որ իր հանդեպ վատ վերաբերմունք է դրսևորվել, ինչը հակասում է դաշնագրի 7-րդ և 10-րդ հոդվածների դրույթներին, անընդունելի էին, քանի որ «դրանք մասնակից պետությանն են փոխանցվել ճամայկայի կողմից կամընտիր արձանագրության չեղյալ հայտարարումն ուժի մեջ մտնելուց հետո»³⁵։ Պրն Սոլարի Յրիգոյենը հակառակ կարծիք է ներկայացրել հետևյալ ձևակերպումներով.

Թեև մասնակից պետությունը չեղյալ է հայտարարել կամընտիր արձանագրությունը 1998 թ. հունվարի 23-ին ուժի մեջ մտած փաստաթղթի միջոցով, հեղինակի բողոքում նկարագրված իրադարձությունները տեղի են ունեցել այդ ամսաթվից առաջ և ընդունելի են։

[25.42] ՌԽՎՄԿ-ի 21-րդ հոդվածի, ինչպես նաև 1984 թ. ընդունված Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի ('CAT') 31-րդ հոդվածի և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 52-րդ հոդվածի դրույթներով ակնհայտորեն թույլատրվում է չեղյալ հայտարարում։ ԿՆԽՎԿ-ի որևէ դրույթ չի առնչվում այս հարցին։ Թիվ 26 Ընդհանուր մեկնաբանության հիմնավորումը դիտարկելիս թվում է, թե դրա դրույթներով ԿՆԽՎԿ-ն չեղյալ հայտարարելու իրավունք չի նախատեսվում։

³⁰ Ինչպես պարզվում է, Հյուսիսային Կորեան ընդունել է այս դրույթը 2000 թ. իր պարբերական զեկույցը ներկայացնելիս, ՍԱԿ-ի փաստաթուղթ (2000) CCPR/C/PRK/2000/2:

³¹ Այդ վերապահմամբ արգելվում է մահապատիժ սահմանելիս առաջացող հարցերի քննարկումն առաջին կամընտիր արձանագրության շրջանակներում։ Սակայն ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշել է, որ այս վերապահումն անվավեր էր «Քենեդին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Kennedy v Trinidad and Tobago*, 845/98) գործում [25.29]:

³² Տե՛ս ընդհանուր առմամբ՝ N. Schiffrin, 'Jamaica withdraws the Right of Individual Petition under the International Covenant on Civil and Political Rights' (1998) 92 AJIL 563:

³³ Տե՛ս [1994] 2 AC 1. «Քենեդին ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Kennedy v Trinidad and Tobago*, 845/99), կետ 6.3՝ [25.29]:

³⁴ Օրինակ՝ «Բուդուն ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (*Boodoo v Trinidad and Tobago*, 721/96) գործով կոմիտեն իր տեսակետները ներկայացրել է 2002 թ. ապրիլի 2-ին, իսկ բողոքը նախապես ներկայացվել է 1994 թ. հունիսի 13-ին:

³⁵ Կետ 6.3:

Իրավահաջորդություն

[25.43] ՄԻԿ-ն ընդհանուր առմամբ այն կարծիքն է արտահայտել, որ իրավահաջորդ պետություններն ինքնաբերաբար ժառանգեն ՔՔԻՄԴ-ով և կամընտիր արձանագրություններով իրենց նախորդների ստանձնած պարտավորությունները³⁶: Թիվ 26 Ընդհանուր մեկնաբանության շրջանակներում կոմիտեն հայտարարել է.

¶ 4. Ղաշնագրով ամրագրված իրավունքները պատկանում են մասնակից պետության տարածքում բնակվող անձանց: Ինչպես վկայում է Մարդու իրավունքների կոմիտեի մեծ փորձը, կոմիտեն հետևողականորեն որդեգրել է այն կարծիքը, որ ղաշնագրով սահմանված իրավունքների պաշտպանությունից օգտվելու դեպքում նման պաշտպանությունը տարածվում է տվյալ պետության վրա, և այդ մարդիկ շարունակում են օգտվել այդ իրավունքներից՝ անկախ մասնակից պետության՝ կառավարության մակարդակով փոփոխությունից, ներառյալ մեկ կամ մի քանի պետության համաձայնագրից դուրս գալը, պետության իրավահաջորդությունը կամ մասնակից պետության ցանկացած հետագա գործողությունը, որը միտված է ղաշնագրով երաշխավորված իրավունքներից մարդկանց զրկելուն:

[25.44] Այնուհանդերձ «Կուոկ Կոյն ընդդեմ Պորտուգալիայի» (*Kuok Koi v Portugal*, 925/00) գործում պրն Անդոն իրավահաջորդության վերաբերյալ մինչ այժմ ՄԻԿ-ի համաձայնությամբ հակառակ կարծիք է արտահայտել³⁷.

Անձամբ ես համաձայն եմ կոմիտեի այն որոշմանը, որով թիվ 26 Ընդհանուր մեկնաբանության 4-րդ պարբերությունը համարվում է ծրագրային հայտարարություն, սակայն չեմ կարող համաձայնել, որ այն պետք է դիտել որպես միջազգային սովորութեական իրավունքի կանոն: Ինչ վերաբերում է պետության՝ ղաշնագրին առնչվող պրակտիկային, միայն նախկին Չարավսլավիայի և Չեխոսլովակիայի՝ համաձայնագրից դուրս գալու դեպքերում է, որ, Ղազախստանից բացի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նորակազմ պետություններից յուրաքանչյուրը նշել է, որ «նախորդ պետության իրավահաջորդը լինելով՝ ինքն ընդունում է ղաշնագիրը»: Համաձայնագրից դուրս եկած բոլոր մնացած պետությունները նշել են, որ իրենք «միանում են» ղաշնագրին, «ինչը ենթադրում է, որ իրավահաջորդի կարգավիճակով չեն ընդունում նախորդ պետությունների ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտավորությունները, այլ կրկին միանում են ղաշնագրի պարտավորություններին: Կամընտիր արձանագրության վերաբերյալ պետությունների համապատասխան փորձից պարզ է դառնում, որ միայն Չեխիայի Հանրապետությունը և Սլովակիան են իրավահաջորդի կարգավիճակով «բացահայտ» ընդունել կամընտիր արձանագրությամբ սահմանված պարտավորությունները: Իհարկե, պետությունների փորձը վկայում է, որ գոյություն չունի ղաշնագրով սահմանված պարտավորությունների ինքնաբերական փոխանցում որևէ պետության, այն էլ կամընտիր արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների դեպքում: Հարկ է, որ պետությունը «բացահայտ» նշի՝ ընդունում է ղաշնագրով և կամընտիր արձանագրությամբ սահմանված պարտավորությունները: Նման նշումի բացակայության դեպքում կհամարվի, որ պետությունը չի ընդունել այդ պարտավորությունները:

[25.45] Անդոյի կարծիքը հակասում է Միջազգային իրավունքի հանձնաժողովի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի³⁸, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի³⁹ և, իհարկե, Մարդու իրավունքների կոմիտեի⁴⁰ նման մարդու իրավունքների և մարդասիրական միջազգային հաստատությունների դիրքորոշմանը: Բացի այդ, 1978 թ. ընդունված Համաձայնագրերի հարցում պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսվում է, որ իրավահաջորդ պետությունները ընդհանուր առմամբ ժառանգում են նախորդող պետությունների՝ համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, թեև 16-րդ հոդվածը սահմանում է, որ այս կանոնը չի գործում «նորանկախ պետությունների» դեպքում:

[25.46] ՔՔԻՄԴ-ն ընդունած պետությունների հնարավոր իրավահաջորդներից միայն Ղազախստանը՝ ԽՍՀՄ իրավահաջորդ պետություններից մեկը, բացահայտորեն չի ստանձնել ՔՔԻՄԴ-ով սահմանված պարտավորությունները, թեև ՄԻԿ-ն այդ պետությամբ խնդրել է զեկույց ներկայացնել մասնակից պե-

³⁶ Տե՛ս նախկին Չարավսլավիայի տարածքում իրավահաջորդ պետությունների՝ ՔՔԻՄԴ-ով ստանձնած պարտավորությունների մասին ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/SR 1178 (զեկույցվել է 15 EHRR 233 (1993 թ.)): Տե՛ս նախկին ԽՍՀՄ տարածքում իրավահաջորդ պետությունների պարտավորություններ, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/48/40 (1993 ՄԻԿ-ի տարեկան զեկույց), կետ 41:

³⁷ Այս գլխում *Կուոկ Կոյի* գործով մեկնաբանությունը վերցված է S. Joseph, 'Human Rights Committee: Recent Cases' (2002) 2 *Human Rights Law Review* 287, 291-3:

³⁸ ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/1995/80 (1995):

³⁹ ՄԱԿ-ի փաստաթուղթ E/CN.4/1996/76 (1996):

⁴⁰ Տե՛ս M. Kamminga, 'State Succession in Respect of Human Rights Treaties' (1996) 7 *European Journal of International Law* 469՝ 474, ինչպես նաև D.B. Majzub, 'Does Secession mean Succession? The International Law of Treaty Succession and an Independent Quebec' (1999) *Queen's Law Journal* 411, 440-4:

տությունների մման⁴¹: Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը՝ որպես իրավահաջորդ, բացահայտ ստանձնել է նաև Միացյալ Թագավորությունից և Պորտուգալիայից իրեն, Հոնկոնգին և Մակաոյին անցած համապատասխան տարածքներում համաձայնագրով սահմանված պարտավորությունները, թեև Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը որպես մեկ միավոր չի միացել ՔՔԻՄՂ-ին⁴²:

[25.47] Այնուամենայնիվ, Անդոն իրավացիորեն նշում է, որ մման կարգի մի շարք պետություններ, հատկապես նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող պետությունները և այժմ Էրիթրեան, բացահայտ «միացել են» ՔՔԻՄՂ-ին՝ «հաշվի առնելով, որ իրենք իրավահաջորդի կարգավիճակով չեն ժառանգել նախորդ պետությունների՝ ՔՔԻՄՂ-ով ստանձնած պարտավորությունները»: Նախկին խորհրդային պետությունների՝ համաձայնագրին միանալու գործելակերպը վկայում է, որ պետությունների փորձը բավարար չէ այն փաստարկն ընդունելու համար, որի համաձայն՝ իրավահաջորդ պետություններն ինքնաբերաբար ժառանգում են մարդու իրավունքների մասին համաձայնագրերի պարտավորությունները: Բացի այդ, համաձայնագրին միանալու մման դեպքերը ոչ թե իրավական, այլ խորհրդանշական նշանակություն ունեն՝ իրավահաջորդության իրավական դրությամբ հանդերձ⁴³:

[25.48] *Կուռկ Կոյի* գործի հեղինակը Մակաոյի բնակիչ է, որը բողոքում է այդ տարածքում ենթադրյալ անարդար դատաքննության դեմ: Դիմումը ներկայացնելու ժամանակ Մակաոն Պորտուգալիայի գաղութն էր: Մակաոյն դիմումը քննելու ժամանակ Մակաոյի տարածքում արդեն գործում էր Չինաստանի ժողովրդական Հանրապետության իրավասությունը: ՉԺՀ-ն հստակորեն նշել է, որ Մակաոն շարունակելու է կատարել ՔՔԻՄՂ-ով ստանձնած պարտավորությունները: Այսուհանդերձ, նա նույնը չի ասել կամընտիր արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների մասին: Անդրադառնալով *Կուռկ Կոյի* գործին՝ ՄԻԿ-ի մեծամասնությունը որոշել է, որ Մակաոյում կամընտիր արձանագրությունն ուժի մեջ է մտել նախքան ՉԺՀ-ի իրավասության տակ անցնելը⁴⁴: ՄԻԿ-ը չպետք է որոշեր, թե արդյոք ՉԺՀ-ն իրավահաջորդի կարգավիճակով ստանձնե՞լ է այդ պարտավորությունները⁴⁵: Վիճելի է այն հարցը, որ ՄԻԿ-ի՝ միայն ՔՔԻՄՂ-ի հիմնական դրույթների հետ հստակ առնչվող թիվ 26 Ընդհանուր մեկնաբանությամբ սահմանված իրավասությունը չի վերաբերում կամընտիր արձանագրության ընթացակարգային դրույթներին: Իրավահաջորդի կարգավիճակով կամընտիր արձանագրությանը միանալու առումով պետության փորձը աղքատ է⁴⁶: Այնուամենայնիվ, Վիեննայի կոնվենցիայում նշվում է, որ ՉԺՀ-ն իրավահաջորդի կարգավիճակով միացել է կամընտիր արձանագրությանը, քանի որ սույն կոնվենցիայի համաձայն՝ Մակաոյի տարածքը չի կարելի դասել նորանկախ պետությունների շարքը:

⁴¹ 2000 թ. հուլիսի 24-ին ՄԻԿ-ը խնդրել է Ղազախստանին նախնական զեկույց ներկայացնել (տե՛ս ՄԱԿ-ի փաստաթուղթ, կետ 72., Ղազախստանը ստորագրել է ՔՔԻՄՂ-ը 2003 թ. դեկտեմբերին):

⁴² Այնուհանդերձ, Մակաոյում կամընտիր արձանագրության կարգավիճակը որոշ շփոթության տեղիք է տալիս, տե՛ս [25.47]:

⁴³ Տե՛ս ՄԻԿ-ի Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեջանի վերաբերյալ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 38 (1994): «Միջազգային իրավունքի հարցում պետությունների իրավահաջորդությունը. նշումներ վերջերս ներկայացված տեսության և պետության հակառակ տեսության մասին» (1997) 15 *Boston University International Law Journal* 71, Հ. Բիմելմանը 89-րդ էջում պնդում է, որ գոյություն ունի սովորական իրավունքից բխող կանոն, ըստ որի՝ պետություններն իրավահաջորդի կարգավիճակով ինքնաբերաբար ստանձնում են համաձայնագրերով սահմանված պարտավորություններն այն դեպքում, եթե այդ համաձայնագրերին միանալու հնարավորություն կա, թեև «խորհրդային Միության իրավահաջորդ պետությունները կասկածներ ունեն այս հարցի մասին»: Տե՛ս նաև ընդհանուր առմամբ՝ M. Beato, 'Newly Independent and Separating States' Succession to Treaties: Considerations on the of the Republics of the Former Soviet (1994) 9 *American University Journal of International Law and Policy* 525:

⁴⁴ Տե՛ս այստեղ՝ [4.06]:

⁴⁵ Պարոնայք Քլայնը, Ռիլաս Փոսադան և Յալդենը ենթադրում են, որ կամընտիր արձանագրությունն այդ ժամանակ Մակաոյի հարցում ուժի մեջ չի մտել ՉԺՀ- ում: Տե՛ս [6.38]:

⁴⁶ Հավանաբար, Մակաոյի և նախկինում Պորտուգալիայի գաղութ Արևելյան Թիմորի հարցում ՉԺՀ-ից բացի միայն Չեխիայի Հանրապետությունը և Սլովակիան են այսօրվա դրությամբ իրավահաջորդի կարգավիճակով միացել կամընտիր արձանագրությանը: Նախկին ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի պետությունների մման այլ իրավահաջորդ պետությունների դեպքում նախորդող պետությունը չի միացել կամընտիր արձանագրությանը: Հարկ է նշել, որ անընդունելի համարվող «*Դրբայն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*» (498/92) գործի շրջանակներում որևէ հարց չի բարձրացվել այն փաստի կապակցությամբ, որ բոլոր հիմնական փաստերը նախորդել են Չեխոսլովակիայի տրոհմանը Չեխիայի Հանրապետության և Սլովակիայի:

Մասնակի չեղյալ հայտարարումներ

ՔՔԻՄԴ-ի 4-րդ շՈՂՎԱԾ

1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը և որը հայտարարված է պաշտոնապես, սույն դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի չեղումն սույն դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորություններին և չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

2. Այս դրույթը չի կարող հիմք ընդունվել 6-րդ, 7-րդ, 8-րդ (1-ին և 2-րդ կետեր), 11-րդ, 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածներից որևէ չեղում կատարելու համար:

3. Սույն դաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է չեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարության միջնորդությամբ սույն դաշնագրի մասնակից մյուս պետություններին անհապաղ տեղեկացնում է այն դրույթների մասին, որոնցից ինքը չեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով հետագայում հաղորդում է նաև այդ չեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

[25.49] 4-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները կարող են «մասամբ չեղյալ համարել» կամ սահմանափակել ՔՔԻՄԴ-ով ամրագրված երաշխիքները՝ համապատասխանաբար արձագանքելով լուրջ արտակարգ դրությանը: Վերապահումներ անելու իրավունքի նման մասնակի չեղյալ համարելու իրավունքն էլ կարող է «անհրաժեշտ չարիք» դառնալ: Թեև արտակարգ դրության ժամանակ ընդհանուր հասարակական անվտանգությունը երաշխավորելու նպատակով քաղաքացիական ազատությունները սահմանափակելու հարցը շարունակում է վիճելի մնալ⁴⁷, անկասկած ճիշտ է նաև, որ մարդու իրավունքների որոշ առավել կոպիտ խախտումներ նկատվում են ենթադրյալ արտակարգ իրավիճակների ժամանակ⁴⁸: Ուստի կարևոր է, որ մասնակի չեղյալ հայտարարումները խստիվ վերահսկվեն և չվերածվեն իշխանությունների ընդդիմադիրների «իրավունքների ցինիկ և դիտավորյալ խախտումների» պաշտպանության իրավական միջոցի⁴⁹:

[25.50] Կամընտիր արձանագրության շրջանակներում քիչ գործեր են առնչվել մասնակի չեղյալ հայտարարումներին: Թեև մի շարք դեպքեր առնչվել են «արտակարգ իրավիճակներում նախատեսված միջոցների», մասնակից պետությունները հազվադեպ են հիշատակել մասնակի չեղյալ հայտարարումը դրանք պատճառաբանելու համար⁵⁰: 2001 թ. լույս է տեսել ՄԻԿ-ի թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությունը, որը բավականաչափ լուսաբանել է 4-րդ հոդվածի նշանակությունը, ուստի և ստորև ծավալուն քաղվածքներ են ներկայացված այդ փաստաթղթից: Ներքոհիշյալ մեկնաբանությունը լրացնում է նաև մարդու իրավունքների մասնակի չեղյալ հայտարարումների վերաբերյալ փորձագետների համախորհրդակցություններից, այսինքն՝ Սիրակուզայի սկզբունքներից⁵¹ և Փարիզյան չափանիշներից⁵² բխող չափորոշիչների վկայակոչումը: Թեև ՄԻԿ-ը պարտավոր չէ հետևել այդ սկզբունքներին, ամենայն հավանականությամբ կրելու է դրանց ազդեցությունը հետագայում 4-րդ հոդվածը մեկնաբանելիս:

⁴⁷ Տե՛ս P. R. Ghandhi, 'The Human Rights Committee and Derogation in Public Emergencies' (1989) 32 *German Yearbook of International Law*, էջ 323- 326:

⁴⁸ Տե՛ս D. McGoldrick, *The Human Rights Committee* (Clarendon Press, Oxford, 1994) *States of Emergency: Their Impact on Human Rights* (ICJ, Geneva, 1983):

⁴⁹ Գանդի, տե՛ս վերը, ծմբ. 47, 323:

⁵⁰ Օրինակ՝ մասնակի չեղյալ հայտարարման իրավունքը չի հիշատակվում «Պոլայ Կամպոսն ընդդեմ Պերուի» (*Polay Campos v Peru*, 577/94) [14.65] գործում, որի շրջանակներում դիտարկվել են ենթադրյալ ահաբեկիչների գործերի դատաքննության համար նախատեսված հատուկ միջոցներ:

⁵¹ «ՔՔԻՄԴ-ի դրույթների սահմանափակումների և մասնակի չեղյալ հայտարարման մասին Սիրակուզայի սկզբունքներ» (1985) 7 *HRQ* 1 [«Էյքլեթյուն» Սարդու իրավունքների եռամսյա հանդես], այսուհետ՝ «Սիրակուզայի սկզբունքներ»: Այս սկզբունքները ձևակերպվել են միջազգային իրավունքի 31 ակամավոր փորձագետների մասնակցությամբ Սիցիլիայում տեղի ունեցած կոնֆերանսի ընթացքում:

⁵² «Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների նորմերի փարիզյան նվազագույն չափանիշները» (1985) 79 *AJIL* 1072, այսուհետ՝ «Փարիզյան չափանիշներ», ընդունվել են 1984 թ. Միջազգային իրավունքի ասոցիացիայի կողմից:

ՄԱՍՆԱԿԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԺԻ ԷԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ**Ժողովրդի կյանքին սպառնացող արտակարգ դրություն**

[25.51] Հստակ սահմանված են մասնակի չեղյալ հայտարարման պայմանները: Առաջին նախապայմանն է «Ժողովրդի կյանքին սպառնացող արտակարգ դրության» առկայությունը, ինչպես օրինակ՝ պատերազմի, ահաբեկչական գործողությունների հետևանքով հայտարարված արտակարգ դրությունը կամ մեծ բնական աղետը, օրինակ՝ ջրհեղեղը կամ երկրաշարժը:

[25.52] Պարզ է դառնում, որ փաստորեն արտակարգ իրավիճակը կարող է ենթարկվել աշխարհագրական սահմանափակումների, ինչպես Հյուսիսային Իռլանդիայում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունների հետևանքով Միացյալ Թագավորությունում հայտարարված արտակարգ դրությունը: Նման արտակարգ իրավիճակների դեպքում, սակայն, կարող է վտանգվել ամբողջ բնակչության կյանքը⁵³: Սակայն հաստատված չէ, թե արդյոք 4-րդ հոդվածի 1-ին կետն ընդգրկում է սահմանափակ աշխարհագրական ազդեցություն ունեցող արտակարգ իրավիճակներ, ինչպես, ասենք, տեղայնացված բնույթի ջրհեղեղները: Սիրակուզայի 39-րդ սկզբունքում նշվում է, որ արտակարգ է այն իրավիճակը, որի դեպքում տուժում է ամբողջ բնակչությունը⁵⁴: Սակայն Փարիզյան չափանիշներում առկա է հետևյալ պնդումը:

ՓԱՐԻԶՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

(Ա) 1(բ). «Երկրում հայտարարված արտակարգ դրություն» արտահայտությամբ սահմանվում է առկա կամ վերահաս ճգնաժամային կամ հասարակությանը սպառնացող վտանգի այն բացառիկ իրավիճակը, որի հետևանքով տուժում է ամբողջ բնակչությունը կամ միայն այն տարածքի բնակչությունը, որտեղ արտակարգ դրություն է հայտարարվել, և որը վտանգում է տվյալ պետության համայնքի բնականոն կյանքը...

(Ա) 4. Արտակարգ դրություն կարող է հայտարարվել տվյալ պետության ամբողջ տարածքում կամ որևէ հատվածում՝ հաշվի առնելով այդ հայտարարման պատճառը հանդիսացող հանգամանքների ազդեցությունն իրականում կրող տարածքները: Դա չի խոչընդոտում անհրաժեշտության դեպքում արտակարգ իրավիճակներում ձեռնարկվող միջոցների կիրառումը երկրի այլ հատվածներում, ինչպես նաև այն տարածքների բացառումը, որտեղ արդեն վերացվել են նման հանգամանքները:

Նշվում է նաև, որ աշխարհագրական տեսանկյունից սահմանափակված, սակայն լուրջ հետևանքների հանգեցնող արտակարգ հանգամանքների դեպքում հարկ է համաձայնագրերի մասնակի չեղյալ հայտարարման իրավունք վերապահել պետություններին: Հակառակ դեպքում կտուժեն Ռուսաստանի Դաշնության կամ Կանադայի նման մեծ տարածք ունեցող պետությունները:

[25.53] Սիրակուզայի 41-րդ սկզբունքով հաստատվում է, որ «տնտեսական դժվարություններն ինքնին չեն կարող արդարացնել չեղյալ հայտարարման ուղղությամբ ձեռնարկված միջոցները»: Արտակարգ հանգամանքներն իրենց էությամբ արտակարգ իրավիճակներ են, մինչդեռ տնտեսական զարգացման ցածր մակարդակը, ցավոք, բնորոշ է շատ պետություններին:

Համաչափության պահանջը

[25.54] Հարկ է, որ համաձայնագրի մասնակի չեղյալ հայտարարմանն ուղղված թույլատրելի միջոցները «միայն խիստ անհրաժեշտ չափով սահմանափակեն» ՔՔԻՄԴ-ով սահմանված իրավունքները, ինչը ենթադրում է համաչափության սկզբունքի կիրառում մասնակի չեղյալ հայտարարման օրինականությունը որոշելիս:

⁵³ M. Nowak, *CCPR Commentary* (N.P. Engel, Kehl, 1993), 79: Իսկապես, կարելի է նշել, որ բազմաթիվ ահաբեկչական գործողություններ են կատարվել Միացյալ Թագավորության կղզում:

⁵⁴ Տե՛ս նաև վերը, Գանդի, ծնթ. 47, 336:

ԹԻՎ 29 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 4. Մասնակի չեղյալ հայտարարման ցանկացած միջոցի ներկայացվող հիմնական պահանջը, որ ամրագրված է սույն դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում, այն է, որ նման միջոցները պետք է սահմանափակվեն իրավիճակով թելադրված պահանջներով: Այս պահանջը վերաբերում է արտակարգ դրության տևողությանը, աշխարհագրական շառավղին, նյութի շրջանակին և դաշնագրի դրույթների՝ արտակարգ իրավիճակով պայմանավորված մասնակի չեղյալ հայտարարման ցանկացած միջոցի: Արտակարգ դրության ժամանակ դաշնագրով ստանձնած որոշ պարտավորությունների մասնակի չեղյալ հայտարարումը հստակ տարբերվում է նույնիսկ բնականոն իրավիճակներում դաշնագրի որոշ դրույթներով թույլատրելի սահմանափակումներից և վերապահումներից: Այնուհանդերձ, իրավիճակի հանգամանքներով թելադրված ցանկացած մասնակի չեղյալ հայտարարում սահմանափակելու պարտավորությունն արտացոլում է համաչափության սկզբունքը, որը բնորոշ է դաշնագրի դրույթները չեղյալ համարելու և իրավունքները սահմանափակելու լիազորությանը: Ավելին՝ նույնիսկ այն փաստը, որ որևէ հատուկ դրույթի թույլատրելի մասնակի չեղյալ հայտարարումն ինքնին կարելի է արդարացնել տվյալ իրավիճակով թելադրված պահանջներով, չի շրջանցում նաև դաշնագրի դրույթների մասնակի չեղյալ հայտարարումից բխող առանձնահատուկ միջոցների կիրառումը իրավիճակով թելադրված պահանջներով հիմնավորելու պայմանը: Գործնականում այս պայմանով երաշխավորվում է, որ դաշնագրի որևէ դրույթ, որքան էլ որ օրինականորեն հիմնավորված լինի, այնուհանդերձ բոլորովին անկիրառելի կլինի մասնակից պետության վարվելակերպում: Մասնակից պետությունների զեկույցները քննարկելիս կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել համաչափության սկզբունքի առնչությամբ ուշադրության պակասի վերաբերյալ:

¶ 5. Իրավունքները մասամբ չեղյալ հայտարարելու ժամանակին և ծավալին առնչվող հարցերը չի կարելի առանձնացնել դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված դրույթից, որի համաձայն՝ մասնակից պետության՝ դաշնագրով ստանձնած ցանկացած պարտավորություն մասամբ չեղյալ դարձնող միջոցները հարկ է սահմանափակել «իրավիճակով խստիվ թելադրված պահանջներով»: Այս պայմանով նախատեսվում է, որ մասնակից պետությունները մանրամասն հիմնավորեն ոչ միայն արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին իրենց որոշումը, այլև նման հայտարարությունների վրա հիմնված ցանկացած առանձնահատուկ միջոցառումները: Այն դեպքում, եթե պետությունները մտադիր են վկայակոչել, օրինակ, բնական աղետի, բռնության դրսևորման միջադեպերով ուղեկցվող զանգվածային ցույցի կամ մեծ արդյունաբերական վթարի ժամանակ դաշնագիրը մասամբ սահմանափակելու իրավունքը, հարկ է, որ նրանք կարողանան հիմնավորել ոչ միայն այն փաստարկը, որ նման իրադրությունը սպառնում է ժողովրդի կյանքին, այլև, որ դաշնագրի դրույթներից մասամբ սահմանափակելու ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների անհրաժեշտությունը թելադրված է իրավիճակի խիստ պահանջներով: Կոմիտեի կարծիքով՝ նման իրավիճակներում սովորաբար բավարար է, օրինակ, 12-րդ հոդվածով սահմանված տեղաշարժվելու ազատության կամ 21-րդ հոդվածով սահմանված միավորումներ կազմելու ազատության շրջանակներում դաշնագրով ամրագրված որոշ իրավունքներ սահմանափակելու հնարավորությունը, սակայն վերոնշյալ դրույթներից որևէ մասնակի չեղյալ հայտարարում չի կարելի արդարացնել իրավիճակով թելադրված պահանջներով:

¶ 6. Այն փաստը, որ դաշնագրի որոշ դրույթներ 4-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված են որպես մասնակի չեղյալ հայտարարման ոչ ենթակա դրույթներ, չի նշանակում, որ դաշնագրի մյուս հոդվածները կարելի է կամայականորեն չեղյալ հայտարարել, նույնիսկ ժողովրդի կյանքի համար վտանգի առկայության դեպքում: Դաշնագրի դրույթների բոլոր մասնակի չեղյալ հայտարարումների թիվն իրավիճակով խիստ թելադրված չեղյալ հայտարարումների շրջանակով սահմանափակելու օրինական պարտավորությամբ և՛ մասնակից պետությունը, և՛ կոմիտեն ներկա իրավիճակի գնահատման հիման վրա դաշնագրի յուրաքանչյուր հոդվածը մանրազնին վերլուծելու պարտականություն են ստանձնում:

[25.55] Հաշվի առնելով դաշնագրով սահմանված իրավունքների մեծ մասի թույլատրելի սահմանափակման բավականին լայն շրջանակը, ինչպես օրինակ՝ 12-րդ և 19-րդ հոդվածներում թվարկված սահմանափակումները կամ 17-րդ հոդվածի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոչ կամայական արգելքների հանդուրժողականությունը, կամ 25-րդ հոդվածով սահմանված քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքի հիմնավորված թույլատրելի սահմանափակումները և 26-րդ հոդվածով ամրագրված անխտրականության իրավունքը, շատ բարդ է հասկանալ, թե ինչպես են այդ թույլատրելի սահմանափակումներով քողարկված միջոցները երբևէ համապատասխանելու համաչափության ստուգման խիստ պահանջներին, նույնիսկ շատ լուրջ արտակարգ դրության պայմաններում: Օրինակ՝ ինչպե՞ս կարելի է երբևէ համարել, որ ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելու պահանջը համաչափ է 12-րդ հոդվածի 3-րդ կետով թույլատրելի սահմանափակումներին, այսինքն՝ «ազգային անվտանգությունը, հասարակական կարգը (*ordre public*), բնակչության առողջությունը, բարոյական արժեքները կամ այլոց իրավունքներն ու ազատությունները երաշխավորելու համար անհրաժեշտ սահմանափակումներին»: Նմանապես դժվար է ենթադրել, որ 17-րդ հոդվածի 1-ին կետի խախտում հանդիսացող անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի «կամայական» սահմանափակումները կա-

որոշ են երբևէ համաչափ համարվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնահատման «կամայականության» որոշմամբ ենթադրվում է համաչափության ստուգման կիրառում⁵⁵:

[25.56]

ՄԻՐԱԿՈՒՉԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

54. Խիստ անհրաժեշտության սկզբունքը հարկ է կիրառել օբյեկտիվ եղանակով: Յուրաքանչյուր միջոց պետք է ուղղված լինի փաստացի, հստակ, առկա կամ վերահաս վտանգի դեմ և չի կարող կիրառվել պարզապես հնարավոր վտանգի վերաբերյալ կասկածի դեպքում:

54-րդ սկզբունքը վիճելի է, քանի որ միտված է արգելելու հետագա ակնկալվող սպառնալիքները նվազեցնելուն ուղղված մասնակի չեղյալ հայտարարումները: Նման շատ միջոցներն իսկապես անպատշաճ են, քանի որ դրանք կարող են պարզապես վերածվել օրինական քաղաքական ընդդիմության դեմ իշխանությունների կողմից ձեռնարկվող դաժան միջոցների⁵⁶ կամ չափազանց մեծ և կոպիտ արձագանքի՝ ի պատասխան կանխատեսվող խախտումների⁵⁷: Բայց հարց է ծագում, թե որքան «վերահաս» պետք է լինի վտանգը, որպեսզի դրույթների մասնակի չեղյալ հայտարարումները թույլատրելի համարվեն, քանի որ, ինչպես ապացուցված է, շատ ավելի լավ է կանխարգելել երկրում արտակարգ հանգամանքների առկայությունը, քան հետագայում «վերացնել» դրանցից բխող արտակարգ իրավիճակը: Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանությունը չի առնչվում այս հարցին:

[25.57] Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանության շրջանակներում ՄԻԿ-ը հայտարարել է, որ «4-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկված միջոցները բացառիկ և ժամանակավոր բնույթ ունեն և կարող են կիրառվել այնքան ժամանակ, քանի դեռ վտանգված է տվյալ ժողովրդի կյանքը»⁵⁸: Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը կրկին հայտարարել է, որ «դաշնագրի դրույթները մասամբ չեղյալ համարող միջոցները պետք է բացառիկ և ժամանակավոր բնույթ ունենան»⁵⁹: Բացի այդ, «դաշնագրի դրույթները մասամբ չեղյալ հայտարարող մասնակից պետության հիմնական նպատակը պետք է լինի բնականոն իրավիճակի վերականգնումը, որի դեպքում կվերականգնվի դաշնագրի դրույթների լիակատար իրագործումը⁶⁰: Ուստի տվյալ ճգնաժամի ավարտից հետո հարկ է դադարեցնել արտակարգ իրավիճակներով թելադրված միջոցների կիրառումը: Ցավոք, արտակարգ դրության ժամանակ կիրառվող միջոցները շատ պետություններում «վերածվել են բնականոն իրավիճակի վերականգնումը հետաձգող միջոցի»⁶¹ կամ ավելի հաճախ վերածվել են հենց բնականոն միջոցների և կայուն մնացել տարիներ և նույնիսկ տասնամյակներում»:

Համապատասխանություն միջազգային իրավունքի դրույթներին

[25.58] 4-րդ հոդվածի դրույթներով իշխանություններին հստակորեն արգելվում է մասամբ չեղյալ հայտարարել միջազգային իրավունքի այլ միջոցները: Այս կանոնն ավելի ընդհանուր կարգով ներկայացված է ՔՔԻՄԴ-ի 5-րդ հոդվածում:

ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 9. Ի լրումն՝ հարկ է նշել, որ 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն՝ դաշնագրի դրույթները մասամբ չեղյալ դարձնող որևէ միջոց չի կարող համահունչ լինել միջազգային իրավունքի, հատկապես միջազգային մար-

⁵⁵ S. Joseph, 'Human Rights Committee: General Comment 29' (2002) 2, «Հյուսն ռայթս լո ռիվյու» (անգլ. *Human Rights Law Review*) 81, at 97: Տե՛ս «Տոոնեն ընդդեմ Ավստրալիայի» (*Toonen v Australia*, 488/92), գործ (պարբ. 8.3 [16.36], և թիվ 16 Ընդհանուր մեկնաբանություն (17-րդ հոդվածի մասին), պարբ. 4 [16.12]:

⁵⁶ Նման միջոցների անճշտությունն ապացուցվել է կամընտիր արձանագրության շրջանակներում Ուրուգվայի դեմ հարուցված մի շարք հին գործերի փաստերով:

⁵⁷ Օրինակ՝ 1950-ական թվականներին ԱՄՆ-ում կոմունիստների հետևորդների կողմից Մակքաթայթին դատական հետապնդման ենթարկելու դեպքը:

⁵⁸ Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություն, պարբ. 3:

⁵⁹ Կետ 2:

⁶⁰ Կետ 1:

⁶¹ S. Marks, 'Civil Liberties at the Margin: the UK Derogation and the European Court of Human Rights' (1995) 15 *Oxford Journal of Legal Studies* 69, էջ՝ 86:

դասիրական իրավունքի կանոնների շրջանակներում մասնակից պետության ստանձնած այլ պարտավորություններին: Դաշնագրի 4-րդ հոդվածը չի կարելի մեկնաբանել որպես դաշնագրի դրույթների մասնակի չեղյալ հայտարարման հիմնավորում, եթե նման դադարեցումները հանգեցնեն թե՛ համաձայնագրերով, թե՛ ընդհանուր միջազգային իրավունքով պետության ստանձնած այլ պարտավորությունների խախտման: Այս հարցին անդրադառնում է նաև դաշնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ հարկ է սահմանափակման կամ մասնակի չեղյալ հայտարարման չենթարկել այլ փաստաթղթերով ճանաչված որևէ հիմնական իրավունք այն պատրվակով, որ դաշնագիրը կամ չի ընդունում նման իրավունքներ, կամ էլ ընդունում է ավելի նեղ շրջանակով:

¶ 10. Թեև Մարդու իրավունքների կոմիտեի գործառնություններից չի բխում այլ համաձայնագրերի հետ մասնակից պետության վարքագծի համապատասխանության վերանայումը, դաշնագիրն իրավասություն է վերապահում նրան դաշնագրի առանձնահատուկ դրույթների մասնակի չեղյալ հայտարարման թույլատրելիության հարցը քննելիս հաշվի առնելու մասնակից պետության այլ միջազգային պարտավորությունները: Ուստի վկայակոչելով 4-րդ հոդվածի 1-ին կետը կամ 40-րդ հոդվածի դրույթներին համապատասխան զեկուցելով արտակարգ իրավիճակներում իրավական շրջանակների մասին՝ հարկ է, որ մասնակից պետությունները տեղեկություններ տրամադրեն տվյալ հարցին առնչվող իրենց ստանձնած այլ միջազգային պարտավորությունների վերաբերյալ, որոնք հատկապես կիրառելի են արտակարգ իրավիճակներում: Այս հարցի շրջանակներում մասնակից պետությունները պարտավոր են պատշաճ կարգով հաշվի առնել արտակարգ իրավիճակներում կիրառելի միջազգային իրավունքի շրջանակներում մարդու իրավունքների չափանիշների զարգացումները:

[25.59] Նախորդ պարբերության ծանոթագրություններից մեկի մեջ ՄԻԿ-ը նշում է «միջազգային իրավունքի որոշ այլ համապատասխան փաստաթղթեր»⁶², ներառյալ՝ գրեթե բոլոր պետությունների կողմից վավերացված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (ԵԻԿ/ՀԿԿ)⁶³: Տվյալ կոնվենցիայի 38-րդ հոդվածից պարզ է դառնում, որ այն կիրառելի է արտակարգ իրավիճակներում: Քանի որ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ըստ էության համընկնում են ՔՔԻՄԴ-ի 24-րդ հոդվածով սահմանված իրավունքներին⁶⁴, հավանական է, որ ՔՔԻՄԴ-ի մասնակից պետությունների ճնշող մեծամասնությանն այլևս 4-րդ հոդվածով լիազորություն չի վերապահվի մասամբ չեղյալ հայտարարելու 24-րդ հոդվածի դրույթները, թեև 24-րդ հոդվածի իրավունքները չեն նշվում որպես անառարկելի նույնիսկ 4-րդ հոդվածի 2-րդ կետում⁶⁵:

Մասնակի չեղյալ հայտարարման միջոցների անխտրականություն

[25.60]

ԹԻՎ 29 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 8. Թեև դաշնագրի 26-րդ հոդվածը կամ անխտրականությանը վերաբերող 2-րդ, 3-րդ, 14-րդ հոդվածների 1-ին կետով, 23-րդ հոդվածի 4-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին կետով և 25-րդ հոդվածով ամրագրված այլ դրույթները չեն ընդգրկվել 4-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անառարկելի դրույթների շարքում, սակայն դրանք անխտրականության իրավունքի տարրեր են կամ շրջանակներ, որոնք ցանկացած հանգամանքներում ենթակա չեն մասնակի չեղյալ հայտարարման: Հարկ է հետևել 4-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված այս դրույթին հատկապես այն դեպքերում, երբ դաշնագրի դրույթները մասամբ չեղյալ դարձնող միջոցների դիմելիս որևէ տարբերություն է դրվում անձանց միջև:

[25.61] Մասնակի չեղյալ հայտարարման միջոցները կարող են խտրականություն դրսևորել ոչ «միայն» թվարկված հիմքերով: Այդ թվարկված հիմքերը չեն արտացոլում դաշնագրի անխտրականության երաշխիքներով արգելված խտրականության պատճառները: Այսպես օրինակ՝ առաջին հայացքից թվում է, թե 4-րդ հոդվածով սահմանված խտրականությունը թույլատրելի է ազգային ծագման կամ քաղաքական կարծիքի նկատառումներով, ընդ որում՝ նման կարգի խտրականությունն իրավամբ հաճախ է հանդիպում արտակարգ իրավիճակների համար նախատեսված իրավունքներում⁶⁶: Բացի այդ, պարզվում է, որ թվարկված պատճառները սպառնիչ են⁶⁷: Ի վերջո, ՄԻԿ-ի նախկին անդամներից մեկը՝ Ռոզալին Հիգինսը, այն ենթադրությունն է արտահայտել, որ 4-րդ հոդվածով սահմանված անխտրականության երա-

⁶² Միջազգային իրավունքի այլ համապատասխան փաստաթղթերը ենթադրում են ժնկի կոնվենցիան և մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի այլ համաձայնագրեր: Տե՛ս նաև Nowak, վերը, ծնթ. 53, 85-6:

⁶³ 2003 թ. հոկտեմբերի դրությամբ կոնվենցիային չեն միացել միայն ԱՄՆ-ն և Սոմալիին:

⁶⁴ Տե՛ս ընդհանուր առմամբ գլուխ 21:

⁶⁵ Տե՛ս Joseph, վերը, ծնթ. 55, 89:

⁶⁶ Տե՛ս Nowak, վերը, ծնթ. 53, 86:

⁶⁷ Համենատիր նույն տեղում [23.20] քննարկվող ընդհանուր անխտրականության երաշխիքները:

շխիքի շրջանակներում «միայն» բառի գործածումը նշանակում է, որ արգելվում է միայն դիտավորյալ, այլ ոչ թե անփութորեն դրսևորված խտրականությունը⁶⁸: Այսպես օրինակ՝ աշխարհագրական տեսանկյունից տեղայնացված արտակարգ իրավիճակներում կիրառվող միջոցները կարող էին ավելի վատ ազդեցություն ունենալ որոշակի ռասայական խմբի վրա, սակայն նման անուղղակի խտրականությամբ չէր խախտվի 4-րդ հոդվածի 1-ին կետը⁶⁹:

Անառարկելի իրավունքներ

[25.62] 4-րդ հոդվածի 2-րդ կետում ընդգծվում է, որ որոշ իրավունքներ երբեք չեն կարող ենթարկվել մասնակի չեղյալ հայտարարման. դրանք են՝ կյանքի իրավունքը (6-րդ հոդված), խոշտանգումների, դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի և բժշկական կամ գիտական փորձերի չենթարկվելու իրավունքը (7-րդ հոդված), ստրկությունից և ստրկացումից զերծ մնալու իրավունքը (8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր), պայմանագրով հաստատված պարտքի համար չբանտարկվելու իրավունքը (11-րդ հոդված), հետադարձ իրավաբանական ուժ ունեցող քրեական պատժի չենթարկվելու իրավունքը (15-րդ հոդված), որպես իրավասու անձ հանդես գալու իրավունքը (16-րդ հոդված) և մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը (18-րդ հոդված): Կամընտիր արձանագրության 6-րդ հոդվածով ամրագրված է, որ մահապատիժն արգելվող դրույթն անառարկելի է այդ արձանագրությանն անդամակցած մասնակից պետությունների համար:

[25.63] ԹԻՎ 24 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերապահումների մասին իր Ընդհանուր մեկնաբանության շրջանակներում ՄԻԿ-ը որոշակի դիտարկումներ է ներկայացրել անառարկելի իրավունքների բնույթի վերաբերյալ.

¶ 10. Թեև գոյություն չունի դաշնագրով ամրագրված իրավունքների կարևորության աստիճանակարգ, որոշ իրավունքների իրացումը չի կարելի հետաձգել նույնիսկ արտակարգ իրավիճակի պայմաններում: Այս պահանջով ընդգծվում է անառարկելի իրավունքների կարևորությունը: Սակայն, փաստորեն, մեծ կարևորություն ներկայացնող բոլոր իրավունքները չեն անառարկելի, ինչպես օրինակ՝ դաշնագրի 9-րդ և 27-րդ հոդվածները: Որոշ իրավունքների անառարկելի բնույթը պայմանավորող գործոններից մեկն այն է, որ դրանց իրացման հետաձգումը որևէ կերպ չի կարող ազդել երկրում արտակարգ դրության իրավական վերահսկողության վրա, օրինակ՝ 11-րդ հոդվածով սահմանված անձի՝ պարտքերի պատճառով չբանտարկվելու իրավունքը: Մյուս պատճառն այն է, որ կարող է իսկապես անհնար լինել մասամբ չեղյալ հայտարարել տվյալ իրավունքը, ինչպես օրինակ՝ խղճի ազատության իրավունքը: Միաժամանակ, հարկ է նշել, որ որոշ դրույթներ անառարկելի են այն պատճառով, որ դրանց բացակայության դեպքում չի կարող գործել նաև իրավունքի գերակայության նորմը...

[25.64] ԹԻՎ 28 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 7. ... Հայեցակարգային առումով՝ այն, որ դաշնագրի որևէ դրույթ դասակարգվում է որպես չսահմանափակվող [non-derogable] (որից չի կարելի շեղվել), չի նշանակում, որ որևէ սահմանափակում կամ շեղում երբևէ չի կարող հիմնավորվել: 4-րդ հոդվածի 2-րդ կետում հղում է արված 18-րդ հոդվածին՝ մի դրույթի, որն իր 3-րդ կետում որոշակի դրույթ է պարունակում շեղումների մասին, ցույց է տալիս, որ սահմանափակումների [restrictions] թույլատրելիությունն անկախ է դաշնագրի հոդվածներից շեղման [derogability] խնդրից ...

[25.65] Իր թիվ 29 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը ներկայացրել է մյուս անուղղակիորեն չսահմանափակվող իրավունքները⁷⁰:

⁶⁸ R. Higgins, 'Derogations under Human Rights Treaties' (1976-77) 48 *BYIL* 281, at 287. Տե՛ս, անուղղակի խտրականություն, նույն տեղում [23.31]:

⁶⁹ Տե՛ս T. Buergenthal, 'To Respect and to Ensure: State Obligations and Permissible Derogations', in L. Henkin (ed), *The International Bill of Rights: The International Covenant on Civil and Political Rights* (Columbia University Press, New York, 1981), at 83:

⁷⁰ Ընդհանուր առմամբ, տե՛ս Ջոզեֆ, վերը, ծնթ. 55, 91-5:

ԹԻՎ 29 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 11. 4-րդ հոդվածում չսահմանափակվող դրույթների թվարկումն առնչվում է, սակայն նույնական չէ այն հարցին, թե արդյոք մարդու իրավունքների առումով որոշ պարտավորություններ միջազգային իրավունքի իմպերատիվ՝ նորմերի [peremptory norms] բնույթ են կրում: 4-րդ հոդվածի 2-րդ կետում դաշնագրի որոշ դրույթներ չսահմանափակվող հայտարարելը հարկ է մասամբ դիտել դաշնագրում պայմանագրային տեսքով ապահովված որոշ հիմնարար իրավունքների իմպերատիվ բնույթի ճանաչում (օրինակ՝ 6-րդ և 7-րդ հոդվածներ): Սակայն ակնհայտ է, որ դաշնագրի որոշ այլ դրույթներ ներառվել են չսահմանափակվող դրույթների ցանկում, որովհետև այդ իրավունքներից շեղման անհրաժեշտություն երբեք չի կարող առաջանալ արտակազ դրության պայմաններում (օրինակ՝ 11-րդ և 18-րդ հոդվածներ): Ավելին՝ իմպերատիվ նորմերի դասը տարածվում է 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ տրված չսահմանափակվող դրույթների ցանկից անդին: Մասնակից պետությունները որևէ պարագայում չեն կարող դաշնագրի 4-րդ հոդվածն օգտագործել որպես արդարացում մարդասիրական իրավունքի կամ միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերը խախտող գործողությունների կատարման համար, օրինակ՝ պատանդներ վերցնելու, կոլեկտիվ պատիժներ սահմանելու, ազատությունից կամայական կերպով զրկելու կամ արդար դատաքննության հիմնարար սկզբունքներից, ներառյալ՝ անմեղության կանխավարկածից շեղվելու ճանապարհով:

¶ 12. Դաշնագրի դրույթներից օրինական շեղման շրջանակները գնահատելիս չափանիշներից մեկը կարող է լինել այն, որ մարդու որոշ իրավունքների խախտումներ սահմանվում են որպես մարդկության դեմ կատարված հանցագործություններ: Եթե պետության իշխանության ներքո կատարված գործողությունը հիմք է ծառայում մարդկության դեմ կատարված հանցանքի համար այդ գործողության մեջ ներգրավված անձանց անհատական քրեական պատասխանատվության ենթարկելու համար, դաշնագրի 4-րդ հոդվածը չի կարող օգտագործվել որպես հիմնավորում, որ արտակազ դրությունը խնդրո առարկա պետությանն ազատում է այդ նույն արարքի համար պատասխանատվությունից: Յետևաբար, Միջազգային քրեական դատարանի մասին Յռոմի ստատուտում [Rome Statute of the International Criminal Court] տեղ գտած մարդկության դեմ կատարված հանցագործությունների վերջին դասակարգումը՝ իրավասության նկատառումներով, տեղին է դաշնագրի 4-րդ հոդվածը մեկնաբանելու առումով:

¶ 13. Դաշնագրի այն դրույթներում, որոնք թվարկված չեն 4-րդ հոդվածի 2-րդ կետում, կան տարրեր, որոնք, կոմիտեի կարծիքով, չեն կարող ենթակա լինել օրինական շեղման՝ համաձայն 4-րդ հոդվածի: Որոշ պատկերավոր օրինակներ ներկայացված են ստորև.

(ա) Ազատությունից զրկված բոլոր անձանց պետք է վերաբերվել մարդասիրաբար և հարգելով մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունը: Թեև այս իրավունքը, որը սահմանված է 10-րդ հոդվածում, առանձին չի նշվում 4-րդ հոդվածի 2-րդ կետում տեղ գտած չսահմանափակվող իրավունքների շարքում, կոմիտեն կարծում է, որ այստեղ դաշնագիրը միջազգային իրավունքի ընդհանուր նորմ է արտահայտում, որից շեղում թույլատրված չէ: Այս տեսակետը պաշտպանում են դաշնագրի նախաբանում անձին ներհատուկ արժանապատվության հիշատակումը և 7-րդ ու 10-րդ հոդվածների միջև սերտ կապը:

(բ) Պատանդ վերցնելու, առևանգման կամ գաղտնի կալանավորման արգելումից շեղում թույլատրված չէ: Այս արգելքների բացարձակ բնույթը, նույնիսկ արտակազ իրավիճակներում, հիմնավորված է միջազգային իրավունքի ընդհանուր նորմի կարգավիճակով:

(գ) Կոմիտեն այն կարծիքին է, որ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների միջազգային պաշտպանությունը ներառում է տարրեր, որոնք պետք է հարգվեն ցանկացած պարագայում: Սա միջազգային իրավունքում դրսևորված է ցեղասպանության արգելմամբ, բուն 4-րդ հոդվածում (1-ին կետ) անխտրականության վերաբերյալ դրույթի ներառմամբ, ինչպես նաև 18-րդ հոդվածի չսահմանափակվող բնույթով:

(դ) Ինչպես հաստատվում է Միջազգային քրեական դատարանի մասին Յռոմի ստատուտով, առանց միջազգային իրավունքով թույլատրելի հիմքերի առկայության՝ բնակչության աքսորը կամ հարկադրական տեղափոխությունը՝ արտաքսման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառությամբ բռնի տեղահանության ձևով այն տարածքից, որտեղ տվյալ անձինք ներկա են օրինական կերպով, մարդկության դեմ հանցագործություն է: Արտակազ դրության պարագայում դաշնագրի 12-րդ հոդվածից շեղվելու օրինական իրավունքը ոչ մի դեպքում չի կարող ընդունվել որպես նման միջոցները հիմնավորող:

(ե) 4-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ արտակազ դրության որևէ հայտարարություն չի կարող օգտագործվել՝ հիմնավորելու համար մասնակից պետության կողմից, ի խախտումն 20-րդ հոդվածի, ներգրավվելը պատերազմի քարոզչությանը կամ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությանը, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում է:

¶ 14. Դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետը պահանջում է, որ դաշնագրին մասնակից պետությունը դաշնագրի

ցանկացած դրույթի խախտման դեպքում իրավական պաշտպանության միջոցներ տրամադրի: Այս դրույթը նշված է 4-րդ հոդվածի 2-րդ կետում տեղ գտած չսահմանափակվող դրույթների ցանկում, սակայն պայմանագրային պարտավորություն է, որը ներհատուկ է դաշնագրին՝ որպես ամբողջության: Նույնիսկ եթե մասնակից պետությունը արտակարգ դրության ընթացքում և այնքանով, որքանով նման միջոցները խստորեն պայմանավորված են իրադրության սրությամբ, շտկումներ մտցնի իրավական պաշտպանության դատական և այլ միջոցները կարգավորող իր ընթացակարգերի գործնական կիրառության մեջ, մասնակից պետությունը պետք է համապատասխանի դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հիմնարար պարտավորությանը, որը խոսում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների տրամադրման մասին:

[25.66] 11-14-րդ պարբերություններում ՄԻԿ-ի դատողությունները դաշնագրում հնարավոր հավելյալ չսահմանափակվող տարրերի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանության թերևս ամենավիճահարույց հատվածն են: Այստեղ է, որ ՄԻԿ-ն ամենամշակակալի կերպով է հեռանում 4-րդ հոդվածի տեքստից: Հավելյալ չսահմանափակվող իրավունքների բացահայտ ավելացումը թերևս արդարացված է ՄԻԿ-ի ճանաչված իրավասությամբ, այն է՝ ստուգել, թե արդյոք շեղում հանդիսացող միջոցները խախտող են երկրի միջազգային պարտավորությունները, ինչպիսիք են այն իմպերատիվ նորմերը, որոնք պաշտպանված են ընդհանուր *յուս կոգենսով* [jus cogens], կամ իրավունքները, որոնք ճանաչված են սովորական կամ ընդհանուր միջազգային իրավունքով: Հնարավոր է նաև, որ ՄԻԿ-ի դատողությունն այն է, որ որոշ իրավունքներից շեղումները, իր կարծիքով, երբևէ չեն կարող համաչափ լինել, հետևաբար, այդ իրավունքներն արդյունավետ կերպով չսահմանափակվող են⁷¹:

[25.67]

ԹԻՎ 29 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 15. 4-րդ հոդվածի 2-րդ կետում բացահայտորեն չսահմանափակվող ճանաչված իրավունքների պաշտպանությանը բնորոշ է այն, որ դրանք պետք է ապահովվեն ընթացակարգային երաշխիքներով, հաճախ՝ ներառյալ դատական երաշխիքներով: Դաշնագրի դրույթները, որոնք վերաբերում են ընթացակարգային երաշխիքներին, երբեք չեն կարող ենթակա լինել այնպիսի միջոցների, որոնք շրջանցում են չսահմանափակվող իրավունքների պաշտպանությունը: 4-րդ հոդվածից չի կարելի օգտվել այնպես, որ այն հանգեցնի չսահմանափակվող իրավունքներից շեղման: Այդպիսով, օրինակ, քանի որ դաշնագրի 6-րդ հոդվածը չսահմանափակվող է իր ամբողջության մեջ, ցանկացած դատավարություն, որը հանգեցնում է մահապատժի սահմանման արտակարգ դրության պայմաններում, պետք է համապատասխանի դաշնագրի դրույթներին, ներառյալ՝ 14-րդ և 15-րդ հոդվածների բոլոր պահանջներին:

¶ 16. Շեղմանը վերաբերող երաշխիքները, ինչպես որ դրանք ներառված են դաշնագրի 4-րդ հոդվածում, հիմնվում են օրինականության և օրենքի գերակայության սկզբունքների վրա, որոնք բնորոշ են դաշնագրին՝ որպես ամբողջության: Քանի որ արդար դատաբանության իրավունքի որոշ տարրեր բացահայտ երաշխավորված են միջազգային մարդասիրական իրավունքով զինված հակամարտությունների ընթացքում, կոմիտեն որևէ արդարացում չի տեսնում այլ արտակարգ իրավիճակներում այդ երաշխիքներից շեղվելու համար: Կոմիտեն այն կարծիքին է, որ օրինականության և օրենքի գերակայության սկզբունքները պահանջում են, որ արդար դատաբանության հիմնարար պահանջները հարգվեն արտակարգ դրության պայմաններում: Միայն դատարանը կարող է անձին դատել և դատապարտել քրեական հանցագործության համար: Ամենեղության կանխավարկածը պետք է հարգվի: Չսահմանափակվող իրավունքները պաշտպանելու նպատակով դատական գործ հարուցելու իրավունքը, որը թույլ է տալիս դատարանին առանց հապաղման որոշել կալանքի օրինականությունը, չպետք է նվազի մասնակից պետության՝ դաշնագրից շեղվելու որոշմամբ:

[25.68] 14-16-րդ պարբերություններում որոշ իրավունքների ենթադրյալ ավելացումը չսահմանափակվող իրավունքների ցանկին, որովհետև դրանք փաստացի անհրաժեշտ են 4-րդ հոդվածի 2-րդ կետում տեղ գտած բացահայտ չսահմանափակվող իրավունքների անձեռնմխելիությունը երաշխավորելու համար, նվազ վիճահարույց է, քան լրացուցիչ չսահմանափակվող իրավունքների դասակարգումը որպես այդպիսին⁷²: Կարելի է նկատել, օրինակ, որ 1969 թ. Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 27-րդ հոդվածում ընդգրկված շեղման վերաբերյալ դրույթն արգելում է շեղվել թվարկված մի շարք իրավունքներից, ինչպես նաև «այդ իրավունքների պաշտպանության համար էական նշանակություն ունեցող դատական ե-

⁷¹ Նույնը, 91:

⁷² Ընդհանուր առմամբ, տե՛ս Ջոզեֆ, վերը, ծմբ. 55, 94: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Եգիպտոսի վերաբերյալ, (1993) ՄԱԿ-ի փաստ. CCPR/C/79/Add. 23, պարբ. 9, Եզրափակիչ դիտարկումներ Իսրայելի վերաբերյալ (1999), ՄԱԿ-ի փաստ. CCPR/C/79/Add. 93, պարբ. 21., Եզրափակիչ դիտարկումներ Շրի Լանկայի վերաբերյալ (1996), ՄԱԿ փաստ. CCPR/C/79/ Add. 56, պարբ. 13:

րաշխիքներից»⁷³: Համանման «ֆունկցիոնալ» չսահմանափակվող իրավունքներ⁷⁴ են մեջբերվել Սիրակուզայի սկզբունքներում⁷⁵ և Փարիզյան չափորոշիչներում⁷⁶:

4-րդ ՅՈՒՎԱԾԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

[25.69] 4-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է, որ շեղման միջոցները նախատեսվեն այն արտակարգ դրությունների համար, որոնք «հայտարարված են» պաշտոնապես: Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանությունում ՄԻԿ-ը նշում է, որ այդ «պահանջն էական նշանակություն ունի օրինականության և օրենքի գերակայության սկզբունքների կենսագործման համար այն ժամանակներում, երբ դրանք ամենապահանջվածն են: Երբ հայտարարվում է արտակարգ դրություն այնպիսի հետևանքներով, որոնք կարող են դաշնագրի որևէ դրույթից շեղում ենթադրել, պետությունները պետք է գործեն իրավունքի իրենց սահմանադրական և այլ դրույթների շրջանակներում, որոնք կարգավորում են մնացած հայտարարությունը և արտակարգ դրությամբ տրվող իշխանության կիրառությունը»⁷⁷: Հետևաբար պետությունները պետք է ներպետական ընթացակարգ գործի դնեն՝ իրենց բնակչությանը համապատասխան արտակարգ դրության գոյության մասին տեղեկացնելու համար: Եզրափակիչ դիտարկումներում ՄԻԿ-ը հաստատում է, որ արտակարգ դրության պայմանները կարգավորող օրենքները պետք է հստակ և ճշգրիտ լինեն⁷⁸: Այս պահանջը այն ընդհանուր պահանջի հայելային արտացոլումն է, ըստ որի՝ ՔՔԻՄԴ-ի իրավունքների թույլատրելի սահմանափակումները պետք է լինեն «օրենքով սահմանված»⁷⁹:

[25.70] 4-րդ հոդվածի 3-րդ կետը պահանջում է, որ պետությունները Միավորված ազգերի կազմակերպությանը տեղեկացնեն բոլոր համապատասխան շեղումների և դրանց վերացման մասին: Եթե 4-րդ հոդվածի 1-ին կետը ընթացակարգային «ծանուցման» պահանջ է առաջ քաշում ներպետական իրավունքում, ապա 4-րդ հոդվածի 3-րդ կետը ծանուցելու պահանջ է ներկայացնում միջազգային մակարդակում: Անհրաժեշտ է նշել, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետը կոմիտեին համապատասխան շեղման մասին տեղեկացնելու բացահայտ պարտավորություն չի սահմանում, թեև կարելի է ենթադրել, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը կփոխանցի համապատասխան տեղեկությունները ՄԻԿ-ին:

[25.71]

ԹԻՎ 29 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

¶ 17. 4-րդ հոդվածի 3-րդ կետում մասնակից պետությունները, երբ նրանք օգտվում են 4-րդ հոդվածով նախատեսված շեղվելու լիազորությունից, պարտավորվում են ենթարկվել միջազգային ծանուցման կարգին: Այն մասնակից պետությունը, որն օգտվում է շեղվելու իրավունքից, պարտավոր է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի միջոցով մյուս մասնակից պետություններին անհապաղ տեղեկացնել այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, և այդ որոշումը կայացնելու դրդապատճառների մասին: Նման ծանուցումն էական նշանակություն ունի ոչ միայն կոմիտեի գործառնությունների իրականացման տեսանկյունից, մասնավորապես գնահատելիս, թե արդյոք տվյալ մասնակից պետության կողմից ձեռնարկված միջոցները տվյալ իրավիճակի պարտադրած ծայրահեղ անհրաժեշտության արդյունք էին, այլև որպեսզի մյուս մասնակից պետությունները հնարավորություն ստանան դիտարկման ենթարկելու այն հարցը, թե որքանով է պետությունը կատարում դաշնագրի դրույթները: Հաշվի առնելով նախկինում ստացված բազմաթիվ ծանուցումների սեղմագրային բնույթը՝ կոմիտեն ընդգծում է, որ մասնակից պետությունների կողմից ներկայացվող ծանուցումը պետք է պարունակի ամբողջական տեղեկատվություն ձեռնարկված միջոցների մասին և դրանց դրդապատճառների հստակ բացատրություն՝ կից ներկայացնելով ի-

⁷³ Տե՛ս Մարդու իրավունքների միջամերկյան դատարան, «Հաբեաս կորպուս արտակարգ իրավիճակներում», Խորհրդատվական կարծիք [Inter-American Court of Human Rights, Habeas Corpus in Emergency Situations, Advisory Opinion] OC-8/87, 30 հունվարի, 1987, 11 EHRR 33, որը հաստատում է, որ Հաբեաս կորպուս և լատինաամերիկյան ամպարոյի կարգադրությունը նման «էական նշանակություն ունեցող» դատական երաշխիքների օրինակ են:

⁷⁴ Տե՛ս J. Fitzpatrick, 'Protection Against Abuse of the Concept of "Emergency"', in L. Henkin and J.L. Hargrove (eds.), Human Rights: An Agenda for the Next Century (American Society of International Law, Washington, DC, 1994), at 218: Տե՛ս նաև A. Svensson-McCarthy, The International Law of Human Rights and States of Exception (Martinus Nijhoff, The Hague, 1998), 445-7, 580-1:

⁷⁵ Սկզբունք թիվ 70. տե՛ս նաև սկզբունք թիվ 60:

⁷⁶ Հոդվածներ 5-ի, 7-ի և 16-ի նախագծեր: «Փարիզյան չափորոշիչներ», վերը, ծնթ. 52, հավելյալ չսահմանափակվող իրավունքներ են առաջարկում 10-16-րդ հոդվածների նախագծերում:

⁷⁷ Պարբ. 2:

⁷⁸ Եզրափակիչ դիտարկումներ Ադրբեյջանի վերաբերյալ (1994), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 38, պարբ. 7., Եզրափակիչ դիտարկումներ Նեպալի վերաբերյալ (1995), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 42, պարբ. 9., Եզրափակիչ դիտարկումներ Չադի վերաբերյալ (1996), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/79/Add. 62, պարբ. 11:

⁷⁹ Տե՛ս, օրինակ, [16.10]-ը և, ավելի ընդհանուր առումով, [1.67]-ը՝ «օրենքով սահմանված» պահանջի քննարկման համար:

րենց ներպետական իրավունքին վերաբերող փաստաթղթեր: Պահանջվում է ներկայացնել լրացուցիչ ծանուցումներ, եթե տվյալ մասնակից պետությունը հետագայում հավելյալ միջոցներ է ձեռնարկում՝ համաձայն 4-րդ հոդվածի, օրինակ՝ երկարաձգում է արտակարգ իրավիճակի տևողությունը: Ամհապաղ ծանուցելու պահանջը հավասարապես կիրառելի է նաև շեղումը դադարեցնելու դեպքում: Այս պարտավորությունները ոչ միշտ են կատարվել: Մասնակից պետությունները գլխավոր քարտուղարի միջոցով մյուս մասնակից պետություններին չեն տեղեկացրել արտակարգ իրավիճակ հայտարարելու և դրա հետևանքով դաշնագրի մեկ կամ ավելի դրույթներից շեղվելու միջոցների մասին, և մասնակից պետությունները երբեմն հրաժարվել են ծանուցում ներկայացնել արտակարգ իրավիճակներում իրենց լիազորություններին առնչվող տարածքային կամ այլ փոփոխությունների մասին: Որոշ դեպքերում արտակարգ իրավիճակի առկայությունը և հարցը, թե արդյոք տվյալ մասնակից պետությունը շեղվե՞լ է դաշնագրի դրույթներից, միայն պատահականության շնորհիվ են հայտնվել կոմիտեի ուշադրության դաշտում, երբ վերջինս դիտարկել է այդ մասնակից պետության ներկայացրած զեկույցը: Կոմիտեն շեշտում է անհապաղ միջազգային ծանուցում տալու պարտավորությունը բոլոր այն դեպքերում, երբ մասնակից պետությունը ձեռնարկում է դաշնագրով ստանձնած իր պարտավորություններից շեղվող միջոցառումներ: Կոմիտեի պարտականությունը, այն է՝ 4-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից դիտարկման ենթարկել մասնակից պետությունների օրենքները և դրանց կիրարկումը, կախված է այն հանգամանքից՝ մասնակից պետությունը ներկայացրե՞լ է ծանուցում, թե՞ ոչ:

[25.72] Պարտավորություններից շեղվելու մասին ՔՔԻՄԴ-ով մինչ օրս ներկայացված ծանուցումները, որոնք բավարարել են վերը հիշատակված 4-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, շատ փոքրաթիվ են, եթե ընդհանրապես այդպիսիք եղել են: Սա կարող է նշանակել, որ ՄԻԿ-ի՝ 4-րդ հոդվածի 3-րդ կետի մեկնաբանումը չափազանց խիստ է: Այսուհանդերձ, համարվում է, որ ՄԻԿ-ը պարզապես հաստատում է շեղվելու մասին առկա ծանուցումների ցածր որակը: Դրանց մեծ մասը բաղկացած է ընդամենը մի քանի տողից և պարունակում է շեղվելու միջոցառումների ճշգրիտ բնույթի վերաբերյալ սուս կցկտուր բացատրություն⁸⁰:

[25.73] *«ԼԱՆԴԻՆԵԼԼԻ ՍԻԼՎԱՆ ընդդեմ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ»*
(LANDINELLI SILVA v URUGUAY, 34/78)

Այս գործը ցուցադրում է 4-րդ հոդվածի բովանդակային և ընթացակարգային տարրերի միջև եղած փոխազդեցությունը⁸¹: Հեղինակը բողոքել է ՔՔԻՄԴ-ի բազմաթիվ խախտումների դեմ: Ի պատասխան՝ մասնակից պետությունը հիշատակել է շեղվելու իր իրավունքը: ՄԻԿ-ը որոշում կայացրեց մասնակից պետության դեմ՝ հետևյալ ձևակերպմամբ.

¶ 8.1. Չնայած Ուրուգվայի կառավարությունը ... հիշատակել է դաշնագրի 4-րդ հոդվածը, որպեսզի արդարացնի հաղորդման հեղինակների նկատմամբ կիրառված արգելքը, Մարդու իրավունքների կոմիտեն անկարող է ընդունել, որ դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված պահանջները բավարարվել են:

¶ 8.2. Համաձայն դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի՝ մասնակից պետությունները հասարակության տեսանկյունից արտակարգ մի իրավիճակում, որը սպառնում է ժողովրդի կյանքին, և որի առկայության մասին պաշտոնապես հայտարարվել է, կարող են ձեռնարկել միջոցներ, որոնք շեղում են այդ իրավական գործիքով ստանձնած իրենց պարտավորություններից: Նույնիսկ նման հանգամանքներում շեղումները թույլատրելի են միայն այնքանով, որքանով դրանք խստիվ պահանջվում են՝ ելնելով տվյալ իրավիճակից բխող ծայրահեղ անհրաժեշտությունից: Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված 1979 թ. հունիսի 28-ի իր ծանուցման մեջ, որը ձևակերպվել է այնպես, որ համապատասխանի դաշնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված ֆորմալ պահանջներին, Ուրուգվայի կառավարությունը վկայակոչել է երկրում առկա մի արտակարգ իրավիճակ, որն իրավական տեսանկյունից ճանաչվել է մի շարք «ինստիտուցիոնալ փաստաթղթերում» [‘Institutional Acts’]: Այնուամենայնիվ, այդ ժամանակ որևէ փաստական մանրամասներ չեն ներկայացվել: Ծանուցումը սահմանափակվում էր հայտարարությամբ, որ արտակարգ իրավիճակի գոյությունը «համատարած իմացության հարց» է. որևէ փորձ չի արվել՝ մատնանշելու դաշնագրով երաշխավորված իրավունքների առնչությամբ կատարված փաստացի շեղումների բնույթը և ընդգրկումը, կամ էլ ցույց տալու, որ նման շեղումները ծայրահեղ անհրաժեշտություն էին: Փոխարենը՝ Ուրուգվայի կառավարությունը հայտարարել է, որ հավելյալ տեղեկություններ կտրամադրվեն դաշնագրի 40-րդ հոդվածով երկրի զեկույցը ներկայացնելու կապակցությամբ: Մինչ օրս ոչ այդ զեկույցն է ստացվել, ոչ էլ այն տեղեկությունը, որով այն պետք է լրացվեր:

⁸⁰ Ջոզեֆ, վերը, ծնթ. 55, էջ 96: Տե՛ս նաև Եզրափակիչ դիտարկումներ Սիրիայի Արաբական Հանրապետության վերաբերյալ (2001), ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/CO/71/SYR, պարբ. 7: Տե՛ս նաև «Սիրականայի սկզբունքը» 45, վերը, ծնթ. 51:

⁸¹ Տե՛ս նաև «Սալգար դե Մոնտեյոն ընդդեմ Կոլումբիայի» (Salgar de Montejó v Colombia, 64/79), պարբ. 10.3:

¶ 8.3. Չնայած հարցականի տակ չի դրվում մասնակից պետության՝ արտակարգ դրություն հայտարարելու ինքնավար իրավունքը, այսուհանդերձ սույն հաղորդման առանձնահատուկ համատեքստում Մարդու իրավունքների կոմիտեն կարծում է, որ պետությունը, պարզապես հիշատակելով բացառիկ հանգամանքների առկայությունը, չի կարող խուսափել այն պարտավորություններից, որոնք ստանձնել է՝ վավերացնելով դաշնագիրը: Չնայած շեղում արձանագրող միջոցներ ձեռնարկելու էական իրավունքը կարող է կախված չլինել պաշտոնական ծանուցումից, որը տրվում է ըստ դաշնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետի, տվյալ մասնակից պետությունը, երբ կամընտիր արձանագրությամբ դիտարկվող քննության ընթացքում հիշատակում է դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետը, կատարման համար պարտադիր պարտականություն ունի, այն է՝ բավականաչափ մանրամասն ներկայացնել համապատասխան փաստերը: Կամընտիր արձանագրությամբ գործող Մարդու իրավունքների կոմիտեի գործառնությամբ է հետևել, որ մասնակից պետությունները կատարեն դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունները: Որպեսզի ՄԻԿ-ը կարողանա իրականացնել իր այս գործառնությամբ և զննատեղ, թե տվյալ երկրում կա՞ դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում նկարագրված իրավիճակ, նա ամբողջական և համապարփակ տեղեկատվության կարիք ունի: Եթե պատասխանող կառավարությունը չի տրամադրում տվյալ հիմնավորումը, ինչպես պահանջվում է կամընտիր արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետով և դաշնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետով, ապա Մարդու իրավունքների կոմիտեն չի կարող եզրակացնել, որ գոյություն ունեն հիմնավոր պատճառներ, որոնք օրինականացնում են շեղումը դաշնագրով հաստատված սովորական իրավական ռեժիմից:

Այսպիսով, որևէ պետության կողմից 4-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային պարտավորությունները չկատարելը նրան չի զրկի շեղում կատարելու իր էական իրավունքներից: Իսկապես, ՄԻԿ-ն այնպիսի գործերով, ինչպիսին է «*Վեյսմանը և Լանսա Պերդոմոն ընդդեմ Ուրուգվայի*» (*Weismann and Lanza Perdomo v Uruguay*, 8/77) գործը, վերահաստատել է, որ այն *ի պաշտոնե [ex officio]* կքննի 4-րդ հոդվածի հիման վրա պաշտպանության հնարավորությունը՝ պետության կողմից դրա վրա հատուկ չհիմնվելու (այն հատուկ չվկայակոչելու) պարագայում⁸²: Այնուամենայնիվ, եթե պետությունը չարունակում է չտրամադրել համապատասխան փաստեր՝ կապված իր կողմից կատարված շեղման հետ, օրինակ՝ համապատասխան արտակարգ իրավիճակի բնույթի և առաջ բերած ծայրահեղ անհրաժեշտությունների մանրամասները, ապա դա նշանակում է, որ պետությունը չի կրում այդ շեղումների հիմնավորումների ապացուցման իր բեռը, հետևաբար, նա կզրկվի իր գործողությունների համար 4-րդ հոդվածով նախատեսված ցանկացած բովանդակային պաշտպանությունից:

ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՈՒ ԵՎ ՄԻԿ-Ի ՎԵՐԱՅՍԿԻՉ ԴԵՐՈՒ

[25.74] *Լանդինելլի Միլվայի* գործը և նմանատիպ բազմաթիվ այլ ուրուգվայական գործեր հաստատում են, որ պետությունն իր կատարած շեղումները հիմնավորելու հարցում կրում է ապացուցման բեռը: Այդ գործերում ակնհայտ էր, որ մասնակից պետությունը ձախողել է այս բեռը կրելու գործը: Անորոշ է, թե ՄԻԿ-ն ինչպես կարծազանքի, եթե մասնակից պետությունը ձեռնարկի մի *բոնա ֆիդե [bona fide]* (բարեխիղճ) փորձ՝ արդարացնելու իր կողմից թույլ տրված շեղումները, քանի որ նման բան կամընտիր արձանագրությամբ դիտարկված գործերով երբևէ տեղի չի ունեցել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 1950 թ. ընդունված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներքո թույլ տրված շեղումները դիտարկման ենթարկելու ընթացքում հայտարարել է, որ մասնակից պետությունները որևէ արտակարգ դրության գոյության կամ դրան ճիշտ ձևով արձագանքելու մասին որոշում կայացնելիս ունենում են «հայեցողության լայն սահմաններ»⁸³, դա ըստ էության պետություններին ընձեռում է այս առումով կասկած հայտնելու մեծ առավելություն⁸⁴, ինչը զգալիորեն թեթևացնում է նրանց ապացուցման բեռը: Ի հակադրություն՝ թիվ 28 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը մատնանշում է, որ ուշադիր կուսումնասիրի տվյալ պետության կատարած շեղումների հիմնավորումները՝ նկատի առնելով բազմաթիվ պետությունների՝ արտակարգ իրավիճակների ընթացքում իրենց իշխանությունը չարաշահելու հակումը⁸⁵: Նշվածը հատկապես ակնառու է Ընդհանուր մեկնաբանության այն պարբերություններում, ո-

⁸² Պարբ. 15: Տե՛ս նաև, օրինակ՝ «*Տոռես Ռամիրեսն ընդդեմ Ուրուգվայի*» (*Torres Ramirez v Uruguay*, 4/77) գործը, պարբ. 17 և «*Պիետրառոյան ընդդեմ Ուրուգվայի*» (*Pietraroia v Uruguay*, 44/79) գործը, պարբ. 14: Տե՛ս նաև Գանդի, վերը, ծմբ. 47, էջ 334-6, և Մակգոլդրիկ, վերը, ծմբ. 48, էջ 311: Այնուամենայնիվ, ուշադրություն դարձրեք, որ ՄԻԿ-ը շեղումը չի համարել արդարացում «*Պոլայ Կամպոսն ընդդեմ Պերուի*» (*Polay Campos v Peru*, 577/94) գործում. տես վերը, ծմբ. 50 և [14.65]:

⁸³ Տե՛ս «*Բրաննիգանը և Մակբրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*Brannigan and McBride v United Kingdom*), Շարք Ա, թիվ 258-Բ, ներկայացված է այստեղ՝ (1994) 17 EHRR 539, պարբ. 43:

⁸⁴ Տե՛ս T. Jones, 'The Devaluation of Human Rights under the European Convention' [1995], *Public Law* 430, 430-1:

⁸⁵ Տե՛ս նաև դատավոր Մարթենսի կայացրած համընկնող վճիռը *Բրաննիգանի և Մակբրայդի* գործով, վերը, ծմբ. 83: Տե՛ս նաև Փարիզյան չափորոշիչ Ա7-ը [Paris Standard A7]: Տե՛ս նաև հայեցողության սահմանների դոկտրինի վերաբերյալ քննարկումն այստեղ՝ [18.23]: Սվենսոն-Մակքարթին վերը՝ ծմբ. 74-ում՝ էջ 580-ում պնդում է, որ կոմիտեի աշխատանքը ցույց

րոնք վերաբերում են համամասնականությանը [25.54]⁸⁶:

Եզրակացություն

[25.75] Թիվ 29 Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը մատնանշում է, որ շեղվելու իրավունքն իրականում շատ նեղ է⁸⁷: Օրինակ՝ ՄԻԿ-ն առաջարկում է դաշնագրի չսահմանափակվող տարրերի (որոնցից չի կարելի շեղվել) *դե ֆակտո* ընդլայնում: ՄԻԿ-ը նաև վերահաստատում է, որ հասարակական արտակարգ իրավիճակների առնչությամբ ձեռնարկված միջոցները պետք է խիստ համարժեք լինեն դրանց ներկայացրած վտանգին և պետք է չեղյալ հայտարարվեն կամ կրճատվեն, եթե այդ խիստ համամասնականությունը նվազում է: Չնայած մեկնաբանությամբ առաջարկվող շեղում չթույլատրող իրավունքների ընդլայնման համեմատ պակաս հակասական լինելուն՝ համաչափության որևէ խիստ փորձաքննություն առավել մեծ վտանգ է ներկայացնում շեղվելու արդյունավետ նյութական այն իրավունքների կենսունակությանը, որ ունեն մասնակից պետությունները: Ինչպես նշվեց վերը, դժվար է պատկերացնել մի իրավիճակ, երբ կպահանջվեն սահմաններ՝ ՔՔԻՄՊ-ով երաշխավորված իրավունքներով թույլատրված սահմաններից անդին, որպեսզի հնարավոր լինի լուծել որևէ հասարակական արտակարգ իրավիճակի խնդիրը [25.55]: Գուցե միակ ճշմարիտ նվազեցվող (շեղում թույլատրող) իրավունքները նրանք են, որոնք ձևակերպվում են որպես բացառիկ բնույթ ունեցողներ, ինչպիսին է 9-րդ հոդվածի 3-րդ կետը (որը երաշխավորում է քրեական մեղադրանքով կալանավորված անձի պատշաճ ներկայացումը դատարանի առջև)⁸⁸: Կարելի է նշել, որ դաշնագրով սահմանված բացառիկ իրավունքներից շատերը բացահայտ չնվազեցվող են (այսինքն՝ հոդվածներ 7-ը, 8(1)-ը, 8(2)-ը, 11-ը, 15-ը և 16-ը): Ավելին՝ պետությունների՝ շեղում կատարելու «փախուստի դրժակն» այս տեսանկյունից հետագայում փակվեց 10-րդ հոդվածի 1-ին կետում և 20-րդ հոդվածում սահմանված բացարձակ իրավունքները ՄԻԿ-ի կողմից դասակարգվելու արդյունքում: ՄԻԿ-ը նաև վերահաստատել է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված ծանուցում տալու պահանջները չափազանց խիստ են, այնպես որ մինչ օրս ներկայացված ծանուցումներից միայն մի քանիսն են բավարարել այդ պահանջները:

[25.76] Վերջապես, պետք է հիշել, որ արտակարգ դրությունները չափազանց հաճախ ծառայել են որպես մարդու իրավունքների համատարած խախտումների քողարկում: Հույս է հայտնվում, որ ՄԻԿ-ը շեղում գրանցող բոլոր միջոցները գնահատելիս կստանձնի աչալուրջ վերահսկիչի դեր, ինչպես խոստացել է Ընդհանուր մեկնաբանության մեջ, որպեսզի նպաստի չափազանց ճնշող արտակարգ միջոցների նկատմամբ հսկողություն իրականացնելու գործին: Այսօր ընթացող «ահաբեկչության դեմ պատերազմի» ընթացքում այս դերը դարձել է ավելի վճռորոշ:

է տալիս, որ շեղում արձանագրող միջոցների առնչությամբ նա կստանձնի «վերանայում իրականացնելու ամբողջական լիազորություններ»:

⁸⁶ Տե՛ս նաև Ջոզեֆ, վերը, ծնթ. 55, էջ 86:

⁸⁷ Նույն տեղում, էջ 97-8:

⁸⁸ Որոշվեց, որ Եվրոպական կոնվենցիայում՝ հոդված 5(3)-ում առկա համարժեք իրավունքի կիրառումը սահմանափակվում է Միացյալ Թագավորությամբ՝ «Բրաննիգանը և Մակբրայդը ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Brannigan and McBride v UK*) գործում առկա օրինական շեղման միջոցով:

Հավելված Ա

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

Ընդունվել է և բացվել է ստորագրության, վավերացման և միացման համար Գլխավոր ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի 2200 A (XXI) բանաձևով:

Նախաբան

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները՝

հաշվի առնելով, որ, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից,

ընդունելով, որ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, քաղաքացիական և քաղաքական ազատությունից օգտվող և վախից ու կարիքից ծերբազատված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականանալ, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, այնպես էլ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից,

հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ պետությունների ստանձնած պարտավորությունը՝ խրախուսելու մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

զիտակցելով, որ անհատը, պարտավորություններ ունենալով այլ անձանց և այն կոլեկտիվի հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը,

համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների շուրջ.

ՄԱՍ I

Հոդված 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից և միջազգային իրավունքից բխող որևէ պարտավորության: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության իրեն պատկանող միջոցներից:

3. Սույն Դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում և նրանք, ովքեր պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսում են ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգում այդ իրավունքը:

ՄԱՍ II*Հոդված 2*

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները, և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

2. Եթե դա դեռևս նախատեսված չէ գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին և սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել այնպիսի օրենքներ կամ այլ միջոցներ ընդունելու համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

a. ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, եթե նույնիսկ այդ խախտումը կատարել են պաշտոնապես գործող անձինք,

b. ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

c. ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը՝ դրանք տրամադրելու դեպքում:

Հոդված 3

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

Հոդված 4

1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

2. Այս դրույթը չի կարող հիմք ընդունվել 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18-րդ հոդվածներից որևէ շեղում կատարելու համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է շեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարության միջնորդությամբ սույն Դաշնագրի մասնակից մյուս պետություններին անհապաղ տեղեկացնում է այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով հետագայում հաղորդում է նաև այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

Հոդված 5

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որևէ պետություն, խումբ կամ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որը ուղղված լինի սույն Դաշնագրով ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Դաշնագրով:

2. Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետությունում չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների համաձայն ճանաչվող կամ գոյություն ունեցող որևէ հիմնական իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ, թե սույն Դաշնագրում նման իրավունք չի ճանաչվում կամ ճանաչվում է նվազ ծավալով:

ՄԱՍ III

Հոդված 6

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անկապտելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից:

2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենաճանր հանցագործությունների համար, հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում սույն Դաշնագրի և Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթներին: Այդ պատիժը կարող է իրականացվել միայն ի կատարումն իրավասու դատարանի կայացրած վերջնական դատավճռի:

3. Եթե կյանքից զրկելը ցեղասպանության հանցագործություն է, պետք է նկատի ունենալ, որ սույն Դաշնագրի մասնակից պետություններին սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս որևէ կերպ շեղվել Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթների համաձայն ստանձնած ցանկացած պարտավորությունից:

4. Մահապատժի դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի հայցելու ներում կամ դատավճռի մեղմացում: Համաներումը, ներումը կամ դատավճռի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

5. Մահապատիժ չի նշանակվում տանուօ տարեկանից ցածր անձանց կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն Դաշնագրի մասնակից որևէ պետության կողմից մահապատժի վերացումը հետաձգելու կամ թույլ չտալու համար:

Հոդված 7

1. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

Հոդված 8

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունը արգելվում են իրենց բոլոր ձևերով:

2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:

3.(a) Մարդուն չի կարելի պարտադրել կատարելու ստիպողական կամ հարկադիր աշխատանք.

(b) այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքների հետ, 3 կետի (a) ենթակետը խոչընդոտ չի հանդիսանում իրավասու դատարանի կողմից նման պատիժ սահմանող դատավճռի հիման վրա տաժանակիր աշխատանքի իրականացմանը,

(c) սույն կետի նպատակի համար «ստիպողական կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում.

(i) ենթակետում չհիշատակված ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը,

(ii) ռազմական բնության ցանկացած ծառայություն, և այն երկրներում, որտեղ ճանաչվում է զինվորական ծառայությունից քաղաքական ու կրոնական շարժառիթներով հրաժարումը, զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված ցանկացած ծառայություն,

(iii) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

(iv) ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը մտնում է սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ:

Հոդված 9

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

2. Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնում են ձերբակալման պատճառները և շտապ կարգով հաղորդում նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:

3. Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական իշխանություն իրականացնելու: Ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելը ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատ արձակվելը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:

4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

Հոդված 10

1. Ազատությունից զրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

2. (a) Այն դեպքերում, երբ չկան բացառիկ հանգամանքներ, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին, և նրանց հատկացվում է չդատապարտված անձի կարգավիճակին համապատասխանող առանձին ռեժիմ,

(b) անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և հնարավորինս կարճ ժամկետում հասցվում դատարան՝ որոշում կայացնելու համար:

3. Պատժի համակարգով բանտարկյալների համար նախատեսվում է այնպիսի ռեժիմ, որի էական նպատակը նրանց ուղղումն է և սոցիալական վերադաստիարակումը: Անչափահաս օրինախախտներն առանձնացվում են չափահասներից, և նրանց հատկացվում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին համապատասխանող ռեժիմ:

Հոդված 11

Ոչ ոք չի կարող ազատագրվել միայն այն բանի հիմքով, որ նա ի վիճակի չէ կատարելու որևէ պայմանագրային պարտավորություն:

Պողված 12

1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու ազատություն:
2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական երկրից, մեկնելու իրավունք:
3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, և համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:
4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

Պողված 13

Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն ի կատարումն օրենքին համապատասխան կայացված որոշման և, եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու, իրավասու իշխանության կամ իրավասու իշխանության նշանակած անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու իրավունք, և այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք:

Պողված 14

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակային քննության իրավունք: Մամուլին ու հասարակայնությանը կարող է արգելվել մասնակցելու ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը, կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը: Մեծ արգելումը կատարվում է այն չափով, որչափ, դատարանի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ դատական ցանկացած որոշում պետք է լինի հրապարակային, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան կամ գործը վերաբերում է անուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

(a) շտապ կարգով և մանրակրկիտ, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվել իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի ու հիմքի մասին,

(b) բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար,

(c) դատվել առանց չարդարացված հապաղման,

(d) դատվել իր ներկայությամբ և իրեն պաշտպանել անձամբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. պաշտպան չունենալու դեպքում տեղեկացվել այդ իրավունքի մասին, և ցանկացած դեպքում, ելնելով արդարադատության շահերից, ունենալ իր համար նշանակված պաշտպան՝ նրա համար անվճար բոլոր այն դեպքերում, եթե նա բավականաչափ միջոցներ չունի վճարելու այդ պաշտպանին,

(ե) հարցաքննել իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննվեն, և կանչել ու հարցաքննել իր օգտին ցուցմունք տվող վկաներին՝ նույն պայմաններով, ինչ առկա են իր դեմ ցուցմունք տվող վկաների համար,

(ֆ) օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով,

(ց) պարտադրված չլինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու:

4. Անչափահասների դեպքում դատավարությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի հաշվի առնվեն նրանց տարիքը և նրանց վերադաստիարակությանն աջակցելու ցանկությունը:

5. Հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից, օրենքի համաձայն:

6. Եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձն օրենքի համաձայն ստանում է փոխհատուցում, եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

7. Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

Ֆողված 15

1. Ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե գործողության կամ անգործության պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:

2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալուն և պատժելուն ցանկացած գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել է քրեական հանցագործություն:

Ֆողված 16

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ նա գտնվելիս լինի, ունի իր իրավասությունների ճանաչման իրավունք:

Ֆողված 17

1. Արգելվում է կամայական կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ:

2. Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվելու իրավունք:

Ֆողված 18

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությանը կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, կրոնական

ու ծիսական արարողությունների և վարդապետությունների իրականացման միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:

3. Կրոնի կամ համոզմունքների արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը՝ սեփական համոզմունքներին համապատասխան:

Հոդված 19

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հավատարիմ մնալու իր կարծիքներին՝ առանց միջամտության:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր թե տպագիր, զեղարվեստորեն արտահայտված թե սեփական ընտրությամբ մամուլի ցանկացած միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պարտականությունների: Ուստի, այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն օրենքով միայն և լինեն անհրաժեշտ.

(a)այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

(b)պետական անվտանգության, կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

Հոդված 20

1. Պատերազմի ցանկացած քարոզչություն պետք է արգելվի օրենքով:

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին ցանկացած ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով:

Հոդված 21

Ճանաչվում է խաղաղ հանրահավաքների իրավունքը: Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

Հոդված 22

1. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության նպատակով դրանց մեջ մտնելու իրավունքը:

2. Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության:

յան պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքից օգտվելու օրինական սահմանափակումների կիրառումն այն անձանց համար, ովքեր մտնում են զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս Միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1948 թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վնաս օրենսդրական ակտեր կամ օրենքը կիրառելու ի վնաս այդ երաշխիքների:

Ֆոդված 23

1. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք:

2. Ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց համար ճանաչվում է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:

3. Ոչ մի ամուսնություն չի կարող կայանալ առանց ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ՝ ապահովելու համար ամուսինների իրավունքների և պարտականությունների հավասարությունը ամուսնության պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում: Ամուսնալուծության դեպքում պետք է նախատեսվի երեխայի անհրաժեշտ պաշտպանություն:

Ֆոդված 24

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անչափահասի:

2. Յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է գրանցվի և ունենա անուն:

3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

Ֆոդված 25

Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, իրավունք և հնարավորություն ունի.

(a) մասնակցելու պետական գործերը վարելուն ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով,

(b) ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը,

(c) իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության:

Ֆոդված 26

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից այնպիսի հիմքերով, ինչպիսին են

ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ:

Հոդված 27

Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզվից օգտվելու իրավունքը:

ՄԱՍ IV

Հոդված 28

1. Ստեղծվում է Մարդու իրավունքների կոմիտե (այսուհետ սույն Դաշնագրում անվանվում է Կոմիտե): Այն կազմված է տասնութ անդամներից և կատարում է ստորև նախատեսվող գործառնությունները:

2. Կոմիտեի կազմի մեջ մտնում են այն անձինք, ովքեր սույն Դաշնագրի մասնակից պետությունների քաղաքացիներ են և օժտված են բարոյական բարձր հատկանիշներով ու մարդու իրավունքների բնագավառում ունեն ճանաչված իրավասություն, ընդ որում նկատի է առնվում իրավաբանական փորձ ունեցող մի քանի անձանց մասնակցության օգտակարությունը:

3. Կոմիտեի անդամներն ընտրվում և աշխատում են անձնապես:

Հոդված 29

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ այն անձանց ցուցակից, ովքեր բավարարում են 28-րդ հոդվածում նախատեսված պահանջները և այդ նպատակով առաջադրվել են սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից:

2. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջադրել երկու թեկնածությունից ոչ ավելի: Այդ անձինք պետք է լինեն իրենց առաջադրող պետության քաղաքացիներ:

3. Յուրաքանչյուր անձ ունի կրկնակի առաջադրման իրավունք:

Հոդված 30

1. Նախնական ընտրություններն անցկացվում են սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս անց:

2. Կոմիտեի յուրաքանչյուր ընտրության օրվանից առնվազն չորս ամիս առաջ, բացի 34-րդ հոդվածին համապատասխան թափուր հայտարարված տեղերի համալրման ընտրություններից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գրավոր հրավերով դիմում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ երեք ամսվա ընթացքում ներկայացնելու Կոմիտեի անդամության թեկնածություններ:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձևով առաջադրված բոլոր անձանց այբբենական ցուցակ՝ նշելով սույն Դաշնագրի մասնակից այն պետությունները, որոնք առաջադրել են այդ անձանց, և հիշյալ ցուցակը ներկայացնում է սույն Դաշնագրի մասնակից այն պետություններին ոչ ուշ, քան յուրաքանչյուր ընտրության անցկացման օրվանից մեկ ամիս առաջ:

4. Կոմիտեի անդամների ընտրությունն անցկացվում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների նիստում, որը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմակերպության կենտրոնական հաստատություններում: Այդ նիստում, որի համար քվորում է կազմում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեի կազմում ընտրված են համարվում այն անձինք, որոնց թեկնածություններն ստանում

են առավելագույն թվով ծայրեր և մասնակից պետությունների՝ ներկա գտնվող ու քվեարկող ներկայացուցիչների ծայրերի բացարձակ մեծամասնությունը:

Ֆողված 31

1. Կոմիտեի կազմի մեջ չի կարող ընդգրկվել նույն պետության մեկից ավելի քաղաքացի:
2. Կոմիտեի ընտրությունների ժամանակ հաշվի է առնվում անդամության աշխարհագրական հավասար բաշխումը և քաղաքակրթության տարբեր ծևերի ու իրավական հիմնական համակարգերի ներկայացուցչությունը:

Ֆողված 32

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորսամյա ժամկետով: Նրանք իրավունք ունեն վերընտրվելու իրենց թեկնածությունների կրկնակի առաջադրման դեպքում: Սակայն, առաջին ընտրությունների ժամանակ ընտրված անդամներից իննի լիազորությունների ժամկետն ավարտվում է երկամյա ժամանակահատվածի վերջում. առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների ամուսնները որոշվում են վիճակահանությամբ այն միստի նախագահողի կողմից, որի մասին հիշատակվում է 30-րդ հոդվածի 4-րդ կետում:
2. Լիազորությունների լրանալուց հետո ընտրություններն անց են կացվում սույն Դաշնագրի սույն մասի նախորդ հոդվածներին համապատասխան:

Ֆողված 33

1. Եթե Կոմիտեի որևէ անդամի լիազորությունները դադարեցվել են մյուս անդամների միաձայն կարծիքով, ժամանակավոր բնույթի բացակայությունից բացի, որևէ այլ պատճառով, Կոմիտեի նախագահը տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետև այդ անդամի տեղը հայտարարում է թափուր:
2. Կոմիտեի որևէ անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում նախագահն անհապաղ տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ տեղը հայտարարում է թափուր մահվան կամ այն օրվանից, երբ պաշտոնաթողությունն ուժի մեջ է մտնում:

Ֆողված 34

1. Եթե, 33-րդ հոդվածին համապատասխան տեղը թափուր է հայտարարվում և եթե փոխարինման ենթակա անդամի լիազորությունների ժամկետը չի լրանում տեղը թափուր հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը տեղյակ է պահում սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետությանը, որը կարող է երկու ամսվա ընթացքում, 29-րդ հոդվածին համապատասխան, թեկնածություն ներկայացնել այդ թափուր տեղի համար:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձևով առաջադրված անձանց այբբենական ցուցակ և ներկայացնում սույն Դաշնագրի մասնակից պետություններին: Թափուր տեղի համար ընտրություններն այնուհետև անցկացվում են սույն Դաշնագրի սույն մասի համապատասխան դրույթների համաձայն:
3. Կոմիտեի այն անդամը, որն ընտրվում է 33-րդ հոդվածին համապատասխան հայտարարված թափուր տեղի համար, պաշտոնն զբաղեցնում է այն անդամի լիազորությունների ժամկետի մնացյալ մասի ընթացքում, որի տեղը Կոմիտեում ազատվել է հիշյալ հոդվածի դրույթների համաձայն:

Ֆողված 35

Կոմիտեի անդամներն ստանում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվող վարձատրություն՝ Միավորված ազգերի կազմակերպության միջոցներից, Գլխավոր ասամբլեայի կողմից սահմանվող կարգով ու պայմաններով՝ հաշվի առնելով Կոմիտեի պարտականությունների կարևորությունը:

Հոդված 36

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը անհրաժեշտ անձնակազմ ու նյութական միջոցներ է տրամադրում Կոմիտեի կողմից իր գործառույթներն արդյունավետ, սույն Դաշնագրին համապատասխան իրականացնելու համար:

Հոդված 37

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Կոմիտեի առաջին նիստը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում:
2. Իր առաջին նիստից հետո Կոմիտեն հավաքվում է սեփական Ընթացակարգի կանոններով նախատեսված ժամանակ:
3. Կոմիտեն, սովորաբար, հավաքվում է Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում կամ Միավորված ազգերի կազմակերպության՝ Ժնևի գրասենյակում:

Հոդված 38

Կոմիտեի յուրաքանչյուր անդամ, նախքան իր պարտականություններն ստանձնելը, Կոմիտեի դմբաց նիստում հանդիսավոր հայտարարություն է անում իր գործառույթներն անաչառ ու բարեխիղճ կատարելու վերաբերյալ:

Հոդված 39

1. Կոմիտեն իր պաշտոնատար անձանց ընտրում է երկամյա ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:
2. Կոմիտեն ընդունում է իր Ընթացակարգի կանոնները, սակայն դրանք պետք է, մասնավորապես, նախատեսեն, որ.
 - (a) քվորում կազմում են Կոմիտեի տասներկու անդամները,
 - (b) Կոմիտեի որոշումներն ընդունվում են մերկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Հոդված 40

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների և այդ իրավունքների օգտագործման ասպարեզում ձեռք բերած առաջընթացի մասին.
 - (a) համապատասխան մասնակից պետության համար սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում,
 - (b) դրանից հետո՝ բոլոր այն դեպքերում, երբ դա կպահանջի Կոմիտեն:
2. Բոլոր զեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանք ուղարկում է Կոմիտեին՝ քննության առնելու համար: Ջեկույցներում նշվում են, եթե կան, այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Դաշնագրի կենսագործման վրա:
3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը, Կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, կարող է շահագրգիռ մասնագիտացված հաստատություններին ուղարկել զեկույցների այն հատվածների պատճենները, որոնք կարող են վերաբերել նրանց իրավասության ոլորտին:
4. Կոմիտեն ուսումնասիրում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների ներկայացրած զեկույցները: Նա մասնակից պետություններին է ուղարկում իր զեկույցները և ընդհանուր կարգի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կհամարի: Կոմիտեն կարող է նաև այդ դիտողությունները, սույն Դաշնագրի մասնակից պե-

տություններից ստացված զեկույցների պատճենների հետ միասին, ուղարկել Տնտեսական և սոցիալական խորհրդին:

5. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են Կոմիտեին ներկայացնել իրենց նկատառումները բոլոր այն դիտողությունների վերաբերյալ, որոնք կարող են արվել սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Հոդված 41

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունը, սույն հոդվածին համապատասխան, կարող է ցանկացած ժամանակ հայտարարել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ստանալու և քննարկելու հաղորդումներ այն մասին, որ որևէ մասնակից պետություն հաստատում է, թե մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունները: Սույն հոդվածով նախատեսվող հաղորդումները կարող են ընդունվել և քննարկվել միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացրել է այն մասնակից պետությունը, որը հայտարարություն է արել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի այդ իրավասությունը: Կոմիտեն չի ընդունում ոչ մի հաղորդում, եթե այն պատկանում է նման հայտարարություն չարած մասնակից պետությանը: Սույն հոդվածին համապատասխան ստացված հաղորդումները քննության են առնվում հետևյալ ընթացակարգով.

(a) եթե սույն Դաշնագրի մասնակից որևէ պետություն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կենսագործում սույն Դաշնագրի դրույթները, ապա նա կարող է գրավոր հաղորդմամբ այդ հարցի մասին տեղեկացնել հիշյալ մասնակից պետությանը: Այդ հաղորդումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում հաղորդումն ստացած պետությունը նման հաղորդում հղած պետությանը ներկայացնում է հիշյալ հարցը պարզաբանող գրավոր բացատրություն կամ ցանկացած այլ հայտարարություն, որտեղ պետք է բովանդակվեն, որքանով դա հնարավոր ու նպատակահարմար է, ներպետական այն ընթացակարգերն ու պաշտպանության միջոցները, որոնք կիրառվել են, կիրառվելու են կամ կարող են կիրառվել տվյալ հարցի առնչությամբ,

(b) եթե ստացող պետության կողմից նախնական հաղորդումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում հարցը չի լուծվում ի բավարարումն երկու շահագրգիռ մասնակից պետությունների, այդ պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի հարցը հանձնել Կոմիտեին՝ այդ մասին տեղեկացնելով Կոմիտեին և մյուս պետությանը,

(c) Կոմիտեն իրեն հանձնված հարցը քննության է առնում միայն այն բանից հետո, երբ հավաստիանում է, որ տվյալ դեպքում միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին համապատասխան օգտագործվել և սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր մատչելի միջոցները: Տվյալ կանոնը չի գործում, երբ այդ միջոցների կիրառումը չարդարացված կերպով ձգձգվում է,

(d) սույն հոդվածում նախատեսվող հաղորդումները քննության առնելիս Կոմիտեն անցկացնում է դմնփակ նիստեր,

(e) Կոմիտեն, (c) ենթակետի դրույթները պահպանելով, իր բարի ծառայություններն է մատուցում շահագրգիռ մասնակից պետություններին՝ սույն Դաշնագրով ճանաչվող մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի հիման վրա հարցը բարեկամաբար լուծելու նպատակով,

(f) իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցով Կոմիտեն կարող է դիմել (b) ենթակետում հիշատակված շահագրգիռ մասնակից պետություններին՝ գործին վերաբերող ցանկացած տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով,

(g) (b) ենթակետում հիշատակված շահագրգիռ մասնակից պետություններն իրավունք ունեն ներկա գտնվել Կոմիտեում հարցի քննարկման ժամանակ և առաջարկություններ անել բանավոր և (կամ) գրավոր,

(h) Կոմիտեն (b) ենթակետին համապատասխան ծանուցում ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում ներկայացնում է զեկույց՝

(i) եթե (e) ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում է ձեռք բերվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է հակիրճ շարադրելով փաստերն ու ձեռք բերված կարգավորումը,

(ii) եթե (e) ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում ձեռք չի բերվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերի հակիրճ շարադրանքով. շահագրգիռ մասնակից պետությունների գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառումը կցվում են զեկույցին:

Յուրաքանչյուր հարցի կապակցությամբ զեկույցն ուղարկվում է շահագրգիռ մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, երբ սույն Դաշնագրի տասը մասնակից պետություններ հանդես են գալիս հայտարարությամբ սույն հոդվածի առաջին կետին համապատասխան: Այդ հայտարարությունները մասնակից պետություններն ի պահ են հանձնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է մնացած մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Նման գործողությունը չի խոչընդոտում ցանկացած հարցի քննարկմանը, որը, սույն հոդվածին համապատասխան, արդեն ուղարկված հաղորդման առարկա է. այն բանից հետո, երբ Գլխավոր քարտուղարը ծանուցում է ստացել հայտարարությունը հետ վերցնելու մասին, ցանկացած մասնակից պետության հետագա ոչ մի հաղորդում չի ընդունվում, եթե շահագրգիռ մասնակից պետությունը հանդես չի եկել նոր հայտարարությամբ:

Պոլված 42

1. a) Եթե 41-րդ հոդվածին համապատասխան Կոմիտեին հանձնված որևէ հարց չի լուծվել ի բավարարումն շահագրգիռ մասնակից պետությունների, Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետությունների նախնական համաձայնությամբ նշանակել հատուկ հաշտարար հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի բարի ծառայությունները շահագրգիռ մասնակից պետություններին են մատուցվում սույն Դաշնագրի դրույթների պահպանման հիման վրա, տվյալ հարցի փոխհամաձայնեցված լուծման նպատակով:

b) Հանձնաժողովը կազմվում է շահագրգիռ մասնակից պետությունների համար ընդունելի հինգ անդամից: Եթե շահագրգիռ մասնակից պետությունները երեք ամսվա ընթացքում համաձայնության չեն գալիս Հանձնաժողովի ամբողջ կազմի կամ նրա մի մասի վերաբերյալ, ապա Հանձնաժողովի՝ նշանակման հարցում ընդհանուր համաձայնության չարժանացած անդամներն ընտրվում են Կոմիտեի կազմից, գաղտնի քվեարկությամբ, Կոմիտեի ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն շահագրգիռ մասնակից պետությունների կամ սույն Դաշնագրի ոչ մասնակից պետության կամ այն մասնակից պետության քաղաքացիներ, որը հանդես չի եկել 41-րդ հոդվածին համապատասխան հայտարարությամբ:

3. Հանձնաժողովը ընտրում է իր նախագահին և ընդունում իր Ընթացակարգի կանոնները:

4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար գումարվում են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում կամ Միավորված ազգերի կազմակերպության Ժնևի գրասենյակում: Սակայն, Հանձնաժողովն իր որոշմամբ, խորհրդակցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի և շահագրգիռ մասնակից պետությունների հետ, դրանք կարող է գումարել այլ հարմար վայրերում:

5. Քարտուղարությունը 36-րդ հոդվածին համապատասխան սպասարկում է նաև սույն հոդվածի հիման վրա նշանակված հանձնաժողովներին:

6. Կոմիտեի ստացած և ուսումնասիրած տեղեկատվությունը հանձնվում է հանձնաժողովի տնօրինությանը, և վերջինս շահագրգիռ մասնակից պետություններին կարող է դիմել գործին առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն ներկայացնելու խնդրանքով:

7. Հանձնաժողովի կողմից հարցի ամբողջական քննարկումից հետո, սակայն, համենայն դեպս, ոչ ուշ, քան տվյալ հարցը հանձնաժողովին հանձնելուց 12 ամիս անց, նա Կոմիտեի նախագահին ներկայացնում է զեկույց՝ շահագրգիռ մասնակից պետություններին ուղարկելու համար՝

(a) եթե հանձնաժողովը չի կարող տվյալ հարցի քննարկումն ավարտել տասներկու ամսվա ընթացքում, ապա նա իր զեկույցը սահմանափակում է իր կողմից տվյալ հարցի քննարկման վիճակի հակիրճ շարադրանքով,

(b) եթե տվյալ հարցի փոխհամաձայնեցված կարգավորում ձեռք է բերվում սույն Դաշնագրով ճանաչվող մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի հիման վրա, Հանձնաժողովն իր զեկույցը սահմանափակում է փաստերի ու ձեռք բերված կարգավորման հակիրճ շարադրանքով,

(c) եթե (b) ենթակետի դրույթների շրջանակում կարգավորում ձեռք չի բերվում, Հանձնաժողովի զեկույցը պարունակում է նրա փաստացի եզրակացությունները շահագրգիռ մասնակից պետությունների վեճին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ և հանձնաժողովի նկատառումներն այդ հարցի փոխհամաձայնեցված կարգավորման հնարավորությունների մասին: Այդ զեկույցը պարունակում է նաև շահագրգիռ մասնակից պետությունների ներկայացրած գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառումը,

(d) եթե հանձնաժողովի զեկույցը ներկայացվում է (c) ենթակետի համաձայն, ապա շահագրգիռ մասնակից պետություններն այդ զեկույցն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում Կոմիտեի նախագահին տեղեկացնում են այն մասին, թե իրենք համաձայն են արդյոք Հանձնաժողովի զեկույցի բովանդակությանը:

8. Սույն հոդվածի դրույթները չեն նվազեցնում Կոմիտեի՝ 41-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

9. Շահագրգիռ մասնակից պետությունները հավասարապես կրում են Հանձնաժողովի անդամների բոլոր ծախսերը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:

10. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կարող է, անհրաժեշտության դեպքում, վճարել հանձնաժողովի անդամների ծախսերը՝ մինչև, սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան, դրանց հատուցումը շահագրգիռ մասնակից պետությունների կողմից:

Հոդված 43

Կոմիտեի և հատուկ հաշտարար հանձնաժողովների անդամները, որոնք կարող են նշանակվել 42-րդ հոդվածի համաձայն, օժտված են Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունների փորձագետների այն արտոնություններով, առավելություններով և անձեռնմխելիությամբ, որոնք նախատեսված են Միավորված ազգերի կազմակերպության Արտոնությունների և անձեռնմխելիության մասին Կոնվենցիայի համապատասխան բաժիններով:

Հոդված 44

Սույն Դաշնագրի իրականացմանը վերաբերող դրույթները կիրառվում են՝ առանց վնասելու մարդու իրավունքների ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների հիմնարար փաստաթղթերով ու կոնվենցիաներով սահմանված կամ դրանց համաձայն գործող ընթացակարգերին, և սույն Դաշնագրի մասնակից պետություններին չեն խոչընդոտում օգտագործելու վեճերի լուծման այլ ընթացակարգեր՝ իրենց միջև գործող ընդհանուր կամ հատուկ միջազգային համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 45

Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային Տնտեսական և սոցիալական խորհրդի միջոցով ներկայացնում է ամենամյա զեկույց իր գործունեության մասին:

ՄԱՍ V

Հոդված 46

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների կանոնադրությունների այն դրույթների նշանակության նվազեցում, որոնք սահմանում են Միավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հաստատությունների տարբեր մարմինների համապատասխան պարտականությունները այն հարցերի կապակցությամբ, որոնց վերաբերում է սույն Դաշնագիրը:

Հոդված 47

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես իրենց բնական հարստությունից ու ռեսուրսներից լիարժեքորեն և ազատորեն օգտվելու և դրանք օգտագործելու՝ բոլոր ժողովուրդների անկապտելի իրավունքի սահմանափակում:

ՄԱՍ VI

Հոդված 48

1. Սույն Դաշնագիրը բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ նրա ցանկացած մասնագիտացված հաստատությունների անդամի, Միջազգային դատարանի Ստատուտի մասնակից ցանկացած պետության և սույն Դաշնագրին մասնակցելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հրավիրած ցանկացած այլ պետության համար:
2. Սույն Դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
3. Սույն Դաշնագիրը միանալու համար բաց է սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:
4. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:
5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագիրն ստորագրած կամ Դաշնագրին միացած բոլոր պետություններին տեղեկացնում է յուրաքանչյուր վավերագիրը կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին:

Հոդված 49

1. Սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում երեսուցիցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:
2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է սույն Դաշնագիրը կամ միանում նրան երեսուցիցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

Հոդված 50

Սույն Դաշնագրի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

Հոդված 51

1. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն, այնուհետև, առաջարկված ցանկացած լրացում ու փոփոխություն ուղարկում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին, խնդրելով հայտնել, թե իրենք համաձայն են արդյոք հրավիրելու մասնակից պետությունների կոնֆերանս՝ այդ առաջարկությունները քննարկելու և դրանց վերաբերյալ քվեարկություն անցկացնելու նպատակով: Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է կոնֆերանսի անցկացման օգտին, Գլխավոր քարտուղարը հրավիրում է այն Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Կոնֆերանսին ներկա գտնված և քվեարկությամբ մասնակցած մասնակից պետությունների մեծամասնության ընդունած ցանկացած լրացում կամ փոփոխություն ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:
2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում, երբ հաստատվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից և ընդունվում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ իրենց սահմանադրական գործընթացների համաձայն:
3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները պարտադիր են դառնում այն մասնակից պետությունների համար, որոնք ընդունել են դրանք, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Դաշնագրի դրույթները և նրանց կողմից նախկինում ընդունված ցանկացած լրացում ու փոփոխություն:

Հոդված 52

48-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին ծանուցում է հետևյալի մասին՝

(a) 48-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,

(b) 49-րդ հոդվածի համաձայն՝ սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի և 51-րդ հոդվածի համաձայն կատարված ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

Հոդված 53

1. Սույն Դաշնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագրի վավերացված պատճեններն ուղարկում է 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

Հավելված Բ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն

Ընդունվել է և բացվել ստորագրման, վավերացման և միանալու համար 1966 թ. դեկտեմբերի 16-ին Գլխավոր ասամբլեայի թիվ 2200A (XXI) բանաձևով:

Նախաբան

Սույն Արձանագրության մասնակից պետությունները՝

նկատի ունենալով, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) հետագա նպատակների իրագործման և նրա դրույթների կատարման համար նպատակահարմար է Դաշնագրի IV մասի համաձայն հիմնադրված Մարդու իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հնարավորություն ընձեռել ընդունելու և քննության առնելու, ինչպես նախատեսված է սույն Արձանագրությամբ, հաղորդումներ առանձին անձանցից, ովքեր հայտարարում են, թե իրենք զոհ են Դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման,

համաձայնել են ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1

Դաշնագրի մասնակից այն պետությունը, որը դառնում է սույն Արձանագրության մասնակից, ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննության առնելու առանձին անձանց՝ իր իրավագրությամբ ենթակա հաղորդումներ, ովքեր հայտարարում են, թե տվյալ մասնակից պետության կողմից՝ Դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման զոհ են դարձել: Կոմիտեն չի ընդունում որևէ հաղորդում, եթե այն վերաբերում է Դաշնագրի մասնակից պետության, որը, սակայն, մասնակից չէ սույն Արձանագրությանը:

Հոդված 2

1-ին հոդված դրույթներին համապատասխան, անձինք, ովքեր հայտարարում են, թե խախտվել է Դաշնագրում ամրագրված իրենց այս կամ այն իրավունքը, և ովքեր սպառել են իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, կարող են գրավոր հաղորդում ներկայացնել Կոմիտեի քննարկմանը:

Հոդված 3

Կոմիտեն կարող է անընդունելի համարել սույն Արձանագրության համաձայն ներկայացվող, բայց անստորագիր կամ, Կոմիտեի կարծիքով, հաղորդումներ ներկայացնելու իրավունքը չարաշահող և կամ Դաշնագրի դրույթներին անհամատեղելի ցանկացած հաղորդում:

Հոդված 4

1. Կոմիտեն, 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, սույն Արձանագրության համաձայն ներկայացվող ցանկացած հաղորդման մասին ծանուցում է սույն Արձանագրության մասնակից այն պետությանը, որը, ինչպես պնդում են, խախտում է Դաշնագրի որևէ դրույթ:

2. Ծանուցում ստացած պետությունը վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում է գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ՝ պարզաբանելով քննության առարկա խնդիրը և, եթե դրանք կան, պաշտպանության այն միջոցները, որոնք կարող էին կիրառվել այդ պետության կողմից:

Հոդված 5

1. Կոմիտեն քննության է առնում սույն Արձանագրության համաձայն ստացված հաղորդումները՝ հաշվի առնելով առանձին անձանց և շահագրգիռ մասնակից պետության ներկայացրած ողջ գրավոր տեղեկատվությունը:

2. Կոմիտեն չի քննում անձանցից ստացված ոչ մի հաղորդում, քանի դեռ չի համոզվել, որ.

(a) այդ նույն հարցը չի քննարկվում միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի համաձայն,

(b) տվյալ անձն սպառել է իրավական պաշտպանության բոլոր մատչելի ներպետական միջոցները: Այս դրույթը չի գործում, եթե նման միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է:

3. Սույն Արձանագրությամբ նախատեսված հաղորդումները քննելիս Կոմիտեն գումարում է փակ նիստեր:

4. Իր նկատառումները Կոմիտեն հայտնում է համապատասխան մասնակից պետությանը և անձին:

Հոդված 6

Կոմիտեն Դաշնագրի 45-րդ հոդվածով նախատեսված իր ամենամյա զեկուցման մեջ ամփոփ շարադրում է սույն Արձանագրությանը համապատասխան իրականացրած իր գործունեությունը:

Հոդված 7

Մինչև Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ին ընդունած Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրի վերաբերյալ 1514 (XV) բանաձևի նպատակների իրագործումը՝ սույն Արձանագրության դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ և Միավորված ազգերի կազմակերպության ու նրա մասնագիտացված հաստատությունների միջազգային այլ համաձայնագրերով ու փաստաթղթերով այդ ժողովուրդներին ընձեռված հանրագիր ներկայացնելու իրավունքը:

Հոդված 8

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Դաշնագիրը ստորագրած ցանկացած պետության կողմից:

2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության կողմից: Վավերագրերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Արձանագրությունը միանալու համար բաց է Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության համար:

4. Միանալն ուժի մեջ մտնում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հանձնելով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրությունը ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին հայտնում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ի պահ հանձնելու մասին:

Հոդված 9

1. Դաշնագրի՝ ուժի մեջ մտնելու դեպքում սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

2. Տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Արձանագրությունը վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

Հոդված 10

Սույն Արձանագրության դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

Հոդված 11

1. Սույն Արձանագրության մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Այնուհետև Գլխավոր քարտուղարը առաջարկված յուրաքանչյուր լրացում ու փոփոխություն փոխանցում է սույն Արձանագրության մասնակից պետություններին, խնդրելով հայտնել, համաձայն են արդյոք հրավիրելու մասնակից պետությունների կոնֆերանս՝ այդ առաջարկությունները քննարկելու և քվեարկելու նպատակով: Եթե կոնֆերանս հրավիրելու օգտին արտահայտվում է մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը, ապա Գլխավոր քարտուղարը հրավիրում է կոնֆերանսը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Կոնֆերանսին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ամեն մի լրացում և փոփոխություն հաստատման է ներկայացվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայում հաստատվելուց և սույն Արձանագրության մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ այդ պետությունների սահմանադրական ընթացակարգի համաձայն ընդունվելուց հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները դառնում են պարտադիր՝ դրանք ընդունած մասնակից պետությունների համար, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Արձանագրության դրույթները և նախկինում նրանց կողմից ընդունված լրացումներն ու փոփոխությունները:

Հոդված 12

1. Մասնակից յուրաքանչյուր պետություն ցանկացած ժամանակ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցումով կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում նշված ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց երեք ամիս անց:

2. Չեղյալ հայտարարումը չի խոչընդոտում մինչև դրա ուժի մեջ մտնելը 2-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաղորդումների առնչությամբ սույն Արձանագրության դրույթների կիրառումը շարունակելուն:

Հոդված 13

Սույն Արձանագրության 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Դաշնագրի 48-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին տեղեկացնում է՝

(a) 8-րդ հոդվածի համաձայն ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,

(b) 9-րդ հոդվածի համաձայն՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու և 11-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ժամկետի մասին,

(c) 12-րդ հոդվածի համաձայն՝ չեղյալ հայտարարելու մասին:

Հոդված 14

1. Սույն Արձանագրությունը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն բնագրերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության վավերացված պատճեններն ուղարկում է Դաշնագրի 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

Հավելված Գ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արժանագրություն՝ ի վերացումն մահապատժի

Ընդունվել է և հայտարարվել Գլխավոր ասամբլեայի թիվ 44/128 բանաձևով,
ընդունված 1989 թ. դեկտեմբերի 15-ին:

Նախաբան

Սույն Արժանագրության մասնակից պետությունները՝

հավատալով, որ մահապատժի վերացումը կնպաստի մարդկային արժանապատվության ամրապնդմանը և մարդու իրավունքների առաջադիմական զարգացմանը,

վկայակոչելով 1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ - հոդվածը և 1966 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի 6-րդ հոդվածը,

ըշելով, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի 6-րդ հոդվածի՝ մահապատժի վերացմանը վերաբերող ձևակերպումը հստակորեն ենթադրում է, որ մահապատժի վերացումը ցանկալի է,

համոզված լինելով, որ մահապատժի վերացնելու բոլոր միջոցները պետք է դիտել որպես առաջադիմություն կյանքի իրավունքի ապահովման ասպարեզում,

ցանկանալով սույնով ստանձնել մահապատժի վերացնելու միջազգային պարտավորություն,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1

1. Սույն Արժանագրության մասնակից պետության իրավագործության ներքո գտնվող ոչ մի անձ մահապատժի չի ենթարկվում:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներն իր իրավագործության շրջանակներում մահապատժի վերացնելու համար:

Հոդված 2

1. Չի թույլատրվում որևէ վերապահում սույն Արժանագրության առնչությամբ, բացառությամբ վավերացման կամ միանալու պահին արված վերապահումի, որով մահապատժի կիրառում է նախատեսվում պատերազմի ժամանակ՝ համաձայն ռազմական բնույթի առավել ծանր հանցագործության կատարման համար մեղադրական դատավճռի:

2. Նման վերապահում կատարած մասնակից պետությունը վավերացման կամ միանալու պահին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հաղորդում է իր ազգային օրենսդրության՝ պատերազմի ժամանակ կիրառվող համապատասխան դրույթների մասին:

3. Նման վերապահում կատարած մասնակից պետությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցում է իր տարածքում պատերազմական ցանկացած դրության սկսվելու կամ դադարելու մասին:

Հոդված 3

Սույն Արձանագրության մասնակից պետությունները Մարդու իրավունքների կոմիտեին Դաշնագրի 40-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող զեկույցներում ընդգրկում են տեղեկատվություն սույն Արձանագրության իրականացման համար իրենց ձեռնարկած միջոցների մասին:

Հոդված 4

Դաշնագրի մասնակից այն պետությունների առնչությամբ, որոնք հայտարարություն են կատարել 41-րդ հոդվածի համաձայն, Մարդու իրավունքների կոմիտեի՝ այնպիսի հաղորդումներ ստանալու և քննարկելու իրավասությունը, երբ մի մասնակից պետություն պնդում է, թե մի այլ մասնակից պետություն չի կատարում իր պարտավորությունները, տարածվում է սույն Արձանագրության դրույթների վրա, եթե միայն շահագրգիռ մասնակից պետությունը հակառակը չի հայտարարել վավերացման կամ միանալու պահին:

Հոդված 5

1966 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրին կից առաջին կամընտիր Արձանագրության մասնակից պետությունների առնչությամբ, Մարդու իրավունքների կոմիտեի՝ նրանց իրավագործության ներքո գտնվող առանձին անձանց հաղորդումներ ստանալու և քննարկելու իրավասությունը տարածվում է սույն Արձանագրության դրույթների վրա, եթե միայն շահագրգիռ մասնակից պետությունը հակառակը չի հայտարարել վավերացման կամ միանալու պահին:

Հոդված 6

1. Սույն Արձանագրության դրույթները կիրառվում են որպես Դաշնագիրը լրացնող դրույթներ:
2. Առանց սույն Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն վերապահում անելու հնարավորությանը խոչընդոտելու, սույն Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքը ենթակա չէ որևէ սահմանափակման՝ Դաշնագրի 4-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 7

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Դաշնագիրն ստորագրած ցանկացած պետության համար:
2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման ցանկացած պետության կողմից, որը վավերացրել է Դաշնագիրը կամ միացել նրան: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
3. Սույն Արձանագրությունը բաց է միանալու համար Դաշնագիրը վավերացրած կամ նրան միացած ցանկացած պետության համար:
4. Միանալն իրականացվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:
5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրությունը ստորագրած կամ նրան միացած բոլոր պետություններին հաղորդում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնման մասին:

Հոդված 8

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

2. Տասներորդ վավերագրի կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնումից հետո սույն Դաշնագիրը վավերացրած կամ նրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

Հոդված 9

Սույն Արձանագրության դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

Հոդված 10

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Դաշնագրի 48-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետություններին տեղեկացնում է՝

- (a) սույն Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն կատարված վերապահումների, հաղորդումների և ծանուցումների մասին,
- (b) սույն Արձանագրության 4-րդ կամ 5-րդ հոդվածների համաձայն արված հայտարարությունների մասին,
- (c) սույն Արձանագրության 7-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,
- (d) սույն Արձանագրության 8-րդ հոդվածի համաձայն նրա ուժի մեջ մտնելու ժամկետի մասին:

Հոդված 11

1. Սույն Արձանագրությունը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության հավաստված պատճեններն ուղարկում է Դաշնագրի 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

Հավելված Դ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից պետությունները

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Ադրբեջան	13/11/92	13/08/92	
Ալբանիա	04/01/92	04/10/91	
Ալժիր	12/12/89	12/09/89	10/12/68
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	08/09/92	08/06/92	05/10/77
Անգոլա	10/04/92	10/01/92	
Արգենտինա	08/11/86	08/08/86	19/02/68
Արևելյան Թիմոր (Թիմոր Լեստե)	18/12/03	18/09/03	
Ավստրալիա	13/11/80	13/08/80	18/12/72
Ավստրիա	10/12/78	10/09/78	10/12/73
Աֆղանստան	24/04/83	24/01/83	
Բանգլադեշ	06/12/00	06/09/00	
Բարբադոս	23/03/76	05/01/73	
Բելառուս	23/03/76	12/11/73	19/03/68
Բելգիա	21/07/83	21/04/83	10/12/68
Բելիզ	10/09/96	10/06/96	
Բենին	12/06/92	12/03/92	
Բոթսվանա	08/12/00	08/09/00	08/09/00
Բոլիվիա	12/11/82	12/08/82	
Բոսնիա-Հերցեգովինա	06/03/92	01/09/93	
Բրազիլիա	24/04/92	24/01/92	
Բուլղարիա	23/03/76	21/09/70	08/10/68
Բուրկինա Ֆասո	04/04/99	04/01/99	
Բուրունդի	09/08/90	09/05/90	
Գաբոն	21/04/83	21/01/83	
Գամբիա	22/06/79	22/03/79	
Գայանա	15/05/77	15/02/77	22/08/68
Գանա	07/12/00	07/09/00	07/09/00
Գերմանիա	23/03/76	17/12/73	09/10/68
Գվատեմալա	05/08/92	06/05/92	
Գվինեա	24/04/78	24/01/78	28/02/67
Գրենադա	06/12/91	06/09/91	
Դանիա	23/03/76	06/01/72	20/03/68
Դոմինիկա	17/09/93	17/06/93	
Դոմինիկյան Հանրապետություն	04/04/78	04/01/78	
Եգիպտոս	14/04/82	14/01/82	04/08/67
Եթովպիա	11/09/93	11/06/93	
Եմեն	09/05/87	09/02/87	
Ջամբիա	10/07/84	10/04/84	
Ջիմբաբվե	13/08/91	13/05/91	
Էկվադոր	23/03/76	06/03/69	04/04/68
Էստոնիա	21/01/92	21/10/91	
Էրիթրեա	22/04/02	22/01/02	
Թաիլանդ	29/01/97	29/10/96	
Թունիս	23/03/76	18/03/69	30/04/68
Թուրքիա	23/01/04	23/09/03	15/08/00
Թուրքմենստան	01/08/97	01/05/97	
Իռլանդիա	08/03/90	08/12/89	01/10/73
Իսլանդիա	22/11/79	22/08/79	30/12/68

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Իսպանիա	27/07/77	27/04/77	28/09/76
Իսրայել	03/01/92	03/10/91	19/12/66
Իտալիա	15/12/78	15/09/78	18/01/67
Իրան (Իսլամական Հանրապետություն)	23/03/76	24/06/75	04/04/68
Իրաք	23/03/76	25/01/71	18/02/69
Լատվիա	14/07/92	14/04/92	
Լեհաստան	18/06/77	18/03/77	02/03/67
Լեսոտո	09/12/92	09/09/92	
Լիբանան	23/03/76	03/11/72	
Լիբիա (Լիբիայի Արաբական Ջամահիրիա)	23/03/76	15/05/70	
Լիտվա	20/02/92	20/11/91	
Լիխտենշտեյն	10/03/99	10/12/98	
Լյուքսեմբուրգ	18/11/83	18/08/83	26/11/74
Լուանդա	23/03/76	16/04/75	
Խորվաթիա	08/10/91	12/10/92	
Կամբոջա	26/08/92	26/05/92	17/10/80
Կամերուն	27/09/84	27/06/84	
Կանադա	19/08/76	19/05/76	
Կանաչ Հրվանդանի Կղզիների Հանրապետություն	06/11/93	06/08/93	
Կամբոջա	26/08/92	26/05/92	17/10/80
Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն	08/08/81	08/05/81	
Կիպրոս	23/03/76	02/04/69	
Կոլումբիա	23/03/76	29/10/69	21/12/66
Կոնգո	05/01/84	05/10/83	
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	01/02/77	01/11/76	
Կոստա Ռիկա	23/03/76	29/11/68	19/12/66
Կոտ դ'Իվուար	26/06/92	26/03/92	
Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն ¹	14/12/81	14/09/81	
Կորեայի Հանրապետություն	14/12/81	14/09/81	
Կորեայի Հանրապետություն	10/07/90	10/04/90	
Հայաստան	23/09/93	23/06/93	
Հայիթի	06/05/91	06/02/91	19/12/66
Հասարակածային Գվինեա	25/12/87	25/09/87	
Հարավաֆրիկյան Հանրապետություն	10/03/99	10/12/98	03/10/94
Հնդկաստան	10/07/79	10/04/79	
Հոնդուրաս	25/11/97	25/08/97	19/12/66
Հորդանան	23/03/76	28/05/75	30/06/72
Հունաստան	05/08/97	05/05/97	
Հունգարիա	23/03/76	17/01/74	25/03/69
Ղազախստան	02/12/03		
Ղրղըզստան	07/01/95	07/10/94	
Ճամայկա	23/03/76	03/10/75	19/12/66
Ճապոնիա	21/09/79	21/06/79	30/05/78
Մադագասկար	23/03/76	21/06/71	17/09/69
Մալավի	22/03/94	22/12/93	
Մալթա	13/12/90	13/09/90	
Մալի	23/03/76	16/07/74	

¹ Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը (Հյուսիսային Կորեա) ՔՔԻՄԴ-ից դուրս գալու մտադրության մասին հայտարարեց 1997 թ. օգոստոսին: ՄԻԿ-ը որոշեց, որ դա անթույլատրելի է (տե՛ս [25.38]):

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Մակեդոնիայի Նախկին Հարավսլավ- վիայի Հանրապետություն	17/09/91	18/01/94	
Մալդիվյան	23/03/76	12/12/73	
Մարոկկո	03/08/79	03/05/79	19/01/77
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	20/08/76	20/05/76	16/09/68
Մեքսիկա	23/06/81	23/03/81	
Մոզամբիկ	21/10/93	21/07/93	
Մոլդովայի Հանրապետություն	26/04/93	26/01/93	
Մոնակո	28/11/97	28/08/97	26/06/97
Մոնղոլիա	23/03/76	18/11/74	05/06/68
Նամիբիա	28/02/95	28/11/94	
Նեպալ	14/08/91	14/05/91	
Նիգեր	07/06/86	07/03/86	
Նիգերիա	29/10/93	29/07/93	
Նիդեռլանդներ	11/03/79	11/12/78	25/06/69
Նիկարագուա	12/06/80	12/03/80	
Նոր Զելանդիա	28/03/79	28/12/78	12/11/68
Նորվեգիա	23/03/76	13/09/72	20/03/68
Շվեդիա	23/03/76	06/12/71	29/09/67
Շվեյցարիա	18/09/92	18/06/92	
Շրի Լանկա	11/09/80	11/06/80	
Չեխիայի Հանրապետություն	01/01/93	22/02/93	
Չիլի	23/03/76	10/02/72	16/09/69
Ջիբութի	05/02/03	05/11/02	
Պանամա	08/06/77	08/03/77	27/07/76
Պարագվայ	10/09/92	10/06/92	
Պերու	28/07/78	28/04/78	11/08/77
Պորտուգալիա	15/09/78	15/06/78	07/10/76
Սալվադոր	29/02/80	30/11/79	21/09/67
Սան Մարինո	18/01/86	18/10/85	
Սեյշելյան կղզիներ	05/08/92	05/05/92	
Սենեգալ	13/05/78	13/02/78	06/07/70
Սենտ Վինսենթ և Գրենադիններ	09/02/82	09/11/81	09/11/81
Սերբիա և Չեռնոգորիա ²	23/03/76	02/06/71	08/08/67
Սինգապուր	23/11/96	23/08/96	
Սիրիայի Արաբական Հանրապետություն	23/03/76	21/04/69	
Սլովակիա	01/01/93	28/05/93	
Սլովենիա	25/06/91	06/07/92	
Սոմալի	24/04/90	24/01/90	
Սուդան	18/06/86	18/03/86	
Սուրինամ	28/03/77	28/12/76	
Վենեսուելա	10/08/78	10/05/78	24/06/69
Վիետնամ	24/12/82	24/09/82	
Վրաստան	03/08/94	03/05/94	
Ռումինիա	23/03/76	09/12/74	27/06/68
Ռուսաստանի Դաշնություն	23/03/76	16/10/73	18/03/68
Տանզանիայի Միացյալ Հանրապետություն	11/09/76	11/06/76	
Տաջիկստան	04/04/99	04/01/99	
Տոգո	24/08/84	24/05/84	
Տրինիդադ և Տոբագո	21/03/79	21/12/78	
Ուգանդա	21/09/95	21/06/95	

² Նախկին Հարավսլավիա: 2003 թ. փետրվարի 4-ին Հարավսլավիա պետությունը վերանվանվեց Սերբիա և Չեռնոգորիա:

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Ուզբեկստան	28/12/95	28/09/95	28/09/95
Ուկրաինա	23/03/76	12/11/73	20/03/68
Ուրուգվայ	23/03/76	01/04/70	21/02/67
Քենիա	23/03/76	01/05/72	
Քուվեյթ	21/08/96	21/05/96	
Ֆիլիպիններ	23/01/87	23/10/86	19/12/66
Ֆինլանդիա	23/03/76	19/08/75	11/10/67
Ֆրանսիա	04/02/81	04/11/80	

NB

Մարդու իրավունքների կոմիտեն արդեն իսկ Ղազախստանին համարում է ՔՔԻՄԴ-ին մասնակից՝ իրավա-
հաջորդության սկզբունքի ուժով [25.46]: Ավելին, ՔՔԻՄԴ-ը դեռևս կիրառվում է Հոնկոնգի [25.46] և Մա-
կաոյի [25.48] տարածքում՝ չնայած դրանց հանձնմանը Չինաստանի ժողովրդական Հանրապետությա-
նը, որը ՔՔԻՄԴ-ի մասնակից չի հանդիսանում:

Հավելված Ե

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրության մասնակից պետությունները

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Ադրբեջան	27/02/02	27/11/01	
Ալժիր	12/12/89	12/09/89	
Անգոլա	10/04/92	10/01/92	
Ավստրալիա	25/12/91	25/09/91	
Ավստրիա	10/03/88	10/12/87	10/12/73
Արգենտինա	08/11/86	08/08/86	
Բարբադոս	23/03/76	05/01/73	
Բելառուս	30/12/92	30/09/92	
Բելգիա	17/08/94	17/05/94	
Բենին	12/06/92	12/03/92	
Բոլիվիա	12/11/82	12/08/82	
Բոսնիա-Հերցեգովինա	01/06/95	01/03/95	01/03/95
Բուլղարիա	26/06/92	26/03/92	
Բուրկինա Ֆասո	04/04/99	04/01/99	
Գամբիա	09/09/88	09/06/88	
Գայանա ¹	05/04/93	05/01/99	
Գանա	07/12/00	07/09/00	07/09/00
Գերմանիա	25/11/93	25/08/93	
Գվատեմալա	28/02/01	28/11/00	
Գվինեա	17/09/93	17/06/93	19/03/75
Դանիա	23/03/76	06/01/72	20/03/68
Դոմինիկյան Հանրապետություն	04/04/78	04/01/78	
Ջամբիա	10/07/84	10/04/84	
Էկվադոր	23/03/76	06/03/69	04/04/68
Էստոնիա	21/01/92	21/10/91	
Թուրքմենստան	01/08/97	01/05/97	
Իռլանդիա	08/03/90	08/12/89	
Իսլանդիա	22/11/79	22/08/79	
Իսպանիա	25/04/85	25/01/85	
Իտալիա	15/12/78	15/09/78	30/04/76
Լատվիա	22/09/94	22/06/94	
Լեհաստան	07/02/92	07/11/91	
Լեսոտո	06/12/00	06/09/00	
Լիբիա	16/08/89	16/05/89	
Լիխտենշտեյն	10/03/99	10/12/98	
Լիտվա	20/02/92	20/11/91	
Լյուքսեմբուրգ	18/11/83	18/08/83	
Խորվաթիա	12/01/96	12/10/95	
Կամերուն	27/09/84	27/06/84	
Կանադա	19/08/76	19/05/76	
Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն	08/08/81	08/05/81	

¹ Գայանան դուրս եկավ առաջին կամընտիր արձանագրությունից, այնուհետև նշված ամսաթվին կրկին միացավ՝ նոր վերապահումով:

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Կիպրոս	15/07/92	15/04/92	19/12/66
Կոլումբիա	23/03/76	29/10/69	21/12/66
Կոնգո	05/01/84	05/10/83	
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	01/02/77	01/11/76	
Կոստա Ռիկա	23/03/76	29/11/68	19/12/66
Կոտ դ'Իվուար	05/06/97	05/03/97	
Կորեայի Հանրապետություն	10/07/90	10/04/90	
Հայաստան	23/09/93	23/06/93	
Հասարակածային Գվինեա	25/12/87	25/09/87	
Հունաստան	05/08/97	05/05/97	
Հունգարիա	07/12/88	07/09/88	
Ղրղըզստան	07/01/94	07/10/95	
Մադագասկար	23/03/76	21/06/71	17/09/69
Մալավի	11/09/96	11/06/96	
Մալթա	13/12/90	13/09/90	
Մալի	24/01/02	24/10/01	
Մակեդոնիայի Նախկին Հարավ- սլավիայի Հանրապետություն	12/03/95	12/12/94 ²	12/12/94
Մալդիվներ	23/03/76	12/12/73	
Մեքսիկա	15/06/02	15/03/02	
Մոնղոլիա	16/07/91	16/04/91	
Նամիբիա	28/02/95	28/11/94	
Նեպալ	14/08/91	14/05/91	
Նիգեր	07/06/86	07/03/86	
Նիդեռլանդներ	11/03/79	11/12/78	25/06/69
Նիկարագուա	12/06/80	12/03/80	
Նոր Զելանդիա	26/08/89	26/05/89	
Նորվեգիա	23/03/76	13/09/72	20/03/68
Շվեդիա	23/03/76	06/12/71	29/09/67
Շրի Լանկա	03/01/98	03/10/97	
Չադ	09/09/95	09/06/95	
Չեխիայի Հանրապետություն	01/01/93	22/02/93	
Չիլի	28/08/92	28/05/92	28/05/92
Պանամա	08/06/77	08/03/77	27/07/76
Պարագվայ	10/04/95	10/01/95	
Պերու	03/01/81	03/10/80	11/08/77
Պորտուգալիա	03/08/83	03/05/83	01/08/78
Ռումինիա	20/10/93	20/07/93	
Ռուսաստանի Դաշնություն	01/01/92	01/10/91	
Սալվադոր	06/09/95	06/06/95	21/09/67
Սան Մարինո	18/01/86	18/10/85	
Սեյշելյան կղզիներ	05/08/92	05/05/92	
Սենեգալ	13/05/78	13/02/78	06/07/70
Սենտ Վինսենթ և Գրենադիններ	09/02/82	09/11/81	
Սերբիա և Մոնտենեգրո	06/12/01	06/09/01	12/03/01 ³
Սինգապուր	23/11/96	23/08/96	
Սլովակիա	01/01/93	28/05/93	
Սլովենիա	16/10/93	16/07/93	
Սոմալի	24/04/90	24/01/90	
Սուրինամ	28/03/77	28/12/76	
Վենեսուելա	10/08/78	10/05/78	15/11/76
Վրաստան	03/08/94	03/05/94	
Տաջիկստան	04/04/99	04/01/99	
Տոգո	30/06/88	30/03/88	

² Ստորագրման իրավահաջորդ:

³ Վավերացման իրավահաջորդ:

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Ուգանդա	14/02/96	14/11/95	
Ուգբեկստան	28/12/95	28/09/95	
Ուկրաինա	25/10/91	25/07/91	
Ուրուգվայ	23/03/76	01/04/70	21/02/67
Ֆիլիպիններ	22/11/89	22/08/89	19/12/66
Ֆինլանդիա	23/03/76	19/08/75	11/12/67
Ֆրանսիա	17/05/84	17/02/84	

NB

Տրինիդադ և Տոբագոն 1998 թ. օգոստոսի 26-ին դուրս եկավ առաջին կամընտիր արձանագրությունից և կրկին միացավ նշված ամսաթվերին: Տրինիդադ և Տոբագոն նորից հրաժարվեց առաջին կամընտիր արձանագրությունից 2000 թ. մարտի 27-ին, որն ուժի մեջ մտավ 2000 թ. հունիսի 27-ին: Գամայկան առաջին կամընտիր արձանագրությունից դուրս եկավ 1997 թ. հոկտեմբերի 23-ին: Տե՛ս [25.39]:

Հավելված Զ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրության մասնակից պետությունները

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Ադրբեջան	22/04/99	22/01/99	
Ավստրալիա	11/07/91	02/10/90	
Ավստրիա	02/06/93	02/03/93	08/04/91
Արևելյան Թիմոր	18/12/03	18/09/03	
Բելգիա	08/03/99	08/12/98	12/07/90
Բոսնիա և Հերցեգովինա	16/06/01	16/03/01	07/09/00
Բուլղարիա	10/11/99	10/08/99	11/03/99
Գերմանիա	18/11/92	18/08/92	13/02/90
Դանիա	24/05/94	24/02/94	13/02/90
Էկվադոր	23/05/93	23/02/93	
Թուրքմենստան	12/04/00	12/01/00	
Իռլանդիա	18/09/93	18/06/93	
Իսլանդիա	11/07/91	02/04/91	30/01/91
Իսպանիա	11/07/91	11/04/91	23/02/90
Իտալիա	14/05/95	14/02/95	13/02/90
Լիխտենշտեյն	10/03/99	10/12/98	
Լիտվա	28/06/02	28/03/02	08/09/00
Լյուքսեմբուրգ	12/05/92	12/02/92	13/02/90
Խորվաթիա	12/01/96	12/10/95	
Կանաչ Հրվանդանի Կղզիների Հանրապետություն	19/08/00	19/05/00	
Կիպրոս	10/12/99	10/09/99	
Կոլումբիա	05/11/97	05/08/97	
Կոստա Ռիկա	05/09/98	05/06/98	14/02/90
Հարավաֆրիկյան Հանրապետություն	28/11/02	28/08/02	
Հունաստան	05/08/97	05/05/97	
Հունգարիա	24/05/94	24/02/94	
Մալթա	29/03/95	29/12/94	
Մակեդոնիայի Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն	26/04/95	26/01/95	
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	10/03/00	10/12/99	31/03/99
Մոզամբիկ	21/10/93	21/07/93	
Մոնակո	28/06/00	28/03/00	
Նամիբիա	28/02/95	28/11/94	
Նեպալ	04/06/98	04/03/98	
Նիդերլանդներ	11/07/91	26/03/91	09/08/90
Նոր Զելանդիա	11/07/91	22/02/90	22/02/90
Նորվեգիա	05/12/91	05/09/91	13/02/90
Շվեդիա	11/07/91	11/05/90	13/02/90
Շվեյցարիա	16/09/94	16/06/94	
Պանամա	21/04/93	21/01/93	
Պարագվայ	18/11/03	18/08/03	

Երկիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	Վավերացման կամ միանալու ամսաթիվը	Ստորագրման ամսաթիվը
Պորտուգալիա	11/07/91	17/10/90	13/02/90
Ջիբութի	05/02/03	05/11/02	
Ռումինիա	11/07/91	27/02/91	15/03/90
Սան Մարինո	26/09/03		
Սեյշելյան կղզիներ	15/03/95	15/12/94	
Սերբիա և Չեռնոգորիա	06/12/01	06/09/01	
Սլովակիա	22/09/99	22/06/99	22/09/98
Սլովենիա	10/06/94	10/03/94	14/09/93
Վենեսուելա	22/05/93	22/02/93	07/06/90
Վրաստան	22/06/99	22/03/99	
Ուրուգվայ	21/04/93	21/01/93	13/02/90
Ֆինլանդիա	11/07/91	04/04/91	13/02/90

Հավելված Է

Պետություններ, որոնք արել են դաշնագրի 41-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունը

Մասնակից պետություն

Ուժի մեջ է մտել

Ուժի մեջ է մինչև

Ալժիր	12 սեպտեմբերի, 1989	առանց սահմանափակման
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	8 սեպտեմբերի, 1992	առանց սահմանափակման
Ավստրալիա	28 հունվարի, 1993	առանց սահմանափակման
Ավստրիա	10 սեպտեմբերի, 1978	առանց սահմանափակման
Արգենտինա	8 օգոստոսի, 1986	առանց սահմանափակման
Բելառուս	30 սեպտեմբերի, 1992	առանց սահմանափակման
Բելգիա	5 մարտի, 1987	առանց սահմանափակման
Բոսնիա-Հերցեգովինա	6 մարտի, 1992	առանց սահմանափակման
Բուլղարիա	12 մայիսի, 1993	առանց սահմանափակման
Գամբիա	9 հունիսի, 1988	առանց սահմանափակման
Գայանա	10 մայիսի, 1993	առանց սահմանափակման
Գանա	7 սեպտեմբերի, 2000	առանց սահմանափակման
Գերմանիա	28 մարտի, 1979	10 մայիսի, 2006
Դանիա	23 մարտի, 1976	առանց սահմանափակման
Զիմբաբվե	20 օգոստոսի, 1991	առանց սահմանափակման
Էկվադոր	24 օգոստոսի, 1984	առանց սահմանափակման
Թունիս	24 հունիսի, 1993	առանց սահմանափակման
Իռլանդիա	8 դեկտեմբերի, 1989	առանց սահմանափակման
Իսլանդիա	22 օգոստոսի, 1979	առանց սահմանափակման
Իսպանիա	30 հունվարի, 1998	առանց սահմանափակման
Իտալիա	15 սեպտեմբերի, 1978	առանց սահմանափակման
Լեհաստան	25 սեպտեմբերի, 1990	առանց սահմանափակման
Լիխտենշտեյն	10 մարտի, 1999	առանց սահմանափակման
Լյուքսեմբուրգ	18 օգոստոսի, 1983	առանց սահմանափակման
Խորվաթիա	12 հոկտեմբերի, 1995	12 հոկտեմբերի, 1996
Կանադա	29 հոկտեմբերի, 1979	առանց սահմանափակման
Կոնգո	7 հուլիսի, 1989	առանց սահմանափակման
Կորեայի Հանրապետություն	10 ապրիլի, 1990	առանց սահմանափակման
Հարավաֆրիկյան Հանրապետություն	10 մարտի, 1999	առանց սահմանափակման
Հունգարիա	7 սեպտեմբերի, 1988	առանց սահմանափակման
Մալթա	13 սեպտեմբերի, 1990	առանց սահմանափակման
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	20 մայիսի, 1976	առանց սահմանափակման
Նիդեռլանդներ	11 դեկտեմբերի, 1978	առանց սահմանափակման
Նոր Զելանդիա	28 դեկտեմբերի, 1978	առանց սահմանափակման
Նորվեգիա	23 մարտի, 1976	առանց սահմանափակման
Շվեդիա	23 մարտի, 1976	առանց սահմանափակման
Շվեյցարիա	18 սեպտեմբերի, 1992	18 սեպտեմբերի, 2002
Շրի Լանկա	11 հունիսի, 1980	առանց սահմանափակման
Չեխիայի Հանրապետություն	1 հունվարի, 1993	առանց սահմանափակման
Չիլի	11 մարտի, 1990	առանց սահմանափակման
Պերու	9 ապրիլի, 1984	առանց սահմանափակման
Ռուսաստանի Դաշնություն	1 հոկտեմբերի, 1991	առանց սահմանափակման

Մասնակից պետություն

Սենեգալ
Սլովակիա
Սլովենիա
Ուկրաինա
Ֆիլիպիններ
Ֆինլանդիա

Ուժի մեջ է մտել

5 հունվարի, 1981
1 հունվարի, 1993
6 հուլիսի, 1992
28 հուլիսի, 1992
23 հոկտեմբերի, 1986
19 օգոստոսի, 1975

Ուժի մեջ է մինչև

առանց սահմանափակման
առանց սահմանափակման
առանց սահմանափակման
առանց սահմանափակման
առանց սահմանափակման
առանց սահմանափակման

Հավելված Ը

Մարդու իրավունքների կոմիտեի անդամները (նախկին և ներկա)

Անուն	Երկիր	Անդամության տևողությունը
<i>Ա. Ներկա անդամներ</i>		
Պ-ն Աբդելֆաթահ Ամոր [Abdelfattah Amor]	Թունիս	1999-
Պ-ն Նիսուկե Անդո [Nisuke Ando]	Ճապոնիա	1987-
Պ-ն Փրաֆուլաչանդրա Նաթվարլալ Բհագվաթի [Prafullachandra Natwarlal Bhagwati]	Հնդկաստան	1995-
Պ-ն Մորիս Գլեյե Ահանհանզո [Maurice Glele Ahanhanzo]	Բենին	2001-
Պ-ն Ֆրանկո Դեպասկուալե [Franco Depasquale]	Մալթա	2001-
Պ-ն Ռայսոմեր Լալահ [Rajsoomer Lallah]	Մավրիկիոս	1985-
Պ-ն Ահմեդ Թոֆիկ Խալիլ [Ahmed Tawfik Khalil]	Եգիպտոս	2001-
Պ-ն Ալֆրեդո Կատիլլերո Հոյոս [Alfredo Catillero Hoyos]	Պանամա	2002-
Պ-ն Մաքսուել Յալդեն [Maxwell Yalden]	Կանադա	1997-
Պ-ն Հիպոլիտո Սոլարի Յրիգոյեն [Hipólito Solari-Yrigoyen]	Արգենտինա	1999-
Պ-ն Մարտին Շայնին [Martin Scheinin]	Ֆինլանդիա	1997-
Տ-ն Քրիստին Շանե [Christine Chanet]	Ֆրանսիա	1987-
Պ-ն Իվան Շիրեր [Ivan Shearer]	Ավստրալիա	2001-
Պ-ն Մարկո Ռուլիո Բրունի Չելլի [Marco Rulio Bruni Celli]	Վենեսուելա	1993-6
Սըր Նայջել Ռոդլի [Sir Nigel Rodley]	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	2001-
Պ-ն Ռոման Վիերուշևսկի [Roman Wieruszewski]	Լեհաստան	1998-
Տ-ն Ռութ Ուեդգուդ [Ruth Wedgwood]	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	2002-
Պ-ն Ռաֆայել Ռիվաս Պոսադա [Rafael Rivas Posada]	Կոլումբիա	2001-
Պ-ն Վալտեր Քելին [Walter Kälin]	Շվեյցարիա	2002-
<i>Բ. Նախկին անդամներ</i>		
Պ-ն Անդրես Ագիլար [Andrés Aguilar]	Վենեսուելա	1981-8
Պ-ն Մոհամեդ Ալ Դուրի [Mohamed Al Douri]	Իրաք	1980-4
Պ-ն Թամաս Բան [Támás Ban]	Հունգարիա	1993-6
Պ-ն Մոհամեդ Բեն-Ֆադեի [Mohamed Ben-Fadhei]	Թունիս	1976-88
Պ-ն Թոմաս Բյուրգենթալ [Thomas Buergenthal]	ԱՄՆ	1995-9
Պ-ն Նեջիբ Բուզիրի [Nejib Bouziri]	Թունիս	1979-86
Պ-ն Աբդուլայե Դիյե [Abdulaye Dieye]	Սենեգալ	1979-82
Պ-ն Վոյին Դիմիտրիևիչ [Vojin Dimitrijevic]	Հարավսլավիա, Դաշնային Հանրապետություն	1983-94
Տ-ն Ժիզել Կոտե-Հարպեր [Gisèle Côté-Harper]	Կանադա	1983-4
Պ-ն Մանուչեհր Գանջի [Manouchehr Ganji]	Իրան	1976-80
Պ-ն Բեռնարդ Գրեֆրաթ [Bernard Graefrath]	Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն	1976-84
Տ-ն Պիլար Գաիտան դե Պոմբո [Pilar Gaitan de Pombo]	Կոլումբիա	1997-2000

Անուն	Երկիր	Անդամության տևողությունը
Պ-ն Աբդալլահ Ջախիա [Abdallah Zakhia]	Լիբանան	1997-2000
Պ-ն Ադամ Ջիլինսկի [Adam Zielinski]	Լեհաստան	1985-8
Պ-ն Օմրան էլ Շաֆեյ [Omran El Shafei]	Եգիպտոս	1987-98
Պ-ն Օլե Մոգենս Էսպերսեն [Ole Mogens Espersen]	Դանիա	1976-8
Սրբ Վինսենտ Էվանս [Vincent Evans]	Միացյալ Թագավորություն	1976-84
Տկն Էլիզաբեթ Էվատ [Elizabet Evatt]	Ավստրալիա	1993-2000
Պ-ն Ֆելիքս Էրմակորա [Felix Ermacora]	Ավստրիա	1981-4
Պ-ն Ռոժե Էրերա [Roger Errera]	Ֆրանսիա	1983-6
Պ-ն Դևիդ Կրեցմեր [David Kretzmer]	Իսրայել	1995-2002
Պ-ն Դանիլո Թյուրկ [Danilo Türk]	Սլովենիա	1997-8
Պ-ն Լյուբեն Գ. Կուլիշև [Luben G. Koulishhev]	Բուլղարիա	1976-80
Պ-ն Վլադիմիր Հանգա [Vladimir Hanga]	Ռումինիա	1976-84
Պ-ն Լուիս Հենկին [Louis Henkin]	ԱՄՆ	1999-2002
Պ-ն Լեոնտե Հերդոսիա Օրտեգա [Leonte Herdocia Ortega]	Նիկարագուա	1981-3
Պ-ն Կուրտ Հերնդլ [Kurt Herndl]	Ավստրիա	1991-4
Տկն Ռոզալին Հիգինս [Rosalyn Higgins]	Միացյալ Թագավորություն	1985-96
Ժ-ն Ռայսուներ Լալահ [Rajsoomer Lallah]	Մավրիկիոս	1976-82
Ժ-ն Անդրեաս Մավրոմատիս [Andreas Mavrommatis]	Կիպրոս	1976-96
Տկն Սեսիլիա Մեդինա Քուիրոգա [Cecilia Medina Quiroga]	Չիլի	1995-2002
Կ-ն Լաուրե Մոգաիզել [Laure Moghaizel]	Լիբանան	1997
Ժ-ն Յոզեֆ Ա. Մոոմերստեեգ [Joseph A. Moomersteeg]	Նիդերլանդներ	1987-91
Պ-ն Ֆերնանդո Մորա Ռոխաս [Fernando Mora Rojas]	Կոստա Ռիկա	1976-8
Պ-ն Անատոլի Պետրովիչ Մովչան [Anatoly Petrovich Movchan]	ԽՍՀՄ	1976-88
Պ-ն Ռայն Մյուլլերսոն [Rein Myullerson]	ԽՍՀՄ, Էստոնիա	1989-92
Պ-ն Բիրամե Նդիայե [Birame Ndiaye]	Սենեգալ	1983-94
Պ-ն Դեյան Յանկա [Dejan Janca]	Հարավսլավիա	1979-82
Պ-ն Ֆաուստո Պոկար [Fausto Pocar]	Իտալիա	1985-2000
Պ-ն Խուլիո Պրադո Վալեյո [Julio Prado Vallejo]	Էկվադոր	1976-98
Պ-ն Ուալիդ Սադի [Waleed Sadi]	Հորդանան	1978-94
Պ-ն Ֆուլջենս Սեմինեգա [Fulgence Seminega]	Ռուանդա	1976-8
Պ-ն Ալեխանդրո Սեռանո Կալդերա [Alegandro Serrano Caldera]	Նիկարագուա	1984-92
Պ-ն Վալտեր Սուրմա Տարնոպոլսկի [Walter Surma Tarnopolsky]	Կանադա	1976-83
Պ-ն Քրիստիան Տոմուշատ [Christian Tomuschat]	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	1976-86
Պ-ն Դիեգո Ուրիբե Վարգաս [Diego Uribe Vargas]	Կոլումբիա	1976-80
Պ-ն Ս. Ամոս Վակո [S. Amos Wako]	Քենիա	1984-92
Պ-ն Բերտիլ Վեններգրեն [Bertil Wennergren]	Շվեդիա	1987-94
Պ-ն Ֆրանսիսկո Խոսե Ագիլար Ուրբինա (Francisco Jose Aguilar Urbina)	Կոստա Ռիկա	1989-96
Պ-ն Հայսամ Քելանի (Haissam Kelani)	Սիրիայի Արաբական Հանրապետություն	1976-80
Պ-ն Էքերտ Բլայն (Eckart Klein)	Գերմանիա	1995-2002
Լորդ Բոլվիլ [Lord Colville]	Միացյալ Թագավորություն	1996-2000
Պ-ն Ջոզեֆ Բուրեյ [Joseph Cooray]	Շրի Լանկա	1987-90
Պ-ն Տորկեյլ Օփսալ (Torke Opsal)	Նորվեգիա	1976-86
Պ-ն Յանոշ Ֆոդոր (Jonos Fodor)	Հունգարիա	1989-93
Պ-ն Լորել Բ. Ֆրանսիս (Laurel B. Francis)	Ճամայկա	1993-6

Հավելված Թ

Կամընտիր արձանագրության գործեր¹

¹ Այս աղյուսակը ներկայացնում է կամընտիր արձանագրության հետ կապված Մարդու իրավունքների կոմիտեի բոլոր հայտնի որոշումները: Այն ներառում է անընդունելիության վերաբերյալ բոլոր որոշումները և վերջնական կարծիքները և այլ հայտնի որոշումներ, ինչպիսիք են ժամանակավոր [interlocutory decisions], ընդունելիության վերաբերյալ կամ հաղորդումները միացնելու վերաբերյալ որոշումները:

Նկատի ունեցեք նաև, որ որոշումների մեծ մասը կարելի է գտնել ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների տվյալների բազայում, այստեղ՝ www.unhchr.ch/tbs/doc.nsf կամ www.bayefsky.com կայքում:

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
1/1976	Ա և այլք [A et al]	Պ. ⁴		1 SD 3,17,35 ⁵	24/10/79
2/1976	Լ. Փ. [L.P.]	Կանադա		1 SD 21	14/8/79
4/1977	Ռանդեն [Ramirez]	Ուրուգվայ	80, 123	1 SD 3,4,49	23/7/80
5/1977	Ամբրոզինի և այլք [Ambrosini et al]	Ուրուգվայ	79, 124	1 SD 37,40	15/8/79
6/1977	Միլան Սեկուեյրա [Millon Sequeira]	Ուրուգվայ	80, 127	1 SD 52	29/7/80
8/1977	Վայսման, Լանցա Պերմոր [Weismann, Lanza Perdomo]	Ուրուգվայ	80, 111	1 SD 45	3/4/80
9/1977	Սանտուլո Վալկադա [Santullo Valcada]	Ուրուգվայ	80, 107	1 SD 43	26/10/79
10/1977	Ալտեսոր [Altesor]	Ուրուգվայ	82, 122	1 SD 6,105	29/3/82
11/1977	Գրիլ Մոտտա և այլք [Grille Motta et al]	Ուրուգվայ	80, 132	1 SD 54	29/7/80
13/1977	Ք. Է. [C.E.]	Կանադա		1 SD 16	25/8/77
15/1977	Պ. Բ. [D.B.]	Կանադա		1 SD 20	24/4/79
16/1977	Մոնգույա Մբենգե և այլք [Monguya Mbenge et al]	Զաիր	83, 134	2 SD 76	25/3/83
17/1977	Զ. Զ. [Z.Z.]	Կանադա		1 SD 19	28/7/78
19/1977	Ք. Զ. [C.J.]	Կանադա		1 SD 23	13/8/79
20/1977	Մ. Ա. [M.A.]	Պ.		1 SD 5,20	24/4/79
21/1977	Ի. [I.]	Պ.		1 SD 35	24/10/79
22/1977	Օ. Է. [O.E.]	Պ.		1 SD 5,6,35	24/10/79
24/1977	Լովելս [Lovelace]	Կանադա	81, 166; 83, 248	1 SD 10,37,83	30/7/81
25/1978	Մասիոտտի և Բարիտուսիո [Massiotti and Baritussio]	Ուրուգվայ	82, 187	1 SD 136	26/7/82
26/1978	Ն. Ա. [N.S.]	Կանադա	82, 212	1 SD 19	28/7/78
27/1978	Փինքնի [Pinkney]	Կանադա	82, 101	1 SD 12,95	29/10/81
28/1978	Ուայներգեր [Weinberger]	Ուրուգվայ	81, 114	1 SD 57	29/10/80
29/1978	Է. Բ. [E.B.]	Պ.		1 SD 11,39	20/10/80
30/1978	Բլեյեր [Bleier]	Ուրուգվայ	82, 130	1 SD 109	29/3/82
31/1978	Վաքսման [Waksman]	Ուրուգվայ	80, 120	1 SD 9,36	28/3/80
32/1978	Սալա դե Տուրոն [Sala de Tourn]	Ուրուգվայ	81, 120	1 SD 61	31/3/81
33/1978	Բուֆո Կարբալալ [Buffo Carballal]	Ուրուգվայ	81, 125	1 SD 63	27/3/81
34/1978	Լանդինելլի Սիլվա և այլք [Llandinelli Silva et al]	Ուրուգվայ		1 SD 65	8/4/81
35/1978	Աումենդուրդի-Ցիֆրա և այլք [Aumeeruddy-Cziffra et al]	Մալդիվյա	81, 134; 83, 254	1 SD 67	9/4/81
37/1978	Սորիանո դե Բաուտոն [Soriano de Bouton]	Ուրուգվայ	81, 143	1 SD 72	27/3/81
40/1978	Հարտիկայնեն և այլք [Hartikainen et al]	Ֆինլանդիա	81, 147; 83, 225	1 SD 74	9/4/81
43/1979	Դրեշեր Կալդաս [Drescher Caldas]	Ուրուգվայ	83, 192	2 SD 80	9/4/81
44/1979	Պիետրառոյա [Pietraoria]	Ուրուգվայ	81, 153	1 SD 76	27/3/81
45/1979	Սուարես դե Գոնզեռո [Suárez de Guerrero]	Արյունքիա	82, 137	1 SD 112	31/3/82

46/1979	Ֆալս Բորդա և այլք [Fals Borda et al]	Կոլումբիա	82, 193	1 SD 139	27/7/82
49/1979	Մարախս կրտսեր [Marais Jr.]	Մադագասկար	83, 141	2 SD 82	24/3/83
50/1979	Վան Դյուզեն [Van Duzen]	Կանադա	82, 150	1 SD 118	7/4/82
52/1979	Լուպես Բուրգոս [López Burgos]	Ուրուգվայ	81, 176	1 SD 88	29/7/81
53/1979	Ք. Բ. [K.B.]	Նորվեգիա		1 SD 24	26/3/80
55/1979	Մակայզել [MacIsaac]	Կանադա	82, 150	2 SD 87	14/10/82
56/1979	Սելիբերտի դե Կասարիեդո [Celiberti de Casariego]	Ուրուգվայ	81, 185	1 SD 92	29/7/81
57/1979	Վիդալ Մարտին [Vidal Martins]	Ուրուգվայ	82, 157	1 SD 122	23/3/82
58/1979	Մարուֆիդու [Maroufidou]	Շվեդիա	81, 160	1 SD 80	9/4/81
59/1979	Ք. Լ. [K.L.]	Դանիա		1 SD 24	26/3/80
60/1979	Ջ. Ջ. [J.J.]	Դանիա		1 SD 26	31/7/80
61/1979	Հերցբերգ և այլք [Hertzberg et al]	Ֆինլանդիա	82, 161	1 SD 124	2/4/82
63/1979	Սենդիկ Անտոնաչիո [Sendic Antonaccio]	Ուրուգվայ	82, 114	1 SD 101	28/10/81
64/1979	Սալգար դե Մոնտեյո [Salgar de Montejo]	Կոլումբիա	82, 168	1 SD 127	24/3/82
66/1979	Կամպորա Շվեյցեր [Campora Schweizer]	Ուրուգվայ	83, 117	2 SD 90	12/10/82
67/1979	Է. Հ. [E.H.P.]	Կանադա		2 SD 20	27/10/82
68/1980	Ա. Ս.՝ դուստր և բռնակ [A.S., daughter and grandson]	Կանադա		1 SD 27	31/3/81
70/1980	Կուբաս Սիմոնես [Cubas Simones]	Ուրուգվայ	82, 174	1 SD 130	1/4/82
72/1980	Ք. Լ. [K.L.]	Դանիա		1 SD 26	31/7/80
73/1980	Տեսի Իզքուերո [Teti Izquierdo]	Ուրուգվայ	82, 179	1 SD 7,132	1/4/82
74/1980	Էստրելա [Estrella]	Ուրուգվայ	83, 150	2 SD 93	29/3/83
75/1980	Ֆանալի [Fanali]	Իտալիա	83, 160	2 SD 99	31/3/83
77/1980	Լիքենշտեյն [Lichtensztein]	Ուրուգվայ	83, 166	2 SD 102	31/3/83
78/1980	Միքմակ Գեդալտուր [Mikmaq Tribal Society]	Կանադա	84, 200	2 SD 23	29/7/84
79/1980	Ս. Ս. [S.S.]	Նորվեգիա		1 SD 30	2/4/82
80/1980	Վասիլսկիս [Vasilskis]	Ուրուգվայ	83, 173	2 SD 105	31/3/83
81/1980	Ք. Լ. [K.L.]	Դանիա		1 SD 28	27/3/81
83/1980	Մարտինես Մաչադո [Martinez Machado]	Ուրուգվայ	84, 148	2 SD 108	4/11/83
84/1981	Իգնասիո, Բարբատո և Ղեմիտ Բարբատո [Ignacio, Barbato, & Dermitt Barbato]	Ուրուգվայ	83, 124	2 SD 112	27/10/82
85/1981	Ալֆրեդո Ռոմերո [Alfredo Romero]	Ուրուգվայ	84, 159	2 SD 116	29/3/84
88/1981	Լարոսա Բեկուիյո [Larrosa Bequio]	Ուրուգվայ	83, 180	2 SD 118	29/3/83
89/1981	Մուհոնեն [Muhonen]	Ֆինլանդիա	85, 164	2 SD 121	8/4/85
90/1981	Մագանա Էքս-Ֆիլիբերտ [Magana ex-Philibert]	Ջաիր	83, 197	2 SD 124	21/7/83
91/1981	Ա. Ռ. Ս. [A.R.S.]	Կանադա		1 SD 29	28/10/81
92/1981	Ալմիրատի Նիետո [Almirati Nieto]	Ուրուգվայ	83, 201	2 SD 126	25/7/83
94/1981	Լ. Ս. Ն. [L.S.N.]	Կանադա		2 SD 6	30/3/84
103/1981	Օքսանդաբարատ Սկարոնե [Oxandabarat Scarrone]	Ուրուգվայ	84, 154	2 SD 130	4/11/83

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
104/1981	Ջ. Ռ. Թ. և Վ. Գ. կուսակցություն [J.R.T. and the W.G. Party]	Կանադա	83,231	2 SD 25	6/4/83
105/1981	Էստրադետ Կաբրեյրա [Estradet Cabreira]	Ուրուգվայ	83,209	2 SD 133	21/7/83
106/1981	Պերեյրա Մոնտեյրո [Pereira Montero]	Ուրուգվայ	83,186	2 SD 136	31/7/83
107/1981	Կուինտեյրոս Ալմեյդա և մայրը [Quinteros Almeida and mother]	Ուրուգվայ	83,216	2 SD 11, 138	21/7/83
108/1981	Վարելա Նունյես [Varela Núñez]	Ուրուգվայ	83,225	2 SD 143	22/7/83
109/1981	Գոմես դե Վոյտուրետ [Gómez de Voituret]	Ուրուգվայ	84,164	2 SD 146	10/4/84
110/1981	Վիանա Ակոստա [Viana Acosta]	Ուրուգվայ	84,169	2 SD 148	29/3/84
112/1981	Յ. Լ. [Y.L.]	Կանադա	86,145	2 SD 28	8/4/86
113/1981	Ք. Ֆ. և այլք [C.F. et al]	Կանադա	85,217	2 SD 13	12/4/85
115/1982	Ուայթ [Wight]	Մադագասկար	85,171	2 SD 151	1/4/85
117/1981	Մ. Ա. [M.A.]	Իտալիա	84,190	2 SD 31	10/4/84
118/1982	Ջ. Բ. և այլք [J.B. et al]	Կանադա	86,151; 87, 47	2 SD 34	18/7/86
121/1982	Ա. Մ. [A.M.]	Դանիա	82,212	1 SD 32	23/7/82
123/1982	Մաներա Լուբերաս [Manera Lluberas]	Ուրուգվայ	84,175	2 SD 155	6/4/84
124/1982	Մուլեբա [Muteba]	Ջաիր	84,182	2 SD 158	24/7/84
125/1982	Մ. Մ. Ք. [M.M.Q.]	Ուրուգվայ	83,237	2 SD 8	6/4/84
127/1982	Ք. Ա. [C.A.]	Իտալիա	83,239	2 SD 39	31/3/83
128/1982	Յ. Ռ. [U.R.]	Ուրուգվայ	83,241	2 SD 40	6/4/83
129/1982	Ի. Մ. [I.M.]	Նորվեգիա	83,243	2 SD 41	6/4/83
130/1982	Ջ. Ս. [J.S.]	Կանադա	85,179	2 SD 42	6/4/83
131/1982	Ն. Գ. [N.G.]	Ուրուգվայ	83,245	2 SD 9	25/7/84
132/1982	Խաոնա [Jaona]	Մադագասկար	83,247	2 SD 161	1/4/85
136/1983	Ս. Գ. Ֆ. [S.G.F.]	Ուրուգվայ	86,121	2 SD 43	25/7/83
137/1983	Ջ. Ֆ. [J.F.]	Ուրուգվայ	85,196	2 SD 43	25/7/83
138/1983	Մպանդանջիլա և այլք [Mpandanjila et al]	Ջաիր	85,187	2 SD 164	26/3/86
139/1983	Կոնտերիս [Conteris]	Ուրուգվայ	86,142	2 SD 168	17/7/85
146/1983 և 148-154/1983	Բաբոերամ և այլք [Baboeram et al]	Սուրինամ	88,184	2 SD 5, 172	4/4/85
147/1983	Արզուագո Գիլբոա [Arzuago Gilboa]	Ուրուգվայ	86,128	2 SD 176	1/1/85
155/1983	Համմել [Hammel]	Մադագասկար	87,130	2 SD 11, 179	3/4/87
156/1983	Ալբերտո Սոլորզանո [Alberto Solórzano]	Վենեսուելա	86,134	2 SD 183	26/3/86
157/1983	Մպակա Նսուսու [Mpaka-Nsusu]	Ջաիր	86,142	2 SD 187	26/3/86
158/1983	Օ. Ֆ. [O.F.]	Նորվեգիա	85,204	2 SD 44	26/10/84
159/1983	Կարիբոնի [Cariboni]	Ուրուգվայ	88,184	2 SD 189	27/10/87

161/1983	Ռուբիո և ծնողներ [Rubio and parents]	Կոլումբիա	88, 190	2 SD 192	2/1/187
162/1983	Բերտերեչե Ակոստա [Berteretche Acosta]	Ուրուգվայ	89, 183		25/10/88
163/1984	Հաշմանդամների խումբ	Իտալիա	84, 197	2 SD 47	10/4/84
164/1984	Կրոես [Croes]	Նիդերլանդներ	89, 259		7/1/188
165/1984	Ջ. Մ. [J.M.]	Ճամայկա	86, 164	2 SD 17	26/3/86
167/1984	Օմինայակ և Լյուբիկոն լճերի ցեղախումբ [Ominayak and the Lubicon Lake Band]	Կանադա	90, 1 ⁶		26/3/90
168/1984	Վ. [V.]	Նորվեգիա	85, 232	2 SD 48	17/7/85
170/1984	Է. Հ. [E.H.]	Ֆինլանդիա	86, 168	2 SD 50	25/10/85
172/1984	Բրուկս [Broeks]	Նիդերլանդներ	87, 139	2 SD 196	9/4/87
173/1984	Մ. Ֆ. [M.F.]	Նիդերլանդներ	85, 213	2 SD 51	2/1/184
174/1984	Ջ. Բ. [J.K.]	Կանադա	85, 215	2 SD 52	26/10/84
175/1984	Ն. Բ. և այլք [N.B. et al]	Շվեդիա	85, 236	2 SD 53	11/7/85
176/1984	Պենյարիետտա [Peñarietta]	Բոլիվիա	88, 199	2 SD 201	2/1/187
178/1984	Յ. Ռ. Բ. [J.D.B.]	Նիդերլանդներ	85, 226	2 SD 55	26/3/85
180/1984	Դանինգ [Danning]	Նիդերլանդներ	87, 151	2 SD 205	9/4/87
181/1984	Սանխուան Արևալյո եղբայրներ [Sanjuán Arévalo brothers]	Կոլումբիա	90, 31		3/1/189
182/1984	Ջվաանրե Վրիս [Zwaan-de Vries]	Նիդերլանդներ	87, 160	2 SD 209	9/4/87
183/1984	Դ. Ֆ. և այլք [D.F. et al]	Շվեդիա	85, 228	2 SD 55	26/3/85
184/1984	Հ. Ս. [H.S.]	Ֆրանսիա	86, 169	2 SD 56	10/4/86
185/1984	Լ. Տ. Կ. [L.T.K.]	Ֆինլանդիա	85, 240	2 SD 61	9/7/85
187/1985	Ջ. Հ. [J.H.]	Կանադա	85, 230	2 SD 63	12/4/85
188/1984	Մարտինես Պորտորեալ [Martinez Portorreal]	Դոմինիկյան Հանրապետություն	88, 207	2 SD 214	5/1/187
191/1985	Բլոմ [Blom]	Շվեդիա	88, 211	2 SD 216	4/4/88
192/1985	Ս. Հ. Բ. [S.H.B.]	Կանադա	87, 174	2 SD 64	24/3/87
193/1985	Գիրի [Giny]	Դոմինիկյան Հանրապետություն	90, 38		20/7/90
194/1985	Միանգո Մուիյո [Miango Muiyo]	Ջաիր	88, 218	2 SD 219	27/10/87
195/1985	Դելգադո Պաես [Delgado Pérez]	Կոլումբիա	90, 43		12/7/90
196/1985	Գույ և այլք [Gueye et al]	Ֆրանսիա	89, 189		3/4/89
197/1985	Կիտոկ [Kitok]	Շվեդիա	88, 221	2 SD 221	27/7/88
198/1985	Ստելլա Կոստա [Stalla Costa]	Ուրուգվայ	87, 170		9/7/87
201/1985	Հենդրիքս ալվազ և որդի [Hendriks Sr. and son]	Նիդերլանդներ	88, 230		27/7/88
202/1986	Ատո դել Ավելանալ [Ato del Avellanal]	Պերու	89, 196		28/10/88
203/1986	Մունյոս Հերմոսա [Muñoz Hermoza]	Պերու	89, 200		4/1/188
204/1986	Ա. Պ. [A.P.]	Իտալիա	88, 242	2 SD 67	2/1/187
205/1986	Միկմաք ժողովուրդ [Mikmaq People]	Կանադա	92, 201		4/1/191

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
207/1986	Մորել [Moraël]	Ֆրանսիա	89, 210		28/7/89
208/1986	Սինգհ Բինդեր [Singh Bhinder]	Կանադա	90, 50		9/11/89
209/1986	Ֆ. Գ. Գ. [F.G.G.]	Նիդերլանդներ	87, 180	2 SD 68	25/3/87
210/1986	Փրատտ [Pratt]	ճամայկա	89, 222	2 SD 3	6/4/89
212/1986	Փ. Փ. Ք. [P.P.C.]	Նիդերլանդներ	88, 244	2 SD 70	24/3/88
213/1986	Հ. Ք. Ս. Ա. [H.C.M.A.]	Նիդերլանդներ	89, 267		30/3/89
215/1986	Վան Մյուրս [Van Meurs]	Նիդերլանդներ	90, 55		13/7/90
217/1986	Հ. վ. դ. Պ. [H.v.d.P.]	Նիդերլանդներ	87, 185	2 SD 71	8/4/87
218/1986	Վոս [Vos]	Նիդերլանդներ	89, 232		29/3/89
219/1986	Գունսոն [Guesdon]	Ֆրանսիա	90, 61		25/7/90
220/1987	S. Կ. [T.K.]	Ֆրանսիա	90, 118		8/11/89
221/1987	Կարդեն [Cadoret]	Ֆրանսիա	91, 219		11/4/91
222/1987	Մ. Կ. [M.K.]	Ֆրանսիա	90, 127		8/11/89
223/1987	Ռոբինսոն [Robinson]	ճամայկա	89, 241		30/3/89
224/1987	Ա և Ս. Ա. [A. and S.N.]	Նորվեգիա	88, 246		11/7/88
225/1987	Մորգան [Morgan]	ճամայկա	89, 222		6/4/89
226/1987	Սոյերս [Sawyers]	ճամայկա	91, 226		11/4/91
227/1987	O. Վ. [O.W.]	ճամայկա	88, 250		26/7/88
228/1987	Կ. Լ. Դ. [C.L.D.]	Ֆրանսիա	88, 252		18/7/88
229/1987	Ռեյնոլդս [Reynolds]	ճամայկա	91, 235		8/4/91
230/1987	Հենրի [Henry]	ճամայկա	92, 210		1/11/91
231/1987	Ա. Ս. [A.S.]	ճամայկա	89, 274		21/7/89
232/1987	Փինթո [Pinto]	Տրինիդադ և Տոբագո	90, 69		20/7/90
233/1987	Մ. Ֆ. [M.F.]	ճամայկա	92, 330		21/10/91
234/1987	Դ. Ս. [D.S.]	ճամայկա	91, 267		8/4/91
236/1987	Վ. Մ. Ռ. Բ. [V.M.R.B.]	Կանադա	88, 258		18/7/88
237/1987	Գորդոն [Gordon]	ճամայկա	93, 5		5/11/92
238/1987	Բոլանյոս [Bolaños]	Էկվադոր	89, 246		26/7/89
240/1987	Քոլինզ [Collins]	ճամայկա	92, 219		1/11/91
241-242/1987	Բիրինդա և Չիսեկեդի [Birindwa & Tshisekedi]	Զաիր	90, 77		2/11/89
243/1987	Ս. Ռ. [S.R.]	Ֆրանսիա	88, 263	2 SD 72	5/11/87

244/1987	Ա. Զ. [A.Z.]	Կոլումբիա	90, 135	3/11/89
245/1987	Ռ.Տ.Զ. [R.T.Z.]	Նիդերլանդներ	88, 265	5/11/87
246/1987	Ն.Ա.Զ. [N.A.J.]	Ճամայկա	90, 137	26/7/90
248/1987	Քեմկեմբլ [Campbell]	Ճամայկա	92, 232	30/3/92
250/1987	Ռեյդ [Reid]	Ճամայկա	90, 85	20/7/90
251/1987	Ա. Ա. [A.A.]	Ճամայկա	90, 141	30/10/89
252/1987	Ք. Զ. [C.J.]	Ճամայկա	88, 267	26/7/88
253/1987	Քելլի [Kelly]	Ճամայկա	91, 241	8/4/91
254/1987	Ու. Ու. [W.W.]	Ճամայկա	91, 271	26/10/90
255/1987	Լինտոն [Linton]	Ճամայկա	93, 12	22/10/92
256/1987	Մ. և Դ. Մաքլին [M. and D. MacLean]	Ճամայկա	91, 226	11/4/91
257/1987	Լ. Ա. և ալլը [L.C. et al]	Ճամայկա	88, 269	26/7/88
258/1987	Լ.Ռ. և Տ. Ու. [L.R. and T.W.]	Ճամայկա	90, 145	13/7/90
259/1987	Դ.Բ. [D.B.]	Ճամայկա	90, 149	13/7/90
260/1987	Ք. Բ. [C.B.]	Ճամայկա	90, 153	13/7/90
262/1987	Ռ. Տ. [R.T.]	Ֆրանսիա	89, 277	30/3/89
263/1987	Գոնսալես դել Ռիո [Gonzalez del Rio]	Պերու	93, 17	28/10/92
265/1987	Վուլան [Vuolanne]	Ֆինլանդիա	89, 249	7/4/89
266/1987	Ի. Մ. [I.M.]	Իտալիա	89, 282	23/3/89
267/1987	Մ. Յ. Գ. [M.J.G.]	Նիդերլանդներ	88, 271	24/3/88
268/1987	Մ. Գ. Բ. և Մ. Պ. [M.G.B. and S.P.]	Տրինիդադ և Տոբագո	90, 157	3/11/89
269/1987	Փրինս [Prince]	Ճամայկա	92, 242	30/3/92
270-271/1988	Բարեթ և Սաքլիֆ [Barrett and Sutcliffe]	Ճամայկա	92, 246	30/3/92
272/1988	Թոմաս [Thomas]	Ճամայկա	92, 253	31/3/92
273/1988	Բ. դ. Բ. և ալլը [B.d.B. et al]	Նիդերլանդներ	89, 286	30/3/89
274/1988	Գրիֆիթս [Griffiths]	Ճամայկա	93, 22	24/3/93
275/1988	Ս. Է. [S.E.]	Արգենտինա	90, 159	26/3/90
276/1988	Էլլիս [Ellis]	Ճամայկա	92, 257	28/7/92
277/1988	Տերան խիլոն [Terán Jijón]	Էկվադոր	92, 261	26/3/92
278/1988	Ն. Ա. [N.C.]	Ճամայկա	90, 166	13/7/90
281/1988	Ք. Գ. [C.G.]	Ճամայկա	90, 169	30/10/89
282/1988	Սմիթ [Smith]	Ճամայկա	93, 28	31/3/93
283/1988	Լիթլ [Little]	Ճամայկա	92, 268	1/11/91
285/1988	Լ. Գ. [L.G.]	Ճամայկա	88, 272	26/7/88
286/1988	Լ. Ա. [L.S.]	Ճամայկա	88, 274	26/7/88
287/1988	Օ. Ջ. Կ. [O.H.C.]	Կոլումբիա	92, 334	1/11/91
289/1988	Վուլֆ [Wolf]	Պանամա	92, 277	26/3/92
290/1988	Ա. Վ. [A.W.]	Ճամայկա	90, 172	8/11/89

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
291/1988	Ինես Տորես [Inés Torres]	Ֆինլանդիա	90, 96		2/4/90
292/1988	Քուելչ [Queich]	Ճամայկա	93, 37		23/10/92
293/1988	Հիբերտ [Hibbert]	Ճամայկա	92, 284		27/7/92
295/1988	Յարվինեն [Järvinen]	Ֆինլանդիա	90, 101		25/7/90
296/1988	ժ. Ռ. Ք. [J.R.C.]	Կոստա Ռիկա	89, 293		30/3/89
297/1988	Հ. Ա. Է. դ. Յ. [H.A.E.d.J.]	Նիդերլանդներ	90, 176		30/10/89
298-299/1988	Լինդգրեն և այլք [Lindgren et al]	Շվեդիա	91, 253		9/11/90
300/1988	Յ. Հ. [J.H.]	Ֆինլանդիա	89, 298		23/3/89
301/1988	Ռ.Ս. [R.M.]	Ֆինլանդիա	89, 300		23/3/89
302/1988	Ա.Հ. [A.H.]	Տրինիդադ և Տոբագո	91, 274		31/10/90
303/1988	Է.Բ. [E.B.]	Ճամայկա	91, 278		26/10/90
304/1988	Դ.Ս. [D.S.]	Ճամայկա	91, 281		11/4/91
305/1988	Վան Ալֆեն [van Alphen]	Նիդերլանդներ	90, 108		23/7/90
306/1988	Յ. Գ. [J.G.]	Նիդերլանդներ	90, 180		25/7/90
307/1988	Քեննիբել [Campbell]	Ճամայկա	93, 41		24/3/93
309/1988	Վալենսուելա [Valenzuela]	Պերու	93, 48		14/7/93
310/1988	Ս.Տ. [M.T.]	Իսպանիա	91, 284		11/4/91
313/1988	Դ.Դ. [D.D.]	Ճամայկա	91, 287		11/4/91
314/1988	Բվալյա [Bwalya]	Համբիա	93, 52		14/7/93
315/1988	Ռ.Ս. [R.M.]	Ճամայկա	91, 290		26/10/90
316/1988	Կ. Է. Ա. [C.E.A.]	Ֆինլանդիա	91, 293		10/7/91
317/1988	Մարտին [Martin]	Ճամայկա	93, 57		24/3/93
318/1988	Է. Փ. և այլք [E.P. et al]	Կոլումբիա	90, 184		25/7/90
319/1988	Կանյոն Գարսիա [Cañon García]	Էկվադոր	92, 290		5/11/91
320/1988	Ֆրանսիս [Francis]	Ճամայկա	93, 62		24/3/93
321/1988	Թոմաս [Thomas]	Ճամայկա	94, 1		19/10/93
322/1988	Ռոդրիգես [Rodriguez]	Ուրուգվայ	94, 5		19/7/94
323/1988	Լը Բիհան [Le Bihan]	Ֆրանսիա	91, 219		11/4/91
324-325/1988	Յ. Բ. և Հ.Կ. [J.B. and H.K.]	Ֆրանսիա	89, 303		25/10/88
326/1988	Կալենգա [Kalenga]	Համբիա	93, 68		27/7/93
327/1988	Բարժիգ [Barzhig]	Ֆրանսիա	91, 262		11/4/91
328/1988	Բլանկո [Blanco]	Նիկարագուա	94, 12		20/7/94
329/1988	Դ.Ֆ. [D.F.]	Ճամայկա	90, 189		26/3/90
330/1988	Բերրի [Berry]	Ճամայկա	94, 20		7/4/94

331/1988	Գ. Ջ. [G.J.]	Տրինիդադ և Տոբագո	92, 337	5/11/91
332/1988	Ալեն [Allen]	Ճամայկա	94, 31	31/3/94
333/1988	Համիլտոն [Hamilton]	Ճամայկա	94, 37	23/3/94
334/1988	Բեյլի [Bailey]	Ճամայկա	93, 72	31/3/93
335/1988	Մ.Ֆ. [M.F.]	Ճամայկա	92, 340	17/7/92
336/1988	Ֆիլաստե և ալլը [Fillastre et al]	Բոլիվիա	92, 294	5/11/91
337/1988	Է.Է. [E.E.]	Ճամայկա	93, 178	23/10/92
338/1988	Սիմոնս [Simmonds]	Ճամայկա	93, 78	23/10/92
340/1988	Ռ.Վ. [R.W.]	Ճամայկա	92, 343	21/7/92
341/1988	Ջ.Փ. [Z.P.]	Կանադա	91, 297	11/4/91
342/1988	Ռ.Լ. [R.L.]	Կանադա	89, 305	7/4/89
343-345/1988	Ռ.Ա.Վ.Ն. և ալլը [R.A.V.N. et al]	Արգենտինա	90, 191	26/3/90
347/1988	Ս.Գ. [S.G.]	Ֆրանսիա	92, 346	1/11/91
348/1989	Գ.Բ. [G.B.]	Ֆրանսիա	92, 351	1/11/91
349/1989	Ռայթ [Wright]	Ճամայկա	92, 300	27/7/92
351/1989	Ն.Ա.Ջ. [N.A.J.]	Ճամայկա	92, 355	6/4/92
352/1989	Դուգլաս, Ջենթլս և Թեր [Douglas, Gentles and Kerr]	Ճամայկա	94, 42	19/10/93
353/1989	Գրանտ [Grant]	Ճամայկա	94, 50	31/3/94
354/1989	Լ. Գ. [L.G.]	Մակրիկիոս	91, 303	31/10/90
355/1989	Ռեյդ [Reid]	Ճամայկա	94, 59	8/7/94
356/1989	Քոլինզ [Collins]	Ճամայկա	93, 85	25/3/93
358/1989	Ռ.Լ. և ալլը [R.L. et al]	Կանադա	92, 358	5/11/91
359/1989	Բալանթայն և Դևիդսոն [Ballantyne and Davidson]	Կանադա	93, 91	31/3/93
360/1989	Լրագիր հրատարակող մի ընկերություն	Տրինիդադ և Տոբագո	89, 307	14/7/89
361/1989	Հրատարակչությանը և տպագրությանը գրադվող մի ընկերություն	Տոբագո	89, 309	14/7/89
362/1989	Սուգրիմ [Soogrim]	Տրինիդադ և Տոբագո	93, 110	8/4/93
363/1989	Ռ.Լ.Մ. [R.L.M.]	Տոբագո	92, 367	6/4/92
366/1989	Թշիոնգո ա Մինանգա [Tshiongo a Minanga]	Ֆրանսիա	94, 65	2/11/93
367/1989	Ջ.Ջ.Բ. [J.J.C.]	Ջաիր	92, 372	5/11/91
369/1989	Գ.Ս. [G.S.]	Կանադա	90, 198	8/11/89
370/1989	Գ.Հ. [G.H.]	Ճամայկա	93, 181	23/10/92
372/1989	Ռ.Լ.Ա.Վ. [R.L.A.W.]	Ճամայկա	91, 311	2/11/90
373/1989	Ստեֆանս [Stephens]	Նիդերլանդներ	96, 1	18/10/95
375/1989	Քոմպաս [Compass]	Ճամայկա	94, 68	10/10/93
377/1989	Քըրի [Currie]	Ճամայկա	94, 73	29/3/94
378/1989	Է.Է. [E.E.]	Իտալիա	90, 201	26/3/90

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
379/1989	Ք.Վ. [C.W.]	Ֆինլանդիա	90, 203		30/3/90
380/1989	Ռ.Լ.Մ. [R.L.M.]	Տրինիդադ և Տոբագո	93, 184		16/7/93
381/1989	Լ.Է.Ս.Կ. [L.E.S.K.]	Նիդերլանդներ	92, 374		21/7/92
382/1989	Ք.Ֆ. [C.F.]	Ճամայկա	92, 378		28/7/92
383/1989	Հ.Բ. [H.C.]	Ճամայկա	92, 381		28/7/92
384/1989	Ռ.Մ. [R.M.]	Տրինիդադ և Տոբագո	94, 246		29/10/93
385/1989	Մակինթայր [McIntyre]	Կանադա	93, 91		31/3/93
386/1989	Կոնե [Koné]	Սենեգալ	95, 1		21/10/94
387/1989	Կարտունեն [Karttunen]	Ֆինլանդիա	93, 116		23/10/92
389/1989	Ի.Ս. [I.S.]	Հունգարիա	91, 316		9/11/90
390/1990	Լուբուտո [Lubuto]	Զամբիա	96, 11		31/10/95
393/1990	Ա.Ս. [A.C.]	Ֆրանսիա	92, 384		21/7/92
394/1990	Ք.Բ.Դ. [C.B.D.]	Նիդերլանդներ	92, 388		22/7/92
395/1990	Սպրենգեր [Sprenger]	Նիդերլանդներ	92, 311		31/3/92
396/1990	Մ.Ս. [M.S.]	Նիդերլանդներ	92, 392		22/7/92
397/1990	Փ.Ս. [P.S.]	Դանիա	92, 395		22/7/92
398/1990	Ա.Ս. [A.M.]	Ֆինլանդիա	92, 403		23/7/92
400/1990	Մոնակո դե Գալիլիո [Mónaco de Gallichio]	Արգենտինա	95, 10		3/4/95
401/1990	Ջ.Փ. [J.P.K.]	Նիդերլանդներ	92, 405		7/11/91
402/1990	Բրինքհոֆ [Brinkhof]	Նիդերլանդներ	93, 124		27/7/93
403/1990	Թ.Վ.Մ.Բ. [T.W.M.B.]	Նիդերլանդներ	92, 411		7/11/91
404/1990	Ն.Փ. [N.P.]	Ճամայկա	93, 187		5/4/93
405/1990	Մ.Ռ. [M.R.]	Ճամայկա	92, 416		28/7/92
406/1990	Ուլային [Oulajin]	Նիդերլանդներ	93, 131		23/10/92
407/1990	Հիլտոն [Hylton]	Ճամայկա	94, 79		8/7/94
408/1990	Վ. Ջ. Հ. [W.J.H.]	Նիդերլանդներ	92, 420		22/7/92
409/1990	Է.Մ.Է.Հ. [E.M.E.H.]	Ֆրանսիա	91, 318		21/11/90
410/1990	Փարքանյի [Párkányi]	Հունգարիա	92, 317		27/7/92
412/1990	Կիվենմաա [Kivenmaa]	Ֆինլանդիա	94, 85		31/3/94
413/1990	Ա.Բ. [A.B.]	Իտալիա	91, 320		21/11/90
414/1990	Միհա [Miha]	Հասարակածային Գվինեա	94, 96		8/7/94
415/1990	Պաուգեր [Pauger]	Ավստրիա	92, 325		26/3/92
417/1990	Բալագեր Սանտականա [Balageur Santacana]	Իսպանիա	94, 101		15/7/94

418/1990	Կավալկանտի Առաւոյր-Յոնգեն [Cavalcanti Araujo-Jongen]	Սիդեռլանդներ	94, 114	22/10/93
419/1990	O.Յ. [O.J.]	Ֆինլանդիա	91, 323	6/11/90
420/1990	Գ.Թ. [G.T.]	Կանադա	93, 190	23/10/92
421/1990	Թռերուտիեն [Trébutien]	Ֆրանսիա	94, 250	18/7/94
422-424/1990	Ադուայոմ և ալթ [Aduayom et al]	Տոգո	96, 17	12/7/96
425/1990	Նեֆս [Neefs]	Սիդեռլանդներ	94, 120	15/7/94
426/1990	Կաիս [Kaiss]	Սիդեռլանդներ	93, 131	23/10/92
427/1990	Հ.Հ. [H.H.]	Ավստրիա	93, 195	22/10/92
428/1990	Բոզիզ [Bozize]	Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն	94, 124	7/4/94
429/1990	Է. Վ. և ալթ [E.W. et al]	Սիդեռլանդներ	93, 198	8/4/93
431/1990	Սարա և ալթ [Sara et al]	Ֆինլանդիա	94, 257	23/3/94
432/1990	Վ.Բ.Է. [W.B.E.]	Սիդեռլանդներ	93, 205	23/10/92
433/1990	Ա.Պ.Ա. [A.P.A.]	Իսպանիա	94, 269	25/3/94
434/1990	Սեերատան [Seerattan]	Տրինիդադ և Տոբագո	96, 25	26/10/95
436/1990	Սոլիս Պալմա [Solis Palma]	Պանամա	94, 274	18/7/94
437/1990	Պատինո [Patiño]	Պանամա	95, 140	21/10/94
438/1990	Թոմսոն [Thompson]	Պանամա	95, 143	21/10/94
439/1990	Ս.Լ.Դ. [C.L.D.]	Ֆրանսիա	92, 424	8/11/91
440/1990	Էլ Մեգրեյսի [El-Megreisi]	Լիբիա	94, 128	23/3/94
441/1990	Կասանովա [Casnovas]	Ֆրանսիա	94, 131	19/7/94
445/1991	Չամպյեյնի և ալթ [Champagnie et al]	Ճամայկա	94, 136	18/7/94
446/1991	Ջ.Պ. [J.P.]	Կանադա	92, 426	7/11/91
447/1991	Շալտո [Shalto]	Տրինիդադ և Տոբագո	95, 17	4/4/95
448/1991	Հ.Ջ.Հ. [H.J.H.]	Սիդեռլանդներ	92, 428	7/11/91
449/1991	Մոյիսկա [Mojica]	Դոմինիկյան Հանրապետություն	94, 142	15/7/94
450/1991	Ի.Պ. [I.P.]	Ֆինլանդիա	93, 210	26/7/93
451/1991	Հարվարդ [Harward]	Նորվեգիա	94, 146	15/7/94
452/1991	Գլազիու [Glaziou]	Ֆրանսիա	94, 277	18/7/94
453/1991	Քոերիել [Coeriel]	Սիդեռլանդներ	95, 21	31/10/94
454/1991	Գարսիա Պոնս [Garcia Pons]	Իսպանիա	96, 30	30/10/95
455/1991	Սինգեր [Singer]	Կանադա	94, 155	26/7/94
456/1991	Չելեպլի [Celepli]	Շվեդիա	94, 165	18/7/94
457/1991	Ա.Ի.Է. [A.I.E.]	Լիբիա	92, 430	7/11/91
458/1991	Մուկոնգ [Mukong]	Կամերուն	94, 171	21/7/94

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
459/1991	Ուայթ և Հարվի [Wright and Harvey]	Ճամայկա	96, 35		27/10/95
460/1991	Սիմոնս [Simons]	Պանամա	95, 146		25/10/94
461/1995	Գրեհեմ և Մորիսոն [Graham and Morrison]	Ճամայկա	96, 43		25/3/96
463/1991	Դ.Բ.Բ. [D.B.-B.]	Ջաիր	92, 432		8/11/91
464/1991	Փիրթ [Peart]	Ճամայկա	95, 32		19/7/95
467/1991	Վ. Է. Մ. [V.E.M.]	Իսպանիա	93, 214		16/7/93
468/1991	Օլո Բահամոնդե [Oló Bahamonde]	Հասարակածային Գվինեա	94, 183		20/10/93
469/1991	Նգ [Ng]	Կամարա	94, 189		5/11/93
470/1991	Քինդլեր [Kindler]	Կամարա	93, 138		30/7/93
471/1991	Բարրի [Barry]	Տրինիդադ և Տոբագո	94, 283		18/7/94
472/1991	Ջ.Պ.Լ. [J.P.L.]	Ֆրանսիա	96, 231		26/10/95
473/1991	Դել Սիդ Գոմես [del Cid Gómez]	Պանամա	95, 41		19/7/95
475/1991	Ս.Բ. [S.B.]	Նոր Զելանդիա	94, 287		31/3/94
476/1991	Ռ.Մ. [R.M.]	Տրինիդադ և Տոբագո	94, 291		31/3/94
477/1991	Ջ.Ա.Ս.Բ.-Ռ. [J.A.M.B.-R.]	Նիդերլանդներ	94, 294		7/4/94
478/1991	Ա.Պ.Լ.-Վ.Պ.Մ. [A.P.L.-v.d.M.]	Նիդերլանդներ	93, 217		26/7/93
480/1991	Ֆունզալիդա [Fuenzalida]	Էկվադոր	96, 50		12/7/96
481/1991	Օրտեգա [Ortega]	Էկվադոր	97, 1		8/4/97
482/1991	Փիրթ [Peart]	Ճամայկա	95, 32		19/7/95
483/1991	Յ.Վ.Բ. և այլք [J.v.K. et al]	Նիդերլանդներ	92, 435		23/7/92
484/1991	Փեպելս [Pepels]	Նիդերլանդներ	94, 221		15/7/94
485/1991	Վ.Բ. [V.B.]	Տրինիդադ և Տոբագո	93, 222		26/7/93
486/1992	Կ.Բ. [K.C.]	Կամարա	92, 437		29/7/92
487/1992	Վեյգա [Veiga]	Ուրուգվայ	94, 302		18/7/94
488/1992	Տոոնեն [Toonen]	Ավստրալիա	94, 226		31/3/94
489/1992	Բրեդշո [Bradshaw]	Բարբադոս	94, 305		19/7/94
490/1992	Ա.Ս. և Լ.Ս. [A.S. and L.S.]	Ավստրալիա	93, 227		30/3/93
491/1992	Ջ.Լ. [J.L.]	Ավստրալիա	92, 440		28/7/92
492/1992	Պելտոնեն [Peltonen]	Ֆինլանդիա	94, 238		21/7/94
493/1992	Գրիֆին [Griffin]	Իսպանիա	95, 47		4/4/95
494/1992	Ռոջերս [Rogers]	Ճամայկա	95, 149		4/4/95
496/1992	Տ.Պ. [T.P.]	Հունգարիա	93, 230		30/3/93

497/1992	Ամիսի [Amisi]	94, 310	Զաիր	19/7/94
498/1992	Դրբալ [Drbal]	94, 312	Չեխիայի Հանրապետություն	22/7/94
499/1992	Կ.Լ.Բ.Վ. [K.L.B.W.]	93, 234	Ավստրալիա	30/3/93
500/1992	Դեբրեչենի [Debreczeny]	95, 59	Նիդերլանդներ	3/4/95
501/1992	Ջ.Հ.Վ. [J.H.W.]	93, 237	Նիդերլանդներ	16/7/93
502/1992	Ս.Մ. [S.M.]	94, 318	Բարբադոս	31/3/94
504/1992	Ռոբերտս [Roberts]	94, 322	Բարբադոս	19/7/94
505/1992	Աքլա [Ackla]	96, 57	Տոգո	25/3/96
509/1992	Ս.Ռ.Ու. [S.R.U.]	94, 327	Նիդերլանդներ	19/10/93
510/1992	Պ.Յ.Ն. [P.J.N.]	94, 330	Նիդերլանդներ	19/10/93
511/1992	Լանսման և այլք [Lansman et al]	95, 66	Ֆինլանդիա	26/10/94
512/1992	Պինտո [Pinto]	96, 61	Տրինիդադ և Տոբագո	16/7/96
514/1992	Ֆեյ [Fei]	95, 77	Կուվեյթի Տրինիդադ և Տոբագո	4/4/95
515/1992	Հոլդեր [Holder]	95, 152		19/7/95
516/1992	Սիմունեկ և այլք [Simunek et al]	95, 89	Չեխիայի Հանրապետություն	19/7/95
517/1992	Լամբերտ [Lambert]	94, 333	Ճամայկա	21/7/94
518/1992	Սոն [Sohn]	95, 98	Կորեայի Հանրապետություն	19/7/95
519/1992	Մարիոթ [Marriott]	96, 67	Ճամայկա	27/10/95
520/1992	Քյոնյե և Բյոնյե [Könye and Könye]	94, 336	Հունգարիա	7/4/94
521/1992	Կուլոմին [Kulomin]	96, 73	Հունգարիա	22/3/96
522/1992	Ջ.Ս. [J.S.]	94, 342	Նիդերլանդներ	3/11/93
523/1992	Նեպտուն [Neptune]	96, 84	Տրինիդադ և Տոբագո	16/7/96
524/1992	Է.Ք.Վ. [E.C.W.]	94, 346	Նիդերլանդներ	3/11/93
525/1992	Ժիր [Gire]	95, 155	Ֆրանսիա	28/3/95
526/1993	Հիլ և Հիլ [Hill and Hill]	97, 5	Իսպանիա	2/4/97
527/1993	Լյուիս [Lewis]	96, 89	Ճամայկա	18/7/96
528/1993	Ստեդման [Steadman]	97, 22	Ճամայկա	2/4/97
529/1993	Էդուարդս [Edwards]	97, 28	Ճամայկա	28/7/97
532/1993	Թոմաս [Thomas]	98, 1	Ճամայկա	3/11/97
533/1993	Էլահի [Elahie]	97, 34	Տրինիդադ և Տոբագո	28/7/97
534/1993	Հ.Տ.Բ. [H.T.B.]	94, 348	Կանադա	19/10/93
535/1993	Ռիչարդս [Richards]	97, 38	Ճամայկա	31/3/97
536/1993	Պերերա [Perera]	95, 158	Ավստրալիա	28/3/95

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
537/1993	Քելլի [Kelly]	ճամայկա	96, 98		17/7/96
538/1993	Ստյուարտ [Stewart]	Կամարա	97, 47		1/11/96
539/1993	Քոքս [Cox]	Կամարա	95, 105		31/10/94
540/1993	Լաուրեանո [Laureano]	Դերու	96, 108		25/3/96
541/1993	Սիմզ [Simms]	ճամայկա	95, 164		3/4/95
542/1993	Թշիշիմբի [Tshishimbij]	Զաիր	96, 116		25/3/96
544/1993	Կ.Յ.Լ. [K.J.L.]	Ֆիլանդիա	94, 351		31/11/93
546/1993	Բառել [Burrell]	ճամայկա	96, 121		18/7/96
547/1993	Մահուիկա և այլք [Mahuika et al]	Նոր Զելանդիա	01, 11		27/10/00
548/1993	Ռ.Է.դ.Բ. [R.E.d.B.]	Նիդերլանդներ	94, 354		31/11/93
549/1993	Հոպյու և Բեսեր [Hopu and Bessert]	Ֆրանսիա	97, 70		29/7/97
550/1993	Ֆորիսոն [Faurisson]	Ֆրանսիա	97, 84		8/11/96
552/1993	Կալլ [Kall]	Լեհաստան	97, 105		14/7/97
553/1993	Բուլոք [Bullock]	Տրինիդադ և Տոբագո	95, 168		19/7/95
554/1993	Լավենդե [LaVende]	Տրինիդադ և Տոբագո	98, 8		29/10/97
555/1993	Բիքարու [Bickaroo]	Տրինիդադ և Տոբագո	98, 15		29/10/97
557/1993	Իքս [X]	Ավստրալիա	96, 235		16/7/96
558/1993	Կանեպա [Canepa]	Կամարա	97, 115		3/4/97
559/1993	Ջ.Ս. [J.M.]	Կամարա	94, 357		8/4/94
560/1993	Ա [A]	Ավստրալիա	97, 125		3/4/97
561/1993	Ուիլյամս [Williams]	ճամայկա	97, 147		8/4/97
563/1993	Բաուտիստա դե Արելանա [Bautista de Arellana]	Կոլումբիա	96, 132		27/10/95
564/1993	Լեսլի [Leslie]	ճամայկա	98, 21		31/7/98
565/1993	Ռ. և Ս.Կ. [R and M.K.]	Իտալիա	94, 360		8/4/94
566/1993	Սոմերս [Somers]	Հունգարիա	96, 144		23/7/96
567/1993	Պունգավանամ [Poongavanam]	Մավրիկիոս	94, 362		26/7/94
568/1993	Կ.Վ. և Ք.Վ. [K.V. and C.V.]	Գերմանիա	94, 365		8/4/94
569/1993	Մեթյուզ [Matthews]	Տրինիդադ և Տոբագո	98, 30		31/3/98
570/1993	Ս.Ա.Բ., Վ.Ա.Ս. և Ջ.Ա.Յ.Տ. [M.A.B., W.A.T. and J.-A.Y.T.]	Կամարա	94, 368		8/4/94
571/1994	Հենրի և Դուգլաս [Henry and Douglas]	ճամայկա	96, 155		25/7/96
572/1994	Փրայս [Price]	ճամայկա	97, 153		6/11/96
573/1994	Ատկինսոն և այլք [Atkinson et al]	Կամարա	96, 243		31/10/95

574/1994	Կիմ [Kim]	Կորեայի Հանրապետություն	99, 1	3/11/98
575-576/1994	Գուերա և Վալեն [Guerra and Wallen]	Տրինիդադ և Տոբագո	95, 172	4/4/95
577/1994	Պոլայ Կամպոս [Polay Campos]	Պերու	98, 36	6/11/97
578/1994	դե Գրոոտ [de Groot]	Նիդերլանդներ	95, 179	14/7/95
579/1994	Վերենբեք [Werenbeck]	Ավստրալիա	97, 256	27/3/97
580/1994	Էշբի [Ashby]	Տրինիդադ և Տոբագո	02, 12	21/3/02
583/1994	Վան դեր Հուսեն [van der Houwen]	Նիդերլանդներ	95, 183	14/7/95
584/1994	Վալենտեն [Valentijn]	Ֆրանսիա	96, 253	31/10/95
585/1994	Ջոնս [Jones]	Ճամայկա	98, 45	6/4/98
586/1994	Ադամ [Adam]	Չեխիայի Հանրապետություն	96, 165	23/7/96
587/1994	Ռեյնոլդս [Reynolds]	Ճամայկա	97, 157	3/4/97
588/1994	Ջոնսոն [Johnson]	Ճամայկա	96, 174	22/3/96
589/1994	Տոմլին [Tomlin]	Ճամայկա	96, 191	21/11/95
590/1994	Բեննեթ [Bennett]	Ճամայկա	99, 12	25/3/99
592/1994	Ջոնսոն [Johnson]	Ճամայկա	99, 20	20/10/98
591/1994	Չանգ [Chung]	Ճամայկա	98, 55	9/4/98
593/1994	Հոլանդ [Holland]	Իռլանդիա	97, 266	25/10/96
594/1994	Ֆիլիպ [Phillip]	Տրինիդադ և Տոբագո	99, 30	20/10/98
596/1994	Չապլին [Chaplin]	Ճամայկա	96, 197	21/11/95
597/1994	Գրանտ [Grant]	Ճամայկա	96, 206	22/3/96
598/1994	Ստերլինգ [Sterling]	Ճամայկա	96, 214	22/7/96
599/1994	Սփենս [Spence]	Ճամայկա	96, 219	18/7/96
600/1994	Հիլտոն [Hylton]	Ճամայկա	96, 224	16/7/96
601/1994	Ջուլիան և Դրեյք [Julian and Drake]	Նոր Զելանդիա	97, 273	3/4/97
602/1994	Հոոֆդման [Hoofdman]	Նիդերլանդներ	99, 36	31/11/98
603/1994	Բարու [Badu]	Կամարա	97, 282	18/7/97
604/1994	Նարթի [Nartey]	Կամարա	97, 288	18/7/97
606/1994	Ֆրենսիս [Francis]	Ճամայկա	95, 130	25/7/95
607/1994	Ադամս [Adams]	Ճամայկա	97, 163	30/10/96
608/1995	Նահիլի [Nahlik]	Ավստրիա	96, 259	22/7/96
609/1995	Ուիլյամս [Williams]	Ճամայկա	98, 63	4/11/97
610/1995	Հենրի [Henry]	Ճամայկա	99, 45	20/10/98
612/1995	Արիուակոս [Arhuacos]	Կոլումբիա	97, 173	29/7/97
613/1995	Լիհոնգ [Leehong]	Ճամայկա	99, 52	13/7/99
614/1995	Թոմաս [Thomas]	Ճամայկա	99, 62	31/3/99

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
615/1995	Յանգ [Young]	ճամայկա	98, 69		4/11/97
616/1995	Համիլտոն [Hamilton]	ճամայկա	99, 73		23/7/99
617/1995	Ֆինն [Finn]	ճամայկա	98, 78		31/7/98
618/1995	Քենմիքել [Campbell]	ճամայկա	99, 78		20/10/98
619/1995	Դեյդրիք [Deidrick]	ճամայկա	98, 87		9/4/98
623-624/1995	Դոմուկովսկի և Տիկլաուրի [Domukovsky and Tsiklauri]	Վրաստան	98, 95		6/4/98
625/1995	Ֆրիմենթլ [Freemantle]	ճամայկա	00, 11		24/3/00
625-626/1995	Գելբախիանի և Դոկվաձե [Gelbakhiani and Dokvadze]	Վրաստան	98, 95		6/4/98
628/1995	Փարք [Park]	Կորեայի Հանրապետություն	99, 85		20/10/98
630/1995	Մազու [Mazou]	Կամերուն	01, 30		26/7/01
631/1995	Սպակոն [Spakmo]	Նորվեգիա	00, 22		5/11/99
632/1995	Փոթեր [Potter]	Նոր Զելանդիա	97, 294		28/7/97
633/1995	Գոտյե [Gauthier]	Կանադա	99, 93		7/4/99
634/1995	Ամորե [Amore]	ճամայկա	99, 281		23/3/99
635/1995	Մորիսոն [Morrison]	ճամայկա	98, 113		27/7/98
638/1995	Լասիկա [Lacika]	Կանադա	96, 265		3/11/95
639/1995	Ռիչարդս և Ուոքեր [Richards and Walker]	ճամայկա	97, 183		28/7/97
641/1995	Գեդումբե [Gedumbe]	Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	02, 24		9/7/02
643/1995	Դրոբեկ [Drobek]	Սլովակիա	97, 300		14/7/97
644/1995	Այազ և Ջամիլ [Ajaz and Jamil]	Կորեայի Հանրապետություն	99, 111		13/7/99
645/1995	Բորդես և Տեմեհարո [Bordes and Temeharo]	Ֆրանսիա	96, 267		22/7/96
646/1995	Լինդոն [Lindon]	Ավստրալիա	99, 285		20/10/98
647/1995	Փեննանթ [Pennant]	ճամայկա	99, 118		20/10/98
649/1995	Ֆորբես [Forbes]	ճամայկա	99, 127		20/10/98
650/1995	Պերել [Pere]	Լատվիա	98, 128		30/3/98
651/1995	Սնեյդերս և այլք [Snijders et al]	Նիդերլանդներ	98, 135		27/7/98
653/1995	Ջոնսոն [Johnson]	ճամայկա	99, 135		20/10/98
654/1995	Ադու [Adu]	Կանադա	97, 304		18/7/97
656/1995	Վ.Է.Մ. [V.E.M.]	Իսպանիա	96, 274		30/10/95
657/1995	վան դեր Էնթ [van der Ent]	Նիդերլանդներ	96, 276		3/11/95
658/1995	վան Օորդ [van Oord]	Նիդերլանդներ	97, 311		23/7/97

659/1995	Բ.Լ. [B.L.]	Ավստրալիա	97, 317	8/11/96
660/1995	Քոնինգ [Koning]	Նիդերլանդներ	96, 278	3/11/95
661/1995	Տրիբուլեն [Triboulet]	Ֆրանսիա	97, 319	29/7/97
662/1995	Լամլի [Lumley]	Ճամայկա	99, 142	31/3/99
663/1995	Մորիսոն [Morrison]	Ճամայկա	99, 148	3/11/98
664/1995	Կույտ-Անեշ [Kruyt-Amesz]	Նիդերլանդներ	96, 280	25/3/96
665/1995	Բրաուն և Փերիշ [Brown and Parish]	Ճամայկա	99, 157	29/7/99
666/1995	Ֆուան [Foin]	Ֆրանսիա	00, 30	3/11/99
667/1996	Ռիքեթս [Ricketts]	Ճամայկա	02, 29	4/4/02
668/1995	Սմիթ և Ստյուարտ [Smith and Stewart]	Ճամայկա	99, 163	8/4/99
669/1995	Մալիկ [Malik]	Չեխիայի Հանրապետություն	99, 291	21/10/98
670/1995	Շլոսեր [Schlosser]	Չեխիայի Հանրապետություն	99, 298	21/10/98
671/1995	Լանսման և այլք [Lansman et al]	Ֆինլանդիա	97, 191	30/10/96
672/1995	Սմարթ [Smart]	Տրինիդադ և Տոբագո	98, 142	29/7/98
673/1995	Գոնսալես [Gonzalez]	Տրինիդադ և Տոբագո	99, 305	23/3/99
674/1995	Կաաբեր [Kaaber]	Իսլանդիա	97, 328	5/11/96
675/1995	Տոալա և այլք [Toala et al]	Նոր Զելանդիա	01, 35	2/11/00
676/1996	Յասին և Թոնաս [Yasseen and Thomas]	Գայանա	98, 151	30/3/98
677/1996	Թիսթեյլ [Teesdale]	Տրինիդադ և Տոբագո	02, 36	1/4/02
678/1996	Գուտյերես Վիկանո [Gutiérrez Vicanco]	Պերու	02, 46	26/3/02
679/1996	Դարվիշ [Darwish]	Ավստրալիա	97, 332	28/7/97
680/1996	Գալիմոր [Gallimore]	Ճամայկա	99, 170	23/7/99
682/1996	Վեստերման [Westerman]	Նիդերլանդներ	00, 41	3/11/99
683/1996	Վանզա [Wanza]	Տրինիդադ և Տոբագո	02, 55	26/3/02
684/1996	Սահադաթ [Sahadath]	Տրինիդադ և Տոբագո	02, 61	2/4/02
687/1996	Ռոխաս Գարսիա [Rojas Garcia]	Կուլոմբիա	01, 48	3/4/01
688/1996	Արեդոնդո [Arredondo]	Պերու	00, 51	27/7/00
689/1996	Մեյ [Maille]	Ֆրանսիա	00, 62	10/7/00
690-691/1996	Վենյե և Նիկոլա [Venier and Nicolas]	Ֆրանսիա	00, 75	10/7/00
692/1996	Ա.Ռ.Ջ. [A.R.J.]	Ավստրալիա	97, 205	28/7/97
694/1996	Ուոլդման [Waldman]	Կանադա	00, 86	3/11/99
695/1996	Սիմփսոն [Simpson]	Ճամայկա	02, 67	2/4/02
696/1996	Բլեյն [Blaine]	Ճամայկա	97, 216	17/7/97

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
698/1996	Սանչես [Sanchez]	Իսպանիա	97, 337		29/7/97
699/1996	Մալեկի [Maleki]	Իտալիա	99, 180		15/7/99
700/1996	Ջարմեն [Jaman]	Ավստրալիա	97, 340		8/11/96
701/1996	Գոմես [Gomez]	Իսպանիա	00, 102		20/7/00
702/1996	Մաքլուրենս [McLawrence]	Ճամայկա	97, 225		18/7/97
704/1996	Շո [Shaw]	Ճամայկա	98, 164		2/4/98
705/1996	Թեյլոր [Taylor]	Ճամայկա	98, 174		2/4/98
706/1996	Թ.Թ. [T. T.]	Ավստրալիա	98, 184		4/11/97
707/1996	Թեյլոր [Taylor]	Ճամայկա	97, 234		14/7/97
708/1996	Լյուիս [Lewis]	Ճամայկա	97, 244		17/7/96
709/1997	Բեյլի [Bailey]	Ճամայկա	99, 185		21/7/99
710/1997	Հենքլ [Hankle]	Ճամայկա	99, 196		28/7/99
711/1996	Դիաս [Dias]	Անգոլա	00, 111		20/3/00
714/1997	Գերիտսեն [Gerritsen]	Նիդերլանդներ	99, 309		25/3/99
716/1997	Պաուգեր [Pauger]	Ավստրիա	99, 202		25/3/99
717/1997	Ինոստրոսա [Inostroza]	Չիլի	99, 313		23/7/99
718/1997	Վարգաս [Vargas]	Չիլի	99, 322		26/7/99
719/1997	Լևի [Levy]	Ճամայկա	99, 208		3/11/98
720/1997	Մորգան և Ուիլյամս [Morgan and Williams]	Ճամայկա	99, 216		3/11/98
721/1997	Բուդու [Boodoo]	Տրինիդադ և Տոբագո	02, 76		2/8/02
722/1997	Ֆրեզեր և Ֆիշեր [Fraser and Fisher]	Ճամայկա	99, 224		31/3/99
724/1997	Մազուրկևիչովա [Mazurkiewiczova]	Չեխիայի Հանրապետություն	99, 330		26/7/99
726/1996	ժելուդկովա [Zheludkova]	Ուկրաինա	03, xx		6/12/02
727/1996	Պարագա [Paraga]	Խորվաթիա	01, 58		4/4/01
728/1996	Սահարեո [Sahadeo]	Գայանա	02, 81		1/11/01
730/1997	Մարշալ [Marshall]	Ճամայկա	99, 228		3/11/98
731/1996	Ռոբինսոն [Robinson]	Ճամայկա	00, 116		29/3/00
732/1997	Ուայթ [Whyte]	Ճամայկա	98, 195		27/7/98
733/1997	Պերկինս [Perkins]	Ճամայկա	98, 205		19/3/98
734/1997	Մաքլեոդ [McLeod]	Ճամայկա	98, 213		31/3/98
736/1997	Ռոս [Ross]	Կանադա	01, 69		18/10/00
737/1997	Լամանյա [Lamagna]	Ավստրալիա	99, 335		7/4/99
739/1997	Տովար Ակունա [Tovar Acuna]	Վենեսուելա	99, 340		25/3/99
740/1997	Բարզանա Յուտրոնիչ [Barzana Yutronic]	Չիլի	99, 344		23/7/99

741/1997	Չիկլին [Cziklin]	Կամարա	99, 348	27/7/99
742/1997	Բիրն և Լազարեսկու [Byrne and Lazarescu]	Կամարա	99, 354	25/3/99
743/1997	Տրունգ [Truong]	Կամարա	03, xx	5/5/03
744/1997	Լինդերհոլմ [Linderholm]	Խորվաթիա	99, 360	23/7/99
746/1997	Մենանտո [Menanteau]	Չիլի	99, 362	26/7/99
747/1997	Դես Ֆուրս [Des Fours]	Չեխիայի Հանրապետություն	02, 88	30/10/01
748/1997	Սիլվա [Silva]	Շվեդիա	00, 188	18/10/99
749/1997	Մակթագարտ [McTaggart]	Ճամայկա	98, 221	31/3/98
750/1997	Դեյլի [Daley]	Ճամայկա	98, 235	31/7/98
751/1997	Պասլա [Pasla]	Ավստրիա	99, 369	7/4/99
752/1997	Հենրի [Henry]	Տրինիդադ և Տոբագո	99, 238	3/11/98
754/1997	Ա [A]	Նոր Զելանդիա	99, 245	15/7/99
755/1997	Մալոնի [Maloney]	Գերմանիա	97, 342	29/7/97
756/1997	Դուկուրե [Doukouré]	Ֆրանսիա	00, 194	29/3/00
757/1997	Պեզոլդովա [Pezoldova]	Չեխիայի Հանրապետություն	03, xx	9/12/02
758/1997	Գոմես Նավարո [Gómez Navarro]	Իսպանիա	97, 345	29/7/97
759/1997	Օսբորն [Osbourne]	Ճամայկա	00, 133	15/3/00
760/1997	Դիերգաարտ և այլք [Diergaardt et al]	Նամիբիա	00, 140	25/7/00
761/1997	Սինգհ [Singh]	Կամարա	97, 348	29/7/97
762/1997	Յանսեն [Jensen]	Ավստրալիա	01, 213	22/3/01
763/1997	Լանցովա [Lantsova]	Ռուսաստանի Դաշնություն	02, 96	26/3/02
765/1997	Ֆաբրիոլա [Fábryová]	Չեխիայի Հանրապետություն	02, 103	30/10/01
767/1997	Բեն Սաիդ [Ben Said]	Նորվեգիա	00, 161	29/3/00
768/1997	Մուկունտո [Mukunto]	Զամբիա	99, 257	23/7/99
770/1997	Գրիդին [Gridin]	Ռուսաստանի Դաշնություն	00, 172	20/7/00
771/1997	Բաուլին [Baulin]	Ռուսաստանի Դաշնություն	03, xx	2/12/02
772/1997	Յ [Y]	Ավստրալիա	00, 199	17/7/00
774/1997	Բրոկ [Brok]	Չեխիայի Հանրապետություն	02, 110	31/10/01
775/1997	Բրաուն [Brown]	Ճամայկա	99, 260	23/3/99
777/1997	Սանչես Լոպես [Sánchez López]	Իսպանիա	00, 204	18/10/99
778/1997	Կորոնել Նավարո և այլք [Coronel Navarro et al]	Կոլումբիա	03, xx	29/11/02
779/1997	Աարեթ և Նակալայարվի [Ärelä and Näkkäläjärvi]	Ֆինլանդիա	02, 117	24/10/01

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
780/1997	Լապցևիչ [Laptsevich]	Բելառուս	00, 178		20/3/00
784/1997	Պլոտնիկով [Plotnikov]	Ռուսաստանի Դաշնություն	99, 373		25/3/99
785/1997	Վույց [Wuyts]	Նիդերլանդներ	00, 210		17/7/00
786/1997	Յոհաննես Վոս [Johannes Vos]	Նիդերլանդներ	99, 271		26/7/99
787/1997	Գոբին [Gobin]	Մավրիկիոս	01, 222		16/7/01
788/1997	Կագաս և այլք [Cagas et al]	Ֆիլիպիններ	02, 131		23/10/01
789/1997	Բրին [Bryhn]	Նորվեգիա	00, 183		29/10/99
790/1997	Չեբան [Cheban]	Ռուսաստանի Դաշնություն	01, 88		24/7/01
791/1997	Սինգհ [Singh]	Նոր Զելանդիա	01, 228		12/7/01
792/1998	Հիգինսոն [Higginson]	Ճամայկա	02, 140		28/3/02
794/1998	Յալոհ [Jalloh]	Նիդերլանդներ	02, 144		23/3/02
800/1998	Թոմաս [Thomas]	Ճամայկա	99, 276		8/4/99
802/1998	Ռոջերսոն [Rogerson]	Ավստրալիա	02, 150		3/4/02
803/1998	Ալտհամեր և այլք [Althammer et al]	Ավստրիա	02, 312		21/3/02
806/1998	Թոմսոն [Thompson]	Սենտ Վինսենթ և Գրենադիններ	01, 93		18/10/00
807/1998	Կուտնի [Koutny]	Չեխիայի Հանրապետություն	00, 215		20/3/00
808/1998	Ռոգլ [Rogl]	Գերմանիա	01, 241		25/10/00
813/1998	Չադի [Chadee]	Տրինիդադ և Տոբագո	98, 242		29/7/98
816/1998	Թերմեն և այլք [Tadman et al]	Կամարա	00, 218		29/10/99
818/1998	Սեքստուս [Sextus]	Տրինիդադ և Տոբագո	01, 111		16/7/01
819/1998	Կավանագ [Kavanagh]	Իռլանդիա	01, 122		4/4/01
821/1998	Չոնգվե [Chongwe]	Զամբիա	01, 137		25/10/00
822/1998	Վոկումե [Vokoumé]	Ֆրանսիա	01, 249		31/10/00
824/1998	Նիկոլով [Nicolov]	Բուլղարիա	00, 227		24/3/00
825-828/1999	Սիլվա, Գոդվին, ռե Սիլվա և Պերերա [Silva, Godwin, de Silva and Perera]	Զամբիա	02, 319		25/7/02
830/1998	Բեթել [Bethel]	Տրինիդադ և Տոբագո	99, 375		31/3/99
831/1998	Մեյերս [Meiers]	Ֆրանսիա	01, 255		16/7/01
832/1998	Ուոլրավենս [Walravens]	Ավստրալիա	01, 260		25/7/01
833/1998	Կարկեր [Karker]	Ֆրանսիա	01, 144		26/10/00

834/1998	Կելեր [Kehler]	Գերմանիա	01, 266	22/3/01
835/1998	Վան դեն Բերգ [van den Berg]	Նիդերլանդներ	99, 380	25/3/99
836/1998	Գելազաիսկաս [Gelazaiskas]	Լիտվա	03, xx	2/6/03
838/1998	Հենդրիքս [Hendricks]	Գայանա	03, xx	20/12/02
839-841/1998	Մանսարաջ և այլք, Գորիե և այլք և Սեսայ և այլք [Mansaraj et al, Gborie et al and Sesay et al]	Սինեա Լեոնե	01, 153	16/7/01
844/1998	Պետկով [Petkov]	Բուլղարիա	99, 382	25/3/99
845/1998	Քենեդի [Kennedy]	Տրինիդադ և Տոբագո	00, 258; 02, 161	2/11/99; 26/3/02
846/1999	Յանսեն-Գիելեն [Jansen-Gielen]	Նիդերլանդներ	01, 158	3/4/01
848/1999	Ռոդրիգես Օրեխուելա [Rodríguez Orejuela]	Կոլումբիա	02, 172	23/7/02
850/1999	Հանակալ [Hankala]	Ֆինլանդիա	99, 384	25/3/99
852/1999	Բորիսենկո [Borisenko]	Հունգարիա	03, xx	6/12/02
854/1999	Վակենհայմ [Wackenheim]	Ֆրանսիա	02, 179	15/7/02
855/1999	Շմից դե Յոնգ [Schmitz-de-Jong]	Նիդերլանդներ	01, 165	16/7/01
857/1999	Բլազեկ և այլք [Blazek et al]	Չեխիայի Հանրապետություն	01, 168	12/7/01
858/1999	Բաքլ [Buckle]	Նոր Զելանդիա	01, 175	25/10/00
859/1999	Խիմենս Վակա [Jiménez Vaca]	Կոլումբիա	02, 187	25/3/02
861/1999	Լեստուրն [Lestourmeaud]	Ֆրանսիա	00, 234	3/11/99
864/1999	Ռուիս Ագուներ [Ruiz Agudo]	Իսպանիա	03, xx	29/11/02
865/1999	Մարին Գոմես [Marin Gómez]	Իսպանիա	02, 198	22/10/01
866/1999	Տոռեգրոսա Լաֆուենտե և այլք [Torregrosa Lafuente et al]	Իսպանիա	01, 270	16/7/01
869/1999	Փիանդիոնգ և այլք [Piandiong et al]	Ֆիլիպիններ	01, 181	19/10/00
871/1999	Տիմերման [Timmerman]	Նիդերլանդներ	00, 237	29/10/99
872/1999	Կուրովսկի [Kurowski]	Լեհաստան	03, xx	11/4/03
873/1999	Հոելեն [Hoelen]	Նիդերլանդներ	00, 240	3/11/99
876/1999	Յամա և Խալիդ [Yama and Khalid]	Սլովակիա	03, xx	12/11/02
880/1999	Իրվինգ [Irving]	Ավստրալիա	02, 324	1/4/02
881/1999	Քոլինզ [Collins]	Ավստրալիա	03, xx	6/11/02
882/1999	Բեք [Bech]	Նորվեգիա	00, 242	15/3/00
883/1999	Մանսուր [Mansur]	Նիդերլանդներ	00, 245	5/11/99
884/1999	Իգնատան [Ignatane]	Լատվիա	01, 191	25/7/01
886/1999	Շչեդկո և Բոնդարենկո [Schedko and Bondarenko]	Բելառուս	03, xx	28/4/03
887/1999	Ստասելովիչ և Լյաշևիչ [Staselovich and Lyashkevich]	Բելառուս	03, xx	24/4/03
890/1999	Կրաուսեր [Krausser]	Ավստրիա	03, xx	29/11/02
891/1999	Տամիհերե [Tamihere]	Նոր Զելանդիա	00, 248	15/3/00

Հաղորդում թիվ	Հեղինակ ²	Մասնակից պետություններ	Տարեկան հաշվետվություն	Ընտրված որոշումներ ³	Որոշման ամսաթիվ
893/1999	Սահիդ [Sahid]	Նոր Զելանդիա	03, xx		11/4/03
899/1999	Ֆրանսիս և այլք [Francis et al]	Տրինիդադ և Տոբագո	02, 206		25/7/02
900/1999	Ք [C]	Ավստրալիա	03, xx		13/11/02
902/1999	ժոսլին և այլք [Joslin et al]	Նոր Զելանդիա	02, 214		17/7/02
905/2000	Ասենսիո Լոպես [Asensio López]	Իսպանիա	01, 277		23/7/01
906/2000	Չիրա Վարգաս-Մաչուկա [Chira Vargas-Machuca]	Պերու	02, 228		22/7/02
908/2000	Էվանս [Evans]	Տրինիդադ և Տոբագո	03, xx		5/5/03
916/2000	Ջայավարդենա [Jayawardena]	Շրի Լանկա	02, 234		22/7/02
919/2000	Մյուլեր և Էնգելհարդ [Müller and Engelhard]	Նամիբիա	02, 243		26/3/02
921/2000	Դերգաչև [Dergachev]	Բելառուս	02, 252		2/4/02
923/2000	Մատյուս [Matyus]	Սլովակիա	02, 257		22/7/02
925/2000	Կոյ [Koi]	Պորտուգալիա	02, 333		22/10/01
928/2000	Բուդլալ Սուկլալ [Boodlal Sooklal]	Տրինիդադ և Տոբագո	02, 264		25/10/01
930/2000	Վինատա [Winata]	Ավստրալիա	01, 199		26/7/01
932/2000	Գիլոտ [Gillot]	Ֆրանսիա	02, 270		15/7/02
934/2000	Գ [G]	Կանադա	00, 251		17/7/00
935/2000	Մահմուդ [Mahmoud]	Սլովակիա	01, 281		23/7/01
936/2000	Գիլլան [Gillan]	Կանադա	00, 255		17/7/00
940/2000	Ջեբիե [Zébié]	Կոտ դ'Իվուար	02, 348		9/7/02
942/2000	Յոնասեն և այլք [Jonassen et al]	Նորվեգիա	03, xx		12/11/02
946/2000	Պատերա [Patera]	Չեխիայի Հանրապետություն	02, 294		25/7/02
947/2000	Հարթ [Hart]	Ավստրալիա	01, 287		25/10/00
948/2000	Դևգան [Devgan]	Կանադա	01, 291		30/10/00
949/2000	Կեշավյե [Keshavjee]	Կանադա	01, 294		2/11/00
952/2000	Պարուն և Բուլմեր [Parun and Bulmer]	Նոր Զելանդիա	01, 297		22/3/01
963/2001	Ուեբերգանգ [Uebergang]	Ավստրալիա	01, 300		22/3/01
965/2000	Կարակուրտ [Karakurt]	Ավստրիա	02, 304		4/4/02
978/2001	Դիքսիթ [Dixit]	Ավստրալիա	03, xx		28/4/03
980/2001	Հուսսեյն [Hussain]	Մալդիվներ	03, xx		17/4/03
983/2001	Լավ և այլք [Love et al]	Ավստրալիա	03, xx		23/4/03
987/2001	Գոմբերտ [Gombert]	Ֆրանսիա	03, xx		11/4/03
991/2001	Ներենբերգ [Neremberg]	Գերմանիա	01, 303		27/7/01

1001/2001	Ստրիկ [Strik]	Նիդերլանդներ	03, xx	21/12/02
1004/2001	Պասկուալ Էստևիլ [Pascual Estevill]	Իսպանիա	03, xx	17/4/03
1005/2001	Սանչես Գոնսալես [Sánchez González]	Իսպանիա	02, 353	21/3/02
1021/2001	Իրո Բալանի [Hiro Balani]	Իսպանիա	03, xx	23/5/03
1038/2001	Օ Կոլչոնի [O Colchón]	Իռլանդիա	03, xx	17/4/03
1048/2002	Ռայլի և այլք [Riley et al]	Կանադա	02, 356	21/3/02
1049/2002	Վան Պուիկելդ [Van Puyvelde]	Ֆրանսիա	03, xx	14/4/03
1055/2002	Սկյոլդագեր [Skjoldager]	Շվեդիա	02, 359	8/7/02
1065/2002	Մանկարիուս [Mankarious]	Ավստրալիա	02, 361	1/4/02
1077/2002	Կարպո և այլք [Carpo et al]	Ֆիլիպիններ	03, xx	9/5/03
1082/2002	Դե Կլիպել [de Clippele]	Բելգիա	03, xx	11/4/03
1086/2002	Վայս [Weiss]	Ավստրիա	03, xx	8/5/03
1087/2002	Հեսսե [Hesse]	Ավստրալիա	02, 364	15/7/02
1114/2002	Կավանա [Kavanagh]	Իռլանդիա	03, xx	28/11/02
1142/2002	Ա.Յ. [A.J.]	Նիդերլանդներ	03, xx	14/4/03

² Տուժողի անունը տրվում է միայն այն դեպքերում, երբ հեղինակը բոլորը ներկայացնում է տուժողի անունից:

³ Selected Decisions Under the Optional Protocol [«Կամընսիոր արձանագրության ներքո կայացված որոշումների ընտրանի»], Նյու Յորք [New York], 1985 և 1990 (հատորներ 1 և 2): CCPR/C/OP1 և 2:

⁴ Մասնակից պետության անվանումը չի հրապարակվում:

⁵ Այն դեպքերում, երբ նշվում է մեկից ավելի էջ, նշանակում է, որ տվյալ գործի տարբեր կողմերը ներկայացվել են «Որոշումների ընտրանու» միևնույն հատորի տարբեր էջերում:

⁶ 1990 թ. իրշատակումները վերաբերում են 1990 թ. Անենամյա զեկույցի [Annual Report] հատոր II-ին: Անենամյա զեկույցի հատոր II-ին: վերաբերում են համապատասխան զեկույցի հատոր II-ին:

Հավելված Ժ

Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություններ

Հաշվետվություն թիվ	Նստաշրջաններ և ընդունման տարեթիվը	Հոդված (Թեմա)
1 ¹	13 (28/7/81)	Ձեկույց ներկայացնելու պարտավորություններ
2	13 (28/7/81)	Ձեկույց ներկայացնելու պարտավորություններ
3	13 (28/7/81)	Կենսագործուն ազգային մակարդակով
4 ²	13 (28/7/81)	Հոդված 3
5 ³	13 (28/7/81)	Հոդված 4
6	16 (27/7/82)	Հոդված 6
7 ⁴	16 (27/7/82)	Հոդված 7
8	16 (27/7/82)	Հոդված 9
9 ⁵	16 (27/7/82)	Հոդված 10
10	19 (27/7/83)	Հոդված 19
11	19 (29/7/83)	Հոդված 20
12	21 (12/4/84)	Հոդված 1
13	21 (12/4/84)	Հոդված 14
14	23 (2/11/84)	Հոդված 6
15	27 (22/7/86)	Օտարերկրացիների դրությունը ըստ դաշնագրի
16	32 (23/3/88)	Հոդված 17
17	35 (5/4/89)	Հոդված 24
18	37 (9/11/89)	Խտրականության արգելում
19	39 (24/6/90)	Հոդված 23
20	44 (3/4/92)	Հոդված 7
21	44 (6/4/92)	Հոդված 10
22	48 (20/7/93)	Հոդված 18
23	50 (6/4/94)	Հոդված 27
24	52 (2/11/94)	Վերապահումներ
25	57 (12/7/96)	Հոդված 25
26	61 (6/12/97)	Չեղյալ հայտարարումներ
27	67 (2/11/99)	Հոդված 12
28	68 (29/03/00)	Հոդված 3
29	72 (24/07/01)	Հոդված 4
30	75 (16/07/02)	Ձեկույց ներկայացնելու պարտավորություններ
31		Հոդված 2

Բոլոր Ընդհանուր մեկնաբանությունները հասանելի են Միավորված ազգերի կազմակերպության պայ-
մանագրերը ներկայացնող ինտերնետային կայքում. www.unhchr.ch/tbs/doc.nsf:

¹ Թիվ 1 Ընդհանուր մեկնաբանությունը հետագայում փոխարինվել է թիվ 30 Ընդհանուր մեկնաբանությամբ:

² Թիվ 4 Ընդհանուր մեկնաբանությունը հետագայում փոխարինվել է թիվ 28 Ընդհանուր մեկնաբանությամբ:

³ Թիվ 5 Ընդհանուր մեկնաբանությունը հետագայում փոխարինվել է թիվ 29 Ընդհանուր մեկնաբանությամբ:

⁴ Թիվ 7 Ընդհանուր մեկնաբանությունը հետագայում փոխարինվել է թիվ 20 Ընդհանուր մեկնաբանությամբ:

⁵ Թիվ 9 Ընդհանուր մեկնաբանությունը հետագայում փոխարինվել է թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությամբ:

